ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(1912-1920ԹԹ.)

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԵՐԵՎԱՆ 2004

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2 Հ)
Հ 200

Հրատարակվում է Հայաստանի ազգային արխիվի գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակչական աշխատանքները իրականացրել է «Армянский вестник» հրատարակչությունը (Մոսկվա)

Տպագրվում է *Վաչագան Պետրոսյանի* հովանավորությամբ

Պատասխանատու խմբագիր՝ *Ամատունի Վիրաբյան* (պատմ.գիտութ. դոկտոր)

Կազմողներ՝ *Ամատունի Վիրաբյան*
Գոհար Ավագյան
Ռոժենտ Գրիգորյան
Ալբերտ Կիրիմյան

Հ 200 Համահայկական խորհրդակցություններ (1912-1920թթ.): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու: Կազմ.՝ Ա.Վիրաբյան, Գ.Ավագյան, Ռ.Գրիգորյան, Ա.Կիրիմյան, պատ. խմբ. Ա.Վիրաբյան. - Եր.: Հայաստանի ազգային արխիվ, 2004թ., էջ:

Հայաստանի ազգային արխիվը առաջին անգամ ամբողջական տեսքով հրապարակում է 1912-1920թթ. կայացած համահայկական խորհրդակցությունների (համագումարների) հրավիրման վերաբերյալ փաստաթղթերը և դրանց արձանագրությունները, ինչպես նաև փաստաթղթեր խորհրդակցություններում ընտրված համազգային գարծադիր մարմինների գործունեության մասին:

ԳՄԴ-63.3 (2 Հ)

ISBN 99941-910-1-2

© Հայաստանի ազգային արխիվ, 2004

ԱՌԱՋԱԲԱՆ

20-րդ դարի երկրորդ տասնամյակում, հայ ժողովրդի համար ճակատագրական պահերին հայկական հասարակական-քաղաքական ուժերը հաճախ փորձել են համախմբվել և միասնաբար ելք գտնել ճգնաժամային իրավիճակներից: Հրավիրվել են համագումարներ և խորհրդակցություններ, ընտրվել համազգային գործադիր մարմիններ:

1912թ. աշնանը՝ հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Թիֆլիսում կայացան Ռուսական կայսրության հայաշատ վայրերի ներկայացուցիչների երկու համագումար-խորհրդակցություններ: Այդ խորհրդակցությունների նպատակն էր օգտվել 1912թ. սկսված Բալկանյան պատերազմի հետևանքով ստեղծված բարենպաստ իրադրությունից և հասել Հայկական հարցի լուծմանը: Առաջին համագումարում ընտրվեց 8 հոգուց կազմված ժամանակավոր բյուրո (Ս.Հարությունյան, Ա.Խատիսյան, Հ.Թումանյան, Կ.Խատիսյան, Ա.Քալանթարյան, Հ.Առաքելյան, Ա.Պողոսյան, Ն.Աղբալյան), որը վարելու էր ընթացիկ գործերը և նախապատրաստելու էր նոր համագումարի հրավիրումը: Նոյեմբերի 3-ին կայացավ 2-րդ համագումարը, որին ներկա էին պատգամավորներ Թիֆլիսից, Բաքվից, Նոր-Բայազետից, Բաթումից, Աստրախանից, Նախիջևանից, Շուշուց և այլ վայրերից: Համագումարը ընդլայնեց ժամանակավոր բյուրոյի կազմը և անվանեց Թիֆլիսի ազգային կենտրոնական բյուրո, որը պատմության մեջ մտավ Ազգային բյուրո անունով:

Բյուրոն սկզբնական շրջանում զբաղվում էր Հայկական հարցի քարոզչությամբ, եվրոպական տերությունների դիվանագիտական շրջաններում ձգտում էր Ռուսաստանի հովանավորությամբ Հայկական հարցի լուծման համար բարենպաստ հող ստեղծել: Երկար բանակցություններից ու բազմապիսի դիվանագիտական «բարդություններ» հաղթահարելուց հետո, վերջապես, 1914թ. հունվարի 26-ի Ռուսական և Օսմանյան կայսրությունների միջև կնքվեց համաձայնագիր՝ Թուրքիայի հայկական վիլայեթներում հայկական բարենորոգումների մասին, որին, սակայն, վիճակված չէր իրագործվել՝ վերահաս համաշխարհային պատերազմի և արևմտահայության նկատմամբ թուրքական ոճրագործ քաղաքականության պատճառով: Երբ սկսվեց պատերազմը, Բյուրոն, ցարական կառավարության հավանությամբ, հայ կամավորական ջոկատների կազմակերպման, պահպանման ու թվաքանակի ավելացման, արևմտահայ գաղթականների ու որբերի տեղավորման, պարենամթերքով ապահովելու խնդիրների իրականացման համար բանակցությունների մեջ մտավ ռուս զինվորական ու քաղաքացիական իշխանությունների հետ:

1916թ. գարնանը Մոսկվայի և Պետրոգրադի հայ հասարակական կազմակերպությունների նախաձեռնությամբ Պետրոգրադում հրավիրվեց հայկական համագումար, որի նպատակն էր հայ գաղթականների օգնող բոլոր ընկերությունների և կազմակերպությունների ջանքերը և ուժերը միավորել համառուսաստանյան չափերով:

Մասնակցել են Պետրոգրադի, Մոսկվայի, Աստրախանի, Դոնի Ռոստովի, Եկատերինոդարի, Օդեսայի և Ռուսաստանի այլ քաղաքների հայ համայնքների ներկայացուցիչները, ինչպես նաև պատվիրակներ Թիֆլիսից, Երևանից, Շուշիից, Բաքվից: Կովկասում գործող մի շարք կազմակերպություններ (էջմիածնի օգնության կոմիտե, Հայոց գյուղատնտեսական ընկերություն և ուր.), չհամաձայնելով անցկացման վայրի հետ, չմասնակցեցին համագումարին: Համագումարի աշխատանքներին մասնակցեցեին ակադեմիկոս Ն.Մառը, Պետական դումայի անդամներ Մ.Պապաջանյանը, Մ.Աճեմյանը, նախկին անդամ Պ.Ղուկասովը, գեն.Բաղրամյանը, Սուլթանշահը, Գ.Բաբայանը, Ա.Թամամշյանը, Լ.Մանթաշյանը, Ս.Լազարևը, սենատորներ և ռազմազմական գործիչներ, ընդամենը՝ 142-150

պատվիրակ: Համագումարը որոշեց միջնորդել, որպեսզի պատերազմական գործողություններից առաջացած վնասների հատուցման օրենքը տարածվի նաև հայ փախստականների վրա, տեղեկություններ հավաքել հայերի վրա գործադրված թուրքական վայրագությունների մասին և, համաձայն դաշնակից պետությունների 1915-ի դեկլարացիայի, պատասխանատվության ենթարկել հանցավորներին, կազմակերպել տեղական հանձնախմբեր փախստականների գույքը պաշտպանելու նպատակով, միջնորդել՝ թուրքերից ազատված հայկական շրջաններում ծանր վիճակում գտնվող հայերին օգնություն ցույց տալու համար: Որոշվեց կազմել Կենտրոնական խորհուրդ (62 հոգի) և առաջիկա համագումարը հրավիրել սեպտեմբերին՝ Երևանում կամ Թիֆլիսում: Համագումարը թեև չստեղծեց ընկերությունների միություն, սակայն իր որոշումներով նպաստեց գոյություն ունեցող ընկերություններին՝ շարունակելու իրենց գործունեությունը որոշակի համակարգված:

1917թ. փետրվարյան հեղափոխության հաղթանակը Ռուսաստանում ժողովրդավարական վերափոխումների և ազգային զարթոնքի հնարավորություններ ստեղծեց կայսրության բոլոր ժողովուրդների, այդ թվում՝ արևելահայության համար: 1917թ. սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 13-ը Թիֆլիսում հրավիրված Հայոց ազգային համախորհրդակցությունը կոչված էր լուծում տալու Ռուսաստանի ժամանակավոր կառավարության քաղաքականությանն առնչվող և հայ ժողովրդի առջև ծառացած մի շարք կարևորագույն հարցերի, որոնց հրատապությունը պայմանավորված էր տվյալ ժամանակաշրջանի բարդ իրավիճակով, ռուսական բանակի կողմից ազատագրվել էր Արևմտյան Հայաստանը, ռուսական պետական կառավարման համակարգը վերջապես մուտք էր գործել ազատագրված հայկական նահանգները և, բացի այդ, հետփետրվարյան անցած ժամանակաընթացքում երկրում խորացող ռազմական, քաղաքական ու տնտեսական ճգնաժամի պայմաններում հասունանում էր նոր հեղափոխության պոռթկման վտանգը: Խորհրդակցությանը մասնակից հայ հասարակության գրեթե բոլոր խավերի ներկայացուցիչները (բոլշևիկները բոյկոտել էին համախորհրդակցությունը) քննարկեցին քաղաքական, տնտեսական, վարչական կառավարման, պարենավորման, դպրոցաշինարարության և այլ հարցեր: Լսվեցին ու քննարկվեցին նաև Հայոց ազգային բյուրոյի հաշվետվությունը (զեկուցումներ՝ Ա.Խատիսյան, Ն.Աղբալյան), այդ մարմնի հետ կապված կամավորական շարժումը, հայկական կոտորածների շարժառիթները, դեպի տաճկահայերն ունեցած վերաբերմունքը, Հայաստանի ինքնավարության հարցում ցարական Ռուսաստանի կեղծ խոստումները, անհանջողության պատճառները և ապագա անելիքները՝ կապված փետրվարյան հեղափոխությունից հետո երկրում ստեղծված իրավիճակի հետ: Այս հարցի շուրջը քաղաքական կուսակցությունների պատգամավորներն արտահայտվեցին անկաշկանդ և անկեղծ մթնոլորտում: Բոլոր այդ ելույթները հրապարակվել են վերջին տարիներին լույս տեսած ուսումնասիրություններում:

Համախորհրդակցության մասնակիցների տեսակետներն՝ Ազգային բյուրոյի գործունեության գնահատման հարցում, գրեթե համընկնում էին: մյուս խմբակցությունների ներկայացուցիչների համար դժգոհության առիթ էր այն հանգամանքը, որ Բյուրոյում մեծամասնություն էին կազմում դաշնակցականները և մարմինը գտնվում էր նրանց ազդեցության ներքո: Համախորհրդակցությունն այս իրողությունից ելնելով՝ դատապարտեց կամավորական շարժումը, համաժողովրդական շահերին չնպաստող Բյուրոյի գործելակերպը, եղան նաև կամավորական շարժումն արդարացնողներ: Հայոց ազգային համախորհրդակցությունը դադարեցրեց Ազգային բյուրոյի գործունեությունը և տարբեր կուսակցությունների ներկայացուցիչներից ստեղծեց Ազգային խորհուրդ՝ բաղկացած 15 հոգուց (նախագահ՝ Ա.Ահարոնյան) և Ազգային ժողով: Վերջինը համարվում էր ռուսահայ ժողովրդի ժամանակավոր ներկայացուցչական մարմին: Մինչ այդ ստեղծվել էր Արևմտահայ ազգային խորհուրդը: Երկու ազգային

Խորհուրդների ձևավորումը պայմանավորված էր հետփետրվարյան շրջանում հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման և Հայկական հարցի ակտիվացմամբ, հայ մտավորականության կողմից երկրի տնտեսական ու քաղաքական կյանքը ղեկավարելու ձգտումներով:

Արևմտահայերի ազգային խորհուրդը ընտրվել էր 1917թ. մայիսի 2-11-ը Երևանում կայացած արևմտահայերի առաջին համագումարում: Մասնակցել է 59 պատգամավոր, մոտ 400 հյուր (քաղաքական կուսակցությունների, հոգևորականության, արևմտահայ գաղթականներին օգնող ռուսական, անգլիական, ամերիկյան հայանպաստ կազմակերպությունների ներկայացուցիչներ): Համագումարի պատվավոր նախագահ է ընտրվել Անդրանիկը: Քննարկվել են արևմտահայերի ֆիզիկական գոյության պահպանման, տնտեսական վերականգնման, Արևմտյան Հայաստանի վերաշինման, աճող սերնդիր կրթության և դաստիարակության հարցերը: Եվ այդ կապակցությամբ միջոցառումների մշակումը համագումարը համարել է Հայկական հարցի լուծման հնարավոր ուղի, քանի որ արևմտահայերի ճակատագիրը դրվում էր որպես Հայկական հարցի մաս: Համագումարն ընդունվել է, որ Հայկական հարցի արծարծումը պետք է վստահվի Եվրոպայում հայկական պատվիրակությանը, որի կազմի մեջ մտնում էին նաև արևմտահայեր: Որոշվել է հատուկ հանձնաժողովի հանձնարարել մշակել և ներկայացնել Արևմտյան Հայաստանում բարենորոգումների ծարգիր: Համագումարում ի հայտ են եկել արևմտահայ և արևելահայ կազմակերպությունների միջև եղած տարաձայնությունները: Ընտրվել է Արևմտահայ ազգային խորհուրդ (15 անդամով, որից 8-ը՝ դաշնակցական, մնացածը՝ ռամկավար, հնչակ և այլն): Խորհրդի մեջ են մտել Անդրանիկը, Զ.Եսայանը, Ա.Թերզիբաշյանը, Գ.Հայկունին, Լ.Շանթը, Կ.Սասունին, Սեպուհը, Ս.Բորոյանը, Արտ.Դարբինյանը, Հ.Գալիկյանը և ուրիշներ: Համագումարը ողջույնի հեռագիր է ուղարկել Ռուսաստանի ժամանակավոր կառավարությանը, քննարկել Փետրվարյան հեղափոխությունից հետո Հայաստանում ստեղծված իրավիճակը, նպաստել հայ ժողովրդի ուժերի համախմբմանը՝ գաղթականներին օգնելու հարցում, կոչ արել Հայկական հարցի լուծման գործում միասնության և ակտիվ գործողությունների, դատապարտել է թուրքական իշխանությունների կազմակերպած հայկական ցեղասպանությունը:

Երկրորդ համագումարը տեղի է ունեցել 1919-ի փետրվարի 6-13 (19-26)-ին: Մասնակցել է 55 պատգամավոր: Քննարկել են արևմտահայ գաղթականների քաղաքական ծրագրերի մշակման, նրանց հայրենիք վերադարձի, ներկայացուցչական մարմին ստեղծելու և այլն հարցեր: Համագումարի ընդունած որոշումների վրա իր ազդեցությունն է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության արտաքին քաղաքական կողմնորոշումը՝ կապված Հայկական հարցի լուծման գործում Անտանտի երկրների հետ հույսեր կապելու և հատկապես առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի պարտությունից հետո ստեղծված քաղաքական նոր պայմանների հետ: Համագումարի ելույթներում հույս է հայտնվել նաև, որ հետպատերազմյան պայմաններում Հայկական հարցը կստանա իր արդարացի լուծումը: Ընդունվել է որոշում՝ հարց դնել Փարիզում ստեղծվող խաղաղության կոնֆերանսի առջև՝ ստեղծել մեկ միասնական հայկական պետություն, Արևմտյան Հայաստանի և Անդրկովկասում արդեն գոյություն ունեցող Հայաստանի Հանրապետության միավորման ճանապարհով: Որոշվել է մինչ այդ հարցերի լուծումը աջակցել Հայաստանի Հանրապետության կառավարության ձեռնարկած միջոցառումներին՝ գաղթականներին օգնություն կազմակերպելու գործում, խնդրել Անդրկովկասում գտնվող դաշնակիցների հրամանատարությանը օգնել հայ գաղթականներին՝ հատկապես նրանց հայրենից վերադառնալու հարցում: Գաղթականների հետ տարվող աշխատանքի համար ընտրվել է գործադիր մարմին:

1918թ. Թուրքական ներխուժման և Անդրկովկասի պաշտպանության հարցերը գտնվում էին հայ քաղաքական կուսակցությունների և ազգային հասարակական կազմակերպությունների ուշադրության կենտրոնում: Բաթումի անկումից հետո Հայ Հեղափոխական Դաշնակցության՝ Սեյմում ներկայացված պատգամավորները նպատակահարմար համարեցին Թուրքիայի հետ հաշտության պայմանները քննության առարկա դարձնել ոչ թե խմբակցային, այլ ազգային չափանիշով, մի ժողովում, որի անցկացումը նախատեսվում էր Հայաստանում: Խորհրդակցության վայրը ընտրվեց Ալեքսանդրապոլը: Ապրիլի 6-8 (19-21)-ը կայացած խորհրդակցությանը մասնակցում էին Սեյմի և կառավարության հայ անդամները, կուսակցությունների ներկայացուցիչները, Երևանի և Կարսի նահանգական կոմիսարները, Հայոց ազգային խորհրդակցության Երևանի, Կարսի և Ալեքսանդրապոլի լիազորները, Ալեքսանդրապոլից քաղաքական մի շարք գործիչներ: Խորհրդակցությունը բացեց Ս.Վրացյանը, մտքերի փոխանակումից հետո հաստատվեց խորհրդակցության օրակարգը. 1. հաշտության պատվիրակության զեկուցումը, 2. կառավարության անդամների զեկուցումը, 3. զեկուցում ռազմական դրության մասին, 4. զեկուցումներ Երևանի և Կարսի շրջանների ներքին դրության մասին, 5. պատերազմի, հաշտության և երկրի պաշտպանության հարցեր:

1919թ. փետրվարի 24-ին Ազգային պատվիրակության նախաձեռնությամբ Փարիզում հրավիրվեց հայ ազգային համագումարը՝ «մշակելու համար հայ ազգի պահանջներուն ծրագիրը»:

Պատվիրակների կազմով (38 հոգի) համագումարը ներկայացնում էր հիմնականում գաղթահայությունը (Կ.Պոլիս, Եգիպտոս, Պարսկաստան, Հնդկաստան, Անգլիա, Ֆրանսիա, Հս.Ամերիկա և այլն), ինչպես նաև Կովկասում ապաստանած արևմտահայ գաղթականությունը: Խորհրդակցական ձայնով մասնակցում էին հենց նոր Փարիզ ժամանած Հայաստանի Հանրապետության պատվիրակության անդամներ Ա.Ահարոնյանն ու Հ.Օհանջանյանը: Հայ ազգային համագումարի նախագահն էր Գ.Նորատունկյանը, փոխնախագահները՝ պրոֆ.Ա.Տեր-Հակոբյանն ու Ա.Չոպանյանը: Գումարել է 38 նիստ:

Համագումարը վավերացրեց նախապես պատրաստված և 1919-20-ի Փարիզի հաշտության կոնֆերանսին ներկայացված հայկական պահանջների հուշագիրը, որտեղ համառոտ շարադրված էր Հայաստանում օսմանյան վեցդարյա տիրապետության «արյունալի պատմությունը», հայերի մասնակցությունն առաջին համաշխարհային. պատրազմին Անտանտի դաշնակիցների կողմում և սրանց խոստումները՝ Հայաստանը թուրքական բռնապետությունից ազատագրելու և նրան անկախություն տալու մասին: Ըստ հուշագրի, Հայաստանը պետք է ամփոփեր հայկական յոթ նահանգները (ներառյալ Տրապիզոնը), Կիլիկիան՝ Ալեքսանդրետ նավահանգստով, Կովկասում՝ Հայաստանի Հանրապետությունը, ներառյալ Երևանի նահանգը, Լոռին և Ախալքալաքը, Լեռնային Ղարաբաղը և Զանգեզուրը, Կարսի մարզը՝ առանց Հս.Արդահանի:

Համագումարը քննարկեց, վավերացրեց և հաշտության կոնֆերանսին ներկայացրեց մի հիշատակագիր՝ Թուրքիայի և Կովկասի մեջ պատերազմի ժամանակ կոտորածների, տեղահանության և այլ աղետների հետևանքով հայ ազգի կրած վնասների հատուցման մասին, որի համաձայն այդ վնասների ամբողջական գումարը կազմում էր 19 մլրդ 982 հզ. ֆրանկ. 14 մլրդ՝ Արմ. Հայաստանում, 4,5 մլրդ՝ Արլ.Հայաստանում:

Ապրիլի 2-ի նիստում ընտրվեց նոր Ազգային պատվիրակություն (Պողոս Նուբար, Ա.Տեր-Հակոբյան, Ա.Չոպանյան, Գ.Փաստրմաճյան, Հ.Նկրուզ, Վ.Թեքեյան), որը Հայաստանի Հանրապետության պատվիրակության հետ կազմելու էր «Ամբողջական Հայաստանի պատվիրակություն» և նրա հետ ջանար «ձեռք բերել

Հուշագրով բանաձևված հայկական պահանջների գործադրությունը և պետք է հետապնդի ազգային դատին հարակից բոլոր հարցերի բարվոք լուծումը»:

Ի թիվս այլ հարցերի համագումարը զբաղվեց նաև հայկական հողերի ռազմական գրավման, Կիլիկիայի և Սիրիայի մեջ ապրող տպագիր հայերի ապահովության, Արևելյան Հայաստանի սովյալ ժողովրդի պարենավորման և այլ խնդիրներով, լսեց Ազգային պատվիրակության նախագահի և Հայաստանի Հանրապետության ներկայացուցչի զեկույցները հաշվետվության կոնֆերանսում իրենց գործունեության մասին: Վերջին նիստում համագումարը, ի լրումն պրեզիդենտ Վիլսոնին (ԱՄՆ) և պրեմիեր մինիստր Կլեմանսոյին (Ֆրանսիա), Լլոյդ Ջորջին (Մեծ Բրիտանիա) և Օռլանդոյին (Իտալիա) հղած ողջույնի ուղերձների, հատուկ կոչով դիմեց դաշնակից ազգերին, որով մեկ անգամ ևս հռչակում էր «հայ ազգի կամքը իր ազատ հայրենիքն ունենալու՝ անկախ պետության մեջ իր բոլոր հողերի միացմամբ», և խնդրում էր նրանցից «իրենց ձայնը միացնելու մերինին՝ պահանջելու համար հաշտության վեհաժողովից, որ փութացնի Հայկական հարցի լուծումը»:

Համագումարը իր պարտքը համարեց նաև «եղբայրական ջերմ ողջույններ» ուղղել Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս նրան տեսնելով «վեց հարյուր տարի ի վեր առաջին անգամ վերազարթնող հայ ազատության հրճվառիթ պատկերը», և հոտնկայս իր խորին հարգանքն ու պաշտամունքը հայտնեց «բազմաչարչար նահատակներին և այն հազարավոր մարտիկների հիշատակին, որոնք իրենց հերոսական պայքարով նախապատրաստեցին հայկական դատի հաղթանակը»:

1920-ի մայիսի 5-հուլիսի 13-ին Փարիզում տեղի է ունեցել երկրորդ համագումարը, 24 պատգամավորների մասնակցությամբ (առանձին նիստերի ներկա են եղել նաև հայ եկեղեցու ներկայացուցիչներ). կայացել է 31 նիստ: Նստաշրջանի նախագահ է ընտրվել Գաբրիել Նորատունկյանը, փոխնախագահ՝ Գրիգոր Սնապյանը: Բացման խոսքում Գաբրիել Նորատունկյանը կոչ է արել միության և համերաշխության՝ որպես Հայկական հարցի լուծման հաջողության գերագույն պայմաններ:Ողջույնի խոսք է ասել Պողոս Նուբար փաշան:

Համագումարը քննարկել է օրակարգով նախատեսված հարցերը՝ Ազգային պատվիրակության զեկուցումը, պատվիրակության բժշկական, քարոզչական, ելևմտական (ֆինանսական) և կազմակերպչական կանոնագրի համաժողովների տեղեկագիրը և Ազգային պատվիրակության վերակազմությունը:

Ազգային պատվիրակության զեկուցումն արել է Արշակ Չոպանյանը, պատվիրակությունը գործել է Հայաստանի Հանրապետության պատվիրակության հետ համատեղ. Փարիզի կոնֆերանսի մասնակից պետություններին համատեղ ներկայացրել են դիմումներ, հուշագրեր, վարել բանակցություններ, գործադրել ջանքեր «Հայոց ազգային ծրագրին իրականացման համար»: Լուսաբանվել է այն նոր իրադրությունը, որն անհուսալի է դարձրել ԱՄՆ-ի հովանավորությամբ միավորված Հայաստանի ստեղծումը (տես Հայաստանի մանդատ 1920) և ստիպել միացյալ պատվիրակությանը «ազգային պահանջները պատշաճեցնել իրերի նոր կացությանը»:

Ազգային պատվիրակությունը աշխատանք է տարել հայ-պոնտական (հունական) հարաբերություններ հաստատելու, հայ-քրդական համաձայնություն կայացնելու և այլ հարցերի ուղղությամբ: Սան Ռեմոյի կոնֆերանսում բանակցություններ են վարվել Վրաստանի և Ադրբեջանի պատվիրակությունների հետ տարածքային և այլ հարցերի շուրջը:

Մի քանի նիստեր նվիրվել են Կիլիկիայի կացությանը և ձեռնարկվելիք միջոցառումներին: Ընտրվել է հանձնաժողով Թուրքիայի հետ կնքվելիք հաշտության պայմանագրի նախագիծը ուսումնասիրելու համար: Պատրաստվել է հուշագիր, որը միացյալ (ամբողջական) Հայաստանի պատվիրակությունը ներկայացրել է դաշնակից երկրների Գերագույն խորհրդին:

Հուլիսի 3-ի նիստում գաղտնի քվեարկությամբ ընտրվել է Ազգային պատվիրակության նոր կազմ (Պողոս Նուբար փաշա. Գրիգոր Սնապյան, Լևոն Մկրտչյան և Հակոբ Նկրուզ):

Համագումարն ընդունել է ուղերձներ Հայաստանի Հանրապետության կառավարությանն ու բանակին, Կիլիկիայի հայությանը, Մերձավոր Արևելքի նպաստամատույց հանձնախմբի նախագահին (հայ ժողովրդին օգնելու համար):

* *
*

Ժողովածուում փաստաթղթերը և նյութերը զետեղված են բնագրերի լեզվով, արևելահայ գրական լեզվով փաստաթղթերը տրված են նոր ուղղագրությամբ, արևմտահայ գրական լեզվով՝ դասական ուղղագրությամբ: Պահպանվել են բնագրերի առանձնահատկությունները, խմբագրական միջամտություններ չեն կատարվել, բացառությամբ աննշան կետադրական շտկումների ու բացահայտ ուղղագրական սխալների ուղղման: Համարակալվել ու փաստաթղթերը վերնագրվել են մեծ մասամբ կազմողների կողմից, այլ դեպքերում տողատակից նշում է արվել:

Ժողովածուն տպագրվում է վեց բաժնով, որոշ բաժիններ բաժանվել են մասերի:

Յուրաքանչյուր փաստաթղթի վերջում նշված են սկզբնաղբյուրները:

Հրապարակվող փաստաթղթերը պահպանվում են Հայաստանի ազգային արխիվում և Ռուսաստանի Դաշնության պետական արխիվում:

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ
(1912-1917ԹԹ.)

N 1

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԲՅՈՒՐՈՅԻ ՆԱՄԱԿՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ԵՎ Ի ՆՊԱՍՏ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՏԻ ՌՈՒՍԱ-ՀԱՅԵՐԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԲՅՈՒՐՈ ԸՆՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12 նոյեմբերի 1912թ.
Թիֆլիս

Վեհափառ Տ՛եր,

Թիֆլիսում գումարված մի բազմամարդ ժողով, որին մասնակցում էին և մի քանի ներկայացուցիչներ Կովկասի և Անդրկովկասի հայաշատ քաղաքներից, ընտրեց մի ժամանակավոր բյուրո, ստորագրող անձանցից բաղկացած, պաշտոն տալով նրանց հրավիրել մի համագումար ազգային ժողով, իսկ մինչև այդ ժողովի գումարումը վարել ռուսահայոց օժանդակության գործը տաճկահայ դատին:

Այդ բյուրոն պատիվ ունի ուղարկելու Ձերդ վեհափառության մոտ իր անդամներից երկուսին՝ պ.պ.Հ.Առաքելյանին և Ն.Աբեղյանին, որ մի քանի կարևոր խնդիրների մասին զեկուցում տան Ձերդ ս.օծության:

Համբյուրելով Ձերդ վեհափառության ս. աջը՝

Նախագահ Բյուրոյի	Սամսոն Հարությունյան
Անդամներ	Ալեքսանդր Խատիսյան
	Հովհաննես Թումանյան
	Կոստանտին Խատիսյան
	Ալեքսանդր Քալանթարյան
	Համբարձում Առաքելյան
	Ավետիս Պողոսյան
	Նիկոլ Աղբալյան

ՀԱԱ, Ֆ.57, ց.5, գ.28, թ.7: Բնագիր: Ձեռագիր:

N 2

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ՍՏԵՂԾՈՒՄՆ ԸՍՏ ԲՅՈՒՐՈՅԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Նոյեմբեր 1912թ.

1912թ. աշնանը բալքանյան պատերազմը սկսվելուց հետո թուրքահայ ժողովրդի վիճակը նորից և բուռն կերպով հայ հասարակության զանազան խավերի մտահոգության առարկա դարձավ: Մի կողմից հնարավոր ջարդերի սպառնալիքը և մյուս կողմից՝ Թուրքիայի գործերը վերջնականապես կարգավորելու համար հրավիրվելիք միջազգային կոնֆերենցիայի վրա դրված հույսերը՝ առիթ տվին հայ մտավորականության զգայուն մասին համախմբել իրենց ջանքերը ըստ կարելույն ավելի լավ կերպով օգտագործելու հարմարավոր պատմական մոմենտը,

նամանավանդ, որ, կողմնակի կերպով, հաստատապես հայտնի էր դարձել ռուս կառավարության շատ նպաստավոր տրամադրությունը դեպի թուրքահայերի դատը: Միաժամանակ Բագվում և Թիֆլիսում միտք ծագեց հրավիրել զանազան հայաբնակ վայրերի ներկայացուցիչներից մի համագումար՝ խորհրդակցելու համար օրվա հրատապ խնդրի մասին:

Առաջին խորհրդակցական ժողովը տեղի ունեցավ Թիֆլիսում 1912թ. հոկտեմբերի վերջերին: Ժողովին ներկա էին պատգամավորներ Բագվից, Երևանից, Ախալցխայից, Նոր-Նախիջևանից, Արմավիրից, Բաքումից և այլ տեղերից, իսկ Թիֆլիսից՝ զանազան կուլտուրական հիմնարկությունների ներկայացուցիչներ: Ժողովն ունեցավ երկու նիստ և որոշեց՝ 1. հրավիրել մոտ ապագայում ավելի լայն կազմով մի նոր համագումար ըստ կարելույն բոլոր հայաբնակ կարևոր վայրերի ներկայացուցիչներից՝ ընտրելու համար մի լիազոր մարմին հայկական հարցի շուրջ աշխատելու համար և 2. դիմել ամենայն Հայոց կաթողիկոսին և խնդրել, որ նա հանուն հայության մի դիմում անի նորին մեծության ռուսաց կայսեր՝ օգնության հասնելու թուրքահայ ժողովրդին այս տագնապալից օրերում: Ժողովը մշակեց այդ մտքով մի բանաձև և հատուկ պատգամավորության ձեռքով այն ներկայացրերց վեհափառ կաթողիկոսին:

Նույն ժողովում խնդիր եղավ նաև թուրքահայերի ինքնապաշտպանության մասին, բայց մեծամասնությունը որոշեց սահմանափակվել դիվանագիտական դիմումներով:

Ընտրվեց մի ժամանակավոր բյուրո, բաղկացած 7 հոգուց՝ Ս.Հարությունյան, Ալ.Խատիսյան, Ա.Քալանթարյան, Հ.Առաքելյան, Ա.Պողոսյան, Հովհ.Թումանյան և Ն.Աղբալյան: Բյուրոն պիտի զբաղվեր ընթացիկ գործերով և պատրաստություն տեսներ հրավիրելու Թիֆլիսում նոր, ավելի բազմամարդ համագումար:

Լեո, Անցյալից... էջ 244-245:

N 3

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԻՑ

25 նոյեմբերի 1912թ.

Ձերդ Սրբություն.

Թիֆլիսի հայ հասարակության պատկանող անձանց մի խումբ, որ բաղկացած է Թիֆլիսի հայ կրթական և հասարակական այլևայլ խավերի ներկայացուցիչներից, քննության առնելով թուրքահայերի դրությունը, որ անտանելի է դարձել նրանց կյանքի, պատվի և գույքի վրա գործադրվող անընդհատ բռնությունների հետևանքով, և չտեսնելով Թուրքաց կառավարության կողմից ձեռք առնված իրական միջոցներ և երաշխիքներ, որոնք ուղղված կլինեին այդ երևույթները վերցնելու գործի օգտին և անկարող լինելով այլևս լուռ և անկարեկից լսել իրենց եղբայրների վրա կատարված այդ գազանությունների մասին, դիմում է Ձերդ Սրբության, իբրև թե՛ Ռուսաստանի և թե՛ Թուքիայի հայ ժողովրդի, նույնպես և բոլոր հայերի հոգևոր գլխին, խոնարհաբար խնդրելով դիմում անել թագավոր կայսրին, միջնորդելով Թուրքիայի հայ ժողովրդի պաշտպանության մասին տանջանքներից և իրավազրկությունից: Մենք հաստատապես հավատում ենք, որ իբրև Արևելքի քրիստոնյաների մշտական պաշտպան, նույնպես և իբրև մի մեծ պետություն, որ Բեռլինի դաշնագրով իր վրա է վերցրել Թուրքիայի հայաբնակ վիլայեթներում անհրաժեշտ ռեֆորմներ մտցնելու հոգսը, ռուսական պետությունը առանց

ուշադրության չի թողնի Ձերդ Սրբության և ի դեմս Ձեր հոտի՝ նրա հավատարիմ որդիների խնդիրքները, և իր ուժեղ հովանավորությամբ և միջամտությամբ վերջ կդնե մեր եղբայրակիցների տանջանքներին, նորից ամբողջ աշխարհի առաջ կհայտնագործե իր բարձր պատմական առաքելությունը Մերձավոր Արևելքում:

Նոյեմբերի 25-ին Թիֆլիսում կայացավ երկրորդ համագումար-ժողովը, որին ներկա էին պատգամավորներ Թիֆլիսից, Բագվից, Նոր-Բայազետից, Բաքումից, Հաշտարխանից, Հին Նախիջևանից, Շուշուց, Թիֆլիսի հայ կաթոլիկ համայնքից, նաև «Մշակի» և «Հորիզոն» խմբագրություններից: Ժամանակավոր բյուրոյի զեկուցումից հետո քննության դրվեցին միևնույն երկու խնդիրները, այն է՝ դիվանագիտական միջնորդություն և ինքնապաշտպանություն: Հարցերի քննությունից հետո ժողովը հրահանգներ մշակեց ընտրվելիք բյուրոյի համար, հանձնարարել նրան 1. Օժանդակել Նորին Վեհափառություն կաթողիկոսին իր գործունեության մեջ հայկական հարցի վերաբերմամբ, 2. Կապեր հաստատել Պոլսի, Փարիզի և ուրիշ վայրերի հայ մարմինների հետ, որոնք նպատակ ունեն աշխատելու հայոց հարցի համար, 3. Պրոպագանդի միջոցով նպաստավոր տրամադրություն ստեղծել ռուս հասարակության և վարիչ շրջանների մեջ դեպի հայոց հարցը: Գալով ինքնապաշտպանության խնդրին, ժողովը միաձայն ընդունեց նրա կարևորությունը և անհրաժեշտությունը, բայց պարտավորիչ որոշումներ չկայացրեց բյուրոյի համար խնդրի վերաբերմամբ, միևնույն ժամանակ համագումարը հանձն առավ կարիքի դեպքում նյութական օժանդակություն հասցնել բյուրոյին:

Դիմելով ընտրություններին, ժողովը վերընտրեց ժամանակավոր բյուրոյի եղած կազմը, երկու նոր անդամ ևս ավելացնելով նրանց՝ բժիշկ Կ.Ստեփանյանին և Ա.Ջամալյանին:

Լեո, Անցյալից... էջ 246-248:

N 4

ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ԶԵԿՈՒՅՑԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ՏԱՃԿԱՀԱՅԵՐԻ ՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԱՐՑՈՎ ՄԵԾ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

27 նոյեմբերի 1912թ.

Վեհափառ Տե՛ր,

Թիֆլիսում, ամսիս 23-ին կայացած գլխավոր հայաբնակ քաղաքների ներկայացուցիչների ժողովը հավանություն տալով Բյուրոյի կազմած այն հիշատակագրի ծրագրին, որը պետք է ներկայացվի Ձերդ վեհափառության կողմից եվրոպական մեծ պետություններին, և վերջնականապես մշակելով այդ ծրագիրը, հանձնեց Բյուրոյին՝ անմիջապես ներկայացնելու Ձերդ վեհափառությանը:

Միաժամանակ Բյուրոն ներկայացնում է և սևագրությունը այն հուշագրի, որ Բյուրոյիս խնդիրքով կազմել է Հայկական հարցի պատմությանը ծանոթ մի անձնավորություն և որը մշակել է, ենթարկելով մի քանի հավելումների և փոփոխությունների:

Բյուրոն պատիվ ունի ամենախոնարհաբար զեկուցել Ձերդ վեհափառությանը, որ այս հուշագիրը պետք է ներկայացվի բոլոր մեծ պետություններին, իսկ Ռուսաստանին ներկայացվելիք հուշագրի սկիզբն ու վերջը պատշաճ փոփոխության պետք է ենթարկվեն, էականը թողնելով նույնը: Նույն հուշագիրը դարձյալ պատշաճ փոփոխություններով պետք է ներկայացվի գումարվելիք կոնֆերանսին կամ կոնգրեսին:

Խոնարհաբար ներկայացնելով այս ամենը և հարցի վերջնական լուծումը թողնելով Ձեր բարձր կամքին,

Մնամք Ձերդ վեհափառության խոնարհ որդիք՝

Ս.Հարությունյան
Ա.Քալանթարյան
Հ.Առաքելյան
Ն.Աղբալյան
Կ.Ստեփանյան
Ալ.Խատիսյան

ՀԱԱ, Ֆ. 57, ց.5, գ.28, թ. 12: Բնագիր: Ձեռագիր:

N 5

ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱ ՎՈՐՈՆՑՈՎ-ԴԱՇԿՈՎԻ ՊԱՏԱՍԽԱՆ ՆԱՄԱԿԸ ՀԱՅՈՑ ԳԵՎՈՐԳ 5-ՐԴ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

22 դեկտեմբերի 1912թ.
Թիֆլիս

Ձերդ Սրբությունը հայ ժողովրդի անունից իմ միջոցով դիմեցիք, խնդրելով, որ պաշտպանություն ցույց տրվի Փոքրասիական Թուրքիայում քրդերի ձեռքով հարստահարվող հայ ազգաբնակչության և որպեսզի նա ընդունվի Ռուսաստանի հովանավորության տակ: Այս միջնորդությունը ներկայացվեց ի բարեհայեցողության Նորին կայսերական մեծության, և թագավոր կայսերը բարեհաճություն ունեցավ վերաբերվել հայ ժողովրդի վիճակին կատարյալ բարյացակամությամբ:

Այժմ կայսերական կառավարությունը առաջարկություն է արել Թուրքաց կառավարության, ցույց տալով նրան, որ մեր ունեցած տեղեկություններով հայերի դրությունը Փոքր Ասիայում վերջին ժամանակները վատացել է և առաջ է բերում արդարացի գանգատներ քրդերի կողմից եղած հարստահարությունների և անձնական ու կալվածական ապահովության բացակայության վրա, բաներ, որոնք առաջանում են վարչական անբարեկարգ դրությունից և վատ կողմից: Դրա հետ միասին, Թորքիային ցույց է տրված, որ նրա համար անհրաժեշտ է այժմից իսկ լրջորեն զբաղվել վերանորոգումներով թուրքաց Հայաստանում և լավացնել վարչության կազմը, մատնանշելով, որ քրիստոնյա հպատակների օրինավոր շահերի արհամարհումը եղել է մի շարք տարիների ընթացքում Թուրքիայի համար մշտական խռովության և բարդությունների աղբյուր նրա եվրոպական նահանգներում և, վերջիվերջո, բերել հասցրել է Թուրքիայի համար դժբախտ պատերազմին Բալքաններում նրա բոլոր հետևանքներով:

Հետևելով դարավոր ավանդույթներին և խորին զգացմունքով վերաբերվելով հայ ժողովրդի տանջանքներին, կայսերական կառավարությունը մտադիր է այսուհետև էլ ամենաբարյացակամ կերպով վերաբերվել Թուրքիայում կեղեքվող հայ ժողովրդի կարիքներին և ջանքեր գործադրել գոյություն ունեցող զեղծումները հեռացնելու և անհրաժեշտ բարենորոգումներ գործադրելու նպատակով:

Կայսերական կառավարությունը, սակայն, հենց իրենց, հայերի շահերին բոլորովին անհամապատասխան է համարում, որ Թուրքիայի հայոց հարցը քննվի պետությունների կոնցերտի կողմից առաջիկայում, բալքանյան ճգնաժամը հարթելու համար գումարվելիք կոնֆերենցիայում, որովհետև կատարյալ հիմք ունի

կասկածելու, թե եվրոպական պետությունները միակը կլինեն հայերի համար կենսական հարցի լուծման մեջ: Եվ, սակայն, այդպիսի միակամության բացակայությունը պետությունների մեջ և, դրա հետևանքով, տարաձայնությունների ծագումը կստեղծեն, ինչպես այս ապացուցել է տխուր պատմական փորձը, չափազանց բարեպատեհ միջավայր տեղական թուրք վարչության համար խուսափողական վերաբերմունք ցույց տալու դեպի հայերի դրության բարելավման գործը:

Գրավելով Ձերդ Սրբության ուշադրությունը մանավանդ վերջին հանգամանքի վրա, ես առանձնապես կարևոր կհամարեի, որ ներկա վճռական րոպեին հայերը ցույց տային առանձին զսպվածություն ու տակտ և առժամանակ հավաքական դիմումներով չբարդացնեն կայսերական կառավարության համար Թուրքահայրի վիճակի բարելավման խնդիրը:

Ես լիապես համոզված եմ, որ Ձերդ Սրբությունն իր ծերունազարդ հեղինակությամբ կկարողանաք ներգործել հայերի վրա հենց իրենց օգտի համար ցանկալի ուղղությամբ»:

Լեո, Անցյալից... էջ 249-250:

N 6

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՆՇԱՆԱԿԱԾ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ ԶԵԿՈՒՑԱԳԻՐ ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱ ՎՈՐՈՆՑՈՎ-ԴԱՇԿՈՎԻՆ*

27 դեկտեմբերի 1912թ.
Թիֆլիզ

Վեհափառ կաթողիկոսի կողմից նշանակված պատգամավորության ներկայանալը Նորին պայծառափայլություն Տ.փոխարքայի 1912թ. դեկտեմբերի 26-ին և 27-ին:

Պատգամավորներ՝ Մեսրոպ եպիսկոպոս, Բագրատ վարդապետ, Ալեքսանդր Խատիսյան և Սամսոն Հարությունյան:

Դեկտեմբերի 25-ին առավոտյան էջմիածնից հասանք Թիֆլիզ (Մեսրոպ եպիսկոպոս, Բագրատ Վարդապետ և Սամսոն Հարությունյան): Նույն օրը նամակով Մեսրոպ եպիսկոպոսը հայտնեց Տ.փոխարքայի վեհափառ կաթողիկոսի կողմից նշանակված պատգամավորության մասին, խնդրելով նշանակել ընդունելության ժամանակ ներկայացնելու Նորին կայսերական մեծության անունով մեմորանդում:

Ըստ որոշման Տ.փոխարքային բոլորս ներայացանք դեկտեմբերի 26-ին, երեկոյան ժամը 4-ին: Մեսրոպ եպիսկոպոսը մի քանի խոսքով ողջունեց Վեհափառ կաթողիկոսի կողմից, ներկայացնելով թագավոր անունով մեմորանդումը: Փոխարքան բացեց իր անունով գրած նամակը և մեմորանդումը հանձնեց Ս.Հարությունյանին՝ կարդալու բարձր: Վերջացնելուց հետո փոխարքան ասաց. «Միջոցի մասին որոշ բան չի ասված»: Հայտնվեց փոխարքային, որ նպատակն ու խնդիրը տաճկահայոց կատարյալ ապահովությունն է, պատվի, կյանքի, գույքի և ազատ քաղաքացիության, իսկ այդ իրագործելու միջոցի մասին դիվանագետները ավելի լավ կիմանային: Փոխարքան այդ առթիվ հայտնեց, որ Ռուսաստանը չի կարող այժմ մտնել Տաճկաստան և տիրել, քանի որ պայմանները նպաստավոր չեն: Փոխարքան հայտնեց, որ արդեն գրել է կաթողիկոսին պատասխան Տաճկահայոց հարցի մասին: Այդ պատասխանի պատճենը գտնվելով Կանցելյարիայում, պատվիրեց հետևյալ օրը

* Վերնագրումը փաստաթղթինն է:

կրկին ներկայանալ իրեն առավոտյան ժամը 10-ին՝ պատասխանը կարդալու: Այնուհետև խոսակցությունը հետևյալ հարցի մասին եղավ:

1. Հայերի հույսն ու սպասելիքը:* Բացատրվեց, որ ամենայն կողմի հայերի հույսն ուհամոզմունքն այն է, թե ռուսաց կառավարությունն այս անգամ լուրջ ուշադրություն կդարձնի և կբարելավի տաճկահայոց վիճակը, որ միանգամայն անտանելի է: Շեշտվեց առանձնապես փոխարքայի, նախարարապետ Կոկովցևի և արտաքին գործոց նախարար Սազոնովի բարյացակամ տրամադրությունը, հուսադրությունն ու խորհուրդները տաճկահայոց խնդրի վերաբերմամբ:

2.Տաճիկ պաշտոնյաների երկյուղը: Տաճկաստանի հայաբնակ գավառներում պաշտոնյաները վերջերս շարունակ երկյուղ են արտահայտում, թե միգուցե ռուսաց զորքը մտնի Տաճկաստան՝ հայերի վերաբերմամբ գործադրվող քրդական ու թուրքական բռնությունների առաջն առնելու համար: Այս պատճառով վալիները առայժմ նախազգուշացնում են քրդերին ու թուրքերին, որպեսզի առիթ չտան և զգույշ մնան հայերին ճնշելուց: Բնական է, այս երկյուղը ժամանակավոր կլինի և կանցնի, եթե Ռուսաց կառավարությունը ձեռնպահ մնա և ոչ մի դրական քայլ չանի տաճկահայերի պատվի, գույքի և անձի ապահովության համար:

3. Պետերբուրգի նախարարապետի և արտաքին գործոց նախարարի մոտ ուղարկվելիք պատգամավորության մասին ևս խոսվեց. այս առթիվ փոխարքան ի պատասխան հայտնեց, որ պատգամավորություն ուղարկելը նպատակահարմար կլինի գործի հաջողության տեսակետից:

Այսօրվա խոսակցությունը տևեց մոտ 50 րոպե:

Դեկտեմբերի 27-ին, առավոտյան ժամը 10-ին ներկայացանք փոխարքային: Կարդացվեց իր տված պատասխանը վեհափառին: Ապա հայտնեց, որ այդ նամակն ինքն է խմբագրել և կաթողիկոսին ուղարկելուց առաջ, հեռագրով ամբողջ նամակը հայտնել է Պետերբուրգ և այնտեղի հաճությունը ստանալուց հետո միայն ուղարկել է էջմիածին: Ավելացրեց, որ այդ կերպ «նախարարական ցենզուրայի ենթարկվեց»:

Այդ նամակի մեջ երկու որոշ կետ կա տաճկահայոց հարցի վերաբերմամբ աննպաստ.

ա. Ի նկատի ունենալով, որ եվրոպական մեծ պետությունների մեջ տաճկահայոց հարցի լուծման առթիվ այժմյան պայմաններում համաձայնություն չի գոյանալու, այդ հարցը Լոնդոնի դեսպանաժողովի խորհրդակցության նյութ չի դառալու, ուստի

բ. Կաթողիկոսը չպետք է դիմի մյուս եվրոպական պետություններին այդ խնդրով այժմ:

Նամակի ընթերցումից հետո ամենայն մանրամասնությամբ բացատրվեց փոխարքայի այն ծանր տպավորությունը, որ կունենա այդ պատասխանը ամեն կողմի հայերի, հատկապես տաճկահայերի վրա, առանձնապես այժմ, երբ հայերն առանց խտրության համոզված են, թե Ռուսաստանն անպատճառ կմիջամտի և յուր հովանավորության տակ առնելով տաճկահայերին կիրագործել տա անհրաժեշտ ռեֆորմներն իր կոնտրոլի ներքո: Շեշտվեց և այն, որ եթե տաճիկ կառավարությունը, մանավանդ հայաբնակ վիլաեթների տաճիկ պաշտոնյաները, իմանան, թե Ռուսաստանն այժմ ձեռնպահ է մնում և չի ցանկանում միջամտել, անպայման հայերի վիճակն ավելի կվատթարանա և մինչև իսկ կարող է սոսկալի հետևանքներ ունենալ: Փոխարքան մի քանի անգամ կրկնեց, որ Ռուսաստանը այժմյան րոպեն, ներկա պայմանները միայն աննպաստ է համարում գործնական քայլեր անելու համար, և այդ երբեք չի նշանակում, թե դադարում է միջամտելուց. Ռուսական կառավարությունը իր դիպլոմատական ազդարարությունները շարունակելու է:

* Այս և մյուս ընդգծումները բնագրինն են:

Այս խոսակցություններից հետո փոխարքան սկսեց գրել, փոխադարձ խորհրդակցությամբ ձևակերպելով այն գլխավոր կետերը, որոնց մասին մանրամասն բացատրություններ տեղի ունեցան: Խնդրեցինք փոխարքային, որ Ռուսաց կառավարությունը իր դեսպանի և հյուպատոսների միջոցով վերահսկողություն ունենա տաճկահայոց վրա, որպեսզի դրությունն ավելի չվատթարանա: Փոխարքան համաձայնեց և մոտավորապես հետևյալ կերպով ձևակերպեց.

«1. Կ.Պոլսում Ռուսաց դեսպանին և Տաճկահայաստանի հյուպատոսներին հրահանգ տրվի, որ շարունակեն պաշտպանել Տաճկաց կառավարության առաջ հայերին քրդական և թուրքական ճնշումներից»:

Բացատրվեց, որ նախարարապետ Կոկովցևի և արտաքին գործոց նախարարի խորհրդի հիման վրա և բոլոր կողմերի հայերի ցանկության համաձայն կաթողիկոսը նշանակեց Պողոս փաշա Նուբարին իր կողմից ներկայացուցիչ՝ եվրոպական պետությանց ներկայացուցիչների կոնֆերանսում աշխատելու Տաճկահայաստանի բարենորոգումների համար ռուսական կոնտրոլի տակ: Կաթողիկոսը դեռ հրահանգ չի տվել Նուբար փաշային, որը տեղի պիտի ունենար Ռուսաց կառավարությունից պատասխան ստանալուց հետո: Նուբար փաշան իր կողմից իր անհատական հեղինակավոր դիրքի շնորհիվ կատարել է մասնավոր դիմումներ: Իսկ պաշտոնական դիմումներ անելու համար հարկ է համարել խնդրելու հեռագրով կաթողիկոսից Ռուսաց կառավարության վերաբերմունքը, որը հարցումից անկախ պիտի հեռագրվեն նրան: Իսկ այժմ ստացած պատասխանը շատ ծանր և անելանելի կացություն կստեղծի, արդյոք, Նուբար փաշան պե՞տք է շարունակի վեհափառի կողմից եվրոպական պետությանց մոտ աշխատելը, թե՞ դադարի իր պաշտոնից. վերջին դեպքը ծանր կլինի կաթողիկոսի և տաճկահայոց համար և, անշուշտ, վերին աստիճանի խրախուսելի Տաճկաց կառավարության համար: Փոխարքան համաձայնելով այս հիմնավոր առարկությանց հետ, ձևակերպեց մոտավորապես հետևյալ կերպ.

«2. Պողոս փաշա Նուբարը նշանակված է կաթողիկոսի կողմից, հավանությամբ պատրիարքի և ազգային ժողովի, որ աշխատի եվրոպական կառավարությանց մոտ 61-րդ հոդվածի իրագործման համար՝ հայաբնակ նահանգներում ռեֆորմներ մտցնելու վերաբերմամբ Ռուսաց կառավարության նախաձեռնությամբ և նրա կոնտրոլի տակ»:

Բացատրվեց, որ Կ.Պոլսում Տաճկաց կառավարությունը, վախենալով օտար միջամտությունից հայկական հարցի առթիվ և ցանկանալով առաջն առնել այդպիսի միջամտության, ըստ իր նախնավանդ սովորության, կազմել է մասնախումբ, կոչել է ներքին գործոց նախարար Ռեշիդ բեյը մի քանի հայերին՝ որպես թե հայաբնակ գավառների վերանորոգության մասին խորհրդակցելու: Բացատրվեցին այդ կեղծ քայլի շարժառիթները: Փոխարքան գրեց մոտավորապես հետևյալը.

«3. Ներքին գործոց նախարար Ռաշիդ բեյը նշանակել է այժմ Պոլսում մի մասնախումբ, որի մեջ նախարարի նշանակումով չորս հայ ևս մասնակցում են: Այդ մասնախումբը ոչ մի վստահություն չի վայելում հայերի կողմից. դորանով Տաճկաց կառավարությունը ցանկանում է Ռուսաց միջամտության առաջն առնել»:

Շեշտվեց հետևյալ կետը, որը և գրվեց.

«4. Բոլոր հայերը, առանց կուսակցության խտրության, համաձայն են, որ Տաճկահայաստանի ռեֆորմների նախաձեռնողը լինի Ռուսաստանը, եվրոպական պետությանց համաձայնությամբ և Ռեֆորմների իրագործման կոնտրոլը պատկանի Ռուսաստանին»:

«5. Բերլինի կոնգրեսի 61-րդ հոդվածի իրագործման ու վերահսկողության հանձնելը Ռուսաստանին հաջողեցնելու համար պետք է կաթողիկոսի կողմից եվրոպական կառավարությանց մոտ պատգամավորություններ նշանակել, որպեսզի

դիպլոմատական շրջաններում տրամադրություն ստեղծվի հօգուտ ռուսական նախաձեռնության և կոնտրոլի»:

«6. Երբ որ հարմար մոմենտ կլինի, կաթողիկոսը բախտավոր կհամարի իրեն ներկայանալ թագավոր կայսեր իր հոտի՝ տաճկահայ ժողովրդի վիճակի բարելավման համար անձամբ հայցելու»:

Քանի որ փոխարքան ցույց էր տալիս բարյացակամ տրամադրություն և մի քանի անգամ ևս հայտնեց իր անձնական կարծիքը, թե կաթողիկոսն ու հայ ժողովուրդը, ինչպես և կաթողիկոսի ներկայացուցիչ Պողոս փաշա Նուբարը պետք է աշխատեն հաջողեցնել Ռուսաստանի նախաձեռնությամբ և կոնտրոլի տակ ռեֆորմներ մտցնել տալը Տաճկահայաստանում, պատգամավորությունը խնդրեց, որ, եթե հնարավոր է մի նոր լրացուցիչ նամակով հանուն վեհափառ կաթողիկոսի հայտնի փոխարքան, թե Հայկական հարցը չի փակում, այլ ընթացքի մեջ է և կարելի է նույն ուղղությամբ աշխատանքները շարունակել:

Այս կարևոր կետի առթիվ փոխարքան հետևյալ կերպով (մոտավորապես) գրեց.

«7. Նամակի (պատասխանի) տպավորությունն այն է, որպես թե հայկական նահանգների ռեֆորմների հարցը հերթական լինելուց դադարում է: Կաթողիկոսից այս կետի առթիվ հարցապնդում (запрос) ստանալու դեպքում տալ բացատրություն, որ ոչ թե Հայկական հարցը վերացվում է, այլ ընթացքի՝ իր ուժի մեջ է և կքննվի Բալկանյան հարցերի հետ միասին»:

Փոխարքան խոստացավ վերոհիշյալ յոթ կետերի մասին փոխադարձ խորհրդակցությամբ և իր ձեռքով կազմած ձևակերպումները հեռագրով հայտնել Պետերբուրգ: Խոստացավ նաև աջակցել, որ ցանկացած պատասխան ստացվի:

Այս խոսակցությունն ու խորհրդակցությունը տևեց մոտ երկու ժամ:

Վերջում պատգամավորության կողմից Մեսրոպ եպիսկոպոսը մի քանի խոսքով հայտնեց շնորհակալություն փոխարքային իր բարյացակամ վերաբերմունքի համար:

Փոխարքան պատասխանեց, որ ինքը դեպի հայերը լավ է վերաբերվում, սակայն այս դեպքում գործում է որպես ռուս պետական մարդ և անցած համարեց Լոբանովի քաղաքականությունը:

Հայտնվեց ուրախություն, որ այս կարևոր խնդրում ռուսական և հայկական շահերը միացած են: Անհրաժեշտ է հիշել և այն, որ վերոհիշյալ կետերի մասին եղած խմբագրությունները կարդաց փոխարքան երեք անգամ, իսկ երրորդ ընթերցանության ժամանակ իր գիտությամբ և թույլտվությամբ արձանագրեց նույն կետերը Բագրատ վարդապետը պատգամավորների համար:

Պատգամավորության անդամներ	Մեսրոպ Եպիսկոպոս
	Բագրատ Վարդապետ
	Ս.Հարությունյան
	Ալ.Խատիսյան

ՀԱԱ, Ֆ.57, ց.5, գ.28, թ.38-43: Բնագիր: Ձեռագիր:

N 7

ԱԶԳԱՅԻՆ Բ-ՅՈՒՐՈՅԻ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՄԻԱՑՅԱԼ ԺՈՂՈՎԻ ՀԱՄԱՏԵՂ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

27 դեկտեմբերի 1912թ.
Թիֆլիս

1. Ստանալ ս.Էջմիածնից փոխարքայի նամակի պատճենը, պատրաստել նրա պատասխանը և ուղարկել Վեհափառին: Պատասխանը երկու նպատակ պետք է ունենա. նախ՝ շտապեցնել Պետերբուրգին տված հարցումների պատասխանը և, երկրորդ, դրդել կառավարությանը ավելի որոշ կերպով արտահայտվել Ռուս[աստանի] քաղաքականության և Հայոց հարցի վիճակի մասին:

2. ա) ուղարկել անմիջապես Պողոս փաշային պատճենները առաջին՝ կայսրին ուղարկած մեմորանդումի և, երկրորդ՝ փոխարքայից ստացված նամակի: Բացի դրանից, հաղորդել նրան մանրամասնորեն Վեհափառի պատգամավորության և փոխարքայի տեսակցության մասին:

բ) Հրահանգել Պողոս փաշային, որ նա շարունակի իր մասնավոր դիմումները դիվանագիտության ներկայացուցիչներին, իսկ պաշտոնական դիմումների համար սպասի նոր կարգադրությանց:

գ) Խնդրել Պողոս փաշային, որ նա շտապեցնի մեմորանդումի մշակումը և առաքումը կաթողիկոսին:

3. Ի նկատի ունենալով փոխարքայի դրական կարծիքը՝ Պետերբուրգի քաղաքական շրջանների հայացքներին անմիջական գծով ևս ծանոթանալու մասին, խնդրել կաթողիկոսին կազմել մի պատգամավորություն և այդ նպատակով ուղարկել Պետերբուրգ:

Պատգամավորությունը պետք է բաղկացած լինի երկու հոգևորական և երկու աշխարհական անձնավորություններից: Աշխարհական պատգամավորներին կհանձնարարի Բյուրոն, երբ այդ մասին կարգադրություն կլինի էջմիածնից:

Որոշեց նաև խնդրել, որ Վեհափառը պատգամավորներին տալիք հանձնարարական նամակները նախապես ուղարկե Բյուրոյի քննությանը:

Պատգամավորներից և Բյուրոյի անդամներից ոմանք խնդրեցին արձանագրել, որ Պետերբուրգ ուղարկվելիք պատգամավորությունը կարիք չկա, որ չորս հոգուց բաղկացած լինի, բավական են երկու հոգի. մեկը՝ աշխարհական, իսկ մյուսը՝ հոգևորական:

Արձանագրեց՝

Բյուրոյի անդամ Ս.Հարությունյան

ՀԱԱ, Ֆ.57, ց.5, գ.28, թ.31: Բնագիր: Ձեռագիր:

N 8

ՄԵՍՐՈՊ ԵՊԻՍԿՈՊՈՍԸ ՌՈՒՍԱՑ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ ՀԱՅՈՑ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ ԿԱՏԱՐՎՈՂ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

8 հունվարի 1913թ.
Ս.Էջմիածին

«Թիֆլիսից վերադարձա և տանս գտա երկու նամակ Պետերբուրգից և Կ.Պոլսից:

Պետերբուրգից Ղուկասյանը և Սաղաթելյանը ներկայացրել են Կոկովցևին, սա ասել է, «Կայսրը հաճ է դեպի հայերը, ռուս կառավարությունը հայկական խնդիրը կպաշտպանե ոչ թե Լոնդրայի, այլ հետո կայանալիք կոնֆերենցիայում»: Պետք է

աշխատել Անգլիայում և Ֆրանսիայում տրամադրություն ստեղծել, մի խոսքով, կրկնել է մոտավորապես այն, ինչ որ ինձ էր ասել:

Սազոնովը հայտնել է, Տաճկաստանում հայեր չկան, նույնիսկ Վանում նոցա տոկոսը 16 է. ռուսները կամենում են այդտեղ ունենալ բուֆեր, և այդ նպատակի համար նոքա գերադասում են քրդերին: Սազոնովին այդ գաղափարը ներշնչել է Միլլերը, Թավրիզի նախկին հայատյաց կոնսուլը, որ այժմ նշանակված է Թիֆլիսում խորհրդատու փոխարքային:

Մենք մեծ աշխատանք ունենք կատարելու, Միլլերին այլ կապեր տրամադրելու, համոզելով և խնդրելով: Կաթողիկոսը եթե թույլ տա, տոներից հետո ես կգամ Թիֆլիս և այնտեղ էլ կմնամ և կաշխատեմ»:

Պոլսի նամակում պատմված է. Նուբարը յուրովի հրավիրել է Օրմանյանին,տեսակցություն է ունեցել Փարիզի տաճկաց դեսպանի հետ և խնդիր է ուղղել Քյամիլ-փաշային: Այդ բոլորը նա անում է Նորատունկյանի թելադրությամբ և խորհրդով: Նամակագրի ասելով դրությունունն այնպես է, որ նա երկուսից մեկին պիտի վաճառե, տերությունը կամ ազգը և վաճառում է ազգը. Օրմանյանը դեռ ամբաստանված, դատի տակ է, Նորատունկյանի թելադրությամբ Քյամիլ-փաշան նրան հրավիրում է, իբրև «երևելի», խորհրդակության, արհամարհելով Ազգային Ժողովի որոշումը: Երկրորդ, չորս երևելիները նախքան ժողովի գնալը եղել են Նորատունկյանի տանը, լսել են նրա ցուցումները և խորհուրդները, բայց հարկ չեն համարել պատրիարքարանին մինչև անգամ տեղեկացնելու իրենց միսիայի մասին: Նորատունկյանի ցանկությունն է, նամակագրի ասելով, տապալել ներկա վարչությունը և իր ցանկացած կազմը ստեղծել տալ, որով իր ձեռքին կունենա թե՛ ազգային վարչություն և թե՛ Պողոս-փաշային: Գրողն է Վահրամ Փափազյանը:

«Պողոս-փաշան և Հ.Առաքելյան հեռագրով խնդրել են կաթողիկոսին պատգամավորներ չուղարկել Ահարոնյանին և Սահակ եպիսկոպոս Այվատյանին: Այսօր հեռագրեցին, որ լուրն անհիմն է, որ ինքն էլ ոչ ոքի չպիտի դիմե պատգամավորության համար և պիտի հրահանգ ընդունե էջմիածնից:

Նրան և պատրիարքարանին գրվելու է երկար նամակ. 1. փոխարքայի և մեր տեսության թղթերի պատճենները պիտի ուղարկենք: 2. Նա դեռ պիտի մնա պատգամավոր, եթե քայլեր անելու լինե, համաձայնեցնե փոխարքայի յոթ կետերի սկզբունքներին, 3. Հարցնե և մեզ տեղեկացնե Արթին Յաղուբ-փաշայի համաձայնությունը:

«Իմ կարծիքն է, որ ռուսաց կառավարչական շրջաններում երկու հոսանք կա, հօգուտ և ի վնաս մեզ: Փոխարքայի տատանումները և Պետերբուրգի նամակը այդ են ապացուցում: Լրագրությունը, Կոկովցևը և փոխարքան առ երևույթ մեր կողմն են: Սազոնով, Միլլեր և այլոք՝ հակառակ: Ծանր է այդ կացությունը, բայց ոչ հուսահատական. լուրջ անձնվիրաբար աշխատանքները գուցե մի օգնություն անեն:

«... Վերջին լուրերը այնքան էլ հուսահատական չեն: Նամակներ ենք ստացել Պատրիարքից, Պողոս-փաշայից, Յութուճյան եպիսկոպոսից և մասնավոր անձերից: Ստացել ենք նաև հեռագիրներ և հարկավոր կարգադրություններն արել:

Ամսիս 2-ին Պ.Նուբարը հեռագրով խնդրեց լրացնել պատգամաորություն բացառապես Թուրքիայի հայերից. Արթին Յաղուբ փաշային, Հարություն Մաստիճյանին, Մինաս-Չերազին և Գևորգ եպիսկ. Յութուճյանին: Ի նկատի ունենալով, որ նա այդ հեռագիրն ուղարկել էր, անկասկած, նոր տեղեկություն ստացած լինելով և մեր կողմից շատ հարմար գտնելով նրա առաջարկած անձանց և որ նա խնդրում է շտապեցնել պատգամավորների կարգումը, հեռագրով և ապա կոնդակներով կատարվեց նրա ցանկությունը:

«Նուբարի նամակը շատ բան պարզեց: Նա շնորհակալություն է հայտնում կաթողիկոսին իր վրա ունեցած վստահության համար, խոստանում է չխնայել իր աշխատանքը և անում է, ինչ որ կարող է: Նա գրում է, չստանալով իր ծանոթ հեռագրի

պատասխանը, դիմել է անձամբ Իզվոլսկուն, իսկ նա անմիջապես հեռագրով հարցրել է Պետերբուրգ իր տալիք պատասխանի համար: Այդ բանը հանդիպել է բարեբախտաբար այն ժամանակ երբ փոխարքայի հարցերն արդեն Պետերբուրգ էին հասել և մինիստրությունը գիտեր մեր տեսակետն ու հայացքը: Առ երևույթ, մեր ցանկության համաձայն հեռագրել են Իզվոլսկուն, թե թող պատգամավորությունը մնա և գործե նախամտածված ծրագրով: Ուստի և Պ[ողոս] փաշան հեռագրով խնդրեց և ստացավ պատգամավորության լրացումը: Փաշան գրում է. Իզվոլսկու և Պուանկարեի խորհրդով, Լոնդոնի ժողովում չպիտի դնեն Հայկական հարցը, հայերը այդ ուղղությամբ չպիտի աշխատեն, այլ այդ հարցը կդնեն և կլուծեն եռապետյան համաձայնության անդամները, անմիջապես Լոնդոնի ժողովից հետո. հայոց պատգամավորությունը պետք ջանք և աշխատանք գործ դնե հասարակական կարծիքը և որոշ չափով նաև երեքպետյան Դաշնակցության կառավարությունների տրամադրությունը նպաստավոր կացուցանել հայերի համար: Այդ նպատակին հասնելու համար նա անձամբ պիտի գնա Բեռլին և Վիեննա և աշխատի այդ ուղղությամբ:

«Յուրուճյանը գրում է, որ Գրեյը իրեն և երկու տեղացի հայերի ընդունելություն չէ հարց հարուցանել, պիտի սպասել: Պատրիարքը Կ.Պոլսից հեռագրով խնդրել էր պատգամավորություններ չուղարկել Լոնդոն, նույնը հաստատում է նամակով: Մասնավոր նամակով ինձ գրում են. Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի Պոլսո դեսպանատներից տեղեկացրել են մոտավորապես հետևյալը. Հայոց հարցը չպիտի դնել լոնդրայում, որովհետև մյուս պետությունները այդ հարցը առևտրի առարկա կդարձնեն (ընդգծում իմն է - L.) իմանալով, որ տաճիկը չափազանց դեմ է, իրանք էլ կաշխատեն տապալել այդ հարցը, փոխարեն իրենց համար ստանալիք օգուտների:

«Մեզ համար ներկայումս մի բան պարզ է, որ ռուսական տեսակետը ընդունվել և պաշտպանվում է եռապետական համաձայնության կողմից, որ նոքա ժամանակավորապես թողնում են մեր հարցը և խոստանում են հառաջիկայում առաջ մղել Թուրքիայի դեմ, առանց մյուս երեք տերությունների: Այդ քայլի պատմական հիմունքն է 1895թ. ծրագիրը, որ դարձյալ այդ երեք տերություններն էին նախագծել:

«Պատրիարքի և այժմ նաև Եվրոպայի կարծիքն է. ամենևին չդիմել թուրք կառավարությանը, հավատ չընծայել նրա խոստումներին և որևէ բանակցությանց մեջ չմտնել նրա հետ:

«Այդ կողմից շատ հետաքրքիր է մանավանդ նամակագրի հաղորդած տեղեկությունները: Ըստ ամենայնի, վստահելի մի անձնավորություն իր նամակի մեջ համառոտակի և փաստալի նկարագրում է հարցի զանազան ֆազերը Թուրքիայի կառավարության շրջաններում: Երևի հիշում են Սոզոնովի իմ տված պատասխանը երբ նա ինձ ասաց Պետերբուրգում, թե հայերը այժմ կարող են հանգիս լինել, քանի որ մեծ վեզիրը Քյամիլն է, ասացի, որ նախկին ջարդերի մեջ Քյամիլը մեծ բաժին ունի, որ դարավոր փորձից հետո չափազանց միամտություն կլիներ որևէ տաճիկ պետական մարդու հավատ ընծայել: Նամակագիրը գալիս է մի անգամ էլ հատատելու այդ չարաբախտ ճշմարտությունը:

«Նա գրում է. երբ հայոց, ապա նաև եվրոպական լրագիրները սկսեցին հայոց հարցի մասին գրել, կառավարությունը կատաղեց, կիսապաշտոնական թերթերը սկսեցին ջարդի սպառնալիքներ կարդալ. պատրիարքը դիմեց կառաավրության, անհետևանք. ապա միջամտեց ռուսաց դեսպանությունը. թերթերի լեզուն փոխվեց և մինիստրությունը ինքը սկսեց մտածել ռեֆորմների մասին: Այդտեղ հանդես է գալիս Նորատունկյանը, որի խորհրդով հրավիրվում են հայ «երևելիները», որոնց նախապես գաղտնի խորհրդակցում է և հարկավոր հրահանգները տալիս: Ժողովուրդը իմանում է, հուզումը մեծանում է, մարդիկ են գնում Օրմանյանի և ընկերների մոտ, խնդրելով, ստիպում են ազգի իրավանց դեմ չգործեն: «Երևելիները» հրաժարվում են,

Նորատունկյանը հրավիրում է վարչության անդամներից Պալաքյան վարդապետին և Ստ.Կարայանին, սոցա համոզում է բավականանալ տաճկի տվածով, չդիմել Եվրոպա: Այդ էլ անհաջող է անցնում: Հրապարակ են հրավիրում «Բյուզանդիոն» և մի քանի թերթեր, որոնք գրում են ռուսական միջամտության դեմ, ակնհայտ վիրավորական տոնով: Աշխատանք է գործ դրվում տապալել ազգային ներկա վարչությունը և ազդել Պողոս-փաշայի վրա: Պոլսում գիտեին այդ բոլոր մեքենայությունները, զգույշ են և համերաշխ: Երանի թե տևի:

«Հանելուկ է Նորատունկյանի դերը»:

Լեո, Անցյալից..., էջ 262-266:

N 9

ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅԻ ՀԵՏ ԲՅՈՒՐՈՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ ԾԱՎԱԼՎԱԾ ԽՈՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

26 փետրվարի 1913թ.
[Թիֆլիս]

Վեհափառ Տե՛ր,

Բյուրոյիս նախագահը ամսույս 16-ին մի տեսակցություն ունեցավ Նորին մեծություն Կովկասի փոխարքայի հետ, որի ընթացքում մտքերի փոխանակություն է եղած թրքահայոց դատի առթիվ: Պարտք ենք համարում այդ տեսակցության փոխարքայի արտահայտած կարծիքները զեկուցանել Ձերդ վեհափառության ի գիտություն:

Խոսելով այն վտանգի մասին, որ կարող է առաջ գալ Բալկանյան պատերազմից հետո, երբ թուրք կառավարությունը տաճիկ գաղթականներ բերե տեղավորելու հայաբնակ վայրերում, փոխարքան հայտնել է. հայերը միանգամայն կարող են վստահել լինել ռուս կառավարության վրա, որ նա թույլ չի տա թուրք կառավարությանն այդ քայլն անելու: Միաժամանակ հայտնել է, որ նորից գրված է Թուրքիայում գտնվող բոլոր ռուս հյուպատոսներին և Պոլսի դեսպանին՝ ամեն կերպ պաշտպանել հայ տարրը Օսմանյան կայսրության սահմաններում: Խոսելով Հայոց հարցի լուծման ժամանակի մասին, փոխարքան հայտնել է, որ այդ հարցը Ռուսաստանի համար հերթական հարց է ներկայումս և Բալկանյան պատերազմի վախճանից հետո անմիջապես հրապարակ կհանվի լուծվելու համար: Այնուհետև դառնալով Ձերդ վեհափառության Փարիզի պատվիրակության, փոխարքան հայտնել է, որ նրանք կարող են մնալ իրենց պաշտոնին և առայժմ աշխատել բարյացակամ տրամադրություն ստեղծելու Մեծ պետությանց շրջանում Հայոց դատին ի նպաս, աշխատելով միանգամայն այն միտքն արծարծել, որ բարենորոգմանց հսկողության իրավունքը նպատակահարմար է թողնել Ռուսաց կառավարության: Բայց պետք է առայժմ զգուշանան որևէ հուշագիր, մեմորանդում կամ ծրագիր ներկայացնելու վեց պետություններից որևէ մեկին: Հետո նա ցանկալի է համարել մշակած ունենալու երկու ծրագիր, որոնցից մեկը ներկայացներ, հայոց մեծագույն մյուսը՝ առավելագույն պահանջները:

Վերջին կետի առթիվ,, ցավ ի սիրտ պիտի հայտնենք, որ մեր ունեցած տեղեկությանց համաձայն, Պողոս փաշա Նուբարը ռուսաց Փարիզի դեսպան Իզվոլսկուն արդեն ներկայացրել է թե՛ Պոլսի պատրիարքարանի և թե՛ Ձերդ Վեհափառության պատվիրակության մշակած ծրագիրները, թեև ոչ պաշտոնապես: Լսում ենք նույնիսկ, որ Պոլսի Պատրիարքարանը իր մշակած ծրագիրը ներկայացրել է

Պոլսի ռուսաց դեսպանին, դարձյալ ոչ պաշտոնապես նրանց կարծիքն իմանալու համար:

Այս քայլերը մենք նկատում ենք վերջին աստիճանի վնասակար Հայոց դատի հաջողության համար: Ծրագիրներ, որոնք վերջնական մշակութայն չեն ենթարկված, որոնք Ձերդ Վեհափառության սանկցիան չեն ստացած, չպետք է ընկնեին դիվանագետների ձեռքը, որովհետև ներկայումս ամենից ավելի աչալուրջ վերաբերում պահանջող կետը Դատի գործում ծրագրի կամ, որ նույնն է, հայոց պահանջների ձևակերպումն է, որի մասին, ինչպես գիտե Ձերդ Վեհափառությունը, դեռ վերջնական համաձայնության չեն եկած հայությունը ներկայացնող բոլոր մարմինները: Մենք կարծում ենք, որ թե՛ պաշտոնապես և թե՛ ոչ պաշտոնապես միմիայն մի ծրագիր կարելի է ներկայացնել դիվանագետներին, այն ծրագիրը, որի մասին տարաձայնություն չի լինի հայության տարբեր խավերի մեջ և որը ստացած կլինի Ձերդ Վեհափառության հավանությունը: Բոլոր մնացած ծրագիրները պիտի համարվեն նախագծեր, որոնք ոչինչ քաղաքական նշանակություն չունեն:

Ի նկատի ունենալով վերոգրյալը, մենք խնդրում ենք Ձերդ Վեհափառության կտրուկ միջոցներ ձեռք առնել ինքնագլուխ գործողությանց առաջն առնելու համար և միաժամանակ հասկացնել տալ ուր պետք է, թե ամեն ծրագիր, որ Ձերդ Վեհափառության սանկցիան չի ստացած, պետք է նկատվի մասնավոր գործ, որ չի արտահայտում բովանդակ հայության պահանջը:

Դրա համար Բյուրոս խոնարհաբար խնդրում է Ձեզ կարգադրել հեռագրով ստուգելու, թե, արդյոք, Պողոս փաշա Նուբարը ներկայացրե՞լ է վերոհիշյալ երկու ծրագիրները Իզվոլսկուն, թե՞ ոչ, ինչպես նաև վարվե՞լ է նույն կերպ Պոլսի պատրիարքարանը և երբ ստուգելուց հետո հայտնվի, թե իրոք արված է այդպիսի մի քայլ, անմիջապես Կովկասի փոխարքայի միջոցով հայտնել ռուսաց արտաքին գործոց նախարարություն, որ նրանց Պարիզի և Պոլսի դեսպաններին ներկայացրած ծրագիրները մասնավոր նշանակություն ունեն և Ձերդ Վեհափառության սանկցիան ստացած չլինելով՝ զուրկ են պաշտոնական արժեքից:

Միաժամանակ կխնդրենք հորդոր կարդալ պատրիարքին, պատվիրակության և նման մարմիններին, որ առանց Ձերդ Վեհափառության գիտության և հրահանգի ոչ մի պաշտոնական քայլ չարվի որևէ մեկի կողմից, որքանով այդ քայլը վերաբերում է Հայոց հարցը դիվանագիտության առաջ պաշտոնապես դնելուն: Առանձին զգուշություն այս գործում պետք է ունենա մանավանդ Պարիզի պատվիրակությունը, որովհետև Դուք եք այսօր ճանաչվում Հայոց դատի պաշտոնական իրավատերը և Ձերդ Վեհափառության պատվիրակի ամեն քայլը ուղղակի Ձեզանից է բխած նկատվում:

Բյուրոն ներկայումս զբաղված է Ձերդ Վեհափառության ուղարկած ծրագիրների քննությամբ և minimum ու maximum ծագիրների մշակությամբ:

Ձերդ Վեհափառության ամենախոնարհ որդիք՝

Նախագահ Ս.Հարությունյան
Քարտուղար Ն.Աղբալյան

ՀԱԱ, Ֆ.57, ց.5, գ.28, թ.61-62: Բնագիր: Ձեռագիր:

N 10

ՊՈՂՈՍ ՆՈՒԲԱՐ ՓԱՇԱՅԻ ՆԱՄԱԿԸ ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ* ՆԱԽԱԳԱՀԻՆ՝ ՄԵԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԾՐԱԳԻՐ ՄՇԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1 ապրիլի 1913թ.
Փարիզ

Մեծարգո Տյար Հարությունյանց՝
ատենապետ հայկական խորհրդակցության ի Թիֆլիս,

Փարիզի հայկական ժողովը ինձ հաղորդեց Ձեր 25 փետրվար ամսաթիվ նամակը, որով կկարծեի գիտցած ըլլալ, չեմ գիտեր ինչ տեսակ տեղեկությանց վրա, թե ես պատվիրակությանս և պատրիարքարանի ծրագիրները տ.Իզվոլսկիի ներկայացուցած եմ:

Սա բոլորովին անստույգ է. պատվիրակությունս որևէ ծրագիր չէ ներկայացուցած աս պատճառով, որ ծրագիրը դեռ չի վերջացված, վասն զի, ինչպես որ գիտեք, պատրիարքարանն ալ իր կողմե ծրագիր մի պատրաստած էր. մենք համաձայնեցանք, միասին աշխատելով, երկու ծրագիրները մեկի կազմելու, որպեսզի բոլոր հայ անվամբ միակ ծրագիր մի միայն ունենանք պետությանց ներկայացնելու:

Այս նպատակով պատրիարքարանը իր անդամներն մին պատվիրակ անվանած է, որուն հետ այժմ Փարիզ կաշխատակցենք երկու ծրագիրը մեկ հատի կազմելու համար: Այս աշխատությունը քիչ մի երկար պիտի տևե՝ Ամենայն պատրիարքի հետ թղթակցելու պետքին համար, սակայն կհուսանք քիչ ժամանակեն լրացնել, որ անհրաժեշտ է, քանզի դեպքերը իրարու կհաջորդեն, և մենք հույս ունենք, որ պետությունք ի մոտո պիտի կրնան հայկական հարցով զբաղվիլ: Երբ որ վերջնական ծրագիրը պատրաստվի և վերջանա, զայն վեհափառ կաթողիկոսին պիտի ներկայացնենք՝ իր հավանությունը և վավերացումը ստանալու համար, ատկե օրինակ մի ձեզ ուղարկելու հաճույքն պիտի ունենամ:

Խորին հարգանքով՝ Պողոս Նուպար

ՀԱԱ, Ֆ.288, ց.1: գ.5, թ.1: Բնագիր: Ձեռագիր:

N 11

ԹԻՖԼԻՍԻ ՀՈԳԵՎՈՐ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՄԵՍՐՈՊ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՆԱՄԱԿԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ԵՎ ԻՐ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

9 ապրիլի 1913թ.
Թիֆլիս

Վեհափառ Տե՛ր

Այս շաբաթ կաշխատեմ ֆոնդի մասնաժողով ընտրել տալ. բավական ժամանակ անցավ և բնականաբար անկախ ինձանից: Ինչպես հայտնել եմ, աշխատում էի երկու մասնաժողովները միացնել և մեկը կազմել, նոքա պետք է առանձին-առանձին ժողովվեին և մի որոշման հանգեին իմ առաջարկի նկատմամբ: Նոքա զատ-

* Նամակի հեղինակը այդպես է դիմել ազգային բյուրոյի նախագահին - Ծանոթ.կազմ.:

զատ հավաքվել են այս շաբաթ օրը և մոտենալու տրամադրություն ցույց տվել, բայց որոշ պայմաններով, հույս ունիմ մի հայտարարի բերել նոցա:

Բյուրոյի գործունեությունը շատ էլ փայլուն չէ: Սամսոնը վերջերս շարունակ բացակայում է գործով Բագու. ժամանակ չունին և մյուսները, անվերջ նիստեր և ժողովներ հազիվ են մարդիկ հավաքում: Մինչև այժմ նոքա զատ-զատ քննել են թե՛ Պարիզի և թե՛ Պոլսի ծրագրերը, բայց չեն միացրել ու իրենցը կազմել: Բագրատ վարդապետը գրում է, թե պիտի ծրագիրը թարգմանեն ռուսերեն և այն էլ շուտով, երբ պատրաստ չի, ինչպես կարող են թարգմանել: Հնարավոր չափով կհետամտեմ: Վերադարձնում եմ դիվանիդ ուղարկած ծրագիրը. այստեղ արդեն առաջուց ստացվել էր մի օրինակ:

Տեր Սարգսին եմ հանձնարարել Վարդանյանին ինձ մոտ հրավիրելու երկու եղբայրներով բացակա էին, մեկը նոր եկել է, հետը կխոսեմ:

Փոխարքայի առողջության մասին ստացված տեղեկությունները լավ են, ես անցյալ օրը հեռագրեցի, բայց պատասխան չունիմ:

Ես չէի կարծում, թե թույլ կտանք Սունդուկյանի կնոջը թաղել վանքի բակում, որը կորցրեց իր նշանակությունը և դարձավ հասարակաց գերեզմանատուն: Չորս մարդ էլ կան թաղված, երևի նոցա կանանց էլ պիտի թույլ տանք, օրինակ՝ Իզմիրով, Աբ.Յովհաննիսյան, Ալխազով և Խատիսյան: Գուրգենբեկովի և Սունդուկյանի կնոջ թաղման թույլտվությունը ինձ համար անհաճելի էր և պարտք համարեցի գրել Ձեզ:

վեհափառ տեր, կանգնած եմ մի մեծ դժվարության առաջ, որ անհրաժեշտ եմ համարում ամենից առաջ Ձեզ գրելու: Առաջնորդի դիրքը և դրա հետ միացա գործի օգուտը, պահանջում են այցելել հայոց և պետական դպրոցները, պաշտոնատար և մասնավոր կարևոր անձանց: Ամեն մի այցելություն, եթե մի ժամից ավել է, նա նստում է 9 ռուբլի (կարետ-5+3ռ., 1ռ.՝կառապան, 1-50 կոպեկ՝ ուղեկցող քահանայի կառք), որ անհնար է հոգալ առաջնորդական 250ռ. ամսական ռոճիկով, եթե ամսական առնվազն տասն անգամ տանից դուրս գալու լինի: Մտադիր եմ թույլտվություն խնդրել և գնել նոր կարետ, քանի որ այստեղինը տարվել է: Վեհափառությանդ հրամանով և (կամ) սեփական ձիեր պահել և (կամ) պայմանավորվել մասնավոր կառապանի հետ և ամեն անգամ բերել տալ նրա ձիերը:

Հենց որ ֆոնդի մասնաժողովը իմ ուզած ձևով կազմակերպեմ, անմիջապես գնալու եմ Հաղպատ և Սանահին վանքերը և նոցա նորոգությունը ձեռնարկեմ, հույս ունիմ ինձ ստանալ նաև մասնավոր օժանդակություն:

Եթե վեհափառությանդ դեռ չեն տեղեկացրել, հարկավոր եմ համարում գրելու, որ Պետերբուրգից գրում են, որ Ջատկական տունին վեհափառությունդ կստանանք շքանշան. շքանշանի են առաջարկված նաև Ներսես և Մխիթար եպիսկոպոսները:

Մաղթելով ի համբույր Աջոց
հոգևոր տյարդ խոնարհ սրտե
Մեսրոպ

ՀԱԱ, Ֆ.57, ց.5: գ.57, թ.1 հակ.: Բնագիր: Ձեռագիր:

N 12

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՆԱՄԱԿԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ՏԱՃԿԱՀԱՅԵՐԻ ՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԿԱՅԱՑԱԾ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

1 մայիսի 1913թ.

Վեհափառ Տե՛ր,

Այս գրաբեր. բժ. Հակոբ Ջավրիյանը, որ պատիվ կունենա ներկայացնելու Ձերդ Վեհափառության, նոր է եկել Պոլսից, շատ մոտ է տաճկահայերի խնդրի հետ, կարևոր տեղեկություններ է բերել և քո խորհուրդով է, որ անպատճառ գա, ներկայանա Ձեզ և անձամբ զեկուցանե Ձեզ բոլոր մանրամասնություններով այն խնդրի մասին, որը այժմ դարձել է Ձերդ Վեհափառության մտահոգության առանձին առարկա: Մի քանի օր սրանից առաջ մենք տեսակցություն ունեցանք գեն. Շատիլովի հետ ինքնապաշտպանության համար, որովհետև երկրում* դրությունը հայերի շատ վտանգավոր է, երկյուղ կա մարտերի: Գեն. Շատիլովը այսօր գնում է Բաթում փոխարքայի հետ տեսնվելու և խոսելու այդ խնդրի մասին: Երեկ Մեսրոպ Սրբազանն էլ հեռագրով հրավիրվեց Բաթում կոմսի անունից: Մեսրոպ Սրբազանը ևս այսօր գնում է Բաթում: Երբ նրանք վերադառնան և մի քանի հարցեր կան պարզելու, այդ մասին գրավոր կտեղեկացնենք Ձեզ կամ ներկայացուցիչներ կուղարկենք զեկուցանելու: Բարենորոգումների ծրագրի մասին կտեղեկանաք, Վեհափառ հայր, որ Պոլսի ռուսաց դեսպանի առաջարկությամբ պատրիարքարանը արդեն ներկայացրել է ծրագիր, որ պետք է արդեն ուղարկված լինի Պետերբուրգ ոչ պաշտոնական ձևով: Այս հանգամանքը փոքր ինչ փոխում է այն ընթացքը կամ ձևը, որ առաջ էր մտածվում: Եթե կանգնենք այն տեսակետի վրա, որ պաշտոնապես մի ծրագիր պետք է լինի և որի մասին պետք է լինի և Ձերդ Վեհափառության սանկցիան, հետևապես երբ ծրագիրը արդեն ընդունված կհամարվի, Դուք մի առանձին գրությամբ Սազոնովին փոխարքայի միջոցով կտաք Ձեր սանկցիան այդ ծրագրի մասին և Պողոս փաշային էլ կիրահանգեք պաշտպանել այդ ծրագիրը: Այսպես է Բյուրոյի կարծիքը և այս մասին Ձերդ Վեհափառության կներկայացվի զեկուցումն գրավոր, կգան ներկայացուցիչներ: Բայց նախապես պետք է ստուգվի և Ձեր ձեռքում լինի պատրիարքից պաշտոնական տեղեկություն, որ ծրագիրը ներկայացված է:

Մի քանի օր սրանից առաջ ուղարկեցի Բագրատ Հայ Սուրբին մեր մշակած ծրագիրը բարենորոգումների, որը իսկապես պատրիարքարանի ծրագիրն է՝ մասամբ փոփոխված: Այսօր ուղարկում եմ Բագրատ Հայր Սուրբին և ռուսերեն թարգմանությունը Ձերդ Վեհափառության ներկայացնելու համար:

Եթե ծրագիրը ներկայացված կհամարվի, ուրեմն այս աշխատանքը կծառայվի նյութ, երբ կոնֆերենցիայում հարց լինի փոփոխությունների մասին:

Մնամ Ձերդ ս.Օծության ծառա և խոնարհ որդի

Սամսոն Հարությունյան

ՀԱԱ, Ֆ.57, ց.5: գ.57, թ.7-8: Բնագիր: Ձեռագիր:

N 13

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ՆԱՄԱԿԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԴԻՎԱՆԻՆ՝ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԱՄՆԵԼՈՒ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

9 մայիսի 1913թ.

* Արևմտահայաստանում: Ծանոթ. կազմ.:

Բյուրոն ստացել է այն գրությունները, որ ուղարկել ենք ապրիլի 30-ին հմ. 704 և մայիսի 1-ին հմ- 705 և 706:

Նորին ս.Օծությունը հարկ է համարել հարցնել Բյուրոյի կարծիքը թե՛ այն տարածայնությունների մասին, որ ծագել են Կ.Պոլսի պատրիարքարանի և Պողոս փաշայի մեջ և թե՛ այն փոփոխությունների մասին, որ արել է ռուսաց դեսպան պ.Գիրսը պատրիարքարանի ծրագրի մեջ: Բյուրոն մեծ ուշադրությամբ ծանոթացավ հիշյալ գրությունների հետ և երկար խորհրդակցություններից եհտո եկավ միաձայն հետևյալ եզրակացության:

1. Հանուն հայ ազգի՝ մեծ պետություններին ներկայացվելիք ծրագիրը պետք է մի հատ լինի:

2. Ի նկատի առնելով, որ Պոլսի պատրիարքարանի ծրագիրը արդեն ստացել է ընթացք, մատուցվել է պ.Գիրսին, և վերջինս ուղարկել է Պետերբուրգ ռուսաց կառավարությանը, և որ այդ ծրագիրը այն փոփոխություններով և ուղղումներով հանդերձ, որ արել է պ.Գիրսը, ըստ էության համանման Պողոս փաշայի պատգամավորության մշակած ծրագրին, - պատրիարքարանը և պատգամավորությունը պետք է գործեն այդ ծրագրի սահմաններում:

3. Եթե ռուսաց կառավարության կողմից նոր ուղղումներ և հավելումներ կատարվեն ծրագրի մեջ, այդ ուղղված ծրագիրը պետք է համարել միակը և վերջնականը:

4. Թեև Պոլսի սրբազան պատրիարքի և Պողոս փաշայի վերջին գրություններից երևում է, որ ս.Գիրսի կատարած ուղղումներով պատրիարքարանի և Պողոս փաշայի մեջ եղած վիճելի հարցերը ծրագրի մասին սպառված պետք է համարվեն, այնուամենայնիվ, Բյուրոն անհրաժեշտ է համարում հանուն գործի վեհության, որ Նորին ս.Օծությունը՝ Ամենայն հայոց կաթողիկոսը, իր հեղինակավոր հայրապետական խոսքով հորդորի թե՛ պատրիարքին՝ և թե՛ Պողոս փաշային, որ նրանք իրենց համազգային, ծանր ու պատասխանատու գործունեությունը, որը տանում են մեծ եռանդով, կատարեն ամենայն համերաշխությամբ, որը հաջողության ամենագլխավոր պայմաններից մեկն է:

Բյուրոն խնդրում է դիվանին այս բոլորը զեկուցանել Նորին Վեհափառությանը:

Վերջին օրերս կատարված մի քանի քաղաքական անցքեր, ինչպես է Անգլիայի և Տաճկաստանի մեջ կայացած համաձայնությունը, որով Անգլիան ստանալով մի քանի շահավետ պայմանագրեր Տաճկաստանից, ապահովեցնում է նրա գոյությունը և ամբողջությունը 40 տարով, որը կապել են Անգլիան և Գերմանիան նոր Տաճկաստանի մասին, որոշելով ազդեցությունների շրջաններ իրենց համար Տաճկաստանի սահմաններում, - կարող է վատ հետևանք ունենալ մեր դժբախտ ազգի խնդրի լուծման համար: Այնուամենայնիվ, չպետք է վհատվել և մեր եռանդը հենց ներկա պայմաններում պետք է կրկնապատկել, որպեսզի այս պատմական րոպեն տա մեր սպասելի արդյունքը:

Հարգանքով նախագահ Բյուրոյի Ս.Հարությունյան

Հ/գ. Բյուրոն խնդրում է, որ էջմիածնում պահված տեղեկությունները, եթե արգելք չկա հաղորդելու, շուտ հաղորդել, որպեսզի Բյուրոն իրազեկ լինի և իր պարտականությունը ժամանակին կատարի: Ս.Հարությունյան

ՀԱԱ, Ֆ.57, ց.5: գ.56, թ.17-18: Բնագիր: Ձեռագիր:

N 14

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԲԱԳՐԱՏ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՆԱՄԱԿԸ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ՝ ՓՈԽԱՐՔԱՅԻՆ ՈՒՂԱՐԿՎԵԼԻՔ ՆԱՄԱԿՈՒՄ ԲԱԼԿԱՆՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ (1912-1913ԹԹ.) ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ ՀԱՅԱԲՆԱԿ ԲՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՑՎԱԾ ԼՈՒՐԵՐԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ ԽՆԴՐԱՆՔՈՎ

23 դեկտեմբերի 1913թ.
Թիֆլիս

Հարգելի պ.Սամսոն Հարությունյան,

Հեռագիր ստանալով էջմիածնից, մնացինք ևս երկու օր Թիֆլիսում, ենթադրելով, կարող է նոր կարգադրություն լինել. ստացանք Ձեր անունով նամակը, որի հետ փոխարքայի նամակի պատճենն էր: Ուղարկում ենք այդ գրության պատճենը: Խնդրում ենք գրության պատասխանը գրել հանուն տ[իար] փոխարքայի, համաձայն Վեհափառի ցանկության, ինչպես և որոշվեց Ժողովում: Գրելու կետերը Ձեզ լավ հայտնի են արդեն: Ցանկալի է հարմար տեղերում շեշտել հետևյալ երկու կետերը ևս:

1. Հաստատ տեղեկություններ կան, որ [Բալկանյան] պատերազմից անմիջապես հետո եվրոպական Թուրքիայից շատերն իրենց կամքով և մասամբ էլ տաճկաց կառավարության դրդմամբ ու կազմակերպված գալու են տաճիկներն ու բնակվելու են հայաբնակ մահմեդականությանը զորեղացնելու մտադրությամբ, անշուշտ, զգուշությամբ:

2. Գարնան բացվելուն պես սկսվելու են քրդական ավազակային ասպատակությունները, որոնց մասին լսվում են, թե կառավարության տաճիկ պաշտոնյաներն ու քրդական ավազակներն ու համադիե ծիավորների գլխավորները գաղտնի խորհրդակցություններ են անում: Տաճկաց կառավաությունն այսպիսի տակտիկային հետևել է միշտ, այժմ ևս նույնն է անում:

Պատասխան նամակի գլխավոր կետերն, երևի, այն կլինի, ինչ խոսակցություն որ տեղի ունեցավ փոխարքայի մոտ:

Մենք այսօր ճանապարհ ընկանք դեպի էջմիածին: Մի պատճենը հանձնեցինք պ.Ալեքսանդր Խատիսյանին:

Հաճեցե՛ք մի երկտողով հայտնել, արդյոք ե՞րբ պատրաստ կլինի պատասխանը, որպեսզի զեկուցանեմ Վեհափառ կաթողիկոսին:

Ընդունեցե՛ք իմ և Մեսրոպ Սրբազանի ողջույնները:

Շնորհավոր Նոր տարի:

Խորին հարգանքով Բագրատ վարդապետ

ՀԱԱ, Ֆ.57, ց.5, գ.28, թ.34-35: Բնագիր: Ձեռագիր:

N 15

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ՆԱՄԱԿԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ՀԱՅ ԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻ ՆԵՐՄԱՆ ՀԱՐՑՈՎ ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅԻ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

16 մարտի 1914թ.

Վեհափառ Տե՛ր,

1907 թվականից սկսած մինչև օրս շարունակվում են բազմաթիվ հայեր ենթարկվել քրեական պատասխանատվության, իբր դաշնակցություն կուսակցության պատկանյալ. շատ-շատերը դրանցից մեղադրվում և ենթարկվում են պատժի մինչև տաժանակիր աշխատանքը, թողնելով իրենց հետևից դժբախտացած ընտանիքներ, երբեմն կատարյալ քաղցածության մեջ: Այս հետևանքները սկսեցին շնորհիվ մի թյուրիմացության, որ իբր այդ կուսակցությունը հակառուսապետական ձգտումներ ունի, այնինչ կուսակցությունը կազմակերպում է [գործունեություն] թուրքահայերի հալածանքների և կոտորածների դեմ, իսկ 1900-10 թվականներին նա մասնակցեց Կովկասի հայերի ինքնապաշտպանական գործում՝ ընդդեմ տեղական թուրքերի արյունահեղ բռնությունների: Այս բոլորը իբր ճշմարտություն պարզվեց և կառավարությանն ասվեց, երբ մոտ 160 հայեր դատվում էին իբր դաշնակցականներ Սենատի առանձին ատյանում: Կառավարության հայացքը ավելի պարզ արտահայտվեց 1913 թվին այն բարձրագույն զեկուցման մեջ, որը Կովկասի փոխարքան ներկայացրեց թագավոր կայսրին, անվանելով դաշնակցական պրոցեսը «պուֆ», այսինքն՝ իբր մի շինծու բան: Այդ հայացքը բարձր կառավարչական շրջանում պետք է ընդհանրացած համարել և այն աստիճանի զորեղ, որ արդարադատությա նախարար Շչեգլովիտովի նախարարության ժամանակ սկսվեցին հալածանքներ: Ի պատասխան Ձերդ Վեհափառության դիմումի Ձեր Պետերբուրգում գտնված ժամանակ...*, այլ հայտնեց, որ հնարավոր է գտնում բարձրագույն ներումն մեադրյալների միայն մի քանի ժամանակից հետո, որովհետև Սենատի վճիռը նոր է կայացել: Այդ, ի նկատի առնելով թե՛ մեղադրյալների և թե՛ նրանց ընտանիքների ծանր դրությունը, արդյոք, ժամանակ չէ՞, որ Վեհափառ Տե՛ր, դուք նորից մի դիմումն անեիք Կովկասի փոխարքային և արդարադատության նախարարություն, որ նրանք բարեխոսեին մեր ողորմած կայսրի մոտ և Ձեր անունից խնդրեին ընդհանուր ներումն, դադարեցնելով ընդմիշտ բոլոր գործավարությունները դաշնակցության վերաբերյալ:

Ժամանակը շատ հարմար է թե՛ ընդհանուր քաղաքական տեսակետից և թե՛ շնորհիվ այն հանգամանքի, որ Կովկասի փոխարքա կոմս Վորոնցով-Դաշկովի բարիությունը դեպի հայերը և նրա հայացքը այդ խնդրի առթիվ միանգամայն շատ նպաստավոր են: Մոտ ապագայում հանգամանքները կարող են շատ փոխվել և դժվարացնել նույնիսկ հարցի հարցումն

Բացի գրավոր դիմումն, Վեհափառ Տե՛ր, խնդրի հաջողության համար շատ կարևոր է, որ Դուք Պետերբուրգում ներկայացուցիչներ ունենաք, որոնք կարողանան ճշգրիտ պարզելու խնդիրը, իրերի դրությունը, և կենդանի խոսքով նպաստավոր տրամադրություն ստեղծեն:

Այս տեսակետից նպատակահարմար կլինի ուղարկել Պետերբուրգ Մեսրոպ եպիսկոպոսին, որը նշանակելը հաճելի կլինի և փոխարքային, լիազորել նույնիսկ և պ.Մ.Պապաջանյանին, որ երկուսը միասին աշխատեն: Հոգևորականի ներկայանալը մեր կողմից բարձր կառավարչական շրջաններում շատ մեծ նշանակություն կունենա և առանց այդ միջոցի գուցե հաջողության հույսերը որոշ չափով թուլանան:

Ազգային բյուրոն, ի նկատի առնելով այս բոլորը և քաջ իմանալով, որ Ձերդ Վեհափառությունն արդեն շատ մոտ է և Ձեզ համար մտահոգության առարկա է թե՛ մեղավորների և թե՛ նրանց ընտանիքի դրությունը, դիմում է Ձեզ և որդիական համեստությամբ խոնարհաբար խնդրում է, որ Ձերդ ս.Օծությունը չմերժե ամենակարճ ժամանակաշրջանում դիմում անել Կովկասի փոխարքային՝ կոմս Վորոնցով-Դաշկովին և արդարադատության նախարար Շչեգլովիտովին, որ նրանք թագավոր կայսրից ընդհանուր խնդրեն, և տնօրինեք ուղարկելու Մեսրոպ Սրբազանին Պետերբուրգ՝ աշխատելու այդ խնդրի մասին պ.Պապաջանյանի հետ միասին: Ձեր ուղարկելիք խնդրագրերի սևագրությունը կստանաք միաժամանակ այս նամակի հետ:

* Մեկ բառ՝ անընթռնելի (հավանաբար «չ՛խոսեցին»):

Ավելորդ չենք համարում հայտնել Ձեզ, Վեհափառ Տե՛ր, այս մասին փոխարքայի հետ արդեն խոսված է, երբ Մեսրոպ և Բագրատ Սրբազանները և պ.Ս.Հարությունյանը Ձեր հանձնարարությամբ վերջին ժամանակ ներկայացան փոխարքային և նա՝ փոխարքան, հայտնեց, որ եթե Ձեր կողմից դիմումն լինի, պատրաստ է Ձեր խնդիրը կատարելու:

Նախագահ Բյուրոյի

Անդամներ

ՀԱԱ, Ֆ.227, ց.1, գ.599, թ.1-2: Պատճեն: Ձեռագիր:

N 16

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԴԻՎԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊԵՏԴՈՒՄԱՅԻ ԱՆԴԱՄ Մ.ՊԱՊԱՋԱՆՅԱՆԻՆ՝ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՋԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ԴԻՄՈՒՄԻ ՄԱՍԻՆ

23 մարտի 1914թ.
Ս.Էջմիածին

Ի նկատի ունենալով ռուսաց կառավարության այժմյան լավ տրամադրությունը, որ արտահայտվեց տաճկահայոց խնդրի առթիվ և հատկապես պ.փոխարքայի լավ վերաբերմունքը, ի նկատի ունենալով նաև այն, որ վերջերս մի քանի աքսորականներին (դաշնակցականների դատի առթիվ) ներել և թույլ են տվել վերադառնալ Կովկաս (բժիշկ Մ.Մուրադյանին, Ս.Եդիգարյանին, Շուշվա քահանաներին), վերջերս մի քանի շրջաններու մեջ էլ դրվեց, որ պետք է աշխատել, միջնորդություն հարուցանել դաշնակցության գործի առթիվ բազմաթիվ աքսորվողների ներման համար:

Այս խնդրի առթիվ խոսվել է նաև Կովկասյան փոխարքայի և նրա օգնական Պետերս(ը)նի հետ: Հունվար(ի) 26-ին, երբ վեհափառ Հայրապետի կարգադրությամբ Տեր Մեսրոպ Եպիսկոպոսը, երդվյալ հավատարմատար պ.Սամսոն Հարությունյանը և ես ներկայացանք փոխարքային եկ.-ծխական դպրոցների ուսուցիչներից բարեհուսության վկայություն պահանջելու հարցը վերացնելու առթիվ և հանձնեցինք Նորին ս.Օծության պաշտոնական գրությունն այդ հարցի մասին: Խոսակցություն եղավ նաև աքսորված, բանտարկված և փախած մարդոց մասին դաշնակցության գործի առթիվ: Փոխարքան ինքնաբերաբար իր կողմից հարց բարձրացնելն անհարմար համարեց գործի հաջողության տեսակետից և ավելի նպատակահարմար գտավ վեհափառ Հայրապետի դիմումը իրեն և արդարադատության նախարարին այդ խնդրով:

Տփխիսի բյուրոն Սամսոն Հարությունյանի նախագահությամբ դիմել է վեհափառ Հայրապետին, խնդրելով այդ դիմումը կատարել:

Աղգիս վեհափառ Հայրապետի հրամանով դիվանս ներփակյալ ուղարկելով Թիֆլիսից ստացած դիմումի պատճենները (փոխարքայի և արդարադատության նախարարի անունով), խնդրում եմ Ձեզ նախ՝ բարեհաճել խորհրդակցել այդտեղ վստահելի, ծեռնհաս, խնդրին ծանոթ անձնավորությանց հետ, արդյոք վեհափառ Հայրապետի այսպիսի դիմումը հավանաբար կարող է մի որևէ հաջողություն ունենալ, թե ոչ, երկրորդ՝ եթե հնարավոր և նպատակահարմար կհամարեք,զգուշությամբ տեղեկանալ արդարադատության նախարարի կամ նախարարության ազդեցիկ անդամի տրամադրության մասին (зондировать почву) և երրորդ՝ բարեհաճեցեք,

որչափ հնարավոր է շուտով, վերախմբագրել տալ, այն էլ անհրաժեշտ կհամարեք, հայտնի փաստաբաններին:

Ներփակել գրությունները և վերադարձնել:

[Կաթողիկոսական դիվան]

ՀԱԱ, Ֆ.57, ց.5, գ.61, թ.26-27: Բնագիր: Ձեռագիր:

N 17

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԴԻՎԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՆ՝ ՀԱՅ ԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻՆ ՆԵՐՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

31 մարտի 1914թ.
Ս.Էջմիածին

Ազգիս Վեհափառ Հայրապետը պատվիրեց դիվանիս գրել Ձեզ հետևյալը, ի պատասխան Բյուրոյի ամսույս 16-ի գրության, որ վերաբերում է դաշնակցական գործի առթիվ մեղադրվողների և դատապարտվածների խնդրին:

Ինչպես Ձեր գրության մեջ հիշում եք, դեռ 1912 թվի հունիսին Վեհափառ Հայրապետը Պետերբուրգում արդարադատության նախարար Շչեգլովիտովին այցելելիս, ի նկատի ունենալով բազմաթիվ բանտարկյալների, աքսորվածների ընտանիքների դիմումները և նրանց թշվառ ու ծանր կացությունը, անձամբ խնդրեց նախարարին զիջողաբար վերաբերվել, ազատել որոնց կարելի է և կամ թեթևացնել պատիժները, միջնորդեց նաև Շուշվա քահանաների համար, որոնք բանտարկված և կարգալույծ էին եղած և որոնց համար Թիֆլիզի Դատաստանական պալատն ևս միջնորդել էր: Նախարարը պատասխանեց վեհափառին, որ Շուշվա քահանաների գործի հետ կծանոթանա և կարգադրություն կանի, մինչև իսկ խնդիրը հիշեցնելու համար յուր ցանկությամբ նշանակվեց երդվյալ հավատարմատար պ.Ս.Սարիբեկյանը, որը ներկա էր այդ խոսակցության ժամանակ Վեհափառ Հայրապետի շքախմբի անդամների հետ միասին: Իսկ Դաշնակցության գործում մեղադրվածների համար նախարարը վաղաժամ համարեց միջնորդություն հարուցանելը:

Այս տարվա հունվարի 16-ին Տ.փոխարքայի և նորա օգնական Պետերսոնի հետ ունեցած Ձեր խոսակցությունն իմ ներկայությամբ, վերադարձիս զեկուցի մանրամասնաբար Վեհափառ Հայրապետին. առանձնապես խնդրեցի ուշադրություն դարձնել փոխարքայի և նրա օգնական հայտնած այն կարծիքի վրա, թե միջնորդությունը հարուցանելու միակ նպատակահարմար միջոցը Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից դիմում անելն է իրեն (փոխարքային) և արդարադատության նախարար Շչեգլովիտովին, որի հիման վրա ինքը կմիջնորդի ուր հարկն է: Վեհափառ Հայրապետը լսելով զեկուցումս և, ի նկատի ունենալով կառավարության այժմյան տրամադրությունն ու պայմանները, սկզբունքով ընդունեց դիմելու անհրաժեշտությունը, միայն հիշեց, որ խմբագրած գրությունները կուղարկվեն Պետերբուրգ պ.Միքայել Պապաջանյանին՝ այնտեղ ձեռնհաս շրջանների կարծիքն ևս իմանալու, ինչպես Դուք հայտնեցիք ինձ Թիֆլիզում, դիմումները վերջնականապես խմբագրելու համար, որի մասին ժամանակին զեկուցել եմ Վեհափառ Հայրապետին:

Նորին Վեհափառությունը ստանալով սույն մարտ 16 թվակիր Ձեր նամակը և ի նկատի ունենալով այս գործի չափազանց ծանրակշիռ և լուրջ լինելը,* անհրաժեշտ համարեց Պետական դումայի անդամ պ.Միքայել Պապաջանյանի միջոցով նախապես իմանալ Պետերբուրգի ձեռնհաս և գործին ու դատավարությանն ըստ ամենայնի ծանոթ անձանց կարծիքն ու տրամադրությունն ևս, որի համար ուղարկվեց նորան նաև փոխարքայի և արդարադատության նախարարի անունով խմբագրած գրությունների պատճենները:

Այժմ Վեհափառ Հայրապետը սպասում է այդ պատասխանին, որից հետո միայն դիմելու է Տ.փոխարքայի և նախարար Շչեգլովիտովի միջոցով՝ թագավոր կայսեր ողորմածությունը խնդրելու:

Դիվանապետ Բագրատ եպիսկոպոս

ՀԱԱ, Ֆ.227, ց.1, գ.595, թ.3-4: Բնագիր: Ձեռագիր:

N 18

ՄԱՏԹԵՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՆԱՄԱԿԸ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ՆԱԽԱԳԱՀ Ս.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ՝ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԻՐ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2 ապրիլի 1914թ.
Տփխիս

Մեծարգո պ.Սամսոն Հարությունյանց,

Երեկ կեսօրին Բագրատ եպիսկոպոսից նամակ ստաա, որ իմիայլոց գրել էր դաշնակցականների գործի առթիվ,խնդրելով Ձեզ մոտ կարդալ. բայց որովհետև Դուք մեկնել եք Դիլիջան, պարտք եմ համարում նամակի այդ կտորը արտագրել և ուղարկել Ձեզ ի տեղեկություն. -

«Դաշնակցկանների համար դիմումը Վեհափառն ընդունել է սկզբունքով. միայն պատվիրեց նախ գրել Պետերբուրգի պ.Միքայել Պապաջանյանին՝ ձեռնհաս մարդկանց կարծիքն ևս իմանալու, зондировать почву, որ համարեց անհրաժեշտ: Այդտեղ խմբագրած գրությանց պատճենները ևս ուղարկվեին, որ ցույց տա հայտնի փաստաբաններին (..., Корабчевский են): Գիտես, որ Վեհափառը զգույշ է և մտածում է այնպիսի քայլ անել և այն ձևով, որ արդյունք ունենա: Երևի մոտ ժամանակներս այդ դիմումը կհաջողվի. այնուհետև կգրվի նաև պատրիարքին ինչ որ անհրաժեշտ է, որ այնտեղից ևս դեսպան Գիրսի միջոցով աշխատի: Գրելուց հետո արդեն ամեն կերպ պետք է աշխատել հաջողացնել»:

Երկրորդ նամակում հայտնում է, որ Ձեր հեռագիրը ստացել և զեկուցել է Նորին Սրբության, որն ասել է. «Խնդիրը լուրջ է, պետք չի դիմել միայն դիմած լինելու համար կամ ձևի համար այլ պետք է հաջողության մասին ևս մտածել և ամեն ինչ նախատեսել»:

Առիթից օգտվելով, հարկ եմ համարում իմ դիտողությունն անել դաշնակցականների գործի դիմումի համար. փոխարքան անշուշտ կկամենա դաշնակցականների գործը մաքրել և ներումն խնդրել, սակայն կառավարական շրջանները ինչպե՞ս կնայեն այդ խնդրի վրա. մի ազգի քաղաքական անլեգալ կուսակցության անդամներին ներումն շնորհելը առիթ չի՞ դառնալ մտածելու մյուս ազգությունների և բուն ռուս անլեգալ կուսակցությունների անդամների համար էլ ներումն պահանջել, և կառավարությունը կարո՞ղ է անտես առնել մի այդպիսի պահանջ, առանց իր դեմ գրգռելու թե՛աջակողմյաններին և թե՛ ձախկողմյաններին, և

* Ընդգծումն բնագրինն է:

* Մեկ անուն՝ անընթեռնելի:

եթե կառավարությունը վերջին հանգամանքն ի նկատի առնի և ընդհանուր ներումն էլ անկարելի համարի (որ շատ հավանական է), արդյոք դաշնակցականների խնդիրն էլ ջուրը չի՞ ընկնիլ: Ինձ թվում է, որ սա նույնպես շատ կարևոր հանգամանք է, որ աչքաթող չպետք է անել: Եվ ես կարծում եմ, որ եթե Վեհափառ կաթողիկոսը նաև Պետերբուրգի կարծիքն է հարցնում, երևի այս հանգամանքն էլ աչքի առաջ ունի, թեև Բագրատ սրբազանը յուր նամակում այդ մասին ոչինչ չի գրել:

Ըստ իս թերևս ավելի դյուրին և ավելի արագ հարգվեր Վեհափառի խնդիրը, եթե դիմումը լիներ 4-5-6 մարդու համար և ոչ թե ամբողջ գործի ликвидация-ի համար:

Սա, իհարկե, իմ անհատական կարծիքն է և ոչ մի կերպ չունի այն մտածողությունների հետ, որ կա Թիֆլիսում և էջմիածնում:

Մատուցանելով Ձեզ իմ հարգանքներս,
Մնամ Ձեր կենաց համար աղոթարար՝

Մատթեոս Եպիսկոպոս

ՀԱԱ, Ֆ.227, ց.1, գ.595, թ.5-6: Բնագիր: Ձեռագիր:

N 19

ՇՈՒՇՈՒ ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԻՐԱՎՈՐ ԶԻՆՎՈՐՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԳՈՐԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

28 հոկտեմբերի 1914թ.
(Շուշի)

Ղարաբաղի թեմի ժամանակավոր կառավարիչ Զավեն վարդապետի հրավիրմամբ սույն թվականի հոկտեմբերի 28-ին տեղույս Առաջնորդարանում տեղի ունեցավ Շուշու Հայոց կուլտուրական հաստատություններից և խմբակցություններից ընտրված 28 ներկայացուցիչների ժողովը:

Ժողովականները հոտնկայս լսեցին Նորին Վեհափառության Ամենայն հայոց կաթողիկոսի կոնդակը՝ ուղղած ամեն դասակարգի հայ ժողովրդյան շուտափույթ կազմակերպելու եղբայրական օգնության և վիրավոր զինվորներին խնամելու գործը: Ի նկատի ունենալով ժամանակի պահանջներին և տեղական ժողովրդի բազմաթիվ և բազմատեսակ կարիքները՝ ժողովականները բարվոք համարեցին տասն հոգուց բաղկացած մի գործող մարմին (բյուրո) կազմել, որը պետք է միջոցներ հայթայթե վերոհիշյալ պահանջներին գոյացում տալու համար:

Գաղտնի քվեարկությամբ տեղական գործող մարմնի անդամներ ընտրվեցին.

1. Մեծ պ.* Գ.Մելիք-Շահնազարյան
2. Ղ.Տեր-Ղազարյան
3. բժ. Ս.Համբարձումյան
4. Ս.Մանդինյան
5. Լ.Վարդապետյան
6. Ա.Շահնազարյան
7. Մ.Խալափյան
8. Զ.Մելիք-Շահնազարյան

* Մեծապատիվ պարոն:

9. Մ.Խաչատրյան
10. Գ.Իսրայելյան

Նախագահ ընդհ. ժողովի Զ.Մելիք-Շահնազարյան
Քարտուղար Ա.Շահնազարյան

ՀԱԱ, Ֆ.288, ց.1, գ.4, թ.3: Բնագիր: Ձեռագիր:

N 20

ՕԴԵՍԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԾԽԱՏԻՐՈՋ ՆԱՄԱԿԸ ԹԻՖԼԻՍ՝ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ՝ ՏԵՂԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՁԵՌՆԱՐԿՎԱԾ ԺՈՂՈՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

3 նոյեմբերի 1914թ.
Օդեսա

Մեծապատիվ պ.Սամսոն Հարությունյան.

Ստացվեցան Ձեր բոլոր հեռագիրները և հաղորդվեցան ինձ, երկրորդ հեռագրին պատասխանեց Ձեզ իշխան Արղությանը: Փող հավաքելու գործը բավական խոչընդոտների հանդիպեցավ: Քաղաքապետը իրեն իրավունք չհամարեց թույլ տալ ո՛չ ժողովը և ո՛չ ժողովարարությունը. դիմեց գեներալ-նահանգապետին. նա էլ նույնպես իրեն իրավունք չհամարեց այդ. հարցրին Պետրոգրադ այնտեղից ամսիս 1-ին հեռագրով պատասխան եկավ, թե դա միմիայն գեներալ-նահանգապետի իրավասությանն է վերաբերում: Երեկ խնդիր տվի. ձևականությունները մի երկու օր կհետևեն. հույս ունեմ, թեև դժվարությամբ, կիրակի, ամսիս 9-ին ժողով գումարել և ժողովարարություն ձեռնարկել: Բյուրոյի նշանակած գումարը՝ 50000 ռուբ., Օդեսայի համար շատ-շատ է. Օդեսայի անունն է մեծ, բնակիչները՝ դալլակ, նավահանգստի տաճկահայ բանվորներ, ծառայողներ և մի քանի հարուստներ: Ամեն ջանք գործ եմ դնում թե՛ եկեղեցում և թե՛ մասնավոր խոսակցության մեջ պատրաստել հասարկությունը այդ ուժից վեր զոհողությունն անելու, որպեն լուրջ է և պատմական:

Կամավորների վերաբերյալ վերջին հեռագիրն էլ ստացա, այդպես էլ անում եմ: Բոլորին ասում եմ, որ իրենց գործին կենան և սպասեն իմ հրավերին: Այժմ քաղաքումս կան 100 հոգուց ավելի կամավորներ: Սիմֆերապոլից և Գրիգորիոպոլից էլ դիմում են ինձ իրենց առաջարկություններով: Բոլգարիայից և Ռումինիայից էլ գալիս են ամեն օր 2-3-ական հոգի չոր ճանապարհով: Ոգևորությունը շատ մեծ է և եթե ըստ կարելվույն հագուրդ չտրվի՝ աստիճանաբար կսառվի: Մինչև Թուրքիայի հարձակումը ճանապարհ էին դնում 20-30-40-ական հոգի Ռուսական ընկերության շոգենավերով: Ճանապարհները փակվեցին, վերջին խումբը՝ 135 հոգի, գնացին երկաթուղով на казенный счет: Սա իբրև բացառություն իմ խնդրով թույլ տվեց գեներալ-նահանգապետը: Դիմումներիս հիման վրա մեր շտաբը հեռագրեց Կովկասյան շտաբին - Поступают многочисленные заявления армян - добровольцев, желающих паступать в армянскую дружину. Сообщите - подлижат ли они отправке по железной дороге на казенный счет? Պատասխան ստացվեցավ - Не подлижат! Իբրև կամավոր են գնում մեծ մասամբ տաճկահայ նավահանգստի բանվորները. աշխատանքը դադարել է, վաստակ չկա, և նոքա, իհակե, իրենց հաշվով Կովկաս գնալու հնարավորություն չունին. դժվարությամբ կարողանում եմ հավաքել նրանց ուտելեղենի ծախսը ճանապարհին. իսկ ով կարող է յուր ծախքով գնալ, նրանք չեն սպասում, որ ես նրանց ճանապարհ դնեմ, ինքնագլուխ են գնում: Բայց այդպիսիների

թիվը քիչ է: Ուստի եթե Բյուրոյի կողմից կամավորների պահանջ լինի, խնդրում եմ աշխատել ուր որ հարկն է, որ նրանց թույլ տրվի ճանապարհել երկաթուղով և պետական հաշվով: Այստեղ՝ շտաբում, փոխարքայի այդ մասին առաջարկություն, անշուշտ կընդունվի և կկատարվի: Առանց այդ թույլտվության անկարող կլինեմ կամավորներ ուղարկել, եթե պահանջվի էլ:

Ի վերջո շատ ցանկալի կլիներ այդ գործի մասին Բյուրոյին որևէ հրահանգ ունենալ, այլև ստույգ տեղեկություններ Կովկասում տիրող հայկական գործունեության մասին այդ ուղղությամբ, որովհետև ամեն կողմից ինձ զանազան տեսակ հարցեր են առաջարկվում թե՛ կամավորների կողմից, թե՛ հասարակության և թե՛ նամանավանդ մամուլի կողմից: Իսկ ես որոշ, հաստատ տեղեկություններ չունենալով, ոչինչ չեմ կարողանում հաղորդել: Մինչդեռ մամուլի միջոցով հասարակական կարծիք պատրաստելն ու ղեկավարելը գործին, նույնիսկ դրամական տեսակետից, մեծ օգուտ կարող է բերել: Լրագիրները շատ են խոսում հայերիս մասին, բայց լուրերի մեծ մասը հերյուրված են, անճիշտ: Ցանկալի է, որ գաղութներիս կապը մայր հայրենիքի հետ լինի ոչ միայն դրամական այլ ավելի խոր և պինդ: Ժողովուրդը ագահորեն կլանում է ամեն բան, ինչ որ գրվում է մեր՝ հայերիս մասին. պետք է այդ ձգտման գոհություն տալ՝ մատակարարելով մաքուր և առաջատար սնունդ:

Հարգանքով՝ Հովհաննես քահանա Չուբարյան

ՀԱԱ, Ֆ.288, ց.1, գ.1, թ.11: Բնագիր: Մեքենագիր:

N N 21-22

ՆՈՎՈՉԵՐԿԱՍԿԻ ԴԱՏԱԿԱՆ ԱՏՅԱՆԻ ԵՐԴՎՅԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱՏԱՐ ԳՐ.ՉԱԼԽՈՒՇՅԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՆ

N 21

9 նոյեմբերի 1914թ.

Եղբայր Սամսոն,

Ուրախությամբ կարդում եմ և տեսնում եմ, որ բոլորս հայ դատին զինվորներ ենք դառած, երնեկ չխաբվեինք, երնեկ մինչև վերջը տանել կարողանայինք մեր սուրբ գործը: Նակազնի Ատամանը ասաց, որ ազատ զենք չկա, բայց 50 կամավորների համար խոստացավ գրել. պատասխան չկա: Բարեբախտաբար մեր Պոլիսում 137 լավ մաուզերներ կան և 6 հազար փամփուշտներ: Ոստիկանապետը խոստացավ տալ մեզ 40ռ. հատը, աշխատում ենք քաղաքապետի հետ վերջացնել 22-ով: Համենայն դեպս 40-ն էլ լավ է, մենք հրավիրեցինք հասկացող մարդ, լավ զենքեր են: Մագազիններում կարելի է գտնել փամփուշտներև ոչ շատ, ձեռք կառնենք: Թույլտվությանն ենք սպասում, գրվեց նաև նակազնի Ատամանին, Ձեզնից էլ չկա պատասխան: Մոսկվայում կան 60 հազար փամփուշտներ: Մամիկոնյանը կարող է իմանալ տեղնուտեղը: Հեռագրած ենք քանի մը տեղեր. գլխավորը՝ թրքաց փամփուշտները համապատասխն են: Դուք ունեք, շտապ չեմ համարձակվում խորհուրդներ տալու, բայց փափախները հարմար չեն, երևում են հեռվից:

Բժիշկների մասին հեռագրեցի, ոչ մի տեղ չկան, բայց այդ հասցեով կարելի է գտնել վիրաբույժներ: Կխնդրեի նաև, որ միաբանության կապերը ամուր պահվեն, և Ձեր վրա նախագահի շատ բան ծանրանում է, օրինակի համար՝ չհավանեցի «Մշակի» ակնարկը, որ քարտուղարը «Հորիզոն»-ական լինելով, «Մշակին» տեղեկություններ չեն տրվում ես շատ ջանքեր եմ թափում, «Մշակի» վրա ազդելով, որ նրա գնացքը ըստ ամենայնի համապատասխան լինի ընդհանուր մեր շարժման: Մի մոռանանք, որ հայտնի ազդեցություն նա ունի, կարիք չկա առանց հարկավորության նեղել նրան և

խռովություն առաջ բերել, ես հակառակ էի Բյուրոյին գարնան, այժմ կարծեմ ավելի ջերմ հպատակող չունենաք: Ի սեր ոչ Աստծո, այլ սուրբ, մեծ, ծանր և ամենապատասխանատու գործին՝ հեռացնել Բյուրոյից ամեն ինչ, որ փոքր նշույլ անգամ կարող է տալ կուսակցության: Հայ և հայություն և արտաքո սրանց՝ ամենայն ինչ ունայնություն և սուտ...

N 22

29 նոյեմբերի 1914թ.

Եղբայր Սամսոն,

Սարսափելի անախորժ տպավորություն թողնում են «Մշակի» ակնարկությունները՝ վերաբերյալ գաղթականներին և փախստականներին:

Մի՞թե ճշմարիտ է, որ այդ չափ ողորմելի է Բյուրոյի ցույց տված օգնությունը, մի՞թե իսկապես սուղ են Ձեր միջոցները առաջին օրերին: Պետք է ասած, մենք այնպես էլ չիմացանք՝ ի՞նչ են անելու բագվեցիները և թիֆլիսցիները: Բարեբախտաբար 25-ը* մոտը, կգանք անձամբ տեսնելու: Երեկ ընդհանուր ժողով ունեինք Ռոստով-Նախիջևան փոխադարձ վարկի ընկերության և իմ առաջարկությունով որոշվեց տալ տասը հազար, հինգը՝ այժմ և հինգը՝ հունվարին: Շեշտվում էր անդադար փախստականների վրա և մատնանիշ էր արվում, որ աչքաթող են եղած և պետք էր ինձ երկար բացատրություններ տալ, որպեսզի Բյուրոյի վարկը բարձր պահել հասարակության մեջ և որոշել, որ Բյուրոյի տրամադրության տրվեին առհասարակ բոլոր գումարները: «Մշակի» արծարծած կարծիքը, թե հարկավոր է առանձին մարմին, այնքան ինձ վշտացրեց, որ երևի Թիֆլիսում կորոշեմ աշխատակցել «Հորիզոնին», մանավանդ, որ իմ երեք հոդվածներս ժողովարարության վերաբերյալ չեն տպվում:

Մենք հեռագրել էինք Ձեզ՝ վերաբերյալ հայ գերիների, հեռագրել էի նաև Աճեմյանին, ստացա պատասխան, որ բոլոր բանը կախված է փոխարքայից, այդպիսի պատասխան ստացել է նախարարությունից, անգամ չեն կարող նրանց զգեստավորել, մերկ են և պոպիկ, հիվանդ, սրտաճմլիկ տեսարան... Երկու ուսանողներ Պետրոգրադից հասան և ինձ պատմեցին, որ Միլյուքովը ասել է, թե հայկական ավտոնոմիային հակառակ պիտի խոսեին մի հայկական երեկույթի մեջ, կարծեմ, եթե չեմ սխալվում, Вольноэкономическое общ.

Բանից երևաց, որ Ադոնցը չէ ուզում հրապարակ ելնել, իսկ խոսողները... վրացիներ են լինելու: Հեռագրեցի Աճեմյանին՝ Ասրբեգյանին՝ Պետրոգրադ, և Մամիկոնյանին և Ջիվելիկյանին՝ Մոսկվա և վերջինից ստացա պատասխան, որ կանցնի Պետրոգրադ: Երևի իմացաք, որ Տոտոմյանն էլ խոսել է հակառակ: Պետք է ձեռնհաս մարդիկ ունենայինք՝ շրջելու, խոսելու համոզելու... Սաթուլանի ճառի մասին ուրիշ լուր ստացվեց՝ իբր թե չի կարողացել լավ խոսել... 4-ին կամ հինգին կայսրը անցնելու է այստեղից: Քաղաքագլուխը ցանկանում է, որ ես ասեմ մի երկու խոսք, չգիտեմ, կթույլատրե՞ն, թե ոչ: Ձեզ [մոտ] կգա Բյուրո Ավետիս Քիստյանը, որ լավ տղա է, լավ ընդունեցե՛ք, բայց փառասեր է և մեծ կարծիք ունի իր վրա, կարոտ, որ շոյեն: Զգուշացնում եմ նրա համար, որ գրեք ինձ, ինչ կարգադրություններ Ձեր հանձնաժողովը կհանձնի նրան (немного фантазёр): Նա նախագահ է մեր հանձնաժողովին և уполномоченный санитарного поезда.

Սիրով՝ Գր.Չալխուշյան

ՀԱԱ, Ֆ.288, ց.1, գ.2, թ.8: Բնագիր: Մեքենագիր:

N 23

* Բնագրում այդպես է:

ՊՅԱՏԻԳՈՐՍԿՈՒ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՎԱՔԻ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐԻ ՆԱՄԱԿԸ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՆ ԳԱՂՈՒԹՈՒՄ ԲՅՈՒՐՈՅԻ ՄԱՄՆԱՑՅՈՒՂ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

11 նոյեմբերի 1914թ.
Պյատիգորսկ

Ի նկատի ունենալով ներկա պատերազմական հանգամանքները, ամսվա 9-ին տեղիս հայերը, հետևելով ուրիշ քաղաքների օրինակին, ժողովվելով հայոց ուսումնարանի դահլիճում, որոշեցին կազմել մի հանձնաժողով ժողովարարություն անելու՝ փողով, տաք հագուստներով և թե ուրիշ նյութերով հայ կամավորների և նրանց ընտանիքների օգտին: Ընտրվեց 10 հոգուց բաղկացած մի հանձնաժողով:

Ժողովականների մեջ ցանկություն հայտնվեց, որ այդ ընտրված հանձնաժողովը կոչվի «Կովկասի կենտրոնական բյուրոյի Պյատիգորսկի ճյուղ»:

Հայտնելով վերոհիշյալի մասին ի գիտություն՝ Կենտրոնական բյուրոյի, սրանով խնդրում ենք Բյուրոյի հարգելի սանկցիան և միևնույն ժամանակ հայտնել անհրաժեշտ կարգադրություններ տեղիս ճյուղի գործունեության վերաբերյալ:

Արդեն հավաքված գումար ունենք, 1500ռ.: Խնդրում ենք նաև հայտնեք, թե արդյոք կառավարության կողմից մի որևիցե արգելք չի կարող հանդիսանալ մեր այս գործելակերպը:

Նախագահ Գ.Սուքիասյանց
Քարտուղար Ն.Ռոստովանյանց

Մեր հասցեն՝ Пятигорск, Тереской обл.
Геворку Довлатовичу Сукиасянцу

ՀԱԱ, Ֆ.221, ց.1, գ.1, թ.8: Բնագիր: Ձեռագիր:

N 24

ԱՍԽԱԲԱԴԻ ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱՄԱԿԸ ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՆ՝ ԳԱՂԹՕՋԱԽԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԽԱՆԴԱՎԱՌՄԱՆ, ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ, ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՅԼ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

12 նոյեմբերի 1914թ.
Ասխաբադ

Ռուս-տաճկական պատերազմի սկսելով, տեղիս գաղթավայրի հայերն ևս, իբրև հեռավոր հատված հայ ազգի, շարժվեցին, որգևորվեցին ապագայի հավատով և խոստումնալի կյանքի արշալույսին և բուռն ոգևորությամբ նետվելով ամենուրեք ծայր առած այս անօրինակ եռուն գործունեության մեջ, կամեցան մի շարք ակտիվ ձեռնարկություններով մասնակցել ընդհանուր շարժման այս համատարած պրոցեսին: Այս նպատակով՝ կազմվեց հայ կամավորներին և նրանց ընտանյաց նպաստող կոմիտետ՝ վեց անդամից բաղկացած, որի առաջին հոգսն եղավ տեղական երիտասարդությունից կազմել կամավորների խումբ, հոգալով նրանց հագուստի և ճանապարհի ծախքերը, և արդեն երկու խումբ, բաղկացած քառասուն հոգուց, ուղևորվել են Կովկաս՝ մտնելու հայկական վաշտերի մեջ: Վաղօրոք ներկայանալով

տեղական ադմինիստրացիային և երկրիս կառավարչին և հայտնելով տեղական կոմիտետի և կամավորների խմբերի կազմակերպության մասին, և քաջալերության ու աջակցության խոստումներ ստանալով՝ կամավորներիս ճանապարհ ձգեցինք մեծ շուքով, ցույցերով և զինվորական նվագախմբի երաժշտությամբ: Երկաթուղու կայարանում կատարվեց հանդիսավոր մաղթանք, տեղի ունեցան ճառախոսություններ և ոգևորված ցույցեր: Բացի հազարավոր հայ և ռուս հասարակությունից, հայ հոգևորականությունից, ներկա էին նաև քաղաքային և զինվորական վարչություններից՝ ներկայացուցիչներ, որոնք նույնպես ոգևորված ճառեր խոսեցին, ցանկություններ արտահայտեցին և հայ կամավորներին օրհնելով և բարի ճանապարհ մաղթելով՝ բաժանեցին արծաթյա փոքրիկ խաչեր՝ արծաթե շղթաներով:

Ներկայումս տեղկան կոմիտետը զբաղված է հանգանակությամբ և հույս ունի մոտ ապագայում փոխադրել Բյուրոյիդ, մի համեստ գումար: Բացի դրանից, պիտի լինի նաև ամսավճարների ժողովարարություն, որ կշարունակվի մինչև պատերազմի վերջանալը: Կոմիտետը կազմել է նաև տեղական կանանց հանձնաժողով, որ բանալով յուր արհեստանոցը՝ եռանդով պատրաստում է կամավորների համար տաք հագուստ և հանգանակություն անում դրամով, իրերով և մթերքներով: Կոմիտետս խնդրում է Բյուրոյիդ իրազեկ անել մեզ, թե ու՞ր և ու՞մ հասցեով պետք է փոխադրել և ուղարկել դրամը և իրերը: Խնդրում ենք թախանձագին, եթե հնարավոր է, ժամանակ առ ժամանակ, գոնե շաբաթը մեկ անգամ, հաղորդել մեզ այն նշանավոր դեպքերի ու անցքերի մասին, որ կատարվում են հայության և հայկական խնդրի շուրջը, որովհետև հազարավոր վերստերով կտրված ու անջատված հայրենիքից և հայության կենտրոնից, միմիայն կցկտուր ու աննշան տեղեկություններ ստանում ենք լրագրերից, որոնք անզոր են լիուլի հագուրդ ու բավարարություն տալ մեր հուզված մտքերին և անհամբեր տրոփող սրտերին:

Ներկա գրության հետ ուղարկելով ռուսերեն լեզվով գրված մի պաշտոնական թուղթ, հանուն Բյուրոյի պ. նախագահի և այն պրովակացիոն նամակի հավատարիմ պատճենը, որ ստացված է տեղիս միակ լրագիր «Асхабад»-ի խմբագրի անունով: Խնդրում ենք ամենակարճ միջոցով հանգստացնել մեր վերին աստիճանի հուզված մտքերը և փարատել այն բոլոր կասկածներն ու անհանգստությունները, որ պաշարում են մեր ամբողջ գոյությունը: Խնդրում ենք պատասխանել մեզ պաշտոնապես, նույնպես ռուսաց լեզվով, որ պիտի ծառայի մեզ իբրև հատու զենք մեր տեղական թշնամիների դեմ: Սակայն մինչև պաշտոնական գրության ստանալը, խնդրում ենք անմիջապես հեռագրական մի երկու բառով հանգիստ տալ մեր խռովահույզ մտքերին:

Նախագահ Կոմիտետի՝ ստորագրություն*

ՀԱԱ, Ֆ.288, ց.1, գ.1, թ.36-37: Բնագիր: Ձեռագիր:

N 25

ՆԱՄԱՆԳԱՆԻ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՆԱՄԱԿԸ ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ՝ ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՕԳՏԻՆ ՏԵՂԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

23 նոյեմբերի 1914թ.

* Փաստաթուղթը ստորագրված է վեց հոգու կողմից, ըստ որում մի քանի ստորագրություններ անընթեռնելի են:

Նամանգան

Մեծարգո պրն. Ս.Հարությունյան,

Նամանգանի հասարակությունը, իմանալով տաճկաց դեմ կռվող հայ կամավորների կարիքը, հավաքել է իր մեջ ներքնազգեստներ, որը և ուղարկում ենք սույն նամակով: Տաք ներքնազգեստների հավաքումը շարունակվում է, որը շարունակաբար կուղարկվի: Ուղարկված հագուստեղենը ստանալուց խնդրում ենք լրագրության միջոցով հայտնեք: Լրագրության միջոցով հայտնելու մեր ցանկությունը այն նպատակը աչքի առաջ ունենք, որ տեղական ժողովուրդը իմանալով, որ իր տվածը լրագրում գրված է, ապագայում ավելի առատաձեռն կլինի: Ավելի լավ կլիներ, եթե «Հորիզոնի» կամ «Արևի» միջոցով հայտնվեր ուղարկված իրերի ցուցակը: Իսկ փող հանգանակելու համար արդեն ընտրված է տեղական հասարակությունից մի հանձնաժողով՝ հինգ հոգուց բաղկացած, որոնք ընտրված են Ազգային բյուրոյի ներկայացուցիչ պրն.Կափյանցի ներկայությամբ, որոնք արդեն սկսած են հանգանակումը:

Մնամք հարգանաոք ի տեղի հայ հասարակության...*

Հ.Գ. Այստեղ հավաքած ունենք բավականին շորեր հայ գաղթականների համար: Խնդրում ենք նեղություն կրեք հայտնելու՝ ու՞մ հասցեով ուղարկենք և ու՞ր:

ՀԱԱ, Ֆ.221, ց.1, գ.1, թ.10: Բնագիր: Ձեռագիր:

N 26

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏԱՐԲԵՐ ԽԱՎԵՐԻ ՈՒ ՀՈՍԱՆՔՆԵՐԻ ՄԻ ԽՈՒՄԲ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԻՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԻՑ ԴՈՒՐՍ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ՍՏԱՆՁՆԱԾ ԴԵՐԻ ՄԱՍԻՆ

4 դեկտեմբերի 1914թ.
[Թիֆլիս]

Վեհափառ Տե՛ր,

Ներքո ստորագրյալներս՝ ներկայացուցիչներ և արտահայտիչներ զանազան մտավոր հոսանքների և ուղղությունների, մեր բարոյական ազգային և քաղաքացիական պարտք ենք համարում խոնարհաբար զեկուցանելու Ձերդ Վեհափառության մեր վերաբերմունքը և դիրքը դեպի այն մարմինը, որ կոչվում է Ազգային կենտրոնական բյուրո:

Թեև այդ Բյուրոն կազմված է միակողմանի, - քանի որ նրա մեջ չկան ո՛չ մամուլի, ո՛չ ուսուցչության, ո՛չ զանազան մտավոր հոսանքների, ուղղությունների և դասակարգերի ներկայացուցիչներ, այլ մասնակցում են մի որոշ հոսանքի հետևողներ և անձինք, հրավիրյալ ըստ հայեցողության Բյուրոյի ղեկավարների, - թեև նա չի կազմված ընդունված ընտրական եղանակով, - մենք չէինք վստահանա հանձնել Ձեր ուշադրության ներկա հայտարարությունը, եթե միայն Բյուրոն չստանձներ նաև քաղաքական ֆունկցիաներ, որոնք վերապահված են միմիայն Ամենայն Հայոց կաթողիկոսին, որպես ազգընտիր պետի:

Եվ որովհետև Բյուրոն յուրացրել է նաև քաղաքական ֆունկցիաներ, գործում և խոսում է հանուն թուրքահայ ժողովրդի, որը բնավ նրան այդպիսի իրավունք չի տվել, և քանի որ նրա գործելակերպը այդ ուղղությամբ մենք գտնում ենք

* Հետևում է երկու հոգու անընթեռնելի ստորագրություն:

անհամապատասխան մեր ազգային իրավական կացության, - ուստի մեր պարտքն ենք համարում զեկուցանել այդ մասին Ձերդ Վեհափառության:

Արդ, անշուշտ, Ձեր Սրբությանն է մնում որոշել Բյուրոյի գործունեության շրջանակը, ցույց տալով նրան իր սահմանները:

Մեր այս ամենախոնարհ հայտարարությունը, Վեհափառ Տե՛ր, արձագանք է տրտունջների և դժգոհությունների, որոնք հասնում են մեզ զանազան հայաբնակ վայրերից:

Հայտնելով այս ամենը Ձերդ Վեհափառության, վստահ ենք, որ Ձերդ Սրբությունը իր իշխանությամբ վերջ կտա այս բոլոր տարաձայնություններին:

Ի դիմաց տարբեր հասարակական խավերի և հոսանքների ընտրյալ ներկայացուցիչներ՝ հանձնելու Ձերդ Վեհափառության այս հայտարարությունը:

Հ.Առաքելյան
Հ.Համբարձումյան
Տ.Նազարյան
Բժշկապետ Բ.Նավասարդյան
Ս.Ջերքեզյան
Հ.Ակունյան
...*

ՀԱԱ, Ֆ.57, ց.5, գ.78, թ.1 և հակ.: Բնագիր: Ձեռագիր:

N 27

ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅՈՑ «ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ» ԲՅՈՒՐՈՅԻ ՆԱՄԱԿԸ ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՆ՝ ԵՐԿՐԱՄԱՍՈՒՄ ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

11 դեկտեմբերի 1914թ.
Շուշի

Ղարաբաղի Հայոց «Եղբայրական օգնության» Բյուրոն սկսելով յուր գործունեությունը սույն թվականի հոկտեմբեր ամսի վերջին օրերից՝ յուր բոլոր ջանքը գործադրել է հայ կամավորների օգնության և գաղթականներին խնամելու համար միջոցներ հայթհայթել: Շուշի քաղաքի հայ ազգաբնակչությունը, չնայելով նյութական սուղ դրության, այնուամենայնիվ, ամսական կամավոր վճարներով շարունակում է օգնել մեր ձեռնարկած անհրաժեշտ գործին: Տաճկահայ գաղթականների անմխիթար դրությունն արձագանք գտավ նաև մեր շրջանում, ուստի Ղարաբաղի Հայոց ազգային բյուրոն անհրաժեշտ համարեց իր ժողոված գումարից իսկույն ևեթ 500ռ. փոխադրել Թիֆլիսի Հայոց ազգային բյուրոյին՝ տաճկահայ գաղթականներին խնամելու համար: Տեղվույս Բյուրոն մոտ օրերս կուղարկի նաև տաք հագնելիք ու այլ մթերքներ հայ կամավորների և գաղթականների համար՝ դարձյալ Թիֆլիսի ազգային բյուրոյի միջոցով:

Բայց Ղարաբաղի Հայոց ազգային բյուրոն գտնում է, որ ներկա պատմական օրերին, երբ պետք է ամեն միջոցով օգնության գալ տարագիր տաճկահայ ժողովրդի դատի պաշտպանության, Ղարաբաղի հայ ազգաբնակությունը կարող է և պետք է ավելին անե, եթե ոչ դրամով, գոնե օգնական ուժերով: Քանի որ Ղարաբաղի հայ ժողովուրդն ևս իրապես զգում է, որ ներկայումս Տաճկահայաստանում հայ

* Մեկ ստորագրություն՝ անընթեռնելի:

ինքնուրույն գոյության խնդիրն է ասպարեզի վրա դրած և այդ հարցի հաջող լուծման պետք է նպաստենք բոլոր հայերս, նա չի կարող անտարբեր մնալ հայի այս ճակատագրական րոպեին և նա պատրաստ է ամեն զոհողություն հանձն առնել և յուր մասնակցությունը ցույց տալ մեր հայրենիքի սրբազան գործին:

Պատմական նշանավոր րոպեներին Ղարաբաղի հայ ժողովուրդը հանդես է բերել յուր կարող ուժերը՝ հայրենիքի բարօրությանը ծառայելու: Տաճկահայ դատի պաշտպանության համար նա տվել է մի շարք ականավոր հերոսներ: Ներկայումս, երբ ամբողջ հայությունն յուր բարոյական և նյութական ուժերն է ասպարեզ հանել ազգային գործին զոհաբերելու համար, Ղարաբաղի հայերն ևս պատրաստ են կամավորների գնդով օգնության գնալ Տաճկահայաստանում գործող մեր եղբայրներին:

Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ հայ կամավորների նոր խմբերի կարիք, անշուշտ, պիտի զգացվի մոտիկ ապագայում՝ Ղարաբաղի Հայոց «Եղբայրական օգնության» բյուրոն որոշել է օգուտ քաղել տեղվույս հայ ազգաբնակության այդ տրամադրությունից և ընտիր ու պատրաստված փորձառու ուժերից կազմել ձիավոր ու հատուկ կամավորների մի խումբ: Բյուրոն հույս է տածում, որ իր ձեռքով կազմած ղարաբաղցի կամավորների այդ գունդը թե՛ բարոյապես և թե՛ գործնական մասնակցությամբ մեծ նեցուկ կարող է լինել ներկայումս գործող հայ կամավորներին:

Ղարաբաղի Հայոց «Եղբայրական օգնության» բյուրոն հայտնելով Ձեզ այդ մասին՝ կարևոր է համարում յուր ձեռնարկելիք սույն անհրաժեշտ գործի նկատմամբ իմանալ Ձեր կարծիքն ու ըստ այնմ գործի անցնել:

Նախագահ բյուրոյի ստորագրություն*
Անդամ քարտուղար ստորագրություն*

ՀԱԱ, Ֆ.288, ց.1, գ.4, թ.2 և հակ.: Բնագիր: Ձեռագիր:

N 28

ՄԱՐԻՈՒՊՈԼԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Վ.ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՆ ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՈՒ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎԱԾ ԻՐԵՐԻ ՈՒ ԴՐԱՆՑ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

12 դեկտեմբերի 1914թ.
Մարիուպոլ

Ներկայիս ներփակյալ ուղարկում եմ Ձեզ տեղիս հայ գաղութի կողմից պատրաստված մեկ սնդուկ տաք հագուստեղենի և ուրիշ իրերի քվիտանցիան, որը խնդրում եմ ըստ Ձեր հայեցողության բաժանեցեք հայ կամավորներին և Տաճկաստանից փախստական կարոտյալներին:

Իրերի ցուցակը հետևյալ է. 59 տաք շապիկներ, 3 բրդից կոր շարֆ, 8000 պապիրոս և 20 ֆունտ ծխախոտ:

Ի դեմս Մարիուպոլի հայ գաղութի

Վ.Վարդանյան
դուբլիկատ N 12.000

* Ստորագրություններն՝ անընթեռնելի:

ՀԱԱ, Ֆ.221, ց.1, գ.2, թ.24: Բնագիր: Մեքենագիր:

N 29

ԲԱՔՎԻ՝ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ԽՆԴՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱՄԱԿԸ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ՝ ԲԱՔՎԻ ԿՈՂՄԻՑ ԲՅՈՒՐՈՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԸՆՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12 դեկտեմբերի 1914թ.

Մեծապատիվ պարոն.

Թուրքահայ գործով զբաղվող Բաքուա հանձնաժողովը պատիվ ունի հայտնելու Ձեզ, որ համաձայն Ազգային բյորոյիդ առաջարկին, Բաքուա հանձնաժողովը դեկտեմբեր ամսի 6-ին կայացած նիստում ընտրել է պարոն Լևոն Ղուլյանին ներկայացուցիչ Բաքուա կողմից Տփխիսի ազգային բյուրոյում և աշխատակից Բյուրոյիդ գործադիր մարմնի մեջ:

Խորին հարգանքով
Նախագահ ...*
Քարտուղար

ՀԱԱ, Ֆ.221, ց.1, գ.2, թ.61: Բնագիր: Ձեռագիր:

N 30

ՀԻՆ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՀՈԳԵՎՈՐ ԹԵՄԻ ՓՈԽԱՆՈՐԴԻ ՆԱՄԱԿԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՀՕԳՈՒՏ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍՆԱԿԻՑ ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲՅՈՒՐՈՅԻՆ ԱՌԱՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

17 դեկտեմբերի 1914թ.
Հին Նախիջևան

Ի կատարումն դիվանական պատվիրանադրության վեհափառությանդ 9 հոկտեմբերի տարույս թ.1612 սրբությանդ պարբերաբար զեկուցանելու խնդրով՝ վիճակիս ներկա հայրենական պատերազմի ս.գործին ամենայն ըստ ամենայն օժանդակություն հասցնելու խնդրո վերաբերյալ:

Արդ շնորհ ունիմ ամենախոնարհաբար զեկուցանելու, որ ի ցանկալին կատարումն բարձրագույն պաշտելի կամացդ՝ կազմվեցավ փոխանորդական վիճակումն երկու գլխավոր բյուրո, մին՝ Ջուլֆայում, մյուսն՝ քաղաքումն, որոնք և ինքնահոժար սիրով ենթարկվեցին վեհ. սրբությանդ հովանին վայելող Տփխիսի կենտրոնական բյուրոյին, և արդեն իսկ վայելում են առնչական փոխադարձ հարաբերության շնորհը:

Ջուլֆայի մասնաճյուղը ընդ անմիջական նախագահությամբ երդվյալ հավատարմատար պ.Ս.Ջանփոլադյանի՝ ի դեպ շատ հանգամանաց տեղվույն ըստ մերային փոխադարձ հաճության պատրաստվում է բանալու փոքրիկ հիվանդանոց, իսկ քաղաքիս մասնաճյուղը լավ վարկավ՝ տեղվույս անհրաժեշտ հոգսերը հոգալուց

* Ստորագրություններն՝ անընթեռնելի:

հետո հետևյալ գումարը ուղարկելու է Տփխիս Կենտրոնական բյուրոյի բարեհաճ տնօրինության, ըստ որում ամսի 13-ին միանվագ փոխադրեցի 200 ռուբլի և կփոխադրեմ պարբերաբար:

Տեղվույս բյուրոյի անդամներն են՝ պ.պ. Բաղդան, Խ.Մելիք-Էյնաթյան, Պ.Ա. Տեր-Գրիգորյան, Ե.Բ.Ջանփոլադյան, Կ.Պողոսյան, Մ.Մելիքսեդեկյան, Ն.Մանուչարյան, Ա.Մովսիսյան և Մ.Մխիթարյան՝ նվաստիս նախագահությամբ, ու ամեն շաբաթ հաջորդարանում տեղի են ունենում ժողովներ:

Բացի այդ, շարունակվում են ամենուրեք թույատրել հանգանակություններ և հանձնվում ըստ պատկանելույն: Քաղաքիցս՝ իմ, ռուս մահմեդական ներկայացուցիչներիս միջոցով փոխադրվեցին 430 ռուբլու սպիտակեղեն և այլ կարևոր պիտույք՝ Տեր փոխարքայի տիկնոջ անունով:

Իսկ ինքս ինձ ուղարկած կարմիր խաչի գրքույկներով հանգանակել եմ և հանգանակում եմ առավելն քան 200 ռուբլի:

Որպես և գավառական բյուրոյի անդամ, պ. գավառապետի և հաշտարար միջնորդների հետ տանում ենք հաջողությամբ և ընդհանուր գործը հանգանակության և այլ ինչ-ինչ կարևոր օգնություն:

Գրեցի շրջաբերական վիճակիս գործակալություններին՝ կազմելու մեծ մի գյուղում օժանդակիչ բյուրո, որոնց տրվեցավ արտոնություն՝ ստանալու կամավոր ամսավճարներ տպագրյալ անդորրագրերով:

Սահմանված է ամսավճար քահանաների և ուսուցիչների՝ 50 կոպ. - մի ռուբլի, և հաջողությամբ հանգանակվում է:

Վեհափառ Տեր, ուրախալի է քաղաքական իշխանության պատշաճին վերաբերմունքը՝ հանձին կազմակերպության բյուրոյիս: - Ստանում եմ պ.գավառապետից թղթեր, որով դիմում է ինձ որպես Տփխիսի բյուրոյի մասնաճյուղի նախագահ, մինչդեռ մեր կողմից ոչ մի տեղեկություն չի տրված: Ծառայդ վայելում է հարգանք՝ որպես հոտից, այնպես և պաշտոնական մարմնից: Չնայած քաղաքիս մի անհայտ շահագրգռված խմբակի գաղտնագողի ոտնձգություն, գործն ընթանում է հաջողությամբ: Որպես չէ զանգուլ վեհափառությունդ քաղաքիս ոմանց անցյալ ամենի հակառակությունը՝ մի խեղաթյուրված ուսուցչի պատճառով, որոնք (հետո) ազնվաբար ներեղություն խնդրեցին, և իմ արդի աջակիցներն են:

Այսօրվա ծակամուտ հակառակորդ խմբակի պարագլուխը հանդիսանում է Կարապետ Եպիսկոպոսի գինեգործ եղբայրը, որը իր նահիր ճգնում է իրեն հասարակական գործչի դերում տեսնել, որի համար չի խնայում վայրիվերո ջանքեր, որը և հեռացավ ժողովից՝ իր վնասակար դիտումների պատճառով, որը շատ վիրավորված է զգում իրեն ու անջատված:

Վեհափառ Տեր, հոտիս՝ Ձեզ հավատացյալ զավակները իրենց բոլորանվեր անձնազոհությամբ պատրաստ են մատուցանելու իրենց կյանքը և հոգին ի ծառայություն ռուս օգոստոսափառ կայսեր և Ձերին հանրատենչ ազգասեր հայրապետության:

Ի դեպ՝ ի հավաստին տեղեկության վեհափառությանդ՝ եղավ ներ հայտարարությանս՝ մի օրինակ պատճենն՝ ուղղել շրջաբերականիս-հանուն գործակալուս.

Ծառա ծառայիցդ
փոխանորդ հոտին
Հնույն Նախիջևան

Սիմոն Վարդապետ
(Ջանփոլադյան)

ՀԱԱ, Ֆ.57, ց.5, գ.79, թ.1-2: Բնագիր: Ձեռագիր:

N 31

ԹԵԼԱՎԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Գ.ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ՝ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՕԳՏԻՆ ԺՈՂՈՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

19 դեկտեմբերի 1915թ.
Թելավի

Ստացա Ձեր դեկտ[եմբերի] 13 թվակիր նամակը, որով Բյուրոն հայտնում է ինձ, 1. որ կամավորների օգտին հանգանակություն կատարելու համար հարկավոր չէ ոչ մի թույլտվություն և 2. Պ.Պետերսոնը այդ մասին տեղեկացրել է նահանգապետներին մտերմական կերպով:

Առաջին կետի մասին գիտեի, որ թույլտվություն չի պահանջվում, բայց դիմել էի տեղիս գավառապետին միայն այն պատճառով, որ ոստիկանությունը խոչընդոտ չհանդիսանա մեզ հանգանակության ժամանակ:

Գավառապետը բացեիբաց մերժեց, հայտնելով, որ պ.նահանգապետից այդ առթիվ չունի ոչ մի կարգադրություն և չի կարող անել:

Ձեր գրությունը ստանալուց հետո գավառապետին մոտիկ կանգնած անձանց հետ միասին կրկին դիմեցինք նրան, հայտնելով պ.Պետերսոնի կարգադրությունը նահանգապետներին, նա նորից մերժեց, հայտնելով, որ այդ կարգադրության մասին ինքը տեղեկություն չունի, ուստի եթե նահանգապետը պաշտոնապես չի թույլատրում ոչ մի տեղ հիշյալ նատակով ժողովարարություն կատարեու, գոնե երկտողով տեղեկացնեի. «Не перепятествовать сбору пожертвований в пользу добровольцев». - Այսպիսի կարգադրությունից հետո նա կարող է անարգել թույլատրել ժողովարարությունը:

Ցանկանալով մշտական կոմիտե ունենալ և ի նկատի ունենալով գավառապետի բռնած դիրքը դեպի այդ ժողովարարությունը, հատուկ խնդրում եմ նորից Ազգային բյուրոյիդ, միջոցներ ձեռնարկեք և գավառապետի պահանջած ձևական կարգադրությունը ուղարկել տաք նահանգապետի դիվանատնից:

Ժողովարարությունը ուզում ենք կատարել այս տոներին, ուստի խնդրում եմ ըստ հնարավորության շուտ անել այդ և տեղեկացնել ինձ նամակով:

Հասցե՝ Телав, учителю Георгию Гаспаровичу
Тер-Саркисяну:
Ի դիմաց տեղիս հայ երիտասարդության, ուսուցիչ
Գևորգ Տեր-Սարգսյան

ՀԱԱ, Ֆ.221, ց.1, գ.2, թ.57-58: Բնագիր: Ձեռագիր:

N 32

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

20 դեկտեմբերի 1914թ.

Նիստը բացեց թեմական սրբազան առաջնորդը, որի հրավերով հավաքված էր ժողովը և հայտնեց ժողովականներին, որ Բյուրոյի նախագահ Ս.Հարությունյանը

քաղաքիցս հեռանալու պատճառով որոշեց գումարել այսօրվա ժողովը՝ անհետաձգելի հարցեր վճռելու համար:

1. Օրակարգի հարցերին անցնելուց առաջ ժողովականներից մեկը հարց բարձրացրեց Բյուրոյի նախագահի Թիֆլիսից հեռանալու մասին: Սրբազան [առաջնորդ] նախագահի և ուրիշների ունեցած տեղեկություններն այդ մասին և ուրիշ ճառախոսների կարծիքները լսելուց հետո ժողովը որոշեց այդ մասին բացատրություն պահանջել Ս.Հարությունյանից, նրա վերադառնալուց հետո և ապա կայացնել այս կամ այն վճիռն այդ մասին:

2. Պ. գանձապահի ժամանակավորապես հեռանալու պատճառով գանձապահի պարտականությունները որոշվեց հանձնել Պ.Գ.Ցուրինյանին, որը հանձն առաջ այդ պաշտոնը առանց նախկին հաշիվների պատասխանատվությունն իր վրա վերցնելու պայմանով և միմիայն իբրև ժամանակավոր պաշտոնավար:

3. Թավրիզի առաջնորդից ստացած հեռագրի՝ Ալաշկերտի մեծ գաղթականության մասին տնօրինություններ անելը հանձնվեց գործադիր մարմնին:

4. Որոշվեց ցնոր տնօրինություն, անցյալ գործադիր մարմնի ամենօրյա նիստերը՝ ժամը 7-ից, երեկոյան, առաջնորդարանում: Առաջարկվում է Բյուրոյի մյուս անդամներին էլ ըստ ցանկության, մասնակցել գործադիր մարմնի նիստերին:

5. Խնդրել պարոն փոխ-նախագահին ըստ առաջնում շարունակել մշտական հարաբերությունները շտաբի հետ և պաշտոնական անձանց հետ և կարևոր դեպքերի մասին անմիջապես տեղեկացնել գործադիր մարմնին:

6. Ի նկատի ունենալով, որ քանի գնում, ավելի ու ավելի փողի կարիք է զգացվում, որ Թիֆլիսի հանգանակությունը շատ անբավարար է, որ դրսի աղբյուրներն էլ սակավ առ սակավ ցամաքում են, որոշվեց հեռագրով դիմել Բյուրոյի գլխավոր բաժանմունքներին (Բաքու, Մոսկվա, Պետրոգրադ, Արմավիր, Եկատերինոդար, Նախիջևան) և խնդրել Թիֆլիսի պատրաստի դրամները:

7. Ենթադրելով, որ ապագայում Բյուրոն կարող է դժվարանալ միջոցներ հայթհայթելու՝ կամավորներ պահելու համար, ուստի որոշվեց այդ առթիվ որոշ հող պատրաստել կառավարչական շրջաններում:

8. Որոշվեց խնդրել գործադիր մարմնից Բյուրոյի գալ նիստին ներկայացնել ամփոփ հաշիվ ստացված և ծախսված գումարներ, նշանակելով, ումից և որքան և ում է վճարված որքան, այլև նախահաշիվ մեր ապագա անհրաժեշտ ծախսերի:

Պատվավոր նախագահ Մեսրոպ եպիսկոպոս

ՀԱԱ, Ֆ.288, ց.1, գ.3, թ.2: Բնագիր: Ձեռագիր:

N 33

24 դեկտեմբերի 1914թ.

1. Կարդացվեց Բյուրոյի նախագա պ. Ս.Հարությունյանի նախագահական պաշտոնից հրաժարվելու մասին: Ժողովն ընդունեց հրաժարականը:

2. Նոր նախագահ ընտրելու հարցը հետաձգվեց հետևյալ նիստին:

3. Պարսկահայերի գաղթը խորապես հուզեց ժողովին, վշտացրեց այն հանգամանքը, որ ժողովը վաղօրոք այդ մասին ոչ մի տեղեկություն չի ստացել: Ցանկություն հայտնվեց, որ սրանից հետո Բյուրոյին այդպիսի կարևոր դեպքերի մասին առաջուց տեղեկացնեն և կամ զորքի և կամավորների խմբերով ապահովեն նրանց գաղթը

4. Բոլոր գաղթականներին օգնելու գործը որոշվեց առաջնում թողնել կենտրոնական կոմիտետին: Մեսրոպ Սրբազանը ծանոթացրեց Տատյանա

Նիկոլաևնայի հովանավորության տակ գտնվող կոմիտետի գործունեության մասին և հայտնեց, որ այդ կոմիտետը օգնության է հասնելու և Կովկաս ապաստանած օտարահպատակ գաղթականներին, ուրեմն և բոլոր գաղթական հայերին:

5. Այնուհետև կարդացվեց հաշվապահ Փարմուզյանի կազմած ստացված և ծախսված գումարների ելևմտից հաշիվը:

6. Խմբեր միացնելու հարցը մնաց առայժմ առկախ:

Նախագահող՝ [Մեսրոպ սրբազան]
Պատվավոր նախագահ

ՀԱԱ, Ֆ.288, ց.1, գ.3, թ.3: Պատճենը: Ձեռագիր:

N 34

27 դեկտեմբերի 1914թ.
(առավոտյան)

Թեմիս սրբազան առաջնորդի նախագահությամբ և գավառական պատգամավորների մասնակցությամբ:

Ժողովս լսեց գավառական պատգամավորների տեղական գործունեության մասին կարճատև զեկուցումներ, որոից, ի միջի այլոց, երևաց, որ՝

ա. Ախլցխայի* տեղական կոմիտեն փողի ժողովարարությունը ամսական տուրքերի միջոցով է անում: Հավաքած փողերի մի մասը ծխսում է պատերազմից բխած տեղական պետքերի վրա:

բ. Ալեքսանդրապոլի կոմիտեն՝ նույնպես: Տեղական կոմիտեի անդամների թիվը մեծ լինելու պատճառով գործունեությունը դանդաղ է ընթանում:

գ. Աստրախանի կոմիտեն ընտրված է ծխական ժողովով և բաղկած է 20մարդուց: Մինչև այժմ հավաքված է մոտ 38 հազար ռ., որից 35 հազարը ուղարկված է Թիֆլիս: Գործունեությունը սեկցիաներով է. կազմված է առանձին կանանց կոմիտե: Փողի փոքրիկ մասը գործադրում են տեղական պեքերի վրա: Մտադրություն կա հայերեն թերթ հրատարակել: Պատգամավորը գանգատվում էր, որ Թիֆլիսի կերպով** սիստեմատիկ կերպով անպատասխան էր թողնում Աստրախանի կոմիտեի նամակներն ու հեռագրերը, մինչև անգամ ուղարկած գումարի մասին տեղեկություն չէր ստացված: Աստրախանի հայ հասարակությունը առանձին հանգանակությամբ բաց էր արել մի հիվանդանոց:

դ. Դերբենտի կոմիտեն ցանկություն է հայտնում պաշտոնական իրավունք ստանալ գործունեության համար:

Կոմիտեին կից կազմված է կանանց կոմիտե՝ գաղթականների գործով զբաղվելու համար և մի հանձնաժողով կամավորների գործի համար: Մտադրություն կա սեփական լազարեթ բանալու. ինքնապաշտպանության հարցը նրանց էլ զբաղեցնում է:

ե. Շուշվա կոմիտեի սկիզբը դրել է պ.Կաֆյանը. հետո այդ շրջանը լայնացել է. տուրք է նշանակված քաղաքի բոլոր հասարակության վրա. մինչև այժմ հավաքվել է 2400ռ.: Թիֆլիսում ղարաբաղցիների կոմիտեն նույնպես հավաքել է 2000ռ.: Փախստականներին ուղարկված է 500ռ. և շորեղեն:Առանձին հանձնաժողովներ են կազմված՝ բարեգործական և ինքնապաշտպանողական:

զ. Ղամարլուի կոմիտեն փող հավաքում է ամբողջ գյուղացիներից. տուրքը կամավոր է. հավաքվում է ամսական 1000-1500ռ. փողը ուղարկվում է Հորիզոնի

* Այս և մյուս ընդգծումները բնագրինն է:
** Բնագրում այդպես է:

միջոցով: Ցուցակագրված 4000 մարդ՝ իբրև կռվող ուժ. ցուցակ է կազմված զենքերի: Գաղթականներին օգնելու գործը նույնպես դրված է կանոնավոր հողի վրա:

է. Ղարսի կոմիտեն հիմնել է Բաբաջանյանը: Բյուրոն սեկցիաների է բաժանված՝ կամավորների, վիրավորների, ինքնապաշտպանության և դրամական: Մոտ 12-15 հազար ռ. ծախսված է փողով և շորով: Գոյություն ունի օժանդակիչ կանանց խումբ: Գաղթականներինօգնելու գործով ևս զբաղվում է կոմիտեն:

ը. Անդիժանի և Կոկանդի կոմիտեն պ.Կաֆյանի գալով կանոնավորվել է: Հավաքված գումարները ուղարկվելու են Թիֆլիս. այդ կողմերում հույս կա 50 հազար հավաքել: Կամավորներ ուղարկված են և կան ցանկացողներ: Ինքնապաշտպանության գործը հույս կա կազմակերպելու ռուսների և վրացիների հետ միասին, տեղական մահմեդականների, այսինքն՝ ...* մեջ անտարակույս պտտում են էմիսարներ Տաճկաստանի: Տեղական կոմիտեին կից կա կանանց Կարմիր խաչի կոմիտե: Խնդիր է հարուցված հայ կամավորների ընտանիքներին ևս հատկացնել արքունական գանձարանից պայոկներ: Ուշադրության արժանի հանգամանքն այն է, որ տեղիս բարձր իշխանությունը գերմանացիներից է կազմված:

թ. Նոր-Բայազետի կոմիտեն գլխավորապես զբաղեցնում է ինքնապաշտպանական հարցը: Տեղիս գավառապետը անվերջ արգելքներ է հանդիսացնում կոմիտեի գործունեությանը: Գործունեության գլխավոր առարկաներն են կամավորների և գաղթականների հարցերը: Փողը հավաքվում է թե՛ քաղաքում և թե՛ գավառում, մի մասը ուղարկվել է:

ժ. Ստավրոպլի կոմիտեն կազմված է 18 հոգուց և ընտրված է ծխական ժողովով: Կոմիտեին կից կազմված է կանանց կոմիտե, որը գլխավորապես զբաղվում է գաղթականների գծով: Փողի հանգանակությունը սկսվել է և կարող է տալ մինչև 10000ռ. միայն Ստավրապոլում, գյուղերը չհաշված: Թիֆլիսի բյուրոյի հետ գրեթե հարաբերություն չեն ունեցել. այդ պատճառով էլ մինչև այժմ չեն կարողացել [պարզել], ինչ բանի վրա իրավունք ունի ծախսելու և կամ ումը պետք է ուղարկել. ուղարկվել են 15 կամավոր: Հայ կամավոր խմբի մեջ ուզում են մասնակցել ռուսները:

ի. Եկատերինոդար կոմիտեն կազմված է Թիֆլիսից ստացված հեռագրի հիման վրա և կոչվում է «Комитет по организации дружины», ճանաչված և ընդունված է կառվարության կողմից: Ռուսների և իշխանության վերաբերմունքը դեպի կամավորները և դեպի հայերը շատ լավ է: Կոմիտեին կից կազմված է մասնաճյուղ հիվանդանոցի համար, հիվանդանոցն ունի 60 մահճակալ և 2500ռ. բյուջե: Ժողովարարությունն արդեն սկսվել է: կոմիտեի նախագահն է Գեղ.Տեր-Պետրոյան, փոխնախագահը՝ Նիկ.Սաթունյան: Առանձին խնմաքով կազմվել է կամավորների խումբ,որի բոլոր պիտույքները հոգացել է տեղական կոմիտեն:

Զենք ստացել են զինվորական իշխանությունից. մարզվել են կազարմաներում.ճանապարհ են դրված մեծ շուքով. դրոշակը օրհնելուց հետո կամավորներին հանձնել է начальник штаба Кубанска войска: Հայկական պատգամավորություն ներկայացրել է կայսեր և արժանացել է նորին կայսեր մեծության գոհունակության: Հայ հասարակությունը շորեղեն և նվերներ ուղարկել է Կուբանի կազակներին՝ Վարշավայի կողմը և այժմ ուղարկում է երկու վագոն նվեր նույն կազակներին՝ Բայազետի և Կարսի շրջանում պ.Սաթունյանի միջոցով:

լ. Հին Նախիջևանի ներկայացուցիչը գանգատվում է, որ քաղաքում ոչ մի ոգևորություն չի նկատվում, իսկ ինքապաշտպանության կարևորությունը չի ընդունվում: Երկու տեսակ բյուրո գոյություն ունի՝ ազգային և երիտասարդների: Առայժմ հավաքված է 300ռ.: Գյուղերից կարելի է հավաքել մոտ 1000ռ.:

խ. Մեծ Ղարաքիլիսայի կոմիտեն ներկայացնում է իբրև կենտրոնական ամբողջ Լոռու շրջանի մեջ: Շրջիկ կազմակերպիչների միջոցով կազմված են

* Հաջորդ մեկ բառն անընթեռնելի է:

ենթակոմիտեներ: Հավաքվում է փող, բայց չգիտեն ում վրա և ինչպես ծախսելու Առաջին գործունեությունը եղել է կամավորներ պատրաստել և ուղարկել: Ժողովուրդը շատ քիչ զենք ունի, իսկ փամփուշտ՝ բնավ:

ծ. Գանձակի կոմիտեն կազմված է 12 մարդուց. կառավարությունը չի ճանաչում և առհասարակ վատ է վերաբերում: Հասարակությունն անտարբեր է թե՛ դեպի կամավորների և թե՛ դեպի ինքնապաշտպանության գործը. շատերը Ազգային բյուրոյի գործունեությունը վնասակար պրովոկացիա են համարում: Տուրքեր չեն նշա[նա]կվել և ընդամենը 1000ռ. է հավաքվել կռվող ուժերի ցուցակը պատրաստվել է: Գանձակը տվել է կամավորներ: Հայ հասարակությունը լազարեթի համար վարձել է մի բնակարան և Կարմիր խաչի տրամադրության տակ է դրել: Ինքնապաշտպանության գործը վերջիվերջո, անշուշտ, պետք է զբաղեցնի տեղական հասարակությանը: Տեղական կոմիտեն կազմվել է Ազգային բյուրոյի կողմից հատուկ եկած պ.Պապովյանի ջանքերով:

կ. Ատրպատականի կոմիտեն կարողացավ հավաքել 3000 թուման: Թավրիզի հայ հասարակությանը խոստացվել էր հարկավոր դեպքում զենք բաժանել, բայց այս րոպեիս այս բոլոր հարցերը վերացած պետք է համարել, որովհետև ռուսաց զորքի Պարսկաստանից քաղվելով, սկսվել է ահագին գաղթականություն Թավրիզի, Ուրմիայի, Սալմաստի և Խոյի հայ բնակչությանը դեպի Ռուսաստանի սահմանները, իսկ մնացածներին սպառնում է մեծ վտանգ:

Բոլոր վայրերի պատգամավորները միաբերան գանգատվում են, որ Կենտրոնական բյուրոյի և տեղական կոմիտեների մեջ ոչ մի կապ չի եղել և սերտ հարաբերություններ չեն պահպանվել, որի պատճառով հասարակության ոգևորությունը թուլանում է, իսկ գործը չարաչար տուժում: Անհրաժեշտ են գտնում գրավոր հարաբերություն պահպանել և, թե կարելի է, շրջիկներ ուղարկել և համագումարներ կազմել:

Ժողովի նախագահ Մեսրոպ եպիսկոպոս

ՀԱԱ, Ֆ.288, ց.1, գ.3, թ.4-5: Բնագիր: Ձեռագիր:

N 35

27 դեկտեմբերի 1914թ.
(երեկոյան)

1. Պ.Կարոն ժողովականների խնդրանքով տեղեկություններ հաղորդեց իր խմբի գործունեության մասին:

2. Պ.Վրացյանը կարդաց ամփոփ գրավոր զեկուցում զինվորական մարմնի գործունեության մասին: Զեկուցումը կցված է ընդ սմին: Ժողովը շնորհակալություն հայտնեց զնվորական մարմնին և բոլոր կամավորներին՝ նրանց անձնուրաց գործունեության համար:

3. Ժողովականները ցանկություն հայտնեցին, որ ամենամոտ միջոցում պատրաստվի Բյուրոյի ամբողջ գործունեության վերաեբերյալ հաշիվը և նախահաշիվ ապագայի վերաբերյալ:

4. Պ.Լեոն զեկուցեց Հայ[ական] հարցի և Տաճկահայաստանի ապագա քաղաքական կազմի մասին: Ժողովականները շնորհակալություն հայտնեցին պ.Լեոին նրա վերին աստիճանի հետաքրքրական զեկուցման համար: Տեղի ունեցած մտքերի փոխանակության մասնակցեցին պ.պ. Բաբաջանյան, Շիրվանզադե, Հ.Տեր-Մկրտչյան, Տեր-Ղազարյան, Շահխաթունյան, Խատիսյան և այլք: Ցանկություն հայտնեց, որ առաջ զեկուցվող հարցի մասին մի տեղեկագիր պատրաստել ապագա համագումարի

համար, մշակված սահմանադրությամբ հանդերձ: Մամուլի մեջ նույն այդ հարցի մասին ցանկություն հայտնեց ասպարեզ գալ խոհեմությամբ, առանց գրգռելու Հայ[ական] հարցի թշնամիներին:

Նախագահ [Մեսրոպ եպիսկոպոս]

ՀԱԱ, Ֆ.288, ց.1, գ.3, թ.6: Բնագիր: Ձեռագիր:

N 36

28 դեկտեմբերի 1914թ.

Թեմիս առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսի նախագահությամբ

1. Բագվի ներկայացուցիչների՝ Եր.Թաղինոսյանի և Հ.Տեր-Միքայելյանի հարցապնդումին ի պատասխան սրբազան նախագահը բացատրեց, որ Բյուրոն որոշել է կամավորների թիվը, պահեստավորների հետ հաշված, հասցնել վեց հազարի: Նաև հավաստիացրեց, որ այդ թիվը ավելացնելու դեպքում Բյուրոն պետք կհամարի և թե՛ այլ խոշոր վայրերի ազգային բյուրոների համաձայնությունն ստանալ:

2. Բյուրոյի բոլոր ճյուղերը զանազան քաղաքներում հավասարապես հետաքրքրվում են գաղթականների հարցով, ուստի որոշվեց կամավորներ պահելու անհրաժեշտ ծախսերի նախահաշիվ կազմել և անհապաղ ուղարկել բոլոր ճյուղերին, որպեսզի տեղական բյուրոները իմանան, իրենց գումարների որ մասը պետք է տան կամավորների գործին և որ մասը՝ հօգուտ գաղթականների:

3. Ապագա համագումարի օրակարգը պատրաստել և առաջուց ուղարկել բոլոր ճյուղերին:

4. Որոշվեց համաձայն Բագվի բյուրոյի հայտնած ցանկության, պ. Լ.Ղուլյանին ճանաչել Կենտրոնական բյուրոյի անդամ և հրավիրել բոլոր ժողովներին:

Նախագահ Մեսրոպ եպիսկոպոս

ՀԱԱ, Ֆ.288, ց.1, գ.3, թ.6: Բնագիր: Ձեռագիր:

N 37

29 դեկտեմբերի 1914թ.

Պ. Ս.Հարությունյանի նախագահության պաշտոնից հրաժարվելու, իսկ պ. Հ.Քոչարյանի քաղաքիցս հեռանալու պատճառով որոշվեց ընտրություններ կայացնել նախագահի և քարտուղարի, իսկ Պ. Ալ.Խատիսյանի առաջարկությամբ՝ նաև մի փոխ-նախագահ ևս, որով փոխ-նախագահների թիվը լինելու է երկու, միաժամանակ այն պայմանով, որ նոր ընտրվելիք փոխ-նախագահը լինի առաջին փոխ-նախագահ, իսկ ինքը՝ պ.Ալ.Խատիսյանը, կմնա երկրորդ փոխ-նախագահ: Փակ քվեարկությամբ՝ թերթիկներով նախագահ ընտրվեց՝ 18 ձայնով ընդդեմ 2-ի, պետական դումայի անդամ պ.Մ.Պապաջանյան, առաջին փոխ-նախագահ՝ 17 ձայնով ընդդեմ 3-ի, պ.Խունունց և քարտուղար՝ 16 ձայնով ընդդեմ 4-ի, պ. Մ.Բերբերյան:

Նախագահ Մեսրոպ եպիսկոպոս

ՀԱԱ, Ֆ.288, ց.1, գ.3, թ.8: Բնագիր: Ձեռագիր:

N 38

Ն.ԱՂԲԱԼՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Ս.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԿՐԱԾ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

24 դեկտեմբերի 1914թ.
Կարս

Վերջին նահանջի ժամանակ մեր կամավորները (Քեռու խումբ) կռվի դաշտում թողել են մեծ քանակությամբ շինելներ, պայուսակներ և այլ իրեր: Իրենց նախկին բնակավայրում գտնված իրերը երեք սայլ բարձած բերել են Նարիմանի մոտերքը և գնդացիրի կրակի տակ հանդիպելով, թողել են անցել Օլթի:

Սարիղամիշի կռիվների ժամանակ ժողովուրդը փախչում է ահաբեկ. իմ օգնականը մի քանի օր պահանջում է մեր պահեստը, ուր մոտ 25.000ր. ապրանք կար ամբարած (վերջին անգամ ես էի ուղարկել երկու վագոն), այնուհետև ստիպված է լինում ինքը ևս մասնակցելու կռիվների, և մեր պահեստը անխնա թալանում են կոզակներն ու զինվորները. մանավանդ տանում են մեր տաք շորերը, կիսամուշտակները, յափնջիները և այլն:

Ասում են, որ այդ թալանին մասնակցել են տեղացիները, որոնք այդ նպատակով մնացել էին Սարիղամիշում, չնայած սոսկալի ռմբակոծության և հրետանածգության: (Վերջին կետը դեռ չեմ ստուգել):

Երեկ նամակ ստացա Վալադյանից, որ Համազասպի խումբը ևս ստիպված է եղել նահանջելու ռուսաց զորքի հետ: Նահանջի ժամանակ նրանք ևս պատահում են գնդացիրի կրակի, զոհ են տալիս մոտ 17 ընտիր տղաներ և կորցնում են իրենց ամբողջ աբոզը: Այսպիսով մենք մնացել ենք առանց հագուստի, կոշիկների և այլն: Ստիպված եմ շուտափույթ զանազան իրեր գնելու, որ տղաների անմիջական կարիքները հոգան, դրամի շատ մեծ կարիք ունենք:

Առժամապես փոխարինաբար 1000ր. պարտք եմ արել Երվանդ Տեր.Մինասյանից, որ նամակս բերում է Ձեզ: Խնդրեմ նախ վճարել հիշյալ պարոնին առածս 1000ր. պարտքը և շուտով ինձ դրամ հասցնեք, որ խմբերը նորից գործի հանենք:

Վերջին կռիվների մեջ մերոնք մասնակցություն ունենալ չկարողացան, որովհետև բավարար հագուստ ու կոշիկ չունեին: Նեղ օրերին ամեն չարչարանք քաշեցին, երբ պետք էր թշնամուն հարվածել և, ջարդել անմասն մնացին, որ շատ ցավալի է: Բայց ինչ կարող էին անել առանց շինելի և պայուսակների ու կոշիկների մարդիկ ձմռան այս ցրտերին, առանց պաշարակիր սայլերի ու բավարար մթերքի:

Նորից խնդրում եմ շտապով ինձ փող հասցնել կամ պ.Երվանդ Տեր-Մինասյանի ձեռքով կամ հեռագրով և այն հասցեով, որ նա կտա ձեզ:

Վերջին անցուդարձի մասին շատ բան կարող եք լսել պ.Երվանդից:

Բարևներ, հարգանքով՝ Ն.Աղբալյան

P.S. Քեռու խումբը Կարս է, Համազասպինը՝ Կաղզվան. երկու խումբն էլ վերակազմվում են:

Նույն

ՀԱԱ, Ֆ.221, ց.1, գ.3, թ.51-53: Բնագիր: Ձեռագիր:

N 39

ՋՈՒԼՖԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ՕԺԱՆԴԱԿԻՉ ՄԱՐՄՆԻ ՎԱՐՉՈՒԹ ՅԱՆ

ՆԱՄԱԿԸ ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ՝ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳԱՆՁԱՐԿՂՈՒՄ ԵՂԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

28 դեկտեմբերի 1914թ.
Ջուլֆա

Ի նկատի ունենալով, որ տեղիս ազգաբնակությունը գրեթե ամբողջովին գաղթեց և նմանապես օժանդակիչ մարմնիս վարչության անդամներն էլ հարկադրված են հեռանալ տեղիցս, վարչությունս պարտավորված է իրեն համարում լիկվիդացիայի ենթարկել իր գործերը, և որովհետև ընդհանուր ժողով գումարելու կարելիություն չկա, ներկայիս ներքոստորագրող վարչության անդամների ներկայությամբ քննեց իր ելևմուտը և հաստատեց, որ գանձարկղում գտնվում է...*, որը որոշեց փոխադրել գանձապահ պ.Ղուկաս Առաքելյանի միջոցովԹիֆլիս՝ Ազգային բյուրոյի նախագահիդ, երկու հարյուր վաթսուն...

Վարչությունս իր գործունեության ընթացքում նոյեմ[բերի] 2-ից մինչև դեկտ[եմբերի] 27-ը ընդամենը մուտք է ունեցել՝ անդամավճարներից երկու հարյուր տասն ռուբլի, հօգուտ մարմնիս՝ պրաժեկտորից՝ վաթսուն ինն ռուբլի 52 կոպ. ծախս է եղել կամավորների վերաբերյալ և հեռագրերի՝ 19ռ. 12 կոպ.: Մնացած զուտ արդյունքն փոխադրվում է Ձեզ փոստով:

Անդամներ վարչության Ս.Ա.Ջանփոլադյան
...**
Գալուստ Գալուստյան
Ջումշուդ Աբրամյան

ՀԱԱ, Ֆ.221, ց.1, գ.1, թ.40: Բնագիր: Ձեռագիր:

N 40

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԴԻՎԱՆԱՊԵՏԻ ՆԱՄԱԿԸ ՍԱՄՍՈՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԼՈՒԳԱՆՍԿԻ ՀԱՅՈՑ ԱՂՈԹԱՏԱՆ ԵՐԵՑՓՈԽԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՆԳԱՆԱԿՎԱԾ ԳՈՒՄԱՐԸ ՏՆՕՐԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դեկտեմբեր 1914թ.
ս.Էջմիածին

Մեծարգո պ. Սամսոն Հարությունյան

Լուգանսկի հայոց աղոթատան երեցփոխ պ. Հազարապետ Դանիելյանը նոյեմբերի 28 թվակիր նամակով նույն տեղի հայ հասարակության կողմից վեհափառ Հայրապետի անունով փոխադրել է երեք հազար չորս հարյուր քառասուն և հինգ ռուբլի 60կ. (3445ռ. 60կ.) գումարը, որը, ինչպես իր նամակի մեջ հիշում է, «հավաքված է Լուգանսկի հայոց ժողովրդեն Նախիջևանի-Բեսարաբիայի կոնսիստորիայից»:

Վեհափառ Հայրապետի հրամանով դիվանս ներփակյալ ուղարկելով Ձեր անունով 3445ռ.60կ. փոխադրական N 1188/938449 տոմար 28 նոյեմբերի 1914թ. և կոնդակի պատճենը, խնդրում է հանձնել ըստ պատկանելույն՝ գործադրելու ինչ նպատակով որ հավաքված է գումարը:

* Այս և մյուս բացթողումները գումարի չափը չի նշված:
** Անընթեռնելի:

Բարեհաճեցեք ուղարկել գումարի ստացման մասին անդորրագիր դիվանին՝ վեհափառ Հայրապետին ներկայացնելու և նվիրատուներին ապահովելու համար:

Դիվանապետ Բագրատ եպիսկոպոս

ՀԱԱ, Ֆ.221, ց.1, գ.3, թ.73: Պատճեն: Ձեռագիր:

N 41

ՑՈՒՑԱԿ ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՕԳՏԻՆ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ՀԱՍՑԵՈՎ ԱՌԱՔՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ

1914թ.

1. Ասխաբադի կանանց ընկեր[ության] նախագահ Շուշանիկ Մամիկոնյանից - 100ռուբլի: Ուղարկված է Սամսոն Հարությունյանին դիվանի 1914թ. դեկտ. 15-ի հմ. 1938 գրությամբ:
2. Օրբազարի Օգսենտ քահ. Հայրունուց - 542 ռուբ.: Ուղարկված է Սամսոն Հարությունյանին 1914թ. դեկտ. 15-ի հմ. 1937 գրությամբ:
3. Լուգանսկի երեսփոխան Հազարապետյանից - 3445ռ.60կ.: Ուղարկված է Սամսոն Հարությունյանին 1914թ. դեկտ. 19-ի հմ. 1954 գրությամբ:
4. Նյու-Յորքից (Պետրոգրադի Ռուս[աց] արտաքին առ[ևտրի] բանկի միջոցով) - 1355 ռուբ.: Ուղարկված է Տփխիսի [Հայոց Ազգային կենտրոնական] բյուրոյի փոխնախագահ Հովսեփ Խունունցի 1915թ. փետրվարի 4-ի հմ. 200 գրությամբ: Պետրոգրադի Ռուսաց արտաքին առևտրի բանկի միջոցով:
5. Նյու-Յորքից հեռագրով (Պետրոգրադի Ռուս[աց] արտաքին առ[ևտրի] բանկի միջոցով) - 210 ռուբ.: Ուղարկված է Տփխիսի [Հայոց Ազգային կենտրոնական] բյուրոյի փոխնախագահ Հ.Խունունցին 1915թ. փետրվարի 9-ի հմ. 229 գրությամբ:
6. Ամերիկայի Նիշուե քաղաքից՝ Սեբաստիո Ուլաշ գյուղի հանձնախմբից - 450 ռուբ. 07 կոպ.: Ուղարկված է Տփխիսի [Հայոց Ազգային կենտրոն] բյուրոյի փոխնախագահ Խունունցին 1915թ. մարտի 13-ի հմ. 407 գր[ությամբ]:
7. Ամերիկայի ազգային պաշտպանության հանձնախմբից - 3409ռ. 10կ.:*

Բագրատ եպիսկոպոս

ՀԱԱ, Ֆ.57, ց.5, գ.102, թ.1: Բնագիր: Ձեռագիր:

N 42

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐ՝ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆԸ ԱՄԵՆ ԻՆՉՈՎ ՕԳՆԵԼՈՒ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Բաքվի քաղաքային լազարեթի օրդինատոր, բժշկուհի Ելենա Զուրաբյանի նամակը Հայոց ազգային բյուրոյին՝ հայ կամավորներին բուժօգնություն ցույց տալու գործում իրեն ևս մասնակից դարձնելու խնդրանքի մասին:

[1914թ.]

* 7-րդ հոդվածի տակ նշված գումարը՝ 3409ռ.10կ. (որը ջնջված է), ուղարկվել է Թիֆլիս «Մշակ» խմբագիր Համբարձում Առաքելյանի միջոցով՝ վերջինիս 1915թ. ապրիլի 16-ի հմ. 650 մակագրությամբ՝ «Սյունիքին» (տե՛ս նույն փաստաթուղթը):

Բուռն ցանկություն ունենալով բժշկական օգնություն հասցնել մեր կամավորներին, խնդրում եմ կռվի դաշտն բժշկական խմբեր ուղարկելիս կամ ուր որ դուք հարմար կգտնեք բժիշկ ուղարկելու, ինձ ի նկատի ունեցեք:

Այժմ Բագու քաղաքային լազարեթում գործում են օրդինատորի պաշտոնում:[17]

Հասցեն հետևյալն է.
Врачу Елене Ивановне Зурабовой,
Сласская 5, кв.4, тел. 6-08,
г.Баку

ՀԱԱ, Ֆ.28, ց.1, գ.114, թ.7: Պատճեն: Ձեռագիր:

N 43

Հեռագիր Բաքվից՝ Հայ կամավորական ջոկատներին անդամագրվելու երկու հայ կին բժիշկների ցանկության մասին

1914թ.

Երկու կին բժիշկներ համաձայն են մեկնելու: Տղամարդ չկա: Կամավորների վերջին խումբը մեկնել է երեկ: Դա այլևս չի լինի առանց Բյուրոյի նախնական համաձայնության:

ՀԱԱ, Ֆ.Պ-28, ց.1, գ.114, թ.42: Հեռագրական բլանկ:

N 44

Հեռագիր Ռոստովից՝ ռումինահայերի և օդեսահայերի կամավորագրվելու ցանկության մասին

1914թ.

Այսօր Ռումինիայից ցանկանում են մեկնել 70 դրուժինականներ: Հինգ հոգի էլ ցանկանում են Օդեսայից: Ճանապարհե՞լ նրանց թե՞ պահել:

Չալխուշյան

Նույն գործը, թ.130:

N 45

Նոր Նախիջևանի հայության հեռագիրը՝ Թուրքիայի դեմ սկսած պատերազմում ռուսական բանակին աջակցելու նախիջևանահայերի ցանկության մասին

1914թ.

Թուրքիայի դեմ պատերազմ սկսելու կապակցությամբ Նոր Նախիջևանի հայության շրջանում հսկայական վերելք է սկսվել: Եկեղեցու հրապարակում կայացած հավաքում հայ հոգևորականությունը աղոթքներ ու մաղթանքներ է հղել ռուսական զենքի հաջողություններին: Տեղի ունեցած բոցավառ ելույթներում հայ հռետորները ցայտուն կերպով շեշտել են Մեծ Ռուսաստանի պատմական առաքելությունը Արևելքում: Բազմահազարանոց թափորը թագավորի և թագաժառանգի պատկերներով ու նվագախմբով շարժվեց դեպի հարևան Ռոստով՝ ի ցուցադրություն քաղաքապետի, անգլիական, ֆրանսիական ու բելգիական հյուպատոսների: Եղանակը բարեհաճ էր

հանդիսությունների համար: Միապետին ուղարկվեցին հավատարիմ հպատակության զգացմունքի հեռագրեր և ողջույններ Վորոնցով-Դաշկովին, Սազոնովին ու գլխավոր հրամանատարին: Շատ հայեր ցուցակագրվեցին հայկական կամավորական ջոկատներին, հավաքեցին նվիրատվություններ:

Առաջնորդական տեղապահ, վարդապետ Գևորգ
Հավատարմատար Չալխուշյան

Նույն գործը, թ.92:

ՀԱՅԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄՈՍԿՎԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՀԵՌԱԳԻՐԸ

N 46

Փարիզի բժիշկը համաձայն է: Երկուշաբթի մեկնում է: Մյունխենում ավարտած մյուս բժիշկը համաձայն է հետևելու զորագնդին, եթե հարկ համարվի: Հեռագրեցե՛ք [Մոսկվա], Հայկական նրբանցք, Հայ եկեղեցու տուն:

Մոսկվայի կոմիտե

Նույն գործը, թ.82:

N 47

Մոսկվայի հայ ինժեներները առաջարկում են կազմակերպել օդային ջոկատ [կամավորական] դրուժինայի համար: Հաղորդեցե՛ք, կա՞ անհրաժեշտություն:

Մոսկվայի Հայկական կոմիտե

Նույն գործը, թ.87:

N 48

1914թ.

Թուրքիայի դեմ պատերազմ սկսելու կապակցությամբ [Մոսկվայի] Հայկական պաշտոնական կոմիտեն խնդրում է անդադար կապի մեջ պահել գործընթացի մասին: Հեռագրով հաղորդեցե՛ք պաշտոնական կոչի տեքստը, եթե դրա կարիքը կզգացվի: Ուսանողները ցանկանում են մասնակցել որպես սանիտար-կամավորականներ: Եթե պետք է, հաղորդեցեք [Մոսկվա], Պոկրովկա 42, Մամիկոնյանին:

Նույն գործը, թ.93:

N 49

Հեռագիր Ռոստովից՝ Օդեսայից հայ կամավորների ճանապարհելու մասին
1914թ.

հմ. 221 գնացքով Օդեսայից մեկնել են 135 հայ կամավորներ:

Չալխուշյան

Նույն գործը, թ.93:

N 50

Հոգևորական Նիկոլայ Ոսկանյանի հեռագիրը Նոր Նախիջևանից՝ իր 16-ամյա որդուն ռազմաճակատ մեկնելուց ետ պահելու մասին

28 դեկտեմբերի 1914թ.

16 տարեկան որդիս՝ Լևոնը, իմ կամքին հակառակ, կամավոր է մեկնել: Խնդրում եմ ետ պահել և վերադարձնել տուն:

Նույն գործը, թ.105:

N 51

Հեռագիր Պետրոգրադի հայկական ներկայացուցչությունից

1915թ.

Երեկ ճանապարհելով հայ կամավորների առաջին խումբը, խնդրում եմ Ձերդ Սրբությանը (Մեսրոպ եպիսկոպոսին - կազմ.) նրանց բարեմաղթել արիասիրտ ճանապարհ: Այստեղ գտնվող վիրավոր հայերը տենչում են շուտ ապաքինվել և կովկասյան զորքի շարքերում նորից մարտի նետվել թուրքերի՝ քրիստոնեաների հավերժ թշնամու դեմ: Խնդրում եմ Ձեր միջնորդությունը Նորին Սրբություն Կովկասի փոխարքայի առջև՝ նրանց ուղարկելու կովկասյան օկրուգի պահեստային գումարտակներ:

Պետրոգրադի խնամատար համայնքի
նախագահ Սուլթանշահ

Նույն գործը, թ.124:

N 52

Տագանրոգի Հայկական կոմիտեի հեռագիրը՝ հայ կամավորների համար տաք հագուստ պատրաստելու խնդրի մասին

18 նոյեմբերի 1914թ.

Տագանրոգի Հայկական կոմիտեն պատրաստում է տաք սպիտակեղենի, վերնաշապիկների, վարտիքի, բաշլուղի (գլխանոցի - կազմողներ) փորակապերի, ոտքի փաթաթանների, բամբակե բաճկոնների, անթևք զգեստների 500 կոմպլեկտ: Խնդրում եմ հեռագրեցեք, պե՞տք են, արդյոք, զգեստի ինչ-որ առարկաներ:

Կոմիտեի քարտուղար, քահանա Օկսենտյանց

Նույն գործը, թ.140:

N 53

Հեռագիր Մերվի քաղաքից՝ առանց ծնողների թույլտվության երկու հայ պատանիների մեկնումը կովկասյան ռազմաճակատ արգելելու մասին

1914թ.

Առանց ծնողների թույլտվության [կամավորական] ջոկատի մեջ մտնելու համար Թիֆլիս են մեկնել Արմեն Մարտիրոսովը և Իվան Մելիք-Մկրտչյանցը: Մինչև նրանց ծնողների հասնելը Թիֆլիս պատանիների ծնողների անունից խնդրում եմ ետ պահել նրանց:

Կաֆիև

Նույն գործը, թ.59:

N 54

Հեռագիր Մերվի քաղաքից՝ հայ բուժքրոջը իր ցանկության համաձայն կամավորական խումբ ընդունելու մասին

1914թ.

Թիֆլիս, եպիսկոպոս Մեսրոպին,
Աշխեն Ղահրամանյանցը թախանձագին խնդրում է իրեն որպես գթության բուժքույր ընդունել մեր խմբում: Նրա կողմից խնդրում եմ նվազագույն հնարավորության դեպքում թույլատրել իրեն ճանապարհվելու: Հեռագրեցե՛ք Միքայել Յուզբաշյանին: Վաղը մեկնում եմ Չարջոու:

Կաֆիև

Հեռագրի վրա կա նշում. «Չի թույլատրվում [ընդունել] գթության ոչ մի քույր: Եպիսկոպոս Մեսրոպ»:

Նույն գործը, թ.60:

N 55

Հեռագիր Անդիժանից՝ պատերազմի կարիքների համար Կարմիր խաչի օգնություն կազմակերպելու մասին

1914թ.

Կազմակերպված է կամավորների և պատերազմի կարիքների օգնության Կարմիր խաչ: Սպասում են ղեկավար ցուցումների: Կարգադրեցե՛ք:

Տեր-Գրիգորյանց

Նույն գործը, թ.31:

N 56

Սևծովյա նահանգի Տուապսեի շրջանի Ղոյթի հայաբնակ գյուղի քահանայի նամակը՝ հայ կամավորների օգտին կատարված հանգանակության արդյունքների մասին

20 դեկտեմբերի 1914թ.

Հարգելի պ. Ծուրինյան,

Կենտրոնական կոմիտեիդ փոխադրելով հիսուն (50) ռուբլի Ղոյթայի շրջանից հավաքված արդյունքներից, հույս ունենք, որ կգործադրեք ըստ մեր ցանկության, այն է՝ հայ կամավորների օգտին: Դրամիս ստացման մասին բարի եղե՛ք հայտնելու: Շուտով կուղարկվի նվիրատուների ցուցակը, որը տպել կտաք «Մշակ» օրաթերթերի մեջ:

Հարգանոք՝ Գրիգորիս քահանա Գարաքեյան

Նույն գործը, թ.54:

N 57

Հեռագիր Տագանռոգից՝ կամավորների համար տեղի հայության կողմից տաք հագուստ ուղարկելու մասին

1915թ.

Տագանրոգի Հայկական կոմիտեն ուղարկում է տասնյոթ տեղ տաք իրեր և սապոգներ:

Քարտուղար Օկսետյանց

Նույն գործը, թ.134:

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

N 58

3 հունվարի 1915թ.

Թեմիս առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսի նախագահությամբ

1. Ձեկուցվեց, որ պ.Պապաջանյանին՝ քաղաքիցս հեռանալու պատճառով դեռևս պաշտոնապես չի հայտնված Բյուրոյի նախագահ ընտրելու մասին, ուստի պաշտոնապես ևս տեղեկություն չկա այն մասին, թե Պապաջանյանը ընդունու՞մ է նախագահությունը, թե՞ ոչ: Նույն այդ հանգամանքը արգելք է հանդիսանում շրջաբերականներ ուղարկել Բյուրոյի պրեզիդիումի նոր ընտրության և նոր կազմի մասին:

2. Ձեկուցվեց, որ նախկին պ. Ս.Հարությունյանին գրավոր դիմում է եղել հանձնելու նոր պրեզիդիումին իր մոտ եղած և առհասարակ Բյուրոյի գործերը: Սակայն մինչև օր[ս] պ.Ս.Հարությունյանը դեռ գործերը չի հանձնած և այս առթիվ պատասխան չի տվել: Իսկ բանավոր կերպով պատասխանել է, որ իրեն ոչ ոք գործ չի տվել, ուրեմն ինքն էլ չի կարող գործ հանձնել: Որպեսզի գործերը կանգ չառնեն, փոխ-նախագահ պ. Խունունցը բարվոք է համարել Բյուրոյի գրասենյակում եղած թղթերը վերցնել և կարգավորել:

Միաժամանակ անհրաժեշտ է գտնվում արձանագրել, որ դիվանում կանոնավոր գործեր չեն գտնվել, այլ միայն զանազան թղթեր, հեռագրեր, նամակներ և հաշիվներ՝ խառնիխուռն պահված սեղանների արկղներում:

3. Ի նկատի առնելով, որ պ. Ս.Հարությունյանի մոտ պետք է լինի Բյուրոյի անցյալ տարիների արխիվը, որոշվեց խնդրել նրանից այդ արխիվն ևս:

4. Անհրաժեշտ համարելով Բյուրոյի գործավարությունը և հաշվական մասը կանոնավոր հիմքերի վրա դնել, որոշվեց պրեզիդիումին ծախսել ծառայողների ռոճիկների համար մինչև 300ռ. ամսական:

5. Ձինվորական մարմնի արած ծախսերը և գնած իրերը ոչ ոք չի ստուգում: Որոշվեց խնդրել տնտեսական հանձնաժողովին հանձն առնել ստուգության գործը. հանձնաժողովի անդամները տվին իրենց համաձայնությունը:

6. Վերստուգիչ հանձնաժողովի նոր անդամ ընտրվեց Ռ.Հովհաննիսյանը, որով հանձնաժողովը կազմվեց հետևյալ անձերից՝ պ.պ. Ա.Եզեկյանը, Գ.Կաֆյան և Ռ.Հովհաննիսյան:

7. Գանձապահ պ. Մկրտիչ Քալանթարյանը վերադառնալով Բագվից, հայտնեց իր պատրաստակամությունը կրկին վերցնելու գանձապահի պաշտոնը: Ժամանակավոր գանձապահ պ. Գ.Ցուրինյանից հաշիվները և փողերը ստանալուց հետո կշարունակի իր պաշտոնը: Բյուրոյի գումարներն ըստ առաջնում մնում են բանկերում ոչ Բյուրոյի անունով: Բյուրոն անհարժեշտ է գտնում, որ փողերը բանկերում մնան ոչ թե մասնավոր մարդկանց, այլ Բյուրոյի անունով և այդ որոշման համաձայն խնդրեց պ.գանձապահին անել անհրաժեշտ տնտեսությունները: Որոշվեց նույնպես թե՛ коммерческий և թե՛ купеческий բանկերից տոկոսները բարձրացնել և այն բանկում պահել, որը ավելի տոկոս կվճարե:

8. Ձեկուցվեց և ընդունվեց գործադիր մարմնի որոշումը համագումարի մասին, միայն այն փոփոխությամբ, որ համագումարը հրավիրվի ոչ թե բարիկենդանին, այլ փետրվարի 15-ին: Համագումարի զբաղմունքի առարկաներն են.

1. Հաշիվ և նախահաշիվ պրեզիդիում և զինվորակ[ան]
2. Տեղեկագիր Բյուրոյի գործունեության մարմին
   ա. ռազմական (զինվ.մարմին)
   բ. քաղաքական (սրբազանը)
   գ. ինքնապաշտպանության (Ա.Սահակյան)
3. Տաճկա[հայա]ստանի ապագա կազմը (Լեո)
4. Բյուրոյի կանոնագիրը (Ա.Պապովյան)

Բացի դրանից, համագումարի վերջում պետք է կատարվի Բյուրոյի անդամների ընտրությունը:

9. Անհրաժեշտ համարվել մի պատգամավորություն կազմել և անհապաղ ուղարկել այցելելու Պետրոգրադի, Նախիջևանի, Մոսկվայի, Եկատերինոդարի, Արմավիրի հայ հասարակությունները՝ Բյուրոյի գործունեության հետ ծանոթանալու և հատկապես ժողովարարության գործին ավելի լայն կերպարանք տալու համար: Շաբաթ օրը, հունվարի 10-ին, որոշվեց ընտրել այդ պատգամավորության անդամներին:

10. Բյուրոյի առաջիկա նիստին պետք է ներկայացվի և քննության ենթարկվի Բյուրոյի նախահաշիվը:

11. Փոխ-նախագահ պ.Խունունցը զեկուցեց ի գիտություն Բյուրոյի գործադիր մարմնի վերջին նիստի խորհրդակցության առարկաների և որոշումների մասին:

Նախագահ Մեսրոպ եպիսկոպոս

ՀԱԱ, Ֆ.288, ց.1, գ.3, թ.9-10: Բնագիր: Ձեռագիր:

N 59

10 հունվարի 1915թ.

1. Կարդացվեց նախկին ժողովի արձանագրությունը:

2. Նախագահը զեկուցեց, որ Բյուրոյի բոլոր ճյուղերին ուղարկելու են շրջաբերականներ Բյուրոյի պրեզիդիումի, հասցեի, փոխ փոխադրելու մասին և այլն:

3. Կարդացվեց Գր.Չալխուշյանի նամակը, ուղղված Մոսկվայի քաղաքագլուղ պ.Չելնակովին: Որոշվեց մասնավոր անձանց միջոցով դիմել Ռուսաստանի գլխավոր քաղաքների և մայրաքաղաքների ճյուղերին ամեն կերպ աշխատել մամուլի և ռուս հասարակության զանազան շրջաններում նպաստավոր կարծիք և վերաբերմունք ստեղծել դեպի հայերը և Հայկական դատը:

Այս առիթով որոշվեց խնդրել Բյուրոյի նախագահին Բյուրոյի առաջիկա նիստին բերել մամուլի բյուրոյի հարցը:

4. Ի պատասխան պ.Խունունցի առաջարկության, ստանձնել նախագահության պաշտոնը տեղի ունեցած ընտրությունների համաձայն, թեպետ պ. Պապաջանյանը հայտնեց, որ այս որպեին այդ ընտրությունը ընդունել չի կարող և իր վերջնական պատասխանը այն մասին, կընդունի, թե ոչ կտա վաղը:

5. Զեբրաիլից ուղարկված հեռագրով պարսկահայերի մի խումբ խնդրում է կարգադրություն՝ անարգել անցնելու սահմանը: Սրբազան առաջնորդը հեռախոսով պ.Պետերսոնից տեղեկացավ, որ այդ սահմանում ևս արգելումը հայերի համար վերացված է:

6. Կարդացվեց զինվորական մարմնի նախահաշիվը, որը որոշվեց արտագրել մի քանի օրինակ՝ Բյուրոյի անդամների ի մոտս ծանոթանալու համար և ապա դնել քննության Բյուրոյի առաջիկա նիստերից մեկում:

7. Ուսանողներից կազմված վարչական երկու խմբերն էլ առայժմ պահել, իսկ երկիր* ուղարկելուց առաջ նրանց գործունեության համար հրահանգ պատրաստել: Այդ խմբերը Ալեքսանդրապոլ և Կարս ուղարկելը վաղաժամ է համարվում:

8. Նախահաշիվ չլինելու պատճառով մտիչև նախահաշիվ կազմվելը և հաստատվելը որոշվեց հանձնարարել նախագահին խմբերին ամսական ուղարկել ամեն մեկին 5500ռ., իսկ Անդրանիկի խմբին՝ 9500ռ., զինվորական մարմնին տալ ավանսով մինչև 6000 ռուբլի: Մանր ծախսեր անել նախագահի հայեցողությամբ: Արտակարգ դեպքերում անհետաձգելի ծախսերի համար ստանալ գործադիր մարմնի համաձայնությունը:

9. Պ. գանձապահ Մ.Քալանթարյանը հայտնեց, որ պ. Ցուրինյանից ստացել է բոլոր գումարները և օրդերները: Ընթացիկ հաշիվները Բյուրոյի անունով բանալու հարցը հանդիպում է մի քանի օրինական դժվարությունների, ուստի այս հարցի այս կամ այն կերպ լուծումը որոշվեց հետաձգել մինչև որ բանկերը ասեն իրենց վերջնական խոսքը այդ մասին:

10. Փոխանակ առանձին պատգամավորություն ուղարկելու Ռուսաստանի զանազան քաղաքները, խնդրել պ. Պապաջանյանին, որ մոտ օրերս մեկնելու է Պետրոգրադ, այցելել նաև Մոսկվա, իսկ պ. Սպենդարյանին, որը գնալու է այցելելու Ղրիմի հայաբնակ քաղաքները, խնդրել վերադարձին այցելել նաև Նախիջևան:

11. Անհապաղ սկսել ժողովարարություն Թիֆլիսում.

ա) պ.Գյուլինգյանին և Խ.Աֆրիկյանին հանձնարարել ժողովարարություն Թիֆլիսի վաճառականության մեջ.

բ) պ. Գ.Խատիսյանին և Հ.Ամիրխանյանին՝ ինտելիգենտ դասակարգի մեջ.

գ) պ. Կաֆյանին և պ. Մ.Բերբերյանին՝ ծառայողների և գործակատարների մեջ:

Նախագահ Մեսրոպ եպիսկոպոս

ՀԱԱ, Ֆ.288, ց.1, գ.3, թ.11 և հակ.: Բնագիր: Ձեռագիր:

* Արևմտահայաստան:

N 60

17 հունվարի 1915թ.

Քննության ենթարկվեց պ. Լեոյի զեկուցումը Տաճկահայաստանի ապագա քաղաքական կազմակերպության մասին: Կարդացվեց նաև Ներսես Պատրիարքի կազմած «Սահմանադրությունը»:

Մտքերի փոխարինությունից հետո բարվոք համարվեց ընդունել հետևյալ բանաձևը. «Ինքնավար Հայաստան (Ավտոնոմիա) օրենսդրական օրենքներով ռուսաց հովանավորության ներքո»:

Նախագահ Մեսրոպ եպիսկոպոս

ՀԱԱ, Ֆ. 288, ց.1, գ.3, թ.12: Բնագիր: Ձեռագիր:

N 61

20 հունվարի 1915թ.
(առավոտյան)

Հ.Խունունցի նախագահությամբ

1. Ի նկատի առնելով, որ բանկերում Բյուրոյի անունով ընթացիկ հաշիվ բանալը դժվարությունների է հանդիպում Բյուրոյի իրավական մարմին չլինելու պատճառով, որոշվեց Բյուրոյի բոլոր գումարները պահել բանկերում հետևյալ չորս անձանց անունով՝ Սրբազան առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսի, Ա.Ի.Խատիսյանի, Հ.Խունունցի և Մ.Ա.Քալանթարյանի, սակայն այն պայմանով.

ա) որ նրանցից վերցվի ստորագրություն, որ բանկերում չորսի անունով բացված ընթացիկ հաշվի բոլոր գումարները պատկանում են Ազգային բյուրոյին

բ) որ նրանք հայտարարեն բանկերին, որ նրանցից երկուսի ստորագրությունը միասին բավական է գումարները բանկից հետ վերցնելու չեկերով կամ հայտարարությամբ և

գ) որ նույն այդ անձինք հայտարարություն տան բանկերին, որ իրանցից մեկի մահից հետո նրա իրավունքներն անցնում են ոչ թե նրա ժառանգներին, այլ մնացյալ երեք անձանց, որոնց անունով բացված է ընթացիկ հաշիվը:*

Նախագահ Հ.Խունունց

ՀԱԱ, Ֆ.288, ց.1, գ.3, թ.13: Բնագիր: Ձեռագիր:

N 62

20 հունվարի 1915թ.
(երեկոյան)

* Արձանագրությունը ստորագրել են նաև Բյուրոյի պատվավոր նախագահը, փոխ-նախագահը, քարտուղարը և ինն անդամներ

1. Քննության ենթարկվեց զինվորական մասի ծախսերի նախահաշիվը, որի մեջ մտնում են եղած խմբերի նորոգության և լրացված ծախսերը 175932ռ. պահեստի հազար մարդուց բաղկացած գնդի կազմության ծախսը (135564 ռ.) նոր կազմվելիք գնդի խմբերի միանվագ ծախսը՝ 2500 մարդուց բաղկացած, եղած խմբերի պահեստի գնդի և կենտրոնական շտաբի տարեկան ծախսը (866220 ռ.) և երկու նոր գնդի տարեկան ծախսը (361680 ռ.), և յոթ հազար մարդու լիկվիդացիայի և օժանդակության ծախսը (210000 ռ.), ընդհանուր գումար՝ 2098596 ռ. և որոշվեց այդ նախահաշիվը ընդունել և ներկայացնել ի հաստատություն համագումարին: Ի հաշիվ նոր կազմվելիք խմբերի, թույլ տալ մինչև համագումարը պատրաստել մինչև 500 նոր կամավոր:

2. Նախահաշվով պահանջված անհրաժեշտ գումարները հավաքելու նպատակով որոշվեց ա) մարդիկ ուղարկել այցելելու Բյուրոյի Կովկասի և Ռուսաստանի ճյուղերը, բ) շտապեցնել տեղական ժողովարարությունը, գ) վերակենդանացնել «Մամուլի բյուրոյի» գործունեությունը, դ) հատուկ պատգամավորություն ուղարկել արտասահմանի հետևյալ վայրերը. Բուլղարիա, Ռումինիա, Ֆրանսիա, Անգլիա, Եգիպտոս և Ամերիկա: Հանձնել գործադիր մարմնին ըստ իր հայեցողության ի կատար ածելու այս որոշումները:

3. Որոշվեց գնդերի նորոգության և լրացման համար ի հաշիվ նախահաշվի ծախսել այլևս 15.000 ռ., որով նախկին որոշած 60.000 ռ. հետ կանի 75.000 ռ.:

4. Որոշվեց Բյուրոյի բոլոր նիստերին հրավիրել արձանագրություններ կազմելու համար գործավար պ.Եփրեմ Սարգսյանին:

ստորագրություն*

ՀԱԱ, Ֆ.288, ց.1, գ.10, թ.1: Բնագիր: Ձեռագիր:

N 63

ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՎՆԱՍՎԱԾՆԵՐԻՆ ՕԳՆՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱՄԱԿԸ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՍՏԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻՑ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻՆ ԲԱԺԻՆ ՄԱՍՀԱՆՄԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

9 հունվարի 1915թ.
Թիֆլիս

Ի պատասխան Ձեր գրության 4 հունվարի 1915թ. Կենտրոնական կոմիտեն հայտնում է, որ 3445ռ. 60կ. գումարի հետ ստացված են՝ կաթողիկոսի դիվանից դեկտեմբեր 1914թ. N 1954 (զետեղված է պատճենը) և գրությունը 2) Լուգանսկի հայոց աղոթատան երեցփոխ պ. Հազարապետ Դանիելյանի գրությունը նոյեմբերի 28-ին 1914թ. (զետեղված է պատճենը):

Հիշյալ երկու գրություններից չի երևում, որ այդ գումարից մասն նշանակված լիներ կամավորների համար. երկու գրության մեջ էլ շեշտված է, որ գումարը ժողովված է կաթողիկոսի կոնդակի համաձայն և հիմամբ, իսկ զինվորների և պատերազմից վնասվածներիի օգնության մասին հիշված է վերոհիշյալ կոնդակի մեջ:

Սակայն կոմիտեն որոշեց դիմել նվիրատու հասարակության և իմանալ նրանց կամքը, եթե ժողովարարությունը ստեղծվել է և կամավորների համար, այդ դեպքում Կոմիտեն, ունենալով իր ձեռքի տակ գեթ մի գրավոր դոկումենտ կամքը

* Ստորագրությունը՝ անընթեռնելի:

պարզող, իրավունք կունենա և անմիջապես գումարի կեսը կուղարկի Բյուրոյին՝ հոգուտ կամավորների:

Փոխնախագահ ստորագրություն*

ՀԱԱ, Ֆ. 221, ց.1, գ.3, թ.67: Բնագիր: Ձեռագիր:

N 64

ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՎՆԱՍՎԱԾՆԵՐԻՆ ՕԳՆՈՂ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱՄԱԿԸ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՆ՝ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՒՄԱՐԸ ԸՍՏ ՆՊԱՏԱԿԻ ԾԱԽՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

13 հունվարի 1915թ.
Թիֆլիս

Դեկտեմբերին 1914թ. Բյուրոյի կողմից պատերազմի շրջանը ուղարկված մասնաժողովի անդամներից՝ Խորեն եպիսկոպոսից, պ.պ. Խունունցից, Շիրվանզադեից և Թումանյանից ստացվել էր մի հեռագիր, որ ուղարկվի 2000 ռուբ.՝ «Մի անհետաձգելի կարիքի համար»:

Որովհետև մասնաժողովի անդամներին սկսած էր, որ հետամուտ լինել և գաղթականների մասին, ուստի ենթադրվեց, որ գուցե այդ գումարը հարկավոր է գաղթականների համար և փոխադրվեց նրանց 2000 ռուբ. պատերազմից վնասված Հայկ[ական] կենտրոնական կոմիտեի միջոցներից. բայց հետո պարզվեց, որ այդ գումարը հարկավոր է եղել զինվորների համար:

Ուստի Կենտրոնական կոմիտեն խնդրում է 2000 ր. վերադարձնել և հանձնել կոմիտեի գանձապահ պ. Գ.Ցուրինյանին:

Նախագահ [Հայկ.կենտ.կոմիտեի] Ս.Հարությունյան
Քարտուղար*

ՀԱԱ, Ֆ.221, ց.1, գ.1, թ.52: Բնագիր: Ձեռագիր:

N 65

ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՕԳՏԻՆ ԱՄԵՐԻԿԱՀԱՅԵՐԻ ՀԱՆԳԱՆԱԿԱԾ ԴՐԱՄԸ ԲՅՈՒՐՈՅԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

18 հունվարի 1915թ.

Վեհափառ Տե՛ր,

Ազգային բյուրոն Ամերիկայի Բոստոն քաղաքից ստացել է մի ծրագիր, որով հայտնում են, թե այնտեղի հանգանակիչ կոմիտեն, որ կազմված էր համերաշխաբար բոլոր կուսակցությանց ներկայացուցիչներից, վերջերս պառակտված է: Ոմանք,

* Ստորագրությունն՝ անընթեռնելի:
* Ստորագրությունն՝ անընթեռնելի:

նրանց թվում և ամերիկահայոց սրբազան առաջնորդը, չեն ուզում ճանաչել Ազգային բյուրոյի հեղինակությունը և կամավորների անունով հանգանակած դրամը պահել են իրենց մոտ:

Հայտնելով Ձերդ Վեհափառության այս մասին՝ խոնարհաբար խնդրում ենք բարեհաճեք հաղորդելու Ամերիկայի պառակտված հայերին գալ համերաշխության և հանգանակած գումարը փոխադրել Ազգային բյուրոյին կամ անմիջապես, կամ Ձերդ Վեհափառության դիվանի միջոցով: Կամավորական շարժումը գնալով լայն ծավալ է ստանում և դրամի կարիքը օրավուր զգալի է դառնում: Հուսով, թե պիտի չզլանաք գոհացում տալու մեր խոնարհ խնդրին և հանձնելով մեզ Ձերդ սրբության աղոթքներին:

Մնամք որդիական խոնարհությամբ

Փոխնախագահ Ազգային բյուրոյի Քարտուղար — Հովսեփ Խունունց

ստորագրություն*

ՀԱԱ, Ֆ.57, ց.5, գ.28, թ.149: Բնագիր: Ձեռագիր:

N 66

ՍԱՄԱՐԿԱՆԴԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԻ ՆԱՄԱԿԸ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՆՀԱՅ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՕԳՏԻՆ ՆՊԱՍՏ ՀԱՆԳԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

19 հունվարի 1915թ.
Սամարղանդ

Հայ կամավորների համար նպաստ հանգանակելու գործը այստեղ հանդիպում է անհաղթելի արգելքների: Գլխավոր պատճառն այն է, որ կամավորների գործի կազմակերպության մասին ստույգ տեղեկություններ չկան և եղած տեղեկությունները միմյանց հակասական են: Հանգամանքից օգտվելով, գործի գոյության, ազգայնության և սրբության մասին կասկածներ հարուցանող ուժեղ աշխատանք է գործադրվում:

Անհրաժեշտ է, դրամական նպաստի հաջողության համար պաշտոնապես և հրապարակավ հայտնի դարձնել.

ա) որքան ժամանակ է, որ հայ կամավորները մասնակցում են ռուս-տաճկական պատերազմին.

բ) որքան է եղել սկզբում և որքան է այժմ հայ կամավորների թիվը.

գ) յուրաքանչյուր կամավոր որքան ծախս է նստում Բյուրոյի վրա ամսական.

դ) սկզբից մինչև այժմ հայ կամավորների համար որքան դրամ է գանձված, որքան է ծախսված մինչև այժմ և որքան կա այժմ Բյուրոյի տրամադրության տակ:

Անհրաժեշտ է շաբաթը մի անգամ պարբերաբար որևէ օրագրում հաղորդել:

1) հայ կամավորների թիվը,

2) գանձված ընդհանուր գումարը հայ կամավորների օգտին,

3)արված ծախսը և 4) մնացած գումարը:

Անհրաժեշտ է ամեն մի ստացված գումարի մասին անմիջապես հաղորդել նույն օրագրում:

* Ստորագրությունը՝ անընթեռնելի:

Կարևոր է պարզել պատճառը, թե ինչու՞ իրենց ծառայություններ առաջարկող կամավորները Բյուրոյի կողմից մերժվում են, երբ կառավարությունն առաջարկում է հայ կամավորների թիվը կրկնապատկել:

Մասնավորապես Սամարղանդի համար պետք է մասնավոր պաշտոնական նամակով պարզել, թե ինչու ուղարկված 2500 ռուբլու մասին պ. Ս.Հարությունյանը հեռագրով հայտնում է, թե ստացված է 2000 ռ., իսկ շատ հետո Պ.Գ.Կաֆյանը նամակով հայտնում է, որ Սամարղանդից ոչ մի կոպեկ* չէ ստացված:

Ստույգ տեղեկությունների ընդհանրապես չլինելու պատճառով Բյուրոյի գործունեությունը վարկաբեկող մութ գործերը աստիճանաբար հայտնի են դառնում, իսկ պաշտպանությունը մնում է անզեն: Իմ և գործի հաջողության նախանձախնդիրների համեստ կարծիքով անհրաժեշտ առաջարկությունը անելուց հետո դրության պատկերը բոլորովին կփոխվի:

Սարգսյանց

ՀԱԱ, Ֆ.221, ց.1, գ.3, թ.12 հակ.: Բնագիր: Ձեռագիր:

N 67

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՎՆԱՍՎԱԾՆԵՐԻՆ ՕԳՆՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ՝ ԿՈԿԱՆԴԻ ՀԱՅՈՑ ԿԱՆԱՆՑ ԿՈՄԻՏԵԻՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՄԵՍՐՈՊ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱՆՈՒՆՈՎ ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ԲՅՈՒՐՈՅԻՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

20 հունվարի 1915թ.
Թիֆլիս

Բյուրոս սույն գրությամբ ուղարկելով Ձեզ «Կոկանդի հայ կանանց կոմիտեից» թեմիս առաջնորդ գերապատիվ Հ[այր] Մեսրովբ եպիսկոպոսի անունով ուղարկված հմ.հմ. 013753 և 013750 բեռնագիրները, խնդրում է ապրանքը ստանալ և կամավորների համար հատկացրած 4 արկղ նվերները, մեկ արկղ լուցկին և մեկ արկղ ծխախոտը հանձնել Բյուրոյիս:

[Փոխ]նախագահ Բյուրոյի — Հ.Խունունց

ՀԱԱ, Ֆ.28, ց.1, գ.116, թ.18: Բնագիր: Ձեռագիր:

N 68

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՎՆԱՍՎԱԾՆԵՐԻՆ ՕԳՆՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ՝ ՎԵՐՋԻՆԻՍ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՈՎ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԹԵՐՔ ԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

20 հունվարի 1915թ.
Թիֆլիս

* Ընդգծումը բնագրինն է:

Սրանով Բյուրոս հայտնում է Ձեզ, որ Ձեր Բյուրոյի կողմից պատերազմի շրջանը ուղարկված մասնաժողովին փոխադրած 2.000 ռուբլով գնված են զանազան մթերքներ՝ շաքար, թեյ, սապոն և այլն: Այժմ կարգադրվում է, որ Ղարսի կոմիտեն այդ մթերքները հատկացնի գաղթականների պետքերին:

Փոխնախագահ Բյուրոյի Հ.Խունունց

ՀԱԱ, Ֆ.28, ց.1, գ.116, թ.17: Բնագիր: Ձեռագիր:

N 69
ԻԳԴԻՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄ Հ.ՉՈԼԱԽՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԲՅՈՒՐՈՅԻՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

24 հունվարի 1915թ.
Իգդիր

Հասնելով Իգդիրը, ծանոթացա գործերի դրության հետ, որի մասին և շտապում եմ հայտնել Բյուրոյիդ:

Քաղաքական խմբի անդամներից մեկը նստած Արծափում, շարունակում է իր գործը, երկուսն անցել են Մակու, իսկ մնացածները սպասում են փողի, որ անցնեն գործի վայրը: Արծափում եղած ընկերը, բացի իր սովորական աշխատանքները կատարելը, ընդունում է և ճանապարհ գցում Ալաշկերտից եկած գաղթականությանը:

Քաղաքական խմբի անդամների առաջ այժմս դրված է հետևյալ խնդիրը, հետ վերադարձնել գաղթականներին այն վայրերը, ուր հնարավոր է նորից նորմալ կյանք ստեղծել: Այս հերթական խնդրի հետ առաջ պիտի տանել և այն խնդիրը, որոնք հիմք են ծառայում քաղաքական խմբերի գործունեության:

Հույս ունեմ, որ հրահանգների խնդիրը արդեն անցյալ է Ազգային բյուրոյում և հարկավոր գումարը մեկ ամսվա ծախսերի համար արդեն փոխադրված է:

Ինչ վերաբերում է ձիաներին, պիտի ասեմ, որ մեր խմբի տրամադրության տակ դրված են եղել այս կողմերը եկած պատգամավորության ձիաները, որոնք ընդհանուր նահանջից հետո, քաղաքական խմբի գործունեության ժամանակավոր դադարեցման պատճառով անցել են զորախմբին: Այդպիսով այստեղ և ոչ մի ձի չի մնացել, ինչու և խնդրում եմ որքան կարելի է շուտ հասցնեք 8 ձիու արժեքը (8x150)-1200ռ.: Առանց ձիաների հեռու գնալ չենք կարող, ինչու և պիտի շտապել փոխադրել անհրաժեշտ գումարը, որ հնարավորություն ունենանք լայնացնել մեր գործունեության շրջանը:

Առաջիկայում կարիք կլինի ավելացնել մեր խմբի կազմի վերանոր անդամներ, քանի որ մեր տրամադրության տակ եղած վայրը շատ մեծ է և շատ բարդ խնդիրների առաջ պիտի կանգնենք մոտիկ ապագայում:

Ալաշկերտից երկու օր է, գալիս են գաղթականները՝ լըլկված, թալանված քրդերի կողմից: Տղամարդկանցից շատերը սպանված են, հարսները և աղջիկները՝ փախցված: Ընդհանուր դրությունը սոսկալի է: Ընդամենը Ալաշկերտից եկած գաղթականության թիվը հավասարվում է 40 հազարի:

Բացի օգնության գործը, պիտի կազմակերպել մի խումբ՝ տեղացիներից ու ինտելիգենտ անձանցից, որ գնան գաղթավայրերը ու տեղնուտեղը որոշեն այնտեղ մնացած ցորենի, գարու (հորերի մեջ եղած) քանակը և հնարավորություն ստեղծեն կամ ծախելու այն, տեղափոխել կամ եթե հնար[ավոր] է, ստեղծել այնպիսի պայմաններ, որ գաղթականները վերադառնան իրենց գյուղերը ու շարունակեն ապրել իրենց ծննդավայրերում: Անհրաժեշտ է շուտ կազմակերպել այս գործը, եթե ոչ, եկած

պատուհասը ավելի կծանրանա: Այդ ուղղությամբ բանակցություններ վարեք Թիֆլիսում:

Քաղաքական խմբի անդամ Հ.Չոլախյան

Հ.Գ. քրդերը իրավունք են ստացել կազմակերպելու մի կոմիտե, որը պիտի աջակցի փախած քրդերին վերադարձնել իրենց վայրը:
Հասցե՝ Игдыр, Саак Матиняну, քաղաքական խմբին:

ՀԱԱ, Ֆ. 221, ց.1, գ.3, թ.58: Բնագիր: Ձեռագիր:

N 70

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԴԻՎԱՆԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ ԲԱԳՐԱՏ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ՝ ԹԻՖԼԻՍՈՒՄ ՀՐԱՎԻՐՎԵԼԻՔ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

24 հունվարի 1915թ.
Թիֆլիս

Սրբազան Հա՛յր,

Ազգային Բյուրոն գալիս է սրանով որդիաբար խնդրելու Նորին Վեհափառությունից նշանակել մի ներկայացուցիչ Մայր Աթոռի կողմից՝ մասնակցելու Թիֆլիսում կայանալիք համագումարի պարապմունքներին:

Համագումարը բացվելու է փետրվարի 15-ին:

Փոխնախագահ Հ.Խունունց
Քարտուղար ստորագրություն*

ՀԱԱ, Ֆ. 57, ց.5, գ.87, թ.15: Բնագիր: Ձեռագիր:

N 71

ՊՅԱՏԻԳՈՐՍԿՈՒ ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻՆ ԵՎ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ ՕԳՆՈՂ ԿՈՄԻՏԵԻ ՆԱՄԱԿԸ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՆ ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՈՒ ԳԱՂՈՒԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲՅՈՒՐՈՅԻ ՀԱՍՑԵՈՎ ՀԱԳՈՒՍՏՆԵՐ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

26 հունվարի 1915թ.

Ամսույս 24-ին, դեռ Բյուրոյից ոչ մի հրահանգ չստացած, այս ներփակյալ հասցեով ուղարկել ենք 8 արկղ հայ կամավորների և գաղթականների համար շորեր: Այդ արկղներից 1 և 2 N-ը նոր շորեր են կամավորների համար, իսկ մնացածը հին շորեր գաղթականների համար, մանրամասն ցուցակը ուղարկված է և որովհետև մեզ ուղարկած հասցեները այժմ ուրիշ են, ուստի հարկ ենք համարում այդ մասին ի գիտություն Բյուրոյիդ հայտնել:

* Ստորագրությունն՝ անընթեռնելի

Նաև պետք ենք համարում հայտնել, որ ամսույս 10-ին երեկույթ կազմակերպեցինք, որից զուտ արդյունք մնաց 921ռ. 97կ.: Այդ գումարը ոստիկանապետի կարգադրությամբ դրված է տեղիս գանձարանը «դեպոզիտ շրջանի կառավարչի»: Չնայած այդ մասին արդեն հայտնված է վեհափառի դիվանին, բայց ավելորդ չէր լինի, որ Բյուրոդ էլ հետևեր, որ փողը շուտ ստացվեր:

Նախագահ Գ.Սուքիասյանց
Քարտուղար Ն.Ռոստովանյանց

"В.Депозит начальника Терской области"

ՀԱԱ, Ֆ.221, ց.1, գ.3, թ.65: Բնագիր: Ձեռագիր:

N 72

ՆՈՎՈՉԵՐԿԱՍԿԻ ԴԱՏԱԿԱՆ ԱՏՅԱՆԻ ՀԱՎԱՏԱՐՄԱՏԱՐ ԳՐ.ՉԱԼԽՈՒՇՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՆ

27 հունվարի 1915թ.

Եղբայր Հովսեփ Նիկիտիչ.

1. Մենք ուղարկում ենք կամավորներին, որովհետև անկարելի է նրանց պահել այստեղ, գուցե վերջապես պատերազմի բեմի մոտ նրանք աշխատանք գտնեն ինրենց համար: Նրանք 46 հոգի են: Մենք մտադիր ենք բոլորովին փակել և անգամ չառնել կամավորներին ցուցակ, որովհետև մի տեսակ արհեստ է սկսվել և մեզանում՝ կամավոր լինել, խաղալ կամավորություն:

2. Մենք մանրամասն հեռագրել էինք վեհափառին Բյուրոյին կարևորության մասին և... շակի* անտակտության վնասները և խնդրել էինք հայտնել Բյուրոյին իր վստահությունը, չգիտեմ բան արե՞ց: Նմանապես հեռագրել էինք նրան, որ Չելնոքովին ազգի շնորհակալությունը հայտնե: Պարզությունը տված է հանճարներին, Գևորգը հայրիկ չէ և գուցե միակ նրա առավելությունը նրանում է, որ իրան պահում է ամպերի մեջ, չտալով անգամ պատասխան նամակներին: Մեր խաչն է, պիտի տանենք:

3. Ցերետելին ըստ իս մի պատրվակ պիտի լիներ վրացիներին մի քիչ շոյելու: Ողջ կյանքը մեր թշնամին եղած է, մանավանդ վերջին տարիները մեր ազնիվ վերաբերմունքը դեպի այդ դիակը, ջոկելով բանաստեղծը հրապարակախոսից պետք քայլ է, ահա թե ինչու շրջաբերական հեռագիրներ տվի քանի մի տեղեր: Չգիտեմ լա՞վ դուրս եկավ, թե ոչ:

4. Մոսկվայի վրա լուրջ ուշադրություն է դարձնելու: Լսվում է, որ Մամիկոնյանը մտադիր է լրագիր հրատարակել ազգի հաշվով: Տաղանդ ունի, բայց ծույլ է, և իբրև ռուս գրող, ըստ իս, թույլ: Մինչդեռ հարուստները փող չեն տալիս, վախենալով, որ Մամիկ[ոնյանը] իր լրագիրը կսկսե: Անհրաժեշտ է ուղարկել Մոսկվա մի բարձրաստիճան հոգևորական, Մոսկվան կարող էր տալ առնվազը կես միլիոն և տալիս է չնչին բան:

5. Թիֆլիսի մեծ սխալներից և մեղքերից մինն է շատախոսությունը: Կարևոր է միանգամայն, որ պատգամավորների մինչև գալը նյութերը և զեկուցումները պատրաստ լինեն: Հակառակ դեպքում միայն խոսակցությունները ապարդյուն կլինեն:

6. Կան հարցեր մինչև օրս չպարզված:

* Բառը տեքստում վնասված է:

ա) Ավտոնոմիայի հարցը, օրինակի համար: Անպատճառ պետք է, որ համագումարը իրան լավ պարզե այդ հարցը և ամեն հայ միատեսակ իմանա, հասկանա, պահանջե: Էական կետերը մշակված և վճռված պիտի լինեն:

բ) Փող ժողովելու հարցը, որ այնչափ թույլ դրված է Կովկասում, պետք է որոշել վերջնականապես թե՛ Կովկասի վերաբերյալ և թե՛ ուրիշ տեղերի:

գ) Կամավորների հարցը՝ հիվանդ և անհասկանալի հարց – հայը պիտի տա արյուն և ոսկի և փոխարենը ոչինչ չստանա: Ծնողները գերադասում են պոռնիկ զավակներին և ուշադրություն չեն դարձնում լավերի վրա:

Մեր առաքինությունը ավելորդ բեռ է ազգի վզին փաթաթած:

դ) Փախստականների հարց: Հազար կոմիտեներ, հանձնաժողովներ և շատ քիչ էական օգուտ:

7. Որովհետև հարցեր շատ կան, ուստի ցանկալի էր, որ բոլոր քաղաքներեն գային որչափ կարելի է շատ պատգամավորներ, որ թե Թիֆլիսը իմանար՝ ինչ է գավառների ցանկությունը: Մենք այստեղից գրում ենք այն կոմիտեներին, որ հրահանգ ստանում են մեզանից, որ ուղարկեն Թիֆլիս մի-մի պատգամավորներ: Թեոդոսիա, Սիմֆերոպոլ և այլն, որոնք ուղարկում են Ձեզ փող, ինչու գալու չեն: Վերջապես դա մի դաստիարակչական նշանակություն կունենա և նրանց համար, իսկ գործը չի վնասվի, եթե մի տասը մարդ ավելի ներկա գտնվի:

Հարգանքով և սիրով Գր.Չալխուշյան

ՀԱԱ, Ֆ.288, ց.1, գ.2, թ.11: Բնագիր: Մեքենագիր:

N 73

ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՏՈՒԺԱՇՆԵՐԻՆ ՕԳՆՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ ՍԱՄՍՈՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՆ ՍԱՄԱՐՂԱՆԴԻՑ, ՋՈՒԼՖԱՅԻՑ ՍԻՐԱՍԻԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

3 փետրվարի 1915թ.

Պատերազմից վնասվածներին օգնող հայկական կենտրոնական կոմիտեն հայտնում է Բյուրոյիդ հետևյալը՝ ի պատասխան Ձեր գրության 27 հունվարի 1915թ.

1. Սամարղանդից 11 դեկտեմբերի 1914թ. փոխադրված է առևտրական տուն՝ «Տարոն» պետական բանկի տոմսակով N901961-2500 ռուբլի: Նամակը գրված է Բյուրոյի անունով, իսկ բանկի տոմսակը՝ պ. Գ.Մ.Ցուրինյանի անունով, որը հայտարարված է Կենտրոնական կոմիտեի գանձապահ:

Նամակը և տոմսակը ստացվել են դեկտեմբերի 19-ին և տոմսակը նույն օրը հանձնվել է պ. Ցուրինյանին, որը ստացել է հետևյալ օրը, այսինքն՝ 20-ին դեկտեմբերի, և մտցրել առժամանակ կոմ[իտեի]՝ ի թիվս մյուս կոմիտեի գումարների միայն պահելու, մինչև որ պարզվի, թե ինչու փոխադրվել է պատերազմից վնասվածների կոմիտեի գանձապահի անունով:

Որովհետև այժմս պարզված է, որ այդ գումարը նշանակված է կամավորների համար, ուստի Կենտրոնական կոմիտեն կարգադրեց հանձնել Բյուրոյիդ և խնդրել, որ Բյուրոն Սամարղանդի նվիրատուներին տեղական կոմիտեի միջոցով հաղորդեն վերոհիշյալ մանրամասնությունները:

2. Ջուլֆայից փոխադրվել է 260ռ.60կ., որը ստացել է Կենտրոնական կոմիտեն, որովհետև նամակը ուշ է ստացվել այդ գումարի մասին: Նամակից պարզվել

է, որ տեղական կոմիտեն կամավորներին օգնող կազմալուծվել է, հեռագրով՝ ոչ ուղղակի Բյուրոյի անունով: Այժմս այդ գումարը ևս կարգադրված է հանձնել Բյուրոյիդ:

Կենտրոնական կոմիտեն խնդրում է առաջարկել գանձապահ Պ.Քալանթարյանին ստանալ Կոմիտեի գանձապահ պ.Ցուրինյանից վերոհիշյալ գումարները:

3. Սիրասիից նոյեմբերի 10-ին ստացված է 94 ռուբլի կամավորների և պատերազմից վնասվածների օգտին: Կենտրոնական կոմիտեն 94 ռուբլուց կեսը՝ 47ռ. հանձնել է Բյուրոյի գանձապահ պ.Քալանթարյանին նույն օրվա N 27 ընկալագրով:

Նույն Սիրասիից ստացվել է 4 դեկտեմբերի 53ռ. 60կ. և նամակի մեջ ասված է, մի մասը հատկացնել վիրավորների օգտին: Որովհետև մեկ վիրավորի պահպանումը մեկ ամսում պահանջում է 36 ռուբլի, ուստի Կոմիտեն կարգադրել է 36ռ. հատկացնել, հայկական լազարեթում մեկ հիվանդ պահել մեկ ամիս Սիրասիի հայ հասարակության կողմից, իսկ մնացյալը ուղարկված է Բյուրոյին և հանձնված է ընծայագրով 18-ին դեկտեմբերի, N 12:

Օգտվելով այս դեպքերից, Կենտրոնական կոմիտեն հարկավոր է համարում հայտնել, որ Սիրասիի 53ռ. 50կ. միակ դեպքն է, երբ անհարմարություն կար կիսով բաժանելու, իսկ մյուս դեպքերում Կենտրոնական կոմիտեն ուղարկել է մեծ մասամբ 2/3 մասեր Բյուրոյին:

Ինչ վերաբերում է շորերին, Կոմիտեն հայտնում է, որ իրեն պահեստում չեն ստացված ոչ այն կվիտանցիայով N 12, որը ուղարկված է գերապատիվ Միտուշ եպիսկոպոսին անունով և ոչ էլ քույրեր Բաղդասարյաններից 12 կտոր տաք շորերը:

Նախագահ Ս.Հարությունյան

ՀԱԱ, Ֆ.221, ց.1, գ.3, թ.62: Բնագիր: Ձեռագիր:

N 74

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՎՆԱՍՎԱԾՆԵՐԻՆ ՕԳՆՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ՝ ԺՆԵՎԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՑ ՀՐԱՎԻՐՎԱԾ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԵՎ ՏԱՃԿԱՀՊԱՏԱԿ ՀԱՅ ԲԺԻՇԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅՏՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12 փետրվարի 1915թ.
Թիֆլիս

Բյուրոն խնդրում է պատասխանել, արդյոք, Ձեր հիմնարկության մեջ կա՞ն ժնևի համալսարանից կանչված հայ ուսանողներ և տաճկահպատակ հայ բժիշկներ: Խնդրում ենք այս գրությանը այսօր նեթ պատասխանել, որպեսզի հնարավորություն ունենանք նահանգապետի գրասենյակից արված հարցումին շուտափույթ բավարարություն տալ:

Փոխնախագահ Բյուրոյի Հ.Խունունց

ՀԱԱ, Ֆ.28, ց.1, գ.116, թ.45: Բնագիր: Ձեռագիր:

N 75

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ՎԻՃԱԿԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐ ՔՆՆՈՂ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԽՄԲԻ ԺՈՂՈՎԻ ԹԻՎ 3 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

16-18 փետրվարի 1915թ.

Ժողովը լսելով տաճկահայերի վիճակի հետ կապված խնդիրներ քննող քառասուն պատգամավորներից կազմված սեկցիայի զեկուցումն ի տեղեկություն՝ ընդունում է (ընդդեմ երկուսի) հետևյալ բանաձևը:

«Ընդհանուր ժողովը լսելով Ազգային բյուրոյի զեկուցումը թուրքահայ հարցի մասին, տեղեկանալով այն քայլերին, որ Բյուրոն արել է այդ տեսակետից, տալիս է իր հավանությունը նրա ընթացքին և խնդրում է շարունակել նոր ոգով, ավելի եռանդուն կերպով:

Նախագահ համագումարի* (ստորագրել է Մեսրոպ եպիսկոպոսը)

Քարտուղար (ստորագրել է Ղազարոս քահ. Տեր-Գրիգորյանը)

Ճիշտ է իսկականի հետ Հակոբ Քոչարյան

ՀԱԱ, Ֆ.222, ց.1, գ.17, թ.18: Վավերացված պատճեն: Ձեռագիր:

N 76

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՆ՝ ԳԱՎԱՌԱՅԻՆ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

18 փետրվարի 1915թ.

Ինքնապաշտպանության հանձնաժողովը, որ ընտրված է Ազգային ժողովի փետրվարի 16-ի նիստում, յուր 25 անդամներով խորհրդակցության նյութ դարձնելով ռուսահայերի ինքնապաշտպանության գործը, լսելով Ազգային բյուրոյի ներկայացուցչի գրավոր զեկուցումը Բյուրոյի՝ այդ շրջանում ունեցած մասնակցության մասին, այլև մանրազնին ուշադրության առնելով գավառական ինքնապաշտպանության մարմինների հանդես բերած գործունեության ու նրանց ղեկավարող մտքերը, միաձայն հանգան հետևյալ եզրակացության:

Ի նկատի ունենալով այն արտաքո կարգի անապահով վիճակը, որի մեջ գտնվում են մեր գավառներից շատերը, անհրաժեշտ է ինքնապաշտպանության գործին շատ ավելի մեծ ուշադրություն նվիրել, քան միչև այժմ այդ եղել է թե՛ Ազգային բյուրոյի կողմից: Ինքնապաշտպանության կազմակերպման գործը հաստատուն հիմքերի վրա դնելու համար հանձնաժողովս կարևոր է համարում մատնանիշ անել մի քանի գլխավոր սկզբունքներ, որոնք իր կարծիքով առաջնորդող պետք է լինեն բոլոր գավառների ինքնապաշտպանությամբ զբաղվող մարմինների համար և որոնք բխում են գավառական պատգամավորների տված զեկուցումներից:

Այդ գլխավոր կետերը հետևյալներն են.

1. Գավառի ինքնապաշտպանության գործը վարում է գավառի ինքնապաշտպանության մարմինը, որ յուր գործունեության մեջ տեղական բյուրոյից բոլորովին անկախ է:

* Տեքստում այդպես է:

2. Ազգային բյուրոյի մեջ լինելու է ինքնապաշտպանության մի մարմին, որը գավառների համար զենք ձեռք բերելու, զենքի գներն իմանալու և զենքի տեղափոխության եղանակների գործում տեղեկատու բյուրոյի դեր է խաղալու:

3. Տեղական ինքնապաշտպանության համար հարկավոր փողը ձեռք է բերվում գավառական բյուրոների և Ազգային բյուրոյի միջոցով:

4. Տեղական ինքնապաշտպանության մարմինները իրենց ստացած դրամի մասին հաշիվ են տալիս այն մարմիններին, որոնցից փող են ստացել:

5. Ազգային բյուրոյի ինքնապաշտպանության մարմինը հարկ եղած դեպքում հավաքումներ է կազմակերպում գավառական ինքնապաշտպանության կոմիտեների ներկայացուցիչների մասնակցությամբ՝ ավելի կանոնավոր և ներդաշնակ դարձնելու ընդհանուր ինքնապաշտպանության գործը:

6. Կամավորների ռեզերվը կենտրոնացնել այն հայաշատ վայրերում, որոնք ինքնապաշտպանության տեսակետից վտանգված են (Երևան, Նախիջևան):

7. Ի նկատի ունենալով, որ գավառներում ինքնապաշտպանության գործը կազմակերպելու համար հարկավոր են կարևոր ուժեր, որոնք ներկայումս մեծ մասամբ կամավորների շարքերումն են, պարտավորեցնել Ազգային բյուրոյին, որ նա նպաստի այդ գործի կազմակերպմանը, հարկավոր դեպքերում կամավորների շարքերից հանելով այդպիսի ուժերը և գավառներ ուղարկելով:

8. Ազգային բյուրոն պետք է լրջորեն աշխատի, որ կառավարությունը գավառներում հայերին չխուզարկի:

9. Ազգային բյուրոն պետք է շարունակի բանակցությունները կառավարության հետ՝ զենք ստանալու նպատակով:

ՀԱԱ, Ֆ.288, ց.1, գ.10, թ.2 և հակ.: Պատճեն: Ձեռագիր:

N 77

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՎՆԱՍՎԱԾՆԵՐԻՆ ՕԳՆՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ՝ ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻՆ ՈՒՂԱՐԿԱԾ ԻՐԵՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

19 փետրվարի 1915թ.
Թիֆլիս

Բյուրոն պատիվ ունի հայտնելու հարգելի կոմիտեիդ, որ Ձեր միջոցով հայ կամավորներին ուղարկած հետևյալ իրերը ստացված են՝ Դերբենդից – 3 արկղ, Պյատիգորսկից – 2 արկղ:

Գրությանս հետ ուղարկում ենք նաև Բախմուտի հայ կանանց կոմիտեի նամակի պատճենը:*

Փոխնախագահ Բյուրոյի Հ.Խունունց

N 78

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ՝ ՄԱՅԿՈՊԻՑ ՈՒ ԹԵԼԱՎԻՑ ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՕԳՏԻՆ

* Նամակի պատճենը գործում չի պահպանվել:

ՆՎԻՐԱԲԵՐՎԱԾ ԳՈՒՄԱՐԻ ԵՎ ԻՐԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԲՅՈՒՐՈՅԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

4 մարտի 1915թ.
Թիֆլիս

Բյուրոն յուր փետրվարի 12-ի գրությամբ դիմել է Խորհրդիդ և խնդրել Մայկոպի շրջանի* նվիրատուներից ստացած գումարի մասին տեղեկություն տալ. եթե ստացել եք այդպիսի գումար, Բյուրոյին հասցնել: Սակայն մինչև այժմ պատասխան չի ստացել [Բյուրոն]:

Նաև փետրվարի 21-ի գրությամբ դիմվել է Խորհրդիդ, որպեսզի Թելավից հայ կամավորների օգտին ուղարկած 150 զույգ գուլպան հասցնեք Բյուրոյին:

Թելավից կրկին և կրկին դիմում են Բյուրոյին և տեղեկություն խնդրում այդ իրերի ստացման մասին. սակայն Ձեր լռության պատճառով Բյուրոն հնարավորություն չունի նրանց պատասխանել:

Բյուրոն խնդրում է իրեն անհարմար դրության մեջ չդնել և վերոհիշյալ գրություններին պատասխանել:

Փոխ-նախագահ Բյուրոյի Հ.Խունունց

ՀԱԱ, Ֆ.228, ց.1, գ.116, թ.63: Բնագիր: Ձեռագիր:

N 79

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՎՆԱՍՎԱԾՆԵՐԻՆ ՕԳՆՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ՝ ՎԵՐՋԻՆԻՍ ՄԻՋՈՑՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԻՐԵՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

9 մարտի 1915թ.
Թիֆլիս

Բյուրոն ստացավ Կոմիտեիդ միջոցով մեզ ուղարկված հետևյալ իրերը:

Ղզլարից* - երեք արկղ. 46 տաք շապիկ, 40 տաք ժիլետ, 54 տաք վարտիկ, 10 շարֆ և 3 զույգ գուլպա:

Կոկանդից – մեկ արկղ. 77 հատ շլեմ, 27 զույգ կտորից թևնոց և 7 պարկ նվեր:

Իրերի ստացման մասին հայտնված է նվիրատուներին:

Փոխ-նախագահ Բյուրոյի Ալ.Խատիսյան

ՀԱԱ, Ֆ.28, ց.1, գ.116, թ.68: Բնագիր: Ձեռագիր:

N 80

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՎՆԱՍՎԱԾՆԵՐԻՆ ՕԳՆՈՂ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ՝ ԻԳԴԻՐՈՒՄ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ

* Այս և մյուս ընդգծումները բնագրինն է:
* Ընդգծումները բնագրինն են:

ՎԵՐԱԴԱՐՁԻՆ ՈՒ ՀԱՍՏԱՏՎԵԼՈՒՆ ՆՊԱՍՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

14 մարտի 1915թ.
Թիֆլիս

Բյուրոն Իգդիրից պ. Ս.[իրական] Տիգրանյանից ստացել է մարտի 6-ի թվակիր մի գրություն, որի մեջ պ. Տիգրանյանը հաղորդում է հետևյալը.

«Իմ գրավոր միջնորդության համաձայն Կովկասյան զորաբանակի Դ-րդ կորպուսի հրամանատարը բարեհաճեց հաստատել Իգդիրում կազմակերպելու և գործելու գաղթականների վերադարձին նպաստող մի հանձնաժողով, որի մեջ մտնում են նույն կորպուսի շտաբի ներկայացուցիչը, գավառական բժիշկը, հողատեր-գյուղատնտես Վարդգես Քազանունին և տեր Ստեփան ք[ահանա] Տեր-Թովմասյանը: Հիշյալ հանձնաժողովը պատրաստ է կատարել գաղթականների վերադարձին, երկրում հաստատվելու ու տնտեսությունը վերականգնելուն վերաբերյալ գործառնություններ»:

Հանձնաժողովի հասցեն է՝ Игдир, Сааку Матиняну.

Փոխ-նախագահ Հ.Խունունց

ՀԱԱ, Ֆ.28, ց.1, գ.116, թ.76: Բնագիր: Ձեռագիր:

N 81

ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ԾԱԳԱԾ ՆԵՐՀԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՎԵՀԱՓԱՌԻ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1 ապրիլի 1915թ.
Թիֆլիս

Վեհափառ Տե՛ր,

Ազգային Բյուրոն ստացավ Ձերդ վեհափառության դիվանի միջոցով Ռումանիո Կոստանցա քաղաքի թաղական խորհրդի գրությունը իրենց շրջանի կուսակցական գժտությանց մասին: Նման գանգատներ թե՛ բերանացի և թե՛ գրավոր ստացած է նաև Ազգային բյուրոն, որոնցից երևում է, որ այդ ներհակությունը նկատվում է ոչ միայն Ռումանիա, այլև ուրիշ վայրերում՝ Եգիպտոս և հատկապես Ամերիկա: Ամերիկայում ծագած տարաձայնության մասին Ազգային բյուրոն ևս մի գրությամբ դիմել էր Ձերդ Վեհափառության Ձեր բարձր աջակցությունը խնդրել այս աղետավոր ընթացքին վերջ տալու համար:

Ազգային բյուրոն, սկսած [1914թ.] դեկտեմբերի սկզբներից, մի քանի անգամ հայտնել էր Ռումանիա, որ կամավորներ չուղարկեն, քանի որ կարիք չկա. մեր դիմումները մնացին անհետևանք: Դիմեց թեմի սրբազան առաջնորդը. նույնպես ապարդյուն: Հատուկ գրությամբ մարդ ուղարկվեց Ռումանիա. անհետևանք մնաց այդ քայլն ևս: Մեր ստացած տեղեկությամբ այդ ներհակ հետևանք է ոմանց այն համոզման, որ Ազգային բյուրոն հանդիսանում է մի մասնավոր խմբակի և ոչ համազգային հիմնարկություն:

Նկատելով, որ ներկայումս ավելի քան երբևիցե անհրաժեշտ է, որ բովանդակ ազգը գործի միաբան և միասիրտ, որ վերանան ամեն պառակտում և ներհակություն

ազգի միջից, Ազգային բյուրոն ուրիշ ավելի ազդու հնար չի գտնում այս ծախորդ վիճակի վերացման համար, քան Ձեր Վեհափառության հեղինակավոր խոսքը: Եթե Դուք հորդոր կարդաք ի սփյուռս աշխարհի հայության՝ գալ համերաշխության, ճանաչել մի ղեկավար մարմին, նպաստները մի տեղ կենտրոնացնել և գործել միասնաբար ու համերաշխ – Ձեր հայրական խրատն ու հորդորը կանե իր բարերար ազդեցությունը, կմբերանե չարախոսներին, կսանձե զարտուղի ընթերցողներին և կզսպե բաժան գործելու հակումը:

Ուստի Բյուրոն խոնարհաբար խնդրում է Ձերդ վեհափառության, ի շահ ընդհանուր գործի վերոհիշյալ իմաստով հորդոր կարդալ հայության՝ գործելու համերաշխ և միասնաբար, հօգուտ և ի փրկություն տառապյալ հայ ժողովրդի:

Ձերդ վեհափառության
խոնարհ որդիք՝

Փոխնախագահ Ազգային բյուրոյի Հովսեփ Խունունց
Ի տեղի քարտուղարի Ա.Պապովյան

ՀԱԱ, Ֆ.57, ց.1, գ.28, թթ.152-153: Բնագիր: Ձեռագիր:

N 82

ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԱՌԱՋՆ ԱՌՆԵԼՈՒ ԲՅՈՒՐՈՅԻ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

4 ապրիլի 1915թ.
Թիֆլիս

Վեհափառ Տե՛ր,

Երեկ Տփխիսում ստացված հետևյալ հեռագիրը Սոֆիայից (Բուլղարիա).

«Սիստեմատիկ կոտորածներ՝ Էրզրում, Դերջան, Ձեյթուն ու շրջականներ: Արյունահեղ ընդհարումներ՝ Բաղեշ, Վան, Մուշ: Ապստամբություն՝ Կիլիկիա: Բռնություններ, թալան, սպանություններ՝ Ակն ու Փոքր Հայք: Տնեսական ավերում ամբողջ ազգաբնակության: «Ազատամարտը»՝ դադարեցված, խմբագիրներից մեկը՝ աքսորված Անգորա: Բողոքեցե՛ք չեզոք պետությունների առաջ ընդհանուր կոտորածն արգելելու համար»:

Հեռագիրը, ձեռքից-ձեռք անցնելով, բուռն հուզում առաջ բերեց հասարակության մեջ և Ազգային բյուրոն պարտք համարեց անմիջապես դիմել Կովկասի փոխարքային երկու նպատակով. ա) տեղեկանալ, թե ո՞ր աստիճան ստույգ է հեռագրի հաղորդումը և բ) իմանալու, թե ի՞նչ օրինական միջոցների կարելի է դիմել կոտորածի առաջն առնելու համար: Պարզվեց, որ հեռագրի հաղորդած սոսկալի լուրը, դժբախտաբար, միանգամայն ճիշտ է: Ինչ վերաբերում է երկրորդ հարցին, կոմս փոխարքայի կարծիքն այն է, որ Դուք Վեհափառ Տե՛ր, իբրև միակ ներկայացուցիչ ու հոգատար ամբողջ հայ ազգի, հաճեք արտաքին գործոց նախարար պ.Սազոնովի միջոցով դիմում անել Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ պ.Վիլսոնին և Ն.Մ.* Իտալիայի Վիկտոր-Էմանուել թագավորին, որպեսզի նրանք և իրենց կառավարությունները, հանուն մարդկության և քրիստոնեության, անհապաղ և

* Նորին մեծություն:

կտրուկ ճնշում գործ դնեն Պոլսում արդեն սկսված Մեծ աղետին վերջ դնելու և գալոք, թերևս ավելի մեծ աղետների առաջն առնելու համար:

Ապա կոմս փոխարքան հայտնեց, որ ինքը հեռագրով տեղեկացրել է արդեն պ.Սազոնովին Թուրքահայաստանում կատարվող անցքերի մասին և ավելացրեց, որ եթե Դուք, Վեհափառ Տե՛ր, պատշաճ համարեք անել վերոհիշյալ դիմումը, փոխարքան իր կողմից կմիջնորդե, որ Ձեր դիմումին անարգել ու բարեհաջող ընթացք տրվի:

Ձեկուցանելով Ձերդ վեհափառությանը այս ամենը, Ազգային բյուրոն հուսով է, որ Ձեր հեղինակավոր ձայնը անլսելի չի մնա և որ երկու Մեծ պետությունների՝ Ամերիկայի ու Իտալիայի միջնորդությունը եթե ոչ բոլորովին, գեթ մասամբ կզսպե այն ոճրագործ ձեռը, որ այսօր կրկին ու կրկին ներկվում է մեր հարազատների անմեղ արյունով:

Ձերդ վեհափառության ամենախոնարհ որդին

Փոխնախագահ Բյուրոյի Հովսեփ Խունունց
Քարտուղար Հովհ.Սպենդիարյան

ՀԱԱ, Ֆ.57, ց.5, գ.28, թթ.156-157 հակ.: Բնագիր:Ձեռագիր:

N 83

ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԴԻՎԱՆԻՆ՝ ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՎՐԱ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

11 ապրիլի 1915թ.
Թիֆլիս

Ազգային բյուրոյի վերջին ժամանակ հասնում են լուրեր, որ մի քանի անհայտ անձինք Հնչակյան կուսակցության անունից դրամական ժողովարարություն են անում հայաբնակ տեղերում՝ իբրի հայ կամավորների խմբեր կազմակերպելու և նրանց պատերազմի դաշտն ուղարկելու համար: Այդ պատրվակով նրանց հաջողվել է մի հայկական գաղութում նշանավոր գումարներ գանձել միամիտ հայերից, որոնք հավատալով այդպիսի մութ անձանց ստահոդ հավաստիացումներին, առատ նվիրաբերություններ են արել այդ նպատակի համար: Դժբախտաբար եղել են նաև բռնության դեպքեր, որոնց ենթարկվել են այդ ապօրինի ժողովարարության դեմ բողոքները:

Սրանով Բյուրոն դիմելով իր տեղական մարմիններին, խնդրում է հայտնել ամեն տեղ ի գիտություն հայ հասարակության, որ հայ կամավորական խմբեր կազմակերպողը և նրանց պետքերի մասին հոգացողը է միայն Ազգային բյուրոն, որն ընտրված է Ռուսահայ ժողովրդից պատգամավորական համագումարում: Միայն նա է, որ ունի իրավունք դրամական նվիրատվություններ հայ կամավորների կազմակերպության համար ինքը, իբրև հաստատություն, կամ այդ նպատակի համար իր նշանակած լիազորների միջոցով: Բացի Բյուրոյից ոչ մի այլ կազմակերպություն կամ խմբակցություն կամ ևս առավել մասնավոր անձինք չունեն իրավունք այս կամ այն քաղաքական կուսակցության անունից դրամական ժողովարարություն անել վերոհիշյալ նպատակի համար:

Հ.Կ.Ազգային Բյուրո

ՀԱԱ, Ֆ.57, ց.1, գ.102, թ.7: Բնագիր: Ձեռագիր:

N 84

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ՓՈԽՆԱԽԱԳԱՀԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԱՌԱՋՆ ԱՌՆԵԼՈՒ ԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՆ ԱԶԱԿՑԵԼՈՒ ԽՆԴՐՈՎ ՄԵԾ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԴԻՄՈՒՄՆԵՐ ԱՆԵԼՈՒ ԵՎ ԲՅՈՒՐՈՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ ԲԺ. ՋԱՎՐԻՅԱՆԻՆ ԵՎ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

16 ապրիլի 1915թ.
Թիֆլիս

Վեհափառ Տե՛ր,

Ամսույս 13-ին ստացանք բժ. Ջավրիյանից հետևյալ հեռագիրը:

«Անկարելի է գործել առանց կաթողիկոսի բավարար լիազորության: Ժամանակ վաստակելու համար խնդրեցե՛ք հեռագրով նախարարության՝ հեռագրել Լոնդոնի դեսպանին լիազորություն [տալու] Աբրահամի և ինձ համար: Անմիջապես հեռագրեցե՛ք ձեռք առնված միջոցների մասին: Ջավրիև»:

Իսկ Տաճկահայաստանից ամեն օր նոր տեղեկություններ են գալիս այնտեղ կատարվող սոսկալի դեպքերի մասին: Դրությունն այնպես է, որ եթե արտաքին միջամտությունը ուշանա, երկիրը կարող է վերջնականապես ավերվել, և ժողովուրդը բնաջինջ լինի:

Նկատի առնելով այս ճգնաժամը ու գիտակցելով այն մեծ պատասխանատվությունը, որ ընկնում է մեզ վրա հանդեպ մեր տաճկահայ եղբայրների անհրաժեշտ համարեցինք հեռագրել վսեմափայլ Պողոս Նուբար փաշային հետևյալը.

«Խնդրում ենք հեռագրեք, ե՞րբ եք մտադիր մեկնել Եվրոպա. կրիտիկական վայրկյանը պահանջում է Ձեր անհապաղ ներկայությունը: Ազգային բյուրոյի ներկայացուցիչներ Ջավիրևն ու Ղուկասովը անհամբեր սպասում են Ձեզ Լոնդոնում»:

Միևնույն ժամանակ հեռագրեցինք բժ. Ջավրիյանին.

«Հեռագրել ենք նուբարին, որ շտապի Եվրոպա գալ: Լիազորության համար նորից դիմում ենք կաթողիկոսին: Թուրքիայում հայկական նոր կոտորածների առթիվ աշխատեցե՛ք կազմակերպել Եվրոպայում հասարակական շարժում՝ ազդելու կառավարությունների վրա, եռանդուն միջոցների դիմեն կոտորածը կանգնեցնելու համար»:

Ձեկուցանելով Ձերդ վեհափառության այս մասին, կրկին անգամ խոնարհաբար խնդրում ենք, որ մինչև Պողոս Նուբար փաշայի Եվրոպա հասնելը բարեհաճեք լիազորություն տալ բժ. Ջավրիյանին և պ. Ղուկասյանին՝ դիմումներ անելու պետություններին և պաշտպանություն աղերսելու կոտորվող թուրքահայերի համար:

Ձեր վեհափառության ամենախոնարհ որդիք՝
Փոխնախագահ Ազգային բյուրոյի

Փոխնախագահ Ազգային բյուրոյի Հովսեփ Խունունց
Ի տ. Քարտուղարի Հակ.Քոչարյան

ՀԱԱ, Ֆ.57, ց.5, գ.28, թթ. 161-162: Բնագիր: Ձեռագիր:

N 85

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲՅՈՒՐՈՅԻ 1914-1915ԹԹ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ*

20 մայիսի 1915թ.

Ազգային կետնրոնական բյուրոն վերջին համագումարում ընտրված կազմով, շարունակելով իր գործունեությունը ներկա ծանր հանգամանքներում, կենտրոնանում է իր ամբողջ ուշադրությամբ հետևյալ խնդիրների վրա.

ա) Հայ կամավորական խմբերի կազմակերպությունը, պահպանությունը և նրանց քանակի ավելացումը ըստ չափու կարևորության և պահանջի.

բ) Հայ ժողովրդի ինքնապաշտպանությունը այն վայրերում, ուր նրան առավելապես վտանգ է սպառնում թշնամաբար վերաբերվող տարրերի կողմից.

գ) Բանակցություններ ռուս զինվորական և քաղաքացիական իշխանությունների հետ վերոհիշյալ խնդիրների բարեհաջող կարգավորման համար.

դ) Դրամական նվիրատվությունների հանգանակումը այլևայլ հայաբնակ քաղաքներում և վայրերում հայ կամավորական խմբերի պահպանության համար:

Բյուրոյի գլխավոր հոգատարության առարկան էր և շարունակում է մնալ մինչև այսօր հայ կամավորների գործունեությունը և նրանց պահպանությունը Հաճկահայաստանի ռազմաշրջանում:

Ռուս կառավարությունը կամավորական խմբերի համար մատակարարում է միայն զենք ու զինական պաշար, իսկ նրանց նյութական և այլ անհրաժեշտ պիտույքների գոյացումը հայթհայթվում է Բյուրոյի դրամական միջոցներից, համաձայն նախապես կազմված նախահաշվի, իսկ այդ միջոցները գումարվում են այլևայլ հայաբնակ տեղերից ստացված դրամական նվիրատվություններից հատուկ այդ կապի համար:

Հայ կամավորների թիվը հասնում է 5.000-ի. նրանք հինգ խմբերի վրա են բաժանված, յուրաքանչյուր խումբ՝ առանձին խմբապետի հրամանատարության տակ:

Բայց վերջին ժամանակ խմբերի կազմակերպության մեջ փոփոխություն տեղի ունեցավ, որով երկրորդ, երրորդ, չորրորդ և հինգերորդ խմբերը միանալով բաժանվեցին երեք հազարյակի կամ բատալյոնի՝ Դրոյի, Քեռու և Համազասպի հրամանատարության տակ:

Այդ երեք բատալյոնները միացած կազմեցին մի գունդ - Հայկական Արարատյան գունդը Վարդանի ընդհանուր հրամանատարության տակ:

Այդ գունդը ապրիլի վերջին հանդիսավոր պարադից և եկեղեցական մաղթանքից հետո Երևանում, շարժվեց ռուս զորքերի հետ միասին դեպի սահմանը, ամեն տեղ ճանապարհին ոգևորված հայ ժողովրդի ողջերթը ստանալով, և ապրիլի 20-ին անցնելով ռուս-տաճկական սահմանը, դիմեց կռվի դաշտը, միշտ գտնվելով ռուս բանակի առաջավոր կարգերում: Կռվով անցնելով Ապաղայի դաշտը, գունդը ապրիլի 27-ին հասնում է Բերկրի՝ դեպի Վան ուղևորվելու համար, և ընդհարվում է շարունակ մեծաքանակ քուրդ հրոսակների հետ, հաջողությամբ ետ մղելով թշնամու ուժերը:

Մայիսի 8-ին հեռագիրը ավետեց յուրաքանչյուր հայի համար անձկալի լուրը, թե Վանը վերցրել է մեր գունդը: Գեն. Օգանովսկու և Նիկոլաևի քաջալերիչ գովասանքները լավագույն վկայություններն են հայկական գնդի ցույց տված անձնվեր գործունեության պատերազմի դաշտում:

* Վերնագիրը փաստաթղթինն է:

Անդրանիկի գունդը (1.200 կամավոր) գործում է առանձին, Պարսկաստանում, գեն. Չեռնոզուբովի բանակում: Թավրիզ, Մարանդ, Խոյ, Դուզ-դաղ՝ ահա այն տեղերը, որ մեր կամավորները ջերմ աջակցություն են ցույց տվել ռուս զորքերին: Ապրիլ ամսի 18-ին Անդրանիկի գունդը մասնակցում է Դիլմանի հայտնի կռվում, ուր համառ դիմադրություն է ցույց տալիս թշնամուն, հնարավորություն տալով ռուս զորքի նահանջին, որը հետո փառավոր ջարդ տվեց թշնամուն: Այդ կռվից հետո գունդը շարժվեց դեպի առաջ և Խանասուրից անցնելով, պիտի ուղևորվի Վան, ուր միանալու են բոլոր հայ կամավորները:

Բյուրոն, ջանելով ավելացնել մեր ռազմիկ ուժերի քանակը, միշտ բանակցությունների մեջ է զինվորական իշխանությունների հետ՝ թե՛ կամավորների թիվն ավելացնելու համար, հասցնելով վերջինը 10 հազարի, և թե՛ ավելացրած թվի համար զենք ստանալու: Չնայելով ռուս զինվորական շտաբի ցույց տված բարյացակամության, Բյուրոն, սակայն, իր ձգտումների մեջ մինչև վերջին ժամանակ խոչընդոտների էր հանդիպում ընդհանուր զենքի պակասության պատճառով, որով առարկում էր շտաբի զինվորական վարչությունը հանդեպ մեր դիմումներին: Բայց վերջին ժամանակ ստացված է ռուս զինվորյալ ուժերի օգոստ[ոս]ափառ հրամանատարից թույլտվություն նոր չորս կամավորական խմբեր կազմելու համար և հավանական է, որ այդ թույլտվության հետ միասին կստացվի և ավելացրած խմբերի համար պատշաճավոր թվով զենք, որով հայ զինվորական կամավորությունը կկազմի մի պատկառելի ռազմական ուժ:

Արձանագրելով այս տեղեկագրում հայ կամավորական խմբերի կատարած ազգաշահ գործը, Բյուրոն չի կարող երախտագիտությամբ չհիշել և այն մեծ ծառայությունը, որ նրանք մատուցեին հայ տառապյալ ժողովրդին, ուղեկցելով դեպի կովկասյան սահմանը Տաճկաստանի և Պարսկաստանի մեր տարաբախտ գաղթականներին: Այդ թշվառները պատերազմի սարսափներից փախչելով, կարող էին ճանապարհին թուրք և քուրդ հրոսակների հարձակումներին ենթարկվել և կոտորվել առանց խտրության սեռի և հասակի, եթե հայ կամավորների կողմից չգտնեին պաշտպանություն և հայրախնամ հոգատարություն:

Ինչ վերաբերում է հայ ժողովրդի ինքնապաշտպանության խնդրին, Ազգային բյուրոն պատիվ ունի խոնարհաբար զեկուցանելու, որ ռուս-տաճկական պատերազմը հայտարարվելուց հետո, երբ հայ երիտասարդ ուժերը հեռացան պատերազմի դաշտը, տեղական հայ ժողովրդի դրությունը ծանրացավ և տեղ-տեղ, համաձայն զանազան վայրերից հասած տեղեկությունների, նույնիսկ վտանգավոր կերպարանք ստացավ: Բյուրոն ի դեմս իր ներկայացուցիչների դիմեց Կովկասի բարձրագույն իշխանության, խնդրելով թույլ տալ որոշ տեղերում զինել հայ անպաշտպան ժողովուրդը իրեն ապահովելու համար շրջապատող ավազակաբարո տարրերից, սակայն իշխանությունը թե՛ ավելորդ զենք չունենալու պատճառով և թե՛ մյուս կողմից չկամենալով զինել հայերին, գրգռել հարևան ժողովուրդները, թողեց անկատար Բյուրոյի դիմումը:

Բյուրոն նախ փորձ արեց պատերազմի արհավիրքներից վնասված տաճկահայերի վիճակը թեթևացնելու ռուս զորքերի միջոցով նվաճված տեղերում, ուր ժողովրդի կենսական պետքերի համար ո՛չ հոգացող, ո՛չ միջնորդ ու բարեխոս կա զինվորական իշխանության առաջ: Այդ տեղերի հայերի դրությունը շատ ծանր է, եթե նկատի առնել այն, որ նրանք անգիտակ ռուս լեզվին և ռուս վարչության մեջ ընդունված կարգերին, հնարավորություն չունեին առանց հասկացող միջնորդի դիմումներ անել հարկավոր դեպքերում ռուս զինվորական իշխանության: Կարևոր նշանակություն վերագրելով այդ խնդրին, Բյուրոն դիմեց զինվորական հրամանատարին, խնդրելով թույլ տալ գործել այդ տեղերում ինտելիգենտ անձերից կազմած քաղաքացիական խմբերին, հատկացնելով նրանց սոսկ միջնորդի և բարեխոսի դեր գյուղացիների կացության վերաբերյալ այլևայլ խնդիրները

կարգավորելու համար իշխանության գիտությամբ: Ստանալով այդ թույլտվությունը, Բյուրոն կազմակերպեց այդպիսի քաղաքացիական խումբ, նշանակելով նրա կառավարիչ ըստ ամենայնի վստահելի և ինտելիգենտ անձնավորություն: Խումբը արդեն սկսել էր իր արդյունավետ գործունեությունը Ալաշկերտի, Բայազետի և Ղարաքիլիսայի շրջաններում, երբ ռուս զորքի գլխավոր հրամանատարը զինվորական տեսակետից գտավ, որ անթույլատրելի է այդպիսի քաղաքացիական խմբերի գործունեությունը ռազմաբեմի շրջանում, որից հետո խումբը հետ կանչվեց և ժամանակավորապես կազմալուծվեց:

Բյուրոյի գործունեության ընթացքում երբեմն ծագում էին և այդպիսի խոշոր ազգային-քաղաքական խնդիրներ, որոնք կարող էին ընթացք ստանալ միայն Ձերդ օծության գիտությամբ և հավանությամբ և այդպիսի դեպքերում ազգի Վեհը իր գրավոր դիմումները ինքը իր կողմից ուղղում էր բարձրաստիճան անձանց:

Երբեմն էլ Բյուրոն, ինչպես Ձերդ օծությանը ևս հայտնի է, որոշ դեպքերում հանձնարարություն էր տալիս պետական դումայի անդամ պ.Միքայել Պապաջանյանին ընթացիկ կարևոր խնդիրների մասին բանակցության մեջ մտնել Պետրոգրադի բարձրագույն վարչության պաշտոնյաների հետ:

Սա է ընդհանուր ուրվագիծը Ազգային բյուրոյի գործունեության 1914/15 թվականների ընթացքում, որի մասին Բյուրոն իր խոնարհ որդիական պարտքն է համարում զեկուցանել Ձերդ վեհափառության, կցելով ներկա տեղեկագրին նաև Բյուրոյի դրամարկղի մուտևելից համառոտ հաշիվը 1914թ. սեպտեմբերի 10-ից մինչև մայիսի 1-ը 1915թ.:*

Հայկական ազգային կենտրոնական
բյուրոյի փոխնախագահ Հ.Խունունց

ՀԱԱ, Ֆ.57, ց.5, գ.28, թ.174-176: Բնագիր: Ձեռագիր:

N 86

Հ Ա Շ Ի Վ
ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ԴՐԱՄԱՐԿՂԻ 1914Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-ԻՑ ՄԻՆՉԵՎ 1915Թ. ՄԱՅԻՍԻ 1-Ը ԿԱՏԱՐԱԾ ԾԱԽՍԵՐԻ

Մուտք Ստացված է	Դրամարկղ	Ելք Ծախսված է
1914թ. սեպտեմբերի 10-30	30.800	1914թ.սեպտ.10-30 26.112.62
- հոկտեմբերի 1.31	95.482.20	- հոկտ.1-31 79.525.75
- նոյեմբերի 1-30	119.266.33	- նոյեմբ.1-30 134.046.43
- դեկտեմբերի 1-31	138.004.30	- դեկտ. 1-30 69.919.04
1915թ. հունվարի 1-31	230.384.25	1915թ.հունվ. 1-31 192.190.68
- փետրվարի 1-28	125.116.25	- փետր. 1-28 73.361.05
- մարտի 1-31	77.970.28	- մարտի 1-31 111.920.80
- ապրիլի 1-30	191.561.11	- ապրիլի 1-30 65.570.93
	1.008.584.72	-1.008.72752.647.30
		մնացորդ առ 1 մայիսի
	-255.937.42	

* Տե՛ս հաջորդ՝ N 61 փաստաթուղթը:

ՀԱԱ, Ֆ.57, ց.5, գ.28, թ.177: Բնագիր: Ձեռագիր:

N 87

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ՓՈԽՆԱԽԱԳԱՀԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ՊՈՐՈՒՉԻԿ ՋԱՆՖՈԼԱԴՅԱՆԻ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԽՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

10 հունիսի 1915թ.
Թիֆլիս

Ձերդ Վեհափառություն.

Երբ ես ս.Էջմիածնում պատիվ ունեցա ներկայացնելու և զեկուցանելու Ձեզ Ազգային բյուրոյի գործունեության մասին, այդ ժամանակ խոսելով պ.Ջանփոլադյանի խմբի մասին, ես իմ ունեցած տեղեկությունների հիման վրա հայտնեցի Ձեզ, որ այդ խումբը վերջերումս կազմալուծված էր:

Այժմ պորուչիկ Ջանփոլադյանը անձամբ գալով ինձ մոտ, հայտնում է, որ ճիշտ է, մի ժամանակ իր խումբը մոտ էր կազմալուծվելու, բայց հետո իրեն հաջողվեց կարգավորելու խումբը, և ներկայումս այդ խմբի մի մասն արդեն գտնվում է ռազմաբեմում, իսկ մյուս մասը պատրաստվում է և շուտով նույնպես կուղևորվի այնտեղ:

Համաձայն պ.Ջանփոլադյանի խնդիրքի, պարտք եմ համարում հաղորդել Ձերդ Վեհափառության այս տեղեկությունը, հնարավորություն չունենալով անձամբ ստուգելու այն:

Մնամ որդիական խոնարհությամբ՝

Փոխնախագահ Հովսեփ Խունունց

ՀԱԱ, Ֆ.57, ց.5, գ.28, թ.182: Բնագիր: Ձեռագիր:

N 88

Ս.ԷՋՄԻԱԾՆԻ ԳԼԽԱՎՈՐ ԿԱՐԳԱԴԻՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱՄԱԿԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ԵԿԱՏԵՐԻՆՈԴԱՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻՑ ԵՎ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՑ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՏՈՒԺԱԾՆԵՐԻ ԵՎ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԳՏԻՆ ԱՌԱՔՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

7 հուլիսի 1915թ.
ս.Էջմիածին

Եկատերինոդարի Հայոց ազգային կենտրոնական բյուրոյի ճյուղի նախագահ պարոն Տարասյանը փոխադրել է հոգուտ Վանի պատերազմից վնասվածների և երկիր վերադարձող հայ փախստական-գաղթականների 1255ր.50կ., փոխադրված է նաև Ղարաբաղի թեմի կառավարիչ Տ.Զավին վարդապետի միջոցով կրկին նույն նպատակի համար 1220ր.85կ.:

Գլխավոր կարգադիր հանձնաժողովս շնորհ ունի ներկայացնելու ընդամին նվիրաբերած հիշյալ գումարները, ընդամենը 2476ր.35կ. Ձերդ վեհափառության տնօրինություն:

Նախագահ Հանձնաժողովի Եփրեմ եպիսկոպոս
Անդամներ Բագրատ եպիսկոպոս
Բաբկեն վարդապետ
Անդամ քարտուղար Մատթևոս եպիսկոպոս

ՀԱԱ Ֆ.56, ց.7, գ.2197, թ.37: Բնագիր: Ձեռագիր:

N 89

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԴԻՎԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՆ՝ ՊՈՂՈՍ ՆՈՒԲԱՐԻՆ ԶԱՎՐԻՅԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԾՐԱԳՐԵՐԸ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

15 հուլիսի 1915թ.
ս.Էջմիածին

Ազգիս Վեհափառ Հայրապետն ամսույս 9-ին ստացավ վսեմ. Պողոս փաշայից գրություն, որի մեջ, ի միջի այլոց, հիշված է. «Իրմե (դոկտոր Զավրիյանե) ստացա Ձերդ վեհափառության հավանությամբ պատրաստված ծրագիր, որուն վրա պարտավոր եմ հիմնել իմ բանակցությունները»: Վեհափառ Հայրապետը պատվիրեց դիվանիս հայտնել Ձեզ, որ այդպիսի մի ծրագրից տեղեկություն չունի և ցարդ իրեն չէ ներկայացված: Դիվանս խնդրում է Ձեզ պարզել այդ թյուրիմացությունը և զեկուցանել Նորին Վեհափառության, արդյոք ի՞նչ ծրագիր է, ո՞վ է լիազորել բժ.Զավրիյանին այդ ձևով հայտարարել Պողոս փաշային և միևնույն ժամանակ բարեհաճել բժ.Զավրիյանի ներկայացրած ծրագրի պատճենը շուտով ուղարկել Վեհափառ Հայրապետին, քանի որ Պողոս փաշային անմիջապես պատասխան պիտի տրվի:

ՀԱԱ, Ֆ.57, ց.5, գ.28, թ.184-185: Բնագիր: Ձեռագիր:

N 90

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ՊՈՂՈՍ ՆՈՒԲԱՐ ՓԱՇԱՅԻՆ ԲԺ.ԶԱՎՐԻՅԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

23 հուլիսի 1915թ.
Թիֆլիս

Վեհափառ Տե՛ր,

Ձերդ Սրբության հրամանով դիվանի հուլիսի 18-ի հմ. 1107 գրությամբ առաջարկվում է Ազգային բյուրոյին բացատրել, թե ինչ ծրագիր է ներկայացրել բժ.Զավրիյանը Պողոս փաշային, հայտնելով, թե այդ «Ձերդ Վեհափառության հավանությամբ պատրաստված ծրագիրն է, որի հիման վրա Պողոս փաշան պարտավոր է հիմնել իր բանակցությունները»:

Ազգ[ային] բյուրոյի կողմից պատիվ ունիմ հայտնելու, որ ինչպես ժամանակին բախտ է ունեցել զեկուցանելու Ձերդ սրբության Բյուրոն, բժ. Զավրիյանը ուղարկվել է Փարիզ և Լոնդոն Հայկական խնդրի համար աշխատելու նպատակով մինչև Պողոս փաշայի այնտեղ ժամանումը, իսկ նրա գալուց հետո՝ նրան աջակցելու համար նույն խնդրում:

Ազգ[ային] բյուրոն իր պարտքն է համարել տալ բժ.Զավրիյանին պատճենները այն գրությանց, որ Ձերդ Վեհափառության կողմից Հայկական հարցի

վերաբերմամբ տրված են եղել կոմս փոխարքային, և նույնպես ստացված պատասխանների, որպեսզի այդ բոլորը նա ներկայացնի Պողոս փաշային՝ նրան իրազեկ կացուցանելու համար ամբողջ ունցած-դարձածի: Ուրիշ որևէ նոր ծրագիր Բյուրոն նրան չի հանձնարարել ներկայացնելու Պողոս փաշային:

Հավանորեն Պողոս փաշան ընդունել է իբրև այդպիսի ծրագիր, Ձեր հավանությամբ պատրաստված այն առաջարկը, որ արված է Ձերդ Վեհափառության վերջին գրության մեջ, այն է 1914թ. նոյեմբերի 8-ից հմ. 1720, որը մատուցված է կոմս փոխարքային Թիֆլիսում և որի մասին Ձերդ Վեհափառությունը բախտ ունեցավ անձամբ զեկուցանելու Նորին մեծության Նիկողայոս Բ կայսեր նոյեմբերի 29-ի ունկնդրության ժամանակ: Համենայն դեպս Բյուրոն իր կողմից դիվանի գրության առթիվ առանձին բացատրություն կխնդրի բժ.Զավրիյանից:

Ձերդ ս.Օծության ամենախոնարհ որդի՝
փոխնախագահ Ազգ[ային] բյուրոյի Հովսեփ Խունունց

ՀԱԱ, Ֆ.57, ց.5, գ.28, թ.187: Բնագիր: Ձեռագիր:

N 91

ՓԱՐԻԶԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՆԳՐԵՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՊՈՂՈՍ ՓԱՇԱՅԻ ՆԱՄԱԿԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ՝ ԻՐԵՆ ՈՒՂԱՐԿԱԾ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

22 օգոստոսի 1915թ.
Փարիզ

Վեհափառ Տե՛ր,

Կփորձեմ պատասխանել Ձեր Վեհափառության 19 հուլիս ամսաթիվ գրության, զոր այս վայրկյանին ստացա:

Պատասխանելով իմ 17 հունիս ամսաթիվ նամակիս, որում ըսած էի, թե «Բարիզ հասնելուս պես գործը սկսա, ստանալով տոքթոր Զավրիևի այն ծրագիրը, որ պատրաստված է Ձեր Վեհափառության հետ որուն վրա պիտի հիմնեմ իմ բանակցությունները», Ձեր ս.Օծությունը ինձ կհայտնե այժմ, որևէ ծրագիր չէ հանձնած և թե դեռ որևէ ծրագրի մասին իր հավանությունը չէ տված: Ձեր վեհափառությունը կհավելու, թե նկատի առնելով այս դեպքը, կխնդրեի, որ այսուհետև հավատք չընծայեմ (ի բացառյալ իր կոնդակներով կամ դիվանատան պաշտոնագրով եղածներին) բոլոր այն հայտարարությանց, որ այս կամ այն անձը կընե իր անվամբ:

Բնականաբար թյուրիմացություններ կան, որոնք պետք է ճշտել: Ձեր Վեհափառությունը կգրե, թե արդեն գրած է Թիֆլիսի Ազգային պյուրոյին՝ բացատրություններ պահանջելու համար: Ես ալ իմ կողմես կուգամ խնդիրը ճշտել, որպեսզի Ձեր ս.Օծությունը կարենա պետք եղած լուսաբանություններ ունենալ:

Լավագույն է նախ ճշտորեն սահմանել տոքթ.Զավրիևի դիրքը. Ձեր Վեհափառությունը 18 ապրիլին ինձ ուղղված հեռագրի մեջ, որում զիս կանվաներ իր Եվրոպիո ներկայացուցիչը, ինչպես նաև Ազգային պատվիրակության նախագահը, ինձ կըսեր, որ «իմ ներկայությունս Լոնտրայի (ի նկատի ունի ք.Լոնդոն-կազմողներ) և Բարիզի մեջ անհրաժեշտ է», և կհավելուր իսկույն. «Մի քանի օր առաջ Զավրիևը և Աբրահամ Ղուկասովը (ը) Բեթրոկրաթեն մեկնած են դեպի Բարիզ և Լոնտրա»: Այս հեռագրեն բնականաբար կհետևեր, թե Զավրիևը և Ղուկասովը մեկնած էին իմ պաշտոնիս վերաբերյալ պատճառներով: Եվ հիրավի տոքթ. Զավրիև Լոնտրայեն

Բարիզ եկավ տեսնելու իմ ժամանման օրն իսկ և ինձ տեղեկություններ տվավ Ձեր Վեհափառության Կովկասի և Բեթրոկրատի մեջ կատարած բանակցություններու մասին, որոնք տեղի ունեցած էին իմ՝ Ձեր ներկայացուցիչ անվանվելես առաջ: Պետք եմ դիմել տալ, որ 26 ապրիլին (9 մայիս) Ձեր վեհափառութենեն 18 ապրիլի հեռագրեն զատ ուրիշ հաղորդագրություն մը չէր ստացած: Միայն ամիս մը վերջեն էր, որ 28 ապրիլին Ձեր 18 ապրիլ (1 մայիս) թվագիր կոնդակը ստացա:

Այդ տոքթ. Զավրիև ինձ տեղեկագիր մը հանձնեց, որ ինձ համար պատրաստած էր, որպեսզի զիս տեղյակ ընե Ռուսիո կացության վրա, ի մասին հայկական խնդրոն, ինչպես նաև խորհրդապահական նամակի մը պատճենը, որ Լոնտրայի ռուսական դեսպանին հանձնած էր, որում մանրամասնված էր Բեթրոկրատի մեջ սկզբմամբ ընդունված ծրագիր մը: Այդ նամակը հետևյալ պարբերությունը կպարունակեր՝ զոր կարտատպեն, որովհետև Ձեր վեհափառության կվերաբերի. «Առ ի գիտություն հայտնելով Ձեր վսեմության վերաբերյալ դեպքերը, պետք է մատնանշել, որ Բեթրոկրատի տեսակցությունք ծանոթ են միայն կաթողիկոսին և պատասխանատվության բաժին մը ունեցող հայերու կողմե նշանակված անձանց»:

Այս պայմաններու մեջ Ձեր Վեհափառությունը չի պիտի զարմանա, երբ ես այդ ծրագիրը նկատեցի Ձեր հավանության արժանացած և անոր հիմնանց վրա գործի սկսա, հիմունքներ, որոնք պարզված էին Ռուսիո դեսպանին հանձնված նամակի մեջ, և որ զանոնք ընդունած էր առանց առարկության: Ի վերա այս ամենայնի կհավելեմ, որ որևէ պատճառ չունեի մերժելու այն ծրագիրը, որ պատվական կգտնեի և որուն վրա հենվելով, ես ալ շատ նպաստավոր փաստեր կրցա գտնել: Այն փաստերն էին, որ իմ բանակցությանս մեջ, թե հոս և թե Լոնտրա, արժեցուցի և զորոնք պարզեցի Գաղղիո և Անգլիո արտաքին գործոց նախարարներուն ներկայացուցած հիշատակագիրներուս մեջ, որոնց պատճեններն ուղարկած եմ Ձեր Վեհափառության: Անոնց մեջ միայն փոփոխություն մը ներմուծեցի, որ բացատրված է Լոնտրայի ռուսական դեսպանին հետ ունեցած տեսակցությանս մեջ, որուն տեղեկագրությունը ստացած է Ձեր Վեհափառությունը, այն ալ Թուրքիո գերիշխանության վերաբերյալ մասն է, որ ընդունված է Զավրիևի ծրագրին մեջ: Միշտ՝ հայտնած եմ, որ իբր հայ ես չեմ կրնա, նկատի առնելով բոլոր անցյալը, պահանջել կամ ընդունել Թուրքիո գերիշխանությունը, սույն խնդիրը պատերազմեն վերջ կրնա պետությանց կողմե լուծվիլ, մենք հարկադրված կըլլանք խոնարհիլ, եթե իրենք այնպես որոշեն:

Ահա տոքթ. Զավրիևի կողմե ինձ հանձնված ծրագրի պատկանող դեպքերուն ճշգրիտ մանրամասնությունը: Ձեր Վեհափառությունը պիտի տեսնե, որ եթե այդ ծրագիրը կանխապես իր հավանության արժանացած չէ, դեռ անդարմանալի դիմում մը չէ եղած, և ես կրնամ շարունակել այդ հիման վրա:

Մյուս կողմե՝ «Մշակի» մեջ լույս տեսած հոդված մը հաղորդեցին, որ գրեթե բառացի կերպով կարտատպե Ձեր վեհափառության նամակին ծրագրի և Կենդր[ոնական] պյուրոյե պահանջած տեղեկությանց վերաբերյալ մասը: Կկարծեմ, թե այս տեսակ հրատարակություններ կվնասեն մեր դատին, ցույց տալով ազգին մեջ երկպառակտություններ: Անոնք կարտատպվեն ուրիշ հայ թերթերու և երբեմն էլ եվրոպական թերթերու կողմե և կշահագործվին մեզ դեմ: Անոնք մեր աշխատությունը ոչնչության մատնելու վտանգին կենթարկվեն: Ես կկարծեմ, որ ընդհանրապես պետք ենք զգուշանալ լրագրական որևէ հրատարակութենե ի մասին մեր բանակցությանց, որոնք մինչև այսօր թուրքերը զայրացնելու բնույթ ունեցած են և զիրենք մղած են կրկնապատկելու իրենց անգթությունը և հալածանքները: Հետևաբար հանձնարարեցին իմ բարեկամներուս ետ կենալ ապագային՝ պատվիրակության աշխատությանց վերաբերյալ որևէ ակնարկութենե կամ տեղեկութենե:

Տոքթ.Զավրիևի վերաբերյալ ուրիշ կետ մ ալ կուզեմ լուսաբանալ: Ստեպ ինձ խոսեցավ Ազգային պյուրոյի և անոր սերտորեն աշխատակցելու պետքի մասին, - ինձ հասկցնել տալով նաև, թե այն Պյուրոն ընտրված էր բոլոր հայկական

կուսակցություններուն կողմե, և թե ես պետք էի ընդունել սույն Պյուրոյի ազգային գործերու վարչության մեջ մասնավոր դեր մը ունենալու իրավունքը: Միշտ մերժեցի զայն, պատասխանելով, որ ես ուղղակի կներկայացնեի Ձեր Վեհափառությունը և Ձեր հետ միայն պետք էի հաղորդակցիլ պաշտոնիս վերաբերյալ ամեն գործի համար: Ավելցուցի, թե իբր ներկայացուցիչ Ձեր Վեհափառության, ես չեմ պատկանիր և կամ չեմ կրնար պատկանիլ որևէ կուսակցության, որ ես պետք եմ միշտ դուրս մնալ, բայց թե սիրահոժար կընդունիմ անխտիր որևէ կուսակցության աջակցությունը՝ Ազգային պատվիրակության գործին հօգուտ և ի շահ մեր ազգային դատին:

Նույնպես միևնույն իմաստով պատասխանեցի. ԿԱռաքելանի(ն), որ ինձ հեռագրած էր, թե Եգիպտոսի հնչակյանները և ռամկավարները իրեն գրած էին, թե որոշած են ինձ աջակցել և ինձ հետ համերաշխիլ, և ինձմե կխնդրեր հաստատել իմ այս մասին համաձայն ըլլալս:

Գալով տոքթ. Զավրիևի[ն], իմ պատասխանս զինքը չի գոհացուց, պնդեց, թե Ազգային պյուրոն Ձեր Վեհափառության հետ սերտ աջակցությամբ, կներկայացնե Ռուսիո հայ ժողովրդի մեծամասնության միակ փափագը և միակ կամքը, և ոչ բնավ միայն դաշնակցականները, ինչպես կուզեն ենթադրել, այն կներկայացնե բոլոր կուսակցությունները: Զիս ապահովցուց, որ իրապես երկու դրոշակյան միայն անդամ են այդ Պյուրոյին: Բայց ես իմ հայտարարությանս վրա պնդեցի և կտեսնեմ Ձեր Վեհափառության նամակեն, որ լավ ներշնչված էի: Օգտակար է սակայն, որ ապագային համար լավ կերպով տեղեկացած ըլլամ Ազգային պյուրոյի մասին և շնորհապարտ պիտի ըլլամ Ձեր Վեհափառության, եթե բարեհաճի այդ մասին ինձ հաղորդել իր գաղափարն և հրահանգները: Կփափագիմ մանավանդ գիտնալ, թե ճի՞շտ է, որ Ձեր Վեհափառությունը, ինչպես իմացած եմ, որ հովանավորությունը շնորհած է Պյուրոյին կամ անոր որևէ պաշտոն մը հանձնած է:

Ուրախ եմ ավելացնելու Ձեր Վեհափառության, որ Եվրոպական մամուլը զանազան հոդվածներ հրատարակեց տաճկական կառավարության հայոց վրա ի գործ դրված անգթությանց դեմ: Պոլկարիո միջոցավ Պոլսո պատրիարքեն ստացած մեկ նամակս Անգլիո և Գաղղիո զանազան անձնավորությանց հաղորդեցի և բազմաթիվ կարևոր թերթեր անկե համառոտագրություններ հրատարակվեցին: Այս հրատարակությանց շնորհիվ հանրային կարծիքը օրըստօրե մեզ նպաստավոր կդառնա:

Այսօր իսկ Ազգային հիմնադրամի հանգանակութենեն և Գրետի Լիոնեի միջոցով Ձեր վեհափառության ուղարկեցին 10.000 ռուբլի՝ կամավորներու համար, հետևաբար կհաստատեմ հետևյալ հեռագիրը:

22 օգոստոս-Գրետի Լիոնեի միջոցավ կղրկեմ Ձեզ 10.000 ռուբլի՝ կամավորներու համար՝ Ձեր Վեհափառության ընտրության թողած:

Հուսամ, թե Վեհափառությունը ստացած է նամակներս և հիշատակագիրներս, որ տոքթ. Զավրիևին հանձնած եմ, որ իր մեկնման առթիվ Ռուսիո դեսպանեն զանոնք դիվանագիտական պայուսակով փոխադրելու շնորհը ստացած էր: Ահա անոնց ցանկը, որպես Ձեր Վեհափառությունը կարենա ստուգել:

1. Գաղղիերեն, 28 հուլիս ամսաթիվ նամակ մը և իր հայերեն թարգմանությունը

2. «29 հուլիս ամսաթիվ, երկրորդ նամակ մը և Ազգային հիմնադրամի հանգանակության հաշվոյն մի համառոտությունը, հայերեն թարգմանությամբ

3. Հիշատակագիր մը Գաղղիո և Անգլիո պետական անձանց հետ ունեցած տեսակցությանս համառոտությունով:

Տոքթ. Զավրիևի մեկնելեն քանի մը օր վերջը նշմարեցի, որ մոռացած էինք կցել նաև Գաղղիո և Անգլիո արտաքին գործոց նախարարներուն ներկայացուցած երկու հիշատակագրերուն պատճենները, հետևաբար փութացի զանոնք Ձեր Վեհափառության ղրկել 8 օգոստոս ամսաթիվ նամակով մը:

Հուսամ, թե բոլոր այդ նամակները և զանազան գրությունները հասած են Ձեր Վեհափառության, որոնցմով այժմ պիտի տեղեկանաք ինչ որ կրցա ընել ցարդ:

Մատչելով ի համբույր
պատվական ս.աջոյդ, մնամ
ամենախոնարհ որդի Պողոս Նուպար
23 օգոստոս 1915թ.

Հ.Գ. - Այս վայրկենիս Տ.Առաքելյանե հեռագիր մը ստացա, ուրկե կտեսնեմ, որ թյուրիմացությունը «ծրագիր» բառեն հառաջ կուգա: Հեռագիրը կըսե, թե տոքթ. Զավրիևի կողմե ինձ ներկայացված բարեՆորոգման ծրագիրը Ձեր Վեհափառության հավանության չէ արժանացած: Այդ բնավ բարեՆորոգման ծրագրի խնդիր չէ եղած իմ 17 հունիս ամսաթիվ նամակիս մեջ. այն նամակով ես խոսած եմ մեր դիվանագիտական բանակցությանց ծրագրի մասին և ոչ բարեՆորոգման ծրագրի մը, զոր որչափ կհիշեմ, չէ պատրաստված ցարդ: Թյուրիմացությունը առաջ կուգա թարգմանութենեն և մյմալ «ծրագիր» բառեն, որ հայերեն կնշանակե թե՛ programme և թե՛ project: Այս պատճառով հետ այսօրիկ նամակներուս հայերեն թարգմանության հետ գաղղիերեն բնագիրն ալ միասին պիտի ղրկեմ:

Պ.Ն

ՀԱԱ, Ֆ.57, ց.5, գ.19, թ.87-89: Բնագիր: Ձեռագիր:

N 92

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ՆԱՄԱԿԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄԱՐԻՈՊՈԼԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՑ ՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԻՐ ՍՏԱՑԱԾ ԳՈՒՄԱՐԸ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆՆ ԱՌԱՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

26 օգոստոսի 1915թ.
Թիֆլիս

Այսու Ազգային բյուրոն տեղափոխում է Ձերդ Վեհափառությանը անունով Մարիոպոլի հայկական կոմիտեից ստացված յոթը հարյուր ռուբլին (700ռ.) հօգուտ հայ փախստականների: Սրա հետ միասին ուղարկում ենք Թիֆլիսի առևտրական բանկի փոխադրատոմսը N 108582:

Փոխնախագահ Ազգային բյուրոյի Հ.Խունունց

ՀԱԱ, Ֆ.56, ց.7, գ.2197, թ.361: Բնագիր: Ձեռագիր:

N 93

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ՀՆԴԿԱՀԱՅ ԳԱՂՈՒԹՈՒՄ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

2 սեպտեմբերի 1915թ.
Թիֆլիս

Վեհափառ Տե՛ր,

Աչքի առաջ ունենալով Ազգային բյուրոյի ստանձնաց գործի համար անհրաժեշտ խոշոր ծախքերը և այն հանգամանքը, որ Հնդկաստանի հայ գաղութը մինչև օրս շատ քիչ մասնակցություն է ցույց տվել ազգային հանգանակությունների մեջ, ազգային բյուրոն որոշել էր հրավիրել Թեհրանից դոկտոր Հարություն Տեր-Ստեփանյանին, որը լավ ծանոթ է այդ գաղութին, և հանձնարարել նրան Հնդկաստան, այնտեղի հայերի շրջանում Ազգային բյուրոյի դրած նպատակների համար հանգանակություն ձեռնարկել:

Ներկայումս, երբ մի նոր և սարսափելի աղետ եկավ ծանրանալու հայ ժողովրդի և հասարակական հիմնարկությունների վրա, Ազգային բյուրոյի նախագծած հանգանակության պահանջն ավելի ևս անհրաժեշտ է դառնում:

Ազգային բյուրոն դոկտոր Հ.Տեր-Ստեփանյանի Թիֆլիս գալուց հետո նորից խորհրդակցություն ունեցավ այդ խնդրի առթիվ և որոշեց այդ հանգանակությունից ստացված արդյունքի որոշ մասը հատկացնել գաղթականների օգտին, դնելով այն գումարը Ձերդ վեհափառության տրամադրության տակ:

Միևնույն ժամանակ Ազգային բյուրոն գտավ, որ գործի կատարյալ հաջողության համար շատ ցանկալի է, որ Բյուրոյի ներկայացուցչի հետ մի ազդեցիկ և կարող հոգևորական ևս ընկերանա՝ Ձերդ Վեհափառության կողմից նշանակված:

Ուստի սորանով Ազգային բյուրոն որդիաբար դիմում է Ձեզ և խնդրում է տալ Ձեր բարեհաճ օրհնությունը այս առաքելության հատուկ կոնդակով և նշանակել Ձեր կողմից մի հոգևորական ներկայացուցիչ՝ դոկտոր ՀՏեր-Ստեփանյանին ընկերանալու համար:

Ձերդ ս.Օծության ամենախոնարհ որդի՝
Փոխնախագահ Բյուրոյի Հովսեփ Խունունց
Քարտուղար Հակ.Քոչարյան

ՀԱԱ, Ֆ.57, ց.5, գ.28, թ.189: Բնագիր: Ձեռագիր:

N 94

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԴԻՎԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ՓՈԽՆԱԽԱԳԱՀԻՆ՝ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՆԴԿԱՀԱՅ ԳԱՂՈՒԹ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

6 սեպտեմբերի 1915թ.
Ս.Էջմիածին

Ազգիս Վեհ.Հայրապետը ստացավ սեպտեմբերի 2 թվակիր Ձեր նամակը դոկտոր պ.Հարություն Ստեփանյանի ձեռքով: Հայտնում ենք, որ Ազգային բյուրոն նշանակել է դոկտոր պ. Հ.Ստեփանյանին իր կողմից ներկայացուցիչ Հնդկաստան ուղարկելու համար և խնդրում ենք Վեհափառ Հայրապետին նշանակել մի հոգևորական ներկայացուցիչ և տալ երկուսին Հայրապետական կոնդակ՝ ուղղված հնդկահայերին, որպեսզի հաջողությամբ կարողանան ժողովել նվերներ հօգուտ կամավորների ու գաղթական-փախստականների:

Վեհափառ Հայրապետը ծանոթանալով այդ գրության հետ և լսելով Ձեր ներկայացուցչի բացատրությունները, բարեհաճեց հրամայել դիվանիս գրել Ձեզ ներոհիշյալը:

Նախ՝ ինչպես Ձեզ հայտնի է, դեռ անցյալ տարի դեկտեմբերին Վեհ. Հայրապետը Թիֆլիսում Բյուրոյի անդամներին հայտնել էր, նույնը կրկնել է

պաշտոնական գործով ս.էջմիածին եկող Բյուրոյի անդամներին ևս, որ մի որևէ կարևոր որոշում կամ կարգադրություն անելիս, որի համար ցանկալի է համարվում Հայրապետական կոնդակ, նախքան խնդրի վերջնական ձևակերպումը և որպես որոշում ներկայացնելը խորհրդակցություն ունենալ Վեհափառ Հայրապետի հետ, որպեսզի բազմակողմանի խորհրդակցությունից հետո գործը դրվի կանոնավոր հիմքերի վրա և թյուրիմացություն չպատահի: Այժմյան միջնորդության վերաբերմամբ ևս ցանկալի էր նույն կերպ վարվել:

Երկրորդ՝ հնդկահայերից հօգուտ գաղթականաց մինչև այժմ համեմատաբար բավական գումար է ստացվել (ավելի քան հարյուր հազար ռուբլի), և դեռ ժողովարարությունը շարունակվում է: Այսուհետև նոր պատգամավորություն ուղարկելն այդպիսի հեռավոր տեղ արդյոք զգալի արդյունք կարող է ունենալ, այս ևս երկբայելի է: Այս պատճառով Վեհափառ Հայրապետը այժմյան պայմաններում նպատակահարմար չի համարում առանձին պատգամավորություն ուղարկելը, որի մասին դիվանս պատիվ ունի հայտնելու Ձեզ:

ՀԱԱ, Ֆ.57, ց.5, գ.28, թ.190: Բնագիր: Ձեռագիր:

N 95

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՍՑՆԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

18 հոկտեմբերի 1915թ.
Թիֆլիս

Վեհափառ Տե՛ր,

Ազգային բյուրոն մեծ գոհունակությամբ ստացավ Հայրապետական դիվանի հ.1748 գրությունը հոկտեմբերի 9-ից, որից Բյուրոն տեղեկացավ այն բոլորի մասին, ինչ որ Ձերդ Վեհափառությունը կարգադրել է թուրքահայ ժողովրդին ներկա ծանր օրերին նյութական օգնություն հասցնելու համար: Նույն գրության հետ Ձեր հրամանով ուղարկված է Բյուրոյին Վանի վաճառականներին տված խնդրի պատճենը և այդ մասին Բյուրոյի կարծիքը Ձերդ Վեհափառությանը զեկուցանելու համար:

Ազգային բյուրոն առանձին խորհրդակցության նյութ դարձնելով այդ խնդիրը, եկավ հետևյալ եզրակացության.

Առաջին կետի վերաբերմամբ, այն է՝ տաճկահայ ժողովրդի Տաճիկ կառավարությունից կրած վնասների մասին որևէ դիմում անելը Ռուս կառավարությանը կամ մյուս պետություններին ներկայումս դեռ վաղաժամ պետք է համարել: Այդ մասին, անշուշտ, անհրաժեշտ կլինի դիմումներ անել, բայց միայն պատերազմը վերջացնելուց հետո, ընդհանուր հաշվեհարդարի միջոցով:

Ինչ վերաբերում է վանեցի վաճառականների այն խնդրին, որպեսզի Ձերդ Վեհափառությունը դիմե Ռուս կառավարությանը՝ նրանց դրամական փոխատվություն անելու ի հաշիվ ապագա լինելիք վնասած հատուցման-այդպիսի մի դիմում Ազգային բյուրոն գտնում է անհարմար, ի նկատի առնելով, որ ներկայումս Ռուսաստանում մի քանի միլիոն ժողովուրդ գտնվում է նույն փախստական վիճակի մեջ և ոչ ոք նույնիսկ ռուս կառավարության հպատակներից մինչև օրս այդպիսի փոխառության խնդիր չի հարուցել: Մյուս կողմից էլ՝ արդեն Ռուս կառավարությունը խոշոր գումարներ հատկացնելով գաղթականների օգնության գործին ընդհանրապես և թուրքահայ գաղթականներին մասնավորապես, աննպատակահարմար և նույնիսկ անպատշաճ

կլինի առանձնակի դիմում անել և վասպուրականցի հայերի համար հատուկ փոխառություն բանալու մասին:

Ձերդ վեհափառության ամենախոնարհ որդի
Ազգային բյուրոյի փոխ-նախագահ Հովսեփ Խունունց
Քարտուղար Հակ.Քոչարյան

ՀԱԱ, Ֆ.57, ց.5, գ.28, թ.197-198: Բնագիր: Ձեռագիր:

N 96

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՎՆԱՍՎԱԾՆԵՐԻՆ ՕԳՆՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ՝ ԼՈՒԳԱՆՍԿԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՈՒ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՕԳՏԻՆ ԱՌԱՔՎԱԾ ԳՈՒՄԱՐԻ ԿԵՍԸ ԲՅՈՒՐՈՅԻՆ ՀԱՍՑՆԵԼՈՒ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

[… 1915թ.]

Լուգանսկի հայ հասարակության կողմից պ. Հազարապետ Դանիելյանը երկու գրությամբ մեզ հայտնում է, որ հայ կամավորների և փախստականների համար փոխադրել է 3445 ռուբլի 60 կոպ.: Այս գումարը ուղարկված է եղել Ամենայն Հայոց Հայրապետի դիվանին, ապա նոցա միջոցով փոխադրվել է հարգելի Կոմիտեիդ:

Արդ, համաձայն փոխադրողի ցանկության, Բյուրոն խնդրում է վերոհիշյալ գումարի կեսը հասցնել իրեն:

Փոխնախագահ բյուրոյի Հ.Խունունց

ՀԱԱ, Ֆ.Պ- 28, ց.1, գ.116, թ.39: Բնագիր: Ձեռագիր:

N 97

«ՔԱՂՎԱԾՔ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ՄԵՋ Պ.ՀՈՎՍԵՓ ԽՈՒՆՈՒՆՑԻ ԱՐԱԾ ԶԵԿՈՒՑՈՒՄԻՑ»*

23 փետրվարի 1916թ.
[Թիֆլիս]

Տեղեկությունները հավաքել եմ՝ աշխատելով միշտ ճշգրտել զանազան աղբյուրներով ու ստանալ փաստացի նկարագրություն: Այդ տեսակետով շատ կարևոր են ամերիկական հյուպատոսի և միսիոներ պ. Ստեպլտոնի ցուցմունքները: Վերջինս, բոլոր անցուդարձի ականատես, յուրաքանչյուր օր գրի է առել կատարած դեպքերն ու տեղեկությունները հանում էր իր օրագրից: Ոչ պակաս վստահելի աղբյուր էր և Երվանդ Յաղությանը, որը մի ժամանակ առևտրով է զբաղվելիս եղել և հետո դարձել էր տաճկական զորքի զինվոր: Հալածանքների սկզբին իր անմիջական հրամանատար սպա՝ կամենալով փրկել նրան անխուսափելի մահից, համոզել էր նրան հավատափոխ լինել: Նա մնացել էր տաճկական զինվորական ծառայության մեջ մինչև էրզրումի անկումը և հետո մի կերպ խույս է տվել նահանջող զորքի միջից և անցել

* Վերնագիրը փաստաթղթինն է:

ռուսների կողմը: Ուրիշ վկաներ էլ ունեցել եմ, և բոլորից ստացաթ տեղեկություններից պարզվում է դեպքերի հաջորդականության հետևյալ պատկերը:

Պատերազմի հայտարարությունից հետո կառավարությունը հայ բնակչությունից էլ վերցրել է զինվորներ և ընդհանուր կարգով բաժանել իր գնդերի մեջ: Ընդհանրապես տաճիկների վերաբերմունքը տանելի է եղել: Սակայն Սարիղամիշի կռվից հետո տաճիկների տրամադրությունը հիմնովին փոխվել է: Նրանք ասում էին, թե իրենց հաղթողը ոչ թե ռուսն է եղել, այլ հայը, և միայն հայերի ցույց տված աջակցության շնորհիվ է, որ իրենք պարտություն են կրել և իրենց հոյակապ մտածված ծրագիրը խորտակվել է: Դրանից հետո հայ զինվորներին հանում են բանակներից, հեռացնում սահմանագլխից և բանեցնում որպես սոսկ մշակներ ամրություններ կառուցելու, ճամբարներ շինելու և այլ ռազմական աշխատությունների համար: Միաժամանակ երևան են գալիս խուժանապետներ, որոնք ամեն ջանք են թափում տաճկական ամբոխն ու վարչությունը գրգռել հայերի դեմ, ոչ մի պրովոկացիական միջոց ձեռքից բաց չթողնելով: Տեռորի ենթարկեցին Սեդրակ Բաստրմաջյանին, մի քանի հայ ինտելիգենտների մահապատժի դատապարտեցին, բայց դրանով չկարողացան հայ հասարակությունը բացարձակ ըմբոստության և դիմադրության դրդել: Այն ժամանակ մեջ բերին 1829 թվին ընկած ռուսական զինվորների եղբայրական գերեզմանի մահարձանը կործանելու հարցը - այդ գերեզմանը գտնվում է [Էրզրումի] հայկական գերեզմանատանը: Պահանջեցին, որ ականավոր է հարուստ հայերը մահարձանը քանդեն անձամբ: Թեև Սմբատ Սրբազանը փորձում է ցույց տալ կառավարությանը մահարձանը քանդելու անպատեհությունը և թույլտվություն է խնդրում մշակների ձեռքով քանդել մահարձանը, բայց խնդիրը մերժվում է: Վերջը հրաման է գալիս, որ հայերը դատարկեն իրենց տները, որ պիտի զինվորական հիվանդանոցների վերածվեն: Կրկին առաջնորդը միջնորդում է հազիվհազ կարողանում է փոխել տալ հրամանը, բայց հայերը դրա փոխարեն պետք է իրենց միջոցներով շինարարություններ վարձեին, հարմարեցնեին, կահավորեին և հիվանդանոցները պահելու ծախսը հոգային: Բավականին խոշոր գումարներ այդ եղանակով կորզվեցին ազգաբնակչությունից:

Ապրիլի 5-ին տաճիկները քաղաքից դուրս հավաքում են մի միտինգ, ուր մոլլաները իրենց քարոզներով աշխատում են ամբոխի մեջ գրգռում առաջ բերել ընդդեմ հայերի, իբր թե նրանք են տաճկական անհաջողությունների և պատուհասի պատճառը: Այդտեղ ամենից մեծ դեր է խաղում Նիշմի բեյը՝ հայտնի իթթիհատականը: Որոշում են կոտորել բոլոր հայերին: Հայերը դիմում են վալիի պաշտպանությանը, սակայն սա հայտնում է, թե ինքը անզոր է ամբոխը զսպելու, եթե հայերը իրենց միջից կամովին մի քանիսին հանձնեն որպես խռովարարների, և դրանք աքսորվեն, գուցե ամբոխը դրանով բավականանա և հանգստանա: Եվ ճիշտ որ վալին ձերբակալում է մի քանի ինտելիգենտների և աքսորում:

Հայերից շատերը դիմում են իրենց տաճիկ հարևաններին, որոնց հետ տարիներով դրկից են եղել և իրար օգնել, ու խնդրում են նրանց պաշտպանությունը, բայց սրանք էլ ամեն կարեկցություն հայտնելով՝ պարզապես այն են խոստովանում, թե իրենք էլ անկարող են որևէ հովանավորություն ցույց տալու և իրենց տներում հայերին պատսպարելու, որովհետև միտինգի մեջ ամբոխը որոշել է չխնայել և այն տաճիկին, որը իր մոտ կպահե հային կամ որևէ կերպ կօգնի նրան: Դիմում են գերմանական հյուպատոսին, որը նույնպես իր անզորությունն է մեջ բերում և ավելացնում է, թե հայերը իրենք են մեղավոր, որ տաճիկները այդպես են վերաբերում իրենց:

Այդպես տևում է մինչև մայիս, երբ լուր է գալիս, թե Վանը ապստամբել է: Տաճիկների զայրույթը գագաթնակետին է հասնում, և նրանք պնդում են, որ պետք է ազատվել հայերից, որովհետև սրանք ամեն տեղ էլ կարող են ապստամբել: Գողերից, ավազակներից, արբեցողներից և ուրիշ սրիկաներից կազմում են առանձին

դրուժինաներ (փԳՎՌՍՌ), որոնց ուղեկցությամբ հայերին պետք է գաղթեցնեն և առաջարկում են անմիջապես ճանապարհ ընկնել. կանանց և երեխաներին բաժանում էին տղամարդկանցից և առանձին-առանձին խմբերով ուղարկում դեպի աքսորավայրերը: Այդ միջոցին քաղաք է հասնում Բասենից և գյուղերից հավաքված հայ ժողովուրդը, որին ներս չեն թողնում, այլ մի քանի օր պահում են բաց դաշտի մեջ՝ անհաց, սոված, հիվանդություններին մատնված, մեռնողների թիվը լինում է անչափ մեծ: Մի քանի օրից այդ հայերին մաս-մաս առաջ են քշում շարունակ միևնույն ուղղությամբ, դերպի Երզնկա և Քեմախ: Վալին, Քյամալ փաշան, չկամենալով, որ կոտորածը տեղի ունենա իր աչքի առջև, իբր թե զիջանում է հայերի խնդրանքին և թույլ է տալիս քաղաքացիներին 15 օրվա ընթացքում կարգի բերել իրենց գործերը և կամովին հեռանալ քաղաքից, այդ ժամանակամիջոցում նրանք պիտի հետները առնելիքը կապոտեին, պատրաստեին և վերցնեին, մնացած գույքը ծախեին և դրամի վերածեին կամ հանձնեին որևէ մեկին պահելու մինչև իրենց վերադարձը: Հայերը սկսում են հավաքվել. ինչ կարողանում են ծախել, ծախում են, վարձում սայլեր, կառքեր, ձիեր, գոմեշներ, գույքի մի մասը վրաները բարձում, մնացածը հակեր կապելով, տանում են հայոց եկեղեցին և այնտեղ փակում, հանձնելով առաջնորդի հսկողությանը: Դրամների մի մասը հանձնում են բանկ Օտոմանին, մյուս մասը տեղական ամերիկական հյուպատոս Ստեպլտոնին (800 հակ) կամ մի ամերիկացի բժիշկ Կեյսի (500 հակ) և սկսում են փախչել:

Գաղթը սկիզբ է առնում [1915թ.] հունիսի 4-ին: Գաղթողները ճամբին հալվում են սովից, զրկանքներից, զինված տաճիկների և քրդերի հարձակումներից, որոնք առանձին խմբերից փախցնում էին գեղեցիկ ու աշխատավոր տղամարդկանց և մնացածներին այստեղ-այնտեղ կոտորում: Գեղեցիկ կանանց տանում են իրենց հարեմները, իսկ աշխատավոր տղամարդկանց բանեցնում են որպես ստրուկ, որովհետև պատերազմի պատճառով աշխատավոր ձեռքեր շատ են պակասել: Շատ քչերն են հասնում մինչև Քեմախ՝ թալանված, ամեն ինչից զրկված, գրեթե մերկ, մեծ մասը մի-մի սպիտակ շապիկ հագած: Եթե ձորերում կամ սարերում պատահել են սպիտակ շապիկ հագած առանձին կամ խումբ-խումբ մարդիկ, մահմեդականները դրանից իմացել են, որ հայեր են և կոտորել են: Այդպես է, որ ազատվողներ կամ ճամբին թաքնվողներ գրեթե չեն եղել: Մի հասակավոր կին կարողացել է ազատվել միայն այն բանի շնորհիվ, որ թաք է կացել մի քարի տակ և հետո ապավինել մի հովվի տան, որից ստացել է մի գունավոր շապիկ ու պատռոտված ցնցոտիներ և այդպես ծպտված շարունակել է փախուստը:

Քեմախ հասնողներին բոլորին էլ գետն են նետելիս եղել: Ասում են, դիակների շատությունից գետը փոխել է իր ընթացքը: Եղել են և այնպիսիներ, որոնց աջողվել է ավելի հեռու գնալ և հասնել Մուսուլ: Այդտեղից մի քանիսը դիմել են իրենց բարեկամներին և բանկի[ց] փող խնդրել: Բայց երբ փողը եկել է, հայտնած հասցեներով նրանց չեն գտել: Հավանական է, որ նրանք մեռած են քաղցից:

Այդպես է եղել ոչ միայն Էրզրումում, այլ ամբողջ այն յոթը վիլայեթներում, որտեղ պետք է ռեֆորմներ մտցվին: Տեղ-տեղ հայերը խնդրել են, որ իրենց թույլ տան հավատափոխ լինելու: Սկզբում թույլ են տվել, և շատերը մահմեդականացել են, բայց վերջը նրանց էլ, որպես և՛ լուսավորչական բողոքական և՛ կաթոլիկ հայերին, տեղահան են արել և ջարդել: Հույներին էլ են գաղթեցրել, բայց չեն կոտորել: Տեղի ունեցած բարբարոսությունները, թույլ տվեք չպատմեմ, սոսկալի են: Դեպքեր են եղել, երբ մոր աչքի առջև զավակին մորթել են, արյունը ամանի մեջ հավաքել և մորը խմեցրել, ապա մորն էլ խողխողել են: Մատներ փշրել, կանանց ծծեր կտրելը – սովորական բան է եղել: Մի տեղ գաղթող հայերը դիմել են Մութիսարըֆին և խնդրել նրա պաշտպանությունը քրդերից և ավազակներից: Նա բարեկամ է ձևացել, ասել է, թե ինքը իր ժանդարմներով պաշտպանված կհասցնի ժողովուրդը նշանակված տեղը, և ճիշտ որ ժանդարմները սկսել են ուղեկցել այդ խմբին: Բայց երբ եկել են մի նեղ

հովիտ, հանկարծ մի բլրի վրայից սկսվել է իրենց վրա հրացանաձգություն: Խեղճերը փախել են դեպի հակառակ կողմը, այստեղ էլ գնդակների են հանդիպել, որ կողմը որ փախել են՝ կրակ ու գնդակ: Իմանում են, որ իրենց վրա կրակողները Մութիսարըֆի ժանդարմներն են. գրեթե բոլորն էլ ոչնչանում են:

Էրզրումում թողել էին մոտ 50 հայ արհեստավորներ, որպեսզի զորքի համար կոշիկ, զգեստ կարեն, և հրամայել էին, որ նրանք սովորեցնեն իրենց արհեստը տաճիկ երիտասարդներին: Նահանջի ժամանակ այդ արհեստավորներին էլ սպանել են. մի ճարպկությամբ միայն ազատվել է ծերունի Բալթաղյանը: Սմբատ Սրբազանը մինչև վերջ մնացել է քաղաքում և աշխատել է մի կերպ պահպանել իր ժողովուրդը, ապա նրան էլ հայ կաթոլիկ և բողոքական հայերի հետ քաղաքից հանել են, հայտնի չէ, թե ուր: Հավանական է նա էլ է սպանված:

Սեպտեմբերի 15-ին նոր իրադեով այն թանկարժեք իրերն ու փողերը, որոնք հանձնված են եղել բանկերին, հրամայված էր գրավել կամ ծախել, գոյացած գումարից վճարել հայերի պետական տուրքերը, ապա՝ հայերի մասնավոր պարտքերը տաճիկներին, իսկ մնացածը հանձնել պետական գանձարանին: Ամերիկահպատակ դոկտոր Կրեյսի մոտ գնված իրերն էլ զոռով խլում են: Ստեպլտոնին հաջողվում է փրկել [պահ հանձնված իրերը]:

Ամերիկյան հյուպատոսի ստացած տեղեկություններին նայելով, Տրապիզոնում, Կիրասոնում, Օրդուում և այլ ծովեզրյա քաղաքներում էլ հայերը սպանված են, և կենդանի են թողնված Օրդուում երկու հայ մատնիչներ, որոնք ցույց են տվել հայերի պահեստի տեղերը: Բոլոր ամերիկական քոլեջների հայ ուսուցիչ-ուսուցչուհիները և հայերի հետ որևէ կապ ունեցող անձնավորությունները մորթված են: Բիթլիսում սպանված են գտել ամերիկական հյուպատոս Ջորջ Կնայպին՝ հայերի պաշտպանին: Փոքր Ասիայի խորքերում կոտորածը ավելի փոքր չափերով է եղել: Կ.Պոլսում ձերբակալել են գլխավորապես ինտելիգենտ հայերին: Սարիղամիշի [ճակատամարտում թուրքերի] պարտությունից հետո Տաճկաստան գաղթած ագարայցիները շատ տեղ՝ Խոտորջուր, Իսպիր, Կիսկիմ, եղել են [հայերի] ջարդերի ղեկավարները: Նրանք [այժմ] բնակեցված են Խոտորջուր և այլ հայկական գյուղերում և տիրացել են հայերի հողերին և ունեցածին: Մի լուսանկարի վրա խմբովին միասին հանվել է իթթիհատի կոմիտեի անդամների հետ մի ագարայցի մոլլա և երեք գանձակեցի թուրքեր - բոլորն էլ ջարդարարներ: Գերի վերցված Օսման Սադըղ բեյի մոտ, որ ինքը դիվիզիայի հրամանատար է եղել ու ինժեներ, և կինը ավստրուհի է, գտել են Օլթիի եկեղեցուց կողոպտած Ս.Աստվածածնի ոսկեկար պատկերը: Գերմանացի օֆիցերները ետ չեն մնացել տաճիկներից: Սխալ է, թե էրզրումում հենց սկզբից մեծ թվով են եղել գերմանացիք և մասնակցել են քաղաքի ամրացման գործին և պաշտպանությանը: Հասարակ գերմանացի զինվորներ այս կողմերը ուղարկված չեն եղել: Եկածները սպաներ են եղել, որոնց տաճիկ սպայակույտը և ժողովուրդը շատ թշնամաբար է վերաբերվել և ամեն գործից հեռու է պահել: Այդ մարդիկ զբաղվել են կերուխումով և արբեցողությամբ: Յուրաքանչյուրը վերցրել է իր մոտ հայոց դպրոցի բարձր դասարանի աշակերտուհիներից մեկին, երկուսին, որոնցից մի քանիսը հազիվ 13 տարեկան են եղել և հետին վավավշոտ տաճկի պես անպատվել նրանց և իրենց մոտ պահել մինչև սեպտեմբեր՝ երբ հեռացել են քաղաքից և մի քանիսին հետները տարել են:

Այժմ կենդանի մնացած հայերի թիվը էրզրումում մի քանիսի հաշվով մոտ 80 հոգի է: Ուրիշները այս թիվը հասցնում են 130-150-ի. գրեթե բացառապես կանայք և երեխաներ են, մեջները հազիվ 5-6 տղամարդ լինի: Բոլորին խնամում է և կերակրում է ամերիկական հյուպատոսը, որի մոտ ապաստան են գտել և պաշտպանություն 17 հայ աղջիկներ՝ ամերիկական միսիոներական դպրոցի սանուհիներից: Ստեպլտոնն ասում է, որ քանի որ իր մոտ կա գաղթած հայերից իրենց հանձնված պաշարեղեն ու դրամ, դեռ կարող է մի կերպ այդ դիմողների կարիքներին հասնել, բայց այդ միջոցները

սպառվելու վրա են և շուտափույթ օգնություն է հարկավոր. ինքն էլ մոտ ապագայում պետք է մեկնի էրզրումից:

Քաղաքը տաճիկների ձեռքով չի այրված, այրել են եկեղեցուն կից հայկական դպրոցը, առաջնորդարանը, շուկայի մի մասը և մի քանի զորանոցներ: Հայերի տները շեն են մնացել, որովհետև մեջները տաճիկներ էին նստել ու տիրացել. նահանջի ժամանակ այդ տները ոչնչացնել չէին կարողացել: Միայն ռուս զորքերի մտնելուց հետո է սկսվում հրդեհումը: Զինվորներին արգելված էր տները քանդել և փայտը վերցնել: Բայց ամբողջ Կարնո բարձրավանդակում փայտի ահագին պակասություն է: Զորամասերը սկսել էին տներից մեկը մյուսը կրակի տալ, որ հետո փայտեղեն մասերը հանեն, ասելով, թե դռները, պատուհանները, հատակները ոչ թե պոկել են շեն տներից, այլ վերցրել են ավերակներից: Այդ պատճառով փողոցներ կան, որ շատ են վնասվել:

Հայերի գույքի մի մասը, հակ-հակ կապած, ամբարած է եղել հայկական եկեղեցում, որտեղ տաճիկները նրանց ձեռք չէին տվել: Ռուսաց բանակի ներս մտնելուն պես՝ եկեղեցու դուռը բաց են անում և միջի իրերը ամեն մեկ ուժ ունեցողը դուրս հանում: Ռուս իշխանավորների վերաբերմունքը դեպի տեղական տաճիկ ժողովուրդը բարեկամական է, դեպի հայերը՝ պարզ կերպով թշնամական. կասկածում են, թե հայերից կարելի է ապագայում էքսցեսների սպասել: Հայերի մուտքը արգելված է: Մի քանի կարնեցիներ Ս.Խորեն եպիսկոպոսի միջոցով գեներալ Յուդենիչի հեռագրական թույլտվությամբ Երևանի քաղաքապահ, կոմենդանտ Կրիժևիչից անցաթուղթ էին ստացել ազատ էրզրում վերադառնալու: Այդ թղթերը երբ ներկայացնում են էրզրումի կոմենդանտին, մակագրել է. “Явлен у меня. Предоставляется в трехдневный срок привести в порядок дела, а затем обязан выехать”.

Մի քանի հայեր Սարիղամիշից և հացթուխներ էին եկել էրզրում, բերելով ապրանքներ և ալյուր ու կամեցել էին խանութներ և փռեր բանալ, չէին թույլ տվել, ասել էին՝ տվե՛ք ապրանքները մի տաճկի, նրա անունով խանութ բաց արե՛ք, որտեղ դուք կարող եք լինել միայն գործակատար: Նրանք էլ ապրանքները ծախել ու վերադարձել են: Մի հույն իրավունք է ստանում փուռ բանալու, բայց նրանից պահանջում են, որ հայ ծառայող չպահի: Այն հայ խուզարկուներին և ուղեցույցներին, որոնք ռուսական զորքին ճամբարներ են ցույց տվել և տարել ամրոցների կռնակը, առաջարկվել է երեք օրվա մեջ հեռանալ: Երբ այդ մարդիկ առարկել են՝ չէ՞ որ իրենք են ճամբարները ցույց տվել և разведчик-ներ են, պատասխան են ստացել, թե իրենց թղթերի մեջ գտնված է, թե այս ինչ մասին են прикомандированы, ոչ թե խուզարկուներ և ուղեցույցներ են:

Արգելված է ռուս զորքի հայ զինվորներին կարաուլ նշանակել: Տեղական տաճիկ ժողովրդից ընտրված են մուխթարներ, որ պիտի քաղաքը պաշտպանեն: Նրանց հրամայված է ձերբակալել ամեն մի զինվոր, որ կհամարձակվի մտնել տաճկի տուն:

Տաճկական տներում, անշուշտ հայ կանայք, որոնց արգելում են տուն գնալ՝ չլինի՞ թե փախչեն ռուսների մոտ. դրանցից մի քանիսին հաջողվել է դուրս պրծնել: Բայց ոչ մի միջոց ձեռք չի առնված, որ այդպիսիներից (տաճիկներից-կազմ.) հնարավորություն տրվի ազատվելու. հավանական է, շատերին դրանցից տաճիկները իրենց տներում սպանում են:

Արգելված է կողոպտել տաճիկների տները, մինչդեռ ինքը՝ հրամանատար Կալիտինը, ֆուրգոններով կրելիս է եղել հայերի գույքը եկեղեցուց իր մոտ. դա ապացուցված է: Նրա օրինակից խրախուսված՝ ուրիշ հրամանատարներ էլ նույնն են արել: Յուդենիչը, որ եկել է, ուզեցել է վերջ դնել այդ բանին և կարգադրել է, որ կազմվի մի հատուկ մասնաժողով, որը պիտի ցուցակագրի հայերի մնացած գույքը, հակերը բաց անեն, ինչ որ հարկավոր է ռուսական ինտենդանտության կամ հիվանդանոցների

համար՝ վերցնի ունիվիզացիայով, մնացածը ծախի և դրամը հանձնի տերերին, եթե այդպիսիները գտնվեն: Մենք ասում ենք, թե հակերը բանալուց և իրերը խառնելուց հետո ինչպե՛ս կարող են տերերը իրենց սեփականությունը ջոկել, և, արդյոք, չե՛ն դուրս գալ ինքնակոչ սեփականատերեր: Այդ առարկությանը ուշք դարձնող չեղավ: Մասնաժողովի նախագահ նշանակվել է գնդապետ Չիկովանին, անդամներից երկուսը նույնպես վրացի են, մեկը՝ Ցիցիանով: Հայերից նշանակվել է բժ. Տերտերյանը:

Հենց մասնաժողովի կազմելու հաջորդ օրը իշխ. Արղությանը նկատում է, որ եկեղեցու դուռը բաց է, մտնում է ներս և տեսնում, որ Չիկովանին քրքրում է իրերը, մի կողմ դարսում զանազան մետաքսեղեն և ուրիշ դուր եկած իրերը. գտել է պատարագի գինին և կարգադրում է իր տունը ուղարկել: Չիկովանին ճանաչելիս չի լինում Տերտերյանին և երբ իմացել է, որ նա էլ է մասնաժողովի անդամ, ասել է. «Դե՜, լա՛վ, ոչի՛նչ, ես արժեքը կվճարեմ»: Եվ իրերն ու գինին իր մոտ է փոխադրել տալիս:

Անհրաժեշտ է անմիջապես հոգ տանել կենդանի մնացած հայերի մասին և աշխատել ազատել տաճիկների ընտանիքների մեջ փակված հայերին: Այժմյան կոմենդանտ Խան Իմուտսկին, որ ազգով սարտ է, ծածուկ հայտնել է, որ իրեն հրամայված է առհասարակ հայերին հեռացնել էրզրումից և թույլ չտալ նորերին այդտեղ հաստատվել: Հայկական տներում նստել է մի-մի տաճիկ և տիրացել: Անհրաժեշտ է նպաստել կարնեցիների վերադարձին Կարին և իրենց գույքին տեր դառնալու:

Սանասարյան դպրոցի կահկարասիքին և գրադարանին դեռ մոտեցող չի եղել: Թեև պրն. Ռոստոմ Զորյանը աշխատում էր, որ իրեն լիազորություն տրվի այդ շինությունը իր հսկողության տակ առնելու, բայց դեռ հարց է, թույլտվություն կստանա՞, արդյոք, էրզրումում մնալու: Ասում են, արդեն մի քանի թղթեր կորած են դպրոցից, մինչդեռ այնտեղ շատ թանկարժեք ձեռագիրներ կան: Այս ամենը ակներև կերպով ցույց է տալիս, որ անհետաձգելիորեն անհրաժեշտ է ուղարկել մի վստահելի ներկայացուցիչ հայերի կողմից, որ բավականաչափ հեղինակություն ունենա ռուս զինվորության և ռուս պաշտոնեության աչքում: Այդպիսի մեկը կարող է լինել միմիայն Ամենայն հայոց կաթողիկոսի ներկայացուցիչը, մի եպիսկոպոս, որ գործի մի հատուկ հայկական մասնաժողովի հետ. կցուցակագրվի մնացած շարժական և անշարժ գույքը, պահպանության միջոցներ ձեռք կառնի, կխնամի այնտեղ մնացած հայերին և նոր երևացողներին և, վերջապես՝ կաշխատի դուրս բերել տաճկական տների մեջ փակված հայ կանանց: Ցանկալի է, որ այդ մասնաժողովի մեջ մտնեն Կարինի նախկին քաղաքական ժողովի հեղինակավոր անդամները, այն է՝ պ.պ. Վահան Շահինյան, Մարգար Քրմոյան և Վահան Միրքանյան:

ՀԱԱ, Ֆ.57, ց.5, գ.56, թ.36-40: Պատճենը: Ձեռագիր:

N 98

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՏՊԱԳՐՎԱԾ «ՀՈՐԻԶՈՆ» ԹԵՐԹՈՒՄ, ՍՏԱՑՎԱԾ ԴՐԱՄԱԿԱՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

23 փետրվարի 1916թ.
Թիֆլիս

- Ազգային բյուրոն մեզ խնդրում է հայտնել, որ հունվարի 8-ից հետո ստացվել են հետևյալ նվիրատվությունները. Բագվի հայկական կոմիտեից՝ 500ռ., Սուխումի հայկական կոմիտեից՝ 600ռ., Թիֆլիսի հայկական կոմիտեից՝ 825ռ., Կահիրեի հայկական կոմիտեից՝ 5.000ռ., պ.Լալայանից՝ (Կահիրեից)՝ 300ռ., Ժնևի հայ

ուսանողներից՝ 600ռ., Ռաշտի հայ կանանց կոմիտեից՝ 120ռ., Կովկասի հայոց բարեգործական ընկերության Դերբենդի ճյուղից՝ 160ռ., Հյուսիսային Ամերիկայի Չլսի քաղաքի Վասպուրականի ուսումն[ական] ընկերությունից՝ 175ռ., Օդեսայի հայկական կոմիտեից՝ 1.000ռ., Բախմուտի հայկական կոմիտեից՝ 800ռ., Նյու-Յորքի Երզնկացվոց ընկերությունից՝ 250ռ., Անդիժանից «Արև»-ի խմբագրության միջոցով՝ 486ռ.35կ.: Բացի դրանից, կամավորների ընտանիքների օգտին նվիրել են մի-մի օրինակ ալբոմի համար հետևյալ անձինք. Ս.Հարությունյանից – 25ռ., Ա.Նահապետյանից (Գրեբոնկա կայարան) – 25ռ., Տաշկենտում՝ Ոսկան Աղաջանյան – 15ռ., Ա.Խաչումյան – 10ռ., Արսեն Մելիք-Ղարագյոզյան, Ա.Միքայելյան, Ն.Թումանյան, Շամիր Գևորգյան, Ն.Ավագյան, Հովհաննես բեկ Մադաթյան, Մ.Կարապետյան, գեներալ Լ.Ա.Պողոսյան – 10ռ., Անդրկասպյան երկրի Արտիկ կայարանում՝ Ս.Մարությանց, տիկին Բ.Մարությանց, Արշակ Միրզոյան – 15-ական ռ., Բ.Մելիք-Ալլավերդյան, Գ.Հովհաննիսյան, տիկին Ս.Ստեփանյան, Ս.Ղազարյան – 10-ական ռ., Ս.Սարգսյան, Ա.Պետրոսյան, Ս.Հարությունյան, Ի.Ստեփանյան – 8-ական ռ., Սամարղանդում՝ պ. Հ.Շավարշի միջոցով նվիրատուների անունները արդեն տպված են «Հորիզոն»-ի հմ. 35-ի մեջ:

N 99

4 մարտի 1916թ.
Թիֆլիս

Ազգային բյուրոն մեզ խնդրում է հայտնել, որ փետրվարի 12-ից հետո ստացել է հետևյալ նվիրատվությունները. Նյու-Յորքի Երզնկացիների միությունից – 243ռ., Ժնևից՝ տիկին Մարի Կորբուլից – 100ռ., Նամանգանից՝ Հայկական կոմիտեից – 268ռ.70կ.: Բացի այդ, ալբոմների համար ստացված են նվերներ կամավորների ընտանիքների օգտին՝ Խարկովից՝ Ա.Սարգսյանից –10ռ., Թերմեզից, Հ.Մալխասյանից – 10ռ., Եդեսիայից, Մանր վարկի ընկերությունից – 100 ռ., Երեմյա Ծատուրյանից – 25ռ., պ.պ. Կար. Ղազարյանից, Գալ. Մուղդուսյանից, Գրիգ.Խաչիկյանից, Կար.Անտոնյանից – 10-ական ռ., Ագուլիսից, Հովհ.Զագյանից – 10ռ., Կոկանդից, նվիրատուների ցուցակն արդեն տպված էր «Հորիզոն»-ի [1916թ.] հմ. 44-ի մեջ:

N 100

12 մարտի 1916թ.
Թիֆլիս

Ազգային բյուրոն մեզ խնդրում է հայտնել, որ մարտի 1-ից հետո ստացվել են հետևյալ նվերները. Մարսելի հայ երիտասարդների միությունից – 600ռ., Կահիրեի Հայկական կոմիտեից – 5.000ռ., պ.Գալալիուսից, Ալեքսանդրապոլից՝ 26ռ., Թիֆլիսի Հայկական կոմիտեից – 300ռ.: Բացի դրանից, ալբոմների համար նվեր ստացվել է կամավորների ընտանիքների օգտին. Աշտարակի հայոց դպրոցից – 18ռ. և Երևանի Կանանց կոմիտեից – 100ռ.:

N 101

6 ապրիլի 1916թ.
Թիֆլիս

Հայոց ազգային բյուրոն մեզ խնդրում է հայտնել, որ մարտի 20-ից հետո ստացվել են հետևյալ նվերները. Թեոդոսիայի Հայկ[ական] կոմիտեից – 500ռ., Օդեսայի Հայկ[ական] կոմիտեից – 1.000ռ., Մարսելից՝ Կովկասի հայ կամավորներին

նպաստող կոմիտեից – 820ռ., Վլադիկավկազի Հայկ[ական] կոմիտեից – 1.500ռ., Մարսելիից՝ «Հայ երիտասարդաց միությունից» - 600ռ., Եդեսիայից մատաղացու երինջի վաճառումից՝ նվեր Գր.Սարգսյանից – 100ռ. կամավորների ընտանիքների օգտին: Բացի դրանից, ալբոմների համար նվերներ ստացվել են կամավորների ընտանիքների օգտին. Թիֆլիսում՝ պ. Ս.Կյուլպենկյանից – 50ռ., Վարոնեժից՝ բժ. Ս.Ավետիքյանից – 25ռ., Աննա Վարդ-Պարոնյանից, Ն.Տեր-Փանոսյանից, Ա.Դավթյանից և Ա.Չախմախյանից – 10-ական ռ., Եդեսիայից՝ Ապրեսյանից, Ի.Ղազարյանից և Մ.Գաբրիելյանից – 10-ական ռ., Հաշտարխանից՝ Երեմիայից – 10ռ.:

N 102

16 ապրիլի 1916թ.
Թիֆլիս

- Եդեսիայից Գրիգոր Սարգսյան Ազգային բյուրոյին դրամի հետ միասին հետևյալ նամակն է ուղղել. «Տեսնելով բյուր տառապանքներ իմ ցավատանջ ազգի, ես բարվոք համարեցի մատաղացու երինջս ծախել և փողը՝ 100 ռուբլի, փոխադրել հարգո Բյուրոյիդ՝ հօգուտ այդ ցավատանջ ազգի վերծննության համար նահատակվող մեր կամավորների ընտանիքների»:

N 103

26 ապրիլի 1916թ.
Թիֆլիս

Հ[այոց] Կ[ենտրոնական] ազգային բյուրոն խնդրում է մեզ հայտնել, որ ապրիլի 2-ից հետո նա ստացել է հետևյալ նվիրատվությունները. Տիկին Եղիսաբեթ Միրզոյանից – 100ռ., Ռոստովի Հայկական կոմիտեից – 5.000ռ., Նոր Նախիջևանի Մեծ Սալա գյուղի վարկային ընկերությունից – 100ռ., պ. Իվ.Քամալյանից՝ նամանգանից – 54ռ. 75կ., Կահիրեի Հայկական կոմիտեից – 5.000ռ., Նոր Բայազետի Հայ կանանց կոմիտեից – 200ռ., բժ. Չալիկյանից – 50ռ., բժ. Մզարեուլյանից – 50ռ.:

N 104

17 մայիսի 1916թ.
Թիֆլիս

Մեզ խնդրում են հայտնել, որ Ազգային բյուրոն ապրիլի 20-ից հետո ստացել է հետևյալ նվերները. Տիխորեցկի անվան Հայկական կոմիտեից – 85ռ.30կ., Բոստոնի Հայկական կենտրոնական կոմիտեից – 94.284ռ., Կահիրեի Հայկական կոմիտեից – 5.000ռ., պ. Հակոբ Պոյաճյանից, Եվպատորիայից – 80ռ., Կ[ենտրոնական] Հայոց բարեգործ[ական] ընկ[երության] Զաքաթալայի ճյուղից – 50ռ.:

N 105

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ՆԱՄԱԿԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԷՐԶՐՈՒՄԻ ՀԱՅ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

25 փետրվարի 1916թ.
Թիֆլիս

Ազգային կենտրոնական բյուրոն փետրվարի 23-ի նիստին լսեց Էրզրումից վերադարձած պ.Հովսեփ Խունունցի զեկուցումը ա. Էրզրումից աքսորված թշվառ հայ

ազգաբնակության՝ անապատում ջարդի և այժմ քաղաքում մնացած և այլևայլ տեղերում ապաստանած հայերի անագորույն վիճակի մասին, բ. ռուս զինվորական իշխանության անարդար և թշնամական վերաբերմունքի մասին դեպի էրզրումաբնակ հայերը, որոնք ժամանակին փախած լինելով քաղաքից, այժմ չեն կարողանում ազատ մտնել Էրզրում՝ իրենց տուն-տեղին և գույքին տիրանալու համար, շնորհիվ ամեն տեսակ արհեստական և անբարյացակամ արգելքների, որոնք հարուցանվում են այլևայլ պատրվակով հայերին քաղաք չթողնելու համար, և գ. Էրզրումում հայերի թողած գույքի և ստացվածքի, ինչպես և մայր Տաճարում պահված հարստության թալանի մասին, որին մասնակցել են ոչ միայն տաճիկները, այլ տարաբախտաբար և ռուս զինվորական պաշտոնյաները:

Պ.Խունունցի զեկուցումը իր սրտաճմլիկ մանրամասնություններով խոր տպավորություն թողեց լսողների վրա. առավել ևս ծանր էր լսել ռուս զինվորական պաշտոնյաների կողմից ցույց տված անարդար և թշնամական վերաբերմունքը դեպի հայերը, որոնց մատուցած ծառայությունը Ռուսաստանին և կրած թշվառությունն այսօր, ցավ է խոստովանել, ոչ մի գնահատության չի արժանացել: Ուղարկելով Բյուրոյի անդամ պ.Սիմեոն Վրացյանի հետ պ. Հովսեփ Խունունցի վերոհիշյալ գրավոր զեկուցումը Ձերդ Վեհափառության բարձր տնօրինության, Ազգային բյուրոն պատիվ ունի ամենախոնարհաբար խնդրելու ազգի վեհափառ Հայրապետի վեհանձն պաշտպանությունը թշվառացած հայ ժողովրդի ներկա տագնապալի օրերին:

Որդիական ամենախորհին հարգանքներով
Ձերդ Օծության խոնարհ և պատրաստական ծառաներ

Փոխնախագահ Ազգային բյուրոյի Հովհ.Սպենդիարյան
Քարտուղար-անդամ Հակ.Քոչարյան

ՀԱԱ,Ֆ.57, ց.5, գ.56, թ.41: Բնագիր: Ձեռագիր:

N 106

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ՆԱՄԱԿԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԷՐԶՐՈՒՄ ԳՆԱՑՈՂ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՂ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ ՍԵՐՄԱՑՈՒ, ԳՈՒՅՔ ՀԱՍՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՅԼ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

[9] մարտի 1916թ.
Թիֆլիս

Ազգային բյուրոն իր պատգամավորներ պ.պ. Ս.Վրացյանի, Ա.Պապովյանի և Վ.Փափազյանի միջոցով պատիվ ունեցավ ներկայացնել Ձերդ Վեհափառությանը մանրամասն զեկուցում Բյուրոյի ուշադրությունը զբաղեցնող կարևորագույն խնդիրների մասին և հայցել Ձեր բարյացակամ որոշումը դրանց վերաբերմամբ: Նրանց գրավոր և բերանացի զեկուցումներից այժմ Բյուրոն տեղեկացավ Ձերդ Վեհափառության տրամադրությունների մասին և շտապում է իր կարծիքները հաղորդել Ձեզ հետաքրքրող հարցերի մասին:

1. Էրզրում գնացող պատգամավորության համար թույլտվություն ձեռք բերելու նպատակով լինելիք դիմումը փոխարքային, Բյուրոյիս կարծիքով, կարող է լինել շատ պարզ, ճիշտ այն ձևով, որ դիմում է եղել թույլտվություն ստանալու Այվատյան եպիսկոպոսին Վանի շրջանը գնալու համար: Մանրամասնությունների մեջ մտնելը այդպիսի մի պաշտոնական գրության մեջ և՛ ավելորդ է, և՛ կարող է նույնիսկ դժվարացնել խնդրի լուծումը:

2.Գալով պատգամավորության մեջ մտնող անձանց, որոնց մասին պետք է հիշատակել գրության մեջ, Ազգային բյուրոն գտնելով, որ բարձրաստիճան հոգևորական ընտրությունը միանգամայն Ձերդ Վեհափառության իրավասության ներքո է, շատ ցանկալի է համարում, որ պատգամավորության մեջ մտնեն երկու կամ երեք ձեռնհաս ինտելիգենտ անձինք, որոնցից մեկը լինելու է իրավաբան: Այդ պաշտոնի համար, Բյուրոյի կարծիքով, հարմարագույն անձինք են փաստաբան պ. Ջամոյանը և ճեմարանի կամ Երևանի թեմատիկ դպրոցի ուսուցիչներից մեկը կամ երկուսը: Իր կողմից Բյուրոն թույլ է տալիս իրեն առաջարկել Ձերդ Վեհափառության իբրև թեկնածու պ.Մարտիրոս Հարությունյանին: Բացի այդ անձերից, ցանկալի կլիներ մտցնել պատգամավորության մեջ նաև երկու անձ տեղական հանգամանքներին լավ ծանոթ տաճկահայերից: Իբրև այդպիսիններ Բյուրոն կարող է հանձնարարել պ.պ. Վահան Շահինյանին և Հրաչյա Ջաքարյանին:

2. Վերադարձող գաղթականներին սերմացու և ինվենտար հասցնելու համար հարմարագույնն է ուղղակի դիմել գաղթականական ընդհանուր լիազոր գեներալ Թամամշյանին, որը իր օգնական պ. Լ.Եվանգուլյանի հետ գնացել է Ալաշկերտ և մոտ օրերումս գալու է այդ կողմերը, և որը կարող է այդ ուղղությամբ կարգադրել ամեն տեսակ օգնություն հասցնել գաղթականներին:

Իսկ եթե Ձերդ Վեհափառությունը կարևոր է համարում դիմել անմիջապես նաև մեծ իշխան փոխարքային, այդ դեպքում դիմումի այն նախագիծը, որի պատճենը մեզ ևս ուղարկված է, Բյուրոն գտնում է միանգամայն հաջող կազմված:

3. Ինչ վերաբերում է համերաշխության խնդրին, որի առթիվ Ձերդ Վեհափառության կազմած պատվիրակության նախագահ Պողոս փաշա Նուբարը հատուկ նամակներով դիմել է այսպես մի քանի անձանց, Բյուրոն պարտք է համարում զեկուցանել Ձեզ, որ այդ նպատակով այստեղ էլ ձեռնարկված է որոշ քայլերի, որոնց հետևանքի մասին անհապաղ Ձեզ կհաղորդենք:

Ուստի Բյուրոն խոնարհաբար խնդրում է Ձեզ սպասել մինչև այդ բանակցությունների ելքը, նախքան այդ նպատակով որևէ խորհրդակցություն կամ համագումար հրավիրելը էջմիածնում:

4. Ազգային բյուրոն ընդսմին ուղարկում է Ձերդ Վեհափառությանը պ. Հ.Աբուլյանի նամակը, որը էրզրումից ստացել ենք Ձեզ հանձնելու համար:

Որդիական ամենախորհին հարգանքներով
Ձերդ Վեհափառության խոնարհ և պատրաստական ծառաներ

Փոխնախագահ Ազգային բյուրոյի — Հովհ.Սպենդիարյան
Քարտուղար — Հակ.Քոչարյան

ՀԱԱ, Ֆ.57, ց.5, գ.28, թ.208-209: Բնագիր: Ձեռագիր:

N 107

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՌԱՔՎԵԼԻՔ ՆՊԱՍՏԱՄԱՏՈՒՅՑ ԳՈՒՄԱՐԻ ԿԵՍԸ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

20 մայիսի 1916թ.
Ֆրեզնո

Վեհափառ Տե՛ր.

Ներփակ կստանաք (400) չորս հարյուր տոլարի գումար մը, որ է հավասար 1277 ռուբլիի:

Փափագելի է, որ (200) տոլարը հատկացվի հանձնվի Ազգային պյուրոյին:

Կհաստատենք մայիս 14 ընդարձակ մեր մեկ նամակ և կհուսանք, որ երբ ստանաք ներկայս, ևս կհաճեք հրաման տալ, որ ընդհույթ ղրկվի մեզ հարկ եղած ընկալագիրը:

Երեկ ստացանք ամերիկահայ առաջնորդարանեն մեր դեկ[տեմբեր] 28 թվականով երկրորդ անգամ ղրկված 6918 ռուբլի գումարի ստացագիրը:

Մաղթելով ի համբույր ս. աջու դ Ատենապետ — Մ.Նիշկյան
Ատենադպիր — Հ.Սարկավագ[յան]

ՀԱԱ, Ֆ.56, ց.5, գ.339, թ.9: Բնագիր: Ձեռագիր:

N 108

ԼՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՓԱԽՍՏԱԿԱՆ ՀԱՅԵՐԻ ՀՈՍՔԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՄՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

2 հուլիսի 1916թ.
Բաղեշ

Շնորհիվ Մուրադի և Սեպուհի բուռն աշխատությանց և դրամական զոհողությունների, փախստական հայերի մեծ հոսանք է սկսվել. գալիս են ստվար խմբերով՝ մերկ ու սոված: Տաս օրում ազատվողների թիվը հասնում է 300 անֆի:

Ժամանակն է, որ մեր ազգային բոլոր մարմինները և, մասնավորապես, արտասահմանում գտնվող մեր հայրենակիցները փութով և միահամուռ օգնության հասցնեն իրենց կոպեկները:

Ազատված փախստականներին օգնում են Բաղեշի Քաղ[աքային] Միության սննդառու կայանում. նրանց հասնելուն պես սապոնով ու տաք ջրով լողացնում, մաքրում են, հագուստները փոխում և օրական երեք անգամ կարգին սնունդ են տալիս:

Կարիքը օր-օրի մեծանում է. անհրաժեշտ է ուղարկել նախ փող և ապա սնունդ ու ամեն կարգի հագուստեղեն:

Վաղարշակ Հոխիկյան

«Հորիզոն», 23 հուլիսի 1916թ.

N 109

ԼՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ԱՆՈՒՆՈՎ ՍՏԱՑՎԱԾ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

12 հուլիսի 1916թ.

Ազգային բյուրոն մեզ խնդրում է հայտնել, որ մայիսի 15-ից հետո Բյուրոն ստացել է հետևյալ նվիրատվությունները. Լաբինսկայա ստանիցայից 250ռ., Ջաքաթալայի հայ տիկինների կոմիտեից՝ 136ռ. 92կ., Պարիզից՝ Պողոս փաշա Նուբարից 622ռուբ. 38 կ., Իզյում քաղաքում ապրող մի խումբ հայերից 125ռ., Եգիպտոսի Հայկական կոմիտեից 5.000ռ. Թիֆլիսի Հայկական կոմիտեից 200ռ.,

Թեոդոսիայի Հայկական կոմիտեից 500ռ., Ցարիցինից՝ Ս.Դոմբայանից 335ռ., Էջմիածնից՝ Վեհափառ կաթողիկոսի կարգադրությամբ 10.000ռ.:

«Հորիզոն», 12.07.16

N 110

ԼՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՄԵՍՐՈՊ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ՝ ԹՈՒՐՔԵՐԻ ՄՈՏ ԵՂԱԾ ՀԱՅ ԳԵՐԻՆԵՐԻՆ ԱԶԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

21 հուլիսի 1916թ.

Մեսրոպ եպիսկոպոսը իր տրամադրության տակ եղած 2.891ռ., հանձնեց Թուրքիա մեկնած փախստականների գլխավոր լիազոր գեներալ Թամամշևին՝ հանձնելու Մուրադին կամ Սեպուհին թուրքերի մոտ եղած հայ գերիներին ազատելու համար:

«Հորիզոն», 21.07.16

N 111

ԼՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

23 հուլիսի 1916թ.
Թիֆլիս

Փախստականների գործի գլխավոր լիազոր գեներալ Թամամշևի կարգադրությամբ փախստականների պարենավորման գործի համար հուլիս ամսվա ընթացքում բաց է թողնված՝ Երևանի նահանգի համար – 498.396ռ., Գանձակի – 37.448ռ., Ստավրապոլի – 30.113ռ., Թիֆլիսի – 39.596ռ., Բագվի – 159ռ., Սև Ծովի – 10.958ռ., Ղարսի շրջանի համար – 174.378ռ., Դաղստանի – 185ռ., Թերեքի – 20.131ռ., Կուբանի – 76.635ռ., Բայազետի – 1.497ռ., Արճեշի – 2.377ռ., Խոյի ռուսաց հյուպատոսի տրամադրության տակ է դրված – 123.063ռ., իսկ Թավրիզի [ռուսաց] գլխավոր հյուպատոսի – 50.121ռ., ընդամենը 985.193ռ.:

«Հորիզոն», 23 հուլիսի 1916:

N 112

ՀԱՏՎԱԾՆԵՐ ԳԱՆՁԱԿԻ ԹԵՄԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴ ԼԵՎՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ՝ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ 5-ՐԴԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԱՄԱԿԻՑ ՆՈՒԽՈՒ ԵՎ ԱՐԵՇԻ ԳԱՎԱՌԻ ՀԱՅ ԱՂԵՏՅԱԼՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

31 օգոստոսի 1916թ.
ք.Գանձակ

…*

* Թեմային չվերաբերելու պատճառով բաց ենք թողնում որոշ հատվածներ

1918 թվի աշնանը եկան Նուխու և Արեշի գավառի հայ աղետյալները, ես սոցա համար բերել տվի տասը հազար ռուբլի և տեղի մարդկանց օգնությամբ կերակրեցինք: Սորանից հետո էր, որ Աղդաշի մի թուրք կնոջից ազատեցի մի հայ աղջիկ հայ մարդկանց ձեռքով և բերի ինձ մոտ: Ապա հայ քահանան եկավ ամիսներից հետո և տարավ աղջկանը:

1919 թվին ես և մի քանի հոգի գանձակեցի հայեր ժողովեցինք հօգուտ Հայաստանի սովյալների 45.424 ռուբլի 15 կոպեկ. այս գումարի 42.224 ռուբլի 50 կոպեկ Հայաստանի կառավարության է ուղարկված նույն թվին, իսկ մնացյալը ծախսված է տեղական ծախքերի համար, ինչպես երևում է այս առթիվ տպված թերթերից:

1920 թվի մարտին կործանվեց Ազըրբեջա[նա]կան մասամբ զորքով և մասամբ ամբոխով հայ Սոլուք գյուղը, որպես թե «Դալի Ղազարին պահպանելու համար». ժողովուրդը քաղաք փախչելու ժամանակ մասամբ կոտորվեց, մասամբ վիրավորվեցին, մի քանիսները սպանվեցին գյուղում թուրքերից:

Կոլոնիայի* գերմանացիք հատուկ շնորհակալության արժանի եղան իրենց բարի գործով դեպի Հայք:

Այս դեպքը առիթ տվեց, որ ժամանակի նահանգապետին բողոքվի, ապա, հանձնաժողով ընտրել տվի, որը փողը ժողովեց հիշյալներին օգնելու և նոցա համար սերմացու գնելու համար. բացի սոցա, այլ և հարևան մյուս գյուղերին [օգնելու]:

Օգնության մի մասը եկավ նաև Թիֆլիզից:

Բացի այս, ես ըստ ամենայնի աշխատել եմ որպես վարդապետ, անդադար քարոզել եմ ներքին միջոցներով յուրաքանչյուր տարի բոլոր գյուղերում, նոցա մեջ օծել եմ Խոյլարի եկեղեցին, Նոր Արմավիրի եկեղեցին 1914 թվին և յուր ժողովուրդը մի պարտեզ տվեց այս եկեղեցուն. իմ դրամական մասամբ օժանդակությամբ և օծմամբ հիմնարկեցի Կորյունապատի ս.Սարգիս աղոթատունը:

Չմոռանամ ասել, որ 1913 թվին կատարեցի տեղիս մայր եկեղեցու դպրոցի հիսնամյակը: Ներկա եղող ժողովուրդը ամենայն ինչ ընդունեց ըստ ասված ճառերի. ապա, ներկայացուցի դպրոց չլինելու պատճառը. առաջարկեցի հանգանակություն, տեղում հավաքվեց. անցա Բաքու, ուր ինձ օգնեց Պավել Տեր-Ներսիսյանը, ապա, մայիսին անցա Թիֆլիզ, ուր անգնահատելի օգնություն արավ տիկին Ռոզալյա Սերգեևնան: Արդյունքը եղավ մոտ 8.500 ռուբլի, քաղաքի երկու բանկերում մնացել է այժմ միայն 5.226ռ. 46 կոպեկ:

1917 թվի վերջերին ես խնդրեցի Ձերդ Սրբությունից թույլ տալու ինձ երթալու պատերազմի դաշտը: Սակայն Հայրապետական դիվանը մերժեց, [թե]՝ ես իմ տեղումը լավ եմ: Այլ[ոց] և Ձերդ Վեհափառությանը հայտնի է, որ 1918 թվի մայիսի 28-ին տաճիկները մտան Գանձակ քաղաքի հայոց մասը, տեղացի կռվող ուժը գնաց Գետաշենի կողմերը առանց կռվի: Այս բոլորի մասին ես գրել եմ «Մշակ» լրագրի մեջ նույն թվին:

1918 թվի սեպտեմբերին ես և Ս.Տեր-Իսրայելյանը գնացինք Շուշի Նուրի փաշայի հրամանով: Ամեն տեսակի հնարներով և տանջանքներով ազատեցինք հայ ազգաբնակչությունը. [դա] այս թվին, հետևյալ 1919 թվին և 1920 թվի սկզբում չկատարվեց, այլ կատարվեց 1920 թվի մարտին. այն է՝ մեծամասնական զորքի Բաքու մտնելուց մի ամիս առաջ…

Ձեր Վեհափառության խոնարհ որդի և Ս.Աջոյդ մատուցող առաջնորդ հայոց Գանձակի՝

Լևոն եպիսկոպոս

* Գանձակի գերմանական գաղութի

ՀԱԱ, Ֆ.409, ց.1, գ.2644, թ.22-23: Ձեռագիր: Բնագիր:

N 113

ՆԻԿՈՍԻԱՅԻ ԱԶԳԱՇՀԱՆՊԱՍՏ ՀԻՄՆԱԴԻՐ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ՆԱՄԱԿԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ՏԵՂԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՕԳՏԻՆ ԺՈՂՈՎՎԱԾ ԳՈՒՄԱՐԸ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

17 սեպտեմբերի 1916թ.
ս. էջմիածին

Վեհափառ Տե՛ր,

Խոնարհաբար կուգանք հաստատել մեր 4/17 ապրիլ 1916 թվակիր նամակը, որում ներփակված էր (50) հիսուն անգղիական ոսկինոց պանգայի[ն] չեք մը: Մեր հիշյալ նամակովը խնդրած էինք Ձերդ Վեհափառութենե, որ բարեհաճեք սույն գումարը Կովկասի ազգային պյուրոյին հանձնել անխտիր հայ կամավորական գործին հատկացնելու համար և ստացագիրը մեզ ղրկել տալ:

Ձերդ Վեհափառութենեն մինչև ցարդ որևէ պատասխան մը չստացանք, զոր մտահոգություն կպատճառե մեզ:

Ձերմապես կխնդրենք, որ մեր նախորդ նամակը ստացած և պարունակության համաձայն Ձերդ Վեհափառության բարձր տնօրինությունը ի գործ դրած ըլլալը, մեզ իմացնելու շնորհքը ընեք:

Մատչելով ի համբույր Ձերդ ս.աջո կմնանք Ձերդ ս.օծության
խոնարհ որդիքը

Ի դիմաց հանձնախմբի
Ատենապետ Հ.Փեշտիմալճյան
Ատենադպիր Ս.Հ.Թուլումճյանց

ՀԱԱ, Ֆ.57, ց.5, գ.57, թ.44: Բնագիր: Ձեռագիր:

N 114

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ՆԱՄԱԿԸ «ԽՈՐԻՋՈՆ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ՝ «ՄԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ԿՈՂՄԻՑ» ՎԵՐՆԱԳՐՈՎ

21 սեպտեմբերի 1916թ.
Թիֆլիս

«Մշակ»-ի հմ. 205-ի մեջ մի պարոն Աստվածատուր ստորագրությամբ գրում է, թե իբր Ազգային բյուրոն Ամերիկա վերադարձող կամավորներին տալիս է ճանապարհածախք մինչև այնտեղ միայն 130ռ. և այն էլ փոխարինաբար, պարտավորացնելով նրանց վերադարձնել այդ դրամը Ամերիկայի Հ.Յ.Դաշնակցության Կենտրոնական կոմիտեն: Պարտք եմ համարում Ազգային բյուրոյի կողմից հայտնել, որ այդ տեղեկությունը միանգամայն չէ համապատասխանում իրականությանը:

Նախ՝ 130ռ. տրվում է յուրաքանչյուրին իբրև ճանապարհածախք ոչ թե մինչև Ամերիկա, այլ միայն մինչև Շվեդիա-Նորվեգիա: Պետք է ասել, որ սկզբներում, երբ նրանք ուղևորվում էին Արխանգելսկի վրայով, ճանապարհածախք տրվում էր մոտ 200ռ. ուղղակի մինչև Ամերիկա, բայց երբ անցյալ ապրիլ ամսից այդ գիծը փակվեց ճանապարհորդների համար, մնում էր վերադառնալ Պետրոգրադ-Շվեդիայի ճանապարհով կամ Վլադիվաստոկով և երկու դեպքերում էլ հարկավոր էր տալ առնվազն 300ռ. յուրաքանչյուրին: Աչքի առաջ ունենալով վերադարձողների խոշոր թիվը, Բյուրոն հնարավորություն չուներ այդքան գումար տրամադրել, ուստի հենց իրենց՝ կամավորների հետ խորհրդակցելով՝ նա գտավ հետևյալ ելքը: Քանի որ վերադարձողների ահագին մեծամասնությունը, որ իրենք դրամ ունեին Ամերիկայում, միայն չեն կարողանում այնտեղից ստանալ, չնայած իրենց տված հեռագրերին, բյուրոն որոշեց տալ նրանց ճանապարհածախք միայն մինչև Շվեդիա-Նորվեգիա, որտեղից արդեն նրանք հնարավորություն ունեն 2-3 օրվա ընթացքում Ամերիկայից հեռագրով դրամ պահանջել և ապա շարունակել ճանապարհը:

Դրամը փոխարինաբար տալու միտքն էլ Ազգային բյուրոյին տվել են իրենք՝ կամավորները, որոնք հայտնել են, որ իրենք չեն ուզում ծանրաբեռնել ազգային սնդուկը և խնդրում են համարել ստացված դրամը իբրև պարտք, որը նրանք կվերադարձնեն Ամերիկա հասնելուն պես: Եվ քանի որ Ազգային բյուրոյի կազմած խմբերի մեջ մտած՝ Ամերիկայի կամավորները բոլորն էլ հավաքված և ուղարկված են Կովկաս Բոստոնի Կենտրոնական կոմիտեի միջոցով, որը ունի նրանց բոլորի ցուցակը, այդ պատճառով հենց իրենց ցանկությամբ նրանց պարտքը վերադարձնելու համար հարմարություն տալու նպատակով Ազգային բյուրոն նրանց առաջարկում է վերադարձնել այդ պարտքը Բոստոնի Կենտրոնական կոմիտեի միջոցով Ազգային բյուրոյին: Ուրեմն, դրամը պետք է վերադարձնեն Ազգային բյուրոյին և ոչ թե Բոստոնի Կենտրոնական կոմիտեին, որը միայն դրամ ստանալու է ըստ պատկանելույն հասցնելու համար:

Դրա մի ապացույցն էլ հենց այն է, որ 6-րդ գնդի Ամերիկայի կամավորները, որոնք եկած են Կովկաս ուրիշ մարմինների միջոցով, տալիս են ստորագրություն այն մտքով, որ վերցրած դրամը նրանք վերադարձնելու են Ազգային բյուրոյին, իսկ թե ինչ մարմնի միջոցով, թե ուղղակի՝ դա թողնվում է իրենց կամքին: Միևնույն ժամանակ հարկ ենք համարում բացատրել, որ իզուր է պ.Աստվածատուրը խառնում այդ խնդրին Հ.Յ.Դաշնակցության անունը, քանի որ Բոստոնի Կենտրոնական կոմիտեն այդ խնդրում գործել է և գործում է իբրև ազգային մի մարմին, ինչպես և ինքը՝ Ազգային բյուրոն, որը համարել է այդ կոմիտեն իբրև իր հետ կապված բազմաթիվ այլ վայրերի կոմիտեներից մեկը:

Առիթից օգտվելով, երկու խոսքով էլ կպատասխանեմ «Գաղափար» թերթի [1916] հմ. 72-ի մեջ տպված տասը կամավորների ստորագրությամբ բաց նամակին՝ պ.Հովհ.Սպենդարյանին: Պ.Հովհ.Սպենդարյանը ահա երեք շաբաթ է, ինչ բացակա է քաղաքից, բայց քանի որ հիշյալ 10.000ռ. դրամը Վեհափառ Կաթողիկոսը փոխադրել է Ազգային բյուրոյին, ուստի հարկ եմ համարում պատասխանել Բյուրոյի կողմից:

Նախ՝ միանգամայն սխալ է, որ այդ դրամը ուղարկված է հատկապես 6-րդ գնդի կամավորներին Ամերիկա գնալու ճանապարհածախս տալու համար: Ազգային բյուրոն սկզբունքով որոշել էր ճանապարհածախս տալ Ամերիկա գնացող կամավորներին առանց գնդերի խտրության, պահանջելով միայն, որ ներկայացող կամավորը ունենա վկայական իր խմբի հրամանատարից: Եվ միջոցների սղության պատճառով Բյուրոն դեռ անցյալ մայիսին դիմել էր Վեհափառ Հայրապետին, խնդրելով իր տրամադրության տակ եղած կամավորական դրամներից մի գումար ուղարկել Ազգային բյուրոյին՝ գոնե 6-րդ գնդի կամավորներին ճանապարհածախք տալու համար: Եվ Բյուրոյի խնդիրը հարգելով՝ Վեհափառը կարգադրել էր ուղարկել 10.000 ռուբլի, և այդ առթիվ Բյուրոյին ուղղած հայրապետական դիվանի գրության մեջ

ասված էր հետևյալը. «Դիվանս հայտնում է, որ 6-րդ գնդի կամավորների անունով հատուկ գումարներ չկան Նորին Սրբության տրամադրության տակ: … Նորին Սրբությունը պատվիրեց Սինոդին փոխադրել Բյուրոյիդ իր տրամադրության տակ գտնված ընդհանուր կամավորների գումարից 10.000 ռ.՝ ընդհանուր կամավորների ծախքերի համար»: Պարզ է, ուրեմն, որ ուղարկված դրամը 6-րդ գնդի կամավորների համար չէր: Այս մեկ սխալ:

Գանք մյուսին: Ազգային բյուրոն մինչև սեպտեմբերի 17-ը ճանապարհածախք տվել է Ամերիկա գնալու համար 6-րդ գնդի 53 կամավորների, ընդհանուր գումարը՝ 6.760 ռուբլի: Ուրեմն, ոչ թե 2-3 հազար ռ., ինչպես առանց իրողությունն իմանալու գրում են «Գաղափար» թերթի մեջ 6-րդ գնդի 10 կամավորները, այսպիսով մոլորության մեջ ձգելով հասարակական կարծիքը:

Ազգային բյուրոյի կողմից՝ Հակ.Քոչարյան

«Հորիզոն», հասարակական, գրական, քաղաքական օրաթերթ, Թիֆլիս, 27.09.16

N 115

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ՆԱՄԱԿԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԴԻՎԱՆԻՆ՝ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԽՄԲԵՐԻՆ ՈՒ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔԻՆԵՐԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՄԻՋՈՑՆԵՐ ԽՆԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

19 մայիսի 1916թ.

Ազգային բյուրոն ստացավ Ձեր գրությունը հոկտեմբերի 5-ից հմ. 2190: Նախ՝ Ազգային բյուրոն հայտնում է իր խորին շնորհակալությունը Նորին Վեհափառության, որը ուշադրության առնելով Բյուրոյիս հեռագրական դիմումը, բարեհաճել է պատվիրել Ս.էջմիածնա Սինոդին փոխադրել Բյուրոյի անունով այլևս 5.000 ռուբլի: Միևնույն ժամանակ պետք ենք համարում հայտնել, որ նախընթաց 5.000 ռուբլին, որի մասին ինչպես վկայում է դիվանիդ համապատասխան գրությունը, Նորին Սրբության կարգադրությունը Սինոդին եղել էր սեպտեմբերի 17-ին, Սինոդի գանձապահը մեզ ուղարկել է միայն հոկտեմբերի 6-ին, և Բյուրոն այդ գումարը ստացավ միայն հոկտեմբերի 12-ին: Հայտնելով իր խորին շնորհակալությունը Նորին Սրբությանը, Բյուրոն ներփակյալ ուղարկում է դիվանիդ համապատասխան անդորագիր հմ. 26/83:

Գալով պատկառելի դիվանիդ գրության շարունակությանը, թույլ ենք տալիս մեզ հայտնել, որ այնտեղ մի խոշոր թյուրիմացություն կա: Ինչպես երևում է, դիվանիդ հաշվեմատյաններում Ազգային բյուրոյի հաշվին անց է կացրած մեզ համար միանգամայն մի գումար, որի մասին առաջին անգամ տեղեկանում ենք Ձեր գրությունից, մի սխալ, որ խնդրում ենք Ձեզ ուղղել: Բանը նրանում է, որ Բյուրոն 1915թ. հունվարին (կամ դրանից առաջ կամ հետո) երբեք չի ստացել Պողոս փաշա Նուբարից 20.000 ռուբլի, ինչպես և երբեք չի փոխադրել Նոր Բայազետի եղբայրական օգնությանը 2000 ռուբ.: Սրա հետ միաժամանակ Բյուրոն առանձին նամակով կդիմի Պողոս փաշային և կխնդրի պարզել, թե այդ ի՞նչ գումար է, որ նա փոխադրել է Բյուրոյին, Վեհին ուղարկելու հանձնարարությամբ, և Բյուրոն չի ստացել: Դիվանիդ գրության այդ սխալ կետը մեզ համար ծանր է ոչ միայն նրանով, որ մեզ վրա հաշված է մի գումար, որ մենք չենք ստացել, այլ ավելի նրանով, որ Բյուրոն կարծես թե մեղադրվում է որոշ չափով անբարեխղճության մեջ, քանի որ նա իբր թե չէ կատարել Պողոս փաշայի հեռագրական պատվերը Նորին Սրբության դրամը փոխադրելու մասին, և «մինչև այսօր իսկ, ինչպես դուք գրում եք, պահել է պետքերի համար»:

Ուրեմն, Խոնարհաբար խնդրում ենք պարզել իրողությունը, զեկուցանել այդ մասին Նորին Սրբությանը և հանելով այդ գումարը մեր հաշվից, վերցնել Բյուրոյի վրայից այդ անհիմն մեղադրանքը:

Գրության մեջ հիշված մնացած գումարները միանգամայն ճիշտ են: Սակայն 16.650 ր. Ազգային բյուրոն ստացել է Նորին Օծության կարգադրությամբ դեռ 1915թ. սեպտեմբերին կամավորական ընդհանուր պետքերի համար, և չպետք է կապվի Բյուրոյի այժմյան խոշոր կարիքների հետ, որ առաջացել են կամավորական խմբերի լիկվիդացիայի շնորհիվ: Մնացյալ 20.000 ռուբ. միայն (այն է՝ 10.000+5.000+5.000) իրոք Բյուրոն ստացել է այդ կարիքների համար: Այստեղ պարտք ենք համարում համառոտ տեղեկություն տալ Նորին Սրբությանը զեկուցանելու համար Ազգային բյուրոյի ունեցած ծախքերի մասին: Վերջին ամիսների ընթացքում կամավորների լիկվիդացիայի վրա Բյուրոն ծախսել է ավելի քան 250.000 ռուբ., այդ թվում միայն ճանապարհածախք ավելի քան 50.000 ռուբլի: Ինչպես հայտնի է, 6-րդ գունդը կազմված էր Ազգային բյուրոյից միանգամայն անկախ և ոչ մի կապ չէր պահում Բյուրոյի հետ: Սակայն երբ այդ գնդերից սկսեցին դիմել Բյուրոյին օգնության համար, և Բյուրոն տեղեկացավ, որ այդ գնդի Կենտրոնական կոմիտեն միջոցներ չունի և անկարող է նրանց օգնել, Բյուրոն որոշեց նրանց օգնել և մինչև այժմ միայն այդ գնդի կամավորների վրա ծախսված է մոտ 14.000 ռուբլի: Ներկայումս բյուրոյի ազատ միջոցները համարյա սպառված են, կա միայն 30.000 ռուբլի, որ հատկապես կամավորների ընտանիքների համար է: Այնինչ դեռ բազմաթիվ ծախքեր կան Բյուրոյի առաջ, այն է՝ բավարարել մի խոշոր մասը հաշմանդամների և ապա օգնության գալ սպանվածների և մեռածների ընտանիքներին, իսկ վերջիններիս թիվը անցնում է 700-800-ից: Այդ նպատակի համար ունեցած 30.000 ռուբլին շատ քիչ է այդ խոշոր կարիքը հոգալու համար: Ամեն կողմից դիմումներ և աղաղակներ են հասնում Բյուրոյին այդ մասին: Աչքի առաջ ունենալով բոլոր վերոհիշյալը՝ Ազգային բյուրոն երկու անգամ հեռագրով դիմել էր դիվանիդ միջոցով Նորին Օծությանը և այժմ գրավոր կերպով երրորդ անգամ դիմում է և ամենախոնարհաբար խնդրում Նորին Վեհափառությունից կարգադրել հաղորդել բյուրոյին, թե որքան «կամավորական գումարներ» կան իր տրամադրության տակ և, եթե կարելի է, միաժամանակ պատվիրել այդ ամբողջ գումարը փոխադրել Ազգային բյուրոյին՝ լիկվիդացիան վերջացնելու համար: Առանձին կամավորներ մի քանի անգամ խոսք են բարձրացրել, որ իրենք կերթան էջմիածին վեհափառ կաթողիկոսին դիմելու, սակայն մինչև օրս մենք գիտենալով, որ դա կարող է անախորժություն պատճառել Նորին Սրբությանը, միշտ արգելք ենք եղել դրան, հայտնելով, որ Վեհափառ կաթողիկոսը ինքը դրամ չի տալիս ոչ ոքի, այլ ուղարկում է Ազգային բյուրոյին՝ բաժանելու համար:

Խոնարհաբար խնդրում ենք որքան հնար է շուտով զեկուցանել այս բոլորը Նորին Օծությանը և խնդրել նրա բարեհաճ կարգադրությունը:

Ընդունեցե՛ք մեր ամենախոնարհ հարգանքները:

Փոխնախագահ Ազգային բյուրոյի Ալ.Խատիսյան
Անդամ-քարտուղար Հակ.Քոչարյան

ՀԱԱ, Ֆ.57, ց.5, գ.56, թթ.55-56: Բնագիր: Ձեռագիր:

N 116

ԼՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՍՊԱՆՎԱԾ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՆՊԱՍՏ ՏԱԼՈՒ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՓՈՍՏՈՎ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

3 նոյեմբերի 1916թ.
Թիֆլիս

Ազգային բյուրոն մեզ հաղորդում է, որ սպանված կամավորների ընտանիքները նպաստ ստանալու համար անձամբ գալիս են Թիֆլիս, որ կապված է ծախսերի ու դժվարությունների հետ, հաճախ առանց որևէ փաստաթղթի: Ի գիտություն նպաստ ստացողների հայտնվում է, որ փոխանակ անձամբ գալու, պետք է ուղարկել Բյուրոյի հասցեով (Лермонтовская 12, Армянское бюро) մեկ վկայական ընտանիքի կազմի վերաբերյալ, հաստատված առաջնորդարանի կամ պրիստավի կողմից և ապա խմբից տրված մահվան վկայականը: Դիմողը պետք է հայտնի իր հասցեն, որպեսզի փոխադրվի դրամը:

«Հորիզոն», հասարակական, գրական, քաղաքական օրաթերթ, Թիֆլիս, 03.11.16:

N 117

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ՆԱՄԱԿԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԴԻՎԱՆԻՆ՝ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՈՒ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԽՆԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

20 նոյեմբերի 1916թ.
Թիֆլիս

Ազգային բյուրոն ստացել է Ձեր գրությունները հմ.2214 հոկտ[եմբերի] 10-ից և 2435 նոյեմբերի 8-ից:

Անցյալ հոկտեմբերի 27-ին Բյուրոն ստացավ Վեհափառ կաթողիկոսի կարգադրությամբ ս.Սինոդի գանձապահից փոխադրած 4987 ր. 50 կ., որի համար Բյուրոն խնդրում է հայտնել իր խորին շնորհակալությունը Վեհափառ Հայրապետի և ընդսմին ուղարկում է այդ գումարի ստացման անդորրագիրը՝ հմ. 29/83:

Ազգային բյուրոն շատ ուրախ է, որ դիվանիդ նոյեմբերի 8-ի նամակով պարզվում է Բյուրոյի վրա սխալմամբ հաշված 18.000 ր[ուբլու] խնդիրը: Սակայն պատկառելի դիվանիդ նամակի մեջ ոչ մի պատասխան չկա Բյուրոյիս հոկտ[եմբերի] 19-ի գրության գլխավոր դիմումին, որը վերաբերում է Ազգային բյուրոյի ներկա խոշոր կարիքներին և Նորին Վեհափառության տրամադրության տակ եղած կամավորական գումարներին:

Այդ առթիվ Ազգային բյուրոն իր վերջին նիստում որոշեց կրկին անգամ դիմել Նորին Օծությանը՝ ուղարկելով հատուկ պատգամավոր պ.Ստ.Լիսիցյանին, որը ներկայացնելով Բյուրոյի գրությունը դիվանիդ անունով Վեհափառ կաթողիկոսին զեկուցանելու համար, միևնույն ժամանակ պատիվ կունենա անձամբ զեկուցանելու Նորին Վեհափառությանը Բյուրոյի ընթացիկ խոշոր կարիքների մասին:

Պատկառելի դիվանիդ անունով սեպտեմբերի 14-ին և հոկտեմբերի 19-ին գրած նամակների մեջ Ազգային բյուրոն արդեն համառոտակի զեկուցել էր, թե ինչ ծախքեր են եղած Բյուրոյի կողմից կամավորների լիկվիդացիայի վրա, այն է՝ հեռացող կամավորներին նպաստ և ճանապարհածախք տալու, հիվանդներին ու հաշմանդամներին բժշկության ծախք և միանվագ նպաստներ տալու և այլ ծախքերի վրա: Բոլոր ծախքերը կատարված են գլխավորապես հատուկ կարգադրիչ մարմնի ձեռքով Երևանում և մասամբ էլ Թիֆլիսում Ազգային բյուրոյի ձեռքով: Ձեզ գրած նամակներից հետո այդ նպատակներով ծախքերը շարունակվել են և ներկայումս հասել են մինչև 280.000 ռուբլու, և այդպիսով Բյուրոյի միջոցները միանգամայն

սպառվել են, և նա արդեն բավական խոշոր գումար նույնիսկ ծախսել է, փոխարինաբար վերցնելով այն առանձին գումարից, որը հատկացված էր սպանված կամավորների ընտանիքների համար: - Ներկայումս, ինչպես մեզ գրում է [Բյուրոյի] Երևանի կարգադրիչ մարմինը, վերոհիշյալ լիկվիդացիան վերջացնելու համար հարկավոր է էլի առնվազն 20.000 ռուբլի (դեռ չեն խոսում սպանվածների ընտանիքների օգնության մասին): Բացի դրանից, ինչպես վերև ասացինք, մինչև այժմ էլ մոտ 15.000ր. ծախսված է ընտանիքների համար հատկացված գումարներից:

Ահա այդ գումարները ծածկելու համար մենք դիմել էինք և այժմ դիմում ենք Նորին Վեհափառության օգնությանը:

Բայց դա միայն մի մասն է խնդրի: Ինչպես արդեն գրել ենք հոկտ[եմբերի] 19-ին, կան մոտ 700-800 հոգի սպանված կամավորներ, որոնց մեծ մասը ունեցել են ընտանիքներ, որ այժմ մնացած են անօգնական վիճակում և դիմում են Բյուրոյին: Բյուրոյի ունեցած գումարը այդ նպատակով (մոտ 30.000 ռուբլի) շատ քիչ է այդքան ընտանիքների համար, քանի որ եթե հաշվենք նույնիսկ 500 ընտանիք և յուրաքանչյուրին առնվազն 200 ռուբլի, դա կլինի արդեն 100.000 ռուբլի: Ահա թե ինչու Ազգային բյուրոն դիմում է Նորին Վեհափառությանը ամենախորհին խնդրանքով՝ օգնության հասնել Բյուրոյին այս ծանր օրերին:

Բյուրոն խոնարհաբար խնդրում է Վեհափառ Հայրապետին տրամադրելի անել Բյուրոյին նախ այն հատուկ «կամավորական գումարները», որ կան նրա տրամադրության տակ: Այդ գումարների մասին հարգելի դիվանիդ հունիսի 7-ին մեզ գրած նամակի մեջ ասված էր, որ 6-րդ գնդի համար (հնչակյանների) հատուկ գումար չկա Վեհափառ կաթողիկոսի մոտ, և դրանք բոլորը ընդհանուր կամավորների համար են: Սակայն Բյուրոն ինքը ծախսել է 6-րդ գնդի կամավորների ճանապարհածախքի և այլ կարիքների համար ավելի քան 14.000 ռուբլի: Բացի դրանից, Ազգային բյուրոն թույլ է տալիս իրեն դիմել Նորին Վեհափառությանը և ավելի լայն խնդիրքով, և լիահույս է, որ Նա կմտնի կամավորների ծանր դրության մեջ և կբարեհաճի պատշաճ տնօրինությունը անել նրանց օգնության համար:

Ինչպես մեզ հայտնի է և բազմիցս տպվել է Լոնդոնի «Ararat» ամսաթերթում և ուրիշ թերթերի մեջ, Լոնդոնից և Ամերիկայից խոշոր գումարներ [են] ուղարկված Նորին Վեհափառությանը վիրավոր հայ զինվորների համար: Ահա այդ գումարների խոշորագույն մասը, եթե ոչ բոլորը, հասնելու է իրենց հիվանդ, վիրավոր և հաշմանդամ հայ կամավորներին: Եվ ահա այդ գումարներից է, որ խոնարհաբար խնդրում ենք Նորին Վեհափառությունից մի խոշոր մասը այժմ դնել Բյուրոյի տրամադրության տակ թե՛ լիկվիդացիայի գործը վերջացնելու և թե՛ սպանվածների ընտանիքներին օգնելու համար:

Ինչպես մեր հոկտ[եմբերի] 19-ի նամակում գրել ենք, կամավորներից շատերը լսելով էջմիածնում եղած գումարների մասին, ցանկություն են հայտնել գալ այդտեղ և դիմել Վեհափառ Կաթողիկոսին, բայց մենք միշտ նրանց արգելել ենք այդ անել, հատնելով, որ Նորին Օծությունը անձամբ դրամներ չի բաժանում կամավորներին, այլ ուղարկում է կամավորներին տալու համար ըստ իր բարեհայեցողության:

Այս խնդրի մասին Բյուրոյի անդամ պ.Ստ.Լիսիցյանն էլ բերանացի կզեկուցանի Նորին Օծությանը և հույսով ենք, որ Վեհափառ կաթողիկոսը կկատարի Բյուրոյի խոնարհ խնդիրը և որքան հնար է խոշոր գումար կուղարկի Բյուրոյին առաջիկա կարիքները հոգալու համար: Սպանվածների ընտանիքների խնդրի համար հատկապես կարևոր է Բյուրոյի համար իմանալ, թե ինչքան գումար կունենա Բյուրոն իր տրամադրության տակ, որ ըստ այնմ որոշի, թե ինչ նպատակներով և որքան կարող է տալ յուրաքանչյուր ընտանիքին:

Գալով պատկառելի դիվանիդ հոկտեմբերի 10-ի նամակին՝ Ազգային բյուրոն պարտք է համարում բացատրել հետևյալը Նորին Վեհափառությանը զեկուցանելու համար:

Նախ՝ Ազգային բյուրոյի նամակը [իր ճյուղի] Ամերիկայի կենտրոն[ական], կոմիտեին, որից մի կտոր տպված էր «Հայրենիքում» և այնտեղից արտատպված Կոմիտեի «Հուսաբեր»-ում, գրված է 1915թ. դեկտեմբերի 20-ին, ուրեմն՝ մոտ մի տարի սրանից առաջ: Այդ նամակը, ինչպես և Բյուրոյիս գրագրությունը առհասարակ կրում է կոնֆիդենցիայի բնույթ և երբեք նշանակված չէր հրատարակության համար: Նամակից քաղվածք տպագրելը «Հայրենիքում» անտակտ քայլ էր Ամերիկայի մեր կոմիտեի կողմից, և այդ առթիվ նրան նկատողություն է գրվել Բյուրոյի կողմից: Գալով նամակի բովանդակությանը ըստ էության, պետք է ասենք, որ դա միանգամայն համապատասխանում է իրականությանը: Ազգային բյուրոն իր գոյության սկզբից միշտ վայելել է Նորին Օծության առանձին հովանավորությունը և ուշադրությունը (էլի կրկնում ենք, որ նամակը գրված է 1915թ. դեկտեմբերին): Անհարմար համարելով այդ առթիվ գրավոր կերպով մտնել մանրամասնությունների մեջ, թողնում ենք այդ անձամբ պ.Ստ.Լիսիցյանին բերանացի բացատրելու Նորին Վեհափառությանը: Երկու խոսքով միայն կհիշեցնենք, որ դեռ 1912թ. վերջերից, երբ կազմվեց Բյուրոն, և երբ հայկական ռեֆորմների հարցն էր մշակվում, և կազմակերպվեց Պողոս փաշա Նուպարի պատգամավորությունը Եվրոպայում և մանավանդ 1914թ. օգոստոսից հետո (այսինքն՝ ռուս-գերմանական պատերազմը սկսելուց) քանի-քանի անգամ հատուկ պատգամավորներ են եկել Բյուրոյի կողմից ս.Էջմիածին՝ Նորին Օծության մոտ զանազան խնդիրներով, զանազան գրություններով՝ խորհրդակցելու համար Նրա հետ և ստանալու Նրա հավանությունը: Հիշենք միայն նրանց անունները, պ.պ. Ս.Հարությունյան, բժ.Հ.Զավրիյան, Միք.Պապաջանյան, Գ.Խատիսյան, Հովս.Ամիրխանյան, Ա.Աբելյան և այլն: Քանի անգամ ինքը՝ Վեհափառ կաթողիկոսը, դիմել է Բյուրոյին այս կամ այն կարևոր խնդրի առթիվ և հարցրել նրա կարծիքը: Հիշենք հենց ամենակարևոր մոմենտներից մեկը, երբ Նիկոլայ 2-րդ կայսեր Թիֆլիս գալու օրերին տեղի ունեցած խորհրդակցություններ, որոնց հետևանքը Նորին Օծությունը գրավոր ներկայացրեց փոխարքային (1914թ. նոյեմբերի 24-ին) Հայկական ինքնօրինության վերաբերյալ պատմական դոկումենտը և ապա նույն նյութի մասին անձամբ խոսեց թագավոր կայսրի հետ...

Իհարկե, մեր նամակը գրելով Ամերիկայի կենտրոն. կոմիտեին՝ մենք երբեք չենք մտածել «գործի ամբողջ պատասխանատվությունը ձգել Նորին Վեհափառության վրա», և մանավանդ չենք ուզեցել նրա անունը «կապել Բյուրոյի գործունեության բոլոր մանրամասնությունների հետ», ինչպես գրված է պատկառելի դիվանիդ գրության մեջ: Մեր խոսքը միայն, ինչպես ասացինք, Բյուրոյի «պատասխանատու քայլերի մասին է»:

Թույլ տվեք նույնպես ասել, որ փոքր ինչ չափազանցրած են դիվանիդ նամակի մեջ այն խոսքերը, թե «Նորին Օծությունը Բյուրոյի գործերից ավելի քան անտեղյակ է և չգիտե, թե ինչ է կատարվում այնտեղ»:

Իհարկե, Ազգային բյուրոն հնարավորություն չի ունեցել շատ հաճախ կանոնավոր զեկուցումներ ուղարկել Նորին Վեհափառությանը, բայց և այնպես մինչև 1915 թվի դեկտեմբեր ամիսը (երբ գրված է Բյուրոյի նամակը Ամերիկա) բավական հաճախ եկած են Էջմիածին Բյուրոյի պատգամավորներ և բերանացի զեկուցել են Բյուրոյի գործերի մասին, մի քանի անգամ Բյուրոն գրավոր զեկուցումներ է ուղարկել Վեհին, և երկու անգամ էլ ինքը՝ Բյուրոն ամբողջ կազմով Թիֆլիսում ներկայացել է Նորին Վեհափառությանը և իր նախագահի բերանով զեկուցել է ընթացիկ գործերի մասին:

Ընդունում ենք, որ Բյուրոյի գործունեության մանրամասնությունները կարող էին ծանոթ չլինել Նորին Վեհափառությանը, բայց Բյուրոն գտնում է, որ պետք էլ չէր

Նորին Օծության ուշադրությունը ծանրաբեռնել զանազան մանր-մունր ընթացիկ գործերով:

Բավականանալով այսքանով, Ազգային բյուրոն նորից խնդրում է պատկառելի դիվանիդ զեկուցանել այս բոլորը Նորին Օծությանը, և Բյուրոն լիահույս է, որ Նորին Օծությունը ներողամիտ կգտնվի, եթե Ամերիկայի կոմիտեի անտակտության պատճառով Բյուրոյիս նամակի մի կտորի հրատարակությունը փոքր ինչ վշտացրել է նրան, և միևնույն ժամանակ նա կհարգի Բյուրոյիս խոնարհ խնդիրը և նյութական խոշոր օգնությամբ կթեթևացնի Բյուրոյի և նրա հետ միաժամանակ թշվառ կամավորների և նրանց ընտանիքների ծանր դրությունը:

Խնդրում ենք ընդունե՛ք մեր ամենախորին հարգանքները:

Փոխնախագահ Ազգային բյուրոյի Ալ.Խատիսյան
Անդամ-քարտուղար Հակ.Քոչարյան

ՀԱԱ, Ֆ.57, ց.5, գ.56, թթ.49-53 (հակ.): Բնագիր: Ձեռագիր:

N 118

ԱՄՓՈՓ ՏՎՅԱԼՆԵՐ 1915-1916ԹԹ. ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԻՑ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐ ՀԱՄԱՐ ԱՌԱՔՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

20 նոյեմբերի 1916թ.
Ս.Էջմիածին

1915թ. 4 փետրվարի	1500	դոլար
,, 18 ,,	1500	,,
,, 4 մարտի	5000	,,
,, 16 ,,	1300	,,
,, 7 ապրիլի	2500	,,
,, 27 հուլիսի	5000	,,
,, 11 սեպտեմբերի	2500	,,
1916թ. 19 հունվարի	1500	,,
,, 10 հուլիսի	5000	,,
Գումարը –	25.800	դոլար

Լիազոր ներկայացուցիչ Ար.գործ. հանձնախմբի Օհան Գասպարյանց

ՀԱԱ, Ֆ.57, ց.5, գ.168, թ.51: Բնագիր: Ձեռագիր:

N 119

ԱՍՏՐԱԽԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴ ՄԵՍՐՈՊ ՏԵՐ.ՄՈՎՍԻՍՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ՝ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՋՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

5 դեկտեմբերի 1916թ.
Ք.Աստրախան

Ամերիկայի հայկական ընկերության բժշկական վարչությունը ինձ է ուղարկել ներփակ նամակ, որով հայտնում է, որ [1916թ.] օգոստոսի 4-ին կոմիտեիդ ուղարկած

հեռագրական հարցմանը - արդյոք կարիք կա՞ բժշկական օգնության, մենք պատրաստ ենք մեր ծախքով բժիշկ ուղարկել Ձեր տրամադրության տակ, դեղերի կարիք կա՞, ու՞ր է Կրեսսին – պատասխան չենք ստացել: Ապա շարունակում են հաղորդել, որ վարչությունը ունի դրամական միջոցներ և պատրաստ է օգնել: Թեև դոկտոր Կրեսսին հավանական է արդեն տեղ է հասել և ինչ որ պետքն է, անձամբ պատմել է, բայց իմ կարծիքով ցանկալի է, որ կոմիտեիդ կողմից պաշտոնապես տեղեկություն տրվի նաև այդ նամակին, մանավանդ, որ վերջին աղետից հետո, անշուշտ, կարիքը ավելի մեծ կլինի: Այդ պատճառով ուղարկում եմ այս նամակը և խնդրում եմ պատասխանել, քանի որ նամակը գրված է իմ և կոմիտեիդ անունով միաժամանակ:

Առաջնորդ թեմի Մեսրոպ

ՀԱԱ, Ֆ.28, ց.1, գ.888, թ.4: Բնագիր:

N 120

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ՆԱՄԱԿԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԴԻՎԱՆԻՆ՝ ՀՕԳՈՒՏ ՎԻՐԱՎՈՐ ՈՒ ՋՈՀՎԱԾ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՄԱՅՐ ԱԹՈՌԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՈՒ ԲԱԽՇՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

5 հունվարի 1917թ.
Թիֆլիս

Ազգային բյուրոն ժամանակին ստացել է պատկառելի դիվանիդ հմ. 2737 գրությունը դեկտ. 12-ից և այս օրերս էլ ստացավ Մայր աթոռի գանձապահի ձեռքով փոխադրված 27.522 ռուբ. 85 կոպ.: Ազգային բյուրոն խնդրում է Ձեզ հայտնել Նորին Վեհափառությանը իր խորին շնորհակալությունը այդ բարեհաճ կարգադրության համար: Ստացված գումարը արձանագրվեց Բյուրոյի հաշվեմատյաններում այնպես, ինչպես մեզ գրված էր, այսինքն՝ 5275 ռ. հօգուտ վիրավոր կամավորների և 22.247 ռ. 85 կոպ. հօգուտ սպանված կամավորների ընտանիքների:

Ձեր նամակի մեջ հաշված գումարները բոլորն էլ ճիշտ են և ստացված են Ազգային բյուրոյի ձեռքով:

Թույլ ենք տալիս մեզ միայն մի փոքրիկ ուղղումն անել: Նամակում ասված է, որ բոլոր գումարներից միայն 3.024 ռ. 47 կոպ. Ազգային բյուրոյի անունով էր, իսկ մնացած ամբողջ գումարները Նորին Վեհափառության կողմից նպաստ է Ազգային բյուրոյին: Այնինչ սեպտ[եմբերի] 9 հմ. 1500 մակագրությամբ ցույց տված գումարը, 10.000 ռուբ. հատկապես, ուղարկված է եղել Պողոս փաշա Նուբարից Նորին Վեհափառությանը՝ Ազգային բյուրոյին հանձնելու համար: Այդ մասին թե՛ ինքը՝ Պողոս փաշա Նուբարը, հեռագրել էր Բյուրոյին և թե՛ հիշված է ս.Էջմիածնի Սինոդի 2-ին հոկտեմբերի 1915-ից հմ. 1493 Բյուրոյին ուղղված գրության մեջ:

Նամակիս հետ ուղարկվում է Ձեզ համապատասխան անդորրագիրը հմ. 30/83:

Ընդունեցե՛ք մեր խորին հարգանքները:

Փոխնախագահ Ազգային բյուրոյի Ալ.Խատիսյան
Քարտուղար Հակ.Քոչարյան

ՀԱԱ, Ֆ.57, ց.5, գ.56, թ.58 (հակ.): Բնագիր: Ձեռագիր:

N 121

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՊԱՆՎԱԾ ՀԱՅ ԶԻՆՎՈՐՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ ԳԵՐԻՆԵՐԻՆ ԱԶԱՏՈՂ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԻ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

17 հունվարի 1917թ.

Ազգային բյուրոն մեզ խնդրում է հրատարակել, որ 1-ին գնդի կամավոր Մկրտիչ Թուքունջյանի միջոցով ստացված Ազգային բյուրոյում նույն գնդի սպանված կամավոր Ավագ Ուզունյանի գրպանից հանած՝ ա. 15 հատ տաճկական ոսկի, որ հավասար է 18 և կես լիրայի և որը Բյուրոյի համաձայնությամբ հանձնվեց գերիներին ազատող մասնաժողովին և փոխարենը ստացած 370 ռուբ. ռուսական դրամ, բ. ռուսական թղթադրամով՝ 240 ռուբ., գ. ամերիկական 50 դոլլար թղթադրամով: Այսպիսով, Ազգային բյուրոյի դրամարկղում պահվում է վերոհիշված Ուզունյանին պատկանող ընդամենը ռուսական դրամ 610 ռ. և ամերիկական դրամ 50 դոլլար:

«Հորիզոն», 17.01.17:

N 122

ԱՍՏՐԱԽԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴ ՄԵՍՐՈՊ ՏԵՐ-ՄՈՎՍԻՍՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ՝ ԹԻՖԼԻՍԻ ԵՎ ՍԱՆԱՀԻՆ ՈՐԲԱՆՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՁՈՐ ՄԻՐԳ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

22 հունվարի 1917թ.
ք.Աստրախան

Անցյալ նոյեմբերի 27-ին Հաշտարախանում կարդացի մի դասախոսություն, որից արդյունք ստացա 642 ռուբլի: Քառասուներկու ռ. մի մասը ծախք եղավ, մնացորդը նվիրեցի այստեղի որբանոցի վարչությանը, իսկ 600 ռ. հատկացրի Թիֆլիսի և Սանահնի որբանոցների համար չոր միրգ գնելու և տոների ժամանակ հասցնելու: Ժամանակին չկարողացա կատարել, ուշացած եմ ուղարկում, խնդրում եմ կոմիտեիդ հնարավոր չափով բաժանել քաղաքիդ և Սանահնի որբերին հավասար չափով առաջիկա բարիկենդանի տոներին: Գնած միրգն է չամիչ, նուշ և ծիրանի չիր, 19 և կես փութ քանակությամբ, որ հանձն առավ տեղափոխելու Հաշտարխանի գավառական Զեմստվոն, ձրիաբար: Միրգը ուղարկելու համար հանձնեցի ամսիս 20-ին: Խնդրում եմ ստացման և բաժանման մասին շնորհ անել ինձ անպատճառ տեղեկացնելու:

Առաջնորդ թեմի՝ Մեսրոպ եպիսկոպոս

ՀԱԱ, Ֆ.28, ց.1, գ.888, թ.3: Բնագիր: Մեքենագիր:

N 123

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԴԱՍ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՌԱԳՐԵՐԸ

Մարտի սկզբներ, 1917թ.

Հայոց ազգային կենտրոնական բյուրոն Նոր կառավարության հաստատման առթիվ հեռագիրներ է ուղարկել հետևյալ անձանց. Պետական դումայի և ժամանակավոր Գործադիր կոմիտեի նախագահ Մ.Ռոձյանկոյին, Մինիստրների խորհրդի նախագահ իշխան Լվովին, Գերագույն հրամանատար Մեծ իշխանին, զինվորական մինիստր Գուչկովին, արտաքին գործերի մինիստր Միլյուկովին, արդարադատության մինիստր Կերենսկուն, ժողովրդական լուսավորության մինիստր Մանուիլովին, երկրագործության մինիստր Շինգարյովին և բանվորական պատգամավորների խորհրդի նախագահ Չխեիձեին:

1. Պետական դումայի նախագահին ուղարկված հեռագիրը.

«Հ[այոց] Ազգային Կենտ[րոնական] բյուրոն խոնարհվելով ի դիմաց Ձեր՝ ժամանակավոր Գործադիր կոմիտեի ջանքերով կատարված մեծ գործի առաջ, ողջունում է Ռուսաց պետության մուտքը ազատության նոր փայլուն ուղին, որը կվերածնի Մեծ Ռուսաստանը և նրա մեջ մտնող բոլոր ազգությունները: Ամբողջ սրտով ցանկանում ենք Նոր կառավարությանը կատարյալ հաջողություն թե՛ պատերազմը հաղթական վերջացնելուն, և թե՛ երկրի լայն ներքին բարեգործության մեջ»:

2. Իշխան Լվովին տված հեռագիրը.

«Հ[այոց] Ազգային կենտրոնական բյուրոն ուրախությամբ ողջունելով ի դիմաց Ձեր, իբրև նոր կառավարության պետի, Ռուսաստանի մուտքը դեպի նոր՝ նրա մեծությանը արժանի ուղի, ամբողջ սրտով ցանկանում է կատարել հաջողություն թե՛ շուտափույթ արտաքին հաղթության գործում, և թե՛ երկրի բոլոր ներքին ուժերի լայն վերծանության գործում»:

3. Գերագույն հրամանատար Մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչին.

«Հայոց Ազգային կենտ[րոնական] բյուրոն Ռուսաստանի վերծանության ներկա պատմական օրերին հաճելի պարտականություն է համարում ողջունել Ձերդ բարձրությունը Գերագույն հրամանատարի բարձր պաշտոնը ստանձնելու առթիվ: Ազգային բյուրոն հայտնում է Ձեզ իր լավագույն ցանկությունները և հուսով է, որ Ձեզ կհաջողվի առաջնորդել քաջարի ռուս զորքերը և նավատորմը մեծ դաշնակից ուժերի հետ միասին փառավոր հաղթությունների շավղով դեպի վերջնական հաղթանակը: Հ.Ազգային բյուրոն իր կողմից միշտ և իր ուժերի չափով աշխատել է նպաստել այդ մեծ գործին կամավորական գնդերի կազմակերպությամբ, և այժմ էլ պատրաստ է Ձեր հրավերով կրկին արձագանք տալ և նոր շարքեր կազմել ընդհանուր սուրբ գործի հաղթանակի համար»:

4. Զինվորական մինիստր Գուչկովին.

«Հ.Ազգային Կենտր. բյուրոն ներկա հանդիսավոր պատմական րոպեին խորին ողջույնով դիմում է Ձեզ, իբրև Ռուսաստանի ցամաքային և ծովային ուժերի պետի, և լավագույն ցանկությունների հետ միասին հույս է հայտնում, որ Նոր կառավարության ամբողջ կազմի հետ և մեծ դաշնակիցների աջակցությամբ կհաջողվի ընդարձակորեն կազմակերպել և առաջ տանել հաղթության և Նոր Ռուսաստանի հաղթանակի գործը: Հ.Ազգային բյուրոն իր կողմից աշխատել է իր ուժերի չափով նպաստել այդ սուրբ գործի հաջողությանը կամավորական գնդերի կազմակերպությամբ: Նա պատրաստ է և առաջիկայում Ձեր հրավերով արձագանք տալ և կազմակերպել նոր շարքեր ընդհանուր գործի հաղթանակի համար»:

5. Արտաքին գործերի մինիստր Միլյուկովին.

«Հայոց Ազգային Կենտր. բյուրոն երկրի արմատական այս հանդիսավոր րոպեին մանավանդ քաղցր պարտականություն է համարում ողջունել Ձեզ, իբրև Նոր Ռուսաստանի արտաքին քաղաքականության ղեկավարի և ցանկանալ Ձեզ մեծ դաշնակից ազգերի հետ կատարյալ համերաշխությամբ կատարյալ հաջողություն

Ռուսաստանի պատմական մեծության և բոլոր փոքր ազգերի երջանկության իդեալների իրականացման գործում»:

«Հորիզոն», հասարակական, գրական, քաղաքական օրաթերթ, Թիֆլիս, 11.03.17:

N 124

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ՊԱՏԱՍԽԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ

Մարտի սկզբներ, 1917թ.

Թիֆլիս. Հայոց Ազգային կենտրոնական բյուրոյի նախագահ Խատիսյանին

Շատ զգացված եմ Հայոց Ազգային կենտրոնական բյուրոյի շնորհավորանքից և նրա հայտնած պատրաստակամությունից՝ ծառայելու մեր բանակի կարիքներին: Հաստատապես հավատում եմ, որ թիկունքում հանգստություն պահպանելով և աշխատանքների ընդհանուր լարումով մենք կհասնենք մեր հաղթանակին թշնամու դեմ:

Ի սրտե շնորհակալ եմ ամենքից:

Գերագույն հրամանատար

«Հորիզոն», 9 մարտի 1917թ.:

N 125

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՄԻՆԻՍՏՐ ԳՈՒՉԿՈՎԻ ՊԱՏԱՍԽԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՆ

14 մարտի 1917թ.*

Զինվորական մինիստր Գուչկովը Հայոց Կենտրոնական Ազգային բյուրոյի նախագահին՝ ի պատասխան իրեն ուղարկված շնորհավորական հեռագրի, ուղարկել է հետևյալ պատասխանը հեռագրով.

«Հանձին ձեր անկեղծ շնորհակալություն եմ հայտնում Հայոց Ազգային բյուրոյին իր ողջույնի և այն առաջարկի համար, որով պատրասակամություն է հայտնում շարունակել աշխատանքը արտաքին թշնամու դեմ հաղթանակ տանելու և ազգերին ազատություն տալու մեծ գաղափարների օգտին, որոնցով ոգևորված է նոր կառավարությունը, որը ուժ և վստահություն է ստանում այդ գաղափարները իրագործելու Ռուսաստանի ամբողջ բնակչության աջակցությամբ»:

«Հորիզոն», 14.03.17:

N 126

ՕԴԵՍԱՅԻ ԿԱՅԱԶՈՐԻ ՀԱՅ ԶԻՆՎՈՐՆԵՐԻ ՈՒ ՍՊԱՆԵՐԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՆ՝ ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

* Թվագրումը թերթինն է: Չի նշված ռազմական մինիստրի ուղարկած հեռագրի ժամանակը: Կազմողներ:

16 մարտի 1917թ.

Թիֆլիս: Հայոց ազգային բյուրոն ստացել է Օդեսայից հետևյալ հեռագիրը մարտի 16-ին, «Օդեսայի գարնիզոնի հայ զինվորները և սպաները՝ բախտի բերմամբ կտրված հայրենիքից՝ ողջունում են բազմաչարչար հայ ժողովուրդը այն ազատության առիթով, որ լուսավորեց Հայաստանի արյունոտ հորիզոնը: Նրանք տոգորված են ջերմ փափագով՝ մեծ ռուս ժողովրդի հետ ձեռք ձեռքի տված՝ հին բռնակալության ավերակների վրա կառուցանել ազատ Ռուսաստանի հոյակապ շենքը բոլոր ազգությունների երջանկության և բարգավաճման համար»:

Ընդհանուր ժողով

«Հորիզոն», 24.03.17:

N 127

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՆՈՐ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆԸ ՍԱՏԱՐ ԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

20-25 մարտի* 1917թ.

Հ[այոց] Ազգային կենտրոնական բյուրոն կայացրել է հետևյալ որոշումը, որը հայտնված է հեռագրով բոլոր կոմիտեներին. «Ներկա մոմենտում չպետք է դնել որևէ ազգային պահանջներ: Մոմենտի առաջին խնդիրն է ամեն կերպ նպաստել նոր կարգերի հաստատմանը, անհրաժեշտ են ամեն տեսակ զոհաբերություններ թշնամուն վերջնականապես հաղթելու համար, որովհետև մեր պատերազմական անհաջողությունը կնշանակեր հին կարգերի վերականգնումը:

«Հորիզոն», 25.03.17:

N 128

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՆԱՄԱԿԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ 5-ՐԴԻՆ՝ ԱԶԳԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ ԼՈՒԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳԱՐԵԳԻՆ ԲԱՍՏՐՄԱՋՅԱՆԻՆ ԱՄԵՐԻԿԱ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

9 ապրիլի 1917թ.

Նախապես խնդրելով Ձերդ Ս.Օծության թույլտվությունը և ներողամտությունը, դիմում եմ Ձեզ մի խնդիրքով, որով դիմում է միաժամանակ Ազգային բյուրոն:

Խնդիրը վերաբերում է պ.Գարեգին Բաստրմաջյանի Ամերիկա գնալուն:

Արդեն Ձեզ հայտնի է, որ թե՛ Ռուսաստանի մեր բարեկամ հայտնի քաղաքական գործիչները և թե՛ Անգլիայի և Ֆրանսիայի, միշտ մեզ նախատեսել են նրանով, որ մենք հայերս, քիչ ենք պարապում մեր ցավոտ ազգային խնդիրներով և քիչ ենք զբաղեցնում այն շրջանները, որոնց կարծիքը վճռողական նշանակություն ունի – լինի հարցը գաղթականների մասին, թե Հայաստանի ապագա վիճակի մասին:

* Թվագրումը թերթինն է: Չի նշված որոշումն ընդունելու ժամանակը:

Այժմս մեզ լավ վերաբերվող դաշնակից պետություններին միացավ և Ամերիկան, որի համակրանքը դեպի մեզ և մեր ազգը նկատվել է բարեմետ:

Այժմս անհրաժեշտ է, որ այդ երկրում լուրջ աշխատանք կատարվի թե՛ գաղթականության և վերաշինության մասին Հայաստանում և թե՛ գաղթականության և վերաշինության մասին Հայաստանում և թե՛ քաղաքական հարցի մասին:

Այդ միսիայի համար շատ հարմար անձնավորություն է պ.Գարեգին Բաստրմաջյանը, որը եղել է Տաճկա[ստանի] պարլամենտի անդամ և ունի լավ կապեր Ամերիկայի հայտնի գործիչների հետ: Պ.Բաստրմաջյանը Պետրոգրադ է և այնտեղից արտաքին գործոց նախարարության գիտությամբ և աջակցությամբ գնալու է Ամերիկա:

Պ.Բաստրմաջյանը շատ ազնիվ, խելացի քաղաքագետ և հմուտ անձնավորություն է և ամեն շրջանում վայելում է մեծ համակրանք:

Նա իր միսիային դիմելու համար կարևորություն ունի ստանալու Ձերդ Վեհափառության օրհնությունը և հանձնարարությունը, որովհետև ազգը Ձեզ է ճանաչում իբրև իր պետը և ներկայացուցիչ և Ձեր անունից գործելը մեծ գրավական է հաջողության:

Ուստի խոնարհաբար ես էլ խնդրում եմ Ձեզ, Վեհափառ Տե՛ր, չմերժեք և բարեհաճեք տալ պ.Գ.Բաստրմաջյանին կոնդակ, վստահ լինելով, որ նա ամենայն սրբությամբ և հմտությամբ կարդարացնի Ձեր հույսերը:

Ձեր Ս.Օծության խ[ոնարհ] որդի և ծառա

Սամսոն Հարությունյան

ՀԱԱ, Ֆ.57, ց.5, գ.154, թթ.3-4 և հակ: Ինքնագիր:

N 129

ԼՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

10-13 ապրիլի 1917թ.
Թիֆլիս

Ինչպես արդեն հաղորդել էինք. Հ[այոց] Կ[ենտրոնական] Ազգային բյուրոյի հրավերով ներկա ապրիլի 10-ից մինչև 13-ը Թիֆլիսում կայացավ խորհրդակցություն, որին մասնակցում էին Ազգային բյուրոյի կազմը կարգադրիչ մարմնի և նախկին խմբապետերի հետ, գավառից եկած տեղական բյուրոների և կոմիտեների ներկայացուցիչները, Թիֆլիսում կազմված միջկուսակցական մարմինը և նրա ընտրող խառն ժողովը, նաև տաճկահայերի մի քանի ներկայացուցիչներ:

Խորհրդակցությունը ունեցավ չորս նիստ, որոնց մասնակցում էին Թիֆլիսից 75 և գավառից 20 անձ: Նիստերին նախագահում էին Բյուրոյի փոխնախագահներ Ալ.Խատիսյան և Հ.Ամիրխանյան:

Առաջին և երկրորդ նիստերում խորհրդակցությունը զբաղվեց նախապատրաստական աշխատանքներով և ծանոթացավ հեղափոխությունից հետո Թիֆլիսում տեղի ունեցած գործունեության հետ, որ առաջ եկավ ժամանակավոր կառավարության ներկայացուցիչների գալուց հետո և ապա լսվեց[ին] գավառից եկած ներկայացուցիչների զեկուցումները:

Ապրիլի 12-ի և 13-ի նիստերում խորհրդակցությունը զբաղվեց համագումարի խնդրով և որոշեց հրավիրել ոչ ավելի ուշ քան երկու ամսվա ընթացքում համագումար,

որը լիազոր կլինի վճռելու ռուսահայերին վերաբերյալ խնդիրները: Ընտրությունները համագումարի համար կատարվելու են քառանդամ սիստեմով առանց սեռի խտրության: Ընտրություններին մասնակցում են միայն ռուսահայերը: Համագումարը հրավիրվում է Երևանում: Բոլոր նախապատրաստական աշխատանքները, համագումար հրավիրելու համար, հանձնվում են Թիֆլիսում կազմված միջկուսակցական մարմնին, որը եթե հարկ գտնի, կարող է ուժեղացնել իր կազմը կոոպտացիայի իրավունքով: Համագումարի կազմի վերաբերմամբ խորհրդակցությունը գտնում է, որ մոտավորապես 10.000 հայերից բաղկացած յուրաքանչյուր շրջան պետք է տա մի պատգամավոր: Առանձին դեպքերում, մանավանդ հեռավոր գաղութների վերաբերմամբ, միջկուսակցական մարմնին թողնվում է այս կամ այն զիջումը անել թվի վերաբերմամբ: Ընտրելու և ընտրվելու իրավունք ունեին 20 տարեկանից ոչ պակաս անձինք: Խորհրդակցության այս որոշումը պատգամավորների թվի և հասակի մասին տրվում է միջկուսակցական մարմնին՝ իբրև ցուցմունքներ, բայց ոչ պարտավորեցուցիչ:

Գալով համագումարի օրակարգին՝ խորհրդակցությունը որոշում է, որ բոլոր առաջարկությունները Օրակարգի խնդիրների մասին պետք է հանձնել միջկուսակցական մարմնին, որը և կազմելու է համագումարի օրակարգը: Այդ մարմինը մամուլի միջոցով կամ այլ ձևով իրազեկ կպահի հաստատությունը* իր որոշումների մասին:

Համագումարը հրավիրելուց հետո, իհարկե, նրան վերապահվում է լրացնել արդեն կազմված օրակարգը նոր խնդիրներով, եթե նա կարևոր համարի:

«Հորիզոն», 21.04.17:

N 130

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ՓՈԽՆԱԽԱԳԱՀ ԱԼ.ԽԱՏԻՍՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՏԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

19 ապրիլի 1917թ.
Թիֆլիս

Վեհափառ Տե՛ր,

Հ.Կ. ազգային բյուրոն ի նկատի առնելով այն խոշոր նյութական և բարոյական օգնությունը, որը ցույց է տվել և շարունակում է ցույց տալ թուրքահայ ժողովրդին ամերիկական ժողովուրդը և կառավարությունը և միևնույն ժամանակ աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ ներկայումս էլ միջամտելով համաեվրոպական պատերազմին, նա կարող է իր առանձին դիրքի շնորհիվ խոշոր դեր խաղալ թուրքահայկական հարցի վերջնական ճռահատության խնդրում, որոշել է հատուկ առաքելությամբ ուղարկել Ամերիկա թուրքահայ գործիչ և օսմանյան պարլամենտի նախկին անդամ պ.Գարեգին Բաստրմաջյանին (Արմեն Գարո), հանձնարարելով նրան, օգտվելով իր այնտեղ ունեցած կապերով ամերիկյան ազդեցիկ թե՛ կառավարական և թե՛ հասարակական շրջաններում, պրոպագանդ մղել և կազմակերպել Հայկական դատի պաշտպանության գործը Ամերիկայում: Կայացնելով այս որոշումը՝ Ազգային բյուրոն միևնույն ժամանակ գործի հաջողությունը ապահովելու համար կարևոր նկատեց այս մասին զեկուցանել Ձերդ Վեհափառությանը և ստանալով Ձեր հավանությունը, խոնարհաբար խնդրել Ձեզ, օրհնելով պ.Գ.Բաստրմաջյանի

* Թերթում այդպես է: Թերևս ճիշտը լինի՝ հասարակությանը:

առաքելությունը, տալ նրա անունով մի հատուկ գրություն կամ կոնդակ, ինչպես հարմար կգտնի Ձերդ Վեհափառությունը, որի շնորհիվ նա հնարավորություն ունենա հաջողությամբ կատարել իր նպատակի համար անտրաժեշտ դիմումները:

Ներկա գրությունը պատիվ կունենա Ազգային բյուրոյի կողմից Ձեզ ներկայացնել և անհրաժեշտ բացատրություններ տալ պ.Վահան Փափազյանը:

Քանի որ պ.Գ.Բաստրմաջյանը արդեն ճանապարհվել է և հատուկ հրավեր ստանալով, կարճ ժամանակով մնալու է Պետրոգրադում, խոնարհաբար խնդրում ենք Ձերդ Վեհափառությանը որքան հնար է փութացնել վերոհիշյալ գրությունը, որպեսզի մենք հնարավորություն ունենանք շուտով ուղարկել այն Պետրոգրադ:

Ձերդ Վեհափառության ամենախոնարհ որդիք՝

Փոխնախագահ Ազգային բյուրոյի Ալ.Խատիսյան
Քարտուղար Հակ.Քոչարյան

ՀԱԱ, Ֆ.57, ց.5, գ.154, թ.1-2: Բնագիր: Ձեռագիր:

N 131

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ Գ.ԲԱՍՏՐՄԱՋՅԱՆԻ ԱՄԵՐԻԿԱ ՈՒՂԵՎՈՐՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

25 ապրիլի 1917թ.
Թիֆլիս

Հ[այոց] Կ[ենտրոնական] ազգային բյուրոն ստացավ պատկառելի դիվանիդ հմ. 654 գրությունը 20-ից ապրիլի պ. Գ.Բաստրմաջյանի առաքելության առթիվ և հենց նույն օրը հեռագրեց Ձեզ, որ նրա Ամերիկա ուղևորվելու, այնտեղ մնալու և այլ ծախքերի մասին հոգում է Ազգային բյուրոն: Նույնը հաստատելով սույն գրությամբ, կրկին խնդրում ենք դիվանիդ զեկուցանել այդ մասին Նորին Վեհափառությանը և խնդրել շուտով կարգադրություն անել այդ խնդրի վերաբերմամբ և ցանկացած գրությունը ուղարկել մեզ՝ պ.Բաստրմաջյանին հաստատելու համար:

Խորին հարգանքներով

Փոխնախագահ Ազգային բյուրոյի Հ.Ամիրխանյան
Քարտուղար Հակ.Քոչարյան

ՀԱԱ, Ֆ.57, ց.5, գ.154, թ.6: Բնագիր: Ձեռագիր:

N 132

Գ.ԲԱՍՏՐՄԱՋՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՏԻՐԱՅՐ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ՝ ՊԵՏՐՈԳՐԱԴՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՈՒ ՆՐԱ ԼՈՒԾՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ ՌՈՒՍ ԻՇԽԱՆԱՎՈՐՆԵՐԻ ՀԵՏ ԻՐ ՎԱՐԱԾ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ ՈՒՆԵՑԱԾ ՋՐՈՒՅՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

29 մայիսի 1917թ.
Պետրոգրադ

Սրբազան հա՛յր,

Ապրիլի 27 թվակիր Ձեր գրությունը, ինչպես նաև Նորին Ս.Օծության հրամանով և Ձեր ստորագրությամբ գրված անգլերեն հանձնարարագիրը ստացա: Վաղը, ամսույս 30-ին, կմեկնեմ ասկե Սիբիրի ճանապարհով դեպի Ամերիկա, որ կհասնեմ հավանաբար հուլիսի առաջին օրերում:

Այստեղ առիթն ունեցա տեսնվել նոր պետական անձանց հետ և ի մասնավորի արտաքին գործոց նախարար պարոն Թերեշչենքովի և նրա օգնական պարոն Պետրոսյանի հետ: Նրանք երկուսն էլ շատ նպատակահարմար գտան իմ ճամփորդությունը, համաձայնելով մեզ հետ, որ Ամերիկայի կարծիքը և բռնելիք մեր հարցի նկատմամբ մեծ կշիռ է ունենալու ապագայում:

Ներկա Ռուսական կառավարության կարծիքով Հայկական հարցի նպատակահարմար և հնարավոր լուծումը հետևյալն է. «Բուն Հայաստանը (6 վիլայեթները) և Կիլիկիան միասին կազմելու են մի ավտոնոմ քաղաքական միություն, որը կդրվի բոլոր պետությանց համաձայնությամբ ռուսական պաշտպանության տակ: Հայկական հարցի այս ձևի լուծումը հնարավորություն պիտի տա Ռուսաստանին տնտեսական անմիջական կապ ստեղծել Միջերկրականին, որով Պոլսո և նեղուցներու հարցը կկորցնի իր հրամայողական նշանակությունը:

Արտաքին գործոց նախարարության կարծիքով միայն Ամերիկայի Նահանգներն են, որ պիտի կարողանան չեզոքացնել ֆինանսական ծրագիրները Կիլիկիայի նկատմամբ:

Ամերիկա հասնելուս պես Նորին վսեմություն Պողոս Նուպար փաշային կհաղորդեմ այս մասին և ստանալով նրա համաձայնությունը իմ գործելակերպի մասին, պիտի աշխատեմ իմ ուժերու չափով տեղյակ պահել ամերիկյան պետական շրջանները մեր ցանկությանց մասին:

Շեշտելն ավելորդ է, որ իմ գործունեության ընթացքում պիտի աշխատեմ համախմբել մեզ բոլորիս համար կենսական հարցի շուրջը հայ գաղութի բոլոր ակտիվ ուժերը:

Զգալով ինձ հանձնված առաքելությանը կարևորությունն ու պատասխանատվությունը, պիտի աշխատեմ հնարավորության սահմաններում արդարացնել այն վստահությունը, որին ինձ արժանացնում է նորին ս.Օծությունը:

Խոնարհաբար համբուրելով Նորին Վեհափառության աջը, խորին հարգանքներով՝

Գ.Բաստրմաջյան

ՀԱԱ, Ֆ.57, ց.1, գ.154, թ.17-18: Բնագիր:Ձեռագիր:

N 133

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԿԱՐԳԱԴՐԻՉ ՄԱՐՄՆԻՆ՝ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ԻՐԱՎԱՆԱՑՄԱՆԸ ՍԱՏԱՐ ԿԱՆԳՆԵԼՈՒ ԲՅՈՒՐՈՅԻ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

30 ապրիլի 1917թ.
Թիֆլիս

Հ[այոց] Կ[ենտրոնական] ազգային բյուրոն ապրիլի 30-ին հետևյալ հեռագիրն է ուղղել Երևանի տաճկահայերի համագումարի[25] կարգադրիչ մարմնին. «Հ.Կ.Ազգային բյուրոն առանձին հաճությամբ ողջունում է բազմաչարչար թուրքահայերի ներկայացուցիչների առաջին համագումարը: Ամբողջ սրտից ցանկանալով համագումարին հաջողություն, դառն ճակատագրի հասցրած ծանր վերքերի

ուսումնասիրության և բուժման գործում՝ Բյուրոն հույս է տածում, որ հեռու չէ այն ժամանակը, երբ ազատ և հայրենի հողի վրա մեր տաճկահայ եղբայրները հնարավորություն կունենան [զբաղվել] ինքնուրույն կյանքի կարգավորման խնդրով, որպիսի նպատակների համար Այգային բյուրոն իր կողմից իր ուժերի չափով աշխատել է մինչև օրս և պատրաստ է առաջիկայում էլ իրեն նվիրել ամբողջովին: Ազգային բյուրոյի կողմից ներկայացուցիչ նշանակված է Աղբալյանը, որը ճանապարհվում է վաղը»:

«Հորիզոն», հասարակական, գրական, քաղաքական օրաթերթ, Թիֆլիս, 04.05.17:

N 134

ՓԱՐԻԶԻՑ «ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ» ՆԱԽԱԳԱՀ ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՆ՝ ՎԵՐՋԻՆԻՍ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՋԱԼԵՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆԸ ՆՊԱՍՏԵԼՈՒ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

30 մայիսի 1917թ.

Փարզում նոր կազմված «Հայ մտավորականների միությունը» հետևյալ հեռագիրն է ուղարկել Հ.Կ.Ազգային բյուրոյի անունով. «Ողջունում ենք ազատության հաղթանակը Ռուսաստանում: Ուրախությամբ տեղեկանում ենք, որ Կովկասի ազգությունների մեջ կատարյալ համերաշխություն է տիրում և բոլոր հայկական կուսակցությունները միացել են Ազգային բյուրոն ընդլայնելու և ուժեղացնելու համար: Մեր միությունը, որ հիմնվել է հայկական պրոպագանդին նպաստելու համար, խնդրում է ուղարկել մեզ նկարներ գաղթականների, ավերված գյուղերի, հուշարձանների, հոշոտված դիակների [մասին] և ամեն տեսակ տեղեկություններ, որ ապացուցանում են Հայաստանում գործված գազանությունները: Նախագահ «Հայ մտավորականների միության»՝ Չոպանյան»:

«Հորիզոն», 30.05.17:

N 135

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՍԵԿՑԻԱՅԻ

7 հոկտեմբերի 1917թ.
Տփխիսում

Սեկցիան ուներ հետևյալ կազմը. նախագահ՝ Սարուխանյան, անդամներ՝ Կրասիլնիկյան, Հ.Ղազարյան, Հ.Ստեփանյան, Հովակիմյան, Ավետիսյան, Դարբինյան և քարտուղար Լևոն Գյուլումյան (ուղարկված սոց.-հեղ. կուսակցությունից):

Ունեցավ հինգ նիստ: Բոլոր նիստերին ներկա էին և բացատրություններ էին տալիս Ազ[գային] բյուրոյի քարտուղար Հ.Քոչարյանը և վերաքննիչ հանձնաժողովի հաշվապահ Արմ.Հովհաննիսյանը: Լրացուցիչ բացատրություններ տվին և Ազգ.բյուրոյին կից կազմված կարգադրիչ մարմնի անդամներ Աղբալյան և Վրացյան: Մի շարք տեղեկությունների համար առանձնապես հրավիրվեց և Անդրանիկը:

Սեկցիան, ծանոթանալով ներկայացրած դոկումենտների, հաշվապահական գրքերի հետ և հիմնվելով տրված բացատրությունների ու տեղեկությունների վրա, միաձայն եկավ հետևյալ եզրակացության, որ կցվում է սորան:*

Նախագահ սեկցիայի Սարուխանյան
Քարտուղար Լ.Գյուլումյան

ՀԱԱ, Ֆ.222, ց.1, գ.17, թ.15: Բնագիր: Ձեռագիր:

N 136

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՍԵԿՑԻԱՅԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԲՅՈՒՐՈՅԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՇԻՎՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՏՈՒԿ ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԸՆՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

8 հոկտեմբերի 1917թ.
Թիֆլիս

Ի նկատի ունենալով, որ.

1. Վերստուգիչ հանձնաժողովը, ինչպես երևում է տեղեկագրում տրված նրա զեկուցումից, բազմաթիվ թերություններ է գտել հաշվապահական մասում,

2. Նույն զեկուցման 6 «դ» կետի համաձայն վերստուգիչ հանձնաժողովը հնարավորություն չի ունեցել քննելու խմբերի ու մարմինների բոլոր կատարած ծախսերը,

3. Տված տեղեկագրի մեջ Բյուրոյի հաշիվը ընդգրկում է 1914 սեպտեմբերից 31 դեկտեմբեր 1916 ելևմուտքն, որով 1917-ի 9 ամսին հաշիվը բոլորովին չէ քննված,

4. Սեկցիայի քննության միջոցին երևան եկան մի քանի թե՛ բերանացի և թե՛ գրավոր ձևի հաշվական տակ** հաշվական նոր հարցեր, որոնք կարոտ են ստուգության և վերջապես՝

5. Մեր հասարակության համար Ազգային բյուրոյի հաշիվների ամբողջական լուսաբանությունը պահանջ է դառել, և այնուհետև Սեկցիան միաձայն որոշեց. կողմնակի թյուրիմացությունների և կասկածների բարձումը մեծապես ցանկալի է,

Հանձնարարել խորհրդաժողովիս, որ ըստ իր հայեցողության, կամ ինքն այժմ ընտրե իր միջից և կամ հրահանգե նոր կազմվելիք կենտրոնական մարմնին, որ մի հատուկ քննիչ հանձնաժողով ընտրե Ազգային բյուրոյի և հարակից մարմինների հաշիվների ամբողջական լուսաբանության համար և արդյունքը տեղեկագրե առաջիկա համագումարին:

Նախագահ սեկցիայի՝ ստորագրություն*
Քարտուղար՝ Հակ.Ստեփանյան

ՀԱԱ, Ֆ.22, ց.1, գ.17, թ.17: Բնագիր: Ձեռագիր:

* Տե՛ս հաջորդ փաստաթուղթը:
** Տեքստում այդպես է:
* Փաստաթղթի տակ առկա են հինգ ստորագրություն, բոլորն էլ անընթեռնելի:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ՊԵՏՐՈԳՐԱԴՈՒՄ

N 1

ԱՌԱՋԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ ԿՈՄԻՏԵ ՀՐԱՎԵՐԸ

1916թ.

Պետրոգրադի և Մոսկվայի Հայկական Կոմիտեները, 1915 թվի աշնանը Պետրոգրադում տեղի ունեցած միացյալ նիստերում, որոշեցին հրավիրել Պետրոգրադում հայ փախստականներին նպաստող կազմակերպությունների ներկայացուցիչների համագումար: Այդ նպատակով վերոհիշյալ կոմիտեները դիմեցին

Պետական Դումայի անդամ պ. Մ.Պապաջանյանին, որ նա հոգա պատշաճավոր թույլտվություն ստանալու մասին: Այժմ, շնորհիվ հարուցված միջնորդությունների, ներքին գործերի պ. Նախարարից և Նորին Կայսերական Մեծության Կովկասի Մեծ Իշխան Փոքրարքայից ստացված է համագումարի թույլտվությունը. Նորին Սրբություն Ամենայն Հայոց Կաթողիկոսը տվել է այդ Համագումարին իր օրհնությունը:

Այդ միացյալ Կոմիտեների կողմից ընտրված Կազմակերպիչ Կոմիտեն խնդրում է այն ազգային հաստատություններին, որոնք նպաստել են փախստականներին, ուղարկել իրենց ներկայացուցիչներին մասնակցելու վերոհիշյալ համագումարին, որ պիտի կայանա Պետրոգրադում, 1916 թվի մայիսի տասին, տասնմեկին և տասներկուսին:

Հաղորդելով համագումարի պարապմունքների ծրագիրը, Կազմակերպիչ Կոմիտեն խոնարհաբար խնդրում է Ձեզ ուղարկել զեկուցումներ, համաձայն այդ ծրագրին, և տեղեկագրեր Ձեր գործունեության մասին:

Զեկուցումները պիտի ուղարկել, վաղօրոք, որպեսզի նրանք ստացվեն Մոսկվայում ո՛չ ուշ, քան մայիսի 5-ը 1916 թ.:

Կազմակերպիչ Կոմիտեն իր պարտքն է համարում ավելացնել որ՝

1. Համագումարի նախընթաց օրը, այսինքն մայիսի 9-ին, ժամը 2-ին, նշանակված է նախապատրաստական Ժողով՝ համագումարի անդամների փոխադարձ ծանոթության համար:

2. Համագումարի մուտքի տոմսակներ ստանալու է Պետրոգրադում, Սպասսկայա, 15, բնակ. 2.

3. Զեկուցումներ, տեղեկագիրներ և ամեն կարգի դիմումներ ու նամակներ պիտի ուղարկել մինչև մայիսի 5-ն Մոսկվայի Հայկական Կոմիտեին (Ì î ñêâà, Àðìÿíñêèé ïåð., ä. Àðìÿíñêî éöåðêâè), իսկ մայիսի 5-ից հետո՝ Պետրոգրադի Հայկական Կոմիտեին՝ (Ï å ò ð î ãðàä, Ñïàññêàÿ óë., ä. 15, êâ. 2), Կազմակերպիչ Կոմիտեի անունով:

4. Այն կազմակերպությունները, որոնք այս կամ այն պատճառով չեն ստացել ներկա հիավիրագիրը, կարող են ուղարկել իրենց ներկայացուցիչներին, միայն անհրաժեշտ է նախօրոք հեռագրով տեղեկացնել այդ մասին Կազմակերպիչ Կոմիտեին, որպեսզի հնարավոր լինի ստուգել տվյալ հաստատության իրավունքը մասնակցելու համագումարին:

Կազմակերպիչ կոմիտե

Ծանոթ. Ցանկալի է, որ յուրաքանչյուր հաստատություն ընտրի ներկայացուցիչ իր տեղի գործիչներից, որպեսզի Համագումարի կազմը լինի համազգային: Ամեն մի ներկայացուցիչ ունի մի ձայն, թեև ընտրված լինի մի քանի հաստատություններից:

ՀԱԱ Ֆ. 50, g. 1, գ. 140, թ. 24: Բնագիր: Մեքենագիր:

N 2

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

5-13 մայիսի 1916թ.
Պետրոգրադ

Համագումարի աշխատանքը կատարվում էր հետևյալ սեկցիաների մեջ.

1. ա) Գյուղատնտեսական.
   բ) Ֆինանսական-Տնտեսական.

2. Բժշկասանիտարական.
3. Դպրոցական-կրթական և որբանոցների.
4. Իրավաբանական.
5. Կազմակերպչական:

Բոլոր զեկուցումներն ու որոշումները նախ քննության էին առնվում համապատասխան սեկցիաներում, և ապա ներկայացվում Համագումարի ընդհանուր ժողովի հայեցողությանը, որ կրկին քննելով առաջարկված թեզիսներն ընդունեց նրանց հետևյալ խմբագրությամբ.

1
ա) ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ

1) Հիմնվելով պ.պ. Մ.Սողոմոնյանցի և Ա.Թերզիպաշյանի զեկուցումների տվյալների վրա և հարմարվելով Հայաստանի պայմաններին, վերադարձող փախստականների գյուղատնտեսությունը վերականգնելու համար իբրև մինիմալ-նորմա, որոշվում է ընդունել 135 ռուբլի մարդագլուխ: Փախստականների թիվը հաշվելով 200000 հոգի, ընդհանուր գումարը կստացվի 27 միլիոն ռուբլի:

2) Հայաստանի վերաշինության գործը ղեկավարող կենտրոնական մարմինը ունենալու է հատուկ գյուղատնտեսական սեկցիա:

3) Գյուղատնտեսական գիտելիքներ ժողովրդի մեջ տարածելու համար կազմակերպել ժամանակավոր և տևական դասընթացներ գյուղատնտեսական զանազան ճյուղերի և արհեստների վերաբերյալ չափահասների համար. նաև հրատարակել հանրամատչելի ձեռնարկներ, գրքեր և թերթեր:

4) Հիմնել օրինակելի ագարակներ, ցուցադաշտեր և նման ուրիշ ձեռնարկներ կենդանի օրինակներ ցույց տալու նպատակով:

5) Անհապաղ միջոցներ ձեռք առնել գյուղատնտեսական հրահանգիչ-ինստրուկտորներ պատրաստելու համար՝ երիտասարդներ ուղարկել Ռուսաստան զանազան կալվածքներում և օրինակելի տնտեսությունների մեջ սովորելու համար համապատասխան մասնագիտություն:

6) Մանուկների համար հիմնել գյուղատնտեսական ապաստարաններ և կոլոնեաներ՝ վարժեցնելու նրանց գյուղատնտեսական պարապմունքների մեջ, միաժամանակ հնարավորություն տալով նրանց ստանալ տարրական կրթություն:

7) Հիմնել գյուղատնտեսական գործիքների և նյութեղենի պահեստներ, հացի հասարակական շտեմարաններ և առաջին հերթին օգնության հասնել երկիր վերադարձող ազգաբնակությանը, մատակարարելով նրանց փայտեղեն, կենդանիներ, սերմացու և գործիքներ:

8) Ի նկատի ունենալով, որ Հայաստանի զանազան գավառներում կան տեղական կլիմայական և հողային պայմաններին դարերով հարմարված, իր տեսակին հատուկ, բույսեր և կենդանիներ, որոնք երկրի ամայանալու պատճառով կարող են անհայտանալ՝ շուտափույթ միջոցներով այդպիսիները հավաքել և հոգալ նրանց պահպանության և բազմացնելու մասին:

բ) ՖԻՆԱՆՍԱԿԱՆ

1) Քանի որ Ատրպատականի ազգաբնակությունը նույնպես պատերազմի հետևանքներից մեծապես տուժել է իր գաղթի ընթացքում, և իբրև չեզոք պետության հպատակ՝ նպաստից զուրկ է մնացել, պետք է նպաստել այդ շրջանի գյուղատնտեսական վերականգման:

2) Հիմնել աշխատանքի բյուրոներ՝ այն պայմանով, որ աշխատանք հայթայթելով արգելք չհանդիսացվի փախստականներին հայրենիք վերադառնալու: Այս նկատումով աշխատանք տալ միայն այն փախստականներին, որոնք զուրկ են հայրենիք վերադառնալու հնարավորությունից, առավելություն տալով երկրագործական պարապմունքներին և աշխատանքներին:

3) Կենտրոնական մարմինը իր գյուղատնտեսական սեկցիայի միջոցով կազմակերպելու է ամեն տեսակ կոոպերատիվ հաստատություններ:

4) Որովհետև գյուղատնտեսական վերաշինությունը բացօդյա չի կարող տեղի ունենալ, և գաղթականների տները սակավ բացառությամբ հիմնահատակ կործանված են, անհրաժեշտ է նախ սկսել գաղթականների տների վերաշինությունը, որի համար որոշվեց գյուղական ազգաբնակության մարդագլուխ 50-ական ռուբլի ծախս. որով 170,000 հոգու համար 8,500,000ռ., իսկ քաղաքների տները կարգի բերելու համար 3,000,000 ռբ. գումար՝ 11,500,000 ռբ.: Հաշվելով գյուղատնտեսական վերաշինությունը ևս 27,000,000ռբ., տների վերաշինության հետ միասին ընդհանուր գումարը կստացվի 38,500,000ռբ.:

Հայկական համագումարների Կենտրոնական Կոմիտեն հոգ տանելու է անհապաղ հիշյալ 38,500,000ռբ. գումարը հատկացնելու ներկայիս Ռուսաստանի սահմանները ապավինած 200,000 հայ փախստականների վերաշինության գործին:

Այս գումարի մեջ չեն մտնում գաղթականների ուտելիքի համար պահանջվող ծախսերը:

5) Քանի որ 38 ու կես միլիոն գումարը վերաբերում է միայն Ռուսաստանում գտնվող 200 հազար հայ փախստականների վերաշինության մինիմալ ծախսերին, Հայկական Համագումարների Կենտրոնական Կոմիտեն քննելու է մայր հայրենիքում մնացած մեր ժողովրդի տնտեսական դրությունը, որոշելու է թիվը և կազմելու նրանց վերաշինության ծախսերի նախահաշիվը:

6) Գաղթականների վերականգման ծախսերի համար պահանջվող գումարի մասին՝ Հայկական Համագումարների Կենտրոնական Կոմիտեն իրավունք ունի հարուցել ուր հարկն է պատշաճավոր միջնորդություն:

7) Թեև հարկավոր գումարները պետք է ստացվեն պետական գանձարանից, բայց և այնպես ամեն մի հայի բարոյական պարտավորությունն է նյութական մասնակցություն ունենալ Հայաստանի վերաշինության գործում: Այս ուղղությամբ Հայկական Համագումարների Կենտրոնական Կոմիտեն միջոցներ ձեռք առնելու է կանոնավոր մուտքի ապահովությունը հաջողեցնելու: Այդ նպատակով՝ ուրույն կազմակերպչական սիստեմով պետք է շաղկապել տեղական բոլոր կազմակերպությունները և նրանց միջոցով բոլոր անհատական ուժերը մասնակից անել գործին:

8) Հայ և օտար հաստատությունների վստահությունը ամրացնելու, տրամադրությունները վառ պահելու և գործը հաստատուն հիմքերի վրա դնելու նպատակով մտցնել բոլոր գործող մարմինների մեջ միատեսակ և կանոնավոր հաշվապահություն և պարբերական հաշվետություն:

9) Ընդունելով գործող մարմինների ներքին գործունեության անկախությունը՝ նրանց ընդհանուր գործունեությունը կրելու է որոշ ներդաշնակություն և կենտրոնանալու է վերոհիշյալ գլխավոր մարմնի ձեռքը: Այս տեսակետով բոլոր գոյություն ունեցող կազմակերպությունները, ոչ ուշ քան 3 ամսվա ժամանակամիջոցում ներկայացնելու են իրենց մուտքի և ելքի մանրամասն հաշիվները Հայկական Համագումարների Կենտրոնական Կոմիտեին՝ և ի պահանջել հարկին այդ հաշիվը տպագրել ի գիտություն հասարակության:

10) Համագումարների Կենտրոնական Կոմիտեն միջոցներ ձեռք առնելու է որոշելու պատերազմից վնասված հայ ժողովրդի նյութական վնասների քանակը, որոնք առաջացել են զորքի շարժումներից և դիրքերի փոփոխման ռազմական

պահանջներից, ուր բազմաթիվ հայկական շեն գյուղերի և ճոխ քաղաքների տեղ այժմ մնացել են ռեկվիզիցիայի, ավերների, կոտորածի և թալանի խղճալի հետքեր միայն:

11) Հայկական Համագումարների Կենտրոնական Կոմիտեն հարուցելու է համապատասխան միջնորդություն ուր հարկն է, որ պետական Դումայի 251 անդամների ներկայացրած օրինագծի մեջ վնասների հատուցման վերաբերյալ կանոնները տարածվեն նաև տաճկահպատակ հայ փախստականների վրա Հայաստանի շրջանում:

12) Միջնորդություն հարուցել, որ փախստականներին վերաբերյալ փոխատու նպաստի (ññóäà) օրենքը տարածվի նաև տաճկահայ փախստականների վրա:

13) Մշակել հետևյալ բաժիններով փոխատու նպաստների բաշխման և վերադարձի պայմանները՝ ա) Երկրի վերաշինության ձևը, բ) Փոխատվության վերադարձի ձևը, գ) Ստացող և բաշխող մարմնի կազմակերպությունը և այդ մասին անդամների պատշաճ ընտրությունը, դ) Կոնտրոլի կազմակերպության խնդիրը:

2
ԲԺՇԿԱԿԱՆ

1) Առաջարկել հայկական կազմակերպություններին համաձայնեցնել իրենց գործունեությունը քաղաքների միության գործունեության հետ, ընտրել բժշկական հանձնաժողով, որը պիտի ուղղություն տա զանազան հայկական հաստատությունների բժշկասանիտարական խմբերին:

2) Որբանոցները ենթակա լինելու են մշտական բժշկական հսկողության: Հարյուրից ավելի երեխաներ ունեցող որբանոցներն ունենալու են հատուկ հիվանդանոցներ, իսկ հարյուրից պակաս որբանոցները տեղափոխվելով պետք է միանան ուրիշ որբանոցներին. եթե այդ անկարելի է ու աննպատակահարմար, օգտվել մոտիկ գտնվող բժշկական հաստատություններից:

3) Ստատիստիկական տեղեկությունների ուսումնասիրումն ու մշակումը հանձնել բժշկական հանձնաժողովին:

4) Նկատի առնելով գաղթականների մեջ տարածված աչքի հիվանդությունները, դիմել Ռուսաստանում գործող կույրերի հոգաբարձությանն և խնդրել երեք բժշկական թռուցիկ խմբեր ուղարկել կովկասյան ճակատ (Մուշ, Վան, Սալմաստ), այդ հիվանդությանց դեմ կռվելու:

5) Նմանապես կաշվի և վեներական հիվանդությունների առաջն առնելու համար գոյություն ունեցող հիվանդանոցներին կից բաց անել բաժանմունքներ, բժշկելու մասնավորապես հիշյալ հիվանդությունները. նաև կազմել թռուցիկ խմբեր այդպիսի հիանդությունները բժշկելու նպատակով:

6) Ըստ կարելույն լայն չափով գաղթականներին պատվաստել տարափոխիկ (տիֆ, խոլերա) հիվանդությունների դեմ:

7) Հիմնել անկելանոցներ կույր և անդամալույծ գաղթականների համար և միջոցներ ձեռք առնել գաղթականների գործածած ջուրը անվնաս դարձնելու մասին:

3
ԴՊՐՈՑԱԿԱՆ –ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՈՐԲԱՆՈՑՆԵՐԻ

1) Որբերի պահպանության և դաստիարակության գործը կանոնավոր կերպով վարելու համար կազմակերպել մի կենտրոնական որբախնամ մարմին:

2) Որբեր և առհասարակ անխնամ երեխաներ հավաքելու համար կազմակերպել թռուցիկ խմբեր:

3) Որբերը առայժմ պիտի պահպանվեն միմիայն Անդրկովկասի գլխավորապես հայ գյուղական միջավայրում, իսկ հետո երկրում խաղաղություն հաստատվելու առաջին պահին մաս առ մաս տեղափոխվեն այնտեղ:

4) Որբերի խնամատարության զուտ ընտանեկան բնույթ տալու նպատակով որբանոցների ցարդ ընտրված հանրակացարանային կամ կազարմային տիպը աստիճանաբար փոխարինել ընտանեկան «օջախների»՝ ինչ չափով որ այն հնարավոր լինի:

5) Որբանոցներում մտցնել աշխատանքի սկզբունքը (òðóäîâîå íà÷àëî) վարժելու որբերին ձեռարվեստի մեջ:

6) Կորսված երեխաների գտնելու գործը դյուրացնելու համար հիմնել մի տեղեկատու բյուրո:

7) Որբանոցների դաստիարակների վերաբերմամբ որոշվեց՝ ա) հրավիրել գործի հայոց լեզվին հմուտ անձնավորություններ. բ) հրավիրել պաշտոնի ձեռնահաս ուսուցիչներ. գ) կազմակերպել հատուկ համառոտ դասընթացներ՝ որբանոցների համար հատուկ դաստիարակներ պատրաստելու նպատակով. դ) նույն նպատակով թոշակավորներ պահել պետական կամ մասնավոր դասընթացներում:

8) Որբանոցների պահպանության հատկացված նպաստը անբավարար եղած է ցարդ բոլոր անհրաժեշտ պահանջների համար. լրացուցիչ միջոցների մասին հոգալ և դիմել ուր հարկն է՝ տրվելիք նպաստի քանակը ավելացնելու համար:

9) Առանձին որբանոցներ բանալ կաշվի և տարափոխիկ հիվանդության ենթակա որբերին կղզիացնելու համար, քանի որ նույն հիվանդությունները բժիշկների վկայությամբ մեծ չափով տարածված են որբերի մեջ:

10) Հայ որբերի շահագործման և ապազգայնացման առաջն առնելու համար հավաքել նրանց հայ և օտար անհատներից և հաստատություններից, ու պահպանել և դաստիարակել՝ հայկական որբանոցներում ազգային կրոնական ոգով:

11) Ցանկալի համարել բաց անել փախստականների երեխաների համար մանկապարտեզներ և դպրոցներ առավելություն տալով տաճկահայ ուսուցիչներին և տաճկահայ բարբառով կազմված դասագրքերին:

12) Ի նկատի առնելով, որ հայ գեղարվեստի հիշատակարանները ենթակա են ոչնչացման, անհապաղ հայթայթել մի որոշ գումար, կազմել մասնագետներից մի մնայուն մարմին, ժողովել և պահպանել ազգային թանկագին մնացորդները:

4
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ

1) Ճշգրիտ և փաստորեն ներկայացնելու համար հայ ժողովրդի կրած տանջանքների և նրանց գլխին կատարված ոճրագործությունների պարզ պատկերը՝ անմիջապես միջոցներ ձեռք առնել ամփոփելու այն բոլոր նյութերը, որոնք վերաբերում են տեղի ունեցած ոճրագործություններին պատասխանատուության ենթարկելու համար օսմանյան բոլոր քրեական հանցավորներին և պաշտոնյաներին՝ համաձայն Դաշնակից պետությունների 1915 թվի դեկլարացիայի. նյութերը հաղորդել ի տեղեկություն սենատոր Կրիվցովի նախագահությամբ գործող քննիչ հանձնաժողովին:

2) Հայ փախստականների շարժական և անշարժ կայքերը զանազան գիշատիչներից ազատելու համար ձեռք առնել բոլոր միջոցները փախստականներին անարգել երկիր վերադարձնելու. այդ հարցերը կանոնավորելու և զանազան ոտնձգություններին վերջ տալու համար, անհրաժեշտորեն կազմակերպել տեղերում իրավաբանական կոնսուլտացիաներ:

3) Դիմումներ անել կառավարության՝ անմիջապես միջոցներ ձեռք առնել, որպեսզի տեղացի ծանոթ հայերի միջոցով ազատվեն մահմեդականների մոտ գտնված բազմաթիվ հայերը:

4) Հայ փախստականներին բավարարություն տալու համար, նոր գրավված հայկական գավառներում՝ ցանկալի համարել երկրի ժամանակավոր վարչության մեջ հրավիրված լինեն տեղական բարքերին ծանոթ հայեր:

5) Թշնամի պետությունների հպատակների վերաբերյալ այն օրենքները, որոնք դյուրություն են տալիս օտարահպատակ սլավոն ցեղերին Ռուսաստանում ազատ ապրելու, աշխատել գործադրել տալ նաև հայ գաղթականների նկատմամբ:

6) Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Տաճկահայաստանը գրավվելուց հետո շնորհիվ պատերազմական դրության գոյություն ունեցող հողային բարդ հարաբերությունները ստացել են անկայուն ու շփոթ բովանդակություն, միջոցներ գտնել շարժական և անշարժ անպաշտպան մնացած կայքերը ստուգելու և իրենց հայ տերերին հանձնելու համար:

Իսկ մինչև այդ՝ նույն կայքերը ցուցակագրել և հանձնել ի պաշտպանություն Ամենայն Հայոց Հայրապետին՝ իբրև հայ ազգի ներկայացուցչին:

7) Աչքի առաջ ունենալով այն, որ Ռուսաստանում և Սիբիրում գտնվում են մեծ թվով հայ գերիներ տաճկական բանակից, որոնք միանգամայն զուրկ են հոգատարությունից՝ քանի որ իրենց մերձավորները մասամբ կոտորված են և մասամբ բռնի տեղահան արված կամ գաղթած են, այսպիսով հայ գերիների համար ստեղծվել է անելանելի դրություն՝ և ավելի վատթար, քան տաճիկ գերիներինը, որովհետև վերջիններիս մասին հոգատար են նրանց ընտանիքները և նույնիսկ թուրք կառավարությունը՝ իսպանիական դեսպանի միջոցով, կենտրոնական մարմինը միջոցներ ձեռք առնելու է նրանց գերությունից ազատելու:

5
ԿԱԶՄԱԿԵՐՊԶԱԿԱՆ

1) Ընտրել համագումարում 9 հոգուց բաղկացած հանձնաժողով՝ շուտափույթ հրավիրելու Հայկական Համագումարների Կենտրոնական Կոմիտեն: Այս ժողովի համար ընտրվեցին հետևյալ անձինք.

1. Գարեգին վարդապետ՝ էջմիածնից՝ Եղբ. օգնութ. հանձն. կողմից.
2. Ս.Հարությունյան՝ Թիֆլիսի Կ.Կոմիտեի և Կ.Հ.Բ.Ընկ. կողմից.
3. Հ.Առաքելյան՝ Նպաստամատույցի և Հայաստ.Վերաշին. հանձնաժողովից.
4. Ա.Սահակյան՝ Հայոց գյուղատնտեսական ընկերությունից.
5. Փ.Թերլեմեզյան՝ Թիֆլիսի հայ փախստականների ընկերությունից.
6. Ս.Մամիկոնյան՝ Մոսկվայի Հայկական Կոմիտեից.
7. Հ.Տէր-Միքայելյան՝ Բաքվի Հայկ. գաղթական. հանձնաժողովից.
8. Ա.Ասրիբեկյան՝ Պետրոգրադի Հայկական Կոմիտեից.
9. Գ.Չալխուշյան՝ Ռոստովի և Ն.Նախիջևանի հայ Կոմիտեներից:

2) Այս մասնաժողովը լիազորված է անմիջապես գործի անցնել և անհապաղ հրավիրել Հայկական Համագումարների կենտրոնական կոմիտեն. ամենևին կանգ չառնել հրաժարված և բացակա անդամների թվի վրա:

3) Լիազորվում է պատերազմից վնասվածներին օգնող Պետրոգրադի հայկական ընկերությունը, որ շարունակի ստանալ կառավարությունից հայ փախստականների համար տրվող նպաստները. իսկ այդ նպաստների բաշխումը կատարել Համագումարից ընտրված հիշյալ 9 հոգուց բաղկացած հանձնաժողովի մասնակցությամբ և համաձայնությամբ:

4) Համագումարների Կենտրոնական Կոմիտեն ինքնալրացման (կոպտացիայի) իրավունքով հրավիրում է արտասահմանյան ազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին ձայնի իրավունքով:

5) Համերաշխության կոչ անել, որ համայն հայությունը՝ թե Ռուսաստանի և թե Եվրոպայի ու Ամերիկայի՝ գիտակցելով որպեի լրջությունը, միանա ընդհանուր գործի և ազգային դատի բարվոք լուծման համար:

6) Հայկական Համագումարների Կենտրոնական Կոմիտեն ղեկավարվում է իր առանձին կանոնադրությամբ, որի ռուսերեն բնագիրը բերվում է ստորև:*

Համագումարի նախագահ՝ Ս.Մամիկոնյան:

ՀԱԱ Ֆ.50, ց. 1, գ. 140, թթ. 15-18 շրջ.: Բնագիր: Տպագիր:

N 3

ОТКРЫТИЕ АРМЯНСКОГО СЪЕЗДА

Открылся съезд армянских общественных деятелей. Съехалось около 150-ти представителей армянских колоний Петрограда, Москвы и Северного Кавказа. Представители Закавказья, занятые в краевом совещании по введению земства на Кавказе отсутствуют. Задачей съезда является организация дела помощи беженцам- армянам при возвращении их на родные пепелища и, наконец, объединение всех армянских организаций, как русских так и иностранных.

Председателем съезда был избран С.Г.Мамиконян. Его товарищами – Г.Х.Чалхушьян, профессор В.И.Вартанов и А.Б.Асрибеков.

С.Г.Мамиконян (Москва) во вступительном слове выразил глубокую благодарность от имени армянского народа России и всем державам согласия за то теплое участие, которое союзники принимают в судьбе многострадательного народа. Когда Турция напала на Россию, все армяне, как один, встали на сторону России и ее союзников. Сейчас мы стоим – говорит оратор, - перед роковым моментом в жизни армянского народа. Мы почти бессильны сделать что-нибудь для наших сородичей. 270 тысяч армян ушли из Турции в Россию, 600 тысяч армян вырезано, несколько сот тысяч угнано в пустыни Месопотамии. Как им помочь? Что сделать? Вот вопросы, которыми должен заняться съезд, и я верю, что все мучения армян приведут к их воскресению. Для армянского народа после победы России и ее союзников будет светлое будущее.

Г.Х.Чалхушьян (Нахичевань) останавливается на положении армян-пленных беженцев и на положении армян.

Член Гос.Думы М.И.Пападжанов останавливается на деятельности Татианинского комитета и особого совещания о беженцах, ассигновавшего около 8-ми миллионов на помощь армянским беженцам, и указывает, что в деле помощи беженцам лучше всего оказались армянские крестьяне.

Съезд постановляет послать верноподданническую телеграмму Государю Императору и приветственную телеграмму Великому Князю Николаю Николаевичу. Кроме того, посылаются телеграммы министру иностранных дел

* Կանոնադրությունը չի հայտնաբերվել:

С.Д.Сазонову с выражением благодарности за труды по введению реформы в Армении и за его сочувственное отношение к нуждам армянского народа и благодарственные телеграммы министрам иностранных дел Англии и Франции и заграничным организациям за оказание помощи армянам.

Съезд разделяется на ряд секций: по организационным вопросам, по вопросам школьного образования, финансово-экономическим, врачебно-санитарным, сельскохозяйственным, юридическим и по общим вопросам.

"Русские Ведомости"

Армянский Вестник N16, стр 11-12. [15 мая 1916г.*]

N 4

ЗАВЕРШЕНИЕ АРМЯНСКОГО СЪЕЗДА

22 мая 1916г.
Москва

Закончился съезд армянских организаций помощи пострадавшим от войны.

Это, в сущности говоря, был первый армянский съезд, имевший возможность открыто заявить о нуждах армянского народа, хоть и в ограниченной области. Он обнаружил много самой элементарной неопытности, крайне несовершенную подготовительную организацию, неумение президиума справиться с задачами, на него возложенными, словом все, что неизбежно сопровождает первые шаги всякого большого общественного дела. Но в то же время съезд показал нечто гораздо более важное: необычайно вдумчивое отношение делегатов армянских организаций к тем вопросам, которые стояли в программе съезда.

С самого начала пришлось считаться с одним крайне досадным фактом: делегаты некоторых крупных кавказских организаций, занимающихся вопросами помощи пострадавшим от войны армянам, не могли прибыть в Петроград по целому ряду причин; не было, напр., докладов такого общества, как тифлисское сельскохозяйственное, на плечи которого ложится огромный труд по восстановлению хозяйств армянских крестьян в оккупированных частях Турции; отсутствовали делегаты Центрального комитета в Тифлисе и общества Нпастаматуйц; не было представителей комитетов Братской Помощи. И все-таки, несмотря на все это, и в принципиальном, и в деловом отношениях, съезд можно считать удавшимся.

Первым и очень важным результатом было то, что русское общество узнало о великих страданиях армянского народа, о том, что перенес он в течение войны, как в Турции, так и в России, куда бежали остатки армянского населения, спасшиеся от насилий турецких содат и курдских шаек. Армянскому народу сочувствие русского общества необходимо, как воздух: дальнейшие судьбы Армении будут складываться при прямом воздействии русского общественного мнения и его органов, прежде всего – Государственной Думы. Дать русскому общественному мнению материал для

* Äàòà èçäàíèÿ æóðíàëà.

суждений по армянскому вопросу было общественным и политическим долгом армян, и эту задачу съезд выполнил.

Другим, крайне важным результатом съезда было то, что предприняты решительные шаги для объединения дела помощи армянам, пострадавшим от войны: решено создать центральный орган, в руках которого будет сосредоточиваться отныне все дело помощи беженцам и другим категориям пострадавшим от войны. До сих пор в деятельности отдельных организаций отсутствовала согласованность, крайне неблагоприятно отзывавшаяся на деле. Теперь согласованность будет, и нужно надеяться, устранятся многие из неизбежных дефектов; люди, стоящие во главе отдельных организаций слишком любят свой народ, чтобы не поступиться некоторой долей своей самостоятельности.

Наконец, третьим крупным результатом съезда являются те постановления практического характера, которые были приняты съездом по самым животрепещущим вопросам текущей бытовой армянской действительности: сельскохозяйственной, санитарной, школьной, правовой и проч. К обсуждению резолюций этой категории, мы еще будем возвращаться неоднократно.

Но, быть может, самым большим результатом съезда было то, что в короткий срок делегаты армянского народа справились с огромной программой, лежавшей перед ними. На съезде совсем или почти совсем не чувствовались столь яркие в армянском народе партийные разногласия: все делали общее дело и чувствовали, что работают над чем-то таким, где партийная рознь будет вредной помехой, где разногласия не вытекающие из существа того или другого вопроса, могут непоправимо скомпрометировать дорогое всем достижение.

Мы твердо верим, что и в дальнейшем эта солидарность будет продолжаться, что организации, не представленные на съезде, не внесут никакого диссонанса в дальнейшую работу. Эта вера – отнюдь не утопия; всякому, кто хотя бы поверхностно знаком с тем, что происходит сейчас на Кавказе, известно, насколько мягче, насколько менее непримеримы сделались теперь отношения между партиями. Совместная работа во многих отношениях налажена: нужно лишь решительнее вступить на этот путь. Этого требуют прежде всего интересы Армении.

И, если съезд подвинет вперед это дело – повторяем: мы ни на минуту в этом не сомневаемся – одного этого будет достаточно, чтобы обеспечить за ним прочное значение в истории армянской общественности.

Армянский Вестник N17, стр.1-2.[22 мая 1916г.*]

N 5

ОБСУЖДЕНИЕ ВОПРОСА О СОЗДАНИИ ЦЕНТРАЛЬНОГО ОРГАНА, ВЕДАЮЩЕГО ДЕЛОМ И ПОМОЩИ ПОСТРАДАВШЕМУ НАСЕЛЕНИЮ ТУРЕЦКОЙ АРМЕНИИ.

29 мая1916 г. Москва

* Äàòà èçäàíèÿ æóðíàëà.

В тифлисском еженедельнике “Амбавабер:” напечатана подписанная инициалами видного кавказского деятеля статья, посвященная только что закончившемуся армянскому съезду, под заглавием “Кто виноват” Рассматривается в ней вопрос о том, на чьей ответственности лежит неучастие в съезде нескольких крупних кавказских армянских организаций, занятых делом помощи пострадавшему от войны населению Турецкой Армении.

Мы не будем входить в существо затронутого вопроса. Он потерял теперь всякое практическое значение, и самая постановка его post factum преставляется нам глубоко академичной. Выискивать сейчас виновных-значит зажигать ненужную полемику, тратить время на разговоры о таких вещах, которые утратили всякий практический смысл, отнимать силы от той нужной и важной работы, которой предстроить сейчас так много. Мы уже указывали в прошлом номере нашего журнала, что созданием нового органа, призванного объединить и централизовать дело помощи беженцам, съезд положил начало коренной реорганизации беженского дела. Эта задача близка и дорога всем армянам одинаково: как тем, которые участвовали в съезде, так и тем, которые на нем не присутствовали. Ею и нужно заняться в ближайшую очередь. Поиски каких-то виновников будут только расхолаживать, не давать сосредоточиться, создавать острые углы, т.е. приводить к тому, что несомненно принесет вред большому национальному делу.

При установлении состава того комитета- ядра, вокруг которого должен сложиться будущий центральный орган, ведающий делом помощи пострадавшим от войны, съезд, прежде всего, заботился о том, чтобы в него вошли все наиболее энергичные действительные работники, руководители главнейших организаций, в руках которых фактически сосредоточивалась до сих пор помощь беженцам. Эти люди, следовательно, получат возможность в полной мере проявить свою энергию и накопленный за больше, чем годовую работу, практический опыт.

Главный вопрос, как известно, заключается в том, чтобы разрозненные действия различных организаций по помощи пострадавшему от войны населению, были объединены в одном центре и чтобы денежные средства, расходуемые на это, сосредоточивались в одной инстанции. До тех пор, пока это не будет осуществлено, все промахи, наблюдавшиеся до сих пор, будут неизбежно повторятся и, что еще важнее, распределение средств между нуждающимися будет по прежнему крайне неравномерно.

Вот главная задача. Над ней нужно работать, ибо время не терпит. В такой момент заниматься академическими вопросами и выискивать каких-то виновных-дело едва ли очень своевременное. Армянский народ не может позволить себе такую роскошь, когда народ страдает от невиданных еще бедствий, когда историческая территория Армении стонет еще под игом векового врага. Пусть разговорами занимаются другие: у армян слишком много живого дела.

Армянский вестник, N18, стр. 1-2. [29 мая 1916 г.*]

N 6

* Äàòà èçäàíèÿ æóðíàëà

ВСЕРОСИЙСКИЙ АРМЯНСКИЙ СЪЕЗД

Телеграмма Августейшего Наместника на Кавказе армянскому съезду

Августейший Наместник на Кавказе Его императорское Высочество Великий князь Николай Николаевич вчера прислал на имя председателя всероссийского съезда Мамиконяна следующую телеграмму:

"Сердечное приветствие съезда представителей армянских организаций глубоко меня тронуло. Особенно ценю я полное любви отношение к памяти моего родителя, всей душой послужившего святому делу освобождения христианских народностей от векового угнетения Турции.

Вместе со всем русским народом я непоколебимо верю, что благословляемая милостию Всевышнего доблестная русская армия достигнет тех высоких идеалов, во имя торжества которых было поднято грозное русское оружие, и что час окончательной победы над врагами России освободит навсегда армян и другие христанские народности, от турецкого владычества. Сердечно благодаря съезд за приветствие от души желаю ему полного успеха в разработке вопроса о лучших способах помощи беженцам-армянам

Генерал-адъютант Николай".

Телеграмма эта последовала в ответ на следующую телеграмму, посланную всероссийским армянским съездом:

"Ваше Императорское Высочество. В восточной войне 1877 года Августейшему Родителю Вашему было угодно обратить внимание на бедственное положение армян в Турции, и по Его указаниям была включена в Сан-Стефанский договор статья 16-я, предусматривающая улучшение условий существования нашего народа. В сознании народа-мученика хранится и живет благодарная память о благородном почине покойного Великого князя.

Живет и крепнет убеждение и из-тайников души народной исходящая вера, что Его Сыну суждено, по неисповедимым путям Провидения, одолеть векового врага христианства и освободить родную землю, омытую кровью многих поколений.

Съезд представителей армянских организаций обеих столиц Европейской России и Кавказа, собравшийся в столице Империи, разделяя вполне эту веру народную, всеподданнейше просить Ваше Императорское Высочество принять его глубочайшую благодарность за высокое внимание к нуждам наших обездоленных братьев, армян-беженцев в Турции".

Петроградская печать об армянском съезде.

Закончивший 13 мая свои занятия в Петрограде всероссийский армянский съезд привлек к себе особое внимание не только всего армянского народа, но и русских слоев, интересующихся армянским вопросом,

доказательством чего могут служить статьи, появившиеся в русской прессе, которые мы приводим ниже.

Всероссийский армянский съезд.

Армяне к делу обороны страны в текущей войне отнеслись чрезвычайно серьезно и вдумчивно, не останавливаясь ни перед какими жертвами. Помимо засвидетельствованной историей преданности армян русскому делу, на этот раз здесь играло большую роль еще другое обстоятельство. Слишком памятны были благородные усилия русской дипломатии в пользу облегчения тяжелой участи зарубежных армян.

С объявлением Германией войны России совпало и отозвание Турцией тех правительственных инспекторов, которые должны были внести законность в эту бессудную страну. На всем необъятном пространстве России армян без различия направления охватил могучий энтузиазм, и все горели одним желанием помочь государству в его борьбе с врагом. Когда затем началась турецкая кампания, воодушевление армян достигло высшего напряжения. Война, как смерч, пронеслась по Турецкой Армении, разматая и превращая в пустыни цветущую страну трудолюбивых пахарей. В стройной системе турки и курды стали вырезывать армян поголовно с благословения и одобрения высококультурных немцев. Но вместо ужаса, отчаяния, вместо паники, упадка сил, страха и растерянности, тысячами армяне-добровольцы отозвались под русские знамена, и новые силы зарождались в усталых и измученных сердцах армян.

Так, в общем порыве сочувствия государственному делу армяне не остановились ни перед какими жертвами. Преждевременно пока подводить итоги, но со временем история сделает это и, когда она беспристрастно, внимательно пересчитает все жертвы армян, общество убедится, что армяне принесли на алтарь отечества в этой войне все, что только могли.

Работающему ныне всероссийскому съезду армянских деятелей предстоит разрешение ряда серьезных задач, выдвинутых войной. По условиям времени, места, а также из тактических соображений русской армии на турецком фронте приходилось в некоторых случаях на отдельных участках фронта отступать, и местное население не успело оставлять вовремя свои насиженные места и следовать за русскими войсками. В тылу встречались часто курдские селения, причем местные курды при успехе русского оружия всегда казались покорными и мирными, при малейшей же неудаче стреляли в русские войска, грабили и убивали мирных жителей.

Армяне, которые встречали русские войска торжественно, из боязни мести должни были поспешно очищать свои очаги, причем одни не успевали это делать и являлись жертвами насилия курдов и турок, другие же за отсутствием перевозочных средств и провианта терпели невероятные лишения, и когда волны беженцев хлынули к Эчмиадзинскому монастырю, положение их оказалось ужасным. Отсутствие питьевой воды, частые перемены погоды, необходимость жить под открытым небом,- все это привело к появлению среди беженцев массовых заболеваний, и смертность среди беженцев оказалась ужасающей.

Само собой разумеется, что армянское общество широко откликнулось на призыв католикоса всех армян, но все же содержать на частную благотворительность сотни тысяч беженцев не представлялось возможным. Беженское движение вызвало к жизни ряд благотворительных учреждений в Эчмиадзине, Эривани, Тифлисе и других городах. Но бедствие оказалось настолько грандиозным, что частная благотворительность не могла помочь всем нуждающимся. Правительство, до того уже оказававшее помощь беженцам-полякам, литовцам, галичанам, широко откликнулось и на армянское бедствие, стало помогать и армянам, в сущности пострадавшим за свою преданность русскому делу.

Возникли крупные организации, как Центральные Комитеты в Тифлисе, "Братская помощь в Эчмиадзине и Нпастаматуйц:". Наряду с вопросом об обеспечении беженцев, продовольствием возникли такие вопросы, как приют сирот, оставшихся от родителей, погибших в Турции или умерших от болезней, в особенности острым стал вопрос о восстановлении разрушенных хозяйств армян-беженцев. Да и общее направление дела призрения устройства беженцев до последнего времени оставалось неопределенным. Явилась необходимость создать авторитетный орган, который мог бы разрешить все эти сложные вопросы. Таким органом является открывшийся всероссийский съезд армянских деятелей, в котором принимают участие, представители почти от всех существующих в России армянских организаций.

Гр. Чалхушьян

К съезду армян

Сегодня в Петрограде открывается всероссийский съезд армян.

Программа съезда охватывает широкий круг вопросов, относящихся к организации планомерной помоши беженцам-армянам. Намечены вопросы- -продовольственный, жилищный, сельско хозяйственный, врачебно-санитарный, финансовый, образовательный, духовный, юридический, о расселении беженцев, обратном водворении их, восстановлении хозяйств, призрении сирот, а также о согласовании работы всех существующих организаций.

Первоначально предполагалось созвать съезд в Эривани или Эчмиадзине. Это имело разумные основания: как самим беженцам, так и местным людям, непосредственно работающим в многочисленных организациях по оказанию помоши беженцам, и легче и скорее было бы съехаться в центре коренной Армении, чем оторваться от дела и ехать за тридевять земель- в Петроград.

Участие местных деятелей из русских и турецких армян, несомненно, придало бы постановлениям съезда более жизненное значение, прибавило бы им больше веса и авторитетности. Мнение людей, работающих в самой гуще беженчества, вооруженных практическим опытом и осведомленностью, могло бы только принести пользу этому государственной важности делу, на которое правительством затрачиваются миллионы.

Но съезд так и не мог состояться в Закавказье, и поневоле пришлось его перенести в Петроград с упущением времени, с потерей целой селско-хозяйственной кампании.

Этим в значительной мере и следует объяснить нынешний состав съезда, где отсутствует представительство от тех элементов, которые моглы бы особенно полно отразить действительные нужды беженцев и содействовать наиболее удовлетворительному разрешению задач, намеченных в программе организационного комитета.

При таких условиях, когда голос самих беженцев или деятелей, работающих в местных организациях коренной Армении, не может быть услышан, задачи съезда в силу нобходимости должны сузиться и — надо признать откровенно — свестись лишь к обсуждению и решению вопросов об организации участия русских армян в устройстве беженцев.

Не желая отнюдь умалять значения открывающегося съезда, мы не должны, однако, закрывать глаза на создавшееся положение. Едва ли было бы справедливо и целесообразно, если бы собравшиеся представителями армянских колоний русских и заграничных городов, как бы благожелательно они ни были настроены, считали себя призванными решать судьбу армян-беженцев без их ведома и участия.

Поэтому думается, что при наличных условиях съезду надлежит ограничить свои задачи указанными пределами. Нет надобности говорить, что и в этих пределах работы съезда будут иметь огромное значение.

Приветствуя съезд, мы надеемся, что армянские общественные деятели без различия политических воззрений объединятся в предстоящем им святом деле братской помощи, и труд их, одухотворенный любовью, увенчается созданием мощной организации, обеспечивающей несчастным беженцам возможность культурного существования.

Н.Ахунов

Армянский съезд

Сегодня в Петрограде открывается съезд представителей армянских организаций.

Армянский народ оспаривает у бельгийцев, сербов и поляков печальную славу жертвы, наиболее пострадавшей от настоящей войны, и едва ли не имеет права на первенство. Отличительная черта армян та, что война только завершила то дело, которое по отношению к ним было начато уже очень давно, по крайней мере с русско-турецкой войны 1877-78 гг. Еще тогда во время этой войны положение армян в Турции вызывало в Европе и России большое сочувствие, и Россия в числе целей войны с Турцией охотно указывала вслед за болгарами и на армян, как на народ, имеющий право на защиту и на освобождение от турецкого ига. В берлинский мирный трактат, которым закончилась война, была включена статья (61) обязывающая султана осуществить в Армении реформы, "вызываемые местными потребностями" и "обеспечить безопасность армян от курдов и черкесов: ", та же статья возлагала на европейские державы, подписавшие берлинский трактат, обязательство следить за ее исполнением. Но благожелательное по форме постановление трактата, не установившего никаких действительных мер для контроля за его осуществлением, осталось на бумаге; не успели еще высохнуть чернила, которыми дипломаты подписали от имени своих правительств обязательство следить за судьбой Армении, как и забыли о нем, и этот грех лежит в одинаковой мере на всех.

Турция же, чтобы избавиться от своего обязательства начала более или менее систематическое истребление подвластного ей народа. В пяти армянских вилайетах была образована особая конная полиция, называвшаяся гамидие, и состоявшая из курдов, т.е. как раз того полудикого горного народа, от которого Турция обязывалась обеспечить армян. Армяне были отданы на жертву этой полиции, которая грабила и при случае вырезывала армян. Наконец, в 1895г. в ответ на образование армянской революционной партии дашнакцутюн был учинен погром, известный под именем Сассунского (потому что в Сассуне он свирепствовал с особенной силою), затмивший своими ужасами все более ранние погромы, и напомнивший ужасы нашествий Атиллы и Чингисхана. Курды сжигали церкви с запершимися в них тысячами людей, целые деревни с их населением, насиловали женщин, выкалывали глаза мужчинам и т.д. Общее число жертв превышало сотню тысяч, а другие сотни тысяч разбежались в Россию, в Западную Европу и даже в другие местности Турции, где преследование не было так свирепо. Цель была достигнута, армянское население было значительно разрежено, и не более двух вилайетов сохранили его заметное преобладание.

Только теперь Европа вспомнила о принятом на себя обязательстве и сделала вежливое дипломатическое представление Турции. Из него, конечно, вышло очень мало. Турция обещала, и ничего не сделала. Положение армян в Турции, в общем, осталось прежним.

Даже революция 1908 года и переход власти к младотуркам, несмотря на помощь, оказанную им армянами, почти не изменила положение этих последних, несмотря на формальное признание их гражданского и политического равноправия, несмотря на открытие турецкого парламента созначительным числом армянских представителей в нем. Новая резня армян была произведена в Адане в 1909г., потом в Ване, в Эрзруме, в других местах.

Наконец, началась великая мировая война, и в эту войну вмешалось Турция. Она имела все основание опасаться армянского населения, как такого, на турецкий патриотизм которого было трудно рассчитывать, и по отношению к нему было применено испытанное средство, но в еще усиленных размерах.

До 1895г. число армян в Турецкой Армении определялось приблизительно в 600-700,000 (всего в Турции их было около 1.200,000, несколько больше в России). Перед войной оно не превышало уже только 400,000. В настоящее время- сколько их в настоящее время в Турецкой Армении, этого никто с достоверностью сказать не может. Вероятно не более сотни тысяч, а, может быть, и того менее. На Кавказе имеется армян, бежавших из Турции, не менее сотни тысяч.

Задача открывающегося сегодня съезда состоит в изыскании способов устройства армян-беженцев на месте временного их пребывания, возвращения (кого можно) в занятую нашими войсками часть турецкой Армении, восстановления их хозяйств и т.д. По всей вероятности, съезду придется столкнуться с целым рядом общих политических вопросов.

Между прочим, вряд ли ему удастся совершенно миновать острый вопрос грузинско-армянских отношений. Политика разжигания национальной розни на Кавказе принесла свои плоды,- и грузины смотрят на массовое переселение на Кавказ армян крайне несочувственно.

-Для вас,- говорят они русским,- армянские беженцы – только несчастные люди, принужденные покинуть родное пепелище, имеющие право

на горячее сочувствие и всякую поддержку. Для нас- то же самое, но, кроме того, для нас они- армяне, внедряюшиеся в грузинское население, уменьшающие его относительную численность во многих городах, в том числе таких, как Тифлис, и облегчающие возможность нашей насильственной денационализации.

Если бы армянам, грузинам и другим народностям на Кавказе, как и повсеместно, дана была возможность самим столковаться, то этот национальный вопрос был бы легко разрешен. Но политика противоположения государственности и общественности, политика искуственного обострение национальной розни, становится на пути.

Мы от души приветствуем настоящий съезд, в уверенности, что он со своей стороны будет не разжигать, а смягчать национальную рознь, и от души желаем, чтобы он не встретил в своей работе внешних препятствий.

В.Водовозов

„ День”

К армянскому съезду

Ожерелье съездов, украсивших нашу скучную зиму и нынешнюю полу-весну, полу-осень, закончится еше одним съездом- армянским, ожидавшимся в апреле, но, волею судеб, ставшим майским: он откроется 10 мая. Этот съезд вызывает глубокое раздумье русской мысли, стремящейся разгадать, что даст этот съезд нашей государственности и армянским чаяниям и как примирит, разовьет и укрепит эти два основных начала своего бытия...

Армянский съезд должен быть майским в смысле бодрости настроений, свежести и яркости мысли и жизненности решений. Упаси Господи, чтобы от него повеяло октябрем или декабрем! Несчастная, многострадальная Армения уже много пережила страшных, трагических месяцев и дней: еще больше потрясений и ударов испытала она от неисполненных неудачно и легкомисленно взбудораженных в ней надежд и уверенностей. Уже много лет небольшое армянское плоскогорье было средоточением всех злых стихий, обуревающих враждуюшее человечество. Тяжко давило Армению иго турецкой обветшалой государственности. К нему в последние годы прибавился еще жестокий жернов беспощадной германской культуры, стремившейся приспособить армянский народ для своих эксплуататорских целей.

Наша доблестная армия освободила Армению от турецкой армии. Казалось бы, наступили чудесные времена долгожданного отдыха, и солнце Армении засияет животворящими лучами над свободно дышащей страной. Но судьбе было угодно распорядиться так сурово и загадочно, что предстоящему съезду придется задуматся над мучительными вопросами: что же такое представляет теперь Армения? В чем, прежде всего, нуждаются обломки народа, разбросанные по всем концам земного шара? Что осталось в Армении? И как эти остатки слить в одно целое с длинными ветвями распустившегося во все стороны и страны народа?

Эти вопросы представляются существенно ценными и для русской государственности, вступившей теперь в новую эру своего существования, когда России придется вступать на путь решения сложнейших мировых задач, ведущих к уяснению величайшей проблемы о мире всего мира.

При решении этой проблемы многострадальному армянскому народу, частью безжалостно выброшенному из своего гнезда, должно принадлежать одно из первых мест. Он должен получить то, что дала ему его история и на что имеет право, согласно с развитием его гражданственности.

Русская власть и общественность всегда сочувственно относились к этим запросам армян и в настоящее время, несомненно, благожелательно отнесутся к тому, что выльется из души армянского съезда, как результат глубокого и верного понимания народных нужд и широких возможностей развития и укрепления Армении. В этом отношении съезд может оказать большую услугу России, если отметет от себя сор вредного политиканства, национальной узости и своекорыстности отбросить авантюристские стремления к такому выходу из бед и затруднений, когда получается много красивых резолюций при полном отсутствии положительных и жизненных результатов. Много мы уже видели таких съездов, оставивших по себе горечь тяжелых воспоминаний и разочарований. Армянский съезд не может и не имеет права быть таким, ибо стоит перед таким глубоким, потрясающим страданием, слышит такие раздирающие вопли растерзанных семей, опозоренных женщин и заброшенных, осиротевших детей, что быть бесплодным мечтателем и фабрикантом беспочвенных резолюций съезд не решится.

Несомненно, некоторая доля мечтательности или, вернее, прозорливости, касающейся будущего Армении, неизбежна и необходима. Съезду придется внимательно сосредоточиться над тем, чем может быть Армения не только в ближайшем будущем, но и через десятки лет. В этом отношении армянским “лучшим людям”, явившимся на съезд, придется проявить всю ту глубину мудрости, которая посещает избранные Богом личности в момент глубочайших народных потрясений. Такой именно момент переживает армянский народ, и такой именно высоты настроения, неподкупности и величавой чистоты мысли требует нынешняя эпоха от представителей армян, русских и турецких, собравшихся на съезд.

От того, как они посмотрят на будущее Армении, во многом зависит и решение насущных, ближайших вопросов. Здесь именно они могут оказать бесценную услугу России, помогая ей выполнить одну из самых сложных государственных задач мудрого и справедливого устройства без вины виноватого и незаслуженно обиженного народа.

Судя по тому, что уже высказала армянская печать по поводу съезда, можно предположить, что главной его задачей будет устроение беженцев в связи с вопросами: финансовым, правовым, земельным и пр. Бог в помощь!

Рядом с этими вопросами почему-то на первый и даже первейший план выдвигается чисто- партийный вопрос, чтобы половина членов съезда была из числа §представителей пребывающей у нас интеллигенции турецких армян:, т.е. в значительной части из дашнакцаканов. Почему? Кому и для чего нужно озарять заседания съезда багровыми вспышками партийной потерпимости? Ясно, что, не отрицая партийности, всюду неизбежной, съезд должен собрать людей, детально знающих беженские вопросы и подготовленных к их решению. Вне этого задания, все решения съезда будут неопределенными или даже вредными.

Армяне должны приложить все свои усилия, все творческие способности, чтобы подсказать России и найти самим самое верное решение армянского вопроса. Быть может, даже очень хорошо то, что постановления

съезда будут носить название майских: в мае вся природа живет самой яркой жизнью. Дай Бог, чтобы деятельность армянского съезда была в самом лучшем смысле майской!

„Петроградские Ведомости”.
Армянский вестник, N18, стр. 6-10. [29 мая 1916 г.*]

N 7

ВОССТАНОВЛЕНИЕ АРМЕНИИ

Очередные задачи

Прошло уже более месяца со дня закрытия первого Всероссийского Армянского съезда и как-будто о нем забыли.

Мы считаем своим долгом напомнить тем, кому это надлежало помнить, что съезд вынес очень важные и неотложные решения — осуществление коих съезд поручил прежде всего, избранному в последнем заседании 13 мая, временному исполнительному бюро.

В состав названного бюро вошли господа: Аракелян А.Б., Арутюнов С.С., Асрибеков А.Б., архимандрит Гарегин, Мамиконян С.И., Саакян А.А., Тер-Микаелян Г.Б., Терлемезян П. и Чалхушьян Г.Х.

Бюро это пока бездействует.

Как известно, лишь недавно председатель съезда С.Г.Мамиконян разослал всем членам временного исполнительного бюро телеграфные запросы о том, где и когда желали бы собраться, и с просьбой ответы направлять в Петроград на имя А.Б.Асрибекова.

И только.

Бюро пока не собиралось, а когда соберется не известно между тем дело не ждет. Если трудно собрать сразу всех членов исполнительного бюро, то должны были собраться, по крайней мере, все его члены, кои лично участвовали в съезде и приняли на себя определенное обязятельство.

Эти последние должны были взять на себя инициативу первых неотложных шагов и добиться собрания всех членов бюро.

Ведь всеми на съезде было признано главной и неотложной задачей — объединение дела помощи армянам, пострадавшим от войны.

Конечно, многое уже делается на местах армянскими общественными организациями, но разрозненно и часто случайно.

Для согласованности в деятельности отдельных организаций, работающих на местах, и требуется объединение в одном ценре. Мы вынуждены повторить еще раз, что до тех пор пока это не будет осуществлено, все промахи, наблюдавшиеся до сих пор, будут неизбежно повторяться.

Вот главная задача.

Над ней нужно работать, ибо время не терпит.

Если не будут использованы в достаточной мере и не будут проведены в жизнь главные постановления первого съезда, то делу объединения грозит серъезная опасность.

---

* Ä à ò à èçäà í èÿ æóð í àëà

В России объединение в национальном деле может быть осуществлено обычно через легальный съезд.

На основании же состоявшегося постановления Совета министров пока не допускаются по соображениям общегосударственного характера всякого рода съезды общественых организаций.

Насколько строго соблюдается это постановление, видно хотя бы по тому, что не допущены не только съезды правых организаций, но даже съезд археологический, который стоит вне политики партий, не говоря уже о съездах земского и городского союзов, осуществляющих поручаемые государственной властью многочисленные и разнообразные по обслуживанию нужд армии задачи.

Инициаторы армянского съезда как-будто чувствовали и это, когда настаивали на созыв съезда в мае, а не в июне.

Мы были правы, когда 1 мая спрашивали на страницах нашего журнала защитников отсрочки съезда – "где гарантия, что разрешат перенести съезд на начало июня, или в июне не помешают съезду какие-либо непредвиденные обстоятельства?".

При таких обстоятельствах ценность постановлений первого всероссийского армянского съезда еще более усугубляется.

Вот почему участники съезда должны особенно ревниво оберегать свои постановления и принимать все зависящие от них меры к скорейшему осуществлению максимума своих пожеланий через будущий и уже признанный законом Центральный Армянский Комитет, представителям которого оставлены вакантные места в "Особом Совещании" при министре внутренних дел.

Ив.Амиров

Армянский вестник N21, стр18-19. [19 июня 1916г*.]

N 8

АРМЯНСКИЕ ОБЩЕСТВЕННЫЕ ОРГАНИЗАЦИИ, ПРИНИМАВШИЕ УЧАСТИЕ НА ВСЕРОССИЙСКОМ АРМЯНСКОМ СЪЕЗДЕ, И ИХ ПРЕДСТАВИТЕЛИ

Петроград

От армянского бюро: ген.Баграмов Иван, Богданян Григорий, проф.Вартанов Вартан, Гукасян Акоп, Гянджунцян Гайк, Султан-Шах Русанна.

От петроградского отделения организационного комитета по созыву съезда: Берберян Николай, Егязарян Лазарь, проф.Каракаш, Манукян Седрак, Ростомян Ментор, Териан Ваган.

От общества по оказанию помощи беженцам и пострадавшим от войны: Гукасян Погос, г-жа Хахутян Нина.

От церковного совета: Богданян Погос, Будагян Саркис, Заврян Ованес.

От общества призрения о бедных г-жа Бабаян Татьяна.

От армянского художественного общества: Калантар Ашхар-бек, Кроян Давид.

* Ä à ò à èçäà í èÿ æóð í àëà.

От армянского клуба: Бабаян Эликум, Левонян Паруйр, Ордуханян Александр.

От кассы взаимопомощи учащихся армян в высших учебных заведениях г.Петрогада: Караханян Петр, Чолахян Иперик.

осква

От московского отделения организационного комитета по созыву съезда: Аджемов Христофор, Амиров Иван, Балиев Иван, Дживелегов Алексей, Мамиконян Степан, Тадевосян Иосиф, Хачатуров Сергей.

От армянского комитета: Поповьян Мкртич, Соромонян Мовсес, Тотомянц Ваган, Хрмаджян Ованес.

От дамского армянского комитета: г-жи Мирзаян София, Паповьян Маргарита.

От армянского церковного совета: Гондаксазян Мкртич.

От общества инженеров армян г.Москвы Тер-Ованнисян Акоп.

От кассы взаимопомощи учащихся армян в высших учебных заведениях г.Москвы Арутюнян Ерванд.

Нахичевань н/Д и Ростов

От нахичеванского и ростовского комитета помощи беженцам: Поркшеян Хачерес, Тертерян Амбарцум, Чалхушьян Григорий, архимандрит Черекчян Геворк, Хачатрян Акоп.

От нахичеванского армянского дамского комитета, от ростовского общества любителей театра, от ростовского армянского дамского комитета, от дамского благотворительного общества Акульян Арам.

От нахичеванского армянского благотворительного общества Зохрабян Александр.

От нахичеванского армянского дамского комитета Сагирян Брабион.

От нахичеванского церковного совета Шапошников Иван.

От благотворительного общества "Измирлян" Дживелегов Срапион.

От нахичеванского н/Д общества призрения о бедных Дерджанян Абгар.

От нахичеванского церковного попечительства о бедных и находящегося при нем комитета помощи беженцам Богданян Акоп.

Самара

От комитета по оказанию помощи беженцам Паповьян Егор.

Астрахань

От организаций и колонии Бухарцян Рафаел, Асланян Саркис, Соболян Карапет.

От комитета помощи беженцам Левханян Николай.

От общества призрения о бедных при астраханской армянской церкви Халатян Петрос.

Харьков

От школьного попечительства Юзбашян Рубен.

Царицын

От армянского дамского комитета Томбаян Саак.

Одесса

От армянского исполнительного комитета ревизионной комиссии и дамского комитета: свящ. Чубарян Ованнес.

От армянскогог дамского комитета: г-жа Овнанян Асанет.

От ревизионной комиссии: Овнанян Аракел.

Симферополь
От армянского комитета свящ. Налбандян Ерванд.
Карасубазар
От армянского комитета: свящ. Метникянц Аствацатур, Кара Мурза Сергей.
Евпатория
От комитета по оказанию помощи беженцам и добровольцам: свящ. Туманян Карапет.
Кишинев
От комитета по оказанию помощи пострадавшим от войны и беженцам: Максудян Месроп.
Мелитополь
От комитета по оказанию помощи армянам, пострадавшим от войны с Турцией: Черникян Геворг.
Ейск
От армянского комитета помощи пострадавшим от войны: Шилтян Авдей.
С.Хач
От армянского комитета: свящ. Джугурян Николай.
Феодосия
От армянского комитета по оказанию помощи пострадавшим от войны: Кевчеян Ерванд.
Бахмут
От армянского комитета Петросян Газарос.
Майкоп
От армянского комитета Мамиконян Степан Есаян.
Севастополь
От армянского комитета Тер-Гукасян Саркис.
Таганрог
От армянского комитета: свящ. Оксентянц Ованнес.
Адлер
От армянского комитета Черноморской губ.: Галентерян Григорий.
Владикавказ
От комитета по оказанию помощи беженцам и добровольцам свящ. Сарикян Акоп.
Ставрополь
От комитета по оказанию помощи беженцам Айвазян Геворг.
Кисловодск
От отделения кавказского благотворительного общества свящ. Тер-Ованнисян Саак.
Моздок
От отделения кавказского армянского благотворительного общества Шилтян Карапет.
Лабинская
От комитета помощи беженцам свящ. Эртевциан Нерсес.
Керчь
От армянской колонии Тер-Месропян Ованнес.
Новочеркасск
От комитета помощи беженцам Паповьян Ваган.

Сочи
От армянского комитета Акопян Арам.
Сухум
От армянского комитета Котбашян Ованнес.
Армавир
От отделения кавказского армянского благотворительного общества Мхитарян Саркис.
От дамского комитета, от попечительства и комитета по оказанию помощи добровольцам Ервелян Осеп.
Екатеринодар
От армянского комитета и дамского комитета по оказанию помощи добровольцам Ярвелян Мкртич.
Пятигорск
От отделения кавк. армянского благотворительного общества, дамского благотворительного общества, комитета по оказанию помощи пятигорским добровольцам и беженцам Муратян Минас.
Дербент
От отделения национального бюро, от дамского общества и отделения благотворительного общества свящ. Варданян Тигран.
Тифлис
От центрального комитета 6-ой армянской дружины Газарян Акоп.
От армянского этнографического общества: Меликян Амбарцум, Лалаян Ерванд.
От тифлисского союза турецких армян Ипекян Гаспар и Мелоян Гарегин.
Баку
От культурного союза: Аракелян Александр, Лазарян Геворг, д-р Аветисян Арам.
От отделения национального бюро: Гюльханданян Абраам, Левон Шант, Шатирян Мкртич.
От общества по оказанию помощи беженцам-сиротам г-жа Патваканян Наталья.
От комитета по оказанию помощи беженцам Аракелян Арам, Тероян Вараздат.
От приходского попечительства Будагян Тигран.
Эривань
От эриванского союза коммерсантов-турецких армян: Арутунян Аветис, Мирзаханян Мирзахан.
От ванского представительства собрания и комиссии по оказанию помощи Ханджян Гевонд.
От эриванской комиссии турецко-армянских беженцев Хорозян Гмаяк.
От ахтамарского представительного собрания Терлемезян Панос.
От учителей турецких армян Манукян Арам.
От союза ванских ремесленников Овсепян Арташес.
Нуха
От отделения армянского благотворительного общества Бунятян Ментор.

Акулиссы

От отделения кавказского армянского благотворительного общества Микаэльян Карэн.

Карс

От национального комитета Дзамоян.

Елисаветполь

От отделения благотворительного общества комитета по оказанию помощи беженцам и учительского союза Мелик Мнацаканян Левон.

Нахичевань (Эрив.губ.)

От комитета “Братской помощи” и общества призрения о сиротах Джанполадян Исаи.

Ахалцых

От отделения кавк. Армянского благотворительного общества Будугян Арменак.

Шуша

От общества помощи беженцам и от петроградского армянского бюро Асрибеков Александр.

От епархиального училища и благотворительного общества: Гукасян Абрам, Тер-Акопян Меликседек.

От дамского комитета помощи беженцам г-жа Асрибекова Елисавета.

Ахалкалаки

От отделения союза городов, армянского комитета и армянских учителей д-р Бабалян Арташес.

Сигнах

От комитета братской помощи Тараян Саркис.

От отделения кавк. армянского благотворительного общества Оганян Геворк.

Игдырь

От комитета “Братской помощи” и карсского отделения армянского благотворительного общества Агбалян Николай.

Из-за границы

Салмаст

От салмастского комитета “Братской помощи” Арутюнян Аракел.

Тавриз

От дамского комитета по оказанию помощи салмастским беженцам г-жа Варданян Араксия.

От областного комитета по оказанию помощи беженцам Тер-Акопян Александр.

Египет

От египетского общества национального вспомоществования Саруханян Аракел.

Америка

От американских армян Врацян Семен.

Таким образом на съезде присутствовало около 150 делегатов 97 армянских общественных организаций; по территориальному признаку на съезде были представлены около 60 городов и местечек.

Армянский вестник N21, стр. 19-21. [19 июня 1916г*.]

N 9

ИНФОРМАЦИЯ ПЕТРОГРАДСКОГО КОРЕСПОНДЕНТА В ГАЗЕТЕ ,,THE TIMES,, О ВСЕРОССИЙКОМ СЬЕЗДЕ АРМЯНСКИХ ОБЩЕСТВЕННЫХ ОРГАНИЗАЦИЙ

29 июня 1916 г.

Армянский вопрос

В Петрограде в течение четырех дней, начиная с 23 мая, заседал Армянский Сьезд, имевший целью обьединение и систематизацию мер, принимаемых для оказания помощи армянским беженцам и другим жертвам войны в Малой Азии. Участвовали в сьезде представители разнообразных благотворительных организаций, местные армянские комитеты, Петроградский и Московский церковные армянские комитеты. Сьезд выбрал исполнительный орган, названный Армянским Центральным Комитетом, состоящий из 62 членов, и постановил собираться четыре раза в год. Следующий сьезд состоится в октябре текущего года на Кавказе, в Эчмиадзине или Эривани, а главная квартира Центрального Комитета будет в Тифлисе. Главные две черты Армянского Сьезда были: первая-тот свет, который он пролил на ужасные страдания, причиненные этому несчастному народу обдуманной жестокостью турецко-германской политики; вторая-твердая уверенность армян в конечную победу союзников и решение России воскресить армянскую нацию. Русские знамена и теперь развеваются над значительной часть Турецкой Армении; но территория эта покинута своими прежними жителями, которые бежали на север, спасаясь от турецких жестокостей. Без жителей Армению нельзя воскресить из этого истекает необходимость оказания помощи тем тысячам армянских беженцев, которые обращают свои взоры к России в час своей горькой нужды.

Ответственность государства.

Русская пресса не поколебалась напомнить государству ее ответственность в эту минуту. Властям настойчиво советуют избежать ошибок, сделанных в Галиции, и при усилиях восстановить законность и порядок в занятых провинциях и где только возможно пользоваться существующими местными учреждениями, которые функционировали даже при турецком режиме. Надо позаботиться предупредить расовыя столкновения следует обеспечить полную веротерпимость и уважение к местным обычаям мусульманским или христианским; не следует также делать попыток отменить местный язык. Россияне напоминают, что турецкий режим, при всех своих недостатках, имел два качества,-был дешев и мало вмешивался в домашнюю жизнь подвластных ему народов. Вслед за возвращением на места армянских беженцев, второй мерой, имеющей большое культурное значение, будет

* Ä à ò à èçäà í èÿ æóð í àëà.

постройка жел. дороги и других путей сообщения, на которую беженцы могут дать нужные рабочие руки. Напоминают о проектированной северо-анатольской жел. дор. сети. Концессия на них, кажется, была дана французам, она могла-бы быть возобновлена, если Россия не хочет сама взять на себя эту постройку, как государственное предприятие. Из представленных сьезду докладов видно в каком печальном положении находятся крестьяне-беженцы из Турецкой Армении; этих несчастных свыше 200000 рассеяно по Закавказью, в Карсской области, Елизаветпольской и Эриванской губерниях. Восстановка разоренных их очагов потребует по рассчету около 30 миллионов рублей. Болезней среди беженцев много; замечается большое число помешавшихся, вследствие перенесенных ужасов и лишений; тревогу внушает также количество глазных заболеваний.

Горячее обрашение

Обьявив Сьезд открытым, председатель его С. Г. Мамиконян, председатель Московского Армянского Комитета, произнес горячую речь, вызвавшую большое воодушевление. ,,Все глаза /сказал он/ обращены к Ставке Верховного Главнокомандующего русскими Армиями, где творится великое дело освобождения наций от германского ига. Армянский народ издавна был верен России, жил в добром согласии с русским народом и русское дело также армянское дело,,.

Затем председатель предложил при общем одобрении послать телеграмму Государю с выражением верноподданических чувств.

,,Близок нашему сердцу Кавказ и его Августейший Наместник. Великий князь Николай Николаевич покоритель древней столицы Армении. С сыновными чувствами мы обращаемся Его Святейшеству Католикосу всех армян и просим его благословения на успешные труды Сьезда,,.

Затем оратор сделал исторический обзор происхождении армянского вопроса, развитие которого противоречит интересам Турецкой Империи. ,,Целый ряд армянских генералов и офицеров /сказал он/ покрыли себя славой в сражении с турками и все армянское население Турецкой Армении смотрело на русских, как на своих кровных братьев. Останавливаясь более подробно на страданиях армянского народа в эту войну, Мамиконян сказал-,,Мы не должны воевать. Мы должны спокойно ожидать благополучного исхода ужасной войны и глубоко верить, что державы согласия выйдут из нее полными победительницами. Этот благополучный исход несомненно гарантирует свободу армянских подданых Турции.,,

Симпатии к России

Горячую речь произнес Вице-Председатель Сьезда Г. К. Чалхушьян.

,,В течение трех дней /сказал он/ будут читать отчеты о национальном горе и национальных слезах. На нас обрушилось страшное бедствие, во-первых благодаря нашим симпатиям к державам согласия и затем благодаря прямому участью армян в настоящей войне. Французы любезно и живописно прозвали нас ,,наши маленькие союзники,,. Может быть общему мировому делу мы сейчас мало помогли, но пострадали мы как крупные союзники. Война захватила весь армянский народ и сначала для нас не было никаких надежд.

Русское Правительство не желало осложнений и всячески старалось избежать войны с Турцией. Эта точка зрения соответствовала и нашим желаниям, т. к мы опасались погромов и резни. Но наши симпатии с начала войны были всецело на стороне держав согласия, т. к. во главе их стояла Россия, а о верности ей армян свидетельствует история. Вспомните преследования и турецкие войны, когда армяне встречали русские войска со звоном колоколов и духовенством в ризах. И в этой войне армянский народ всецело на стороне русского народа.Незадолго до турецкой войны между турецкими властями и армянскими почетными гражданами происходили частные совещания, на которых турки щедрыми обещаниями старались привлечь армян на свою сторону. Армянский народ, с чувством отвращения, отверг эти предложения. Началась война и начался приток добровольцев из Армении, Египта, Румынии, Болгарии, которые так хорошо знают Малую Азию, что оказали большие услуги русскому Правительству. Началась беспримерная резня и, говоря словами испанцев, нам оставалось только кричать устами наших ран. В беззаконной стране Турции уже веками раздаются стоны армян, но их душило лицемерие европейской дипломатии, Мы явились сюда в Петроград, чтобы нас услыхало русское Правительство, благородное русское общество и всегда неподкупная русская пресса,,.

Справедливость, право и свобода

Это не крик отчаяния. Конечно, это будет крик глубокой скорби когда мы затронем вопрос беженцев, судьба которых до сих пор не определилась; когда мы будем говорит о нерешенном положении десятков тысяч сирот; когда мы будем говорить о необходимости восстановить разоренное крестьянское хозяйство, на что потребуется сотни миллионов рублей. Армянство Турецкой Армении представляет собой глубокое море крови и слез; оно выбросило на берег трупы измученных армян. Но мы верим, что эта кровь и эти слезы будут присоединены к общему делу человеческих страдании и будут печальным и постыдным наследием истории нации и веков. Мы верим, что со дна подымутся новые ключи и, да воды заполнят пространство, с помощью великодушной России и держав Согласия, они выбросят на берег три жемчужины. Имя первой пусть будет справедливость. Когда люди говорят о справедливости с турецкими армянами они не смотрят им прямо в глаза, т. к. им стыдно за человеческое достоинство. Имя второй должно быт Право, которое должно заменить слепой и глухой по отношению к армянам шариат. Последняя жемчужина самая большая, которая должна покоится на двух первых,-это Свобода. Эту свободу наши братья заслужили и они получат ее с помощью держав Согласия, дело которых мы считаем священным, справедливым и нашим делом. Преклонимся перед памятью героев всех держав Согласия, которые пали в сражениях за это великое дело.

Другие речи

Эти речи и другие речи в том-же духе заслужили громкие аплодисменты. Армянский член Думы Пападжанов в конце обращения, в котором он выразил благодарность армян Татиановскому Комитету за помощь, оказанную беженцам, заметил: -,,Мы переживаем такое тяжелое испытание, какого не

переживала ни одна другая нация, но мы черпаем силу и мужество из того факта, что многие элементы нам сочувствуют не только среди русских, но и среди Союзников. Армянские беженцы получили большую денежную помощь и из Англии и из Америки. Политическая коньюктура в настоящую минуту не ясна и наш лозунг-ожидать конца войны, в которой мы будем продолжать принимать самое деятельное участие,,.

В заключительном заседании Председатель сказал:-,,Армянский народ точно дерево, над которым прошла буря. Оно согнулось, но не сломалось. Как опытный садовник, мы должны подойти и перевязать его раны. Дерево поправится, зацветет и даст плоды. Но мы будем похожи на этого садовника только тогда, если будем верить в себя, в свой народ, в его будущность. Если-же нами овладеет, уныние и если мы потеряем веру в свой народ, мы будем похожи на садовника, который, по глупости, тщательно собирает увядщие желтые листья и прикрепляет их к дереву в надежде, что дерево зацветет. Скорбь наша беспредельно глубока. Она часть мировой скорби и мы носим в душе часть этой скорби. Поэтому, как в начале Сьезда, так и теперь, нами владеет одно чувство. Чувство это имеет одно выражение. Да здравствует Россия,,!. Громовой взрыв рукоплесканий раздался после этих слов.

В числе принятых резолюций была одна о средствах сохранения армянских памятников и учреждения специальной организации из экспертов с этой целью. Юридическая секция представила доклад и резолюцию, уполномачивающую вновь назначенный Центральный Комитет принимать меры к расследованию жестокостей, совершенных турками против армян, с целью потребовать вознаграждения от виновных после войны, соответственно декларации держав Согласия, сделанной в 1915 г. Эти материалы должны быть переданы в чрезвычайную комиссию сенатора Кривцова, тем было предложено, чтобы Центральный Комитет, через временную русскую администрацию Турецкой Армении, немедленно предпринял шаги для освобождения армян, содержащих в рабстве отдельными турецкими семействами. Было обьяснено, что в начале войны турки, под предлогом спасения армян от резни, предлагали им убежище; однако в настоящее время эти армяне de facto находятся в положении домашних рабов, вынужденных исполнять всякого рода низкую работу.

Банкет армянской колонии

Сьезд закончился банкетом, на котором присутствовали члены Сьезда и представители армянской колонии. Среди них был член Турецкого Парламента, представитель армянского населения Малой Азии, Вагуан Папазияан, который в настоящее время находится в России. Председательствовал М. С. Аджемов, член Государственной Думы; он в своей речи упомянул о тяжелых жертвах арямн в этой мировой войне и высказал убеждение, что эти были не напрасны и что армянский народ дождется своих прав и свободы. ,,В настоящую минуту,, сказал Аджемов, ,,немцы действительно одержали временные успехи, но окончательная победа будет принадлежат союзным государствам России, от которых армянский народ получит свободу,,.

Шант, автор известной армянской книги ,,Старые Боги,, сказал: -,,В течение ста лет турки и курды угнетали армян и терзали Армению. Но что

случилось. Подобно стали, армяне закалились в борьбе, укрепили свою волю, стали еще сильнее, жили, живут и будут жить,,.

Ипекиан, представитель Турецкой Армении указал на огромные военные услуги армянских женщин, которые бескорыстно и изо всех сил работали, чтобы оказать помощь своим близким. Оратор надеется, что женщины будут продолжать великое дело, помощи страдающим беженцам. Ипекиан также приветствовал армянское студенчество, которое неустанно помогает своим бедствующим братьям.

Сараньян сказал: -,,В этой войне мы принесли много жертв и имеем право на свободу. Но когда мы говорим о свободе, мы не должны забывать свободу других национальностей, особенно свободу той нации, под властью которой мы живем. Судьбе угодно было связать нашу жизнь с жизнью России, с жизнью русского народа, а он теперь переживает тяжелые времена, угрожают свободе русского народа. Наша свобода будет достигнута только тогда, когда русское государство будет в безопасном положении. Приветствую Россию и одновременно с нею свободу армян,,.!

Неосведомленность о положении армян

Мамиконян предложил помянуть павших на поле сражения. ,,Русская публика,, сказал он ,,мало осведомлена об армянских делах, армянских чувствах и стремлениях русская пресса должна заполнить этот пробел. В Англии организованы общественные учреждения для изучения армянского народа и его культуры. В английских церквах проводятся проповеди о страданиях армян, а в стране, где мы живем, русский народ ничего о нас не знает,,.

Армянин генерал Баграмов указал, что ,,победа несомненно будет на стороне России и Союзников. Немцы поставили себе задачу обойти с флангов русские войска, но русская армия осталась невредимой. Честь генералу Алексееву мудрому генералу, который сумел сохранить русскую армию. В М. Азии наши войска постепенно соединяются с британскими войсками в Мессопотамии. Новая жизнь Армении связана с победой Союзников. Будем молиться и желать этой победы,,.!

Победа для Союзников.

Чалхушьян сказал: ,,С особым удовольствием мы слышали речь русско-армянского генерала Баграмова, который указал, что все победы германцев призрачны и в действительности составляют поражение, т. к. не достигли желательных результатов ни на одном театре войны. Баграмов указал, что русская победа будет армянской победой. Мы разделяем этот взгляд и повторяем: Да здравствует сильная Россия, которая обнажила свой меч в защиту права и справедливости! Да здравствует вечно прекрасная могущественная Франция, о могуществе которой беспомощно разбиваются тевтонские волны под Верденом.! Да здраствует Англия, владычица морей, крикнувшая Германия ,,Руки прочь,,! Да здравствует Италия, которая всегда поддерживала интересы маленьких, слабых народов.! Да здравствуют Бельгия, Сербия и Черногория, теперь поверженные в прах, но которые скоро восстанут и будут процветать больше прежнего.! Мы, армяне,

которые сделали и делаем для этой войны все, что можем, которые столько страдали, столько принесли нужных и ненужных жертв, благодаря жестокости наших врагов, мы не можем не выразить своего сочувствия нашим товарищам по несчастью в Польше, Литве и других местах,,.

Говорили еще некоторые выдающиеся армяне, читались стихи армянских поэтов и были спеты русский и армянский национальные гимны.

Телеграмма г. Сазанову

Всероссийкий Армянский Сьезд отправил следующую телеграмму министру иностранных дел г. Сазонову:

,,Сьезд представителей армянских организаций для оказания помощи беженцам, собравшись в Петрограде при участии таких же организаций, действующих в союзных странах, выражает Вашему Превосходительству свою глубочайшую признательность, за неизменную симпатию, с которой Вы всегда изволили относиться к армянскому народу, волею судеб вовлеченному в великий исторический мальштрем. Сьезд верит, что и последствии справедливые интересы армянского народа в Турции, встретят с Вашей стороны то-же благосклонное участие, которое он заслуживает за свои незначительные услуги христианской культуре и свои великие страданяи. Сьезд позволяет себе почтительно просить Ваше Превосходительство передать его горячие приветствия и главам правительств Франции, Великобритании и Соединенных-Штатов, за великодушную отзывчивость к несчастьям армян. Симпатия великой России и культурного Запада придает армянам силу переносить все испытания, и смотреть будущему в лицо со светлой надеждой,,.

ГА, ф. 102, ДО, оп. 1916 г., д. 168, лл. 66-72: Типографический экз.

N 10

ДОКЛАД НАЧАЛЬНИКА ОТДЕЛЕНИЯ ПО ОХРАНЕ ОБЩЕСТВЕННОЙ БЕЗОПАСНОСТИ И ПОРЯДКА В ПЕТРОГРАДЕ О ХОДЕ СЬЕЗДА ПРЕДСТАВИТЕЛЕЙ АРМЯНСКИХ ОБЩЕСТВЕННЫХ ОРГАНИЗАЦИЙ

29 июня 1916 г.

По существу работ, состоявщихся в Петрограде, сьезда представителей армянских организаций по оказанию помощи беженцам, через секретную агентуру вверенного мне Отделения, добыт нижеследующий осведомительный материал:

Для подготовки программы деятельности означенного сьезда был учрежден особый ,,организационный комитет,, в состав которого вошли 7 представителей Петроградского армянского комитета и столько-же представителей Московского комитета. Председателем ,,организационного комитета,, являлся председатель Петроградского армянского кружка отставной действительный статский советник Григорий Фаддеев Тигранов, 56 лет, первым товарищем председателя-присяжный поверенный округа Московской Судебной

Палаты Степан Григорьев Мамиконян, 53 лет, вторым товарищем председателя-Петроградский присяжный поверенный Александр Богданов Асрибеков, 35 лет, членами Комитета: кандидат естественных наук Абрам Осипов Гукасов, 48 лет, приват-доцент Петроградского Университета Николай Григорьев Адонц, 43 лет, нахичеванский мещанин Керон Серонов Аджемов, 54 лет, потомственный почетный гражданин Ованес Аствацатуров /Иван Федоров/ Балиян-Балиев, 46 лет, оканчивший Московский Университет Алексей Карапетов Дживелегов, 41 лет, житель Нахичеванского уезда, Эриванской губернии, Иосиф Иванов Тадевосянц, 42 лет, и неустановленные: Н. М. Берберов, Н. Н. Ростомян, А. Саруханян, И. Т. Амиров и Н. Р. Каронян.

Организационным комитетом по созыву армянского сьезда в первых числах апреля месяца сего года был разослан во все армянские общественные организации циркуляр следующего содержания;

,,Петроградский и Московский армянские комитеты в соединенных заседаниях, происходивших в Петрограде осенью 1915 года, выдвинули в соответствии с высказанными в армянской прессе соображениями, вопрос о необходимости созыва в Петрограде сьезда представителей армянских организаций, оказывающих помощь беженцам-армянам. С этой целью названные комитеты просили члена Государственной Думы Михаила Ивановича Пападжанова испросить надлежащее разрешение. Вследствие возбужденных ходатайств перед господином министром внутренних дел и Великим князем наместником его Императорского Величества на Кавказе, ныне следовало разрешение на созыв сьезда.

Его Светейшество Католикос всех армян дал свое благословение на этот сьезд.

Избранный теми-же соединенными комитетами организационный комитет обращается ко всем армянским национальным организациям, оказывающим помощь беженцам, с просьбой прислать своих представителей на упомянутый сьезд, назначенный в Петрограде на 10-12 мая 1916 года.

Вместе с тем, препровождая при сем программу занятий сьезда и положение о сьезде, организационный комитет покорнейше просит прислать по возможности в указанный в положении о сьезде срок и применительно к программе сьезда, доклады и отчеты о своей деятельности.

К сему организационный комитет считает долгом прибавить:

1/что накануне сьезда, именно 9 мая, в 2 часа дня, назначено собрание г. г. членов сьезда для взаимного ознакомления.

2/что за входными билетами надлежит обращаться в Петроград /Спасская 15, кв. 2/

3/ что доклады, отчеты и всякого рода заявления и письма должны быть доставляемы в Московский армянский комитет /Москва, Армянский пер. Армянской церкви/ до мая, после-же 1 мая-в Петроград на имя организационного комитета /Спасская ул., д. 15, кв. 2/

2/что организации, не получившие по какой-либо причине настоящего извещения, приглашаются прислать своих представителей, снабженных ими надлежащими полномочиями на принятие участи в сьезде,,.

Для занятий сьезда организационным комитетом была выработана следующая программа:

1/Избрание председателя, товарища председателя и секретарей сьезда; доклад организационного комитета; избрание членов совета сьезда; распределение занятий по секциям.

2/Организация дела помощи беженцам с начала войны и настоящее его положение. Источники, из которых оказывается помощь: казна, комитет Его Императорского Высочества Великой княжны Татьяны Николаевны, всеросийские союзы городов и земств, армянские национальные организации и российские и иностранные общественные организации. Виды и размеры помощи: продовольственная, квартирная по передвижению, врачебная, духовная, образовательная, юридическая, одеянием, изысканием заработков, призрением сирот и инвалидов, ссудами, пособиями на восстановление хозяйств, обсеменение и пр.

3/Число беженцев по категориям: подданства, профессии, пола, возраста, религии, мест прежнего коренного жительства и нынешнего нахождения

4/Взаимоотношение между различными учреждениями и лицами, участвующими в деле помощи беженцам.

5/Расселение беженцев. Размеры убытков, понесенных ими от войны. Восстановление разоренных хозяйств. Земельные и имущественные вопросы в Армении.

6/Потребительные лавки, артели, дома трудолюбия и др. Справочное бюро по розыску беженцев. Техническая и хозяйственная помощь. Статистика. Обратное водворение беженцев на родину. Помощь армянских добровольческих дружин беженцам.

7/Отчеты национальных организаций и проекты смет.

8/Доклады, выдвигающие принципиальные вопросы.

На армянский сьезд ожидалось прибытие около 300 делегатов с мест.

Заседания сьезда открылись 10 мая сего года в зале гражданских инженеров/Серпуховская ул., д. 10/, а с 11 мая таковые происходили в клубе общественных деятелей /Симеоновская ул., д. 1, кв. 6/.

Несмотря на то, что точный срок созыва сьезда выяснился окончательно довольно поздно, к открытию сьезда прибыло значительное число делегатов, как из ценральной России, так и от организаций, работающих в отдаленных раионах Закавказья.

Всех участников сьезда было приблизительно 175 человек. Некоторые имели мандаты не только от российских организаций, но и от армян, проживающих за границей. Парижская армянская колония вручила мандат Тигранову, Египет-Аракеляну-редактору газеты ,,Мшак,,.

Сьезд был открыт председателем организационного комитета Тиграновым. От имени организационного комитета он обратился к петроградским и московским деятелям и к уполномоченным организациям на местах, отметив самоотверженную деятельность организаций, работающих в пределах Турецкой Армении, и выразив надежду, что сьезд выработает более совершенный план дальнейшей помощи беженцам.

Председателем сьезда был избран присяжный поверенный С. Г. Мамиконян, товарищами председателя-присяжный поверенный Степанос Григоров /Степан Григорьев/ Чалхушьян, 25 лет, профессор Вартанян и присяжный поверенный А. Б. Асрибеков.

Председатель сьезда Мамиконян обратился к собранию с следующими словами: ,,Первою мыслью, где-бы и когда-бы мы не собирались, должна быть мысль о победе. Наши взоры быть направлены в Ставку, на Верховного Главнокомандующего. Я предлагаю отправить телеграмму Государю Императору. Мы не можем также забыть и нашего родного Кавказа, а также того, что происходит на территорий бывшей Турции, занятой русскими войсками, благодаря его высочеству наместнику на Кавказе. Не могу умолчать также о той духовной поддержке, которую оказывает беженцам и всем работающим по оказанию им помощи его святейшество Католикос всех армян,,.

Далее, переходя к задачам и целям сьезда, он высказал следующее: ,,Нет надобности указывать, как велико бедствие, переживаемое армянским народом, и отдельные факты переживаемых населением ужасов. Эти факты не могут принести бодрости и энергии. Но нельзя не задаться вопросом-откуда пришло это бедствие. Неужели это только простое зверство турок. Не найдется-ли указаний, которые придадут этому явлению огромное историческое значение. Быть может, вы и согласитесь со мой, что это и есть армянский вопрос, вопрос постепенного освобождения армянского народа от гнета тюркизма,,.

Указав далее некоторые этапы истории армян, привлекавшихся к переселению в Персию и Турцию, оратор подчеркнул народный инстинкт-тяготение армян к России, постепенное освобождение от влияния азиатских народов и слияние с Россией.

После него выступил присяжный поверенный Чалхушьян, который сказал приблизительно следующее: ,,Много веков мы кричали от нанесенных нам незаживших ран, много лет наш голос заглушала власть и дипломатия, много лет мы кричали и кричим и эти крики не от наших ран, а для того, чтобы, наконец, нас услышало русское общество. Это крики не отчаяния и мы будем продолжать кричать, когда придется восстанавливать разоренные хозяйства здесь у нас, в пределах России. А там в Армении кошмар и ужас; одних вырезали, а другим боятся помогать. Армянское море выбрасывало множество трупов, трупы были без конца. Судьба армян будет позорной страницей истории европейских держав, а в особенности России,,. /Поднимается шум и после долгих усилий председателю удается восстановить порядок./

По предложению председателя собрание решает послать телеграмму с выражением благодарности министру иностранных дел Сазонову, а также всем иностранным организациям.

Сьезд перешел затем к деловым работам в секциях. Работы сьезда в конечном результате свелись к следующему:

1/Дальнейшая организация помощи беженцам

2/Обьединение всех организаций помощи с центральным комитетом, который будет находится в Петрограде или Москве

3/Финансово-экономическое положение беженцев

4/Вопросы о школах и приютах для детей беженцев

5/ Вопросы врачебно-санитарной помощи

6/сельскохозяйственные вопросы

7/юридическая помощь беженцам.

В соединенном заседании секций экономической и сельско-хозяйственной были заслушаны доклады Сагомонянца и Тер-Джирбашянца.

Оба доклада касались вопроса о восстановлении экономической жизни занятой русскими части Армении, при чем доклад Сагомонянца касался исключительно сельскохозяйственного устройства, а второй-торгово-промышленной и др. экономических сторон. По этим вопросам секция пришла к следующему заключению: если принять в основу бюджет мелкого крестьянского хозяйства в Карсской области и Эриванской губернии по масштабу мирного времени, то на восстановление крестьянских хозяйств в разоренной Армении потребуется 150 руб. на душу, что по общему числу всех пострадавших составит до 30-ти миллионов рублей. Секция признала необходимым учредить особую сельскохозяйственную комиссию при ,,центральном комитете,, помощи беженцам-армянам. Далее секция признала нужным организовать кратковременные курсы чтений и практических демонстраций различных отраслей сельского хозяйства и ремесел для взрослого населения. Для значительного числа бесприютных детей высказано пожелание устройства сельскохозяйственных приютов колоний с обучением грамот и практическому сельскому хозяйству.

Школьно-образовательная секция

В этой секции был заслушан доклад Рашмаджанова. По данным этого доклада, среди беженцев армян, находящихся в России, зарегистрированно до 100.000 детей и из них 39% в возрасте от 1 до 17-ти лет. Из 55.000 детей школьного возраста обучаются только 8.000 в школах, организуемых комитетом помощи беженцам.

Другой докладчик Тадевосянц указал, что из 100.000 детей беженцев 20.000 или сироты, или потерявшие своих родителей; из них 7.000 призреваются в приютах, учрежденных организациями. По данному докладу прения носили бурный характер и секция, благодаря разделению голосов ничтожным большинством приняла следующую резолюцию: ,,Необходимо сконцентрировать призрение сирот в руках одного центрального органа, организовать повсеместно и особенно на террритории Армении летучие отряды для собирания сирот, рассеянных повсеместно вследствие разразившейся над страной катастрофы; приюты для детей должны быть организованы в Закавказье, преимущественно, в сельских местностях, густо заселенных армянами; по окончании войны все призреваемые в приютах дети должны быть немедленно переправлены группами на родину; наряду с приютами должны быть организованы мелкие очаги неказарменного типа с режимом семейного характера, по возможности,,.

Далее секция признала также необходимым, во избежание эксплуатации сирот частными лицами, установить, что дети не должны быть отдаваемы для призрения в частные руки, а содержаться исключительно в учрежденях, основанных организациями.

Врачебно-санитарная секция

Во врачебно-санитарной секции заслушан доклад представителя Кавказского комитета ,,Союза Городов,, врача, из мещан г. Шуши Арташеса Адамова Шахназаряна-Бабальянца, 28 лет, посвященный врачебно-санитарной деятельности ,,Союза Городов,, на Кавказе.

В виду колосальной работы ,,Союза Городов,, по оказанию врачебно-санитарной помощи беженцам, секция признала, что эта работа вполне удовлетворяет врачебно-санитарные нужды беженцев, и постановила предложить армянским организациям согласовать свою деятельность с деятельностью организаций Союза Городов на Кавказе, избрав для этого особую врачебно-санитарную комиссию.

Юридическая секция

Сложные вопросы юридического характера, сопряженные с беженством привлекли в юридическую секцию много участников сьезда. Наиболее путанный вопрос о восстановлении имущественного владения беженцев был затронут в докладе Чалхушьяна.

Он отметил, что в Турецкой Армении с 1905 года применяется закон о насильственной экспроприации правительством армянских земель. И применение этого закона, армяне-землевладельцы под различными предлогами часто изгонялись и земли их передавались в собственность туркам. По его-же словам, нередко армяне просто вырезывались с той-же целью. Он полагает, что на эти земли следует обратить особое внимание и возвратить их армянам, ,,хотя-бы путем восстания,,.

По этому вопросу выступал Аджемов, который коснулся вопроса об организации юридической помощи беженцам. Необходимость этой помощи говорит он-вызывается тем исключительным положением, в каком оказались беженцы из Армении в Закавказье и в самой Армении при сношениях с представителями русской власти. Многие беженцы-армяне, из числа не русско-подданных, оказались на русской территории, но не имея право проживать в России, попали в безвыходное положение. Положение это ухудшалось еще и тем обстоятельством, что они не владеют русским языком, вследствие чего, при сношениях с русской администрацией, часто возникали конфликты при назначении их на принудительные работы. Оратор находит необходимым для урегулирования всех вопросов, как имущественного, так и личного права, создать три юридических органа: центральный комитет для разрешения вопросов обшего характера, возникающих по беженству вообще, местные юридические комитеты в Закавказье и так же комитеты в Армении.

Секция по организационным вопросом

Здесь сосредоточились наиболее бурные прения, возникшие по вопросу об учреждении армянского центрального комитета помощи беженцам, расхождение произошло по вопросам о сфере компетенции и деятельности Комитета и об его местопребывании. Большинство склонялось к мысли о том, что комитет должен находиться в Петрограде, где он будет близок к центральным органам правительства и откуда наиболее удобно руководить деятельностью местных организаций путем инструкций и указаний, вытекающих из общего положения дел. Противники этого взгляда указывали, что на Кавказе, вблизи места катастрофы, представлялась-бы возможность также мобилизовать и интеллигентных работников и что финансирование организаций, прозводящееся через канцелярию наместника на Кавказе, не

вызовет тех осложнений, которые возникнут в случае нахождения комитета в Петрограде.

Общее собрание 11 мая, происходившее в клубе общественных деятелей, привлекло, помимо значительного числа участников сьезда, также и гостей из среды петроградской армянской колонии. Собрание велось на армянском языке. Председательствовал С. Г. Мамиконян. Заслушаны были доклады двух секций: сельскохозяйственной и врачебно-санитарной.

По докладу сельскохозяйственной секции, собрание, принимая во внимание невозможность предвидеть, когда окончится война и каковы будут ее последствия, а также, имея в виду, что большинство беженцев крестьяне,-постановило: признать минимальной нормой для восстановления крестьянского хозяйства 135 руб. на душу и, считая число беженцев-крестьян в 200.000 определить сумму, необходимую для восстановления крестьянских хозяйств, в 27.000.000 руб.; учредить при центральном органе армянских организаций особую сельскохозяйственную секцию: учредить образцовые хозяйства, опытные поля, организовать курсы, издать руководства по сельскому хозяйству для беженцев армян, подготовить кадр сельскохозяйственных инструкторов, организовать склады сельскохозяйственных орудий, запасов зерна и снабжение строительными материалами,живым инвентарем и т. д., а также открыть ряд сельскохозяйственных колоний и приютов для детей.

По докладу врачебно-санитарной секции, собрание приняло следующую резолюцию: принимая во внимание, что ,,Союз Городов,, уже 10 месяцев ведет дело врачебно-санитарной помощи беженцам-армянам и поставил это дело на твердых началах, что правительством дело оказания по беженцам поручено ,,Союзу городов,, и что на местах работают также и армяне,-предложить армянским организациям согласовать свою деятельность по врачебно-санитарной помощи с деятельностью ,,Союза городов,, избрав для этой цели особую комиссию, которой поручить одновременно заняться собранием и разработкой статистических данных о беженцах-армянах.

Врачебно-санитарная секция постановила, помимо сего, предложить общему собранию принять следующие постановления: так как среди беженцев сильно развиты глазные болезни, то желательно обратиться в попечительство о слепых имени Императрицы Марии с ходатайством об организации трех летучих отрядов для отправки в раионы Мушский, Ванский и Сасунский, в виду наблюдающихся среди беженцев усиленных заболеваний глазными и венерическими болезнями-открыть при существующих больницам для беженцев специальные отделения по означенным болезням и организовать врачебные отряды для обследования в этом отношении беженцев в виду множества случаев психических заболеваний среди беженцев, особенно в последнее время, обратиться к главноуполномоченному на Кавказе с просьбой об открытии для беженцев больницы для душевно-больных; в виду распространения среди беженцев открытых инфекционных заболеваний, обратиться ко всем врачам, работающим в беженских организациях с приглашением по возможности усиленнее производить прививки оспы, тифа и др. инфекций. Означенные пожелания были одобрены.

В юридической секции продолжалось обсуждение вопроса об организации юридической помощи беженцам. В результате двухдневных совещании секция постановила предложить общему собранию принять резолюцию об организации при центральном органе помощи беженцам

юридической комиссии, задачей и целью которой должна быть подготовка законодательного материала и интерпретация существующих законоположений, регулирующих положение беженцев-армян. В то-же время, в виду беззащитности армян и многочисленных нарушений личных и имущественных прав в местах скопления беженцев, высказано было пожелание организовать в местах скопления беженцев юридическую помощь в виде местных консультационных бюро, коим и поручить принять охранительные меры по отношению к имуществам беженцев.

В общих собраниях сьезда, происходивших 12 мая вечером и 13мая днем, обсуждались доклады секций юридической и соединенных сельскохозяйственной и финансово-экономической.

По докладу сельскохозяйственной секции собрание приняло следующую резолюцию:

,,В виду того, что установленная в 37,5 миллионов руб. сумма, необходимая для восстановления крестьянских хозяйств беженцев, относится только к беженцам, находящимся в России, центральному органу армянских организаций надлежит выяснить и установить размеры средств, необходимым для восстановления хозяйств беженцев, оставшихся в занятой ныне русскими части Армении; поручить центральному органу ходатайствовать о распространении на беженцев-армян законадательного предположения о возмещении убытков, последовавших по обстоятельствам войны, а также распространении на них правил положения об оказании ссудной помощи,,.

По докладу юридической секции, собрание постановило поручить центральному органу собрать сведения о злоупотреблениях и зверствах турецких властей по отношению к армянам, для привлечения к ответственности участвовавших в преступных деяниях турецких должностных лиц; учредить в занятой русскими части Армении юридические консультации для ограждения имущественных интересов турецких армян и организовать юридическую помощь на местах; безотлагательно принять меры, при содействии временной русской администрации в занятой части Армении и при содействии сведущих и компетентных лиц из числа местных турецких армян, к освобождению армян, порабощенных турками, оставшимися в занятой части Армении.

Заключительное заседание

13 мая, в 8 час. вечера, состоялось заключительное заседание сьезда, почти целиком посвященное центральному вопросу-об организации постоянного центрального органа всех армянских организации.

Секция, работавшая по этому вопросу, едва успела закончить свой доклад к открытию собрания. Конструкция этого органа, выработанная секцией, приблизительно такова: Президиум созывает обязательно 4 раз в год сьезды представителей армянских организаций по оказаннию помощи жертвам войны, число коих достигло сейчас цифры 60. Центральный орган находится на Кавказе, но имеет своих представителей в Петрограде. Для выработки устава центрального органа и исходатайтвования его утверждения, а также для созыва первого сьезда представителей организаций,-избирается комиссия в составе 8 лиц, каковая после утверждения устава, и является президиумом. Эта-же комиссия является таким образом временным центральным органом,

уполномочивается получать и распределять средства, поступающие для помощи беженцам.

В состав временного центрального органа предложены следующие кандидаты: А. Б. Асрибеков /Петроград/, С. Г. Мамиконян /Москва/, С. С. Арутюнов /Тифлис/, крестьянин села Севаках, Арцевописской волости Забухского уезда, Елисаветпольской губернии, Арам Мирзаджан Аракелян, 49 лет /Тифлис/, С. Саакян /Тифлис/, дворянин Фанос Павлов Терлемезян, 50 лет /представитель турецких армян/ и архимандрит Гарегин председатель общества братской помощи в Эчмиадзине.

Доклад организационной секции вызвал длительные и страстные прения и дебаты, главным образом, по вопросу о местонахождении центрального органа, при чем представители Петрограда и Москвы отстаивали в этом отношении г. Петроград. Большинство голосов оказалось, однако на стороне группы, отстаивавшей Кавказ.

Изложенным закончились работы сьезда. Перед закрытием сьезда председатель сьезда Мамиконян произнес маленькую речь, в которой между прочим, указал, что будущий сьезд явится уже не ,,сьездом,, а ,,маленьким армянским и в то-же время великим парламентом,,.

Подводя итоги первого армянского сьезда представителей организаций помощи армянам-беженцам, можно отметить нижеследующее:

Доклады в большинстве секций не отличались достаточной полнотой и продуманностью, что не помешало однако подьему настроений в среде участников сьезда, старавшихся использовать заседания такового для взаимоознакомления и возможного личного сближения.

С чисто практической точки зрения некоторые резолюции, благодаря их теоретичности, вряд-ли могут рассчитывать на свое осуществление, хотя многие из участников сьезда и выражали уверенность, что будущий исполнительный орган сумеет примирить эти противоречия, осуществив то, что является наиболее необходимым и важным. С их точки зрения существование центрального исполнительного органа несомненно является более удобным в районе Кавказа.

Дашнакцаканы склонны думать, что сьезд, оказавшийся с точки зрения тактической не на должной высоте, в моральном отношении принес большую пользу армянскому делу.

Гнчакисты пришли к заключению, что сьезд оказался буржуазным, не защищал не только классовых интересов, но даже не сделал ничего для того, чтобы мало-мальски облегчить участь беженцев. Они утверждают, что прибыли на сьезд с определенной задачей-облегчить участь несчастных жертв мировой войны, но благодаря патриотическому настроению части сьезда им не удалось ничего сделать.

Они-же , в своих речах о бесправном положении турецких армян, пытались понудить присутствовавших заняться обсуждением вопроса об автономии Армении, высказывая при этом надежду, что чаянием армянского народа является переустройство Турецкой и Российской Армении.

Хотя на сьезде и не было высказано определенных конкретных предложений и не был предложен на обсуждение какой-либо выработанный проэкт будущей автономной Армении, но, во всяком случае, многие ораторы в своих речах касались вопроса об автономии Армении.

Следующий сьезд предположительно решено было созвать в сентябре месяце текущего года на Кавказе, в Эчмиадзине или Эривани.

Помомо перечисленных выше лиц, в числе участников сьезда были зарегистрированы и прибывшие из Тифлиса, взятые в наблюдение вследствие телеграммы Начальника Тифлисского губернского жандармского управления от 7 мая сего года за N 74, видные деятели партии ,,Дашнакцутюн,,: член распорядительного комитета армянских дружин Симон Лазарев Грузинян, 35 лет, /упомянутый в циркулярах департамента полиции от 29 октября 1910 года и 1 декабря 1915 года за NN 126044/115 и 156649/350/, крестьянин селения Ченанабе, Нахичеванского уезда, Эриванской губернии, Степан Крикоров Зорянц-Зорян, 49 лет, /упомянутый в циркуляре департамента полиции от 29 октября 1910 года за N 126044/115/ и выясненные по связям их: Турецкий подданный Ардахес Карапетов Оссепян, 37 лет, житель г. Шуши, Елисаветпольской губернии, Сергей Арам Аратюнов Аванесов, 41 года, Тифлисский гражданин Никола Погоса Агбалян, 41 года, и турецкий подданный, доброволец армянской дружины Вагмар Коргян, 28 лет.

Об изложенном доношу Департаменту полиции.

Генерал-Майор /подпись/

ГА РФ, Ф. 102, До, о. 1916 г., д. 14, л. 119-125 об. Подлинник. Машинопись.

N 11

ПРЕДПРОВОДИТЕЛЬНОЕ ПИСЬМО 4-ГО ДЕЛОПРОИЗВОДСТВО В 6-ОЕ ДЕЛОПРОИЗВОДСТВО ДЕПАРТАМЕНТА ПОЛИЦИИ К ПРОЕКТУ ПОЛОЖЕНИЯ О СЬЕЗДЕ ПРЕДСТАВИТЕЛЕЙ АРМЯНСКИХ ОБЩЕСТВЕННЫХ ОРГАНИЗАЦИЙ

1 августа 1916г.

Срочно

Уполномоченные состоявшегося в мае сего года в Петрограде Всероссийского армянского сьезда, присяжный поверенный Самсон Степанов Арутюнов, дворянин Амбарцум Асцатуров Аракелян, архимандрит Гарегин Овсепян, кандидат прав Григорий Христофоров Чалхушьян, личный почетный гражданин Гайк Богданов Тер-Микаелян и профессор Вартан Иванов Вартанов, избравшие своим местожительством г.Тифлис, возбудили ходатайство об утверждении положения о сьездах представителей армянских общественных организации.

Препровождая при сем копию проекта положения и 7 справок центрального алфавита, относящихся к настоящему делу, 4-ое делопроизводство просит 6-ое делопроизводство сообщить с возвращением всех приложений, как сведения из указанных в справках, дел, кои не выдаются, так и заключение по существу приведенного ходатайства.

Заведывающий делопроизводством /подпись/

ГА РФ, ф.102, ДО, оп.1916 г, д.14, л.147об.: Подлинник. Машинопись.

ПОЛОЖЕНИЕ

О сьездах представителей Армянских общественных организаций оказывающих помощь жертвам войны.

Цель и Состав Сьездов

1. Целью Сьездов представителей Армянских общественных организации по оказанию помощи жертвам войны является разработка и обьединение мероприятий этих организаций по оказанию помощи лицам и учреждениям пострадавшим от военных действий.

2. В сьездах представителей Армянских общественных организаций принимают участие в лице своих уполномоченных следующие организации:

а/Все благотворительные и культурно-просветительные армянские общества и местные армянские комитеты, оказывающие помощь жертвам войны.

б/ Учрежденые с той же целью организации, состоящие из самих беженцев.

в/Петроградский и московский Совет армянских церквей.

Примечение. Все участвующие в Сьездах общества и комитеты в кругу своей деятельности руководствуются своими уставами.

3. Сьезды созываются по постановлению предыдущего Сьезда, а также, в случае надобности, Армянским центральным комитетом, каждый раз с разрешения подлежащих властей в сроки и на время, установленные Сьездом или комитетом.

Публичые заседания Сьездов подчиняются действию временных правил о собраниях, изложенных в 110 /1-110/22 ст. Уст. о предупр. И пресеч. преступлений /Св. Зак. Т. XIV по прод. 1912 г./.

Управление делами Сьезда

1. Управление делами Сьездов возлагается на избираемый Сьездом орган носящий название: ,,Армянский Центральный Комитет Сьездов, организаций, оказывающих помощь жертвам войны,, на состоящее при нем исполнительное бюро.

Кроме того, Армянский Центральный Комитет может также пополняться лицами, кооптированными тремя четвертями голосов присутствующих в заседании членов Комитета.

5. В состав Армянского Центрального Комитета входят представители:

1/Главного Комитета Братской Помощи в Эчмиадзине, состоящего в ведении Его Святейшества Католикоса всех армян в количестве 5 человек.

2/Армянского Благотворительного Общества на Кавказе и состоящего при нем Армянского Центрального Кавказского Комитета помощи пострадавшим от войны в количестве 5 человек.

3/Общество Нпастаматуйца и Восстановления Хозяйства в Армении, 2.

4/ Тифлисского Армянского сельско-хозяйственного общества-2

5/ Кавказского Армянского женского комитета в количестве одного человека.

6/ Организаций армянских Петрограда, оказывающих помощь жертвам войны-3.

7/ Организаций армянских Москвы, оказывающих помощь жертвам войны-3.

8/ Организаций г. г. Нахичевани и Ростова на Дону и окружающих армянских селений-2.

9/ Организаций Екатеринодара, Ставрополя и Армавира-2.

10/ Организаций Владикавказа-1

11/ Астраханского Армянского Комитета-1

12/ Одесского и Кишиневского армянских комитетов-1.

13/ Армянских организаций Симферополя, Ялты, Феодосий и Карасубазара-1

14/ Организаций Новороссийска, Сочи и Туапсе-1

15/ Бакинских армянских организаций в количестве шести человек.

16/ Армянских организаций г.Александрополя-2.

17/ Армянских организаций г. Карса-1.

18/ Армянских организаций г. Эривани-5.

19/ Армянских организаций г. Нахичевани Эриванской. губ. и. Шарурского уезда-2.

20/ Армянских организаций местечка Игдыр-1.

21/ Армянских организаций г. Шуши-1.

22/ Салмасского комитета-2.

23/Армянских организаций г. Елисаветполя-1.

24/ Армянских организаций Н. Баязета-2.

25/ Армянских организаций г. г. Ахалкалака и Ахалцыха-1.

26/ Армянских организаций турецко-подданных армян, живущих в пределах Кавказского края в количестве десяти человек.

27/ Союза Кавказского Армянского учительства-1.

28/ Этнографического Общества-1.

29/ Армянских организаций г, Батуми-1.

30/ Члены Государственной Думы и Государственного Совета армянского происхождения.

31/Армянских организаций Эчмиадзина и Вагаршапата-1.

6. Армянский Центральный Комитет избирает из своей среды председателя и двух товарищей председателя.

7. На обязанности Армянского Центрального Комитета лежит:

а/Созыв сьездов представителей армянских организаций по оказанию помощи жертвам войны.

б/выработка программы и вопросов, подлежащих рассмотрению Сьезда.

в/Предварительное рассмотрение докладов и отчетов.

г/разработка правил посылки представителей отдельных организаций на сьезды и представление своих соображений по сему поводу сьезду.

д/учреждение комиссий под председательством одного из членов Комитета по отдельным вопросам.

е/посылка уполномоченных Сьезда на места для организаций помощи жертвам войны и составление инструкций для этих уполномоченных.

Примечание. Об учреждений комиссии и о ее председателях Комитет сообщает подлежащим властям.

ж/попечение о духовных и культурных нуждах жертв войны.

з/вообще заведывание всеми делами и имуществом Сьездов,

Примечание. Проект программы /п.б/ представляется на утверждение подлежащих властей.

8.Армянский Центральный Комитет сьездов может, в пределах необходимых для преследуемых сьездами целей от своего имени приобретать, отчуждать, закладывать движимое и недвижимое имущество, заключать договоры, выдавать и принимать обязательства, искать и отвечать на Суде.

9..Армянский Центральный Комитет имеет печать с изображением своего наименования.

10. Ближайщее заведывание делами Армянского центрального комитета возлагается на испольнительное бюро, состоящее из семи лиц избираемых Армянским Центральным Комитетом из своей среды. К этим семи лицам избираются три кандиидата.

11.Для ближайшего сношения с центральными учреждениями, выдающими делами жертв войны. Армянский Центральный Комитет учреждает в Петрограде отдел испольнительного бюро.

12.Заседания Центрального Армянского Комитета происходят не менее двух раз в году. Постоянное местопребывание Комитет имеет в Эчмиадзине. Испольнительное бюро заседает в г. Тифлисе.

Примечание.о лицах, входящих в состав Центрального армянского комитета, испольнительного бюро и отдела последнего в Петрограде, а также о председателях отдельных комиссий доводится до сведения подлежащих властей.

13. Средства Армянского Центрального Комитета состоят из пожертвований частных лиц и учреждений, взносов армянских общественных организаций, денежных сумм и пособий, могущих быть предоставленными правительственными и общественными учреждениями на нужды войны.

Закрытие Сьездов

14. В случае ликвидации дел сьездов, оставшееся имущество получает назначение согласно постановления сьезда.

15. При обнаружении в действиях сьездов чего-либо противного государственному порядку и общественной безопасности и нравственности, Министерство внутренних дел может сделать распоряжение о закрытии сьездов.

16. На изменение или дополнение настоящего положения испрашивается каждый раз разрешение в установленном порядке, причем это изменение или дополнение должно быть принято большинством, двух третей присутствующих на Сьезде.

Верно: Помощник Делопроизводителя

ГА РФ, ф. 102, ДО, оп. 1916 г, д. 14, л. 148-149 об.: Заверенная копия. Машинопись.

N 12

СПРАВКА 6-ГО ДЕЛОПРОИЗВОДСТВА ДЕПАРТАМЕНТА ПОЛИЦИИ О ХОДЕ СЬЕЗДА АРМЯНСКИХ ОБЩЕСТВЕННЫХ ОРГАНИЗАЦИЙ

Срочно

10 августа 1916 года

Для подготовки программы деятельности сьезда представителей армянских организаций по оказанию помощи беженцам был учрежден особый ,,организационный комитет,, в состав которого вошли 7 представителей Петроградского армянского комитета и столько-же представителей Московского комитета. Организационным комитетом были разосланы во все армянские общественные организации циркуляр. что Петроградский и Московский армянские комитеты в соединенных заседаниях происходивших в Петрограде осенью 1915 г. выдвинули вопрос о необходимости созыва в Петрограде сьезда представителей армянских организаций, оказывающих помощь беженцам-армянам.

С этой целью член Государственной Думы Михаил Иванов Пападжанов испросил надлежащее разрешение. Заседания сьезда открылись 10 мая речью председателя сьезда Мамиконяна. 13 мая вечером состоялось заключительное заседание сьезда, посвященное центральному вопросу об организации постоянного центрального органа всех армянских организаций.

Подводя итоги первого армянского сьезда представителей организаций помощи армянам-беженцам можно отметить нижеследующее:

Доклады в большинстве секций не отличались достаточной полнотой и продуманностью, что не помешало подьему настроений в среде участников старавшихся использовать заседания для взаимоознакомления и возможного личного сближения.

,,Дашнакцаканы,, склонны думать, что сьезд оказавшийся с точки зрения тактической не на должной высоте, в моральном отношении принес большую пользу армянскому делу.

,,Гнчакисты,, пришли к заключению, что сьезда оказался буржуазным, не защищал не только клановых интересов, но даже не сделал ничего для того, чтобы мало-мальски облегчить участь беженцев.

Хотя на сьезде и не было высказано определенных конкретных предложений и не был предложен на обсуждение какой-либо выработанный проэкт будушей автономной Армении но, во всяком случае многие ораторы в своих речах касались вопроса об автономии Армении.

Отставной подполковник /Латвинов/

ГА РФ, ф. 102, ДО, описи 1916 г, д. 14, л. 141-150 об.: Подлинник: Машинопись:

N 1

Համախորհրդակցության օրակարգը

27 սեպտեմբերի 1917թ.
Թիֆլիս

1. Քաղաքական մոմենտը և դրա հետ կապված խնդիրները:
Զեկուցողներ՝ Ս.Վրացյան և Տ.Բեկզադյան
2. Նահանգների և գավառների փոփոխության (передел) և զեմստվոյի հարցը:
Զեկուցողներ՝ Ա.Շահխաթունյան, Ղազար Տեր-Ղազարյան, Ստ.Կամսարական, Գ.Խատիսյան և Լ.Սահակյան
3.Պարենավորման հարցը:
Զեկուցողներ՝ Ս.Հարությունյան և Տ.Բեկզադյան
4. Ազգամիջյան հարաբերությունների հարցը:
Զեկուցողներ՝ Հ.Օհանջանյան, Միք.Պապաջանյան և Ար.Երզնկյան
5. Դեպի Անդրկովկասյան հատուկ կոմիտեի վերաբերմուքի հարցը:
Զեկուցողներ՝ Ն.Աղբալյան, Հ.Առաքելյան:
6. Տեղական իշխանությունների կազմակերպության հարցը:
Զեկուցողներ՝ Հովս. Արղության և Ա.Երզնկյան
7. Ճակատի պահպանության և վտանգված վայրերի ապահովության հարցը:
Զեկուցողներ՝ Ռ.Տեր-Մինասյան, Արսեն Շահմազյան և Ս.Փիրումյան
8. Փախստականության հարցը:
Զեկուցողներ՝ Վ.Փափազյան, Ս.Հարությունյան և Հ.Առաքելյան
9. Դպրոցների ազգայնացման հարցը:
Զեկուցողներ՝ Ս.Տիգրանյան, Ա.Աբեղյան և Ս.Հովվեյան
10. Ազգային բյուրոյի հաշվետվությունը:
Զեկուցողներ՝ Ալ.Խատիսյան և Ն.Աղբալյան
11. Ընթացիկ հարցեր:

ՀԱԱ Ֆ. 222, ց.1, գ.17, թ.1: Տպագիր թերթիկ:

Համախորհրդակցության արձանագրությունները
N 2
Նիստ Ա

29 սեպտեմբերի 1917թ.

Արտիստական ընկերության ակումբի դահլիճ:

Ժողովը բաց է անում միջկուսակցական խորհրդի հերթական նախագահ բժ. Հ.Օհանջանյանը: Միջկուսակցական խորհրդի կողմից համառոտ ակնարկ ձգելով ռուսական մեծ հեղափոխության ծագման և նրանց առաջ կած մեծամեծ հեղաշրջումների վրա, առանձին շեշտով մատնանիշ է անում ներկա ազատական պայմանները, որոնց շնորհիվ հայ ժողովուրդը առաջին անգամ հնար է ունենում մեկ տեղ համախմբվելու և տիրող հոսանքների միջոցով որոշ խնդիրների նկատմամբ յուր կարծիքները հայտնելու: Թեև, ասում է բժ. Օհանջանյանը, հարկ եղած համագումարն

անհնարին եղավ գումարել որոշ դժվարությունների պատճառով, սակայն անհրաժեշտ կարիքները հարկադրեցին մի քանի անհետաձգելի խնդիրների լուծում տալու համար գեթ սույն համախորհրդակցությունը գումարելու, իսկ ավելի պատասխանատու հարցերը վերապահելու ապագա համագումարին, երբ հնար կլինի այդպիսին հրավիրելու: Ժողովի ընթացքում ընկ[եր] բժիշկը շեշտում է նաև հեղափոխական շրջանում ընկած հերոսների սխրագործությունները և հրավիրում է ժողովականներին հարգել նրանց հիշատակը, ոտքի կանգնելով:

Ժողովը միահամուռ կերպով հարգում է սույն առաջարկը: Այնուհետև ընկեր Օհանջանյանը ժողովականներին ծանոթացնում է նախընթաց երեկոյան նախապատրաստական ժողովի կատարած աշխատանքների հետ: Սույն ժողովում, տիրող կուսակցական ֆրակցիաների փոխադարձ համաձայնությամբ և զիջողությամբ, բացի օրակարգի խնդիրները դասավորելուց, նախագահության վերաբերմամբ հետևյալ որոշումն է եղել: Ընդունելով ժողովին մասնակցող պատգամավորների համեմատական թիվը, ընտրում են նախագահներ՝ յոթ հոգի, քարտուղարներ՝ 5, որոնցից ըստ վերոգրյալ համեմատական սիստեմի, դաշնակցականներեն տրվում է 3 նախագահ, սոց. հեղափոխ [ականներեն]՝ 1 հոգի, սոց. դեմ. և ս.դ. հնչակյաններեն՝ 1, Հ[այ] ժողովրդ. կուս[ակցութեեն]՝ 1 և 1 հոգի՝ Ս.Մամիկոնյանին, իբրև անկուսակցականի: Քարտուղարության մեջ. Դաշնակցություն՝ 2 հ[ոգի], ս. հեղ[ափոխական]՝ 1, ս.դ. հնչ[ակյան] բլոկեն՝ 1, Հայ ժող. կուս.՝ 1: Ժողովը առանց առարկելու, տիրող կուսակցական ֆրակցիաների ներկայացուցիչների բերանով տալիս է յուր համաձայնությունը, որից հետևո հերթով ներկայացնում է ֆրակցիաներն իրենց թեկնածուներին: Դաշնակցությունը նախագահներ առաջարկում է Ավ.Ահարոնյանին, Ալ.Խատիսյանին և Հովհ.Քաջազնունուն, սոց. հեղափ[ոխական] ֆրակցիան՝ բժ. Լ.Աթաբեկյանին: Սոց. դեմ. և Հնչ. կողմից առաջարկվում է Ղազար Տեր.Ղազարյանը, Հայ ժող. կ[ուսակցության] կողմից՝ բժ. Հար. Այվազյանը: Քարտուղարներ. դաշնակցության կողմից՝ Հակ. Տեր-Հակոբյան և Զոհրաբյան, ս.հեղ.՝ Հակ.Ստեփանյան, ս. դ. և Հնչակ.՝ Սիմ. Հովվեյան, Հայ ժող. կուս.՝ Ստ.Մալխասյան:

Թեկնածուների վերոհիշյալ ցուցակը, ոչ մի հատվածի կողմից առարկության չհանդիպելով, ընդունվում է միաձայն, միահամ[ուռ] ծափահարություններով:

Նոր ընտրված նախագահությունը, ըստ հրավերի ժողովը բաց անող բժ. Օհանջանյանի, բռնում է յուր տեղը: Ներհակում նախագահի դերը մյուս պաշտոնական ընկերների ցանկությամբ ստանձնում է Ստ.Մամիկոնյան:

Նախագահն ուրախություն է հայտնում, որ հայ ժողովուրդն այսքան ստվար թվով մարդիկ է ուղարկել առաջարկված խնդիրներին լուծում տալու: Եկել է մի րոպե, երբ հայ ժողովրդի երկու հատվածները կանգնած են իրենց բախտի վճռի առաջ: Մեծ է մեր դերը և պատասխանատվությունը: Այդպիսի մի ծանր վայրկյանում պարտավոր ենք պահպանել ինքնուրույնություն, հարթել այն խոչընդոտներն ու անհարթությունները, որ կան մեր առաջ, միացնել մեր ուժերը և որոնել միջոցներ, որոնք մեսր ժողովրդին հեղափոխության սույն բովով անցկացնեն և հասցնեն կուլտուրական նպաստական դրության: Մեծ է մեր պատասխանատվությունը, եթե միացյալ ուժերով չգործենք, ուստի առաջարկում եմ ձեզ, հնարավոր եղածին չափ, միախորհուրդ լինել և դեն ձգելու այն անհարթությունները, որոնք կան թե մեր հետ, առհասարակ մյուս ժողովուրդների մեջ: Այս հակիրճ բացատրությունից հետո անցնենք գործի: Պետք է ընտրել մի մասնաժողով, մանդատները ստուգելու:

Սամ. Հարությունյան - Եթե չեմ սխալվում, պատգամավորների թիվը 100-ից ավելի կլինի: Մեր պարապմունքները կտևեն 7 օր: Եթե մանդատներն ստուգելու համար քննություն նշանակվի, կտևի երեք օր: Ուստի մի այնպիսի եղանակ պիտի ընտրել մանդատներն ստուգող հանձնախումբ կազմելու համար, որ գործը շուտ և արագ ընթանա: Ես կարծում եմ, ընտրության եղանակը պետք է թողնել նույնն, ինչ որ նախագահություն ընտրելու ժամանակ աչքի առաջ ունեցանք: Եվ որովհետև

մանդատները շատ են, ուստի կառաջարկեմ նախագահությունից երկու անդամ ավելի՝ 24 հոգի:

Կարճիկյան - Նույն պատճառաբանությունն ունեմ նաև ես, բայց իմ կարծիքով, 24 հոգին շատ կլինի: Կառաջարկեմ ամեն մի ֆրակցիայից 2-2 հոգի, ընդամենը՝ 8 հոգի: Այս ձևով գործն առավել արագ կանցնի:

Բժ.Իսախանյան - Ինչ ձևով էլ որ մանդատները քննենք կամ մասնաժողով ընտրենք, տարաձայնություն եղած դեպքում խնդիրը պիտի գա ժողովի առաջ: Նրա համար էլ որքան քիչ լինեն այդ քննիչ մասնաժողովի անդամները, այնքան՝ լավ, թեկուզ ամեն մի հատվածից 1-1 հոգի:

Ս.Հարությունյան - Միանում եմ Կարճիկյանի առաջարկին:

Խոնթկարյանը ս. հեղափոխականների կողմից առաջարկում է մեկ ձայն մանդատային հանձնաժողովի մեջ:

Բժ.Իսախանյան - Մեր ֆրակցիայի կողմից ևս առաջարկում ենք մեկ հոգի:

Նախագահ - Ըստ հայտարարության, դաշնակցությունն ուզում է ունենալ վերոհիշյալ հանձնաժողովի մեջ երկու ձայն, Հայ ժող. կուսակցությունը՝ նույնպես 2, մյուս երկու ֆրակցիաները՝ էսեռները և միացյալ էսդեկները՝ 1-1 ձայն: Գուցե կքվեարկե՞նք:

Ձայներ - համաձա՛յն ենք:

Ս.Հարությունյան - Մեր ֆրակցիայի կողմից առաջարկում ենք Համբ. Առաքելյանին և Խ.Հարությունյանին: Էսեռները առաջարկում են Լիպարիտ Գյուլումյանին, միացյալ էսդեկները՝ Դարբինյանին, դաշնակցականները՝ բժ. Բաբայանին և Հակ.Քոչարյանին:

Նախագահ - Երեկվա նախապատրաստական ժողովի մեջ արծարծվեց նիստերի դռնփակ, թե դռնբաց լինելու հարցը: Որոշվեց դռնբաց անել, բայց այն ձևով, որ որոշ քանակությամբ նստեն տոմսակներով՝ կողմնակի հանդիսականներ լինեն: Ո՞վ կցանկանա այժմ այդ հարցի առիթ արտահայտվել:

Խոնտկարյան - Առայժմ նիստերն անել դռնբաց, այնուհետև յուրաքանչյուր անգամ, հարկ եղած դեպքում, առանձին կարգադրություն կանենք:

Մյուս ֆրակցիաները հայտնում են իրենց համաձայնությունը:

Նախագահ - Խնդիրը վերջացած է. դռնբաց լինելու հարցն ընդունվում է միաձայն:

Հ.Առաքելյան - Դռնբաց պետք է հասկանան այն մտքով, որ մամուլի ներկայացուցիչներն են ներկա և առանձին իրավեր ունեցողները:

Արարատյան - Պետք է դռնբաց անել և չսահմանափակել, ով ուզենա, ներս թողնել, եթե միայն տեղ լինի՝ տոմսերով:

Նախագահը հարցն սպառված և ընդունված համարելով, անցնում է սեկցիաների խնդրին:

Ս.Հարությունյան - Օրակարգի մեջ կան մոտ 11 խնդիր: Կան դրանց մեջ այնպիսի բարդ հարցեր, որ համար կլիներ մասերի բաժանել: Բացի դրանից, հակավոր չէր լինի որոշ խնդիրների նկատմամբ սեկցիաների բաժանել: Հայ ժող. կուս. ֆրակցիան գտնում է և բաժանում հետևյալ սեկցիաները:

1. Передел և земство,
2. Ազգամիջյան հարաբերություններ և տեղական իշխանության հարց,
3. Պարենավորման և գաղթականական խնդիր,
4. Ազգային դպրոցների հարց:

Մի քանի խնդիրներ կարելի է միացնել և մի ամբողջություն կազմել՝ իբրև միատեսակ խնդիրներ, ինչպես վերև ցույց տրվեց:

Արամ - որովհետև միջկուսակցական մարմինն այդ խնդիրների նկատմամբ աշխատանք կատարել է, ցանկալի է, որ մեջ բերվի այդ կատարածը:

Բժ.Օհանջանյան - Միջկուսակցական մարմինը չէ արել:

Արամը առաջարկում է սեկցիաների բաժանման մի այլ նախագիծ, որ էությամբ քիչ է տարբերվում Ս.Հարությունյանի առաջարկից:

Բժ.Իսախանյան - Ս.դ. ֆրակցիաները առանձին առաջարկ չեն դնում: Սակայն մյուս խնդիրների համար, որոնք չեն մտնում վերոհիշյալ առաջարկների մեջ, պետք է առանձին սեկցիա ընտրել, օրինակ՝ Ազգային բյուրոյի նյութական համարատվությունը:

Շահխաթունյանը գտնում է, որ передел-ը և ազգամիջյան հարաբերությունները չի կարելի միացնել:

Մուշեղյանը առաջարկում է սեկցիաների խնդրի որոշումը հանձնել Ավագների խորհրդին:

Արամ - Մենք դեմ չենք Ավագների խորհրդին:

Նախագահ - Մենք Ավագների խորհուրդ չունենք, բայց գուցե նախագահությունը կարողանա այդ բանն անել:

Խոնդկարյան - Ավագների խորհուրդը ֆրակցիաների միջից է ընտրվում: Պետք է հանձնել ամեն մի ֆրակցիայի՝ ընտրություն կատարելու:

Տարբեր ֆրակցիաների ներկայացուցիչների հայտարարություններից պարզվում է, որ ավագներ ընտրելու առաջարկը չի անցնում:

Բժ.Իսախանյան - Մենք առաջարկում ենք սեկցիաներ ընտրել: Ինչքան սեկցիա ուզում է լինի, բայց Ազգային բյուրոյի խնդիրը որևէ սեկցիայի մեջ պետք է մտցնել:

Նախագահ - Եղած վիճաբանությունները ցույց են տալիս, որ 5 սեկցիաների բաժանելու առաջարկներ կան: Կա մի այլ առաջարկ ևս, այն է՝ Ազգային բյուրոյի նյութական հաշվետվությունը հանձնվի մի հանձնախմբի: Մնացած խնդիրները քննել պլենար-հրապարակական ժողովում: Սույն առաջարկն ընդունվում է միաձայն:

Նախագահ - Այժմ անցնենք սեկցիաների ընտրության:

Արամը խոսում է սեկցիաների կազմի մասին: Չորս ֆրակցիա կա՝ Դաշնակցություն, էսեռներ, էսդեկ-հնչակյան և Հայ ժող. կուսակցություն: Սեկցիաների այն անդամները, որոնք ընտրվում են ֆրակցիաների կողմից, վճռական ձայն ունեն: Իսկ նրանք, որոնք կկամենան աշխատել սեկցիաներում, խորհրդակցական ձայն կունենան միայն:

Ս.Հարությունյան - Չի կարելի ղեկավարվել բոլոր հարցերի վերաբերմամբ այնպես, ինչպես արիանք նախագահություն ընտրելու ժամանակ: Այստեղ հարկավոր լուսաբանություններ են պետք, լուրջ աշխատանք և վերաբերմունք կպահանջվի, ուստի առաջարկում եմ սեկցիաներ ընտրել այնպես, որ նրանց կազմը համապատասխան լինի ֆրակցիաների անդամների ներկա թվին, որոնք այժմ արձանագրված և գտնվում են նիստի դահլիճում:

Բժ.Իսախանյան - Խորհրդաժողովը բաժանվում է սեկցիաների: Սեկցիաների հարցը պետք է այսպես վճռել, ովքեր որ օգտակար կարող են լինել սեկցիաներում, մտնում են նրանց մեջ և աշխատանք կկատարեն:

Արարատյան - Եթե ցանկություն հայտնողներ լինեն այս կամ այն սեկցիայի մեջ մտնելու, դեմ չենք լինի դրան: Սակայն ձևով դուրս կգա, որ մի սեկցիայի մեջ մարդ չի մտնի, իսկ մյուսները կլցվեն:

Նախագահը քվեարկում է բժ. Իսախանյանի առաջարկը, որ չի անցնում:

Վ.Փափազյանը հայտնում է, թե կան տաճկահայեր, որոնք ոչ մի կուսակցության մեջ չեն մտնում: Այնպես պետք է անել, որ դրանք էլ, մանավանդ գաղթականական խնդիրների քննության ժամանակ, սեկցիաների մեջ մտնել կարողանան:

Բժ.Օհանջանյան - Ով եղած խնդիրների մասին տեղեկություններ ունի թող մասնակցի, մենք կընդունենք: Պետք է այնպես անել, սակայն որ սեկցիայի անդամները նրանց հրավիրեն:

Ս.Հարությունյան - Մեր ֆրակցիան համաձայն է Փափազյանի առաջարկին:

Հ.Ղազարյան - Փափազյանի ցանկությունն էր, որ իրենցից սեկցիաների մեջ մտնողներ լինեն: Այժմ այդ ձևով բացատրելով, նրանց տրվում է ձայնի իրավունք: Ընտրությունը պետք է թողնել նրանց՝ տաճկահայերին և ոչ ուրիշներին:

Փափազյան - Արևմտահայ խորհուրդը կցանկանար, որ յուր անդամները տա առանձին-առանձին սեկցիաների մեջ:

Ժողովն ընդունում է, որ գաղթականական հարցի վերաբերյալ սեկցիայի մեջ մտնեն չեզոք տաճկահայերից:

Ապա խոսք է լինում սեկցիաներ ընտրելու [մասին]:

Արամը յուրաքանչյուր սեկցիայի համար առաջարկում է 25 հոգի:

Նախագահը քվեարկում է հիշյալ առաջարկը, որ մեծամասնությամբ ընդունվում է:

Արամ - Կառաջարկեի մատ բարձրացնել, որից կերևա, թե յուրաքանչյուր ֆրակցիայից քանի՞ հոգի են ներկա:

Ղազար Տեր-Ղազարյան - Վերստին առաջարկում եմ, որ ի նկատի ունենաք մանդատի սիստեմը: Ահա մենք՝ էսդեկներս և հնչակյաններս, ունենք 22 հոգի մանդատ ստացած, բայց չեն եկել շատերը, որովհետև հենց քաղաքումս պաշտոնական այս կամ այն գործով անկարող են եղել ներկա լինել:

Մուշեղյան - Պր. Արամի առաջարկած ձևն անհարմար է: Այդ նշանակում է, գիլիոտինի ենթարկել փոքրամասնության կարծիքը, օգտվելով այն հանգամանքից, որ դաշնակցականները մեծամասնություն են կազմում:

Բժ.Օհանջանյան - Չենք կարող իմանալ, թե ով որ կուսակցության է պատկանում: Ամեն մեկը ինքը կասի այդ:

Ղազար Տեր-Ղազարյան - Եկածները հայտնեն, բայց խնդիրը չեկածների մեջն է: Պետք է նրանց էլ հաշվի առնենք, ապա թե ոչ ճնշվում է մեր կարծիքը:

Մուշեղյանը համաձայն է սույն կարծիքին:

Բժ.Իսախանյանը պաշտպանում է Ղազար Տեր-Ղազարյանի ևս. հեղ[ափոխականների] կարծիքը: Պետք է նայել, թե ովքեր են մանդատ ստացել և նրա համեմատ վարվել: Թող դաշնակցությունն էլ մանդատները աչքի առաջ ունենա: Համեմատությունը երկու կողմից է, այնպես որ հաշիվը նույնն է դուրս գալիս: Եթե մեր այս ձևը չնդունվի, այն ժամանակ պետք է հայտարարել, թե սեկցիաներում միմիայն դաշնակցությունն է մասնակցել և նա է պատասխանատու:

Արշ.Ղազարյան - Եթե մանդատներն ի նկատի ունենանք, պետք է գավառից եկածներին իրենց գործից հետ ձգենք: Առանց նրան էլ այս խորհրդակցությունն երկու օրով ուշ սկսվեց: Ժողովն իրավասու է, ինչպես վճռի, այնպես էլ պետք է անել:

Արարատյան - Մեր ֆրակցիայի առաջարկած ձևով ամենաանշան ֆրակցիան իսկ ձայն է ունենում: Ուստի առաջարկում եմ ներկա եղող անդամներին ի նկատի ունենալ և ըստ այնմ ընտրություն կայացնել:

Իս.Ամիրյան - Այս հարցը պետք է լուծել: Մեր խումբն առաջարկում է ընդմիջում անել և հարցի լուծումը հանձնել նախագահության:

Ղազար Տեր-Ղազարյան - Մի դիտողություն էլ եմ կամենում անել, և թող մեծամասնությունը որոշի: Մեզնից 30 տոկոսը պակասում է: Եթե Դաշնակցությունն իմանար, որ իրենից էլ նույնքան տոկոս է պակասում, չէր համաձայնիլ:

Խ.Կարճիկյան - Ընդմիջում անել, առաջուց մատ բարձրացնելով յուրաքանչյուր ֆրակցիայի անդամների թիվն իմանալու համար:

Հ.Տեր-Աստվածատրյան - Նախ ընդմիջում անել, ապա ստուգել անդամների թիվը:

Կարճիկյան - Այժմ եթե մատ բարձրացնել, ներկա եղողների քանակը ստուգելու համար: Այնուհետև թող յուրաքանչյուր ֆրակցիոնական բյուրոյում ասվի, թե որքան տոմսակ ստացել են, բայց չեն եկել:

Բերբերյան - Այդ առաջարկի առաջին մասն ընդունում ենք, երկրորդը՝ ոչ:

Մեծամասնությամբ որոշվում է բոլորին դուրս հանել ժողովի դահլիճից և ներս թողնելով ստուգել, թե յուրաքանչյուր ֆրակցիա քանի անգամ ունի նիստին մասնակցող ներկայումս:

Սույն գործողությունը, մոտ 40 ր[ոպե] ընդմիջում անելով, կատարվում է: Արդյունքը՝ դաշնակցական - 99, Հայ ժող. կուս. - 36, ս. հեղ. - 21, էս - դեկ և հնչ. -15, չեզոք - 7, ընդամենը՝ 178 հոգի:

Ղազար Տեր-Ղազարյան - Կազմակերպիչ բյուրոյի ցուցակից երևում է, որ մանդատ ստացել են 270 հոգի: Պետք է ուրեմն սույն թվից 178 հանել և մնացորդը բացակաների թվով լրացնել:

Նախագահ - Մնում է, որ համաձայնության գանք:

Շամազյան - Զինվորական խորհրդից 7 հոգի պետք է գային, բայց չեն եկել և չենք էլ կարող ասել, թե որ կուսակցության կհարեին, ուստի և չպիտի հաշվի առնել, որպես նաև նախընթաց ճառախոսների ասածները:

Բերբերյան - Նույն բանը պետք է ասեմ ես Հայ ժող. կուս. կողմից: Մեզ մոտ այսօր ցուցակագրվել էին 43 հոգի: Այժմ սակայն ներկա են 36-ը, ուրեմն կարևոր գործով բացակայում են 7 հոգի:

Վ.Տեր-Օհանյան - Էսեռներից բացակայում են երկու հոգի:

Արամ - Մեր ցուցակով արձանագրվում էին 113 հոգի, բայց ներկա են միայն 99 հոգի:

Կարճիկյանը, բոլոր հանգամանքները հաշվի առնելով, հայտարարում է, թե Դաշնակցությունը յուրաքանչյուր 25 հոգուց բաղկացած սենյակում իրեն վերապահում է 15 ձ[այն], մեկը զիջելով, սակայն էսդեկներին և հնչակյաններին տալիս է երեք տեղ, էսեռներին՝ երեք, Հայ ժողովրդ[ական] կուսակցության՝ 5:

Սուրխաթյանը հայտարարում է միացյալ էսդեկների կողմից, որ նրանք բավականանում են երկու ձայներով, այսպիսով հրաժարվելով զիջում արած մեկ ձայնից:

Արամ - Եթե ֆրակցիաները պատրաստ են թող այժմ ևեթ առաջարկեն իրենց թեկնածուներին: Բացի դրանից, առաջարկում եմ հրապարակական ժողովներն անել առավոտները, սեկցիաներինը՝ երեկոները:

Բժ. Աթաբեկյան - Սեկցիաների ընտրությունը այս կերպ չպետք է լինի: Սեկցիաների մեջ պետք է ընտրվեն այնպիսի մարդիկ, որոնք գործը հասկանում են: Մենք անպատճառ չպետք է ձգտենք երեք մարդ մտցնել: Թող ղեկավարվենք պրոպորցիայով, բայց գործին տեղյակ մարդոց առաջ քաշենք, պետք է ի նկատի ունենալ, այսպես ասած, մարդոց деловитост- ը:

Արամ - Ընդունում ենք, բայց թող ընտրված սեկցիաներն իրենք հրավիրեն ձեր այդ ասած գիտակ մարդկանց:

Հ.Առաքելյան - Թիֆլիսի քաղաքագլխից մի հեռագիր է եկել: Դա պետք է, իսկապես, առաջ կարդացվեր: Առաջարկում եմ գեթ այժմ կարդալ:

Նախագահը կարդում է Թիֆլիսի քաղաքագլուխ էլիավայի շնորհավորական հեռագիրը հետևյալ բովանդակության «Թիֆլիս քաղաքի ինքնավարությունը ողջունում է հայ ժողովրդի խորհրդաժողովը: Ռուսաստանի մեծ հեղափոխությունը մեր առաջ բաց է արել լայն հորիզոններ հասարակական և ազգային ինքնորոշման: Միասին կանգնած ազատության շեմքին, բոլոր ուժերով պետք է պաշտպանենք Ռուսաստանի մատաղ հասարակապետությունը հանուն ընդհանուր գաղափարի:

Թիֆլիսի քաղաքագլուխ էլիավա»: (Ծափահարություններ):

Շիրվանզադե - Մի շարք կարևոր և անհետաձգելի առաջարկ ունեմ. շուտով տեղի է ունենալու վրաց կաթողիկոսի օծումը: Առաջարկում եմ, որ ժողովն զբաղվի այդ հարցով և հայտնի յուր վերաբերմունքը, շնորհավորելով:

Միք.Պապաջանյան -Ընդունված է, որ այստեղ առաջարկների առթիվ չեն վիճաբանում, այլ պահում են, հանձնում են նախագահություն, որ ինքը քննում է և հարկ եղած կարգադրությունն անում:

Ընդունվում է Միք.Պապաջանյանի առաջարկը:

Խոսք է լինում наказ-ը կարդալու մասին և տեղիք տալիս վիճաբանություններին:

Բժ.Իսախանյան - Մենք առաջարկում ենք наказ-ը հանձնել պրեզիդիումին՝ ի տնօրինություն:

Միաձայն ընդունվում է:

Չալխուշյան - Վաղն ինչո՞վ ենք պարապելու: Պետք է սեկցիաները այսօր աշխատեն և նյութ պատրաստեն:

Պետրոսյան - Պետք է որոշել սեկցիաների պարապմունքի տեղը:

Բերբերյան - Ո՞վ պետք է հրավիրի այդ սեկցիաները:

Նախագահ - Նախագահությունը կորոշի տեղը: Այստեղ չենք կարող:

Բժ.Աթաբեկյան - Ժողովը չի ...*: Սեկցիաները կհավաքվեն և կընտրեն իրենց պարապմունքը և հավաքման տեղը:

Ժողովականները այս հայտարարությամբ չեն ցրվում և մնում են, որ հայտնվեն յուրաքանչյուր սեկցիային մասնակցողները:

Մելիք-Ղարագյոզյան - Բժ.Օհանջանյանն առաջարկեց մի հեռագիր ուղարկել դեմոկրատական խորհրդակցություն: Մենք առաջարկում ենք քննության խնդիր դարձնել, ապա թե՝ կարգադրել:

Բժ.Օհանջանյան - Քանի որ այդպիսի առաջարկություն կա, ես հետ եմ վերցնում իմ առաջարկը:

Արամ - Մեր ֆրակցիան ցավ է հայտնում, որ երեկոները չի կարող մասնակցել այս խորհրդակցության նիստերին, որովհետև ռայոնական ժողով ունենք:

Վ.Տեր-Օհանյան - Էսեռները նույնպես զբաղված են կոնֆերենցիայով:

Ս.Հարությունյանը դահլիճի մասին ստեղծված հարմարությունները հիշատակելով, պնդում է, որ այս երեկո անպատճառ նիստ լինի:

Նախագահ - Անհնար է քվեարկել, քանի որ ժողովականների կեսից ավելին բացակա պետք է լինի:

Էսդեկ - հնչ[ակյանները] հայտնում են սեկցիաների համար հետևյալ ցուցակը.

Դպրոցների ազգայնացման հարցի համար - Սուրխաթյան և Հովվեյան, պարենավորման և գաղթականական խնդիր - Պետրոս Զաքարյան և Գաբրիելյան, ազգամիջյան հարաբերությունների և տեղական իշխանության համար - Անանյան և բ. Իսախանյան, земство և передел - Տեր-Ղարագյոզյան, ճակատ և ինքնապաշտպանություն - Փիրումյան և Աբր. Մալխասյան, բյուրոյի հաշվետվություն - Ղարաբեգյան և Լազո:

Նիստը փակվեց 3 $^1/_2$ ժամին:

Հետևյալ նիստը ամսիս 30-ին, առավոտյան 10 ժամին:

ՀԱԱ, Ֆ. 222, ց.1, գ. 20, թ.1-6:

N 3
Նիստ Բ

30 սեպտեմբերի 1917թ.

* Հաջորդ մեկ բառն՝ անընթեռնելի:

Հերթական նախագահ՝ Ալ.Խատիսյան

Օրակարգի խնդիրը՝ մոմենտի հարց:

Նախագահը բաց անելով նիստը, հայտարարում է, որ օրակարգի ներկա խնդրի մասին զեկուցում պետք է տան, համաձայն միջկուսակցական խորհրդի որոշման, Տ.Բեգզադյանը և Ս.Վրացյանը: Հեռախոսներ գրվել են երկու հոգի՝ Բեգզադյան* և Դ.Անանուն, 3-րդ և 4-րդ հերթին:

Ս.Հարությունյան - Մեր ֆրակցիայի կողմից առաջարկում եմ սահմանափակել ճառախոսների թիվը և խոսելու ժամանակը:

Նախ[ագահ] - Համաձայն քիչ առաջ կարդացված наказ-ի, չի սահմանափակվում ոչ ճառախոսների թիվը և ոչ ժամանակը: Սրա մասին կա առանձին հոդված наказ-ում, որի համաձայն սահմանափակում կլինի յուր ժամանակին:

(Ս.Վրացյանը կարդում է յուր զեկուցումը):**

Ապա քաղաքական մոմենտի մասին զեկուցումը ընկ. Վրացյանը: Շեշտելով այն խանդավառ ոգևորությունը, որով ամբողջ Ռուսաստանը դիմավորեց ազատարար հեղափոխությանը, ընկերը մանրամասն կանգ է առնում այն անկերպարան վիճակի վրա, որ այսօր տիրում է երկրում - հիասթափություն թե՛ երկրի ներսում և թե՛ ռազմաճակատներում:

«Երկիրը կանգնած է ծանր ճգնաժամի հանդեպ: Պատճառները զորեղ են և մեկից ավելին: Ամենից առաջ խանգարված է պետության մեխանիզմը: Չկա իշխանություն, ճիշտ է, թեև անվանապես գոյություն ունեին պետական օրգաններ, սակայն նրանց ազդեցությունը կյանքի վրա չեն անդրադառնում: Գյուղերը, ծայրագավառները քայքայվում են անիշխանությունից: Երկիրը առաջ է գնում տարերային ընթացքով՝ չզգալով պետական իշխանության ուժը:

Խանգարված է նաև երկրի տնտեսական կյանքը: Կանգ է առել արդյունաբերությունը: Ոչ մի ճյուղում հառաջադիմություն չի նկատվում: Ընդհակառակը, օրավուր զարգանում է հետադիմությունը, քայքայումը: Սրա բնական հետևանքով թանգությունը, պարենավորման ճգնաժամը անտանելի են դարձել: Այս հողի վրա կատարվում են բազմաթիվ էքսցեսներ: Պակաս հուսահատական չէ և պետության ֆինանսական վիճակը: Պատերազմը կլանում է հսկայական միլիարդներ: Կյանքի թանգությունը զորեղ կերպով ազդում է նաև պետության բյուջեի վրա: Մի կողմից անվերջ ծախսում են ահռելի գումարներ, իսկ մյուս կողմից չկան աղբյուրներ այդ ծախքերը ծածկելու համար: Արդյունաբերություն չկա, ներմուծում չկա, արտահանություն չկա: Միակ միջոցը մնում է փոխառությունը: Արտաքին փոխառության մասին այլևս խոսք չի կարող լինել, որովհետև մեր պետությունը դուրսը վարկ չի վայելում: Ներքին փոխառությունն էլ հաջողություն չունի, որովհետև մեր բնակչության ունևոր մասը վստահություն չունի դեպի հեղափոխական կառավարությունը:

Ի՞նչ անի կառավարությունը, ի՞նչ աղբյուրներից ծածկի իր աներևակայելի ծախքերը: Նրա առաջ մնում է միայն մի ճանապարհ - թեև վտանգավոր, անհույս ճանապարհ. ուժ տալ թղթադրամին և նրանով հեղեղել երկիրը: Ահա այդ ճանապարհը, որ իր հերթին, ավելի է ծանրացնում կյանքի թանգությունը:

Նույն քայքայումն ու անմխիթարական վիճակը և ռազմաճակատներում: Այն զորքը, որ հեղափոխության առաջին օրերին հրապարակ դուրս եկավ պատերազմը մինչև վերջ տանելու լոզունգով, այսօր լքումի է մատնված: Ընկճված է նրա

* Քանի որ արխիվային փաստաթղթերում պահպանվել է ազգանվան Բեգզադյան (ոչ թե՝ Բեկզադյան) ձևը, ուստի մենք ևս պահպանում ենք այն: Ծանոթ.կազմ.:

** Ս.Վրացյանի ճառը չի արձանագրվել և չի պահպանվել արխիվային գործերում: Ճառի տեքստը բերում ենք «Հորիզոն» թերթի 1917-ի հոկտեմբերի 3-ի համարից՝ թերթի մեկնաբանություններով: Ծանոթ. կազմ.:

տրամադրությունը, ընկած՝ կարգապահությունը, խորտակված տոկունությունը: Այդ բոլորի հետ միասին նա մերկ է, անօթի, անզեն: Հաց չկա, պարեն չկա: Արդեն ձմեռը գալու վրա է, սակայն զորքի համար անհրաժեշտ պատրաստություններ չեն տեսնված»:

Ահա մոտավորապես դրությունը, որ հանգամանորեն նկարագրեց զեկուցանողը: Հետևաբար, վտանգի մեջ է ոչ միայն հեղափոխությունը, այլև՝ բովանդակ պետությունը:

Ի՞նչ ելք գտնել, եթե ոչ չարիքն իսպառ վերացնելու, գոնե դրությունը քիչ-քիչ մեղմելու համար: Երկու միջոցի վրա կանգ առավ ընկ. Վրացյանը: «Առաջին՝ երկրում ստեղծել մի զորեղ իշխանություն: Իշխանությունը պետք է լինի կոալիցիոն: Հեղափոխության հարած բոլոր տարրերը պետք է ձեռք-ձեռքի տված կազմեն մի կուռ իշխանություն ոչ միայն կենտրոններում, այլև ամենահետին գյուղերում: Դեմոկրատիան պետք է լինի այդ իշխանությանը դաս տվողը, նրա նեցուկն ու գլխավոր հիմքը: Երկրորդ՝ պիտի աշխատել լիկվիդացիայի ենթարկել պատերազմը, որ էապես հանդիսանում է այդ բոլորի աղբյուր: Ներկա պայմաններում, երբ երկրի բոլոր ուժերը քայքայման վերջին ծայրն են հասել, կրկին պնդել այն նշանաբանի վրա, թե պատերազմը պիտի շարունակել մինչև հաղթական վախճանը, այլևս չի կարելի: Պիտի ձգտել պատերազմը վերջացնել, բայց ինչպե՞ս - ահա դժվար հարցը: Անջատ հաշտության մասին խոսք լինել չի կարող, որովհետև ամենից առաջ՝ դա միայն Ռուսաստանից չի կախված: Այսօր Ռուսաստանը կազմում է համաեվրոպական շղթայի միայն մի օղակը, հետևաբար նա միայնակ անկարող է նման մի պատասխանատու քայլ անել առանց իր դաշնակիցների թույլտվության: Նա կարող է անջատ հաշտության մասին մտածել կամ դաշնակիցների հետ միասին և կամ գոնե նրանց համաձայնությամբ: Բացի դրանից, անջատ հաշտությունը կարող է մի նոր պատերազմի պատճառ դառնալ, բայց այս անգամ ուրիշ ռազմաբեմում:

Այո՛, Ռուսաստանը պիտի ձգտի հաշտության, որովհետև եթե դրությունն այսպես շարունակվի, անկումն անխուսափելի է, բայց դեմոկրատիայի միջոցով, աշխատելով ռուսական դեմոկրատիայի հետ միասին՝ եվրոպական դեմոկրատիան ևս ոտքի հանել հօգուտ հաշտության:

Իսկ մինչ այդ անհրաժեշտ է, Ռուսաստանը վարի ոչ թե հարձակողական, այլև պաշտպանողական պատերազմ՝ ամուր պահելով իր դիրքերը, որովհետև թշնամու առաջխաղացումը ոչ միայն իր գերեզմանն է այլև՝ ազատության գերեզմանը:

Այս խնդիրը կրկնակի նշանակություն ունի մասնավորապես մեզ՝ հայերիս համար - ընդհանուր պետական և մասնավոր ազգային: Հասկանալի է, թե ինչ կլինի մեր վիճակը, երբ ֆրոնտը պարտվի և թշնամու առաջ բաց լինի ճանապարհը: Հետևաբար, մենք, ավելի քան ուրիշները, պետք է ուժ տանք ֆրոնտի ամրացումին, կռվենք դասալքության դեմ և չխնայենք հնարավոր բոլոր միջոցները՝ թե՛ ֆրոնտի կայունության և թե՛ զորքի ֆիզիկականն ու բարոյականը բարձրացնելու նպատակով»:

Նույնը նաև երկրում զորեղ իշխանություն հաստատելու վերաբերմամբ: Ընկերը գտնում է, որ այդ խնդրում հայերս ևս շահագրգռված ենք, եթե ոչ ուրիշներից ավելի, գոնե և ոչ պակաս: «Հայերս պետք է ողջունենք այս բոլոր քայլերը, որ ժամ[անակավոր] կառավարությունն անում է այդ ուղղությամբ և աշխատենք ամեն կերպ նպաստել անիշխանության վերացմանը մեր երկրում: Թե՛ մեկ և թե՛ մյուս տեսակետով անհրաժեշտ է, որ նախ մեր մեջ եղած տարբեր հոսանքներն ըմբռնեն պետության ու մեր ազգային շահերը և գործեն ըստ այնմ համերաշխ ձեռք-ձեռքի տված, երկրորդ, որ հայ, թուրք, վրացի հարևանները, իրանց աշխատավոր զանգվածները նույնպես տոգորված լինեն այդ գիտակցությամբ և համերաշխ գործունեության ընբռնողությամբ»:

Զեկուցումից հետո խոսում են հոսանքների ներկայացուցիչները: Նրանք համաձայն են զեկուցողի հիմնական սկզբունքներին և նրանցից յուրաքանչյուրն

աշխատում է այդ հիմնական դրույթները լուսաբանել ու հիմնավորել իր տեսակետներով»:*

Հ.Բեգզադյան - Ես պետք է հայտնեմ, որ ես այստեղ չէի, նոր եմ եկել Բագվից և իմացել, որ զեկուցում պետք է կարդամ: Միջկուսակցական խորհուրդը բարի պետք է լիներ յուր ժամանակին հայտնելու այդ առթիվ: Դուրս գալ առանց որևէ պատրաստության, անկարելի է: Ես սկզբունքորեն խնդիր չեմ հարուցանել, այլ մեջ կբերեմ մի քանի գործնական խնդիրներ: Ռուսական հեղափոխության մասին տարբեր կարծիք ունեմ: Հեղափոխությունը գտնվում է ներկայումս большевизм-ի մեջ: Առաջ կշարունակվի большевик-ական ընթացքը, հետո՝ խմորում, ապա թե՝ ֆետիշացում: Մինչև այդ հայությունը կարող է ենթարկվել խոշոր վտանգների: Հայությունը պետք է որոշի, թե ի՞նչ վերաբերում ունի դեպի ռուսական հեղափոխությունը: Հայ աշխատավոր մասսան, հայ բուրժուազիան այն տարրերը չեն, որոնք կգան և խոչընդոտներ կհարուցանեն հեղափոխության դեմ: Հայոց հիմնական հենակետն է, որ բյուրեղացում առաջ գա: Եվ այն ժամանակ նա խոշոր նեցուկ կհանդիսանա ներկա պետականության: Հայությունը համերաշխ է և համեաշխ պիտի լինի յուր շրջապատող ազգությունների՝ թուրքերի, վրացիների հետ: Եթե հայությունը [անի] այս բանը, նա ոչ միայն պետական խոշոր գործ արած կլինի, այլև՝ ազգային գործ: Այսօր, երբ բնաջնջման առաջ ենք կանգնած, պետք է միջոցներ փնտրել առաջն առնելու համար, և մենք կարող ենք հասնել մեր նպատակին: Մենք ունենք երկու խնդիրներ. պարենավորում և ֆրոնտ: Դրսից սպասելիքներ ունենք պարենավորման գործը կանոնավորելու համար: Մենք մեր բոլոր նյութերը, որ մեր մեջ ամբարված են, պետք է հանդես բերենք, թուրքերի հետ պետք է համերաշխ լինենք՝ նրանց[ից] մեր ֆիզիքական գոյությունը պաշտպանելու համար: Ֆրոնտի նկատմամբ պետք է անել գործնական առաջարկներ: Զորքը կազմալուծված է: Պետք է հանդես բերենք որոշ մարմիններ քայքայված դրությունը վերականգնելու համար: Այդ ուժերը կարող ենք մենք ներկայացնել, եթե ջանքեր գործ դնենք:

Նախագահը հիշեցնում է, որ այդ խնդիրները արդեն կան օրակարգի մյուս կետերում: Խոսքը պատկանում է Դ.Անանունին:

Դ.Անանուն - Ընկերնե՛ր և քաղաքացինե՛ր, խոսել ներկա մոմենտի մասին, պետք է որոշել, թե ի՞նչ տեսակ հեղափոխություն ենք ապրել: Եթե որոշեցինք հեղափոխության տեսակը, կպատասխանենք նաև ներկա մոմենտին: Այս հարցը դրված է եղել ռուս մտքի առաջ դեռ 70-ական թվական[ներ]ին: Երկու տեսակետ կա: Մեծամասնությունն ասում է, թե խորտակելով հնի խարխուլ, շենքերը, պիտի կառուցանել բուրժուական հասարակարգ, մյուսն ասում է՝ բուրժուական հասարակարգը գոյություն չպիտի ունենա, այլ անմիջապես թագավորե սոցիալիստական հասարակարգ: Այս տեսակետը պաշտպաններ ունի դեռ 70-[ական] թվականներին, թե ռուսական հեղափոխությունը կարիք չունի օրինակ վերցնելու Արևմտյան Եվրոպայից: Այս երկու տեսակետները ներկայացնողներն էին Բակունինը և Գերցենը: Վեջին տեսակետը զուտ ռուսական է Դա յուր մեջ բովանդակում է մի տեսակ միսիականություն: Ինչպես լույսը ծագում է արևելքից, այնպես էլ փրկությունը, ազատությունը՝ Ռուսաստանից: Պլեխանովն ասում է, առաջ բուրժուական, ապա սոցիալիստական հեղափոխությունն է հանդես գալիս պատմության մեջ: Այժմ նույն դրությունը հրապարակի վրա է: Եթե այժմ ամեն ինչ ջլատված է, շինարար գործ չենք կատարում, կախումն ունի հետևյալ տեսակետներից: Հայ դեմոկրատիան գերազանցապես գյուղացիական է: Նա համախմբված է գյուղերում կամ քաղաքներում: Վերջին դեպքում էլ յուր հետ բերում է գյուղացիական մտքեր: Դա դեմոկրատիայի մեղքը չէ, Ռուսաստանի մեղքն է: Մի ժողովուրդ, որ շարունակ ճնշված եղել, ուրիշ կերպ չէր կարող ապրել և մտածել: Ժողովուրդը դեմոկրատիային տալիս է

* «Հորիզոն», 03.10.1917, N 211:

ըմբոստացում, բայց ստրուկ ոգով: Մյուս կողմից՝ նույն արտոնյալ դասակարգը, որ ստեղծել է, ճոխացել է աբսոլյուտիզմի տակ, դարձել է ջերմոցային ծագումն ունեցող: Ինքն՝ այդ դասակարգը, դիմելով մի դիմազուրկ դասակարգ, չունի այն առնականությունը, որ երկա տաիների ընթաքում ցույց է տվել դեմոկրատիան:

Եվ այժմ պրոլետարիատը գալիս կատարում է հեղափոխությունը, իսկ բուրժուազիան համարյա ոչինչ չկարողացավ անել: Չլինելով հեղափոխության շարքերում, նա ոչինչ չունի սպասելու նրանից: Իսկ դեմոկրատիան ունի և սպասում է: Նա հիմնահատակ տապալել և տապալելու է դեռևս ֆեոդալականության կարգերն ու վերջին եղկելի մնացորդները: Բուրժուազիան, եթե կամենում է որոշ դեր ստանձնել ներկա հեղափոխական մոմենտում, պետք է անկեղծորե ձեռք մեկնի պրոլետարիատին: Եթե անկեղծ ձեռք մեկնի պրոլետարիատին, նա թերևս կընդունի այդ ձեռքը, ընդհանուր գործի հաջողության համար: Բայց եթե մեկ կողմից ձեռքը մեկնի, մյուս ձեռքովը քարը բռնի յուր ծոցում, այն ժամանակ հարցը կփոխվի հիմնովին: Չնայած նրա մասնակցության չնչին դերին այս հսկա հեղափոխության մեջ, այնուամենայնիվ առյուծի բաժին է կամենում ստանալ: Կոռնիլովի գործը գալիս և մեծ կասկածի տակ է դնում ամբողջ բուրժուազիայի գործելակերպն ու մտայնությունը: Բուրժուական բոլոր խավերում խորապես համոզված էին, թե Կոռնիլովը հաղթությունը կտանի: Եթե այժմյան դաշնակիցն այդպիսի տարր է, դեմոկրատիան ամենայն իրավունք ունի կասկածելու: Դեմոկրատիայի պահանջները բոլորիդ հայտնի են՝ դեմոկրատական հանրապետություն, հողը աշխատավոր մասսային, 8-ժամյա բանվորական օր և այլն: Ահա այն պլատֆորմը, որի շուրջը համաձայնություն պետք է լինի: Դեմոկրատիան պիտի զգա, որ հետևում թշնամի չունի: Խոսք չի կարող լինել, որ միմիայն դեմոկրատիան պարտականություն չի կարող վերցնել: Եթե այժմ որևէ տատանում կա դեմոկրատիայի մեջ, ևս առավել նա պետք է գործը տանի ամենայն իմաստությամբ: Նա ունի ահագին տնտեսական հարցեր, ահագին հեղափոխական նորանոր նվաճումներ կատարելու, ուստի և պետք է համոզված լինել, որ ցեղզավոր դասակարգը յուր հետևից չարիք չէ նյութում, այլ իրեն զուգընթաց է գնալու: Ինչ էլ որ լինի երկրի բարքը, կենտրոնական իշխանության մեջ կոալիցիայի կողմնակից լինել կարող ենք, թեև վերապահումներով: Բայց իշխանությունը յուր վրա պարտականություն պիտի վերցնի չկասկածելու, շարունկ հսկելու դեպի աջակողը, որ խոսելու ցավով է բռնված, բայց և մեծ պահանջներ ունի: Պետք է այնպես անել, որ այդ կասկածելի տարրը հեղափոխության դեմ չարիքներ չնյութի, չարիքներ չնյութի հեղափոխական դեմոկրատիայի դեմ:

Ահա այստեղ հավաքվել ենք հայ ժողովրդի ներկայացուցիչներ շատ կարևոր խնդիրներ լուծելու: Պետք է մտածենք, թե ինչպիսի քաղքականություն վարենք երկրի այս դառն դրության ժամանակ: Արդյո՞ք մեր պատմական անցյալը մեզ իրավունք է տալիս ասելու, թե մեր գործը չէ, մեր տունը գյուղի ծայրումն է: Հայ մտավորականությունը և նրա սխալ և թյուր դաստիարակությամբ սնված մասսան կարծում էին, թե մենք գործ ունենք կատարելու սահմանից այն կողմը, իսկ այս կողմը ոչինչ չունենք: Չլինի թե այսպիսի քաղաքականություն [ենք] վարելու: Չարիք առաջ կգա սահմանից յս կողմը գործելու ժամանակ, ասում են սխալ մտածողները: Մեր խելահասությունից է կախված, այնպես որ վտանգ չգա: Սակայն չտարվենք ֆանտազիաներով: Շատերը մտածում են, թե թող ծայրահեղ տարրերը, մեծամասնականներն անցնեն գործ գլուխ, որպեսզի վարկաբեկվեն և այնուհետև դադարեն մասսայի վրա ազդեցություն ունենալուց: Սակայն այս կերպ մտածելով, չարաչար սխալվում են: Այս գործելակերպի և մտածելակերպի հաջողության դեպքում հայությունը հոշոտված կլինի:

Ռուս ժողովրդի հարցը ուրիշ է: Նրանք այնքան բազմաթիվ են, այնպիսի հսկա ուժ և թիվ են կազմում, որ կհոշոտվեն, կջնջվեն, բայց էլի կվերականգնվեն, կվերակենդանանան, իսկ հայերը՝ ոչ: Այս ժողովուրդը մի կատայալ գերեզմանոց

կդառնա այդպիսի պարագայում: Այնպես պետք է անենք, որ վերջին հանգամանքը երբեք տեղի չունենա: Եվ Ռուսաստանը իրենից ավելի լավ քաղաքացիներ ունեա հանձին մեր: Մեր երախտավոր գործիչները կարծել են, թե մեր բախտը և երջանկությունը ռուս ժողովրդի հետ կապված լինելու մեջն է և միմիայն այդ դեպքում հայ ժողովուրդը կարող է գրաստային վիճակից դուրս գալ: Դժբախտաբար անցյալում եղել ենք այնպիսի մի իշխանության իրավունքի տակ, որ մի կողմից գլխներիս բամփել է, իսկ մյուս կողմից՝ շոյել, նայած իր օգուտներին: Մենք ուզում ենք Ռուսաստանի հետ լինել, առանց մեր առանձին տնակն ունենալու: Ես գալիս եմ մի որպե այն եզրակացության, թե կոալիցիան անհրաժեշտ է:

Դեռ 60-ական թվականներին մեր նշանավոր գործիչ Ստ.Նազարյանը քարոզում էր, թե իբրև Ռուսաստանի քաղաքացիներ՝ կազմենք նրա մի մասը: Իմ մի խումբ ընկերներն ինձ հանձնարարել են այսպես ասել, բայց կան նաև ընկերներ, որոնք եկել են այն եզրակացության, թե փրկությունը իշխանությունը դեմոկրատիայի հանձնելու մեջն է: Համենայն դեպս, կոալիցիան եթե կազմվելու էլ լինի, եթե բուրժուազիան ու դեմոկրատիան ձեռք-ձեռքի տված գործեն, պետք է վստահ լինենք, որ դեմոկրատիայի ժամանակավոր գործակիցը քար չունի յուր թևի տակ:

Նախագահ - Մեր наказ-ի հիման վրա իրավունք ունի կուրեֆերենդը նույնքան ժամանակ խոսելու: Մյուսները՝ 10 րոպե: Խոսքը պատկանում է Խ.Ամիրյանին:

Խ.Ամիրյան - Մեր ֆրակցիայի տեսակետը պետք է պաշտպանի Քր.Վերմիշյանը: Մեր համագումարը հայկական է: Ողջունում եմ Դ.Անանունի ճառը: Ներկա ժամանակ արդյոք կարո՞ղ ենք մի ելք գտնել, կարո՞ղ ենք ասել, թե հայերը դեպի ռուսական մեծ հեղափոխությունը առանձին վերաբերմունք են ցույց տվել: Ես գտնում եմ, որ մեր ապագայի շահերի տեսակետից հայերը դասակարգային կռիվ չունեն մղելու: Եթե մենք հետ թողնենք բանվորական տեսակետը, կկանգնեք գյուղացիական տեսակետի վրա: Դաշնակցությունը գնացել է այն ճանապարհով, ուր գտել է наименьшее сопротивление, ուստի և յուր դեմ է ունեցել թուրք աղալարներին, որպեսզի հայ մասսայի մեջ հաջողություն գտնի: Դաշնակցությունն արհեստական կերպով գործեր է ստեղծել՝ յուր դիրքն ամրապնդելու խավար մասսայի շարքերում: Հիշենք նրա հարաբերությունը և վարած քաղաքականությունը Վորոնցով-Դաշկովի[1] ժամանակ: Դաշնակցությունը եղել է հայ բնազդի արտահայտիչը: Երբ կալվածները խլեցին, նա կանգնեց շարժման գլուխ: Շատ դեպքերում ձեռք-ձեռքի տված է գնացել ռուս անցյալ պետության հետ: Նա յուր ամբողջ գործունեության ընթացքում եղել է ազգայնական, թեև իրեն անվանել է սոցիալիստական: Գալով հատկապես հայերին, նրանք բնազդորեն նեցուկ են հանդիսացել ռուսական հեղափոխության: Ինչու՞: Որովհետև ռուսական քաղաքացի են: Հայ ժողովուրդը, ինչ կուսակցության էլ որ պատկանի, սեպարատ ձգտումներ չունի և չի կարող ունենալ: Այդ պատճառով էլ ինձ չէ վախեցնում ոչ սեպարատիզմը և ոչ էլ большевизм-ը: Հայի մեջ չկա Ռուսաստանին կազմալուծված տեսնելու ցանկություն: Ընդհակառակն, պատմական ամբողջ ընթացքը ցույց է տվել հայ ժողովրդի դրական վերաբերմունքը դեպի Ռուսաստանը: Մենք շատ լավ ռուս քաղաքացիներ ենք: Մի բան էլ, որ հարկավոր եմ համարում այստեղ հիշեցնել: Ոչինչ չասվեց արտաքին քաղաքականության մասին: Ռուսական դեմոկրատիան առաջ է բերել безаннексий и контрибуций սկզբունքը: Հայ ազգն սպասում է յուր ինքնորոշման: Մենք չենք վախենա իմպերիալիզմից: Մենք պետք է համերաշխ լինենք մեր հարևան ազգերի հետ: Մենք պետք է ունենանք մեր ազգային ռեզոլյուցիան, որպեսզի վրացիները և թուրքերը չասեն, թե հայ ժողովուրդն յուր դիմակը չի պարզել:

Բժ. Աթաբեկյան - Ես տկարությանս պատճառով հազիվ թե կարողանամ ֆրակցիայի մտքերն արտահայտել: Քաղաքական* մոմենտն ըմբռնելու համար պետք է ասել, թե ի՞նչ է սոցիալիզմը: Սոցիալիզմը մի ամբողջ կուլտուրա է: Սոցիալիզի իրականացման վրա ահագին ժամանակ կարելի է խոսել, երբ օբյեկտիվ փաստեր կան: Ինչպես 14-15 տարում բուրժուազիան եկավ ավարտականության[ն] ասելու, թե եկել եմ քո տեղը բռնելու, այսպես էլ այժմ դեմոկրատիան ասում է, թե եկել եմ քո տեղը բռնելու: Ով որ ասում է, թե ուղղակի կգանք կապիտալիզմ խորտակելու, նա սխալվում է, որովհետև կապիտալիզմը և բուրժուազյան թույլ են, չկա տեխնիկա: Պրոլետարական այնպիսի կենտրոնում, ինչպիսին Բագուն է, 25%, Պետրոգրադում 50%: Գրագիտությունը վերջին տեղն՝ 40-50%: Այս կոոպերատիվ շարժումները, որ սկսվել են, նոր են: Այս բոլոր հանգամանքների պատճառով չի կապելի այս շարժումը սոցիաիստական համարել: Ով ասում է հակառակը, նա սխալվում է: Ահա իրար կողքի ապրում են ժողովուրդներ, բայց ի՞նչ համերաշխությամբ: Պետերբուրգի մեջ նույնիսկ հայրենիքն ուրանում են: Բոլոր անտագոնիզմները ստեղծեցին մի քաոս:

Մեր ֆրակցիայի հիմնական մտքերը հետևյալներն են.

1) դասակարգային կռիվ, 2) պետականության շուրջը համախմբումն և 3) արդյունաբերության շուրջը խմբվել: Ազատագրված դասակարգերը լարվել են: Maximal կերպով ուզում են բարվոք վիճակի մեջ դնել, բայց հասցնում են այն աստիճանի, որ հասցնում են պետական քայքայման: Երկաթուղային գործադուլները, վերջին քառասային դրությունն ու անվերջ շարժումները հրապարակի վրա են իբրև փաստեր: Չեն ըմբռնում, որ ռուսական ամբողջության վտանգումն իրենց համար վտանգավոր է:

Մեր ֆրակցիան այն կարծիքի է, թե պայքարն այնպես պետք է տանել, դասակարգային շահերն այնպես վարել, որ չխախտել պետականության ամբողջությունը: Այնպես անել, որ արդյունաբերությունը չվտանգվի: Կապիտալիզմը մի մեծ կուլտուրա է, բարձր մեխանիզմ է: Աչքի առաջ չունենալ այդ կոմպլեքսը, նշանակում է աշխատավոր և պրոլետար դասակարգի շահերը մի կողմ նետել և մյուսներին հետ մղել: Օգոստ[ոսի] 14-ի դեկլարացիան է, որի շուրջը պիտի խմբվենք և մեր գործելակերպը որոշենք: Մի վայրկյան էլ խոսենք ֆրոնտի, պատերազմի մասին: Ֆրոնտի հաստատուն լինելն ահագին նշանակություն ունի: Գալով Անդրկովկասին և հայ իրականությանը, այն հավաքական շարժումներին և խլրտումներին, որ տեղի են ունենում, մեզ պեսիմիզմով են համակում: Հուսահատություն, մեկուսացում է տեղի ունենում: Հայ ինտելիգետը կարծել է, թե շրջապատված ենք վանդալներով, և միակ փրկությունը պայքարն է մեր հարևանների դեմ մղվելիք: Մեզ թվում է, թե այդ տիեզերական պատերազմի ժամանակ [կ]արվեն որոշ քայլեր: Մեզ թվում է, թե սոցիալիստական կուսակցությունները կարող են ասել, թե հայ ժողովուրդը պետք է յուր պեսիմիզմը թողնի: Երբ 905թ. դասակարգային պայքար էինք մղում, թուրք բանվորները խողխողում էր հայ բանվորին: Չպետք է խանգարել պրպագանդ անելու թուրքի և վրացու մեջ: Բուրժուազիայի կարծիքը սխալ է: Ես միայն մի կողմից եմ համաձայն, թե Ռուսաստանի հետ կապվելու ենք իբրև մի ամբողջության մեջ: Լինելով պետական, մենք մեր վիճակը չենք տալիս ռուս պետության ձեռքը: Մենք պետք է մեր շրջապատողների հետ զուգընթաց գնանք: Պետականություն և համերաշխություն շրջապատող ժողովուրդների հետ:

Երկու խոսք գյուղացիական խնդրի մասին: Գյուղացու և բանվորության մեջ չպետք է խորխորատ բաց անել: Թուրք գյուղացին ավելի հեղափոխական է, քան թե հայը: Հողերի օգտագործման հարցը պետք է մաքսիմալ կերպով դնենք: Ոչ մի ընդհարում թուրքի և հայի միջև: Այս այն դուռն է, որ հայ գյուղացին պետք է գա մեզ հետ: Ագրարային խնդիրն է, որ մեզ կապելու է թուրք և հայ գյուղացու հետ:

* Բնագրում՝ քաղաքային:

Համերաշխություն ոչ ինտելիգենտի, այլ ժողովրդի խավերում, ստորոտներում, կոոպերատիվներում: Ահա այն թեզերը, որ ես այստեղ ընդգծարեցի: Սոցիալական բանակն իրեն չէ համարում անպատասխանատու հայ ժողովրդի մեջ: Նա պետք է կենդանի գործով նպաստի գործին: Այն բանակը ոչ միայն մեր, այլև թուրքի և վրացիների մեջ պետք է գործի:

Նախագահը կարդում է վրաց ֆեդերալիստների հետևյալ շնորհավորական հեռագիրը. «Հայոց ազգային համախորհրդի պրեզիդիումին. վրաց սոց. ֆեդերալիստների հեղափոխական կուսակցության գլխավոր կոմիտեն ողջունում է հայոց համախորհրդի բացումը և ցանկանում է հաջողություն եղբայրական հայ ցեղը ազգային-քաղաքական իդեալների իրագործման: Կուսակցությունը համոզված է, որ համախորհուրդը կլինի մինի օղակներից բոլոր կովկասյան ժողովուրդների համերաշխության, որոնց ազգամիջյան համաձայնությունը գրավական է Ռուսաստանի հեղափոխական դեմոկրատիայի հաջողության և կովկասյան ժողովուրդների քաղաքական իրավունքների ամրապնդման:

Նախագահի փոխարեն՝ Խցկիլաձե քարտուղար՝ Դադյանի»:

Ժողովը ծափահարությամբ ընդունեց այս ողջույնը և հանձնարարեց պրեզիդիումին հայտնել շնորհակալություն թե՛ քաղաքագլխին և թե՛ սոց.ֆիդերալիստներին:

Շահխաթունյան - Ընկերնե՛ր և հայրենակիցնե՛ր, ձգտելով բնորոշել ներկա քաղաքական մոմենտը, պետք է, իմ կարծիքով, բնորոշել ռուսական դեմոկրատիան և սոցիալիզմը, որ յուր մտայնությամբ զգալապես զանազանվում է եվրոպականից: Տեսանք, որ հեղափոխության ընթացքում ռուսական սոցիալիստ ինտելիգենցիան շատ առաջ է գնում յուր մտավոր ձգտումներով: Եվ դա դառնում է մի ռեալ հանգամանք: Այդ տեսակետից նայելով խնդրին, պատասխան պետք է տանք այն որոշման, որ անելու ենք: Աշխատավոր մասսան ինքը դառնալով գործոն, պիտի որոշի այն գիծը, որով գնալու ենք: Կոալիցիա այն մտքով, ինչ որ հասկանում ենք, չի կարող լինել: Այն կառավարության, որ կազմված է, կարող ենք հավանություն տալ, բայց դա կոալիցիա չէ, այլ մի համաձայնություն է, որով բուրժուազիան ընդառաջ է գնացել աշխատավոր մասսային: Եթե բուրժուազին անկեղծորեն ուզում է ընդառաջ գնալ, կամ ուզում է ապագայում յուր ձեռքն առնել իշխանությունը, կամ հայրենասիրական մի ժեստ է, մի զիջում է թույլի՝ ուժեղի դեմ: Մեր առաջն է դրված ոչ թե կոալիցիա, այլ մի ծրագիր: Ոչ թե բացասաբար ենք վերաբերվում կոալիցիային, իբրև այդպիսաց, այլ ընդհակառակը, որովհետև ուժերը եկել և միասին գործում են: Այս տեսակետից կորոշենք միայն այն ծրագիրն աչքի առաջ ունենալ, և ըստ այնմ վարվել: Այդ ծրագիրն, որ ահնարին է դարձնում հողային հարցի լուծումը: Բուրժուազիան կաշկանդումներ է հարուցանում, որովհետև այդպիսի պահանջները նա չէ կարող տանել: 6 ամիս շարունակ մի կողմից դեմոկրատիայի մեջ պառակտումներ է ձգում, մյուս կողմից՝ ծրագիրը չէր իրագործում: Այժմ բուրժուազիան ստիպված է համակերպվել: Մի կողմը յուր ծրագիրն է առաջ տանում, մյուսը զիջում է անում: Պետք է ուրեմն քննել այն ծրագիրը, թե արդյոք դեմոկրատիայի շահերին համեմատ ինչու՞մ նպատակահարմար են: Դեմոկրատիայի մեջ կան քայլեր, որոնք դատապարտման արժանի են: Այժմ դրված է այնպիսի ծրագիր, որը ժխտվում է նրա կողմից: Ավելին զիջումներ չեն կարող անել նա կառավարությանը:

Ինչ որ Ռուսաստանի վերաբերմամբ ենք ասում, նույնը պիտի ասենք հայերի վերաբերմամբ: Հայ բուրժուազիան իրեն հատուկ հարցերը չի լուծել, այլ՝ հայ դեմոկրատիան: Նա կտրված է եղել հայ մասսայից: Պատմական-տնտեսական ծրագիր չէ ներկայացրել: Նա բաց է արել դպրոցներ, թատրոններ, բայց տնտեսական, ազգային խնդիր չէ առաջ բերել: Այսօր, երբ Ռուսաստանի դեմոկրատիայի լոզունգներն ընդունում է հայ դեմոկրատիան, հայ լիբերալիզմն ստիպված է ընդունել: Հայ բուրժուազիան այսպիսի վայրկյանում պարտականություն զգաց հրաժարվելու յուր

դասակարգային շահերից: Հարցը ոչ թե նրա մեջ է, որ հեղափոխությունը պահպանվի, այլ հարկավոր է ստեղծել կառավարություն, որը մեծամասնության համակրությունը գրավի: Անհնարին է մի այնպիսի իշխանություն ստեղծել, որ բոլորի պահանջներին բավարարություն տա: Կառավարության առաջարկած ծրագիրը մեր և բուրժուազիայի համար ընդունելի պիտի լինի, մանավանդ ծայրագավառների համար: Կոչ եմ անում բոլոր համախոհներին և անկախ քննադատներին: Հայ ժողովրդի մեջ այնպիսի հարցեր են առաջ եկել, որոնք տարաձայնություններ չեն կարող առաջ բերել: Քննադատություն և հակադրություն՝ տարբեր բաներ են: Դաշնակցությունը կարող է քննադատվել, բայց չի կարող հակադրության առաջ գալ: Դաշնակցության դրած հարցերին այնպես են նայում, որ նախաձեռնությունը նրան չի պատկանում, ինչ որ էլ անեն, ինչ հարցերին մոտենան հայ ժողովրդի շահերի տեսակետից:

Ք.Վերմիշյան (հայ ժող. կուսակ. ֆրակցիայի կողմից) նկատում է, որ նախորդ ճառախոսի մեղադրանքներին առիթ չի տրվել համագումարում, որ բոլորն եկել են այստեղ համերաշխ գործելու, հաշտության, համագործակցության նպատակով: Քննելով Ռուսաստանի ապրած մոմենտը զինվորական արդյունաբերական, ագրարային տեսակետներից, հռետորը գտնում է, որ այդ ընդհանուր քայքյման մեջ ամենևին մեղք չունի կադետական կուսակցությունը, որ սկզբից ևեթ նախատեսում էր սոցիալիստական, դասակարգային կռվի և հայտարարված լոզունգների այսպիսի հետևանքը: Ագրարային հարցը պետք է լուծվի օրենքով, այլապես նա կդառնա ավազակություն և կսպանի ամբողջ կուլտուրան: Մենք ևս կողմնակից ենք կոալիցիոն կառավարության, բայց դա պետք է լինի անկեղծ ու արտահայտվի գործով: Պետք է ճանաչվի բոլոր քաղաքացիների իրավունքը և ոչ թե առանձին դասակարգերի: Մենք պահանջում ենք զորեղ և միակ իշխանություն և ոչ թե բազմիշխանություն, որ տանում է դեպի անիշխանություն: Ուստի պետք է մերժել «այնքան-որքան» սկզբունքը: Հռետորներից ոմանք կասկածում են բուրժուազիայի անկեղծության և միևնույն ժամանակ հրավիրում են նրան գործակցել կառավարության մեջ: Ինչպե՞ս կարող է ուժեղ լինել այդպիսի կառավարությունը, երբ անդամները կասկածով են նայում մեկը մյուսին: Պետք է անկեղծ վերաբերմունք, պետք են փոխադարձ զիջումներ, համաձայնության ճանապարհ կա: Համերաշխ գործակցության կարիքը այժմ զգացվում է ամենուրեք:

Արարատյանը (դաշնակցական), առարկելով Վերմիշյանի, Ամիրյանի ինչ-ինչ տեսակետներին, գտնում է, որ իրենք ունեն գործ աշխատավորության (բանվորության և գյուղացիության) մեջ: Բայց կան խնդիրներ, որ վերաբերում են բուրժուազիային, թող նա էլ այդ գործերն ստանձնի: Ընդունում է կոալիցիայի սկզբունքը, որը հիմնված պետք է լինի ռեալ ուժերի գործակցության վրա, որը պետք է Ռուսաստանը դուրս բերի ներկա դրությունը: Գիտակից դեմոկրատիան հայրենասիրական է և պետական: Միակ կազմակերպված ուժը դեմոկրատիան է, ուստի չնայելով նրա բազմաթիվ սխալներին ու թերություններին, պետք է նրա հետ ներդաշնակ գործել, զիջումներ անելով: Դեմոկրատիային հակառակ գնացող տարրերը քայքայում են ռուսական պետականության հիմքը: Գալով հայ ժողովրդի վիճակին՝ հռետորը գտնում է, որ թուրքերի և հայերի համերաշխության միակ պլատֆորմն է հանդիսանում հողային խնդիրը, որ պետք է լուծվի լայն ծրագրով:

Ժողովը որոշում է հաջորդ հռետորներին լսել մյուս նիստին, որովհետև պրոֆ. Աղաջանյանը մեկնելու էր Թիֆլիզից, նրան տրվում է հերթից դուրս խոսք:

Աղաջանյանը հայտնում է, որ այստեղ լսում է այն տեսակ մտքեր ու դատողություններ, որ լսվում են բոլոր Ռուսաստանում, բայց չի լսում ազգային խոսք: Մեր ժողովուրդը բնաջինջ է լինում, պետք է նրան փրկել: Բուրժուազիան, սոցիալիզմը չեն, որ մեզ պետք է փրկեն: Ոչ միայն հասարակական այսպիսի վիճելի հարցերում, այլ նույնիսկ գիտական հարցերում լինում են սխալներ: Մենք պետք է ձեռք վերցնենք մեր պատմական անմիաբանությունից, պետք է գործենք միաբան, կազմենք ազգային

կոալիցի՝ իբրև եղբայրներ Ռուսաստանի: Մենք պետք է ձեռք մեկնենք մեր հարևան վրացիներին և թուրքերին, ոչ թե որովհետև երկյուղ ենք կրում, այլ որովհետև այլ կերպ վարվելով, բոլորն էլ կկորչեն: Այստեղ զոհաբերության հարց չի դրվում, այլ փոխադարձ զիջողության: Սրա մեջ է մեր փրկությունը:

Նիստը փակվում է 3 ժամին:

Նույն գործը, թ. 7-12:

N 4
Նիստ Գ

1 հոկտեմբերի 1917թ.

Հերթական նախագահ՝ բժ.Այվազյան:

Նախագահ - Ընկերնե՛ր և քաղաքացինե՛ր, այսօրվա նիստը շարունակությունն է երեկոյան նիստի: Մի շարք ճառախոսներ գրվել են: Եթե կամենում եք, ցուցակը կարդանք:

Կարդացվում է 28 հոգուց բաղկացած մի ցուցակ:

Նախ[ագահ] - Ամեն մեկ կուսակցություն պետք է յուր բանաձևը տա:

Այվազյան Ներսես - Ըստ օրակարգի ամեն մեկը ձայն է խնդրում: Նկատի ունենալով մի քանի հանգամանքներ և շատ կարևոր հարցեր, մեր պարապմունքները 10 օր կտևեն, եթե այսպես շարունակենք: Առաջարկում եմ, որ այդ ցուցակում գրված ֆրակցիաներից 2-2 հոգի հայտնեն ֆրակցիաների կարծիքը:

Նախ[ագահ] - Առաջարկում է, որ 1-1 հոգի թեր և դեմ խոսեն:

Մ.Ղարաբեգյան - Երեկ ս.դ. մի մասն արտահայտվեց: Թույլ տալ մյուս մասին ևս խոսել:

Բժ. Տ.Իսախանյան - Ցարդ ոչ միայն ֆրակցիաներ, այլև անհատներ դեռ ոչինչ չեն ասել:

Նախ[ագահ] - Ով որ ուզում է ցանկը փակել, թող ձեռք բարձրացնի:

Ստվար մեծամասնությունը ցանկանում է շարունակել:

Նախագահ - Քվեարկության եմ դնում Ավագյանի առաջարկությունը՝ թույլ տալ ամեն մի ֆրակցիայից 2 հոգի խոսել, ապա փակել:

Սույն առաջարկը մեծամասնությամբ ընդունվում է: Կարդացվում է ցանկը: Ապա 5 րոպե ժամանակ է տրվում ճառախոսներ ներկայացնելու: Ընդմիջումից հետո նիստը վերաբացվում է:

Նախագահ - Ժողովը բացված է: Կա 4 ֆրակցիա: Կան նաև անկուսակցականներ: Կցանկանայինք անկուսակցականներից մեկին ձայն տալ: Որոշվում է տալ:

Մեսրոպ եպ[իսկոպոս] - Թեև իմ անունը այսօր «Մշակ»-ում տպված է Հ.Ժ. կուսակցության ցանկի մեջ, բայց ես անկուսակցական եմ և միայն համակրող եմ այդ կուսակցության: Կխնդրեի ինձ ձայն տալ իբրև անկուսակցականի:

Որոշվում է տալ:

Նախագահ - Տաճկահայերից կա մի խումբ, ուզում ենք, որ մեկը նրանցից խոսի:

Ոչ ոք լիազորված չի լինում խոսելու:

Կարճիկյան - Առաջարկում եմ խոսել նախկին ցուցակի կարգով:

Խ.Ամիրյան - Քանի որ ընդունեցինք կուսակցություններին ձայն տալ, առաջարկում եմ մեջընդմեջ խոսել:

Դարբինյան - Ամեն մեկը թող տա յուր ընկերների ցուցակը:

Բժ.Օհանջանյան - Մենք դեմ ենք, որ պրոֆ. Հակոբյանը իբրև անհատ խոսի:

Ֆրակցիաները տալիս են իրենց ճառախոսների ցուցակը:

Դաշնակցության կողմից՝ Վ.Նավասարդյան և Քաջազնունի, Հ.Ժ.կ. Հ.Առաքելյան և Մելիք Ղարագյոզյան, ս.հեղ - Խոնդկարյան և Խ.Տեր-Ներսիսյան, ս.դ. - Դարբինյան և Ղարաբեգյան, անկուսակցական - Մեսրոպ եպիսկոպոս:

Պրոֆ. Հակոբյան - Ես կուզեի սահմ[անադրական] ռամկ[ավար] և այդ ուղղությամբ մտածողների կողմից խոսել:

Խ.Տեր-Ներսիսյան - Իբրև անհատի դեմ ենք, իսկ կուսակցության կողմից՝ ոչինչ չունենք:

Մելիք-Ղարագյոզյան - Իմ ձայնը զիջում եմ պրոֆ.Հակոբյանին:

Բժ.Բռնապարտյան - Տաճկահայ գաղթականության մասին մեկը կարող է խոսել:

Նախ[ագահ] - Ընկեր Նավասարդյանը բացակա է: Խոսքը Մեսրոպ եպիսկոպոսինն է:

Մեսրոպ եպիսկոպոս - Հայ ժողովրդի ներկայացուցիչներ, առաջին անգամն է, որ հնարավորություն ենք ունենում մեր մտքերը հայտնելու ազատորեն: Առանձին հաճույքով լսեցի, որ զանազան կուսակցության ներկայացուցիչներ զանազան բառերով նույն արտահայտություններն արին: Նախ՝ թե մենք կապված ենք ռուս ժողովրդի հետ, և թե մեր գործերը պետք է վարենք ժողովրդական ոգով: Սա ամենա էականն է: 2), որ բոլոր կուսակցությունները կամենում են հաշտ մտքով տանել գործը: Այս պատերազմի ընթացքում շատ շփվեցինք և ծանոթացանք միմյանց հետ կարիքից: Ես ի՞նչ կարող եմ ասել: Տունը վնասվում է, հրդեհն ընկել է, և ռուս մարդիկ, որոնց հետ կապում ենք մեր բախտը, կռվում են և սկզբունքների մասին են խոսում: Նախ տունը փրկենք, ապա սկզբունքից խոսենք: Իբրև հոգևորական, ի պաշտոնե շփվեցի բոլորի հետ: Տեսա, որ հայ ժողովուրդը պահպանեց յուր որոշ վերաբերմունքը: Ես չեմ միջամտում այս կամ այն կուսակցության ծրագրի մեջ: Իբրև հոգևոր պաշտոնյա, կցանկանամ, որ հայ ժողովրդի կամքն այդպես էլ մնա: Կարիքները շատ են: Ես վերջացնում եմ: Գործի ժամանակ է: Թող հայ ժողովուրդը մեջ բերե յուր բոլոր լոջությունը:

Պրոֆ.Հակոբյան - Պր. պատգամավորնե՞ր, ես, որպես ոչ ռուսաքաղաքացի, խնդրեմ թույլ տաք իմ տեսակետները հայտնել այն սկզբունքների մասին, որ երեկ այստեղ հայտնեցին: Բոլորդ ալ արտահատվեցաք նույն տեսակետով՝ ազգային բնազդային ողջամտություն ցույց տալով: Բոլորդ ալ հայտնեցիք այն տեսակետը, թե վրացիներու հետ համերաշխ պիտի ըլլանք, ինքնասիրության, ողջամտության հարցեր կան: Ես, իբրև ցավի, մյուս կողմե՝ կխոսեմ համաժողովին, որ նույն հեռատեսությունն ունենանք, նույն ողջամտությունը ցուցանեք սահմանի այն կողմի նկատմամբ: Անցյալը պատմություն կմնա: Անցյալը, ինչ որ գործված է, պատմության կմնա: Այժմ այնպես պիտի ընել, որ որոշ սկզբունքներ, որոշ տեսակետներ անցնեն: Բոլորդ ալ մի տեսակետի վրա կանգնած եք: Ես թուրքիացի չեմ, պարզ հայ մըն եմ: Հայերուն հանեցին Թուրքիո հպատակութենե: Հոս ապաստանած հայերը թուրքահպատակ են, ռուսահպատակ ալ չեն: Մենք՝ Հայաստանի հայերս, միջազգային դատին ենք հանձնած մեր խնդիրը: Դուք օգնեցե՛ք ոչ Անգլիա[յի], ոչ ալ Ֆրանսիայի պես, հապա իբրև հայեր օգնեցե՛ք: Էրզրումեն դաշնակցությունը բողոքած էր, թե իրենց ներկայացուցիչը չէ մտած կոմիտեի մեջ: Մենք՝ թուրքահայերս,կխոնարհվենք բոլոր ռուս զինվորներու գերեզմանին առջև, բայց մենք դեռ ռուսահպատակ չենք և չենք կրնար միջամտել ռուսական գործերուն: Հոս կտեսնեմ զանազան հոսանքներ: Ժողովը ցրվել առաջ, որոշ տեսակետ ընդունեցեք: Իբրև միջազգային հարց, աշխատենք և բաղձանք, որ հարցը լուծվի: Յուրաքանչյուր ժողովրդի ինքնորոշման իրավունք տրված է: Այդ ուղիով էլ ընթանանք և գործենք:

Խոնդկարյան (ս.հ.) նշեց, որ բուրժուազիան, իբրև կազմակերպված կուսակցություն, չկա: Կա միայն ապադասակարգային տարրերից կազմված

խմբակցություն: Նա կանգ առնելով ներկա մոմենտի վրա, մատնանշեց մի ելք՝ թե դեմոկրատիան մի շարք սխալներ է արել, որովհետև չի գնացել այն ուղիով, որ ընդգրկել են կադետները: - Ինձ թվում է, թե այս մտայնությունը ցույց է տալիս, թե ինչքան ասվի, թե չկա բուրժուազական մտածելակերպ, այնքան ցույց է տալիս, որ նա գոյություն ունի: Ներկա մոմենտը վերլուծելիս չի կարելի կանգնել այն տեսակետի վրա, թե դեմոկրատիան յուր ուսերի վրա պիտի առնի: Եթե փաստ գոյություն ունի, թե նա կարող է տանել դեպի կործանում, պետք է ի նկատի առնել: Դրանք՝ բուրժուազիան, նույնքան մեծամասնական են: Հայտարարությունները բավական չեն: Դուք նույնքան պետական հողի վրա եք կանգնած, որքան և նրանք: Ասում են, թե հեղափոխության սկզբում կար միահամուռ ցանկություն: Սխալ է: Մեղրամիսը մի քանի ժամ տևեց: Այն ժամանակ, երբ Միլյուկովը հայտնեց Միխայիլ Ալեքսանդրովիչի անունը, բողոքեցին, թե ցենզավորականներ են: Այդ տարբերությունը երկու հոսանքի մեջ նկատվեց: Նպատակները հետո եկան, խորացան: Երկու մոմենտ, երկու տարբեր կարծիքների բախում առաջ եկավ: Մեկն ուզում էր կառավարություն կազմել այնպես, ինչպես ինքն էր ցանկանում, դարդանելյան տենչածներով, մյուսը՝ հակառակը: Դեմոկրատիան հենվում էր այն ուժի վրա, որ ինքն ուներ: Բոլորիդ համար պարզ է, որ այժմ այն լոզունգները, ինչ որ դեմոկրատիան երևան հանեց, բուրժուազիան ինքն էլ ուներ: Նա պայքարը ծայրահեղ աստիճանի էր հասցրել, երբ տեսնում էր, որ յուր շահերը վտանգվում են, և այն ժամանակ նա դառնում էր большевик: Դեմոկրատիան նոր էր կառուցանում մի հասարակարգ: Պետությունը պետք է լիներ բուրժուազական: Մյուս կողմից՝ ուներ մի խնդիր՝ պատերազմ: Դեմոկրատիան չէր կարող բուրժուազական հասարակարգ ստեղծել, որովհետև զբաղված էր պատերազմով, որին ինքը հակառակ էր: Այս ներքին հակասությունը բուրժուազիան շահագործեց: Ես, ասաց նա,* եթե չանեք զիջում, կանեմ իմ արածը: Մեկն ասաց, մի շատ հարգելի անձնավորություն ինձ համար, թե պետք է ղեկը большевизм-ին տալ, որ կործանի երկիրը: Սա ինքը большевизация է: Սա անհեթեթ է: Դուք ուզում եք իշխանությունը հասցնել աբսուրդի, վտանգավար էքսպերիմենտ է: Եթե այնուհետև ուզենք վերստին ձեռք բերել, ո՛չ պետություն, ո՛չ էլ իշխանություն կտան ձեզ: Ես խոստովանում եմ, որ պետությունը կազմակերպելում յուր դրությունը և դերն ունի: Բայց և դեմը ունի: Դուք պետք է միջոց գտնեք, որպեսզի պետական գաղափարը մնա, բայց այն պետական, որ առաջ կար: Նա պետք է հրաժարվի պատերազմի մասին ունեցած աշխարհահայացքից:Եթե մենք ուզենանք էլ, դեմոկրատիան՝ ինքը, չի հրաժարվիլ: Ներկա պետությունը ոչ այն պետությունն է, որ երևաց կադետների մեջ, այլ այն, որ դնում է սոցիալական ռեֆորմներ: Յուրաքանչյուր սրանից դուրս արածը ո՛չ թե հեղափոխություն, այլ бунт է: Սրանից դուրս большевизация է, թե՛ ձախ և թե՛ աջ կողմը:

Նախ[ագահն] - Ուղղում է большевизация-ի մասին ասածը, որ ակնարկվում էր Տ.Բեգզադյանի հասցեին ճառախոսի կողմից:

Նավասարդյան (դաշնակ.) - Ճշմարտությունը որքան շատ կրկնվի, այնքան նա ակնհայտ կլինի: Ամեն մի օրգանիզմ շերտավորված է: Շերտավորված է նաև հայ ժողովուրդը: Բ.** իշխան յուր վերջին մի շարադրության մեջ ասում է, թե Կովկասում ոչ մի ժողովուրդ այնպես շերտավորված չէ, որպես հայ ժողովուրդը: Բուրժուազիայի վրա դրված են եղել պարտականություններ, նա չի կատարել յուր միսիան: Այդ դերն ստանձնել է Հայ Հեղ[ափոխական] Դաշնակցությունը, այն միսիան, որ դուք պիտի կատարեք (ցույց տալով դեպի աջ՝ Հ.Ժ.կուս.): Նոյ Ժորդանիան ասում էր, հայ ժողովուրդը թվական շերտավորված այն չէ տալիս, ինչ որ կարծում են: Պր.Ամիրյանն ասաց, թե դաշնակցությունը հայ ժողովրդի միսիայով չեկավ: Դուք գիտեք

---

* Բուրժուազիան:

** Հավանաբար իշխան Բորիս Արղությանի մասին է խոսքը:

գերմ[անական] այն նկարը, որի տակ գրված է где кошка?: Այդ գրությունը ձև չէ, որ հոսանքի մեջ է գցել: Մեզ ասում են, դուք առաջարկում եք կոալիցիայի սկզբունքը: Այո՛, բայց վերապահությամբ: Ոչ մի հանցանք չկա այստեղ: Եվ այդ է պատճառը, որ ռուսական բուրժուազիան հանձին կադետների չէր կարող հանրապետությունն ընդգրկել, որ գալիս է նրանց համար գերեզմաններ փորելու: Միլյուկովն ասաց, թե իշխանությունը Միխայիլ Ալեքսանդրովիչից են ստացել:

Ամիրյան (Հ.Ժ.կ.) - Նա չի ասել, Մասլյաննիկովն է ասել:

Նավասարդյան (շարունակելով) - Ես ուզում եմ, որ մի բան վերանա: Դրանով բոլորոս կշահենք: Ամեն մեկդ, որ արտահայտիչ եք որոշ օրգանիզացիայի, հայտարարեցեք: Կապիտալիզմը հարազատ է հեղափոխությանը, բայց դուրս եկեք առանց տաղտուկ մտքերի, որ որոշ ցեղերի արտահայտիչ եք: Ես հայտարարում եմ որ հայ դեմոկրատիան, հայ դաշնակցությունը չի կարող այլ մտածում ունենալ, քան թե այն կարծիքը, որ սոցիալիզմը պետք է գա: Հայ ժողովուրդը և դեմոկրատիան գերեզման չպիտի փորեն Ռուսաստանի և Ռուսաստանի դեմոկրատիայի համար: Մենք ընդունում ենք, որ դեմոկրատիան յուր տունը պիտի կառուցանե և ձեռք տա այն դեմոկրատիային, որ հարևան ժողովուրդների և ռուս ժողովրդի միջև կամուրջ պիտի լինի: Գերցենի խոսքը պիտի ընդունենք, թե Ռուսաստանն ապրում է մի որպե, որ ամեն բան պիտի մոռանանք, բոլոր մտայնությունները մի կողմ դնենք: Բուրցևն ասում է. ամբողջ 25 տարվա ընթացքում ոչինչ չեմ գրել օպոզիցիայի դեմ՝ հօգուտ ապսոլյուտիզմի:

Դարբինյան (большевик)* - Քաղաքացինե՛ր, Դ.Անանունն ասաց, որ կողմնակից է կոալիցիային: Նա պարզապես հայտարարեց, թե դեմոկրատիան պետք է բուրժուազիայի հետ զուգընթաց ընթանա, ձեռք-ձեռքի տված: Բայց ինչպես ձեռք տալ բուրժուազիային, երբ նա, հանձին Կոռնիլովի, եկավ յուր հարվածը հասցնելու հեղափոխության: 6 ամիս շարունակ այդ սկզբունքը գործ դրվեց, սակայն ոչինչ դուրս եկավ, ոչ միայն դուրս չեկավ, այլև երկիրը մատնվեց անիշխանության և քայքայման: Եթե խոսք է լինում հարևան ազգերի հետ համերաշխ ընթանալու, դրա դեմ ոչինչ չի կարելի ասել, և պետք է մի ընդհանուր ուղի գտնել: Ինքս հայտարարում եմ, որ большевик եմ և որ ոչ մի զիջողություն դեմոկրատիայի ողմից կադետներին և կոալիցիոն մինիստրության:

Տեր-Ներսիսյան* (սոց. հեղ.) - Մեզանում չկար ոչ կազմակերպված բուրժուազիա և ոչ կազմակերպված գյուղատնտեսություն: Պատերազմը մեզ զրկում է այն բարիքներից, որ տվեց հեղափոխությունը: Պետականության գաղափարի նկատմամբ ասում է, թե մեզանում հայրենասիրությունը տեղական է: Ամենքը մտածում են.-Եթե մեր նահանգն անվտանգ է, ուրեմն լավ է ամեն ինչ: Այսպես է և՛ ՌՈւսաստանում, և՛ մեզանում: Ինքն էլ համամիտ է այն տեսակետին, թե մենք պետք է կապված լինենք Ռուսաստանի հետ:

Քաջազնունին (դաշնակցական) գտնում է, որ մեր ժողովը չպետք է զբաղվի կառավարության ձևի, պատերազմը շարունակելու, թե ոչ և այլ այսպիսի հարցերով, որովհետև նրանք մեր որոշումներով չէ, որ պիտի որոշվեն: Մի բան կարող է կատարել մեր ժողովը, որի որոշումը նշանակություն կունենա, այն է՝ պահանջել, որ ազգերի և ծայրագավառների վերաբերյալ հարցերն չվճռվեն այժմվանից, այլ հետաձգվեն ռուսական Սահմանադիր ժողովի որոշմանը: Մեր կողմից էր չպետք է այսպիսի հարցեր բարձրացնենք՝ չդժվարացնելու համար Ռուսաստանի առանց այն էլ դժվար դրությունը: Եթե մենք կամենայինք, օգտվելով Ռուսաստանի թուլությունից, ազգային

* Մատթեոս Դարբինյանն է (տե՛ս N N 56, 57, 58 փաստաթղթերը):

* Այս և հաջորդ հռետորների ելույթները, որ բաց են թողնվել տվյալ արխիվային գործում, մեջբերում ենք նույն ֆոնդի մեկ այլ գործից (N 21):

նվաճումներ անել, դա կլիներ դավաճանություն: Պետք է զգուշանանք և զգուշացնենք թե՛ մեզ և թե՛ մեր հարևաններին:

Հ.Առաքելյանը (Հայ ժող.կուսակ.) նկատում է, որ Հայ ժող. կուսակցությունը բուրժուական չէ, այլ ապադասակարգային, թեև նա հինգ-վեց ամիս է, որ կազմված է, բայց իրոք 30-40 տարվա գոյություն ունի: Դա այն «Մշակ»-ական հոսանքն է, որին մասնակցել են հայտնի հին դաշնակցականներ զավարյանը, Միքայելյանը... (բողոք, աղմուկ դաշնակցականների շարքում): Հայ ժող. կուսակցությունը հանձին նախկին գործիչների միշտ պաշտպանել է հայ գյուղացիությունը, կոոպերատիվն: Ինքը ևս ողջունում է համերաշխության սկզբունքը, եթե դա նպատակ ունի պաշտպանել հայ ժողովրդի կենսական շահերը: Մենք ազգային ծրագրի պահանջ չենք դնում դժվարություններ չհարուցանելու համար: Մենք պաշտպանում ենք կոալիցիոն կառավարության սկզբունքը և միանում ենք կառավարության արած հայտարարության:

Ղարաբեգյանը (սոց.դեմոկ.), առարկելով նախկին հռետորներին, գտնում է, որ կոալիցիոն կառավարությունը չի կարող փրկել Ռուսաստանը, որովհետև բուրժուազիան շահերով կապված է Ֆրանսիայի, Անգլիայի, Ամերիկայի կապիտալիստների հետ և նրանց է ծառայել (ձայներ՝ «իսկ Գերմանիայի՞»): Այո՛, եթե կամենաք, նաև Գերմանիայի: Եթե բուրժուազիան պահանջում էր Դարդանելը, այ նրա համար էր, որ Եվրոպան ցորեն ստանա Ռուսաստանից, մինչդեռ Ռուսաստանին իրեն չի բավականացնում յուր ցորենը: Ինքը հակառակ է կոալիցիոն կառավարության սկզբունքին: Հայ ժող.կուսակցության մասին խոսելով, ասաց, թե գյուղերում շրջելով, տեսան, որ այդ կուսակցության անդամները միայն կուլակներն են, ոչ մի շիտակ գործիչ չկա այդ կուսակցության մեջ (բողոք, աղմուկ, «հետ վերցրե՛ք ձեգր խոսքը» և այլն): Նախագահը հազիվ վերահաստատում է կարգը:

Վրացյանը (դաշնակ.), պատասխանելով ընդդիմախոսներին, նկատում է, որ Հ.Առաքելյանը, իբրև հին մշակականների, հիշեց մի քանի անուններ, որոնց միշտ հայհոյել է: Ապա հերքում է այն հայտարարությունը, թե հայ ժողովրդի մեջ բուրժուական կուսակցություն գոյություն չունի: Ինքը պնդում է հակառակը. եթե կուսակցությունը կազմակերպված չէ, այնուամենայնիվ, գոյություն ունի բուրժուական իդեոլոգիա: Հեղափոխության ժամանակի առաջին կառվարությունը չէր կարող համապատասխան լինել դեմոկրատիայի պահանջներին, այլ նպատակ ուներ հեղափոխությունը շահագործել հօգուտ իմպերիալիզմի: Կադետների վերաբերմունքը դեպի հայկական հարցը, նեղուցները, արդյունք է բուրժուական տեսակետի: Այնտեղ գործում են գիտակցաբար, իսկ այստեղ նրանց հետևում են: Չպետք է հրաժարվել բոկրժուական կուսակցություն լինելուց: Բուրժուազիան մեծ դեր է կատարել և դեռ ունի կատարելու մեր մեջ, որովհետև կյանքը գնալու է հավասարագծի ուղղությամբ: Դառնալով Լ.Աթաբեկյանի հայտարարության, որ նրանք գալիս են պատասխանատու դեր վերցնելու իրանց վրա, ողջունում է այդ հայտարարությունը, հուսալով, որ այդ կուսակցությունը դիմելու է շինարար աշխատանքի հայ իրականության մեջ: Այժմ նա պետք է գործի դաշնակցության հետ, որ այսքան տարի մենակ է ղեկավարել հայ կյանքը, ենթարկվելով հարձակումների: Հողային խնդրի շուրջը, որտեղ ազգերի սորոտներում համերաշխություն պետք է ստեղծվի, երկու կուսակցությունն էլ նույն տեսակետի վրա են կանգնած: Կոալիցիայի վերաբերմամբ դարձյալ պնդում է, որ նա միակ միջոցն է համախմբելու հեղափոխության ուժերը երկու կողմից էլ և պաշտպանելու հեղափոխության նվաճումները: Սա կարևոր է մանավանդ մեր իրականության մեջ, որ տարբեր և ինքնուրույն պայմանների մեջ է ապրում:

Նախագահը հայտարարում է, որ ստացվել է մի նամակ, բողոք այն անարգական խոսքերի դեմ, որ ուղղված էին Հայ ժող. կուսակցության հասցեին: Այդ խոսքերն արտասանվելիս ինքն զբաղված լինելով, չի կարողացել լսել և հարկ եղած միջոցն ձեռք առնել: Պրեզիդիումը քննության առնելով այդ խոսքերը, հայտարարում

են նրանց անպատեհ և անվայել: Այնուհետև այս վիճաբանությունները վերջացած հայտարարելով, [նախագահն] առաջարկում է ֆրակցիաներին ներկայացնել իրենց բանաձևերը, որ և կատարվում է: Ապա նախագահն առաջարկում է ընտրել ֆրակցիաներից ներկայացուցիչներ՝ այդ բանաձևերը ընդհանուր համաձայնության բերելու: Իսկ եթե որևէ ֆրակցիա ընդհանուր բանաձևին չի համաձայնի, ներկայացնի յուր առանձին բանաձևը:

Ֆրակցիաներն ընդունում են այս առաջարկությունը և ընտրում են երկու-երկու անձ դաշնակցականներից՝ Արարատյան և Վրացյան, Հայ ժող. կուսակցության կողմից՝ Պապաջանյան և Վերմիշյան, սոց. հեղափոխականներից՝ Աթաբեկյան և Տեր-Օհանյան, սոց. դեմոկրատներից՝ Իսախանյան և Անանուն և անկուսակցականներից՝ Մանանդյան և Տեր-Միքայելյան:

Նիստի փակվում է $2^1/_2$ ժամին:

Գ.20, թ.13-16, գ.21, թ.7-8:

N 5
Նիստ Դ

2 հոկտեմբերի 1917թ.

Նիստը բացվեց Արտիստական ընկերության դահլիճում, ժամի 11-ին (նախագահությամբ Հ.Քաջազնունու և ներկայությամբ 149 անդամի):

Կարդացվում է Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության (բոլշևիկների) Թիֆլիսի կոմիտեի կողմից, քարտուղար Ա.Միկոյանի ստորագրությամբ և կոմիտեի կնիքով, մի հայտարարություն՝ 1-ից հոկտեմբերի, որով հայտնվում է, թե այդ կուսակցությունը, թե ինչպես նաև Թիֆլիսի կոմիտեն, նաև Շուշվա և Ալեքսանդրապոլի իրենց կազմակերպությունները բոյկոտ են հայտարարել ազգային համախորհրդին և կարգադրել, որ իրենց անդամները նրան չմասնակցեն, իսկ Մ.Դարբինյանը կուսակցության շարքերից դուրս է գտնվում:

Այս առիթով Մ.Դարբինյանը տվել է գրավոր հայտարարություն,* թե ինքը խոսել է ոչ թե բոլշևիկների ֆրակցիայի կողմից, այլ որպես սոսկ մի անհատ, որ պատկանում է այդ հոսանքին:

Այդ հայտարարությունը ժողովն ընդունում է ի տեղեկություն:

Հ.Առաքելյանը հերթից դուրս հայտարարում է, թե Անդրանիկը հրավիրված է ճակատի պաշտպանության և ժող.կուսակցության ֆրակցիայի մեջ ոչ իբրև այդ կուսակցության պատկանող: Վահան Փափազյանը հայտնում է, որ Անդրանիկը հրավիրված է եղել Արևմտահայ խորհրդի կողմից: Դարձյալ հետևյալ ուղղումներն է անում Հ.Առաքելյանը յուր նախորդ օրվա ճառի մեջ.

1. Ասում են, թե ես Հայ.ժող. ֆրակցիան կոչել եմ մշակական: Դա սխալ է, որովհետև ֆրակցիայի մեջ կան և ոչ մշակականներ:

2. Հին դաշնակցականների և «Մշակ»-ի [միջև] եղած կապի մասին ասածներս իմ անձնական մտքերն էին և ոչ ֆրակցիայի:

3. Մյուս ասածներս ֆրակցիայի կողմից են:

Կարդացվում է Թիֆլիսում նոր կազմակերպված Աշխատավորական ժողովրդական սոց.կուսակցության ողջույնի հեռագիրը* համախորհրդին, որը ժողովն ընդունում է ծափահարությամբ և հանձնարարում է պրեզիդիումին շնորհակալություն հայտնել:

---

* Տե՛ս N 56 փաստաթուղթը:
* Տե՛ս N 71 փաստաթուղթը:

Նախագահի առաջարկությամբ Հ.Առաքելյանը մանդատների ստուգող կոմիտեի կողմից զեկուցում է տալիս մանդատների մասին, որից երևում է, որ տրված է ընդամենը 221 մանդատ: Սրանցից չեն եկել 11 մարդ: Բացակա է նույնպես դրամատիկական ընկերության ներկայացուցիչը: Այդ 221 մանդատից վեճ տարածվեց միայն 9 մանդատի մասին, և կոմիսիան պրեզիդիումի հետ խորհրդակցություն ունենալով, այդ 9 մանդանտների էլ ընդունելի համարեց: Առանձին կարծիքի մնաց պր.Գյուլումյանը, որի կարծիքը լսելուց հետո ժողովը, չնչին փոքրամասնության դեմ, որոշեց բոլոր մանդատները օրինավոր ճանաչել:

Դրվում է առաջարկություն համախորհրդի իրավասության մասին, որի վերաբերմամբ Կարճիկյանը դաշնակց. ֆրակցիայի կողմից ներկայացնում է մի բանաձև, առաջարկելով, որ մյուս ֆրակցիաներն էլ ներկայացնեն իրենց բանաձևերը, որոնք քննելուց հետո ժողովը քվեարկությամբ ընտրություն անի:

Այս հարցի առիթով ծագում են երկար վիճաբանություններ, որոնց մասնակցում են Ամիրյանը, Սուրխաթյանը, Խոնդկարյանը, Լեոն, Ղազարյանը, Հ.Հարությունյանը, Ս.Իսախանյանը, Մալխասյանը, Ղազարյան-Լազոն, Մեսրոպ եպիսկոպոսը, Անտոն Աիարոնյանը: Ա.Ղազարյանը, Սողոմոնյանը: Վիճաբանությունից պարզվում է, որ օրակարգի մեջ այդ հարցը դրված չլինելով, ֆրակցիաները պատրաստված չեն եղել պատասխանելու: Դարձյալ [առաջարկեց] համախորհրդի և նրանից ընտրվելիք գործադիր մարմնի իրավասության հարցը, որը շոշափում է կուսակցությունների ծրագրային սկզբունքներ, շատ պատասխանատու հարց է: Ուստի խոսողները գալիս են այն եզրակացության, թե պետք է այդ հարցը հանել այսօրվա օրակարգից և առաջիկա նիստերից մեկում դնել, նախապես հայտարարելով: Կարճիկյանը դաշնակցության կողմից լիովին համաձայնվում է այս մտքին և հետ է վերցնում յուր առաջարկած բանաձևը:

Նախագահը հայտարարում է, որ համախորհրդի իրավասության հարցը այսօրվա օրակարգից վերացվում է: Ապա հայտնում է, որ կլինի մի փոքր ընդմիջում, որից հետո կկարդացվի միջկուսակցական խորհրդակցության բանաձևը մոմենտի մասին:

Ընդմիջումից հետո Մ.Պապաջանյանը միջկուսակցական խմբագրական հանձնաժողովի կողմից խոսելով, այն միտքն է արծարծում, թե մեր ժողովուրդը կանգնած է վտանգի առաջ: Այդպիսի րոպեում մենք պետք է գտնենք գործունյա մի ճանապարհ: Մասնաժողովին հաջողվեց եղած բանաձևերից կազմել մի ընդհանուր բանաձև, որը կկարդա քարտուղար [Հակոբ] Մանանդյանը:

Մանանդյանը կարդում է հետևյալ ընդհանուր բանաձևը.

«Նկատի ունենալով, որ ժամանակավոր նոր կառավարությունը այժմ ավելի քան երբևէ կարիք ունի Ռուսաստանի բոլոր ժողովուրդների անվերապահ աջակցության և որ հեղափոխական 7 ամիսների ընթացքում տեղի ունեցած իրադարձությունները ցույց են տալիս թե անհնար է ստեղծել երկրի մեջ ուժեղ պետական իշխանություն, առանց այդպիսի աջակցության, նաև նկատի ունենալով, որ նոր կառավարության սեպտեմբերի 25-ին հրատարակած դեկլարացիան իր բովանդակությամբ համապատասխանում է ստեղծված իրական պայմաններին, ընդգրկում է իր մեջ ներկա քաղաքական պայմանի հրամայական պահանջները և իր հայտարարած սկզբունքներով գոհացուցիչ պատասխան է տալիս նաև հայ ժողովրդի մինչև Սահմանադիր ժողովն ունենալիք պահանջներին, ռուսահայ ազգային համախորհուրդը, ռուսական մեծ Հեղափոխության հետևանքով առաջին անգամ գումարված ազատ պայմաններում, հայտնում է իր բացարձակ վստահությունը ժամանակավոր նոր կառավարության և խոստանում է իր կատարյալ աջակցությունը բոլոր տրամադրելի միջոցներով»:

Ժողովը ծափահարությամբ ընդունում է այս բանաձը, ձեռնպահությամբ սոց.դեմոկրատ. ֆրակցիայի:

Ղ.Տեր-Ղազարյանը հայտնում է, որ սոց-դեմոկրատական ֆրակցիան առանձին բանաձև է ներկայացնում նախագահության:*

Նախագահը ողջունում է բանաձևի ընդունելությունը:

Նախագահը հայտարարում է, թե ժողովն անցնում է քննելու վերաբերմունքը դեպի Անդրկովկասյան հատուկ կոմիտեն: Միջկուսակցական խորհրդակցությունը այս հարցի համար ընտրել է երկու զեկուցանող՝ Հ.Առաքելյանին և Ն.Աղբալյանին:

Հ.Առաքելյանը, հայտնելով, որ ինքը միջկուսակցական խորհրդակցության կողմից ընտրված լինելով զեկուցանող, իր ասելիքը անհատական և մասնավոր բնույթ է կրում և ոչ թե Հայ ժող.կուսակցության ֆրակցիայի կարծիքն է արտահայտում: Ապա նա ակնարկ ձգեց հայ ժողովրդի դրության մասին Անդրկովկասում ռուսաց տիրապետության օրերից մինչև հեղափոխության օրերը: Ազգաբնակչությունը ողջունեց Օզակոմի նշանակվելը Ժաման[ակավոր] կառավարության կողմից,[1] որը բաղկացած էր ռուսից, մի հայից, մի թուրքից և երկու վրացուց: Շուտով հարկ եղավ Օզակոմին կից խորհրդակցական մարմին կազմել 4 ազգի ներկայացուցիչներից, բայց դա ոչ իրավական հիմք ուներ և ոչ առանձին հեղինակություն էր վայելում, ընդհակառակը, առանձին ազգեր կարծում էին, թե իրանց ներկայացուցիչները հարցը պետք է քննեն և լուծեն իրանց ազգային շահերի տեսակետից: Այդ խորհրդակցությունը վերջիվերջո լուծվեց: Օզակոմի դեմ ևս տրտունջներ առաջ եկան, թե նա չի կարող բավարարել օրվա կենսական պահանջներին: Թեպետ Կովկասը Ռուսաստանի բաղդատմամբ ավելի խաղաղ է և հանգիստ, բայց և այնպես Օզակոմի գործունեության թերությունները պետք է խոստովանել, որոնք հետևանք են կենտրոնական իշխանության թուլության և տատանվող քաղաքականության: Ինքն առաջարկում է օզակոմը վերակազմել 7 անդամից, որոնցից չորսը՝ ռուսներից, տիրող սոցիալիստական կուսակցություններից, իսկ 3 հոգի՝ տեղական երեք խոշոր ազգերից,

Ն.Աղբալյանն ասում է, թե երբ Օզակոմը Անդրկովկաս եկավ, ժողովուրդը ոգևորությամբ նրան ողջունեց, սակայն ոգևորությունը շուտով տեղի տվեց հիասթափության, որովհետև Անդրկովկասը առանձին ազգությունների երկիր է և յուրատեսակ հատկություններ ունի: Ազգերի տրամադրությունները լարված են իրար դեմ, որ պարզ երևաց, իմիջի այլոց, զեմստվոյի հարցի քննության ժամանակ: Այս պատճառով Օզակոմը ներկայացրեց Իրանից ոչ թե մի ամբողջական կառավարություն, այլ առանձին-առանձին կառավարիչներ, որոնց շուրջը խմբվում էին ազգությունները: Այս դրության մեջ իրանց ուժեղ էին զգում թուրքերը և մանավանդ վրացիները, որոնք, իբրև սոց-դեմոկրատականներ, ահագին ազդեցություն ձեռք բերին թե՛ կենտրոնում և թ՛ե գավառներում: Թույլ էր հայերի դրությունը, նախ՝ որովհետև նրանց ներկայացուցիչ Միք.Պապաջանյանը չէր պատկանում այն կուսակցության, որ ամենից ուժեղն էր հայ ժողովրդի մեջ, ուրեմն և չէր կարողանում իր գործունեության և պնդումների համար հենարան գտնել հայ ժողովրդի մեջ, ինչպես էին թուրքերն ու վրացիները, և երկրորդ՝ որ հայ տարրը ինքը թույլ է Անդրկովկասում մյուս ազգությունների մեջ և գլխավորապես այս հանգամանքին պետք է վերագրել Մ.Պապաջանյանի թուլությունը և ոչ թե յուր անձնական հատկություններին: Հայ տարրի թուլության պատճառը հռետորը գտնում էր նախ այն պատմական իրողությունը, որ 11-րդ դարից ի վեր կորցնելով ազգ[ային] իշխանությունը, կորցրել են և իշխելու ունակությունը, և այսօր մեր մի հայ կոկարդավոր պաշտոնյա ժողովրդի աչքին խորթ ու կասկածելի է թվում: Երկրորդ՝ որ հայերը իրանց բնակչության դիրքերով բազմաճակատ են և շրջապատված են օտար, ոչ բարյացակամ տարրերով, որպիսի հանգամանքը սովորեցրել է նրանց զգուշավոր լինել և խիզախ քաղաքականությունից հեռու մնալ: Երրորդ պատճառը նա համարում էր

* Տե՛ս N 21 փաստաթուղթը:

թուրքահայկական դատը, որ գրավել էր հայ գործունյա տարրերի ամբողջ ուշադրությունը, այնպես որ հայ ժողովուրդը պատրաստության հոգ տարված չէր: Մանավանդ երբ վրա հասավ վերջին պատերազմը, հայերի մասսայական կոտորածով և տեղահանությամբ՝ ու մեզ բոլորիս շշմեցրեց և մեր բոլոր ուշադրությունը գրավեց, որից օգտվեցին վրաց սոց.դեմոկրատները և խոշոր նվաճումներ արին: Գալով Օզակոմի առաջիկա կազմին- հռետորը գտնում էր, որ նա կազմված պետք է լինի 7 անձից, որոնցից 4-ը՝ ռուս (երկու սոց-հեղ. և երկու սոց.դեմ.), իսկ երեքն՝ երեք ազգերի ներկայացուցիչներից:

Նախագահն առաջարկում է կեդր[ոնական] կառավարություն ուղարկել համախորհրդի ընդունած բանաձևը, որը ժողովն ընդունում է:

Նիստը փակվում է $2^1/_2$ ժամին:

Գ.21, թ.8ա-9 և հակ.:

N 6
Նիստ Ե

3 հոկտեմբերի 1917թ.

Նիստը բացվեց Արտիստական ընկերության դահլիճում, առավոտյան 11 ժամին, նախագահությամբ Լ.Աթաբեկյանի և ներկայությամբ 140 պատգամավորի:

Ինժեներ Աղաբալյանը ներկայացնում է պերզիդիումին ինժեներների ընկերության հայտարարությունը և բանաձևերը* համախորհրդի օրակարգի հարցերի մասին: Ժողովը որոշեց այդ հայտարարությունն ի նկատի ունենալ ընդհ[անուր] բանաձևեր մշակելու ժամանակ:

Նախագահը հայտարարում է, որ շարունակվելու են վիճաբանությունները դեպի կովկասյան կառավարությունը վերաբերմունքի նկատմամբ:

Փիրումյանն (սոց.-դեմոկր.) ասում է, որ իշխանությունը պետք է բարձրից նշանակված լինի և մի սկզբունքով: Կովկասյան իշխանությունը կազմված է ազգային հատկանիշների սկզբունքով և սրա մեջ է նրա թուլության պատճառը: Այս կամ այն ներկայացուցիչը ավելի կամ պակաս ուժեղ է, նայելով, թե որպիսի հենարան ունի յուր ազգի մասսայի մեջ: Նրանց յուրաքանչյուրի մոտ կազմված էր ազգային կաբինետ, որ ազդում էր ընդհ[անուր] գործերի վրա: Նույն դրությունը ստեղծվեց նաև գավառներում, ուր ուղարկվում էր ոչ թե մի լիազոր, այլ մի քանիսը՝ ազգային սկզբունքով: Այնպիսի մի դեպք, ինչպես Բերկրի.Կալայինն էր,[1] քննելու համար քննիչ հանձնաժողով ընտրվեց դարձյալ ազգային սկզբունքով: Գործերը այս կերպով քայքայվում էին և ոչ թե շինվում: Իշխանության կառքը քաշելու համար չունենք միջին ձի, այլ ունենք կողմնակիներ, որ աջ և ձախ են քաշում: Պետք է այստեղ իշխանություն կազմել զուտ դեմոկրատական սկզբունքով: Ռուսաստանում ցենզավոր տարրերի համագործակցությունը կարելի է, իսկ մեզ մոտ՝ ոչ, որովհետև այստեղ ցենզավոր տարրը ազգային է: Երկու զեկուցանողներն էլ իբրև սկզբունք ընդունեցին ռուս տարրի նոր տեսակի ...* մասնակցությունը կովկասյան իշխանության մեջ: Բայց ինքը զարմանում է, որ դաշնակցությունը այդ տարրի հետ միացնում է նաև ազգային տարրը: Տեղացին չէ կարող պետական հողի վրա կանգնել: Ինքը ուրախ է,որ հայերի միջից վերացել է հայ իշխանական տարրը. իշխողը պետք է լինի հայ դեմոկրատիան: Դարձյալ երկրորդ զեկուցողը (Աղբալյան) պարզ ցույց տվեց դաշնակցության հոգեբանությունը: Նա ասաց, որ իրանք ինտերնացիոնալիստ են, բայց ցույց են տալիս, որ չեն ճանաչում ինտերնացիոնալիստ կուսակցություն, չեն հավատում, որ

* Այդ փաստաթղթերը գործում չեն պահպանվել:
* Հաջորդ մեկ բառը՝ անընթեռնելի:

տեղացին կարող է նույնքան պետական լինել, որքան ռուսը: Հայտարարում են, որ հայերը պետք է կռվեն չորս ֆրոնտի վրա: Իրենք են ստեղծում այդ դրությունը և կղզիացնում հայերին և իրանց ետևից քաշում հայ դեմոկրատիան: Դրանք նացիոնալիստական գաղափարներ են: Հայտարարում են, որ հայերը թույլ են և իշխելու ունակությունը կորցրել են, բայց միևնույն ժամանակ կռիվ հայտարարեցին Թուրքիայի դեմ մի բուռը կամավորներով: Նրանք խոսում են վտանգի մասին, բայց ու՞ր է այդ վտանգը. դա վախկոտ քաղաքացու հոգեբանություն է և ոչ քաղաքական կուսակցության: Գողը բղավում է. «Բռնեցե՛ք գողին»: Դա բանդիտների հոգեբանությունն է... (սաստիկ աղմուկ, բողոք, զանգահարություն, բացականչություններ՝ «դուրս», ծափահարություն):

Նախագահը հռետորին զրկում է խոսքից անթույլատրելի համարելով «բանդիտ» բառի գործածությունը մի քաղաքական կազմակերպության նկատմամբ, որի պատմությունը սրբագործված է նահատակություններով:

Ժողովականներից ոմանք առաջարկեցին ընդմիջում անել, բայց նախագահը չհամաձայնեց և պրեզիդիումի հետ խորհրդակցելով՝ ժողովի համաձայնությամբ թույլ տվեց Ա.Երզնկյանին օգտագործել նախորդ հռետորին տրված ժամանակի մնացորդը՝ կուսակցության հայացքը պարզելու համար օրակարգի հարցի մասին, այն պայմանով միայն, որ նախապես պարզե սոց.դեմոկրատ. ֆրակցիայի վերաբերմունքը դեպի հռետորի գործածած խոսքը:

Երզնկյանը ասում է, թե ֆրակցիան իրենց հանձնարարեց հայտարարել, որ Փիրումյանի գործածած դարձվածքը միանգամայն անհաջող է, և որ ֆրակցիան չի ընդունում այդ կվալիֆիկացիան Դաշնակցության վերաբերմամբ: (Դաշնակցականները հայտարարում են, որ բավարարված են):

Դառնալով օրակարգի հարցին, ասաց, որ կովկասյան իշխանությունը միատարր պետական կազմ չէր ներկայացնում, այլ զանազան ազգերի ներկայացուցիչներ, որոնք վարում էին ազգայնական շովինիստ քաղաքականություն: Ներկայացուցիչների սենյակները դավադրության սենյակներ էին՝ միմյանց գործունեությունը ոչնչացնելու, չեզոքացնելու համար: Այդպիսի իշխանությունը կտանի դեպի անարխիա, ազգերի փոխադարձ անվստահությունն ու զինումը: Բոլորը համաձայն են, որ կովկասյան իշխանության թուլության պատճառը ազգային հողի վրա հիմնված լինելն է: Պետք է ուրեմն ստեղծել իշխանություն՝ ազատ ազգային ներկայացուցչությունից: Պետք է կազմվի միատարր իշխանություն՝ միջազգային տարրերից, սոց.դեմոկրատներից և սոց.հեղափոխականներից, որպիսին միայն կանգնած կլինի ընդհանուր պետական տեսակետի վրա: Ձեկուցողներից մեկը հայտնեց, թե մենք կռվելու ենք չորս ճակատի վրա: Եթե այդպես է, պետք է ուրեմն ճակատը փոքրացնել և թիկունքը ամրացնել: Այս տեսակետից ինքը վտանգավոր է համարում դաշնակցության և մասամբ Հայ.ժող. կուսակցության վարած քաղաքականությունը, որ մեկուսացնում է հայ ժողովուրդը: Դառնալով այն մեղադրանքներին, թե սոց. դեմոկրատները իրանք մեկուսացնում են հայերին, հայտարարեց, որ այդ մեղադրանքները անհիմն են և անճիշտ և բերեց բազմաթիվ օրինակներ ու լիազորներ նշանակված են դաշնակցականներից: Ընդհակառակը, դաշնակցությունն է եղել, որ աշխատել է հայերին մեկուսացնել և ագրեսիվ քաղաքականություն վարել մյուս ազգերի նկատմամբ, օրինակ, սահմանաբաժանման, գրավված վայրերի կառավարության և նպաստների բաշխման խնդիրներում, որոնք թեպետ և, նույնիսկ դաշնակցականների համաձայնությամբ, պետք է մշակվեին և լուծվեին այստեղ, Կովկասյան կոմիտեին կից միջկուսակցական խորհրդակցության մեջ, սակայն դաշնակցականները առանձին պատգամավորների միջոցով լուծել տվեցին Պետրոգրադում: Դարձյալ անհիմն է այն մեղադրանքը, թե շնորհիվ սոց.դեմոկրատների հայերն անմասն են մնացել այն բարիքներից, որ ստացել են վրացիք և թուրքերը: Այսպես ասողները չեն կարող ցույց տալ ոչ մի փաստ, որ

սոց.դեմոկրատները դրած լինեն ազգային հարց ուղղված լինի միայն մի ազգի օգտին: Այսպիսի մեղադրանքները զրպարտություններ են և կռիվ՝ վատ զենքերով:

Նախագահը հայտարարում է, որ գրված է 25 հոգի խոսողներ: Ժողովը որոշեց ցուցակը փակել և ցուցակագրվածներին 10 րոպե ժամանակ տալ խոսելու:

Ղարաբեգյանը նույնպես համաձայնելով կովկասյան իշխանության սխալ հողի վրա դրված լինելուն, ծանրանում էր այն հետևանքի վրա, որ ունեցել է այդ իշխանությունը գավառներում: Այնտեղ ստացվում էին հայտնի ու գաղտնի հրահանգներ տարբեր բովանդակությամբ տարբեր կոմիսարների կողմից: Տեղական կոմիտեները ընտրված էին լինում հետամնաց տարրերից, սպեկուլյանտներից: Նրանք չէին հասկանում պետականության սկզբունքը: Նրանք աշխատում էին կազմալուծել դեմոկրատական ծրագիրը: Նրանք հետամուտ էին կողոպտելու գանձարանը: Հեղափոխության բերած ազատությունից գավառում օգտվում էին իշխանության ներկայացուցիչները՝ նպաստների բաշխման, նպարավորման և այլ գործերում: Այժմ ժողովուրդը բողոքում է ասելով «զահրումար լինի այսպիսի ազատությունը»: Այսպիսով, շնորհիվ ազգային քաղաքականության, երկիրը բաժանվեց բազմաթիվ մանր անիշխանական հանրապետությունների, որոնց մեջ տիրողները կուլակներն են ու ազնվականները՝ հեղափոխական տոգա հագած: Այս դրությունը այն ժամանակ միայն կբարվոքվի, եթե Հատուկ կոմիտեն վերակազմվի այնպես, ինչպես առաջարկեց սոց.դեմոկրատների ներկայացուցիչը: Դա միայն կարող է կռվել անիշխանության դեմ:

Ժողովը որոշում է ֆրակցիան[ներ]-ի ներկայացուցիչներից յուրաքանչյուրին 5 րոպե տալ խոսելու:

Ղ.Տեր.Ղազարյանը հրաժարվում է խոսելուց, որովհետև հինգ րոպեում չէ կարող արտահայտվել:

Ս.Հարությունյանը ասում է, թե Անդրկովկասյան հատուկ կոմիտեի կազմը պատահական չէ եղել: Դեռ հեղափոխությունից առաջ լսվում էր ազգերի ձայնը, որոնք պահանջում էին ազգային ինքնորոշում: Հեղափոխությունից հետո Ժամանակավոր կառավարությունը չէր կարող անտես անել ազգերի այս ցանկությունը, ուստի և կազմեց Անդրկովկասյան [հատուկ] կոմիտեն ազգային սկզբունքով: Անձերի ընտրության հարցում էլ կենտրոնական իշխանությունը ղեկավարվեց հայտնի սկզբունքով՝ ընտրել անդամներ այն տարրերից, որոնք առաջ բերեին հեղափոխությունը: Դժբախտաբար այստեղ ազգային սկզբունքը գերիշխող հանդիսացավ, չնայելով, որ կային այնտեղ պետական սկզբունքի վրա կանգնած անդամներ, ինչպես Խառլամովը և մանվանդ Միք.Պապաջանյանը: Հռետորը երկար կանգ է առնում, թվելով Պապաջանյանի աշխատությունները թե՛ կոմիտեում և թե՛ ազգային շրջաններում (օրինակ՝ հողային մասնաժողովի հիմնարկությունը, երդվյալների, գյուղական պահակների կազմակերպությունը, գաղթականական մարմնի ստեղծումը, զանազան պետական և ազգային խորհրդակցությունների հրավիրումը և այլն): Ավելին անել անկարելի էր, մանավանդ որ մի կողմից՝ հեղափոխությունից հետո հին պաշտոնյաները հեռացվեցին, որոնց փոխարինել նորերով դժվար էր և մյուս կողմից՝ որովհետև հենց կոմիտեի կողքին ստեղծվեց բանվորական և զինվորական խորհուրդ, որ բոլոր գործն առել էր իր ձեռքը և առանց որի համաձայնության չէր կարելի ոչինչ անել: Այնուհետև առարկելով Աղբալյանին, հռետորեն ասում էր, թե Պապաջանյանն իբրև կոմիտեի անդամ չի պատկանել որևէ կուսակցության, որպիսի հենարանի հարց ծագեր, այլ կանգնած է եղել կուսակցություններից դուրս և միշտ շփում է ունեցել բոլոր կուսակցությունների հետ և խորհրդակցել է նրանց ներկայացուցիչների հետ: Եթե Աղբալյանի ասածի նման մի դաշնակցական լիներ կոմիտեի անդամ, դա առաջ կբերեր փոթորիկներ հակառակորդների մեջ: Դարձյալ բողոքում է Աղբալյանի այն հայացքի դեմ, որ հայ ցեղը կորցրել է իշխելու ունակությունը և վարժվել է ուրիշների իշխանության ենթարկվել: Դա հակասում է պատմության փաստերին: Նա բերում է օրինակների

դպրոցների փակման, կալվածքների գրավման, թուրքահայերի ապստամբության և այլ դեպքեր: Գալով կոմիտեի ապագա կազմին, գտնում է, որ նա պետք է ազգային լինի, ներկա օրերում ամոթալի կլինի խոստովանել մեր ապիկարությունը ինքնավարության գործում: Չխենկելին Պետրոգրադում հանդես եկավ ոչ իբրև սոց-դեմոկրատների ներկայացուցիչ, այլ՝ վրաց ազգի: Պետք է նշանակված լինի մի գեներալ-կոմիսար, որ կարող է ունենալ օգնականներ ազգություններից և անպատճառ խորհուրդներ, որոնք կազմված կլինեն ազգությունների մեջ տիրող կուսակցությունների ներկայացուցիչներից: Բայց ինչ էլ որ լինի կոմիտեի ապագա կազմը, եթե նա նեցուկ չունենա ժողովրդի մեջ, ոչինչ չի կարող անել:

Ամիրյանը, առարկելով Ա.Երզնկյանին, ասում է, թե դաշնակցությունը հայ բնազդի արտահայտությունն է, և նրա սխալները հայ ազգի բնազդի սխալներն են: Իրոք հայ ազգը կարիք ունի կռվելու չորս ֆրոնտի վրա: Զեմստվայի խորհրդակցության ժամանակ մենք ագրեսիվ չէինք և հետևանքը տեսանք: Մեր թուլության պատճառը մեր ազգամիջյան հարաբերությունն է: Դաշնակցությունը յուր դեմ հակառակություն է ստեղծել օտարների մեջ նույնիսկ հայ սոցիալիստների մեջ: Մեր մեջ կառավարող տարրը բուրժուազիան է, և դաշնակցությունն ընդունել է ագրարային սոցիալիզմի տիպը, որպեսզի բուրժուազիայի հետ ընդհարում չունենա: Քաղաքներում նա օգտվել բուրժուազիայի ոչ միայն ձայներով, այլև դրամական աջակցությամբ: Իսկ վրաց մեջ կառավարող տարրը հողատեր ազնվականությունն է, ուստի վրացիք ընդունել են բանվորական սոցիալիստական տիպը, որպեսզի չկապվի գյուղացիության հետ: Հռետորը սխալ է համարում Դաշնակցության ագրարային ծրագիրը: Լսեցինք, որ էսեռները պահանջում են, որ իրենց ագրարային ծրագիրը գործադրվի մաքսիմալ չափով: Բայց դուք տեսաք գյուղացիական ժողովում, որ վրացիներն ու թուրքերը հակառակ են այդ ծրագրին, որովհետև հողի սեփականության կողմնակից են նրանք: Պետք է չափավոր ագրարային ծրագիր ունենալ, չգրգռել մեր դեմ վրացի ազնվականներին և թուրք բեգերին: Թող այդ ագրարային ծրագիրը ուրիշ կուսակցություններ տանեն, բայց ոչ Դաշնակցությունը: Նա եղել է ազգային կուսակցություն, թող այդպես էլ գործի: Մեր ագրարային քաղաքականությունը պետք է լինի բուրժուական. պետք է հողային բանկ ստեղծել՝ հայ ժողովրդին հող մատակարարելու համար:

Բաբայանը (սոց. դեմ. հնչ[ակյան]) գտնում է, որ Անդրկովկասյան հատուկ կոմիտեն թույլ էր, ազգայնական սկզբունքով կազմված լինելու պատճառով: Սովորել էին սև մուտքից ելումուտ անել և մեկը մյուսի գործողությունները դիտել: Եթե ապա գա կազմի մեջ դարձյալ ազգային սկզբունք պահպանվի, դարձյալ խաղաղություն չի լինի: Իսկ եթե դաշնակցականները մտնեն այնտեղ, կոտորածների վտանգը կավելանա: Պետք է կառավարությունը այստեղ կազմված լինի չեզոք՝ էսեռական և էսդեկական տարրերից:

Ա.Չիլինգարյանը (դաշնակցական), քննելով Անդրկովկասյան հատուկ կոմիտեի թուլության պատճառները, գտնում է, որ նրա անդամները չէին պատկանում այն կուսակցություններին, որոնց ձեռքին է ռեալ ուժը: Կադետների մինիստրության ժամանակ հասկանալի էր այդ կազմը, բայց երբ կադետներն ընկան, այստեղ կազմը պետք է փոխվի: Երկրորդ պատճառն այն է, որ հայ ներկայացուցիչը չի պատկանում այն կուսակցության, որ յուր հետևից ունի հայ ժողովուրդը: Ինքը կողմնակից է կոալիցիոն կառավարության, ինչպես ընդունվեց և Ռուսաստանում: Կազմը պետք է ունենա ազգային տարրեր՝ տիրող կուսակցությունների ներկայացուցիչներից, և պետական չեզոք տարր, որ հաշտեցնող դեր կատարե: Դաշնակցությունը, որ մեկուկես միլիոն հետևող ունի, չի կարող առանց ներկայացուցչի մնալ: Դաշնակցությունը կանգնած է նույն ազգային հիմքի վրա, ինչպես և շատ ուրիշ սոցիալիստական կուսակցություններ:

Շահխաթունյանը գտնում է, որ տեղական իշխանության կազմության մեջ մաս պետք է ունենա Ռուսաստանի դեմոկրատիան: Զուտ ազգային իշխանություն կարող է կազմել Սահմանադիր ժողովից հետո, երբ նորմալ պայմաններ ստեղծվեն: Խոսելով վրաց սոց. դեմոկրատների մասին, որ նրանք ազգերի մեջ խտրություն չեն դնում, հռետորը բերում է փաստեր հակառակը հաստատող, օրինակ, որ հայ սոց. դեմոկրատ ներկայացուցիչներ ազգային ժողովների մեջ ընտրվում են ոչ թե այն անձերը, որոնց հայ աշխատավոր մասսան է ընտրում, այլ վրաց սոց. դեմոկրատները: Հայերը սոց. դեմոկրատների կողմից ճնշված են. կամ պետք է նրանց առհասարակ զրկել իրավունքից իբրև հակահեղափոխական տարրի, կամ ձայն տալ հայերի ուժեղ կուսակցության ներկայացուցչին: Մինչև որ սոց. դեմոկրատները չհաշտվեն այս սկզբունքի հետ, ոչ մի կառավարություն չէ կարող յուր տեղում լինել:

Ա.Երզնկյանը (սեփական հերթում խոսելով), առարկելով այն կարծիքին, թե պետք չէ ռուսներ հրավիրել կովկասյան իշխանության մեջ, որովհետև մեր հակառակորդ ազգերը իրանց ազդեցության կենթարկեն նրանց, հիշեցրեց մի հակառակ երևույթ, երբ ռուս իշխանավորի մոտ ելումուտ էին անում հայերը, ուրեմն ամեն ազգ կարող է ազդել եկվորների վրա: Ուրեմն չպետք է գան այնպիսի անձեր, որոնք կարող են ենթարկվել այս կամ այն ազգի ազդեցության: Իշխանությունը պետք է պատկանի սոցիալիստական կուսակցություններին: Հռետորը պաշտպանում է սոց. դեմոկրատներին այն մեղադրանքի դեմ, թե նրանք վարել են ազգային քաղաքականություն Անդրկոկասյան [հատուկ] կոմիտեի մեջ: Հայերը սխալ են գործում, որ չեն գնում դեմոկրատիայի հետևից և կղզիացած են մնում: Սրանից օգտվում են թուրքերը դեմոկրատիայի դիմակի տակ: Եթե կղզիացման քաղաքականությունից ձեռք չքաշենք, կպատահենք այնպիսի անակնկալների, որ Թուրքահայաստանում տեղի ունեցան:

Բժ. Ղազարյանը (դաշնակցական) խոսելով սոց. դեմոկրատիայի մասին, բերեց Ալեքսանդրապոլում գումարված զինվորական խորհրդի միջադեպը, երբ սոց. դեմոկրատ Փիրումյանը ճնշումներ գործադրեց դաշնակցության վրա և նրան տեռորի ենթարկեց, հեռագրելով, թե Դաշնակցությունը չենթարկվեց դեմոկրատիային: Հայերի մեկուսանալու գլխավոր պատճառը գտնում էր այն հանգամանքը, որ հայ սոց. դեմոկրատների հայ ժողովրդի մեջ իրենց հետևից ուժ չունենալով, վրացիների մեջ այնպես են ներկայանում, իբր թե հայ մասսա ունեն իրենց հետևից: Մինչև նրանք չհրաժարվեն այդ ոչ պատշաճ դերից, հայերը կմնան կղզիացած:

Նիստի վերջում նախագահը կարդաց Վանից ստացված հեռագիրը՝ հայոց հարվածող գնդի խորհրդի նախագահ Մելքումյանի ստորագրությամբ, որով ողջունում էր Ազգային խորհրդի բացումը և ցանկանում էր հաջողություն ազգային կյանքի շինարարության գործում:

Ժողովը ծափահարությամբ ընդունեց հեռագիրն ու հանձնարարեց պրեզիդիումին շնորհակալություն հայտնել:

Նիստը փակվեց ժամը 3-ին:

Գ. 21, թ. 10-13 հակ.:

N 7

Նիստ Զ

4 հոկտեմբերի 1917թ.

Նիստը բացվեց Արտիստական ընկերության դահլիճում, ցերեկվա 12 ժամին, նախագահությամբ Ղ.Տեր-Ղազարյանի և ներկայությամբ 146 անդամի:

Ժողովը, գտնելով, որ վիճաբանությունները շատ ձգձգվում են, որոշեց ֆրակցիաների ներկայացուցիչներին տալ տասական րոպե և զեկուցողներին՝ կես ժամ, և ֆրակցիաներից խոսի մի-մի մարդ:

Տեր-Օհանյանը (էսեռ), առարկելով զեկուցանող Աղբալյանի տեսակետներին հայ ժողովրդի մեկուսացած դրության պատճառների մասին, չէր համաձայնում նրանց հետ և գտնում էր, որ հայ ժողովրդի մեկուսացման պատճառն այն է, որ նա չէ կրթվել սոցիալիստական գաղափարներով, որ Դաշնակցությունը ոչ թե սոցիալիստական կուսակցություն է, այլ մի կազմակերպություն՝ արտահայտություն հայ բնազդի հոգեբանության: Ուստի նա չի կամեցել հայ մասսան կրթել սոցիալիստական ոգով և չէր էլ կարող այդ անել: Այդ պատճառով հայ մասսան ավելի տարվել է քաղաքային խնդիրներով, քան տեղական ռեալ հարցերով:

Կարճիկյանը, առարկելով սոցիալիստ ճառախոսներին, նկատում է, որ բոլոր խոսողները միաբան են այն տեսակետի վրա, որ հայ ժողովուրդը մեկուսացած է, և սրա պատճառը սոցիալ-դեմոկրատները գտնում են նրա մեջ, որ Դաշնակցությունը վարել է թիկունքի՝ թուրքահայկական քաղաքականություն: Ինքը՝ սակայն, գտնում է, որ հայ ժողովրդի մեկուսացման հարցում մեծ դեր է կատարել կուսակցական պայքարը: Սոցիալ-դեմոկրատները հայտարարելով թե Դաշնակցությունը ոխերիմ հակառակորդ է թուրքերին, որ թուրք-հայկական ընդհարումները Դաշնակցության գործն են և այլն, կամենում էին մեկուսացնել Դաշնակցությունը, բայց իրոք մեկուսացրին հայ ժողովուրդը: Այն մեղադրանքի դեմ, որ Դաշնակցությունը սահմանաբաժանման, գրավված վայրերի կառավարության և գաղթականների նպաստների գործում տեղական դեմոկրատիայից մեկուսացված և անջատ գործեց, հռետորը նկատեց, թե փաստերը ճշտիվ չեն բերված, բայց և այնպես այս հարցերում էլ Դաշնակցությունը Պետրոգրադում գործել է՝ համառուսական դեմոկրատիայի առաջ հարցը պարպելու համար: Գալով Օզակոմի ապագա կազմին, հայտնում է, որ իրենց առաջարկած ձևը իրանք էլ իդեալական չեն համարում, բայց և այնպես լավագույնն են համարում:

Ի վերջո հռետորն առաջարկում էր պարզել կուսակցությունների մեջ տեղի ունեցած թյուրիմացությունները և գալ համաձայնության, այլապես գործերը վարելը անհնարին է:

Վերմիշյանը (Հայ ժող. կուս.) նկատեց, որ հարցի էական կետը կազմում է Անդրկովկասյան իշխանության ապագա կազմը: Մենք պետք է ի նկատի առնենք դրությունը ներքին Ռուսաստանում: Այնտեղ ներկայումս երկու ուժեղ հոսանք կա. բոլշևիզմը, որ հակառակ է կոալիցիոն կառավարության, և նրանից առաջ գտնվող մյուս բոլոր կուսակցությունները, որոնք կողմնակից են կոալիցիայի: Մենք վերջին տեսակետին պետք է հարենք, որպեսզի կարողանանք ստեղծել ուժեղ իշխանություն: Ուստի մեզ ընդունելի չէ սոցիալիստական կուսակցությունների առաջարկած միատարր սոցիալիստական կազմը:

Հովսեփ Բեգզադյանը (սոց. դեմ.), առարկելով դաշնակցական հռետորներին, ասաց, թե բանվորական և գյուղացիական օրգանները ազգային քաղաքականություն չեն վարել, այլ վարել են հեղափոխական-դեմոկրատական քաղաքականություն: Նրանք չեն վնասել հայ ժողովրդի շահերին, այլ գուցե վնասել են Դաշնակցության: Իրանք կռվում են Դաշնակցության դեմ, որովհետև նրան դասակարգային սոցիալիստական կուսակցություն չեն համարում: Եթե Դաշնակցությունն զբաղվեր միմիայն տաճկահայերի խնդրով, իրանք ամենայն համակրությամբ կվերաբերվեին նրան: Բայց դրա մեջ կան թե՛ ծայրահեղ սոցիալիստներ և թե՝ կղերականներ, դրա համար էլ իրանք կռվում են դաշնակցության դեմ:

Լ.Աբաբեկյանն ասաց, թե Դաշնակցությունը, անտարակույս, մեծ կուսակցություն է, բայց Արևելյան Անդրկովկասի մեջ կան գավառներ, որտեղ դաշնակցականներին ճրագով պետք է փնտրել: Գալով Օզակոմին՝ հռետորը գտնում է,

որ նրա թերությունը նրա մեջ է, որ նա չէ եղել հեղափոխական և դեմոկրատական: Արևելյան Անդրկովկասում հայ և թուրք մասսաները կռվում են թուրք և հայ բեգության դեմ: Եթե Օզակոմը կարողանար այդ խնդիրը կանոնավորել, նա կարժանանար հայ ժողովրդի համակրանքին, թեկուզ դաշնակցական ներկայացուցիչ էլ չլիներ նրա մեջ: Գալով Օզակոմի վերակազմության հարցին, հռետորը գտնում է, որ Օզակոմը չպետք է ստեղծվի մի որևէ ժողովրդի համար, որովհետև Կովկասում ոչ մի հարց չէ կարող լուծվել անջատ մի ազգի համար: Ուրեմն Կովկասյան կոմիտետը* պետք է լինի Կովկասյան երկրային կոմիտետ: Ինքը հակառակ է, որ այդ իշխանությունը նշանակվի ռուսաց կենտրոնական իշխանությունից, որովհետև այդ դեպքում եկողների շուրջը կստեղծվի տեղական ինտրիգա, մանավանդ, որ ռուս ժողովուրդը, նույնիսկ ինտելիգենցիան, Անդրկովկասը չէ ճանաչում: Իրենց ֆրակցիան այն կարծիքին է, որ կովկասյան իշխանությունը պետք է ստեղծե տեղական հեղափոխական կազմակերպությունների (բանվորական, գյուղացիական և զինվորական խորհուրդների) ընդհանուր ժողովը: Կովկասյան կոմիտետը պետք է կազմվի կոալիցիայի սկզբունքով՝ երկու սոց. հեղափոխականից և մի նախագահից, որին կնշանակե Ռուս [աստանի] կենտրոնական իշխանությունը, իբրև յուր ներկայացուցիչ: Գալով մյուս տարրերի ներկայացուցչությանը, դա պետք է թողնվի այդ նոր մարմնի բարեհայեցողության և կարող է բաղկացած լինել երեք հոգուց. մի հայից, մի թուրքից և մի վրացուց: Իբրև հայ ժողովրդի ներկայացուցիչ սոց- հեղափոխական ֆրակցիան առաջարկում է Մ.Պապաջանյանին:

Տիգրան Բեգզադյանը առարկում է Օզակոմի դեմ եղած մի քանի մեղադրանքների դեմ և հայտնում, թե հայկական կաբինետում դավադրություններ չեն կազմվել, Պապաջանյանը ընդունակ չէ այդպիսի բանի: Եթե այդպիսի բան լիներ, ինքն էլ չորսուկես ամիս այնտեղ չէր կարողանա մնալ և աշխատել: Այն մասին, թե Օզակոմը թույլ է եղել, որովհետև սոցիալիստական և հեղափոխական չէ եղել, հռետորն ասում է, թե մի կողմից՝ Օզակոմի կազմն է եղել նրա թուլության պատճառը, և մյուս կողմից՝ կենտր[ոնական] իշխանության թուլությանը: Ինքը չէ ընդունում, թե Պապաջանյանի գործունեության թուլության պատճառը եղել է այն, որ գոյություն է ունեցել կոնտակտ նրա և հայ ժողովրդի մեծամասնությունը ներկայացնող Դաշնակցության մեջ: Եթե Օզակոմի կազմի մեջ Պապաջանյանի փոխարեն մի դաշնակցական լիներ, ավելին չէր կարողանա անել: Գալով Պապաջանյանի գործունեության, հռետորը թվեց մի շարք կարևոր հարցեր, որոնց մեջ Պապաջանյանը նախաձեռնող է եղել և վճռական դեր կատարել: Այսպես, օրինակ, Անդրկովկասից մի ընտրական շրջան կազմելը Հիմնադիր ժողովի ընտրությունների համար, գրավված երկրների վարչության ձևի որոշումը՝ հեղափոխական մարմինների տեսակետի համաձայն, սահմանափոխության աշխատանքը, հայ զինվորական մարմնի կազմակերպությունը, հայկական և վրացական զինվորական մասերի ուժեղացումը և այլն:

Միք-Պապաջանյանը ցավ է հայտնում, որ չէ կարողանալու լրիվ պատասխանել Օզակոմի և յուր մասին եղած քննադատություններին, նախ՝ որ կառավարության անհետաձգելի գործերի պատճառով ստիպված է եղել հաճախ բացակայել համախորհրդի նիստերին և երկրորդ՝ որ անձնական նկատումներով չէ կարող ամեն ինչ անել՝ արդարանալու համար: Օզակոմը թույլ է, ասում են: Բայց նա չէր կարող ավելի ուժեղ լինել, քան ժամանակավոր կառավարությունը: Բայց և այնպես կյանքն այսպես ավելի լավ է, քան Պետրոգրադում և առհասարակ Ռուսաստանում: Թույլ են գտնում և յուր գործունեությունը ամբողջի մեջ: Բայց հայ ներկայացուցիչը չէր կարող ավելի ուժեղ լինել, քան նրա ներկայացրած հայ ժողովուրդը, որ «ճառախոսների վկայությամբ, հալածված է չորս կողմից»: Հայ ժողովրդի մեկուսացման իրողությունը ճիշտ է: Բայց իմ գործունեության թուլությունը

* Օզակոմը:

վերագրում էին նաև իմ անձնական թուլության: Դժվար է սրան պատասխանել, քանի որ փաստեր չեն բերվում: Բայց եթե իմ թուլությունը գտնում են նրա մեջ, որ ես ագրեսիվ քաղաքականություն չեմ վարել, դա ճիշտ է, և ուրիշներին էլ խորհուրդ չեմ տալիս այդպիսի քաղաքականություն վարել: Կամ եթե կասեն, որ ես գնում էի համերաշխության և համաձայնության ճանապարհով, կասեմ՝ ճիշտ է, և պետք է այդ ճանապարհով էլ գնալ: Մի պատճառ էլ իմ թուլության այն է, որ այսօր առաջին անգամ հայտարարեց Դաշնակցության նեկայացուցիչը, որ Դաշնակցությունը չէ կամեցել ինձ աջակցել: Պարզ է, որ եթե Դաշնակցությունը հայ ժողովուրդն է, նրա ներկայացուցիչը թուլ պետք է լիներ: Բայց ինչպե՞ս հաշտեցնել այս հայտարարության հետ Դաշնակցության մի ուրիշ հայտարարությունը հունիսի 4-ի իմ հրաժարականից հետո, երբ Դաշնակցությունը Բեգզադյանի միջոցով ինձ հայտնեց, որ ինձ կաջակցե, և ես մնամ պաշտոնում: Կամ այս հայտարարությունն էր սխալ, կամ Աղբալյանի հայտարարությունը: Երբ ես գալիս էի Կովկաս, ինձ ասացին, որ պետք է հենվեմ կադետների վրա: Բայց ես հարկ համարեցի, իբրև հայ ժողովրդի ներկայացուցիչ, հենվել բոլոր կուսակցությունների՝ հայ ժողովրդի վրա, և ես շարունակ հարաբերությունների մեջ էի բոլոր կուսակցությունների ներկայացուցիչների հետ, որոնք բոլորն էլ ինձ օգնել են, ինչպես և Դաշնակցության առանձին ներկայացուցիչները: Այժմ միայն պարզվում է, որ ես իմ աթոռը պետք է զիջեմ մի ուրիշին, որ մեկուկես միլիոն կուսակիցներ ունի: Ես, սակայն, երբեք պինդ չեմ կպել իմ աթոռին, այլ շարունակ իմ հրաժարականի հարցն եմ վրել զանազան հայկական խորհրդակցությունների մեջ, այստեղ և Բագու, և շարունակ խորհրդակցությունները պնդել են, որ ես մնամ պաշտոնումս: (Ամսաթվերով հիշում է հրաժարականի առաջարկության և հեռագիրների դեպքերը): Ինձ զարմացրեց Երզնկյանի մեղադրանքը, որին համաձայնեց և Դաշնակցության ներկայացուցիչը, իբր թե իմ կաբինետը, ինչպես և իմ հարևան կաբինետը, դավադրության տեղեր են եղել: Սա ոչ այնքան վիրավորական է, որքան սխալ: Ովքե՞ր էին դավադիրները, երբ իմ կաբինետը հաճախողները նույն Երզնկյանը, այլ սոցիալիստները և դաշնակցականներն էին: Ու՞մ դեմ էր ուղղված դավադրությունը, երբ իմ կաբինետը հաճախ այցելում էին պաշտոնական գործերով թուրքեր ու վրացիներ, որոնց ես գործեր էի առաջարկում և աջակցություն ցույց տալիս: Մի՞թե Հայ ժող, կուսակցության դեմ էի դավադրում: Ազգերի փոխհարաբերության մեջ ես գնացել եմ ազգամիջյան հաշտության ճանապարհով: Օգնել եմ վրացիներին եկեղեցական ավտոկեֆալիայի հարցում, կանեմ այն բոլորը, ինչ որ կօգնի վրաց ժողովրդի ավտոնոմիային: Թուրքերի նկատմամբ գնացել եմ նույն ճանապարհով և համոզված եմ, որ կան միջոցներ նրանց հետ հաշտ և համաձայն ապրելու, առանց ագրեսիվ լինելու: Խիստ միջոցներ եմ ձեռք առել թուրքերի կրած վնասները փոխարինելու հարցում, և Երևանում թուրքերի կողմից ինձ ցույց տրված համակրությունը ապացուցեց, որ ես սխալված չեմ իմ քաղաքականության մեջ: Ես հետևել եմ պետական քաղաքականության, որ միակ ընդունելին է մեզ համար: Օզակոմի ապագա կազմը պետք է լինի բացահայտ ազգային ներկայացուցչություն, երեք խոշոր ազգերից մի.մի անձ: և 4 անդամ էլ ոչ թե «տիրող» տարրից, քանի որ տիրող տարր ներկայումս չկա, այլ չեզոք տարրերից, իմ անձնական կարծիքով՝ սոցիալիստական տարրերից: Համաձայն եմ Աղբալյանի կարծիքին, որ պատգամավորների մոտ պետք է ազգային խորհուրդներ ստեղծվեն: Երբ հուլիսի 29-ին Հայկական խորհրդակցության մեջ ինձ առաջարկեցին, որ ես անձամբ հրավիրեմ օգնականներ, քանի որ համագումարը չկայացավ, ես հրավիրեցի օգնականներ Լ,Աթաբեկյանին, Տեր.Ղազարյանին, Երզնկյանին, Փիրումյանին, Բեգզադյանին, Շահմազյանին, Օհանջանյանին և ուրիշների, և իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում այս անձերին, որ ընդունեցին իմ առաջարկությունը և ցույց տվին աջակցություն: Ի վերջո Հայ ժող, կուսակցության և իմ կողմից

հայտարարում եմ, որ մենք կօգնենք այն հայ անդամին, որ ընտրված կլինի Օզակոմի ապագա կազմի մեջ՝ ինչ կուսակցությունից էլ որ լինի:

Երզնկյանը տվեց բացատրություն յուր գործածած «դավադրություն» բառի մասին: Ինքը կամ լավ չի արտահայտվել, կամ իրեն սխալ են հասկացել: Ինքը կամեցել է ասել, որ Օզակոմի որոշ անդամներ իրար չէին հավատում և աշխատում էին միմյանց չեզոքացնել, վճռում էին զուտ ազգայնական հարցեր, և այսպիսի քաղաքականությունը թույլատրելի չէ: Յուր միտքը միայն այս կերպ պետք է ընդունել:

Բժիշկ Ղազարյանը հայտնեց, որ ինքը երկու կաբինետները երբեք դավադրական չէ համարել, այլ ասել է, որ եթե սոցիալիստները նրանց դավադրական էին համարում, ապա Չխենկելին պետք է բողոքեր ու հեռանար:

Ձեկուցանող Հ.Առաքելյանը պատասխանելով առարկություններին, ասաց. - Եթե Օզակոմի հայ ներկայացուցիչը դաշնակցական լիներ, գուցե ավելի վատ կլիներ, անտագոնիզմ հարուցանելով վրացիների և թուրքերի մեջ: Եթե կար մի ներկայացուցիչ, որ վարում էր պես-ական քաղաքականություն, հարթում էր սուր հարաբերությունները և կարգ էր պահպանում կուսակցությունների մեջ, դա Պապաջանյանն էր:

Ձեկուցանող Աղբալյանը պատասխանելով առարկություններին, նկատեց, որ Օզակոմի շուրջը եղած վիճաբանությունները դաշնակցության գործունեության քննադատության բնույթ ստացան, և սա բնական էր, քանի որ դաշնակցությունը եղել է հայ կյանքի քաղաքական ղեկավարը, մի անպաշտոն մինիստրություն, որ պիտի հարուցաներ քննադատություն: Հենված մեր հին և նոր գործիչների վրա՝ մենք բաց ճակատով կանգնած ենք հայ ժողովրդի ներկայացուցիչների առաջ, թե՛ մեր սխալներով ու շեղումներով և թե՛ մեր անձնվիրությամբ, աշխատանքով և ուժով: Առարկելով ընդդիմախոսներին՝ ասաց, թե ինքն առաջարկում էր ոչ թե անձերի, այլ ուժերի կոմբինացիա: Գտնում էր, որ նրանք, որոնք հերքում են չորս ճակատից մեզ սպառնացող վտանգը, անտեղյակ են մեր աշխարհագրական և տեղագրական պայմաններին, մեր տենչերին ու գաղտնիքներին: Իբրև ապացույց, որ ազգերի հակամարտությունը Անդրկովկասում գոյություն ուներ նաև Օզակոմից առաջ, հիշեց տեխնոլոգիական ինստիտուտի և զեմստվոյի շուրջը հարուցված աղմուկները, երբ մեր հարևան սոցիալիստները գնում էին ազնվականների հետ (Երզնկյանը տեղից՝ «կատարելապես սուտ է», բողոք, աղմուկ, նախագահի կողմից նկատողություն): . Ես լսեցի ձեր նկատողությունը, թե սուտ է: Մեզ մեղադրում են, որ մենք կամենում ենք հրավիրել վարյագներ (Օզակոմի նոր կազմի մեջ ռուս անդամներ): Եթե մենք համոզված լինեինք, որ կարելի է հայերի գոյությունը պահպանել, չէինք հրավիրի: Հավասարակշռությունը պահպանելու համար պետք է ոչ թե կուսակցական, այլ պետական տարր մտցնել Կովկասում, ուստի հարկավոր է ռուսներ կանչել: Հայերի մեջ ազնվականության անհետանալը ինքը մեջ բերեց իբրև պատմական երևույթ և ոչ թե իբրև ցանկություն ազնվականության վերականգնման, որ Կովկասի չարիքն է, և որպիսի ցանկությունը միանգամայն հակառակ կլիներ յուր դեմոկրատական հայացքներին: Պատասխանելով այն հռետորներին, որոնք ասում էին, թե միջազգային հողի վրա կարելի է ստեղծել Կովկասում խաղաղ համակեցություն և Դաշնակցությունը յուր ագրեսիվ քայլերով խանգարել է այդպիսի համակեցությունը, հռետորը նկատեց, թե այդպես ասողները միշտ աշխատել են Դաշնակցության ամեն մի գործի մեջ տեսնել ազգային կամ ազգայնական հակումներ: Բոլոր ճնշողների համար ստրուկների ընդդիմությունը համարվել է ագրեսիվ: Հայ աշխատավորը ոչնչով պակաս չէր ուրիշ ազգերի աշխատավորներից: Հայը նույն իրավունքները պետք է ունենա, ինչ որ ուրիշները, և դաշնակցությունը կստիպի տալ այս իրավունքները: Մենք հարյուր հազարավոր զոհեր ենք տվել, էլի կտանք հարյուր հազարներ:

Հայերի մեկուսացման մասին խոսելով, հռետորը նկատեց, որ այդ մեկուսացման պատճառը Դաշնակցությունը չէ, այլ այն կուսակցությունները, որոնք

անդադար մեկուսացում բղավելով, զորացնում են նրան, որոնք վարկաբեկում են այդ ուժեղ կուսակցությունը, որ հայ ժողովրդի անձնվեր ինտելիգենցիայի խոշորագույն մասն է կազմում, որոնք հայտարարում են, թե հայի փրկությունը Դաշնակցության կործանման մեջ է գտնվում: Մեզ ասում են, որ գնանք դեմոկրատիայի հետևից: Բայց մի՞թե դեկոկրատիա չէնք, և ինչպե՞ս կարող է մի ուժ, որ հավասարազոր է, գնալ մյուսի հետևից. խոսք կարող է լինել միասին գնալու, գործակցելու մասին, այլ ոչ հետևից, և դաշնակցությունը այդ չի անի:

Հռետորը գտնում է, որ ներկա երևույթները կրկնություն են հին պատմական վեճի, փոխված են բառերը, միջավայրը, բայց էությունը նույնն է մնացել: Միշտ գտնվել են խելոքներ, որոնք հորդորել են ծուլվել ուժեղների հետ, բայց և միշտ գտնվել են դաշնակցականներ, որոնք հակառակ են եղել ծուլվելու սկզբունքին, և այսպես քարոզողների անունները կորել են: Առարկելով այն սոցիալիստ հռետորներին, որոնք ասում էին, թե Դաշնակցության գործը պարենավորումն է, նկատեց, թե այդ տեղը հարմար է սոցիալիստներին և ոչ թե դաշնակցականներին: Դաշնակցությունը կարիք չունի ոչ ոքից հեղափոխության դասեր առնելու, նա, որ գործել է պարսկական և թուրքական հեղափոխությունների գործում, նա, որ բռնակալության ռեժիմի տակ համարձակվել է դուրս գալ այստեղ՝ իրավունքը պաշտպանելու և բռնության դեմ կռվելու:

Այնուհետև հռետորը պատասխանեց Ս.Հարությունյանի, Տեր-Օհանյանի, Տ.Բեգզադյանի, Լ.Աթաբեկյանի մի քանի առարկությունների, որից հետո Պապաջանյանի խոսքերին դիմելով, ցավ հայտնեց, որ Պապաջանյանը նրան և Դաշնակցության ֆրակցիային վերագրեց խոսքեր, որ իրենք չեն ասել՝ իբր թե Պապաջանյանը չէ եղել մեր ներկայացուցիչը, բայց ինքն էլ վկայեց, որ դաշնակցականները աշխատակցել են իրեն: Հենց այն փաստը, որ դաշնակցականները չեն բողոքել նրա դեմ, բավական պետք է համարվի. ավելին՝ պահանջել անիրավություն կլիներ դեպի Դաշնակցությունը: Իրենք լավ գիտեին, որ Օզակոմի հայ անդամը նշանակվելու է պետական դումայի կողմից, որտեղ մի հայ ներկայացուցիչ կար, ուստի և չէին կարող պահանջել, որ այդ տեղը զիջվեր դաշնակցականներին: Ընդունում է, որ թե դաշնակցական լիներ նրա տեղ, շատ բան չէր փոխվի, միայն փոքր ինչ լավ կլիներ:

Առարկելով Հ.Առաքելյանին, իբր թե դաշնակցությունը ջանում է ամեն տեղ մեկուսացնել մյուս կուսակցությունները, հռետորը նկատեց, որ այդպես չէ, դաշնակցությունը ամենազիջող կուսակցությունն է ամեն տեղ: Հենց այս համախորհուրդը ուրիշ բան չէ, եթե ոչ Դաշնակցության կուսակցության զիջման արդյունք: Պաշտպանելով դարձյալ յուր առաջարկությունը Օզակոմի առաջիկա կազմի մասին՝ կոալիցիոն սկզբունքով, ռուս սոցիալիստական տարրերի և մի կադետի մասնակցությամբ և երեք ազգերի ներկայացուցիչներով և ազգային խորհուրդներով, հռետորը վերջացրեց իր բանախոսությունը, ասելով, թե նայում է այս խորհրդակցության վրա իբրև մի դարբնոցի վրա, որի վարպետը դաշնակցությունն է՝ փոքր մուրճը ձեռին, իսկ մյուս կուսակցութունները՝ քարգահները: Դաշնակցությունը պետք է ղեկավարե ազգային խոփը կռելու գործը յուր փոքր մուրճով և այդ մուրճով խելքի բերե շեղվողներին:

Նախագահը նկատում է, թե իբրև մեկը համախորհրդի փոքր կուսակցությունների ներկայացուցիչներից ասում է, որ եթե այդ ճառը մի անգամ էլ կրկնվի, մենք այլևս չենք կարողանա ձեռք-ձեռքի տված գործել:

Լ.Աթաբեկյանը նկատում է, թե այդ մտաշարքը, որ առաջ բերեց հռետորը, ինքը աղետային է համարում հայ ժողովրդի համար: Այն կազմակերպությունը, որ այդպիսի ճառախոս է առաջ բերում, իրավունք չունի ինտերնացիոնալիստ կոչվելու: (Բողոք, աղաղակ, թույլ չեն տալիս խոսել):

Լինում է ընդմիջում:

Ընդմիջումից հետո խոսք է խնդրում Աղբալյանը և ասում. - Իմ խոսքերի մեջ երկու կետ թյուրիմացություն են ծագեցրել, և ես հարկ եմ համարում բացատրություն տալ: Երբ ես հին պատմության վրա ակնարկելով, ասացի, որ եղել են խելոքներ, որոնք առաջարկել են օտարների հետ միանալ, աչքի առաջ եմ ունեցել միացում կրոնական հարցերում, օրինակ՝ հույների, կաթոլիկների հետ: Այնինչ, այնպես են հասկացել, իբր թե ես նրանց վերագրել եմ ցանկություն քաղաքական ձուլման: Այսպիսի ցանկություն ես չեմ վերագրում որևէ կուսակցության: Երկրորդ կետը փոքր մուրճի պատկերն էր, որն ընդունել են իբրև սպառնալիք Դաշնակցության կողմից ուրիշ կուսակցությունների դեմ: Այնինչ, ես ի նկատի ունեի փոքր մուրճի դերը, որով վարպետը քարգահներին ցույց է տալիս, թե կռվող խոփի որտեղին պետք է խփեն, իսկ եթե քարգահի մուրճի շեղվի և մեզ խփի, որ լինում է միշտ հարձակվելով Դաշնակցության վրա, այդպիսին վարպետը ցույց կտա յուր տեղը:

Տեր-Ղազարյանը նկատում է. - Ես ընմբռնեցի ճառն այնպես, ինչպես որ ասվեց: Մեզ շատ անգամ են վիրավորել այդպիսի սլաքներով: Այժմ դեռ չբուժված վերքը նորից ծակեցին սլաքով: Երբեք չենք մոռանա: Վեց ամիս է, որ սոցիալիստական կուսակցություններս մի բան ենք արել՝ պաշտպանել հայությունը: Մենք չենք կարող նեթարկվել ոչ մեծ և ոչ փոքր մուրճի: Երբեմն շատ փոքրիկ արարածը կարող է մեծ ուժի պատվանդանը քանդել:

Ս.Հարությունյանը նկատում է. - Մենք համոզված էինք, թե այստեղ գալու ենք համերաշխության, գործակության, ազգային շահերի ընմբռնումով և ոչ թե ուժի, հեգեմոնիայի մասին հայտարարություն լսելու, որ Դաշնակցությունը փոքր մուրճով ղեկավարե մեր գործունեությունը: Ոչ մի կուսակցություն չի համաձայնի այդպիսի պայմանի հետ: Որպեսզի միաբան գործենք, այդպիսի խոսքեր չպետք է արտասանվեն: Բողոքում եմ ֆրակցիայի կողմից:

Անդրանիկը, հերթից դուրս խոսք խնդրելով, ասաց.

- Ես եկել եմ Ռոստովից, որովհետև ճակատի գործի համար ինձ օգտակար համարեցին: Դուք չեք եկել հայ ժողորդի մասին խորհելու, այլ ձեր կուսակցական կրքերը հագեցնելու: Զորքերը ճակատից փախչում են, վաղը մեզ կոտորած է սպասվում: Պետք է գործի մասին խոսել: Հիշեցե՛ք դաշնակցական գործիչներին: Հրամայում եմ ոտքի կանգնել Քրիստափորի, Զավարյանի, Նիկոլների հիշատակին: (Բոլորը ոտքի են կանգնում): Ժողովրդի մասին մտածեցե՛ք: Ես իբրև դաշնակցական իմ ծառայությունները մատուցել եմ հայ ժողովրդին, բայց քանի որ Դաշնակցության մեջ մոնոպոլիստներ են մտել, քանի որ համերաշխություն չի ստեղծվում, ես այլևս դաշնակցական չեմ: Դաշնակցությունը պետք է տեղ տա մյուս կուսակցություններին:*

Ժողովն առժամանակ զբաղվում է կազմելով նախագահություն, որին հանձնում է մշակել Ազգ[ային] խորհրդի իրավասության ծրագիրը:

Ներս են մտնում սոց.դեմոկրատական և սոց.հեղափոխական ֆրակցիաների անդամները, որոնք ընդմիջումից հետո ունեին մասնավոր խորհրդակցություն:

Բժ.Իսախանյանը սոց.հեղափոխական և սոց.դեմոկրատ կուսակցությունների կողմից հայտարարում է.

- Աղբալյանի ճառը համապատասխանում է Դաշնակցության գործելակերպին և այնքան է մեզ վրդովում, որ այսօր չենք մասնակցի ժողովին աշխատանքին և հետ ենք կոչում մեր ներկայացուցիչներին պրեզիդիումից: Մեր վերջնական վճիռը վաղը կներկայացնենք ժողովին:

Երկու կսակցությունների ներկայացուցիչները և նրանց նախագահներն ու քարտուղարները հեռանում են ժողովից:

Ս.Մամիկոնյանը հայտարարում է նիստը փակված ցերեկվա 4 ժամին:

---

* Զոր.Անդրանիկի ելույթի լրիվ տեքստը տե՛ս այս ածանագրության վերջում:

Գ.21, թ.13-18 հակ.:

*
* *

Անդրանիկ Օզանյանի հայտարարությունը Ազգային համախորհրդակցության 6-րդ նիստում

7 հոկտեմբերի 1917թ.

Ես ընտրված եմ Ռոստովի և Նախիջևանի հայ համայնքին կողմե: Ես Անդրկովկասի ժողովուրդներու վերաբերյալ հարցերու մասին իրավունք չեմ զգար խառնվելու, սակայն ճակատի պահպանության և այլ ռազմական գործերում և պարենավորման խնդիրներ մեջտեղ դրվելով համախորհրդակցության մեջ, եկա այս ժողովին իմ պարտականությանս բաժինը բերելու: Բայց ցավով պիտի հայտնեմ, որ ժողովը չի զբաղիր հայ ժողովուրդի համար կենսական նշանակություն ունեցող հարցերով, այլ կուսակցական հաշիվներով և կիրքերով կառաջնորդվի. մեր վիճակն ու կացությունը իսկապես վտանգավոր դրության մեջ կգտնվի. մեր առջև ցցված է հայ ժողովրդի ֆիզիքական կացությունը պահպանելու մեծ հարցը: Դուք այս մասին կարծես չեք մտահոգվիր և տարված եք միմիայն սոցիալիստական գաղափարներով: Դուք հավաքված եք այստեղ, իբրև մեր ժողովրդի ներկայացուցիչները, անոր իղձերուն և ակնկալություններուն թարգման հանդիսանալու համար, բայց անոր ցավերով չէ, որ կառաջնորդվիք, այլ զուտ կուսակցական հայեցողությամբ և մտահոգությամբ: Դուք կճառեք սոցիալիստության մասին, բայց որ չափ որ աշխարհի վրա դրամ գոյություն ունի, գոյություն պիտի ունենա նաև գործարանատեր, բանվոր, գյուղացի և այլն դասակարգ: Չի պիտի չքանա ո՛չ դասակարգերը և ո՛չ ալ աշխարհի չարիքը:

Իմ կարծիքով Դաշնակցության ճառախոսներու արտահայտած գաղափարներն ու տեսակետները չեն, այլ մոնոփոլիստ խմբակի մը: Այստեղ շատ մը ճառախոսներ զանազան խնդիրներու մասին արտահայտվեցան, բայց մի բան չհիշեցին, որ Դաշնակցության հզորացումը ու հայ ժողովուրդը օտար ազգերու ծանոթացումն եղավ Քրիստափորներով, Զավարյաններով, Սերոբներով, Գեորգ Չավուշերով, Գուրգեններով: Անոնք և նմանները, հազարավոր մարտիկներ, չինական հանուն էնթերնասիոնալի, այլ՝ ազգի և հայրենիքի ազատության նվիրական գաղափարին: Քանի որ մինչև հիմա ոևէ ճառախոս ինկող զոհերու համար խոսք մը չըսավ, ես պարտականություն կզգամ անոնց հիշատակը հարգել ոտնկայս (ժողովուրդը ոտքի կելլե):

Ձեր ստանձնած գործունեությամբ և պարտականությամբ չեք կրնար ցույց տալ ուրիշներու, որ Դուք իսկապես էնթերնասիոնալ սոսիալիստներ եք:

Դուք եկած եք ոչ թե ժողովուրդին ցավերուն մասին մտածելու, այլ մեկզմեկու հոր փորելու և գոյություն ունեցող խրամատը ավելի լայնացնելու, մինչդեռ այս կրիտիքական րոպեին մոռանալով կուսակցական հաշիվներ և մտահոգություններ, պետք է մտածել միմիայն հայ ժողովրդի անհետաձգելի պահանջներուն մասին համերաշխ և միաբան ոգիով:[1]

«Հայաստան», 07.10.1917, N 126:

N 8
Նիստ է

5 հոկտեմբերի 1917թ.

Նիստը բացվեց առավոտյան $11^3/_4$ ժամին, նախագահությամբ Ա.Ահարոնյանի: Նիստը բացվելուց առաջ սոց. դես. և սոց. հեղ. ֆրակցիաները բավական ժամանակ խորհրդակցում էին Ն.Աղբալյանի ճառի հարուցած խնդիրների առիթով:

Նիստը բանալով, նախագահը դիմեց ժողովականները և ունկնդիրներին, հաղորդելով պահպանել սառնասրտություն և նպաստել խնդիրների խաղաղ լուծման: Մոմենտը շատ ծանր է, հազարավոր աչքեր այս խորհրդին են նայում, ուր հայրենիքի փրկության միջոցներ պետք է որոնվեն:

Ղ.Տեր-Ղազարյան (ս.դ.) սոց. կուսակցությունների կողմից հայտարարում է.

- Երեկ դաշնակցական կուսակցության ներկայացուցիչը ձախակողմյան սոցիալիստներին համեմատեց պատմական հայտնի հոսանքների հետ, որոնք հաճախ վաճառել են հայ ժողովուրդը և նրա շահերը: Մենք միշտ պաշտպանել ենք հայ ժողովրդի շահերը և եկել ենք այստեղ օրգանական աշխատանք կատարելու: Չէր կարելի մեր վզին փաթաթել դավաճանություն: Կարծում ենք, թե ֆրակցիան հետ կվերցնի այդ խոսքերը, ինչպես մենք հետ վերցրինք Դաշնակցության հասցեին ուղղված վիրավորանքը: Այդ խոսքը այս դահլիճից դուրս կգա և կընկնի խեղճ ամբոխի բերանը, որով կդժվարանա մեր մուտքը ժողովրդի մեջ: Մի ուրիշ պատկեր մուրճ խփելու օրինակն էր, որով վարպետը փոքր մուրճով շեղվողներին խելքի պետք է հրավիրե: Այս խոսքը ժողովրդի մեջ ուրիշ իմաստ կստանա՝ մեր գլխին բամփելու. սա գիտակցված կամ չգիտակցված կոչ է ժողովրդին՝ մեր դեմ բռնություն գործ դնելու: Պահանջում ենք, որ ֆրակցիան հայտարարի, թե հետ է վերցնում այդ խոսքերը:

Ս.Հարությունյանը հայտնում է, թե Հայ ժող. կուս. կողմից բողոքել է Աղբալյանի ճառի երկու կետի դեմ և այսօր միանալով նախորդ ճառախոսին, հարցնում է՝ Աղբալյանի ասածները նրա անհատական կարծիքնե՞րն են, թե՞ ֆրակցիայի:

Ա.Սարուխանյանը անհատապես յուր կողմից հայտնում է, թե Աղբալյանի ճառից շատ անհաջող եզրակացություն կհանեն բյուրավոր հայեր: Ձուլման մասին բացատրություն տալով, Աղբալյանը ասաց, թե ձուլման տակ հասկացել է կրոնական միացումներ, որից կարելի է եզրակացնել, թե կրոնով միաբանելու դեպքում հայերը իրենց ազգությունը պետք է կորցնեն: Այսպիսով, մենք՝ ուրիշ դավանության պատկանողներս, հեռացած պետք է համարվենք հայերից: Արդյոք դա Աղբալյանի՞ կարծիքն է, թե՛ Դաշնակցության:

Հ.Օհանջանյանը հայտնում է Դաշնակցության կողմից Աղբալյանի այն մտքին, թե սոցիալիստական կուսակցությունները համաձայն են այդպիսի ձուլման, մենք համաձայն չենք: Մենք էլ սոցիալիտական կուսակցություն ենք: Իսկ երկրորդ պատկերը՝ մուրճի մասին, ամբողջապես հետ ենք վերցնում:

Բժ.Լ.Աթաբեկյան - Օհանջանյանի բացատրությունը համարում ենք բավարար և մնում եք համախորհրդի մեջ այն պայմանով, որ մեր հայտարարությունը կարդացվի այստեղ: Ֆրակցիայում այդպես ենք որոշել:

Ք.Վերմիշյանը պնդում է, որ բավարարություն ստանալուց հետո այլևս հայտարարությունը չկարդացվի, միգուցե նոր բարդություններ ծագելն: Առաջարկում է անցնել գործի, իսկ հայտարարությունը հանձնել պրեզիդիումին:

Բժ.Լ.Աթաբեկյանը պնդում է յուր հայտարարության մասին, հայտնելով, որ դա ֆրակցիայի վճիռն է:

Բժ.Հ.Օհանջանյանը հայտնում է, թե իրենք հակառակ չեն, որ հայտարարությունը կարդացվի, բայց այս դեպքում իրենք էլ իրավունք պետք է ստանան իրենց պատասխանը տալու:

Նախագահը հայտարարում է, թե երկու ֆրակցիաներին էլ իրավունք կտրվի պատասխան հայտարարություններ անելու, բայց առանց վիճաբանության:

Բ.ժԼ.Աթաբեկյանը կարդում է սոց. դեմ. և սոց. հեղ. ֆրակցիաների կողմից հետևյալ հայտարարությունը...:

Բժ.Հ.Օհանջանյանը խնդրում է ընդմիջում անել: Ընդմիջում լինում է 12¼ ժամին:

Նիստը վերսկվում է ժամը 2-ին: Նախագահը խոսք է դալիս Դաշնակցության ֆրակցիային՝ յուր պատասխան հայտարարությունը կարդալու:

Ա.Չիլինգարյանը կարդում է հետևյալ հայտարարությունը...:*

Ս.Հարությունյանը Հայ ժող. կուսակցության կողմից հայտարարում է, թե Դաշն[ակցության] ներկայացուցչի տված բացատրությունից հետո պետք էր ինցիդենտը վերջացած համարել: Եթե, այնուամենայնիվ, թույլ տրվեցին հայտարարություններ, նրանք ավելի հեռու գնացին, քան պետք էր, փոխադարձ քննադատության հանգելով. սա սխալ էր երկու կողմից էլ: Ոչ մի իրավունք չունենք մի րոպե անգամ կորցնելու: Հրավիրում ենք գործի:

Անկուսակցականների կողմից Հ.Մանանդյանը կարդաց հետևյալ հայտարարությունը...:*

Նախագահը հայտարարում է ինցիդենտը վերջացած և խնդրում է արագացնել համախորհրդի աշխատանքը, որովհետև գավառի պատգամավորները չեն կարող երկար սպասել:

Ներս է մտնում Վ.Լունկևիչը, որին ժողովն ընդունում է բուռն ծափահարություններով: Նախագահը դիմավորում է նրան ողջույնի ճառով, որին ի պատասխան Լունկևիչը շնորհակալություն է հայտնում և հորդորում է ուժ տալ հեղափոխության, որ ազգերին ազատություն է բերում և օգնելու համերաշխության և եղբայրության գաղափարների արծարծվելուն:

Սրանից հետո կարճ ընդմիջում է լինում, որպեսզի ոչ պատգամավորները հեռանան ժողովից, և նիստը դռնփակ լինի:

Մ.Պապաջանյանը հայտնում է, թե Պետրոգրադում վճռված է, որ զինվորական և քաղաքական վարչություններին կից ներկայացուցիչներ նշանակվեն բոլոր ազգերից: Այս մտքով առաջարկություն է եղած վրացիներին և մահմեդականներին: Ինքն էլ հեռագիր է ստացել Պետրոգրադից, որով հրավիրում են մեր կողմից ևս ներկայացուցիչներ նշանակել:

Երզնկյանի առաջարկությամբ, որին միանում են կուսակցությունները, որոշվում է հարցի նախնական քննությունը հանձնել Ավագների խորհրդին, որը յուր եզրակացությունը կբերե ժողովին:

Այնուհետև երկար վիճաբանություն է լինում որոշ հարցերի մասին դռնփակ նիստեր անելու վերաբերմամբ: Ժողովը գալիս է այն եզրակացության, որ, անհրաժեշտ համարված դեպքերում, ժողովի հատուկ որոշումով կարող է դռնփակ նիստեր տեղի ունենալ: Սահմանադրության հարցի քննությունը ժողովը որոշեց դռնբաց անել:

Այնուհետև ընտրվեց Ավագների խորհուրդ Հայ ժող. կուսակության կողմից՝ Մ.Պապաջանյան (կանդիդատ՝ Ս.Հարությունյան), Դաշնակցությունից՝ Ս.Արարատյան (կանդիդատ՝ Խ.Կարճիկյան), Սոց. դեմոկրատների կողմից՝ Ա.Երզնկյան (կանդիդատ՝ բժ. Իսախանյան), Սոց. հեղափոխականների կողմից՝ Հ.Տեր-Օհանյան (կանդիդատ՝ Ա.Խոնդկարյան), թուրքահայերի կողմից՝ Վ.Փափազյան, անկուսակցականների կողմից՝ Հ.Մանանդյան (կանդիդատ՝ Հ.Տեր.Միքայելյան): Այս ընտրված անձերը նախագահության հետ պիտի կազմեն Ավագների խորհուրդը:

Նիստը փակվեց ժամը 3-ին:

Գ. 21, թ. 18-20 հակ.:

N 9
Նիստ Ը

6 հոկտեմբերի 1917թ.

Նիստը բացվեց առավոտյան 11 ժամին, նախագահությամբ Ս.Մամիկոնյանի և ներկայությամբ 161 անդամի:

Ժողովը զբաղվեց սահմանափոխության հարցով: Հայտնվեց, որ Դաշնակցության նախագահներից մեկը՝ Ալ.Խատիսյանը, մեկնել է քաղաքից: Նրա փոխարեն Դաշնակցությունն ընտրում է Ավ.Սահակյանին:

Ի նկատի ունենալով, որ ժողովի պարապմունքները շատ են երկարում, և գավառից եկած պատգամավորների մի մասն արդեն մեկնել է, ժողովը որոշում է որքան կարելի է կրճատել խոսողների թիվը և խոսելու ժամանակը:

Սահմանադրության մասին առաջին զեկուցանող Ստ. Կամսարականը նախ պատմական ակնարկ ձգեց Անդրկովկասի գավառների այժմյան վարչական սահմանների ծագման վրա և մատնանշեց, որ սահմանների բաժանումը կատարելիս կառավարությունը աչքի առաջ չի ունեցել տեղագրական և տնտեսական պայմանները և ոչ իսկ վարչական կառավարության հարմարությունները: Երբեմն կառավարությունը, որպեսզի հայերը որևէ գավառում մեծամասնություն չկազմեն, այդ գավառից մի զուտ հայաբնակ մաս անջատել ու միացել է հարևան թուրքաբնակ մասի: Այսպիսով, պատահական կամ դիտավորյալ սահմանաբաժանման անհարմարությունները շուտով աչքի ընկան, մանավանդ, երբ ծագեց հարց Անդրկովկասում զեմստվային հիմնարկություններ մտցնելու մասին: Ուստի զանազան խորհրդակցությունների մեջ առաջ բերեց սահմանափոխության անհրաժեշտությունը: Այնուհետև զեկուցանողը բերեց վիճակագրական թվեր Անդրկովկասի թուրք և հայ ազգաբնակության ըստ նահանգների և գավառների, ցույց տալով, թե նահանգների որ գավառներում հայերը մեծամասնություն են կազմում և որոնցում՝ փոքրամասնություն Յուր կատարած սահմանափոխության աշխատանքիմեջ, որ նա ձեռնարկել է Միք.Բաբաջանյանի առաջարկությամբ, նա ի նկատի չի ունեցել քաղաքական դիտումներ, այլ՝ լոկ տնտեսական ու էթնիկական, այն է՝ համախմբել միևնույն ցեղի և միևնույն տնտեսություն ունեցող վայրերը, որպեսզի հեշտանա ապագա զեմստվոյի գործունեությունը: Այնուհետև զեկուցանողը մանրամասն նկարագրում է յուր առաջարկած փոփոխությունները ներկա գավառական սահմանների մեջ: Ըստ այս առաջարկության, կազմվում է մի նահանգ, որի մեջ մտնում են ամբողջ Երևանյան նահանգը, Կարսի շրջանից՝ երկու գավառ, Թիֆլիսի նահանգից՝ երկու գավառ և Գանձակի նահանգից՝ լեռնային մասը, կազմելով մոտ 60.000 քառ.վերստ տարածություն երկու միլիոն բնակիչներով, որոնցից հայերը կազմում են մեկ միլիոն երկու հարյուր հազար կամ 60%: Բացատրում է այն պատճառները, որոնցից թելադրված ինքը մի նահանգ է առաջարկում կազմել խիտ հայաբնակ մասերից: Մինիստրության ուղարկած ծրագիրը, որ միևնույն սահմանների մեջ երեք նահանգ է առաջարկում՝ Գանձակի, Երևանի և Ալեքսանդրապոլի, ինքը չի ընդունում իբրև ոչ բնական և ավելորդ ֆինանսական ծանրաբեռնության պատճառով:

---

* Այս և մյուս հայտարարությունների մասին, որ բաց են թողված տվյալ արխիվային գործում, համապատասխանաբար տե՛ս տողատակերում բերված մեր հղումները:
* Տե՛ս փաստաթուղթ N 65:
* Տե՛ս փաստաթուղթ N 64:

Գ.Խատիսյանը (երկրորդ զեկուցանողը) հիշեցնում է Ստ.Կամսարականի ծառայությունը սահմանափոխության հարում, ասելով, որ այդ հարցի մասին բոլոր հետագա աշխատանքերը հիմնված են եղել նրա աշխատանքի վրա: Ինքը հակառակ չէ մեկ նահանգ ստեղծելուն, բայց մի քանի տեխնիկական անհարմարությունների պատճառով, ինչպես են մի կենտրոնի հեռավորությունը ծայրագավառներից, հաղորդակցության դժվարությունները ևս, ավելի նպատակահարմար է համարում ընդունել միևնույն սահմաններում երեք նահանգ՝ Երևանի, Ալեքսանդրապոլի և Գանձակի, ըստ մինիստրական ծրագրի: Այնուհետև զեկուցանողը մանրամասն պատմում է մինիստրական ծրագրի պատրաստվելու ընթացքը, որից երևում է, որ Պետրոգրադում հատուկ խորհրդակցության մեջ հայերը և վրացիները շատ շուտով համաձայնության եկան սահմանափոխության և առաջարկված նոր սահմանների մասին, իսկ թուրքերը թեև, մյուս անդամների միաբերան համաձայնությունից ճնշվելով, սկզբունքով համաձայնեցին սահմանափոխության, բայց երբ ծանոթացան ենթադրված փոփոխություններին Գանձակի և Երևանի նահանգներում, հայտարարեցին, թե իրանք լիազորված չեն վերջնական համաձայնություն տալու: Այնուամենայնիվ ծրագիրը Պետրոգրադում ընդունվեց և ուղարկվեց Թիֆլիս՝ Օզակոմի վերջնական եզրակացության: Թիֆլիսում կազմվեց առանձին մասնաժողով Ն.Ժորդանիայի նախագահությամբ: Սահմանափոխության մասին համաձայնություն կայացավ, բայց առաջ եկավ մի նոր հանգամանք՝ նահանգների ներքին բաժանում ըստ կանտոնների, որպիսի ծրագիր պաշտպանում էին սոց.դեմոկրատները: Ինքը, ի նկատի ունենալով ներկա պայմանները և այն հանգամանքը, որ սահմանափոխության նպատակը ոչ թե քաղաքական է, այլ տնտեսական ու վարչական և քանի որ նահանգական հիմնարկությունները դեռ չեն վերացված և փոխարինված այլ տիպի հիմնարկություններով, պետք է դեռ պահպանել նահանգական բաժանման սկզբունքը:

Ղ.Տեր-Ղազարյանը զեկուցումների առիթով ասաց, որ ծրագրված սահմանափոխությունը զեմստվոյի անվան տակ իսկապես լուծում է ազգային տերիտորիայի խնդիրը: Այն աշխաանքը, որ կատարել է Կամսարականը, Խատիսյանը և Շահխաթունյանը, այնքան մշակված և հաջող է, որ միայն կարելի է կատարել: Վարիանտները շատ քիչ բան կարող են փոխել նրա մեջ, և առարկությունները չնչին կլինեն: Յուր առարկությունը գլխավորապես կայանում է նահանգական և գավառական բաժանումների դեմ. ինքը կողմնակից է կանտոնային սիստեմի, որպիսի դեպքում ավելի միատարր համախմբումներ կկազմվեն և մեր հարևանների համար ավելի ընդունելի կլինեն: Այս դեպքում Թիֆլիսը՝ Անդրկովկասի մտավոր կենտրոնը, որտեղ համախմբված են չորս ազգերի գործիչները, կդառնա կանտոնների կենտրոնավայր: Կանտոնները իրանց փորձով կարող են հետզհետե միանալ և ավելի մեծ միություններ կազմել: Հայտնում է նաև, որ սահմանափոխության ծրագրի ընդունվելու գործում մեծ դեր է կատարել վրաց սոց. դեմոկրատիան, որ հանձին Ն.Ժորդանիայի հաշտարար դեր է կատարել մեր և թուրքերի մեջ: Կանտոնական դրությունը ունի և այն առավելությունը, որ առաձգական է, որը կարելի կլինի ապագայում լայնացնել և խորացնել:

Խոնդկարյանն ընդունում է նույնպես, որ սահմանափոխության գործը կատարված է այնպես, որքան կարելի էր կատարել: Գալով ներքին բաժանումներին՝ ինքն էլ կողմնակից է կանտոնական սիստեմին, գտնելով հանդերձ, որ դա սկզբում դժվարությունների կհանդիպի: Սակայն պետք է նկատի ունենալ, որ սահմանաբաժանումը չի կարելի գլուխ բերել միայն հայերի ուժով, այլ հարկավոր է երեք ազգերի համաձայնությամբ, իսկ թուրքերը առաջարկված նահանգական սիստեմին հակառակ են և այսուհետև էլ կհակառակեն: Պետք է միջին ճանապարհ բռնել և գրգռումների տեղիք չտալ: Սահմանափոխության մոտիվների մեջ ինքն առավելություն է տալիս նախ տնտեսական, ապա՝ էթնիկական և վերջը միայն վարչական համարություններին և գտնում է, որ եթե չի կարելի այս երեք պայմանները

հաշտեցնել,ապա պետք է վարչական հարմարությունները զոհել տնտեսականին և էթնիկականին:

Ք.Վերմիշյանը՝ սահմանաբաժանման սեկցիայի նախագահը՝ զեկուցեց սեկցիայի եզրակացությունները սահմանափոխության մասին: Սեկցիան գտնում է, ր սահմանափոխությունը պետք է կատարվի այժմ ևեթ, առանց Սահմանադիր ժողովին սպասելու, որ աշխատելու է որքան կարելի է համաձայնության գալ հարևանների հետ և հարթել դժվարությունները, որոնք այնքան էլ մեծ չեն: Իսկ երբ համաձայնություն չի կայանա, հարցի լուծումը կհանձնվի կառավարությանը: Ընդհանուր սահմանների վերաբերմամբ սեկցիան համաձայնեց Կամսարականի գծած սահմանների վրա: Ագրարային հարցի լուծումը, թե ինչպես հայ գյուղացին հող պիտի ստանա այս սակավահող հայ տերիտորիայում, նույնպես և յայլաղների հարցը, որ այնքան հուզում էթուրք ազգաբնակությանը, պետք է հանձնվի կենտրոնական կառավարության լուծման: Սահմանափոխության ներքին բաժանման ըստ գավառների բոլորը համաձայնեցան: Հարցը ըստ ֆրակցիաների քվեարկելով, ընդունվեց երեք նահանգի սկզբունքը, գտնելով, որ երեք նահանգից միշտ կարելի է մի նահանգ ստեղծել, իսկ հակառակն անել կարելի չէ: Սոց. դեմոկրատների առաջարկած կանտոնական սկզբունքը համակրություն գտավ սեկցիայի մեջ,բայց սեկցիան գտավ, որ ներկա պայմաններում դա անիրագործելի է: Թիֆլիսի և Բագվի հարցերը սեկցիան որոշեց չշոշափել: Սեկցիան արդարացի և անհրաժեշտ է գտնում սահմանափոխությունը և հույս է հայտնում, որ բոլոր ազգերի դեմոկրատ տարրերը պետք է աշխատեն նրան իրավորձել: (Ընդմիջում ժամը 2-ին):

Ընդմիջումից հետո դաշնակցական ֆրակցիայի ներկայացուցիչ Շահխաթունյանը պատմական ակնարկ ձգեց գավառների և նահանգների բաժանման վրա գլխավորապես Արևմտյան Անդրկովկասում և ցույց տվեց, որ այս տեղերում շատ անգամ տեղի են ունեցել սահմանների փոփոխություններ: Ներկա ծրագրով ընդունված դրությունը, որով Ախալքալաքը և Լոռին միացվում են Ալեքսանդրապոլի գավառի հետ, գոյություն է ունեցել մինչև անցյալ դարի 60-ական թվական[ներ]ը, երբ այս մասերը մի ամբողջություն էր կազմում: Այնպես որ ծրագիրն այս կողմից ոչ մի տնտեսական կամ գործնական առարկություն չէ վերցնում: Զեմստվոյի հաջողությունը պահանջում է, որ ստեղծվեն համանման միավորներ, և այս պահանջին ընդառաջ է գնում հայաբնակ երկրներից մի նահանգ ստեղծելը: Անդրկովկասը երեք մասի բաժանելն ըստ ազգային հատկանիշների՝ դարձյալ բնական է, որովհետև հիմնված է գյուղատնտեսական, ազգագրական և տեղագրական տվյալների վրա: Ժողովուրդը չէ հասկանում մեծամասնություն կամ փոքրամասնություն լինելու տարբերությունները: Բայց երբ նրան բացատրվի զեմստվոյի անելիքը լեզվի, դատարանի, հողաբաժանության, դպրոցների և այլ հարցերում, նա շատ լավ կզգա մեծամասնության և փոքրամասնության իրավունքների տարբերությունը և շատ որոշ կերպով կպահանջե միատարր միավորներ: Մի նահանգ ստեղծելու դեմ եղած առարկություններին պատասխանելով, նկատեց, թե ճանապարհների բացակայությունը, հարաբերությունների դժվարությունը չպետք է արգելք հանդիսանա, քանի որ դրանք ժամանակավոր են և ուղղելի. մենք պետք է առաջնորդվենք ապագայի հեռանկարով. զեմստվոն այդ պակասությունները կլրացնի: Մյուս կողմից էլ՝ հարաբերությունները գավառների և քաղաքների մեջ պայմանավորվում են ոչ թե վարչական կապերով, այլ տնտեսական շահերով: Այսպես Ղազախը ավելի Թիֆլիսի հետ է կապված, քան Գանձակի, նույնպես Ալեքսանդրապոլը Երևանից ավելի Թիֆլիսի հետ է կապված: Հողային հարցի լուծումը, ինչպես նաև գյուղացիների տեղափոխության հարցը պետք է թողնվեն Սահմանադիր ժողովին, որ նրանց լուծե ընդհանուր պետական ճանապարհով: Հռետորը չէ ընդունում, թե

հայաբնակ նահանգը շատ չնչին հող ունի և աչք պիտի դնե օտար հողերի վրա: Մեր ժողովուրդը բավականաչափ հող ունի հացահատիկների մշակության և ալպյան...*

ՀԱԱ, Ֆ. 222, ց.1, գ.21, թ.20-22 և հակ.:

Տրվում է 10 րոպե ընդմիջում: Նիստը վերաբացվում է, խոսում է Ա.Շահխաթունյանը: Նախ տալիս է Անդրկովկասի ներկա սահմանների գոյության պատմությունը վերջին 100-ամյակում, շեշտելով, որ 60-ական թվականների սկզբում, երբ դեռ վերջին բաժանումը չէր եղած, երկիրը մոտավորապես նույն սահմաններն ուներ, ինչ որ առաջարկում էր նախագիծը՝ օրինակ, Ալեքսանդրապոլի, Լորու և Ախալքալաքի գավառները միացած էին և կազմում էին Թիֆլիսի նահանգի մի մասը:

Հետո կանգ է առնում այն հանգամանքի վրա, որ նոր բաժանումը համապատասխանում է ոչ միայն երկրի տնտեսական պայմաններին, այլև հողային, դասակարգային, տեղագրական և այլ պայմաններին, որ հին կառավարությունը սահմանները գծելիս դիտմամբ զանց է առել՝ որոշ հետին նպատակներով ղեկավարվելով: Գործնականի տեսակետից դեմ է [զեկուցողը] կանտոնալ սիստեմի, որովհետև նախ պետական մտածողությունն այդ չի ընդունում, երկրորդ, պիտի մնան. այսօրվա նահանգական իշխանությունները, որովհետև չի կարելի յուրաքանչյուր գավառում, օրինակ, կազմոննայա պալատ ունենալ: Դեկրետով չի վերանա այն միությունը, որի ֆունկցիաները մնում են. պետք է երկուսը միասին վերցվեն: Խաշնարածության դժվարություններին անցնելով, գտնում է, որ դրությունը ավելի կվատթարանա, եթե կանտոնալ սիստեմն ընդունվի, որովհետև միևնույն հարաբերություններն ավելի հեշտ է լուծել մեծ միությունների մեջ, քան մանր: Հարևանների դիմադրության մասին խոսք լինել չի կարող: Եթե նրանք դեմ են նահանգ կազմելուն, դեմ պիտի լինեն և երեք նահանգ կազմելուն: Առաջարկում է, որ բանաձևի մեջ մտցվի մի նահանգ կազմելու անհրաժեշտությունը, իսկ դրա իրականացումը թողնել կյանքին: Դեմ է Թիֆլիսը ամբողջ Անդրկովկասի կենտրոն դարձնելու մտքին:

Ա.Երզնկյանը կրկին ծանրանում է Դաշնակցության «թիկունքային» քաղաքականության վրա, որի համար այնքան գեղեցիկ պատասխան էր ստացել թե՛ Շահխաթունյանից, թե՛ Կարճիկյանից և թե՛ Աղբալյանից: Պնդում է, որ հայերը, ցանկանալով ազգային մեծամասնություն ստեղծել իրենց համար, նույն սահմաններում ստեղծում են ազգային փոքրամասնություն մեր հարևանների համար, որպիսի ցանկությունը ազգայնական է: Պնդում է, որ մի նահանգ կամ երեք նահանգ առաջարկելով, հայերը ցանկանում են քաղաքական սահմաններ գծել և ոչ վարչական: Դրա համար էլ իրենք դնում են կանտոնալ սիստեմի տեսակետը: Ա.Երզնկյանին մասնավորապես Բագվի և Թիֆլիսի խնդիրն է հուզողը: Դաշնակցության առաջարկած նախագծի մեջ և ոչ մի խոսք չկա այդ երկու քաղաքների մասին, որպիսի հանգամանքը վրդովում է Երզնկյանին: Դիմելով ժողովին և մասնավորապես դաշնակցական ֆրակցիային, հուզված բացականչում է. «Ու՞ր է Բագվի և Թիֆլիսի խնդիրը: Ձեր լռությամբ ասում ենք, թե Բագուն թողնում ենք թուրքերին, իսկ Թիֆլիսը՝ Վրաստանին. Ու՞մ անունից եք այդ պահանջը դուք դնում, ո՞ր հայ ժողովուրդն է այդ իրավունքը Ձեզ տվել: Դեմոկրատիան չի կարող հանդուրժել, որ Բագուն և Թիֆլիսը լինեն այս կամ այն ազգի, նրանք պիտի լինեն միջազգային: Այդ է դեմոկրատայի պահանջը, իսկ այդ անել կարող ենք, եթե կանգնենք կանտոնալ տեսակետի վրա»:

Ստ.Մամիկոնյանը հայտնում է, որ ինքը այդ խնդրի նկատմամբ տարբեր կարծիք ունի և թույլտվություն է խնդրում իր կարծիքը արձանագրության կցելու:

* Բնագրում պակասում է այս արձանագրության վերջին մասին: Այն շարունակում ենք ըստ «Արև» թերթի:

Ժողովը խնդիրը պարզված համարելով, կամենում է անցնել բանաձևերի քվեարկության: Սակայն ոմանք բողոքում են այդ շտապողականության դեմ: Հարցը համարելով խիստ կարևոր, առաջարկում են շատերին թույլ չտալ արտահայտվելու և ոչ թե ափալ-թափալ վերջացնելու (Լեո):

Շահխաթունյան, Տեր-Միքայելյան, ինչպես և ժողովի ճնշող մեծամասնությունը դեմ են բանաձևի հանելը հետաձգելու[ն] - ինչպես այդ առաջարկում է բժ. Իսախանյանը: Նրանք գտնում են, որ երեք տարի է, ինչ խոսվում է սահմանափոխման մասին, որ ժողովի համար հարցն արդեն սպառված է և կարելի է մի հանձնաժողով կազմել, որը հաներ ընդհանուր բանաձև այդ մասին:

Առաջարկն անցնում է և յուրաքանչյուր ֆրակցիայից ընտրվում են երկու հոգի՝ հաշտեցնող բանաձև կազմելու համար:

Նիստը փակվում է:

Իրազեկ

«Արև», 02.11.1917, 232:

N 10
Նիստ Թ

7 հոկտեմբերի

Նիստը բացվեց առավոտյան ժամը $11^{1}/^{2}$-ին, նախագահությամբ Ավ.Իսահակյանի և ներկայությամբ 150 անդամի:

Օրակարգի խնդիրն էր ազգամիջյան հարաբերությունների հարցը:

Խորհրդակցությունից հետո ժողովը որոշեց նիստը դռնբաց անել:

Զեկուցանող Ասատրյանն ասում է. - Կովկասի ազգամիջյան հարաբերությունը կովկասյան խոշոր ազգերի ինքնորոշման խնդիրն է:

Այս հարցի առիթով միաձայն որոշվեց, որ բոլոր ազգերին տրված է լայն ինքնորոշման իրավունք, ուրեմն և հայերը կարող են այդ հարցը դնել: Ինքնորոշման հարցի մեջ մինիմումը կազմում է զեմստվոն, իսկ մաքսիմումը տարբեր բովանդակություն կարող է ունենալ, կարող է լինել կուլտուրական էքստերիտորիալ ավտոնոմիայի կամ տերիտորիալ ավտոնոմիայի ձևով: Կուլտուրական էքստերիտորիալ ավտոնոմիայի մասին ոչ մի տարակարծություն չկար սեկցիայում: Բոլորը գտնում էին, որ այդպիսի ավտոնոմիան կարող է տարածվել Ռուսաստանի բոլոր հայերի վրա: Իսկ քաղաքական տերիտորիալ ավտոնոմիայի նկատմամբ սեկցիան գտնում է, որ դա կախում պետք է ունենա հարևանների հետ համաձայնությունից և չի կարող լուծվել սեպարատ կերպով, որ նոր գժտությունների առիթ կդառնար: Բուն խնդրին անցնելով, երկու առաջարկություն է արվում. առաջինը՝ որ Ռուսաստանի ապագա կազմը կլինի ֆեդերատիվ հանրապետություն: Այս դեպքում ֆեդերացիայի անդամները կվայելեն ներքին ինքնորոշման լիակատար իրավունք և երկրորդ՝ որ Ռուսաստանի կազմը այսպիսի չի լինի, և կենտրոնական կառավարությունը լայն իրավունքներ կունենա. այս դեպքում տեղերում կարող են կազմել լայն ինքնավարություններ: Սեկցիայում տարբեր կարծիքներ հայտնվեցին: Ոմանք պահանջում էին որ Կովկասի երեք ազգային միությունները ինքնուրույն լինեն և կապված Ռուսաստանի հետ: Մյուսները ցանկանում էին տեղական իրավունքները սահմանափակել և ընդարձակել կենտրոնականը Ուրեմն սեկցիայում կար երկու տեսակետ. 1. Կովկասի երեք մասերի քաղաքական ավտոնոմիա, 2. լայն ինքնավարություն: Բացի սրանից , սեկցիան ցանկություն հայտնեց, որ համախորհուրդը մի կոչ ուղղե մեր հարևաններին, որի մեջ հայտնե, թե ցանկանում է միջոցներ գտնել հաշտ ապրելու միմյանց հետ և չհակասելու նրանց տրամադրությունների տնտեսության համար, այնինչ, թուրքական մասը բարձր

(ինտենսիվ) տնտեսության վայր է, ուստի և անասնապահությունը և վաչկային տնտեսությունը նրանց համար անցողական շրջան են կազմում: Գալով կանտոնական սիստեմին, գտնում է, որ մեր հետամնացության պատճառով անկարելի է ներկայումս իրագործել, մանավանդ որ գոյություն ունեն հիմնարկություններ, որոնք չի կարելի վերացնել և փոխարինել նորերով:

Նահանգների թվին գալով, ինքը առավելություն է տալիս մեկ նահանգին, իսկ եթե գործադրության վերաբերմամբ դժվարություններ պատահեն. կարելի է ժամանակավորապես հաշտվել երեք նահանգի հետ: Այժմ ընդունել մեկ նահանգ և չարձանագրել երեք նահանգը, թողնելով, որ կյանքը լուծի այդ հարցը:

Լ.Աթաբեկյանը նկատում է, որ զեմստվոյի հարցը կապ ունի հայկական ավտոնոմիայի, թերևս և հայ պետության հարցի հետ, որոնք կախում ունեն մի շարք ֆակտորներից՝ հեղափոխության ընթացքից, մեր հարաբերությունից հարևանների հետ, ռազմաճակատի դրությունից և դաշնակիցների վերաբերմունքից: Անգլիական բանակի այս կամ այն շարժումը Բաղդատի ճակատում ազդեցություն կունենա և մեր պայմանների վրա: Սահմանափոխության մեջ պետք է ի նկատի ունենալ էթնիկական, տնտեսական և արդյունաբերական սկզբունքները և ըստ այնմ լուծել հարցը: Գանձակի նահանգը երկու մասի բաժանվելու դեմ ունի առարկություն, քանի որ լեռնային մասերը սերտ կապ ունեն տափարակի հետ: Բայց քանի որ դրված է զուտ զեմստվոյի հարցը, ինքը չի առարկի այդպիսի բաժանման դեմ, միայն թե ընդունվի երեք նահանգի սկզբունքը և միջոց տրվի սահմանից դուրս գտնված մասերի հետ հարաբերություն պահպանելու: Ի վերջո հռետորը հայտնեց, թե սոցիալիստական ֆրակցիան ամեն կերպ կաշխատի աջակցել սահմանափոխության յուր հիշած երեք սկզբունքներով:

Ա.Երզնկյանը գտնում է, որ հարցը սպառված է, ուստի ինքը կանգ կառնի երեք կետի վրա: Նախ դժգոհություն է հայտնում, որ սահմանափոխության հարցում դաշնակցականները վարել են թիկունքի քաղաքականություն, Պետրոգրադում լուծել տալով այն հարցը, որ պետք է լուծվեր այստեղ, կովկասյան դեմոկրատիայի միջոցով, որ մեր քաղաքականության ընդհանուր գիծը պետք է լինի: Երկրորդ, որ նկատելով հայերի ճնշված դրությունը և փոքրամասնություն կազմելը, ուզում են ստեղծել այնպիսի մի դրություն, որ հայերը մեծամասնություն կազմեն, իսկ թուրքերը՝ փոքրամասնություն: Չարիքից խուսափելու մի ելք կա. ստեղծել կանտոնական սիստեմ, որով առաջ կգան թուրքական և հայկական կանտոններ, և այնուհետև կյանքը ինքն կթելադրե, թե որ կանտոնները որոնց հետ կկամենան միանալ: Երկրորդ նկատողությունը վերաբերում է Թիֆլիս և Բաքու քաղաքներին, որոնք կանտոնական սկզբունքն ընդունվելու դեպքում կդառնան առանձին միջազգային կանտոններ, այնինչ, առաջարկված ծրագրով այդ քաղաքները, որոնց մասին ոչինչ հայտնի չէ ասվում, կհամարվեն վրացական և թուրքական միությունների քաղաքներ («Ո՛չ»,- բացականչում են տեղերից): Եթե «ոչ»՝ ապա ուրեմն պարզ հայտնեցե՛ք ձեր դիտավորությունը: Ընդունեցե՛ք կանտոնական սկզբունքը, և եթե ժամանակը պահանջի, մենք կարող ենք ձեզ հետ միանալ:

Զեկուցանող Վերմիշյանը առարկություններին պատասխանելով, նկատում է, որ սեկցիան սահմանափոխության և զեմստվոյի վրա նայել է զուտ վարչական-տնտեսական տեսակետից, ուստի Թիֆլիսը և Բաքուն նրա քննության առարկան չեն դարձել: Հայաբնակ վայրերից մի միություն ստեղծելու նպատակն էր ունենալ այն, ինչ որ արդեն ունեն վրացիներն ու թուրքերը: Այս դեպքում հիրավի ստեղծվում է ստվար թուրքական փոքրամասնություն հայկական միության մեջ, բայց պետք չէ մոռանալ, որ նույնպիսի ստվար հայկական փոքրամասնություն կստեղծվի և թուրքական միության մեջ: Մենք կարիք ունենք մի անկյուն ստեղծելու ազգային կուլտուրական կյանքի համար: Զեկուցանողը այնուհետև առարկելով մի նահանգի պաշտպաններին, ցույց է տալիս դրա անհարմարությունները և երեք նահանգի առավելությունները՝

հարաբերության հեշտության և վարչական աշխատանքի տեսակետից: Թող կյանքը ապագային վճռի երեք նահանգների միացման հարցը: Պետք է ի նկատի առնել այսօրվա պահանջները: Զեմստվոյի ռեֆորմը անհետաձգելի է, նա միայն կարող է երկիրը հանել ներկա անիշխանական դրությունից և քայքայման առաջն առնել: Միևնույն ժամանակ զեմստվոն է, որ կարող է հաշտություն և ներդաշնակություն առաջ բերել մեր և մահմեդականների մեջ, քանի որ սահմանների բաժանումով ընդհարումների առիթը կվերանա, և յուրաքանչյուր ազգ պարզ կգիտակցի յուր դրությունը:

Նախագահը հայտնեց, թե ինքն առանձին կարծիքի է մնում այս հարցի մասին:

Լեոն գտնում է, որ ազգի կյանքի համար այս ամենակարևոր հարցի վայով շատ շտապով է անցնում ժողովը: Պետք է բազմակողմանի ուսումնասիրել, ինքն էլ անելիք ունի:

Հ.Տեր-Միքայելյանը և Շահխաթունյանը հակառակ են հետաձգելուն, նկատելով, որ հարցը երեք տարի ուսումնասիրվել է և առանձնապես քննվել սեկցիաներում, սա զեմստվոյի հարց է, որ ազգամիջյան հարաբերության հետ պետք է չէ շփոթել: Եղած առաջարկությունները միահանելու համար ժողովը նախագահի առաջարկությամբ որոշում է յուրաքանչյուր ֆրակցիայից ընտրել երկու-երկու անձ, որոնք, մշակելով առաջարկությունները, մի ընդհանուր որոշում բերեն ժողովին: Ընտրվում են սոց. հեղափոխականների կողմից՝ Աթաբեկյան և Խոնտկարյան, սոց. դեմոկրատների կողմից՝ Երզնկյան և Իսախանյան, Հայ ժող. կուսակցության կողմից՝ Վերմիշյան և Տեր-Պատրոսյան, Դաշնակցության կողմից՝ Խատիսյան և Շահխաթունյան:

Նիստը փակվում է ցերեկվա $3^1/_2$ ժամին:

Գ. 21, թ. 27-29:

N 11
Նիստ Ժ

8 հոկտեմբերի 1917թ.
(առավոտյան)

Նիստը բացվեց $11^1/_2$ ժամին նախագահությամբ բժ. Հ.Այվազյան և ներկայությամբ 118 անդամի:

Օրակարգի մեջ դրված էր Ազգ[ային] խորհրդի կոմպետենցիայի հարցը:

Հայտնվում է, որ Ավագների խորհրդում այդ հարցը քննվել է, բայց վերջնական եզրակացության չէ հանգել, որովհետև սոց. հեղափոխական ֆրակցիան յուր որոշումը դեռ չէ բերել: Ոմանք առաջարկում են այժմ նեթ ընդմիջում անել՝ ընդհանուր բանաձև մշակելու և ժողովին զեկուցանելու համար, քանի որ գավառցի պատգամավորներից մոտ մի քառորդ արդեն մեկնել է, և վաղը ավելի սակավամարդ կլինի ժողովը: (Այս տեսակետը պաշտպանում էին Հ.Տեր-Միքայելյանը և Ս.Հարությունյանը): Ուրիշները գտնում էին, որ վճռի հեղինակությունը ոչ թե ժողովի բազմամարդությունից է կախված, որքան բոլոր ֆրակցիաների համաձայնությունից և բանաձևի լավ մշակությունից: Չէ կարելի շտապով մի գործ կատարել և ստեղծել այնպիսի մարմին, որ գործերը վարելու և աշխատելու ընդունակություն չունենա (Քազանունի): Ժողովը որոշում է, որ Ավագների խորհուրդը երեկոյան նիստին ներկայացնի համաձայնեցրած բանաձևը Ազգ[ային] խորհրդի կոմպետենցիայի մասին: Սոց.հեղափոխական ֆրակցիան խոստանում է յուր բանաձևը ժամանակին

ներկայացնել Ավագների խորհրդին: Հ.Տեր-Միքայելյանը հայտնում է, որ ինքը համաձայն չէ:

Գյուլխանդանյանը, ֆրոնտի պաշտպանության սեկցիայի նախագահը, առաջարկում է կարդալ բանաձևը, որի մասին բոլոր ֆրակցիաները եկել են համաձայնության, բայց որոշել են, բացի սոց.դեմոկրատներից, որ կարդացվի առանց վիճաբանության:

Այս մասին լինում է մտքերի փոխանակություն, որից հետո ժողովը որոշում է բանաձևը հանձնել ֆրակցիաներին, որոնց եզրակացությունները կկարդացվեն ժողովում:

Դրվում է փախստականների և պարենավորման հարցը: Սեկցիայի զեկուցանող Վ.Փափազյանը լուսաբանում է սեցիայի ընդունած բանաձևը, ասելով. - Թուրքահայերը սարսափելի հարվածից հետո, երեք տարի է, ապաստան են գտել Կովկասում, որտեղ նրանց ջերմ հյուրասիրություն ցույց տվին հայրենակիցները, և պետությունը նպաստ նշանակեց: Փախստականների դրությունը, սկզբի համեմատությամբ, երբ դիպվածի ակնկալության պատճառով շատ չարիքներ կրեցին, այժմ համեմատաբար լավ է: Բայց չէ կարելի այսպես շարունակել, այլապես փախստականները կկորցնեն բարոյական առաքինությունը և մուրացիկներ կդառնան: Պետք է նրանց համար աշխատանք ստեղծել, որին բոլորը մասնակցեին, և պետության նպաստի ծանրությունը թեթևանար: Կանայք ևս պետք է մասնակցեն այս հանրային աշխատանքին: Չպետք է մոռանալ, որ փախստականները թուրքահայությունն են կազմում, և դրված է նրանց ֆիզիկական գոյության հարցը, որից կախումն ունի և ռուսահայոց ապագան: Պետք է պաշտպանել այս աշխատասեր, մեռնել չկամեցող, ընդունակ ժողովը, պետք է պահպանել նրա մանուկ սերունդը, որ մեր ապագա հույսն է: Դժբախտաբար ռուսաց կառավարությունը նախկին ռեժիմի ժամանակ արտաքուստ բարյացակամություն ցուցյց տալով, ներքուստ հայաջինջ քաղաքականության հետևում, ստեղծելով արհեստական* նահանջներ, սիրաշահելով քրդերին և թուրքերին և Սիբիրում տառապեցնելով հայ գերիներին, որոնք զենք էլ չէին բարձրացրել ռուս բանակի դեմ և որոնց ոչ մի միջոցով հնար չեղավ ազատել: Հեղափոխությունից հետո դրությունը այնքան էլ չփոխվեց, որովհետև ստեղծվեց երկու օրգան՝ գեներալ-կոմիսարիատ և փախստականական խորհուրդ, որոնց իրավասության սահմանները որոշված չեն, և գեներալ կոմիսարիատի շուրջը տեղի ունեցած ինտրիգների շնորհիվ տուժում են գլխավորապես հայ փախստականները: Այդ երկու օրգանների մեջ ստեղծված երկիշխանությունը կորստաբեր է ժողովրդի համար: Ապա հռետորը հիշեց, թե մի քանի ամիս առաջ գումարվեց թուրքահայերի համագումարը, որտեղ իբրև սկզբունք ընդունվեց, որ փախստականների գործը համազգային գործ է, ուրեմն հայության երկու մեծ հատվածներն էլ պետք է գործեն համերաշխությամբ: Ընտրվեց արևմտահայ խորհուրդ, որը դիմեց ռուսահայոց փախստականական կազմակերպություններին միասին գործելու կոչով, և այս կոչը ընդունելություն գտավ: Ի վերջո հռետորը դիմում է դեմոկրատական կուսակցություններին, խնդրելով, որ ավելի հետաքրքրվեն փախստականների վիճակով և հետաքրքրեն նաև սրա դեմոկրատիային: Այնուհետև հռետորը կարդում է փախստականական և պարենավորման գործի բանաձևը:*

Ահարոնյանը, շոշափելով թուրքահայկական դատը, այն միտքը հայտնեց, որ այդ դատը պետք է լուծվի համաձայն հայերի պատմական իրավունքների յուր հողի վրա, թափած արյունի և անթիվ զոհաբերությունների: Հայկական հարցը ուրույն հարց է և չէ նման այլ ազգերի հարցերին: Եվրոպական դեմոկրատիան արդեն ճանաչել է հայերի՝ իբրև ուրույն ազգության գոյության իրավունքը: Ֆրանսիայում այլև չեն ասում

* Բնագրում՝ արվեստական:
* Տե՛ս փաստաթուղթ N 21:

թուրքահայ, այլ պարզապես՝ հայ: Պետք է, որ ռուսական դեմոկրատիան էլ նույն տեսակետը յուրացնի: Հայաստանը հայինը պետք է լինի: Այս կետում զիջում չէ կարող լինել:

Երզնկյանը, պատասխանելով Վ.Փափազյանին, ասաց, թե ռուսաց դեմոկրատական կուսակցությունները, որոնք դրել են ազգերի ինքնորոշման հարցը, չեն կարող չնպաստել, որևէ ազգի ինքնորոշման, եթե մի ազգ այդ հարցը դնում է: Գալով գեներալ-կոմիսարիատի և փախստականական խորհրդի շնորհիվ ծագած երկիշխանության, ասաց, թե դեմոկրատիան անմասն է եղել դրանց կազմակերպության մեջ: Եթե դեմոկրատիան մասնակցած լիներ, հարցը ավելի լավ լուծում կստանար:

Պապաջանյանը բացատրություն է տալիս, թե ինչպիսի պայմաններում կազմակերպվեց փախստական խորհուրդը, որ հիմնված է ազգերի իրավասության սկզբունքի վրա, որ այս սկզբունքով ամենից նպաստավորն է մեր գործերի համար, որ ընդունված է նաև ուրիշ հարցերի համար, որ խորհուրդը միայն կոնտրոլի դեր ունի և չէ կարող ճնշել ազգային կազմակերպությունների գործունեությունը, որոնք պատրաստում են նախահաշիվները, և սրանք լուծում են ստանում Պետրոգրադում:

Ա.Երզնկյանի առաջարկությամբ ժողովը որոշում է կարդացված բանաձևը հանձնել ֆրակցիաների ներկայացուցիչներին (քանի որ սեկցիայի նիստերին բոլորը մասնակցած չեն եղել), որոնք հրավիրելով գաղթականական կազմակերպությունների ներկայացուցիչներ, մի ընդհանուր բանաձև բերեն ժողովին:

Կարդացվում է գրական-գեղագիտական սալոնի ողջույնը* համախորհրդին, որը ժողովն ընդունում է ծափահարությամբ և առաջարկում է պրեզիդիումին շնորհակալություն հայտնել:

Հերթական հարցն էր դպրոցների ազգայնացման խնդիրը: Որովհետև զեկուցումը պատրաստ չէր, որոշվեց հետաձգել երեկոյան նիստին:

Նիստը փակվեց $1^1/_4$ ժամին:

Գ.21, թ. 29-30:

N 12
Նիստ ԺԱ

8 հոկտեմբերի (երեկոյան) 1917թ.

Նիստը բացվեց կոնսերվատորիայի դահլիճում, երեկոյան $8^1/_2$ ժամին, նախագահությամբ Հովհ.Քաջազնունու և ներկայությամբ 121 անդամի:

Սիրական Տիգրանյանն, իբրև զեկուցանող դպրոցների ազգայնացման սեկցիայի, ասում է, որ ազգայնացումը պետք է շոշափե մեր ազգային-եկեղեցական դպրոցները և պետական դպրոցները: Պատմական ակնարկ ձգելով ազգային-եկեղեցական դպրոցների վրա, ցույց է տալիս, որ նրանք թեպետ ազգային բնույթ ունեն, բայց միայն լուսավորչական դավանության հայերի համար են, որոն բարձրագույն տեսչությունը գտնվել է հայ հոգևորականության ձեռքին: Ուրեմն այս տիպի դպրոցների ազգայնացումը պետք կայանա նրանում, որ դավանական տիպը փոխվե զուտ ազգայինի, նրանց կառավարությունը և այն կալվածները, որոնցով պահվում են այդ դպրոցները, անցնեն ժողովրդի ձեռքը: Գալով պետական դպրոցներին, հայտնում է, որ փոխանակ նախկին հոգաբարձուի նշանակված են չորս կոմիսարներ, ըստ ազգությունների, որոնք կոլեգիալ կերպով կառավարում են պետական դպրոցների ընդհանուր գործերը: Սրա հետ միասին, ամեն մի կոմիսար

* Ողջույնի տեքստը արխիվային գործում չի պահպանվել:

պետք է զբաղվի յուր ազգի դպրոցների ազգայնացման գործում: Դպրոցական կոմիսարների կանոնադրությունը կազմված է և առաջարկված ժամանակավոր կառավարության հաստատության: Այս տիպի դպրոցների ազգայնացումը ավելի բարդ է. պետք է ընտրվի կառավարող մարմին, նոր ի նորո մշակվեն ծրագիրներ, կանոնադրություն, պատրաստվեն դասագրքեր, ուսուցիչներ և այլն: Ինքը՝ զեկուցանողը, հայտնում է, որ ինքն ընտրված է հայկական դպրոցների համար կոմիսար հայոց ուսուցչական համագումարի առաջարկությամբ: Բայց գտնում է, որ այդ պաշտոնը պետք է վարի որևէ մի ազգային մարմնի կողմից ընտրված մարդ: Առաջարկում է, որ այդ ընտրությունը կատարե համախորհուրդը: Ապա զեկուցանողը համառոտ հիշատակում է, թե ինչ է արվել այս ուսումնական տարվա սկզբից պետական դպրոցների հայկական մասերի ազգայնացման խնդրում:

Երկրորդ զեկուցանող Աբեղյանը, բերելով վիճակագրական թվեր Կովկասի պետական դպրոցների քանակի և աշակերտության թվի, ըստ ազգության, գալիս է այն եզրակացության, թե պետական դպրոցները ծառայում էին ռուս ազգաբնակության, իսկ այլ ազգիների համար ծառայում էին իբրև ուսուցման միջոց, այնքան նրանց մեջ ուժեղացած էր ռուսական տարրը և արհամարհված տեղականը: Նրանց ազգայնացումը տեղափոխությունից հետո, երբ ազգերի ինքնորոշման իրավունքը հրատարակվեց, անհրաժեշտ պահանջ է: Ազգայնացում ասելով պետք է հասկացվի միայն, որ մայրենի առարկաները պարտադիր լինեն, կամ առարկաները մայրենի լեզվով ավանդվեն, այլ որ նրանց ղեկավարությունը ևս հանձնվեց ազգից ընտրված մի մարմնի, որ ըստ յուր հասկացածի մշակե ծրագիր և դպրոցները կառավարե: Այլապես մենք կես ճանապարհին կմնանք, և մինիստրությունը հնարավորություն կունենա այս կամ այն կերպով ազդել դպրոցների ոգու և ուղղության վրա: Այնուհետև զեկուցանողը տեղեկություններ է հաղորդում, թե ինչ է կատարվել այս տարի դպրոցների ազգայնացման խնդրում: Հիշում է նաև, որ շատ անգամ հայ ծնողները հրաժարվել են իրենց որդոց տալ ազգայնացած դպրոցները, գերադասելով նախկին դրության մեջ մնացած, խառն տիպի դպրոցները: Սակայն երբ նրանց բացատրվում է ազգայնացման նպատակը և այս տեսակ դպրոցների իրավահավասարությունը, նրանք համաձայնում են ազգայնացած դպրոցները տալ: Անցնելով եկեղեցական-ծխական դպրոցներին, զեկուցանողը հայտնում է, որ նրանք զուտ ազգային ժողովրդական դպրոցներ են, բայց եթե եկեղեցուց անջատ չեն եղել, դա հետևանք է եղել հին կառավարության քաղաքականության: Այժմ ժամանակը հասել է, որ նրանց ղեկավարությունը անցնի ազգից ընտրված մարմնի ձեռքը: Ուրեմն նրանք ոչ թե պետք է ազգայնանան, այլ աշխարհականանան, և այս անհետաձգելի պահանջ է, քանի որ մինիստրության կարգադրությամբ ռուսաց սինոդին ենթակա դպրոցները հանձնվում են մինիստրության: Այս կարգադրությունը կարող է տարածվել մեր դպրոցների վրա, եթե մենք չկանխենք: Աշխարհականացման ստիպողականությունն ակներև է դառնում, երբ ի նկատ ունենանք մեր դպրոցների խառնակ, անկազմակերպ վիճակը, թեմական տեսուչների բացակայությունը, հոգաբարձումների քայքայումը, բազմաթիվ փակ մնացած դպրոցներ և այլն: Հեղափոխության շրջանում մեր նշանաբանը պետք է լինի՝ կառավարել մեր դպրոցները իբրև ազգ և ոչ թե իբրև եկեղեցական համայնք:

Նախագահը հայտնում է, թե Ավագների խորհուրդը դեռ չէ կարողացել պատրաստել բանաձև Ազգ[ային] խորհրդի կազմի և իրավասության մասին: Առաջարկում է, որ ֆրակցիաները ժողովի մեջ իրենց բանաձևերն առաջարկեն, և ժողովում լուծվի այդ հարցը:

Պապաջանյանը գտնում է, որ մեծ ժողովում այդպիսի հարցեր լուծելը նպատակահարմար չէ. հարցը կտապալվի: Առաաջրկում է, որ Ավագների խորհուրդը դարձյալ պարապե և համաձայնության գալով մի ընդհանուր որոշում բերե:

Այս առաաջարկությունն ընդունվում է, և հայտարարվում է ընդմիջում:

Ընդմիջումից հետո դպրոցական սեկցիայի փոքրամասնության կողմից զեկուցանում է Ստ.Մալխասյանը և ասում. - Ազգայնացման ենթակա երկու տիպի դպրոցներից ամենամեծ կարևորություն ունի պետական դպրոցների ազգայնացումը, որի համար ամեն ինչ նոր պետք է ստեղծվի: Սակայն դպրոցական սեկցիան և ոչ մի նիստ չէ նվիրել այս հարցին: Գալով եկեղեցական-ծխական դպրոցների աշխարհականացման, սեկցիան այս հարցին նվիրել է երեք նիստ, որոնց ընթացքում քննության է առել Ս.Տիգրանյանի կազմած թեզիսներից միայն առաջինը, որի մասին էլ համաձայնություն չի կայացել: Ուրեմն սեկցիան պատրաստ բանաձևեր չունի դպրոցների ազգայնացման հարցի առիթով: Եկեղեցական-ծխական դպրոցների վերաբերմամբ զեկուցանողը նկատում է, որ նրանք իսկապես ժողովրդական են և կառավարում են ժողովրդի ձեռքով, հանձին հոգաբարձությունների: Հոգևոր իշխանությունը միայն կոնտրոլի դեր է կատարում, և եթե այդ դպրոցներն աննախանձելի վիճակի մեջ են, մեղավորը ինքը ժողովուրդն է: Մեծամասնության առաջարկած եկեղեցապատկան կալվածների գրառումը անիրագործելի է: Ուստի կալվածները համազգային սեփականություն են կազմում, և եթե համախորհուրդը վճռե գրավել, դեռ հարց է, արդյոք, կաթողիկոսը կտա՞ և մանավանդ թե ունի՞ տալու իրավունք: Ուստի փոքրամասնությունը սկզբունքով ընդունելով ծխական-եկեղեցական դպրոցների աշխարհականացումը, գտնում է, որ քանի որ դա կապված է մի շարք իրավաբանական և տնտեսական բարդ հարցերի հետ: Եվ քանի որ դեռ չկա մի ազգային իրավասու մարմին, որ իրավունք ունենա ստանձնելու այն եկեղեցական գույքերն ու հասույթները, որոնցով պահվում են դպրոցները, վաղաժամ է համարում այդ ազգայնացումը և առաջարկում է ընտրել մի մարմին, որ հոգևոր իշխանության հետ համաձայնությամբ կառավարեր այդ դպրոցները և մշակեր նրանց աշխարհականացման եղանակն ու պայմանները:

Մեսրոպ եպիսկոպոսը բացատրում է հոգևոր իշխանության վերաբերմունքը դպրոցների ազգայնացման հարցին: Նկարագրելով հին վանական դպրոցների կատարած դերը մեր լուսավորության գործում, անցնում է ռուսաց տիրապետության ժամանակի կարգերին և ասում, թե չնայելով կառավարության ձգտումներին՝ եկեղեցական դպրոցները որքան կարելի է կղերականացնել, հոգևոր իշխանությունք պահպանեց նրանց ժողովրդական տիպը: Մատթեոս կաթողիկոսը սկիզբ դրեց ժողովրդական հոգաբարձության: Էջմիածնում հունիսի 12-ին գումարված էր եկեղեցականների համագումար, որտեղ ի նկատի առնվեց ծխական դպրոցների հարցը: Նկատվեց, որ գոյություն ունեն մի քանի տեսակի դպրոցներ՝ մասնավոր անձերի և հիմնարկությունների պահածներ, զուտ եկեղեցական հասույթներով պահվողներ և ժողովրդի հասույթներով պահվողներ: Առաջին տեսակի դպրոցների վիճակը կախված պետք է լինի պահողների կամքից, երկրորդ տեսակինը պետք է մնա հոգևոր իշխանության՝ եկեղեցական կարիքների համար, իսկ երրորդ տեսակի դպրոցները ժողովուրդը թող կառավարե ինչպես որ կամենա: Զեկուցանողները այս տարբերությունները նկատի չունեին: Ինքը չէ հավատում, որ համախորհուրդը որոշում կայացնի, թե եկեղեցին իրավունք չունի դպրոց բանալու: Գալով մեր դպրոցների աննախանձելի վիճակին, հռետորը գլխավոր պատճառը գտնում է միջոցների պակասության մեջ: Ինքը համաձայն չէ այն առաջարկության, թե եկեղեցապատկան գույքերը պետք է գրավել դպրոցների պահպանության համար: Ինքը գտնում է, որ այդ խղճուկ միջոցները պետք է գործի դրվեն մեր կուլտուրական այն կարիքների համար, որ շատ բազմաթիվ են, իսկ դպրոցների պահպանությունը պետության գործն է, պետք է պահանջել, որ պետական գանձարանը մատակարարե այս միջոցները:

Ստամբուլցյանը (սոց.-հեղ.) ակնարկ ձգելով դպրոցների այժմյան վիճակի վրա, գտնում է նրանց աննախանձելի դրության մեջ: Պետական դպրոցները ծառայել են ռուսացման և այլազգիների զրկողության, ազգային դպրոցները, որոնք վայելում են ինքնավարություն, խեղճ դրության մեջ են: Վրացիք, որոնք չունեին դպրոցական

ինքնավարություն, մեզանից բարձր են կանգնած գրագիտության կողմից: Սա ցույց է տալիս, որ հայ համայնքը չէ կարողանում յուր միջոցներով կառավարել յուր դպրոցները: Մեր դպրոցները ոչ թե պետք է ազգայնացնել, որ դժվար թե բավարար արդյունք ունենա, միջոցների պակասությունը աչքի առաջ ունենալով, այլ պետք է պետականացնել: Մենք ոչ թե պետք է կանխենք, որ մեր դպրոցները միհիստրական չդառնան, այլ ինքներս պետք է հարց հարուցանենք նրանց պետական դպրոցների ցանցի մեջ մտցնելու համար: Նույն միջոցը, միայն մասամբ, պետք է գործադրել և հոգևոր դպրոցների համար: Պետականացած դպրոցները պետք է կառավարվեն ինքնավար մարմինների ձեռքով, տերիտորիալ սկզբունքով:

Խոնդկարյանը սխալ է համարում Ժող. կուսակցության հայացքը, թե եկեղեցական կալվածքները, ըստ Պոլոժենիայի, պատկանում են ամբողջ հայության և ոչ միայն ռուսահայերին: Ուստի և ռուսաց պետական օրենքը չէ կարող նրանց գրավել, և ոչ ռուսահայոց համախորհուրդը իրավասու է նրանց մասին կարգադրություն անել: Յուր կարծիքով Պոլոժենիան, որ եկեղեցական կալվածքները ընդհանուր եկեղեցունն է ճանաչում, աչքի առաջ ունի միայն Ռուսաստանի սահմաններում եղած հայ եկեղեցիները: Եկեղեցական կալվածքներից մի մասը կարելի է պահպանել համայնքների ձեռքում, բայց հողային կալվածները, որքան էլ բողոքենք, ինչ միջոցների էլ որ դիմենք, այնուամենայնիվ, պետությունից կգրավվեն ժողովրդի համար՝ ընդհանուր պետական օրենքով: Իրանց ֆրակցիան հակառակ չէ, որ այդ կալվածքների կառավարությունը հանձնվի համայնքներին, եթե ստեղծվի ազգային կուլտուրական ավտոնոմիա:

Հայկ Տեր-Միքայելյանը նկատում է, որ առաջին զեկուցանողները գնում են «ամենափոքր դիմադրության» ուղղությամբ. մոմ ծախելով, աջահամբյուրներով կոպեկներ են հավաքվում, և ահա աչք են դնում այդ կոպեկների վրա, բայց չեն սպասում միջոցներ ստանալ պետությունից, որի պարտականությունն է դպրոցների պահպանությունը: Մեր դպրոցները խեղճ են: Բայց ո՞վ է մեղավոր: Հոգևոր իշխանությունը սխալվել է, որ ժողովրդին է հանձնել նրանց կառավարությունը: Յոթը ամիս է, նոր կարգեր են ստեղծվել: Նախկին դպրոցական հոգաբարձուի փոխարեն կազմվել է կոմիսարիատ: Բայց ի՞նչ է արել նա մինչև այսօր: Ստանում ենք շրջաբերականներ՝ ազգայնացած դպրոցների բացումը հետաձգելու մինչև հոկտեմբերի 20-ը, որպեսզի կարգադրություն անեն: Ստեղծվել է անարխիա: Մեղադրելի չեն այն ծնողները, որոնք հրաժարվում են իրենց որդոց այդ ազգայնացած դպրոցները տալու: Ահագին գործ կա կատարելու պետական դպրոցների ազգայնացման գործում, և սակայն դեռ ոչինչ չէ արված: Ի վերջո, նկատելով, որ սեկցիայի կողմից պատրաստված ծրագիր և բանաձև չէ բերված, ինքն առաջարկում է այդ հարցը համախորհրդի գործերից հանել և պահել Ազգային համագումարին:

Սուրխաթյանը[1] գտնում է, որ դպրոցների գործը պետք է հանձնվի պետության, քաղաքային և զեմստվային ինքնավարությունների անմիջական կառավարության տակ: Սրանք պետ է ունենան միջազգային խորհուրդներ՝ բաժանված ազգային ավտոնոմ սեկցիաների: Բոլոր դպրոցները պետք է ենթարկված լինեն լուսավորության մինիստրին, որին կից պետք է հիմնվի նույնպես միջազգային բնավորության խորհուրդ՝ ազգային սեկցաներով: Համաձայն չէ, որ ընտրվեն կրթական առանձին ազգային մարմիններ: Ծխական դպրոցները նույնպես պետք է առնվեն հոգևոր իշխանությունից և հանձնվեն պետության, մտցնելով պետական դպրոցների ցանցի մեջ: Իսկ այն եկամուտները, որոնցով պահվում են այդ դպրոցները, պետք է գործադրվեն այլ կուլտուրական կարիքների համար:

Ղազար Տեր-Ղազարյանը դիտում է այն հակասությունը, որ կա դպրոցների ազգայնացման ծրագրի և տերիտորիալ ավտոնոմիայի ծրագրի մեջ: Եթե ստեղծվի տերիտորիալ ավտոնոմիա, այլևս կարիք չի լինի դպրոցների համար ազգային խորհուրդ ստեղծելու: Ինքը համաձայն չէ, որ դպրոցների կառավարությունը հանձնվի

հետամնաց ժողովրդի ձեռքը: Անդրկովկասում կան ժողովրդական մասսաներ, որոնք անընդունակ են դպրոցներ կառավարելու: Որպեսզի դպրոցները չենթարկվեն ոչ ցանկալի տարրերի և դասակարգերի ազդեցության, պետք է նրանց ղեկավարությունը մի ուժեղ ձեռքի մեջ դնել, այն է՝ պետք է նրանց պետականացնել:

Արշ.Զամալյանը առարկելով նախկին հռետորներին, նախ կանգ է առնում Հայ ժող. կուսակցության հարուցած առարկությունների վրա և ասում է, թե եկեղեցական-ծխական դպրոցների աշխարհականացման ոչ մի դժվարություն չկա, որովհետև համախորհրդի կողմից ընտրվելիք դպրոցական մարմինը կառավարության կողմից կհաստատվի, և նա կիրականացնի ինչ որ հարկ է: Մալխասյանի հայտնած տարակույսին, թե արդյոք, կաթողիկոսը կտա՞ կալվածները և իրավունք ունի՞ տալու, հռետորը պատասխանեց՝ մենք կստիպենք: Ապա առարկելով սոց-դեմոկրատ և սոց. հեղափոխական հռետորներին, ասում է, որ դպրոցները պետք է հանձնվեն ազգի տնօրինությանը: Ոչ մի թուրք կամ վրացի, կամ ռուս իրավունք չպիտի ունենա խառնվելու մեր դպրոցական գործերին: Պետք է ստեղծվի անկախ հայկական ուսումնական խորհուրդ, որ պիտի կառավարե [միայն] դպրոցները:

Ամիրյանը առարկելով դաշնակցական հռետորներին, ասում է, որ հայ եկեղեցին ինքը հայ ժողովուրդն է, և սրա մեջ է եկեղեցու ուժը և թուլությունը: Եկեղեցին մեր մեջ եղել է ազգային իշխանության սուրոգատը, ուրեմն ի՞նչ իրավունք ունեք այսպիսի եկեղեցուց պահանջելու կալվածքները, քանի որ նրանք արդեն ժողովրդինն են: Եթե հարց է ծագում կալվածների սեկուլարիզացիայի, այդ հարցը այստեղ չէ կարող լուծվել: Իսկ եթե նրանց կառավարելու և կարգավորելու հարցն է դրվում, կառավարենք, որովհետև դուք ժողովուրդն եք: Ինչ որոշում էլ որ այստեղ կայանա, նշանակություն չի ունենա, որովհետև այդ կալվածները սեփականություն են հիմնարկությունների, որոնք դատարանի միջոցով կբողոքեն և ի չիք կդարձնեն որոշումները: Դաշնակցությունը եկեղեցական կալվածների գրավման հարցը առաջ է բերում ցույց տալու համար, որ ինքը սոցիալիստական կուսակցություն է: Նա կռվում է կղերականության դեմ, որովհետև գիտե, որ ուժեղ դիմադրության չի հանդիպի:Բայց նա դուրս չի գալիս թուրք բեգի դեմ՝ հայ գյուղացուն պաշտպանելու: Մենք կղերականություն չունենք: Եթե նա կղերական է եղել, նշանակում է, Դաշնակցությունը ինքն է եղել կղերական, որ մտել է եկեղեցու մեջ՝ նրան շահագործելու համար հօգուտ կուսակցության շահերի: Երբ Դաշնակցությունը դուրս գա եկեղեցուց, եկեղեցին կուժեղանա:

Այնուհետև դարձյալ լինում է մտքերի փոխանակություն, որից հետո առաջարկություն է դրվում հարցը հանձնել ֆրակցիաներին, քանի որ սեկցիայում բավականաչափ քննված չէ: Բայց նախագահը առաջարկությունը չէ դնում քվեարկության, որովհետև քվորում չկար, այլ ասում է, թե մյուս օրը կզեկուցանե ժողովին:

Նիստը փակվում է գիշերվա $1^1/_2$ ժամին:

Գ. 21, թ.30-34:

N 13
Նիստ ԺԲ

9 հոկտեմբերի (առավոտյան) 1917թ.

Նիստը բացվեց առավոտյան 12 ժամին, նախագահությամբ Ղ.Տեր-Ղազարյանի և ներկայությամբ 124 անդամի:

Նախագահը զեկուցանում է, թե երեկվա նիստում դպրոցական հարցի վերաբերմամբ որոշում չկայացավ: Կար երկու առաջարկություն.

ա. հանձնել ֆրակցիաների քննության, քանի որ հարցը սեկցիայում բավականաչափ մշակված չէ,

բ. դուրս ձգել համախորհրդի գործերից և թողնել համախորհրդի որոշման՝ միևնույն պատճառաբանությամբ:

Ժողովը, ի նկատի ունենալով, որ ընտրվելու է Ազգային խորհուրդ լայն ֆունկցիաներով, որոշում է Ս.Տիգրանյանի առաջարկությամբ այս հարցը և նրա իրագործումը հանձնել ընտրվելիք Ազգային խորհրդին:

Նախագահը հայտնում է, որ Ավագների խորհուրդը եկել է համաձայնության Պետրոգրադում զինվորական մինիստրի մոտ նշանակվելիք հայ զինվորական գործակալի անձնավորության մասին և, իբրև այդպիսին, առաջարկում է գեներալ Բագրատունուն: Բոլոր ֆրակցիաները հայտնում են միաձայն իրանց վստահությունը նրա մասին, և Բագրատունին միաձայն ընտրվում է զինվորական գործակալ: Ժողովը որոշում է, որ նա կարևոր հարցերի վերաբերմամբ պետք է հրահանգներ և ցուցումներ ստանա Ազգային խորհրդից, իսկ ընթացիկ գործերը պետք է վարե, խորհրդակցելով յուր մոտ կազմվելիք մարմնի հետ:

Նախագահը զեկուցանում է, որ Ավագների խորհուրդը համաձայնության է եկել Ազգային խորհրդի ֆունկցիաների մասին: Կազմի մասին դեռ համաձայնություն չկա: Հույս ունի, թե մինչև երեկոյան նիստը համաձայնություն կկայանա:

Նախագահը զեկուցանում է, թե Պետրոգրադից ստացվել է հեռագիր, որով առաջարկվում է ընտրել հայերի կողմից մի ցենզավոր ներկայացուցիչ նախապառլամենտում՝ ի լրացումն երկու սոցիալիստական-ազգային ներկայացուցիչների:

Ժողովը խորհրդակցությունից հետո գտնում է, որ այդ ներկայացուցչի ընտրությունը պետք է կատարե ոչ համախորհուրդը, այլ ցենզավոր որևէ մարմին, և որոշում է հանձնել այդ ընտրության գործը առևտրա-արդյունաբերական խորհրդին:

Նիստը փակվեց ժամը 3-ին:

Գ.21, թ.34 և հակ.:

N 14
Նիստ ԺԳ

9 հոկտեմբերի 1917թ.
(երեկոյան)

Նիստը բացվեց առաջնորդարանում, երեկոյան ժամը 9-ին, նախագահությամբ Լ.Աթաբեկյանի և ներայությամբ 78 անդամի:

Նախագահը զեկուցանում է, թե Ավագների խորհուրդը դեռ չէ կարողացել վերջացնել Ազգային խորհրդի կազմի հարցի որոշումը, խորհուրդը դեռ շարունակում է աշխատանքը:

Հ.Առաքելյանն ասում է, թե քանի որ ընտրվելու է Ազգային խորհուրդ և գործադիր մարմին, պետք է որոշվեն թե՛ մեկի և թե՛ մյուսի ֆունկցիաները: Ժողովը, գտնելով, որ բազմամարդ ժողովի մեջ դժվար է համաձայնության գալ այս հարցերի մասին, որոշում է հանձնել այդ ֆունկցիաների որոշումը Ավագների խորհրդին:

Նախագահի առաջարկությամբ ժողովը որոշում է ընտրել մասնաժողով՝ ժողովի մեջ քննված հարցերի մասին ընդհանուր բանաձևեր մշակելու համար:

Հ.Քաջազնունու առաջարկությամբ ժողովը որոշում է մասնաժողովի կազմի մեջ մտցնել նաև քարտուղարությունը:

Մասնաժողովի կազմի մեջ ժողովի որոշմամբ մտնում են երկու-երկու անձ ֆրակցիաներից և մի անձ անկուսակցականներից: Ընտրվում են Դաշնակցությունից՝ Շահխաթունյան, Աղբալյան, սոց. դեմոկրատներից՝ Տեր-Ղազարյան, սոց. հեղափոխականներից՝ Ստամբոլցյան, Տեր-Օհանյան, Հայ ժող. կուսակցությունից՝ Մխիթարյան, Ամիրյան, անկուսակցականներից՝ Մամիկոնյան: Բացի սրանցից, որոշվում է գաղթականական և պարենավորման հարցի բանաձևի համար հրավիրել գաղթականական մարմնի մասնաժողովը:

Օրակարգի հարցն էր զեկուցումը պարենավորման հարցի մասին:

Սեկցիայի կողմից զեկուցանում է Ս.Հարությունյանը: Նա վիճակագրական տվյալներ բերելով, ցույց է տալիս, որ Անդրկովկասում այս տարի հացի բերքը անբավարար է եղել: Կան գավառներ, որ սերմացուն անգամ հետ չեն ժողովել: Համեմատաբար լավ է Հյուսիս[ային] Կովկասում, որ շարունակ Անդրկովկասի համար ծառայել է իբրև շտեմարան: Հացի պակասությունը մեզ մոտ արդեն չարագուշակ կերպարանք է ստանում: Հացի գինը չափազանց բարձրանում է: Ձորքի ճակատը հազիվ մի ամսվա պաշար ունի, և այնտեղ էլ օրական բացիոնը պակասեցրել են կես ֆունտով: Սրա հետ միասին պարենավորման գործը շատ անկազմակերպ ու խառն վիճակի մեջ է: Վագոններով ալյուր է անհետանում, չգիտեն ուր: Գաղթականների համար ստացված ալյուրը բռնությամբ առել-տարել են: Պետք է այժմեն կտրուկ և նպատակահարմար միջոցներ ձեռք առնվեն ապագա սովի սպառնալիքից խուսափելու համար:Մեր հույսը դնելու ենք Հյուս[իսային] Կովկասի և Պարսկաստանի վրա, որտեղ նույնպես ալյուր կա, թեպետև շատ բարձր գնով: Այնուհետև կարդում է սեկցիայի ընդունած բանաձևը:

Ժողովը, նախագահի առաջարկությամբ, որոշում է, որ միայն գործնական առաջարկություններ լինեն:

Հ.Առաքելյանը գտնում է, որ կառավարության օգնության վրա հույս դնելով չի կարելի բավականանալ: Այդ օգնությունը, եթե լինի էլ, շատ կուշանա: Պետք է ինքնօգնության դիմել: Թուրքերը կարողացել են ժամանակին կազմակերպել հացի գնման գործը և ներկայումս ֆունտը 9 կոպեկով հաց են մատակարարում իրանց ազգակիցներին, այնինչ, Շուշիում հայերը հացի ֆունտին մի ռուբլի են տալիս: Պետք է մեր հարուտները և բանկերը առևտրական հողի վրա մի քանի միլիոն ռուբլու ֆոնդ կազմեն, ալյուր գնեն և առքի գնով ծախեն ազգաբնակությանը: Նույնպես առաջարկում է բանալ էժանագին ճաշարաններ և թեյարաններ:

Սերեբրյակյանը հայտնում է, որ Հյուս[իսային] Կովկասում ցորեն կա, դժվարությունը վագոնների իրավունք ստանալու մեջ է կայանում: Պետք է դիմել, այսպես կոչված, պոլկաչների աջակցության: Շամախիում հերկ կա, բայց սերմացու չկա. եթե շուտ չհասնի, սովը մյուս տարի անխուսափելի կլինի: Համաձայն է Հ.Առաքելյանի առաջարկած միջոցին:

Նարիման Տեր-Ղազարյանը նկատում է, թե ոչ թե հաց չկա, այլ չկա կանոնավոր կազմակերպություն: Մեր ինտելիգենցիան սովոր է ռեզոլյուցիաներ հանել, բայց նրանց գործադրելու համար գործնական քայլեր չէ անում: Պարենավորման գործը գտնվում է սպեկուլյանտների ձեռքին, որոնք շահագրգռված են հացի թանկանալու մեջ: Ջիվանշիրի գավառում հաց գնվեց Շուշվա համար՝ փութը12ռ., բայց պարենավորման կոմիտեն թույլ չտվեց տանել Շուշի, և այնտեղ այժմ ցորենը ծախվում է փութը 30-33 ռուբլով: Պետք պարենավորման գործը առնել այդպիսիների ձեռքից և հանձնել կառավարչական կոմիսարներին: Պետք է կռիվ հայտարարել վաշխառուների դեմ, և նրանք կսաստվեն: Սովի ուրվականը կանգնած է մեր առաջ. պետք է դպրոցները փակել. սոված երեխան չի կարող սովորել: Մայրերը ժամերով հերթի են սպասում մի կտոր հաց գնելու համար: Եթե հուլիսին, երբ հացի

պակասությունը հայտնի դարձավ, անմիջապես գործի ձեռնարկեինք, այժմ ապահով դրության մեջ կլինեինք Գոնե այժմ փութանք ինչ որ հնար է անել, այլապես կանգնած կլինենք բարդությունների առաջ:

Ժողովը որոշում է վիճաբանությունները փակել: Այնուհետև կարճ խորհրդակցությունից հետո որոշվում է սեկցիայի բանաձևը իբրև նյութ հանձնել Ազգային խորհրդին՝ հանձնարարելով յուր հոգսերի կարևորագույնը համարել պարենավորման գործը: Նույն խորհրդին հանձնել և Հ.Առաքելյանի առաջարկությունը՝ [այն] իրագործելու, որքան հնար է:

Օրակարգի հաջորդ հարցն էր զեկուցումը Ազգային բյուրոյի մասին: Բայց հայտնվեց, որ զեկուցանող Աղբալյանը բացակա է:

Երզնկյանը բողոքեց այս երևույթի դեմ և հայտնեց, որ սաբոտաժը անթույլատրելի է:

Որոշվեց այդ զեկուցումը հետաձգել հաջորդ օրվան:

Նիստը փակվեց գիշերվա $10^1/_2$ ժամին:

Գ.21, թ.23-24:

N 15
Նիստ ԺԴ

10 հոկտեմբերի 1917թ.

Նիստը բացվեց առաջնորդարանում, [առավոտյան] 8 ժամին, նախագահությամբ Ա.Ահարոնյանի և ներկայությամբ 103 անդամի:

Նախագահը հայտնում է, թե խմբագրական մասնաժողովը մշակել է ընդհանուր բանաձևեր Օզակոմի ապագա կազմի և ազգամիջյան ու ինքնորոշման հարցերի մասին:

Կարդացվում են բանաձևերը:

Օզակոմի կազմի մասին- «Կովկասյան կառավարության կազմին վերաբերող հարցի լուծումը համախորհուրդը հանձնում է նորընտիր Ազգային խորհրդին՝ վարվելու համաձայն մոմենտի պահանջին»:

Ազգամիջյան և ինքնորոշման հարցերի մասին - «Ընդունելով ազգերի ինքնորոշման իրավունքը, հայ ժողովուրդը պիտի ձգտի իրականացնել իր այդ իրավունքը պետականության հիմունքներով և սկզբունքներով, անդրկովկասյան ժողովուրդների դեմոկրատիայի փոխադարձ համաձայնությամբ»:

Ժողովը երկու բանաձևերն էլ ընդունում է:

Օրակարգի հարցն էր՝ զեկուցում Ազգային բյուրոյի գործունեության մասին:[1]

Զինվորական մասի զեկուցանող Ն.Աղբալյանը ամփոփ տեղեկություններ է հաղորդում կամավորների գնդի կազմակերպության մասին,[2] որոնք առաջացան կառավարության ցանկությամբ:* Բայց վերջը կառավարությունը սկսեց ցուցյ տալ դեպի նրանց անբարյացակամ վերաբերմունք, օրինակ՝ թույլ չէր տալիս նրանց ստվարանալ, կասկածելով, թե միգուցե ապագային չարիք դառնան յուր համար իբրև հեղափոխական տարրեր. նրանց պահանջները և կարիքները չէր հոգում, նրանց ծառայությունները և քաջագործությունները չէր հիշատակում և այլն: Այսպիսով հարաբերությունը կառավարության և մեր մեջ լարված բնույթ ստացավ: Այնուհետև հռետորը թվում է կամավորների անվիճելի ծառայությունները և քաջությունները - որ նրանք եղել են հառաջապահ դիրքերի վրա, նահանջի ժամանակ եղել են հետին

* Ճառի համեմատաբար լրիվ շարադրանքը, որ ընտրել ենք «Հորիզոն» թերթից, բերում ենք սույն արձանագրության վերջում:

դիրքերի վրա, նահանջի ժամանակ եղել են հետին գծերի վրա, կատարել են խուզարկուի պաշտոն, ճակատի կռիվներին մասնակցել են անվեհերությամբ, օրինակ՝ Սարիղամիշի, Դիլմանի, Ռևանդուզի, Բերկրի-Կալայի, Բիթլիսի, Մուշի, Խնուսի և այլ կռիվներում, որտեղ հաճախ վճռական դեր են կատարել: Հայ ժողովրդի վերաբերմամբ կամավորների կատարած ծառայությունները հռետորը գտնում է նրանում, որ Վանը ազատելու պատճառ դարձան, հակառակ ռուսաց կառավարության որոշման, գաղթի ժամանակ ապահովեցին և պաշտպանեցին գաղթողներին, հայկական հարցի լուծման գործում նշանակություն տվին հայերի մասնակցությամբ կռվող դաշնակից պետությունների աչքում, ապացուցեցին հայերի զինվորական կազմակերպչական ոգին, ժողովրդի ոգեկան կորովը: Այս հանգամանքները հասարակական մեծ արժեք ունեն հայոց վերածնության նախօրյակին: Կամավորների պակասությունները ավելի չեն եղել, քան ռուսաց բանակինը: Այսքան ասելով կամավորների դերի մասին, հռետորը ասում է, թե մնացածը թողնում է պատմության:

Ա.Ահարոնյանը, հակիրճ ճառով արտահայտելով այն միտքը, թե կամավորական խմբերի վարիչները մեր ցեղի ազնվական կորովի արտահայտիչներն են եղել, առաջարկում է ողջունել ժողովում ներկա եղող Անդրանիկին և Դրոյին և ոտքի կանգնել ընկածների հիշատակին: (Բոլորը ոտքի են կանգնում):

Ն.Տեր-Ղազարյանը պահանջում է, որ զեկուցում տրվի Բյուրոյի վարած քաղաքականության մասին նախկին կառավարության հետ:

Բժ.Բոնապարտյանը նկատում է, որ Ազգային բյուրոն այդ պատասխանատու քաղաքականությունը վարելիս հարաբերության մեջ չի մտել Պոլսո Ազգային ժողովի հետ:

Ն.Աղբալյանը պատասխանում է, թե այդ հարցերը վերաբերում են Ազգային բյուրոյի քաղաքական գործունեության, որի մասին զեկուցում պետք է տա Գ.Խատիսյանը:

Երզնկյանը, որին ձայնակցում են և ուրիշ ժողովականներ, պահանջում է, որ Ազգ[ային] բյուրոյի քաղաքական գործունեության հաշիվը ներկայացվի համագումարին: Եթե զեկուցանող Գ.Խատիսյանը բացակա է, ապա պետք է մեկ ուրիշը զեկուցանե, մանավանդ, որ ներկա են բյուրոյի այդ գործունեության լավատեղյակ անդամներ: Ժողովը, մտքերի փոխանակությունից հետո, որոշում է այդ հարցը հետաձգել առաջիկա նիստին, խնդրելով, որ Ս.Հարությունյանը զեկուցանե:

Ժողովն անցնում է Ազգային բյուրոյի դրամական հաշիվների քննիչ հանձնաժողովի զեկուցումը լսելու: Հանձնաժողովի նախագահ Ս.Հարությունյանի բացակայության պատճառով զեկուցումը կարդում է Ա.Դարբինյանը, որ կարդալով սեկցիայի արձանագրությունն ու որոշումը (այս արձանագրությունն ու որոշումը դրվում են այս նիստի արձանագրության տակ)*, յուր կողմից մի քանի լրացուցիչ տեղեկություններ է հաղորդում մոտ 100.000 ռուբլի գումարի սխալի մասին, որ նկատվել է Ազգային բյուրոյի տված հաշիվների մեջ:

Այս առիթով տրվում են փոխադարձ բացատրություններ, որոնցից երևում է, որ այդ գումարի հարցը դեռ ստուգված չէ եղել, ուստի և հանձնաժողովը որոշել է դրա մասին, իբրև դեռ չստուգված, ոչինչ չզեկուցանել համախորհրդին:

Այս հարցը այսպես պարզվելուց հետո ժողովն ընդունում է հանձնաժողովի զեկուցումը:

Նիստը փակվում է $2^1/_2$ ժամին:

Գ.21, թ.24,35:

*

* Արձանագրությունն ու որոշումը արխիվային գործերում չեն պահպանվել:

* *

Պատգամավոր Նիկոլ Աղբալյանի զեկուցումը Ազգային համախորհրդակցության հոկտեմբերի 10-ի երեկոյան նիստում՝ նվիրված կամավորական շարժմանը

10 հոկտեմբերի 1917թ.

Այնուհետև կամավորական շարժման մասին Ազգային բյուրոյի կողմից զեկուցում է տալիս ընկ. Ն.Աղբալյան:

«Կամավորական շարժման մասին դատավճիռ կարծակի ապագա հայ պատմագիրը: Իսկ մենք, որպես ականատեսներ, կարող ենք մտքեր բանաձևել այդ շարժման մասին և ցույց տալ մեր վերաբերմունքը: Երբ ակնհայտ դարձավ, որ Թուրքիան էլ, որպես հակառակորդ մեր դաշնակիցներին, կռվի է դուրս գալիս, այդ ժամանակ ինքնաբերաբար շարժում սկսվեց հայկական բոլոր խավերում: Կամավորներ երևացին անգլիական և ֆրանսիական բանակներում:

Կամավորական հոսանք սկսվեց նաև դեպի ռուսական բանակը: Այդ ցրիվ, անկազմակերպ շարժմանը որոշ ձև և ուղղություն տալու համար ծնվեց համապատասխան ազգային մարմին,* որ իր ձեռքն առավ հայ կամավորական շարժման ղեկավարությունը: Ռուսական բանակի մեջ հայ կամավորների պարտք է լինել օժանդակ ուժ և, որպես երկու ծանոթ տարր, զբաղվել հետախուզական գործողություններով: Կամավորական շարժումն ունի երկու շրջան. սկզբից մինչև 1915թ. ապրիլի 1-ը՝ մինչև կամավորական գնդերի լուծումը: Կամավորական գնդերը կոչվում էին խմբեր, ինչպես և ասված է ռուսական պաշտոնական հրամաններում: Խմբերը գտնվում էին փորձված մարդկանց հրամանատարության տակ: Բաղկացած էին 450 մարդուց, միայն 1-ին գունդը 1000-ից ավելի էր: Խմբերը հետագայում միացան և վերածվեցին բատալիոնների: Խմբերը նպաստ էին ստանում պետությունից և Ազգ[ային] բյուրոյից:

1915թ. սեպտեմբերի վերջում կամավորական գնդերն այլևս իբրև այդպիսին, գոյություն չունեին. նրանց մի մասը ցրվեց, զինապարտները մուծվեցին ռուսական զորքի մեջ իբրև սովորական զորամասեր: Ազգային Բյուրոյի և [ցարական] կառավարության մեջ կար բացարձակ հակադրություն, նույնիսկ թշնամանք: Մինչդեռ Ազգային բյուրոն աշխատում էր մեծացնել գնդերի թիվը՝ կառավարությունն ընդդիմանում և աշխատում էր եղածի ուժն ամեն տեսակ արգելքներով թուլացնի: Նա ընդառաջ չէր գնում գնդերի ամենատարրական, նույնիսկ տեխնիքական պահանջներին: Կառավարությունը խմբերին համարում էր կանոնավոր զորամասեր և համապատասխան պահանջներ առաջադրում: Այնինչ խմբերն այդ տեսակ կոչում և պատրաստակամություն չունեին: Այստեղից՝ մի շարք թյուրիմացություններ: Բռնակալությունը չէր կարող տանել մեր բարոյական կարգապահությունը*, որ հարկադրված էր այն ժամանակվա մտրակի ու սարսափի ազդեցության տակ գոյություն ունեցող կարգապահության: Մեր կամավորների մեջ իշխում էր այն ձևի կարգ, որ հիմա հեղափոխական կառավարությունն աշխատում է ստեղծել ռուս զորքի մեջ: Կառավարության թշնամանքը դեպի հայ կամավորներն ուներ մի այլ հիմնական պատճառ. այդպիսի մի զինական ուժ որոշ բարոյական կշիռով՝ չէր կարող հաճելի լինել բռնակալության: Այդ ուժը նկատվում էր իբրև մի վտանգ ապագայի համար: Ահա այդ էր պատճառը, որ կամավորների կատարած մի շարք փայլուն գործողություններն անտեսվում էին պաշտոնական մարմինների կողմից, չէիր հրատարակվում, մի բան, որ

* Խոսքը Ազգային բյուրոյի մասին (տե՛ս N 15 փաստաթղթի ծանոթ. N 1):

* Ժամանակավոր կառավարությունը:

խոր կերպով վիրավորանք էր հասցնում թե՛ մարտիկներին և թե՛ առհասարակ հայերի ազգային զկացմունքին:

Կամավորներն ունեցել են մի շարք անվիճելի ծառայություններ.

1. Նրանք թե՛ պետությանը և թե՛ դաշնակիցներին զինված աջակից են եղել: Փաստերով կարելի է ապացուցել, որ նրանք միշտ առաջնակարգ դիրքերումն են եղել՝ նրա կռիվների և հարձակումների ժամանակ:

2. Նահանջի ժամանակ՝ նրանք միշտ եղել են հետնապահ, անմիջական կրակի տակ:

3. Իբրև խուզարկուներ՝ նրանք նույնիսկ առաջին գծից էլ առաջ են եղել, այսինքն՝ կռվի ամենավտանգավոր մասում:

Վճռական ճակատամարտերում նրանք մի շարք կռիվներում կարևոր ու մեծ գործոն է հանդիսացել:

1. Սարիղամիշի ճակատամարտում 4-րդ գունդը Նարիմանի կռվում իր հերոսական դիմադրությամբ ահագին նշանակություն է ունեցել ընդհանուր պայքարի հաջողության համար:

2. Դիլմանի ճակատամարտում 1-ին գունդը Խալիլ-բեյի ուժի խորտակման մեջ ունեցել է իր մեծ կշիռը:

3. Ռևանդուզդի կռվում 4-րդ գունդը իր խիզախ հարձակումով փրկել է ռուսական զորամասը տաճիկների ձեռքը գերի ընկնելուց, զոհ տալով Քեռուն:

Մի քանի կարևոր տեղեր գրավվել են հայ կամավորների անմիջական մասնակցությամբ կամ բացառապես նրանց ձեռքով: Դրանք են. Բերկրի-Կալայի, Վանի, Խնուսի, Մուշի, Բիթլիսի գրավումները: Մեծ դեր են կատարել նաև Էրզրումի գրավման մեջ Ազգ[ային] բյուրոյի տված ուղեցույցները: Բոլոր վերև հիշվածները հաստատված են պաշտոնական փաստաթղթերով:

Հայ կամավորները մի շարք անգնահատելի և անհերքելի ծառայություններ են մատուցել հայ ժողովրդին. նրանք ազատել են Վանը վերջնական խորտակումից: Ալաշկերտի և Վանի մեծ գաղթերի ժամանակ կամավորները՝ թե՛ առջևից, թե՛ թիկունքում կռվելով՝ փրկել են գաղթող ժողովրդին: Հայ կամավորական շարժումը հայկական հարցի հրապարակ նետվելուն և դաշնակիցների կողմից պաշտպանելու գործում ունեցել է իր մեծ նշանակությունը: Նա ցույց տվեց, որ հայ ցեղը կարող է կազմակերպված պաշտպանել իր երկիրը, ցուցադրեց ռազմական ոգին և ուժեղացրեց հայ ինքնազգացումը:

Այդ շարժումով հայ ժողովուրդն ապրեց ամբողջ երեք տարի: Դա բարոյական վերածննդի տարեթիվ է հայ ազգի համար 10-հազարանոց անձնվեր բանակ հանելը մեր նոր պատմության մեջ եզակի երևույթ է: Վերջին տարում, կորովազուրկ հայ ժողովուրդը առաջին անգամն է այդքան մի մեծ կազմակերպված ուժ և կորով ցուցադրում: Նախքան կամավորական շարժումը՝ մենք ենթադրում էինք, թե կարո՞ղ ենք պետականորեն կազմակերպվելու և պաշտպանվելու, իսկ հիմա մենք այդ բանի ապացույցն ունենք: Կամավորական շարժման մի շարք պակասությունները նսեմանում են այս մեծ դրական կողմերի առաջ: Իսկ մնացածը պատկանում են պատմությանը»:

Վերջացնում է իր զեկուցումը ընկ. Աղբալյանը հասարակության բուռն ծափահարություններով:

Պատգամավորները խոսք են վերցնում և պահանջում, որ Ազգ[ային] բյուրոն հաշիվ տա իր այն հարաբերությունների մասին, որ վարել է կառավարության հետ:

Նախագահ - Ընդհատելով խոսողներին, առաջարկում է ողջունել կամավորական գործի այն հերոսներին, որ հիմա նստած են մեր շարքերում (բուռն ծափեր): Անդրանիկ և Դրո ոտքի են կանգնում և շնորհակալություն հայտնում (բուռն, երկարատև ծափահարություններ):

Նախագահ - Հիշենք նաև մեծ պայքարում ընկած զոհերի, որոնք կորան մեր փրկության և վերածնության գործի համար: Հարգե՛նք նրանց հիշատակը (բոլորը ոտքի են կանգնում):

Ժողովն անցնում է հերթական հարցերին:

«Հորիզոն», 18.10.1917, N 223:

N 16
Նիստ ԺԴ

11 հոկտեմբերի 1917թ.

Նիստը բացվեց երեկոյան $9^1/_2$ ժամին, նախագահությամբ Ս.Մամիկոնյանի և ներկայությամբ 82 անդամի:

Ս.Հարությունյանը զեկուցանում է Ազգային բյուրոյի քաղաքական գործունեության մասին հետևյալ բովանդակությամբ (արտագրել համառոտ զեկուցումը Գ, ամբողջ 8 երես):*

«Ազգային բյուրոյի քաղաքականության մասին զեկուցում է Ս.Հարությունյանը: Ազգային բյուրոն կազմվեց 1912թ., նրա նպատակն էր աջակցություն ցույց տալ Ամենայն հայոց կաթողիկոսին Հայկական հարցը պաշտպանելու գործում և սերտ կապ պահպանել արտասահմանյան ազգային պատվիրակությունների, այլ և Կ.Պոլսո Պատրիարքարանի հետ: Բյուրոն հիշյալ բոլոր հիմնարկությունների հետ միասին նպաստում էր հայանպաստ պրոպագանդային՝ թե Ռուսաստանում և թե արտասահմանում: Բյուրոյի մոտակա նպատակն էր Կ.Պոլսո դեսպան Գիրսի մշակած Հայաստանի ռեֆորմների ծրագրի իրականացմանը նպաստել:

Երկրորդ և ամենամեծ գործունեությունը ռուս-տաճկական ներկա պատերազմի ժամանակն էր: Բյուրոն կազմակերպեց, ձև և ոգի տվեց սկսած տարերային կամավորական շարժմանը և նրա ամենաեռանդուն ղեկավարը հանդիսացավ: Շատ բնական է, որ Հայկական հարցը ուժեղ կերպով հրապարակ նետելուն ահագին չափով նպաստել է Ազգային բյուրոյի ղեկավարությամբ տարված կամավորական շարժումը:

Բոլոր պատասխանատու քայլերի համար Բյուրոն բանակցում էր կաթողիկոսի, Եվրոպայի հայ պատվիրակության հետ և ըստ այնմ գործում: Հնարավոր եղած դեպքում շատ կարևոր խնդիրների համար հրավիրվում էր կուսակցությունների և քաղաքների ներկայացուցիչների խորհրդակցություն:

Սկսվում է Ազգային բյուրոյի և կամավորական շարժման քննադատությունը: Ս.-ր և ս.-դ. գտնում են,* որ կամավորական շարժումը նպաստեց տաճկահայ կոտորածների լայնացմանն ու արագացմանը, որ Բյուրոն ոչ մի հիմք չուներ հավատալու ռուս կառավարության խոստումներին Հայաստանի ապագայի վերաբերյալ և այլն:

Տաճկահայերի ներկայացուցիչներն ու դաշնակցականները շեշտում են, որ պատերազմից առաջ թուրքերն առաջարկել են նրանց միանալ, դրդել, որ Կովկասի հայերն ապստամբեն, խփեն ռուս զորքի թիկունքից, բայց միշտ նույն պատասխանն

* Համառոտ զեկուցումը չի արձանագրվել և գործում չի պահպանվել: Ս.Հարությունյանի այդ զեկուցումը, որ բերում ենք «Հորիզոն» թերթի հոկտեմբերի 19-ի համարից, թերթի մեկնաբանություններով, վերցնում ենք չակերտների մեջ:

* Էսեռները և սոցիալ-դեմոկրատները:

են ստացել, թե հայերը լոյալ քաղաքացիներ են մնալու և կատարելու են իրենց պարտքը պետության առաջ՝ թե՛ Ռուսաստանում և թե՛ Տաճկաստանում:

Հայկական կոտորածների պատճառը համախալամականությունն է եղել և ռուս կառավարության առաջադրած ռեֆորմների ծրագիրը: Քանի անգամ տաճիկ պետական պաշտոնական անձինք հայերին ասել են՝ եթե դուք չհրաժարվեք ռեֆորմներից, նրանք ձեզ 300.000 զոհ կբերեն: Նույնիսկ պատերազմից առաջ Էնվերն առաջարկում էր հայերին տեղափոխել Միջագետք և այդպիսով ընդմիշտ ազատվել Հայկական հարցից: Նրանց պատերազմը հնարավորություն տվեց իրագործել իրենց վաղեմի դիվային* քաղաքականությունը:

Թե՛ քննադատողները, և թե՛ պաշտպանողները խոսում են ծանր ու ճնշված տրամադրության տակ: Երևում է, որ նրանք խոր կերպով գիտակցում են, որ կնճռոտ ու ցավոտ հարցի վերլուծման առաջ են կանգնած: Ոչ ոք չի հերքում, որ Ազգային բյուրոն չի կատարել այն, ինչ որ հարկ էր, ոչ ոք չի ասում և այն, թե ի՞նչ պետք է աներ Բյուրոն, ի՞նչ դիրք պետք է բռներ ինքնաբերաբար սկսված կամավորական շարժման առաջ:

Լուրջ տրամադրության մեջ զավեշտական շեշտ է մտցնում Հ.Առաքելյանը, որ ընդհանուր ծիծաղի մեջ, ամենալուրջ տոնով հայտարարում էր, թե Ազգային բյուրոն Հ.Հ. Դաշնակցության գրասենյակն էր, որ ինքը հեռացել է Բյուրոյից, որովհետև համաձայն չէր նրա քաղաքականությանը, և Բյուրոյում Դաշնակցության կողքին նստած էին մնացել միայն մի քանի դիմազուրկ բուրժուաներ»:

Զեկուցումից հետո Երզնկյանը նկատում է, որ զեկուցումը լրիվ չէ, ժողովը սպասում է լիակատար զեկուցման:

Ս.Հարությունյանը նկատում է, որ դժվար է այդպիսի ընդարձակ հարցում ամեն ինչ նախատեսել: Առաջարկում է տալ հարցեր, որոնց ինքը կպատասխանի:

Լեոն պահանջում է, որ ամեն ինչ լիովին ասվի: Ամենամեծ մեղադրանքը, որ կարող են անել Բյուրոյին, այն կլինի, թե Բյուրոն սխալ է արել:

Պրոֆ. Հակոբյանը թուրքահայերի բռնած դիրքի մասին խոսելով, հայտարարում է, որ թուրքահայերը ներկա պատերազմի ընթացքում լոյալ են եղել, և հակառակը պնդելը պրովակացիա է:

Զանազան անձերի կողմից տրվում են հարցեր. կամավորական խմբերը կազմակերպելիս Ազգային բյուրոն ի՞նչ խոստումներով էր առաջնորդվում, արդյոք Բյուրոյի ղեկավարների վրա եղե՞լ են խոստումներ պարունակող դոկումենտներ, արդյոք կաթողիկոսը, պատրիարքարանը, Նուբար փաշան տեղյա՞կ և համաձա՞յն են եղել կամավորական խմբերի կազմակեպման, և ու՞մ վրա է ընկնում պատասխանատվությունը, ի՞նչ հարաբերության մեջ է եղել Բյուրոն դաշնակցության մեջ, ի՞նչ հիմք ուներ «Հորիզոն»-ի մի պաշտոնական հոդվածը, թե հայ ժողովուրդը ուժ է ներկայացնում, բայց նա մի բան կանի, երբ իմանա, թե ինչ է կամենում մեզ տալ ռուսաց կառավարությունը, ինչպե՞ս է վերավերվել Բյուրոն Դաշնակցության [առաջարկին] 1914թ., դեռ թուրք պատերազմից առաջ, Կարինում կայացրած որոշման[ը], որով խնդրվում էր Բյուրոյից, որ կամավորական խմբեր գործին չմասնակցի, և այլն: Անդրանիկը մանրամասն պատմում է, թե ինչպես ինքը արտասահմանում գտնված ժամանակ հեռագիր է ստացել՝ անմիջապես մեկնել Կովկաս: Այստեղ տեսնվել է Մեսրոպ եպիսկոպոսի հետ, ապա՝ Յուդենիչի հետ, որ պարզել է իրանց ռազմական ծրագիրը, հայտնել է, որ 800.000-անոց բանակ պիտի գա Կովկաս և որ կամավորական խմբերը ծառայելու են ճանապարհներ ցույց տալու և խուզարկությունների համար: Բայց կառավարությունը մեզ խաբեց և խոստումները չկատարեց: Հետևանքն եղան կոտորածները: Կախվելու արժանի են Մեսրոպ

* Բնագրում՝ դժվարին: Զարմանալի է, իսկ ինչու՞ դժվարին: Չէ՞ որ թուրքական կառավարությունը շատ հեշտությամբ իրականացրեց իր գազանային բնույթին սովոր հայության հրեշավոր ցեղասպանությունը: Ծանոթ.կազմ.:

եպիսկոպոսն և ինքը, որ հավատացել են կառավարության խոստումներին: Ինքը չէ մեղադրում ո՛չ քուրդերին և ո՛չ թուրքերին: Ինքը մեղադրում է հայ հարուստներին, որ իրանց միջոցները խնայում են ազգի կյանքի կարևոր րոպեներին օգնության հասնելու, մամուլը հօգուտ մեզ տրամադրելու, բարձրաստիճան բարեկամներ շահելու և այլն: Ընդհակառակը, դեպքեր գիտե, երբ կամավորները տասը ռուբլով հրացան էին ծախում թուրքերին, և իրանք այդպիսիներին մահվան պատժի են ենթարկել:

Ս.Հարությունյանը տրված հարցերին պատասխանելով, ասում է. - Ճիշտ է ասում Երզնկյանը, թե իրանք բողոքել են կամավորական շարժման դեմ: Բայց այդ բողոքը չէր կարող ազդել 40 հոգուց բաղկացած ժողովի մեծամասնության վճռի վրա: Գուցե մեծամասնության վճիռը սխալ է եղել, բայց մենք պետք է ենթարկվենք նրան: Այն հարցին, թե ո՞վ է վարել բանակցություն կառավարության հետ, պատասխանում է, թե կառավարությունը Ազգային բյուրո չէր ճանաչում: Նա բանակցում էր կաթողիկոսի և պատրիարքի հետ: Կամավորական շարժումը Բյուրոն չէ հարուցել: Դա եղել է ժողովրդական տարերային շարժում, որին ընդառաջ է գնացել Բյուրոն, մանավանդ, որ կառավարությունն ասում էր, թե դուք արժանի եք ստանալու ավտոնոմիա, միայն կազմակերպեցե՛ք կամավորական խմբեր: Մեծ պատիվ կլիներ 5 անձի համար, եթե նրանց վերագրվեր կամավորական շարժումը: Այն հարցին, թե ինչպես վերաբերվեց Բյուրոն թուրքահայաստանից ուղարկված որոշումներին, որ Բյուրոն զգուշանա կամավորական խմբեր կազմելուց, պատասխանում է, թե այդ որոշումը շատ ուշ հասավ Բյուրոյին, երբ խմբերն արդեն կազմակերպված էին: Կամավորական խմբերի քանակը մեզ հուսախափեց: Մենք հույս ունեինք ոչ թե 4000, այլ 50.000 հոգուց բաղկացած խմբեր ունենալ: Բայց դրանց պակասությունը արգելք հանդիսացավ: Այն հարցին, թե ի՞նչ է կուսակցություն առանձին դեր էր կատարում կազմավորական գործում, պատասխանում է, թե Բյուրոն ըստ էության անկուսակցական էր, բայց նրա մեջ գլխավոր դեր կատարողը, ուրեմն և պատասխանատուն, Դաշնակցությունն է: Կարելի է համաձայնել Լեոի հետ, թե սխալվել ենք, այո՛, բայց սխալվել ենք ազգովի:

Լեոն ասում է, որ իրան հրավիրեցին Բյուրոյի մեջ, և ինքը հանձն առավ մասնակցել պրոպագանդի համար: Ինքն սկզբից ևեթ զգուշացնում էր, որ Ռուսաստանը ավտոնոմիա չի տա հայերին և թե ավելորդ է Բյուրո կազմել, բայց իրան չլսեցին: Կառավարությունը մի խոստում միայն արել է գրավոր, թե 1913թ. ռեֆորմները կիրագործի և ավելի ոչինչ: Խոստովանում է, որ Բյուրոն կուրորեն հավատացել է Վորոնցովի խոսքերին և խափվել: Վանի գաղթից հետո ինքը հեռացել է Բյուրոյից և հայտնել է կարծիք, թե պետք է կամավորական խմբերը վերջացնեն: Իբրև եզրակացություն, ասում է. - Երբ մի տարերային շարժում առաջ է գալիս՝ չէ կարելի մեղադրել այս կամ այն անհատը, բայց և այնպես չեն կարող չքմեղ լինել շարժման նախաձեռնողները:

Սպենդիարյանը գտնում է, որ Ազգային բյուրոն արել է այն, ինչ որ պետք էր անել այն հանգամանքներում: Վորոնցովը ուղղակի ասում էր, թե դուք ավտոնոմիա կստանաք: Սխալներ եղել են, բայց չէ սխալվում նա, ով ոչինչ չէ անում: Եթե կամավորական շարժումը չլիներ, մենք ոչինչ պահանջելու իրավունք չէինք ունենա:

Դրոն այն միտքն է հայտնում, թե ռուս կառավարությունը մեզ իրան գործիք դարձրեց, և երբ մեր կարիքն անցավ, մեզ դեն շպրտեց: Մենք նույնպես դժգոհ ենք Ազգային բյուրոյից, որ մեզ կառավարության գիրկը նետեց, որ վերջիվերջո մեր խմբերը լուծեց իբրև հեղափոխականների օջախներ: Պետք է մխիթարվենք, որ թեկուզ ուշ, հասկացանք կառավարության քաղաքականությունը մեր վերաբերմամբ: Որ թուրքահայերի կոտորած պետք է լիներ՝ այդ ինքը անկասկածելի է համարում: Թուրքահայերը չէին կարող լոյալ մնալ:

Նիստը փակվեց 12 ժամին:

Գ.21, թ.36-37:

N 17
Նիստ ԺԵ

12 հոկտեմբերի 1917թ.
(առավոտյան)

Նիստը բացվեց առավոտյան 12 ժամին: Առաջնորդարանում, նախագահությամբ Ս.Մամիկոնյանի և ներկայությամբ 66 անդամի:

Օրակարգի հարցն էր. շարունակություն Ազգային բյուրոյի գործունեության քննության:

Վ.Փափազյանը այն միտքն է հայտնում, թե թուրքահայերի կոտորածին կամավորական շարժումը պատճառ չեղավ, այլ պատրվակ: Բուն պատճառը համաիսլամական գաղափարն է, որի իրագործման ճանապարհի վրա կանգնած էին հայերը: Բյուրոյին մեղադրում են, որ կամավորական խմբեր կազմակերպելիս համաձայնության մեջ չմտավ պատրիարքարանի կամ Նուբար փաշայի հետ: Բայց այսպիսի քաղաքականություն ռուսահայերը վարել են դեռ շատ առաջ էլ, օրինակ՝ ռեֆորմների չորս ծրագիրները, որոնք առաջ բերվեցին առանց պատրիարքարանի հետ բանակցելու, այնպես էլ ավտոնոմիայի մասին բանակցությունը: Ինքն էլ հաստատում է, որ կամավորական գործում թուրքահայերը բոլորովին լոյալ էին. այսպես էին թելադրում հանգամանքները: Բայց երբ այս կողմից խմբերը Թուրքահայաստանի սահմանը մտան, այնուհետև դժվար էր չեզոք դիրք պահպանել: Իբրև եզրակացություն, հռետորն ասում է, թե Բյուրոն չկարողացավ թուրքահայերի բաղձանքն իրականացնել: Բայց քանի որ դեռ հարցը չէ վերջացել, թուրքահայերը ցանկանում են, որ անտես չանեք նրանց բաղձանքը: Միայն խնդրում ենք այնուհետև զգույշ լինել, որ մեր բաղձանքներին անհամապատասխան կամ հակառակ գործեր չկատարվեն: Այս ասում եմ ոչ թե մեղադրելու նպատակով, այլ ապագայի գործունեության համար:

Մազմանյանը պատմում է մանրամասնություններ Արդանուճի հայերի կոտորածի [մասին], որին ինքը ականատես է եղել, թե ինչպես թուրքերը խոստացան հայերին պատսպարել և ինչպես ահա հավատացողներին անխնա կոտորեցին:

Հ.Առաքելյանը յուր կողմից հայտնում է, որ Ազգային բյուրոյի գործունեության առաջին շրջանում ինքը նրա անդամն է եղել, նույնիսկ հիմնադիրը Ալ.Խատիսյանի հետ: Այս շրջանում Բյուրոյի նպատակն էր, քանի որ Բալկանյան պատերազմի ժամանակ ազգային պատվիրակություն էր կազմվել, ինչպես հայտնեց Մեսրոպ եպիսկոպոսը, որ վերադարձել էր Եվրոպայից, կազմել Հայաստանի ռեֆորմների ծրագիր: Այս գործով ինքն զբաղվել է այստեղ, գնացել է Փարիզ և Էջմիածին: Հաջորդ տարին, երբ Բյուրոյում մի կուսակցություն սկսեց տիրապետող դիրք գրավել,* ինքը օպոզիցիա կազմեց և հեռացավ: Պատերազմի նախօրյակին կաթողիկոսի տատվիրակ Նուբար փաշայի կողմից Թիֆլիս եկավ դոկտ. Տաղավարյանը, հատուկ հանձնարարություն ունենալով հորդորել, որ Բյուրոն արկածախնդրական քայլերից զգուշանա: (Պաշտոնապես նա եկել էր Եգիպտոսի բարեգործ[ական] ընկերության ճյուղ բանալու): Ես նրան ուղղեցի Մեսրոպ եպիսկոպոսի և Ս.Հարությունյանի մոտ: Սակայն երեք ամիս այստեղ մնալով, նա չկարողացավ Ազգային բյուրոյին ներկայանալ և պաշտոնապես յուր միսիան կատարել, որովհետև Բյուրոն չկամեցավ լսել պատրիարքի և թուրքահայերի կարծիքը: Դարձյալ Բյուրոյին հայտնի էր, որ Գերմանիան առաջարկում էր հայերին լոյալ մնալ, խոստանալով ավտոնոմիա, հայտնելով որ հակառակ դեպքում բնաջինջ կլինեն: Այս առաջարկությունն

* Նկատի ունի ՀՅ Դաշնակցությանը:

ուղարկված էր Բյուրոյին, բայց պատասխանը հայտնի չէ: Բյուրոն լուրեր էր տարածում, թե ստորագրված պաշտոնական խոստում կա Ռուսաստանի կողմից՝ Հայաստանին ավտոնոմիա տալու: Սրա հետ միասին հրատարակվում էր Վորոնցովի հաճությամբ եփրատյան կազակության ծրագիրը: Ինչպե՞ս էր հաշտեցնում Բյուրոն այս երկու հակասությունները: Բյուրոն պարապում է արկածախնդրությամբ: Բյուրոն Դաշնակցությունն էր, լրացրած դիմազուրկ վաճառականներով:

Ամիրյանը նկատում է, որ Աթաբեկյանի բոլոր ասածները ճիշտ են: Ուրախություն է հայտնում, որ այժմ նրանք ազգային քաղաքականության մեջ են մտնում, որին սկզբունքով դեմ էին Բալկանյան պատերազմի ժամանակ: Նրանք ցիմմերվալդյաններից դարձան ազգային:

Լ.Աթաբեկյանը քննության է ենթարկում դաշնակցականների վարմունքը պատերազմի ժամանակ առհասարակ և կամավորական շարժման գործում մասնավորապես, և առարկում է դաշնակցական հռետորներին: Այն մասին, թե կամավորական շարժումը տարերական էր, հռետորն ասում է, թե խորհող անհատի և կազմակերպության պարտականությունն է կռվել ամբոխային, տարերական շարժման դեմ և ոչ թե նրան հետևել: Այն մասին, թե պատերազմի ժամանակ երկրի դրությունը պահանջում էր Ռուսաստանի հետ համընթաց գործել, հռետորն ասում է, թե դեռ պատերազմից առաջ էլ Դաշնակցությունը ռուսաց կառավարության խորհրդով էր գործում: Նարնջագույն գրքից հայտնի է, որ Ջավրիյանը Պոլսում ներկայացել է ռուսաց դեսպանին, և նրանից վարմունքի գիծ խնդրել: Դարձյալ նրանք տարածեցին լուր, բոլորովին անհիմն կերպով, թե ռուսները խոստացել են Հայաստանին ավտոնոմիա: Ո՛չ Սազոնովի բացասական վերաբերմունքը, ո՛չ ռուս. սոցիալիստների անտարբերությունը դեպի Հայկական հարցը խրատական չեղան Բյուրոյի համար: Կասկած չկա, որ թուրքաց կառավարությունը մտադիր էր հայերին բնաջինջ անել: Բայց եթե Գերմանիան չկամենար, այդ ծավալով կոտորած չէր լինի: Գալով իրանց կուսակցության հարաբերությանը դեպի Բյուրոն, ասում է, թե իրանք դիմեցին Բագվի բյուրոյին՝ տեղ խնդրելով, բայց իրանց այն ժամանակ մերժեցին: Իսկ երբ վրա հասավ կոտորածը, տեղի ունեցավ Բյոփրի-Քյոյի խայտառակությունը,* այն ժամանակ իրանք մեզ հրավիրեցին: Հռետորը եզրակացնում է, թե Դաշնակցությունը որոշ դիրք է ունեցել Բյուրոյի մեջ և կամավորների գործում: Գոնե նա այնուհետև ավելի փափկանկատ լինի դեպի հայ ժողովուրդը և ավելի խելացի՝ իմպերիալիստական կառավարության հանդեպ:

Արամը, ակնարկ ձգելով պատմական անցուդարձի վրա, նկատում է, որ հայերը ավելի խանդավառ գտնվեցին թուրքական սահմանադրության [նկատմամբ], քան՝ թուրքերը: Դաշնակցությունը իթթիհատականների կողմից բռնեց իբրև նվազ հայատյաց կուսակցության: Բայց երբ իրանց բոլոր հույսերը իթթիհատի վրա՝ Հայաստանում քաղաքացիական ռեֆորմներ մտցնելու մասին, զուր անցան, իրանք լուծեցին կապը այդ կուսակցության հետ: Հայկական կոտորածների պատճառ ինքը համարում է ռուսաց քաղաքականությունը, որ յուր վրա հովանավորողի դեր վերցրեց և ռեֆորմների ծրագիրը առաջ քշեց թուրքերի կամքի հակառակ: Թուրքերը հենց այն ժամանակ ասում էին, թե այդ ռեֆորմները 300 հազար զոհ կնստեն հայերին: Կամավորական շարժումը կոտորածների դեպքում առանձին դեր չկատարեց, դեռ կամավորական շարժումից առաջ տեղի ունեցան մի շարք սպանություններ և հրդեհներ: Ճիշտ է, Տաճկահայաստանի կազմակերպությունները և հասարակական գործիչներ նպատակ ունեին լոյալ մնալ. նրանց նպատակն էր կոտորածները հետաձգել:

Բժ.Բոնապարտյանը գտնում է, որ հայության երկու հատվածները բաժանված են եղել չինական պարսպով: Քսան տարի է, որ մեր ողբերգությունը

* Տե՛ս N 63 փաստաթղթի ծանոթ. NN 1-2:

կատարվում է. տեսնում ենք բոլոր ծրագիրները և դարձյալ խաբվում: Մենք՝ տեղացիներս, հասկանում էինք, որ դուք թե՛ ձեզ եք վտանգում, թե՛ մեզ: Երբ մեր անելիքը թուրքահայերի միջոցով անեինք, հետևանքը այդ չէր ստացվի: Ինքը մեղադրում է դաշնակցականներին, ասելով, թե նրանք իրավունք չունեին երկու միլիոն թուրքահայ ժողովրդի բախտը այդ ժողովրդից անկախ լուծելու: Դաշնակցությունը ձախորդ գործելակերպի հետևեց:

Բժ.Իսախանյանը ուշադրություն է դարձնում երկու կետի վրա, որոնք արմատ և աղբյուր են եղել Ազգային բյուրոյի գործունեության. ա. վերջին տասնամյակի շարժումները, բ. դիպլոմատիական հարաբերությունները ռուս կառավարության հետ: Քաղաքական շարժումների մեջ գլխավոր առանցքն է եղել թուրքահայերի հարցը: Արդ այդ հարցը ոչ թե Տաճկաստանից է այստեղ տեղափոխվել, այլ հենց այստեղ՝ Ռուսաստանում է ծնունդ առել ու ծաղկել, սրանից է առաջ գալիս և ռուսահայերի ակտիվ մասնակցությունը այդ հարցում, առանց ի նկատ առնելու թուրքահայերի տրամադրությունը: Գալով դիպլոմատիական հարաբերություններին, նկատում է, որ թույլը չէ կարող դիպլոմատիական հարաբերություն վարել, այլապես դա կդառնա կատվի ու մկան հարաբերություն: Մեր դժբախտությունն այն է եղել, որ մենք ունեցել ենք ռուսական օրիենտացիա, մի կառավարություն, որ դեմ էր հայկական ավտոնոմիայի և որի միջոցով սակայն մենք հույս ունեինք ավտոնոմիա ստանալ: Մենք դրսի ուժերի վրա պետք է հույս դնեինք և ձեռք-ձեռքի տված գործեինք թուրքահայերի հետ: Անցյալ սխալներից պետք է այն փորձառությանը գանք, որ Տաճկահայաստանի քաղաքական հարցի լուծումը պետք է պատկանի տաճկահայերին: Մենք պետք է նրանց ցույց տանք մեր աջակցությունը միայն:

Ժամանակի ուշ չլինելու պատճառով նիստը ընդհատվում է: Շարունակությունը թողնվում է երեկոյան:

Նիստը փակվում է ժամը 4-ին:

Գ.21, թ.38-39:

N 18
Նիստ ԺԶ

12 հոկտեմբերի 1917թ.
(երեկոյան)

Նիստը բացվեց երեկոյան $8^1/_2$ ժամին, նախագահությամբ բժ. Հ.Այվազյանի և ներկայությամբ 60 պատգամավորների:

Օրակարգն էր շարունակություն վիճաբանությունների Ազգային բյուրոյի քաղաքական գործունեության մասին:

Թերզիբաշյանը, տաճկահայրեի կողմից, քննադատում է Ազգային բյուրոյի գործունեությունը և գտնում է, որ նա կատարել է մի քանի տեսակի սխալներ: Նախ՝ իրավական, քանի որ պատերազմի շնորհիվ խառնակ դրություն ստեղծվելով, Բյուրոն, իբրև Ռուսահայոց մարմին, յուր ձեռքն առավ Տաճկահայաստանի հարցի լուծումը, որ տաճկահայերի համար կյանքի ու մահի խնդիր էր և գերազանցորեն նրանց էր պատկանում լուծել: Բյուրոն մինչև անգամ չկամեցավ լսել Տաճկաստանից եկած պատգամավորներին, որոնք եկել էին զգուշացնելու արկածախնդրական քայլերից, արդարանալով նրանով, թե բանը բանից անցել էր: Երկրորդ սխալն էր՝ քաղաքական. Բյուրոն հայկական հարցի լուծման մեջ ընդունեց ռուսական օրիենտացիա, մոռանալով նրա վաղեմի քաղաքականությունը, որ էր «Հայաստանը առանց հայերի»: Երրորդ սխալն էր՝ տակտիկական. Բյուրոն, լսելով Որոնցով-Դաշկովի խոստումը՝ իրագործել Գիրսի ծրագիրը, համաձայնեց նրա առաջարկության՝ կազմելու

կամավորական խմբեր, որ նրա գործը չէր: Հռետորը դժգոհություն է հայտնում, որ Բյուրոյի համարատվությունը լրիվ չէ, որ նույնիսկ պաշտոնական զեկուցանողը բացակա էր ժողովին, և պահանջում է, որ նոր լիակատար հաշիվ տրվի պետք եղած վավերաթղթերով:

Շահխաթունյանը, առարկելով Ազգային բյուրոյի և կամավորական շարժման քննադատողներին, ասում է, որ Ազգային բյուրոն չէ սխալվել: Նրա գործունեությունը հիմնված չէ եղել խոստումների վրա, այլ՝ հանգամանքների իրական պահանջի վրա: Կամավորական խմբերն անհրաժեշտ էին: Նրանք կարևոր դեր կատարեցին Հայկական դատի ապագա լուծման համար: Նրանց ներկայությունը ռուսաց բանակի կողքին, հայկական հողի վրա, բարոյական և քաղաքական մեծ նշանակություն ուներ: Եթե նրանք լուծված լինեին ռուսաց զորքի մեջ (ինչպես ոմանք առաջարկում էին), ո՛չ Վանը կազատվեր և ո՛չ էլ Ալաշկերտը: Կյամավորական շարժումը ոչ մի դեր չէ կատարել հայերի կոտորածի մեջ, ոչ արագացրել և ոչ սաստկացրել: Այդ կոտորածը Թուրքիայի հիմնական ծրագիրն էր, որպեսզի մեջտեղից վերացնե իսլամությունը երկու կտոր անող հայ տարրը: Շատ սխալ կաներ Թուրքիան, եթե այդ կոտորածը չաներ: Վերջը հռետորը մեղադրում է հակառակորդներին, որ աղետների ժամանակ նրանք ցույց չտվին սրտացավություն, գորով, այլ բավականանանում էին քննադատելով և արձանագրելով դեպքերը:

Երզնկյանը, առարկելով Շահխաթունյանի մի քանի մտքերին, ասում է. թե Շահխաթունյանը հայտարարեց, իբր թե խոստումների վրա չէ եղել հիմնված կամավորական շարժումը: Այնինչ «Հորիզոնը» շարունակ հակառակն էր հայտարարում, թե մեզ խոստացված է ավտոնոմիա և դրա համար պետք է կյամավորներ տանք: Հռետորն ընդհանրապես գտնում է, որ մեծ սխալ էր դաշնակցության կողմից որևէ մասնակցություն ունենալ այս պատերազմում, որ կապիտալիստների և իմպերիալիստների հարուցած պատերազմ է: Համենայն դեպս հայերի դրությունը պահանջում էր, որ միանգամայն չեզոք մնային, ոչ ռուսական և ոչ թուրքական նպատակներին չծառայեին: Այնինչ Դաշնակցությունը շատ ավելի առաջ գնաց: Նա պարտավորվեց աջակցել Ռուսաստանին ոչ միայն Տաճկահայաստանում, այլև այստեղ՝ Կովկասում, անտեղյակ լինելով ռուս[ական] քաղաքականության բուն ծրագրին որ վերջը երևան եկավ եփրատյան կոզակության ծրագրով: Մինչ Դաշնակցությունը երազում էր ավտոնոմ կամ անկախ Հայաստան մինչ Միջերկրական ծովը, իրոք, նա պատրաստում էր հայկական կոտորած և Թուրքահայաստանի անեքսիա: Որոնցովը Դաշնակցության համար բանտեր էր փնտրում՝ նրան մեջտեղից վերացնելու համար: Բարեբախտաբար վրա եկավ հեղափոխությունը, և այս մտադրությունը չիրագործվեց: Հակառակ դեպքում դուք Սիբիրիայից կգայիք:

Դ.Անանունը, պատասխանելով Շահխաթունյանին, ասում է, որ նա պաշտպանում է ֆատալիզի կզբունքը, տարերային բնույթ վերագրելով դիպվածներին: Ինչու՞ այդ դեպքում Դաշնակցությունը չնպաստեց գաղթականական հոսանքին, որ նույնպես տարրերային բնույթ էր կրում: Դեռ պատերազմից առաջ թուրքահայ գործիչները հայտնում էին, որ թուրքահայոց խնդիրը ներքին պետական խնդիր է, որին չպետք է օտար տերությունները մասնակցեն: Նրանք զգուշանում էին, ուրեմն, որ օտարների գործիք չդառնան: Բայց այս զգաստ ձայնը մնաց ձայն բարբառո հանապատի: Այսպես, Ս.Տիգրանյանը գրում էր, թե մենք կամավորների թիվը պետք է հասցնենք 50.000-ի, որպեսզի անակնկալների դեպքում Ալբանիայի դրության մեջ չընկնենք: Իսկ Միք.Վարանդյանը Փարիզում ասել է, որ եթե մենք կամավորներ չտայինք, ռուս կառավարությունը մեր դեմ կհաներ թաթարներին: Առաջին հայտարարությունը լավագույն զենքն է, որ տրվեց ռուսաց դիպլոմատիային: Երկրորդ հայտարարությունից բխում է, որ թուրքահայերին քավության նոխազ դարձրին դաշնակցականները, Այսպիսի պնդումներով չէ կարելի արդարացնել վարված

քաղաքականությունը, որ թուրքահայերի դառնության բաժակը լցրեց: Այս համախորհուրդը պետք է յուր դատապարտության խոսքը ասել պատասխանատու գործիչներին. նրանք պետք է դուրս գան գործելու շրջանից: Հոգևորականը թող յուր խուցը քաշվի, աշխարհականը այլ ասպարեզ փնտրի յուր ձգտումներին:

Գ.Տեր-Օհանյանն ասում է - մենք զոհ դարձանք մեր ռոմանտիզմին. կար անձնական հերոսություն, բայց չկար մասսայական շարժում: Մենք բարձր, բայց սխալ կարծիք ունեինք մեր մասին, թե մենք հզոր և ուժեղ ազգ ենք և կարող ենք թուրքերին կոտորել: Այս սնոտի հավատից էլ ծագեց թուրքահայերի զինված ապստամբությունը: Իրականության մեջ, սակայն, արդարացավ Անդրանիկի խոսքը, թե մեզ ոչխարների պես մորթեցին: Իբրև եզրակացություն ասում է, թե կամավորական շարժման մեջ սխալ էր հոգեբանական հիմքը, և որ այդ շարժումը առաջ բերվեց հակառակ թուրքահայ գործիչների կամքի:

Ա.Ջամալյանը, պատասխանելով նախորդ հռետորներին, ասում է, թե այժմ մեր գաղափարական հակառակորդները, ենթադրելով, որ մենք հաղթված ենք, հարձակվում են մեր վրա, կենտրոն դարձնելով Դաշնակցությանը, հետևելով, «վայ հաղթվածներին» սկզբունքին, մինչդեռ, ինչպես հայտնի է, «հաղթողներին չեն դատապարտում»: Բայց մենք մեզ հաղթված չենք համարում: Խոստովանում եմ, որ եղել են սխալներ ու անակնկալներ, բայց դրանք բոլոր աշխարհի համար են: Շատերը համոզված էին, թե պատերազմը հազիվ երեք ամիս կտևի: Անդրանիկը կարծում էր, թե վեց ամսում կվերջանա: Նույն սխալը գործել են և եվրոպական դիպլոմատները, ինչպես անցյալ կռիվներում նույնպես և այժմ: Մի՞թե չեն սխալվել նաև Անգլիան, Գերմանիան: Դարձյալ մենք սխալվել ենք, որ ավելի հավատ ենք ընծայել ռուս մարդու հասունությանը: Բայց ո՞վ կարող էր սպասել Սուխոմլինովի կամ Ռասպուտինի դեպքերը: Մենք համոզված էինք, որ թուրքերը անպատճառ պետք է կոտորեն հայերին: Այս է ցույց տալիս թուրքերի պատմությունը: Հունաստանի ապստամբության ժամանակ նրա ազգաբնակության $^{2}/_{3}$ մասը զոհվեց, իսկ մեզ ոչ ոք պաշտպանող չկար: Գերմանիան էլ ուզում էր հայերին տեղափոխել Միջագետք, թուրքերը դրա փոխարեն հայերին կոտորեցին: Երբ դրվում էր Հայաստանի հարցը, Ազգային բյուրոն պետք է հետևեր որևէ քաղաքականության և Բյուրոն հիմք ուներ հետևելու ռուսական օրիենտացիայի, քանի որ նրա շահերին համապատասխանում էր հայերին պահպանել: Ռեֆորմների գործի արձանագրությունը պարզապես այս է ցույց տալիս: Սրա վրա էր հիմնվում Ազգային բյուրոն և ոչ թե խոստումների և դոկտումենտների վրա, որոնք առանձին արժեք չունեն: Կամավորական շարժումը մասսայական բնույթ էր կրում և նրան զսպելն անմիտ բան կլիներ: Թուրքահայերին հարցնելը չէր կարելի: Նրանց մեջ տարբեր ու հակառակ կարծիքներ էին տիրում: Ասում են, որ պատերազմը ինմպերիալիստական է: Բայց ամբողջ աշխարհի սոցիալիստ լիդերները մասնակցում են պատերազմին ազատագրական նկատումներով, գտնելով, որ իրենց հայրենիքը վտանգված է: Ի վերջո, հռետորը ասում է, թե կամավորական շարժումով ստեղծվեց մի մթնոլորտ, որտեղ մեզ չեն ասի, թե մենք վախկոտ ենք, չեն կրկնի. «ты трус, ты раб, ты армянин»: (Անանունը տեղից՝ «վա՜յ մեզ»):

Այնուհետև լինում են մանր հարց ու պատասխաններ, որոնց մեջ մասնակցում են Տեր-Զաքարյանը, Երզնկյանը, Արամը, պրոֆ. Հակոբյանը, Սպենդիարյանը, Լեոն:

Այնուհետև զեկուցանող Ս.Հարությունյանը պատասխանում է եղած առարկություններին, որոնք վերաբերում էին Բյուրոյին: Նա նկատում է, որ Բյուրոն մեղադրվում է նրանում, որ ընդունել է ռուսական օրիենտացիա: Բայց 1912-ին ոչ ոք չկար այս քաղաքականության հակառակ: Բոլորն էլ համաձայն էին, որ պետք է շահել ռուս քաղաքականության սիրտը: Մենք մինչև անգամ ավելի զգույշ էինք այս հարցում, երկյուղ կրելով, որ թուրքերը կարող են կոտորած հառաջացնել, բայց մեզ ապահովացնում էին, որ պատերազմը 3-6 ամիս կտևե և որ 600.000-ոց ռուսական

բանակ կգա արագացրած չվով: (Բագրատ եպիսկոպոսը տեղից նկատում է. «Միշլաևսկին կաթողիկոսի մոտ ասաց, թե զենք չունենք»): Թուրքահայերն էլ շարունակ նայել են ռուսների վրա իբրև փրկիչների: Իսկ այժմ այստեղ մեզ դատափետում են: Խոստովանենք, որ բոլորս էլ սխալված ենք եղել: Մենք գիտեինք, որ Վորոնցով-Դաշկովը խորամանկ է և քաղաքագետ, և զգույշ էինք նրա հետ: Ուզում էինք ռուսաց տրամադրությունը շահել: Դիմելով ձախակողմյաններին. հռետորն ասաց, թե դուք էլ չկանգնեցրիք մեզ: (Ն.Տեր-Ղազարյանը տեղից. «Դուք տեռորի էիք ենթարկել այս դահլիճում ամենքին»: - Ս.Հարությունյան. «Իսկական գործիչը տեռորից չպիտի վախենա»): Առարկելով Հ.Առաքելյանին , հռետորն ասաց, թե Տաղավարյանը եկել է Թիֆլիս՝ Եգիպտոսի բարեգործական ընկերության ճյուղ բանալու և ոչ թե ուրիշ հանձնարարությամբ, քաղաքական հարցերի վերաբերմամբ:

Հ.Առաքելյան (տեղից նկատում է) - Նրան Բյուրոյում չէին ընդունում, որովհետև դաշնակցական չէր, ինչպես չընդունեցին Ամերիկայից եկած կամավորներին...

Դրո (տեղից) - Սուտ եք ասում, թողե՛ք սրիկայությունները... (Աղմուկ, աղաղակ, պահանջում են խոսքը հետ վերցնել: Դրոն ներողություն է խնդրում «սրիկա» ասելու համար):

Ս.Հարությունյան (շարունակելով) - Չափազանց սխալ ընթացք է ընդունել մեր վիճաբանությունը: Բոլորս էլ մեղավոր ենք, գուցե մեկը ավելի, մյուս նվազ չափով: Բոլորը հետևանք է 61-րդ հոդվածին:* Յոթանասունևութ թվականից, երբ այդ հոդվածը գրվեց, սկսվեց մեր դժբախտությունը, գուցե և բախտավորությունը: Եթե հույս ունեմ, որ վերջիվերջո դա մեզ համար բախտավորության աղբյուր է լինելու:

Ն.Տեր-Ղազարյանը փաստացի ուղղում է մտցնում Ս.Հարությունյանի՝ ձախակողմյաններին ուղղած մեղադրանքի մեջ, ասելով, թե իրանք տպել են ռեզոլյուցիա, թե Ազգային բյուրոյի գործելակերպը կարող է բարթողեմյան գիշերներ առաջ բերել: Դարձյալ, երբ նա Բագու էր եկել, նրանից երաշխիքներ ենք պահանջել, որ կզգուշանան ագրեսիվ գործալակերպից:

Նախագահը հայտարարում է, որ վիճաբանությունները Ազգային բյուրոյի քաղաքականության վերաբերմամբ հակված են և առաջարկում է ֆրակցիաներին բանաձևեր առաջարկել:

Սոց.դեմոկրատների կողմից բժ.Իսախանյանը կարդում է հետևյալ բանաձևը. «Ի նկատի ունենալով, որ Ազգային բյուրոն իր քաղաքականությունը Տաճկահայաստանի վերաբերմամբ տարել է առանց հաշվի առնելու տաճկահայերի համաձայնությունն ու ցանկությունը, որ այդ քաղաքականությունը կրել է արկածախնդրական բնավորություն, որ այդ քաղաքականությունը վարվել է դիպլոմատիական ճանապարհով, կուլիստների հետևը, որ այդ քաղաքականությունը վարողները սերտ հարաբերություն են ունեցել միապետական ռեժիմի ներկայացուցիչների հետ և ղեկավարվել են նրանց ցանկություններով ու ցուցմունքներով, մի հանգամանք, որ չէր կարող չվտանգել տաճկահայ ժողովրդի կենսական շահերը և չնպաստել թուրք կառավարության դիվային քաղաքականության հայ ժողովրդի նկատմամբ, խորհրդաժողովը գտնում է: որ այդ քաղաքականությունը եղել է հիմնովին սխալ և վտանգավոր տաճկահայ ժողովրդի համար»:*

Որովհետև մյուս ֆրակցիաները բանաձև չէին ներկայացրել, ուստի ժողովը որոշում է ընդհանուր բանաձևի հարցը հետաձգել հաջորդ նիստին, մինչև բոլոր բանաձևերը ներկայացվեն:

Լինում է առաջարկություն, կաթողիկոսի մոտ եղած հաշիվները քննության ենթարկել: Ժողովը համաձայնում է:

---

* Բեռլինի համաժողովում Հայկական հարցին վերաբերող հոդվածն է:
* Բանաձևի նախագիծը տե՛ս ֆ.222, ց.1, գ.17, թ.34:

Նախագահը հայտարարում է, որ մշակված է փախստականական հարցի վերաբերյալ բանաձևը հետևյալ բովանդակությամբ.

«Անհրաժեշտ համարելով, որ փախստականական խնդիրներով զբաղվող բոլոր կազմակերպություններն ու մարմինները իրենց գործունեությունը ներդաշնակորեն առաջ տանեն, համախորհուրդը գտնում է, որ այդ գործով զբաղվող ռուսահայ և արևմտահայ մարմինները, առանց զրկվելու իրենց ինքնուրույնությունից, պիտի ձգտեն բոլոր ընդհանուր սկզբունքները փոխադարձ համաձայնությամբ վճռել: Գաղթականական գործը, լինելով հայության վերաբերող մի ընդհանուր խնդիր, ենթակա է համագումարից ընտրվող խորհրդի հսկողության»:

Ժողովն ընդունում է այս բանաձևը: Վ.Փափազյանը բողոքում է բանաձևի դեմ:

Նախագահը հայտարարում է, որ Ավագների խորհուրդը համաձայնության է եկել ընտրվելիք մարմինների կազմի մասին:

Ս.Մամիկոնյանը զեկուցանում է Ավագների խորհրդի կողմից, որ առաջարկվում է ընտրել երկու մարմին.

ա. Ազգային խորհուրդ բաղկացած 15 անդամից, որոնցիցը վեցը՝ դաշնակցական, երկու-երկու անդամ՝ սոց.դեմոկրատներից, սոց.հեղափոխականներից և Հայ ժող.կուսակցությունից և երեք անկուսակցական, որոնց կառաջարկեն դաշնակցականները, երկու մյուս սոցիալիստական կուսակցությունները և Հայ ժող.կուսակցությունը, յուրաքանչյուրը մի անդամ և

բ. Ազգային ժողովը, բաղկացած 35 անդամից, որոնցից 25 անդամ կընտրվեն 4 կուսակցություններից՝ համախորհրդում նրանց ներկայացրած անդամների համեմատական սկզբունքով, 5 անգամ՝ Արևմտահայ խորհրդից (թուրքահայերից) և մի-մի անդամ Վ[եհափառ] Կաթողիկոսի, Պետրոգրադի, Մոսկվայի, Նոր Նախիջևանի (և Ռոստովի) և Բագվա հայ ազգաբնակության կողմից: Սրանք պետք է հրավիրեն առաջիկա Ազգային համագումարը:

Լեոն գտնում է, որ կարևոր էր Ազգային ժողովի մեջ էլ տեղ տալ անկուսակցություններին:

Երզնկյանը կարևոր էր գտնում, որ ժողովի և խորհրդի կոմպետենցիան միաձայն որոշվեն:

Որովհետև ծագում են տարաձայնություններ, ուստի ժողովը որոշում է հարցը վճռել հաջորդ նիստին:

Նիստը փակվում է գիշերվա $12^1/_2$ ժամին:

Գ.21, թ.40-43:

N 19
Նիստ ժէ և ԺԸ

13 հոկտեմբերի 1917թ.
(առավոտյան և երեկոյան)

Առավոտյան նիստը կայացավ Առաջնորդարանում, Ա.Սահակյանի նախագահությամբ, իսկ երեկոյան նիստը՝ Ա.Մամիկոնյանի նախագահությամբ:

Առավոտյան նիստին նախագահը հայտնեց, թե Ազգային բյուրոյի քաղաքականության մասին ֆրակցիաները բանաձևերը դեռ չեն ներկայացրել, և որովհետև համախորհրդի պարապմունքները վերջանում են, ինքն առաջարկում է, որ այդ բանաձևերը հանձնվեն Ավագների խոհրդի և նախագահության միացյալ մարմնին, որ կամ մի ընդհանուր բանաձև մշակի նրանցից, կամ, եթե այդ չէ կարելի, ի գիտություն ընդունե:

Ժողովը համաձայնում է այս առաջարկության:

Այնուհետև ժողովն զբաղվում է Ազգային ժողովի և Ազգային խորհրդի կազմակերպության և կոմպետենցիայի մանրամասնություններով: Երկար փոխանակություն է լինում մտքերի, բայց ժողովը որոշ եզրակացության չէ գալիս, քանի որ ֆրակցիաների մեջ դեռ համաձայնություն չէ կայացել: Ուստի ժողովը որոշում է հարցն առկախ թողնել և երեկոյան վերջին անգամ հավաքվել այդ հարցը լուծելու, հանձնարարելով ֆրակցիաներին ամենայն ջանք գործ դնել համաձայնության գալու, այլապես համախորհրդի գումարումը ապարդյուն կանցնի, եթե նա ցրվի առանց մի հեղինակավոր ազգային մարմին ստեղծելու ներկա տագնապալի օրերում:

N 20

Երեկոյաեն նիստին ֆրակցիայի ներկայացուցիչները հայտնեցին, թե ֆրակցիաները եկել են համաձայնության: Այս հիման վրա ժողովը որոշում է ֆրակցիաների համաձայնության կետերը հանձնել Ավագների խորհրդին և պրիզիդիումին՝ վերջնական խմբագրության համար:

Այնուհետև նախագահը, բարեմաղթություններ անելով ազգային ակնկալությունների իրագործման համար, հայտարարում է Ազգային համախորհուրդը փակված:

*
* *

Ներկա արձանագրությունը, Համախորհրդի քարտուղարներ Ս.Մալխասյանցի, Հ.Ստեփանյանի, Ս.Հովվեյանի և, մասամբ, Հ.Տեր-Հակոբյանի սևագրությունների հիման վրա, կազմեցին Ստ.Մարկոսյանցը և Սիմ.Հովվեյանը, աշխատակցությամբ Ռաֆ.Զարդարյանի:

11 հունվարի 1918թ. Թիֆլիս:

Գ.21, թ.43 հակ.:

ՀԱՄԱԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՆԱՁԵՎԵՐՆ ՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

N 21

Բանաձև փախստականական գործի մասին*

[Հոկտեմբեր] 1917թ.

Ռուսահայ համախորհուրդը, լսելով փախստականական գործի և համապատասխան կազմակերպությունների մասին զեկուցումներ, նկատում է.

1. Որ՝ անհրաժեշտ է իրականացնել սերտ համագործակցություն փախստ[ականական] բոլոր կազմակերպությունների և արևմտահայ խորհրդների մեջ, որոնց միությունից ստեղծված կենտրոնական մարմինը պետք է ստանձնե ամբողջ

* Այս բաժնում բերվում են այն բանաձևերն ու որոշումները, որոնք չեն հրապարակվել համախորհրդակցության արձանագրություններում:

գործի ընդհանուր ղեկավարությունը, բաշխե բյուջեն և հսկե բոլոր մարմինների գործունեության վրա, պահպանելով նրանց ներքին վարչական ինքնուրույնությունը:

2. Որ՝ Կովկասի մեջ գտնվող փախստականների պետական օժանդակությունը և հսկողությունը կվերապահվի «Կովկասի փախստականներին օգնող գլխավոր խորհրդին», որի հետ կապ և հարաբերություն պահող պիտի լինի միայն Հայ կազմակերպությունների միացյալ կենտ[րոնական] մարմինը:

3. Որ՝ պատերազմի տևականությունը ստեղծել է տնտեսական այնպիսի ծանր պայմաններ, որ փախստականության կենտրոններում արդեն իսկ սովամահության դեպքերը անսովոր չեն, մինչդեռ ապրուստը սոսկալի չափերով ավելացած է, իսկ պետական օգնության չափը նույնը մնալով, բացարձակապես չի կարող չնչին իսկ չափով բավարարություն տալ. իսկ հայ ազգաբնակության աշխատավար խավերը, որ երեք տարիներից ի վեր եղել են գլխավոր օժանդակողը փախստականներին, ներկա տնտեսական ճգնաժամի մեջ անկարող են այլևս զգալի օգնություն հասցնել:

4. Որ՝ մյուս կողմից, ցանկալի չափով հնարավոր չէ եղել կազմակերպել համայնական աշխատանքներ, որոնք նպաստեին բանակի և հանրության պահանջներին, մասնավորապես կանանց համար, որոնք մեծ տոկոս են կազմում, աշխատանքներ, որ հնարավորություն տային քիչ շուտ բարվոքելու իրենց անտանելի վիճակը և թեթևացնելու պետական գանձարանի ծանրությունը: Մանավանդ, որ կառավարությունը, ընդունելով ներկա ծանր դրությունը, իր Մարտ 29 և Մայիս 10 հրահանգներով ավելացրել էր փախստականության օգնության նորմաները, բայց հետագայում նորից փոխել էր իր որոշումը:

5. Որ՝ թուրքահայ ժողովուրդը, քաջալերվելով կառավարության օժանդակությունից, մասամբ վերադարձել է հայրենիք և ձեռնարկել է երկրի վերաշինության, որ մեծապես կնպաստե նաև կռվող բանակի հաջողության: Եվ որ Հայրենիք վերադարձող ժողովրդի օգնության գործը, իբրև պատերազմից վնասված բնիկ ազգաբնակության, պիտի վերաբերի բացառապես այդ վայրերի համար կազմված հատուկ իշխանության և բուն իսկ բնիկ ժողովրդին:

6. Որ՝ մոտ երեք տարի երկրի* խորքերում իբր պատերազմական գերիներ, ապրուստի և կլիմայական ծանր պայմանների մեջ տառապող բազմաթիվ թուրքահայերի մեծագույն մասը, պատերազմի սկզբին, կոտորածներից խուսափող կամ թրքական բանակի մեջ պարտադիր աշխատանքի ենթակա խմբեր են, որոնց ազատման մասին բազմիցս ապարդյուն դիմումներ են եղել և որ վվրջին օրերում միայն հեղ[ափոխական] կառավարությունը արտոնել է ուղարկել Կովկաս և դնել նրանց կովկասյան զինվորական պարենավորման վարչության տրամադրության տակ՝ իբր գերի ենթարկվելու պարտադիր աշխատանքի:

Համախորհուրդը որոշում է.

I. Ողջունել Հայկ[ական] փախստական[ական] կազմակերպությունների և Արևմտահայ խորհրդի մեջ կայացած համաձայնությունը՝ փախստ[ականական] բոլոր գործերի կենտրոնացման և ընդհ[անուր] ղեկավարության հիմքերի վրա և հրավիրում է միությունից դուրս մնացած մյուս մարմիններին ևս միանալու նոցա:

II. Դիմել ժամանակավոր կառավարության, առաջարկելով՝ ա.նպաստներից օգտվողների տոկոսը բարձրացնել 65-ի, բ.փախստականներին և նրա հիմնարկություններին տրվող նպաստի քանակը դարձնել գոնե կրկնակի:

III. Հոգուտ փախստականական կարիքների նշանակել հանգանակության մի օր հայաբնակ բոլոր վայրերի համար, որի կարգադրությունը հանձնարարել Փախստականական գլխավոր խորհրդի գործադիր մարմնին:

* Բնագրում՝ որբերի:

IV. Հայրենիքում տեղավորված պատերազմից վնասված ազգաբնակության օգնության գործը հանձնել դեմոկրատիկ սկզբունքներով ժողովրդից ընտրված տեղական մարմիններին՝ Թուրքահայաստանի հատուկ վարչության ղեկավարություններով:

V. Առաջարկել Ժամ[անակավոր] կառավարության բաց թողնելու երկու միլիոն ռուբլի աշխատանքների կազմակերպության համար:

Կազմակերպել բանվորական խմբեր Հայաստանի երկաթուղների շինության համար, որ պատերազմական գործողությունների հաջողության և երկրի վերաշինության ամենակարևոր ազդակն է:

VI. Ցավ հայտնել, որ Ժամանակավոր կառավարությունը չշտապեց արձանագրել հին ռեժիմի սխալը թուրքահայ գերիների նկատմամբ և բողոքել, որ նոքա դեռ ճանաչվելով իբր գերիներ, բացառիկ խիստ ռեժիմի տակ ուղարկվում են Կովկաս և պահանջել նոցա ազատ արձակումը:

VII. Վերաքննիչ մասն[աժողով] կազմել՝ դրամական հաշիվները քննելու:

VIII. Հնությունները պահպանելու համար:

IX. ...*

Գ.17, թ.12-13 և հակ.:

N 22

Բանաձև իշխանության և ռազմաճակատի ամրապնդմանը նպաստելու մասին

[Հոկտեմբեր] 1917թ.

Ի նկատի ունենալով, որ հայ ժողովրդի ինքնապաշտպանության գործը ոչ այլ ինչ է, քան հեղափոխական իշխանության հաստատումը երկրում և պետության սահմանների պաշտպանություն,

համախորհուրդը գտնում է, որ բոլոր հայ կենսական ուժերը պետք է գործադրվեն** իշխանության հաստատման և ճակատի պաշտպանության համար, հեղափոխական կառավարության և դեմոկրատիայի միջոցով:

Գ.17, թ.9 և հակ.:

N 23

Բանաձև զեմստվոյական կառավարում մտցնելու մասին

7 հոկտեմբերի 1917թ.

Ի նկատի ունենալով, որ զեմստվո մտցնելը Անդրկովկասում անհետաձգելի անհրաժեշտություն է, համախորհուրդը գտնում է, որ գավառական զեմստվոյական միավորումները պետք է կազմվեն համաձայն այն պրոեկտի, որ ներկայացրել են համախորհրդին զեկուցանողները: Ինչ վերաբերում է նահանգական զեմստվոյական միավորումներին, ապա այդպիսիները կարող են կազմվել պրոեկտով կազմված

* Բանաձևի 9-րդ կետը անընթեռնելի:
** Բնագրում՝ գործադրվի:

գավառների խմբագրությամբ՝ համաձայն պետական իշխանության և երկրի ժողովրդական-տնտեսական պահանջներին:[1]

Գ.17, թ.8 և հակ.:

N 24

Բանաձև պարենավորման գործի բարելավման վերաբերյալ

[հոկտեմբեր] 1917թ.

Հայկական համախորհուրդը ի նկատի առնելով՝

1. Որ պարենավորման գործը թե՛ ամբողջ պետության մեջ և թե՛ մանավանդ Անդրկովկասում ստացել է ճակատագրական բնույթ և սպառնում է հեղափոխության նվաճումներին,

2. Որ հին ռեժիմից ժառանգած պարենավորման քայքայումը ոչ թե նվազել և բարվոքվել է, այլ ավելի բարդացել ու խորացել է,

3. Որ կառավարության քաղաքականությունը պարենավորման գործում չի ունեցել հաստատուն ուղղություն,

4. Որ մենավաճառությունը իբրև սկզբունք՝ ապրուստի ամենակարևոր առարկաների վերաբերմամբ, կանոնավոր հսկողության հետ, պետք է մտցվի կյանքի մեջ ամենուրեք և ամենալայն չափով և

5. Որ Անդրկովկասի զորքի և ազգաբնակության պարենավորման հոգսը պետք է կազմի կառավարության առանձին ուշադրության առարկա, որոշեց՝

I. Տարածել մենավաճառության օրենքը 30 մարտի 1917թ. Անդրկովկասի վրա:

II. Անդրկովկասի ազգաբնակության կարիքին համապատասխան չափով հացահատիկ պահանջել հյուս[իսային] Կովկասից

III. Արտահանության և ներածության համար կանոնավորվե Վլադիկավկազի և Անդրկովկասի ճանապարհները, ներքին հարաբերությունները և օգտվել ծովային երկու ճանապարհից՝ Սև ծով-Նովորոսիյսկից և Կասպիական ծովից Պետրովսկի մինչև Բագու և Եվլախ:

IV. Արտահանությունը արագացնելու համար՝ հացահատիկի նախապատվություն տալ, Ռուսաստանից եկող մյուս ապրանքներից:

V. Հացահատիկը կանոնավոր բաժանելու և եղած բողոքներին շուտափույթ բավարարություն տալու համար՝ նշանակել կոմիսար-վերահսկիչ, պարենավորման մարմիններից անկախ:

VI. Առաջարկել կառավարության հնարավորություն ստեղծելու Պարսկաստանից ևս հացահատիկ բերելու Ռուսաստանի և Անդրկովկասի տարբեր ապրանքների փոխանակությամբ:

VII. Առաջարկել կառավարության Անդրկովկասի ազգաբնակության տալու շաքարի և թեյի բավարարությունը, որը մեծամասնության համար կփոխարինե տաք կերակրին:

VIII. Միջոցներ ձեռք առնել հերկելու մեծ տարածության հողեր և դրա համար կառավարությունից պահանջել այժմյանից ապահովել ժողովուրդը անհրաժեշտ սերմացուով, իսկ աշխատանքի ժամանակ հայ զինվորների մի մաս, գլխավոր[ապես] թիկունքից, որոշ ժամանակով գյուղեր վերադարձնել աշխատանքներ կատարելու:

IX. Միջոցներ ձեռք առնել գյուղացիներին համոզելու և հասկացնելու, որ նրանք էլ խնայողաբար գործածել հացը, յուրաքանչյուր շնչին ոչ ավել մեկ ֆունտից օրական:

X. Ժողովրդյան հագուստեղեն մատակարարելու համար հիմնել և տարածել ջուլհականոցներ՝ կոոպերատիվների, հասարակական հաստատությունների և գյուղական համայնքների նախաձեռնությամբ, որի համար կառավարությունից խնդրել 1.000.000ռ.:

XI. Գյուղատնտեսական գործիքները պատրաստելու և հները նորոգելու համար հիմնել տեղական արհեստանոցներ և խնդրել 500.000ռ.:

XII. Ճանաչել գաղթականական սննդական պահեստները համահավասար նահանգական պահեստներին և ազատ ռեկվիզիցիայից:

Գ.17, թ.10-11:

N 25

Որոշում Ռուսահայ Ազգային ժողով ու Ազգային խորհուրդ ստեղծելու և դրանց կանոնադրությունը ընդունելու մասին

1. Ռուսահայ ազգային ժողովը գերագույն ներկայացուցչական օրգան է ռուսահայ ժողովրդի:

2. Մինչև ընտրական քառանդամ սիստեմով ազգային ներկայացուցչություն հրավիրելը խորհուրդը ունենում է իր պարբերական գումարումները և լուծում է սկզբունքային ու առանձին գործնական կարևորություն ունեցող ժողովրդական խնդիրներ:

3. Ազգային ժողովը կազմված է համախորհրդակցության մեջ ի հայտ բերված հասարակական խմբակցությունների թվական փոխհարաբերության հիման վրա և, բացի այդ, հրավիրվում են ժողովին հասարակական մի քանի խմբակցությունների ներկայացուցիչները համախորհրդակցության որոշմամբ:

4. Համագումարի մեջ հարցերը լուծվում են հասարակական խմբակցությունների փոխադարձ համաձայնությամբ:

5. Համախորհրդակցության մեջ ընտրված ռուսահայ խորհուրդը գերագույն գործադիր օրգան է ռուսահայ ժողովրդի և նա է, որ ամբողջ ժողովրդի անունից վարում է ռուսահայ քաղաքականությունը թե՛ մեր ժողովրդի և թե՛ ամբողջ պետության մեջ:

6. Ռուսահայ խորհուրդը իրականացնում է այն որոշումները, որն արել է Հայոց ազգային համախորհրդակցությունը:

7. Խորհուրդը վարում է ժողովրդական մյուս ընթացիկ խնդիրները, եթե միայն սրանք առանձնապես սկզբունքային բնույթ և գործնական կարևորություն չունեն:

8. Այս վերջին խնդիրները նախապես քննության են ենթարկվում ռուսահայ ազգային ժողովի մեջ և խորհուրդը իրականացնում է սրա որոշումները:

9. Խորհուրդն իր որոշումները սկզբունքային հարցերի մասին կայացնում է նույնպես ոչ թե պարզ քվեարկությամբ, այլ իր անդամների փոխադարձ համաձայնությամբ:

10. Ազգային համախորհրդակցության, ազգային ժողովի և ռուսահայ խորհրդի փոխհարաբերությունների և լիազորությունների ստույգ և մանրամասն մշակումը հանձնել խորհրդին, իսկ հաստատումը՝ ազգային ժողովին:

Վարձատրության հարցը:

Խորհրդի ամենից կարևոր պարտականություններից մեկն է շուտափույտ կերպով ազգային համագումար հրավիրելը քառանդամ սիստեմով:

Նույն գործը, թ.48 և հակ.:

ՀԱՎԵԼՎԱԾ

Ա. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ: ԸՆՏՐԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐ: ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ: ՍԵԿՑԻԱՆԵՐԸ

N 26

Ռուսահայոց համախորհրդակցության պատգամավորների ընտրությունների կանոնները և ընտրական շրջանների ու պատգամավորների ցուցակը

05 հունիսի 1917թ.

1. Յուրաքանչյուր ռուսահայ՝ 20 տարին լրացած՝ առանց սեռի և դավանության խտրության, իրավունք ունի մասնակցելու պատգամավորների ընտրությանը որպես ընտրող և ընտրվող: Գարնիզոններում և առհասարակ ընտրաշրջաններում գտնվող հայ զինվորները ընտրություններին մասնակցում են ընդհանուր հիմունքներով:

Ծանոթ. 1. - Զորաճակատներում և մոտավոր թիկունքներում գտնվող հայ զինվորների՝ ընտրություններին մասնակցելու հարցը որոշվելուց հետո առանձին կհայտարարվի:

Ծանոթ. 2. – Ընտրություններին մասնակցելու, ընտրելու և ընտրվելու իրավունք ունեն նաև ոչ ռուսահպատակ այն հայերը, որոնք ներկա պատերազմից առաջ բնակություն են հաստատել Ռուսաստանում:

2. Պատգամավորների ընտրությունը կատարվում է ընդհանուր, համեմատական (պրոպորցիոնալ), անմիջական և գաղտնի ձայնտվությամբ:

3. Ռուսահայ ժողովրդի յուրաքանչյուր 10.000 հոգուց մեկ պատգամավոր է լինելու: Ընտրական շրջաններում պատգամավորների թվի մասին տե՛ս ցուցակ ընտրական շրջանների:

4. Յուրաքանչյուր ընտրող կարող է ունենալ միայն մեկ ձայն: Յուրաքանչյուր ընտրող իր ընտրական իրավունքը կարող է գործադրել միայն մեկ ընտրական շրջանում: Ընտրվել կարող են մարդիկ անկախ այն հանգամանքից, թե որ ընտրական շրջանումն են բնակվում:

5. Ընտրությունը կատարելու կարգերը որոշված են ստորև առաջ բերված ընտրական օրակարգով:

6. Ընտրությունները կազմակերպելու, կարգադրելու և վարելու համար հաստատվում են՝ կենտրոնական հանձնժողով Թիֆլիսում, այլև 11 շրջանային ընտրական հանձնաժողովներ՝ շրջանների կենտրոններում (տե՛ս ցուցակ ընտրական շրջանների), որոնք բաղկացած են հայ քաղաքական կուսակցությունների անդամներից՝ թվով 5-7 հոգի:

---

* Տեքստում հանդիպող և ընտրական շրջաններին ու ընտրական հրահանգին առնչվող այս և հաջորդ հղումները բնագրինն են: Ծանոթ. կազմ.:

Ծանոթ. – Ընտրական շրջանների ցուցակում յուրաքանչյուր շրջանակի դեմ նշանակված պատգամավորների թվերը (օրինակ, Երևան քաղաք՝ 4, Երևանի գավառ՝ 7, և այլն) չեն նշանակում, թե յուրաքանչյուր շրջանով պետք է այդքան թվով պատգամավոր ընտրե իր կողմից, այլ այդ թվերը բերված են միմիայն ցույց տալու համար, թե ինչի հիման վրա և ինչ տվյալներից է ստացվել ամբողջ շրջանի պատգամավորների թիվը (40): Ուրեմն՝ 11 ընտրական շրջաններից յուրաքանչյուրը կազմում է միայն մեկ ընտրական միություն, այսինքն՝ այդ շրջաններից յուրաքանչյուր մեկում կուսակցությունների կողմից առաջադրված անվանացուցակները, որոնք պարունակում են այդ շրջանի համար պահանջվող թեկնածուների թիվը: (Ընտրության մանրամասնությունները տե՛ս «Հրահանգում»):

7. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը Թիֆլիսում.

ա. Հսկում է ընտրությունների կանոնավորության վրա ամենուրեք ընդհանրապես:

բ. Լուծում է սույն կանոնադրության և ընտրական հրահանգի գործադրման առթիվ ծագող տարակուսանքները ու բացատրություն է տալիս:

գ. Հարկավոր հրահանգներ է տալիս շրջանային հանձնաժողովներին:

դ. Շրջանային հանձնաժողովների զեկուցագրերի հիման վրա կազում և հրատարակում է պատգամավոր ընտրվածների ընդհանուր ցուցակը:

8. Յուրաքանչյուր ընտրող ինքը անձամբ պետք է տա իր ձայնը:

9. Ընտրությունների անկանոնությունների դեմ բողոքները, հարկավոր բացատրություններով հանդերձ, տրվելու են ընտրական շրջանային հանձնաժողովներին՝ ընտրությունը կատարելուց հետո երեք օրվա ընթացքում: Այդ բողոքները հիշյալ հանձնաժողովները կենտրոնական ընտրական հանձնաժողովի միջոցով ներկայացնում են Ռուսահայոց համագումարին, որից կախված է պատգամավորների քննությունը, ստուգումն ու վավերացումը:

Ց Ո Ւ Ց Ա Կ

Ընտրական շրջանների և պատգամավորների

Առաջին անգամ արդեն հայտարարված և ցրված ցուցակում բերված էր յուրաքանչյուր շրջանակի հայ ազգաբնակության թիվը և քանի պատգամավոր է ընկնում յուրաքանչյուր շրջանակի վրա: Ներկա ցուցակից այդ տեղեկությունները դուրս ձգեցինք, որպեսզի տեղիք չտվին կարծելու, թե յուրաքանչյուր շրջանակ նշանակված թվով պատգամավոր պիտի ընտրե իր կողմից:

1. Երևանի շրջան, կենտրոն՝ Երևան:

(Շրջանակներ. 1. Երևան քաղաք, 2. Երևանի գավառ, 3. Նոր- Բայազետ՝ գավառով, 4. Հին Նախիջևան՝ գավառով, 5. Վաղարշապատ՝ էջմիածնի գավառով, 7. Շարուր-Դարալագյազ՝ 46 պատգամավոր:

2. Ալեքսանդրապոլի շրջան, կենտրոն՝ Ալեքս[անդրապոլ]:

(Շրջանակներ, 1. Ալեքսանդրապոլ գավառ)՝ 19 պատգամավոր:

3. Ղարսի շրջան, կենտրոն՝ Ղարս:

(Շրջանակներ. 1. Ղարս, Օլթի, Արդահան, 2. Ղարսի գավառ, 3. Կաղզվան քաղաք, 4. Կաղզվանի գավ[առ]՝ 12 պատգամավոր):

4. Թիֆլիսի շրջան, կենտրոն՝ Թիֆլիս:

(Շրջանակներ. 1. Թիֆլիս քաղաք, 2. Թիֆլիսի գավառ, 3. Ախալցխա, 4. Գորի և Դուշեթ, 5. Գորվա գավառ, 6. Սղնախ՝ գավառով, 8. Ախալքալակ՝ գավառով, 9. Բորչալու գավառ)՝ 40 պատգամավոր:

5. Շուշվա շրջան, կենտրոն՝ Շուշի:

(Շրջանակներ. 1. Շուշի՝ գավառով, 2. Գորիս և Զանգեզուր, 3. Կայագինի գավառ)՝ 22 պատգամավոր:

6. Գանձակի շրջան, կենտրոն՝ Գանձակ:

(Շրջանակներ. 1. Գանձակ՝ գավառով, 2. Նուխի՝ գավառով, 3. Ղազախ՝ գավամռով, 4. Արեշի գավառ, 5. Ջիվանշիրի գավառ)՝ 20 պատգամավոր:

7. Բագվա շրջան, կենտրոն՝ Բագու:

(Շրջանակներ. 1. Բագու, Ղուբա, Լենկորան, Սալյան, 2. Շամախի՝ գավառով, 3. Գյոքչայի գավառ)՝ 12 պատգամավոր:

8. Բաթումի շրջան, կենտրոն՝ Բաթում:

(Շրջանակներ. 1. Բաթում՝ իր շրջանով, 2. Քութայիս՝ գավառով, 3. Սուխումի շրջան, 4. Նովորոսիյսկ՝ շրջանով)՝ 7 պատգամավոր:

9. Դաղստանի շրջան, կենտրոն՝ Արմավիր:

(Շրջանակներ. 1. Դերբենդ և Դաղստանի շրջան, 2. Արմավիր, Եկատերինոդար, Մայկոպ, 3. Վլադիկավկազ, Ղզլար, Պյատիգորսկ, Մոզդոկ՝ շրջանով)՝ 7 պատգամավոր:

10. Հաշտարխանի շրջան, կենտրոն՝ Հաշտարխան:

(Շրջանակներ. 1. Հաշտարխան, Ստավրոպոլ, Սարատով, Ցարիցին (Սիբիր), 2. Ասխապատ և Թուրքեստանի շրջան)՝ 2 պատգամավոր:

11. Բեսարաբիայի շրջան, կենտրոն՝ Նոր Նախիջևան:

(Շրջանակներ, 1. Պետրոգրադ, Մոսկվա, 2. Կիև, Խարկով, Ռոստով, 3. Քիշինև, Օդեսա, Ակկերման, 4. Ղրիմ, Տավրիկյան նահանգ՝ 8. պատգամավոր:

Ընդամենը 11 շրջանակով և 185 պատգամավոր:

«Արև», 05.07.1917:

N 27

Ռուսահայ Ազգային ժողովի ու Խորհրդի կանոնադրության նախագիծը

1. Մինչ ընտրական քառանդամ սիստեմով ազգային համագումար հրավիրելը՝ ստորև հիշված հիմունքներով կազմակերպվում է «Ազգային ներկայացուցչական ժողով», որ համարվելու է Ռուսահայ ժողովրդի ժամանակավոր ներկայացուցչական օրգանը և ունենալու է իր պարբերական նիստերը Թիֆլիզում:

2. Նրա զբաղմունքի առարկաները պիտի լինեն՝ Ռուսահայության վերաբերող բոլոր հարցերը և Տաճկահայության վերաբերող այն խնդիրները, որ օրգանապես կապված են ռուսահայության հետ և բխում են ներկա կացությունից: Օրինակ, փախստականական վերաշինության վերաբերյալ մի շարք վարչական հարցեր (մինչ պատերազմի վերջանալը) և առհասարակ գործնական արժեք ունեցող խնդիրներ:

3. Այդ «Ժողովի» կազմը miniatur չափով ներկայացնում է տեղի ունեցող համագումարը, գումարած մի քանի հիմնարկությունների ներկայացուցիչները:

Այսպես՝

1. Դաշնակցական Կուսակ[գություն]ից		16-14 հոգի
2. Ժողովրդական	-,,-	7-5 -,,-
3. Սոցիալ-դեմոկր.	-,,-	4-3 -,,-
4. Սոցիալ-հեղափոխ.	-,,-	3-3 -,,-
5. Озакома-ի ներկայաց.		1 -,,-
6. Կաթողիկոսի ներկայաց.		1 -,,-
7. Համագումարում ընտրված Պետրոգրադի ներկայացուցիչներ		2 -,,-

8. Առևտրա-արդյունաբերակ[ան] Միությունից ընտրվելիք ներկայացուցիչներ (Մոսկվա, Պետրոգրադ, Նախիջևան, Բագու)	4 (5) -,,-
9. Արևմտահայ խմբակցությունից	1 -,,-
10. Տաճկահայ հանձնաժող.ներկայացուց.	1 -,,-

Ընդամենը 35 հոգի

4. «Ազգային ներկայացուցչական ժողովում» հարցերը լուծվում են ֆրակցիաների փոխադարձ համաձայնությամբ.

Նկատ. - Այն հարցերը, որոնց վերաբերմամբ փոխադարձ համաձայնություն չի կայանում, հանվում են օրակարգից՝ լուծելու հառաջիկա համագումարին:

5. Եթե մինչ այդ համագումարը այս կամ այն ֆրակցիան իր անունից սեպարատ կերպով քայլեր է անում օրակարգից հանված հարցերի շրջանում, դրա պատասխանատվությունը ընկնում է ամբողջովին սեպարատ գործող ֆրակցիայի վրա հերթական համագումարի[ց] առաջ:

6. Ազգ[ային] ներկ[այացուցչական] ժողովի ամենաառաջին քայլերից մեկը պիտի լինի փութացնել հերթական համագումարի հրավիրելը, մշակելով նրա օրակարգը, պատրաստելով զեկուցումները և տեխնիկական հարմարություններ ստեղծելով:

7. Համախորհրդից ընտրված «Ռուսահայ խորհուրդը» գերագույն գործադիր օրգանն է ռուսահայ ժողովրդի, որի ամբողջական անունից վարում է ռուսահայ քաղաքականությունը թե՛ Անդրկովկասում և թե՛ ամբողջ պետության մեջ, - Համախորհրդի որոշումների և շոշափված հարցերի շրջանում:

8. Հարցերի լուծումը կարող է տեղի ունենալ կամ բացարձակ քվեարկությամբ, կամ փոխադարձ համաձայնությամբ քաղաքական ֆրակցիաների մեջ:

Նկատ. – Փոխադարձ համաձայնությամբ պիտի լուծվեն բոլոր համապետական և համաանդրկովկասյան հարցերը առհասարակ և մասնավորապես Հայկական ազգային սկզբունքային խնդիրները:

Նկատ. - Եթե «Ռուսահայ խորհրդում» համաձայնության չգան ֆրակցիաները, անմիջապես հրավիրվում է «Ազգային ներկայացուցչական ժողովը» և հարցերը այնտեղ որոշում են 4 և 5 կետ...* հիման վրա:

9. «Ռուսահայ խորհրդի» անդամների թիվը՝ փոխադարձ համաձայնությամբ, որոշվել է այսպես.

Դաշնակց. կուս.-ից		6 հոգի
Ժողովրդ.	-,,-	2 -,,-
Սոց.-դեմ.	-,,-	2 -,,-
Սոց.-հեղ.	-,,-	2 -,,-
և Ընդհանուր համաձայն[ությամբ] լրացուցիչ		3 -,,-
	Ընդամենը	15 հոգի

* Մեկ բառ՝ անընթեռնելի:

10. Հիշյալ 15 հոգուց 8 հոգի պատրաստվում են ապրել Թիֆլիզում և ամբողջովին նվիրվել «Ռուսաց խորհրդի» գործին առանց կողմնակի որևէ աշխատանք ունենալու: Ուստի և Համախորհուրդը որոշում է վարձատրել դրանց աշխատանքը ամսական ... ռ.* վճարումով:

11. «Ռուսահայ խորհուրդը» մշակում է «խորհրդի» և «Ժողովի» փոխհարաբերությունների և լիազորությունների ստատուտները նույնպես և իր ներքին աշխատանքի բաժանումը ու ներկայացնում է «Ազգ[ային] ներկ[այացուցչական] ժողովին» ի հաստատություն:

12. Ժամանակավորապես «Ռուսահայ խորհրդի» կազմն է.

1. Ավետիս Ահարոնյան
2. Խաչատուր Կարճիկյան
3. Աբրահամ Գյուլխանդանյան
4. Ռուբեն Տեր-Մինասյան
5. Նիկոլ Աղբալյան
6. Կորյուն Ղազազյան
7. Լևոն Աթաբեգյան
8. Հովհ.Տեր-Օհանյան
9. Ղազար Տեր-Ղազարյան
10. Արամայիս Երզնկյան
11. Սամսոն Հարությունյան
12. բժ. Հար.Այվազյան
13. Տիգրան Բեգզադյան
14. Պետրոս Զաքարյան
15. Ստեփան Մամիկոնյան

Գ.17, թ. 51-58 և հակ.:

N 28

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ[1]

	Ազգանուն, անուն	քաղաքը	կուսակցակ.	Հիմնարկութ. կամ այլ լիազոր.
1	2	3	4	5
1.	Սողոմոնյան Տիգրան	Թիֆլիս	ս.-դ.	Ժամանակ.հեղափոխ. կոմիտե
2.	Շանշյան	-,,-	ս.-հ.	-,,-
3.	Ազաբեգյան Լևոն	-,,-	ս.-հ.	-,,-
4.	Երզնկյան Հայկ	-,,-	ս.-դ.	պրոֆես.միության կենտրոն
5.	Փիրումյան Ս.	-,,-	ս.-դ.	Զինվոր.երկր.
6.	Նազարյան	-,,-	ս.-հ.	-,,-
7.	Ժամագործյան	-,,-	ս.-հ.	-,,-
8.	Պետրոսյան	-,,-	ս.-հ.	-,,-

* Գումարի չափը բաց է թողնված:

9.	Թումանյան Լևոն	-,,-	ս.-հ.	-,,-
10.	Բեգզադյան Հովս.	-,,-	ս.-դ.	-,,-
11.	Բեգզադյան Ռուբ.	-,,-	ս.-հ.	-,,-
12.	Մալխասյան Ռուբ.	-,,-	ս.-դ.	-,,-
13.	Չալխուշյան Ռուբ.	-,,-	դաշն.	Հայ զինվոր.միութ.
14.	Կամսարական Արշ.	-,,-	անկ.	-,,-
15.	Պետրոսյան Թադ.	-,,-	դաշն.	-,,-
16.	Շահմազյան Արս.	-,,-	դաշն.	-,,-
17.	Տեր-Օհանյան Գաբր.	-,,-	ս.-հ.	-,,-
18.	Թարխանյան Ն.	-,,-	ս.-հ.	Միացյալ երկր.կենտրոն
19.	Խոդկարյան Արշ.	-,,-	ս.-հ.	-,,-
20.	Խանդանյան Եր.	-,,-	ժող.	Հայ.կաթոլ. վարչութ.
21.	Սարուխանյան Աս.	-,,-	ժող.	-,,-
22.	Ռստակյան Հովս.	-,,-	դաշն.	-,,-
23.	Գևորգյան Գևորգ	-,,-	դաշն.	-,,-
24.	Տեր-Գևորգյան Վ.	-,,-	դաշն.	Գայանյան դպրոց
25.	Բաբայան Արշ.	Թիֆլիս	ս.-դ.	Ս.-դ. Հնչակ.կուս.
26.	Հակ.Ղազարյան (Լազո)	-,,-	ս.-դ.	-,,-
27.	Դեմիրճյան Դ.	-,,-	դաշն.	Հայ.գրողների ընկ.
28.	Գյուլումյան Լիպ.	-,,-	ս.-հ.	Բանվոր.երկր. կենտ.
29.	Դանդուրյան Ս.	-,,-	ս.-դ.	-,,-
30.	Ազատյան Հայկ	-,,-	ս.-դ.	-,,-
31.	Ղարաջյան Գ.	-,,-	ս.-դ.	-,,-
32.	Օհանջանյան Համ.	-,,-	դաշն.	-,,-
33.	Հարությունյան Իսահակ	-,,-	ժող.	Փախստ.գլխավոր խորհուրդ
34.	Մխիթարյան Արշ.	-,,-	ժող.	-,,-
35.	Սուրխաթյան	-,,-	ս.-դ.	Ռուս.սոց.դեմ.կուս.
36.	Պիճիկյան Իվան	-,,-	ս.-դ.	-,,-
37.	Դարբինյան Մարտ.	-,,-	ս.-դ.	-,,-
38.	Ամիրյան Իսահակ	-,,-	ժող.	Հայ կադետների կողմից
39.	Մայսուրյան Թեոդոր	-,,-	դաշն.	Կոոպեր.Անդրկովկ. միությունից
40.	Արիստակեսյան	-,,-	ժող.	Թիֆլիզի հայ վաճառականության կողմից
41.	Մելիք-Ղարագյոզյան Գ.	-,,-	ժող.	-,,-
42.	Տեր-Դանիելյան Դ.	-,,-	ս.-դ.	Ս.դեմ.հայ կազմակերպ.
43.	Հարությունյան Ս.	-,,-	ժող.	Քաղաքային դումայի ֆրակցիայի
44.	Խատիսյան Գևորգ	-,,-	դաշն.	-,,-
45.	Աբեղյան Արտ.	-,,-	դաշն.	-,,-
46.	Կարճիկյան Խաչ.	-,,-	դաշն.	-,,-
47.	Թադևոսյան տ.Դ.	-,,-	դաշն.	-,,-
48.	Զուրաբյան տ. Աղավնի	-,,-	ս.-դ.	-,,-
49.	Կաֆյան Գաբրիել կամ Զարտիշյան Գ.	Թիֆլիս	ս.-դ.	Քաղաքային դումայի ֆրակցիայի

50.	Մուշեղյան Տիգրան	-,,-	ս.-հ.	-,,-
51.	Սպենդիարյան Հովի.	-,,-	ժող.	Հայ ժողովրդ.կուս.
52.	Ստեփանյան բժ.Կ.	-,,-	ժող.	-,,-
53.	Մուչայան Միք.	-,,-	դաշն.	Ներսիսյան դպրոց
54.	Ստամբոլցյան Ան.	-,,-	ս.-հ.	Սոց.-հեղափ. կուս.
55.	Տեր-Օհանյան Հովի.	-,,-	ս.-հ.	-,,-
56.	Աղասարյան Բախշի	-,,-	ժող.	Կ[ովկասի] Հ [այոց] բարեգործ.ընկերութ.
57.	Զառաֆյան Սարգիս	-,,-	դան.	Փոստ-հեռագրակ. ծառ.
58.	Ահարոնյան Ավետիս	-,,-	-,,-	Հ.Հ.դաշնակցություն
59.	Մանուկյան Արամ	-,,-	-,,-	-,,-
60.	Տեր-Մինասյան Ռուբեն	-,,-	-,,-	-,,-
61.	Արարատյան Ս.	-,,-	-,,-	-,,-
62.	Շահխաթունյան Ա.	-,,-	-,,-	-,,-
63.	Բժ.Հ.Տեր-Դավթյան	-,,-	-,,-	-,,-
64.	Օհանջանյան տ.Ռուբինա	-,,-	-,,-	-,,-
65.	Մանասյան Սարգիս	-,,-	-,,-	-,,-
66.	Տեր-Աստվածատրյան Մ.	-,,-	ժող.	Հայ.ավետարանական
67.	Գալիկյան Հրանտ	-,,-	ս.-դ.	Արևմտահայ խորհուրդ
68.	Դարբինյան Արտ.	-,,-	ժող. (սահմ.)	-,,-
69.	Եսայան տիկ.Զար.	-,,-	դաշն.	-,,-
70.	Թերզիբաշյան Ավ.	-,,-	ժող.	-,,-
71.	Հայկունի Գուրգեն	-,,-	ս.-դ.	-,,-
72.	Մանուկյան Հմ.	Թիֆլիս	դաշն.	Արևմտահայ խորհուրդ
73.	Շանթ Լևոն	-,,-	-,,-	-,,-
74.	Պապիկյան Վարդան	-,,-	ժող.	-,,-
75.	Սասունի Կարո	-,,-	դաշն.	-,,-
76.	Վան Փուշ	-,,-	-,,-	-,,-
77.	Բորոյան Սմբատ	-,,-	-,,-	-,,-
78.	Տեր-Զաքարյան Հակոբ	-,,-	ժող.	-,,-
79.	Բոնապարտյան Բժ.	-,,-	դաշն.	-,,-
80.	Փափազյան Վահան	-,,-	-,,-	-,,-
81.	Արղության իշխ.Բորիս	-,,-	ժող.	Հ[այոց] Ազգագր.ընկեր.
82.	Մարտիրոսյան տիկ. Հայկ.	-,,-	-,,-	Հայուհեաց Բար. [ընկ.]*
83.	Խատիսյան Աղեքս.	-,,-	դաշն.	Ազգային բյուրո
84.	Ամիրխանյան Հովի.	-,,-	-,,-	-,,-
85.	Քոչարյան Հակ.	-,,-	-,,-	-,,-
86.	Աղբալյան Նիկ.	-,,-	-,,-	-,,-

* Արխիվային փաստաթղթի այդ մասերը վնասված են:

87.	Բաբախանյան Առաք[ել]	-,,-	անկ.	-,,-
88.	Հակոբյան պրոֆ. Հովհ.	-,,-	ժող.	Հայ.սահմ.ռամ.կազ.
89.	Առաքելյան Համբ.	-,,-	-,,-	Նպաստամ[ատույց] ընկ.
90.	Սահակյան Ավետիք	-,,-	դաշն.	Հ.գյուղատնտ.ընկ.
91.	Ղազարյան Կորյուն	-,,-	-,,-	Գյուղաց.երկր. [կենտ.]*
92.	Բաբայան Վարոս	-,,-	-,,-	-,,-
93.	Քյալալյան Գառնիկ	-,,-	-,,-	-,,-
94.	Չոլախյան Հիպերիկ	-,,-	-,,-	-,,-
95.	Էլիբեգյան Հակոբ	-,,-	-,,-	-,,-
96.	Տեր-Իսրայելյան Հար.	-,,-	-,,-	-,,-
97.	Վրացյան Սիմոն	Թիֆլիս	դաշն.	Գյուղաց[իկան] երկր[ային] [կենտր.]
98.	Ղազարյան Գևորգ	-,,-	-,,-	-,,-
99.	Ջամալյան Արշակ	-,,-	-,,-	-,,-
100.	Երզնկյան Արամայիս	-,,-	ս.-դ.	-,,-
101.	Սաղաթելյան Լևոն	-,,-	դաշն.	-,,-
102.	Մալխասյան Ալեքս.	-,,-	ժող.	Կազմակերպիչ բյուրո
103.	Հովվեյան Սիմ.	-,,-	ս.-դ.	-,,-
104.	Տեր-Աստվածատրյան Հայկ	-,,-	ժող.	Ազգ.հառաջ.կուս.
105.	Շարբաբչյան	-,,-	ժող.	Հայ Գեղարվեստ.կողմ.
106.	Աղաբաբյան Գրիգոր	-,,-	անկ.	Հայ ճարտար.կողմ.
107.	Շահինյան Վաղարշակ	-,,-	դաշն.	Սպայական դպրոցից
108.	Չմշկյան Հարություն	-,,-	անկ.	Հ.Դրամատիկ[ական] ընկ.
109.	Պապաջանյան Միքայել	-,,-	ժող.	Պետ.դումայի անդ.
110.	Տիգրանյան Սիրական	-,,-	դաշն.	-,,-
111.	Տեր-Ավետիքյան Ստեփան	-,,-	-,,-	-,,-
112.	Աջեմյան Մ.	-,,-	ժող.	-,,- չի եկել
113.	Այվազյան Բժիշկ	-,,-	-,,-	-,,- չի եկել
114.	Տեր-Պետրոսյան Գ.	-,,-	-,,-	-,,-
115.	Թումանյան Լևոն	-,,-	-,,-	-,,- չի եկել
116.	Սաղաթելյան Հովհ.	-,,-	դաշն.	-,,- չի եկել
117.	Համազասպ	-,,-	դաշն.	Հրամանատար 3-րդ խմբի
118.	Դրո	-,,-	-,,-	-,,- 2-րդ -,,-
119.	Իշխան	-,,-	-,,-	-,,- 7-րդ -,,-
120.	Վարդան	-,,-	-,,-	-,,- 5-րդ -,,-
121.	Արզումանյան Մ.	Թիֆլիս	-,,-	-,,- 4-րդ -,,-
122.	Պանդուխտ	-,,-	ս.-դ.	-,,- 6-րդ -,,-
123.	Զուրաբյան Արշակ	-,,-	-,,-	Պետական դումայի անդամ

* .....

124.	Մնացականյան	ֆրոնտ	ս.-հ.	6-րդ հայկ.գնդի կողմից
125.	Հարությունյան Բագրատ	ֆրոնտ	դաշն.	5-րդ հայկ.գնդի կողմից
126.	Տեր-Ավագյան Գուրգեն	-,,-	-,,-	1-ին հայկ.գնդի կողմից
127.	Թորոսյան	Բագու	-,,-	Հայ լութերականներից
128.	Կրասիլնիկյան Կոնստ.	-,,-	ժող.	Հայ վաճառական-ների և արդյունաբ-րողների կողմից
129.	Աքաբեգյան Միք.	-,,-	-,,-	-,,-
130.	Մանանդյան Հակ.	-,,-	անկ.	Հայ հասարակությունից
131.	Իսախանյան Տիգրան	-,,-	ս.-դ.	-,,-
132.	Ստեփանյան Հակ.	-,,-	ս.-հ.	Կոոպեր.ընկերությունից
133.	Գյուլխանդանյան Աբր.	-,,-	դաշն.	Հայ հասարակությունից
134.	Քաջազնունի Հովհ.	-,,-	-,,-	-,,-
135.	Վերմիշյան Քրիստ.	-,,-	ժող.	Հայ ազգ.դեմ.կուս.
136.	Տեր-Ներսիսյան Իսահակ	-,,-	ս.-հ.	Կոոպերատիվ միությունից
137.	Խանզադյան Ց[ոլակ]	-,,-	ս.-դ.	-,,-
138.	Տերտերյան Նիկոլ.	-,,-	ս.-հ.	Հայ հասարակությունից
139.	Տեր-Ղազարյան Նարիման	-,,-	ս.-դ.	-,,-
140.	Հովհաննիսյան Տիգրան	-,,-	դաշն.	Հայ գրասիրաց ընկ.
141.	Տեր-Միքայելյան Հայկ	-,,-	անկ.	Մարդասիր.ընկ.
142.	Զաքարյան բժ.Թադևոս	-,,-	ժող.	Կուլտուր.միությունից
143.	Կարապետյան Ալեքսան	-,,-	դաշն.	Հայ բանվորությունից
144.	Անդրեասյան Անդրեաս	-,,-	-,,-	-,,-
145.	Տեր-Պողոսյան Հայրիկ	Նուխի	ս.-հ.	Կոոպերատիվ միություն
146.	Համբարձումյան Կոնստ.	Ղարս	դաշն.	Քաղաքային ինքնավարութ.
147.	Բաբալյան Արտաշես	-,,-	-,,-	Գյուղացիակ.միություն
148.	Վալադյան Վ.	-,,-	-,,-	-,,-
149.	Մինասյան Արփենիկ	-,,-	ս.-հ.	Քաղաքային ինքնավարութ.
150.	Մատինյան Նիկոլայ	-,,-	դաշն.	-,,-
151.	Ազնաուրյան Գալուստ	-,,-	-,,-	Գարնիզոնի հայ.զին.
152.	Աթանասյան Պարույր	Ղարս	ս.-հ.	Կոոպեր. միություն.
153.	Ղազարյան Արշակ	Ալեքսանդրա-	դաշն.	Քաղաքային ինքնավար.

		պոլ		
154.	Նավասարդյան Վահան	-,,-	-,,-	-,,-
155.	Տերտերյան Իսահակ	-,,-	-,,-	-,,-
156.	Տեր-Գասպարյան Ալեքս.	-,,-	ս.-հ.	-,,-
157.	Բաղրամյան Հակոբ	-,,-	դաշն.	Գարնիզոնի հայ.զին.
158.	Հայրապետյան Ավագ	-,,-	-,,-	-,,-
159.	Տեր-Աբրահամյան Մխիթար	-,,-	-,,-	Արղության դպրոց
160.	Տեր-Հակոբյան Հակոբ	-,,-	-,,-	Կոոպեր.միություն
161.	Տեր-Գրիգորյան Արարատ	-,,-	-,,-	Գյուղացիակ.միութ.
162.	Գարեգին Նժդեհ	-,,-	-,,-	-,,-
163.	Տեր-Հովհաննիսյան Համբ.	Վլադի-կավ-կազ	-,,-	Հայ հասարակութ.
164.	Տեր-Հովհաննիսյան Պետրոս	Կիսլո-վոդսկ	-,,-	-,,-
165.	Ավագյան Արշալույս	Պյատի գորսկ	-,,-	Քաղաքային ինքնավար.
166.	Փիրուզյան Լևոն	Երևան	-,,-	Գարնիզոնի զինվոր.
167.	Կանդուրազյան Պողոս	-,,-	-,,-	Քաղաքային ինքնավար.
168.	Թոշյան Թադևոս	Երևան	դաշն.	Քաղաք.ինքնավ.
169.	Նիկողոսյան Թորգոմ	-,,-	-,,-	-,,-
170.	Ավետիքյան Արմենակ	-,,-	ս.-հ.	-,,-
171.	Գյուլալյան Գառնիկ	-,,-	դաշն.	Գայանյան դպրոցից
172.	Թորոսյան Սահակ	-,,-	-,,-	Թեմական դպրոցից
173.	Հարությունյան Հակոբ	-,,-	-,,-	Գյուղացիակ.միութ.
174.	Սարգսյան Հայկ	-,,-	-,,-	-,,-
175.	Վանց յան Արտաշես	-,,-	-,,-	-,,-
176.	Խուդոյան Գեղամ	-,,-	-,,-	-,,-
177.	Ամիրյան Գևորգ	-,,-	ժող.	Հայ վաճառականութ.
178.	Աղաջանյան Արամ	-,,-	դաշն.	Կոոպեր.միութ.
179.	Շահնազարյան Արշակ	-,,-	-,,-	-,,-
180.	Մելիքյան Հովհաննես	Երևան	ժող.	Հայ վաճառականութ.
181.	Թոփչյան Բագրատ	Մոսկվա	դաշն.	Հայ.համառուս.ուսանողական միություն
182.	Բերբերյան Մինաս	-,,-	ժող.	Լազարյան ճեմարանից
183.	Սողոմոնյան Մովսես	-,,-	դաշն.	Եկեղեց.խորհրդից
184.	Մամիկոնյան Ստեփան	-,,-	անկ.	Մոսկվ.հայկակ.կոմի տեից
185.	Շահինյան Բագրատ	Գորի	դաշն.	Քաղաքային ինքնավար.
186.	Հովակիմյան Տիգրան	Ղազախ	ս.-հ.	Կոոպեր.միություն
187.	Մալխասյան Արշակ	Գանձակ	դաշն.	Գյուղացիությունից
188.	Սոտնիկյան Պողոս	-,,-	-,,-	Քաղաքային ինքնավար.

189.	Մելքոնյան Հայկ	-,,-	-,,-	-,,-
190.	Առվանյան Գրիգոր	Ախալ-քալակ	-,,-	Կոոպերատիվ. միութ.
191.	Չիլինգարյան Արտաշես	-,,-	-,,-	Գյուղացիակ.միութ.
192.	Դեմիրչօղլյան Շավարշ	-,,-	-,,-	-,,-
193.	Տեր-Գրիգորյան Ջալալ	-,,-	-,,-	Քաղաքային ինքնավար.
194.	Սերեբրյակյան Աշ.	Շամախի	ժող.	Հայկ.հիմնարկ[ություններից]
195.	Գյանջեցյան	Սիբի-րից	ս.-դ.	Հայ գաղութից
196.	Մազմանյան	Արտա-նուշ	դաշն.	Հայ հասարակությունից
197.	Ղարաբեգյան Միքայել	Շուշի	ս.-դ.	Թեմական դպրոցից
198.	Ջաքարյան Պետրոս	-,,-	-,,-	Քաղաքային ինքնավար
199.	Տեր-Ղազարյան Ղազար	-,,-	-,,-	-,,-
200.	Բահաթրյան Հրանտ	-,,-	անկ.	Կոոպերատիվ.
201.	Հովհաննիսյան Հայկ	-,,-	դաշն.	Մարիամ.-Ղուկաս. դպր.
202.	Գարեգին եպիսկոպոս	Էջմիա-ծին	ժող.	Գեորգ ճեմարան
203.	Գեորգ եպիսկոպոս	-,,-	-,,-	Եղբայր.օգնութ.չի եկել
204.	Մեսրոպ եպիսկոպոս	Էջմիա-ծին	անկուս.	Վեհափառ կաթողիկոսից
205.	Բագրատ եպիսկոպոս	-,,-	-,,-	-,,-
206.	Խորեն եպիսկոպոս	-,,-	-,,-	-,,-
207.	Գևորգյան Գեորգ	Ասխա-բադ	դաշն.	Հայ հասարակությունից
208.	Ավագյան Ներսես	Շամշա-դին	-,,-	Կոոպերատիվ[ների] միություն
209.	Աֆրիկյան Լևոն	Նոր Բայա-զետ	-,,-	-,,-
210.	Ավետիսյան Մարգար	-,,-	-,,-	Գյուղացիակ.միություն
211.	Աֆրիկյան Վահան	Նոր Բայա-զետ	դաշն.	Քաղաքային ինքնավարութ.
212.	Աղաջանյան պրոֆ.	Ն.Նախ-իջևան	ժող.	Աղքատախնամ ընկերութ.
213.	Չալխուշյան Գրիգոր	-,,-	անկ.	Հայ հասարակությունից
214.	Անդրանիկ	-,,-	-,,-	-,,-
215.	Զոհրաբյան Ալեքս.	-,,-	դաշն.	Թեմական դպրոց
216.	Տեր-Ստեփանյան Սմբատ	Սիմֆե-ռոպոլ	-,,-	Հայ հասարակությունից
217.	Շխյան Սիմեոն	Նուխի	-,,-	Քաղաք[ային] ինքնավարութ

218.	Գաբրիելյան Եփրեմ	Տաշ-քենտ	ժող.	Հայ հասարակությունից
219.	Տեր-Ստեփանյան Գարեգին	Սղնախ	դաշն.	Քաղաք[ային] ինքնավարութ.
220.	Մարգարյան Պողոս	Եկատե-րինո-դար	-,,-	Հայ հասարակությունից
221.	Այվազյան Ստեփան	Սարի-ղամիշ	-,,-	Գործ.մարմնից
222.	Հովհաննիսյան Հակոբ	Արմա-վիր	-,,-	Հայ հասարակությունից
223.	Ղահրամանյան Լևոն	Սուրբ խաչ		-,,-
224.	Սարդարյան Կարապետ	Բաքում	ս.-դ.	Քաղաք[ային] ինքնավարութ.
225.	Ասրիբեգյան Ալեքս.	Պետրո-գրադ	անկ.	Եկեղեց.խորհրդից և հայկ.կոմիտեից
226.	Ահարոնյան Անտոն	Կաղզ-ման	դաշն.	Հայկ.հասարակու-թյուն
227.	Ահարոնյան Վարդգես	Թիֆլիզ	-,,-	Գյուղացիակ. կենտրոն
228.	Բժ.Զավրիև Հակոբ	-,,-	-,,-	-,,-

Հակոբ Քոչարյան

Գ.16, թ.1-4 հակ.:

N 29

Սեկցիաների բաժանումը և կազմը

Սեկցիաներ	Սեկցիաների անդամներ
I. Գաղթականական և պարենավորման հարցերը քննելու Նախագահներ Մեսրոպ եպ. Փափազյան Քարտուղարներ Խուդոյան Եսայան Զաբ. 8 կիրակի, Բարեգործ ընկ.[դահլիճ]	*սոցիալիստ-հեղափոխական* 1. Հակ.Ստեփանյան 2. Նիկ.Տերտերյան 3. Պար.Աթանասյան *սոցիալ-դեմոկրատ* 1. Պետրոսյան 2. Գալիկյան 3. Պետրոս Զաքարյան *դաշնակցական* 1.Շահնազարյան Արշ. 2.Խուդոյան Գեղամ 3. Արվանյան Գրիգոր 4.Տոշյան Թադեոս 5.Ավագյան Ներսես 6.Ղազազյան Կորյուն

	7.Փափազյան Վահր. 8.Սողոմոնյան Մովս. 9.Արվանյան Գրիգ. 10.Համբարձումյան 11.Շանթ 12.Եսայան Զաբել 13.Մ.Հայրապետյան 14.Մայսուրյան Թադ. *հայ.ժող.կուսակցություն* 1.Մեսրոպ եպիսկոպոս 2.Հարությունյան Ս. 3.Թերզիբաշյան 4.Վերմիշյան Քրիստ. 5.Սերեբրյակյան Թեկնածուներ 1.Մխիթարյան 2. 3.Հարությունյան Իս. 4.Առաքելյան Համբ. 5.Դարբինյան Ա. 6.Տեր-Զաքարյան
II. Նահանգների և գավառների սահմանագծերի փոփոխության և զեմստվոյի հարցերը Նախագահներ Վերմիշյան Խատիսյան Գ. Քատուղար՝ Միք.Ղարաբեգյան Կյուրակի, 8 ժ. Գ.Տեր-Մարգարովի [շենք], Гол.[овинский] пр., 25	*սոցիալիստ-հեղափոխական* 1.Լ.Աթաբեգյան 2.Տեր-Օհանյան Հովի. 3.Խոնդկարյան *սոցիալ-դեմոկրատ* 1.Ղազար Ղազարյան 2.Ղարաբեգյան Միք. *դաշնակցական* 1.Ավագյան Արշ. 2.Հովհաննիսյան Տիգր. 3.Տեր-Գրիգորյան Արար. 4.Հովհաննիսյան Հակ. 5.Մելքոնյան Հայկ 6.Նավասարդյան Վար. 7. Շահխաթունյան 8.Ղազարյան Գևորգ 9.Տեր-Իսրայելյան Հ. 10.Խատիսյան Գևորգ 11.Հարությունյան Հակ. 12.Սահակյան Ավետիք 13.Պոպովյան Ալեքս. 14.Բեգզադյան Տիգր. 15.Սպենդիարյան Հովի. *հայ.ժող.կուսակցություն*

	1.Վերմիշյան Քրիստ. 2.Տեր-ՊետրոսյանԳ. 3.Մեսրոպ եպիսկոպ. 4.Մխիթարյան Արշ. 5.Սերեբրյակյան Ալ. Թեկնածուներ 1. Միք.Ավդալբեգյան 2.Բահաթրյան Լ. 3.Հարությունյան Սամս.
III. Դպրոցների ազգայնացման և ազգ. ծխական ու հոգեվոր դպրոցների դրության հարցերը մշակելու համար Կիրակի, Ներսիսյան դպրոցի դիվարանը, եր.ժ. 7-ին	*սոցիալիստ-հեղափոխական* 1.Ստամբոլցյան Արտ. 2.Մուշեղյան Տիգր. 3.օր.Մինասյան *սոցիալ-դեմոկրատ* 1.Սուրխաթյան 2.Հովվեյան Սիմ. *դաշնակցական* 1.Տիգրանյան Սիրակ. 2.Աբեղյան Արտաշես 3.Շխյան Սիմոն 4.Ղազարյան Գևորգ 5.Մարգարյան Պողոս 6.Տեր-Հակոբյան Հակոբ 7.Դեմիրչօղլյան Շավարշ 8.Տեր-Գրիգորյան Արարատ 9.Ջոհրաբյան 10.Տեր-Ստեփանյան Սմբատ 11.Թորոսյան Սահակ 12.Էլիբեգյան 13.Սոտնիկյան 14.Թադևոսյան 15.Բաբայան Վարոս *հայ.ժող.կուսակցություն* 1. Առաքելյան Համբ. 2.Գարեգին եպիսկոպոս 3.Մալխասյան Ստ. 4.Հարությունյան Իսահ. Թեկնածուներ 1.Բագրատ եպիսկոպոս 2.Հակոբյան Հակոբ 3. պրոֆ.Հակոբյան
IV.Ճակատի պահպանության և վտանգված վայրերի ապահովության շուրջը Նախ.՝ Ա.Գյուլխանդանյան փ. ն. չունինք Քարտ.՝ Գեորգյան Գեորգ	*սոցիալիստ-հեղափոխական* 1.Տեր-Օհանյան Գ. 2.Թումանյան Լ. 3.Նաջարյան Ա.

Կիրակի, Ազգ.բյուրո ժ. 10-ին երեկոյան Բ նիստ Ա նիստը շաբաթ, ժամը 10-ին	*սոցիալ-դեմոկրատ* 1.Փիրումյան 2.Մալխասյան Աբր. *դաշնակցական* 1.Գյուլխանդանյան Աբր. 2.Դրո 3.Շահմազյան Արսեն 4.Արզումանյան Միշա 5.Փիրուզյան Լևոն 6.Կամսարական Արտ. 7.Մանասյան Սարգիս 8.Տեր-Դավթյան Հովս. 9.Նժդեհ Գարեգին 10.Պետրոսյան Թադևոս 11.Շահինյան Վաղարշակ 12.Այավզյան Ստեփան 13.Աղաջանյան Ար. 14.Տեր-Գրիգորյան Գևորգ 15.Ռուբեն *հայ.ժող.կուսակցություն* 1.Անդրանիկ 2.Ամիրյան 3.բժ.Այվազյան 4.բժ.Զաքարյան 5.Հակոբյան Հակ.
V. Տեղական ազգերի փոխհարաբերության և տեղական իշխանությունը կազմակերպելու հարցերը քննելու համար Նախ.՝ Արարատյան Իսախանյան Քարտ.՝ Գառնիկ Քալաշյան Կիրակի, երեկ. ժ.6-ին *անկուսակցական* Մանանդյան Հ.Տեր-Միքայելյան	*սոցիալիստ-հեղափոխական* 1.Տեր-Պողոսյան Հ. 2.Հովակիմյան 3.Բեգզադյան Ռուբեն 4.Ստեփանյան Հակ. *սոցիալ-դեմոկրատ* 1.Դավիթ Անանուն 2.բժ.Իսախանյան *դաշնակցական* 1.Արարատյան Սարգիս 2.Աղբալյան Նիկոլ 3.Վրացյան Սիմոն 4.Քոչարյան Հակոբ 5.Նավասարդյան Վահան 6.Չիլինգարյան Արտաշ. 7.Չոլախյան 8.Խուդոյան Գեղամ 9.Քալաշյան Գառնիկ 10.Ղազարյան Ա. 11.Աղաջանյան Ա. 12.Դավթյան Ստ.

	13.Մալխազյան Ա. 14.Խատիսյան Գ. 15.Սարգսյան Լ. 16.Տերտերյան *հայ.ժող.կուսակցություն* 1.Սամսոն Հարությունյան 2.Համբ.Առաքելյան 3.Մելիք-Ղարագյոզյան 4.Բորիս Արղության 5.բժ.Զաքարյան 6.Մեսրոպ եպիսկոպոս 7.Չալխուշյան 8.Միքայել Պապաջանյան թեկնածուներ 1.Սարուխանյան 2.Բերբերյան 3.Ամիրյան 4.Աքաբեգյան
VI. Ազգային բյուրոյի դրամական հաշիվ-ները քննելու համար Երկուշաբթի, երեկ. ժ.8-ին, Բյուրո	*սոցիալիստ-հեղափոխական* 1.Հակ.Ստեփանյան 2.Հովակիմյան 3.Ավետիքյան թեկնածու 4.Գյուլումյան *սոցիալ-դեմոկրատ* Ղազարյան Հակ. Սալոմոնյան *դաշնակական* 1.Սողոմոնյան Մովսես 2.Ավետիսյան Մարգ. 3.Մակարյան Արամ *հայ.ժող.կուսակցություն* 1.Կրասիլնիկյան Կոստ. 2.Սարուխանյան Ավ. թեկնածուներ 1.Թերզիբաշյան 2.Աղասարյան 3.Գ.Մելիք-Ղարագյոզյան Քարտուղար Հ.Ստեփանյան

N 30

Սեկցիաների կազմում ընդգրկված սոցիալ-դեմոկրատներ և ս.դ.հնչակյաններ

1. Земство и передель - Ղ.Տեր-Ղազարյան և Մ.Ղարաբեգյան

2. Պարենավորման և գաղթականական խնդիր - Պետրոսյան և Գալիկյան
3. Ազգամիջյան հարաբերությունների և տեղական իշխանությունների հարցեր - Դ.Անանուն և բժ.Իսախանյան
4. Ճակատ և ինքնապաշտպանություն - Փիրումյան և Աբր.Մալխասյան
5. Դպրոցների ազգայնացում - Սուրխաթյան և Սիմ.Հովվեյան
6. [Ազգային] բյուրոյի հաշվետվություն - Ղարաբեգյան և Հակ.Ղազարյան

Գ.17, թ.3:

բ. Համախորհրդակցության նախապատրաստական փուլը

N 31

Թղթակցություն «Արև» թերթում. «Ղրիմի ազգային համագումարը»

30 հունիսի 1917թ.

Սիմֆերոպոլում հուն[իսի] 11-ին, ժամը 12-ին, բացվեց Ղրիմի հայոց համագումարը: Ներկա էին 30 ներկայացուցիչներ բոլոր (12) գաղութներից, բացի Յալթայից և Կարասուբազարից:

Առաջարկվում է այդ համագումարում հայերեն խոսել և ընդունվում է առաջարկը:

Կարդացվում է օրակարգը:

Քննության է առնվում այդ օրակարգի առաջին հարցը՝ Հայաստանի ապագա վիճակը:

Տեղի է ունենում տաք, աղմկահույզ վեճ: Վիճաբանությունից հետո առաջարկվում են մի քանի բանաձևեր: Ընդունվում է բանաձևը, որ ճանաչվի ազգերի ինքնորոշումը, տերիտորիալ ավտոնոմիան: Տաճկահայերը իրենք պիտի դառնան իրենց բախտի տնօրինողները:

Կարճ ընդմիջումից հետո ժողովը, ձայների մեծամասնությամբ, որոշում է Տավրիկյան նահանգների կենտրոնում՝ Սիմֆերոպոլում, բանալ հայկական միջնակարգ դպրոց, որի ծախսերը և նախապատրաստական աշխատանքները հոգալու համար ընտրվում է հանձնաժողով: Միջոցները հայթայթելու համար ընդունվում է Ղրիմի բոլոր գաղութներում հանգանակության բացում:

Ապա քննության է դրվում Տավրիկյան նահանգի հասարակությունների միության խնդիրը: Երկար քննությունից և վիճաբանություններից հետո ընդունվում է հետևյալ բանաձևը.

1. Առաջարկել Տավրիկյան հայ համայնքներին կազմել տեղական ինքնավար մարմիններ, որոնք վարելու են տեղական ազգային գործերը, 2. Հիմնել նահանգական կենտրոնական մարմին Սիմֆերոպոլում՝ բաղկացած բոլոր համայնքների տված համեմատական թվով ներկայացուցիչներից, որ իրավասու է՝ ա. վճռել ընդհանուր նահանգային ազգային բնույթ կրող գործերը և բ.սերտ ու ներդաշնակ կապ պահպանել ինչպես Կովկասի, այնպես և ուրիշ հեռավոր հայ գաղութների համայնական մարմինների հետ:

Առաջարկվում է նախկան կենտր[ոնական] մարմնի կազմավորվելը, ունենալ ժամանակավոր կենտր[ոնական] մարմին, որ բաղկացած լինի Ղրիմի բոլոր հայ գաղութների տված համեմատական թվով ներկայացուցիչներից (ընդամենը 22 հոգի): Առաջարկությունն ընդունվում է և պարտականություն է դրվում համագումարի նախագահի և տիկ. Գրեկյանի վրա այդ մարմինը հրավիրել մինչև հունիսի 5-ը:

Խորհրդակցության է դրվում կենտր[ոնական] պատգամավոր[ներ]ի ընտրությունները ռուսահայ համագումարի համար: Պրն. Ս.Թամրազյանն առաջարկում է պատգամավորների ընտրությունը անպայման հետաձգել, պատճառաբանելով՝ ա. ռուսահայ համ[ագումար]ին պիտի մասնակցեն միայն ռուսահայերը, հետևապես և տաճկահայերը չեն կարող ընտրել կամ ընտրվել, մինչդեռ նրանք սույն ժողովին մասնակցում են, բ. դա կլինի երկաստիճանի, անուղղակի ընտրություն, մինչդեռ պետք է լինի ուղղակի: Առաջարկն ընդունվում է և ընտրությունն հետաձգվում է, միայն ընտրվում է մի միջկուսակցական մարմին՝ ղեկավարելու համար ընտրությունները:

Քննության դրվելով օրակարգի վերջին կետը, որոշվում է կազմել Ղրիմի ամբողջ հայության մանրամասն վիճակագրությունը: Պատգամավոր Ցուզանյանը կարդում է իր կազմած վիճակագրության ձևը, որ ընդունվում է լրացումներով: Որոշվում է շուտով տպագրության տալ վիճակագրային թերթիկները, որի համար ընտրվում է երկու հոգի:

Օրակարգի հարցերը սպառելով, գիշերվա ժ.11-ին, պատգամավորներից շատերը ցանկանում են հեռանալ: Որոշվում է շտապողականությամբ քննության առնել հասարակությունների կողմից դնելիք հարցերը: Ժամանակի սղության պատճառով շատերը հրաժարվում են: Պատգամավոր Թամրազյանը բողոքում է, որ համագումարը դրվելով նեղ շրջանակի մեջ, զբաղվեց կազմակերպիչ բյուրոյի աղքատ օրակարգով, իսկ Ղրիմի բոլոր համայնքների դնելիք հարցերն արհամարհվեցին: Կերչի պատգամավորն է միայն դնում իր համայնքի հարցերը, որոնք, 2-րդական լինելով, չեն ընդունվում:

Օն.Անոփյան կարդում է իր պատրաստած բանաձևը, որով համագումարը պահանջում է, որ թուրք արյունախում կառավարությունից պահանջվի հայ ժողովրդի արյան հատուցումը. միաձայն ընդունվում է [առաջարկությունը] և մտցվում արձանագրության մեջ:

Համագումարը չունեցավ իր սպասած հաջողությունը, շնորհիվ կղերաեան, անգույն, պահպանողական, անսկզբունք և անձնական հաշիվներից ու եսասիրությունից կուրացած կղերամիտ պատգամավորների:

Ս.Ս.Թանատոս
Ղրիմ

«Արև», 30.06.1917:

N 32

Հոդված «Արև» թերթում. «Ռուսահայ համագումարի շուրջ»

1 օգոստոսի 1917թ.

Ռուսահայ համագումարի կազմակերպիչ միջկուսակցական խորհուրդը իր հուլիսի 29-ի հայտարարությամբ ծանուցանում է ի գիտություն հայ հասարակության, որ Ռուսահայ համագումարը տեղի է ունենալու Թիֆլիսում, օգոստոսի 20-ին: Ընտրությունները պիտի կատարվեն ամենուրեք՝ թե՛ քաղաքներում և թե՛ գյուղերում՝ օգոստոսի 6-ին:

Թիֆլիսի ընտրական շրջանի համար ՀՀ Դաշնակցությունը առաջարկել է 40 պատվիրակների ցանկ:

Միջկուսակցական Թիֆլիսի խորհրդակցությունը զանազան շրջաններից հեռագիրներ և նամակներ է ստացել, համաձայն որոնց՝ ազգային համագումարի աշխատանքներն առաջ են տարվում կանոնավոր կերպով և նշանակված օրը,

օգոստոսի 6-ին, պիտի կատարվեն ընտրությունները: Երևանի շրջանի միջկուսակցական խորհրդակցությունը տպագրել է տվել և Թիֆլիս ուղարկել կուսակցությունների կողմից այդ շրջանի համար առաջադրված թեկնածուների ցանկեր:

ՀՀ Դաշնակցության ցանկը պարունակում է 46 անուն, սոց.-հեղափոխականների ցուցակը՝ վեց անուն, սոց.-դեմոկրատների և հնչակյանների միացյալ ցուցակը՝ 19 անուն:

Գանձակի, Ալեքսանդրապոլի և Բեսարաբիայի շրջաններից ևս տեղեկություններ են ստացված, որ այդ շրջաններում ևս արդեն կազմված ու ներկայացված են թեկնածուների ցուցակներ՝ կուսակցությունների կողմից:

Բուն ընտրություններն ամենուրեք (օգոստոսի 6-ին) կատարվել են ընտրաթերթիկների (բյուլետեն) հանձնումով, որը տպագրել են տվել կուսակցությունները և ցրել շրջանները:

Միջկուսակցական խորհրդի դիվանը Թիֆլիսի ընտրական շրջանի համար պատգամավորների ցուցակներ է ստացել նաև Հայ ժողովրդական կուսակցության բյուրոյի կողմից, որ ամփոփում է 25 անուն և սոց.-դեմոկրատ Հնչակյան կուսակցության կողմից, որ ամփոփում է ինն անուն:

Թիֆլիսի շրջանի ընտրական հանձնաժողովը՝ Թիֆլիսի շրջանի մեջ մտնող ընտրական գլխավոր վայրերի համար շրջանային հանձնաժողովներ կազմելով, ինչպես, օրինակ, Ախալցխայում, Գորում, Սղնախում, Թելավում, Ախալքալակում և Շուլավերում (Բորչալուի գավառ), ուղարկել է հարկավոր հրահանգներ օգոստոսի 6-ին կայանալիք ընտրությունների համար:

Իսկ ի՞նչ է արել այս տեսակետից Բագվի՝ Ազգային համագումարի ընտրությունների կազմակերպման գործը իր վրա վերցրած Ժամանակավոր խորհուրդը իր գործադիր մարմնի հետ միասին: Համարյա՝ ոչինչ: Գիտենք միայն, որ շաբաթներ առաջ քաղաքը բաժանվել էր 14 ընտրական շրջանների և որոշել ընտրությունները կատարել այն ձևով, ինչ ձևով կատարված էին վերջերս քաղաքի պարենավորման մարմինների ընտրությունները: Այսպես էր վարվում այն պատճառով, որ հնարավորություն չկա առայժմ ընտրողների կանոնավոր ցուցակներ ունենալ և մյուս կողմից՝ ցանկություն կար ընտրություններին մասնակից անելու շրջանի հայ ազգաբնակության հոծ բազմությունը, որպեսզի գումարվելիք Ազգային համագումարը հնարավորության սահմաններում արտահայտիչ լինի հայ հասարակության լայն խավերին:

Գիտենք նաև, որ գավառի նկատմամբ որոշել էր ընտրությունները ղեկավարելու գործը հանձնել տեղիս հայրենակցական միություններից ընտրված միջկուսակցական խմբերին: Սակայն գործնական քայլեր թե՛ քաղաքի և թե՛ գավառի նկատմամբ՝ որոշումներն իրագործելու համար, չկան հրապարակի վրա:

Մինչդեռ դրա հետ ակնհայտ է Ժամանակավոր խորհրդի ձգձգման քաղաքականությունը- որքան կարելի է անորոշ ժամանակի թողնել իսկական համագումարի գումարումը և նրան փոխարինել առայժմ Մոսկվայի «հայտնի» առաջարկի համաձայն կուլտուրական-հասարակական խմբակցությունների և քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների (նախկին ռեժիմին հատուկ) խորհրդակցական համագումարով, որը, ոմանց կարծիքով, կարող է վճռական ձայն ունենալ:

Այս մտքով էլ խորհուրդը իր վերջին նիստում, մեծամասնության որոշումով, երկրորդ անգամ հետաձգման առաջարկ է անում Թիֆլիսի կենտրոնական խորհրդին: Սակայն Թիֆլիսի խորհուրդը մինչև օրս ոչ մի պատասխան չի ուղարկել. նշանակում է՝ օգոստոսի 6-ին ընտրություններ կատարելու հրահանգը մնում է յուր ուժի մեջ: Այդ երևում է նաև այն տեղեկություններից, որ հառաջ բերինք մեր հոդվածի սկզբում:

Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ հայ ժողովրդի լայն խավերի կողմից քառանդամ սիստեմով ընտրված ժողովրդական ներկայացուցչության կարիքը, ռուսահայերիս համար, և՛ այժմեական է, և՛ անհրաժեշտ, բացի այդ՝ խոշոր դեր ունի կատարելու ներկա ծանր ու մտահոգիչ վայրում:

Ի նկատի ունենալով նաև այն, որ Ռուսաստանի համարյա բոլոր հայաշատ վայրերում արդեն որոշ ընտրական աշխատանքներ են թափված և օգոստոսի 6-ին, հրամանագրի համաձայն, ամենուրեք կատարվելու են այդ ընտրությունները՝ մնում են տեղիս Ժամանակավոր խորհրդին, որն իր վրա է վերցրել Բագու շրջանի ընտրություններ կազմակերպելու գործը, ընթացք տալ գործին, գործնական քայլեր անել, ընտրությունների գործը կազմակերպել և հնարավորություն տալ ընտրող հայ ազգաբնակությանը ձայն տալու իր թեկնածուների համագումարի համար:

Ար.Մեհրաբյան

«Արև», 01.08.1917:

N 33

Թղթակցություն «Արև» թերթում՝ Ազգային համախորհրդակցության նկատմամբ Ռոստով-Նախիջևանի հայության վերաբերմունքի մասին

8 օգոստոսի 1917թ.

Հայ գաղութներ: Ազգային համագումարը և տեղիս հայությունը:

Ռոստով-Նախիջևան, 27 հուլիսի: Մենք գտնվում ենք Ռուսահայոց Ազգային համագումարի ընտրությունների նախօրյակին: Այդ համագումարը հայ ժողովրդի ապագա բաղդը որոշող հեղինակավոր մի մարմին է և նրա դեմոկրատիկ ընտրությունը պիտի անթերի լինի և հայ հասարակության կողմից ոչ մի ջանք չպիտի խնայվի դրա համար: Մեր հասարակական, անհատական ուժերի արտակարգ լարումով պիտի հաջողեցնել, որ այդ համաժողովը ներկայացնի հայության բովանդակ կամքը և ներկայանա Սահմանադիր ժողովին ու առաջադրե այն քաղաքական և տնտեսական պահանջները, որոնք կազմում են հայ ժողովրդի ջերմ ցանկությունը:

Ահա այս աստիճան կենսական արժեք ունեցող համագումարի ընտրությունը բախվում է Ռոստով-Նախիջևանի հայ հասարակության անհետաքրքիր և բառիս բուն նշանակությամբ, իներտ վերաբերմունքին, մի վերնաբերմունք, որ միանգամայն դատապարտելի է և անորակելի:

Ռոստովում և Նախիջևանում կազմված միջկուսակցական հանձնաժողովներն ևս իրենց թույլ և դանդաղ գործունեությամբ գալիս են ավելի ևս նպաստելու այս վատ կացության:

Բացի այդ, մինչև այժմ նախընտրական պատրաստություններ շատ քիչ տեսնված և ընտրությանց առթիվ դեռ ոչ մի միտինգ կամ դասախոսություն տեղի չէ ունեցել, եթե սրա վրա ավելացնենք հայկական տպարանների փակումը, որով տուժում է պրոպագանդի գործը, պյատկերը լրիվ կլինի:

Հայտարարություններ են տրվում ռուսերեն թերթին, սակայն ոչ ոք չի բարեհաճում անձամբ գնալ և արձանագրել: Միայն մի քանի գյուղեր են կազմակերպվել, այն էլ հապճեպ և ոչ հիմնական կերպով:

Բարեբախտաբար, հայ տպարանը վերսկսելու է շուտով իր աշխատանքը: Մեր կազմակերպությունները շարժման մեջ դնեն հասարակական ուժերը, կազմակերպեն դասախոսություններ և միտինգներ համագումարի նշանակությունը և

նրա օրակարգի խնդիրները լուսաբանելու նպատակով, միջկուսակցական հանձնաժողովներ ստեղծեն, ընտրողների ցանկը շուտով լրացնեն և որոշված օրին, շրջանների բաժանելով՝ կանոնավոր կերպով ընտությանց ձեռնարկեն, քանի որ ժամանակը սուղ է:

Ահա այս բոլորը անհրաժեշտորեն շուտով պետք է իրագործել, որպեսզի ընտրությունները պատահական և հապճեպ բնույթ չստանան և չշեղվեն դեմոկրատիկ սկզբունքներից:

Վ.Ավագյան

«Արև», 08.08.1917:

N 34

Հաղորդագրություն «Մշակ» թերթում Միջկուսակցական խորհրդակցության հերթական նիստի մասին

4 սեպտեմբերի 1917թ.

Միջկուսակցական խորհրդակցությունը (որ նշանակված էր կիրակի, սեպտեմբերի 3-ին, և չկայացավ) կայացավ երկուշաբթի օրը, սեպտեմբերի 4-ին, երեկոյան ժամը 6-ին, Հ.Առաքելյանի նախագահությամբ և մասնակցությամբ կուսակցությունների ներկայացուցիչների հետևյալ անձանց. Տ.Բեգզադյանի, Ալ.Խատիսյանի, պրոֆ. Ադոնցի, Ստ.Մամիկոնյանի, Ս.Տիգրանյանի, Մ.Բերբերյանի և Գ.Տեր-Պետրոսյանի:

Նախագահը հայտնեց, որ այս նիստում պետք է վերջնականապես լուծվի ազգային համագումար հրավիրելու հարցը ինչպես և Բագվի, Մոսկվայի կոմիտեներից և Կիսլովոդսկի հայ համայնքից ստացված առաջարկները անհապաղ գումարել մի նախապատրաստական ժողով կամ համախորհրդակցություն՝ մինչև Ազգային համագումար կայանալը:

Ալ.Խատիսյանը հաղորդելով տեղեկություններ Կիսլովոդսկում կայացած ժողովի որոշման մասին՝ բացատրեց, որ անհրաժեշտություն անհապաղ մի խորհրդակցություն գումարելը, որ կքննե որպեի հետ կապված հարցերը և մի քանի անհետաձգելի որոշումներ կանե ու կընտրե ժամանակավոր կենտրոնական մարմին՝ ազգային գործերը վարելու մինչև իսկական հայկական հիմնադիր ժողովի կայանալը: Կարդացվեց Բագվի առաջարկը: Հաջորդաբար արտահայտվցին Ա.Երզնկյան, բժ.Բաբալյան, Ստ.Մամիկոնյան, Ս.Տիգրանյան, Ս.Մալխասյան, Ալ.Խատիսյան,Գ.Տեր-Պետրոսյան, Ս.Բերբերյան, Տ.Բեգզադյան: Ժողովը միաձայն եկավ այն զրակացության, որ անհրաժեշտ է ազգային խորհրդակցության գումարումը: Որոշվեց գումարել խորհրդակցությունը Թիֆլիսում, սեպտեմբերի 27-ին, հրավիրելով բոլոր կուսակցություններից, հոսանքներից, դասակարգերից, կուլտուրական-կրթական հասարակական հիմնարկություններից, ինչպես և գյուղացիական, բանվորական, զինվորական, երկրային կենտրոններից, ներկայացուցիչներ, թվով ընդամենը ոչ ավելի քան 120 ներկայացուցիչ: Կազմը որոշելու համար ընտրվեց մի մասնաժողով: Ապա որոշվեց, որ խորհրդակցությունը զբաղվե որպեի հետ կապված հարցերի քննությամբ և կայացնե անհետաձգելի որոշումներ, ընտրելու և մի կենտրոնական ժամ[անակավոր] մարմին՝ իրագործելու այդ որոշումները և վարելու ազգային գործերը մինչև հիմնադիր ժողովը: Հետևաբար, ինչպես հայտնեցինք, ազգային խորհրդակցությունը կկայանա սեպտեմբերի 27-30-ին և միջկուսակցական մարմինն այսօր իսկ կուղարկե հեռագրով հրավերներ, համաձայն կազմված ցուցակի, պատգամավորներ ընտրելու և ուղարկելու:

«Մշակ», 06.09.1917:

N 35

Հաղորդագրություն «Արև» թերթում Ազգային համախորհրդակցություն հրավիրելու անհրաժեշտության մասին

15 սեպտեմբերի 1917թ.

Ազգային խորհրդակցություն

Թիֆլիսի միջկուսակցական մարմինը, մասնակցությամբ Ազգային բյուրոյի պրեզիդիումի և Պետրոգրադի ու Մոսկվայի կոմիտեների նախագահների՝ պ.պ. Ադոնցի և մամիկոնյանի՝ սեպտեմբերի 6-ի նիստում որոշեց մինչև ազգային համագումարի կայացնելը, անմիջապես հրավիրել Ազգային խորհրդակցություն սեպտեմբերի 27-ին Թիֆլիսում:

Նույն մարմինը որոշեց խորհրդակցության կազմը և ընտրեց հատուկ կազմակերպիչ մարմին, որը պիտի զբաղվի խորհրդակցության նախապատրաստական աշխատանքներով:

Խորհրդակցությանը մասնակցում են՝ Գյուղացիական կենտրոնական խորհրդի հայ անդամները, Բանվորական կենտրոնի հայ անդամները, Զինվորական խորհրդի հայ անդամները, Շրջանային գյուղացիական խորհուրդների ու Միությունների ներկայացուցիչները, կոոպերատիվ միությունների ներկայաուցիչները, զանազան քաղաքաների համայնքների ներկայացուցիչները, հայ վճռականությանց և արդյունաբերության ներկայացուցիչները, թուրքահայերի ներկայացուցիչները, Պետական դումայի բոլոր կողմերի հայ անդամները և հայ խմբապետները Ընդհանուր թիվը բոլոր մասնակցողների հասնում է 170-ի: Մանրամասն ձայների բաշխումը պաշտոնապես կհայտնվի կազմակերպիչ բյուրոյի կողմից, թե լրագիրներում և թե առանձին հիմնարկություններին:

«Արև», 15.09.1917:

N 36

Թղթակցություն «Արև» թերթում՝ առաջիկա ազգային համագումարի նկատմամբ Ղզլարի հայ հասարակության վերաբերմունքի մասին

10 օգոստոսի 1917թ.
Ղզլար

Ղզլարի հայ հասարակության շրջանում Ազգային համագումարի ընտրությունները մեծ հետաքրքրություն առաջ բերին: Տեղիս միջկուսակցական մարմինը ամսիս 4-ին հրավիրեց ընդհանուր ժողով, որտեղ կուսակցությունների Ազգային համագումարի օրակարգի վերաբերմամբ իրենց տեսակետը պիտի պարզաբանեին: Ժողովը բազմամարդ էր: Միջկուսակցական մարմնի նախագահը՝ պ.Շարաբյանը, բաց անելով ժողովը, բացատրում է Ազգային համագումարի նշանակությունը հայ ժողովրդի համար, որից հետո նախագահ է ընտրվում պ.Մեհրաբյանը (քաղաքագլուխ): Խոսքը տրվում էկուսակցությունների ներկայացուցիչներին, բայց նրանցից և ոչ մեկն էլ դուրս չի գալիս: Հարցը պարզվում է

այն ժամանակ, երբ դաշնակցության ներկայացուցիչը ցանկություն է հայտնում լսելու նախ նորակազմ ժողովրդական կուսակցության կարծիքը համագումարի նկատմամբ և ապա երկու մնացորդ կուսակցությունները (սոցիալ-դեմկրատական) և դաշնակցությունը) կպարզաբանեն իրենց հանրածանոթ վաղուց արդեն մշակված տեսակետները: Այնուամենայնիվ, Ժողովրդական կուսակցությունը քաջություն չի ունեցել առաջինը դուրս գալու: Այնուհետև խոսում է ս.-դեմոկր. ներկայացուցիչ Պոպովյանը (ռուսերեն լեզվով), ապա՝ դաշնակցության ներկայացուցիչը՝ Նուրիջանյանը և հետո արդեն Ժողովրդական կուսակցության պրն. ատամնաբույժ Գյուրջյանը և ք[ահանա] Տեր-Վահանը:

Երկու վերջին խոսողները ժողովրդական կուսակցության կողմից ամեն բան խոսեցին, բայց համագումարի վերաբերմամբ՝ շատ քիչ բան: Պ.Գյուրջյանը իր «սրտառուչ խոսքերը» (ոչ ճառը, որովհետև ինչպես ինքը հայտարարեց, հեռետոր չէ) ուղղեց հայ ազգային, քննադատեց նրան, պխարակեց թե՛ նրան և թե՛ իրեն և ի վերջո, դատապարտելով դասակարգային շերտավորումը հայ ժողովրդի մեջ, հորդորեց նրան «չշերտավորվել» (՞), այլ միանալ, պաշտպանել եկեղեցին, նրա կալվածները (հակառակ դաշնակցականների) և այլ միջնադարյան մտքեր... նույն ուղղությամբ, բայց ավելի մանրամասնորեն, խոսեց Տեր-Վահանը, կարդալով միաժամանակ Հայ ժողովրդական ծրագիրը:

Անշուշտ, ցանկալի է Ղզլարի պես մի քաղաքում որտեղ հայ ունևոր դասակարգը պատկառելի թիվ է կազմում, Ժողովրդական կուսակցության ասպարեզ իջնելը: Բայց թող նա պարզե իր իսկական դեմքը, և Ժողովրդական կուսակցությունը այս ժողովում ինքը իրեն մերկացրեց և հազիվ թե կարողանա նորից համադասակարգային «անկուսակցական» քողով ծածկվել: Թե՛ ծրագիրը, և թե՛ Ժողովրդական կուսակցության ներկայացուցիչների կարծիքները անողոք քննադատության ենթարկվեցին: Ժողովը ցրվեց կես գիշերին բարձր տրամադրության տակ:

Հետևյալ օրը հեռագիր է ստացվում, որ ընտրությունները հետաձգված են: Այս լուրը ճնշիչ տպավորություն թողեց բոլոր քաղաքացիների և, նամանավանդ, կուսակցությունների վրա, որոնք ահագին աշխատանք և ծախք էին թափել այդ ուղղությամբ: Այնուամենայնիվ, մոտակա հայ գյուղում ընտրություններ կայացել են այդ լուրը ուշանալու պատճառով: Դաշնակցական ցուցակը ստանում է 146 ձայն, 4 դ[եմ], 1 ձ[ձեռնպահ] և կադետներինը՝ 14 ձ[այն]:

Նույն օրը, օգոստոսի 5-ին, դաշնակցական տեղական կոմիտեն Ազգային հարցի առթիվ հրավիրված է միտինգ եկեղեցու բակում: Ներկա էին մոտ 200-300 ընկերներ և համակիրներ: Խոսեցին Նուրիջանյանը և Բաղդասարյանը: Ժողովականներից դժգոհություն հայտնեցին համագումարի ընտրությունները հետաձգելու առթիվ:

Ամսույս 8-ին, երեկոյան, բազմաթիվ դաշնակցական ընկերների ներկայությամբ կազմվում է քաղաքային Դումայի համար թեկնածուներ վեջնական ցուցակը՝ 10 հոգուց բաղկացած, որոնց թվում է մի սոցիալիստ] հեղափոխական՝ Օհանյան:

Վերջնականապես բլոկ է կազմված քաղաքի ծառայողների արհեստակցական միության հետ:

Բացի այդ բլոկից, գոյություն ունի նաև մի ուրիշ բլոկ՝ բ[անվորների], զ[ինվորների] և գյուղ[ացիների] խորհրդի և տեղույս մահմեդական կոմիտեի միջև: Բ[անվորների], զ[ինվորների] և գյուղ[ացիների] խորհուրդը քանիցս անգամ դիմել է մեզ բլոկի մեջ մտնելու, բայց մեր կարծիքը նույնն է, որ խորհուրդը իբրև այդպիսին, իրավունք չունի առանձին ցուցակով դուրս գալու և նամանավանդ բլոկի մեջ մտնելու:

Ամսույս 10-ին տեղական կոմիտեն, ի պատասխան դաշնակցական կոմիտեին՝ բլոկի առթիվ եղած պաշտոնական դիմումին, խորհրդին ուղղեց հետևյալ

բովանդակությամբ մի գրություն.- Տեղական կոմիտեն, քննելով ձեր խորհրդի առաջարկությունը բլոկի առթիվ, որոշեց՝ Խորհուրդը, ինչպես իշխանության ներկայացուցիչը տեղում, չի կարող առանձին ցուցակով դուրս գալ ընտրություններին և բլոկ կազմել: Իսկ եթե այդ առաջարկությունը արված է Խորհրդի որոշ անդամների կողմից, որպեսզի որոշ ցանկալի թեկնածուներ մտցնել կուսակցության ցուցակի մեջ, տեղական կոմիտեն, սկզբունքով հակառակ չլինելով դրան, առաջարկում է այդ անձանց ցուցակը ներկայացնել իրեն, որպեսզի կուսակցությունը պարզե իր վերաբերմունքը դեպի այդ ցուցակը:

Պատասխանը դեռ չի ստացված:

Կիրակի օրը, առավոտյան, նշանակված է միտինգ, որտեղ մեր պլատֆորմայի մասին պիտի խոսացվի: Նույն օրը երեկոյան պիտի լինի դակլադ ռուսերեն լեզվով դաշնակցության ծրագրի մասին ուպրավայում:

Ավիս[1]

«Արև», 18.08.1917:

N 37

Խմբագրական հոդված ՌՍԴԲԿ Շուշվա կոմիտեի օրգան «Նեցուկ» թերթում. «Ազգային համախորհրդակցությունը»

28 սեպտեմբերի 1917թ.
Շուշի

Հայտնի է, որ ռուս համաձայնողականների իմաստուն քաղաքականությունը՝ ձգձգելով Հիմնադիր ժողովի գումարումը՝ շտապեց կյանքի կոչել դրա փոխարեն Մոսկվայի տխրահռչակ խորհրդակցությունը: Այժմ դրանց փայլուն օրինակից թև առած Ռուսահայոց համագումարի կազմակերպիչ մարմինը, մոռացության տալով իր գոյության նախնական նպատակը, հայոց «կենդանի ուժերի» հավաքույթ է ստեղծում, կազմակերպում «Ազգային համախորհրդակցություն»: Ամիսներ առաջ հայ քաղքենության բերան «Հորիզոնը» գրում էր. «Եթե համագումարը հետաձգողները նպատակ ունին առհասարակ հրաժարվել դեմոկրատիկ ընտրություններից և դարձյալ հրավիրել իրանց սիրած ձևով՝ ազգային երևելիներից բաղկացած խորհրդաժողով և համագումարի սուրագատով յոլա գնալ, նրանք սխալվում են: Ներկա ազատ կարգերում հայ ժողովուրդը այդպիսի քայլ թույլ չի տալ: Մեզ համար երկու կարծիք չկա, ազգային համագումարը պետք է կազմված լինի դեմոկրատիկ սկզբունքով, հակառակ դեպքում նա ավելորդ է» («Հորիզոն», N 163): Ժամանակները փոխվել են ըսի երևույթին և դրա հետ միասին նաև «Հորիզոն» կարծիքը «հայ ժողովրդի» մասին: Մեծ-մեծ խոսքերը մանր քայլերին հարմարեցնելով՝ «Հորիզոնն» այսօր իր լայն էջերն է բացել Համախորհրդակցության երկարաշունչ հրավիրաթղթի առաջ: «Հորիզոնն» երեկ այնքան էր դեմոկրատիկ, այսօր՝ այսքան: Չէ՞ որ խորհրդաժողովի «ազգային երևելիները» նախ և առաջ Դաշնակցության երևելիներն են լինելու:

Թե ի՞նչ հարցերի մասին կամ ու՞մ պիտի «խորհուրդներ» տա համախորհրդակցությունը՝ պարզ չէ միանգամայն: Պետք է ենթադրել, որ քննության պիտի առնվեն Ռուսահայոց համագումարի օրակարգում նշանակված հարցերը: Սակայն, եթե այդ օրակարգի սահմաններում Համագումարը դեկլարատիվ բնույթ միայն կարող էր ունենալ, ապա Համախորհրդակցությունը, զուրկ լինելով Համագումարի իրավասությունից, չի կարող նույնիսկ այդ նեղ շրջանակի մեջ լինել «ազգային կամքի» արտահայտիչ:

Համախորհրդակցության մեջ տեղ են գտնելու ազգային դասակարգերի, հիմնարկությունների, միությունների ներկայացուցիչների և հոսանքների պատվիրակները՝ համաձայն իրանց «ազգային կշռի և նշանակության»: Եվ չնայած դրան Ազգային համախորհրդակցությունը ոչ միայն կրելու է հակադեմոկրատական, այլև, ինչպես դաշնակցություններն են սիրում արտահայտվել՝ «ապազգային» բնույթ:

Այսպես, օրինակ, հայ դեմոկրատիան Համախորհրդակցության մեջ ներկայացված պիտի լինի Անդրկովկասի Բ.,Զ. և Դ. Երկրային կենտրոնի հայ անդամների, քաղաքային ինքնավարությունների «հայկական ֆրակցիաների» և, կազմակերպողների կարծիքով, գուցե նաև... Պետական դումայի բոլոր չորս կազմերի հայ անդամների միջոցով: Եթե ընդունելու լինենք, որ բոլոր այս պատվիրակները անխտիր դեմոկրատիայի ներկայացուցիչներ են, հարց է առաջանում, կարո՞ղ են, արդյոք, նկատվել դրանք որպես հայ դեմոկրատիայի ներկայացուցիչներ: Ո՞վ ասաց, որ երկրային կենտրոնի, քաղաքային ինքնավարությունների կամ Պետական դումաների հայ անդամներն անպայման հայերից են ընտրված: Կարո՞ղ են, արդյոք, մի Աճեմյան, մի Արշ.Զուրաբյան կամ մի իշխ.Արղության նկատվել ներկա դեպքում որպես հայ դեմոկրատիայի ներկայացուցիչներ: Կարող է, իհարկե, պատահել, որ քաղաքային ինքնավարությունների մեջ սոց-հեղ. և սոց.-դեմ. ներկայացուցիչներն անցած լինեն նաև հայ դեմոկրատիայի ձայներով: Սակայն որտեղի՞ց է հայտնի, որ նարնք մտնում են այդտեղ «հայկական ֆրակցիաների» մեջ: Պարզ չէ՞, արդյոք, որ կազմակերպչական մարմնի պահանջին բավարարել կարող է միայն քաղաքային ինքնավարությունների հայ նացիոնալիստական բլոկը, այսինքն՝ հայերի հակադեմոկրատական հատվածը:

Համախորհրդակցության մեջ հայ գյուղական դեմոկրատիան ներկայացվելու է գյուղացիական միությունների պատվիրակներով: Ի՞նչ են ներկայացնում այդ միությունները: Հետաքրքրվողները թող կարդան այդ մասին մեր թերթի այսօրվա համարում զետեղված ընկ. Մ.Եսայանի հոդվածը: Բավական է այնուհետև աչքի տակով անցկացնել Համախորհրդակցությանը մասնակցող մյուս հիմնարկությունների, ընկերությունների, կուսակցությունների և անձնավորությունների ցանկը, որպեսզի պարզ լինի, որ դա այլ ինչ չէ, քան հայ կղերականության, վաճառականության և մանր բուրժուազիայի ներկայացուցչություն: Արդյո՞ք ժողովում հաղթող կլինի հայ ծխականությունը՝ հանձին իր պահպանողական և լիբերալ ներկայացուցիչների, թե հայ քաղքենությունը՝ հանձին Դաշնակցության ղեկավարների ու խմբապետների՝ մեզ համար միևնույն է: Թե՛ մեկը, թե՛ մյուսը մի մի փորձանք են այն ժողովրդի համար, որի անունը նրանք պիտի շահագործեն Համախորհրդակցության մեջ:

Այդ մանրամասնությունները չեն, որ պետք է ետ կանգնեցնեն Համախորհրդակցությունից հետևողական սոցիալիստներին: Չենք կասկածում, որ մենշևիկները և էսերները և նրանց հետ միասին հայերի «հավաքական զորության» իդեոլոգները՝ ազգային ս.-դ.-ները՝ պիտի շտապեն օգտագործել իրենց արված շնորհը: Սակայն համոզված ենք, որ այդ շնորհը արհամարհանքով ետ պիտի մղեն մեր ընկերները՝ հայ բոլշևիկները: Հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան չի կարող ժամավաճառ լինել մի խորհրդակցության մեջ, որի նպատակն է ի մի խմբել անպատասխանատու տարրերին և հանուն հայ ժողովրդի՝ «համաձայնություն» կնքել ինչ-ինչ մութ ու պղտոր խնդիրների շուրջ: Նրանք չեն կարող և ոչ մի խնդրում համերաշխ լինել ո՛չ հայ կաթողիկոսի, ո՛չ հայ վաճառականության, ո՛չ հայ խմբապետների և ո՛չ իսկ հայ «սոցիալիստների» հետ: Մեր ընկերները պետք է բոյկոտի ենթարկեն Ազգային համախորհրդակցությունը և մերկացնեն հայ բանվորության առաջ ազգային այդ կատակերգության հակաժողովրդական բովանդակությունը:

Ներհակ*

«Նեցուկ», 28.09.1917:

N 38

Թղթակցություն «Արև» թերթում՝ Ալեքսանդրապոլում կայացած Ազգային համախորհրդակցության պատգամավորների ընտրության արդյունքների մասին

28 սեպտեմբերի 1917թ.

Ալեք.-պոլ, 19 սեպտեմբերի [1917] - [Քաղաքային] դումայի նիստը փակվելուց հետո նախագահը հայտարարում է հայ ձայնավորներին չցրվել, այլ մնալ և հրահանգի համաձայն չորս ներկայացուցիչ ընտրել Ազգային խորհրդակցության համար:

Բոլշևիկ ֆրակցիայի լիդերն ասում է, որ եթե ընտրությունն որևէ կերպ կապ ունի դումայի հետ, ապա պիտի մասնակցեն դումայի բոլոր ձայնավորները՝ առանց ազգի խտրության: Նրան պատասխանում են, որ Թիֆլիսի խորհրդակցությունն ազգային է, հետևաբար ոչ հայերը չեն կարող մասնակցել նրան ընտրությունների կամ այլ միջոցով: Բոլշևիկը համառում է: Ստիպված կարդում են միջկուսակցական բյուրոյի գրությունը՝ ուղղված դումայի հայ ձայնավորներին ու մյուս օտարազգի ձայնավորները թողնում են դահլիճը:

Տեղի է ունենում խորհրդակցություն ընտրությունների շուրջ: Նկատվում է երկու հոսանք: Մի մասը, գլխավորապես էսերները, գտնում են, որ գնացող պատգամավորները պիտի լինեն դումայի կուսակցությունների արտահայտիչը:

Մյուս մասը, որ և ջախջախիչ մեծամասնություն է կազմում, պատասխանում է նրանց.- Կուսակցությունները, իբրև կուսակցություն, արդեն միջկուսակցական բյուրոյի հրավերով ունեն իրենց արտահայտիչը խորհրդակցության մեջ: Ընտրող պատգամավորները պիտի լինեն այս կամ այն հոսանքի ներկայացուցիչը: Եվ որովհետև ներկա դեպքում՝ միայն Ալեքսանդրապոլում, բացի դաշնակցությունից մյուս քաղաքական կուսակցությունները չունեն հայ մասսա, հետևաբար և նրանք չեն կարող, իբրև այդպիսին, ներկայացված լինել խորհրդակցության մեջ: Մյուս կողմից - բյուրոյի հրահանգը չի տրամադրում ընտրությունները կատարել ըստ կուսակցությունների: Նա ուղղված է դումայի բոլոր հայ ձայնավորներին անխտիր ու նրանց բոլորից էլ պատգամավորներ է պահանջում:

Չնայած դրան, երկրորդ հոսանքը զիջում է անում առաջիններին, հավատարիմ մնալով այն սկզբունքին, որ կիրառվում է դումայում բոլոր ընտրությունների ժամանակ: Դումայի տեր-ֆրակցիան Դաշնակցությունն է, որը դումայական բոլոր ընտրությունների ժամանակ, հարգելով մյուս կուսակցությունների հետ համերաշխ գործելու սկզբունքը, տեղ է տալիս նրանց. համաձայն նրանց թվական համեմատության ներկա դեպքում էլ վարվում է նույն ձևով, Ազգային խորհրդակցության մեջ ունեցած չորս տեղերից մեկը զիջում է մյուսներին: Այսպիսով, միաձայն ընտրվում են. ընկ. Նավասարդյան, բժ. Տերտերյան և բժ. Ղազարյան՝ Դաշնակցությունից և Տեր-Գասպարյան՝ էսերներից:

Ալեքսանդրապոլը Ազգային խորհրդակցության մեջ ունի ութ ձայն, 4-ը՝ քաղաքային դումայի հայ ձայնավորներից, 1-ը՝ գավառի կոոպերատիվների միությունից, 1-ը՝ Արղության օր[հորդաց] դպրոցից, երկու հոգի էլ գավառի գյուղացիական միությունից:

* Տե՛ս N 19 ծանոթագրությունը:

Այժմ ընտրված են, բացի վերոհիշյալ չորս հոգուց, ընկ. Հ. Տեր-Հակոբյան՝ գավառի կոոպերատիվ ընկերությունների «Շիրակ» միության կողմից և ընկ. Մ.Տեր-Աբրահամյան՝ Արղության դպրոցից:

Իրազեկ

«Արև», 28.09.1917:

N 39

Խմբագրական հոդված «Հորիզոն» թերթում. «Ազգային խորհրդաժողովը»

28 սեպտեմբերի 1917թ.
Թիֆլիս

Արդեն ամեն կողմից հավաքվել են պատգամավորներ Ազգային խորհրդաժողովին մասնակցելու համար: Մենք մեկից ավելին անգամներ առիթ ենք ունեցել այդ համախմբումի մասին մեր տեսակետները պարզելու - խորհրդաժողովի նախօրյակին ավելորդ չենք համարում մեկ անգամ ևս արտահայտել:

Հարկ չկա հիշեցնելու, որ ներկա խորհրդաժողովի հեղինակը ՀՀ Դաշնակցությունը չէ: Դաշնակցությունը շարունակ պնդել է և հնարավոր է համարել հրավիրել համագումար ռամկավար ընտրական սկզբունքով, որ միակ իրավատերն է բովանդակ ազգի կամքն ու բաղձանքները ձևակերպելու ու ներկայացնելու, սակայն մյուս հոսանքները՝ աջից ու ձախից, սնոտի առարկություններով, համառոտ դիմադրություն են ցույց տվել՝ համոզված, որ նման համագումարում իրենց վիճակվելու է ավելի քան համեստ տեղ: Ներկա խորհրդաժողովը կազմվում է այդ հոսանքների ջանքերով: Մենք մասնակցում ենք նրան վստահ, որ խորհրդաժողովը գործնական միջոցներ կմշակի թե՛ համագումարը փութացնելու և թե՛ մի շարք անհրաժեշտ ազգային հարցեր կարգադրելու:

Թե՛ առաջին և թե՛ երկրորդ պայմանը հնարավոր կը լինի այն ժամանակ միայն, երբ խորհրդակցության եկած պատգամավորները խորհրդաժողովի վրա չմնային լոկ իբրև մի տեղի, ուր կարելի է տաք-տաք ճառեր խոսել և ապա թեթև սրտով հեռանալ, այլ իրական քայլեր անեն հոսանքների միջև գործոն համաձայնություն առաջ բերելու, մի տեսակ կոալիցիա ստեղծելու ազգային ուժերի մեջ: Այդ կոալիցիայի հետևանքներից առաջինը պետք է լինի Ազգային մի մարմնի կազմակերպումը, որը մինչև համագումար կը վարե ազգային այն ընթացիկ խնդիրները, որոնք ստիպողաբար լուծում են պահանջում: Եթե հոսանքներն այսպիսի տրամադրությամբ են մասնակցում խորհրդաժողովին, արժե նրանով զբաղվել, բայց եթե գալիս են իրենց ներքին ու արտաքին հաշիվները մաքրելու և իրենց հին նեյնիմները կրկնելու, զուր է այն ժամանակն ու եռանդը, որ հարյուրավոր մարդիկ վատնելու են:

Ամենից ավելի մենք ենք քննադատել ու բողոքել ազգային պոչատ ժողովի դեմ: Ամենից շատ մենք իրավունք ունենք դժգոհ լինելու այսպիսի հակադեմոկրատական կազմակերպություն ունեցող ժողովից: Եվ, սակայն, մենք չենք կարող հաշվի չառնել, որ հեղափոխության այս շրջանում երեսի վրա են մնացել սոցիալտնտեսական և ազգային կարևորագույն հարցեր, որոնց շուտափույթ լուծման մեջ մեծապես շահագրվռված է նաև հայ աշխատավորությունը Մենք չենք կարող անհրաժեշտ չհամարել հեղափոխության հաղթանակով շահագրգռված բոլոր ուժերի համագործակցությունը: Եվ իբրև հայ դեմոկրատիայի ճնշիչ մեծամասնության կարծիքների թարգման՝ մենք պարտականություն ենք զգում նպաստելու նման համագործակցության իրականացման և անկեղծ ու գործունակ կոալիցիայի հաստատման: Ուստի այդ նպատակի համար չենք կարող լայնորեն չօգտվել

հայկական զանազան խմբակցություններից և հոսանքներից կազմվող այս խորհրդաժողովից: Եթե կոալիցիան հաջողվի, ապա, ուրեմն, խորհրդաժողովն ապարդյուն անցած չի լինի:

Համենայն դեպս ձախորդության դեպքում մեր վրա չէ, որ պետք է ընկնի պատասխանատվությունը, որովհետև մենք անվերապահ ցանկացողն ենք ազգային բոլոր իրական հոսանքների համերաշխության:

«Հորիզոն», 28.09.1917:

N 40

Թղթակցություն «Արև» թերթում Ազգային համախորհրդակցության հրավիրման կապակցությամբ

28 սեպտեմբերի 1917թ.
Թիֆլիս

Նախապատրաստական նիստ

Այսօր, երեկոյան ժամը 8-ին, Առաջնորդարանի դահլիճում տեղի ունեցավ Ազգային համախորհրդի խորհրդակցական նիստը, ներկա էին 185-ից ավելի պատգամավորներ:

Միջկուսակցական մարմնի կողմից նիստը բաց արավ ընկ.Համ.Օհանջանյանը ողջույնի խոսքերով և բարի գալուստ մաղթելով պատգամավորներին: Այնուհետև առաջարկեց ընտրել նախագահ և քարտուղար խորհրդակցության համար: Առաջին պաշտոնի համար ընտրվեց մեր հռչակավոր Ահարոնյանը, իսկ երկրորդի՝ ընկ. Գ.Քալաշյանը:

Ընկեր նախագահն իր տեղն անցնելով, երկու խոսքով հավատք հայտնեց, որ պատգամավորները չեն խնայի իրենց մտքի ողջ կարողությունը, կամքի կորովը և սրտի համայն զգացմունքը՝ հայ կյանքի նավը այս փոթորկոտ ծովում ապահով կերպով նավահանգիստ հասցնելու:

Կազմակերպիչ բյուրոյի կողմից ընկ. Բաբալյանը կարդում է Համախորհրդի օրակարգը: Ընկեր Նախագահին առաջարկում է լրացնել այն կամ հարկավոր համարված փոփոխությունները մտցնել օրակարգի կետերի դասավորության մեջ:

Քաղաքացի Չալխուշյանը առաջարկում է օրակարգի մեջ մտցնել ազգային ինքնորոշման խնդիրը, որը, սակայն, մերժվում է, որովհետև այդ խնդիրը, լինելով գերազանցորեն քաղաքական, չի կարող քննության առարկա լինել նման մի խորհրդակցական ժողովում, ինչպիսին է Ազգային համագումարը:

Դրվում են մի քանի այլ հարցեր ևս, որոնք վեր լինելով համախորհրդի իրավասությունից, մերժվում են ձայների ճնշող մեծամասնությամբ:

Մասնավորապես մի խնդրի վրա շատ է պնդում բժ.Իսախանյանը և պահանջում, որ անպայման օրակարգի մեջ մտցվի: Այն է՝ մեր քաղաքականությունը հանդեպ տաճկահայ դատի: Նրան բացատրում են, որ այդ խնդիրը, իբրև առանձին կետ, ավելորդ է օրակարգի մեջ մտցնել, քանի որ այդ մասին խոսք կլինի Բյուրոյի հաշվետվության ժամանակ: Բայց և այնպես նա պնդում է համառորեն, մանավանդ, որ նրան ձայնակցում է մի ուրիշը, ընկեր Տեր.Ղազարյանը, միայն մի քիչ այլ ձևով արտահայտելով նույն միտքը - որոշել գծերն ու հիմունքները այն քաղաքականության, որ ներկայումս էլ ռուսահայերը վարում են տաճկահայության վերաբերմամբ:

Անցնելով համախորհրդի գործնական մասին, նախագահի առաջարկությամբ ընկեր Բաբալյանը կարդում է միջկուսակցական մարմնի որոշումներն այն մասին, որոնք են.

1. Համախորհրդի պաշտոնական բացումը լինելու է վաղը, ամսի 29-ին,
2. Չեն լինելու ողջույնի ճառեր և դեկլարացիաներ,
3. Համախորհուրդը չի ունենալու պատվո նախագահ կամ նախագահներ:

Ժողովը միաձայն ընդունում է այդ առաջարկները:

Այնուհետև բավական զբաղեցնում է այն հարցը, թե ո՞վ պիտի բաց անի վաղվա պաշտոնական նիստը: Ոմանք ասում են՝ միջկուսակցական մարմնի հերթական անդա՞մը, Անդրանի՞կը, թե՞ կաթողիկոսի ներկայացուցիչը: Խնդրի լուծումը որոշվում է թողնել իրեն՝ միջկուսակցական մարմնին:

Ապա ժողովի քննությանն է դրվում նախագահության խնդիրը, արդյոք, հավասար իրավունքներով մի քանի նախագահնե՞ր պիտի ընտրել թե՞ մի նախագահ օգնականներով: Սոցիալ-հեղափոխական և դաշնակցական ֆրակցիաների կողմից հայտարարվում է, որ պիտի լինեն մի քանի նախագահներ՝ համախորհրդում ներկայացված հոսանքների թվական համեմատությամբ և մի քանի քարտուղարներ՝ կրկին նույն հիմունքներով: Առաջարկվում է ընտրել յոթ նախագահ, հինգ քարտուղար:

Ժողովը ընդունում է այդ և հայտարարում է 20 րոպե ընդմիջում, որպեսզի կուսակցությունները հնարավորություն ունենան համրելու և իմանալու իրենց պատկանող պատգամավորների թիվը:

Նիստը վերաբացվում է: Ընկեր Տեր-Ղազարյանը սոց.-դեմոկրատների և հնչակյանների կողմից հայտարարում է, որ իրենք առաջարկում են երեք տեղ տալ դաշնակցականներին, մեկը՝ իրենց միացյալ բլոկին, մեկը՝ էսերներին, մեկը՝ Հայ ժող[ովրդական] կուսակցությանը, մեկն էլ՝ անկուսակցական խմբակին: Մոտավորապես նույն ձևի հայտարարություն է անում նաև բժ.Աթաբեկյանը էսերական ֆրակցիայի անունից:

Խնդիրը արդարությամբ լուծելու համար դաշնակցական ֆրակցիան, ինչպես և Հայ ժողովրդական կուսակցությունը պահանջում են հոսանքներից հայտնել, թե յուրաքանչյուր կուսակցությունից կամ խմբակից որքան պատգամավոր կա, որպեսզի ըստ այնմ բաշխվեն տեղերը նախագահության մեջ:

Ժողովը համաձայնում է, որից հետո տրվում են համապատասխան հայտարարություններ: Պարզվում է, որ ժողովում ներկա են դաշնակցական պատգամավոր-91 հոգի, էսեր-24, Հայ ժող. կուսակցությունից-40, անկուսակցական-4, հնչակյանների և էսդեկների ներկայացուցիչներ: Տեր-Ղազարյանը, փոխանակ իրենց բլոկից ներկա եղող պատգամավորների թիվը տալու, տալիս է իրենց ստացած մանդատների թիվը, որ է՝ հնչակյան հինգ մանդատ, էսդեկ-22 մանդատ: Ժողովը ստիպված է հաշտվել այս բացառության հետ, որովհետև Տեր-Ղազարյանը պատճառաբանում է, որ այս նիստը, լինելով խորհրդակցական, պատգամավորներից շատերը կարող էին ներկա չգտնվել: Հետևապես պետք է ղեկավարվել ոչ թե ներկա գտնվող պատգամավորների, այլ՝ ստացված մանդատների թվով:

Ըստ ներկայացված թվերի, նախագահության մեջ կեսից ավելի տեղը պատկանում է դաշնակցական ֆրակցիայի, իսկ մնացածը մյուս կուսակցություններին ու խմբակցություններին: Հայ ժող.կուսակցությունը, որպես թվով երկրորդ տեղը բռնողը (40 հոգի), համախորհրդի մեջ խնդրում է երկու ձայն տալ իրեն, երեքը՝ դաշնակցության, իսկ մյուսներին մեկ-մեկ և դրանով սպառել խնդիրը:

Դաշնակցությունը չի համաձայնում առաջարկին: Առաջարկողներ կան, որ այդ ավելորդ մի ձայնի բաշխումը թողնվի վաղվա պաշտոնական նիստին, երբ կպարզվի հոսանքների ճիշտ թվական պատկերը: Դաշնակցական ֆրակցիան առաջարկում է, որ ինքը այդ մի տեղը զիջում է քաղաքացի Մամիկոնյանին:

Առաջարկին միանում են մյուս բոլոր կուսակցություններն ու խմբակցությունները և այդպիսով հարցը սպառվում է:

Շատ հեշտ, առանց վիճաբանությունների է լուծվում քարտուղարների խնդիրը: Երկու տեղ տրվում է դաշնակցության, իսկ մնացած տեղերը մեկ-մեկ յուրաքանչյուր ֆրակցիային:

Ընտրությունները մնում են վաղվա նիստին:

Այնուհետև Կազմակերպիչ բյուրոյի կողմից հայտարարվում է, որ որոշված է համախորհրի նիստերը անել դռնբաց: Ժողովն ընդունում է այդ որոշումը, միայն իրեն վերապահելով հարկավոր դեպքում նիստը դռնփակ անելու իրավունքը:

Նիստը փակվում է վաղվա ժողովի հայտարարումով:

Իրազեկ

«Արև», 03.10.1917:

N 41

Լևոն Թութունջյանի հոդվածը «Հայաստան» թերթում. «Ազգային խորհրդակցության շուրջ»

1 հոկտեմբերի 1917թ.

Բացվեցավ ազգային համախորհուրդը. ինչ ձևով և ինչ հարմարություններով ալ հրավիրված ըլլա ա իկա, ամեն տարրերե վստահություն կվայելե վերջապես, քանի որ հոն ամեն տարր ու հոսանք իր ներկայացուցիչը ղրկած է:

Ինցի համար, շատ ավելի բաղձալի էր, որ օրակարգի մեջ մտնող քանի մը ծանրակշիռ հարցերը վճռված ժամանակ, համայն Ռուսիո մեջ գտնվող հայությունը, կարելիություն ունենար արտասահման գտնվող մեր ազգակիցներուն համեմատությունը ունենալու: Այստեղ, Կովկասի մեջ, Ռուսիո բաղկացուցիչ և իրավահավասար տարրերեն մեկը, ռուսահայությունը, անշուշտ, բավական ձեռնտվություն կրնա ունենալ մեր հարցին համար ռուսական տեսակետը պատրաստել տալու գործին մեջ, և այդ իսկ պատճառով, ռուսահայությունը պետք է հնարավորություն ունենա իր խողովակեն բոլոր հայերուն միահամուռ բաղձանքը պաշտպանել այն պետության մեջ, որուն մեջ իրավատերն ալ ինքն է, և ազգային կուսակցության հանգամանքով, ավելի շատ ձայն ունի, քանի Ռուսիո ոևէ բաղկացուցիչ մեկ ազգ:

Այդ հնարավորությունը չեղավ, չէր ալ կրնար ըլլալ, կարելիություն չկար այսքան քիչ ժամանակի մեջ արտասահմանեն հրավիրել ներկայացուցիչներ, սակայն իմ կարծիքովս կարելի էր Եվրոպա, Եգիպտոս և Ամերիկա գտնվող հայ հեղինակավոր անձերու հեռագրական հրավերներ ուղարկել և համախորհուրդիս կանչել: Ուրիշ կետ մը կա, որուն վրա «Հայաստանը» անդրադարձավ իր խմբագրականով, և խնդիրը սապես ձևակերպեց. «Մեզի համար կարևոր կետը հոն է, որ համախորհուրդը յուրաքանչյուր հարցի համար ավելի շատ կշիռ տա այն կազմակերպության կամ հատվածի տեսակետին, որու վրա պիտի անդրադառնա տրված որոշումը և ոչ թե հենվի լոկ քվեի մեծամասնության վրա»:

Օրինակի համար: Համախորհրդի 8-րդ օրակարգը՝ «Փախստականական հարցը», ամենեն մոտ կերպով կը շահագրգռե փախստական թրքահայությունը, ուրեմն անոր ներկայացուցիչներու բաղձանքն ու կարծիքը ավելի հեղինակավոր, նույնիսկ վճռական դեր պիտի ունենա որոշման ժամանակ:

Ընդհանրապես խոսելով, մտքերու խմորումի և զանազան տեսակետներու հրապարակ գալու իսկ անհրաժեշտությամբ, այս «համախորհրդակցություն»-ը շատ շահագրգռական է, հայ հանրային կարծիքին առաջ վերջապես պիտի պարզվին

տեսակետներ և ուղղություններ, այդ տեսակետներն ու ուղղությունները գոնե կարևոր չափով պիտի միացվին հայության մեկ մեծագույն մասին իրարու քով գալովը, և այսպիսով երկրորդ ավելի լիակատար, ավելի ընդհանուր խորհրդակցության մը մեջ անոնք պիտի կռանվին և հիմնավորվին իբրև հայ ազգին գերագույն բաղձանքներն ու կետ-նպատակները:

Մեր ժողովուրդը, որ շատ մեծ, ահավոր բաներ տեսած ըլլալուն համար դարձել է սկեպտիկ բոլոր հանդիսավոր բաներու հանդեպ, պետք է, սակայն, պատկառանք և սրտի տրոփյուն զգա, տեսնելով ինքզինքը, ահավոր ցնցումներե հետո դարձյալ անընկճելի, դարձյալ կենսունակ, դարձյալ միացած մեծ և կենսական բաներու համար:

Ես նահատակ ժողովուրդի մը զավակը, ինքզինս պարտ կզգամ, որ տեսնելե հետո թրքահայության ջարդ ու փշուր բեկորներու իրարու մոտ գալն ու հավաքականության բաղդի շուրջ սեղմվելը, այսօր պիտի տեսնեմ, ավելի բարեբաղդ մնացած, հույսի և կենսունակության սեմին կանգնած, մեր սիրելի և թանկագին եղբայրներուն մեծ հավաքույթը հայրենիքի պատմական օրերու սեմին:

«Ազգային համախորհրդակցության» գացող ամեն մեկ պատգամավոր, անոր ժամանակակից ամեն մեկ հայ թող նույն զգացումով մոտենա այս պատմական օրին, մեր տարապայման դժբախտություններու վաղորդյանը թող մեզի ալ ավելի կենսունակ և ալ ավելի գիտակ գտնե պատմական արժեքներու և վայրկյաններու առջև:

Պիտի ըլլան անշուշտ բաղխումներ, վիճեր և նույնիսկ կրքեր, սակայն այդ ամեն պետք է որ ընկերական ազգային շահերու սրտացավ հոգատարության և ոչ թե անձնականության:

Լևոն Թյությունճյան[1]

«Հայաստան», 01.10.1917:

գ. Բանաձևերի և որոշումների նախագծեր

N 42

Հայ ժողովրդական կուսակցության որոշման նախագիծը Հայոց ազգային համագումարի ու համախորհրդակցության խնդիրների, կառուցվածքի, ղեկավար մարմինների ընտրության կարգի մասին

1. Համախորհուրդը ճանաչում է, որ հայ ազգի կամքի և հայացքների հարազատ ներկայացուցիչը կարող է համարվել միայն ազգային համագումարը՝ ընտրված հնգանդամ քվեարկությամբ:

2. Սակայն մինչև այդպիսի համագումարի հրավիրվելը անկարելի է, ներկա տագնապալից և անակնկալներով լի օրերում, ազգային գործերը թողնել առանց որևէ ղեկավարությամբ: ուստի Համախորհուրդը, որ բաղկացած է հայ ժողովրդի բոլոր կուսակցությունների, կազմակերպությունների և դասակարգերի ներկայացուցիչներից՝ պարտավորություն և իրավունք ունի հայտարարել ղեկավարող սկզբունքներ և կայացնել պարտադիր որոշումներ մինչև համագումարը:

3. Համախորհուրդը ընտրում է գործադիր մարմին «Ազգային խորհուրդ» անունով, որ պետք է վարե ազգային գործերը համաձայն Համախորհրդի հայատարած սկզբունքներին ու որոշումներին և բավարարություն տա հերթական, անհետաձգելի և նոր ծագող հարցերին՝ նույն սկզբունքների հիման վրա: Նա է, որ պետք է միջոցներ ձեռք առնել փութացնելու Ազգային համագումարի հրավիրելը:

4. Ազգային խորհուրդը պետք է կազմվի կոալիցիոն սկզբունքով, բոլոր ֆրակցիաների ներկայացուցիչներից, փոխադարձ համաձայնությամբ:

Գ.17, թ.30:

N 43

Հայ ժողովրդական կուսակցության և նրան համակրողների բանաձևի նախագիծը ժամանակավոր կառավարության պաշտպանության և այլ հարցերի վերաբերյալ

I. Ազգային համախորհուրդը, քննելով Ռուսաստանի ներկա քաղաքական դրությունը հայ ազգի շահերի տեսակետից, գալիս է այն եզրակացության, որ Ռուսահայոց ազգային հարցի լուծումը հնարավոր է միայն ընդհանուր պետական հարցի լուծման հետ միասին, իբրև մասն Ռուսաց պետության կազմակերպության հարցի: Ուստի հայ քաղաքական կուսակցությունները, ազգային շահերի ուղիղ ըմբռնողությամբ, պետք է լարեն իրանց բոլոր ուժերը, որպեսզի Ռուսաստանը դրվի հաստատուն իրավակարգի ճանապարհի վրա այն սկզբունքներով, որ հայտարարել է Ռուսաց հեղափոխությունը:

II. Այս հիման վրա Համախորհուրդը հայտարարում է, որ

1. Անհրաժեշտ է ամեն կերպ պաշտպանել ժամանակավոր կոալիցիոն կառավարությունը, ինչպես միակ օրգան պետական իշխանության, որ անկախ պետք է լինի որևէ ազդեցությունից, ինչ կազմակերպության կողմից էլ լինի, և կազմված պետք է լինի այն սկզբունքներով ու նպատակներով, որոնք հայտարարված են սեպտեմբերի 25-ի դեկլարացիայով: որ այն բոլոր նպատակների մեջ, որոնք հայտարարված են կառավարության դեկլացաիայում՝ Համախորհուրդը կարևորագույն է համարում - նախ՝ բանակի ռազմական ուժի վերականգնումը, առանց որի հայրենիքը չէ կարող փրկվել կործանումից և ծանր, անփոխարինելի կորուստներից, Երկրորդ՝ կռիվը ամեն տեսակ փորձերի դեմ՝ [որ նպատակ կունենա] ոչնչացնելու հեղափոխության հայտարարած ազատությունները (անձի, մամուլի են): Երրորդ՝ դիմադրությունը այն փորձերին, որոնք նպատակ ունեին լուծել սոցիալական և քաղաքական հարցերը բռնի, ոչ օրինական ճանապարհով: Եվ չորրորդ՝ կոչը, ուղղված բոլոր դասակարգային կուսակցություններին, որ իրանց դասակարգային շահերն ստորադասեն ընդհանուր պետական շահերին և անձնվիրաբար աշխատեն հանուն հայրենիքի փրկության:

2. Համախորհուրդը անպայման դատապարտում է ամեն տեսակ փորձերը՝ կազմելու ինքնաստեղծ կազմակերպություններ, որոնք հավակնություն ունեն իրանց վերագրելու պետական իշխանության օրգանների դեր ու նշանակություն:

3. Հանրապետության ժամանակավոր խորհուրդը (նախապարլամենտ), որ սահմանվել է ժամանակավոր կառավարության նույն դեկլարացիայի հիման վրա, պետք է ունենա միայն այնքան նշանակություն, որքան նշանակված է դեկլարացիայի մեջ, ոչ մի կերպով չծգտելով նվազեցնելու անձեռնմխելիությունը, միությունը և հաջորդականությունը այն կառավարության պետական իշխանության, որ ստեղծված է հեղափոխությամբ:

III.Ժամանակավոր կառավարության գործունեության ծրագրի նկատմամբ Համախորհուրդը կառավարության վերջին դեկլարացիան ճանաչում է համապատասխան պետության շահերին ներկա մոմենտում, այն պայմանով միմիայն, որ ժամանակավոր կառավարությունը յուր օրենսդրական գործունեության մեջ չձեռնարկե այն հարցերի լուծման, որոնց լուծումը պատկանում է Սահմանադիր ժողովին:

IV. Հաշտության պայմանների նկատմամբ Համախորհուրդը, ընդունելով այն բանաձևը, որը հայտարարել է դեմոկրատիան և արծարծել է ժամանակավոր կառավարությունը յուր վերջին դեկլարացիայի մեջ, ենթադրում է, թե թուրքահայերը պետք է ստանան ազատություն իրանց քաղաքական ինքնորոշման և տնօրինելու

իրանց անկախ գոյությունը՝ համաձայն իրանց պահանջներին, և պետք է ստանան հատուցում այն բոլոր նյութական կորուստների, որ նրանց պատճառել է Թուրքական կառավարությունը: Թուրքահայերի այս պահանջների բավարարությունը Համագումարը նկատում է իբրև լոկ մի արդարության գործ, որին թուրքահայերն իրավունք ունեն ակնկալելու այն բոլոր արյունալի, անթիվ զոհերից հետո, որ նրանք բերին հանուն Ռուսաստանի և նրա դաշնակիցների:

V. Բոլոր հայ քաղաքական կուսակցությունների նկատմամբ Համագումարը ցանկություն է հայտնում, որ պետական սկզբունքը, որ ազատ է բոլոր կուսակցության և դասակարգային շահերից, պաշտպանություն գտնելով բոլոր կուսակցությունների կողմից, կիրառվի բոլոր գործնական հարցերում: Միմիայն այս պետական սկզբունքի հետևողական կիրառությամբ հնարավոր է քաղաքական կուսակցությունների համագործակցությունը նաև հայ ժողովրդի վերաբերյալ հարցերի լուծման և նրա շահերի բավարարման գործերում:

Նույն գործը, թ.31-32 և հակ.:

N 44

Հայ ժողովրդական կուսակցության և նրան համակրողների ֆրակցիայի բանաձևի նախագիծը Անդրկովկասյան իշխանության կազմի մասին

Ի նկատի ունենալով, որ

ա. Անդրկովկասյան կենտր[ոնական] իշխանությունը լոկ գործադիր իշխանություն է, որ պետք է ղեկավարվի իր գործունեության մեջ ժաման[ակավոր] կառավարության ցուցումներով և հրահանգներով,

բ. Գործադիր իշխանության գլուխը, ինչպես ամեն տեղ, այնպես էլ մեզանում, պետք է կանգնած լինի մի անձնավորություն, որ վայելե կենտր[ոնական] իշխանության վստահությունը,

գ. Որ այնպես լինելով հանդերձ՝ տեղական ազգաբնակչությունը պարտք և իրավունք ունի մասնակցելու կիրառման մեջ,

դ. Որ Անդրկովկասի առանձնահատուկ ազգագրական պայմանները հրամայաբար թելադրում են մասնակից անել իշխանության գործերին չորս գլխավոր ազգություններին, որ բնակվում են նրա մեջ:

Ազգային համախորհուրդը գտնում է, որ

1. Անդրկովկասի ժամ[անակավոր] կառավարության գլուխը կանգնած պետք է լինի մի գեներալ կոմիսար, նշանակված կենտրոնական կառավարությունից յուր օգնականներով:

2. Գեներալ կոմիսարի մոտ պետք է կազմվի խորհուրդ՝ Կովկասում բնակվող չորս գլխավոր ազգերի բոլոր քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներից:

Նույն գործը, թ. 29:

N 45

Սոց[իալ]-դեմոկրատական մենշևիկների ֆրակցիայի և Հնչակյան սոցիալ-դեմոկրատական բանաձևի նախագիծը ներկա պահի մասին

Ցենզավոր բուրժուազիայի նահանջելը հեղափոխությունից, որ սկսվեց դեռ ապրիլին, վերջացավ գեն. Կորնիլովի ապստամբությամբ:

Այդ ապստամբության ընկճումը և տեղերում ամբողջ իշխանությունը հեղափոխական կազմակերպություններին անցնելը ցույց տվին երկրին բանվոր[ական] և զինվորական պատգ[ամավորների] խորհուրդների ամբողջ իշխանության ուժը:

Այդ խորհուրդները, իբրև հեղափոխության գլխավոր հենարան, փրկեցին հայրենիքը քաղաքացիական պատերազմի և հանրապետական խորտակումի սարսափներից:

Հեղափոխության հետագա զարգացումը հնարավոր է ամբողջ դեմոկրատական ճակատի միությամբ ընդդեմ ցենզավոր Ռուսաստանի շահերի ու կամքի:

Հեղափոխական ու դեմոկրատական հանրապետությանը հավատարիմ մնացած բոլոր հասարակական խմբակցությունների միացումը և ամբողջ իշխանությունը՝ վերից մինչև վար, նրանց ձեռքը հանձնելն է միակ երաշխիքը, որ պատերազմը շուտ կվերջանա և երկիրը կփրկվի վերևից եկող հակահեղափոխությունից և ցածից բարձրացող անիշխանությունից:

Ելակետ ունենալով այս, անհրաժեշտ ենք գտնում դեմոկրատիկ ուժեղ իշխանության կազմակերպումը, ժխտելով ընդհմին երևան եկած երկու ծայրահեղ հոսանքները, ինչպես իշխանության հանձնելը միայն Խորհուրդներին, այնպես էլ բլոկը երկրի ցենզավոր տարրերի հետ: Վերջին հոսանքի հաղթանակը նշանակում է մեկուսացումն բանվոր դասակարգի և հեղափոխական կազմակերպությունների, նշանակում է հասարակական բոլոր ուժերի միացումը ցենզավոր բուրժուազիայի ղեկավարության ներքո, նշանակում է նաև ուղղել այդ ուժերը հեղափոխության հենարան խորհուրդների և նրա թիկունքում կանգնած խմբակցությունների դեմ:

Մոմենտի նշանաբանն է՝ բանվորական և զինվորական խորհուրդների հսկողության ուժեղացումը իշխանության բոլոր օրգանների, մանավանդ կառավարության գործունեության վրա, ճնշումը նախապարլամենտի վրա՝ ոչնչացնելու համար բլոկը ցենզավոր տարրերի հետ և միացնելու դեմոկրատական բոլոր տարրերին Խորհուրդների հետ:

Պահել բանվորությունը անժամանակ հրապարակ գալուց, մի հանգամանք, որը կարող է ծառայել իբրև առիթ բուրժուազիայի համար մի հարվածով տապալելու հեղափոխական դասակարգը՝ բաց անելով դրանով դուռ հեկահեղափոխության համար: Այլև պիտի ճգնել մեկուսացնելու ցենզավոր բուրժուազիան, միացնելով հեղափոխական դեմոկրատիայի պրոլետարիատի հետ:

Գ. 17, թ.27-28 և հակ.:

N 46

Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության (սպեցիֆիկների) բանաձևի նախագիծը ընթացիկ պահի մասին

Մոմենտի ռեզուլյոցիա*

Ի նակտի ունենալով, որ Ռուսաստանի ներկա հեղափոխությունն իր էական բովանդակությամբ բուրժուական է, ի նակտի ունենալով, որ դեմոկրատիան այս հեղափոխության ընթացքում միակ ընդունակ ուժն է վարելու հետևողական դեմոկրատական քաղաքականություն ներքին և արտաքին խնդիրների նկատմամբ,

* Վերնագրումը բնագրինն է: Ծան. կազմ.:

մյուս կողմից, ի նակտի ունենալով այն հանգամանքը, որ դեմոկրատիայի պատմականորեն բաժին ընկած ծանր ու պատասխանատու գործը հնարավոր է պատվով լուծել միայն օգտագործելով ողջ երկրի բոլոր կենսունակ ուժերը, հատկապես առևտրաարդյունաբերական դասակարգը,

մենք գտնում ենք, որ երկրի կենտրոնական իշխանությունը պիտի կազմակերպված լինի համաձայնության սկզբունքով, սակայն այնպիսի կառուցվածքով, որ երաշխավորված լինի դեմոկրատիայի քաղաքական և տնտեսական պահանջների իրականացումը՝ համեմատ նրա նվազագույն ծրագրի:

Սոցիալ-դեմոկրատական բան[վորական] Հայ
կազմակերպության ներկայացուցչություն

Նույն գործը, թ.19-20:

N 47

Սոցիալիստ-հեղափոխականների ֆրակցիայի բանաձևի նախագիծը ընթացիկ պահի մասին

Մոմենտի գնահատականը*

Շրջապատված համաշխարհային պատերազմի կրակի և արյան խեղդիչ օղակով, հեղափոխական Ռուսաստանը կառուցանում է իր ժողովուրդների ապագան:

Զուրկ տնտեսապես հզոր, հասարականորեն կազմակերպ և կուլտուրապես բարձր դասակարգերը, երկիրը թպրտում է հիմա դասակարգային սուր ներհակությունների, ազգային կենտրոնախույզ խլրտումների, պետականության անկման և արդյունաբեր ուժերի ծայրահեղ քայքայման մահաբեր քաոսի մեջ:

Բուրժուազիան և նրա տնտեսական ու իդեոլոգիական ազդեցության տակ գտնվող մեշչանականությունը, որ սկզբում հարել էր երկրի քաղաքական հեղաշրջման, հիմա, վախեցած ռուսական հեղափոխության սոցիալական տարրերից, պատրաստ է նետվելու և մասամբ արդեն նետվել է հակահեղափոխությանը գիրկը:

Սովոր աշխատավորական վաստակի սանձարձակ շահագործման, դասակարգային անհակ էգոիզմով տարածված և պետականության զգացումից զուրկ բուրժուազիան չի կամենում զիջել բանվոր ու գյուղացի ժողովրդի հասունացած և արդարացի պահանջներին և այդպիսով նպաստում է մեծապես երկրի արդյունաբեր կարողության թուլացման ու քայքայման:

Աշխատավոր ժողովուրդն ևս, յուր մեծամասնությամբ տակավին անկազմակերպ ու դասակարգային ինքնագիտակցությունից զուրկ, յուր տնտեսական պայքարը տեսնում է երբեմն մինչև այն աստիճան, որ խախտվում են պետականության հիմնական շահերը և արդյունաբեր ուժերի անարգել զարգացումը:

Այս տագնապալից կացության մեջ սոցիալ-քաղաքական վարքի այն գիծը, որ կարող է դուրս բերել երկիրը արդի մահամերձ դրությունից, կարող է լինել միայն այն, որը ներդաշնակորեն համաձայնեցնում է աշխատավոր դասակարգի, պետականության և արդյունաբեր ուժերի զարգացման շահերը:

Այս քաղաքականությունը իրագործելու համար անհրաժեշտ են հետևյալ նախապայմանները.

1. Պիտի կազմակերպվի թե՛ կենտրոնում և թե՛ երկրի մեջ հին ռեժիմի բոլոր մնացորդներից ազատ հեղափոխական աշխատավորության և երկրի բոլոր կենսական

* Վերնագրումը բնագրինն է: Ծան. կազմ.:

տարրերի շիտակ կոալիցիայի հիման վրա կառուցված մի զորավոր իշխանություն, որը նպատակ կդնի իրեն իրագործելու օգոստոսի 14-ին հայտարարած դեմոկրատական ծրագիրը,

2. Դեմոկրատական և հեղափոխական իշխանության հստակ տեխնիկական օրգանների խիստ և արթուն հսկողության և կանոնավորման պիտի ենթարկվի երկրի ամբողջ արդյունաբերությունը:

3. Բանվոր և գյուղացի ժողովուրդը պիտի ստեղծի իր տնտեսական ու քաղաքական ինքնուրույնության բոլոր հիմնարկությունները և պիտի վարժվի հեղափոխական ու դասակարգային դիսցիպլինային ենթարկելու իր բոլոր գործողությունները:

Ապա արդի անարխիական դրության վերացման համար հիմնական պայման պիտի դիտվի համաշխարհային պատերազմի շուտափույթ վերջացումը, պատերազմի, որ Ռուսաստանում գոնե թե՛ օբյեկտիվորեն և թե՛ սուբյեկտիվորեն անհնար է դարձել: Հաշտությունը, սակայն, պիտի կնքվի դաշնակից ժողովուրդների կազմակերպ դեմոկրատիայի միջնորդությամբ՝ դաշնակից պետությունների հետ միասին կամ սրանց համաձայնությամբ:

Անդրկովկասի մեջ հայ սոցիալիստական ու հեղափոխական դեմոկրատիայի հիմնական նպատակները պիտի լինեն.

1. Դուրս բերել հայ ժողովուրդը, այն վտանգավոր մեկուսացումից, որի մեջ նա գտնվում է թե՛ կովկասյան ազգերի և թե՛ այն տարրերի դիմաց, որոնք արդի ռուս հեղափոխության հզոր կրողներն են հանդիսանում:

2. Նպաստել ամեն կերպ Կովկասի բոլոր ժողովուրդների օրգանական մերձացման՝ քաղաքական, տնտեսական և կուսակցական ինտերնացիոնալ կազմակերպության հողի վրա:

3. Կյանքի հրավիրել ժողովրդական տնտեսական ինքնուրույնության բոլոր օրգանները և, չխախտելով պետականության ու արդյունաբերության շահերը, վարել դասակարգային խիստ ու կազմակերպ պայքար գյուղի և քաղաքի շահագործող դասակարգերի դեմ՝ առանց որևէ փափկանկատության դեպի նրանց ազգային պատկանելությունը:

4. Ստեղծել մի զորավոր իշխանություն, որը պիտի կանգնի ոչ թե այս կամ այն ազգի . . .* ցանկությունների վրա, այլ պիտի վարի համապետական, դեմոկրատական և հեղափոխական մի քաղաքականություն:

Նույն գործը, թ.22-23 և հակ.:

N 48

Սոցիալիստ-հեղափոխականների բանաձևի նախագիծը Ազգային բյուրոյի գործունեության գնահատման վերաբերյալ

Համագումարը, լսելով Ազգային բյուրոյի քաղաքական գործունեության զեկուցումները և այդ առթիվ տեղի ունեցած քննադատությունները հանգավ հետևյալ բանաձևին.

Շնորհիվ Հայաստանի պատմականորեն անբարեհաջող աշխարհագրական դիրքի ու հայության երեք հատվածների բաժանվելուն, շնորհիվ այն հանգամանքին, որ մեր հայրենիքին տիրելու տենչը ունեցել են և ունեն ոչ թե միայն հարևան, այլև շատ հեռու ապրող ազգեր, շնորհիվ մեզ կենակից այլակրոն և մոլեռանդ ազգերի հետ ունեցած տնտեսական ու քաղաքական շահերի բաղխման, ինչպես և պատմական

* Բառն անընթեռնելի է:

անցյալներում, տաճկահայ ժողովրդի ազատագրման գործը ներկայացվում է քաղաքականորեն մի բարդ խնդիր, որի լուծումը կպահանջեր քաղաքագիտական ավելի հասուն հեռատեսություն, կազմակերպչորեն ավելի զորեղ ուժ ու նյութական մեծ կարողություն, քան թե ասպարեզում եղած են և հայության երեք հատվածների գիտակից գործակցությունը, որի մեջ տաճկահայությունը պիտի ունենար գերակշիռ ու առաջնակարգ տեղ: Այդ իմպուլսների ու հանգամանքների բացակայությունը տեղի է տվել սխալ հասկացված հայրենասիրության արտահայտությունների և մասնավոր անհատների անպատասխանատու գործելակերպին ի դեմս մի շարք ինքնաստեղծ քաղաքագետների՝ Ազգային բյուրոյի ներսը և նրանից դուրս:

Գլուխ խոնարհելով մեր ժողովրդի ազատագրման ճանապարհին ընկած մարտիրոսների և զոհերի առաջ և վերջին տարիների այդ զոհերի բարոյական պատասխանատուն համարելով Ազգային բյուրոյին իր սխալ ըմբռնած քաղաքականությամբ, նրա գործակիցների հետ միասին, - դրանց գործելակերպի գնահատումը թողնում ենք անկողմնակալ պատմության անաչառ դատին:

Հակոբ Ստեփանյան

Նույն գործը, թ.35-37:

N 49

Սոցիալիստ-հեղափոխականների և սոցիալ-դեմոկրատների բանաձևի նախագիծը ՀՀ Դաշնակցության գործունեության գնահատման վերաբերյալ՝ կապված Ն.Աղբալյանի ելույթի հետ

1. Մասնակցելով Ազգային համախորհրդին, մենք՝ սոց.-դեմ. և սոց.-հեղափոխական ֆրակցիաներս, որոշեցինք կատարել շինարար աշխատանք համանուն հայ ժողովրդի, միշտ շեշտելով այն ներհակությունները, որոնք կան փրկարար ինտերնացիոնալիզմի և կործանարար նացիոնալիզմի մեջ,

2. Մեր աշխատանքը նպատակ ունի դուրս հանել հայ աշխատավոր ժողովուրդը այն մեկուսացումից, որի մեջ գտնվում է նա այսօր: Այդ աշխատանքը պիտի մտցնի մեր ժողովուրդը Ռուսաստանի համայն հեղափոխական դեմոկրատիայի միջազգային ընտանիքը, ապահովելով նրա սոցիալ-քաղաքական ազատագրումը և ֆիզիքական անվտանգ գոյությունը,

3. Սակայն Ազգային համախորհուրդի զբաղմունքների ընթացքում պարզվեց, որ տիրող ֆրակցիան՝ հանձին Հ.Հ. Դաշնակցության, չի կամենում մազաչափ անգամ հրաժարվել իր հնավանդ մտածելակերպից ու գործելակերպից և իր տաքտիկայով այստեղ ձգտում է նորից մեկուսացնելու հայ սոցիալիստական ուժերը մեր կյանքից, առանց գիտակցելու, որ նման տաքտիկայով նա մեկուսացնում է հայ ժողովուրդը Ռուսաստանի հեղափոխությունից և Անդրկովկասի բոլոր հեղափոխական տարրերից,

4. Խստացած կերպով Հ.Հ. Դաշնակցության մտայնությունը և վարքի գիծը արտահայտվեց պ.Ն.Աղբալյանի պետական և ժողովրդական իմաստից զուրկ ճառի մեջ, որի հիմնական տրամադրություններն էին.

ա. Անվստահություն դեպի սոցիալիզմը և հեղափոխական միջազգային դեմոկրատիան

բ. Անվստահություն դեպի Անդրկովկասի դրացի ժողովուրդները

գ. Քաղաքական նոր արկածախնդրության սպառնալիքը՝ իբրև հայ ժողովրդի իրավունքների պաշտպանության մի ձև:

5. Մեզ համար գաղտնիք չէ եղել Հ.Հ.Դաշնակցության թե՛ մտայնությունը և թե՛ գործելակերպը, սակայն գալով այս Համախորհուրդը, մենք նպատակ ենք դրել

պայքարել հայ դիմազուրկ բուրժուազիայի և հարձակողական մեշչանականության դեմ: Այժմ հայտարարում ենք, որ պատմության մեջ շատ հաճախ աշակերտի զորավոր մուրճը վանել է սոցիալական ասպարեզից անպատասխանատու և բռնավոր վարպետին: Հայտարարում ենք նաև հրապարակով Ձեզ՝ Համախորհուրդի անդամներիդ և Ձեր գլխի վրայով ողջ հայ ազգին, թե այսօր Ռուսաստանում կա մի վարպետ միայն և այդ վարպետը նրա հեղափոխական դեմոկրատիան է: Գիտակցե՛ք, որ սոցիալիստական բանակը այն միակ կամուրջն է, որ շաղկապում է լքված և անկազմակերպ հայ ժողովուրդը Ռուսաստանի մեծ հեղափոխության հետ: Թերևս մենք կանգնած ենք աղետալի անակնկալների առջև և գիտակցելով մեր մեծ պատասխանատվությունը դեպի հայ ժողովուրդը, մենք, թեև փոքրություն, մնում ենք այստեղ մեր հեղափոխական դիրքի վրա՝ իբրև արթուն պահապան մեր ժողովրդի գիտակցված շահերի և ֆիզիքական գոյության:

Սոց[իալիստ]-հեղ[ափոխական] և սոց[իալ]-դեմո-
կրատական ֆրակցիաներից՝ Լ.Աթաբեկյան

Նույն գործը, թ.24 և հակ.:

N 50

Պետական դպրոցների ազգայնացման և եկեղեցական-ծխական դպրոցների աշխարհականացման սեկցիայի փոքրամասնության բանաձևի նախագիծը

1. Սեկցիան սկզբունքով ընդունում է եկեղեցական-ծխական դպրոցների աշխարհականացումը:

2. Սակայն որովհետև այդ աշխահականացման իրավործումը բարդ է իրավաբանական և տնտեսական տեսակետից, և որովհետև չկա մի իրավասու մարմին (իրավաբանական անձ), որ կարողանար ստանձնել այն եկեղեցապատկան գույքերն ու հասույթները, որոնցով պահվում են եկեղեցական-ծխական դպրոցները, սեկցիան վաղաժամ է համարում ներկայումս այդ աշխարհականացումը:

3. Եկեղեցական-ծխական դպրոցների բարեկարգության համար սեկցիան առաջարկում է ընտրել մի մարմին, որ հոգևոր իշխանության հետ համաձայնությամբ կառավարեր այդ դպրոցները և մշակեր նրանց աշխարհականցման եղանակը և պայմանները:

Նույն գործը, թ.33:

N 51

Թուրքահայերի բանաձևը «Ազգային» բյուրոյի մասին*

Ռուսահայ Ազգային համախորհրդին մասնակցող ինն թուրքահայ պատգամավորներից յոթը «ազգային» բյուրոյի մասին տեղի ունեցած վիճաբանություններից հետո ներկայացրին հետևյալ բանաձևը.

* Բանաձևը գործում չի պահպանվել: Տպագրվում է ըստ «Մշակի»: Վերնագրումը թերթինն է:

«Ռուսահայ Ազգ[ային] համախորհրդին մասնակցող թուրքահայ պատգամավորներս, լսելով Ազգային բյուրոյի թեր և դեմ վիճաբանությունները, գտանք.

1. Որ Ազգ.բյուրոն իր նախաձեռնության որպես հիմք ոչ միայն չէ ունեցեր թուրքահայության մանդատը, այլ նաև չէ անսացեր թուրքահայության կողմե երկրեն խրկված նախազգուշացումներուն:

2. Որ Ազգ. բյուրոն իր ձեռնարկած ծանրակշիռ նշանակություն ունեցող աքթերու համար չէ ունեցեր ո՛չ անհրաժեշտ երաշխիք և ո՛չ ալ համապատասխան տակտիկա:

Եվ որովհետև համարատվությունը չուներ ո՛չ հավաքական և ո՛չ դոկումենտալ բնույթ և կատարվեցան հարևանցիորեն և մանավանդ գլխավոր համարառու թուրքահայության բացակայության, կգտնենք, որ Ազգ. բյուրոն պարտավոր է տալ յուր լրիվ համարատվությունը համազգային ժողովի մը առջև, երբ իր իսկական համարառուն՝ թուրքահայությունը՝ հնարավորություն կունենա լսելու զինք»:

Գալիկյան Հրանդ, Դարբինյան Արտակ, Թերզիբաշյան
Ավետիս, Հակոբյան Հովհաննես, Պապիկյան Վարդան,
Պոնափարթյան դոքտ., Տեր-Զաքարյան Հակոբ

«Մշակ», 03.11.1917:

N 52

Հայ տեխնիկական ընկերության 26 սեպտ. 1917 թվի ընդհանուր ժողովը ընդունեց հետևյալ որոշումները և հանձնարարեց իր պատգամավորներին այդ որոշումները ներկայացնել և պաշտպանել Ազգային համախորհրդակցության մեջ*

1. Երկրի վարչական սահմանների փոփոխության ու զեմստվային հարց:

Զեմստվոյի ներմուծումը Անդրկովկասի մեջ կարող է ուշանալ վարչական սահմանների փոփոխության հարցի բարդ լինելու պատճառով: Զեմստվոն անհրաժեշտ է անմիջապես մտցնել ինքնավարական փոքր միավորների կազմով (мелькая земск. единица): Վարչական սահմանների փոփոխության հարցը կարող է մանրամասն ու բազմակողմանի կերպով քննվի և լուծվել զեմստվային ռեֆորմից հետո:

2. Պաենավորման հարց:

Այդ հարցը և տագնապը, իբրև համառուսական և ընդհանուր բնավորություն ունեցող բազմաթիվ պատճառներից կախված, կարող են կանոնավորվել ժամանակավոր կառավարության կողմից մշակվելիք ընդհանուր (планомерный) ծրագրով:

3. Ազգամիջյան հարաբերությունները:

Ազգամիջյան թյուրիմացությունների վերացման տեսակետից, դատապարտելով ազգայնամոլ, շովինիստական արտահայտությունները, ինչ կողմից և լինեն դրանք, ժողովը անհրաժեշտ է համարում ազգային խորհրդակցությունների հաճախակի գումարումները՝ լուսաբանելու և հարթելու նպատակով բարի դրացիական հարաբերությունները խանգարող բոլոր պատճառները:

4. Առանձին Անդրկովկասյան կոմիտետը:

* Փաստաթղթի վերնագիրն է:

Ի նկատի ունենալով, որ Առ[անձին] Անդրկ[ովկասյան] կոմիտետը չէ կանգնած իր կոչման բարձրության վրա, որ նա անկարող գտնվեց համերաշխ գործելու, որ նրա անդամները միմիանցից առանձնացած և տարբեր ուղիներով էին ընթանում, որ, ընդհանրապես, կոմիտետը չէր ղեկավարվում հեղափոխական ծրագրով և որ, վերջապես, նա ցույց չտվեց վճռականություն, ուժ, եռանդ և հեղափոխական նախաձեռնություն, ժողովը գտնում է, որ իր վերաբերմունքը դեպի Կոմիտետը կարող է լինել միայն բացասական:

Ներկա Կոմիտետը, որպես գործադիր օրգան երկիրը կառավարելու համար պետք է փոխարինվի հեղափոխական օրգանով, կազմված բոլոր ազգությունների սոցիալիստական և հեղափոխական կուսակցությունների ներկայացուցիչներից:

5. Դպրոցների ազգայնացում:

Դպրոցները պետք է անհապաղ ազգայնացվեն, հայերենի դասավանդությունը պետք է դրված լինի բարձր մակերևույթի վրա:

6. Փախստականների հարց:

Ընդունելով այդ հարցի մեծ կարևորությունը Հայաստանի ապագայի տեսակետից, այժմից իսկ պետք է մշակել միջոցներ փախստականներին վերադարձնելու և վերաբնակեցնելու իրանց հայրենի երկրի մեջ: Վերջին պարագայի հետ կապ ունեցող շինարարական խնդիրների կանոնավորման և հաջող լուծման համար Հայ տեխնիկական ընկերությունը առաջարկում է իր ծառայությունը և տեխնիկական ուժերը: Փախստականներին վերաբերող գործերի լավագույն ընթացքի տեսակետից, ժողովը անհրաժեշտ է համարում նրանց ներկայացուցիչների լայն և պարտավորացուցիչ մասնակցությունը նրանց օգնություն մատուցանող բոլոր կազմակերպությունների մեջ:

7. Ճակատի ամրացումը:

Վերջին ժամանակներում զորքի մեջ նկատվող կազմալուծման նկատմամբ ժողովը գտնում է անհրաժեշտ կռվել դասալքության դեմ ընդհանրապես և հայ զինվորների մեջ մասնավորապես: Ներկա քաղաքական մոմենտը անհրաժեշտ է դարձնում հայկական զորամասերի կազմակերպումը. այդ զորամասերին հայկական շրջանները պետք է ցույց տան ամեն աջակցություն: Միևնույն ժամանակ ի նկատի ունենալով սերտ կապը ճակատի և թիկունքի մեջ, վերջինում անհրաժեշտ է կազմակերպել ժողովրդական միլիցիա, խոսքի ամենալայն մտքով:

8. Տեղական իշխանության կազմակերպումը:

Այդ խնդրի լուծումը ժողովը համարում է կապված առ[անձին] Կովկ[ասյան] կոմիտետի վերակազմության հետ:

Տեղի ունեցող պատմական անցքերը հարուցել են, մի կողմից, Կովկասի և Անդրկովկասի քաղաքական վերակազմության վերաբերյալ և, մյուս կողմից, Տաճկահայաստանի ավտոնոմիայի կարևորագույն խնդիրները: Այդ առթիվ, ի նկատի ունենալով մոտիկ ապագայում կայանալիք Հիմնադիր ժողովը, Հայ Տ[եխնիկական] ընկերության ժողովը գտնում է, որ՝

9. Առաջին, հիմնվելով ժամանակավոր կառավարության հրապարակած հասարակապետական կարգի և Ռուսաստանի առանձին ազգությունների ինքնորոշման սկզբունքի վրա, բնականաբար դրված պետք է համարել մեր երկրի քաղաքական վերակազմության հարցը դեմոկրատական հիմունքների վրա՝ որպես Համառուսական ֆեդերատիվ հասարակապետության մի մասի:

10. Երկրորդ, Դաշնակից մեծ տերություններից նախավճռված Տաճկահայաստանի ավտոնոմիան պետք է ընդունվի և անմիջապես հրատարակվի ժամանակավոր կառավարության կողմից:

Գ.17, թ.60-61 և հակ.:

դ. Հայտարարություններ, դիմումներ, նամակներ, գրություններ

N 53

ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեի բանաձևը Հայկական «Ազգային» խորհրդակցության առթիվ*

19 սեպտեմբերի 1917թ.

Նկատի ունենալով՝

1) որ հայկական այսպես կոչված «ազգային» խորհրդակցությունը հանդիսանում է խոշոր բուրժուազիայի կառքին լծած ու ռեակցիոն հոգևորականներից դեռևս չխզված մանր բուրժուազիայի նացիոնալիստական հնարքը և կրում է բուրժուա-կղերական բնույթ, քանի որ նրանում հսկայական ճնշող գերակշռությամբ մասնակցում են այնպիսի հաստատություններ, որոնք միշտ էլ բուրժազիայի և հոգևորականության ձեռքին հանդիսացել են դեմոկրատական մասսաներին խաբելու գործիք, որոնք երբեք չեն ներկայացվել այդ հաստատություններում, իսկ բանվորական կազմակերպությունները և չքավոր գյուղացիությունը բոլորովին մեկուսացված են,

2) որ հայ պրոլետարիատն ու չքավոր գյուղացիությունը ոչ մի ընդհանուր շահ չունեն հայ բուրժազիայի և հոգևորականության հետ, հետևաբար, առանց առաջինների շահերին վնասելու ռևոլյուցիոն սոցիալիստական պրոլետարիատի և հակառևոլյուցիոն բուրժազիայի տրամագծորեն հակադիր կամքից չի կարող մեկ ընդհանուր ազգային կամք ստեղծվել, - միակ նպատակը, որին ձգտում է խորհրդակցությունը, այն է, որ խաբեբայորեն ամրապնդի և ուժեղացնի բուրժուազիայի տիրապետությունն ու ազդեցությունը հայկական կյանքում և, այդպիսով, հայ ժողովրդին զոհաբերի համառուսական գիշատիչ-կապիտալիստների իմպերիալիստական իղձերին,

3) որ հայ բուրժուազիայի հետ հայ պրոլետարիատի և գյուղացիության չքավորության համաձայնողականությունն ու ազգային միավորումը կնշանակի դավաճանել ինտերնացիոնալիստական պրոլետարական տակտիկային և ռևոլյուցիային՝ ի հաճույս հայ իմպերիալիստական բուրժուազիայի և նացիոնալիստական մանր բուրժուազիայի՝ դաշնակցության պարտիայի գլխավորությամբ, որոնք ձգտում են հայ պրոլետարիատին և չքավոր գյուղացիությանը պարտադրել, մի կողմից՝ բուրժուազիայի իմպերիալիստական և հակառևոլյուցիոն քաղաքականությունը, իսկ մյուս կողմից՝ պաշտպանողական պարտիաների վախկոտ և դավաճանական քաղաքականությունը,

4) որ խորհրդակցության լուծմանը ենթակա հարցերը ընդհանուր քաղաքական հարցեր են պրոլետարիատին ու գյուղացիությանը գոհացնելու իմաստով դրանք լուծվել կարող են միայն Ռուսաստանի և Կովկասի բոլոր ազգությունների պրոլետարական-ռևոլյուցիոն տարրերի համատեղ պայքարում, այլ ոչ թե ազգի շրջանակներում՝ պրոլետարիատի ու բուրժուազիայի խայտառակ և դավաճանական համաձայնողականությամբ,

ՌՍԴԲ (բոլշևիկների) Կ Թիֆլիսի կազմակերպության կոմիտեն որոշում է հրաժարվել իր ներկայացուցիչները խորհրդակցություն ուղարկելուց և բանվորներին, զինվորներին ու գյուղացիներին կոչ է անում եռանդուն կերպով բողոքել այդ

* Փատաթղթի վերնագիրն է:

դավաճանության դեմ, նշանակել այն որպես նացիոնալիստական հակաբանվորական և հակառևոլյուցիոն:

«Кавказский рабочий» թերթ, N 158, 25.09.1917: Թարգմանություն ռուսերենից: Տպագրվում է ըստ «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում» փաստաթղթերի ու նյութերի ժողովածուի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1960, էջ 73-74:

N 54

Պետրոգրադի բնակիչ Թադեոս Տեր-Հովսեփյանցի նամակը Տիգրան Նազարյանին՝ անկախ Հայաստան ստեղծելու մասին իր առաջարկությունը Ազգային համախորհրդակցությանը հանձնելու մասին

25 սեպտեմբերի 1917թ.
Պետրոգրադ

Մեծապատիվ պ. Տիգրան Նազարյան

Դիմում եմ Ձեզ խոնարհաբար խնդիրքով՝ խնդրում եմ հետևյալ հարցն առաջարկել Ազգային համախորհրդակցության ի որոշում, եթե այն գտնվի համապատասխան և օգտակար: Իսկ եթե ուշ հասնի Ձեզ նամակս, խնդրում եմ տեղվույդ ազգային գործիչների քննությանն առաջարկել նորան նույն նպատակով:

Հարցը անկախ Հայաստանի հարցն է:

Ցավոք սրտի պիտի շեշտել (констатировать) այն փաստը, որ երբ հաշտության վերաբերմամբ հարց է հանվում հրապարակ, պետությունների ներկայացուցիչները իրենց գրությունների կամ ճառերից մեջ միշտ հիշելով ուրիշ փոքր ազգերի վերականգնման հարցը, խեղճ ու անճար Հայաստանի անունը երբեք չեն հիշում: Մինչդեռ Հայաստանի որդիները, թվով ոչ պակաս 400.000-500.000 զինվորներ, արյուն են թափել պատերազմների դաշտերում և իրանց բացարձակ միությունով միության պետությունների հետ (Правительства согласия)* առաջացրել են իրանց համար մահաբեր կոտրվածք** անխիղճ Գերմանո-Թուրքիայի կողմից:

Մեր զինվորների թափած արյունը գործող զորամասերում հօգուտ միության գործի և անթիվ անմեղ զոհերի թափած արյունը Թուրքիայի անապատներում մեզ իրավունք են տալիս բարձրաձայն կոչել և պահանջել Հայաստանի անկախությունը: Այդ չարաբախտ հարցը պատերազմի համարյա նախօրյակին արդեն սկսվել էր իրականություն դառնալ ի դիմաց նշանակված եվրոպական կոմիսարների, բայց...

Մեր ձայնը լսելի անելու մեզ հարկավոր է բոլոր պատերազմող և չեզոք պետությունների մայրաքաղաքներում ունենալ ազգային քաղաքական ներկայացուցիչներ (в роде посольства или политического агентства), որոնք օգտվելով ամեն առիթից և հանգամանքից, պիտի հիշեցնեն կառավարությունների պետերին Հայաստանի վերականգնման հարցը: Մեր քաղաքական ներկայացուցիչների, ինչպես և ամեն մի հայի նշանաբանը պիտի լինի՝ «Մի կտոր չոր հող, որի անունը լինի անկախ Հայաստան»: Ամեն մի հայ ամեն մի տեղ, ամեն մի անկյունում պիտի գոռա և գոչե այդ նշանաբանը մինչև նորա իրականություն դառնալը:

* Նկատի ունի Անտանտը:
** Նկատի ունի արևմտահայության ցեղասպանությունը Առաջին աշխարհամարտի տարիներին:

Քաղաքական ներկայացուցիչներ պիտի ունենալ նաև հակառակ միությանց պետությունների* մայրաքաղաքներում, բացի Թուրքիայից և Բուլղարիայից: Խոմ աշխարհիս բոլոր հայերը միաձայն կողմնակից չեն միության պետությունների հետ: Անշուշտ, կան և հակառակի կողմնակիցներ: Այդ շատ փափուկ հարց է, բայց ամեն մի հայ պիտի գործե և աշխատե ամեն տեղ հօգուտ վերոհիշյալ սուրբ նշանաբանի: Օգտվենք լեհացիների քաղաքականությունից:

Ուրեմն, պիտի աշխատել կազմակերպել քաղաքական ներկայացուցիչներ բոլոր երկրներում և այդոնք պիտի նյութապես ապահով լինեն ազգի կողմից:

Կարծում եմ, որ Արևմտյան Եվրոպայում մեր քաղաքական ներկայացուցիչները կարող էին գործել Պողոս Նուբար փաշայի փորձված ընդհանուր նախագահությամբ: Թիֆլիսում կամ էջմիածնում պիտի ունենալ ընդհանուր քաղաքական մարմին, որը կունենա կապ բոլոր արտաքին քաղաքական ներկայացուցիչների հետ:

Ես մտադիր էի այս հարցի մասին խոսալ Պետրոգրադի ներկայացուցիչների հետ, բայց չհաջողվեց ինձ իմանալ, ովքեր պիտի լինեն: Այդու հարկադրված եմ նեղություն տալ Ձեզ իմ այս խնդրով, որի համար կհուսամ, որ ներողամիտ կլինեք:

Պ.Չարուխյան (խնդրեց Ձեզ ողջունել) ինձ ասաց, որ մի նամակ է տված Գարեգին եպիսկոպոսին Պոլոժենիայի փոփոխման վերաբերմամբ դեռևս մայիսին, բայց մինչև օրս ոչինչ արված չէ այդ հարցում: Ամեն հարց հետաձգել Учредит. собрание-ին, իմ կարծիքով, չի կարելի: Պիտի այժմևեթ վերականգնել Հայաստանի եկեղեցվո անկախությունը (автономия), եթե կարողանանք, շարժեցեք այդ հարցը ևս:

Նամակիս բովանդակության վերաբերմամբ կայացած որոշումը խնդրեմ չզլանալ հայտնել նվաստիս:

Խորին հարգանոք՝ Թ.Տեր-Հովսեփյանց

Հասցես՝ Петроград*, ... д.8, кв.12. Военному инженеру, полковнику Матевосу Аристакесовичу Тер-Осипианцу.

Գ.17, թ.64-65 և հակ.:

N 55

Սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի ներկայացուցիչ, պատգամավոր Մ.Դարբինյանի հայտարարությունը

1 հոկտեմբերի 1917թ.

Քաղաքացիներ՛ր:

Երեկ այստեղ ս.-դեմ. մի մասի կողմից խոսեց ընկ. Դ.Անանունը և պաշտպանեց կոալիցիայի սկզբունքը: Հիմնական, սկզբունքային կետերում, այն, ինչ որ վերաբերում է մարքսիստական արշխարհայացքին, համաձայն լինելով ս.-դեմ.-ի մի մասը համաձայն չէ կոալիցիային:

Ընկ. Անանունը ասաց, որ բուժուազիան պետք է ձեռք մեկնի պրոլետարիատին և նրա վրա քար չպետք է նետի, որովհետև այդ պրոլետարիատը

* Եռյակ դաշինքի (տվյալ դեպքում՝ Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի) մայրաքաղաքներում:
* Հաջորդ բառը՝ անընթեռնելի:

նրան (բուրժուազիային) խոշոր ծառայություն է մատուցել, այն է՝ ազատել է նրան բռնակալությունից:

Սակայն այս 6-7 ամսվա պատմությունը մեզ ապացուցեց, որ բուրժուազիան ոչ միայն ձեռք չի մեկնել պրոլետարիատին, այլ միանգամայն չի ուզում իր դիրքերից որևէ մեկը զիջել և շարունակ քարեր է նետում պրոլետարիատի վրա: Ինչ ավելի խոշոր քար կարող է լինել, քան Կորնիլովյան ապստամբությունը, որ իր համախոհ շարքով ուզում էր արշավե Պետրոգրադի վրա և ցրել հեղափոխական խորհուրդները: Շատ տեղին և իրավացի է պատգամավոր Հ.Ժ. կուսակցական պ.Վերմիշյանի այն դիտողությունը, թե վեց ամսից հետո դեմոկրատիան նորից խնդրում է կոալիցիա, մի բան, որ վեց ամիս առաջ ժամանակավոր կառավարությունը պնդում էր: Սակայն պարոնը մոռանում է, որ վեց ամիս առաջ, հենց հեղափոխության առաջին օրերը, դեմոկրատիայի ձախ թևը (բոլշևիկները) դեմ էին կոալիցիայի և պնդում էին, որ երկիշխանություն չպետք է լինի երկրում: Սակայն սոցիալիստ մինիստրները ճակատագրական սխալ գործեցին բուրժուազիայի հետ գործակցելով:

Այս 6-7 ամսվա պատմությունը ապացուցում է, որ բուրժուազիայի հետ գործակցելը միմիայն վնաս է բերում դեմոկրատիային:

Չնայելով, որ ես պատկանում եմ բոլշևիկյան հոսանքի, որը բոյկոտի է ենթարկել այս համախորհրդակցությունը, բայց թե իմ անձնական համոզմունքներով ես մասնակցում եմ: Ես գտնում եմ, որ հայ իրականության մեջ գործելու համար անհրաժեշտ է ընդգծել մի ընդհանուր պլատֆորմա: Եվ եթե այստեղ խոսք է լինում փոխադարձ զիջումների մասին, այդ զիջումները պետք է լինեն մինչև օրս տիրող դասերի՝ բուրժուազիայի և կուլակների կողմից:

Նույն գործը, թ.66-67:

N 56

ՌՍԴԲԿ (բոլշևիկների) Թիֆլիսի կոմիտեի քարտուղար Ա.Միկոյանի գրությունը Համախորհրդակցության նախագահությանը՝ բոլշևիկների կողմից Ազգային խորհրդակցությունը բոյկոտելու և Մաթեոս Դարբինյանի հայտարարությունը չեղյալ հայտարարելու մասին

N 104 1 հոկտեմբերի 1917թ.

Հայ ազգային համախորհրդակցության մեծարգո նախագահության

Սրանով հայտնում ենք մեծարգո նախագահությանդ և խնդրում ենք հայտարարել ի գիտություն Համախորհրդակցությանը, որ Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական կուսակցությունը բոյկոտ է հայտարարել Ազգային խորհրդակցությանը և կարգադրել, որ իր բոլոր անդամները նույնպես չմասնակցեն: Համապատասխան ռեզոլուցիա ընդունել է Թիֆլ[իսի] կոմիտեն և տպել «Кавк[азский] раб[очий]» և «Բանվորի կռիվ»* թերթերում: Նույնպիսի ռեզուլիցիաներ ընդունել են նաև Շուշու և Ալեքսանդրապոլի մեր կազմակերպությունները:

Իսկ ինչ վերաբերում է քաղ.Մաթեոս Դարբինյանին, հայտնում նեք, որ նա կուսակցության շարեքրից դուրս է գտնվում:

Նորից հիշեցնում ենք Խորհրդակցությանդ, որ մեր կողմից ոչ ոք լիազորված չէ խորհրդակցությանը մասնակցել և բոլշևիկների անունից խոսել:»

* Տե՛ս N 54 փաստաթուղթը:

Քարտուղար՝ Ռ.Ս.Դ.Բ.Կ.(բոլշևիկների)
Թիֆլիսի կոմիտեի Ա.Միկոյան

Նույն գործը, թ.71:

N 57

Մ.Դարբինյանի լրացուցիչ հայտարարությունը Համախորհրդակցության նախագահությանը

1 հոկտեմբերի 1917թ.

Հայտնում եմ ի գիտություն նախագահության, որ ես խոսել եմ ոչ թե մեծամասնական ֆրակցայի կողմից, այլ որպես սոսկ մի անհատ, որ պատկանում է այդ հոսանքին:

Իմ հայտարարությունը այդ առթիվ եղել է հետևյալը. «Չնայելով, որ տեղիս մեծամասնական ֆրակցիան բոյկոտի է ենթարկել ներկա համախորհրդակցությունը, բայց ես անհատապես կարևոր եմ համարել մասնակցելու նրան»:

Նախագահութունը, եթե կարևոր համարի, կարող է հայտարարել Համախորհրդակցությանը:

Մ.Դարբինյան

Նույն գործը, թ.72:

N 58

Խորհրդակցությանը հրավիրված Հայ արվեստագետների միության ներկայացուցիչների դիմումը խորհրդակցության նախագահությանը՝ պատմական արժեք ունեցող հայ մշակույթի ու գեղարվեստի հուշարձանների պահպանության խնդրի վրա պատշաճ ուշադրություն դարձնելու մասին

7 հոկտեմբերի 1917թ.
Թիֆլիս

Ազգային համախորհրդակցության պատկառելի պրեզիդիումին

Ի նկատի ունենալով, որ հայ ազգային կուլտուրական և գեղարվեստական պատմական հիշատակարանները թե՛ Արևելյան և թե՛ Արևմտյան Հայաստանում ներկայումս գտնվում են վերին աստիճանի անմխիթար դրության մեջ:

Ի նկատի ունենալով, որ մենք, ժամանակակից հայ քաղաքական-հասարակակյան ու մտավոր կյանը ղեկավարողներս, մեր այս անտարբերությամբ ու ապագայի հայ կուլտուրական կյանքի հիմքը կազմող նվիրական մնացորդները կորցնելով մեծ պատասխանատվություն ենք վերցնում մեր վրա՝ հանդեպ հետագա սերունդների:

Հայ արվեստագետների միության խորհուրդը իր բարոյական պատասխանատվությունն է համարում իր պատգամավորներ պ.Շարբաբչյանի և պ.Սարյանի միջոցով և այս գրությամբ դիմել Համազգային խորհրդակցության հարգելի պրեզիդիումին, որ ի թիվս այլ կարևոր և անհետաձգելի հարցրի, նա, կամ

Համախորհրդակցության վերջում ընտրվող մնայուն մարմինը չմոռանա լուրջ կերպով զբաղվել այս հարցով:

Հայ արվեստագետների միության խորհուրդը նպատակահարմար է գտնում, որ մնայուն մարմնիս կից կազմվի մի առանձին համաժողով՝ ընտրված գործիս քաջածանոթ և հմուտ անձնավորություններից, որը, մշակելով իր գործունեության համար մի ծրագիր և կատար ածել այդ ցանկալի և մեծ գործը:

Համազգային խորհրդակցության մեջ մտնող
Հայ արվեստագետների միության ներկայացուցիչներ՝
Մ.Սարյան
Գ.Շարբաբչյան»
Ճիշտ է՝ քարտուղար-անդամ Հայ
արվեստագետ[ների] միության՝ Գարեգին*»

Նույն գործը, թ.62 և հակ.:

N 59

Գեներալ-մայոր Անդրանիկ Օզանյանի հայտարարությունը

7 հոկտեմբերի 1917թ.
Թիֆլիս

Ազգային համախորհրդի ուշադրության

Ազգային համախորհրդին [կից] կազմված մարմինը եթե կհրամայի իմ վրա ինկած պարտականության և գործի բաժինը կատարել, ամենայն ուրախությամբ պատրաստ եմ ընդառաջ երթալ անոր կարգադրություններուն:

Անդրանիկ

«Հայաստան», 07.10.1917:

N 60

Մեսրոպ և Բագրատ եպիսկոպոսների դիմումը Ազգային համախորհրդի նախագահությանը՝ գործադիր խորհրդի կազմում Հայոց կաթողիկոսի ներկայացուցիչ ունենալու խնդրանքով

12 հոկտեմբերի 1917թ.
Թիֆլիս

Հայոց Ազգային համախորհրդին:

Ազգային համախորհուրդը, իբրև եզրակացություն յուր զբաղմունքների որոշել է կազմել մի գործադիր խորհուրդ, պատասխանատու և իրավատեր, կատարելու այս Համախորհրդի որոշումները և ժամանակավորապես կարգավորելու մեր ընթացիկ կարևոր խնդիրները մինչև ազգային օրինական ժողովի հրավիրելը:

* Ազգանունն անընթեռնելի է:

Ամենայն Հայոց Վեհափառ կաթողիկոսի ներկայացուցիչներս, քանի որ չէինք մասնակցում պրեզիդիումին և Ավագների խորհրդին, Հայ ժողովրդական կուսակցության ներկայացուցիչ պ. Միքայել Պապաջանյանի միջոցով հայտնեցինք պրեզիդիումին, որ պետք է ունենալ գործադիր մարմնի մեջ Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից մի ներկայացուցիչ: Պ.Միքայել Պապաջանյանը հայտնեց, որ այս պահանջը նույնիսկ քննության չի առնվել, այլ ուղղակի մերժվել է:

Ի նկատի ունենալով, որ Համախորհուրդն իրավատեր էր միայն համազգային կյանքի գործոն ուժերի մեջ հառաջ բերելու համերաշխ համագործակցություն ազգային գործունեության ասպարեզում և որ Հայոց ժողովրդական եկեղեցին յուր համազգային ժողովով ընտրված Վեհափառ կաթողիկոսով ունեցել է և ունի այդ գործոն դերը, մենք՝ Ամենայն Հայոց կաթողիկոսի ներկայացուցիչներս, գտնում ենք, որ ներկա վերին աստիճանի ծանր ու պատասխանատու մոմենտում Ազգային համախորհուրդն իրավատեր չէ այդպես վարվելու, որի դեմ ցավելով բողոքում ենք:

Մեսրոպ եպիսկոպոս
Բագրատ եպիսկոպոս

Գ.17, թ.59 և հակ.:

N 61

Տ.Դևոյանի երկտողը համախորհրդակցության նիստի նախագահին՝ ելույթ ունենալու ցանկության մասին

[Հոկտեմբեր] 1917թ.

Պ.Նախագահ

Որովհետև Վանի ընդհանուր նահանջի մասին պ.Անդրանիկի կողմից հայտարարություն եղավ, իբրև թե ես սխալ տեղեկություն եմ տվել թշնամու ուժերի մասին (2-րդ դիվիզիա) և հետևաբար նահանջի պատճառը ես եմ եղել, կխնդրեի կրկին բարեհաճեիք ժողովի համաձայնությամբ թույլ տայիք ինձ որպես բացառություն տայի իմ բացատրությունները այդ ընդհանուր նահանջի մասին:[2]

Տ.Դևոյան

Նույն գործը, թ.68:

N 62

Հայ ժողովրդական կուսակցության և Ազգային համախորհրդակցության մասնակից անկուսակցական պատգամավորների հայտարարությունը

[Հոկտեմբեր] 1917թ.
Տփխիս

Հայ ժողովուրդը համաշխարհային պատերազմի ու ռուս հեղափոխության հետևանքով ապրում է պատմական այնպիսի մի մոմենտ, երբ վտանգ է սպառնում ոչ միայն նրա ազգային-կուլտուրական զարգացման, այլ անգամ նրա գոյության: Հայ կյանքի այսպիսի օրհասական պայմաններում, ամեն մի հայի ու յուրաքանչյուր կուսակցության սրբազան պարտականությունն էր լինելու, զգալով քաղաքական ներկա մոմենտի մեծ պատասխանատվությունը, դիմելով գործնական ու շինարար

աշխատանքի, երկրորդական տեղ տալով առժամանակ կուսակցական իդեոլոգների տարբերության:

Ռուսահայ ազգային խորհրդակցության...* օրվա նիստերը ցույց են տալիս, որ անհաշտ կուսակցությունը խանգարում է խորհրդացությանս բեղմնավոր աշխատությունները, որոնք հայ ժողովրդի արդի կացության հրամայական պահանջն են: Կուսակցությունների գործելակերպը այս խորհրդաժողովում իրական իր հետևանքներով կարող է դառնալ ստեղծագործական շինարար աշխատանքի ամենամեծ արգելքը:

Ռուսահայ Ազգային խորհրդակցության արտակուսակցական պատգամավորները հայտարարում են, որ իրանք ուղարկված են այստեղ շինարար գործ կատարելու, ուստի մատնանշելով խորհրդակցության զբաղմունքների սխալ ընթացքը, կոչ են անում անմիջապես անցնել շինարար գործունեության:

Հ.Մանանդյան
Գրիգոր Չալխուշյան
Անդրանիկ
Ա.Ասրիյան
Լեո*

Նույն գործը, թ.26:

N 63

Հայ Հեղափոխական Դաշնակցության հռչակագիրը

Դեկլարացիա Դ.Կողմից*

Դաշնակցական ֆրակցիան, իր այսօրվա արած կտրուկ և որոշ բացատրություններից հետո, իրավունք ուներ սպասելու, որ երեկվա միջադեպը սպառված պիտի համարվեր: Բայց սոցիալ-դեմոկրատական և սոցիալ-հեղափոխական ֆրակցիաների միացյալ հայտարարությունը հարկադրում է մեզ ասել հետևյալը.

1. Մասնակցելով Ազգային խորհրդակցության, ՀՀԴ-յունը, ինչպես միշտ, այսօր ևս միանգամայն գիտակցում է այն մեծ պատասխանատվությունը, որ ընկնում է իր վրա ներկա բացառիկ պայմաններում հանդեպ հայ աշխատավոր ժողովրդի:

2. Ձգտելով հայ աշխատավոր ժողովուրդը ավելի սերտ կերպով կապել Ռուսաստանի և Կովկասի հեղափոխական դեմոկրատիայի միջազգային ընտանիքի հետ և ապահովել նրա սոցիալ-քաղաքական ազատագրումը և ֆիզիկական անվտանգ գոյությունը, մենք պիտի շարունակենք կռվել այն բոլոր փորձերի դեմ, որոնք նպատակ ունեն մեկուսացնելու հայ ժողովուրդը:

3. Իր գործելակերպով ու մտածելակերպով ՀՀԴ-յունը կանգնած է այն միջազգային ուղիի վրա, որ իսկապես տանելու է դեպի վերոհիշյալ նպատակների իրագործումը Ռուսաստանի և, մասնավորապես, Անդրկովկասի բոլոր հեղափոխական տարրերի հետ միասին:

Մեր ընկեր Ն.Աղբալյանը իր զեկուցման մեջ, մեկնելով միջազգային սոցիալիզմի ողջամիտ և գիտական ըմբռնումից, շեշտեց այն իրական ճանապարհները, որոնք կարող են առաջ բերել կատարյալ վստահություն

* Հաջորդ բառն անընթեռնելի է:
* Մեկ ստորագրություն անընթեռնելի է:
* Վերնագիրը փաստաթղթինն է:

Անդրկովկասի բոլոր ժողովուրդների միջև և համերաշխության հաստատուն հիմքեր ստեղծել մեր և մեր հարևանների համար: Սակայն մենք չենք կարող հրապարակով չմատնանշել, որ ձգտելով վարկաբեկել մեր հարևանների առջև հայ ժողովրդի ...* հեղափոխականներից որոշ տարրեր իրենց գործելակերպով խոչընդոտ են հանդիսանում այդ մերձեցման:

Մենք հայտարարում ենք Ազգային խորհրդակցության, որ եկել ենք այստեղ ոչ թե հրաժարվելու մեր աշխարհայեցողությունից, այլ հայ ժողովրդի բոլոր գործուն տարրերի հետ համաձայնության գալու այն գործնական միջոցների վերաբերմամբ, որոնք իրապես պիտի ապահովեն ազգամիջյան համերաշխությունը Կովկասում և գործակցությունը համառուսական դեմոկրատիայի հետ՝ հանուն հայ աշխատավոր ժողովրդի կենսական շահերի և ռուսական մեծ հեղափոխության հաղթանակի:

Նույն գործը, թ.25 և հակ.:

Ե. ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

N 64

Հայոց ազգային համախորհրդակցության աշխատանքների վերլուծությունը ըստ վրաց «Էրթոբա»* լրագրի՝ թարգմանաբար արտատպված «Հորիզոն» թերթում

8 հոկտեմբերի 1917թ.
Թիֆլիս

Վրաց լրագիրները շատ համառոտ տեղեկություններ են տալիս Հայոց Ազգային խորհրդաժողովի մասին: Այդ տեղեկություններն էլ, ըստ երևույթին, նրանք քաղում են տեղական ռուս լրագիրներից:

«Էրթոբա»-ն սաստիկ պախարակում է Թիֆլիսի հայտնի հայատյաց «Возрождение» լրագրի այս օրերս նորից հայերի դեմ հանդես գալը՝ հիշյալ խորհրդաժողովի առիթով: Ռուսերեն լեզվով հրատարակվող վրաց ինտելիգենցիայի մի մասի այդ օրգանը ի միջի այլոց ասել է. «Հայերը մի անգամ ընդմիշտ պետք է հրաժարվեն Վրաստանում հարձակողական քաղաքականություն վարելու սովորությունից, հրաժարվեն ամեն տեսակ նորանոր սահմաններ գծելու ձգտումից, վրացական հողն ու ջուրը ծածուկ կերպով հափշտակելու մտքից և աշխատեն իրենց հայրենիքը վերականգնել ոչ Վրաստանի ավերակների վրա, Վրաստանի, որ դեռևս կենդանի է և ապագայում էլ ապրելու մտադրություն ունի»:

Ազգայնական լրագրի այս խոսքերի առթիվ «Էրթոբա»-ն գրում է.

«Ապշեցուցիչ է: Ո՞վ է տվել արդյոք այդ պարոններին իրավունք վրաց ժողովրդի կողմից այդպիսի պոռոտախոսություն անելու և այդ օրինակ մեղադրական ակտեր կայացնելու: Վրաց դեմոկրատիան դրանց իր շահերի պաշտպան ու միջազգային դատախազ չէ ընտրել:

Մի ազգի կողմից մյուսի վերաբերմամբ այդպիսի մեղադրանքներ ու պահանջներ դնելը ծառայում է միայն մի նպատակի - ժողովուրդների միջև ատելություն ու թշնամություն զարգացնելուն:

Հայ ազգայնականները իրենց համագումարում ասում են, թե վրացիք իրենց դեմ են գործում և մեր խելքին զոռ տվող նացիոնալիստներն էլ կարծես հենց այդ

* Բնագրում մեկ-երկու տող վնասված է:
* «Միասնություն»:

միտքը հաստատելու համար այնպիսի մեղադրական ակտեր են հորինում, որոնք վրաց ժողովրդի մտքովն էլ չեն անցել:

Հանգստացե՛ք, պարոն ազգայնականնե՛ր, աշխարհքը ձեր կտցահարելու համար չէ ստեղծվել: Դեմոկրատիան ինքը կարող է իր անելիքներն անել, իր գլխի ճարը տեսնել, ազգերի միջև հաշտություն ու համերաշխություն առաջացնել: Նա ձեր խնամակալության կարիք չունի»:

«Հորիզոն», 08.10.1917

N 65

Վրաց «Սախալխո Սաքմե»* լրագրում տպագրված «Հայոց խորհրդաժողովը և տարօրինակ կարծիքներ» հոդվածը՝ թարգմանաբար արտատպված «Հորիզոն» թերթում

12 հոկտեմբերի 1917թ.
Թիֆլիս

Այդ վերնագրով «Սախալխո Սաքմե» լրագիրը իր N 71-ում տպագրել է հետևյալ առաջնորդող հոդվածը.

«Թիֆլիսում տեղի ունի Հայոց խորհրդաժողովը: Ժողովը դեպի ինքը գրավեց հայ ժողովրդի բոլոր մասերը, բոլոր կուսակցությունները, բոլշևիկների բացառությամբ, որոնք բողոքով դիմավորեցին ազգային խորհրդաժողովին: Դրանց բողոքը ոչ մի տպավորություն չգործեց խորհրդաժողովի վրա: Հայ ազգի մեջ սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը չափազանց անզոր է և չպետք է զարմանանք, որ այդ անզոր կուսակցության մի թևին ոչ ոք նշանակություն չի տալիս: Բացի կուսակցություններից, խորհրդաժողովում մասնակցություն ունեն հայոց համարյա բոլոր կուլտուրական հիմնարկությունների ներկայացուցիչները: Առհասարակ հայերն այնքան մեծ կարևորություն են տալիս այդ խորհրդաժողովին, որ նա, անկասկած, շատ մեծ նշանակություն կունենա հայկական իդեոլոգիայի մշակման համար:

Մենք, վրացիներս, հեշտությամբ կարող ենք ըմբռնել ազգային ժողովի ուժն ու հեղինակությունը: Մեր ամբողջ զգացմունքն ու միտքը ուղղված է ազգային ժողովներ հրավիրելու կողմը և մեր բարօրության համար էլ գործոն ենք համարում հարևան ազգի ժողովով հանդես գալը, որը մեր մեջ էլ արձագանք կը գտնե: Ամբողջ Ռուսաստանում համարյա միայն վրացիք են մնացել, որ իրենց ազգային ուղղությունը մաքսանենգությամբ են երևան հանում, չհամարձակվելով բաց ճակատով որևէ ազգային գործի ծեռնարկել: Այդպիսով հայոց ազգային ժողովը թանկագին մի բան է ոչ միայն իրենց՝ հայերի, այլև մեր՝ վրացիների համար. նա կը նպաստե և մեր պատրաստվելուն ու հանդես գալուն: Հավատացած ենք, որ ապագայում վրացիք էլ կը հաջողեցնեն զուտ ազգային ժողով հրավիրել, որպեսզի հետո էլ կարողանանք միջազգային ժողով գլուխ բերել, ժողով, որ միջազգային Անդրկովկասի համար վերջնականապես մի միջազգային ու ֆեդերատիվ կազմակերպության հիմքը կը ձգե:

Բացի այն փաստից, որ ազգային ժողովը գումարվեց և անգնահատելի նշանակություն ունի, նորերևույթ պետք է համարվի «Դաշնակցություն» կուսակցության այն հայտարարությունը, թե հայ ազգը Անդրկովկասում Պետական ազգ է (ընդգծումը վրաց լրագրինն է): Դաշնակցությունը սխալ չգործեց իր այդ հայտարարությամբ և ճշմարտությամբ ներկայացրեց ազգային խորհրդաժողովի ոգին, որպեսզի միաժամանակ ներկայացնե նաև հայ ժողովրդի ամբողջությունը:

* «Ժողովրդական գործ»:

Պետականության սկզբունքով տոգորված այդ դեկլարացիան ինքնին արդեն վճռում է ազգի քաղաքական պատկերի պրոբլեմը և մենք կարող ենք ասել, որ այսուհետև հայ ժողովրդի մեջ այլևս գոյություն չեն ունենա այն կասկածն ու կամքի թուլությունը, որ նկատվում էին ավտոնոմիա պահանջելու հարցում:

Սակայն մենք միաժամանակ պետք է անպատճառ մատնանշենք այն ստրկական հոգեբանությունը, որ չեն կարողացել ազատվել նույնիսկ այն անձինք, որոնք հպարտությամբ խոստովանում են, թե հայերը մի հեղինակավոր պետական երևույթ են ներկայացնում: Ն.Աղբալյանն էր հայերին պետական ազգ հայտարարելու հեղինակը, մի ճառախոս, որի յուրաքանչյուր խոսքը ոգևորություն էր պատճառում խորհրդաժողովի ահագին մեծամասնության: Այդ պարոնը հետևյալ ողորմելի կարծիքն է հայտնում. «Մեզ հարկավոր է այնպիսի մի տարր, որը հաշտեցնող դեր է կատարում տեղական ժողովուրդների համար: Այդպիսի չեզոք տարր կազմում են ռուսները Կովկասում»:

Չենք կարողանում հասկանալ, թե ինչպե՞ս է, որ ազգային հողի վրա կանգնած և հեղինակավոր դրդապատճառներ հայտարարող մի հասարակական գործիչ անընդունակ է հանդիսանում վերջնականապես ոտքի վրա պինդ կանգնելու և ազգի ուժն ու բարօրությունը արտաքին «չեզոք» ուժերի մեջ է տեսնում: Ցավալի է, լսել այդպիսի մի կարծիք, քանի որ դրա նման դատողություն մենք չենք տեսել ո՛չ ուկրաինացիների, ո՛չ բելոռուսների, ո՛չ լիտվացիների, ո՛չ մահմեդականների համագումարներում և ոչ էլ ուրիշ որևէ տեղ: Այդօրինակ հայտարարությունն անարգական է հենց ազգի պատվի և իրավունքի համար, որովհետև յուրաքանչյուր ազգի համար քաղաքական ձևեր պետք է որոնել հենց իրա՝ ազգի մեջ, իսկ որևէ տարրի չեզոքացումն ու մեկուսացումը պետք է կատարվի քաղաքական-ազգային հավասարության սկզբունքի և ոչ մի ուրիշ մոտիվի համեմատ, որովհետև ամեն մի ազգ հեղինակավոր կազմակերպություն է՝ սեփական շահերով օժտված:

Մենք ցավալի երևույթ ենք միայն համարում այն հանգամանքը, որ Աղբալյանի տարօրինակ կարծիքները հափշտակող ոգևորություն էին պատճառում խորհրդաժողովին: Դա հետևանք է այն իդեոլոգիայի, որ Ալ. Ի.Խատիսյանն էր արծարծում Վրաստանում: Մենք այստեղ աչքի առաջ ունեինք քաղաքական սերվելիզմը (ստրկահոգությունը): Մյուս բոլոր հանգամանքները, որ մի կողմ թողնենք, հենց միմիայն հեղափոխական ժամանակամիջոցը բավական էր հասկանալու համար, որ ռուսները ոչ մի տեղ ոչ մի չեզոք ուժ չեն ներկայացնում և որ նրանք ազգային հարցերում Կովկասումն էլ նույն սառնասրտությունն ու հին քաղաքական խստությունն են պահպանում»:

«Հորիզոն», 12.17.1917:

N 66

«Մշակը» Ազգային համախորհրդակցության երեք նիստերի արդյունքների մասին*

14 հոկտեմբերի 1917

* Խոսքը վերաբերում է հոկտեմբերի 11-ի և 12-ի 15, 16 ու 17-րդ նիստերին:

Այս երեք նիստերում ժողովն ամբողջովին զբաղվեց Թիֆլիսի «Ազգային» բյուրոյի քաղաքական գործունեության և նրա՝ ռուսական հին ռեժիմի կառավարության հետ ունեցած հարաբերությունների ու կամավորական շարժման խնդրով:

Պետք է ասել, որ գավառական պատգամավորների մեծ մասն արդեն մեկնել էր և ժողովին մասնակցում էին գլխավորապես Թիֆլիսի պատգամավորները: Երբեմն, նիստի բացման ժամանակ, նույնիսկ հարկավոր կվորումը չկար:»

Մենք չենք տա բոլոր ճառախոսների և քննադատների ճառերի բովանդակությունը, քանի որ արծարծվեցին և այնպիսի կետեր ու հարցեր, որոնց հրապարակ հանելը դեռ վաղաժամ է և որոնց լուսաբանությունը վերապահված է ապագա անաչառ պատմության:

Հայ հասարակությանը շատ լավ հայտնի է այն բանակռվից և քննադատությունից, որ մի քանի տարիներ «Մշակը» մղեց «Ազգային» բյուրոյի կողմնապահ, վնասակար ու ազգակործան գործունեության դեմ, այդ խնդրի էությանը: «Ազգային» բյուրոն, ինչպես գիտեք, լոկ մի դաշնակցական բյուրո էր, բայց դիմակավորված. և նա իսկապես վարում և գործադրում էր Դաշնակցության քաղաքականությունը և գիծը, բայց ազգային դիմակի ներքո, շնորհիվ այն հանգամանքի, որ հրավիրել էր գործակցության այնպիսի մարդկանց, որոնք ըստ ամենայնի համակերպվում էին նրա քաղաքականության, և մի քանի դիմազուրկ բուրժուաների, որոնք իրանց համար մեծ պատիվ էին համարում վայելել Դաշնակցության հովանին և հետևաբար անմռունչ հպատակվում էին նրա բոլոր կարգադրություններին: Իսկ եթե Բյուրոյի մեջ լինում էին այնպիսի անդամներ, որոնք անհատականություն կամ ընդդիմադրական ձգտումներ էին ցույց տալիս, դրանք շուտով ստիպված էին լինում հեռանալ՝ անզոր լինելով ստեղծված պայմաններում փոփոխել իրերի դրությունը և չկամենալով մասնակից լինել ապագա պատասխանատվության: Մյուս կողմից, Բյուրոն իր պատվավոր նախագահ Մեսրոպ եպիսկոպոսի հետ միասին ամեն ջանք գործ էր դնում, որ Բյուրոյի կազմի մեջ չմտնեն ընդդիմադիրներ: Բացի դրանից՝ գործի ամբողջ կազմակերպչական և կարգադրիչ մասը բացառապես գտնվում էր դաշնակցականների ձեռքում, և Բյուրոյի մնացած անդամները, ինչպես իր ժամանակին ասել էր նրա հեռացող անդամներից մինը, լոկ մանեկենների դեր էին կատարում:

Հայտնի է և այն հանգամանքը, որ ունեցավ «Ազգային» բյուրոյի քաղաքական գործունեությունը, և այսօր հայ ժողովուրդը ժխտեց ճանաչել նրան հայ ժողովրդի կամքի ներկայացուցիչ. և նա, հետզհետե կորցնելով իր ժողովրդականությունը, հյուծվեց և վերջերս միանգամայն կազմալուծվեց:

Բյուրոյի գործունեության գլխավոր մասը կամավորական շարժման կազմակերպությունը և վարումն էր: Այդ շարժման սխալ և թյուր ուղղություն տալու հետևանքով հայ ժողովուրդը, շատերի կարծիքով, ենթարկվեց բնաջնջման Թուրքիայում: Եվ կամավորական շարժումը, ահագին զոհերը, որ տվեց հայ ժողովուրդը, մարտիկների հերոսական մահը և թափած արյունը ոչ միայն չտվին Հայաստանին ինքնավարություն, այլ այդ ինքնավար Հայաստանի փոխարեն ստացանք մոխրակույտերի վերածված և հայերից թափուր Հայաստան: Բացի դրանից, պարզվեց, որ Մեսրոպ եպիսկոպոսը և այլք, վարելով Բյուրոյի կողմից բանակցություններ և հարաբերություններ ռուսական կառավարության հետ, հին ռեժիմի հետ, ի դեմս Վորոնցով-Դաշկովի, ընկել են ծուղակի մեջ, չարաչար խաբվելով սին ու անորոշ խոստումներով:

Հայ ժողովրդի համար ունեցած բոլոր աղետալի հետևանքների ամբողջ պատասխանատվությունը, բնականաբար, ծանրանում է Դաշնակցության վրա, որը, ինչպես առաջ, այժմ ևս ամեն ճիգ էր թափում իր ճառախոսների բերանով ապացուցել, թե աղետի պատճառը ոչ թե Բյուրոյի բռնած չարաբաստիկ քաղաքականությունն էր և

կամավորական շարժման ձևը, այլ այն հանգամանքը, որ թուրք կառավարությունը վաղուց որոշել էր ջնջել հայ ժողովուրդը և նրա վերացմամբ վերացնել և հայկական հարցը, ուստի և լիներ կամավորական շարժում թե ոչ, այդ ծրագիրը նա իրագործելու էր:

«Ազգային» բյուրոյի գործունեության քննադատները այդ նիստերում հանդիսացան մի կողմից թուրքահայ ներկայացուցիչներ, դրանց թվում նույնիսկ դաշնակցականներ (ինչպես Անդրանիկ, դոքտոր Պոնսափարթյան), մյուս կողմից սոցիալիստական բլոկը և «Մշակի» խմբագիր Հ.Առաքելյանը:

Եվ այդ երեք նիստերում դաշնակցականների կողմից խոսեցին Ն.Աղբալյան, Շահխաթունի, Արամ, Դրո, Վրացյան, Փափազյան, Ջամալյան՝ իբրև պաշտպաններ Բյուրոյի գործունեության: Այդ պաշտպաններից նույնիսկ երկուսը՝ Վ.Փափազյանը և Արամ, հայտնեցին այն կարծիքը, որ Բյուրոն չէ հարցրել թուրքահայերի կարծիքը, չէ ղեկավարվել նրանց կարծիքով: Մնացածները շատ սոփեստական և լուրջ կրիտիկայի չդիմացող դատողություններով, նույնիսկ իրանց հակառակորդների հասցեին փողոցային անվայել ոճեր գործածելով, աշխատում էին ցույց տալ, որ Բյուրոն և Դաշնակցությունը անսխալական են եղել, որ նրանց գործունեությունը օգտակար է եղել:

Սոցիալիստների կողմից Լ.Աթաբեկյան, բժ.Իսախանյան, Ա.Երզնկյան, Դ.Անանուն, Տեր-Օհանյան, ջախջախիչ և շշմեցուցիչ փաստերով ապացուցեցին, որ 1. Բյուրոն գործել է ինքնագլուխ, առանց թուրքահայերի կամքը և ցանկությունը իմանալու, նույնիսկ հակառակ նրանց կամքի, երբ իմացել է, որ թուրքահայերը հակառակ են արկածախնդրական գործունեության, 2. որ կամավորական շարժումը հղացել, կազմակերպել և իրագործել են դաշնակցականները, չնայելով նույնիսկ այն հանգամանքին, որ իրանց թուրքահայ ընկերները դեմ են եղել, 3. որ Բյուրոն, ոգևորություն առաջ բերելու համար հայ ժողովրդի և հարուստների մոտ, ամեն տեղ տարածել է այն լուրը, թե ռուսական կառավարությունը խոստացել է Հայաստանին ավտոնոմիա, մինչ այդպիսի խոստումն իրապես չէ եղել, այլ, ընդհակառակը, ռուսական հին ռեժիմը ձգտել է ունենալ մի Հայաստան առանց հայերի, և Վորոնցով-Դաշկովը շարունակել է Լոբանովի քաղաքականությունը, 4. որ Դաշնակցությունը իր ամբողջ ռազմական ուժը դրել է ի սպաս ռուսական կառավարության, ուշադրություն չդարձնելով, որ ներկա պատերազմը ոչ թե ազատագրական է, այլ՝ իմպերիալիստական:

Ոչ դաշնակցական թուրքահայերը, ինչպես Թերզիպաշյան, պրոֆ.Հակոբյան, Տեր-Զաքարյան, նույնպես ցույց տվեցին, որ թուրքահայերի կամքը և տրամադրությունները անտես են առնվել և կարելի է խուսափել այն սոսկալի աղետից, որ պայթեց թուրքահայ ժողովրդի գլխին:

Բյուրոյի կողմից բացատրություններ տալիս էին Ս.Հարությունյան, Ն.Աղբալյան, Հ.Սպենդիար: Անձնական բացատրություններով մի քանի անգամ հանդես եկավ Լեոն, ցույց տալու համար, որ ինքը ակտիվ մասնակցություն չէ ունեցել Բյուրոյի գործունեության մեջ, այլ միայն նպաստել է գրական աշխատությամբ:

Առանձին ճառով հանդես եկավ Հ.Առաքելյան, անելով մի քանի կարևոր հայտարարություններ, որոնք ցույց են տալիս, թե Բյուրոն, արդարև, անտես է արել թուրքահայերի կամքը, չէ լսել նրանց ներկայացուցչին և թե գերմանական կառավարությանը, դեռ ռուս-թուրքական պատերազմը չծագած, առաջարկ է արել Թուրքիայի հայ ժողովրդին հայ ժողովրդին պահել իրան լոյալ, խոստանալով դրա փոխարեն տալ Հայաստանին ավտոնոմիա, իսկ հակառակ դեպքում սպառնալ[ով] սոսկալի վրեժխնդրություն: Այդ առաջարկի մասին գիտակ է եղել և Բյուրոն, բայց անգիտության է մատնել: Ի միջի այլոց բժ. Իսախանյան շատ պերճախոս կերպով ցույց տվեց, որ կամավորական շարժումը ոչ մի բան չէր կարող ավելացնել կամ պակասեցնել հայկական դատին ի նպաստ: Առանց այդ շարժման Եվրոպան եթե պետք

էր և հարկ դատեր, կտար հայերին ավտոնոմիա, հետևաբար շարժումն ավալորդ էր, բացի դրանից՝ նա առաջ բերեց սոսկալի վրեժխնդրություն Թուրքիայի և Գերմանիայի կողմից:

Այդ ճառերը ահագին տպավորություն գործեցին ժողովրդի վրա և անհերքելի կերպով ապացուցեցին այն փաստը, որ Դաշնակցության, որի հլու կամակատարն էր «Ազգային» բյուրոն, արկածախնդրական քաղաքականության մեջ պետք է որոնել նոր սոսկալի աղետը, որին ենթարկվեց հայ ժողովուրդը Թուրքիայում:

Խնդրի քննությունը սպառվելուց հետո, որոշվեց, որ կուսակցական ֆրակցիաները ներկայացնեն իրենց բանաձևերը հաջորդ նիստին, որ նշանակվեց հոկտեմբերի 13-ին, ցերեկը, և որը լինելու է վերջինը: Այդ նիստում կքվեարկվեն և բոլոր մյուս հարցերի մասին բանաձևերը և ընդունված որոշումները:

«Մշակ», 14.10.1917:

N 67

Հոդված «Հայաստան» թերթում. «Ազգային խորհրդակցութենեն վերջ»

17 հոկտեմբերի 1917թ.
Թիֆլիս

Ռուսական հեղափոխությունը, ինչպես Ռուսաստանը բաղկացնող բոլոր ազգերուն, նույնպես և ռուսահայ ժողովուրդին լավագույն պատեհությունն ու ժամանակը տվավ կարգավորելու իրենց ներքին կյանքը և ձգտելու դեպի ազգային վերածնունդ և ստեղծելու ինքնուրույն կյանք: Այս տեսակետով ռուսահայ ժողովուրդը իր առջև կդնե գործելու ընդարձակ դաշտ մը, ուր ազգային զանազան անհետաձգելի պետքեր և պահանջներ իրենց լուծումը կսպասեն անհամբեր: Այդ պատճառով էր, որ գումարվեցավ Ազգ[ային] համախորհրդակցությունը, քննելու ռուսահայ ազգային կյանքը իր բոլոր կողմերով և երևույթներով ու ընթացք տալու՝ ներդաշնակորեն քայլելու համար վերածնունդի ճամբայեն, հայ քաղաքական կուսակցություններու համերաշխությամբ:

Եվ ուրախ ենք, որ Ազգ[ային] համախորհրդակցությունը կարող եղավ ստեղծել Ազգ[ային] խորհուրդ, բաղկացած հայ ժողովրդին մեջ շերտավորված բոլոր հոսանքներն, առժամապես վարելու համար ազգային գործերը, մինչև հառաջին ընդհանուր համագումարը:

Հին ռեժիմի ռուսահայ կյանքը և ընդհանրապես հայ կյանքը կը ներկայացներ անկերպարան վիճակ մը, շնորհիվ քաղաքական անպաստ հանգամանքներու, այնտեղ չէր երևնար ազգը ներկայացնող օրինավոր մարմին մը, որ հեղինակություն ունենար վարելու հայ ժողովրդի գործը: Այո, ռուսահայությունը ուներ հոգևոր իշխանություն, որ իրավունք ուներ ազգային քաղաքական ներկայացուցիչը հանդիսանալ օտար և տիրող ազգերու առջև, այսու ամենայնիվ հայ քաղաքականությունը վարելու գործին մեջ շատ անգամ անտես կառնվեր անոր իրավունքը, որովհետև հոգևոր իշխանությունը ռուսահայ համայնքի մեջ կորսունցուցած էր այլևս իր պատմական իրավունքն ու դերը: Այդ իսկ պատճառով զանազան կուսակցություններ և մարմիններ կստեղծվեին ռուսահայոց մեջ՝ անկախ հայ ազգը ներկայացնող կաթողիկոսեն, և կը տանեին գործը անպատասխանատու կերպով, այսպիսով առաջ կուգար ազգային անիշխանություն մը, հայ կյանքն ու միջավայրը վերածելով իրական քաոսի մը: Շատ անգամ կուսակցության մը քաղաքականությունը կը հակադրվեր բովանդակ ազգին և ծնունդ կուտար ահագին

սրտամաշուկ վիճաբանության և քննադատության՝ հակառակորդ կուսակցություններու կողմե և այսպիսով ազգային շարժումները շատ անգամ կստանային ապարդյուն աշխատանքի բնույթ, զուրկ ըլլալով ամբողջ ազգին կամքը ներկայացնելու անհրաժեշտ հանգամանքներեն:

Ատիկա կը վերաբերի անցյալին, անցյալ մը, երբ հայ ժողովուրդը ենթարկված էր սահմանի թե՛ այս և այն կողմը քաղաքական բացառիկ աննպատ պայմաններում, երբ խոսքի և մամուլի ամենատարրական ազատությունները բռնաբարված էին:

Այժմ պարագաները փոխված են, հետևաբար փոխվելու էր և ազգային կյանքն ու հին դրությունը: Ներկա Ազգ[ային] համախորհրդակցությունը կոչված է վերջ դնելու հին սիսթեմին և ներարկել նորը, այն է՝ որ հայ ազգի քաղաքականությունն ու գործերը վարելու խնդիրը պետք չէ մեկ կուսակցության մը կամ մարմնի մը տանք այլ ամբողջ ազգին, իր զանազան կուսացություններու ներկայացուցիչներով:

Ազգ[ային], խորհրդակցութենեն վերջ՝ ռուսահայ հանրային կյանքը կը դրվի նոր փուլի մը մեջ, ուր ազգը համերաշխ և միաբան, այնպես կը կարծենք, հայ ժողովուրդը կտանի դեպի ապահովություն, վերածնունդ և քաղաքակրթություն:

Շնորհավորելով նոր կազմված Ազգ[ային] խորհուրդը կը մաղթենք հարատև, համերաշխ և տոկուն գործունեություն:

Թաթուլ

«Հայաստան», 17.10.1917:

N 68

Խմբագրական հոդված «Մշակ»-ում. «Ազգային համախորհրդակցության արդյունքը»

20 հոկտեմբերի 1917թ.

Ունեցա՞վ Համախորհրդակցությունը կամ խորհրդաժողովը որևէ գործնական շոշափելի արդյունք հայ ժողովրդի համար:

Կաշխատենք պատասխանել այս հարցին:

Խորհրդաժողովը հիմնված չէր կանոնավոր ընտրական սկզբունքի և սիստեմի վրա. հետևաբար համարել այդ ժողովը իբր օրինական արտահայտիչ Ռուսաստանի հայ ժողովրդի իսկական իղձերի և կամքի չէ՛ կարելի: Սակայն որովհետև այդ ժողովին մասնակցում էին տարբեր և զանազան հոսանքների, կուսակցությունների, դասակարգերի ներկայացուցիչներ, պետք է ասել, որ որոշ չափով նա արտահայտիչ էր հայ ժողովրդի մեջ ներկայումս տիրող տրամադրությունների և ձգտումների: Կարելի է նույնիսկ ասել, որ եթե գումարված լիներ ազգային ժողով նույնիսկ քառանդամ սիստեմով, գուցե նա ավելի միակողմանի լիներ իր կազմով, քան ներկա խորհրդաժողովը:

Խորհրդաժողովի դրական կողմերից առաջինն այն է, որ հայ ժողովրդի զանազան քաղաքական հոսանքները և կուսակցությունները առաջին անգամ ազատ և լեգալ կերպով իրար հանդիպեցին, իրար դեմ կանգնեցին, իրար դեմ պայքար մղեցին, մտքերի և կարծիքների փոխանակություն կատարեցին և, վերջիվերջո, գոնե որոշ ազգային հարցերի վերաբերմամբ մի համաձայնության հանգեցին: Երկրորդ արդյունքն այն է, որ բյուրոն կամ ազգային խորհուրդը և ազգային ժողովը, որոնք կազմվել են, այլևս չեն նմանի այն «ազգային բյուրոյին», որ դիմակավորյալ ազգային էր, լոկ մի կուսակցության օրգան՝ գործիք Դաշնակցության: Ճիշտ է, այստեղ ևս Դաշնակցությունը խոշոր ձայն ունի, բայց, համենայն դեպս, մյուս հոսանքները ի

վիճակի կլինեն չեզոքացնել նրա վնասակար գործունեությունը և արկածախնդրական քաղաքականությունը, եթե նա դարձյալ ձգտի դրանց, քանի որ միասին առած՝ մեծամասնություն են կազմում դաշնակցականների դեմ: Համենայն դեպս, այդ խորհրդի և ժողովի մեջ ոչ դաշնակցական հոսանքների ներկայացուցիչների մասնակցությունը որոշ սանձ կդնի դաշնակցական ապերականության վրա, մի հանգամանք, որ օգտակար և փրկարար կլինի նույնիսկ իրենց, դաշնակցականների համար, որոնք մինչև այսօր «ազգային» Բյուրոյի մեջ իրենց առաջ ունեին կամ Մեսրոպ եպիսկոպոսի պես փառասերներ կամ կամազուրկ և դիմակազուրկ բուրժուաներ և կամ կամավորական ու համակերպվող ինտելիգենտներ:

Չորրորդ արդյունքն այն է, որ հայ հասարակությունը տեսավ իր աչքերով, որ հայ ժողովրդի մեջ երևան են եկել քաղաքական և հեղափոխական տարրեր, որոնք կարող են աջողությամբ և պատվով լուրջ օպոզիցիա կազմել Դաշնակցության դեմ և այսուհետև հայ գյուղին տիրողը «Դաշնակը» չի լինի (այս բառի այն մտքով, որով հասկանում է գյուղացին), այլև գիտակից, լուրջ մարդիկ, որոնք դաշնակի տեղ համոզումն, գաղափար են քարոզում և մտցնում: Հայ հասարակությունը տասավ, որ խորհրդաժողովի մեջ թեև դաշնակցականները մեծամասնություն են կազմում (շնորհիվ, խոսենք մենք, մի քանի արվեստական միջոցների, օրինակ, խմբապետների մասնակցությունը և այլն), բայց օպոզիցիան նույնպես մի պատկառելի քանակ էր կազմում: Այդ կողմից շատ մխիթարական էր այն երևույթը որ «Մշակի» շնորհիվ ստեղծված նոր Հայ ժողովրդ[ական] կուսակցությունը, որ միայն 5-6 ամսվա գոյություն ունի, իբրև ուժ, այնքան զարգացել էր, որ կարողացավ Դաշնակցության 114 մանդատների դեմ տալ 44 մանդատ: Այդ փաստը ցույց տվեց, որ կուսակցությունը կարող է փառավոր ապագա ունենալ, եթե կարողանա եռանդով գործել, տոկունություն և ստեղծագործ աշխատանք ցույց տալ: Մի այլ հանգամանք ևս, որ աչքի էր ընկնում, այն էր, որ մինչև դաշնակցականների մեծամասնությունը ամբոխ էր կազմում, օպոզիցիայի անդամները գրեթե ամենքը իտելիգենտ ուժեր էին ներկայացնում: Պետք է ասել, որ ինքը՝ Դաշնակցությունը, ևս զգում էր, որ հանձին օպոզիցիայի, իր դեմ ունի մի պատկառելի ուժ, որի հետ հաշիվ պետք է տեսնել. և թեև նա մի քանի անգամ փորձեր արեց ի դեմս Աղբալյանի, Դրոյի և այլոց՝ սպառնական դիրք բռնել, հոխորտալ,բայց շուտով ստիպվեց խոստովանել իր սխալը և զիջողության, համբերության ոգի ցույց տալ:

Հինգերորդ արդյուզնքը պետք է համարել այն խիստ քննադատությունը, որին ենթարկվեց Թիֆլիսի «Ազգային» կոչված բյուրոյի գործունեությունը, մի գործունեություն, որի դեմ երկար պայքար մղեց «Մշակը» և այժմ խորհրդաժողովը կատարեց մի արդար գործ:

Վեցերորդ, որ գլխավորն է, խորհրդաժողովը ցույց տվեց և համոզեց ամենքին, բոլոր հոսանքների և կուսակցությունների ներկայացուցիչներին, որ ներկա քաղաքական տագնապալից րոպեին, երբ հայ ժողովրդի համար կյանքի և մահի խնդիրն է լուծվում, անհրաժեշտ է ամենքի միությունը, համագործակցությունը և համերաշխ գործունեությունը:

Եվ քանի որ թե՛ ազգային խորհուրդը, թե՛ մեծ խորհուրդը կազմված է ամենքի համաձայնությամբ՝ պետք է հուսալ, որ այսուհետև մեր ազգային գործերի ղեկավարությունը այլևս չի հանդիպի խոչընդոտների, ում կողմից էլ լինի, այլ ամենքը կշտապեն իրանց աջակցությունը բերել և ցույց տալ, որ կան րոպեներ, երբ հայը ևս գիտե միաբանել և գործել միաբան ու համերաշխ:

Հ.Ա.*

«Մշակ», 20.10.1917:

* Համբարձում Առաքելյանն է, «Մշակի» խմբագիրը:

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Ա նիստ

2 մայիսի 1917թ.

Երևանի թուրքահայ համագումարը իր հանդիսավոր բացումը ունեցավ մայիսի 2-ին, ժամը 10 1/2-ին քաղաքային ակումբի դահլիճի մեջ:

Ներկա էին Վեհափառ Հայրապետի, օտար հայանպաստ և ռուսահայ փախստականական կազմակերպությունների ներկայացուցիչները, պատգամավորներ ու խուռներամ երկսեռ բազմություն:

Հանդեսը ղեկավարում էր Համագումարի Կազմակերպիչ կոմիտեի դիվանը:

Հանդեսը բացեց պ. Անդրանիկն, ողջույնի հակիրճ ճառով, որից հետո Վեհափառ կաթողիկոսի ներկայացուցիչ Գևորգ Սրբազանը կարդաց օրհնության կոնդակ, որ լսեցին հանդիսականները հոտնկայս: Ապա կազմակերպիչ կոմիտեի կողմից՝ պ. Արամ Մանուկյանը հարգանքի խոսք ասաց ուղղվաց հայ մարտիկներին. ներկաները ոտքի կանգնելով հարգեցին նրանց հիշատակը: Իր ողջույնի խոսքը ասաց թուրք բռնակալության ճիրաններից ճողոպրած, այժմ Սիբիրում կամ այլուր գտնվող հայ գերիներին՝ ցանկանալով նրանց շուտափույթ ազատումը. ողջույնի խոսքեր հայ տառապանքին կարեկից և նրա դատին բարիացակամ դաշնակից մեծ պետությունների՝ Ազատ Ռուսիայի, Մեծն Բրիտանիայի, հեղափոխական Ֆրանսիայի, Ամերիկայի, Իտալիայի, Շվեցիարիայի և մյուս չեզոք պետությունների պետական և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին, հանձին Պողոս Նուպար փաշայի Եվրոպայի հայ պատգամավորության՝ մասնավորապես անհրաժեշտ համարեց իր ողջույնի խոսքերը ուղղել մարտիրոսագրված թուրքահայ փախստականությունը հյուրընկալող և հնուց ի վեր նրա դատը պաշտպանող ներկա դեմոկրատիկ, ազատ Ռուսաստանի ժողովրդական ներկայացուցիչ Ռոձենկոյին, ժամանակավոր կառավարության նախագահ՝ իշխան Լվովին, Արտաքին գործերի նախարար՝ Միլյուկովին, Արդարադատության մինիստր՝ Կերենսկուն, Պետրոգրադի զինվորական և բանվորական խորհրդին, ապա Ռուսահայ եղբայրներին, գյուղացիությանը, հասարակական կազմակերպություններին, կանանց և այլն:

Ապա կազմակերպիչ կոմիտեի կողմից խոսք առավ Արտակ Դարբինյանը՝ համագումարի կազմակերպության համառոտ պատմականը անելով, որից հետո տիկին Զապել Եսայանը մի գեղեցիկ ճառ կարդաց համերաշխության անհրաժեշտության մասին. ապա Վահան Փափազյանը պատմական տեսություն արեց թուրքահայ վերջին տասնամյակի և ներկա քաղաքական մոմենտի մասին:

Սրանցից հետո Լոնդոնի լորդ Մերի հայանպաստ ընկերության ներկայացուցիչ՝ Մր. Պեքաուզը, Ամերիկյան հայանպաստի ներկայացուցիչ Մր. Եարոն, Կ. Հ. Բարեգործական և Կենտրոնականի ներկայացուցիչ՝ Ալեքսանդր Շարաֆյանը, Նպաստամատույցի ներկայացուցիչ Գրիգոր Վարդանյանը, Գյուղատնտեսականի ներկայացուցիչ՝ Նիկողայոս Ղարագյոզյանը իրենց խնդակցությունը և շնորհակալությունները հայտնեցին թուրքահայ սույն անդրանիկ համագումարի առիթով: Խոսեցին նաև երկրի և Կովկասի պատգամավորներից բժ. Բոնապարտյանը, Տրդատ Ղազանչյանը, Կարո Սասունին և Գրիգոր Խլղաթյանը:

Դիվանի և այլնի ընտրությանը անցնելու համար տաս րոպեի ընդմիջում տրվեց:

Նիստը սկսելուն՝ Կազմակերպիչ Կոմիտեի Դիվանի կողմից առաջարկվեց պ. Անդրանիկին հրավիրել որպես համագումարի պատվո նախագահ: Որոտընդոստ ծափերի մեջ խոսք առավ Անդրանիկը, որ իր շնորակալությունը հայտնելով, համերաշխության կոչ արեց: Ապա ձեռնարկվեց գաղտնի քվեարկությամբ երեք նախագահների ընտրություն. մասնակցում էին 59 պատգամավորներ: Նախագահ ընտրվեցին.

1. պ. Լևոն Շանթ 55 քվեով
2. Վ. Փափազյան 52 քվեով
3. Ա. Դարբինյան 33 քվեով

Բաց քվեարկությամբ ընտրվեցին հետևյալ վեց քարտուղարներ.

1. Բարունակ Տ.Հարությունյան
2. Սուրեն Տիրատուրյան
3. Գրիգոր Հարությունյան
4. Վանփուշ
5. Հ. Տ. Զաքարյան
6. Հրանտ Գալիկյան

Դիվանի կողմից Լևոն Շանթը շնորհակալություն հայտնեց և հույսի խոսքերով ոգեկոչեց ներկաներին համերաշխությամբ և ընդհանուր կամքով աշխատանքներին ձեռնարկելու համար:

Բաց քվեարկությամբ պատգամավորների մանդատները ստուգող կոմիսիայի անդամները հետևյալներն են.

1. Աղաբեգ Համբարյան
2. Միրզախան Միզախանյան
3. Հրանտ Գալիկյան
4. Գուրգեն Հայկունի
5. Կարո Սասունի

Անցնելով տեղեկատու Բյուրոյի և խմբագրական կազմի ընտրությանը՝ բաց քվեարկությամբ ընտրվեցին.

1. Տիկին Զապել Եսայան
2. Լազո Ղազարյան
3. Արտակ Դարբինյան
4. Հովսեփ Դեփոյան
5. Հմայակ Մանուկյան

Ամենից վերջում խոսք առավ Երևանի փոխ-թեմական Խորեն Սրբազանը՝ հայտնելով, որ Երևանի հայ հասարակության կողմից իր վրա պարտք է դրված ողջունելու թուրքահայերի սույն առաջին համագումարը:

Դիվանի նախագահության կողմից շնորհակալություն հայտնվեց համագումարի Կազմակերպիչ Կոմիտեին՝ իրենց գեղեցիկ ձեռնարկության համար:

Նիստը փակվեց ժամը 2 ½ –ին:

Բ նիստ

2 մայիսի, ժամը 8-ին

Նիրկա էին պատգամավորներ և խորհդակցական ձայն ունեցողներ:

Դիվանի կողմից կադացվեց հետևյալ շնորհաւորական հեռագիրները և նամակները.-

1. Ազգային Բյուրոից
2. Քաղաքների Միության Կենտրոնական Կոմիտեից

3. Բաքվի թուրքահայերի վարչությունից
4. Այնթապի և Մանազկերտի հասարակությունից
5. Սև քաղաք-Լևոնիկից
6. Սամդրիտ- Օհան Շխյանից
7. Ալեքսանդրապոլից – Գյումրիի հասարակությունից
8. Տիգրան Հովհաննիսյանից
9. Բագու- Շավարշից
10. Բագու- Տանթոյանից
11. «Վան» Կոոպերատիվի Միությունից

Դիվանի կողմից կարդացվեց և առանց փոփոխության քվեարկվեց նիստերի հետևյալ ներքին կանոնագիրը, որն է.

1. Համագումարը կունենա վեց կանոնավոր նիստ՝ բացի բացման և փակման նիստերից:
2. Միևնույն նյութի մասին կարելի է խոսել միայն երկու անգամ, առաջին անգամ 10 րոպե, երկրորդը՝ 5 րոպեից ոչ ավելի:
3. Խոսողների ցանկը կարող է փակվել կամ նյութը սպառված համարվելով կրճատվել, երբ ժողովը պետք տեսնի:
4. Առաջարկված գրավոր բանաձևերը միայն կարող են քվեարկվել:
5. Բանաձևերի քվեարկության վայրկյանին անհրաժեշտ պարագայում, խոսք կտրվի միայն մեկ թեր ու մեկ դեմ խոսողներին:
6. Փակման նիստում կարդալ վերջնապես բոլոր բանաձևերը:
7. Ամեն անգամ Ժողովում կկարդացվի նախորդ օրվա նիստերի արձանագրությունը:

Մանդատներ ստուգող հանձնաժողովի տեղեկաբերը զեկուցում տվեց ժողովին հետևյալ վիճելի համախոսականների մասին:

1. Ալաշկերտի երկրից մեկի փոխարեն, եկել են չորս պատգամավորներ, որոնցից՝

ա. Ռուբեն Զրբաշխյանը տեղի համագյուղացիական Միությունից ընտրված,

բ. Բաղդասար Ապոյան, ժողովրդական ընտրությամբ,

գ. և դ. Մկրտիչ Աբգարյան և Շավարշ Բարսեղյան՝ ժողովրդական ընտրության համախոսականներով: Տեղեկաբերը հայտնեց, որ հանձնաժողովը ի նկատի ունենալով, որ առաջինի ընտրությունը շատ մասնակի բնույթ ունի, նաև Բ-ի, որ երկրորդի ընտրությունն էլ թե մասնակի բնույթ է կրում, նաև ընտրության և նրա մասնակցող պատվիրակների լիազորության օրինականությունը ապացուցող արձանագրություններ կպակասեն, առաջարկում է վերջին ընտրյալներին՝ այսինք Մ. Աբգարյանի և Շ. Բարսեղյանի ընտրությունը ընդունել օրինական, քանի որ նրանց ընտրությանը մասնակցել են քսանևութ գյուղերի ամբողջ ազգաբնակությունը, նաև ի նկատի ունենալով Ալաշկերտի ժողավուրդը 15.000-ից ավելի է՝ հակառակ շրջաբերական հրահանգի՛ փոխանակ մեկի, Ալաշկերտին տալ երկու պատգամավորի իրավունք և հետևաբար Աբգարյանին և Բարսեղյանին ընդունել իսկական պատգամավորներ վճռական ձայնով, իսկ առաջին երկուսին՝ այսինքն Ռ. Զրբաշխյանին և Պ.Ապոյանին էլ տալ խորհրդակցական ձայնի իրավունք՝ ի նկատի ունենալով, որ նրանք էլ համենայն դեպս ժողովրդական որոշ հատվածի արտահայտություններ են:

Այս հարցի քննության և թեր ու դեմ վիճաբանության ժամանակ՝ Բաղդասար Ապոյանը հայտնեց, որ Աբգարյանի և Բարսեղյանի համախոսականները կազմված են ոչ թե տեղերի վրա, այսինքն Ալաշկերտի մեջ. այլ Երևանի մեջ կեղծ կերպով: Ապոյանի

կողմից մեջ բերված սույն մեղադրանքը քննելու և եզրակացությունը ժողովին բերելու համար որոշվեց խնդիրը վերադարձնել մանդատների հանձնախմբին:

2. Զեկուցման երկրորդ կետը վերաբերում էր Շիրակից ընտրված Սիրական Տեր-Սահակյանի մանդատի մասին. ի նկատի ունենալով, որ Ալեքսանդրապոլից արդեն երկու պատգամավորներ ընտրվել և եկել են, հանձնաժողովը առաջարկում էր այս երրորդ պատգամավորին տալ խորհրդակցական ձայն: Խնդիրը վիճաբանության դրվելով, մեծամասնությամբ որոշվեց հիշյալին տալ վճռական ձայն և հետևաբար Սիրական Տ. Սահակյանը ընտրվեց պատգամավոր:

3. Խնդիրը Վասպուրականի կանանց երկու Միության առաջարկն էր . որով հիշյալ միությունները պահանջում էին, որ իրենց տրվի երկու պատգամավորների իրավունք: Տեղեկաբերը հայտնեց, որ հանձնաժողովը ի նկատի ունենալով, որ կանանց վերոհիշյալ երկու միությունները իրենց պատվիրակներով մասնակցել են Երևանի հինգ պատգամավորների ընտրությանը՝ ավելորդ ստիպում է բացառաբար իրենց վճռական ձայն տալ, այլ առաջարկում է նրանց երկուսին միատեղ տալ միմիայն մի խորհրդակցական ձայն, որպեսզի նրանք հնարավորություն ունենան իրենց սեռի առանձնահատուկ կարիքները, պահանջները համագումարին տեղեկացնելու: Ժողովը մեծամասնությամբ ընդունեց և քվեարկեց հանձնաժողովի առաջարկը:

4. Բիթլիսցիները համախոսականով առաջարկում էին, որ իրենց երկրորդ պատգամավորի էլ իրավունք տրվի: Ի նկատի ունենալով, որ կազմակերպիչ կոմիտեն զանազան գավառներին մեկ մեկ ձայն տված է, անկախ նրանց հայրենակցական Միություններու ձայնեն՝ հանձնաժողովը առաջարկում է բիթլիսցիներին տալ երկրորդ պատգամավորի իրավունք և հետևաբար ընդունել համախոսականով ներկայացված Տիգրան Հազոյանին որպես պատգամավոր: Ժողովը մեծամասնությամբ ընդունեց հանձնաժողովի առաջարկը և հետևաբար Տիգրան Հազրոյանը ընդունվեց պատգամավոր:

5. Յանձնաժողովը առաջարկում է նաև Կարսից ընտրված երկրորդ պատգամավոր՝ Կնյազ Մկրտչյանին ընդունել և տալ ձայնի իրավունք. ժողովը համաձայն հանձնախմբի առաջարկին՝ մեծամասնությամբ ընդունվեց Կնյազ Մկրտչյանին պատգամավոր:

6. Ի նկատի ունենալով, որ Ղուրդուղուլու շրջանը 5000-ից ավելի փախստականություն է պարունակում՝ հանձնախումբը առաջարկում էր նույն տեղից ընտրված Հովսեփ Թերլոյանին տալ վճռական ձայնի իրավունք. սույն առաջարկն էլ ընդունվեց և հետևաբար Հ. Թերլոյանի պատգամավորությունը քվեարկվեց :

7. Ապա ի նկատի ունենալով, որ կազմակերպիչ կոմիտեն որպես անհատ անձնավորություններ իր հրավիրածներին միմիայն խորհրդակցական ձայնի իրավունք ուներ տալու, հանձնաժողովը առաջարկում էր, որ ժողովը այդ հանգամանքով հրավիրված և ձայնի իրավունք ունեցող պատգամավորների ձայնի իրավունքը ժողովի կողմից օրինականացվի:

Այս վերջին հարցի և ընդհանրապես Կազմակերպիչ Կոմիտեի բաշխված վճռական և խորհրդակցական ձայներ քննության ժամանակ վիճաբանության առարկա եղավ այն խնդիրը, թե Կազմակերպիչ Կոմիտեն կուսակցություններին, օրգաններին և անհատներին ձայն տալու մեջ ինչ՞ հիմունքներով է առաջնորդվում: Կազմակերպիչ Կոմիտեի կողմից Արամ Մանուկյանը խնդրի լուսաբանության համար բացատրեց, որ քաղաքական հոսանքներով ձայն տրված է այն պատճառով, որ նրանց համերաշխ նախաձեռնությամբ միայն հնարավոր եղավ ներկա համագումարի գումարումը, ձայն տրված է Կովկասահայ փախստականական կազմակերպություններին, քանի որ փախստականական գործերի ապագա հաջողության համար նրանց գործակցության անհրաժեշտ պետք ունենք. ձայն տրված է թերթերին, որովհետև նրանք պիտի լինեն մեր համերաշխության գաղափարի ղեկավարողները և

արտահայտիչները. ձայն տրված է նաև մի քանի անհատների, որպես մտավորականների և մասնավորապես որպես հասարակական գործիչների, նրանց փորձառությունից օգտվել կարենալու համար:

Թեր ու դեմ վիճաբանություններից հետո երևան եկան հետևյալ բանաձևերը .

1. Հակոբ Տեր- Զաքարյանի բանաձևը, որի բովանդակությունն է.

«Նկատելով, որ համագումարը հրավիրուած է զբաղելու տաճկահայերու անմիջական և ապագայ կարիքներով. նկատելով, որ այդ անմիջական կարիքները սերտ կերպով կապուած են Կովկասի Ազգային հաստատութեանց հետ և յետևաբար ասկէ յիտոյ ալ կապակցութիւն պիտի ունենան. հետևաբար այդ կազմակերպութեանց ներկայացուցիչները կրնան վճռական ձայնով մասնակցիլ համագումարին, պայմանավ, որ պաճկահայերու ներքին և կազմակերպչական խնդիրներու և ընտրութիւններու ժամանակ ձեռնպահ մնան»:

2. Հմայակ Մանուկյանի բանաձևն էր, «որ կառաջարկէ ընդունել կազմակերպիչ կոմիտէի մինչև այսօր ըրած բոլոր կագադրութիւնները և անցնել միւս օրակարգերուն»:

Քվեների մեծամասնությամբ անցավ վերջինը:

Ժողովի նախագահը առաջարկեց վավերացնել նախապես Կազմակերպիչ կոմիտեի կողմից հայտարարած օրակարգը. ժողովը քվեարկությամբ վավերացրեց համագումարի օրակարգը, որ հետևյալն է.

1. Զեկուցումներ

Ա. Համագումարին մասնակցող միությունների և մարմիններ գործունէության մասին:

Բ. Ընդհանուր փախստականների օգնության գործի մասին:

Գ. Օտար, արտասահմանյան հայ և հայանպաստ մարմինների հետ հարաբերելու մասին:

2. Ներգաղթի և նրա հետ կապված խնդիրներ:

3. Երկրի մեջ տեղական Ազգային վարչությունների կազմակերպում և իրավաբանական օգնություն:

4. Չգրավված վայրերի հայ գերիների ազատության և օգնության գործը:

5.Երկրի հայ ազգաբնակության ապահովության հարցը.

6. Թուրքահայ փախստականների տնտեսության վերականգնումը:

Ա. Վարուցանքս /պետական և ազգային միջոցներով/:

Բ. Արհեստանոցների փոխադարձ օգնության և կոպերատիվների կազմություն:

Գ. Փոխատվության խնդիր:

Դ. Թուքահայ վերաշինության ֆոնդի խնդիրը:

7. Նպաստի և պարենավորման գործը:

8. Փախստականիրի մասնակցությունը Կովկասի Հայոց Գյուղատնտեսական աշխատանքներին:

9. Թուրքահայ գերիներ Ռուսաստանի մեջ:

10. Փախստականների առողջապահության գործը /հիվանդանոցներ, բժշկական օգնություն և այլն/:

11. Որբանոցներ, որբեր և նրանց կրթությունը:

12. Դպրոցներ և նրանց կազմակերպումը:

13. Աշխատանքի և Տեղեկատու Բյուրոներ և փախստականների վիճակագրություն:

14. Նոր առաջարկներ ապագա գործունեության համար:

15. Թուրքահայ փախստականների ներքին կազմակերպություն և կանոնագրության հաստատումը:

16. Թուրքահայ Կենտրոնական Վարչության ընտրությունը:

Նիստը փակվեց ժամը 11-ին:

Գ Նիստ

3 մայիսի 1917թ.

Ներկա են պատգամավորներ և խորհրդակցական ձայն ունեցողներ:

Նախագահում է Վահան Փափազյանը:

Նիստը բացվեց ժամը 10 1/2-ին: Կարդացվեց հայ գյուղատնտեսական ընկերության և «Հայաստան » թերթի խմբագրության կողմից համագումարին ուղղված ողջույնի հեռագիրները:

Նախագահը ժողովին ներկայացրեց Ներսես Սրբազան Մելիք – Թանգյանին, որ խոսք առնելով, պատգամավորներին զեկուցում տվեց Պետրոգրադի մեջ Ռուսաստանի բոլոր փախստականական մարմինների ժողովում եղած որոշումների մասին, որը հետևյալներն են.

1. Որոշված է միջոցներ ձեռք առնել քրդերի ազատ գործունեությանը առաջը առնիլու համար:
2. Որոշված է նպաստի քանակը բարձրացնել այն քանակությամբ, որ համապատասխան լինի ներկա տնտեսական թանգության:
3. Տարին երկու անգամ հագուստի դրամ բաշխել, յուրաքանչյուր անգամ անձ -գլխին քսան ռուբլի վճարելով:
4. Թե Թիֆլիսի և թե գավառների մեջ կկազմվեն հանձնաժողովներ փախստականական գործերը ղեկավարելու համար, և այդ հանձնաժողովներին պիտի մասնակցեն նաև փախստականներ:
5. Սմկոյին և նման ավազակներին ձերբակալել և Վան տանող երեք ճանապարհները ապահովել:

Սրբազանը հույս հայտնեց, որ այդ որոշումները հաստատուելու համար ներկայացված են ժամանակավոր կառավարության, և պիտի հաստատվեն, որով փախստականական գործերը դրված կլինեն որոշ սկզբունքների վրա և հետևաբար դրանից հետո գործերը ավելի կանոնավոր պիտի ընթանան: Ապա հայտնեց նույնպես, որ ինքը Վեհափառ կաթողիկոսի կողմից ժամանակավոր կառավարիչ է նշանակված Վանի, Ալաշկերտի, Մուշ- Բասենի շրջանի համար: Խնդրեց, որ եթե այդ շրջանի պատգամավորներն վստահություն ունեն իր գործունեության վրա՝ արտահայտեն իրենց վստահությունը: Բոլոր պատգամավորներն և մասնավորապես Երկրի պատգամավորները ծափահարությամբ իրենց վստահությունը հայտնեցին, միաժամանակ գնահատելով Սրբազանի անցյալ և ներկա գործունեությունը. Երկրի պատգամավորները փափագ հայտնեցին, որ Սրբազանը նախքան իր պաշտոնատեղին մեկնելը, ունենա իրենց հետ խորհրդակցություններ:

Ժողովը, անցնելով իր օրակարգին, այսինքն հանձնաժողովների /սեկցիա/ ընտրության՝ ձեռնարկեց հետևյալ հանձնաժողովների ընտրության, միաձայնությամբ քվեարկվեցին.

5. Կազմական կանոնագրի հանձնաժողովին որպես անդամներ՝ հիտևյալ յոթը անձնավորությունները.
   1. Գրիգոր Վարդանյան
   2. Աղաբեկ Համբարյան
   3. Լազո Ղազարյան
   4. Արամ Մանուկյան
   5. Տիկին Զապել Եսայան

6. Ավետիս Թերզիպաշյան
7. Հմայակ Մանուկյան

Բ. Կրթական – կուլտուրական հանձնաժողովի անդամներ.
1. Գուրգեն Հայկունի
2. Գրիգոր Հովսեփյան
3. Վանփուշ
4. Կարապետ Կարախանյան
5. Միրզախան Միրզախանյան
6. Բարունակ Տ. Հարությունյան
7. Ղուկաս Դերենիկյան
8. Վրթանես Փափազյան
9. Արսեն Հացագործյան

Գ. Բժշկաառողջապահական հանձնաժողովի անդամները յոթ հոգի.
1. բժ. Արտաշես Բաբալյան
2. ,, Աշոտ Տ. Պողոսյան
3. ,, Խաչիկ Պարթև
4. ,, Հայկազուն Նալբանդյան
5. բժշկուհի Ե. Զալյան
6. բժիշկ Մինասյան
7. ,, Խոսրով Սանֆանի

Դ. Վերաշինության հանձնաժողովի 11 անդամները.
1. Ներսես Սրբազան
2. Մր. Էրնեսթ Եարո
3. Փանոս Թերլեմեզյան
4. Հրանտ Գալիկյան
5. Արամ Մանուկյան
6. Զավեն Կորկոտյան
7. Մուրադ
8. Շարաֆյան
9. Կարո Սասունի
10. Հակոբ Տեր-Զաքարյան
11. Մկրտիչ Աբգարյան

Ընդունեց, որ Վեհափառ Կաթողիկոսի ներկայացուցիչ Գևորգ Սրբազանը իրավունք ունենա բոլոր հանձնաժողովների նիստերին ներկա լինել:

Ապա ժողովը անցնելով իր երկրորդ օրակարգին, այսինքն պատգամավորների ամփոփված զեկուցումների ընթերցմանը հետևյալ կերպով:

ՀԱԱ, ֆ. պ. 57, ց. 5, գ. 169, թթ. 23-28: Բնագիր: Ձեռագիր:

ԷՋՄԻԱԾՆԻ ՄԻԱԲԱՆ ԳԵՎՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

11 մայիսի 1917թ.
Էջմիածին

Ձերդ ս. Օծութեան հրամանի համաձայն /Հայրապետական դիվանի տարվոյս Մայիսի 1 թուակիր, թ.749 գրութիւն/՝ ներկայ եղայ որպէս Հայրապետական ներկայացուցիչ, Երևանում մայիսի 2-ին բացուած տաճկահայ գաղթականական Ա համագումարին և կարդալով Հայրապետական ս.կոնդակը ողջույնի խոսք ասացի:

Համագումարը տևեց տասն օր և ունեցավ... նիստ, ուր լսուեցան քննադատական զեկուցագրեր բոլոր գոյութիւն ունեցող գաղթականական մարմինների գործունէութեան մասին և կազմուեցան ո՝չ նպաստաւոր բանաձևեր: Լսուեցան նաև կրթական,որբանոցային, վարչական-քաղաքացիական և բժշկա-սանիտարական սեկցիաների մշակած ծրագրերը ապագայ նոր կազմուելիք մարմինների գործունեութեան ուղին գծող՝ և համապատասխան բանաձևեր կազմուեցան:

Վեջապէս ծրագրուեցան ունենալ երեսուն հոգուց բաղկացած մի խորհուրդ, որից 15 հոգին պիտի ընտրի տաճկահայերի համագումարը և 15-ը ռուսահայերինը, և կամ ներկայումս գործող գաղթականական կազմակերպութիւնները: Իսկ այդ խորհուրդը պիտի կազմէ մի կենտրոնական մարմին իւր անդամներից կամ հրավիրեալներից, որոնց թիւը ու վարձատրութեան չափը ինքը խորհուրդը պիտի որոշէ:

Ամսիս 11-ից երեկոյեան նիստում շատ դժուարութիւններից յետոյ՝ վերջապէս յաջողուեցավ ընտրել խորհուրդի 25 անդամներ՝ տասն և հինգը իսկական և միւսը անձնափոխանորդներ, և փակել համագումարը: Փակման խոսքը ինձ վերապահուեցավ, որպէս Հայրապետի ներկայացուցչի:

Ուրախ եմ յայտնելու, որ համագումարի որոշմամբ նախագահութիւնը պատիւ կունենայ ամսիս 12-ին լինել ս.էջմիածնում և ներկայանալ Ձերդ Վերափառութեան՝ յայտնելու իր որդիական ակնածութիւնը հանդէպ Ձերդ Վեհափառութեան դէպի գաղթականութիւնը ցոյց տուած գորովի և հայրական խնամքի ու հոգատարութեան:

Ընդ սմին պատիվ ունիմ մատուցանելու նաև ժողովի բոլոր արձանագրութիւնների և համագումարի բացման և փակման առթիւ իմ արտասանաց խոսքերի պատճենները:

Խորին ակնածութեամբ
Վեհափառութեանդ
խոնարհ որդի՝ Գէորգ եպիտկոպոս

ՀԱԱ, ֆ.պ. 57, ց. 8, գ. 169, թթ. 37- 38:Բնագիր: Ձեռագիր:

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

N 1

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ ԿՈՄԻՏԵԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

11 հունվարի 1919թ.
Երևան

Վեհափառ տեր!

Արևմտահայ երկրորդ համագումարի Կազմակերպիչ կոմիտեն իր սեպուհ պարտականութունն է համարում իր գործն սկսել հայցելով նորին Ս. Օծության օրհնութունն իր աշխատանքների համար, և խոնարհաբար խնդրելով, որ նորին Ս.Օծութիւնը բարեհաճի իր ներկայացուցիչն ուղարկել համագումարին:

Կազմկոմիտեն հույս ունի, որ նորին Ս.Օծութիւնը իր բարձր ուշադրության արժանի կդարձնի Կոմիտեի հրատարակած «Կոչն» ու «Շրջաբերական-հրահանգը»,

որոնք համագումարի նպատակների և մանրամասնությունների մասին տեղեկություններ կարող են տալ իր բարձրապատիվ ներկայացուցչին:

խոնարհ ողջույնով՝
դիվան կազմ. կոմիտեի Նախագահ՝ Գր. Բուլկարացի
Ատենապետ՝ Վ. Տերոյան
Քարտուղար՝ Արսեն Կիտուր

ՀԱԱ, ֆ.պ. 57, ց. 5, գ. 169, թ. 40, ձեռ.բն.

N 2

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՉԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓԱԽՍՏԱԿԱՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ

1 հունվարի 1919թ.
Երևան

Համաշխարհային պատերազմը վեջացավ, մեր դաշնակիցները հաղթեցին, մենք հաղթեցինք: Սակայն Արևմտյան Հայաստանի տարագիր հայությունը դեռ չի կարողանում իր նպատակների և իդեալների ամփոփված ձևակերպությունը հրապարակել և ինքն էլ մասնակից լինել նրանց իրականացմանը: Այժմ մեր անունից խոսում են ոչ միայն մեր բարեկամները, այլ, գուցե մեր թշնամիները. այժմ պարտվողները նույնիսկ խոսելու իրավունք և պատեհություն ունեն:

Ինչքան էլ որ իրավունք ունենան մեր եղբայրները, հեռավոր բարեկամներն ու ներկայացուցիչները մեր անունից խոսելու, այնուամենայնիվ, մոտավորապես չորս տարի մեր մեծ դաշնակիցների հայտարարած սկզբունքների և արդարության համար պայքարող և տանջվող հայությունը ամենից ավելի և ամենից առաջ պարտավոր է իր նպատակները, իր ցանկությունները և իր կամքը կազմակերպված ձևով հրապարակ բերել և պաշտպանել նույն արիությամբ և անձնազոհությամբ, որով այն պատերազմի թատերաբեմը իջավ վճռականորեն, սկզբից ևեթ, առանց երկդիմության, տատանումների և վհատության:

Շատերը մեր անունից խոսելու իրավունք ունեն, բայց, եթե որևէ ձայն պետք է լսվի մեր արդար դատի և իրավունքների պաշտպանության ի խնդիր, այդ էլ մեր ձայնը պետք է լինի: Սա հրամայական պարտականություն է, որ իր բովանդակ մեծությամբ կծանրանա ներկա սերունդի վրա: Մենք կարելինը պիտի անենք անթերի և կատարյալ կերպով տանելու մեր այդ պարտականությունը և վերջին ճիգը գործ դնելու համար ապագայի և պատմության ահեղ դատաստանից և պատասխանատվությունից ազատվելու և իրականացնելու այն սկզբունքները, որոնց համար մենք դարերով տանջվել ենք և ահա չորս տարի է, որ արյունաքամ կլինենք ու կմեռնենք:

Մեր քաղաքական իդեալների ձևակերպումն ու ներկայացչությունը մեր առջև կդրվի ճիշտ այս օրերին, ճիշտ այս րոպեին: Չկա մարդ, որ չզգա մեր դատապարտելի լռությունը և խոսելու անհրաժեշտությունը:

Մեր հերթական բոլոր խնդիրները մնացին ապառիկ և այժմ ժամանակ է, որ մենք մոռանանք այդ բոլորը, որպեսզի կարողանանք տեսնել պատմության մեծ խնդիրը, որ մեր առջևն է դրված և մեզ համար պետք է լուծվի: Ամենայն հավանականության դեր կարող է խաղալ այդ լուծման մեջ փախստական հայությունը,այն չպիտի՞ կամենար իր մասնակցությունն էլ դարձնել այդ դեր խաղացող փոքրիկ հավանականություններից մեկը: Իր ժամանակի և վայրկյանի ոգին

ըմբռնողների համար պետք է կամքի և մտածողության կազմակերպությունն ստեղծել փախստական հայության բոլոր ծալքերի մէջ:

Որովհետև, այդ խնդիրներից բացի, շուտով մեր առջև պիտի դրվի նաև Արևմտյան Հայաստանի համարյա թէ՝ անմարդաբնակ մեր հայրենիքը բազմամարդելու և վերաշինելու, մեկ խոսքով Ներգաղթի խնդիրը: Չորս տարիների փախստականական բոլոր տանջալից վարժությունները մեզ համար բավարար, շատ բավարար դասեր եղան, որպեսզի մենք չուզենանք օգտվել դրանցից և մեր ներգաղթը մի նոր գաղթ դարձնել, ավելի՛ ահավոր, ավելի՛ անկազմակերպ, ավելի՛ արյունոտ:

Անպտուղ անցան մեր բոլոր ճիգերը կուռ և ամուր կազմակերպություն ստեղծելու համար փախստական հայության մեջ, և այսօր, երբ անոր հովիվները չկան, անգլուխ է մնացել բազմադարյան կուլտուրայի ավանդապահ ժողովուրդը, անլեզու և անխոս, այսօր մենք գուցե նկատում ենք, որ պետք է լռել մի քիչ էլ Այսորվա մասին և սակայն, բարձրագոչ խոսել մեր լուսավոր Վաղվա մասին:

Այս երկու նպատակները, մեր մոտավոր ապագայի մտահոգությունը և մեր դատի սեփական պաշտպանությունը անհրաժեշտ են դարձնում կարճ ժամանակի մեջ և գուցե կարճ ժամանակի համար կազմակերպել փախստական հայության Խորհուրդը կամ Կոմիտեն:

Եթե մենք ուրիշ ո՛չ մեկ նպատակ, ո՛չ մեկ ցավ կամ հոգս, ո՛չ մեկ հարց կամ խնդիր էլ չունենանք, այդ երկու խնդիրները միայն բավական են, որպէսզի մենք արդարացնենք, նույնիսկ փախստական վիճակի մեջ, մեր կազմակերպման համառ մտադրության հետ, մեր այդ հավիտենական երկու խնդիրները վերջնականապես լուծելու վճռականությունը, գիտակցությունն ու պարտականությունը:

Արևմտյան Հայաստանի փախստական հայության Համագումարի Կազմակերպիչ Կոմիտեն ներկա կոչով դիում է բոլորին, խնդրելով միանալ այդ երկու մեծ նպատակների շուրջ, մոռանալ ամեն բան, նույնիսկ մեր թշվառությունը, հավիտենական թշուառությունից ազատվելու, համերաշխ, միաբան, և աննկուն կամքով, մեր առջև դրուվծ այդ երկու խնդիրների՝ սիրուն այդ երկու խնդիրները լուծելու:

Դիվան Արևմտահայ Երկրորդ Համագումարի Կազմ. Կոմիտեի
Նախագահ՝ Գր. Բուլկարացի
Ատենապետ՝ Վ. Տերոյան
Քարտուղար՝ Արսեն Կիտուր

Ծանոթ.- Համագումարի տեղի, ժամանակի, ընտրական հրահանգների և ձևակերպված օրակարգի մասին կհայտարարվի առանձին:

ԱԱՀ, ֆ.պ. 57, ց. 5, գ. 169, թ. 41: Տպագիր:

N 3

ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ-ՀՐԱՀԱՆԳԸ

2 հունվարի 1919թ.
Երևան

Ներկա 1919 թվի հունվար ամսի 25-ին Երևանի մեջ գումարվելու է Արևմտյան Հայաստանի փախստական Հայության Համագումարը, որ լինելու է առավելապես Հայատանի Հանրապետության մեջ ապաստանածների ներկայացուցչությունը:

Համագումարի կազմության համար մշակված է հետևյալ ընտրական կանոնադրությունը, որ իբրև հրահանգ կառաջարկվի Արևմտյան Հայաստանի ամբողջ փախստականությանն անխտիր.

Արևմտահայ Երկրորդ Համագումարի Ընտրական Կանոնները

Ա. Արևմտահայ Երկրորդ Համագումարը ներկայացուցչական ժողովն է լինելու Հայաստանի Հանրապետության սահմանների մեջ ապրող ամբողջ արևմտահայերի:

Բ. Համագումարի պատգամավորության ընտրություններին մասնակցելու իրավունք ունեն առանց սեռի խտրության բոլոր այն արևմտահայերը, որոնք 18 տարեկանից բարձր են:

Գ. Յուրաքանչյուր 3000 շունչ արևմտահայերը կընտրեն մեկ պատգամավոր:

Դ. Արևմտահայ Երկրորդ Համագումարի պատգամավորական ընտրությունները կկատարվեն հետևյալ ընտրական շրջանակների մեջ.

1. Երևան քաղաք և արվարձաններ	15500	անձ 5 պատգ.
2. Էջմիածին – Սարդարապատ	6800	,, 2 ,,
3. Աշտարակ - Ապարան Շորագյալ Եղվարդ	15885	,, 5 ,,
4. Սուրմալու	12000	,, 4 ,,
5. Ղրխ- Բուլաղ	16698	,, 5 ,,
6. Ախտա	14439	,, 5 ,,
7. Նոր- Բայազետ	12000	,, 4 ,,
8. Միլլի-Դարա	6000	,, 2 ,,
9. Սիսիան	13000	,, 4 ,,
10.- Դարալագյազ	2000	,, 1 ,,
11.- Բաշգառնի	2500	,, 1 ,,
12.- Դիլիջան	3519	,, 1 ,,
13.- Ղարաքլիսա	3500	,, 1 ,,
14.- Ալեքսանդրոպոլ	3000	,, 1 ,,
15.- Ղամարլու	3000	,, 1 ,,

Ծանոթ.- Վիճակագրական վերոհիշյալ թվերի հիմք են ծառայում Հայաստանի Հանրապետութ. 1918 թվի հոկտ.1-ի միօրյա վիճակագրությունը և կառավարական շրջանային լիազորներից ստացած տեղեկությունները:

Ե. Յուրաքանչյուր ընտրական շրջանակը կունենա իր ընտրական 5 անձից բաղկացած հանձնախումբը, որը կնշանակվի Արևմտահայ Երկրորդ Համագումարի կազմակերպիչ Կոմիտեի կողմից կամ կընտրվի նրա ներկայացուցչի նախաձեռնությամբ:

Զ. Ընտրական շրջանային հանձնաժողովը կղեկավարի իր պատկանած շրջանի ընտրությունները, Համագումարի կազմակերպիչ Կոմիտեի հրահանգներով:

Է. Արևմտահայ Երկրորդ Համագումարի ընտրությունները տեղի կունենան ընտրական երկաստիճան սիստեմով:

Ծանոթ.-Ա.Գյուղերի կամ ըստ հնարավորության գյուղախմբերի յուրաքանչյուր 300-500 շունչ արևմտահայությունը կընտրի իր շրջանային պատվիրակները, որոնք շրջանային պատվիրակների ժողովի մեջ կընտրեն համագումարի պատգամավորությունը համաձայն սույն կանոնադրության Գ. հոդվածի:

Բ. Յուրաքանչյուր գյուղը կամ թաղամասը, եթե 300 շունչը պակաս է, կմիանա մոտիկ շրջանի գյուղին կամ թաղամասին՝ պատվիրակ ընտրելու համար:

Գ. Այն արևմտահայերը, որոնք զինվորական պարտականության մեջ են, իրենց տեղի վրա կմասնակցեն ընտրությանը

Ը. Արևմտահայ Երկրորդ Համագումարը տեղի կունենա 1919թ.Հունվարի 25-ին / ն.տ../ Երևան քաղաքի մեջ:

Ծանոթ.-Արևմտահայ Երկրորդ Համագումարին մասնակցող պատգամավորներին օրապահիկը պիտի հոգա Համագումարը հրավիրող Կազմակերպիչ Կոմիտեն:

Համագումարի օրակարգն է.

1. Արևմտյան Հայաստանի գաղթական հայության քաղաքական նպատակներով ձևակերպումը և արտահայտությունը:
2. Արևմտյան Հայաստանի գաղթական հայության Ներգաղթի խնդիրը և կազմակերպությունը:
3. Արևմտյան Հայաստանի գաղթական հայության ներկայացուցչական և հաշվեհարդար կոմիտեի ընտրությունը:

Պատգամավորները պետք է ունենան իրենց ընտրական լիազորության թուղթը, ստորագրված շրջանի Ընտրական Կոմիտեի կամ ժողովի կողմից:

Համագումարին հրավիրված են Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի, Հայաստանի Հանրապետական Կառավարության և Պառլամենտի, Դաշնակիցների, Ամերիկյան Կոմիտեի, Մոսկվայի Կոմիտեի, Եղբայրական օգնության, Հայոց գյուղատնտեսական և բարեգործական ընկերության ներկայացուցիչները, ինչպես նաև Արևմտահայ հասարակական հայտնի գործիչները:

Ի վերջո, Համագումարի կազմակերպիչ Կոմիտեն հարկանհրաժեշտ կհամարի իր կազմության մասին տալ հետևյալ ծանօթությունը:

Երևանի մեջ անցնող տավա ամբողջ վերջին ամսվա ընթացքում մի շարք խորհրդակցական ժողովներ գումարվեցին Արևմտահայության նախկին մարմինների և մտավորականների մասնակցությամբ, որոնք հանգեցին միաձայնությամբ Համագումարը հրավիրելու անհրաժեշտության և կանխավ հայտարարելով կազմակերպիչ Կոմիտեի ընտրվելու օրը, Դեկտեմբերի 19-ին, քաղաքային Խորհրդարանի մեջ կատարեցին այդ ընտրությունը:

Կազ. Կոմիտեն համար ընտրվեցան հետևյալ անձինք՝

Գրիգոր Բուլղարացի, Արմեն Սասունի,Վարազդատ Տերոյան, Ռուբեն Դրամբյան, Արսեն Կիտուր, Սմբատ, Հովհաննես Մխիթարյան, որոնք կոպտացիոնի իրավունքով հրավիրեցին իրենց աշխատանքներին մասնակցելու պ.պ. Աղաբեկ Համբարյանին և Վաղարշակ Յոխիկյանին:

Թե Ներկայացուցչական ժողովները և թե Կազմ. կոմիտեն ղեկավարվեցին սկզբից ևեթ միայն կատարելիք գործի մեծության գաղափարով և այդ պատճառով էլ փախստական Հայության գործերի տնօրինության մեջ ոչ մի արժեք տվին բոլոր մինչ այժմյան տեսակետներին:

Կազմակերպիչ Կոմիտեն կկարծի, որ իր կազմած գործն էլ այդպես պետք է լինի և այն միակ սահմանափակությունը, որ այն դրել է Հանրապետության սահմաններով՝ սոսկ ճանապարհների և հաղորդակցության հնարավորութուները նկատի առնելով արած է. այդ պատճառով էլ նա կկարծե, որ Համագումարը իր դռները լայն պիտի բացի Հանրապետության սահմաններից դուրս ընտրված պատգամավորների առջև, եթե նրանք, համապատասխան ներկա հրահանգին և իր ժամանակին փութան իրենց ձայնն էլ միացնել մերին:

Դիվան Կազմակերպիչ Կոմիտեի
Նախագահ Գրիգոր Բուլղարացի
Ատենապետ Վ. Տերոյան
Քարտուղար Արսեն Կիտուր

Կազմակերպիչ Կոմիտեի հասցեն՝ Երեւան « Ա Հ Ե Կ »

ՀԱԱ, ֆ. պ. 57, ց. 5, գ. 169, թ. 42: Տպագիր:

N 4

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

15 մարտի 1919թ.
Երևան

Արևմտահայ երկրորդ Համագումարի առաջին պաշտոնական նիստը տեղի ունեցավ Երևանի մեջ 1919 թ. փետրվարի 6-ին, Արարատյան Հանրապետության Խորհրդարանի դահլիճի մեջ:

Արևմտահայ Համագումարի անհրաժեշտությունը հրամայական էր դարձել գերմանո-թուրքական բանակների ընդհանուր նահանջից հետո և առավելապես փախստական հայության կատարելապես անկազմակերպ վիճակի պատճառով քաղաքական կոշմարի վերացումը կբացեր նոր հորիզոններ ամբողջ հայության առջև ընդհանրապես և արևմտահայության առջև մասնավորապես:

Դրան կզուգադիպեր փախստականության անկազմակերպությունը, որի շնորհիվ անկարելի կլիներ որևէ ձևով շարունակել ընդհատված աշխատանքները և վայրկանին համապատասխան դիրք բռնել մեր հին և նոր դատին պաշտպանության ի խնդիր: Ահա այս ընդհանուր վիճակի մեջ տեղի ունեցան մի շարք խորհրդաժողովներ, որոնցից հետո հաջողվեց 1918 թ. դեկտ. 19-ին ընտրել համագումար հրավիրող կազմակերպիչ մի կոմիտե , որի վրա պարտականություն դրվեց ամենակարճ ժամանակում հրավիրել Արևմտյան Հայաստանի փախստական հայության երկրորդ համագումարը:

Համագումարի օրակարգը ամփոփվում էր հետևյալ երեք կետերով.

1/ Արևմտյան Հայաստանի գաղթական հայության քաղաքական հպատակների ձևակերպումն և արտահայտությունը:

2/ Արևմտյան Հայաստանի գաղթական հայության ներգաղթի խնդիրը և կազմակերպությունը:

3/ Արևմտյան Հայաստանի գաղթական հայության ներկայացուցչական և հաշվեհարդար կոմիտեի ընտրությունը:

Համագումարը պետք է լիներ ժողովրդական ներկայացուցչություն, այդ իսկ պատճառով կազմակերպիչ կոմիտեն որոշած էր անել ռամկավար ընտրություն՝ երկաստիճան ձևով: Համագումարին հրավիրված էին Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսը, գեներալ Անդրանիկը, Արևելյան Հայաստանի հասարակական ու պետական հաստատությունների ներկայացուցիչները, նաև դաշնակից պետությունների Թիֆլիսի ներկայացուցիչները:

Համագումարն օրակարգը, ընտրական ձևը և հրավիրված հաստատությունները անհրաժեշտորեն համագումարը դարձնելու էին քաղաքական հաստատություն, որ առանց անտես առնելու փախստականության ճգնաժամային վիճակը, ամենից ավելի և ամենից առաջ պետք է զբաղվեր Արևմտյան Հայաստանի փախստական հայության քաղաքական նպատակների և ձևակերպման խնդրով:

Կազմակերպիչ կոմիտեն մեծ ջանքեր էր թափել համագումարին հրավիրելու նաև նախկին Արևմտահայ և Ապահովության Խորհուրդները, թե մասնավոր

նամակներով և սուրհանդակով և թե Թիֆլիսի և Երևանի թերթերոին ուղղած բաց նամակներով:

Կազմ. կոմիտեի դիմումի վրա Արարատյան Հանրապետության Խորհրդարանը միաձայնությամբ քվեարկել էր 35.000 ռուբլիի վարկ համագումարի ծախսերի համար:

Համագումարի բացումը նշանակված էր 1919 թվի հունվարի 25-ին, սակայն շրջաններից ստացված դիմումների համաձայն կազմակերպիչ կոմիտեն բացումը հետաձգեց տաս օրով:

Փետրվարի 4-ին արդեն Երևան էին հասել պատգամավորների մեծ մասը, այնպես որ նույն օրը երեկոյան նշանակվեց առաջին նախապատրաստական նիստը: Թե այս առաջին և թե հաջորդ օրը կայացած երկրորդ նախապատրաստական նիստի մեջ պատգամավորները ծանոթացան կազմակերպիչ կոմիտեի աշխատանքներին և կատարեցին մի շարք նախնական աշխատանքներ: Երկրորդ նախապատրաստական նիստի մեջ որոշվեցին, որ համագումարաը պետք է ունենա երեք նախագահներ և գաղտնի քվեարկությամբ ընտրվեցին պ. պ. Գրիգոր Բուլղարացին, Վարազդատ Տերոյանը և Վահագն Քրմոյանը: Նույն ժողովում ընտրվեցին նաև երկու քարտուղարներ՝ Ա. Կիտուր և Հ. Վարդապետյանը, երեք հոգուց կազմված մանդատային հանձնաժողովը, ինչպես նաև համագումարի կանոնադրության համաձայն հանձնաժողովների չորս նախագահները.

1.Շրջաններից եկած զեկուցումների հանձնաժողով

2.Քաղաքական հանձնաժողով

3.Ներգաղթի հանձնաժողով

4.Հաշվեհարդարի և կազմակերպչական հանձնաժողով

Այդ ժողովի մեջ որոշվեց նաև հրավիրել խորհրդակցական ձայնով ինը հոգի, որոնք պետք է նպաստեին համագումարի աշխատանքներին:

Համագումարի բացման նիստը տեղի ունեցավ փետրվարի 6-ին, ժամը 12-ին: Համագումարի նախագահներից պ. Գր. Բուլղարացու բացման խոսքից հետո գերապատիվ Տ. Գևորգ Եպիսկոպոս Չորեքչյանը կարդաց Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի օրհնության կոնդակը, որի պատճենը կներկայացնենք այստեղ:

Ամենայն Հայոց Վեհ. Կաթողիկոսի Օրհնութեյան Կոնդակ

Գեվորգ ծառայ Յիսուսի Քրիստոսի և Անհասանելի կամօքն Աստծոյ եպիսկոպոսապետ և կաթողիկոս Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք Համազգական Նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցվոյ Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի Մեծարոյ անդամոց Բ.Համագումարի կազմակերպութեանց Հայոց Տաճկական Հայաստանի, սիրեցեալ որդվոց Մերոց Հոգեվորաց, հարազատից մօրս մերոց լուսոյ Ս. Էջմիածնի, ողջոյն և օրհնություն Հայրապետական առատացեալ ծավալեսցի ընդ Ձեզ ընդ ամենեսեանդս:

Խնդամիտ սրտիվ հասու եղաք ի ձեռն Ատենապետի Կազմակերպիչ Յանձնախմբի Համագումարիդ, յառանձինն ունկնդրութեան, եթե ի մօտոյ, ունի գումարել Բ.Համագումար գաղթականական ներկայացուցչաց Տաճկական Հայաստանի Երևան, առ ի խորհել զպիտոյից և զկարեաց հայորերաց, որք ասա առ մեղական պատսպարեալ յամաց հետէ և որ ըստ ներման հանգամանաց ունին կրկին դարձ առ հայրենին իրեանց առնել յարկս և ի շենս յավանս և ի քաղաքս:

Սիրտ Հայրապետիս Հայոց առլցեալ է յայդ խորհուրդ բանավոր ուրախութեամբ և յսկզբանն իսկ գումարել խորհրդակցութեանց զզմերս առաքեմք Հայրական ջերմագինն խնդակցություն, ընդ օրհնութեանցս ի ձեռն առանձինն ներկայացուցչի մերոյ Գերապատիվ Տ. Գեվորգ եպիսկոպոսի, մաղթանոք սրտի

ցանկանալով տեսանել ի գումարմանդ հիմն և խարիսխ բարօրութեան ապագայի մօտավորի, յոր ամենեքեանս կամք յուսացեալ և ակնկալու:

Ուրախ եմք յայս ձեռնարկություն կարևոր, նա զի յուսալ յուսամք եթե խոհական և շրջահայեացն խորհրդակցություններկայացուցչաց որդվոց Մերոց, սիրելեաց անշուշտ ունի գտանիլ ելս հնարից, արդիս մշակել մօտավորն կարելիությամբ զսահմանս լուծման խնդրոց, որք հային առ կրկին դարձ յաշխարհն ձեր և ի հայրենիս մեր անկապուտ դարևոր, ի բարվոքումն տնտեսական վիճակի, ի կրկին շինություն ավերեալ տանց, ի կանգնումն աշխարհին, զորս յակամայս լքիք և այլն զուղի ներքին կազմակերպութեան Հայրենացդ ծրել, զի մի դանդաղասցին ընթացք կարևոր բարեկարգութեանց ի դառնալն Ձեր յերկիր և յաշխարհ, որ ծնավն և սնավն զձեզ ամենեսեանդ:

Արդ յուշ ածեմք Ձեզ ամենեցունցդ լինել պատկառ մեծի գործոյս, որ առաջի ձեր ամենեցունցդ դնե զվերաշինությանն խնդիր մերոց Հայրենաց, լինել զգաստ և բարեխոհ մեն մի անդամոյ, յոյդ ձեռն ունի արգասավորել զլուծումն խնդրոյդ:

Օն, զաչ յուրաքանչյուր ումենքի Ձենջ ի մաճ արօրից հանրական կենցաղականին բարօրութեան, ի ծրել զակօս պիտանի առի արկանել սերմն բարի, ատօք և առատաբեր, զի և մենք յերեկոյացեալ հասակիս տեսանել տեսանեմք զբարեբաստիկն վիճակ մերոց Հայրենաց և ձեզ ամենեցունցդ լինել վկայք ականատեսք, եթե Տեր փրկե կրկին դժողովուրդ իմ ի տառապանաց և սրբե զարտասուս վշտակրութեանցս:

Աջ Տեառն հովանի Ձեզ ամենեցուց, օրհնություն մեր Հայրական առ ամենեսեանդ: Ամէն:

ի 9/22 Յունուարի 1919 ամի — Իսկականի վրայ ստորագրած
Ըստ Տոմարիս ՌՅԿԸ — Գեորք Ե. Կաթ.
Ի Հայրապետութեան Մերում Ը ամի — Ամենայն Հայոց
յԱրարատեան Մ. Առոռ. Ս. էջմիածնի
Ի Վաղարշապատ
Թ. 7

Նրանից հետո հանրապետական կառավարության նախագահ պ. Հ. Քաջազնունին հայտնեց իր կառավարության ցանկությունը վերացած տեսնել այս համագումարով հայության հատվածական բաժանումը: Խորհրդարանի ներկայացուցիչ պ. Ս. Վրացյանը խոսեց նույն մտքով: Այնուհետև խոսք առաև բարձրապատիվ Տ. Կորյունը վարդ. Սահակյանը, պ. պ. Ս. Թոփալյանը, Ե. Հարությունյանը, Ա. Տեր- Հակոբյանը և Ա. Խչիլյանը: Համագումարի նախագահներից պ. Վարազդատ Տերոյանը կարդաց մի ճառ համագումարի աշխատանքների մասին, իսկ պ. Վ. Քրմոյանը հարգանքի խոսքեր ուղղեց մեռնող ժողովրդի, նահատակված հասարակական գործիչների և պանծալի հերոսների հիշատակին: Որից հետո կարդացվեցին ողջույնի և շնորհակալության մի շարք գրություններ, որոնցից ահա կբերենք գեներալ Անդրանիկի, Հ. Յ. Դաշնակցության Արևմտյան Հայաստանի կենտ. կոմիտեի և Հայ ռամկավար Կուսակցության Երևանի շրջանային վարչության նամակների պատճենները:

Գեներալ Անդրանիկի նամակը

Արևմտահայ Բ Համագումարի կազմակերպիչ կոմիտեին

Շնորհակալությամբ ստացայ Ձեր N.16 գրությունը:

Մտածելով, որ չեմ կրնար այդ Համագումարին մասնակցելովս օգտակար դառնալ և թեթևացնել Ձեր աշխատանքները, ուստի հրաժարվում եմ ներկայ լինել այդ համագումարին:

Ձեր կատարեալ յաջողություն կը ցանկանամ:

25 յունուար 1919 թ.

Անդրանիկ

ՀՅ Դաշնակցութեան Արևմտեան Հայաստանի Կենդր. Կոմիտեի նամակը

Արևմտահայութեան Բ Համագումարի նախագահութեան

Սրտի անհուն բերկրանքով կողջունենք Արևմտահայութեան Բ. Համագումարը:

Կը ցանկանայինք, որ իբրև Արևմտահայութեան Համագումարը սա վերջինը լիներ, և յառաջիկային Ազատ և Միացեալ Հայաստանի մեջ բոլոր հայերը հնարավորություն ունենային միասին աշխատելու և հավաքաբար համագումարներ կազմակերպելու:

Լիայոյս ենք, որ Համագումարը իր բոլոր ջանքերը կը լարե այդ ուղղութեամբ, թե որոշումներ կայացնելով և թե գործնական քայլեր առնելով:

Թող վերջանան հայությունը բաժանող սահմանները:

Կեցցե Ազատ և Միացեալ Հայաստանը:

ՀՅ Դաշ. Արևմտեան Հայաստանի Կենդր. Կոմիտե

1919, փետր. 6, Երևան:

ՀԱՅ ՌԱՄԿԱՎԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆԱՄԱԿը

Արևմտահայ Բ. Համագումարի
Յարգոյ Նախագահութեան

Հայ Ռամկավար կուսակցությունը որպես մին հայ ժողովրդի ազատագրութեան համար աշխատող քաղաքական կազմակերպություններեն ներկայ պատմական վայրկեանին, երբ մարմին են առած տասնեակ տարիներու մեր իդեալները ու մենք կը գտնվենք նոր կեանքի շեմքին, սրտի առանձին գոհունակությամբ կուգայ շնորհավորել ազատագրված թեև վտարանդի, զավակներու այս առաջին ազատ համագումարը և յոյս ունի, որ համագումարը կը յայտնե իր միաձայն ցանկությունը այն հարցի մասին, որ մեր կուսակցութեան գերագոյն նպատակն է եղած՝ տեսնել հայութեան չար հողմով ցիր ու ցան հատվածները՝ քով-քվի, հայրենի հողին վրայ և մեկ ու անբաժան պետական միավորի մեջ:

6 փետր. 1919, Երևան:

Հայաս. Ռամկավար Կուսակցութեան Երևանի Շրջանային
Վարչություն

Սրանցից զատ ողջույնի գրություններ էին ղրկել նաև եզդիների ցեղապետ Ջհանգիր աղան և Թեյֆուր բեկը, Արևմտահայ Ուսուցչական Միության կենտրոնական և Երևանի վարչությունները, ,,Աշխատանք,, և ,,Վան-Տոսպ,, թերթերի խմբագրությունները, Հայաստանի հրատարակչական կոոպերատիվ վարչությունը, բժ. Զալյանը, Մանուկյանը և այլք:

Այս առաջին պաշտոնական նիստից հետո համագումարի նիստերը տեղի ունեցան Երևանի քաղաքային խորհրդարանի դահլիճի մեջ, ամեն օր ժամը 4-8-ին, կեսօրից հետո և աշխատանքները վերջացան փետրվար 13-ին: Այս ժամանակամիջոցի ընթացքում նիստ տեղի չունեցավ միայն փետր. 9-ին, որովհետև հանձնաժողովները չէին վերջացրել իրենք աշխատանքները:

Այնպես որ համագումարն ունեցավ երկու նախապատրաստական, մեկ բացման և վեց պաշտոնական նիստեր, առանց հաշվելու հանձնաժողովների բազմաթիվ նիստերը:

Համագումարի առաջին պաշտոնական նիստի մեջ մանդատային հանձնաժողովը հետևյալ ձևով ներկայացրեց համագումարի կազմը:

1. Երևան- 31.700 փախստական- 8 պատգամավոր՝ պ.պ. Հայկակ Կոսոյյան, Զավեն Կորկոտյան, Հայրապետ Հայրապետյան, Հրանտ Կարինյան, Ռուբեն Շատվորյան, Եփրեմ Ալեքսանյան, Մանուել Մալոյան, Աբրահամ Ավետիսյան:
2. Էջմիածին- 42.600 փախստական- 3 պատգամավոր՝ Տեր Եզնիկ վրդ. Ներկարարյան, Հակոբ Մադոյան և Վահան Համբարձումյան:
3. Աշտարակ- 12.800 փախստական- 2 պատգամավոր՝ Գարեգին Ոսկերչյան և Ռուբիկ Թերլեմեզյան:
4. Դարաչիչակ- 23.750 փախստական- 5 պատգամավոր՝ Տաճատ Դեմոյան, Շավարշ Բասենցյան, Տաճատ Թերլեմեզյան, Մկրտիչ Մանուկյան, Համազասպ Աբրահամյան:
5. Կըրդ. Բուլաղ- 17.570 փախստական- 5 պատգամավոր՝ Արշակ Մանուկյան, Շարան Շարանբեյան, Արծրուն Ղուկասյան, Սիմեոն Գալստյան, Հովակիմ Շահբազյան:
6. Սուրմալու- 25.700 փախստական- 4 պատգամավոր՝ Արտաշես Միրզոյան, Օրման Ղորղանյան, Թեյֆուր բեկ Թեմուր աղա:
7. Միլլի-Ղարա- 10.670 փախստական- 1 պատգամավոր՝ Անդրանիկ Մխիթարյան:
8. Ալեքսանդրապոլ- 10.000 փախստական- 1 պատգամավոր՝ Սեդրակ Խալոյան:
9. Դիլիջան- 12.000 փասխտական- 2 պատգամավոր՝ Վարդան Առաքելյան, Ղեվոնդ Հովսեփյան:
10. Բաշգառնի- 5000 փախստական- 1 պատգամավոր՝ Մուշեղ Դարմանյան:
11. Նոր-Բայազետ- 27.923 փախստական- 7 պատգամավոր՝ Վահագն Քրմոյան, Բաղդասար Աբոյան, Արսեն Խաչիկյան, Միհրան Գրիգորյան, բժիշկ Մուրադյան, Արամ Խոջայան, Գառնիկ Ասլանյան:
12. Կազմակերպիչ կոմիտեն- Գրիգոր Բուլղարացի, Սմբատ, Վարազդատ Տերոյան, Ռուբեն Դրամբյան, Արմեն Սասունի, Վաղարշակ Յոխիկյան, Հովհաննես Մխիթարյան, Արսեն Կիտուր, Նազարեթ Բուռնության:
13. Արևմտահայ Խորհրդի անդամներեն- 2 հոգի՝ բժ. Պոնապարտյան, Վանփուշ:
14. Արարատեան Հանրապետության Խորհրդարանի կողմից- 1 հոգի՝ Ս. Վրացյան:
15. Եղբայրական Օգն. գլխ. կարգադրիչ կոմիտեի կողմից- 1 հոգի. Կորյուն վրդ. Սահակյան:
16. Կովկասի Հայոց Բարեգործ. Ընկերության կողմից՝ 1 հոգի՝ Երվանդ Հարությունյան:
17. Անգլիական լորդ Մերի կոմիտեի կողմից- 1 հոգի՝ Սարգիս Թոփալյան:
18. ,,Աշխատանք,, և ,,Վան-Տոսպ,, թերթերի կոմիտեից- 1-ական հոգի՝ Արշավիր Ղազանջյան, Հարություն Վարդապետյան:

Այսպիսով, ձայնի իրավունքով համագումարին մասնակցելու էին 55 հոգի: Հնարավորություն չէին ունեցել ընտրություններին մասնակցելու Ղամարլուի, Սիսիանի և Դարալագյազի մեջ ապաստանած արևմտահայերը:

Համագումարին բացակա էին Ղարաքիլիսի երկու պատգամավորներն ու կազմակերպիչ կոմիտեի մեկ հիվանդ անդամը:

Համագումարն անցնելով իր բուն աշխատանքներին, ամենից առաջ լսում է շրջաններից եկած զեկուցումների զեկուցումը հանձնաժողովի նախագահ պ.Ռուբեն Շատվորյանի կողմից: Համագումարը մտքերի երկար փոխանակություն ունեցավ շրջանների մեջ ապաստանած փախստական հայության զարհուրելի կացության մասին, ի վերջո կընդունի սովի մասին հետևյալ բանաձևը:

ԲԱՆԱՁԵՎԻ ՇՐՋԱՆՆԵՐԵՆ ԵԿԱԾ ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Լսելով շրջաններից եկած պատգամավորների զեկուցումների ամփոփումը, որի հիման վրա Հայ և Եզդի ժողովուրդը փաստորեն սովի ճիրանների մեջ վերջնական բնաջնջման նախօրյակն է ապրում, համագումարը որոշում է, որ իրենից ընտրված մարմինը ազդու դիմումներ կատարի դաշնակիցների կովկասյան ընդհ. հրամանատարին, դաշնակից պետությունների համաեվրոպական կոնֆերանսին, այլև Փարիզի մեջ կազմված մեր նոր հայկական կառավարության և պահանջել հաց և շուտափույթ օգնություն՝ մահացող ժողովրդի համար, ինչպես նաև հանձնարարել, որ անհրաժեշտ միջոցներ ձեռ առնվեն նպաստի և խնամատարական գործը կազմակերպելու և լավ հիմքերի վրա դնելու:

/Ընդունված Արևմտահայ Բ Համագումարի նիստի մեջ 1919 թ. փետր. 8-ին/

Համագումարի հետևյալ նիստի հաշվեհարդար Զավեն Կորկոտյանը կանի նախկին Արևմտահայ և Ապահովության Խորհուրդների գործունեության համառոտ պատմությունը և մտքերի փոխանակություն կատարելուց հետո կնդունի հետևյալ բանաձևը:

ՀԱՇՎԵՀԱՐԴԱՐԻ ԲԱՆԱՁԵՎԸ

Արևմտահայ Բ Համագումարը լսելով հաշվեհարդար հանձնաժողովի զեկուցումը նախկին մարմինների մասին և տեսնելով, որ նրանք կազմալույծ վիճակում են գտնվու, շնորհիվ այն հանգամանքի, որ 1918 թ. մայիս ամսից ի վեր ոչ մի տեղ չեն հաջողել մեծամասնություն կազմել, իրենց ընտրողներին հավաքել և իրենց տնտեսական-բարոյական գործունեության հաշիվը ներկայացնել, ինչպես նաև շնորհիվ այն հանգամանքի,որ ոչ միայն իրենց ընտրողների մոտ չեն վերադարձել և Բ Համագումարին չեն ներկայացել, մի բան, որ ըստ ամենայնի նրանք հնարավորություն ունեին անելու, այլև միայն 2-3 հոգու համաձայնությամբ հանձն են առել արևմտահայ փախստականության հանդեպ այնպիսի պարտականություններ կատարելու, որ երբեք իրենց վրա դրված չի եղել, նրանց գումարները անձնական պատասխանատվությամբ զանազան գործերի հատկացնելով, մի բան, որ ոչ համագումարը, ոչ կոնֆերանսը և ոչ էլ խորհուրդները չէին թույլատրել:

Արևմտահայ Բ Համագումարը, որպես Հայաստանի Հանրապետության սահմանների մեջ ապաստանած փախստականության ներկայացուցչություն հայտարարում է նախկին Խորհուրդները լուծված, պահանջելով բարոյական և նյութական հաշվետվություն իրենց ամբողջ գործունեության վերաբերյալ թե հավաքականորեն և թե անձնապես:

/Ընդունված Գ նիստի մեջ փետր. 10-ին/

Ներգաղթի նախագահ պ.Արմեն Սասունի զեկուցում կանի ներգաղթի մասին և համագումարը համաձայն լինելով, որ երկարապատում ծրագիրները չեն, որ պիտի ներգաղթը հաջողեցնեն և կազմակերպեն, կընդունի հետևյալ բանաձևը:

ԲԱՆԱՁԵՎ ՆԵՐԳԱՂԹԻ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով մոտ ապագայում տեղի ունենալիք արևմտահայ փախստականների ներգաղթը դեպի իրենց ծննդավայրը և որ այդ ներգաղթը նպատակահարմար և արդյունավետ կլինի միայն այն ժամանակ, երբ այն կատարվի որոշ կանոնավորությամբ, ժողովրդի ֆիզիկական ապահովության անհրաժեշտ պայմաններում, Համագումարը հրահանգում է ընտրվելիք մարմնին այժմ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել պատմական Միացեալ Հայաստանի կառավարութեան մոտ և դաշնակիցներու ներգործոն միջամտությամբ և աջակցությամբ պետականորեն ապահովելու ներգաղթող ժողովրդի ֆիզիկական գոյությունը և պարենավորման անհրաժեշտ պայմանները, ինչպես նաև նրան հետևող վերաշինության գործի իրականացման անհրաժեշտ տվյալներ հավաքելը:

/Ընդունված Գ և Դ նիստերու մեջ 1919 թ. փետր 10 և 11-ին/:

Համագումարի առանցքը կազմող քաղաքական հարցը շատ երկար ժամանակ է գրավում: Քաղաքական հարցը այնքան հասունացել էր և նրա ձևակերպումն այնքան հրամայական դարձել, որ հանձնաժողովի մեջ անգամ հարցերը կառաջարկվեին պատգամավորների կողմից ինքնաբերաբար և կպահանջեին իրենց շուտափույթ պատասխանները: Հանձնաժողովի նախագահ բժ. Պոնապարտյանի զեկուցումից հետո համագումարը երկարորեն քննության և վիճաբանության կենթարկի քաղաքական բանաձևի հատկապես 1, 2 և 5 հոդվածները: Հոդված առ հոդված քննելուց և մաս-մաս քվեարկության դնելուց հետո առաջին և երկրորդ ընթերցումով ամբողջական բանաձևը քվեարկության է դրվում և միաձայնությամբ ընդունվում է Համագումարի կողմից:

Համագումարը ջերմ ծափահարություններով կընդունի Արևմտյան Հայաստանի փախստական հայության քաղաքական իդեալների ձևակերպման վերջնական հայտարարությունը և այսպիսով հրապարակի վրա դրված մեր դարավոր դատի բարոյական լուծումը կտա ամենից առաջ, իբրև ժողովրդական կամքի արտահայտություն:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՁԵՎԸ

Արևմտահայ Բ Համագումարը քննելով Հայ ժողովրդի ներկայ կացությունը.

1. Սրտագին կողջունի և կհայտարարի Ազատ և Միացյալ Հայաստանի անկախությունը:
2. Լիակատար վստահություն կհայտնի Ազատ և Միացյալ Հայաստանի Պողոս-Նուպար փաշայի Անդրանիկ Դահլիճին:
3. Կհայտարարի իր վճռական որոշումն ու կամքը՝ ունենալ քաղաքական և պետական մեկ միություն համազգային հատվածների և երկրամասերի միավորությամբ:
4. Կպարտադրի ընտրված ,,Գործադիր Մարմնին,,՝ նախարարական դահլիճի հետ անմիջական հարաբերության մեջ մտնել, իրականացնելու և գործնականացնելու քաղաքական և պետական այն բոլոր աշխատանքներն, որոնք հարկավոր են Ազատ և Միացյալ Հայաստանի պետական գոյությունը հիմնավորելու համար:
5. Միաժամանակ կպարտադրի ընտրված ,,Գործադիր Մարմնին,, գործնական քայլեր առնել Արարատյան Հանրապետության Նախարարության և Խորհրդարանի հետ Միացեալ Ազատ Հայաստանի անկախությունը հայտարարելու և իր մասնակցությունը բերելու գոյություն ունեցող պետական և օրենսդրական հաստատությունների մեջ համազգային միությունը իրականացնելու համար*:
6. Կպահանջի Ազատ և Միացյալ Հայաստանի պետական գոյության երաշխավորումը, դաշնակից պետությունների քաղաքական, տնտեսական և ռազմական օժանդակությամբ և աջակցությամբ:
7. Կպահանջի Հայկական Մեծ Եղեռնի հեղինակ և պատասխանատու ճիվաղներին Վիլհելմի, Էնվերի, Թալեաթի, Ջեմալի, Նազիմի, Բեհաէդդին Շաքիրի և ընկեր նահանգապետների, կառավարիչների և այն բոլոր ղեկավարների զիվորա-դաշտային դատարանով պատժվելը:
8. Կպահանջի Հայ ժողովրդի վնասների ամբողջական հատուցումը ի հաշիվ օսմանեան կառավարության:

/Ընդունված Դ և Ե նիստի մեջ, փետր. 11-ին և 12-ին/

Այնուհետև Համագումարին կզբաղեցնի այն հարցը, թե ինչպիսի կազմով մարմին պետք է ընտրել, իր որոշումները իրականացնելու համար: Այս հարցի առթիվ կքվեարկվի և կընդունվի պ. Ռուբեն Դրամբյանի հետևյալ բանաձևը.

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆԻ ԲԱՆՁԵՎԸ

Արևմտահայ Բ. Համագումարը կընտրի ինն հոգիանոց մեկ մարմին, որպես Արարատյան Հանրապետության մեջ ապրող Արևմտահայ հատվածի ,,Գործադիր Մարմին,,:

1. Նա կիրականացնի համագումարի որոշումները:
2. Կշարունակի մնալ իր ստանձնած պարտականությունների և իրավասության մեջ, մինչև Միացյալ Ազատ Հայաստանի պետական-օրենդրական հաստատությունների իրականացումը՝ Հայության մյուս հատվածների՝ Պողոս Նուպարի կաբինետի, Արարատյան հանրապետության կառավարության և խորհրդարանի գործակցությամբ և համաձայնությամբ:
3. Բացառիկ և համազգային արժեք ներկայացնող որևէ դեպքի առթիվ կիրավիրի սույն համագումարն իր լրիվ կազմով, Գործադիր Մարմնի անդամների մեկ երրորդի կամ Համագումարի անդամների կեսից ավելիի պահանջմամբ:
4. Գործադիր Մարմինը հաշվետու և պատասխանատու է Համագումարի առաջ իր գործունեության համար:
5. Համագումարի Բ նստաշրջանը կիրավիրվի մայիս 1-ին, եթե մինչ այդ ներգաղթը չի կատարված և եթե հնարավոր է պատգամավորների կեսից ավելին հավաքել;
6. Գործադիր Մարմնի օրենսդրական գործունեությունը կսահմանափակվի միայն այն չափով, որ չափով որ չի հակասի համագումարի որոշումներին և բանաձևերին:
7. Գործադիր Մարմինը կաշխատի մյուս շրջաններում ևս, որոնք զանազան պատճառներով ներկա կազմից կբացակայեն, պատգամավորներ բերելով, լրացնել իր կազմը:

/Ընդունված Զ. Նիստի մեջ, փետրվար 13-ին/

* Այս կետի ռամկավար կուսակցության հինգ անդամները լինելով, պատճառաբանված գրություն ներկայացնելով կհեռանան դահլիճից:

Փետրվար 13-ին, Համագումարի վերջին նիստի մեջ գաղտնի քվեարկությամբ կընտրվեն հետևյալ ինն անձնավորությունները, իբրև Համագումարի որոշումների ,,Գործադրող Մարմին,, պ. պ.Սմբատ Բորոյան, Խաչատուր Բոնապարտյան, Արմեն Սասունի, Գրիգոր Բուլղարացի,Վարազդատ Տերոյան, Ռուբեն Դրամբյան, Վահագն Քրմոյան, Վաղարշակ Յոխիկյան, Արսեն Կիտուր:

Այնուհետև նախագահության առաջարկով Համագումարը կլսի ողջույնի նամակների ընթերցումը: Այդ նամակներից այստեղ կբերենք Ամենայն Հայոց վեհափառ կաթողիկոսին, Պողոս Նուպար փաշային, Հաշտության Կոնֆերանսին, Արարատյան Հանրապետության կառավարության և Խորհրդարանին ուղղված գրությունները:

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅԱՆ Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Ե. ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Վեհափառ Տեր

Արևմտահայ Բ Համագումարը վերջացնելով իր աշխատանքները, սրբազան պարտականություն է համարում իր որդիական խորին շնորհակալություններն ուղարկել Նորին Ս. Օծության, իր օրհնության Կոնդակի և բարեմաղթությունների առթիվ:

Համագումարը խորապես հավատացած է, որ հայ ժողովուրդը և նրա հատվածները մի նպատակ միայն կարող են ունենալ՝ տեսնել հայրենիքի անջատված մասերը մեկ քաղաքական միավորի մեջ և հայ ժողովուրդը մեկ հայրենիքի վրա, այդ իսկ պատճառով համագումարը հայտնեց իր վճռական կամքն ու որոշումը իրականացնելու համար Միացյալ Ազատ Հայաստանի գաղափարը և հրահանգեց ընտրված ,,Գործադիր մարմնին,, գործնական քայլեր առնել այդ ուղղությամբ:

Համագումարը չի տարակուսում, որ Նորին Ս. Օծությունը ընդառաջ կգնա համազգային այդ միահամուռ կամքին ու ցանկությանն և կընդունի մեր լիակատար վստահության հետ նաև մեր որդիական խոնարհ, անկեղծ հարգանքները:

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՆՈՐԻՆ ՎՍԵՄԱՓԱՅԼՈՒԹՅԱՆ ՊՈՂՈՍ ՆՈՒԲԱՐ ՓԱՇԱՅԻՆ

Արևմտահայ Բ Համագումարը, գումարված Երևանի մեջ, փետրվար 6-ին, իր սրտագին ողջույնները կուղղի Ձերդ Վսեմափայլության և իր լիասիրտ վստահությունը կհայտնի, որ Ձեր կարող և արդյունավետ գործունեությամբ պետք է վերջնականապես ձևակերպվեն հայ բնաշխարհի պետական հիմքերը և հայ բազմաչարչար ժողովրդին հնարավորություն տրվի աշխատել և վերստեղծել իր հայրենի տունը:

Համագումարը տեսնելով Ձեր մեջ իր իղձերի և ցանկությունների լավագույն արտահայտիչը, Հույս ունի, որ իր քաղաքական և ազգային ձգտումները կջանաք լուծել հայ ժողովրդի արհեստականորեն անջատված հատվածների միավորությամբ և մեկ պետական-քաղաքական իրավակարգի ստեղծմամբ:

ՓԱՐԻԶԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽԱՂԱՐԱՐԱՐ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ

Կովկաս ապաստանած 400.000 արևմտահայության համագումարը կազմված Երևանի մեջ փետր. 6-ին, իր ողջույններն ուղղելով խաղաղարար վեհաժողովին, լիահույս է, որ իր Դատը, որի համար աննկարագրելի կորուստներ է տվել արևմտահայությունը, կլուծվի հայ ժողովուրդի իղձերի և ցանկությունների համաձայն

և դաշնակիցների հավանությամբ, հնարավորություն տալով արհեստականորեն անջատված հայ հատվածներին միանալ մեկ պետական կազմակերպության մեջ ազգային, տնտեսական, քաղաքական, տերրիտորիալ անհրաժեշտ պայմանների կիրառումով:

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Պ. ՎԱՐՉԱՊԵՏԻՆ

Արևմտահայ Բ Համագումարը ողջունելով հայության մեկ հատվածի կառավարությունը, լիահույս է, որ այն ևս կմիացնի իր ձայնը Արևմտահայ Համագումարի վճռին-ունենալ մեկ հայրենիք և մեկ Միացյալ, Ազատ Հայաստանի պետական կազմակերպություն:

Համագումարը գտնելով սույն խնդիրը հայության համար պատմական մեկ կարևոր խնդիր, հավատացած է, որ Արարատյան Հանրապետության կառավարությունը կփութա օր առաջ հայտարարել Միացյալ Ազատ Հայաստանի անկախությունը և գործնական քայլեր առնել միացումը իրականացնելու համար կյանքի մեջ:

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ

Արևմտահայ Բ Համագումարը ողջունելով Հանրապետության անդրանիկ Խորհրդարանին, վստահ է, որ այն ևս իր հեղինակավոր ձայնը պիտի միացնի հայության ամենից շատ տանջված և զոհաբերած խոշոր հատվածի ձայնին-ունենալ մեկ հայրենիք, Միացյալ Անկախ Հայաստան մեկ պետական կազմակերպությամբ:

Համագումարը հավատացած է, որ Խոհրդարանը չի ուշանա իր որոշումը տալու հայության համար խիստ կարևոր այս խնդրի մասին:

Առաջին նստաշրջանի փակման առթիվ կխոսեն պ.պ. Խ.Բոնապարտյանը, Վ.Քրմոյանն և Վ. Տերոյանն, որից հետո նստաշրջանը կհայտարարվի փակված:

Արևմտահայ Գործադիր Մարմինը հրատարակության տալով Երկրորդ Համագումարի այս համառոտ տեղեկագիր-պատմությունը, կկարծի, թե որոշ չափով նպաստած կլինի Համագումարի որոշումների ժողովրդականացման և ավելի լայն խավերի մեջ տարածման:

Արևմտահայ Գործադիր Մարմին

ՀԱԱ, ֆ. պ. 200, ց. 1, գ. 237, թ. 116-126:Տպագիր:

ԱՐՏԱԿԱՐԳ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՍԵՅՄԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅ ԱՆԴԱՄՆԵՐԻ, ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԻՐՎԱԾ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին նիստ

6/19 ապրիլի 1918թ.

Նիստը բաց է անում Ս.Վրացյան երեկ[ոյան] ժամը 7½-ին Ալեքսանդրապոլի Արտակարգ հանձնաժողովի շենքում, որից հետո նույն հանձնաժողովի նախագահ Գոլովաչովը ասում է ողջույնի խոսք: Պատասխանի համառոտակի խոսքից հետո Ս.Վրացյան պարզում է ներկա արտակարգ խորհրդակցության նպատակը և դրա կազմը: Սեյմը, ասում է նա, միայն որոշեց մերժել Տաճկաստանի պահանջը՝ ընդունել Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը անշեղ ու որոշեց Տրապիզոնից հետ կանչել իր պատվիրակներին:

Այնուհետև տեղի ունեցավ քաղաքական խոշոր դեպք՝ Բաթումի անկումը: Այդ հանգամանքի և պատվիրակության նախաձեռնության հետևանքով հարկ համարվեց նորից քննության առարկա դարձնել հաշտության պայմանները:

Սեյմի դաշնակցական ֆրակցիան նպատակահարմար համարեց այդ խնդիրը ոչ թե ֆրակցիոն, այլ ազգային չափանիշով քննության առարկա դարձնել մի ժողովում, որին մասնակցելու են հրավիրված, համաձայն նախնական խորհրդակցության և Հ.Յ.Դաշնակցության Արևելյան բյուրոի նախաձեռնության, Սեյմի և կառավարության բոլոր հայ անդամները, Ազգային խորհրդի անդամները, կուսակցությունների ներկայացուցիչները, Երևանի և Կարսի նահանգական կոմիսարները, Հայոց Ազգային խորհրդի և Երևանի, Կարսի և Ալեքսանդրապոլի լիազորները, ինչպես նաև՝ Ալեքսանդրոպոլի գործիչներից մի քանիսը:

Սրանից հետո խոսք է առնում խորհրդակցության անդամ Հ. Բեկզադյանը և բողոքում է, որ Հայ Զինվորական Միության կենտրոնական մարմնից ոչ ոք չի հրավիրված: Ս.Վրացյանը բացատրում է, որ դա հետևանք է մոռացության, բացի այդ՝ ժողովն ինքն ևս, իհարկե, կարող է նոր անդամներ հրավիրել: Հ.Բեկզադյանն առաջարկում է ձայնի իրավունք տալ Հայ Զինվորական Միության նախագահ Ա.Շահմազյանին, որ գտնվում է այստեղ: Ժողովն ընդունում է այդ առաջարկը:

Ապա Ս.Վրացյան առաջարկում է ընտրել նախագահ և քարտուղարներ: Նախագահ ընտրվում է Ա.Ահարոնյանը, քարտուղարներ՝ Ա.Աբեղյանը և Ա.Ստամբոլցյանը:

Խորհրդակցությանը հայտնվեց, որ մեր զորքերի գլխավոր հրամանատար Լեբեդինսկին կկամենար տեսնվել ժողովի անդամների հետ, որ նա նոր է վերադարձել ճակատից և այդ երեկո նեթ մեկնելու է Թիֆլիս: Ժողովը որոշեց՝ ցանկություն հայտնել լսելու նրա՝ գլխավոր հրամանատարի զեկուցումը ֆրոնտի մասին: Բացի նրանից՝ ժողովին ներկա պիտի գտնվեն նաև գեներալ Նազարբեկովը, ինչպես սույն ժողովի անդամ, ներկա կլինեն նաև՝ կորպուսի շտաբի պետ գեներալ Վիշինսկին ու գեներալ Կորգանովը:

Ժողովի արձանագրությունների համար Ա.Երզնկյանը ցանկալի համարեց, նրանց պատմական կարևորությունը նկատի առնելով, որ լինեն ըստ կարելույն ճշգրիտ: Մ.Հարությունյանն ավելացնում է՝ որ ժողովականներից ցանկացողներն

իրենք գրի առնեն իրենց խոսքը և տան քարտուղարներին՝ մուծելու արձանագրության մեջ: Առաջարկներն ընդունվում են:

Այնուհետև նախագահ Ա.Ահարոնյանն առաջարկում է կազմել օրակարգ, որ և կազմվում է այսպես. 1. Զեկուցումներ հաշտության պատուիրակության. 2. Զեկուցում կառավարության անդամների. 3. Զեկուցում զինվորական դրության մասին, 5. Զեկուցումներ Երևանի և Կարսի շրջանների ներքին դրության մասին, 6. Պատերազմի և հաշտության խնդիրը:

Բեկզադյան և Երզնկյան- այն կարծիքն են հայտնում, որ թե՛ պատերազմը շարունակելու և թե՛ հաշտություն կնքելու դեպքում ժողովը պիտի զբաղվի երկրի պաշտպանության հարցով, որ և ավելացնում է օրակարգի վրա՝ իբրև 7-րդ կետ:

Նախագահն իբրև հարկադրական ցանկություն ժողովին հայտնում է այն, որ նրա բոլոր որոշումները մնան ըստ ամենայնի գաղտնի, մանավանդ, որ հակառակ դեպքում ոչ գաղտնապահությունը կարող է անցանկալի ազդեցություն ունենալ զորքի տրամադրության վրա: Հ.Չոլախյանն առաջարկում է՝ ժողովի նպատակների մասին հետաքրքրվող անձանց տալ միատեսակ պատասխան, այն՝ որ խորհրդակցությունը խորհելու է ֆրոնտի պաշտպանության հնարավոր միջոցների մասին:

Ռուբեն Տեր-Մինասյան- այն կարծիքն է հայտնում, թե ինքնին այն հանգամանքը, որ պատերազմի և հաշտության խնդիրը քննվում է այս քաղաքում, ֆրոնտին մոտ, դա արդեն ֆրոնտը թուլացնող հանգամանք է, ուստի և բողոքում է այդ բանի դեմ, նման մի հարց քննելու համար պետք էր գնալ ավելի հեռու:

Հ. Քաջազնունի- բողոքում է Ռուբենի հայտարարության դեմ և չէ կարող թույլ տալ նման մի միտք, որ ժողովի որոշումները դուրս տարվեն և որևէ կերպ ազդեն ֆրոնտի վրա:

Ա.Երզնկյան- այն կարծիքին է, որ ժողովի որոշումներից մի քանիսը պիտի հրապարակվեն, հասարակությունը պիտի իմանա այդ մասին:

Ս.Մամիկոնյան- եթե կուսակցությանց ներկայացուցիչները իրենց ժողովներում պիտի զեկուցումներ տան քննելիք խնդիրների մասին, ապա ուրեմն ինքնախաբեություն է գաղտնապահությունը:

Հ.Քաջազունի- այն կարծիքի է, որ ժողովում քննելի խնդիրները պիտի մնան գաղտնի, հետո ժողովը ինքը կորոշի, թե ինչ որոշումներ պիտի հրատարակել: Այս կարծիքը համարվում է ընդունելի:

Ա.Զոհրաբյան- այն կարծիքին է, որ ներկա ժողովը ոչ թե պատերազմի և հաշտության, այլ ինքնապաշտպանության և հաշտության խնդրով պիտի զբաղվի:

Ս.Վրացյան- առաջարկում է օրակարգի բուն խնդիրներին չդիմել այս նիստին, քանի որ Երևանից ու Կարսից պատգամավորները չեն եկել, քիչ հետո պիտի գա գլխավոր զորահրամանատարը, այսօր բավականանք նրա զեկուցումը լսելով:

Ս.Հարությունյան- առաջարկում է անմիջապես անցնել օրակարգի քննության, բացակայող անդամները կարող են մասնավոր կերպով ծանոթանալ արված զեկուցումներին:

Մ.Հարությունյան- պաշտպանում է Վրացյանի առաջարկը՝ մանավանդ որ շրջանների ներկայացուցիչներին հայտնվել է, որ խորհրդարանական նիստերն սկսվելու են վաղը, ամսի 7-ի առավոտը: Առաջարկը ընդունվում է:

Նախագահը կարդում է Ալեքսանդրոպոլի արտակարգ հանձնաժողովի անդամներ՝ Կիրակոսյանի, Բաղրամյանի, Ասրիբեկյանի և Մարգարյանի գրավոր հայտարարությունը, որով խնդրում են իրենց թույլ տալ ներկա լինելու ժողովի նիստերին, որ և հարգվում է: Դրանից հետո հայտարարվում է ընդմիջում:

Ժամը 10 ½-ին վերսկսվում է ժողովը՝ ներկայությամբ գլխավոր զորահրամանատար Լեբեդինսկու, կորպուսի հրամանատար գեն. Նազարբեկովի, կորպուսի շտաբի պետ գեն. Վիշենսկու և գեն. Կորգանովի: Նախագահը երկու խոսքով պարզում է ժողովականներին խորհրդակցության նպատակը: Խոսք առնելով գեն.

Լեբեդինսկին՝ ասում է հետևյալը՝- Մենք զինվորական խնդիրներում ուշացել ենք երկու ամսով. զորահավաքը փոխանակ դեկտեմբերին սկսելու, սկսվեց փետրվարին: Ես մարտին եղա Բաքում և տպավորությունս մխիթարական չէր, ունեցած ուժերով հնարավոր չպիտի լիներ պաշտպանել Բաքումը: Այժմ եղա հայկական կորպուսի ֆրոնտում, և տպավորությունս համեմատաբար մխիթարական է: Ալեքսանդրոպոլում ստացա այն տպավորությունը, որ նոր կազմակերպվող զինական ուժեր կան: Հենց այսօր գալիս եմ ֆրոնտից, ուր սկսել են կռիվները, և ուր մեր զորքերը կռվում են քաջաբար. ձախ թևում մենք մինչև իսկ ետ քշեցինք թշնամուն իր դիրքերից: Զորքի բարոյական մակարդակն ևս բարձր է, այս կռվին տվել է 80 ծանր և 200 թեթև վիրավորներ, որ ինքնին դարձյալ ապացույց է անձնվեր դիմադրության: Գալով այն հարցին, թե կարելի՞ է արդյոք կռիվները շարունակել, թե ոչ, դա շատ դժվար խնդիր է: Այժմ ունենք մենք նոր թշնամիներ ևս - դա տեղական տաճիկներն են, որոնք ներկայումս դրության տերն են Ախալցխայի շրջանում: Բաքումի դրությունը անհուսալի է: Կարսը բավարար չափով պաշտպանված է և կարող է ցույց տալ դիմադրություն: Իսկ արդյոք՝ կռիվը մենակ այս ճակատում շարունակել կարելի՞ է թե ոչ - դժվար է պատասխանել: Իրեն տրված մի քանի հարցերին պատասխանելով՝ գլխ. զորահրամանատարը ասաց, որ հարձակման դիմող թշնամու զորքերի թիվը 3-4 հազար է, չհաշված քրդերին: Հարձակում կարող է լինել և Արդահանի կողմից, համաձայն մեր ստացած տեղեկությունների՝ մասամբ դեպի Ախալցխա, մասամբ էլ՝ Կարս:

Գեն. Նազարբեկովը տալիս է մի քանի լրացուցիչ տեղեկություններ ֆրոնտի մասին: Այժմ ամբողջ ֆրոնտում ունենք 6 հազար զինվոր, որ մեծ թիվ չէ, իհարկե, քանի որ նախաձեռնությունը պատկանում է թշնամուն, մենք չունենք հետախուզություն: Կարսի պաշտպանության համար եղած ուժերը քիչ են, մեզ հարկավոր են նոր ուժեր, եղածները քիչ են: Զորքը չունի բավարար հագուստ, սնունդն էլ գոհացուցիչ չէ, հոգնած են զորամասերը, չեն թարմացվում նոր ուժերով: Մենք մենակ դիմադրել չենք կարող թշնամուն, տաճկահայերից էլ առանձին օգնություն չպետք է սպասենք:

Նախագահը շնորհակալություն է հայտնում հրամանատարներին արած զեկուցումների համար, որից հետո և նիստը փակվում է:

Նախագահ՝ Ա.Ահարոնյան
Քարտուղար՝ Ա.Աբեղյան

Երկրորդ նիստ

7/20 ապրիլի 1918

Առավոտյան ժամը 10 ½-ին Ա. Ահարոնյանը բաց է անում նիստը: Երևանի դրության մասին զեկուցում է Ս.Թորոսյանը.- Հին Նախիջևանը և [Դարալագյազը] կտրված է մեզնից, տեղեկություններ չունենք, Երևանում է գտնվում 6-րդ գունդը: Նահանգի մյուս մասերը արձագանք են տվել զորակոչին: Այժմ կազմվում է Սևանի գումարտակը Նոր Բայազետում: Հայ-թրք[ական] հարաբ[երությանը] գալով՝ մինչև փետր[վարի] 17-ը հայերը եղել են զուսպ և կոռեկտ, այնուհետև՝ երկաթուղու և այլ ճանապարհներ թուրքերի կողմից կտրելու, զորքի տեղափոխ[ումը] խանգարելու, ինչպես նաև հայերի սպան[ություններ]ի հետևանքով հայերը ցույց են տվել ակտիվ դիմադրություն, շատ անգամ վնասելով մինչև իսկ թուրքերին: Սուրմալուն այժմ համար[յա] թուրքերից դատարկվել է, քրդերը իրենց տեղերում են: Էջմիածնի գավառում թուրքերը լինելով փոքրամ[ասնութիւն]՝ ագրեսիվ չեն եղել: Մարտի 20-ից սկսած, թրքահայ գաղթականության գալով՝ քշում են թուրքերին իրենց գյուղերից (Սարդարապ[ատ] և Վաղարշ[ապատ]) և նստում նրանց տեղը՝ առանց կոտորած

սարքելու: Վերջերս նաև Երևանի գավառում (Ղըրխ-Բուլախ) նույնն է սկսվել: Նոր-Բայազետի շ[ջան]ում Հաջի Մուխանանի մոտ թուրք[երը] հարձակվում են մեր տրանսպորտի վրա, կողոպտում, շատ զինվորների (46հոգու) մորթել են: Բասարգեչարում վերջերս 4 գյուղ են ավիրել թուրքերը: Այժմ թուրքերը մեծ մասով զսպված են, ճնշված: Զորքը մասնակց[ություն] չունի դրանում, այլ գլ[խապես] ժողով[ուրդը] և մասն[ավորապես] թրքահայ գաղթականությունը: Պարզվել է, որ կազմակերպված ուժ կա, որ խանգարում է հայ զորամասերի տեղափոխ[ությանը]: Քաղաքում հարաբ[երությունները] լավ են, թուրքերը իրենց զսպված են զգում, հայերը ամեն կերպ աշխատում են որևէ ընդհար[ման] առաջն առնել, լիահույս ենք, որ քաղաքում որևէ ընդհարում լինել չի կարող:

Այնուհետև ժողովին նոր եկած անդամների համար նախագահը պարզում է ժողովի նպատակը:

Զեկուցման համար խոսք է տրվում պատուիր[ակության] անդամ Ա.Խատիսյանին:

Սեյմի պատ[ուիրակութեան] կազմը. – 11 հոգի, բոլշ[ևիկներից] և էսէռներից չեն եղել, պաճառները: Êàðë նավի վճարը 50 հազար պահանջեցին, 10 հազար տվինք, 40 հազարի թուղթ՝ որ թարմ ստանան: Սպասում են 4 օր, ապա գալիս են տաճիկները, ընդունել[ութլուն]: Նախագահ[ության] խնդիրը – որի հողի վրա լինում է ժողով: Մեր պատուիր[ակության] ներքին կազմը չեղած բնավ, մեր թուրք պատվիր[ակությունը], բացառությամբ Հումմեթի (Շեյխ-ուլ Իսլամով) ավելի մոտ էին պարզորեն տաճիկներին, ավելի պաշտպ[անում] էին տաճ[իկների] տեսակետները, քան մեր, ինչ և խոսում էինք մեր մեջ – թշնամ[ին] գիտեր վաղօրոք և ,,մեր թուրքերից,,: Սրանք ժամերով լինում էին տաճիկ[ների] մոտ, մեր հեռագ[րերի] և թղթերի բովանդակությունը հայտնում նրանց: Ֆրոնտից եկած ամեն մի վատ լուր ուժ էր տալիս թշնամուն: Դեպքերը - էրզրումի անկումը, Սարիղամիշի անկումը, որ անմիջ[ապէս] իմացանք Վեհիբ փաշայից, այն ինչ նույնը միայն 3 օր հետո տեղեկացվեց մեզ Թիֆլիսից. Արևմ[տեան] ֆրոնտի վրա հարձակումները,Նովո-[Սելիմ], Արդահան, Բաքումի անկումը – մթնոլորտը վերին աստիճան աննպաստ էր մեզ համար: Տաճ[իկները] գիտեին, որ հայկ[ական] ֆրոնտում ավելի դիմադր[ություն] կգտնեին, քան վրացական: Լրտես[ութիւնը] լավ կազմակ[երպված] է նրանց [համար]: Տաճ[իկները] զգում էին իրենց իբրև իրենց տանը, դրության տերեր: Ունեցել ենք 6 նիստ, ատենագրած կա, մեր պատվիր[ակությունը] ունեցել է 38 օրվա ընթացքում 46 նիստ: Բացի ընդհանուր նիստերից, ունեցել ենք մասն[աւոր] խորհրդակ[ցություն]ներ տաճ[իկների] հետ և՝ ընդհանուր և՝ մասնավոր. խոսում էինք ժամերով: Պաշտոն[ական] թարգմանիչներ՝ Ռասուլ զադե և Պեպինով: Ունենք հաշտության պատուիրակության պաշտոնական զեկուցումն, որ պիտի Սեյմում կարդացվի: Խատիսյան կարդում է էու[թյունը]. 1. Անդրկ[ովկասի] անկախությունը, 2. Տերիտորիալ զիջումների և 3. Հայկ[ական] հարցի խնդիրները: Պաշտոն[ական] նիստերում, իսկ մասն[ավոր] խորհրդակց[ություններում] - այս կերպ:

1. Անկախ[ության] խնդիր - ասում են դուք Ռ[ուսաստան]ի մի մասն եք մինչև օրս էլ միջազգ[ային] տեսակետից, մի քանի փաստեր-ճառեր, ռուս գեներալներ են, ուրեմն՝ Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը պետք է ընդունեք, ետ տանեք զորքերը, տերիտ[որիայի] վերաբերյալ պրիտենզիա չունենաք, հայտարարեք անկախ[ությունը], մենք էլ ձեզ կճանաչենք սուվերեն պետություն: Մենք մեծ ուրախությամբ կաջակցենք ձեզ սեփական պետություն կազմելու, որ մեր շահն է՝ ընդդեմ Ռուսաստանի: Դրա փոխարեն մենք ձեզ կօգնենք ինչպես կամենաք - օր[ինակ] զորքեր կուղարկենք ձեզ համար՝ ընդդեմ բոլշևիկների: Դա պետք է նաև հայկ[ական] հարցի համար – կօգնենք հայկ[ական] տերիտորիայի կազմումին Կովկասի սահմանում: Վերաբերմունքը անկախության համար - սոցիալ-դեմոկրատները դեմ էին անկախ[ության] անմիջական հայտարարելուն, վրացի նացիոնալ-դեմոկրատները և ֆեդերալիստները,

ինչպես նաև բոլոր թուրքերն անխտիր կողմնակից էին անկախ[ության] հայտարարության, դաշնակցականները – ինչպես սոցիալ-դեմոկրատները:

2. Տերիտորիալ խնդիր- Առաջին քայլերից երևաց, որ վրացիները ամեն գնով ուզում էին Բաթումը պահել, զիջելով Կարս, Արդահան, անգամ Ախալցխան: Ուլիտիմատումը 48 ժամ իբրև պատասխան տերի[տորեալ] զիջման: Պատասխանեց Չխենկելին, որ ունի արտակարգ լիազոր[ություն] և կհեռագրի Թիֆլիս, առանց մեզ ասելու բովանդակությունը հեռագրի: Թիֆլիսից պատասխանը ստանալուց հետո միայն իմացանք այդ հեռագրի բովանդակությունը: (Մաքսիմում զիջում Կարսը՝ իր շրջանում, բացի այլ հայկ[ական] մասից, Արդահանի և Բաթումի թուրքական մասերը:) Պատասխան 26-ին եղավ Սեյմի ֆրակց[իաների] և կառավ[արության] ժողովը - բոլոր ֆրակցիաները ընդհանուր կողմնակից են մաքսիմալ զիջումներին, իսկ դաշնակցականները անհրաժեշտ են համարում íàñòàèâàò Կարսի և շրջանի վրա: Հ.Քաջազունունու և Խատիսյանի տեսակետն է եղել, որ Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը ավելի ձեռնտու է մեզ համար, քան այդ մաքսիմալ զիջումը: Պատվիրակությունը ստանում է հեռագիրը Գեգեչկորիից, Չխենկելին թուղթ է տալիս Ռուսֆ բեյին, որ հեռանում են՝ ընդունելով Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը:

3. Հայկական հարց - Մենք ունեինք մանրամասն զեկուցում – ինքնավարության պահանջ, համարիա թե անկախ[ության] է մոտենում, միայն տուրք է տալիս Տաճկաստանին: Տերիտորիան՝ մաքսիմալ՝ 6 վիլայեթ, մինիմալ՝ 4 սանջակ, սեփական միլիցիա, օրենսդրական հաստատություն: Մասն[ավոր] խոս[ակցություններում] մեզ ասել են տաճ[իկ] պատվիրակները – Տաճկ[աստանը] ներկայումս շատ է ուժեղ և պիտի խոսի կտրուկ լեզվով: Դարդանել չկարողացավ մտնել անգլիական, ֆր[անսիական], իտալ[ական] նավատորմը, մենք մեր սեփական ուժերով պաշտպանեցինք նեղուցները և Կ.Պոլիսը առանց Գերմ[անիայի], մյուս կողմից՝ 15 տարի առնվազն Ռ[ուսաստան]ը պիտի լինի թույլ, «Գարանտիա» բառը զզվելի է մեզ համար: Տաճկ[աստանը] պատերազմի սկզբում է մասնակցել, հայերի դերը Տ[աճկաստանում] և Կովկասում, ամբողջ հայ ազգը դավաճանում է Տ[աճկաստանին], ամեն մի հայի մեջ նստած է եղել մի ռուս լրտես, հետևանքը՝ կոտորվեց 600 հազար հայ, 300 հարյուր մահմ[եդական] կոտորվեցին հայ[երի] և ռուսների ձեռքով: Թողնել անցյալը, ներկան քննենք, մենք ուզում ենք, որ հայերը վերադառնան Տաճկաստան – ոչ նրանց՝ իրենց համար ենք ասում, այլ մեր շահերի տեսակետից – լավ արհեստ[ավոր] են և լավ տուրք վճարողներ: Քրդերը էլ մեզ պետք չեն, հույների դեմ հակաթույն են հայերը՝ Միջագետքում այժմ 30 հազար հայ կա, սկզբի տեղահանված 300 հազար: Պոլսում 80 հազար հայ կա, ամբողջ Տաճկաստանում մոտ 400 հազար հայ, եթե բոլոր հայերին (և գաղթակ[աններին]) հավաքենք ձեր՝ Տ[աճկաստանի] տեր[իտորիայում], կունենանք 700 հազար հայ, այդ թիվը մեզ համար վտանգավոր չէ: Մենք մեր պատմական կոչումը պիտի կատարենք: Եթե այժմ հայերը մեզ ստիպեն, որ Կովկասը կռվի մեզ դեմ, այն ժամանակ կլինենք անողոք, վրաց[իները] և մահմ[եդականները] վտանգավոր չեն մեզ համար: Մյուս կողմից՝ Երևանի նահանգում քանդում եք թուրք գյուղերը: Եթե շարուն[ակեք] կռվել – հետևանքների մասին պատասխանատու չենք: Հույս չդնեք Անգլիայի վրա, որ ջարդվում է Գերմանիայի կողմից: Բաղդատ էլ ուժեր ենք ուղարկում մենք, գերմանացիները և բուլգարները: Գերմանացիք էլ մեզ կարող են օգնել Նիկոլաևից: Միջազգային վերջին կոնֆերանսի վրա էլ հայերը հույս չպիտի դնեն – Սերբ[իայի], Չրնոգ[որիայի], Ռումինիայի օրինակները: Վերջապես՝ հայ [օբեկտ] կլինի՞ կոնֆ[երանսի] համար: Այս բոլորը նկատի ունենալով՝ ժամանակ ենք տալիս հայերին մտածելու այս բոլորի մասին: Գարանտիաներ՝ որ Տաճկ[աստանը] չի գա Կովկաս. 1. այժմ մենք ուրիշ կողմ պիտի երթանք, և ոչ Կովկաս, 2. [Մուսավաթը] չի ուզում այդ տնտեսական տեսակետից 3. [Դաղստանի] ներկայացուցիչները պաշտոնապես հաստատում են այդ, նույն և Ղրիմից: Տաճկ[աստանի] երիտ. թուրքերի

կուսակցությունը կողմնակից է Կովկասում 3 կանտոն կազմելու և ոչ միայն 2 (Վրաստան և Ադրբէջան): Եզրակացութիւն – թուրքերը մեզ պարզորեն աւելի էին պաշտպանում, քան վրացիք, որ ամեն գնով ուզում էին պահել Բաթումը: Մուսավաթի ներկայացուցիչ Հաջինսկին և Պեպինովն, որ գնացին Կ.Պոլիս, պաշտոնապես հայտարարեցին իր թելադրությունը 1. Կ.Պոլսում կպաշտպանի հայկական հարցը - ?, 2. Բաթում չի վերադ[արձնի] Կովկասին, 3. Կովկասը պիտի ունենա 3 կանտոն – Հայաստան, Վրաստան և Ադրբէջան (գուցե և 4-րդ՝ Աջարիան), 4. Մուսավաթը կլինի չեզոք, պայմանով 3 կետ երկաթուղի, փոքրամասնության պաշտպանություն կոտորածից, 4. բոլշևիկների դեմ, 5. «Մուսավաթի»-ի օրիենտացիան տաճկական է, թէ հայերի համար դա ընդունելի չէ - թող լինի գերմանո-թուրքական օրիենտացիա, 6. Մուսավաթը այժմ չի կանչի տաճկական զորքերին, 7. Ï åðåäåë-ը: Հրաժեշտ Տրապիզոնից: Այնտեղ մնացողներ: (Վիշապելի, Հաջինսկի, Պեպինով):

Կառավար[ութեան] ներկայացուցիչների զեկուցում:

Կ.Ղազազյան-ինչպես դելեգացիայի, այնպես և կառավարության կազմի մեջ հայացքի միատեսակություն չկար – ոմանք՝ օր[ինակ], ընդունում էին Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը (օրինակ Չխենկելի), ոմանք՝ ոչ, ուստի և կրիզիս եղավ: Թուրքերի դիրքը – կռվի դեպքում ակտիվ աջակցություն չեն կարող ցույց տալ, լավագույն դեպքում՝ թիկունքի որոշ աշխատանքներ կարող են կատարվել: Այնպես որ ներկա կազմով կառավարելը տևական լինել չի կարող, պիտի հաղթե կամ մի՛ (պաշտպանողական) և կամ մյուս (Բրեստ-Լիտովսկի) տեսակետը: Ապահովության Գերագույն խորհուրդը (Գեգեչկորի, Ռամիշվիլի, Կարճիկյան), դրանով մյուս մինիստր[ություն]ները երկրորդական նշանակություն ստացան, թուրքերը դժգոհ են դրանից, ուրեմն երկու տեսակ կրիզիս է առաջանում- հայացքների տարբերություն և թուրքերի դժգոհություն:

Հ.Քաջազունի- խոսք առնելով կարդաց իր մանրամասն գրավոր հիմնավորումը, թե ինչու մեզ համար համեմատաբար փոքրագույն չարիք է Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը և թե ինչու՛ Տաճկ[աստանը] բնավ չի հրաժարվի այդ դաշնագրից:

ПОЧЕМУ ПРИ СОЗДАВШИХСЯ УСЛОВИЯХ ПРИЗНАНИЕ БРЕСТСКОГО ДОГОВОРА ЕСТЬ НАИМЕНЬШЕЕ ИЗ ЗОЛ

А. Турки настойчиво требуют признания этого договора, не соглашаясь ни на что меньшее. У нас нет основания думать, что упорство их может быть сломлено нашим сопротивлением при ведении переговоров; напротив, есть полная уверенность, что они не отступят ни на один шаг, по следующим соображениям:

1. Выставленные нами возражения правового характера против обязательности для нас Брестского договора весьма слабы; аргументация же турок представляется достаточно обоснованной и убедительной.
2. Турция рядом актов торжественно манифистировала удачное заключение мира в Бресте; ему придан характер крупной победы. Сделать какие - либо уступки значило бы разочаровать армию и народ. Правительство не может пойти на это; оно не может сказать: победив в Бресте могущественную Московию, в Трапезунде мы были побеждены Закавказьем.
3. Вероятные, - а может быть и неизбежные — потери на юге /в Аравии, Сирии, Месопотамии/ делают для Турции особенно необходимым компенсацию на севере.

4. Турки откровенно заявляют, что хотят использовать в полной мере благоприятно сложившуюся коньюнктуру, называя всякое послабление недопустимой в политике сентиментальностью. В течении 200 лет Турция только теряла; теперь представился случай, что-то приобрести и она не упустит такой возможности тем более, что в текущей войне она поставила на карту все свое существование, рискнув всем, она должна получить все, что фактически окажется возможным получить.
5. Приобретения в Закавказье необходимые для упрочения положения правительства и Иттихата.
6. Они необходимы также и для национального возрождения и государственной целости Империи. Оценивая степень этой необходимости, мы не должны помнить что имеем дело с Правительством централистическим, националистическим и империалистическим. Политика Турции, с нашей точки зрения может показаться недальновидной и пагубной для нее же самой, но это не изменяет положение вещей.
7. Турки говорят, что им нужно обеспечить себя от России. Сейчас Россия разбита и никому не страшна; но это не значит, что она останется такою навсегда. Несомненно, выделение Закавказья самостоятельное, несвязанное с Россией, государство является крупным приобретением для Турции. Но положиться всецело на этот буфер Турция не может, ибо, во - первых, она не уверена, что Закавказье не изменит своей ориентации и не соединиться вновь с Россией; во - вторых, она не уверена, что даже в случае желания отстоять свою независимость от посягательств России, Закавказье сумеет защитить себя. Поэтому Турции необходимо иметь в своих руках такие сильные стратегические пункты, как Карс, Ардаган и Батум.
8. Батум, как опорный морской пункт, нужен Турции не только против Болгарии, усиления которой Турция имеет все основания сильно бояться.
9. Аргументируя справедливость своей позиции, турки указывают на то, что огромное большинство населения, спорных областей — мусульмане, турки или отуречившиеся грузины, имеющие ярко выраженную оттаманскую ориентацию. Отторжение от Закавказья Батумской и Карсской областей есть не более, как возвращение Турции территории и народонаселения, не так давно, и при том насильственно, отнятых от нее империалистической Россией. Это осуществление требования демократии, о самоопределении народов.
10. Нет реальной силы, которая могла бы помешать Турции осуществить права, предоставленные Брестским договором. Доказательство: быстрый, беспрепятственный марш по Черноморскому побережью до фортов Батума, а в Эрзрумском направлении — до Ново-Селима. Марш этот сделан турками с самыми незначительными силами и почти без потерь. Турки своих действий не называют даже военными операциями.
11. Занимая области, турки делают огромные материальные приобретения в виде правианта, амуниции, оружия, строительных материалов и прочее. В Трапезунде и Карсе они взяли имущество миллиарда на два. Такая же добыча ожидает их в Батуме и Карсе. При той острой нужде, которую испытывают турки, с их стороны было бы безумием отказаться от богатств, которые сами лезут им в руки.

В. Изложенные даные и соображения говорят за то, что Турция не откажется добровольно от выгод предоставленн ей Брестским договором. Следовательно, не признать договора — значит объявить ей войну или вернее — продолжать войну, которую фактически ведем мы сейчас. А воевать мы не можем даже против той малочисленной, утомленной и плохо снаряженной армии которую выставляет против нас Турция.

Б. Все это, а также и отсутствие твердых гарантий в том, что даже по принятии Брестского договора Турция не будет искать случая нарушить его в ущерб Закавказья, говорит против договора, но вместе с тем, договор оставляет место некоторым возможностям, делает вероятным некоторые достижения и исключает или — по крайней мере — делает не неизбежным некоторые опасности. А именно:

1. Брестский договор, отторгая от России Карсскую и Батумскую области, не отдает их во владение Турции, как думали мы сначала на основании неправильно переданного телеграфом текста, а предоставляет населению самому определить свое государственное бытие и международное положение, ставя лишь условием согласие соседних держав в частности — Турции. Таким образом, Брестский договор устанавливает принцип против которого, как таковой — Закавказская демократия ничего не может возразить, не изменяя, так как принцип этот — ее собственный лозунг.
2. Конечно, Турция, настаивая на Брестском договоре, рассчитывает на то, что при наличных условиях самоопределение областей сведется фактически к присоединению их к Турции. В данное время, вероятно, так это и будет, тем не менее нельзя лишать области этого, хотя бы пока чисто теоретического права. Строго говоря, отвергая договор мы чиним прямое насилие над областями, предлагая же Турции войти с нами в соглашение относительно полюбовного дележа этих территорий, мы становимся на путь разбоя, ибо договор предоставляет населению право на самоопределение, мы лишаем его этого права, а затем опираясь на силу начинаем делить с Турцией земли, нам не принадлежащие.
3. Признав Брестский договор, мы фактически передаем Турции всю территорию обеих областей, ибо часть населения немедленно покинет области, а оставшиеся — вольно или невольно — выскажутся за присоединение к Турции. Но такое самоопределение, как сделанное под давлением Турции в ближайшем же будущем /например на мировом Конгресе/ может быть опротестовано и не исключена возможность пересмотра его, причем Карский и Кагызманский округа могут вернуться и Закавказью, а Батум может быть нейтрализирован.
4. Признание Брестского договора предпочтительнее безусловной отдачи спорной территории еще и потому, что уступки были бы сделаны за счет земель наиболее интересующих армян и наименее — грузин. В конечном счете дело могло бы свестись к отставанию одного лишь Батумского округа. Это отразилось бы тотчас же на армяно-грузинских отношениях, вызвало бы охлаждение, неприязнь, а может быть и открытый разрыв. Потеряв мало от сделки, грузины оставили бы нас одних домогаться возможного исправления нанесенного нам ущерба. Между тем как потеряв вместе с Карсом и Батум, мы теснее свяжем свою судьбу с судьбою грузин, будем иметь в их лице верных союзников в дальнейшей борьбе.

5. Еслиб мы и не признали Брестского договора и даже заставили бы Турцию отказаться от него то в данный момент мы все равно не могли бы удержать за собой спорной территории иначе, как силой оружия подавив сепаратистическое движение аджарцев в Батумской области и турок большей части Карсской, что фактически неосуществимо и принципиально неприемлемо.
6. Какое бы положение не создалось сейчас, несомненно, что оно будет лишь временным. Закавказье – слишком большой приз, чтоб окончательное определение его судьбы было представлено одной только Турции или Турции с нами. При заключении всеобщего мира будет поставлен несомненно и вопрос о Закавказье, причем решение может быть отличенное от того, какое продиктует нам Туция. Вынужденное согласие на Брестский договор, после заявленного нами и зафиксированного в протоколах Трапезундской конференции протеста, облегчить перерешение или – вернее – надлежащее применение договора; между тем как независимое от Брестского договора соглашение с Турцией или завоевание областей силою оружия, значительно затруднит наше положение.
7. Если и по принятии Брестского договора мы не гарантированы от дальнейших агрессивных шагов Турции, то при войне и последующем поражении такие шаги будут не только возможным или вероятным, но и совершенно неизбежным. Сами турки утверждают, что никаких дальнейших видов на Закавказье они не имеют и вполне удовлетворены тем, что дано им Брестским договором. Если только не будут вынуждены нами на новую ненужную и нежелательную им войну. Есть основания думать, что турки говорят это искренно; если же у них есть иные виды то пред нами остается еще открытым путь аппеляции к Германии и другим союзным державам, подписавшим договор; а в случае войны и этот путь будет закрыт.
8. Быстрое прекращение войны и заключение мира даст нам возможность заняться строительством Закавказского государства с одной стороны – отмежеваться друг от друга, с другой – объединиться в федерацию, организовать местные и центральное правительство, водворить некоторый порядок, восстановить пути сообщения, предотвратить финансовый и продовольственный крах, который грозит нам еще большими потрясениями, чем само военное поражение.
9. Заключение мира, пока мы еще держим в руках такой важный пункт, как Карс, дает нам преимущества, которых лишимся, если крепость эта будет отнята у нас силою оружия.
10. Заключение мира в ближайшее время сохранит нам наши войска и оружие, что придаст нам определенный вес при решении внутренних вопросов в пределах самого Закавказья.

*

* *

1. Чтобы вести войну, нужно иметь войско, а у нас его нет, ибо вооруженные, но плохо организованные, необученные и недисциплинированные массы не составляют еще войска. О том, что войска наши, в настоящем их состоянии небоеспособны, говорят все военные, осведомленные в положении дел. Это же подтверждается событиями.

2. Войскам, даже и вполне боеспособным, для ведения успешной войны, необходим обеспеченный тыл. А наш тыл не обеспечен в полном смысле слова. Весьма значительная часть населения края, по причинам вполне понятным отказывается от участия в войне; в лучшем случае и при героических усилиях руководящих кругов, эта часть населения останется пассивным зрителем.
3. Пути сообщения находятся в полном расстройстве, а с начатием крупных военных действий придут в еще большее расстройство; в результате – невозможность своевременного передвижения воинских частей, доставки провианта и оружия; в случае неудачи – отступления.
4. Продовольствие и финансы для армии и страны.
5. Продолжение войны осложнит и углубит внутреннюю анархию, кровавые бесчинства в тылу дезорганизуют и без того плохо организованный фронт; естественное побуждение быть у себя, когда собственная семья или родное село находится в опасности, разовьет массовое дезертирство.
6. Наличность двух фронтов – армянского и грузинского – может ввести в войну самые пагубные разногласия относительно распределения сил, оружия и провианта, средств сообщения, технических приспособлений и прочее; а также относительно момента окончания войны в зависимости от преследуемых целей; эти разногласия могут привести к тому, что единая война Закавказья фактически обратится в две отдельные войны – армяно-турецкую и грузино-турецкую. Это положение, само по себе пагубное, может стать совершенно невыносимым в связи с тем, какую ориентацию примет при этом третий, крупнейший элемент – Закавказское мусульманство и горцы Дагестана.

Каждое из указанных обстоятельств в отдельности вызывает серьезные сомнения и опасения. А совокупность их вселит убеждение, что война может кончиться только одним: неизбежным, быстрым и жестоким поражением.

С. В случае поражения, столь неизбежного, есть все основания опасаться следующего:

1. Брестский договор потеряет силу обязательства для Турции, а при заключении новых условий мира Турция может потребовать территории большей, чем две области, причем без всяких оговорок относительно самоопределения, а в безусловную собственность.
2. Если Турция и не заявит притезаний на новые территории, то – во всяком случае – наложит на Закавказье контрибуцию, а в обеспечение ее окупирует временно часть наших земель. Об этом турки говорили определенно.
3. Война с Турцией будет не просто войной, а и резней. Есть надежда, что в грузинских областях крупные бесчинства не будут допущены; но несомненно, что армянское население будет вырезано везде, где только настигнут их турки. Армянское население из Карса, Кагызмана, Ахалкалака, а затем из Александрополя и Эривани будет уходить, поскольку успеет, а оставшиеся будут истреблены. Сотни тысяч людей или погибнут в беспощадной резне или станут бездомными беженцами.
4. В ответ на войну может последовать также и беспощадное истребление остатков армян в Месопотамии и вообще – в Малой Азии, за

исключением, может быть, Константинополя и нескольких других крупных пунктов. Об этом турки предупреждали нас весьма откровенно.

5. Военные неудачи и сопутствующие им осложнения вызовут полный раскол Закавказья; ни единства, ни сейма, ни краевого правительства иметь уже мы не будем. Пойдут раздоры, наступить междуусобица, край разобьется на враждующие между собой клочки, а в результате — разгромы, резня.
6. При таких обстоятельствах Турция по собственному почину или по вызову одной из сторон, придет водворять в крае порядок по примеру Германии, делающей тоже в южной России, с той только разницей, что у Турции будут уже не германские методы водворения порядка а свои собственные — турецкие.

Д. Если Турция без войны не отступит от Брестского договора, а мы не можем вести успешной войны и если война угрожает нам неисчислимыми бедствиями, то принятие Брест-литовского договора становится повелительной необходимостью. Конечно, договор в некоторых отношениях наносит нам очень тяжелый ущерб в настоящем и усиливает турецкую угрозу в будущем.

С потерей Артвинского, Ардаганского и Ольтинского округов мы могли бы примириться без труда. Экономическое положение Закавказья от этого не пострадало бы сколько-нибудь существенно; а в смысле политическом — с армянской точки зрения — это было бы даже некоторым приобретением, так как ослабило бы положение мусульман в настоящем и положило бы предел империализму грузин в будущем. Затем, с принципиальной точки зрения мы, по совести, не могли бы возразить ничего против отторжения этих округов, раз все симпатии населения их на стороне Турции. Много труднее мириться с потерей Батумского округа, хотя и здесь население обнаруживает турецкую ориентацию; - трудно, потому, что без округа нельзя будет удержать порта Батум, а он является незаменимым фактором в экономической жизни всей страны. Еще труднее — с армянской точки зрения — примириться с потерей Карса и Кагызмана. Большинство населения этих округов — христианское /армяне, греки, русские/, которому турецкое владычество не сулит ничего хорошего. Второе — с отходом этих округов существенно урезывается территория Армянского кантона в Закавказье и отрезывается путь в Басен и Алашкерт. Третье: в округах много свободных земель, которые — оставаясь в пределах Закавказья — могли бы быть использованы для заселения беженцами — армянами или избытком армянского населения других малоземельных уездов. Четвертое: укрепившись в Карсе, Турция станет постоянной угрозой над Александрополем и Эриванской равниной.

НАА, ф.200, оп.1, д. 21, лл. 113 — 120. Рукопись. Автограф. [Ов. Качазнуни]

ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏ

7/20 ապրիլի

Նիստը բացվում է երեկոյան ժամը 5-ին նախագահությամբ Ա.Ահարոնյանի և քարտուղարությամբ Ա.Աբեղյանի:

Ս.Մամիկոնյան- Տրապիզոնում տաճիկ պատվիրակության նախագահը այն միտքն է հայտնել, թե հայերը չհամաձայնեցին իրենց պահանջներին, նրանք ևս, ռուսահայերը, կարող են ենթարկվել կոտորածի – նույն վիճակին, ինչ որ

տաճկահայերը: Դա է խնդրի բուն հիմքը – որ է՝ գայլի հոգեբանություն: 1915 տաճիկները կոտորեցին տաճկահայերին, 1918-ին կարող են կոտորել ռուսահայերին, ուրեմն մեզ ուրիշ ելք չի մնում – քան պաշտպանել և շարունակել պատերազմը: Մենք պետք է շարունակենք կազմակերպել մեր ուժերը՝ զորահավաք առաջ տանել: Վերջին երկու ամսվա փորձը ցույց է տալիս, որ հնարավոր է կազմակերպել ուժեր: Մեղադրել միայն ժողովրդին և զորքին – սխալ կլիներ. պատասխանատվության խոշոր մասն ընկնում է մեզ՝ ղեկավարներիս վրա: Էրզրումի և Սարիղամիշի անկումը զորքի մեղքը չէ, մենք չնպաստեցինք նրա պաշտպանության գործին: Սարիղամիշից նահանջելն էլ հրամանատարության կարգադրության հետևանքն էր: Այժմ զորքի մեջ կարգապահությունը բավարար է, տրամադրությունը նմանապես: Սակայն զորքի պարենավորումը և հագուստը բավարար չէ: Չկա ֆրոնտում նաև պատասխանատու հրամանատար-գեներալ Արիշևը այնտեղ չէ, այլ Թիֆլիսում: Կազմում են նոր զորամասեր, եղածները լրացնում են, պիտի հաշվել 25 հազար սվին, ի բացառյալ կողմնակի ուժերը: Այս է դրությունը, այսպիսի պայմաններում հաշտության պայմանները ստորագրողի վրա պիտի ընկնի պատասխանատվությունը: Ո՞վ է իրավունք տալիս մեզ՝ առանց կռվի թշնամուն տալու մեր երկրի մի անբաժան մասը, հարազատ ժողովրդի հետ միասին: Մյուս կողմից կա տաճկահայ ժողովրդի խնդիրը, որին պատասխան պիտի տալ, իսկ դա չի լուծվում, առաջարկած դաշնագրով: Գալով Կովկասի անկախության՝ այդտեղ ևս տաճիկները կամենում են մտցնել հեղաշրջում, ենթարկելով իրենց, զրկելով նրան այն նեցուկից, որի վրա հենվում էր մի ամբողջ դար: Պատերազմը շարունակելու համար մենք՝ ղեկավարներս համարյա ոչինչ չենք արել, կատարած բանակցությունները ավելի են թուլացրել ճակատը: Պետք չէ նաև հավատալ տաճկական խոստումներին: Մեր պատասխանը կարող է մեկ լինել – շարունակել պատերազմը:

Ա.Զոհրաբյան- Մենք այստեղ չպիտի քննենք պատվիրակության գործունեությունը: Ես լսեցի Հ. Քաջազնունու մանրամասն զեկուցումը և չգտա նոր հիմնավորում ի պաշտպանություն տաճկական պահանջների կատարման: Նա՝ Քաջազնունին անտես արավ տաճիկների մյուս պահանջները, Բրեստ-Լիտովսկի պայմանների հետ նաև Անդրկովկասի անկախությունը, առանց վերջինիս նրանք չեն ընդունում Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը: Ապա՝ ինչո՞վ կարելի է երաշխավորել, որ Թուրքիան կբավականանա 1877թ. սահմաններով և ավելի առաջ չի գա: Թշնամու առաջխաղացումը ինքնին ապացույց է, որ նրանք չեն հարգի դաշնագիրը: Թշնամին բանակցությունների ժամանակ էլ ձգտել է պանիկա տարածել մեր պատվիրակության վրա: Ոչ ոք չի կարող տալ գարանտիա, որ թշնամին առաջ չի գա և մեզ չի կոտորի, հավատալ թղթաց խոստումներին - դա վատագույն ավանտյուրա է: Տաճկաստանը մեզանից ուզում է ստեղծել բուֆեր-պետություն իր և Ռուսաստանի մեջ, սակայն բուֆեր-պետությունը չի կարող լինել ինքնուրույն, նա պիտի ենթարկվի հարևան պետություններից մեկին: Տաճկաստանի նպատակն է՝ բաժանել մեզ Ռուսաստանից և ենթարկել իրեն: Բայց կարո՞ղ ենք թողնել Ռուսաստանը, հյուսիսի օրիենտացիան, կարո՞ղ ենք դադարել մեր աչքերը դեպի հյուսիս հառելուց: Ո՛չ: Չէ՞ որ՝ տաճկահայերի կոտորածի պատճառներից մեկն էլ այն էր, որ նրանք իրենց աչքերը դեպի հյուսիս էին հառել: Բացի այս բոլորից՝ Տաճկաստանը ամեն մի պրովակացիա կարող է առիթ ծառայեցնել՝ շարժվելու առաջ, օրինակ՝ հայ-թուքական որևէ ընդհարում: Այս բոլորը նկատի առնելով՝ ես չեմ գտնում որևէ հիմք՝ փոխելու մեր մինչայժմյան պոզիցիան: Մենակ, առանց վրացիների, իհարկե չենք կարող շարունակել կռիվը, բայց հույս պիտի ունենալ, որ մեր հարևաններն ևս կշարունակեն երկրի պաշտպանությունը:

Կարգից դուրս խոսք է տրվում Կ.Ղազազյանին, որ կարդում է Խ.Կարճիկյանից ստացած հեռագիրը, թե՝ այսօր կառավարության և Սեյմի ֆրակցիաների ներկայացուցիչների ժողովում մահմեդական ներկայացուցիչներն հայտնել են, որ իրենք ամենքը հեռանում են կառավարության կազմից և հավանորեն այս օրերս

կհայտարարեն Ադրբեջանի անկախությունը: Այդ հիմնավորում են նրանով, որ իրենց համար պարզվել է, որ մենշևիկները և դաշնակցականները չեն կամենում հայտարարել Անդրկովկասի անկախությունը, որ նրանք չեն ուզում մնալ Ռուսաստանի սահմաններում: Փոքրամասնականները կարծում են, որ դրությունից դուրս գալու միակ միջոցն է՝ ստեղծել միություններ՝ առանձին կառավարություններով և պաշտպանողական դաշն կռելով կռվող երկու կողմերի մեջ: Կարճիկյանը կարծում է, որ պետք է ներկա խորհրդակցությունը ընտրի ժամանակ[ավոր] կառավարություն: Մենշևիկները հաստատ են մնում մարտ 31-ի տեսակետի վրա և կշարունակեն Անդրկովկասի սահմանների պաշտպանությունը:

Հեռագրի ընթերցումից հետո հայտարարվում է ընդմիջում 10 րոպե: Ժողովը վերսկսելուց հետո խոսք է տրվում Ս. Հարությունյանին: Ըստ հեռագրի, ասում է նա, ստեղծվում է նոր դրություն, որի մասին խոսելը և քննելը անկարելի է այստեղ, Ալեքսանդրոպոլում, ուստի կոնֆերանսը այս կազմով վաղն ևեթ պիտի տեղափոխել Թիֆլիս, ուր կարելի կլինի անմիջապես խոսել մեր հարևանների հետ:

Ա.Երզնկյան- հայտարարում է, որ ինքը և իր ընկերները այս գիշեր ևեթ պիտի մեկնեն Թիֆլիս, ուր ունեն ֆրակցիայի ժողով, ուստի առաջարկում է առաջին հերթին դնել անկախության և կառավարության խնդիրները, որոնք սերտ կերպով կապված են իրար հետ: Առաջարկում է նաև խոսելու ժամանակամիջոցը կրճատել 10 րոպեով: Առաջարկը պաշտպանում են Մ.Ղարաբեկյան և Հ.Բեկզադյան: Ս.Մամիկոնյանն և Ա.Ղազարյանն առաջին հերթին անհրաժեշտ են համարում պատերազմի (ինքնապաշտպանություն) և հաշտության խնդիրը քննել ու վերջացնել:

Ա.Շահխաթունյան- բնավ անհրաժեշտ չէ համարում այսօր մեկնել, դա առաջ կբերի անտեղի շփոթ:

Ընդունվում է առաջարկը՝ շարունակել արծածված խնդրի քննությունը և գիշերվա ժամը 1-ին այս կազմով մեկնել Թիֆլիս:

Լեո – Նոր դրությունը, որ ստեղծվում է այժմ, հիմնովին փոխում է խնդրի քննությունը: Ստեղծվում է նոր՝ 2-րդ ֆրոնտ, որ մեր առջև պիտի ծառանա Ադրբեջանի անկախության հայտարարումով: Տաճկաստանը ինքը հենց այժմ չի պահում Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը, քանի որ համաձայն դրա, Կարսի, Արդահանի և Բաթումի շրջանները պիտի լինեն ինքնավար, ինքնորոշվեն, բայց ո՛չ գրավվեն Տաճկաստանի կողմից, որ անում է նա այժմ: Թուրքերը Ադրբեջանի անկախությունը հայտարարելով՝ նրանց առաջին գործերից մեկն է լինելու, իմ կարծիքով, պատերազմ հայտարարել մեզ:

Հ.Քաջազնունի- անում է հայտարարություն, որ հեռագիրը իր հիմնական տեսակետները չի փոխում, բայց այժմ, նոր դրության հետևանքով, մենք ստիպված պիտի լինենք շարունակելու պատերազմը:

Մ.Արզումանյան - Մենք լավ չենք կռվում, որովհետև հայ ժողովուրդը սովոր է, որ իրեն և իր երկիրը պաշտպանի ռուսը, այժմ ինքը պիտի պաշտպանի, և այդ ծանրությունը նա զգում է: Բացի դրանից՝ ֆրոնտի պաշտպանության գործը թուլանում է նրանով, որ ամենքն անխտիր թալանով են զբաղված, չեն մտածում կռվի մասին: Սակայն այժմ տրամադրությունը բարձրանում է: Պէտք է ամեն գնով պաշտպանել ֆրոնտը: Եթե որոշենք տալ Կարսը՝ ոչ մի զինվոր և ոչ մի սպա չի մնա զորքի շարքերում և սահմանը բաց պիտի լինի թշնամու առաջ:

Ժամը 8-ին նիստին եկան գեներալներ Նազարբեկյանը և Վիշինսկին, որ հայտնեցին, թե այսօր մեր զորքերը հետ են գրավել թողած դիրքերը, գնդացիրները ու վերցրել են գերիներ: Դրությունը արդեն հաստատուն կարելի է համարել վերջապես: Գեներալ Տեր-Հակոբյանը հեծելազորք է տեղափոխել ձախ թևից աջ թևը: Այսօրվա կռիվների զոհերը՝ 150 հոգի սպանված և վիրավոր, 100-ը անհայտ կորած, ընդհանուր թիվը կորուստների՝ մոտ 350: Թշնամու մասին կա հետևյալ տեղեկություններ - աջ թևի

դեմ՝ 2 գունդ, ձախի՝ մեկ գունդ, ընդամենը՝ մոտ 3 հազարից ոչ ավելի կանոն[ավոր] զորք (բացի քրդերից):

Նախ[ագահ]ը խնդրում է հրամանատարության՝ թե ի՞նչ է մեզ պակասում պաշտպանությունը հաջող տանելու համար:

Նազարբեկով- Անհրաժեշտ է մարդ, հրացան, ուտելիք և այլն: Վաղվա մասին ոչ մի խոսք չեմ կարող ասել, ðàçâåäèà չկա: Թուրքերը պետք է ողջ ուշադրությունը դարձնեն Կարսի վրա, արդեն կան լուրեր, որ երևացել են Մերդինիկի մոտ, հրացան չկա, մարդ չկա, եթե լինի, կարող ենք դիմադրել: Հաջողության մասին ոչ մի խոսք, կանենք ինչ որ կարող ենք, դուք տրամադրությունը բարձրացրեք, մենք էլ մերը կանենք:

Վեշինսկին կառավարության հեռագրի մասին ասում է, որ նոր բան չի ավելացնում, դիմակը պատռվում է: Առանց վրացիների անհնար է կռվելը, գլխավորապես նրանցից է կախված:

Նազարբեկով - Անհրաժեշտ է մեծ թվով մարդիկ, ուրիշ կերպ չի կարելի, հասակավորներին թողնել ներքին ֆրոնտի համար, մյուսներին ղրկել ճակատ: 2-րդ գնդում կա 800 զինվոր, 1-ինում՝ 600, 3-րդում՝ 1900, 4- 1600, 7- 1600, Էրզրումյան-պակաս, Երզնկայի-800, մոտ 15000, սա քիչ է, հարկավոր է մարդ, մարդ, մարդ:

Վեշինսկին նույնպես պնդում է մարդ ուղարկել: Թեև Կարսում շատ բան է արած, բայց մարդ է հարկավոր: Նույնպես Ալեքսանդրոպոլում: Ժողովուրդը շատ զենք ունի, պետք է խլել, կարելի է 20000 հրացան խլել:

Նազարբեկով - Զինամթերքի պակասություն շատ կա, պետք է հոգալ այդ պակասի մասին:

Գ.Ղազարյան-Մարդ ամենից շատ տվել է Ղարսը, բայց դեռ Ալեքսանդրոպոլն ու Երևանը չեն տվել:

Առաջարկ է լինում վիճաբանությունները ընդհատել, որոշված ցանկը փակել, լրացնելով նոր ցանկացողներին:

Բժ[իշկ] Տերտերեան- առաջարկում է ցրվել գավառները և ընդհանուր զորահավաք անել:

Բժ. Զավրիև- Չնայած թուրքերի դիրքին և ստեղծված դրության, պետք է օբեկտիվ լինել: Ինչպե՞ս պատերազմել, մինչև ե՞րբ, միջոցներ ձեռք առնել ապահովելու մեզ շատ կողմերից: Վախը, որ մեզ կոտորելու են, հիմք ունի: Հավատ չկա, թե նրանց պայմաններն ընդունելիս մեզ չեն կոտորի: Օրինակ Մարաշում, երբ զենքը տվին, կոտորեցին: Նույնը այստեղ կարող է պատահել: Այստեղ ժողովուրդը ավելի լավ զինված է, դիմադրություն կլինի, թեկուզ պարտիզանական: Բայց այնուամենայնիվ պետք է փնտրել ճանապարհներ վերջ տալու այս պատերազմին: Կառավարությունը թող որոշի գերմանացիներից, թե բոլշևիկներից օգնություն ստանալ:

Ռազմավիրական ճանապարհով կստանանք զինամթերք:

Բացի այդ, պետք է փրկել Բագուն, առանց որի Ադերբեջանը ոչինչ է: Ճնշում գործի դնել այդ բանի համար: Եթէ ժամանակին դիմում լիներ, Սև ծովի նավատորմիղը կօգներ Բաթումին: Իշխանության նկատմամբ՝ դժվարանում է բան ասել, պետք է այդ որոշվի Թիֆլիսում, սահմաններն հայտնի չեն: Նրանց մասին թուրքերի հետ բանակցել: Այստեղ (թիկունքում) որոշել, թէ հնար կա՞ վրացիներից բաժանվել և անջատ պատերազմել:

Մ.Պապաջանյան- Մեծամասնության հետ համաձայն չէ: 3 ամիս առաջ հաշտություն էի ասում, երբ մեր դրությունը ավելի լավ էր: Զորքի մեջ բոլշևիզմ չկար: Բրեստ-Լիտովսկ չգնացինք, սխալ էր: Հիմա նույնն է կատարվում: Այսօր վերջին անգամ դիմում են և մերժում ենք: Այդ տրամադրությունները բացարձակ վնասակար է: Առանց, իհարկե, վնասելու մեր ինքնապաշտպանության գործին, ուժը պետք է ավելացնել: Եթե մեկը կռվել չգիտե, չի կարող հաշտության մասին խոսել: Բոլշևիզմը

մտել է ժողովրդի մեջ, որ ավելանալու է: Առհասարակ ղեկավարվում ենք անտիբոլշևիզմով, անտիվրացիությամբ և անտիթուրքությամբ: Եթե բոլշևիզմը ուժ բերեր, կլիներ ընդունելի: Բոլշևիզմը պիտի կազմալուծեր մեր զորքը: Բոլշևիզմից օգնություն չկա: Առանց վրացիների չենք կարող կռվել: 31-ին կային մարդիկ, որոնք ասում էին, թե ամբողջ աշխարհն էլ մեր դեմ լինի, պետք է կռվենք: Դա հիստերի կոչ է: Գերմանիան նույնիսկ դաշնակիցներ ունի: Իսկ մե՞նք... Վրացիները կռվելու՞ են... Գուրիան և Քութայիսը չեն կռվելու, մենշևիկների նոր վճիռը անհասկանալի է: Վրացիների վրա հույս չկա: Նրանք իրավունք ունեն իրենց կաշին փրկելու: Մենք պետք է որոշենք նրանց արժեքը: Նրանք մեր ֆրոնտին այլ աչքով են նայել: Զինվորական մինիստրի օգնական անգամ չտվին և Հ.Յ.Դ. չպնդեց, թեև շատ զորքը մերն է: Նոր դրությունը ոչինչ չի փոխում: Թուրքերը մինչև հիմա խանգարել են, Ադերբեջանի անկախությունն ավելի ևս վատթարացնելու է մեր դրությունը: Հրացան և մարդ չենք կարող ստանալ շատ վայրերից: Կառավարություն չկա, ազգային խորհուրդն էլ կործանվում է: Մենք կազմակերպչական ընդունակություն չունենք: Որքան էլ որ մենք պետք է պատրաստվենք կռվելու, չպետք է դադարենք բանակցություններ վարելուց: Արշ. Զոհրաբյանի առաջարկն ընդունելի է, բայց հայտնել վերջին դեպքում: Պատերազմի համար հարկավոր է էս ու էն, բայց չկա: Կարող է պատահել, որ դիվիզիան գա Մերդենակից, մենք չենք կարող դիմադրել: Թուրքերը կապել են Քութայիսի հիմնական ճանապարհը: Մեր թիկունքը նեղանում և դժվարանում է: Կարսն էլ կարող է ընկնել: Եթե մարդ չգա, տրամադրությունը կընկնի: Եթե ես համոզված լինեի, որ 2 ամիս կդիմանա Կարսը, այլ կերպ կխոսեի: Եթե չենք կարող պահել, պետք է լավ գնով զիջել: Մեզ օրինակ Վիկտորիայի կորուստը, «եթէ չես կարող պահել, ընծայիր»:

Երաշխավորությունը երկուսն է: Գերմանիայի ստորագրությունը և երկրորդ՝ 2 ամսվա դադարը մեր ժողովրդին ավելի կզինե: Դեմոբիլիզացիայի պահանջը միայն վերաբերում է Ռուսաստանին: Կարսի հետ տալը ժողովուրդը կընդունի, որ դա անհրաժեշտություն է: Անկախ Հայաստանը պետք է զորք ունենա: 2-3 ամսուց շատ բան կփոխվի: Եթե այդ պայմանը կապում ենք, ժողովրդի ֆիզիկական գոյությունը պահելու համար է: Առանց հետ նայելու չի կարելի կռվել: Դրսի օգնության վրա հույս դնել չի կարելի, պետք է համաձայնության գալ տեղական ժողովուրդների հետ: Խոմ չի կարելի ïåðåäåë-ի համար էլ նոր կռիվ անել: Թուրքերը զիջում անում են: Եվ մի՞թե համաձայնության վնասը ավելի է, քան անողոք, անհաշիվ պատերազմը: Եթե պատերազմում եք, մենք, իհարկե, կօգնենք: Բայց դա հերիք չէ: Լավ ժամանակ է, պետք է օգտվենք: Վեշապելին այնտեղ է, Հաջինսկին հեռագրով է կարգադրել, որ անկախություն հայտարարեն: Պետք է մարդ ուղարկել թեկուզ Պոլիս և այլուր և մեր պահանջներն իրագործել: Եվ որքան լավ կռվենք, այնքան մեզ հաշվի կառնեն: Բանակցություններ վարել Հայկական կառավարության միջոցով, ունենալով ներքին ու արտաքին ðàçåâàêà:

Ս.Վրացյան-Գլխավոր ուշադրությունը պետք է դարձնել պատերազմը շարունակելու վրա: Զինական ուժերը լարել: Բայց այդ միայն բավական չէ.միայն զենքը չի լուծելու: Պետք է փնտրել նաև այլ ճանապարհներ: Որոշ համաձայնության գալ դրսի հետ: Ռ.Քաջազնունու առաջարկը չի վերջացած, պետք է օգտվել այդ բաց դռնից: Անկարելի չէ նաև այստեղի թուրքերի հետ համաձայնության գալ: Վարել նրանց հետ բանակցություններ: Դիմել նաև Գերմանիային, շոշափելի քայլեր անել այդ ուղղությամբ: Հույսեր կապել բոլշևիզմից, ցնորք է և վաղաժամ:

Գիգա Խատիսյան – Շարունակել բանակցությունները Բրեստ-Լիտովսկի պայմանագրի հիմքով: Դիմել բոլշևիզմին- կնշանակե լարել թուրքերի դեմ: Հրդեհ երկու կողմից վերջնական բնաջնջում է նշանակում: Տրապիզոնի բանակցությունները անհուսալի չեն: Չխենկելին միայն միակողմանի է տարել Բրեստ-Լիտովսկու պայմանը այնպես, ինչպես Լենն բացատրեց: Տաճկաստանը ուզում է հաշտություն, որովհետև

նա որոշում է զորք ուղարկել Անգլիա, որովհետև նա ավելի կարևոր է, քան մեր ֆրոնտը:

Ս.Հարությունյան -Կռվենք, կռվենք, կռվենք. կարող են ասել նրանք, որոնք կարող են հաղթել: Մերը ինքնապաշտպանություն է: Խաղաղության ճանապարհից չպետք է հեռանալ: Եթե շտապենք, դարձյալ կուշանանք և կվնասվենք: Զարմանալի է, որ Ալ.Խատիսյան իր երկար զեկուցումից հետո, վերջը իր տեսակետից հրաժարվեց: Դա սպառնալիքի ազդեցության տակ կատարվեց: Առաջարկում է բանակցությունները շարունակել: Վրացիների մեջ ևս կա կուսակցություններ, որոնք նայում են իրենց կուսակցության շահերի տեսակետից: Պետք է զգաստ լինել: Իրերի դրությունը այլ է, զորք քիչ ունենք հենց իսկ Կարսում: Եթե նահանջենք, մինչ ու՞ր և ինչպե՞ս, դրությունը թելադրում է մեզ, որ եթե վրացիները կուզենան հաշտվել, մենք շարունակենք բանակցությունները: Ժողովրդական կռիվ: Բոլորը պետք է գան, բայց դա բավական չէ: Նոր դրությունը ավելի ևս ստիպում է հաշտվել: Մեր թուրքերի հետ վերսկսել բանակցությունները և համաձայնության գալ, դեռ ամեն բան կորած չէ: Կռվի ընթացքում չպետք է ջարդ լինի խաղաղ ժողովրդի, ինչպես կատարվում է մեզանում, դա վտանգավոր է իր հետևանքներով: Նուխի, Շամախի և այլն, նույնը կարող է լինել հայերի նկատմամբ:

Գ.Տեր-Օհանյան- Անպաշտպան կանանց ու երեխաների ջարդը զայրույթ է հարուցում զինվորների մեջ: Անցնելով նյութիվ՝ պատերազմել պետք է, բայց ի՞նչ միջոցներով: Մենք տաճիկների հետ կռվել կարող ենք այն ժամանակ միայն, երբ պատերազմը կրի ժողովրդական բնույթ, երբ կռվի ամբողջ ժողովուրդը, այդպես են կռվում այժմ տաճիկները – մեկ ասկյար և 3-4 բնակիչ, իսկ մեզ մոտ զինվորը կռվում է, իսկ ժողովուրդը փախչում է, չնայած զինված է, այս հանգամանքը շատ ճնշում է զորքի տրամադրությունը, մեր կռվող զորաշարքերի մոտից երբեմն անցնում են հազարավոր զինված մարդիկ (գաղթականներ) և բնավ մասնակցություն չեն ունենում կռիվներին: Զորքի ոգին օրեցօր բարձրանում է, ուրեմն ձեզ է մնում, թե կարող եք, կռիվը դարձնել ժողովրդական, թեև ես հույս չունեմ դրա հաջողությանը:

Ա.Երզնկյան- Համաձայն է Ս. Հարությունյանի հետ, որ պիտի դատապարտել թիկունքի ջարդերը, հիմնական խնդիրը այժմ հաշտության հարցն է Տաճկաստանի հետ: Կարծում են, որ եթե ընդունենք Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը՝ իսկույն կլինի հաշտություն, սակայն դաշնագրի խախտողն ինքը Տաճկաստանն է: Երկրորդ՝ Տաճկաստանը իբրև նախապայման ընդունում է Անդրկովկասի անկախությունը, որով հենց, դարձյալ, նրանք ժխտում են Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը: Սխալ է նաև կարծել, իբր Տաճկաստանը ուզում է Անդրկովկասից բուֆեր-պետություն ստեղծել, թե այդպես լիներ՝ նա չէր թուլացնի մեզ, անդամահատելով երկիրը: Տաճկաստանի նպատակն է, կռվել տալով մեզ բոլշևիկների դեմ, կռվել Ռուսաստանի դեմ: Կա նաև այն հանգամանքը, որ տաճիկները պահանջում են մեր զորքերի զինաթափությունը: Այս բոլորը ցույց է տալիս, որ Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը իրագործելի չէ: Վերջապես՝ ոչ հայ և ոչ էլ վրաց ժողովուրդը չեն կարող ըմբռնել տաճկական օրիենտացիան. ժողովուրդը այդպիսի դաշնագիր ստորագրող ղեկավարներից երես կդարձնի անպայման: Այս տարտամությունը միայն և միայն վնասում է ֆրոնտի պաշտպանությունը: Պիտի մի անշեղ գիծ ընտրել, պիտի ստեղծել ուժ, ապա դիմել հաշտության: Այժմ միայն մի հարց կա – կազմակերպել երկրի ինքնապաշտպանությունը:

Բունիաթյան- Վերջին հեռագիրը փոխեց մեր վիճաբանության ընթացքը: Սխալ է ասել, իբր Տաճկաստանը պահանջում է Անդրկովկասի անկախությունը՝ Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը ընդունելու համար: Ադրբեջանի անկախության որոշումը Կովկասի թուրքերի կողմից - դա հետևանք է Տաճկաստանի ներշնչումների և թափած ջանքերի: Եթե անգամ Տաճկաստանը կամենա խախտել Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը՝ Գերմանիան թույլ չի տա: Բոլշևիկների վրա հույս դնելը ցնորք է միայն:

Քանի որ մենք ուժ չունենք Կարսը պաշտպանելու, ինչու՞ չտանք, որ ստանանք որոշ զիջումներ, օրինակ մեզ թողնելով Կարսի և Կաղզվանի գավառների արևելյան հայաբնակ մասը, որի մասին նրանք մասնավոր խոսակցությունների միջոցին հայտնել են, կա նաև տաճկահայերի հարցը, որոնց բնակության համար նրանք Վանա լճի շուրջը չորս գավառակ տալու մասին էին խոսում մասնավոր զրույցների ժամանակ:

Լեո- Ըստ կարգի հայտարարություն է անում և հերքում այն՝ իբր թե տաճիկները չեն խախտում Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը:

Ա.Շահխաթունյան – Ո՛չ Գերմանիան և ո՛չ էլ Տաճկաստանը չեն խախտել Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը. տաճիկների առաջխաղացումը բխում է Բրեստ-Լիտովսկի դաշնագրից: Ադրբեջանի անկախություն հայտարարելու որոշումը ստեղծում է նոր դրություն, որ դժվար է այսօր նախատեսել Բրետ-Լիտովսկի դաշնագրի նշանակությունը մեզ համար:

Ղարիբջանյան - Վիճում է կադետների հայացների դեմ և պաշտպանում բոլշևիկների տեսակետը: Անդրկովկասի փրկությունը պահանջում է, որ ճանապարհ տանք բոլշևիկներին: Այսօրվա հեռագիրը ցույց տվավ, թե ի՞նչ տարրեր են նստած եղել Անդրկովկասի կառավարության մեջ, որոնք այժմ Աբրբէջանի անկախությունն են հայտարարում: Ներկա կրիտիկական մոմենտում մի ելք կա – ձեռք մեկնել ժողովրդական կոմիսարների իշխանությանը, հակառակ դեպքում փրկություն չկա:

Ա.Խոնդկարյան - Բոլոր դրություններն էլ, որ առաջ բերվեցին այստեղ, քննադատելի են: Ես կողմնակից եմ բանակցությունների վերսկսելուն Բրեստ-Լիտովսկի դաշնագրի [հինման] վրա, որ սխալ բացատրություն է ստանում տաճիկների կողմից: Դաշնագրի մեջ բնավ խոսք չկա, թե 3 շրջանները միացվում են Տաճկաստանին, այլ՝ որ դրանցից հեռանում են ռուս զորքերը ու ինքնորոշվում են: Ինչու՞ դաշնագրի մեջ չէ գրած պարզապես գրավման մասին. հավանորեն՝ Գերմանիայի ազդեցության հետևանքով, դա երևում է նաև դաշնագրի մյուս կետերից: Բացի այդ՝ դաշնագրի մէջ կա և այն կետը, որ 3 շրջաններում պիտի լինի պլեբիսցիտ: Թե դա առանձին-առանձին շրջանների սահմաններում լինի, գուցե հնար լինի և փրկել Կարսի շրջանը:

Լ.Սարգսյան - Ներկայումս մեզ զբաղեցնողը մեր ժողովրդի ֆիզիկական գոյության խնդիրն է դրված, չնայած դրան՝ դարձյալ կատարվում են սխալներ: Մեր հոսանքի կարծիքով՝ անընդունելի է ազգային զորքի կազմակերպումը. հետո՝ որոշ խմբեր աշխատում են այստեղ ինքնապաշտպանության գործը իրենց ձեռքում կենտրոնացնել: Ժողովուրդը բնավ չէ ուզում Ռուսաստանից բաժանվել: Զորքի կազմակերպումն և պարենավորումը ևս շատ թերություններ ունի: Պիտի կազմակերպել ինքնապաշտպանության գործը:

Այնուհետև կարդացվում է Խ.Կարճիկյանի գրավոր կարծիքը, որ, համաձայն իր ցանկության, կցվում է այս արձանագրության:

ՀԱԱ, ֆ.222, ց. 1, գ. 123, թթ.1-14: Բնագիր: Մեքենագիր:

Խ. Կարճիկյանի կարծիքը

5 ապրիլի 1918թ. Թիֆլիս

Հնարավորություն չունենալով ներկա լինելու Ալեքսանդրապոլում ամսիս 6-8 նշանակված ազգային հաստատությունների կոնֆերանսին, անհրաժեշտություն եմ զգում ներկայացնելու իմ անհատական կարծիքը քննվող հարցի մասին ու խնդրել կցել կոնֆերանսի արձանագրություն:

Ես համարում եմ, որ պատմական ամենախոշոր և ճակատագրական սխալը կատարած պիտի լինենք, եթե հիմա ընդունելու լինենք Բրեստի դաշնագիրը ու այդպիսով դադարեցնենք պատերազմը:

Նախ և առաջ այդ մեզ չի ազատելու ու ապահովելու Տաճկաստանի առաջխաղացումից ու Անդրկովկասի լիովին գրավումից: Հակառակ այն բոլոր հավաստիացումներին, որ արել են տաճիկները, Կովկասի գրավումը հանդիսանում է մի քաղաքական ծրագիր և անհրաժեշտություն Տաճկաստանի համար: Բաթումի ու Կարսի գրավումն առաջին էտապն է, դյուրացնելով այդ:

Տաճկաստանը պիտի ձգտե, օգտվելով հարմար մոմենտից, միանգամից և մշտապես ապահովելու իրեն Ռուսաստանի ապագա վտանգից, որը ոչ հեռավոր ապագայում կարող է ռեալ կերպով նորից սպառնալ Տաճկաստանի սահմաններին: Այս հանգամանքը չեն թաքցնում հենց իրենք տաճիկները և դրանով էլ պատճառաբանում են Կարսի և Բաթումի գրավման անհրաժեշտությունը:

Հիշյալ բերդերի գրավմամբ Տաճկաստանը, հիրավի կապահովի իրեն միայն մի անհրաժեշտ պայմանով, այն է, եթե իր կողքին լինի անկախ, լավ է ասել, Ռուսաստանից անջատված Անդրկովկաս: Այս դեպքում Տաճկաստանը իր հավաստիացումների մեջ անկախ է, երբ պնդում է, որ Անդրկովկասը գրավելու մտադրություն չունի, որ չափով որ իր մտադրությունը կապում է անջատված Անդրկովկասի պայմանի հետ: Իսկ եթե Անդրկովկասը իրեն անկախ չհայտարարի և կամ հայտարարելուց հետո նույն Անդրկովկասը իր ծոցում ունենա այնպիսի խոչընդոտներ, որոնք խանգարեն անկախ Անդրկովկասը Տաճկաստանի վասալը դարձնելու ու անդառնալի կերպով նրան Տաճկական օրբիտի մեջ մտցնելու, այդ դեպքում Տաճկաստանը չպիտի համարի իրեն ապահովված հյուսիսից, պիտի ձգտե վերացնելու այդ խոչընդոտները:

Կարո՞ղ է արդյոք Անդրկովկասը իրեն անկախ հայտարարել և խլել իր բոլոր կապերը Ռուսաստանի հետ, և ինչ՞ու պիտի այդ անի:

Նախ և առաջ պիտի ասեմ, որ ես միանգամայն ճիշտ եմ համարում նկատառումը, որ իբր թե համաձայն Բրեստի դաշնագրի, երբ Անդրկովկասը անկախ լինի, նա իրավունք կունենա և կարող կլինի ազդել կտրվող գավառների բախտի տնօրինման վրա: Այդ գավառների ազգաբնակչության գերազանց մեծամասնությունը պարզորեն կոչված է կցվելու Տաճկաստանին: Եթե նույն իսկ թույլ տանք Կարսի տեղական ժողովուրդը ցանկություն ու վճռականություն ունենա իրեն համար ավտոնոմ կյանք ստեղծելու և կամ Կովկասին միանալու, միթե կասկած կարող է լինել, որ Տաճկաստանը այդ հանդուրժել չի կարող: Չէ՞ որ բացարձակ կերպով Տաճկաստանը հայտարարում է, որ Կարսը, Արդահանը ու Բաթումը պետք է լինեն իր ձեռքում իբրև բերդեր: Այլեւս ինչ տարակույս կարող է լինել, որ այդ գավառների բախտը Տաճկաստանի համար կանխորոշված է:

Կարսի ու Բաթումի տալուց հետո, Անդրկովկասի անկախ հայտարարվելը համահավասար է հայ և վրացի ժողովուրդների ինքնասպանման: Դա ոչ միայն դարձնելու է Անդրկովկասը Տաճկաստանի վասալ մի գավառ, այլև անխուսափելիորեն պիտի տանի հայության, գուցե և վրաց ժողուրդի բնաջնջման:

Նախ և առաջ Ռուսաստանը չպիտի հաշտվի Անդրկովկասի կորստի հետ և այսօրվա անջատումը, չպիտի նկատի անկախության գաղափարի իրականացումը, այլ մի բռնության ակտ, որին ակամայից ենթարկվել է Կովկասը Տաճկաստանի ճնշման տակ: Նույնիսկ այսօրվա Ռուսաստանը առաջիկա ամիսներն իսկ պիտի ձգտե

մտնելու Կովկասի սահմանները և ազատագրելու երեկվա իր մասսաները Տաճկական ու տեղական բեգության բռնակալությունից:

Եթե անգամ այդպիսի ձգտումներ չլինեն Ռուսաստանի կողմից և նա վերջնականապես հաշտվի Անդրկովկասի անջատման մտքի հետ, դրա հետ չի հաշտվելու հայությունը, որը միշտ պիտի զգա իր գլխեն տեղական թրքության ու Տաճկաստանի կախված թուրը ու իր հայացքը հառելով դեպի հյուսիս, առիթներ պիտի փնտրե Ռուսաստանին ներս բերելու ու ազատագրվելու: Անգամ վրաց ժողուրդը, որքան էլ այսօր նա զզված լինի ռուսներից և մտածի Տաճկաստանի հովանու տակ ավտոնոմիայի բարիքները վայելելու, վաղը, երբ իր կաշվի վրա կզգա Տաճկաստանի բռնանցքը, պիտի տենչա ու ձգտե Ռուսաստանի հովանավորության:

Եթե իսկապես Ռուսաստանը փորձե ներս գալու, բնական է որ Կովկասի քրիստոնեա ժողովուրդները չեն դուրս գալու ու զենքով դիմադրելու նրան: Իսկ Տաճկաստանը, իհարկե չի հանդուրժելու, որ իր «Բարեկամ դրացին» վտանգվի, նա ինքը պիտի ներս գա և բռնի այն դռները, որով Ռուսաստանը մտադիր կլինի առաջանալու: Դա կլինի փաստացի գրավում Անդրկովկասի:

Երկրորդ դեպքում, եթե Ռուսաստանը ինքը հաշտվի Կովկասի կորցնելուն հետ, ինքը Տաճկաստանը, ինչպես և տեղական թուրքությունը չի կարող չզգալ ու հասկանալ, որ քրիստոնեա ազգաբնակչությունը իր հոգեկան կապերով ու սպասելիքներով մի մշտական սպառնալիք է Ռուսաստանի առաջխաղացության և, տարակույս չկա, որ պիտի աշխատի այդ խոցը կորզելու ու իրեն մշտապես ապահովելով, ինչպես արեց նա տաճկահայոց վերաբերմամբ, ճիշտ նույն նկատումներով ու նույն պայմաններում: Եվ քանի որ տեղական թուրք ազգաբնակչությունը պիտի ունենա վերին աստիճանի ագրեսիվ տրամադրություն և դառնալու սանձարձակ, Տաճկաստանի համար խնդիրը շատ է դյուրանալու:

Հուսալ, որ Գերմանիան կամ նրա դաշնակիցները այլ կերպ կնային Կովկասի իրականության ու կթելադրեն այլ կերպ վարվել Կովկասի քրիստոնեայ ազգաբնակչության հետ, մենք հիմք չունինք: Այդպիսի խնդիրներում գուցե Գերմանիան ինքը անկարող լինի արգելք հանդիսանալ Տաճկաստանի մտադրություններին և շատ հավանական է, որ երբ խնդիրը գա Կովկասը հյուսիսից անվտանգ դարձնելուն, ինքը՝ Գերմանիան թելադրողը ու ծրագրողը լինի վտանգավոր տարրերի վերացման, ինչպես այդ եղավ Տաճկահայաստանում:

Այսպիսով, Բրեստի դաշինքը ընդունելուց հետո, հնարավոր է երեք դրություն. 1/ կամ, չտալով ոչ մի նշանակություն կապած դաշինքին, անմիջապես Տաճկաստանը առաջանում է ու գրավում Անդրկովկասը, 2/ կամ կանգ է առնում որոշված սահմաններում ու ստիպում Անդրկովկասը անկախ հայտարարել ու փաստորեն դառնալ իր վասալ նահանգը և 3/ կամ գրավում է Կովկասը, եթե մենք հրաժարվում ենք անկախ հայտարարելուց ու մնում ենք Ռուսաստանի մի մասը: Վերջին դրությունը անխուսափելի է, քանի որ տեղական թուրք ազգաբնակչության համար դեռ հանդուրժելի է անկախ Անդրկովկասը, իսկ երբ խնդիրը գա Ռուսաստանի հետ կապված մնալուն, տարակույս չկա, որ նա ամեն միջոց ձեռք է առնելու Տաճկաստանին հրավիրելով ու կցվելով իր ազգակից պետության:

Երեք դեպքում էլ հայության, գուցե նաև վրացության բախտը կանխորոշված է, վաղ թե ուշ բնաջնջումը անխուսափելի է:

Ահա այս պատճառով էլ ես միանգամայն կորստաբեր եմ համարում Բրեստի դաշնագիրը ու Կարսը տալով, պատերազմը դադարեցնելը:

Կարող է առարկություն լինի, որ Բրեստի դաշնագիրը ընդունելուց հետո, մենք հնարավորություն կունենանք մեր բանակը ու ռազմական ուժերը պահելու ու դրանով ապահովելու մեր հետագա անելիքների ազատությունը և շարունակելու կռիվը, եթե Տաճկաստանի կողմից տենդենցներ նկատվի առաջխաղացության:

Ինձ թվում է, որ այն րոպեին, երբ հայտարարվեց, որ խաղաղությունը կնքված է, որ սահմանները որոշված են, տիրելու է սոսկալի հոգեկան ռեակցիան, որը կհաջորդի չորս տարվա հոգնածությանը:

Ոչ միայն կչքանա ոգևորությունը, կռվելու ու պաշտպանվելու ձգտումը, որը նկատվում է այժմ և ձեռք է բերված երկար փորձություններից հետոո, այլ և ամբողջ բանակը կհալվի ու ոչ մի զինվոր չի մնալ զենքի տակ: Կասկածից դուրս է, որ դաշնագիրը ընդունելու օրից փաստորեն զինաթափ են լինելու ու լուծվելու են մեր զինվորական ուժերը և բացելու ենք բոլոր դռները Տաճկաստանի առաջ:

Այս վերլուծումից հետո ինձ մնում է անել միայն հնարավոր եզրակացություն: Ամեն պարագային մենք շարունակում ենք կռիվը և երբեք չպետք է կամովին ձեռքից տանք այն դիրքերն ու ամրությունները, որ կարող են ուժեղացնել մեր դիմադրական ուժը: Եթե անգամ այդ կռիվը լինի միանգամայն անհույս և հետևանքը պարզ, այնուամենայնիվ մենք չենք կարող գիտակցաբար զենքը ձեռքից վար դնել:

Ես ինձ իրավունք չեմ համարում դատելու, որքան արժեքավոր է մեր ռազմական կարողությունը և կարող ենք արդյոք մենք շարունակել պատերազմը, հույս ունենալով հաջողությամբ դիմադրելու Տաճկաստանին:

Բայց և այնպես կարիք եմ զգում հայտնելու իմ կարծիքը այդ խնդրի մասին: Ինձ թվում է, որ մեր ռազմական ուժը, Տաճկաստանի հանդեպ, հենց ներկայիս արդեն հանդիսանում է որոշ գրավական, իսկ գնալով նա զարգանալու ու ուժեղանալու է, մինչդեռ Տաճկաստանինը գնալով պակսելու ու թուլանալու է: Նախ պետք է ի նկատի ունենալ, որ մեզանում դեռ նոր է ժողովուրդը զգում վտանգի սարսափը և նոր է առաջ գալիս զոհաբերության պատրաստակամության: Դիսցիպլինայի անհրաժեշտությունը սկսում է արմատ ձգել կռվող մասսաների գիտակցության մեջ: Իսկ հակառակ կողմի զորքերը հեռանալով իրենց գլխավոր հենակետերից ու զրկվելով մատակարարման դյուրություններից՝ առաջին արշավից հետո, պիտի մեծ հոգնածության ու հանգստի կարիք զգան, մանավանդ, եթե մեզ հաջողվի միառժամանակ կանգնեցնել նոցա իրենց տեղերում և հարվածների տակ պահենք:

Ինձ նույնպես թվում է, որ այնքան էլ հոռետես չպիտի լինենք վրացական ուժերի վերաբերմամբ: Նույն կազմալուծումը հիասթափությունը մենք նկատեցինք մեր խոշոր անհաջողությունից հետո, երբ տվինք Էրզրումը ու Սարիղամիշը: Եվ սակայն դրանից հետո մեզ հաջողվեց ցնցել զինվորական մասսաները և նոցա կազմակերպել: Հիմք չունենք կասկածելու, որ վրացիներին ևս, երբ արդեն զգացվեց նոցա համար ևս վտանգի սարսափը, չի հաջողվի կարգի բերելու իրենց զինվորական ուժերը: Այն կազմալուծումը, որ նկատվում է այժմ վրացական գավառներում, ինձ թվում է շուտով անցնելու է և վրաց ժողովուրդը պիտի կարողանա կազմակերպել իր ռազմական ուժերը: Դրա նշանները արդեն նկատվում է և վերջին տեղեկությունները արդեն ցույց են տալիս, որ նոցա բանակը ևս սկսել է կռվել ու դասալքությունը նվազել է:

Ամենախոշոր հարցը, պատերազմը շարունակելու համար, իհարկե, զինամթերքի պակասն է: Սակայն իմ ունեցած տեղեկություններով մեր պաշարները և այն աղբյուրները, որ դեռ կարող են օգտագործվել, այնքան էլ աննշան չեն և անհնար չպիտի համարել Ռուսաստանից հետագայում ռազմամթերք ստանալը: Այդ ուղղությամբ աշխատանքներ արդեն կատարվում են և մեծ հավանականություն կա, որ հաջող ելք կունենա:

Եզրափակելով իմ կարծիքը, ես գտնում եմ, որ պատերազմը դադարեցնելը մեզ համար ինքնասպանության նշանակություն ունի: Իսկ մեր անվերջ տատանումները և հասարակական զանազան խմբակցությունների ու օրգանների ագիտացիան հօգուտ Բրեստի դաշնագրի, մեծապես թուլացնում է մեր դիմադրական ուժը, անվստահություն ներշնչում կռվողներին և կազմալուծում առաջ բերում թիկունքում: Վճռականապես պետք է որոշել ու ցուցադրել, որ կռիվը շարունակվելու է և որ անհույս մի կռիվ չէ, որը անվիճելի կերպով տանում է մեզ դեպի կորուստ:

Ֆ.222, ց.1, գ.122,թ.1-4: Ձեռագիր: Բնագիր:

Չորրորդ նիստ

8/21 ապրիլ, 1918

Նիստը բացվեց առավոտյան ժամը 10 1/4 -ին նախագահությամբ Ա.Ահարոնյանի և քարտուղարությամբ Ա.Աբեղյանի: Օրակարգի խնդիրներն էին՝1. իշխանության խնդիր, 2. ինքնապաշտպանության խնդիր:

Ն.Աղբալյան- Ադրբեջանի սպասվող բաժանումով հայերը և վրացիները մնում են առանձնացած: Հայերի և վրացիների ընդհանուր գործը (պատերազմ) վարելու համար պիտի ընտրել մի ընդհանուր կառավարություն, իսկ Վրաստանի և Հայաստանի համար-առանձին-առանձին կառավարություններ: Դա բնական է, այդ ուղղությամբ էլ զարգանում է ազգային կյանքը:

Ա.Երզնկյան- Վտանգավոր է համար հատուկ ազգային կառավարություններ ընտրել, այլ պիտի պահել Անդրկովկասյան կառավարությունը, չպետք է հաշտվել Ադրբեջանի անջատման գաղափարի հետ, դա կարող է լինել միայն պլեբիսցիտայի միջոցով: Մուսավաթը գնում է, առանց նրան էլ կարելի է ընդհանուր կառավարություն ունենալ:

Հ.Բեկզադյան- Համամիտ է վերոհիշյալ կարծիքին, բայց կարծում է, որ իրոք նոր կառավարությունը լինելու է հայ-վրացական կառավրություն, քանի որ հավանորեն հումմետիստներն ևս պիտի անջատման կողմնակից կլինեն: Հայկական և վրացական առանձին կառավարությունները կարող են իրար դեմ լինել չնչին խնդիրների պատճառով:

Ս.Վրացյան- Առանձին կառավարությունների խնդիրը կապ չունի Անդրկովկասի անջատման հետ: Անջատումը ամենից շատ կվնասի մեզ, հայերիս.այդ դեպքում մենք կմնանք կղզիացած, կտրված արտաքին աշխարհից և անխուսափելիորեն պիտի պարտվենք: Իսկ թե հնարավոր չլինի Անդրկովկասի մի մասը (թաթարական) պահել, պիտի միացած պահել մյուս մասերը:

Գ.Ղազարյան- Նույն կարծիքի է. պիտի աշխատել թուրք աշխատավոր մասսաների ներկայացուցիչներին պահել:

Ա.Զոհրաբյան- Սկզբունքային տեսակետից լավ է չդնենք խնդիրը, այլ վերցնենք փաստը և քննենք: Ադրբեջանը գնում է, առանց ցանկալու մնալ Ռուսաստանի ֆեդերատիվ հասարակապետության մէջ: Գնում են- իրենց գործն է, բայց թող պլեբիսցիտ անեն:

Վ.Նավասարդյան- Կյանքը այլ ընթացք ունի, քան մեր մտածողությունները: Հարկավոր է գտնել միջին ելքը Անդրկովկասյան և ազգային կառավարությունների մեջ: Մինչև այսօր հնարավոր չեղավ անդրկովկասյան մի ճակատ ստեղծել. ապացույց- Ադրբեջանի անջատումը: Հարկավոր է ապացուցել այժմ հայ և վրաց դեմոկրատական շահերի նույնությունը: Հայ ժողովուրդը մինչև օրս չգիտե, թե որն է իր հարազատը, անդավաճան իշխանությունը մեր ժողովրդի համար: Ապացույց դրա Հայոց Ազգային խորհրդի հեղինակությունը մեր ժողովրդի մեջ, որովհետև դա մեր կյանքի պահանջն է: Պետք է ընդառաջ գնալ հայ ժողովրդի բնազդի ցանկության, որ ժողովուրդը զգա, որ կա իր հարազատ կառավարությունը: Մեծ երկյուղ կա, որ հայ-վրացական ընդհանուր կառավարության մեջ էլ չլինի համերաշխություն, առաջ գա անհամաձայնություն: Ապացույց՝ մենշևիկ կառավարությանը ամեն եղանակով աշխատում է մեր երկրի հարստությունները տանել: Առաջարկ՝ անդրկովկասյան ընդհանուր կառավարության հետ միասին նաև ազգային կառավարություն պիտի ստեղծել:

Ա. Շահխաթունյան- Ժամանակը չի համարում առանձին կառավարություններ ստեղծել: Հայ ժողովրդի ձգտումն է ոչ թե Հայաստանի, այլ հայ ժողովրդի կառավարութուն ունենալ: Ներկա մոմենտին ժողովուրդները ապրում են ոչ թե քաղաքական-կուլտուրական կյանքով, այլ տարված են ինքնապաշտպության խնդրով: Անջատ կառավարությունը փաստորեն կտանի դեպի Անդրկովկասյան 3 մասերի անջատում, և դա ձեռնտու կլինի Թուրքիային, որ գործ կունենա արդեն 3 առանձին երկրների հետ: Հարցի բուն լուծումը կախված է իրերի՝ մոտիկ ապագային դասավորվելուց: Պետք է մի բանաձև ընդունել, ավելի նպաստավոր երկրի պաշտպանության համար արտաքին թշնամու դեմ:

Ս. Մամիկոնյան- Թուրքերի քայլը մի խաղ է միայն, մի միջոց՝ հարկադրելու որ Անդրկովկասը անջատվի Ռուսաստանից և հաշտություն կնքել Տաճկաստանի հետ, մեկ էլ՝ ստեղծել անարխիա, որ չիրագործվի հողային դեկրետը և դժվարության առաջ բերեն երկրի պաշտպության համար: Պիտի թուրքերից պահանջել, որ անջատման համար դիմեն պլեբիսցիտի, մինչև այն՝ պիտի մնան կառավարության մեջ, մանավանդ որ Անդրբեջանի սահմանները որոշ չեն: Պիտի ջանալ, որ հումմեթը գոնե մնա կառավարության մեջ: Պիտի պահել, հակառակ դէպքում ընդհանուր հայ-վրացական կառավարություն ունենալ. կան ընդհանուր շատ խնդիրներ-ֆինանսական, զինվորական և այլ խնդիրներ (օրինակ՝ տերրիտորիալ-Ախալքալակի խնդիր) և այլն:

Ա. Ստամբոլցյան- Պետք է ամեն կերպ աշխատել հեղափոխական ֆրոնտի միությունը պահպանել: Քանի որ հակահեղափոխական Մուսավաթը գնում է, պիտի դառնալ կրկին խորհուրդների իշխանությանը: Առանձին իշխանությունները մտցնում են ջլատումն, մանավանդ որ անկախության դեմ է մեծամասնությունը: Առաջարկ՝ ընդունել կովկասյան խորդուրդների իշխանությունը:

Հ.Թումանյան- Կովկասի ոչ մի ժողովրդի համար այնչափ անհրաժեշտ չէ ընդհանուր իշխանությունը, կենտրոնը, որչափ մեզ համար: Անջատումն Անդրկովկասի մասերի- կնշանակե կռիվ առանձին մասերի դեմ, կռիվ ոչ միայն Տաճկաստանի, այլև Ադրբեջանի և Վրաստանի դեմ, թույլ չպիտի տալ առանձին կառավարություն ստեղծելը: Առանձին կառավարություն՝ կնշանակե առանձին թշնամի, բարեկամություն պիտի ստեղծել հարևանների հետ: Ժամանակ է խոստովանել, որ պարտված ենք մենք, մեր իդեալները՝ջախջախված:

Ա.Խոնդկարյան- դեմ է առանձին կառավարություններին. պիտի բացառել ,,Մուսավաթի,, որոշումը: Եթե վրացիները առանձնանան, իրենց տունը մտնեն, բաժանող վեճը ավելի կխորոնա, մանավանդ որ զուտ վրացական կառավարության մեջ նացիոնալիստ տարրերը ավելի կզորանան: Համաձայն է նաև մյուս պատճառների հետ:

Ղարիբջանյան- Սա կովկասյան իշխանության 101-րդ կրիզիսն է. Անդրկովկասի և ոչ մի իշխանություն չէ եղել արտահայտիչը աշխատավոր մասսաների: ,,Մուսավաթի,,-ը գնաց, լավ եղավ- ինչու չգնացին նաև մյուսները: Ինչպե՞ս կազմակերպել իշխանությունը- ճանաչել ժողովրդական կոմիսարներին.դա կփրկի միայն հեղափոխությունը և ժողովուրդը:

Լ.Թումանյան- ժողովրդական կոմիսարական իշխանությունը գյուղացիների և բանվորների իշխանություն չէ, այլ՝ որոշ խմբակի: Նա հասցրեց մեզ Բրեստ-Լիտովսկին: Առանձին կառավարությունը մահ է ամբողջի հետ:

Ն.Աղբալյան- Կովկասը աշխարագրական տերմին է: Դա երեք ժողովուրդների երկիր է, շահերը մեծ մասամբ նման չեն, երբեմն հակընդդեմ, օր.՝ թուրքերի շահը պատերազմի խնդրում հակադրվում է հայ-վրացական շահերին: Ադրբեջանը ուզում է անկախանալ-ի՞նչ իրավունքով եք դիմադրում. դրանով ավելացնում եք նոր ֆրոնտ: Եթե մենք դիմադրում ենք նրանց ձգտումին- հարել տաճկական օրենտացիային, ուրեմն և չպիտի խանգարենք նրանց- տնօրինելու իրենց գործերը: Թող Ռուսաստանի իշխանությունը միջոցներ գտնի անջատվողների դեմ: Հայերի և վրացիների միությունը

կյանքը թելադրանք է, և մենք այժմ ավելի ենք միացած, քան մեկ ամիս առաջ, իսկ դա պիտի արտահայտենք մի օրգանի մեջ:

Ա.Երզնկյան- Առարկում է Ղարիբջանյանին: Բոլշևիկյան կառավարությունը ոչ թե ներքևի խավերից է դիմում կառավարության ստեղծելու գործում, այլ հակառակը՝ օրինակ՝ բոլշևիկները կովկասի համար նշանակում են վերևից ,,փոխարքա,,- հանձին Շահումյանի: Բուն նյութին անցնելով՝ դեմ է Ադրբեջանի անջատման, որովհետև դա ժողովրդի անջատում չէ, այլ տիրող դասակարգի անջատումն, բռնի կերպով, բեկերի միջոցով, ապա ուրեմն պիտի պայքարել դրա դեմ, քանի որ դա ինքը կստեղծի նոր ֆրոնտ, թեկուզ հենց տերիտերիայի խնդրում: Առանձին կառավարությունը կունենա նորանոր ֆրոնտներ: Կառավարումը պահանջում է ահագին մեխանիզմ, ֆինանսներ և այլն: Տարբեր կառավարությունները կլինեն կործանարար:

Ռ.Քաջազնունի- Ո՞րն է լավը, լավը չկա. ո՞րն է չարիքներից փոքրագույնը, ահա խնդիրը: Չի բաժանում Արամայիսի տեսակետը: Ադրբեջանի անջատումը փաստ է, լինի դա Բեգերի թե այլ մասերի կողմից՝ միևնույն է: Սխալ կլինի, հետևելով նրան ստեղծել Վրաստան, Հայաստան: Գուցե և այլ մանրմունր ազգեր պետք է ընդհանուր կառավարություն կազմել վարչական ապակենտրոնացմամբ: Տարօրինակ է, որ Տրապիզոնում կային ազգային գրուպպաներ: Ինչ արած, մեր իրականությունն է այսպես: Ազգային ինքնազգացումը զորեղ է, պետք է կառավարել: Գուցե մենք սոցիալիստներ չենք, բայց փաստ է, որ Մուսավաթը, Հ.Յ.Դ., սոցիալդեմոկրատ մենշևիկները նույն բաներն են, բայց իրողություն նույն է: Պետք է վարչական բաժանում մտցնել, տեղերում իշխանություն ստեղծելու համար: Կաղապարել այն, ինչ որ կատարվում է անխղճորեն: Կողմնակից է Սեյմի գոյության: Դեմ է որևէ օրգանի, առանց պետական ֆունկցիաների:

Բունիաթյան- Կողմնակից է ռուս օրենտացիայի: Սխալ էր ապակենտրոնացումը, որի պտուղները մենք վայելում ենք: Օազիս ենք մահմեդականության մեջ: Սոցիալական հեղափոխությունը պայթեցրեց Ռուսաստանը. որից և վախենում են թուրքերը և ուզում են անջատվել: Դեմ է անջատ պետություն կազմելու, գոնե վրացիների հետ միանալ, թեև հավատ չունի, որ նրանք ևս չեն ցանկանում անջատվել: Ուժեղացնել Ազգային խորհուրդները իբրև ռազմական ապագա հնարավոր կառավարություն: Լավ հարաբերություններ պահել թուրքերի հետ. թերև հնարավոր է դեռ էլ պահել մեզ հետ:

Ս.Հարությունյան- Կտրուկ կերպով դեմ է անջատման, մեզ՝ հայերի համար մահացու հարված է: Վրացիներից և թուրքերի մեջ կան տարրեր, որոնք ուզում են անջատվել, որից հետո առանձին կապ կստեղծեն օսմանցիների հետ: Եթե մենք անջատվենք, կկորցնենք ամեն մի հենարան թե ֆրոնտի և ներքին կյանքում: Ամեն կողմից կփակվենք իբր մի պարկի մեջ: Հիմա թույլ եք, անջատվելով ավելի կթուլանանք: Վրացիների և թուրքերի մեջ հո կան տարրեր, որոնք դեմ են անջատման: Թուրք մանր բուրժուազիան, որ այժմ թույլ է, դեմ է նույնպես: Կառավարության մեջ մտցնել Հումմեթին, որպեսզի միությունը չխախտվի: Կենտրոնական կառավարություն կազմելը, մտցնելով ռուսական տարրի ներկայացուցիչը, ընդորում, որ մենք չենք ուզում Ռուսաստանից անջատվել: Պահանջել, որ մնա կենտրոնական կառավարությունը 4 ազգի ներկայացուցիչներից:

Նախագահը վիճաբանությունները վերջացած համարելով, հիշեցնում է, որ բանաձևեր կազմելիս ի նկատի ունենան, թե թուրքերի մասնակցությունը կառավարության մեջ ինչպես է լինելու:

Տեղի է ունենում ընդմիջում:

Վերաբացելով ժողովը, նախագահը առաջարկում է քվեարկել պատերազմի ու խաղաղության մասին եղած բանաձևերը.

1) Սոցիալ- դեմոկրատների բանաձևը
2) Հայ ժողովրական կուսակցության բանաձևը

3) Սիմոն Վրացյանի բանաձևը
4) Արշամ Խոնդկարյանի բանաձևը
5) Վ. Տեր-Գևորգյանի բանաձևը
6) Վ. Նավասարդյանի բանաձևը

Այդ բանաձևերի շուրջը տեղի է ունենում երկարատև թեր ու դեմ վիճաբանություններ, գլխավորապես Բրեստ-Լիտովսկի պայմանագրի կետի և հաշտության խնդիրների այս կամ այն ձևակերպության մասին: Այդ տարաձայնությունների շնորհիվ էլ առաջարկվում են 6 տարբեր բանաձևեր միևնույն խնդրի մասին: Վերջապես որոշվում է քվեարկությամբ բանաձևերից մեկը ընդունել իբրև հիմք:

Քվեարկությունը տալիս է հետևյալ արդյունքը՝

Վ.Նավասարդյանի բանաձևը - 17 ձայն, 8 դեմ
Վ.Տեր-Գևորգյանի բանաձևը - 13 ձայն, 8 դեմ
Ս. Վրացյանի բանաձևը - 11 ձայն, 9 կողմ
Ա. Խոնդկարյանի բանաձևը - 10 ձայն, 13 կողմ
Ս. Հարությունյանի բանաձևը – 3 ձայն

Ընդունվում է հիմք առաջին բանաձևը:

Սամ. Հարությունյանը առաջարկում է ոչ մի բանաձև չընդունել, այլ բոլոր բանաձևերը թողնել կառավարության հայ անդամների մոտ, որ ի նկատի ունենան: Այդ առաջարկը չի ունենում արձագանքում: Ուշ լինելու պատճառով նիստի շարունակությունը թողնվում է երեկոյան:

ՀԱԱ, ֆ.Պ-222, ց. 1, գ. 123, թթ. 15-20: Ձեռագիր: Բնագիր:

Հինգերորդ նիստ

8/21 ապրիլի, երեկոյեան ժամը 6½-ին

Նիստը բացվում է երեկոյան ժամը 6 ½ նախագահությամբ Ա.Ահարոնյանի և քարտուղարությամբ Ա.Սատմբոլցյանի: Օրակարգի խնդիրն է նախորդ ժողովում հիմք ընդունված բանաձևի վերջնական խմբագրումը և Անդրկովկասյան իշխանության խնդրի վերջնական լուծումը: Նախագահը կարդում է այն բանաձևը, որ ընդունվեց իբրև հիմք: Ռ.Քաջազնունին առաջարկում է բանաձևից հանել Բրեստ-Լիտովսկի պայմանագրի մասին եղած ամբողջ հատվածը: Այդ առաջարկի առթիվ տեղի է ունենում թեր ու դեմ վիճաբանություն: Ոմանք՝ բժ.Զավրիևը, Մ.Պապաջանյանը, Գ.Խատիսյանը այն կարծիքին են, թե պետք է այնպիսի որոշում կայացնել, որ կարելի լինի հարմարացնել հետագայի նոր առաջ եկած պայմաններին, ուստի և կողմնակից էին, որ Բրեստ-Լիտովսկի պայմանագրի հիշատակումը հանվի բանաձևից, իբրև մի կետ, որ կարող է հետագայում արգելք լինել մեր դիվանագիտական հարաբերություններին: Մյուսները /Ա.Երզնկյան/ համարում են,որ այդ առաջարկ է հիմնական ժխտումն ընդունուած բանաձևի, անպատասխան թողնելով մի շատ կարևոր խնդիր, անորոշության մեջ է դնում կառավարության հայ անդամներին: Եթե ամեն ինչ թողած է նրանց, ապա բանաձև բնավ հարկավոր չէ:

Նախագահը անվանական քվեարկության է դնում: Բրեստ-Լիտովսկի պայմանագրի հիշատակումը բանաձևից հանելուն ձայն են տալիս 20 հոգի, պահելու 18, ձեռնպահ մնում են 5 հոգի :

Ապա փոխվում է «պատերազմի» տեղ «երկրի պաշտպանություն» բառերով: Այնուհետև Ստ.Մամիկոնյան առաջարկում է խաղաղության մասին եղած կետը հանել: Պատերազմի ժամանակ խաղաղության մասին չեն մտածում, դրանք տատանումներ

են առաջացնում: Դրա մասին կարելի է խոսել իբրև հնարավորություններ, և ոչ կատեգորիկ պահանջ: Դրանք պահել իբրև հրահանգ և ոչ հայտարարություն:

Մ.Պապաջանյան առարկում է, որ չի կարելի անվերջ կռիվը շարունակել, պետք է ժողովրդին դրությունը պարզել, որ կռիվը հուսահատական չէ: Կարելի է այնպես անել, որ մի բանաձևը մնա իբրև գաղտնի հրահանգ կառավարության, մյուսը հասարակությանը հայտնելու համար:

Քվեարկությամբ որոշվում է այդ կետը /հաշտության մասին/ հրապարակ չհանել: Նույնպես քվեարկությամբ հետևյալ ուղղումն ընդունվում է, կոնֆերանսը հանձնարարում է պատշաճ մարմիններին համապատասխան քայլեր անել, ըստ կարելույն շուտով Անդրկովկովկասի ժողովրդների ազատությունն ապահովող պատվավոր և հաստատուն հաշտություն կնքել:

Մ.Պապաջանյան- Քանի որ այդ կետը գաղտնի է մնալու, պետք է որոշել, թե մինչև որ կետը զիջումն ենք անելու. առաջարկում է ավելացնել «հիմք ընդունելով Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը», բայց քվեարկությամբ մերժվում է:

Ա.Ղազարյան- Առաջարկում է «այնպիսի հաշտություն կնքել, որ մեր երկրի ամբողջությունը պահպանվի» քվեարկությամբ չի անցնում:

Ալ. Շարաֆյան- Առաջարկում է «առանց Կարսի, Բաթումի հաշտություն չկնքել» - չի անցնում:

Ռ.Քաջազնունին, որպես դետալիզացիա ավելացնել «ձգտել պահպանել Բաթումի, Կարսի և Կաղզվանի հայկական շրջանները»: Ստ.Մամիկոնյան առաջարկում է «ապահովել Անդրկովկասի սահմանները, ինքնորոշման իրավունքը իրագործելով»: Այս առաջարկները իբրև մանրամասներ թողնվում է իբրև հրահանգ պատվիրակության, բայց ոչ թե կետ բանաձևի մեջ:

Վահ.Նավասարդյան - Հավատացած, որ վրացին Կարսի համար արյուն չի թափի /ձայներ՝ հայն էլ վրացու համար չի թափի, / առաջարկում է նույնիսկ մենակ կռվել Կարսի համար, առանց Բաթումի: Քվեարկվում է և մերժվում է այդ առաջարկը /4 ձայն է ստանում/:

Ալ.Խատիսյան- Առաջարկում է մտցնել թուրքահայերի խնդրի նկատմամբ հետևյալ կետը՝ «թուրքահայերին թողնել վերադառնալու իրենց երկիրը և որոշելու իրենց կյանքը»:

Վահան Փափազյան- Նախ բողոքում է, որ թուրքահայերի ներկայացուցչական մարմնից՝ ապահովության խորհրդից մարդ չի հրավիրված և ապա գտնում է միանգամայն ավելորդ այնպիսի երկրորդական պահանջներ դնել. թողեք ոչինչ չլինի, որպեսզի ապագայում հնարավորություն լինի պահանջներ ներկայացնելու:

Թուրքահայերի վերաբերյալ կետը հետ է վերցվում: Վիճաբանությունը այդ խնդրի նկատմամբ սպառված համարելով, նախագահը քվեարկության է դնում բանաձևը վերջնական խմբագրությամբ, որն ընդունվում է:

«Ալեքսանդրապոլի կոնֆերանսը լսելով հաշտության պատգամավորության և զորահրամանատարության զեկուցումները, որոշվում է՝ որ հրամայական անհրաժեշտություն է բոլոր հնարավոր միջոցներով շարունակել երկրի պաշտպանությունը: Կոնֆերանսը հանձնարարում է պատշաճ մարմիններին համապատասխան քայլեր անել, ըստ կարելույն շուտով, Անդրկովկասյան ժողովուրդների ազատությունը ապահովող պատվավոր և հաստատուն հաշտություն կնքելու»:

Այնուհետև ժողովն անցնում է անկախության և իշխանության խնդիրներին. կարդացվում է սոցիալ-դեմոկրատների և սոցիալ-հեղափոխականների, կարդացվում է նաև Ռ.Քաջազնունու և էսեռների բանաձևը իշխանության մասին: Այդ բանաձևերի շուրջը տեղի է ունենում մտքերի կարճ փոխանակություն. ոմանք գտնում են, որ այդ խնդիրների մասին պետք է խոսել Թիֆլիսում, հանգամանքների հետ ծանոթանալուց

հետո, մյուսները, ի նկատի ունենալով, որ արդեն այդ հարցերի մասին խոսված է, առաջարկում են ընդունել որևէ բանաձև: Այդ որպեին ստացվում է հեռագիր Թիֆլիսից, որ վրաց ազգային խորհուրդը որոշել է անկախություն հայտարարել: Այս հանգամանքը ստիպում է ժողովին թողնել այդ խնդիրները, շտապել Թիֆլիս և այնտեղ այդ հարցերը որոշել: Որոշվում է անկախության և իշխանության խնդիրները քննել Թիֆլիսում, տեղի է ունենում ընդմիջում:

Ընդմիջումից հետո Ստ.Մամիկոնյան հայտնում է. քանի որ մեր վիճակը ըստ երևույթին վատթարանում է, ավելի, քան երբևիցէ, մենք պետք է մնանք այստեղ, շրջենք գավառները, հրացան հավաքենք և առհասարակ նպաստենք պաշտպանության գործին: Թողնենք անկախության և այլ հարցերը առանց մեզ որոշեն, եթե մեզ կսպասեն լավ, իսկ եթե չէ, մենք մեր գործը կանենք:

Այդ առաջարկը պաշտպանում են շատերը, առանձնապես գավառի ներկայացուցիչները /Գ.Ղազարյան, բժ.Տերտերյան, Լ.Սարգսյան/:

Մյուսները համաձանվելով դրա հետ, առաջարկում են հետո գալ, երբ Թիֆլիսում այս խնդիրներից մեկնումեկը չլուծվի:

Հովհ.Թումանյան առաջարկում է ստեղծել մի կամք և հեղինակություն, իսկ մեզանում երկու իշխանություն կա՝ Ազգային խորհուրդ և Հ.Յ.Դաշնակցություն, այս հանգամանքը քայքայիչ ազդեցություն է ունենում մեր գործի վրա, ապացույց թուրք-հայկական ընդհարումները, որի հանդեպ Ազգային խորհուրդի լիազորները խաղարար ընթացք են բռնում, իսկ խմբերը ընդհակառակը: Պետք է վերջ տալ այս բոլորին, որովհետև հետևանքները շատ վատ կլինեն: Ստ.Մամիկոնյան նորից պնդում է, որ սեյմի հայ անդամները այստեղ ներկա լինեն, որ իրենց հեղինակությամբ կարողանան գործին նպաստել:

Նախագահը ձևակերպում է /այս/ առաջարկը այն մտքով, որ երբ այս խնդիրներից մեկնումեկը կորոշվի, հետո կգան և նիստը փակում է երեկոյան ժամը 8½-ին:

Նախագահ Քարտուղար Ա. Ստամբոլցյան

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Նախապատրաստական նիստ

24 փետրվարի 1919թ.

ՕՐԱԿԱՐԳ

1. ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ

Համագումարը նկատեց, որ ընտրուած պատգամաւորները եւ Ազգ. Պատուիրակութեան անդամները, 21 հոգի, արդէն հաւաքուած էին Փարիզ, ընդդէմ 10 բացակայ պատգամաւորներու, որոնց հինգը ճամբան էին եւ հինգը տակաւին ընտրուած չէին. հետեւաբար՝ Համագումարի բացման համար, նոր ընտրութեանց պաշտօնական հրաւիրագրի պարունակութեան համաձայն, բացարձակ մեծամասնութիւն արդէն իսկ կար:

Ճշդելէ յետոյ այս կէտը, հարց ծագեցաւ, թէ արդեօք համագումարը ինք իր կողմէ իր անդամներուն թիւին վրայ յաւելումներ ընելու իրաւունք ունէ՞ր, թէ՞ ոչ: Միաձայնութեամբ ընդունուեցաւ, որ Համագումարը ունէր այդ իրաւունքը եւ որոշուեցաւ, ձայնի եւ քուէի հաւասար իրաւունքով՝ իբրեւ վաղեմի ազգային գործիչներ՝ Համագումարի անդամ հրաւիրել Տիարք Միհրան Տամատեանը, Արշակ Չօպանեանը, Արտաւազդ Հանըմեանը, Դաւիթ-Բէկը եւ Բրօֆ. Թումայեանը, բնականաբար այս ընտրութեան վերջնական վաւերացումը ձգելով Համագումարին՝ իր օրինական առաջին նիստին:

Որոշուեցաւ նոյնպէս ձայնի ու քուէի հաւասար իրաւունք տալ Պոլսոյ պատգամաւորութեան խորհրդակցական անդամ Տիար Տոքթ. Արմենակ Բարսեղեանի, այս կերպով յարգած ըլլալու համար Պոլսոյ Ազգ. Մարմիններու ընտրութիւնը, որով Ազգ. Պատուիրակութեան կողմէ որոշուած երկու պատգամաւորներու տեղ երեք հոգի ղրկած էին:

Որոշուեցաւ նոյնպէս ձայնի եւ քուէի հաւասար իրաւունքով Համագումարի անդամ ճանչնալ Ազգ. Պատուիրակութեան արդի անդամ Տիար Ճ. Մալքոլմն ու Վեհ. Կաթողիկոսի կողմէն նախապէս Ամերիկա ղրկուած Տիար Գ. Փաստրմաճեանը, որոնք որեւէ շրջանէ իբր պատգամաւոր ներկայացուած չէին Համագումարին:

2. ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԵՏ

Համագումարը յետոյ անցաւ Հայկական Հանրապետութեան ներկայացուցիչներուն եւ Ազգ. Համագումարի փոխյարաբերութեանց խնդրին:

Հայկական Հանրապետութիւնը, բոլորովին անտեղեակ ծրագրուած Համագումարէն, Տիարք Ա. Ահարոնեանի նախագահութեամբ եւ Մ. Պապաջանեանի /որ տակաւին եկած չէ/ ու Համօ Օհանջանեանի անդամակցութեամբ Պատուիրակութիւն մը ղրկած էր Փարիզ, գործելու համար ի նպաստ ազգային դատին՝ համախորհուրդ Ազգ. Պատուիրակութեան հետ:

Այս Պատուիրակութեան անունով Տիար Ա. Ահարոնեան խօսք առնելով յայտարարեց, որ Հանրապետութեան Պատուիրակութիւնը ինքզինքը կը դնէր Համագումարին տրամադրութեան տակ, թէ իրենք բոլոր սրտանց կ'ուզէին աշխատակցիլ Համագումարի աշխատութեանց, բայց նկատի ունենալով Հայկական Հանրապետութեան ներկայացուցիչներու թիւին նուազութիւնը /երեք հոգի/, նկատի ունենալով նաեւ, թէ երեք հոգիով կարելի չէ ներկայացնել հայութեան կէս հատուածը, ուրեմն եւ Հայ Հանրապետութեան Պատուիրակութիւնը կը մասնակցի Համագումարին՝ խորհրդակցական ձայնով միայն:

3. ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՈՒՄ

Ծրագրի Մշակման Յանձնախումբը, որ նախապէս կազմուած էր, առաջարկեց որ Համագումարը բացուելուն պէս իր ծոցէն ընտրէ երեք կամ չորս անձնաւորութիւններ, առժամեայ հանգամանքով, որոնք միանալով Հայկական Հ. Պատուիրակութեան, կազմեն մէկ մարմին, վարելու համար Պատուիրակութեան առօրեայ աշխատութիւնները, քանի որ Համագումարի աշխատութեանց պահուն անկարելի է, որ ժողովը, ինչպէս եղած է մինչեւ հիմա, մէկ կողմէ Պատուիրակութեան գործերը տանի, եւ միւս կողմէ Համագումարի ժողովներ կարենան գումարել:

Թեր ու դէմ կարծիքներէ յետոյ, որոշուեցաւ ստիպողութիւն տալ այս հարցին եւ զայն անցընել Համագումարի օրակարգը:

Դարձեալ՝ Ծրագրի Մշակման Յանձնախումբը առաջարկ բերաւ, որ Ազգ. Համագումարի բացումը կատարուի հանդիսաւոր կերպով, ի ներկայութեան Դաշնակից եւ բարեկամ պետութեանց ներկայացուցիչներուն, մամուլի ներկայացուցիչներուն, հայ ժողովուրդին, եւ այլն, կարելի եղածին չափ մեծ արձագանգ տալու համար Համագումարին, ինչ որ թէ՛ կը նպաստէ մեր դատին եւ թէ՛ մեծ ուրախութիւն կը պատճառէ ու բաւարարութիւն կու տայ մեր ժողովուրդին:

Համագումարը մեծամասնութեամբ ընդունեց այս առաջարկը եւ ընտրեց կարգադիր յանձնախումբ մը անդամակցութեամբ՝

Տիարք Թէքէեանի,
Մալքոլմի,
Մասեհեան Խանի,
Չօպանեանի,
Տէր-Ստեփանեանի:

4. ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԳՐԵՐՈՒ ՎԱՒԵՐԱՑՄԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ

Համագումարը քուէարկեց Պատգամաւորագրերու Վաւերացման Յանձնաժողովի մը ընտրութեան: Անդամ ընտրուեցան՝

Ամեն. Դուրեան Արքեպ.
Տիարք՝ Տէր-Յակոբեան
Տէր-Ստեփանեան

Որոշուեցաւ, որ Յանձնաժողովը անմիջապէս աշխատութեան ձեռնարկէ եւ իր տեղեկագիրը բերէ Ժողովին:

Նիստը փակուեցաւ ժամը 8 1/2-ին:

Նախագահ

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 18, թթ. 2-3 շրջ.: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ 1-ին

ՕՐԱԿԱՐԳ

1. ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ

Պատգամաւորագրերու Վաւերացման Յանձնաժողովը բերաւ իր տեղեկագիրը, որուն հիման վրայ հաստատուեցաւ հետեւեալ պատգամաւորներու ընտրութիւնը.

Ամեն. Դուրեան Արքեպիսկոպոս եւ Տիարք Բրօֆ. Տէր-Յակոբեան ու Բարսեղեան՝ Պոլսէն:

Գեր. Հ. Թորոսեան՝ Վենետիկի Միաբանութենէն

Տիար Մոստիչեան՝ Յունաստանի հայ գաղութէն

Տիարք Թէքէեան եւ Տոքթ. Նեւրուզ՝ Եգիպտոսի հայ գաղութէն

Տիարք Յակոբեան եւ Ֆնտգլեան՝ Անգլիոյ հայ գաղութէն

Տիարք Յովհաննէս Խան Մասեհեան եւ Վարանդեան՝ Պարսկաստանի հայութեան կողմէ

Տիարք Շանթ, Փափազեան եւ Թէրզիպաշեան՝ Կովկասի թրքահայ գաղթականներուն կողմէ

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար՝ հնդկահայոց կողմէ

Տիար Տէր-Ստեփանեան՝ Իտալիոյ հայ գաղութէն

Տիարք Աղաթօն Պէյ, Բրօֆ. Թումայեան եւ Տամատեան՝ Ամերիկայէն, առժամանակեայ կերպով, մինչեւ ժողովրդական քուէով ընտրուելիք ներկայացուցիչներուն ժամանումը:

Տիար Տէրտէրեան՝ Ռումանիոյ հայ գաղութէն

Տիար Տոքթ. Սայեան եւ Հինդլեան՝Պուլկարիոյ հայ գաղութէն

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան՝ Զուիցերիոյ հայ գաղութին կողմէ

Հրաժարեցաւ Ամերիկայէն առժամանակեայ կերպով ընտրուած Տիար Տամատեան:

Միջագետքի հայ փախստականներու ներկայացուցչին մասին տարակարծութիւն եղաւ, որովհետեւ երկու հակասական հեռագիրներ կային, մէկը՝ Պաղտատէն՝ Վահրամ Փափազեան ստորագրութեամբ, որ կ'իմացնէր Տիար Բրօֆ. Խաչատուրեանի ընտրուած ըլլալը, եւ միւսը Պասրայէն՝ Գեր. Մուշեղ Ս. Եպիսկոպոսի կողմէ, որ կ'իմացնէր Տիար Տէրվիշեանի ընտրութիւնը:

Որոշուեցաւ առկախ ձգել Միջագետքի պատգամաւորին ընտրութեան խնդիրը:

Որոշուեցաւ հրաւիրել նոյնպէս Ֆրանսայի հայ գաղութին կողմէ ընտրուած պատգամաւորները՝ Տիարք Ներսէսեան Խան եւ Քէլէկեան Խան:

2. ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՈՒՄ

Ծրագրի Մշակման Յանձնաժողովին տեղեկատուութենէն յետոյ, Տիար Թէրզիպաշեան դիտել տուաւ, որ Համագումարի օրակարգին գլուխը պէտք է դնել պարենաւորման հարցը, որովհետեւ ամէն ինչ լաւ է այդ ծրագրին մէջ, բայց այդ գեղեցիկ ծրագիրը ո'չ մէկ արժէք կունենայ վաղը, սովէն ամայացած ու դատարկուած Հայաստանի մէջ:

Այդ մասին մասնաւոր յանձնախումբ նշանակուած ըլլալով, Յանձնախումբի կողմէն Տիար Մալքոլմ՝ կատարուած դիմումներուն նկատմամբ տեղեկութիւն տուաւ եւ յոյս յայտնեց, որ երկու միլիոն տոլար կարելի պիտի ըլլայ ստանալ Ամերիկայէն եւ թէ քանի մը օրէն կը հասնի ատոր պատասխանը:

Տիար Ահարոնեան, որ եկած առաջին օրէն իսկ ցոյց տուած էր Հայկական Հանրապետութեան պարենաւորման հսկայ կարիքը, կրկին յարոյց խնդիրը, ըսաւ թէ ինք ինչ դիմումներ կատարած էր Դաշնակիցներու Պոլսոյ ներկայացուցիչներուն մօտ եւ թէ կը պատրաստուէր այստեղ եւս նոյն դիմումները կրկնել: Բայց յարեց, պէտք է աւելի բուռն թափով աշխատիլ ամէն գնով եւ շուտով Քուպանէն ցորեն հասցնելու համար դէպի Երեւան, Նովոռոսիյսք-Պաթում գծով, քանի որ Քուպանի մէջ մեծ քանակութեամբ ցորեն կար արդէն եւ Զօրավար Տենիքին հաւանած էր պէտք եղած չափով ցորեն տրամադրել, կը բաւէ, որ վստահ ըլլար, թէ այդ ցորենէն չպիտի օգտուին վրացիք:

Թեր ու դէմ վիճաբանութենէ յետոյ, որոշուեցաւ կազմել Պարենաւորման Յանձնախումբ մը, որուն անդամ նշանակուեցան՝

Տիարք Բիրալեան /Տիար Ահարոնեանի օգնական/
Թէրզիպաշեան
Մալքոլմ
Փաստրմաճեան

որոնք պիտի ուսումնասիրեն խնդիրը եւ պիտի խորհին պարենաւորման բոլոր կարելի միջոցներու մասին: Իսկ ինչ կը վերաբերի այս մասին ըլլալիք քաղաքական դիմումներու, այդ գործը թողուեցաւ Ազգային եւ Հանրապետութեան Պատուիրակութեանց Նախագահներուն:

Տարագիրներու եւ Որբերու Նպաստից Բաշխման Յանձնախումբը առաջարկ բերաւ անմիջապէս 60.000 ֆրանք ղրկել Եգիպտոս՝ Ազգ. Միութեան նպաստամատոյցին, յատկացուելու համար Սուրիոյ /Դամասկոս, Պէյրութ, Հալէպ/ տարագիրներու եւ որբերու օգնութեան:

Համագումարը ընդունեց այս առաջարկը:

Տիար Տէր-Ստեփանեան առաջարկ բերաւ դիմում կատարել Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան մօտ, որպէսզի յանձնախումբ մը ղրկէ երկրի յարմարագոյն մէկ կեդրոնը, այնտեղ զբաղուելու համար որբերու հոգատարութեան գործով:

Ի պատասխան այս առաջարկին՝ Գեր. Հ. Թորոսեան ժողովին տեղեկացուց, որ ինք արդէն այդ ուղղութեամբ թելադրութիւն ըրած է իրենց Միաբանութեան եւ թէ ուրախ է յայտնելու, թէ արդէն իսկ Մուշ, Նիկոմիդիա, Տրապիզոն եւ Պարտիզակ ներկայացուցիչներ ղրկած է՝ որբանոցներ հաստատելու եւ կամ իրենց դպրոցները վերաբանալու համար:

3. ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ՕԺԱՆԴԱԿ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻՆ

Կազմուեցաւ Օժանդակ Յանձնաժողովներու մասին խորհրդակցելու, անոնց թիւն ու դերը ճշդելու պաշտօն ունեցող յանձնախումբ մը, որուն անդամ նշանակուեցան՝

Տիարք Մասեհեան Խան,
Նեւրուզ,
Շանթ,
Տէրպէտէրեան

4. ՏԵՂԵԿԱՏՈՒՄԻՒՆ ՏԻԱՐ ԹԷՐԶԻՊԱՇԵԱՆԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ

Նիստին վերջաւորութեան՝ Տիար Թէրզիպաշեան ժողովին ներկայացուց հետեւեալ տեղեկագիրը.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ - ՏԵՂԵԿԱԳԻՐ ՏԻԱՐ ԹԷՐԶԻՊԱՇԵԱՆԻ -

Ցարական կառավարութեան օրով, Ռուսական Յեղափոխութեան նախօրեակին՝ 1917 Փետրուարի վերջերը, այս էր Թրքահայաստանի դրութիւնը:

Թրքահայերը, թուով 120.000 բացառապէս երկրագործ դասակարգից, հաստատուած էին իրենց հայրենի հողին վրայ, բռնելով Վան-Մուշ-Քղի-Երզնկա գիծը: Թրքահայերի ներգաղթը կը քաջալերուէր հայ հասարակական կազմակերպութիւնների կողմից՝ երեք նպատակաւ.

1. Թրքահայերին հնարաւորութիւն տալ իրենց սեպհական աշխատանքով ապրելու
2. Դիւրացնել ռուսական զօրքերի պարենաւորումն ու յառաջխաղացութիւնը
3. Թոյլ չտալ, որ Հայաստան մնայ առանց հայութեան եւ քիւրտերը հնարաւորութիւն ունենան տեղաւորուելու:

Ցարական կառավարութեան վերաբերումը դէպի հայերը, մանաւանդ դէպի նոցա քաղաքական ձգտումները, շատ անբարեհաճ էր: Հիմնուած 1916-ի գաղտնի դաշնագրին վրայ, նա Հայաստանը ո՛չ միայն քաղաքականապէս, այլ նաեւ տնտեսապէս ռուսացնելու ծրագիրն ունէր, ձեռնարկած էր նա Հայաստանի վարչական բաժանումներին եւ քաղաքային իշխանութեան կարգաւորման աշխատանքին, գործի կանչելով չինովնիկների լեգէոն մը, որոնց մէջ կը գտնուէր ե՛ւ լեհ, ե՛ւ վրացի, ե՛ւ յոյն, նոյնիսկ թիւրք, եւ սակայն ո՛չ մի հայ. յատուկ հրահանգ կար, նոյնիսկ տեղացիներից գտնել թարգմաններ, պայմանաւ, որ հայկական շրջանների համար դրանք լինէին ասորի, իսկ ասորական շրջանների համար՝ միայն հայ: Իսկ լքուած հողերի սեպհականութեան եւ շահագործումի համար ունէին շարք մը թաքուն հրահանգներ, որոնց նպատակն էր դրանց վրայ հաստատել քոզաքների գաղութ մը: Ալաշկերտի հովտին մէջ նոյ իսկ այս ուղղութեամբ actif քայլեր արել էին:

Ռուսական Յեղափոխութեամբ յեղաշրջուեց նաեւ ցարիզմի այս ծրագիրը: Որոշ տեղեր հայ ժողովրդին յաջողուեց իր ձեռքն առնել քաղաքական իշխանութիւնը: Քիչ յետոյ, Բեթրոկրատում, Լվով-Կերենսքիի դահլիճին քով եղած դիմումներին եւ թափուած մասնաւոր ջանքերին իբր արդիւնք, 1917-ի ամռան ռուս կառավարութիւնը վերանորոգեց գրաւուած վայրերի առանձին եւ կովկասեան իշխանութիւններից անկախ վարչութիւն մը, հայկական շրջանի համար օգնական նշանակելով Տոքթ. Զավրիեւին, որուն յանձնուած էր գրեթէ հայկական շրջանի ամբողջ վարչութիւնը, որոշ հրահանգով, որուն համեմատաբար նպաստաւոր տրամադրութիւնները մէկ կողմից կ՚օգնէին հայերի ֆիզիքական գոյութեան պահպանման, միւս կողմից կը մօտեցնէին զինքը իւր քաղաքական ձգտումներին: Սոյն նորոգուած վարչութեան առաջին գործն

եղաւ մաքրել Հայկական շրջանը հին ռեժիմի չինովնիկներից, որոնց փոխարէն նշանակեց բացառապէս հայերին, եւ հնարաւորութիւն տուաւ, որ վերադարձող ժողովուրդը իւր ներկայացուցչական մարմիններով օժանդակի վարչական գործերին. նաեւ ձեռնարկեց տեղական միլիցիայի կազմութեան, որ հետզհետէ Հայաստանի ինքնապաշտպանութեան կորիզը պիտի դառնար:

Իրերն այս դրութեան մէջ էին, երբ ծագեց Բեթրոկրատի Հոկտեմբերեան Յեղափոխութիւնը: Յայտնի է որ, պոլշեւիկների յաղթութեամբ յաղթեց նաեւ զօրքերի «Դէպի տուն» նշանաբանը, զինուորական տիսիբլինը խախտուեց եւ 3 1/2 տարիից ի վեր պատերազմի զրկանքներից զզուած զօրքը սկսեց, արտօնութեամբ թէ առանց արտօնութեան, վերադառնալ իւր օճախը: Հայ զօրքերից քիչեր եղան, որոնք չուզեցին օգտուել այս նպաստաւոր մթնոլորտից, այնպէս, որ Դեկտեմբերի սկիզբներին Վան, Ախլաթ, Մուշ, Խնուս, Մամախաթուն գծի վրայ կը գտնուէին ոչ աւելի քան 15.000 զօրքեր, ամէնամեծ մասը հայերից բաղկացած, փոխարէն քսան անգամ աւելի ստուար բանակին, որ ամռան կը պահէր այս գիծը: Այս զօրքերին միացան միլիցիայի անուամբ եւ տեղ-տեղ կամաւորական դրութեամբ կազմակերպուած թիւրքահայերը. կը պահպանէին թէ՛ ճակատը եւ թէ՛ թիկունքը, ուր սկսեր էին՝ թիւրքերից ստացած յատուկ հրահանգներով որոշ գործունէութիւն ցոյց տալ ցարական կառավարութեան տեղաւորած քիւրտերը: Իսկ թրքական բանակը, որ չորս աչքերով կը հետեւէր ճակատի պարպուելուն գործողութեանց, կը սպասէր վերջին ոյժերի հեռանալուն՝ գործունէութեան սկսելու համար:

Ստեղծուած այս դրութեան առջեւ երկու բան կար անելու. կա՛մ պարպել Թրքահայաստանը եւ քաշուել կովկասեան սահմանը, եւ կա՛մ ստեղծել ինքնապաշտպանութեան համապատասխան ոյժ:

Ահա այս երկընտրանքի առաջ էր, որ Արեւմտահայ Խորհուրդը 1917 Դեկտ. 15-ին Հայաստանում եւ Կովկասում թրքահայերից ընտրուած շրջանային ժողովների պատուիրակներից եւ քաղ. կուսակցութիւնների ներկայացուցիչներից Թիֆլիսում գումարեց մի «քոնֆերանս»՝ դրութեան դարման խորհելու համար: Այս քոնֆերանսի աշխատութեան ընթացքին Փարիզէն՝ Հայկական Պատուիրակութեան Նախագահ Պօղոս Փաշայից ստացուեց մի հեռագիր հետեւեալ բովանդակութեամբ. «Եթէ թրքահայերը՝ ռուսահայերի օգնութեամբ ձեռնարկեն պաշտպանել ռուսական զօրքերի պարպած ճակատը, Դաշնակիցները կը խոստանան զինուորական եւ ֆինանսական օգնութիւն»: Կ՚աւելացնէր նաեւ, որ «այն օրը երբ Հայաստան հայկական ոյժերով յաջողուի պաշտպանել, Դաշնակիցները դէմ չեն՝ եթէ Հայկական օթօնոմի հռչակուի»:

Աւելորդ է բացատրել սոյն հեռագրի քաղաքական նշանակութիւնը, մանաւանդ որ նա կը հասնէր Ֆրանսիայի Արտաքին Գործոց Նախարարութեան շիֆրէով:

Քոնֆերանսը՝ աչքի առաջ ունենալով մէկ կողմից ձմեռային մի նահանջի սարսափները եւ 120.000 ժողովրդի տնտեսական քայքայումը, միւս կողմից հայութեան քաղաքական ձգտումները, եւ այն հանգամանքը որ, Դաշնակիցների կողմից եղած կէս պաշտօնական հրաւէրի, մանաւանդ խոստումներից վերջ Հայաստանը պարպել ուրիշ բան չպիտի նշանակէր՝ եթէ ոչ Հայկական Հարցից հրաժարուել՝ միաձայն որոշեց, Ռուսահայ Ազգային Խորհուրդի հետ խորհրդակցաբար, Ազգային Հերոս Անդրանիկի հրամանատարութեան ներքոյ կազմակերպել թրքահայ տիւիզիոն մը, Թրքահայաստանի պաշտպանութեան համար, ենթարկելով զայն Ռուսահայ կորպուսի հրամանատարութեան, որ կը պաշտպանէր թրքական ֆրոնտը: Այս գործը հանձնեց նա ութ հոգիից բաղկացած մի մարմնի, որուն եւ տուեց «Հայաստանի Ապահովութեան Խորհուրդ» անունը:

Այստեղ հարկ կը համարենք շեշտել, որ մէկ նպատակի ձգտող գործունէութեան վրայ թրքահայութեան անունը եւ դրոշմը առանձին պահպանելու պէտքը, Ռուսահայ Ազգային Խորհրդի հետ համաձայնութեամբ, ճանչցուած էր երկու նկատումներով. Ա.

խուսափելու համար այն բարդութիւններից, որոնք կրնային ծագել իրաւական տեսակէտներից ռուսահայերի համար. Բ. Անվթար տանելու համար թրքահայոց դատի միջազգային բնոյթը:

Այս օրերին մի ուրիշ քաղաքական նշանակութիւն ունեցող առիթ կու գար աւելցնել թրքահայերի ոգեւորութիւնը: Դա՝ ռուս կառավարութեան Դեկտ. 30-ի դեկրետն էր, որով նա կը յանձնարարէր աջակցութիւն ցոյց տալ հայերին՝ «կազմելու համար Տաճկահայաստանի ժամանակաւոր ժողովրդական կառավարութիւն, հայկական ժողովրդի պատգամաւորների խորհրդի ձեւով, ընտրուած դեմոկրատական ձեւով»:

Քաղաքական այս նպաստաւոր մթնոլորտի մէջ էր, որ Հայաստանի Ապահովութեան Խորհուրդը, համախորհուրդ Ռուսահայ Ազգ. Խորհրդի հետ, ստանալով ֆինանսական դիւութիւններ՝ Անգլիական Միսսիայից եւ պարենաւորման մոպիլիզացիայի միջոցներ ռուս հրամանատարութիւնից, նախաձեռնեց կազմակերպել թրքահայ տիւիզիոնը Անդրանիկի հրամանատարութեան ներքոյ, զէնքի կանչելով 19-40 տարիք ունեցող թրքահայերին, որոնց թիւը՝ մէկ ամսուայ ընթացքին 20.000-ի հասաւ, բացաւ ենթասպայից վարժարանը, /ուրկից/ հետզհետէ ենթասպայական աստիճան ընդունելով ֆրոնտ մեկնեցին 500-ի չափ թրքահայեր: Բայց մենակ զինուորով եւ ենթասպայով կարելի չէր բանակ կազմել. բանակին պակասում էին սպաներ, եւ ռուսական սպայակոյտը չէր կրնար բաւարարել այս պակասը: Անգլիական Միսսիան մարզիչներ խոստացել էր, որոնք սակայն կ'ուշանային եւ որոնց համար վերջին գրաւորապէս յայտնեց, որ յարաբերութիւնը կտրուած լինելով, չի կրնար հասցնել խոստացուած մարզիչները: Այս պակասներից զատ՝ հարկաւոր էր ժամանակ՝ մարզանքի համար, որ աւելի սուղ գտնուեց, ըստ որում Փետրուարի կէսից թիւրքերը ռազմական ամէն պատրաստութիւններով եւ յարմարութիւններով, չորս տիւիզիայով յարձակողական սկսեցին ամբողջ ճակատի երկայնքը: Թիւրքերը այս յարձակողականին սկսած էին քաջալերուած քաղաքական այն նպաստաւոր պայմաններից. որոնք տուել էր իրենց Յունուարի վերջերին Պրէսթում կնքուած դաշնագիրը, որով Սովիէթների իշխանութիւնը կ'ընդունէր այն ամօթալի պայմանները որոնք իրեն կը պարտադրէին ո՛չ միայն պարպել 1914-ի սահմանները, ո՛չ միայն զիջել Պաթումի, Արտահանի, եւ Կարսի սանջակները, այլ նաեւ դադարեցնել Կովկասում հայ զինուորական ուժերի գործունէութիւնը: Թաթարների համար ոչ նուազ քաջալերանք էին փոփոխուած այս պայմանները: Նրանք եւս որոշ տակտիկայով սկսեցին թիկունքային գործունէութեան. նախ կտրելով Գանձակի երկաթուղագիծը՝ արգելք եղան Պաքուի ռուսահայ եւ թրքահայ ոյժերի փոխադրութեան, ապա Երեւան-Ջուլֆա եւ Մակուի գծերի վրայ շարունակական յարձակողականներով ո՛չ միայն զօրահաւաքի գործը ամլութեան դատապարտեցին, այլ նաեւ պատճառ եղան, որ ճակատ գտնուող հայ զօրքերը, իրանց օճախը պաշտպանելու համար, բանակը լքեն եւ վերադառնան:

Պրէսթի դաշնագիրը իրաւունք կու տար թրքահային՝ գործելու նախ քաղաքական հողի վրայ. զուգընթաց իր ռազմական գործունէութեան՝ նա ձեռնարկեց Տրապիզոնի հաշտութեան բանակցութիւններին, ուր Պաթում-Կարսի հարցի պաշտօնական բանակցութեան կարգին թրքահայ հարցը Պատուիրակութեան հայ անդամների հետ անպաշտօն խոսակցութեան նիւթ արել էր, եւ երբ կովկասեան Սէյմը /երեսփ. ժողով/ Տրապիզոնի բանակցութիւնների առթիւ իր կամքն արտայայտեց, Հայկական Հարցի առթիւ եւս ընդունեց մի բանաձեւ՝ որով առաջարկուելու էր Թիւրքիային «տալ թիւրքահայերին ինքնավարութիւն թիւրք պետականութեան շրջանի մէջ»: Որպէսզի այս բանաձեւը, ինչպէս նաեւ Տրապիզոնի մէջ անցած խօսակցութիւնները որոշ թիւրիմացութիւնների տեղիք չտային Դաշնակիցների շրջանակի մէջը, Հայաստանի Ապահովութեան Խորհուրդը փութաց առանձին մեմորանտոմով մը դիմել Դաշնակից պետութիւնների Թիֆլիսի ներկայացուցիչներին, յայտնելով, որ թիւրքահայերը մերժում են հաշտութեան ռեւէ քոմբրոմիս, եւ թէ իրենց

անխախտ որոշումն է շարունակել պայքարը, բոլոր ոյժերով եւ միջոցներով, մինչեւ իրենց քաղաքական իրաւունքների յաղթանակը: Յանձնելով սոյն յիշատակագիրը, Խորհուրդը խնդրել էր Դաշնակիցների ներկայացուցիչներից իրենց պետութիւններին հեռագրել թրքահայերի սոյն հաւաստիացումների մասին, ինչպէս որ ինքն էլ առաջին հեռագրով յայտնել էր Եւրոպայի Հայ Պատուիրակութեան:

Իր այս որոշումի մասին Խորհուրդը առանձին Պատուիրակութեան միջոցաւ յայտնեց նաեւ կովկասեան ռուս գլխաւոր հրամանատարութեան, որ իրեն պարտք համարեց Փետր. 21 թիւ գրութեամբ մը դիմել Դաշնակից պետութիւնների ներկայացուցիչներին, գնահատելով եւ վեր հանելով հայերի ծառայութիւնները Դաշնակիցների օգտին:

Տրապիզոնի բանակցութիւնների օրերին էր, որ թիւրք յարձակող բանակը գրաւել էր Երզնկան, եւ որպէսզի թոյլ չտայ էրզրումի ինքնապաշտպանութիւնը որ կազմակերպուի, արագ կերպով կը յառաջանար էրզրումի վրայ: էրզրում շատ քիչ կրցաւ դիմանալ, եւ Փետրուար 26-27-ին ինկաւ թշնամիի ձեռքը:

ԷՐԶՐՈՒՄԻ ԱՆԿՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

1. էրզրումի ընդհանուր հրամանատարը մի վրացի էր, գեներալ Օտրշելիձէ, որ Ռուսական Յեղափոխութիւնից վերջ էրզրումից մեկնող թնդանօթաձիգների, սպաների, թեքնիսիէնների եւ նոցա հետ տարած առարկաների պակասը լրացնելու համար ո՛չ մի բան չէր արած, եւ ինքն՝ ստեղծուած քաոսային դրութիւնից օգտուելով՝ կամ յուսահատելով, քաղաքը պարպելու առաջարկ դրել էր վերին հրամանատարութեան. ինքն էլ, երեք շաբաթ առաջ, քաղաքից դուրս եկած՝ Սարըղամիշ կը գտնուէր:

2. Ռուսահայ զօրքը՝ ռուս զօրքի հետ ապրած լինելով միեւնոյն յարկի ներքեւ, չէր կրցած ինքզինքը զերծ պահել նրա մտքերի ազդեցութիւնից. երեքուկէս տարուայ զրկանքից, մանաւանդ թաթարների՝ իրենց գիւղերի վրայ գործած անվերջ արշաւանքներից մղուած, նա օր առաջ իւր օճախը դառնալ կ'ուզէր: Այս տրամադրութեան մէջ եւ տիսիպլինից զուրկ, նրան կարելի չէր զօրք համարել:

3. Յուսահատ զօրքի այս տրամադրութիւնից, Հայկական Կորպուսի հրամանատարը եւ սպայակոյտը չեն ուզեր էրզրում երթալ, եւ ռուսահայ ղեկավար շրջանների անվստահ ու տատամսոտ քաղաքականութիւնը հեռու էր ազդու միջամտութիւն ունենալու թ՛ մէկի եւ թ՛ միւսի վրայ:

4. Թիւրքահայ զինուորներին եւս կարելի չէր զօրք համարել. նրանք՝ առանց նոյնիսկ նախնական մարզանքի, հազիւ էրզրում հասել էին, երբ սկսեց թրքական արշաւանքը: Այսպէսով, Անդրանիկ էրզրումի պաշտպանութեան դուրս եկաւ գրեթէ առանց թնդանօթի եւ առանց զօրքի:

էրզրումի անկումը խիստ աղէտաբեր եղաւ ե՛ւ բարոյական, ե՛ւ ռազմական տեսակէտներից, եւ առաջացրեց ընդհանուր բարոյալքում զինուորների մէջ, որի հետեւանքով իրար ետեւից ետ քաշուեցին Խնուսից եւ Մալազկերտից ոյժերը, նրանց հետ՝ ազգաբնակչութիւնը: Մնում էին Վանի ոյժերը, որոնք մինչեւ Մարտի 22-ը դիմադրելուց վերջ, դիմեցին դէպի Պարսկաստան, ուր Սալմաստի շրջանի հայերի հետ Ապրիլի կռիւների հետեւանքով քաշուեցան դէպի Համատան եւ անկից դէպի Պաղտատ, ուր կռուող ոյժեր անգլիական բանակի մէջ ընդունուեցան եւ որի ծառայութեան մէջ գտնուում են մինչեւ այսօր:

Անցնելով կովկասեան սահմանը, թիւրքահայ զինուորների մի մասը շարունակեց, զանազան կէտերի վրայ, ռուսահայ գունդերի շարքում, իւր զինուորական ծառայութիւնը. իսկ Անդրանիկ Ռուսահայ Ազգային ու Ապահովութեան Խորհուրդների համաձայնութեամբ կազմեց 2.000 հոգիից բաղկացած մի հարուածող գունդ, որ Հայկական Կորպուսի հրամանատարութեան կարգադրութեամբ միջոց մը

Ախալքալաքի որոշ սահմանները պաշտպանելուց վերջը, թրքական առաջացող զօրքերի առջեւից փախչող հայերը պաշտպանելով մերթ ճելալ Օղլի, մերթ Ալեքսանդրապոլի շրջանը եղաւ մշտական սպառնալիք ճակատից թիւրքերի, իսկ թիկունքից թաթարների դէմ: Ալեքսանդրապոլի գրաւումից վերջ իւր զօրքերով անցաւ Նախիջեւանի շրջան, անկից Պարսկաստան, ուր իր կռիւներով հնարաւորութիւն տուեց այնտեղ գտնուող թէ' պարսկահայերին եւ թէ' վանեցիներին՝ ճողոպրել թիւրք-քրտական ոյժերից եւ անցնել Համատան: Պարսկաստանից նորից նա իր ոյժերով անցաւ Նախիջեւան, անկից Գորիսի եւ Զանգեզուրի շրջան, միշտ մնալով անխոցելի եւ յաւիտենական սպառնալիք թիւրք բանակի եւ թաթարների շարժումների:

Ռազմական դէպքերի սոյն անընպաստ պայմանների տակ խզուեցին Տրապիզոնի բանակցութիւնները: Սոյն բանակցութիւնների ընթացքին արդէն վրացիք իրենց մասքը վերացրել էին, եւ երեւան եկել էր, որ նոքա ունեցել են ե՛ւ թիւրքերի ե՛ւ գերմանացիների հետ որոշ կապեր եւ թաքուն բանակցութիւններ: Թաթարների հետ իրենց շահերի մօտիկությամբ, ինչպէս նաեւ աւելի հեռատես քաղաքականութեամբ, նոքա յաջողել էին իրանց ետեւից քաշել թաթարներին, եւ այսպէսով պահել իրանց ձեռքին կովկասեան գործերի ղեկը եւ նախաձեռնութիւնը: Հայեր կրաւորական դիրքի մէջ մնացել էին, այնպէս որ երբ Գերմանիա եւ Թիւրքիա Կովկասում՝ մանաւանդ Պաքուի դէմ աւելի ազատ գործելու համար թելադրեցին Կովկասեան իշխանութեան՝ Ռուսաստանից կտրուել եւ անկախութիւն յայտարարել, հայեր ոչինչ կրցան անել՝ եթէ ոչ ակամայ համակերպութիւն ցոյց տալ, ինչպէս որ ցոյց տուեր էին Կարսի չարաբախտ յանձնումի առթիւ, եւ Ապրիլ 9-ին միասին յայտարարեցին Կովկասեան անկախութիւն, մի առիթ, որ պատճառ պիտի դառնար, վերջէն, Ալեքսանդրապոլի եւ Պաքուի արշաւանքներին: Թիւրքերը, որոնք այլեւս ինքզինքնին կաշկանդուած չէին համարեր Պրէսթի դաշնագրով, արշաւեցին Ալեքսանդրապոլի վրայ: Աւելորդ է խօսել թրքական արշաւանքների բնոյթի մասին: Պատերազմի ո՛չ մի օրէնք չի ճանչնար նա, երբ գործը հայերի հետ է. արշաւանքները զուգընթաց իրենց հետ կը բերեն ջարդ եւ կողոպուտ: Ալեքսանդրապոլի բանակը գրեթէ կազմալուծուած էր. սակաւաթիւ թիւրքահայ զինուորներ անցան Երեւանի շրջանը, ուր միացած Գեներալ Սիլիկովի հրամանատարութեան ներքեւ գործող ոյժերին, օգնեցին այդ շրջանի ինքնապաշտպանութեան գործին:

Իրերի այս քաոսային դրութեան մէջ, երբ մէկ կողմէն թիւրքերը կը յառաջանային եւ միւս կողմէն ռուսահայերի ազդեցութիւնը կը պակսէր Թիֆլիսի կառավարութեան մէջ, Ապահովութեան Խորհուրդը հարկ համարեց նոր քոնֆերանս մը գումարել՝ դրութիւնը պարզելու եւ համապատասխան որոշում մը տալու համար: Մայիսի սկիզբներում Թիֆլիզում գումարուած քոնֆերանսը՝ նկատելով, որ ստեղծուած քաղաքական պայմանների մէջ Ապահովութեան Խորհրդի Թիֆլիզում գոյութիւնը ձեռնտու չէ թիւրքահայ քաղաքական եւ ֆիզիքական գոյութեան տեսակէտից, եւ որ կրնայ բարդութիւններ ստեղծել ռուսահայերի համար, որոշեց լուծել Ապահովութեան Խորհուրդը, թրքահայ տիւիզիոնի գործը յանձնելով Ռուսահայ Ազգային Խորհրդին. իսկ Ապահովութեան Խորհրդի լիքիտասիոնի գործը յանձնել Արեւմտահայ Խորհրդին, որուն եւ յանձնարարեց արծարծել եւ հետապնդել Հայկական Հարցը:

Արեւմտահայ Խորհուրդը, որ Ալեքսանդրապոլի գրաւումով կտրուած էր Երեւանից, Վրաստանի անջատման եւ անկախութեան յայտարարութեան եւ թիւրքերի Թիֆլիզի դուռներին մօտիկանալու առաջադրած խուճապի օրերին /մայիս 23/, համաձայն նախապէս տրուած որոշման, 50.000 գաղթականութեան հետ անցաւ Հիւսիսային Կովկաս, ուրկից կը յուսար կապ հաստատել Եւրոպայի Հայ Պատուիրակութեան հետ: Դժբախտաբար այնտեղ նոր արգելքներ՝ պոլշեւիկների կաշկանդումներ, հնարաւորութիւն չտուին ատոր:

Որպէս եզրակացութիւն ուրեմն, մեր զեկոյցից երկու բան որոշ է.

Ա. Որ Կովկասում թիւրքահայերի անուամբ քաղաքական ուրոյն օրկանի մը կազմակերպութիւնը անհրաժեշտ էր, քաղաքական իրադարձութիւնների ընթացքին Հայկական Հարցը անվթար պահելու համար:

Բ. Որ գոյացնելով այս օրկանը, Կովկասի թիւրքահայ փախստականութեան յաջողուեց, հակառակ շրջապատի դժնդակ պայմաններին, հաստատուն մնալ մինչեւ վերջ իրենց պայքարին մէջ, եւ խաղաղութեան նախօրեակին Դաշնակիցներին ներկայացնել իրենց դատը անխախտ՝ ինչպէս էր պատերազմի նախօրեակին, եւ կոփուած նոր զոհաբերութիւնների բովին մէջ:

/ստ./ Ա. Թէրզիպաշեան

Նիստը փակուեցաւ ժամը 8 1/2–ին:

Նախագահ

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 18, թթ. 4-9 շրջ.: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ 2-րդ

26 փետրվարի 1919թ.

ՕՐԱԿԱՐԳ

1. ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ ՏԻԱՐ ՅԱԿՈԲԵԱՆԻ՝ ՀԱՅ ՎԵՐԱՊՐՈՂՆԵՐՈՒ ԿԱՑՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Նիստը սկսելուն՝ Տիար Յակոբեան, որ Անգլիոյ մէջ երկար ժամանակ Պատուիրակութեան քարտուղարը եղած է, եւ վերջին օրերս հասած էր Անգլիայէն, հետեւեալ զեկուցումը ըրաւ Ժողովին՝ հայ վերապրողներու կացութեան մասին.

Տիար Յակոբեան. Անգլիոյ մէջ տրամադրութիւնները շատ աղէկ են: Իմ տպաւորութիւնս այն է, որ անգլիական կառավարութիւնը ամէն ջանք պիտի ընէ՝ մեր համազգային ծրագիրը յաջողցնելու համար, ու պարենաւորման անհրաժեշտ նկատուած հրահանգները տրուած են անգլ. ներկայացուցիչներուն, որպէսզի ամէն կարգի աջակցութիւն ընեն հայերուն, առատ պաշար տալով: Հալէպի մէջ կը գործէ յատուկ մարմին մը՝ Գնդապետ Hocher-ի նախագահութեամբ, որպէսզի ո՛չ միայն նպաստ բաշխէ տարագիրներուն, այլեւ օգնէ անոնց վերադարձին դէպի Հայրենիք: Գերմանիա գտնուող 15.000-ի չափ հայ գերիները ուշադրութեան առնուած են, խնամքի առարկայ պիտի ըլլան եւ յարմար ժամանակին պիտի դարձուին երկիր:

Հարցում եղաւ Կովկասի մասին եւ Տիար Յակոբեան պատասխանեց, թէ անգլիական իշխանութեանց կողմէ իրեն յայտնուած է, որ վերջերս Կովկասի վիճակը աւելի բարելաւուած է, որովհետեւ հիւսիսէն բաւական մեծ քանակութեամբ ցորեն բերուած է Երեւան:

Ժողովը մեծ գոհունակութեամբ լսեց այս յայտարարութիւնները:

2. ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՑՄԱՆ ԿԱՐԳԱԴԻՐ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻՆ

Խօսք առաւ՝ Համագումարի բացման հանդէսի Կարգադիր Յանձնախումբին կողմէ՝

Տիար Թեքէեան. Բրոբականտի տեսակէտով Յանձնաժողովս անհրաժեշտ կը նկատէ հանդիսաւոր բացումը, որուն համար պէտք է վարձել մեծ սրահ մը, օրինակ Palais d'Orsay, որուն վարչութեան հետ բանակցիլ սկսած ենք: Կը խորհինք հանդէսը

ընել կէսօրէ վերջ, ժամը 3-ին, որմէ ետքը թէյ տալ հիւրերուն, սրահին կից մեծ սենեակի մը մէջ, այս կերպ մտքերու աւելի մտերմական փոխանակութիւն մը հնարաւոր դարձնելու համար: Յանձնաժողովս կ'առաջարկէ հրաւիրել Հաշտութեան Վեհաժողովին մէջ մտնող միսիոնները, նախարարները, հայասէր ծերակուտականներն ու երեսփոխանները, մեծ թերթերու տնօրէնները, բարեկամ հրապարակագիրները, հայ եւ օտար մամուլի ներկայացուցիչները, Փարիզի հայ գաղութը, Փարիզ գտնուող յոյն, արաբ, սուրիացի, պարսիկ եւ այլ ներկայացուցիչներ: Պէտք է հրաւիրել նաեւ տիկիններ, հայ եւ օտար: Բացումը պիտի կատարէ Ազգ. Պատուիրակութեան Նախագահը: Պիտի խօսին քանի մը անձեր:

Այս առթիւ բացուած վիճաբանութեան ընթացքին պարզուեցաւ, որ պատգամաւորները ամբողջովին անհրաժեշտ կը նկատէին հանդիսաւոր բացումը, ընդունելով անոր մեծ նշանակութիւնը բրոբականտի, ինչպէս նաեւ հայ հասարակութեան վրայ ընելիք բարերար ազդեցութեան տեսակէտով:

Կարծիքները կը տարբերէին՝ երբ խօսք կ'ըլլար հրաւիրեալներու ցանկի մասին: Գլխաւորաբար երկու հոսանք կար: Մէկ կողմը կը նկատէր, որ Համագումարի բացումին պէտք է՝ հրաւիրել պաշտօնական անձեր, որպէսզի այս կերպով հայ ժողովուրդի քաղաքական կեանքի սկզբնաւորութիւնը որոշակի աչքի զարնէ: Այդ կարգի անձերու հրաւէր ուղղել չի նշանակեր անպատճառ սպասել, որ իրենք գան, կրնան իրենց մէկ ներկայացուցիչը ղրկել: Միւս կողմը կը կարծէր, որ աւելի համեստ եւ նուազ յաւակնոտ ըլլալու ենք, հրաւիրելով միայն մեր օտար բարեկամները, թերթերու խմբագիրներ, Փարիզի հայ հասարակութիւնը, իսկ արտաքին գործերու նախարարութիւններուն, գէթ ֆրանսականին՝ Համագումարին բացումը նախապէս պէտք է ծանուցանել:

Ոմանք անհրաժեշտ նկատեցին հրաւիրեալներու մէջ մտցնել նաեւ մեր ապագայ դրացիներու ներկայացուցիչները, յոյն, արաբ, լիբանանցի եւ այլն, բայց այս կարծիքը ընդհանուր հաւանութիւն չգտաւ:

Ընդհանուր հաւանութիւն չգտաւ նաեւ Համագումարի բացման հանդէսը տեսակ մը բողոքի միթինկի վերածելու առաջարկը, զոր ըրին պատգամաւորներէն ոմանք:

Վիճաբանութեան միջոցին արտայայտուած կարծիքները ամփոփուեցան հետեւեալ երեք բանաձեւերու մէջ.

Ա. ԲԱՆԱՁԵՒ. Հանդիսաւոր բացում՝ Յանձնաժողովոյ ըմբռնած ձեւով:

Բ. ԲԱՆԱՁԵՒ. Հանդիսաւոր բացում՝ հրաւիրելով հայ հասարակութիւնը, հայ եւ օտար մամուլը եւ օտար բարեկամներ:

Գ. ԲԱՆԱՁԵՒ. Հանդիսաւոր բացում՝ հրաւիրելով միայն հայ հասարակութիւնը եւ հայ ու օտար մամուլը:

Յաջորդաբար քուէի դրուեցան այս երեք առաջարկութիւնները: Առաջինը՝ Յանձնաժողովինը՝ ստացաւ 2 քուէ միայն ու մերժուեցաւ: Երկրորդը նոյնպէս մերժուեցաւ, միայն մէկ քուէ ստանալով: Իսկ երրորդ առաջարկութիւնը ընդունուեցաւ 10 ձայնի մեծամասնութեամբ:

Յանձնաժողովի անդամներէն Տիարք Թէքէեան եւ Տէր-Ստեփանեան հրաժարեցան՝ բողոքելով իրենց ընկերակիցներուն դէմ, որոնք ժողովին մէջ չպաշտպանեցին Յանձնաժողովին կարծիքը:

Ընտրուեցաւ նոր Կարգադիր Յանձնախումբ մը, որուն անդամ նշանակուեցան

Տիարք Մալքոլմ
Զօպանեան
Տամատեան

3. ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ

Ներքին Կանոնագրի Պատրաստութեան Յանձնաժողովին տեղեկաբեր Տիար Հինդլեան կարդաց ամբողջ Կանոնագիրը, որ կը բաղկանար 26 յօդուածներէ:

Կանոնագիրը երկրորդ ընթերցումով վիճաբանութեան ենթարկուեցաւ յօդուած առ յօդուած եւ ընդունուեցան 1-15 յօդուածները՝ ոմանք /յօդ. 5, 6, 12/ կարգ մը բարեփոխութիւններով: 12-րդ յօդուածին քուէարկութեան միջոցին Տիարք Հինդլեան եւ Տէր-Ստեփանեան ձեռնպահ մնացին, այդ խնդիրը կապուած նկատելով առժամեայ Պատուիրակութեան եւ Համագումարի փոխյարաբերութեանց հարցին հետ:

Նիստը փակուեցաւ ժամը 8 1/2-ին:

Նախագահ

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 18, թթ. 10-11 շրջ.: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ 3-րդ

27 փետրվարի 1919թ.

ՕՐԱԿԱՐԳ

1. ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ ՕԺԱՆԴԱԿ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻՆ

Տեղեկաբեր Տիար Տէրպէտէրեան կարդաց Յանձնախումբին առաջարկութեանց գլխաւոր կէտերը, որոնց մասին հարկ եղած բացատրութիւնները տրուեցան թէ՛ Տիար տեղեկաբերին եւ թէ՛ Տիար Շանթի կողմէ: Յանձնախումբը կ'առաջարկէր ընդունիլ երկու տեսակ Յանձնաժողովներու կազմութեան անհրաժեշտութիւնը.

1. Համագումարի
2. Պատուիրակութեան

Առաջինները անմիջական կապ պիտի ունենան Համագումարին հետ, այսինքն՝ պիտի ընտրուին Համագումարին կողմէ, իր անդամներուն մէջէն, պիտի ուսումնասիրեն իրենց յանձնուած խնդիրները, եւ իրենց գործը պիտի շարունակեն մինչեւ Համագումարին փակումը:

Երկրորդ կարգի յանձնաժողովները՝ պիտի թելադրուի, որ ընտրուին Պատուիրակութեան կողմէ, պիտի ըլլան մնայուն, որքան ատեն որ Պատուիրակութիւնը շարունակէ պահել իր գոյութիւնը, եւ Պատուիրակութեան պիտի օժանդակեն՝ ամէն մէկը իրեն գծուած շրջանակին մէջ:

Ոմանք այս մասին որոշում կայացնելը կանխահաս նկատեցին, որքան ատեն, որ չէ պարզուած Պատուիրակութեան եւ Համագումարին փոխյարաբերութեանց խնդիրը:

Թեր ու դէմ կարծեաց փոխանակութենէ վերջ, ընդունուեցաւ այն սկզբունքը, թէ յանձնաժողովները պէտք է ըլլան երկու կարգի.

1. Համագումարի յանձնաժողովներ
2. Պատուիրակութեան յանձնաժողովներ:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար իմացուցած ըլլալով, թէ ինք պիտի ուշանայ, յանձնարարած էր սկսիլ ժողովը, ուր տեղի ունեցաւ Վսեմ. Յովհ. Խան Մասեհեանցի նախագահութեամբ:

Ընդհանուր քարտուղարին բացակայութեան պատճառաւ, ատենադպրի պաշտօնը առժամաբար ստանձնեց Տիար Բարսեղեան:

2. ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ

Յօդուած առ յօդուած կարդացուելով եւ վիճաբանութեան ենթարկուելով, ընդունուեցան մնացեալ 16-26 յօդուածները, որոնցմէ մէկ քանիին՝ կարգ մը բարեփոխութիւններով:

23-րդ յօդուածին քուէարկութեան պահուն՝ Տիար Տէրպէտէրեան ձեռնպահ մնաց՝ ընելով հետեւեալ յայտարարութիւնը.

«Այս խնդիրը սերտ առնչութիւն ունի երեք պարագաներու հետ, որոնց եւ ոչ մին լուսաբանուած եւ որոշուած է տակաւին:

Այդ երեք պարագաներն են.

1. Պատուիրակութիւնը, ընտրութեան եղանակը եւ դուրսէն ալ անդամներ ունենալու խնդիրը.

2. Համագումարին եւ Պատուիրակութեան փոխյարաբերութեանց բնոյթը.

3. Համագումարին առժամեա՞յ, թէ՞ մինչեւ կառավարութեան մը կազմութիւնը մշտական ըլլալու պարագան»:

Տարակարծութեան առարկայ եղաւ նաեւ յօդուած 24-ը, որով նախատեսուած է, որ Պատուիրակութեան գործունէութեան վերաբերեալ խնդիրներու քննութեան միջոցին, Պատուիրակութեան անդամները քուէ տալու չեն:

Թեր ու դէմ վիճաբանութիւններէ վերջ՝ որոշուեցաւ այս կարգի բոլոր խնդիրները «կենսական» նկատել, հետեւաբար՝ առնուազն 19 քուէի կեդրոնացում մը անհրաժեշտ դատուեցաւ անոնց քուէարկության առթիւ, որպէսզի ոեւէ առաջարկ վերածուի որոշումի:

Որոշուեցաւ նաեւ վիճելի չդարձնել Պատուիրակութեան անդամներու քուէի իրաւունքը:

Հակառակ քուէարկեցին, պահանջելով որ արձանագրուի, Տիարք Տամատեան, Տէր-Ստեփանեան եւ Հինդլեան:

3. ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ ՎՍԵՄ. ՊՕՂՈՍ ՓԱՇԱ ՆՈՒՊԱՐԻ

Նիստին փակումէն առաջ Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար ժողովին հաղորդեց կարգ մը տեղեկութիւններ, մասնաւորաբար կարդաց Ֆրանսայի վարչապետ Պ. Քլեմանսոյի վրայ կատարուած մահափորձին առթիւ իր ղրկած ցաւակցութեան գիրը, որով իր եւ Համագումարին անդամներուն զայրալից խռովքը կը յայտնէր կատարուած եղեռնին համար:

Նիստը փակուեցաւ ժամը 8 1/2-ին:

Նախագահ

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 18, թթ. 12-13 շրջ.: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ 4-րդ

28 փետրվարի 1919թ.

ՕՐԱԿԱՐԳ

1. ՔՆՆՈՒԹԻՒՆ ԻՍԿԷՆՏԷՐՈՒՆԻ ԴԷՊՔԻՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՖՐԱՆՍԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԾԱՆՕԹԱԳՐԻՆ

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպարի առաջարկութեան վրայ՝ նիստը բացաւ ու վարեց Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան:

Տիար Հանըմեանի հիւանդութեան պատճառաւ, այս նիստին ատենագրութիւնն ալ կազմեց Տիար Տոքթ. Ա. Բարսեղեան:

Նիստը սկսելուն՝ կարդացուեցաւ Ֆրանսական Արտաքին Գործոց Նախարարութեան կողմէ եկած գրութիւն մը, որ իր կարեւորութեամբը անմիջական ու երկարատեւ մտքերու փոխանակման առիթ դարձաւ: Այդ գրութեամբ կը հաղորդուէր, որ Իսկենտերունի մէջ հայ զինուորները յարձակած են թիւրք թաղի վրայ, սպանած են 1-2 թիւրք եւ այրած են երկու տուն: Ֆրանսական ծովային զինուորներ միջամտած են, որուն հետեւանքով սպանուած են 9 եւ վիրաւորուած են 7 հայ զինուորներ: Ֆրանսացի զինուորներէն վիրաւորուած են երեքը: 150 հայ զինուորներ լեռը ելած են: Ֆրանսացի զինուորներ ցամաք հանուած են եւ պաշարած են հայ զօրանոցը:

Շատեր խօսք առին այս առթիւ եւ ամէնքն ալ զարմանք յայտնեցին, որ զեկոյցը ոչ մէկ խօսք ըրած է այդ դժբախտ դէպքի պատճառներուն մասին; Մինչ մէկ կողմէն կը շեշտուէր շարունակ, որ անհրաժեշտ է այս կամ այն կերպ լուսաբանութիւններ ստանալ այդ մասին, միւս կողմէ ընդհանուր կարծիքն այն էր, թէ թիւրք պաշտօնեաներու եւ թիւրք տարրի կողմէ գրգռութիւն մը /provocation/ եղած ըլլալու է, հաւանօրէն որբերու եւ իսլամացած կիներու խնդիրը լուծել փորձուած միջոցին: Ամէն պարագայի տակ՝ Ֆրանսացի նաւազներու այդօրինակ միջամտութիւնը ենթադրել տուաւ շատերու, որ Կիլիկիոյ մէջ գործող պաշտօնեաներ այնքան ալ լաւ տրամադրուած չեն դեպի բազմաչարչար հայ ժողովուրդը եւ անոր զինուոր զաւակները, որոնց մասին մինչեւ վերջերս ֆրանսական պաշտօնական անձեր միշտ գոհունակութեամբ կը խօսէին եւ կը գովէին անոնց կարգապահական ոգին:

Շատեր խօսեցան նաեւ դարմանի եւ հակամիջոցներու մասին: Ոմանք կ՚առաջարկէին ղրկել մէկը դէպքին վայրը, որպէսզի քննութիւն կատարէ եւ տեղեկագրէ, առանց պաշտօնական յարաբերութեան մտնելու տեղական վարիչներու հետ: Ուրիշներ կը նախընտրէին պաշտօնական հանգամանք ունեցող մը ղրկել՝ եթէ կարելի ըլլար՝ նախապէս ապահովելով ֆրանսական կառավարութեան համաձայնութիւնը: Երրորդ մը կ՚առաջարկէր խնդրել անգլիական իշխանութիւններէն որպէսզի Իսկենտերունէն մանրամասն տեղեկութիւններ ուզեն այս դէպքի մասին եւ մեզի հաղորդեն: Չորրորդ մը՝ այդ մանրամասնութիւնները կ՚առաջարկէր հեռագրով ուզել Իսկենտերունի հայ հեղինակութիւններէն: Մէկ քանիներ կ՚առաջարկէին պահանջել, որ թիւրք պաշտօնէութիւնը վտարուի հայ զինուորներէն գրաւուած մասերէն, մանաւանդ որ՝ կամաւորներու մասին խօսուած ատեն ֆրանսացիք ըսած են, որ շուտով պիտի ուզուին նաեւ հայ պաշտօնատարներ, որպէսզի Կիլիկիան ամբողջովին յանձնուի հայերուն:

Ի վերջոյ կարծիք յայտնուեցաւ, որ այս կարգի խնդիրներու լուծման միջոցին անհրաժեշտ է պաղարիւնը պահել եւ նկատի ունենալ, որ այս տեսակ խառնակ ժամանակներ նման գրգռութիւններն ու դէպքերը սովորական երեւոյթներ են:

Առաջարկ եղաւ եւ ընդունուեցաւ, որ այս խնդրին կարգադրութիւնը յանձնուի Վսեմ. Պօղոս Փաշա Նուպարի եւ Տիար Ահարոնեանի, որոնք իրենց պատրաստելիք պատասխանին պիտի կցեն նաեւ Կիլիկիոյ Կաթողիկոսին բողոք-գրութիւնները, ինչպէս նաեւ ֆրանսացի գնդապետի մը՝ հայ զինուորները գովող նամակին պատճէնները, հաղորդելով նոյն ատեն, որ Ազգ. Պատուիրակութիւնը չի կրնար ինքզինքը պատասխանատու նկատել այդ վայրերու անցքերուն, որքան ատեն որ անոնք հայ իշխանութեան մը ենթակայ չեն:

Յարմար դատուեցաւ, որ այս պատասխանին պատճէնները եւ դրութիւնը պարզող գրութիւնները ուղղուին նաեւ մեծ պետութիւններու ներկայացուցիչներուն:

Տիար Չօպանեան առաջարկեց Վեհ. Տ. Սահակ Կաթողիկոսէն հեռագրով տեղեկութիւններ խնդրել: Տիար Տէր-Ստեփանեանի առաջարկին վրայ՝ Ժողովը

յոտնկայս իր վիշտը յայտնեց 9 հայ զոհերուն համար, իսկ Ամեն. Դուրեան Արքեպիսկ. հոգւոց կարդաց անոնց համար:

2. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԽՆԴԻՐ

Միջանկեալ կերպով խնդրոյ նիւթ եղաւ Երուսաղէմի Յանձնաժողովին մէկ տեղեկաբերութիւնը, որով կ'առաջարկուէր այդ վանքին գործերուն կարգադրութիւնը յանձնել մասնաւոր մարմնի մը, կազմուած եգիպտոս գտնուող հետեւեալ անձերէն.

Գեր. Տ. Թորգոմ Եպիսկոպոս, Նախագահ
Տիարք՝ Կամսարական
Ռէիզեան Պէյ
Յ. Մուքաֆօֆ
Գ. Թօփալեան
Մելքոնեան

Ժողովն ընդունեց եւ վաւերացուց այս առաջարկը եւ յարմար դատեց, միաժամանակ, խնդրել անգլիական իշխանութեանց աջակցութիւնը: Այս կարգադրութիւնը պիտի տեւէ այնքան ատեն, որքան որ Պոլսոյ Ազգ. Իշխանութիւնը ի վիճակի չէ Երուսաղէմի խնդրով զբաղելու:

3. ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԴԻՒԱՆԻ

Ըստ Ներքին Կանոնագրի տրամադրութեան, որ կը նախատեսէր մէկ նախագահ, երկու դեր-նախագահ եւ երկու ատենադպիր, ձեռնարկուեցաւ Համագումարի նախագահին ընտրութեան, ի ներկայութեան 22 քուէարկուներու, որոնցմէ Տիար Տէր-Ստեփանեան յայտարարեց, թէ ձեռնպահ կը մնայ:

Մնացեալ 21 պատգամաւորներու մասնակցութեամբ քուէարկութիւն կատարուելով, գոյացաւ հետեւեալ արդիւնքը.

Տիար Լեւոն Շանթ – 9 քուէ
Վսեմ. Տիար Նորատունկեան – 8 քուէ
Ամեն. Դուրեան Արք. – 1 քուէ
Տիար Ահարոնեան – 1 քուէ
Տիար Փաստրմաճեան – 1 քուէ
Սպիտակ – 1 քուէ

Ո՛չ ոք մեծամասնութիւն ստացած ըլլալով, համեմատականի մնացին Տիարք Լեւոն Շանթ եւ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան, որոնք հրաժարեցան քուէարկելէ: Այս անգամ ընտրութեան մասնակցեցաւ նաեւ քիչ առաջ ձեռնպահ մնացող Տիար Տէր-Ստեփանեան, որով համեմատականի քուէարկութիւնը կատարուեցաւ մասնակցութեամբ 20 պատգամաւորներու, եւ տուաւ հետեւեալ արդիւնքը.

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան – 11 քուէ
Տիար Լեւոն Շանթ – 9 քուէ

Վսեմ Տիար Գ. Նորատունկեան Ազգ. Համագումարի նախագահ ընտրուած հռչակուեցաւ:

Օրը տարաժամանած ըլլալով, Դիւանի միւս անդամներուն ընտրութիւնը ձեռնարկուեցաւ յաջորդ նիստին:

Նիստը փակուեցաւ ժամը 8 1/2-ին:

Նախագահ

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 18, թթ. 14-16: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ 5-րդ

1 մարտի 1919թ.

ՕՐԱԿԱՐԳ

1. ՁԵԿՈՒՑՈՒՄ ՏԻԱՐ ԱՀԱՐՈՆԵԱՆԻ՝ ԿԱՐՍԻ ՄԱՍԻՆ

Դիւանի ընտրութեան անցնելէ առաջ՝ Տիար Ահարոնեան խօսք առաւ եւ կարդաց Հանրապետութեան արտաքին գործերու նախարար Տիար Տիգրանեանէ նոր ստացած մէկ գիրը, որով իրեն կը հաղորդուէր, թէ անգլիական զինուորական հրամանատար Major General Forestier Walker-ի եւ Հայ Հանրապետութեան միջեւ գոյացուած է համաձայնագիր Կարսի շրջանին վերաբերմամբ:

Ժողովը գոհունակութեամբ լսեց այս տեղեկութիւնները:

2. ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԴԻՒԱՆԻ

Նախագահ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան յիշեցուց, թէ նախորդ նիստին մէջ ըսած է, որ իր առողջական վիճակը չի թոյլատրեր իրեն դիւանական ոեւէ պաշտօն ընդունիլ. սակայն Պատուիրակութեան նախագահ Վսեմ. Պօղոս Նուպար Փաշայի եւ ժողովականաց ոմանց դիմումին վրայ՝ ինքզինքը պարտաւոր կը զգայ չմերժելու իրեն վստահուած նախագահական պաշտօնը, համոզուած ըլլալով, թէ Համագումարին մասնակցող իւրաքանչիւր պատգամաւոր այս րոպէիս միայն եւ միմիայն պէտք է ազգային գերագոյն շահերուն նկատումէն առաջնորդուի եւ օրինասիրութեամբ ու կարգապահութեամբ դիւրացնէ Դիւանին աշխատանքը:

Յետոյ՝ Ն. Վսեմութիւնը Համագումարին կողմէ բարի գալուստ մաղթեց Տիարք Արշակ Չօպանեանի, Տիգրան Խան Քէլէկեանի, Ներսէս Խան Ներսէսեանի եւ Ս. Դաւիթ-Բէկի:

Ապա ձեռնարկուեցաւ Համագումարի երկու դեր-նախագահներուն ընտրութեան:

Բացարձակ մեծամասնութեամբ, այն է՝ 15 ական քուէով՝ Համագումարի դեր-նախագահ ընտրուեցան՝

Տիարք՝ Բրօֆ. Տէր-Յակոբեան
Արշակ Չօպանեան

Ատենադպիրներու ընտրութեան համար կատարուած քուէարկութեան արդիւնքը եղաւ՝

Տիարք՝ Ս. Հինդլեան – 11 քուէ
Լեւոն Շանթ – 9 քուէ
Վ. Թէքէեան – 4 քուէ
Տոքթ. Բարսեղեան – 5 քուէ

Ընտրութիւնը մնաց համեմատականի:

Տիար Շանթ, ինչպէս միւս քուէ ստացողները, յայտարարեցին, թէ կը հրաժարին ընտրելիութենէ:

3. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՏԻԱՐՔ ՎԱՐԱՆԴԵԱՆԻ ԵՒ ԱՀԱՐՈՆԵԱՆԻ՝ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲՆՈՅԹԻՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Քուէարկութենէն անմիջապէս վերջ Տիար Մ. Վարանդեան յայտարարեց, թէ սա միմիայն թրքահայերու համագումար է, եւ փոքրամասնութիւնը գէթ մի ներկայացուցիչ պէտք է ունենայ այնտեղ:

Տիար Ահարոնեան. Ես պարտաւոր եմ այս վայրկեանիս յայտնել, թէ սա համահայկական համաժողով չէ, այլ միայն թրքահայերու ժողով:

Այս յայտարարութիւնը տեղի տուաւ կարծիքներու թեր ու դէմ փոխանակութեան՝ Համագումարին յաչս օտարաց Հայկական Ազգ. Համագումար, եւ յաչս մերայնոց՝ իրապէս թրքահայոց, պարսկահայոց եւ գաղութներու ներկայացուցիչներէն կազմուած համագումար նկատուելու մասին:

Նիստը փակուեցաւ ժամը 8 1/2-ին:

Նախագահ

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 18, թթ. 17-18: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ 6-րդ

2 մարտի 1919թ.

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

1. ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆ ՏԻԱՐ ԱՂԱԹՕՆ ՊԷՅԻ

Նախագահ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան շնորհաւորեց Ամերիկայի հայ գաղութին առժամեայ պատգամաւորներէն Տիար Աղաթօն Պէյի ներկայութիւնն ու մասնակցութիւնը ժողովին:

2. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՎՍԵՄ. ՊՕՂՈՍ ՓԱՇԱ ՆՈՒՊԱՐԻ՝ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՐՏԷՍԻՆ ՆԿԱՏՄԱՄԲ

Պատուիրակութեան Նախագահ Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար կարդաց Ատրպատականի Առաջնորդ Տ. Ներսէս Եպիսկոպոսի մէկ հեռագիրը, որով ցաւ կը յայտնէր, թէ «Թայմզ»-ի հրատարակած ապագայ Հայաստանի քարտէսէն դուրս թողուած են Լոռիի, Սեւանի եւ այլ շրջանները: Ն. Վսեմութիւնը յայտնեց, թէ այդ քարտէսը սխալի մը արդիւնք եղած է եւ թէ խնդրոյ առարկայ շրջանները առնուած են Պատուիրակութեան յիշատակագրին կից քարտէսին մէջ, ինչպէս ծանօթ է:

3. ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ՏԻԱՐ ՄԻՆԱՍ ՉԵՐԱԶԻ

Նախագահ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան կարդաց Տիար Մինաս Չերազի մէկ գիրը, որով շնորհակալութիւն կը յայտնէր Համագումարին՝ զինքը անդամակցութեան կոչող հրաւէրին համար, բայց կը ծանուցանէր, թէ առողջական պատճառով ստիպուած է հրաժարիլ իրեն եղած այս պատուէն:

ՕՐԱԿԱՐԳ

1. ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԴԻՒԱՆԻ

Դիւանի երկու ատենադպիրներուն ընտրութեան ձեռնարկելէ առաջ՝ Նախագահ Վսեմ. Գ. Նորատունկեան 10 վայրկեանի դադար մը առաջարկեց ժողովին:

Տիար Շանթ առաջարկեց թեկնածուներու անուններ տալ ժողովին՝ որպէսզի ընտրութիւնը կարենայ արդիւնաւոր կերպով կատարուիլ:

Տիար Տամատեան անյարմար գտաւ այդ ձեւը, աւելցնելով, թէ նոյնը կրնայ կատարուիլ դադարի միջոցին՝ անպաշտօն եղանակով:

Ըստ այնմ՝ դադար տրուեցաւ:

Նիստը վերսկսելուն՝ 24 պատգամաւորներու մասնակցութեամբ քուէարկութիւն կատարուելով՝ հետեւեալ արդիւնքը տուաւ.

Տիարք Թէքէեան – 16 քուէ
Դաւիթ-Բէկ – 11 քուէ
Տէր-Ստեփանեան – 9 քուէ
Հինդլեան – 9 քուէ
Սպիտակ – 5 քուէ

Տիար Վ. Թէքէեան հռչակուեցաւ ընտրուած: Իսկ Տիարք Դաւիթ-Բէկ եւ Տէր-Ստեփանեան համեմատականի մնացին:

Երկրորդ քուեարկութեամբ ընտրուեցաւ
Տիար Տէր-Ստեփանեան՝ ստանալով 12 քուէ:

2. ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ՕԺԱՆԴԱԿ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒ

Նախագահ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան յիշեցուց, թէ Համագումարի նախապատրաստական նիստերուն մէջ կատարուած խորհրդակցութիւններէն հասկցուած է, թէ ժողովը հարկ կը տեսնէ կազմութիւնը հետեւեալ Յանձնաժողովներու.

1. Պետական կազմակերպութեան սկզբնաւորութեանը վերաբերեալ խնդիրներու քննութեան
2. Վերաշինութեան
3. Տարագրելոց եւ որբերու ի նպաստ հանգանակութեան
4. Արտաքին ֆինանսական օգնութեան եւ պարենաւորման
5. Հայկական Լեգէոնի եւ զինուորական գործողութեանց

Ըստ այսմ, Ն. Վսեմութիւնը հրաւիրեց ժողովը նկատողութեան առնել այս Յանձնաժողովներու կազմութեան սկզբունքը, աւելցնել կամ պակսեցնել՝ եթէ պէտք է՝ այս Յանձնաժողովներուն թիւը, ի վերջոյ՝ Կանոնագրի տրամադրութեան համաձայն՝ ձեռամբարձ ընտրել անոնց անդամները:

Տիար Չօպանեան. Կ'առաջարկեմ ընտրել նաեւ բրոբականտի գործով զբաղելու կոչուած յանձնաժողով մը՝ որուն գոյութիւնը այստեղ, այս պահուն, անհրաժեշտ է:

Տիար Դաւիթ-Բէկ. Անկախ Հայաստանի ապագային համար դաստիարակութեան կենսական կարեւորութիւնը նկատի ունենալով, կ'առաջարկեմ կազմել նաեւ կրթական յանձնաժողով մը:

Տիար Փաստրմաճեան. Այս Յանձնաժողովներու ընտրութեան ձեռնարկելէ առաջ պէտք է գիտնանք, թէ ինչ է այս ժողովին նկարագիրը, կատարելիք գործը, ձեռնհասութիւնը եւ տեւողութիւնը: Իմ կարծիքով՝ կարգ մը այնպիսի խնդիրներով, ինչպէս կրթականն է, զբաղելու ո՛չ հնարաւորութիւն եւ ո՛չ ձեռնհասութիւն ունինք: Ատոնք գործն են ապագայ խորհրդարանին եւ կառավարութեան: Մեր միակ նպատակն ըլլալու է Հայաստանի արդէն անկախ մասին եւ միւս տակաւին ոչ-անկախ մասին միացման ձգտիլ, եւ մնացեալը թողուլ մեր նոր ընտրելիք Պատուիրակութեան:

Տիար Փաստրմաճեանի այս դիտողութեան վրայ՝ Նախագահ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան կարդաց Պատուիրակութեան կողմէ Համագումարի գումարման համար ուղղուած հետեւեալ հրաւիրագիրը.

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ — Փարիզ, 15 Հոկտեմբեր 1918.
DELEGATION NATIONALE
ARMENIENNE

12, Avenue du Prռsident Wilson

Սիրելի՛ Հայրենակիցներ

Ազգային Պատուիրակութիւնս եկած է այն խոր համոզման, որ պատերազմին ստեղծած ներկայ պայմաններու մէջ ազգային ներկայացուցիչ մարմնի մը գոյութիւնը անհրաժեշտութիւն դարձած է ո՛չ միայն ազգային շահերու պաշտպանութիւնը ընդհանուր ազգի կողմէն ընտրուած մարմնի մը յանձնելու, այլ եւ ամբողջ աշխարհի, եւ մասնաւորապէս Խաղաղութեան Քոնկրէսին առաջ ապացուցելու համար, որ հայ ազգի՝ քաղաքական եւ այլ պատճառներով՝ իրարմէ բաժնուած եւ ցիրուցան անդամները մի' եւ նո'յն անբաժանելի ազգութեան հատուածները կը կազմեն: Այդ նպատակին իրագործման համար Պատուիրակութիւնս մշակած է ներկայ նամակիս կցուած Կանոնագիրը, Փարիզի մէջ գումարելու Համագումար մը, որուն անդամները ընտրուած պիտի ըլլան ամբողջ ազգին կողմէն:

Սակայն այս հրաւիրագիրը ղրկելու միջոցին՝ Դաշնակիցներու տարած փայլուն յաղթանակները այն աստիճան գահավիժեցին դէպքերը, որ Ազգ. Պատուիրակութիւնը հարկ դատեց, առանց սպասելու համագումարի կայանալուն, իր կազմին վրայ աւելցնել մի քանի անդամներ, ընտրուած ոչ շատ հեռաւոր գաղութներէն. որովհետեւ կրնայ ըլլալ, որ անակնկալ կերպով զինադադար մը կնքուի, եւ հաշտութեան բանակցութիւնները Համագումարի ժողովուելէն առաջ սկսին:

Այսուհանդերձ, Պատուիրակութիւնը անպատրաստ չի գտնուելու համար է միայն, որ այս միջոցին դիմեց, առանց հրաժարելու համագումարը հրաւիրելու իր հիմնական ծրագրէն, նոյնիսկ եթէ այն տեղի ունենայ հաշտութեան կնքումէն վերջը, որովհետեւ այդ պարագային մէջ անգամ ապագայ Հայաստանի կազմակերպութեան եւ վերաշինութեան մասին մեծ դեր կարող է կատարել եւ վճիռներ կայացնել:

Պարզ է, որ գաղութներու կողմէ ընտրուած եւ Պատուիրակութեան մաս կազմելու կոչուած սոյն անդամները պիտի կրնան անոնց կողմէն պատգամաւոր ընտրուիլ ապագայ Համագումարին մէջ:

Այս հիման վրայ է, որ Պատուիրակութիւնը ձեզ կ'ուղղէ ներփակ հրաւիրագիրը եւ կը խնդրէ, որ անյապաղ ձեռնարկէք ապագայ համագումարի պատուիրակներու ընտրութեան:

Այս նամակին կցուած Կանոնագիրը միայն իբրեւ հրահանգ պիտի ծառայէ համագումարի ժողովումին համար. Համագումարն ինքնին ըլլալով ազգի կամքին արտայայտութիւնը, լիազօր իրաւունք պիտի ունենայ խորհրդակցելու եւ մշակելու ազգային պահանջներու ծրագիրը, համաձայն օրուան պայմաններուն: Համագումարը նաեւ պիտի ընտրէ 7 անդամներէ բաղկացած Գործադիր Ժողով մը, որ պաշտօն պիտի ունենայ այդ ծրագրին իրագործումը հետապնդելու:

Պատուիրակութիւնս դիտմամբ զգուշացած է Համագումարի անդամներուն ընտրութեան եղանակը ճշդելէ՝ կատարեալ ազատութիւն տալու համար իւրաքանչիւր երկրի ազգային իշխանութիւններուն, հաստատութիւններուն, Ազգային Միութիւններուն եւ քաղաքական կազմակերպութիւններուն, որ իրար հետ համաձայնելով կարենան կարելի եղածին չափ հաւատարիմ եւ կատարեալ ազգային ներկայացուցչութիւն մը իրականացնել:

Հեռաւորութիւնները եւ ճամբորդութեան դժուարութիւնները նկատի ունենալով՝ Համագումարի բացման թուականը որոշուած է 1919 Փետրուարի մէկը: Բայց այն պարագային, երբ գահավիժող քաղաքական հանգամանքները Համագումարին աւելի կանուխ բացումը հարկադրեն՝ պատշաճը ձեզ հեռագրով կը հաղորդուի:

Ազգային Պատուիրակութիւնս համոզուած է, որ դուք եւս այս Համագումարին անհրաժեշտութեան մասին համաձայն էք իր հետ, եւ թէ ձեր ամբողջ աջակցութիւնը

պիտի բերէք որպէսզի ձեր համայնքը ներկայացնող պատուիրակներու ընտրութիւնը փութով եւ օրինաւորաւորապէս գլուխ գայ:

Ընդունեցէ՛ք, սիրելի՛ հայրենակիցներ, իմ անձնուէր զգացումներուս հաւաստիքը:

Նախագահ
Հայ Ազգային Պատուիրակութեան
Պօղոս Նուպար

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

ՀՐԱՒԷՐ

Համաշխարհային պատերազմը արմատապէս փոփոխած ըլլալով այն քաղաքական պայմանները, որոնցմէ կախուած են հայ ազգի կենսական շահերը թէ՛ Կովկասի եւ թէ՛ Թրքահայաստանի մէջ, Հայ Ազգ. Պատուիրակութիւնը անհրաժեշտ կը նկատէ, որ ներկայացուցչական մարմին մը, ընտրուած բոլոր երկիրներու հայերուն կողմէն, որոնք մի եւ նոյն ազգութիւնը կը կազմեն, գոյութեան կոչուի:

Ա. Մշակելու համար հայ ազգի պահանջներու ծրագիրը, դէպքերու ստեղծած նոր կացութեան համաձայն, եւ

Բ. Ընտրելու համար Գործադիր Ժողով մը, որ պաշտօն պիտի ունենայ հետապնդելու այդ ծրագրին իրականացումը:

Այդ նպատակով, Հայ Ազգային Պատուիրակութիւնը նախաձեռնութիւնը կը ստանձնէ հրաւիրելու Ազգային Համագումար մը:

Որպէսզի այդ Համագումարը խորհրդակցելու եւ ազգին անունով վճիռներ կայացնելու իրաւասու համարուի, պէտք է կազմուած ըլլայ բոլոր երկիրներու հայոց, այսինքն Թրքահայաստանի, Կովկասի եւ կարեւորագոյն գաղութներու ներկայացուցիչներէն:

ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԿԱԶՄԸ. - Համագումարը կազմուած պիտի ըլլայ մօտաւորապէս 35 անդամներէ, որոնք հետեւեալ երկիրներու հայերէն եւ հետեւեալ համեմատութեամբ պիտի ընտրուին.

Թրքահայերէն – 8
Կովկասահայերէն եւ ռուսահայերէն – 8
Ամերիկայի հայերէն – 4
Եգիպտոսի, Կիպրոսի եւ Եթովպիոյ հայերէն – 2
Պարսկաստանի հայերէն – 2
Պալքանեան երկիրներու հայերէն – 1
Յունաստանի հայերէն – 1
Ֆրանսայի հայերէն – 2
Անգլիայի հայերէն – 2
Իտալիայի հայերէն – 1
Զուիցերիայի հայերէն – 1
Հնդկաստանի եւ Ճավայի հայերէն – 1

33

ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԵՂԱՆԱԿ - Ազգային Համագումարի անդամները պիտի ընտրուին իւրաքանչիւրը իր երկրին մէջ սովորական դարձած ընտրական օրէնքներուն համաձայն:

ԹՐՔԱՀԱՅ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ - Պատերազմի պատճառով ստեղծուած պայմաններուն հետեւանքով՝ Թրքահայաստանը ներկայացնող ութը անդամներուն հինգը պիտի ընտրուին թրքահայ փախստականներուն կողմէն՝ 2-ը Կովկասի, 1-ը Պարսկաստանի, 1-ը Միջագետքի եւ 1-ը Պաղեստինի ու Եգիպտոսի մէջ գտնուող փախստականներու կողմէն. իսկ մնացեալ երեքը Ազգային Համագումարը ինքը պիտի անուանէ ի պաշտօնէ, արտասահման գտնուող թրքահայերէն ընտրելով զանոնք:

ԱՌԱՋԻՆ ԺՈՂՈՎ - Ժամանակ տալու համար հեռաւոր շրջաններու պատգամաւորներուն, որ կարենան մինչեւ Ազգային Համագումարի բացումը Փարիզ հասնիլ՝ Համագումարը 1919 Փետրուարի մէկին իր առաջին նիստը պիտի կայացնէ:

Եթէ մինչեւ այդ թուականը հայութեան ներկայացուցիչներուն մէկ մասը տակաւին ընտրուած եւ կամ Փարիզ ժամանած չըլլան՝ Ազգային Համագումարը օրինաւորապէս նիստ պիտի կրնայ կայացնել, պայմանով միայն, որ ներկայ գտնուին առնուազն 20 անդամներ, որոնցմէ առնուազն չորսը՝ Թրքահայաստանի ներկայացուցիչներէն, եւ չորսը՝ Կովկասի ներկայացուցիչներէն:

Միւս յապաղած անդամները պիտի կրնան գալ մասնակցիլ ժողովներուն, անմիջապէս որ հանգամանքները թոյլատրեն:

Ազգային Համագումարը առ առաւելն մէկ ամսուայ ընթացքին պիտի մշակէ ազգային պահանջներու ծրագիր մը եւ ձայներու մեծամասնութեամբ պիտի ընտրէ 7 անդամներէ բաղկացած Գործադիր Ժողով մը: Այդ աշխատանքը լրացնելէ յետոյ պիտի ցրուի եւ կրկին պիտի գումարուի ինչպէս ստորեւ նախատեսուած է:

Գործադիր Ժողովի անդամներուն առնուազն չորսը պիտի առնուին Համագումարին մասնակցող պատգամաւորներուն մէջէն, իսկ մնացեալ երեքը, եթէ Համագումարը յարմար նկատէ, պիտի կրնայ ընտրել դուրսէն՝ ձեռնհաս ազգայիններէ:

Գործադիր Ժողովը հայ ազգի ներկայացուցիչը պիտի ըլլայ պետութեանց մօտ, պիտի հետապնդէ հայկական պահանջներու իրականացումը, եւ Խաղաղութեան Քոնկրէսի բացման պահուն, կրկին ի նիստ պիտի հրաւիրէ Ազգային Համագումարը, որպէսզի այս վերջինը վերաքննէ իր ծրագիրը, պատշաճեցնէ զայն վայրկեանի պահանջներուն, եւ տայ Գործադիր Ժողովին բոլոր այն ցուցմունքները, որոնք անհրաժեշտ կրնան դարձած ըլլալ դէպքերու ստեղծած նոր հանգամանքներուն բերումով:

Գործադիր Ժողովը իր կեդրոնը պիտի ունենայ Փարիզի մէջ եւ պիտի կրնայ իր ներկայացուցիչները նշանակել Լոնտոնի, Հռոմի, Ուաշինկթոնի մէջ, եւ ամէն տեղ, ուր անոնց պէտքը զգալի նկատէ: Այդ ներկայացուցիչները կրնան ընտրուիլ թէ՛ Համագումարին մասնակցող անդամներէն եւ թէ՛ դուրսէն:

Համագումարին անդամներուն տեղափոխութեան եւ այլ ծախքերը պէտք է զիրենք ընտրող գաղութներուն կողմէ հոգացուին:

Գործադիր ժողովի անդամներուն, ինչպէս նաեւ դիւանատան ծախքերը պիտի հոգացուին ամբողջ ազգին կողմէ՝ համաձայն Համագումարի կողմէն կատարուելիք համեմատական բաշխումին:

Ազգային Համագումարին, ինչպէս նաեւ Գործադիր Ժողովին պաշտօնը լրացած պիտի նկատուի խաղաղութեան կնքումէն յետոյ:

Եթէ, ինչպէս կը յուսանք, այս Ազգային Համագումարը՝ հակառակ պատերազմին ստեղծած դժուարութիւններուն՝ կարենայ գումարուիլ վերոյիշեալ պայմաններուն համաձայն, եւ հետեւաբար, օրինաւորապէս իրաւասութիւն ունենայ ազգը ներկայացնելու եւ անոր անունով որոշումներ կայացնելու, այդ պարագային Հայ

Ազգ. Պատուիրակութիւնս, վստահ ըլլալով, որ իր կատարած գործը չպիտի ընդմիջուի՝ իր հրաժարականը պիտի փոխանցէ Գործադիր Ժողովին:

Հայ Ազգային Պատուիրակութիւն

Ընթերցումէն վերջ՝ խօսք առաւ

Տիար Հանըմեան. Կ'ընդունիմ Տիար Նախագահին կողմէ առաջարկուած Յանձնաժողովներուն կազմութիւնը, պայմանաւ, որ անոնք իրենց վերաբերող խնդիրներու համար սկզբունքներ, հիմեր միայն դնեն եւ ժողովին կողմէ ընդունուելէ վերջ, գործը թողուի ընտրուելիք Պատուիրակութեան, որ անոնց համար աշխատի Հանրապետութեան Պատուիրակութեան հետ ձեռք-ձեռքի:

Տիար Նեւրուզ- Առաջարկուած յանձնաժողովներէն ոմանք Պատուիրակութեան հետ, ուրիշներ Համագումարի կողքին կրնան աշխատիլ. պէտք է բաժնել: Իսկ ատկէ առաջ՝ պէտք է ճշդել Համագումարին աշխատութիւններուն բնոյթը, որ բուն գործն է եւ որ տակաւին որոշ չէ, թէ ի՞նչ է:

Տիար Շանթ. Գործն է հայկական միացեալ երկրին համար կառավարութիւն ստեղծել, որմէ վերջ միայն կրնայ հասկցուիլ, թէ ի՞նչ յանձնաժողովներ պէտք են:

Տիար Թէրզիպաշեան. Կառաջարկեմ նախ կարդալ Պատուիրակութեան կողմէ Խաղաղութեան Վեհաժողովին տրուած յիշատակագիրը, որ պաշտօնապէս դեռ բերուած չէ այս ժողովին: Այնուհետեւ, խնդիրները կը ճշդուին եւ կը հասկցուի թէ ինչպիսի՞ յանձնաժողովներ հարկաւոր են մեզի:

Տիար Տէր-Ստեփանեան. Ըստ իս՝ ամէն բանէ առաջ պէտք է ճշդել, թէ ի՞նչ պիտի ըլլայ այս ժողովին իրաւասութիւնը ընտրուելիք Պատուիրակութեան վրայ: Ժողովին տեւողութիւնը ատկէ կախում ունի:

Տիար Բարսեղեան. Մենք կրնանք այստեղ ամէն կարգի յանձնաժողովներ կազմել եւ որոշումներ տալ. բայց պէտք է գիտնանք, թէ որո՛ւ պիտի յանձնուի այդ որոշմանց գործադրութիւնը:

Տիար Սայեան. Մեր առաջին գործն է որոշել, թէ ի՞նչ աչքով պիտի նայինք Կովկասի մէջ կազմուած Հայ անկախ Հանրապետութեան եւ Հայաստանը ազատելու «տեխնիքական» գործին: Մենք թրքահայ բարլամենթ պիտի ստեղծենք այստե՞ղ, թէ՞ ոչ՝ այնտեղ, Երեւանի մէջ ստեղծուած օրինական բարլամենթին ոյժ պիտի տանք, գրկելու համար Ամբողջական Հայաստանը:

Նախագահ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան յիշեցուց, թէ Յիշատակագիրը տպագրուած ու բաժնուած ըլլալով, պարունակութիւնը ծանօթ է ժողովի ամէն անդամներուն. եւ արդէն՝ Պատուիրակութեան կողմէ Խաղաղութեան Վեհաժողովին տրուած ըլլալով՝ աւելորդ կը դառնայ անոր անդրադառնալ. պէտք է ջանալ ամբողջացնելու անոր թերի մնացած մասերը, զոր օրինակ՝ վնասուց հատուցման վերաբերող խնդիրը, զոր պէտք է ժողովին անմիջական զբաղման առարկայ դարձնել:

Տիար Տամատեան. Լաւ կ'ըլլայ, որ Դիւանը կանխաւ պատրաստէ եւ ժողովին հաղորդէ յաջորդ նիստին օրակարգը, որպէսզի ամէն անգամ ժամանակ ունենայ անոր վրայ մտածելու:

Տիար Օհանջանեան. Կ'առաջարկեմ քուէի դնել հետեւեալ բանաձեւը.

Ժողովը որոշում է յանձնարարել Դիւանին կազմել մի օրակարգ եւ այդ օրակարգի մէջ առաջին տեղը դնել այս ժողովի ձեռնհասութեան եւ բրոկրամի խնդիրը:

Հ. Օհանջանեան

Բանաձեւը քուէի դրուելով, ընդունուեցաւ ստուար մեծամասնութեամբ:

Տիար Հինդլեան. Կ'առաջարկեմ քուէարկել նոյնպէս հետեւեալ բանաձեւը, որ առաջինը կը լրացնէ.

«Ժողովը կը զբաղի օրակարգի առաջին հարցով, որ է Ազգ. Համագումարին ձեռնհասութիւնն ու բրոկրամը, Ազգ. Պատուիրակութեան մինչեւ հիմա կատարած աշխատանքին զեկուցումը լսելէ ետք:

Ս. Հինդլեան»

Այս բանաձեւն ալ քուէի դրուելով՝ ընդունուեցաւ մեծամասնութեամբ:

Նիստը փակուեցաւ ժամը 8 1/2-ին:

Նախագահ

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 18, թթ. 19-23 շրջ.: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ 7-րդ

3 մարտի 1919թ.

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

1. ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ ՏԻԱՐ ՀԻՆԴԼԵԱՆԻ՝ ԹՈՒՐՔԻՈՅ ՀԵՏ ԿՆՔՈՒԱԾ ՁԻՆԱԴԱԴԱՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՆ ՆԿԱՏՄԱՄԲ

Նախագահ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան ծանոյց, թէ Տիար Հինդլեան գրութիւն մը ուղղած է Դիւանին, որով կ'առաջարկէ դիմել Դաշնակից կառավարութեանց եւ պահանջել Թուրքիոյ հետ կնքուած զինադադարի պայմաններուն փոփոխութիւնը, աւելցնելով նոր պայման մը, որուն համաձայն՝ հայկական հողամասը կարենայ այժմէն զինուորականապէս գրաւուիլ:

Այս գիրին նկատառումը վերապահուեցաւ յառաջիկային:

2. ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՀԵՌԱԳԻՐ ՍԻՈՆԻՍՔՆԵՐՈՒ

Նախագահ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան, յայտնելով, թէ Լոնտոնի մէջ այս պահուն գումարուած է Սիոնիսքներու Համաժողովը, առաջարկեց Համագումարին կողմէ շնորհաւորական հեռագիր մը ուղղել:

Այս առաջարկութիւնն ընդունուեցաւ:

3. ՀԱՄԱՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ ԱԶԳ. ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ

Նախագահ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան յայտնեց, թէ Ժողովոյ երէկուան նիստին որոշման համաձայն խնդրած էր Ազգ. Պատուիրակութեան Վսեմ. Նախագահէն, որ հաճի այս օրուան նիստին մէջ, իրաւասութեան եւ ծրագրի խնդրին անցնելէ առաջ, Պատուիրակութեան մինչեւ այժմ ունեցած գործունէութեան վերաբերեալ զեկուցումը ընել: Սակայն Պատուիրակութեան Վսեմ. Նախագահը պատասխանած է, թէ այսօր իսկ Խաղաղութեան Վեհաժողովէն կանչուած ըլլալով Տիար Ահարոնեանի հետ, անկարող պիտի ըլլայ ժամանակին Ժողովին գալ. այս պատճառաւ առաջարկած է, որ ժողովը իրեն ներկայացուած նկատէ Յիշատակագիրը

եւ զայն վաւերացնելու համար սկսի նախապէս կարծեաց փոխանակութիւն կատարել անոր մասին: Պատուիրակութեան Վսեմ. Նախագահը յայտնած է նաեւ, թէ Յիշատակագրին կցուած սուրիացիներու քարտէսը, Յիշատակագրին երկրորդ տպագրութեան մէջ սխալմամբ չի կրեր սուրիացւոց քարտէսը ըլլալը յայտնող արձանագրութիւնը, ինչ որ պէտք է ձեռագրով աւելցնել:

Տիար Տամատեան. Կ'առաջարկեմ նախ զբաղիլ այս Ժողովին իրաւասութեան եւ ծրագրի խնդրով եւ Պատուիրակութեան զեկոյցը թողուլ ասկէ վերջի:

Ժողովն անցաւ օրակարգի:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՆՊԱՏԱԿ ԵՒ ՁԵՌՆՀԱՍՈՒԹԻՒՆ ԱԶԳ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ

Նախագահ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան կարդալ տուաւ Պատուիրակութեան 15 Հոկտեմբեր 1918 թուականաւ ըրած շրջաբերական հրաւիրագրին այն մասը, որուն մէջ ամփոփուած է Համագումարին նպատակը: Գալով Յիշատակագրին, Ն. Վսեմութիւնն ըսաւ, թէ արդէն իսկ Վեհաժողովին եւ տէրութեանց տրուած ըլլալով, պէտք է փութացնել անոր յաւելուածական մասը կազմող վնասուց հատուցման ծրագիրին քննութիւնը:

Ն. Վսեմութիւնը, անդրադառնալով հրաւիրագրին, յարեց, թէ ինչպէս կ'երեւայ կատարուած ընթերցումէն, կովկասեան հայութիւնն ալ հրաւիրուած էր մասնակցիլ Համագումարին, բայց ատիկա իրականացած չէ դժբախտաբար՝ ծանօթ պատճառներով:

Տիար Տէր-Ստեփանեան. Այստեղ վերջերս կարդացուած եւ «Դրօշակ» -ի խմբագրութեան միջոցաւ ստացուած հեռագիր մը կը յայտնէր, թէ Տիարք Ահարոնեան, Պապաջանեան եւ Օհանջանեան այս Համագումարին մասնակցելու համար պատուիրակի պաշտօն ունէին. մինչդեռ նոյն պատուիրակներէն Տիարք Ահարոնեան եւ Օհանջանեան կ'ըսեն, թէ այսպիսի պաշտօն մը չունին, այլ միայն պետութեանց մօտ կը ներկայացնեն Հայ Հանրապետութիւնը: Այս հակասութեան վրայ Ժողովիդ ուշադրութիւնը կը հրաւիրեմ:

Տիար Փաստրմաճեան. Յայտնի է, թէ թէեւ Ազգ. Պատուիրակութիւնը անցեալ Հոկտեմբերին փափաքած է ընդհանուր հայութիւնը ներկայացնող ժողով մը գումարել, բայց պարագաներու բերմամբ ատիկա կարելի եղած չէ: Ընդունինք այս իրողութիւնը եւ տեսնենք, թէ ի՞նչ օգտակար գործ կրնանք կատարել ներկայ պայմաններով: Ըստ իս՝ այս Ժողովին առաջին եւ գլխաւոր նպատակն է Հայաստանի երկու մեծ մասերուն միութիւնը առաջ բերել: Այս երկու մասերէն մէկը արդէն կազմակերպուած ըլլալով՝ այս Ժողովին կը մնայ մնացեալ մասին, այսինքն՝ Արեւմտեան Հայաստանի կազմակերպութիւնը լրացնել եւ փոխադրուիլ անդին:

Տիար Թէքէեան. Նպատակի մասին ամէնքս ալ համաձայն ենք. միայն իրարմէ կը տարբերինք գործադրութեան եղանակին նկատմամբ: Նախ՝ չեմ կարծեր, որ Հայաստանի կովկասեան մասը կարելի է արդէն կազմակերպուած նկատել: Եթէ այդպէս ըլլար՝ մեր գործը չափազանց կը դիւրանար, Հայաստանի մնացեալ մասն ալ աստիճանաբար կը գրաւուէր եւ մենք՝ կատարուած կամ կատարուելիք իրողութիւնը միայն վաւերացնելով կը ցրուէինք: Այստեղ մեր գործն է նախ Հայաստաններու միութիւն հռչակել, եւ ճիշդ այդ պատճառաւ մեծապէս փափաքելի էր, որ Կովկասահայ Պատուիրակութիւնն ալ մասնակցէր Համագումարիս, բան մը, որուն կարեւորութիւնը մեզի պէս ըմբռնած եւ ըստ այնմ որոշած ըլլալ կ'երեւայ Հանրապետութեան կառավարութիւնը, ինչպէս կը հասկցուի «Դրօշակ» -ի խմբագրութեան միջոցաւ մեզի հաղորդուած հեռագրէն: Մեր երկրորդ գործն է՝ Փարիզի մէջ այս պահուս

Խաղաղութեան Վեհաժողովին գումարումէն օգտուելով ճանչցնել տալ Միացեալ Հայաստանի անկախութիւնը, ինչ որ քաղաքական գործ մըն է, եւ այդ գործին յաջողապէս ի գլուխ հանուելուն վրայ հսկելն է մեր ամէնամեծ պարտքն ու իրաւունքը:

Տիար Չօպանեան. Կատարելապէս համաձայն եմ. անհրաժեշտ է, որ ձեւ մը գտնենք, որով Հայ Հանրապետութեան ներկայացուցիչները կարենան մասնակցիլ թէ՛ այս ժողովին եւ թէ՛ այս ժողովէն բղխելիք միատարր գործադիր մարմնին:

Տիար Սայեան ընդդիմախօսելով վերեւ յայտնուած կարծիքներուն, եզրակացուց, թէ պէտք է ձգտիլ Թրքահայաստանի ազատագրման՝ գրկելով արդէն իսկ գոյութիւն ունեցող Հայկական Հանրապետութիւնը:

Տիար Տամատեան. Ազգ. Պատուիրակութեան հրաւիրագիրը ինքնին կը բաւէ ապացուցելու համար այս ժողովին ունեցած մեծ հեղինակութիւնը: Ոմանք զայն պզտիկցնել կը ջանան: Իմ կարծիքովս՝ ժողովն իր աշխատութիւնը չի կրնար վերջացած նկատել մինչեւ որ իր հաւաքման նպատակը կազմող Ամբողջական Հայաստանի ազատագրման գործը յաջողութեամբ չպսակուի:

Նախագահ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան կարդաց Ազգ. Պատուիրակութեան հրաւիրագրին ուրիշ մէկ պարբերութիւնը, որուն մէջ ըսուած է, թէ Ազգ. Համագումարը վերստին ի նիստ պիտի կոչուի, երբ Խաղաղութեան Վեհաժողովը գումարուի եւ Հայաստանի բախտին վերաբերեալ վճռական որոշմանց ժամը հասնի:

Տիար Թէրզիպաշեան. Իրականին մէջ՝ այս ժողովը թրքահայերէ բաղկացած է, սակայն իր նպատակը համազգային է: Ժողովը կրնայ զբաղիլ առ այժմ թրքահայոց համար մասնաւոր եղող, թեպէտ ի վերջոյ դարձեալ ընդհանուր հայկական բնոյթ ունեցող խնդիրներով, որպիսիք են թրքահայ փախստականներու ու տարագրելոց ներգաղթի եւ այլ խնդիրները: Անհրաժեշտ է, որ այս ժողովին բոլոր գործերը համաձայնութեամբ տարուին. այդ պատճառաւ՝ հարկ է Կովկասահայ Պատուիրակութեան՝ մեր ժողովին մասնակցութիւնը՝ ձայնի իրաւունքով, ինչպէս որ նման նկատումներով Արեւմտահայ Խորհուրդը մասնակցեցաւ Ազգ. Խորհուրդին:

Տոքթ. Բարսեղեան. Սխալ է թրքահայոց եւ ռուսահայոց յարաբերութեան խնդիր հանել, որ ինքնին վճռուած է արդէն: Պէտք է որոշել, թէ ի՞նչ կարգի խնդիրներ կրնան կատարուիլ այստեղ եւ յետոյ երթալ Երկիր, ուր կարեւոր գործեր կան կատարուելիք:

Տիար Օհանջանեան. Հրաւիրագիրը որոշ է: Անոնք որ տարբեր կերպով կը մեկնեն զայն, կը սխալին: Սա բառլման չէ, եւ ոչ իսկ թրքահայոց ներկայացուցչական ժողով, քանի որ պատգամաւորները ընտրուած չեն օրինական ձեւով: Կովկասահայ Հանրապետութեան ներկայացուցիչները չեն կրնար իրենց մասնակցութեամբ այս ժողովը համազգային դարձնել:

Տիար Յակոբեան. Կ՚առաջարկեմ, որ ի սէր համերաշխութեան եւ մեր ստեղծել ջանացած Միացեալ, Ամբողջական Հայաստանին, Հայ Հանրապետութեան ներկայացուցիչները պատիւ ընեն մասնակցելու այս ժողովին, որպէսզի այժմէն մեր միութիւնը կատարեալ իրողութիւն մը ըլլայ:

Կարծեաց փոխանակութիւնը՝ ժողովին նպատակին եւ ձեռնհասութեան խնդրին նկատմամբ՝ շարունակուեցաւ Տիարք Թէքէեանի, Փաստրմաճեանի, Տոքթ. Սայեանի եւ Փափազեանի միջեւ:

ՎՍԵՄ. ՊՕՂՈՍ ՓԱՇԱ ՆՈՒՊԱՐ ԵՒ ՏԻԱՐ ԱՒԵՏԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎԻ ՄՕՏ

Նիստին վերջերը՝ ժողովասրահ մտան Խաղաղութեան Վեհաժողովէն դարձող՝ Ազգ. Պատուիրակութեան Նախագահ Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար եւ Հայ Հանրապետութեան Պատուիրակութեան Նախագահ Տիար Ահարոնեան, որոնք

մանրամասնօրէն պատմեցին այնտեղ իրենց ընծայուած ունկնդրութիւնը, եւ տեղի ունեցած յայտարարութիւններուն հետ՝ իրենց կրած գեղեցիկ տպաւորութիւնը:

Տիար Տոքթ. Սայեան շնորհաւորեց երկու Պատուիրակութեանց Նախագահները:

Նիստը փակուեցաւ ժամը 8 1/2-ին:

Նախագահ

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 18, թթ. 24-26 շրջ.: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ 8-րդ

4 մարտի 1919թ.

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

1. ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ՏԻԱՐ ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

Կարդացուեցաւ Տիար Մ. Փորթուգալեանի մէկ նամակը, որով շնորհակալութիւն կը յայտնէր ժողովին՝ զինքը անդամակցութեան հրաւիրելուն համար, բայց կը ծանուցանէր, թէ առողջական պատճառով ստիպուած է հրաժարական տալ:

Որոշուեցաւ արձանագրել:

2. ԴԻՄՈՒՄ ՏԻԱՐ ՍԱԱԹՃԵԱՆԻ՝ ՄԱՐՍԻԼԻՈՅ ԳԱՂՈՒԹԻՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐ ԸՆՏՐԵԼՈՒ ԻՐԱՒԱՍՈՒԹԻՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Նախագահ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան ժողովին հաղորդեց նամակ մը, որով Մարսիլիոյ Ազգ. Միութեան ատենապետ Տիար Սաաթճեան, որ Փարիզ կը գտնուի, կը խնդրէր Մարսիլիոյ հայ գաղութին իրաւունք տալ /փոխան հրաժարեալ Տիար Փորթուգալեանի/ ուրիշ պատգամաւոր մը ընտրելու, ընդհանուր քուէարկութեամբ:

Ն. Վսեմութիւնը յայտնեց, թէ Համագումարի անդամներուն ընտրութեանց վաւերացմամբ խնդիրը փակուած ըլլալով, Դիւանն ըստ այնմ հարկ եղած պատասխանը պիտի տայ Տիար Սաաթճեանի:

Տիարք Տոքթ. Նեւրուզ եւ Բարսեղեան առարկութիւն ըրին, բայց Ն. Վսեմութիւնը փակեց խնդիրը:

3. ԿԻԼԻԿԻՈՅ ԽՆԴԻՐ

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Այսօրուան ֆրանսական բոլոր լրագրաց մէջ Հայկական Հարցը ճիշդ եւ նպաստաւոր կերպով չէ ներկայացուած. բոլորն ալ կը ձգտին Կիլիկիան զատել Հայաստանէն. հարկ է խորհիլ կարեւորը:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Այսօր հեռաձայնով խօսակցութիւն մը ունեցայ «Մաթէն»-ի քաղաքական բաժնին խմբագրապէտ Պ. Սաօրվայնի հետ, որ հարցուց, թէ գո՞հ էի իմ շատոնց տուած մեկ «էնթերվիու»ս հրատարակած ըլլալուն համար: Պատասխանեցի, թէ կարգ մը փոփոխութիւններ պիտի ընէի անոր մէջ, եթէ կանխաւ ինծի իմացուցած ըլլար: Բայց անիկա՝ խօսքը դարձնելով ըսաւ. «Մի՛ կարծէք, որ միշտ Ձեզ պիտի պաշտպանեմ»: Իմ հարցումիս վրայ թէ ինչո՞ւ, պատասխանեց. «Որովհետեւ Ալեքսանդրէթն ալ ուզած էք»: Ըսի, որ մենք Քոմիսիոնին ենթարկած ենք

մեր պահանջները. որոշումը Վեհաժողովին կը վերաբերի: Որոշեցինք Երկուշաբթի օր միասին ճաշել. այդ առթիւ կը յուսամ, թէ մեր հարցը հարկ եղածին չափ պարզաբանելով պիտի կարողանամ նոր եւ աւելի լաւ յօդուած մը գրել տալ: Ասկէ զատ, ամէն տեղ եւ թերթերու մէջ կը կարծուի, թէ մենք մասնաւոր փափաք մը արտայայտած ենք նախընտրելու Իտալիան՝ իբրեւ «ասիսքան» պետութիւն: Ասիկա բոլորովին սխալ է, եւ ես, ինչպէս նաեւ Տիար Ահարոնեան, այս մասին ո՛չ մէկ տեղ եւ ո՛չ մէկ ժամանակ փափաք յայտնած ենք:

Տիար Ահարոնեան. «Թան»-ի խմբագիր Պ. Հերպէթն ալ նոյն բանը ըսաւ Իտալիոյ համար:

Տիար Տամատեան. Հարկ կը տեսնեմ յայտարարել, որ Իտալիոյ մէջ մեր կատարած աշխատանքներուն ընթացքին այդ կարգի ոեւէ դիմում ըրած չենք, այլ միշտ խնդրած ենք իրենց օգնութիւնը՝ Հայաստանի անկախութեան իրականացման համար: Անշուշտ ըսած ենք, որ ապագայ անկախ Հայաստանին մէջ իտալական եւ հայկական շահերը կը համապատասխանեն իրարու, բայց ո՛չ մէկ խօսք՝ իբրեւ առաջարկ Իտալիան պաշտպան պետութիւն ունենալու համար: Հռոմի ֆրանսական դեսպան Պ. Պառեր, երբ իրեն գացած ենք բողոքելու համար նախագահ Պ. Բուանքարէի վերջին ճառին մէջ հայ անուան չյիշատակուելուն դէմ, մեզի իբր մեղադրանք ըսաւ, որ հայերը Իտալիոյ եւ Անգլիոյ ապաւինած են: Մենք հերքեցինք այդ կարծիքը եւ ըսինք, որ հայկական անկախութիւնը ձեռք բերելու համար բոլոր պետութեանց ալ դիմած ենք, քանի որ Հայկական Խնդիրը միջազգային խնդիր մըն է:

Տիար Տէր-Ստեփանեան. Մենք միշտ protection collective-ի մասին խօսք ըրած ենք:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Կը թուի, թէ Պ. Հերպէթ մեզի հակառակ պիտի գրէ «Թան»-ի մէջ, որովհետեւ անիկա կ'ուզէ Սուրիոյ անբաժան մաս նկատել Կիլիկիան: Ան է, որ ըսած է, թէ Սուրիան ոսկորն է, իսկ Կիլիկիան միսը, եւ թէ առանց միսի ոսկորն արժէք չունի: Գալով Իտալիոյ մասին գոյութիւն առած տարաձայնութիւններուն, կը կարծեմ, թէ անոնց նպատակն է Իտալիոյ համար ուրիշ կողմէ գոհացում ձեռք բերել:

Տիար Նեւրուզ. Արդեօք ժամանակը չէ՞ թերթ մը հանելու, որուն մասին նախապէս որոշում անցած էր:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Ո՛չ մէկ ազդեցութիւն կրնայ ունենալ հիմա այդպիսի թերթ մը: Շատեր Ալեքսանտրէթը անհրաժեշտ կը նկատեն Սուրիոյ համար: Հոգ չէ, թող առնեն. Հայաստանի համար մեծ կարեւորութիւն մըն ալ չունի: Բայց Կիլիկան թող մեզի տան:

Ն. Վսեմութիւնը ապա պատմեց Արտաքին Գործոց Տնօրէն Պ. Կուի հետ իր ունեցած տեսակցութիւնը, որու միջոցին Պ. Կու՝ Տիար Ահարոնեանի Կովկասի Հայկ. Հանրապետութեան կողմէ Խաղաղութեան Վեհաժողովին մասնակցիլ ուզելը այնպէս մը մեկնած էր, որ իբր թէ Ռուսահայաստանն ու Թրքահայաստանը իրարու հակառակ են: Նոյնպէս՝ Պ. Կու հարցուցած էր, թէ ինչո՞ւ Պատուիրակութեան Նախագահը միասին չէր տարած Վսեմ. Տիար Գ. Նորատունկեանը՝ Խաղաղութեան Վեհաժողովի նիստին:

Տիար Թէքէեան. Պէտք է հերքում մը եւ ճշդում մը ընել միանգամայն. մեզի կը վերագրեն, թէ կը պահանջենք Հալէպը, Պաթումը, Պաքուն, եւ այլն, ու կ'ըսեն, թէ Ատանա Սուրիա է:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Տարակոյս չկայ, որ յայտարարութիւն մը պիտի ընենք իմ եւ Տիար Ահարոնեանի ստորագրութեամբ, որուն մէջ պիտի ճշդենք մեր պահանջները, Իտալիոյ եւ Հայաստանի մասին գոյացած տարաձայնութիւնը եւ պիտի հերքենք սխալ լուրերը:

Նախագահ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան փակեց այս խնդիրը՝ օրակարգի անցնելու համար:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՆՊԱՏԱԿ ԵՒ ՁԵՌՆՀԱՍՈՒԹԻՒՆ ԱԶԳ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ

Տիար L. Շանթ. Ի՞նչ է այս ժողովին իրաւասութիւնը, եւ մենք ինչո՞վ պիտի զբաղինք:

Առաջին. Մենք մինչեւ հիմա ազգ եղած ենք եւ ո՛չ պետութիւն: Արդ, ազգի մը խօսքը նուազ կարեւորութիւն ունի, քան պետութեան մը խօսքը: Մենք այժմ ունինք պետութիւն մը, Կովկասեան Հայկ. Հանրապետութիւնը, զոր Տիար Չօպանեան իրաւամբ կոչեց ամբողջ հայութեան փոքրիկ հանրապետութիւնը: Մենք մինչեւ հիմա խնդրող եղած ենք. ասկէ յետոյ պահանջող պիտի ըլլանք՝ խօսելով պետութեան անունով, եւ պիտի շահագործենք այդ անունը:

Երկրորդ. Պէտք է իսկոյն համահայկական կառավարութիւն մը ստեղծել եւ ճանչցնել տալ Եւրոպային: Եթէ այս կառավարութիւնը ստեղծենք, աւելի ոյժ կունենանք եւ անոր անունով կը պահանջենք ամէն ինչ: Պետութիւնները աւելի կը դժուարանան բան մը ստեղծելու, քան թէ եղած մը քանդելու: Ասկէ յետոյ է, որ միայն կրնանք «ասիսքանս»-ին հակառակ չըլլալ. իսկ այլ պայմանի մէջ՝ չեմ գիտեր, թէ որքա՞ն կրնայ մեզի օգտակար ըլլալ: Արդ, հիմա պէտք է, որ միացնենք եղածը ու երեւան բերենք իրապէս մէկ խորհրդարան եւ մէկ կառավարութիւն: Ըստ իս՝ յանցանք է երկու կառավարութիւն ստեղծել: Երկու կառավարութիւնով ոյժերու բաժանում առաջ պիտի գայ: Յետոյ կրնայ վտանգ սպառնալ Կովկասին եւ Կիլիկիան կորսնցնելու պատճառ ըլլալ: Եթէ երկու կառավարութիւն գոյութիւն ունենայ, շուտով կրնայ երեքի, չորսի վերածուիլ եւ մեր հակառակորդները ոյժ պիտի տան Կովկասի կառավարութեան եւ պիտի ոչնչացնեն միւսը: Պէտք է ստեղծենք հետեւաբար մէկ կառավարութիւն եւ մէկ խորհրդարան մեր երկրին մէջ: Արդ, ի՞նչ է մեր գործը: Հիմա Կովկասեան Հայաստանը 45 հոգիանոց ներկայացուցչական մարմին մը ստեղծած է. գաղթական եւ հաստատուած բնակչութիւնն ալ իբր պէտք է ընտրէ, եւ գրաւուած քաղաքի մը մէջ, օրինակի համար Էրզրում, հայկական անկախ պետութեան խորհրդարանը կը ստեղծուի: Այս համագումարն է, որ գլուխ պիտի անցնի այդ գործին, մշակելով այն սկզբունքները, որոնցմով ընտրութիւնները պիտի կատարուին, եւ շատ արագ: Համագումարին երկրորդ գործն է Պատուիրակութիւն մը ընտրել եւ տալ անոր իր «տիրէքթիւ»-ները, որպէսզի վարէ տէրութեանց հետ քաղաքական յարաբերութիւնները:

Երրորդ. Համագումարին իրաւասութիւնը: Այս ժողովը ես կը նկատեմ թրքահայ փախստականներու եւ գաղութներու ներկայացուցչական ժողով, որուն ընտրութիւնները, իմինէս սկսեալ եւ գրեթէ ամբողջապէս՝ տնավարի եղանակով կատարուած են: Ուրեմն, այս ժողովին հեղինակութիւնը այն ատեն կը մեծնայ, երբ մենք խնդիրները միաձայնութեամբ անցընենք: Այստեղ ձայնի մեծամասնութիւնը կարեւորութիւն չունի եւ իրաւացի չէ: Մենք ամէն ինչ պիտի ընենք փոխադարձ համաձայնութեամբ. հակառակ պարագային՝ ժողովին ապօրինութիւնը ինքնին երեւան կ'ելլէ եւ որոշումները կը դադրին պարտադիր ըլլալէ:

Տիար Փափազեան. Կ'ուզէի հասկնալ, թէ օրինակ՝ Տիար Շանթ ե՞րբ կ'առաջարկէ ստեղծել այդ կառավարութիւնը:

Տիար Շանթ. Կարելի է երկու-երեք շաբաթուան մէջ պատրաստել:

Տիար Հինդլեան. Տրուած հարց մը ճշդօրէն քննելու եւ իրական արդիւնքի մը հասցնելու համար՝ պէտք է միշտ տրուած իրողութիւններէն մեկնիլ: Իրականութիւնը բռնաբարելը շատ անգամ կրնայ մեր իղձերուն գոհացում տալ, բայց ո՛չ երբեք կեանքի հարցերուն ճշգրիտ լուծումը: Երկու-երեք օրէ ի վեր Համագումարիս նոր անուն մը առաջարկեցին տալ,- թրքահայոց, պարսկահայոց եւ գաղութներու ներկայացուցչական ժողով,- մանաւանդ այն յայտարարութենէն ետք, զոր ըրաւ Տիար Ահարոնեան՝ Դիւանի ընտրութեանց միջոցին, պահանջելով, որ այս ժողովը

համազգային կամ ազգային անունը չունենայ, քանի որ Կովկաս գտնուող երկու միլիոնի չափ հայերը իրենց ներկայացուցիչները չունին անոր մէջ: Շատեր, մասնաւորապէս իր գաղափարակից ընկերները, այն ատենէն է, որ սկսան վերլուծումը ընել այս ժողովի կազմին, զայն թրքահայոց, եւ այլն ժողով անուանելով: Վերլուծումը ճիշդ է եւ համաձայն իրականութեան, բայց կայ եւ ուրիշ իրականութիւն մը, զոր չեմ գիտեր ինչո՞ւ գիտակցաբար կ'անգիտանաք: Ժողով մը իր անունը չառնէր իր կազմէն, այլ գործէն՝ որուն համար հրաւիրուած է: Այս ժողովը համազգային դատ մըն է, որ կը քննէ եւ անոր յաջողութեան ու իրականացման կը ձգտի: Ինչպէս գործը համազգային է, միջոցներն ալ՝ համազգային դատի պաշտպանութեան եւ իրականացման համար՝ անհատական, խմբակցական կամ կուսակցական չեն, այլ որոշապէս եւ ուղղակի համազգային: Համազգային դատ՝ համազգային միջոցներով: Ահա թէ ինչո՛ւ այս տեսակէտով, եւ միակ հնարաւորը ներկայ պարագաներուն մէջ, այս ժողովը համազգային ըլլալու բնոյթը ունի իրաւամբ: Տրուած ,,թրքահայոց,, եւ այլն անունը չէ նաեւ անոր համար, որ ժողովը թրքահայերու առանձնայատուկ կամ գաղութներու մասնակի շահերու պաշտպանութեան ժողով չէ: Մինչեւ այն ատեն, երբ թրքահայերը հայկական դատը կը տանէին բարենորոգումներու շրջանին մէջ՝ օսմանցի էին եւ ժողովներն ալ՝ թրքահայերու ժողովներ էին, զանազանելու համար բոլոր միւս ոչ-թրքահպատակ հայերէ: Այս սեղանին շուրջը բոլոր բոլորուածներս անկախ հայեր ենք հայ անկախութեան հռչակման օրէն ի վեր, անկախ եւ միացեալ Հայաստանի մեծ դատին իրականացման համար եկած: Երբ յիսուն տարի առաջ թրքահպատակ հայերու Պոլսոյ ժողովին չխնայեցինք «Ազգային ժողով» անունը, եթէ այս վերջին օրերուն Կովկասի ինքնապաշտպանութեան մարմնին՝ Ազգ. Խորհուրդին՝ որուն կը նախագահէր Տիար Ահարոնեան, «Ազգային» անունը ամէնայն իրաւամբ դրուեցաւ, առանց որ անոր մասնակցած ըլլային ասդին մնացած մօտ երկու միլիոն հայերը, ինչո՞ւ այս ժողովին կը զլանաք այս անունը: Կովկասեան Հանրապետութիւնը, 64.000 քառակուսի քիլոմեթր տարածութեամբ, հեռու է Հայաստանի բոլոր սահմանները պարունակելէ: Բայց Հայաստանի Հանրապետութիւն է, եւ անոր բառլման՝ հայ ազգային բառլման: Արդ, այս Համագումարը ազգային դատի համար կոչուած ըլլալով, ուրկէ պիտի բղխի նաեւ նոր Ազգային Պատուիրակութիւնը, ձեռնհասութիւն ունի վեհապետօրէն լուծելու բոլոր հարցերը, որոնք Անկախ եւ Միացեալ Հայաստանի ստեղծումը կը պայմանաւորեն: Իսկ Պատուիրակութիւնը համարատու է իր բոլոր գործերու մասին, ինչպէս նաեւ ճշգրիտ եւ անվրէպ գործադրիչը այս ժողովին տուած որոշումներուն: Ճիշդ է, այս ժողովը բառլման չէ, որովհետեւ կազմուած պետութեան մը օրէնսդիր ժողովը չէ. բայց այս ժողովը աւելի քան բառլման է՝ Assemblne Gռոռrale, որովհետեւ անիկա պիտի ստեղծէ երկիրը, անիկա պիտի վերականգնէ Հայաստանը: Իրաւասու էինք Յիշատակագիրը պատրաստելու եւ ներկայացնելու, ուր ընդգծեցինք մեր բոլոր պահանջները. այժմ աւելի իրաւասու ենք, երբ անկէ պիտի փորձեն բան մը փրցնել: Հրաժարիլ այս մասին մեր ունեցած պատասխանատուութենէն՝ մեր «մանդա»-յին դէմ դասալքութիւն է: Միացումի համար ամէնքս համաձայն ենք, բայց թէ ե՞րբ եւ ինչպէ՞ս, հոս է, որ կը զանազանուինք:

Տիար Թեքէեան. Այս ժողովին իրաւասութեանց եւ ծրագրին շփոթութիւնը Պատուիրակութենէն կը բղխի. որովհետեւ ինք հրաւիրած էր զայն, ինք պիտի որոշէր անոր իրաւասութիւնն ու ընելիքը: Հրաւիրագիրը կը խօսի անոր երկրորդ անգամ,- Խաղաղութեան Վեհաժողովի պահուն,- գումարման մասին, որ այսօր է: Ճիշդ է, մենք հոս խորհրդարան չենք, բայց եկած ենք հոս իբրեւ ներկայացուցիչ ազգային զանազան մասերու կողմէ, յիշատակագրի մը մէջ մեր բաղձանքները արտայայտելու եւ նոր գործադիր մարմինը ստեղծելու: Ազգին ներկայացուցիչները, բանաձեւելէ ետք ազգին ամբողջ բաղձանքները, պէտք է հսկեն նաեւ անոնց իրագործումին: Մեր ստեղծելիքը կառավարութիւն մը չէ, եւ բանակին ոյժը դժբախտաբար այնքանի հասած չէ, որ մեր թշնամիները զսպէ եւ ի դերեւ հանէ մեր հողամասերուն վրայ մեծ

պետութիւններու յաւակնութիւնները: Ուրեմն, մենք պէտք է Պատուիրակութեան կողքին մնանք, մինչեւ որ վերջանայ այստեղ կատարուելիք քաղաքական գործը: Այստեղ ես ալ համաձայն եմ, որ գլխաւոր հարցերը մեծամասնութեամբ եւ համաձայնութեամբ անցնին: Վերցնենք կասկածները. ասիկա Հայ Ազգային Ժողով ընենք, ինչպէս որ արդէն իրաւամբ է, որովհետեւ ներկայացուցիչ ունինք նոյնիսկ Պարսկաստանէն, որ ոչ մէկ կերպով մաս կը կազմէ մեր դատին:

Տիար Փափազեան. Պիտի նախընտրէի իմ ծրագիրս պարզել յանձնաժողովի մը մէջ, ուր աւելի դիւրին է իրար հասկնալ եւ համաձայնութեան մը գալ:

Ժողովը, նկատելով որ վիճաբանութեան առարկան չափազանց կարեւոր հարց մըն է, որոշեց որ պատգամաւորները ժողովին մէջ իսկ արտայայտեն իրենց կարծիքները:

Այս որոշման վրայ խօսք առաւ՝

Տիար Փափազեան. Յայտնի է, որ բոլոր պատգամաւորներն ալ համաձայն են նպատակին մէջ, որ է ունենալ միացեալ կառավարութիւն եւ մէկ խորհրդարան: Խնդիրը կը ներկայանայ որոշելու մէջ, թէ ե՞րբ կրնանք իրականացնել այս փափաքը: Ոմանք առաջարկեցին երկիրը միանգամայն գրաւել եւ հռչակել միացեալ կառավարութիւն: Ես ասիկա վնասակար եւ վտանգաւոր կը գտնեմ, որովհետեւ ասիկա եւրոպական պետութեանց ըսել է, թէ մենք Ձեզի կարեւորութիւն չենք տար եւ մեր ուզածը կ'ընենք: Այսպիսով՝ եւրոպական պետութիւններէն զատ, մեր դէմը պիտի ունենանք նաեւ բարբարոս ցեղերը: Տիրել եւ հռչակելը պէտք է ժամանակին կատարուեր. այժմ շատ ուշ է: Մենք սկսած ենք խնդրել եւ կը ձգտինք տիրելու: Հակասութիւն է աս: Արդ, ասկէ յետոյ ուզենք-չուզենք պիտի սպասենք Քոնկրէի որոշման, որով մեր խնդիրը հաստատ հողի վրայ դրած կ'ըլլանք: Բայց հիմակուց պէտք է սկսինք Միացեալ Հայաստանի նախապատրաստութիւններ տեսնել: Ինչպէ՞ս կազմել մեր պետութիւնը: Նկատի ունենանք ուրեմն այս կամ այն անձերը՝ այս կամ այն պաշտօնին համար, անոնց բացատրենք եւ տանք մեր «տիրէքթիւ»-ները, որպէսզի երբ գոյութիւն ստանայ Միացեալ Հայաստանը, անոնք անմիջապէս երթան հոն եւ գործի սկսին:

Տիար Տամատեան. Ի պատասխան Տիար Շանթի խօսքերուն՝ ըսեմ, թէ համերաշխութիւնը մեր ամէնուս փափաքն է, եւ ես կը կարծեմ, թէ իրաւունք ունիմ ըսելու, որ մանաւանդ իմ փափաքս է: Բայց պէտք չէ ժողովին հեղինակութիւնը ստորադասել համերաշխութեան: Այս ժողովը կ'արիամարհուի. ինչ ձեւով ալ եւ ինչպէս ալ ընտրուած ըլլան անոր անդամները, բոլորն ալ հաւասար իրաւունք ունին՝ անգամ մը, որ ընտրուած են:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Այս օրերս իմացայ, թէ քննադատութիւններ եղեր են այն հրաւիրագրի ծրագրի մասին, զոր Ազգ. Պատուիրակութիւնը Թուրքիոյ, Կովկասի եւ կարեւորագոյն գաղութներու մեր հայրենակիցներուն ուղղած էր, Փարիզի մէջ Ազգային Համագումար մը գումարելու համար: Այս քննադատութիւնները բնաւ արդարացի չեն, քանզի պէտք է նկատի առնել, որ մենք բնաւ չխորհեցանք խորհրդարան մը ընտրել, այլ՝ որոշ նպատակով մը համագումար մը հրաւիրեցինք: Պէտք է նախ յիշել, որ թէպէտ հրաւիրագիրը Հոկտեմբեր ամսուն սկիզբները ղրկուեցաւ, բայց ծրագիրը այդ թուականէն շատ առաջ մշակուած էր, եւ անոր առաքումը այն ատեն յետաձգուած էր մի միայն մեր Անգլիոյ պաշտօնակիցներուն հետ կանխապէս համաձայնութիւն մը գոյացնելու համար: Հետեւաբար՝ երբ հրաւիրագիրը ցրուեցինք, ո՛չ ոք կը մտածէր, որ մօտ ժամանակէն զինադադար մը պիտի կնքուէր եւ կամ պատերազմը պիտի տեւէր ամբողջ ձմեռը: Համագումարը հրաւիրեցինք յետագայ նպատակով. 1. Մշակել ազգային պահանջներու ծրագիր մը՝ դէպքերու ստեղծած նոր կացութեան համաձայն: 2. Ընտրել գործադիր ժողով մը, որ պաշտօն պիտի ունենար գործադրութեան դնելու այդ ծրագիրը: Մասնաւոր պայման դրինք, որ Համագումարը օրինաւորապէս նիստ պիտի կրնար գումարել, պայմանաւ միայն, որ ներկայ գտնուին

առնուազն քսան անդամներ, որոնց գէթ չորսը Թրքահայաստանի ներկայացուցիչներէն եւ չորսը՝ Կովկասի ներկայացուցիչներէն: Վերջին պարբերութեան մէջ ալ աւելցուցած էինք, որ եթէ Համագումարը վերոյիշեալ պայմաններուն համաձայն գումարուի եւ հետեւապէս օրինաւորապէս իրաւասութիւն ունենայ ազգը ներկայացնելու եւ անոր անունով որոշումներ կայացնելու, այդ պարագային՝ վստահ ըլլալով, որ Պատուիրակութեան կատարած գործը չպիտի ընդմիջուի, իր հրաժարականը պիտի տայ Պատուիրակութիւնը եւ իր պաշտօնին շարունակութիւնը պիտի փոխանցէ նոր գործադիր ժողովի մը: Ասոնք են պայմանները, որոնց համեմատ մեր համագումարը գումարուեցաւ եւ այս է իր աշխատութեանց ծրագիրը: Կը մնայ ստուգել հիմա, թէ այս պայմանները լրացա՞ծ են: Արդարեւ՝ ոչ ի մասին ներկայ գտնուելիք անդամներուն նուազագոյն թիւին, վասնզի Հայկ. Հանրապետութեան ներկայացուցիչ Կովկասի մեր հայրենակիցները յայտնեցին, թէ Ազգ. Համագումարի նիստերուն մասնակցելու համար ոեւէ պաշտօն չունին, այլ եկած են իբր պատուիրակ Խաղաղութեան Վեհաժողովին մօտ: Արդ, մեր համագումարը չի կրնար առանց անոնց ներկայութեան նիստ կայացնել եւ բոլոր ազգին անունով որոշումներ տալ: Բայց միւս կողմէ՝ Հայ Հանրապետութեան Պատուիրակութեան նախագահը, Տիար Ահարոնեան, որոշապէս յայտարարեց, թէ մեզի հետ կատարելապէս համաձայն էր ո՛չ միայն մեր ազգային ձգտումներուն, այլ նաեւ մեր պահանջներու ծրագրին մասին, որ խտացած է Խաղաղութեան Վեհաժողովին ներկայացուած Յիշատակագրին մէջ եւ զոր ստորագրած է ինծի հետ: Հետեւաբար, ոեւէ պատճառ չկայ, որ իրարու հետ չհամաձայնինք՝ միասին աշխատելու եւ իրականացնելու մեր ընդհանուր ծրագիրը, որ կը կայանայ ձեռք բերելուն մէջ Հայաստանը՝ մէկ եւ անբաժանելի: Ըստ իս, գործնական լուծումի մը յանգելու միակ միջոցը կը կայանայ հրաւիրագրին երկրորդ պարբերութեան մէջ կանխատեսուած գործադիր ժողովը անյապաղ ընտրելուն մէջ, ընդունելով Հայ Հանրապետութեան երեք ներկայացուցիչները եւ ընտրելով մնացեալ չորսը՝ մեր Ազգ. Համագումարի պատգամաւորներէն: Բնական է «քոմբրոմիս» մըն է ասիկա՝ անդամներու նուազագոյն թիւին կանխատեսուած պակասէն առաջ եկած դժուարութիւնները հարթելու համար: Կը խնդրեմ, տիարք, որ ընդունիք զայն եւ չմղէք մեզ՝ զայն մերժելով՝ ո՛չ միայն անմիաբանութեան, այլ նաեւ անկարելիութեան՝ շարունակելու մեր պաշտօնը: Պէտք չեմ տեսներ կրկնելու, թէ որքան փափուկ է վայրկեանը եւ որքան անհրաժեշտ է կատարեալ միութիւնը: Եթէ յիրաւի առաջարկուած «քոմբրոմիս»-ը չընդունուի, պիտի ստիպուիմ, խորին ցաւով, յիշեցնել Ձեզի, որ Համագումարը օրինաւորապէս կազմուած չէ եւ Պատուիրակութիւնը չի կրնար հրաժարիլ իր պաշտօնէն, հրաւիրագրին վերջին պարբերութեան համեմատ, ու պիտի ստիպուի առանձինն շարունակել իր պաշտօնը, ինչ որ ամէնէն առաջ անբաղձալի է ինծի: Մեր Ազգ. Համագումարը, ինչպէս ըսի, պէտք էր նախ եւ առաջ մշակեր մեր պահանջներուն ծրագիրը: Ատիկա լմնցած է, քանզի այդ ծրագրին վրայ դուք երկարօրէն վիճաբանեցաք եւ Հաշտութեան Վեհաժողովին ներկայացուած Յիշատակագիրը դուք միաձայնութեամբ շարադրեցիք: Արդ, այս առաջին կէտը լուծուած է, եւ եթէ կ'ուզէք, ինչպէս որ առաջարկեցի Ձեզի ընտրել գործադիր ժողովը, սոյն ընտրութենէն վերջ Համագումարը, ըստ հրաւիրագրի, ցրուի՝ մինչեւ որ գործադիր ժողովը կրկին գումարուելու համար զայն հրաւիրէ: Իրաւ է, որ հրաւիրագրին մէջ մասնաւորուած է, թէ Համագումարին կրկին գումարումը Խաղաղութեան Վեհաժողովին բացման օրը տեղի պիտի ունենայ, վերստին քննելու համար ծրագիրը եւ զայն պատշաճեցնելու վայրկեանին պահանջներուն, սակայն քաղաքական դէպքերը այնքան արագութեամբ իրարու յաջորդեցին, որ հաշտութեան բանակցութիւնները արդէն սկսած էին, երբ մենք հաւաքուեցանք: Այդ պայմանը ուրեմն լրացած է, քանզի դուք արդէն որոշեցիք յիշատակագիրը եւ զայն պատշաճեցուցիք ներկայ պահանջումներուն: Արդ, Համագումարին կանխատեսուած ցրումը աւելի եւս անհրաժեշտութիւն մը դարձած է:

Այսուհանդերձ, ես կը խորհիմ, որ օգտակար պիտի ըլլայ, եթէ Գործադիր Ժողովը՝ հաշտութեան կնքման օրը՝ կրկին գումարէ Համագումարը, որովհետեւ այն ժամանակ պէտք պիտի ըլլայ ուսումնասիրել աւագ կարեւորութիւն ունեցող նոր խնդիրներ, ապագայ հայկական կառավարութեան վերաբերեալ, զոր պիտի ստեղծէ Խաղաղութեան Վեհաժողովը, եւ նոր կարգադրութիւններ ընել՝ ընտրելու համար կանոնաւորապէս կազմուած ազգային ընդհանուր ժողով մը: Եթէ Ձեզմէ շատեր, օգտուելով իրենց Փարիզ գտնուելէն, կը փափաքին մեզի աջակցիլ, շատ օգտակար պիտի ըլլայ մասնաւոր յանձնախումբեր կազմել՝ ներգաղթի, վերաշինութեան, վնասուց հատուցման, եւ այլն, եւ այլն, որոնց մէջ ձեր գործակցութիւնը թանկագին պիտի ըլլայ: Վերջացնելու համար՝ կրկին կոչ պիտի ընեմ, սիրելի՛ հայրենակիցներս, ձեր ամբողջ հայրենասիրութեան, օգնելու ինծի, որ կարենամ հարթել այն դժուարութիւնը, որուն առջեւ կը գտնուինք՝ անդամներու որոշեալ նուազագոյն թիւին չգոյանալուն պատճառաւ, ընդունելով ձեզի առաջարկած կարգադրութիւնս, որ միայն պիտի կրնայ պահել մեր միութիւնը եւ առանց որուն՝ Խաղաղութեան Վեհաժողովին մօտ մեր ընելիք բոլոր ջանքերը ապարդիւն պիտի մնան եւ մեր դատին յաջողութիւնը մեծապէս պիտի վտանգուի:

Տիար Թէքէեան. Շատ բան պարզեց Նուպար Փաշայի յայտարարութիւնը: Ճիշդ է, այս ժողովը պիտի կանչուեր Հայաստանի ճակատագրին որոշուած պահուն, որ հիմա է, մինչդեռ այս յայտարարութենէն ետք մեզի ուրիշ բան չի մնար ընել՝ բայց եթէ դարձեալ նախկին Պատուիրակութեան պետին ձգել, որ իր ուզած մարդիկը առնէ եւ գործադիր մարմինը կազմէ:

Տիար Մասեհեան Խան. Պէտք է մէկ-երկու ամիս բացարձակ լիազօրութիւն տալ գործադիր մարմնին, որ աշխատի. այլապէս՝ բարդութեանց տեղի կու տանք:

Տիար Թէրզիպաշեան բողոքեց Հանրապետութեան պատուիրակներուն դէմ, որոնք քննադատած էին այս ժողովին ընտրական եղանակը, եւ աւելցուց, թէ Կովկասի մէջ կատարուած ընտրութիւնները, որոնք Ազգ. Խորհուրդի համար էին եւ կատարուած առհասարակ միութեանց /առեւտրական/, «քօօբերաթիւ»-ներու, ուսուցչական միութեանց, եւ այլն կողմէ, աւելի օրինական չէին, քան թէ սա: Կանոնաւորագոյն ընտրութիւն կարելի չէր հայկական այժմու իրականութեան մէջ. հետեւաբար՝ Համագումարը պէտք է օրինական նկատել:

Տիար Ահարոնեան. Տիար Թէրզիպաշեան, եթէ կ'ուզէք՝ այս ժողովը նկատեցէք թրքահայերու ժողով եւ ընտրեցէք երեք անդամ, մեզի հետ գործադիր մարմինը կազմելու համար:

Օրը տարաժամած ըլլալով, որոշուեցաւ յաջորդ նիստին թողուլ վիճաբանութեան շարունակութիւնը:

ՁԵԿՈՒՑՈՒՄ ՎԱՍԵՄ. ՊՕՂՈՍ ՓԱՇԱ ՆՈՒՊԱՐԻ ԿԻԼԻԿԻՈՅ ԽՆԴՐԻՆ ՆԿԱՏՄԱՄԲ

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Եգիպտոսէն հեռագիր մը ստացանք, որուն համեմատ՝ եգիպտահայերը չափազանց վրդովուած են Ֆրանսացւոց մեզի հանդէպ բռնած դիրքին համար: Վախ կայ, որ այս խռովութիւնը մինչեւ Կիլիկիա՝ հայկական զօրքերուն մէջ անցնի, ինչ որ վտանգաւոր դրութիւն մը կրնայ ստեղծել: Ասոր համար՝ կ'առաջարկեմ Կիլիկիա ղրկել Տիար Տոթք. Նեւրուզը, որ կ'ընդունի այս պաշտօնը իբրեւ Պատուիրակութեան ներկայացուցիչ, եւ որուն կարելի է առողջապահական առաքելութիւն մըն ալ վստահիլ՝ իր բժիշկի հանգամանքէն օգտուելով:

Տիար Տոթք. Նեւրուզի համաձայնութեամբ, որոշուեցաւ զինքը Եգիպտոս եւ Կիլիկիա ղրկել իբր Պատուիրակութեան ներկայացուցիչ:

ՁԵԿՈՒՑՈՒՄ ՎԱՍԵՄ. ՏԻԱՐ Գ. ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆԻ՝

ՄՏԱՒՈՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԷՍԻՆ ՆԿԱՏՄԱՄԲ

Նախագահ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան կարդաց հրաւիրագիր մը, որով յաջորդ օրը՝ Հայկական Խնդրին համար Մտաւորական Միութեան նախաձեռնած հանդէսին կը հրաւիրուէին Համագումարին անդամները:

Որոշուեցաւ յաջորդ նիստը յետաձգել Շաբաթ օրուան:

Տիար Տէրպէտէրեան առաջարկեց յանձնարարել նոյն հանդէսին բանախօսներուն, մասնաւորաբար Պ. Ալպեր Թոմայի, որ ծանրանան նաեւ այսօրերս ֆրանսական մամուլին մեզի հանդէպ բռնած անիրաւ դիրքին վրայ:

Նիստը փակուեցաւ ժամը 8 1/2-ին:

Նախագահ

ՀԱԱ, ֆ. 430, g. 1, գ. 18, թթ. 27-33: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ 9-րդ

5 մարտի 1919թ.

ՕՐԱԿԱՐԳ

1. ՆՊԱՏԱԿ ԵՒ ՁԵՌՆՀԱՍՈՒԹԻՒՆ ԱԶԳ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ

Տիար Հանըմեան. Մենք հոս չենք եկած մեծ աշխատանք մը կատարելու, այլ եկած ենք արդէն կատարուած աշխատանքի մը պտուղը քաղելու, աշխատանք՝ զոր երեւան բերած է մեր տանջուած, պայքարած, կռուած ժողովուրդը, եւ որ այժմ ողորմելի վիճակի մէջ է: Մենք միշտ աչքերնուս առջեւ ունենանք ասիկա եւ համաձայնութիւնը ինքնին կու գայ կը նստի մեր մէջ: Մենք չպիտի աշխատինք անպատճառ անունով մը որակելու այս ժողովը, այլ պիտի նայինք, թէ իրականին մէջ ի՞նչ կը ներկայացնէ ան: Արդ, իրականին մէջ անիկա Արեւմտահայ Ժողով մըն է, քանի որ հոս կովկասահայութենէն ներկայացուցիչներ չունինք իբր Համագումարի անդամ: Ըսողներ կան, թէ ընդարձակենք մեր Կովկասի պատգամաւորներուն ձայնի իրաւունքը եւ կոչենք այս ժողովը «Համազգային Ժողով»: Ասիկա անկարելի է, որովհետեւ ո՛չ մէկ պարագայի տակ երկու կամ երեք հոգի կրնան 35 հոգիի ձայնը ունենալ. եւ արդէն ատիկա բանաւոր ալ չէ: Իսկ եթէ նոյնիսկ այդպէս որոշենք ի սէր համերաշխութեան, ատիկա պէտք էր ընել Դիւանը ընտրելէ առաջ եւ ո՛չ թէ յետոյ: Բայց առաջ ալ կարելի չէր, որովհետեւ երկու հոգին ինչպէ՞ս պիտի կրնայինք բազմաթիւ յանձնաժողովներու մէջ դնել՝ բազմաթիւ ձայներով: Այս ժողովը ուրեմն Արեւմտահայ Ժողով է, որուն իմ կարծիքովս՝ կրնանք թեպէտ «Ազգային Ժողով» ըսել, բայց Փարիզ գումարուած ըլլալուն համար աւելի լաւ է ճշդել եւ կոչել իր բուն անունովը:

Ազգ. Պատուիրակութիւնը հռչակեց Հայաստանի միութիւնը. անկէ յետոյ՝ պէտք էր միացեալ կառավարութիւն հռչակել: Իմ կարծիքովս՝ հիմա այդ է, որ պիտի ընենք եւ այդ պիտի ըլլայ մեր մեծագոյն աշխատանքը: Մենք այժմ միայն Կովկասի մէջ ունինք անկախ հանրապետութիւն մը. պէտք է, որ իրաւունքը եւ միջոցը տանք անոր իր թեւին տակ առնելու նաեւ միւս մասերը, եւ անոնց անունով խօսելու: Թրքահայ ոեւէ համագումարի պարտքն է այս: Անշուշտ կրնանք անոր կառավարութիւնը փոփոխել, նոր անդամ աւելցնել, եւ այլն: Մեր մեծագոյն աշխատանքը կը կայանայ ուրեմն, ոեւէ տեղ Հայաստանի միացեալ կառավարութիւն ստեղծելու մէջ:

Ես Տիար Փափազեանի հետ համակարծիք չեմ, եւ ոչ մէկ վտանգ կը տեսնեմ Հայաստանի հողերը գրաւելուն մէջ, որովհետեւ՝ եթէ սպասենք, որ օտարը գրաւէ եւ

մեզի տայ՝ հետը անպատճառ լուծ մըն ալ կը դրուի: Խնդիրը կը կայանայ արդէն գոյութիւն ունեցող մարտական ոյժերը մեծցնելու, ուժեղցնելու եւ գործի սկսելուն մէջ: Հողը առաջին գրաւողինն է, եւ միայն դիւանագիտական աշխատանքը չի բաւեր: Պատուիրակութեան մինչեւ այսօրուան գործունէութիւնն ալ երբեք հակառակ չէ եղած ասոր: Ընդհակառակը:

Գալով այս նստաշրջանին մնայուն ըլլալու հանգամանքին, ես կը կարծեմ, որ ժողովը պէտք է մնայ մինչեւ որ իր ծրագիրը վերջացնէ, որմէ յետոյ անշուշտ աւելորդ է մնալը: Իսկ եթէ ներգաղթի, սոյն խնդիրներու համար յանձնաժողովներ ըլլան եւ գործ ըլլայ ընելիք, անոնք կրնան մնալ:

Դիտողութիւն մըն ալ պիտի ընեմ Դիւանին: Պէտք է ժողովը ամբողջական օրակարգ մը կազմէր եւ ապա ձեռնարկէր մէկիկ-մէկիկ հարցերը քննելու, որովհետեւ այս կերպ գործելով՝ արդէն մէկ հարցէն բազմաթիւ ուրիշներ յառաջ կուգան:

Տիար Չօպանեան. Մինչեւ որ ժողովը չորոշէ իր ձեռնհասութեան եւ իրաւասութեան սահմանը, չի կրնար նախապէս օրակարգ կազմել:

Տիար Հանըմեան. Կ'առաջարկեմ կազմել Ժողովին ամբողջական ծրագիրը եւ մէկ քանի կարեւոր որոշումներ անմիջապէս անցընելով՝ հեռագրով հաղորդել մամուլին եւ գաղութներուն, որոնք աչքերնին յառած եւ անհամբեր՝ մեծ բանի կը սպասեն մեզմէ: Պէտք է որոշել նաեւ ժողովին հանդիսաւոր բացման խնդիրը:

Տիար Տէր-Ստեփանեան. Համագումարին բնոյթը որոշելու համար սխալ պիտի ըլլար զայն նմանցնել անպատճառ խորհրդարանի՝ այս հաստատութեան սեղմ իմաստով: Ոեւէ բանի, եւ հետեւաբար՝ ոեւէ քաղաքական մարմնի դասաւորումը տէրութեան համար միայն կ'ըլլայ: Մեր ժողովը, ուրեմն, է՛ եւ պէտք է ըլլայ մարմին մը ձեւուած՝ վայրկեանին եւ իր կատարելիք դերին պահանջներուն համաձայն: Այս Համագումարը «Ազգային» է, քանի որ ան քննեց եւ վաւերացուց Խաղաղութեան Վեհաժողովին ներկայացուած Յիշատակագիրը, որ համազգային նկարագիր ունի եւ ստորագրուած է Տիարք Պօղոս Փաշայի եւ Ահարոնեանի կողմէ: Այս Համագումարին իրաւասութիւնը՝ արեւմտահայ գործերու մէջ՝ բացարձակ է, քանի որ իրմէ աւելի հեղինակաւոր մարմին մը չկայ: Համագումարին այս բացարձակ իրաւասութիւնը հին Պատուիրակութիւնը կ'ընդունի, քանի որ կը պատրաստուի իր հրաժարականը ներկայացնել անոր, որպէսզի անկէ նոր գործադիր մարմին մը բղխի: Տրուած ըլլալով այս պարագան՝ Համագումարին տեւողութիւնը չի կրնար նախապէս որոշուիլ. ան պէտք է տեւէ տրամաբանօրէն մինչեւ Հայկական Հարցին լուծումը: Եթէ մենք գիտակից ենք այն պատասխանատուութեան, զոր պիտի ստանձնենք՝ ընդունելով Կաթողիկոսէն նշանակուած Պատուիրակութեան հրաժարականը, եւ անոր տեղ նորը ընտրելով, պարտաւոր ենք նոր Պատուիրակութեան կողքին մնալ իբր համարառու եւ քննող մարմին, մինչեւ Հայ Հարցին քաղաքական վերջնական լուծումը:

Մեզմէ ոմանք Համագումարին գլխաւոր գործը կը նկատեն Միացեալ Հայ կառավարութեան մը ստեղծումը: Ասիկա շատ մեծ եւ հեռաւոր նպատակ մըն է: Ըստ իս՝ մեր առաջին եւ գլխաւոր նպատակը, որմէ ամէն բան կախում ունի, քաղաքականապէս Հայ Դատը շահիլն է: Միացեալ կառավարութիւն կազմելու անհրաժեշտութիւնը շեշտողները կը մղուին պետութիւնները կատարուած իրողութեան մը առջեւ դնելու օգտակարութեան գաղափարէն: Բայց այս կատարուած իրողութիւնը լաւագոյն ենթադրութեամբ կրնանք առաջ բերել, քանի որ կ'ուզէի, որ արեւմտահայ ներկայացուցիչներ երթան մասնակցելու Երեւանի խորհրդարանին, առնուազն 3-4 ամիսէն, երբ արդէն Հայաստանի բախտը վճռուած կըլլայ: Եթէ ուրեմն մենք անկեղծ ենք միութիւնը առաջ բերելու մեր փափաքին մէջ եւ չենք ընդունիր, որ գոյութիւն ունենան այլեւս տաճկահայեր եւ ռուսահայեր, ու եթէ օգտակար կը նկատենք Հայ Միացեալ կառավարութեան մը կարելիօրէն շուտ գոյութիւնը, նկատենք մեր Համագումարը Համազգային Համագումար, յայտարարենք, որ ամբողջ հայերը Արեւելահայ Հանրապետութեան կառավարութիւնը եւ խորհրդարանը կը նկատեն իբր

ամբողջ Հայաստանի կառավարութիւն ու խորհրդարան: Յայտարարենք, որ մեր ընտրելիք Պատուիրակութիւնը, Հանրապետութեան Պատուիրակութեան հետ լուծուելով, պիտի ներկայացնէ իր ամբողջութեամբ Հանրապետութեան կառավարութիւնը, եւ նկատենք մեր Համագումարը իբր համարառու մարմին մը Պատուիրակութեան կողքին, որ պարագաներու բերումով չի կրնար կանոնաւոր յարաբերութեան մէջ գտնուիլ, ինչպէս կ'ընեն ուրիշ պատուիրակութիւններ, իր կառավարութեան հետ: Բայց պէտք է քննել նախ հարցը, թէ քաղաքական տեսակէտէն միացեալ կառավարութեան ստեղծումը նպաստաւո՞ր է մեզի, թէ ան՝ մեր հարցին կեդրոնը դեպի Կովկաս չի՞ փոխադրեր, տկարացնելով մեր պահանջը մասնաւորապէս Կիլիկիոյ վրայ:

Ամեն. Դուրեան Արքեպ. Իրաւունք մը ինչ չափով որ կը տրուի մեկու մը, այն է որ կը շինէ անոր իրաւունքը եւ պատասխանատուութիւնը: Այս ժողովին ներքին կազմը՝ իր տարրերուն մէջ՝ տարակոյս չկայ, որ հաւասար եւ ներդաշնակ չէ: Հոս եկողներուն ամէնուն միեւնոյն իրաւունքը տրուած չէ: Ճիշդ է, բոլորն ալ կը նշմարեն հեռաւոր եւ աղօտ կէտ մը, որուն շուրջ պիտի համագործակցէին. բայց որովհետեւ որոշապէս չէին գիտեր, հետեւաբար եւ որոշ իրաւունքներ չէին առած իրենց ընտրողներէն: Ասոր համար է, որ ես կը կարծեմ, թէ ժողովը՝ մինչեւ միացեալ կառավարութիւններ ստեղծելու չափ առաջ երթալու իրաւունք չունի: Ատկէ առաջ մենք ուրիշ գործ մը ունինք ընելիք, եւ եթէ յաջողութեամբ գլուխ բերենք՝ շատ ուրախ եւ շատ գոհ ըլլալու պատճառ կ'ունենանք. այն է՝ ստեղծել Պատուիրակութիւն մը, որուն բոլորս ալ մեծ վստահութիւն ունենանք եւ որ կարողանայ Կովկասի կառավարութեան ներկայացուցիչներուն հետ ճշմարտապէս միացեալ մարմին մը կազմել: Եւ ասիկա չափազանց անհրաժեշտ է, որովհետեւ պէտք է օտարին առջեւ միացած երեւալ: Այս մարմնին մէջ եթէ մէկը մէկուն եւ միւսը միւսին անունով կը խօսի, պատճառը այն է, որ անոնցմէ իւրաքանչիւրը աւելի տեղեակ եւ ծանօթ է իր մասին, եւ որով ամբողջ Հայաստան աշխարհի ներկայացումը ճիշդ կ'ըլլայ: Եթէ այդ Պատուիրակութիւնը կազմուի՝ չեմ կարծեր, որ ցրուիլը ճիշդ ըլլայ. մենք նախ պատասխան ունինք տալու, երբ բոլորս երկիր վերադառնանք: Իմ խելքս չի հասնիր, որ առանց զօրքի, առանց ոյժի, հայ ժողովուրդին այս թշուառ վիճակին մէջ, միացեալ կառավարութիւն ինչպէ՞ս կը ստեղծուի՝ առանց հողին տէր դարձած ըլլալու: Պատուիրակութեան յաջող ընտրութիւնը ես մեծ բան մը կը նկատեմ՝ իբրեւ առաջին կառավարական ձեւ:

Գեր. Յովհաննես Վ. Թորոսեան. Այս ժողովին ձեռնհասութիւնը եւ դերն է ճշդել ըլլալիք գործին խոշոր գիծերը եւ յանձնել գործադիր մարմնին, որ իրագործէ հայկական բացարձակ ազատութիւնը: Բայց եթէ այս ժողովը այս մեծ հարցերը դնէ եւ երթայ, Պատուիրակութիւնը որո՞ւ պիտի տայ իր հաշիւը եւ որո՞ւ խորհուրդ պիտի հարցնէ՝ իր տարակոյսներուն եւ տատամսումներուն մէջ: Ես այդ Պատուիրակութիւնը, որ իր հաշուետուութիւնը ապագայի խորհրդարանին պիտի վերապահէ, «աննորմալ» վիճակի մէջ կը նկատեմ: Այս համագումարին դերն է մշակել նաեւ ներգաղթի, պարենաւորման եւ այլ խնդիրները եւ գործի սկսիլ, որմէ յետոյ Ժողովը կրնայ ցրուիլ՝ իւրաքանչիւր անդամ իր տեղը աշխատելու համար, բան մը, որուն ժողովուրդը այնքան պէտք ունի: Կը կարծեմ, թէ Հայաստանի միացման գործը առանց ոյժի կարելի չէ. օրինակ՝ իտալական Սավուայի տէրութեան կազմուիլն ու ընդարձակուիլը: Կովկասի Հանրապետութիւնն ալ պէտք է կամաց-կամաց տարածուի եւ հռչակէ Միացեալ Հանրապետութիւն:

Տիար Չօպանեան. Այն օրէն, որ շրջաբերական-հրաւիրագիրը ուղղուած է, պայմանները նոյնը չեն մնացած: Կազմակերպողները այս ուշ թուականը դրին, որպէսզի համազգային ժողով մը ըլլայ ասիկա, եւ որուն համար Պարսկաստանէն ու այլ գաղութներէ մարդիկ եկան: Այսօր եթէ վէճ կայ, յանցանքը մերը չէ. որովհետեւ դրութիւնը փոխուած է, հայկական պետութիւն մը կայ, որ առանձին իշխանութիւն եւ դիրք ունի: Եթէ այսօր կը փափաքինք, որ ասիկա համազգային ժողով ըլլայ, շատ

հասկնալի եւ բնական է, սակայն ի՞նչ կրնանք ընել, երբ Կովկասեան Հանրապետութիւնը իր ներկայացուցիչները ղրկած է Խաղաղութեան Վեհաժողովին, եւ որոնք չեն ուզեր մասնակցիլ այս ժողովին իբրեւ անդամ: Այս պարագային՝ այս ժողովը պիտի նկատենք, ինչպէս որ է արդէն, «Ոչ-փրկեալ Հայերու Ազգային Համաժողով»: Այս Համագումարը իսկապէս կոչուած է արեւմտահայութեամբ զբաղիլ, եւ բարեբախտութիւն է, որ Կովկասէն եկած պատգամաւորներն ալ հոս ըլլալով՝ ստորագրած են մեր պաշտօնական Յիշատակագիրը տէրութեանց ուղղեալ: Պէտք է ընտրենք ուրեմն Պատուիրակութիւն մը, որ զբաղի ոչ-փրկեալ հայերու խնդրով: Պէտք է կազմել նաեւ Յանձնաժողովներ՝ ներգաղթի, պարենաւորման, բրոբականտի եւ այլ գործերը ընելու համար: Համագումարը կրնայ թելադրութիւններ ընել Պատուիրակութեան եւ քոմիսիոն մըն ալ ընտրել՝ Դիւանին հետ Պատուիրակության ծրագիրը մշակելու համար:

Գալով հանդիսաւոր բացման խնդրին՝ ես խելացի կը գտնեմ, որ չըրինք: Աւելի լաւ է փակումը հանդիսաւոր ընել, երբ արդէն մեր Դատն ալ լուծուած ըլլալով՝ վիճակնիս որոշուած կ'ըլլայ: Թող թոյլ տրուի ինծի նաեւ Դուրեան Սրբազանի մէկ խօսքին անդրադառնալ եւ ըսել, որ ճիշդ է, թէեւ արեւմտահայերս շատ չարչարուած, կարօտուած ժողովուրդ ենք, բայց «Թան»-ի խմբագրին իսկ հիացում կը պատճառենք մեր գործունէութեամբը, պահանջներով եւ յամառութեամբ: Մենք ունինք Հայկական Լեգէոնը, որ կորիզն է արեւմտահայ բանակին. պէտք է ուժեղցնել, միջոցներ ստեղծել մեծցնելու այդ բանակը, որ յետոյ պիտի միանայ Արարատեան Հանրապետութեան բանակին՝ կազմելու Հայաստանի միացեալ բանակը:

Տիար Բարսեղեան. Անհրաժեշտ կը տեսնեմ Հայաստանի զինուորական ոյժին զօրեղացումը եւ գրաւումները: Անդրանիկը, իր յամառութեան շնորհիւ, ի վերջոյ անգլիական իշխանութիւններու կողմէ յարգուեցաւ, իր գրաւումներուն մէջ: Թրքահայաստանի դեռ չգրաւուած մասերը ո՞ր պետության պիտի պատկանին՝ ատիկա մենք պիտի որոշենք: Վաղը, գարնան, եթէ Անդրանիկը առաջին պատեհ առիթով երթայ եւ գրաւէ Վանը ու միւս տեղերը, անոնք մերը եղած կ'ըլլան ալ: Մինչեւ այդ՝ եթէ սպասենք որ ուրիշները մեզի տան, կրնանք շատ դժուարութեանց հանդիպիլ: Պատուիրակութիւնը շատ գործ ունի ընելիք, բայց որոշ տիպի, եւ ատիկա՝ դիւանագիտական աշխատանքն է: Ըստ իս՝ մնացեալը պէտք է Երկրին մէջ ըլլայ եւ կեդրոնական կառավարութեան կողմէ:

Միացեալ կառավարութիւն հռչակելը ես անհրաժեշտ կը տեսնեմ, եւ ասիկա երբեք չի տկարացներ Կիլիկիոյ ու Թրքահայաստանի խնդիրը, այլ ընդհակառակը, որովհետեւ այն ատեն՝ կառավարութիւնն իսկ է, որ պիտի զբաղի անոնցմով: Միւս կողմէ՝ այդ կառավարութիւնը որքան իր սահմանը ընդարձակէ, իր զօրքերը կը շատնան: Արդ, անմիջապէս պէտք է ստեղծել կեդրոնական կառավարութիւն մը, որուն երկրէն դուրս ունեցած դիւանագիտական գործերը պիտի վարէ Պատուիրակութիւնը:

Տիար Տամատեան. Ժողովին ուշադրութիւնը այն կէտին վրայ կը հրաւիրեմ, որ ես կը մնամ միշտ իմ նախորդ կարծիքներուս վրայ եւ համամիտ չեմ այսօրուան խօսուածներուն: Բայց խնդիրը շատ կարեւոր կը համարեմ, որովհետեւ կախում ունի Ժողովին իրաւասութեան խնդրէն: Այս Ժողովին երկարաձգումը երբեք վնասակար չէ: Ես կ'առաջարկեմ յանձնաժողով մը ընտրել, որ խորացնէ այս հարցը եւ մեզի բանաձեւ մը բերէ, որուն շուրջ՝ վստահ եմ, թէ բոլորս ալ համաձայն պիտի ըլլանք:

Տիար Սայեան. Քանի կը ծեծուի խնդիրը, այնքան աւելի կը մօտենանք գործին, որովհետեւ մինչեւ հիմա մենք անուններով կը զբաղէինք: Իսկապէս՝ մեր ամէնէն աւելի կարեւոր գործը Պատուիրակութիւն մը ընտրելն է, որ անգամ մը մեր գործը թուղթի վրայ վերջացնէ: Իսկ գալով այս ժողովին մնայուն ըլլալու խնդրին, ես կ'առաջարկեմ ընտրել Պատուիրակութիւն մը, մշակել ներգաղթի, պարենաւորման եւ այլ խնդիրները, եւ սկսիլ գործադրութեան: Այն ատեն է միայն, որ պիտի տեսնենք, թէ ժողովը պէ՞տք է ցրուի, թէ՞ ոչ. հիմակուընէ որոշել այդ՝ աւելորդ է:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Ազգ. Պատուիրակութեան ցրուած հրաւիրագրին համաձայն՝ այս Ժողովը երկու բանի համար գումարուած է: Նախ՝ պատրաստել եւ վաւերացնել Խաղաղութեան Վեհաժողովին տրուելիք Յիշատակագիրը եւ ապա՝ ընտրել Պատուիրակութիւն մը, որ հետամուտ ըլլայ ձեռք բերելու այդ ծրագրին ընդունելութիւնն ու գործադրութիւնը: Բայց կը տեսնուի, որ Ժողովս այսքանով չի բաւականանար եւ կ'ուզէ զբաղիլ նաեւ միացեալ կառավարութեան մը ստեղծման եւ այլ խնդիրներով: Կ'առաջարկեմ, հետեւաբար, մէկ կողմէն կատարել իր առաջին պարտականութիւնը, եւ միանգամայն ընտրել յանձնախումբ մը, որ մշակելով խնդիրները ու միացնելով ներհակ բաժինները, մեզի բանաձեւ մը ներկայացնէ:

Ն. Վսեմութեան այս առաջարկութիւնը ընդունելով՝ միաձայնութեամբ ընտրուեցաւ յանձնախումբ մը, որուն անդամ նշանակուեցան՝

Ամեն. Դուրեան Արքեպիսկոպոս
Տիարք՝ Չօպանեան
Հինդլեան
Փաստրմաճեան
Փափազեան
Տամատեան
Շանթ
Թէքէեան

Այս յանձնախումբին պիտի մասնակցին նաեւ Պատուիրակութեան Վսեմ. Նախագահը եւ Արարատեան Հանրապետութեան ներկայացուցիչները:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՎՍԵՄ. ՊՕՂՈՍ ՓԱՇԱՅԻ ԱԶԳ. ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ազգ. Պատուիրակութեան Նախագահ Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար Ժողովին հաղորդեց Իտալիոյ Հայկական Քոմիթէէն ստացած մէկ նամակը, որով կը ծանուցանէին, թէ հանգանակութիւնը սկսած է, եւ թէ արդէն իսկ 250.000 լիրա /իտալական ֆրանք/ հաւաքուած է:

ԱՄԵՐԻԿԵԱՆ «ՄԱՆՏԱ»Ն

Ազգ. Պատուիրակութեան Նախագահ Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար կարդաց նաեւ երէկուան «Թայմզ»-ի հրատարակած մէկ լուրը, որուն համեմատ Մ. Նահանգներու Նախագահ Պ. Ուիլսոն յայտնած է, թէ Մ. Նահանգները կ'ուզեն իրենք ըլլալ Հայաստանի հոգատար պետութիւն:

Ասոր վրայ՝ Տիար Բրօֆ. Տէր-Յակոբեան մանրամասն կերպով նկարագրեց Ամեն. Դուրեան Արք.-ի եւ իր ունեցած ունկնդրութիւնը նախագահ Ուիլսոնի հետ, որ չափազանց սիրալիր եւ խոստումնալից եղած է: Բրօֆէսէօրը այդ տեսակցութեան մասին պատրաստած ըլլալով գրաւոր զեկուցում մը, յանձնեց Դիւանին, խնդրելով, որ արձանագրուի Համագումարի ատենագրութեանց մէջ:

Ժողովը ընդունեց բրօֆէսէօրին այս առաջարկութիւնը:

Սիաւասիկ այդ գրաւոր զեկուցումը:

ԱՄԵՆ. ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊ. ԴՈՒՐԵԱՆԻ ԵՒ ԲՐՕՖ. ՏԷՐ-ՅԱԿՈԲԵԱՆԻ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՆԱԽԱԳԱՀ ՈՒԻԼՍՈՆԻ ՀԵՏ

Նախագահ Ուիլսոն Դուրեան Սրբազանը եւ զիս ընդունեց Փետրուար 12-ի երեկոյեան ժամը 8 1/2-ին, Hotel Murat-ի մէջ:

Նախ ես խօսք առնելով ներկայացուցի Սրբազանը իբր նախկին Պատրիարք եւ իբր նախագահ Սինոդին:

Նախագահը գոհունակութիւն յայտնեց զմեզ տեսնելուն համար:

Սրբազանը ըսաւ. «Շատ շնորհակալ ենք, որ Պ. Նախագահը մեզ այս պատեհութիւնը կու տայ մեր կողմանէ, ինչպէս ամբողջ հայ ազգին անունով, իրեն նկատմամբ շնորհակալութիւն յայտնելու այն բարիքներուն համար, զորս ըրած են մեր բազմաչարչար ժողովուրդին ինքն ու այն ժողովուրդը, որուն նախագահն է: Զայս կը նկատենք ո՛չ այնքան իբր անձնական այցելութիւն մը, այլ աւելի իբր ուխտագնացութիւն մը մօտը ազատարարին զրկուած ու հարստահարուած ազգերուն, որոնց գլուխն է անտարակոյս հայ ազգը»:

Այս խօսքերը թարգմանեցի նախագահին:

Նախագահը ըսաւ. «Շնորհակալ եմ: Ես միայն մէկ օրինակն եմ Ամերիկայի ժողովրդեան: Իմ ժողովուրդիս կամքն է, որ ես ապահովեմ հայոց համար անկախութիւն եւ անոնց իրաւունքները պաշտպանեմ: Բայց Հայաստանի քարտէսին հարաւային մասին, Միջերկրականի արեւելեան եզերքի մասին, հակառակ պահանջներ կան: Վաղն իսկ պատեհութիւն պիտի ունենանք սուրիական խնդիրները քննելու եւ այդ առթիւ բնականաբար պիտի քննենք նաեւ այդ հակառակ պահանջները»:

Պատասխանեցինք, թէ երբեք մեր մտքէն իսկ անցած չէր ասկէ առաջ, թէ կարելի էր Կիլիկիան մասը նկատել Սուրիոյ. թէ աշխարհագրօրէն, պատմականօրէն, տնտեսականօրէն, մեր աւանդութիւններովը այնքան Հայաստանի անբաժան մասը կը նկատենք Կիլիկիան, որ ամրօրէն կը կառչինք անոր: Մեզ ամէն տեսակէտով անհրաժեշտ կը նկատենք Միջերկրականի այդ եզերքները ունենալ եւ այդու նաեւ՝ Արեւմուտքի հետ հաղորդակցութեան դիւրութիւն:

Նախագահը այս խօսքերը քանիցս ընդմիջեց՝ յայտնելու համար իր կատարեալ հաւանութիւնը այս յայտարարութեանց, եւ մեծ եռանդով ընդունեց զանոնք:

Գիտեք որ,- ըսաւ,- մեր մասնագէտները կան Կսեյիօնի մէջ: Անդադար շփման մէջ գտնուեցէ՛ք անոնց հետ եւ անոնց գլուխները ձեր գաղափարներովը լեցուցէ՛ք:

Մեր շնորհակալութիւնները կրկնեցէ՛ք իր հոգածութեան մասին:

Երբ ոտքի ելանք, Սրբազանը խնդրեց, որ մեր Պատուիրակութեան Նախագահին՝ Նուպար Փաշայի պատեհութիւն տայ իրեն անձամբ ներկայանալու եւ այս խնդիրներու մասին անձամբ խօսելու:

Նախագահը ըսաւ. «Ամէն պատեհութիւն պիտի տրուի ձեզ ձեր խնդիրներու մասին ձեր տեսակէտները պարզելու՝ յարմար առթիւ, յանձնախումբերու առջեւ»:

Կրկնեցինք դարձեալ, որ երբ պարագաները թոյլատրեն, բարեհաճի մեր նախագահն ալ տեսնել:

Ասոնցմէ զատ՝ քանի մը խօսքեր փոխանակուեցան նաեւ Պոլսոյ ամերիկեան վարժարաններուն նկատմամբ:

Ա. Տէր-Յակոբեան

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Այժմ համոզուած եմ, որ Պ. Ուիլսոն դիտմամբ խուսափած է ինծի հետ տեսակցութիւն մը ունենալէ, որպէսզի համաձայնութեան մը մասին չկասկածուի:

Տիար Տամատեան. Կ'ուզէի հարցնել Պօղոս Փաշայի, թէ արդեօք ճի՞շդ է այն զրոյցը, որուն համեմատ իբր թէ նոր եւ մասնաւոր համաձայնութիւններու եկած ըլլայ ֆրանսական կառավարութեան հետ:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Բացարձակապէս կը հերքեմ այդ զրոյցը:

Նիստը փակուեցաւ ժամը 8 1/2-ին:

Նախագահ

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 18, թթ. 34-39: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ 10-րդ

6 մարտի 1919թ.

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

1. ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆՔ ՏԻԱՐՔ ՓԱՓԱԶԵԱՆԻ ԵՒ ԹԷՐԶԻՊԱՇԵԱՆԻ

Օրակարգի անցնելէ առաջ կարդացուեցաւ Տիարք Փափազեանի եւ Թէրզիպաշեանի կողմէ ստորագրուած յետագայ գիրը, որով կարգ մը կարեւոր խնդիրներու մասին անմիջական լուծում կը պահանջէին.

Ազգ. Համագումարի Պատ. Նախագահութեան

Մեր գալուն առթիւ զեկուցման մէջ, ժողովիս յատուկ ուշադրութեան յանձնած էինք մի քանի խիստ անյետաձգելի առաջարկներ, որոնք, ըստ մեզ, հիմերն էին մեր քաղաքական պահանջներուն:

Առաջարկներու գլխաւորներն էին.

1. Իսլամացուած հայերը փութով հաւաքել տալու միջոցները խորհիլ եւ իրականացնել: Հաւատացէ՛ք, որ երկրի ներկայ պայմաններուն մէջ ամէն մէկ կորսուած օրը կորուստն է թերեւս բազմաթիւ այդ դժբախտներուն, որոնց ընդհանուր թիւը 200.000-էն նուազ չէ:
2. Ամսոյս 8-ին՝ Խաղաղութեան Վեհաժողովի յատուկ Յանձնաժողովը վերջացնելու է յանցաւորներու պատասխանատուութիւնը ճշդող տեղեկագիրը: Մեր կոտորածներու յանցաւորները ճշդելու եւ անոնց ցուցադրելու խնդիրը:
3. Ներգաղթի օրերը ահա մօտեցան: Ատոր համար չպէտք է սպասել քաղաքական մեր հարցին վերջնական լուծման. հարկ կա՞յ ըսելու, թէ ներգաղթի խնդիրը կարեւորագոյնն է: Գարուն է արդէն. ուղիղ մէկ ամսէն ցանք ընելու պատրաստութիւններ պիտի տեսնուին. առաջին իսկ հերթին առնուազն 100.000 ժողովուրդ պատրաստ պիտի ըլլայ Երկիր փոխադրուելու: Ձանոնք տեղաւորելն ու անոնց տնտեսութեան հիմը դնելը շատ բարդ ու ժամանակի կարօտ աշխատանք է:

Ձեկուցում ներկայացրածս օրէն 15 օր է անցեր եւ ժողովս ոչինչ չէ ըրած:

Անծանօթ է նաեւ մեզ՝ Պատուիրակութեան այս ուղղութեամբ ըրած քայլերը: Ծրագիր պատրաստա՞ծ է նա. բանակցութիւններ ունեցա՞ծ է. կամ ի՞նչ ելք ունեցած են իր դիմումները /եթէ եղած են/:

Անգամ մը յիշած՝ դարձեալ կը կրկնենք. յիշեալ խնդիրները յաջող ելք կրնան ունենալ, եթէ մեր առաջարկները Դաշնակիցներէն ընդունուելով՝ այստեղէն հրահանգուին Դաշնակիցներու Պոլսոյ լիազօրներուն՝ ի գործադրութիւն:

Արեւմտահայ Խորհուրդի պատուիրակներէն
Աւետիս Թէրզիպաշեան
Վահան Փափազեան

Ժողովը յարմար նկատեց օրակարգ անցընել այս գրութիւնը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՎՆԱՍՈՒՑ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԽՆԴԻՐ

Վնասուց Հատուցման Յանձնախումբին կողմէ Տիար Թէրզիպաշեան խօսք առնելով մանրամասն տեղեկութիւններ տուաւ: Յանձնախումբը՝ վնասները որոշելու խնդրին մէջ՝ վնասեալները երկուքի բաժնած է՝ գիւղի բնակչութիւնը եւ քաղաքի բնակչութիւնը: Պահանջները գլխաւորաբար հաստատուած են թիւրք կառավարութեան դրած հարկերու համեմատութեան վրայ, որով ցոյց տրուած թիւերը արդարացի հիմքի վրայ են: Այսպիսով՝ ամբողջ Թուրքիոյ եւ Կովկասի հայ պահանջներուն գումարը կ'ըլլայ մօտ 20 միլիառ ֆրանք:

Տիար Աղաթօն Պէյ. Կ'առաջարկեմ ստացուելիք գումարին մէջ աւելցնել նաեւ 1896-ի եւ Ատանայի ջարդերուն ժամանակ մեր կրած վնասները, զորս կարելի պիտի ըլլար ճշդել Լեփսիուսի պատրաստած մէկ հին եւ մանրամասն վիճակագրութենէն:

Տիար Տամատեան. Համամիտ եմ Աղաթօն Պէյի, բայց կ'առաջարկեմ մեր պահանջած հատուցման խոշոր գումարէն դուրս հանել կարգ մը մեծ միութիւններու, օրինակ՝ Քաղաքներու Միութիւնը, եւ այլն, եւ անոնց մեզի բերած օգնութիւնը, որ արդէն վճարուած է ռուս կառավարութեան կողմէ. իսկ հայկական ընկերակցութեանց օգնութիւնները պէտք է եղբայրական օգնութիւն նկատել միայն:

Տիար Հինդլեան. Բացարձակապէս հակառակ եմ հին հաշիւներն ալ պահանջելու, որովհետեւ այսօրուան Խաղաղութեան Վեհաժողովին իրաւասութիւնը կը տարածուի միայն 1914-ի պատերազմի միջոցին եւ ո՛չ անկէ առաջուան դէպքերուն. միւս կողմէ՝ մենք այս պահանջը կ'ընենք իբրեւ պետութիւն, բան մը որ չէինք արդէն հին ջարդերու թուականին:

Ամեն. Դուրեան Արքեպ. Ատանայի ջարդէն յետոյ հայկական իշխանութիւնները կերպով մը համաձայնութեան եկած են թրքական կառավարութեան հետ, հատուցման խնդրին վրայ:

Տիար Սայեան. Ես կը կարծեմ, թէ Խաղաղութեան Վեհաժողովը աւելի լայն իրաւասութիւն ունի, քան ինչ որ կը կարծէ Տիար Հինդլեան, եւ ատոր ապացոյցն ալ այն է, որ Ֆրանսա կը պահանջէ նաեւ իր 1870-ին կրած վնասներուն հատուցումը: Մեզի համար ալ նոյն բանն է, քանի որ ո՛չ միայն 96-ի ջարդերուն ատեն, այլ՝ անկէ շատ առաջ ալ եղած կորուստները եւ կոտորածները միշտ միեւնոյն դրդապատճառը ունեցած են՝ որ է մեր ազատութեան ձգտումը, եւ որ բոլորովին կը համապատասխանէ այսօրուան տրուած սկզբունքներուն: Մեր այսօրուան վնասները բնական շարունակութիւնն են հիներուն, միշտ միեւնոյն սկզբունքներուն համար: Ուրեմն, պէտք է մեր հին վնասներն ալ պահանջենք:

Տիար Թէքէեան. Քանի որ մեզ կը մեղադրեն չափազանց պահանջկոտ եղած ըլլալ, մենք այս խնդրին մէջ է, որ ցոյց պիտի տանք մեր չափաւորութիւնը: Ֆրանսական հին պահանջները մերինին չեն նմանիր. անոնց այսօրուան կռիւը շարունակութիւնն է հինին: Այն ատեն յաղթուած էին. հիմա կը յաղթեն: Մինչդեռ մեր վնասուց հատուցման պահանջը պիտի հիմնուի այս կռուի ընթացքին յաղթող կողմին հետ գտնուած ըլլալնուս եւ մեր երեւան բերած ոյժին վրայ: Կրնանք հին կորուստները յիշատակել, բայց առանց աւելցնելու այսօրուան գումարին վրայ:

Տիար Չօպանեան. Մեր այսօրուան պահանջները հիմնուած են այս պատերազմի ընթացքին մեր՝ իբր պատերազմիկ վարուած ըլլալուն վրայ, մինչդեռ 1909-ի, 1896-ի եւ աւելի հին ժամանակ մեր կրած կորուստները այդ հանգամանքը չունին. աւելի լաւ է զանոնք անցողակի յիշատակել, ինչ որ պիտի ուժեղացնէ մեր ներկայ պահանջներուն իրաւունքը, առանց աւելցնելու ընդհանուր գումարը:

Տիար Տէր-Ստեփանեան. Խաղաղութեան Վեհաժողովը մինակ պատերազմիկներուն չէ որ հատուցում պիտի ընէ, եւ ո՛չ ալ հատուցումը հիմնուած

պիտի ըլլայ իբր պետութիւն ներկայանալու հանգամանքին վրայ: Երբ Ֆրանսան իր վիճելի իրաւունքները կը պահանջէ, մեր իրաւունքը անտարակուսելի կը դառնայ: Ֆրանսայի եւ Գերմանիոյ միջեւ ամէն խնդիր վերջաւորութիւն մը գտած է 1870-ի պատերազմին յաջորդող խաղաղութեամբ, մինչդեռ մեր հարցը, բացուած 1876-ին, երբեք լուծում չէ գտած, հակառակ պետութիւններու Պերլինի Վեհաժողովին մէջ ստանձնած պարտքին ու խոստումին, եւ մենք կէս դար շարունակ բողոքողի եւ պահանջողի դերին մէջ մնացած ենք: Այսօր, ուրեմն, պէտք է պահանջենք 1896-ի եւ 1909-ի ջարդերու վերաբերող հատուցումները:

Տիար Բարսեղեան. Երբ ֆրանսացիք կը պահանջեն իրենց հին հաշիւները, մենք ալ իրաւունք ունինք, որովհետեւ մեր պայքարին ալ պատճառները միշտ միեւնոյնը եղած են: Այս պատերազմի միջոցին մեր կրած հալածանքը շարունակութիւնն է հիներուն: Իսկ գալով այն վախին, թէ պահանջած գումարնիս շատ մեծ կրնայ ըլլալ, տեղի չկայ, որովհետեւ այդ գումարին մեծագոյն մասը հաւանօրէն հաշուակցելով պիտի կարգադրուի: Հայաստանի մէջ մնացող թիւրք պետական եւ կրօնական կալուածները /վագըֆ/ հարկաւ չեն կրնար մնալ նոյն տէրերու ձեռքը. իսկ ատոնք բաւական մեծ հարստութիւն մը կը կազմեն: Նկատի պէտք է առնել նաեւ, որ այդ կալուածներն ալ հիմա մեծ մասով աւերուած վիճակի մէջ են եւ նորոգուելու պէտք ունին, որպէսզի բանի մը ծառայեն:

Տիար Թէրզիպաշեան. Մենք իբրեւ պատերազմիկ միայն իրաւունք ունինք մեր պահանջները ընելու. եթէ հիներն ալ պահանջենք՝ իրաւական հողի վրայ չենք մնար:

Տիար Տէր-Յակոբեան. Մեր հին հաշիւները ընենք եւ անոր լուծումը ձգենք Վեհաժողովին: Բայց հիմա կրնանք արծարծել ապահովագրական ընկերութիւններու հարցը, որոնք ջարդերուն ժամանակ չվճարեցին իրենց պարտքը:

Տիար Մասեհեան Խան. Խնդիրը առաւելապէս իրաւաբանական հարց մըն է, հետեւաբար՝ լաւ է մեծ իրաւագէտի մը խորհուրդը հարցնել:

Տիար Փափազեան. Նոյն միտքէն եմ. յիշատակել հիները, առանց պահանջելու:

Տիար Հինդլեան. Տիար Աղաթօն Պէյի առաջարկը կը գտնեմ անընդունելի՝ հետեւեալ պատճառներով. 1. 1896-ի եւ միւս հին դէպքերու պատճառով հայութեան կրած վնասները չեն կրնար պահանջուիլ այսօր Թուրքիայէն, ներկայացնելով Խաղաղութեան Վեհաժողովին, որովհետեւ Խաղաղութեան Վեհաժողովը ունի իր որոշ եւ սեղմ սահմանները, որոնցմէ դուրս չի կրնար ելլել: Ան պէտք է ընէ հաշուեյարդարութիւնը 1914-1919-ի պատերազմին ստեղծած հողային, վնասուց, եւ այլն խնդիրներուն: 2. Հայկական պահանջները առաջին անգամ այս Վեհաժողովին կը ներկայանան պետական կազմի եւ անկախութեան ձեւին տակ, քաղաքական հիմ ունենալով Թուրքիայէն եւ Ռուսիայէն անջատուած ազգի մը դիրքը, որ դաշնակից է Խաղաղութեան Վեհաժողովին մասնակցող յաղթական ազգերուն: 3. 1896-էն մինչեւ 1914՝ հայութիւնը ո՛չ միայն անջատուած չէ Թուրքիայէն, այլ՝ իբրեւ օսմանցի մասնակցած է Թուրքիոյ պետական կեանքին, թիւրք երեսփոխանական ժողովին հայ երեսփոխաններ տալով եւ այլ մասնակցութեամբ: Այս հիման վրայ է, որ 96-էն ետք 1909-ին, երբ Ատանայի ջարդը պատահեցաւ, թրքահայութիւնը՝ յանձին ազգ. իշխանութիւններու՝ համաձայնութիւն գոյացուց թիւրք կառավարութեան հետ: Եթէ 1896-ի վնասները պիտի ուզենք, աւելի առաջ եղած ջարդերուն վնասները ինչո՞ւ չպահանջել: Ասոնք իրաւագիտական հիմերն են, որոնք որոշապէս ցոյց կու տան այս պահանջին անհիմն ըլլալը: Ասկէ զատ՝ կան քաղաքական պատճառներ, որոնք զգուշացնելու են մեզ՝ նման պահանջներ դնելէ: Կը տկարացնենք մեր այսօրուան դիրքը՝ շփոթելով ճնշուած ազգի մը, դաշնակցի մը, պետական անկախութեան հասած ազգի մը պահանջները: Զգուշանանք երեւակայական պահանջներ դնելէ, ջանալով պետական հասունութիւն ունեցող դրական ազգի մը համբաւը շահիլ, որուն այնքան պէտք ունինք այսօր:

Տիար Օհանջանեան. Ես շատ դիտողութիւններ ունիմ ընելիք, բայց կարելիութիւն չկայ մեծ փոփոխութիւններ մտցնելու, քանի որ մինչեւ ամսոյս 7-ը ամէն ինչ պատրաստ պէտք է ըլլայ: Ամենէն առաջ պէտք է պատրաստել հիմնաւոր յառաջաբան մը հատուցման խնդիրքին մէջ: Վնասներու գնահատումները տնավարի եւ անհիմն կերպով կատարուած են. այստեղ աւելի հիմքեր բերել հարկաւոր էր, բացատրելու համար թէ ինչո՞ւ այս այսպէս է: Ինծի կը թուի, թէ օրինակ, գիւղացիներու կայքը աւելի կ'արժէ, քան թէ քաղաքացիինը. բայց ուշ է արդէն այս բոլորը փոփոխելու համար:

Տիար Փափազեան. Իբր անդամ Յանձնախումբին՝ քանի մը բացատրութիւններ պիտի տամ: Հատուցման յիշատակագրին սկիզբը մենք արդէն որոշած ենք, բայց որովհետեւ շատ փափուկ խնդիր մըն է, ձգած ենք, որ իրաւաբաններու հետ խմբագրեն: Իսկ պահանջումները հիմնուած են պետական տուրքերու վրայ /աշար, աղնամ, էմլաք/, որոնց քանակը ճշդած ենք եւ անկէ եզրակացուցած հայ ժողովուրդին կայքի եւ հարստութեան կորուստը: Չեմ կարծեր, թէ այսպիսով անհիմն եղած ըլլայ:

Գալով գիւղացւոց կայքին երեւութապէս աւելի քիչ գնահատման քան քաղաքացիինը, անոր համար է, որ գիւղացիին անշարժ ստացուածքը հողն է, որ վնասուած չէ եւ կը մնայ, մինչդեռ քաղաքացիին անշարժ ստացուածքը գլխաւորապէս շէնքերն են, որոնք աւելի կը գնահատուին. եւ անոնք ոչնչացած են: Սխալ է նաեւ, որ ռուսահայ եւ թրքահայ պահանջները զատ-զատ պիտի ներկայացուին: Մեր վնասներու «մօթիֆ»-ներն են միայն, որ առանձին պիտի կազմենք, որովհետեւ անոնք իրարմէ տարբեր են, մինչդեռ հաշիւը՝ առանձին սիւնակով, բայց մէկ տախտակի վրայ պիտի ըլլայ:

Տիար Տամատեան. Հատուցման Խնդրի Յանձնախումբը խղճմտօրէն կատարած է իր աշխատանքը. կը մնայ խմբագրել յառաջաբանը, տալ Պատուիրակութեան՝ որ անհամաձայն կէտի մը շուրջ կրնայ Յանձնախումբը կանչել եւ կարգադրել եւ որ պէտք է զայն յանձնէ Խաղաղութեան Վեհաժողովի քոմիսիոնին:

Տիար Տէր-Ստեփանեան. Կ'ուզէի գիտնալ, թէ ապահովագրական ընկերութիւնները պիտի վճարե՞ն, թէ՞ ոչ. այլապէս այդ հատուցումն ալ պէտք է այս ցուցակին մէջ աւելցնել:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Տեղեկացայ, թէ մասամբ վճարած են ապահովագրական ընկերութիւնները, որոնք իրենք իսկ պիտի ուզեն ապա տէրութիւններէն իրենց հատուցումը:

Տիար Հինդլեան. Մեր պահանջած հատուցումը ստանալու աւելի յոյս ունենալու համար՝ լաւագոյնը՝ կռիւէն ու ջարդերէն ազատուածներու կեանքը ապահովելու սկզբունքին վրայ ընել մեր պահանջները: Հաշմուածները /mutiles/ որոնք ո՛չ մէկ աշխատանքի ընդունակ են, հիմնաւոր իբրեւ մեռած նկատի առնել եւ ըստ այնմ դնել պահանջը, ինչպէս եւ խոշտանգուածներուն եւ բռնաբարուածներուն համար ո՛չ թէ իրենց վնասին կամ կորուստին փոխարէն պէտք է ուզել, այլ՝ իրենց կեանքը պահելու համար: Ես կը կարծեմ, թէ որպէսզի մեր պահանջը գործնական հողի վրայ ըլլայ՝ պէտք է կրճատենք մեր գումարը: Եւ յետոյ՝ շատ կարեւոր խնդիր մը. եթէ այս հատուցումը իբրեւ պետութիւն կը պահանջենք, պէտք է մտածենք նաեւ միւս ցեղերու մասին, որոնք մեր պետութեան մէջ պիտի ապրին: Ես կը կարծեմ, թէ մեր պատուիրակները կազմուելիք պետութեան մը կողմէ կը ներկայանան. հետեւաբար՝ պէտք է պահանջենք նաեւ մեր երկրին մէջ ապրող ցեղերու կորուստները:

Տիար Թէրզիպաշեան. Մենք դեռ պետութիւն չենք, ազգ ենք եւ նոր կազմուելիք պետութիւն: Գալով մեր պահանջած գումարին մեծութեան, պէտք չկայ վախնալու, որովհետեւ համեմատական բաշխում պիտի կատարուի, եւ մենք պէտք է ներկայացնենք մեր ճշմարիտ կորուստը՝ համեմատօրէն ստանալու համար:

Տիար Փաստրմաճեան. Բացի այն «ռէէլ» պահանջներէն, որ տուրքերու վրայ հիմնուած են, պէտք է պահանջենք նաեւ ապահովութիւն, որոշ տարիներու համար,

այն մէկ միլիոն թրքահայութեան, որ ayantdroit-ներն են երկու միլիոն զոհերուն: Ժողովին ուշադրութիւնը կը հրաւիրեմ նաեւ մեր պահանջած հատուցման գինին չափազանց մեծցած ըլլալուն վրայ:

Տիար Շանթ. Երկու խնդիր կայ, զորս պէտք է զատել իրարմէ. նախ՝ մեր վնասներուն հատուցումը, ապա՝ միջոցներ վերաշինութեան համար: Մենք պէտք է ներկայացնենք բոլոր հաշիւը, թէ՛ հինը, թէ՛ նորը, բայց պահանջենք միայն ներկայինը: Յետոյ՝ ես կը կարծեմ, թէ մենք պետութիւն ենք, իբրեւ այդ կը պահանջենք, եւ միայն այդ պարագային է, որ մեզի դրամ կու տան: Տիար Հինդլեանին մէջ բերած խնդիրը շատ լուրջ ուշադրութեան արժանի է, եւ մենք այն ժամանակ պարտաւոր ենք մտածել նաեւ քիւրտերուն եւ թիւրքերուն մասին, որ մեր պետութեան մէջ պիտի ապրին. եւ եթէ մենք անոնց համար ալ ուզենք ատիկա, լաւ տպաւորութիւն կը թողու արտաքին աշխարհի վրայ: Վերջապէս, այդ մարդիկը պէտք է կարելիութիւն ունենան ապրելու:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Վտանգաւոր է պետութեան անունով պահանջելը, որովհետեւ դեռ մեզ չեն ճանչցած եւ այդ պարագային կրնան չքննել իսկ մեր խնդիրը:

Տիար Փափազեան. Մենք իբրեւ ազգ է, որ կը պահանջենք, որ պատերազմի սկիզբէն կռուած է Դաշնակիցներու կողքին, թեւ վերջին շրջանին, նոյնիսկ երբ Կովկասեան Հանրապետութիւնը կազմուած չէր, իբրեւ ազգ էր, որ 4-5 ամիս պաշտպանեցինք միայնակ Հայաստանի սահմանները՝ միջոց տալով Դաշնակիցներու Միջագետքի բանակին իր ոյժերը ժողվելու: Իսկ այն առաջարկը, թէ մենք պիտի պահանջենք նաեւ մեր երկրին մէջ ապրող մահմետականներու վնասներն եւս, այստեղ այսպիսի խնդիր դնելը կը գտնեմ ես անհեթեթ: Ասիկա կ'ըսեմ ո՛չ թէ զգացումէ տարուելով, այլ՝ իրապէս անհիմն է, որովհետեւ նախ դեռ պէտք է ճշդել պատասխանատուները կոտորածին, որուն մէջ մեր երկրին մահմետական ժողովուրդներու մասնակցութեան չափը գիտենք, ու մինչդեռ անոնց մօտ կը մնան մեր տասնեակ հազարաւոր կանայք եւ երեխաներ: Սպաննուողներու համար մեր պահանջը իբր արեան գին չնկատելու համար, կրնանք իրենց ընտանիքները ապրեցնելու իբր միջոց պահանջել: Իսկ մեր բերած թիւերուն հիմնաւոր ըլլալը արդէն յայտնեցի քիչ առաջ:

Վիճաբանութեան վերջ տրուելով, Տիար Տամատեան ներկայացուց հետեւեալ բանաձեւը.

«Համագումարը, Յանձնաժողովին տեղեկագրին վրայ, դիտողութիւններէ ու բարեփոխութիւններէ վերջ զայն վաւերացնելով՝ կը վերցնէ իր օրակարգէն. կը յանձնարարէ Յանձնաժողովին՝ իր ներկայացուցած պատճառաբանութեանց հիման վրայ տեղեկագրին յառաջաբանն ալ պատրաստելէ վերջ յանձնել տեղեկագիրը Ազգ. Պատուիրակութեան. Պատուիրակութեան կողմէ դիտողութեանց պարագային, առանց անգամ մը ալ տեղեկագիրը ժողովին բերելու, Յանձնաժողով եւ Պատուիրակութիւն խորհրդակցաբար անոր մէջ կը մտցնեն հարկ եղած բարեփոխութիւնները, նկատի առնելով նաեւ ներկայ պատերազմէն առաջուան վնասուց հատուցման պահանջին բանաւորութիւնը կամ ոչ, հիմնուելով իրաւաբաններու կարծիքին վրայ:

Մ. Տամատեան»

Ժողովը միաձայնութեամբ ընդունեց այս բանաձեւը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ ՎՍԵՄ. ՊՕՂՈՍ ՓԱՇԱՅԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՏԱՐ ՑԵՂԵՐՈՒ ՆԿԱՏՄԱՄԲ

Ազգ. Պատուիրակութեան Նախագահ Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար առաջարկեց կազմել յանձնաժողով մը, որ պիտի զբաղի Հայաստանի օտար ցեղերու քաղաքական կազմի եւ իրաւանց խնդրով:

Ժողովն ընդունեց այս առաջարկութիւնը եւ Ն. Վսեմութեան թելադրութեան վրայ՝ Յանձնաժողովոյ անդամ նշանակուեցան

Տիարք՝ Փափազեան
Թէրզիպաշեան
Տամատեան

Տիար Տէր-Ստեփանեան . Ըստ յիշատակագրի՝ Հայաստանի մէջ բնակող միւս ցեղերը պիտի նկատուին հայոց համահաւասար քաղաքացիներ: Այժմ անոնց բացառիկ իրաւունքներ տալը ճիշդ եւ արդարացի չըլլար: Հետեւաբար՝ շատ զգոյշ կենալու է այս մասին:

Նիստը փակուեցաւ ժամը 8 1/2-ին:

Նախագահ

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 18, թթ. 40-44 շրջ.: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ 11-րդ

7 մարտի 1919թ.

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

1. ԺԱՄԱՆՈՒՄ ՏԻԱՐՔ ՖՆՏԳԼԵԱՆԻ ԵՒ ՏԷՐՎԻՇԵԱՆԻ

Նախագահ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան բարի գալուստ մաղթեց երկու նոր պատգամաւորներու՝ Տիարք Ֆնտգլեանի եւ Տէրվիշեանի:

Ն. Վսեմութիւնը Տիար Տէրվիշեանի մասին աւելցուց, թէ ասկէ առաջ Միջագետքէն երկու հեռագիրներ եկած էին, որոնցմէ մին՝ Պաղտատի Առաջնորդ Գեր. Մուշեղ Արքեպիսկոպոսի կողմէ՝ կը յայտնէր, թէ Տիար Տէրվիշեանն է պատգամաւոր ընտրուած: Ուրիշ մը՝ Գեր. Վահրամ Վրդ.ի կողմէ՝ թէ Բրօֆ. Խաչատրեանն է ընտրուած նոյն պաշտօնին:

Այս մասին վիճաբանութենէ մը ետք ընդունուեցաւ Տիար Չօպանեանի առաջարկը՝ որ է թէ՛ Բրօֆ. Խաչատրեանը եւ թէ՛ Տիար Տէրվիշեանը նկատել Ժողովի անդամ, նկատի առնելով Միջագետքի հայերուն թիւը եւ ընտրեալ պատգամաւորներու անձնական արժանիքները:

2. ՇԻՔԱԿՈՅԻ ՀԱՅ ՍՈՑ.-ԴԵՄՈԿՐԱՏՆԵՐՈՒ ԲՈՂՈՔԸ ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԴԷՄ

Կարդացուեցաւ Շիքակոյէն՝ Սոց.-Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան կողմէ տրուած բողոքի հեռագիր մը, Ամերիկայի մէջ կատարուած Համագումարի անդամոց ընտրութեան դէմ, ըսելով որ ժողովուրդի հարիւրին ութսունը եւ Սոց.-Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը չեն մասնակցած անոր:

Ազգ. Պատուիրակութեան Նախագահ Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար կարդաց հեռագիր մը՝ Ամերիկայի Ազգ. Միութեան Նախագահ Տիար Սվազլըի կողմէ, որ կը յայտնէր, թէ անվիճելիօրէն ընտրուած են Տիարք Համբարձումեան, Մաթիկեան եւ Միքայէլեան: Ն. Վսեմութիւնը կարդաց նաեւ ուրիշ հեռագիր մը այս վերջիններէն, որով կը պահանջէին թոյլ չտալ նիստերուն ներկայ գտնուելու՝ առժամեայ հանգամանքով նշանակուած պատուիրակներուն:

Տիար Աղաթօն Պէյ, իբր մին անոնցմէ, ուզեց հրաժարիլ:

Տիար Նեւրուզ այդ հեռագիրը անփափկանկատ գտաւ առժամեայ պատուիրակներուն հանդէպ:

Տիար Բարսեղեան դիտել տուաւ, որ Հնչակեանները կրնան գոհացուած նկատուիլ, քանի որ ճիշդ այն նկատումով, թէ անոնք ոչ մէկ պատգամաւոր չունին Համագումարին մէջ, իրենցմէ մէկը առնուած է Փարիզէն իբր այդ:

Տիար Տամատեան ըսաւ, որ պէտք չէ նկատի առնել Ս. Դ. Հնչակեաններու հեռագիրը, որովհետեւ Ազգ. Պատուիրակութիւնը կուսակցութեանց չէ, որ հրահանգ տուած էր ընտրութիւնները ընելու, այլ՝ Ամերիկայի Ազգ. Միութեան, որուն դէմ այդ կուսակցութիւնը «պոյքօթ» է ըրեր. իսկ միւս կուսակցութիւնները համաձայնած եւ մասնակցած են ընտրութիւններուն: Տիար Տամատեան յարեց. «Մենք կը սպասենք պատգամաւորներուն, եւ մինչեւ այդ՝ առժամեայ պատուիրակները կը մնան. ու երբ հասնին՝ կը քննենք իրենց պաշտօնական թուղթերը, ինչպէս կատարուեցաւ միւս պատգամաւորներուն համար»:

Այսպիսով խնդիրը փակուած նկատուեցաւ:

3. ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ՏԻԱՐ ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆԻ՝ ԴԻՒԱՆԻ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԵՆԷ

Կարդացուեցաւ Տիար Տէր-Ստեփանեանի՝ Դիւանի անդամակցութենէն հրաժարման գիրը, պատճառաբանեալ:

Այս հրաժարագրին նկատառումը յետաձգուեցաւ յառաջիկայ նիստին:

4. ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ ՏԻԱՐ ՉՕՊԱՆԵԱՆԻ՝ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ԱՆԴԱՄՆԵՐ ԱՒԵԼՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կարդացուեցաւ Տիար Չօպանեանի մէկ նամակը, որով կ՚առաջարկէր խորհրդակցական ձայնով Համագումարի անդամ նշանակել Փարիզ գտնուող գրագէտ Տիկին Զապէլ Եսայեանը, Պաքուի «Արեւ»-ի խմբագիր Տիար Սիմոն Յակոբեանը, Գեր. Պալաքեան Վարդապետը եւ Ռուսական Տումայի նախորդ անդամ Տիար Աճէմօֆը, որոնք բոլորն ալ մարտիրոսագրուած եւ պայքարած ժողովուրդին ծոցէն գալերնուն՝ կրնան մեծապէս օգտակար ըլլալ, ինչպէս նաեւ բանասէր Տիար Պասմաճեանը:

Այս մասին թեր ու դէմ կարծեաց փոխանակութիւններէ վերջ՝ մերժուեցաւ սոյն առաջարկը, նկատելով որ երբ ժողովը բացառապէս որոշում մը տուած է մէկ քանի անձերու համար, արդէն այն ժամանակ թիւը սահմանափակած է, եւ թէ ասկէ զատ նոր առաջարկուած պատգամաւորներու խորհրդակցական ձայն տալը՝ աստիճանաւորութիւն մը դնել պիտի ըլլար պատգամաւորներու կարողությանց միջեւ, ինչ որ վիրաւորիչ պիտի ըլլար անոնց համար:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՆԵՐԳԱՂԹԻ, ՅԱՆՑԱՒՈՐՆԵՐՈՒ ԵՒ ԻՍԼԱՄԱՑԱԾ ՀԱՅԵՐՈՒ ԽՆԴԻՐԸ

Ժողովը օրակարգի անցընելու նկատողութեան առաւ Տիարք Թէրզիպաշեանի եւ Փափազեանի կողմէ գրուած եւ ներգաղթի, յանցաւորներու պատժուելուն ու իսլամացած հայերու վերաբերող նամակը, որ կարդացուած էր նախորդ նիստին:

Տիար Հինդլեան. Ինչպէ՞ս կարելի է այստեղ քննել խնդիր մը, երբ չենք գիտեր, թէ Պատուիրակութիւնը ի՞նչ ըրած է մինչեւ հիմա այդ խնդրին համար եւ կամ ի՞նչ տեսակէտ, ի՞նչ մտածումներ ունի անոր մասին: Պէտք է յարգենք Պատուիրակութեան իրաւունքները եւ սպասենք անոր բացատրութիւններուն, գիտնալու համար թէ ի՞նչ

ըրած է ցարդ, կամ եթէ բան մը չէ ըրած՝ ի՞նչ կը խորհի ընել այդ մասին: Անկէ յետոյ է, որ մենք պիտի քննենք եւ որոշման գանք այդ խնդրին նկատմամբ:

Տիար Փափազեան - Այդ թուղթը գրուած է Մարտ 3-ին եւ խնդիրներ կան անոր մէջ, որոնք վերջնական լուծում պիտի ստանան Խաղաղութեան Վեհաժողովին յատուկ քոմիսիոնին կողմէ՝ ամսոյս 7-ին կամ 8-ին: Արդ, եթէ յետաձգելով այս խնդիրները չկարողանանք բան մը ընել, այս ժողովին վրայ ծանր պատասխանատուութիւն կ՚իյնայ:

Տիար Տամատեան. Քանի որ այս խնդիրներէն ոմանք անմիջական հանգամանք ունին, կ՚առաջարկեմ, որ այս նամակը գրողները ներկայանան Պատուիրակութեան, անմիջապէս պատրաստեն խնդիրը եւ դիմումներ կատարեն. բայց միեւնոյն ժամանակ այս ժողովը զբաղի անով: Արդէն ես ալ շատ ըսելիքներ ունիմ՝ այս ուղղութեամբ Իտալիա կատարուած մեծ աշխատանքներու մասին:

Տիար Սայեան. Շատ լաւ կը հասկնամ Տիարք Փափազեանի եւ Թէրզիպաշեանի յարուցած խնդիրներուն անմիջական կարեւորութիւնը. բայց անոնք սերտօրէն կապուած են ուրիշ խնդիրներու հետ, առանց որոնց լուծման կարելի չէ գործի սկսիլ: Դուք ալ կը խօսիք ներգաղթի, ցանքի, եւ այլն մասին: Բայց ինչպէ՞ս կարելի է այս բոլորը ընել, երբ հող չկայ, երբ դեռ երկիրը գրաւուած չէ: Այսպիսով՝ մենք կը վերադառնանք լուծելու նախ կարգ մը ուրիշ խնդիրներ, որոնք սերտօրէն կապուած են իրարու:

Տիար Փափազեան. Մեր ամէնէն կարեւոր խնդիրներէն մէկն ալ հատուցման խնդիրն էր, որ բարեբախտաբար պատրաստ ըլլալով՝ հազիւ կարելի եղաւ հասցնել եւ մէկ քանի օրէն պիտի քննուի: Հիմա ուրիշ շատ կարեւոր խնդիր մըն ալ կայ, որուն նկատառումը նոյնպէս քանի մը օր յետոյ կրնայ շատ ուշ ըլլալ. այդ ալ՝ յանցաւորները պատժելու խնդիրն է: Մենք Պոլսէն անցնելու ժամանակ տեսանք, թէ ի՛նչ կերպով կը կատարուին այդ յանցաւորներու վերաբերեալ դատերը: Դատական ատեանները ամբողջ թիւրքերէ կազմուած են եւ մանրամասն փաստերով, ձեւականութիւններով կը ձգձգեն դատավարութիւնը, միջոց տալով չարագործներուն փախչելու կամ պահուըտելու: Դաշնակիցները, անտեղեակ ըլլալով իսկական դրութեան, իրենք ալ ընդունած են այդպիսի մանրամասն եւ փաստական արարողութիւններ կատարելու դրութիւնը՝ ոճրագործ մը դատապարտելու համար: Ճիշդ է, վերջերս դաւադրական ժողովի մը մէջ 30 հոգի ձերբակալուեցան, բայց չենք գիտեր, թէ ի՛նչ եղած են եւ ի՛նչ որոշում տրուեցաւ իրենց մասին: Հայկական իշխանութիւնները ձեռքերնուն եկածը կ՚ընեն, կը հետապնդեն զանոնք, հասցէները կը տեղեկացնեն դատարանին, եւ այլն: Բայց ո՛չ մէկ դրական արդիւնք: Ես այս խնդիրը չափազանց կարեւոր կը նկատեմ, որովհետեւ ասիկա ունի նաեւ քաղաքական նշանակութիւն: Այսպէս՝ երբ սկիզբները Դաշնակիցները մտած են Պոլիս եւ լուր տարածուած է, որ յանցաւորները պիտի պատժուին, սարսափը տիրած է ամէն կողմ եւ շատ մը թիւրքեր շտապած են վերադարձնել իսլամացած կիներ, երեխաներ, եւ այլն: Բայց հետզհետէ, տեսնելով Դաշնակիցներուն ալ դանդաղ եւ ձգձգող մէթոտը, աւելի երես առած են, ոճրագործները փախած են եւ այժմ միջոց չկայ իսլամացած հայերը ետ առնելու:

Առաջարկներս են, որ նախ Պատուիրակութիւնը տեղեկագիր մը պատրաստէ եւ ներկայացնէ Խաղաղութեան Վեհաժողովին յատուկ քոմիսիոնին: Յանցաւորները երեքի կը բաժնուին. Ա. Իթթիհատ վէ Թէրագգը կուսակցութիւնը, որ յղացաւ եղեռնը: Բ. Պաշտօնեաները, որոնք կազմակերպած ու վարած են ջարդերը: Գ. Ժողովուրդը, որ գործադրած է: Մենք այս բոլորի մասին ահագին փաստեր ունինք:

Այդ գիրին մէջ, զոր Պատուիրակութիւնը պէտք է ներկայացնէ, անհրաժեշտ է խստօրէն քննադատել Դաշնակիցներու ներկայ դատելու եղանակը: Այլապէս՝ եթէ այս բոլորը չկատարուին եւ այս ձեւով շարունակուի, մենք կը մնանք չափազանց դժուարին եւ վտանգաւոր դրութեան մէջ, Դաշնակիցներուն վարկը բոլորովին կ՚իյնայ,

անկարելի կըլլայ հաստատել կարգ, կանոն, հեղինակութիւն, եւ այսպիսով անհնարին կը դառնայ նաեւ ներգաղթի, ցանքի բոլոր ծրագիրներուն իրագործումը:

Իսկ գալով իսլամացածներու խնդրին, այն պիտի ըսեմ, որ այդ իսլամացածները որոնք կորիզը պիտի ըլլային ապագայ Հայաստանին, մօտ 200.000 կին, երեխայ, եւ այլն, են ամէնէն առողջները, գեղեցիկները եւ լաւագոյն տարրը ցեղին: Անոնց համար Պոլիս դիմումներ կ'ըլլան, բայց արդիւնքը ոչինչ է, կամ շատ քիչ. ատոնք կիսամիջոցներ են. նշանակութիւն չունին նաեւ Դաշնակիցներուն այս մասին ըրածները որոնք անպաշտօն գոյն ունին եւ պատահական են: Եւ խնդիրը այն աստիճանին հասաւ, որ կառավարութիւնը յայտարարեց, թէ բռնի իսլամացածները կրնային վերադառնալ, իբր թէ կամովին իսլամացածներ ալ եղած ըլլային: Իսկ որբերուն համար ըսուած էր, թէ ազգականները միայն իրաւունք ունին երթալ թրքական որբանոցներուն մէջ փնտրել իրենց փոքրիկները, ազգականներ՝ որոնք գոյութիւն չունին: Ուրիշ շատ կարեւոր եւ բարդ խնդիր մը եւս կայ. ի՞նչ պէտք է ընել թիւրքերէ ծնած երեխաները: Այս բոլորը կ'ըսեմ, որպէսզի Պատուիրակութիւնը իմանայ. բայց դժբախտաբար Պատուիրակութեան անդամները դուրս ելան մէկիկ-մէկիկ: Ճիշդ է, պատահած է, որ կիներ վերադառնան թիւրքերու որջերէն, բայց անոնք եկեղեցիներուն բակերը կամ փողոցներուն մէջ այնպիսի թշուառ վիճակի ենթարկուեցան, որ հարկադրուած վերադարձան նորէն իրենց նախկին տեղերը, ուրկէ ալ չպիտի գան: Այնտեղի մարմինները յանցաւոր չեն, որովհետեւ ահագին դրամ հարկաւոր է այս բոլորին համար. պէտք է անմիջապէս մեզի տրուելիք հատուցումէն մաս մը փոխ առնենք եւ ղրկենք:

Ուրիշ կարեւոր խնդիր մըն ալ ներգաղթի խնդիրն է, որ առանց երկրին զինուորական գրաւման չի կրնար տեղի ունենալ: Պէտք է աշխատինք, անկախաբար մեր խնդրին լուծումէն, անմիջապէս ապահովութեան ոյժեր ներմուծել տալ Երկիր. այլապէս՝ շատ ծանր դրութիւն կրնայ սպասել մեզի. Գերմանիոյ մէջ ծագած յեղափոխութիւնը կրնայ տարածուիլ. այն ժամանակ՝ թիւրքերը, առիթը նորէն եկած համարելով, անգամ մը եւս կը կատարեն իրենց գործը: Մինչեւ հիմա գաւառը ի՞նչ կը կատարուի՝ չենք գիտեր: Քոնքրոլ ընել անհնարին է, եւ ջարդի սպառնալիքը միշտ ներկայ է, որով բռնի իսլամացածները չեն վերադառնար՝ կրկին ջարդի չենթարկուելու համար: Եւ եթէ այս դրութիւնը երկարի՝ մեզի համար կորստաբեր է: Իթթիհատի ներկայ կառավարութիւնը, որովհետեւ ասոնք ո՛չ մէկ տարբերութիւն չունին միւսներէն, կրնայ ներգաղթ ընել տալ թիւրքերէ եւ յետոյ մեզի տեղ չի մնար երթալու: Պէտք է Պատուիրակութիւնը տեսնուի նախագահ Ուիլսոնի հետ, որպէսզի անմիջական կտրուկ միջոցներ ձեռք առնուին:

Այս զեկուցումէն յետոյ, որ ժողովին վրայ խոր տպաւորութիւն ըրաւ, այն մտքերը յայտնուեցան, թէ պէտք է, որ Համագումարը քննէ եւ «տիրէքթիւ» տայ Պատուիրակութեան՝ Տիար Փափազեանի յարուցած այս խնդիրներուն մասին: Բայց անոնցմէ մէկին՝ յանցաւորները պատժելու խնդրին համար, քանի որ կ'ըսուի, թէ ամսոյս 8-էն վերջ այլեւս նոր գիրեր չպիտի ընդունուին, որոշուեցաւ, որ առաջարկութիւնը ընողները այս մէկ-երկու օրուան մէջ Պատուիրակութեան հետ պատրաստեն իրենց ունեցած փաստերով «մեմորանտում» մը եւ հասցնեն Վեհաժողովին յատուկ քոմիսիոնին:

Տիար Չօպանեան. Յանցաւորները պատժել տալու խնդիրը այնքան իմ սրտիս մօտիկ եղած է, որ երբ իմացայ, թէ Պ. Բոլիթիս կը գտնուի այդ խնդիրը քննող յատուկ քոմիսիոնին մէջ, իմ ունեցած միջոցներովս փոքրիկ «մեմորանտում» մը պատրաստած եւ ղրկած եմ իրեն: Անոր մէջ շեշտած եմ, թէ ամբողջ թիւրք ժողովուրդը յանցաւոր է եւ պատասխանատու եղած կոտորածներուն, որոնց համար պէտք է պատժուի decheance politique-ով: Ես ալ կը պնդեմ, որ Տիարք Փափազեանի եւ Թէրզիպաշեանի փաստերուն վրայ հիմնուելով, Պատուիրակութիւնը հարկ եղած անմիջական ձեռնարկը ընէ այս խնդրին նկատմամբ:

Նիստը փակուեցաւ ժամը 8 1/2-ին:

Նախագահ

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 18, թթ. 45-48 շրջ.: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ 12-րդ

8 մարտի 1919թ.

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

1. ՕՐԱԿԱՐԳ ԱԶԳ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ

Կարդացուեցաւ Տիար Հանըմեանի մէկ նամակը, որով կ'ուզէր գիտնալ, թէ Ժողովս արդեօք ունի՞ իր ամբողջական գործունէութեան օրակարգը, եւ եթէ ոչ՝ կարելի չէ՞, որ անիկա այլեւս կազմուի, հիմա որ Իրաւասութեան եւ Ծրագրի Յանձնաժողովին ծրագիրը յայտնի եղած է:

Նախագահ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան յայտնեց, թէ իւրաքանչիւր նիստի փակման պահուն յաջորդ նիստին օրակարգը կը ծանուցուի արդէն: Գալով Համագումարի ընդհանուր աշխատութեանց՝ օրակարգին՝ ընդունուած ծրագիրը ուրիշ բան չէ արդէն, բայց եթէ պահանջուած օրակարգը, որուն մէկ մասը ի ձեռին ըլլալով, մնացեալ մասը կը մնայ գործադրելի:

2. ՄԻՋԱԴԷՊ ՏԻՐ ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԻ ՇՈՒՐՋ

Նախագահ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան հետեւեալ յայտարարութիւնը ըրաւ Տիար Տէր-Ստեփանեանի հրաժարականին նկատմամբ.

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Այսօր Պատուիրակութեան Նախագահը տեսայ. կը թուի, թէ վերջին նիստին՝ պատգամաւոր Տիար Տէր-Ստեփանեանի հրաժարականի նամակէն նեղացած, չուզէր ժողովին ներկայ գտնուիլ: Ես աշխատեցայ զինքը համոզելու, որ գայ: Կը կարծեմ, թէ պէտք է կարգադրել այս խնդիրը: Ըստ իս՝ լաւագոյն ձեւն է երկու անդամակից ղրկել մեր մէջէն, որ բացատրեն խնդիրը եւ հասկցնեն, որ եղածը թիւրիմացութիւն մըն է:

Տիար Սայեան. Ժողովս Պօղոս Փաշայի հանդէպ ո՛չ մէկ անպատշաճ դիրքի մէջ չէ գտնուած. հետեւաբար, հարկ չկայ ժողովին կողմէ երկու պատգամաւոր ղրկել: Թող Դիւանը երթայ եւ բացատրէ խնդիրը:

Այս մասին խօսեցան նաեւ Տիարք Թէքէեան եւ Հինդլեան: Ի վերջոյ՝ որոշուեցաւ պաշտօն յանձնել դեր-նախագահ Տիար Տէր-Յակոբեանի եւ Տիար Տէր-Տէրպէտէրեանի, որ Պատուիրակութեան Նախագահին երթալով հարթել թիւրիմացութիւնը:

Տիար Նեւրուզ. Կ'առաջարկեմ Վսեմ. Պօղոս Փաշայի բացակայութեան քննել Տիար Տէր-Ստեփանեանի ատենադպրութենէ հրաժարելու հարցը:

Տիար Տէր-Ստեփանեան. Այդ նամակը գրած պահուս երբեք չէի ենթադրած, որ կրնար ժողովին համար կնճռոտութիւններ ստեղծել. պարզապէս գրած էի՝ հրաժարմանս պատճառաբանութիւնները յայտնելու համար: Քանի որ խնդիրը այս կերպարանքը առաւ, ետ կ'առնեմ նամակս, ի սէր ազգային շահերուն, եւ կը ներկայացնեմ պարզ հրաժարական մը:

Այս յայտարարութեան վրայ՝ ժողովը ցաւով ընդունեց Տիար Տէր-Ստեփանեանի՝ ատենադպրութեան պաշտօնէն հրաժարականը:

3. ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԳԷՈՆԻ ՀԱՐՑԸ

Նիստին փակման միջոցին Տիար Նեւրուզ կարդաց Հայկական Լեգէոնի մասին ստացած մէկ ծանրակշիռ նամակը:

Տիար Հինդլեանի առաջարկութեան վրայ՝ ժողովը որոշեց յաջորդ նիստին օրակարգին անցընել այդ հարցը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՆՊԱՏԱԿ ԵՒ ՁԵՌՆՀԱՍՈՒԹԻՒՆ ԱԶԳ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ

Ազգ. Համագումարի Իրաւասութեան, Ծրագրի, Անունի եւ Բացման Յանձնաժողովին կողմէ խօսք առաւ տեղեկաբեր Տիար Հինդլեան եւ ծայնեց, թէ Յանձնաժողովը մինչեւ հիմա ունեցած է չորս նիստ, որոնց ներկայ գտնուած են Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար, Տիար Օհանջանեան, եւ վերջին նիստին միայն Տիար Ահարոնեան, որ մէկ քանի դիտողութիւններ ըրած է Ժողովին իրաւասութեան խնդրին նկատմամբ եւ նախընտրած է իր դիտողութիւնները Ժողովին առջեւ ընել:

Յետոյ՝ տեղեկաբեր Տիար Հինդլեան, Յանձնաժողովին անունով, կարդաց հետեւեալ տեղեկագիրը.

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԱԶԳ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ, ԾՐԱԳՐԻ, ՏԵՒՈՂՈՒԹԵԱՆ, ԱՆՈՒՆԻ ԵՒ ԲԱՑՄԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ

Ազգ. Համագումարի Իրաւասութեան, Ծրագրի, Տեւողութեան, Անունի եւ Բացման Յանձնաժողովը,

նախագահութեամբ
Ամեն. Եղիշէ Արք. Դուրեանի
եւ անդամակցութեամբ
Տիարք՝ Միհրան Տամատեանի
Գարեգին Փաստրմաճեանի
Լեւոն Շանթի
Վահան Փափազեանի
Արշակ Չօպանեանի
Վահան Թէքէեանի
Ստեփան Հինդլեանի
լսելէ ետք Ազգ. Պատուիրակութեան Նախագահ
Վսեմ. Պօղոս Փաշա Նուպարը
եւ Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցիչ
Տիարք՝ Ա. Ահարոնեանը
Հ. Օհանջանեանը
որոշեց.

Ա. ԱՆՈՒՆ ԵՒ ԿԱԶՄ

Հայ Ազգային Համագումարը /Congrەs National Armەnien/, որ Ազգ. Պատուիրակութեան հրաւէրով հաւաքուեցաւ 1919 Փետրուարին՝ Փարիզ, բաղկացած է թրքահայերու, պարսկահայոց եւ գաղութներու ներկայացուցիչներէն եւ կը գործէ

Կովկասի Հայ Հանրապետության Պատուիրակութեան խորհրդակցական մասնակցութեամբ:

Բ. ԻՐԱՒԱՍՈՒԹԻՒՆ ԵՒ ԾՐԱԳԻՐ

1. Վաւերացնել Ազգ. Պատուիրակութեան կողմէ պատրաստուած, Համագումարի անդամներու մեծամասնութեան աշխատակցութեամբ ու հաւանութեամբ, Վեհաժողովին ներկայացուած ազգ. պահանջներու յիշատակագիրը:
2. Հաստատել հայ ազգին վնասուց հատուցման հիմերը՝ ներկայացնելու համար Խաղաղութեան Վեհաժողովին:
3. Գծել՝ իրանց նոր կացութեան համաձայն ազգային քաղաքականութեան ընդհանուր ուղեգիծ մը, որ իբր հիմ պիտի ծառայէ նոր կազմուելիք Ազգ. Պատուիրակութեան գործառնութեանց:
4. Վեհափառ Կաթողիկոսէն նշանակուած Ազգ. Պատուիրակութեան մինչեւ այժմ գործունէութեան տեղեկատուութիւնը եւ հրաժարականը լսելէ ետք՝ պիտի ընտրէ իր Պատուիրակութիւնը, բաղկացած 5 անդամներէ, որ պիտի միանայ Կովկասեան Հայ Հանրապետութեան Պատուիրակութեան եւ պիտի կազմէ Միացեալ Հայաստանի Համազգային Պատուիրակութիւնը:
5. Ընտրել Ելեւմուտքի Յանձնաժողով մը, որ տեղեկանալէ ետք հրաժարեալ Պատուիրակութեան գանձային վիճակին, պիտի պատրաստէ նորընտիր Պատուիրակութեան համար դրամական մօտաւոր նախահաշիւ մը, որոնելով հասոյթի աղբիւրները:
6. Ընտրել յանձնաժողով մը, մշակելու համար Միացեալ Հայաստանի պետական առժամանակեայ վարչական կանոնի նախագիծ /Reglement administratif provisoir/ եւ միացեալ առժամեայ կառավարութեան իրականացման նախագիծը:
7. Որոշել Համագումարի հրապարակային արտայայտութիւնները /հեռագիր, ուղերձ, հանդէս, կոչ, եւ այլն/:

Գ. ՏԵՒՈՂՈՒԹԻՒՆ

Համագումարը՝ իր վերեւ նշանակուած օրակարգին գործունէութիւնը վերջացնելէ ետք՝ կը դադրեցնէ իր նիստերը:

Համագումարը Պատուիրակութեան կողմէ վերստին նիստի կը հրաւիրուի անմիջապէս, երբ Խաղաղութեան Վեհաժողովը վճիռը տայ Միացեալ Հայաստանի հարցին:

Այն ժամանակ է, որ Հայաստանի առժամեայ պետական կանոնի եւ միացեալ առժամեայ կառավարութեան մը իրականացման եւ նախագիծի յանձնաժողովը կը բերէ իր ուսումնասիրութեան արդիւնքը եւ Պատուիրակութիւնը կը ներկայացնէ իր գործունէութեան համարատուութիւնը:

Բացի այդ /միջանկեալ կերպով/ Համագումարը նիստի պէտք է հրաւիրուի նաեւ Պատուիրակութեան կողմէ՝ հետեւեալ պարագաներու մէջ.

Ա. Երբ Ազգային Պատուիրակութիւնը իրեն տրուած ուղեգիծէն դուրս ելլելու հարկին մէջ գտնուի:

Բ. Երբ ոեւէ այլ ստիպողական պատճառով հարկ համարէ զայն նիստի հրաւիրել:

Գ. Ներկայ տեղեկագիրը Համագումարին բերելու Յանձնաժողովիս կողմէ տեղեկաբեր նշանակուած է Տիար Ս. Հինդլեան՝ Յանձնաժողովի անդամներէն:

Նախագահ Յանձնաժողովի
Եղիշէ Արքեպիսկ. Դուրեան

Պատուիրակութեան Նախագահ Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար բացակայ ըլլալով, հարց ծագեցաւ, թէ առանց Ն. Վսեմութեան ներկայութեան բանաւո՞ր է քննել եւ վաւերացնել Յանձնաժողովին բերած եզրակացութիւնները:

Ժողովը որոշեց մի առ մի քննել խնդիրները, առանց վերջնականապէս վաւերացնելու, եւ յետաձգել որոշումը յաջորդ նիստին, որուն Պատուիրակութեան Նախագահը ներկայ կըլլայ:

Տիար Տամատեան. Դիտել կու տամ, որ Յանձնաժողովին բերած առաջարկութիւնը կատարուած է նախ այս ժողովին եւ յետոյ Յանձնաժողովին մէջ՝ երկար վիճաբանություններէ յետոյ: Հետեւաբար՝ խնդիրը քննելու ատեն պէտք է նկատի ունենալ, թէ փոխադարձ կարծեաց զիջողութիւնք տեղի ունեցած են:

Տիար Սայեան դիտողութիւն ըրաւ տեղեկագիրին մէջ պատգամաւորներու համար գործածուած «ներկայացուցիչ» բառին դէմ:

Տիար Հինդլեան. Այս մասին Յանձնաժողովին մէջ խնդիր եղած չէ. միւս կողմէ՝ այս ժողովին հրաւիրեալ անդամներն ալ ներկայացուցիչներ են որոշ խումբերու, մտաւորականութեան եւ այլնի:

Տիար Շանթ. Արդէն գործածուած բառը «ներկայացուցիչ» է, ոչ թէ «ընտրեալ»:

Տիար Տէր-Ստեփանեան. Ժողովի նիստերուն տեւողութեան մասին ըսուած է, թէ ժողովը նոր Պատուիրակութիւնը ընտրելէ, վարչական առժամեայ կազմը եւ Վերաշինութեան Յանձնաժողովը նշանակելէ եւ իր հրապարակային արտայայտութիւնները ընելէ յետոյ պիտի ցրուի, եւ երբ Հայաստանի մասին խաղաղութեան Վեհաժողովին կողմէ եղած կարգադրութիւնը լսուի, նոր Պատուիրակութիւնը նորէն նիստի պիտի հրաւիրէ ժողովը: Ատիկա նիւթապէս անկարելի է, որովհետեւ այս ամէնը մէկ-երկու ամսուան մէջ պիտի կատարուի:

Տիար Չօպանեան. Իբր տեղեկութիւն հաղորդեմ, թէ Տիարք Ահարոնեան ու Օհանջանեան փափաքած են, որ այս ժողովը չյետաձգէ իր նիստերը, այլ՝ Պատուիրակութիւնը ընտրելէ անմիջապէս յետոյ ցրուի:

Տիար Հինդլեան. Յանձնաժողովը, իր որոշումներուն առթիւ, նկատի առած է նաեւ Վսեմ. Նուպար Փաշայի տրամադրութիւնները:

Տիար Սայեան. Յանձնաժողովին բերած եզրակացութիւններուն մէջ ըսուած է, որ ժողովը պիտի լսէ հին Պատուիրակութեան տեղեկատուութիւնը եւ հրաժարականը: Ժողովը չպիտի՞ քննադատէ, կամ իր կարծիքը չպիտի՞ յայտնէ՝ Պատուիրակութեան համարատուութիւնէն յետոյ:

Տիար Հինդլեան. Այս ժողովը չէ, որ ընտրած է Ազգ. Պատուիրակութիւնը. հետեւաբար՝ իրաւունք չունի ո՛չ հաշուետուութիւն պահանջելու անկէ, ո՛չ ալ հրաժարական. բայց որովհետեւ կարելի չէ նոր մարմին մը ընտրել, երբ դեռ հինը գոյութիւն ունի, պէտք է առաջարկենք, որ Պատուիրակութիւնը հրաժարած յայտարարուի, որպէսզի կարենանք նորը ընտրել: Իսկ հաշուետուութիւնը միմիայն պիտի լսենք առանց քննադատելու կամ վաւերացնելու, որպէսզի կարենանք անոր վրայ հիմնել նոր Պատուիրակութեան ելեւմտացոյցը:

Տիար Տամատեան. Այս այն կէտերէն է, որու մասին Յանձնաժողովը Պատուիրակութեան հետ համաձայնութեան չէ եկած: Պատուիրակութեան Նախագահը կ'ընդունի Պատուիրակութեան գործունէութեան մասին տեղեկատուութիւն ընել, բայց կ'ուզէ, որ նոր Պատուիրակութիւն ընտրուի դեռ հինը հրաժարական չտուած: Յանձնաժողովս դիտել տուաւ, որ նոր մարմին մը չընտրուիր մինչեւ որ հինը ինքզինքը

հրաժարած չյայտարարէ: Ն. Վսեմութիւն Փաշան կ'ուզէ, որ նախ ընտրութիւնը կատարուի. եթէ համաձայն ըլլայ՝ իր հրաժարականը կու տայ. իսկ եթէ ոչ՝ չընդունիր նորը:

Տիար Նեւրուզ. Կարեւորն այն է, թէ նոր Պատուիրակութիւնը քանի հոգիէ բաղկացած պիտի ըլլայ:

Տիար Հինդլեան. Տիար Ահարոնեան եւ Վսեմ. Պօղոս Փաշա համաձայնութիւն կայացուցած են, որ այս ժողովը չորս հոգի ընտրէ: Կովկասի ներկայացուցիչներն ալ երեք հոգի ըլլալով՝ ամբողջութիւնը կ'ըլլայ եօթը: Իսկ Յանձնաժողովս աւելորդ համարեց քննել խնդիր մը, որու մասին Փաշան ու Տիար Ահարոնեան համաձայնութիւն կայացուցած էին եւ որու մասին վերջնական որոշում մը տալ կը մնայ ժողովիս:

Տիար Տէր-Ստեփանեան. Եթէ Կովկասեան երեք պատուիրակներուն հետ մենք չորս պիտի ընտրենք եւ Տիար Ահարոնեան ու Փաշան այս մասին համաձայնութեան եկած են, ըսել է, թէ անոնք ընտրած են նաեւ համաձայնութեամբ գործելու սկզբունքը. այն ժամանակ՝ ինչո՞ւ եօթ հոգի չընտրել:

Տիար Շանթ. Տիար Ահարոնեան երեքի դէմ երեք կ'ուզէ. իսկ Պօղոս Նուպար Փաշան երեքի տեղ չորս կը նախընտրէ, յայտնելով որ այս կերպով համաձայնութիւնը աւելի դիւրին է:

Տիար Տամատեան. Տեսակցութեան մը մէջ Պատուիրակութեան նախագահը շեշտեց, թէ հակառակ է չորսէ մէկ հատ իսկ աւելի ընդունելու, եւ ըսաւ, թէ կովկասահայ պատուիրակներն ալ այդ կարծիքին են:

Տիար Սայեան. Մինչեւ հիմա յայտնի չեղաւ, թէ նախ Պատուիրակութիւնը պիտի ընտրենք եւ հրաժարումը յետո՞յ տեղի պիտի ունենայ, թէ՞ նախ հին Պատուիրակութիւնը ինքզինքը հրաժարած պիտի նկատէ ու յայտարարէ եւ մենք վերջը նորը պիտի ընտրենք: Մեր ժողովը Պատուիրակութեան տեղեկատուութի՞ւնը պիտի արձանագրէ միայն, թէ՞ պիտի քննէ զայն: Մեր ժողովին ընթացքը անբնական է. եթէ ժողովը միայն պիտի արձանագրէ, ըսել է, թէ այս ժողովը երկրորդական դիրք մը ունի, որուն տեղեկութիւն կը տրուի միայն. ըսել է, թէ Պատուիրակութիւնը կարեւորութիւն չտար ժողովին. եւ կամ հակառակն է, որ տեղի կ'ունենայ, այսինքն՝ ժողովը կարեւորութիւն չտար Պատուիրակութեան մինչեւ հիմա ունեցած գործունէութեան: Պէտք է, որ Պատուիրակութեան Նախագահը իր հաշուետուութիւնը ընէ հոս, մենք մեր տրամադրութիւնը յայտնենք եւ քննադատենք, եւ յետոյ հրաժարի: Կովկասի Պատուիրակութիւնն ալ «վէթօ՞» պիտի դնէ, թէ չորս անձէն աւելի չպիտի ընտրենք: Կ'առաջարկեմ համոզել զիրենք, որ աւելի թիւով պատգամաւորներ ընտրուին նոր Պատուիրակութեան մէջ:

Տիար Փափազեան. Ճիշդ է՝ այս ձեւի հրաժարականը անսորմալ է, բայց նկատի առէք, որ իրականութիւնը ինքն ալ արդէն անսորմալ է, իսկ Յանձնաժողովն այդ կարգադրութիւնը ըրաւ՝ այս անսորմալ վիճակէն դուրս ելլելու համար: Պատուիրակութեան առաջարկը՝ հինը չհրաժարած նորը ընտրել՝ իրեն համար արդէն վարկաբեկիչ է: Կը կարծեմ, թէ կովկասեան ներկայացուցիչները պէտք է համոզուին, որ թրքահայերը աւելի ներկայացուցիչ ունենալու իրաւունք ունին, քանի որ այս րոպէիս Թրքահայաստանի հարցն է, որ պիտի վճռուի, բայց ի հարկէ՝ միշտ ընդունելով որոշումները համաձայնութեամբ անցընելու սկզբունքը: Իսկ ես կը կարծեմ, թէ չորսը արդէն բաւական է, քանի որ դժուար է մեզի համար գտնել մեծ թիւով անձնաւորութիւններ, որոնք կատարելագործուած Պատուիրակութեան մը պայմանները լրացնեն: Յետոյ՝ շատ մարդով՝ համաձայնութիւնը աւելի դժուար է:

Տիար Նեւրուզ. Եթէ համոզենք Պատուիրակութեան Նախագահը՝ թերեւս համարատուութիւն ընէ: Բայց քանի որ տեղեկատուութիւն մըն է, որ պիտի ընէ, քննել, եւ այլն աւելորդ է: Մենք պարզապէս կը լսենք եւ կ'անցնինք, առանց շնորհակալութիւն

իսկ յայտնելու: Աւելի լաւ է, որ մենք այսօր իսկ վերջացնենք այս հարցը, որպէսզի անիկա նորէն Փաշային առջեւ չկրկնուի:

Տիար Տէր-Ստեփանեան. Այստեղ երկու իշխանութիւն կայ, մէկը՝ այս ժողովը եւ միւսը՝ Կաթողիկոսը: Արդ, քանի որ այս երկու հեղինակութեանց միջեւ ո՛չ մէկ բաղխում կամ խնդիր տեղի չէ ունեցած, Կաթողիկոսին վեհապետական իրաւունքները կանցնին այս ժողովին, եւ այս պարագային ժողովը իրաւունք կ'ունենայ համարատուութիւն պահանջելու ու քննելու:

Տիար Ֆնտգլեան. Ես համաձայն եմ, որ Պատուիրակութեանց անդամոց թիւը աւելի մեծ ըլլայ, որովհետեւ այնպիսի կարեւոր խնդիրներ պիտի լուծուին, որ բազմաթիւ միտքերու գոյութիւնը չափազանց օգտակար է: Արդէն մեծ անհամաձայնութիւն չի կրնար ծագիլ անոնց մէջ, քանի որ այս ժողովը նոր Պատուիրակութեան որոշ «տիրէքթիւ»-ներ պիտի տայ, որոնց համեմատ ան պիտի գործէ: Պէտք է նկատի առնել նաեւ հիւանդութեան պարագան, որուն համար եւս անհրաժեշտ է աւելցնել անդամներուն թիւը: Ես կը կարծեմ նաեւ, որ թրքահայերը աւելի շատ պատգամաւոր տալու իրաւունք ունին, բնակչութեան թիւի տեսակէտէն, քանի որ կ'ըսենք, թէ մեռածներն ալ պիտի հաշուենք: Յետոյ՝ երկրի տարածութեան տեսակէտով ալ նոյն եզրակացութեան կու գանք, քանի որ Ռուսահայաստանը Թրքահայաստանին մէկ քառորդն է միայն:

Տիար Հինդլեան. Մեծ սխալ մը կ'ըլլայ այստեղ: Պատուիրակութիւնը, զոր պիտի ընտրենք, պիտի ըլլայ համազգային Պատուիրակութիւնը Միացեալ Հայաստանին, եւ անոր մէջ՝ կովկասեան երեք պատուիրակներն ալ պիտի զբաղին, միւսներուն հետ եւ միւսներուն հաւասար, Միացեալ Հայաստանի խնդրով: Հետեւաբար՝ թիւի, Թրքահայաստանի, Ռուսահայաստանի, Պարսկահայաստանի հարկ չկայ, երբ համաձայն են: Երբ իրենք կը համաձայնին մեզմէ չորս ընդունիլ, մենք լիովին պէտք է գոհանանք: Մենք «ֆետերաթիւ» Պատուիրակութիւն չէ, որ կ'ուզենք, այլ՝ Միացեալ Հայաստանի Համազգային Պատուիրակութիւն:

Տիար Օհանջանեան. Ես կը գտնեմ, որ երկրի, բնակչութեան թիւի մեծութեան տեսակէտը պատճառ չէ աւելի շատ ներկայացուցիչ ունենալու, ո՛չ ալ յարմար է այդ կարգի տեսակէտներ Միացեալ Հայաստանի խնդրին մէջ մտցնել: Բայց քանի որ դուք կ'ուզէք շատ ներկայացուցիչ ունենալ, կարելի է այսպէս ընել. ընտրեցէ՛ք որքան որ կ'ուզէք, բայց անոնք թող ընտրեն իրենց մէջէն երեք հոգի, որ կովկասեան պատուիրակներուն հետ քուէարկեն եւ կարենան անոնց հետ ծուլուիլ: Այսպէս կը կատարուի ամէն տեղ: Բուն գործող անդամներէն զատ բազմաթիւ ուրիշներ կրնան ըլլալ օգնելու, խորհրդակցութեան, եւ այլնի համար: Գալով Պարսկաստանի կողմէ եւս Պատուիրակութիւն մը առաջարկելուն, կարծեմ թէ այս խնդիրը աւելորդ է:

Տիար Մասեհեան Խան. Պարսկահայաստանի կողմէ առանձին պատուիրակութիւն ունենալու մասին երբեք խնդիր չեմ յարուցած ես: Ես ալ աւելորդ կը նկատեմ այդ տեսակ խնդիր մը, եւ լիովին համաձայն եմ այն յայտարարութեանց, զորս պահ մը առաջ ըրաւ Հայ Հանրապետութեան ներկայացուցիչներէն Տոքթ. Օհանջանեան՝ այդ խնդրին նկատմամբ:

Տիար Տամատեան. Պատուիրակութիւնը, եթէ պէտք ունենայ, մեր ընտրած չորս անդամներէն զատ կրնայ ուրիշ «քոմբեթանս»-ներու օգնութեան դիմել: Ասիկա իր գործն է: Բայց ես կը պնդեմ, որ մենք՝ երեք անդամի տեղ անպատճառ չորս անդամ ընտրենք, ո՛չ թէ անոր համար, որ մէկ ներկայացուցիչ աւելի ունենանք Կովկասեան Հանրապետութեան ներկայացուցիչներուն վրայ, այլ անոր համար, որ նոյնիսկ չորս անդամ ընտրելով, հազիւ պիտի կրնանք մեր գլխաւոր «քոմբեթանս»-ները տալ եւ արտայայտել մեր իսկական բաղձանքները:

Տիար Քէլէկեան Խան. Ես կ'առաջարկեմ չորս հոգի ընտրել եւ այս ժողովին միւս բոլոր անդամները իբրեւ խորհրդական նկատել Պատուիրակութեան:

Տիար Շանթ. Արդեօք կարելի չէ՞ Պատուիրակութեան տալիք հաշուետուութիւնը տպագրել, որպէսզի բոլոր փափաքողները կարենան տեղեկանալ իր գործունէութեան:

Նախագահ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան դիտել տուաւ, թէ այդպիսի որոշում մը չկայ:

Նիստը փակուեցաւ ժամը 8 1/2-ին:

Նախագահ

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 18, թթ. 49-54: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ 13-րդ

9 մարտի 1919թ.

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

1. ԱՆԳԼԻԱՑԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐԴԻԿ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Նախապէս՝ Տիար Ֆնտգլեան հրաւիրուեցաւ ժողովին ծանօթացնելու Լոնտոնի կարգ մը պետական անձնաւորութեանց խորհրդածութիւնները՝ Հայկական Հարցին նկատմամբ:

2. ԱՄԲՈՂՋԱՑՈՒՄ ԴԻՒԱՆԻ

Տիար Տոքթ. Տէր-Ստեփանեանի հրաժարականին ընդունելութեան հետեւանքով, ատենադպրի ընդունելութիւն տեղի ունեցաւ եւ 23-ի վրայ 12 ձայնով ընտրուեցաւ

Տիար Գառնիկ Ֆնտգլեան:

3. ՀԱԼԷՊԻ ՁԱՐԴԸ

Նախագահ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան հաղորդեց տխուր լուր մը, որուն համեմատ՝ անգլիացիները կամ ֆրանսացիները պաշտպանելու վէճի մը առթիւ Հալէպի քրիստոնեայ եւ արաբ բնակչութեանց միջեւ կռիւ տեղի կ'ունենայ, որուն հետեւանքով 50 հայ կը սպաննուին: Ն. Վսեմութիւնը աւելցուց, որ էմիր Ֆայսալ նմանօրինակ հեռագիրներ ստացած է, որոնց պատասխանած է՝ հրամայելով վերջ տալ քրիստոնէից եւ իսլամներու միջեւ եղած վէճին եւ դատարանի միջոցաւ խստիւ պատժել յանցաւորները:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԳԷՈՆԻ ՀԱՐՑԸ

Ժողովին նախորդ նիստին որոշման համեմատ, օրակարգի առաջին խնդիր պիտի ըլլար Տիար Նեւրուզի կողմէ տեղեկատուութիւն մը՝ Հայկական Լեգէոնի խնդրին նկատմամբ:

Տիար Նեւրուզ այդ մասին Դիւանին յանձնած էր հետեւեալ գրաւոր զեկուցումը, որ կարդացուեցաւ.

ԶԵԿՈՒՑՈՒՄ ՏԻԱՐ ՆԵՒՐՈՒԶԻ՝
ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԳԷՈՆԻ ՀԱՐՑԻՆ ՆԿԱՏՄԱՄԲ

Վերջերս ստացուած տեղեկութիւններն ու նամակները՝ ուղղուած Ազգային Պատուիրակութեան եւ կամ անոր միջոցաւ՝ Ազգային Համագումարին, կիլիկեան հայ կամաւորական խումբերու եւ կամ Հայկական Լեգէոնի դրութիւնը կը ներկայացնեն բաւականաչափ ծանրակշիռ եւ անմիջական կարգադրութեան սպասող:

Յանձնախումբս, ծանօթանալով բոլոր գրութիւններուն, Հայկական Լեգէոնի պահանջներուն եւ եղած առաջարկներուն, եկաւ հետեւեալ եզրակացութեանց.

1. Նկատելով, որ կիլիկեան կամաւորական շարժումով մենք դեռեւս կապուած ենք ֆրանսական կառավարութեան հետ.
2. Որ առանց ֆրանսական կառավարութեան դիմելու, ներկայ քաղաքական պայմաններուն մէջ անպատակայարմար է ռեւէ կարգադրութիւն ընել.
3. Որ հայ կամաւորներու ներկայութիւնը պէտք է նաեւ մեր ժողովուրդին եւ մեր երկրին ապահովության տեսակէտէն.
4. Որ կամաւորական շարժման սկզբնական օրերէն իսկ հասկացողութիւն ունինք ֆրանսական կառավարութեան հետ, թէ այդ խումբերը կորիզ պիտի հանդիսանան ապագայ հայկական բանակին.
5. Որ մենք արդէն որոշ համաձայնութիւն ունինք, թէ կամաւորները պիտի մնան մինչեւ պատերազմի վերջաւորութիւնը /խաղաղութեան պայմանագրի ստորագրում/,

Կ'առաջարկէ Հայ Ազգ. Պատուիրակութեան միջոցաւ դիմել ֆրանսական կառավարութեան՝

Ա. Որ Հայկական Լեգէոնի կարգապահութիւնը մինչեւ այսօր եղած է գոհացուցիչ, համաձայն իրենց հրամանատարներու եւ այլոց իսկ տուած վկայութիւններուն, եւ այդ հիմամբ անոնց հասցէին ուղղուած անկարգապահութեան մեղադրանքները համարել անարդար.

Բ. Որ Հայկական Լեգէոնը պահուի մինչեւ հաշտութեան վերջնական կնքումը՝ առանց նոր յանձնառագրի /ռէանկաժըման/.

Գ. Որ Հայկական Լեգէոնի զինուորներու այս պահանջներու, որոնց արդարացի ըլլալը արդէն իսկ ընդունուած է ֆրանսական զինուորական պետերու կողմէ, բաւարարութիւն տրուի:

Այդ պահանջներն են.

1. Բարելաւել Լեգէոնի նիւթական պայմանները՝ տալով լաւագոյն սնունդ եւ ֆրանսական զինուորներու հաւասար թոշակ /սոլտ/.
2. Կամաւորներու ընտանիքներու նպաստներու եւ թոշակներու յաւելումը՝ համաձայն արդի պայմաններուն.
3. Ծառայութեան ընթացքին տեղի ունեցած արկածներու հետեւանքով ազատ արձակուածներու կենսաթոշակի յատկացումը.
4. Հայկական Լեգէոնի հայ քատրի փոփոխութիւնը /Ա. Հայկական Լեգէոնի հայ քատրին աստիճանական բարձրացումը՝ համաձայն իւրաքանչիւրին ընդունակութիւններուն, Բ. Հայկական Լեգէոնի քատրին հայացումը, բացի բարձրաստիճան հրամանատարներէ, Գ. Վարչական բաժնին աստիճանական բարձրացումը, Դ. Հայ սպաներու դասընթացքներու հաստատումը, Ե. Հեծելազօրի եւ ժենիի գունդերու կազմութեան ծրագրին գործադրութիւնը/.
5. Բանակի հրամանատարութեան եւ Ազգ. Պատուիրակութեան միջեւ մշտական կապ հաստատող ներկայացուցչի մը ընդունուիլը.
6. Հայկական Լեգէոնի գունդերը բացառապէս գործածել Կիլիկիոյ եւ կամ հայկական նահանգներու շրջաններու մէջ.
7. Ազգային Պատուիրակութեան կողմէ Հայկական Լեգէոնին ուղղուած կոչի մը պաշտօնական ընթերցումը.

8. Եթէ վերոհիշեալ բարելաւումի վերաբերեալ առաջարկներուն մասամբ եւ կամ ամբողջովին գոհացում չտրուի, Ազգ. Պատուիրակութիւնը ջանադիր պիտի ըլլայ պահպանել Հայկական Լեգէոնը /գոնէ մինչեւ «ռէանկաժըման»-ի հարցի լուծումը/ իր ներկայ դրութեան մէջ՝ պարբերական կոչերով, ներկայացուցիչ ուղարկելով եւ նպաստի գումարներով՝ անոնց անմիջական կարիքներուն համար.
9. Մինչեւ այդ՝ խնդրել ֆրանսական կառավարութենէն, որ հեռագրական հրահանգով յետաձգէ «ռէանկաժըման»-ի գործադրութիւնը Հայկական Լեգէոնի վերաբերմամբ:

«ՌԷԱՆԿԱԺԸՄԱՆ». Նկատելով Հայկական Լեգէոնի ցրումի հաւանականութիւնը, եւ անկէ առաջ գալիք ծանր հետեւանքներն ու վտանգները, «ռէանկաժըման»-ի առաջարկը սկզբունքով ընդունիլ, եւ այդ՝ հետեւեալ պայմաններով.

1. «Ռէանկաժըման»-ի վերաբերեալ բոլոր բանակցութիւններն ու համաձայնութիւնները պիտի ըլլան Ազգ. Պատուիրակութեան հետ, եւ անկէ վերջ միայն պիտի գործադրուին:
2. Իբրեւ հիմունք պիտի ընդունիլ հայկական գունդի ինքնավար կազմակերպութիւնը, կազմելով ատոր համար յատուկ կանոնագիր մը:
3. «Ռէանկաժըման»-ի համար Ազգ. Պատուիրակութիւնն է, որ կոչ կ'ուղղէ հայ զինուորներուն՝ նախապէս համաձայնելով ֆրանսական կառավարութեան հետ:
4. Բանակցութիւններու ատեն Ազգ. Պատուիրակութիւնը նկատի պիտի ունենայ զինուորներու վերոյիշեալ պահանջներն ու անոնց գոհացում ստանալը:
5. Կիլիկիոյ եւ Սուրիոյ, ինչպէս նաեւ ուրիշ վայրերու հայերէն զինուոր ըլլալու փափաք ունեցողները անմիջապէս արձանագրել եւ ընդունիլ՝ Հայկական Լեգէոնը ստուարացնելու համար:
6. Հայկական Լեգէոնը սահմանուած պիտի ըլլայ բացառաբար գործածուելու Կիլիկիոյ եւ հայկական նահանգներու պաշտպանութեան եւ ապահովութեան համար:
7. Խաղաղութեան Վեհաժողովին կողմէ Հայկական Հարցի լուծման եւ կամ Հայկական Լեգէոնի ցրման ատեն բոլոր խնդիրները պիտի կարգադրուին ֆրանսական կառավարութեան եւ Ազգ. Պատուիրակութեան փոխադարձ համաձայնութեամբ:

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ – Հակառակ պարագային, եթէ Հայկական Լեգէոնի պահպանման եւ վերարձանագրութեան խնդիրներու վերաբերմամբ համաձայնութիւն չգոյանայ, եւ եթէ ֆրանսական կառավարութիւնը վճռէ Հայկական Լեգէոնը ցրուել, Ազգ. Պատուիրակութիւնը կը դիմէ հետեւեալ միջոցներուն.

1. Անմիջապէս քուէարկել եւ կամ կազմել մէկ միլիոն ֆրանքի ֆոնտ մը՝ այդ պարագային ձեռք առնուելիք միջոցներուն յատկացնելու համար.
2. Ամէն կերպով ջանալ՝ արդէն մարզուած բանակը չցրուելու եւ օգտագործելու զայն հայկական նահանգներու գրաւման եւ ապահովութեան համար՝ միացնելով Միջագետքի հայ կամաւորական խումբերուն եւ կամ դնելով Հայաստանի Հանրապետութեան տրամադրութեան տակ:

Տոքթ. Նեւրուզ

Տիար Չօպանեան. Կատարելապէս կը ձայնակցիմ Տիար Նեւրուզի զեկոյցին եւ իմ կողմէս կ'առաջարկեմ, որ Պատուիրակութեան հետ՝ այս ժողովէն ալ ներկայացուցչութիւն մը պէտք եղած տեղերը դիմումներ կատարելով արտայայտէ ամբողջ հայութեան վրդովմունքը: Կ'ուզենք գիտնալ, թէ ի՞նչ կարգադրութիւն եղած է՝ Ալեքսանտրէթի խնդրոյն համար, եւ ի՞նչ եղած է Սահակ Կաթողիկոսէն տեղեկութիւններ ուզելու համար հեռագիր տալու իմ առաջարկս:

Տիար Սայեան. Ես կը կարծեմ, թէ գործնական արդիւնքի հասնելու համար պէտք է ուղղակի դիմումներ ընենք Ամերիկայի, հասկնալու համար թէ վերջապէս յանձն պիտի առնէ՞ մեր «ասիսթանս»-ը. եթէ այո՝ այն ժամանակ այս Ժողովէն որոշուած պահանջներ դնենք առջեւնին, երկիրը թիւրքերէն պարպելու, պարենաւորելու եւ այլ խնդիրներու համար, եւ վերջապէս մեզի թոյլ տրուի, որ մենք ալ մեր ընելիքը կարենանք ընել:

Տիար Տէրվիշեան. Բրիտանական բանակները, Միջագետք նոր մտած ատենէն չափազանց հոգատար եւ հետաքրքիր եղած են հայոց վիճակին հանդէպ, բայց յետոյ ստեղծուեցաւ այս կացութիւնը, որովհետեւ տեղւոյն վրայ չունեցանք անգլիացւոց հետ խօսելու եւ վարուելու ատակ հայ գլխաւորներ: Ասոր համար կ'առաջարկեմ երեքական հոգինոց երկու յանձնաժողով ընտրել, որոնց անդամները լաւ ծանօթ ըլլան անգլիական եւ ֆրանսական լեզուներուն ու մտայնութեանց, ըլլան նաեւ որոշ դիրքի տէր եւ երթան Կիլիկիա ու Միջագետք՝ յարաբերութիւն պահպանելու համար հայերուն եւ օտար իշխանութեանց միջեւ, ու միւս կողմէ ներկայացնելու համար հայկական տեղական պահանջումներն ու շահերը:

Տիար Հինդլեան. Կ'առաջարկեմ պահանջել Հայաստանի գրաւումը, Յիշատակագրին մէջ ցոյց տրուած սահմաններուն մէջ, այնպիսի պետութեան մը կողմէ, որ պատասխանատու ըլլայ այս տեսական դէպքերու համար, եւ արտաքսել ի սպառ բոլոր թրքական իշխանութիւնները այդ սահմաններէն:

Տիար Թէրզիպաշեան. Ես հակառակ եմ այստեղ պետութեանց պատուիրակութիւններուն դիմումներ ընելու մտածման, զայն գործնական չեմ գտներ եւ չեմ յուսար, որ անմիջական արդիւնք տայ: Այժմ միակ գործնականը բացասական արդիւնքէ խուսափիլն է: Ես ալ համամիտ եմ Պ. Տէրվիշեանին. պէտք է ղրկել երեք հոգինոց յանձնաժողով մը, որ գլխաւորաբար երեք աշխատանք կատարէ. Ա. Թուրք «բրովոքասիոն»-ները չէզոքացնող միջոցներ ձեռք առնել. Բ. Նոյն միջոցները տարածել երկրին մէջ գտնուած օտար իշխանութեանց հնարքներուն դէմ, եթէ կան. Գ. Հայ զինուորներու եւ հայ գաղթականներու վրայ բարոյական ազդեցութիւն գործելով՝ տեղի չտալ անպատեհութեանց ծագման:

Տիար Յակոբեան. Ես կը կարծեմ, թէ մինակ լեզու գիտնալ չի բաւեր, այլ հարկաւոր է նաեւ լաւ ծանօթ ըլլալ տեղին պայմաններուն եւ հոգեբանութեան. այս իսկ պատճառով, կ'առաջարկեմ, որ կարելի եղածին չափ շուտ Տիարք Նեւրուզ եւ Տամատեան Կիլիկիա մեկնին:

Տիար Տամատեան. Տիա՛րք, դիւանագիտութիւնը խաղ կը խաղայ մեզի հետ. Պեռլինի Վեհաժողովէն մինչեւ այս պատերազմին սկիզբը՝ ռէֆորմներու խաղն էր. հիմա ալ անկախութեան խնդիրն է: Եթէ ի վերջոյ ստանանք ալ, Հայաստանը բաւականին հայերէ պարպուած պիտի ըլլայ, որպէսզի ապարդիւն մնայ: Մենք պէտք է այս մեծ վտանգին առաջքն առնենք, ամէնախիստ դիմումները պէտք է ընենք պետութիւններու ներկայացուցիչներուն մօտ՝ վերապրող հայերը պահելու համար: Լիովին համաձայն եմ Տոքթ. Նեւրուզի առաջարկներուն եւ Տոքթ. Սայեանին, որ կ'ուզէր հայկական զինուորական ոյժերը զօրեղացնել: Ես համամիտ եմ, որ Պատուիրակութիւնը անձամբ ընէ այս դիմումները, ընկերակցութեամբ այս Ժողովի մէկ քանի ներկայացուցիչներուն: Պատուիրակութեան Նախագահը ցոյց կու տայ, թէ ինչ դժուարութիւններ կան, որոնք մեր դէմը պիտի ելլեն՝ այս առաջարկներուն գործադրութիւնը պահանջած ատեննիս: Օրինակ՝ երկրին գրաւումը շատ

բարդութեանց տեղի կու տայ, բայց եւ այնպէս, մեր պարտքն է ընել այս դիմումները, եւ պէտք է ընենք ու պահանջենք:

Տիար Փափազեան. Տոքթ. Նեւրուզի ըրած առաջարկները պէտք չէ մասնաւորել, այլ՝ ամբողջ Հայաստանի համար պէտք է պահանջել: Պէտք է ճանչցնել տալ նաեւ ղրկուելիք յանձնաժողովին հեղինակութիւնը՝ պետութիւններու կողմէ: Յանձնաժողովին պաշտօնը պէտք է հաստատեն անոնք, օրինակի համար՝ յարաբերութիւն պահել հայոց եւ Դաշնակից պետութեանց միջեւ, սիրաշահիլ արաբները, զբաղուիլ գաղթականական հսկայ գործերով, եւ այլն: Ես ալ այն կարծիքին եմ, որ դիմումները մեծ եւ անմիջական արդիւնք չպիտի տան, բայց Պատուիրակութիւնը հիմա շատ կարեւոր եւ մեծ գործ ունի կատարելիք, եւ իր ըրած պահանջներուն առաջինը՝ գրաւման խնդիրը պիտի ըլլայ: Նկատի ունենալով, որ Խաղաղութեան Վեհաժողովը մօտ օրերս պիտի պատրաստէ ընդհանուր հաշտութեան պայմանները, կ'առաջարկեմ, որ հայկական Պատուիրակութիւնը Վեհաժողովին ներկայացնէ այն ֆորմիւլները, զորս մենք կը բաղձանք դնել տալ հաշտութեան պայմաններուն մէջ, մեր ապագայ ու մանաւանդ մեր անմիջական պահանջներուն նկատմամբ:

Տիար Աղաթօն Պէյ. Կ'առաջարկեմ խնդիրը յանձնել Պատուիրակութեան, որ պէտք եղածը ընէ եւ կազմէ այն յանձնաժողովը, որ Կիլիկիա պիտի մեկնի:

Տիար Չօպանեան. Անմիջապէս, որ նախագահ Ուիլսոն գայ, անոր դիմելու է եւ հասկցնելու է, թէ ինք անձամբ կրնա՞յ կարգադրել, որ հայերը իրենք գրաւեն երկիրը, միջոցներ եւ դրամ տալով:

Տիար Տամատեան. Ես պատրաստ եմ երթալու, բայց գործ մը կարենալ ընելու համար պէտք է, որ մենք տեղ մը ունենանք, որուն կոթնիլ կարելի ըլլայ. պէտք է որոշ հեղինակութիւն ունենանք եւ Կովկասի Հանրապետութեան ու Ազգ. Պատուիրակութեան ներկայացուցիչները ըլլալու հանգամանքով ճանչցուինք Դաշնակից պետութիւններէն: Այլապէս՝ ի՞նչ կ'ուզէք, որ կարենանք ընել տեղ մը, ուր դեռ թրքական ժանտարմըրին գոյութիւն ունի իր ամբողջ կազմովը: Ասկէ զատ, գործ մը կարենալ ընելու համար պէտք է, որ ղրկուելիք մարմինը աւելի բազմանդամ ըլլայ:

Տիար Մասեհեան Խան. Ֆրանսա տակաւին չպիտի ուզէ այդ պատգամաւորութիւնը իբր հայկ. կառավարութեան դեսպանութիւն ընդունիլ: Ճիշդ է, որ իրենց առաջարկներու տասնէն ութը չպիտի յաջողի, բայց յաջողելիք այդ երկուքն ալ արդէն մեծ օգուտ կը նշանակէ:

Տիար Սայեան. Ես այն հաւատքը ունիմ, թէ այս առաքելութիւնը մեծ դեր պիտի ունենայ կատարելիք. անիկա պիտի դառնայ տէրը, գլուխը այն շուարած ու թշուառ ժողովուրդին, որ դեռ նոր նոր ելած է տարագրութեան սոսկումներէն եւ կարօտ է ամէն բանի, մասնաւորաբար ուղեցոյցի մը, որուն ցուցմունքներուն համեմատ շարժի: Առաքելութեան բարոյական քաջալերութիւնն ու խորհուրդները բարիքներ պիտի դառնան այդ թշուառներու բազմութեան համար:

Տիար Տամատեան. Իմ երթալուս մասին որոշումս կրնամ յայտնել՝ Պատուիրակութեան Նախագահին այս մասին կատարելիք դիմումներէն յետոյ:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Ուրեմն, ժողովը սկզբունքով համաձայն է, որ Պատուիրակութեան կը մնայ որոշել այդ առաքելութիւնը կազմելիք անձերը, եւ ղրկել առաքելութիւնը: Ասկէ յետոյ, ուրեմն, այս խնդրին նկատմամբ ժողովին ըլլալիք դիմումները պէտք է Պատուիրակութեան յղել:

Նիստը փակուեցաւ ժամը 8-ին:

Նախագահ

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 18, թթ. 55-59: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ 14-րդ

10 մարտի 1919թ.

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

1. ԺԱՄԱՆՈՒՄ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԳԱՂՈՒԹԻՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐՈՒՆ

Նախագահ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան բարի գալուստ մաղթեց Ամերիկայէն հասած եւ նոյն տեղի հայ գաղութը ներկայացնող երեք պատգամաւորներուն՝ Տիարք Համբարձումեանի, Մաթիկեանի եւ Միքայէլեանի:

Տիար Հինդլեան հարցուց, թէ ի՞նչ պիտի ըլլայ Տիար Աղաթօն Պէյի դիրքը ժողովին մէջ, քանի որ Ամերիկայի պատգամաւորները հասած են:

Որոշուեցաւ, որ Աղաթօն Պէյ իրաւունք ունենայ ներկայ գտնուելու եւ մասնակցելու նիստերուն, մինչեւ որ Ամերիկայի չորրորդ պատգամաւորը հասնի:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՆՊԱՏԱԿ ԵՒ ՁԵՌՆՀԱՍՈՒԹԻՒՆ ԱԶԳ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ

Իրաւասութեան, Ծրագրի, եւ այլն Յանձնաժողովին տեղեկաբեր Տիար Հինդլեան կարդաց Յանձնաժողովին պատրաստած նախագիծը, եւ աւելցուց, թէ Ազգ. Պատուիրակութեան Նախագահը, ինչպէս նաեւ Տիար Օհանջանեան համաձայն են Յանձնաժողովին բոլոր եզրակացութեանց, իսկ Տիար Ահարոնեան կարգ մը դիտողութիւններ ունի, զորս նախընտրած է ժողովին առջեւ ընել: Տիար Հինդլեան յայտնեց նաեւ, որ Յանձնաժողովը որոշած է Պատուիրակութիւնը կազմել հինգ անդամներով, եւ ասիկա առաջարկել ժողովին: Այդ հինգ անդամները, միանալով կովկասեան երեք պատուիրակներուն, համաձայնութեան սկզբունքով պիտի գործակցին հաւասար իրաւունքներով ու ձայնով:

Տիար Ահարոնեան. Տիար Հինդլեան կրնա՞յ բացատրել արդեօք, թէ ի՞նչ պատճառներ անհրաժեշտ դարձուցին, որ Պատուիրակութեան համար հինգ անդամ առաջարկուի՝ փոխանակ երեքի:

Տիար Հինդլեան. Նախ՝ Յանձնաժողովը նկատի առաւ, որ հինգ հոգիէ կազմուած Պատուիրակութիւն մը աւելի պիտի կրնայ գոհացում տալ այլազան պահանջներու, մանաւանդ որ՝ ներկայացուցչական պաշտօնէ դուրս կան նաեւ ուրիշ կազմակերպչական, ելեւմտական եւ ընդհանուր վարչական հարցեր, որոնց օրը օրին հասնելու համար երեք հոգին անբաւական պիտի ըլլայ: Երկրորդ՝ Պատուիրակութենէ դուրս ուրիշ մարմին մը չկայ, որ առժամանակեայ կառավարութեան մը պաշտօնը կատարէ, ինչպէս կ'ընէ Հայաստանի հանրապետական կառավարութիւնը, որ մի միայն ներկայացուցչական պաշտօնին համար երեք հոգի յատկացուցած է, եւ միւս բոլոր պէտքերուն համար ունի իր յատուկ նախարարները: Երրորդ՝ հինգ հոգի, վերեւ ցոյց տրուած տեսակէտներէն, աւելի ձեռնհասութիւններ պարփակելով, աւելի մեծ ապահովութիւն մը կրնան ընծայել հարցերուն բազմակողմանի քննութեան համար: Չորրորդ՝ վերջապէս այս ժողովին կողմէ նկատի առնուելով եւ ընտրական տեսակէտով հինգ հոգիէ բաղկացեալ Պատուիրակութիւն մը աւելի դիւրաւ իրագործելի է, եւ իր մասին համաձայնութեան գոյացումն ալ աւելի դիւրին, քան երեք հոգինոց Պատուիրակութեան մը համար:

Տիար Ահարոնեան. Կրնա՞մ այս բացատրութիւններէն եզրակացնել, թէ մինչեւ որ Միացեալ Հայաստանը չկազմուի, նոր ընտրուելիք Պատուիրակութեան երկու կողմերը առանձին-առանձին պիտի գործեն:

Տիար Հինդլեան. Մեր կարծիքով՝ նոր Պատուիրակութեան երկու կողմերն ալ հաւասար իրաւասութիւն պիտի ունենան թէ՛ թրքական եւ թէ՛ Կովկասի Հանրապետութեան խնդիրներուն նկատմամբ, ու ոեւէ աշխատանք միշտ միասնաբար պիտի կատարուի: Երկու մասերը միասին նիստեր պիտի ունենան, հոն պիտի քննուին բոլոր հարցերը եւ պիտի որոշուին: Երբ Տիրէքթիւներու Յանձնաժողովը իր եզրակացութիւնները բերէ, հոն պիտի կանխատեսուին հարկ եղած ձեւերը, որոնցմով պիտի ապահովուի Պատուիրակութեան երկու մասերուն կատարելապէս համերաշխ եւ համաձայն գործունէութիւնը: Մէկ խօսքով, հակառակ մեր նախապէս ունեցած փափաքին, միաձոյլ Պատուիրակութիւն չէ, որ կը ստեղծուի, այլ՝ միացած երկու Պատուիրակութիւններ, մինչեւ Միացեալ Հայաստանի իրականացումը:

Տիար Տամատեան. Այս երկու կողմերը այնքան սերտօրէն ձուլուած պիտի ըլլան, որ երբեք առանձին ո՛չ մէկ նախաձեռնութիւն ընելու իրաւունք չպիտի ունենան:

Տիար Ահարոնեան. Ես չկրցայ յստակ պատասխան առնել իմ հարցումներուս. կ'ուզեմ գիտնալ, թէ զոր օրինակ օտար աշխարհին առջեւ, Պատուիրակութիւնները առանձին-առանձի՞ն երեւան պիտի գան իրենց նախագահներով, թէ իբրեւ միաձոյլ մէկ մարմին:

Տիար Հինդլեան. Յանձնաժողովը այս մանրամասնութեանց չէ մտած: Վերը տրուած հարցերուն պատասխաններէն դիւրին է եզրակացնել, սակայն, թէ պէտք է ամէն ջանք ի գործ դրուի՝ արտաքին աշխարհին առջեւ մէկ մարմին ներկայանալու համար: Այս մասին՝ Յանձնաժողովը կը խորհի, թէ երկու Պատուիրակութիւնները երբ իրարու մօտ գան, իրենք իրենց պիտի ճշդեն ինչպէս նախագահութեան, նոյնպէս նաեւ բոլոր նման արտաքին արտայայտութեանց խնդիրները:

Տիար Յակոբեան. Կ'ուզէի գիտնալ, թէ Յանձնաժողովը ի՞նչ պատճառներով անդամոց թիւը չորսէն հինգի վերածեց:

Տիար Հինդլեան. Քանի որ նախապէս կը խորհուէր, թէ պիտի ստեղծուի միաձոյլ Պատուիրակութիւն մը՝ եօթ հոգիով, որուն երեքը Հանրապետութեան պատուիրակները ըլլալով, չորսն ալ ասկէ պիտի ընտրուէին, կը խորհուէր նաեւ, որ երեքին հանդէպ չորսը աւելի չըլլայ. սակայն հիմա, որ հարցերը կողմերով պիտի վճռուին, այլեւս ազատ ենք քիչ առաջ յիշուած նկատումէն, ու հինգը, ինչպէս անգամ մը բացատրեցի, աւելի համապասխան է հարկ եղած ձեռնհասութիւնները համախմբելու համար:

Տիար Շանթ. Յանձնաժողովին մէջ երկու գլխաւոր կարծիք կար, մէկը սա՝ թէ աւելի քիչ ընտրելով, այսինքն երեքի դէմ երեք, գործը շատ աւելի շուտ, դիւրին եւ համաձայնութեամբ կ'երթայ. իսկ միւս մասը կը կարծէր, թէ անհրաժեշտ է թիւը աւելցնել, աւելի շատ «քոմբեթանս»-ներ տալու եւ այլ նկատումներով: Բայց Յանձնաժողովին հինգի համար որոշում տալու գլխաւոր պատճառներէն մէկն ալ այն է, որ հինգը միջինը կը կազմէր երկու պահանջներուն եւ կը դիւրացնէր գործը այն տեսակէտով, որ ժողովին մէջ գոյութիւն ունեցող հոսանքները կրնային իրենց ներկայացուցիչը ընտրել:

Տիար Ահարոնեան. Ես մեծ նշանակութիւն կու տամ երեք պատուիրակ ընտրելու խնդրին. ասիկա ցոյց պիտի տայ, որ մենք մեր մտքին մէջ ամրապէս դրած ենք, որ շուտով պիտի ունենանք Միացեալ Հայաստանի կեդրոնական միակ կառավարութիւնը, երկու կողմերէն երեքական ներկայացուցիչներու միաձոյլ Պատուիրակութեամբ: Որքան ալ որ մենք համաձայնութեամբ պիտի գործենք, այդ բաժանումը արտաքին աշխարհի համար մեծ նշանակութիւն ունի: Անշուշտ՝ երեք անդամ ընտրելէ յետոյ՝ անոնք կրնան իրենց ուզածին չափ օգնականներ, խորհրդականներ առնել: Համագործակցութիւնը աւելի կը դիւրանայ երեքով, որ թէ՛

բանաւոր է եւ թէ՛ նշանակալից՝ ապագայ ձուլումին համար: Բայց եթէ ժողովը հակառակի, ի՞նչ կարող եմ ընել, պիտի ընդունիմ:

Չորրորդ յօդուածը քուէի դրուելով, ժողովն ընդունեց զայն, միայն թիւի որոշումը դուրս ձգելով, ու վերապահելով յառաջիկային:

Յանձնաժողովոյ առաջարկին մէջ՝ Համագումարի կազմութիւնը բանաձեւուած ըլլալով «բաղկացած թրքահայերու, պարսկահայերու եւ գաղութներու ներկայացուցիչներէն» ասութեամբ, Տիար Վարանդեան առաջարկեց միայն «թրքահայոց եւ պարսկահայոց» ըսել, քանի որ գաղութներու ազգայինք ալ թրքահայ են:

Տիար Ահարոնեան. Լաւ է «պարսկահայ» բառը եւս վերցնել, քանի որ մենք Պարսկահայաստանի քաղաքական դեր չունինք: Օտարներու կողմէ կրնայ գէշ մեկնուիլ. եւ արդէն՝ ոչինչ կ'աւելցնէ իմաստին վրայ:

Տիար Տամատեան. Ես կ'առաջարկեմ ոեւէ փոփոխութիւն չմտցնել, որովհետեւ մեր Ժողովը իսկապէս համազգային ժողով մըն է, ուր միայն ռուսահայերն են, որ իրենց ներկայացուցիչները չունին, շնորհիւ այն հանգամանքին, որ անոնք բարեբախտաբար ունին Կովկասի մէջ ազատ հանրապետութիւն մը: Ոեւէ սեղմում պատշաճ չէ ներմուծել մեր իսկական կազմութեանը հանդէպ:

Տիար Թէքէեան. Այս ժողովը միայն թրքահայերու ժողով չէ եւ չենք կրնար «գաղութները» ու «պարսկահայ» բառերը ջնջել, զանոնք ալ նկատելով թրքահայ, որովհետեւ այդ գաղութներուն մէջ, ինչպէս Ամերիկա, Եգիպտոս, եւ այլն, ամէն կողմէ եկած հայեր կան, որոնց մէջ նաեւ ռուսահայեր: Յետոյ՝ Պատուիրակութեան հրաւիրագիրը կը գործածէ այդ երեք բառերն ալ, եւ մեր պարսկահայ քաղաքական խնդիր չունենալը պատճառ չէ, որ ջնջենք այդ բառը, քանի որ Ժողովի կազմութեան մէջ իսկապէս պարսկահայ ներկայացուցիչ կայ, եւ անոնք, իբր մէկ մասը ամբողջ հայութեան, իրաւունք ունին ապագայ Հայաստանի մասին իրենց բաղձանքները յայտնելու: Մնաց որ՝ այս ծրագիրը օտարներու երեւալու համար չէ եղած, եւ պիտի է ծառայէ միայն մեր ներքին գործերուն մէջ:

Տիար Թէրզիպաշեան. Լաւ է այս մասին բծախնդրութիւն ընել, որովհետեւ՝ «պարսկահայ» եւ այլն, գործածուած է պարզապէս ժողովին կազմութիւնը յստակօրէն բանաձեւելու համար:

Տիար Սայեան. Մինչեւ այս պատերազմին վերջերը, երբ բանաձեւուեցան մեր բաղձանքները՝ Յիշատակագրին մէջ յիշուած սահմաններուն համեմատ, մենք Պարսկահայաստանը մաս կը համարէինք Ամբողջական Հայաստանին. անկէ յետոյ է, որ սկսանք աչք գոցել եւ գաղութի աչքով նայիլ անոր վրայ, ըստ որում՝ մենք քաղաքական ձգտումներ ցոյց չենք տար Պարսկահայաստանի վրայ եւ այնտեղի հայութիւնը կը նկատենք իբր պարզ գաղութ մը:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Ինչպէս յայտնի է, այս բառերը գործածուած են պարզապէս իրականութիւնը ճշդօրէն արտայայտելու համար: Քանի որ նախագիծը կը պատկանի մեր ներքին աշխատանքներուն, լաւ է որ այդ բառերը անփոփոխ մնան:

Տիար Չօպանեան. Այս վիճաբանութեանց պատճառը այն է, որ մենք սկիզբէն ի վեր ուզած ենք, եւ Պատուիրակութեան հրաւիրագիրն ալ այդ նպատակով է, ընդհանուր ազգային ժողով մը կազմել. ասիկա ամբողջովին չիրականացաւ այն պատճառով, որ բարեբախտաբար Կովկասի մեր եղբայրները իրենց հանրապետութիւնը կազմեցին, հանրապետութիւն, որ սակայն իր պատուիրակներն ունի այս ժողովին մէջ: Իսկ գալով Պարսկահայաստանին, մենք երբեք զայն գաղութ մը չպիտի նկատենք, եւ մեր սրտին մէջ միշտ պիտի մնայ իբր Ամբողջական Հայաստանի մէկ մասը: Ինչպէ՞ս գաղութ նկատել Պարսկահայաստանը, ուր Աւարայրը կայ, Տղմուտը կայ: Այս պատճառաւ մեզի համար ցանկալի է, որ այդ բառը գործածուի հոն:

Քուէարկութիւն կատարելով՝ որոշուեցաւ պահել այդ յօդուածը նոյնութեամբ:

Յետոյ քննուեցան Յանձնաժողովին բերած ծրագրին երրորդ եւ չորրորդ յօդուածները, ի մասին նոր կազմուելիք Պատուիրակութեան ուղեգիծ մշակելու, Ազգ. Պատուիրակութեան հրաժարականին եւ գործունէութեան տեղեկագրին, եւ նոր Պատուիրակութիւն մը ընտրելու:

Տիար Օհանջանեան. Կ'առաջարկեմ թիւի մասին այժմ չվիճաբանիլ, այլ՝ ընտրութեան միջոցին, եւ Կովկասի պատուիրակներուն համար գործածուած «ներկայացուցիչ» բառը փոխել «պատուիրակ»ի:

Տիար Վարանդեան. Կ'առաջարկեմ Իրաւասութեան Յանձնաժողովին մէջ մէկ երկու հատ ալ Ամերիկայէն եկած պատգամաւորներէն մտցնել, եւ այդ Յանձնաժողովին յանձնել նոր Պատուիրակութեան համար գործունէութեան ուղեգիծ պատրաստելու պաշտօնը:

Ժողովը համակարծիք գտնուելով, որոշուեցաւ նոյն Յանձնաժողովին անդամ նշանակել նաեւ Տիար Համբարձումեանը:

Տիար Հինդլեան. Ես կը դիւրացնեմ Տիար Վարանդեանի առաջարկը, հրաժարելով այդ Յանձնաժողովի անդամակցութենէն եւ տեղ տալով ամերիկահայ պատգամաւորներուն: Այսպիսով՝ Յանձնաժողովին աշխատանքն ալ կը դիւրանայ եւ իմ ազատութիւնս վերստացած կ'ըլլամ այս ժողովին մէջ, փոխանակ միշտ քոմբրոմիսներ ընելու Յանձնաժողովին մէջ:

Ժողովը նախ մերժեց Տիար Հինդլեանի հրաժարականը, բայց իր պնդման վրայ՝ ընդունեցաւ:

Տիար Սայեան. Ես համամիտ չեմ Պատուիրակութեան հրաժարականը եւ գործունէութեան տեղեկատուութիւնը մի միայն լսելու առաջարկին: Քանի որ Պատուիրակութիւնը իր հրաժարականը այս մարմնին կու տայ, կը հետեւի, որ մենք ալ իրաւունք ունենալու ենք զայն քննադատելու, պարսաւելու կամ շնորհաւորելու: Ես չեմ հասկնար. կա՛մ այն է, որ ժողովին արժէքը շատ կը փոքրացնենք մենք, որուն միայն տեղեկութիւն կը տրուի, կա՛մ այն է, որ ժողովը Պատուիրակութեան բնաւ կարեւորութիւն չի տար: Ասիկա անբնական կը թուի ինծի: Վերջապէս՝ նախարարները եւ թագաւորներն իսկ կը քննադատուին:

Տիար Հինդլեան. Իրաւասութիւնը՝ երկու անկախ մարմիններու միջեւ՝ պարտականութեան եւ իրաւունքի յարաբերութիւնն է: Այս ժողովը, որ չէ ընտրած Պատուիրակութիւնը, իրաւունք չունի ո՛չ հրաժարական պահանջելու, ո՛չ ալ հաշուետուութիւն, այլ՝ հրաւիրուած է եւ պարտականութիւն ունի նոր Պատուիրակութիւն մը ընտրելու: Արդ, որպէսզի այդ աշխատանքը կարենայ ընել, պէտք է, որ լսէ հին Պատուիրակութեան հրաժարումը, առանց որուն չի կրնար նորը ստեղծել: Որպէս համագումար՝ մենք ի վիճակի չենք եւ չենք ուզեր ալ Պատուիրակութեան անցեալ գործունէութիւնը քննադատելով եւ հաշուետուութիւնը լսելով՝ անոր գործունէութեան պատասխանատուութիւնը բաժնել:

Տիար Չօպանեան. Այսպիսի րոպէի մը, ուր դէպքերը կը գահավիժին, ուր այնքան գործ կայ ընելիք, ես յարմար չեմ գտներ յամենալ քննադատելու հին գործունէութիւն մը: Ատիկա պատմութեան գործն է:

Տիար Թէրզիպաշեան. Ես կ'առաջարկեմ, առանց պատճառաբանելու առաջարկս, որ Պատուիրակութեան հրաժարականին խօսքը չըլլայ, այլ բաւականանանք ըսելով, թէ ժողովը կը լսէ Պատուիրակութեան տեղեկատուութիւնը եւ կ'ընտրէ նոր Պատուիրակութիւնը:

Նիստը փակուեցաւ ժամը 8-ին:

Նախագահ

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 18, թթ. 60-63 շրջ.: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ 15-րդ

11 մարտի 1919թ.

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

1. ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Կարդացուեցաւ Փետրուար 27-ի նիստին ատենագրութիւնը: Տիար Շանթ խօսք առնելով ըսաւ, թէ ատենագրութիւնը չի պարունակեր իր ամէն ըսածները եւ շատ թերի է. ինչ որ խօսած էր՝ հաւատարմաբար չէ արձանագրուած: Տիար Շանթ աւելցուց, թէ քանի որ այս ատենագրութիւնները փոշիի տակ մնալու վիճակուած են, աւելի լաւ է, որ փոխանակ մանրամասնօրէն արձանագրելու. միայն գլխաւոր գաղափարները եւ քուէարկուած որոշումները արձանագրուին:

Տիար Հինդլեան. Համաձայն չեմ Տիար Շանթի յայտնած կարծիքին. եթէ ատենագրութիւն ըսելով պիտի հասկնայինք միայն տրուած որոշումներուն պարզ արձանագրութիւնը, ուրեմն ի՞նչ հարկ կար երկու արձանագրող քարտուղարներ նշանակելու: Ընդհակառակը, հնարաւորութեան բոլոր սահմաններուն մէջ պէտք է արձանագրուին այստեղ արտայայտուած բոլոր մտքերը. արձանագրութիւնը պէտք է ճշգրիտ պատկերը տայ ժողովին մտայնութեան: Խօսքերը կը թռին կ'երթան, բայց գրուածները կը մնան: Նիստերը դռնփակ ընելու որոշումը տրուելէն ետք, արձանագրութիւնները կը մնան միակ միջոցը, որով հայ ազգը եւ մեր ընտրողները պիտի կարենան գիտնալ, թէ իրենց պատուիրակները որքա՛ն մնացեր են իրենց պաշտօնին բարձրութեան վրայ, ինչքա՛ն գիտակցութիւնը ունեցեր են իրենց յանձնուած եւ վստահուած գործին մէջ: Ամէն խօսող պիտի գիտնա, թէ իր արտայայտած մտքերուն համար հոս, դուրսը, հաշիւ պիտի պահանջեն իրմէ, եւ իր այստեղ ունեցած դիրքին, ըսել կ'ուզեմ ունեցած ուղղութեան համեմատ, պիտի գնահատուին ապագային մէջ, այս ժողովէն ետք, մեր հանրային կեանքի մէջ իր մասնակցութիւնը, յայտնած գաղափարները, գործունէութիւնը: Արձանագրութիւնները անհրաժեշտ են անհատական պատասխանատուութիւններու ճշդման համար, եւ ասոր համար է, որ կը խնդրեմ, թէ պէտք է ամէնուն յայտնած գաղափարները ճշգրտօրէն եւ ամբողջութեամբ արձանագրուին:

Տիար Տամատեան. Ես ալ համաձայն եմ, որ արձանագրութիւնները Ժողովին հարազատ պատկերն ըլլան. կարելի է անշուշտ խօսուածները համառօտել, կրկնությունները զանց ընել. բայց իւրաքանչիւրին արտայայտած կարծիքները պէտք է ճիշդ ցոլացած ըլլան: Ընդհակառակը, արձանագրութեանց մէջ ոմանց ըսածները ամէնայն մանրամասնութեամբ գրուած են, ուրիշներունը՝ յապաւուած, որոնցմէ է նաեւ իմս: Այդ Փետրուար 27-ի նիստը շատ կարեւոր նիստ մըն էր եւ ժողովականներէ ոմանց յայտարարութիւնները Ժողովին համար շատ փափուկ կացութիւն մը կը ստեղծէին. պէտք էր այդ ամէնը պատկերացուած ըլլար: Օրինակի համար, Տիար Շանթի վերոյիշեալ յայտարարութիւններուն ի պատասխան ես ըսի, թէ «այդ համերաշխութեան մեղրածորան բառերուն տակ ժողովին կարծիքի ազատութեան դէմ սպառնալիք մը պահուած է» թէ՝ «ժողովականներու ընտրութեան կամ նշանակովի հրաւիրման մասին եղած ակնարկութիւնները յայտնապէս կը միտին Ժողովին օրինաւորութիւնը կասկածի տակ դնելու, ինչ որ այս Համագումարին դիրքը նսեմացնել եւ անոր արժանապատուութիւնը վիրաւորել կը նշանակէ»: Ես այդ նիստին մէջ ըսի նաեւ, թէ Դիւանին պարտականութիւնն էր այդպիսի արտայայտութիւններու պարագային ատենախօսը ի կարգ հրաւիրել անմիջապէս: Այս ամէնը դուրս թողուած են արձանագրութիւններէն եւ կը պահանջեմ, որ արձանագրուին:

Տիար Յակոբեան. Կ'առաջարկեմ Ժողովին ոգին միայն արձանագրել, որով ժամանակ ալ կը շահուի:

Տիար Դաւիթ-Բէկ. Անոնք որ կը փափաքին, իրենց ճառերը իրենք իսկ գրեն եւ արձանագրել տան:

Տիար Տէր-Ստեփանեան. Ամէնէն աւելի յարմար կը գտնեմ Տիար Դաւիթ-Բէկի առաջարկը: Անհրաժեշտ է, որ Ժողովի արձանագրութիւնները կարելիօրէն ընդարձակ ըլլան եւ պատկերացնեն ամբողջ ըսուածները: Ամէն պատգամաւոր իր արտասանած խօսքերուն պատասխանատուութիւնը պէտք է ստանձնէ: Պատգամաւորներ կրնան ըլլալ, որոնք անպատեհ խօսքեր ընեն եւ չուզեն անոնց արձանագրումը, պատասխանատուութենէ խուսափելու համար: Տիար Շանթի խօսքերուն արձանագրութիւնները ամէնէն հաւատարիմներէն են եւ կը պարունակեն անոր հիմնական գաղափարները:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Գիտէ՞ք, որ երկու տեսակ արձանագրութիւն կայ, մէկը «սթենոկրաֆիք», որ բառ առ բառ կ'առնէ իւրաքանչիւրին խօսածը, իսկ միւսը՝ «անալիթիք», որ միայն արտայայտուած գլխաւոր գաղափարները կ'ամփոփէ: Դժբախտաբար ո՛չ սղագիր, եւ ո՛չ ալ վարժ գրագիրներ չունինք ձեռքի տակ ու հարկադրուած ենք եղածով գոհանալու. այնպէս որ՝ հոս միջին ճամբայ մը բռնուած է: Ի հարկէ, կը յանձնարարենք աւելի խնամք տանիլ արձանագրութիւններուն:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՆՊԱՏԱԿ ԵՒ ՁԵՌՆՀԱՍՈՒԹԻՒՆ ԱԶԳ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ

Ժողովը, անցնելով Իրաւասութեան Յանձնաժողովին բերած նախագիծին այն յօդուածին, որ Պատուիրակութեան համարատուութեան եղանակին կը պատկանի, քուէի դրաւ եւ 10 ձայնով ընդունեց:

Տիար Տոքթ. Սայեան ներկայացուց հետեւեալ բանաձեւը.

«Վեհափառ Կաթողիկոսէն նշանակուած Պատուիրակութեան տեղեկատուութիւնը Ժողովը կը լսէ, ու անոր վրայ արտայայտուելէ յետոյ կը կատարէ Պատուիրակութեան ընտրութիւնը»:

Քուէի դրուելով՝ այս բանաձեւը ստացաւ միայն երեք ձայն:

Միաձայնութեամբ ընդունուեցաւ 6-րդ յօդուածը, եւ անմիջապէս ընտրուեցաւ հինգ հոգիէ բաղկացեալ Ելեւմտական Յանձնաժողով մը, այդ խնդիրը մշակելով Ժողովին եզրակացութիւններ բերելու համար:

Յանձնախումբին անդամ նշանակուեցան՝

Տիարք՝ Աղաթօն Պէյ
Ներսէսեան Խան
Տէրպէտէրեան
Քէլէկեան Խան
Ֆնտգլեան

Ժողովը անցաւ 7-րդ յօդուածին, որ կը վերաբերի Համագումարին հրապարակային արտայայտութեանց: Այս մասին յանձնաժողով մը ընտրելու համար թեր ու դէմ կարծիքներ յայտնուեցան, բայց ի վերջոյ որոշուեցաւ առանց նոր յանձնաժողով մը ընտրելու յանձնել այս խնդիրը Դիւանին, որ իր հարկ դատած կարգադրութիւններովը առաջարկ մը բերէ Ժողովին:

Ապա քննութեան ենթարկուեցաւ Ժողովի տեւողութեան եւ վերահրաւիրման հարցը:

Տիար Տէր-Ստեփանեան. Քանի որ յիշեալ ու որոշեալ պարագաներուն մէջ Ժողովը նորէն պիտի կանչուի, կ'ենթադրեմ, որ Ժողովականները Փարիզ պիտի մնան: Ի՞նչ պիտի ընեն այդ ժամանակամիջոցին մէջ:

Տիար Տամատեան. Պատուիրակութիւնը ինքը պիտի ընտրէ կարգ մը յանձնաժողովներ, որոնք պիտի զբաղին ներգաղթի, բրոբականտի եւ այլ հարցերով, եւ որոնց մէջ հաւանօրէն պիտի մտնեն այս Ժողովին անդամներէն շատերը:

Տիար Յակոբեան. Դիտել կու տամ, որ նախագահ Ուիլսոն շուտով պիտի գայ եւ այն ժամանակ գործերը աւելի արագ ելք պիտի գտնեն: Կ'առաջարկեմ անմիջապէս նոր Պատուիրակութեան ընտրութեան ձեռնարկել:

Տիար Հինդլեան. Ժողովը նախ Պատուիրակութեան տիրէքթիւները պիտի գծէ եւ ապա Պատուիրակութեան ընտրութիւնը պիտի կատարէ: Եթէ նախագահ Ուիլսընն գայ, մենք Պատուիրակութիւն մը ունինք, որ պէտք եղածը կ'ընէ:

Վսեմ. Պողոս Փաշա Նուպար. Ճիշդ է, որ Պատուիրակութիւն մը կայ, բայց անիկա անդամալուծուած է: Ես ալ համաձայն եմ, որ անմիջապէս նոր ընտրութիւն կատարուի:

Տիար Փափազեան. Ես համամիտ եմ Պատուիրակութեան Նախագահին եւ Տիար Յակոբեանի: Ճիշդ է, Պատուիրակութիւն մը գոյութիւն ունի, բայց անուանական է. իսկ մենք եթէ խնդիրը այսպէս ձգձգենք, մեծապէս կը վնասենք մեր դատին: Պէտք է ընտրենք Պատուիրակութիւնը, որ քիչ ժամանակի համար է: Ասոր համար կ'առաջարկեմ թուական որոշել տիրէքթիւներու ծրագիրը մշակող յանձնաժողովին, որ բերէ իր եզրակացութիւնները:

Տիար Հինդլեան. Կ'առաջարկեմ, որ շուտ ընենք ըսելով պատճառ չտանք աշխատութեանց անկատար մնալուն, ինչպէս եղաւ Իրաւասութեան Յանձնաժողովին համար:

Տիար Շանթ. Վաղը եւ միւս օրը տուէք մեզի, Ուրբաթ օրը կը բերենք ձեզի:

Ըստ այսմ, տիրէքթիւներու մշակման գործը յանձնուեցաւ Ժողովին իրաւասութեան ծրագրով զբաղող յանձնաժողովին, պայմանաւ, որ իր աշխատութեանց արդիւնքը Ուրբաթ օր բերէ:

Տիար Սայեան. Ժողովականները ի՞նչ պիտի ընեն այդ դադարի միջոցին, որ պիտի տրուի ժողովին՝ իր աշխատանքները վերջացնելէն մինչեւ վերահրաւիրման օրը:

Տիար Չօպանեան. Պատուիրակութիւնը իր շրջաբերականին մէջ արձանագրած է, որ այս Համագումարը, դադրեցնելէ յետոյ իր նիստերը, նորէն պիտի հրաւիրուի, երբ յայտնի ըլլայ Հայկական Հարցին վերջնական պատասխանը: Այդ պարագային՝ Պատուիրակութիւնն է հրաւիրեր կամ ժողովը ինքն է գումարուեր՝ միեւնոյնն է: Իսկ արտաքոյ կարգի պարագայի մը՝ Համագումարը հրաւիրելը Պատուիրակութեան ձգուած է: Կը խորհիմ, որ ասիկա կարելի էր ժողովին ալ ձգել: Իսկ դադարի միջոցին աշխատելու համար, ինչպէս արդէն որոշուած է, կ'առաջարկեմ աւելի մեծ յանձնաժողով մը կազմել, որ պիտի մշակէ Հայաստանի վարչական կազմի ծրագիր մը, եւ որուն կրնան մասնակցիլ այս Ժողովին բոլոր անդամները:

Տիար Հինդլեան. Յանձնաժողովին մէջ կարծիք մը կար, որուն համաձայն այս Համագումարը իր անդամներէն որոշ թիւի մը պահանջով նիստի պիտի հրաւիրուէր՝ անկախ Պատուիրակութեան հրաւէրէն: Այս կարծիքը չընդունուեցաւ, եւ շատ բանաւոր պատճառներով: Այս Ժողովը ինք պիտի ընտրէ իր Պատուիրակութիւնը, որ պիտի գործադրէ որոշումները: Արդ, Պատուիրակութիւնը, իբր համարատու մարմին մը, բեռնաւորուած պատասխանատուութիւններով, պիտի գիտնայ, թէ մարմին մը կայ, որ միշտ հաշիւ եւ համար պիտի պահանջէ իրմէ: Ահա թէ ինչո՛ւ Համագումարը պիտի մնայ միշտ, մինչեւ որ Պատուիրակութիւնը իր գործը վերջացնէ եւ գայ իր համարը տալու: Համագումարը միշտ նիստ պիտի ունենա՞յ թէ ոչ՝ այս պարագային մէջ կարեւոր չէ բնաւ. կարեւորը այն է, թէ Համագումարի հրաւանչիւր անդամ կը պահէ իր հանգամանքը, եւ Համագումարը կը պահէ իր գոյութիւնը իբր համարառու մարմին: Այլապէս՝ պիտի ընտրենք Պատուիրակութիւն մը, որ Համագումարին ցրուելէն ետք չպիտի գիտնայ, թէ որու հաշիւ եւ համար պիտի տայ: Ազգի՞ն. սակայն ազգը, ժողովուրդը չի կրնար առանց որոշ ձեւի մը եւ որոշ հաստատութեան մը այդ գերագոյն

իրաւունքը կիրարկել: Հիմա Պատուիրակութիւն մը կայ, որ գէթ Կաթողիկոսին համարատու է: Եթէ Համագումարը ցրուի՝ վերջ տալով իր գոյութեան, իր ընտրած Պատուիրակութիւնը պիտի ըլլայ անպատասխանատու իշխանութիւն մը: Այդպէս բան չենք կրնար ընել ո՛չ մէկ պարագայի մէջ. ատիկա պիտի ըլլար յանձնառութեան դասալքութիւն մեր կողմէ:

Հիմա գանք երկրորդ խնդրին: Համագումարը չի կրնար նիստի հրաւիրուիլ, բայց եթէ միայն իր իսկ ընտրած Պատուիրակութեան եւ իր բովանդակ վստահութիւնը վայելող մարմնին հրաւէրով: Ընտրել Պատուիրակութիւն մը եւ վերապահել իրաւունք մը՝ նիստի հրաւիրելու անկախ անկէ, պիտի նշանակէր վստահութեան պակաս: Ես չպիտի ուզէի եւ չպիտի կրնայի երբեք անդամ ըլլալ գործադիր իշխանութեան մը, որուն չի վստահուիր ձեզ նիստի հրաւիրելու նախաձեռնութիւնը: Գործադիր իշխանութիւնը պիտի ունենայ գործելու իր ազատութիւնը: Ասիկա այնքան անհրաժեշտութիւն է, որքան հակակշիռը Համագումարի կողմէ: Սակայն, այդ հակակշիռը երբեք չպիտի վտանգէ ազատութիւնը, այլապէս՝ հակակշիռը կը դառնայ բռնաբարում: Եթէ առարկուի, որ կրնայ պատահիլ, որ գործադիր իշխանութիւնը ժողովին որոշումներուն հակառակ ընթացք մը ունենայ եւ գործունէութիւն մը մշակէ, ու Համագումարը նիստի չհրաւիրէ, դուք գիտէք, թէ այդ պարագային ի՞նչ կրնայ պատահիլ եւ ի՛նչ միջոց ունինք մեր ձեռքը՝ հարկ չկայ հոս ըսելու: Երբ Համագումարը ցրուած չէ եւ հրաւանչիւր պատգամաւոր իր հանգամանքը կը պահէ, նման հաւանականութեան մը պարագային կը կատարէ իր պարտականութիւնը, զինքը արհամարհող եւ իրմէ ընտրուած գործադիր իշխանութեան հանդէպ, մեր իրաւունքները պինդ բռնենք, բայց գործադիր իշխանութեան ալ ազատութիւնը յարգենք: Միայն այսպիսով կ'իրականանայ պահանջուած ներդաշնակութիւնը գործադիր իշխանութեան եւ Համագումարին միջեւ:

Վսեմ. Պողոս Փաշա Նուպար. Ես լիովին համաձայն եմ Տիար Հինդլեանի: Այս ժողովը այստեղ կանչուած է նոր Պատուիրակութիւն ընտրելու եւ անոր գործունէութեան համար ծրագիր մը շինելու: Ասիկա ընելէ ետք՝ վերջացած է իր պաշտօնը եւ պէտք է ցրուի: Յետոյ նոր Պատուիրակութիւնը պիտի վերահրաւիրէ ժողովը՝ երբ վերջնական որոշում մը իմանանք մեր խնդրին մասին եւ կամ երբ Պատուիրակութիւնը ծանր վիճակի մը մէջ գտնուի:

Տիար Համբարձումեան. Ինչպէս կ'երեւայ՝ Պատուիրակութիւնը իր հրաւիրագրին մէջ կարգադրութիւններ ըրած է, որոնք ո՛չ միայն այն ժամանակուան համար եղած են, այլեւ՝ ապագային: Արդ, անկէ մինչեւ հիմա պայմանները բոլորովին փոխուած են. հետեւաբար՝ այդ կարգադրութիւնները ոչ պարտադիր են այլեւս:

Ապա Տիար Համբարձումեան, իբրեւ նոր հասած պատգամաւոր, անդրադարձաւ ժողովի կազմութեան թերի կողմերուն, քննադատեց պատգամաւորներու թիւին գաղութներու մէջ թերի բաշխումը, հրաւիրեալ պատգամաւորներու գոյութիւնը, եւ այլն, ու պահանջեց որ վերահրաւիրուելիք Համագումարը ունենայ պատգամաւորներ այն տեղերէն, ուր մեծ թուով հայութիւն կայ, օրինակ՝ Իզմիր եւ Հալէպ, եւ հրաւիրուած պատգամաւորները ձայն չունենան:

Տիար Թէքէեան. Չեմ ընդունիր ժողովին հեղինակութեան դէմ ըսուածները: Կովկասի հայութեան՝ այս ժողովին ձայնով չմասնակցիլը ժողովին յանցանքով չէ: Այն օրէն, որ Համագումարը կազմեցինք, Պատուիրակութիւնը ուրիշ ոեւէ պայման չէր կրնար դնել մեր վրայ: Պատուիրակութիւնը կը գտնուի աւելի մեծ մարմնի մը առջեւ. հետեւաբար, ժողովին կը մնայ որոշել, թէ ե՞րբ կը ցրուի եւ ե՞րբ կը գումարուի վերստին: Իսկ գալով այս ծրագիրը մշակող յանձնաժողովին, այն կրնամ ըսել, որ անոր անդամները շատ լաւ գիտակցութիւնը ունէին, որ այս ժողովը աւելի լայն իրաւունքներ ունէր. բայց Պատուիրակութիւնը, իր տեսակէտները յայտնելէ յետոյ, Յանձնաժողովը, իրականութիւնը յայտնելու համար, իր իրաւունքները կտրատեց ի յարգանս Պատուիրակութեան Նախագահին, որուն կամքը շատ որոշ էր եւ զոր հաշուի

առնել ստիպուած ենք: Ասոր համար է, որ Ժողովին վերահրաւիրումը ձգեցինք Պատուիրակութեան եւ համաձայն եղանք միւս կէտերուն՝ մէկ կողմէ Պատուիրակութեան Նախագահին եւ միւս կողմէ՝ Կովկասի ներկայացուցիչներուն կարծիքի ճնշումին տակ:

Տիար Տամատեան. Կը հաստատեմ:

Տիար Թէքէեան. Կը մնայ ուրեմն իրողութիւնն ընդունիլ այնպէս, ինչպէս որ է, վստահ ըլլալով, որ Պատուիրակութիւնը հարկ եղած ժամանակ պիտի կանչէ Ժողովը եւ թէ ինքն իսկ արդէն ծանր պատգամաւորներու պատասխանատուութիւնը պիտի ուզէ բաժնել այս Ժողովին հետ կամ անոր թողուլ: Կ'առաջարկեմ, ուրեմն, Պատուիրակութիւնը դատաւոր ընել այս վերահրաւիրման. իսկ մենք, դադարի միջոցին, կրնանք անպաշտօն նիստեր գումարել՝ թելադրութիւններ ընելու համար Պատուիրակութեան եւ կամ գալիք ծանր աշխատանքները դիւրացնելու համար:

Տիար Սայեան. Բոլորովին հակառակ եմ կրկին ժողով գումարելու Փարիզ: Երկրի թշուառ ժողովուրդին քով մեծ աշխատանք կայ ընելիք: Կ'առաջարկեմ միւս նստաշրջանը գումարել Հայաստանի մէջ, քանի որ արդի նստաշրջանը իր դերը կատարած է, այսինքն՝ որոշ տիրէքթիւներով ընտրել նոր Պատուիրակութիւն եւ ձգել, որ անիկա դիւանագիտական աշխատանք կատարէ: Ուրեմն, եթէ պէտք կայ՝ մնալ տակաւին մէկ-երկու ամիս եւ անկէ վերջ, անշուշտ աշխատանքը լրացնելէ յետոյ, ցրուիլ երկիրը եւ վերածնության գործին սկսիլ:

Տիար Տամատեան. Տիար Թէքէեանի յայտարարութիւններուն կատարելապէս համամիտ եմ: Բայց ես քիչ մըն ալ առաջ պիտի երթամ: Պատուիրակութեան Վսեմ. Նախագահը յայտարարեց, որ այս Ժողովը, հրաւիրագրին տրամադրութեանց համեմատ, ութ արեւելահայ պատգամաւորներ պէտք էր ունենար. թէ քանի որ այս էական պայմանը լրացած չէ, Ժողովը օրինաւորապէս կազմուած չի կրնար նկատուիլ. եւ սակայն, compromiss–ի մը շնորհիւ է, որ իբրեւ Ազգ. Համագումար ճանչցուեցաւ եւ իր նիստերը կը շարունակէ: Այս հայեցակէտին համաձայն չեմ եւ զայն անընդունելի կը գտնեմ, միանգամայն նաեւ՝ վիրաւորիչ Ժողովին արժանապատուութեան: Եթէ Ժողովին մէջ արեւելահայեր չկան, այդ պակասին պատճառը մեր կամքէն բոլորովին անկախ է. անիկա առաջ եկած է Հայկական Հանրապետութեան մը կազմութեան պարագայէն, որ մեզի համար force majeure մըն է, թէեւ ուրախառիթ force majeure մը: Նոյնպէս այն պարագան, թէ տաճկահայ ժողովուրդին կողմէ ութի տեղ վեց ներկայացուցիչ ունինք՝ ոչինչ կը պակսեցնէ Ժողովին օրինաւորութիւնէն: Արդարեւ, երբ Սեպտեմբերին Համագումարին հրաւիրագիրը պատրաստուեցաւ, պատերազմը վերջացած չէր, եւ թէ՛ արեւելահայերուն, եւ թէ՛ Տաճկահայաստանի հայութեան հետ յարաբերութենէ զրկուած էինք: Եթէ մինչեւ Համագումարին բացումը պատերազմը շարունակուած ըլլար, եւ այս իսկ պատճառով ո՛չ Տաճկահայաստանէն եւ ո՛չ Կովկասէն պատգամաւորներ չունենայինք, եւ միայն արտասահմանի պատգամաւորները հասած ըլլային, Պատուիրակութիւնը ի՞նչ պիտի ընէր. Ժողովը պիտի բանա՞ր, թէ՞ պատգամաւորները իրենց տեղերը պիտի ղրկէր, յայտարարելով, որ Ժողովը օրինաւորապէս կազմուած չէ:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Պատգամաւորները իրենց տեղերը պիտի վերադարձնենք, եւ ասիկա՝ Կովկասի ու Տաճկաստանի հայոց շահուն համար, քանի որ անոնք են, որ կը կազմեն հայութեան մեծամասնութիւնը:

Տիար Տամատեան. Այդպէս չպիտի ընենք, եւ ասիկա այնքան ճիշդ է, որ հրաւիրագրին մէջ նախատեսուած է Թուրքիոյ հայերու պատգամաւորներուն չհասնելու պարագային՝ Ժողովը ի՛նք պիտի կարգէ պատգամաւորներ՝ Երկիրը ճանչցող անձնաւորութիւններէ: Հոս երկընտրանք մը կայ: Կա՛մ այն է, որ այս Ժողովը օրինաւոր է եւ կա՛մ՝ ոչ: Եթե օրինաւոր է, եւ ես կը պնդեմ, թէ օրինաւորութեամբ կը գումարուի, ուրեմն կը գործէ կատարեալ հեղինակութեամբ: Իսկ եթէ օրինաւոր չէ՝ ոեւէ compromis կամ Պատուիրակութեան կողմէ շնորհ մը չի կրնար զայն օրինաւոր

դարձնել: Այդ պարագային՝ Ժողովը չի կրնար գումարուիլ, ազգային հարցի մասին կարեւոր որոշումներ տալ, եւ ո՛չ ալ նոր Ազգ. Պատուիրակութիւն ընտրել: Այսչափը՝ իբրեւ պատասխան Ազգ. Պատուիրակութեան:

Հիմա գանք երկրորդ կէտի մը: Ասկէ առաջ քանի-քանի անգամներ ժողովականներէ ոմանք պատգամաւորներու այս կամ այն կերպ ընտրութեան մասին ակնարկութիւններ ընելով, միտեցան այս Ժողովին օրինաւորութիւնը եւ ձեռնհասութիւնը կասկածի տակ դնել. բան մը, որ նոյնպէս Ժողովին արժանապատուութիւնը վիրաւորելու բնոյթը ունէր, եւ որուն դէմ ամէն անգամ բողոքեցի, վերջին անգամուն պահանջելով նաեւ, որ Դիւանը այդպիսի ակնարկութիւններ ընող պատգամաւորները իսկոյն ի կարգ հրաւիրէ: Դժբախտաբար, այդ ընթացքը տակաւին կը շարունակուի: Այսօր իսկ երկու ատենախօսներ մատնանիշ ըրին, թէ այս Ժողովին մէջ նշանակովի կանչուածներ կան, թէ Ժողովին կազմը հիւանդոտ է եւ այլն: Արդ, նշանակովի կանչուածներէն մէկը ես եմ: Համագումարի նախապատրաստական նիստերէն մէկուն մէջ ես ալ գտնուեցայ: Եկած էի միամտաբար, բայց տեսայ որ քուէի իրաւունք չունիմ եղեր: Անկէ վերջ՝ Ժողովին չմասնակցեցայ, անոր օրինաւորութիւնը չխանգարելու համար: Քիչ վերջը ինծի իմացուցին, թէ Ամերիկայէն առժամեայ պատգամաւոր ընտրուած եմ. չընդունեցի այդ առժամեայ պաշտօնը եւ չեկայ Ժողովին: Յետոյ՝ Ժողովը զիս իբրեւ գործիչ հրաւիրեց մասնակցելու իր նիստերուն, ընտրուած պատգամաւորներու համահաւասար ձայնով: Պարտականութիւն համարեցի ընդունիլ այս հրաւէրը: Բայց անկէ ի վեր, ինչպէս ըսի, քանիցս ակնարկութիւններ եղան, թէ Ժողովը օրինաւոր չէ, որովհետեւ անոր մէջ նշանակովի հրաւիրուածներ կան: Ժողովին օրինաւորութեան մասին, կ'ուզեմ ես ալ նոյնքան նախանձախնդիր ըլլալով, եւ իմ մասիս՝ անոր օրինաւորութիւնը վերահաստատելու մտածմամբ, իբրեւ նշանակովի, հետեւաբար՝ ապօրէն կերպով հրաւիրուած մը՝ ահա դուրս կ'ելլեմ այս Ժողովէն, դադրեցնելով իմ մասնակցութիւնս այսուհետեւ կատարուելիք աշխատութեանց եւ խորհրդակցութեանց:

Տիար Տամատեան այս յայտարարութիւնը ընելէ ետք, հակառակ ժողովականներու ընդդիմութեան եւ պնդումներուն, մեկնեցաւ ժողովասրահէն:

Տիար Տամատեանի մեկնումէն վերջ, Ժողովը, նկատելով որ այս խնդիրը բացուած է ամերիկահայ պատգամաւորներէն մէկուն կողմէ, նկատելով նաեւ, որ Ժողովը ո՛չ մէկ վիրաւորիչ ընթացք ունեցած է նշանակովի պատգամաւորներու հանդէպ, որոշեց, որ Դիւանը ինքը Տիար Տամատեանը վերստին Ժողովի հրաւիրէ եւ կարգադրէ այս խնդիրը:

Նիստը փակուեցաւ ժամը 8-ին:

Նախագահ

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 18, թթ. 64-69 շրջ.: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ 16-րդ

12 մարտի 1919թ.

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

1. ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆ ՏԻԱՐ ԲՐՕՖ. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻ

Նախագահ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան Ժողովին անունով բարի գալուստ մաղթեց բարբարոս ճիրաններէ ազատած եւ երկար ճամբորդութենէ մը յետոյ նոր Փարիզ հասած, Միջագետքի պատգամաւոր Տիար Բրօֆ. Խաչատուրեանի, որ փոխադարձ շնորհակալութիւն յայտնեց:

2. ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ՏԻԱՐ ՊԱՍՄԱՃԵԱՆԻ

Կարդացուեցաւ Ազգ. Պատուիրակութեան մասնագէտ–խորհրդական Տիար Պասմաճեանի հրաժարագիրը:

Ժողովը որոշեց Պատուիրակութեան ղրկել զայն:

3. ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐՕՇԱԿԻ ՄԱՍԻՆ

Կարդացուեցաւ լոնտոնաբնակ[1] ազգայիններէն Տիար Միհրդատեանցի մէկ նամակը, որ ապագայ Հայաստանի ունենալիք պաշտօնական դրօշակի մասին առաջարկներ կը պարունակէր:

Որոշուեցաւ այս նամակը ղրկել Պատուիրակութեան, որ արդէն ուրիշ կողմերէ ալ հայ դրօշակի մասին գրեր ստացած ըլլալով, ամէնքը միասին ուսումնասիրութեան պիտի ենթարկէ:

1. ԴԻՄՈՒՄ ՀԱՅ ՄԱՄԼՈՅ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ

Կարդացուեցաւ նամակ մը հայ մամուլի Փարիզի ներկայացուցիչներուն կողմէ, որոնք կը խնդրէին ներկայ գտնուիլ Համագումարի նիստերուն:

Նախագահ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան յայտնեց, թէ որոշուած է արդէն դռնփակ ընել նիստերը. բայց Ժողովին աշխատութեանց մեծ մասը արդէն լրացած ըլլալով, թէրեւս կերպով մը կարելի է գոհացում տալ մամուլին:

Տիար Բրօֆ. Խաչատուրեան շեշտեց, թէ ժողովուրդը որքան անձկութեամբ եւ հետաքրքրութեամբ կը սպասէ Համագումարի լուրերուն, եւ առաջարկեց, որ իւրաքանչիւր նիստէ յետոյ Դիւանը հակիրճ զեկուցումներ տայ մամուլին:

Տիար Միքայէլեան առաջարկեց փոխել նախկին որոշումը եւ ընդունիլ մամուլի ներկայացուցիչները:

Տիար Թէրզիպաշեան ըսաւ, թէ օրինական չէ նախկին որոշում մը փոխել. Դիւանը կրնայ մամուլին հաղորդել հարկ եղած տեղեկութիւնները:

Տիար Չօպանեան յայտնեց, թէ համակարծիք չէ, որ մամուլին առջեւ դռները գոցուին, եւ առաջարկեց Համագումարի գոնէ վերջին մէկ քանի նիստերուն ընդունիլ մամլոյ ներկայացուցիչները:

Որոշուեցաւ անխախտ պահել նախապէս տրուած որոշումը եւ ի հարկին տեղեկութիւններ տալ Դիւանին կողմէ մամուլին, երբ սա դիմում ընէ:

5. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԽՆԴԻՐ

Կարդացուեցաւ Երուսաղէմէն հասած գիր մը, որ կը յայտնէր, թէ անիշխանութիւն կը տիրէ Հայոց Վանքին մէջ եւ թէ ազգ. հարստութեանց մատակարարութիւնը գոհացուցիչ չէ:

Տիար Բրօֆ. Խաչատուրեան դիտել տուաւ, թէ այս ժողովը չի կրնար այդպիսի խնդիրներով զբաղուիլ:

Տիար Հինդլեան հակառակ կարծիք յայտնեց եւ ըսաւ, որ այժմ ձեռնհաս պաշտօնական մարմին գոյութիւն չունենալով եւ հաղորդակցութիւնները դժուար ըլլալուն, մենք չենք կրնար աչքերներիս գոց անցնիլ ազգ. սեփականութեանց վերաբերող խնդրի մը վրայէն:

[1] Պետք է ըլլայ «Լահէյաբնակ»

Ժողովը այս խնդիրն ալ ուղարկեց Պատուիրակութեան, անոր թողլով կարեւորը տնօրինել:

6. ԱԶԳ. ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ ԻԶՄԻՐԻ ՄԷՋ

Նախագահ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան կարդաց Իզմիրէն եկած հեռագիր մը, որ կը յայտնէր, թէ Տիար Նիքոթեանի նախաձեռնութեամբ տեղի ունեցած հանգանակութիւնը 150.000 ոսկիի յանգած է, եւ հրահանգ կը խնդրէր, թէ ո՞ւր եւ ինչպէ՞ս փոխադրելու է դրամը:

Այս հեռագիրը յանձնուեցաւ պիւտճէի խնդրով զբաղող յանձնաժողովին, որ պիտի որոշէ նաեւ այդ գումարին ծախսուելու եղանակը, նկատի ունենալով Միջագետքի, Ատանայի եւ այլն թշուառ վիճակը:

Ժողովը յանձնարարեց Պատուիրակութեան Նախագահին, որ նուիրատուներուն շնորհակալութիւն յայտնէ նաեւ Համագումարին կողմէ:

7. ՎԵՆԵՏԻԿԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ ՄԱՄՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԱԶԳ. ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԵԱՆ

Վենետիկի Մխիթարեանց պատգամաւոր Հ. Յովհ. Վ. Թորոսեան Ս. Ղազարու վանքին կողմէ 30.000 ֆր. Պատուիրակութեան հանգանակութեան գործին յատկացուած ըլլալուն վերաբերող զեկուցում մը ըրաւ, պարզելով այն բոլոր դժուարութիւններն ու նեղութիւնները, որոնց ենթակայ եղան վանքը եւ իր հաստատութիւնները՝ աշխարհային այս մեծ պատերազմին հետեւանքով:

Տիար Տամատեան. Հայ ազգին անցուցած այս դժնդակ ժամանակամիջոցին մէջ՝ մենք Մխիթարեան Միաբանութեան կողմէ մեծ ժէսթ մը սպասելու իրաւունք ունէինք: Բայց երբ նկատի առնենք այն կաշկանդիչ պայմանները, որոնց մէջ գտնուեցաւ ան, այս ըրածնին իսկ կարելի է ըսել հրաշք մըն է, որուն համար մենք երկիցս պէտք է շնորհակալ ըլլանք:

Ամեն. Դուրեան Արքեպիսկ. Ես ալ պարտք կը համարեմ ըսել, որ մեծ չափով կրած եմ Վենետիկի Միաբանութեան սքանչելի հանճարներուն ազդեցութիւնը: Անոնք մեզ ամէնուս սորվեցուցին մեր լեզուն, մեր մէջ վառ պահեցին ազգային զգացումը եւ զմեզ հայրենասէրներ դարձուցին: Փառաւոր ըլլան Մխիթարը եւ իր մեծ յաջորդները: Մաղթենք նաեւ, որ Հայաստանի մէջ ամէն տեղ հիմնուին Վենետիկեան Միաբանութեան դպրոցները:

Նախագահ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան յանուն Համագումարին շնորհակալութիւն յայտնեց Մխիթարեան բազմարդիւն Միաբանութեան, անոր ղրկած այս նպաստին եւ իր դպրոցներու վերականգնումին նպատակով ձեռք առած միջոցներուն համար, եւ յարեց, թէ ազգին փափաքը այն է, որ Մխիթարեանները միշտ եւ միշտ բարգաւաճին ու ընդարձակեն իրենց ազգօգուտ գործունէութիւնը եւ աւելի մեծ բաժին մը ստանձնեն մեր բազմաթիւ որբերու կրթութեան ու պահպանման կենսական գործին մէջ:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ ՎՍԵՄ. ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱՅԻ

Ժողովը օրակարգի անցնելով, Ազգ. Պատուիրակութեան Նախագահ Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար հետեւեալ տեղեկատուութիւնը ըրաւ իր եւ Ազգ. Պատուիրակութեան նախորդ գործունէութեան մասին.

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 18, թթ. 84-86: Ձեռագիր: Բնագիր:

Ամփոփ Տեսութիւն
Ազգային Պատուիրակութեան աշխատութեանց՝
Նախագահ Պօղոս Նուպար Փաշային կողմէ ներկայացուած
Հայ Ազգային Համագումարին

Փարիզ, 15 Մարտ 1919.

Պատերազմի չորս տարուան ընթացքին Ազգային Պատուիրակութեան կատարած աշխատութեանց տեսութեան սկսելէ առաջ, օգտակար կը դատեմ նախ, մէկ քանի խօսքով, յիշեցնել ձեզի այն բանակցութիւնները, որ Պատուիրակութիւնը կատարեց Մեծ Պետութիւններուն մօտ, 1912-էն 1914, Հայաստան բարենորոգումներ ներմուծելուն համար:

Ինչպէս գիտէք, Ռուսիան էր, որ նախաձեռնարկ եղաւ յիշեցնել Թուրքիոյ՝ իր ստանձնած յանձնարարութիւնները նախ՝ Սան Սթէֆանոյի եւ յետոյ՝ Պերլինի դաշնագիրներով, հայկական գաւառներու մէջ բարենորոգումներ ներմուծելու համար:

Անմիջապէս համաձայնութիւն մը գոյացաւ Դաշնակից պետութիւններուն մէջ՝ ոյժ տալու համար ռուսական կառավարութեան նախաձեռնութեան եւ որոշուեցաւ Մեծ Պետութիւններու Կ. Պոլսոյ դեսպաններուն պաշտօն յանձնել վերջնական ծրագիր մը մշակելու, հիմ բռնելով Հայոց Պատրիարքարանի մշակած ծրագիրը: Այս ծրագիրը Կ. Պոլսէն ինծի բերաւ Տ. Փափազեան, որ ոչ միայն միջնորդի դեր կատարեց, այլ նաեւ շատ օգտակար կերպով աջակցեցաւ ինծի: Դժբախտաբար, դեսպաններուն աշխատութիւնը բացայայտ ընդդիմութեան մը բախեցաւ Բ. Դռան կողմէ, որ ուժգնապէս պաշտպանուած էր գերմանական կառավարութենէն եւ յետոյ իր ցեղակիցներէն:

Այս ընդդիմութիւնը տեղի տուաւ երկայն եւ տաժանելի բանակցութիւններու, եւ Գերմանիոյ չարամտութիւնը այն աստիճան ջլատեց Ազգային Պատուիրակութեան գործը, որ ստիպուեցայ Պերլին երթալ՝ աշխատելու համար բառնալ խոչընդոտները:

Պէտք է խոստովանեմ, որ Տ. Գիմմէրման, որուն դիմած էի իբր Արտաքին Գործոց Պետական Փոխ-Քարտուղար,- քանզի Տ. Ժագով, Պետական Քարտուղարը, դեռ ձեռք չէր առած իր նախարարութեան գործերը,- բարեացակամօրէն վարուեցաւ, եւ ես երջանիկ եղայ զինքը համոզելու, թէ հայերու ի նպաստ պահանջուած բարենորոգումները օգտակար պիտի ըլլային նաեւ նոյնիսկ Օսմանեան կառավարութեան, քանզի անոնք պիտի բառնային խռովութիւնները եւ անկարգութիւնները՝ որոնք ուշ կամ կանուխ պետութիւններուն միջամտութեան տեղի պիտի տային: Քանզի այն ժամանակ Պալքանեան պատերազմի շրջանին մէջ կը գտնուէինք եւ բոլոր դիւանագէտները կը ջանային արգիլել, որ այդ բախումը ընդհանուր պատերազմ մը առաջ բերէ, ինչ որ Գերմանիան անգամ /անշուշտ ինքզինքը բաւական պատրաստ չզգալով մեծ պատերամի մը/, ջերմօրէն կը բաղձար խուսափիլ անկէ:

Տ. Գիմմէրման, համոզուած հայկական պահանջներուն անկեղծութեան եւ արդարութեան, իմ ներկայութեանս հեռագրեց իր Պոլսոյ դեսպանին, եւ նոյն վայրկեանէն սկսեալ Համաձայնական Պետութեանց ներկայացուցիչներուն հանդիպած դիմադրութիւնը դադրեցաւ: Այս կերպով, վերջապէս, համաձայնութիւնը գոյացաւ եւ 8 Փետրուար 1914-ին Բարենորոգումներու Որոշումնագիրը պարտադրուեցաւ Բ. Դռան, որ զայն ընդունեց:

Աւելորդ կը համարեմ հոս յիշեցնել ձեզի, թե ի՛նչ բանէ կը բաղկանար, իր մանրամասնութիւններուն մէջ, այդ Բարենորոգումներու Որոշումնագիրը, որ այժմ սոսկ պատմական շահեկանութիւն մ'ունի: Բայց եւ այնպէս՝ այն ժամանակ երբ հայերն իրենց կեանքին եւ ինչքին համար միմիայն արդարութիւն եւ ապահովութիւն կը պահանջէին, գոհ եղան այդ բարենորոգումներէն,- որքան ալ անկատար ըլլային անոնք,- յուսալով, որ իրենց համար այլեւս խաղաղութեան նոր դարագլուխ մը պիտի բացուէր:

Այդ միջոցներուն,- Պերլին ըրած ճամբորդութենէս վերջը,- Բեթրոկրատ գացած էի: Բնական է, թէ հոդ Տ. Սազոնոֆի կողմէ լավագոյն ընդունելութիւն մը գտայ, որովհետեւ Ռուսիոյ նախաձեռնութեան վրայ էր, որ բարենորոգումներու ծրագիրը պատրաստուած էր: Ինծի յայտարարեց, որ կայսերական կառավարութեան՝ հայոց հանդէպ հետեւած քաղաքականութիւնը այլեւս Լոպանոֆի եւ Կալիցինի քաղաքականութիւնը չէ եւ թէ ապահով կրնայի ըլլալ, որ ինքը կը նկատէր հայերը կայսրութեան ամէնաուղղամիտ եւ ամէնահաւատարիմ հպատակներէն մին: Կարծեմ շահեկանութենէ զուրկ չի պիտի ըլլայ յիշել, այդ օրէն ի վեր պատահած դէպքերուն պատճառաւ, որ Տ. Սազոնոֆ զիս զգուշացուց գերմանական կառավարութեան խարդախութիւններուն դէմ, որուն հանդէպ մեծ անվստահութիւն մը կը ցուցնէր:

Բ. Դուռը, հաւատարիմ իր աւանդական քաղաքականութեան, ջանաց կերպարանափոխել Բարենորոգումներու Որոշումնագիրը, զայն գործադրութեան դնելէ առաջ իսկ: Ձայն քննելու պաշտօն յանձնեց Օսմանեան կառավարութեան իրաւագէտ խորհրդական Տ. Օսթրորոկի, որ յաջողեցաւ ընդհանուր վերահսկիչներու պաշտօնի պայմանագիրներուն եւ Բարենորոգումներու Որոշումնագիրին կցուելիք կանոնագրութեան մէջ ներմուծել յօդուածներ, որոնք սահմանուած էին ջլատելու գործունէութիւնը ընդհանուր վերահսկիչներուն եւ մատնելու զանոնք գրեթէ անկարողութեան:

Ինչ որ ալ ըլլայ, նոր ձգձգումներէ վերջը երկու ընդհանուր վերահսկիչները,- որոնք պաշտօն ունէին բարենորոգումները գործադրելու,- անուանուեցան: Անոնք էին Քոլոնէլ Հոֆֆ եւ Տ. Վեսթենենկ:

Դեպքերը, դժբախտաբար, ցոյց տուին, թէ որքան ընդունայն էին մեր յոյսերը: Բարենորոգումները դեռ չէին սկսած գործադրուիլ, երբ պատերազմը պայթեցաւ եւ Թուրքիա, որ թէպետ դեռ չէր մասնակցած պատերազմին, իսկոյն օգտուեցաւ առիթէն՝ ոտնակոխ ընելու համար իր յանձնարարութիւնները եւ սկսաւ ջարդի եւ տեղահանութեան իր գործը:

Այն ժամանակ, 1915 Ապրիլին, Վեհափառ Կաթողիկոսը ինծի հեռագրեց Եգիպտոս, ուր վերադարձած էի, եւ զիս կրկին անուանեց իր լիազօր ներկայացուցիչը եւ նախագահ Եւրոպիոյ Ազգային Պատուիրակութեան:

Յաջորդ ամսոյն, 1915 Մայիսին, Տոքթ. Ձաւրիէֆ Փարիզ հասաւ եւ ինծի յանձնեց յայտագիր մը, որ Թիֆլիսի Ազգային Պիւրոն պատրաստած էր ռուսական կառավարութեան հետ համաձայնութեամբ:

Այսպէսով, տեղեկացայ, որ Ֆրանսա եւ Ռուսիա, Թուրքիոյ պատերազմի մտնելէն անմիջապէս վերջը, համաձայնութիւն մը կնքած էին, որուն հետեւանքով, կանխատեսելով Օսմանեան կայսրութեան բաժանումը, Ֆրանսան ստացած էր Կիլիկիան, եւ Ռուսիան՝ Կ. Պոլիսը, Էրզրումի, Պիթլիսի եւ Վանի հայկական երեք գաւառներուն հետ: Բայց Ռուսիա, զղջալով այդ կարգադրութեան վրայ, կը մղէր հայերը պահանջել Կիլիկիան եւ մեզ կը խոստանար իր աջակցութիւնը՝ ստանալու համար ինքնավարութիւն մը միացեալ վեց գաւառներու եւ Կիլիկիոյ համար:

Արդ, Կովկասէն ինծի բերուած յայտագիրը կը պարունակէր.

ա./ պահանջել՝ վեց գաւառներու եւ Կիլիկիոյ համար ինքնավարութիւն մը՝ սուլթանին անուանական գերիշխանութեան տակ.

բ./ խնդրել՝ ինքնավար Հայաստանի համար ֆրանսայի, Անգլիոյ եւ Ռուսիոյ հաւաքական թեւարկութիւնը.

գ./ հրաժարիլ Եւմուրթալըքի եւ Իսքէնտէրունի նաւահանգիստներէն՝ Անգլիոյ եւ Ֆրանսայի կողմէ ըլլալիք ընդդիմութենէ մը խուսափելու համար:

Ճիշդ այս միջոցներուն, ջարդերը, որոնց սոսկալի վայրագութիւնները, աւա՜ղ, ամէնքնիս գիտենք որպէսզի հարկ ըլլայ անոնց վրայ անդրադառնալ.- եթէ ոչ անգամ մ՝ալ յարգանք մատուցանելու համար մեր մարտիրոսներուն յիշատակին,- այնքան մեծ համեմատութիւններու հասան, որ ջանքերս կեդրոնացուցի նախ՝ զանոնք կասեցնելու համար ձեռք բերել Դաշնակից եւ չէզոք պետութիւններուն միջամտութիւնը: 1915 Մայիսին, Դաշնակից պետութիւնները, որ պատերազմին մէջ ըլլալով չէին կրնար, դժբախտաբար, գործնականապէս միջամտել, Բ. Դռան ուղղեցին հաւաքական յարտարարութիւն մը, որով թիւրք վարիչները անձնապէս պատասխանատու կը բռնէին հայոց վրայ կատարուած ոճիրներուն համար:

Այդ ժամանակ իմ բանակցութիւններս կը կայանային միայն պատրաստութիւններու մէջ, վասնզի Դաշնակից պետութիւնները կը մերժէին ոեւէ յանձնառութիւն մ՝առնել մինչեւ որ պատերազմը վճռական փուլի մը մէջ չմտնէր: Այսուհանդերձ, կրցայ ներկայացնել, 1916 Յունիսին, յիշատակագիր մը Տ. Տէլքասէի, որ շատ նպաստաւոր ընդունելութիւն մ՝ըրաւ անոր, եւ որովհետեւ Լոնտրայի մէջ ալ շատ համակրութիւն գտած էի մեր դատին համար, միեւնոյն յիշատակագիրը ներկայացուցի նաեւ անգլիական Արտաքին Գործոց Նախարարութեան:

Նոյն տարւոյն Հոկտեմբերին էր, որ Լոնտրա կանչուեցայ, ուր կը գտնուէր այն ժամանակ Տ. Ժորժ Փիքօ, որ Սըր Մարք Սայքսի հետ Օսմանեան Կայսրութեան Փոքր Ասիոյ հողամասերուն գաղտնի համաձայնութիւնը պատրաստած էին: Այդ համաձայնութեան,- որուն ամբողջութեան տեղեակ եղանք յետոյ,- միայն Հայաստանի վերաբերեալ պայմանները ինծի հաղորդուեցան այն ժամանակ: Համաձայնութիւնը արդէն կնքուած էր: Կիլիկիան եւ հարաւային գաւառները Ֆրանսայի թողուած էին եւ Ռուսիան կը ստանար հիւսիսային գաւառները: Կատարուած իրողութեան մը առջեւ գտնուելով,- որուն վրայ այլեւս վերադառնալ անկարելի էր,- խնդրեցի, երբ տեսայ, որ, դժբախտաբար, Հայաստան երկուքի պիտի բաժնուէր, որ Կիլիկիոյ եւ վեց գաւառներուն շնորհուէր գէթ ինքնավարութիւն մը, ամէնալայն ձեւի մը տակ, եւ Ֆրանսայի թեւարկութեան տակ:

Անգլիական կառավարութեան հետ համաձայն, ֆրանսական կառավարութիւնը բացայայտ կերպով յանձնառու եղաւ ատոր, բայց պահանջեց, փոխարէնը, որ Ազգային Պատուիրակութիւնը կամաւորներ տայ՝ օժանդակելու համար Հայաստանի ազատագրութեան եւ այդ կերպով նոր իրաւունքներ ձեռք բերէ Դաշնակիցներու աջակցութեան համար: Չէինք կրնար մերժել այս զինուորական օգնութիւնը, որ մեզմէ կը պահանջուէր մեր ինքնավարութեան փոխարէն: Բայց որովհետեւ ես չէի ծածկեր այն մեծ վտանգները, որ Հայաստանի այս զինեալ միջամտութիւնը ապահովաբար վտանգի մէջ պիտի դներ հայ բնակչութիւնը, զոր թիւրքերը իբր ճշմարիտ պատանդներ կը պահէին, եւ որոնց վրայ ի գործ պիտի դնէին փոխվրէժներ, հաւանեցայ կամաւորներու զինուորագրութեան համար կոչ մը ընել, բացորոշ կերպով պահանջելով, որ կանխազգուշական ամէնախիստ միջոցներ ձեռք պիտի առնուէին որպէսզի հայերը ուղղակի կերպով չմիջամտէին զինուորագրութեան գործին մէջ, որ պէտք էր ըլլար միմիայն ֆրանսական իշխանութեան նախաձեռնութեամբ եւ խնամքով: Իմ վախիս եւ խղճահարութեանս հիմնաւոր ըլլալը ճանչցաւ կառավարութիւնը եւ մեր կամաւորներու զինուորագրութեան համար տրուած բոլոր պայմանները ընդունուեցան եւ գործադրուեցան: Այն ժամանակ միայն կոչ մ՝ըրինք մեր եգիպտոսի եւ Ամերիկայի հայրենակիցներուն եւ կազմուեցաւ Արեւելեան Լեգէոնը, որ վերջէն անուանուեցաւ Հայկական Լեգէոն:

Պէտք է յիշատակեմ հոս, որ երկու Դաշնակից կառավարութիւններուն խորհուրդին վրայ, Ազգային Պատուիրակութիւնը հաղորդակցութեան մտաւ Սիոնական Քոմիթէի եւ արաբներուն հետ՝ համագործակցելու համար: Մեր բարի համաձայնութիւնը, մանաւանդ Սիոնականներու հետ, օգտակար եղաւ մեզի սիրաշահելու Անգլիոյ մէջ Պահպանողականներու աջակցութիւնը, որ մինչեւ այն ժամանակ զլացուած էր:

Այդ թուականէն է, որ կը սկսի այդ սկզբունքը ընդունուած թէ՛ Ֆրանսայի եւ թէ՛ Անգլիոյ կողմէ, ստեղծելու համար հայկական կառավարութիւն մը՝ կատարելապէս ինքնավար:

Այս էր կացութիւնը 1916 տարւոյն վերջերը: Այդ թուականէն սկսեալ՝ Ազգային Պատուիրակութիւնը իր աշխատութիւնները հետապնդեց վերոյիշեալ հիմերուն վրայ, աշխատակցութեամբ Վսեմ. Յովհաննէս Խան Մասեհեանի, որ այն ժամանակ միայն անպաշտօն կերպով մեզի միացած էր, Պարսկաստանի մէջ իր ունեցած դիւանագիտական դիրքը թոյլ չի տալով իրեն պաշտօնական յանձնառութիւն մ'ընդունիլ: Քիչ յետոյ, 1917 Մայիսին, Տ. Մալքոլմ, որ թանկագին կերպով աջակցած էր ինծի Լոնտրա գտնուած միջոցիս, Վեհ. Կաթողիկոսին կողմէ Ազգային Պատուիրակութեան անդամ անուանուեցաւ, իմ առաջարկութեանս եւ Անգլիոյ հայկական գաղութին նախաձեռնութեան վրայ:

Այսուհանդերձ, մեր բանակցութիւնները դանդաղած էին: Դաշնակիցները՝ պատերազմին իրենց տուած ծանր մտահոգութիւններով խորասուզուած, որուն ելքը այն ժամանակ շատ տարակուսելի էր, կը զգուշանային զբաղելէ Փոքր Ասիոյ խնդիրներով եւ ստանձնելէ զօրաւորագոյն յանձնառութիւններ Հայաստանի համար, որուն ճակատագիրը Դաշնակիցներուն յաղթանակէն կախուած էր:

Երկու դէպքեր վրայ հասան, որ այս կացութիւնը բոլորովին փոխեցին.

ա./ Ռուսական յեղափոխութիւնը (18 Մարտ 1917-ին), որ առաջին հարուած մը տուաւ 1916-ի համաձայնութեան, որուն մէկ պայմանադրող կողմը Ռուսիան էր, մինչդեռ յեղափոխական կառավարութիւնը կը հակառակէր ոեւէ կցումի.

բ./ Նախագահ Ուիլսոնի պատգամաւորներուն ազդեցութեան տակ Դաշնակիցներուն պատերազմի նպատակներուն փոխուիլը, եւ յետոյ Միացեալ Նահանգներուն պատերազմի մասնակցելու հետեւանքով 14 կէտերուն որդեգրումը:

Այլեւս թեւարկութեան խնդիր չէր կրնար յարուցուիլ այնպէս՝ ինչպէս որ կանխատեսուած էր 1916-ի համաձայնութեամբ. այդ համաձայնութիւնն արժէքազուրկ էր:

Ճիշդ է, որ աւելի վերջը, ֆրանսական եւ անգլիական երկու կառավարութիւնները, զգալով որ այլեւս չպիտի կրնային պահպանել 1916-ի համաձայնութիւնը, որոշեցին միահաղոյն յայտարարութիւն մը հրատարակել, որուն մէջ իւրաքանչիւրը, իրեն վերաբերեալ մասին համար խոստում կու տար ազատագրեալ ժողովուրդներուն՝ անոնց ապահովել ամէնալայն ինքնավարութիւն մը՝ երաշխաւորելու համար անոնց ձերբազատումը եւ անոնց քաղաքակրթութեան զարգացումը:

Այդ յայտարարութեամբ կ'ակնարկուէր միմիայն պարզ աջակցութիւն մը, բայց նոյնիսկ այդ ձեւին տակ 1916-ի համաձայնութիւնը Հաշտութեան Վեհաժողովին կողմէ այլեւս չէր կրնար ընդունուիլ:

Այս պայմաններուն մէջ, Ազգային Պատուիրակութիւնը, մեկդի դնելով Հայաստանի բաժանման ոեւէ գաղափար, չվարանեցաւ կրկին պահանջել ինքնավար Հայաստանի մը կազմութիւնը, բոլոր Թրքահայաստանի հողամասերէն, այսինքն՝ Կիլիկիայէն եւ վեց գաւառներէն բաղկացած:

Եւ իրաւապէս այս էր, որ պահանջեցինք իմ 24 Մայիս 1917-ի Յիշատակագիրովս, ուր վերադառնալով Դաշնակիցներու հաւաքական պաշտպանութեան մեր պահանջին, խնդրեցինք, միեւնոյն ժամանակ, Հաշտութեան

Վեհաժողովին յանձնել առժամանակեայ յանձնառութիւն մը պետութիւններէն մէկուն՝ օգնելու Հայաստանին, իր վերաշինութեան գործին մէջ: Հոս պէտք է ի վեր հանել որ հաւաքական պաշտպանութիւնը, զոր մենք կը խնդրէինք պետութիւններէն, ոեւէ կապակցութիւն չունէր քոնտոմինիումի մը հետ, զոր մենք չենք փափաքիր եւ որուն հակառակած էին նաեւ դիւանատունները, այն բազմաթիւ անպատեհութիւններուն համար, որ կը բղխին այդ տեսակ ռեժիմէ մը, մանաւանդ այն դժբաղդ փորձէն ի վեր, որ կատարուեցաւ Եգիպտոսի մէջ: Հաւաքական պաշտպանութիւնը, զոր մենք կը խնդրէինք կը կայանար միայն երաշխաւորել Հայաստան՝ դուրսէն գալիք ամէն յարձակումներու դէմ: Ատկից զատ՝ կը պահանջէինք, որ յանձնառու պետութիւնը հարկադրուած ըլլայ նոր հայկական կառավարութեան ընելու փոխառութիւն մը, երաշխաւորեալ պետութիւններուն կողմէ, անկախաբար պատերազմէն վերջը Թուրքիայէն պահանջուելիք վնասուց հատուցման ֆոնտէն:

Այդ ժամանակէն ի վեր՝ Ազգային Պատուիրակութեան յայտագիրը փոփոխութիւն մը միայն կրեց, երբ Ազգերու Դաշնակցութիւն մը ստեղծելու գաղափարը յղացուեցաւ: Դաշնակիցներու հաւաքական պաշտպանութեան տեղ,- ինչպէս պահանջած էինք մինչեւ այն ժամանակ,- մենք պահանջեցինք դրուիլ Ազգերու Դաշնակցութեան երաշխաւորութեան տակ, այն պարագային՝ երբ այդ Դաշնակցութիւնը ստեղծուեր:

Հոս պիտի յիշեմ Ազգային Պատուիրակութեան երեք կարեւոր ձեռնարկները, կատարուած վերջին Հոկտեմբեր եւ Նոյեմբեր ամիսներուն մէջ:

Երբ դէպքերուն գահավիժելուն հետեւանքով, Թուրքիան, անձնատուութեան հարկադրուած, զինադադար մը խնդրելու վրայ էր, մենք Դաշնակիցներէն խնդրեցինք, Հոկտեմբեր 8-ին, զինադադարի որոշումնագիրին մէջ մտցնել մասնաւոր պայմաններ Հայաստանի վերաբերեալ, պայմանադրելով.

ա/ ներգաղթ՝ տեղահաններու եւ գաղթականներու, Դաշնակից զորախումբերու պաշտպանութեան տակ եւ գրաւումը վեց գաւառներու եւ Կիլիկիոյ ռազմական ամէն կէտերուն.

բ/ արգելումը օսմանեան կառավարութեան՝ կազմակերպելու այդ գաւառներուն մէջ թիւրքերու գաղթականութիւնը.

գ/ միջոցներ ձեռք առնել սովամահ հայ բնակչութեան գոյութիւնը ապահովելու եւ երկիրը վարչապէս կազմակերպելու՝ Դաշնակից զօրախումբերու կողմէ:

Դժբախտաբար, անգլիացի ծովակալի մը յանձնուեցաւ կնքել զինադադարը, որ ամէնէն առաջ նկատի առնելով իր նաւատորմին վերաբերեալ պայմանները, նկատառութեան չառաւ մեր պահանջները:

Հետեւաբար, երբ զինադադարի բնագրին պարունակութիւնը մեզի յայտնի եղաւ, Ազգային Պատուիրակութիւնը բողոքեց իր 7 եւ 12 Նոյեմբեր թուակիր նամակներով, ուղղուած բոլոր Դաշնակիցներուն, եւ կրկնեց այն պահանջը, որ ըրած էր 29 Հոկտեմբերին, ճանչնալու համար հայերը իբր պատերազմիկ: Այս պահանջագիրին ոյժ տուաւ Ֆրանքօ-Հայկական Ընկերակցութեան Յանձնաժողովը՝ այցելութեան մը միջոցին, որ ըրինք միասին Քէ տ'Օրսէ: Կարեւոր է ծանօթացնել, որ այս տեսակցութեան միջոցին Տ. Բիշոն ճանչցաւ, որ, յիրաւի, հայերը գործնականապէս պատերազմիկներ եղած էին: Արձանագրեցինք այս յայտարարութիւնը եւ նորոգեցինք միեւնոյն ժամանակ մեր խնդիրքը՝ ընդունուելու համար Հաշտութեան Վեհաժողովին մէջ (այդ խնդիրքը կանխապէս ներկայացուցած էի արդէն Տ. Քլեմանսոյին եւ նոյնիսկ Տ. Բիշոնի): Առանց բացայայտ խոստում մը ընելու, նախարարը խոստացած էր մեզի՝ ոյժ տալ մեր խնդրանքին: Բայց նկատելով, որ ոեւէ նպաստաւոր պատասխան մը չէր հասներ եւ Հաշտութեան Վեհաժողովի բացման թուականը կը մօտենար, Ազգային Պատուիրակութիւնը որոշեց, վերջին 30 Նոյեմբերին, հաղորդել բոլոր Դաշնակից եւ ընկերակից պետութիւններուն՝ Հայաստանի անկախութիւնը:

Հիմնուելով այս հաղորդագրութեան վրայ, Ազգային Պատուիրակութիւնը կրկնեց իր խնդիրքը՝ ընդունուելու համար Հաշտութեան Վեհաժողովին մէջ եւ Տ. Բիշոնէն եւ նախագահ Ուիլսոնէն ապահովութիւն ստացաւ, թէ միայն սկզբունքի խնդիր մը կ'ընդդիմանար անոր, վասնզի Հայաստան դեռ կազմուած տէրութիւն մը չէր:

Նախագահ Ուիլսոնի նամակը մասնաւորապէս բարեացակամ էր եւ մեզի կը խոստանար, թէ ո՛չ միայն մենք պիտի հրաւիրուէինք ներկայացնելու մեր պահանջները Հաշտութեան Վեհաժողովին, այլ նաեւ մեր շահերը հոն պիտի պաշտպանուէին այն հոգածութեամբ, որով պիտի կրնային պաշտպանուիլ՝ երբ մենք անոր մաս կազմած ըլլայինք:

Վերադառնալով մեր յայտագիրին, մենք կրնայինք, բնականաբար, պահանջել անոր իրագործումը միմիայն Թուրքիոյ հողամասերուն համար, որովհետեւ մենք գրեթէ պատերազմի սկիզբէն ի վեր ոեւէ հաղորդակցութիւն չունէինք Կովկասի մեր հայրենակիցներուն հետ եւ անկարելիութեան մէջ էինք գիտնալու իրենց տեսակէտները: Անոնց նկատմամբ մեր գործունէութիւնը միմիայն սահմանափակուած էր Դաշնակիցներու մօտ կատարուած ստիպողական դիմումներու մէջ, խնդրելով առաքումը դրամական ձեռնտուութեան եւ ուտեստի, մանաւանդ զինուորական օգնութեան մը՝ Միջագետքի անգլիական բանակին կողմէ: Մեզի եղան բացայայտ խոստումներ, դժբախտաբար՝ առանց արդիւնքի:

Ինչպէս ըսի, անոնց հետ հաղորդակցութեան մէջ չըլլալով, կ'անգիտանայինք անոնց քաղաքական յայտագիրը, հետեւաբար՝ չէինք կրնար խօսիլ անոնց անունով: Եւ մեր ուրախութիւնը մեծ եղաւ, երբ Հայկական Հանրապետութեան Պատուիրակութեան ժամանումով, իմացանք Տ. Ահարոնեանէն, որ Կովկասի մեր եղբայրները մեզի հետ կատարելապէս համաձայն էին, միեւնոյն յայտագիրը կը հետապնդէին եւ կը պահանջէին, մեզի պէս, սերտ միութիւնը Թուրքիոյ եւ Կովկասի ամբողջ հայկական հողամասերուն՝ կազմելու համար միակ Հայաստան մը, դրուած Ազգերու Դաշնակցութեան երաշխաւորութեան տակ, յանձնառու պետութեան մը աջակցութեամբ:

Ինծի համամիտ պիտի ըլլաք, որ մեր ազգին պատիւ կը բերէ հաստատելը, թէ Կովկասի հայերը՝ կղզիացած ըլլալով հանդերձ եւ առանց մեզի հետ խորհրդակցելով համաձայնութեան մը յանգելու, ազգային պահանջներուն մէջ կատարելապէս համաձայն գտնուած են իրենց Թուրքիոյ եղբայրներուն հետ:

Այս կ'ապացուցէ մեր ինքնածին ազգային զգացումը, որուն համար իրաւունք ունինք հպարտանալու, որ զմեզ ամէնքիս հաւասարապէս կ'ոգեւորէ եւ զմեզ միշտ կը միացնէ, որքան ալ իրարմէ հեռու եւ բաժնուած ըլլանք:

Այսպէսով է, որ կրցանք, կատարեալ համաձայնութեամբ ստորագրել եւ ներկայացնել, Տ. Ահարոնեանի հետ միասին, մեր Յիշատակագիրը Հաշտութեան Վեհաժողովին:

Տ. Ահարոնեան բացատրեց Հայկական Հարցը Կովկասի մէջ իր մանրամասնութիւններով, մինչդեռ ես բացատրեցի այն ամէնը, որ կը վերաբերի Թուրքիոյ հայկական հողամասերուն: Երկուքնիս ալ հաստատեցինք մեր կատարեալ համաձայնութիւնը մեր պահանջներուն մէջ ամբողջական Հայաստանի մը մասին, կազմուած ռուսական եւ թրքական երկու Հայաստաններու միացումով, եւ այն լուծումին մէջ՝ որ մեր կը խնդրենք մեր դատին համար:

Եզրակացնելու համար, պարզած այս արագ տեսութենէս կը հետեւի, որ Ազգային Պատուիրակութեան հետապնդած յայտագիրը, զոր վաւերացուցիք՝ զայն մտցնելով Հաշտութեան Վեհաժողովին ներկայացուած Յիշատակագիրին մէջ, կրնայ ամփոփուիլ այս երկու կէտերուն մէջ.

Ազատում թրքական լուծէն,

Ամբողջական Հայաստան մը, դրուած Ազգերու Դաշնակցութեան երաշխաւորութեան տակ, ժամանակաւոր աջակցութեամբ յանձնառու պետութեան մը:

Եւ կը կարծեմ, Տիա՛րք, որ Ազգային Պատուիրակութիւնը կրնայ ինքզինքը շնորհաւորել՝ հաստատելով, որ այսօր Հաշտութեան Վեհաժողովին մէջ հաւաքուած դիւանագէտները,- որ մեզի պէս միեւնոյն խնդիրը լուծելու կոչուած են, ո՛չ թէ միայն Հայաստանի, այլ նաեւ Թուրքիայէն ազատագրուած բոլոր ազգերու խնդիրները,- մեզի պէս միեւնոյն լուծումին յանգած են:

Այս յայտագրին առաջին կէտը՝ թրքական լուծէն ազատումը, կատարուած իրողութիւն մըն է:

Գալով երկրորդ կէտին, գիտենք, որ Հաշտութեան Վեհաժողովը մօտերս արտայայտուեցաւ այս մասին, գերմանական գաղթավայրերու եւ Օսմանեան Կայսրութեան ճակատագիրերու մասին ասած որոշումներովը:

Ան որոշեց, որ Թուրքիայէն ազատուած ազգերը Ազգերու Դաշնակցութեան երաշխաւորութեան տակ պիտի դրուին, յանձնառու պետութեան մը աջակցութեամբ, որ պատասխանատու պիտի ըլլայ Ազգերու Դաշնակցութեան:

Ուրեմն, մեր յայտագիրին գործադրութիւնը, իր ամբողջութեան մէջ, ապահովուած է, հետեւաբար ես, իմ մասիս, պաշտօնս լրացած կը նկատեմ: Ճիշդ է, որ կը մնայ դեռ յանձնառու պետութեան անուանումը, բայց Հաշտութեան Վեհաժողովը ի մօտոյ մեզ խորհուրդ պիտի հարցնէ անոր ընտրութեան մասին եւ պիտի լուծէ այս խնդիրը մեր ամէնուս տալով,- ինչ որ կը յուսանք,- կատարեալ գոհացում:

Պօղոս Նուպար

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 26, թթ. 5-20: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ 17-րդ

13 մարտ 1919.

Նիստը բացուեցաւ Վսեմ. Նորատունկեանի նախագահութեան տակ, ժամը 5-ին, 30 անդամներու ներկայութիւնով:

Օրակարգ

Ա. Ժողովին Իրաւասութեան եւ Ծրագրի Յանձնախումբին բերած նախագծին քննութիւնն ու վաւերացումը:

Բ. Խաղաղութեան Համաժողովին ներկայացուած Յիշատակագրին վաւերացումը եւ տարբեր կարծիքներու արձանագրութիւնը:

Օրակարգին անցնելէ առաջ Պ. Միքայէլեան Ամերիկայի պատգամաւորութեան կողմէ հետեւեալ զեկուցումը կ՚ընէ, այս պատերազմի ընթացքին ամերիկահայութեան կատարած դերի մասին /զեկուցումը տեսնել ստորեւ/:

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԱԾ ԳՐԱՒՈՐ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

17 Փետրուար 1919.

Փարիզի Հայ Ազգային Խորհրդաժողովին.

Յարգելի՛ հայրենակիցներ,

Ամերիկահայ պատգամաւորութիւնը, ընտրուած մօտ 100 000 հայ գաղթականութեան կողմէ, իր պարտականութիւնը կը համարէ համառօտ զեկուցում մը ներկայացնել ձեզի՝ գաղութի հայութեան, անոր քաղաքական նպատակներու եւ

կատարած դիւանագիտական աշխատանքներու համար, եւ յոյս ունի, որ այս կերպ կատարած կ՚ըլլայ իր պարտքն ու միաժամանակ նպաստած Խորհրդաժողովի աշխատանքներուն:

Այս աշխատանքի կարեւորութիւնը կը շեշտուի նաեւ այն պատճառով, որ ամերիկահայ գաղութը եղած է եւ է ամէնաբազմամարդն ու զոհաբերողը եւ, հետեւաբար, յոյս ունի, որ դուք լուրջ եւ յատուկ ուշադրութիւն կը դարձնէք իր տեղեկութիւններուն եւ անկէ բղխած կարծիքներուն: Այդ հաւատքն ունինք նաեւ այն պատճառով, որ այդ գաղութը պատրաստ պիտի ըլլայ մեր ազգային բաղձանքները իրականացնելու համար նպատակայարմար եւ ներդաշնակօրէն ընտրուած մարմնին օժանդակելու:

Ընդհանուր տեսութիւն.

Ըսինք արդէն, որ մեր գաղութն ունի մօտ 100 000 հայութիւն՝ ցրուած Միացեալ Նահանգներու բազմաթիւ քաղաքներու եւ շրջաններու մէջ, ինչպէս նաեւ Քանատայի: Տասնեակ տարիներու ընթացքին, հոն հաւաքուած են հազարաւոր հայեր, Հայաստանի բոլոր նահանգներէն եւ գաւառներէն եկած եւ մեծ մասով կը զբաղուին գործարանային աշխատանքներով, արհեստներով, երկրագործութեամբ եւ վաճառականութեամբ: Հակառակ անոր, որ հայերը գտնուած են օտար մթնոլորտի մէջ եւ անծանօթ եղած են տեղական լեզուին՝ կրցած են դիզել որոշ հարստութիւն, ստեղծել լաւ դիրք, ինչպէս նաեւ շարունակել ազգային կուլտուրական կեանքը:

Ամերիկահայութիւնն իր ծոցին մէջ կրցած է ստեղծել բազմաթիւ ազգային-հասարակական հիմնարկութիւններ, ունենալ հարիւրաւոր ուսանողներ, պահել Բարեգործական Ընկերութիւնն ու շատ մը ուսումնասիրաց-կրթասիրացներ, որբախնամներ եւ այլ բարենպատակ հաստատութիւններ, քաղաքական կուսակցութիւններ, լուսաւորչական եւ բողոքական եկեղեցիներ, հարիւրաւոր գլխաւոր եւ գրադարաններ, 12-էն աւելի պարբերական հրատարակութիւններ /որոնց մէջ՝ օրաթերթ մը/, կրթել հազարաւոր մանուկներ՝ մայրենի լեզուով եւ գրականութեամբ, խոշոր թիւով հայրենակցական միութիւններ եւ իր ամէնօրեայ հրապարակային բացատրական ժողովներով ալ վառ պահել ազգային հայրենասիրական զգացումները:

Ան իր մէջ ունեցած է եւ ունի նշանաւոր բժիշկներու եւ բրոֆէսէօրներու խմբակ մը, որ ամերիկեան համալսարաններու մէջ իբր դասատու են եւ իրենց գործունէութեամբ ալ յարգուած՝ տեղացի եւ օտարազգի հասարակութեան կողմէ:

Քալիֆորնիոյ շրջանին մէջ ալ հայերը կարեւոր դիրք կը գրաւեն: Այնտեղի հայերու մեծամասնութիւնը երկրագործութեամբ կը զբաղի եւ բացառաբար խաղողի արտադրութեամբ: Չամիչի 1/3-ը միայն հայերու ձեռքով կը պատրաստուի եւ ամէնալաւ մշակուած հողերը մեր հայրենակիցներու չարքաշութեամբ եղած են: Հոն հայ գիւղաքաղաք մը կայ՝ Եդեմ անունով, որու փոսթայի կառավարիչը, դատաւորն ու ոստիկանները հայեր են եւ այդ պատիւ կրնայ բերել իրենց:

Այնտեղի հայութիւնն ունեւոր է: Միլիոնատէրերու կողքին դուք կը գտնէք տասնեակներով հայեր, որոնք հարիւր հազարներու տէր են: Աշխատաւորութիւնն ալ իր գրպանին մէջ դրամ ունի եւ այդ այն պատճառով, որ վերջին չորս տարիներու ընթացքին ան հնարաւորութենէ զուրկ եղած է Երկիր դրամ ուղարկել: Նիւթական այդ ապահով վիճակն ունենալէ զատ՝ անոնք, յատկապէս աշխատաւորութիւնը, ունին նաեւ զոհաբերելու աննման յատկութիւն եւ այդ է գլխաւոր պատճառը, որ միշտ ալ ամերիկահայութիւնը արձագանգ տուած է ազգային բոլոր կարիքներուն եւ այն ալ՝ լիառատ կերպով:

Պատերազմի տարիներ.

Հայ ժողովուրդի վիճակը մեզի, ինչպէս նաեւ ուրիշ գաղութներու հայերուն, խորապէս ցնցած է եւ մենք միշտ պատրաստ եղած ենք երեք գլխաւոր ուղղութեամբ աշխատելու. դրամական, մարտական եւ Հայկական Հարցի բրոբականտի:

Դրամական.

Այդ ուղղութեամբ խոշոր դեր խաղցած է ամերիկահայութիւնը: Ամէնալայն չափով եւ առատ կերպով մասնակցած է ազգային բնոյթ կրող բոլոր հանգանակութիւններուն: Կովկասեան ճակատի փառաւոր եւ յիշատակելի շարժումներուն ատեն, երբ հայութեան որոշ մասն իր ուսերուն վրայ կը տանէր գործին ծանրութիւնը, մեր գաղութը Հ. Յ. Դաշնակցութեան Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէի միջոցաւ մէկ միլիոն ֆրանք տեղափոխեց Ազգային Բիւրոյին եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Այդ ատենները գոյութիւն ունեցող Ազգային Պաշտպանութեան Միութիւնն ալ /բաղկացած քաղաքական միւս 3 կուսակցութիւններէ, լուսաւորչական-բողոքական եկեղեցիներէ եւ Հայ Բարեգործական Ընդհանուր Միութենէ/ մօտ 1/2 միլիոն ֆրանք փոխադրեց՝ ազգային զանազան կարիքներուն բաւարարութիւն տալու համար: Երբ Հայաստանի բազմաթիւ վայրերէն փախստականներու խումբեր լեցուեցան Կովկաս եւ հնարաւորութիւն կար դրամ փոխադրելու հոն ապաստանածներուն, Ամերիկայի անոնց ազգակիցները մէկ միլիոն ֆրանքի չափ օժանդակութիւն հասցուցին՝ թեթեւցնելով ազգային մարմիններու բեռը:

Հայ Ազգային Միութեան կազմութենէն ի վեր /երկու տարի/ երկու անգամ հանգանակութիւն տեղի ունեցաւ եւ 5 /հինգ/ միլիոն ֆրանքի գումար մը հաւաքուելով՝ Ազգային Պատուիրակութեան միջոցով յատկացուեցաւ կամաւորներուն, փախստականներուն եւ դիւանագիտական աշխատանքներուն: Եթէ աւելցնենք ասոնց վրայ բազմաթիւ ուսումնասիրացներու, հայրենակցական միութիւններու, Հ. Բ. Ը. Միութեան, կանանց միութիւններու, Հ. Յ. Դ., Կարմիր Խաչերու եւ որբախնամներու հաւաքած ու գործադրած գումարները, մենք ապահովաբար կրնանք ըսել, որ այս չորս տարուայ ընթացքին ամերիկահայութիւնը զոհաբերած է մօտ 8 միլիոն ֆրանք՝ հայ ազատագրութեան համար:

Մարտական.

Մեր գաղութը բաւականացած չէ միայն դրամական օժանդակութեամբ, այլ եւ իր կեանքն ու արիւնը տրամադրած է հայ ժողովուրդի քաղաքական կեանքի ազատութեան համար: Կովկասեան ճակատի կամաւորական շարժման ատեն մեր գաղութի ամէնէն լաւ, կենսունակ ու վառվռուն երիտասարդներէն մօտ 1300 հոգի գացին, որոնցմէ ոմանք նահատակուեցան կռուի դաշտին վրայ եւ իրենց արեամբ սրբագործեցին մեր դատը: Կիլիկեան կամաւորական շարժման ատեն, որ յետոյ Արեւելեան Լեգէոն անունն ստացաւ եւ գեներալ Ալէնպիի հրամանատարութեան տակ դրուեցաւ, 1200 հոգի ամերիկահայերէն, մոռցած ամէն ինչ, թողած ապագան եւ հարստութիւն, վազեցին կռուի դաշտ եւ Արարայի բարձունքներուն վրայ իրենց հերոսական դիմադրութեամբ մեր ցեղի մարտական հոգին երեւան բերին, եւ, այդպիսով, իրենց վրայ ինկած սրբազան պարտականութիւնը կատարեցին: Դաշնակից պետութիւններու զանազան բանակներու մէջ ալ, յատկապէս քանատական, շատ ամերիկահայեր կամաւոր արձանագրուեցան եւ 5000 չափ ալ ամերիկեան բանակի մէջ հայ զինուորներ մտան, որոնց մէկ մասը Ֆրանսայի մէջ քաջաբար դիմադրեց թշնամիին եւ կռուեցաւ Դաշնակից պետութիւններու միջոցաւ, տառապած հայութեան ազատութեան համար: Այդպիսով, մենք իրաւունք կ'ունենանք յայտարարելու, որ մեր գաղութը մօտ 2500 կամաւոր եւ 5000 ալ զինուոր տուած է այս պատերազմին ընթացքին եւ, այդպիսով, թէ՛ դիմադրած է թշնամիին եւ թէ՛ մարզուած՝ ապագայ անկախ Հայաստանի մէջ համապատասխան պարտականութիւններ կատարելու:

Դիւանագիտական.

Տալով բաւականաչափ դրամ եւ երիտասարդութիւն՝ մեր գաղութը կրցած է նաեւ առաջ տանիլ Հայկական Հարցի բրոբականտը եւ այդ ուղղութեամբ ալ, մանաւանդ վերջին ժամանակներս, խոշոր աշխատանքներ կատարած է: Ամէնէն առաջ հրատարակած է երկու օրկաններ՝ անգլերէն լեզուով. The New Armenia եւ Armenian Herald, որոնք կրցած են իրենց վրայ ծանրացած աշխատանքը լաւ կերպով տանիլ: Ազգային Միութեան միջոցաւ հրատարակած եւ ձրիաբար ցրած է քանի մը պրոշիւրներ, Տիկ. Փափազեանի The Tragedy of Armenia, Տոքթ. Փաստրմաճեանի Why Armenia Should Be Free, ինչպէս նաեւ ձրիաբար ցրած է նշանաւոր հայասէրներու հրատարակութիւններ՝ Ճէյմս Պրայսի The Treatment of Armenians in the Ottoman Empire, Օր. Ալիս Պլաքուէլի՝ Armenian Poems եւ ուրիշներ: Հիմնած է յատուկ բրէս-պիւրո, որու միջոցաւ խոշոր շարժում առաջ բերած է եւ կրցած է հիմնել Հայաստանի անկախութեան համար աշխատող 75-նոց կոմիտէ մը, որու մէջ կը մտնեն Ճերարտ՝ ամերիկեան նախկին դեսպան Պերլինի մէջ, Պրայան՝ արտաքին գործոց նախկին նախարար, Հիւզը՝ Ռիփապլիքընն Կուսակցութեան նախագահական նախորդ թեկնածուն, Կարտինալ Կիպպընս, Քոլումպիայի համալսարանի նախագահ Նիկոլայ Բըդլըտ, Փարիզի նախկին դեսպան Հերրիկ, 37 նահանգապետներ, Ռաբբի Ուայզ, Տոքթ. Պարտըն, Տոքթ. Տիթ. Քլիվլընտ, նաեւ ուրիշներ: Վերջերս նախագահ Ուիլսոնին հետաքրքրեցնելու համար հայկական անկախութեամբ, հետեւեալ քայլերն առնուած են.

Ա. 50 000-ի չափ խնդրագրեր /մօտ 2 միլիոն ստորագրութեամբ/, ամերիկեան քաղաքացիներու կողմէ եւ Հայաստանի ամբողջական անկախութիւնը շեշտող;

Բ. 25 000 եկեղեցիներու կողմէ, նոյն իմաստով, խնդրագիր տրուած է նախագահին;

Գ. Ամերիկեան 48 նահանգներէն 32-ի օրէնսդրական մարմիններն իրենց պաշտօնական նիստերուն մէջ անցուցած են համապատասխան բովանդակութեամբ բանաձեւեր;

Դ. Նոյնիմաստ գրութիւն մը ներկայացուած է նաեւ Ամերիկայի բոլոր համալսարաններու նախագահներէն:

Գրաւոր եւ բերանացի բրոբականտն ալ մոռցուած չէ եւ այդ ուղղութեամբ խոշոր աշխատանք կատարուած է: Հայերու նախաձեռնութեամբ եւ ամերիկացի բարեկամներու օժանդակութեամբ կազմակերպուած են նաեւ հայկական նպաստի օրեր՝ նախագահ Ուիլսընի յատուկ արտօնագրի հիման վրայ:

Դիւանագիտական աշխատանքներ կատարուած են Ազգ. Պատուիրակութեան ցուցմունքներով եւ անոր հետ եղած սերտ կապակցութեամբ եւ Պ. Միհրան Սվազլըի միջոցաւ, որ Ազգ. Պատուիրակութեան ներկայացուցիչն է եւ Ամերիկեան Հայ ազգային Միութեան ատենապետը: Վերջին շարժումներուն մեծապէս նպաստած է նաեւ Կաթողիկոսի յատուկ պատուիրակ մը՝ Փաստրմաճեան, որ իր օգտաշատ գործունէութեամբ արժանի է ուշադրութեան:

Ամերիկահայութեան ապագայ դերը.

Անցեալի եւ ներկայի գործունէութենէն դուրս՝ ամերիկահայութիւնը խոշոր դեր ունի կատարելիք եւ ապագային: Իբր անմիջական անհրաժեշտութիւն, պէտք է յայտարարել, որ առաջին իսկ պատեհութեամբ՝ մօտ 15-20 000 հայեր պատրաստ են Երկիր վերադառնալ: Երկրորդ տարին ալ նոյնքան թուով կարելի է փոխադրել, եթէ միայն մեր երկիրը բոլորովին ազատ եւ ապահով ըլլայ ու մենք մեր ազգային կառավարութեան դրօշին տակ կարողանանք մնալ: Գոյութիւն ունեցող ամերիկահայութեան 80%-ը պատրաստ է Հայրենիք վերադառնալ, եթէ անձնագրային դժուարութիւններ չըլլան եւ այդ ուղղութեամբ աշխատանքը չպակսի: Այնտեղէն հնարաւոր է անմիջապէս հարիւր հազարաւոր ֆրանքներ տեղափոխել Կովկասի, Պաղտատի, Հալէպի, Պոլսոյ եւ այլ շրջաններու համար՝ իրենց ազգակիցներուն կողմէ,

եթէ միայն այս Խորհրդաժողովը եւ կամ Ազգ. Պատուիրակութիւնը յատուկ եւ լուրջ ուշադրութիւն դարձնեն փոխադրութեան միջոցներուն վրայ: Վերադառնալու պատրաստ հայրենակիցներուն մեծ մասը երիտասարդներ են, աշխատանքի վարժուած եւ պատրաստ վերաշինութեան համար: Անոնք իրենց հետ կրնան Երկիր տանիլ բաւական խոշոր գումար եւ փորձառութիւն: Այդ ուժ մ'է, որու օգտագործումը մեծապէս պիտի նպաստէ Հայաստանի վերաշինութեան: Եթէ ընդունինք, որ վերադարձող աշխատաւորութենէն /ընդունինք մօտ 60 000/ ամէն մէկը 500 տոլար կը տանի, որ ըսել է՝ 30 միլիոն տոլար եւ կամ 150 միլիոն ֆրանք, այն ատեն միայն կրնանք ճշգրտօրէն պատկերացնել ամերիկահայութեան դերն ապագային:

Եթէ ատոնց հետ միատեղ վերադառնան անմիջապէս նաեւ խոշոր եւ միջին վաճառականներ, այն ատեն Հայաստանի վերաշինութեան գործը կը դիւրանայ եւ երկիրն իր առաջին օրերուն մէջ հնչուն դրամ կ'ունենայ:

Հայութեան այդ խոշոր գաղթավայրն իր վերադարձի ատեն կը տանի հարիւրաւոր արհեստաւորներ, որոնց պէտքն այնքան զգալի է մեր քանդուած եւ աւերակ դարձած երկրի համար: Մենք կ'ունենանք նաեւ բազմաթիւ ինթելիկէնթ ոյժեր՝ ճարտարապետներ, մեքենագործներ, բժիշկներ եւ իրաւաբաններ, որոնք յաջող եւ լաւ կառավարութեան ձեռքին մէջ յոյժ օգտակար կրնան ըլլալ:

Այս բոլոր տեղեկութիւններն հաղորդելէն վերջ, երբ տեսնուեցաւ որ ամերիկահայ գաղութը լիուլի կատարած է իր դերը, մենք խորապէս համոզուած ենք, որ Փարիզի Հայ Ազգային Խորհրդաժողովը լրջօրէն պիտի վերաբերուի նաեւ մեր ազգային-քաղաքական առաջարկներուն եւ պիտի ջանայ, գոնէ ասկէ վերջ ըլլալիք խնդիրներուն մէջ, որոշ նպատակայարմարութեան եւ համագործակցութեան համար ընդառաջ գնալ մեր բաղձանքներուն:

Քաղաքական մեր պահանջները, որոնց մէկ մասն արդէն ընդունուած է Խորհրդաժողովիդ կողմէն, իր մէջ կը պարունակեն ամբողջական Հայաստանի անկախութիւնը: Ատոնց մէջ կարեւոր եւ անհրաժեշտ կէտը, որ ամերիկահայ ընտրողներուն մեծամասնութեան հաւատքն է, Հայաստանի Հանրապետութիւնն իբրեւ կորիզ ընդունիլն է Միացեալ, Անկախ Հայաստանի: Այս կարեւոր կէտը Ժողովիդ կողմէն անուշադրութեան մատնուած է եւ մենք այդ առթիւ առ այժմ կը յայտնենք մեր խորունկ ցաւը: Մենք բոլորս պիտի փորձենք եւ գործնական օժանդակութիւն բերենք հայկական այդ կառավարութեան, որ ունի իր բառլամէնթը, բանակը եւ նախարարական կազմը: Եւ արդէն մինչեւ այսօր արտասահմանի պատասխանատու մարմիններու՝ այդ ուղղութեամբ քայլեր չառնելը յոյժ քննադատելի երեւոյթ է եւ խոշոր սխալ: Աւելի ամփոփ ըլլալու համար՝ պատրաստ ենք մեր փլաթֆորմն ամբողջովին ներկայացնել:

1. Ընդունիլ Հայաստանի Հանրապետութիւնը որպէս իրաւապէս /տէ ֆաքթօ եւ տէ եիւրէ/ հայկական կառավարութիւն եւ ճանչնալ զայն որպէս կորիզ Միացեալ, Անկախ Հայաստանի:
2. Պահանջել Միացեալ Հայաստանի անկախութիւնը Պատմական Հայաստանի երեք հատուածներով /Ռուսահայաստան, Տաճկահայաստան եւ Պարսկահայաստան/, Կիլիկիայով եւ Տրապիզոնով միասին:
3. Հայաստանի անկախութիւնը պիտի ըլլայ առանց քոնթրոլի, ունենալով իր սեփական պետական կազմը, Ազգային Խորհրդարանով եւ բանակով՝ երաշխաւորուած Ազգերու Ընկերութեան կողմէ:
4. Տալ անկախ Հայկական Հանրապետութեան այնպիսի կառավարական ձեւ մը, որ հիմնուած ըլլայ աշխատաւորական-ռամկավարական սկզբունքներուն վրայ, որպէսզի դասակարգային հակընդդէմ ոյժերու սուր պայքար երեւան չգայ մեր Հայրենիքին մէջ եւ արգելք հանդիսանայ բնականոն զարգացման:
5. Պահանջել մեր ֆիզիկական եւ նիւթական կորուստներու ամբողջական հատուցումը՝ տեւտոն դաշնակիցներէն, Դաշնակից պետութիւններու միջոցաւ:

6. Անմիջական եւ կտրուկ միջոցներով ազատել թրքական հարէմներէն եւ որբանոցներէն հայ կանայք եւ որբեր, եւ յանձնել զանոնք ազգային մարմիններու հոգատարութեան:
7. Պահանջել պատժումը հայկական սարսափներու բոլոր պատասխանատուներուն, իբրեւ եղեռնագործներ, յանուն մարդկային արդարութեան գաղափարին:

Այլեւայլ նպատակներուն հասնելու համար մենք պարտաւոր ենք համերաշխաբար գործելու եւ միասին, ձեռք-ձեռքի տուած, շարունակելու սկսուած գործը:

Մեր քննադատութիւնները ո՛չ մէկ նպատակ ունին քանդելու, այլ՝ շտկելու եւ իրական արդիւնքներու հասնելու: Եւ մենք համոզուած ենք, որ այս Ժողովը, որքան ալ թերի ընտրուած ըլլայ, պարտականութիւն մ'ունի կատարելու եւ այն՝ ընդհանուր համագործակցութեամբ եւ միասնաբար:

Այս յուսով է, որ մենք կը կարծենք, թէ գոնէ ասկէ վերջ, Ազգային Պատուիրակութեան ընտրութեան ատեն, մենք կարող կ'ըլլանք իրար ըմբռնել եւ ընտրել մարմին մը, որուն մէջ կը մտնեն փորձառու եւ Հայկական Դատի տեսակէտէն վստահելի անձնաւորութիւններ: Այդ եւ նման համագործակցութեան ատեն է միայն, որ ամերիկահայ գաղութը կարող կ'ըլլայ ամբողջութեամբ իր ոյժերը տրամադրել նորընտիր Ազգային Պատուիրակութեան:

Մ. Համբարձումեան
Զ. Մաթիկեան
Ա. Միքայէլեան

ՀԱԱ, ֆ. Պ- 430, ց. 1, գ. 25, թթ. 1-32: Ձեռագիր: Բնագիր:

Պ. Նախագահը շնորհակալութիւն կը յայտնէ Ամերիկայի հայութեան, որ այնքան խղճմտօրէն իր պարտականութիւնները կատարած է Ա. Ազգային պէտքերուն համար կարեւոր գումարներ ժողվելով, Բ. Ամէնաբուռն խանդավառութեամբ քանի մը հազար կամաւորներ տալով եւ Գ. Մեծ աշխատանք թափելով Հայկական Դատի բրոբականտի համար: Իսկ գալով Ամերիկայի հայութեան ներկայացուցած՝ Հայկական Հարցի գլխաւոր կէտերուն լուծման պահանջին, ամերիկահայ պատգամաւորներ ընդ բաւականին տեղեակ չըլլալով իրաց կացութեան, չեն գիտեր, թէ ի՞նչ կարգի արգելքներ կան մեր փափաքներուն ամբողջական իրականացման դէմ:

Այնուհետեւ Պ. Նախագահը կ'անդրադառնայ Համաժողովի ձեռնհասութեան մասին յայտնուած կարծիքներու եւ կը խնդրէ, որ միանգամընդմիշտ աւելորդ ակնարկութիւններ եւ խօսքեր տեղի չունենան, միշտ կէտ նպատակի ունենալով ազգին գերագոյն շահերը: Այս աշխարհաւեր պատերազմէն յետոյ նոյն ցրուեալ եւ տարաբաղդ վիճակին մէջ՝ ուր կը գտնուի հայ ազգը, դժուար էր, եթէ ոչ անհնարին, աւելի օրինաւոր ժողով մը կազմակերպել: Այժմ ընդհանուրին աչքը հոս է եւ յոյսը մեր վրայ, հետեւաբար՝ հիմա ժողովին հեղինակութիւնը բարձր պահելու է: Տարբեր մտածումներ այս մասին կրնան մեծապէս վնասել ազգին կենսական շահերուն:

Պ. Նախագահը յետոյ ուրախութեամբ կը զեկուցանէ, որ Իզմիրի հայ գաղութը մէկ հաւաքման մէջ 150 000 հարիւր յիսուն հազար ոսկի ժողված է:

Ի վերջոյ անդրադառնալով Պ. Տամատեանի հրաժարման, կը յայտնէ, որ շատ աշխատած է զինքը համոզելու, բայց Պ. Տամատեան անդրդուելի մնացած է: Դեռ կը յուսայ սակայն, որ Պ. Տամատեան իր որոշումը պիտի փոխէ, ըստ որում՝ ո՛չ մէկ ժողովական ուզած է զինք վիրաւորել եւ Պ. Տամատեան ալ ըսած է բարեկամի մը, թէ ինք գոհացած պիտի ըլլայ, եթէ Ժողովը որոշէ որ այլեւս չպիտի խօսի նշանակովի պատգամաւորներու մասին:

Պ. Չօպանեան անճիշդ կը գտնէ Պ. Տամատեանի՝ այս Ժողովին հանդէպ բռնած դիրքը, քանի որ ժողովին կողմէ անարգական ոչինչ կատարուած է նշանակովի անդամներու դէմ եւ Ժողովը ինքն իսկ է, որ որոշած է այդ անդամները: Ինքն ալ կը միանայ Պ. Նախագահի կարծիքին, որ երբեք չպէտք է մանրացնել Համաժողովին հանգամանքը եւ կը վերջացնէ այսպէս. «Ինչպէ՞ս կարելի է աշխատիլ փոքրացնել ժողովին հեղինակութիւնը, երբ նկատի առնենք, որ ամէն կողմէ եկած ներկայացուցիչներէն զատ, այս ժողովին կը մասնակցին նաեւ Կովկասեան Հանրապետութեան պատուիրակները, Կաթողիկոսին կողմէն նշանակուած Վսեմ. Պօղոս Նուպար Փաշան եւայլն»:

Պ. Շանթ. Սկզբունքի խնդիրը եւ ազգային շահու խնդիրը կը շփոթուին: Մենք ինքներս ենք կանչեր այդ հրաւիրովի անդամները, որ իրենց օգնութիւնը բերեն մեզ: Բայց ես ընդհանրապէս խօսած եմ, որ այս Ժողովը չունի համազգային ժողով ըլլալու հանգամանքը, որպէսզի միացեալ կառավարութիւններ ստեղծէ եւայլն, եւ ես շեշտած եմ, որ մեր Ժողովին գլխաւոր հեղինակութիւնը որոշումները համաձայնութեամբ եւ համերաշխութեամբ անցընելէն պիտի գայ: Ահա թէ ի՛նչ է մեր ըսածը եւ ո՛չ թէ այս կամ այն անձին ուղղուած անարգանքներ:

Պ. Նախագահ. Եթէ աչքերնուս առջեւ բերենք, որ մէկ միլիոն զոհ տուած ենք, այն ժամանակ բոլոր խնդիրներու մէջ ալ համաձայնութիւնը կը տիրէ եւ այս Ժողովը կը կարենայ օգտակարապէս գործել:

Պ. Մաթիկեան, իբրեւ բացատրութիւն, կ'ըսէ, որ ամերիկահայ պատգամաւորներ իրենց հարցերով երբեք մէկը չեն ուզած վիրաւորել: Մեր տեսակէտը եղած է միշտ, որ այնքան ատեն, որ Ժողովը ծառայէ ազգային ընդհանուր շահերուն, այնքան ատեն մենք կանգնած կ'ըլլանք անոր կողքին, մեր գաղութին բոլոր միջոցներով:

Նոր եկող պատգամաւորներու ըրած զեկուցման մասին խօսք կ'ըլլայ եւ ժողովականներէն շատեր կը յայտնեն, թէ իրենք ալ իրենց տեղի զեկուցումը պիտի ընեն որպէսզի արձանագրուի:

Պ. Փափազեան կ'առաջարկէ նաեւ վաւերացուած արձանագրութիւնները տպել տալ, որպէսզի ուզողը իր ձեռքը ունենայ:

Ապա Ժողովը օրակարգի կ'անցնի եւ խօսքը կը տրուի Պ. Փափազեանին, որ դեռ անցեալ նիստին ձայն ուզած էր եւ որ իր ընելիքներուն միայն գլխաւոր մէկ կէտը կը յիշէ անցեալ անգամ յարուցուած քոմբրոմիս ընելու խնդրին շուրջ:

Պ. Փափազեան. Ճիշդ է, մենք Յանձնաժողովին մէջ քոմբրոմիսներ ըրած ենք, բայց գիտակցութեամբ: Օրինակ, ես ինքս ինծի համար կրնամ ըսել, որ անձնական խղճի հանդարտութեամբ կատարած եմ ատոնք, որովհետեւ անոնք նպատակ ունեցած են միայն ժողովուրդին շահը, քոմբրոմիսներ ընդհանրապէս ըրած են Վսեմ. Նուպար Փաշա՝ Ժողովին հանդէպ, ժողովը՝ Պօղոս Փաշային, հոսանքներ՝ իրարու, բայց ասիկա շեղում չէ, նոյնիսկ պատուաբեր է, որովհետեւ մեր ժողովուրդին հանդէպ ունեցած պարտականութեան գիտակցութիւնը ցոյց կու տայ:

Պ. Չօպանեան. Ժողովին ձեռնհասութեան եւայլն խնդիրը շատ կարեւոր է, եւ այս առիթով է, որ քոմբրոմիս բառը երեւան եկած է: Ընտրութիւնները ինչպէս ալ կատարուած ըլլան, այս կամ այն թերութիւններն ունենան, իմ կարծիքս այն է, որ այս Ժողովը օրինաւոր է, այլապէս՝ այսքան պատասխանատու գործեր յանձն չպիտի կրնար առնել եւ կատարել: Եւ արդէն օրինաւոր չըլլալը ապացուցող առարկութիւններն ալ անհիմն են, քանի որ այն երկու դէմքերը, որ ամբողջ արեւելահայութիւնը կը ներկայացնեն, լիակատարօրէն մեր գործակիցներն են, անոնցմով ամբողջ Հանրապետութիւնը կը մասնակցի այս Ժողովին եւ ոեւէ խնդիր չանցնիր առանց անոնց խորհրդակցութեան:

Պ. Նախագահը հարց կու տայ, թէ արդեօք ժողովականները դիւրութիւն ունի՞ն հոս սպասելու մինչեւ Հայկական Հարցի վերջնական լուծումը եւ կամ ցրուելէ յետոյ նորէն կարելիութիւն ունի՞ն վերահաւաքուելու:

Պ. Միքայէլեան. Երկու պարագայ կայ, կա՛մ այն է, որ Խաղաղութեան Վեհաժողովը պիտի լուծէ մեր խնդիրը մեր ուզածին պէս եւ կա՛մ այն է, որ Խաղաղութեան Վեհաժողովի լուծումը մեր բաղձանքներուն համեմատ չպիտի ըլլայ: Արդ, առաջին պարագային, այս ժողովը այստեղ գումարուելու բնաւ պէտք չունի, հոն է, երկիրը ահագին աշխատանք կայ ընելիք եւ մենք հոն՝ ժողովուրդին քով է, որ պիտի ըլլանք: Իսկ երկրորդ պարագային, ամերիկահայ գաղութին կարծիքը այն է, որ պէտք է այս երկրորդ ժողովը նորէն երկիր գումարել. սկսիլ բարլամենթական ընտրութիւններուն, հռչակել միացեալ կառավարութիւն եւ անկախաբար մեզի համար տրուած որոշումէն՝ գործել: Արդ, ես կ'առաջարկեմ՝ ալ չերկարել այս ժողովը, վերջացնել շուտով աշխատանքները եւ Երկիր փոխադրուիլ՝ ուր հաշիւ ունինք տալու մեզ ընտրողներուն:

Պ. Չօպանեան. Ոմանք կը կարծեն, որ Խաղաղութեան Վեհաժողովը կրնայ ամիսներ տեւել, իսկ ես համոզուած եմ, որ առ առաւելն մէկ ամիսէն կը լրանայ, այնպէս որ ես ցրուիլը ոչ-գործնական կը նկատեմ: Մենք արդէն հազիւ 15 օրէն կարողանանք լրացնել ծրագիրը, որ ունինք մեր Ժողովին համար, իսկ մնացած օրերուն մէջ, Հայաստանի կառավարական կազմերու եւ այլ խնդիրներ մշակելու համար կ'ընտրենք քոմիսիոններ, եւ երբ Պատուիրակութիւնը վերջնական որոշումը իմանայ ու Համագումարը նիստի հրաւիրէ, թերեւս հարկ կըլլայ 2-3 նիստի, որմէ յետոյ կրնանք ցրուիլ:

Պ. Բարսեղեան. Երկու կողմերը լաւ պարզաբանուած չեն: Ես կը կարծեմ, որ այս ժողովը իր նիստերը պիտի գումարէ այնքան ատեն, որքան դեռ աշխատանք ունի ընելիք: Մենք մնանք թէ չէ՝ Պատուիրակութիւնը իր ընել կրցածը պիտի ընէ, իսկ որոշումը յայտնուած օրը ինչո՞ւ նիստ գումարենք անպատճառ. որոշումը հանդիսաւորապէ՞ս իմանալու համար միայն: Ես կ'առաջարկեմ, որ ժողովը իր աշխատութեան ծրագիրը լրացնելէ յետոյ թուական մը որոշէ, օրինակ՝ մինչեւ Ապրիլ 15, որու ընթացքին կրնայ ապագայ Հայաստանին վերաբերեալ խնդիրներուն նախապատրաստական աշխատանքները կատարել: Եթէ մինչեւ այդ թուականը որոշումը չյայտնուի, Համագումարը կը ցրուի:

Տոքթ. Սայեան. Կա՛մ Համագումարը իր ունեցած ծրագիրը ամբողջովին պիտի վերջացնէ, եւ կա՛մ դադարէ մը յետոյ պիտի շարունակէ լրացնել իր կիսատ թողուցած ծրագիրը: Ես առաջինին համամիտ եմ: Մենք եկած ենք հոս մեր ծրագիրը լրացնելու եւ յետոյ երթալու ժողովուրդին մէջը, ուրկէ ծնունդ առած են մեր աշխատանքները եւ հոն իրականացնելու հոս մեր տուած որոշումները: Եթէ օրինակ՝ ժողովը ժամանակ մը որոշէ հոս կենալու, դարձեալ կրնամ համաձայն ըլլալ, բայց ինչպէ՞ս կենանք այստեղ անորոշ ժամանակներով: Եթէ ատիկա մեր ընտրած Պատուիրակութենէն հաշիւ առնելու համար է, պէտք չկայ, թող Փաշան Երկիր գայ մեզի համարատուութիւն ընելու համար: Եթէ մեր ժողովուրդը հոն կրնայ ապրիլ, մենք ալ հոն պէտք է ապրինք եւ մեր 30 հոգիին համար ալ տեղ կայ ահագին Երեւանեան Հանրապետութեան մէջ: Արդ, ես կ'առաջարկեմ վերջացնել մեր առջեւ դրուած ծրագիրը եւ վերջապէս կարելիութիւն տալ բոլորիս երթալ Երկիր եւ աշխատիլ:

Պ. Մաթիկեան. Մենք չենք կրնար կանխատեսել Խաղաղութեան Վեհաժողովին որոշումը տալու օրը: Հետեւաբար, կ'առաջարկեմ մեր աշխատանքները լրացնելէ յետոյ պայմանաժամ մը որոշել՝ որմէ յետոյ, առաջին նիստին, ժողովը ինք կ'որոշէ իր դիրքը: Ես բոլորովին աւելորդ կը տեսնեմ մեր կողմէ ընտրուած եւ մեր վստահութիւնը վայելող Պատուիրակութեան կողքին, վերահսկիչ մարմնի մը գոյութիւնը:

Պ. Փափազեան. Հիմա միտքս գաղափար մը եկաւ, որ ժողովին ուշադրութեան կը յանձնեմ իր հում վիճակին մէջ: Արդեօք աւելի յարմար չէ՞, որ ժողովը իր ծրագիրը

վերջացնելէ յետոյ, քոմիսիոն մը կազմէ, որ պատրաստէ այն ծրագիրը, որով Հայաստանի մէջ ընտրութիւնները պիտի կատարուին եւ կառավարութիւնը պիտի հիմնուի: Մենք ցրուելէ առաջ կը քուէարկենք այդ կանոնները ու Պատուիրակութիւնը տպուած կը ղրկէ ամէն կողմ՝ ուր հայ կայ, եւ, որոշեալ թուականին, ընտրութիւնները կը սկսին, այնպէս որ երբ Խաղաղութեան Վեհաժողովը իր վճիռը տուած կ'ըլլայ մեր մասին, մենք արդէն հոն կանոնաւոր ընտրուած մարմին մը կ'ունենանք, որ կարելի է համարել ժամանակաւոր կառավարութիւն, կամ ծրագրող մարմին, կամ կովկասեանին հետ միանալով բարլամենթ եւայլն:

Պ. Շանթ կ'առաջարկէ քուէարկութեան դնել 1-2 շաբաթ առաջ իր մէկ տուած բանաձեւը, որ իր հիմնական միտքերէն մէկը կը պարունակէ, այսինքն՝ կեդրոնական կառավարութիւն ստեղծելու խնդիրը: Կը պատասխանուի, որ Պ. Շանթ ինք եւս ըլլալով անդամ այն յանձնաժողովին, որ կազմած է այս ծրագիրը, չկրնար երկու տարբեր բանաձեւեր ներկայացնել:

Պ. Տէր-Ստեփանեան դիտել կու տայ, որ Յանձնախումբին բերած բանաձեւէն յետոյ, բանաւոր չէ ուրիշ ծրագիրներ կամ բանաձեւեր ներկայացնել, քանի որ մենք արդէն վիճաբանելէ յետոյ այս խնդիրներուն շուրջ՝ Յանձնախումբին ձգած էինք մեր բոլորիս ալ մտքերը միացնող միջին առաջարկ մը գտնել: Այժմ մենք կրնանք փոփոխել այդ առաջարկը եւ ո՛չ նորեր ներկայացնել. այլապէս՝ ես ալ իմս կու տամ:

Ամեն. Դուրեան Սրբազան. Ես ո՛չ մէկ ամանտրման կ'ընդունիմ եւ կը ցաւիմ, որ մեր Յանձնաժողովին անդամները, փոխանակ իրենց բերած եզրակացութեան շուրջ համաձայն ըլլալու, նոր ամանտրմաններ կ'առաջարկեն: Իսկ գալով Ժողովի տեւողութեան խնդրոյն, եթէ նոյնիսկ Ժողովը որոշումը տայ առանց Խաղաղութեան Վեհաժողովին վերջնական վճիռը իմանալու ցրուիլ, ինծի կը թուի, թէ ներկայացուցիչ ժողովականներ չեն կրնար ընել այդ՝ առանց զիրենք ղրկողներուն կամքն հարցնելու եւ նկատի առնելու:

Ապա քուէարկութեան կը դրուի Յանձնաժողովին բերած բանաձեւը /տե՛ս Յանձնախումբին բերած նախագծին մէջ/, որ 20 ձայնով կ'ընդունուի, ինչպէս նաեւ Տոքթ. Սայեանի հետեւեալ առաջարկը, որ միայն 5 ձայն կը շահի.

«Համագումարը կը շարունակէ իր նիստերը առանց երկարատեւ դադարի, կը վերջացնէ իւր աշխատութիւնները եւ կը փակուի: Եթէ յառաջիկային, հաշտութեան վերջնական որոշումներէն յետոյ, երբ Հայաստանի սահմանները նշանակուած կ'ըլլան եւ եկած կ'ըլլայ վայրկեանը կազմակերպելու հայկական պետական վարչութիւնը եւ պէտք կ'ըլլայ նոր ժողով գումարել. այդ ժողովը պէտք չէ Փարիզ գումարել, այլ՝ Հայաստանի մէջ /Տաճկահայաստան կամ Հայկական Հանրապետութեան մէջ/»:

Քուէարկութեան կը դրուի նաեւ Պ. Հանըմեանի հետեւեալ առաջարկը, որ միաձայնութեամբ կը մերժուի.

«Համագումարը իր նիստերը դադրեցնելէ յետոյ կը փոխադրուի Երկիր՝ այնտեղ գործադրելու համար իր տուած որոշումները, երկրի վերակազմութեան, ներգաղթի եւայլն գործերու մասին, եւ մանաւանդ հսկելու համար ընտրական այն նոր գործողութիւններու վրայ, որոնցմէ պիտի բղխի սահմանադիր ժողով մը կամ խորհրդարան մը»:

Իրաւասութեան եւ փրոկրամի ծրագրին քննութիւնը վերջացած ըլլալով՝ ժողովը կ'անցնի օրակարգի երկրորդ խնդրոյն՝ Յիշատակագրին վաւերացումը եւ տարակարծիք եղողներու դիտողութեանց արձանագրութիւնը:

Տոքթ. Սայեան. Ուեւէ ասիսթանսի հակառակ եմ:

Պ. Տէր-Ստեփանեան. Ես մեր ներկայացուցած Յիշատակագրին դէմ քուէարկեցի հետեւեալ երկու գլխաւոր պատճառներով.

Ա. Յիշատակագիրը միեւնոյն ատեն որ կը պահանջէ Հայաստանի անկախութիւնը, այդ անկախութիւնը խաբուսիկ կը դարձնէ, խնդրելով, որ Ազգերու Միութեան կողմէ խնամակալ պետութիւն մը կարգուի Հայաստանի վրայ, քսան

տարուան շրջանի մը համար: Պատուիրակութիւնը այս ձեւով ներկայացնելով Հայկական Խնդրի լուծումը՝ նկատի ունեցած է այն ահաւոր դժուարութիւնները, որոնց պէտք է յաղթէ Հայաստան կազմակերպուելու համար եւ որոնց արագ ու ապահով հարթումին պայման է խնամակալութեան շրջան մը: Ըմբռնելով հանդերձ այն մեծ դժուարութիւնները, որոնք Հայաստանի առջեւ կը ցցուին, համոզուած ըլլալով հանդերձ օտար օգնութեան բացարձակ անհրաժեշտութեան, ես հակառակ եղայ մեր ազգային պահանջներու այդ կերպ բանաձեւումին շարք մը նկատումներով, որոնք ահաւասիկ իրենց գլխաւոր կէտերուն մէջ.

1. Օտար օգնութիւնը անհրաժեշտ է Հայաստանին, բայց ոչ անպատճառ այն կազմակերպուած ձեւով, զոր Պատուիրակութիւնն ընդգրկեց, կարծելով, որ առանց ինքզինք կազմակերպուած խնամակալութեան ենթարկելու Հայաստան պիտի չկարենար գտնել տնտեսական, կազմակերպական եւայլն օգնութիւններ, ազատ ընտրութեամբ եւ պարագայ առ պարագայ: Ես համոզուած եմ, որ Հայաստան կրնայ ամէն տեսակ օգնութիւն գտնել, մանաւանդ Ամերիկայի մէջ, առանց իր վրայ հրաւիրելու կազմակերպուած խնամակալութիւն մը, որ իր անկախութեան վրայ պիտի ճնշէ իբր նոր լուծ մը, որուն հետեւանքները՝ անհախատեսելի այսօր, կրնան ճակատագրական դառնալ Հայաստանի բաղդին համար, եւ որուն ժամանակաւոր ըլլալն առեղծուածային պիտի ըլլայ եթէ խնամակալութիւնն Ամերիկայի չյանձնուի:
2. Խնամակալութեան այդ ձեւը, զոր Պատուիրակութիւնն ընդգրկեց՝ ճիշդ այն է, զոր պետութիւնները յղացան քօղարկելու համար Գերմանիոյ ափրիկեան գաղութներուն եւ Թուրքիոյ զանազան մասերու կցումը գաղափարական կեղծ շղարշով մը: Միայն այն պարագան, որ այդ ձեւը ստեղծուած է ափրիկեան գաղութներու խնամակալութեան համար, եւ յետոյ՝ տարածուած Սուրիոյ, Արաբիոյ, Թուրքիոյ եւ Պաղեստինի պարագաներուն, պէտք էր մեզ խրտչեցներ անկէ, որովհետեւ հայ ազգը եւ իր դատը դասաւորել այդ ցեղերուն եւ իրենց վիճելի դատերուն կարգին, սրբապղծում է:
3. Մեր Յիշատակագրին մէջ պէտք էր պահանջէինք միմիայն Ազգերու Միութեան հաւաքական խնամակալութիւնը եւ ինքզինքնիս հոչակէինք չէզոք ազգ, մեզի վերապահելով ապագային մասնաւոր, պարագայ առ պարագայ, համաձայնութիւններ կնքել մեր լաւագոյն դատած պետութիւններուն հետ, Հայաստանի պէտք ունեցած օգնութիւններուն համար:
4. Մէկ պետութեան մասնաւոր խնամակալութիւնը խնդրելով՝ մեր դատը դրած եղանք, Վեհաժողովի տեւողութեան միջոցին, շատ դժուար հողի մը վրայ, քանի որ անոր շուրջ մենք մեր ձեռքով ստեղծած եղանք քաղաքական նախանձներու եւ խաղերու մթնոլորտ մը, մանաւանդ որ պահանջած էինք, որ խնամակալ պետութեան ընտրութեան մէջ մենք ալ ձայն ունենանք: Մինչ մենք կրնայինք բաց ճակատ մեր իրաւունքները պաշտպանել ուեւէ պետութեան դէմ, եթէ պարզապէս մեր անկախութեան հարցը դրած ըլլայինք, նոյն բանը չենք կրնար ընել խնամակալ պետութեան ընտրութեան շատ փափուկ խնդրին մէջ: Այս անտեղութեան փայլուն ապացոյցն է այն պարագան, որ Ֆրանսա մը Կիլիկիայի վրայ դրած պահանջին ընդառաջ կ'երթայ առաջարկելով մեզի լուծել այդ խնդիրը, իբր թէ հայերու ի նպաստ, ընդունելով ֆրանսական խնամակալութիւնը ամբողջ Հայաստանի վրայ:
5. Պատուիրակութիւնը խնամակալութեան այդ ձեւը իր ընդգրկելուն իբր հիմնական պատճառ կը ներկայացնէ հաւաքական տիրապետութեան յառաջ բերած անպատեհութիւնները Եգիպտոսի եւ Քոնկոյի մէջ: Այս պատճառաբանութեամբ ան ընդունած կ'ըլլայ, որ մասնաւոր խնամակալի դրութիւնը պարզապէս օտար տիրապետութիւն մը պիտի յառաջացնէ Հայաստանի վրայ, այն միակ առաւելութեամբ, որ հաւաքական տիրապետութեան անպատեհութիւններէն զերծ

պիտի ըլլայ ան: Քանի որ մեր խնդրած խնամակալութիւնը ոչինչով պէտք է նմանի տիրապետութեան սիսթէմին, ո՛չ մէկ պատճառ կայ, որ հաւաքական տիրապետութեան ներկայացուցած անպատեհութիւնները հաւաքական խնամակալութիւնն ալ ներկայացնէ, եթէ ճիշդ է որ, ինչպէս Պատուիրակութիւնը կը հաւատայ, խնամակալութիւնը չպիտի նուազեցնէ մեր ներքին անկախութիւնը:

6. Խնամակալութեան այդ կազմակերպուած կերպը բանաձեւելով Յիշատակագրին մէջ, Պատուիրակութիւնն ի նկատի ունեցած է ամերիկեան խնամակալութիւնը: Բայց Յիշատակագրին խմբագրուած օրերուն մէջ ո՛չ մէկ կերպով ապահովուած էր, եւ այսօր ալ չէ դեռ, ամերիկեան կառավարութիւնը: Մեր պահանջները յոյսերու վրայ բանաձեւելու իրաւունքը չէինք կրնար ունենալ: Մանաւանդ որ խնամակալութիւնը Ամերիկայի չտրուելու պարագային՝ Հայաստանի դատը դրուած կ'ըլլար, մեր իսկ ձեռքով, գաղթային քաղաքականութեան ճանկերուն մէջ, քանի որ Անգլիա, Ֆրանսա եւ Իտալիա խնամակալութիւնը colonization-ի քօղարկուած ձեւ մը նկատած են եւ կը շարունակեն նկատել:

Երկրորդ պատճառ. Պատուիրակութիւնը էական չնկատեց Հայաստանի ապագային համար եւ քաղաքական հողին վրայ անկարելի դատեց՝ պահանջել թիւրքերու արտաքսումը Հայաստանէն ի փոխան նոյնիսկ հայերու արտաքսումին Թուրքիայէն, եւ կամ գէթ թիւրքերու զրկումը քաղաքական իրաւունքներէ Հայաստանի մէջ: Ես համոզուած եմ, որ մեր ամէնէն աւելի սարսափելի դժուարութեան՝ ցեղային հարցի արմատական լուծումը մենք կրնայինք պահանջել եւ ընդունիլ իբր դոյզն հատուցում մեր միլիոնաւոր սիրելիներու նահատակումին: Որչափ ալ դժուար ըլլար այս հարցի լուծումը ընդունիլ տալը, մենք պէտք էր այժմէն իսկ ջանայինք անոր արմատական լուծումը ընդունիլ տալ, համոզուած՝ ինչպէս պէտք է ըլլայինք եւ ըլլանք, որ ատիկա վաղուան Հայաստանին կեանքի ու մահի հարցն իսկ է: Հայաստան մը, որուն բնակչութեան երկու երրորդը օտար ցեղերէ կազմուած կ'ըլլայ, աշխարհագրական բացատրութիւն մը կ'ըլլայ եւ ո՛չ թէ հայերու հայրենիք:

Ցեղային հարցին արմատական լուծումը այժմէն քաղաքական հողի վրայ մենք պէտք էր պահանջէինք, այն համոզումով, որ անոր ապագայ լուծումը ծայրայեղօրէն դժուար է, եթէ ոչ անկարելի՝ հետեւեալ պատճառներով.

1. Պալքանեան ազգերու կազմումին ատեն պատահած թրքական արտագաղթը Հայաստանի մէջ շատ անհաւանական է, որ կրկնուի, ինչպէս Պատուիրակութիւնը կը կարծէ: Պատմական իրողութիւնը անպատճառ չկրկնուիր, մանաւանդ երբ իրողութիւնները տարբեր են: Պուլկարիոյ վերակազմելու ձեւը եւ այն ատենի թիւրքերու տրամադրութիւնը չեն համապատասխաներ Հայաստանի վերակազմութեան ձեւին եւ այժմու թիւրքերու դրութեան: Պուլկարիա, թէեւ պարզ իշխանութիւն, բայց ռուսական հովանիին տակ ազատ եղաւ, թիւրքերու արտագաղթը յառաջ բերելու համար ուզած միջոցները ձեռք առնելով, մինչ մենք այդ ազատութիւնը պիտի չունենանք: Յետոյ՝ Պուլկարիա կը գտնուէր Թուրքիոյ արեւմտեան կողմը, հետեւաբար՝ բոլորովին խզուած էր թրքական զանգուածէն, որ կ'երկարի Պոլսէն մինչեւ Կեդրոնական Ռուսիա, մինչդեռ Հայաստան պիտի գտնուի վաղուան Թուրքիոյ արեւելեան կողմը եւ ճիշդ մէջտեղը թրքական երկու զանգուածներուն, որոնց միացման կամուրջը միայն Սեւ Ծովէն Միջերկրական տարածուող Հայաստանն ըլլալով, անոնք պիտի ջանան ամէն կերպով Հայաստանը ջնջել, եւ, չկարողանալով քաղաքականօրէն հասնիլ այդ նպատակին, պիտի ջանան ինչպէս զինադադարէն ի վեր կ'ընեն, ո՛չ միայն քաջալերելու Հայաստանի թիւրքերը մնալու իրենց տեղերը, այլ ամէն կերպ պիտի յառաջացնեն թրքական ներգաղթ դեպի Հայաստան՝ նուաճելու համար Հայաստանը ցեղային հողին վրայ, ցեղային նուաճում, որ միակ էականն է եւ որուն շատ դիւրաւ, առաջին առիթով, կրնայ յաջորդել եւ քաղաքական նուաճումը:

2. Լաւ է, որ մենք ազատ պիտի ըլլանք, ինչպէս եղաւ Պուլկարիա, թիւրքերուն հանդէպ վարել այնպիսի քաղաքականութիւն մը, որ զանոնք ստիպէ երկիրը թողելու:

Ասոր պատճառը այն է, որ մենք մեր գլխուն վրայ պիտի ունենանք խնամակալ պետութիւնը, որ լաւագոյն պարագային Ամերիկան պիտի ըլլայ եւ որ, ենթադրելով իսկ Ամերիկան ըլլայ, թիւրքը, քիւրտը եւ հայը բացարձակապէս հաւասար հողի վրայ պիտի դնէ՝ դարձնելով Հայաստանը թրքо-քրտо-հայ երկիր մը: Կոյր ըլլալու է այս վտանգը չտեսնելու համար, երբ մեր աչքերուն առջեւ է սա իրականութիւնը. եւրոպացիներ եւ ամերիկացիներ այսօր իսկ, դեռ հայ մարտիրոսագրութիւնը վերջ չգտած. թիւրքն ու քիւրտը եւ հայը կը դնեն հաւասար հողի վրայ քաղաքական իրականութեան մէջ եւ կը մտահոգուին վաղուան Հայաստանի մէջ, թիւրքերու եւ քիւրտերու համար ստեղծուելիք դրութեան մասին, առանց սոյն մտահոգութիւնն ունենալու վաղուան Թուրքիոյ մէջ գտնուելիք հայութեան համար: Դժուարութիւններու շուրջը դառնալ՝ զանոնք լուծել չի նշանակեր, այլ՝ աւելի իսկ ծանրացնել: Մեր պարտքն էր ուրեմն, եւ է՛ դեռ, նախ՝ զատել թիւրքերը քիւրտերէն եւ պարզապէս ըսել Եւրոպայի, թէ հայ ազգին համար նիւթապէս թէ բարոյապէս անկարելի է միեւնոյն երկրին մէջ կենակցութիւնը թիւրքերու հետ, եւ թէ հայերու եւ թիւրքերու փոխադարձ հեռացումը Հայաստանէն ու Թուրքիայէն միակ միջոցն է Մօտաւոր Արեւելքի մէջ խաղաղութիւն հաստատելու: Եւրոպա, որ Պերլինի Դաշնագրէն ի վեր իբր պատասխանատու՝ հանդիսատես եղաւ թիւրքերու կողմէ երկու միլիոն հայերու խողխողման, որուն նպատակն էր Հայաստանը թրքացնել, չի կրնար չհամոզուիլ, որ դոյզն հատուցում մը միայն պիտի ըլլայ հայերուն՝ թիւրքերու խաղաղ հեռացումը Հայաստանէն, որուն նպատակը պիտի ըլլայ ո՛չ թէ Թուրքիան, այլ նահատակ Հայաստանն իսկ հայացնել: Եւրոպա չկրնար այս աղաղակող ճշմարտութեան չհամոզուիլ, եթէ մենք քաջութիւն ունենանք, մեր ամէնէն սուրբ պարտականութիւնը կատարելով, անկէ պահանջելու մեր այդ ամէնէն տարրական իրաւունքին ճանաչումը:

Այս երկու կենսական խնդիրներուն անտեսումը կամ տարբեր ձեւով դրուիլը զիս ստիպեց հակառակ քուէ տալ: Իմ համոզումը եղած է եւ միշտ է, որ այդ երկու խնդիրներէն առնուազն մէկին իմ տեսած ձեւովս լուծումը անհրաժեշտ պայման է Հայկական Հայաստանի ստեղծման: Մեր ապագան ուրեմն, ըստ իս, բոլորովին վտանգած չըլլալու համար, առնուազն անհրաժեշտ է կա՛մ բացարձակ անկախութիւն պահանջել՝ վերապահելով մեզի մեր ներքին անկախութեան շնորհիւ լուծել ցեղային հարցը, եւ կա՛մ, եթէ խնամակալութիւնն անհրաժեշտ է՝ պահանջել ցեղային հարցին արմատական լուծումը: Բացարձակ անկախութիւնն այլեւս չենք կրնար պահանջել, Յիշատակագիրը զայն անկարելի դարձնելով, բայց դեռ մեզի կարելի է պահանջել ցեղային հարցին արմատական լուծումը՝ թիւրքերու հեռացումով Հայաստանէն:

Պ. Միքայէլեան. Յանուն ամերիկահայ պատգամաւորներու կը ներկայացնեմ մեր երեքին կողմէ ստորագրուած հետեւեալ դիտողութիւնները, որոնք կը խնդրեմ, որ ատենագրութեան մէջ արձանագրուին:

Փարիզի Հայ Ազգային Խորհրդաժողովին

Ամերիկահայ պատուիրակութեան հասնելէն առաջ՝ Խորհրդաժողովն արդէն ընդունած էր Դաշնակից պետութիւններու Խաղաղութեան Վեհաժողովին ներկայացնելիք Յիշատակագիրը /մեմորանտում/, որի մէջ առաջարկ բերուած էր Հայաստանի միացեալ կառավարութեան համար հովանաւորող /մանտաթէր/ պետութիւն մը ունենալ:

Այդ որոշման դէմ մենք, ամերիկահայութեան կողմէ ընտրուած պատգամաւորներս, խստիւ կը բողոքենք՝ յենուած մեր ընտրողներու մեզի տուած մանտայի եւ մեր ժողովուրդի քաղաքական անկախութեան ապահովութեան վրայ:

Դարերու տանջանքներէն եւ ստրկական դրութենէն վերջ, երբ մեր ժողովուրդը յամառօրէն պայքարեցաւ իր քաղաքական անկախութեան համար եւ վերջին չորս տարուայ ընթացքին ալ բազմաթիւ զոհեր եւ կռուողներ տուաւ, մենք անկարող ենք

ընդունիլ, որ մեր անկախութիւնը հովանաւորուած պիտի ըլլայ ռեւէ պետութեան կողմէ:

Մենք անկարող ենք համաձայնիլ այդպիսի ձեւի օժանդակութեան եւ այն պարզ պատճառով, որ մանտաթէր պետութիւնը, առաջին քսան տարուայ ընթացքին, պիտի ձգտի իր քաղաքական, տնտեսական եւ կուլտուրական կնիքը դնել եւ այդպէսով մեր ժողովուրդի բնականոն զարգացումը որոշ սահմաններու մէջ պահել, որ այդ պետութիւնն ամէն կերպ պիտի ջանայ, նախ եւ առաջ, իր իսկ պետութեան շահերն ու յարմարութիւնները ապահովել եւ այդ՝ ի վնաս հայ ժողովուրդի շահերուն, որ այդպէսով մենք կամաւոր կերպով մեզի օտար լուծի եւ տիրապետութեան /հոգ չէ թէ ժամանակաւոր/ տակ դրած կ'ըլլանք եւ ապա ուրեմն հնարաւորութենէ զրկուած պիտի ըլլանք առաջին անգամն իսկ մեր սեփական ոյժերն ու կարողութիւնները զարգացնել: Որ կարեւորութիւն չկար որպէսզի մենք ինքներս առաջադրէինք այդ, երբ կարելի էր յատուկ որոշում կայացնել եւ զիջման կէտ ընդունիլ, եթէ միայն Խաղաղութեան Վեհաժողովին կողմէն գար նման առաջարկ՝ իբր քաղաքական անհրաժեշտութիւն: Որ այդ խնդիրն իր իրաւական փոխյարաբերութիւններով՝ հայկական ապագայ պետութեան հետ, դեռ եւս պարզուած չէր, ապա ուրեմն բաւականաչափ վտանգաւոր է անորոշ դրութեան մը համար որոշ յանձնառութիւն ընել:

Այդ եւ այս պատճառաբանութիւններով՝ մենք մեր բողոքը կը յայտնենք այդ կէտի վերաբերմամբ, եւ կ'առաջարկենք, որ Խորհրդաժողովդ եւ կամ ընտրուելիք Ազգային Պատուիրակութիւնն ամէն կերպ ջանան այդ հովանաւորութեան ժամանակամիջոցն ու ազդեցութիւնը նուազագոյնի հասցնել:

Յարգանքներով՝ Ա. Միքայէլեան, Զ. Մաթիկեան, Մ. Համբարձումեան»:

Պ. Փափազեան. Անշուշտ, ռեւէ պետութեան համար, ասիսքանսը վնասակար է եւ օրինակները այդ ցոյց կու տան: Բայց եթէ ասիսքանսի խնդիրը չըլլայ՝ դժուար թէ պետութիւնները մեզի բաւարարեն այն չափով, ինչ չափով որ մենք ուզած ենք մեր մեմուարի մէջ: Բայց խնդիրը հոն է, որ՝ ասիսքանսի խնդիրը մենք չպէտք է յարուցանէինք եւ չպիտի յիշատակէինք մեմորանտումին մէջ: Թող իրենք առաջարկէին մեզի: Ցանկութիւնն իսկ արդէն որոշ չափով կաշկանդում է մեր իրաւունքներուն. ես ատիկա կը նկատեմ մեր ամէնամեծ սխալը:

Պ. Օհանջանեան. Այս ամբողջ խնդիրը կը կայանայ անոր մէջ, թէ ի՞նչ բովանդակութիւն կը տրուի ասիսքանս բառին: Ո՛չ ոք չկրնար ժխտել, որ մեր քանդուած, աւերուած երկիրը առանց արտաքին նիւթական օգնութեան չկրնար վերականգնիլ: Արդ, պէտք է աշխատիլ, որ այդ արտաքին օգնութիւնը այնպիսի պայմաններով կատարուի, որ չվնասէ ո՛չ մէկ չափով մեր անկախութեան: Ասիկա Պատուիրակութեան ուղղութիւնն իսկ է: Պատուիրակութեան Նախագահն անշուշտ մտքէն չէր անցուցած, որ ասիսքանս խնդրելով՝ կրնար սահմանափակել մեր անկախութեան իրաւունքները, եւ այդ մեմուարը ստորագրած է, առանց որ մեր անկախութեան իրաւունքները սահմանափակուած ըլլան: Եթէ մենք այնպէս ընենք, որ իրապէս անկախ ըլլանք, միւսը ինքնին անվնաս կը դառնայ: Մենք այսպէս հասկցած ենք ասիսքանսը եւ այդպէս ալ պիտի շարունակենք հասկնալ:

Պ. Հինդլեան. Կը ճանչնա՞ք այդպիսի պետութիւն մը:

Պ. Օհանջանեան. Այո՛, կը ճանչնանք, Ամերիկան է, եւ օրինակը մեր աչքին առջեւ է՝ Քուպան, որ Ամերիկայի թեւին տակ է, դարձեալ անոնք իրենց գաղութը չեն դարձուցած: Ուրեմն, պէտք է Պատուիրակութեան հրահանգել, որ այդ կերպ հասկնայ ասիսքանսը:

Պ. Ֆնտգլեան. Նախ ես պարտք մը ունիմ կատարելիք, եւ պէտք է ըսեմ, որ իմ համայնքս, որ զիս ընտրած է, կը պահանջէ Հայաստանի բացարձակ անկախութիւնը: Եւ այն անձնաւորութիւնը որուն հետ տեսակցութիւն ունեցայ, նոյն միտքն ունէր եւ կ'ըսէր, որ կարելի է վստահիլ Պ. Ուիլսոնին: Բայց Պ. Ուիլսոնը այսօր նախագահ է,

վաղը տեղը ուրիշ մը կու գայ: Նմանապէս, երբէ՛ք պէտք չէ վստահիլ կառավարութեանց վրայ, որոնք ամէնքն ալ, առաւել կամ նուազ չափով, կ'ազդուին մենաշնորհ ընկերութիւններէ, քաբիթալիստներէ եւայլն: Ես համամիտ չեմ նաեւ Պ. Օհանջանեանին: Մենք ո՛չ մէկ պարագայի տակ մենք զմեզ անատակ չպիտի հռչակէինք անկախ կառավարելու եւ օտար հանրային կարծիքը, ինչպէս կը գրէ ամերիկեան կարեւոր թերթ մը՝ New York Times, այդ համարումը ունի մեր վրայ: Մենք կրնայինք յետոյ զատ բերանացի ընել պաշտպան տէրութեան բանակցութիւնները, իսկ եթէ հարկ ըլլար՝ այդ ասիսքանսը: Արաբներն իսկ բացարձակ անկախութիւն պահանջած են: Հայը Անատոլուի ժողովուրդներուն ամէնէն բարձրն է թէ՛ քաղաքական հասկացողութեամբ, թէ՛ տնտեսական ընդունակութեամբ, թէ՛ զարգացումով, վերջապէս՝ քաղաքակրթութեամբ, եւ արժանի է բացարձակ անկախութեան: Պէտք է, որ մենք հիմա ամէն ինչ ընենք, որ մեր իրաւունքները, պաշտպան տէրութեան կողմէ անհարուածելի մնան՝ պաշտպան տէրութեան տրուելիք charter-ին մէջ պատշաճ յօդուածներ դնել տալով:

Պ. Հանըմեան. Ես ռեւէ ասիսքանսի հակառակ եմ: Նախատեսուած ձեւով ասիսքանսը, անշուշտ, նուազագոյն չարիքն է, բայց միշտ չարիք մըն է եւ խոստումէն գործադրութիւն ահագին տարբերութիւն կայ: Օգնութիւն մը երբեք անշահախնդիր չկրնար ըլլալ, եւ մենք որքան ալ աշխատինք լաւագոյն պայմաններու մէջ ընել, սեղմումներ դնել, ասիսքան պետութիւնը ամէն ինչ պիտի ընէ կնճիռներ ստեղծելու, ցեղերը իրարու դէմ հանելու եւայլն եւայլն՝ իր ասիսքանսի ժամանակը երկարաձգելու համար: Մեզ համար անշուշտ Միացեալ Նահանգները լաւագոյն մանտաթէրն է, բայց մեմորանտումը տրուած օրը, ինչպէս այսօր, որոշապէս եւ վերջնականապէս չէինք գիտեր եւ չենք գիտեր, թէ ո՞վ է վերջապէս այդ ասիսքան պետութիւնը: Մենք այդ անծանօթին առջեւ նուազագոյն չափով իսկ մեր անկախութեան իրաւունքները չպիտի զոհէինք, որովհետեւ ես հաւատացած եմ, որ մենք մինակնիս ալ կրնայինք ոտքի ելլել, այն տարբերութեամբ, որ եթէ ասիսքան պետութիւնով 10 տարիէն պիտի ըլլար այդ, առանձինն՝ 50 տարիէն:

Թուրքը կը գտնուի չափազանց տկար վիճակի մէջ: Մեզի կը մնար միացնել մեր զինուորական ոյժերը, գրաւել երկիրը եւ հռչակել կառավարութիւնը: Մենք կարողութիւն ունէինք թէ՛ քաղաքականապէս, թէ՛ զինուորականապէս այդ ընելու: Կը մնար միայն նիւթական օգնութիւնը, որ երբ պատճառ պիտի դառնար լուծի մը, անոր ալ հակառակ եմ, նախընտրելով 50 տարուայ մէջ վերականգնիլ, քան թէ օտար լուծով մը, բայց 10 տարիէն: Ասիսքանսին ռեւէ ձեւով հակառակ եմ, որովհետեւ ան երբեք անշահախնդիր չի կրնար ըլլալ:

Պ. Տէրպէտէրեան. Թէեւ ես անձամբ համաձայն եմ Ազգային Պատուիրակութեան, որ այլեւայլ քաղաքական հայեցակէտներ ի նկատի ունենալով, իր մեմորանտումին մէջ ռեւէ ակնարկութիւն ըրած չէ Պարսկահայքի նկատմամբ՝ իբր ամբողջացուցիչ մաս Պատմական Հայաստանի, բայց կը խնդրեմ, որ արձանագրուի, թէ Ռումանահայ Միութիւնն իր Պուքրէշի Կեդրոնական Կոմիտէի միջոցաւ պարտք դրած է ինծի պահանջել նաեւ Ատրպատականը՝ յենելով Ուիլսոնեան ծանօթ սկզբունքներուն վրայ, առանց ի նկատի ունենալու, թէ Պարսկաստանը, չէզոք մնալով, պատերազմին մասնակցած չէ:

Պ. Չօպանեան. Համաձայն եմ ասիսքանսի հակառակ եղողներուն, բայց վնասը որ եղած է՝ կարելի է դարմանել այն տիրէքթիւներուն մէջ, որ պիտի տրուին նոր Պատուիրակութեան: Յետոյ՝ այդ ասիսքանսը մեր վարկին ալ դէմ է: Հայ ազգը, որ ամէնէն հինն է, որ այնքան յանդգնօրէն մէջ մտաւ այս կռիւին մէջ եղած համաձայնականներու դրած սկզբունքներուն, եւ որ ամէնամեծ զոհողութիւնները տուաւ, հիմա զինքը կ'իջեցնեն, կ'իջեցնեն, մինչեւ սիւրիէններու եւ հրեաներու կարգը կը դնեն: Մինչդեռ Հայկական Դատը եղած է միշտ Հայաստանի բացարձակ անկախութեան հարցը եւ իւրաքանչիւր հայ ամէն տեղ ատոր է, որ ձգտած է:

Մեմորանտումի այդ բանաձեւովը մենք հաւատարիմ չենք մնացած հայկական այդ ոգիին: Բայց մենք, որ եւրոպացւոց համար զոհ գացինք, ամէն զոհողութիւն ըրինք, այժմ որ երկիրնիս քար ու քանդ է, պէտք է անշուշտ հիմա մեզի նիւթական փոխարինութիւն տալ՝ մեր տունը մեր ձեռքով կանգնելու համար: Պէտք է զգոյշ ըլլալ նաեւ, երբ Ամերիկան ըլլայ մեր մանտաթէրը, որովհետեւ հոն ալ կան շահախնդիր խմբակներ: Արդ, հիմա, գործադրութեան րոպէին, հայը իրաւունք ունի ճակատը բարձր եւ հպարտօրէն խօսելու: Արդ, պէտք է այս ոգին ներշնչենք Պատուիրակութեան, որ այս ոգիով գործէ:

Բրօֆ. Տէր-Յակոբեան. Հայրենասիրականօրէն՝ ես ալ հակառակ եմ ասիսքանսին, բայց Պատուիրակութեան խնդրած ասիսքանսը շինիչ, վերականգնիչ ասիսքանսն է, որ անխուսափելի էր Հայաստանի ամբողջութեան բաժանումը արգիլելու համար:

Պ. Հինդլեան. Փարիզ գումարուած Ազգային Համագումարին անունով Խաղաղութեան Վեհաժողովին ներկայացուցած Յիշատակագրին ասիսքանսի (assistance) մասին հակառակ քուէիս գլխաւոր նկատողութիւններն են.

Ա. Հայ ժողովուրդը իր մինչեւ ցարդ տուած զոհողութիւններով եւ իր ազգային մշակոյթ (culture), ընկերային (sociale), տնտեսական (economoque), մտաւորական (intellectuelle) եւ ստեղծագործական (creatrice) կարողութիւններու աստիճանով, ամբողջովին ընդունակ է քաղաքական անկախ եւ ինքնավար կեանքի մը, ինք իր ոյժերով իր բոլոր այլազան պէտքերը գոհացնելու համար:

Բ. Հայ ազգային մշակոյթի ներկայ աստիճանին հաւասար եւ նոյնիսկ աւելի ստոր աստիճանին գտնուող ազգերը ինչպէս անցեալի մէջ, այսօր ալ անկախութիւն ունեցած են եւ ունին, մերժելով ամէն ասիսքանս:

Գ. Մասնաւոր սեփականութեան (capitalisme) տնտեսական ռեժիմին տիրապետութեամբ, ներկայիս բոլոր պետութիւնները, առաւել կամ նուազ չափերով աշխարհակալական (imperialiste) ձգտումներ ունին ուղղակի համեմատութեան մէջ գտնուելով, երկրի մը, պետութեան մը քաբիթալիստական զարգացման աստիճաններուն հետ:

Դ. Ո՛չ մէկ ասիսքանք (assistant) պետութիւն չի բերեր եւ չի տար իր օժանդակութիւնը եւ աջակցութիւնը, առանց տնտեսական առաւելութիւններու եւ մենաշնորհներու ակնկալութեան, հետեւաբար եւ աշխարհակալական յարձակողական (agressive) քաղաքականութեան:

Ե. Արդիական (moderne) պետութեան իրական եւ դրական ոյժը, անոր քաղաքական անկախութիւնը, գերակայութիւնն ու վեհապետութիւնը (indepéndance et souverainité) կը հիմնուին գերազանցապէս անոր տնտեսական ոյժին եւ անկախութեան, ինչ որ էապէս կը վտանգուի ասիսքանք պետութեան տնտեսական անպարտելի ձգտումներէն եւ ակներեւ գերակշիռ դիրքէն:

Զ. Ասիսքանք պետութիւնը իր ձգտումներն իրականացնելու համար եւ իրեն համար տնտեսական գերակշիռ դիրք մը միշտ ապահովելու նպատակով կը պահանջէ եւ կ'իրականացնէ իր եսասիրական շահերուն նպաստող քաղաքական որոշ պայմաններ ու հաստատութիւններ, երկրին ընդհանուր շահերուն հակառակ, եւ յաճախ ջնջելով ու քանդելով զինքը արգիլող բոլոր քաղաքական եւ այլ ազատութիւնները:

Է. Ասիսքանք պետութիւնը իր մշտակայ ներկայութեամբ եւ քաղաքական այն բացառիկ դիրքովը, որ ան պիտի յաջողի իրեն համար ստեղծել մեր ամէն ջանքերուն եւ փորձերուն հակառակ՝ իր բերելիք քաբիթալովը, «դրամական օժանդակութեամբ» փոխանակ նպաստելու հայրենի, տեղական ազգային հարստութեան եւ քաբիթալի ստեղծման ու բարգաւաճման, ընդհակառակը, պիտի արգիլէ զայն՝ իրեն համար վերապահելով միշտ մենաշնորհը օգտագործելու եւ շահագործելու երկրին բոլոր բնական հարստութիւնները, պետական շինութիւնները, ճարտարարուեստի

ասպարէզները, պարտադրելով մեր երկրին մաքսային բացառիկ ռեժիմ մը, հաղորդակցութեան միջոցներու՝ իր եսասիրական ձգտումներուն համապատասխանող բացառիկ ուղղութիւն, թարիֆներու առանձնաշնորհեալ սիսթէմ, հանրային ապահովութեան՝ իր շահերը ապահովող ձեւ եւ հաստատութիւններ, դատավարութեան եւ արդարաբաշխութեան ոտնձգութիւններով, ազդեցութիւններով, եւ, վերջապէս, մեր վարչական գործերու մէջ իր անխուսափելի միջամտութիւններով:

Ը. Օտար դրամագլուխի բացարձակ այս տիրապետութիւնը մեր երկրին մէջ, պիտի ազդէ մեր երկրին տնտեսական ապագային երկու հնարաւոր, եւ սակայն՝ երկուքն ալ՝ աղիտաբեր ճամբաներով. կա՛մ պիտի ջնջէ հայ ցեղին ստեղծագործական եւ արդիւնաւորող կարողութիւններն ու ձիրքերը, անկէ ջանալով միայն պարզ մշակներ շինել, եւ կա՛մ, ինչ որ աւելի հաւանական է, հայը, չգտնելով իր հայրենիքին մէջ իր ձգտումներուն նպաստող պայմաններ՝ պիտի գաղթէ օտար, աւելի ձեռնտու երկիրներ:

Թ. Ասիսքանք պետութեան մը քաղաքական միջամտութիւնը եւ ազդեցութիւնը, որչափ ալ սահմանափակուած ըլլայ զանազան դաշնագրերու միջոցաւ, միայն նախապէս տրուած շրջանի մը եւ ժամանակամիջոցի մը համար, անոր տնտեսական ազդեցութիւնը եւ գերակշռութիւնը անկարելի է սահմանափակել, եւ, հետեւաբար, նաեւ այն քաղաքական հզօր ազդեցութիւնը, որ ան պիտի շարունակէ դուրսէն ալ ներգործել, շնորհիւ այն դրական եւ մեծ ոյժին, որ ան պիտի ունենայ եւ պահէ երկրին մէջ իր տնտեսական տիրապետութեամբ: Այսպէս ժամանակաւոր ասիսքանսը պիտի յաւերժանայ, ցորչափ կը տիրէ քաբիթալիզմը:

Ժ. Ասիսքանք պետութեան մը ներկայութեամբ չէ՛ որ կ'ապահովուի եւ կ'երաշխաւորուի մեր հայրենիքին ամբողջականութեան անձեռնմխելիութիւնը: Այդպիսի յանձնարարութիւն առնող պետութիւնը չի բաւականանար միայն ասիսքանսով, այլ՝ ասիսքէ երկիրը պարզապէս կը նկատէ իբր իր կալուածը, իր possession-ը, colonie մը պարզապէս: Մեզի համար պէտք էր պահանջել եւ կը մնայ դեռ պահանջել մեր երկրին անձեռնմխելիութեան համար օտարներու դէմ անոր չէզոքութիւնը յայտարարել, զայն դնելով ինչպէս Պելճիքան եւ Զուիցերիան, եւրոպական պետութիւններու փոխադարձ երաշխաւորութեան եւ հաւաքական պաշտպանութեան ներքոյ, առանց պէտք ըլլալու, այս առթիւ, ոեւէ մանտաթէրի մը:

Նիստը փակուեցաւ ժամը 8 ու կէսին:

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 25, թթ. 1-23: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ 18-րդ

15 Մարտ 1919.

Նիստը բացուեցաւ Վսեմ. Գ. Նորատունկեանի նախագահութեան տակ եւ 32 անդամներու ներկայութեամբ:

ՕՐԱԿԱՐԳ

1. Տեղեկատուութիւն Պատուիրակութեան Նախագահին
2. Զեկուցումն Հայր Թորոսեանի

Պ. Նախագահը բարի գալուստի խօսք ըրաւ բարբարոս ճիրաններէ ազատած եւ երկար ճամբորդութիւնէ մը յետոյ՝ նոր Փարիզ հասած Բրօֆ. Աստուածատուր Խաչատուրեանի, որ փոխադարձ շնորհակալութիւն յայտնեց:

Յետոյ կարդացուեցաւ Պատուիրակութեան մասնագէտ խորհրդական Պ. Փաստրմաճեանի մէկ հրաժարագիրը, որ Պատուիրակութեան ղրկել որոշուեցաւ:

Կարդացուեցաւ Լահէյաբնակ ազգայիններէն Պ. Միհրդատեանցի մէկ նամակը, որ ապագայ Հայաստանի ունենալիք պաշտօնական դրօշակի մասին առաջարկներ կը պարունակէր: Կ'որոշուի այդ նամակը ղրկել Պատուիրակութեան, որ արդէն ուրիշ կողմերէ ալ հայ դրօշակի մասին գրեր ստացած ըլլալով՝ ամէնքն միասին ուսումնասիրութեան պիտի ենթարկէ:

Կը կարդացուի նաեւ նամակ մը հայ մամուլի ներկայացուցիչներու կողմէն գրուած, որոնք կը խնդրեն ներկայ գտնուիլ Համագումարի նիստերուն: Պ. Նախագահը կը յայտնէ, որ որոշուած է արդէն դռնփակ ընել նիստերը, բայց Ժողովիս աշխատութեանց մեծ մասը արդէն լրացած ըլլալով, թերեւս կերպով մը կարելի է գոհացում տալ մամուլին:

Բրօֆ. Խաչատուրեան եւս կը շեշտէ, թէ ժողովուրդը որքան անձկութեամբ ու հետաքրքրութեամբ կը սպասէ համագումարի լուրերուն եւ կ'առաջարկէ, որ իւրաքանչիւր նիստէ յետոյ, Դիւանը փոքրիկ զեկուցումներ տայ մամուլին: Պ. Միքայէլեան կ'առաջարկէ փոխել նախկին որոշումը եւ ընդունիլ մամուլի ներկայացուցիչները: Պ. Թէրզիպաշեան կ'առաջարկէ, թէ օրինական չէ նախկին տրուած որոշում մը փոխել, այլ՝ Դիւանը կրնայ մամուլին հաղորդել հարկ եղած տեղեկութիւնները.

Պ. Չօպանեան համակարծիք չէ մամուլին առջեւ դռները գոցելուն եւ կ'առաջարկէ Համաժողովի գոնէ վերջին մէկ-երկու նիստերուն թոյլատրել խմբագիրներուն ներկայ գտնուիլ:

Կ'որոշուի յարգել նախապէս տրուած որոշումը եւ ի հարկին տեղեկութիւններ տալ Դիւանին կողմէ մամուլին, երբ սա դիմում ընէ:

Կը կարդացուի ուրիշ գիր մը Երուսաղէմէն, որ կը յայտնէ, թէ անիշխանութիւնը կը տիրէ հայոց վանքին մէջ եւ ազգային հարստութիւնը կողոպուտի ենթարկուած է:

Բրօֆ. Խաչատուրեան դիտել կու տայ, թէ այս Ժողովը չի կրնար այսպիսի խնդիրներով զբաղիլ:

Պ. Հինդլեան հակառակ կարծիք կը յայտնէ եւ կ'ըսէ, որ այժմ ձեռնհաս պաշտօնական մարմին չկենալուն եւ հաղորդակցութիւնք դժուար ըլլալուն՝ չի բաւեր ըսել այստեղ, թէ եւ մենք չենք կրնար աչքերնիս գոց անցնիլ ազգային սեփականակութեանց կողոպուտին վրայէն: Ժողովը այս հարցն ալ կ'ուղարկէ Ազգ. Պատուիրակութեան՝ առ ի տնօրինել կարեւորն:

Պ. Նախագահը կը կարդայ Իզմիրէն եկած հեռագիր մը, որ կը յայտնէ, թէ Պ. Նիքօթեանի նախաձեռնութեամբ տեղի ունեցած հանգանակութիւնը 150 000 ոսկի հանգանակած է եւ հրահանգ կը խնդրէ թէ ո՞ւր եւ ինչպէ՞ս փոխադրելու է դրամը: Սոյն հեռագիրը կը յանձնուի պիւտճէի խնդրով զբաղող յանձնաժողովին, որ պիտի որոշէ նաեւ այդ գումարին ծախսուելու եղանակը, նկատի ունենալով Միջագետքի, Ատանայի եւ այլն տեղերու թշուառ վիճակը: Ժողովը կը յանձնարարէ Պատուիրակութեան Նախագահին, որ նուիրատուներուն շնորհակալութիւն յայտնուի նաեւ Ժողովի կողմէն:

Ապա Վսեմ. Պօղոս Նուպար Փաշա կ'ընէ հետեւեալ տեղեկատուութիւն:

Պ. Հինդլեան կը հարցնէ, թէ Պատուիրակութեան Նախագահի յայտնութիւնները պէ՞տք է գաղտնի պահել, թէ՞ ոչ: Պօղոս Նուպար Փաշա աւելի խոհեմ կը նկատէ գաղտնի պահել:

Աղաթօն Պէյի առաջարկութեամբ՝ Դիւանը շնորհակալութիւն կը յայտնէ Նորին Վսեմութեան՝ տեղեկութեանց համար:

Յետոյ Հայր Թորոսեան Մխիթարեանց վանքին կողմէ 30000 /երեսուն հազար/ ֆրանք Պատուիրակութեան հանգանակութեան գործին յատկացուած ըլլալուն վերաբերեալ զեկուցում մը կ'ընէ եւ կը պարզէ բոլոր այն դժուարութիւնները եւ նեղութիւններն, որոնց ենթակայ եղան վանքը եւ իւր հարստութիւնները աշխարհային այս մեծ պատերազմի երեսէն:

Պ. Տամատեան. Հայ ազգի անցուցած այս դժնդակ ժամանակամիջոցին մէջ մենք Մխիթարեան Միաբանութեան կողմէ մեծ ժէսթի մը սպասելու իրաւունք ունէինք, բայց երբ նկատի առնենք այն կաշկանդիչ պայմանները, որոնց մէջ գտնուեցաւ ան, այս ըրածնին իսկ, կարելի է ըսել, հրաշք մըն է, որուն համար մենք երկիցս պէտք է շնորհակալ ըլլանք:

Պ. Նախագահը յանուն Համաժողովին շնորհակալութիւն կը յայտնէ Մխիթարեան բազմարդիւն Միաբանութեան, անոր ղրկած այս նպաստին, եւ իւր դպրոցներու վերականգնումին համար ձեռք առած միջոցներուն համար:

Կը յաւելու, թէ մեր փափաքը այն է, որ Մխիթարեանները միշտ եւ միշտ բարգաւաճին եւ ընդարձակեն իրենց ազգօգուտ գործունէութիւնը եւ աւելի մեծ բաժին մը առնեն մեր բազմաթիւ որբերու կրթութեան կենսական գործին մէջ:

Պ. Մաթիկեան իր խորին ուրախութիւն կը յայտնէ, որ Պատուիրակութեան Նախագահը իր տեղեկատուութեան մէջ դրուատեց մեր կամաւորները, որոնք այնքան անձնուիրաբար կռուի մէջ նետուեցան եւ որոնց շատ բան կը պարտինք Հայկական Դատի յաջող լուծման մէջ: Այս պատճառով, կ'առաջարկէ, որ Ժողովը յոտնկայս յարգէ այն բոլոր կամաւորներուն յիշատակը, որոնք ինկած են կռուին մէջ:

Ժողովականները ոտքի կը կանգնին, Դուրեան Սրբազան աղօթք կ'ընէ անոնց յիշատակին համար եւ ապա կ'ըսէ.

Ամեն. Դուրեան Սրբազան. Հայ երիտասարդները, որ կռուեցան, ինկան մեզ բարձրացնելու համար՝ այնքան մօտիկ են մեր սրտին, որ ո՛չ մէկ հռետորական ճառի պէտք կայ անոնց սէրը արծարծելու համար մեր սրտին մէջ: /Յետոյ անդրադառնալով Թորոսեան Հօր զեկուցման՝ կ'ըսէ/ Ես ալ պարտք կը համարեմ ըսել, որ մեծ չափով կրած եմ Վենետիկի Միաբանութեան սքանչելի հանճարներուն ազդեցութիւնը: Անոնք մեզի բոլորիս լեզուն հայերէնը կը սորվեցնէին, որ մեր մէջ պահեց ազգային զգացումը եւ որ զմեզ դարձուց հայրենասէրներ:

Փառաւոր ըլլան Մխիթարը եւ իր մեծ յաջորդները: Մաղթենք նաեւ, որ Հայաստանի մէջ ամէն տեղ հիմնուին Վենետիկեան Միաբանութեան դպրոցները:

Ապա խօսք կ'առնէ Պ. Տէրվիշեան, որուն ճառը Պատուիրակութեան գործունէութիւնը քննադատելու միտելուն համար՝ շարունակաբար կ'ընդմիջուի:

Պ. Տէրվիշեան կը յայտարարէ, թէ Հայկական Դատը վտանգի տակ է, եւ զանազան դէպքերով կը ջանայ իր այս տպաւորութիւնը բաժնել տալ Ժողովին, հրաւիրելով Պատուիրակութիւնը աչալուրջ ըլլալ թիւրքերու էնթրիկներուն դէմ:

Նիստը փակուեցաւ ժամը 8 1/2-ին:

ՀԱԱ, ֆ. Պ-430, ց. 1, գ. 26, թթ. 1-4: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ 19-րդ

17 Մարտ 1919.

Ժողովը բացուեցաւ ժամը 4½-ին, Վսեմ. Գ. Նորատունկեանի նախագահութեան տակ՝ 26 ժողովականներու ներկայութեամբ:

Օրակարգ.
Ա.- Ձեկոյց Բրօֆ. Խաչատուրեանի
Բ.- Տիրէքթիւներու Յանձնաժողովի առաջարկը

Բրօֆ. Խաչատուրեան խօսք առնելով նկարագրեց վերջին կոտորածներու, Միջագետք եւ այլուր ցրուած հայ փախստականներու եւ տեղահանեալներու կացութիւնը, իբր ականատես՝ շատ մը շահեկան տեղեկութիւններ տուաւ ժողովին:

Պ. Չօպանեան. Բրօֆ. Խաչատուրեանի տուած տեղեկութիւններէն կը հետեւի, որ վեց նահանգներու մէջ գրեթէ ժողովուրդ չկայ հիմա, ուրեմն՝ դիմում ընենք գրաւելու համար:

Պ. Տամատեան. Պ. Չօպանեանի յայտնած միտքերուն հակառակ չեմ, կացութիւնը օրէ օր կը փոխուի, շատ ալ լաւատես չ'ըլլանք: Զինադադարէն ասդին կացութիւնը փոխուած է, թիւրքերը գաղթականներով կը լեցընեն այժմ մեր երկիրը, կը կրկնեմ Պ. Չօպանեանին առաջարկը:

Բրօֆ. Խաչատուրեան. Քիւրտերը պատերազմի միջոցին փոխադրուեցան երկաթուղիներու գիծերուն վրայ: Թիւրք կառավարութիւնը աշխատցուց զանոնք: Ժողովուրդ մը տեղէ մը ուրիշ տեղ փոխադրելու ատեն ընդհանրապէս կորուստներ կ'ունենայ: Մանաւանդ, որ քիւրտերը կոտորակուած են փոփոխութեանց, հիւանդութեանց, համաճարակի եւ կլիմայական պատճառաւ:

Պ. Հինդլեան. Կ'ուզէի գիտնալ, թէ գրաւման հարցի մասին Տիրէքթիւներու Յանձնաժողովը պիտի բերէ՞ հոս իր աշխատանքը, թէ՞ ոչ, մենք պէտք է գիտնանք, թէ ի՞նչ թիւ ունին թշնամի տարրերը Հայաստանի մէջ: Հակառակ պարագային, ստիպուած եմ հարցնել Պ. Վ. Փափազեանին, թէ գրաւման հարցի մասին Յանձնաժողովը որոշ աշխատանք մը կատարա՞ծ է արդեօք:

Պ. Չօպանեան. Յանձնաժողովի կողմէ ըսեմ, որ տիրէքթիւներու մէջ գրաւման հարցը գոյութիւն ունի արդէն:

Պ. Գ. Յակոբեան. Գրաւման հարցը կարեւոր է եւ արդէն այդ ուղղութեամբ դիմում եղած է պետութեանց մօտ՝ Վսեմ. Պօղոս Փաշայի եւ Պ. Ահարոնեանի կողմէ:

Պ. Խաչատուրեան. Շատ հարցեր կը փնտրենք, որոնց մասին որոշ տեղեկութիւններ չունինք: Պատուիրակութեան եւ մեր մէջ կապ չիկայ, կատարուած դիմումներուն պէտք է տեղեկանանք: Կ'առաջարկեմ, որ Պատուիրակութիւնը երբեմն տեղեկութիւններ տար մեզի:

Պ. Հինդլեան. Նախ Յանձնաժողովը իր տեղեկագիրը թող բերէ մեզի, որպէսզի կարենանք արտայայտուիլ: Գրաւման հարցին մասին վիճաբանիլը աւելորդ կը նկատեմ: Կ'ուզէի որ Համագումարի դիրքը ճշդուի եւ ժամավաճառ չըլլանք:

Պ. Տամատեան. Թիւրիմացութեան մէջ կը գտնուի Պ. Հինդլեան, Կիլիկիայէն եկած անապահովութեան վրդովիչ լուրերէն վերջ, ուրախ եմ վերջապէս, որ թէեւ ուշ՝ այդ դիմումը եղած է:

Պ. Մաթիկեան. Յոյսերնիս օտարներու վրայ դնելու չենք, մեր սեփական ոյժերու վրայ ապաւինինք, ամէնէն առաջ մենք պէտք է ճանչնանք մեր կառավարութիւնը:

Պ. Վարանդեան. Այդ դիմումը թէեւ պիտի կատարուէր, բայց կատարուած չէ տակաւին:

Պ. Տամատեան. Ցաւ կը յայտնեմ դիմումը կատարուած չըլլալուն համար:

Պ. Խաչատուրեան. Միջագետք եւ Եգիպտոս ոյժեր ունինք եւ կրնանք մենք իսկ գրաւել մեր երկիրը առանց օտարներէն օգնութիւն սպասելու, պայմանով, որ անոնց տրուին զէնք եւ պաշար:

(Պ. Ֆնտգլեան հեռագիր մը կարդաց այս միջոցին՝ թարգմանութիւնը Բրօֆ. Խաչատուրեանի տեղեկագրութեան մաս կազմող ծրագրի մը Սիրաքուզայի հայ կամաւորներուն խնդրին վերաբերեալ):

Պ. Նախագահ. Ժողովը կը յիշէ, որ վերջերս Սիւրիոյ եւ Կիլիկիոյ մէջ պատահած դէպքերուն առթիւ որոշուած էր, որ դիմում ըլլայ տէրութեանց մօտ՝ յիշատակելով մեր զգացած ցաւը պատահած դէպքերուն համար, եւ խնդրելով, որ միջոցներ ձեռք առնուին: Տեղեկագիրը պատրաստուեր եւ ժամադրութիւն ուզուեր է: Բայց ամերիկացիք՝ նախագահ Ուիլսընի վերադարձին առթիւ խնդիրը փութացնելով խորհուրդ տուին, որ այս մասին պաշտօնական դիմումներ չըլլան, նկատել տալով Պատուիրակութեան, որ այդպիսի դիմում մը դիւանագիտական պիտի չըլլար այս

միջոցին: Այս մասին Վսեմ. Պօղոս Փաշան եւ Պ. Ահարոնեան համակարծիք են, որ այդ դիմումը չկատարուի:

Պ. Չօպանեան. Հակառակ դիմումը պաշտօնապէս կատարուած չըլլալուն, կը կարծեմ, որ մեր կողմէն այդպիսի դիմում մը ընելու առաջարկն արդէն իր ազդեցութիւնը ունեցած է:

Պ. Տամատեան. Արդեօք կրնա՞նք այդպէս հասկնալ, որ հակառակ պաշտօնական դիմում չըլլալուն, նորէն միջոցներ ձեռք պիտի առնուին ապահովութեան տեսակէտով:

Պ. Բարսեղեան. (Դիւանին հարցնելով) Գրաւման մասին խօսք կա՞ր այդ դիմումին մէջ:

Պ. Նախագահը կը պատասխանէ այո՛:

Պ. Բարսեղեան՝ շարունակելով. Պատուիրակութիւնը պատրաստ էր նախապէս տրուած որոշումը գործադրել, եւ եթէ չէ գործադրած՝ պէտք էր Ժողովին բացատրութիւն տար այդ մասին:

Պ. Հինդլեան. Այս ժողովը վեհապետական իրաւունքներ ունի: Միանգամ ընդ միշտ պէտք է հասկցուի, որ Պատուիրակութիւնը պարտաւոր է գալ այստեղ եւ բացատրութիւններ տալ, հակառակ պարագային աւելորդ է Համագումարին գոյութիւնը:

Պ. Միքայէլեան. Աւելորդ է եւ ժամավաճառութիւն է իրաւասութեան եւ փոխյարաբերութեան հարց ստեղծել այստեղ:

Պ. Հինդլեան. Կը պնդեմ իմ առաջարկիս վրայ:

Պ. Գ. Յակոբեան. Կ'առաջարկեմ քուէի դնել Պ. Հինդլեանին առաջարկը: Մեր ազգ. շահերը չեն ներեր, որ ամէն խնդիր այստեղ բերենք:

Ժամը 8 ½-ը ըլլալով, ժողովը վերջացնելու որոշում տրուեցաւ:

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 27, թթ. 1-4: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ 20-րդ

18 Մարտ 1919.

Նիստը բացուեցաւ Վսեմ. Գ. Նորատունկեանի նախագահութեամբ եւ 28 ժողովականներու ներկայութեամբ:

Նախքան օրակարգի անցնիլը Պ. Նախագահը տեղեկութիւն կու տայ Պոնտոսի խնդրին առթիւ: Այս առտու յունաց լօքում թէնէնս Պատրիարքը այցելութիւն տուած ըլլալով Վսեմ. Պօղոս Նուպար Փաշայի, ի մէջ այլոց ըսած է, թէ յոյները չեն ուզեր հայերուն դրօշակին տակ մտնել, յոյները կ'ակնկալեն, որ Իզմիրի, Պոլիսի եւ այլնի հայերը հանդէպ յոյներուն նպաստաւոր դիրք մը բռնեն: Ասոր համար մեր մեմորանտումին մէջ Տրապիզոնի նահանգին կէսէն աւելին ուզած ենք, ուր 3-4 հարիւր հազար յոյները չեն ուզեր հայերուն դրօշակին տակ ըլլալ եւ առանձին ինքնավար կազմակերպութիւն մը կ'ուզեն ունենալ, որուն համար նոյնիսկ իրենց կարգ մը հրոսախումբերն ասդին-անդին սկսած են գործել: Միւս կողմէ՝ Պոնտոսէն ներկայացուցիչներ եկած են եւ կ'ուզեն բանակցիլ մեզի հետ: Ուղղակի ինծի ալ դիմած են իրենց խնդրոյն միջնորդը ըլլալու իբր յունաց վաղեմի բարեկամ: Ես ցոյց տուի իրենց ծրագրին դժուարութիւնները եւ անկարելիութիւնը, առարկելով, որ Տրապիզոնի նահանգին ¾ բնակչութիւնը իսլամ է եւ իրենք հազիւ ¼-ը կը կազմեն, որով ըստ ուիլսոնեան սկզբանց՝ այդ երկիրը չը կրնար տրուիլ յունաց: Աւելի լաւ է յարմարութեան գալ հայոց հետ ու չխառնել խնդիրը: Իրենք առաջարկեցին փոխադարձաբար 5-ական հոգի ընտրել ու բանակցութեան մտնալ:

Պ. Թէրզիպաշեան իբրեւ տեղեկութիւն կ'ըսէ, որ Տրապիզոնի նահանգին մէջ մէկ միլիոն երկու հարիւր հազար բնակչութիւն կայ, եւ հարց կու տայ, թէ յոյները ի՞նչ գետնի վրայ կ'ուզեն տանիլ բանակցութիւնները:

Նախագահ. Դեռ իրենք ալ որոշ չեն արտայայտուիր. յանձնարարեցի, որ թուղթի վրայ գրեն իրենց մտածումը:

Պ. Չօպանեան իր՝ յոյն խմբագիր Լամպետեսի հետ ունեցած տեսակցութիւնը կը պարզէ, ուրկէ կ'իմացուի, որ անոնք մեզի դէմ ցոյցեր իսկ ընելու տրամադրութիւններ ունին՝ մեզ էմբեռիալիսթ եւայլն հռչակելով: Պ. Լամպետես այն կարծիքէն եղած է, որ պէտք է անուշութեամբ համոզել եւ հասկցնել այդ մարդոց, որ հայերն իրենց բոլոր իրաւունքները պիտի յարգեն իբրեւ ինքնավար ցեղ եւ այլն:

Օրակարգ. Տիրէքթիւներ

Տիրէքթիւները մշակող Յանձնախումբին տեղեկաբեր Պ. Չօպանեան կը կարդայ իրենց աշխատութիւնը: Կ'որոշուի մէկիկ-մէկիկ կարդալ յօդուածները եւ անցընել մեծամասնութեամբ: Բայց քննութիւնը կը յետաձգուի՝ որպէսզի տպուի եւ ամէն ժողովական իր ձեռք ունենայ հատ մը:

Պ. Յակոբեան եւ Քէլէկեան առողջական պատճառներով մեկներ են, ու ստիպուած ըլլալով՝ ժողովը կ'ընդունի, որ անոնք իրենց քուէները յանձնեն Ամեն. Դուրեան Սրբազանին, նոր Պատուիրակութիւն ընտրելու համար որոշուած յատուկ եղանակով մը պահարաններու մէջ ձգելով իրենց ձայները:

Պ. Տամատեան կ'առաջարկէ, որ Համագումարն իր նիստերէն մէկուն մէջ նկատի առնէ ընդհանուր ազգային համերաշխութիւնը անխախտ պահելու խնդիրը եւ այդ մասին կարգադրութիւն մը ընէ:

Պ. Քէլէկեան խան կ'առաջարկէ, որ հողեր գնուին Հայաստանի մէջ եւ ձրի բաժնուին ժողովուրդին, որպէսզի տարագիրները հրապուրուին եւ Երկիր դառնան:

Պ. Նախագահը կ'ըսէ, որ ժողովոյ օրակարգը տիրէքթիւներու խնդիրն է միայն:

Ժողովը վերջացաւ ժամը 8-ին:

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 27, թթ. 5-6: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ 21-րդ

19 Մարտ 1919.

Նիստը բացուեցաւ Վսեմ. Գ. Նորատունկեանի նախագահութեամբ եւ 30 ժողովականներու ներկայութեամբ:

Օրակարգ. Ելեւմտից Յանձնաժողովին բերած աշխատութեան ընթերցումը

Օրակարգին անցնելէ առաջ, Նախագահը տեղեկութիւններ կու տայ իրենց ըրած մէկ դիմումին առթիւ: Այս առաւօտ ժողովին Նախագահը, Հայկական Հանրապետութեան Պատուիրակութեան Նախագահը, Ամենապատիւ Դուրեան Սրբազան եւ Ազգային Պատուիրակութեան Նախագահը այցելութիւն մը տուին ֆրանսական արտաքին գործոց նախարար Պ. Բիշոնին, որ իրենց ներկայացուցած խնդիրներուն հանդէպ համակրութեամբ կը վերաբերի: Դիմումին գլխաւոր շարժառիթը, որ Ատանայի մէջ տեղի ունեցած ցաւալի դէպքերն էին, ինքնին փակուած կը նկատուի այն երկու նամակներով, որ Պատուիրակութեան Նախագահը ստացած է ֆրանսական կառավարութեան կողմէ եւ որոնք կը յայտնեն, թէ ալ խռովութիւնները վերջ գտած են եւ կարգ-կանոն հաստատուած ըլլալով, կարելի է ապահով ըլլալ, որ

ուրիշ անգամ այսպիսի բաներ ալ չպիտի պատահին: Բաւարար բացատրութիւն կը տրուի նաեւ այն խնդրոյն մասին, թէ ինչո՞ւ Ալճերիոյ մէջ գտնուած զինուորները աւելի շատ դրամ կը ստանան, քան թէ Ատանայի ֆրանսական հայ կամաւորները: Իբր երրորդ խնդիր, Բիշոնի այցելուները շատ կը ծանրանան Կովկասի այժմեան ճգնաժամային վիճակին վրայ, պարտաւորման հնարաւորութիւն մը ստեղծելու համար: Բիշոն կը պատասխանէ, որ այն կողմերը այդ խնդիրներով գլխաւորաբար անգլիացիք է, որ կը զբաղին, հետեւաբար անոնց է, որ աւելի պիտի դիմուի, իսկ ինք իր ձեռքէն եկածը պիտի ընէ, որուն համար նօթ մը կը խնդրէ, յայտնող այս խնդրին առթիւ մեր պահանջները: Նախագահը կը յայտնէ նաեւ, որ անգլիական ինչպէս ամերիկեան կառավարութեանց կողմէ այս մասին միջոցներ ձեռք առնուած են, որոնց ղրկած պարէնը դեռ տեղը չէ հասած: Նախագահը կը խնդրէ Պատուիրակութենէն, որ այս խնդիրը միշտ իր զբաղման առարկայ ընէ եւ ո՛չ մէկ րոպէ անտեսուի այդ խնդիրը:

Պ. Փափազեան կ'առաջարկէ, որ նոյն այդ կազմով դիմում կատարուի անգլիական եւ ամերիկեան կառավարութեանց ներկայացուցիչներուն մօտ:

Պ. Ահարոնեան կը յայտնէ, որ արդէն իրենք մտադիր են այդ դիմումն ընելու: Վսեմ. Մեծապատիւ Նուպար Փաշա կը տեղեկացնէ, որ վաղն ինք ժամադրութիւն մը ունի գեներալ Ալլէնպիի հետ, որ պիտի կարողանայ, կը յուսայ, բաւական գործերը դիւրացնել, այնպէս որ կ'առաջարկէ ինք, այդ դիմումներուն մասին մտածել, իր ունենալիք տեսակցութենէն յետոյ, կը յայտնէ նաեւ որ իրենք ունկնդրութիւն խնդրած են արդէն յիշեալ կառավարութիւններէն, սակայն դեռ պատասխան չեն ստացած, դարձեալ կարելի է նոր դիմում մը ընել,- կ'աւելցնէ:

Պ. Տէր-Ստեփանեանի տեսակցութիւնը Լէօն Պուրժուային հետ

Այսօր Ligue des Nations-ի Յանձնախումբին մէջ Ֆրանսան ներկայացնող Պ. Leon Bourgeois-ի հետ տեսակցութիւն մը ունեցայ, որուն մասին օգտակար կը նկատեմ ժողովին տեղեկութիւն տալ, թէեւ ըսեմ այս որպէսզի թիւրիմացութիւն չ'ըլլայ՝ անոր ներկայացած էի իբր պարզ անհատ, Luzzatti-ի յայտարարութեամբ եւ նամակով: Իմ հարցումիս, թէ ինչպէ՞ս պէտք է մեկնել Ligue des Nationsի statut եւ mandat etc-սիսթէմին վերաբերող 19-րդ յօդուածը, պատասխանեց, որ այդ յօդուածը Conseil des Dix ինքն իսկ պատրաստած եւ յանձնած է Յանձնախումբին, որ հազիւ կարողացեր է տեսքի բարեփոխում մը ներմուծել: Հայաստանը բնաւ չի կրնար շփոթուիլ Ափրիկէի ցեղերուն հետ, ան nation majeure մ'է, ունենալով ինչպէս սուրիացիները, մերինին բարձրութեան հասնող քաղաքակրթութիւն մը:

Ես բացատրուեցէն իմ տպաւորութիւնս եղաւ, որ Յանձախումբին ներմուծած բարեփոխումը կը վերաբերի mandat-ի ենթակայ ազգերու երեք դասակարգի բաժանումին: Յոյս յայտնեց, որ կարելի ըլլայ նոր բարեփոխում մը ընել՝ ըստ իրեն՝ mandataire պետութեան դերը նուազացում պէտք չէ նշանակէ: Հայաստանի ներքին անկախութեան տպաւորութիւն ունեցայ, ուրեմն, որ իր մաղթած բարեփոխումներն այդ նկարագիրն ունէին: Խօսեցայ Հայաստանի ցեղային խնդրին մասին, բացատրելով, թէ ինչպէս Հայաստանի ցեղային խառնուրդն արդիւնքն իսկ է Հայաստանի գլխաւորապէս այս վերջին յիսուն տարիներուն կրած ճնշումին եւ թէ ինչպէս այդ արդիւնքին վրայ կարելի չէ հիմնել պատճառին դարմանումը: Հարցուցի յետոյ, թէ ինչպէ՞ս պիտի նկատէր ինք վաղուան Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ հայ եւ թիւրք բնակչութեան փոխանակութիւնը, ըսելով, որ այդ երկու ցեղերուն միասին ապրելուն դէմ կայ ֆիզիկական եւ բարոյական անկարելիութիւն մը, մէկը միւսին դահիճը ըլլալով: Պ. Bourgeois պատասխանեց, որ թէեւ անմիջապէս վերջնական պատասխան մը, բնականաբար, իրեն կարելի չէր տալ, սակայն փոխանակութիւնն իրեն կը թուէր, առաջին քննութեամբ, ամէնէն տրամաբանական եւ գործնական միջոցը: Ըսաւ, որ ինք կ'ուզէ զբաղիլ այդ խնդրով ու խնդրեց ինձմէ, որ իրեն note մը ներկայացնեմ ցեղային

հարցին այդօրինակ լուծումին մասին, փափաք յայտնելով, որ կրկին տեսնուինք այդ խնդրին մասին խորհրդակցելու համար:

Համագումարին կը մնայ որոշել, թէ այս աշխատութիւնը ինչպէ՞ս յառաջ տարուի. իմ կողմէ անհատապէս՝ լաւագոյն է, որ ան Պատուիրակութեան յանձնուի:

Պ. Վարանդեան դիտել կու տայ, թէ 3 այլ մարդիկ դիմում ըրած են տեսնուելու համար Leon Bourgeois-ի հետ. ասիկա կրնայ ձանձրացնել այդ զբաղուած մարդերը. կ'առաջարկէ խորհրդակցաբար ընել այդ տեսակցութիւնները:

Տոքթ. Օհանջանեանը ո՛չ մէկ անպատեհութիւն կը տեսնայ շատ մը հայերու մէկ բարձր անձնաւորութեան մը հետ տեսակցելուն մէջ: Միայն թէ մեր հարցի շուրջ հակասական մտքեր չյայտնելու համար լաւ է, որ իրենց խօսելիքին վրայ նախ իրենք խորհրդակցին:

Պ. Թէրզիպաշեան կ'ուզէ վնասուց հատուցման խնդրոյն մասին իր մէկ պատրաստած ծրագրի յաւելուածական մասը Ժողովի կարծիքին ենթարկել: Ժողովը կը մերժէ լսել, առաջարկելով, որ նման աշխատանքներ Յանձնաժողովին կողմէն գան:

Ելեւմտից Յանձնաժողովին կողմէ Պ. Տէրպէտէրեան կը կարդայ իրենց աշխատանքին արդիւնքը, եւ կը յայտնէ միանգամայն, թէ Պատուիրակութեան բռնած 4 տարուան տոմարները կատարեալ վիճակի մէջ գտնուած են եւ կարդաց Յանձնախումբին բերած ելեւմտացոյցի քննութեան տեղեկագիրը:

Պ. Տէրվիշեան կը գտնայ, որ նշանակուած գումարները բոլորովին անբաւական են այդ հսկայական պահանջներուն գոհացում տալու համար եւ կ'առաջարկէ, որ Վսեմ. Պօղոս Փաշահի եւ միւս նախագահներուն կողմէ հեռագիրներ տրուին ամէն կողմ՝ դրամ ժողուելու համար, եւ կը յայտնէ, որ ինք բոլորովին վստահ է, որ շատ աւելի մեծ գումարներ կարելի պիտի ըլլայ ձեռք ձգել: Կ'առաջարկէ նաեւ, զինուորական եւ վերականգման ծախսերը բաժնելով՝ դիմում մը ըլլայ Ուիլսոնին՝ միայն վերաշինութեան համար օգնութիւն խնդրելու: Պ. Տէրվիշեան վստահ է նոյնպէս, որ Ուիլսոն երբ Պելճիքայի վերաշինութեան համար 10 միլիոն տոլար տուած է, նոյնքան մըն ալ մեզի պիտի տայ:

Պ. Ահարոնեան կը գտնայ, որ ներքին կամ արտաքին փոխառութիւնները երբեւէ պիտի ըլլան, բայց այժմ աշխատանքի կարօտ են եւ դժուար: Հայը դեռ շատ դրամ ունի իր ծոցը եւ այս գերագոյն րոպէին իւրաքանչիւր մարդ բռնադատուած է իր գերագոյն չափովը օգնելու: Եւ այդ օգնութիւնը հանելը այս Ժողովին գործն է, որ շատ բան կրնայ կատարել: Պ. Ահարոնեան ցոյց կու տայ, թէ ինչպէ՞ս հարուստները թերացած են իրենց պարտականութեան մէջ եւ ինչպէ՞ս հասարակ ժողովուրդն իր կարողութենէն շատ աւելիովը կատարած է իր պարտքը. ցոյց կու տայ նաեւ, թէ ինչպէ՞ս Կովկասի մէջ բարոյական եւ նոյնիսկ բռնի հարկադրութիւններով, ահագին գումար հանած են հարուստներէն: Արդ, կ'առաջարկէ փոխառութիւններէ առաջ, օտարներէն ուզելէ առաջ, որպէսզի անոնց քով երես ունենանք, այս Ժողովը կոչեր ընելով, մարդիկ ղրկելով գաղութները, բարոյական բռնադատութիւններով սկսիլ մեծ հանգանականութիւն մը: Պ. Ահարոնեան վստահ է, որ այս Ժողովը հսկայական գումար պիտի կարողանայ ձեռք ձգել՝ որոշելով, որ իւրաքանչիւր համայնք այսքան գումար պիտի վճարէ իբր ազգային տուրք, ո՛չ թէ փոխառութիւն եւ թէ այդ համայնքին կը մնայ բարոյական միջոցներով կամ ինչպէս որ կ'ուզեն՝ իրականացնել Ժողովին կողմէ նշանակուած գումարը:

Պ. Ֆնտգլեան համակիր է Պ. Ահարոնեանին եւ կը մերժէ տոկոսով դրամ փոխ ուզելու սիսթէմը եւ թէ ինքը այս մտքով տարակարծիք եղած է Յանձնաժողովին մեծամասնութեան հետ, ցոյց տալով, որ հարուստները կարծուածին չափ անտարբեր չեն, թէ անոնցմէ կարելի է ահագին գումարներ առնել եթէ հանգանակութիւնը մրցակցութեան եւ պատուոյ խնդիր դարձուի: Իւրաքանչիւր հայ գաղութի պէտք է առ այս պատգամաւորներ ղրկել, որ պէտք եղած եռանդն արծածեն:

Պ. Միքայէլեան նոյն միտքը կը յայտնէ, որ Ամերիկա ալ միշտ բանուորութիւնն է որ իր պարտքը կատարած է, թէ այնտեղի հարուստները չեն ուզած ազգային մարմիններուն տալ իրենց օգնութիւնը: Պ. Միքայէլեան ցոյց տալով, որ ինչ մեծ հարստութիւն կայ Ամերիկայի հայութեան մէջ, ինքն ալ կ'առաջարկէ մեծ կոչեր ուղղել, այս Համագումարին, Ազգային Պատուիրակութեան եւ Կովկասի Հանրապետութեան կողմէ եւ ամէն բարոյական միջոցներու դիմել հարուստներուն իրենց պարտքը կատարել տալու համար: Այսպէս կարելի է անոնց սպառնալ, որ Հայաստանի մտնելու ժամանակ սահմանագլուխին վրայ իրենց պարտքը չվճարած թոյլ չպիտի տրուի ներս մտնալ եւ Հայաստանի քաղաքացիական իրաւունք վայելել:

Պ. Օհանջանեան. Այս ժողովը ինք պիտի սկսի զոհաբերութեան օրինակ տալ: Այն ցոյց կու տայ, թէ Յանձնաժողովին կազմած պիւտճէն շատ խղճուկ պիւտճէ մըն է, բարեգործական ընկերութեան յատուկ: Մինչդեռ մենք կը գտնուինք փոխանցման շրջանի մը մէջ ազգութենէ դէպի պետութիւնը, հետեւաբար՝ մեր կատարած գործն ալ պէտք է այս փոխանցման շրջանին համապատասխան ըլլայ եւ մեր պիւտճէն ձգտի դէպի պետական պիւտճէի համեմատութիւնները: Ցոյց կու տայ իբր օրինակ առողջապահական խնդրոյն մասին եղած ծրագրին վերին աստիճանի անբաւարար եւ խեղճ ըլլալը եւ կ'առաջարկէ որոշել վճարել իւրաքանչիւր հայու իր ունեցած կարողութեան որոշ սակը: Իսկ իբրեւ միջոց կ'առաջարկէ նոյն բարոյական պարտականութիւնները եւ հակառակ է Պ. Միքայէլեանի առաջարկին՝ յանձնել սահմանին վրայ հարուստներուն պարտքը, որովհետեւ ասիկա կրնայ պատճառ մը ըլլալ ներգաղթը նուազեցնելու եւ ատոր տեղ կ'առաջարկէ գրաւել Հայաստանի մէջ հարուստներուն ունեցած կալուածքը:

Պ. Չօպանեան կ'առաջարկէ ուրեմն ճոխացնել Յանձնաժողովը եւ քանի մը օր եւս տալ անոր, որ այս հողին վրայ կատարէ իր աշխատանքները, եւ վստահ, որ այս Ժողովին, Կովկասի պատուիրակներու եւ Վսեմ. Պօղոս Նուպարի կողմէ կատարուած հանդիսաւոր կոչ մը հայութենէն ահագին գումար պիտի հանէ:

Պ . Մաթիկեան կը կարծէ, որ հեռագիրները եւ կոչերը միայն բաւական չեն եւ կ'առաջարկէ երկու բան՝ նախ ճանչնալ հայկական միացեալ կառավարութիւնը եւ հռչակել ու անոր անունով ազատութեան փոխառութեան տոմսեր հանել եւ, յետոյ՝ սիրուած ազգային դէմքեր ղրկել, որ իրենք իսկ գլուխը կենան հանգանակութեան: Այսպիսով Պ. Մաթիկեան վստահ է, որ 25 միլիոնը միայն Ամերիկայէն կ'ելլէ:

Պ. Թէրզիպաշեան կը գտնայ, որ Յանձնաժողովը լաւ կատարած է իր պարտքը, որովհետեւ այդ միայն յանձնարարուած էր իրեն, իսկ ինք հակառակ է այժմէն իսկ բարոյական ճնշումի միջոցներու գործադրութեան, որովհետեւ դիտել կու տայ՝ մենք դեռ մեր պարտքը բաւական չենք կատարած սովորական միջոցներով հարուստներէն դրամ առնելու համար: Կ'առաջարկէ նախ ուշադրութիւն դարձնել հարուստներէն դրամ առնելու համար բրոբականտի, անոնց փառասիրութիւնը շոյելու միջոցներուն:

Պ. Փաստրմաճեան ծախսերը քանի մը մասի կը բաժնէ. այն, որ Պատուիրակութիւնը պիտի ընէ՝ անոր համար 25 միլիոնը բաւական է, իսկ մնացեալ մեծ գործերը պէտք է միացեալ կառավարութեան հռչակումէն յետոյ ընել, եւ, այդ պարագային, վստահ որ Ուիլսոն շատ սիրով վերաշինութեան համար մեծ գումար նուէր կու տայ, նկատի առնելով անտէրութիւնը, որ ես տեսայ Կովկասի հայ կամաւորներուն զէնք ղրկելու համար դրամ հայթայթել ուզած ատենս: Ներքին փոխառութիւններն ալ պէտք է կատարել միացեալ կառավարութենէն յետոյ, եւ զգացմանց խնդիրներու անունով, օրինակ՝ որբերու եւ այլնի, եւ շատ չնչին տոկոսով:

Տոքթ. Սայեան ալ այն կարծիքին է, որ ներքին փոխառութիւնը պէտք է Հայկական միացեալ կառավարութեան հռչակումէն յետոյ ընել, իսկ անմիջական ծախսերու համար պէտք է Պատուիրակութիւնը դիմէ ժողովուրդին եւ անիկա միշտ իր պարտքը կատարած է, պիտի կատարէ մեծ վստահութիւն ունենալով Պատուիրակութեան վրայ: Հարուստներուն համար նոյն բարոյական միջոցները

կ'առաջարկէ, իսկ արտաքին փոխառութիւնը պէտք է ընել, կ'ըսէ, Կովկասի Հանրապետութեան անունով եւ ամերիկեան կառավարութենէն: Ատիկա պատճառ մը կ'ըլլայ միեւնոյն ատեն, որ ասիսթանսի խնդրոյն մօտենանք: Պ. Չօպանեան, որ 10 րոպէէ ի վեր Պ. Նորատունկեանի գործով մեկնած ըլլալուն ինք կը կառավարէր նիստը, կ'ամփոփէ բոլորը, ըսելով որ ժողովականները բոլորն ալ համաձայն են ընդհանուր սկզբունքին վրայ: Արդ, կ'որոշէ հին Յանձնաժողովին վրայ աւելցնել նաեւ Պ. Պ. Փաստրմաճեան, Մաթիկեան որպէսզի Պ. Պ. Ահարոնեանի եւ Օհանջանեանի հետ խորհրդակցաբար խնդիրը այս հողին վրայ մշակեն եւ բերեն Ժողովին:

Նիստը ժամը 8 ½-ին վերջացաւ:

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 27, թթ. 7-12: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ 22-րդ

20 Մարտ 1919.

Օրակարգ. Տիրէքթիւներու Յանձնաժողովին բերած ծրագրին վիճաբանութիւնը

Նիստը բացուեցաւ Բրօֆ. Ա. Տէր-Յակոբեանի նախագահութեամբ եւ 20 անդամներու ներկայութեամբ: Ամենապատիւ Դուրեան Սրբազան տեղեկութիւն տուաւ իր, Վսեմ. Նորատունկեանի եւ Պօղոս Փաշայի նոյն օրն իսկ Լորտ Հարտինկի հետ ունեցած տեսակցութեան մասին: Մեր պատուիրակներն անգլիական կառավարութեան ներկայացուցիչին պարզած են Ատանայի եւ Տիարպէքիրի մէջ կատարուած դէպքերը, Կովկասի սովաբեկ վիճակը եւ պարէնի պահանջներ ներկայացուցած են: Լորտ Հարտինկ պատասխանած է, որ ամէն ինչ պիտի կարգադրուի, միայն թէ ժամանակի կարօտ է: Կարծիք կը յայտնուի, որ Պ. Բիշոնի տրուելիք նօթերը տրուին նաեւ անգլիական եւ ամերիկեան կառավարութեանց: Բրօֆ. Խաչատուրեան կ'առաջարկէ այդ գիրին մէջ աւելցնել նաեւ հայ երիտասարդներու կամաւոր դառնալու համար դիւրութիւն տալու եւ արդէն իսկ անգլիացւոց ձեռքին տակ մարզուած հայ զօրքերու ընկերակցութեամբ ժողովուրդին տէր դառնալու խնդիրները: Պ. Օհանջանեան կ'առաջարկէ նաեւ աւելցնել թրքական կառավարութեան Հայաստանէ հեռացման, իսկ Տոքթ. Սայեան քանի մը գլխաւոր դաշտերու մէջ ցանքսի դիւրութեան խնդիրները: Պ. Ֆնտգլեան կը տեղեկացնէ Ժողովին Միս Ռապինսոնէն հասած նամակի մը պարունակութիւնը, որմէ կը հասկցուի, թէ անգլիական կառավարութեան կողմէ ուղղակի արգելք դրուած է Կովկաս դրամ ղրկելու դէմ, իբրեւ թշնամիէն գրաւուած երկիր, եւ կ'առաջարկէ դիմումներով վերջ տալ այս կացութեան եւ կամ գոնէ կարգադրել, որ անգլիական կառավարութիւնը ինքը ղրկէ դրամը, քանի որ զանազան տեղերէ այնքան մարդիկ կան, որ դրամ ղրկել կ'ուզեն: Պ. Չօպանեան շատ մեծ կարեւորութիւն կու տայ այս խնդրին եւ կը պահանջէ որ նօթիսի մէջ անպատճառ յիշուի նաեւ այս խնդիրը, զայն նկատելով թէ՛ քաղաքական եւ թէ՛ տնտեսական տեսակէտներով անմիջական անհրաժեշտութիւն ունեցող գործ մը:

Պ. Տամատեան Ժողովին ուշադրութիւնը կը հրաւիրէ այն կէտին վրայ, որ Պատուիրակութիւնը պատասխան ստացած է իր այն գիրին, որով տեսակցութիւն մը խնդրուած էր անգլիական եւ ամերիկեան կառավարութիւններէն, մինչդեռ ասկէ շաբաթ մը առաջ մեզի կ'ըսուէր, որ այդ կառավարութիւնները անպաշտօնօրէն տեղեկանալով տեսակցութեան պատճառներուն՝ բարեկամաբար խորհուրդ տուած էին չտալ մեր տալիք նօթը եւ հիմա իրե՛նք է, որ կ'ուզեն այդ նօթը: Ասիկա, կըսէ, հակասութիւն մըն է, զոր չեմ հասկնար, կ'երեւի բաներ մը կան, որոնք յարմար չնկատուիր մեզի ըսել: Ես ուրիշ կէտի մը շուրջ իմ խորին ցաւս պիտի յայտնեմ՝ որ Հայկական Դատի այսօրուայ վարիչները նոյն հին ստրկական լեզուն կը գործածեն

օտար կառավարութիւններու ներկայացուցիչներու հետ, մեր այնքան զոհերէն եւ զոհողութիւններէն վերջ: Կ'առաջարկէ, որ գոնէ այս նօթիսը աւելի արի եւ ուժեղ լեզուով գրուի:

Դրամ ղրկելու արգելքի մասին ուրիշներ ալ կը խօսին եւ յոյս կը յայտնեն, որ մասնաւոր դիմումով մը կարելի պիտի ըլլայ այդ խնդիրը կարգադրել:

Պ. Փափազեան կ'առաջարկէ երկու նօթիս պատրաստել, որոնցմէ մէկուն մէջ միայն գործնական միջոցներ առաջարկուին պարենաւորման եւ այլն խնդիրներու մասին, իսկ միւսը աւելի խնամքով պատրաստուած, մեր պահանջները պարունակէ:

Պ. Չօպանեան եւս այն կարծիքին է, որ Կովկասի մէջ տիրող սովի խնդիրը պէտք է առանձին հարց մ'ընել, որու համար ինք առաջարկած է Պատ. Նախագահին անմիջապէս տեսակցիլ Պ. Ուիլսոնին հետ: Պ. Չօպանեան այդ մասին իր պատրաստած մէկ փոքրիկ էքսբոզէն՝ ուր բացատրուած են Կովկասի վիճակը, վրացոց պոյքոթը հայերուն դէմ, դրամ ղրկելու արգելքն ու դարմանները՝ կը կարդայ Ժողովին, աւելցնելով, որ յետոյ expos´e-ն Պատ. Նախագահին պիտի յանձնուի, որպէսզի անկէ օգտուի իր տալիք նօթին մէջ:

Աղաթօն Պէյ կ'առաջարկէ գործնական միջոցներուն մէջ առաջարկել նաեւ, որ Քուպանի ցորենները Կովկաս փոխադրելու մասին միջոցներ գործադրուին:

Տոքթ. Սայեան կը յիշէ, որ կառավարութիւններու անպաշտօնօրէն տրուած նօթը ժողովը չէ տեսած եւ կ'առաջակէ շատ բաներ չուզել, որովհետեւ մեզի չպիտի լսեն, իսկ եթէ պիտի լսեն, դրամի փոխադրութեան միջոցներու նման ճղճիմ բաներ չէ, որ պիտի պահանջենք, այլ դրամը, հացն է, որ պիտի ուզենք երկիրը սովէ փրկելու համար, երկիրն է, հողն է, որ կ'ուզենք՝ ժողովուրդը բնակեցնելու եւ գալ տարուայ համար ցանք սկսելու համար: Իսկ այժմ, կ'ըսէ Տոքթ. Սայեան, աւելի լաւ է անցնինք օրակարգին՝ լսելով Պատուիրակութեան, որ մեր վարած կռիւը իրաւունք կու տայ մեզի աւելի լաւ պայքար մղելու քաղաքական հողի վրայ:

Պ. Ահարոնեան սխալ կը գտնայ Պ. Տամատեանի այն ըսածը, որ Ժողովէն կարգ մը բաներ կը պահուին: Ընդհակառակը, կ'աւելցնէ, շատ բաներ կան, որ դուք գիտէք եւ ես չեմ գիտեր: Կը յայտնէ նաեւ, որ Պ. Բիշոնի հետ իրենց ունեցած տեսակցութենէն յետոյ, արդէն ինք նօթիս մը պատրաստած է, որ շուտով կը տրուի եւ պէտք եղած հետապնդումն ալ կը կատարուի, այնպէս, որ Ժողովը ասով զբաղուելու պէտք չունի եւ աւելի լաւ է օրակարգի անցնիլ:

Տոքթ. Տէր-Ստեփանեան. Այս բոլոր պէտքերը այնքան աչք ծակող են, որ Պատուիրակութիւնը եթէ կրնայ բան մը ընել, առանց մեր թելադրութիւններուն ալ կրնայ կատարել: Բայց ես մէկ բան կ'ուզէի ըսել, սա՝ որ մեր շարունակուող մարտիրոսագրութիւնը վերջերս երբեք արձագանգ չի գտներ մամուլին մէջ, այնպէս որ թերթերու մէջ եթէ ազդու կոչ մը հրատարակել տանք, թերեւս Պատուիրակութիւնը հանրային կարծիքին վրայ հիմնուելով աւելի լաւ կարողանայ ընել իր պահանջները:

Պ. Նախագահը կը փակէ այս խնդիրը՝ օգտակար նկատելով խօսուածները, որոնք պիտի յայտնուին Պատուիրակութեան:

Պ. Տամատեան իրեն լաւ ծանօթ հայ կամաւորի մը կողմէ Կիլիկիայէն գրուած նամակ մը կը կարդայ, որ կը յայտնէ Դաշնակից պետութեան մը կողմէ բռնուած թշնամական վերաբերումը հայերուն հանդէպ, եւ կը յուզէ սա գլխաւոր խնդիրը, թէ կ'ուզուի Հայկական Լեգէոնը ցրուել եւ նոր պայմաններով նոր արձանագրութիւններ կատարել: Նամակագիրը կ'առաջարկէ, որ այդ արձանագրութիւններու պայմանները կա՛մ Պատուիրակութեան կողմէ ընդունուած ըլլան եւ կա՛մ չփոփոխուի Հայկական Լեգէոնը: Այս նամակը երեւան կը բերէ հին որոշում մը, որու համեմատ՝ Պատուիրակութեան կողմէ Կիլիկիա ներկայացուցիչ մը ղրկելու անհրաժեշտութիւնը ընդունուած էր:

Մասեհեան Խան իբր բացատրութիւն կ'ըսէ, որ Տոքթ. Նեւրուզ հիւանդացած է եւ չի կրնար երթալ եւ ուրիշ յարմար անձնաւորութիւն մը կը փնտրուի: Այդ պաշտօնին

համար կ'առաջարկուի Համագումարի անդամներէն դուրսն ալ մարդ փնտրել: Միւս կողմէ կը շեշտուի այն միտքը, թէ այնտեղ՝ կառավարութիւններու ներկայացուցիչներու բռնած դիրքը բացարձակապէս կախուած է պետութեանց՝ մեզի հանդէպ տրամադրութիւններէն, այնպէս որ ով որ ալ ղրկուի՝ մեծ բան չպիտի կրնայ ընել, ինչպէս որ արդէն հոն մէկ քանի գործիչներ եղած են եւ ստիպուած են հեռանալ տեղեկացնելով այդ մասին Պատուիրակութեան: Արդ, Դաշնակից պետութեանց տրամադրութիւնները փոխել անհնարին է, քանի որ շահերն են, որ հակամարտ են հիմա,- կը շեշտէ գլխաւորաբար Պ. Վարանդեան: Կը մնայ յոյսերնիս դնել Խաղաղութեան Վեհաժողովին վրայ եւ մինչեւ այդ (անընթեռնելի) անցնիլ եւ ղրկել անմիջապէս կարեւոր ոյժեր՝ որոնք տեղեկացնեն անցած դարձածը եւ ժողովուրդին տէր դառնան: Կը յայտնուի նաեւ այն միտքը,- գլխաւորաբար Պ. Հինդլեանն է,- որ ասոնք բոլորն ալ երկրորդական միջոցներ են եւ բոլորն ալ կախուած են մէկ խնդիրէ, այն է՝ փութացնել եւ իրագործել երկրին գրաւումը, որով միայն կարելի է ամէն ինչ ընել:

Ապա Ժողովը կ'անցնի օրակարգի եւ կը սկսի մէկիկ-մէկիկ կարդացուիլ տիրէքթիւները մշակող Յանձնախումբին բերած ծրագրին յօդուածները, որոնք, քուէարկուելէ յետոյ, ժողովէն ընտրուած Պատուիրակութեան համար պարտաւորիչ պիտի նկատուին: Մեծամասնութեամբ կ'ընդունուի Ա. յօդուածի Ա. հատուածը (միացեալ Հայաստանի կառավարութեան ստեղծումը): Բ. հատուածը շատ կարեւոր խնդիր մը շօշափելուն՝ Ժողովը երկար ատեն կանգ կ'առնէ վրան եւ անոր շուրջ հետեւեալ երեք գլխաւոր միտքերը կը յայտնուին եւ առաջարկները կ'ըլլան. Ա. նկատելով, որ չափազանց կարեւոր է այդտեղ շօշափուած խնդիրը՝ պէտք է Ժողովը ինքն իսկ որոշէ անոր գործադրութեան եղանակները եւ այդ պատճառով պէտք է բոլորովին հանել տիրէքթիւներու միջէն նոյն հատուածը եւ յատուկ նիստ մը յատկացնել այդ խնդիրը քննելու համար: Բ. կ'առաջարկուի, որ ո՛չ միայն Ժողովը գործադրութեան եղանակները ինքը որոշէ, այլեւ՝ սկսի ինքն իսկ գործադրել զանոնք՝ շարունակութիւնը յանձնելով Պատուիրակութեան: Գ.-րդ խնդիրը յանձնել Յանձնաժողովի մը, որ Կովկասի պատգամաւորներու կարծիքն ու համաձայնութիւնը առնելէ յետոյ բերէ Ժողովին վերջնական ծրագիր մը: Պ. Չօպանեան, իբրեւ Յանձնաժողովի տեղեկաբեր, կը յայտնէ, թէ այս խնդիրը արդարեւ չափազանց կարեւոր ըլլալով, ինքն ալ համաձայն է, որ միեւնոյն Յանձնաժողովը մշակէ խնդիրը եւ իր եզրակացութիւնը բերէ Ժողովին: Այս առիթով հինգ բանաձեւեր կ'առաջարկուին, որոնցմէ Պ. Փափազեանի բերած հետեւեալ բանաձեւը կ'ընդունուի մեծամասնութիւնով.

«Համագումարը լսելով Ա. յօդուածի Բ. հատուածը, այդ առթիւ Հայաստանի միակ կառավարութեան անմիջական կազմակերպութիւնը համարելով իր գլխաւոր նպատակներէն մէկը, կը յանձնարարէ յատուկ յանձնաժողովի մը՝ պատրաստել հրահանգներ՝ ժամ առաջ անոր իրականացումը առաջ բերելու համար, որով երկրորդ հատուածին քննութիւնը կը վերապահէ յանձնախումբին տեղեկատուութենէն վերջ»:

Կ'որոշուի նաեւ, որ այդ աշխատանքը կատարէ նոյն Յանձնաժողովը, որուն տրուի իր վրայ մէկ քանի նոր անդամներ աւելցնելու իրաւունքը:

Նիստը փակուեցաւ ժամը 8 ½-ին:

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 27, թթ. 13-18: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ 23-րդ

21 Մարտ 1919.

Նիստը բացուեցաւ Վսեմ. Գ. Նորատունկեանի նախագահութեան տակ եւ 32 անդամներու ներկայութեամբ:

Օրակարգ. Տիրէքթիւներու վաւերացման շարունակութիւնը

Օրակարգի անցնելէ առաջ՝ Նախագահը ժողովին կը տեղեկացնէ, որ Պոնտոսի յոյն ազգաբնակչութեան ներկայացուցիչները ուզած են բանակցութեան մտնալ հայերուն հետ Տրապիզոնի նահանգի մասին եւ Պատուիրակութեան Նախագահը կը փափաքի ժողովին կարծիքը ու որոշումն ունենալ այս մասին: Այդ, Պոնտոսի ներկայացուցիչները արդէն 5 հոգի ընտրած են բանակցելու համար:

Տոքթ. Օհանջանեան իբրեւ բացատրութիւն, կ'ըսէ, որ այդ մարդոցմէ երկուքը տեսակցութիւն մը ունեցած են Հայ Հանրապետութեան պատուիրակներուն հետ եւ չափազանց խիստ ու պահանջկոտ ոճով խօսած են անոնց հետ: Վէնիզէլոսին ոչ մէկ իրաւունք կը ճանչնան իրենց մասին խօսելու եւ բացարձակ անկախութիւն կ'ուզեն ըսելով, որ Տրապիզոնի նահանգին մէջ աւելի շատ յոյն կայ, քան թէ հայ՝ ամբողջ Հայաստանի մէջ, եւ որպէսզի հայերը ծովի վրայ ելք ունենան, առաջարկած են Տրապիզոնը ազատ նաւահանգիստ դարձնել եւ Ռիզէ ու Աթենա նաւահանգիստներն ալ հայերուն: Երբեք չեն ուզած բաւականանալ ներքին ինքնավարութեամբ եւ այդ պարագային սպառնացած են ըսելով «Les fusils partiront tout seuls»: Կ'ըսուի, որ այդ մարդիկը աչքերնին ամէն ինչ առած են, եւ, հակառակ պարագային, պիտի սկսին հայերուն գործել՝ զանոնք էմբերիալիսթ եւայլն հռչակելով:

Ժողովը, յետ խորհրդակցութեան, կ'որոշէ, որ հինգ անդամներ՝ Պ. Պ. Չօպանեան, Խաչատուրեան, Փաստրմաճեան, Բրօֆ. Տէր-Յակոբեան եւ Թէրզիպաշեան, լոկ բարեկամական տեսակցութիւն մը ունենան նշանակեալ պոնտացիներու հետ՝ առանց սակայն պաշտօնական հանգամանք մը տալու այդ հանդիպումին:

Պ. Խաչատուրեան կ'ըսէ, թէ Ասորական խնդիրն ալ կը նմանի Պոնտականին. ինք տեսնուած է զարգացած ասորիի մը՝ Տոքթ. Եուսուֆի հետ, որ կ'ուզէ Ասորական Դատը պաշտպանել՝ միանալով հայերուն՝ ապահովելու համար ներքին ազգային ինքնավարութիւն մը ասուրիներուն համար:

Ապա Պ. Հանըմեան կը կարդայ Ազգային Պատուիրակութեան Եգիպտոսի Ազգային Միութենէն ստացած կարգ մը տեղեկագրերն Իսկենտերունի եւ Հալէպի մէջ պատահած դէպքերուն մասին:

Պ. Չօպանեան նորէն կը պնդէ, որ անմիջապէս մարդ ղրկուի հոն եւ կամ առնուազն Պոլիս գրուի՝ խորհուրդ տալու համար, որ գէթ այնտեղէն ներկայացուցիչ մը ղրկեն որոշ հրահանգներով: Յետոյ ամէն կողմ մեծ աղմուկ բարձրացնելու է այս խնդիրներուն շուրջ, ֆրանսերէնի թարգմանելու է գլխաւոր մասերը այդ տեղեկագիրներուն եւ ֆրանսական մամուլին մէջ հրատարակել տալու է: Ի վերջոյ Պ. Չօպանեան կ'առաջարկէ փութացնել Համագումարին աշխատանքները, որպէսզի ունենանք վերջապէս մեր իսկական Պատուիրակութիւնը, որ գլուխ կանգնի գործերուն:

Պ. Աղաթօն Պէյ կը տեղեկացնէ էմիր Ֆէյսալի այս առթիւ տուած հեռագիրներու մասին եւ ինքն ալ կ'առաջարկէ նախ մարդ ղրկել Հալէպ, ապա որոշ հատուածներ առնել այս տեղեկատուութիւններէն եւ ղրկել Դաշնակից կառավարութեանց:

Պ. Ֆնտգլեան կը զգուշացնէ Ժողովը էմիր Ֆէյսալի կեղծ ազատամտութենէն, կը յայտնէ Ֆէյսալի մեծամիտ արտայայտութիւնները եւ որեւէ եւրոպական լուծ օգնական կամ պաշտպան պետութիւն իբր տէր չհանդուրժելու հասարակ մտայնութիւնը, եւ ասկէ յետոյ, կ'ըսէ, արաբ եւ թիւրք մահմեդական տարրերը մեր դէմը պիտի միանան:

Պ. Դաւիթ-Բէկ հարց կու տայ, թէ ի՞նչ միջոց պէտք է ձեռք առնել «Մահմետական Եղբայրակցութիւն» անունով միութեան դէմ. Իթթիհատէն կը հրահանգուի ամէն տեղ եւ որը բուն իսկ կազմակերպողն է այս շարժումներուն:

Տոքթ. Սայեան կ'առաջարկէ բողոքի ձայն հանել այստեղէն եւ խնդիրը արմատէն լուծելու համար աշխատիլ երկրի գրաւման:

Պ. Նախագահը կը յայտնէ, որ Պ. Պ. Բիշոն, Ալլենպի, Լորտ Հարտինկ եւ ուրիշներ մեզ վստահեցուցած են, որ ասկէ յետոյ նման դէպքեր ալ չպիտի պատահին:

Ժողովը կ'անցնի օրակարգին, քննութեան ենթարկելով Տիրէքթիւներու 3-րդ հատուածը:

Պ. Թէրզիպաշեան աւելորդ կը համարէ զայն՝ ըսելով, որ արդէն անիկա Յիշատակագրին մէջ յիշուած է, բայց Պ. Չօպանեան կը պատասխանէ, որ հոն միայն բաղձանքի ձեւին տակ է, իսկ հոս իբր տիրէքթիւ է, որ կը տրուի Պատուիրակութեան:

Պ. Հինդլեան կ'ըսէ, թէ այս բաղձանքը անգործադրելի դարձուցած է Համագումարը, քանի որ օգնական պետութեան մը սկզբունքը քուէարկած է:

Մեծամասնութեամբ կը քուէարկուի 3-րդ հատուածը: Կ'ընդունուի նաեւ նպատակներու Ա. յօդուածը:

Բ.-ին մասին այն կարծիքները կը յայտնուին, որ այն կրնայ վնասել վար ու ցանքի, վերաշինութեան եւ այլն գործերու՝ պակսեցնելով երիտասարդ աշխատող ձեռքերը, բայց միեւնոյն ժամանակ, ապագային համար ալ չափազանց անհրաժեշտ կը նկատուի Հայկական Բանակը եւ կ'ընդունուի Բ. յօդուածը:

Իսկ Գ. յօդուածին շուրջ ոմանք այն կարծիքը կը յայտնեն, թէ՝ 1895 եւ աւելի հին թուականներ եւ այլն յիշելու չէ, միայն պատերազմի ընթացքին իսլամացածներու խօսքը ընելու է: Բայց, ասոր կ'առարկուի, որ Հայաստան ցեղեր կան, որոնք մահմետականներ դարձած հայեր են, շատ չնչին տարբերութիւն ունենալով հայկական բարքերէ եւ սովորութիւններէ եւ որոնց համար գրուած է յօդուածին այդ մասը: Կ'առաջարկուի նաեւ, թէ այդպիսի ցեղերու քրիստոնէութեան վերադարձը հայկական պետութեան գործն է, ո՛չ թէ Պատուիրակութեան: Խմբագրական փոփոխութեամբ մը կ'ընդունուի Գ. յօդուածը:

Յետոյ կ'ընդունուին Դ. Ե. Զ. եւ Է. յօդուածները որոնցմէ վերջինին Տոքթ. Սայեան ամբողջովին հակառակ կը յայտարարէ ինքզինք:

Ը. յօդուածը բոլորովին աւելորդ կը գտնեն Պ. Պ. Մասեհեան Խան եւ Միքայէլեան, իսկ Պ. Տամատեան կ'ըսէ, որ վնաս մը չկայ այդ յօդուածը մնալէն եւ դրուելուն պատճառը այն է, որ նկատուած է, թէ Պատուիրակութիւնը մինչեւ հիմա պէտք եղածին չափ սերտ յարաբերութիւն չէ մշակած, հետեւաբար ասկէ յետոյ պիտի աւելի սերտ յարաբերութեան մէջ ըլլայ: Պ. Փափազեան եւս կ'առաջարկէ, որ մնայ այդ յօդուածը, առարկելով, որ ընդհանրապէս այդ օտար յարաբերութիւնները հիմնուած են արտաքին համակրութեան եւ արտաքին պատճառներու վրայ: Կ'ընդունուի Ը. յօդուածն ալ: Կ'ընդունուի նաեւ Թ. յօդուածը՝ աւելցնելով «ասուրի եւ այլ» մասը: Կ'ընդունուին նաեւ Ժ., ԺԱ., ԺԲ., ԺԳ. յօդուածները:

Նիստը կը փակուի ժամը 7 ½– ին:

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 27, թթ. 19-23: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ 24-րդ

22 Մարտ 1919.

Նիստը բացուեցաւ ժամը 5½-ին, Վսեմ. Գ. Նորատունկեանի նախագահութեամբ եւ 29 անդամներու ներկայութեամբ:

Օրակարգ.

Ա. Նոր Պատուիրակութեան տրուելիք տիրէքթիւներուն վաւերացումը

Կը կարդացուի 14-րդ յօդուածը: Պ. Թէրզիպաշեան կ'առաջարկէ փոխել այդ յօդուածը, որովհետեւ անգամ մը ասիսթանսը ընդունուած ենք, ասիսթան պետութիւնը իր որոշ դերը եւ իրաւունքներ ունի խնամակալուած տէրութեան վրայ: Պ. Թէրզիպաշեան իր միտքը լաւ բացատրելու համար երկու այդպիսի տէրութեանց յարաբերութիւններու մասին, անչափահաս տղու մը առաջնորդելու օրինակ կը բերէ չափահաս մարդու մը կողմէ: Մինչդեռ, կ'աւելցնէ, Յանձնաժողովին մշակած յօդուածին մէջ անոր (ասիսթան պետութեան) պարզ ժանտարմերիի դերը տրուած է, որ առանց հայերու թոյլտուութեան ոչինչ ընելու իրաւունք պիտի ունենայ:

Պ. Հինդլեան գրեթէ նոյն միտքը կը շեշտէ, ըսելով, որ ասիսթանսը ընդունիլը արդէն որոշ կապանք է մեր բացարձակ անկախութեան, իսկ հիմա Յանձնաժողովը անոր իրաւունքները կը սահմանափակէ: Պ. Հինդլեան եւս ինքզինքը լաւ արտայայտելու համար, կ'ըսէ որ Յանձնաժողովը ասիսթան պետութեան միայն նպաստողի դերը տուած է, որն ամէն ինչ պիտի տայ, առանց ոչինչ ստանալու: Հիմա այդպիսի պետութիւն ես չեմ ճանչնար: Կ'առաջարկէ հիմնապէս փոխել այդ յօդուածը՝ արտայայտելով պարզ եւ որոշ կերպով, ինչպէս իր առաջարկած հետեւեալ բանաձեւին մէջ.

«Յօդուած 14-րդ. Հայ Ազգ. Պատուիրակութիւնը չպիտի կրնայ ո՛չ մէկ քաղաքական, տնտեսական, ընկերային եւ այլ ուրիշ հայ ազգը եւ Հայաստանը պարտաւորող յանձնարարութիւն ստանձնել հանդէպ ասիսթան մանտաթէր պետութեան՝ այս իրաւունքը պատկանելով միայն ազգ. սահմանադիր ժողովին»:

Բրօֆ. Թումայեան կ'առաջարկէ կարգ մը բառերու քով, աւելի որոշ ըլլալու համար, ֆրանսերէն դնելը, եւ ասիսթան պետութեան ու միւս կառավարութեանց հետ յարաբերութիւն պահելու խնդրին մասին կը հարցնէ. «Եթէ Պատուիրակութիւնը իրաւունք չ'ունենայ ասիսթան պետութեան հետ յարաբերութեան մտնելու, հապա ո՞վ պիտի կատարէ այդ դերը»:

Պ. Փափազեան Յանձնաժողովին կողմէ աս միտքը կը յայտնէ, որ մէմորանտումին մէջ մեր պահանջները առաւելագոյն չափով ներկայացնելու մէթոտին հետեւած ենք, բայց սկիզբէն արդէն խնամակալ պետութեան մեր կողմէ իրաւունքներ տրուիլը արդէն զմեզ շղթայել ըսել է, քանի որ մենք մեր քաղաքական պահանջները առաւելագոյն չափով արտայայտած ենք: Հոս ալ հետեւողական ըլլալու համար մեր պահանջները առաւելագոյն չափով դրած ենք, որուն իրականացմանը պիտի ձգտի Պատուիրակութիւնը եւ որոշ պիտի կարողանանք ապահովել մեր քաղաքական անկախութիւնը:

Տոքթ. Տէր-Ստեփանեան թէեւ համոզուած է, որ «Ligue des Nations»-ը միայնականօրէն պիտի կարենայ գոյութիւն ունենալ, հետեւաբար եւ ասիսթանսը պիտի ըլլայ սիսթէմ մը, լուծ մը, որ մեր վրայ պիտի դրուի, բայց եւ այնպէս՝ կը քուէարկէ այս յօդուածը, որպէսզի մեր բացարձակ անկախութեան ձգտումը հաստատուի:

Պ. Տամատեան դիտել տալէ յետոյ, որ մեր երկիրը բազմացեղ ժողովուրդ մը ունի, ուր հայերը չափազանց նուազած են, ըսաւ, թէ խառնացեղ վարչութիւն մը ստեղծել Հայաստանի մէջ՝ վտանգաւոր է մեզի համար, որ կը փափաքինք բացարձակ անկախութեան հասնիլ մեր երկրին մէջ: Երկիրը Հայաստան պիտի ըլլայ եւ միւսները հայկական քաղաքացի ըլլալու արժանանալէ յետոյ պիտի վայելեն քաղաքական այդ իրաւունքները:

Պ. Ֆնտգլեան կ'ուզէ, որ հոս որոշակի յայտարարուի, թէ հայ ազգը մաժէօր ազգ է ու չէ այն ժողովուրդներու կարգին մէջ, որոնք անկարող են ինքզինքին կառավարելու՝ ինչ որ ֆրանսական մամուլը կը կրկնէ: Եւ այնպէս ընել, որ Ligue des

Nations-ը պարտք դնէ մանտաթէր պետութեան վրայ՝ ամէն կերպով հայկական զօրեղ պետութիւն մը շուտով իրականացնելու նպաստել:

Պ. Փաստրմաճեան համաձայն է Պ. Տամատեանին, բայց այս ձեւը կ'առաջարկէ. «Հայաստանը վերակազմել իրապէս հայկական պետութեամբ»: Կ'առաջարկէ նաեւ, որ Ժողովը որոշէ աւելի ճիշտ բանաձեւ մը, թէ ո՞րն է Ժողովին փափաքած մանտաթէր պետութիւնը:

Պ. Թէրզիպաշեան. «Հայկական բացարձակ անկախութիւն» եթէ ըսենք՝ մեր ամբողջ բաղձանքները կը բովանդակէ, որով կը գոհացուին մեր իրաւունքները: Կ'առաջարկէ հիմնական կարեւորութիւն տալ հայերէնը պաշտօնական լեզու ընդունիլ տալու հարցին:

Պ. Չօպանեան կ'առաջարկէ, որ եղածին պէս քուէարկուի յօդուածը, որովհետեւ ասով Յանձնաժողովը նպատակ չէ ունեցեր ասիսթանսի մասին եղածը փոխելու, այլ՝ մեր հասկացողութիւնը թելադրելու Պատուիրակութեան՝ այս խնդիրներու մասին, եւ պահանջմանց առաւելագոյն չափով: Միւս կողմէ՝ անփափկանկատ եւ ոչ օգտակար կը գտնայ մանտաթէր պետութեան ճշդումը:

Պ. Թէքէեան կը կարդայ իր մէկ բանաձեւը, որ կրնայ գոհացում տալ բոլոր փափաքներուն:

Պ. Համբարձումեան կ'առաջարկէ եղածը քուէարկել, որովհետեւ Թէքէեանին բանաձեւը ընդհանրացումներով տկարացուցած է բուն միտքը, իսկ «Հայաստանը հայերուն»ի սկզբունքը ամէն տեղ արտայայտուած է: Պատճառ մը չի տեսներ նմանապէս, այս ներքին մէկ տօքիւմանին մէջ մանտաթէր պետութեան անունը չճշդելու:

Պ. Փափազեան անգամ մը եւս ցոյց կու տայ, որ ասիկա «դիւանագիտական արարք» չէ եւ պէտք չէ աղօտացնել, սքօղել Պատուիրակութեան տրուած հրահանգները, որոնք պարզ եւ որոշ կերպով պէտք է ըսուած ըլլան:

Պ. Բարսեղեան կը գտնայ, որ հրահանգը որքան մանրամասն տրուի՝ այնքան լաւ է: Սխալ է նաեւ Պ. Թէրզիպաշեանի օրինակը անչափահաս տղու եւ չափահաս մարդու յարաբերութիւնը նմանցնել խնամակալ պետութեան եւ մեր յարաբերութեանը: Ընդհակառակը, ասիկա կարելի է նմանցնել կարող հարուստ մարդու մը, որուն սակայն խելքը տեղն է եւ շատ լաւ գիտէ ինքզինքը կառավարել: Կ'առաջարկէ եղածին պէս քուէարկել:

14-րդ յօդուածը 21 ձայնով կ'ընդունուի:

Կը ներկայացուին նաեւ հետեւեալ բանաձեւերը.

Պ. Թէրզիպաշեանինը, որ մէկ ձայն կը ստանայ.

«Պատուիրակութիւնը ջանալու է թէ՛ Խաղաղութեան Քոնֆէրանսին եւ թէ՛ ասիսթան պետութեան ընդունիլ տալ հայկական բացարձակ անկախութեան գաղափարը եւ սկզբունքը: Ասիսթան պետութիւնը կ'ունենայ մէմուարին մէջ յիշատակուած պայմանաժամի շրջանի ժամանակաւորուած իրաւունքներ եւ պարտականութիւններ, որոնք նախատեսուած են մէմուարին մէջ: Փոփոխութիւններու համար՝ Պատուիրակութիւնը պարտաւոր է առնել Համագումարին կարծիքը»:

Պ. Ֆնտգլեանի հետեւեալ ամանտըմանը, որ միայն 5 ձայն կը շահի.

«Օժանդակող պետութիւնը պէտք է յանձնառու ըլլայ իրական հայկական պետութեան մը շուտափոյթ հաստատումը նկատի առնել միշտ եւ նպաստել անոր: Այս մասին դիմումներ ընել նաեւ Ligue des Nations-ի անդամներուն մօտ, որպէսզի օգնական պետութեան տրուելիք մանտայի յօդուածներուն մէջ կատարելապէս պաշտպանուի Հայաստանը հայուն պահելու սկզբունքը»:

Կը ներկայացուի նաեւ Պ. Տամատեանի հետեւեալ բանաձեւը, որուն միացաւ Պ. Թէքէեան եւ որ 4 ձայն շահեցաւ.

«Պատուիրակութիւնը պարտաւոր է ընդունիլ օգնականի դերը միայն այն պետութեան, որու մասին Համագումարը իր հաւանութիւնը կու տայ:

Պատուիրակութիւնը պարտ է Վեհաժողովին, ինչպէս նաեւ օգնականի դեր ստանձնող պետութեան հետ իր բանակցութեանց մէջ պնդել այն հիմնական պահանջին վրայ, թէ Հայաստանի բացարձակ անկախութիւնը, իբրեւ իրապէս հայկական պետութիւն՝ կանխաւ սկզբունքով ընդունուի եւ նուիրագործուի: Օգնական պետութեան աջակցութիւնը երբեք թեւարկութեան ձեւ պէտք չէ առնէ. ան պիտի ունենայ ժամանակաւոր հանգամանք:

Մ. Տամատեան»

Կը կարդացուի 15-րդ յօդուածը:

Պ. Օհանջանեան կ'առաջարկէ վերցնել ա. նախադասութիւնը, որովհետեւ ատիկա առաջուց ըսել պիտի ըլլար, թէ Հայաստանի մէջ երկու տեսակ քաղաքացի գոյութիւն պիտի ունենայ՝ հայերը՝ իշխողներ, եւ միւս ցեղերը՝ ճնշուածներ, իսկ երբ պայմանները բոլորին համար ալ միեւնոյնն ըլլան, հայերը իրենց ընդունակութիւններով, իրենց մշակոյթով բնականօրէն առաջ պիտի անցնին:

Պ. Հինդլեան բոլորովին հակառակ է այս յօդուածի ա. մասին եւ կը պահանջէր ամբողջական ջնջումը՝ հետեւեալ պատճառներով. նախ՝ որ ատիկա կրնայ մեր թշնամիներուն ձեռքը հրաշալի զէնք մը ըլլալ եւ Հայկական Դատին մեծապէս վնասել, բ.- ընդհակառակը՝ թիւրքերը իբրեւ պատանդ պէտք է պահենք, գ.- մենք, որ շատ մը պարագաներու մէջ ընդհանուր ռամկավարութեան կարծիքին եւ օգնութեանը դիմած ենք, հիմա մենք այդ կարծիքը մեր դէմ կ'ունենանք, դ.- ատիկա Պատուիրակութեան պատկանող գործ չէ, այլ՝ երկրին մէջ միացեալ կառավարութեան ընելիք գործը: Մէկ խօսքով՝ ատիկա մտայնութիւն մըն է, որ չի կրնար մեր հրապարակային ազգային քաղաքականութիւնն ըլլալ:

15-րդ յօդուածին ա. մասը քուէարկութեան կը դրուի եւ կ'ընդունուի: Բ. մասը քննութեան կ'ենթարկուի: Նախագահը, ի գիտութիւն Ժողովին, միայն կը յայտնէ, որ յոյներն ալ նմանօրինակ պահանջ մը ըրած են:

Պ. Չօպանեան կը կարդայ Լորտ Պրայսի գրած մէկ նամակը, որ այս նիւթը կը շօշափէ եւ կը հաստատէ Յանձնաժողովին կազմած յօդուածը:

Պ. Տամատեան եւս հակառակ է, որ Պատուիրակութեան տրուած հրահանգին մէջ «Հայաստան թիւրք մը չպիտի մնայ»-ի պէս բաներ ըլլան, քանի որ արդէն մուհամիրները ինչպէս եւ յանցաւոր թիւրքերը դուրս պիտի հանենք:

Այս մասին կը ներկայացնէ իր հետեւեալ բանաձեւը.

«Թուրքեր Ա.- Թէ՛ հայոց եւ թէ՛ նոյնիսկ թրքաց շահուն համար, ինչպէս նաեւ Արեւելքի մէջ տեւական խաղաղութեան տեսակէտով, պէտք է ջանալ ընդունիլ տալ այն սկզբունքը, թէ բացի գաղթական թիւրքերէն, որոնց մասին կը խօսի այս յօդուածի 3-րդ հատուածը, Հայաստանի մէջ գտնուող թիւրքերուն դիւրութիւն եւ միջոց հայթաթել փոխադրուելու Փոքր Ասիոյ թիւրքական հողամասերուն մէջ, անոնց կալուածքները փոխանակելով ինքնայօժար Հայաստան վերադարձող հայերու կալուածքներուն հետ, կամ վճարել անոնց արժէքը: Հակառակ տրուած այս դիւրութեան՝ Հայաստան մնացող թիւրքերը պիտի համակերպուին Հայաստանի Հայկական կառավարութեան ռեժիմին եւ օրենքներուն»:

Պ. Օհանջանեան կը յայտնէ, որ ինք Յանձնաժողովին մէջ ընդհանրապէս առաջարկած է ներքին քաղաքականութեան պատկանող խնդիրներու մասին հրահանգ չտալ Պատուիրակութեան, քանի որ ան միայն արտաքին քաղաքականութիւնը վարելու կոչուած մարմին մըն է: Արդ, ինչ կը վերաբերի այս թիւրքերու մասին եղած խնդրոյն, զուտ ներքին հարց մըն է, որ միացեալ կառավարութեան բաղամէնքը պիտի լուծէ:

Պ. Փափազեան Յանձնախումբին կողմէ կը յայտնէ, որ Պատուիրակութեան տիրէքթիւները մշակելու ատեն Յանձնաժողովը գլխաւորաբար նկատի ունեցած է նաեւ ասս կէտը՝ պատրաստել Պատուիրակութեան համար ծրագիր մը, որ Պատուիրակութիւնը գտնայ Ժողովին պատասխանները բոլոր այն հարցերու մասին,

որոնք կրնան պետութեանց կողմէ արծարծուիլ: Կը բացատրէ նաեւ, թէ թիւրքերը քշելու խնդիր չկայ, այլ՝ երկուստեք շահերը կը պահանջեն, որ փոխադարձ երկրափոխութեան սիսթէմով կատարուի այդ բնակութեանց խնդիրը եւ ասիկա գաղտնիք մը չէ, այլ ամէն տեղ բացայայտօրէն յայտնուած է ու կրնայ յայտնուիլ:

Այս մասին մէկ-երկու ժողովական եւս կ'արտայայտուին, նոյն միտքը շեշտելով, այսինքն՝ պահել յօդուածը:

Տոքթ. Տէր-Ստեփանեան աւելի ուժեղ կ'արտայայտուի՝ առաջարկելով այդ մասը դնել իբրեւ բացարձակ մեր պահանջներէն մէկը, որովհետեւ կենսական նշանակութիւն ունի, քանի որ հայ ժողովուրդը այս իր յոգնած ու ուժասպառ վիճակին մէջ ա՜լ ոյժ չունի մաքառելու, ներքին պայքարը շարունակելու: Կ'առաջարկէ, որ նոյնիսկ ասիկա հատուցումին հողին վրայ դրուի:

15-րդ յօդուածին Բ. մասը 22 ձայնով կ'ընդունուի:

Բրօֆ. Ա. Խաչատուրեան քիւրտերու վերաբերող յօդուածի մասին հարց կու տայ, թէ ինչպէ՞ս կ'ուզեն, որ քիւրտերուն սահմանակից չըլլանք:

Պ. Փափազեան. Քիւրտիստանի ախորժակը շատ մեծ է. անոնք իրենցը կը համարեն Վանը, մինչեւ Բաբերդի նահանգը: Այդ բրէթանսիոնները անշուշտ ոչ այդ սահմաններուն մէջ կրնան յաջողութիւն գտնել: Մենք ջանալու ենք սակայն, որ անոնք եթէ պիտի ունենան անկախութիւն, մեզի սահմանակից չըլլան. այսպէս, աջակցիլ ստեղծելու անկախ ասորիներու երկիր Հէքեարի-Ջապ գետ մինչեւ Սղերդ սահմաններուն մէջ, իսկ միւս կողմէ սիւրիացիներու ձգտումը մինչեւ Տիգրանակերտի սահմանները քաջալերել, որով եթէ ոչ բոլորովին, մեր բոլոր ճիգերը պիտի ուղղուին ազատուելու այն երկաթէ օղակէն, որ կը կազմեն մեր շուրջը մահմետական պետութիւններ: Այս եղած է մեր պատմական դժբախտութիւնը եւ այդ օղակէն ազատիլ կամ թուլցնել զայն, պիտի ունենայ փրկարար հետեւանքներ մեր ազգային եւ պետական զարգացման համար:

Բրօֆ. Ա. Խաչատուրեան. Անկարելի է Պ. Փափազեանին ըսածը. Քիւրտիստանի պաշտպանները շատ ընդարձակած են զայն: Անգլիական զինուորականներու տրուած գրքերու քարտէսներուն մէջ, նոյնիսկ Վանը, Պիթլիսը եւ այլն նշանակուած են իբրեւ մաս Քիւրտիստանի: Մէս Պէլի գրուածին մէջ Վանի թագաւորութիւնը համարուած է Քիւրտիստանի մէջ նշանակուած թագաւորութիւն: Այս պարագաներուն մէջ Քիւրտիստանը մեզի սահմանակից չընել անհնարին է:

Պ. Փափազեան. Մենք պարտաւոր ենք դնել այդ կէտը, Պատուիրակութեան քաղաքական ուղեգիծ մը տուած ըլլալու համար, ինչ որ հնարաւոր է գործադրել քիչ առաջ յիշուած ձեւով:

Պ. Թէրզիպաշեան կ'առաջարկէ քիւրտերուն մասին եղածը ամբողջովին դուրս ձգել, որպէսզի թիւրքերը հեռացնելու հարցին մէջ աւելի յաջողութեան կարելիութիւն ստեղծենք, ինչ որ աւելի կարեւոր է, որովհետեւ թիւրքերը իրենց որոշ կուլտուրայով կրնան աւելի վնասել մեզի, քան թէ անգրագէտ քիւրտերը:

Պ. Տամատեան. Ես կ'առաջարկէի դուրս ձգել այդ մասը, որովհետեւ քիւրտերուն միշտ սահմանակից պիտի ըլլանք: Յետոյ՝ ինչո՞ւ նկատի ունենանք քիւրտ պետութեան մը կազմուելու հաւանականութիւնը:

Պ. Հանըմեան մեծ հակասութիւն մը կը գտնայ, որ թուրքերու մասին եղած յօդուածը քուէարկելէ յետոյ, ժողովը ուրիշ բան կ'անցընէ քիւրտերու նկատմամբ, որոնք հաւասարապէս մեղսակից եւ պատասխանատու են կատարուած եղեռնին: Համաձայն է նաեւ, որ ոչ-յանցաւոր թիւրքերը Հայաստանի մէջ կարենան մնալ: Կ'առաջարկէ այդ մասը նոյն կերպով խմբագրել՝ տրամաբանական ըլլալու համար:

Պ. Չօպանեան համաձայն չէ Պ. Հանըմեանին, չուզէր, որ քիւրտ տարրը ամբողջովին հեռացուի, որ գործիք եղած է թիւրքերուն ձեռքը, որուն մահմետականութիւնն ալ շատ հարեւանցի է եւ որոնցմէ կրնանք օգտուիլ: Համաձայն է

նաեւ, որ քիւրտ պետութիւն մը ստեղծելու գաղափարը մենք չշեշտենք: Կ'առաջարկէ ջնջել վերջին մասը:

Պ. Փաստրմաճեան կ'առաջարկէ ղզըլպաշները եւ եէզիտները հայ քաղաքացի ընդունիլ, իսկ վերջիններուն մասնաւորապէս օգնել:

Բրօֆ. Ա. Խաչատուրեան քիւրտերու դրացի ըլլալէն վախնալու պէտք չկայ, կ'ըսէ, բայց շեշտելու չէ քիւրտ պետութեան մը գաղափարը:

3-րդ յօդուածին վերջին մասը կը ջնջուի եւ քանի մը փոփոխութիւններով ամբողջ յօդուածը կ'ընդունուի: Պ. Հինդլեան եւս այս խնդրին մասին հետեւեալ բանաձեւը կ'առաջարկէ, որ քուէի դրուելով՝ 2 ձայն կը շահի միայն.

Յօդուածին 15-րդի Բ մասը ջնջել, այս Համագումարը իրաւասութիւն չունենալով ճշդելու Հայաստանի քաղաքացիներու քաղաքական, քաղաքացիական եւ այլ իրաւունքները, ինչ որ ամբողջութեամբ կը պատկանի Հայ Սահմանադիր Ժողովի իրաւասութեան եւ ձեռնահասութեան:

Իսկ Պ. Թէրզիպաշեան, ոգւոյն համաձայն ըլլալով հանդերձ, քաղաքական նկատումներով նոյն յօդուածին ջնջումը կ'առաջարկէ:

Նիստը վերջացաւ ժամը 8-ին:

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 27, թթ. 24-31: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ 25-րդ

24 Մարտ 1919.

Նիստը բացուեցաւ ժամը 5-ին նախագահութեամբ Վսեմ. Գ. Նորատունկեանի եւ ի ներկայութեան 32 անդամներու:

Օրակարգ. Քննութիւն եւ վաւերացում Պատուիրակութեան տրուելիք տիրէքթիւներու

Պ. Նախագահը բարի գալուստ մաղթելէ յետոյ Ազգ. Պատուիրակութեան անդամ եւ Յունաստանի հայ գաղութի ներկայացուցիչ Պ. Յ. Մոստիչեանի, որ Լոնտոնէն նոր եկած էր, կ'անցնի ընդհանուր քաղաքական կացութեան շփոթ վիճակին վրայ եւ Ժողովին ուշադրութիւնը կը հրաւիրէ Հայկական Դատին ներկայիս ստացած սուր հանգամանքին վրայ: Մէկ կողմէն Աւագաժողովը կ'որոշէ, ըստ լրագրաց, որ քոմիսիոն մը երթայ Հայաստան՝ իրաց կացութիւնը մօտէն քննելու համար, որով ըսել է՝ Հայկական Հարցին վերջնական լուծումը բաւական ժամանակի համար պիտի յետաձգուի, այդ քոմիսիոնը ի՞նչ օգուտ կրնայ արտադրել տեսնելով պատերազմի, սովի, հիւանդութեանց եւ փախուստի երեսէն երկրին ամայի ու լքեալ վիճակը, շրջապատուելով հոն մնացած մահմետական այլասեռ տարրերէ: Անշուշտ, աննպաստ եզրակացութեանց պիտի յանգի:

Պոլսոյ լրագրաց մէջ հրատարակուած է արդէն յիշատակագիր մը, զոր թիւրքերը տուեր են եւրոպական պետութեանց եւ ուր հայկական նահանգներու մէջ ամէնամեծագոյն տարրը ցոյց կու տան եւ պատրաստակամութիւն կը յայտնեն անգլիական բրոթէքթորաթը ընդունելու: Միւս կողմէն, մեր բարեկամներէն ոմանք, ինչպէս Լորտ Սէսիլ եւ Լորտ Հարթինկ եւ այլք, թիւրքերուն հանդէպ լաւագոյն տրամադրութիւններ սկսած են ունենալ եւ չափաւորել կը յորդորեն հայոց խնդրանքը: Այս բոլորը շատ ծանր հետեւանքներ կրնան ունենալ եւ եթէ այսպէսով այս գարունն ալ կորսնցնենք առանց օգնութեան եւ վերջնական կարգադրութիւններու, յուսահատական կ'ըլլայ գործող կերպարանքը: Ուրեմն, կ'առաջարկեմ անմիջապէս լրացնել Համագումարի աշխատանքները, ժամ առաջ ընդունիլ նոր Պատուիրակութիւնը, համերաշխ ոգիով աշխատիլ օրակարգի խնդիրներու լուծմանը

եւ մինչեւ այդ՝ տեղեկութիւն ուզել Պատուիրակութիւնէն, թէ ի՞նչ եղած է, կամ ի՞նչ պիտի ըլլայ մեր մասին:

Նախագահին այս խօսքերէն յետոյ

Տոքթ. Նեւրուզ շատ յուզուած կերպով կը շեշտէ, որ այս բոլորը միայն կը լսուին եւ գործնական ոչինչ տեղի կունենայ, Պատուիրակութիւն չէ մնացած, որ գործէ. ան բաղկացած է միայն մէկ հոգիէ, անոր վրայ չենք կրնար յոյսերնիս դնել: Կ'առաջարկէ անմիջապէս հրաւիրել Վսեմ. Պօղոս Նուպար Փաշան, տեղեկանալ, թէ ի՞նչ եղած է մինչեւ հիմա այդ մասին, եւ յետոյ անմիջական դիմումներ ընել ամբողջ Ժողովին կողմէ եւ այլեւս խիստ ոճով պահանջել, որ Հայկական Լեգէոնի խնդիրները քննուին, որ սովին դէմ շուտափոյթ օգնութիւն հասցնեն, ամերիկեան, անգլիական, ֆրանսական կառավարութիւնները գրաւման խնդիրը կարգադրեն, թիւրք ժանտարմըրին վերցնեն եւ այլն: Այլապէս, կ'աւելցնէ, իր խղճին առջեւ հանգիստ ըլլալու համար՝ պիտի ստիպուի ձգել հեռանալ ասկէ:

Նոյն նիւթին շուրջ, նոյն միտքերը շեշտելով, Պ. Չօպանեան եւս խօսք կ'առնէ եւ ինքն ալ կ'առաջարկէ, որ այսպիսի բացառիկ պարագաներու մէջ Ժողովը իր ձայնը բարձրացնէ ամբողջ հայ ազգին անձկութիւնը յայտնելու համար: Կ'առաջարկէ ընտրել Պատուիրակութիւնը եւ պարտք դնել անոր վրայ, որ խնդրէ ամերիկացի ազգին՝ անմիջապէս օգնութեան հասնիլ, առանց սպասելու մեր դատին վերջնական լուծումին. եւ յետոյ, ինչպէս բազմաթիւ անգամներ, առաջարկած է ղրկել հայկական քոմիսիոն մը Պոլիս՝ Պատուիրակութեան կողմէ:

Պ. Հինդլեանի առաջարկին վրայ՝ Հայկական Լեգէոնի վերաբերեալ խնդիրը օրակարգի յաջորդ նիստի նիւթ կը դառնայ:

Ապա Ժողովը կ'անցնի օրակարգի եւ կ'ընդունուի 15-րորդ յօդուածին 3-րդ մասը: 4-րդ մասին համար թեր ու դէմ կարծիքներ կը յայտնուին, թէ հայկական շահերուն համար ասորական պետութեան մը ստեղծումը արդեօք օգտակա՞ր է, թէ՞ ոչ: Ոմանք, ինչպէս Պ. Պ. Հինդլեան, Բրօֆ. Թումաեան, Թէրզիպաշեան եւ Դաւիթ-Բէկ, վնասակար կը գտնան, առաջարկելով, որ մեր երկրին մէջ մահմետականներուն դիմաց քրիստոնեայ տարրի շատ պէտք պիտի ունենանք, թէ դեռ մերը չյաջողցուցած՝ ուրիշի դատին համար կարելի չէ աշխատիլ, թէ ասորիք ընդամէնը 50 000 հոգի են եւ չեն կրնար նոր պետութիւն մէ կազմել, եւ թէ մեզի համար նպաստաւոր չէ ունենալ երկիր մը՝ շրջապատուած օտար մեծ պետութեանց կողմէ հովանաւորուած երկիրներով եւայլն: Գլխաւորաբար Պ. Պ. Փափազեան, Բրօֆ. Խաչատուրեան, Փաստրմաճեան եւ այլք օգտակար կը գտնեն նպաստել ասորական օթոնոմիի մը կազմութեանը, պատճառաբանելով, որ արդէն ասորական ազգային գիտակցութիւնը ուժեղ թափով սկսած է գործել եւ շատ պաշտպաններ ունին, թէ ընդհակառակը, շատ օգտակար է մեր երկրին համար շրջապատուած ըլլալ մեծ պետութիւններէ հովանաւորուած ազգութիւններով՝ բազմամիլիոն մահմետականներու ազգային զարթնումի վտանգին դէմ, թէ այդ պետութիւնը մեզի պիտի զատէ մահմետականներէ եւայլն:

Մէկ քանի փոքրիկ փոփոխութեամբ կ'ընդունուի նաեւ 15-րդ յօդուածին Դ. մասը:

Յանձնախումբերու կազմութեան վերաբերեալ յօդուածները կ'ընդունուին փոքրիկ փոփոխութիւններով, բացի Ե.էն, որուն մասին թեր եւ դէմ կարծիքներ կը յայտնուին: Թէ՛ այդ յօդուածը եւ թէ՛ անոր տեղ առաջարկուած մէկ երկու ուրիշ բանաձեւեր քուէարկելէ յետոյ, մեծամասնութիւն չշահելով, յօդուածը դուրս կը ձգուի:

Ժողովը կ'անցնի Պատուիրակութեան ներքին կազմակերպման խնդրոյն: Պ. Տամատեան այս մասին հետեւեալ բանաձեւը կ'առաջարկէ.

«Խաղաղութեան Համաժողովին ներկայացուած Յիշատակագրով սահմանագծուած Միացեալ Հայաստանի ոեւէ նահանգը եւ ի մասնաւոր Կիլիկիան ամբողջովին կամ մասամբ Հայաստանէն բաժնելու եւ առհասարակ մեր պատմական հայրենիքին հողային ամբողջութիւնը եւ մեր ազգին անբաժանելի միութիւնը

վտանգելու ոեւէ փորձի հանդէպ Ազգային Պատուիրակութիւնը պարտի Համագումարը անմիջապէս ի նիստ հրաւիրել՝ իր բռնելիք դիրքը որոշելու համար:

Մ. Տամատեան»

Ասիկա փոքրիկ վիճաբանութեան տեղի կու տայ եւ նկատուելով, որ իր գլխաւոր գիծերուն մէջ արդէն որոշուած է, թէ Պատուիրակութեանը այդ պարագային պիտի վերստին Ժողովը նիստի հրաւիրէ՝ քուէարկութեան չի դրուիր:

Վսեմ. Պօղոս Նուպար Փաշա խօսք կ'առնէ եւ կը յայտնէ, որ Յանձնաժողովին պատրաստած յօդուածները բաւական յստակ կերպով չեն որոշեր երկու Պատուիրակութեանց փոխյարաբերութիւնները: Այս մասին ինք տեսնուած է Պ. Ահարոնեանի հետ եւ կ'առաջարկէ ընդունիլ բերած իր մէկ քանի գրաւոր յօդուածները: Պատուիրակութեան նախագահը երկարօրէն կը ծանրանայ միութեան եւ համաձայնութեան օգուտներուն վրայ, օտարներու առջեւ թրքահայ եւ ռուսահայ հարցը, Թրքահայերու Պատուիրակութիւն եւ Կովկասի Հանրապետութեան Պատուիրակութիւն եւ այլն ցոյց չտալու շահը կը յայտնէ եւ կ'ըսէ որ արդէն մինչեւ հիմա այդ միութիւնը եւ համաձայնութիւնը տիրած են թէ՛ այս ժողովին եւ թէ՛ երկու Պատուիրակութեանց միջեւ, որոնք ահա ամիսէ մը ի վեր արդէն միասին կ'աշխատին: Ինք վստահ է, որ այս համաձայնութիւնը ասկէ յետոյ ալ պիտի տիրէ, որով կարելի պիտի ըլլայ արդիւնաւոր կերպով աշխատիլ: Բայց Պատուիրակութեան Նախագահը դիտել տալով, որ ինք մինչեւ հիմա օտար կառավարութեանց կողմէ իբրեւ Հայ Ազգային Պատուիրակութեան նախագահ ճանչցուած է, եւ փափաքած է պահել իր հին տիտղոսը, պատճառաբանելով, որ իսկապէս ինք ամբողջ հայ ազգի Պատուիրակութեան նախագահն է եւ ո՛չ միայն թիւրքահայոց: Իսկ Պ. Ահարոնեան դիտել տալով, որ ինքը պատասխանատու է Կովկասի Հանրապետութեան առջեւ, կ'առաջարկէ, որ Վսեմ. Պօղոս Փաշան ստորագրէ՝ Նախագահ Թրքահայ Ազգային Պատուիրակութեան, իսկ այս արդէն առաջ կը բերէ շատ անցանկալի երկուութիւնը:

Պ. Ահարոնեան շատ կը խնդրէ Ժողովին, որ այն տպաւորութեան տակ չմնայ, որ նախագահութեան եւ այլնի կռիւ կայ մեր մէջ, ինչ որ շատ ցաւ պիտի պատճառեր իրեն եւ ցոյց կու տայ, որ, դժբախտաբար, հակառակ մեր բոլոր ջանքերուն, միշտ միացած ըլլալու եւ երեւնալու, փաստը դեռ կը մնայ փաստ, որ դեռ չունինք հայկական միացեալ կառավարութիւն եւ, անխուսափելիօրէն, այժմ գոյութիւն ունի երկու Պատուիրակութիւն: Կը մնայ միջոց մը խորհիլ, որ այս չարիքը նուազագոյնին վերածուի: Պ. Ահարոնեան կը յայտնէ, որ ինք պատրաստ է ամէն զոհողութեան, միայն թէ գտնէր հնարը, գտնուի օրինաւոր եւ բանաւոր եղանակ մը վերացնելու այս երկուութիւնը: Ինք կը կարծէր, որ Վսեմ. Պօղոս Նուպար Փաշա համաձայնած է այնօրուան իրենց տեսակցութեան միջոցին ընդունիլ միայն Թրքահայոց Պատուիրակութեան նախագահի տիտղոսը, բայց ինչպէս կ'երեւի՝ թիւրիմացութիւն կայ: Պ. Ահարոնեան կանխատեսել կու տայ նաեւ այն պարագան, թէ ի՞նչ պիտի ընէ Վսեմ. Պօղոս Փաշա, եթէ իր Պատուիրակութեանը Քոնֆերանսը յանկարծ ընդունի եւ ճանչնայ պաշտօնապէս եւ կոչէ իր ներկայութեան՝ Կովկասի Հանրապետութեան Պատուիրակութիւն:

Պ. Վարանդեան ցոյց կու տայ, որ Վսեմ. Պօղոս Նուպար Փաշայի առաջարկած տիտղոսներու կարգադրման ձեւին մէջ, մեծ հակասութիւն մը կայ: Երբ մէկը կը ստորագրէ «Նախագահ Հայ Ազգային Պատուիրակութեան», ա՛լ աւելորդ եւ անիմաստ կը դառնայ իր քուէ ունենալը իբրեւ «Նախագահ Կովկասի Հանրապետութեան Պատուիրակութեան» մը: Պ. Վարանդեան կ'ըսէ նաեւ, որ այն անիրաւ պիտի ըլլար, քանի որ Պատուիրակութեան Նախագահը չէ ուզած Կովկասի Հանրապետութեան համար գործել, ունենալով պաղ եւ կրաւորական ընթացք մը Կովկասի Հանրապետութեան հանդէպ. իսկ այժմ որ կայ Կովկասի Հանրապետութեան իսկական ներկայացուցիչը, ինչո՞ւ Վսեմ. Պօղոս Փաշան խօսի ամբողջին անունովը: Պ. Վարանդեան կը յայտարարէ նաեւ, որ թերեւս մենք ընդունուած կ'ըլլայինք

Քոնֆերանսին մէջ, եթէ Վսեմ. Պօղոս Փաշան այդ կրաւորական եւ պաղ վերաբերումը ցոյց տուած չըլլար Կովկասի Հանրապետութեան հանդէպ եւ սկիզբէն ուժեղ բրոբականտ մղուեր ի նպաստ անոր: Անձնաւորութիւնը, ի հարկէ, խիստ թանկ բան է, կ'ըսէ Պ. Վարանդեան, իւրաքանչիւրի համար, բայց կայ մի բարձրագոյն անձնաւորութիւն, որ աւելի թանկ է բոլորիս համար եւ որի անունն է առաջին Հայկական Հանրապետութիւն: Պ. Վարանդեան կ'առաջարկէ վերջ տալ այսպիսի ճղճիմ վէճերու:

Վսեմ. Պօղոս Նուպար Փաշա կը ճշդէ այն կէտը, թէ ինք սկիզբները չէ ուզած Կովկասի անունով խօսիլ, որովհետեւ հաղորդակցութեան անկանոնութեան պատճառով ինք անգիտացած է բոլորովին, թէ այնտեղ ի՞նչ ծրագրով կը գործեն: Իսկ երբ կը պնդէ, որ այն օրը իրեն ունեցած Պ. Պ. Ահարոնեանի, Վարանդեանի եւ Մասեհեան Խանի տեսակցութեան մէջ ըսած է, որ կը համաձայնի ստորագրել այնպէս, ինչպէս ստորագրած են Յիշատակագրին մէջ:

Պ. Մասեհեան Խան իբր ներկայ այդ տեսակցութեան, կը յայտնէ, որ հոն ըսուած է, թէ երբ թուղթ մը միայն Վսեմ. Պօղոս Նուպար Փաշան ստորագրէ, պիտի գրէ «Նախագահ Հայ Ազգային Պատուիրակութեան», իսկ եթէ երկուքը մէկ ստորագրեն, որպէսզի հակասութիւն առաջ չգայ՝ միայն «թիւրքահայոց»:

Պ. Հինդլեան չարիքը արմատէն վերցնելու համար միջոց մը կ'առաջարկէ, որն է մտնալ Կովկասի Հանրապետութեան հետ յարաբերութեան մէջ եւ որոշել մէկ Պատուիրակութիւն ունենալու խնդիրը: Իսկ եթէ սա կարելի չըլլար ընել՝ կ'առաջարկէ շարունակել Յիշատակագրին մէջ ստորագրուած եղանակովը: Պ. Հինդլեան հարստութիւն մը կը նկատէ արդէն, որ Թրքական Հայաստանը դեռ կառավարութիւն մը չունեցած՝ ունեցած ենք Պատուիրակութիւն մը, որ ճանչցուած է պետութիւններէն եւ այժմ ասիկա ոչնչացնելու աշխատիլը այս Ժողովին կողմէ՝ դեռ բան մը չտուած՝ եղածը քանդել ըսել է, մանաւանդ որ Պ. Ահարոնեան շատ մը հանդիսաւոր պարագաներու մէջ, որպիսին է մէմուարի ստորագրումը, Քոնֆերանսին ներկայանալը, շատ մը այցելութիւնները կառավարական ներկայացուցիչներու եւայլն հետ, ընդունած է եւ տարած Պատուիրակութեան այժմեան առաջարկած փոխյարաբերութեան եղանակը: Պ. Հինդլեան կը յուսայ, որ վստահ ըլլալով հայրենասէր Պ. Ահարոնեանին վրայ. ան պիտի կարողանայ, յարաբերութեան մէջ մտնալով Կովկասի բառլըմանին հետ, ընել բան մը, զոր մինչեւ հիմա առանց հարցնելու ըրաւ, այսինքն՝ ստեղծել միակ Պատուիրակութիւն մը:

Պ. Ահարոնեան կը յայտնէ, որ այդ եղած է պարզ փափկանկատութեան արարք մը, թէ Փարիզ հասած-չհասած՝ չէին կրնար Վսեմ. Պօղոս Փաշային օձիքէն բռնել, թէ փոխէ քու տիտղոսդ: Միւս կողմէ դիտել կու տայ, թէ եթէ Ազգային Պատուիրակութիւնն արդէն որոշ պատուանդան մըն է օտար պետութիւններուն առջեւ, Հանրապետութեան անունը աւելի բարձր եւ նուիրական պատուանդան մըն է, որուն անունը ջնջելով, կը վախնայ թէ սխալ գործ կատարած կ'ըլլանք:

Պ. Չօպանեան նախ կը ճշդէ այն կէտը, որ Պատուիրակութիւնը միայն Վեհ. Կաթողիկոսէն նշանակուած մարմին մը չէ, այլ, նախ եւ առաջ Պոլսոյ Պատրիարքարանը եւ Ազգային Ժողովը վճռած են կազմել Ազգային Պատուիրակութիւնը եւ յանձնած են Վեհ. Կաթողիկոսին, որ գործադրէ այդ որոշումը, իսկ յետոյ ամբողջ հայութիւնը ճանչցած է զայն իբր ազգին պաշտօնական ներկայացուցիչ: Իսկ միւս կողմէ, մեր բոլորիս փափաքն է, որ Արեւելեան Հայաստանի Հանրապետութիւնը դառնայ ամբողջական Հայաստանի կառավարութիւն եւ իր ներկայացուցիչն ըլլայ հոս գտնուած միակ Պատուիրակութիւն մը: Ես այս չարիքին առաջքն առնելու համար, ինչպէս շատ անգամ ըսած եմ այս Ժողովին մէջ, կ'առաջարկեմ Կովկասի Հանրապետութեան կառավարութեան մէջ աւելցնել նաեւ թրքահայ անդամներ, զայն ընդունիլ եւ հռչակել համահայկական միացեալ

կառավարութիւն: Պ. Չօպանեան կ'առաջարկէ անմիջապէս յանձնաժողով մը ընտրել, որ առտու-իրիկուն այս խնդրով զբաղի եւ որոշ եզրակացութիւններ բերէ Ժողովին:

Պ. Փաստրմաճեան բոլորովին համաձայն է Պ. Չօպանեանին եւ կ'երկրորդէ անոր առաջարկը, բայց հետեւեալ մանրամասնութիւնը կ'առաջարկէ: Մինչեւ որ միացման գործը կատարուի՝ 1-2 ամիս պիտի անցնի, որու ընթացքին պէտք է գործել. այդ պարագային, Պ. Փաստրմաճեան անջատումը նոյնիսկ նպաստաւոր կը գտնէ օգտուելու համար, քաղաքական կացութեան համաձայն, մէկէն կամ միւսէն, եւ կ'ուզէ որ Կովկասի վերաբերեալ խնդիրներու մէջ Կովկ. ներկայացուցիչները ազատ ըլլան գործելու: Իսկ տիտղոսի խնդրին առթիւ կ'առաջարկէ, որ «փափկանկատութիւնը» շարունակուի նորէն մինչեւ միացեալ կառավարութեան հռչակումը:

Պ. Թէրզիպաշեան կը յայտնէ, որ մեր հարցը մէկ է եւ դէպքերն են, որ երկու ձեւ են տուեր. արդ, հարկաւոր է քննել, թէ ո՞ր ձեւին մէջն է մեր հարցին գլխաւոր ոյժը յենուիլ այդ ոյժին վրայ: Օրինակի համար, եթէ կգտնանք, որ թիւրքահայ դատը աւելի հիմնաւոր է՝ պէտք է ոյժ տանք, որ հարցի ա՛յդ ձեւը եւ տիտղոսը աւելի գերակշռող դերի մէջ ըլլան:

Կ'ընդունուի ապա Պ. Չօպանեանին առաջարկը, որուն համաձայն՝ միացեալ կառավարութիւն եւ միացեալ Պատուիրակութիւն խնդիրն ուսումնասիրելու եւ որոշ առաջարկներ բերելու համար պաշտօն կը յանձնուի Տիրէքթիւներու Յանձնաժողովին, որուն վրայ մէկ քանի անդամներ եւս կ'աւելնան եւ Յանձնաժողովը բաղկացած կ'ըլլայ այսպէս հետեւեալներէ.

Պ. Պ. Չօպանեան, Տամատեան, Շանթ, Տոքթ. Նեւրուզ, Վ. Փափազեան, Գ. Փաստրմաճեան, Հ. Համբարձումեան, Թէքէեան, Տէր-Ստեփանեան, Թէրզիպաշեան:

Նիստը փակուեցաւ ժամը 8 ½ -ին:

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 27, թթ. 32-40: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ 26-րդ

26 Մարտ 1919.

Նիստը բացուեցաւ Վսեմ. Գ. Նորատունկեանի նախագահութեան ներքոյ, 32 անդամներու ներկայութեամբ, ժամը 5½-ին:

Օրակարգ.

Ա. Խորհրդակցութիւն Հայկական Լեգէոնին վերաբերեալ խնդիրներու մասին:

Նախքան զայդ՝ կը կարդացուի հեռագիր մը, Ամերիկայի Նպաստից Յանձնախումբին կողմէ գրուած, որ տեղեկութիւններ կու տայ իրենց հասցուցած եւ հասցնելիք օգնութեան մասին: Կը կարդացուի նաեւ Լորտ Ռոպէրթ Սէսիլի եւ Յակոբեանի միջեւ տեղի ունեցած տեսակցութեան տեղեկագիրը:

Պ. Մոստիչեանէն կը խնդրուի, Լոնտոնէն իբր նոր հասած մէկը, տեղեկութիւններ տալ Հայկական Հարցի վերաբերմամբ հոն տիրող կարծիքներու մասին:

Պ. Մոստիչեան նախ կ'ըսէ, որ շատ բան մը չպիտի կրնայ ըսել, որովհետեւ այն բոլոր անձինք, որոնց դիմում եղած է, պատասխանած են՝ Փարիզ գացէ՛ք, հոս ոչինչ կարելի է ընել, գործերու կեդրոնը Փարիզ է: Բայց անգլիական քաղաքական շրջանակի՝ մեր դատին հանդէպ տրամադրութիւնները բացատրելու համար կը յայտնէ, թէ թիւրքերուն հետ զինադադարը կնքուելէ վերջ՝ Մանչեսթրի եւ Լոնտոնի հայերը մեծ բողոք բարձրացուցած են: Հայերուն դէմ եղած անիրաւութեան հանդէպ եւ մամուլի արտայայտութիւններէն զատ, ամէն տեղ դիմումներ կատարած են՝ 24-րդ յօդուածի

հիման վրայ երկիրը գրաւել տալու համար, բացատրելով, որ հոն անկարգութիւնը շարունակական բնոյթ ունի եւ ամէն օր հազարաւոր մարդիկ կը մեռնին: Այս դիմումներուն վրայ է, որ Լորտ Պրայս Լորտերու Ժողովին մէջ հարցապնդում կ'ընէ, թէ ինչո՞ւ երկիրը չեն գրաւեր: Հոն է, որ Լորտ Գարզընն կը յայտարարէ, որ չեն կրնար այդ գրաւումները ընել: Անկէ յետոյ մեծ աղմուկ կը հանուի Անկլօ-Հայկական Ընկերութեան ժողովներուն մէջ եւ իբր արդիւնք կը ստանան միայն խուսափողական պատասխաններ:

Այնպէս որ, կը յայտնէ Պ. Մոստիչեան, Լորտ Սէսիլի բռնած դիրքը արձագանգն է միայն այն տրամադրութեան, որ պաշտօնական կառավարութիւնն ունի այժմ մեր դէմ եւ այս այն Լորտ Ռոպէրթ Սէսիլն է, որ Դեկ. 2-ի նշանաւոր ժողովին մէջ «Հայաստանը հայերուն համար է» պոռացած է: Պարենաւորման, սնունդի եւ այլնի համար եւս դիմումներ կատարուած են, որոնց իբր արդիւնք հրահանգներ կը տրուին ամէն կերպով հայերը սնուցանելու համար:

Պ. Նախագահը դարձեալ կը յիշեցնէ ժողովին այն յիշատակագիրը, զոր թիւրքերը ներկայացուցած են մեծ պետութեանց եւ որով կ'ընդունին Հայկական խիստ փոքր պետութեան մը գոյութիւնը, իսկ իրենց համար կ'առաջարկեն մեծ պետութեան մը քոնթրոլը:

Պ. Չօպանեան զարմանալի չգտնար անգլիական կառավարութեան բռնած դիրքը, քանի որ բոլոր պետութիւնք բոլորն ալ շահադիտական նկատումներով կ'առաջնորդուին: Բայց Պ. Չօպանեան կ'աւելցնէ, թէ պէտք չէ յուսահատիլ՝ ինչպէս ամէն նոր ազատագրուած ազգ, նախ պէտք է մեր յոյսը մեր ոյժերուն վրայ դնենք, օգտագործենք մեր ոյժերը եւ յետոյ պէտք է այս կառավարութիւններուն դէմ հանել ուժգին հանրային կարծիքը զօրեղ բրոբականտի մը միջոցով կառավարութեան դէմ, որովհետեւ բոլոր մեծ ազգերուն մէջ կան իսկական ազնուութիւն եւ մարդասիրական զգացում:

Տոքթ. Նեւրուզ կը կարդայ իրեն եկած նամակները Ատանայէն, կ'անդրադառնայ Լեգէոնին վերաբերեալ կարեւոր եւ կնճռոտ խնդիրներուն: Բուռն խօսքերով վերստին կ'առաջարկէ, որ Ժողովն անմիջապէս զբաղի այդ խնդրով եւ իր որոշումները տայ, քանի որ, կ'ըսէ, Պատուիրակութիւն գոյութիւն չունի, միայն Պատուիրակութեան Նախագահը կայ եւ Պատուիրակութիւնը 2 ամիսէն աւելի է, որ նիստ չէ գումարած:

Պ. Հանըմեան դիտել կու տայ, որ եթէ հարկ ըլլար Պատուիրակութեան ժողովները շարունակել իր զօրացեալ կազմով՝ այս Համագումարի անդամներուն մեծագոյն մասը հոն պիտի զբաղուեր: Ինքն ալ շատ կարեւոր կը գտնայ Տոքթ. Նեւրուզի յարուցած հարցը եւ կ'առաջարկէ, որ այս Համագումարը զբաղի անով:

Պ. Չօպանեան կ'ընդդիմախօսէ այս կարծիքին եւ կ'ըսէ, որ Պատուիրակութիւնը կրնար իր անդամներէն կազմել փոքրիկ գործադիր մարմին մը, միշտ գումարել իր նիստերը եւ գործերը վարել, մինչեւ որ Համագումարը ընտրէր նոր Պատուիրակութիւնը: Ինչո՞ւ այդ նպատակով եկած անձինք Պատուիրակութեան իրենց աջակցութիւնը չտային:

Պ. Տամատեան կը յայտնէ, որ ահաւոր վայրկեան մը կ'ապրինք, թերեւս աւելի գէշ անակնկալներով յղի, քան այն, ինչ որ տեղի ունեցաւ այս պատերազմի ընթացքին: Այդ անակնկալները կրնան պայթիլ Կիլիկիոյ մէջ, ուր Հայկական Լեգէոն մը ունինք եւ որուն կազմութեան համար շատ մարմիններ աշխատած են, այնպէս որ անոր պատասխանատու անդամներէն զատ,– որոնցմէ մէկն ալ ես եմ,- ամբողջ ազգը պատասխանատու է: Հետեւաբար, պէտք է քննենք անմիջապէս այս խնդիրը եւ մեր տուած որոշումին գործադրութիւնը պարտադրիչ դարձնենք Պատուիրակութեան, հոգ չէ թէ մէկ անձէ բաղկացած ըլլայ ան:

Պ. Հինդլեան համամիտ չէ, որ այս խնդիրը այս ձեւով քննէ Ժողովը, որովհետեւ անոր կազմութեան պատասխանատուն ինք չէ, եւ կ'առաջարկէ նախ քննել երկրի գրաւման հարցը, որմէ կախուած է սա եւ որոշելէ յետոյ երկրի գրաւումը՝ զբաղիլ այս

հարցով, որուն այս կամ այն կերպ լուծումը մեծապէս կը դիւրանայ, երբ ժողովը ճշդէ իր դիրքը առաջին հարցի մասին:

Բայց Ժողովը Պ. Միքայէլեանի առաջարկին վրայ, խնդիրը օրակարգի անցուց՝ անմիջապէս անով զբաղելու համար առաջիկայ նիստին մէջ:

Տոքթ. Նեւրուզ պարզաբանեց, թէ ո՛ւր կը կայանար Հայկական Լեգէոնի խնդիրը: Նախ կայ անոնց ներկայ դրութիւնը: Անոնք լքուած թշուառ վիճակ մը ունին: Յետոյ կայ իրենց դէմ եղած զրպարտութիւնը, թէ հայերը էնտիսիբլին էին, եւայլն, ինչ որ բացարձակ սուտ մըն է ֆրանսական զինուորականներու իսկ վկայութեամբ: Յետոյ կայ նաեւ այն, որ բազմաթիւ հայ երիտասարդներ կ'ուզեն մտնալ Հայկական Լեգէոնը եւ չեն ընդունուիր, եւ վերջապէս, ամէնէն կարեւորը՝ ռըանկաժըմանի խնդիրն է: Ֆրանսացիք առաջարկած են ռըանկաժըման մը ստորագրել: Հայ կամաւորները այդ մասին Ազգային Պատուիրակութենէն հրահանգի կը սպասեն եւ կ'ուզեն վստահ ըլլալ, թէ արդեօք ասկէ յետոյ իրենք ռըանկաժէ ըլլալով հայկական շահերո՞ւն պիտի ծառայեն, թէ ֆրանսականին: Առաջի պարագային, պատրաստ են ամէն կարգի զոհողութեան եւ վերստին արձանագրուելու, բայց ոչ երկրորդ պարագային:

Պ. Փափազեանի եւ այլոց կողմէ հարցում կ'ըլլայ, թէ ի՞նչ է Զինուորական Քոմիսիոնին տեսակէտը այս խնդիրներուն շուրջ:

Տոքթ. Նեւրուզ կը յայտնէ, որ իրենց տեսակէտը այն է, որ պէտք չէ ցրուել այդ բանակը, որովհետեւ այն նպատակով կազմուած է ան, որ պիտի մնայ մինչեւ Հայկական Դատի վերջնական լուծումը եւ պիտի կազմէ ապագայ Հայաստանի բանակին կորիզը:

Բրօֆ. Խաչատրեան եւս կը հաստատէ, թէ ֆրանսացիք այդ խոստացած են եւ ֆրանսական Պատերազմական Նախարարութեան կողմէ տրուած հեռագրի մը մէջ ալ ըսուած է, որ Միջագետք, անգլիացիներու կողմէ մարզուող հայ զօրքերն ալ կորիզը պիտի կազմեն ապագայ հայկական բանակին:

Տոքթ. Սայեան դիտել կու տայ, որ Համագումարը այսքան ատենէ ի վեր հոս է եւ դեռ ոչ մէկ կարեւոր խնդրի համար իր լուծումը չէ տուած եւ եթէ այս սկզբունքով շարունակուի՝ մենք ո՛չ մէկ գործնական արդիւնքի պիտի հասնինք, եւայլն:

Տոքթ. Սայեանի դիտել կը տրուի, որ նիւթէն դուրս են իր ըսածները:

Պ. Չօպանեան դարձեալ ցոյց կու տայ, որ բացատրելի է ֆրանսացւոց բռնած դիրքը. սկիզբները երբ անոնք հայկական այդ բանակին համար այդպիսի խոստումներ ըրած են, անոնց դիտաւորութիւնը այն եղած է, որ պիտի ստեղծուի հայկական ինքնավարութիւն մը ֆրանսական բրոթէքթորայի տակ, հետեւաբար, այն ատենուան կազմուած Լեգէոնն ալ այդպիսի Հայաստանի մը բանակին կորիզը կրնար կազմել: Հիմա պայմանները բոլորովին փոխուած են, փոխուած է նաեւ անոնց դիրքը: Հետեւաբար, պէտք է ժամ առաջ վերջացնել մեր գործերը, նոր Պատուիրակութիւն ընտրել, որ գլուխ կանգնի այս բոլոր գործերուն:

Պ. Մաթիկեան կը յայտնէ, թէ ռուսերը ինչ որ ըրին Կովկասի կամաւորական խումբերուն համար, հիմա ֆրանսացիք կ'ընեն Կիլիկիոյ Հայկական Լեգէոնին համար, այսինքն կ'օգտագործեն օտար խումբերը այնքան ատեն, որքան իրենց շահերը կը պաշտպանուին, յետոյ կը լքեն զանոնք:

Ապա կ'ընտրուի յանձնախումբ մը հետեւեալ անձերէն. Տոքթ. Նեւրուզ, Պ. Տամատեան, Պ. Միքայէլեան, Պ. Փաստրմաճեան, որ խնդիրը մշակեն եւ Ժողովին գործնական առաջարկներ բերեն այս մասին:

Ժողովը փակուեցաւ ժամը 8-ին:

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 27, թթ. 41-46: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ 27-րդ

27 մարտ 1919.

Նիստը ժամը 6-ին սկսաւ Վսեմ. Նորատունկեանի նախագահութեան տակ՝ ի ներկայութեան 28 անդամներու եւ ժամը 7-էն յետոյ շարունակեց Բրոֆ. Ա. Տէր-Յակոբեանի նախագահութեամբ:

ՕՐԱԿԱՐԳ

Ա. Զինուորական Յանձնաժողովին Հայկ. Լեգէոնի խնդրոյն մասին կազմած աշխատանքին քննութիւնը

Յանձնաժողովին կողմէ Պ. Միքայէլեան կը կարդայ պատրաստուած ծրագիրը: Ապա վիճաբանութիւն տեղի կ'ունենայ ամբողջական խնդրին շուրջ ընդհանրապէս, որ կարելի է հետեւեալ գլխաւոր միտքերուն եւ առաջարկներուն մէջ պարփակել:

Պ. Փափազեանի կողմէ կ'առաջարկուի չխճողել առաջարկները, մէկդի ձգել երկրորդական եւ երրորդական խնդիրները եւ արկիւմանները զօրացնելով՝ աշխատիլ ընդունիլ տալ գլխաւոր սկզբունքը՝ չցրուել բանակը:

Ուրիշներ, գլխաւորաբար Պ. Թէքէեան, Չօպանեան, Ֆնտգլեան, կ'առաջարկէին փոխանակ պահանջի՝ խնդիրք ներկայացնել, որովհետեւ Ֆրանսա այժմ Կիլիկիոյ վրայ նոյն շահադիտական յոյսերը չունենալով, անկարելի կը դառնայ պահանջներուն բաւարարումը: Կը յայտնուի նաեւ, որ շատ դժուար է իրականացնել այդ պահանջները, որովհետեւ նախ՝ պատերազմին սկիզբը մենք անկախութեան խօսք չենք ըրած եւ շատ սիրով ընդունած ենք Ֆրանսայի բրոթէքթորայի տակ ինքնավարութիւն մը, բայց յետոյ երբ ցարիզմը ինկաւ, երբ մեր զոհողութիւններով ամէն իրաւունք կը ստանայինք ամբողջական անկախ Հայաստան մը պահանջել, բնական բերումով՝ մեր քաղաքականութիւնը ֆրանսական շահերու հակառակ կ'ընթանար: Իսկ շատերը, գլխաւորաբար Պ. Հինդլեան բոլորովին անհնարին կը գտնան, որ այդ ամբողջ բանակը պահուի ֆրանսական միջոցներով եւ Ֆրանսան ոչ մէկ օգուտ չակնկալէ: Գովելի է Յանձնաժողովին դիտաւորութիւնը՝ հայացնել բոլորովին Արեւելեան Լեգէոնը, բայց անիրագործելի: Ուստի, եթէ կ'ուզենք, որ բանակը բոլորովին հայանայ, այն ժամանակ՝ մե՛նք պիտի պահենք զայն, եւ կամ միջոցներ գտնալ Կովկասեան Հանրապետութեան յանձնելու եւ կամ կարելիութիւն պիտի ստեղծենք, որ հոն մնան այդ զօրքերը՝ գաղթականներուն օգնելու համար: Կ'առաջարկուի նաեւ Պ. Օհանջանեանին կողմէ, որուն Մասեհեան Խանն ալ համաձայն կ'ըլլայ, ձգձգել այս դրութիւնը, մինչեւ որ ստեղծուի հայկ. միացեալ կառավարութիւնը, երբ կ'որոշուի իրենց վերջնական ճակատագիրը եւ կամ անմիջապէս որ ճշդուի, նոյնիսկ ոչ-պաշտօնապէս, ասիսքան պետութիւնը՝ անոր կը յանձնուի, որ մեր երկրի պաշտպանութեան համար գործադրէ զանոնք:

Յանձնախումբին կողմէ հետզհետէ կը խօսին Տոքթ. Նեւրուզ եւ Պ. Տամատեան, որոնք հետեւեալ միտքերը կը յայտնեն. թէ, այս ծրագրին պատրաստութեան ատեն Յանձնաժողովը խնդիրը իր հիմքին մէջ չէ նկատի առած, այլ իբր հարց մը, որ անմիջական լուծումի կարօտ է եւ կ'առաջարկէ ցուցմունքներ, որոնցմով Պատուիրակութիւնը պիտի առաջնորդուեր իր բանակցութիւններուն մէջ եւ միանգամայն ասիկա է պատասխանը ֆրանսական կառավարութեան հայ կամաւորներուն դէմ ըրած զրպարտութեանց: Ոմանք ցոյց կու տան նաեւ, թէ ո՛չ մէկ հակասութիւն կայ մեր պահանջներուն եւ Լեգէոնին մեր փափաքած կատարելիք դերին միջեւ, որովհետեւ ա. անկաժշմանի ժամանակ ֆրանսական կառավարութիւնը ինքն իսկ ըրած է այս բոլոր խոստումները եւ այժմ իր խոստումներն է, որ կը պահանջենք, քանի որ դեռ ա. անկաժշմանի շրջանին մէջ կը գտնուի Հայկ. Լեգէոնը:

Պ. Հանրմեանը մօտաւորապէս նոյն միտքը կը շեշտէ, ըսելով, որ իրենք մեզմէ զօրք խնդրած են, մենք տուած ենք. իրենք մեզի խոստումներ ըրած են, եւ նոյնիսկ այնքան հայկ. շահերն ու դիտաւորութիւնները նկատի առնելով, որ ընդունած էին հայեր իսկ կարգել իբրեւ բարձրաստիճան զինուորականներ Հայկ. Լեգէոնի մէջ: Մենք

այժմ միայն կը խնդրենք, որ իրենց խոստումները յարգեն: Նոյնիսկ Réangagement-ի խնդրոյն մէջ, մենք մօտաւորապէս նոյն պարագայիս մէջ կը մնանք, որովհետեւ դարձեալ իրենք է, որ ռէանկաժէ ընել կ'ուզեն. հետեւաբար, մենք ալ կրնանք մեր պահանջները ներկայացնել: Ուրիշներու կողմէ կ'առաջարկուի նաեւ, որ յանձնարարուի Պատուիրակութեան՝ դիմումներ ընել կառավարութեան, արգիլելու համար բանակին անմիջական ցրումը, մինչեւ պատերազմիս վերջանալը եւ մինչեւ Հայկ. Հարցին վերջնական լուծումը, եւ տեղեկանալ ռէանկաժշմանի պայմանները:

Պ. Թէրզիպաշեան կ'առաջարկէ հետեւեալ բանաձեւը, որ կ'ընդունուի Ժողովին կողմէ սա յաւելուածով, որ Պատուիրակութիւնը հետզհետէ տեղեկացնէ Ժողովին իր կատարած դիմումներուն մասին:

Պ. Թէրզիպաշեանի բանաձեւը.

«Համագումարը նկատելով Հայկ. Լեգէոնի Կիլիկիոյ մէջ գոյութեան եւ պահպանման քաղաքական ամէնամեծ նշանակութիւնը, կ'իւրացնէ Յանձնաժողովին առաջարկները, կը յանձնարարէ Պատուիրակութեան՝ ընդունիլ Յանձնաժողովին պատրաստած ծրագիրը եւ անմիջապէս ընել հարկաւոր դիմումները՝ ապահովելու համար Լեգէոնին գոյութիւնը, նոյն ատեն աչքի առջեւ ունենալով այն հանգամանքը, որ Լեգէոնի անկաժշմանը կը մնայ միայն խաղաղութեան կնքումին օրը»:

Պ. Տամատեան կը յայտարարէ, որ իր ստորագրութիւնը Յանձնաժողովին բերած ծրագրի տակէն ետ կ'առնէ, քանի որ Ժողովը չիւրացուց այդ ծրագիրը:

Ժողովը փակուեցաւ ժամը 8 1/4-ին:

*

* *

Հայկական Լեգէոնի հարցը

Վերջերս ստացուած տեղեկութիւններն ու նամակները, ուղղուած Ազգ. Պատուիրակութեան եւ կամ անոր միջոցով՝ Ազգ. Համագումարին, Կիլիկեան կամաւորական խումբերու եւ կամ Հայկական Լեգէոնի դրութիւնը կը ներկայացնեն բաւականաչափ ծանրակշիռ եւ անմիջական կարգադրութեան սպասող:

Յանձնախումբս ծանօթանալով բոլոր գրութիւններուն, Հայկական Լեգէոնի պահանջներուն, եկաւ հետեւեալ եզրակացութեանց.

Նկատելով

1. որ Կիլիկեան կամաւորական շարժումով մենք դեռեւս կապուած ենք ֆրանսական կառավարութեան հետ.

2. որ առանց ֆրանս. կառավարութեան դիմելու, ներկայ քաղաքական պայմաններուն մէջ անհնարաւորապէս դժուար է ռեւէ կարգադրութիւն ընելու.

3. որ հայ կամաւորներու ներկայութիւնը պէտք է նաեւ մեր ժողովուրդի եւ մեր երկրի ապահովութեան տեսակէտէն.

4. որ կամաւորական շարժման սկզբնական օրերուն իսկ հասկացողութիւն ունէինք ֆրանս. կառավարութեան հետ եւ թէ այդ խումբերը կորիզը պիտի հանդիսանան ապագայ հայկական բանակին.

5. որ մենք արդէն համաձայնութիւն ունինք, թէ կամաւորները պիտի մնան մինչեւ պատերազմի վերջաւորութիւնը՝ խաղաղութեան պայմանագրի ստորագրումը:

Կ'առաջարկէ Հայ Ազգ. Պատուիրակութեան միջոցով դիմել ֆրանս. կառավարութեան.

ա. որ Հայկական Լեգէոնի կարգապահութիւնը մինչեւ այսօր գոհացուցիչ է՝ համաձայն իրենց հրամանատարներու եւ այլոց իսկ տուած վկայութեան, եւ, այդ հիմամբ, անոնց հասցէին ուղղուած անկարգապահութեան մեղադրանքները համարել անարդար:

բ. որ Հայկական Լեգէոնը պահուի մինչեւ հաշտութեան վերջնական կնքումը, առանց նոր յանձնառագրի /ռէանկաժըման/.

գ. որ Հայկական Լեգէոնի զինուորներու այն պահանջներուն, որոնց արդարացի ըլլալն արդէն իսկ ընդունուած է ֆրանս. զինուորական պետերու կողմէ, բաւարարութիւն տրուի:

Այդ պահանջներն են.

1. Բարելաւել Լեգէոնի նիւթական պայմանները, տալով լաւագոյն սնունդ մը եւ ֆրանսական զինուորներու հավասար սօլէր:

2. Կամաւորներու ընտանիքներու նպաստներու եւ թոշակներու յաւելումը՝ համաձայն արդի պայմաններուն:

3. Ծառայութեան ընթացքին տեղի ունեցած արկածներու հետեւանքով ազատ արձակուածներու կենսաթոշակի յատկացումը:

4. Հայկական Լեգէոնի հայ քատրի փոփոխութիւն ա. Հայկական Լեգէոնի հայ քատրի աստիճանական բարձրացումը՝ համաձայն իւրաքանչիւրի ընդունակութիւններուն. բ. Հայկական Լեգէոնի քատրին հայացումը՝ բացի բարձրաստիճան հրամանատարներէ. գ. Վարչական բաժնին աստիճանական բարձրացումը. դ. Հայ սպաներու դասընթացքներու հաստատումը. ե. Հեծելազօրի եւ ժէնիի գունդերու կազմութեան ծրագրին գործադրութիւնը:

5. Բանակի հրամանատարութեան եւ Պատուիրակութեան միջեւ մշտական կապ հաստատող ներկայացուցչի մը ընդունուիլը:

6. Հայկական Լեգէոնի գունդերը բացառապէս գործածել Կիլիկիոյ եւ կամ հայկական նահանգներու շրջանին մէջ:

7. Ազգային Պատուիրակութեան կողմէ Հայկական Լեգէոնին ուղղուած կոչի մը պաշտօնական ընթերցումը:

8. Եթէ վերոյիշեալ, բարելաւումի վերաբերեալ առաջարկներուն մասամբ եւ կամ ամբողջովին գոհացում չտրուի, Ազգ. Պատուիրակութիւնը ջանադիր պիտի ըլլայ պահպանել Հայկական Լեգէոնը, գոնէ մինչեւ ռէանկաժըմանի հարցին լուծումը, իր ներկայ դրութեան մէջ, պարբերական կոչերով, ներկայացուցիչ ուղարկելով եւ նպաստի գումարներով՝ անոնց անմիջական կարիքներուն համար:

9. Մինչեւ այդ՝ խնդրել ֆրանս. կառավարութենէն, որ հեռագրական հրահանգով յետաձգէ ռէանկաժըմանի գործադրութիւնը Հայկական Լեգէոնի վերաբերմամբ:

Ռէանկաժըման

Նկատելով Հայկական Լեգէոնի ցրումի հաւանականութիւնը եւ անկէ առաջ գալիք ծանր հետեւանքները եւ վտանգները, ռէանկաժըմանի առաջարկը սկզբունքով ընդունիլ: Եւ այդ՝ հետեւեալ պայմաններով.

1. Ռէանկաժըմանի վերաբերեալ բոլոր բանակցութիւններն ու համաձայնութիւնները պիտի ըլլան Ազգ. Պատուիրակութեան հետ եւ անկէ վերջ միայն պիտի գործադրուին:

2. Իբրեւ հիմունք պիտի ընդունիլ հայկական գունդի ինքնավար կազմակերպութիւնը, կազմելով ատոր համար յատուկ կանոնագիր մը:

3. Ռէանկաժըմանի համար Ազգ. Պատուիրակութիւնն է, որ կոչ կ'ուղղէ հայ զինուորներուն, նախապէս համաձայնելով ֆրանս. կառավարութեան հետ:

4. Բանակցութիւններու ատեն Ազգ. Պատուիրակութիւնն ի նկատի պիտի ունենայ զինուորներու վիրոյիշեալ պահանջներն ու անոնց գոհացում ստանալը:

5. Կիլիկիոյ եւ Սիւրիոյ, ինչպէս նաեւ ուրիշ վայրերու հայերէն զինուոր ըլլալու փափաք ունցիցողները անմիջապէս արձանագրել եւ ընդունիլ՝ Հայկական Լեգէոնը ստուարացնելու համար:

6. Հայկական Լեգէոնը սահմանուած պիտի ըլլայ բացառաբար գործածելու Կիլիկիոյ եւ հայկական նահանգներու պաշտպանութեան եւ ապահովութեան համար:

7. Խաղաղ. Վեհաժողովին կողմէն Հայկական Հարցին լուծման եւ կամ Հայկական Լեգէոնի ցրումի ատեն բոլոր խնդիրները պիտի կարգադրուին ֆրանսական կառավարութեան եւ Ազգ. Պատուիրակութեան փոխադարձ հաւանութեամբ:

Վերջնական կարգադրութիւն

Հակառակ պարագային, եթէ Հայկական Լեգէոնի պահպանման եւ վերարձանագրութեան խնդիրներու վերաբերմամբ համաձայնութիւն չկայանայ եւ եթէ ֆրանս. կառավարութիւնը վճռէ ցրել, Ազգ. Պատուիրակութիւնը կը դիմէ հետեւեալ միջոցներուն.

1. Անմիջապէս քուէարկելու եւ կամ կազմելու է մէկ միլիոն ֆրանքի ֆոնտ մը՝ այդ պարագային ձեռք առնուելիք միջոցներուն յատկացնելու համար:

2. Ամէն կերպ ջանալ արդէն մարզուած բանակը չցրուել եւ օգտագործել զանոնք հայկական նահանգներու գրաւման եւ ապահովութեան համար, մեծցնելով Միջագետքի հայ կամաւորական խումբերով եւ կամ դնելով Հայաստանի Հանրապետութեան տրամադրութեան տակ:

Տոքթ. Նեւրուզ
Մ. Տամատեան
Ա. Միքայէլեան

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 28, թթ. 1-9: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ 28-րդ

28 Մարտ 1919.

Ժողովը բացուեցաւ ժամը 5 1/2-ին, Վսեմ. Նորատունկեանի նախագահութեան տակ, 30 անդամներու ներկայութեան:

ՕՐԱԿԱՐԳ

ա. Ելեւմտից Յանձնաժողովին բերած ծրագրին քննութիւնն ու վաւերացումը

Օրակարգին անցնելէ առաջ կը կարդացուի Ամերիկայի Ազգ. Միութեան նախագահ Պ. Սվազլըի կողմէ տրուած հեռագիր մը, որով կը յայտնէ, թէ ընտրութեանց արդիւնքին վերջին քննութեանց համաձայն, ըստ օրինի ընտրուած են Պ. Պ. Համբարձումեան, Մաթիկեան, Մասեհեան Խան, Տամատեան, իսկ անոնցմէ վերջ առաւելագոյն քուէ ստացած են Պ. Աղաթօն եւ Միքայէլեան: Այս մասին կարծիքներու փոխանակութենէ մը յետոյ, Ժողովը կ'որոշէ պահել նախորդ որոշումը Ամերիկայի պատգամաւորներուն մասին եւ բացատրութիւն պահանջել Սըվազլըէն՝ եթէ տեղեկագիրը ուշանայ:

Ելեւմտից Յանձնաժողովին կողմէ Պ. Տէրպէտէրեան կը կարդայ իրենց պատրաստած ծրագիրը եւ կը յայտարարէ, թէ Յանձնախումբին նախկին ծրագիրը կը

պարունակէր 25 միլիոնի պիւտճէ մը եւ իբր աղբիւր ցոյց տրուած էր ազգ. փոխառութիւնը: Համաժողովը ընդհանուր տրամադրութեամբ հակառակ արտայայտուելով փոխառութեան գաղափարին, Յանձնաժողովը փոխելով իր առաջարկը, այսօր կ'առաջարկէ նուիրատուութեամբ գոցել իր պիւտճէն:

Թէեւ Յանձնաժողովոյ անդամ՝ բայց ես միշտ կը մնամ փոխառութեան գաղափարին կուսակից. անշուշտ տգեղ են փոխառութեան տոկոս եւ այլն բառերը, որոնք կապուած են շահախնդրական եւ սեղանաւորական գաղափարներու հետ, շատ աւելի գեղեցիկ եւ վսեմ են մանաւանդ ընդհանուր զոհաբերութեանց այս շրջաններուն նուիրատուութիւն, անձնուիրութիւն, ազգասիրութիւն եւ այլն, որոնց վրայ կարելի է զգացումը տարբեր է, իրականութիւնը՝ տարբեր: Այժմ ժամանակը չէ դատապարտելու հայ հարուստը եւ ժամավաճառ ըլլալու՝ փնտրելու համար, թէ արդեօք ինչո՞ւ ան նուազ կը զոհաբերէ, քան օտար հարուստը: Մեր առջեւ ունինք անմիջապէս դրամ գտնելու կենսական հարցը:

Պէտք է նկատի ունենանք, որ այսօր միայն արտասահմանի հայութիւնը, եւ Պոլիսն ու Իզմիրն է, որ կրնան նուիրատուութեան մասնակցիլ, ըսել է՝ միայն 300.000-է բաղկացած հայութիւն մը, որուն ալ կէսէն աւելին թէեւ համեմատաբար աւելի բարեկեցիկ, բայց նմանապէս զերծ մնացած չէ պատերազմի աւերներէն:

Այդ բուռ մը հայութիւնը արդէն տուած է ոչ նուազ քան 10 միլիոն այս 3-4 տարուոյ շրջանին եւ անոնցմէ գրեթէ իւրաքանչիւրը ցայժմ ալ կը շարունակէ օգնել իր մէկ կարօտ ազգականին, որբին, կամաւորին եւ այլն. սխալ է այժմ 30 միլիոնի նոր զոհաբերութիւն մը պահանջել անկէ, եւ կը վախնամ, թէ բացասական արդիւնքի մը յանգելով՝ կրնանք աղիտաբեր ըլլալ ազգին՝ ճակատագրական այս ժամուն:

Տուրք բառն անհասկնալի է ինծի, երբ չյենուր sanction-ի մը վրայ: Կովկաս կարելի եղաւ հարուստներուն վրայ որոշ սակով տուրք դնել եւ մասամբ գանձել, բայց այնտեղ կառավարութեան գործօն աջակցութիւնը կար եւ մինչեւ իսկ բանտարկութեան իրաւունք տրուած էր: Ամերիկայի կամ Եւրոպայի մէջ հանգանակութեան չմասնակցողի մը անունն իսկ կարելի չէ լրագրի մէջ գրել: Բարոյական միջոցներու մասին չեմ խօսիր, որովհետեւ առաջարկուած միջոցներէն ո՛չ մէկը գործադրելի է իրականապէս եւ շատերն ալ վնասակար են եւ անիրաւ:

Երբ ոեւէ ճնշում չունի իր ետեւը օրինական յենարան՝ կը մնայ անօգուտ. աւելորդ է մենք մեզ խաբելը: Նուիրատուութիւնը կամաւոր միայն կրնայ ըլլալ եւ որովհետեւ արդիւնքը ապահով չէ, պէտք չէ իսկ փորձելու համարձակութիւնն ունենալ. եւ վերջապէս՝ պէտք չէ մոռնալ, թէ հայերու քով գտնուած դրամները յառաջիկային պիտի կազմեն ազգ. հարստութեան կորիզը:

Օրինակ մը աւելորդ չըլլար թերեւս. 1916-ին Ռումանիան ներքին փոխառութիւն մը հրապարակ հանեց 6% տոկոսով եւ բրոբականտի բոլոր ձեւերն ալ օգտագործելով հանդերձ՝ 7 միլիոն ժողովուրդէն հազիւ 300 միլիոն կարելի եղաւ հաւաքել. ինչպէ՞ս կարելի է 350 000 հայերէ, որ 20 անգամ նուազ են, 30 միլիոնի նուիրատուութիւն պահանջել: Ըստ իս՝ եթէ 30 միլիոնի փոխառութիւնն ալ յաջողինք, շնորհաւորելի կ'ըլլայ հայութեան մեծ զոհաբերութիւնը, որովհետեւ 5 կամ 6% տոկոսը ոչինչ շահ մըն է ներկայ պարագաներուն:

Ես կ'առաջարկեմ ուրեմն՝ վերադառնալ փոխառութեան ձեւին. ով որ նուիրել կ'ուզէ՝ ազատ է, բնականաբար, իր պարտատոմսերը մասամբ կամ ամբողջովին ջնջել, պատռել:

Պ. Փափազեան, ընդհակառակը, կը շեշտէ, որ այդ գումարը նուիրատուութեամբ պէտք է ձեռք բերել, ո՛չ թէ փոխառութեամբ, կեդրոնը կ'որոշէ իւրաքանչիւր քաղաքի կամ գաղութի վրայ ինկած բաժինը եւ մարդիկ դրկելով եւ տեղական մարմիններու միջոցով կը գանձէ զանոնք: Ցոյց կու տայ նաեւ, թէ դեղերու հսկայական պէտք կայ, թէ երթալով ամէն տեղ դեղերը կը նուազին եւ կ'առաջարկէ դեղերու պահեստներ ունենալ զանազան կեդրոններու մէջ:

Երկրագործական գործիքներու եւ որբերուն յատկացուած գումարն ալ շատ քիչ կը գտնայ:

Պ. Մաթիկեան նուիրահաւաքութեան նոյն ձեւին կողմնակից է, առարկելով, որ փոխառութիւնը կառավարութիւն մը կ'ենթադրէ եւ վստահ է, թէ լաւ արդիւնք ձեռք կը ձգուի՝ եթէ միջոցներ ձեռք առնուին, ունեւոր դասին ալ իրենց պարտականութիւնը կատարել տալու:

Պր. Թէրզիպաշեան կ'առաջարկէ քննել խնդիրը այն հիման վրայ, թէ որքա՞ն գումար կարելի պիտի ըլլայ հաւաքել:

Տոքթ. Սայեան ուշադրութիւն կը հրաւիրէ Կովկասի կարօտութեան զարհուրելի վիճակին վրայ, մատնանիշ կ'ընէ, որ այս հանգանակութիւնը նաեւ Կովկասի Հանրապետութեան անունովը պիտի կատարուի. ուրեմն, կ'առաջարկէ նոյնքան պիւտճէ մըն ալ յատկացնել Կովկասի մեր եղբայրներուն համար, որոնք 5 տարիէ ի վեր իրենց պարտքը լիուլի կատարած են: Սակայն, միւս կողմէ կ'առաջարկէ դուրս ձգել հողագործական գործիքներու եւ ներգաղթի վերաբերեալ մասը, որոնք սերտօրէն կապուած են գրաւման, հետեւաբար՝ միացեալ կառավարութեան հետ եւ որոնք Պատուիրակութեան գործունէութեան սահմանէն դուրս կ'ելլեն:

Տոքթ. Բարսեղեան կը հակառակի ներգաղթի պիւտճէին դուրս ձգուելուն, որովհետեւ գրաւումը ամէն որպէ կրնայ տեղի ունենալ, գոնէ մասնակիօրէն, եւ գաղթականներուն մեծ մասը կրնայ շուտով վերադառնալ: Իսկ երկրագործական գործիքները բնական բերումով կը յետաձգուին, որովհետեւ այժմ զանոնք գտնելն ալ, գնելն ալ, փոխադրելն ալ գրեթէ անկարելի են: Նշանակուած գումարը հաւաքելու համար՝ Տոքթ. Բարսեղեան կ'առաջարկէ ազգ. տուրքի ձեւը, որ, իր կարծիքով, շատ աւելի մեծ արդիւնքներ կրնայ տալ: Անպարտաճանաչներուն պէտք է բարոյական ամէն ճնշում գործադրել:

Պ. Հինդլեան հակառակ է ազգ. պարտադիր տուրքին, որովհետեւ նախ անկարելի է գործադրել՝ չունենալով հարկադրիչ միջոցները, յետոյ՝ մարդոց նիւթական կարողութիւնը ճշդելը բարդ խնդիր մըն է, որով կը մնայ միայն նուիրատուութեան ձեւը: Պ. Հինդլեան հակառակ է նաեւ Տոքթ. Բարսեղեանի առաջարկած սանքսիոններուն, որոնք վտանգաւոր կրնան ըլլալ՝ յաճախ հակառակ արդիւնքը տալով: Պր. Հինդլեան կը գտնայ նաեւ, որ Յանձնաժողովը նկատի չէ առած, դրամի բաշխման մէջ, բոլոր պայմանները, ինչպէս նաեւ կը յայտնէ, որ պատուիրակի մը համար նշանակուած 2000 ֆր. ամսականը բաւարար չէ:

Պ. Թէքէեան կ'առաջարկէ, որ նկատի ունենալով մեր մեծ պահանջները եւ ժողովուրդին բեռը ծանրացնելու դժուարութիւնները, առայժմ ներգաղթի պիւտճէն չքուէարկուի ինչպէս եւ Կովկասի վերաբերեալ պիւտճէն, որովհետեւ Կովկասի մէջ դրամը չէ, որ կը պակսի, այլ՝ սնունդի նիւթը: Պահանջուած գումարը հայթայթելու համար, Պ. Թէքէեան կ'առաջարկէ փոխառութեան ձեւը, երաշխիք ցոյց տալով մեր էնտամնիթէն, որովհետեւ ժողովուրդը, նուիրատուութիւննիրով արդէն յոգնած է եւ ազգ. տուրքը ոչ մեծ արդիւնք կու տայ՝ հարկադրելու միջոցներ չունենալնուս համար, ինչպէս Եգիպտոսի օրինակը շատ պարզօրէն ցոյց տուած է:

Պ. Չօպանեան մէկ քանի խօսքով դարձեալ կը նկարագրէ Կովկասի, Ատանայի եւ ամէն տեղ գտնուած հայերու ահաւոր վիճակը եւ կ'ըսէ, որ յուրաքանչիւր ոք իր գերագոյն զոհողութիւնն է, որ պիտի բերէ եւ պէտք է հասկցնել հարուստներուն, որ այս ազգային հանգանակութեան մասնակցին բոլոր գումարներով: Պէտք է երթալ անձնապէս, հասկցնել, ցնցել, բացատրել ամէն միջոցներով, հարկ եղած գումարները ստանալ, եւ ատոր համար օրինակը նախ Փարիզէն պիտի տրուի եւ նոյնիսկ այս Համաժողովէն եւ եթէ հարուստներէն մէկը մեծ գումարով մը մասնակցի՝ միւսներն ալ կը հետեւին անոր:

Նուիրատուութիւնը չարգիլէր, կ'ըսէ Պ. Չօպանեան, որ քիչ յետոյ ներքին փոխառութիւն ալ կատարենք:

Պ. Միքայէլեան Յանձնաժողովին կատարած բաշխումը արդար չի գտնար. գլխաւոր ծանրութիւնը աշխատաւոր դասակարգին վրայ ձգուած է դարձեալ, մինչդեռ մինչեւ հիմա այդ դասակարգն է, որ տարած է զոհողութեան մեծագոյն մասը, հարուստները գրեթէ ոչինչ ըրած են, եւ ինչ որ տուած են՝ ո՛չ թէ ազգ. իշխանութիւններուն, այլ օտար ընկերութիւններու վստահած են: Արդ, Պ. Միքայէլեան կ'առաջարկէ գլխաւոր 3 պարագայ նկատի ունենալ հանգանակութիւններու ատեն՝ բանուոր դասակարգ, հարուստ դասակարգ եւ երկրի ու արտասահմանի հայութիւն: Միքայէլեան համաձայն չէ նաեւ, որ ներգաղթի պիւտճէն դուրս ձգուի, որովհետեւ 6 ամսուան մէջ ներգաղթը կրնայ սկսիլ, միւս կողմէ՝ հակառակ է ներքին փոխառութեան, որով հազիւ կազմուած միացեալ կառավարութեան վրայ մեծ ծանրութիւն մը դրուած պիտի ըլլար: Կ'առաջարկէ, որ հանգանակութիւնը կատարուի նախ հարուստներէն սկսելով, մեծ թափով եւ համերաշխաբար: Պ. Միքայէլեան նուիրահաւաքութեան սիսթէմը կրկին կը շեշտէ, յայտնելով, որ դեռ չազատագրուած ազգերը իրենց պարտականութիւնները պիտի կատարեն զուտ գաղափարական հողի վրայ:

Նիստը փակուեցաւ ժամը 8-ին, շարունակութիւնը յաջորդին ձգուելով:

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 28, թթ. 10-14: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ 29-րդ

29 մարտ 1919.

Նիստը բացուեցաւ ժամը 6-ին՝ Վսեմ. Գ. Նորատունիկեանի նախագահութեամբ եւ 32 անդամներու ներկայութեամբ:

Օրակարգ

Ա. Նոր Պատուիրակութեան պիւտճէի քուէարկութիւնը
Բ. Տիրէքթիւներու վերջի մասին քննութիւնը

Վսեմ. Նախագահը պիւտճէի խնդրոյն վրայ այն կարծիքը կը յայտնէ, թէ այդ մեծ գումարները՝ որ 30 երեսուն միլիոնի ֆրանքի կը յանգին՝ միայն նուիրատուութեամբ մեր ազգայիններէ չի կարելի ձեռք բերել եւ պէտք է մտածել ուրիշ միջոցներու վրայ: Օրինակ. կ'առաջարկէ պօն տը թրէզորներ շրջաբերութեան հանելու եղանակ որոնել սեղանատանց հետ համաձայնութեամբ՝ որոնցմէ կարելի է նաեւ, որ օտարներ ալ գնեն, քանի որ տոկոսաբեր պիտի ըլլան եւ իբր երաշխիք կարելի է մեր ստանալիք էնտամնիթէն ցոյց տալ գլխաւորաբար ու նոյնիսկ Կովկասեան Հանրապետութեան առաջարկ ընել: Ասիկա այն առաւելութիւնը կ'ունենայ նաեւ, որ օտարներուն տրուելով չծանրանար հայկական դրամագլուխներուն վրայ, եւ չարգիլէր միեւնոյն ժամանակ նուիրահաւաքութիւնն ալ կատարել: Նախագահը կը յաւելէ, թէ կարելի է նաեւ Կարմիր Խաչի վիճակահանութեան տոմսեր ալ հանել: Բայց ասոնք զուտ մասնագիտական խնդիրներ են եւ առաւելապէս Պատուիրակութեան կը պատկանի զբաղիլ անոնցմով: Լաւագոյն միջոցն է հոս միայն ընդհանուր առմամբ պիւտճէին սկզբունքները որոշել եւ խնդիրը ղրկել Պատուիրակութեան, որ, իր, կարգին պէտք եղած ձեռնհաս անձանց հետ բանակցելով, յարմարագոյն ձեւ մը գտնայ այն մեծ գումարները հայթայթելու համար: Պ. Նախագահը կ'անդրադառնայ նաեւ հայ ունեւոր դասին ցուցած ժլատութեան նկատմամբ եղած մեղադրանքներուն եւ կը գտնայ, որ բացասական երեւոյթն է հայու մէկ դրական յատկութեան, այն է՝ խնայասիրութիւն: Շատեր իսկ տուած են յօժարութեամբ վարժարաններու, եկեղեցիներու եւ այլն:

Պ. Համբարձումեան ցոյց տալով, որ նուիրատուութեան ժողովուրդին մէկ մասն է, որ կը մասնակցի, որ նոր նուիրատուութեան մը համար դարձեալ նոյն մասն է, որ կը մասնակցի /աշխատաւոր եւ միջակ դասակարգը/ եւ որ ան չկրնար լեցընել այս մեծ

պահանջները, միւս կողմէ՝ ցոյց տալով դարձեալ, որ փոխառութիւնները, չունենալով իրենց ետեւը վստահութիւն ներշնչող երաշխիքներ եւ այլն, ազգային տուրքի սիսթէմը լաւագոյն կը գտնայ:

Պ. Համբարձումեան իւրաքանչիւր հայու վրայ միջին հաշուով գումար մը որոշելով՝ ցոյց կու տայ, որ ակնկալուած գումարը շատ դիւրաւ կը գոյանայ: Անսաստներուն համար կ'առաջարկէ բարոյական պատիժներ, սեւ եւ ճերմակ գիրքերու մէջ պարտաճանաչներու եւ անպարտաճանաչներու անուններ հրատարակել, ընկերային յարաբերութիւններէ զրկում, պոյքոթ եւ այլն, հասկցնել նաեւ, թէ հիմա չվճարողները վաղը հայկական կառավարութեան պիտի վճարեն յաւելեալ տուգանք:

Պ. Թէրզիպաշեան. Այստեղ պէտք է պարզուի տուրքի իրաւաբանական հանգամանքը: Տուրք իւրաքանչիւր քաղաքացին կը վճարէ պետութեան՝ փոխարէն այն պաշտպանութեան եւ օժանդակութեան՝ որ ան կը գտնայ պետութեան կողմէ եւ որուն ծախքերուն մասնակցելու կը պարտաւորուի: Քանի որ հայ պետութիւն կազմուած չէ դեռ, արդար չէ տուրք գանձելու ձեռնարկել: Փոխառութեան միջոցն ալ գործնական չեմ գտներ, ըստ որում՝ կապուած է ֆինանսական եւ մասնագիտական շարք մը բարդութիւններու հետ: Այդ բանը դիւրին կ'ըլլայ մեր քաղաքական դրութեան ճշդուելէն վերջ, որ եթէ ուշանայ, թերեւս Պատուիրակութիւնը ձեռնարկէ հիմնել հայ ազգային պանքա մը, որ աւելի դիւրին է անշուշտ, քան փոխառութիւնը: Բայց սա եւս մասնագիտական հարց է եւ մենք, փոխանակ վիճելու, լաւ կ'ընենք, որ որոշ միջոցներ առաջարկենք Պատուիրակութեան: Բայց մէկ բան, որու մասին մենք այստեղ կտրականապէս կրնանք արտայայտուիլ, ան է, որ մենք պարտաւոր ենք ընթանալ այնպէս, որ ամէն հայ վստահաբար գիտնայ, որ ինք կազմուելիք հայկական պետութեան մէջ պիտի վայելէ այն ամէն ազատութիւնները իւր սեփականութեան մասին, որ տեսած է ուրիշ սահմանադրական ազատ երկիրներու մէջ: Եթէ այս վստահութիւնը չներշնչենք, եթէ թեկուզ փոքր չափով խախտենք այս հաւատքը՝ Հայաստան կը մնայ այն անապատը, ինչ որ է այսօր: Կ'առաջարկեմ, ուրեմն, մերժել բարոյական ճնշումներու առաջարկը, որն օրէնքով արգիլուած է եւ պարտադրել Պատուիրակութեան, որ ամէնալայն հիմքերու վրայ կազմակերպէ հանգանակութեան դրութեան:

Տ. Համբարձումեան այս կերպ դրամ գանձելու յաջողութեան առաջին պայման կը նկատէ կատարեալ համերաշխութիւնը եւ համաձայնութիւնը:

Պ. Մաթիկեան կը գտնայ, որ նուիրահաւաքութիւնը բաւական արդիւնք դեռ կրնայ տալ եւ կ'առաջարկէ, սակայն, ազգային տուրքին հետ միասին ընել, ինչ որ Ամերիկա եւ կարգ մը գաղութներ արդէն կ'ընեն եւ որոնք իրարու արգելք չեն:

Պ. Տամատեան ցոյց տալով, որ մեր կառավարութիւն չունենալը, նիւթապէս վստահութիւն ներշնչող հաւաստիքներ ու հարկադրիչ միջոցներ չունենալը գլխաւորաբար՝ արգելքներ են ազգային տուրքի, ներքին կամ արտաքին փոխառութիւններու, պօն տը թրէզօրի յայտնի յաջողութեան, կ'եզրակացնէ. «Ընդունելով Յանձնաժողովին բերած նախահաշուի հասոյթներուն գումարը, կ'առաջարկեմ յանձնարարել Ազգային Պատուիրակութեան, որ անմիջապէս ձեռնարկէ հայ ժողովուրդին մէջ ներքին նուիրահաւաքութեան մը՝ ամէնալայն եւ ամէնաազդեցիկ եղանակներով ու միաժամանակ դիմում ընէ Դաշնակից պիտութեանց եւ Միացեալ Նահանգաց, որ նպաստի կարեւոր գումարներով օգնեն հայ ժողովուրդին»:

Ապա Ժողովը կը զբաղի ներգաղթի մասին ներկայացուած պիւտճէովը: Պ. Թէքէեան, որուն կը ձայնակցին նաեւ Պ. Պ. Միքայէլեան, Տոքթ. Նեւրուզ եւ այլք, կ'առաջարկէ, որ 15 միլիոնի պիւտճէն Պատուիրակութեան թոյլ տրուի նաեւ գործածել ներգաղթի խնդրոյն համար, երբ անմիջական եւ անակնկալ պահանջը ներկայանայ:

Պ. Տամատեան կը գտնայ, որ այդ պարագային՝ Պատուիրակութեան շատ քիչ չափով պիտի կրնայ օգնութեան գալ եւ եթէ կ'ուզուի, որ կարենայ գործ մը ընել այդ մասին՝ պիւտճէն աւելցնելու է:

Տոքթ. Նեւրուզ նոյն միտքը կը յայտնէ եւ կ'առաջարկէ նաեւ աշխատանոցներ եւ այլն բանալու համար դրամագլուխ յատկացնել գաղթականութեան գտնուած կեդրոններու մէջ՝ որպէսզի աշխատանք հայթայթուելով՝ ժողովրդեան ապրելու հնարաւորութիւն տրուի: Ապա քուէարկութեամբ յաջորդաբար կ'ընդունուին՝ Յանձնաժողովի՝ հանգանակութեան մասին պատրաստած ուղեգիծը, ապա Պ. Տամատեանի յաւելուածական բանաձեւը, յետոյ՝ ներգաղթի համար յատկացուած պիւտճէն, ինչպէս նաեւ Պ. Համբարձումեանի հետեւեալ բանաձեւը.

«Ա. Նկատելով, որ նուիրատուութեամբ կարելի չէ վեց ամսուան միջոցին երեսուն /30/ միլիոն ֆրանքի խոշոր գումար մը ձեռք բերել՝ ինչպէս անցեալ փորձերը ցոյց տուած են.

Բ. որ հասարակութեան խոշոր մեծամասնութիւնը, ինչպէս միշտ, այս անգամ ալ պիտի խուսափի իր պարտականութենէն,

կ'առաջարկեմ կիրարկել ազատութեան տուրքի սիսթէմը, բարոյական կարելի ամէն ազդեցութիւն բանեցնելով անպարտաճանաչներուն դէմ»:

Վսեմ. Նախագահ. Ուրեմն ժողովը սկզբունքով ընդունեցաւ Յանձնաժողովին բերած ուղեգիծը, ինչպէս եւ միւս առաջարկները, Պատուիրակութեան յանձնելու համար, որ կարենայ այս բանաձեւերու մէջ իւր աշխատանքները վարել:

Պ. Փափազեան խստիւ կը բողոքէ այս որոշմանց դէմ, որ առանց մանրամասն քննութեան՝ ամբողջ պիւտճէ մը կը քուէարկուի եւ հակասական բանաձեւեր միասին կ'ընդունուին:

Վսեմ. Նախագահը դիտել կու տայ, որ սկզբունքները միայն քուէարկուեցան եւ ոչ մանրամասնութիւնները:

Ժողովը կ'անցնի տիրէքթիւները պատրաստող Յանձնախումբին բերած նախագծին, որուն վերջին մասը Յանձնաժողովին կողմէ կը կարդայ Պ. Չօպանեան:

Պ. Ահարոնեան Ժողովին կը հաղորդէ հետեւեալ Ձեռագիրը, զոր ստացած է Հայկական Հանրապետութենէն:

Հեռագիր Երեւանի կառավարութենէն
/Փոխանցուած Արտաքին Գործոց Նախարարութեան կողմէ/

25 Մարտ 1919.

Անդրկովկասեան հայ բնակչութիւնը կը գտնուի իսլամական լուրջ վտանգի առջեւ: Թաթար կարեւոր ոյժեր կազմակերպուած թիւրք պաշտօնեաներու կողմէ, Շարուրի, Նախիջեւանի, Սուրմալուի եւ Ղարաբաղի մէջ յայտարարած են Ատրպատականեան ընդհանուր կառավարութիւն՝ զինաթափ ընելէ վերջ տեղական հայ ոյժերը: Կը սպասուի յառաջիկայ ծանր դէպքերու: Անհրաժիշտ է, որ Դաշնակիցներ, խուսափելու համար նոր արիւն թափելէ, ուժեղ եւ կտրուկ միջոցներով կասեցնեն թաթարները, առաջքն առնելու համար հաւանական կնճռոտութիւններու, որ ճամբաները բանան Թուրքիայէ տեղահանուածներու եւ հաստատեն հայ կառավարութեան համար յարաբերութիւններ:

Տիգրանեան
Նախարար Արտաքին Գործերու

Պ. Ահարոնեան բացատրութիւններ տալէ յետոյ այս հեռագրի մասին, կ'անդրադառնայ նոր Պատուիրակութեան երկու կողմերուն ամէնասերտ եւ միաձոյլ գործակցութեան անհրաժեշտութեան մասին, քանի որ մեզմէ անկախ եւ դժբախտ պարագաներու բերմամբ դեռ չենք կրցած ունենալ այդ Միացեալ Հայաստանի միացեալ կառավարութիւնը եւ ստիպուած ենք տանիլ Պատուիրակութեան այս երկու կողմերուն գոյութիւնը: Հետեւաբար, կ'առաջարկէ ընտրել նոր Պատգամաւորութեան իբրեւ անդամ այնպիսի մարդիկ, որոնցմով կարելի ըլլայ իսկապէս յառաջ բերել այդ սերտ եւ միաձոյլ գործակցութիւնը, եւ կը թելադրէ նաեւ, որ այս ժողովին ընտրուելիք

պատուիրակներուն թիւը /3/ երեք ըլլայ, հաստատելու եւ կարելի դարձնելու համար իսկ միութեան գաղափարը: Ըսելով, որ այդ Պատուիրակութիւնը կրնայ միշտ օգտուիլ ամէնալայն չափով խորհրդականներէ եւ մասնագէտներէ, կը հերքէ այն կարծիքը, թէ քոմբէթանսներ զետեղելու համար հարկաւոր է հինգ թիւը: Կը շեշտէ, որ քիչ հոգիով աշխատանքը աւելի շատ եւ դիւրին կը կատարուի, ինչպէս նաեւ համաձայնութիւն գոյացնել: Պ. Ահարոնեան կ'առաջարկէ նաեւ բոլորովին վերցնել թրքահայ-ռուսահայ խնդիրներու մէջ տեղի ունենալիք բրեբօնդէրանսի մասը, որովհետեւ այդ դժբախտ բառն արդէն անջատումը կը շեշտէ եւ բոլորովին անհեթեթ է, քանի որ բնականօրէն արդէն իւրաքանչիւր պատգամաւորի կարծիքը գերակշիռ պիտի ըլլայ այն խնդիրներու մէջ, որոնց ան աւելի ծանօթ է. յետոյ՝ ո՞ր հարցը ռուսահայ է եւ ո՞րը թրքահայ, երբ Հայկական Դատը մէկ է միայն: Իրեն իսկ Կովկասեան Հանրապետութեան կողմէ հոս ղրկուելուն գլխաւոր պատճառը եղած է առաւելապէս այն հանգամանքը, որ ինք եղած է թրքահայ դատի գերագոյն պաշտպանը: Պ. Ահարոնեան կը վերջացնէ իր խօսքը, ըսելով, որ ինք համաձայն է պատրաստուած նախագծին, բայց միայն մատնանշելի ըրաւ այն կէտերը, որ իր արդէն տպած էին:

Պ. Չօպանեան ինքն ալ կը ձայնակցի, որ այս առաջարկը համապատասխան չէ նաեւ իր Յանձնաժողովի անդամներու զգացումներուն: Բայց տօքիւման մըն է, զոր դժբախտ իրականութիւնը հարկադրուած է քոմբրոմիսներով ընդունիլ: Պ. Չօպանեան կ'աւելցնէ նաեւ, որ սա ընդունուած է այն յոյսով, որ շատ կարճ ժամանակի մը համար է եւ թէ կը յուսայ, որ Միացեալ Հայաստանի եւ միացեալ կառավարութեան ստեղծումով պիտի ջնջուին այս անբաղձալի եւ անբնական դրութիւնը:

Պօղոս Նուպար Փաշա չի ժխտեր, որ ընդունուած է տիրէքթիւներու այդ վերջին մասը, յայտարարելով հանդերձ, որ ''Mauvais arrangement'' (անբաւարար կարգադրութիւն) մըն է եւ զոր ընդունուած է իբրեւ քոմբրոմիս:

Նախագիծին վաւերացումը յաջորդ նիստին յետաձգելով՝ նիստը փակուեցաւ ժամը 8 1/4-ին:

Վսեմ. Պողոս Նուպար Փաշա խոսք կ'առնէ անձնական մի 24-ի նիստին մէջ Պ. Վարանդեանի ըսած խօսքերուն Կովկասական Հանրապետութեան մասին:

Առ այս՝ Նորին Վսեմութիւնը Դիւանին կը ներկայացնէ հետեւեալ նամակը, որպէսզի իւր դիտողութիւնները ատենագրութեանց մէջ անցնին: Ահաւասիկ նամակին թարգմանութիւնը, որ ֆրանսերէն գրուած էր:

Փարիզ, 27 Մարտ 1919.

Վսեմափայլ Գաբրիէլ Էֆենտի Նորատունկեան
Ատենապետ Ազգային համագումարի
Փարիզ

Մեծայարգ Տիար Ատենապետ,

Կրնայ ըլլալ, որ ներկայ չկարենամ գտնուիլ այն նիստին, որուն մէջ պիտի կարդացուի 24 Մարտի նիստին ատենագրութիւնը, հետեւաբար գրաւոր կեպով կը ղրկեմ քեզի այս քանի մը տողերը՝ որոշակի կերպով սահմանելու եւ լրացնելու համար Տ. Վարանդեանի հաւաստումին դէմ իմ տուած պատասխանս:

Ինչպէս որ արդէն յայտնեցի, միշտ զգուշացայ, երբ Կովկասի հետ հաղորդակցիլ անկարելի էր, ըսել ուզէ խօսք, որ կրնար պարտաւորել Կովկասի Հայկական Հանրապետութեան քաղաքականութիւնը՝ այն արդար պատճառով, որով կ'անգիտանայի Հանրապետութեան տեսութիւնները: Եւ Պ. Վարանդեանը միշտ զայս կը մեղադրէր զիս, հաստատելով, թէ մեր Կովկասի հայրենակիցներուն տեսութիւնները ամբողջովին համաձայն էին մերիններուն: Իրեն միշտ պատասխանած էի, թէ այդ էր իմ անկեղծ իղձս ալ, բայց անկարելի էր ինծի համար՝ հաստատել զայն իմ յայտարարութիւններուս եւ պաշտօնական յիշատագիրներուս մէջ՝ մինչեւ որ Հայկական Հանրապետութիւնը ինծի չի հաստատեր զայն: Ես միշտ որոշակի կերպով ըսած եմ իմ յիշատակագիրներուս մէջ, թէ չկրնալով հաղորդակցիլ Կովկասի Հայ.

Հանրապետութեան հետ, չէի կրնար անոր անուամբ խօսիլ, թէպէտ մեր սիրիլի իղձն էր իրագործուած տեսնել Կովկասեան հայ գաւառներուն միութիւնը Տաճկահայաստանի գաւառներուն հետ եւ թէ ես ապահով էի թէ մեր Կովկասի եղբայրներն ալ նոյնը կը բաղձային:

Եթէ Տ. Վարանդեանի թելադրութիւններուն տեղի տուած ըլլայի, որ իր Կովկասի հայրենակիցներուն թարգմանը կը հանդիսանար, պէտք էի առաջնորդուիլ այն հրապարակային յայտարարութիւնով, որ ըրած էր անցեալ Օգոստոսին, զինադադարէն շատ քիչ առաջ, Լոնտոն, հացկերոյթի մը մէջ արտասանած ճառին մէջ, զոր թերթերը արտատպեցին եւ որուն մէջ ըսած էր. «Հայերը միշտ անկեղծ կուսակից եղած են ամբողջական Ռուսիոյ եւ միշտ ալ պիտի աշխատին կազմութեան Ռուսիոյ Ազգերու մեծ Դաշնակցութեան՝ որուն մաս պիտի կազմեն իր զանազան ժողովուրդները, իբր անջատ եւ ինքնավար ազգութիւններ»:

Պէտք պիտի ըլլար, ուրեմն, որ յայտարարէի իրեն պէս, թէ Կովկասի Հայկական Հանրապետութիւնը, մեզի հետ միանալ չուզելէ զատ, կը փափաքէր մաս կազմել Ռուսիոյ Ազգերու Դաշնակցութեան:

Ուրախ եմ այսպէս ըրած չընելուս, որովհետեւ հաճութեամբ տեղեկացանք Տիար Ահարոնեանէն, երբ Կովկասի Հայկական Պատուիրակութիւնը Փարիզ հասաւ, թէ իրենց ծրագիրը ամբողջովին համաձայն էր մերինին եւ մեզի պէս իրենց ալ կէտ նպատակն էր իրագործուած տեսնել Ամբողջական Հայաստան մը, Ազգերու Դաշնակցութեան երաշխաւորութեան ներքոյ, աջակցող պետութեան մը, ինչպէս անխոհեմաբար յայտարարած էր Տ. Վարանդեան:

Հաճեցէք ընդունիլ, մեծայարգ Տիար Ատենապետ, խորին յարգանացս հաւաստիքը:

Պօղոս Նուպար

Պ. Վարանդեան այս մասին իւր պատասխանը գրաւոր կը յանձնէ Դիւանին, որ հետեւեալն է.

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 28, թթ.15-23: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ 30-րդ

31Մարտ 1919.

Նիստը բացուեցաւ Վսեմ. Նորատունկեանի նախագահութեամբ, 32 անդամներու ներկայութեան, ժամը 5 1/2-ին:

Օրակարգ

Ա. Տիրէքթիւներու վերջին մասի քննութիւնն ու վաւերացումը

Տոքթ. Սայեան մէկ-երկու օրէն մեկնելու ստիպուած ըլլալուն համար, իր ընտրողներուն կողմէ իր վրայ պարտք դրուած հետեւեալ առաջարկը կը ներկայացնէ.

«Համագումարի Պ. Նախագահին.

Պուլկարահայ պատգամաւորական ժողովի որոշման համաձայն, պարտք կը համարեմ յայտնել, որ հրամայական մանտա ունինք ներկայ ժողովին առաջարկելու հետեւեալը.

«Համագումարը կը ճանչնայ եւ կ'ընդունի Հայկական Հանրապետութիւնը իբրեւ պետութիւն ամբողջ հայութեան եւ անոր կառավարութիւնը՝ իբրեւ ժամանակաւոր համահայկական կառավարութիւն»:

Պատիւ ունեմ ներկայացնելու այս բանաձեւը, խնդրելով որ քուէարկէք զայն:

Պուլկարահայոց պատգամաւոր
Տոքթ. Սայեան
31 Մարտ 1919, Փարիզ»

Պ. Հինդլեան Տոքթ. Սայեանի գրաւոր այն առաջարկին նկատմամբ, որով կը յայտարարէ, թէ պուլկարահայոց պատգ. ժողովոյ որոշմամբ imperatif mandat ունինք ճանչնալու Երեւանի Հայ Հանրապետութեան կառավարութիւնը որպէս հայկական ընդհանուր կառավարութիւն, ինծի համար պուլկարահայոց պատուիրակութեան՝ Համագումարին մէջ պատասխանատու կը նկատեմ զիս յայտարարելու, թէ՝ ծանօթ չէ նման որոշում մը եւ ո՛չ իսկ impératif mandat մը:

Պ. Սայեան յանձն կ'առնու վաղը գրաւոր ապացոյց բերել Ժողովին:

Պ. Չօպանեան, իբրեւ Յանձնախումբին զեկուցանողը, կը կարդայ տիրէքթիւներու վերջին մասը: Խօսք կը դառնայ նոր Պատուիրակութեան մէջ ստեղծուելիք դիւանական մարմինի մը եւ «գործավար»-ի պաշտօնին շուրջ: Պ. Պ. Հինդլեանի, Բրօֆ. Թումայեանի, Բրօֆ. Խաչատուրեանի եւ այլոց կողմէ այդ մասին այն կարծիքները կը յայտնուին, թէ գործավար Դիւանը եւ Պատուիրակութեան ներքին կազմը պարզապէս Պատուիրակութեան պատկանող խնդիրներ են, որով Համագումարը զբաղելու պէտք չունի, թէ գործավար պաշտօնը կրնայ աւելի բարդացնել եւ ծանրացնել խնդիրը, թէ դուրս ձգել պէտք է այդ մասը բոլորովին, թողնելով կարգադրութիւնը նոր Պատուիրակութեան:

Պ. Փափազեան՝ հեղինակը այդ առաջարկին, կը բացատրէ, թէ ինչ կը հասնայ գործավար ըսելով: Դիտուած է, որ Պոլիս, Կովկաս եւ այլուր այս գործերը տնավարի կերպով կ'ըլլան, դանդաղօրէն ձգձգուելով եւ այլն: Իսկ այն պարագային մանաւանդ, երբ նոր Պատուիրակութեան մէջ երկու կողմ պիտի ըլլայ, այսպիսի մարմինի մը համար գործավարի գոյութիւնը անխուսափելի կը դառնայ՝ գործերը կանոնաւոր եւ արագ ընթանալու համար: Գործավարը պիտի ունենայ իր յատուկ սենեակը, որուն միջոցաւ մշտական հաղորդակցութիւն պիտի մշակեն Պատուիրակութեան երկու կողմերը՝ նպաստելով միացման: Ապա՝ 16 ձայնով այդ մասին դուրս հանուիլը կը քուէարկուի, իսկ Պ. Փափազեանի առաջարկը 7 քուէ կը ստանայ միայն:

Կարճ ժամանակ վիճաբանութեանց ըլլայ յետոյ Կովկասի Հանրապետութեան ներկայացուցիչներուն համար նշանակուած 3 թիւին մասին: Քուէարկութեամբ կ'որոշուի վերցնել 3 թիւը:

Յետոյ ժողովը երկար ատեն կանգ կ'առնէ տիրէքթիւներու այն պարբերութեան վրայ, որ կը վերաբերի թրքահայ խնդիրներու համար Թրքահայ Պատուիրակութեան, իսկ ռուսահայ խնդիրներու համար՝ Կովկասի Հանրապետութեան ներկայացուցիչներուն ունենալիք գերակշռութեան վրայ:

Երկու գլխաւոր հոսանք կը տեսնուին անոնք՝ որոնք այդ մասին վերնալը կ'ուզեն եւ անոնք, որոնք՝ պահպանուիլը:

Առաջին կարծիքին կ'արտայայտուին Պ. Պ. Մաթիկեան, Միքայէլեան, Լեւոն Շանթ, Վարանդեան, Սայեան Տոքթ. Օհանջանեան, պահանջելով այդ բրէթոնտէրանսի մասին ամբողջական ջնջումը, պատճառաբանելով, որ այդ յօդուածը կը շեշտէ արդէն իսկ դժբախտ իրականութեան բերմամբ նոր Պատուիրակութեան ստեղծուած մէջի երկու կողմերը եւ բաժանումը, որ դէմ է այն ոգիին միութեան, որ այնքան աշխատանքով երեւան բերել կը փափաքար որ ավելորդ իսկ է. որովհետեւ ոչինչ ըսուել է եւ ոչինչ կ'աւելցնէ եղածին վրայ, քանի որ կարելի չէ արդէն որոշել, թէ ո՞ր հարցը թրքահայ է, ո՞ր հարցը ռուսահայ եւ այլն:

Պ. Օհանջանեան այն միտքը կը յայտնէ, թէ նոր Պատուիրակութեան մէջ գոյութիւն ունեցող երկու մասերէն առաջինը՝ Կովկասի Հանրապետութեան Պատուիրակութիւնը՝ կը ներկայացնէ պետական շահերը պաշտպանող մարմինը, եւ պետական սկզբունքը, իսկ երկրորդը՝ այս Համագումարի ընտրած աւելի ազգային եւ բարոյական շահերը պաշտպանող մարմինը:

Իսկ Պ. Միքայէլեան շատ կը պնդէ, որ այս Համագումարը այսպիսի տխուր տօքիման չձգէ, հակառակ ամբողջ հայկական միութեան ձգտելու ոգիին, եւ հետեւեալ բանաձեւը կ'առաջարկէ.

«Ես կը պահանջեմ բոլորովին ջնջել Միացեալ Պատուիրակութիւններու խնդրոյն շուրջ եղած այն մասը, որու մէջ ըսուած էր, թէ Արեւմտահայ Պատուիրակութիւնը գերակշռող ձայն ունի արեւմտահայ խնդիրներու վերաբերեալ եւ ընդհակառակը: Այս կէտն իր մէջ կը պարունակէ երկու հատուածներու տարբեր գոյութեան իրաւունքը, եւ այդպիսով կը թողնէ պատմական տօքիման մը, որ իր էութեամբ հակառակ է մեր հիմնական սկզբունքին միացեալ Հայաստանի քաղաքական: Այդ կէտն առաւել եւս անտեղի է, մանաւանդ որ Պատուիրակութիւնները փոխադարձ համաձայնութեամբ պիտի գործեն եւ իբրեւ միացեալ կը հանդիսանան»:

Իսկ Բ. կարծիքէն կ'արտայայտուին Պ. Պ. Չօպանեան, Տամատեան, Թէրզիպաշեան, Հինդլեան, որոնք իրենք ալ իրենց զգացումներուն համաձայն չեն գտնար այդ բաժանումը, բայց անհրաժեշտ հետեւանքը կը նկատեն ողբալի իրականութեան, այսինքն այն, որ մինչեւ հիմա դեռ կարելի չէ եղած ունենալ արդէն Միացեալ Հայաստանը, իր միացեալ կառավարութեամբը եւ մէկ պատուիրակութեամբը, որ պարագային խնդրոյ մը շուրջ անհամաձայնութեան ատեն, խնդրին լուծումը մը տալու համար անհրաժեշտ կը դառնայ այսպիսի յօդուած մը: Պ. Տամատեան կը հակառակի Տոքթ. Օհանջանեանի արտայայտած մտքին, որովհետեւ, այդ պարագային, այս ընտրուած համագումարէն պատ. պարզ խրտուիլակի մը ձեւը կ'առնէ եւ որպէսզի արտայայտման յօդուածին խստութիւնը փոխուի՝ կ'առաջարկէ աւելցնել՝ «անհամաձայնութեան մը պարագային՝ իբրեւ վերջին միջոց» մասը: Պ. Չօպանեան այն յոյսը կը յայտնէ, որ այս յօդուածը շատ կարճ ժամանակի համար պիտի ըլլայ, որովհետեւ բոլորս ալ պիտի աշխատինք ժամ առաջ իրականացնել միացեալ կառավարութիւնը, բայց որ մինչեւ այդ անհրաժեշտ է այդ: Եւ նկատել տալով, որ այս վիճաբանութեամբ աւելի խրամատ կը բացուի անջատման՝ կ'առաջարկէ ամիջապէս փակել վիճաբանութիւնը:

Քուէարկութեան դրուելով՝ 14 ձայն ստացաւ վերնալու կարծիքը, իսկ 9 ձայն՝ պահելու այդ պարբերութիւնը, որով խնդիրը մնաց անհետեւանք:

Նիստը փակուեցաւ ժամը 8 1/2-ին:

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 28, թթ. 24-28: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ 31-րդ

1 Ապրիլ 1919թ.

Նիստը բացուեցաւ Վսեմ. Նորատունկեանի նախագահութեան տակ, 30 անդամներու ներկայութեան, ժամը 7-ին:

Օրակարգ

Ա. Տիրէքթիւներու վերջին մասին քննութիւնն ու վաւերացումը

Պ. Թէքէեան թէ՛ իբրեւ յանձնախումբի անդամ եւ թէ՛ իբրեւ ժողովական կ'առաջարկէ պահել յօդուածը, միայն décision-ը avis-ի փոխելով:

Տիրէքթիւներու այդ մասը, avis բառովը քուէարկութեան կը դրուի եւ միայն 16 ձայն կը շահի: Իսկ բոլորովին այդ մասը վերցնելու կարծիքը 11 ձայն կը ստանայ, որով անհետեւանք կը մնայ:

Պ. Հինդլեան կը տեսնայ որ ո՛չ մէկը, ո՛չ միւսը ունեցաւ 19 քուէ, ըստ Ներքին Կանոնագրի, հետեւաբար՝ միջոց մը կ'առաջարկէ, այն է՝ արմատապէս բաժանման ջնջումը, այսինքն ա՛լ նկատի չառնել կողմերու բաժանումը եւ Պատուիրակութեան ունենալիք ոեւէ հարց անցընել տալ խառն քուէարկութեամբ:

Պ. Ահարոնեան դիտել կու տայ, որ այս այնպիսի հարց մըն է, որ կը պատկանի Պատուիրակութեան երկու մասերուն ալ, իր անցեալ անգամ այս մասին ըրած ճառէն յետոյ, քանի որ դեռ կ'ուզուի քուէարկութեամբ լուծել: Պ. Ահարոնեան կը յայտարարէ, որ այդ յօդուածը ընդունելի եւ պարտադրիչ չէ իրեն համար, յօդուած, որ դէմ է Հանրապետութեան՝ իրեն տուած հրահանգներուն, իր սրտին, իր գլխին եւայլն: Խնդրի բաժանում չկայ եւ միայն մէկ դուռ կայ:

Պ. Չօպանեան ցոյց կու տայ, որ ո՛չ անջատում, ո՛չ ալ խտրութիւն դնելու խնդիր կայ, այլ՝ դժբախտ իրականութիւնն է, որ մեզ հարկադրած է այդ երկու կողմերն ունենալու, եւ այդ բաժանումը հոս չէ որ եղած է, այլ՝ Կովկաս իսկ, ուր, բնականաբար, կառավարութիւնը՝ առանց թրքահայերու եւ Արեւմտահայ Խորհուրդը՝ առանց ռուսահայերու առանձին նիստեր կը գումարեն եւ նոյնիսկ Կովկասի Հանրապետութիւնը նիւթապէս կ'օգնէ այս վերջնոյն: Հետեւաբար, հոն այդ բաժանումը, ըսել է՝ օգտակար կը տեսնեն եւ խոհեմութիւն կը համարեն պահել զայն: Հոս ալ գոյութիւն ունի այդ եւ Պատուիրակութիւնն է, որ պիտի աշխատի կարելի եղածին չափ շուտ միացնել այդ երկու խումբերը: Պ. Չօպանեան այսպէս իր կարծիքը լուսաբանելէ յետոյ՝ կ'առաջարկէ անմիջապէս համաձայնիլ, խնդիրը փակելով, քանի որ Կովկասի Հանրապետութեան ներկայացուցիչները իրենց վերջնական կամքը դրած են:

Ամենապատիւ Դուրեան Սրբազան կը յայտնէ, որ երկուութիւնը ճակատագրականօրէն ստեղծուած է, բայց միւս կողմէ դեռ չէ հասկցած, որ ի՞նչ է երկու Պատուիրակութեան ալ պահուած գերակշռութեան հիմը, քանի որ խնդիրները կարելի կ'ըլլար արեւելահայի կամ արեւմտահայի վերածել: Ուրիշ կէտ մըն ալ դիտել կու տայ, թէ ի՞նչ պիտի ընէ, օրինակ, Կովկասի Պատուիրակութիւնը, եթէ հոն իր կառավարութիւնը այնպիսի բան մը ընէ, որ հոս հաճոյ չթուի: Նկատել տալով, որ այս բոլոր պարագաներուն մէջ ալ այդ յօդուածը ոչինչ կրնայ փոխել կացութեան մէջ, կ'առաջարկէ ջնջել՝ քանի որ վէճի ալ տեղի կու տայ:

Պ. Թէրզիպաշեան. Այս յօդուածի բանավէճը յառաջ եկաւ այն պատճառաւ, որ կրցանք համաձայնիլ միակ Պատուիրակութիւն կամ կառավարութիւն մը ստեղծելու շուրջ: Շաբաթ օրուան իւր ճառին մէջ Պ. Ահարոնեան անորոշ բառերով Դաշնակիցներուն վերագրեց այս անյաջողութեան պատճառը: Անշուշտ ըսել կ'ուզէր, թէ մեր հարցը օր առաջ չվճռուելու այն հանգամանքը արգելք եղաւ միութիւնը աքթիւ կերպով գլուխ բերելու, այլապէս Դաշնակիցներ ալ մէկ արգելք չէին կրնար ըլլալ, եւ մենք գիտենք, որ միակ կառավարութիւն մը չստեղծուելու արգելքը մեր միջէն էր. մենք /միտքս արագ արտայայտելու համար է որ կը գործածեմ՝ մենք, նոքա բառեր են, որք սակայն իմ ալ ականջին խորթ կը հնչեն/ ո՛չ միայն հնարաւոր զիջումներ ըրինք, այլ նաեւ վերջին պահուն առաջարկեցինք որպէս արպիթրի, կանչել Պ. Աճէմեանին, որ ռուսահայ ըլլալէ զատ,- գիտէք որ ռուսահայոց ամէնակարկառուն դեմքերէն է,- ըլլալով յայտնի իրաւաբան, միջազգային օրէնքներուն հմուտ, եւ միանգամայն ըլլալով երկար ատեն Տումայի անդամ եւ մէկը յայտնի կուսակցութեան մը լիտերներէն, Պ. Աճէմեան եկաւ, լսեց մեզ եւ յայտնեց եզրակացութիւն մը, որ ո՛չ միայն ընդունելի եղաւ մեզի, այլ նոյնիսկ քանի մը քայլ եւս առաջ անցանք ընդունելով Պ. Չօպանեանի առաջարկը, որ աւելի կը մօտենար ռուսահայերու միտքերուն: Եւ սակայն վերջին պահուն Պ. Օհանջանեան քաթեկորիկ կերպով յայտնեց, որ իրենք Հանրապետական կառավարութենէն չունին հարկաւոր հրահանգ եւ իրաւասութիւն՝ ընել կարենալու համար այդպիսի քայլ մը: Այս յայտարարութեան վրայ էր, որ բանակցութիւնները վերջ գտան:

Արդ՝ որպէս Յանձնաժողովի մէկ անդամ ընելով այս յայտարարութիւնը այս անհամաձայնութեան առթիւ, որ մեզ բերաւ այս յօդուածին, եւ նորա շուրջ բացուած վիճաբանութեանց, ես կ'ըսեմ, քանի որ միութիւնը մեր սիրտերուն մէջ կը մնայ, քանի որ միակ կառավարութիւն մը չկրցանք ստեղծել, քանի որ մեր յայտնած թանտանսի համար խաղաղութեան Քոնֆերանսը չէ տուած իր դրական վճիռը, տը ֆաքթօ արտաքին աշխարհի առաջ մենք կը մնանք դեռ անջատ միութիւններ: Արդէն Ժողովը իւր քուէարկած բանաձեւին մէջ ըսեր է, որ մինչեւ որ հնարաւոր ըլլայ ստեղծել միակ

կառավարութիւն մը, իւրաքանչիւր կողմը կը պահէ իւր իրաւական տիտղոսը, եւ քանի որ գլխաւոր հարցերու համար նոյնպէս ընդունուած բանաձեւով պայման կը դնենք, որ կողմերը հարցերը վճռեն համաձայնութեամբ, կը հետեւի ուրեմն, որ մէկ կամ միւս կողմի համար մասնաւոր նշանակութիւն ունեցող հարցերու կնատուիլը համաձայնութիւն չգոյացած պարագային, պատկանեալ կողմը իրաւական եւ բանավարական օրէնքով կու տայ իր որոշումը: Տիրէքթիւներու մէջ մենք բացատրական մը եթէ չդնենք իր այս բնական ընթացքով կողմերէն մէկը չկրնար բացասական դերի մէջ մնալ: Օրինակով խօսինք. եթէ վաղը Խաղաղութեան Քոնֆերանսէն առաջարկուի զիջիլ Խարբերդի նահանգը եւ եթէ երկու Պատուիրակութիւնները չհամաձայնին, ազգային տելեկասիոնը որուն անշուշտ պիտի ուղղուի իրաւական սոյն հարցը, չկրնար պատասխանել, թէ երկու Պատուիրակութեանց մէջ համաձայնութիւն գոյացած չըլլալու համար՝ չեմ կրնար պատասխանել: Այսպիսի պատասխան մը ապսիւրտ թէզ մը կ'ըլլար, կամ եթէ Հայկ. Հանր. կառավարութեանը Շուշիի մէկ հողամասի մասին առաջարկ մը ըլլայ եւ համաձայնութիւն չգոյանայ այդ առթիւ երկու Պատուիրակութեանց մէջ: Հանրապետութեան ներկայացուցիչը դաւաճանած պիտի ըլլար իւր կառավարութեան շահերուն՝ եթէ այդօրինակ ոչ բնաթեք ընթացքով մը անցկացնէր գործին լուծումը, կամ ինքզինքը ֆոս-պոզիսիոնի մը մէջ դներ արտաքին աշխարհի առաջ: Կարծեմ այնպիսի բնական լուծումը իմ կարծիքով կ'իյնար այն սկզբունքային հարցերու կատեգորիայի մէջ, որոնց համար նախատեսուած է պատգամաւորներու ամբողջ թիւի մեծամասնութեան քուէով լուծուելու կարգադրութիւն: Ես կ'առաջարկեմ, ուրեմն, չերկարել վիճաբանութիւնն այս հարցի առթիւ, որ իւր բնական եւ բանավարական ընթացքն ունի եւ արձանագրելով այս առթիւ եղած քուէարկութեան արդիւնքը, անցնիլ միւս օրակարգին:

Պ. Փափազեան յուզուած կը խօսի՝ յայտարարելով, որ իր խիղճը հանդարտեցնելու համար պարտաւոր է իր տպաւորութիւնները յայտնել: Մեր հարցը կը գտնուի շատ ծախող վիճակի մէջ: Կը թուի, թէ այս անգամ ալ ան չպիտի լուծուի կամ պիտի լուծուի այն ժամանակ, երբ հայ չի մնար: Ընդհանուր տիրող քաղաքական դրութիւնը, ինչպէս դուք ալ պիտի նկատէք, շատ աննպաստ է մեզի. մեծ պետութիւնները իրենց հաշիւները մաքրելու եւ առիւծի բաժին վաստկելու մէջ են, իսկ Ամերիկան կը թուի, թէ չըմբռներ մեր ճգնաժամը, եւ վաղը միւս օրը կրնայ պայթիլ տիեզերական յեղափոխութիւնը, իսկ այն ժամանակ ոտքի տակ երթացողներու առաջինը մեր ժողովուրդն է նորէն, այսինքն՝ վերջնական ջարդի ենթակայ: Ահա՛ թէ ինչո՛ւ կ'ըսեմ ձեզի՝ պէտք է ճանչնալ Կովկասի Հանրապետութիւնը իբրեւ մերը եւ ոյժ տալ անոր. մեր յոյսերը մեր վրայ դնելու ենք: Ես ձեզմէ շատ աւելի գիտեմ Հայկական Հանրապետութեան թերութիւնները, բայց եւ այնպէս՝ սիրտովս եւ բանականութեամբս ըսեմ՝ եկած է վայրկեանը, որ իրական ոյժ մը ստեղծենք եւ անոր կոթնինք, մեր միակ փրկութիւնը ան պիտի ըլլար: Առաջին օրերը, երբ նոր հասած էի, բոլորովին հաւատացած էի, թէ իրար պիտի հանդիպինք իրապէս Ամբողջական Հայաստան ստեղծելու գաղափարով տոգորուած: Սկիզբէն իմ ընկերներուս մէկ քանիին կողմէ տակտի պակաս նկատեցի, որով նախապաշարում մը առաջ եկաւ, սակայն այդ իրաւունք եւ հիմք մը չպիտի ծառայէր միւս կողմին հակառակ ծայրը նետելու եւ իբր անհարազատ ընդունելու Հայկական Հանրապետութիւնը: Այս այսպէս է եւ ո՛չ ոք չփորձէ արդարանալ գեղեցիկ խօսքերով կամ ժխտել ճշմարտութիւնը: Եւ այսպէս, թոյլ տուիք, որ այս տգեղ եւ կորստաբեր վիճակը ստեղծուի: Մեր այս ընթացքը կը տանի մեզ դէպի անջատում, այսինքն՝ դէպի կորուստ: Եւ մէկ կողմի տիրող հոգեբանութիւնը երէկ իր արտայայտութիւնը գտաւ երէկուայ Պ. Տամատեանի ճառին մէջ, եւ ահա՝ մենք կանգնած ենք նաեւ ներքին անջատման մը, այսինքն՝ անդունդին եզրին: Անջատման թանտանսը, պարոննե՛ր, բարեբախտաբար գոյութիւն չունի ժողովուրդին մէջ, դուք միայն էք: Ես ժողովուրդին կողմէն կու գամ յայտարարելու այս եւ պահանջելու

ժողովուրդին անունով. մեռցնել ձեր մէջ կիրքը. ստեղծել միակ իշխանութիւն մը մէ՛կ ժողովուրդի եւ մէ՛կ հայրենիքի համար, որ այնքան տառապեցաւ:

Պ. Նախագահը կը յայտարարէ, թէ տիրէքթիւներու խնդիրը ամբողջութեամբ վերջացած ըլլալով, յառաջիկայ նիստը պիտի պատկանի Ազգային նոր Պատուիրակութեան մը ընտրութեան՝ ըստ Համագումարի նախորդ որոշման:

Ժողովը կը փակուի ժամը 8½-ին:

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 30, թ. 1-5: Ձեռագիր: Բնագիր:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

Յանձնաժողովը, որուն նախագահն էր Ամեն Տ. Եղիշէ Արքեպս. Դուրեան, Անդամները՝ Պ. Պ. Վահան Փափազեան, Մ. Համբարձումեան, Վահան Թէքէեան, Տոքթ. Նեւրուզ, Լեւոն Շանթ, Արշակ Չօպանեան /տեղեկաբեր/, խմբագրեց հետեւեալ ուղեգիծը՝ համաձայնութեամբ Ազգ. Պատուիրակութեան Նախագահ Ն. Վ. Պօղոս Նուպարի եւ Հայկական Հանրապետութեան Պատուիրակ Պ. Պ. Ա. Ահարոնեանի եւ Հ. Օհանջանեանի:

Ուղեգիծ՝ կազմուած Հայ Ազգային Համագումարի կողմէն նորընտիր Ազգային Պատուիրակութեան համար:

Ազգային Պատուիրակութիւնը պաշտօն ունի.

Ա. Հետապնդել Համագումարի անունով Խաղաղութեան Վեհաժողովին ներկայացուցած հայկական պահանջներու Յիշատակագրին ամբողջական իրականացումը:

Բ. Նպաստել իրականացնելու Միացեալ Հայաստանի միակ կառավարութիւնը:

Գ. Աշխատիլ, որ առաջին որպէին հայ ազգը ընդունուի Ազգերու Ընկերութեան իբր անդամ:

Այս նպատակներուն հասնելու համար Պատուիրակութիւնը ձեռք պիտի առնէ հետեւեալ միջոցները:

1. Հետապնդել ոչ-փրկեալ հայկական հողերուն հայ եւ Դաշնակից ոյժերով փութանակի գրաւումը:

2. Պահանջել Դաշնակիցներէն՝ թուրք իշխանութեանց անմիջական ու բացարձակ վտարումը բոլոր հայկական հողամասերէն:

3. Աշխատիլ հայ զինուորական ոյժերուն ստուարացման եւ զօրացման:

4. Ընել ինչ որ հարկ է ապահովելու համար ազատութիւնը մահմետականացած բոլոր հայոց՝ իրենց նախկին կրօնքին վիրադառնալու. Նոյնպէս եւ ձեռք բերելու համար շուտափոյթ ազատումը մահմետականներու մօտ գտնուող հայ կանանց եւ տղայոց:

5. Հետապնդել վնասուց հատուցման պահանջներու իրականացումը:

6. Աշխատիլ, որ հայ ժողովուրդի դէմ գործուած ոճիրին պատասխանատուներուն պատուհասման մասին Պատուիրակութեան կողմէ Խաղաղութեան Վեհաժողովին եղած դիմումը դրական արդիւնքի հասնի:

7. Հետապնդել Համագումարին կողմէն վաւերացուած ելեւմտացոյցին իրականացումը:

8. Նպաստաւորել ամեն կերպով հայրենիք վերադարձը բոլոր տարագիրներու եւ աշխարհի չորս կողմը ցրուած գաղթական հայոց, գտնելով միջոցներ /փոխառութեան կամ վնասուց հատուցման ի հաշիւ Դաշնակիցներէն ստանալ դրութիւններ ներգաղթող ժողովուրդին պարենաւորման, վար ու ցանքի, բնակութեան եւ այլնի համար/:

9. Ձարկ տալ հայանպաստ լայն եւ բազմաձեւ բրոբականտի շարժման:

10. Ձեռնարկել Հայաստանի մասնագիտական ուսումնասիրութեան՝ տեղագրական, վիճակագրական, արդիւնաբերական եւ այլն բաժիններով:

11. Սերտ եւ շարունակական յարաբերութեան մէջ ըլլալ Դաշնակից բոլոր ազգերու կառավարութեանց ներկայացուցիչներու, ինչպէս եւ քաղաքական առաջնորդներուն հետ:

12. Մօտ յարաբերութիւններ հաստատել ապագային մեզի սահմանակից կամ դրացի ըլլալ կոչուած ազգերու ղեկավար մարմիններուն հետ /յոյներ, սուրիացիներ, արաբներ, սիոնական հրեաներ, վրացիներ, ռուսեր, պարսիկներ, ասորիներ եւ այլն/:

13. Ազգային ընդհանուր գործունէութեան շարժում տալու, զայն կարգաւորելու եւ կապակից դարձնելու համար մշտական յարաբերութեան մէջ ըլլալ հայկական գիտուններուն հետ, երկրին մէջ ու երկրէն դուրս, թղթակցութեամբ, պատուիրակ ղրկելով: Պատուիրակութիւնը պարբերաբար տեղեկութիւն պիտի տայ ազգին՝ իր գործունէութեան մասին՝ լայն գծերով:

14. Պատուիրակութիւնը պարտաւոր է ի նկատի ունենալու, որ Հայ Տէրութեան օգնական նշանակուելիք պետութիւնը որոշապէս յանձնառու պէտք է ըլլայ գոհացում տալ հայ ազգին բացարձակ անկախութեան պահանջին: Օգնական պետութեան աջակցութիւնը երբեք թեւարկութեան ձեւ պէտք չէ առնէ: Միացեալ Հայաստանի միակ կառավարութիւնը իրական տնօրինողը պիտի ըլլայ Հայ Տէրութեան կուլտուրական, տնտեսական եւ քաղաքական կեանքին: Օգնական պետութիւնը օժանդակողի դերը պիտի կատարէ եւ ոչինչ պիտի ընէ առանց հայ կառավարութեան հաւանութեան: Պատուիարկութիւնը պէտք է ջանայ, որ օգնական պետութեան պաշտօնավարման համար իբր maximum նշանակուած քսան տարուան ժամանակամիջոցը նուազագոյնի իջեցնէ: Պատուիրակութիւնը պէտք է խուսափի օգնական պետութեան մօտ ոեւէ յանձնառութենէ, որ կրնայ ձգտիլ տնտեսապէս լուծի տակ դնելու Հայաստանը. պէտք է վերապահէ ոեւէ տնտեսական յանձնառութիւն Միացեալ Հայաստանի միակ կառավարութեան որոշմանցը:

15. Հայաստանի սահմաններուն մէջ ապրող այլացեղ տարրերուն նկատմամբ Պատուիրակութիւնը պէտք է ընդգրկէ որոշ քաղաքականութիւն մը, զոր մեծ գիծերուն մէջ կը բանաձեւենք այսպէս.

Ա. Թուրքեր. Թէ՛ հայոց եւ թէ՛ նոյնիսկ թրքաց շահուն համար ինչպէս նաեւ ընդհանուր խաղաղութեան տեսակէտով՝ Պատուիրակութիւնը պէտք է ջանայ ընդունիլ տալ սկզբունքը, թէ Հայաստանի սահմաններուն մէջ գտնուող թուրք տարրը պէտք է փոխադրել տալ Փոքր Ասիոյ թրքական հողամասերուն մէջ, որ թուրք տէրութիւնը պիտի կազմեն, անոնց անշարժ կայքը փոխանակելով թրքական հողամասերուն մէջ գտնուող հայերուն կալուածներուն հետ կամ վճարել տալով անոնց արժէքը. պէտք է փոխադարձաբար ջանալ թրքական հողամասերուն մէջ հաստատուած հայերը տեղափոխել Հայաստան՝ նոյն պայմաններով:

Բ. Քիւրտեր. Բացարձակ թափառաշրջիկ եւ կիսաթափառաշրջիկ ցեղերը, համիտիէ գունդերուն մասնակցած քիւրտերը, կոտորածներու մէջ դեր կատարած քիւրտերը հեռացնել Հայաստանի սահմաններէն:

Երկրագործ եւ հաստատաբնակ քիւրտերը կը համարուին Հայաստանի քաղաքացիներ, պայմանաւ որ ամբողջապէս զինաթափ ըլլան. նոյն պայմանաւ Հայաստանի քաղաքացիներ կրնան ըլլալ նաեւ ղզլպաշ քիւրտերը: Եզիէները պէտք է ընդունուին իբրեւ Հայաստանի քաղաքացիներ եւ բնակեցուին իրենց նախկին տեղերը:

Գ. Մուհաճիրներ. 1899-էն ի վեր մեր երկիրը բերուած ամեն ցեղէ մահմետական մուհաճիրները հեռացնել Հայաստանի սահմաններէն եւ փոխադրել տալ մահմետական հողամասերու մէջ:

Դ. Ասորիներ. Արտայայտուիլ ի նպաստ ասորիներու /նեստորականներ, քաղդէացիներ, յակոբիկներ/ ինքնավար երկիր մը կազմելու ձգտումին իրենց բնիկ հողամասերուն մէջ:

Ե. Յոյներ. Պոնտոսի յունական շրջաններու համար ներքին կուլտուրական ինքնավարութեան մը համաձայնիլ:

Յանձնախումբեր.

Պատուիրակութիւնը պէտք է կազմէ հետեւեալ յանձնախումբերը.

Ա. Բրոբականտի Յանձնախումբ:

Բ. Ներգաղթի եւ Վերաշինութեան Յանձնախումբ, որուն գործն է քաջալերել եւ կազմակերպել տարագիր եւ գաղթական հայերու վերադարձը, ապահովել դարձողներուն պարենաւորումը, երկրագործական աշխատանքը եւ այլն :

Գ. Ձինուորական Յանձնախումբ, որուն գործն է նպաստել ստուարացնելու գոյութիւն ունեցող հայկական զօրագունդերը, իրականացնելու երկրին ամբողջական գրաւումը եւ այլն:

Ուղեգիծին յետագայ մասը խմբագրելու աջակցեցան Պ. Պ. Փաստրմաճեան, Տամատեան, Թէրզիպաշեան եւ Տէր-Ստեփանեան:

Ներքին Կազմակերպութիւն Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան.

Հայ Ազգ. Պատուիրակութիւնը, զոր կը կազմեն Արեւմտեան Հայաստանի եւ Գաղութներու Ազգային Համագումարին ընտրուած վեց /6/ անդամները, պիտի գործէ ըստ այս ուղեգծին, ինչպէս եւ Հայկական Հանրապետութեան Պատուիրակութիւնը, որ իր կառավարութենէն հրահանգ ատացած է Հայ Ազգային Պատուիրակութեան հետ համաձայնութեամբ գործելու: Հայ Ազգային Պատուիրակութեան անդամները հաւաքաբար պատասխանատու են ազգին առջեւ: Իրենք կ'ընտրեն իրենց նախագահը: Հայ Ազգ. Պատուիրակութիւնը եւ Հայկական Հանրապետութեան Պատուիրակութիւնը, միացած, կը կազմեն Ամբողջական Հայաստանի Պատուիրակութիւնը Դաշնակից եւ ընկերակից պետութեանց մօտ:

Ամբողջական Հայաստանի Պատուիրակութիւնը պիտի ունենայ իր պարբերական նիստերը: Որոշումները պիտի տրուին երկու կողմերու համաձայնութեամբ եւ պիտի արձանագրուին: Ամբողջական Հայաստանի Պատուիրակութիւնը պիտի գործէ իբր միակ մեխանիզմ մը. ոչ մէկ յանձնառութիւն պիտի չըլլայ եւ ոչ մէկ դեպքին պիտի չկատարուի առանց երկու Պատուիրակութեանց միջեւ համաձայնութեան: Երկուքէն իուրաքանչիւրը ոեւէ անջատ դիմում պիտի չկատարէ:

Մինչեւ որ Հայաստանի մեջ կազմուի Ամբողջական Հայաստանի կառավարութիւնը, երկու Պատուիրակութիւններէն իւրաքանչիւրը պիտի պահէ իր իրաւական տիտղոսը:

Համահայկական դատին վերաբերեալ ամեն դիմում՝ Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան կողմէ որոշուելէ յետոյ պիտի գործադրուի երկու Պատուիրակութեանց նախագահներուն կողմէ միասին կամ երկու խումբերուն պատկանող այլ անդամներու կողմէ, զոր պիտի նշանակէ Ամբողջական Հայաստանի Պատուիրակութիւնը:

Ամեն տօքիւման կամ նամակ, որ ազգային քաղաքականութեան տեսակէտով պատասխանատու նշանակութիւն ունի, Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան հաւանութիւնը ստանալէ յետոյ պիտի ստորագրուի երկու նախագահներէն:

Երկու Պատուիրակութեանց ընթացիկ թղթակցութիւնը պիտի ստորագրուի իւրաքանչիւր նախագահէն, ամեն մէկ կողմ միւսին տեղեկութիւն տալով այդ նամակներու նիւթի մասին:

Ազգ. Համագումարի Մայր Դիւանի
Ատենադպիր
Գառնիկ Ֆնտգլեան
Մարտ 31, 1919

Ստորագրութիւնք՝
Առի ճշդութիւն կը ստորագրենք
Անդամք Յանձնաժողովոյ՝
Ա. Չօպանեան
Գ. Փաստրմաճեան
Ն. Տէր-Ստեփանեան
Վահան Թէքէեան
Վ. Փափազեան
Մ. Համբարձումեան
Ա. Թէրզիպաշեան

ՀԱԱ, ֆ. -430, ց. 1, գ. 28, թթ. 29-35: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ 32-րդ

2 Ապրիլ 1919.

Նիստը բացուեցաւ Վսեմ. Նորատունկեանի նախագահութեան տակ, 33 անդամներու ներկայութեան, ժամը 8-ին:

Օրակարգ

Ընտրութիւն նոր Պատուիրակութեան
Ժողովը միաձայնութեամբ ընդունեց վեց հոգի ընտրել իբրեւ պատուիրակ:
Ապա կատարուեցաւ գաղտնի քուէարկութիւն, 33 քուէարկուներուն կողմէ:
Հետեւեալ անձինք ստացան հետեւեալ քուէներու թիւը.

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար	քուէ 32
Բրօֆ. Աբր. Տէր-Յակոբեան	32
Պ. Գ. Փաստրմաճեան	29
‘’ Նեւրուզ	26
‘’ Ա. Չօպանեան	24
‘’ Վ. Թէքէեան	24
‘’ Թէրզիպաշեան	7
‘’ Մալքոլմ	9
‘’ Վ. Փափազեան	3
‘’ Մասեհեան Խան	3
‘’ Հ. Մոստիչեան	3
‘’ Ամեն. Դուրեան Սրբազան	1
” Բրօֆ. Խաչատուրեան	1

Պ. Պ. Գրիգոր Յակոբեան, Տոքթ. Սայեան, Քէլէկեան Խան, Թորոսեան Հայր եւ Տէրվիշեան արդէն իսկ Փարիզէն մեկնելու ստիպուած ըլլալով, իրենց քուէները, ամէնն ալ, Դուրեան Սրբազանին քով թողած էին պահարաններու մէջ, որոնք Ժողովին մէջ բացուեցան:

Հետեւաբար, Հայ Ազգ, նոր Պատուիրակութեան անդամ ընտրուեցան Ա. Պօղոս Նուպար Փաշա, Բ. Բրօֆ. Ա. Տէր-Յակոբեան, Գ. Տիար Փաստրմաճեան, Դ. Տոքթ.

Նեւրուզ, Ե. Պ. Ա. Չօպանեան, Զ. Պ. Վ. Թէքէեան: Ժողովականները ծափահարեցին նոր ընտրուած պատուիրակները:

Նախագահը թարգման կ՚ըլլայ Ժողովին՝ արտայայտելով իր խնդակցութիւնը եւ շնորհաւորութիւնը նոր ընտրուած Պատուիրակութեան անդամներուն: Այսպիսի ընտրութիւն մը, որ գրեթէ միաձայնութեամբ կատարուած է, կ՚ապացուցէ, թէ համաձայնութիւն, համերաշխութիւն եւ սէր, բարեբախտաբար կը շարունակեն տիրել մեր մէջ եւ այսու ապահովապէս պիտի փոխանցեն նաեւ համօրէն ազգերնուս մէջ եւ յուսանք, որ ազգային Դատը նոր Պատուիրակութեան անխոնջ ջանիւք մեր յաջողութեամբ կը պսակուի ըստ կարելւոյն շուտով եւ անվթար: /ծափահարութիւններ/

Պ. Ֆնտգլեան խօսք կ՚առնէ եւ կ՚ըսէ, թէ ըստ սովորութեան, երբ նոր մարմին մը կ՚ընտրուի, նախորդին շնորհակալութիւն կը յայտնուի եւ կառաջարկէ այդ պարտքը կատարել հին Պատուիրակութեան հանդէպ: Բոլոր ժողովականները կը ձայնակցին Պ. Ֆնտգլեանին եւ ծափահարութիւններով իրենց շնորհակալութիւնները կը յայտնեն հին Պատուիրակութեան, յանձին Պօղոս Նուպար Փաշայի:

Պօղոս Նուպար Փաշա կը յայտնէ, որ զգացուած է այդ համակրական ցոյցէն, թէ ինք իր պատուական ընկերակիցներուն հետ, շատ ծանր րոպէներու մէջ, միայն պարտականութիւնն է, որ կատարած է եւ պիտի շարունակէ դարձեալ իր բոլոր կարելին ընել առաւելագոյն չափով օգտակար ըլլալու համար Հայրենիքին: Ժողովը բուռն խանդավառութեամբ ծափահարեց Պ. Վարանդեանի «Կեցցէ համերաշխութիւնը» եւ Վսեմ. Նորատունկեանի «Կեցցէ՛ Միացեալ, Անկախ Հայաստանը» կոչերուն:

Ժողովը փակուեցաւ ժամը 8½-ին:

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 30, թթ. 6-8: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ 33-րդ

3 Ապրիլ 1919.

Նիստը բացուեցաւ Վսեմ. Նորատունկեանի նախագահութեամբ եւ 28 անդամներու ներկայութեան, ժամը 6-ը քառորդ անցած:

ՕՐԱԿԱՐԳ

Ա. Վնասուց հատուցման խնդրոյն յաւելուածական մասը
Բ. Տրապիզոնի խնդիրը

Պ. Նախագահը ժողովին կը հաղորդէ Վնասուց Հատուցման Յանձնաժողովոյ մէկ աշխատութիւնը, ուր փաստերն ու պատճառաբանութիւնները գլխաւորաբար դասաւորուած են մեր պահանջի հատուցման համար, ու անմիջական լուծման կը կարօտին:

Կը կարդացուի նախ յաւելուածը:

Այդ մասին հետեւեալ կարծիքները կը յայտնուին:

Ա. Որ փաստերը բաւականաչափ խտացուած են, բայց խմբագրութիւնը դեռ կոկուելու պէտք ունի, որ թէեւ Գերմանիան պէտք է ուղղակի իբրեւ մեղսակից եւ պարտական բռնել մեր վնասներուն եւ հատուցման համար, բայց այդ պէտք չէ, որ թուլացնէ թիւրքերուն կատարած ոճիրներն ու պատասխանատուութիւնը: Արծարծուեցաւ նաեւ այն միտքը, թէ պէ՞տք է Գերմանիայէն ու զինակիցներէն ալ հատուցում պահանջել: Ոմանք յայտնեցին, որ Գերմանիայէն պէտք է պահանջել նախ անոր համար, որ ան իսկապէս մասնակցած է հայկական աւերներուն եւ յետոյ՝ նաեւ անոր համար, որ Թուրքիա տնտեսապէս այնպիսի խեղճ դրութեան մը մէջ է, որ՝ մեր հատուցումէն գոնէ որոշ մաս մը առնելու յոյս ունենալու համար պէտք է Գերմանիայէն

ալ պահանջել, իսկ իր զինակիցներուն խօսքը ընելու չէ, որովհետեւ անոնք գրեթէ մաս չեն ունեցած մեր խնդրոյն մէջ:

Ժողովը չափազանց կարեւոր եւ անմիջական լուծման կարօտ նկատելով խնդիրը, որոշեց յանձնել Պատուիրակութեան, որ անմիջապէս զբաղի անով, աշխատակցութեամբ՝ եթէ հարկ ըլլայ, դուրսէն կանչուած իրաւաբաններու, եւ ներկայացնէ ուր որ անկ է:

Պ. Նախագահը շնորհակալութիւն յայտնեց Յանձնախմբի անդամոց եւ մասնաւորաբար Պ. Թէրզիպաշեանի՝ այս խղճի մտօք կատարուած աշխատութեան համար:

Պ. Չօպանեան տեղեկութիւն կու տայ այն տեսակցութեան վրայ, որ տեղի ունեցած էր Պոնտոսի խնդիրը պաշտպանող յոյներու ներկայացուցչութեան եւ Համագումարին մէկ քանի անդամներուն միջեւ: Պ. Չօպանեան կ'ըսէ, որ պոնտացիները շատ մը լուծումներ առաջարկած են, բայց իրենց իսկական նպատակը եւ միտքն է ամէն ինչ ընել բացարձակ անկախութիւն ունենալու համար: Յոյները խնդիրը կը ներկայացնեն չորս ձեւի տակ եւ կը քննեն.

Ա. Ամէնէն անփափաքելին, անշուշտ, որ Պոնտոսը դեռ մնայ թիւրքերուն տիրապետութեան տակ:

Բ. Ամէնէն փափաքելին իրենց կողմէ, որ Պոնտոսը ըլլայ բոլորովին անկախ, ո՛չ մէկ կապ եւ կախում ունենալով Հայաստանի հետ:

Գ. Որ Հայաստանի մաս կազմէ, իբրեւ ներքին ամէնալայն ինքնավարութիւն վայելող երկրամաս:

Դ. Իրենք միշտ կը ծանրանան իրենց բացարձակ անկախութեան ձեւին վրայ, որուն շուրջ կ'ուզեն համաձայնութեան գալ եւ որուն համար կ'առաջարկեն շատ մը գոյութիւն ունեցող ձեւեր. օրինակ՝ ունենալ այն յարաբերութիւնը, ինչ որ կայ Անգլիոյ եւ Իրլանտայի միջեւ, կամ՝ Միացեալ Նահանգներու, կամ Զուիցերիայի գանթոններուն եւ այլն:

Պ. Չօպանեան եւ իր ընկերները միշտ կը յայտնեն, որ իրենք չեն կրնար այս խնդրոյն մասին մեմուարին մէջ արտահայտուած կարծիքներու սահմանէն դուրս ելնել: Ցոյց կու տան անոնց, որ իրենց դատը շատ նոր դատ մըն է, որ կրնայ նկատի չառնուիլ, մինչդեռ հայկականին հետ միանալով՝ կրնայ լաւագոյն լուծում մը ունենալ: Կը մեղադրեն այն պայքարը, որ հայերուն դէմ Ամերիկա եւ այլուր կ'ընեն, իբր թէ հայերը էմբերիալիսթ ձգտումներ ունին: Կ'ըսեն, որ բարեկամութեամբ կարգադրուի այս խնդիրը, եւ վերջ տրուի այն անախորժ դիրքին, որ հայերուն դէմ բռնուած է, քանի որ Վէնիզէլոսին իսկ Տրապիզոնը հայերուն տրուելու համար ըրած առաջարկէն յետոյ, հայերն ալ փոխարէնը նպաստած են յոյներուն, իբրեւ ազգաբնակչութիւն՝ յայտնելով, որ Թրակիան, Պոլիսը, Պրովասն եւ այլնը իրենց տրուի: Ի վերջոյ, կը յայտնեն, որ այս տեսակցութեան մասին պիտի հաղորդեն այս Համագումարին:

Պ. Չօպանեան իր կողմէ կը յայտնէ, որ տեսակցութիւն մը եւս բաւ պիտի ըլլայ մեր դէմ բացուած պայքարին վերջ տալու համար:

Պ. Թէրզիպաշեան կ'աւելցնէ, որ վերջին պահուն երկու առաջարկ կար. մեր առաջարկը՝ ներքին կուլտուրական օթոնոմի, իսկ իրենցը՝ անկախութիւն քանթոնային դրութեամբ:

Մենք ժամանակ առինք այս երկու առաջարկները միացնել աշխատելու համար:

Բրօֆ. Խաչատուրեան ալ կ'աւելցնէ այն տեղեկութիւնը, որ ըսած են, թէ երբ առանձին էթա մը ըլլան՝ այն ժամանակ Ռիզէին վրայով անցք մը պիտի տան մեզի Սեւ Ծովու վրայ:

Իրենց միտքն է ամէն ինչ ընել անկախ ըլլալու համար, իսկ եթէ չյաջողին՝ միւս կողմէ արդէն պատրաստ ունենան Զուիցերիոյ ձեւով քանթոն մը:

Պ. Հինդլեան կ'առաջարկէ, որ Ժողովը չզբաղի այս խնդրով, որովհետեւ փոլիթիք է այս, եւ այս ժողովը այլեւս անով զբաղելու չէ, քանի որ գրուած է Յիշատակագրին մէջ:

Պ. Մաթիկեան. Հապա կրօնակա՞ն ժողով է այս:

Պ. Հինդլեան. Մեզի համար նշանակութիւն ունեցող խնդիրն էր գիտնալ, թէ իրենք իբրեւ Պոնտոսի ազգաբնակչութիւն՝ բողոքական ի՞նչ բաղձանք ունին: Բայց քանի որ մենք արդէն նախագահ Ուիլսոնի առաջարկած սկզբունքը չենք ընդունիր՝ երկրի մը քաղաքական վիճակը որոշել տեղւոյն ազգաբնակչութեան մեծամասնութեանը արտայայտած բաղձանքին համաձայն, եւ քանի որ օթոնոմի բոլոր ցեղերուն ալ պիտի տրուի, Համագումարը ալ դադրի բանակցութիւնները վարելէ եւ Պատուիրակութիւնը զբաղի անով:

Ժողովականներէն շատեր կը մեղադրեն տեսակցութիւն ունեցող անդամները՝ անոր կիսապաշտօնական գոյն մը տուած ըլլալնուն համար, հակառակ Ժողովին տուած հրահանգին, որ ան բոլորովին անպաշտօն պիտի ըլլար, եւ «Տրապիզոնը Վէնիզէլոսը մեզի տուաւ» ըսելու սխալը գործած ըլլալնուն համար:

Պ. Թէրզիպաշեան շատ կարեւոր կը համարէ հարցը եւ կ'առաջարկէ Պատուիրակութեան վրայ տիրէքթիւներով տրուած կաշկանդումները այս մասին քակել քիչ մը, որ ան կարելիութիւնը ունենայ գործելու եւ բանակցութիւնները վարելու: Կը գտնայ, որ Տրապիզոնը մեր կողմէ կառավարելու ձգտիլը եւութբի է, որովհետեւ ան առաւելապէս օտար ցեղերով բնակուած երկիր մըն է եւ պէտք չէ այդ քրիստոնեայ տարրը մեր դէմ հանել, այլ օգտագործելու է իրենց թիւրքերուն հանդէպ ունեցած ատելութիւնը: Ռիզէն եւ Աթենան մերն են, եւ այս խնդիրը բանակցութեան նիւթ չի կրնար ըլլալ:

Պ. Փափազեան կ'առաջարկէ Պատուիրակութեան տալ մտքեր, որոնցմով ան ազատութիւնը ունենայ բանակցութիւնները վարելու այնպէս մը, որ ապահովէ Սեւ Ծովն անոնց ուզած ատենը մեր առջեւ չգոցելու պայմանը: Եւ Պատուիրակութիւնը պետութեանց մօտ մտքերը մշակէ յունական պահանջներու առթիւ, մանաւանդ որ Պ. Փափազեան մը կարծէ, թէ Ամերիկան ընդառաջ պիտի երթայ յունական այս պահանջներուն:

Պ. Միքայէլեան համակարծիք չէ այդ կապերը քակելու Պատուիրակութեան վրայէն, եւ կը պահանջէ, որ տրուած տիրէքթիւներով մեմուարին պահանջները հետապնդէ, որովհետեւ մէկ տեղ դուռ բանալը կրնայ հետը բերել ուրիշ խնդրի առթիւ ալ դուռ բանալու հարցը:

Պ. Տէր-Ստեփանեան կ'ըսէ, որ մեմուարին մէջ այս խնդիրը ներկայացուած ձեւով՝ մենք կը ճանչնանք յոյներուն իրաւունքը Տրապիզոնի վրայ եւ ասիկա օգտակար ալ է Կիլիկիոյ խնդիրը չթուլացնելու տեսակէտէն, այնպէս որ համոզել այդ մարդիկը, որ հայկական էմբերիալիզմ գոյութիւն չունի, ձգել որ աշխատին իրենց անկախութեանը եւ եթէ չյաջողին՝ ըսել. «Ընտրեցէ՛ք մեզ կամ թիւրքերը»: Պ. Տէր-Ստեփանեան օթոնոմի եւ այլն բառերուն ալ հակառակ է, որովհետեւ եթէ մէկ ցեղին տրուի՝ միւսներուն ալ պէտք է տրուի:

Պ. Մաթիկեան ինչպէս ամբողջ ժողովը, կ'առաջարկէ, որ Համագումարը չզբաղի այս խնդրով, այլ՝ ձգել Պատուիրակութեան, որ Վէնիզէլոսին հետ բանակցութիւններ վարէ: Պ. Մաթիկեան կ'ըսէ նաեւ, որ Տրապիզոնը սերտօրէն, տնտեսապէս կախուած է մնացեալ ցամաքային մասէն, եւ եթէ անկախ պետութիւն մը հոն յաջողին ստեղծել, իրենց տնտեսական վիճակը չեն կրնար բարգաւաճել, եթէ Հայաստան չնպաստէ անոնց:

Ժողովը կ'որոշէ, որ քաղաքավարութեան համար, նոյն կողմը անգամ մը եւս տեսնուի, առաջարկելով վերցնել այդ մեր դէմի պայքարը եւ մնալով միշտ մեմուարի հողին վրայ, յայտնելով նաեւ, որ Պատուիրակութեան հետ կրնան բանակցութիւններ վարել:

Ժողովը վերջացաւ ժամը 8-ին:

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 30, թթ. 9-13: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ 34-րդ

4 Ապրիլ 1919.

Նիստը բացուեցաւ Վսեմ. Նորատունկեանի նախագահութեան տակ, 28 անդամներու ներկայութեան, ժամը 5 ու կէսին:

Օրակարգ

Ա. Միացեալ կառավարութիւն մը ստեղծելու համար կազմուած յանձնաժողովին պատրաստած բանաձեւին ընթերցումը /բանաձեւը տե՛ս ստորեւ/

Կը կարդացուի Պ. Տամատեանի Մարսիլիայէն տուած մէկ հեռագիրը, որով ցաւ կը յայտնէր յանկարծական մեկնումին պատճառով հրաժեշտ տալ չկրնալուն համար:

Դիւանին կողմէ կը հարցուի, թէ նիստերուն արձանագրութիւնները պէ՞տք է անմիջապէս տպագրել տալ: Ժողովը յարմար չի տեսներ քաղաքական եւ ներքին ազգ. տեսակէտով, այժմ հրապարակել տեղի ունեցած վիճաբանութիւնները:

Պ. Հինդլեան բուռն կերպով հակառակ է անոր եւ կը պահանջէ, որ ժողովուրդը մանրամասնօրէն տեղեակ ըլլար հոս արտայայտուած բոլոր միտքերուն եւ անցած դարձածին: Թէեւ խնդիրը օրակարգի նիւթ եղած չըլլար, բայց Ժողովը հակառակ Պ. Հինդլեանի երկրորդ եւ այս անգամ ըստ կարգի բողոքին՝ քուէարկութեան յանձնեց, եւ նկատի ունենալով կարգ մը անպատեհութիւնները, 18 ձայնով ընդդէմ 5-ի կ'որոշէ առայժմ շարունակել նիստերուն արձանագրութիւնները եւ ժողովուրդին հաշիւ տալ միայն Դիւանին ընելիք յայտարարութիւններուն սահմաններուն մէջ: Առ այս՝ Պ. Ատենադպիրը ատենագրութիւններէն քաղուած մը պիտի պատրաստէ, որ նստաշրջանի փակման օրը Ժողովոյ մէջ կարդացուելով հրատարակութեան պիտի տրուի:

Յետոյ կը կարդացուի Հալէպէն եկած հետեւեալ գիրը.

«Վսեմափայլ Պօղոս Նուպար Փաշա,

Նախագահ Հայկական Պատուիրակութեան ի Փարիզ,

Վսեմաշուք Փաշա,

Եգիպտական «էլ-Մագաթթամ» թերթին մէջ կը հրատարակուէր Ձեր Վսեմութեան մէկ յայտարարութիւնը, որուն մէջ Կիլիկիոյ իբրեւ արեւելեան սահման կը յիշուէին Ամանոս լեռները: Այս թէթեւութեամբ Մարաշի եւ Այնթապի սանճագները եւ Քիլիս դուրս կը ձգուէին Կիլիկիայէն:

1. Նկատելով, որ վերոյիշեալ տեղերը պատմականօրէն եւ ազգագրականօրէն կը պատկանին բուն իսկ Հայկական Կիլիկիային,

2. Նկատելով, որ այս տեղերը ռազմագիտական, առեւտրական, ուսումնական եւ երկրագործական տեսակէտներով առաջնակարգ դիրք մը կը գրաւեն Կիլիկիոյ մէջ,

3. Նկատելով, որ այս վայրերու հայութիւնը վերջին քառորդ դարու ընթացքին իր հարիւր քսան հազար զոհերու արիւնովը նուիրագործած է իր սեփականութեան իրաւունքը,

4. Նկատելով, որ հակառակ թիւրքի սիստեմաթիկ հալածանքներուն ու ջարդերուն, սոյն տեղերը այսօր իսկ կը պարունակեն մօտ վաթսուն հազար վերապրող հայութիւն մը,

Հետեւաբար, վերոյիշեալ վայրերուն Կիլիկիայէն անջատումը պիտի ըլլայ պատմական ամէնամեծ զրկում մը եւ անդարմանելի կորուստ մը Կիլիկիային:

Ուստի, խուսափելու համար պատմական ամէնամեծ անիրաւութենէ մը եւ անոր աղիտալի հետեւանքներէն, եւ խնայելու համար այսքան ստուարաթիւ հայութիւն մը նորանոր տեղափոխութիւններէն, կը խնդրենք, որ անմիջական դիմումներ ընէիք առ որ անկ է, որպէսզի Այնթապի եւ Մարաշի սանճագները եւ Քիլիս եւս մաս կազմէին նորակազմ Կիլիկիային:

Հաճեցէ՛ք ընդունիլ խորին յարգանաց հաւաստին Ձեր խոնարհ ծառաներուն:

Ի դիմաց Քիլիսի մասնախմբին, ի դիմաց Մարաշի մասնախմբին, ի դիմաց Այնթապի մասնախմբին:

Ի դիմաց Քիլիսի մասնախմբին՝
Ատենադպիր Ատենապետ
Յ. Սալեզեան Սղիկ Եէնի Գոմշեան

Ի դիմաց Մարաշի մասնախմբին՝
Ատենադպիր Ատենապետ
Հ. Քէշիշեան Սահակ Քահանայ

Ի դիմաց Այնթապի մասնախմբին՝
Ատենադպիր Ատենապետ
Սապչեան Քէնտիրճեան

Հալէպ, 2 Յունուար 1919»:

Պ. Չօպանեան կը կարդայ նոյն ուղղութեամբ ուրիշ գիր մը /տես ստորեւ գիրը/ եւ կ'առաջարկէ Յիշատակագրին յաւելուածական նօթով մը պատմականապէս մեզի պատկանող հայկական այս շրջանները պահանջել: Առ այս պէտք եղածն արդէն Յիշատակագրին մէջ անցած է:

Պ. Փափազեան խօսք կ'առնէ հետեւեալ յայտարարութեան համար:

Ապրիլ 1-ին նամակ մը ստացանք մեզ ընտրող մարմնէն՝ «Արեւմտահայ Խորհուրդ»-էն, զոր ստորագրած են անոր 5 անդամները. 1 անդամի կարծիքը առնուած է եւ 2 փոխանդամներէ: Գրուած է Յունուար 28-ին, այսինքն՝ մեր գալէն 19 օր վերջ: Մեր մանտան, որ ներկայացուցած ենք Յանձնաժողովին, կը կրէ Արեւմտեան Բիւրոյի անդամի մը ստորագիրը, որ ստորագրած է եւ այս թուղթը, ինչ որ զարմանք կը պատճառէ մեզ:

Այս նամակով անոնք կը յայտնեն մեզ, որ մենք չենք կրնար իրենց ներկայացուցիչը ըլլալ Եւրոպայի մէջ, այսինքն՝ իրենց մանտան ետ կ'առնեն: Թողնելով ասոր դրդապատճառներու մէջ մտնելը, որ մարդկային իսկ եւ հայկական բնոյթին մէկ գիծն է, կ'ուզեմ յայտնել Ձեզ, թէ երբ մեր մանտան հոս կը քննուէր, հակառակ անոր, որ մանտան առարկութիւն չէր վերցներ, Մանտաներու Յանձնաժողովի նախագահին ես յայտնած էի մեր ինչ պարագաներու մէջ ընտրուիլը եւ այն պայքարը, որ կովկասեան թերթերու մէջ մղուեցաւ մեր գալուն դէմ: Մենք ընտրուած ենք անցեալ Յուլիսին Հիւս. Կովկասի մէջ Արեւմտեան Խորհուրդի 6 անդամներու ժողովի մը մէջ, որ ինքն իրեն օրինաւոր յայտարարեց ժամանակի աննորմալ պայմաններուն բերմամբ: Գալով Թիֆլիս, մենք ցանկացանք Արեւմտեան Խորհուրդի մեծամասնութեամբ նիստ մը գումարել՝ նոր որոշում մը տալու այս մասին, որովհետեւ այս պարզ էր, որ թրքահայերէն պէտք էր, որ ներկայացուցիչներ երթային Եւրոպա: Չյաջողեցաւ դժբախտաբար, հայ-վրացական պատերազմի պատճառով, որ փակած էր թէ՛ Երեւանի եւ թէ՛ միւս Կովկասի ճամբաները. չկրցինք գումարել, առաւել եւս, համագումար մը, ինչպէս նաեւ գոնէ քաղաքական կուսակցական ներկայացուցիչներու ժողով մը, որովհետեւ բայց կուսակցական մէ, միւսները

ներկայացուցիչ չէին կրնար տալ: Այս պայմաններու մէջ հարկադրուած եղանք բաւականանալ նախորդ որոշումով եւ մեկնիլ:

Արդ, ժողովուրդին կը մնայ որոշում մը տալ այս մասին, քանի որ մեծ արեւմտ. կուս.-ի անդամներ ըլլալով, այս վայրկեանիս անդամ ենք նաեւ այս Համագումարին, կատարելու համար անոնց որոշումը ներկայացուցիչ չը համարուելու մասին ձեր որոշումը նախ պէտք է: Ընկերս Պ. Թէրզիպաշեանը համամիտ չէր ինծի, այս նամակի մասին խօսք բանալ հոս, բայց ես ուզեցի քոնքրէթ ըլլալ եւ բանալ խնդիրը:

Պ. Թէրզիպաշեան. Ո՛չ մէկ օրինական նշանակութիւն չտալով այդ նամակին՝ համակարծիք չէի զայն յայտարարելու Ժողովին, որովհետեւ այդ փոխանդամ ըսուածները պարզապէս քանտիտաներ են փոխանակելու համար գործող անդամներուն, որոնց ստորագրութիւնը նշանակութիւն չունի, հետեւաբար այդ նամակը օրինական չէ:

Պ. Թէքէեան կ'ըսէ, որ Կովկաս ապաստանած թրքահայ փախստականներու պատգամաւորներուն կը մնայ դատել, թէ օրինակա՞ն է այդ նամակը, թէ՞ ոչ, որովհետեւ Ժողովը ո՛չ մէկ դրական տեղեկութիւն ունի խնդիրը քննելու համար:

Պ. Տէր-Ստեփանեան կ'ըսէ, որ նկատի չենք կրնար առնել այդպիսի գիր մը, քանի որ Մանտաներու Յանձնաժողովը անգամ մը անոնց անդամութիւնը Ժողովին վաւերացման առաջարկած է, եւ Ժողովն ալ վաւերացուցած է:

Պ. Ֆնտգլեան յիշելով անգլիական բարլամենթին՝ նման պարագաներու մէջ դիտած աւանդական ուղղութիւնը, կ'եզրակացնէ, թէ ընտրութիւնները վաւերանալէ ետք այս ժողովին մէջ, ո՛չ մէկ առաջարկութիւն ընտրողներու կողմէ չի կրնար լսուիլ:

Պ. Չօպանեան կ'առաջարկէ կարեւորութիւն չտալ այս նամակին, մանաւանդ որ Պ. Պ. Փափազեան եւ Թէրզիպաշեան օգտակար գործակցութիւն մը ունեցած են Համագումարի աշխատութեանց մէջ:

Ժողովը կ'որոշէ, թէ Պ. Պ. Թէրզիպաշեանի եւ Փափազեանի անդամակցութեան խնդիր չկայ եւ անոնք կը մնան միշտ անդամներ:

Ժողովը կ'անցնի օրակարգին:

Պ. Չօպանեան կը կարդայ միացեալ կառավարութիւն ստեղծելու խնդրոյն մասին պատրաստուած հետեւեալ բանաձեւը.

«Մեծարգոյ Պ. Նախագահ Ազգային Համագումարի,

Միացեալ Հայաստանի միակ կառավարութեան շուտափոյթ իրականացման ցանկալի գործին Համագումարի մէկ արարքով նպաստելու մասին խորհրդակցելու համար, կը բերենք հետեւեալ առաջարկը.

Յանձնաժողովը նկատելով, որ ներկայ րոպէին մեծ դժուարութիւններ կան այդ իրականացնելու համար, որոշեց այդ խնդրոյն ուսումնասիրութեան շարունակումը ձգել Համագումարին կազմելիք յանձնաժողովին, որ պիտի զբաղի Հայաստանի ապագայ կազմութեան ուսումնասիրութեամբ: Որոշեց նաեւ առ այժմ շատանալ ուղղելով կոչ մը հայ ժողովրդին՝ միացման անհրաժեշտութիւնը անգամ մը եւս հռչակող, եւ այդ միացումը նախապատրաստող քայլ մ'առնելով՝ այն եւ հրաւիրել արեւմտահայ բոլոր հատուածները, որ ընտրեն պատգամաւորներ ապագայ համահայկական խորհրդարանին արեւմտահայ մասը կազմելու համար:

Տեղեկաբեր՝ Ա. Չօպանեան

Փարիզ, 3 Ապրիլ 1919»:

Պ. Հինդլեան հարց կու տայ, թէ Յանձնաժողովը գործնական ի՞նչ մոտալիթէ կրնայ ցոյց տալ միացումը յայտարարելու եւ գործադրելու համար:

Պ. Փափազեան կը թուէ այն զանազան եղանակները, որոնք բերուեցան Յանձնաժողովին՝ միացեալ կառավարութիւն մը ստեղծելու համար եւ այն դժուարութիւնները, որոնք առայժմ կը դժուարացնեն անոր իրագործումը: Անշուշտ լաւագոյնն էր, որ թրքահայերը հոն իրենք ալ ունենային իրենց խորհրդարանը եւ

ընտրէին նախարարներ իրենց մէջէն, բայց հաղորդակցութեանց այդ դժուարին կացութեան մէջ, ամիսներու խնդիր կը դառնայ եւ միացեալ կառավարութիւնը կը ձգձգուի երկար ատեն, որուն համար Յանձնաժողովը ստիպուեցաւ բերել Պ. Չօպանեանի կարդացած այդ բանաձեւը: Եւ քանի որ առայժմ չկրցանք իրականացնել միացեալ կառավարությունը լաւագոյնն է հիմակուընէ պատրաստել ընտրութեանց օրինագիծը միաց. խորհրդարան ստեղծելու. ատկէ յառաջ պիտի գայ նաեւ միացեալ կառավարութիւնը:

Պ. Թէրզիպաշեան կ'աւելցնէ, թէ միացեալ կառավարութիւն ստեղծելու դժուարութիւններէն մէկն ալ Հանրապետութեան ներկայացուցիչները այդ մասին մանտա չունենալու մեզի ըրած յայտարարութենէն առաջ եկաւ:

Պ. Օհանջանեան Սխալ է, մենք մանտա ունինք միացեալ Հայաստան ստեղծելու աշխատելու, բայց մենք հոս կառավարութիւն կազմելու դէմ ենք:

Պ. Թէրզիպաշեան. Երբ դուք սկզբունքով իրաւասութիւն ունէիք միացեալ Հայաստան ստեղծելու ուրեմն՝ միջոցին առջե՞ւ է, որ կանգ կ'առնէք, մանտա չունիք յայտարարելով:

Պ. Օհանջանեան. Պէտք չունինք ուսում առնելու Պ. Թէրզիպաշեանէն: Մենք այդպէս ենք հասկցած մեզի տրուած մանտան:

Պ. Հինդլեան կը հարցնէ, թէ Յանձնաժողովին մէջ ի՞նչ եղած է փոքրամասնութեան կարծիքը:

Պ. Փաստրմաճեան. Յանձնաժողովին մէջ երկու գլխաւոր կարծիք կար. առաջին՝ անմիջապէս գոյացնել կեդրոնական կառավարութիւն, երկրորդ՝ նախ խառն խորհրդարան ստեղծել, ապա կազմել միացեալ կառավարութիւնը: Բայց որպէսզի ժամանակ չկորսուի եւ երբ վաղը միւս օր մեր հարցը լուծուի՝ մենք պատրաստ ըլլանք՝ առաջարկ բերուեցաւ հիմակուընէ պատրաստել ընտրական օրինագիծը, ցրուել ամէն տեղ եւ սկսիլ ընտրութեանց: Ասիկա է Յանձնաժողովի 5 անդամներու ընդդէմ 9-ի մեծամասնութեան առաջարկը:

Պ. Չօպանեան. Արդէն այս բանաձեւն իսկ ցոյց կու տայ, որ Յանձնաժողովը չէ կրցած գործնական արդիւնքի հասնիլ. այնպէս որ օգտակար չէ վէճը վերսկսիլ: Յանձնաժողովին մէջ առաջարկուեցաւ նաեւ այստեղէն քանի մը մարդ ղրկել այնտեղի կառավարութեան մասնակցելու համար եւ որով միացեալ կառավարութիւն կազմուի: Բայց Հանրապետութեան ներկայացուցիչներուն այս մասին մանտա չունենալնուն յայտարարութեան առջեւ խոնարհեցանք: Ասկէ յետոյ էր, որ ընտրական օրագիր մշակելու կարծիքը եկաւ, փոքրամասնութիւնը նկատեց, որ այժմ ատենը չէ այդպիսի ընտրութեանց սկսելու: Արդ, ձգենք խնդիրը Պատուիրակութեան, որ ան կատարէ այն, ինչ որ Յանձնաժողովը չկրցաւ ընել:

Պ. Թէքէեան. Հայ ժողովուրդին ներկայ թափառական ցանուցիր ու թշուառ վիճակը, գաղութներուն ընտրութեան մասնակցելու խնդրին անորոշութիւնը դժուարութիւններ կը նկատէ անմիջապէս միացեալ խորհրդարան մը ստեղծելու համար: Միացեալ Հայաստան ունենալու եւ միացեալ կառավարութիւն մը ստեղծելու համար, միացեալ խորհրդարան կազմելը պայման չէ: Առժամանակեայ կառավարութիւն մը, որուն մէջ արեւմտահայ եւ արեւելահայ մասերը հաւասար մասնակցութիւն մը ունենան՝ պէտք է ստեղծուի եւ կրնայ ստեղծուիլ. պատասխանատու ըլլալով ապագայ խորհրդարանին: Հիմա խորհրդարան ստեղծելու օգուտը կասկածելի է ինծի համար, բայց կառավարութեան մէջ արեւմտահայ հաւասար անդամներու ներկայութիւնը անհրաժեշտ կը նկատեմ՝ առնուազն միութեան գաղափարին իրականացման համար: Ներկայ օրերուն մէջ, երբ ամէն հայու գործակցութիւնը եւ համերաշխութիւնը այնքան անհրաժեշտ է, ընտրութիւնները անտեղի պայքար մը պիտի յառաջ բերեն եւ կրնան բաժնել հայութիւնը: Ասկէ զատ, երբ արեւմտահայոց մէջ նոր ընտրութիւններ պիտի ըլլան, արեւելահայերը իրենց ներկայ բարլամէնթով պիտի մնան, հետեւաբար միատեսակ ընտրութեամբ չէ, որ

ընտրուած պիտի ըլլան: Իմ համոզումս այն է, որ այս պայմաններուն մէջ՝ խորհրդարան չենք կրնար ունենալ:

Պ. Համբարձումեան նկատել կու տայ, որ ամէն ոք համաձայն է միացեալ Հայաստան, միացեալ խորհրդարան, միացեալ կառավարութիւն ստեղծելուն եւ ո՛չ մէկ գլխաւոր արգելք կը տեսնէ ցոյց տրուածներուն մէջ, իրականացնելու համար այդ մեծ գործը: Ժողովուրդին ցիրուցան ըլլալը, Կովկասի խորհրդարանին եւ նոր կազմուելիքին ընտրութեանց տարբերութիւնները եւ այլնը շատ փոքր, ոչինչ արգելքներ են՝ բաղդատմամբ այդ պատմական մեծ աքթին, որ պիտի կատարենք: Ասիկա միեւնոյն ժամանակ շատ պատասխանատու գործ մըն է, որ պէտք է Համաժողովը կատարէ, փոխանակ Պատուիրակութեան ձգելու եւ յետոյ զայն քննադատելու:

Պ. Թէրզիպաշեան եւս համաձայն չէ անմիջապէս ընտրութեանց սկսելու, որովհետեւ նոր ընտրուած Պատուիրակութեան դիրքը կը խախտի եւ, յետոյ, այսպիսի քայքայուած վիճակի մէջ արդեօք որքա՞ն յարմար է ընտրական պայքար ձգել ժողովուրդին մէջ:

Պ. Շանթ հետեւեալ գլխաւոր միտքը կը շեշտէ, որ ամէն բանէ առաջ, պէտք էր որ ճանչնայինք Կովկասի հայ խորհրդարանը եւ կառավարութիւնը, յետոյ լրացնէինք, ամբողջացնէինք խորհրդարանը, ուրկէ բդխեր միացեալ կառավարութիւնը: Պ. Շանթ կը պաշտպանէ այն կարծիքը, որ գաղութներու հայութիւնն ալ պէտք է մասնակցի ընտրութեանց՝ երկու պատճառներով, նախ՝ անոր համար, որ Հայ. խորհրդարանը ընտրելու համար մասնակցած են ամբողջ Ռուսաստանի հայերը եւ, յետոյ, անոր համար, որ Հայաստան հայ չկայ եւ գաղութներու հայութեան մեծամասնութիւնն է, որ պիտի երթայ գլխաւորաբար երկրի հայութիւնը կազմելու: Պ. Շանթ կը վերջացնէ ըսելով, որ իւրաքանչիւր համագումար պատմական դեր մը ունի կատարելիք: Այս ժողովը այդ դերը կատարած չըլլար՝ եթէ միայն սահմանափակուի Վսեմ. Պօղոս Նուպար Փաշայի նախագծած աշխատանքով, այլ՝ ճանչնալ գոյութիւն ունեցող կառավարութիւնը, ամբողջացնել խորհրդարանը եւ ստեղծել միացեալ կառավարութիւնը, որով եւ ստեղծել մէկ ժողովուրդ, մէկ ազգ, մէկ պետութիւն, մէկ կառավարութիւն եւ մէկ խորհրդարան: Այս բոլորը կատարել կրնայինք, բայց չուզեցինք:

Պ. Հինդլեան. Համաձայն չեմ անոնց հետ, որոնք զանազան ձեւերու տակ միացման համար կ'առաջարկեն նախարարներ նշանակել հոս՝ Փարիզի մէջ ամբողջութեամբ եւ կամ անոնցմէ մէկ քանին Երեւան ղրկելով, այնտեղի կառավարութեան մաս կազմելու համար: Յանձնաժողովի առաջարկը նոր ընտրական կանոնագիր մը մշակելու հոս թուականը ճշդուելէ ետք այս ժողովին, անմիջապէս ընտրութեանց ձեռնարկելու՝ գաղութներու եւ Թրակիոյ զանազան վայրոց մէջ գտնուած հայերու կողմէ Երեւանի բարլամենթին անդամներ տալու համար՝ նոյնպէս բանաւոր չեմ նկատեր: Նոր ընտրութիւններ նշանակելով՝ այս Համագումարը կը հակասէ իր նախորդ որոշման, քանի որ Ազգ. Պատուիրակութիւն ընտրելով՝ այս Համագումարը կը մնայ համարառու անոր նկատմամբ մինչեւ Պատուիրակութեան գործունէութեան վերջը, իսկ նոր ընտրութիւններ նշանակելով՝ մենք քանդած կ'ըլլանք այս Համագումարը, անոր իրաւասութիւնն ու հեղինակութիւնը մերժած, ու ասով նորընտիր Պատուիրակութիւնը կը դառնայ անպատասխանատու մարմին մը, բան մը, որմէ ամէնքս ալ ուզեցինք խուսափիլ: Եթէ ընտրութիւններ ընելով կը հասկցուի, թէ այս Համագումարն ալ կը պահէ իր գոյութիւնը, այն ատեն մենք կ'ունենանք երկու ներկայացուցչական արեւմտահայ ժողով, մին՝ որ Փարիզ է, իսկ միւսը՝ որ Երեւան է եւ բարլամենթին մաս կը կազմէ: Ասով մենք ստեղծած կ'ըլլանք բազմաիշխանութիւն մը, անիշխանութեան ամէնէն սոսկալին: Չեմ հասկնար նաեւ բարլամենթ մը, որուն մէկ մասը ընտրուած է Հայաստանի քաղաքացիներու կողմէ, ինչ որ է այժմեան Երեւանի բարլամենթը, իսկ միւս մասը՝ գաղութներու կողմէ, որոնք թէեւ Հայ քաղաքացիներ չեն

եւ որոնք իրենց ընտրեալներէն 1000 մղոններով հեռու կը մնան: Եթէ Պ. Փաստրմաճեան կը հարցնէր շատ իրաւամբ ասկէ Երեւան ղրկուելիք նախարարներու համար, թէ որո՞ւ պիտի կռթնին անոնք հոն, ես ալ իմ կողմէս կը հարցնեմ հոս, թէ գաղութներու կողմէ ընտրեալ պատգամաւորները որո՞ւ պիտի կռթնին Երեւանի մէջ: Ասիկա բարլամենթի բարոտի պիտի ըլլայ, իրականութիւնները ֆիքսիոններով չի կարելի կառավարել, եւ ինչ որ ամէնէն վտանգաւորն է, ժողովուրդէն հեռու բոլորովին անջատուած այս բարլամենթը ժողովրդապետութեան արտաքին ձեւի տակ պիտի իրականացնէ ընտրեալներու սանձարձակ համայնական տիրապետութիւնը, պարզ oligarchie մը: Հայաստանի մէկ մասին բոլորովին բացառիկ վիճակը, երբ թրքահայութիւնը ցրուած է զանազան գաղութներու եւ Թիւրքիոյ ոչ-հայկական մասերուն մէջ, այնպիսի իրականութիւն մըն է, որ մեզի ցոյց կու տայ արդէն միակ ճանապարհը, միջոցը եւ եղանակը միացեալ Հայաստանի միացեալ կառավարութեան մը ստեղծման համար: Պէտք են, հետեւաբար, արդիւնաւոր միջոցներ եւ մէթոտներ: Մինչեւ ներգաղթ կատարուիլը, մենք պէտք է առժամանակեայ կառավարութիւն մը ստեղծենք այս Համագումարին եւ Երեւանի բարլամենթին համաձայնութեամբ, հաւասար մասնակցութեամբ, որմէ ետք կը ցրուին թէ՛ այս համագումարը եւ թէ՛ Երեւանի բարլամենթը, ու մինչեւ Constituante-ի հաւաքումը, այս կառավարութիւնը, պատասխանատու ըլլալով Սահմանադիր Ժողովին, կը գործէ եւ կը վարէ երկիրը վեհապետական բոլոր իրաւունքներով եւ ամբողջ ազգին վստահութեանը աջակցած ու անոր ամբողջութեանը պատասխանատու: Ասիկա, եթէ կ'ուզէք Directoire մըն է, որ Ֆրանսայի յեղափոխական շրջանին ծագում առած է եւ բոլոր նորակազմ երկիրները այս ճամփով ընթացեր են: Մենք մեր վիճակովը աւելի պէտք ունինք անոր, քան ոեւէ ազգ անցեալին մէջ եւ ներկայի մէջ:

Նիստը փակուեցաւ ժամը 8½-ին:

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 30, թթ. 14-26: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ 35-րդ

5 Ապրիլ 1919.

Նիստը բացուեցաւ Վսեմ. Նորատունկեանի նախագահութեան տակ, 26 անդամներու ներկայութեան, ժամը 5-ին:

ՕՐԱԿԱՐԳ

Միացեալ կառավարութիւն ստեղծելու հարցի լուրջ վիճաբանութեան շարունակութիւնը

Տոքթ. Բարսեղեան կը շեշտէ, որ բոլորն ալ ընդունին միացեալ կառավարութիւն ստեղծելու սկզբունքը: Միջոցներուն մէջ է, որ կը տարբերինք եւ երկուք են այդ միջոցները.

Ա. Նախ ընել խորհրդարանական ընտրութիւնները եւ ապա կազմել միացեալ կառավարութիւն. Բ. Այստեղէն նախարարներ ղրկել Երեւան որպէսզի հոն կազմեն միացեալ՝ կառավարութիւն:

Պ. Բարսեղեան բոլորովին հակառակ է Բ. ձեւին, որովհետեւ չի գիտեր, թէ նախ՝ այստեղէն ղրկուած անձերը պիտի կրնա՞ն գործակցիլ Երեւանի կառավարութեան, քանի որ այնտեղի նախարարները պատասխանատու են Երեւանի խորհրդարանին, մինչդեռ այստեղէն ղրկուածները պատասխանատու պիտի չըլլան: Հոն կայ Երեւանեան կառավարութիւնը եւ մենք այստեղէն չենք կրնար անոր ցրուիլը որոշել եւ պարտաւոր ենք մեր կարգադրութիւնները համաձայնեցնել այնտեղիններուն հետ: Պ. Բարսեղեան կ'եզրակացնէ, որ անհրաժեշտ է միակ խորհրդարան եւ կառավարութիւն ստեղծել եւ ատոր համար մենք այժմէն պէտք է Երեւանի կառավարութիւնը ճանչնանք

իբրեւ ընդհանուր կառավարութիւն, մշակենք ընտրական կանոնագիր եւ սկսինք, եթէ նիւթական կարելիութիւն կայ՝ խորհրդարանական ընտրութիւններուն:

Պ. Մաթիկեան նախ ցաւով կը մեղադրէ արտասահմանի կարգ մը ղեկավար մարմիններ, որոնք ո՛չ միայն չճանչցան, այլեւ նախատեցին Կովկասի Հանրապետութիւնը, անոր խորհրդարանը սովետի նմանցնելով: Ապա կ'առաջարկէ անմիջապէս ընդունիլ այդ կառավարութիւնը իբրեւ համահայկական կառավարութիւն, ձեռնարկել նաեւ խորհրդարանի ամբողջացմանը, որմէ պիտի բխի միացեալ կառավարութիւնը, այլապէս՝ այսինքն՝ եթէ այս ժողովը չընէ այդ, կ'ըսէ Պ. Մաթիկեան, ժողովուրդը ինքը պիտի երթայ իր ձեռքովը ընելու: Պ. Մաթիկեան կը վերջացնէ իր խօսքը՝ ըսելով, որ իբր պատերազմիկ ճանչցուելու համար մենք ամէն կերպով կը շահագործենք Կովկասի կռուած ըլլալը, իսկ այժմ ո՛չ իսկ կ'ուզենք ճանչնալ անոր կառավարութիւնը, իբր թէ վեց դար մեր կրած թրքական կառավարութենէն ալ գէշ ըլլար:

Բրօֆ. Թումայեան դիտել տալով, որ խնդիրը արդէն առաջուց շատ ծեծուած է Յանձնաժողովին մէջ եւ թէ գրեթէ անհնարին եղած է համաձայնութեան գալ, կ'առաջարկէ վիճաբանութեան փակում:

Պ. Միքայէլեան. Պ. Մաթիկեանի կարծիքները կը պաշտպանէ, որ պէտք է, կ'ըսէ, անմիջապէս ճանչնալ Կովկասի կառավարութիւնը եւ ամէն ոյժով օգնել փարիլ անոր: Արտասահմանի մարմինները շատ մեծ սխալ գործած են առաջին օրէն զայն չճանչնալով եւ ճանչցնելու համար ամէն ինչ չընելով: Եւ ահա առաջ եկած է տուալիզմ, տուալիզմ, որ միշտ գոյութիւն ունեցած է հայկական իրականութեան մէջ եւ որմէ թշնամիներ միշտ օգտուած են: Բայց ա՛լ ժամանակն է, որ վերացնենք այդ, ճանչնանք Կովկասեան Հանրապետութիւնը իբրեւ կորիզը ապագայ միացեալ կառավարութեան եւ ամէն կերպով նպաստենք անոր: Գալով առաջացուած առարկութիւններուն՝ զանոնք կը գտնէ չափազանց երկրորդական եւ լոկ ձեւի խնդիր: Ապագային այս Ժողովն ալ պատասխանատու է եւ ան ճանչնալով, ամբողջացնելով, ստեղծելով միացեալ կառավարութիւնը, պատմական մեծ գործ կատարած կ'ըլլայ:

Բրօֆ. Խաչատուրեան կը յայտնէ, որ այն բոլոր հայերը, որոնց իր ճամփորդութեան ընթացքին հանդիպած է, միմիայն կը փափաքին տեսնել Միացեալ Հայաստանի միացեալ կառավարութիւն: Պ. Խաչատուրեան իր տեսակէտները բանաձեւով մը Դիւանին կը յանձնէ:

Պ. Օհանջանեան ցույց կու տայ, որ հայկական գաղութներու մեծամասնութեան համար Միացեալ Հայաստանի միացեալ կառավարութեան խնդիրը էական դարձած է եւ ամէնէն փափաքելին: Այդ խնդիրը երկու գործի կրնայ վերածուիլ: Ա. Գոյութիւն ունեցող Կովկասեան կառավարութիւնը իբր հիմք ընդունիլ: Բ. Այն լրացնելու, ամբողջացնելու աշխատիլ: Ի՞նչ են այս մեծ գործի կատարումին դէմ բերուած փաստերը: Այստեղի ըսուածներուն մասին ես պիտի չխօսիմ, որովհետեւ անոնց մէջ ո՛չ մէկ լուրջ առարկութիւն տեսայ, բոլորն ալ ձեւական խնդիրներ են: Ես պիտի խօսիմ այն քանի մը փաստերու մասին, որոնք Յանձնաժողովին մէջ արտայայտուեցան: Անոնցմէ առաջինն Պ. Աճէմօֆէ ներշնչուած է եւ որուն համաձայն՝ թրքահայ հարցը ամբողջովին կցելով Ռուսաստանի, վտանգ կը ստեղծուի, որ երբ վաղը այդ հսկայ էմբերալիսթ Ռուսաստանը ինքզինքը վերագտնէ, պիտի ուզէ իր իրաւունքները վերահաստատել Կովկասի վրայ եւ եթէ թրքահայ դատը ռուսահայ դատին կցուած ըլլայ՝ կրնայ վտանգի ենթարկուիլ:

Արդ, իմ կարծիքով, Ռուսաստանը գլխովին քայքայուած է, ան փոշիացած է եւ երբեւիցէ ապագայի Ռուսաստանը չի՛ կրնար անցեալի Ռուսաստանն ըլլալ:

Հետեւաբար, ռուսական էմբերիալիզմի այդ վտանգը չկայ: Իսկ եթէ նկատի առնենք նոյնիսկ Ռուսաստանի ամբողջական վերակազմումի անկարելի պարագան, երբ եւրոպական պետութիւններուն շահերը իրեն արգելք չհանդիսանալով Ռուսաստան սկսի գրաւել Կովկասը, այն ատեն ի՞նչ կարեւորութիւն ունի, թէ թրքահայ

հարցը միացած է կամ ոչ Կովկասինին: Ռուսիա կրնայ երթալ եւ ամբողջ Թրքահայաստանն ալ գրաւել: Այնպէս որ՝ միացումը իրաւաբանօրէն վտանգ չի ներկայացներ: Ռուսաստանը, ուրեմն, եթէ վերականգնի պոլշեւիկներու ոյժով անգամ, պոլշեւիկ Ռուսաստանը այդպիսի ո՛չ մեկ ձգտում ունի: Իսկ գալով ռուսական միւս գլխաւոր հոսանքներուն, անոնք արդէն յայտարարած են, որ զանազան ազգերը պիտի կարենան ինքնավար կառավարութիւններ ստեղծել: Եւ յետոյ, նկատի պէտք է առնել այժմ ազգութիւններու համար գրուած սկզբունքները, Ուիլսոնի վարդապետութիւնը եւ այլն: Հին հասկացողութիւններով չէ, որ հիմա նոր աշխարհ պիտի կազմուի, նոր հասկացողութիւններով է, որ հին աշխարհը պիտի վերակազմուի:

Ուրիշ առարկութիւն մըն ալ այն է, որ՝ միացումի պարագային՝ թրքահայութիւնը կը հեռացուի ռուսահայութենէն: Պ. Օհանջանեան բոլորովին անհեթեթ կը գտնէ այս առարկութիւնը եւ կ'առաջարկէ, որ ամէն հայ իր միտքէն հանէ այդ: Կը մնայ ուրեմն, կը շարունակէ Պ. Օհանջանեան, գործնականապէս եւ անմիջականօրէն միացեալ կառավարութիւն ստեղծելու դժուարութիւնը: Արդ, եթէ ճանչնանք անմիջապէս Երեւանի կառավարութիւնը ինչպէս որ է, բարոյական մեծ շահ մը ըրած կ'ըլլանք: Այդ կառավարութիւնը կրնայ, այդ պարագային, բոլոր հայութեան անունով խօսիլ: Միութիւնը Երեւան պիտի գայ, իսկ գործնական ո՛չ մէկ անյարմարութիւն ծնունդ պիտի չառնէ, մինչեւ որ ընտրական օրինագիծը կազմուի, միացեալ խորհրդարանը կազմուի գաղութներուն ալ ընտրութեանց մասնակցութեամբ եւ ստեղծուի միացեալ կառավարութիւն: Այն ժամանակ մանտաթէր պետութիւնն ալ երբ գայ՝ չպիտի կարողանայ նախատեսուած շահագործումները իր ուզած չափով իրականացնել:

Պ. Չօպանեան ուժգնօրէն կը շեշտէ այն միտքը, թէ ո՛չ ոք կրնայ կասկածիլ միացեալ կառավարութիւն մը տեսնելու համար բոլորիս ալ ունեցած ամէնաջերմ փափաքին վրայ: Տարակարծութիւնը պարզապէս քաղաքական համոզումներէ յառաջ կու գայ: Յանձնաժողովին մէջ կատարուած այդ երկար վիճաբանութիւններն ու աշխատանքները ցոյց տուին, որ անկարելի էր այս մեր բերած բանաձեւէն զատ ուրիշ ելքի մը յանգիլ, ուստի կ'առաջարկեմ, քանի որ դեռ քննել կ'ուզուի այս խնդիրը, վաղը ամբողջ կազմով զբաղիլ այս խնդրով:

Պ. Չօպանեան Պոնտոսի խնդրոյն մասին Պոնտոսի յունաց ներկայացուցիչներուն հետ միասին խմբագրուած զեկոյց մը կարդաց:

Նիստը փակուեցաւ ժամը 8-ին:

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 32, թթ. 1-5: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ 36-րդ

7 Ապրիլ 1919.

Ժողովը բացուեցաւ Վսեմ. Նորատունկեանի նախագահութեան տակ, 5 1/2-ին, 26 անդամներու ներկայութեան:

ՕՐԱԿԱՐԳ

Ա. Միացեալ կառավարութիւն ստեղծելու խնդիրը

Օրակարգի անցնելէ առաջ, կարդացուեցաւ Պոսթոնէն՝ Դաշնակցական Կեդրոնական Կոմիտէէն հասած հեռագիր մը ամերիկահայ պատուիրակներու ընտրութեան վերաբերմամբ, որուն, իբրեւ կարգադրուած խնդիր՝ ժողովը չզբաղեցաւ:

Կը կարդացուի նաեւ Պ. Մալքոլմի տուած հետեւեալ զեկուցումը՝ Կովկասի սովեալ դրութեան վերաբերմամբ իր կատարած դիմումներուն մասին:

Փարիզ, 31 Մարտ 1919.

/Պ. Մալքոլմի անգլերէն զեկոյցի թարգմանութիւնը/

«Երկուք ու կէս ամսոյ չափ առաջ տեղեկութիւն տրուեցաւ մեզի, թէ Հայաստան եւ մասնաւորապէս Հայ Հանրապետութեան սահմաններուն մէջ կացութիւնը խռովիչ էր: 1400000 մեր հայրենակիցներէն սովալլուկ վիճակի մէջ էին:

Երկու անպաշտօն մասնաժողովներ յաջորդաբար կարգուեցան մեր Համագումարէն, որոնց անդամ էի, հոգ տանելու այս վիճակին, սակայն Համագումարը այն կարծիքին էր, թէ մասնաժողովը Վսեմ. Պօղոս Նուպար Փաշայէն պէտք է ընդունի իր հրահանգները:

Այլ եւ այլ պատճառներով երկրորդ մասնաժողովին անդամներէն միայն մէկը եկած ըլլալով՝ Նորին Վսեմութեան խորհուրդին դիմեցի, եւ արդէն քանի մը անգամներ նպաստի եւ օգնութեան համար Դաշնակիցներու Գերագոյն Ժողովին ներկայացուցիչներուն մօտ գացած ըլլալով, նամակներ գրեցի այդ Ժողովին թէ՛ անգլիական եւ թէ՛ ամերիկեան հատուածներուն: Նոյն ատեն՝ իրենց ղրկեցի յուշագիր մը, զոր Պ. Պ. Փաստրմաճեանի եւ Բիրալեանի տուած մանրամասնութեանց վրայ պատրաստած էի: Ասի եղաւ Փետրուար 13-ին:

Այս թուականէն առաջ, իրաւամբ աս տպաւորութիւններն ունէինք, թէ ամերիկահայերու Սուրիական Նպաստի Հիմնադրամին եղած հանգանակութիւնը շատ աւելի մեծ էր, քան յետոյ երեւան եկածը եւ թէ D. Barton-ի նպաստի պատուիրակութիւնը շատ աւելի խոշոր դրամական միջոցներ ունէր իր ձեռքը:

Այսուամենայնիւ, Փետր. 21-ին գրաւոր պատասխան մը առի իմ Փետր. 13-ի նամակիս, որով իմ յուշագիրին մէջ գտնուած քանի մը կէտերուն վրայ աւելի որոշ տեղեկագիր մը կը պահանջէին: Իսկոյն հաղորդակցութեան մտայ Պ. Փաստրմաճեամի եւ Պ. Բիրալեանի հետ: Պ. Փաստրմաճեան քիչ վերջը պարտաւորուեցաւ մեկնիլ: Մարտ 5-ին /12 օր յետոյ/ կրկնակի Պ. Բիրալեանի ուղղակի ու անուղղակի դիմումներ ընելէ վերջ Պ. Ահարոնեանի ստորագրութեամբ տեղեկութիւններ առի, որոնք զգալի տարբերութիւն մը չունէին յուշագրին մէջ գտնուածներէն:

Այս նոր տեղեկութիւններէն յետոյ, նամակներն անձնապէս տարի անգլիական եւ ամերիկեան ներկայացուցիչներուն եւ վերստին նպաստի համար խնդիրք ներկայացուցի, երբ բերանացի խոստումներ ընդունեցայ նպաստաւոր նկատառման:

Երկու օր յետոյ, Մարտ 7-ին, ձեռքով ինծի բերուեցաւ նամակ մը՝ տեղեկացնելով, թէ M. Hoover՝ հատուածին գլխաւորը, հեռագրով հրահանգ ղրկեր էր ամիսը 5000 poco ալիւր ուտեստ ղրկելու Արեւելեան Հայաստանի, ու կարգադրութիւններ ընելու սերմնացուի համար, վերջինը Dr. Barton-ի մասնաժողովին հետ ընկերովի:

Մարտ 13-ին, Հինգշաբթի օրը, պաշտօնական յատուկ պատուիրակութիւն մը, որուն գլուխն էին Captain Tulin եւ Lieutenant Horchow մեկնեցան դէպի Հայաստան: Իրենց մեկնումէն առաջ տեսակցութիւն մը կարգադրեցի իրենց ու Պ. Ահարոնեանի միջեւ, որ ինչպէս Վսեմ. Պօղոս Նուպար Փաշա եւ Նորին Սրբ. Դուրեան հարկ եղած յանձնարարական նամակները տուին իրենց:

Նպաստի համար ծախսուած դրամի վճարումէն յետոյ պիտի որոշուի եւ կատարուի ապագայ Հայ կառավարութեան, եթէ սակայն Ամերիկա նպաստի հիմնադրամին նոր հանգանակութիւններով չդիմաւորէ այն: Հոն հասած տեղեկութիւնները ասոր նկատմամբ շատ աւելի քաջալերական են:

Սուրիա, Միջագետք, Կիլիկիա ու շրջակաները եւ ուրիշ կողմեր ալ նպաստի գործին համար գոհացուցիչ տեղեկութիւններ կան: Բայց ամէնէն սուր հանգամանքը՝ սովը կը տիրէ Հայ Հանրապետութեան երկիրներուն մէջ ինչպէս կ'երեւայ յետագայ հեռագրին պատճէնէն, զոր ընդունեցայ միջ-դաշնակցային Գերագոյն Ժողովէն, Շաբաթ գիշեր, Մարտ 15-ին եւ որ արդէն կարդացուած է Համագումարին առաջ:

«Հաց չկայ ոչ մէկ տեղ: Երեւանի մէջ 45000 հոգի առանց հացի են: Կառավարութիւնը մէկ փող մը չունի: Որբանոցներն ու զինուորները բոլոր Երեւանի մէջ

զարհուրելի վիճակի մէջ են: Ո՛չ մէկ շուն, կատու, ձի, ջորի կամ ուրիշ կենդանի կը գտնուի Իգդիրի շրջանին մէջ: Տեսանք տարագիր կիներ, որոնք իրենց մերկ ձեռքերով սատկած ձիէ մը միս կը փրցնէին ուտելու: Լուր կը տրուի, թէ օրը 30 հոգի կը մեռնի Աշտարակ, 25 հոգի՝ էջմիածին եւ, անտարակոյս, շատ աւելի՝ Իգդիր ու Սարդարապատ: Երբ շաբաթ մը անցնի՝ 10000 մահ պիտի հաշուուի: Աստծու սիրուն՝ փութացէ՛ք: Պաքու ու Պաքում տեղւոյն վրայ բաւական ուտեստ կայ հիմա՝ սովատանջ ժողովուրդին քիչ մը ժամանակ ողջ պահելու: Երկաթուղիները իրենց կրցածը կ'ընեն ուտեստ հասցնելու ժողովուրդին: Կը յուսանք այս փոթորիկը անցընել, բայց յոյնը մեր թշնամին է այս պահուս: Մօտ ամէնին մեզի պէտք են պաշտօնեաներ: Հաճեցէ՛ք որքան պաշտօնեայ որքան շուտ կրնաք հասցնել: Նաեւ հաճեցէ՛ք յիշել, թէ ներկայ ուտեստի ամբարնիս շատ շուտով կը հատնի, ուստի նոր վարկենական ու ստիպողական է»:

Այս հեռագիրը ստանալէս ի վեր երկու դիմումներ ըրի եւ տեսակցեցայ պաշտօնական անձերու հետ, որոնք ըսին, թէ իրենց կրցածը կ'ընեն ու մեզի պիտի տեղեկացնեն:

Մարտի 24-ին հետեւեալ նամակը ստացայ.

«Սիրելի Պ. Մալքոլմ,

Կը յիշէք, թէ Մարտ 20-ին Պոլիս Պ. Հայնցին հեռագրեցինք՝ առաջարկելով Մօտաւոր Արեւելքի Նպաստի Մասնաժողովին միանալ՝ Քուպանի շրջանէն հագուստ եւ ուտեստ ղրկելու փոխարէն սերմնացու ստանալու պայմանով: Կը ցաւինք ձեզի տեղեկացնելու, թէ Պ. Հայնցէն պատասխան առինք, որով կ'իմացնէ, թէ իրենց հասած լաւագոյն տեղեկութեանց համեմատ հիմա այլեւս չափազանց ուշ է այս առաջարկուածը գործադրելու, որովհետեւ հաւանօրէն այս եղանակին ցանքին համար ժամանակին չպիտի կրնայ հասնիլ ցորենը: Խորապէս ցաւելով, որ այս նպաստի միջոցին օգնելու մեր անկեղծ ջանքերը ի դերեւ եղան,

Մնամք՝

Ձերդ ճշմատապէս՝

Ամերիկեան Նպաստի Վարչութիւն

/ստորագրուած/ E. A. Geden

Մարտ 25-ին վերագրեալ խնդրոյն համար Mr. N. Geden-ը տեսայ եւ զիս վստահեցուց, թէ որեւէ պարագայի ամիսը 5000 poco ուտեստ պիտի ղրկուի Արեւելեան Հայաստան: Յոյս յայտնեց, թէ սերմնացու եւս պիտի ղրկուի աշնան ցանքին համար, թէպէտ կը ցաւէր, թէ անկարելի գտնուեցաւ գարնանացանքին համար ղրկել:

Գլխաւորելով պարտիմ ըսել, թէ իմ բոլոր դիմումներուն եւ ջանքերուն ընթացքին, երբ պէտք եղաւ՝ կատարեալ օժանդակութիւնը եւ գործակցութիւնը վայելեցի Mr. Arthur Curtes James-ին, Dr. Barton-ին՝ Ամերիկեան Նպաստի Մասնաժողովին Փարիզի ներկայացուցիչէն եւ անկեղծ համալրուած Mr. Geden-է, Captain Tulin-է, Mr. Louis Arauss-է, Փարիզի Ամերիկեան Պատուիրակութեան ուրիշ անդամներէ:

Բոլոր նամակներն ու վաւերաթուղթերը Համագումարի ուզած ատեն կրնանք ներկայացնել:

James Malcolm.

Ծանօթութիւն. Երկու ամիս առաջ հասած Հայ. Ազգ. Պատուիրակութեան ձեռքը գտնուած տեղեկութեան համեմատ՝ պէտք եղած ամբողջ ցորենը կրնայ ստացուիլ Քուպանի շրջանէն, եւ մաս մը արջառ՝ Վրաստանէն ու Հարաւային Ռուսաստանէ կրնայ գնուիլ: Պատրաստ գնուած ցորենը, թեպէտ փոքր է ատոր քանակը, մօտակայ ներքնաշխարհէն կրնայ դիւրաւ բերուիլ ծովեզերք /Նովոռոսիյսք/՝ հոնկէ բեռցուելու Պաքում՝ տառապեալ շրջաններուն ամէնէն մօտիկ նաւահանգիստը: Բայց հարկ պիտի ըլլայ ապահովութիւններ տալ Զօրավար Տենիքինի, թէ արտահանուած ցորենը չպիտի ղրկուի Վրաստան:

Վերջերս իմացուած գինը ցորենի, որ տառապեալ շրջաններու մէջ կրնայ ձեռք բերուիլ՝ փուտը 150-էն 220 ռուպլի է:

Քուպանի շրջանին մէջ ցորենի գինն է փուտը 25-էն 30 ռուպլի: Մէկ փուտը 36 լիպրա է:

Բաշխումը ամիսը 1 1/2 փուտ կը հաշուուի մարդ գլուխ:

Այդ շրջաններուն մէջ ցորենի հունձքն է 7-9 պատիկ:

Հայ. Ազգ. Պատուիրակութիւնը պատրաստակամ է ղրկել վստահելի ու ձեռնհաս անձեր, որ օգնեն պարենի գնումին ու բաշխումին մէջ:

Բազմաթիւ պարագաներու մէջ ժողովուրդը վճարմամբ պիտի ստանայ պարէն ու ո՛չ թէ ձրիաբար իբր ողորմութիւն:

Ի վերջ բանի, կրնայ ըսուիլ, թէ թէպէտ այս բանակցութիւնները բաւականաչափ հաջողութիւն գտած են, պարտականութիւն է մատնանշել, թէ Արեւելեան Հայաստանի կացութիւնը տակաւին կը մնայ շատ ծանրակշիռ: Փետր. 11-ի յուշագրին կցուած պատճէնէն կը տեսնուի, թէ Ամերիկեան Նպաստի Յանձնաժողովին վեհանձնօրէն խոստացած ամսական 5000 poco ալիւրը եւ ուտեստը շատ փոքր մասը կը կազմէ սնունդի համար հարկաւոր քանակութեան /դուրս ձգելով սերմնացուն/. հայ ազգին գրեթէ կէսին վրայ վերահաս ահաւոր վտանգին առաջքը առնելու համար, մինչդեռ դեռ իրօք ոչինչ եղած է մեր հայրենակիցները պաշտպանելու ժանտախտի կոտորածներէն եւ պատերազմի մշտակայ վտանգներուն դէմ: Պէտք չէ, որ հարկ ըլլայ մատնանշել, թէ մեր ժողովուրդին կեանքերը նոյնիսկ աւելի թանկագին են, քան անկախութիւնը, որուն համար կը շարունակեն դիւցազնօրէն տառապիլ: Պէտք է յիշել, թէ ամէն տեսակէտով եւ ամէն բանէ աւելի ժողովուրդն է, որ կարեւոր է ու էական:

Կը յուսամ, որ Համագումարին անդամները, Պատուիրակութիւնը, Հանրապետութեան ներկայացուցիչները կ'ընբռնեն իրօք զարհուրելի կացութիւնը եւ կը ձեռնարկեն ընել անյապաղ ինչ որ հարկ է՝ մեր ցեղին գրեթէ բնաջնջման առաջն առնելու համար:

Այս օրս աս է ամէնէն կարեւոր խնդիրը:

Դաշնակցաց դատին մէջ տառապած ու պատերազմած ըլլալով՝ չի կարելի ու պէտք չէ, որ ձգուինք սովամահ ըլլալու:

Դիւանը շնորհակալութիւն կը յայտնէ Պ. Մալքոլմի եւ ապա Ժողովը կ'անցնի օրակարգի:

Պ. Թէքէեան հետեւեալ պատճառները կը ներկայացնէ այժմ ընտրութիւնները անկարելի դարձնող: Գլխաւորն այն է, որ հողը չունինք, երկիրը դեռ մեզի չի պատկանիր, որմէ դուրս մեծ մաս մը կայ ժողովուրդին, որ իր կամքը չպիտի կրնայ արտայայտել:

Յետոյ շատ անբնական դրութիւն մը պիտի ըլլար, որ ժողովուրդը հեռու ըլլար իր ընտրած բառլըմանէն:

Երեւանի խորհրդարանին եւ մեր ընելիք ընտրութիւնները նման չպիտի ըլլան, հետեւաբար անոնց միացումը բառլըման չի կրնար կազմել: Ուրիշ պատճառ մըն ալ այն է, որ ժողովուրդին այս սպառած եւ քայքայուած վիճակին մէջ օգտակար չեմ տեսներ պայքարը, որ ամէն ընտրութիւն իր հետ կը բերէ: Գալով միացեալ կառավարութեան խնդրոյն, ես հետեւեալ արգելքները կը տեսնեմ: Թրքահայ կառավարութիւն մը ստեղծելու իրաւունքը չուզուեցաւ մեզի ճանչնալ: Բազմաթիւ արգելքներ յարուցանուցան այդ առթիւ: Ուրեմն, երբ մենք կառավարութիւն ստեղծելու իրաւունք չունինք, ինչպէ՞ս կընանք եղած կառավարութիւն մը ճանչնալ, որ աւելի ծանրակշիռ բան մըն է եւ որով երկու իղձերէն մէկը բոլորովին ջնջած կ'ըլլանք: Եթէ այս Ժողովը իրաւասու է այս խնդիրը լուծելու, այն ժամանակ առաւել եւս իրաւասու է թրքահայ կառավարութիւն ստեղծելու:

Երկու խօսք նաեւ «ապսորպէ» բառին առթիւ, որ ես արտասանած եմ առաջին անգամ եւ այնպիսի առթիւ մը, որ ան երբեք չէ ունեցած հիմա իրեն տրուած իմաստը:

Եթէ Յանձնաժողովին մէջ կ'առաջարկուէր կառավարութիւն ստեղծել, երբ ան չընդունուեցաւ եւ առաջարկուեցաւ այստեղէն մարդիկ նշանակել եւ ղրկել, եւ երբ այս ալ չընդունուեցաւ եւ առաջարկուեցաւ եղածն ընդունիլ, այն ժամանակ էր, որ ես ըսի, թէ այս միութիւն չէ, այլ՝ ապսորպսիոն է արդարեւ: Բայց ես չյայտնեցի, թէ ան օգտակար է, վնասակար է կամ աննպատակայարմար: Իսկ ես գլխաւոր մէկ արգելքը Կովկասի կառավարութիւնը ճանչնալուն այն կը նկատեմ, որ Հայկական Հարցը ռուսական հարց մը չէ, այլ՝ Դաշնակիցներուն զբաղած եւ միջազգային խնդիր մը: Երբ տանէինք ու զայն բոլորովին միացնէինք ռուսական հարցին՝ ան իր ծանրութենէն շատ կը կորսնցնէր ինչպէս եւ իր յատկութիւններէն ու ռեֆերանսներէն, որոնք 30 տարիներու չափազանց դաժան փորձութենէ մը յետոյ ստացուած են: Այս վախն է, որ մեզ կը վարանեցնէ միութիւնը յառաջ բերել եղածը պարզապէս ճանչնալով: Իսկ ո՞րն է այն օգուտը եթէ այդ յայտարարութիւնը կատարենք: Պարզապէս մօրալ օգուտ մըն է, որ արդէն ստացած ենք միութեան այն աքթերով, որ կատարուած են մէմորանտումին մէջ՝ երկու նախագահներուն ստորագրութեամբ, միասնաբար կատարած դիմումներովը եւ զայն մեր բաղձանքներուն ամէնէն մեծը ընելով մէմորանտումին մէջ: Իսկ պաշտօնական աքթը նոր բան մը չաւելցնէր այս օգուտին վրայ եւ սակայն կրնայ իր հետը բերել վերը յիշուած ծանրակշիռ վնասները:

Պ. Ֆնտգլեան նախ իր խորին ցաւը կը յայտնէ այն յայտարարութեանց դէմ, որոնք կարգ մը ժողովականներու՝ Կովկասի Հանրապետութեան դէմ անտարբերութիւն կը մեղադրեն: Պ. Ֆնտգլեան կ'ըսէ, թէ եթէ նոյնիսկ Հայաստան որեւէ մէկ հողամասին վրայ պատկանէր եւ անկախ ըլլար՝ պաշտամունքին առարկան պիտի դառնար: Ասոր իբրեւ փաստ կը բերէ մեր ունեցած գուրգուրանքը կիսանկախ Զէյթունին համար: Այլ տարբերութիւնը պարզապէս թաքթի պատեհակութեան եւ գնահատումի խնդրոյն մէջ կը կայանայ:

Պ. Ֆնտգլեան կը հարցնէ նաեւ՝ որ կարելի չէ՞, որ Ռուսաստանը դառնայ ֆետերաթիֆ պետութիւն մը, եւ ֆետերասիոնը պարտադիր դառնայ ամբողջ Հայաստանին, երկու հարցերը նախապէս միացած ըլլալով: Ասկէ զատ, խնդիրը լոկ մեր ներքին կեանքին հետ կապ չունի, այլ՝ արտաքին աշխարհի, դիւանագիտական աշխարհի հետ կապ ունի: Պէտք է գիտնալ Դաշնակից պետութեանց ներքին մտաւորութիւնը, թէ ինչ վերաբերմունք պիտի ունենան մեր դատին հետ, երբ մեր թրքահայոց արդէն ճանչցուած եւ գնահատուած դատը կցուի ռուսահայոց, երբ Ռուսաստանի խնդրին առայժմ մոտենալ իսկ չեն ուզեր, կը յիշեցներ Լորտ Քրզընի Անգլիոյ արտաքին գործոց նախարարին նամակը նաեւ միւս էմիլի Ռոպբնսինոյ այնքան ցուրտ տպաւորութիւն ըրավ, եւ որուն մէջ բացայայտ կըսէր թէ Կովկասը դեռ Aechnigue կերպով թշնամիի գրաւուած երկիր կը նկատուի եւ չկրնար տոյլատրիլ: Թղթակցութեան կամ դրամի առաքում Կովկաս: Բայց Պ. Ֆնտգլեան կ'առաջարկէ այժմեանէ իսկ սկսիլ ընտրական օրինագիծը պատրաստել՝ ժամանակ չկորսցնելու եւ միացեալ խորհրդարան ու ապա կառավարութիւն ձեռնարկելու համար:

Պ. Մաթիկեան գլխաւորաբար Պ. Թէքէեանի առաջարկութիւնները անհիմն եւ շատ թոյլ կը գտնէ՝ չիրականացնելու համար այնքան մեծ նշանակութիւն ունեցող միացեալ կառավարութեան գործը: Ամբողջ ժողովուրդը ատոր կը փափաքի, կ'ըսէ Պ. Մաթիկեան, եւ մենք մինչեւ հիմա արդէն զայն ճանչցած չըլլալով՝ մեծ սխալ գործեցինք ու դեռ կ'ուզենք շարունակել այդ սխալին մէջ մնալ: Պ. Մաթիկեան կը վերջացնէ ըսելով, որ պէտք է անմիջապէս ճանչնալ Կովկասեան կառավարութիւնը, ամէն ինչ ընել, որ միւս պետութիւններն ալ ճանչնան եւ դատեն, որ մեր տուած որոշումները կրնան արդիւնաւորապէս իրականանալ:

Պ. Միքայէլեանը ցոյց կու տայ, որ ճանաչումը արդէն մեմորանտումէն կը բխի: Հետեւաբար, ճանչնալու կամ չճանչնալու պարագային մէջ ալ՝ մեր դատը ռուսական հարցին կցուելու վտանգը նոյնը կը մնայ: Արդ, քանի որ սկզբունքով ընդունած ենք այդ, հետեւողական ըլլալու համար, պէտք չէ վարանինք նաեւ գործադրութեան մէջ:

Ընդհակառակը, մենք պէտք է այդ կատարուած իրողութիւն դարձնենք եւ երբ վաղը Ռուսաստանը մեզ տեսնէ միացած, ուժեղ եւ կազմակերպուած, ստիպուած է նկատի առնել: Եւ այդ ամբողջական գաղափարի սկզբունքին համար երկու մասերը իրարու պաշտպան պէտք է կանգնին:

Պ. Միքայէլեան կը վերջացնէ ըսելով, որ աքթը միեւնոյնն է: Մեմորանտումին մէջ սկզբունքով ընդունիլ գաղափարը, ապա ընտրութեանց սկսիլ միայն: Կա՛մ այստեղէն մարդիկ երթան միութիւնը յառաջ բերելու, կա՛մ համամիտ ըլլալ, որ մէկ քանի ամիսէն սկսին ընտրութիւնները: Ուրեմն, այս Ժողովը կիսատ ճամբաներ չի կրնար բռնել. կա՛մ այն է, որ պիտի ժխտէ այս կամ այն ձեւով միացեալ կառավարութիւնը յառաջ բերելու գործը եւ կա՛մ պիտի ընէ այն մեծ աքթը, որ պիտի հաստատէ ստրկութեան 6 դարերէ ի վեր մեր կորսնցուցած դիրքը:

Պ. Չօպանեան Կովկասի Հանրապետութեան պատգամաւորները կը մեղադրէ, որ իրենց հասած օրէն իսկ խնդիրը այս ձեւին մէջ չդրին, որով եւ այն ժամանակ չքննուեցաւ: Ընդհակառակը, անոնք ըսին պարզապէս, որ եկեր են Պատուիրակութեան հետ միասնաբար գործակցելու համար եւ բաժանումը մինչեւ այսօր մնաց ու նուիրագործուեցաւ մեմորանտումի երկու ստորագրութիւններովը, իրենց տեսակցութիւններովը եւ այլն, եւ այսօր այսպիսի մեծ թեզ մը կը դրուի մեջտեղ: Եթէ այս վիճաբանութիւնները պիտի ըլլար, այն օրն է որ պէտք էր տեղի ունենար: Պ. Ահարոնեան կ'առաջարկէր, որ փափկանկատութեան համար է, որ առաջին օրէն իսկ խնդիրը մէջտեղ չէ դրուած այս ձեւով եւ մեմորանտումը երկուքին կողմէ ստորագրուած է: Բայց այսպիսի ծանրակշիռ խնդրոյ մը մէջ՝ ինչպէ՞ս կարելի է փափկանկատութեան առարկութիւններ ընել: Իսկ գալով բուն խնդրին՝ ես դարձեալ կը կարծեմ, որ միակ ելքն է հաւաքուիլ նորէն այս բանաձեւին շուրջ, որ արտայայտուած բաղձանքներէն ոչ մէկուն ալ դէմ է եւ կը թոյլատրէ ոեւէ մէկուն ալ իրականացումը: Գլխաւոր երկու հակաթէզեր կային. առաջինը՝ այն, որ կը պաշտպանէր ճանչնալ Կովկասի կառավարութիւնը իբրեւ արդէն իսկ համահայկական, իսկ երկրորդը՝ որ կ'ըսէր, թէ Հայաստանին մէկ մասը կայ, որ ազատուած է ու իր կառավարութիւնն ունի, միւս մասն ալ կ'ունենայ իր կառավարութիւնը, որոնք երբ յարմար ժամանակը գայ՝ կը միանան: Արդ, երբ համաձայնութիւնը անկարելի կ'ըլլար, ես կ'առաջարկէի այս բանաձեւին նախ ողջոյնի եւ սիրոյ խօսքը հանդէպ Կովկասի կառավարութեան եւ թելադրել անմիջապէս Երեւանի Արեւմտահայ ժողովին, որ լրացնէ Կովկասեան խորհրդարանը եւ ան ալ ընտրէ միացեալ կառավարութիւնը: Երբ ասոր դէմ ալ ուշ ըլլալու եւ այլ առարկութիւններ եղան, այն ժամանակ էր, որ Պ. Փաստրմաճեան առաջարկեց ասկէ նախարարներ ղրկել, որով հոս պիտի ունենայինք միացեալ մէկ պատուիրակութիւն եւ հոն ալ՝ մէկ միացեալ կառավարութիւն: Այս քոնկրէն պիտի հռչակէր, որ Երեւան ժամանակաւոր մայրաքաղաք է, որ հակառակ հայերու կամքին՝ դեռ ամբողջական Հայաստանը ունենալ չկրնալուս համար՝ ստիպուեր ենք ժամանակաւորապէս հոն ընել մեր մայրաքաղաքը: Երբ այս ձեւն ալ չընդունուեցաւ, այն ժամանակ էր, որ բանաձեւեցինք այս գիրը եւ խնդիրը ուզեցինք ձգել Պատուիրակութեան, որ թերեւս լուծում մը յաջողէր գտնել: Խնդիրն այս վիճակին մէջ էր, երբ ընտրութեանց օրինագծի մշակման հարցը դրուեցաւ հոս եւ որ իր հետ բերաւ ամբողջ խնդիրը: Պ. Չօպանեան բուռն կերպով միշտ կը հերքէ այն կարծիքները, որոնք չկամութիւն կը տեսնեն խնդրին լուծման մեջ: Անոր բուն հիմը հոն չէ, հոն որ Հայկական Հարցը հիմնուած է թրքական բարբարոսութիւններուն ու լուծին վրայ եւ որուն համար կան միջազգային աքթեր, միջազգային անցքեր, որոնք աւելորդ է յիշել: Հայկ. Հարց ըսելով, բոլոր պետութիւններն ալ զայն միացած կը նկատեն թրքական խնդրոյն եւ ինչ որ շատ լաւ երեւան կու գայ այն պատասխանին մէջ, որ ամերիկեան կառավարութիւնը տուած է Պ. Փաստրմաճեանի՝ Հայկական Հանրապետութիւնը ճանչնալու եւ հայերը պէլիժերան ճանչցնել տալու իր դիմումին:

Պ. Փաստրմաճեան ճշդում մը կ'ընէ՝ ըսելով, որ պետական անձնաւորութիւններ միշտ խորհուրդ տուած են, թէ պէտք է Հանրապետութիւնը առաջ քշել պէլիժերան ճանչցուելու համար:

Պ. Չօպանեան կ'ըսէ, որ պէլիժերան ճանչցուելու համար պէտք էր Հանրապետութեան հռչակումէն առաջ ու մանաւանդ առմիստիսէն առաջ աշխատուեր՝ հիմնուելով ամբողջ հայ ժողովուրդին պատերազմին սկիզբէն իսկ Դաշնակիցներուն մատուցած ծառայութեան վրայ: Արդ, այս բոլոր մեր բաղձանքները դարձեալ կ'արտայայտուին մեր բանաձեւովը, այսպէս կամ այնպէս Թրքահայաստանի ազատագրումը եւ պիտի կատարուի, կը մնար մեզի բաղձանքը յայտնել, որ մեր բուռն փափաքն է տեսնել Կովկասեան Հայաստանի միացումը Թրքահայաստանին: Թրքահայաստանը անպատճառ պիտի կազմուի իբր ազատ երկիր: Արդ՝ եւրոպական պետութեանց շահուն համար իսկ, ատոր շնորհիւ կը վերնայ ռուսական վտանգը Կովկասեան Հայաստանի համար, որովհետեւ եթէ նոյնիսկ Ռուսաստանը այսպիսի մեծ գրաւումներ ընելու չափ զօրանայ, այդ շատ ուշ պիտի ըլլայ եւ մտածել Թրքահայաստանը գրաւել՝ Անգլիան երբեք թոյլ չի տար զայդ: Պ. Չօպանեան նորէն կ'առաջարկէ համախումբուիլ այդ բանաձեւին շուրջ:

Պ. Հինդլեան. Անգամ մը եւս հոս կը շեշտուի համերաշխութեան եւ համաձայնութեան անհրաժեշտութիւնը՝ բերուած առաջարկին առթիւ: Շատ բաղձալի է, որ խնդրի նկատմամբ եւս այս ժողովը համերաշխ արտայայտութիւն մը ունենայ, սակայն երբ մերձեցման կէտեր չի գտնուին հակառակ ըմբռնումներու միջեւ, բնական է, որ համերաշխութիւն չի կրնար գոյանալ համոզումներ եւ հասկացողութիւններ զրկելով: Բռնազբօսիկ համերաշխութիւն մը չէ, որ մեզ պիտի միացնէ հոս եւ նամանաւանդ ասկէ դուրս: Բաւական է միայն գիտակցութիւնը ունենանք, սակայն ճշգրիտ եւ ամբողջական գիտակցութիւնը այն խիստ պատասխանատու շրջանին, զոր կ'ապրինք այսօր, եւ միւս կողմէ համեստ ըլլանք ամէն մէկու տրուած հարցին առթիւ մեր ունեցած ձեռնհասութեան մէջ, որպէսզի իրական համոզումներ ունենանք՝ կանխակալ կարծիքներու եւ նախասիրութիւններու տեղ: Վիճելու ատեն չէ հիմա եւ ոչ ալ քաղաքական փորձերու /էքսբերիմենթներու/:

Կ'առաջարկուի այս Ժողովին մասնակցող մէկ քանի անդամներէն,- քաղաքական հոսանքի մը ներկայացուցիչներէն,- որ Համագումարն իր նիստերը փակելէ առաջ՝ Միացեալ Հայաստանի մը ստեղծման համար՝ Երեւանի Հայ Հանրապետութիւնը հռչակէ ամբողջ հայ ազգին, իբր բոլոր հայերուն միակ կառավարութիւնը:

Այս առաջարկը պէտք է քննել միակ տեսակէտէ: Նման ուղղութիւն մը, ընթացք մը այս Համագումարին կողմէ՝ որքա՞ն կրնայ օժանդակել եւ ինչքա՞ն ձեռնտու է զօրացնելու մեր միջազգային դիրքը ներկայ քաղաքական պայմաններու մէջ, եւ ի՞նչ ազդեցութիւն կրնայ ներգործել մեր դատին յաջողութեան համար: Երբ այս տեսակէտէն քննելով խնդիրը հաստատ համոզում մը գոյացնենք եւ ամէնքս ալ որոշապէս տեսնենք, թէ ասով մենք կը բարելաւենք մեր դիրքը, ուրեմն ուրիշ բան չի մնար, բայց եթէ ընդունիլ առաջարկը: Երկու օր է, որ առաջարկողները կը խօսին եւ սակայն ո՛չ մին մեզի ցոյց չտուաւ, չպարզեց այդ ուղղութեամբ եւ ո՛չ իսկ Պ. Օհանջանեան կրցաւ շօշափելի փաստ մը տալ այս առաջարկին անժխտելի եւ անվիճելի օգուտներուն մասին: Ո՞վ մենք կրնայ հերքել, մերժել, որ նման ընթացք մը մեր ներքին կեանքին մէջ կրնայ նոր եւ մեծ ոգեւորութիւն մը /elan/ ստեղծել, աւելի մեծ զոհողութիւններու տրամադրութիւններ պարտադրել ազգին բոլոր նիւթական եւ բարոյական ոյժերը համախմբելով: Եւ սակայն ասիկա չէ կարեւորը եւ կամ աւելի ճիշդ՝ այս օգուտը անբանական է եւ չարդարանար երբ ասիկա կ'ըլլայ ի գին քաղաքական սխալի մը՝ մեր միջազգային դիրքը խախտելով, տկարացնելով անոնց հանդէպ, որոնցմէ կախում ունի մեր հարցին լուծումը:

Եթէ Երեւանի հայ կառավարութիւնը ճանչցուած ըլլար Քոնֆերանսին կողմէ, եթէ անոր միջազգային դիրքը ճշդուած ըլլար, մի՞թէ կարելի էր կասկածիլ վայրկեան մը, որ այս Համագումարը իր առաջին գործը չպիտի նկատեր զայն յայտարարելու նաեւ իր կառավարութիւնը: Եթէ Երեւանը եւ ընդհանրապէս Հայ Հանրապետութեան կառավարութեան տիրած հողամասերը ըլլային՝ փոխան Ռուսիոյ՝ Թուրքիայի հողամասերը, վայրկեան մը չպիտի ուշանայինք միանալու եղած առաջարկին:

Հայկական Հարցը միջազգային հարց չէ: Միջազգային խնդիրը Թուրքիան է: Հայաստանը եւ Հայկական Հարցը այնքան ալ միջազգային է, որքանով որ մաս կը կազմէ Թուրքիոյ, եւ, հետեւաբար, ստորադասուած Թուրքիոյ ընդհանուր ճակատագրին, միջազգային ընդհանուր դրութեան: Ցաւալի իրականութիւն է ասիկա, սակայն տուեալը, դրական տուեալը այս է: Ռուսիան միջազգային հարց չէ եւ այս Քոնֆերանսը, բացի Բոլոնիայէն, ո՛չ միայն չզբաղիր Ռուսիոյ հարցով, այլ՝ մօտենալ իսկ անոր չուզէր, որովհետեւ չուզէր ուժանակով լեցուն տեղի մը մօտենալ:

Մեր ուղղութիւնը, եւ, եթէ կարելի է ըսել՝ մեր քաղաքականութիւնը պիտի ըլլայ դրական: Գոնէ այս անգամ, այս այնքան փափուկ եւ այնքան պատասխանատու շրջանին: Սկսած Պերլինի Դաշնագրէն մինչեւ 1914-ի ընդհանուր պատերազմը, Հայկական Հարցը միշտ եղեր է մաս թրքական հարցին. այդ տեսակէտով մենք որոշ ստացուած իրաւունքներ ունինք՝ նոյնպէս արիւնով եւ զոհերով շահուած: Անոնց վրայ պէտք է հիմնուինք, իսկ ընդհանուր պատերազմէն մինչեւ Armistice եւ անկէ վերջ մինչեւ այսօր, նոյնպէս նոր շահուած իրաւունքներ ունինք, որոնք գլխաւոր առանցքը կը կազմեն մեր այսօրուան պահանջներուն: Ընդունիլ եղած առաջարկը, որ կու գայ Պ. Բրօֆ. Խաչատուրեանէ եւ իր համախոհ ընկերներէն՝ կը նշանակէ շրջել գլխիվայր այս ամէնը եւ փոխադրել մեր իրաւունքներուն ծանրութեան կեդրոնը այլ տեղ, Հայկական Հարցէն Ռուսական Հարց շինել: Այսքան խիզախ քայլի մը պատասխանատուութիւնը ստանձնելու քաջութիւնը կը պակսի ինծի:

Կրնայ առարկուիլ, թէ եղած առաջարկը չի փոխեր մեր ուղղութիւնը եւ Երեւանի հայ կառավարութիւնը նոյնքան կրնայ այս իրաւունքներու հիման վրայ մեր պահանջները հետապնդել, որքան Ազգ. Պատուիրակութիւնը, որ այս Ժողովէն կ'ընտրուի:

Ճիշդ պիտի ըլլար թերեւս առաջարկութիւնը, եթէ նկատի չառնուէր, որ զուտ ռուսական հողամասերու մէջ հիմնուած պետութեան մը կառավարութիւնը, հիմնաւոր բոլորովին նոր քաղաքական doné-ներու վրայ, որոնք դեռ ո՛չ մէկ միջազգային sanction-ը չունին, չի՛ կրնար այլ պետութեան մը հանդէպ, Թուրքիոյ նկատմամբ այն զօրաւոր դիրքը ունենալ, ինչպէս նոյն պետութեան մինչեւ երէկ մասը կազմող եւ ասկէ վնասուած, հալածուած եւ ջարդուած ժողովուրդը, զայն ներկայացնող Ազգ. Պատուիրակութիւնը, որ /ասիկա երբեք չպէտք է մոռնանք/ 4-5 տարիներէ ի վեր անվիճելի իրաւունքը ունի խօսելու, պահանջելու եւ բանակցելու Խաղաղութեան Վեհաժողովը կազմող չորս մեծ պետութեանց հետ:

Պ. Չօպանեան կը կարծէ, թէ եթէ հարկ եղած աշխատանքը ըլլար՝ հայերը կրնային աթոռ մը ունենալ Խաղաղութեան Վեհաժողովին մէջ եւ օրինակ կու տայ չեխօ-սլովաքները: Չեմ գիտեր որքան ճշգրիտ կրնար ըլլալ իր մատուցումը, սակայն, օրինակը համոզիչ չէ, որովհետեւ չեխօ-սլովաքները մաս կը կազմեն Աւստրօ-Հունգարիոյ, իսկ այդ երկրին հանդէպ imperialist միտումներ չունին այն պետութիւնները, որոնք Թուրքիոյ մէջ դարէ մը ի վեր միշտ իրենց ապագայ ժառանգութիւնը տեսեր են: Որքան զգոյշ պիտի ըլլանք մենք այսօր մեր քաղաքականութեան մէջ, նկատելով որ ո՛չ միայն մեր թշնամիները այլ՝ բարեկամներն իսկ, իրենց աշխարհակալական ձգտումներէն առաջնորդուած, այնքան տրամադիր չեն կրնար ըլլալ մեր պահանջներուն նկատմամբ եւ, հետեւաբար, պիտի ուզեն մեզի դէմ գործածել մեր ամէնափոքր իսկ սխալը: Ընդունիլ Երեւանի հայ կառավարութիւնը որպէս միակ ներկայացուցիչը հայութեան՝ պիտի նշանակէր մեզ հեռացնել մեր թէրէնէն

/terrain, հողէն/: Ասիկա կրնան օգտագործել մեզի դէմ մեր բարեկամներն իսկ, ինքզինքնին ազատ նկատելով ամէն տրուած անկաժըմանէ:

Կը վերջացնեմ:

Կ'ըսուի՝ Երեւանի հայ կառավարութիւնը ճանչնալ այս Համագումարին կողմէ: Ասիկա կատարուեցաւ քանիցս այն օրէն, երբ Պ. Ահարոնեանը հասաւ հոս, memoire–ը ստորագրուեցաւ նաեւ République-ի ներկայացուցիչէն, ասկէ ետք երկուքն ալ Համաժողովին ներկայացան եւ խօսեցան: Միեւնոյն ատեն՝ մինչեւ այսօր դիմումներ կ'ըլլան երկուքին, երկու Նախագահներուն կողմէ: Ասկից աւելի ի՞նչ կը նշանակէ ճանչնալու խնդիր ընել հոս: Եթէ Պ. Միքայէլեան այնքան անտրամաբան illogique պարագաներ ցոյց տուաւ անոնց նկատմամբ, որոնք ասկից նախարարներ նշանակելու եւ Երեւան ղրկելու առաջարկը կ'ընէին, ինքը նոյնքան անտրամաբանական չէ՞, երբ այսօր Պ. Խաչատուրեանին կը միանայ, առաջարկելով Երեւանի հայ կառավարութիւնը ընդունիլ միակ կառավարութիւնը ամբողջ հայութեան, իսկ դեռ երկու օր առաջ մասնակցեցաւ Ազգ. Պատուիրակութեան ընտրութեան այս Համագումարին կողմէ՝ հետապնդելու համար համահայկական պահանջները: Ես ամէնէն բարեբախտ եւ նախախնամական կը նկատեմ այն պարագան, երբ առանց այս Համագումարին հարցնելու՝ երկու Նախագահները ստորագրեցին մեր memoire-ը: Թերեւս, եթէ հարցուեր, դժուար, թէ այս լուծումը ստանար: Այն օրէն մեր ուղղութիւնը որոշ է: Ազգ. Պատուիրակութիւնը եւ Հանրապետութիւնը մեր քաղաքական պայքարին երկու բերդերն են, երկու ամրութիւնները, որոնք համաձայնուած, ներդաշնակուած գործակցութեամբ ու աշխատակցութեամբ, մէկ ճակատ եղած, մեր պահանջները պիտի հետապնդեն: Հիմա կրնամ պատասխանել Պ. Ահարոնեանին ասկէ մէկ քանի օր առաջ ըրած հարցումին՝ թէ ի՞նչ պիտի ընենք եթէ միայն զինքը կանչեն Համաժողովին: Առաւել եւս լաւ, դուռ մը եւս ունինք Համաժողով մտնելու համար, անկէ՛ պիտի մտնենք, Պ. Ահարոնեան:

Այսօրուան համար մեր ազգային միակ հարստութիւնն են այս երկու բերդերը: Պահենք, զգոյշ ըլլանք պահելու մեր ազգային այս հարստութիւնը՝ առանց զայն բաժնելու, առանց զայն կոտորակելու եւ ատով անոր արժէքը կորսնցնելու:

Բրօֆ. Ա. Տէր-Յակոբեան կը յայտնէ իր խորին վիշտը թրքահայի եւ ռուսահայի զանազանութեան համար, ինչ որ Պոլիս չեն գիտցած այդպիսի բան: Կ'առաջարկէ վերջ տալ խնդրոյն, քանի որ այդ մասին արդէն որոշում կայացած է, թէ այդպիսի բան ընել չկրնալնուս համար կ'ընտրենք միացեալ Պատուիրակութիւն: Իրեն ուղղուած հարցումին վրայ Բրօֆ. Տէր-Յակոբեան կը պատասխանէ, թէ ինք ալ այսպիսի ժամանակ նման յայտարարութիւն մը յարմար չի տեսներ:

Նիստը վերջացաւ ժամը 8-ին:

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 32, թթ. 6-24: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ 37-րդ

8 Ապրիլ 1919.

Նիստը բացուեցաւ ժամը 7-ին, Նորատունկեան էֆ.-ի նախագահութեան տակ, 23 անդամներու ներկայութեամբ:

Օրակարգ.

Միացեալ կառավարութիւն ստեղծելու խնդիրը

Պ. Հանրմեան նախ կը շէշտէ այն կէտը, թէ Ժողովը պէտք չէ աշխատի խուսափիլ, որովհետեւ Պատուիրակութեան ձգուելու առաջարկներ կան, այս խնդրոյն լուծման պատասխանատուութենէն, եթէ նոյնիսկ ան շաբաթ մը եւս պահանջէ: Այս խնդրոյն շուրջ գլխաւոր չորս հոսանք կայ: Ա.- այն, որ կը պահանջէ ճանչնալ անմիջապէս Կովկասի կառավարութիւնը՝ իբրեւ կորիզ ամբողջ Հայաստանի կառավարութեան եւ միջոցներ ձեռք առնել միացեալ խորհրդարան եւ կառավարութիւն ստեղծելու համար: Բ.- այս Համագումարը զուտ արեւմտահայ նկատել եւ մէջէն նախարարներ ընտրելով՝ ղրկել Կովկաս: Գ.- այն, որ շատ չարտորար եւ կ'ըսէ՝ սպասենք քիչ մը նայինք ի՞նչ կ'ըլլայ եւ առ այժմ խորհրդարանի ընտրութեանց ձեռնարկենք: Դ.- որ բոլորովին աւելորդ կը նկատէ կարգ մը դժուարութեանց համար թէ՛ խորհրդարանը եւ թէ՛ կառավարութիւնը:

Պ. Հանրմեան. նախ վերջին հոսանքին դէմ հետեւեալ հակառակ պատճառաբանութիւնները կը բերէ: Վերջին հոսանքին իբր գլխաւոր պաշտպան Պ. Թէքէեանը արտայայտուած է, որ չուզեր այս Ժողովին տալ միացեալ կառավարութիւնը ճանչնալու իրաւասութիւնը: Սակայն Պ. Թէքէեանը ինքն էր, որ այնքան ջերմօրէն պաշտպանած էր այս ժողովին հեղինակութիւնը եւ նոյնիսկ կ'առաջարկէր իբրեւ քոնքրոլ ընող մարմին միշտ մնայ Պատուիրակութեան վրայ, այս հակասութիւն է: Իսկ իբր պատասխան Պ. Հինդլեանին այն կ'ըսեմ, որ լաւ է թերի կազմով խորհրդարան մը ունենալ, որ քոնքրոլ ընէ կառավարութեան վրայ, քան թէ զայն ձգել անպատասխանատու եւ ինքնագլուխ: Անհիմն է նաեւ ժողովուրդին՝ խորհրդարանէն հեռու ըլլալու պատճառաբանութիւնը, որովհետեւ քանի մը տարիէն խորհրդարանը շրջապատուած պիտի ըլլայ հայերէն եւ յետոյ Երեւանի մէջ 4-5 հարիւր հազար թրքահայ զանգուած կայ: Պայքար առաջ գալու առարկութիւնը շատ թոյլ է: Յետոյ՝ մինչեւ հիմա ո՞ւր կանոնաւոր եւ լաւ կատարուած են ընտրութիւնները, ինչո՞ւ ասկէ յետոյ գէշ պիտի կատարուին: Գ.-րդ հոսանքին տարբերութիւնը այն է Դ.-րդէն, որ անոնք չեն ուզեր անմիջապէս ճանչնալ Կովկասի կառավարութիւնը իբրեւ ամբողջական: Բ.-րդ հոսանքին դէմ այն առարկութիւնը ունիմ, որ այստեղէն գացած նախարարները օդին մէջ պիտի մնան, խորհրդարանին պատասխանատու չեն եւ այլն:

Պ. Տէր-Ստեփանեան. Բ.-րդ հոսանքին կարծիքը քոմբրոմի մըն է:

Պ. Հանրմեան. Իսկ Ա. հոսանքին դէմ եղած առարկութիւններէն գլխաւորը ռուսական հոսանքն է՝ որու արդէն Պ. Օհանջանեան պատասխանեց: Եթէ նոյնիսկ պատահի, որ Կովկասը ապագային միանայ Ռուսաստանին, մեր Արեւմտեան Դատը դարձեալ չվնասուիր: Այսօրուընէ իսկ ճանչնալով Կովկասի Հանրապետութիւնը, այս հարցը ոչինչով կը փոխուի, մինչդեռ ճանչնալով զայն՝ քաղաքական հասունութեան առիթ մը կատարած կ'ըլլանք: Պ. Աճէմեանի առաջարկը, թէ Կովկասը յայտարարէ միացած Թրքահայաստանին, անհիմն է, որովհետեւ ինչպէ՞ս գոյութիւն չունեցողին հետ գոյութիւն ունեցողը միանայ, տրամաբանականը հակառակն է: Մեր դատը պիտի տուժէ, կ'ըսեն, եթէ զայն Կովկասինին միացնենք: Ո՛չ, սխալ է, որովհետեւ մենք միշտ պիտի ունենանք մարմին մը, որ պիտի պաշտպանէ ոչ-ազատագրուած հայութեան դատը, ինչպէս որ յունական խնդրին մէջ տեղի ունեցած է:

Գալով Փաստրմաճեանի դիմումին տրուած ամերիկեան պատասխանին հոս մէջ բերուելուն, այն կ'ըսեմ, որ մեր բռնելիք ուղղութիւնն ու բաղձանքները չպէտք է ձեւենք օտարներու արտայայտած տեսակէտներուն վրայ: Յետոյ, ո՞վ յայտարարած է, որ Թրքահայաստանը անկախ պիտի ըլլայ: Մենք պէտք չէ, որ վերջինը ըլլանք Հանրապետութիւնը ճանչնալուն մէջ, եւ. եթէ ճանչնանք, բարոյական օգուտէ զատ դրական գործ մը կատարած պիտի ըլլանք: Մենք անկախութիւն կը մուրանք եւ մեր ձեռք բերած անկախութեան չենք փարիր՝ զայն միւսներուն ալ ճանչցնելուն համար: Այս ձեւով մեր դատը ո՛չ միայն ամուր կռուանի մը վրայ դրած պիտի ըլլանք, այլ նաեւ իրաւունքներ տուած պիտի ըլլանք անոր, որ չազատագրուած երկրամասերն ալ գրաւէ եւ խօսի բոլորին անունով:

Պ. Չօպանեան. Պատուիրակութեանց երկու նախագահները արդէն խնդրած են Դաշնակից կառավարութիւններէն, որ թոյլ տրուի Հայկական Հանրապետութեան՝ գրաւել Թրքահայաստանը:

Պ. Հանրմեան. Եթէ Հայկական կառավարութիւնը ինքնագլուխ ընէ այդ, այն ժամանակ Դաշնակիցները իրաւունք կ'ունենան բողոքելու, մինչդեռ մեր միակ միջոցը հիմա այդ կը մնայ, որ Հայկական Հանրապետութիւնը գրաւէ միւս մասը եւ որուն համար պէտք է անմիջապէս ճանչնալ զայն, ուժեղացնել եւ մեծցնել բանակը:

Պ. Թէրզիպաշեան. Ես կը փափաքէի, որ Պ. Օհանջանեան այստեղ ըլլար, վասնզի իմ խօսքերը պիտի պատասխանէին նորա Շաբաթ օրուան առաջարկներուն: Հոգ չէ, ես կը խօսիմ նորա բացակայութեան, որպէսզի Համագումարի պատմութեան մէջ անցնի:

Պ. Օհանջանեան իւր առաջարկը այսպէս բանաձեւեց, թէ թրքահայեր պէտք է ճանչնան Երեւանի արդէն գոյութիւն ունեցող կառավարութիւնը, որպէս փաստ: Ան մէջ բերեց. Ա. Պուլկարիոյ, Ամերիկայի եւ Միջագետքի պատգամաւորներու այն յայտարարութիւնները, թէ զիրենք ղրկող ժողովուրդին բուռն ցանկութիւնն է ճանչնալ Երեւանի կառավարութիւնը: Բ. որ մեր ամբողջ իրականութեան մէջ, որպէս ռեալ ոյժ հանրապետական կառավարութիւնը միայն կայ, որ ունի իր խորհրդարանը, բանակը եւ այլն եւ որին պէտք է կռթնել, ինչ որ Պուլկարիոյ, Ամերիկայի եւ Միջագետքի ժողովուրդի ցանկութեան կը վերաբերի: Ես չեմ կարծեր, որ նոքա Երեւանի կառավարութիւնը պաշտօնապէս ճանչնալու շեշտուած եւ բանաձեւուած պահանջ դրած ըլլան: Պուլկարիոյ պատգամաւոր Տոքթ. Սայեանի այս մտօք յայտարարութեան դէմ երբ իւր Պուլկարիոյ քուլեկը բողոքեց, տոքթորը խոստացաւ յաջորդ օրը բերել համապատասխան մանտա, իսկ յաջորդ օրը ան ոչինչ չբերաւ եւ մեկնեցաւ Պուլկարիա: Բանէն դուրս եկաւ, որ պլըֆ մըն էր իւր այդ յայտարարութիւնը:

Պ. Շանթ. Կը բողոքեմ, չվայլէր բացակայ ընկերոջ հանդէպ գործածել այդ բառը. պէտք է ետ առնէ պլըֆ բառը:

Պ. Թէրզիպաշեան. Ես կը կարծեմ, որ պլըֆ բառը խորհրդարանի մէջ ետ առնուելիք բառ մը չէ, բայց քանի որ Պ. Շանթ այդպէս կը կարծէ, ես ալ կ'ուզեմ բացակայ ընկերոջ մը հանդէպ այնքան ազնիւ ըլլալ, որքան ինքն Պ. Շանթը եւ ետ կ'առնեմ: Արդ, ես կը կարծեմ, որ այս յայտարարութիւնները ընողները կը շփոթեն ժողովրդեան միութիւն հռչակելու ցանկութիւնը Երեւանի կառավարութիւնը պաշտօնապէս ճանչնալու ձեւին հետ: Հոս գտնուող ամէն պատգամաւորներս ալ զանազան առիթներով թարգման եղած ենք ժողովուրդի միութեան կամ միացեալ կառավարութիւն հռչակելու ցանկութեան: Բայց ահա Սրբազանը, որ Պոլիսէն կու գայ, մենք որ Կովկասէն, ուրիշներ՝ զանազան վայրերէ, այդ տեսակ բանաձեւեր չենք լսած – ցանկութեան հիմքը միութիւնն է, որուն ժողովուրդը կրնայ ձգտիլ, բայց միացեալ կառավարութեան ձեւի մասին ժողովուրդը ո՛չ մտածեր է, ո՛չ ալ կրնայ մտածել, վասնզի անոնք քաղաքականութեան գործեր էին, եւ կարելի չէ այդ մտօք մանտա տալ: Բայց պահ մը սեպենք, թէ ժողովուրդը իր ցանկութիւնը բանաձեւեր է այնպէս, ինչպէս կը յայտարարեն Պուլկարիոյ կամ Ամերիկայի պատգամաւորները: Կարելի՞ է ժողովուրդի մէկ մասի զգացումներուն վրայ շրջել կատարուած իրականութիւնը: Այստեղ քաղաքական աքթեր (acte) կան կատարուած, որոնց հիմքը թրքահայ դատն է: Ես չեմ կրկներ այդ դատի հին պատմութիւնը, ես կը խօսիմ անհրաժեշտ Նոյեմբերէ վերջը տեղի ունեցած քաղաքական աքթերու մասին: Դուք կը յիշէք, որ Ուիլսոնի 14 պայմաններէն մէկը կը տրամադրէր Թիւրքիոյ զանազան ազգերու համար, ֆիզիկական գոյութեան եւ ազատ զարգացումի համար՝ ապահովութիւն եւ օթոնոմիա: Արդ, Թիւրքիա, Նոյեմբերի 11-ին Ուիլսոնի տասնեւչորս պայմաններու հիման վրայ ստորագրած ըլլալով զինադադարի պայմանները, ընդունած է նաեւ հայերու օթոնոմիան: Գերմանիա եւ միւս զինակիցներն որպէս հաշտութեան հիմք ընդունած ըլլալով Ուիլսոնի զինադադարի պայմանները, ընդունած են նաեւ հայերու

օթոնոմիան: Անկից վերջ դուք կը յիշէք Դաշնակիցներու այն պաշտօնական յայտարարութիւնները, որոնց հիման վրայ հայեր թրքական լուծէն ազատուած եւ Ազգերու Միութեան պաշտպանութեան ներքեւ կը գտնուին (ձայներ.- ո՞ւր են այդ պաշտօնական յայտարարութիւնները): Եթէ հետեւած էք թերթերուն, պէտք է իմացած ըլլայիք այդ բանը: Կրնանք հարցնել Պատուիրակութեան Նախագահին:

Վսեմ. Պօղոս Փաշա.- C'est juste, parfaitement.

Պ. Թէրզիպաշեան (շարունակելով). Սա մեր քաղաքական շէնքի հիմքն է: Հիմա քննենք, թէ ինչպէ՞ս կառուցուած է շէնքը: Ամէնքդ ալ գիտէք, թէ Պօղոս Փաշայի նախագահութեան ներքեւ գտնուած հայ Ազգային Տելեկասիոն Նոյ. 30–ին յայտարարած եւ առանձին նոթով Դաշնակիցներուն յայտնած է միացեալ Հայաստանի անկախութիւնը հետեւեալ ֆորմուլով. «Թարգման ամբողջ ազգի ցանկութեան, որի մէկ մասը Կովկասի մէջ անկախ հանրապետութիւն կը կազմէ, կը յայտարարեմ Ամբողջական Հայաստանի անկախութիւնը եւ այլնը»: Արդ ո՛չ ոք չկրնար անգիտանալ, որ Հանրապետութիւնը չէ ճանչցուած, կամ նորա ռէալ ոյժեր յայտարարուած անկախութեան ոյժերը չեն: Խնդիրը դորա վրայ չէ, այլ, ինչպէս ըսի, շէնքի հիմքին եւ կառուցուածքին վրայ: Այս քաղաքական աքքէն վերջ, Փետրուար 12-ին նորէն Ազգ. Պատուիրակութիւնը բոլոր հայ ազգի անունով կը դիմէ Քոնֆերանսին, եւ միշտ միեւնոյն միջնակէտէն, այսինքն՝ թրքահայ դատէն սկսելով իւր արկիւմանթասիոնը, կը պահանջէ ուրիշ սահմաններու մէջ հայոց անկախութեան հաստատութիւնը եւ այլն: Իսկ Հանրապետութեան ներկայացուցիչը իւր ստորագրութեամբ կը հաստատէ, ոյժ կու տայ Տելեկասիոնի պահանջներուն: Իսկ մէկ առանձին տեղ Կովկասեան բաժինն իր կողմէ կը յայտարարէ հետեւեալը. «Որովհետեւ Հայաստանի ամէնամեծ մասը ազատուած է Թիւրքիոյ խորտակումով, անկարելի է այլեւս ռուսահայ ձգել Հայաստանի մի մասը»: Հիմա կը տեսնա՞ք, Պ. Հանըմեան, որ թրքահայ հարցն է, որ գոյութիւն ունի եւ ոչ թէ ռուսահայ, իսկ Ռուսահայաստանի մէջ կան ռէալ ուժեր, զորս պէտք է միացնել բուն հարցին: Ես չեմ խօսի անպաշտօն տեսակցութիւններու, հաւաստիքներու, կիսապաշտօն յայտարարութիւններու մասին, որոնց նմանները շատ լսած ենք եւ յուսախաբ եղած. նոքա խօսքեր են որք կը թողին, ես ասացի ինչ որ չթողիր, ինչ որ թուղթի վրայ մնացեր է: Այսպէս գործը քննելով իր տօքիմենթներով կը տեսնանք, որ մեր քաղաքական շէնքը 100-ին 90-ով կառուցուած է: Ես չեմ ժխտեր, որ քաղաքական աննպաստ պայմաններ չեն կրնար աննպաստ փոփոխութիւններ կամ դժուարութիւններ չառաջացնել: Բայց ներկայ որպէի դրութիւնը այն է, ինչ որ կը պատկերացնեմ: Արդ, ինչո՞ւ կուզէք, որ մէկ հարուածով քանդելու ելլենք այս կառուցուածքը: Երեւանի կառավարութեան ենթարկելով թրքահայ դատը, մենք մեզի աննէքսէ կ'ընենք հողամասի մը, որ միջազգային օրէնքով ռուսական է: Ձեզ յայտնի է, որ Ռուսական Յեղափոխութեան պատճառով այսօր Ռուսաստան գոյութիւն ունին զանազան կառավարութիւններ, որոնց հետ Դաշնակիցները յարաբերութիւն կը պահեն պարզ այն պատճառով, որ այդ բանը անհրաժեշտութիւն կը համարեն տեղական կարգ պահպանելու համար: Բայց դուք գիտէք նաեւ, որ ո՛չ Դաշնակիցները, ո՛չ ալ ռուսական այս կամ այն հոսանքը, Բոլոնիայէն զատ, չեն ճանչցած յիշուած կառավարութիւնները: Հիմա ինչպէ՞ս կ'ուզէք, դուք որ թրքական բովէն մեր հարցի քիչ թէ շատ կռուած, կոփուած երկաթը հանենք եւ տանինք այն բովի մէջ ձգենք, որ ռուսական մարքա կը կրէ, որուն Դաշնակիցները յայտարարած են, որ չպիտի դպչին: Մենք ամէնքս ալ գիտենք, որ Դաշնակիցներուն համար շատ աւելի հեշտ է գործ ունենալ Թուրքիոյ պէս քաղաքակրթութեան առջեւ վարկաբեկ եւ քայքայուած պետութեան մը հետ, քան Ռուսիոյ պէս 170 միլիոնոց ժողովուրդի հետ: Պ. Օհանջանեան անցեալ օր փոշիացած անուանեց այդ պետութիւնը: Ես չեմ ըմբռներ, թէ հայ մը ինչպէ՞ս կրնար փոշիացած համարել պետութիւն մը, որ ամէն վեց ամիսը անգամ մը հայերու չափ ժողովուրդ կը ծնի:

Միեւնոյն մտահոգութիւնն ունինք նաեւ ասիսքան պետութեան համար: Առնենք Ամերիկան: Կը կարծէ՞ք, որ ան յօժարութիւն պիտի ունենայ մեր մանտան վերցնելու, երբ տեսնայ, որ վաղ թէ ուշ գործ ունենալու է ռուս ժողովուրդին հետ: Խօսք չի կրնար ըլլալ քատէքներու մօտիկ օրերս ընելիք յայտարարութեան մասին. կարելի է վէրէսիցէ տոքիւմաններու վրայ քաղաքականութիւն հիմնել, որ եթէ կանխիկ ալ ըլլայ՝ արժէք չունի, վասնզի այսօր ո՛չ ոք Ռուսիոյ անունէն չկրնար խօսիլ: Այդ տեսակ խոստումներու կարեւորութիւն տալ՝ քաղաքական սխալ մը կ'ըլլար: Արդէն ահաւոր սխալներ:

Պ. Համբարձումեան. Ի՞նչ սխալներ են, կրնա՞նք իմանալ:

Պ. Թէրզիպաշեան. Չէ՞ք կարծեր, որ սխալ էր, որ մենք 1911-ին Երրորդութեան եկեղեցին միթինկ կազմեցինք Ռուսիոյ դէմ եւ «Անկցի՛ ցարիզմը» պոռացինք, իսկ 1914-ին միեւնոյն ցարիզմի հետ դաշնակցեցանք: Ցարը գիտէր, որ իր հետ դաշնակցողները Երրորդութիւն եկեղեցիի «Անկցի՛ ցարիզմը» պոռացողներն էին, եւ գիտեք ի՞նչ ըրալ ան: 1919-ին երբ ռուսական բանակը Մուշի դաշտին մօտիկցած էր, տեսնելով, որ իւր յառաջխաղացումով 100 000 հայեր կ'ազատուին, կեղծ նահանջ մը սարքեց եւ թոյլ տուաւ ամբողջ Մուշի գաւառը կոտորուի: Միեւնոյն կեղծ նահանջը ըրաւ Վասպուրականի մեծ գաղթին, որմէ ինչպէս գիտենք, 90000 հոգի ճանապարհին եւ Կովկասի մէջ մեռան հիւանդութենէն: Չէ՞ք կարծեր, որ սխալ էր, որ մենք 1917-ի Ռուսական Յեղափոխութեամբ այնքան տարուեցանք, էստէքներու եւ էսէռներու հետ այնպէս խիստ քոնքիւրանս մղեցինք եւ այս ռազմական ոգին internationale-ի շուկայի մէջ նուազուրդի դնելով, պատերազմի դէմ այնպիսի սոսկալի բրոբականտ մղեցինք, որ երբ 1917 Դեկտեմբերին էրզրումը պաշտպանելու համար 10000 զինուորի պէտք ունեցանք, չկրցանք ղրկել, եւ կորսնցուցինք պատեհութիւն մը, որ մեր ամբողջ պատմութեան մէջ ո՛չ պատահեր է, եւ ո՛չ պատահելու է: Էրզրում ինկաւ եւ նորան յաջորդեցին Կարսի եւ Ալեքսանդրապոլի անկումները, եւ այն ամբողջ դժբախտութիւններու եւ թշուառութեանց տեսարանները, որ այսօր կը պարզուին մեր առջեւ: Ըսէ՛ք, խնդրեմ, սխալ չէ՞ր միթէ առմիսքեսի կնքումէն վերջ, երբ մեր ամբողջ քաղաքականութիւնը Հայաստանը գրաւել կամ Հայաստանի սահմանի վրայ ռէալ ոյժի մը գտնուիլը կը պահանջէր, հարց մը, որ շատ ճիշդ էր դիւանագիտօրէն կամ Դաշնակիցներու արպիդրաժով կարգադրել, մեր ոյժերը փոխադրեցինք Երեւան եւ պատերազմ յայտարարելով վրացիներու դէմ, արիւնի վիհ մը բացինք մեր եւ մեզի միակ վստահութիւն ներշնչող դրացիի միջեւ. եւ այս այն օրերուն, երբ պաշարուած էինք: Մեր արեան վերջին կաթիլին ծարաւի արդիւնքը այն եղաւ, որ այսօր կտրուած պարենաւորման միակ ճանապարհէն, Կովկաս մատնուած է սոսկալի սովի մը թիւրք թշնամիներով: Ես չեմ մտներ քոնֆլիքթի էութեան խորը, ուր անշուշտ վրացիներ մեղադրելի են իրենց շովինութեան ձգտումներով, բայց հաստատապէս կը հաւատամ, որ նախքան պատերազմը շատ միջոցներ կային քոնֆլիքթը հարթելու, եւ թէ այդ միջոցներէն եւ ո՛չ մէկը սպառուած չէր:

Կ'ուզէ՞ք, որ թուեմ նաեւ թաքթիքային սխալները: Մենք մէկ հոսանքի, նոյնիսկ մէկ մարդու բերանով կը խօսինք ամէնքի հետ. Պ. Օհանջանեան կը խօսի էմբէրիալիստ Գերմանիոյ հետ, կ'անցնի Պերն, ուր կը խօսի սոսիալիստներու հետ եւ ուր կը յայտարարէ նաեւ, որ հայերու ամբողջ յոյսը սոսիալիստներու վրայ է, Դաշնակիցներէն բան մը չեն սպասեր, յետոյ Փարիզ կու գայ Դաշնակիցներէն Հայկական Հարցի լուծումը կը պահանջէ: Կը հարցնեմ ձեզի. այս թաքթիքով կարելի՞ է վստահութիւն ներշնչել ե՛ւ մէկին ե՛ւ միւսին: Ո՞ւր է Պապաջանեանը: Դաշնակիցներն իրենց ներկայացուած Հանրապետութեան յանձնարարագրէն գիտեն, որ Պատուիրակութիւնն ունի մի երրորդ անդամ մը, գիտեն նաեւ, որ ան ներկայացուցիչ է որոշ հոսանքի մը: Արդ, նորա բացակայութիւնը կը կարծէ՞ք, որ նոքա նպաստաւոր կերպով կը մեկնեն:

(Պ. Համբարձումեան. Ինչո՞ւ չէք թուեր Պատուիրակութեան սխալները)։ Ես չեմ ըսած, թէ Պատուիրակութիւնն անսխալ եղած է, ան ալ իր սխալներն ունի եւ պէտք է մատնանշենք թէ՛ այս թէ՛ այդ։ Ծածկելը կ՚առաջնորդէ մեզ նոր սխալանքներու եւ մեր ազգը, պէտք է գիտնանք, որ նոր սխալներու վտանգներուն այլեւս չի դիմանար։

Հիմա դառնանք մեր նիւթին։

Պ. Չօպանեան սխալ բացատրեց իմ տեսակէտը միացեալ կառավարութիւն մը ստեղծելու մասին։ Ես բնաւ թրքահայ կառավարութիւն մը ստեղծելու տեսակէտ չեմ ունեցած (Չօպանեան. Ճիշդ է, որ ես սխալած եմ)։ Յանձնաժողովի աշխատութեանց առաջին օրէն ես մէկ տեսակէտ եմ ունեցած եւ զայն պաշտպանած եմ մինչեւ վերջը։ Իմ տեսակէտս եղած է միշտ չշեղիլ որոշուած ուղղութենէն, ետ չդառնալ այն ճամբէն, որի մեծ մասը կտրած ենք արդէն, եւ աշխատիլ լրացնել այն շէնքը, որ, ինչպէս ըսի, բաւական բարձրացած է։ Ի՞նչ է այդ շէնքը։ Տեսանք, որ հայ Ազգ. Տելեկասիոնը յայտարարած է անբաժան Հայաստանի անկախութիւնը։ Ան պէտք էր այդ յայտարարութեան օրն իսկ կազմէր միացեալ Հայաստանի կառավարութիւն։ Չէ ըրած։ Լաւ է ուշ քան երբեք։ Դաշնակիցներուն կատարուած իրողութեան առջեւ դնելու համար ան ընելու էր այդ բանը։ Այսօր Փարիզի մէջ կառավարութեան երե՞ք անդամ կ՚ունենայ, թէ՞ հինգ, տիրէքթուա՞ր անուն կ՚ունենայ, թէ՞ տիքթաթորա, տիրող անոնրմալ պայմաններուն մէջ այդ մանրամասնութիւններու մասին հարցնող չկայ։ Էականն այն է, որ հայերն իրենց դատը աւելի քոնքրէթ, աւելի ներկայանալի վիճակի մէջ կ՚ըլլան հռչակելու միացեալ կառավարութիւն։ Ես չեմ թուեր ուրիշ առաւելութիւններ, վասնզի միացեալ կառավարութեան սկզբունքին ամէնքս համաձայն ենք. ձեւի մասին է, որ կը տարբերուինք։ Արդ, ցորչափ Հայկ. Հարցը Խաղաղութեան Քոնֆերանսին մէջ իւր վերջնական վճիռը չի ստացեր, ի՞նչ ընելու պիտի երթան նախարարներ կամ երեսփոխաններ Երեւանի մէջ։ Կառավարութիւնը Փարիզի մէջ պէտք է յայտարարուի եւ նոր գործ պիտի ըլլայ, այսինքն՝ ինքզինքը եւ անկախ Հայաստանը ճանչցնել տալ Դաշնակիցներուն, որ եթէ յաջողուի՝ արդէն կը ստեղծուի նորմալ կառավարութիւն։ Առանց Դաշնակիցներուն ճանչցնելու մեր միութիւնը եւ անկախութիւնը, Երեւանի մէջ ինչ ալ որ ընենք, ներքին զուր եւ անօգուտ ասեկոսներ պատճառելէ զատ ոչ մէկ օգուտ չի տար. իսկ եթէ կ՚ուզենք մէկ ժեսթով ազդել Խաղաղութեան Քոնֆերանսին վրայ, հենց նոցա աչքի առջեւ պէտք է առնենք այդ յեղափոխական քայլը։ Այս ձեւով կառավարութիւն ստեղծելու դէմ եղած առարկութիւնները՝ իրաւասութեան, բրէսթիժի պէս՝ երկրորդական նշանակութիւն ունեցող հարցեր են, որոնց՝ այս պատմական օրերուն, երբ ազգին բաղդն է, որ կը վճռուի, մէկ կողմը պէտք է դնել։ Միացեալ կառավարութեան գլուխ կ՚ըլլայ միութիւնը եւ անկախութիւն յայտարարող Ազգ. Delegation–ի նախագահը կողքին կ՚ըլլայ, ինչպէս եղած է մէմուարի մէջ, հանրապետութեան ներկայացուցիչը։ Մնացեալը ինչպէս կ՚ուզեն՝ այնպէս թող լրացնեն։

Ահա՛ իմ առաջարկը՝ ըլլալ հետեւողական, չփճացնել եղած նուաճումները եւ ձգտելով միեւնոյն նպատակներուն՝ շարունակել բացուած ճանապարհը։ Շեղիլը կամ նոր ճանապարհ բանալու փորձը հիմքէն կը խախտէ այն հարցը, որու համար՝ մէկ միլիոն հայեր իրենց կեանքը տուին։

Պ. Շանթ. Այստեղ լսուեցաւ, թէ այս խնդրին քննութիւնը շեղում մըն է, թէ այս ժողովին չպատկանիր։ Ես պարտք կը զգամ յայտարարելու, որ մինչեւ հիմակուայ եղած նիստերը շեղումներ էին եւ մեր իսկական աշխատանքը, ընելիք գործը այս է։ Իմ առաջարկս է՝ ճանչնալ Կովկասի Հանրապետութիւնը իբրեւ համահայկական կառավարութիւն։ Աստ իբրեւ գլխաւոր առարկութիւն ռուսական վտանգը բերուեցաւ։ Պարոնե՛ր, խնդիրը պարզունի խնդիր է։ Եթէ Ռուսաստանը ուժեղացաւ, եթէ միւս պետութիւններուն շահերը չարգիլեցին իր յառաջխաղացումը եւ եթէ ան վերցնէ Հայաստանը՝ կը վերցնէ ու մեծ նշանակութիւն չունի, թէ մե՞նք անոնց ենք միացեր, թէ՞ անոնք մեզի են միացեր։ Ոմանք ալ կ՚ըսեն, թէ օգուտ չունի այդ։ Օգուտը այն է, որ

մենք ամէնէն առաջ մէկ ժողովուրդ կ՚ունենանք, մէկ ներկայացուցչութիւն, եւ մէկ կառավարութիւն։ Ժամանակն է ալ, որ վերջանայ այս բաժանումը։ Այդ միութիւնը մեզ անհրաժեշտ է դուրսին համար, օտարին՝ որ անոնք մեզի միացած եւ մէկ տեսնեն, ինչ որ մեծ առաւելութիւն է։ Երկիրը եւ միացեալ կառավարութիւնը անհրաժեշտ են նաեւ գլխաւորաբար այն ժամանակ, երբ ասիսքան պետութիւնը պիտի սկսի մեր վրայ իր ասիսքանսը գործադրել. այլապէս, շատ ծանր կ՚ըլլայ անոր բեռը եւ ան կը դառնայ բրոթէքթորաթ։ Ան մեծ նշանակութիւն ունի նաեւ գոյութիւն ունեցող կառավարութեան համար։ Անոր բարոյական կարողութիւնը անմիջապէս կը բարձրանայ եւ կը կարողանայ մեր անունով եւ մեզի համար ալ գործել։ Կ՚ըսուի նաեւ, որ դեռ սպասենք եւ մէկ-երկու շաբաթէն լսենք այս բոլորը, երբ ամէն ինչ որոշուած պիտի ըլլայ։ Պարոնե՛ր, մարդ կը ստանայ այն, ինչ որ կրցած է առնել եւ միւսները կու գան ու կ՚ըսեն՝ ամէ՛ն։ Այստեղ դարձեալ երկու հին եւ մեծ հոսանքներ է, որ իրար կը բախին։ Մէկը, որ միշտ կ՚ըսէ՝ սխալ կ՚ընենք, անխոհեմ քայլ չընենք, յարմարուինք, իրականութիւնը դժբախտ է եւայլն։ Ասոր դիմաց ալ կրնայ ուրանալ, որ պետութիւններուն կամքը գերակշիռ դեր ունի մեր խնդրոյն լուծման մէջ։ Բայց անմտութիւն է նաեւ յայտնել, թէ նշանակութիւն չունի մեր կամքը, երբ ան արտայայտուած է գործով, միացեալ կառավարութիւնը ճանչնալով։ Կամքը ոյժ է եւ պէտք է այդ ոյժը գործածենք, պէտք է ստեղծենք այդ կառավարութիւնը եւ պէտք է ընենք այդ՝ նոյնիսկ եթէ կառավարութիւնները հակառակ ըլլան անոր։ Ով որ կ՚ըսէ Կովկասի խնդիրը զատել թրքահայկական խնդրէն, ան ըսած կ՚ըլլայ կորսնցնել հայկական անկախութիւնը։ Մենք համոզուած ըլլալու ենք, թէ առանց Կովկասի՝ չենք կրնար ապրիլ, առանց Կովկասի՝ անկախութիւն չենք կրնար ունենալ, առանց Կովկասի՝ անապատ կ՚ունենանք։

Ես կը գերադասեմ նոյնիսկ միացեալ կառավարութիւն մը Ռուսիոյ ձեռքին տակ, քան թէ անկախութիւն մը անջատուած մասերով, որովհետեւ իտէալներու, շահերու նոյնութիւնն է, որ մեզ ոյժ պիտի տայ։

Եթէ այս առաջարկը անցնի՝ այն ժամանակ ժողովը դեր մը կատարած կ՚ըլլայ։

Պ. Տէր-Ստեփանեան. (խօսքը Շանթին ուղղելով) Թուրքիոյ խնդիրը եւ Ռուսիայինը զատ են։ Որոշ է նաեւ, որ Թուրքիայինը աւելի շուտ պիտի լուծուի, քան թէ ռուսականը։ Արդ, եթէ միութիւնը ձեր ըսած ձեւով յայտարարենք (ներքին միութիւնը արդէն գոյութիւն ունի) քանի որ կ՚ըսէք, որ Հայաստան մարդ չէ մնացած, երբ Կովկաս միայն հայ կայ, Եւրոպայի առջեւ ինչպէ՞ս պիտի դրուի մեր հարցը եւ ե՞րբ պիտի լուծուի ան։

Պ. Շանթ. Հոն կառավարութիւն գոյութիւն ունի, զայն վաղը կ՚ընդունին կամ չեն ընդունիր՝ երկրորդական է։ Դուք կը մտածէք, թէ եւրոպացիք ի՞նչ պիտի ըսեն։ Քիչ մըն ալ ըսենք, թէ մենք այսպէս կը մտածենք։

Պ. Տէր-Ստեփանեան. Դժբախտաբար, Հանրապետութիւնը դեռ կազմակերպուած չէ եւ այն ոյժը չունի մեր մտածածը գործադրելու համար։ Հետեւաբար, մենք դեռ պէտք պիտի ունենանք միւս պետութիւններու աջակցութիւնը։ Այս վերջին րոպէին կազմուած Հանրապետութիւնը fait accompli մը չէ, որ մէջ բերել պիտի կարենանք, մինչդեռ ան պէտք էր յայտարարել կամաւորական կռիւներու առաջին օրէն իսկ։ Այսօրուան Հանրապետութիւնը իբրեւ ազգ կռուած է։ Իսկ մեր միութեան բարոյական կամքը արտայայտուած է մեմուառով եւ Մարտ 31-ին։

Ապա Պ. Տէր-Ստեփանեան կ՚անցնի բուն խնդրին՝ ըսելով.

Միացեալ կառավարութիւն ստեղծելու հարցը հիւանդագին վիճակի մը մատնած է Համագումարը։ Այս վիճակը արդիւնք է այն պարագային, որ հարցը գէշ դրուած է առաջին օրէն։ Միացեալ Հայաստանի եւ կառավարութեան ստեղծումը Համագումարի ամէն անդամի կամքը, փափաքն ու նպատակն է։ Այս մասին որեւէ կասկած ունենալ կամ յայտնել կը նկատեմ նպատակաւոր եւ, հետեւաբար, յանցաւոր հոգեբանութեան արդիւնք։ Մեզմէ ոմանք իրենց միայն տրուած անձնական կամ

կուսակցական մենաշնորհ մը կը համարեն Միացեալ Հայաստանի եւ կառավարութեան ստեղծման կամքը, եւ այդ կարծեցեալ առաւելութեամբ զինեալ՝ ժողովրդին դէմ կ'արձակեն սլաքներ, որոնք դաւաճաններու դէմ ուղղուած ըլլալու հանգամանքն ունին յաճախ: Մեր այս ընկերները կ'ուզեն մոռնալ, որ խնդիրը Միացեալ Հայաստանի եւ կառավարութեան սկզբունքին վրայ չէ, այլ՝ քաղաքական այս վայրկեանին Միացեալ Հայաստանն ու կառավարութիւնը յանձին Երեւանի կառավարութեան արուեստականօրէն իրականացած յայտարարելուն մէջ: Անոնք կ'ուզեն մոռնալ, որ Հայ Հանրապետութեան ներկայացուցիչները քանիցս յայտարարեցին, թէ իրենք միայն այդ ձեւով միացեալ կառավարութեան ստեղծումին հաւանութիւն տալու իրաւասութիւն ունին, կամ աւելի ճիշդը՝ իրենց կրնան վերագրել:

Յանձնաժողովին մէջ միացեալ կառավարութիւն ստեղծելու վեց զանազան ձեւեր առաջարկուեցան, որոնցմէ երկուսը ծայրայեղ, այսինքն՝ մին գերազանցօրէն արեւելահայ, միւսը՝ գերազանցօրէն արեւմտահայ, երեքը՝ միջին, եւ, հետեւաբար, ճիշդ ու արդար, իսկ մէկը՝ երեք քառորդով արեւելահայ: Հանրապետութեան ներկայացուցիչները այս հինգ առաջարկներուն մէկ հատը միայն ընդունելու իրաւասութիւնը վերագրեցին իրենց: Եւ քանի որ անոնք միացեալ կառավարութիւն ստեղծելու իրաւասութիւն ունին, չեն կրնար իրաւասութիւն չունենալ ընդունելու ոեւէ ձեւ, որուն մէջ հայութեան երկու հատուածները իբր հաւասարներ կը միանան: Ես կը ստիպուիմ համոզուիլ, որ այս ժողովին մէջ ո՛չ թէ իւրացուելու վախ կայ ոմանց կողմէ, այլ ընդհակառակը՝ Երեւանի կառավարութիւնը իբրեւ ամբողջ հայութեան կառավարութիւնն ընդունելու անհեթեթ ձեւով միացեալ կառավարութիւն ստեղծելու գաղափարը բանագովներուն կողմէ մարմաջ կայ՝ իւրացնելու:

Հակառակ այս ամէնուն, կ'ըսեմ, ես պիտի ընդունէի միացեալ կառավարութիւն գոյացնելու այդ անհեթեթ ձեւն իսկ, եթէ քաղաքական աչք ծակող իրականութիւններ մեր վրայ պարտք չդնէին չաճապարել միացեալ կառավարութիւն գոյացնելու, մանաւանդ Արեւմտեան Հայաստանը Արեւելեանին կցելու ձեւին տակ, որուն ընդգրկումը պիտի նշանակէր պատմական ու քաղաքական մեծ սխալ մը՝ գործուած միասնութեան դիմակին տակ եւ անոր յառաջացուցած բարոյական ճնշումին:

Ես հակառակ եմ, ուրեմն, Երեւանի կառավարութիւնն ու խորհրդարանը միացեալ ընդունելու առաջարկին, զանազան պատճառներով, որոնցմէ մին բացասական է, իսկ միւսները՝ դրական: Բացասական պատճառն այն է, որ այդ ձեւով միացումը ամէն պարագայի ոեւէ կերպով չի բարւոքեր մեր դատին քաղաքական դրութիւնը. ան կրնար յառաջ բերել միայն հայ ներքին կեանքին մէջ որոշ խանդավառութիւն, որուն կարեւորութիւնն ալ պէտք չէ չափազանցել, որովհետեւ ամէն հայու սրտին մէջ միութիւնն արդէն իսկ իրականացած է: Անձնապէս կրնամ ըսել, որ ոեւէ խտրութիւն չէի տեսած եւ դրած հայութեան այս կամ այն հատուածին մէջ մինչեւ այն օրն, որ Բարիզ գալով, արեւմտահայ Պ. Լեւոն Սեղբոսեանի ճառերը լսեցի: Ու ես կը վախնամ, որ այս կցումի ձեւով միացեալ կառավարութեան հռչակումը կրնայ մեր ներքին ճակատը տկարացնել որոշ տարրերու խանդավառութեան կողքին յառաջացնելով ուրիշ տարրերու դժգոհութիւնը՝ արուեստականօրէն ստեղծելով շատ մը հայերու մէջ գոյութիւն չունեցող խտրական ոգի: Այս՝ բացասական պատճառն է: Գլխաւոր դրական պատճառներն են հետեւեալները.

1. Քաղաքական ու միջազգային հողին վրայ հայկական երկու Դատերուն զօրաւորագոյնը, անտարակուսելիօրէն, Արեւմտահայ Դատն է, որ մինչեւ երէկ միակ Հայ Դատն էր, հետեւաբար, կա՛մ այս երկու Դատերը պէտք է ներկայանան Խաղաղութեան Ժողովին կողք-կողքի եւ կա՛մ եթէ պիտի միացեալ մարմնի մը միջոցով ներկայացուին, այդ միացեալ մարմինին կորիզը պէտք է ըլլայ արեւմտահայ մարմինը, որուն միանալու է արեւելահայը: Այս վարկեանին միացեալ կառավարութիւն ստեղծելու միակ ոչ-վտանգաւոր ձեւն է ստեղծել արեւմտահայ կառավարութիւն մը,

որուն անմիջապէս միանայ արեւելահայ կառավարութիւնը: Այս՝ կարծիքն է արեւելահայ Պ. Աճէմեանի:

2. Ցնոր կարգադրութիւն՝ Արեւմտեան Հայաստանի Դատը կապուած է Թրքական Խնդրին լուծման, իսկ Արեւելեան Հայաստանի Դատը կապուած է Ռուսական Խնդրին լուծման: Այս երկու խնդիրներէն Թրքականին լուծումը մօտաւոր է եւ, ըստ ամէն հաւականութեան, պիտի կատարուի մեր Դատին նպաստաւոր ձեւով, այսինքն թիւրք կառավարութեան ջնջումով, մինչ Ռուսական Խնդրին լուծումը ո՛չ միայն նուազ մօտաւոր է, այլ՝ նոյնիսկ հարցական, եւ լուծման պարագային կարելի չէ լսել, թէ հաւանական է, որ ռուս կայսրութիւնը ջնջուի եւ կամ ան դաշնակցական պետութեան մը չվերածուի: Ընդհակառակը: Բարիզի Ռուս Համագումարը կ'աշխատի պահելու Ռուսիան ինչպէս որ է, բացի Չինաստանէն, որուն մասին, եւ որուն մասին միայն ըրած է ցարդ վերջնական հրաժարման յայտարարութիւն:

3. Հողային տարածութեան տեսակէտով՝ Արեւելահայ Դատը զօրաւոր է, քանի որ Արեւելեան Հայաստանի բնակչութեան մէջ կայ հայ բացարձակ մեծամասնութիւն, մինչ Արեւմտահայ Դատը տկար է՝ արեւմտահայութեան բնաջնջումին հետեւանքով: Այս պայմաններու մէջ, հայութեան երկու հատուածներու միացումը կցումի ձեւով, մեծագոյն սխալը պիտի ըլլար եւ պիտի տկարացնէր մեր պահանջները Արեւմտեան Հայաստանի կեդրոնախոյս մասերուն, մանաւանդ Կիլիկիոյ վրայ: Միացեալ կառավարութեան հռչակումը կցումի ձեւով՝ այն տպաւորութիւնը պիտի գործէ քաղաքական աշխարհի վրայ, որ Հայ Հարցին առանցքը հայերու իսկ գործով կը փոխադրուի դէպի Կովկաս: Անհրաժեշտ է, որ արեւմտահայ զանգուածը ճնշում գործէ դիւանագէտներու վրայ՝ կեդրոնանալով Արեւմտեան Հայաստանի վրայ: Եւ այս տեսակէտով ես շատ կը ցաւիմ, որ Ազգ. Պատուիրակութիւնը ամբողջական Հայաստանի անկախութիւնը հռչակած օրն իսկ չէ կազմած Բարիզի մէջ հայ կառավարութիւն մը, որուն յետոյ միացած հռչակեր ինքզինք Երեւանի կառավարութիւնը: Այս բանն այսօր ալ կարելի է ընել: Ասիկա երկու կառավարութիւն ստեղծել չէր կրնար նշանակել, այլ՝ մէկ կառավարութիւն, որուն մէկ մասը ազատուած երկրամասին մէջ է եւ որուն միւս մասը Բարիզ կը գտնուի, որովհետեւ երկրին մէկ մեծ մասը դեռ չէ ազատուած: Բարիզի մէջ հայ պանդուխտ կառավարութեան մը գոյութեան օգտակարութիւնը չտեսնել կուրութիւն է ըստ իս, երբ մանաւանդ այդ կառավարութիւնը հիմնուած կ'ըլլայ պանդուխտ հայութեան ներկայացուցչութեան մը վրայ, ինչպիսին է այս Համագումարը:

Ահա՛ այս գլխաւոր պատճառները, որոնց վրայ հիմնուած՝ կը հակառակիմ կցումի ձեւով միացեալ կառավարութիւն ստեղծելու առաջարկին: Կը կրկնեմ՝ մենք պարտք ունինք միացեալ կառավարութիւն հռչակելու խնդրին մէջ նկատի ունենալ տարամերժօրէն արտաքին քաղաքական պարագաները: Ներքին տեսակէտով՝ միացեալ Հայաստանի եւ կառավարութեան հարց չկայ: Միացեալ Հայաստանը եւ կառավարութիւնը Ռուս Կայսրութեան տապալումի օրէն ի վեր իսկ արդէն ամէն հայու սրտին մէջ կ'ապրին ու անջնջելի են: Արեւելահայ Հանրապետութիւնը ամէն հայ արդէն կը նկատէ իր իսկ, ուրեմն՝ հայութեան Հանրապետութիւնը, առանց ստիպուած զգալու ինքզինք հռչակելու անոր առժամեայ կառավարութիւնն ու խորհրդարանը՝ միացեալ կառավարութիւն ու խորհրդարան: Ով որ կարդացածը հասկնալ գիտէ, այս միութիւնը իրագործուած կը գտնէ Խաղաղութեան Ժողովին ներկայացուած Յիշատակագրին իսկ մէջ:

Տոքթ. Ալթունեան կ'ըսէ, թէ ինքը որոշ գաղափար մը չէ կրցած կազմել այս խնդրոյն շուրջը եւ թէ ժողովականներուն մեծամասնութիւնը Եւրոպա ապրած ըլլալով՝ վերջերս ժողովուրդի իսկական կամքէն եւ վիճակէն լուր չունի: Ժողովուրդը իր միակ յոյսը դրած է Կովկ. Հանրապետութեան վրայ եւ կը կարծէ, թէ ան պիտի փրկէ զինքը: Երբ խաղաղութիւնը վերջնականապէս հաստատուի, այն ժամանակը կանոնաւոր եւ

օրինական ընտրութեանց կարելի է ձեռնարկել. մինչեւ այդ՝ պէտք է միութիւնը գոյացնել՝ մանտաթէր պետութեան լուծը թեթեւցնելու համար:

Բրօֆ. Թումայեան առայժմ միացման հռչակուելու մէջ մեծ օգուտ մը չի տեսներ, որովհետեւ միութիւնը թոյլ պիտի տայ Երեւանի բանակին գրաւել Թրքահայաստանը: Հայկ. բանակը այնքան թոյլ է այժմ եւ այդ գրաւուածը այնքան դժուար, որ ես առ այժմ դրական օգուտ մը չեմ տեսներ միացումով:

Պ. Փափազեան նախ իւր գոհունակութիւնը կը յայտնէ վիճաբանութեանց հանդարտ եւ ակադէմիք բնոյթ ունենալուն: Այդ ապացոյց է, որ ամէնքս հաւասարապէս կ'ըմբռնենք խնդրին լրջութիւնը: Յանձնաժողովը բանաձեւ մը բերած էր, որուն մէջ Հանրապետութիւնը նկատուած էր իբր «հանգրուան» մը, իսկ Բրօֆ. Խաչատուրեանի բանաձեւին մէջ ան կը ճանչցուէր իբր «կորիզ»: Այս երկու բնորոշումները, փոխաբերական իմաստով, կը յատկանշեն ժողովականներու երկու գլխաւոր մտայնութիւնները. անոնցմէ մին Հայկ. Հանրապետութիւնը կորիզ կը նկատէ, այսինքն՝ հունտ մը, որ հողին մէջն է, ան պիտի բուսնի եւ ուռճանայ, եթէ ան առողջ է, որուն չեմ կասկածիր, միւսը զայն կը նկատէ հանգրուան մը, այսինքն՝ տառապանքի երկար ժամանակէ մը յետոյ հասած կ'ըլլանք կայանի մը, սակայն շունչ մ'առնելու, որպէսզի աւելի հաստատուն քայլերով կարենանք դիմել դէպի նպատակը: Այս վերջինը պիտի նախընտրենք մենք: Մենք հին սահմանին երկու կողքը ապրող հայերս այո՛, կորիզ եւ կայուն պիտի նկատենք զայն, եւ աւելի շատ խարիսխ մը մեր յոյսերուն եւ նպատակներուն: Երկու հատուածները ազգային վիշտը երկար տանջանքի տարիներով բաժներ են: Մէկը իր կաշիով զգացած է, միւսը՝ հոգով, որ աւելի ուժեղ է, քան թէ առաջինը: Պիտի վճռապէս գիտնանք, պարոննե՛ր, որ մանաւանդ ներկայ պարագաներու մէջ, անկախութիւնն առանց հատուածներու լուծման անհնար է եւ կորստաբեր: Թրքահայ ժողովուրդը, բարեբախտաբար, ըմբռնած է այս, որուն ապացոյցը Երեւանի մէջ գումարուած Արեւմտահայ Համագումարն է, ուր ներկայ եղած է, ի միջի այլոց, Կովկասի Հանրապետութեան վարչապետը, որ յայտարարած է, թէ ինքը կու գայ Արեւելեան Հանրապետութեան կողմէ ողջունելու Արեւմտահայ Համաժողովը, որ սակայն ալ վերջինը պիտի ըլլայ, որովհետեւ այլեւս հատուածական բաժանում չկայ: Ուրեմն, դուք ճանչնաք-չճանչնաք՝ ժողովուրդը արդէն հոն կեանքին մէջ իրականացուած է այդ միութիւնը եւ ընդառաջ չերթալ անոր՝ ինքնասպանութիւն է:

Պ. Փափազեան կը ծանրանայ նաեւ Հանրապետութիւնը «ճանչնալ» բառի վրայ, որ շատ կը գործածուի ժողովին մէջ: Ոչինչ կ'արտայայտէ այդ բառը, կ'ըսէ ան, որովհետեւ այդ դիւանագիտական բառ մըն է եւ պետութիւն մը չենք, որ ճանչնալ կամ չճանչնալու հարց կը դնենք: Հայկական Հանրապետութիւնը մեր ցեղի մէկ մասնիկն է: Կարելի՞ է օրկանիզմի մը՝ իր մէկ մասը չճանչնալ՝ իր աչքը, իւր ձեռքը, եւայլն, երբ անոնք կան եւ գոյութիւն ունին իրենց function-ներով: (Ձայներ. «Անշուշտ կը ճանչնանք»): Ուրեմն, մենք պէտք է, որ ճանչնանք ան, իսկ երբ կը ճանչնանք՝ աւելի՛ պիտի ընդունինք, որ հայկական պետութիւն մը ունինք, որ մերն է: Կը թուի, թէ ճանչնալու հակառակողները երկիւղ մը ունին, որ կողմը պարզել. այդ երկիւղն է, թէ ի՞նչ պիտի ըլլայ այստեղի Պատուիրակութեան իրաւական դրութիւնը այդ պարագային: Բայց կրնամ զանոնք հաւատացնել, որ Հանրապետութեան ընդունիլը այժմ իսկոյն միայն քաղաքական բարոյական նշանակութիւն ունի, իսկ ներքին մեր յարաբերութիւնները պիտի մնան անփոփոխ, մինչեւ որ արեւմտահայ ներկայացուցիչները կարենան մասնակցիլ պետական կազմին:

Ընդունիլ այդ Հանրապետութիւնը անհրաժեշտ է հետեւեալ գլխաւոր երեք պատճառներով. Ա.- Պէտք է մենք պետութիւն մը ունենանք, որ ներկայացնէ մեր ազգը, որպէսզի Հանրապետութիւնը պետութեան մը հետ խօսի եւ ոչ թէ ազգի մը հետ: Կասկած չկայ, որ ազգի մը հետ իբրեւ անկազմակերպ մասսա աւելի տիրաբար կը փարի ան եւ կ'ըլլայ պահանջատէր, քան պետութեան մը հետ: Բ.- Մենք ունինք արտաքին աշխարհի մէջ թշնամիներ, որոնք ամէն կերպ կ'աշխատին բաժան-բաժան

տեսնալ, տարբեր շահաստաններ ցուցնել մեզ: Օրինակներ մեր նորագոյն դիւանագիտական պատմութիւնը կը ցուցնէ եւ ծանօթ է ձեզ:

Պ. Փափազեան կը յիշատակէ այն պարագան, որ Քոնֆերանսին ներկայանալու համար միայն Պատուիրակութեան նախագահին գովելի յամառութեան կը պարտինք՝ երկուքին միասնաբար ներկայանալը: Արդ, եթէ այս ժողովը այդ միութեան խօսքը չըսէ՝ կը նպաստէ դաւադիրներու ձեռնարկներուն: Ուշ կամ կանուխ, այս կամ այն մորթին տակ երեւան պիտի գայ: Մենք պէ՞տք է մտածենք նաեւ Կովկասի հայութեան քաղաքական ապագային մասին ալ, թէ՞ ոչ, որ մերն է եւ առանց որուն մենք չենք կրնար ապրիլ: Մենք միացման աքթովը կը փրկենք զանոնք այդ վտանգէն: Եւ եթէ չկատարենք այդ աքթը՝ թրքահայ ժողովուրդը կը դատապարտէ մեզ:

Վսեմ. Պօղոս Նուպար Փաշա իր խորին զարմանքը կը յայտնէ նախ, որ հոս ճանչնալու-չճանչնալու խօսք կ'ըլլայ եւ չի կրնար երեւակայել, որ ըլլայ այնպիսի մէկը, որ չճանչնայ Կովկասի Հանրապետութիւնը եւ ամէն ինչ չընէ զայն միւսներուն ալ ճանչցնել տալու համար: Իւր առաջին գործը որ եղաւ, երբ Պ. Ահարոնեան այստեղ հասաւ, այն էր՝ Հանրապետութեան ներկայացուցիչները ճանչցնել տալ Քոնֆերանսին եւ ձայն խնդրել հոն: Ապա մէմորանտումը մեր երկուքին կողմէ ստորագրուիլը միութեան հրապարակային արտայայտութիւններ են եւ երբ առիթը գտնանք՝ գործնականապէս ալ մարմինը պիտի ընենք: Բայց, դժբախտաբար, մեր վիճակը որոշելը միայն մեզմէ կախուած չէր: Եթէ այդպէս ըլլար՝ ես պիտի ըսէի՝ թող թրքահայերը Կովկասի: Բայց, դժբախտաբար, մեզմէ կախուած չէ եւ գլխաւորապէս կախում ունի քաղաքական պարագաներէ: Այնպիսի դժուարութիւններ կան, որ ամէնէն մեծ քաղաքագէտներն իսկ շուարումի մատնած են: Բայց անտարակուսելի է, որ Թրքական Հարցը պիտի լուծուի եւ աւելի առաջ քան, թէ Ռուսականը եւ այն ժամանակ, ըլլա՛յ մարդկայնօրէն, ըլլա՛յ քաղաքական շահու տեսակէտով անկարելի է, որ ան թրքահայով չզբաղի: Արդէն Դաշնակիցները որոշած են Հայաստանը թիւրքին լուծին տակ չթողուլ…

Պ. Շանթ կ'ընդմիջէ. Ապահո՞վ էք ատոր:

Փաշան կը պատասխանէ.

Տարակուսիլը չարագուշակութիւն է:

Փաշան կը շարունակէ.

Եւրոպան ստիպուած է լուծելու Արաբական, Սիւրիական հարցերու հետ նաեւ Հայկականը: Դաշնակիցները այն օրը, երբ Թիւրքիոյ հաշտութեան պայմաններու բանակցութիւններ սկսին, այն ժամանակ պաշտօնապէս եւ վերջնականապէս պիտի գործադրեն իրենց խոստումը թրքահայոց ազատումը ու անկախութիւնը կնքելով: Արդ, զգացումները մէկ կողմ ձգենք եւ աւելի քաղաքականօրէն վարուելով՝ օգտուինք խնդրոյն այս վիճակէն: Այլապէս, ռուսահայոց կապուելով, Եւրոպան կրնայ մեզմով չզբաղիլ ու լքանել, որպէս Վրաստանի եւ Ատրպատականի եւ այլ Կովկասի մասերն: Ասկէ զատ՝ միութիւնը եթէ այժմէն յայտարարելու ըլլանք՝ յետոյ չպիտի կարենանք պահանջել, որ Ligue des Nations զմեզ իւր պաշտպանութեան տակ առնէ:

Պ. Ահարոնեան նախ կ'ուզէ մէկ-երկու թիւրիմացութիւններ ճշդել թերահաւատութեան մասին, որ կը յայտնուի Հայկական Հանրապետութեան բարոյական եւ ֆիզիկական արժէքներու մասին: Պ. Ահարոնեան կը յայտնէ, որ Հանրապետութիւնը 90000 զօրք ունի, թէ բազմաթիւ յաջող կռիւներ մղած է վրացոց դէմ, թէ միայն քաղցն է, հացի պակասն է, որ կը նեղէ զանոնք: Պ. Ահարոնեան կը յայտնէ նաեւ, որ Երեւանի խորհրդարանը թէեւ հոսանքներ ունի, բայց իւր գործը արժանաւոր կերպով կը տանի, թէ հոս աւելի վէճ կայ, քան թէ հոն, թէ տարաձայնութիւններ կան, թէ այնտեղի կառավարութիւնը սոսիալիսթներէ բաղկացած է, որոնք էջմիածնայ կալուածները բաժներ են, թէ այդպիսի բան տեղի չէ ունեցած եւ եթէ տեղի ալ ունենայ՝ ան կատարուած պիտի ըլլայ Հայ Ժողովրդական Կուսակցութեան հաւանութեամբ, որովհետեւ Դաշնակցականները, զգալով դրութեան

ծանրութիւնը, նոյնիսկ կառավարութեան մէջ մեծագոյն մասը տուած են այդ կուսակցութեան: Գալով բուն խնդրին, Պ. Ահարոնեան կը յայտնէ, թէ ո՛չ ոք կրնայ ժխտել, թէ Թրքահայ Դատը ուրոյն դատ մըն է, թէ ան ունեցած է բոլորիս ծանօթ միջազգային զանազան փուլեր: Բայց այժմ միեւնոյնը չէ. այդ ըսելը մեր թշնամիներուն հացին իւղ քսել ըսել է: Սխալ է նաեւ, որ Թրքահայ Դատը հիմնուած է միայն թրքական բարբարոսութիւններուն վրայ. եթէ մէկ հայ իսկ ջարդուած չըլլար, հայերը պիտի ունենային այն: Ապա Պ. Ահարոնեան, ցոյց կու տայ, թէ Կովկասն ու Թրքահայաստանը որքան սերտօրէն կապուած են իրարու, թէ առանց Կովկասի Թրքահայաստան չի կրնար ունենալ, որովհետեւ Ժէոն Թիւրքերը արդէն լուծած են Թրքահայկական Հարցը:

Աղաթօն Պէյ կ'ըսէ, որ Պատուիրակութեանց Նախագահները իրենց կարծիքը յայտնեցին, կը փափաքէինք իմանալ թէ Համագումարին Նախագահը ի՞նչ կը խորհի անձնապէս այս կարեւոր հարցին վրայ:

Վսեմ. Նախագահ. Պ. Ահարոնեանի տուած այս բացատրութիւններէն կը յայտնուի, որ իւր եւ Պօղոս Նուպար Փաշայի միջեւ կարծեաց հիմնական տարբերութիւններ կան: Շատ փափաքելի էր, որ այս անհամաձայնութիւնները իրենց մէջ պարզուէին եւ կարգադրուած ըլլային: Յայտնի է, որ ընդհանուր ժողովները եւ բառլըմանները կ'առաջնորդուին իրենց վարչութիւններէն կամ պատուիրակութիւններէն, որոնք իրենց պաշտօնին բերմամբ՝ մօտէն տեղեակ ըլլալով քաղաքական եւ յարաբերական իրաց ճշգրիտ ընթացքին՝ աւելի ձեռնհաս կը գտնուին, ճանապարհ գծելու, ուղեցոյց ըլլալու: Արեւմտեան հայութիւնը, արեւելահայութեան հետ այժմէն, մեր միջոցաւ, պաշտօնապէս միացնելու բարդ եւ ուշադրութեան արժանի հարցը ներքին եւ արտաքին հանգամանքներ ունի, զորս պէտք է ի նկատի առնել: Ըստ իս՝ հարկ է այսպիսի ձեռնարկի մը մեր քաղաքական յարաբերութեանց եւ դատին վրայ ունենալիք ազդեցութիւնը լաւ քննել ու խորհրդակցիլ նախապէս որոնց հետ որ անկ է: Արդ, Պ. Ահարոնեան երկրորդական կը նկատէ այդ կէտը քանի որ կ'ըսէ, թէ Դաշնակից ու պաշտպան տէրութիւնք եթէ նոյն իսկ մեզ հակառակ խորհուրդ տան ու սպասեցէք ըսեն, պէտք չէ անսալ: Արդ, չի՞ կարելի արդեօք, որ ինքը եւ մեր Պատուիրակութեան Նախագահը՝ որ լսեցին ժողովոյս մէջ վիճաբանութիւնները, միասին վերստին խորհրդակցելով համաձայնութեան եզր մը գտնան ու այնպէս արտայայտուին որով ժողովը երկու հոսանքի բաժանուած չի մնար ու անգամ մը եւս համերաշխութեան ոգին մեր մէջ հաստատուած ըլլալու գոհունակութիւնը կ'ունենանք: Յիշենք, կ'աւելցնէ Պ. Գ. Նորատունկեան, որ անցեալի անմիաբանութեան հետեւանքն է, որ մեր հայրենիքը անբաղդ եղած է ու ի հեճուկս մատնուած: Ցոյց տանք գործով եւ բանիւ, որ այս հարցի առթիւ եւս գիտցանք հարթել զմեզ բաժանող հայեցակէտները: Ասոր համար կ'առաջարկեմ քուէի չդնել այս բանաձեւերը, այլ՝ Պատուիրակութեանց թողուլ, որ խորհրդակցին ձեռնհաս անձանց հետ եւ Ժողովոյն հաղորդել կամ ենթարկել իրենց վերջնական որոշումը, եթէ պէտք ըլլայ՝ մինչեւ իսկ առաջիկայ երկրորդ նստաշրջանի (session) բացման առթիւ ու պահուն:

Պ. Փաստրմաճեան եւ այլք դիտել կու տան, թէ այսքան օրերէ ի վեր թէ՛ Յանձնաժողովոյ եւ թէ՛ Համաժողովի մէջ առ այս տեղի ունեցած ջանքերը ապարդիւն եղած են: Նոյնը կ'ըսէ Պօղոս Նուպար Փաշա, որ նմանապէս կը խնդրէ վերջ տալ խնդրոյն՝ քուէարկութեամբ: Հետեւաբար, բանաձեւերը քուէի կ'ենթարկուին: Առաջինը՝ որ է Յանձնաժողովի առաջարկը՝ անուանաբար կը քուէարկուի (տեսնել վարը):

Բ. բանաձեւը (տեսնել ստորեւ) կը ստանայ 10 քուէ:

Վսեմ. Նախագահ. Ըստ այսմ Ա. բանաձեւը ստացած է 13 քուէ, իսկ Բ.-ը՝ 10 քուէ միայն: Ձեռնպահ մնացած են Դուրեան Սրբազան եւ Տոքթ. Ալթունեան. Ժողովէն արդէն մեկնած ըլլալով՝ քուէարկութեան չէ կրցած մասնակցիլ Պ. Դաւիթ-Բէկ: Հետեւաբար, օրինական 19 թիւը չէ գոյացած:

Ապա Վսեմ. Նախագահը կը ծանուցանէ, թէ ատենադպիրք զբաղած ըլլալով ատենագրութեանց պատրաստութեամբ՝ Ժողովոյ յառաջիկայ նիստը տեղի պիտի ունենայ երկուշաբթի միայն:

Նիստը փակուեցաւ ժամը 8-ին:

Յանձնաժողովի կողմէ Պ. Չօպանեանի առաջարկը.

Ա. բանաձեւ

Փարիզի մէջ հաւաքուած Հայ Ազգային Համագումարը, որուն մասնակցեցան Թրքական Հայաստանի, Պարսկահայաստանի եւ հայկական բոլոր գաղութներու պատուիրակները, անգամ մը եւս հայ ազգը եւ հայ հայրենիքը կը հռչակէ մի եւ անբաժանելի՝ Կովկասէն մինչեւ Միջերկրական:

Իր խանդաղատագին ողջոյնը կ'ուղղէ բովանդակ հայ ազգի ազատագրական պայքարէն ծնած Հայկական Հանրապետութեան, անոր մէջ հրճուանքով տեսնելով 600 տարուան գերութենէ յետոյ հայ ազգային ազատութեան վերազարթնումը եւ ճանչնալով զայն իբր առաջին հանգրուանը վաղուան Ամբողջական հայ տէրութեան:

Կ'արձանագրէ Հանրապետութեան պատուիրակներու՝ Համաժողովին մէջ ըրած յայտարարութիւնը, որու համեմատ՝ Կովկասի Հայկական Հանրապետութիւնը իր ծնած օրէն իսկ որոշած է միանալ Արեւմտեան Հայաստանին, անմիջապէս որ այս վերջինը հայ եւ Դաշնակից ոյժերով ազատի թիւրք տիրապետութեան յետին մնացորդներէն եւ ըստ Դաշնակից պետութեանց որոշ յայտարարութիւններուն՝ անկախ հայ կեանքի վերածուի:

Պարտք կը դնէ Ամբողջական Հայաստանի նորակազմ Պատուիրակութեան վրայ՝ իր բոլոր ջանքերը նուիրել նպաստելու, որ իրականանայ Հայաստանի երկու մեծ մասերուն միացումը միակ հայ տէրութեան մը մէջ:

Կոչ կ'ընէ բովանդակ հայ ժողովուրդին՝ օգնութեան հասնիլ մեր Կովկասի եղբայրներուն, որ մահամերձ թուրանական բռնապետութեան նիւթած դիւային դաւին հետեւանքով, սովի եւ ժանտատենդի կրնակի չարիքին ներքեւ ահաւոր ճգնաժամ մը կ'անցընեն այս րոպէին, ու կը հրաւիրէ մեր հայրենակիցները Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան ընձեռել բոլոր նիւթական եւ բարոյական միջոցները՝ դիւրացնելու համար Հայաստանի բոլոր հողամասերուն ազատումը թիւրք իշխանութիւններէ:

Բրօֆ. Խաչատուրեանի առաջարկը

Բ. բանաձեւ

Հայաստանի միացման համար առաջարկներ.

1. Նկատելով, որ հայ ազգին առաջին անգամն ըլլալով կ'ազատագրուի իր դարաւոր ստրկութենէն իր իսկ հերոսական ճիգերով՝ Հայաստանի մէկ մասին մէջ եւ այսպիսի պայմաններու մէջ անհնար է ամէն բան սահմանադրական կանոններով կարգադրել,

2. Նկատելով, որ փաստօրէն հաստատուած՝ Հայաստանի Հանրապետութիւնը հիմնուած է հայրենիքի այն մասին մէջ, որ միշտ պատմական աթոռանիստն է եղեր հայ քաղաքական իշխանութեան եւ դարերէ հետէ կը շարունակէ նոյնը մնալ հայ հոգեւոր նուիրապետութեան «Ամենայն Հայոց Հայրապետովը»,

3. Նկատելով, որ ընդհանրապէս նոր ազատագրուած ազգերը հազիւ անգամ կը յաջողին առաջին քայլէն իսկ՝ տէր դառնալ իրենց ամբողջ պատմական հայրենիքին, այլ մէկ կեդրոնէ հետզհետէ կը տարածեն իրենց իշխանութիւնը ամբողջ երկրի վրայ,

4. Նկատելով, որ Հայաստանի հայութեան դուրս գտնուած շատ մասեր (Միջագետք, Սիւրիա, Գոնիա, Իզմիր, Պոլիս եւ ուրիշ գաղթավայրեր) եւ երկրի մէջ ալ՝

Կիլիկիա ի վիճակի են մասնակցելու Հանրապետութեան խորհրդարանին անդամ ընտրելու գործողութեան,

5. Նկատելով, որ Հայաստանի Հանրապետութեան անմիջապէս համազգային ճանչնալն ու յայտարարելը մեծ կարեւորութիւն պիտի ունենայ մեր Դատի ամբողջութեան յաջողութեանը համար եւ միւս կողմէ ամբողջ հայութիւնը պիտի ոգեւորէ մեզի համար այնքան կենսական համերաշխութեան ու սիրոյ շունչով մը,

Կ'առաջարկենք, որ Համագումարն անմիջապէս յայտարարէ Հայաստանի Հանրապետութիւնը իբր կորիզը համազգային պետութեան եւ անմիջապէս ձեռնարկէ պատրաստել ընտրական հրահանգներ, որով ապահովուի Հայաստանի Հանրապետութեան մէջ դեռեւս բաժին չունեցող հայութեան մասնակցութիւնը:

Ա. Խաչատուրեան
Ներկայացուցիչ Միջագետքի հայ փախստականներուն

Ամերիկահայ ներկայացուցիչներ
Պ.Պ.Միքայելեան
Զ.Մաթիկեան
Մ.Համբարձումեան

Յանձնաժողովի առաջարկի քուէ տուողներ	Բրօֆ. Խաչատուրեանի առաջարկին քուէ տուողներ
Մոստիչեան	Խաչատուրեան
Մալքօմ	Փափազեան
Ֆընտքլեան	Հանըմեան
Չօպանեան	Մաթիկեան
Աղաթօն	Փաստըրմաճեան
Թումայեան	Միքայելեան
Թէրզիպաշեան	Համբարձումեան
Տէր Ստեփանեան	Շանթ
Նորատունկեան	Բարսեղեան
Ներսէսեան	Տէրպէտէրեան
Պողոս Փաշա	
Տէր Յակոբեան	10 քուէ
Հինդլեան	
13 քուէ	

Ձեռնպահ
Դուրեան Սրբազան
Տօք. Ալթունեան
Բացակայ Դաւիթ պէկ

ՀԱԱ Ֆ. 430 Ց. 1 Գ. 33, թթ. 1-32: Բնագիր: Ձեռագիր:

Նիստ 38-րդ

8 Ապրիլ, 1919

Նիստը բացուեցաւ Վսեմ. Նորատունկեանի նախագահութեան տակ, 28 անդամներու ներկայութեան, ժամը 5 ու կէսին:

ՕՐԱԿԱՐԳ

Միացեալ կառավարութիւն մը ստեղծելու համար կազմուած յանձնաժողովին պատրաստած բանաձեւին ընթերումը /տես ստորեւ բանաձեւը/:

Կը կարդացուի Պ. Տամատեանի՝ Մարսիլիայէն տուած մէկ հեռագիրը, որով ցաւ կը հայտներ յանկարծահաս մեկնումին պատճառով հրաժեշտ տալ չկրնալու համար:

Դիւանին կողմե կը հարցուի, թէ նիստերուն արձանագրութիւնները պէ՞տք է անմիջապէս տպագրել տալ: Ժողովը յարմար չի տեսնար քաղաքական եւ ներքին ազգ. տեսակէտով. այժմ հրապարակել տեղի ունեցած վիճաբանութիւնները:

Պ. Հինդլեան. Բուռն կերպով հակառակ է անոր եւ կը պահանջէ, որ ժողովուրդը մանրամասնօրէն տեղեակ ըլլայ հոս արտայայտուած բոլոր միտքերուն եւ անցած-դարձածէն: Թէեւ խնդիրը օրակարգի նիւթ եղած չըլլար, բայց Ժողովը հակառակ է. Հինդլեանի երկրորդ եւ այս անգամ ըստ կարգի բողոքին քուէարկութեան հասցեից եւ նկատի ունենալով կարգ մը անպատեհութիւնք, 8 ձայնով ընդդէմ 5-ի կորոշէ առայժմ շարունակել նիստերուն արձանագրութիւնները եւ ժողովուրդին հաշիւ տալ միայն Դիւանին ընելիք յայտարարութիւններուն սահմաններուն մէջ: Առ այս Պ. ատենադպիրը ատենագրութիւններէն քաղուած մը պիտի պատրաստէ, որը այս նստաշրջանի բացման օրը Ժողովոյ մէջ կարդացուելով հրատարակութեան պիտի դրուի:

Յետոյ կը կարդացուի Հալեպէն եկած հետեւեալ գիրը.

«Վսեմափայլ
Պողոս Նուպար Փաշա.
Նախագահ Հայկական Պատուիրակութեան
ի Փարիզ:

Վսեմաշուք Փաշա.

Եգիպտական «Էլ.-Մոգաթթամ» թերթին մէջ մը հրատարակուէր է
Ձեր Վսեմութեան մէկ յայտարարութիւնը, որուն մէջ
Կիլիկիոյ իբրեւ արեւելեան սահման կը հիշուին Ամանոս լեռները: Այս դիտութեամբ
Մարաշ եւ Այնթապի սանճակները եւ Քիլիս դուրս կը ձգուէին Կիլիկիայէն:

1. Նկատելով, որ վերոյիշեալ տեղերը պատմական օրէն եւ ազգագրականօրէն կը պաքթանին բուն իսկ հայկական Կիլիկիային.
2. Նկատելով, որ այն տեղերը ռազմագիտական, առեւտրական, ուսումնական եւ երկրագործական տեսակէտներով առաջակարգ դիրք մը կգրաւեն Կիլիկիոյ մէջ:
3. Նկատելով, որ այս վայրերու հայութիւնը վերջին քառորդ դարու ընթացքին իր հարիւր քսան հազար զոհերու արիւնովը նուիրագործած է իր սեփականութեան իրաւունքը.
4. Նկատելով, որ հակառակ թուրքի սիստեմատիկ հալածանքներուն ու ջարդերուն, սոյն տեղերը այսօր իսկ կը պարունակեն մօտ վաթսուն հազար վերապրող հայութիւն մը:

Հետեւաբար, վերոյիշեալ վայրերուն Կիլիկիայէն անջատումը պիտի ըլլայ պատմական ամենամեծ զրկում մը եւ անդարմանելի կորուստ մը Կիլիկիային:

Ուստի, խուսափելու համար պատմական ամենամեծ անիրաւութենէ մը եւ անոր աղիտալի հետեւանքներէն, եւ խնայելու համար այսքան ստուարաթիւ հայութեան մը նորանոր տեղափոխութիւններէն կխնդրենք, որ անմիջական դիմումներ ընենք առ որ անկէ, որպէսզի Այնթապի եւ Մարաշի սանճակները եւ Քիլիս եւս մաս կազմէին նորակազմ Կիլիկիային:

Հաճեցէք ընդունիլ խորին յարգանաց հաւաստին
Ձեր խոնարհ ծառաներն

Ի դիմաց Քիլիսի մասնախեւմբեն, ի դիմաց Մարաշի մասնախումբին, ի դիմաց Այնթապի մասնախումբին, Ի դիմաց Քիլիսի համախումբին

Ատենադպիր՝
Հ. Քէշիշեան»

ԱՄՓՈՓՈՒՄ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆՑ ԵՒ ՈՐՈՇՄԱՆՑ

Հայ Ազգային Համագումարը, հաւաքուած ի Փարիզ, ունեցաւ ընդամէնը 43 նիստ, որոնց հինգը՝ նախապատրաստական:

Սոյն նախապատրաստական նիստերու գումարումէն, այն է, 1919 Փետր. 18-էն առաջ, աւելի քան մէկ ամսուան ընթացքին տեղի ունեցան գրեթէ ամենօրեայ հաւաքոյթներ, մասնակցութեամբ Ազգ. Պատուիրակութեան հին եւ նոր կազմի (ըստ հրաւիրագրի՝ զօրեղացած Պատուիրակութեան) եւ հետզհետէ հասնող Համագումարի անդամներուն, որոնք կատարեցին աշխատութիւններ, ինչպէս՝ Խաղաղութեան Վեհաժողովին ներկայացուելիք Յիշատակագիրին վիճաբանութիւնը, եւ ընտրեցին Յանձնաժողովներ՝ հաւատարմագրերու ճշդման, Հայկական Լեգէոնի վերաբերեալ խնդրոց, Նպաստից եւ Համագումարի կանոնագրին պատրաստութեան համար:

Համագումարի անդամ ճանչցուեցան, Ազգ. Պատուիրակութեան պաշտօնի վրայ գտնուող անդամներէն զատ, նաեւ Պատուիրակութիւնը ուժեղացնելու համար կամ Պատուիրակութեան մօտ իբրեւ ներկայացուցիչ զանազան հայ համախմբումներու կողմէ ընտրուած անձնաւորութիւնները, Վեհ. Կաթողիկոսի Ամերիկայի ներկայացուցիչը եւ Համագումարին կողմէ հրաւիրուած հինգ ծանօթ գործիչներ: Պատուիրակութեան անդամներէ, ինչպէս եւ հրաւիրեալ անդամներէ ոմանք ունէին կամ վերջէն ունեցան նաեւ Համագումարի համար ընտրուած պատգամաւորի հանգամանք: Կովկասի եւ Ռուսաստանի հայութիւնը քուէի ձայնով մասնակցելու համար պատգամաւորներ ղրկած չէր Համագումարին, որովհետեւ Խաղաղութեան Վեհաժողովին համար ընտրուած Պատուիրակութեան Երեւանէ մեկնած միջոցին, Հայ Հանրապետութեան կառավարութիւնը ստացած չէր Ազգային Պատուիրակութեան հրաւիրագիրը, ինչպէս յայտարարեց Նախագահը՝ Պ. Ա. Ահարոնեան, որ նոյն պատգամաւորութեան անդամ Պ. Հ. Օհանջանեանի հետ մասնակցեցաւ Համագումարին՝ միմիայն խորհրդակցական հանգամանքով: Համագումարի քուէարկու անդամներուն թիւը այսպէսով աստիճանաբար բարձրացաւ, մինչեւ իր փակումէն քիչ առաջ հասնող նոր պատգամաւորներով, երեսուն եւ ութի:

Ահաւասիկ Համագումարի նախապատրաստական վերոյիշեալ հինգ նիստերուն եւ պաշտօնական բացումէն մինչեւ փակումը, այն է Փետրուար 24-էն մինչեւ Ապրիլ 22, գումարուած 38 նիստերուն, ընդամէնը 43 նիստի մէջ կատարուած աշխատութեանց համառօտ մէկ ամփոփումը:

1. Ընտրութիւն Համագումարի Դիւանին: Ընտրուեցան՝

Նախագահ՝ Վսեմ. Գ. Նորատունկեան, դեր-Նախագահներ՝ Պ. Պ. Բրօֆ. Տէր-Յակոբեան եւ Ա. Չօպանեան, ատենադպիրներ՝ Պ. Պ. Վ. Թէքէեան եւ Ն. Տէր-Ստեփանեան. այս վերջնոյն հրաժարելէն յետոյ՝ Պ. Գ. Ֆնտգլեան:

2. Քննութիւն եւ վաւերացում Համագումարի ներքին կանոնագրին:

3. Քննութիւն եւ վաւերացում ժողովի իրաւասութեան եւ աշխատութեանց ծրագրին:

4. Վաւերացում նախապէս պատրաստուած եւ Խաղաղութեան Վեհաժողովին ներկայացուած Հայկական Պահանջներու Յիշատակագիրին:

5. Ձեկուցում Ազգ. Պատուիրակութեան Նախագահ Վսեմ. Պօղոս Նուպար Փաշայի՝ Պատուիրակութեան ի սկզբանէ մինչեւ այժմ կատարած աշխատութիւններուն եւ ստացած արդիւնքներուն վերաբերմամբ:

6. Քննութիւն եւ վաւերացում հայ ազգին Թուրքիոյ եւ Կովկասի մէջ այս պատերազմի ընթացքին կոտորածներու, տեղահանութեան եւ այլ աղէտներու հետեւանօք կրած վնասներուն հատուցման վերաբերող Յիշատակագիրին, որ ներկայացուեցաւ Խաղաղութեան Վեհաժողովին եւ, որուն համաձայն, վերոյիշեալ վնասուց ամբողջական գումարը կը յանգի 19 միլիառ 130 միլիոն 982 հազար ֆրանքի: Այս գումարին 14 միլիառ 598 միլիոն 510 հազարը արեւմտեան հայոց պահանջներուն եւ մնացեալ 4 միլիառ 532 միլիոն 472 հազարը արեւելեան հայոց պահանջներուն համար:

7. Քննութիւն եւ վաւերացում Ելեւմտական Յանձնաժողովին կողմէ Ազգ. Պատուիրակութեան յառաջիկայ վեց ամսուան գործունէութեան համար պատրաստուած ելեւմտացոյցին, որուն համաձայն՝ ազգային զանազան պէտքերու համար նուազագոյն 15 եւ առաւելագոյն 30 միլիոն ֆրանքի ծախուց գումար մը կը նախատեսուի, հասոյթի զանազան եղանակներու առաջարկութեամբ, որոնց յարմարագոյն գործադրութիւնը յանձնուած է նոր Ազգ. Պատուիրակութեան:

8. Քննութիւն եւ վաւերացում յատուկ Յանձնաժողովի մը կողմէ պատրաստուած նոր Ազգ. Պատուիրակութեան տրուելիք ուղեցոյցներու (Տիրէքթիւ) ծրագրին, որուն մէջ մանրամասնուած են պետութեանց հետ բանակցութիւններու ընթացքին Պատուիրակութեան հետեւելիք ուղղութիւնն ու դնելիք պահանջները՝ հիմնուած Յիշատակագիրի գլխաւոր սկզբունքներուն վրայ:

9. Քննութիւն եւ վաւերացում Հայկական Լեգէոնի ներկայ վիճակին, կամաւորներու վերստին յանձնառագրումին եւ Լեգէոնի ապագայ գործածութեան հարցերուն մասին յատուկ յանձնաժողովի մը կողմէ բերուած առաջարկներուն:

10. Քննութիւն Պատուիրակութեան տրուելիք ուղեցոյցներու առթիւ վերապահուած յաւելուածական մասի մը, որով կը փափաքուէր Համագումարի ընթացքին իսկ կարելի դարձնել թրքական եւ ռուսական Հայաստաններու միացումը, միակ ներկայացուցչութեան մը եւ միակ կառավարութեան մը ստեղծմամբ: Յետ բազմաթիւ խորհրդակցութեանց՝ որոշուեցաւ սոյն խնդրոյն իրականացումը յանձնել նորընտիր Պատուիրակութեան՝ ըստ ուղեցոյցներու տրամադրութեան:

11. Ընտրութիւն Ապրիլ 2-ի նիստին մէջ Հայ Ազգային Պատուիրակութեան, բաղկացած վեց անդամէ, որ՝ համաձայն նոր Պատուիրակութեան համար ընդունուած ուղեցոյցներուն՝ Հայ Հանրապետութեան Պատուիրակութեան հետ կը կազմէ «Ամբողջական Հայաստանի Պատուիրակութիւնը» եւ անոր հետ միասին պիտի աշխատի ձեռք բերել Յիշատակագիրով բանաձեւուած հայկական պահանջներու գործադրութիւնը եւ պիտի հետապնդէ ազգային դատին յարակից բոլոր հարցերուն բարւոք լուծումը: Նորընտիր Պատուիրակութեան անդամ ընտրուեցան՝ Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար, Պ. Պ. Բրօֆ. Տէր-Յակոբեան, Ա. Չօպանեան, Գ. Փաստրմաճեան, Տոքթ. Յ. Նեւրուզ, Վ. Թէքէեան:

12. Քննութիւն Հայկական Վնասուց Հատուցման Յիշատակագիրին վրայ աւելցուելիք նոր յուշագրի մը՝ վնասուց պատասխանատուութեան եւ գանձման վերաբերեալ: Սոյն յուշագրին ամբողջացումն ու առաքումը յանձնուեցաւ Պատուիրակութեան:

13. Ընտրութիւն, համաձայն Համագումարի իրաւասութիւնն ու գործունէութիւնը ճշդող ծրագրին, յանձնաժողովի մը, որուն պաշտօնն է մօտաւոր փոխանցման շրջանին համար Հայաստանի վարչական կազմը ճշդող առժամեայ ծրագիր մը կազմել եւ զայն ենթարկել Համագումարի վաւերացման՝ երբ Համագումարը վերստին ի նիստ հրաւիրուի Պատուիրակութեան կողմէ, ինչպէս պարտաւոր է ընել այն ատեն, երբ Հայաստանի քաղաքական բախտին մասին Խաղաղութեան Վեհաժողովն իր որոշումը տայ, կամ երբ Պատուիրակութիւնը հարկ տեսնէ Համագումարին դիմել ուրիշ որեւէ անակնկալ հարկեցուցիչ պարագայի առթիւ:

Օրակարգի նիւթ կազմող եւ վերեւ թուուած այս խնդիրներէն զատ, Համագումարը իր նստաշրջանի միջոցին զբաղեցաւ նաեւ կարգ մը խնդիրներով, որոնցմէ յիշենք՝ հայկական հողամասերու զինուորական գրաւման, Կիլիկիոյ եւ Սիւրիոյ մէջ ապրող տարագիր հայ ժողովուրդին ապահովութեան, Արեւելեան Հայաստանի սովաբեկ հայ ժողովուրդին պարենաւորման, Կիլիկիոյ համար բժշկական միսիոնի մը, հիւանդանոցի կազմածներու, դեղօրէից եւ զգեստեղէնի, ինչպէս նաեւ Արեւելեան Հայաստանի համար դեղօրէից առաքման խնդիրները: Ասոնցմէ վերջիններուն Համագումարը յաջողեցաւ մասամբ գոհացում տալ Պատուիրակութեան տրամադրելի միջոցներով:

Համագումարը իր նստաշրջանին միջոցին դժբախտութիւնն ունեցաւ լսելու Հալէպի մէջ հայերու վրայ գործադրուած կոտորածի մը գոյժը, ինչպէս նաեւ Իսկեներուն եւ Ատանա գտնուող Հայկական Լեգէոնի վաշտերուն մէջ պատահած յոյժ ցաւալի դէպքերը: Համագումարը թէ՛ Հալէպի կոտորածին եւ թէ՛ միւս պատահարներուն կրկնութեան առաջքը առնելու համար հնարաւոր միջոցները խորհեցաւ եւ անոնց գործադրութիւնը յանձնարարեց Պատուիրակութեան:

Ի բաց առեալ Հայաստանի տնտեսական եւ քաղաքական կացութեան մասին Պատուիրակութեան հասած կարեւոր տեղեկագիրներու ընթերցումը, Համագումարը լսեց, իր նստաշրջանի տեւողութեան միջոցին, Ազգային Պատուիրակութեան Նախագահին եւ Հայկ. Հանրապետութեան ներկայացուցիչին Խաղաղութեան Վեհաժողովին կողմէ ունկնդրութեան զեկուցումը, Թիւրքիայէն եւ Կովկասէն հասնող պատգամաւոր եւ ոչ-պատգամաւոր ձեռնհաս հայրենակիցներու բերանացի եւ գրաւոր ընդարձակ զեկուցումները, ինչպէս նաեւ գաղութներէ եկած պատգամաւորներուն՝ գաղութներու հայկ. կեանքին եւ գործունէութեան վերաբերմամբ ըրած մանրամասն տեղեկատուութիւնները:

Համագումարը ստիպուեցաւ նաեւ նկատի առնել Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանուց Միաբանութենէն հասած հեռագրական դիմումները, եւ յանձնարարեց յիշեալ վանուց համար մատակարար մարմնի մը կազմութիւնը՝ համաձայն Երուսաղէմի զինուորական կառավարիչին կատարած կարգադրութեան, նկատելով, որ Պոլսոյ Պատրիարքութիւնը այս միջոցին ի վիճակի չէր այս հարցով զբաղելու:

Այս առաջին նստաշրջանի փակման առթիւ Համագումարը պարտք համարեց իր եղբայրական ջերմ ողջոյնները ուղղել Հայկական Հանրապետութեան, անոր մէջ տեսնելով վեց հարիւր տարիէ ի վեր առաջին անգամ վերազարթնող հայ ազատութեան հրճուառիթ պաքթերը, եւ յոտնկայս իր խորին յարգանքն ու պաշտամունքը յայտնեց մեր ցեղի բազմաչարչար նահատակներուն եւ այն բիւրաւոր մարտիկներուն յիշատակին, որոնք իրենց հերոսական պայքարներով պատրաստեցին Հայկական Դատին յաղթանակը:

Համագումարը որոշեց նոյնպէս, որ Դիւանը սոյն առթիւ ղրկէ Համագումարի զգացումները յայտնող ուղերձներ՝ Նախագահ Ուիլսընի, Պ. Պ. Քլէմանսոյի, Լլոյտ Ճորճի եւ Օրլանտոյի, կոչ մը Դաշնակից ազգերուն՝ լրագրաց մէջ հրատարակուելու համար, եւ հեռագիր մը Հայ Հանրապետութեան, Երեւան:

Այն պահուն երբ Համագումարը իր աշխատութեանց գլխաւոր մասը կատարելէ ետք՝ կը դադրեցնէ իր Ա. նստաշրջանը, նորընտիր Ազգ. Պատուիրակութիւնը Հայկական Հանրապետութեան հետ ձեռնարկած է արդէն իրմէ սպասուած աշխատութեան, եւ ուղեցոյցներու տրամադրութեան համաձայն շուտով ամբողջացնելով իրեն գործակցելու կոչուած Ներգաղթի, Ելեւմտական, Բրոբականտի եւ այլ գլխաւոր Յանձնաժողովներու կազմութիւնը, պիտի պսակէ անշուշտ Համագումարին իր վրայ դրած յոյսերը:

Դաշնակից ազգերուն ուղղուած կոչը

Փարիզ հաւաքուած Հայ Ազգային Համագումարը պարտք կը համարէ, իր աշխատութեանց աւարտին, յայտնել իր երախտագիտութիւնը կեղեքեալ ժողովուրդներու վեհանձն բարեկամ Ֆրանսային, որուն մեծաշուք մայրաքաղաքը իրեն շնորհեց ազնիւ իր ասպնջականութիւնը:

Կ'ուզէէ գորովալից ողջոյն մը բոլոր Դաշնակից ազգերուն, որ բռնութեան դէմ պայքարելու համար նիզակակցեցան եւ որոնց դիւցազնական ճիգը արդար յաղթանակով մը պսակուեցաւ:

Կը հռչակէ անգամ մը եւս հայ ազգին կամքը իր ազատ հայրենիքն ունենալու՝ անկախ տէրութեան մը մէջ իր բոլոր հողամասերուն միացմամբը կազմուած, եւ կը յուսայ, որ Հաշտութեան Վեհաժողովը, որ խորին համակրութեամբ ընդունեց իր պահանջներուն արտաբերումը, պիտի իրականացնէ ընդհուպ մեր ազգին միահաղոյն բաղձանքները:

Այդ իրականացման մինչեւ ցարդ յապաղումը ստեղծած է վտանգալից կացութիւն մը, որ կրնայ նոր աղէտներ յառաջ բերել՝ եթէ այդ յապաղումը երկարաձգուի տակաւին:

Մեր հայրենիքին մէկ ամբողջ շրջանը՝ Անդրկովկասեան Հայաստանը, արդէն ազատագրուած է իր իսկ միջոցներով, եւ ձեւացուցած է Հանրապետութիւն մը, պատրաստ միանալու ամբողջական Հայաստանի անկախ տէրութեան, որ վաղը պիտի կազմուի: Ուրիշ շրջան մը՝ Կիլիկիան, գրաւուած է Դաշնակից զօրքերէ, որոնց ներկայութիւնը թոյլ կու տայ Միջագետք աքսորուած մեր հայրենակիցներուն, գալ հոն կեդրոնանալ: Բայց Օսմանեան Հայաստանի նահանգները, որ թուրանական ամէնէն չարաշուք խժդժութեանց թատերաբեմ եղան, կը սպասեն դեռ իրենց ազատագրմանը, եւ իրենց բնակիչները, Կովկաս ապաստանած, դեռ չեն կրնար դառնալ իրենց տունն ու տեղը եւ գարնան վարուցանքն ընել: Հազարաւոր հայ կիներ ու երեխաներ կը շարունակեն հարէմներու մէջ փակուած մնալ. Միութիւն ու Յառաջդիմութիւն քոմիթէին անդամները, բովանդակ Արեւելքի մէջ տարածուած, մահմետական ցեղերը կը գրգռեն քրիստոնեաներուն դէմ եւ կը պատրաստեն նոր դաւեր, որոնց անխուսափելի հետեւանքը պիտի ըլլան անդարմանելի աղէտներ. արդէն իսկ Հալէպի մէջ հայերու կոտորած մը տեղի ունեցաւ վերջերս. Կովկասի թաթարները, թուրք սպաներէ առաջնորդուած, գրաւած են ինչ-ինչ հայկական հողամասեր եւ կ'ուզեն զանոնք կցել Ատրպատականի կառավարութեան: Վերջապէս, մեծ սով մը եւ ժանտատենդը Անդրկովկասեան Հայաստանին մէջ կը հնձեն հազարաւոր կեանքեր՝ այն պատճառաւ, որ թուրք զօրքերը, Անդրկովկասէն քաշուած ատենին, իրենց հետ տարած են ամբողջ ցորենը, ուտեստները, արջառը եւ դեղօրայքը:

Մեզի համար շատ տաժանելի է տեսնել մեր ժողովուրդին տանջանքներուն երկարաձգումը, Դաշնակիցներու լիակատար յաղթանակի շրջանին մէջ, Իրաւունքի դատին համար հայութեան ստանձնած այնքան ծանր զոհաբերութենէն եւ Ազատութեան պայքարին մասնակցելու համար իր ոյժէն ա'յնքան գերիվեր ճիգէն յետոյ, զոր ան պարզեց, ու երբ գրեթէ բոլոր հարստահարեալ ժողովուրդները արդէն իսկ ազատուած են զիրենք կապկպող շղթաներէն:

Ստիպողական կոչ մը կ'ուղղենք Դաշնակից ժողովուրդներուն, խնդրելով որ իրենց ձայնը մերինին միացնեն պահանջելու համար Հաշտութեան Վեհաժողովէն, որ փութացնէ լուծումը Հայկական Հարցին:

Մենք վստահութիւն ունինք Դաշնակից կառավարութեանց արդարամիտ ոգւոյն, բայց չափազանց երկարատեւ յապաղում մը կրնար մեր ժողովուրդին համար կորստաբեր ըլլալ եւ Ազատութիւնը՝ եթէ շատ ուշ գայ ճառագայթել Հայաստանին վրայ՝ կրնայ հոն լայնատարած գերեզմանոց մը միայն գտնել:

Շա'տ երկար ատենէ ի վեր Հայաստան կը տառապի ու կը մաքառի Ազատութեան համար. ան իրաւունք ունի յուսալ, որ յաղթական ազատասէր աշխարհը

այլեւս պիտի չյետաձգէ հարկաւոր անմիջական կարգադրութիւններն ընել անոր մարտիրոսութեան վերջ դնելու եւ անոր երկար ու դժնդակ ճիգը վարձատրելու համար:

Հայաստանի Հանրապետութեան ղրկուած հեռագիրը

Փարիզ համախմբուած Հայ Համագումարը, իր առաջին նստաշրջանի փակման առթիւ, Հայկական Հանրապետութեան կ'ուղղէ իր եղբայրական խանդաղատագին ողջոյնը: Սրտագին կը մաղթենք, որ ընդհուպ իրականանայ Միացեալ Հայաստանի Հանրապետութեան կազմակերպութիւնը, եւ լիայոյս ենք, որ ձեր եւ մեր ջանքերով պիտի պսակուին մեր իղձերը՝ ընդհանուր խաղաղութեան կնքման պահուն՝ Ազգային Դատին կատարեալ յաղթանակովը:

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Կ. Պոլիս	Ամեն. Եղիշէ Արքեպս. Դուրեան
»	Պ. Պ. Բրօֆ. Ա. Տէր-Յակոբեան
»	Տոքթ. Ա. Բարսեղեան
»	Գրիգոր Սինապեան
»	Պօղոս Պէյ Մըսրլը
Կովկաս (արեւմտահայ փախստականներու կողմէ)	Վ. Փափազեան
	Ա. Թէրզիպաշեան
	Լ. Շանթ
Եգիպտոս	Տոքթ. Նեւրուզ
»	Վ. Թէքէեան
Պուլկարիա	Տոքթ. Գ. Սայեան
»	Ս. Հինդլեան
Պարսկաստան	Վսեմ. Յովհ. Խան Մասեհեան (անդամ Ազգ. Պատ.)
»	Պ. Պ. Մ. Վարանդեան
Անգլիա	Գ. Յակոբեան
»	Գ. Ֆնտգլեան
Հնդկաստան եւ Ճավա	Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար (անդամ Ազգ. Պատ.)
Զուիցերիա	Վսեմ. Գ. Նորատունկեան
Իտալիա	Պ. Տոքթ. Ն. Տէր-Ստեփանեան
Վենետիկ (Մխիթարեան Միաբանութ.)	Գեր. Յովհ. Վարդ. Թորոսեան
Ռումանիա	Պ. Պ. Մ. Տէրպէտէրեան
Ֆրանսա	Ներսէս Խան Ներսէսեան
»	Տիգրան Խան Քէլէկեան
Ամերիկա	Ե. Աղաթօն Պէյ (առժամեայ)
»	Մ. Համբարձումեան
»	Զ. Մաթիկեան
»	Ա. Միքայէլեան
Միջագետք	Ե. Տէրվիշեան
»	Բրօֆ. Խաչատուրեան
Հալէպ եւ Այնթապ	Տոքթ. Ալթունեան
Յունաստան	Յ. Ն. Մոստիչեան (անդամ Ազգ. Պատ.)
Անդամ Ազգ. Պատուիրակութեան	Ճ. Մալքոլմ

Ներկայացուցիչ Վեհ. Կաթողիկոսի	
յԱմերիկա	Տոքթ. Գ. Փաստրմաճեան
Հրաւիրեալ անդամներ	Մ. Տամատեան (նաեւ ընտրեալ Ամերիկայէն)
»	Ա. Չօպանեան
»	Ա. Հանըմեան (նաեւ ընտրեալ պարսկահայ փախստականներէ)
»	Մ. Ս. Դաւիթ-Բէկ
»	Բրօֆ.Կ. Թումայեան

Հայկ. Հանրապետութեան Պատուիրակութեան անդամներ, որոնք մասնակցեցան Ազգ. Համագումարին խորհրդակցական ձայնով
Պ. Պ. Ա. Ահարոնեան
Հ. Օհանջանեան

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 20, թթ. 1-4: Տպագիր: Բնագիր:

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Նիստ Ա.
Բացման նիստ

Չորեքշաբթի, 5 Մայիս 1920, ժամը 2 1/2-ին,
նախագահութեամբ Գաբրիել էֆ. Նորատունկեանի

Ներկայ էին 16 պատգամաւորներ՝

Ամեն. Դուրեան Արքեպ., Պ. Պ. Աղաթօն Պէյ, Բարսեղեան, Դաւիթ-Բէկ, Ա. Թէրզիպաշեան, Վ. Թէքէեան, Ա. Հանըմեան, Գ. Նորատունկեան, Պօղոս Նուպար Փաշա, Տոքթ. Նեւրուզ, Ներսէսեան Խան, Ա. Չօպանեան, Պօղոս Պէյ Մըսրլը, Զ. Պզտիկեան, Գ. Սինապեան, Տիգրան Խան Քէլէկեան:

Մասնաւոր հրաւէրով այս բացման նիստին ներկայ էին նաեւ Ամեն. Զաւէն Ս. Պատրիարք, Գերերջ. Թէրզեան Ս. Կաթողիկոս, Գերապայծառ Նազլեան, Փարիզի հոգեւոր հովիւ Վռամշապուհ Ծ. Վարդապետ, Պ. Պ. Էնֆիաճեան, Փիրալեան, Զօրավար Կորկանօֆ եւ Տիգրան Չայեան:

Բացառաբար, եւ լոկ այս բացման նիստին ներկայ գտնուեցան նաեւ մամուլի ներկայացուցիչներ, մասնաւոր հրաւէրով:

ՕՐԱԿԱՐԳ

1. Բացում Ազգ. Համագումարի Բ. նստաշրջանին

Նորատունկեան Գաբրիէլ էֆենտի, Նախագահ Ազգ. Համագումարի, Ս. Հարք եւ Տիարք, Ձեզ ամէնուդ յայտնի է, թէ Ազգ. Համագումարը հ'նչ պարագաներու տակ անցեալ տարի հաւաքուեցաւ Փարիզ: Ձեմ ուզեր մի առ մի ներկայացնել այն աշխատութիւնները, զորս կատարեց իր առաջին նստաշրջանին մէջ: Բայց կը յիշէք անշուշտ, թէ այդ նստաշրջանին վերջին օրերուն, իր աշխատութիւնները ամփոփած միջոցին, Ազգ. Համագումարը քանի մը. կարգադրութիւններ ըրաւ, որոնց շարքին կազմեց յանձնաժողով մը, որ պիտի մշակէր հայկական կառավարութեան յառաջիկային ունենալիք կազմական կանոնագրին գլխաւոր կէտերը, ինչպես նաեւ հոգատար պետութեան եւ հայկական կառավարութեան փոխադարձ յարաբերութիւնները ճշդող օրինագիծ մը: Այս յանձնաժողովին աշխատութիւնները քննութեան պիտի ենթարկուէին Ազգ. Համագումարին կողմէ, իր երկրորդ

նստաշրջանին մէջ։ Ազգ. Համագումարը միանգամայն որոշած էր, որ Ազգ. Պատուիրակութիւնը իրաւունք ունենայ հրաւիրելու Համագումարը, եթէ երբեք պէտք տեսնէ անոր հաղորդելու Ազգ. Դատին պաքթանող ոեւէ խնդիր եւ այդ մասին Համագումարին հետ խորհրդակցիլը անհրաժեշտ դատէ։ Նաեւ՝ Ազգ. Պատուիրակութիւնը Համագումարը հրաւիրէ՝ երբ հոգատար պետութիւնը որոշուի, որպէսզի կարելի ըլլայ քննել եւ վերջնական ձեւի մը ենթարկել այն օրինագիծը, որ պիտի սահմանէ հոգատար պետութեան եւ հայկական կառավարութեան փոխադարձ յարաբերութիւնները։ Այն ատեն յոյսով էինք, թէ քիչ ատենուան մէջ կը պարզուին գլխաւոր առկախ հարցերը եւ Ազգ. Համագումարը իր երկրորդ նստաշրջանը գումարելով եւ իր գործը աւարտելով կը բաժնուի։ Բայց իրերը այնպէս բերին, որ այդ առկախ խնդիրները անլոյծ մնան։ Տարիէն աւելի անցաւ Համագումարին առաջին նստաշրջանին փակումէն ասդին, եւ տակաւին անոնց նկատմամբ վերջին խօսքը ըսուած չէ։ Ի՞նչ ըրինք այդ մէկ տարուան միջոցին, ի՞նչ դրութեան մէջ ենք այսօր, ի՞նչ բախտ վիճակեցաւ մեր խնդրին, որ եթէ մեզի համար ազգային-քաղաքական խնդիր մըն է, քաղաքակիրթ աշխարհին համար ունէր ո՛չ միայն քաղաքական, այլեւ մարդասիրական մեծ նշանակութիւն։ Ինքնատիպ յաքթութիւններով եւ բարձրագոյն կարողութիւններով օժտուած ազգ մըն էինք, դատապարտուած ամէնէն դժնդակ պայմաններուն, որոնք դուն արիք, ծանրացած են ժողովուրդի մը վրայ։ Մեծ չէր մեր ազգը, բայց ապրելու իրաւունքը լոկ մեծերուն չի պաքթանիր, փոքրերը նոյնքան տէր են այդ իրաւունքին։ Փոքրիկ հայութիւնը մանաւանդ ամենէն աւելի ունէր այդ իրաւունքը, քանի որ միշտ կրցեր է ցոյց տալ, ինչպէս մասնաւորաբար այս պատերազմին ընթացքին, այն տեսակ բարձր յաքթութիւններ, որոնք կրնային հպարտութիւն առթել նոյնիսկ մեծ ազգերու։ Քաղաքակիրթ աշխարհը յանձնառու եղած էր այս ազգը փրկելու, ազատագրելու եւ վերակենդանացնելու. ի՞նչ ըրաւ արդեօք, ի մի բան՝ որ յանգեցաւ մեր խնդիրը։ Կը յուսամ, որ Ազգ. Պատուիրակութիւնը պիտի ներկայացնէ մանրամասնաբար այս մէկ տարուան ընթացքին կատարուած գործառնութիւնները ու պիտի պարզէ իրաց արդի վիճակը։ Ատոնցմով անշուշտ առիթ պիտի ունենանք զբաղելու մեր յառաջիկայ նիստերուն մէջ, եւ պիտի կրնանք որոշել, թէ տակաւին ի՞նչ պէտք է ընել մեր նաւը ժամ առաջ ապահով նաւահանգիստ մը տանելու համար։ Համագումարս առիթ պիտի ունենայ նաեւ քննելու քանի մը օրինական խնդիրներ, որոնց մասին աշխատութիւններ կան կատարուած, նկատողութեան պիտի առնէ Ազգ. Պատուիրակութեան ելեւմտական գործառնութիւնները, եւ թերեւս պիտի առաջարկէ միջոցներ՝ անհրաժեշտ նոր ծախքերու մասին։ Դժբախտաբար, մեր պատուարժան անդամակիցներէն ոմանք բացակայ են այսօր կամ ի ճանապարհի են եւ կամ հրաժարած են ինչ-ինչ նկատումներով։ Այդ մասին Դիւանիս հասած գրութիւնները պիտի կարդացուին։ Բայց ամեն բանէ առաջ սրտի խորին ցաւով կը յիշատակեմ մեր վաղամեռ անդամակցին՝ Տիար Յարութիւն Մոստիչեանի դառն կորուստը, որ տեղի ունեցաւ անցեալ տարուան ընթացքին։ Ողբացեալը ծանօթ էր իր ջերմ ազգասիրութեամբ եւ այն գեղեցիկ եռանդով, որով նուիրուած էր Հայաստանի ազատագրութեան գաղափարին։ Իր սիրտը կը թրթռար, երբ կը խորհէր Հայրենիքին վրայ, եւ նորածին Հանրապետութեան համար կը տածէր խանդավառ սէր մը, որուն անունով միշտ կոչում կ'ընէր ամէնուս՝ գուրգուրանքով շրջապատել հայկական անկախութեան այդ անդրանիկ բոյնը։ Դժբախտութիւն մըն է մեզի համար, որ այլեւս զինքը չպիտի ունենանք մեր մէջ։ Անոր տեղ նոր պատգամաւոր ընտրուած է։ Կան նաեւ ուրիշ նոր ընտրութիւններ, որոնց տեղեկագիրները պիտի կարդացուին մեր յաջորդ նիստին, երբ անցնինք մեր օրակարգին վրայ գտնուող խնդիրներու քննութեան։ Անշուշտ պէտք չունիմ շեշտելու, թէ երբեք չէ եղած ատեն մը, ուր այնքան կենսական պէտք ունեցած ըլլանք ազգային ներքին միութեան, որքան հիմա։ Որովհետեւ չէ եղած ատեն մը, ուր այնքան չարչարանք ու թշուառութիւն վիճակուած ըլլայ մեր ազգին, որքան որ վիճակուած է

այսօր։ Անձկութեան, բայց նաեւ յոյսերու, ակնկալութեան շրջան մը կ'անցընենք։ Բայց յոյսերը, ակնկալութիւնները մէկ օրէն միւսը կը պակսին, երբեմն բոլորովին կ'անյայտանան, մինչդեռ անձկութիւնն ու չարչարանքը, մեր ժողովուրդին համար, կարծես միշտ աւելի կը բարդուին՝ փոխանակ պակսելու։ Այս պայմաններուն մէջ՝ ի՞նչ նպատակ պէտք ենք ընտրել մեզի, եւ դէպի ո՞ւր ուղղելու ենք մեր ջանքերը որպէսզի կարենանք շրջել ազգին դառն դրութիւնը։ Այնպէս կը կարծեմ, թէ այս մասին առաջին գլխաւոր դարմանը եղբայրակցութեան եւ միութեան մէջն է։ Մեր ամէնուս համագործակցութենէն կախուած է հայ ազգին փրկութիւնը։ Այդ կերպով միայն կրնանք արդարանալ մեր խղճին հանդէպ, որովհետեւ ձեռք-ձեռքի, նոյն սրտով, նոյն հոգուով աշխատելով մանաւանդ հատուցած պիտի ըլլանք գերագոյն պարտականութիւնը, որ մեզի կը վիճակուի։ Ազգին մէջ գտնուած կուսակցութիւնները պէտք է միաբանեն։ Անոնց տարակարծութիւնները պատճառ մը չեն, որ մէկուն օգտակարութիւնը հռչակած ատենենս ուրիշ մը անպէտ նկատենք։ Ծաղկեփունջի մը մէջ տեսակ-տեսակ ծաղիկ կայ. ոչ մէկը միւսին կը նմանի ո՛չ իր ձեւով, ո՛չ իր գոյնով։ Բայց ամենը մէկ, քով-քովի, հաճելի ամբողջութիւն մը կը կազմեն։ Կուսակցութիւններն ալ ծաղիկներուն պէս են, եւ քով-քովի՝ նոյն ծաղկեփունջին մէջ կրնան գոյացնել միեւնոյն հաճելի եւ օգտակար ալ ամբողջութիւնը, ոմանք իրենց եռանդով, ոմանք իրենց խոհականութեամբ, ուրիշներ իրենց ոյժով։ Անշուշտ միշտ պիտի ըլլան կարծիքի տարբերութիւններ, եւ պէտք է ըլլան, բայց այդ տարակարծութիւնները, իրար սրբագրելով, իրար լրացնելով, պէտք է աւելի ազգին ընդհանրութեան բարիքին ձգտին եւ ո՛չ թէ յանգին ցաւալի շեղումներու, որոնք վնասէ զատ ուրիշ արդիւնք չեն տար, ինչպէս կ'ըլլայ այս միջոցիս մեր ժողովուրդին մէջ, Ամերիկա կամ այլուր։ Պէտք է մեր ամբողջ եռանդով աշխատինք, որ վերջ գտնեն այդ տխուր բախումները։ Նպատակը ամենուս համար ալ մէկ է, ազգին փրկութիւնը։ Այս նուիրական նպատակին շուրջ, ամենքս ալ, ինչ կարծիքի եւ համոզումի տէր եղած ըլլանք, միշտ կրնանք միանալ։ Կը կրկնեմ, որ ազգին փրկութիւնը մեր գոյացնելիք այս միութենէն կախուած է։

Ուրախ ենք այսօր մեր շուրջը տեսնելով մեր հոգեւորականութեան կարկառուն դէմքերը։ Վերջին երեք-չորս տարուան շրջանին մէջ մեր հոգեւորականութիւնը Ղեւոնդեանց եւ Սուքիասեանց ճշմարիտ յաջորդ հանդիսացաւ, անոնց պէս նահատակուելով ազգին ազատութեան ու բարիքին դատին անունով։ Յարգանքով ու խանդաղատանքով կը խոնարհինք իրենց յիշատակին առջեւ։ Վստահ եմ, որ ազգը երբեք չպիտի մոռնայ զիրենք եւ միշտ երախտագիտութեամբ պիտի ոգեկոչէ իրենց նուիրական յիշատակը։ Մասնաւորաբար բարեբախտութիւն ունեցանք մեր մէջ տեսնելու Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրը, որ անձնապէս Միջագետքի անապատներուն մէջ կրեց այն բոլոր նեղութիւնները, որոնք վիճակուած էին ժողովուրդին, միշտ աչքի առաջ ունեցաւ անոր թշուառութիւնը, եւ կը հաւատամ, որ ժողովուրդը այդպէս դժբախտ տեսնելով, իր մէջ աւելի մեծցան իր սեփական ցաւն ու տառապանքը։ Մեր մէջ ունէինք նաեւ Կիլիկիոյ Վեհաշնորհ Կաթողիկոսը, որ տակաւին անցեալ օր կը յայտնէր, թէ որքան կը ցաւի յանկարծական կերպով Իտալիա մեկնելու ստիպուած ըլլալուն, այլապէս,- կը յարէր,- անձամբ իր օրհնութիւնները պիտի բերէր մեր ջանքերուն եւ մեզի գրգիռ պիտի հանդիսանար, պարզելով ժողովուրդին ցաւերը, զորս այնքան լաւ կը ճանչնայ, քանի որ ինք ալ այդ ցաւերը կրեց տարագրութեան մէջ։ Դարձեալ մեր մէջ ունեցանք Նազլեան Գերապայծառը, որ այնքան անխոնջ ու եռանդուն գործակցութեան բաժին մը բերաւ Հայկական Դատին համար կատարուած աշխատութեանց ու դիմումներուն։ Ու նաեւ այս օրերս ալ բախտաւոր եղանք ընդունելով այցելութիւնը Գերերջանիկ Թէրզեան Ս. Կաթողիկոսի։ Կը հաստատեմ այս առթիւ սա պարագան, թէ մինչեւ այսօր, հոգեւորական եւ աշխարհական չդադրեցան իրարու ձեռք տալէ եւ չտարբերեցան իրարմէ. ամենքն ալ նոյն հոգուով եւ սրտով աշխատեցան ազգին փրկութեան համար։ Ասիկա գրաւական մըն է, թէ նոր ճամբու մը մէջ մտած ենք։ Կը հաւատամ, որ այս ընթացքը պիտի շարունակուի յառաջիկային, եւ

այս համագործակցութեան շնորհիւ մեր կղերը առիթ պիտի ունենայ աւելի մեծ օգտակարութիւն մը ընծայելու ազգին եւ անոր նուիրական Դատին:

Սրբազան Հարք եւ Տիարք,

Պէտք չունիմ անշուշտ յիշեցնելու, թէ քանի մը ամիս առաջ տեղի ունեցաւ երջանկաբեր իրողութիւն մը՝ Հայկական Հանրապետութեան ճանաչումը Դաշնակից տէրութեանց կողմէ: Այս մեծ իրողութիւնը ներկայ է միշտ ամէնուս ալ յիշողութեան մէջ, որովհետեւ ամէնքս ալ լեցուց հրճուանքով եւ յոյսով: Այն ատեն՝ գրով կամ հեռագրով մեր խնդակցութիւնը յայտնեցինք Հանրապետութեան կառավարութեան: Այսօր կրնանք նոյն հրճուանքով, նոյն յոյսով անդրադառնալ այս իրողութեան եւ խնդակցիլ իրարու, որ վերջապէս ունինք անկախ կառավարութիւն մը: Իրաւ է, որ կատարուած ճանաչումը de facto ճանաչում մըն է տակաւին, բայց մտահոգ ըլլալու տեղի չկայ: Չմոռնանք, որ Հանրապետութեան կառավարութիւնը Ռուսիոյ սահմաններուն մէջ գտնուելուն, Դաշնակից տէրութեանց համար յարմար չէր առաջին քայլերով de juris ճանաչում մը: Բայց, վերջապէս, միջազգային օրինաց մէջ de facto ճանաչումը նախաքայլն է de juris ճանաչման, եւ մեզի համար ալ նոյնը պիտի ըլլայ, ապահով եղէք ասոր: Մօտ օրէն Թուրքիոյ հետ հաշտութեան դաշնագրին ստորագրութեան հարցը կը հասնի անշուշտ իր լուծման, մեր խնդիրն ալ պարզուելով կ'ունենանք կատարեալ անկախ կառավարութիւն մը, եւ վերջապէս կը մտնենք բարօրութեան ու երջանկութեան ճամբու մը մէջ: Այժ եւ կարողութիւն մը մաղթեմ բոլոր անոնց, որոնք ազգին համար կ'աշխատին, եւ կը հաւատամ, որ անոնց համախումբ ջանքերը վերջ ի վերջոյ պիտի կրնան իրականացնել ինչ որ մեր ժողովուրդը երազեր է դարերէ ի վեր:

Այսօր չպիտի մտնենք խնդրոյ կարգին մէջ: Նախ՝ ամբողջ չենք: Ունինք անդամներ, որոնք քանի մը օրէն միայն կրնան հասնիլ եւ որոնց գործակցութիւնը անհրաժեշտ է անշուշտ մեզի: Յետոյ՝ իրաց ընթացքը պաքթերացնելու ծառայող քանի մը գրեր կան, որոնք պատրաստելու վրայ են: Կը յուսամ յաջորդ նիստին ամեն բան լրացած կ'ըլլայ եւ կը սկսինք մեր աշխատութեանց: Այսօրուան համար՝ կը խնդրեմ Ազգային Պատուիրակութեան Վսեմաշուք Նախագահէն, որ գոնէ համառօտ կերպով հաղորդէր իր մտածումները իրաց կացութեան մասին /ծափահարութիւններ/:

Պօղոս Նուպար Փաշա, Նախագահ Ազգային Պատուիրակութեան. Սրբազան Հարք, Տիար Նախագահ եւ Տիարք,

Յանուն Պատուիրակութեան՝ բարի գալուստ մաղթելով ձեզի կ'ուզեմ յայտնել նաեւ, թէ որքան երջանիկ ենք տեսնելով, որ այսքան մեծ բազմութեամբ պատասխանեցիք մեր Ազգային Համագումարի երկրորդ նստաշրջանի գումարման հրաւէրին: Երկիւղն ունէինք, թէ այն հապճեպ կոչը, զոր պարագաները մեզ ստիպեցին ձեզի ուղղելու հեռագրով, եւ այն երկար հեռաւորութիւնը, որ ձեզմէ ոմանք ստիպուած էին կտրել, կարելիութիւն չպիտի ընծայեն իրենց որոշուած թուականին Փարիզ հասնելու: Շատ վարանեցանք որոշելէ առաջ այդ թուականը, որ կախում ունէր Խաղաղութեան Վեհաժողովին աշխատութեանց յառաջացումէն, որովհետեւ ստիպուած էինք, ձեր՝ մեզի տուած ուղեգծին համաձայն, ձեզ նիստի հրաւիրել այն պահուն, ուր Հայկական Խնդիրը լուծուելու վրայ ըլլար: Բայց Խաղաղութեան Վեհաժողովը երկարաձգուեցաւ ամեն նախատեսութենէ անդին: Յաջորդական յետաձգումներ տեղի ունեցան, եւ քանի դժուարութիւններ կը ծագէին, Թրքական Հարցին լուծումն ալ օր օրի կը յետաձգուէր: Ասոր համար է, որ ձեզ Փետրուար 15-ին գումարուելու հրաւիրելէ ետք,- որովհետեւ կը կարծէինք թէ այդ թուականին ամեն բան աւարտած կ'ըլլայ,- ստիպուեցանք Մարտ 31-ին յետաձգել մեր Համագումարին բացումը: Այսօր ալ հարկադրուած ենք սպասելու, որ Գերագոյն Խորհուրդը վերջնականապէս վճռէ Թուրքիոյ հետ հաշտութեան պայմանները ու միեւնոյն ատեն որոշ կերպով մը հաղորդէ իր որոշումները Հայաստանի նկատմամբ:

Մեր Պատուիրակութիւնը իրեն պարտք պիտի նկատէ յառաջիկայ նիստի մը մէջ ձեզի ներկայացելու մանրամասն տեղեկագիր մը, ձեզի ծանօթացնելու համար այն

զանազան երեւոյթները, որոնցմէ անցաւ Հայկական Խնդիրը, ինչպէս նաեւ արդիւնքները այն բանակցութեանց, զորս ունեցանք Դաշնակից կառավարութեանց հետ՝ մեր վերջին նստաշրջանէն ասդին: Բայց կ'երեւակայեմ ձեր անհամբերութիւնը, եւ երկու բառով ձեզի պիտի յայտնեմ, թէ ի՞նչ վիճակի մէջ կը գտնուի այսօր մեր հարցը: Ասիկա օգտակար կը նկատեմ մանաւանդ անոր համար, որ անհրաժեշտ պէտք է քիչ մը լոյս սփռել եւ ցրուել այն տեսակ մը շփոթութիւնը, որ առաջ եկաւ՝ Հայաստանի հոգատարութեան մասին Գերագոյն Խորհուրդին կողմէ նախ Ազգերու Ընկերութեան եւ յետոյ Նախագահ Ուիլսոնի յղած կրկին առաջարկներուն պատճառաւ:

Մեր բանակցութիւնները մասնաւորաբար գործօն բնոյթ մը ստացան այն երկու ամիսներուն մէջ, որոնց ընթացքին Խաղաղութեան Վեհաժողովը գումարուեցաւ Լոնտոն, ինչպէս նաեւ Սան Ռեմոյի վերջին տասնօրեայ նստաշրջանին ընթացքին: Ինչպէս գիտէք, Լոնտոնի նստաշրջանի ընթացքին է, որ Գերագոյն Խորհուրդը Հայաստանի հոգատարութիւնը առաջարկեց Ազգերու Ընկերութեան: Ընկերութիւնը, առանց մերժելու, ինչպէս յանիրաւի յայտարարուեցաւ, դիտել տուաւ Գերագոյն Խորհուրդին, թէ իր կազմական կանոնագրին համաձայն՝ չի կրնար ուղղակի հոգատարութիւն մը ստանձնել, բայց, միւս կողմէ, պարտականութիւն մը կը նկատէ Հայաստանը առնել իր պաշտպանութեան տակ, պայմանաւ, որ պետութիւն մը ստանձնէ անոր հոգատարութիւնը յանուն Ընկերութեան, եւ կարգադրութիւններ ըլլան ելեւմտական օժանդակութեան մը համար:

Գիտէք նաեւ, Սրբազան Հարք եւ Տիարք, թէ Խաղաղութեան Վեհաժողովը Լոնտոնի մէջ գծած էր սահմանները Հայկական պետութեան, որ պիտի կազմուէր Թուրքիոյ հայկական հողամասերէն մէկ մասին արդի Հայկական Հանրապետութեան կցմամբ, Սեւ Ծովին վրայ ազատ ելքերով: Իրաւունք ունէինք ենթադրելու, թէ այդ սահմանները, որոնք Ազգ. Պատուիրակութեան եւ Վեհաժողովի սահմաններու գծման յանձնաժողովին միջեւ բանակցութեանց առարկայ դարձած էին, վերջնական են այլեւս: Դժբախտաբար այդպէս չեղաւ: Գերագոյն Խորհուրդը պէտք տեսաւ խնդրել վերաքննելու Սան Ռեմոյի մէջ, ուր մասնաւորաբար էրզրում քաղաքը նոր խորհրդակցութեանց առարկայ դարձաւ: Լսելէ ետք Ազգ. Պատուիրակութիւնը, Գերագոյն Խորհուրդը նախ որոշ կերպով ընդունեց էրզրումը Հայաստանի թողելու «թէզ»ը, բայց յաջորդ օրը զարմացանք, իմանալով, որ մասնագիտական պատճառներու բերմամբ եւ Զինուորական Յանձնաժողովի կարծիքին վրայ՝ որոշեր է խնդիրը առկախ թողուլ եւ վերջնական որոշում մը տալէ առաջ վերջին կոչ մը ուղղել Միացեալ Նահանգներուն: Այս պայմաններուն մէջ է, որ Հայաստանի հոգատարութիւնը առաջարկեց Նախագահ Ուիլսոնի: Դիտելի է, թէ առաջին անգամն է, որ այս տեսակ առաջարկութիւն մը կ'ըլլայ պաշտօնապէս: Գերագոյն Խորհուրդը նոյն ատեն խնդրեց Միացեալ Նահանգներէն, որ հոգատարութիւնը մերժելու պարագային գոնէ ելեւմտական ու զինուորական աջակցութիւն մը ընծայեն Հայաստանի: Գերագոյն Խորհուրդը, վերջապէս, առաջարկեց Նախագահ Ուիլսոնի, որ նոյնիսկ այն պարագային, երբ այս վերջին առաջարկութիւնն ալ մերժուի, ինքն իսկ, իբր իրաւարար, որոշէ Հայաստանի սահմանները:

Համառօտակի՝ այս է արդի կացութիւնը: Անձկութեամբ կը սպասենք պատասխանին, որ անշուշտ չպիտի ուշանայ եւ որ միակ բանն է, որ կրնայ վերջ տալ մեր անհանգստութեանց: Ամեն պատճառ ունինք յուսալու, թէ այդ պատասխանը մեզի նպաստաւոր պիտի ըլլայ. որովհետեւ՝ եթէ նոյնիսկ, ինչպէս հաւանական է, Միացեալ Նահանգները ի վիճակի չըլլան հոգատարութիւնը ընդունելու, գոնէ պիտի կրնան մտնել Ազգերու Ընկերութեան կողմէ թելադրուած կարգադրութեան մէջ, հոգատար պետութեան օգնելով եւ Հայաստանի ընծայելով այն ելեւմտական ու զինուորական աջակցութիւնը, որուն պէտք ունի:

Հաւատք ունենանք ուրեմն, մտաբերելով Միացեալ Նահանգներու ժողովուրդին ու կառավարութեան կողմէ մեր մասին սնուցուած ու բազմիցս

ապացուցուած համակրութիւնը, եւ այն յայտարարութիւնները, որոնք այնքան անգամներ հանդիսաւորապէս եղած են ի նպաստ Հայաստանի՝ Ամերիկայի ամէնէն նշանաւոր անձնաւորութեանց կողմէ: Չափազանց լաւատեսութիւն մը անտեղի է անշուշտ: Կացութիւնը այսօր այն չէ, ինչ որ էր զինադադարի պահուն: Այն օրէն ի վեր, ուր Միացեալ Նահանգները այլեւս չեն մասնակցիր Գերագոյն Խորհուրդին խորհրդակցութեանց, սկզբնաւորութեան շրջանին հաւանական նկատուող լուծումները անզգուշաբար եւ միշտ աւելի մեծ համեմատութիւններով փոխուած են՝ ծագած նոր դժուարութեանց հանդէպ շատ մը խոստումներ որոնք եղած էին՝ մոռցուած կամ մէկ կողմ թողուած են. կը խուսափին անոնց խօսքը ընելէ, վախնալով, որ չեն կրնար զանոնք կատարել: Ինչ որ ալ ըլլայ, պէտք է շարունակենք մեր ջանքերը մինչեւ վերջին վայրկեանը եւ սպասել Ուաշինկթոնի կառավարութեան պատասխանին:

Վերջացնելէ առաջ՝ Ազգ. Պատուիրակութեան խորին երախտագիտութիւնը կը յայտնեմ մեր յարգելի Պատրիարքին՝ Ամենապատիւ Տ. Ձաւէն Ս. Արքեպիսկոպոսին, որ Պոլսէն յաքթապէս գալով, այս վճռական րոպէին եւ մեր բանակցութեանց ամէնէն հրատապ միջոցին մեզի օգնեց իր խորհուրդներով, եւ իր անձին յատուկ ամբողջ հեղինակութեամբ մեր ջանքերուն զօրավիգ հանդիսացաւ: Շնորհակալութիւն կը յայտնեմ նաեւ Գերերջանիկ Թերզեան Ս. Կաթողիկոսին, Նազլեան Գերապայծառին եւ Գերաշնորհ Խորէն Եպիսկոպոս Մուրատբէկեանի, որոնք այնքան հայրենասիրաբար իրենց ջանքերը միացուցին մերիններուն: Վերջապէս՝ մեր երախտագիտութիւնը կը յայտնեմ Կիլիկիոյ Տ. Տ. Սահակ Բ. Վեհափառ Կաթողիկոսին, որ Ֆրանսա եկաւ պաշտպանելու համար դատը Կիլիկիոյ մեր եղբայրներուն, որոնց տառապանքին ծանօթ էր ուրիշ ամեն անձէ աւելի: Իրաւունք ունինք յուսալու, որ այս բոլոր վեհանձն աջակցութիւնները, միացած մեր ջանքերուն, ի զուր չպիտի անցնին, եւ թէ մեր ազգը, այնքան ահռելի տառապանքներէ եւ զոհողութիւններէ ետք, պիտի ողջունէ վերջապէս իր փրկութեան արշալոյսին ծագումը /ծափահարութիւններ/:

Պ. Արշակ Չօպանեան, Փոխ-Նախագահ Ազգ. Համագումարին. Ազգ. Համագումարի եւ Ազգ. Պատուիրակութեան Վսեմաշուք Նախագահներուն ծանրակշիռ եւ իմաստալից յայտարարութիւններէն վերջ՝ ինծի քիչ բան կը մնայ ըսելիք: Անցեալ դարը յոյսերու շրջան մըն էր մեզի համար, եւ այնքան մօտ ըլլալ կը կարծէինք այդ յոյսերուն իրականացման: Բայց այսօր կը գտնուինք նոր մութ րոպէի մը մէջ, որ ուրիշ ամեն ատենէ աւելի մեզի կը թելադրէ միութեան պէտքը, ինչպէս գեղեցկօրէն շեշտեց Ազգային Համագումարի Վսեմաշուք Նախագահը: Այդ մասին ամենքս ալ համամիտ ենք իրեն: Բայց միութեան հետ եւ միութեան մէջ նոյնքան եւ աւելի անհրաժեշտաբար պէտք է ցոյց տանք մեր ցեղին ամէնէն հիմնական ու տեւական յաքթութիւններէն մէկը՝ հաւատքը մեր փրկութեան, մեր բարօրութեան, մեր ապագային նկատմամբ: Չկարծենք, թէ դժբախտութեան մէջ գտնուող միակ ազգն ենք աշխարհի վրայ. ոչ միայն մեզի պէս պզտիկ ազգերու, այլ նոյնիսկ մեծ ու զօրեղ ազգերու համար հորիզոնը նոյնքան մութ է այս րոպէիս, որքան մեզի համար: Այն դժնդակ տարիներուն, ազգերու այն հսկայ բախումին ընթացքին, մենք ալ երազեցինք, որ եթէ ցանկալի յաղթանակին օրը ծագեր վերջապէս՝ մարդկութիւնը պիտի փոխուէր: Եկաւ այդ յաղթանակը, եւ եղաւ աւելի ջախջախիչ, քան ինչ որ կը յուսայինք, քան ինչ որ կը յուսային այն պետութիւնները, որոնք անոր համար կը կռուէին: Սակայն մարդկութիւնը չէ փոխուած, եւ նորէն շատ բան մութ է աշխարհի մէջ, մութ մեզի համար, մութ նաեւ մեզմէ շատ աւելի մեծ ազգերու համար: Բայց ասիկա պէտք չէ յուսահատութեան պատճառ մը ըլլայ: Պատերազմը չէ վերջացած իրապէս: Դեռ մէջն ենք ահաւոր բաղխումին, փոթորիկը դեռ կը տեւէ եւ չենք գիտեր, թէ ի՞նչ կրնայ ծնիլ: Մեր փոքր ազգը մանաւանդ այդ բախումին մէջն է, շրջապատուած անոր ամբողջ արիաւիրքէն ու վտանգներէն, եւ ուրիշ ամեն ատենէ աւելի իր վրայ պարտք կը ծանրանայ այդ արիաւիրքն ու վտանգները դիմագրաւելու այն տոկունութեամբ եւ հերոսական անձնազոհութեամբ, որուն այնքան փայլուն ապացոյցները տուաւ պատերազմի

ընթացքին: Բան մը վերջապէս պիտի ծնի այս վիթխարի երկունքէն: Մեր ազգը, որ դարերէ ի վեր այն դժուարութեանց մէջ կրցեր է տոկալ, աշխատիլ եւ սպասել հաւատքով, կրնայ նոյն հաւատքին եւ նոյն աշխատութեան շնորհիւ սպասել այս կարճ միջոցն ալ, այն վստահութեամբ, թէ քանի որ ամենահզոր ազգերու ճակատագիրն իսկ փոփոխութեան կ'ենթարկուի, իր ճակատագիրն ալ պիտի սահմանուի լաւագոյն կերպով մը, քան ինչ որ էր երէկ՝ բռնութեան ու սարսափի այն պայմաններուն մէջ: Ազգ. Պատուիրակութեան Վսեմաշուք Նախագահը յայտնեց, թէ յոյսի ի՞նչ նշոյլ մը ունինք, որ այս մթութեան մէջ պայծառօրէն կ'երեւայ, մխիթարական եւ սրտապնդիչ նոյն ատեն, նշոյլ, զոր գոյացնելու համար ամբողջ տարի մը մաքառեցանք: Հայ տէրութիւն մը պիտի կազմուի Կովկասեան Հայաստանով եւ Թրքահաստանի մէկ քանի նահանգներով: Այս հայ տէրութեան կազմութեան նկատմամբ երկմտութիւն չկայ, որովհետեւ Դաշնակից պետութիւնները այդ մասին պաշտօնական յանձնառութիւն մը ստանձնած են ամբողջ աշխարհի առջեւ: Չեմ ծածկեր, որ Լոնտոնէն վերջ՝ Սան Ռեմոն հիասթափութիւն մը եղաւ: Էրզրումէն աւելին կը յուսայինք, ուրիշ նոյնքան սիրական եւ մեր պետութեան զօրեղ կազմաւորման համար նոյնքան անհրաժեշտ նահանգներ, ինչպէս Երզնկան, Խարբերդը: Բայց նոյնիսկ Էրզրումը վտանգուեցաւ Սան Ռեմոյի մէջ, ճիշդ այն միջոցին, ուր ամեն բան մեզի իրաւունք եւ ապահովութիւն կու տար հաւատալու, թէ այն ահագին պետութիւնները վերջնականապէս վճռած են Էրզրումի կցումը Հայկական տէրութեան: Սակայն նոյնիսկ այս հիասթափութեան մէջ ունեցանք Ամերիկայի կատարուած դիմումին մխիթարութիւնը, որ յոյսի նոր հորիզոն մը կը բանայ մեզի համար: Դժուար է երեւակայել, որ Ամերիկա մերժէ այդ դիմումը. դժուար է երեւակայել, որ այդ դիմումը մերժելով Ամերիկա լքէ մեր ժողովուրդը եւ մեր յոյսերն ի դերեւ հանէ: Գոնէ իրեն եղած առաջարկներէն մէկը պիտի ընդունի անշուշտ, եւ այդ մէկը, որն ալ ըլլայ, միշտ նպաստաւոր է մեզի համար: Որովհետեւ կռուան մը պիտի ըլլայ ատիկա, որ մեզի կարելիութիւն պիտի ընծայէ խաղաղութեան եւ ապահովութեան մէջ աշխատելու եւ մեր աշխատութեամբ ձգտելու այն աղուոր ապագային, որուն ցեղը երազեց դարերու ընթացքին, եւ որուն համար այնքան սիրով ենթարկուեցանք թերեւս զոհողութեան ծանրագոյն հարկին, որ երբեք վիճակուած ըլլայ ազգի մը: Մօտ օրէն կ'իմանանք Ամերիկայի պատասխանը: Միւս կողմէ, Պ. Լլոյտ Ճորճ, քանի մը օր առաջ արտասանած ճառին մէջ, քիչ մը հեգնօրէն յայտարարելէ ետք, թէ հայերը վիթխարի Հայաստանի մը կազմութեան ձգտեցան Ամբողջական Հայաստանի իրենց պահանջմամբ, ըսած, էր թէ հայերը մինակնին չունին անհրաժեշտ ոյժը, եւ եթէ նոյնիսկ իրենց բանակը զօրացուի՝ չպիտի կարենան ցոյց տալ այն զինուորական կարգապահութիւնը եւ մարտական յաքթութիւնները, որոնք պէտք են էրզրումի գրաւման համար: Բայց նոյնիսկ այս թերահաւատութեան մէջ կը տեսնենք ապահովութիւն մը, թէ մեզ երբեք մինակ չպիտի թողուն մեր հայրենիքին վերստեղծման գործին մէջ, ու մեզի պիտի ընծայեն իրենց խորհուրդներն ու աջակցութիւնը: Եւ արդէն Պ. Լլոյտ Ճորճ, որ այդ գնահատութեան աւելցուցած էր նշանակելի «ֆրազ» մը, որ եթէ նոյնիսկ Ամերիկա իրեն եղած ամեն առաջարկները մերժէ, իրենք՝ Դաշնակիցները, հաւաքական զոհողութեամբ եւ օժանդակութեամբ պիտի աջակցին Հայկական Պետութեան: Հաւատքով նայինք ուրեմն վաղուան:

Անհունապէս աւելի յուսահատեցուցիչ պարագաներու մէջ անգամ յոյսը միշտ անշէջ մնացեր է մեր ցեղին մօտ: Չքնանանք, շարունակենք աշխատիլ, շարունակենք մանաւանդ հաւատալ, այն խոր ու անյեղլի հաւատքով, որ ինչպէս անցեալին մէջ մեր գոյութեան առանցքն է եղած, այնպէս ալ այսօր ու ապագային մեր մեծութեան աղբիւրը կրնայ դառնալ: Չեմ ըսեր միանանք, որովհետեւ միութեան անհրաժեշտութիւնը ամէնուս գիտակցութեան մէջ ներկայ է միշտ, բայց մէկդի դնենք աւելորդ վէճերը եւ մեր մէջ զօրացնենք այն, ինչ որ ունինք իւրաքանչիւրս իբր առանձին անհատ: Ամեն հայ խորապէս ազգասէր է: Հայերը հաւաքաբար իրենց ազգը կը սիրեն, բայց առանձին իրար չեն սիրեր: Շրջենք այս թերութիւնը, եւ ինչ զգացում,

որ կը սնուցանենք ազգին ընդհանրութեան մասին, փոխադարձաբար աշխատինք մշակելու անհատէ անհատ: Մեկ ամիսէն կամ երկու ամիսէն հայերը կողք-կողքի պիտի հաւաքուին, երբ Հայկական Խնդիրը լուծուի եւ որոշուի վերջնականապէս մեր ամէնուս Հայրենիքը: Այս լուծումը դժբախտաբար այնքան փայլուն չպիտի ըլլայ, քան ինչ որ կը յուսայինք, եւ պիտի ունենանք շատ աւելի սահմանափակ հայրենիք մը, քան ինչ որ կը պահանջէինք անցեալ տարի: Բայց վերջապէս դրական արդիւնք մըն է, որ նոյնիսկ համեստութեան հակառակ, պիտի կրնայ ցեղին միջոց ընծայել իր գոյութիւնը պահպանելու, հաւատքով ու կամակորութեամբ աշխատելու, եւ շարունակելու այն գեղեցիկ քաղաքակրթական գործը, զոր դարերու ընթացքին կատարած է անհունապէս աւելի դժուարին պայմաններու եւ գերութեան կաշկանդիչ շրջանի մը մէջ /ծափահարութիւններ/:

Ամեն. Ձաւէն Ս. Պատրիարք. Ինչ որ զիս ստիպեց Եւրոպա գալու՝ Հայկական Դատին ծառայելու կարող ամեն ոյժ այս վճռական օրերուն Եւրոպայի մէջ կեդրոնացնելու անհրաժեշտութեան մտածումն էր, զոր ունէին նաեւ Պոլսոյ մեր Ազգային ժողովները, որոնց հաւանութեամբ ճամբայ ելայ արդէն: Թէեւ հոգեւորականները մեծ ոյժ մը չունին, բայց վերջապէս կրցածնին կ'ընեն, եւ ամեն ջանք, որ կը ձգտի ազգային դատին յաջողութեան, որքան ալ պզտիկ ըլլայ, միշտ բարի է անշուշտ: Երկուքուկէս ամիս է, որ կը գտնուիմ մեր Պատուիրակութեան հետ: Կը տեսնեմ այն անդուլ աշխատութիւնը, որուն նուիրուած են՝ լաւագոյն վիճակի մը մէջ դնելու համար մեր ազգին ճակատագիրը: Կը տեսնեմ ու կը զարմանամ, թէ ինչպէ՞ս տէր կը մնան իրենց ջիղերուն, ինչպէ՞ս կը պահեն իրենց առողջութիւնը: Որովհետեւ մշտատեւ սիրտմաշուքը, յաջորդական բուռն յուզմունքներու կեանք մըն է, որուն դատապարտուած են: Օր մը սեւ, օր մը ճերմակ, օր մը գէշ, օր մը ուրախառիթ լուրեր: Հազիւ սրտապնդիչ իրողութեան մը հրճուանքը, եւ ահա անմիջապէս վերջը նոր ջարդի մը զարհուրանքը իր բովանդակ ջլատիչ ազդեցութեամբ: Իրենց ցոյց տուած աննկուն հոգիի արիութիւնը աչքի առջեւ ունենալով մանաւանդ, կը մղուիմ ըսելու, թէ այս բոլոր տխուր իրադարձութեանց եւ աննպաստ պայմաններուն հանդէպ յուսահատութիւնէ տարուելու չենք: Իրաւ է, որ մեծ յոյսերով ճամբայ ելանք: Բայց, այդ յոյսերը մեզի իրականանալի կը թուէին անոր համար մանաւանդ, որ մեր արդար իրաւունքներուն վրայ հիմնուած էին, եւ այն մարդիկը, որոնք պիտի կոչուէին աշխարհի ճակատագիրը տնօրինելու, իրենց հանդիսաւոր յայտարարութիւններով շարունակ մեզ կը քաջալերէին հաստատ մնալու մեր ակնկալութեանց վրայ: Ես կը մտաբերեմ ինքզինքս՝ տարագրութեան դժնդակ տարիներուն, այն հեռաւոր անապատներուն մէջ: Կը յիշեմ այն վայրկեանները, երբ մեր ձեռքը կ'անցնէին եւրոպացի դիւանագէտներու ճառերը: Ինչ զեղումով ու սրտապնդութեամբ կը կարդայինք իրենց գնահատութիւնը հայ ժողովուրդին նկատմամբ եւ որքան բերկրութեամբ կը լսէինք այն խոստումները, զորս կ'ընէին հայ ազգին վարձատրութեան, անոր նուիրական իրաւունքներուն պսակման մասին: Եւ յոյսը օր օրի աւելի կը մեծնար ու կը զօրանար մեր մէջ: Իրերը սակայն չմնացին այնպէս, ինչպէս որ կ'ակնկալէինք: Այսօրուան օրը մէկ տարի առաջուան չի նմանիր, ոչ ալ անկէ նախորդ տարուան: Ձարնուած այն եզը բաժնելու ատենը եկած էր: Անոնք, որ մեզ կը գովէին, մեր զոհողութիւններն ու մեր հերոսական ընթացքը կը պանծացնէին, չգոհացան միայն ամէնէն խոշոր պատառները առնելով, առին նաեւ այն ինչ որ մեր արդար իրաւունքն էր: Մեզի մնացածը հազիւ պզտիկ պատառ մը եղաւ, եւ այդ պատառն ալ փրկելու համար գիտէք արդէն, թէ ինչ աշխատութիւն եւ ինչ չարչարանք պէտք կ'ըլլայ: Ուր մեր ակնկալութիւնները, ուր այս արդիւնքը: Ա՞յս պիտի ըլլար մեր ստանալիք վարձքը այն մեծ անձնազոհութեան փոխարէն, զոր ցոյց տուինք պատերազմին ընթացքին: Գոնէ ես արդարութիւն չտեսայ Եւրոպայի մէջ: Եւ ահա այսօր՝ կռուի մէջ ենք մենք՝ գաճաճներս՝ այն հսկաներուն հետ: Բարեբախտ պէտք է նկատենք ինքզինքնիս, եթէ կրցանք պզտիկ բան մը փրցնել անոնցմէ. պէտք է գոհ ըլլանք ատով, մտածելով, թէ ի'նչ ահարկու առիւծներու եւ վագրերու ձեռքէն խլած

ենք: Բայց որպէսզի կարենանք նոյնիսկ այդ քիչը ձեռք բերել, պէտք չէ բնաւ յուսահատինք: Եւ ժողովուրդին դատը հետապնդած ատեննիս պէտք չէ մոռնանք նոյն ինքն ժողովուրդը, որ տակաւին անօթի ու թշուառ է, մասամբ իր իսկ հայրենիքին, մասամբ նաեւ այն անապատներուն մէջ, որոնցմէ դեռ կարելի չեղաւ փրկել զինքը ծանօթ դժնդակ պայմաններուն բերումով: Պատուիրակութիւնը շատ մեծ է ամէնուս համար ալ, եւ այն որ պարտքի տակ է, յուսահատելու իրաւունք չունի: Այս բոլոր դժուարութիւնները պէտք է, ընդհակառակը, գրգռռ ըլլան մեզի՝ աւելի կորովով ու փրկունութեամբ աշխատելու, անշէջ պահելով մեր մէջ այն հաւատքը, թէ անպատճառ պիտի յաջողինք, ի'նչ ալ ըլլան պայմանները. պիտի յաջողինք՝ որովհետեւ պիտի աշխատենք: Ես միշտ յոյսով եմ, որ ուշ կամ կանուխ անպատճառ պիտի ունենանք մեր հայրենիքը: Մե՞ծ պիտի ըլլայ, թէ՞ պզտիկ՝ ասոր շուրջն է կռիւը: Անշուշտ չպիտի ըլլայ այն, զոր կ'երազէինք, զոր իրաւունք ունէինք ակնկալելու, բայց եթէ նոյնիսկ ըլլայ այնքան պզտիկ, որ չկրնայ պարփակել մեր ամբողջ ժողովուրդը, ասիկա պէտք չէ մեզ մղէ յուսահատութեան յանձնուելու, պէտք չէ ջլատէ մեզ՝ մեր աշխատութեան պարտքին հատուցման մէջ: Ինչ որ մեր սերունդը չկրցաւ ընել՝ վաղուան սերունդը պիտի կրնայ ընել: Աչքի առջեւ բերենք բոլոր ազգերը. անոնց մեծութիւնը մէկ սերունդի գործ չէ, եւ անոնք ընդհանրապէս իրենց անկախութեան շրջանը մտած են ճիշդ այն հիասթափութիւններով եւ զրկանքով, որոնցմով կը մտնենք մենք ալ: Ես վստահ եմ, որ մեր ազգը պիտի կրնայ ինքզինքը բարձրացնել նոյնիսկ պզտիկ կէտի մը վրայէն: Քանի որ կրցաւ իր գոյութիւնը պահպանել այն զարհուրանքի պայմաններուն մէջ որոնք դարերէ ի վեր կը ծանրանային իր վրայ, պիտի կրնայ ապրիլ ու մեծնալ, երբ իր անկախութեան տիրանայ, եւ աւելի գեղեցկօրէն ի յայտ բերէ այն յաքթութիւնները, զորս ցոյց տուած է անցեալին մէջ: Կարողութիւն կը մաղթեմ Ազգ. Պատուիրակութեան պատ. անդամներուն, մանաւանդ անոր Վսեմաշուք Նախագահին, որ եօթ տարիէ ի վեր կը ճգնի ազգին համար: Ձինքը յոյսով զեղուն եւ միշտ աշխատելու տրամադիր ճանչնալուս համար մանաւանդ, վստահ եմ, որ պիտի յաջողի իր ծանր ու դժուարին պարտականութեան կատարման մէջ: Ասկէ քանի մը տարի առաջ՝ ինք Փարիզէն, մենք Պոլսէն՝ կը թղթակցէինք պզտիկ ռեֆորմի մը իրականացման համար: Այսօր երկրի մը կը տիրանանք: Փա'ռք տանք Աստուծոյ: Ինծի համար առաջին հանդիսաւոր առիթն է ասիկա, որ կը ներկայանայ՝ Նորին Վսեմութեան յայտնելու համար իմ շնորհակալութիւններս: Ազգը անշուշտ կը գնահատէ, եւ տարակոյս չկայ, որ պիտի շարունակէ գնահատել իր տարած ջանքերը: Շնորհակալութիւն կը յայտնեմ նաեւ Ազգային Պատուիրակութեան պատ. անդամներուն, Ազգ. Համագումարի Վսեմաշուք Նախագահին եւ բոլոր պատուարժան պատգամաւորներուն, այն վստահութեամբ, թէ իրենց ամէնուն մէկանց ջանքերը իրար պիտի լրացնեն յօգուտ Ազգային Դատին յաջողութեան: Աստուած Ձեզի հետ ըլլայ /ծափահարութիւններ/:

Գերերջ. Տ. Թէրզեան Կաթուղիկոս. Թէեւ ամեն բան ըսուեցաւ արդէն, բայց քանի մը խօսք ալ ես ըսել կ'ուզեմ, ամէնէն աւելի շեշտելու համար սա՝ թէ յուսահատելու չենք, որքան ալ անպաստ երեւան պայմանները: Յուսահատութիւնը ջլատում կը նշանակէ, եւ մենք հիմա ուրիշ ամեն ատենէ աւելի պէտք ունինք աշխատելու: Մեծ բարեկամներ ունինք, եւ որքան ատեն, որ բարեկամութիւններ կան մեզի հետ, մեր դատը կորած չէ: Հռոմ եղած ատենս Սրբազան Քահանայապետը վերջին աստիճան հետաքրքիր գտայ Հայկական Խնդրին նկատմամբ: Կարդինալ Կասպարի ալ յայտնեց ինծի, թէ Սրբազան Քահանայապետը, Նազլեան Գերապայծառի միջոցով հաղորդած լուրերս ընդունելով, մեծ շահագրգռութիւն ցոյց տուած է, ուրախառիթ լուրերը իմանալով ուրախ եղած է, տխուր լուրերը իմանալով տխրած է: Մեկնած ատենս ալ՝ երբ Մօնսինեօր Թէրէթիի միջոցաւ իր օրհնութիւնները կը հայցէի, ստացայ նաեւ բոլոր քաջալերութիւնները այն ջանքերուն համար, որոնք պիտի ըլլային իր մասնաւոր ուշադրութեան առարկան եղող մեր դատին համար: Աշխատութեան հարկը, որ կը ծանրանայ ամեն մէկերնուս վրայ՝ շատ մեծ է: Պէտք է

ամեն բան շինենք եւ երկիրը հասցնենք այն տեսակ վիճակի մը, որ մեր բազմաչարչար ժողովուրդը այլեւս շունչ առնէ, հանդարտութեան ու ապահովութեան մէջ ապրի, կարենայ աշխատիլ, շէնցնել իր հայրենիքը: Կ'աղօթեմ, որ Աստուած յաջողութեամբ պսակէ սկսուած գործը եւ արդիւնաւորէ այն ջանքերը, որոնք կ'ըլլան այդ նպատակով: Քանի որ հաւատքի վրայ հիմնուած են անոնք, ինչպէս ըսաւ յարգելի ատենախօսներէն մէկը, համոզուած եմ, որ Աստուած պիտի բեղմնաւորէ զանոնք, եւ կազմուելիք Հայաստանն ալ երկնային օրհնութեան պիտի արժանանայ: Ես վստահ եմ, որ այս անհրաժեշտ աշխատութիւնը չպիտի զլացուի ո'չ մէկուն կողմէ, բայց որպէսզի այդ աշխատութիւնը տայ ակնկալուած արդիւնքը, պէտք է որ տեղի ունենայ կատարեալ միաբանութեամբ: Մեր գտնելիք յաջողութիւնը մեր միութենէն կախուած է: Խոստովանինք, որ մեր ազգը այս յաքթութենէն զուրկ եղած է ընդհանրապէս: Այստեղ ալ կը տեսնեմ մեր այս թերութիւնը, եւ նոյնիսկ մէկ քանի նշանաւոր անձնաւորութիւններ, որոնց հետ առիթ ունեցայ խօսակցելու, ըսին թէ հայերը ամեն յաքթութիւն ունին, բայց պէտք է միաբան ըլլան: Պարագաները իրենց աննպաստութեամբ անշուշտ առիթ պիտի դառնան, որ սրբագրենք այս թերութիւնը, ամեն բանի մէջ անձնազոհութիւն բայց մանաւանդ միաբանութիւն ցոյց տանք, յաջողութեամբ պսակելու համար կատարուած աշխատութիւնը եւ մեր ժողովուրդը հասցնելու համար ապագայի մը, որմէ թէեւ հեռու ենք տակաւին, բայց որ նոյնիսկ այս հեռաւորութեան մէջ այնքան մեծ եւ փայլուն կ'երեւայ:

Խօսքս վերջացնելէ առաջ շնորհակալութիւն կը յայտնեմ Ազգային Պատուիրակութեան Նախագահ Վսեմաշուք Փաշային, որ Պ. Ահարոնեանի հետ կ'աշխատի կատարեալ անձնուիրութեամբ եւ անխոնջ եռանդով: Շնորհակալութիւն կը յայտնեմ նաեւ ամեն անոնց, որոնք իրենց աշխատութեան եւ զոհողութեան բաժինը չեն զլանար ազգին դատին: Կը մաղթեմ, որ իրենց ջանքերը պսակուին լիապէս, եւ բոլորն ալ գտնեն իրենց արժանի վարձատրութիւնը ոչ միայն այս, այլ նաեւ հանդերձեալ աշխարհին մէջ /ծափահարութիւններ/:

Նորատունկեան էֆէնտի. Յանուն Ազգ. Համագումարին կը փութամ շնորհակալութիւն յայտնել այն թանկագին քաջալերութեանց եւ օրհնութեանց համար, զորս մեզի ընծայեցին Ամենապատիւ Ջաւէն Սրբազան Պատրիարքն ու Գերերջանիկ Թէրզեան Սրբազան Կաթողիկոսը: Միւս կողմէ՝ ազգին միութեան անհրաժեշտութեան մասին եղած թեալադրութեանց առթիւ կ'ուզեմ յայտնել սա պարագան, թէ մեր Համագումարը, անցեալ տարի միաբանութեան ու եղբայրակցութեան օրինակ մը հանդիսացաւ: Պատգամաւորները մեծ մասամբ իրար չէին ճանչնար, եկած էին աշխարհի հեռաւորագոյն կէտերէն, ընդհանրապէս տարբեր-տարբեր համոզումներ ունէին, բայց ազգին սէրն ու հայրենիքին փրկութեան իղձը ամէնուն ալ մօտ հաւասարապէս զօրեղ ըլլալով, ամէնքն ալ գիտցան նոյն սրտով գործակցիլ իրարու, եւ խորհրդակցութեան առարկայ դարձած բոլոր խնդիրներուն քննութեան առթիւ այդ սրտակից միութիւնը մանաւանդ առաջնորդեց զիրենք: Ամեն յոյս ունիմ, որ ներկայ նստաշրջանին մէջ ալ Համագումարին պատուարժան անդամները նոյն գեղեցիկ եւ օրինակելի ընթացքը ցոյց պիտի տան:

Յառաջիկայ նիստին իբր օրակարգ պիտի ունենանք 1. Ատենական գործողութիւններ /հրաժարականներ եւ ընտրութիւններ/, 2. Տեղեկագիր կազմական կանոնագրի յանձնաժողովին, 3. Տեղեկագիր եւ հաշուեցոյց Ազգ. Պատուիրակութեան ելեւմտական գործառնութեանց, համարատուութիւն Ազգ. Պատուիրակութեան: Կ'առաջարկեմ, որ Համագումարի յաջորդ նիստը տեղի ունենայ Երկուշաբթի, 10 Մայիսին: Եթէ հակառակ կարծիք մը չըլլայ, ուրեմն կը հաւաքուինք Երկուշաբթի ժամը 3-ին:

Պ. Աւետիս Թէրզիպաշեան. Կ'առաջարկեմ նոյնիսկ վաղը գումարուիլ, անմիջապէս լսելու համար Ազգ. Պատուիրակութեան համարատուութիւնը: Ճգնաժամային օրեր են մեր խնդրին համար: Համագումարը կարելի եղածին չափ

շուտ պէտք է տեղեկանայ իրերու դրութեան: Թերեւս կան փոքրիկ զանցառութիւններ, որոնց մասին Համագումարին թելադրութիւնները, որքան ալ համեստ, կարենան իրենց օգուտն ունենալ:

Տիգրան Խան Քէլէկեան. Կարծեմ աւելի յարմար է, որ Շաբաթ օր կատարենք մեր գումարումը:

Պ. Դաւիթ-Բէկ. Բայց եթէ նոյնիսկ Շաբաթ օրը գումարուինք, չպիտի կրնանք լսել Ազգ. Պատուիրակութեան համարատուութիւնը, որովհետեւ անոր ընթերցումէն առաջ անհրաժեշտ ատենական գործողութիւններ կան կատարուելիք: Մնաց որ, համարատուուութեան տեղեկագիրը պատրաստ ալ չէ տակաւին:

Պ. Արշակ Չօպանեան. Տեղեկագիրը պատրաստ կ'ըլլայ մինչեւ Երկուշաբթի, եւ կը յուսամ այդ օրը կարենանք մէյ մէկ օրինակ ցրուել Համագումարի անդամներուն:

Պօղոս Պէյ Մսըրլը. Լաւ կ'ըլլայ, որ Երկուշաբթի օրուան թողունք յաջորդ նիստը: Թերեւս մինչեւ այդ օրը Ամերիկայի պատասխանն ալ հասած կ'ըլլայ, եւ աւելի գիտակցութեամբ կը մօտենանք մեր օրակարգին խնդիրներուն:

Պ. Գրիգոր Սինապեան. Եթէ Պատուիրակութեան տեղեկագիրը չպիտի կարդացուի՝ աւելորդ է աճապարել:

Պ. Ա. Թէրզիպաշեան. Ես եթէ փութացնել ուզեցի նիստը, պատճառը սա է, որ կարեւոր է օր առաջ տեղեկանալ Ազգ. Պատուիրակութեան գործունէութեան, որպէսզի այս վճռական օրերուն մէջ գլուխ-գլխի կարենանք որոշել, թէ ինչ կը մնայ ընելիք: Ես այնպէս կը հաւատամ, որ շատ բան պիտի ունենանք ընելիք : Հետեւաբար, որքան շուտ անցնինք մեր օրակարգին, այնքան լաւ պիտի ըլլայ: Եթէ ոչ Երկուշաբթի, գոնէ Շաբաթ օրը յարմարագոյն է:

Պ. Արտաւազդ Հանըմեան. Կը մոռնանք ուրիշ բան մըն ալ. գալու վրայ եղող պատգամաւորներ կան, որոնք ճամբայ են, բայց մինչեւ Երկուշաբթի կը հասնին անշուշտ: Ինչո՞ւ զանոնք զրկենք համարատուութեան ընթերցումէն, որ մեր օրակարգին ալ ամէնակարեւոր խնդիրն է ինքնին: Արդէն այսքան ուշ մնաց մեր գումարումը. կրնանք մէկ երկու օր ալ սպասել:

Պօղոս Նուպար Փաշա. Մեծ յոյս կայ, որ մինչեւ Երկուշաբթի իմանանք Ամերիկայի եղած առաջարկութեանց պատասխանը: Հետեւաբար, Երկուշաբթին նախընտրելի է:

Նորատունկեան էֆէնտի. Քանի որ առարկութիւն չկայ եւ կ'ընդունուի, ուրեմն յառաջիկայ նիստը Երկուշաբթի, 10 Մայիս, ժամը 3-ին: Պէտք կը տեսնեմ յայտնելու, թէ այսօր ներկայ եղող անդամներուն հրաւիրագիր չպիտի ղրկուի:

Նիստը փակուեցաւ ժամը 5:40-ին:

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 48, թթ. 1-9: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ Բ

Ուրբաթ, 14 Մայիս 1920, ժամը 3-ին,
նախագահութեամբ Գաբրիէլ էֆ. Նորատունկեանի:

Ներկայ էին 19 պատգամաւոր՝
Եղիշէ Արքեպ. Դուրեան, Պ. Պ. Երուանդ Պէյ Աղաթօն. Տոքթ. Ա. Բարսեղեան, Դաւիթ-Բէկ, Ա. Թէրզիպաշեան, Վ. Թէքէեան, Ա. Հանըմեան, Պօղոս Պէյ Մսըրլը, Տոքթ. Նեւրուզ, Նէրսէս Խան Ներսէսեան, Գաբրիէլ էֆ. Նորատունկեան, Պօղոս Նուպար Փաշա, Ա. Չօպանեան, Զ. Պզտիկեան, Գ. Սինապեան, Մ. Տէրպէտէրեան, Տ. Տէօվլէթեան, Տիգրան Խան Քէլէկեան, Գառնիկ Ֆնտգլեան:

ՕՐԱԿԱՐԳ

1. Ընտրութիւն Համագումարի Դիւանին:
2. Տեղեկագիր Կազմական Կանոնագրի Յանձնաժողովին:

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Ատենագրութիւն

Նորատունկեան Գաբրիէլ էֆէնտի. Մեր երկրորդ նստաշրջանին բացման նիստին առթիւ, Ամենապատիւ Ս. Պատրիարք Հօր, Գերերջանիկ Թէրզեան Կաթողիկոսի, Ազգ. Պատուիրակութեան Նախագահ՝ Վսեմաշուք Պօղոս Նուպար Փաշայի, Պ. Չօպանեանի եւ նուաստիս կողմէ արտասանուած ճառերը արձանագրուած են ատենագրութեան մէջ: Դիւանիս բաղձանքն է, որ իւրաքանչիւր նիստի ատենագրութիւնը պատրաստուած ներկայացուի եւ կարդացուի յաջորդ նիստին, որպէսզի եթէ արձանագրութեան վրէպներ ըլլան, ուղղուին անմիջապէս: Առ այս, Դիւանս պիտի աշխատի կարելին ընելու: Նախորդ նիստին ատենագրութիւնը սակայն, որ զուտ բացման ճառերէ կը բաղկանայ, կարծեմ պէտք չկայ կարդալու: Յարգելի ճառախօսները, եթէ ուզեն, կրնան աչքէ անցընել զայն:

2. Վերակազմութիւն Ազգ. Համագումարի

Նորատունկեան էֆէնտի. Կ'անցնիմ Ազգ. Համագումարի վերակազմութեան խնդրին: Ունինք հրաժարած անդամներ, նաեւ նոր ընտրուած անդամներ: Ոմանք ալ ճամբան են, եւ հաւանական է, որ մեր յառաջիկայ նիստին բախտաւորութիւն ունենանք զիրենք մեր մէջ տեսնելու: Յաջորդաբար տեղեկութիւն պիտի տամ հրաժարած կամ նոր ընտրուած անդամներու մասին, որոնց վերաբերող թուղթեր կան Դիւանիս մօտ: Ինչպէս յայտնի է, նախորդ տարի, մասնաւոր յանձնախումբ մը, որ կը գտնուէր Ամենապատիւ Դուրեան Արքեպիսկոպոսի նախագահութեան տակ, կը զբաղէր այս խնդիրներու քննութեամբ: Եթէ այդ յանձնախումբին պաշտօնը մնայուն կը նկատէք, կրնանք անոր յանձնել այս թուղթերուն քննութիւնը: Եւ կամ նոր յանձնախումբ մը կ'ընտրենք, անոր քննութեան ենթարկելու համար այդ թուղթերը: Նախորդ նիստին արդէն առիթը ունեցայ յիշելու մեր ողբացեալ անդամակցին՝ Պ. Մոստիչեանի դառն կորուստը: Վաղահաս մահը զինքը խլեց մեր աշխատութիւններէն, որոնց այնքան օգտակար կը հանդիսանար իր խանդավառ ազգասիրութեամբ եւ իմաստուն խորհուրդներով: Իրեն տեղ կատարուած է նոր ընտրութիւն, ինչպէս պիտի յայտնեմ քիչ մը վերջը: Նաեւ Անգլիոյ հայ գաղութին պատգամաւոր Պ. Յակոբեան, որ նոյնքան օգտակար մասնակցութիւն մը կը բերէր մեր աշխատութեանց, առողջական պատճառներու բերմամբ ստիպուեցաւ հրաժարիլ: Գիտէք արդէն, թէ նախորդ տարի ալ, երբ մեր մէջ կը գտնուէր, նոյն պատճառաւ ստիպուեցաւ ընդհատել իր աշխատութիւնը ու մեկնեցաւ Լոնտոն: Պ. Յակոբեանի տեղ ալ նոր պատգամաւոր մը ընտրուած է:

Պ. Վահան Թէքէեան. Կ'առաջարկեմ, որ Համագումարը յարգանքի ցոյց մը ընէ ողբացեալ Պ. Մոստիչեանի համար, որուն վաղահաս կորուստին առթած կսկիծը այնքան բաբախուն է մեր ամէնուս ալ մօտ: Այս յարգանքի ցոյցը պէտք է արձանագրուի ատենագրութեան մէջ եւ հաղորդուի հանգուցեալին ընտանիքին:

Պ. Ա. Չօպանեան. Կը ձայնակցիմ Պ. Թէքէեանի: Այս յարգանքի ցոյցը, որուն ամեն կերպով արժանի էր հանգուցեալը, պէտք է ըլլայ թէ՛ Համագումարին եւ թէ՛ Ազգային Պատուիրակութեան անունով:

Պօղոս Նուպար Փաշա. Բայց Ազգ. Պատուիրակութիւնը ըրած է արդէն ատենին, իր կսկիծը յայտնելով հանգուցեալին տիկնոջ: Լոնտոն գտնուած միջոցիս նոյնը

կրկնեցի անձամբ այրի Տիկին Մոստիչեանի: Համագումարը միայն առիթ չունեցաւ իր ցաւակցութիւնները յայտնելու, եւ անշուշտ այս անգամ կ'ընէ պէտք եղածը:

Պ. Ա. Չօպանեան. Կ'ուզէի ըսել, որ այս անգամ նոյնը կրկնէինք Համագումարին հետ:

Պ. Թէքէեանի առաջարկը ընդունուելով, Ամենապատիւ Դուրեան Եղիշէ Արքեպիսկոպոս արտասանեց հոգոցը ողբացեալ Պ. Յարութիւն Մոստիչեանի յիշատակին: Ներկաները յոտընկայս ունկնդրեցին:

Նորատունկեան էֆէնտի. Դիւանս ալ կը գրէ առանձինն մեր ողբացեալ անդամակցին Տիկնոջ: Կը խօսէինք Անգլիոյ հայ գաղութին պատգամաւոր Պ. Յակոբեանի հրաժարականին վրայ: Պ. Յակոբեանի տեղ այս անգամ ընտրուած է Պ. Տիրան Տէօվլէթեան, ինչպէս կը տեղեկանանք նաեւ Մանչեսթրի հայոց ընդհանուր ժողովի դիւանին կողմէ իրեն ուղղուած նամակէ մը, զոր Դիւանիս յանձնեց: Այս ընտրութեան համար կը շնորհաւորեմ Պ. Տէօվլէթեանը, որ մեր մէջ կը գտնուի արդէն եւ որ անշուշտ սիրայօժար պիտի մասնակցի մեր աշխատութեանց: Իր ընտրութեան վերաբերող գիրն ալ կը յղենք պատգամաւորներու ընտրութեան խնդիրները քննող յանձնախումբին:

Ուրիշ խնդիր մը կայ, զոր պէտք է բացատրեմ: Անցեալ տարի Յունաստանի հայ գաղութը միայն մէկ պատգամաւոր ղրկած էր: Այս անգամ սակայն, Հին Յունաստանի հայ գաղութը առանձին ընտրութիւն կատարած է յանձին Պ. Միքայէլ Պապաջանեանի, մինչդեռ նոր Յունաստանի հայ գաղութն ալ, ողբացեալ Պ. Մոստիչեանի տեղ ընտրած է Բրօֆ. Թումայեանը: Հին Յունաստանի հայ գաղութը իր ընտրութիւններն ըրած է կարգ մը առարկութիւններով, զորս անշուշտ մասնաւոր յանձնախումբը կը քննէ: Ուրիշ ընտրութիւն մը եղած է Պաղտատէն, Միջագետքի նախորդ պատգամաւոր Պ. Տէրվիշեանի տեղ, որ հրաժարած էր: Նախապէս՝ Տէր Նահիմ Թաճիր ստորագրութեամբ հեռագիր մը կը ծանուցանէր, թէ ընտրուած է Պ. Ահարոնեան: Երկրորդ հեռագիր մը, տրուած Պաղտատի Առաջնորդարանէն՝ ընտրական քոմիթէին անունով, կը հաստատէ Պ. Ահարոնեանի ընտրութիւնը, աւելցնելով, որ եթէ Պ. Ահարոնեան չկարենայ ընդունիլ, իրեն տեղ պիտի ընտրեն Պ. Արշակ Սաֆրաստեանը: Առիթ չեղաւ այս հեռագիրը հաղորդելու Պ. Ահարոնեանի, որ ինչպէս յայտնի է, նախորդ տարի Համագումարին աշխատութեանց մասնակցեցաւ լոկ խորհրդակցական հանգամանքով, իբր Նախագահ Հայկական Հանրապետութեան Պատուիրակութեան:

Պ. Ա. Չօպանեան. Այս մասին խօսեցայ ես Պ. Ահարոնեանի հետ. ըսաւ, թէ իրեն համար լաւագոյն պիտի ըլլայ նախորդ տարուան պէս լոկ խորհրդակցական հանգամանքով մասնակցիլ Համագումարին աշխատութեանց:

Պ. Արտաւազդ Հանըմեան. Ատիկա չի բաւեր: Պէտք է պաշտօնապէս հաղորդել իրեն իր ընտրութեան պարագաները եւ ստանալ իր պաշտօնական պատասխանը:

Նորատունկեան էֆէնտի. Իրեն ալ, ինչպէս բոլոր անդամներուն, պաշտօնապէս հրաւէր ղրկուեցաւ Համագումարին աշխատութեանց մասնակցելու:

Տոքթ. Ա. Բարսեղեան. Այդ հրաւէրը կապ չունի այս խնդրին հետ:

Պ. Աւետիս Թէրզիպաշեան. Հրաւիրագրին մէջ յիշատակուա՞ծ էր իր ընտրութեան վերաբերող հեռագիրը:

Նորատունկեան էֆէնտի. Ո՛չ:

Պ. Վ. Թէքէեան. Այս թուղթերուն յարակից ուրիշ թուղթ մը կար, որ պէտք է նոյնպէս կարդացուէր: Անցեալ տարի, Բողոքականաց Ազգապետարանը երկու պատգամաւոր նշանակած էր՝ Տոքթ. Սմբատ Գաբրէիլեանը, որ վախճանած է անկէ ի վեր եւ Բրօֆ. Թումայեանը: Այն ատեն՝ Համագումարը առիթ չունեցաւ այդ ընտրութեանց տեղեկանալու, որովհետեւ գիրը չկարդացուեցաւ: Այս անգամ պէտք է կարդալ այդ գիրը, որպէսզի հասկցուի, թէ վախճանեալ Տոքթ. Սմբատ Գաբրիէլեանի տեղ ընտրուած է Բրօֆ. Լեւոնեան:

Նորատունկեան էֆէնտի. Դիւանիս քով գտնուող թուղթերուն մէջ չկայ այդ գրութիւնը. պէտք է գտնել տալ, եւ այն ատեն կը կարդացուի:

Տոքթ. Ա. Բարսեղեան. Ինծի այնպէս կը թուի, թէ Ժողովը կանոնաւոր հիմքի վրայ չէ, սկսանք քննել ընտրութեան խնդիրներ, առանց անհրաժեշտ մեծամասնութիւնը ունենալու:

Նորատունկեան էֆէնտի. Այս թուղթերը կը կարդացուին առ ի տեղեկութիւն. մեծամասնութիւն ունենալու խնդիրը ապա նկատի պիտի առնուի:

Տոքթ. Ա. Բարսեղեան. Անցեալ տարի խնդիր եղաւ, թէ մինչեւ ե՞րբ պիտի շարունակուի Ազգ. Համագումարին համար նոր անդամներու ընտրութիւնը: Համագումարը այն ատեն դէմ արտայայտուեցաւ նոր անդամներ ընտրելու դրութեան: Որչափ որ կը յիշեմ, նոյն ինքն Պօղոս Փաշա հակառակեցաւ նոր ընտրութեանց: Հիմա սակայն, դարձեալ նոր ընտրութեանց վերադարձանք եւ կը խօսինք ընտրելիներու մասին: Այնպէս կը կարծեմ, որ Ժողովին մեծամասնութեան կողմէ տրուած որոշման մը հակառակ կ'երթանք: Անցած տարի ներքին կանոնագրով նախատեսուած մեծամասնութեամբ միայն կրնանք որոշել, թէ պէ՞տք է նոր անդամներ ընդունինք:

Նորատունկեան էֆէնտի. Պ. Բարսեղեանի առաջարկն է, որ այս խնդիրը մեծամասնութեան ենթարկենք: Բայց կը կրկնեմ, որ հիմակուան եղածը լոկ ընթերցում մըն է՝ առ ի տեղեկութիւն: Երբ այս մասին Յանձնախումբին տեղեկագիրը ստանանք, այն ատեն մեծամասնութեամբ կը քննենք խնդիրը:

Պ. Վ. Թէքէեան. Անշուշտ առ ի տեղեկութիւն կը կարդացուին այս թուղթերը, եւ անհրաժեշտ չէ, որ մեծամասնութիւն ունենանք: Երբ Յանձնաժողովին տեղեկագիրը գայ, մեծամասնութեամբ կը քննենք: Կ'ուզեմ սակայն դիտել տալ, թէ Համագումարին անցեալ տարուան որոշումը կը պաքթանէր նշանակովի անդամներուն: Վախճանած անդամներու տեղ նոր անդամ ընտրելու արգելք կա՞ր իրապէս: Յետոյ, զոր օրինակ, Կիլիկիոյ պէս կարեւոր շրջանի մը պատգամաւորները մերժելու միտում ունէ՞ր այդ որոշումը: Համագումարը անշուշտ այս անգամ նկատի պիտի առնէ կատարուած ընտրութիւնները, որոնց, եթէ ուզէ, կրնայ սահման մը դնել: Ամեն պարագայի մէջ, պիտի յարգուի այս հարցը մեծամասնութեամբ քննելու պահանջումը: Գալով մեծամասնութեան, անոր գոյացման համար աչքի առջեւ պիտի ունենանք այն նոր պայմանները, որոնք առաջ կու գան այս անգամուան ընտրութիւններով:

Պ. Ա. Թէրզիպաշեան. Անցեալ տարուան որոշումէն վերջ Համագումարը ընդունեց Պոլսոյ Հայ Կաթոլիկ Պատրիարքարանի ներկայացուցիչները: Տրուած որոշումը իսկապէս նշանակովի անդամներուն համար էր:

Պ. Ա. Չօպանեան. Եւ արդէն Ժողովը մերժեց հաւանիլ՝ երբ անցեալ տարի առաջարկեցի հինգ անձեր իբր անդամ Համագումարի:

Կարդացուեցաւ պարսկահայոց պատգամաւոր Պ. Մ. Վարանդեանի կողմէ 1920 Մայիս 4 թուականով Փարիզի Համագումարի Դիւանին ուղղուած նամակ մը, որով կը յայտնէր, թէ իր նոր պաշտօնին բերումով եւ այդ պատճառաւ Հռոմ մեկնելու ստիպուած ըլլալով, չպիտի կրնայ մասնակցիլ Համագումարին աշխատութեանց:

Նորատունկեան էֆէնտի. Այս նամակն ալ կը ղրկենք Յանձնաժողովին:

Ձայներ. Այո՛, այո՛:

Պ. Ա. Թէրզիպաշեան. Պարզ, եւ առանց պատճառաբանութեան հրաժարական մըն է. ինչո՞ւ ղրկենք Յանձնաժողովին:

Ձայներ. Նամակին մէջ հրաժարականի խնդիր չկայ:

Նորատունկեան էֆէնտի. Քանի որ Պ. Վարանդեան գրած է, թէ իր պաշտօնին բերումով չպիտի կրնայ մեր աշխատութեանց մասնակցիլ, ուրեմն կը նշանակէ, թէ կը հրաժարի: Գալով Պ. Թէրզիպաշեանի առարկութեան, անպատեհութիւն մը չկայ այս նամակը Յանձնաժողովին ղրկելուն մէջ, որովհետեւ կրնայ ըլլալ, որ Յանձնաժողովը պէտք տեսնէ նոր ընտրութիւն առաջարկել հրաժարեալին տեղ:

Կարդացուեցաւ ամերիկահայոց պատգամաւորներ Պ. Պ. Մ. Համբարձումեանի եւ Զ. Մաթիկեանի 1920 Մարտ 20 թուակիր մէկ նամակը, Պոսթոնէն ուղղուած առ Պօղոս Նուպար Փաշա, որով, կարգ մը պատճառաբանութիւններով, կը հրաժարէին իրենց պատգամաւորի հանգամանքէն, նոյն ատեն բողոքելով Ազգ. Համագումարի վերստին գումարման դէմ:

Պ. Ա. Չօպանեան. Այս նամակը գոնէ փոքր պատասխանի մը կը կարօտի: Համագումարը երկրորդ անգամ նիստի հրաւիրելը ո՛չ միայն անհրաժեշտութիւն մըն էր Ազգ. Պատուիրակութեան համար, այլ՝ պարտականութիւն մը, եւ այս պարտքը իր վրայ դրած էր նոյն ինքն Համագումարը, իր նախորդ նստաշրջանին մէջ, որուն մասնակցած էին նաեւ Պ. Պ. Համբարձումեան եւ Մաթիկեան:

Պօղոս Նուպար Փաշա. Պատասխան տալու հարկը կը պաքթանի Համագումարին, պատասխանին մէջ յիշատակելով անշուշտ այն պարագան, զոր պարզեց Պ. Չօպանեան:

Նորատունկեան էֆէնտի. Այս գիրն ալ կը ղրկենք Յանձնաժողովին:

Կարդացուեցաւ Սոֆիայէն՝ Ազգ. Միութեան կողմէ Ազգ. Պատուիրակութեան ուղղուած 1920 Ապրիլ 7 թուակիր նամակ մը որով, համանման պատճառաբանութիւններով, կը յայտարարեն, թէ հրաժարած կը նկատեն պուլկարահայ գաղութին պատգամաւորները եւ չեն հաւանիր, որ անոնք մասնակցին Համագումարի ներկայ նստաշրջանին:

Կարդացուեցաւ նաեւ Հայ Սահմանադրական-Ռամկավար Կուսակցութեան Վառնայի Քոմիթէին 1920 Մարտ 30 թուակիր եւ Պօղոս Նուպար Փաշայի ուղղուած մէկ հեռագիրը, որով կը բողոքէ Սոֆիայի Ազգ. Միութեան վերոյիշեալ որոշման դէմ:

Նոյնպէս կարդացուեցաւ Պուլկարիոյ հայ գաղութին պատգամաւոր Պ. Հինդլեանի 1920 Մարտ 31 թուակիր եւ Ազգ. Պատուիրակութեան ուղղուած մէկ հեռագիրը, որով կը յայտնէր, թէ ինք պաշտօնական հրաւէր չէր ընդունած Համագումարի երկրորդ նստաշրջանին համար: Հեռագրին յարակից կարդացուեցաւ Ազգ. Պատուիրակութեան մէկ ծանօթութիւնը, որով կը յայտնէր, թէ երկու անգամ հեռագրով եւ երկու անգամ ալ նամակով հրաւէր ուղղուած է Պ. Հինդլեանի:

Ժողովը որոշեց այս գիրերն ալ ղրկել Յանձնաժողովին:

3. Մեծամասնութեան խնդիր

Պ. Ա. Թէրզիպաշեան. Կարծեմ աւելի ճիշդ բան մը ըրած պիտի ըլլանք՝ մեծամասնութիւնը փնտռելու առթիւ նկատի առնելով միայն թիւը այն պատգամաւորներուն, որոնք իրենց վրայ կը պահեն ներկայացուցչական հանգամանքը: Պէտք է քննենք, թէ ո՞վ անդամ է իրօք եւ ո՞վ ոչ, եւ ըստ այնմ որոշենք մեր մեծամասնութիւնը: Համագումարի առաջին նստաշրջանին բացման օրը անդամներու թիւը 38 էր: Մեր անդամակիցներէն մէկը վախճանած է եւ վեցը հրաժարած են: Քննելով իրենց հրաժարականները, բոլորս ալ համոզուեցանք, թէ անոնք այլեւս չեն կրնար մաս կազմել Համագումարին: Ուրեմն ներկայիս Համագումարը ունի 38-էն 7 անդամ պակաս, այսինքն՝ 31 անդամ: Արդ, մեծամասնութիւնը պէտք է փնտրենք Համագումարին ներկայ անդամներուն իրական թիւը, 31 թիւը հաշուելով, որով անոնց կէսէն մէկ աւելին, 16-ը կ'ըլլայ մեր մեծամասնութիւնը: Այսօր մենք ունինք 17 անդամներ, չհաշուելով գալիք անդամները, ինչպէս նաեւ Կիլիկիոյ եւ Մանչեսթրի պատգամաւորները, որոնց ընտրութիւնը չէ վաւերացուած դեռ: Կ'առաջարկեմ, ուրեմն, մեծամասնութիւնը գոյացած նկատել եւ նիստը պաշտօնապէս բացուած յայտարարել:

Պօղոս Նուպար Փաշա. Ընդհանուր դիտողութիւն մը պիտի ընեմ այս առթիւ: Կայ մեծամասնութեան որոշ կանոն մը, որ կը յարգուի բոլոր խորհրդարաններու մէջ: Առնենք օրինակի համար Ֆրանսական խորհրդարանը: Ի՞նչ է իր անդամներուն

ընդհանուր թիւը. ենթադրենք 600. մեծամասնութիւնը բնականաբար կը գոյանայ այդ 600-ին կէսէն մէկ աւելիով, այսինքն 301 թիւով: Բայց եթէ մահուամբ կամ հրաժարմամբ այդ 600-էն պակսողներ ըլլան, մեծամասնութիւնը նոյնը չի մնար, այլ կը փոխուի նոյն համեմատութեամբ, միշտ անդամներու իրական թիւին կէսէն մէկ աւելին հաշուելով: Մենք ալ, մեր մեծամասնութիւնը որոշելու համար, պէտք է նկատի առնենք Համագումարին տրամադրելի անդամներուն իրական թիւը, եւ այդ թիւին կէսէն մէկ աւելիով կազմենք մեր մեծամասնութիւնը: Այս կերպով՝ ո՛չ նոր ընտրութեան պէտք կը մնայ, ո՛չ ալ սպասելու, եւ կրնանք առաջ տանիլ մեր աշխատութիւնները:

Նորատունկեան Էֆէնտի. Փաշային դիտողութիւնը անշուշտ օրինաւոր է: Բայց թերեւս դժուարութեան կը բաղխինք գործադրութեան մէջ: Ժողովս պէտք է խորհրդակցի այս մասին եւ միանգամ ընդմիշտ որոշէ, թէ ի՞նչ պէտք է ընել ներկայացող երկու պարագաներուն հանդէպ: Պարզ հրաժարականներու պարագան որոշ է. հարկ չկայ անոնց մասին վիճաբանելու: Բայց ի՞նչ ընթացք պէտք ենք բռնել միւսներուն նկատմամբ, որոնք կը հրաժարին՝ մեր աշխատութեանց մասնակցել չուզելնուն համար:

Պօղոս Նուպար Փաշա. Քանի որ չեն ուզեր մեզի հետ աշխատիլ, ի՞նչ կրնանք ընել. պարզապէս կ'ընդունինք իրենց հրաժարականը:

Պ. Ա. Հանըմեան. Կրնայինք այդպէս ընել՝ եթէ զանոնք նկատէինք իբր սոսկական անհատներ. բայց անոնք անհատներ չեն ներկայացներ, այլ՝ ամերիկահայ գաղութը, որուն կողմէ ընտրուած են իբր ներկայացուցիչ: Այդ նամակները պէտք ենք հաղորդել ամերիկահայ գաղութին, հասկնալու համար, թէ ինք ի՞նչ կը խորհի անոնց մէջ յարուցուած պատճառաբանութեանց մասին: Պէտք է լսենք ամերիկահայ հանրային կարծիքը:

Պօղոս Նուպար Փաշա. Ո՛չ. ով որ հրաժարական կու տայ, հրաժարած կը նկատուի, պէտք չկայ, որ ատոր համար զինքը ընտրողներուն կարծիքը առնուի կամ անոնց հաղորդուի հրաժարականը: Եթէ նոր ընտրութիւն կատարել պէտք ըլլար, այդ պարագային կը հասկնամ, որ ամերիկահայ գաղութին դիմելու պէտք տեսնէինք:

Տիգրան Խան Քէլէկեան. Արդեօք այդ պատգամաւորները իրենց ընտրողներուն հաղորդա՞ծ են այն պատճառաբանութիւնները որոնցով հրաժարած են:

Պ. Ա. Հանըմեան. Ո՛չ:

Տիգրան Խան Քէլէկեան. Ուրեմն մե՞նք ինչու հաղորդենք:

Տոքթ. Նեւրուզ. Իմ գիտցածը սա է, որ իրենց հրաժարականը պիտի տային Ազգ. Միութեան: Չեմ գիտեր, թէ տուի՞ն: Չեմ կարծեր, սակայն, որ պէտք ըլլայ անոնց տեղ նոր ընտրութիւն ընելու, որովհետեւ մեր այս երկրորդ նստաշրջանը առաջին նստաշրջանին շարունակութիւնն է պարզապէս: Եթէ նախորդ տարի Համագումարը վերջացած նկատէինք, կրնայինք հիմա նոր ընտրութեան ձեռնարկել: Մենք այսօր կատարուած իրողութեան մը հանդէպ կը գտնուինք: Պատգամաւորներ հրաժարեր են. պէտք չունինք անոնց տեղ նոր ընտրութիւն ընելու: Վերադառնանք մեր աշխատութեանց:

Պ. Ա. Հանըմեան. Հապա մեռնողնե՞րը, ինչո՞ւ Պ. Մոստիչեանի տեղ նոր ընտրութիւն կատարուեր է:

Պ. Վ. Թէքէեան. Անշուշտ մեծամասնութեան կազմութեան խնդրին մէջ նկատի պիտի առնենք նաեւ հրաժարած պատգամաւորներու պարագան: Եթէ իրօք խորհրդարանի նման մարմին մը ըլլայինք, հրաժարածներուն տեղ նոր ընտրութիւն կը կատարուէր եւ այդ միջոցին Ժողովը իր նախորդ մեծամասնութեամբ կը շարունակէր գումարուիլ: Բայց մենք այդ տեսակ մարմին մը չենք. ժամանակ չունինք նոր ընտրութիւն կատարելու: Մեզմէ շատեր հեռաւոր տեղերէ եկած են եւ չեն կրնար երկար ատեն մնալ այստեղ: Արդէն որոշ գործով մը գումարուած ենք, թերեւս մեր աշխատութիւնը քանի մը շաբաթ միայն տեւէ: Հետեւաբար, չենք կրնար հրահանգ տալ նոր ընտրութիւններու, որոնց արդիւնքը Համագումարին փակումէն վերջ միայն պիտի

կրնար իմացուիլ: Որպէսզի գործնական ելքի յանգինք, պէտք է հրաժարողները պակսեցնենք մեր ընդհանուր թիւէն, մնացածներուն վրայ աւելցնենք անոնք, որոնք անցեալ տարի մեր մէջ չէին եւ նոր ընտրուած են, ինչպէս Կիլիկիոյ պատգամաւորը եւ բողոքականներու Ազգապետարանին պատգամաւորները, եւ այսպէսով գոյացած ընդհանուր թիւին վրայ կազմենք մեծամասնութիւնը: Հակառակ պարագային, պիտի ծագին անպատեհութիւններ, որոնց մէկ օրինակը կրնանք նկատել Բրօֆ. Թումայեանի պարագան: Ինչպէս կը յիշուի, Բրօֆ. Թումայեան անցեալ տարի Համագումարին մասնակցեցաւ իբր հրաւիրեալ անդամ: Անկէ ի վեր յայտնուած է, թէ ընտրուած է իբր բողոքականներու Ազգապետարանին երկու պատգամաւորներէն մէկը, եւ հին Յունաստանի հայ գաղութին կողմէ՝ իբր յաջորդ հանգուցեալ Մոստիչեանի: Արդ, պէ՞տք է մեծամասնութիւնը փնտռած ատեննիս նկատի ունենանք Բրօֆ. Թումայեանի երեք պատգամաւորի հանգամանքը: Եւ եթէ ընդունինք, ասիկա մեր թիւը չի՞ պակսեցներ:

Պօղոս Նուպար Փաշա. Պ. Թէքէեան երկու առաջարկ ըրաւ: Առաջին առաջարկով՝ ինծի համամիտ է, այսինքն՝ հրաժարողները պակսեցնել մեր ընդհանուր թիւին, մնացողներուն վրայ կազմելու համար մեծամասնութիւնը: Բայց ըրաւ նաեւ ուրիշ առաջարկութիւն մը, որուն համամիտ չեմ: Պ. Թէքէեան առաջարկեց հրաժարողները պակսեցնելով՝ տրամադրելի պատգամաւորներու թիւին վրայ աւելցնել նաեւ նոր անդամներուն թիւը, եւ անկէ վերջ միայն գոյացած ընդհանուր թիւին վրայ կազմել մեծամասնութիւնը: Այսօրուան համար, սակայն հարկ չկայ այս յաւելումին: Այսօր կրնանք մեր մեծամասնութիւն հաստատել պակսածներէն զատ տրամադրելի եղող պատգամաւորներու ընդհանուր թիւը միայն նկատի առնելով: Այս կերպով կազմուած մեծամասնութիւնը մը օրինական է եւ կը բաւէ մեզի որպէս զի անմիջապէս սկսինք մեր աշխատութեանց: Եթէ նոր պատգամաւորներու ընտրութեան վաւերացումը կատարուի, այն ատեն միայն անոնց թիւը կը բարդենք մեր ընդհանուր թիւին եւ ըստ այնմ կ'որոշենք նաեւ մեր մեծամասնութիւնը:

Պ. Վ. Թէքէեան. Ուրեմն երկո՞ւ մեծամասնութիւն:

Պօղոս Նուպար Փաշա. Այո՛, մեծամասնութիւն մը այս օրուան համար, որպէսզի կարենանք անմիջապէս աշխատութեանց սկսիլ, եւ մեծամասնութիւն մը այն օրուան համար, երբ ատիկա անհրաժեշտ դառնայ մեր ընդհանուր թիւին յաւելման պատճառաւ:

Պ. Տիրան Տէօվլէթեան. Առաջին անգամն է, որ խօսք կ'առնեմ ժողովին մէջ. պիտի ներէք անշուշտ, եթէ պզտիկ դիտողութիւն մը ընեմ: Իմ կարծիքովս՝ կարծեմ չափազանց ձեւակերպութեան կ'երթանք: Այսօր օրինական մեծամասնութիւն չունինք. խորհրդակցական ժողով մըն է միայն եղածը, հետեւաբար՝ հարկ չկայ, որ այս բոլոր մանրամասնութեանց մտնենք այն տեսակ խնդրի մը մասին, զոր լոկ մեծամասնութեամբ կրնանք լուծել: Երբ այդ մեծամասնութիւնը ունենանք եւ նիստը դառնայ օրինական, այդ պարագային կ'որոշենք, թէ ի՞նչ պիտի ըլլայ մեծամասնութեան թիւը, պիտի պահե՞նք 20-ը, թէ՞ զայն պիտի իջեցնենք 15-ի կամ 16-ի:

Երուանդ Պէյ Աղաթօն. Բայց մեր այսօրուան նիստը օրինաւոր է, որովհետեւ ունինք մեծամասնութիւն: Անցեալ տարի 38 հոգի էինք. մեծամասնութեան թիւն էր 20. այս տարի 32 հոգի ենք, կէսէն մէկ աւելին կ'ըլլայ 17, որ մեծամասնութեան թիւն է: Եթէ ներկաները հաշուենք, պիտի տեսնենք, որ մեծամասնութիւն ունէինք արդէն:

Պօղոս Նուպար Փաշա. Իմ սիսթէմս է ատիկա:

Պ. Վ. Թէքէեան. Պայմանաւ սակայն, որ Պ. Պզտիկեան, Կիլիկիոյ պատգամաւորը չհաշուուի ներկաներու թիւին մէջ:

Երուանդ Պէյ Աղաթօն. Ո՛չ ալ Պ. Տէօվլէթեանը, քանի որ իրենց ընտրութիւնը չէ վաւերացուած տակաւին:

Նորատունկեան էֆէնտի. Ուրեմն կրնանք ըսել, թէ մեծամասնութիւն ունինք այսօր եւ ըստ այնմ ընթացք տալ մեր աշխատութեանց /հաւանութեան ձայներ/:

Տոքթ. Ա. Բարսեղեան. Մեծամասնութիւն կազմելու համար առաջարկուած ձեւը շատ իրաւական չէ ըստ իս: Այս Համագումարը անցեալ տարուանին շարունակութիւնն է եւ անոր մէջ պէտք է մնայ այն մեծամասնութիւնը, որուն վրայ կը հիմնուէինք: Մեր անդամակիցներէն ոմանք որոշ պատճառաբանութիւններով կը մերժեն մեզի աշխատակցիլ. կրնա՞նք զանոնք հրաժարած նկատել այն մեծամասնութեամբ, զոր կ'ուզենք կազմել այսօր: Թէեւ այդ պատգամաւորները հրաւիրուած էին անձնապէս, բայց իրենց յարուցած պատճառաբանութիւնները լոկ իրենց անձին չեն պաքթանիր, կը շահագրգռեն նաեւ այն ժողովուրդը, որուն ներկայացուցիչներն էին: Արդէն պուլկարահայ գաղութին պատգամաւորները չեն ղրկուած նոյնիսկ զիրենք ընտրողներուն կողմէ: Ամերիկահայոց պատգամաւորներուն հրաժարագիրն ալ գաղտնի բան մը չէր, հրապարակուեցաւ այնտեղ եւ ընտրող ժողովուրդը չբողոքեց: Երբ խնդիրը այսքան կարեւոր է, ինչպէ՞ս կրնանք անոր մասին որոշում տալ ձեւական մեծամասնութեամբ մը: Փոխանակ մեզ օրինաւոր խորհրդարաններու հետ բաղդատելու, լաւագոյն բան մը ըրած կ'ըլլանք հետեւելով Ներքին Կանոնագրին, որ մեր միակ առաջնորդը պէտք է մնայ: Եւ Ներքին Կանոնագիրը կը տրամադրէ 20 ձայնի մեծամասնութիւն մը: Չենք կրնար ուրեմն ձեւակերպութեան մը աստիճանին իջեցնել այս խնդիրը: Նախկին անդամներուն մեծամասնութիւնը անհրաժեշտ է այս ժողովին օրինական հանգամանք մը տալու համար: Այդ մեծամասնութեամբ պէտք է քննենք նաեւ նոր ընտրուած պատգամաւորներու պարագան: Բացառութիւն կը նկատեմ միայն Պ. Մոստիչեանի տեղ ընտրուածը, զոր կրնանք մեր մէջ ընդունիլ առանց վիճաբանութեան, իբր մահուամբ պակսած պատգամաւորի մը յաջորդը:

Ամեն. Եղիշէ Արքեպ. Դուրեան. Նախկին անդամներու թիւին հետ կապուիլը օրինական հիմ չունի: Որովհետեւ չենք կրնար ամբողջական նկատել այդ թիւը: Անցեալ տարի այս Համագումարը Կիլիկիայէն ներկայացուցիչ չունեցաւ, միւսդեռ պզտիկ գաղութներ պատգամաւորներ տուին. նոյնիսկ անոնցմէ ոմանք երբեմն իրար ալ խաչաձեւեցին: Պակաս մըն էր անշուշտ Կիլիկիայէն պատգամաւոր չունենալը: Իզմիրի պէս մեծ գաղութ մըն ալ բացը մնաց: Ստիպուած ըլլալով անցեալ տարուան ուղղութեան վրայ քալել, մենք մեր կողմէն չենք կրնար սրբագրել այս թերիները: Բայց կ'ընդունինք ինչ որ ինքնին սրբագրուեր է, տեղ տալով մեր մէջ նոր ընտրուողներուն: Գալով հրաժարականներու խնդրին, ի՞նչ պէտք ունինք հրաժարողներուն կապուած մնալու, երբ մանաւանդ իրենց հրաժարման գիրերը պատճառաբանուածեն ալ անդին կ'անցնին: Չե՞ն ուզեր մեզի հետ գործել՝ կը գործենք առանց իրենց, քանի որ ուրիշ միջոց չունինք: Եթէ շարունակենք կապուած մնալ անոնց, չպիտի կրնանք մեծամասնութիւն գոյացնել եւ մեր աշխատութեանց ձեռնարկել: Մահուամբ կամ մեզի հետ մնալու կամք չունենալնուն համար պակսողները չհաշուելով ալ կրնանք կազմել մեր մեծամասնութիւնը:

Տիգրան Խան Քէլէկեան. Մեր երկու պատուական անդամակիցներուն հրաժարականին պատճառաբանութիւնները ոչինչ կ'արժեն արդէն: Եթէ մեր Համագումարը օրինաւոր չէր, ինչո՞ւ անոր մասնակցեցան անցեալ տարի, ամեն խնդրի վիճաբանութեան մասնակցեցան, պոռացին-կանչեցին: Համագումարը ինչ որ էր անցեալ տարի, նոյնն է նաեւ այս տարի: Եթէ չեն ուզեր անոր մասնակցիլ, ատիկա կը նշանակէ, որ չեն ուզեր մեզի հետ աշխատիլ:

Պ. Ա. Հանըմեան. Հրաժարականներու էութե՞ն մասին կը վիճաբանինք, թէ՞ մեծամասնութեան խնդիրը կը քննենք: Եթէ հրաժարականներու էութեան վրայ կը խօսուի, ուրեմն ես ալ այդ մասին խօսք կ'ուզեմ:

Պ. Ա. Չօպանեան. Շատ լաւ կ'ըլլայ, որ վերջնական որոշման մը գալու համար թուէինք, թէ ի՞նչ պատճառներու բերումով այս անգամ չեն գար այն բոլոր պատգամաւորները, որոնք պիտի բացակային մեր նիստերէն: Պ. Մոստիչեանի

պարագան յայտնի է: Մեր նախկին անդամակիցներէն երկու հոգի պատճառներ գտած են հրաժարելու: Պուլկարիոյ հայոց պատգամաւորները նոյնպէս: Ծանօթացանք նաեւ Պ. Վարանդեանի հրաժարման պատճառին: Կայ տակաւին Պ. Փաստրմաճեանի հրաժարականը, որուն առիթ տուող պատճառները պէտք են ծանօթ ըլլալ ամէնուդ: Բայց կան նաեւ ուրիշ բացականեր, որոնք շատ յարգելի պատճառներով չպիտի կրնան Համագումարի այս երկրորդ նստաշրջանին մասնակցիլ: Օրինակի համար, մեր թանկագին ընկերը՝ Պ. Տամատեան, որ ամէնադժուարին, եւ ներկայ պարագաներուն բերմամբ բոլորովին տաժանելի աշխատութիւն մը ստանձնած է Կիլիկիոյ մէջ. այլապէս՝ սիրով պիտի ուզէր մեր մեջ ըլլալ այսօր: Իր կատարած գործը այնտեղ՝ահագին կարեւորութիւն ունի, եւ ասիկա ըստ ինքեան յարգելի պատճառ մըն է իր բացակայութեան համար: Կը յիշատակեմ նաեւ Բրօֆ. Աբրահամ Տէր-Յակոբեանը, որ այլապէս կարեւոր պաշտօնով մը Ամերիկա կը գտնուի, եւ որ նոյնպէս եթէ այդ յարգելի պատճառը չըլլար, այստեղ ներկայ պիտի գտնուէր այսօր: Միւս կողմէ՝ Պ. Պ. Սեղբոսեան, Վահան Փափազեան, Արսէն Միքայէլեան, Բրօֆ. Ա. Խաչատուրեան չեն եկած եւ տեղեկութիւն ալ չեն տուած իրենց բացակայութեան նկատմամբ: Գիտենք, որ չորսն ալ Երեւան կը գտնուին: Բայց իրենց լռութիւնը թերեւս համամտութիւն մըն է Ամերիկայի պատգամաւորներուն բռնած ընթացքին:

Պ. Գառնիկ Ֆնտգլեան. Չեմ կարծեր, որ այդպէս ըլլայ. գոնէ իրաւունք չունինք այդ ենթադրութիւնն ընելու:

Պ. Ա. Չօպանեան. Մեր մէջ էր նաեւ Տոքթ Ալթունեան, որ ստիպուեցաւ մեկնիլ հարկեցուցիչ պատճառներով: Յետոյ կայ Պ. Տէրվիշեանի պարագան:

Նորատունկեան էֆէնտի. Պ. Տէրվիշեանի տեղ ընտրուած է Պ. Ահարոնեան: Միջագետքի ազգայինները, Պ. Ահարոնեանի մերժման պարագային, փափաք յայտնած են իբր ներկայացուցիչ ունենալ Պ. Սաֆրաստեանը:

Պ. Ա. Չօպանեան. Վերջապէս, պէտք է յիշատակել այն պատգամաւորները, որոնք կը բացակային յարգելի պատճառներով: Համաձայն եմ, որ հրաժարողները եւ պակսածները զեղչելով կազմուի մեծամասնութիւնը, որով այս ժողովը այսօր կրնայ ինքզինքը իրաւասու նկատել եւ անմիջապէս կազմել պատգամաւորներու «մանտա»ներու քննիչ յանձնաժողովը, որպէսզի իր կարծիքը բերէ կատարուած ընտրութեանց եւ դրուած հրաժարականներուն նկատմամբ: Կ'ուզեմ ընել նաեւ դիտողութիւն մը յիշեալ հրաժարականներու մասին: Ինչ որ ալ ըլլան անոնց հիմ դարձած պատճառաբանութիւնները, անոնք չեն կրնար, ինչպէս Պուլկարիոյ, այնպէս ալ Ամերիկայի ամբողջ հայութեան կարծիքը ներկայացնել:

Տոքթ. Նեւրուզ. Չշեղինք խնդրէն: Եթէ հրաժարականներու էութեան պիտի դառնանք, ես ալ կրնամ խօսք ուզել:

Նորատունկեան էֆէնտի. Ժողովը կը հաւանի ուրեմն, որ որոշ կերպով հրաժարած կամ պակսած անդամները զեղչելով պատգամաւորներու ընդհանուր թիւէն՝ կազմուի մեծամասնութիւնը: Ինչպէս յայտնի է, պակսած են 2 պատգամաւոր Ամերիկայէն, 2 պատգամաւոր Պուլկարիայէն, յետոյ Պ. Վարանդեան եւ Պ. Փաստրմաճեան. նաեւ Պ. Յակոբեան եւ Պ. Մոստիչեան, որով, բոլորովին մեզմէ անջատուողներուն թիւը կը հասնի 8-ի: Նախորդ տարի 38 հոգի էինք, զեղչելով 8-ը, կ'ունենանք 30: Ուրեմն, մեծամասնութիւն կը նկատուի 16 թիւը, զոր ունինք այսօր, որով նիստը կը դառնայ օրինական եւ կրնանք ձեռնարկել պատգամաւորներու պաշտօնին վաւերացման յանձնաժողովին ընտրութեան /հաւանութեան ձայներ/:

4. Ընտրութիւն Պատգամաւորներու Վաւերացման Յանձնաժողովին

Նորատունկեան էֆէնտի. Ինչպէս յայտնի է, նախորդ տարի այդ Յանձնաժողովը կազմուած էր Ամենապատիւ Դուրեան Արքեպիսկոպոսի նախագահութեամբ, անդամ ունենալով Պ. Պ. Բրօֆ. Տէր-Յակոբեան եւ Ն. Տէր-Ստեփանեան: Կը հաւատամ, որ Դուրեան Արքեպիսկոպոս պիտի յօժարի այս անգամ ալ ստանձնել նոյն աշխատութիւնը, եթէ ժողովս փափաքի /հաւանութեան ձայներ/:

Դիւանին առաջարկութեան համաձայն, Համագումարը որոշեց Յանձնաժողովը կազմել Դուրեան Արքեպիսկոպոսի նախագահութեամբ եւ անդամակցութեամբ Պ. Պ. Գառնիկ Ֆնտգլեանի եւ Մարտիրոս Տէրպէտէրեանի:

Ընտրուողները ընդունեցին առանց առարկութեան:

Դուրեան Արքեպ. Կարծեմ Դիւանին կողմէ կարդացուած թուղթերուն մէջ պակասներ կան. կը խնդրեմ, որ ամբողջացուին եւ այնպէս ղրկուին մեզի, որպէսզի աշխատութիւնը շուտով աւարտի: Անշուշտ կը գտնուին ու կը ղրկուին Կիլիկիոյ պատգամաւորներու ընտրութեան թուղթերն ալ: Կարծեմ Պ. Պզտիկեան միասին բերած է իր պաշտօնը հաստատող թուղթերը:

Պ. Զաքարիա Պզտիկեան. Մեզի միայն լուր տրուած է մեր ընտրութեան մասին, բայց կարծեմ պէտք եղածը գրուած է Ազգ. Պատուիրակութեան:

Պօղոս Նուպար Փաշա. Կը յիշեմ, որ այդ տեսակ թուղթ մը հասաւ. կը փնտռենք ու կը ղրկենք:

ՕՐԱԿԱՐԳ

1. Ընտրութիւն Համագումարի Դիւանին

Նորատունկեան էֆէնտի. Քանի որ մեր այսօրուան նիստը օրինական է, եթէ ժողովը հաւանի, կրնանք անցնիլ մեր օրակարգին եւ ձեռնարկել Դիւանի ընտրութեան:

Պ. Ա. Հանըմեան. Լաւագոյն է, որ յառաջիկայ նիստին թողունք այդ գործը: Նոր ընտրուողներ կան, որոնց ընտրութիւնը պիտի վաւերացուի յառաջիկայ նիստին: Կրնայ ըլլալ, որ անոնցմէ ոմանք Դիւանի անդամ ընտրուին: Դիւանի ընտրութիւնը կրնանք կատարել անոնց վաւերացումէն ետք:

Նորատունկեան էֆէնտի. Ուրեմն յառաջիկայ նիստին օրակարգի առաջին խնդիր կ'ընենք Դիւանի ընտրութիւնը /հաւանութեան ձայներ/:

2. Տեղեկագիր Կազմական Կանոնագրի Յանձնաժողովին

Նորատունկեան էֆէնտի. Մեր օրակարգին վրայ կը գտնուի նաեւ անցեալ նստաշրջանին կազմուած Կազմական Կանոնագրի Յանձնաժողովին տեղեկագրին ընթերցումը: Այս տեղեկագրին յարակից կան Յանձնաժողովին կողմէ պատրաստուած երեք ծրագիրներ, որոնցմէ երկուքը հայկական կառավարութեան կազմական կանոններուն նկատմամբ եւ երրորդն ալ այն յարաբերութեանց մասին, որոնք գոյութիւն պիտի առնէին հոգատար պետութեան եւ հայկական կառավարութեան միջեւ: Պետք չունիմ անշուշտ ըսելու, թէ կանխահաս է առ այժմ զբաղիլ այս խնդիրներով: Յայտնի չէ տակաւին, թէ ի՞նչ ձեւով պիտի լուծուի Հայաստանի գոյութեան հարցը: Միւս կողմէ՝ հոգատար պետութիւն ալ չկայ: Յետոյ՝ Թուրքիոյ հետ կնքուելիք հաշտութեան դաշնագրին մէջ կը գտնուին տրամադրութիւններ, որոնք հիմնովին կը փոխեն իրերու այն դրութիւնը, որ գոյութիւն ունէր այդ տեղեկագիրը պատրաստուած միջոցին: Եթէ կը հաւանիք, կարդանք միայն Յանձնաժողովին տեղեկագիրը:

Ժողովին հաւանութեան վրայ կարդացուեցաւ Կազմական Կանոնագրի Յանձնաժողովին հետեւեալ տեղեկագիրը.

Տեղեկագիր
Կազմական Կանոնագրի Յանձնաժողովին

22 Յուլիս 1919

Ազգ. Համագումարի Պատ. Նախագահութիւն,
Փարիզ.

Ազգ. Համագումարի Կազմական Կանոնագրի Յանձնաժողովը իր աշխատութիւնները Յուլիս 10-ին աւարտած ըլլալով, պատիւ ունի Պատ. Նախագահութեանը ներկայացնելու հետեւեալ նախագծերը.

Ա. Նախագիծ հիմնական կանոններու Հայաստանի Հանրապետութեան ժամանակաւոր կարգերու համար, բաղկացած 22 յօդուածներէ:

Բ. Նախագիծ կազմական կանոններու Հայաստանի ժամանակաւոր վարչութեան համար, բաղկացած 45 յօդուածներէ, որոնցմէ հինգը կը վերաբերին Սահմանադիր ժողովոյ ընտրական օրէնքի հիմնական սկզբունքներուն:

Այս երկու նախագիծերը, համաձայն Համագումարի որոշման, պիտի ներկայացուին նոյն ժողովի երկրորդ նստաշրջանին, ի քննութիւն, իսկ եթէ անոր գումարումը անկարելի ըլլայ, կը կարծենք, թէ նպատակայարմար պիտի ըլլար ներկայացնել Միացեալ Հայաստանի Ազգային ժողովին, իբրեւ նիւթ, բացի առաջին նախագծի հինգերորդ /Ազգային ժողովի ընտրական մասին վերաբերող/ գլուխէն, որ Պատուիրակութեան նկատողութեան պէտք է յանձնուի:

Յիշեալ երկու նախագիծերէն զատ՝ Յանձնաժողովս քննութեան առած եւ խմբագրած է երրորդ աշխատութիւն մը՝ «Accord intervenu entre la République des Etats-Unis d'Amérique et l'Etat Arménien au sujet du mandat confié par la Société des Nations».

Այս երեք նախագիծերուն մէջ կան շարք մը յօդուածներ, որոնք քուէարկուած են Յանձնաժողովին անդամներուն մեծամասնութեամբ, եւ որոնց մասին փոքրամասնութիւնը վերապահած է իր կարծիքը Համագումարին մէջ արտայայտելու իրաւունքը:

Ընդունեցէ՛ք մեր յարգանքներուն ջերմ հաւաստիքը:

Ատենադպիր	Ատենապետ
Ն. Տէր-Ստեփանեան	Գ. Սինապեան

Նորատունկեան էֆէնտի. Յիշեալ ծրագիրներուն խնդիրը անշուշտ կը մնայ օրակարգին վրայ, եւ միւս խնդիրներուն քննութենէն վերջ, եթէ հարկ ծագի, կը զբաղիմք նաեւ այդ ծրագիրներով, որոնք տարակոյս չկայ, թէ իրենց օգտակարութիւնն ունին:

Ժողովը հաւանութիւն յայտնեց այս մասին:

Նիստը փակուեցաւ ժամը 5 1/2-ին:

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 48, թթ. 11-18: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ Գ

Չորեքշաբթի, 19 Մայիս 1920, ժամը 4-ին,
նախագահութեամբ Գաբրիէլ էֆ. Նորատունկեանի:

Ներկայ էին 20 պատգամաւոր՝

Եղիշէ Արքեպ. Դուրեան, Պ. Պ. Երուանդ Պէյ Աղաթօն, Տոքթ. Ա. Բարսեղեան, Դաւիթ-Բէկ, Ա. Թէրզիպաշեան, Վ. Թէքէեան, Բրօֆ. Թումայեան, Ա. Հանըմեան, Պօղոս

Պէյ Մսըրլը, Տոքթ. Նեւրուզ, Նէրսէս Խան Ներսէսեան, Գաբրիէլ էֆ. Նորատունկեան, Պօղոս Նուպար Փաշա, Ա. Չօպանեան, Զ. Պզտիկեան, Գ. Սինապեան, Մ. Տէրպէտէրեան, Ն. Տէր-Ստեփանեան, Տ. Տէօվլէթեան, Գ. Ֆնտգլեան:

ՕՐԱԿԱՐԳ

1. Ընտրութիւն Համագումարի Դիւանին

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Ընթերցում ատենագրութեան

Կարդացուեցաւ եւ վաւերացուեցաւ Մարտ 14-ի նիստին ատենագրութիւնը:

Այս առթիւ որոշուեցաւ* բոլորովին մանրամասն կերպով չպատրաստել ատենագրութիւնը, ինչպէս որ եղած էր նախորդ անգամուն, եւ լոկ բացառիկ կարեւորութիւն ունեցող վիճաբանութեանց առթիւ միայն կիրարկել այդ դրութիւնը:

2. Վերակազմութիւն Ազգ. Համագումարի

Պատգամաւորներու Վաւերացման Յանձնաժողովին տեղեկաբեր Պ. Մարտիրոս Տէրպէտէրեան, Յանձնաժողովին անունով կարդաց հետեւեալ տեղեկագիրը.

ՏԵՂԵԿԱԳԻՐ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐՈՒ ՎԱՒԵՐԱՑՄԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ

1. Ընտրութիւն

Ա. Միջագետք. Պաղտատի ընտրական ժողովը, հրաժարեալ Տիար Տէրվիշեանի տեղ պատգամաւոր ընտրած է Տիար Ա. Ահարոնեանը, եւ հաղորդած է անոր այդ ընտրութիւնը: Ընդունելութեան մասին ոեւէ տեղեկութիւն ստացած չըլլալով Տիար Ահարոնեանէ, ընտրական ժողովը հեռագրով կը խնդրէ Ազգ. Պատուիրակութենէն ուրիշի մը ընտրութիւնը հրահանգել, եթէ անհրաժեշտ է: Հաւանական նոր ընտրելին կը ներկայացնեն Տիար Սաֆրաստեանը: Տիար Ահարոնեան 17 Մայիս 1920 թուակիր նամակով մը կը ծանուցանէ, թէ չի կրնար ընդունիլ այդ «մանտա»ն: Բայց Յանձնաժողովս կը խորհի, թէ այլեւս ուշ է նոր ընտրութեան հրահանգ տալու համար:

Բ. Հին Յունաստան. Աթէնքի եւ Կրետէի հայերը, Մաշթոց Քահանայ Բզնունիի նախագահութեամբ ժողով գումարելով, պատգամաւոր կ'ընտրեն Պ. Պապաջանեանը եւ հեռագրով կը խնդրեն Ազգ. Պատուիրակութենէն՝ վաւերացնել իրենց ընտրողական իրաւունքը, նկատի ունենալով, թէ հին եւ նոր Յունաստանի գաղութները տակաւին ուրոյն կազմակերպութիւններ են: Համագումարի Դիւանը հրաւիրած ըլլալով Տիար Պաբաջանեանը իբր Աթէնքի պատգամաւոր, արդէն վաւերացուցած է գաղութին ընտրողական իրաւունքը, ինչպէս նաեւ ընտրեալ պատգամաւորը:

Գ. Նոր Յունաստան. Ազգ. Պատուիրակութեան կողմէ դիմում եղած է Սելանիկի հայ գաղութին՝ հանգուցեալ Տիար Մոստիչեանի տեղ նոր ընտրութիւն մը ընելու: Այնտեղի ընտրողական յանձնաժողովը հեռագրով մը կը յայտնէ, թէ ընտրած է Տիար Ներսէս Խան Քէլէկեանը, հաւանաբար Տիգրան Խան, եւ անոր մերժման պարագային՝ Տիար Գալուստ Կիւլպէնկեանը: Տիար Քէլէկեան Խան արդէն ընտրուած ըլլալով Ֆրանսայի գաղութին կողմէ, իսկ Տիար Կիւլպէնկեանը մերժած ըլլալով, Սելանիկի հայ գաղութը կ'ընտրէ Տիար Բրօֆ. Թումայեանը, նախապէս անոր հաւանութիւնը առնելով:

Դ. Բողոքական ազգայինք. Կ. Պոլսոյ Համազգային Խորհուրդը 1919 Յունիս 25-ին Համագումարի անդամ ընտրած է Տիար Բրօֆ. Թումայեանը եւ Տիար Սմբատ Գաբրիէլեանը: Վերջինիս մահուընէն ետք Կ. Պոլսոյ Ազգապետարանը անոր տեղ կ'ընտրէ Տիար Բրօֆ. Լ. Լեւոնեանը, որ սակայն Տիար Թէքէեանի ուղղուած երկու նամակներով կը յայտնէ, թէ հիւանդութեան պատճառաւ առ այժմ չպիտի կրնայ ներկայ ըլլալ Համագումարի նիստերուն: Յանձնաժողովս, ի նկատի առնելով, թէ Համագումարը արդէն անցեալ տարի անուանած էր Տիար Բրօֆ. Թումայեանը իբր բողոքական ազգայնոց պատգամաւոր, կ'առաջարկէ զայն նկատել միշտ իբր այդ, ցորչափ Տիար Բրօֆ. Լեւոնեան չի կրնար մասնակցիլ Համագումարին նիստերուն: Իսկ անոր մասնակցութեան պահուն՝ Տիար Բրօֆ. Թումայեանը ընդունիլ իբր Սելանիկի հայոց ներկայացուցիչ, քանի որ անընդունելի է միեւնոյն պատգամաւորին մէկէ աւելի ձայն ունենալը:

Ե. Անգլիա. Մանչեսթրի ընդհ. ժողովոյ դիւանին կողմէ պաշտօնական գրութիւն մը կը յայտնէ, թէ Լոնտոնի եւ Մանչեսթրի հայոց պատգամաւոր նշանակուած է Տիար Տիրան Տէօվլէթեան, փոխարէն Գր. Յակոբեանի, որ հիւանդութեան պատճառաւ ստիպուած էր հրաժարիլ իր այդ պաշտօնէն:

Զ. Կիլիկիա. Կիլիկիոյ Ազգ. Միութիւնը Տիար Զաքարիա Պզտիկեանի ուղղած Յունուար 28 թուակիր հեռագրով մը կը ծանուցանէ անոր ընտրութիւնը իբր Կիլիկիոյ պատգամաւոր: Ազգ. Պատուիրակութիւնն ալ ստացած է այդ ընտրութիւնը հաստատող հեռագիր մը, բայց ցայժմ կարելի չէ եղած գտնել այդ հեռագիրը:

2. Հրաժարականներ

Է. Պարսկահայոց ներկայացուցիչ Տիար Մ. Վարանդեան Մայիս 4 թուակիր նամակով մը կը ծանուցանէ, թէ իր այժմու պաշտօնին բերմամբ չպիտի կրնայ մասնակցիլ Համաժողովին նիստերուն: Յանձնաժողովս կը խորհի, թէ կարելի չէ սոյն նամակն ընդունիլ իբր բացարձակ հրաժարական մը եւ կը նկատէ Տիար Վարանդեանը իբր բացակայ, նկատի ունենալով, թէ եթէ պատահի, որ Համագումարի տեւողութեան միջոցին Տիար Վարանդեան ազատ կացուցուի իր նոր պաշտօնէն, ան կատարեալ իրաւունք պիտի ունենայ մասնակցելու ժողովին, իբր պարսկահայ պատգամաւոր:

Ը. Ամերիկայի պատգամաւորներէն երկուքը՝ Տիարք Մաթիկեան եւ Համբարձումեան՝ պատճառաբանեալ հրաժարական մը ղրկած են Ազգ. Պատուիրակութեան, ինչպէս ծանուցուած է մեզ Քարտուղարութեան կողմէ: Յանձնաժողովիս ղրկուած էր միայն այդ հրաժարականի ֆրանսերէն թարգմանութիւնը: Համագումարս արդէն օրինաւոր կերպով բացուած եւ իր խորհրդակցութեանց սկսած ըլլալով, Յանձնաժողովս չի կրնար վէճի տակ ձգել անոր գոյութեան իրաւունքը, զոր կը մերժեն ճանչնալ Ամերիկայի յիշեալ պատգամաւորները, եւ կ'առաջարկէ ընդունիլ անոնց հրաժարականը:

Թ. Պուլկարիոյ Հայ Ազգ. Միութեան Կեդրոնական Վարչութիւնը պաշտօնագրով մը կը հաղորդէ, թէ Սոֆիայի վերջին ժողովը կ'արգիլէ նախապէս ընտրուած երկու պատգամաւորներու մասնակցութիւնը Համագումարի Բ. նստաշրջանին: Թէեւ

* Պահանջումը ըրաւ Պօղոս Նուպար Փաշա, նոյնիսկ զարմանք յայտնելով, որ այդ աստիճան ճշգրիտ, գրեթէ սղագրական կերպով մը տեղի ունեցած է արձանագրութիւնը, եւ շնորհաւորելով Դիւանը: Բայց լոկ ներկայ նիստին ատենագրութիւնը պատրաստուեցաւ ամփոփման ձեւով, որովհետեւ, յաջորդ նիստին, Պ. Չօպանեանի պահանջման վրայ, վերստին սկսաւ կիրարկուիլ մանրամասն արձանագրութեան դրութիւնը, որ շարունակուեցաւ մինչեւ նստաշրջանին փակումը:

Վառնայի Ռամկավար Կուսակցութիւնը իր հեռագրով ապօրինի կը հռչակէ Ազգ. Միութեան կազմութիւնը եւ իր վստահութիւնը կը յայտնէ Վսեմ. Պօղոս Նուպար Փաշայի եւ Ազգ. Պատուիրակութեան, ինչպէս նաեւ պատուիրակներէն մին՝ Տիար Հինդլեան Մարտ 31 թուականով կը հեռագրէ, թէ հրաւէր ստացած չէ եւ հեռագրի կը սպասէ գալու համար, բայց Յանձնաժողովս կը խորհի, թէ ի նկատի ունենալով Պուլկարահայ Ազգ. Միութեան ընտրողական իրաւունքի հանգամանքը եւ անոր Կեդրոնական Քոմիթէին վերոյիշեալ մերժումը իր անուամբ ոեւէ պատգամաւորի ներկայութեան, պուլկարահայ պատգամաւորները պէտք է նկատել իբր հրաժարեցուած:

Ժ. Ազգ. Պատուիրակութեան անդամ Տիար Գ. Փաստրմաճեան Յունուար 17 թուակիր հեռագրով մը կը բողոքէ Ազգ. Պատուիրակութեան ընթացքին դէմ եւ կը հրաժարի թէ՛ Պատուիրակութենէն եւ թէ՛ Համագումարի անդամակցութենէ: Վսեմ. Պօղոս Նուպար Փաշա Յունուար 23 թուականով կը հեռագրէ Տիար Փաստրմաճեանի, թէ կ'ընդունի այդ կրկին հրաժարականները:

Տեղեկաբեր /ստ./ Մ. Տէրպէտէրեան.

17 Մայիս 1920.

Նախագահ Գաբրիէլ էֆենտի Նորատունկեանի առաջարկութեան վրայ, Համագումարը որոշեց առանց օրակարգի անցնելու անմիջապէս քննել Յանձնաժողովին տեղեկագիրը, հատուած առ հատուած, եւ ներկայացուած իւրաքանչիւր խնդրի մասին եզրակացութեան մը յանգիլ փութով, որպէսզի կարելի ըլլայ, առանց ժամանակ կորուցելու, անցնիլ օրակարգի խնդիրներուն:

Ա. Միջագետք. Յանձնաժողովը գոհացած էր լոկ յիշատակելով Պ. Ահարոնեանի ընտրութիւնն ու հրաժարականը: Համագումարը, նկատի առնելով Պ. Ահարոնեանի հրաժարականին պարզ հանգամանքը, որոշեց ընդունիլ զայն, յոյս յայտնելով, որ Պ. Ահարոնեան կը շարունակէ խորհրդակցաբար մասնակցիլ Ժողովին աշխատութեանց, ինչպէս ըրաւ անցեալ տարի:

Պ. Ահարոնեանի տեղ ուրիշ պատգամաւորի մը ընտրութեան մասին Յանձնաժողովը կարծիք յայտնած էր, թէ այլեւս ուշ է նոր ընտրութեան հրահանգ տալու համար: Բայց Համագումարը, նկատելով, որ մէկ շաբաթը կը բաւէ Միջագետքի հետ հեռագրով հաղորդակցելու, պաշտօն յանձնեց Դիւանին, որպէսզի հեռագրով մը Պ. Ահարոնեանի հրաժարումը ծանուցանէ Պաղտատի ընտրողներուն, քանի որ այս վերջինները նախապէս յայտնած էին իրենց բաղձանքը՝ Պ. Սաֆրաստեանը ունենալու պատգամաւոր, եթէ երբեք Պ. Ահարոնեան չընդունէր:

Այս որոշումը տրուեցաւ նկատելով նաեւ, որ Պ. Սաֆրաստեան կը գտնուի Լոնտոն, ուրկէ կրնայ շուտով Փարիզ ժամանել, պարագայ՝ զոր կ'անգիտանար Յանձնաժողովը:

Բ. եւ Գ. Հին եւ Նոր Յունաստան. Յանձնաժողովը, յիշատակելով Պ. Պապաջանեանի ընտրութիւնը հին Յունաստանի հայ գաղութին կողմէ, եզրակացուցած էր, թէ «Համագումարի Դիւանը հրաւիրած ըլլալով Տիար Պապաջանեանը իբր Աթէնքի պատգամաւոր, արդէն վաւերացուցած է գաղութին ընտրողական իրաւունքը, ինչպէս նաեւ ընտրեալ պատգամաւորը»:

Գաբրիէլ էֆենտի Նորատունկեան տեսնել տուաւ, թէ Դիւանը ինքնին չի՛ կրնար պատգամաւորի մը ընտրութիւնը վաւերացնել, քանի որ այդ իրաւունքը կը պաքթանի լոկ Ժողովին, եւ թէ իր կողմէ եղած հրաւէրն ալ վաւերացում չի՛ նշանակեր: Այդ հրաւէրը անհրաժեշտ ձեւակերպութիւն մըն է, որ կ'ըլլայ որոշ «մանտա»-յով մը ներկայացուած իւրաքանչիւր պատգամաւորի, որոնց ընտրութիւնը յետոյ Ժողովը կրնայ վաւերացնել կամ բեկանել:

Պ. Արտաւազդ Հանըմեան ժխտեց Հին Յունաստանի գաղութին ընտրողական իրաւունքը, առարկելով, որ անցեալ տարի արդէն իսկ խնդիր կար այս մասին ու

մերժուած, եւ թէ Համագումարը չէր կրնար այս անգամ ընդունիլ իրաւունք մը, զոր մերժած էր ընդունիլ նախորդ նստաշրջանին: Պ. Հանըմեան յիշատակեց նաեւ ուրիշ գաղութներու կողմէ, ինչպէս Պէլճիքա, Հապէշստան, եւ այլն, եղած համանման դիմումները, որոնք նոյնպէս մերժուեցան: Եւ արդէն, յարեց, Աթէնքի, Պերէսնի եւ Կրետէի հայերը, որոնք կը կազմեն Հին Յունաստանի հայ գաղութը, անցեալ անգամ Պ. Մոստիչեանի ընտրութեան մասնակցեցան Սելանիկի մէջ, Նոր Յունաստանի հայոց հետ:

Պ. Վահան Թէքէեան պատասխանելով յայտնեց, թէ Աթէնքի հայերը անցեալ տարի առանձինն ընտրութիւն կատարած էին յանձին Պ. Խանզատեանի, որ այդ ընտրութիւնը հաստատող նամակ մը բերած էր՝ հոգեւոր հովիւ Տ. Մաշքոց Քահանայի ստորագրութեամբ: Հաւանական է որ, յարեց, եթէ Պ. Խանզատեան կամովին չհեռանար եւ պնդէր իր ընտրեալի իրաւունքին վրայ, Համագումարը պիտի ընդունէր զինքն ալ, ինչպէս ընդունեց օրինակի համար Պ. Տէրպէտէրեանը, զոր Ռումանիոյ հայ գաղութը ընտրած էր առանց ընտրութեան հրահանգ ստացած ըլլալու: Հաստատելով Հին Յունաստանի հայ գաղութին իրաւունքը պատգամաւորի ընտրութեան մասին, Պ. Թէքէեան առաջարկեց վաւերացնել Պ. Պապաջանեանի ընտրութիւնը:

Պ. Հանըմեան յայտարարեց, թէ ինք անձի հետ գործ չունի, այլ՝ լոկ սկզբունքին հետ: Պ. Պապաջանեանը, ըսաւ, կը յարգեմ անձնապէս, եւ համոզուած եմ, որ իր ներկայութիւնը մեր մէջ շատ ալ օգտակար պիտի ըլլայ: Պատասխանելով Ռումանիոյ մասին Պ. Թէքէեանի ըրած դիտողութեան, Պ. Հանըմեան առարկեց, թէ կարելի չէ համեմատութեան դնել Ռումանիան, ուր 20.000 հայեր կը գտնուին եւ Աթէնքը, ուր հազիւ 150 հայեր կան, եւ կրկնեց, որ եթէ Աթէնքի տրուի ընտրութեան իրաւունք, պէտք պիտի ըլլայ նոյն իրաւունքը տալ նաեւ բոլոր համանման գաղութներու:

Պ. Աւետիս Թէրզիպաշեան, միջամտելով, նախ շեշտեց Պ. Պապաջանեանի ծանօթութիւնը կովկասահայ կեանքի պայմաններուն, ինչպէս նաեւ անոր փորձառութիւնն ու օրէնսգիտութիւնը, որոնցմէ Համագումարը մեծապէս պիտի օգտուէր: Յետոյ, յիշատակելով այն պարագան, թէ Նոր Յունաստանի կողմէ իբր հանգուցեալ Պ. Մոստիչեանի յաջորդ ընտրուած Բրօֆ. Թումայեան պատգամաւոր ընտրուած է նաեւ Պոլսոյ բողոքականներու Ազգապետարանին կողմէ, առաջարկեց Յունաստանի ներկայացուցիչ նկատել Պ. Պապաջանեանը, եւ Բրօֆ. Թումայեանն ընդունիլ իբր բողոքական Ազգապետարանի ներկայացուցիչ, քանի որ մանաւանդ ոեւէ պատգամաւոր չի կրնար երկու ձայն միացնել իր անձին վրայ:

Պ. Թէրզիպաշեանի այս պատճառաբանութեան վրայ, Համագումարը ընդունեց Պ. Թէքէեանի առաջարկը եւ վաւերացուց Պ. Պապաջանեանի ընտրութիւնը:

Ե. Անգլիա. Համագումարը վաւերացուց Պ. Տ. Տէօվլէթեանի ընտրութիւնը իբր յաջորդ Անգլիոյ հայ գաղութին պատգամաւոր Պ. Գր. Յակոբեանի, որ հրաժարած էր հիւանդութեան պատճառաւ:

Զ. Կիլիկիա. Համագումարը վաւերացուց Պ. Զաքարիա Պզտիկեանի ընտրութիւնը իբր պատգամաւոր Կիլիկիոյ: Այս առթիւ յիշատակուեցաւ, թէ Կիլիկիայէն պատգամաւոր ընտրուած է նաեւ Մուշեղ Արքեպ. Սերոբեան, իբր յաջորդ Բրօֆ. Պէզճեանի, որ նախապէս ընտրուած եւ հրաժարած էր, եւ այս կէտին որոշումը վերապահուեցաւ Մուշեղ Արքեպ.-ի ներկայութեան:

Է. Հրաժարական Պ. Մ. Վարանդեանի. Յանձնաժողովը եզրակացուցած ըլլալով, թէ կարելի չէ Պ. Վարանդեանի նամակը նկատել իբր հրաժարական մը, Համագումարը, կարծիքի փոխանակումէ մը վերջ, Դիւանին յանձնարարեց, որ այդ մասին գրաւոր կերպով հարցում ուղղէ Պ. Միքայէլ Վարանդեանի, պարզելով խնդրին բնութիւնը, ստացուելիք պատասխանին համեմատ կարգադրելու համար այս հարցը:

Ը. Հրաժարական ամերիկահայ պատգամաւորներու. Պ. Պ. Զ. Մաթիկեան եւ Մ. Համբարձումեան իրենց հրաժարագրին մէջ գրած ըլլալով, թէ «ոչ միայն չենք մասնակցիր Համագումարին, այլեւ ուժգին կերպով կը բողոքենք այդպիսի ժողովի մը

գումարման դէմ, զայն համարելով բոլորովին ապօրինի եւ անպէտ», Յանձնաժողովը յանգած էր հետեւեալ եզրակացութեան. «Համագումարը արդէն օրինաւոր կերպով բացուած եւ իր խորհրդակցութիւնները սկսած ըլլալով, Յանձնաժողովս չի կրնար վէճի տակ ձգել անոր գոյութեան իրաւունքը, զոր կը մերժեն ճանչնալ Ամերիկայի յիշեալ պատգամաւորները եւ կ'առաջարկէ ընդունիլ անոնց հրաժարականը»:

Կատարուած վիճաբանութեան ընթացքին անգամ մըն ալ շեշտուեցաւ այն իրողութիւնը, թէ Համագումարի այս երկրորդ նստաշրջանին գումարումը պարտք մըն էր Ազգ. Պատուիրակութեան համար, պարտք մը, զոր իր վրայ դրած էր նոյնինքն Համագումարը, որուն կը մասնակցէին նաեւ Պ. Պ. Համբարձումեան եւ Մաթիկեան:

Համագումարը ընդունեց Յանձնաժողովին եզրակացութիւնը, հրաժարեալ նկատելով Պ. Պ. Համբարձումեանն ու Մաթիկեանը, բայց յանձնարարեց Դիւանին, որպէսզի անոնց պարագան յստակ գրով մը առ ի տեղեկութիւն հաղորդէ Ամերիկայի Ազգ. Միութեան, որ Ազգ. Պատուիրակութենէն իր ստացած հրաւէրին վրայ ընտրութեան հրահանգ տուած էր Ամերիկայի մէջ:

Ազգ. Պատուիրակութեան Նախագահ Պօղոս Նուպար Փաշայի առաջարկութեան վրայ, Համագումարը որոշեց նաեւ, որ այդ նամակին մէջ ցաւով դիտել տրուի Ազգ. Միութեան, թէ այդ հրաժարականներուն պատճառաւ Համագումարը զրկուած կը մնայ ամերիկահայ գաղութը ներկայացնող պատգամաւորներու աշխատակցութենէն:

Թ. Հրաժարեցում պուլկարահայ պատգամաւորներու. Յիշատակելով Սոֆիայի Ազգ. Միութեան Կեդր. Վարչութեան պաշտօնագիրը, որով կը հաղորդէր, թէ իր վերջին համաժողովին մէջ որոշած էր արգիլել նախապէս ընտրուած երկու պատգամաւորներու մասնակցութիւնը Համագումարի երկրորդ նստաշրջանին, Յանձնաժողովը եզրակացուցած էր, թէ «Նկատի ունենալով Պուլկարահայ Ազգ. Միութեան ընտրողական իրաւունքի հանգամանքը, եւ անոր վերոյիշեալ մերժումը՝ իր անուամբ ոեւէ պատգամաւորի ներկայութեան, պուլկարահայ պատգամաւորները պէտք է համարել իբրեւ հրաժարեցուած»:

Երկար վիճաբանութենէ մը ետք, որուն ընթացքին շեշտուեցաւ մասնաւորաբար ընտրող մարմնի մը՝ իր ընտրածը հրաժարեցնելու իրաւունք չունենալը, Համագումարը, առանց Պուլկարիոյ Ազգ. Միութեան վերոյիշեալ նամակը նկատի առնելու, հիմնուելով լոկ այն իրողութեան վրայ, թէ պուլկարահայ երկու պատգամաւորներն ալ չեն պատասխանած իրենց եղած հրաւէրին, որոշեց վերջնականապէս բացակայ համարել զանոնք, որով երկու պատգամաւորներն ալ կը դադրին անդամակցութենէ եւ նկատողութեան չպիտի առնուին մեծամասնութեան կազմութեան առթիւ: Այս որոշումն անցաւ մեծամասնութեամբ:

Նոյն ատեն, Համագումարը յանձնարարեց Դիւանին, որ նամակով մը մերժէ Պուլկարիոյ Ազգ. Միութեան յարուցած պատճառաբանութիւնները, այդ առթիւ ցաւ յայտնելով, թէ Համագումարը զրկուած կը մնայ Պուլկարիոյ գաղութը ներկայացնող պատգամաւորներու աշխատակցութենէն:

Ժ. Հրաժարական Պ. Գ. Փաստրմաճեանի. Յանձնաժողովը Պ. Գարեգին Փաստրմաճեանի թէ՛ Ազգ. Պատուիրակութեան եւ թէ՛ Ազգ. Համագումարի անդամակցութենէն կրկին հրաժարականները թուելով, աւելցուցած էր, որ Պօղոս Նուպար Փաշա հեռագրած է Պ. Փաստրմաճեանի, թէ կ'ընդունի այդ հրաժարականները: Յանձնաժողովին այս տեղեկութիւնը հիմնուած էր Պ. Փաստրմաճեանի հեռագրին պատճէնին աւելցուած ձեռագիր ծանօթութեան մը վրայ:

Նախագահ Նորատունկեանի էֆենտի դիտել տուաւ, թէ ատիկա սխալ ծանօթագրութեան մը արդիւնքը պէտք է ըլլայ, քանի որ Համագումարին պաքքանող հրաժարականի խնդիր մը լոկ Համագումարը կրնայ վճռել:

Համագումարը, նկատելով, որ Պ. Փաստրմաճեան, Ազգ. Համագումարի անդամակցութենէն իր հրաժարումը ոեւէ պատճառաբանութեան չէ ենթարկած, որով իր հրաժարականը կը դառնայ պարզ, առանց վիճաբանութեան ընդունեց զայն:

Նախագահ Գաբրիէլ էֆենտի Նորատունկեան՝ Պօղոս Նուպար Փաշայի հետ պաշտօնական այցելութեան մը կոչուած ըլլալով, նախագահութիւնը թողուց Պ. Գ. Սինապեանի եւ Պօղոս Փաշայի հետ մեկնեցաւ ստիպողաբար:

ՕՐԱԿԱՐԳ

1. Ընտրութիւն Դիւանի

Համագումարը, Պ. Գ. Սինապեանի նախագահութեամբ, ձեռնարկեց Դիւանի ընտրութեան:

Գաբրիէլ էֆենտի Նորատունկեան թէեւ նախապէս յայտարարած էր, որ Ժողովին խորհրդակցութեանց աւելի լայն չափով մը մասնակցելու համար կը փափաքի այս անգամ Դիւանին մաս չկազմել, բայց Համագումարը ինքզինք ազատ հռչակեց իր ընտրութեան մէջ:

Ներկայ 17 պատգամաւորներու մասնակցութեամբ քուէարկութիւն կատարուելով, Նախագահի համար քուէներու արդիւնքն եղաւ՝

Գաբրիել էֆենտի Նորատունկեան	16 քուէ
Եղիշէ Արքեպիսկոպոս Դուրեան	1 քուէ

Դեր-Նախագահի ընտրութեան համար, միշտ նոյն 17 անդամներուն մասնակցութեամբ կատարուած քուէարկութեան արդիւնքը եղաւ՝

Պ. Գրիգոր Սինապեան	14 քուէ
Եղիշէ Արքեպ. Դուրեան	2 քուէ
Երուանդ Պէյ Աղաթօն	1 քուէ

Որոշուեցաւ ատենադպիրներու ընտրութեան համար կատարել միակ քուէարկութիւն մը, եւ քուէներու երկու առաւելագոյն թիւերուն համաձայն ընտրուած նկատել Ա. եւ Բ. ատենադպիրները:

Քուէարկութեան արդիւնքը եղաւ՝

Պ. Գառնիկ Ֆնտգլեան	13 քուէ
Պ. Դաւիթ-Բէկ	10 քուէ
Պ. Ն. Տէր-Ստեփանեան	4 քուէ
Տոքթ. Ա. Բարսեղեան	2 քուէ
Պ. Վահան Թէքէեան	1 քուէ
Բրօֆ. Թումայեան	1 քուէ
Պ. Զաքարիա Պզտիկեան	1 քուէ
Պ. Մ. Տէրպէտէրեան	1 քուէ
Պ. Տիրան Տէօվլէթեան	1 քուէ

Որով՝ դիւանը կազմուեցաւ հետեւեալ կերպով.

Գաբրիէլ էֆ. Նորատունկեան՝ Նախագահ
Պ. Գրիգոր Սինապեան՝ դեր-Նախագահ
Պ. Գառնիկ Ֆնտգլեան՝ Ա. ատենադպիր
Պ. Դաւիթ-Բէկ՝ Բ. ատենադպիր

Պատգամաւորները ջերմապէս շնորհաւորեցին նոր Դիւանին անդամները:

Նիստը փակուեցաւ ժամը 7-ին:

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 48, թթ. 19-24: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ Ե

Շաբաթ, 22 Մայիս 1920, ժամը 3 1/2-ին,
նախագահութեամբ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեանի

Ներկայ էին 16 պատգամաւորներ՝

Աղաթօն Պէյ, Ամեն. Եղիշէ Արքեպ. Դուրեան, Ա. Բարսեղեան, Թէրզիպաշեան, Թէքէեան, Բրօֆ. Թումայեան, Հանըմեան, Տոքթ. Նեւրուզ, Մսըրլը Պէյ, Վսեմ. Գ. Նորատունկեան, Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար, Չօպանեան, Սինապեան, Տէրպէտէրեան, Տէր-Ստեփանեան, Տէօվլէթեան:

ՕՐԱԿԱՐԳ

1. Շարունակութիւն վիճաբանութեան Ազգ. Պատուիրակութեան համարատուութեան մասին
2. Տեղեկագիր հաշուեցոյց ելեւմտական գործառնութեանց Ազգ. Պատուիրակութեան
3. Տեղեկագիր Կազմական Կանոնագրի Յանձնաժողովին

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Ընթերցում եւ վաւերացում ատենագրութեան

Նախագահ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան ծանոյց, որ նախորդ Մայիս 21-ի նիստին ատենագրութիւնը պատրաստ է: Բայց նկատելով, որ Ազգ. Պատուիրակութեան անդամները կարեւոր գումարման մը համար պիտի ստիպուին բացակայիլ ժամը 5-ին եւ քիչ ժամանակ միայն կը մնայ վիճաբանութեանց, որոնք անհրաժեշտաբար պէտք է տեղի ունենան Պատուիրակութեան ներկայութեան, առաջարկեց յետաձգել ատենագրութեան ընթերցումն ու վաւերացումը: Ընդունուեցաւ:

2. Խնդիր հրաժարականի Հ. Յովի. Թորոսեանի

Կարդացուեցաւ Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան պատգամաւոր, Գերյարգելի Հ. Յովի. Վ. Թորոսեանի կողմէ Հռոմէն գրուած 15 Մայիս թուակիր նամակը, կը ծանուցանէ, թէ հակառակ իր ջերմ փափաքին՝ չպիտի կրնայ ներկայ գտնուիլ Համագումարի նիստերուն, որովհետեւ Միաբանութիւնը՝ «այս կամ այն պատճառաւ՝ անհրաժեշտ հարկ մը չտեսնելով իր մէկ ներկայացուցիչը ղրկելու Ազգ. Համագումարին, ազատ կ'ընէ զինքը այդ պարտականութենէ»:

Համագումարը պարտք դրաւ Դիւանին, նամակով մը Միաբանութեան յայտնել, թէ կը յուսայ, որ շուտով կը վերնան վերոյիշեալ նամակին մեջ ակնարկուած արգելող պատճառները, եւ վերստին բախտաւորութիւն կ'ունենայ իր մէջ տեսնելու Գեր. Հ. Թորոսեանը, որուն մասնակցութիւնը իր աշխատութեանց կրնայ այնքան օգտակար դառնալ, ինչպէս եղաւ անցեալ նստաշրջանին:

Համագումարը յանձնարարեց նաեւ Դիւանին, որ Միաբանութեան գրուած նամակին մէկ պատճէնը հաղորդէ նաեւ Գեր. Հ. Յովի. Վ. Թորոսեանի:

3. Խնդիր հրաժարականի Տիար Միք. Վարանդեանի

Նախագահ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան յայտնեց, թէ պատահմամբ տեսնուած ըլլալով Տիար Միք. Վարանդեանի հետ, այս վերջինը յայտարարած էր, թէ

որքան ալ Համագումարին մասնակցելու անկարելիութիւնը յայտնող իր նամակին մէջ «հրաժարական բառը չէր գործածած, պէտք էր նաեւ այդ նամակը նկատել իբր վերջնական հրաժարական, նկատելով, որ իր նոր պաշտօնին բերումով բացարձակապէս անհնար է իրեն պահել պատգամաւորի հանգամանքը, երբ մանաւանդ իր բացակայութիւնն ալ պիտի տեւէ շատ երկար»:

Համագումարը այս բացատրութիւնը բաւական համարեց Տիար Մ. Վարանդեանը վերջապէս հրաժարած համարելու համար: Միւս կողմէ, նկատելով, որ Տիար Մ. Վարանդեան պարսկահայոց պատգամաւորն էր, եւ թէ հեռաւորութեան պատճառաւ ժամանակ չկայ, որոշեց չձեռնարկել անոր յաջորդի մը ընտրութեան:

4. Խնդիր բացակայութեան Տիար Վսեմ. Յովի. Խան Մասեհեանի

Համագումարը լսեց նաեւ Վսեմ. Նախագահին այն դիտողութիւնը, թէ համանման պատճառաւ մը անշուշտ պէտք է մեկնել նաեւ բացակայութիւնը պարսկահայոց միւս պատգամաւորին՝ Տիար Յովի. Խան Մասեհեանի, որ ստիպուած է Լոնտոն մնալ իբր ներկայացուցիչ Հայկ. Հանրապետութեան:

5. Խնդիր ներկայութեան Տիար Ա. Ահարոնեանի

Տիար Տիրան Տէօվլէթեանի առաջարկութեան վրայ, ժողովը ցանկութիւն յայտնեց իր մէջ ունենալու նաեւ Հանրապետութեան Պատուիրակութեան Նախագահ Տիար Աւետիս Ահարոնեանը, նկատելով որ Ազգ. Պատուիրակութեան համարատուութեան վիճաբանութիւնը մօտէն կը հետաքրքրէ զինքն ալ, իբր անդամ Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան, ինչպէս մասնակցած էր անցեալ նստաշրջանի խորհրդակցութեան: Համագումարը պարտք ըրաւ Դիւանին վրայ՝ իր այս ցանկութիւնը հաղորդելու Տիար Ա. Ահարոնեանի:

6. Համարատուութիւն Ազգ. Պատուիրակութեան Բրոբականտի, Ելեւմտական եւ Բժշկական Յանձնաժողովներուն

Ազգային Պատուիրակութեան անդամ Տիար Տոքթ. Նեւրուզի տուած տեղեկութեան վրայ, թէ պատրաստուելու վրայ են Պատուիրակութեան Բրոբականտի, Ելեւմտական եւ Բժշկական Յանձնաժողովներուն տեղեկագիրները, Համագումարը որոշեց օրակարգ անցընել զանոնք, երբ պատրաստ ըլլան:

ՕՐԱԿԱՐԳ

1. Շարունակութիւն վիճաբանութեան Ազգ. Պատուիրակութեան համարատուութեան

Տիար Թէրզիպաշեան. Պատուիրակութեան համարատուութեան մասին խօսելէ առաջ կ'ուզեմ դիտողութիւն մը ընել: Տիար Թէքէեանի կողմէ երէկուան նիստին եղած առարկութիւնը մտքի շփոթութիւն պատճառեց: Մենք Պատուիրակութեան անդամները ընտրած ենք հաւասար իրաւունքներով: Կը փափաքիմ գիտնալ, որ եթէ Պատուիրակութեան Նախագահը ներկայ չըլլայ, միւս անդամները պիտի կրնա՞ն պատասխանել մեր յարուցած հարցերուն:

Տիար Տոքթ. Նեւրուզ. Բոլոր անդամներն ալ պատրաստ են միշտ պատասխան տալու:

Տիար Թէրզիպաշեան. Որովհետեւ Տիար Թէքէեանի երէկուան առարկութիւնը այն տպաւորութիւնը թողուց մեր վրայ, թէ կարելի չպիտի ըլլայ վիճաբանութիւն սկսիլ՝ երբ Պատուիրակութեան Նախագահը ներկայ չըլլայ:

Տիար Թէքէեան. Սխալ է: Երէկուան նիստին մէջ որոշուած էր լոկ լուսաբանութիւններ պահանջել Պատուիրակութեան անդամներէն, եւ Ժողովը ինքը փափաք յայտնած էր, որ խնդիրներու էութեան մասին վիճաբանութիւնները տեղի ունենան Պատուիրակութեան Նախագահին ներկայութեան: Ես այն ատեն միայն միջամտեցի, երբ յուզուած խնդիրները լուսաբանութիւններէ անդին անցան: Ես արդէն յայտարարեցի, որ Պատուիրակութեան բոլոր անդամներն ալ իւրացուցած են հաշուետուութիւնը:

Տիար Թէրզիպաշեան. Նախորդ նիստին ես յուզեցի երկու խնդիր: Առաջինը՝ Գերմանիայէն պահանջներու հատուցման հարցն էր: Անցեալ տարի երբ այդ մասին յանձնարարութիւն ըրինք Պատուիրակութեան, մեր տեսակէտը պարզ էր եւ հիմնաւոր: Գիտենք, որ Թուրքիա երբեք ի վիճակի չպիտի ըլլայ ոեւէ հատուցում ընելու: Հաշտութեան դաշնագիրը այսօր փաստ մըն է, թէ չենք սխալած այդ մասին: Բայց ասով չէր կորուսուեր հատուցում ստանալու մեր իրաւունքը: Պատերազմին մէջ մենք ալ արիւն թափեր ենք, իրապէս պատերազմիկ եւ Դաշնակից ազգ մըն ենք, ինչպէս կը հռչակէ այս մեր դաշնագիրը, եւ այդ հանգամանքով իրաւունք ունինք հատուցում ստանալու ինչպէս թուրքերէն, այնպէս նաեւ Գերմանիայէն նոյնացեալ, որոնց ռազմական եւ քաղաքական ծրագիրներուն դէմ [կռուեցանք] Դաշնակիցներու կողքին: Եթէ այս տեսակէտով թրքահայոց պահանջումը խնդրական ալ նկատուէր, գոնէ ռուսահայոց համար երկմտութիւն չկար: Ռուսահայերը պատերազմէն առաջ կը կազմէին Ռուսիոյ մաս. իրենց պատերազմիկ ժողովուրդի հանգամանքը բնաւ տարակոյս չի վերցներ. եւ աւելի քան 180.000 էին Կովկասի այն հայերը, որոնք ռուսերուն հետ զանազան ճակատներու վրայ կռուեցան Գերմանիոյ դէմ: Իրենցմէ 6000-է աւելին ինկան պատերազմի դաշտերուն վրայ: Երբ միւս պատերազմիկ պետութիւնները իրաւունք ունեցան իրենց բոլոր մեռած կամ հաշմանդամ զինուորներուն համար հատուցում ստանալու, ինչո՞ւ նոյն իրաւունքը չունեցանք նաեւ մենք: Հատուցման խնդրին մէջ՝ Ռուսիոյ իրաւունքը բացայայտ է, իբր Գերմանիոյ դէմ կռուած ժողովուրդ: Ռուսահայերը այս հիման վրայ նոյնքան իրաւունք ունին: Անոնք իբր մասնիկ Դաշնակից պետութիւն եղող Ռուսաստանի, իրենց յանձնառութիւնն ու դերը շարունակեցին կատարել նախ իբր բաղկացուցիչ ժողովուրդը Ռուսաստանի, յետոյ ինքզինքնին անկախ յայտարարելով, իբր քաղաքական ուրոյն միութիւն: Հանգամանք, որ իրենց իրաւունք տուաւ ներկայ դաշնագրին մէջ Դաշնակից հռչակուելու եւ հատուցում ստանալու: Տիրէքթիւ մը չէր, զոր պարտաւորեցինք Պատուիրակութեան, այլ՝ յանձնարարութիւն մը, եւ խնդրին ունեցած մեծ կարեւորութիւնը ինքնին պատճառ մը պէտք էր ըլլար, որ չանտեսուէր այս յանձնարարութիւնը: Երէկ սակայն, Պատուիրակութեան տեղեկագրին ընթերցման միջոցին տեսանք, որ չէ յարգուեր այս յանձնարարութիւնը: Կը խնդրեմ որ այս զանցառութեան պատճառը պարզեն: Այս՝ մէկ:

Երկրորդ խնդիրը կը պաքթանէր Թուրքիոյ հանրային պարտքին բաժանման: Այդ բաժանումը պէտք է տեղի ունենար Թուրքիայէն անջատուելով՝ պետութեան կազմէն ժողովուրդներու հանրային հարստութեան համեմատութեամբ: Տարրական արդարութիւնն իսկ այս կը պահանջէր: Բայց դաշնագիրը ցոյց կուտայ, թէ ո՛չ միայն չէ յարգուած այդ արդարութեան տեսակէտը, այլ ընդհակառակը, բոլորովին անարդար բաժանում մըն է եղած: Իբր օրինակ մէջ կը բերեմ էրզրում, Վան եւ Պիթլիս նահանգները: Երեքը մէկ՝ պատերազմէն առաջ տարեկան 750 000 ոսկի եկամուտ ունէին: Մօտաւորապէս երկու միլիոն բնակիչ կար անոնց մէջ, 5-6 միլիոն ոչխար եւ արջառ ունէին: Բայց ասիկա պատերազմին առաջի վիճակն է: Այս վիճակին վրայ հիմնուեր է հանրային պարտքի հատուցման բաժինը, մինչդեռ այսօր այդ երեք

նահանգներուն մէջ ո՛չ տուն է մնացեր, ո՛չ անասուն, ո՛չ հարստութիւն, ամեն բան քանդուեր, աւերակ դարձեր է, մարդ ալ չէ մնացեր ընդհանրապէս, որով [երեքին] ալ հանրային հարստութիւնը ոչինչ կը ներկայացնէ: Այս անարդարութիւնը դարմանելու համար ոեւէ ձեռնարկ չէ եղած, ինչպէս յայտնի եղաւ տեղեկագրին ընթերցումէն: Երբ այս անգամ Երեւանէն ճամբայ ելայ, կը կասկածէի, որ այս անփութութիւնը կը գործուի, որովհետեւ տեղեկացած եմ, թէ Պատուիրակութիւնն իր ամբողջ գործունէութիւնը յաքթացուցած է ներքին վէճերու եւ սահմաններու որոշման հարցին: Այդ նկատումով ալ Պոլսոյ մամուլին մէջ բաց նամակ մը ուղղեցի Պատուիրակութեան հասցէին, որպէսզի քանի ուշ չէ՝ զբաղին նաեւ այս հարցով: Այսպէս, կը կարծեմ, թէ շատ ալ դժուար չպիտի ըլլար այս անարդարութեան բարձումը, որովհետեւ ասիկա քաղաքական հարց չէ, անկախութեան հարց չէ, սահմանի հարց ալ չէ, այլ՝ լոկ ելեւմտական հարց մը, որու մասին ոեւէ Դաշնակից պետութիւն չպիտի ուզէր ժխտել մեր իրաւունքը, քանի որ բոլոր ալ գիտեն ու կը հռչակեն, թէ հայ ժողովուրդը կողոպտուեցաւ, աղքատացաւ, վատացաւ՝ պատերազմին մէջ բռնած դիրքին բերումով: Կը կրկնեմ՝ ասիկա սահմանի հարց չէ, որ մերժուէր ...

Տիար Ա. Չօպանեան. Հայ ազգը գերութենէ ազատելու, հայ պետութիւն մը հիմնելու եւ անոր կարելի եղածին չափ ընդարձակ սահմաններ ապահովելու աշխատութիւնը նուա՞զ կարեւոր էր:

Տիար Թէրզիպաշեան. Չեմ ըսեր, որ նուազ կարեւոր էր: Բայց մէկուն կարեւորութիւնը միւսին կարեւորութիւնը չի պակսեցներ: Դաշնագրին տրամադրութեամբ՝ 3 միլիոն ոսկի պարտք է դրուեր ժողովուրդի մը վրայ, որուն տունը-տեղը քանդուած է, որ հիմնովին որբացած է, նոյնիսկ ապրուստի միջոցէն զուրկ է: Այս ժողովուրդը պիտի ստիպուի տարեկան 300 000 հնչուն ոսկի տոկոսի գլխավճար տալ. հաշուեցէ՛ք, թէ քանի միլիոն կ'ընէ այս գումարը: Ես այն համոզումն ունիմ, որ զանցառութիւն մը եղեր է եւ կը փափաքիմ հասկնալ, թէ ինչո՞ւ եղաւ այդ զանցառութիւնը:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Կը պատասխանեմ նախ Տիար Թէրզիպաշեանի առաջին հարցման:

Գերմանիայէն հատուցում ստանալու համար ուղղակի պահանջ չդրինք. ասիկա ճիշդ է: Բայց եթէ դրած ըլլայինք այդ պահանջը, ի՞նչ պիտի ստանայինք իրմէ: Մեծ օրինակ մը ունինք այս մասին աչքերնուս առաջ՝ Ֆրանսան: Գերմանիայէն ամէնէն աւելի վնաս տեսած պետութիւնն է, եւ մեր դիրքին մէջ ալ չի գտնուիր: Չէ՞ք հետեւիր այն բանակցութեանց, որոնք ամիսներէ ի վեր տեղի կ'ունենան, ստիպելու համար Գերմանիան, որ վճարէ: Ի՞նչ արդիւնք գոյացաւ: Եւ Ֆրանսայի համար իրապէս գոյութեան խնդիր մըն է այդ հատուցման հարցը: Իրեղէն դրութիւնը մէջտեղն է. առանց Գերմանիոյ վճարելիք տուգանքին՝ կարելի չէ, որ կարգի դնէ իր ելեւմուտքը: Եւ սակայն ի՞նչ կրցաւ ստանալ: Երբ Ֆրանսա չի կրնար իր խօսքը քալեցնել, մե՞նք պիտի քալեցնենք մեր խօսքը: Խնդրեմ, ինքզինքնիս չխաբենք, որովհետեւ կատարեալ ինքնախաբէութիւն մըն է հաւատալ, թէ Գերմանիա պիտի գոհացներ մեզ՝ եթէ իրմէն հատուցում պահանջած ըլլայինք:

Տիար Ա. Չօպանեան. Ճիշդ է, որ անցեալ տարի Համագումարը այդ տեսակ յանձնարարութիւն մը ըրաւ: Բայց չկարծուի, թէ զանցառու գտնուեցանք: Շատ դիմումներ ըրինք անձերու. սակայն խորհուրդ տուին մեզի, որ ետ կենանք, որովհետեւ, կ'ըսէին, բացարձակապէս անկարելի է:

Տիար Ա. Թէրզիպաշեան. Ֆրանսայի պաշտօնատարները անշուշտ:

Տիար Ա. Չօպանեան. Մինակ ֆրանսացիք չէին ըսողը: Բոլորն ալ այդպէս կ'ըսէին:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Ամեն անգամ, որ հատուցման խնդիր եղաւ, ըսին, թէ մի' պնդէք, ձեզի գոհացում պիտի տրուի: Տարտամ խօսք, բայց վերջապէս խոստում մըն էր. եւ մենք չէինք կրնար զիրենք ստիպել, որ անպատճառ մանրամասնութեանց

մէջ մտնեն, ըսեն թէ ի՞նչ տեսակ գոհացում պիտի տան եւ ի՞նչ չափով: Ինչո՞ւ կը մոռնաք այն Յիշատակագիրը, զոր տուինք ազգին ենթարկուած վնասներուն նկատմամբ, եւ որուն մէջ միլիարդներու պահանջ դրած ենք: Արդեօք կը հաւատա՞ք, որ մենք չէինք ուզեր մեր վնասներուն դարմանումը:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Տիար Թէրզիպաշեանի յարուցած առաջին խնդիրը բաւական լուսաբանուեցաւ: Թերեւս աւելորդ չըլլայ ըսուած խօսքերուն աւելցնել, թէ դաշնագիրը հատուցման խնդրին մէջ զանազանութիւն մը կը դնէ Դաշնակից պետութեանց հպատակներուն եւ ոչ-հպատակներուն միջեւ: Այս մասին գոյութիւն ունեցող տրամադրութիւնները շատ որոշ են, իրաւական տեսակէտով՝ առաջինները նկատուած են պատերազմիկ եւ վերջինները՝ ոչ: Ու քանի որ մենք վերջիններուն մէջ ենք, ասիկա կը նշանակէ, թէ ճշմարիտ պատերազմիկներ չենք նկատուած: Հետեւաբար աշխատիլ հարկ է հաւասար իրաւունքներ ձեռք բերելու:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Հիմա պէտք է ընել ատիկա, եւ արդէն անգործ չենք մնար, կը խորհինք այս առիթը օգտագործելու:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Մանաւանդ որ միւնակ չենք: Այդ զանազանութիւնը լոկ մեզի համար չէ տրուած. միւս բոլոր տարրերն ալ մեզի պէս ու պատերազմիկ նկատուած են: Անոնց, ինչպէս մեր շահը կը պահանջէ, որ ձեռք-ձեռքի տանք եւ աշխատինք դաշնագրին այդ կէտը սրբագրելու: Յուզուած երկրորդ խնդիրը կը պաքքանի հանրային պարտքի հարցին: Տիար Թէրզիպաշեան կը գանգատի, թէ անհիրաւուած ենք այդ մասին, եւ թէ Պատուիրակութեան տեղեկագրին մէջ չէ յիշուած այն տեսակ ձեռնարկ մը, որ կատարուած ըլլար այս անհիրաւասութիւնը դարմանելու համար:

Տիար Ա. Չօպանեան. Տիար Թէրզիպաշեան կը գանգատի, թէ մենք անհիրաւուած ենք այդ հարցին մէջ: Բայց ինչո՞ւ կը մոռնայ, թէ հանրային պարտուց վճարման մասին դաշնագրին տրամադրութիւնները կը պաքքանին ընդհանուր տարրերուն եւ ոչ թէ միայն մեզի: Կարելի՞ էր բացառութիւն մը ձեռք բերել հայոց համար: Տարակոյս չկայ, որ ամէնքս ալ կը փափաքինք չվճարել. բայց խնդիրը ո՛չ թէ վճարել չուզելու, այլ չվճարելու կարելիութեան վրայ էր. եւ ատիկա անհնար եղաւ բացարձակապէս: Յոյներն ալ կը վճարէին: Ինչպէ՞ս միայն մենք կրնայինք չվճարել: Գալով Գերմանիայէ ուղղակի հատուցում ստանալու խնդրին, անշուշտ պէտք չկայ ըսելու, թէ պատերազմին պատճառաւ ամէնէն ահաւոր կերպով վնասուած ազգը մենք ենք: Յոյներն ալ կան, եւ իրենց կրած վնասին համեմատութեամբ, մեզմէ անմիջապէս վերջ անոնք կու գան: Հակառակ անոր, որ Պ. Վենիզելոսի պէս ազդեցիկ մարդ մը ունէին իրենց պահանջմանց պաշտպանութեան համար, կրցա՞ն հատուցում ստանալ:

Տիար Ա. Թէրզիպաշեան. Յոյները ստացած են:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Բայց սխալ, սխալ է: Հատուցում ստացողները Թուրքիոյ յոյները չեն, այլ՝ Հելլենիոյ, որոնք իբր պատերազմիկ կռուեցան Դաշնակիցներուն հետ, ոչ միայն Գերմանիոյ, այլ նաեւ Պուլկարիոյ եւ Աւստրիոյ դէմ:

Տիար Ա. Թէրզիպաշեան. Մենք ալ պատերազմին մէջ էինք, մենք ալ կռուեցանք:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Շատ աշխատեցանք, որ մենք ալ մեզ պատերազմիկ հռչակել տանք: Այնքան անգամներ գրեցինք այդ մասին, բայց պատասխան իսկ չտրուեցաւ: Յետոյ միւնակ մենք չէինք կռուեր: Թուրքիոյ յոյները նոյնպէս կռուեցան: Ի՞նչ կրցան ստանալ: Ի՞նչ ստացան օրինակի համար Ատրպէջանի յոյները: Ամէնքս ալ զոհուեցանք, ամէնուս ալ անարդարութիւն եղաւ: Համաձայն եմ այս մասին: Բայց Դաշնակից պետութեանց դէմ ըլլալիք գանգատները չեմ հասկնար, թէ ինչո՞ւ մեզի կ'ուղղեն:

Տիար Ա. Թէրզիպաշեան. Գոնէ պէտք էր ատիկա յիշատակել տեղեկագրին մէջ:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Տեղեկագիրը չէր կրնար ամեն մանրամասնութիւն պարունակել. նոյնիսկ երկար ալ էր, եւ ճիշդ ատիկա դիտել տուի երբ պատրաստուեցաւ: Վերջապէս, պիտի վիճաբանինք մեր գործունէութեան

կապուած բոլոր խնդիրներու մասին: Տեղեկագիրը պարզ ուղեցոյց մըն է: Կրնայ պակասներ ունենալ, որովհետեւ արդէն կարելի չէր ամեն բան յայտնել անով: Բայց մենք հոս ենք արդ պակասները լրացնելու համար: Գալով հանրային պարտուց սահմաններուն հարցին, ատիկա այն տեսակ խնդիր մըն էր, որ լոկ հայերը չէր հետաքրքրէր, այլ բոլոր ազգերը: Չէինք կրնար յաւակնիլ, որ մեզի համար առանձին կարգադրութիւն մը ըլլար:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Որչափ որ կը յիշեմ, Միացեալ Պատուիրակութեան տուած պաշտօնական Յիշատակագրին մէջ հատուած մը կար, որ կ'ակնարկէր հանր. պարտուց հարցին եւ կ'առաջարկէր փոխարինութիւն մը: Ատոր վրայ հիմնուելով թերեւս կարենանք անդրադառնալ բացառիկ կարգադրութիւն մը ձեռք բերելու մտածման: Վան, Պիթլիս, Էրզրում՝ քար ու քանդ վիճակի մէջ են: Արդարութիւն է, որ հատուցում ըլլայ տեղի ունեցած քանդումներուն փոխարէն, այլ նահանգները դնելու համար այն տեսակ վիճակի մը մէջ, որ անոնց վերածնութիւնը ընթանայ եւ կարենան ի մէջ այլոց վճարել նաեւ հանր. պարտուց բաժինը: Պուլկարիոյ հետ կնքուած դաշնագրին մէջ ալ ուշադրութիւն գրաւեց տրամադրութիւն մը, որ որոշ կերպով կը նուիրագործէ en nature ըլլալիք հատուցման սկզբունքը. պուլկարները յանձնառու եղած են Սերպիոյ քանդուած վայրերը վերաշինել եւ յափշտակած անասունները հայթայթել: Նոյնը եղած է նաեւ Պելճիքայի համար: Նոյն նախընթացներու վրայ հիմնուելով կարելի է դիմումներ ընել պետութեանց մօտ, գոնէ որոշ չափով մը ձեռք բերելու համար այն, ինչ որ այնքան արդարօրէն կը պահանջէ Տիար Թէրզիպաշեան: Որովհետեւ բացայայտ է, թէ Դաշնակիցները չոր նուէր մը կ'ընեն մեզի, Հայաստանի մաս դարձնելով լոկ այն տեսակ նահանգներ, որոնք զուրկ են բարգաւաճման ամեն միջոցէ, նոյնիսկ բաւական հարուստ ժողովուրդ ալ չունին, որուն արդիւնաբերութեան շնորհիւ կարելի ըլլայ այդ նահանգներու վրայ դրուած հարկը հատուցանել:

Տիար Ա. Թէրզիպաշեան. Կը վերապահեմ իմ իրաւունքս այս խնդիրներուն վերադառնալու հետ անոնց էութեան մասին վիճաբանութեան ձեռնարկելու: Այդ առթիւ աւելի որոշ կերպով պիտի պատասխանեմ Վսեմ. Պօղոս Փաշայի մէջ բերած առարկութեանց, որոնք չկրցան փոխել համոզումս: Ես միշտ այն հաւատքը ունեցեր եմ, թէ իրենք նախապաշարումով, կանխակալ եւ անվստահութեամբ մօտեցած են այս հարցին, եւ ատիկա ջլատեր է իրենց գործունէութիւնը: Նախապաշարում, թէ անկարելի է Գերմանիայէն ոեւէ հատուցում ստանալ: Բայց բոլոր թշնամի ժողովուրդներու մէջ լոկ գերմաններն են, որոնք կրնային կարճ ատենուան մը միջոցին վերականգնիլ, հետեւաբար նաեւ՝ վճարել: Եւ այդ վճարումէն բաժին ստանալու համար, կը կրկնեմ, թէ մեր իրաւունքը ճիշդ ու ճիշդ այն գիծին վրայ էր, ուր որ կը գտնուէր բոլոնիացւոց եւ հէլլէններուն իրաւունքը:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Ներեցէ՛ք, որ դիտողութիւն մը ընեմ: Համոզուած եմ, որ իրաւապէս ոեւէ հիմ չունէինք Գերմանիայէն հատուցում պահանջելու: Բոլոր խօսակցութիւնները զորս ունեցած եմ այդ խնդրին նկատմամբ, աւելին զօրացուցած են այս համոզումս: Չեմ կարծեր, որ ոեւէ օրէնսգէտ երբեք իրաւունք տայ այս մասին Տիար Թէրզիպաշեանի: Բայց նորէն դիմում պիտի ընեմ կարող օրէնսգէտի մը՝ այդ մասին իր կարծիքը իմանալու համար: Գոնէ խիղճերնիս հանդարտ կ'ըլլայ: Ով գիտէ, թերեւս Հայ Հանրապետական կառավարութիւնը իրաւունք ունէր, բայց վստահ չեմ:

Տիար Ա. Թէրզիպաշեան. Մեր յանձնարարութիւնը Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեանն եղած էր: Քանի որ այս խնդրին էութեան անցանք, ես մէջ պիտի բերեմ այն բոլոր փաստերը, որոնք կը հաստատեն իմ տեսակէտս: Մայնի առաջին ճախողումէն ետք, գերմանները Թուրքիան Դաշնակիցներուն դէմ հանեցին: Անշուշտ պէտք չկայ շեշտելու այն մեծ կարեւորութիւնը, զոր Դաշնակիցներուն համար ունէր եւ ունեցաւ Թուրքերուն պատերազմի մասնակցութիւնը:

Թուրքերը, առաջին րոպէին իսկ մեծ վտանգ մըն էին Դաշնակիցներուն համար, եւ այդ վտանգին առաջ հայերը կուրծք տուին, իրենց բոլոր ռազմիկ տարրերով, ռուս բանակին մէջ կամ անջատ կամավորական խումբերով: Իրենց կատարած դերը ո՛չ թշնամիները ուրացան, ո՛չ ալ Դաշնակիցները: Սարըղամիշի [Ռեւանտուզի] մէջ՝ մեծապէս նպաստեցին յաղթանակին: Միւս կողմէ, գրաւոր անհերքելի փաստեր ունինք այսօր, թէ գերմանները ուղղակի մեղսակից էին հայոց տեղահանութեան ու ջարդերուն: Իրենց այս մեղսակցութիւնը հաստատուած է նոյնիսկ գերմաններու, ինչպէս Տոքթ. Ռոյպախի եւ Տոքթ. Լեփսիուսի հրատարակութիւններով: Մենք ստացանք նոյն ինքը Պ. Բիշոնի «շիֆրէ»ով Պօղոս Փաշայի մեկ հեռագիրը, որ կ'ըսէր՝ եթէ թորքահայերը ռուսահայերու հետ իրենց սեփական ոյժերով կարենան պաշտպանել Թրքահայաստանը, Դաշնակիցները պատրաստ են զինուորական եւ ելեւմտական աջակցութիւն ընծայել անոնց եւ չպիտի հակառակին, եթէ անոնք անկախութիւն յայտարարեն: Երկրորդ անգամ՝ հայերը 1917ի վերջին մեծ դեր մը կատարեցին Կովկասի մէջ, պահելով ռուսերուն լքած ճակատը, հակառակ այն բոլոր դժուարութիւններուն, որոնցմէ շրջապատուած էին, հակառակ նոյնիսկ ամբողջովին բնաջնջուելու վտանգին: Ու տակաւին հայերն իրենց արիւնը շռայլեցին Եւրոպա, Սուրիա եւ այլուր, պատերազմի ճակատներուն վրայ: Արդեօք այս ամենը իրաւական հիմեր չե՞ն հատուցում ստանալու համար: Բոլոնիա ճիշդ ու ճիշդ մեր դերին մէջ կը գտնուէր: Բայց անոնք աւելի իմաստութեամբ կրցան վարուիլ: Մենք չեմ ըսեր, թէ աւելի յիմար, բայց աւելի անկեղծ եղանք: Չկրցանք արժեցնել մեր իրաւունքը: Մինչդեռ բոլոնիացիք, որոնց իրաւական հանգամանքը մեզի հետ նոյնն էր, կրցան զայն արժեցնել: Անոնք ստացան, որովհետեւ մեզի պէս նախապաշարուած չէին, թէ անկարելի է ստանալ: Ստացան՝ որովհետեւ կրցան կէտի մը մասին մանաւանդ մեր իրաւունքը հարիւրին-հարիւր անվիճելի էր: Ռուսահայերը 180 000 զինուոր տուեր էին ռուս բանակին, զինուեր էր մեր ժողովուրդին տասէն մէկը: Անոնցմէ 6-էն 7000ը ինկան պատերազմի դաշտերուն վրայ: Չեմ հաշուեր տակաւին հաշմանդամները: Երբ հարուստ ժողովուրդներ իրենց յետին մեռած կամ հաշմանդամ զինուորներուն համար հատուցում ստացան, ինչո՞ւ այս իրաւունքը զլացուեր մեզի պէս կարօտ ժողովուրդի մը, որուն ընծայած աջակցութիւնը Դաշնակիցներուն՝ շատ մեծ բան էր բաղդատմամբ իր միջոցներուն: Եւ մեր դերը չլրացաւ Ռուսիոյ կողմէ զենքերը վար դրուելեն վերջ: Ռուսահայերը բողոքեցին Պրէսթ-Լիթովսքի Դաշնագրին դէմ, պահեցին իրենց ճակատը եւ շարունակեցին կռիւը, չնայելով իրենց անբաւականութեան եւ այն ահաւոր կորուստներուն, որոնց ենթարկուեր էին: Իրենց դիմադրութիւնը տեւեց մինչեւ այն վայրկեանը, երբ ատիկա հնարաւոր դարձաւ: Արդեօք այս ամենը իրաւական հիմեր չէի՞ն, որպէսզի կարենար իր վնասներուն հատուցումը ստանալ: Ես իրաւաբան չեմ: Բայց մեր մէջ կան իրաւաբաններ. կը փափաքիմ, որ իրենց կարծիքը յայտնեն այս ամէնուն նկատմամբ: Ես կ'ուզեմ մէկ բան միայն աւելցնել, սա՝ թէ ժամանակն է, որ վարժուինք պատասխանատուութիւնները փնտրելու, պատասխանատուութիւնները ճանչնալու եւ գնահատելու. այլապէս՝ չպիտի կրնանք լաւագոյն բախտի մը արժանացնել նոյնիսկ այն ափ մը ժողովուրդը, որ մեզի կը մնայ այս բոլոր կորուստներէն ետք:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Տիար Թէրզիպաշեանի պարզած տեսակէտներուն մէջ կը գտնուին երեք կարեւոր կէտեր: Առաջինը՝ արդարութեան տեսակէտն է, երկրորդը՝ իրաւական. իսկ երրորդը՝ դժուար է սահմանել միակ բառով մը, բայց վերջապէս կրնանք մերձաւորագոյն բացատրութեամբ մը ըսել՝ կարելիութեան տեսակէտ:

Առաջին կէտին նկատմամբ բոլորովին համաձայն եմ Տիար Թէրզիպաշեանի: Թէ արդարութեան հարկ մըն էր, որ հատուցում ստանայինք մեր բոլոր վնասներուն համար, այս մասին ո՛չ ոք տարակարծիք է: Բայց արդէն առիթը ունեցայ յայտնելու, թէ լոկ բաղձանքի խնդիր չէր ասիկա:

Երկրորդ տեսակէտին՝ իրաւական տեսակէտին համար՝ յայտնեցի իմ կարծիքս: Բայց նաեւ պիտի հարցնեմ կարող օրէնսգէտի մը, որքան ալ անխախտ մնացած ըլլայ իմ համոզումս, թէ Դաշնակից պետութիւնները երբեք մեզի համար իրաւունք մը չպիտի նկատին Գերմանիայէ հատուցման պահանջումը:

Կը մնայ երրորդ տեսակէտը, կարելիութեան տեսակէտը: Կրնանք վստահ ըլլալ, թէ ինչ որ պէտք էր եւ կարող ենք ընել՝ ըրինք: Եթէ դատարանի մը առջեւ ըլլայինք որմէ արդարութիւն պիտի պահանջէինք, խնդիրը կը տարբերէր: Այդ պարագային ամեն հնարաւորութիւն կ'ըլլար, որ պաշտպանենք մեր պահանջումները, եւ մաքառինք անոնց յաղթանակին համար: Բայց Դաշնակիցներուն եւ մեր դիրքը այդ չէր: Մենք հեռու կը պահուէինք դատավարութենէն, մեզի դէմ որոշումներ կը տրուէին, որոնց մասին տեղեակ չէինք, որովհետեւ մեզմէ գաղտնի կ'ըլլար այս ամենը, եւ մեր մասին կարծիք մը կը գոյացուէր առանց մեզ լսելու: Այսպէս վարուեցան Դաշնակիցները: Եւ իրենց արդարութեան վճիռը՝ դաշնագիրը, մէջտեղն է: Իմ մասին, կրնաք վստահ ըլլալ, որ միշտ առաջինը պիտի ըլլամ յայտարարելու համար, թէ ոչինչ այնքան անարդար, շնական ու գայթակղական է, որքան այդ դաշնագիրը: Ինչո՞ւ սակայն այս անարդարութիւնը մեր երեսին կը տրուի հիմա այն տեսակ եղանակով մը, որ կարծես, թէ մենք ենք ատոր պատճառը:

Տիար Ա. Հանըմեան. Տիար Թէրզիպաշեան գանգատներ ունի, որոնք հեռուէն հեռու կ'ակնարկեն ազգին ամբողջութեան վերագրելի սխալներու: Չեմ հասկնար, թէ ինչպէ՞ս կարելի կ'ըլլայ այդ բոլոր գանգատները բերել կեդրոնացնել Ազգ. Պատուիրակութեան դէմ: Եւ յետոյ՝ խօսելու եղանակ մը ունի, որուն համար՝ կարծես ինք միայն զգացեր է ժողովուրդին ցաւը, ժողովուրդին եղած անարդարութիւնը:

Տիար Թէրզիպաշեան. Ես այդպէս չըսի:

Տիար Ա. Հանըմեան. Բայց միշտ պէտք կը տեսնէք մեզի կրկնելու, թէ բացառիկ նշանակութիւն մը պէտք է տալ ձեր ամեն ըսածին, քանի որ 700 000 ժողովուրդ կը ներկայացնէք:

Տիար Թէրզիպաշեան. Թուղթեր ունիմ ապացուցանող թէ 75 000 ժողովուրդի անունով կը խօսիմ, ժողովուրդ, որ իմ վրաս պարտք դրուած է իր շահերը պաշտպանելու եւ որուն հաշիւ պէտք է տամ:

Տիար Ա. Հանըմեան. Ուրիշ թուղթեր ալ կը նկատեն, թէ իրապէս ո՛չ ոք կը ներկայացնէք: Գալով ձեր փաստերուն, որոնցմով իբր թէ պիտի ապացուցենք հատուցման պահանջին օրինական հիմքը, համոզիչ չեն դժբախտաբար, արդարացնելու համար այն մեղադրանքը, զոր կ'ուղղէք Պատուիրակութեան: Եթէ ըսէիք, թէ Պատուիրակութիւնը չէ յաջողած հայ ազգը պատերազմիկ հռչակել տալու, աստիճան մը պիտի ըմբռնուի այն մեղադրանքը, որովհետեւ առանց այդ ճանաչման՝ հատուցման խօսք ընել կարելի չէր: Բայց կրնանք վստահ ըլլալ, որ Պատուիրակութիւնը ամեն բան ըրաւ, որպէսզի հայ ժողովուրդն ալ մտնէ պատերազմիկ ազգերու կարգը:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Մասնաւորաբար շատ կարեւոր նամակ մը գրած ենք Դաշնակից պետութեանց, այն նամակը, որով կը ծանուցանենք մեր անկախութեան յայտարարութիւնը: Մեր կողմէ մէջ բերուած բոլոր փաստերը այդ յայտարարութեան մասին՝ հիմնուած էին մեր պատերազմիկ ժողովուրդի հանգամանքին վրայ, եւ ըսած էինք ամեն բան, որով կարելի էր արժեցնել այդ հանգամանքը:

Տիար Ա. Հանըմեան. Այն օրը, երբ Վերսայլի Վեհաժողովը չընդունեց հայերը իբր պատերազմիկ, հատուցման մեր իրաւունքը կորսնցուցած էինք: 180000 ռուսահայերու պատերազմին մասնակցիլը չէր կրնար բացառիկ իրաւունք մը ստեղծել հայոց համար որոնք, ռուս բանակին մէջ կը նկատուին ռուս զինուոր, ինչպէս ռուս զինուոր նկատուեցան լէթոնները, էսթոնիացիները, ֆինլանտացիները, ուքրէնները,

որոնք հայոց նման ռուսերուն հետ կռուեցան Գերմանիոյ դէմ՝ Դաշնակիցներուն հետ կողք-կողքի, եւ որոնց նոյնպէս հատուցում չեղաւ:

Տիար Ա. Թէրզիպաշեան. Հապա բոլոնիացիք, ինչո՞ւ անոնք հատուցում ստացան:

Տիար Ա. Հանըմեան. Ներողութի՛ւն, բոլոնիացիք զինադադարէն առաջ պատերազմիկ ազգ ճանչցուած էին Դաշնակիցներուն կողմէ, ունէին առանձին բանակ, եւ առանձին ճակատ մը կը բռնէին: Ռուսիայէն անջատուելով կազմուած միւս բոլոր պետութիւնները այդ հանգամանքը չունեցան: Լիթուանիա, Էսթոնիա, Ուքրանիա, Ֆինլանտա՝ հատուցման հարցին մէջ իրաւապէս այն դիրքը ունէին, ինչ որ ունի հայկական պետութիւնը: Եւ պէտք չէ մոռնալ, որ անոնք շատ աւելի մեծ ու կարեւոր դեր մը խաղացին պատերազմին մէջ: Անշուշտ տարբեր արդիւնք կը գոյանար, եթէ երբեք յաջողած ըլլայինք հայերը հռչակել տալ իբր պատերազմիկ ազգ: Բայց կը կրկնեմ, որ այդ նպատակով ամեն դիմում ըրաւ Պատուիրակութիւնը ու չյաջողեցաւ:

Վսեմ. Պօղոս Փաշա. Շատ ճիշդ է, շատ ճիշդ:

Տիար Թէրզիպաշեան. Պատերազմիկ ժողովուրդի հանգամանքն ու հատուցման հարցը կապ չունին իրարու հետ:

Տիար Տոքթ. Նեւրուզ. Բայց օրինական չէ ինչ որ կը հնչէ. երբեք ազգ մը, առանց պատերազմիկ ճանչցուելու, չի կրնար հատուցում ստանալ:

Տիար Ա. Թէրզիպաշեան. Ամերիկա եւ Անգլիա, Կովկասի ինչպէս Սուրիոյ ու Միջագետքի մէջ կ'օգնեն մեր ժողովուրդին, ուրեմն կը ճանչնան մեր իրաւունքը, թէ պէտք է հատուցուին այն վնասները, որոնց ենթարկուեցանք՝ պատերազմին մէջ մեր կատարած քաղաքական դերին պատճառաւ:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Ատիկա գուբի տեսակէտ մըն է պարզապէս. վերապրողներուն եղածը հատուցում չէ, օգնութիւն է, եւ ամեն կառավարութիւն ազատ է իր ուզած օգնութիւնը ընելու՝ քաղաքական-իրաւական նկատումներէ անկախաբար: Նոյն օգնութիւնը կ'ընէր նաեւ Ֆրանսա Կիլիկիոյ մէջ:

Տիար Թէրզիպաշեան. Կը կրկնեմ, թէ այն պետութիւնները, որոնք մեզի օգնութիւն կ'ընեն, պիտի ուզէին նաեւ մեզի հատուցում տալ, քանի որ իրենց ըրած օգնութիւնը ուղղակի մեր հատուցում ստանալու իրաւունքին մէկ հետեւանքն է: Մենք հատուցում չենք ստանար, որովհետեւ արժանի չեղանք ատոր, չգիտցանք պահանջել որ տային, նախընտրեցինք գուբի առարկայ դառնալ եւ գուբի անունով ստանալ ինչ որ կրնայինք առնել առանց ձեռք բանալու, իբր արդար իրաւունք մը:

Տիար Ա. Չօպանեան. Կը ցաւիմ, որ այս ամբողջ վիճաբանութեան մէջ կը մոռցուի այն դերը, զոր Պատուիրակութիւնը կատարեց: Ամերիկա մինակը չդրկեց ալիւրը, որ այնքան մեծ թուով ժողովուրդի փրկութեան նպաստեց: Պատուիրակութիւնը շաբաթներով աշխատեցաւ ատոր համար: Հանրապետութիւնը չէր ճանչցուած տակաւին. ոչ մէկ դրական երաշխաւորութիւն կրնայինք տալ, թէ իրենց օգնութիւնը պիտի փոխարինենք օր մը: Հակառակ ասոր՝ յաջողեցանք համոզել Ամերիկան, որ իր ծախքերը պիտի հատուցուին վերջէն: Նոյնիսկ չեմ կարծեր, որ Ամերիկա այդ հատուցման վրայ կը խորհէ այսօր, եւ հաւանական է որ, ինչպէս Խորէն Եպիսկոպոս ալ կ'ենթադրէր, բնաւ փոխարինութիւն չպահանջէին:

Գալով հատուցման հարցին՝ մինչեւ այս դաշնագրին խմբագրութիւնը շատ յոյս չկար, որ այդ մասին մեր ունեցած իրաւունքը ճանչցուեր: Սակայն նորէն միշտ պահանջած ենք, բազմաթիւ գրութիւններով եւ բերանացի տեսակցութիւններու ընթացքին: Ասիկա ըրինք մինչեւ վերջը, Սան Ռեմոյի մէջ ալ, ուր նոյնպէս աշխատեցանք փրկել մեր իրաւունքը, եւ այդ առթիւ Գերագոյն Խորհուրդին ղրկեցինք նախապէս եղած գրաւոր դիմումներու բոլոր պատճէնները: Գալով ուղղակի Գերմանիայէն հատուցում ստանալու հարցին, ճիշդ է Տիար Թէրզիպաշեանի ըսածը, թէ Համագումարը անցեալ տարի այդ մասին աշխատելու յանձնատուութիւն մը ըրաւ Պատուիրակութեան: Բայց մինչեւ այսօր յոյս չկայ բնաւ, թէ այդ նպատակով

կատարուելիք ոեւէ աշխատութիւն կրնայ արդիւնք մը տալ: Այսօր սակայն ուրիշ դիրք մը ունինք՝ կը հռչակուինք Դաշնակից պետութիւն, եւ այդ հանգամանքով պիտի կանչուինք դաշնագիր ստորագրելու: Թերեւս ուշ չէ վերստին վերադառնալու այս հարցին, եւ մեր այս նոր հանգամանքին ոյժով նպաստաւոր կարգադրութիւն մը ձեռք բերելու:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Դաշնագրին տրամադրութիւնները պիտի քննուին Ազգ. Պատուիրակութեան կազմած յատուկ յանձնաժողովին կողմէ: Համագումարն ալ, եթէ փափաքի, կրնայ իր մէջէն մարմին մը ընտրել՝ նոյն խնդրով զբաղելու համար, որով թանկագին աջակցութիւն մը ընծայած կ'ըլլայ յիշեալ յանձնաժողովին, աւելի կատարեալ հանգամանք մը տալով անոր աշխատութեանց:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Կը ձայնակցիմ այս առաջարկին, որ արդէն տրամաբանական ալ է: Այսօր դաշնագրի մը առջեւ չենք, այլ՝ դաշնագրի ծրագրի մը, որ պիտի փոխուի: Կատարուելիք փոփոխութիւններէ մեզի նպաստաւոր արդիւնք մը ակնկալելը մեր իրաւունքն է, եւ ատոր համար պէտք է ամեն կերպով աշխատինք: Համագումարին լոկ իրաւունքը չէ, այլ նաեւ պարտքն է այդ տեսակ յանձնաժողով մը կազմել, եւ՝ անմիջապէս:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Այո՛, պէտք է աճապարել, որովհետեւ շատ ժամանակ չկայ: Քէ տ'Օրսէէն կարեւոր անձնաւորութիւն մը հաղորդեց ինծի, թէ տրուած մէկ ամսուան պայմանաժամին ընթացքին եթէ թուրքերը չստորագրեն, դրական միջոցներ ձեռք պիտի առնուին իսկոյն զիրենք ստիպելու համար, որ ստորագրեն: Դաշնակից պետութիւնները հաստատապէս որոշած են միանգամ ընդմիշտ փակել այս խնդիրը, կարելի եղածին շատ շուտ:

Տիար Տիրան Տէվլէթեան առաջարկեց, որ Դիւանին անդամներով կազմուի այդ յանձնաժողովը: Նախագահ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան դիտել տուաւ, թէ ինք արդէն կը գտնուի Ազգ. Պատուիրակութեան կողմէ կազմուած յանձնաժողովին մէջ, ինչպէս կը գտնուի նաեւ դեր-Նախագահ Տիար Գ. Սինապեան: Ժողովը աւելի յարմար դատեց, որ իր երկու նախագահները մնան Համագումարի յանձնաժողովին մէջ, որ կազմուեցաւ հետեւեալ կերպով.

Ամեն. Տ. Եղիշէ Արք. Դուրեան

Նախագահ՝ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան

Դեր-Նախագահ՝ Տիար Գ. Սինապեան

Ա. Ատենադպիր՝ Տիար Գառնիկ Ֆնտգլեան

Բ. Ատենադպիր՝ Տիար Դաւիթ-Բէկ

Տիար Ա. Թէրզիպաշեան

Տիար Ն. Տէր-Ստեփանեան

Պատգամաւորներէն ոմանք առաջարկեցին, որ երկու յանձնաժողովները միասին եւ Պատուիրակութեան հետ գումարուելով աշխատին:

Տիար Տոքթ. Նեւրուզ. Յանձնաժողովներուն՝ Պատուիրակութեան հետ աշխատելու առաջարկին նկատմամբ դիտողութիւն մը ունիմ: Բայց անկէ առաջ կ'ուզեմ պատասխանել Տիար Թէրզիպաշեանի կողմէ եղած այն առարկութեան, թէ իրաւական հիմեր ունինք Գերմանիայէն հատուցում պահանջելու: Ասիկա սխալ է, եւ արդէն, օրէնսգիրի մը կարծիքը պիտի առնուի այդ մասին, ինչպէս Վսեմ. Պօղոս Փաշա յայտնեց, պիտի տեսնուի որ իրաւական ո՛չ մէկ հիմ կար այդ տեսակ պահանջում մը ընելու, ինչպէս ամեն կողմէ դիտել կը տրուէր մեզի, ամեն անգամ որ այդ խնդրին կ'ակնարկէինք: Զգացումի տեսակէտով՝ կը հասկնամ, որ իրաւունք ունինք: Այդ տեսակէտով՝ ամէնքս ալ Տիար Թէրզիպաշեանի հետ ենք: Բայց իրաւական հարց մը զգացումի տեսակէտով մը չի լուծուիր: Գալով հանր. պարտուց մեզի սահմանուած բաժնին, դիտողութիւն եղաւ, թէ կրնայինք մեր բաժինը մեր հատուցման իրաւունքին հետ փոխարինել: Բայց զգուշացանք աքթէ, նախընտրեցինք անորոշ թողուլ այդ կէտը, որպէսզի այդ պատճառաւ տարբեր զրկանք մը չըլլայ մեր դատին:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Հանրային պարտուց մասին արդէն Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան Յիշատակագրին մէջ ըսուած էր, թէ կը ստանձնենք մեզի ընկած բաժինը:

Տիար Տոքթ. Նեւրուզ. Կը դառնամ յանձնաժողովներու՝ Պատուիրակութեան հետ աշխատելու հարցին: Աշխատութեան այդ եղանակը անգործնական է եւ օրինական ալ չէ: Համագումարը համարառու մարմին մըն է, Պատուիրակութիւնը՝ գործադիր մարմին մը: Երկուքն ալ տարբեր իրաւասութիւններ ունին: Լաւագոյն է, որ առանձին աշխատին:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Ինծի պարտք կը նկատեմ այս առթիւ յայտնելու ժողովիդ, որ Պատուիրակութիւնը երկար ատեն բախտը ունեցաւ վայելելու Վսեմ. Տիար Գաբրիէլ Նորատունկեանի թանկագին աջակցութիւնը: Իր ծանօթ ձեռնհասութիւնը սովորաբար մեզի առաջնորդ եղաւ ամէնէն դժուարին պահերու մէջ: Կ'առաջարկեմ, եւ արդար ալ է, որ ժողովը Պատուիրակութեան անդամ նշանակէ Ն. Վսեմութեանը, քանի որ տեղն ալ բաց է Տիար Փաստրմաճեանի հրաժարման պատճառաւ: Մեր խնդիրը հասած է իր ամէնէն ճգնաժամային շրջանին, եւ ուրիշ ամեն ատենէ աւելի հիմա մանաւանդ պէտք պիտի ունենանք Վսեմ. Տիար Գաբրիէլ Նորատունկեանի խորհուրդներուն եւ թելադրութեանց: Այս րոպէին ոչինչ այնքան օգտակար կրնայ ըլլայ մեզի, որքան իր մեծ հմտութիւնն ու փորձառութիւնը:

Ժողովականներուն ստուարագոյն մեծամասնութիւնը ծափերով ձայնակցեցաւ Վսեմ. Պօղոս Փաշայի խօսքերուն:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Շնորհակալութիւն կը յայտնեմ ժողովին համակրութեան համար, բայց ներեցէ՛ք ինծի դիտել տալու, թէ այս տեսակ կարգադրութիւն մը այս վայրկեանիս չունի այն ստիպողութիւնը, զոր անոր ընծայեց Պատուիրակութեան Վսեմ. Նախագահը: Մանաւանդ որ, ինչպէս անցեալին մէջ զանազան առիթներով մասնակցեցայ, ասկէ ետքն ալ կրնամ անպաշտօն կերպով մասնակցիլ Պատուիրակութեան աշխատութեանց, եթէ ատոր պէտքը տեսնուի:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Մի՛ մոռնաք, սակայն, որ ասկէ առաջ՝ նկատում մը միշտ կաշկանդեց Ձեզ՝ ձեր աշխատակցութեան մէջ: Երբ պէտք տեսայ Ձեր ներկայութեան, Լոնտոն կամ այլուր, այդ նկատումը վարանեցուց Ձեզ: Ապահովաբար իրաւունք ունիք, որովհետեւ՝ որքան ալ Ձեր մօտ մեծ ըլլար մեր աշխատութեանց նպաստելու բաղձանքը, կրնայիք մտածել վերջապէս, թէ ի՞նչ հանգամանքով կատարէիք այդ աշխատակցութիւնը: Մինչդեռ ընդունելով Պատուիրակութեան անդամակցութիւնը, այլեւս այդ նկատումը չէք ունենար, եւ ես անձնապէս համոզուած եմ, որ ձեր աշխատակցութիւնը մեծապէս օգտակար պիտի դառնայ մեզի: Անհրաժեշտ է, որ անմիջապէս վայելենք ձեր թանկագին աջակցութիւնը:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Մտածելու հարկ կը տեսնեմ, որովհետեւ անպատեհութիւն մըն ալ կայ: Չեմ կրնար միեւնոյն ատեն թէ՛ Համագումարին Նախագահ եւ թէ՛ Պատուիրակութեան անդամ դառնալ:

Տիար. Տոքթ. Ա. Բարսեղեան. Յաջորդաբար երկու խնդիր յուզուեցաւ; Նախ՝ կազմուած յանձնաժողովներու միասին կամ անջատ աշխատութեան խնդիրը: Իմ կարծիքովս՝ լաւագոյն պիտի ըլլար, որ Համագումարին յանձնաժողովը եւ Պատուիրակութեան յանձնաժողովը առանձին աշխատէին, եւ իւրաքանչիւրին տեղեկագիրը բերուէր այստեղ՝ քննութեան համար: Երկրորդ խնդիրը կը պաքթանի Պատուիրակութեան Նախագահին առաջարկութեան: Չեմ կարծեր, որ կարելի ըլլայ ընդունիլ այդ առաջարկութիւնը: Համագումարը սկսած է իր աշխատութեանց եւ չի կրնար զրկուիլ իր Նախագահէն: Աւելի կարեւոր պատճառ մը կայ սակայն: Պատուիրակութիւնը իր գործը լրացուցած է. չենք գիտեր, թէ վաղը ի՞նչ պիտի ըլլայ, պիտի վերակազմուի՞, թէ՞ պիտի վերընտրուի: Անպատեհ է հիմակուց անդամ մը աւելցնել, քանի որ անդամներէ վեցին վրայ չորսը կը մնան միշտ եւ ունին անհրաժեշտ մեծամասնութիւնը: Գալով Համագումարի Նախագահին, ամէնքս ալ կը հաւատանք, որ

ինչպէս անցեալին մէջ, ասկէ վերջն ալ պիտի շարունակէ զօրավիգ ըլլալ Պատուիրակութեան:

Տիար Տոքթ. Նեւրուզ. Յանձնաժողովներու կազմութեան առթիւ պէտք չէ աչքէն վրիպի սա պարագան, թէ դաշնագիրը քննելու իրաւունքը լոկ Համագումարին չի պաքթանիր, այլ նաեւ Երեւանի խորհրդարանին, որ թէեւ հեռուն է, ժամանակ չպիտի ունենայ, բայց վերջապէս այստեղ է Հանրապետութեան Պատուիրակութիւնը, որ կրնայ նոյնը ընել փոխանորդաբար:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Այդ էր նաեւ մեր մտածումը: Յանձնաժողովը որ կազմուեցաւ՝ հրաւիրուած է Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան անունով:

Երուանդ Պէյ Աղաթօն. Ես համամիտ չեմ Տիար Բարսեղեանի կողմէ եղած դիտողութեանց: Եթէ թողունք, որ յանձնաժողովները առանձին գործեն, պիտի պատահի այն, ինչ որ պատահեցաւ անցեալ տարի: Ամեն անդամ ճշդապահ չպիտի ըլլայ նորէն եւ շաբաթներ պիտի անցնին բոլորովին ապարդիւն կերպով: Մինչդեռ բոլորը մէկ՝ Պատուիրակութեան հետ աշխատելու ստիպողութիւնը կրնայ գրգիռ մը ըլլալ, որ աւելի ճշդապահ ըլլան այս անգամ: Գալով Վսեմ. Տիար Գ. Նորատունկեանի՝ Պատուիրակութեան անդամակցութեան, չեմ կարծեր, որ անպատեհութիւն մը ըլլայ ատոր մէջը: Կը բաւէ, որ Ն. Վսեմութիւնն ընդունի եւ ձեւ մը կը գտնուի անշուշտ ուրիշ ամեն արգելիչ պատճառ բառնալու համար:

Համագումարը մեծամասնութեամբ որոշեց, որ յանձնաժողովները միասին եւ ի հարկին Պատուիրակութեան հետ աշխատին:

Տիար Տոքթ. Նեւրուզ. Կը կրկնեմ, որ Համագումարին եւ Պատուիրակութեան իրաւասութիւնները. կը շփոթուին, քանի որ առաջինը համարառու եւ երկրորդը՝ համարատու մարմիններ են: Կը պնդեմ դարձեալ, որ աշխատութիւնները կատարուին առանձինն եւ կը խնդրեմ, որ այս պահանջումս արձանագրուի ատենագրութեան մէջ:

Տիար Տէօվլէթեան վերստին յուզեց Վսեմ. Պօղոս Փաշայի առաջարկութեան հարցը՝ անհրաժեշտ նկատելով Վսեմ. Տիար Գ. Նորատունկեանի անդամակցութիւնը Ազգ. Պատուիրակութեան, նոյնիսկ եթէ ատոր համար պէտք ըլլար Համագումարին՝ զրկուիլ իր Նախագահէն: Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան անգամ մըն ալ յայտնեց, թէ կը վերապահէ իր հաւանութիւնը: Համագումարը որոշեց օրակարգ անցընել այդ առաջարկութիւնը Ազգ. Պատուիրակութեան վերակազմութեան խնդրին հետ:

Նիստը փակուեցաւ ժամը 5 1/2 -ին:

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 59, թթ. 1-24: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ Զ

26 Մայիս 1920, ժամը 4 1/2-ին,
նախագահութեամբ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեանի:

Ներկայ էին 17 պատգամաւոր՝

Երուանդ Պէյ Աղաթօն, Տոքթ. Ա. Բարսեղեան, Եղիշէ Արքեպ. Դուրեան, Դաւիթ-Բէկ, Թէրզիպաշեան, Թէքէեան, Թումայեան, Մսըրլը Պէյ, Ներսէսեան Խան, Վսեմ. Գ. Նորատունկեան, Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար, Չօպանեան, Սինապեան, Տէր-Ստեփանեան, Տէօվլէթեան, Քէլեկեան Խան, Ֆնտգլեան:

Օրակարգ

1. Շարունակութիւն վիճաբանութեան Ազգ. Պատուիրակութեան համարատուութեան
2. Տեղեկագիր հաշուական գործառութեանց Ազգ. Պատուիրակութեան
3. Տեղեկագիր Կազմական Կանոնագրի Յանձնաժողովին

4. Վերակազմութիւն Ազգ. Պատուիրակութեան

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Ընթերցում եւ վաւերացում ատենագրութեան

Նախ Վսեմ. Տիար Գաբրիէլ Նորատունկեան ծանոյց, որ թէեւ Մայիս 22-ի նիստին ատենագրութիւնը պատրաստ է, բայց անոր, ինչպէս Մայիս 21-ի նիստին ատենագրութեանց ընթերցումը դարձեալ պիտի յետաձգուի, նկատելով որ ժողովականներէն մաս մը ուշ եկած ըլլալով՝ կարելի չէ եղած որոշուած ժամուն նիստը բանալ, եւ թէ բաւական ժամանակ չէ մնացած ժողովին աշխատութեանց: Ընդունուեցաւ:

2. Տեղեկատուութիւն Վսեմ. Նախագահին՝ դաշնագիրը քննելու համար Համագումարին կողմէ կազմուած յանձնաժողովին աշխատութեանց նկատմամբ

Նախագահ Վսեմ. Տիար Գաբրիէլ Նորատունկեան՝ Ազգ. Համագումարի կողմէ դաշնագիրը քննելու համար կազմուած յանձնաժողովին աշխատութեանց մասին հետեւեալ տեղեկատուութիւնը ըրաւ:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Յանձնաժողովը, զոր Համագումարը կազմած էր, երկու յաջորդական նիստերու ընթացքին նկատի առաւ դաշնագիրը եւ առանձին քննեց անոր գրեթէ իւրաքանչիւր տրամադրութիւնը: Գործը ժամանակի կարօտ էր: Թուրքիոյ հետ հաշտութեան դաշնագիրը կը պարունակէ 473 յօդուած եւ այս տեսակէտով՝ վերջին ատեններս կնքուած բոլոր դաշնագիրներուն մէջ կու գայ անմիջապէս վերջ Գերմանիոյ հետ կնքուած դաշնագրին, որ մօտաւորապէս 440 յօդուած ունէր: Մեր քննութիւնը գլխաւորաբար կեդրոնացաւ դաշնագրին այն կէտերուն վրայ, որոնք հեռուէն ու մօտէն առնչութիւն ունին Հայկական Խնդրին հետ: Ուզեցինք հասկնալ նախ, թէ ի՞նչ դիրք տրուած է հայ ազգին եւ մասնաւորաբար Հայաստանի, թէ հայոց իրաւունքները նկատի առնուա՞ծ են այնպէս, ինչպէս ամէնքս ալ կը բաղձայինք, որ առնուին: Յանձնաժողովը դեռ վերջնական կերպով լրացուցած չէ իր գործը, եւ, միւս կողմէ, տակաւին չէ կրցած տեղեկանալ Ազգ. Պատուիրակութեան կարգած յանձնաժողովին աշխատութեանց, որովհետեւ ժամանակը կը պակսէր: Յանձնաժողովոյ վերջին նիստին ներկայ էին նաեւ Ազգ. Պատուիրակութեան Վսեմ. Նախագահը եւ Տիար Աճէմօֆ: Տիար Աճէմօֆի առաջարկութեան վրայ՝ օգտակար նկատուեցաւ դաշնագրին կարգ մը դժուարին կէտերուն քննութեան համար կարծիքը առնել նաեւ եւրոպացի հեղինակաւոր մասնագէտի մը, որուն հետ խորհրդակցելու համար որոշուեցաւ կազմել մասնախումբ մը, անդամակցութեամբ Պ. Մանտէլշթամի, որ ծանօթ է մեր ազգին նկատմամբ ունեցած համակրութեամբ եւ իր օրէնսգիտական հմտութեամբ, Տիար Աճէմօֆի եւ նուաստիս: Ասիկա պիտի ըլլայ անմիջապէս եւ արդիւնքը պիտի հաղորդուի ժողովին: Սպասելով ատոր, անշուշտ անհամբեր էք իմանալու, թէ յանձնաժողովը ի՞նչ եզրակացութեանց յանգեցաւ դաշնագրին նկատմամբ:

Նախ ըսեմ, որ դաշնագիրը, իր ամբողջութեան մէջ, մեզի կ'ընծայէ կարգ մը առաւելութիւններ, զորս թանկագին կը նկատենք, որովհետեւ մեկուկէս տարիէ ի վեր անհամբեր կը սպասէինք ունենալ այդ առաւելութիւնները: Մխիթարական բան մըն է, որ գոնէ հիմա կը տրուին: Անոնց մէջ գլխաւորագոյնը սա է, որ Հայաստան կը հռչակուի կատարելապէս անկախ եւ ազատ պետութիւն, ձեռք կը բերէ միւս պետութեանց համահաւասար դիրք եւ նշանակութիւն: Հայերը վերջապէս կը թօթափեն ճնշուած ազգի իրենց հանգամանքը, կը դառնան անկախ ժողովուրդ, եւ յետոյ դաշնագիրը իբր

այդ իրեն իրաւունք կու տայ պայմաններ պարտադրելու Տաճկաստանի եւ անկէ պահանջներ ընելու: Ինչպէս ծանօթ է ժողովիդ, դաշնագրին սկիզբը Հայաստան հռչակուած է իբր Դաշնակից պետութիւն եւ այս պետութեանց գլուխը դասուած է այբուբենի կարգով, անմիջապէս վերջ Մեծն Բրիտանիայէն, Ֆրանսիայէն, Իտալիայէն եւ Ճապոնիայէն, որոնք կը կազմեն Դաշնակից գլխաւոր պետութիւնները: Արդ, դաշնագրին տրամադրութեանց մէջ կը տեսնենք, որ Դաշնակից պետութեանց տրուած են կարգ մը իրաւունքներ եւ առաւելութիւններ: Տարակոյս չկայ, որ հայերն ալ պիտի ունենան այդ իրաւունքները եւ պիտի վայելեն այդ առաւելութիւնները, քանի որ Հայաստան կը նկատուի Դաշնակից պետութիւն: Այդ իրաւունքներուն եւ առաւելութեանց մէջ՝ առաջին տեղը պիտի բռնէ այն դիրքը, զոր Երեւանի Հանրապետութեան եւ անոր կցուելիք Տաճկաստանի հողամասերուն միացմամբ կազմուած Հայկական Պետութեան քաղաքացիները պիտի ունենան Թուրքիոյ մէջ: Դաշնագիրը իրենց բոլոր զօրութեամբ կը վերահաստատէ երբեմնի capitulation-ները, որոնց պաշտպանութիւնը պիտի վայելեն բոլոր Դաշնակից պետութեանց հպատակները, ուրեմն նաեւ Հայկական Պետութեան հպատակները: Մինչդեռ երբեմն բայաներ էինք Տաճկաստանի մէջ, այսուհետեւ պիտի ունենանք եւրոպացի ժողովուրդներուն համահաւասար դիրքն ու առանձնաշնորհումները: Մասնաւոր կերպով ուրախ պէտք է ըլլանք այս արդիւնքին համար, որովհետեւ կան պետութիւններ, որոնց չէ տրուած այդ իրաւունքը, եւ որ անշուշտ մեզի կը տրուի այն մեծ զոհողութեանց փոխարէն, զորս կրեցինք պատերազմին մասնակցելով: Դարձեալ մեր՝ Դաշնակից պետութեան հանգամանքին շնորհիւ պիտի կրնանք վայելել Տաճկաստանի տնտեսութեան համար կազմուելիք կարգ մը յանձնաժողովներու մասնակցութեան իրաւունքը, ինչ որ անշուշտ այլապէս օգտակար պիտի ըլլայ մեր ազգին: Այդ յանձնաժողովներէն՝ մեզի զլացուած է Պոլսոյ եւ նեղուցներու վարչութեան յատուկ յանձնաժողովին մասնակցութեան իրաւունքը, անշուշտ անոր համար, որ ծովային պետութիւն մը չենք տակաւին, որքան ալ ելք մը պիտի ունենանք Սեւ Ծովուն վրայ: Դիտելի է, որ միեւնոյն նկատումով՝ Սեւ Ծովուն վրայ ելք ունեցող Վրաստանն ալ չի մասնակցիր այդ յանձնաժողովին:

Երկրորդ խնդիրը, որ մեր մասնաւոր ուշադրութեան առարկայ դարձաւ՝ Հայաստանի սահմաններուն հարցն էր: Դաշնագիրը վերջնական կերպով չէ ճշդած այդ սահմանները: Այս զանցառութեան մասին միանգամայն բարեբախտութեան ու դժբախտութեան նկատումներ իրարու կը զուգադիպէին: Եթէ այսօր ի վիճակի ըլլայինք անմիջապէս գրաւելու տրուելիք հողամասերը, եւ ատոնք որոշուած չըլլային, անշուշտ դժբախտ պիտի նկատէինք ինքզինքնիս: Բայց կերպով մը բարեբախտութիւն մը կը դառնայ այս զանցառութիւնը, քանի որ եթէ որոշուած ըլլային սահմանները, ատիկա պատճառ պիտի դառնար որ թուրքերը, այդ նահանգները փրկելու համար, յարձակին նոյնիսկ Հանր. կառավարութեան վրայ, ինչպէս կը յարձակին Իզմիրի եւ Կիլիկիոյ վրայ: Յետոյ, մխիթարական է, որ անոնց մասին իրաւարարութիւնը կը թողուի Ամերիկայի Հանրապետութեան Նախագահին: Ծանօթ ըլլալով այն ամեն յայտարարութեանց, որոնցմով Նախագահ Ուիլսոն միշտ շեշտած է հայոց արդար ըղձանքները պսակելու անհրաժեշտութեան ու քաղաքական անկախութեան տիրացման պէտքը, կրնանք լաւատես ըլլալ իր իրաւարարութեան մասին: Ասիկա պարզ նկատողութիւն մըն է, զոր կ'ընեմ:

Այս սահմաններու մասին: Դաշնագրին յօդուածներուն խմբագրութեան ձեւը բաւարար չէ, մինչդեռ ամեն իրաւունք ունինք լաւագոյն բանի մը սպասելու: Բայց կը կրկնեմ, որ մխիթարական տրամադրութիւններ ալ ունի Դաշնագիրը: Մինչեւ այս դաշնագրին խմբագրութիւնը՝ մեր պետութեան դիրքը կապուած էր Տաճկաստանէն անջատուելով անկախութիւն ստանալու կոչուած միւս ժողովուրդներու դիրքին հետ, որոնց խնամակալութիւնը, Ազգերու Ընկերակցութեան անունով, պիտի յանձնուէր զարգացեալ ազգի մը հոգատարութեան: Ընկերակցութեան կանոնագրին 22-րդ

յօդուածը կը տրամադրէր. «Կարգ մը ժողովուրդներ, որոնք երբեմն Օսմ. կայսրութեան կը պաքքանէին, հասած են զարգացման աստիճանի մը, որուն համեմատ կարելի է առժամաբար ճանչնալ զիրենք իբր անկախ ազգեր, պայմանաւ, որ հոգատարի մը խորհուրդներն ու օգնութիւնը ուղղեն իրենց վարչութեանը, մինչեւ այն ատեն, ուր պիտի կրնան ինքզինքնին կառավարել»: Դաշնագիրը մեր պետութիւնը կը հանէ այս դիրքէն, արդէն իսկ անկախ պետութիւն մը նկատելով, բայց եւ առ այդ՝ պէտք տեսնելով, որ Թուրքիոյ հայկական նահանգներուն կարեւոր մեկ մասը անոր միացուի: Ասոր մէկ առաւելութիւնը սա է, որ Դաշնակիցները հռչակած կ'ըլլան, թէ Հայաստան արդէն իսկ կարողութիւնն ունի ինքզինքը կառավարելու, եւ այս առաւելութեան մէկ կարեւորութիւնը այն ատեն միայն կրնանք ըմբռնել, երբ կը մտածենք, թէ ատոր ուղղակի հետեւանքով Հայաստան ալ կրնայ շուտով աթոռ մը ունենալ Ազգերու Ընկերակցութեան մէջ: Մինչդեռ եթէ հոգատարութեան ենթարկուած ըլլայինք, ինչպէս օրինակի համար Սուրիա, Միջագետք, Պաղեստին, երկար ատեն մեզի անկարելի պիտի ըլլար ատիկա: Իմ անձնական կարծիքս է, որ Ազգերու Ընկերակցութեան մէջ աթոռ մը ունենալը շատ թանկագին առաւելութիւն մըն է մեր պետութեան համար: Ատիկա ո'չ միայն մեծ նշանակութիւն մը կ'ընծայէ հայոց, այլ պիտի ունենայ իր անհաշուելի օգուտները մեր ժողովուրդին համար: Ասիկա կ'ըսեմ՝ որովհետեւ ես թերահաւատ չեմ Ազգերու Ընկերակցութեան մասին, համոզուած եմ, որ ապագային շատ նշանաւոր դեր մը պիտի խաղայ մարդկութեան համար:

Յետոյ կայ նաեւ Կիլիկիոյ սահմաններուն հարցը: Դաշնագրին ընկերացող քարտէսը ցոյց կու տայ, որ Կիլիկիա երկու մասի կը բաժնուի: Մեծագոյն մասը կը մնայ Տաճկաստանի, բայց քանի մը գաղաներ եւ թերեւս սանճագ մը, որոնք տնտեսապէս հարստագոյն մասերն են Կիլիկիոյ, կը մնան դուրս, իբր Սուրիոյ մաս: Ասոնց մէջ է նաեւ զուտ հայ ոստան մը, Տէօրթ Եօլը, ուր մեր պատուական անդամակիցը, Տիգրան Խան Քէլէկեան, իր ծանօթ առատաձեռնութեամբ տարիներէ ի վեր կը պահէ մասնաւոր որբանոց մը, որուն ընծայած օգուտները կարծեմ պէտք չկայ թուելու: Անշուշտ փափաքելի էր, որ ոեւէ անջատում չըլլայ Կիլիկիոյ եւ պահուի անոր քաղաքական ու տնտեսական ամբողջութիւնը: Այդ ուղղութեամբ կարելի է աշխատիլ նորէն:

Երրորդ խնդիրը, զոր ամէնէն աւելի ուշադրութեան նկատի առինք Դաշնագրին քննութեան միջոցին՝ փոխարինութեանց եւ վնասուց հատուցման խնդիրն էր: Կը ցաւիմ ըսելու եւ անշուշտ ամէնքդ ալ այստեղ կը բաժնէք այս ցաւը, որ այդ մասին մեր ունեցած ակնկալութիւնները չեն պսակուած Գերագոյն Խորհուրդին կողմէ: Իրաւ է, որ այս տեսակէտով միանակ մենք չենք անիրաւուած, ուրիշ ազգերու ալ միեւնոյն զրկանքը եղած է, բայց ասիկա չի կրնար մխիթարութիւն մը դառնալ մեզի: Մենք պատերազմին մէջ ամէնէն աւելի տուժող ժողովուրդներէն մէկն եղանք: Անձի կորուստն շատ նուիրական անսահման վնասներ ունեցանք: Գրեթէ կէս առ կէս փճացանք: Մասնաւոր միջոցներ պէտք էին մեր վերականգնութեան համար, եւ այս մասին իրաւունք ունէինք շատ բան ակնկալելու Գերագոյն Խորհուրդէն, մտաբերելով այն անձնուէր աջակցութիւնը, զոր ընծայեցինք իրենց յաղթանակին համար: Չեմ ըսեր, որ դաշնագիրը այդ մասին բնաւ գոհացում չի տար մեր ժողովուրդին. տրամադրութիւններ կան, որոնք որոշ հատուցումներ կ'ապահովեն: Բայց մեր իրաւունքներուն եւ այդ մասնակի հատուցմանց միջեւ խրամատը շատ լայն է: Ո'չ մէկ տրամադրութիւն կայ նաեւ Հայաստանի կցուելիք նահանգներուն՝ Վանի, Պիթլիսի, Էրզրումի արդի դրութեան բարւոքման մասին: Գիտենք, թէ ինչ խեղճ կացութեան մը մատնուած են այդ նահանգները: Այնպէս՝ ինչպէս մեզի պիտի դարձուին, բեռ են, քան շնորհ: Եւ մեր ազգին սեփական միջոցները այնքան մեծ բաներ չեն, որ մինակնիս կարենանք անոնց վերականգնումն իրականացնել: Այս մասին՝ հատուցման կամ փոխարինութեան իրաւունքնիս արդար է, եւ անշուշտ պէտք է ջանալ, որ կատարուելիք նոր աշխատութեանց ընթացքին մեր այդ իրաւունքն ալ արժեցուի: Դաշնագիրը, որ այդ տեսակէտով ոչինչ կը տրամադրէ, միւս կողմէ հարկ մըն ալ դրած է

այդ նահանգներուն վրայ, այսինքն՝ Թուրքիոյ հանրային պարտուց այն բաժինը, զոր Հայաստան պիտի ստանձնէ այդ նահանգներուն տիրանալով: Թէ իրապէս ի՞նչ պիտի ըլլայ այդ գումարը՝ չենք գիտեր: Բայց կրնանք մերձաւոր հաշիւ մը ընել անոր մասին: Թուրքիոյ ընդհանուր հաշիւները, Պալքանեան պատերազմէն ետք եւ վերջին պատերազմէն առաջ, կը հասնէին տարեկան 28 միլիոն ոսկիի: Ըսենք 30 միլիոն, որպէսզի աւելի դիւրանայ մեր այս վերիվեր հաշիւը: Արդ, վերոյիշեալ երեք վիլայէթները՝ Վան, Պիթլիս, Էրզրում ի՞նչ բաժին ունէին այդ ընդհանուր հաշիւներու մէջ: Կը գտնենք 7-800 000 ոսկի: Աս ալ ենթադրենք մէկ միլիոն, հաշուի նոյն դիւրութեան համար: Ուրեմն՝ Թուրքիոյ ընդհանուր հասոյթներուն 30-էն մէկ բաժինը կը գոյանար յիշեալ երեք վիլայէթներէն: Դաշնագիրը 162 միլիոն ոսկի կը գնահատէր Թուրքիոյ ընդհանուր պիւտճէն: Ուրեմն՝ այդ 162 միլիոնին մէկ յիսներորդ մասը պիտի իյնայ Հայաստանի, այն է՝ 5 ու կէս միլիոն ոսկիի պարտք մը, որ 5% -էն կամ 6 տոկոսով՝ կ'ենթադրէ մօտաւորապէս 300 000 ոսկիի տարեվճար մը: Բայց այս գումարէն պէտք է զեղչել գէթ 1/3-ը, քանի որ վերոյիշիալ նահանգներէն քանի մը սանճագներ, ինչպէս Հէքիարի, Սղերդ, եւ այլն Տաճկաստանի կը մնան, որով հայկական պետութեան իրազեկ տարեվճարը, միշտ մերձաւոր հաշուով, կ'իջնէ 200 000 ոսկիի: Կան տակաւին կարգ մը նկատումներ ալ, զորս երկար կ'ըլլայ թուել հիմա, եւ որոնց շնորհիւ կարելի է դեռ զգալի զեղչ մը ընել այդ գումարին վրայ: Անշուշտ արդար պիտի ըլլար, որ Հայկ. Պետութեան ինկած այս պարտքը փոխարինուէր, ինչպէս ըսուած էր Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան Յիշատակագրին մէջ, մեր ազգին կրած վնասուց հատուցման իրաւանց մէկ մասին հետ:

Ուրիշ խնդիր մը, որ մեր ուշադրութեան առարկայ եղաւ՝ ազգայնութեան խնդիրն էր: Ո՞ր հայերը պիտի կրնան Հայաստանի հպատակ ըլլալ. ինչպէ՞ս կարելի պիտի դառնայ պսակել օտար հպատակութեան մեջ գտնուող հայոց Հայաստանի հպատակութիւնը ընդունելու արդար բաղձանքը: Նաեւ՝ քաղաքական ի՞նչ իրաւունքներ պիտի վայելեն Թուրքիոյ մէջ հպատակութիւննին անփոփոխ մնացած հայերը: Բարդ խնդիրներ են ասոնք: Հայերը միայն ռուսական կամ թրքական հպատակութեան մէջ չէին գտնուեր. շատեր հպատակ են եւրոպական պետութեանց եւ Ամերիկայի: Կան հայեր, որոնք պարագաներու բերմուվ ստիպուած էին քանի մը հպատակութիւն իսկ ունենալ: Այն օրէնսգէտներու մասնախումբը, որուն կազմութիւնը ծանուցի, առանձինն պիտի քննէ այս հարցերը: Այն ձեւով, ինչպէս որ կը ներկայանայ այսօր այդ խնդիրը, երկիւղի տեղի տալու հանգամանք մը չունի: Վտանգի տեսակէտէն աւելի՝ բարդութեան ու դժուարութեան տեսակէտէն են, որոնք մեզ մտահոգ կ'ընեն: Որովհետեւ ամեն պետութեան հպատակ հայոց համար՝ լուծման ձեւը նոյնը չէ: Օրինակի համար, Եգիպտոս գտնուող հայերը պիտի կրնան տեղափոխել իրենց հպատակութիւնը: Բայց տարբեր պետութեան մը հայ հպատակներուն համար պիտի ծագին դժուարութիւններ: Հայկական պետութիւնն ալ, տակաւին նոր կազմուած, միջոց չէ ունեցած այս խնդրին անդրադառնալու եւ կապ մը ստեղծելու իրեն ու աշխարհիս չորս կողմը ցրուած հայերու միջեւ: Երէկ՝ Յանձնաժողովս յարմար նկատեց առաջարկել Տիար Ահարոնեանի, որ հանրապետութեան կառավարութիւնը անմիջապէս հպատակութեան առժամեայ օրենք մը պատրաստէր, հակիրճ բայց որոշ օրէնք մը, քանի մը յօդուածով, որով հռչակուի, թէ ամեն հայ՝ ի'նչ թեմի մեջ ալ ծնած ըլլայ եւ կամ ո'րտեղ ալ գտնուի, իրաւունք ունի Հայկական հպատակ ըլլալու, եւ հանրապետութեան կառավարութեան կամ անոր արտասահմանի ներկայացուցիչներուն դիմելով ստանալու ազգայնութեան վաւերագիր մը: Ճիշդ է, որ հիմա ամեն հայ Հանրապետութեան ներկայացուցիչներէն կը ստանայ անցագիր՝ ճամբորդութեանց համար, բայց անցագիրը՝ հպատակութեան խնդրին մէջ այն չէ, ինչ որ կրնար ըլլալ ազգայնութեան վաւերագիրը: Անցագիրը արտօնութիւն մըն է պարզապէս եւ չի' բաւեր հպատակութեան բացարձակ փաստ դառնալու: Կը յուսանք, որ այդ օրէնքը երբ հաստատուի հայկական կառավարութեան կողմէ, պիտի կրնայ

միջոց մը դառնալ, որուն ոյժով ամեն հայ, որ կը բաղձայ իր ազգային պետութեան հպատակութիւնն ընդունելու, իր դիրքը ճշդէ օրինական հիման վրայ:

Տիար Քէլէկեան Խան. Միւս տերութիւնները թոյլ պիտի տա՞ն, որ իրենց հպատակ հայերը փոխեն հպատակութիւնին:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Միջազգային օրէնքով՝ իւրաքանչիւր տէրութիւն allégeance կանոններ ունի: Պետութիւններ կան, որոնք իրենց հպատակներուն կ'արգիլեն հպատակութեան փոփոխութիւնը: Օրինակի համար, Թուրքիոյ հպատակ մը չէր կրնար օտար պետութեան մը հպատակ դառնալ ինք իր գլխուն եւ Թուրքիա դառնալով վայելել այն առանձնաշնորհումները, որոնք յատուկ էին օտար պետութեանց հպատակներու: Ուրիշ պետութիւններ բնաւ արգելք չունին այս մասին, ազատ կը թողուն իրենց հպատակները, որ իրենց յարմար թուած պետութեան հպատակութիւնն ընդունին՝ բացի եթէ զինուորական ծառայութեան մէջ են: Ոմանք ալ նոյն ազատութիւնը կու տան այն պայմանաւ, որ հպատակութիւննին փոխած իրենց հպատակները արտասահմանի մէջ միայն կարենան արժեցնել այդ նոր հանգամանքը, եւ իրենց մայր երկիրները դառնալուն պէս նորէն անոր հպատակ նկատուին:

Հայոց համար՝ անսովոր վիճակի մը բերմունքն էր մանաւանդ պատճառը, որ օտար հպատակութիւններ փնտրելու մղուեցան: Ջարդերէ եւ հարստահարութենէ նեղուող ժողովուրդը ստիպուեցաւ լքել իր հայրենիքը եւ արտասահման անցնելով ապաւինիլ ոեւէ օտար պետութեան մը պաշտպանութեան: Հանրապետութեան կառավարութիւնն անշուշտ պիտի պարզէ այս տեսակէտը, աւելցնելով, որ հիմա այլեւս այդ անսովոր վիճակը գոյութիւն չունի, որով պէտք չէ արգելք մը ըլլայ, որ ոեւէ հայ չդառնայ իր հայրենիքը, եւ իբր հայ չընդունի իր ազգային պետութեան հպատակութիւնը: Յուսալի է, որ ո՛չ մէկ պետութիւն ուզէ հայոց զլանալ այս բնական իրաւունքը:

Ուշադրութեան առնենք նաեւ այն պայմանները, որոնց պիտի ենթարկուին իրենց նախնի կամ հպատակութեամբ Թուրքիոյ սահմաններուն մէջ մնալիք հայերը: Այդ պայմանները մանրամասնուած են դաշնագրին Droits des Minorités վերնագիրը կրող մասին մէջ: Կարելի է ըսել, որ դաշնագիրն ամէնէն խնամով պատրաստուած մասը այդ է: Անոր մէջ՝ ապահովութիւններ կ'ընծայուին ո՛չ միայն հայոց, այլ նաեւ բոլոր միւս տարրերուն: Անցողակի կը յիշեմ անոնցմէ գլխաւորները. բռնի իսլամացողները ազատօրէն կը վերադառնան իրենց մայրենի տեղերը. էմվալը Մէթրուքէի Օրէնքը, որով թուրք պետութիւնը գրաւած էր տարագիր եւ տեղահան եղած Հայոց կալուածներն ու ստացուածքը, կը ջնջուի եւ այդ գրաւումները կը վերադարձուին իրենց տէրերուն կամ ազգին, եթէ տէրերը մեռած են. թուրք կառավարութեան վրայ հարկ կը դրուի հայթայթել քանդուած վայրերու վերաշինութեան համար անհրաժեշտ գործաւորներ. ջարդերու եւ տեղահանութեանց դերակատարներն ու թելադիրները կը հեռացուին կամ դատի կ'ենթարկուին. ասոնց մասին ամբողջ գլուխ մը կայ դաշնագրին մէջ. Ազգ. Սահմանադրութեան ու Պատրիարքարանի առանձնաշնորհումները կը վերահաստատուին. լեզուի ազատութիւն կը հռչակուի նոյնիսկ դատարաններու առջեւ թուրք կառավարութիւնը յանձն կ'առնէ ճանչնալ ոչ-թուրք վարժարաններու բոլոր վկայականները. ընտրական օրէնքը կ'ենթարկուի այն տեսակ պայմաններու, որ փոքրամասնութիւնները կարենան օգտուիլ իրենց բոլոր իրաւունքներէն: Չեմ թուեր ամեն բան՝ մտածելով, որ առիթ ունեցաք աչքի անցընելու դաշնագիրը: Այս տրամադրութիւնները Թուրքիոյ դաշնագրին մէջ մեծ մասամբ նոյնն են, ինչ որ էին Գերմանիոյ եւ միւս թշնամի պետութեանց հետ կնքուած դաշնագիրներուն մէջ: Հիմնական անխախտ տրամադրութիւններ են բոլոր Եւրոպայի համար եւ իբր այդ՝ սրբագրելի լոկ Ազգերու Ընկերակցութեան կողմէ: Միւս կողմէ՝ այդ տրամադրութիւնները ենթարկուած են փոխադարձութեան տեսակէտի մը, որ նոյնպէս պարտադիր պիտի ըլլայ: Օրինակի համար՝ ինչպէս որ հայեր պիտի մնան Թուրքիոյ

սահմաններուն մէջ, թուրքեր ալ պիտի մնան Հայաստանի սահմաններուն մէջ: Եւ ինչպէս որ թուրքերը պարտաւորութիւններ ստանձնած են իրենց սահմաններուն մէջ մնացած հայ փոքրամասնութեանց մասին, պարտաւորութիւններ պիտի ստանձնէ նաեւ Հանրապետութեան կառավարութիւնը՝ իր սահմաններուն մէջ մնալիք թուրք փոքրամասնութեանց մասին: Առ այս՝ Գերագոյն Խորհուրդը Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեանը տուած է օրինագծի պատճէն մը, որուն մէկ օրինակը անցեալ նիստին Դիւանիս յանձնուեցաւ եւ որ այժմ Համագումարի Յանձնաժողովին մօտն է:

Մեր պարտքն է հիմակ խորհիլ, թէ ի՞նչ միջոցներով պիտի կրնանք դաշնագրին այն պակասաւոր կէտերուն սրբագրութեան եւ մեզի համար աւելի որոշ ու նպաստաւոր տրամադրութեանց հաստատման աշխատիլ: Դաշնագիրը մեզ տարօրինակ դիրքի մը մէջ դրած է: Անիկա Թուրքիոյ կը ներկայացուի նաեւ մեր անունով, իբր թէ մենք ալ Դաշնակից պետութեանց հետ գլուխ-գլխի աշխատած ըլլայինք անոր պատրաստութեան: Մինչդեռ իրականութիւնը հակառակն է, ինչպէս Պատուիրակութեան Վսեմ. Նախագահը պարզեց մեր անցեալ նիստին մէջ: Ամեն բան խմբագրուած է մեզմէ գաղտնի: Եւ մինակ մեզի չէ եղած ասիկա: Բոլոր պզտիկ ազգերն ալ այդպէս հեռու պահուած են դաշնագրին պատրաստութենէն: Նոյնիսկ Հիճազ, որ մեզի հետ Դաշնակից պետութիւն կը հռչակուի, անտեղեակ էր իր մասին տրուած որոշումներէն, ինչպէս իր ներկայացուցիչներն իսկ անձամբ յայտնեցին ինծի: Եթէ Նախագահ Ուիլսոն Հայաստանի սահմանները որոշելու առթիւ յայտնէ, թէ արդարութիւն չէ, որ Տաճկաստանէ անջատուելով Հայաստանի կցուելիք նահանգները տրուին այն վիճակով, որուն մէջ կը գտնուին այսօր, հաւանական է որ այս արդարացի դիտողութիւնը Գերագոյն Խորհուրդը մղէ մեր տեսակէտին համապատասխան կարգադրութիւն մը ընելու: Արդէն օրինակները կան: Գերմանիոյ վրայ պարտք դրուեցաւ վերաշինելու Պելճիքայի այն մասերը, որոնք քանդուած էին պատերազմին ընթացքին. նաեւ՝ հատուցելու այն արջառները, զորս գրաւած էր: Նմանօրինակ պարտք մըն ալ դրուեցաւ Պուլկարիոյ վրայ՝ Սերպիոյ հանդէպ: Եթէ Նախագահ Ուիլսըն իր պատասխանին հետ այս իմաստով պահանջ մը դնէ, թերեւս անկարելի չդառնայ մեզի ի նպաստ կարգադրութիւն մը ձեռք բերել՝ դրամով եւ կամ արջառ ստանալով, վերոյիշեալ նախընթացներուն հիման վրայ: Պատուիրակութեան Վսեմ. Նախագահն ու նուաստս, ասոր ի նախատեսութիւն՝ անցեալ օր այս գաղափարը յայտնեցինք ամերիկեան դեսպանին: Ըսելէ ետք, թէ շատ գոհ ու երջանիկ ենք, որ Նախագահ Ուիլսըն ընդունեց Գերագոյն Խորհուրդին կողմէ եղած իրաւարարութեան առաջարկն, աւելցուցինք, թէ այն պայմաններուն մէջ, որոնցմով մեզի կը տրուին այդ նահանգները, շնորհ մը ըլլալէ աւելի բեռ պիտի դառնան նորակազմ հայկական պետութեան, քանի որ անոնց մէջ ամեն բան աւերակ ըլլալով, հնարաւոր չէ ոեւէ արդիւնաբերութիւն, պարագայ, զոր հաւանականապէս Գերագոյն Խորհուրդը մոռացմամբ նկատի չէ առած: Դեսպանը ամենայն սիրով պատրաստակամութիւն յայտնեց իր կողմէ ամեն ոյժ տալու մեր առաջարկութեան եւ փափաք յայտնեց, որ այդ մասին ծանօթագիր մը տանք իրեն, որպէսզի անմիջապէս հաղորդէ Ուաշինկթոնի կառավարութեան, ստիպողական կարգադրութիւն մը յանձնարարելով:

Դաշնագրին պակասաւոր կէտերուն նկատառման համար ուրիշ պատեհութիւն մըն ալ կրնան դառնալ այն հակառաջարկները, զորս հաւանական է, որ ընէ Տաճկաստան՝ եթէ առանց բոլորովին մերժելու դաշնագիրը, անոր վերաքննութիւնը պահանջէ: Այդ պարագային հարկաւ մեզի ալ դիւրութիւն կ'ըլլայ մեր տեսակէտով գոհացումներ ձեռք բերելու: Միւս կողմէ, դաշնագրին 90-րդ յօդուածը կը տրամադրէ, որ յետագայ դաշնագրութիւններով կարգադրուին այն բոլոր խնդիրները, որոնք կարգադրուած չեն ներկայ դաշնագրով: Ան ալ անշուշտ առիթ կ'ընծայէ թերի խնդիրներու լուծման: Կան նաեւ ինչ-ինչ խնդիրներ, որոնց լուսաբանութեան համար

Գերագոյն Խորհուրդին մեկնաբանութեան դիմելով՝ կրնանք թերեւս լուծել տալ մեր տեսակէտներուն համաձայն եղանակով մը:

Ահա', Տիա'րք, ընդհանուր գիծերուն մէջ այս է դաշնագիրը: Անոր մէջ կան բարեփոխման կարեւոր կէտեր, եւ ինչպէս քիչ առաջ ըսի, բարեփոխելու եղանակներ չեն պակսիր: Նոր ջանքեր պէտք են անշուշտ, ջանքեր, որոնք պէտք է ըլլան շուտով: Եւ տարակոյս չկայ, որ ո'չ ոք ասանկ որպէի մը պիտի թերանայ իր պարտաւորութեանց մէջ: Մաղթենք միայն եւ ջանանք, որ հաշտութեան խնդիրը շուտով հասնի իր վախճանին, որովհետեւ, եթէ երկարի՝ հետեւանքը լաւ չպիտի ըլլայ մեր եղբայրներուն համար, որոնք անդին, մեծ մասամբ անօթի ու անապաւէն կը մնան, ոմանք տակաւին անապատները, վրաններու տակ, ուրիշներ նոյնիսկ վրանէ ալ զուրկ, ձեռքերնին բաց, եւ որոնք մեծ ակնկալութիւններով կը նային Եւրոպայի, թերեւս կը նային նաեւ Ազգ. Պատուիրակութեան եւ Համագումարիս ալ, վայրկեան մը առաջ դարման մը սպասելով իրենց ողբալի դրութեան: Պէտք է, ուրեմն, որ երկրորդական պատճառներով չյամենայ այս խնդրին կարգադրութիւնը, դաշնագիրը ստանայ վերջնական հանգամանք, Հայաստան օժտուի բնականոն վիճակով մը եւ կարելի ըլլայ փրկել կեանքերը, որոնք վտանգի մէջ են: Ներկայիս՝ ամէնէն անհրաժեշտ բանը այս է: Դժբախտաբար, զինադադարէն ի վեր մէկ ու կէս տարի անցաւ ապարդիւն եւ այս մէկ ու կէս տարիները քանի մը հարիւր հազար անձի կորուստ արժեցին մեզի, ինչպէս տխուր առիթը ունեցան ստուգելու ամեն անոնք, որոնք Հայաստան այցելեցին: Եւ այս կորուստը միշտ պիտի բազմապաքթուի, քանի յամենայ դաշնագրին վաւերացումն ու գործադրութիւնը:

Տիար Ա. Թէրզիպաշեան. Ըստ իս՝ դաշնագրին Հայաստանի վերաբերեալ յօդուածներու թերութիւնները ձեւական բնոյթ չունին լոկ: Ընդհակառակը, կը պնդեմ, որ այդ յօդուածներուն մէջ թողուած է Թրքահայաստանի հարցը: Ի՞նչ կ'ըսէ 88-րդ յօդուածը. «Թուրքիա յանձն կ'առնէ ճանչնալ Հայաստանը իբր ազատ եւ անկախ պետութիւն, ինչպէս ճանչցած են Դաշնակից պետութիւնները»: Արդ, Դաշնակից պետութիւնները հետեւեալ ֆորմուլով ճանչցած էին Հայաստանի անկախութիւնը. «Հայկական պետութեան կառավարութիւնը գոյապէս ճանչցուած է: Այս ճանաչումը չի կանխորոշեր այս պետութեան ապագայ սահմաններու խնդիրը»: Հետեւաբար, Թուրքիա, ստորագրելով դաշնագիրը, ճանչցած պիտի ըլլայ միայն այն Հայաստանը, զոր Դաշնակիցները իրենք ճանչցած էին, այսինքն՝ Երեւանի Հանրապետութիւնը իր արդի սահմաններուն մէջ: 89-րդ յօդուածին մէջ ուր, կը կարծենք, թէ Թրքահայաստանի հարցը վճռուած է, մենք ոչինչ կը տեսնենք որոշ. այնտեղ վճռուած սկզբունք մը գոյութիւն չունի. հիմ մը չէ դրուած. յօդուածը լոկ սահմանագծութեան վերաբերող անորոշ տրամադրութիւն մը ունի: Քննենք, թէ ի՞նչ կըսէ այդ յօդուածը. «Թուրքիա եւ Հայաստան, ինչպէս նաեւ ստորագրող միւս կողմերը, կը համաձայնին Ամերիկայի Նախագահին իրաւարարութեան ենթարկել Թուրքիոյ եւ Հայաստանի սահմաններուն գծումը, Էրզրումի, Վանի, Պիթլիսի եւ Տրապիզոնի վիլայէթներուն մէջ»: Եթէ դաշնագիրը ուզած ըլլար Թրքահայաստանի մասին վճռական բան մը ըսել, պէտք է ըսէր, թէ Թուրքիա կ'ընդունի վերոյիշեալ չորս վիլայէթներու մէջ անկախ Հայաստանի մը գոյութիւնը, որուն կը միանայ Ռուսական Հայաստանը, կամ որ կը միանայ Ռուսական Հայաստանին: Այս վերջին զանազանութիւնը հիմա չենք փնտռեր, որովհետեւ դաշնագրին մէջ հարցին էութիւնն իսկ ուրացուած է: Սկզբունքային այսպիսի որոշում մը արձանագրելէ վերջ էր, որ սահմանագծումը կարելի էր ենթարկել ոեւէ իրաւարարութեան: Այդպիսի բան մը եղած չէ դաշնագրին մէջ: Այն հարցը, որ միջազգային իրաւարարութեանց մէջ յաջորդաբար նուիրագործուած էր 61-րդ յօդուածով, Մայիսեան ծրագրով, Յունուարի ռեֆորմներով եւ որուն համար միլիոնաւոր կեանքեր զոհուեցան, թողուած է դաշնագրին մէջ: Դաշնագրին 89-րդ յօդուածին մէջ սահմանագծման պայման կայ միայն, ուրիշ ոչինչ. եւ այդ պայմանը դրուած է շատ աղօտ կերպով, առանց վերապահումներու, այնպէս որ եթէ Նախագահ

Ուիլսոն չընդունի իրաւարարութեան առաջարկը, կամ հիւանդանայ, հրաժարի, եւ կամ եթէ քաղաքական անցքեր անհնար դարձնեն այդ իրաւարարութիւնը, ո'չ մէկ միջոց չի մնար, ո'չ մէկ ուրիշ ճանապարհ չի ստեղծուիր, քանի որ դաշնագրին մէջ էութիւն մը չէ վճռուած, այլ լոկ՝ մանրամասնութիւն մը: 89-րդ յօդուածին մէջ չկայ նաեւ այն տեսակ տրամադրութիւն մը, որ պարտաւորութիւնը դնէր իրաւարարին վրայ յիշեալ չորս վիլայէթներէն անպատճառ հողամասեր միացնելու համար Հայաստանի:

Միւս կողմէ՝ 90-րդ յօդուածին սկիզբը ըսուած է. «Այն պարագային, եթէ այդ վիլայէթներուն մէկ մասը կամ ամբողջութիւնը [փոխուի]» նաեւ՝ 91-րդ յօդուածին սկիզբը՝ «Եթէ ոեւէ հողամաս մը Հայաստանի կցուի». ինչ որ կ'ենթադրէ, թէ չկցուելու պարագան ալ նախատեսուած է: Եթէ հարցը վճռուած ըլլար ըստ էութեան, այնպէս ինչպէս վերը բացատրեցի, ո'չ միայն փրկուած կ'ըլլար, այլ նաեւ իրաւարարութեան անպայման կերպով յապաղման կամ ըստ կամս մեկնուելուն վտանգներն ալ գոյութիւն չէին ունենար: Մինչդեռ հիմա, հարցը ուրացուած է, եւ այդ չորս յօդուածներուն մէջ մէկ որոշ բան միայն ըսուած է, այն՝ թէ կը ճանչնան Ռուսահայաստանի անկախութիւնը. գոյապէ՞ս թէ իրաւապէս՝ խնդիր չէ, որովհետեւ մէկ կամ միւս ձեւով այդ Հայաստանը կապուած է Ռուսաստանի պայմաններուն հետ եւ ենթակայ կը մնայ անոր ոտնձգութեան: Մենք ուրախ ենք անշուշտ, որ ճանչցուած են Հայկ. Հանրապետութեան շատ մը իրաւունքներ, բայց չենք կրնար անտեսել, թէ Դաշնակիցները չեն վճռած Հայկական Հարցին այն մասը, որուն բախտը լրիւ կախուած կը մնար իրենց որոշումէն, թէ անոնց կողմէ տրուած որոշումը այդ մասին աղօտ է եւ անբաւարար: Կ'առաջարկեմ, ուրեմն, անմիջապէս դիմում կատարել, եւ եթէ, ինչպէս ոմանք կը կարծեն, եղածը խմբագրութեան ձեւական թերութիւն մըն է, աշխատիլ, որ այդ թերութիւնը սրբագրուի: Ամեն պարագայի մէջ, ըլլա'յ խմբագրութեան թերութիւն, ըլլա'յ նպատակաւոր անտեսում, անհրաժեշտ է կատարել բոլոր ջանքերը որպէսզի մասնաւոր յօդուածի մը մէջ յիշատակուի եւ վճռուի Թրքահայաստանի անկախութեան հարցը:

Տիար Թէրզիպաշեանի այս յայտարարութեան վրայ տեղի ունեցաւ կարծեաց փոխանակութիւն մը՝ մասնաւորաբար Թրքահայաստանի հարցին եւ անոր էութեան սպառնացող վտանգին նկատմամբ: Տիարք Տէր-Ստեփանեան եւ Արտաւազդ Հանըմեան այդ մասին համակարծիք ըլլալով Տիար Թէրզիպաշեանի, միեւնոյն կերպով շեշտեցին ազդու եւ անմիջական դիմումներ ընելու անհրաժեշտութիւնը: Փափաք յայտնուեցաւ այս առթիւ, որ աշխատուի Նախագահ Ուիլսընի իրաւարարութեան վճիռը ուենեալ դաշնագրին ստորագրութեան թուականէն առաջ: Ազգ. Պատուիրակութեան Նախագահ Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար յայտարարեց, թէ նախապէս այն վստահութիւնն ունէին, որ մինչեւ դաշնագրին ստորագրութեան թուականը Նախագահին վճիռը հասած կ'ըլլայ, բայց երկու օրէ ի վեր միայն յայտնի եղաւ, որ պիտի հասնի աւելի ուշ, դաշնագրին ստորագրութենէն ետք, ինչ որ, յարեց, նոր վտանգ մը կը ստեղծէ մեր դատին համար: Ն. Վսեմութիւնը յայտնեց, թէ ջանք չի խնայուիր նաեւ այս վտանգը հեռացնելու համար, ո'չ միայն այստեղ, այլ նաեւ Ամերիկայի մէջ, դիւանագիտական եւ զինուորական առաքելութեանց կողմէ:

Համագումարը որոշեց, որ պատգամաւորներէն անոնք, որ կը փափաքին, կարենան ներկայ գտնուիլ այն աշխատութեանց, զորս պիտի կատարէ օրէնսգէտներու մասնախումբը, որուն կազմութիւնը ծանուցած էր Վսեմ. Նախագահը: Համագումարը որոշեց նաեւ, որ այդ մասնախումբին խորհրդակցութեանց արդիւնքը, Ազգ. Պատուիրակութեան կարծիքին հետ, ներկայացուի Ժողովին քննութեան:

Նիստը փակուեցաւ ժամը 7 1/2-ին:

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 59, թթ. 25-44: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ է

28 Մայիս 1920, ժամը 4-ին,
նախագահութեամբ Տիար Գ. Սինապեանի:

Ներկայ էին 18 պատգամաւոր՝

Տիարք՝ Աղաթօն Պէյ, Տոքթ. Ա. Բարսեղեան, Ամեն. Դուրեան Արքեպիսկոպոս, Դաւիթ-Բէկ, Թէրզիպաշեան, Վահան Թէքէեան, Բրօֆ. Թումայեան, Արտաւազդ Հանըմեան, Մսըրլը Պէյ, Տոքթ. Նեւրուզ, Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար, Չօպանեան, Սինապեան, Տէրպէտէրեան, Ն. Տէր-Ստեփանեան, Տէօվլէթեան, Ֆնտգլեան Գառնիկ:

ՕՐԱԿԱՐԳ

1. Շարունակութիւն վիճաբանութեան Ազգ. Պատուիրակութեան համարատուութեան
2. Տեղեկագիր հաշուական գործառնութեանց Ազգ. Պատուիրակութեան
3. Տեղեկագիր Կազմական Կանոնագրի Յանձնախումբին
4. Վերակազմութիւն Ազգ. Պատուիրակութեան

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Ընթերցում ատենագրութեան

Կարդացուեցան եւ վաւերացուեցան Մայիս 21-ի, Մայիս 22-ի, Մայիս 26-ի նիստերուն ատենագրութիւնները:

2. Խնդիր մանտայի հարցին նկատմամբ Ամերիկայի մէջ եղած յայտարարութեան

Ազգ. Պատուիրակութեան անդամները, ինչպէս Համագումարի Նախագահ Վսեմ. Տիար Գաբրիէլ Նորատունկեան, կարեւոր խորհրդակցութեան մը համար ստիպուած ըլլալով բացակայիլ, որոշուեցաւ օրակարգի չանցնիլ:

Տիար Աւետիս Թէրզիպաշեան Ժողովին ուշադրութիւնը հրաւիրեց Ուաշինկթոնէն «Նիւ Եորք Հերալտ»-ի ուղղուած Մայիս 27 թուակիր հետեւեալ հեռագրին վրայ.

«Ուաշինկթոն, 27 Մայիս. 4-ի դէմ 11 քուէով Ծերակոյտի Արտաքին Գործոց Յանձնախումբը ընդունեց Քոնէքթիքէթի իր ծերակուտական Մր. Պրէնճիի որոշումնագիրը, որով Յանձնաժողովը յարգալից կերպով կը մերժէ Միացեալ Նահանգները արտօնել՝ ընդունելու Հայաստանի մանտան:

Առտու կանուխ՝ էրզրումի Եպիսկոպոսը տեսակցութիւն մը ունեցաւ ծերակուտական Լօճի հետ եւ թարգմանի մը միջոցաւ անոր տեղեկացուց, թէ հայերը չեն ուզեր, որ Միացեալ Նահանգները մանտան ընդունին, զգալով որ մանտային ընդունելութիւնը զիրենք հպատակները պիտի դարձնէ այդ երկրին, մինչդեռ իրենք կատարեալ անկախութիւն կը պահանջեն»:

Պ. Թէրզիպաշեան՝ յայտնելէ ետք, թէ հեռագրին մեջ յիշատակուած «էրզրումի Եպիսկոպոս» բառերը սխալի մը արդիւնք են, եւ պէտք է ըլլան «Երեւանի Եպիսկոպոս», աւելցուց, որ խնդիրը կը դառնայ Երեւանի Առաջնորդ Մուրատբէկեան Խորէն Եպիսկոպոսի վրայ եւ թէ անոր կողմէ Մր. Լօճի մօտ կատարուած այդ դիմումը կը ստեղծէ նոր ու շատ ծանր բարդութիւն մը, որու մասին անհրաժեշտ է, որ Համագումարը խորհրդակցի Ազգ. Պատուիրակութեան հետ:

Ժողովականներէն ոմանք կասկած յայտնեցին հեռագրին ճշդութեան մասին եւ պէտք տեսան, որ ստուգուի: Ամեն. Դուրեան Արքեպիսկոպոս, յայտնելով, թէ այդ

տեսակ յայտարարութիւն մը կը հակասէ ազգին հետեւած ուղղութեան, եւ կրնայ ծանր անպատեհութեանց ծնունդ տալ, առաջարկեց անմիջապէս հերքում մը տալ:

Խնդիր եղաւ նաեւ, թէ Խորէն Եպիսկոպոս ի՞նչ հանգամանք ունի: Տիար Թէրզիպաշեան ըսաւ, որ միակ Վեհ. Կաթողիկոսին ներկայացուցիչը չէ, ինչպէս կ'ըսէր Տիար Ա. Բարսեղեան, այլ նաեւ Երեւանի կառավարութեան: Նոյնը հաստատեցին նաեւ Տիարք Բրօֆ. Թումայեան եւ Գառնիկ Ֆնտգլեան, յայտնելով, որ Խորէն Եպիսկոպոս Լոնտոնի մէջ անձամբ իրենց ըսած է այդպէս ըլլալը:

Ազգ. Պատուիրակութեան Նախագահը՝ Վսեմ. Պօղոս Փաշա ժողովասրահ մտնելով, իսկոյն յայտարարեց, թէ Պատուիրակութիւնը նոյնպէս յուզուած էր կարդալով այդ անհաւատալի լուրը, զոր կը հաստատէր Պատուիրակութեան Ամերիկայի ներկայացուցիչ Տիար Միհրան Սվազլըի կողմէ Ուաշինկթոնի նոյն օրուան թուականով տրուած հետեւեալ հեռագիրը.

«Ուաշինկթոն, 27 Մայիս. Ն. Վսեմութիւն Պօղոս Փաշա, Բարիզ.

«Փաստրմաճեան, Գարտաշեան եւ Երեւանի Արքեպիսկոպոսը այսօր իմացուցին Լօճին եւ ուրիշ ծերակուտականներու, որ հայերը չեն ուզեր Ամերիկայի «մանտա»ն: Խնդրեմ, հեռագրեցէ՛ք Պատուիրակութեան հրահանգները այս ստիպողական հարցի մասին»:

/ստորագրութ./ Միհրան Սվազլը

Այս հեռագիրը կարդալէ վերջ, Վսեմ. Պօղոս Փաշա յայտնեց, թէ պարագան ծանր էր եւ ամեն իրաւունք ունէին վրդովուելու, նկատի առնելով մանաւանդ Տիար Փաստրմաճեանի պաշտօնական դիրքը: Տիար Փաստրմաճեան Հանրապետութեան ներկայացուցիչը ըլլալով Ամերիկայի մէջ, իր կողմէ եղած նմանօրինակ յայտարարութիւն մը շատ փափուկ ու վտանգաւոր կացութեան մը կը մատնէր հայ ազգը թէ՝ Գերագոյն Խորհուրդին հանդէպ, որ ազգին ներկայացուցիչներու խնդրանքին վրայ՝ ծանօթ նոր դիմումը ըրած էր Նախագահ Ուիլսընի, որպէսզի Ամերիկա ընդունի Հայաստանի «մանտա»ն, եւ թէ՝ Նախագահ Ուիլսընի հանդէպ, որ դեռ նոր-նոր, այնքան գեղեցիկ եւ յուզիչ կերպով մը արտայայտուած էր ի նպաստ Հայաստանի «մանտա»-յին ընդունելութեան:

Տիար Թերզիպաշեանի այն դիտողութեան վրայ, թէ չի՞ կարծեր, որ Տիար Փաստրմաճեան այդ յայտարարութիւնը ըրած ըլլայ առանց իր կառավարութենէն հրահանգ ունենալու, Վսեմ. Պօղոս Փաշա ըսաւ, թէ այդ մասին ապահովուելու համար իր դիրքը շեշտեց, որ Ամբողջական Հայաստանի Պատուիրակութիւնը իսկոյն գումարում մը ունենայ: «Ճիշդ այդ գումարումէն կ'ելլենք»,- յարեց Ն. Վսեմութիւնը, աւելցնելով, որ Հանրապետութեան Պատուիրակութեան Նախագահ Տիար Աւարոնեան, յայտնելով, թէ բնաւ տեղեկութիւն չունի Տիար Փաստրմաճեանի կողմէ եղած դիմումին, ինչպէս նաեւ այդ մասին Երեւանի կառավարութենէն տրուած հրահանգի մը նկատմամբ, փութաց ստորագրել հետեւեալ հիմնագիրը, զոր պէտք տեսանք Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան անունով ղրկել Ամերիկեան Մամուլի Ընկերակցութեան.

«Փարիզ, 28 Մայիս 1920. Մամուլի Ընկերակցութեան /Association of Press/, Նիւ Եորք.

Զարմացմամբ կարդացինք «Նիւ Եորք Հերալտ»ի այն լուրը, թէ հայ եպիսկոպոս մը յայտարարած է, որ հայերը չեն ուզեր Ամերիկայի «մանտա»ն: Ամբողջական Հայաստանի Պատուիրակութիւնը ո՛չ մէկ անձի իրաւասութիւն տուած է ընելու այդ տեսակ յայտարարութիւնը մը, որ կը հակասէ մեր ժողովուրդին միահամուռ իղձերուն: Մեր ժողովուրդը վստահութեամբ կը սպասէ Ամերիկեան Ծերակոյտին նպաստաւոր պատասխանին՝ ի մասին Խաղաղութեան Վեհաժողովին կողմէ Հայաստանի «մանտա»յին կամ Հայաստանի օգնելու համար եղած առաջարկութեան»:

Ամբողջական Հայաստանի
Պատուիրակութեան կողմէ

Ահարոնեան Նուպար

Համագումարը համամտութիւն յայտնեց այս հիմնագրին անհրաժեշտութեան նկատմամբ: Վսեմ. Պօղոս Փաշա ծանուցած ըլլալով, թէ Տիար Ահարոնեան հեռագրով տեղեկութիւն պիտի խնդրէ Տիար Փաստրմաճեանէն՝ Համագումարը, Տիար Գառնիկ Ֆնտգլեանի առաջարկութեան վրայ, որոշեց Տիար Փաստրմաճեանի պատասխանին սպասել, այս խնդրին անդրադառնալու համար:

Նիստը փակուեցաւ ժամը 6-ին:

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 59, թթ. 45-50: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ Ը

1 Յունիս 1920, ժամը 3 ½-ին,

նախագահութեամբ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեանի:

Ներկայ էին 19 պատգամաւոր՝

Ամեն. Դուրեան Արքեպիսկոպոս, Տիարք Աղաթօն Պէյ, Բարսեղեան, Դաւիթ-Բէկ, Թէրզիպաշեան, Թէքէեան, Թումայեան, Հանըմեան, Մսըրլը Պէյ, Տոքթ. Նեւրուզ, Ներսէսեան Խան, Վսեմ. Նորատունկեան, Վսեմ. Պօղոս Նուպար Փաշա, Չօպանեան, Սինապեան, Տէրպէտէրեան, Տէր-Ստեփանեան, Ֆնտգլեան:

Օրակարգ

1. Տեղեկագիր Ազգ. Պատուիրակութեան Բժշկական Յանձնաժողովին:
2. Տեղեկագիր Ազգ. Պատուիրակութեան Բրոբականտի Յանձնաժողովին:
3. Շարունակութիւն վիճաբանութեան Ազգ. Պատուիրակութեան համարատուութեան:
4. Տեղեկագիր հաշուական գործառնութեանց Ազգ. Պատուիրակութեան:
5. Տեղեկագիր Ազգ. Պատուիրակութեան Կազմական Կանոնագրի Յանձնաժողովին:
6. Վերակազմութիւն Ազգ. Պատուիրակութեան:

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Ընթերցում եւ վաւերացում ատենագրութեան

Կարդացուեցաւ եւ վաւերացուեցաւ Մայիս 28-ի նիստին ատենագրութիւնը:

2. Խնդիր մանտայի հարցին նկատմամբ Ամերիկայի մեջ եղած յայտարարութեան

Ազգ. Պատուիրակութեան Նախագահ Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար Համագումարին Մայիսի 28-ի նիստին որոշման համաձայն, հաղորդեց հետեւեալ հեռագիրը, զոր Պատուիրակութեան Ամերիկայի ներկայացուցիչ Տիար Միհրան Սվազլը ղրկած էր ի պատասխան Ն. Վսեմութեան հեռագրին:

«Ուաշինկթոն, անթուական (հեռագիրը ստացուած է Մայիս 30-ին), Պօղոս Նուպար, Փարիզ.

«Տիար Փաստրմաճեան այսօր հաղորդեց ինծի, թէ սխալ տեղեկութիւն ստացած եմ եւ անջատ կէտը բացատրեց հետեւեալ կերպով: Կաթողիկոսին կոնդակները Լօճ եւ Հիէլքոք ծերակուտականներուն մատուցած միջոցին՝ Արքեպիսկոպոսը յոյս յայտնած է, թէ Ամերիկա պիտի շարունակէ իր օգնութիւնը Հայաստանի: Ամերիկեան Քոմիթէին անունով՝ Գարտաշեան յայտարարած է ծերակուտականներուն, թէ Նախագահին պատգամագրին մերժումը աղիտաբեր պիտի

ըլլայ Հայաստանի, եւ եթէ ատ մանտան մերժուի, պէտք է ձեռք առնեն միջոցներ, որպեսզի Նախագահը իրաւունք ունենայ Հայաստանի օգնելու»:

Միհրան Սվազլը

Համագումարու խնդիրներին վրայ՝ Վսեմ. Պօղոս Փաշա բերանացի հաղորդեց նաեւ Տիար Փաստրմաճեանի կողմէ Հանր. Պատուիրակութեան Նախագահ Տիար Ահարոնեանի հասած հետեւեալ հեռագիրը.

«Ո՛չ մէկ յայտարարութիւն եղած է մանտայի դէմ, բրովոքասիոն մըն է»:

Մէկ քանի պատգամաւորներ դիտողութիւն ըրին, թէ «բրովոքասիոն» բառը ճիշդ չէ եւ թէ եղածը սխալում մըն է: Դարձեալ ուրիշ պատգամաւորներ դիտել տուին, թէ Տիար Սվազլը պէտք էր նախապէս խնդիրը ստուգելէ վերջ հեռագրեր:

Պատուիրակութեան Նախագահ Վսեմ.Պօղոս Փաշա կարդաց նաեւ հետեւեալ հեռագիրը, զոր ուղղած էր Տիար Մ. Սվազլըի, վերոյիշեալ հեռագրին ի պատասխան.

«1 Յունիս 920. Սվազլը, Ուաշինկթոն.

Ստացայ ձեր հեռագիրը, որով կը հաղորդէք Փաստրմաճեանի գոհացուցիչ բացատրութիւնները, բայց չէք բացատրեր, թէ ինչպէ՞ս կրցաք առանց կանխաւ քննելու հեռագրել այդ աստիճան խորապէս անճիշդ լուր մը, որ կրնար ծանր հետեւանքներու ծնունդ տալ մեր միջեւ:

Նուպար»

Համագումարը գոհացուցիչ գտաւ Ն. Վսեմութեան այս հեռագիրը եւ միջադէպը փակուած նկատեց:

Օրակարգ

1. Տեղեկագիր համարատուութեան Ազգ. Պատուիրակութեան Բժշկական Յանձնաժողովի:

Ազգ. Պատուիրակութեան համարատուութեան վիճաբանութեան անցնելէ առաջ, կարդացուեցաւ Պատուիրակութեան Բժշկական Յանձնաժողովի գործունէութեան մասին հետեւեալ տեղեկագիրը, որուն տեղեկաբերն էր Տիար Տոքթ. Նեւրուզ:

Տեղեկագիր

Տեղեկագրին ընթերցումէն ետք, Տիար Տոքթ. Նեւրուզ բերանացի տեղեկութիւններ տուաւ Համագումարին՝ կարգ մը կէտերու մասին որոնք չէին յիշատակուած տեղեկագրին մէջ: Նախ յայտնեց, թէ Տիար Տոքթ. Արթինեան, որ իբր պետ Կիլիկիոյ Բժշկական Առաքելութեան՝ Կիլիկիա պիտի երթար եւ այդ պատճառաւ Պոլսոյ մէջ ունեցած պաշտօնէն հրաժարելով եկած էր Փարիզ՝ Պատուիրակութեան հրահանգները ստանալու, վերջին պահուն անձնական հարկեցուցիչ պատճառով մը ետ կեցած էր երթալէ, որով Ազգ. Պատուիրակութիւնը անոր տեղ նշանակած էր վիրաբույժ-մանկաբարձ Տիար Տոքթ. Չաուշեանը: Տիար Տոքթ. Նեւրուզ այդ առթիւ յայտնեց, թէ Տոքթ. Չաուշեան Ատանայի հիւանդանոցին մէջ պիտի ստանձնէ վիրաբուժական ճիւղը, Տոքթ. Տամլամանեան՝ ներքին հիւանդութեանց ճիւղը, իսկ իբր վարիչ-տեսուչ պիտի նշանակուի տեղացի ձեռնահաս անձնաւորութիւն մը, որուն ընտրութիւնը Պատուիրակութիւնը թողած է Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան Կիլիկիոյ ներկայացուցիչ Տիար Մ. Տամատեանի, որ անշուշտ տեղական ազգ. մարմիններու գործակցութեամբ պիտի յաջողի յարմար անձ մը կոչել այդ պաշտօնին: Գալով Առաքելութեան Կիլիկիա գտնուող անդամներուն, անոնք, ըստ առաջնոյն, կը մնան իրենց պաշտօնին գլուխը: Տիար Տոքթ. Նեւրուզ այս առթիւ մասնաւոր շնորհակալութեամբ մը յիշատակեց ծանօթ դեղագործ Տիար Լաքրուան, որ միշտ նամակագրութեամբ գործակցած էր Բժշկական Յանձնաժողովին, Բարիզի

Service Sanitaire-ի տնօրէն Տիար Կօթիէն, որ ամէնանպաստաւոր պայմաններով դեղեր տրամադրած էր Կիլիկիոյ Ազգ. Առաքելութեան համար, Մարսիլիոյ Ազգ. Միութեան Նախագահ Տիար Սաաթճեանը, որ թէ՛ Առաքելութեան անդամներուն եւ թէ՛ դեղերու առաքման առթիւ ամեն տեսակ դիւրութիւն ընծայած էր, ինչպէս նաեւ Տիար Արտաւազդ Հանըմեանը, որ անձնուիրաբար ստանձնած էր Բժշկական Յանձնաժողովին քարտուղարութեան ամբողջ աշխատութիւնը: Տիար Տոքթ. Նեւրուզ ի վերջոյ շնորհակալութիւն յայտնեց նաեւ Ֆրանսական կառավարութեան որ ո՛չ միայն իր շոգենաւերուն վրայ մասնաւոր տեղ տրամադրած էր Առաքելութեան անդամներուն համար, այլ նաեւ առաջին անգամ մեկնող անդամներէ վարձք ալ չէր առած Կիլիկիա փոխադրելու համար:

Տիար Աղաթօն Պէյ. Արդեօք ֆրանսական կառավարութիւնը ինք իր ծախսերով Ատանայի մէջ կամ այլուր հիւանդանոց կամ դարմանատուն հաստատե՞ց:

Տիար Տոքթ. Նեւրուզ. Ո՛չ: Ատանայի մէջ կար արդէն թաղապետական հիւանդանոց մը, զոր ֆրանսական իշխանութիւնները կը տնտեսեն: Աւելի շատ կայ նաեւ ամերիկեան հիւանդանոցը, որ սակայն մատչելի չէ կարօտ ժողովուրդին:

Տիար Աղաթօն Պէյ. Տեղեկագրին նշած դարմանատուներուն մէջ Բժշկական Առաքելութեան անդամներէն ոչ ոք պաշտօնի չանցա՞ւ:

Տիար Տոքթ. Նեւրուզ. Ամէնին ալ իրենց պաշտօնն ունեին: Ատանայէ դուրս՝ պէտք եղաւ Առաքելութիւնն աւելցնել [հեռու] տեղացի բժիշկներ:

Տիար Աղաթօն Պէյ. Շարունակ կը լսենք, թէ դեղի անմիջական կարօտութիւն կայ Կիլիկիոյ մէջ: Կը փափաքէի գիտնալ, թէ այստեղ հայթայթուած դեղերը ատենին հասա՞ն Կիլիկիա:

Տիար Տոքթ. Նեւրուզ. Գոնէ կրնամ ըսել, թէ այդ մասին ոեւէ ջանք չխնայուեցաւ: Դեղերը միշտ յարմար ատենին ղրկուեցան, բայց, հակառակ նոյնիսկ Տիար Սաաթճեանի կողմէ Մարսիլիոյ մէջ շռայլուած անխոնջ աշխատութեանց, երբեմն սնտուկներու առաքումը յապաղեցաւ:

Տիար Աղաթօն Պէյ. Ղրկուած բժիշկները պէտք եղած արդիւնքը տուի՞ն:

Տիար Տոքթ. Նեւրուզ. Ամէնքն ալ իրենց կարողութեան չափով աշխատած են: Թեւ եղան պզտիկ զանցառութիւններ, բայց կարելի դարձաւ շուտով դարմանել: Ասոր հետ մէկտեղ՝ միշտ պէտք կայ վարիչ բժշկապետի մը:

Տիար Վահան Թէքէեան. Առաքելութեան բոլոր անդամներն ալ կը շարունակե՞ն իրենց պաշտօնը:

Տիար Տոքթ. Նեւրուզ. Տիարք Տոքթ. Մանկրեան եւ Վարդանեան մեկնած են, իսկ ժնեւէն գացողները կը փափաքին հեռանալ, բայց բժշկապետին ժամանման կը սպասեն, որպէսզի իրենց տեղ ուրիշներ նշանակէ եւ սպասարկութիւնը չկասի:

Տիար Վահան Թէքէեան. Այդ պարագաները պէտք էին յիշատակուած ըլլալ տեղեկագրին մէջ:

Ամեն. Դուրեան Արքեպիսկ. Կարդացուած տեղեկագիրը Բժշկական Առաքելութեան գործունէութիւնը կը պաքթերացնէր մինչեւ այն թուականը, որ Տոքթ. Ղազարոսեան մեկնած էր Կիլիկիայէն: Անկէ ի վեր ամիսներ անցած են եւ այս վերջին շրջանին մէջ Առաքելութեան ունեցած գործունէութեան նկատմամբ ո՛չ մէկ յիշատակութիւն կայ: Տեղեկագիրը միւս կողմէ պէտք ցոյց կու տայ Առաքելութեան յաքթացուած ամսավճարը բարձրացնելու, բայց լաւագոյն չէ՞ր, որ աքթէ առաջ տեղեկութիւն առնուեր, թէ ի՞նչ է Առաքելութեան արդի գործունէութիւնը: Ո՞վ կ'երաշխաւորէ, թէ անիկա լիապէս կը կատարէ իրեն վստահուած գործը:

Տիար Տոքթ. Նեւրուզ. Ճիշդ է, որ տեղեկագրին մէջ յիշատակուած է միայն Առաքելութեան մինչեւ Օգոստոսի վերջ ունեցած գործունէութիւնը, բայց եթէ անկէ ասդին եղածին նկատմամբ մանրամասնութիւն չկայ, պատճառը սա է, որ տեղեկութիւն չէ հասած մեզի: Մեզ հասած նամակներէ իմացած ենք, որ գործը իր առջի վիճակովը կը շարունակուի Կիլիկիոյ ամեն կողմը, բացի Մարաշէ, ուր վերջին դէպքերուն եւ

կոտորածին պատճառաւ ամեն բան տակն ու վրայ եղաւ: Ի բացակայութեան բժշկապետին՝ Տոքթ. Տամլամանեան, Տոքթ. Գրիգորեան եւ Տոքթ. Մնացականեան ձեռք-ձեռքի կ'աշխատին Առաքելութեան գործը արդիւնաւէտելու համար: Միակ մեղադրանքը, զոր կարելի է ընել իրենց՝ տեղեկագիր չղրկելն է: Տոքթ. Մնացականեանի կողմէ վերջերս ստացած ենք նամակ մը, որով կը ծանուցանէր, թէ ընդարձակ եւ մանրամասն տեղեկագիր մը ղրկած է, բայց դժբախտաբար չէ հասած մեր ձեռքը: Ապահովաբար կորսուած պէտք է ըլլայ:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Կիլիկիոյ Վեհ. Կաթողիկոսը տեղեկագիր չբերա՞ւ իրեն հետ Բժշկական Առաքելութեան կողմէ:

Տիար Տոքթ. Նեւրուզ. Կը սպասէինք, բայց յուսախաբ եղանք:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Այս գործը 14 ամսէ ի վեր սկսած է, բայց միայն երեք ամսուան գործունէութեան հաշուետուութիւն մը է եղածը: Ասիկա անբաւական է անշուշտ Առաքելութեան մասին լիակատար կարծիք մը կազմելու համար:

Տիար Վահան Թէքէեան. Տեղեկագրին մէջ շատ մանրամասնութիւններ կան հիւանդանոցներու, դարմանատուներու, դեղատուներու, նոյնիսկ դեղատուներու կողմէ պատրաստուած դեղագիրներու թիւին նկատմամբ, բայց չէ յիշուած, թէ ասոնցմէ իւրաքանչիւրին համար ի՞նչ ծախսուած է, ի՞նչ ծախք կ'ըլլայ բժիշկներուն համար: Չեն յիշատակուած տակաւին ասոնց նման կարգ մը անհրաժեշտ մանրամասնութիւններ, որոնցմով կարելի պիտի ըլլար լիովին գաղափար մը կազմել Առաքելութեան ձեռնարկին նկատմամբ:

Տիար Տոքթ. Նեւրուզ. Յիշատակուած են այն տեղեկութիւնները, որոնք մեզի հասած էին մինչեւ Օգոստ. 31, անկէ ասդին՝ մանրամասնութիւն չունինք: Առաքելութեան ամսական ծախքը՝ 25000 ֆրանք, կանոնաւորապէս ղրկուած է միշտ: Ապրիլին՝ Տիկին Եսայեան եւ Տոքթ. Մնացականեան գրած էին, թէ մէկ կողմէ տիրող սղութեան եւ միւս կողմէ ֆրանքի արժէքին անկման պատճառաւ չի բաւեր այդ գումարը, եւ խնդրած էին, որ գոյացած բացը գոցելու համար 30000 ֆրանքի բարձրացուի:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Քանի որ Տիկին Եսայեանի եւ միւսներուն նամակները կը հասնին, ինչպէ՞ս կ'ըլլայ, որ տեղեկագիրը չի հասնիր: Ուրեմն, անփութութիւն մը կայ Առաքելութեան կողմէ:

Տիար Տոքթ. Նեվրուզ. Ճիշդ այդ մտածումով խիստ նամակ մը գրեցինք, պահանջելով, որ կարելի եղած արագութեամբ եւ ամեն մանրամասնութեամբ տեղեկութիւն տան Առաքելութեան գործունէութեան մասին: Բայց պէտք չէ այս առթիւ ուշադրութենէ վրիպեցնել այն քաղաքական պայմանները, որոնց ենթակայ է այս միջոցին Կիլիկիա եւ որոնք հաւասարապէս կրնան արտակարգ մտահոգութեանց եւ զբաղման աղբիւր մը դարձած ըլլալ նաեւ Առաքելութեան անդամներուն համար:

Տիար Տէր-Ստեփանեան. Անցեալ տարի՝ Համագումարն էր, որ կազմեց Բժշկական Յանձնաժողովը: Այսօր կը տեսնենք, որ Յանձնաժողովը բոլորովին փոխուեր եւ Պատուիրակութեան իրաւասութեան ենթարկուեր է: Կը փափաքէի գիտնալ, թէ Պատուիրակութեան իմաց տրուա՞ծ է նոր անդամներ նշանակուած միջոցին եւ թէ, միւս կողմէ, Պատուիրակութիւնը կանոնաւորապէս տեղեկութիւն ստացա՞ծ է Յանձնաժողովին գործունէութեան նկատմամբ:

Տիար Տոքթ. Նեւրուզ. Նոր անդամները առաջարկուած են Յանձնաժողովին կողմէ եւ պաշտօնի հրահանգուած են Պատուիրակութեան կողմէ: Յանձնաժողովն իր գործունէութեան մասին միշտ տեղեկագիր տուած է Պատուիրակութեան:

Տիար Բրոֆ. Թումայեան. Արդեօք Յանձնաժողովը Բժշկական Առաքելութեան մասին ուղղակի տեղացիներէ քննադատութիւն կամ գնահատականներ ստացա՞ծ է:

Տիար Տոքթ. Նեւրուզ. Տեղացիներէն ուղղակի բան մը չէ հասած: Բայց անկէ եկողներն ընդհանրապէս լաւ վկայութիւններ տուած են:

Տիար Արշակ Չօպանեան. Այս կէտին նկատմամբ կ'ուզեմ տալ տեղեկութիւն մը, զոր տեղեկագիրը մոռցած էր յիշատակել եւ ասիկա այն շատ պատուաբեր գնահատութիւնն էր, զոր Կիլիկիոյ վարիչ Գնդապետ Պրեմոն Ազգ. Պատուիրակութեան Վսեմ. Նախագահին ուղղուած նամակով մը ըրած էր, թէ' Բժշկական Առաքելութեան գաղափարին յղացման եւ թէ' անոր գործադրութեան նկատմամբ, մասնաւորաբար յիշատակելով Տոքթ. Ղազարոսեանի եւ ընկերներուն օգտակար ու փայլուն գործունէութիւնը:

Տիար Դաւիթ-Բէկ ալ յիշատակեց ամերիկացիի մը կողմէ եղած նոյնքան խանդավառ վկայութիւնը Առաքելութեան գաղափարին եւ անոր գործառութեան եղանակներուն նկատմամբ:

Ամեն. Դուրեան Արքեպիսկ. Գործին առաջին քայլերուն կը պաքթանին այդ բոլոր գնահատութիւնները, եւ մենք ալ այդ մասին ամեն շնորհակալութիւն կը յայտնենք Տոքթ. Ղազարոսեանի: Բայց կը կրկնեմ, որ անհրաժեշտ էր գիտնալ, թէ այդ 3-4 ամսուան շրջանէն ետք, երբ բժշկապետը մեկնեցաւ, Առաքելութեան գործունէութիւնը կը շարունակէ՞ պահել այն գովելի ընթացքը, զոր ունէր իր սկզբնաւորութեան օրերուն:

Տիար Տոքթ. Նեւրուզ. Գէշ լուրը շուտ կը հասնի, Սրբազա'ն, եւ մինչեւ այսօր վրդովման տեղի տուող լուր մը չառիք այդ մասին: Այդ հիմնարկութիւնը կը շարունակուի այն պայմաններով, որոնք գոյութիւն ունէին Տոքթ. Ղազարոսեանի մեկնած միջոցին: Նոյնիսկ անոր մեկնումէն ասդին՝ Առաքելութեան անդամներուն մէջ կը տիրէ աւելի համերաշխ ոգի մը, քան ինչ որ գոյութիւն ունէր իր գտնուած ատենը: Ամեն կողմէ հասած լուրերը ասիկա կը վկայեն: Տարակոյս չկայ, որ իրենց կողմէ թերացում մը է տեղեկագիր չղրկելը, կամ եթէ ղրկուած էր՝ կորսուած ըլլալը իմանալէ ետք նոր օրինակ մը չհասցնելը: Թէեւ ասիկա աստիճան մը կ'արդարանայ այնտեղ գոյութիւն առած քաղաքական արտակարգ պայմաններուն պատճառաւ, բայց նորէն բնաւ իրաւունք չեմ տար իրենց այդ թերացման համար: Մէկ անգամ մըն ալ կը կրկնեմ, որ Առաքելութեան գործունէութիւնը այսօր աւելի գոհացուցիչ ընթացք մը ունի, քան ինչ որ ունէր Տոքթ. Ղազարոսեանի բժշկապետութեան շրջանին: Եթէ եղած են զանցառութիւններ Առաքելութեան այս կամ այն անդամին կողմէ, անպատիժ չեն թողուած: Վերջապէս, ամեն բան եղած է Առաքելութիւնը իր կոչման պատշաճ կացութեան մը մէջ պահելու համար, եւ մեզի հասած կողմնակի տեղեկութիւնները կը հաստատեն, թէ արդիւնքը լաւ է բոլորովին եւ տեղի չկայ վրդովուելու:

Ամեն. Դուրեան Արքեպիսկ. Բայց քանի որ տեղեկագիր չէ տուած, յայտնի չէ, թէ իրապէս ի՞նչ վիճակ ունի այսօր Առաքելութեան գործը, ինչպէս որ կողմնակի տեղեկութիւններու վրայ կարելի է վճռել, որ այդ գործը լաւագոյն դրութեան մը մէջ կը գտնուի այս միջոցին:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Կիլիկիայէն եկած անձ մը աննպաստ տեղեկութիւններ տուաւ ինծի Բժշկական Առաքելութեան մասին: Եղածը լոկ խօսք էր, լուսաբանուելու համար՝ ուզեցի գիտնալ, թէ Յանձնաժողովը ի՞նչ կերպով կը ներկայացնէր Առաքելութեան գործունէութիւնը: Դժբախտաբար, իր տեղեկագրին մէջ ոչինչ կար այդ մասին: Անշուշտ լաւ պիտի ըլլայ, որ փութով ղրկուի բժշկապետը եւ ստացուին բոլոր անհրաժեշտ տեղեկութիւնները Առաքելութեան գործունէութեան վերջին շրջանին նկատմամբ: Երբ մէկ կողմէ նոր յաւելում մը կ'առաջարկեն տրուած ամսավճարին վրայ, պարտք մըն է գիտնալ, թէ ի՞նչ վիճակի մէջ է գործը:

Տիար Նեւրուզ. Յանձնախումբին բաղձանքն ալ ատ է, եւ ատոր պիտի աշխատի: Եթէ մինչեւ այսօր այդպէս չեղաւ՝ յայտնեցի պատճառը: Տեղը մօտ չէ, որպէսզի կարելի ըլլայ օրը օրին տեղեկութիւն առնել: Մեկնողներ ալ միշտ գոյութիւն չունին: Այլապէս՝ Յանձնախումբն այսքան ատեն առանց լուրի չէր մնար Առաքելութեան մասին: Ապահովաբար, փափաքը չէր, որ կը պակսէր իր մօտ:

Տիար Չօպանեան դրուատեց այս առթիւ Տոքթ. Տամլամանեանը, իբրեւ եռանդուն, ազգասէր եւ լուրջ հայ մը, փափաք յայտնեց, որ Համագումարը պէտք է պիտճէին խնդրով զբաղած միջոցին մասնաւոր ուշադրութեան առարկայ դարձներ Բժշկական Առաքելութեան այս ձեռնարկը:

Տիար Աղաթօն Պէյ. Ամէնքս ալ անշուշտ կը ձայնակցինք Տոքթ. Ղազարոսեանի մասին եղած գնահատութեանց: Բայց գործադիրը դրուատած ատեննիս պէտք չէ մոռնանք նաեւ բուն գործը ստեղծողը՝ Տիար Տոքթ.Նեւրուզը եւ պէտք է անոր ալ յայտնենք մեր շնորհակալութիւններն այս առթիւ:

Տիար Բրօֆ. Թումայեան. Կրնա՞մ արդեօք գիտնալ, թէ ինչո՞ւ մեկնած է Տոքթ. Մանկրեան:

Տիար Տոքթ. Նեւրուզ. Չարժէր ծանրանալ այդ մասին. բժշկապետին հետ պարզ անհամաձայնութիւն մըն էր պատճառը:

2. Տեղեկագիր համարատուութեան Ազգ. Պատուիրակութեան Բրոբականտի Յանձնաժողովին

Տիար Արշակ Չօպանեան կարդաց Ազգ. Պատուիրակութեան Բրոբականտի Յանձնաժողովին գործունէութիւնը պաքթերացնող հետեւեալ տեղեկագիրը.

Տեղեկագիր

Տիար Աղաթօն Պէյ. Տեղեկագրին մէջ յիշատակուած էր նաեւ Տիար Խաչատուրեանի քարտէսներու ալպոմը: Արդեօք ինչո՞ւ գոնէ Համագումարին անդամներուն մէկ-մէկ օրինակ չտրուեցաւ այդ աշխատութիւնը:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Պատուիրակութիւնը դրամը վճարեց, բայց գրեթէ քարտէսի երես չտեսաւ:

Տիար Աղաթօն Պէյ. Ի՞նչ վճարուեցաւ:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. 7000 ֆրանք, ինչպէս ինքն իսկ պահանջած էր նախապէս: Վերջէն նորէն դրամ ուզեց, բայց մերժեցի, որովհետեւ հազիւ 20 օրինակ ղրկած էր Պատուիրակութեան: Պէտք է ընդունիլ, որ վճարուած դրամը չէ կորած, որովհետեւ գիրքը շարելով տարածուեցաւ հեղինակին իսկ ձեռքով:

Տիար Տիրան Տէօվլէթեան. Բրոբականտի Յանձնաժողովին կատարած գործը ունի կարգ մը կէտեր, որոնք գովելի են անշուշտ, բայց անոր գործունէութեան մէջ կան նաեւ պակասներ, որոնց մասին ցաւս կը յայտնեմ: Կարդացուած տեղեկագրին մէջ ամէնէն աւելի կ'ուզէի տեսնել, թէ ի՞նչ եղած է Յանձնաժողովին գործունէութիւնը՝ ազդելու համար ֆրանսական մամուլին վրայ, որուն բռնած ուղղութիւնը մեր հարցին նկատմամբ՝ շատ հեռու է գոհացուցիչ ըլլալէ: Մենք երբեք չկրցանք մեր դատին արդարութեան համապատասխան ընթացք մը տալ ֆրանսական թերթերու հրատարակութեանց, մինչդեռ թուրքերը եւ յոյները լիապէս յաջողեցան իրենց դատին ծառայեցնել զանոնք:

Տիար Տոքթ. Բարսեղեան. Անոնք դեղին ոսկի ունէին:

Տիար Տ. Տէօվլէթեան. Կարծեմ մենք ալ դեղին ոսկի ունեցանք, մենք ալ դեղին ոսկի ծախսեցինք: Խնդիրը հոն է, որ մեր ծախսած դրամին համապատասխան արդիւնք մը ձեռք չէ բերուած: Չեմ ըսեր, թէ դժուարութիւններ չկային, կ'ընդունիմ, որ մեծ աշխատութիւն պէտք էր ասոր համար, բայց ֆրանսական մամուլին այսօրուան ուղղութիւնն իսկ ցոյց կու տայ, թէ պէտք եղածին պէս չէ աշխատուած: Այս դիտողութիւնը կ'ընեմ, որպէսզի գէթ ասկէ վերջ ֆրանսական մամուլին, մտաւորականներուն եւ հոգեւորականներուն մօտ լաւագոյն մղում մը տրուի բրոբականտի գործին, ինչպէս եղած է, եւ կ'ըլլայ Անգլիոյ մէջ, որովհետեւ դեռ ուշ չէ, դեռ կարելի է աշխատիլ, եւ պէտք է աշխատուի:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Կ'ընդունիմ, որ մեր կողմէ կատարուած բրոբականտը անբաւական էր: Անշուշտ կարելի էր աւելին ընել: Բայց ատոր համար պէտք էր ունենայինք աւելի լայն միջոցներ, զորս չունեցանք: Բրոբականտի գումարը պիտի հոգացուէր ազգ. հանգանակութեամբ, բայց անոր հասոյթը լոկ բրոբականտի չէր յաքթացուած, շատ աւելի մեծ պահանջներ կային, որոնք այդ հանգանակութեամբ պիտի հոգացուէին: Երբ այդ հանգանակութեան կոչը ըրի, խնդրեցի նուիրատուներէն, որ որոշ կերպով սահմանեն, թէ իրենց նուէրը ի՞նչ նպատակի կ'ուզեն, որ յաքթացուի: 80-90 առ հարիւրը սովորաբար նպաստի գործին կը սահմանէին, եւ ասիկա բնական էր, նկատի առնելով այն մեծ կարօտութիւնը որուն մատնուած էր մեր ժողովուրդը, Կովկասի, ինչպէս Տաճկաստանի եւ Կիլիկիոյ մէջ: Այդ կարօտութեան դարմանումը ամէնուս ալ մտահոգութեան մեծագոյն առարկան էր: Իսկ բրոբականտի համար շատ քիչ բան միայն տրամադրուեցաւ, եւ այդ քիչով եղաւ այն բոլորը, զորս յիշատակած էր տեղեկագիրը: Մենք ստիպուած էինք մեր միջոցներուն ներած չափով միայն աշխատիլ եւ տարակոյս չկայ, որ մեր ձեռք բերած արդիւնքն ալ այդ չափով կրնար ըլլալ: Մինչդեռ՝ յոյները եւ թուրքերը չէին հաշուեր իրենց տուածը, որովհետեւ իրենց կառավարութիւններն էին տուողը: Վերջին անգամ երբ անձնապէս մասնակցեցայ հանգանակութեան, ստիպուած եղայ իմ տուած բաժինն ամբողջովին յաքթացնել բրոբականտի գործին, նկատի առնելով անոր անհրաժեշտութիւնը եւ կարեւորութիւնը: Համամիտ եմ Տիար Տէօվլէթեանի, թէ միշտ ատենն է շարունակելու բրոբականտը եւ հիմա, այս վճռական պահուն մանաւանդ պէտք է ոյժ տրուի անոր:

Տիար Գառնիկ Ֆնտգլեան շատ համակրալիր կերպով մը դրուատիքը ըրաւ «Տեպա»յի քաղաքական բաժնի խմբագիր Պ. Օկիւսթ Կովէնի, որ սկիզբէն ի վեր բոլորովին անշահախնդիր կերպով մը պաշտպանած է եւ կը շարունակէ պաշտպանել Հայկական Հարցը:

Տիար Ա. Չօպանեան. Չեմ գիտեր, թէ Տիար Տէօվլէթեան, մօտէն տեղեակ չըլլալով, կրնա՞յ լիակատար գաղափար մը կազմած ըլլալ ֆրանսական մամուլին նկատմամբ, եւ չեմ հասկնար, թէ ինչպէ՞ս առանց այդ անհրաժեշտ ծանօթութեան՝ կը քննադատէ Բրոբականտի Յանձնաժողովին այդ ուղղութեամբ ունեցած գործունէութիւնը:

Տարակոյս չկայ, որ ֆրանսական մամուլը մեր խնդրին նկատմամբ չըրաւ այն ամենն, ինչ որ կրնար ընել: Բայց մեր դատին արդարութիւնը մինակը չէր բաւեր ատոր համար, որպէսզի կարելի ըլլար մեզ մեղադրել, թէ չըրինք՝ ինչ որ հնարաւոր էր ընել: Դրամ եւ մեծ դրամ պէտք էր այդ արդիւնքին հասնելու համար, եւ այդ դրամը չունեցանք: Բայց նորէն կը կարծեմ իրաւունք ունենալ յայտարարելու, թէ մեր բրոբականտը Ֆրանսայի մէջ, ամէնափայլուն արդիւնք մը տուաւ: Ասիկա նոյնիսկ օտարները գնահատեցին: Ռումանական դեսպանատան մէջ անձամբ առիթ ունեցայ լսելու ռումէն դիւանագէտներու շնորհաւորութիւնները մեր Բրոբականտի Յանձնաժողովին եւ Տեղեկատու Պիւրոյին նկատմամբ. գովեստով կը յիշատակէին անոնց գործունէութիւնը, յայտնելով, թէ կը յաջողինք բոլոր տեղերը ողողել Հայկական Հարցին պաքթանող լուրերով, այնքա՛ն որ կարելի չէ ուշադրութենէ վրիպեցնել զանոնք: Չեմ հասկնար նաեւ, թէ Տիար Տէօվլէթեան ինչո՞ւ անպէտ կը նկատէ հրատարակուած գիրքերը: Յոյներն եւ թուրքերը նոյնպէս բրոբականտի այդ եղանակին ալ դիմեցին: Բայց անոնք լայն միջոցներ ունէին եւ աւելի մեծ ծաւալ կրնային տալ հենց հրատարակութեանց: Օրինակի համար, թուրքերը 100 000 օրինակներով տպած եւ ցրուած էին հայկական պահանջմանց դէմ իրենց հրատարակած գիրքերը: Այդքան մեծ ծաւալ տուին նաեւ այն գրքոյկին, որուն դէմ Պ. Թահմազեան շատ արժէքաւոր գիրք մը գրեց: Բայց մենք հազիւ 3000 օրինակ միայն կրցանք տպել, որովհետեւ միջոց չկար աւելի տպելու, եւ այդքանը միայն տպուեցաւ: Յետոյ՝ պզտիկ ազդեցութիւն կրնանք ընել, զոր օրինակ, Քամել Մօէլերի եւ Տիկին Կապրիել [Սիվաշի] պէս մեծ գրագէտներու – Հայկական Դատին նուիրուած

աշխատութիւնները: Մեծ թերթերը ձեռք առնելու համար անհրաժեշտ միջոցները չունէինք, բայց որքան ալ պայմանները նեղ էին, նորէն Բրոբականտի Յանձնաժողովը կրցածը ըրաւ: Նոյն իսկ Պ. Կովէն, զոր Տիար Ֆնտգլեան այնքան արդարօրէն դրուատեց պահ մը առաջ, մինակը չըրաւ, մենք գացինք, խօսեցանք, գիտնալով որ կը հետաքրքրուի՝ շարունակ իրեն ղրկեցինք մեր դատին ծառայող ամեն տեսակ գրուածքներ: Միջոց մը ընդունելութիւններ կը սարքէինք մեզի բարեկամ անձնաւորութիւններ հրաւիրելով. լաւ եղանակ մըն էր ասիկա եւ միշտ իր օգուտն ունեցաւ: Գերապայծառ Նազլեան Եպիկոպոսի ի պատիւ սարքուած թէյասեղանին մասնակցեցան 15 նշանաւոր անձնաւորութիւններ, եւ անոնց համախմբումը միեւնոյն սեղանին շուրջը, առիթ մը դարձաւ, որ բոլորն ալ տեղեկանան Հայկական Հարցին ստացած նոր երեւոյթներուն: Պէտք էր աւելի ընդարձակ սահմանի մը մէջ եւ աւելի յաճախ ընել այդ ընդունելութիւնները եւ միշտ ատենն է այս կերպով շարունակելու:

Տիար Գ. Ֆնտգլեան. Համամիտ եմ:

Տիար Ա. Չօպանեան. Եթէ չեղաւ՝ պատճառը դրամի պակասն էր: Պատուիրակութիւնը այն աստիճան ծանր դրամական անձկութեան մը մատնուած էր վերջերս, որ նոյնիսկ մէկ քանի գիրքեր, որոնց տպագրութիւն սկսուած էր երկար ատենէ ի վեր, կարելի չեղաւ մինչեւ այսօր հրապարակ հանել:

Տիար Գ. Ֆնտգլեան. Տիար Գալենտէրեան կ'ըսէր, թէ Փարիզի ամերիկեան շրջանակներուն մէջ ըլլալիք բրոբականտը պէտք եղած կերպով չէ կատարուեր:

Տիար Ա. Չօպանեան. Ինք սակայն դարմանեց: Նախապէս շատ լայն յարաբերութիւններ չունէինք, իր միջոցաւ հաղորդակցութեան մէջ մտանք Նիւ Եորքի Մամլոյ Ընկերակցութեան ներկայացուցչին հետ եւ հիմա այդ պակասն ալ լրացած է:

Տիար Տ. Տէօվլէթեան. Տիար Չօպանեանի ի պատասխան, պիտի ըսեմ, թէ ֆրանս. խնդիրներու հրատարակութեանց անտեղեակ չեմ, բայց երբեք չեմ տեսած անոնց մէջ մեր դատին ի նպաստ պատճառ մը այն ձեւով ինչ ձեւով որ կ'ընեն, օրինակի համար, «Մանչեսթր Կարտիան», «Թայմզ», նոյն իսկ «Տէյլի Քրոնիքլ» եւ ուրիշ անգլերէն թերթեր:

Տիար Ա. Հանըմեան. «Մանչեսթր Կարտիան»ի այդ հրատարակութեանց արդիւնքն ի՞նչ եղաւ:

Տիար Տէօվլէթեան յայտնեց, թէ Անգլիայի մէջ, իրենք քանի մը հոգի, անգլիական 3000 ոսկով յաջողեցան խոշոր շարժում մը առաջ բերել ի նպաստ Հայկական Դատին:

Տիար Դաւիթ Բէկ յայտնեց, թէ Բրոբականտի Յանձնաժողովն ալ շատ մեծ ծրագիրներ ունէր, բայց նիւթական միջոցներու պակասը միշտ արգելք եղաւ այդ ծրագիրներու գործադրութեան, թէ Յանձնաժողովը նոյնիսկ իր անձուկ միջոցներով կրցաւ սարքել տալ շատ մը հրապարակային ժողովներ, զորս մոռցած էր յիշատակել Տիար Չօպանեան, եւ այդ ժողովները մեծապէս նպաստեցին Հայկական Հարցին ծանօթացման: Ի վերջոյ յիշատակելով թէ Բրոբականտի Յանձնաժողովը, Image պաքթերազարդ թերթին Հայաստանի նուիրուած թիւին գտած ընդունելութենէն քաջալերուած՝ որոշեց Armenie Illustré անունով պաքթերազարդ թերթ մը հրատարակել, բայց միջոց չունեցաւ այդ մտածումը գործադրելու: Տիար Դաւիթ-Բէկ ալ կրկնեց, որ եթէ կը փափաքուի մեծ արդիւնք ստանալ բրոբականտէն, պէտք է անոր համար մասնաւոր գումարներ հայթայթել: Տիար Ա. Հանըմեան ալ դիտել տուաւ, թէ Յանձնաժողովը ամբողջ տարին 3000 ոսկի չունեցաւ իր տրամադրութեան տակ, ու~ր մնաց մէկ անգամի համար: Միւս կողմէ, հրաւիրեց Տիար Տէօվլէթեանը որպէսզի եթէ ուզէ՝ ներկայանայ իր պիւրոն, տեսնելու համար այն ահագին թուով հրատարակութիւնները, որոնք ֆրանս. մամուլին մէջ եղած են ի նպաստ Հայկական Դատին: Տիար Տիրան Տէօվլէթեան՝ Տիար Դաւիթ-Բէկի պատասխանելով ըսաւ, թէ Փարիզի հայերն իրենք պէտք էին հոգալ բրոբականտի ծախքերը, առանց ատոր

համար դուրսէն աջակցութիւն սպասելու, ինչպէս չէին սպասէր բնաւ Անգլիոյ հայերը, որոնք իրենք իրենց մէջ կը գոյացնեն միշտ բրոբականտի անհրաժեշտ գումարները:

Տիար Տոքթ. Բարսեղեան վերստին արծարծեց Տիար Խանզատեանի քարտէսներու ալպոմին հարցը եւ ուզեց գիտնալ, թէ արդեօք Բրոբականտի Յանձնաժողովը ի՞նք տպեց այդ գործը, ինչպէս կրնայ հասկցուիլ կարդացուած տեղեկագրէն, մինչդեռ յարեց, ինք լաւ գիտէ, որ Հանր. Պատուիրակութեան տրուած օրինակներուն փոխարէն ալ դրամ կը պահանջուի հեղինակին կողմէ: Եթէ Բրոբականտի Յանձնաժողովը կամ Պատուիրակութիւնն են հրատարակողը, ինչպէ՞ս կ'ըլլայ, որ չեն կրցեր հեղինակէն ստանալ պէտք եղած օրինակները:

Տիար Չօպանեան պատասխանեց, թէ Պատուիրակութիւնը Տիար Խանզատեանը օգնած է իր գործին հրատարակութեան համար: Անշուշտ Տիար Խանզատեան իրաւունք ունէր իբր հեղինակ իր գործին կէսը իրեն պահելու, բայց գոնէ կարեւոր մաս մը պէտք է տար Պատուիրակութեան, իր ստացած գումարին փոխարէն, ինչ որ չըրաւ:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Տիար Խանզատեան այդ գործին խօսքը ըրաւ ինծի, հարցուցի թէ որքա՞ն դրամ պէտք է, 7000 ֆրանքի պէտք մը ցոյց տուաւ, եւ որովհետեւ գործը օգտակար էր՝ իսկոյն վճարեցինք այդ դրամը, մտածելով, որ անոր փոխարէն գոնէ մաս մը գիրք պիտի դնէ Պատուիրակութեան տրամադրութեան տակ, բրոբականտի ծառայելու համար: Վերջէն սակայն՝ հազիւ 20 օրինակ տպեց, եւ ա'լ գրքի երես չտեսանք: Եթէ տրամադրելի օրինակներ ունենայինք, պիտի փութայինք տպագրել զանոնք, որով այլապէս մեծ պիտի ըլլար գրքին ընծայելիք օգուտը: Առջի օր՝ շատ ուրախ եղայ, Պ. Պէռատի գրասեղանին վրայ տեսնելով օրինակ մը: Պէտք էր Արեւելքի խնդիրներով հետաքրքրուող բոլոր անձնաւորութեանց գրասեղանին վրայ ալ գտնուեր:

Տիար Թէրզիպաշեան. Եթէ Բրոբականտի Յանձնաժողովին տեղեկագիրը նոյնութեամբ պիտի անցնի ատենագրութեան մէջ, ըստ իս, լաւ կ'ըլլայ, որ վերցուին անոր այն մասերը, որոնք երաժշտական կտորներու նկատմամբ կը խօսին, եւ որոնց յիշատակութիւնը շատ ալ պատշաճ չէ մեր այսօրուան կացութեանը:

Տիար Չօպանեան. Սկզբունքով համաձայն չեմ, որովհետեւ ասոնք նոյնքան բրոբականտի միջոցներ են: Արդեօ՞ք տեղը բան մը չի շահիր, երբ իր գեղարուեստական յաքթութիւնները կը ծանօթացուին եւ զմայլանք կը յարուցանեն:

Տիար Գառնիկ Ֆնտգլեան վերստին անդրադարձաւ Պ. Օկիւսթ Կովէնի պարագային եւ առաջարկեց, որ Համագումարին անդամները նախաձեռնարկ ըլլան արժէքաւոր նուէր մը ընելու անոր, աստիճան մը փոխարինած ըլլալու համար այն մեծ ու անշահախնդիր աջակցութիւնը, զոր Պ. Կովէն միշտ ընծայած է մեր դատին:

Տիար Չօպանեան յայտնեց, թէ Ազգ. Պատուիրակութիւնը արդէն իսկ խորհած է այդ մասին եւ թէ մօտ օրէն այս մտածումը գործադրութեան պիտի դնէ, թանկարժէք նուէր մը ընելով Պ. Կովէնին, բոլոր կարելի փափկութեամբ:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Բրոբականտի ձեւերը մեծ զանազանութիւն ունին, ուստի բրոբականտը գիտութիւն մըն է: Տեղ կայ, որ քիչ ծախքով մեծ արդիւնք ձեռք կը բերուի, տեղ ալ կայ, որ նոյնիսկ մեծ ծախքերով նշանակալի արդիւնք մը չի գոյանար: Ասոր համար սերտել պէտք է այն զանազան եղանակները, որոնք անհրաժեշտ են բրոբականտը արդիւնաւոր դարձնելու համար, եւ միշտ պէտք է խորհրդակցիլ ձեռնհաս եւ փորձառու անձնաւորութեանց հետ: Օգտակար կ'ըլլայ կարծեմ, որ Բրոբականտի Յանձնաժողովը խորհրդակցի այս մասին Տիար Տէօվլէթեանի հետ որպէսզի կարելի ըլլայ այստեղ ալ կիրարկել բրոբականտի այն ձեւերը, որոնք յաջողութեամբ կիրառուած են Անգլիոյ մէջ:

Համագումարը յաջորդաբար լսեց Ազգ. Պատուիրակութեան համարատուութիւնը, նաեւ անոր յարակից տեղեկագիրներէն երկուքը: Կը մնայ

տակաւին ելեւմտական գործառնութեանց տեղեկագիրը, որ պիտի կարդացուի յառաջիկայ նիստին:

Որպէսզի այս բոլոր համարատուութեանց մասին կարելի ըլլայ որոշման մը յանգիլ առանց զանոնք տարտղնելու, լաւագոյն է անշուշտ, որ Համագումարն իր մէջէն մասնախումբ մը կազմէ, որ ամփոփէ եղած դիտողութիւնները եւ զանոնք խտացնելով բանաձեւով մը ներկայացնէ Ժողովին՝ ինչ որ անհրաժեշտ է խնդրոյն եզրակացութեան համար: Չմոռնանք, որ ժամանակներս սուղ է, պէտք է շուտով վերջ տանք այս Ժողովին աշխատութեանց, եւ առ այս՝ առաջին կարեւոր բանը սա է, որ պէտք է մեթոտով աշխատինք:

Տիար Տէօվլէթեան. Կը ձայնակցիմ Վսեմ. Նախագահին խօսքերուն, եւ կը կարծեմ, որ Ժողովն ամբողջ համամիտ է այս մասին հետ: Ինչպէս այնքան լաւ կերպով ըսաւ Ն. Վսեմութիւնը՝ ժամանակնիս սուղ է, մեր գործերը լքեր եկեր ենք, չենք կրնար հետ ատեն մնալ այստեղ, պէտք է օր առաջ վերջացնենք մեր աշխատութիւնը:

Տիար Ֆնտգլեան. Բնական է՝ ամէնքս ալ համամիտ ենք այս մասին: Եթէ Համագումարին աշխատութիւնները չափազանց յետաձգուին՝ վերջ ի վերջոյ դժուար պիտի ըլլայ մեծամասնութիւն գոյացնել, որովհետեւ մեզմէ շատեր, որոշ ժամանակ մը վերջ պիտի ստիպուին ելլել:

Տիար Տէօվլէթեան. Արդէն դրուած աւելի հրատապ հարցեր կան: Անցեալէն աւելի ներկայի խնդիրները պէտք է մեզ զբաղեցնեն: Նախնական խորհրդակցութիւններով կրնանք հարթել թէ՛ անհամաձայնութիւնները եւ թէ՛, մանաւանդ, մեր դիտողութիւնները Ժողովին բերել իրենց վերջնական ձեւով, որով աւելորդ վիճաբանութեանց պէտք չի մնար եւ ամեն խնդիր կը լրանայ շուտով:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Ինչպէս յայտնի է Համագումարիդ, որոշուած էր թրքական դաշնագրին մեզի աննպաստ մասերուն սրբագրութեան համար եւրոպացի ձեռնահաս իրաւաբանի մը կարծիքն իմանալ: Այս որոշման համեմատ, Ազգային Պատուիրակութեան Վսեմ. Նախագահին հետ դիմեցինք յայտնի ֆրանսացի իրաւաբանի մը՝ Պ. Ժոզէֆ Պարթէլոմէի, որ Փարիզու համալսարանի դասատուներէն է եւ միանգամայն Երեսփոխանական Ժողովոյ անդամ: Պ. Պարթէլոմէ քանի մը օրէն պիտի պատասխանէ մեր կողմէ իր կարծիքին ենթարկուած հարցումներուն: Երբ այդ պատասխանը ստանանք, իսկոյն պիտի հաղորդուի այն յանձնաժողովին զոր Համագումարը կազմեց դաշնագրին քննութեան համար եւ բանաձեւ մը կազմուելով պիտի ենթարկուի Ժողովիդ: Միւս կողմէ, Ազգ. Պատուիրակութիւնն ալ անշուշտ իր նկատողութիւնները պիտի յայտնէ ստացուած պատասխանին նկատմամբ, եւ այդ առթիւ Ժողովին պիտի հաղորդէ այն մտածումները, զորս ունի յառաջիկային ընելիք ձեռնարկներու մասին: Որպէսզի այս բոլորը շուտով քննուին Ժողովիդ կողմէ, անհրաժեշտ է, որ ինչպէս Տիար Տէօվլէթեան զիս կանխելով ըսաւ՝ աշխատութեան մեթոտ մը հաստատենք: Հետեւաբար, պիտի առաջարկեմ, որ պատգամաւորներէն անոնք, որոնք դաշնագիրը քննեցին եւ անոր նկատմամբ դիտողութիւններ ունին, իրարու հետ խորհրդակցելով գրաւոր կերպով ձեւաբանեն իրենց թելադրութիւնները եւ յանձնեն Դիւանիս, որպէսզի կարելի ըլլայ որոշ դասաւորման մը ենթարկել բոլոր վիճելի կէտերը եւ ապահովել անոնց արագ ու կանոնաւոր քննութիւնը:

Համագումարը միաձայնութեամբ համամտութիւն յայտնեց այդ առաջարկութեանը:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Միւս կողմէ՝ պէտք է ուղեգիծ մը հաստատենք նաեւ Համագումարին ընդհանուր աշխատութեանց համար, որպէսզի կարենանք սահմանել անոր տեւողութեան միջոցը եւ այդ սահմանուած ժամանակին մէջ լրացնել բոլոր աշխատութիւնները: Անոնց մէջ մեծագոյն տեղը կը բռնէ անշուշտ Ազգ. Պատ.-թեան միամեայ գործունէութեան համարատուութեան մասին կատարուելիք վիճաբանութիւնը: Այս գործը եւ Պատ.-թեան բոլոր գործերը պէտք չէ ուշանան: Համագումարը չի կրնար յաւերժանալ: Տարակոյս չկայ, որ չենք կրնար երրորդ

նստաշրջան մը ունենալ. ասիկա ո՛չ պատշաճ է, ո՛չ ալ գործնական: Այս մասին անշուշտ բոլորդ ալ համակարծիք էք ինծի: Որպէսզի կարելի ըլլայ հաստատել այս ձեւ ուղեգիծ մը, կարծեմ լաւ պիտի ըլլայ, որ պատգամաւորներն իրենք իրենց միջեւ խորհրդակցելով հասունցնեն վիճելի հարցերը եւ առանձինն կամ հաւաքաբար բանաձեւեն զանոնք ու բերեն ժողովին: Որոշ գործի մը համար եւ որոշ նպատակով մը հաւաքուած ենք, պէտք է որ կարելի եղածին չափ շուտով լրացնենք այդ գործը ու ցրուինք: Ինչպէս ըսուեցաւ՝ հեռաւոր տեղերէ եկածներ կան, որոնք արդէն մեծ զոհողութիւն մը ըրած են իրենց գործերը լքելով եւ մինչեւ Փարիզ գալով: Խղճի խնդիր է անոնց կացութիւնը նկատի առնելը, աշխատելու ենք որ այդ զոհողութիւնը որքան կարելի է նուազ սուղի նստի իրենց, եւ արդէն մեր խնդիրն, այսօրուան դրութիւնն ամեն բանէ աւելի աշխատութեան արագութիւն կը պահանջէ:

Համագումարը նոյնպէս ընդունեց այս առաջարկութիւնը:

Տիար Արշակ Չօպանեան յայտնեց, թէ Բրոբականտի Յանձնաժողովին տեղեկագրին առթիւ սկսուած վիճաբանութիւնը չէ փակուած եւ պատգամաւորները ազատ են Պատուիրակութեան պիւտճէի վիճաբանութեան առթիւ վերադառնալ նաեւ Բրոբականտի Յանձնաժողովին տեղեկագրին քննութեան: Համագումարը համամտութիւն յայտնեց, նոյն նկատման ենթարկելով նաեւ Բժշկական Յանձնաժողովին տեղեկագիրը:

Նիստը փակուեցաւ ժամը 6 ½ -ին:

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 60, թթ. 1-23: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ Թ

2 Յունիս 1920, ժամը 4-ին,
նախագահութեամբ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեանի:

Ներկայ էին 17 պատգամաւոր՝

Ամեն. Եղիշէ Արքեպիսկոպոս Դուրեան, Տիարք Աղաթօն Պէյ, Տոքթ. Բարսեղեան, Դաւիթ-Բէկ, Թէրզիպաշեան, Թէքէեան, Թումայեան, Հանըմեան, Մսըրլը Պէյ, Վսեմ. Գ. Նորատունկեան, Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար, Չօպանեան, Սինապեան, Տէրպէտէրեան, Տէր-Ստեփանեան, Տէօվլէթեան, Ֆնտգլեան:

Օրակարգ

1. Տեղեկագիր ելեւմտական գործառնութեանց Ազգ. Պատուիրակութեան
2. Շարունակութիւն վիճաբանութեան Ազգ. Պատուիրակութեան համարատուութեան
3. Տեղեկագիր Ազգ. Պատուիրակութեան Կազմական Կանոնագրի Յանձնաժողովին
4. Վերակազմութիւն Ազգ. Պատուիրակութեան

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Ընթերցում ատենագրութեան

Կարդացուեցաւ եւ վաւերացուեցաւ Յունիս 1-ի նիստին ատենագրութիւնը:

2. Նամակ այրի Տիկին Մոստիչեանի

Նախագահ Վսեմ. Տիար Գաբրիէլ Նորատունկեան հաղորդեց, թէ այրի Տիկին Մոստիչեան նամակով մը շնորհակալութիւն յայտնած է այն յարգանքի ցոյցին համար,

որ Համագումարին կողմէ կատարուած էր իր ողբացեալ ամուսնին՝ Տիար Յարութիւն Մոստիչեանի ի յիշատակ, եւ որու մասին Դիւանը տեղեկութիւն տուած էր իրեն՝ ինչպէս յանձնարարած էր Համագումարը:

Ընթերցուեցաւ ատենագիրը:

Օրակարգ

Տեղեկագիր ելեւմտական գործառնութեանց Ազգ. Պատուիրակութեան

Ազգ. Պատուիրակութեան ելեւմտական գործառնութեանց քննութեան համար Համագումարին կողմէ կազմուած յանձնաժողովին տեղեկաբեր Տիար Գառնիկ Ֆնտգլեան կարդաց Պատուիրակութեան ելեւմտական հաշուեցոյցին նկատմամբ պատրաստուած տեղեկագիր մը: Տիար Ֆնտգլեան դիտել տուաւ, թէ Ազգ. Պատուիրակութեան կողմէ ղրկուած հաշուեցոյցը գումարներու ներկայացում մըն է եւ անոր մէջ չկան իւրաքանչիւր գործառնութեան մանրամասնութիւնները:

Պատուիրակութեան Նախագահ Վսեմ. Պօղոս Փաշա ըսաւ, որ իր Դիւանը միշտ պատրաստ է ուզուած մանրամասնութիւնը տալու, ըլլա՛յ Յանձնաժողովին, ըլլա՛յ Համագումարի անդամներուն, կը բաւէ որ պահանջուած մանրամասնութեանց մասին որոշ հարցում մը ուղղուի:

Համագումարին անդամներէն ոմանք փափաք յայտնեցին, որ յետածգուի տեղեկագրին նկատառումը, եւ Յանձնաժողովը՝ Պատուիրակութեան Վսեմ. Նախագահին Դիւանէն պէտք եղած մանրամասնութիւնները ստանալէ վերջ բերէ նոր տեղեկագիր մը:

Տիար Տիրան Տէօվլէթեան առաջարկեց յետածգել տեղեկագրին նկատառումը, քանի որ Համագումարը միշտ ազատ է վիճաբանութեան ընթացքին պէտք տեսնուած մանրամասնութիւններն ստանալու Պատուիրակութեան Վսեմ. Նախագահին Դիւանէն:

Համագումարը այդ մասին հաւանութիւն յայտնած ըլլալով, Տիար Տոքթ. Ա. Բարսեղեան տեղեկութիւն հարցուց հետեւեալ երեք կէտերու նկատմամբ.

ա.- Ներգաղթի համար կատարուած ծախքերու յիշատակութիւն մը կար տեղեկագրին մէջ, ծախքեր, որոնք եղեր էին Ֆրանսայի, Իտալիոյ ու Զուիցերիոյ մէջ գտնուող հայեր հայրենիք ղրկելու համար. կարելի չէ՞ գիտնալ, թէ ուրկէ՞ կու գային այդ հայերը եւ ո՞ւր կ'երթային:

բ.- Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան ծախքերուն համար ընդհանուր գումար մը յիշատակուած էր: Կարելի չէ՞ գիտնալ, որ այդ ծախքերէն ո՞րքանը եղած է Ազգ. Պատուիրակութեան եւ ո՞րքանը Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան կողմէ:

գ.- Ազգ. Համագումարի համար 36000 ֆրանքի ծախք մը նշանակուած էր. ի՞նչ բանի գործածուած կրնայ ըլլալ այդ կարեւոր գումարը:

Առաջին հարցման յաջորդաբար պատասխանեցին Պատուիրակութեան անդամները, ինչպէս նաեւ Տիարք Աղաթօն Պէյ ու Հանըմեան եւ յայտնի եղաւ, թէ զինադադարէն ասդին Զուիցերիայէն, Իտալիայէն ու Ֆրանսայէն դիմում ընող կարգ մը հայերու, ինչպէս նաեւ ուսանողներու, որոնք կը փափաքէին Երկիր դառնալ եւ ատոր համար ո՛չ մէկ միջոց ունէին, ճամբու ծախք տրուած էր:

Երկրորդ հարցման ի պատասխան՝ Պատուիրակութեան Վսեմ. Նախագահը յայտնեց, թէ Համագումարին կողմէ Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան կազմութենէն առաջ, Ազգ. Պատուիրակութիւնը կը գումարուէր իր բնակարանին մէջ, որով ո՛չ առանձին պաշտօնատուն վարձելու, ո՛չ ալ առանձին գրագրութիւն կազմելու պէտք կար. իր անձնական քարտուղարները կը կատարէին ամեն աշխատութիւն: Մինչդեռ արդի շէնքը, ինչպէս նաեւ հաստատուած դիւաններուն, անոնց պաշտօնեաներուն ու ծառայողներուն պէտք տեսնուած է լոկ Ամբողջական

Հայաստանի Պատուիրակութեան համար, այս է պատճառը որ անոր անունով ատենագրուած են այդ ծախքերը: Այս առթիւ՝ Պատուիրակութեան Վսեմ. Նախագահը յայտնեց, որ թէեւ նախապէս որոշուած էր որ Ազգ. Պատուիրակութիւնն ու Հանրապետութեան Պատուիրակութիւնը կէս առ կէս ընեն այդ ծախքերը, բայց Հանր. Պատուիրակութիւնը իր բաժինը չվճարեց եւ ամբողջ ծախքերը վճարուեցան Ազգ. Պատուիրակութեան կողմէ:

Դարձեալ, ի պատասխան Տիար Ա. Բարսեղեանի երրորդ հարցման, Ազգ. Պատուիրակութեան Վսեմ. Նախագահը յայտնեց, որ Համագումարին համար եղած ծախքերուն մէջ կայ նախ շէնքի վարձքը, յետոյ կան գրագրութեան եւ սպասարկութեան ծախքերը եւ այն բացառիկ ծախքերը, որոնք եղան մէկ քանի պատգամաւորներու համար, ինչպէս զոր օրինակ Տիարք Բրօֆ. Խաչատուրեան եւ Լեւոն Շանթ, որոնց թէ՛ գալու եւ թէ՛ մեկնելու ծախքերը, ինչպէս նաեւ Փարիզ մնացած ատենին որոշ ամսական մը Պատուիրակութիւնը վճարեց:

Ամեն. Դուրեան Արքեպիսկոպոս հարցուց, թէ ինչո՞ւ Եգիպտոսի մէջ պատսպարուած որբերուն եւ վերապրողներուն համար դրամ ղրկուած էր, մինչդեռ Եգիպտոսի գաղութը կրնար ինք հոգալ անոնց ծախքերը: Պատուիրակութեան Վսեմ. Նախագահը յայտնեց, որ այդ գումարը ղրկուած էր ո՛չ թէ Եգիպտոս գտնուող որբերու եւ վերապրողներու համար, այլ՝ Հայաստանի զանազան կողմերէն հետզհետէ Եգիպտոս հասնողներուն համար, որոնց օգնութեան հասնելու անմիջական պէտք կար: Տիար Վահան Թէքէեան ալ աւելցուց, թէ Եգիպտոսի գաղութը միշտ իր կարելին ըրած է իր շրջանակին մէջ գտնուող կարօտութիւնները դարմանելու համար:

Տիար Տիրան Տէօվլէթեանի առաջարկութեան վրայ՝ Համագումարը պէտք չտեսաւ, որ Յանձնաժողովը, Պատուիրակութեան Վսեմ. Նախագահին Դիւանէն մանրամասնութիւնները ստանալէ վերջ նոր տեղեկագիր մը բերէ, այլ՝ ինք իր կողմէ անհրաժեշտ հակակշիռը ընելով՝ լոկ եզրակացութիւնը հաղորդէ Համագումարին: Յանձնարարեց նաեւ, որ եթէ սխալ մը տեսնէ, այդ սխալն ալ հաղորդէ իր եզրակացութեանց հետ:

Ամեն. Դուրեան Արքեպիսկոպոս այս որոշման առթիւ ըսաւ, թէ լաւագոյն հակակշիռ մը կար ընելիք, գիտնալու համար, որ Պատուիրակութեան կողմէ զանազան տեղեր ղրկուած գումարները իրապէս յաքթացուա՞ծ են իրենց նպատակին: Այս դիտողութեան ձայնակցեցան ուրիշ պատգամաւորներ ալ: Նախագահ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեանի առաջարկութեան վրայ՝ Համագումարը որոշեց յանձնարարել Ազգ. Պատուիրակութեան, որ ղրկուած գումարներու տեղւոյն վրայ գործածութեան եղանակին նկատմամբ իրեն հասած տեղեկութիւններն առանձին տեղեկագրով մը հաղորդէ Համագումարին:

Տեղեկաբեր Տիար Գառնիկ Ֆնտգլեան կարդաց նաեւ անցեալ տարի Համագումարին կողմէ կազմուած պիւտճէի նախագիծին վերաբերող հետեւեալ տեղեկագիրը: Տեղեկաբեր Տիար Գառնիկ Ֆնտգլեան բացատրութիւններ տուաւ այս տեղեկագրին նկատմամբ եւ պատասխանեց ազգ. հանգանակութեան մասին պատգամաւորներու կողմէ եղած հարցումներուն: Համագումարը պէտք տեսաւ, որ այդ մասին ալ, մանաւանդ Ազգ. հանգանակութեան նկատմամբ Յանձնաժողովը անհրաժեշտ մանրամասնութիւններն ստանայ Պատուիրակութեան Վսեմ. Նախագահին Դիւանէն եւ անջատ տեղեկագիր մը բերէ, որպէսզի քննուի Պատուիրակութեան ելեւմտական գործառնութեանց վերաբերող եզրակացութեանց հետ:

Ազգ. հանգանակութեան վերաբերեալ տեղեկատուութեան առթիւ Տիար Աղաթօն Պէյ ցաւ յայտնեց կարգ մը թերթերու մասին, որոնք այդ հանգանակութեան դէմ արտայայտուած էին եւ պատճառ դարձած, որ պէտք եղած արդիւնքը չգոյանայ, ինչ որ այնքան վնասաբեր եղած էր ազգին, մանաւանդ կարօտ ժողովուրդին, որ իր յոյսը դրած էր Ազգ. Պատուիրակութեան վրայ:

Դարձեալ այդ տեղեկատուութեան ընթացքին Համագումարը գովեստով եւ շնորհակալութեամբ յիշատակեց մասնաւորաբար Անգլիոյ հայ գաղութը, որ իրմէ ակնկալուածէն աւելին ըրած էր ազգ. հանգանակութեան համար, ինչպէս հակիրճ կերպով տեղեկացուց Տիար Տիրան Տէօվլէթեան, պարզելով մանաւանդ այն խիստ հակակշիռը, որ դրամին գործածութեան միջոցներն կը կատարուի թէ՛ գաղութներուն եւ թէ՛ հանգանակուած գումարն կրկնապաքթուելով Անգլ. կառավարութեան կողմէ: Նախագահ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան փափաք յայտնեց, որ Տիար Տիրան Տէօվլէթեան վերադարձին՝ Համագումարին շնորհակալութիւնները հաղորդէ Անգլիոյ գաղութին: Ժողովը ձայնակցեցաւ այս առաջարկութեան: Շնորհակալութեամբ յիշատակուեցան նաեւ այն գաղութները, որոնք պսակած էին ազգ. հանգանակութեան մասին իրենց վրայ դրուած ակնկալութիւնները:

Տիար Տիրան Տէօվլէթեան ակնարկեց նաեւ կարգ մը ծախքի չափազանցութեանց եւ իբր օրինակ ցոյց տուաւ Կիլիկիոյ Բժշկական Առաքելութիւնը: Այդ առթիւ յայտնելով, թէ Տիար Տոքթ. Ղազարոսեան բողոքագիր մըն ալ տուած է Ազգ. Պատուիրակութեան, առաջարկեց, որ Համագումարը իր ներկայութեան ընդունի Տոքթ. Ղազարոսեանը եւ անկէ անձամբ բացատրութիւն ստանայ:

Նախագահ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան դիտել տուաւ, որ յարմար ատենին կարելի է վերադառնալ այդ խնդրին՝ երբ Յանձնաժողովը իր տեղեկագիրը բերէ:

Նիստը փակուեցաւ ժամը 6-ին:

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 60, թթ. 24-30: Բնագիր: Ձեռագիր:

Նիստ ԺԱ

3 Յունիս 1920, ժամը 4-ին,
նախագահութեամբ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեանի:

Ներկայ էին 16 պատգամաւոր՝

Ամեն. Եղիշէ Արքեպիսկոպոս Դուրեան, Տոքթ. Բարսեղեան, Դաւիթ-Բէկ, Թէրզիպաշեան, Թէքէեան, Թումայեան, Հանըմեան, Մսըրլը Պէյ, Վսեմ. Գ. Նորատունկեան, Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար, Չօպանեան, Սինապեան, Տէրպէտէրեան, Տէր-Ստեփանեան, Տէօվլէթեան, Ֆնտգլեան:

Օրակարգ

1. Շարունակութիւն վիճաբանութեան Ազգ. Պատուիրակութեան համարատուութեան
2. Շարունակութիւն վիճաբանութեան Ազգ. Պատուիրակութեան հաշուական գործառնութեանց տեղեկագիրներուն
3. Տեղեկագիր Կազմական Կանոնագրի Յանձնաժողովին
4. Վերակազմութիւն Ազգ. Պատուիրակութեան

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընթերցում ատենագրութեան

Կարդացուեցաւ Յունիս 2-ի նիստին ատենագրութիւնը:

Ատենագրութեան ընթերցման վրայ՝ Տիար Ա. Բարսեղեան ըսաւ, թէ նախորդ նիստին մէջ Համագումարի ծախքերուն նկատմամբ տրուած բացատրութեան ընթացքին երբ Պատուիրակութեան Նախագահը Տիարք Շանթի եւ Բրօֆ.

Խաչատուրեանի ճամբու ծախքը եւ ամսական վճարուած ըլլալը յայտնեց միջանկեալ կերպով, ինք այնպէս կարծեց, թէ այդ պարագան չպիտի արձանագրուի ատենագրութեան մէջ: Այլապէս՝ պիտի պատասխանէր, թէ անոնց համար եղած ծախքերը պէտք էին մնալ Պատուիրակութեան ընդհանուր ծախքերուն մէջ, քանի որ Տիարք Շանթ եւ Բրօֆ. Խաչատուրեան Համագումարին սկսելէն առաջ նախորդ Պատուիրակութեան կողմէ հրաւիրուած էին, առաջինը՝ Պատուիրակութիւնը զօրացնելու համար, եւ երկրորդը՝ իբր մօտէն տեղեակ Միջագետք գտնուող վերապրողներու դրութեան: Տիար Բարսեղեան յայտնելէ ետք, թէ Պատուիրակութեան Նախագահը մինակ Տիարք Շանթի եւ Բրօֆ. Խաչատուրեանի չէր ակնարկած, այլ նաեւ ուրիշներու, որոնց անունը չէ տրուած, պահանջեց, որ կա՛մ ամէնուն ալ անունը արձանագրուի եւ կա՛մ ատենագրութեան այդ մասը ջնջուի:

Համագումարը՝ մեծամասնութեամբ իրաւացի գտաւ Տիար Բարսեղեանի դիտողութիւնը, եւ հարկ չդատեց նախորդ նիստի ատենագրութեան ակնարկուած մասը ջնջելու, այլ յանձնարարեց Հաշուեքննիչ Յանձնաժողովին՝ ստանալ ծախուց մանրամասնութիւններ եւ Ժողովոյ տեղեկագրել ընդ փոյթ նաեւ այդ կէտին նկատմամբ եւ իր տեղեկագրով ներկայացնել Ժողովին:

Տիար Արշակ Չօպանեան դիտել տուաւ, որ թէպէտ նախկին Պատուիրակութիւնը Ն. Վսեմութիւն Պողոս Փաշայի տունը կ'ունենար իր նիստերը, բայց Համագումարին ընտրած Պատուիրակութեան համար արդէն իսկ մասնաւոր պաշտօնատեղի մը անհրաժեշտ պիտի ըլլար:

Օրակարգ

Շարունակութիւն վիճաբանութեան Ազգ. Պատուիրակութեան համարատուութեան

Տիար Տոքթ. Բարսեղեան. Օրակարգի խնդրին անցնելէ առաջ՝ կ'ուզէի լուսաբանուիլ երկու կէտերու մասին, որոնք չէին արձանագրուած Պատուիրակութեան տեղեկագրին մէջ:

Առաջին կէտը սա է: Անցեալ աշնան կամ ամռան վերջերը, մամուլին մէջ հրատարակուեցան կարգ մը տեղեկութիւններ, որոնց համեմատ՝ Ազգ. Պատուիրակութիւնը էջմիածնայ Կաթողիկոսին նամակ կամ հեռագիր մը ուղարկելով խորհուրդ տուած էր, որ արեւմտահայերը չմասնակցին Հայաստանի խորհրդարանական ընտրութեանց, առարկելով թէ կրնան քաղաքական ծանր անպատեհութիւններ ծագիլ: Կը փափաքիմ գիտնալ, թէ Ազգ. Պատուիրակութիւնը, որ Համագումարէն ընտրուած է, ի՞նչ իրաւունքով կրնար Կաթողիկոսին այդ տեսակ քաղաքական դիմում մը ընել:

Երկրորդ կէտը, որուն նկատմամբ լուսաբանուիլ կ'ուզեմ, սա է: Ազգ. Պատուիրակութիւնը՝ դաշնագրին յանձման միջոցին ոեւէ հրաւէր ստացա՞ծ էր Գերագոյն Խորհուրդին կամ անոր Ընդհ. Քարտուղարութեան կողմէ՝ իբր պաշտօնական մարմին մը, որ դեր մը պիտի կատարէ դաշնագրին ստորագրութեան միջոցին:

Պատուիրակութեան Նախագահ Վսեմ. Պողոս Փաշա Նուպար դիտել տուաւ, թէ այս տեսակ հարցումներ պէտք է նախապէս գրաւոր տեղի ունենան, որպէսզի Պատուիրակութիւնը կարենայ ակնարկուած խնդիրներուն վերաբերող պաշտօնագրերը միասին բերել ու կարդալ: Յետոյ, պատասխանելով Տիար Բարսեղեանի առաջին հարցման, բացատրութիւններ տուաւ այն պարագաներուն նկատմամբ, որոնք անհրաժեշտ դարձուցին վերոյիշեալ հեռագրին առաքումը: Այդ պարագաները արեւմտահայոց համար մանաւանդ կը ներկայացնեն տեսակէտ մը, զոր

չէին կրնար աչքէ վրիպիլ, եւ արդէն արեւմտահայերն իրենք ալ բողոքի ձայն բարձրացուցած էին այդ մասին: Բողոքը Կաթողիկոսին ղրկուած էր, որովհետեւ արեւմտահայոց քաղաքական դերը որոշ չէր այդ միջոցին, եւ Կաթողիկոսը մանաւանդ իբր ընդհանուր հոգեւոր պետ՝ կը զբաղէր անոնց ճակատագրով: Եւ արդէն բողոքը գաղտնի բան մը չէր: Միեւնոյն առթիւ՝ Պատուիրակութիւնը բողոքած էր նաեւ Երեւանի կառավարութեան, նոյն պատճառաբանութիւններով:

Համագումարը բաւական նկատեց Պատուիրակութեան Նախագահին այդ մասին տուած բացատրութիւնները եւ անցաւ Տիար Բարսեղեանի երկրորդ հարցման, որ երկար վիճաբանութեան մը դուռ բացաւ:

Վսեմ. Պողոս Փաշա Նուպար. Բնական է, թէ հրաւիրուած էի դաշնագրին յանձման արարողութեան, այլապէս՝ ինչպէ՞ս կրնայի երթալ բազմիլ Դաշնակից կառավարութեանց ներկայացուցիչներու կարգին: Դաշնագրին յանձնուելէն օր մը առաջ, բոլորովին անակնկալ կերպով մը ստիպողաբար հրաւիրուեցայ Արտաքին Գործոց պաշտօնատունը. այնտեղ հարցուցին, թէ ստացա՞ծ եմ հրաւիրագիրը: Պատասխանեցի, թէ ոչ: Զարմացան եւ փնտրելով հասկցան, թէ հրաւիրագիրը ղրկուած էր Տիար Ահարոնեանի, իբր ներկայացուցիչ Հանրապետութեան կառավարութեան: Այն ատեն բացատրեցի Թուրքիոյ հայոց ալ ունեցած իրաւունքը հաշտութեան դաշնագիրը ստորագրելու մասին: Խորհրդակցութիւն մը կատարուեցաւ, որմէ վերջ, իմ պարզած տեսակէտս ընդունելով, իսկոյն հրաւիրագիրը տուին:

Տիար Բարսեղեան. Տիար Ահարոնեանէն՝ հրաւիրագիրը տրուած միջոցին, պահանջուած էին լիազօրութեան թուղթեր, անշուշտ նոյն պահանջումը ըրած են նաեւ Պատուիրակութեան Նախագահին: Ինծի ըսուեցաւ, թէ Կաթողիկոսէն կոնդակ մը եւ Պոլսոյ Համազգային խորհուրդէն լիազօրութեան թուղթ մը ներկայացուած է, ճի՞շդ է:

Վսեմ. Պողոս Փաշա Նուպար. Այո՛, ճիշդ է:

Տիար Տոքթ. Բարսեղեան. Եթէ ասիկա ճիշդ է, Ազգ. Պատուիրակութեան միւս անդամները տեղեկութիւն ունի՞ն այդ մասին:

Վսեմ. Պողոս Փաշա Նուպար. Երբ իմ լիազօրութեան թուղթերս պահանջեցին, յիշեցուցի, թէ վեց տարիէ ի վեր Եւրոպայի մէջ կը ներկայացնեմ արեւմտահայերը, էջմիածնայ Կաթողիկոսին կողմէ տրուած լիազօրութեամբ մը, որ ճանչցուած է բոլոր Դաշնակից կառավարութիւններէն, եւ անոր հիման վրայ կատարուած են իմ դիմումներս իրենց մօտ: Իրաւունք տուին ինծի: Ուրիշ բան, թէ պէտք էր նաեւ Համագումարին կողմէ տրուած լիազօրութիւն մը: Ասիկա կրնաք ընել հիմա, բայց չմոռնանք, որ շատ անկանոն, գրեթէ աննախընթաց կացութեան մը մէջ ենք, դուք՝ իբր արեւմտահայերը ներկայացնող մարմին, մենք՝ իբր ձեզմէ բղխած գործադիր տարր: Ո՛չ դուք կառավարութիւն մը կը ներկայացնէք, ո՛չ ալ մենք: Բայց անդին կայ սկզբունք մը, զոր պէտք է փրկենք, եւ ատիկա դաշնագրին ստորագրութեան մէջ Թուրքիոյ հայոց մասնակցութեան սկզբունքն է: Ամբողջ խնդիրն ատոր մէջ է: Եթէ պէտք է, որ ստորագրեն՝ անհրաժեշտ է, որ ներկայացուցիչ մը ունենան: Այս մասին ո՛չ այնքան ձեւական տեսակէտներուն, որքան սկզբունքին փրկութեան պէտք է աշխատինք: Դիտել կու տամ այս առթիւ, որ եթէ դաշնագրին տակ չգտնուէր նաեւ Թուրքիոյ հայոց մէկ ներկայացուցչին ստորագրութիւնը, ատիկա ամէնէն առաջ գոհունակութիւն պիտի պատճառէր թուրքերուն: Ես կը զարմանամ, որ հայեր խնդիր կ'ընեն ասիկա:

Տիար Տոքթ. Բարսեղեան. Դաշնագրին մէջ արեւմտահայութիւնը շատ տեղ չունի: Պէտք չէ առնենք անանկ քայլ մը, որ վերջէն ծիծաղելի դառնանք եւ ներքին խնդիրներու նոր դուռ բացուի:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Չենք գիտեր, թէ դաշնագրին մէջ գործածուած «Arménie» բառը Գերագոյն Խորհուրդին մտածմանց մէջ ի՞նչ կերպով ըմբռնուած է. լոկ Հանրապետութի՞ւնը կ'ըմբռնեն, թէ Հանրապետութեան հետ նաեւ Թրքական Հայաստանի այն մասերը, որոնք յիշատակուած են: Այս կէտը չճշդուած՝ չենք կրնար վճռել, թէ դաշնագրին մէջ Թուրքիոյ հայերը շատ տեղ չունին:

Տիար Վ. Թէքէեան. Քանի որ Տիար Բարսեղեան հարցուց, թէ Պատ.-թեան անդամները տեղեկութիւն ունի՞ն Նախագահին ներկայացուցած իրաւասութեան գիրերուն նկատմամբ, կ'ուզեմ պատասխանել թէ այո, եւ թէ այդ մասին Պատուիրակութեան մէկ նիստին մէջ խորհրդակցութիւն կատարուած է: Երբ Նախագահը յայտնեց, թէ անմիջական պէտքին առջեւ ներկայացուցած է Կաթողիկոսէն ստացած իրաւասութեան գիրը, յայտնեցինք, որ դաշնագրին ստորագրութեան համար պէտք է հիմնուիլ Համագումարին իշխանութեան վրայ, որ իբր Թուրքիոյ հայոց ներկայացուցիչ մարմին, իրաւունք ունի այս լիազօրութիւնը տալու իրեն: Նոյն նիստին մէջ դաշնագրին ստորագրութիւնը նախատեսելով, Տիար Ահարոնեան առաջարկեց հեռագրել Կովկաս, որպէսզի Հանր. կառավարութիւնը արտօնէ Փաշան եւս իր կողմէ դաշնագիրը ստորագրելու: Խնդիր է, թէ երկու Նախագահներն ալ պէտք է Հանրապետութե՞ն անունով ստորագրեն, թէ՞ մէկը ստորագրէ յանուն Հանրապետութեան եւ միւսը յանուն Թուրքիոյ հայոց: Որովհետեւ կը կարծեմ, թէ այս խնդրին մէջ պէտք է նկատողութեան առնենք այն բոլոր քաղաքական հաւանականութիւնները, որոնք կրնան ծագիլ Կովկասի մէջ՝ օրինակի համար պոլշեւիզմի վտանգը, որ կրնայ այդ պարագային խախտել ո՛չ միայն Փաշային, այլ նոյն ինքն Հանրապետութեան ներկայացուցչին դիրքը՝ դաշնագրի ստորագրութեան միջոցին:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Տիար Ահարոնեան այդ մտածումը ունեցաւ այն կանխատեսութեամբ, որ եթէ յառաջիկային թուրքերու կողմէ առարկութիւն ըլլայ Վսեմ. Փաշային ներկայացուցած լիազօրութեան գիրերուն համար, պահեստի թուղթ մը գտնուի, որուն շնորհիւ Ն. Վսեմութիւնը կարենայ ստորագրել դաշնագիրը: Ձինքը շնորհաւորեցի այս մտածման համար: Կը կարծեմ, թէ այդ հեռագիրը ղրկուած է անշուշտ: Այդ օրը խօսեցանք նաեւ այն քաղաքական երկիւղներու մասին, որոնց ակնարկեց Տիար Թէքէեան: Յարմար դատուեցաւ, որ առանց նկատի առնելու հաւանական ձեւափոխութիւնները, որոնք կրնային առաջ գալ Կովկասի մէջ, այդ լիազօրութեան գիրերը ուզուին եւ պատրաստ ըլլան:

Տիար Գառնիկ Ֆնտգլեան. Բուն խնդիրը սա է, թէ Փաշան թրքահայո՞ց, թէ՞ Հանրապետութեան անունով պէտք է ստորագրէ: Կը կարծեմ, թէ պէտք է թրքահայոց կողմէ ստորագրէ, եւ ասոր համար ամեն ջանք պէտք չէ խնայուի: Դաշնագիրը քննած ատեննիս մենք գանգատ յայտնեցինք, թէ թրքահայոց խօսք չէ եղած, ինչո՞ւ չաշխատինք ուրեմն կարելի եղածին չափ լայն մեկնութիւն մը տալու դաշնագրին մէջ գործածուած «Arménie» բառին:

Տիար Ա. Չօպանեան. Այս հարցը շատ կարեւոր է ո՛չ միայն իրաւաբանական տեսակէտով, որ մասնագիտական հանգամանք մը ունի, այլ՝ մանաւանդ մեր ազգ. պատմութեան տեսակէտով, որ աւելի կարեւոր է: Փաշան իրաւունք ունէր յիշեցնելու, որ ինք վեց տարիէ ի վեր Թուրքիոյ հայոց ներկայացուցիչն է, ինչպէս արդէն ծանօթ է Դաշնակից պետութեանց: Խնդիր եղաւ, թէ պէտք է կռթնէր Համագումարին կողմէ տրուած մանտայի մը: Բայց արդէն Համագումարը ո՛չ միայն զինքը հռչակած է իբր թրքահայոց ներկայացուցիչ, այլ՝ իւր տիրէքթիւներէն մէկն ալ կը տրամադրէ, որ երկու Պատուիրակութիւնները միասին պիտի գործեն եւ տրուած թուղթերը պիտի կրեն երկու Նախագահներուն ստորագրութիւնները: Այսպէս ալ եղած է միշտ, այսպէս եղաւ նաեւ Լոնտոնի ու Սան Ռեմոյի մէջ: Տիար Ահարոնեան մտածումը ունեցեր է իր կառավարութենէն լիազօրութեան թուղթ մը բերել տալու Ն. Վսեմութեան համար: Պատուիրակութեան այդ նիստին ներկայ չէի, այլապէս պիտի ընէի առաջարկ մը, զոր հիմա այստեղ կ'ընեմ: Ես կ'առաջարկեմ, որ ինչպէս Հանրապետութեան կառավարութիւնը Ն. Վսեմութիւնը պիտի հռչակէ նաեւ Հանրապետութեան կողմէ լիազօր, այնպէս ալ Համագումարը Թուրքիոյ հայոց անունով լիազօրութեան թուղթ մը տայ Տիար Ահարոնեանի, որով երկու Նախագահները անգամ մըն ալ լիազօր կը

դառնան ամբողջ Հայկական Խնդրին համար եւ այդ հանգամանքով Դաշնագիրը ստորագրելու իրաւունք կը ստանան:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Լիազօրութեան գիր մը օրինական հանգամանք ունենալու համար պէտք է, որ այդ գիրը տուողը արդէն իսկ օրինական գոյութիւն մը ունեցած ըլլայ: Թուրքիոյ հայոց կողմէ՝ իբր օրինական առանձին մարմին մէկ գործողութիւն մը միայն կատարուած է, այն գիրը, որ 1918 Նոյեմբեր 30-ին ուղղուեցաւ Դաշնակից պետութեանց եւ որով թրքահայոց անկախութիւնը կը հռչակուէր: Բայց Դաշնակից պետութիւնները ո՛չ կը ճանչնանք ըսին, ո՛չ ալ չենք ճանչնար ըսին: Իրաւ է, Պատուիրակութիւնը գործողութիւններ ըրաւ, որոնց մէջ իր ստորագրութիւնը ճանչցուեցաւ իբր Թուրքիոյ հայոց ներկայացուցչի ստորագրութիւն, բայց ատիկա բաւական չէ դաշնագիր մը ստորագրելու համար: Որպէսզի թրքահայերն օրինական մարմին մը նկատուէին, անհրաժեշտ էր, որ Դաշնակից պետութիւնները ճանչցած ըլլային անոնց անկախութիւնը, եւ այս տեսակ բան մը չեղաւ: Պէտք է աշխատինք նախ այդ օրինական հիմը ստեղծելու:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Պ. Քլէմանսօ չպատասխանեց մեր անկախութեան յայտարարութեան, բայց անգլիական կառավարութիւնը ստացած ըլլալն ծանոյց, աւելցնելով, որ արձանագրած է զայն: Կրնանք ասոր վրայ հիմնուիլ նոր դիմումի մը համար: Թէ՛ մեր ապագային եւ թէ՛ մեր պատմութեան տեսակէտով, անհրաժեշտ է, որ Թուրքիոյ հայերը ստորագրեն դաշնագիրը: Կը կրկնեմ դարձեալ, որ անձերը նկատի չառնենք, այլ՝ լոկ սկզբունքը:

Տիար Ա. Հանըմեան. Խնդրին անցնելէ առաջ կ'ուզեմ դիտել տալ, թէ տեսակ մը անբաղձալի խտրական ոգի գոյութիւն առած է մեր վիճաբանութեանց մէջ, եւ մասնաւորաբար մեզի՝ Դաշնակցականներուս նկատմամբ կանխակալ համոզում մը ունին ոմանք, թէ անպատճառ յետին միտք մը կայ մեր խօսքերուն տակ: Ասիկա ճիշդ չէ: Ամէնքս ալ կը փափաքինք, որ Փաշան ստորագրէ դաշնագիրը: Ես անձամբ ներկայ գտնուեցայ դաշնագրին յանձնման, չեմ կրնար նկարագրել, թէ ի՛նչ հպարտութիւն զգացի, երբ զինքը տեսայ նստած թուրք լիազօրներու հետ դէմ առ դէմ, անոնց դատապարտութիւնը վճռող այդ հանդիսաւոր հաւաքման մէջ, ինք՝ դատաւորի աթոռին, անոնք՝ յանցաւորներու աթոռին վրայ: Եւ սակայն, ինծի անկարելի կը թուի, որ մենք յաջողինք սոսկ թրքահայոց անունով դաշնագիրը ստորագրելու իրաւունք մը ձեռք բերել, որովհետեւ Թուրքիոյ լուծէն ազատագրուող, բայց անկախութեան չտիրացած ուրիշ ժողովուրդներու ալ, ինչպէս Սուրիոյ, Պաղեստինի, այդ իրաւունքը չտրուեցաւ: Հեճազ եւ Հնդուստան միայն ստացան այդ իրաւունքը, բայց անոնք հռչակուած էին անկախ պետութիւն: Ամեն անգամ, որ Պատուիրակութիւնը դիմում ըրաւ Վեհաժողովին աշխատութեանց մասնակցելու համար, մերժում միայն գտաւ: Նախագահ Ուիլսոն իսկ, որ այնքան համակիր էր մեզի, իր պատասխանին մէջ ըսաւ, թէ քանի որ հայ ազգը տակաւին չի մտած Ազգերու մեծ Ընկերակցութեան մէջ, իրաւունք չունի մասնակցելու Վեհաժողովին աշխատութեանց: Հիմա ալ, նոյն հիման վրայ պիտի մերժեն, եթէ թրքահայոց անունով դաշնագիրը ստորագրելու մասին դժուարութիւններ ծագին: Անշուշտ պիտի աշխատինք, որ Փաշան ստորագրէ դաշնագիրը իբր Թուրքիոյ հայոց ներկայացուցիչ: Բայց եթէ չկարենանք՝ վերջին պահուն նոր թուղթ մը ցոյց տալով ծիծաղելի չպիտի՞ ըլլանք յետոյ, բանի մը պիտի ծառայէ՞ իրօք:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Ո՛չ, անպատեհութիւն մը չկայ: Ատիկա պարզ chancellerie-ի գործ մըն է: Գերագոյն Խորհուրդը չէ, որ անով պիտի զբաղի, այլ՝ դիւան մը, եւ եթէ իւր եզրակացութիւններն ընդունուին Գերագոյն Խորհուրդին կողմէ, թուրքերը ստիպուած են նոյնպէս ընդունիլ:

Տիար Ա. Հանըմեան. Կարելի չէ՞, որ Հանր. կառավարութիւնը լիազօրէ Փաշան՝ դաշնագիրը ստորագրելու, նկատի առնելով անոր՝ Թուրքիոյ հայոց ներկայացուցչի հանգամանքը, եւ այդ պարագան շեշտելով իւր տալիք լիազօրութեան գիրին մէջ:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Տէրութիւնները եթէ նկատի առնեն, որ Թրքահայաստան ինքզինքը անկախ հռչակած է, թէ Վսեմ. Փաշան յանուն թրքահայոց կատարած է դիմումներ եւ գործողութիւններ, որոնք de facto ընդունուած են իրենց կողմէ, եւ եթէ այսքանը բաւական նկատեն իբր օրինական հիմ ու խնդիրը վճռեն առանց թուրքերուն կարծիքը հարցնելու, այն ատեն ամեն բան կը կարգադրուի: Բայց եթէ թուրքերուն հարցնեն, բնականաբար ո՛չ պիտի ըսեն, եւ խնդիրը պիտի վտանգուի: Պէտք է աշխատիլ նախապէս, որ տէրութեանց համամտութիւնը ձեռք բերուի:

Տիար Ն. Տէր-Ստեփանեան. Ես համամիտ չեմ, որովհետեւ կը կարծեմ, թէ թուրքերը իրենք պիտի փափաքին, որ թրքահայոց կողմէ ստորագրուի դաշնագիրը: Որովհետեւ այն ձեւով՝ ինչպէս որ պատրաստուած է այդ դաշնագիրը, մեր պահանջումները ենթարկուած են շատ մեծ կրճատումներու, եւ անտեսուած են մեր ամէնէն հիմնական իրաւունքները, ինչպէս, օրինակի համար, հատուցման իրաւունքը: Եթէ դաշնագիրը թրքահայոց կողմէ ստորագրուի այդ ձեւով, ատիկա պիտի նշանակէ, թէ թրքահայերը կը հրաժարին իրենց բոլոր անտեսուած պահանջումներէն եւ իրաւունքներէն, ինչ որ թուրքերու աչքին բաղձալի կը դարձնէ դաշնագրին թրքահայոց կողմէ ստորագրելը: Ես կը կարծեմ, որ այս պայմաններուն մէջ լաւագոյն է չստորագրել դաշնագիրը թրքահայոց անունով, եւ անոնց դատը չմեռցնել բոլորովին:

Ամեն. Դուրեան Արքեպ. Կ'ուզէի գիտնալ, թէ Հանրապետութեան կառավարութեան անունով դաշնագիրը պիտի ստորագրուի մէ՞կ Հայաստանի, թէ՞ Միացեալ Հայաստանի համար:

Տիար Վ. Թէքէեան. Մինչեւ դաշնագիրի ստորագրութեան վայրկեանը, բնական է, թէ երկու Հայաստանի գոյութիւնը նկատի կ'առնուէր: Դաշնագիրը ստորագրուած վայրկեանին է, որ մէկ Հայաստան կը կազմուի: Ես փափաքեցայ, որ երկու Հայաստանի անունով ստորագրուի, եւ այս տեսակէտով, հակառակ եմ Տիար Տէր-Ստեփանեանի քիչ մը paradoqsal կարծիքներուն: Տիար Հանըմեան յիշեց, որ անցեալ տարուընէ ի վեր շատ անգամներ դիմումներ ըրինք Գերագոյն Խորհուրդին մօտ՝ Վեհաժողովին աշխատութեանց մասնակցելու համար ու մերժուեցանք: Բայց այս անգամ հրաւիրուեցանք դաշնագրին յանձնման արարողութեան: Ուրկէ՞ առաջ եկաւ այս նոր կացութիւնը: Տիար Հանըմեան ըսաւ, թէ Հանր. ճանաչումէն: Կը կարծեմ որ ո՛չ, որովհետեւ մենք չկոչուեցանք մասնակցելու դաշնագրին խմբագրութեան, հակառակ անոր մէջ միւս Դաշնակիցներու կարգին յիշուած ըլլալնուս: Այսուհետեւ՝ դաշնագրին սրբագրութեան վերաբերող մեր դիտողութիւններով եւ ստորագրութեան մէջ մեր մասնակցութիւնով է, որ պիտի կրնանք Դաշնակից ըլլալ, եւ ատոր մէջ ալ թրքահայութեան ներկայացուցչի համգամանքը պէտք է առանձին պահել: Արդէն դաշնագրին մէջ իրենց պայմանները Թուրքիայի ներկայացնող տէրութեանց կարգին Հայաստանի յիշատակութիւնը փաստ մըն է, թէ այդ Հայաստանը Թուրքիայէն անջատուող հայ հողամասերուն կը վերաբերի: Ռուսական Հայաստանի յիշատակութիւնը Թուրքիոյ հետ կնքուելիք դաշնագրի մը մէջ բոլորովին անիմաստ պիտի ըլլար:

Տիար Թէրզիպաշեան. Կ'առաջարկուի, որ դաշնագրին ստորագրութեան համար դիմում ըլլայ Գերագոյն Խորհուրդին, բայց ասոր համար իրական հիմը կը պակսի մեզի: Ցորչափ դաշնագիրը չէ ստորագրուած, մենք պէտք է մեր խորհրդակցութեան ընթացք տանք մեր ձեռքը եղած դաշնագրին վրայ հիմնուելով: Դաշնագիրը կը յիշատակէ լոկ Հանրապետութիւնը, որպէս ստորագրելու իրաւունք ունեցող կողմ: Իսկ Թրքահայաստանի հարցին մասին ոչինչ չենք տեսներ անոր մէջ: Եղածը լոկ սահմաններու ճշդման յիշատակութիւն մըն է: Իմ կարծիքով՝ փոխանակ ստորագրութեան համար դիմում ընելու, նախապէս պէտք է դիմում ընել դաշնագրին ստորագրութեան համար, ուրմէ կրնայ բղխիլ ինքնին յանուն Թրքահայաստանի ստորագրելու իրաւունքը: Ներկայ վիճակին մէջ դաշնագիրը թաղած է Թրքահայաստանի հարցը, եւ եթէ այդ վիճակին մէջ նոյնիսկ Թրքահայաստանի

ներկայացուցչի մը կողմէ ստորագրուի, ո՛չ մէկ դրական արդիւնք առաջ չի գար: Թերեւս ատով Տիար Տէր-Ստեփանեանի ակնարկած վտանգն ալ առաջ կու գայ: Կ'առաջարկեմ յետաձգել այս հարցին վիճաբանութիւնը, որովհետեւ քաղաքական իրադարձութիւնները մեծ փոփոխութեան կրնան ենթարկուիլ եւ մեր այսօրուան վիճաբանութիւնը ապարդիւն կը մնայ: Լաւագոյն է անշուշտ, որ այս հարցն ալ Համագումարի Վսեմ. Նախագահը պարզէ իր ձեռնհասութեամբ, եւ եթէ պէտք տեսնէ՝ մասնագէտներու խորհրդակցութեամբ լուսաբանէ, որովհետեւ եթէ առանց հիմքը շտկելու լոկ ստորագրութեամբ բաւականանանք, կրնան ապագային վնասներու ենթարկել մեր ձգտումները: Եւ ես կը կարծեմ, որ Համագումարը այդ հաւանականութիւնը բառնալու համար, յանուն գերագոյն շահերու, սիրով պիտի ուզէ զոհել իր նախանձախնդրութիւնները:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Բրոֆեսոր Պարթոլեմէի յղուած հարցումներուն մէջ այդ կէտն ալ մօտէն շօշափող խնդիրներ կան, որոնք կրնան լոյս սփռել այդ մասին: Երբ իր գրաւոր պատասխանը ստանանք, աւելի գիտակցութեամբ կ'անդրադառնանք այդ կէտին:

Տիար Ա. Չօպանեան. Տիար Ա. Ահարոնեանի կողմէ ծանօթ հեռագիրը ղրկուած ըլլալուն նկատմամբ կասկածներ յայտնուեցան:

Տիար Տոքթ. Բարսեղեան. Կարծեմ, թէ վերջնական պատասխան մը կը սպասուէր ղրկելու համար:

Տիար Ա. Չօպանեան. Ես կը պնդեմ իմ առաջարկիս վրայ: Պէտք է, որ Փաշան լիազօր նշանակուի ո՛չ միայն թրքահայերու, այլ եւ Հանրապետութեան կողմէ ստորագրելու եւ Համագումարն ալ լիազօրութիւն տայ Տիար Ահարոնեանի՝ յանուն թրքահայոց ալ ստորագրելու: Միւս կողմէ, համամիտ չեմ Տիար Թէրզիպաշեանի, որ Թրքահայաստանի խնդիրը թաղուած կը նկատէ: Եթէ Հանրապետութեան կառավարութեան չպիտի կցուին Թրքական Հայաստանի հողամասեր, ուրեմն ինչո՞ւ Թուրքիան ստիպէին դաշնագիր կնքելու Ռուսական Հայաստանի հետ: Այդ ստիպումը ինքնին փաստ մըն է, որ Օսմ. Կայսրութենէ մասեր պիտի կցուին Հայկական Հանրապետութեան: Պէտք է նոր դիմումներ ընենք դաշնագրին հիման վրայ, որպէսզի այդ կցուելիք չորս նահանգներուն ներկայացուցիչն ստորագրէ դաշնագիրը:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Տիար Ահարոնեանին պիտի հարցնեմ, թէ ղրկե՞ց հեռագիրը, եւ եթէ Ժողովը չի հակառակիր, պիտի յայտնեմ, թէ Համագումարը կը բաղձայ, որ ամեն կանխատեսութեան համար այդ լիազօրութեան թուղթը պատրաստ ըլլայ: Կրնայ ըլլալ, որ թուղթը ատենին չհասնի, եւ կամ Հանրապետութեան կառավարութիւնը մերժէ: Ասիկա պատճառ մը չէ որ մենք մեր պարտքը չկատարենք: Միւս կողմէ, որովհետեւ ամէնուս բաղձանքն է, որ թրքահայերն առանձին ներկայացուցիչ մը ունենան դաշնագրին ստորագրութեան միջոցին, ատոր համար ալ այստեղ կատարուիլը հնարաւոր եղող ամեն բան ընել Պ. Պարթոլեմէի գրաւոր կարծիքն ալ լսելէ վերջ:

Համագումարը համամտութիւն յայտնեց Տիար Ահարոնեանի մօտ կատարուելիք դիմումին համար եւ այդ առթիւ միաձայնութեամբ ցաւ յայտնեց Փարիզ հրատարակուող թերթի մը կողմէ Պատուիրակութեան Վսեմ. Նախագահին նկատմամբ եղած անվայել հրատարակութեանց մասին:

Ամեն. Դուրեան Արքեպիսկոպոսի մէկ հարցման վրայ՝ Վսեմ. Պօղոս Փաշա յայտնեց, թէ դաշնագրին ստորագրուելէ վերջ Թրքահայաստանի դատը կրնայ փակուիլ եւ Պատուիրակութեան դերը կը լրանայ: Այս առթիւ՝ Տիար Վահան Թէքէեան դիտել տուաւ, թէ այդ հարցը արդէն իսկ օրակարգին վրայ է եւ պիտի քննուի իր կարգին:

Իբր Ազգ. Պատուիրակութեան վերակազմութեան խնդիր Համագումարը Ազգ. Պատուիրակութեան համարատուութեան վիճաբանութեան անցնելով, խօսք առաւ՝

Տիար Ն. Տէր Ստեփանեան. Ազգ. Պատուիրակութեան տեղեկագրէն այն տպաւորութիւնը կրեցինք, թէ Պատուիրակութիւնը չէ ունեցած գործունէութեան որոշ ծրագիր եւ որոշ մեթոտ, թէ այդ գործունէութեան միշտ պակսեր է աշխատանքի լուրջ բաժանում մը, եւ ընդհանրապէս մեր Դատին հետապնդութիւնը կատարուեր է թուլութեամբ, տեսակ մը կանխակալ վիճատումով: Տեղեկագիրը չի յիշեր գործնական արդիւնք մը, որ ձեռք բերուած ըլլայ տարուան մը գործունէութեան ընթացքին: Միակ արդիւնքը, որ կը յիշուի, Պ. Հուվէրի հետ ստորագրուած ալիւրի պայմանագրութիւնն է: Այս անկազմակերպ գործունէութիւնը դիտուած է նաեւ Պատուիրակութեան երկու յանձնաժողովներուն մէջ: Փաստերը չեն պակսիր այս մասին: Բժշկական Յանձնաժողովը գործեր է առանց Պատուիրակութեան քոնթրոլին, նոյնիսկ իր տեղեկագիրը չէ անցած Պատուիրակութեան բովէն: Գալով Բրոբականտի Յանձնաժողովին, իր գործունէութիւնը, միեւնոյն թերութեանց բերմամբ, չէ տուած երբեք այն արդիւնքը, որ կը սպասուէր: Նոր Պատուիրակութեան կազմութենէն առաջ անհոգութիւն մը կար այդ մասին, եւ այդ անհոգութիւնը շարունակուեցաւ նաեւ Պատուիրակութեան վերակազմութենէն ետք: Ես ալ, իբր անդամ, սկիզբները մասնակցեցայ այդ Յանձնաժողովին եւ առաջին քայլէն իսկ համոզում գոյացուցի, թէ կարելի չպիտի ըլլայ դարմանել այդ անփութութիւնը: Ամենակենսական անհրաժեշտութիւն մը կար մեծ tirage-ով օրկանի մը, որ եւրոպական աշխարհին առջեւ մեր պահանջմանց թարգմանն ըլլար յարատեւ եւ ազդու կերպով մը: Բրոբականտի համար ամէնէն էական միջոցներէն մէկն էր ասիկա, եւ առաջին վայրկեանէն իսկ այդ տեսակ օրկանի մը ստեղծման պէտքը շեշտեցի: Պատուիրակութիւնը պատասխանեց, թէ դրամական միջոցներ չկան: Մինչդեռ, միւս կողմէ, նուազ կարեւոր, նուազ անհրաժեշտ, երբեմն նաեւ անպէտ բաներու համար, որոնք կ'ըլլային բրոբականտի անունով, Պատուիրակութիւնը երբեք չդադրեցաւ նոյնիսկ կարեւոր գումարներ ծախսելէ: Այն բրոբականտը, որ կատարուեցաւ, ուղղուած էր սահմանափակ շրջանակի մը: Bulletin-ը զոր սկսան հրատարակել, քաղաքական նպատակի մը չէր ծառայեր, որովհետեւ պարզ տեղեկատու թերթ մըն էր: Երբէք անոր մէջ չպաշտպանուեցաւ մեր ազգային դատին վերաբերող ո'չ մէկ տեսակէտ: Նոյնիսկ այդ վիճակին մէջ՝ կը տպուէր հազիւ 1500 օրինակ, որոնց մեծ մասը կը ղրկուէր հայերու, հազիւ 3-400 օրինակ միայն կը տարածուէր օտար շրջանակներու մէջ, այն տեսակ անձերու, որոնք ճանչցուած են իբր մեզի բարեկամ: Մինչդեռ մենք աւելի պէտք է աշխատինք մեր բրոբականտը կատարել ոչ-բարեկամ կամ անտարբեր տարրերու մէջ՝ նոր բարեկամներ շահելու համար: Միւս կողմէ՝ ո'չ ոք մտածեց գոնէ Ծերակոյտի եւ Երեսփոխանական Ժողովի 1500-ի մօտ անդամներուն ղրկել այդ թերթը. անոնցմէ թերեւս հազիւ 50, շատ-շատ հարիւր հոգի կը ստանային զայն:

Անցնելով Պատուիրակութեան գործունէութեան, դիտելի է, որ ո'չ միայն թոյլ եղած է, այլ նաեւ՝ պակասաւոր: Տեղեկագիրը, որ կարդացուեցաւ, հատուցման հարցին նկատմամբ կատարուած ձեռնարկի մը յիշատակութիւն անգամ չունէր: Պատուիրակութեան անդամները այս մասին ինքզինքնին պաշտպանեցին, ըսելով, որ դիմումներ ըրինք եւ պատասխան չստացանք: Բայց կարծեմ սխալ մը չպիտի ըլլայ ըսել, թէ այդ մասին չեն աշխատած պէտք եղածին պէս: Համեմատաբար աննշան հարցերուն շուրջ երկար յօդուածներ գրուեր են, ճառեր խօսուեր են, միթինկներ սարքուեր են, բայց հատուցման կենսական խնդրին համար, որ մեր պահանջմանց մէջ պէտք էր առաջին տեղերէն մէկը գրաւեր, ցոյց տրուեր է անփութութիւն մը, զոր ոչինչ կ'արդարացնէ: Ո'չ մէկ լուրջ ու բազմակողմանի ուսումնասիրութիւն այդ հարցին նկատմամբ՝ ոեւէ թերթի մէջ ես գոնէ չտեսայ: Նոյնը կարելի է ըսել նաեւ հայկական ջարդերու հեղինակները պատժելու հարցին նկատմամբ: Ամերիկայի մէջ պէտք էր ամէնէն աւելի աշխատութիւն շռայլուեր մեր Դատին համար, նկատի առնելով մանաւանդ այն սերտ առնչութիւնը, որ հաստատուած էր Հայկական Խնդրին եւ

Ամերիկայի քաղաքականութեան միջեւ: Պատուիրակութեան ամբողջ ըրածը այս մասին՝ Յովի. Խան Մասեհեանցը Ամերիկա ղրկելու որոշումն էր: Յովի. Խան նախ չդժկամեցաւ, ընդունեց Պատուիրակութեան առաջարկը, նոյնիսկ իրեն քարտուղար նշանակեց Պ. Լեւոն Շանթը, որ բնաւ յարմարութիւն չունէր այդ պաշտօնին: Մասեհեան Խան՝ չգնաց սակայն, եւ ցաւալի է լսել, որ իր մերժումէն ետք, անբողջ վեց ամիս, Պատուիրակութիւնը այլեւս չանդրադարձաւ այս հարցին, իբր թէ խնդիրը լոկ Յովի. Խանը ղրկելու վրայ ըլլար: Մինչդեռ այդպէս չէր, Յովի. Խանը ղրկել մտածուեցաւ, որովհետեւ պէտք մը կար Ամերիկա մարդ ղրկելու, եւ այդ պէտքը չվերցաւ՝ երբ Յովի. Խան չգնաց: Ապացոյցը սա է, որ վեց ամիս վերջ դարձեալ այդ պէտքին վրայ խորհուեցաւ եւ մէկի տեղ ղրկուեցաւ երկու անձ, ինչպէս մէկ առաքելութեան տեղ ալ երկու առաքելութիւն, ինչ որ սխալ էր, որովհետեւ անձերուն եւ առաքելութեանց հետ՝ հետապնդուած քաղաքականութիւնն ալ կրկնուեցաւ այնտեղ:

Կ'անցնիմ մանտայի հարցին: Տեղեկագիրը չի պարզեր, թէ երբ Ամերիկայի մանտան բոլորովին անհաւանական դարձաւ, Պատուիրակութիւնը ի՞նչ տեսակէտ ունեցաւ: Խօսքեր կան Մր. Ճերալտի առաջարկած ուղղութեան մասին, որուն Ազգ. Պատուիրակութիւնը պէտք չէր որ փարեր, քանի որ Ամերիկեան Քոմիթէն յայտնապէս Ուիլսընի հակառակորդներու քաղաքական հայեացքները ապացուցած էր: Քանի որ մեզի ծանօթ էին այն հակառակութիւնները, որոնք պիտի յարուցուէին մանտային ընդունելութեան դէմ, իբր Ազգերու Ընկերակցութեան դաշինքէն բղխող կարգադրութիւն մը, եւ որոնք վերջ ի վերջոյ անհնարին պիտի դարձնէին ատիկա, ու միւս կողմէ՝ քանի որ Նախագահ Ուիլսընն միշտ լաւ տրամադրուած էր հայոց մասին, պէտք էր ամեն միջոցներով աշխատէինք, որ Նախագահը Ամերիկայի կողմէ մեզի ընծայուելիք պաշտպանութիւնը դնէ տարբեր եւ աւելի ապահով հիման մը վրայ: Եթէ Հայաստանի պաշտպանութեան առաջարկը ըրած ատենը Նախագահը բացորոշ կերպով մը յայտնած ըլլար, թէ Հայաստանի ընծայուելիք պաշտպանութիւնը Ազգերու Ընկերակցութենէն եւ միջազգային ուրիշ խնդիրներէ անջատ բան մըն է, կարելի էր, որ ընդունուեր իր տեսակէտը: Անտեղի կը գտնեմ նաեւ Անգլիոյ եւ Ֆրանսայի եղած «մանտա»յի առաջարկը: Որովհետեւ մանտա ընդունիլն այնքան թեթեւ խնդիր մը չէ, որ պետութիւն մը մէկ օրէն միւսը կարենայ ըսել թէ կ'ընդունի: Ատկէ առաջ անհրաժեշտ են նախապատրաստական աշխատութիւններ եւ լուրջ ուսումնասիրութիւններ: Եթէ այսպէս յանկարծ, բոլորովին անակնկալ կերպով մը մանտայի առաջարկ կ'ըլլայ, բնականաբար՝ մերժումէ զատ ուրիշ պատասխան չի ստացուիր: Այս առթիւ կ'ուզէի գիտնալ նաեւ, թէ ինչո՞ւ այդ առաջարկը եղեր է լոկ Անգլիոյ եւ Ֆրանսայի ու Իտալիոյ վրայ չէ խորհուեր:

Կարեւոր հարց մըն ալ Կիլիկիոյ աղէտն է: Այս խնդրին քննութիւնը մեզ կը բերէ սա համոզման, որ ատոր մէջ ալ Ազգ. Պատուիրակութիւնը որոշ եւ հաստատ քաղաքականութիւն մը չէ ունեցեր: Կիլիկիոյ մէջ՝ մեր ժողովուրդը բնաջնջման սպառնալիքի մը ենթարկուած էր: Կատարուած դիմումներուն՝ Գերագոյն Խորհուրդը կը պատասխանէր, թէ այդ մասին պէտք է խօսէինք Ֆրանսայի հետ: Քանի որ յոյսերնիս կտրած էինք Ֆրանսայէն, պէտք էր իրողութիւնը հասկցնել Պ. Տամատեանի, եւ յայտնելով, թէ Դաշնակից պետութիւններէն ոեւէ յոյս չկայ, զինքը ազատ թողուլ, որ տարամերժօրէն ժողովուրդի ֆիզիքական գոյութեան ապահովութիւնը ի նկատի ունենալով, ճշդէ իր քաղաքականութիւնը՝ նոյնիսկ թուրքերուն հետ որոշ համաձայնութեան գալով: Այնպէս ցոյց տրուեցաւ, թէ աշխատուած է Պոլսոյ գրաւման խնդիրը արծարծելու, որովհետեւ՝ այդ կերպով կարելի պիտի ըլլար թուրքերը բռնադատել, որ դադրեցնեն իրենց գործունէութիւնը Կիլիկիոյ մէջ: Բայց ատով Ազգ. Պատուիրակութեանը Կիլիկիոյ մէջ պէտք եղաւ անգլ. քաղաքականութեան, որուն անկեղծ չըլլալուն ապացոյցն ան է, որ արդէն Կիլիկիոյ ջարդերուն լուրերը սկսած էին հասնիլ, երբ Գեր. Խորհուրդը որոշեց Պոլիսը թուրքերուն թողուլ:

Երեւանի հետ միացման հարցին շուրջ կատարուած բանակցութեանց մասին տեղեկագրին ըսածները ճիշդ են, բայց ինչո՞ւ այդ խնդիրը չէ ներկայացուեր իւր ամբողջութեամբ: Օրինակի համար՝ տեղեկագիրը չըսէր, թէ երբ Ազգ. Պատուիրակութիւնը Պ. Խատիսեանի հեռագրեց, որ պարագաներուն փափկութիւնը նկատի առնելով կ'ընդունի իր փոխ-առաջարկները, Պ.Խատիսեան չպատասխանեց: Մինչդեռ ասիկա էական կէտ մըն էր, պէտք է արձանագրուած մնար, եւ պատճառն ալ ցոյց տրուեր: Ես վստահ եմ, որ Պ. Խատիսեան չպատասխանեց հակառակ իր կամքին, եւ այն ազդեցութիւնը, որ այս մասին զինքը այդ ընթացքին մղեց, կատարուած էր Փարիզէն:

Այս քննադատութիւնները ընելէ վերջ, քննադատութիւններ, որոնք թերեւս ծանր նկատուին, չեմ ուզեր խօսքս աւարտել առանց թուելու այն պարագաները, որոնք կերպով մը արդարացումներ կրնան նկատուիլ Պատուիրակութեան թերացման համար: Նախ որ Ազգ. Պատուիրակութիւնը շատ դառն ժառանգութիւն մը ունեցաւ: Նախ՝ պատերազմի սկիզբը Կովկասի մէջ ազգային քաղաքականութեան դրած ուղղութիւնը: Երկրորդ՝ հին Ազգ. Պատուիրակութեան գործունէութիւնը եւ յետոյ՝ զինադադարէն սկսեալ՝ Երեւանի Հանրապետութեան քաղաքականութիւնը: Ուրիշ մեծ դժուարութիւն մը սա էր, որ Ազգ. Պատուիրակութիւնը, Համագումարին անցեալ նստաշրջանին մէջ տուած որոշման համաձայն, ստիպուած էր գործել Հանրապետութեան Պատուիրակութեան հետ: Պէտք էր արտակարգ զգուշաւորութիւն մը, որովհետեւ երկու Պատուիրակութեանց միջեւ բաղխումներ միշտ կրնային տեղի ունենալ, եւ տեղի ունեցան, յայտնի է, թէ ինչո՞ւ: Այդ բաղխումներուն պատճառաւ՝ երկու Պատուիրակութեանց գործունէութեան երեք չորրորդ մասը գրաւեցին ներքին վէճերը: Ասոր մէջ՝ յանցանքի մեծագոյն բաժինը վերագրելի է Հանր. Պատուիրակութեան: Ան մանաւանդ պատճառ եղաւ, որ համերաշխ գործունէութիւն մը չստեղծուի: Իբր ապացոյց յիշեմ, որ անցեալ տարի, ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան կազմութեան միջոցին, Պ. Ահարոնեան հանդիսաւորապէս յանձնառու եղաւ, որ միասին պիտի գործէ Ազգ. Պատուիրակութեան հետ. ամիս ու կէս ետք՝ Երեւանի մէջ հռչակուեցաւ Մայիս 28-ի աքտը, առանց Ազգ. Պատուիրակութեան գիտութեան, ինչ որ արդէն հակասութիւն մըն էր իր յանձնառութեան հետ: Բայց ասով չբաւականացան: Այստեղ ձեռք առաւ թերթ մը, անոր խմբագիրը կարգեց Հանրապետութեան Պատուիրակութեան քարտուղարը, եւ անոր միջոցով ամէնաբուռն եւ ամէնախայտառակ պայքար մը սկսաւ Ազգ. Պատուիրակութեան եւ իր Նախագահին դէմ: Այս տեսակ մթնոլորտի մը եւ այս տեսակ պայմաններու մէջ ու այդ տեսակ մարդոց հետ աշխատելու բռնադատուած ըլլալով, կ'ըմբռնեմ, որ Ազգ. Պատուիրակութիւնը մեծ արդիւնք չտար: Եթէ պէտք կայ ուրիշ ապացոյցի՝ կարելի է յիշել նաեւ Ամերիկայի կրկին ներկայացուցիչներուն եւ կրկին առաքելութեանց պառաքթումը: Բայց դեռ շատ կարեւոր աշխատութիւն մը կայ կատարուելիք Եւրոպայի մէջ: Պէտք է ջանանք, որ այս ներքին հիւանդագին վիճակին դարման մը գտնենք, որպէսզի վերջապէս կարելի ըլլայ առողջ եւ բեղմնաւոր հիման մը վրայ դնել մեր արտաքին գործունէութիւնը:

Տիար Թէրզիպաշեան. Առանց մտնելու տեղեկագրին շօշափած հարցերու էութեան մէջ, առ այժմ պիտի խօսիմ տեղեկագրին կազմուածքին, կառուցուածքին մասին: Մենք կը սպասենք, որ տեղեկագիրը՝ միլիոնաւոր զոհերու եւ միլիառներու հասնող նիւթական կորուստներու գինը, եւ անոնց իրաւունքներուն liquidation-ի տոքիմանը ըլլալով, իր լրջութեան համապատասխան արժէք մը ունենար գոնէ: Հայ պատմութեան մէջ չկայ էջ մը, որ պարունակէ զոհողութեան, կորուստի եւ ճակատագրական փոփոխութիւններու այդքան խոշոր անցքեր, որքան այս տոքիմանը պիտի փոխանցէ հայ ապագայ սերունդներուն: Ամբողջ դարեր հայ սերունդները պիտի կարդան այս տոքիմանը, որ, ինչպէս ըսի, իր կառուցուածքով չի ներկայացներ համապատասխան արժէք մը, եւ որուն մէջ՝ թուական վիճակագրութեան անճշդութիւններ, հակասութիւններ ու քաղաքական անըմբռնողութիւն զիրար կը

խաչաձեւեն: Պատուիրակութիւնը պէտք է սկսեր իր գործունէութեան ծագումէն, Հայկական Հարցի գոյավիճակը բացատրելով պարզաբաներ հետզհետէ ստացած փոփոխութիւնները, որոշ պատճառաբանութիւններով: Եւ որովհետեւ տեղեկագիրը պատրաստած օրը ի ձեռին ունէր դաշնագիրը, Համագումարին պէտք է ներկայացներ իւր գործունէութեան արդիւնքը, հիմնուելով դաշնագրին տրամադրութեանց վրայ, որոնց մասին բերելու էր իր տեսակէտներն ու կարծիքները: Մենք տեղեկագրին մէջ չենք տեսներ այս բանը: Չենք տեսներ յիշատակութիւնը Յունիս 28-ի Վերսայլի Դաշնագրի 22-րդ յօդուածին պատմութեան, որ մեր Հարցին առաջին հաստատուն հանգրուանը եղաւ, չենք տեսներ ռուս քաղաքականութեան դիրքը ճշդող այն նօթը, որով կը ճանչնային 22-րդ յօդուածով Հայկական Հարցին ստացած քաղաքական դիրքը, այն Ռուսիոյ, որ 40 տարիէ ի վեր իր քաղաքականութեան խրտուիլակ ըրած էր Հայկական Հարցը, չենք տեսներ գործունէութեան որոշ ծրագիր մը եւ հետեւողականութիւն: Ընդհակառակը, մենք կը տեսնենք ընդհակառակը այդ տեղեկագրին մէջ՝ յեղյեղուկ քաղաքականութիւն մը, որ յանկարծ կը փոխուի օտար թելադրութեան մը վրայ: Տեղեկագրին հետ կապ չունեցող մէջբերումներ, թուական եւ վիճակագրական սխալներ, եւ, ինչ որ աւելի ուշադրութիւն կը գրաւէ, խնդրին էութիւնը վերլուծելու աշխատութենէն խուսափելու եւ ընդհակառակը, զանազան յուսատու, սակայն անհետեւանք խաբուսիկ երեւոյթներու պատմութիւններով տպաւորութիւն թողելու ջանք մը:

Պարտաւոր կը զգամ ինքզինքս՝ այս ամենը ապացուցելու՝ կարգ մը դրուագներ յիշատակելով տեղեկագրին պարունակութենէն:

1. Պատուիրակութիւնը զանազան որոշումներու կարգին յիշատակած է Տիար Տէր-Ստեփանեանի՝ Հռոմի ներկայացուցիչ կարգուած ըլլալը: Ամէնքս ալ գիտենք սակայն, որ Տիար Տէր-Ստեփանեան այդ պաշտօնին չէ կոչուած, հակառակ անոր, որ Պատուիրակութիւնը պատրաստ էր առաջին օրէն Իտալիոյ մէջ ներկայացուցիչ մը ունենալ, քանի որ Իտալիա մէկն էր այն երեք կամ չորս պետութիւններէն, որոնց ձեռքին մէջն էր Հայկ. Հարցին լուծումը: Բայց ասիկա ուրիշ խնդիր մըն է, որուն թերեւս անդրադառնանք երբ հարցը քննենք ըստ էութեան: Կը հարցնեմ, թէ ինչո՞ւ տեղեկագրին մէջ յիշատակուեր է որոշում մը, որ չէ գործադրուեր եւ կամ գոնէ ինչո՞ւ բացատրութիւն չէ տրուեր, թէ ինչո՞ւ չէ գործադրուեր:

2. 1919 Ապրիլ 11-ին Ամերիկայի եղած մանտայի առաջարկին առթիւ տեղեկագիրը կ'ըսէ, թէ Ամերիկեան Պատուիրակութեան անդամ Պ. Ուիլեամս պատասխանած է. «Խաղաղութեան Դաշնագրին՝ Ամերիկայի Ծերակոյտին կողմէ վաւերացուելէն ետք միայն կարելի է անցնիլ այդ հարցին, եւ այլն»: Արդ, Ապրիլ 11-ին Պ. Ուիլեամս չէր կրնար Խաղաղութեան Դաշնագրին մասին խօսիլ, քանի որ այդ Դաշնագիրը Յունիս 28-ին միայն երեւան եկաւ: Այստեղ՝ վրան բաց հակասութիւն մը կայ:

3. Տեղեկագիրը կը յայտնէ, թէ Նախագահ Ուիլսոն Դուրեան Սրբազանին բերանացի եւ Պատուիրակութեանց Նախագահներուն բերանացի ու գրաւոր յայտնած է իր փափաքը Հայաստանի մանտան ընդունելու մասին: Մենք լաւ կը յիշենք թէ' Դուրեան Սրբազանի եւ թէ' Պատուիրակութեանց Նախագահներուն՝ Համագումարին մէջ ըրած յայտարարութիւնները, որոնց համաձայն՝ Նախագահ Ուիլսոն ըսած է համակրական խօսքեր, ըսած է նաեւ, որ եթէ Ամերիկա ուեւէ մանտա ստանձնէ, ատիկա Հայաստանի մանտան պիտի ըլլայ, բայց չէ ըսած բնաւ, թէ ինք կը փափաքի ստանձնել Հայաստանի մանտան:

4. Տեղեկագրին մէջ պատմութիւններ կան, որոնց համաձայն՝ անցեալ տարի՝ Թուրքիոյ բաժանման մասին վճռական կարգադրութիւններ եղած են, եւ սակայն վերջէն հնդիկ պատգամաւորութեան դիմումին վրայ, անգործադրելի մնացած են: Աւելորդ է ըսել, թէ ո՛չ այս տեսակ որոշում մը եղած է, ո՛չ ալ հնդիկ պատգամաւորութիւնը այդ մասին ուեւէ դեր կատարած է:

5. Տեղեկագիրը նոյնութեամբ արտագրեր է Քլէմանսոյի կողմէ Ֆէրիտ Փաշայի ուղղուած հռչակաւոր նամակին զանազան մասերը, իբր թէ Պատուիրակութիւնը դեր մը կատարած ըլլար այդ նամակին խմբագրութեան մէջ, կամ ինք ալ բան մը թելադրած ըլլար այդ առթիւ: Եթէ այդ նամակը գրող ֆրանսացի դիւանագէտները հայանպաստ քաղաքականութեամբ մը Հայկական Հարցին յաջող մէկ լուծման ջանային, անշուշտ այդ նամակին յիշատակութիւնը կ'արժէր: Բայց այսօր, երբ ողբալի յուսախաբութիւններու մատնուած ենք, եւ ասոր մէջ, դժբախտաբար, ֆրանսացի դիւանագէտներ իրենց տխուր դերի բաժինը ունեցած են, աւելորդ հեգնանք մը չէ՞ արդեօք այդ նամակին յիշատակութիւնը:

6. Տեղեկագրին մէկ հատուածը այն տպաւորութիւնը կը թողու, թէ թրքասէրներու գործն էր հակաուիլսոնեան շարժումը: Թերեւս այսպէս ըսել չէ ուզուած, որովհետեւ հաւանական չէ այս տեսակ բան մը, բայց ես իմ ֆրանսերէնի անբաւական ծանօթութեամբս այդ տպաւորութիւնը կրեցի:

7. Ամերիկայի մէջ՝ Պ. Ճերարտի քաղաքականութեան պատմութիւնը ընելով, տեղեկագիրը կ'ըսէ, թէ Պատուիրակութիւնն ալ հակուած էր դէպի այդ քաղաքականութիւնը: Արդ, մեր Հարցին հիմքը 22-րդ յօդուածը եւ մեր Դատին ախոյեանն ալ Ուիլսոն ըլլալով, ու միւս կողմէ՝ հայերու ձգտումը Ուիլսոնի քաղաքականութեան հետ նոյնացած ըլլալով, ինչպէ՞ս կ'ըլլայ, որ Պատուիրակութիւնը կը թողու այն հաստատ գետինը, որուն վրայ կեցած էր եւ կ'ընդգրկէ քաղաքականութիւնը մի ոմն Ճերարտի, որ ո՛չ մեր ազգային ձգտումներուն ծանօթ է, ո՛չ ալ մեր շրջապատին, որուն Հայկական Հարցի շուրջ ունեցած գործունէութիւնը լեցուն է հակասութիւններով, եւ որուն համար կը պատմեն, թէ շատ անգամ առանց կարդալու կը ստորագրէ Պ. Գարտաշեանի կողմէ իրեն ներկայացուած հեռագիրները: Կը հարցնեմ դարձեալ, ինչպէ՞ս Պատուիրակութիւնը կ'իւրացնէ այս տեսակ մարդու մը քաղաքականութիւնը եւ անոր հետ ալ՝ զանազան գաղութներու հեռագիրներ ղրկելով՝ կը պաշտպանէ Պ. Ուիլեամսի առաջարկը, որ շարունակութիւնն է Ճերարտի թէզին: Ասոնք հակասութեան եւ անհետեւողականութեան մէջ մեծ գլուխգործոցներ են, որոնց էութիւնը պիտի քննադատենք անշուշտ: Ասոնց յիշատակութիւնը տեղեկագրին մէջ՝ կ'ապացուցէ Պատուիրակութեան քաղաքական անընմբռնողութիւնը:

8. Տեղեկագիրը կը յիշատակէր Մասեհեան Խանի Ամերիկայի ներկայացուցչութեան պաշտօնէն հրաժարելու իրողութիւնը եւ կ'աւելցնէ, թէ «քիչ ետքը» ղրկուեցաւ Բրօֆ. Տէր-Յակոբեան: Արդ, Մասեհեան Խան հրաժարած է Յունիսի սկիզբը, իսկ Բրօֆ. Տէր-Յակոբեան մեկնած է Նոյեմբերին: Արդեօք «քիչ ետքը» ասութիւնը կը բացատրէ՞ այն հինգ ամսուան անջրպետը, որ կայ այդ թուականներուն միջեւ: Մենք դեռ չենք խօսիր այդ երկար շրջանին Ամերիկայի մէջ ներկայացուցիչ չունենալու սխալին նկատմամբ:

9. Տեղեկագրին մէջ՝ Քըրզընի առաջարկին առթիւ՝ երկու անգամ աղօտ բացատրութիւններով իրարու հակասող տեղեկութիւններ կան, որոնց համաձայն՝ նախ կը համակերպին Քըրզընի առաջարկին, եւ սակայն կ'որոշեն շարունակել իրենց նախորդ քաղաքականութիւնը, յայտարարելով, որ չեն հրաժարիր իրենց ձգտումներէն եւ յետոյ՝ նորէն կ'ուզեն, որ Հայաստան կազմուի Վանայ, Պիթլիսի, Էրզրումի նահանգներով, իսկ մնացեալ մասին համար օթօնօմի կը պահանջեն:

10. Տեղեկագիրը կ'ըսէ, թէ Լոնտոնի Վեհաժողովը վերջնականապէս որոշեց հայ միացեալ պետութեան մը կազմութիւնը եւ մօտաւորապէս գծեց անոր սահմանները: Մեզմէ ո՛չ ոք չի կասկածիր, թէ Լոնտոնի մէջ այդ տեսակ վերջնական կարգադրութիւններ չեն եղած: Արդեօ՞ք զարմանալի չէք գտներ, որ վերջնական կարգադրութեան ծանօթանալէ ետք, Պատուիրակութիւնը դեռ կը խօսի ուրիշ հին կարգադրութիւններու մասին, զանոնք վերջնական անուանելով:

11. Տեղեկագիրը կը խօսի Անգլիոյ կողմէ հայոց ռազմանիւթ տալու խոստումի մասին, եւ կ'աւելցնէ. «Այս խոստումները իրականանալու ճամբուն մէջն են»: Մենք որ

անգլ. քաղաքականութեան ծանօթ ենք, որ գիտենք թէ քանի ամիսէ ի վեր պահումի մէջ վար դրած է հայկական օդանաւեր, անգլիական խոստումներու իրականութեան ճամբուն մէջ տեսնելու համար գէթ ռազմանիւթերու բեռնուած ըլլալուն լուրը ունենալու էինք: Ունի՞նք այդ լուրը, վստահ եմ, թէ ո՛չ:

12. Անգլիոյ եւ Ֆրանսայի մանտան ստանալու համար՝ Պատուիրակութիւնը իր ջանքերը հետեւեալ կերպով կը նկարագրէ: Հարցուցեր է, թէ կ'ուզե՞ն արդեօք իրենք ստանձնել Հայաստանի մանտան: Մենք կը յուսանք, թէ Պատուիրակութիւնը ջանքեր ըրեր է ստանալու համար Անգլիոյ կամ Ֆրանսայի մանտան, բայց այն ձեւով, որ պարզուած է տեղեկագրին մէջ, մանտա չուզուիր:

Վսեմ.Պօղոս Փաշա Նուպար. Բայց այդ ձեւով չէ, որ ուզուեցաւ իրենց մանտան: Բնականաբար, չէինք կրնար մէկ կողմը լուր չունեցած՝ միւս կողմին դիմել: Եւ ճիշդ այսպէս ըրինք, որպէսզի երկու կողմերէն ո՛չ մէկը նեղանայ: Պէտք է ըսեմ, սակայն, թէ այս ամենը եղան խօսակցութիւններով:

Տիար Թէրզիպաշեան. Պէտք էր այդպէս գրուեր տեղեկագրին մէջ, մինչդեռ՝ այն ձեւով, ինչպէս որ ներկայացուած է այս խնդիրը տեղեկագրին մէջ, սա տպաւորութիւնը կը թողու, թէ գէշ կերպով դիմուեր է եւ գէշ կերպով ալ մերժուեր է:

13. Տեղեկագրին մէկ հատուածը ի մէջ այլոց կ'ըսէ. «Գերագոյն Խորհուրդը Լոնտոնի մէջ Հայաստանի սահմանները գծելէ վերջ, եւ այլն»: Այս տեսակ հաւաստում մը ընելու համար անհրաժեշտ էր իրականութիւն մը, որ սակայն կը պակսի: Ի զուր պիտի փնտռենք փաստ մը Լոնտոնի այդ սահմանագծման ստուգութեան մասին:

14. Տեղեկագիրը կ'ըսէ, թէ «Ազգերու Ընկերակցութիւնը գումարուեցաւ մասնաւորապէս Հայաստանի համար»: Այս պարբերութիւնը հայերու համար ողոքիչ բացատրութիւն մը ունի, բայց իրականութեան հակառակ է: Ազգերու Ընկերակցութեան Ապրիլ 11-ի հաւաքումը իր օրակարգին վրայ ունէր չորս հարցեր, որոնցմէ մէկն էր միայն Հայաստանի մանտային հարցը:

Տիար Չօպանեան. Երբ մենք Լոնտոն էինք, որոշուած էր լոկ Հայաստանի հարցին համար գումարել, վերջէն օրակարգին աւելցուցին նաեւ միւս խնդիրները:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Լոնտոնի մէջ էր, որ Գերագոյն Խորհուրդը անակնկալ կերպով մը որոշում տուաւ այդ մասին եւ անմիջապէս հաղորդեց հեռագրով Պ. Լէոն Պուրժուայի, հարցնելով, թէ արդեօք Ազգերու Ընկերակցութիւնը կը հաւանի՞ Հայաստանի մանտան ընդունիլ: Պ. Պուրժուա, պատասխանելով, խնդրեց, որ աւելի բացորոշ տեղեկութիւն եւ լուսաբանութիւն տրուի խնդրին նկատմամբ, եւ այդ առթիւ յայտնեց, թէ Ապրիլ 11-ին, Ընկերակցութեան Գործադիր Խորհուրդը մասնաւոր նիստ մը գումարելով պիտի քննէ Հայաստանի մանտային հարցը: Գումարման որոշումը տրուած էր Հայաստանի հարցին համար, բայց վերջէն, գումարումէն օգտուեցան՝ քննելու համար նաեւ ուրիշ հարցեր: Չմոռնամ այս առթիւ ըսելու, որ Գործադիր Խորհուրդին քննութիւնը խորհրդակցական հանգամանք մը միայն ունէր, վերջնական որոշումը պիտի տար Ազգերու Ընկերակցութեան Ընդհ. Ժողովը:

Տիար Ա. Թէրզիպաշեան. Տեղեկագիրը կ'աւելցնէ. «Ազգերու Ընկերակցութիւնը որոշեց ստանձնել Հայաստանի մանտան»: Բայց Ընկերակցութեան այդ օրուան որոշումը չի պարունակեր շատ համակրալից նախադասութիւններ: Այդ որոշումը, իւր ամբողջութեան մէջ՝ չունէր ո՛չ նպաստաւոր, ո՛չ ալ որոշ կարգադրութեան մը հանգամանքը: Ընդհակառակը՝ իր պաշտպանութիւնը կը կապէր շատ մը բարդ ու դժուարին պայմաններու հետ, ինչպէս զինուորական եւ ֆինանսական օգնութիւն, եւ այլն: Գալով «Protection» բառին, այդ բառը մենք աւելի առաջ լսած էինք՝ Խաղաղութեան Դաշնագրին մէջ, որով հայերը կը մտնէին Ազգերու Ընկերակցութեան խնամակալութեան տակ:

15. Տեղեկագիրը կը յայտնէ, թէ «Լոնտոնի մէջ եղած դիմումներու վրայ՝ բրիտանական կառավարութիւնը որոշեց գրաւել Պոլիսը»: Չեմ գիտեր, թէ ի՞նչ ըսել կ'ուզուի. Պատուիրակութիւնը դեր մը կատարե՞ր էր ատոր մէջ, թէ՞ ոչ: Բայց գիտեմ, թէ

Մարաշի ջարդին հետեւանքով էր, որ Մարտի սկիզբը անգլ. նաւատորմը Պոլիս եկաւ: Իսկ թէ Պոլսոյ գրաւման պէս վերին աստիճանի քաղաքական նշանակութիւն ունեցող քայլ մը առնուած է Պատուիրակութեան դիմումին վրայ, ներեցէ՛ք, որ կասկածս յայտնեմ այս մասին: Նոյնիսկ եթէ Պատուիրակութիւնը ապահով ըլլար այս մասին, գէթ ուրիշ մտածումով դնելու չէր ատիկա իր տեղեկագրին մէջ, նկատելով որ թուրքերուն համար դէպի հայերը թշնամութեան եւ գրգռութեան մեծ պատճառ մը կրնար դառնալ իրենց մայրաքաղաքին գրաւումը: Բարեբախտաբար, թուրքերն ալ չեն հաւատար այդ բանին:

16. Դարձեալ, Սանռեմոյի իրադարձութեանց առթիւ, տեղեկագիրը յիշատակած է Ամերիկայի ներկայացուցիչ Պ. Ճոնսընի հետեւեալ խօսքերը, թէ «Հայկական Հարցը բարեկամ ձեռքերու մէջ է»:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Դեսպանը ըսաւ, որ «սահմաններու իրաւարարութիւնը ենթարկուած է Նախագահ Ուիլսընի, կրնաք ապահով ըլլալ թէ ձեր դատը լաւ ձեռքերու մէջ է»:

Տիար Գ. Ֆնտգլեան. Համանման յայտարարութիւն մըն ալ Պ. Լլոյտ Ճորճ ըրաւ:

Տիար Ա. Թէրզիպաշեան. Սան Ռեմոյի իրադարձութիւնները եւ դաշնագրին մեզի պարգեւած արդիւնքը տեսնելէ վերջ՝ Ամերիկայի ներկայացուցչին խօսքերը հեգնական իմաստ մը կը ստանան եւ այդ տպաւորութիւնը կը թողուն: Մինչդեռ տեղեկագիրը կը յիշէ այդ խօսքը դրական իմաստով մը՝ որպէս յուսատու դրուագ մը:

17. Խօսելով վնասուց հատուցման հարցի մասին, տեղեկագիրը փոխանակ վեր հանելու դաշնագրին այն տրամադրութիւնները, որոնցմով հայերը զրկուած են վնասուց հատուցման իրաւունքէն, փոխանակ ցոյց տալու արդիւնքը, որ, դժբախտաբար, շատ բացասական է, կը յիշատակէ եղած շատ մը խոստումներէն մէկը՝ ըսելով. «Մեր դիմումներն ընդունուեցան շատ նպաստաւոր կերպով»:

18. Տեղեկագիրը կը խօսի նաեւ այն սերտ յարաբերութեանց մասին, զորս Պատուիրակութիւնը պահած է գաղութներու եւ Պատրիարքարանի հետ: Ուրիշ առիթի կը թողում անդրադառնալ, թէ Պատուիրակութիւնը հայութեան կեդրոնին՝ Երեւանի հետ յարաբերութիւն չէ ունեցած ուղղակի ներկայացուցիչի մը միջոցով: Հիմա կը բաւականանամ յիշատակելով, որ վերջին հինգ ամիսներուն ընթացքին Պատրիարքարանը ստացած է միայն մէկ նամակ՝ Լորտ Քըրզընի տեսակցութեան առթիւ, եւ մէկ հեռագիր՝ Պատրիարքին ուղեւորութեան համար: Եթէ այս է ամբողջ յարաբերութիւնը, կը կարծեմ, որ սերտ ըլլալէ հեռու է:

19. Տեղեկագիրը կ'ըսէ. «Յունաստան միշտ պաշտպանեց Հայկական Հարցը»: Ո՞ր Յունաստանը, Վենիզելոսի՞նը, որ մէկ կողմէն Տրապիզոնը հայերուն տուաւ, միւս կողմէն պոնտացիները հայերուն դէմ հանեց: Ա՞յն Վենիզելոսը, որ քանի մը օր առաջ խորհրդարանին մէջ ըսած է. «Կը յուսամ, որ Նախագահ Ուիլսոն կը բաւականանայ հայերուն Սեւ Ծովու վրայ տնտեսական ելք մը տալով, եւ ո՛չ թէ երկրամաս մը»: Ա՞յն Վենիզելոսը, որ նախապէս ամբողջ Տրապիզոնի նահանգը կու տար: Եւ յետոյ, ինչպէ՞ս կարելի է Յունաստանի պաշտպանութեան խօսքը ընել, այդ աստիճան դրական բառ մը գործածել, երբ արդիւնքը բացասական է:

20. Տեղեկագիրը կ'ըսէ, որ ասորիներու եւ քաղդէացիներու հետ հաւաքական դիմումներ ըրած ենք, իսկ դիմումներուն առարկայ եղող հարցերու մասին ո՛չ մէկ խօսք կ'ընէ: Եթէ այդ դիմումներուն առարկաները հետաքրքրական բաներ չէին, ուրեմն դիմումներն ալ պէտք չէին յիշատակուեր: Նոյնքան անիմաստ է նաեւ այն «հիմնական յաջողութիւններ» անուանումը, զոր Պատ.-թիւնը կու տայ դաշնագրին՝ հայոց պաքքանող յօդուածներուն, որոնք արտագրուած են տեղեկագրին վերջը: Այդ յօդուածները, որոնց մէջ անտեսուած են հայոց վնասուց հատուցման եւ վերաշինութեան իրաւունքը, որոնց մէջ Թրքահայաստանի հարցին անունն անգամ չկայ, հարցը դրուած է լոկ սահմանագծած ձեւով եւ ենթարկուած իրաւարարութեան մը՝ լի հազար տեսակ արգելիչ անակնկալներու հաւանականութեամբ, վերջապէս՝ այն

յօդուածները, որոնց մէջ թաղուած է Թրքական Հայաստանի հարցը՝ «հիմնական յաջողութիւն» անուանել, անգամ մըն ալ կ'ապացուցէ քաղաքական ըմբռնողութեան աստիճանը: Տիար Չօպանեան անկախ Հայաստանի խօսքը կ'ընէ: Այդ անկախ Հայաստանը ստեղծուած է Ռուսական Յեղափոխութեան բերմամբ եւ կապուած է անոր պայմաններուն հետ: Դաշնակիցները ճանչցան այդ Հանրապետութիւնը ո՛չ թէ այս կամ այն Պատուիրակութեան ջանքերով, այլ՝ այն օրը միայն, երբ իրենց քաղաքական հաշիւներուն համար ռումբ մը պէտք էր պոլշեւիկներու դէմ: Եւ այդ օրը անոնք առաջին անգամ ճանչցան Կովկասեան այն պետութիւնները, որոնք աւելի մօտ ըլլալով պոլշեւիկներուն, աւելի արագ դեր մը կրնային կատարել: Մի՛ մոռնաք, որ անոնք ճանչցան նախ վրացւոց եւ թաթարներու անկախութիւնը, յետոյ հայերունը, իւր կարգին զայն համարելով բնական ռումբ թէ՛ պոլշեւիկներու եւ թէ՛ համիսլամականներու դէմ: Թողլով այս հարցը, որուն մենք ըստ էութեան քննութեան առթիւ պիտի անդրադառնանք անշուշտ, ես կ'եզրակացնեմ, թէ տեղեկագիրը ոստոստած է հարցի մասին ձեռք բերած արդիւնքին վրայէն, արդիւնք, որ, դժբախտաբար, շատ բացասական է, թէ մասնաւոր ջանք թափուած է միայն յետահայեաց կարեւորութիւն ունեցող գոյ կամ անգոյ, յուսատու բայց խաբուսիկ երեւոյթներով շպարելու եւ ծածկելու հարցին այսօրուան դժբախտ մերկութիւնը:

Տիար Թէրզիպաշեան պատրաստակամութիւն յայտնեց նաեւ խօսելու հայ-քրտական համաձայնութեան մասին՝ եթէ ժողովը փափաքէր: Համագումարը հաւանութիւն յայտնելով, խօսք առաւ.

Առաջին անգամ, անցեալ տարի, երբ Համագումարին մէջ անցաւ քրտական անկախութեան խօսքը, ո՛չ ոք տարակարծիք մնաց, որ քրտական անկախութիւն մը ամէնահիրական սպառնալիք մը կրնար դառնալ Հայաստանի անկախութեան գոյութեան եւ տեւականութեան դէմ: Համագումարը որոշ տիրէքթիւ տուաւ Պատուիրակութեան՝ Քիւրտիստանի մասին: Այդ տիրէքթիւը կը կարծեմ տրամագծապէս խոտոր չի համեմատիր անկախ Քիւրտիստանի մը կազմութեան գաղափարին, որուն սակայն նպաստած է Ամբողջական Հայաստանի Պատուիրակութիւնը: Ես կ'ուզէի անձնական ծանօթութիւններով քիչ մը աւելի լուսաբանել այս հարցը: Եթէ Վանի, Էրզրումի եւ Պիթլիսի վիլայէթները ստանանք որպէս մեր կրճատուած յոյսերու «մաքսիմում»ը, ատոնցմէ Վանայ վիլայէթին մէջ պատերազմէն առաջ գտնուած են 250000 քիւրտի դէմ 160000 հայ, իսկ Պիթլիսի վիլայէթին մէջ՝ 300000 քիւրտի դէմ 200000 հայ: Եթէ զեղչենք քրտաբնակ Հէքիարիի եւ Սղերդի շրջանները, նորէն քիւրտերը մեծամասնութիւն կը կազմեն: Արդ, մեր թեզը սկիզբէն ի վեր այն եղած էր, թէ քիւրտ տարրը, որպէս կիսավայրենի ժողովուրդ, որ չունի ո՛չ գրականութիւն, ո՛չ ալ քաղաքակրթութիւն, Հայաստանի մէջ հայկական արդար ռեժիմի մը համակերպող ժողովուրդ մը պիտի ըլլայ: Այսօր, ջարդերու հետեւանքով, մեծամասնութեան համեմատութիւնը մեծապէս խախտած է այդ շրջանին մէջ ի նպաստ քիւրտերու: Երբ Վանի շրջանին մէջ ներկայիս բնակող 100000 քիւրտի դէմ մենք լաւագոյն պայմաններու մէջ հազիւ պիտի կրնանք փոխադրել 60000 հայ, Պիթլիսի մէջ ներկայիս ապրող նոյնքան քիւրտերու դէմ մենք հազիւ պիտի կրնանք փոխադրել 20000 հոգի: Անշուշտ, մեզի աւելի դիւրին պիտի ըլլար կառավարել քիւրտերը որպէս հպատակութեան վարժուած ժողովուրդ, բայց այսօր երբ Անգլիոյ քաղաքականութեան եւ Ազգ. Պատուիրակութեան սխալ քայլին շնորհիւ քիւրտերու մէջ անկախութեան գաղափարը մտաւ, ես չեմ գիտեր, թէ ինչպէ՞ս պիտի յաղթահարենք այն դժուարութիւնները, զորս պիտի կրենք որպէս փոքրամասնութիւն՝ կառավարելու համար մեզմէ բազմաթիւ ցեղ մը, կիսավայրենի եւ զինուած, որ մեր սահմաններուն մօտ պիտի ունենայ անկախ Քիւրտիստան մը: Դեռ Քիւրտիստան չստեղծուած՝ անոնք արդէն սկսած են Վանայ եւ Պիթլիսի մասին խօսիլ իբր Քիւրտիստանի յատուկ շրջաններ: Ճիշդ է, որ Անգլիոյ շահը կը պահանջէր Քիւրտիստանի մը ստեղծումը, նախ՝ իբր ապառնալիք հանդէպ Թիւրքիոյ, յետոյ՝ որպէս միջոց զայն տկարացնելու, բայց

Անգլիա պիտի դժուարանար այդ հարցը մէջտեղ դնելէ, տրուած ըլլալով, որ քիւրտերը անկախութեան ո՛չ մեկ ստորոգելի չունենալէ զատ, մինչեւ վերջ թուրքերու հետ կռուած էին Դաշնակիցներու դէմ եւ անոնց ձեռքով կատարուած էին հայկական ջարդերը՝ մեծ մասամբ: Հայ եւ քիւրտ համաձայնութիւնը միայն Անգլիոյ շահերուն կը յարմարէր, այն Անգլիոյ, որուն քաղաքականութեան ջրաղացքի քարը դարձնելու համար հայ արիւն չէ մնացած այլեւս, եւ որ առ այդ պէտք ունի քիւրտերու արիւնին: Ազգերու պատմութիւնը ամէնուս յայտնի է. անկախութեան գաղափարը անգամ մը սերմանուելէն վերջ՝ այլեւս կարելի չէ արմատախիլ ընել ազգի մը մէջէն: Քիւրտերուն մէջ անկախութեան մասին խորհող չկար. պատահաբար դպրոց տեսած խել մը քիւրտ մտաւորականներ քանի մը ամիսէ ի վեր Պոլսոյ մէջ քլիւպ մը հաստատած էին եւ օրկանով մը անկախութեան բրոբականտը կը մղէին: Այս էր ահա՝ անոնց ամբողջ գործունէութիւնը: Իրենք իսկ չէին հաւատար իրենց երազներուն, բայց այդ երազը այսօր իրականութիւն է՝ շնորհիւ մեր անհեռատես քաղաքականութեան: Շէրիֆ Փաշայի հետ կնքուած համաձայնութեամբ, նախ քիւրտերը մաքրուած են իրենց՝ ջարդերու մէջ ունեցած մասնակցութեան արատէն քաղաքակիրթ աշխարհի առաջ: Ասիկա առաջին պայմանն էր անոնց յաջողութեան: Շէրիֆ Փաշայի հետ կնքուած համաձայնութեամբ, հայերը ճանչցած են քիւրտերու անկախութեան իրաւունքը՝ ազգայնութեան իրաւունքի սկզբունքով: Անգլիոյ համար անշուշտ որոշ նշանակութիւն ունէր այդ աքթը, որով հայերը, որոնք իբր դատախազներ եւ իբր դրացիներ բնական հակառակորդ դուրս պիտի գային Քիւրտիստանի անկախութեան դէմ, ընդհակառակը, իրենց իսկ ձեռքով ալ կը դիւրացնեն այդ գործը: Եւ հիմա, երբ ինքնորոշման Ես-ն է որ կը փչէ ամեն կողմ համաձայնութեան մէջ ընդունուած ազգայնութեան սկզբունքին համեմատ, քիւրտերը իրենցը պիտի համարեն այն ամեն շրջանները, ուր իրենք մեծամասնութիւն կը կազմեն: Պատուիրակութիւնը ամեն ճիգ թափելու էր, ամեն զոհողութիւն ընելու էր, որպէսզի քիւրտ ժողովուրդի մէջ՝ թուով երեք միլիոն, որ կը շրջապատէ Հայաստանի հարաւային եւ արեւելեան շրջանները, որ այնքան հոծ թիւ կը կազմէ Հայաստանի մէջ, որ կարգ մը շրջաններու մէջ մեծամասնութիւն է այժմ, չխմորուէր անկախութեան գաղափարը: Ամբողջական Հայաստանի Պատուիրակութիւնը իւր այդ քայլով մեծապէս դժուարացուց, վտանգեց Հայաստանի կառավարութեան գործը: Պատուիրակութիւնները ո՛չ մէկ օգուտ չէին կրնար ակնկալել այդ համաձայնագրէն: Քիւրտերը արդէն դժգոհ էին թուրք վարչութենէն: Իրենք արդէն անկախութիւն պահանջած էին, եւ այսպէս՝ իրենց դիրքը որոշած էին հանդէպ Թուրքիոյ: Եթէ Դաշնակիցները պէտք զգային նման արտայայտութեան մը, արդէն ունէին այդ ի. ձեռին: Հայ եւ քիւրտ համաձայնագիրը ոչինչ կ՚աւելցնէր ատոր վրայ, մանաւանդ որ ստորագրող կողմերը չունէին հաւասար դիրքեր: Հայոց կողմէն ստորագրողները Հայ Հանրապետութեան պաշտօնական ներկայացուցիչը, ինչպէս նաեւ եօթ տարիէ ի վեր Թրքահայութեան ամէնուր ճանչցուած ներկայացուցիչ Պօղոս Փաշա Նուպարն էին, որոնք չէին կրնար ուրանալ իրենց յանձնառութիւնները, ինչպէս ըրաւ Շերիֆ Փաշան, որ արկածախնդիրի մը համբաւ ունէր Դաշնակիցներու մօտ, որ իւր մանտան ստորագրած էր միայն Պոլսոյ մէջ հաւաքուած քանի մը ինքնակոչ մտաւորականներէ, եւ որ, ինչպէս տեսանք, հայերուն հաստատել տալէ վերջ քիւրտերու ձգտումները եւ ատոր առաւելութիւնը ապահովելէ վերջ՝ մէկ հարուածով ջնջեց այն առաւելութիւնը, զոր Ամբողջական Հայաստանի Պատուիրակութիւնը կարծած էր ձեռք բերել: Այդ հարուածը Շերիֆ Փաշայի այն յայտարարութիւնն էր, որով քիւրտեր հաւատարիմ կը հռչակէր թիւրք իշխանութեան:

Եզրակացնելով, անգամ մը ալ կը յայտարարեմ, որ հայ եւ քիւրտ համաձայնագրով գործուած է ամէնամեծ սխալ մը, որուն հետեւանքները շատ ծանր պիտի կշռեն հայ ապագայ պատմութեան մէջ:

Որոշ պատգամաւորներ ալ խօսք ուզած էին Ազգ. Պատուիրակութեան համարատուութեան մասին, բայց օրը տարաժամած ըլլալով, որոշուեցաւ յառաջիկային շարունակել վիճաբանութիւնը:

Նիստը փակուեցաւ ժամը 7-ին:

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 60, թթ. 31-63: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ ԺԱ

4 Յունիս 1920, ժամը 3 ու կէսին,
նախագահութեամբ Վսեմ.Տիար Գաբրիէլ Նորատունկեանի:

Ներկայ էին 16 պատգամաւոր՝
Ամեն. Դուրեան Արքեպիսկ., Տոքթ. Ա. Բարսեղեան, Թէրզիպաշեան, Թէքէեան, Թումայեան, Հանըմեան, Մսըրլը Պէյ, Տոքթ. Նեւրուզ, Վսեմ. Գ. Նորատունկեան, Սինապեան, Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար, Չօպանեան, Տէրպէտէրեան, Տէրվիշեան, Տէր-Ստեփանեան, Տէվլէթեան, Ֆնտգլեան:

Օրակարգ
1. Շարունակութիւն վիճաբանութեանց Ազգ. Պատուիրակութեան համարատուութեան
2. Տեղեկագիր եւ հաշուետուութիւն ելեւմտական գործունեութեանց Ազգ. Պատուիրակութեան
3. Տեղեկագիր Կազմական Կանոնագրի Յանձնաժողովին
4. Վերակազմութիւն Ազգ. Պատուիրակութեան

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Ընթերցում ատենագրութեան

Կարդացուեցաւ Յունիս 3-ի նիստին ատեանագրութիւնը:

Տիար Վահան Թէքէեան դիտել տուաւ, որ ատենագրութեան մէջ ատենագրած չէին դաշնագրին յանձնման առթիւ Փարիզ հրատարակուող «Վերածնունդ» թերթին կողմէ Պատուիրակութեան Նախագահ Վսեմ. Պօղոս Նուպարի համար եղած յերիւրանքին նկատմամբ բոլոր ըսուածները, մասնաւորաբար Տիարք Բարսեղեանի եւ Հանըմեանի այն յայտարարութիւնները, թէ «Վերածնունդ» բոլորովին անպատասխանատու թերթ մըն է եւ թէ իրենք բնաւ համամիտ չեն անոր հրատարակութեանց:

Համագումարը բաւականացաւ այս դիտողութեան արձանագրութեամբ եւ վաւերացուց ատենագրութիւնը:

2. Նամակ Վենետիկի Մխիթարեանց Ընդհ. Աթոռակալէն՝ Գեր. Հ. Յովհ. Թորոսեանի բացակայութեան մասին

Նախագահ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան ժողովին հաղորդեց Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան Ընդհանուր Աթոռակալ Գեր. Հ. Քերովբէ Ա. Չաքրեանի կողմէ 1920 Մայիս 31 թուով Դիւանին ուղղուած նամակ մը, որով կը ծանուցանէ, թէ Միաբանութիւնը յակամայս ստիպուած էր հրաժարիլ իր մէկ ներկայացուցիչը /Գեր. Յով. Վ. Թորոսեանը/ Համագումարին ղրկելու պատուէն, իբր պատճառ ցոյց տալով վանական ընդհ. ժողովի գումարումը, որ անհրաժեշտ կը դարձնէր Հ. Թորոսեանի աշխատակցութիւնը:

Համագումարը այս նամակին վրայ որոշեց իբր վերջնականապէս բացակայ, հետեւաբար՝ հրաժարեալ նկատել Գեր. Հ. Յովհ. Վ. Թորոսեանը:

3. Խնդիր «մանտայի» հարցին նկատմամբ Ամերիկայի մեջ եղած յայտարարութեան

Նախագահ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան այս խնդիրը յիշեցնելով Ժողովին, ծանուցեց, որ Ազգ. Պատուիրակութեան Վսեմ. Նախագահը Դիւանին հաղորդած է հետեւեալ հեռագիրը, զոր Տիար Միհրան Սվազլը ղրկած էր ի պատասխան Ն. Վսեմութեան այն հարցման, թէ ինչպէ՞ս առանց հաստատ տեղեկութիւն ստացած ըլլալու՝ Ամերիկայի մանտայի մերժման յայտարարութեան վերաբերուող ծանօթ լուրը տրուած էր.

«Ն. Վսեմութիւն Պօղոս Փաշա Նուպար, Փարիզ.

Ուաշինկթոն, Յունիս. Ինծի պարտականութիւն նկատեցի Ձեզի հեռագրել՝ երբ այդ մասին տեղեկութիւն ստացայ Ուոլթըր Ճորճ Սմիթի նման վստահութեան արժանի բարեկամներու կողմէ: Անոնք ինծի յայտարարեցին, թէ նոյն օրը «մանտայի» խնդրին նկատմամբ տեսնուած են ծերակուտականներու հետ, որոնք իրենց ըսած են, թէ հայերը, ըստ Գարտաշեանի, Եպիսկոպոսին եւ Հանրապետութեան ներկայացուցիչին յայտարարութեանց, չեն ուզեր ամերիկեան մանտան: Ամերիկայի բարեկամներն իսկոյն այս լուրը հեռագրեցին Տէր-Հովսէփեանի: Գարտաշեան յայտարարութիւն մը հրապարակեց մամուլին մէջ, որուն համեմատ Հայաստան միայն բարոյական եւ ելեւմտական օգնութիւն կ'ուզէր:

/ստորագ./ Միհրան Սվազլը»

Որոշուեցաւ ատենագրել:

Օրակարգ

Համարատուութիւն Ազգ. Պատուիրակութեան

Համագումարն անցաւ Ազգ. Պատուիրակութեան համարատուութեան: Պատուիրակութեան գործունէութեան էութեան մասին խօսք առաւ՝

Տիար. Ա. Թէրզիպաշեան. Անցնելով Ազգ. Պատուիրակութեան տեղեկագրին էութեան, նախ կ'ուզեմ վերլուծել այն պատճառները, որոնց բերումով վիժեցաւ Թրքահայաստանի հարցը: Մենք ֆաթալիստներ չենք եւ, հետեւաբար, չենք կրնար ճակատագրականութեան վերագրել այս վիժումը: Եթէ այս վիժումը տեղի ունեցաւ, ուրեմն կայ պատճառ մը եւ մենք պիտի փնտռենք, թէ ի՞նչ է այդ պատճառը:

Հարցին էութեան անցնելէ առաջ կ'ուզեմ մէկ-երկու խօսք ըսել Պատուիրակութեան իրաւասութեան վերաբերմամբ: Յայտնի է, որ անցեալ տարի ի սփիւռս աշխարհի ցրուած հայեր իրենց ներկայացուցիչները Փարիզ ղրկեցին Հայկական Հարցի մասին վճռելու իրենց ձգտումները: Այս ներկայացուցիչներուն միացմամբ կազմուած Համագումարը սահմանեց որոշ տիրէքթիւներ Հայկ. Դատին հետապնդութեան համար, եւ այդ տիրէքթիւները վստահեցաւ իր ընտրած յատուկ Պատուիրակութեան: Արդ, տեղեկագրէն կը հասկնանք, թէ շատ մը կէտերու մէջ Պատուիրակութիւնը շեղած է իրեն տրուած տիրէքթիւները, կամ բոլորովին անտեսած է զանոնք: Արդ, ես, որպէս մէկ անդամը այդ ներկայացուցչական ժողովին, հարց կը դնեմ, թէ Պատուիրակութիւնը ինչպէ՞ս կրնար զիջել Հայաստանի մէկ մասը, առանց հարցնելու զինքը ընտրող եւ իր վրայ որոշ պայմաններով վստահութիւն դրած Համագումարին:

Անցնելով բուն հարցին, ես կ'ուզեմ յետահայեաց պզտիկ ակնարկ մը ձգել Համագումարի անցեալ տարուան աշխատութեանց վրայ, ցոյց տալու համար, թէ

Համագումարի մեծամասնութեան հիմնական տեսակէտը այն էր, որ Խաղաղութեան Վեհաժողովի սեղանին վրայ կար միայն Թրքահայաստանի հարց, թէ այդ հարցն էր միայն, որ յիշեալ Վեհաժողովին վճռով պէտք է լուծուեր, եւ թէ Ռուսահայաստանի հարցը՝ ստեղծուած Ռուսական Յեղափոխութեամբ եւ սերտօրէն կապուած ռուսական պայմաններուն, որով նաեւ ապագային գուցէ ենթակայ անոր միջամտութեանց, խառնելով Թրքահայաստանի հարցին՝ մենք կը դժուարացնենք Թրքահայաստանի հարցը, կը բարդացնենք անոր լուծումը, որովհետեւ երկու հարցերը ունենալով երկու տարբեր քաղաքական պայմաններ, պէտք էին ունենալ նաեւ իրենց սեփական դժուարութիւնները: Օրինակով խօսելով, ըստ որուն՝ մեր հարցին բախտը կապուած էր «մանտաթէր» մը գտնելու կարելիութեան հետ, կասկածէ դուրս էր, որ ոեւէ տէրութիւն ուզեր իր պաշտպանելիք ժողովրդեան գործերուն մէջ ապագային իր դէմը ունենալ Ռուսաստանը, իր բազմազան սպառնական հաւանականութիւններով: Հետեւաբար, միացեալ կառավարութիւն ստեղծելու հարցը չորս անգամ Համագումարին ներկայացաւ եւ չորս անգամ մերժուեցաւ մեծամասնութեան այն տիրապետող կարծիքին բերումով, թէ Հայկական Հարցին ծանրութեան կեդրոնը փոխադրելով Ռուսահայաստանի մէջ, մենք կը տկարացնենք Թրքահայաստանի հարցը, որ, ինչպէս ըսի, մէկ կողմէ կը գտնուէր Խաղաղութեան Վեհաժողովի սեղանին վրայ, եւ միւս կողմէ՝ իբր կապար կը ծանրանար Դաշնակից պետութեանց խղճին վրայ: Ճիշդ է, որ իր տիրէքթիւներուն մէջ Համագումարը արտօնած էր Պատուիրակութեանը՝ միացեալ կառավարութիւն ստեղծել, բայց մեծամասնութեան անդամները կը յիշեն անշուշտ, որ իրենք այս որոշումը տուին չորս անգամ ներկայացուած հարցի ճնշումին ներքոյ, պարտադրելով Պատուիրակութեան, որ գործադրութեան պահուն աչքի առջեւ ունենայ մեծամասնութեան՝ վիճաբանութեանց ընթացքին հետապնդած տեսակէտը: Այսպէս ալ որոշուած էր մեծամասնութեան մասնակի գումարմանց մէջ:

Տոքթ. Ա. Բարսեղեան. Ուրեմն, մեծամասնութիւնն իր գաղտնիքնե՞րն ունէր:

Տիար. Թէրզիպաշեան. Այո՛, ամեն «ֆրաքսիոն» իր առանձին որոշումները ունի, ինչպէս ունի Դաշնակցութիւնը: Դէպքերը շուտով ապացուցեցին, թէ մեծամասնութիւնը իր այս տեսակէտին մէջ որքան իրաւացի էր: Մէկ ամիս վերջ, Մայիս 7-ին հրատարակուած Խաղաղութեան Դաշնագրին 22-րդ յօդուածին մէջ տեսանք եւ Դաշնակից պետութիւնները, թուով 22, ընդամէնը Թրքահայաստանի անկախութեան սկզբունքը, անոր առաջին քայլերը «մանտաթէր»-ի մը օգնութեամբ Ազգերու Ընկերակցութեան պաշտպանութեան ենթարկած են: Այս աքթը, որ Թրքահայաստանի հարցին լուծման հիմքը եւ առաջին հանգրուանը կը կազմէր եւ կը նուիրագործէր Համագումարի մեծամասնութեան տեսակէտը, պէտք էր ըլլար նաեւ հիմքը Ազգ. Պատուիրակութեան քաղաքականութեան, որովհետեւ ատիկա համաշխարհային աքթ մըն էր, զոր ջնջելու համար պէտք էր, որ զայն կազմող 22 պետութիւնները իրենց լեզուով սրբէին իրենց ստորագրութիւնը: Կը հարցնեմ, թէ ի՞նչ ստիպողութիւն ունէինք Թրքահայաստանի դատը կապելու ռուսական Հայաստանի դատին: Ապահովաբար՝ ո՛չ մէկ Դաշնակից պետութիւն այդ միակ բանը պիտի պահանջէր մեզմէ: Ամենուն ալ յայտնի էր, որ մենք կողք-կողքի, բայց քաղաքական տարբեր պայմաններով, սակայն մէկ ձգտումով տոգորուած ժողովուրդ մըն էինք: Մեր միութեան ցանկութիւնը չէր, որ պիտի կրնար վճռել մեր առանձին դատերուն յաջողութիւնը: Ինչպէս ըսի, Ռուսական Հայաստանի ճակատագիրը բացարձակապէս կապուած կը մնար ռուսական պայմաններու հետ, Թրքահայաստանի հարցն էր միայն, որ Թուրքիոյ յաղթող Դաշնակից պետութեանց վճռին ենթարկուած էր եւ մասամբ վճռուած Յունիս 28-ին: Ազգ. Պատուիրակութիւնը, փոխանակ այս հիմնական քաղաքականութիւնը հետապնդելու, չկրնալով ինքզինքը զերծ պահել Հայաստանի Հանրապետութեան Պատուիրակութեան բրոբականտներէն եւ ճնշումին ազդեցութենէն, հետզհետէ

կորսնցուց իր նախաձեռնութիւնը եւ ակամայ գործիք ու հետեւորդ դարձաւ ռուսահայերու քաղաքականութեան:

Տիար Ա. Հանըմեան. Պիտի խնդրենք Տիար Թէրզիպաշեանէն, որ ամեն անգամ երբ ամբաստանութիւն մը ընէ՝ փաստերով ապացուցէ:

Տիար Թէրզիպաշեան. Ես ամբաստանութիւն մը չէ, որ կ'ընեմ, այլ հարցը կը վերլուծեմ ու կը քննադատեմ:

Տիար Տոքթ. Նեւրուզ. «Գործիք» բառը ինքնին կը բաւէ իբր ամբաստանութիւն, եւ կը զարմանամ, որ երբ այդ բառը գործածուեցաւ, Դիւանը չբողոքեց այդ մասին:

Վսեմ. Կէր Գ. Նորատունկեան. Ըսուածներուն մէջ հակասահմանադրական բան մը չկայ:

Տիար Թէրզիպաշեան. Հիմա արդէն փաստերով պիտի խօսիմ: Մայիս 28-ին Հայ Հանրապետութիւնը ինքզինքը հռչակեց նաեւ Թրքահայաստանի կառավարութիւն: Չեմ ծանրանար այն պատճառներուն վրայ, որոնք Հանր. կառավարութիւնը մղեցին այս պետական հարուածը ստեղծելու: Մեր մէջ ո՛չ ոք կը գտնուէր միութեան գաղափարին հակառակող: Ընդհակառակը, ամէնքս ալ կը ձգտէինք այդ միութիւնը դնելու հաստատուն հիմքերու վրայ, յաւերժացնելու համար զայն, եւ ո՛չ թէ անտեղի աճապարանքով մը զայն վիժեցնելու: Կարելի չէ ուրանալ, որ տեղական պայմանները որոշ թելադրութիւններ կը ներշնչեն: Այստեղ ո՛չ տեղն է, ո՛չ ալ ժամանակը երկարօրէն խօսելու այս մասին, բայց որպէսզի ես մտածումս լրիւ արտայայտած ըլլամ, սա չափ կ'ըսեմ, որ ո՛չ թէ երկու տարբեր երկրամասերու, այլ նոյնիսկ երկու գիւղերու մէջ տեղական շահերու տարբեր ըմբռնումներ գոյութիւն ունին: Ո՛չ ոքի գաղտնիք չէ, որ ռուսահայերուն քաղաքականութիւնը առաջին օրէն եղած էր ունենալ ո՛չ թէ մեր ծրագրական ամբողջական Հայաստանը, այլ՝ վեց վիլայէթներուն որոշ մասերը, եւ դժուարութեան պարագային՝ միայն երեք վիլայէթներ, որոնք պէտք է միանային Երեւանի Հանրապետութեան: Նոյնիսկ կրնամ ըսել, թէ որոշ հրահանգ կար ոյժ տալ աւելի ծովու վրայ ելք մը ունենալու, քան ընդարձակ հողամասեր: Ես մտքէս չեմ անցներ քննադատել այս ծրագիրը, որ ամփոփ ոյժ մը գոյացնելու քաղաքականութեան տեսակէտով կրնայ արդարանալ: Բայց չէինք կրնար նոյն քաղաքականութիւնը պարտադրել խարբերդցիի մը կամ կիլիկեցիի մը: Արդ, խարբերդցիներէ, կիլիկեցիներէ եւ ընդհանուր կերպով ամբողջ Թրքահայաստանի ներկայացուցիչներուն կողմէ Պատուիրակութեան պարտադրուած տիրէքթիւները կը պարտաւորեցնեին զայն, որ այն րոպէին երբ առաւ Մայիս 28-ի աքթին, այդ պետական հարուածին լուրը, աքթ մը, որ կը քանդէր Մայիս 7-ին Հայկական Հարցին դրուած նախնական հիմքը, եւ զայն կը ձգէր ռուսական քաոսին մէջ, պէտք էր րոպէապէս բողոքել: Պատուիրակութիւնն այդ քայլը չառաւ եւ թոյլ տուաւ, որ Դաշնակիցներու աչքին առջեւ այդ կատարուած աքթը մնայ իր քաղաքական նշանակութեան մէջ: Մէկ-երկու քոմբրոմիսային հեռագիրները զորս տուաւ՝ ո՛չ մէկ նշանակութիւն ունեցան, եւ արդէն՝ առաքելութիւն մը ղրկելու ձեռնարկը մասամբ նուիրագործեց այդ աքթը: Այն օրէն ի վեր Պատուիրակութիւնը կորսնցուց իր ինքնուրոյն քաղաքականութեան ղեկը եւ նախաձեռնութիւնը ու կամաց-կամաց իյնալով Հանր. Պատուիրակութեան ազդեցութեան տակ, այնպիսի գործունէութիւն մը ունեցաւ, որ Դաշնակիցները աստիճանաբար մոռցան Թրքահայաստանի հարցին կարեւորութիւնը, եւ եկաւ րոպէ մը, ուր Հայկ. Հարց ըսելով սկսան ճանչնալ լոկ Ռուսական Հայաստանի հարցը: Այս քաղաքականութիւնը շատ լաւ կը յարմարէր Դաշնակիցներու «էկոիսթ» քաղաքականութեան, որոնք Մայիս 7-ի դաշնագրով բոլորովին որոշ բարոյական եւ նիւթական յանձնառութիւններ ստանձնած էին Հայաստանի վերաբերմամբ: Կասկած չկայ որ այսօր ո՛չ մէկ տէրութիւն իր քայքայուած ֆինանսին եւ զինուորական պայմաններուն մէջ տրամադիր չէ զինուորական եւ ֆինանսական օգնութիւններ ընել Հայաստանի: Միակ հանգամանքը, որ կրնար հրապուրել այդ պետութիւններէն մէկը կամ միւսը, ատիկա Հայաստանի աշխարհագրական եւ տնտեսական

առաւելութիւնները ներկայացնող մասերը կը կազմեն, ինչպէս Կիլիկիա ու Տիարպէքիրի եւ Խարբերդի շրջանները, զորս Ազգ. Պատուիրակութիւնը երկրորդ խոշոր սխալով մը, հակառակ Համագումարի տիրէքթիւներուն, զիջեց: Անցեալ տարի, քննելով մեր դրութիւնը, մենք գտած էինք, որ Հայաստանի միայն Կիլիկիոյ մասին մէջ է, որ կը գտնուի 200 000-ի չափ հայութիւն: Հաշուած էինք, որ Կիլիկիոյ աշխարհագրական դիրքը եւ երկրային հարստութիւնն է, որ կրնան հրապուրել եւ ներգաղթի մղել ցրուած հայութիւնը: Հաշուած էինք նաեւ մեր տեղային յաքթութիւնները, որոնց բերումով մեր ժողովուրդը միշտ լեռնոտ վայրերէն հեռանալով գացեր կուտակուեր է ծովեզերեայ վաճառաշահ քաղաքներ: Հաշուած էինք տակաւին, որ Էրզրումի եւ Վանի լեռները ո՛չ մէկ պարագայի մէջ չպիտի կրնային դէպի իրենց քաշել հայ սեփականասէր ժողովուրդը: Այս ամէնուն հետ հաշուած էինք նոյնպէս, որ առանց Կիլիկիոյ, մնացեալ աւերակ եւ լեռնոտ մասով մենք չէինք կրնար հրապուրել նաեւ «մանտաթէր» մը: Այստեղ է, որ կը շեշտուի Պատուիրակութեան սխալը: Անիկա, առանց նոյնիսկ սպասելու, որ Ամերիկայի պատասխանը յայտնուի, կամովին զիջեց Հայաստանի շէն եւ հարուստ մասը:

Տիար Ա. Չօպանեան. Եղածը իսկապէս զիջում չէ, այլ՝ հարկադրացուցիչ համակերպութիւն մը:

Տիար Ա. Թէրզիպաշեան. Ձեզի կը յիշեցնեմ Պ. Ահարոնեանի՝ Հնչակեան թղթակցի մը ըրած յայտարարութիւնները, թէ Տաւրոս շատ հեռու է, մեր աչքերը պէտք է դարձնենք դէպի Արարատ: Կը յիշեցնեմ նաեւ այն յայտարարութիւնը, զոր Պ. Ահարոնեան ըրած էր Կաղանդի առթիւ սարքուած երեկոյթի մէջ, ըսելով, որ Հայաստանի սահմաններ գծող յանձնաժողովը կու գայ:

Տիար Ա. Չօպանեան. Հերքուեցաւ ատիկա:

Տիար Ա. Հանըմեան. Միւս յայտարարութիւնն ալ հերքուեցաւ: Այս առթիւ պարզ լուսաբանութիւն մը պիտի ընեմ: Տիար Թէրզիպաշեան կը մեղադրէ Ազգ. Պատուիրակութիւնը, թէ զիջումներ ըրեր է: Կը կարծեմ, թէ այս յայտարարութեամբ՝ Ազգ. Պատուիրակութեան գլխուն վրայէն կ'ուզէ հարուածել Հանր. Պատուիրակութիւնը, եւ անոր ալ գլխուն վրայէն՝ Դաշնակցութիւնը:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Կը խնդրեմ պատուարժան ատենախօսներէն, որ անպատեհ ակնարկութիւններ չընեն Հանրապետութեան Պատուիրակութեան Նախագահին անձին նկատմամբ: Անիկա անշուշտ նոյնքան ազատ է իր նկատումները ունենալու: Տիար Թէրզիպաշեան կը կարծէ, որ Հայկական Խնդրին ծանրութեան կեդրոնը Թրքահայաստանի մէջ էր. Տիար Ահարոնեան ալ կրնար կարծել, թէ Ռուսահայաստանի մէջ էր, ինչպէս ուրիշներ ալ կրնան կարծել, թէ երկու Հայաստաններու միացման մէջն էր:

Տիար Ա. Հանըմեան. Տիար Թէրզիպաշեան կը պնդէ, թէ Պատուիրակութեան ըրած զիջումներուն հետեւանքով Թրքահայաստանի հարցը թաղուած է, եւ կը դատապարտէ Պատուիրակութիւնը՝ այդ զիջումներուն համար: Միւս կողմէ, սակայն, անիկա, առանց որոշապէս արտայայտելու, սպրդուկներով եւ կողմնակի ճամբաներով այն տպաւորութիւնը կը ձգէ լսողին վրայ, որ Ազգ. Պատուիրակութիւնը այդ զիջումները կատարած է Հանր. Պատուիրակութեան պնդումներուն վրայ, եւ անոր ձեռքը իբր գործիք ծառայելով: Խնդիրը՝ այս ձեւով դրուելով՝ հաւանօրէն Պատուիրակութեան կողմէ իր քննադատութեանց մէջ եղած պատասխանին մէջ այս կէտը լուսաբանող պատասխան մը չտրուի: Նկատի ունենալով սակայն խնդրին չափազանց մեծ կարեւորութիւնը, ես կը խնդրէի, որ Պ. Թէրզիպաշեան որոշ կերպով ըսէր, թէ ինքը կ'ամբաստանէ՞ արդեօք Հանր. Պատուիրակութեանը՝ իր պնդումներովը պատճառ դարձած ըլլալուն համար, որ Ազգ. Պատուիրակութիւնը զիջումներ կատարէ:

Տիար Թէրզիպաշեան. Ամբաստանութեան հարց չկայ, այլ՝ տեսակէտներու տարբերութեան: Այլեւս րոպէն եկած է, որ մենք որպէս մէկ ընտանիքի անդամներ, անկեղծօրէն արտայայտուինք: Եթէ մենք շարունակենք այնպէս, ինչպէս եղեր ենք

մինչեւ հիմա, մեր ազգին մնացածն ալ կը կորսցնենք: Ճշմարտութիւնը այս է, որ տեղական պայմանները տեղական տեսակէտներ առաջ կը բերեն, ո՛չ միայն հեռաւոր երկրամասերու, այլ նաեւ՝ գիւղերու միջեւ: Եւ Տիար Ահարոնեան, ուզէ-չուզէ, պէտք է հետեւի ռուսահայերու տեղական պայմաններու քաղաքական պահանջներուն: Ո՛չ միայն ռուսահայերուն, այլ նաեւ՝ թրքահայերուն մէջ ալ կան մարդիկ, որոնք ամփոփ եւ ուժեղ Հայաստանի մը գոյութիւնը կը նախընտրեն: Ասոնք տեսակէտներու տարբերութիւններ են եւ ամբաստանութիւն չեն ենթադրեր: Կ'անցնիմ տեղեկագրին: Անոր մէջ կ'ըսուի, թէ Լորտ Քըրզընի յայտարարութեան վրայ, որով Հայաստանի կազմութիւնը կարելի կը դատէր միայն երեք վիլայէթներու կցումով, Պատուիրակութիւնը համակերպած է: Եւ սակայն պարտաւոր էր չշեղիլ տիրէքթիւներէն եւ անմիջապէս նիստի հրաւիրել Համագումարը: Բայց Պատուիրակութիւնը, հաշտուելով Հանր. Պատուիրակութեան հետեւած քաղաքականութեանը, բռնադատուած է այդ համակերպութեան: Ես չեմ կրնար ուրանալ, որ Հայկական Հարցը 1915-ի ահաւոր ջարդով արդէն կրած էր իր առաջին հարուածը. չեմ կրնար ուրանալ նաեւ, թէ Հանր. կառավարութեան տարբեր քաղաքականութիւնը, իր բուռն ու ազդեցիկ գործունէութեամբ, կը ջլատէր Ազգ. Պատուիրակութեան գործունէութիւնը: Բայց դարձեալ մետաղին միւս երեսը, ես չեմ կրնար արդարացնել Ազգ. Պատուիրակութիւնը, որ Համագումարի տիրէքթիւներու սահմանին մէջ աննկուն եւ հաստատուն քաղաքականութեան կարելիութիւն ունէր փրկելու Թրքահայաստանի հարցը: Ասիկա չէ ըրած եւ դուրս գալով իր որոշ տիրէքթիւներու սահմանէն՝ զիջած է այն Հայաստանը, որ միայն իրը չէր, եւ զոր ինք չէր տեսած մօտէն:

Տոքթ. Ա. Բարսեղեան. Եթէ Հայաստանը չէին տեսած, ուրեմն ինչո՞ւ ընտրեցիք:

Տիար Ա. Թէրզիպաշեան. Ընտրեցինք, որովհետեւ վստահութիւն ունեցանք: Այսպէս, մեր անհեռատես քաղաքականութեան պատճառաւ Հայկական Հարցը ստացաւ այն տեսակ վիճակ մը, որ Դաշնակից «էկոիսք» կառավարութիւններուն պատեհութիւն տուինք դաշնագիրը խմբագրելու այնպէս, որ՝ ինչպէս քանիցս կրկնեցի ու կը կրկնեմ, Թրքահայաստանի դատը թաղուած կը մնայ անոր մէջ: Արդ դաշնագրին մէջ՝ անոնք իբր Հայաստան կը ճանչնան միայն Ռուսական Հայաստանը, իսկ Թրքահայաստանի հարցի ո՛չ իսկ յիշատակութիւն կայ, այլ միայն սահմանագծումի յիշատակութիւն մը՝ ենթարկուած Նախագահ Ուիլսոնի աւելի կամ նուազ առեղծուածային իրաւատուներուն: Եթէ նոյնիսկ այդ իրաւարարութիւնը տեղի ալ ունենայ նշանակուած սահմաններով, առանց «մանտաթէր»-ի, լոկ մեր միջոցներով գրաւելու եւ պահպանելու համար մեզի պէտք է առնուազն 150 000 հոգիանոց բանակ մը, զոր չեմ գիտեր թէ ո՞ր տեղէն պիտի ճարենք: Որովհետեւ ով որ ծանոթ է այդ շրջաններուն, գիտէ, որ ցանցառ հայութեամբ եւ շատ աւելի հոծ քիւրտերէ բնակուած այդ անմերձենալի լեռներն ու ձորերը մի միայն աւազակի որջեր են, որոնց մէջ չորս քիւրտ կրնայ հեշտիւ ամբողջ զօրախումբ մը զբաղեցնել: Շիտակ չէ յուսալ, որ ռուսահայաստանցիները, ինչպէս օրինակ ախալքալաքցի մը, ուզէ երթալ Վանը կամ Էրզրումը գրաւելու, մանաւանդ այս պայմաններուն մէջ, երբ անդին իրենց օճախները թաթարներու սպառնալիքին տակ են: Մենք այս բանը փորձով գիտենք: 1917-ի դրութենէն ես ինքս իբր Արեւմտահայ Խորհուրդի ներկայացուցիչ, անձամբ Պ. Ահարոնեանի գացի եւ Էրզրումի ճգնաժամային դրութիւնը պարզելով, խնդրեցի որ 5000 զօրք ղրկէ Անդրանիկի օգնութեան: «Չեն գնում, չեն ուզում գնալ»,- պատասխանեց, աւելցնելով, որ ժողովուրդը չուզէր հեռանալ իր օճախներէն, որոնք վտանգի տակ էին: Ես այս քննադատութիւնները կ'ընեմ ո՛չ թէ այսօր, երբ աչքի առջեւ ունինք մեր հարցի ստացած յուսահատ վիճակը, այլ ըրի նաեւ Յունուարին, նոյն այս տեսակէտները յատուկ նամակով հաղորդելով Համագումարի Նախագահին, ինչպէս նաեւ Փետրուարի մէջ՝ Պատուիրակութեան Նախագահին: Այս ամենը եզրակացնելով, ես կը յայտնեմ, որ Ազգ. Պատուիրակութիւնը, անտեսելով Համագումարի տիրէքթիւները, եւ չկարենալով զերծ մնալ Հանր. Պատուիրակութեան ազդեցութենէն,

առանց որոշ քաղաքականութեան եւ առանց նախածեռնութեան, յեղյեղուկ գործունէութեամբ մը պատճառ դարձած է, որ մենք այսօր չունենանք «մանտաթէր» մը, չունենանք ցանկացուած ամբողջական Հայաստանը: Մենք այսօր իբր արդիւնք այն անօրինակ զոհողութեանց, զորս մեծ պատերազմիկներն իսկ չկրեցին, ուրիշ բան չենք ստանար, եթէ ոչ դաշնագրին մէջ գտնուող այն առեղծուածային եւ անստոյգ յիշատակութիւնը, որուն մէջ «Թրքահայաստան» բառն իսկ գործածուած չէ, որուն մէջ ըստ էութեան ոեւէ վճիռ չկայ, այլ լոկ սահմանագծման իրաւադատութեան պատմութիւն մը:

Տիար Ա. Բարսեղեան. Տիար Թէրզիպաշեանի այն դիտողութիւնը, թէ մենք այսօր չունինք մեր բաղձացած Հայաստանը, իրականութիւն է, բայց թէ այդ արդիւնքը գոյացեր է մի միայն Ազգ. Պատուիրակութեան բռնած քաղաքականութեամբ՝ համաձայն չեմ: Ամեն պարագայի մէջ՝ Պատուիրակութեան պաշտպանողականը չէ, որ պիտի ընեմ. անիկա լսեց եղած քննադատութիւնները եւ անշուշտ կը պատասխանէ: Ես միայն դիտողութիւն պիտի ընեմ կարգ մը հարցերու մասին, զորս յուզեց Տիար Թէրզիպաշեան, եւ որոնք կապ ունին Պատուիրակութեան համարատուութեան հետ: Համագումարը անցեալ տարի որոշեց, որ Պատուիրակութիւնը աշխատի Միացեալ Ամբողջական Հայաստանի մը կազմութեան: Կը զարմանամ, որ Տիար Թէրզիպաշեան հիմա կ'ըսէ, թէ Ազգ. Պատուիրակութեան իրաւասութեանց մէջ էր նաեւ, անկախաբար Հանրապետութեան Պատուիրակութենէն կազմել Թրքահայաստան մը, եթէ ոչ անկախ, գոնէ ինքնավար, Թրքահայաստան մը՝ կազմուած այն տեսակ հողամասերով, որ կարենար հրապուրել զանազան գաղութներու մէջ ապրող հայերը եւ զանոնք իր մէջ հաւաքեր: Ասիկա Համագումարին մեծամասնութեան ալ որոշումը չէր: Գալով Ազգ. Պատուիրակութեան գործունէութեան, որոշ անհարթութիւններ ունի անշուշտ, բայց բոլորովին հակառակ տեսակէտէն: Պէտք է շրջել այն ամեն ինչ, որ Տիար Թէրզիպաշեան յիշատակեց իբր Պատուիրակութեան թերութիւնները: Որովհետեւ Պատուիրակութիւնը որքան ատեն, որ համաձայնութեամբ գործեր է Հանր. Պատ.-թեան հետ, մնացեր է հաւատարիմ իրեն տրուած տիրէքթիւներու գլխաւոր մէկ կէտին. ընդհակառակը, քննադատելի են անոր այն քայլերը, որոնք առնուած են ինքնագլուխ: Հետեւելով Հանր. Պատ.-թեան Նախագահին յանձնառութեանը, թէ միշտ համաձայնօրէն պիտի գործէ Ազգ. Պատ.-թեան հետ, Պ. Տէր-Ստեփանեան ըսաւ, թէ Հանր. Պատուիրակութեան Նախագահը շուտով այդ յանձնառութիւնը ոտնակոխ ըրաւ՝ Մայիս 28-ի աքթով: Ասիկա սխալ է: Երկու Պատուիրակութեանց գործակցութիւնը ամէնքս ալ ուզեցինք, եւ ամէնքս ալ աշխատեցանք ատոր համար: Տիար Տէր-Ստեփանեան կը մոռնայ սակայն, թէ այդ գործակցութիւնը այստեղի աշխատութեանց համար էր: Անկախաբար Հանր. Պատուիրակութենէն, անդին կար Հանր. կառավարութիւն մը, որ չէր կրնար ամեն վայրկեան այստեղէն հրահանգ ստանալ: Ասիկա ո՛չ միայն անկարելի էր, այլ նաեւ՝ անտեղի, որովհետեւ Հանր. Պատ.-թիւնը՝ կառավարութեան հրահանգ տալու իրաւասութիւն չունէր, ընդհակառակը, ինք անկէ հրահանգ կը ստանար: Հետեւաբար, չեմ հասկնար թէ ինչպէ՞ս Մայիս 28-ի աքթին պատճառաւ կարելի կ'ըլլայ մեղադրել Հանրապետութեան Պատուիրակութիւնը, թէ իր յանձնառութեան հակառակ վարուած է: Անիրաւ կը նկատեմ նաեւ այն դիտողութիւնը, թէ Հանր. կառավարութիւնը այդ աքթը հրատարակած է առանց Ազգ. Պատուիրակութեան իմաց տալու եւ խորհուրդ հարցնելու: Բայց կառավարութիւնը ազատ էր ազգին ընդհանուր շահերուն կապուած կարգադրութիւն մը ընելու այն կատարեալ անկախութեամբ, որ իրաւունքն է ամեն կառավարութեան: Երբ Ազգ. Պատուիրակութիւնը 1918 Նոյեմբերին այստեղէն հռչակեց Ամբողջական Հայաստանի անկախութիւնը, Հանր. կառավարութիւնը դիտողութիւն անգամ չըրաւ, որովհետեւ ատիկա իր բաղձանքներուն համապատասխան յայտարարութիւն մըն էր: Ես կը ցաւիմ, որ Ազգ. Պատուիրակութիւնը բողոքեց Մայիս 28-ի աքթին դէմ: Չեմ հասկնար, թէ ի՞նչ բան կրնար դրդել Պատուիրակութեան վարիչները իր երկրի մէջ ամբողջական

Հայաստանի մը գաղափարին նուիրագործման համար կատարուած այդ անկախութեան հռչակման հակառակը: Անոր համա՞ր արդեօք, որ իր անդամներուն մէջ չկային միացեալ հռչակուած երկու Հայաստաններուն ալ պաքքանող անձեր: Բայց ինչ վնաս կու գար աքքէ: Կառավարութիւն մը փոփոխութեան ենթակայ է միշտ. այդ կառավարութիւնն ալ կրնար փոխուիլ: Ազգ. Պատուիրակութիւնը կամ անոր Նախագահը սխալ քաղաքականութեան հետեւեցաւ այդ մասին, եւ գիտենք, թէ ինչ եղաւ հետեւանքը. ծագեցան խոր վէճեր, որոնք պառաքթում առաջ բերին եւ այնքան վնասակար եղան ազգին՝ Հայաստանի, ինչպէս առ հասարակ բոլոր գաղութներու մէջ: Եթէ Պատուիրակութիւնը իրեն տրուած տիրէքթիւներուն հետեւեր հաւատարմաբար, այդպիսի ընթացք մը չպիտի ունենար, եւ կամ ատոր համար պէտք պիտի տեսնէր նաեւ Հանրապետութեան Պատուիրակութեան գործակցութեան: Ես այնպէս կը կարծեմ, թէ Մայիս 28-ի աքթին նկատմամբ Ազգ. Պատուիրակութիւնը ուղիղ եւ քորեքթ չեղաւ, եւ ատիկա մանաւանդ շեշտեց այն երկուութիւնը, որ այսօր գոյութիւն առած է ազգին մէջ: Այսպէս, օրինակ՝ Հայաստան գտնուող արեւմտահայերու՝ խորհրդարանի ընտրութիւններուն մասնակցելու առթիւ Կաթողիկոսին տրուած հեռագիրը ո՛չ միայն Ազգ. Պատ.-թեան իրաւասութեան սահմաններէն դուրս էր, այլեւ՝ Հայաստանի ներքին խնդիրներուն միջամտելու փորձ մը: Մանաւանդ որ, որքան գիտեմ, այդ հեռագրի մասին ո՛չ միայն չէ խօսուած Ամբողջական Հայաստանի Պատ.-թեան նիստին մէջ, այլեւ Ազգ. Պատուիրակութեան անդամներուն ալ Նախագահին կողմէ հաղորդուած է հեռագրուելէն վերջ:

Ուրիշ խնդիր մը, որ պատճառ դարձաւ այդ երկուութիւնը զօրացնելու, Ամերիկայի զինուորական առաքելութիւնն էր: Բայց ատոր անցնելէ առաջ կ'ուզեմ յիշատակել նաեւ երկու Պատուիրակութեանց կողմէ Ամերիկա ղրկուած ներկայացուցիչներու հարցը: Հանրապետութեան Պատուիրակութիւնը, որ իր կառավարութենէն իրաւունք ստացած էր ներկայացուցիչներ կարգելու այն բոլոր երկիրներուն մէջ, ուր պէտք կար, անցեալ տարի՝ աշնան ատենները խորհեցաւ ներկայացուցիչ մը ղրկել նաեւ Ամերիկա, եւ / ՞ / համերաշխութեան մտքով ընտրեց այն տեսակ անձ մը, որ միեւնոյն ատեն անդամ էր Ազգ. Պատուիրակութեան, որով կրնար Ամերիկայի մէջ ներկայացնել նաեւ Ազգ. Պատուիրակութիւնը: Բայց Ազգ. Պատուիրակութիւնը պէտք տեսաւ ուրիշ անձ մըն ալ ղրկելու, իբր թէ տրամադրելի շատ մարդ ունենայինք արդէն: Ասոր ալ հետեւանքը գիտենք. հարկ չկայ, որ ծանրանանք այս մասին եւ թուենք այն վնասները, որոնք առաջ եկան: Ասիկա չէր բաւեր, ղրկուեցաւ նաեւ Զինուորական Առաքելութիւն մը՝ բաղկացած Զօր. Բագրատունիէ եւ Զօր. Անդրանիկէ: Նկատի առնելով Առաքելութեան անդամներուն խառնուածքը, կարելի էր հասկնալ, թէ երբեք իրարու հետ համերաշխ չպիտի մնային եւ իր գործունէութիւնը Ամերիկայի մէջ, հակամարտ ուղղութիւն մը պիտի առնէր շուտով: Հակառակ անոր, որ այս պարագան յայտնի էր, միայն գործակցութեան կոչ մը ընելով բաւականացան եւ առաքելութիւնը ճամբու դրուեցաւ: Բայց հազիւ Ամերիկա ոտք կոխած էին՝ հակամարտութիւնն սկսաւ: Զօրավար Անդրանիկ ո՛չ միայն սկսաւ ինքնագլուխ գործել, այլ նոյնիսկ ո՛չ հաշիւ, ո՛չ ալ տեղեկութիւն տուաւ Ազգ. Պատուիրակութեան, այնպէս որ հիմա յայտնի չէ նոյնիսկ, թէ Զօրավարը Ազգ. Պատուիրակութեան ներկայացուցի՞չն է իրօք: Եթէ այո, ինչպէ՞ս կ'ըլլայ, որ բան մը չի գրեր, բան մը չըսեր, թէ ինչ կ'ընէ այնտեղ:

Տիար Տոքթ. Նեւրուզ. Միեւնոյն լռութիւնը կը պահէ նաեւ Զօրավար Բագրատունին:

Տիար Տոքթ. Բարսեղեան. Այսպիսով՝ զրկուեցանք թէ' լաւ ոյժերէ, որոնցմէ կրնայինք այլապէս օգտուիլ, եւ թէ' անոնց ներկայութիւնը Ամերիկայի մէջ ո՛չ միայն օգտակար արդիւնք մը չունեցաւ, այլ, ընդհակառակը, վնասակար ալ դարձաւ:

Տիար Վ. Թէքէեան. Իրականութիւնը ձեր ըսածին բոլորովին հակառակն է: Ազգ. Պատուիրակութիւնը Հանրապետութեան Պատուիրակութեան կողմէ Ամերիկա

ներկայացուցիչ ղրկելու որոշումէն ետքը չէր, որ մտածեց ինք ալ մարդ ղրկել. ընդհակառակը, Հանր. Պատուիրակութիւնն էր, որ այդ բանն ըրաւ: Յովհաննէս Խան Մասեհեանցի մերժումէն ետք, Ազգ. Պատուիրակութիւնը մտածեց Տիար Բրօֆ. Տէր-Յակոբեանը ղրկել. ասիկա որոշուելէն ետքն է, որ Հանր. Պատուիրակութիւնը մտածեց Տիար Փաստրմաճեանը ղրկել իր կողմէ: Գալով Զօր. Անդրանիկի եւ Զօր. Բագրատունիի, երկու Պատուիրակութիւնները համաձայնած էին թէ' մէկին եւ թէ' միւսին համար:

Տիար Տոքթ. Բարսեղեան. Բրօֆեսէօրը ղրկելու առթիւ համաձայնութիւնը առա՞ծ էիք Հանր. Պատուիրակութեան:

Տիար Վ. Թէքէեան. Ձեր մտքին մէջ՝ համաձայնութիւնը ամեն ատեն Հանր. Պատուիրակութեան տեսակէտը ընդունի՞լ կը նշանակէ: Մնաց որ վերջ ի վերջոյ համաձայնութիւն գոյացաւ, որ երկու ներկայացուցիչները միաժամանակ երթան, այն պայմանով, որ այնտեղ համերաշխ գործեն:

Տիար Տոքթ. Բարսեղեան. Եզրակացնելով՝ կ'ըսեմ, թէ Ազգ. Պատուիրակութիւնը պէտք եղածը չէ ըրած, որ այդ խորդուբորդութիւնները վերնան. ընդհակառակը, առած է այն տեսակ քայլեր, որոնց պատճառաւ աւելի' զօրացած են:

Տիար Ա. Չօպանեան. Ատենին պատասխան պիտի տրուի յուզուած բոլոր խնդիրներուն: Բայց կայ կէտ մը, որուն կ'ուզեմ այսօր իսկ պատասխանել: Տիար Թէրզիպաշեան ըսաւ, թէ Ազգ. Պատուիրակութիւնը այն միացեալ Հայաստանին տեղ, զոր ամբողջ ազգը կ'ուզէր, վերացեալ Հայաստանի մը գաղափարին համակերպուեցաւ՝ ենթարկուելով Հանր. Պատուիրակութեան, այսինքն՝ թէ Ազգ. Պատուիրակութիւնը Հանր. Պատուիրակութեան գործը հստակուց: Ասիկա սխալ է: Թէեւ Հանր. կառավարութիւնը իր պատուիրակներուն հրահանգ տուած էր, որ գոհանան վեց նահանգներով եւ Կիլիկիոյ մասին ալ Ֆրանսայի հետ համաձայնին, բայց այստեղ գալով՝ Տիար Ահարոնեան փոխեց այդ որոշումը, եւ, ընդհակառակը, ինք էր, որ ենթարկուեցաւ Ազգ. Պատուիրակութեան տեսակէտին, անոր հետ պահանջելով Միացեալ Ամբողջական Հայաստանը: Ամեն պարագայի մէջ՝ Ազգ. Պատուիրակութիւնը այդ պահանջին վրայ հաստատ մնաց մինչեւ այն տխուր վայրկեանը, երբ այլեւս անկարելի դարձաւ Ամբողջական Հայաստանի կազմութիւնը: Մինակ Լորտ Քըրզընի յայտարարութիւնները չէին, որ ատոր մէջ դեր խաղցան, այլ նաեւ՝ Փարիզի ու Լոնտոնի ամերիկեան դեսպաններուն յայտարարութիւնները: Եւ երկու Պատուիրակութիւնները, երկար խորհրդակցութիւններէ ետք, նաեւ որոնց մասնակցեցաւ Ազգ. Համագումարին Նախագահ Վսեմ. Նորատունկեան, նոյնիսկ Տիար Աճէմօֆի եւ ուրիշ ձեռնհաս անձներու կարծիքը առնելէ վերջ միայն համախորհուրդ որոշեցին այդ համակերպութիւնը ընել: Այս է իրողութիւնը:

Տիար Տէրպէտէրեան. Հակիրճ կերպով մը քանի մը դիտողութիւններ պիտի ընեմ Պատուիրակութեան տեղեկագրին մէկ քանի կէտերուն նկատմամբ: Առաջին. Ազգ. Պատուիրակութիւնը պատրաստ էր անմիջապէս Համագումարը նիստի հրաւիրել, երբ իրեն տրուած տիրէքթիւներէն շեղելու ստիպուեր: Պատուիրակութիւնը շատ մեծ շեղումներ ընելու ստիպուած է եւ ամեն բան լմննալէ վերջն է միայն, որ կը գումարէ Համագումարը, առանց սակայն բացատրելու պատճառները, թէ ինչո՞ւ ժամանակին չէ հրաւիրած Համագումարը: Կա'մ պէտք է բացատրուին այդ պատճառները եւ կա'մ պէտք է ջնջել այդ տիրէքթիւը, որպէսզի հեգնանք մը չըլլայ Համագումարին նկատմամբ:

Տիար Վահան Թէքէեան. Պատուիրակութիւնը այդքան ալ ծիծաղելի դիրքի մէջ չդնենք: Ամեն պարագայի մէջ՝ մեր տեղեկագիրը տրուած է, չենք կրնար անկէ բան ջնջել:

Տիար Տէրպէտէրեան. Ես ալ կը պնդեմ, որ այդ հատուածը Համագումարին արժանապատուութեան հակառակ է:

Տիար Թէքէեան. Լաւ, կը պատասխանուի իր կարգին:

Տիար Տէրպէտէրեան. Կիլիկիոյ մասին տեղեկագիրը կը յիշատակէ, թէ Ֆրանս. կառավարութիւնը յայտարարած է, որ պատրաստ էր Կիլիկիոյ վրայ իր ունեցած իրաւունքներէն հրաժարիլ, եթէ Ամերիկա ընդունի Հայաստանի մանտան:

Տեղեկագրին մէջ չէ ըսուած սակայն, թէ գրաւո՞ր կամ բերանացի՞ եղած է այս յայտարարութիւնը, ինչ որ կրնայ թիւրիմացութեան տեղի տալ. պէտք է որոշ կերպով յիշուէր ինչ ձեւով եղած ըլլալը:

Տիար Ֆնտգլեան. Լոյտ Ճորճին հարցնելու է:

Տիար Տէրպէտէրեան. Լոյտ Ճորճի՞ն հարցնելու է, թէ Պատ.-ութեան: Երրորդ դիտողութիւն մը պիտի ընեմ բրոբականտի մասին: Կը կարծեմ, որ ծախսուած գումարը իրեն համապատասխան արդիւնք չէ տուած: Եթէ այդ գումարին մէկ մասը յաքթացուեր շաբաթը գոնէ երկու անգամ լոյս տեսնող նպատակայարմար ֆրանսերէն թերթի մը հրատարակութեան, անգլերէն բաժինով մը, տարակոյս չկայ, որ մեծ օգտակարութիւն պիտի ունենար: Ուրիշ նկատումներով, կարելի եղաւ «Հայաստան» թերթը հիմնել: Ապահովաբար բրոբականտի թերթ մը հիմնելու ո՛չ միջոցները, ո՛չ ալ ոյժերը կը պակսէին:

Դիտողութեան արժանի չորրորդ կէտ մը՝ Պատուիրակութեան Ամերիկայի, Իտալիոյ, եւ Անգլիոյ ներկայացուցիչներուն խնդիրն է: Այս ներկայացուցիչները շատ ծանր կը կշռեն Պատուիրակութեան պիւտճէին վրայ. լսածիս համեմատ՝ ամիսը 10 000 ֆրանք ծախք կ'երթայ երեքին: Ամերիկայինը մնայուն էր, եւ կը հասկցուի անոր համար եղած ծախքերը: Արդեօք Լոնտոնի եւ Իտալիոյ ներկայացուցիչնե՞րն ալ նոյնպէս խոշոր ծախքեր կը պատճառեն:

Ձայներ. Իտալիա ներկայացուցիչ չկայ:

Տիար Տէր-Ստեփանեան. Երէկուընէ ի վեր երկու անգամ է, որ ակնարկութիւն կ'ըլլայ այս մասին: Քանի որ խնդիրը իմ անձիս շուրջ կը դառնայ, պարտաւոր եմ երկու բառով բացատրութիւն մը տալու: Անցեալ տարի, Մայիսին, Պատուիրակութեան Նախագահէն նամակ մը ստացայ, որով յայտնելէ ետք, թէ մտադրած են զիս Իտալիոյ ներկայացուցիչ կարգել, կը հարցնէր, թէ կ'ընդունի՞մ: Գրեցի թէ կ'ընդունիմ, բայց ալ բնաւ պատասխան չստացայ:

Տիար Տէրպէտէրեան. Տեղեկագրին մէջ գրուած չէ նաեւ, թէ այդ ներկայացուցիչներուն կողմէ ինչե՞ր եղան: Անգլիոյ ներկայացուցիչը ի՞նչ կ'ընէ, քանի որ, կ'ենթադրեմ, թէ ամսական կը ստանայ:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Տիար Մալքոլմի նոյնքան կը տրուի, որքան Պատուիրակութեան անդամներուն: Քանի որ խնդիր եղաւ, ըսեմ, թէ այսօր իսկ իրմէ ստացայ նամակ մը, որով 20 000 ֆրանքի չէք մը կը դրկէ Պատուիրակութեան ծախքերուն համար: Գրեթէ իրեն վճարուած գումարն է, որ կը վերադարձնէ:

Տիար Տէրպէտէրեան. Կ'անցնիմ ուրիշ կէտի մը: Պատգամաւորներէն ոմանք պախարակեցին Պատուիրակութիւնը, թէ գործիք եղաւ Հանր. Պատուիրակութեան ձեռքը: Ես հակառակը կը խորհիմ: Տեղեկագրին ընթերցումէն իսկ կ'երեւայ՝ գրեթէ մինչեւ այսօր կարելի չէ եղեր իրականացնել միացեալ Պատուիրակութեան մը եւ միացեալ կառավարութեան մը կազմութիւնը. պատճառը Ազգ. Պատուիրակութիւնն է, որ իր դիտումներով, իր ձգձգումներով անկարելի դարձուցեր է այդ միութիւնը, հակառակ անոր, որ Համագումարը՝ նախորդ նստաշրջանին մէջ՝ այդ մասին որոշ տիրէքթիւ տուած էր իրեն: Ես կը կարծեմ նաեւ, որ Պատուիրակութիւնը թերացած է Հանրապետութեան նկատմամբ իր ունեցած պարտաւորութեանց մէջ: Պատմական Հայաստանը աչքի առջեւ բերենք: Գիտենք, որ անոր զանազան մասերը այլեւայլ ժամանակներ նուաճուած էին: Պէ՞տք էր, որ այս նուաճուած մասերը անկախ մասին հեղինակութիւնն ուրանային: Ներկայ ժամանակին մէջ ալ, բոլոր հայերու պարտականութիւնն էր խոնարհիլ այն դրօշին առջեւ, որ առաջին անգամ բարձրացած էր Արարատի՝ մեր հին պետութեան ոստանին մէջ: Ամէնուս ալ պարտականութիւնն էր, որ այդ դրօշակին շուրջը բոլորուէինք, Պատմական Հայատանի ո'ր մասին մեջ ալ որ

պարզուած ըլլար: Եթէ Թրքահայ Դատը զոհերու արեան յենած էր, Ռուսահայ Դատն ալ մարտիկներու արիւնին յենած էր: Երկուքն ալ հայու արիւն էին եւ հաւասարապէս նուիրական: Յունաստանի անկախութեան եւ մեծութեան օրինակը աչքերնուս առջեւն է: Նախապէս ափ մը հող անկախ դարձաւ: Բայց եթէ այդ ափ մը հողը կարելի եղաւ հետզհետէ ընդարձակել եւ այսօրուան մեծ Յունաստանը գոյացնել, պատճառը սա է, որ մնացեալ նուաճուած յոյները հաւատարմութեամբ կը նայէին այդ պզտիկ անկախ մասին եւ գիտցան անոր շուրջը բոլորուիլ, զայն զօրացնել: Չեմ կարծեր, որ Թրքահայաստանի դատը՝ Հանր. կառավարութեան ձեռքը անցնելով, կը կորսնցնէ իր ոյժը եւ առանձնաշնորհումները: Կը փափաքիմ, որ Ն. Վսեմութիւն Փաշան դաշնագիրը ստորագրէ, բայց ստորագրէ իբր ներկայացուցիչը այն պետութեան, որ կազմուած է արդէն եւ որ իրական տէրն է բոլոր Հայաստաններուն, կազմուածի'ն ալ, չկազմուածի'ն ալ եւ բոլո'ր հայերուն ալ, ըլլա'յ ռուսահայ թէ թրքահայ, պարսկահայ թէ եգիպտահայ: Կը փափաքիմ նաեւ, որ դաշնագիրը ստորագրուելէ առաջ, այստեղի ու Կովկասի մէջ գոյանայ այն միութիւնը, որուն կը փափաքէինք անցեալ տարի, եւ որ, ներկայ պարագաներուն մէջ, բոլորովին անհրաժեշտ դարձած է:

Տիար Տիրան Տէօվլէթեան. Տիար Տէրպէտէրեանի մէկ դիտողութեան պատասխանելէ առաջ՝ պէտք կը տեսնեմ ըսելու, թէ ամբողջ հայութիւնը նկատի կ'առնեմ առանց խտրութեան, եւ չեմ ուզեր, որ իմ խօսքերը մեկնուին իբր այս կամ այն կուսակցութեան կողմնակալութիւն: Որովհետեւ ես ինքս ո'չ մէկ կուսակցութեան կը պաքթանիմ եւ իմ հաւատամքս հայութիւնն է: Տիար Տէրպէտէրեան ըսաւ, թէ Ազգ. Պատուիրակութիւնը միայն մեղապարտ է, եթէ մինչեւ այսօր միութիւն չէ եղած: Կը կարծեմ, թէ ճշմարտութեան շատ աւելի մօտեցած պիտի ըլլանք, եթէ երկու կողմերը մէկանց մեղադրենք: Քանի օր է մէկ-երկու անգամ ես անձամբ փափաք յայտնեցի Տիար Ահարոնեանի, որ իր ներկայութեամբ պատուէ մեր Համագումարը: Եւ սակայն չեկաւ: Ասիկա ապացոյց մըն է, թէ միութիւնն անկարելի դարձնող պատճառները միայն մէկ կողմէն չեն, որովհետեւ միայն մէկ կողմին ուզելով միութիւն չըլլար: Մենք, Անգլիոյ պատգամաւորներս, եկած չենք անցեալ անցքերով զբաղելու: Նիստի խնդիրները անհունապէս աւելի կարեւոր են, եւ անոնք մանաւանդ պէտք է առարկայ դառնան մեր մտահոգութեանց: Պէտք է խորհինք, թէ մեր այսօրուան սա աննպաստ դրութեան մէջ ի՞նչ կրնանք ընել դէպքերուն տալու համար այն տեսակ ընթացք մը, որ նպաստեն մեր դատին: Ազգը, անդին, ողբալի դրութեան մը մէջ է: Կարօտութիւնն ու տառապանքը վերջ չեն գտած: Թշուառներու անհամար բազմութիւն մը օգնութեան կը սպասէ: Փոխանակ այստեղ անցած-գացած իրողութիւններու վերադառնալով իրար վիրաւորելու, պէտք է խորհինք, թէ ի՞նչ կրնանք ընել ազգին այս տխուր դրութեան վերջ մը տալու համար:

Տիար Գառնիկ Ֆնտգլեան. Ես Ազգ. Պատուիրակութեան համարատուութեան մէկ մասին միայն պիտի ակնարկեմ, այսինքն, Ամերիկայի Առաքելութեան: Այն միջոցին, ուր այդ Առաքելութիւնը ճամբայ կ'ելլէր, մասնաւորաբար Անգլիոյ մեջ մեծ յոյսեր դրուած էին անոր վրայ: Բայց մեր մասին մեծապէս յուսախաբ եղանք: Ազգը մեծ ակնկալութիւններ ունէր Ամերիկայէն, եւ իրաւամբ կը սպասէր, որ գոնէ այնտեղ անհրաժեշտ ջանքերը կը կատարուին: Դժբախտաբար՝ ո'չ մէկ արդյունք գոյացաւ: Անշուշտ հետաքրքրական էր գիտնալ, թէ Ազգ. Պատուիրակութիւնը ի՞նչ ըրաւ այդ բացասական արդիւնքը տեսնելով: Եւ սակայն, տեղեկագրին մէջ ոչինչ կայ այդ մասին: Ամբողջ գիտցածս սա է, որ Ամերիկայէն եկող անձեր միշտ գանգատած են դրկուած Առաքելութեան դէմ՝ մատնանիշ ընելով անոր չափազանց գէշ կազմակերպութիւնը: Առաքելութիւնը չկրցաւ անհետացնել այնտեղ ծագած հակասութիւնները. ընդհակառակը, կարծես պատճառ դարձաւ, որ բոլորովին աւելնան: Նոյնիսկ Ջօրավար Անդրանիկ զերծ չմնաց այդ հակասութիւններէն: Կը յիշեմ, որ երբ զինքը Ամերիկա դրկելու առաջարկն եղաւ, վարանեցաւ, յայտնելով, որ մասնաւորաբար անկարելի պիտի ըլլայ գործել Ջօրավար Բագրատունիի հետ:

Վերջապէս, ստիպեցին զինքը, որ մեկնի, առանց մտածելու, թէ այդ պայմաններուն եւ այդ տրամադրութեան մէջ գտնուող Զինուորական Առաքելութիւն մը չպիտի տար այն արդիւնքը, որ կը սպասուէր իրմէ: Ես անձամբ ընդունեցի Զօրավար Անդրանիկի մէկ նամակը, որուն մէջ դառնութեամբ կը յայտնէ, թէ զղջացած է երթալուն, թէ Զօրավար Բագրատունի միւսակը կը գործէ եւ միւսակը ստորագրած է կարեւոր պաշտօնագիր մը, որ սերտ առնչութիւն ունէր Առաքելութեան նպատակին հետ:

Տիար Տոքթ. Նեւրուզ. Զինուորական Առաքելութիւնը ղրկուեցաւ Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան կողմէ: Զօրավար Բագրատունի անոր պետ անուանուած էր եւ Անդրանիկ ընդունած էր ասիկա: Շատ բնական է, որ Առաքելութեան անունով տրուած պաշտօնագիր մը կրէ նոյն ինքն Առաքելութեան պետին ստորագրութիւնը:

Տիար Վ. Թէքէեան. Թոյլ տուէք, որ ճշդեմ այդ կէտը: Զօրավար Բագրատունի արդարացուցած է միւսակ ստորագրած ըլլալը, առարկելով որ Անդրանիկ մեկնած էր հանգանակութեան համար: Ուրեմն, Զօր. Բագրատունի կ'ընդունի, որ երկուէն մէկը պէտք էր ստորագրել:

Տիար Գ. Ֆնտգլեան. Ես մանրամասնութեան մէջ մտնել չեմ ուզեր, ես միայն կը յիշատակեմ Զօր. Անդրանիկի նամակը, այն դառնութիւնը, որ կ'երեւայ անոր մէջ՝ ցոյց կու տայ ինքնին, թէ երբեք չպիտի կրնայ սրտով աշխատիլ այնտեղ, հետեւաբար՝ կարելի չպիտի ըլլայ ստանալ այն արդիւնքը, որ կ'ակնկալուէր: Ազգ. Պատուիրակութիւնը պէտք էր նախատեսեր ասիկա, եւ պէտք չէր, որ Անդրանիկի պէս անկախ մարդ մը Զօրավար Բագրատունիի հրամանին ենթարկեր:

Տիար Տէրպէտէրեան. Թող ինք չընդունէր:

Տիար Տէօվլէթեան. Չընդունեց ու պնդեց իր մերժումին վրայ, բայց ստիպուեցաւ համակերպիլ՝ երբ իրեն վերստին կոչում եղաւ յանուն ազգային գերագոյն շահերուն:

Տիար Գ. Ֆնտգլեան. Բացայայտ է, որ վեց թանկագին ամիսներ կորսնցուցինք, մինչեւ որ Ամերիկա մարդ ղրկուեցաւ: Չեմ ուզեր այս յետաձգման պատճառը փնտռել: Չպիտի փնտռեմ նաեւ, թէ ինչո՞ւ նոյն վնասակար երկուութիւնն առաջ եկաւ թէ՝ Պատուիրակութեանց ներկայացուցիչներուն եւ թէ՝ Զինուորական Առաքելութեան միջեւ: Բայց կ'ուզեմ շեշտել, թէ քանի որ ամէնէն աւելի Ամերիկայէն կը սպասէինք մեր դատին յաջողութիւնը, պէտք էր, որ մեր ամէնէն կարող ոյժերը ղրկէինք հոն, այն տեսակ մարդիկ, որոնք կարենային որոշ ազդեցութիւն մը ձեռք բերել վարիչ շրջանակներուն մօտ եւ այդ ազդեցութեան շնորհիւ փրկել մեր դատը:

Տիար Վ. Թէքէեան. Ստեղծէի՞նք այդ մարդիկը:

Տիար Գ. Ֆնտգլեան. Եւ կամ գացողները եթէ չեն կրցեր ազդել այնտեղի քաղաքականութեան վրայ, գոնէ պէտք էր, որ տեղեկութիւն տային իրենց գործունէութեան եւ առհասարակ բոլոր քաղաքական իրադարձութեանց մասին: Այսօր թերթերէն միայն կ'իմանանք, թէ ո՛չ միայն մանտան անկարելի դարձած է, այլ նոյնիսկ Հայաստանի ըլլալիք ելեւմտական օժանդակութեան մասին Հիչքոքի առաջարկն ալ մերժուեր է 34-ի դէմ 42 ձայնի մեծամասնութեամբ: Չափազանց մեծ բան էր սպասել իրենցմէ, որ այս փոքր տարբերութիւնը կարենային մեծամասնութեան փոխել, քանի մը գաւառական ալ համոզելով: Զարմանալի չէ՞, որ Պատուիրակութեան ներկայացուցիչները, որոնք այնտեղ կը գտնուին, ո՛չ միայն չկրցան ընել սա պզտիկ ճիգը, այլ բան մըն ալ չգրեցին այս անցքերուն նկատմամբ, որոնք այնքան կենսական նշանակութիւն ունէին մեզի համար: Ես կը կրկնեմ, որ պէտք էր մեր ամէնէն կարող մարդիկը ղրկէինք Ամերիկա: Այս մասին, կը յիշատակեմ այն խօսքը, զոր Գնդապետ Կուրո՝ Ազգ. զինուորական իշխանութեան ներկայացուցիչը Կովկասի մէջ, հայոց մասին խիստ համակիր անձ մը, անցեալներս ըսաւ ինծի. «Դո՛ւք, հայերը, մեծ սխալ մը կը գործէք, միշտ տեսնելով եւ դիմելով կրօնասէր, մարդասէր փոքրամասնութեան եւ անոնց համակրութիւնը շահիլը բաւական կը նկատէք: Մինչդեռ պէտք էր հետաքրքրել

եւ համոզել կառավարող դասը: Ապահով եղէք, որ այն համեմատութենէն, որով առաջին դասակարգին համակրութիւնը կը շահիք, կը կորսնցնէք երկրորդ դասակարգին համակրութիւնը»: Ցաւալի է ըսել, որ մեր ներկայացուցիչները չեն կրցած այս այլեւայլ հոսանքներուն համեմատական ոյժը, կարեւորութիւնն ու ազդեցութիւնը կշռել եւ ճշգրիտ տեղեկութիւն տալ այդ մասին, որպէսզի Պատուիրակութիւնը կարենար ըստ այնմ ուղղել իր գործունէութիւնը:

Բրօֆ. Թումայեան. Իմ ըսելիքն Ազգ. Պատուիրակութեան տեղեկագրին քննադատութիւն մը չէ, որովհետեւ կարդալու եւ քննելու պատեհութիւն ունեցած չեմ: Ես Պատուիրակութեան ընդհանուր գործունէութեան վրայ է, որ քանի մը դիտողութիւններ ընել կ'ուզեմ:

Պատուիրակութիւնը չափազանց կղզիացած կը գործէր, առանց մտահոգուելու, որ հայ հասարակութեան հետ շփման մտնելը կարեւոր եւ էական պայման մըն էր թէ՛ հայ հասարակութեան համակրանքը շահելու եւ թէ՝ ընդհանուր գիծերով հաջողելու համար: Հայ հասարակութենէն անդին՝ զանազան գաղութներու մէջ հաստատուած եւ ազգային գործով զբաղող քոմիթէներն անգամ անտեղեակ մնացած են անցուդարձերէն, ինչպէս նաեւ Պատուիրակութեան գործերէն ու իր հետեւած քաղաքականութեան ընդհանուր գիծերէն: Առ հասարակ՝ գաղտնիքի հով մը կը փչէր իր ամբողջ գործունէութեան վրայ: Եւ ասիկա միայն անցեալ տարի ընտրուած Պատուիրակութեան համար չեմ ըսեր, այլ՝ նախորդ Պատուիրակութեան ալ սկիզբէն ի վեր հետեւած մեթոտը այս էր: Մենք, զոր օրինակ Լոնտոնի կամ Մանչեսթրի հայերս, շատ անգամ չէինք գիտեր, թէ ի՞նչ կ'անցնի կը դառնայ: Մտահոգուող հասարակութիւնը՝ քանի իրաց ընթացքը աննպաստ հանգամանք ստանար, յուզուած՝ կը հարցնէր, թէ ո՞ւր կ'երթանք, ի՞նչ է իրաց կացութիւնը: Եւ որովհետեւ միակ տեղեկութիւնը լրագրողներուն հաղորդածն էր, եւ ան ալ թերի, չափազանցուած կամ սխալ, ժողովուրդին ամեն մէկը իր ուզած կերպով կը հասկնար կամ կը մեկնէր: Անոր հետեւանքով՝ շատ արտառոց զրոյցներ կը շրջագայէին, ինչ որ տեսակ-տեսակ տարաձայնութիւններու, քննադատութիւններու եւ անտեղի վէճերու ծնունդ կու տար, եւ շատ կը տկարացնէր Պատուիրակութեան վարկն ու ազդեցութիւնը: Ազգ. Պատուիրակութիւնը, փոխանակ այդ գաղտնապահութեան, եթէ կերպ մը գտնէր հայ հասարակութեան եւ քոմիթէներուն հետ մնայուն սերտ յարաբերութիւն մշակելու, եւ գոյութիւն ունեցող քոմիթէները իրեն թեւ ու թիկունք, իրեն ներկայացուցիչ ու գործակից նկատէր, այն ատեն հոծ, միացեալ ու կազմակերպեալ, զինքը ա'լ աւելի գուրգուրանքով շրջապատող, պաշտպանող ու քաջալերող մարմին մը կ'ունենար կռնակը: Դժբախտաբար, Պատուիրակութիւնը անտես ըրաւ ասիկա եւ կորսնցուց թէ՛ գաղութներու եւ թէ՛ Թուրքիոյ մէջ գտնուող հայ համայնքը կազմակերպելու պատեհութիւնը: Այսպիսով՝ ազգին ահագին մեծ զանգուածը կը դառնար կազմակերպուած ոյժ մը, իրեն գլուխ ունենալով Պատուիրակութիւնը: Պէտք էր նախաձեռնութիւն ստանձնել քոմիթէներ կազմելու քիչ-շատ ամեն տեղ, եւ անոնց հետ յարաբերութեան մէջ մնալ: Պէտք էր, ի պահանջել հարկին, հրաւիրակներ ղրկել հոս ու հոն, ժողովուրդը լուսաւորելու համար, քոմիթէներուն՝ տարբեր պետութեանց մօտ նոյն ծրագրով աշխատելու հրահանգ եւ ուղղութիւն տալ, անոնց դիտողութիւններէն ու թելադրութիւններէն ալ օգտուելով:

Նպատակ չունիմ կուսակցութեանց ակնարկութիւն ընել, բայց չենք ալ կրնար աչք գոցել եւ չտեսնել իրողութիւն մը, որ ակներեւ է: Հանրապետութեան Պատուիրակութիւնը մեծ առաւելութիւն մը ունի այս մասին. անիկա կը յենու լայն ու լաւ կազմակերպութեան մը, յանձնաժողովներու հոծ ցանցով մը շրջապատուած է եւ մեծապէս կ'օգտուի աքթէ, իբրեւ թէ անոնց թեւերուն վրայ կը թռչի: Մինչդեռ Ազգ. Պատուիրակութիւնը թէեւ գուցէ նոյնչափ եւ աւելի համակրողներու բազմութիւն մը ունի, բայց անկազմակերպ ըլլալով եւ անոնց հետ սերտ շփում չունենալով, պէտք եղած ժամանակ չկրցաւ անոնցմէ օգտուիլ: Իբր օրինակ կը յիշեմ Համագումարի

ներկայացուցիչներու ընտրութեանց եւ գումարմանց առթիւ տեղի ունեցած դանդաղութիւններն ու անկանոնութիւնները: Որպէսզի միտքս ա'լ աւելի բացատրեմ, հարկ կը տեսնեմ քանի մը օրինակներ ալ տալ: Պատուիրակութիւնը կամ իր Վսեմ. Նախագահը պետական մարդոց հետ այստեղ կամ Անգլիա տեսակցութիւն կ'ունենային կամ դիմում կը կատարէին անոնց մօտ: Ատոնք պէտք էր յայտնուէին հայ հասարակութեան, որպէսզի ժողովուրդը իրականութեամբ զբաղէր եւ ո'չ թէ երեւակայական տուեալներու յենած՝ չափազանց յոռետեսութեան կամ չափազանց լաւատեսութեան մղուէր: Լորտ Քըրզընի կողմէ Վսեմ. Փաշային յղած յայտարարութեան իսկութիւնը, իր իսկ գործածած բառերով, ի՞նչ էր՝ ո'չ ոք գիտէ: Գաղղիոյ պետական մարդոց հետ մշակուած բանակցութեանց ուղղութիւնը ի՞նչ էր, ի՞նչ ըսին, ի՞նչ կ'ըսեն՝ ասոնք ո'չ ոք գիտէ: Տեղեկագրին մէջ ալ յիշուած չեն: Վերջին անգամ՝ Լոնտոն, Լորտ Քըրզընի հետ տեսակցութեան մը համար չորս անձանց մասին դիմում եւ կարգադրութիւն եղած ըլլալով հանդերձ, ինչո՞ւ անոնցմէ Խորէն Եպիսկոպոս չգնաց, եւ ընդունելութենէն քանի մը ժամ առաջ, առանց լուր տալու, ձգեց Մանչեսթր մեկնեցաւ. ո'չ ոք գիտէ պատճառը: Ո'չ մէկ պաշտօնական յայտարարութիւն եղաւ, որով ամեն ոք ըստ իր քմաց մեկնութիւն տուաւ, ինչ որ մեծ գայթակղութիւն յարոյց Լոնտոնի հասարակութեան մէջ: Յետոյ՝ մասնաւորաբար Լորտ Քըրզընի յայտարարութեանց մասին խոշոր տարակարծութիւններ ծնունդ առին, իբր թէ Լորտը պահանջած էր, որ Երեւանի դահլիճին անդամները հեռացուին իշխանութենէ: Երեւան տրուած հեռագրին ստորագրութեան մասին ալ կարգ մը բաներ ըսուեցան, առ ի չգոյէ ստոյգ, վաւերական եւ պաշտօնական տուեալներու: Նոյն տեսակ տարաձայնութիւններ ծնունդ առեր են նաեւ, ըստ ոմանց, Սան Ռեմոյի մէջ ալ: Միեւնոյն բանը տեսանք անցեալ օր՝ Թուրքիոյ դաշնագրին յանձնման ժողովին ներկայ գտնուելու հրաւիրագրին շուրջ: Վսեմ. Փաշային հրաւէր ղրկուելու կերպին նկատմամբ տարաձայնութիւն կամ սխալ հասկացողութիւն գոյացած է, ասոր ալ պատճառը դարձեալ ստոյգ տեղեկութեան պակասն է: Եթէ՝ ինչպէս կը խորհուէր նախապէս՝ մասնաւոր օրկան մը հրատարակուեր, այս բոլոր պահանջներուն գոհացում կու տար: Եւ այն ծախքերով որոնք եղած են՝ կարելի էր այն տեսակ թերթ մը հրատարակել: Թէեւ գուցէ տեղեկագրին քննութեան ներկայ խնդրին չի վերաբերիր, բայց այս ըսածներս շատ մօտ են շօշափելուն համար ներեցէ՛ք, որ, ըստ իս՝ կարեւոր սա մէկ կէտն ալ յիշեմ: Պատուիրակութեան Վսեմ. Նախագահը շատ կարեւոր տեսակցութիւններ ունեցած է պետական անձնաւորութեանց հետ: Պիտի խնդրէի իրմէ, որ օրը օրին գրի անցընէ եւ զգուշութեամբ պահէ անոնց արտայայտած գաղափարները կամ տուած յոյսերն ու խոստումները, քանի որ ատոնք մեզի համար վերին աստիճանի կարեւոր ու թանկագին document-ներ են, պատմական եւ քաղաքական տեսակէտով, ապագայ սերունդներուն առջեւ ինքզինքնիս անհատապէս կամ իբր Համագումար այդ ստանձնելու համար: Պիտի խնդրէի նաեւ Պատուիրակութենէն, որ իր տալիք պատասխաններու կարգին նշանակէ եւ մեզ լուսաբանէ, թէ ինչո՞ւ Քլէմանսօ Հայկական Դատին աննպաստ արտայայտուեցաւ, քանի որ սկիզբէն ի վեր հայոց բարեկամ ճանչցուած էր: Նաեւ՝ ի՞նչ անցաւ դարձաւ, որ Յովհ. Խան Մասեհեանց չղրկուեցաւ Ամերիկա, ինչպէս որոշուած էր: Հարկաւ Երեւանէն ղրկուած Առաքելութեան մասին ալ բաւարար լրացուցիչ տեղեկութիւններ պիտի տրուին:

Տիար Թէրզիպաշեան. Վիճաբանութեան փակումէն առաջ կ'ուզեմ քանի մը խօսք ընել Պատուիրակութեան ներքին քաղաքականության մասին: Այն օրը երբ կազմուեցաւ, Պատուիրակութիւնը դարձաւ թրքահայ քաղաքականութեան առանցքը, ինք պէտք է վարէր այդ քաղաքականութիւնը եւ «թոն» տար զանազան շրջանակներու մէջ գտնուող հայերու գործունէութեան: Այս վերին աստիճանի կարեւոր դերը իրականացնելու համար պատրաստ էր կապ հաստատել զանազան տեղեր գտնուած հոծ հայութեանց հետ: Պէտք էր, օրինակի համար, Երեւանի մէջ ունենար իր ներկայացուցիչը, ո'չ միայն կապ պահելու համար հոն գտնուող թրքահայ

փախստականներու հետ, այլ նաեւ մօտէն ծանօթանալու համար Կովկասի մէջ կատարուած անցքերու հետ, որոնցմէ շատեր ուղղակի կամ անուղղակի կերպով կապ ունէին իր վարած քաղաքականութեան յաջողութեան հետ: Հայերու հիմնական քաղաքականութիւնը Պատ.-թեան միջոցաւ յայտնի պէտք է ըլլար ամեն կողմի հայ մամուլին, որովհետեւ մենք տեսանք, թէ Կովկասի, ինչպէս Պոլսոյ մէջ, հայ մամուլի հրատարակութիւններ խիստ վնասակար ազդեցութիւն կը գործէին ո'չ միայն Հայկական Հարցի վերաբերմամբ, այլ նաեւ՝ անոր ֆիզիկական գոյութեան տեսակէտով: Պատուիրակութիւնը թէեւ Կիլիկիոյ մէջ ունի իր ներկայացուցիչը, բայց տեղւոյն քաղաքականութիւնը կը վարուի Ազգ. Միութեան կողմէ: Նոյնիսկ դէպքեր կան, որոնց մէջ Պատուիրակութիւնը, որոշ հրահանգներ չտալով, անստուգութեան մատնած է իր ներկայացուցիչը: Ասկէ առաջ Պ. Տամատեան խորհուրդ հարցուցած է Պատուիրակութեան եւ «բառոլա»-յով պատասխան խնդրած ֆրանսական կամ թրքական քաղաքականութիւն մշակելու մասին: Բայց Պատ.-թիւը անպատասխանի թողած է:

Տիար. Ա. Չօպանեան. Չէ թողած, ինչո՞ւ կը պնդէք չգիտցած բաներնուդ վրայ. եթէ չէք գիտեր՝ կրնաք հարցնել:

Տիար Տոքթ. Նեւրուզ. Ես ալ կը բողոքեմ: Հայհոյութիւններ են ասոնք եւ դարձեալ զարմանք կը յայտնեմ, որ Դիւանը չարգիլէր ատենախօսը:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Տիար Թէրզիպաշեանի ըսած խօսքերուն մէջ հայհոյութիւն չկար: Ամէնապարզ կերպով մը ըսաւ, թէ դիմում մը անպատասխանի թողուած է: Կարելի է հերքել՝ եթէ ճիշդ չէ ըսածը:

Տիար Ա. Թէրզիպաշեան. Ես հաւաստում մը ըրի. կրնաք ժխտել, երբ ձեր պատասխանը տալու ըլլաք: Ազգ. Պատ.-թիւը յարաբերութիւն չէ պահած նաեւ Պոլսոյ Պատրիարքարանին եւ Երեսփոխանական Ժողովին հետ, եւ ասիկա անանկ ատեն մը, ուր ասդին՝ Քըրզընի ծանօթ յայտարարութեան կը համակերպէր, մինչդեռ ի բացակայութեան Համագումարին, զոր կարելի չէր գումարել մէկ օրէն միւսը, պէտք էր գոնէ Պատրիարքարանին եւ Երեսփոխանական Ժողովին տեղեկութիւն տար այն տեսակ զիջումներու մասին, որոնք ուղղակի կը հետաքրքրէին զանոնք:

Ամեն. Դուրեան Արքեպիսկոպոս. Քըրզընի խնդրին համար նամակ հասաւ Պատրիարքարան:

Տիար Վ. Թէքէեան. Կը հաստատեմ ասիկա: Այդ միջոցին Պոլիս էի. Պատուիրակութեան նամակին վրայ, Պատրիարքին Նախագահութեամբ գումարուեցաւ մասնաւոր ժողով մը, որուն ես ալ հրաւիրուեցայ իբր Պատուիրակութեան անդամ: Ո'չ միայն խնդիրը ծանուցուած էր մանրամասնութեամբ, այլ նոյնիսկ հարցում եղած էր, թէ ի՞նչ կը խորհին այդ նոր կացութեան առթիւ բռնուելիք ուղղութեան մասին:

Տիար Ա. Թէրզիպաշեան. Ատիկա Կիլիկիան զիջելու համար էր. անկէ ետք տեղեկութիւն չեկաւ Պատրիարքարան:

Ամեն. Դուրեան Արքեպ. Զգացուցինք, թէ գործերուն ընթացք տուողը Պատուիրակութիւնն է եւ թէ լաւագոյն կերպով մը կրնայ կացութեան համապատասխան ուղղութիւն մը բռնել: Եւ արդէն Ս. Պատրիարքը պիտի գար:

Տիար Ա. Թէրզիպաշեան. Երկու խօսք ալ պիտի ընեմ հատուցման խնդրի մասին, որուն նկատմամբ արդէն խօսեցաւ Տիար Տէր-Ստեփանեան: Իրեն հետ ես ալ կը կրկնեմ, թէ ո'չ մէկ լուրջ ձեռնարկ եղեր է այդ խնդրին համար, ո'չ միթինկ, ո'չ ատենախօսութիւն, ո'չ հրատարակութիւն, եւ թէ Պատուիրակութիւնն առհասարակ անհոգ գտնուեր է մեր ժողովուրդին նիւթական վնասներուն դարմանման մասին, խնդիր՝ որուն անդրադառնալու իրաւունքս կը վերապահեմ:

Պատուիրակութեան համարատուութեան մասին այլեւս խօսք ուզող չըլլալով, վիճաբանութիւնը փակուած նկատուեցաւ: /Տիար Արտաւազդ Հանըմեան

վիճաբանութեան փակման առթիւ հետեւեալ երկու հարցումներն ուղղեց այդ առթիւ Պատուիրակութեան/:

Տիար Ա. Հանըմեան. Ազգ. Պատուիրակութենէն, զորս պիտի տայ պատգամաւորներու կողմէ եղած քննադատութեանց, պիտի խնդրեմ, որ իր միւս բացատրութեանց կարգին հաճի կարգ մը լուսաբանութիւններ տալ մեզի հետեւեալ երկու հարցերու մասին:

Առաջին. շատերու համար երկար ամիսներէ ի վեր որոշ էր, որ Ֆրանսա համաձայնութեան գալով կամ ստիպումի տակ՝ պիտի պարտաւորուէր հրաժարիլ Կիլիկիայէն: Այդ պարագան կանխատեսելով՝ Ազգ. Պատուիրակութիւնը գործունէութեան ի՞նչ ուղղութիւն հրահանգած է Կիլիկիոյ ազգ. իշխանութիւններուն: Թրքական դաշնագրին հիման վրայ բուն Կիլիկիոյ մեծագոյն մասը թուրքերուն ձգուելով, յայտնի էր, թէ ֆրանսացիք չպիտի ուզէին պատերազմը շարունակել այդ շրջաններուն համար եւ այդ շրջաններուն մէջ: Մօտ ամիսուկէսէ ի վեր եւրոպական մամուլը արձագանգ կ'ըլլար այն լուրերուն, թէ Զօրավար Կուրօ բանակցութեան մէջ է թուրք ազգայնականներու հետ: Այդ լուրերը այսօր կը ստուգուին: Պ. Ռոպէռ տը Քէ՝ ֆրանսական կառ.-թեան քաղաքային գործակալը Զօր. Կուրոյի մօտ, Էնկիւրիի մէջ յաջողեր է զինադադար կնքել Մուսթաֆա Քեմալի հետ, եւ, ապահովաբար մեր շահերը ոտքի տակ տալով: Նկատի ունենալով, որ Զէյթունի, Հաճընի, Սիսի եւ ուրիշ շատ մը շրջաններու մէջ հայերը կռիւի մէջ են թուրքերուն դէմ, այդ զինադադարը մեզի համար կը ստեղծէ չափազանց դժուարին կացութիւն մը: Այդ մասին Ազգ. Պատուիրակութիւնը կանխատեսութիւն մը ըրա՞ծ է արդեօք, եւ կամ՝ գէթ ի՞նչ կը խորհի ընել այսօր:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Այս խնդիրը Պատ.-թեան համարատուութեան հետ կապ չունի, յառաջիկային Պատուիրակութեան տրուելիք տիրէքթիւներուն կը պաքքանի: Այն ատեն անյապաղ Ժողովը նկատի կ'առնէ:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Շատ կարեւոր խնդիր մըն է, կ'ընդունիմ, բայց ներկայ վիճաբանութեան հետ կապ չունի: Եթէ Պատուիրակութիւնը պիտի մնայ, կը խորհինք, թէ ի՞նչ պիտի ընենք այդ մասին:

Տիար Ա. Հանըմեան. Կ'անցնիմ երկրորդ հարցումին. Սան Ռեմոյի Վեհաժողովին առջեւ, երբ Հայաստանը գրաւելու դժուարութեանց մասին խօսք եղած է, Ազգ.Պատ.-թեան Նախագահը յայտարարած է, թէ հայերը կարող են 40 000 հոգինոց բանակ մը կազմել եւ իրենք իրենց միջոցներով գրաւել երկիրը, եթէ երբեք Դաշնակիցները անոնց աջակցին նիւթապէս, տրամադրելով զէնք, ռազմամթերք, եւ այլն: Ես պիտի խնդրեմ, որ Ազգ. Պատ.-թիւնը որ մեզի հաղորդէ, թէ այդպիսի յայտարարութիւն մը ընելու համար արդեօք այս վերջին տարուան ընթացքին առա՞ծ էր որոշ քայլեր եւ կատարա՞ծ էր որոշ աշխատանք մեր բանակին զօրացման համար: Եւ եթէ մինչեւ այդ՝ չէր կատարած որոշ աշխատանք այս ուղղութեամբ, Սան Ռեմոյի Վեհաժողովէն ասդին ի՞նչ քայլեր առնուած են եւ որքա՞ն յաջողութեամբ:

Նիստը փակուեցաւ ժամը 6 եւ կէսին:

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 61, թթ.1-32: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ ԺԲ

7 Յունիս 1920, ժամը, 3-ին,

Նախագահութեամբ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեանի:

Ներկայ էին 15 պատգամաւոր՝

Ամեն. Դուրեան Արքեպիսկոպոս, Տոքթ. Բարսեղեան, Թէրզիպաշեան, Թէքէեան, Թումայեան, Հանըմեան, Մսըրլը Պէյ, Վսեմ. Գ. Նորատունկեան, Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար, Չօպանեան, Սինապեան, Տէրպէտէրեան, Տէր-Ստեփանեան, Տէօվլէթեան, Ֆնտգլեան:

Օրակարգ

1. Տեղեկագիր եւ հաշուեցոյց հաշուական գործունէութեանց Ազգ. Պատուիրակութեան
2. Համարատուութիւն Ազգ. Պատուիրակութեան
3. Տեղեկագիր Կազմական Կանոնագրի Յանձնաժողովին
4. Վերակազմութիւն Ազգ. Պատուիրակութեան

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Ընթերցում ատենագրութեան

Կարդացուեցաւ եւ վաւերացուեցաւ Յունիս 4-ի նիստին ատենագրութիւնը:

2. Յայտարարութիւն Տիար Գ. Սինապեանի՝ Հանր. Պատուիրակութեան խորհրդականներու մասին

Տիար Գ. Սինապեան տեղեկութիւն տուաւ Համագումարին, թէ Գերագոյն Խորհուրդի Քարտուղարութիւնը Հանր. Պատուիրակութենէն խնդրած ըլլալով Պատուիրակութեան անդամներուն, ինչպէս նաեւ անոր օժանդակող խորհրդականներու եւ մասնագէտներու մէկ պաշտօնական ցուցակը, Տիար Ահարոնեան արտօնութիւն խնդրած է իրմէ՝ իր անունն ալ դնելու վերոյիշեալ ցուցակին մէջ, որուն վրայ նշանակուած անձերը հաւանական է, որ պէտք եղած ատեն հրաւիրուին մասնակցելու դաշնագրին վերաբերող խորհրդակցութեանց:

Տիար Տէօվլէթեան փափաք յայտնեց այս առթիւ, որ Համագումարին Նախագահ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան ընդունի Ազգ. Պատուիրակութեան անդամակցութիւնը, քանի որ այս վճռական օրերուն կատարուելիք բանակցութեանց եւ խորհրդակցութեանց համար մեծապէս կրնան օգտակար դառնալ իր ծանօթ ձեռնհասութիւնն ու փորձառութիւնը:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան յայտնեց այս առթիւ, թէ Տիար Ահարոնեան նոյն դիմումը ըրած է նաեւ իրեն, բայց ինք պատասխանած է, թէ մինչեւ Համագումարին աշխատութեանց լրանալը՝ կ'ընդունի միայն, ի պահանջել հարկին, ոչ-պաշտօնապէս մասնակցիլ տեղի ունենալիք խորհրդակցութեանց եւ կատարուելիք ձեռնարկներուն բերել իր օժանդակութիւնը, ինչպէս սիրով կատարած է ցարդ:

Գալով Տիար Տիրան Տէօվլէթեանի առաջարկութեան, Վսեմ. Նախագահը դիտել տուաւ, որ այդ խնդիրն արդէն իսկ անցած է օրակարգին մէջ, եւ Համագումարը իր կարգին պիտի զբաղի անով:

Օրակարգ

1. Տեղեկագիր եւ հաշուեցոյց ելեւմտական գործունէութեանց Ազգ. Պատուիրակութեան

Ազգ. Պատուիրակութեան ելեւմտական Գործառնութեանց Հաշուեքննիչ Յանձնաժողովին տեղեկաբեր Տիար Գառնիկ Ֆնտգլեան, յայտնելէ ետք, թէ Համագումարին յանձնարարութեան համեմատ վերոյիշեալ հաշիւներուն բոլոր մանրամասնութիւնները ստացած էր Պատուիրակութեան Վսեմ. Նախագահին անձնական Դիւանէն, կարդաց հետեւեալ տեղեկագիրը.

Տեղեկագիր Հաշուեքննիչ Յանձնաժողովոյ՝ Ազգ. Պատուիրակութեան ելեւմտական գործունէութեանց մասին

Տիար Գառնիկ Ֆնտգլեան թէ՝ տեղեկագրին ընթերցման միջոցին եւ թէ՝ անկէ վերջ, անհրաժեշտ բացատրութիւնները տուաւ Պատուիրակութեան հաշուական գործունէութեանց մանրամասնութեանց նկատմամբ:

Տեղեկագրին ընթերցման առթիւ պատգամաւորներէ ոմանք դարձեալ շեշտեցին ղրկուած գումարներու գործածութիւնը հակակշռի ենթարկելու անհրաժեշտութիւնը: Պատուիրակութեան անդամ Տիար Վահան Թէքէեան յայտնեց, թէ Պատուիրակութիւնը, Համագումարին կողմէ յայտնուած փափաքին համաձայն, որոշեց այսուհետեւ դրամ ղրկուած ատեն՝ տեղեկութիւն պահանջել նաեւ դրամին գործածութեան եղանակին նկատմամբ: Անշուշտ, ըսաւ, Պատուիրակութիւնը նոյնիսկ այս կերպով չի կրնար հակակշռի ենթարկել ղրկուած գումարներու գործածութիւնը, բայց, վերջապէս, անոնց ընդունուած եւ նպատակին յաքթացուած ըլլալուն նկատմամբ յայտարարութիւն կ'ունենայ ձեռքը: Այս առթիւ Տիար Վահան Թէքէեան դիտել տուաւ, թէ ամէնէն աւելի մեծ գումարները, մանաւանդ պատերազմի շրջանին, ղրկուած էին Ն. Ս. Օծութիւն էջմիածնայ Կաթողիկոսէն եւ ամէնէն աւելի էջմիածին լռութիւն պահած է թէ՝ այդ գումարները ստացած ըլլալուն եւ թէ՝ անոնց գործածութեան եղանակին նկատմամբ: Երբ Երեւան մեկնեցանք, յարեց Տիար Թէքէեան, Վսեմ. Պօղոս Փաշա ընդարձակ հաշուեցոյց մը յանձնեց մեզի՝ էջմիածին ղրկուած գումարներու մասին: Այդ հաշուեցոյցը տուի Կաթողիկոսին՝ որպէսզի ստուգել տայ, թէ իրո՞ք հասած են ղրկած գումարները: Բաւական ժամանակ մնացինք Կովկաս, եւ մինչեւ մեր մեկնումը դիտողութիւն մը չըրին, ինչ որ կ'ենթադրէ, թէ հաշուեցոյցին մէջ սխալ չկար:

Տիար Տէրպէտէրեան ուզեց գիտնալ, թէ իրեն տրուած խնդրանք մը կ'ըլլայ՝ Պատուիրակութեան անդամներուն խորհրդակցութեա՞մբ կ'որոշուի առաքումը: Տիար Վահան Թէքէեան պատասխանեց, թէ քանի որ Պատուիրակութեան անդամներէն մէկը կամ միւսը առարկութիւն չըներ ներկայացուած հաշիւներուն նկատմամբ, ուրեմն պէտք է ընդունիլ, թէ համամտութիւն գոյութիւն ունի իրենց միջեւ:

Տիար Տոքթ. Բարսեղեան դիտողութիւն ըրաւ մէկ քանի գումարներու մասին, որոնք տրուած էին զանազան անձերու, իբր ճամբու ծախք: Յիշեց մասնաւորաբար Տոքթ. Ռուբէն Տէր-Ստեփանեանը եւ իր կինը, որոնց Կովկաս վերադարձին ծախքերը հոգացած էր Պատուիրակութիւնը: Դարձեալ Տիար Բարսեղեան դիտողութիւն ըրաւ Զօրավար Թորգոմի վճարուած գումարի մը համար: Տիար Արշակ Չօպանեան ի պատասխան ըսաւ, թէ իբր Զօրավարը քաջութեամբ մասնակցած էր թրքօ-հայ կռիւներուն. ինչպէս երբեմն Բիէռ Լոթիի միջադէպին առթիւ, մենամարտած էր Ֆրանսայի առաջնակարգ սուսերամարտիկներէն Պ. Պրկերմայերի հետ արիութեամբ մը, որ նոյնիսկ իր հակառակորդին զմայլանքը շարժած էր: Պատուիրակութիւնը օգնութիւն մը ըրած է պարզապէս իրեն, այնքան ատեն մը, որ նեղութեան մէջ կը գտնուէր: Այլապէս օգտակար գործունէութիւն ունեցած էին նաեւ Տոքթ. Ռուբէնը եւ իր կինը՝ թրքօ-հայ կռիւներուն ընթացքին:

Հաշուեքննիչ Յանձնաժողովոյ տեղեկաբեր Տիար Գառնիկ Ֆնտգլեան կարդաց նաեւ Ֆինանսական Յանձնաժողովին կողմէ պատրաստուած եւ (նախորդ նիստին ատենագրութեան մէջ ստորագրուած) պիւտճէի նախագահին քննութեան վերաբերող հետեւեալ տեղեկագիրը, զոր Համագումարին յանձնարարութեան համեմատ լրացուցած էր Պատ. Վսեմ. Նախագահին անձնական դիւանէն ստացուած մանրամասնութիւններով:

Տեղեկագիր Հաշուեքննիչ Յանձնաժողովոյ Ազգ. Պատուիրակութեան՝ պիւտճէի ծրագրին նկատմամբ

Տիար Տէօվլէթեան ցաւ յայտնեց, որ Պատուիրակութեան եւ Ֆինանսական Յանձնաժողովի անդամներէն Տիար Տոքթ. Նեւրուզ դարձեալ ներկայ չէ, մինչդեռ գիտէր, որ այս տեղեկագիրները պիտի կարդացուէին եւ անհրաժեշտ էր իր

ներկայութիւնը՝ բացատրութիւններ տալու համար: Տիար Տէօվլէթեան ըսաւ, թէ հաշիւներու մէջ 80% շռայլութիւն կայ, եւ թէ Բժշկական Առաքելութեան, ինչպէս նաեւ Կովկասի, Կիլիկիոյ ու Ամերիկայի Առաքելութեանց համար եղած ծախքերը պարզապէս աւելորդ վատնումներ եղած են: Ասկէ վերջ, յարեց, մեզի դժուար պիտի ըլլայ նոր դրամ գտնել, որովհետեւ երբ այս տեսակ հաշիւներ ներկայացնենք մինչեւ հիմա ղրկուած գումարներուն գործածութեան եղանակին նկատմամբ, պարզապէս մեր վրայ պիտի խնդան: Տիար Տէօվլէթեան քննադատեց մասնաւորաբար այն պարագան, թէ Կիլիկիոյ Բժշկական Առաքելութեան 17 ամսուան գործունէութեան լոկ առաջին երեք ամիսներուն հաշիւները միայն ստացուած են, բայց նորէն շարունակեր են դրամ ղրկել ամեն ամիս:

Տիար Վահան Թէքէեան. Բայց եթէ հաշիւ չէ եկեր, հիւանդանոցը միշտ գոյութիւն ունեցեր է եւ ունի, եթէ դրամ չղրկուի՝ հիւանդները ի՞նչ կ'ըլլան: Յետոյ, տեղեկագիր չկայ ըսելով պէտք չէ հասկնալ, թէ տեղեկութիւն չէ եկած բնաւ:

Տիար Տէօվլէթեան. Ամերիկայի Առաքելութիւնը ղրկուեցաւ որպէսզի մանտայի ընդունելութիւնը դիւրացնէ: Ասիկա չեղաւ, չենք գիտեր, թէ ի՞նչ ըրին այնտեղ: Բայց յայտնի է, թէ աւելորդ ու վնասակար վէճերու եւ հակառակութեանց ծնունդ տուին: Կիլիկիոյ Առաքելութեան տուած արդիւնքն ալ լաւագոյն բան մը չէ: Կ'առաջարկեմ, որ երկու Առաքելութիւններն ալ ետ կանչուին:

Տիար Ա. Հանըմեան. Տոքթ. Նեւրուզ այսօր չկրցաւ գալ, որովհետեւ կարեւոր ժամադրութիւն մը ունէր Կիլիկիա ղրկուելիք դեղերու համար: Տիար Տէօվլէթեան եղած ծախքերու շռայլութիւն մը կը գտնէ եւ ատոր մեղքը կը բեռցնէ Ֆինանսական Յանձնախումբին վրայ: Բայց Յանձնախումբը կոչուած էր լոկ միջոցներ խորհելու՝ որոշուած 15 միլիոնի հանգանակութեան յաջողութեան համար: Այդ միջոցներուն գործադրութիւնն անգամ իր ձեռքը չէր: Հետեւաբար՝ Տոքթ. Նեւրուզ անձնապէս պատասխանատու չէ, կամ այնքան միայն պատասխանատու է, որքան Պատուիրակութեան միւս անդամները: Կիլիկիոյ Բժշկական Առաքելութեան համար ալ աւելորդ ծախք չէ եղած, շռայլութիւն չկայ, Առաքելութիւնը իրեն սահմանուած պիւտճէին չափով գործ բացած է: Ինչպէս Տիար Թէքէեան դիտել տուաւ, միշտ կանոնաւոր տեղեկութիւն առնուած է Կիլիկիայէն: Լոկ տեղեկագիր մը կորսուած է, ղրկուած ու չէ հասած: Եթէ դրամ չղրկուեր՝ պէտք պիտի ըլլար փակել հիւանդանոցը, որ սակայն շատ մեծ օգտակարութիւն ունեցած է: Տիկին Եսայեան քանիցս շեշտեց այդ հաստատութեան ընծայած բարիքը: Դեռ նոր-նոր կը գրէր, թէ այն վերջին օրերու մէջ, որ ամեն կողմէ փախստականներ՝ ամենաողբալի դրութեան մը մէջ կը հասնին Ատանա, մասնաւորաբար Մարաշի փախստականները, որոնք ընդհանրապէս կիսովին սառած էին ճամբաները, հիւանդանոցը պարզապէս նախախնամական դեր մը կը կատարէ:

Տիար Տէօվլէթեան. Ես չըսի, թէ Պատուիրակութիւնը պատասխանատու չէ, ընդհակառակը, Պատուիրակութեան ամեն անդամ պատասխանատու է: Ես այնպէս կարծեցի, թէ Տիար Թէքէեան կ'ըսէր, որ մինակ Տոքթ. Նեւրուզ տեղեկութիւն ունի վերոյիշեալ հաշիւներուն նկատմամբ: Մենք ալ, Կաթողիկոսին դիմումին վրայ, Մանչէսթրը դրամ ղրկեցինք եւ ստացագիր ուզեցինք: Չեկաւ, բայց երբ նորէն դրամ ուզեցին, մերժեցինք ղրկել, յայտնելով, թէ ինչո՞ւ չենք ղրկեր: Միեւնոյն բանը տեղի ունեցաւ նաեւ Տիար Սամսոն Յարութիւնեանի հետ: Այսպէս պէտք էր վարուէիք նաեւ դուք:

Տիար Ա.Հանըմեան. Քիչ մը շատ վաճառականական ըմբռնում է ատիկա:

Տիար Տէօվլէթեան. Եւ սակայն պէտք է:

Տիար Ա. Հանըմեան. Երբ Տոքթ.Ղազարոսեան Կիլիկիայէն դարձաւ, շատ աւելի վեր ի վերոյ հաշիւներ բերաւ: Երբ մանրամասնութիւն խնդրուեցաւ՝ ըսաւ թէ Տիար Տամատեանի քովն են: Խնդրեցինք այդ հաշիւները, բայց չեկան: Հիւանդանո՞ցը գոցէինք ատոր համար:

Տիար Թումայեան. Հաշիւ տալու պարտաւորութիւն ունեցողներէն շատեր հեռուն են: կը հասկնամ, որ ժամանակ չկայ իրենցմէ տեղեկութիւն ստանալու: Բայց կան ուրիշներ, որոնք այստեղ են, օրինակի համար՝ Բրոբականտի Պիւրօն: Կարելի չէ՞, որ անոնցմէ գոնէ տեղեկութիւն ուզուի:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Երբ Պատուիրակութիւնն իր համարատուութեան մասին պատասխաններ տայ, այն ատեն կրնաք հարցումներ ուղղել նաեւ այս խնդիրներուն նկատմամբ:

Տիար Գ. Ֆնտգլեան. Կը ձայնակցիմ Տիար Տէօվլէթեանի այն խօսքերուն, թէ մենք չպիտի կրնանք ասկէ ետքը ոեւէ կարեւոր գումար հաւաքել՝ եթէ Պատուիրակութիւնը շարունակէ իր գործունէութիւնը այս պայմաններով, եթէ տեղեկութիւն չտայ իր Առաքելութեանց գործունէութեան եւ դրամներու գործածութեան եղանակին նկատմամբ:

Տիար Վ. Թէքէեան. Այնպէս կը կարծեմ, թէ Տիար Տէօվլէթեան կը շփոթէ Պատուիրակութեան գործունէութիւնը՝ Մանչեսթրի գաղութին գործունէութեան հետ: Մանչեսթրի հայերը հանգանակութուն կատարած են որոշ նպատակի մը, օրինակ՝ բարեգործութեան համար. եթէ բրոբականտի մաս մըն ալ կայ իրենց գործունէութեան մէջ, այն ալ տեղական հանգամանք ունի, կը կատարուի շատ որոշ սահմանի մը մէջ եւ կարելի է դիւրաւ քոնթրոլի ենթարկել: Մինչդեռ Պատուիրակութիւնն ունի շատ ընդարձակ գործունէութիւն, եւ իր ըրած ծախքերէն մէկ քանին կերպով մը կը նմանին այն ծախքերուն, որոնք կառավարութեան մը ելեւմտացոյցին մէջ նշանակուած են «գաղտնի վարկեր» անունով: Ծախքեր կան, որոնք չեն կրնար յայտնուիլ, մանրամասնուիլ, թերեւս կարելի նկատուի անորոշ կերպով մը ծանուցանել զանոնք, բայց այդ ձեւով ծանուցուիլը ճշգրիտ հաշուետուութեան մը դերը չի կրնար խաղալ եւ սպասուածին բոլորովին հակառակ արդիւնք մը կու տայ: Այս մասին կարելի է քիչ մը վստահութիւն ընել Պատուիրակութեան: Պէտք չէ մոռնալ, որ Պատուիրակութեան Նախագահը կէս առ կէս իր կողմէ ըրած է բրոբականտի ծախքերը: Գալով դրամի համար եղած դիմումներուն, միանգամայն ամեն կողմէ այդ կարգի դիմումներ կը հասնին Պատուիրակութեան: Կարելի չէ անմիջապէս ստուգել, թէ ի՞նչ է իրական պէտքը՝ ըստ այնմ դրամ ղրկելու համար: Երբ ցոյց տրուած պէտքը անմիջապէս օգնութիւն պահանջող բան մըն է, ստիպուած՝ կը ղրկէ դրամը: Տիար Տէօվլէթեան մասնաւորաբար Կիլիկիոյ պարագային վրայ ծանրացաւ, եւ ըսաւ, թէ քանի որ տեղեկութիւն չէին տար իրենց գործունէութեան մասին, պէտք էինք դադրեցնել դրամի առաքումը, բայց անդին՝ պահանջը կար, տեղեկութիւն հասնէր կամ ոչ՝ դրամը պէտք էր: Դադրեցնելով դրամի առաքումը, պարզապէս աղէտ մը պիտի ըլլար: Միջոց մը՝ մեր կամքէն անկախ պատճառներով, չկրցանք դրամ ղրկել: Հեռագիր հեռագրի վրայ հասաւ, շեշտելով պահանջը որ կար: Տոքթ. Ղազարոսեան նոյնիսկ Պոլիս դիմած էր, եւ այնտեղէն ալ, զգալով անհրաժեշտութիւնը, դրամ ղրկած էին:

Դիտողութիւններ եղան նաեւ այլ եւ այլ անձերու ճամբու ծախքին համար վճարուած գումարներու մասին: Այդ մարդիկը կը փափաքէին Հայրենիք վերադառնալ, բայց միջոց չունէին: Փոխանակ այստեղ տանելու եւ բեռ աւելցնելու, լաւագոյն չէ՞ր, որ երթային իրենց Հայրենիքը, ուր կրնային օգտակար դառնալ: Պատ.-թիւնն այս մտածումով վճարեց անոնց ճամբու ծախքերը: Տոքթ. Բարսեղեան յիշեց մասնաւորաբար Տոքթ. Ռուբէնի պարագան: Տոքթ. Ռուբէն եկած էր Զօրավար Անդրանիկի հետ: Անդրանիկի դիրքը ունեցող անձ մը չէր կրնար անշուշտ միւսակը ճամբորդել, եւ այն միջոցին որ Տոքթ. Ռուբէն Հայրենիք պիտի վերադառնար, Զօրավարը միջոց չունէր անոր ճամբու ծախքը հոգալու:

Տոքթ. Բարսեղեան. Կը կրկնեմ, որ Պատուիրակութիւնը աւելի բարեգործական ընկերութեան մը դերը կատարեր է:

Տիար Տէօվլէթեան, պատասխանելով Տիար Թէքէեանի ակնարկութեան, թէ կարելի է քիչ մը վստահութիւն ունենալ Պատուիրակութեան մասին, ըսաւ, թէ ինք

երբեք չէ ուզած Պատուիրակութիւնը կասկածի ենթարկել եւ թէ միշտ առաջինը պիտի ըլլայ Վսեմ. Պօղոս Փաշայի առատաձեռնութիւնը հռչակող:

Նիստը փակուեցաւ ժամը 5-ին:

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 61, թթ. 33-42: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ ԺԳ

8 Յունիս 1920, ժամը 3 ու կէսին,
Նախագահութեամբ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեանի:
Ներկայ էին 15 պատգամաւոր՝
Ամեն.Դուրեան Սրբազան, Տոքթ. Բարսեղեան, Թէրզիպաշեան, Թէքէեան, Թումայեան, Հանըմեան, Մսըրլը Պէյ, Տոքթ. Նեւրուզ, Վսեմ. Գ. Նորատունկեան, Սինապեան, Տէրպէտէրեան, Տէր-Ստեփանեան, Տէօվլէթեան, Ֆնտգլեան:

Օրակարգ
1. Շարունակութիւն վիճաբանութեան Ազգ. Պատուիրակութեան համարատուութեան
2. Տեղեկագիր Ազգ. Պատուիրակութեան Կազմական Կանոնների Յանձնաժողովին
3. Վերակազմութիւն Ազգ. Պատուիրակութեան

Օրակարգ
1. Համարատուութիւն Ազգ. Պատուիրակութեան

Պատասխանելու համար Ազգ. Պատուիրակութեան տեղեկագրին կազմութեան եւ յարակից խնդիրներու մասին եղած քննադատութեանց, խօսք առաւ Ազգ. Պատ.-թեան անդամ եւ տեղեկաբեր՝

Տիար Արշակ Չօպանեան. Տիար Թէրզիպաշեանի կողմէ՝ մեր տեղեկագրին ձեւին նկատմամբ եղած քննադատութեանց պիտի պատասխանեմ այսօր, յանուն Պատուիրակութեան: Կրնայ ըլլալ որ, ինչպէս ինք ըրաւ, ես ալ ստիպուիմ մերթ Պատուիրակութեան գործունէութեան էութեան նկատմամբ քանի մը խօսք ընել: Բայց ամբողջական պատասխանը այդ մասին՝ Պատուիրակութեան Նախագահը պիտի տայ անձամբ: Տիար Թէրզիպաշեան իր քննադատութեանց մէջ գլխաւորաբար սա եզրակացութեան հասաւ, թէ Պատուիրակութիւնը իրեն յանձնուած գործին մէջ ձախողած է, թէ Թրքահայաստանի դատը վերջնականապէս կորած է հաշտութեան դաշնագրին մէջ եւ թէ այս ամբողջ ձախողութիւնը առաջ եկած է անոր համար, որ Պատուիրակութիւնը հարկ եղած կորովը չէ ունեցած, բոլոր անհրաժեշտ դիմումները չէ ըրած ու միւս կողմէ՝ չափազանց ենթարկուած է Հանրապետութեան Պատուիրակութեան ազդեցութեան՝ անոր տեսակէտները ընդունելու, անոր քաղաքականութիւնը իւրացնելու, անոր ձեռքը գործիք դառնալու աստիճան: Տիար Թէրզիպաշեան այս ամէնուն ցոլքը տեսնել կարծեց տեղեկագրին մէջ, ըսելով, որ այնտեղ յիշատակութիւնը չկայ շատ մը դիմումներու որոնք պէտք էին կատարուած ըլլալ, թէ ընդհակառակը՝ ջանք մը կայ եղածները աւելի փայլուն եւ արդիւնաւոր ցոյց տալու, եւ թէ, ընդհանուր առմամբ, Պատուիրակութիւնը իրեն վերագրեր է արժանիքներ, որոնք իրեն չեն վերաբերիր:

Ես ալ իմ մասիս դիտողութիւն մը պիտի ընեմ եղած քննադատութեանց սիսթէմին նկատմամբ: Այդ քննադատութեանց մէջ պակաս մը կայ: Յարգելի քննադատներէն շատերը մեզի չուղղեցին այն բոլոր հարցումները, զորս կը սպասէինք: Դիտողութիւնները ընդհանրապէս եղան շատ սահմանափակ հարցումներէ ետք: Մենք

սակայն աւելիին կը սպասէինք, եւ ատոր համար էր, որ տեղեկագրին մէջ դրուած էր հետեւեալ հատուածը. «Երկար պիտի ըլլար թուել այն բոլոր դիմումները, որոնք կատարուեցան, այն բոլոր յուշագիրներն ու յիշատակագիրները, որոնք ներկայացուեցան Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան կողմէ, այս պաշտօնը գործադրելու համար: Պիտի տանք միայն մէկ ամփոփումը Պատուիրակութեան գործունէութեան լայն գիծերուն, պատրաստ ըլլալով լրացուցիչ տեղեկութիւններ հայթայթելու Համագումարի այն անդամներուն, որոնք հարցումներ պիտի ուղղեն մեզ»: Այս տողերը վրիպած են նաեւ Տիար Թէրզիպաշեանի ուշադրութենէն, այլապէս՝ գոնէ այս մասին պիտի զգուշանար Պատուիրակութիւնը մեղադրելէ:

Այս դիտողութիւնը ընելէ վերջ՝ կ'անցնիմ Տիար Թէրզիպաշեանի քննադատութեանց.

1. Տեղեկագրոյն մէջ յիշատակուած էր այն նամակը, զոր Պատուիրակութիւնը 1919 Ապրիլ 11-ին, մանտայի խնդրին համար ուղղած էր Պ. Լանսինկի: Տեղեկագրին մէջ այդ մասին ըսուած էր, թէ որոշ պատասխան մը չտրուեցաւ ամերիկեան կառավարութեան կողմէ, որ չէր կրնար Հայաստանի հոգատարութեան ընդունուիլը որոշել Ծերակոյտին կողմէ Ազգերու Ընկ.-թեան դաշնաթուղթին վաւերացումէն առաջ: Տիար Թէրզիպաշեան դիտողութիւն ըրաւ, թէ քանի որ այդ միջոցին տակաւին Ազգերու Ընկերակցութեան դաշնաթուղթը դեռ չէր ստորագրուած, Պատուիրակութիւնը ինչպէ՞ս կրնար այդ ենթադրութեամբ արդարացնել իր նամակին պատասխան տրուած չըլլալը: Դարձեալ Տիար Թէրզիպաշեան դիտողութիւն ըրաւ, որ Պատուիրակութիւնը իրաւունք չունէր ըսելու, թէ Նախ. Ուիլսըն եւ ամերիկեան Պատուիրակութիւնը յայտնի փափաք ցոյց կու տային մանտան ընդունելու, քանի որ Նախ. Ուիլսընի հետ տեսնուող Դուրեան Արք.-ի եւ Պատուիրակութեանց Նախագահներուն՝ Համագումարին մէջ ըրած յայտարարութիւններէն տեսնուեցաւ, որ Նախ. Ուիլսըն բացորոշ բան մը չէր ըսած այդ մասին, այլ միայն ըսած էր, թէ եթէ Ամերիկա ռեւէ մանտա ընդունի, ատիկա պիտի ըլլայ Հայաստանի մանտան: Տեղեկագրին այդ պարբերութիւնը կը պաքքանի բոլոր գրաւոր եւ բերանացի յայտարարութեանց, զորս Նախ. Ուիլսըն եւ Ամերիկեան Պատուիրակութեան զանազան անդամները ըրած են Հայկ. Պատուիրակութեան ներկայացուցիչներուն՝ ո՛չ միայն Համագումարի ատեն, այլ մանաւանդ՝ Ապրիլ 11-ի նամակին ղրկուելէն յետոյ: Այդ նամակը ղրկուելու միջոցին՝ Ազգերու Ընկ.-թեան դաշնաթուղթը ճիշդ է, որ դեռ չէր ստորագրուած, բայց անոր գաղափարը մէջտեղն էր, եւ ամեն ոք գիտէր, որ Ամերիկեան Պատուիրակութիւնը մանտա ըսելով՝ Ազգերու Ընկերակցութեան անունով կատարուելիք հոգատարութիւն կը հասկնար:

2. Տեղեկագրին մէջ ըսուած էր, թէ 1919-ի գարնան վերջերը եղաւ վայրկեան մը, ուր Ամբողջական Հայաստանի մը ծրագիրը, այնպէս ինչպէս Համագումարը սահմանագծած էր, եւ որ առաջին օրէն իսկ Ամերիկեան Պատուիրակութեան հաւանութիւնը գտած էր, սկզբունքով ընդունուեցաւ Դաշնակիցներէն, ինչպէս յայտնի կ'ըլլար Թուրքիոյ բաժանման մասին թերթերու մէջ տեսնուող կէս-պաշտօնական նօթերէն: Տեղեկագրին այս առթիւ յիշատակած էր նաեւ, թէ ֆրանսական կառավարութիւնը ինքզինքը պատրաստ ցոյց տուած էր հրաժարելու Կիլիկիոյ վրայ ունեցած յաւակնութիւններէն, բացի Ալեքսանտրէթէն, եթէ Ամերիկա ստանձնէր Հայաստանի մանտան: Տիար Թէրզիպաշեան ըսաւ, որ այսպիսի հաւաստում մը կարելի չէ ընել, լրագիրները կրնան գրած ըլլալ, եւ սակայն, թերթերու այդ հրատարակութիւնները հաստատ քաղաքական բանակցութեանց վրայ հիմնուած եւ պետութիւններէն ներշնչուած էին: Մեզի ծանօթ էր ամէնահաստատ աղբիւրներէ, թէ այդ օրերուն իրապէս խօսակցութիւններ տեղի ունեցան Նախ. Ուիլսընի, Պ. Լլոյտ Ճորճի եւ Պ. Քլէմանսոյի միջեւ, որ եթէ Ամերիկա ընդունի Հայաստանի մանտան, Ֆրանսա պիտի զիջի Կիլիկիան, բացի Ալեքսանտրէթէն: Եւ Քէ տ'Օրսէի հետ ուղղակի շփման մէջ գտնուող անձնաւորութիւններէ իմացած ենք, թէ Արտաքին Գործոց

նախարարութեան պիւրոները քննադատեցին Պ. Քլէմանսօն, որ Կիլիկիայէն հրաժարած է՝ անոր արժէքը չճանչնալուն համար, ինչպէս աւելի վերջը նոյն քննադատութիւնն ըրին Մոսուլի լքման մասին:

Տիար Բրոֆ. Թումայեան. Պ. Լլոյտ Ճորճ ալ յայտարարեց, որ եթէ Ամերիկա ընդունի Հայաստանի մանտան, Ֆրանսա պիտի լքէ Կիլիկիան:

Տիար Արշակ Չօպանեան. Խնդիրը ամեն կողմ ծանօթ էր արդէն իբր Ֆրանսայի կողմէ բացայայտ յանձնառութիւն մը:

3. 3. Տիար Թէրզիպաշեան հեգնութեամբ հարցուցած էր, թէ քանի մը հնդիկներու Փարիզ եկած ըլլալը ի՞նչ փոփոխութեան կրնայ ենթարկած ըլլալ քաղաքական դրութիւնը:

Ամէնուն յայտնի է արդէն, թէ նոյնիսկ Անգլիոյ մէջ երկու տեսակ քաղաքականութիւն կայ մահմետականներու նկատմամբ, քաղաքականութիւն մը, որ մահմետականներուն երես կու տայ, եւ ուրիշ քաղաքականութիւն մը, կը մղուի զանոնք սանձելու, զանոնք եւրոպական քաղաքակրթութեան պայմաններուն ենթարկելու: Այն միջոցին, ուր բրիտանական դահլիճին մէջ Հնդկաստանի նախարար Պ. Մոնթակին Փարիզ առաջնորդեց հնդիկ պատուիրակութիւնը, մահմետականները զսպելու ձգտող քաղաքական հոսանքը զօրաւոր էր թէեւ, բայց Պ. Մոնթակին եւ հնդիկները, միանալով Թուրքիոյ բաժանման հակառակորդներուն, յաջողեցան քաղաքական նոր հոսանք մը առաջ բերել, եւ այդ հոսանքը վնասեց մեր դատին: Միեւնոյն ատեն՝ Ամերիկայի մէջ հասարակութեան հոսանք մը կը գոյանար Նախ. Ուիլսընի եւ անոր կողմէ պաշտպանուած Ազգերու Ընկերակցութեան գաղափարին դէմ: Տեղեկագիրը չէ ըսած, թէ այս հոսանքն ալ թրքասիրական շարժումի մը արդիւնք է, եւ զայն չէր նոյնացուցած հնդիկ պատուիրակութեան գործունէութեան հետ, ինչպէս ենթադրեց Տիար Թէրզիպաշեան: Ամերիկայի մէջ առաջ եկած հոսանքը, ինչպէս ամբողջ աշխարհը գիտէ, թրքասիրութեան հետ կապ չունէր, յիշատակած էինք զայն իբր մէկը այն արգելքներէն, որոնց բաղխեցաւ Պատուիրակութեան գործունէութիւնը:

4. Տիար Թէրզիպաշեան աւելորդ նկատեց Պ. Քլէմանսոյի ստորագրութեամբ թուրք պատուիրակներուն տրուած պատասխանին յիշատակումը, առարկելով, որ Պատուիրակութիւնը ռեւէ դեր չէ ունեցած անոր խմբագրութեան մէջ: Կ'արժէ յիշել այս մասին, որ այդ նամակը թէեւ Պ. Քլէմանսոյի ստորագրութիւնը կը կրէ, բայց լոկ անոր անձնական կարծիքը չի ներկայացներ, այլ կը ներկայացնէ ամբողջ Դաշնակից պետութեանց կարծիքը՝ այդ որպէին, եւ նոյնիսկ հաստատուեցաւ, թէ անոր խմբագրութեան մէջ կարեւորագոյն դերը ունեցած է ո՛չ թէ Պ. Քլէմանսօ, այլ՝ Պ. Պալժուր: Համամիտ չեմ Տիար Թէրզիպաշեանի առարկութեան: Մեր դատին համար այնքան նպաստաւոր այդ փաստաթուղթը, իբր որոշ որպէ մը երեւան եկող յուսալից երեւոյթ մը, պէտք է յիշատակուեր տեղեկութեան մէջ, ինչպէս յիշատակուած էին աննպաստ երեւոյթները: Մարդ երբ Պատուիրակութեան՝ ինչպէս ռեւէ մարմնի գործունէութեան գլխաւոր գիծերը ցոյց կու տայ, պարտական է նկատի առնել եւ մատնանիշ ընել նաեւ անոր շուրջ երեւան եկող քաղաքական մեծ երեւոյթները նպաստաւորներն ալ, աննպաստաւորներն ալ, որոնք իրենց անխուսափելի ազդեցութիւնը կ'ունենան անոնց գործունէութեան վրայ: Միւս կողմէ՝ իրաւունք ունինք ենթադրելու, թէ Հայ Պատուիրակութեան ճիգերն ալ, ինչպէս միւս բոլոր ճնշուած ազգերու ճիգերը, որոշ բաժին մը ունեցան, որ այդ տոքիմանը այդ ձեւով խմբագրուի:

5. Տիար Թէրզիպաշեան մեղադրեց Ազգ. Պատուիրակութիւնը, թէ միմիայն Պ. Ճերարտի մէկ հեռագրին վրայ մեծապէս յուսահատեր է ամերիկեան մանտայէն եւ Ճերարտի տեսակէտը ընդունելով, այլեւս ետ կեցեր է Ամերիկայի մանտան պահանջելէ: Բոլորովին սխալ է ասիկա: Տեղեկագրին մէջ Ճերարտի հեռագրի խօսք չկայ, այլ՝ ակնարկուած է ընդարձակ յիշատակագրի մը, որ Ճերարտի ստորագրութեամբ Ամերիկայի կառավարութիւն ղրկուած է ամբողջ Ամերիկեան Հայասիրական Քոմիթէին կողմէ: Ասկէ զատ, այդ յիշատակագրին տրուելէն առաջ

տեղի ունեցած էին կարգ մը իրողութիւններ, որոնք մանրամասնաբար յիշատակուած են տեղեկագրին մէջ, ինչպէս Պ. Լոթի եւ Հանրապետական Կուսակցութեան միւս անդամներուն յայտարարութիւնները, որոնցմով խորհուրդ կու տային չպնդել մանտայի մասին, ինչպէս մանաւանդ նոյն հաւանականութիւնը թէ Նախ. Ուիլսըն չպիտի յաջողի մեծամասնութիւն ձեռք բերել Ծերակոյտին մէջ, հաւանականութիւն, որ հաստատուեցաւ անկէ ի վեր, զոր նախատեսելով Ամերիկայի մեր ամէնէն ականաւոր բարեկամները խորհուրդ տուին մեզի մանտայի հարցը լքելու: Ասոնցմէ Պ. Տեւիսը, փոխ-նախագահը Հայաստանի Անկախութեան Քոմիթէին, մեզի գրեց, թէ ձեր շահուն համար մի' պնդէք մանտային վրայ, այլ՝ ընդհանուր կերպով Ամերիկայի օգնութիւնը ուզեցէք: Կը յիշեմ նաեւ Պ. Կիպընսը, որուն անունը կարծեմ ծանօթ է ամեն հայու: Պ. Կիպընս, որ գործակցած էր նախորդ Պատուիրակութեան եւ անոր կողմէ մասնաւոր պաշտօնով Ամերիկա գացած էր, ջերմապէս կը հաւատար, թէ Ամերիկա պիտի ընդունի Հայաստանի մանտան, իր այս հաւատքը նոյնիսկ երկու անգամ հրապարակաւ յայտնած էր միթինկներու մէջ: Եւ սակայն ինքն իսկ, Պատուիրակութեան կողմէ մանտայի պահանջման լքումէն 4-5 ամիս առաջ գրեց մեզի, թէ այլեւս բնաւ յոյս չկայ, որ Ամերիկա ընդունի Հայաստանի մանտան:

6. Տեղեկագրին մէջ յիշուած է նաեւ ծերակուտական Պ. Ուիլեամսի այն բանաձեւը, որով կը խնդրէր ամերիկեան կառավարութենէն՝ օգնել հայ պետութեան, առանց սպասելու Ազգերու Ընկերակցութեան վէճին լուծման, 50 միլիոն տոլարի փոխատուութիւն մը ընելով եւ 10 000 զինուոր ղրկելով Հայաստան:

Տիար Թէրզիպաշեան կը մեղադրէ Պատ.-թիւնը, թէ այս բանաձեւին ընդունելութեան համար գաղութներուն յանձնարարած է դիմումներ կատարել ամերիկեան Ծերակոյտին: Չենք հասկնար, թէ ինչո՞ւ այսպիսի թելադրանք մը ըրած ըլլալուն համար մեղադրելի է Պատ.-թիւնը: Առանց երբեք մանտայի գաղափարէն հրաժարած ըլլալու, Պատ.-թիւնը, նկատի առնելով Հայաստանի անմիջական օգնութեան անհրաժեշտութիւնը, գաղութներուն թելադրած է որպէսզի ձայնակցին Պ. Ուիլեամսի բանաձեւին եւ խնդրեն, որ ընդունուի:

7. Տիար Թէրզիպաշեան հարցուց, թէ ինչո՞ւ Մասեհեան Խան Ամերիկա չգնաց, եւ ինչո՞ւ անոր մերժումէն վերջ ամբողջ ամիսներ Պատուիրակութիւնը ուրիշ ներկայացուցիչ մը չղրկեց: Հարցուց նաեւ, թէ ինչո՞ւ վերջէն երկու հոգի ղրկուեցաւ, հակառակ անոր, որ Մասեհեան Խան պիտի երթար Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան անունով: Մասեհեան Խանի մերժումը բացատրելու համար ըսեմ, որ ինք, մեկնելէ առաջ, պէտք տեսաւ հաւանութիւնը ստանալու պարսիկ կառավարութեան, որուն պաշտօնատարներէն էր, եւ որուն ծառայած էր երկար տարիներ: Այդ միջոցին անցագրի մեծ դժուարութիւններ ալ կային, որով Մասեհեան Խան չէր կրնար մեկնիլ անմիջապէս: Տակաւին այդ դժուարութիւնները չհարթեցուած, պարսիկ կառավարութեան կողմէ հասաւ պատասխանը, որ մերժում մըն էր: Մասեհեան Խան՝ ստիպուեցաւ խորին ցաւով հրաժարիլ: Այստեղ կը յիշեմ, որ Մասեհեան Խան նախորդ Պատուիրակութեան ամենալայն աջակցութիւն մը նուիրած էր միշտ, բայց նոյն նկատումը զինքը ստիպած էր ոչ-պաշտօնական կերպով մը կատարելու այդ աջակցութիւնը, եւ այդ նկատումով է, որ իր անունը երբեք մեջտեղ չէ դրուած: Երբ իր մերժումը տեղի ունեցաւ, իսկոյն որոշուեցաւ ուրիշ անձնաւորութիւն մը ղրկել: Բացարձակապէս համաձայն եմ, թէ պէտք էր կարողագոյն մարդը ղրկել Ամերիկա: Բայց շնորհակալ պիտի ըլլայի՝ եթէ այս դիտողութիւնն ընող քննադատները նոյն ատեն անուններ տային: Եթէ մինչեւ Տիար Բրօֆ. Տէր-Յակոբեանի առաքումը՝ երկու-երեք ամիսներ անցան, պատճառը սա էր, որ կարելի չեղաւ մարդ գտնել: Եւ ապացոյց, թէ Պատուիրակութիւնը ջերմապէս կը փափաքէր փութացնելու ներկայացուցիչի մը առաքումը, վերջ ի վերջոյ իր անդամներէն մէկը ղրկեց, եւ ճիշդ այն, որ ամէնէն աւելի մօտիկ յարաբերութիւններ ունէր ամերիկեան շրջանակներու հետ:

Ինծի կը մնայ յայտնել, թէ ինչո՞ւ Տիար Փաստրմաճեան ալ գնաց: Նախ՝ ինչպէս մեր ընկերներէն Տիար Թէքէեան ըսաւ, սխալ է, թէ Բրօֆ. Տէր-Յակոբեանը որոշեցինք ղրկել՝ Տիար Փաստրմաճեանի մեկնումը որոշուելէն ետք: Երբ Մասեհեան Խանը ղրկել որոշած էին, Ազգ. Պատուիրակութիւնը բնաւ առարկութիւն չըրաւ: Դիտողութիւն չըրաւ նաեւ՝ երբ Մասեհեան Խան իրեն քարտուղար նշանակեց Տիար Լեւոն Շանթը, որ ո՛չ իսկ անգլերէնի հմուտ էր եւ որուն տեղ կարելի էր յարմարագոյն անձ մը նշանակել: Բայց երբ Ազգ. Պատուիրակութիւնը որոշեց Բրօֆեսէօրը ղրկել, Հանր. Պատուիրակութիւնը ըսաւ, թէ Բրօֆեսէօրը մինակը չի բաւեր, եւ թէ պէտք է անոր հետ ուրիշ անձնաւորութիւն մը ղրկել: Ապացոյց թէ Ազգ. Պատուիրակութիւնը կոյր հետեւող չէ եղած Հանր. Պատուիրակութեան տեսակէտներուն, եւ չէ գործած անոր ճնշման տակ՝ բացարձակ կերպով մերժեց այդ պահանջումը, մատնանիշ ընելով, թէ դատողութեան այդ եղանակը վիրաւորիչ էր Բրօֆ. Տէր-Յակոբեանի համար, որ թէ' ամերիկեան շրջանակներու հետ իր ունեցած յարաբերութիւններով եւ թէ' իր լուրջ ու շրջահայեաց գործունէութեամբ մեծ օգտակարութիւն ունեցած էր եւ կրնար ունենալ: Հանր. Պատուիրակութիւնը պնդեց իր տեսակէտին վրայ, որմէ ետք՝ Բրօֆեսէօրը ճամբայ ելաւ: Իրենք ալ Տիար Փաստրմաճեանը ղրկեցին ո՛չ թէ Հանր. Պատուիրակութեան կողմէ, այլ՝ իբր Հանր. կառավարութեան Ամերիկայի դիւանագիտական ներկայացուցիչ: Հանր. Պատուիրակութեան՝ այս խնդրին մէջ բռնած ընթացքը մեկնելու համար ըսեմ, թէ իրենք կը կասկածէին, որ Ազգ. Պատուիրակութիւնը եւ իր ներկայացուցիչը Ամերիկայի մէջ պիտի աշխատէին արգելք ըլլալ Հանր. կառավարութեան de facto ճանաչման: Տիար Փաստրմաճեան՝ Զօր. Բագրատունիի տանը անձամբ այս կասկածը յայտնեց Բրօֆեսէօրին: Ես հոն էի, բողոքեցի ամէնաուժեղ կերպով, նոյնիսկ Բրօֆեսէօրը այնքան յուզուած էր այդ առթիւ, որ քիչ մնաց նուաղեր: Բողոքեցինք, որովհետեւ Ազգ. Պատուիրակութիւնը ո՛չ միայն այդ տեսակ մտադրութիւն մը չունէր, այլ ինք մանաւանդ կը փափաքէր, որ Հանր. կառավարութիւնը պաշտօնապէս ճանչցուի օր առաջ:

Եւ արդեն Բրօֆ.-ը նոյն մտքով եւ մեծ եռանդով աշխատեցաւ Ամերիկայի մէջ, ինչպէս Տիար Փաստրմաճեան ալ՝ իր կողմէ:

8. Տիար Թէրզիպաշեան ըսաւ, թէ Պատուիրակութիւնը ինչպէ՞ս կրնար Լորտ Քըրզընի մեկ բառով փոխել իր գործունէութեան ուղեգիծը: Ինչպէս արդէն անգամ մը ըսի, վերստին դիտել կու տամ, թէ լոկ Լորտ Քըրզընի յայտարարութեան վրայ չէր, որ այդ որոշման յանգեցանք: Ամերիկայի թէ' Փարիզի եւ թէ' Լոնտոնի դեսպանները նոյնպէս բացորոշ կերպով յայտարարեցին, թէ այլեւս ոեւէ յոյս չկայ, որ Ամերիկա ընդունի Հայաստանի մանտան: Ասկէ զատ կային ուրիշ բազմաթիւ իրողութիւններ եւ հանգամանքներ, զորս յիշած ենք տեղեկագրին մէջ:

9. Տիար Թէրզիպաշեան հեգնութեամբ ակնարկեց տեղեկագրին այն տողերուն, որոնց մէջ ըսած էինք, թէ Պատուիրակութիւնը ոեւէ իրաւալքում չընդունեց հայկական պահանջմանց մասին: Բացատրելէ ետք այն պատճառները, որոնց բերումով ստիպուած էինք ազգ. ծրագիրը պատշաճեցնել ստեղծուած նոր կացութեան, տեղեկագրին մէջ որոշապէս յայտնած էինք, թէ Հայաստանի այն մասին համար, զոր կարելի չէր ըլլար կցել Հանրապետութեան, պահանջեցինք, որ գոնէ ազատեն թուրք տիրապետութենէն եւ Ազգերու Ընկերակցութեան անունով դրուին պետութեան մը մանտային տակ, ինքնավար ռեժիմով մը: Ի՞նչ կրնար ընել Պատուիրակութիւնը, երբ բացորոշ կերպով կ'ըսէին, թէ շատ տեղ կը պահանջենք եւ թէ անկարելի է մեր բոլոր պահանջներուն գոհացումը: Աշխատեցանք կարելին փրկել: Ինչ որ ըրինք այդ հարկեցուցիչ պատճառներուն ստիպման տակ՝ իրաւալքում մը չէ:

Տիար Գ. Ֆնտգլեան. Գրաւո՞ր ըրիք այդ պահանջը:

Տիար Ա. Զօպանեան. Այո՛, նոյնիսկ Զօրավար Կորկանեանի մէկ քարտէզով: Տակաւին անկէ ետք ալ, Սան Ռեմոյի մէջ, շատ որոշ կերպով յայտարարեցինք, թէ չենք հրաժարիր մեր պահանջումներէն եւ նորէն կրկնեցինք, որ Հայաստանի չկցուած

հայկական հողամասերը ազատուին թրքական վարչութենէն եւ օժտուին ինքնավար ռեժիմով մը:

Տիար Թէրզիպաշեան. Ձեր տիրէքթիւներուն մէջ ինքնավարութեան խօսք չկար, այլ՝ անկախութեան: Պէտք էր ամբողջին անկախութիւնը պահանջել:

Տիար Չօպանեան. Գոնէ կարելի եղած մասին անկախութիւնը պահանջեցինք, եւ մնացեալ մասն ալ աշխատեցանք փրկել այն ձեւով, որով կարելի էր: Տիար Թէրզիպաշեան կը մեղադրէ Պատուիրակութիւնը, թէ այսպիսի փոփոխութիւն մը ընդունելէ առաջ ինչո՞ւ Համագումարը չհրաւիրեց: Կարելի չէր Համագումարը հրաւիրել անմիջապէս: Դէպքերը գահավիժման մէջ էին, չէինք կրնար սպասել: Կրնայի՞նք Գերագոյն Խորհուրդին ըսել, որ մենք Ազգ. Համագումարէն որոշ տիրէքթիւներ ունինք, չենք կրնար անոնցմէ շեղիլ, սպասեցէ՛ք, որ Համագումարը հաւաքուի, անոր որոշման համեմատ պատասխանը կու տանք: Պարզապէս մեր վրայ պիտի խնդային:

Տիար Տիրան Տէօվլէթեան. Ո՞ր քոնֆերանսին մէջ պահանջուեցաւ չկցուած հողամասերու ինքնավարութիւնը:

Տիար Չօպանեան. Թէ՛ Փարիզ, թէ՛ Լոնտոն եւ թէ՛ Սան Ռեմո, միշտ գրաւոր:

10. Տիար Թէրզիպաշեան ըսաւ նաեւ, թէ Ազգերու Ընկերակցութիւնը մերժած է Հայաստանի մանտան, եւ թէ այդ մերժումը հաւատարմաբար չէ արձանագրուած տեղեկագրին մէջ: Բայց Ազգերու Ընկերակցութիւնը չէ մերժած, այլ միայն ըսած է, թէ ինք իր դաշնաթուղթին տրամադրութիւններով, չի՛ կրնար ուղղակի մանտա ստանձնել, թէ պէտք է մանտաթէր պետութիւն մը, որ իր անունով ստանձնէ այդ մանտան եւ որուն ելեւմտական ու զինուորական աջակցութիւն ըլլայ, եւ թէ յանձն կ'առնէ գտնել այդ պետութիւնը, յանձնառութիւն, որմէ չի հրաժարած մինչեւ այսօր: Նոյնիսկ Լորտ Ռոպէրթ Սէսիլ, որ անդամ է Ազգերու Ընկերակցութեան Խորհուրդին, պատասխանելով անգլ. կարեւոր լրագրի մը այն հրատարակութեան, թէ Ընկերակցութեան պատասխանը մերժողական եղած էր, հաստատեց, թէ Ազգերու Ընկերակցութիւնը երբեք չէ մերժած Գերագոյն Խորհուրդին առաջարկը:

11. Տիար Թէրզիպաշեան բոլորովին անճիշդ գտաւ, թէ Պոլսոյ գրաւումը կապ ունեցած ըլլար Հայկական Խնդրին հետ: Ճիշդ է, որ այդ գրաւումէն ետք նորէն հայկական ջարդեր տեղի ունեցան, բայց անուրանալի է որ անգլ. կառ.-թիւնն այդ գրաւումը որոշեց Մարաշի ջարդերէն յետոյ, Պատուիրակութեան ըրած դիմումներուն հետեւանքով, մասնաւորապէս Կիլիկիոյ հարցին նուիրուած Գերագոյն Խորհուրդի երկու նիստերուն մէջ, իբր միջոց մը քրիստոնէից դէմ թուրք ազգայնականներու յարձակումները դադրեցնելու: Միեւնոյն ժամանակ, Անգլիոյ մէջ սկսաւ ամէնաբուռն հակաթուրք պայքար մը, որուն գլուխն անցան Լորտ Ռոպէրթ Սէսիլ եւ Լորտ Պրայս, եւ որ Կիլիկիոյ խժդժութեանց վրայ յենելով մանաւանդ, կը պահանջէր նոյնիսկ սուլթանին վտարումը Պոլսէն: Անգլ. շատ մը կարեւոր թերթեր հայկական ջարդերը եւ Պոլսոյ գրաւման որոշումը կը կապէին իրարու հետ, թէպէտ եւ Պատուիրակութիւնը իր դիմումներուն մէջ այդպիսի թելադրանք մը չէր ըրած, այլ պահանջած էր պարզապէս խիստ միջոցներ ձեռք առնել՝ Կիլիկիոյ մէջ հայոց կեանքը ապահովելու համար:

12. Հռոմի ամերիկեան դեսպան Պ. Ճոնսընի յայտարարութեան մասին եղած ակնարկութեան պատասխանեց արդէն Պատ.-թեան Նախագահը. «Հայկական Խնդիրը բարեկամ ձեռքերու մէջ է» խօսքը, զոր Պ. Ճոնսընը ըրած էր, կ'ակնարկէր լոկ Ամերիկայի եւ ոչ թէ ուրիշ Դաշնակից ազգերու, ինչպէս ենթադրեց Տիար Թէրզիպաշեան, հակառակ որ տեղեկագրին խմբագրութիւնը այդպիսի շփոթութիւն մը չտար: Պ. Ճոնսընի այդ խօսքը կ'արժէր յիշատակել, որովհետեւ ինք իր կառավարութեան հրահանգով ներկայ գտնուած էր Սան Ռեմոյի մէջ Գեր. Խորհուրդի այն նիստին, ուր Հայոց Հարցը նկատի առնուեցաւ:

13. Տիար Թէրզիպաշեան ըսաւ, թէ տեղեկագիրը չի յիշատակեր այն տեսակ դիմումներ եւ աշխատութիւններ, որոնք կատարուած ըլլան հատուցման հարցին,

ինչպէս նաեւ հայկական ջարդերու հեղինակներուն պատժուելուն համար: Նախ՝ տեղեկագրին մէջ, թէպետ համառօտակի, յիշատակուած է, թէ այդ դիմումներն եղած են: Ճիշդ է, որ անոնք իրենց ամբողջութեան մէջ չեն ընդունուած, բայց որոշ մաս մը ընդունուած եւ դաշնագրին մէջ անցած է: Ջարդերու հեղինակներուն նկատմամբ դաշնագրին մէջ ամբողջ գլուխ մը կայ:

Տիար Թէրզիպաշեան. Լոնտոնի մէջ Գերագոյն Խորհուրդին ներկայացուեր էր այնքան լաւատես պիւտճէ մը, որ հատուցման պէտք չեն տեսեր:

Տիար Չօպանեան. Հատուցում չէ եղած նաեւ յոյներուն, որոնք եթէ ոչ մեզի չափ, գոնէ մեզի պէս իրաւունք ունէին: Եւ յոյներուն դիւանագիտական դիրքը անհունապէս աւելի նպաստաւոր էր, քան մերինը: Անոնք ունեցան չափազանց շարժուն պատուիրակութիւն մը, որ կրցաւ ամեն տեղ ներկայանալ: Բայց նոյն իրաւունքը չբացուեցաւ նաեւ իրենց:

14. Տիար Թէրզիպաշեան բացատրութիւն ուզեց ասորացիներու եւ քաղդէացիներու հետ մշակուած յարաբերութեանց յիշատակութեան մասին: Երբոր իրենք մեզի դիմեցին, մենք շատ սիրալիր ընդունելութիւն ըրինք իրենց եւ միասին գրաւոր ու բերանացի դիմումներ կատարեցինք հայ եւ ասորի խառն բնակչութիւն պարունակող շրջանակներու սպառնացող ջարդերուն առաջքն առնելու համար: Դժբախտաբար, այդ յարաբերութիւնները չյարատեւեցին, որովհետեւ իրենք նեղն էին դրամապէս, եւ Ազգ. Պատուիրակութիւնը չէր կրնար ընել խոշոր նիւթական օժանդակութիւն մը՝ զոր կ'ակնկալէին մեզմէ:

15. Տիար Թէրզիպաշեան այնպէս ցոյց տուաւ, թէ տեղեկագրին մէջ ոսկեզօծած ենք մեր աշխատութեանց արդիւնքը եւ կարծած ենք «հիմնական յաջողութիւն» մը ձեռք բերած ըլլալ, մինչդեռ Թրքահայաստանի խնդիրը կորած է էապէս: Տեղեկագրին մէջ դաշնագրին Հայաստանի վերաբերող յօդուածները յիշատակուած են ո՛չ թէ իրենց ամբողջութեանը մէջ իբրեւ լիակատար յաջողութիւն, այլ նախ յիշատակուած են իբր կարեւոր փաստաթուղթ մը, զոր պէտք էր ծանօթացնել, իբր արդիւնքը թափուած բոլոր աշխատութեանց: Այդ յօդուածներուն յիշատակութենէն ետքն է, որ տեղեկագիրը «հիմնական յաջողութիւն» բացատրութիւնը կը գործածէ, որոշապէս ակնարկելով յօդուածներէն առաջինին, ուր ամէնապայծառ եւ ամէնահանդիսաւոր կերպով իրաւապէս կը ճանչցուի եւ կը նուիրագործուի հայ ազգին անկախութիւնը եւ Դաշնակից պետութեան հանգամանքը: Մի՞թէ ասիկա էական յաջողութիւն մը չէ եւ արդէն իսկ չի կրնար նկատուիլ այնքան զոհաբերութեանց եւ պայքարներու եթէ ոչ համեմատական, գէթ լուրջ ու դրական պսակումը: Գալով յաջորդ յօդուածներու, ճիշդ է, որ անոնց մէջ կան խմբագրական անորոշութիւններ, որոնք ամէնուս ալ մտահոգութիւն կը պատճառեն եւ զորս պարզելու ու ճշդելու համար պարտաւոր ենք աշխատիլ: Անոնք սակայն չունին այն բացարձակապէս ժխտական բնոյթը, զոր կը կարծէ տեսնել Տիար Թէրզիպաշեան: Մենք այնտեղ կը տեսնենք Դաշնակիցներու կողմէ որոշ խոստում Թրքական Հայաստանի կարեւոր մէկ մասը Հայկական Պետութեան միացնելու: Եւ Մ. Նահանգաց Նախագահին մօտ եղած դիմումը այդ միացուելիք մասին որոշման ու Հայաստանի եւ Թուրքիոյ սահմանագլուխներուն համար է միայն: Միւս կողմէ՝ երբ Տիար Թէրզիպաշեան կը յայտարարէ, թէ դաշնագիրը ուրիշ բան չընէր, բայց եթէ անկախութիւնը ճանչնալ Ռուսական Հայաստանին, որուն գոյացումը պարզ հետեւանք մըն է Ռուս Յեղափոխութեան եւ թէ ատոր մէջ ո՛չ Դաշնակիցները դեր ունին, ո՛չ ալ Ազգ. Պատուիրակութիւնը, խորապէս կը սխալի: Առանց Դաշնակիցներու կողմէ այս վճռական ճանաչման, Երեւանի Հանրապետութիւնը պիտի ըլլար տեղական վաղանցուկ վարչութիւն մը, մինչդեռ այս ճանաչմամբ, Դաշնակիցներն արդէն ընդունած կ'ըլլան որ հայկական այդ հողամասը զատուած է ռուս պետութենէն: Թողունք որ այդ ճանաչումը թէպետ կը վերաբերի գլխաւորաբար Ռուսական Հայաստանին, որ արդէն իսկ ազատ է, բայց իր մէջ կը

պարունակէ նաեւ անկախութեան ճանաչումը Թրքահայաստանի այն մասերուն, որոնց միացումը առաջարկուած է դաշնագրին այդ յօդուածներուն մէջ:

16. Քանի մը բառ ալ պիտի ըսեմ Բրոբականտի Յանձնախումբին գործունէութեան նկատմամբ եղած քննադատութեանց մասին: Տիար Տէր-Ստեփանեան ըսաւ, թէ պէտք էր մեծ օրկան մը հիմնել Հայկական Դատին պաշտպանութեան համար, ի հարկին երկու-երեք լեզուով, եւ ամեն կողմ տարածել այս օրկանը: Ասիկա, ըստ Տիար Տէր-Ստեփանեանի, աւելի կարեւոր էր, քան միթինկներու գումարումը, պրոշիւրներու հրատարակութիւնը, եւայլն: Յիշեցնեմ, որ Բրոբականտի Յանձնախումբին մէջ երկու առաջարկ եղաւ այդ մասին: Տիարք Թահմազեան եւ Դաւիթ-Բէկ առաջարկեցին պաքթերազարդ հանդէս մը հրատարակել, անոր միջոցաւ ծանօթացնելու համար մասնաւորաբար հայկական գեղարուեստն ու գրականութիւնը: Հանդէսը պիտի ունենար նաեւ քաղաքական բաժին մը, եւ անշուշտ պէտք չկայ ըսելու, թէ այդ քաղաքական բաժինը պիտի յաքթանար Հայկական Հարցին: Տիար Տէր-Ստեփանեան պաշտպանեց քաղաքական օրկանի մը հրատարակութեան տեսակէտը, օրկան մը, որ պիտի հրատարակուէր քանի մը լեզուներով, պիտի տպուէր մեծ քանակութեամբ, որպէսզի կարելի ըլլար ամեն տեղ ցրուել: Ինք այնպէս կը կարծէր, թէ 50 000 ֆրանքի գումար մը կը բաւէ այս ձեռնարկին համար: Բայց այդ գումարով՝ հազիւ թէ կարելի պիտի ըլլար երեւան բերել երբեմնի «Pro-Armenia»-ին կամ Տիար Տէր-Ստեփանեանի կողմէ Իտալիոյ մէջ հրատարակուած պատուական «Armenia»-ին նման թերթ մը, որ սահմանափակ ծաւալում մը պիտի ունենար եւ մասնաւոր դատերու նուիրուած հարիւրաւոր փոքրիկ պաշտօնաթերթերու նման շատ քիչ պիտի կարդացուէր եւրոպական հասարակութենէն: Մինչդեռ այն մեծ օրկանին համար, որուն հրատարակութիւնը կը փափաքէր Տիար Տէր-Ստեփանեան, շատ խոշոր գումար մը պէտք էր:

Տիար Տէր-Ստեփանեան. Ես 50 000 ֆրանք առաջարկեցի քանի մը ամսուան համար. յետոյ՝ մեր հարուստները սովորաբար լայնօրէն կը նպաստեն՝ եթէ բրոբականտի համար իրենց կը դիմուի: Կարելի էր կարեւոր գումար մը հաւաքել այդ նպատակին համար:

Տիար Տոքթ. Նեւրուզ. Ճիշդ այսօր նամակ մը ստացայ Զուիցերիայէն, որուն մէջ կը ծանուցանեն, թէ տեղւոյն հայ հարուստները որոշած են այլեւս սանթիմ մը անգամ չտալ բրոբականտի համար:

Տիար Չօպանեան. Լոնտոնի մէջ բրոբականտի ամէնաանհրաժեշտ պէտք մը ծագեցաւ, երբ այնտեղ էինք: Տեղւոյն հարուստները խոստացան 2000 ոսկի տալ այդ նպատակին, բայց մինչեւ այսօր բան մըն ալ չըրին: Միայն Մանչեսթրի հայերն էին, որ իրենց խոստումը կատարեցին:

Տիար Ֆնտգլեան. Մանչեսթրը 4000 ոսկի խոստացաւ, եւ 3700-ը տուած է արդէն:

Տիար Չօպանեան. Բրոբականտի Յանձնախումբը միջոց չունէր ուրեմն ընելու այն մեծատարած եւ փայլուն բրոբականտը, որ պէտք էր ըլլար: Յանձնախումբը գիտէր, թէ ի՛նչ պէտք է ընել, բայց դրամը միշտ պակսեցաւ, եւ ըրաւ այն, ինչ որ կարելի էր ընել: Bulletin-ը բազմաթիւ յօդուածներ չէր կրնար հրատարակել, տեղեկատու թերթ մըն էր, որ նոյնպէս իր օգտակարութիւնն ունեցաւ: Տիար Տէր-Ստեփանեան մեղադրեց, թէ Ծերակոյտի եւ Երեսփոխանական Ժողովին անդամներուն չէ ղրկուած պէտք եղածին չափ: Բայց կրնայ վստահ ըլլալ, որ բոլոր կարեւոր անձնաւորութեանց ղրկուեցաւ, օրինակի համար՝ Արտաքին Գործոց Յանձնաժողովին բոլոր անդամները կը ստանային զայն: Յետոյ՝ սխալ է, թէ մեծ մասամբ հայոց կը ղրկուէր: Շատ քիչ հայեր միայն կը ստանային Bulletin-ը:

Տիար Տէր-Ստեփանեան. Կարելի էր շատ աւելի տպել եւ տարածել:

Տիար Հանըմեան. Կարգ մը պրոշիւրներ տպուած են աւելի քան 3000 օրինակ եւ ղրկուած են բոլոր կարեւոր անձերու: Իսկ հայերու՝ չեն ղրկուած գրեթէ բնաւ:

Տիար Չօպանեան. Մեղադրեցին նաեւ Բրոբականտի Յանձնախումբը, թէ պէտք եղած յօդուածները չէ կրցած հրատարակել տալ տեղական թերթերու մէջ՝ Հայկական Դատին նկատմամբ: Սակայն ճիշդ չէ ասիկա: Ահագին թուով յօդուածներ հրատարակուած են, ինչպէս հետաքրքիրները կրնան տեսնել Տիար Հանըմեանի մօտ, որ կը հաւաքէ այդ հրատարակութիւնները: Լայն միջոցներ չունէինք քաղաքական մեծ թերթեր ձեռք առնելու համար, բայց շատ լուրջ եւ տարածուած թերթեր շարունակ ամէնանպաստաւոր հրատարակութիւններ ըրին մեր դատին համար, ինչպէս օրինակի համար՝ L'Homme Libre, որ Պ. Քլէմանսոյի օրկանն է, Radical, Figaro, Democratie Nouvelle, La Croix, L'Ere Nouvelle, եւ այլն, եւ այլն: Կը յիշեմ նաեւ մեծ օրաթերթ մը՝ «Journal des Debats»-ն, որուն քաղաքական բաժնին խմբագրող Պ. Օկիւսթ Կովէն, առաջին օրէն այնքան փայլուն կերպով մը պաշտպանեց մեր խնդիրը, ինչպէս կը շարունակէ ընել: Նմանապէս մեր վաղեմի բարեկամ Պ. Տընի Քոշէն, մէկէ աւելի անգամներ ուժեղ յօդուածներ հրատարակեց մեր դատը պաշտպանելու համար: Նոյնպէս՝ Ռընէ Բինոն, Վիքթոր Պէռար եւ այլն:

Եւ յետոյ, պարագայ մը կայ, որ մոռցուեցաւ: Մենք կը գտնուինք Ֆրանսայի մէջ եւ ստիպուած ենք գործել ֆրանսական շրջանակներու մօտ: Մեր քաղաքական պահանջումները հիմնովին հակառակ էին սակայն ֆրանսական տեսակէտներուն: Օրինակի համար՝ ամերիկեան մանտան կը խնդրէինք: Ինչպէ՞ս կարելի էր բռնադատել ֆրանսական օրկանները, որ իրենց տեսակէտներուն հակառակող մեր այս կարգի պահանջումները իւրացնեն ու պաշտպանեն:

Տիար Ֆնտգլեան. Շատ ճիշդ է, ասիկա տեսակէտ մըն է, որ վրիպեցաւ բոլոր քննադատներու ուշադրութենէն:

Տիար Թումայեան. Ես ալ կը ձայնակցիմ Տիար Ֆնտգլեանի:

Տիար Չօպանեան. Բռնադատուած էինք ուրեմն մեր բրոբականտը սահմանափակել: Մեզի՝ իբր բրոբականտի միջոց կը մնար ծանօթացնել պատերազմի միջոցին մեր շռայլած հերոսութիւնը եւ մեր կրած հսկայ տառապանքը, մեր դատին արդարութեան համոզումը տարածել եւ համակիրներ ու պաշտպաններ շահիլ: Չեզմէ ո՞վ պիտի կրնայ երբեք ըսել, թէ այս տեսակէտով մեծ յաջողութիւն մը ձեռք չենք բերած: Անշուշտ այնքան միամիտ չենք ըլլար ենթադրելու, թէ մեր դատին պաշտպանութեան նուիրուած այն բոլոր մարդիկը, որոնք կը գործեն այս երկրին մէջ, ինքնաբերաբար մղուած են այդ գործին: Օտարներու կողմէ մեզի ի նպաստ եղած ամեն ձեռնարկի տակ քիչ մը մեր մատը փնտռել պէտք է, գոնէ ի սէր տարրական արդարութեան: Ո՞ւր կը մնան, ուրեմն, եղած մեղադրանքները: Լաւագոյն պաշտպանութիւնը, որ այս վերջին ատեններս Ֆրանսայի Երեսփոխանական Ժողովին մէջ եղաւ Հայկական Հարցին նկատմամբ՝ Պ. Պելլէի նշանաւոր ճառն էր: Կ'արժէ յիշել, որ Պ. Պելլէ իր բոլոր տեղեկութիւնները ստացած էր Բրոբականտի Յանձնախումբէն:

Տիար Հանըմեան. Եւ պէտք է ընդունիլ, որ Պ. Պելլէ հայու մը պէս իւրացուցած էր ամբողջ Հայկական Խնդրին էութիւնը, եւ գիտցաւ հայու մը պէս ալ պաշտպանել զայն: Շաբաթներ ամբողջ յարաբերութեան մէջ մնացած էր մեզի հետ, օրը օրին տեղեկութիւն, տոքիւմաններ, հրատարակութիւններ խնդրելով: Բնականաբար՝ սիրով տրամադրեցինք իրեն ամեն բան, ինչպէս ըրած ենք նաեւ ուրիշներու, խնդրած ըլլան կամ ոչ:

Տիար Հանըմեան. Անցողակի պատասխանեմ նաեւ Տիար Տէր-Ստեփանեանի այն դիտողութեան, թէ Պատուիրակութիւնը սխալ ըրած է որոշ որպէ մը յետոյ Նախ. Ուիլսընի չդիմելով՝ խնդրելու համար, որ ի սէր մարդկութեան, Հայկական Հարցը դնէ Ծերակոյտին առջեւ, առանց կապելու Ազգերու Ընկերակցութեան գաղափարին հետ: Ամեն ոք գիտէր, սակայն, թէ Ազգերու Ընկերակցութեան գաղափարը Նախ. Ուիլսընի ամբողջ քաղաքականութեան առանցքն էր, թէ Հայկական Հարցով իր հետաքրքրուելուն գլխաւոր շարժառիթն ալ աքթէ կը բղխէր եւ թէ այդպիսի դիմում մը Նախ. Ուիլսընի, իրեն անախորժ ըլլալէն զատ ուրիշ հետեւանք չպիտի ունենար:

Կը պատասխանեմ նաեւ Տիար Թէրզիպաշեանի այն հեգնական դիտողութեան, թէ տեղեկագիրը, ըսելով, թէ յոյն կառավարութիւնը պաշտպանած է Հայկական Դատը Գեր. Խորհուրդին մօտ, միամտութեան ապացոյց է տուած: Այս հեգնութիւնը անհիմն է, եւ զայն ընդունիլը մինչեւ իսկ ապերախտութիւն մը պիտի ըլլար: Մենք որոշ փաստերու վրայ հիմնուելով է, որ այդ հաստատումը ըրած ենք: Թէ՛ պատերազմի ընթացքին եւ թէ՛ մանաւանդ յաղթանակէն ի վեր ամեն առթիւ յոյն կառավարութիւնը եւ յոյն պատուիրակութիւնը իրենց ամեն կրցածը ըրած են աջակցելու համար Հայ Պատուիրակութեան: Պ. Վենիզելոս ինքն էր, որ առաջին անգամ, Յունական Հարցը Գեր. Խորհուրդին առջեւ պարզած օրը, պարզեց ու ջերմօրէն պաշտպանեց հայկական պահանջները իրենց ամբողջութեանը մէջ, այնպէս որ՝ կերպով մը ինքն էր, որ հանդիսաւորապէս եւ հեղինակաւոր եղանակով մեր հարցը դրաւ Գեր. Խորհուրդին առջեւ եւ զայն այնպէս պաշտպանեց, որպէս թէ հայութեան ներկայացուցիչ մը ըլլար:

Տիար Գ. Ֆնտգլեան. Ուրեմն ինչո՞ւ Լորտ Պրայս հարցուց, թէ արդեօք Պ. Վենիզելոսը ձեզի բարեկամ կը նկատէք: Լորտ Պրայս ոեւէ մեկը չէր, որ այսպէս կասկած մը յայտնեց, պէտք էր ունենար շատ էական պատճառ մը:

Տիար Տէրպէտէրեան. Ե՞րբ ըսաւ այդ խօսքը եւ ի՞նչ առթիւ:

Տիար Ֆնտգլեան. Այս վերջերս էր, թուականը որոշ չեմ յիշեր, բայց անշուշտ Պատուիրակութիւնը գիտէ:

Տիար Չօպանեան. Լորտ Պրայս կրնայ այդպիսի կարծիք մը ունենալ, բայց մենք մեր տեսութիւնը կը հիմնենք մեզի ծանօթ բազմաթիւ իրողութեանց վրայ: Արդէն յոյն կառավարութեան այս շրջանին մէջ մեզի ցոյց տուած աջակցութիւնը բացատրելի ալ կը գտնենք, որովհետեւ երկու ազգերու շահերը կը զուգադիպէին:

Նիստը փակուեցաւ ժամը 5 ու կէսին:

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 61, թթ. 43-64: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ ԺԴ

11 Յունիս 1920, ժամը 4 ին.

նախագահութեամբ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեանի:

Ներկայ էին 18 պատգամաւոր՝

Ամեն. Դուրեան Արքեպիսկ., Տոքթ. Բարսեղեան, Դաւիթ-Բէկ, Թէրզիպաշեան, Թէքէեան, Թումայեան, Հանըմեան, Մսըրլը Պէյ, Տոքթ. Նեւրուզ, Վսեմ. Գ. Նորատունկեան, Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար, Չօպանեան, Պզտիկեան, Սինապեան, Տէրպէտէրեան, Տէր-Ստեփանեան, Տէօվլէթեան, Ֆնտգլեան:

Օրակարգ

1. Շարունակութիւն վիճաբանութեան Ազգ. Պատուիրակութեան համարատուութեան
2. Տեղեկագիր Ազգ. Պատ. Կազմական Կանոնագրի Յանձնաժողովին
3. Վերակազմութիւն Ազգ. Պատուիրակութեան

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Ընթերցում ատենագրութեան

Կարդացուեցան եւ վաւերացուցեցան Յունիս 7-ի եւ Յունիս 8-ի նիստերուն ատենագրութիւնները:

2. Կիլիկիոյ դրութիւնը

Նախագահ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան Ժողովին հաղորդեց հետեւեալ հեռագիրը, զոր ստացած էր Դիւանը.

«Ն. Վսեմութիւն Գաբրիէլ Նորատունկեան, Նախագահ Ազգ. Համագումարի,

12 Avenue de Président Wilson,

Փարիզ.

«Պոսքընն, 9 Յունիս 1920. Վերակազմեալ Հնչակեան եւ Ազգ. Ռամկավար Կուսակցութեանց Ամերիկայի Կեդր. Քոմիթէները, նկատի ունենալով Կիլիկիոյ խնդիրը, իրենց հաւաքական ժողովին մէջ որոշեցին ստիպողաբար խնդրել Համագումարէն՝ հաստատ մնալ Կիլիկան իր նախկին բռնաւորին յանձնելու քաղաքականութեան դէմ: Հայերը չեն կրնար ընդունիլ ո՛չ մէկ որոշում, որ կ'անտեսէ հայոց իրաւունքը Կիլիկիոյ մէջ: Ի գործ դրէք ամեն ոյժ՝ Դաշնակից պետութեանց մօտ, ապահովելու համար հայ կամաւորներու Կիլիկիա երթը:

Ծովիկեան, Տեքիճեան».

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Այս խնդիրը կապ ունի յառաջիկային Պատուիրակութեան տրուելիք տիրէքթիւներուն հետ, եւ պէտք է անցնի օրակարգին: Բայց եթէ Համագումարդ փափաքի, կրնանք այսօր իսկ կարծիքի փոխանակութիւններ ընել անոր մասին:

Տիար Գառնիկ Ֆնտգլեան. Այս հեռագրին յարուցած խնդիրը շատ ծանրակշիռ է եւ մասնաւոր այժմէութիւն մը կը ստանայ այսօրուան թերթերու այն հրատարակութեանց վրայ, որոնց համեմատ՝ Պ. Միլլերան ծանուցեր է, թէ Ֆրանսա պիտի պարպէ Կիլիկիան, վերապահելով լոկ տնտեսական իրաւասութիւններ եւ երկրին վարչութեան ու կարգապահութեան հոգը թողլով Թուրքիոյ, այն Թուրքիային, որուն կարգապահութիւնը շատ լաւ գիտենք, թէ ջարդերու յանգած է սովորաբար: Ասիկա պարզապէս լքումն է հայոց պաշտպանութեան, մինչդեռ Ֆրանսա դեռ վերջերս յայտարարած էր, թէ ինք ձեռնթափ չի կրնար ըլլալ Կիլիկիայէն, քանի որ հոն քրիստոնեայ տարրերը պաշտպանելու պարտականութիւնը ստանձնած է: Պէտք է այժմէն, առանց ժամանակ կորսնցնելու, ամեն կարգի դիմումներ կատարել եւ պահանջել, որ ետ առնուի այդ որոշումը, եւ կամ ըլլայ այն տեսակ կարգադրութիւն մը, որուն մէջ նկատի առնուի նաեւ հայոց կեանքին ապահովութեան կենսական հարցը:

Տիար Ա. Չօպանեան. Կը փութամ յայտնել, թէ Ազգ. Պատուիրակութիւնը, նոյնիսկ այդ հրատարակութիւններէն առաջ որոշած էր դիմում ընել: Ասիկա պարտականութիւն մըն է, զոր այսօրուան թերթերու լուրերը բոլորովին հարկեցուցիչ կը դարձնեն: Կրնաք վստահ ըլլալ, որ Պատուիրակութիւնը չպիտի թերանայ այդ մասին : Կը կարծեմ նոյնիսկ, թէ այդ դիմումը պէտք է ընել ո՛չ միայն ֆրանսական կառավարութեան, այլ միւս բոլոր Դաշնակից պետութեանց ալ, քանի որ անոնք՝ վերջին անցքերուն առթիւ, երբ իրենց պաշտպանութիւնը հայցեցինք Կիլիկիոյ հայոց համար, մեզի ըսին, թէ պէտք է Ֆրանսայի դիմենք: Միչդեռ այսօր ֆրանսացիք՝ ահա կը լքեն Կիլիկիան: Բայց կը կարծեմ, որ այս մասին պարտք կը ծանրանայ նաեւ Համագումարին վրայ. ինք ալ պէտք է խորհրդակցի այս խնդրին նկատմամբ, եւ հանդիսաւորապէս արտայայտուի տէրութեանց մօտ:

Տիար Վահան Թէքեան. Տիար Չօպանեան զիս կանխեց. պիտի ըսէի այն, ինչ որ ըսաւ: Ֆրանսական կառավարութեան այս որոշումը կը ստեղծէ նոր կացութիւն մը, չափազանց վրդովիչ ու վտանգաւոր եւ նոր հարց մը կը դնէ Պատ.-թեան առջեւ: Ատիկա Կիլիկիոյ ապագային հարցն է: Ֆրանսացւոց քաշուելուն հետեւանքով՝ Կիլիկիա կը վերադառնայ իր նախկին դրութեան: Եթէ այս կացութեան հանդէպ դիմում մը ընելով պիտի բաւականանք, չեմ կարծեր, որ մեր պարտքը կատարած ըլլանք:

Համամիտ եմ, որ Համագումարը նոյնպէս զբաղեր այս խնդրով, եւ որոշ ուղղութիւն մը տար Պատուիրակութեան: Այս աշխատակցութիւնը կ'ընդբռնեմ շատ լայն առումով մը: Տրուելիք նոր տիրէքթիւներու կարգին հապճեպ որոշում մը տալով՝ Համագումարը ոչինչ ըրած պիտի ըլլայ. Պէտք է ամբողջ նիստեր յաքթացուին այս խնդրին, բոլորովին տարբեր ոգիով մը: Պէտք է, որ ամէնքս ալ բացարձակապէս սերտ ազգ. միութեամբ եւ համերաշխութեամբ խմբուինք այս հարցին շուրջ: Էականը սա է, որ որոշ քաղաքականութիւն մը ունենանք Կիլիկիոյ մասին: Ի՞նչ պիտի ըլլայ այդ քաղաքականութիւնը: Դաշնակիցներու կողմէ այսպէս լքուելէ վերջ, թերեւս հարկ ըլլայ սոսկ մեր ոյժերուն վրայ հիմնուած քաղաքականութեան մը հետեւիլ: Այնտեղ ոյժեր կան արդէն: Կրնայ պէտք տեսնուիլ զէնքի, ռազմամթերքի հայթայթումով այդ ոյժերը զօրացնելու եւ այդ նպատակով դրամ հաւաքելու, ո՛չ թէ այսօրուէ իսկ Կիլիկիան ապստամբութեան մղելու համար, այլ՝ պատրաստելու համար այն տեսակ վիճակ մը, որպէսզի թուրքին առջեւ խոնարհելու եւ թրքական ծանօթ պայմաններուն ենթարկուելու դառն հարկը վերնայ մեր ազգակիցներուն վրայէն: Եթէ Կիլիկիան Հայաստանի թոքն է, ինչպէս ըսի, անհրաժեշտ է, որ այդ թոքը ազատ մնայ ոեւէ սպանիչ ճնշումէ:

Տիար Զաքարիա Պզտիկեան. Կիլիկիոյ հարցը երկու որոշ երեւոյթ ունի: Նախ՝ որ Կիլիկիա, ինչպէս ցոյց կու տայ դաշնագրին ընկերացող քարտէսը, երկու մասի կը բաժնուի. մէկ մասը կը մնայ Թուրքիոյ եւ միւս մասը կ'ենթարկուի Ֆրանսայի հոգատարութեան՝ կցուելով Սուրիոյ: Միւս երեւոյթը այս օրուան թերթերու կողմէ տրուած լուրերուն հետեւանքով անհրաժեշտ դարձած գրաւման խնդիրն է: Դաշնակից պետութիւնները յանձն առած էին հայ ժողովուրդին պաշտպանութեան համար Կիլիկիան գրաւել մինչեւ դաշնագրին ստորագրութիւնը: Այսօր կը տեսնենք, թէ Ֆրանսա, որ այդ յանձնառութիւնը ստանձնած էր Կիլիկիոյ մէջ, կը հեռանայ այնտեղէն՝ առանց սպասելու դաշնագրին ստորագրութեանը եւ գործադրութեանը: Երբ մենք բողոքեցինք Կիլիկիոյ անապահովութեան եւ կոտորածներուն դէմ, պարզելով այն վտանգաւոր դրութիւնը, որուն մատնուած է այնտեղի հայութիւնը, մեզի միշտ ըսին, որ եթէ նոյնիսկ ստիպուին պարպել Կիլիկիան, գոնէ մինչեւ դաշնագրին ստորագրութիւնը պիտի շարունակեն գրաւումը, եւ պարպելէ առաջ ալ՝ անհրաժեշտ ամեն միջոց ձեռք պիտի առնեն հայ ժողովուրդին ապահովութեան համար: Տակաւին դաշնագիրը չէ ստորագրուած, բայց ամեն բան ցոյց կու տայ, թէ Ֆրանսացիք պիտի պարպեն Կիլիկիան: Եթէ իրօք տեղի ունենայ ասիկա, ի՞նչ պիտի ըլլայ մեր ժողովուրդին դրութիւնը: Թուրքերը մեծապէս լարուած են հայոց դէմ: Ամիսներէ ի վեր տեսակ մը պատերազմական վիճակ գոյութիւն ունի իրենց եւ հայոց միջեւ: Բնականաբար, իրենք ալ զոհեր տուած են եւ վրէժխնդրութեան զգացումով կրնան լեցուած ըլլալ: Եթէ Ֆրանսական զինուորները մեկնին, հաւանաբար տեղի պիտի ունենան շատ անախորժ դէպքեր: Ի՞նչ պիտի ընենք այս կացութեան հանդէպ: Դաշնակիցներէն լքուած ըլլալով, թերեւս մեզի համար իմաստութիւն մը ըլլայ ուղղակի թուրքերուն հետ համաձայնութեան մը գալու, թէ՛ հայ ժողովուրդը փրկելու եւ թէ՛ Կիլիկիոյ համար տեղական ինքնավարութեան հիման վրայ մասնաւոր ռեժիմ մը հաստատել տալու համար: Ասիկա ծանր խնդիր մըն է անշուշտ ամէնուս ալ համար, բայց այս վրդովիչ կացութիւնը հարկեցուցիչ կը դարձնէն զայն: Միւս կողմէ՝ պէտք է, որ Պատուիրակութիւնը բողոքէ Կիլիկիոյ երկու մասի բաժնուելուն, ինչպէս պարպուելուն դէմ: Ժամանակ կորսնցնելու չէ ասոր համար, որովհետեւ թուրքերը առ հասարակ թշնամական զգացումներով լեցուած են հայոց դէմ. արդէն միշտ գէշ աչքով կը տեսնէին թէ՛ Ազգ. Միութեան եւ թէ՛ կուսակցութեանց գործունէութիւնը: Հազիւ Ֆրանսացիք մեկնած, կրնան ջարդեր տեղի ունենալ: Եւ յետոյ, միջոց մը պէտք է խորհիլ այս անգամուան դիմումները արդիւնաւոր դարձնելու համար: Լոնտոն ալ դիմումներ եղան, բայց վստահ եմ, որ արձանագրուեցան լոկ, առանց ոչինչ ընելու: Աշխատելու է, որ այս բախտը չվիճակուի նաեւ կատարուելիք նոր դիմումներուն:

Տիար Ա. Չօպանեան. Եղածը իսկապէս վրդովիչ, զայրացուցիչ է, դրժումն է այն բոլոր խոստումներուն, որոնք եղան մեր դիմումներուն: Կիլիկիան պարպելու այս որոշումը նոր չէ: Պատուիրակութիւնը շատ անգամներ ֆրանսական կառավարութեան դիմելով պարզեց այն բոլոր վտանգները, որոնց կրնային ենթարկուիլ Կիլիկիոյ հայերը՝ եթէ ֆրանսական զինուորները քաշուէին: Միշտ ապահովցուցին մէզ, թէ Կիլիկիա Թուրքիոյ կատարեալ տիրապետութեան չպիտի վերադարձուի, պիտի օժտուի մասնաւոր ռեժիմով մը եւ գրաւումը պիտի տեւէ մինչեւ դաշնագրին ստորագրութիւնը: Այսօր, անակնկալ կերպով կը լսենք, թէ արդէն իսկ սկսած են պարպել, ստեղծելով կացութիւն մը, որ կրնայ աղիտաբեր դառնալ մեր ազգակիցներուն: Այնպէս կը կարծեմ, թէ Պատուիրակութեան եւ Համագումարի Նախագահները, ինչպէս նաեւ Պ. Ահարոնեան անմիջապէս պէտք է դիմեն ֆրանսական կառավարութեան, եւ եթէ երեւի շատ անկէ կարելի ըլլայ գոհացում ստանալ, դիմեն նաեւ միւս Դաշնակից պետութեանց, պարզելով վաղուան հաւանականութիւնները եւ պահանջելով, որ հայ ժողովուրդի կեանքի ապահովութեան համար Դաշնակից զօրքերով գրաւուի Կիլիկիան:

Տիար Թէրզիպաշեան. Յոյս ունի՞ք, թէ կ'ընեն:

Տիար Չօպանեան. Ինչպէ՞ս կարելի է հաստատ յոյս ունենալ: Կրնայ ըլլալ, որ նորէն յուսախաբ ըլլանք: Բայց այս մասին դրական ապահովութիւն մը չունենալը պատճառ մը չէ, որ մենք մեր պարտքը չկատարենք: Գալով Համագումարին, պէտք է իսկոյն զբաղի այս հարցով, ի հարկին մէկ քանի նիստերու մէջ, նկատողութեան առնելով նաեւ այն երկու առաջարկութիւնները, որոնք եղան Տիար Թէքէեանի եւ Տիար Պզտիկեանի կողմէ:

Տիար Թէքէեան. Երկուքն ալ իրարու կը մօտենան արդէն: Պ. Պզտիկեանի կողմէ եղած առաջարկութիւնը կը պատշաճի այսօրուան կացութեան. իմ ըսածս կրնայ պատշաճեցուիլ վաղուան քաղաքականութեան:

Տիար Տէօվլէթեան. Երկու Պատուիրակութեանց Նախագահներն ալ զբաղած են այս հարցով:

Տիար Չօպանեան. Դեռ այսօր յայտնուած խնդիր մըն է:

Տիար Տէօվլէթեան. Կը ցաւիմ, որ Տիար Ահարոնեան այսօր ալ չէ եկած՝ երբ այս աստիճան կենսական խնդիր մը կայ մէջտեղ: Չհաճեցաւ պատասխանել իրեն եղած հրաւէրներուն, մինչդեռ գոնէ այս հարցին համար, որ միութիւն եւ գործակցութիւն կը պարտադրէ ամէնուս, պէտք է ինք իր կողմէ փութար գալ: Կ'առաջարկեմ նաեւ, որ անմիջապէս Նախագահ Ուիլսոնի հեռագրուի Ֆրանսայի խոստումնադրժումը, յայտնելով նաեւ, թէ Ֆրանսա գաղտնի դաշնագրութիւն կը կնքէ թուրքերուն հետ եւ իր այս ընթացքով կը ստեղծէ կացութիւն մը, որ ամէնամեծ վտանգներու կրնայ ենթարկել Կիլիկիոյ հայերը:

Տիար Տէր-Ստեփանեան. Կը կարծեմ, թէ այս վիճաբանութիւը կանխահաս է: Պէտք է օրակարգ անցընել այդ հեռագրին ու անոր յարուցած հարցը եւ խնդրել Պատուիրակութենէն՝ այդ մասին Ֆրանսայի ղեկավար շրջանակներուն մէջ տիրող ուղղութիւնը բուն իսկ աղբիւրներէն իմանալով հաղորդել Համագումարին, որպէսզի կարելի ըլլայ կատարեալ գիտակցութեամբ քննել զայն: Պէտք է նախ գիտնանք, թէ իրապէս պիտի քաշուի՞ն ֆրանսացիք:

Տիար Վ. Թէքէեան. Դժբախտաբար՝«պիտի»-էն աւելի բան մըն է այսօր:

Տիար Բրօֆ. Թումայեան. Անշուշտ միայն դիմումով եւ բողոքով չի բաւականացուիր: Պէտք է ձեռք առնել շատ դրական միջոցներ, բայց զգուշաւորութեամբ, աշխատելով չվիրաւորել ֆրանսական կառավարութիւնը: Որովհետեւ թշնամին աւելցնելու վիճակին մէջ չենք: Եւ ուրիշ խնդիր մը կայ: Պ. Ալպեր Թոմա յայտարարած է Տիար Վարանդեանի, թէ հնարաւորութիւն մը կայ Ֆրանսայի հետ համաձայնութեան մը գալու՝ պետական մանտայի նկատմամբ: Պատուիրակութեան Նախագահը այն կարծիքը յայտնած էր, թէ դիմումի մը համար

գետին կայ այդ առաջարկին մէջ: Արդեօք կարելի չէ՞ այդ հիման վրայ դիմում ընել ֆրանսական կառավարութեան՝ բարեկամական կերպով:

Տիար Վահան Թէքէեան. Տիար Ահարոնեան այդ խնդրին կարեւորութիւնը նուազագոյնս իջեցուց: Պ. Ալպեր Թոմա Տիար Վարանդեանի նամակ մը գրելով, հարցուցած էր, թէ ինչո՞ւ Ֆրանսայի մանտան չենք ուզեր: Տիար Վարանդեան առանց այն համոզումը ունենալու, թէ Պ. Ալպեր Թոմայի խօսքերը կրնան կառավարական տրամադրութեան մը արձագանգը ըլլալ, պատասխանած է, թէ այդ հարցին նկատմամբ կ'արժէ խորհրդակցութիւն մը ունենալ: Պ. Ալպեր Թոմա Փարիզէն չէր գրած այս նամակը. վերադարձին համար ժամադրութիւն մը կու տայ Տիար Վարանդեանի, բայց Պ. Թոմա Փարիզ դարձին հազիւ օր մը կը կենայ եւ առանց Տիար Վարանդեանը տեսնել կարենալու՝ կը ստիպուի մեկնիլ: Կրկին ժամադրութիւն մը որոշուած է մօտաւոր օրուան մը համար: Ասոր յարակից՝ Պատուիրակութեան Նախագահն ալ նոյն օրը ըսաւ, թէ իր ընտանիքին անդամներէն մէկէն ստացած նամակին համաձայն, Պելճիքայի ֆրանսական դեսպանն ալ համիմաստ բան մը ըսած էր Պրիւքսէլի մէջ, խօսակցութեան մը ընթացքին:

Այն տեսակ դրութեան մը մէջ ենք, որ ստիպուած ենք կառչիլ այն բոլոր յոյսի նշոյլներուն, որոնք կը ներկայանան: Եւ արդէն Պատուիրակութիւնը անտարբեր չէ անցած-դարձածէն. դիմումներ ըլլալու վրայ են:

Տիար Չօպանեան. Պիտի լրացնեմ Տիար Թէքէեանի տեղեկութիւնները, աւելցնելով, թէ Պատ.-թեան Նախագահը խնդրեց մեր դատին բարեկամ ֆրանսացի երեսփոխանէ մը, որ յաքթապէս տեսնուի Պ. Միլլերանի հետ եւ ստոյգ տեղեկութիւն մը ստանայ:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Յոյս ունիմ, որ այս իրիկուն իսկ կը ստանամ այս տեղեկութիւնը:

Տիար Վսեմ. Պօղոս Փաշա Համագումարին հաղորդեց հետեւեալ հեռագիրը, զոր ստացած էր Ազգ. Պատուիրակութիւնը.

«Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար,
Նախագահ Ազգ. Պատուիրակութեան,
12, Avenue de Président Wilson
Paris.

Լարնաքա, 11 Յունիս 1920. Զապել Եսայեանէ, Հերեանէ, Խանզատեանէ բաղկացած երեք անդամներով մասնաւոր պատուիրակութիւն մը Կիլիկիայէն մեկնեցաւ Պոլիս: Ստիպողական դիմումներ անհրաժեշտ են քրիստոնէից ապահովութեան համար:

Եսայեան»:

Տիար Տոքթ. Բարսեղեան. Չեմ կարծեր, որ այդ պատուիրակութիւնը դրական արդիւնք մը ձեռք բերէ Պոլսոյ մէջ: Նախ՝ ի՞նչ է Պոլիս երթալուն նպատակը. կա՛մ այն է, որ Դաշնակից պետութեանց քոմիսէրներուն պիտի դիմէ, եւ կա՛մ ուղղակի թուրք կառավարութեան՝ հայ եւ թուրք համաձայնութիւն մը գտնելու համար: Քոմիսէրներէն կարելի չէ բան մը յուսալ, որովհետեւ, վերջին անցքերուն առթիւ ամեն անգամ, որ Պոլսէ դիմում եղաւ իրենց՝ կ'ըսէին, թէ Կիլիկիա Սուրիոյ Բարձր Քոմիսէրներուն ենթակայ է, իրենց ձեռնհասութենէն դուրս է, եւ թէ շատ-շատ իրենք խողովակ մը կրնան ըլլալ՝ մեր դիմումները հաղորդելու համար Փարիզի: Չեմ կարծեր, որ տարբեր պատասխան մը տան այսօր: Գալով թուրքերու հետ բանակցելու տեսակէտին, չեմ կարծեր, որ Պոլիս գացող այդ Պատուիրակութեան անդամները յարմարութիւն ունին նմանօրինակ գործի մը, մանաւանդ որ Պոլսոյ այժմու թուրք կառավարութիւնը ոեւէ ազդեցութիւն չունի Կիլիկիոյ վրայ: Կիլիկիոյ համար կը կարծեմ, թէ լաւագոյն բան մը ըրած պիտի ըլլանք՝ աշխատելով այնտեղ վերահաստատել տալու այն դրութիւնը, որ գոյութիւն ունէր ֆրանսացւոց երթալէն առաջ: Այն ատեն՝ անգլիացիք գրաւած էին երկիրը: Ֆրանսացիք գացին եւ անգլիացիք մեկնեցան: Քանի որ Կիլիկիոյ՝

Դաշնակիցներու կողմէ գրաւումը անհրաժեշտ նկատուած էր ու քանի որ ֆրանսացիք կը մեկնին այսօր, պէտք է նորէն դիմել Անգլիոյ, որպէսզի վերահաստատէ նախորդ դրութիւնը, եւ Կիլիկիան գրաւման ենթարկէ գոնէ մինչեւ դաշնագրին ստորագրութիւնը: Այս մասին՝ ամէնէն ետի պէտք է դիմել Ֆրանսայի: Այս միջոցիս՝ կարեւորագոյն բանը, զոր կրնանք ընել, Անգլիոյ մօտ կատարուելիք դիմումն է:

Տիար Գ. Ֆնտգլեան. Կը ձայնակցիմ: Պէտք է դիմել Անգլիոյ ո՛չ այնքան մեծ յոյսեր դնելով անոր կողմէ ուղղակի գրաւման մը մասին, քանի որ, ինչպէս յայտնի է, բազմաթիւ անգամներ մերժեց արդէն, այլ՝ աշխատելով, որ գոնէ Դաշնակից ոյժերու կողմէ տեղի ունենայ այդ գրաւումը: Այս դիմումին հիմ կրնայ դառնալ այն իրողութիւնը, որ զինադադարէն ետք, երբ տարագիր հայերը կ'ուզէին իրենց ծննդավայրը վերադառնալ, անգլիացիք եւ ֆրանսացիք արգիլեցին, ըսելով, որ լոկ Կիլիկիոյ մէջ կրնան պաշտպանել զիրենք: Այսպիսով՝ տեղի ներքին հայկական գաւառները ըլլալիք ներգաղթերու հոսանքը ամբողջովին Կիլիկիա ուղղուեցաւ: Մարաշի ջարդերու վաղորդայնին, Մանչեսթրի եւ Լոնտոնի հայերս երբ բողոքի մեծ միթինկ մը սարքեցինք, այս իմաստով որոշում տուինք եւ յանձնեցինք Պ. Լլոյտ Ճորճի: Միւս կողմէ, բարլամենթին մէջ, ծանօթ հայասէր Մր. Աւիլեամս երբ հարցուց կառավարութեան, թէ արդեօք տեղեկութիւն ունի՞, որ Մարաշի մէջ 20 000 հոգի ջարդուած են, Պ. Լլոյտ Ճորճ պատասխանեց, թէ այդպիսի հսկայ թիւի մը մասին տեղեկութիւն չէ ստացած, բայց եթէ այդ թիւը ստուգուի, յարեց, Գեր. Խորհուրդը տուժել պիտի տայ Թուրքիոյ՝ այս նոր բարբարոսութիւնը: Պէտք է յիշեցնել այս պաշտօնական յանձնառութիւնը որպէսզի անհրաժեշտ ճնշումը ընեն թուրքերուն վրայ, եւ սպառնան: Ես վստահ եմ, որ եթէ հայոց կեանքի անապահովութիւնը շարունակուի ծանր միջոցներ ձեռք պիտի առնուին թուրքերուն դէմ:

Տիար Թէքէեան. Այո՛, շատ-շատ պիտի ծանրացնեն դաշնագրին պայմանները, ի նպաստ իրենց:

Տիար Գ. Ֆնտգլեան. Ամեն պարագայի մէջ՝ սպառնալիք մը պիտի ընեն: Եթէ, օրինակի համար, Գերագոյն Խորհուրդը հաւաքական սպառնալից ծանուցագիր մը տայ թուրքերուն, կը կարծեմ, որ ան որոշ ազդեցութիւն կ'ունենայ:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Ամէնքս ալ մեծ վրդովման մէջ ենք, եւ այս վրդովումը հասկնալի է: Կիլիկիոյ մասին ստեղծուած է նոր կացութիւն մը, որ շատ աղիտաբեր հաւանականութեանց առջեւ կը դնէ մեզ: Ահաւասիկ հեռագիր մը, որ ղրկուած է Ազգ. Պատուիրակութեան, եւ որ աղէտի մը բօթին համարժէք է ինքնին.

«Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար,
Նախագահ Ազգ. Պատուիրակութեան,
12, Avenue de Président Wilson
Paris

«Գահիրէ, 8 Յունիս 1920. Վերջին տեղեկագիրները կը հերքեն ֆրանսական պաշտօնական յայտարարութիւնները, թէ յաղթական կերպով վերագրաւած են Այնթապը: Թուրքերը Այնթապի մէջ կացութեան տէրն են: Ֆրանսացիք կը պարպեն: 5000 հայերու առաջին քարաւան մը, որուն 1000-ը որբեր, դէպի Պոլիս ուղղուած են ողբալի պայմաններու մէջ: Կիլիկիոյ կացութիւնը յուսահատական է: Ո՛չ մէկ լուր կայ Հաճընէն:

Մալէզեան»:

Վսեմ Պօղոս Փաշա Նուպար. Սարսափելի կացութիւն մըն է ասիկա: Ինչ որ կ'ըլլայ՝ անհաւատալի է պարզապէս: Ֆրանսացիք կատարեալ փախուստի մը մէջ են : Պէտք է անմիջապէս խորհրդակցինք այս խնդրին նկատմամբ, եւ անհրաժեշտ է, որ Համագումարը այս մասին աշխատակցի Պատուիարկութեան, որ նոր տիրէքթիւներ տայ անոր: Նախորդ տիրէքթիւները, որոնց համեմատ շարժեցաւ Պատ.-թիւնը մինչեւ այսօր, արդի կացութեան չեն պատշաճիր: Բախտաւոր ենք գոնէ, որ այս իրողութիւնը տեղի կ'ունենայ Համագումարին հաւաքուած միջոցին: Պէտք է ըսէք մեզի, թէ ի՞նչ

պէտք է ընենք: Որովհետեւ շատ մութ, շատ կնճռոտ կացութիւն մըն է եւ Պատ.-թիւնը անդամներն ալ ձեր ամէնուդ պէս շփոթած են: Անշուշտ պիտի խորհինք, թէ որո՞նք են ամէնէն դրական միջոցները այս աղիտալի դրութիւնը դարմանելու համար: Անձնապէս՝ յոյս չունիմ, որ Անգլիա օգնէ մեզի, քանի որ չի կրնար Դաշնակից պետութիւններէն անկախաբար գործել. եւ Ֆրանսա ու Իտալիա թուրքերուն կողմն են, կը բանակցին քեմալիստներու հետ: Ֆրանսացւոց Կիլիկիա երթալուն նպատակներէն մէկն ալ այնտեղի հայոց պաշտպանութիւնն էր: Այդ մտքով է, որ վերապրող հայերը տակաւ քաշեցին Կիլիկիա, խոստանալով պաշտպանութիւն եւ ապահովութիւն: Իսկ այսօր, կը քաշուին Կիլիկիայէն, ինչպէս յայտնի եղաւ Պ. Միլլերանի վերջին յայտարարութիւններէն: Այդ մասին անշուշտ պէտք էինք ստոյգ եւ հիմնական տեղեկութիւններ ունենալ եւ ճիշդ այդ տեղեկութիւնները կը յուսամ ստանալ Պ. Վիքթոր Պէռարէն, որուն հետ այսօր իսկ ժամադրութիւն մը տուած ենք Տիար Ահարոնեան ու ես: Պիտի տեսնուինք նաեւ երեսփոխան Պ. Պեռէի հետ՝ խորհրդարանի Արտաքին Գործոց Յանձնաժողովին մտածումն իմանալու համար: Կ'առաջարկեմ, ուրեմն, որ վաղն իսկ Համագումարը հաւաքուի յաքթապէս այս խնդրով զբաղելու համար. կը յուսամ մինչեւ վաղը անհրաժեշտ տեղեկութիւններ ստացած ըլլալ: Թերեւս յաջողինք այս անստոյգ կացութեան մասին որոշ բան մը իմանալու եւ ըստ այնմ ուղղելու մեր գործունէութիւնը: Որովհետեւ եղածը անընդունելի է պարզապէս: Երեք ամիս առաջ, ձգենք Կիլիկիան, նոյնիսկ Դամասկոսը, Հալէպը Ֆայսալի թողնելու մտածումն անգամ կ'ընդվզեցնէր զիրենք: Այսօր ո՛չ միայն անոնց խօսքը չեն ըներ, այլ նաեւ կը թողուն Կիլիկիան: Ի՞նչ քաղաքականութիւն է ասիկա, ի՞նչ ազդեցութիւն պիտի կրնանք ունենալ այս քաղաքականութիւնը փոխել տալու եւ մեր ժողովուրդին փրկութեան ամէնանուիրական գործը իրականացնելու համար: Յառաջիկայ նիստին պիտի խորհինք այս ամէնուն նկատմամբ: Բայց մինչեւ այն ատեն՝ պէտք է պարզուած ըլլայ նոյն ինքն Պատուիրակութեան դիրքը: Համագումարը անցեալ տարի տիրէքթիւներ տուած էր Պատուիարկութեան: Մեր գործունէութեան համարատուութիւնն ըրինք: Այդ մասին պէտք է գիտնանք, թէ ի՞նչ պիտի ըլլայ Համագումարին մտածումը, որպէսզի նոր յանձնառութիւններ ստանձնենք եւ նոր աշխատանքի ձեռնարկենք:

Համագումարը առ այժմ բաւական գտաւ այս կարծեաց փոխանակութիւնը եւ որոշեց Կիլիկիոյ դրութեան խնդիրը անցընել օրակարգ:

Օրակարգ

1. Շարունակութիւն վիճաբանութեան Ազգ. Պատ. համարատուութեան

Ազգ. Պատուիրակութեան գործունէութեան նկատմամբ եղած քննադատութեանց մասին խոսք առաւ Նախագահ Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար եւ կարդաց հետեւեալ պատասխանը.

Պատասխան Ազգ. Պատուիրակութեան Նախագահ Վսեմ. Պօղոս Փաշա Նուպարի

Ընթերցման աւարտելէն վերջ, Նախագահ Վսեմ. Տիար Գաբրիէլ Նորատունկեան շնորհակալութիւն յայտնեց Վսեմ. Պօղոս Փաշայի, որ այնքան երկար խօսեցաւ այդ խնդիրներու նկատմամբ, որոնց մասին, յարեց, որքան աւելի մանրամասնութիւն տրուի՝ անշուշտ նոյնքան գոհունակութեամբ պիտի լսուի Համագումարէն: Վսեմ. Նախագահը յետոյ հրաւիրեց պատգամաւորները, որ եթէ դիտողութիւն մը ունին Պատուիրակութեան պատասխանին նկատմամբ՝ ընեն:

Տիար Տիրան Տէօվլէթեան. Կ'ենթադրեմ, որ մեր առաջին պարտականութիւնն է Համագումարիս խորին շնորհակալութիւնը յայտնել Պատուիրակութեան Վսեմ.

Նախագահին եւ անդամներուն, իրենց գործունէութեան մասին: Եթէ եղան քննադատութիւններ, ինչպէս ես ալ ըրի, կը պաքթանին ո՛չ թէ իրենց հիմնական գործունէութեան, այլ՝ վարչական թերութեանց: Նկատի առնելով պարագաներուն փափկութիւնը, պէտք է փակենք այլեւս անցեալը, եւ օրուան կենսական պահանջներուն դարմանը խորհինք:

Տիար Տոքթ. Բարսեղեան. Կը ձայնակցիմ Տիար Տէօվլէթեանի այն խօսքերուն, որոնցմով կ'առաջարկէ փակել վիճաբանութիւնը: Իմ կարգիս՝ կ'առաջարկեմ, որ դադար մը տանք Ժողովին՝ բանաձեւ մը քուէարկելու համար:

Տիար Ա. Թէրզիպաշեան. Պատուիրակութեան Նախագահը իր ճառին մէջ ակնարկներ ըրաւ եղած քննադատութեանց մասին եւ անոնցմէ մէկ քանին passionné անուանեց: Ես, որ ամէնէն աւելի քննադատողը եղայ, կը կարծեմ, թէ չեմ գործածած բառեր, որոնք խորհրդարանական ըլլալով հանդերձ՝ անհամապասխան են եղած այն մեծ յարգանքին, զոր կը տածեմ Պատուիրակութեան Նախագահին հանդէպ : Գուցէ գործածեցի այս տեսակ բառեր: Այս հաւանականութեան համար ես ներողութիւն կը խնդրեմ եւ կը ջանամ այսօր modéré ըլլալ իրեն պէս, շատ աւելի modéré, որպէսզի կարենամ անհետացնել իմ առաջին ճառիս մէջ սպրդած ենթադրական passionné-ը: Պ. Նախագահը անկեղծութիւն եւ համեստութիւն ունեցաւ խոստովանելու, թէ սխալներ տեղի ունեցած են. այս խոստովանութիւնը ինքնին վստահութիւն կը ներշնչէ, վասնզի ով սխալը կը ճանչնայ, որոշ հաւաստիք կը ներշնչէ, թէ չպիտի կրկնէ: Սխալներ վեր հանելը, քննադատելը պարտականութիւն մըն էր, զոր կատարեցինք. գուցէ անոնցմէ շատերը մեր միջավայրի ծնունդն են: Բայց պէտք է օգտուին անոնց դասերէն: Մեր ազգին մէջ մեծ սխալներ կատարուած են եւ հայ ազգը անհաշուելի տուրք տուեր է անոնց: Պէտք է զգուշանանք, որ ուրիշներ ա'լ չգործուին, որովհետեւ այս ազգին մօտ այլեւս նոր տուրքի ոյժ չէ մնացած:

Այս մէկ քանի խօսքը ընելէ զատ, ես պզտիկ քննադատութիւն մը պիտի ընեմ միայն Պ. Նախագահի այն թէզին դէմ, որով կը կարծէ, թէ տիրէքթիւը mandat imporatif չէ, այլ, ինչպէս ինք կը մեկնէ՝ Լառուսի բացատրութեամբ, յանձնարարութիւն մը, զոր ստանձնողը պարտաւոր չէր լրիւ գործադրել:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Մեզի տիրէքթիւ տուած էիք. տիրէքթիւը ինչ նշանակութիւն որ ունի, անոր համեմատ պիտի վարուինք: Եթէ mandat imporatif տուած ըլլայիք, ո՛չ միայն ես, այլ ո՛չ ոք պիտի ընդունէր:

Տիար Ա. Թէրզիպաշեան. Պ. Նախագահը թող ներողամիտ գտնուի, եթէ համաձայն չենք այդ թէզին: Համագումարը իր տիրէքթիւները տուած օրը Լառուսի մեկնաբանութիւնը չունէր ի մտի. այլ ան տիրէքթիւ բառին մէջ կը գտնէր direction, ուղղութիւն իմաստը: Օրինակ՝ ան կը յանձնարարէր բանել ուղղութիւն մը, որ դէպի արեւելք կը տանէր. Պատուիրակութիւնը անշուշտ կրնար ճամբէն քիչ մը աջ, քիչ մը ձախ շեղել, սակայն միշտ դէպի արեւելք երթալով: Բայց կը կարծեմ, որ չէր կրնար կռնակը դարձնել եւ դեպի արեւմուտք երթալ: Ահա՛ թէ ինչպէս կը հասկնամ ես տիրէքթիւ բառը:

Պատուիրակութեան գործերէն օրինակ բերենք: Համագումարը, քննելով Քրտական Հարցը, իր տիրէքթիւներուն մէջ ըսած էր, որ Պատուիրակութիւնը պէտք է դէմ կենայ Քրտական Հարցին:

Ձայներ. Տիրէքթիւներուն մէջ այդպէս բան չկայ:

Տիար Թէրզիպաշեան. Պատուիրակութիւնը, ընդհակառակը, ինքը խնդրած է քրտական անկախութիւնը: Պ. Նախագահը առաւելութիւններ կը տեսնէ այդ դիմումին մէջ, բայց ես կը պնդեմ, որ Թրքահայաստանի հարցին վիժելուն պատճառներէն մէկը այդ դիմումն եղաւ, վասնզի մենք մեր ձեռքով պզտիկցուցինք, նուաստացուցինք մեր դատը: Մենք մեր 40 տարուան միջազգային կերպարանք ունեցող, միլիոնաւոր զոհերու եւ միլիառներու զոհողութեանց գինը եղող դատը հողին հաւասարեցուցինք. մէկ գիծի վրայ դրինք գիր-գրականութիւն չունեցող կիսավայրենի եւ հայկական

ջարդերու մէջ ամէնամեծ դերը կատարող ու Դաշնակից պետութեանց դէմ կռուող քիւրտերու դատին հետ, խնդրեցինք, որ ազգայնական սկզբունքով ստեղծուի Հայաստան մը եւ Քիւրտիստան մը: Արդ, եթէ ազգայնական սկզբունքով քիւրտերը պահանջեն Վանը եւ Պիթլիսը, Պատուիրակութիւնները ինչպէ՞ս պիտի կրնան ետ դառնալ իրենց առած քայլերէն:

Տիար Տոքթ. Բարսեղեան. Այդ ամենը արդեն ըսիք քանի մը անգամ: Եթէ այս ձեւով պիտի խօսուի, ամէնքս ալ խօսք պիտի ուզենք:

Տիար Թէրզիպաշեան. Եւ ուրիշ օրինակ մը: Մայիս 7-ին հրատարակուած Խաղաղութեան Դաշնագրին 22-րդ յօդուածին մէջ, Դաշնակիցները Թրքահայաստանի անկախութեան սկզբունքը ճանչցած եւ նոյն Ազգերուն Ընկերակցութեան պաշտպանութեան ներքեւ առած էին: Այս փաստը՝ Համագումարին մէջ տիրապետող կարծիքին հետ միասին՝ Պատուիրակութեան տիրէքթիւն էր Հայկական Հարցին հետապնդութեան գործին մէջ: Մայիս 28-ի այն աքթը, որով Հայ Հանրապետական կառավարութիւնը ինքզինքը կը հռչակէր նաեւ Թրքահայաստանի կառավարութիւն, բոլորովին հակառակ ուղղութիւն մը կ'ընդգրկէր, Թրքահայստանի հարցին թրքական դրոշմը կը խափանէր եւ ռուսական քաոսին մէջ կը ձգէր զայն: Այս երկու աքտերը իրար խաչաձեւող, իրար չէզոքացնող իրողութիւններ էին: Արդ, Պատ.թիւնը չէր կրնար 22-րդ յօդուածով իր առջեւ բացուած ճամբան թողուլ եւ հետեւիլ դէպի հակառակ կողմը տանող ճամբուն, որպիսին կը բանար Մայիս 28-ի աքթը:

Չեմ կրնար նաեւ անպատասխան թողուլ Պ. Նախագահին indemnité-ի եւ réparation-ի մասին ըրած առարկութիւնները...

Տիար Տոքթ. Բարսեղեան. Բայց Պ. Նախագա'հ, ամբողջ իր նախորդ ճառերն են, որ կը կրկնէ Տիար Թէրզիպաշեան:

Տիար Թէրզիպաշեան. Տիար Բարսեղեան, ես indemnité-ի հարցին վրայ կը խօսիմ եւ դուք կ'արգիլք զիս: Թող այս պարագան արձանագրուի...

Տիար Տոքթ. Բարսեղեան. Նոր բան չկայ իր ըսածներուն մէջ. լսեցինք արդէն: Բանաձեւերուն անցնինք:

Տիար Թէրզիպաշեան. Պատուիրակութեան Նախագահը գերմանական տուգանքէն բաժին պահանջելու մէջ իրաւունք չունենալնիս կը հաստատէ ժիւրիսթ Պ. Պարթոլէմիի վկայութիւնով : Այդ վկայութենէն, զոր իմ ձեռքս ունիմ, երկու բան բացայայտ կ'երեւայ: Առաջին՝ որ Պատուիրակութիւնը հարցը թրքահայերու անունով առաջադրած է Պ. Պարթոլէմիին. մինչդեռ մեզի ծանօթ է, որ այս հարցը ես յուզած եմ թէ' ռուսահայոց եւ թէ' թրքահայոց անունով միանգամայն: Ասկէ կ'երեւայ արդէն, որ Պատուիրակութիւնը դեռ չուզէր ըմբռնել արծարծուած հարցը: Երկրորդ՝ որ Պ. Պարթոլէմի՝ քննելով թրքահայերու անունով, կը գտնէ, որ թէեւ խղճի տեսակէտով իրաւունք ունին, բայց իրենց թրքահպատակութեան հանգամանքը օրինական իրաւունք չի տար իրենց: Այս թէզէն իսկ յայտնի կ'ըլլայ, որ այն պահանջը, զոր թրքահայերու անուամբ կարելի չէ ընել, կարելի է ընել ռուսահայերու անուամբ:

Պ. Նախագահը indemnité-ի եւ réparation-ի գործին մէջ անհրաժեշտ դիմումները կատարած ըլլալը կը յայտնէ : Մենք ցարդ՝ բրոբականտի աշխատութեանց, ինչպէս նաեւ մեզի տրամադրուած տեղեկագրին մէջ չհանդիպեցանք ոեւէ փաստի, որ մեզի կարծել տար, թէ այս ուղղութեամբ աշխատանք տարուած է. մենք տեսած ենք մէկ աշխատանք միայն, Լոնտոնի մէջ ներկայացուած պիւտճէն, ուր ցոյց տրուած է, թէ ութ տարիէն Հայաստան ի վիճակի պիտի ըլլայ 650 000 ոսկիի հասոյթի առաւելութիւն մը ունենալ: Վարդագոյն պիւտճէ մը, որ անշուշտ ներշնչողը եղած է այն դաշնագրին, որուն մէջ պէտք չեն տեսած ո'չ réparation-ի, ո'չ ալ indemnité-ի իրաւունք ճանչնալ մեզի:

Ես համաձայն չեմ նաեւ Պ. Նախագահի այն տեսակէտին, որ իրենք պարտաւոր էին զիջիլ Հայաստանի մասերը: Պատուիրակութիւնները աւելորդ անհամբերութիւն ցոյց տուած են, եւ պետական մարդոց զանազան յայտարարութիւնները վերջնական

համարելով՝ զանազան զիջումներ ըրած են: Պատուիրակութիւնը մէկ պատասխան միայն ունէր, սա՝ թէ Համագումարէն ստացած իրաւասութիւնը թոյլ չէր տար իրեն կամովին զիջումներ ընելու: Փոխանակ այս պատասխանը տալու, ինչ որ արդէն իր վրայ դրուած պարտականութիւնը կը պահանջէր, զիջումներու փոփոխակի քաղաքականութիւն մը ձեռք առած է, մինչդեռ տեսնուեցաւ Սան Ռեմոյի որոշումներէն, որ Դաշնակիցներու միջեւ վերջնական ոչինչ չէ եղած: Նոյնիսկ յայտարարուեցաւ, թէ Ֆրանսա պիտի զիջէր Կիլիկիան՝ եթէ Ամերիկա ընդունէր Հայաստանի մանտան: Բայց մենք տեսանք նոյնպէս, որ 15 օր առաջ միայն Ամերիկա մերժեց Հայաստանի մանտան:

Պատուիրակութիւնը թող բարի ըլլայ ուրեմն խոստովանելու, որ Խաղաղութեան Դաշնագրի 22-րդ յօդուածէն շեղումը, Կիլիկիային կամովին ու անժամանակ զիջումը սխալներ էին, որոնք իրենց բաժինը եւ դերը ունին այս դաշնագրին մէջ, ուր թաղուած են թրքահայերու ամեն իրաւունքները:

Տիար Բրոֆ. Թումայեան. Թէեւ իմ մէկ քանի հարցումներուն պատասխան չտրուեցաւ, բայց հոգ չէ: Պէտք կը տեսնեմ միայն կրկնելու, թէ այսուհետեւ պէտք է աւելի սերտ շփում մը Պատուիրակութեան եւ ժողովուրդին միջեւ: Բացատրեցի արդէն, թէ ի'նչ անպահեստութիւններ կրնան ծագիլ ժողովուրդին անտեղեակ մնալէն: Ինչպէս գիտենք, անցեալ տարի Համագումարի նիստերը դռնփակ եղան: Անշուշտ լաւ էր, որ դռնփակ ըլլային: Բայց ասիկա շատ մը զանգատներու տեղի տուաւ: Սակայն, գոնէ պէտք էր տեղեկութիւն տրուեր անոր գործունէութեան մասին:

Տիար Թէքէեան. Տրուեցաւ:

Տիար Չօպանեան. Նոյնիսկ տպուեցաւ եւ հրատարակուեցաւ:

Տիար Բրոֆ. Թումայեան. Ես պիտի խնդրէի, որ Վսեմ. Փաշային պատասխանը նոյնպէս հրատարակութեան տրուեր:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Խնդրէն կը շեղինք:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Ատիկա վերջի խնդիր է:

Նիստը դադրեցաւ պահ մը, եւ դադարի միջոցին Դիւանին յանձնուեցան հետեւեալ չորս բանաձեւերը, որոնք կարդացուեցան երբ նիստը վերսկսաւ.

Ա. բանաձեւ.

Ազգ. Համագումարը՝ լսելով Ազգ. Պատուիրակութեան համարատուութիւնը մէկ տարուան իր գործունէութեան մասին, ինչպէս նաեւ անոր թեր ու դէմ քննադատութիւններն ու գնահատումները, լսելով նաեւ Ազգ. Պատուիրակութեան Նախագահին եւ անդամներուն պատասխան-բացատրութիւնները, վերջացած կը յայտարարէ այս հարցը եւ կ'անցնի օրակարգի յաջորդ խնդրին:

Տոքթ. Ա. Բարսեղեան
Մ. Ս. Դաւիթ-Բէկ
Զ. Յ. Պզտիկեան
Տէրպէտէրեան
Ա. Հանըմեան

Բ. բանաձեւ.

Համագումարս՝ լսելով Ազգ. Պատուիրակութեան համարատուութիւնը, ինչպէս նաեւ անոր թեր ու դէմ եղած քննադատութիւնները, նաեւ Ազգ. Պատուիրակութեան Վսեմ. Նախագահին պատասխան-բացատրութիւնները, իր շնորհակալութիւնները յայտնելով, վերջացած կը յայտարարէ այս հարցը եւ կ'անցնի օրակարգի յաջորդ խնդրին:

Տիրան Տօվլէթեան

Գ. բանաձեւ.

Համագումարս, լսելով Ազգ. Պատուիրակութեան միամեայ գործունէութեան համարատուութիւնը եւ անոր շուրջ տեղի ուեցած վիճաբանութիւնները, նկատի

առնելով այն դժուարին պայմանները ու Դաշնակից մեծ պետութեանց քաղաքականութեան մէջ յառաջ եկած այն յեղակարծ շրջումները, որոնց արդիւնք եղած է փոքր ազգութեանց իրաւանց լքումը, նկատի ունենալով այս պայմաններուն դէմ հակազդելու համար Ազգ. Պատուիրակութեան ունեցած խիստ փոքր միջոցները բարոյական թէ նիւթական, կ'արձանագրէ Ազգ. Պատուիրակութեան տեղեկատուութիւնը եւ կ'անցնի օրակարգին, յանձնարարելով, որ ամեն կարելի ազդու միջոցները եւ արթուն հետամտութիւն գործադրէ, ապահովելու համար ազգին կենսական պահանջները, զորս նոր տիրէքթիւներու մէջ Համագումարը պիտի բանաձեւէ:

Գ. Ֆնտգլեան

Դ. բանաձեւ.

Համագումարը, լսելով Ազգ. Պատուիրակութեան համարատուութիւնը եւ անոր շուրջ փոխանակուած քննադատութիւններն ու պատասխանները, կ'անցնի օրակարգին:

Ն.Տէր-Ստեփանեան

Օրը տարաժամած ըլլալով, Համագումարը որոշեց յառաջիկայ նիստի մը յետաձգել բանաձեւերու քուէարկութիւնը:

Նիստը փակուեցաւ ժամը 7-ին:

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 63, թթ. 1-22: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ ԺԵ

12 Յունիս 1920, ժամը 4 ին,

նախագահութեամբ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեանի

Ներկայ էին 16 պատգամաւորներ՝

Ամեն. Դուրեան Արքեպիսկ., Տոքթ. Բարսեղեան, Դաւիթ-Բէկ, Թէրզիպաշեան, Թէքէեան, Բրօֆ. Թումայեան, Հանըմեան, Մսըրլը Պէյ, Գ. Նորատունկեան, Չօպանեան, Պզտիկեան, Սինապեան, Տէրպէտէրեան, Տէր-Ստեփանեան, Տէօվլէթեան, Ֆնտգլեան:

Մասնաւոր հրաւէրով՝ այս նիստին ներկայ գտնուեցաւ նաեւ Կիլիկիոյ Վեհ. Տ. Սահակ Կաթողիկոսը, իւր հետեւորդ Գիւտ Վ. Խուպէսէրեանի հետ միասին:

Օրակարգ

1. Կիլիկիոյ կացութիւնը
2. Շարունակութիւն վիճաբանութեան Ազգ. Պատ. համարատուութեան
3. Տեղեկագիր Ազգ. Պատ. Կազմական Կանոնագրի Յանձնաժողովին
4. Վերակազմութիւն Ազգ. Պատուիրակութեան

Օրակարգ

Կիլիկիոյ կացութիւնը

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Համագումարիս անունով շնորհակալութիւն կը յայտնեմ Կիլիկիոյ Վեհ. Կաթողիկոսին, որ կը բարեհաճի իր ներկայութեամբ պատուել մեր այսօրուան նիստը: Վեհափառը անշուշտ իր իմաստուն խորհուրդներով ու թելադրանքներով պիտի մասնակցի մեր խորհրդակցութեանց, որոնց առարկան իր հոտն է եւ իբր մօտէն տեղեակ տեղւոյն անցքերուն, պիտի տայ անհրաժեշտ լուսաբանութիւնները մեզ ամէնքս վրդովող այս ծանրակշիռ խնդրին նկատմամբ :

Պօղոս Նուպար Փաշա թէեւ ներկայ պիտի ըլլայ մեր այսօրուան խորհրդակցութեանց, բայց փոքր ինչ հիւանդ ըլլալուն՝ դժբախտաբար չպիտի կրնայ գալ:

Կրնանք ուրեմն սկսիլ Կիլիկիոյ կացութեան քննութեան, որոշելու համար այն միջոցները, որոնք անհրաժեշտ են այդ կացութիւնը դարմանելու: Պատուիրակութեան անդամները, որոնք ներկայ են, բնական է, ի բացակայութեան Վսեմ. Նախագահին, կու տան հարկ եղած բացատրութիւնները: Վերջերս հրատարակուած լուրեր ծանուցած էին, թէ ֆրանսացիք փայլուն յաղթանակ մը տարած են Այնթապի մէջ եւ թէ կացութիւնը բարւոքած է այն կողմերը: Կ'երեւայ, սակայն, թէ այս լուրերը շատ ճիշդ ըլլալու չեն, որովհետեւ մէկ կողմէ կը ծանուցանեն, թէ Այնթապ պաշարեալ եւ վերին աստիճան անձկութեան մէջ է տակաւին, եւ միւս կողմէ կ'ըսուի, թէ ֆրանսական կառավարութեան զանազան պաշտօնական շրջանակներուն մէջ տեղի կ'ունենան կարգ մը խորհրդակցութիւններ, որոնք կապ ունին Կիլիկիա գտնուող ֆրանսական զինուորները ետ կանչելու մտադրութեան մը հետ: Ոմանք՝ նուազ լաւատես են եւ չեն հաւատար, որ ֆրանսացիք ամբողջովին պարպեն Կիլիկիան. նաեւ իմացուեցաւ, որ 20 օրուան զինադադար մը կնքուեր է թուրքերուն հետ, իբր հետեւանք այն բանակցութեանց, զորս ֆրանսացիք կատարած էին Մուսթաֆա Քեմալ Փաշայի հետ: Այս եւ նմանօրինակ լուրերը անշուշտ տարածուած են նաեւ Կիլիկիա, եւ մեծ վրդովման մատնած են տեղւոյն թէ՛ հայ եւ թէ՛ առհասարակ բոլոր քրիստոնեայ ժողովուրդները, ինչպէս կ'երեւայ հաւաքական հեռագրէ մը, զոր Իզմիրի ճամբով ղրկած են Դաշնակից ու չէզոք պետութեանց նախարարապետներուն, եւ որուն մէկ օրինակն ալ Փարիզի հելլէնական դեսպանատան միջոցով հաղորդուած է Ազգ. Պատուիրակութեան եւ յանձնուած Դիւանին: Լաւ կ'ըլլայ, որ խորհրդակցութեանց սկսելէ առաջ Համագումարը տեղեկանայ այդ հեռագրին:

Կարդացուեցաւ յիշեալ հեռագիրը, որուն պատճէնը Իզմիրէն ղրկուած էր Յունիս 7-ին:

Ատանա, 15 Մայիս 1920.

Կիլիկիոյ ամբողջ քրիստոնեայ բնակչութիւնը, այսինքն՝ Հայ Կաթոլիկ եւ Հայ Բողոքական յարանուանութիւններով, Յոյն Օրթոտոքսները, Սուրիանի Կաթոլիկները, Ասորիները, Նեստորականները, Քաղդեացի Կաթոլիկները, իտալական գաղութը, ինչպէս նաեւ Կիլիկիոյ Մասօնական Օթեակներու Համաժողովը, որոնք իրենց կենսական շահերը սերտիւ միացուցած են համանման ըմբռնումով մը, որոնք անբաժանելի կերպով համերաշխ կը մնան իրենց ամէնուն մէկանց գոյութեան սպառնացող վտանգներուն դէմ, նոյն ատեն՝ խորապէս յուզուած եւ ահաբեկուած կարգ մը տարաձայնութեանց հանդէպ, որոնց համաձայն՝ Դաշնակից պետութիւնները, հակառակ այն հաւաքական բողոքին, զոր իրենք նախապէս վերջին Մարտ 31-ին, միշտ տրամադրութիւն ցոյց կու տան, նոյնիսկ որոշեր են եղեր Կիլիկիոյ մէջ պահել թրքական գերիշխանութիւնն ու անօրինական վարչութիւնը, պարզ ելեւմտական վարչութեան քոնթրոլով մը անգամ մըն ալ, ամենաբուռն կերպով բողոքելով այս հրէշային անիրաւութեան դէմ, որ կը համապատասխանէ անտեղին բոլոր զուլումին յաւերժացման եւ 275.000 քրիստոնեայ բնակչութեան մը մահուան դատապարտութեան: Յիշեցնելով 1895-ի եւ 1909-ի ջարդերը, ինչպէս նաեւ տեղահանութիւնները եւ անլուր վայրագութիւնները, որոնք գործուեցան վերջին պատերազմին ընթացքին, մասնաւորաբար արդի դժուարին կացութիւնը, որուն մէջ քեմալիսթ աւազակները տեղական եւ կեդրոնական թուրք իշխանութեանց բացայայտ մեղսակցութեամբ, նոյնիսկ ֆրանսական քոնթրոլին ու գրաւման հակառակ, 20 000 քրիստոնեաներուն ջարդեցին Մարաշի եւ շրջականերուն մէջ եւ կը շարունակեն հուրի ու սուրի մատնել ամբողջ երկիրը, գերագոյն կոչ մը կ'ուղղենք իւրաքանչիւր Դաշնակից եւ ընկերակից պետութեան, բոլոր չէզոք պետութեանց, Ն. Սրբութիւն Պապին, ինչպէս նաեւ ամբողջ քաղաքակիրթ աշխարհի հանրութեան կարծիքին,

1. Որպէսզի ազդու կէրպով միջամտեն, որ զինուորական դրական միջոցներ ձեռք առնուին զսպելու համար այդ ապստամբական եւ բարբարոս արարքները, ինչպէս նաեւ պաշարուած քաղաքները ազատելու եւ քրիստոնեայ արիւնի հեղումը դադրեցնելու համար.

2. Կը պահանջենք, որ այսուհետեւ ջնջուի թրքական վարչութեան եւ գերիշխանութեան ամեն հետք Կիլիկիոյ մէջ, եւ քրիստոնեայ վարչութիւն հաստատուի՝ արդարութեան, մարդասիրութեան ու եւրոպական քաղաքակրթութեան սկզբունքներու հիման վրայ, մեծ պետութեան մը հոգատարութեան տակ: Երջանիկ պիտի ըլլայինք, եթէ այս մանտան վստահուեր Ֆրանսայի, որ դարաւոր աւանդութեամբ պաշտպան բարեկամն է Արեւելքի քրիստոնեաներուն, պայմանաւ, որ ամուր երաշխաւորութիւններ տրուին, թէ ֆրանսական քաղաքականութիւնս այս դերին մէջ պիտի ըլլայ եւ մնայ միշտ համաձայն իր փառաւոր աւանդութեանց եւ վերոյիշեալ սկզբունքներուն ու պահանջմանց, առանց բնաւ ազդուելու նկատումներէն բուռ մը անխիղճ դրամասէրներու, որոնք անկարող թափանցելու Ֆրանսայի ճշմարիտ բարոյական, նոյնիսկ նիւթական շահերուն, կը շարունակեն պաշտպանել թրքական յաւակնութիւնները այս քրիստոնեայ երկրին մէջ: Եթէ, հակառակ մեր կրկնակի բողոքներուն, պետութիւնները պնդեն իրենց որոշման վրայ՝ մեզ կրկին մեր դահիճներուն յանձնելով՝ Կիլիկիոյ քրիստոնեաները կը նախընտրեն խմբովին մեկնիլ երկրէն, քան ենթարկուիլ ռեժիմի մը, որուն տակ մեր կեանքը, ինչքը եւ պատիւը մշտապէս ենթակայ պիտի մնան թուրքերու քմահաճոյքին, ինչ որ ըլլան հաստատուած քոնթրոլը ու թուղթի վրայ դրուած ապահովութիւնները:

Այս դժբախտ հաւանականութեան պարագային, կը խնդրենք շահակից պետութիւններէն, որ միջոցներ ձեռք առնեն բոլոր քրիստոնեայ ժողովուրդները ապահով տեղ մը փոխադրելու համար:

15 Մայիս 1920

Ատանայի Հայոց Առաջնորդ Գէորգ Վրդ. Ասլանեան
Ամբողջ Հայաստանի Պատուիրակութեան ներկայացուցիչ՝
Մ. Տամատեան
Ատանայի բողոքական հայոց երէց՝
Կ. Հ. Յարութիւնեան
Արդի Կաթոլիկ Հայոց Առաջնորդ՝
Բասգալ Քէքլիկեան
Ատանայի Ազգ. Միութեան Նախագահ՝
Տոքթ. Մնացականեան
Ատանայի Քաղ. Ժողովոյ ատենապետ՝
Կ. Քէշիշեան
Ատանայի Յոյն Օրթոտոքս հասարակութեան
ներկայացուցիչ՝ Ա. Գարաեուսուֆօղլու
Ա. Կ. Սիմէօն օղլու
Տոքթ. Ժ. Ռանիէլիտէս
Կ. Կրիկորիատէս
Կաթոլիկ Սուրիանիներու Պատր. Փոխանորդ՝
Էլ-խուրի Փիլիպպոս
Կիլիկիոյ Քաղդէացւոց ընդհ. հովիւ՝
Հ. Ժոզէֆ Թիւֆէնկճի
Ատանայի Ասորիներու Պատրիարքական Փոխանորդ՝
Հ. Ժան
Ատանայի Մասօնական Օթեակին կողմէ
Աւետիս Աւետիսեան
Ատանայի Սուրիական Ազգ. Միութեան Դեր-Նախագահ՝

Ժան
Իսկականի համաձայն է
գործակալ՝ Հայ ապաստանեալներու
/Լորդ Մայէրս Օֆ Լոնտօն օգնութեան քսմիթեն/ w.a Kenndu M.D.
Մերձաւոր Արեւելքի Տոքթ. Վ.Ա. Քենեդի օգնական քսմիթեի մասնաճյուղին
Տոքթ. Ուիլիամ Ս. Տադ./S. Dodd M.D./

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Կիլիկիոյ հայ եւ քրիստոնեայ ժողովուրդները անցեալներս ալ նմանօրինակ հաւաքական գիր մը ղրկած էին, որու, անշուշտ, Պատուիրակութեան կողմէ ընթացք տրուած է:

Տիար Արշակ Չօպանեան. Ինչ որ կը ղրկուի, իսկոյն կը հաղորդուի պաքթանեալ պաշտօնատան:

Տիար Տիրան Տէօվլէթեան. Կը փափաքինք, որ Ն. Վ. Կաթողիկոսը, իբր մօտէն տեղեակ Կիլիկիոյ անցքերուն, մեզի պարզեր ճշգրիտ կացութիւնը, եւ յայտներ, թէ ի՞նչ դիմումներ ըրաւ Անգլիոյ մէջ, ուրկէ կը վերադառնայ:

Վեհ. Տ. Սահակ կաթողիկոս. Կիլիկիայէն մեկնելուս երեք ամիսը անցաւ, եւ ես ալ հեռուէն ստացուած լուրերով միայն տեղեակ եմ կացութեան: Այս վերջին հեռագիրը պէտք է ղրկած ըլլան ազդուելով դաշնագրին նկատմամբ ստացուած տեղեկութիւններէ, որոնք կը յայտնէին, թէ Կիլիկիա երկու մասի պիտի բաժնուի: Երբ մեկնեցայ Կիլիկիայէն՝ կացութիւնը շփոթ էր ու ծանր: Եկայ այստեղ՝ ֆրանսական կառավարութեան պարզելու իրերու դրութիւնը, մասնաւորաբար յայտնելու, թէ այնտեղ գտնուող ֆրանսական ոյժերը անբաւական են Կիլիկիոյ խաղաղութիւնն ու հանգստութիւնը ապահովելու համար: Միւս կողմէ, աշխատեցայ, որ հայերն ու թուրքերը նոյն աստիճանին վրայ ըլլան, ինչպէս կ'ըլլայ Կիլիկիոյ մէջ, պարզեցի հայոց սէրը Ֆրանսայի մասին աւելցնելով, թէ անոնք իրենց շահերը կը նկատեն ֆրանսական շահերը: Այդ առթիւ ըսի, որ եթէ դժուարութիւններ կան նոր զօրք ղրկելու, տեղւոյն հայ ժողովուրդը պատրաստ է բոլորուելու ֆրանսական իշխանութեանց շուրջը, պաշտպանելու համար թէ՛ իր կեանքը եւ թէ՛ ֆրանսական դրօշին պատիւը, կը բաւէ որ ֆրանսական կառավարութիւնը զինէ եւ իր սպաներով կազմակերպէ զանոնք: Եղած հարցումի մը պատասխանելով, ըսի տակաւին, թէ 8-10 000 զէնք բաժնելով հայոց, կարելի պիտի ըլլայ ստեղծել բաւարար ոյժ մը այդ նպատակին իրականացման համար: Խոստացան, յայտնելով նաեւ, թէ նոր զօրք պիտի ղրկուի կամ արդէն իսկ ղրկուած է: Վերջին լսածիս համեմատ, մաս մը զօրք ղրկուեր է իրապէս: Ասկէ վերջ ի՞նչ անցաւ-դարձաւ, որ նոյնիսկ իրենց գրաւման ենթակայ քաղաքներն ալ կը պարպեն: Ասիկա չենք գիտեր:

Անգլիոյ մէջ՝ չէի կրնար անշուշտ այստեղ կատարած դիմումներու հակառակ ուղղութեան մը հետեւիլ: Քանի որ անգամ մը դիմեր էի Ֆրանսայի, կրնայի վիրաւորել զայն՝ դիմում կատարելով նաեւ Անգլիոյ: Ստիպուած էի չափազանց զգուշաւոր ըլլալ նոյն ինքն Կիլիկիոյ ժողովուրդին բարիքին համար: Միայն, Կիլիկիոյ բաժանման մասին բողոքագիր մը ներկայացուցի անգլիական կառավարութեան, ինչպէս արդէն ամեն Դաշնակից պետութեանց:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Պատասխան մը ստացա՞ք անգլիական կառավարութեան կողմէ:

Վեհ. Տ. Սահակ Կաթող. Լորտ Քըրզըն պատասխանեց, թէ ստացած է եւ Պ. Լլոյտ Ճորճի յանձնած է:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Ֆրանսական կառավարութիւնը զէնք յանձնե՞ց Կիլիկիոյ հայոց:

Վեհ. Տ. Սահակ Կաթող. Մաս մը տուին: Եթէ տուած չըլլային, օրինակի համար Հաճընն ինչպէ՞ս կրնար սոսկ իր միջոցներով այսքան ամիսներ դիմադրել զինքը ամեն կողմէ շրջապատող այն բարբարոս խուժաններուն:

Տիար Զաքարիա Պզտիկեան. Երեւցածին նայելով, յայտնի չկամութիւն մը կայ ֆրանսացւոց կողմէ, ո՛չ միայն թուրքերու, այլ նաեւ հայոց մասին: Որովհետեւ չեմ կարծեր, թէ իրենց ունեցած ոյժերը իրօք անբաւական ըլլային թուրքերուն դէմ: Օրինակի համար՝ Պոզանթիի մէջ 5000 զինուոր ունէին, ինչպէս գրուեցաւ վերջերս: Զարմանալի է, որ այդքան զինուորով կրցած չըլլան պահել Պոզանթին, որ պզտիկ տեղ մըն է եւ պաշտպանուած է շատ անառիկ դիրքերով: Թուրքերը, ինչպէս կը տեղեկացնեն վերջին նամակները զորս ստացած եմ, կանոնաւոր բանակ չեն հանած ֆրանսացւոց դէմ: Խմբական մեծ յարձակումներ չեն ըրած: Աւելի՝ չեթէներ են, որոնք կը գործեն զանազան տեղերու մէջ, նոյնիսկ Ատանայի մօտերը: Ատանայէն դուրս բերելը անհնար է հայոց: Բայց միւս կողմէ, հասած նամակները կ'ըսեն, թէ Կիլիկիոյ ամենէն լաւ պաշտպանուած քաղաքն Ատանան է: Քաղաքին հայերը շատ վախ չունին բնիկ իսլամներէն: Շրջականները գործող չեթէներն են, որ մտահոգութիւն կը պատճառեն իրենց:

Այդ բոլոր խումբերը շատ լաւ զինուած են, նոյնիսկ միթրայէօզներ, երբեմն նաեւ թնդանօթ ունին իրենց հետ:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Թալան, եւ այլն կը կատարե՞ն այդ խումբերը:

Տիար Զաքարիա Պզտիկեան. Ո՛չ, իրենց նպատակը քաղաքական է: Խնդիր է, սակայն, թէ Ատանա հիմակուան պէս ապահով պիտի մնա՞յ՝ եթէ ֆրանսացիք քաշուին: Մինչեւ վերջերս՝ լուրերը շատ լաւ էին. հասած նամակներէն կ'երեւար, թէ առատ գործ կայ քաղաքին մէջ: Բայց Յունիս մէկ թուական նամակ մը, որ Պէյրութէն ղրկուած է, կը ծանուցանէ, թէ քանի ատենէ ի վեր այլեւս բնաւ լուր չեն ստանար Ատանայէն:

Տիար Բրօֆ. Թումայեան. Ինչպէս կ'ըլլայ, որ ֆրանսացիք հայերուն ու թուրքերուն միեւնոյն կասկածով կը նային Կիլիկիոյ մէջ. պատճառ մը կա՞յ:

Տիար Զաքարիա Պզտիկեան. Կիլիկիոյ հայերն ալ այդ հարցումը կ'ընեն:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Յայտնի է արդէն, թէ մերիններն անհրաժեշտ զգուշաւորութիւնը չկրցան ունենալ, շրջահայեաց չեղան եւ ֆրանսացւոց կասկածը հրաւիրեցին իրենց վրայ: Միւս կողմէ, այնտեղ գտնուող ֆրանսացի զօրքերն ալ մեծ մասամբ գաղթավայրերէ եկած ըլլալով, կ'երեւայ թէ շատ բարեկիրթ եւ լաւ տարրեր ըլլալու չեն, որով չեն կրցեր պէտք եղածին պէս գնահատել մեր ժողովուրդը: Այս երկու գլխաւոր պատճառներով, խնդիրը արծարծուեր է: Հիմա, ինչպէս ծանօթ է, ֆրանսական կառավարութիւնը կամ այնտեղի ֆրանսական իշխանութիւնները Մուսթաֆա Քեմալ Փաշայի հետ բանակցութիւն կատարեր եւ համաձայնութիւն մը կնքեր են: Չենք գիտեր, թէ ի՞նչ պայմաններով: Պատուիրակութեան Վսեմ. Նախագահէն խնդրած ենք, որ Քէ տ'Օրսէէն տեղեկութիւն առնէ կնքուած համաձայնութեան մասին: Արդեօ՞ք Պատուիրակութեան ներկայ անդամները տեղեկութիւն մը ունին: Համագումարը անշուշտ գոհութեամբ պիտի լսէ զիրենք:

Տիար Արշակ Չօպանեան. Ինչ որ պիտի ըսեմ՝ կապ չունի Պատուիրակութեան Նախագահին ունենալիք տեսակցութեան եւ այդ մասին տալիք տեղեկութեանց հետ: Աւելի անձնական տեսակցութեան մը արդիւնքն է, զոր պիտի հաղորդեմ: Այսօր տեսնուեցայ Արտաքին Գործոց Նախարարութեան Արեւելեան Ճիւղի Դեր-տնօրէն Պ. Պարժըքոնի հետ, եւ երբ հաղորդեցի Կիլիկիոյ պարպումին նկատմամբ մեր ունեցած բոլոր տեղեկութիւնները, Պ. Պարժըքոն զարմանք յայտնեց: Մասնաւորաբար Այնթապի պարպուած ըլլալը ծանուցանող տեղեկութեանց ակնարկելով, ըսաւ թէ այդպէս բան չկայ: Հարցումս կրկնեցի, աւելցնելով, թէ լոկ թերթերու հրատարակութիւններ չեն, այլ՝ ուրիշ աղբիւրներէ ստացուած տեղեկութիւններ ալ կը ծանուցանեն, թէ ֆրանսական զինուորները իրօք կը քաշուին Կիլիկիայէն: Բացատրեցի նաեւ այն յուզումը, որուն մատնուած էինք այս վրդովիչ լուրերը առնելով: Պ. Պարժըքոն ըսաւ դարձեալ, թէ ինք գոնէ բան մը չի գիտեր այս մասին եւ թէ ամբողջ գիտցածը սա է, որ զինադուլ մը կնքուած է թուրքերուն հետ: Հարցուցի, թէ ինչպէ՞ս կ'ըլլայ, որ զինադադարի մէջ զինադադար մը կը կնքուի, քանի որ անհերքելի է, թէ Պ. Ռոպէր տը Քէ գացեր է այդ

մասին բանակցելու Մուսթաֆա Քեմալի հետ: Պ. Պարժըքոն յայտնեց, թէ կնքուած զինադուլը լոկ զինուորական բան մըն է, քաղաքական նշանակութիւն մը չունի բնաւ: Համագումարիդ կը հաղորդեմ նաեւ, թէ Պ. Ռոպէր տը Քէ, որ Պոլիս անցած էր, Փարիզ եկեր է: Պէտք է անշուշտ զինքը տեսնել եւ անձամբ տեղեկութիւն ստանալ իրմէ: Ասիկա ալ պիտի ընէ Պատուիրակութիւնը:

Տիար Տիրան Տէօվլէթեան. Պ. Վենիզելոս ալ Փարիզ կը գտնուի: Պատուիրակութիւնը մտադի՞ր է զայն ալ տեսնել:

Տիար Ա. Չօպանեան. Պատուիրակութիւնը շատ մը կարեւոր առիթներու մէջ տեսնուած է Պ. Վենիզելոսի հետ եւ այս անգամ ալ պիտի տեսնուի: Բայց չեմ կարծեր, որ ինք ալ հիմա որոշ բան մը գիտնայ Մուսթաֆա Քեմալի եւ ֆրանսացւոց միջեւ կնքուած համաձայնութեան մասին: Կ'ենթադրեմ, սակայն, թէ ինք ալ մեզի պէս վրդովուած պէտք է ըլլայ այդ համաձայնութեան պատճառաւ, քանի որ տարակոյս չկայ, թէ ֆրանսացւոց հետ կռիւը դադրեցնելով, թուրքերը Կիլիկիոյ մէջ իրենց ունեցած ոյժերուն մեծ մասը պիտի բերեն կեդրոնացնեն յունական ճակատներուն դէմ:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Պէտք է խորհիլ հիմա, թէ ի՞նչ կրնանք ընել թէ՛ տեղին վրայ եւ թէ՛ այստեղ: Փարիզի մէջ ըլլալիք ձեռնարկներու մասին վերջնական եզրակացութեան մը յանգելու համար անհրաժեշտ եղած տեղեկութիւնները տակաւին չառնուեցան: Պ. Պալէոլոկի հետ տեսակցութիւն մը պէտք տեսնուած էր. դեռ հնարաւոր չեղաւ: Պ. Պէլլէ տեղեկութիւններ պիտի տար Արտաքին Գործոց Յանձնաժողովին մէջ տիրող կարծիքին նկատմամբ. այս ալ դեռ կարելի չէ եղած: Միւս կողմէ, պէտք կայ Պ. Ռոպէր տը Քէն Պ. Վենիզելոսի տեսնելու: Բան մը չենք գիտեր տակաւին, թէ հելլեն վարչապետը, նոր կացութեան բերմամբ ի՞նչ ուղղութեան պիտի հետեւի: Արդեօք պիտի յարատեւէ՞ դաշնագիրը զինու զօրութեամբ եւ անգլիական աջակցումը թուրքերուն պարտադրելու մտածման մէջ, թէ ոչ՝ ինք ալ պիտի յարի Ֆրանսայի եւ Իտալիոյ քաղաքականութեան ու պիտի նախընտրէ համաձայնութեան մը գալ թուրքերուն հետ: Գալով տեղւոյն վրայ ըլլալիք գործողութեանց, պէտք է այժմէն եւ շուտով կարգադրութիւն մը ընել: Կիլիկիոյ հետ հաղորդակցիլը դիւրին գործ չէ. դէպքերը կրնան անակնկալի բերել զմեզ: Մինչեւ այսօր՝ Կիլիկիոյ մէջ երկու ուղղութիւն կար. թուրքերուն դէմ բացարձակ ատելութիւն եւ ֆրանսացւոց դէմ յայտնի անսիրելութիւն մը: Այս երկու ուղղութիւններն ալ սխալ էին, ինչպէս կ'ապացուցուի այսօր: Հայերը, ընդհակառակը, պէտք էին սիրաշահիլ երկու տարրերն ալ, զգուշանալով մէկուն ու միւսին մօտ կասկածի առարկայ դառնալէ: Մասնաւորաբար, թուրքերուն հետ վեհանձնութեամբ վարուիլը անշուշտ ծանր էր իրենց համար, բայց լաւագոյն միջոցն այդ էր. կը տեսնենք ահա Պ. Լլոյտ Ճորճը, որ Պ. Քրասինի հետ կը բանակցի. կը տեսնենք նաեւ Պ. Միլլերանը, որ Պ. Ռոպէր տը Քէի միջոցաւ Մուսթաֆա Քեմալի հետ համաձայնութիւն կը կնքէ: Տարակոյս չկայ, որ յանձնարարելի մեծ օրինակներ չեն ասոնք, բայց վերջապէս աշխարհք այսպէս է: Երբ հզօր պետութիւններ շրջահայեցութեամբ վարուելու պէտք կը տեսնեն, ինչո՞ւ մեզի պէս պզտիկ ու տկար ժողովուրդ մը այդպէս չընէ: Հետեւաբար, հայերն ալ կրնան խնդիր ընել համաձայնութեան եզր մը Մուսթաֆա Քեմալ Փաշայի հետ: Չմոռնանք, որ ժամանակը սուղ է: Ֆրանսացիք տակաւին Կիլիկիոյ մէջ են, բայց եթէ յանկարծ պարպեն զայն, շատ մեծ անպատեհութիւններ կրնան ծագիլ: Ժողովուրդին տեղափոխութիւնը լուծում մը չէ: Տեղափոխութիւնը կէս մը մահ ըսել է: Աւելի քան 150 000 ժողովուրդ ունինք Կիլիկիոյ մէջ. ո՞ւր պիտի երթան, ինչպէ՞ս պիտի երթան: Փոխադրութեան միջոցները չափազանց դժուարին են. յետոյ՝ ամեն կողմ կեանքը սուղ է. ուր որ ալ երթան՝ թշուառ պիտի ըլլան: Ազգերու գթութեան դիմելէն ալ մեծ օգուտ մը չպիտի կրնան ձեռք բերել, որովհետեւ աշխարհք այլեւս ձանձրացաւ նպաստելէ: Այս պայմաններուն մէջ՝ ժողովուրդը տեղափոխել՝ մեռցնել ըսել է: Անշուշտ, ուսեւորներ կան, որոնք ասանկ բոպէի մը կրնան ուրիշ աւելի ապահով տեղ մը բնակելու որոշում տալ. բան մը չենք կրնար ըսել անոնց. բայց միւսներուն համար ո՛չ մեր սիրտը, ո՛չ մեր զգացումները թոյլ

կու տան, որ խորհինք, թէ պէտք է ելլեն երթան իրենց երկրէն: Ուրեմն, անհրաժեշտ է, որ ժողովուրդը մնայ: Բայց միւս կողմէ, վտանգը կայ: Երբ Ֆրանսացիք մեկնին եւ թուրքերը իրենք իրենց գլխուն մնան, կարելի է, որ վրիժառութեան դիմել ուզեն եւ երկուստէք արիւն թափի: Եղանակ մը գտնել պէտք է ուրեմն՝ մէկ կամ միւս անպատեհութենէն խուսափելու համար: Մեր նախահայրերը աւելի նեղ, աւելի վտանգաւոր պարագաներու մէջ գտնուած են, բայց, ինչպէս յայտնի է, միշտ կրցած են պարագային յարմար մարդիկը գտնել եւ անոնց խոհեմութեամբ ու խելքով ազատել ինքզինքնին: Չեմ հաւատար, որ մեր ազգը հիմա զուրկ ըլլայ իմաստութենէ, ունի լաւ տարրեր, որոնց խոհեմութեան կրնայ թողուլ այս վտանգաւոր դրութեան լուծումը: Կը կարծեմ, թէ թուրքերուն հետ համաձայնութեան մը հիմերը չեն պակսիր: Կրնանք, օրինակի համար, անոնց ըսել. թէ ահա, դաշնագրին համաձայն, Կիլիկիոյ մէկ ստուար մասը Սուրիոյ կը կցուի. այդ տեղերը՝ Կիլիկիոյ ամէնէն արգաւանդ եւ հարուստ մասերն են. մենք միջնորդ կ'ըլլանք պետութեանց մօտ, որ անոնք Կիլիկիոյ վերադարձուին, պայմանաւ, որ ատոր փոխարէն, մեզի տրուին նախ հանգստութիւն, ապահովութիւն, յետոյ՝ վարչական ձեռնտու կազմակերպութիւն մը: Կարելի է գտնել բանակցութեան ուրիշ հիմեր ալ, բայց նախ պէտք է համաձայնինք սկզբունքին վրայ: Կը հասկնամ, դժուար է կիլիկեցւոց այս տեսակ կարգադրութեան մը վրայ խորհիլն իսկ, բայց լաւագոյն միջոցն է: Ֆրանսական կառավարութեան ընթացքը Կիլիկիոյ մէջ աննախընթաց բան մըն է պատմութեան մէջ, եւ այդ պատճառաւ հայք ալ գրեթէ աննախընթաց կացութեան մը ենթարկուած են:

Տիար Բրօֆ. Թումայեան. Կիլիկիոյ հայերը տրամադի՞ր են այս տեսակ կարգադրութիւն մը ընդունելու: Շնորհակալ պիտի ըլլայինք՝ եթէ Վեհ. Կաթողիկոսը այս մասին լուսաբաներ մեզ:

Վեհ. Սահակ Կաթողիկոս. Կը կարծեմ, թէ ուշ մնացած ենք: Անոնք այնտեղ անմիջական օգնութիւն կը սպասեն, մենք այստեղ տակաւին պիտի համաձայնինք թէ ի՞նչ ընենք: Կիլիկիոյ մէջ՝ ժողովուրդը շատ մեծ հաւատք ունի Պատուիրակութեան վրայ. անանկ կը կարծէ, որ երբ Պատուիրակութիւնը ուզէ, կրնայ ամեն բան ոտքի հանել: Ան գիտէր, որ Պատուիրակութիւնը պահանջած է Կիլիկիան իբր ամբողջական Հայաստանի մաս եւ ըստ այնմ ձեւած էր իր ընթացքը: Եթէ Պատուիրակութիւնը ատենին ըսեր, թէ Դաշնակիցներէն յոյս չկայ այլեւս, թերեւս կարելի ըլլար միջոց մը գտնել տեղին վրայ համաձայնութեան մը գալու համար:

Տիար Արշակ Չօպանեան. Բայց Պատուիրակութիւնը կացութիւնը չէ ծածկած բնաւ: Այն օրն իսկ երբ Կիլիկիոյ վիճակուելիք բախտը պարզուեցաւ, իսկոյն հաղորդեցինք Պ. Տամատեանի, մանրամասն նամակով մը, զոր մօտաւորապէս երկու ամիս առաջ տարաւ Տոքթ. Ալթունեան, եւ որ ապահով ենք, թէ հասած է Պ. Տամատեանի ձեռքը: Ապացուցելու համար, թէ Պատուիրակութիւնը իրական վիճակը չէ ծածկած, կը կարդամ այդ նամակէն մաս մը.

«...Կիլիկիոյ ինչպէս եւ հայ տէրութենէն դուրս մնալիք բոլոր հայ հողամասերուն քաղաքական բախտը դեռ չէ որոշուած: Տիկին Եսայեանի՝ այստեղէն մեկնած պահուն այնպէս կը կարծուէր, թէ այդ բոլոր հողամասերը պիտի դրուին Ֆրանսայի հովանավորութեան տակ՝ Ազգերու Ընկերակցութեան կողմէ mandat-ով, եւ մենք անմիջապէս «Ամբողջական Հայաստանի մը կազմաւորման անկարելիութիւնը եւ Կիլիկիոյ մասին Ֆրանսայի հետ համաձայնեցէ՛ք» խորհուրդով, Լորդ Քըրզոնի բերնէն իսկ լսելէ յետոյ, ցաւ ի սիրտ, ստիպուած եղանք մեր քաղաքականութիւնը յարմարցնել այս նոր կացութեան, ընդունելով որ հայ տէրութենէն դուրս մնալիք հողամասերը դրուին Ֆրանսայի պաշտպանութեան տակ, միշտ այն հասկացողութեամբ, թէ անոնց հայկական հանգամանքը պիտի ճանչցուի Գերագոյն Խորհուրդէն եւ անոնց պիտի տրուի ինքնավար ռեժիմ մը, թուրք տիրապետութենէն բոլորովին ազատ: Ինչ պիտի ըլլայ Գերագոյն Խորհուրդին վերջնական որոշումը, դեռ չենք գիտեր, եւ կը յուսանք որ Սան Ռեմոյի մէջ, քիչ օրէն, այդ որոշումը՝ կը տրուի: Շատ հզօր պատճառներ կան, որ

մեզի վախնալ կու տան, թէ թուրք վեհապետութիւնը եւ նոյնիսկ թուրք վարչութիւնը պիտի պահպանուին Կիլիկիոյ եւ հայ տէրութեան չկցուելիք միւս հայ հողամասերուն վրայ: Ֆրանսական խորհրդարանի Commission des Affaires Extérieurs-ին կարեւոր անդամներէն ոմանք մեզի յայտնեցին, թէ Ֆրանսայի փափաքն է, որ ֆրանսական Zône-ը սահմանակից ըլլայ հայ տէրութեան, եւ այդ ամբողջ Zône-ին մէջ Սուլթանին գերիշխանութիւնը լոկ անուանական ըլլայ, վարչութեան ղեկը գտնուելով ֆրանս իշխանութեանց ձեռքը: Բայց երբ Կիլիկիոյ եւ Սուրիոյ պաշտպանութեան գործին մէջ այնքան թոյլ կը յայտնուի Ֆրանսա, ինչպէ՞ս պիտի հաստատէ իր իշխանութիւնը մինչեւ Խարբերդ, Տիարպէքիր ու Սվազ: Միւս կողմէ, Լորդ Քըրզընն, Լլոյտ Ճորճ եւ Պ. Էսքուիթ խորհրդարանին մէջ վերջերս արտասանած իրենց ճառերով յայտարարեցին, թէ Կիլիկիա մահմետական երկիր է, թէ հոն մահմետականները խոշոր մեծամասնութիւն կը կազմեն եւ թէ հայերը ազգաբնակութեան հազիւ մեկ երրորդը կը ներկայացնեն, եւ ասիկա՝ հակառակ այն բոլոր նօթերուն, զոր Պատուիրակութիւնս իրենց ղրկած էր: Վերջին պահուն կ'իմանանք, թէ Ֆրանսական կառավարութեան եւ խորհրդարանին մէջ կայ երկու հոսանք, մին կ'ուզէ հրաժարիլ Կիլիկիայէն եւ Սուրիայէն՝ ուրիշ տեղ փոխարինութիւն ստանալով. միւսը կ'ուզէ, որ Ֆրանսա մնայ հոն: Ֆրանսայի հոն մնալու պարագային՝ ի՞նչ ռեժիմ պիտի հաստատուի՝ որոշ չեն ըսեր, եւ «հայկական ինքնավար ռեժիմի» մը խօսքն անգամ չկայ: «Կիլիկիոյ բոլոր ազգայնութեանց իրաւունքները պիտի յարգուին». այս է բանաձեւը, զոր կը լսենք Քէ տ'Օրսէի մէջ: Չափազանց մեծ հաւանականութիւն կայ, որ թուրք գերիշխանութիւնը եւ վարչութիւնը պահպանուին ուրեմն Կիլիկիոյ եւ միւս հայ հողամասերուն մէջ: Մենք կը վախնանք նոյնիսկ, որ այդ գերիշխանութեան պահպանումը անխուսափելի ըլլայ ֆրանսական քոնթրոլի տակ՝ եթէ ֆրանսացիք հոն մնան: Մենք մինչեւ վերջը պիտի պնդենք հայ տէրութեան չկցուելիք հայ շրջանները թուրք տիրապետութեան տակ չձգուին եւ Ազգերու Ընկերակցութեան հոգատարութեան տակ դրուին:

Այն ըլլալով կացութիւնը, նոր ուրեմն ձեզի կը մնայ անոր պատշաճեցնել ձեր դիրքը: Ֆրանսական իշխանութեանց հանդէպ բռնուած լեզուն ըլլալու է համեստ եւ ճապուկ, քանի որ անոնց ձեռքն է առ այժմ Կիլիկիոյ պաշտպանութիւնը: Մահմետականաց հանդէպ պէտք է զգուշանալ յարձակողական ոեւէ քայլէ, շատանալ ինքնապաշտպանութեամբ՝ յարձակմանց դէմ, մնալ չէզոք ամեն անգամ, որ կարելի է՝ զուր արիւնահեղութեան տեղի չտալու համար: Մէկ խօսքով, ամեն ջանք ընելու է, որպէսզի յարաբերութիւնները լաւ ըլլան ֆրանսական իշխանութեանց հետ եւ մահմետականաց հետ ալ modus vivendi մը գտնենք...»:

Ա. Չօպանեան

Տիար Ա. Չօպանեան. Ինչպէս ըսի, ապահով ենք, որ այդ նամակը ստացուած է այնտեղ մէկուկէս ամսէ ի վեր, բայց ահա այսօր կը ղրկեն հեռագիր մը, որ նամակին թելադրութեանց բոլորովին հակառակ տրամադրութենէ մը ներշնչուած է: Ուրիշ խնդիր, թէ պէտք է նորէն դառնալ թուրքերուն հետ համաձայնութեան մը գալու տեսակէտին: Ամեն պարագայի մէջ, Պատուիրակութիւնը չի կրնար ուղղակի կերպով այս տեսակ բանակցութեան մը ձեռնարկել, որովհետեւ եթէ Դաշնակիցները յանկարծ մասնաւոր կարգադրութիւն մը ընել որոշեն Կիլիկիոյ համար, Պատուիրակութեան կողմէ հակառակ ուղղութեամբ առնուած ոեւէ քայլ կրնայ վնասել այդ կարգադրութեան, նոյնիսկ քանդել զայն: Բայց այնտեղ մարդ կը ղրկուի, եւ Պատուիրակութիւնը կրնայ բերանացի թելադրութիւններ ընել:

Վեհ. Տ. Սահակ Կաթող. Կը կրկնեմ, որ շատ ուշ մնացինք ատոր համար: Որովհետեւ արդէն իսկ փորձ մը եղած է առանց արդիւնքի, նոյնիսկ թուրքերուն կողմէ: Ատանայի վալին՝ ճելալ Պէյ ուղղակի ինծի ըսաւ, թէ այս երկիրը ո՛չ մերն է, ո՛չ ձերն է, ո՛չ ալ Ֆրանսայի: Պէտք է, որ մենք՝ թուրքերս եւ դուք՝ հայերդ համաձայնինք: Խնդիր եղաւ, ժողովներ գումարուեցան, խորհրդակցութիւններ եղան, բայց, ինչպէս ըսի, ապարդիւն:

Ձայներ. Ո՞վ արգելք եղաւ:

Վեհ. Տ. Սահակ Կաթող. Չէ՞ք հասկնար, թէ ով: Ամեն պարագայի մէջ՝ ոչ գլուխը, այլ՝ ոտքերը:

Տիար Տէրպէտէրեան. Ժողովո՞ւրդը...

Վեհ. Տ. Սահակ Կաթ. Ո՛չ: Ինչո՞ւ միշտ ժողովուրդը կը մեղադրէք: Վերջէն՝ թուրքերը անգամ մըն ալ այդ առաջարկը ըրին՝ յոյները միջնորդ դարձնելով, բայց դարձեալ կարելի չեղաւ: Ըլլալիքը ոչ այնքան քաղաքական կարգադրութիւն մը, որքան համերաշխութեան, փոխադարձ բարեացակամ յարաբերութիւններ հաստատելու պիտի ձգտէր: Եւ առիթը յարմար էր այդ միջոցին, որովհետեւ թուրքերը կը կարծէին, թէ ֆրանսացիք գաղտնի կերպով կը զինեն հայերը ու կը վախնային: Ատանայի հայերը իրօք չափազանց սպառնալից դիրք մը ունին, բայց զէնքը առատ չէր իրենց մօտ: Գնդապետ Պրեմոնէն հազիւ 200 կտոր զէնք կրցանք առնել Ատանայի համար, մինչդեռ թուրքերը այն հաւատքն ունէին, թէ հայերուն մօտ այնքան շատ քանակութեամբ զէնք կայ, որ եթէ ուզեն, կրնան մէկ օրուան մէջ ջարդել բոլոր թուրքերը:

Տիար Վ. Թէքէեան. Կացութիւնը բաւական պարզուեցաւ կարծեմ: Վեհափառին խօսքերէն կը հասկցուի, թէ շատ ուշ է Կիլիկիոյ հայ ժողովուրդն ու թուրքերը համաձայնութեան բերելու համար: Եթէ տակաւին կարելիութիւն մը կայ, անշուշտ կ'աշխատի նաեւ այդ ուղղութեամբ: Պետութեանց մօտ կատարուելիք դիմումներէն մեծ բան չենք կրնար սպասել, քանի որ յայտնի չկամութիւն մը կայ անոնց մօտ: Միւս կողմէ, քանի որ չենք փափաքիր ժողովուրդէն հեռանալը, եւ արդէն անկարելի է վարժուիլ այդ տեսակ գաղափարի մը, պէտք է աշխատինք այդ ժողովուրդը զօրացնելու, որպէսզի մինակը կարենայ դիմադրել իրեն սպառնացող վտանգներուն: Ասիկա պէտք է ընել գաղտնի միջոցներով: Պէտք է նախ հրահանգ տալ ժողովուրդին, որ իր մորթը ապահովելու համար ամեն կարելի բան ընէ, համաձայնի թուրքերուն հետ, սիրաշահի զանոնք, եւ մինչեւ այդ՝ գաղտնաբար զօրացնել զայն: Դիւր գործ մը չէ անշուշտ, բայց անկարելի ալ չէ, քանի որ թուրք տիրապետութեան ամէնէն զօրեղ, ամեն տեղ կարելի կ'ըլլար զէնք անցընել Կիլիկիա, եւ յետոյ, արտասահմանի մէջ՝ պէտք է օգնութեան ուժեղ հոսանք մը գոյացնել Կիլիկիոյ համար: Այնտեղի ժողովուրդը ուրիշ ամեն ատենէ աւելի պէտք ունի հիմա գիտնալու, թէ այդ արտասահմանի հայերը զինքը չեն մոռցած ու չեն լքեր: Այստեղ, Անգլիա, Ամերիկա, վերջապէս ամեն կողմ պէտք է հիմակուընէ խոշոր գումարներ հաւաքուին, ո՛չ թէ լոկ որբերու եւ այրիներու օգնութեան անունով, ինչպէս կ'ըլլայ սովորաբար, այլ՝ Կիլիկիոյ ժողովուրդը ուժովցնելու այս նպատակին համար:

Ամեն. Դուրեան Արքեպ. Իբր տեղեկութիւն հաղորդեմ, որ Պոլսոյ մէջ ատոր մէկ փորձը եղաւ անցեալներս: Մասնաւորաբար Մարաշի կոտորածին հետեւանքով ահագին յուզում առաջ եկած էր. թէ' պաշտօնական շրջանակները եւ թէ' ժողովուրդը իրար անցած էին. գումարումներ, խորհրդակցութիւններ եղան օրերով. եկեղեցիները փակելու որոշումն ալ այդ վրդովման արդիւնքն էր: Պէտք տեսնուեցաւ զօրացնել Կիլիկիոյ ժողովուրդը, եւ սկսան ձեռնարկներ ըլլալ՝ ազգին զգացնելու համար, թէ պէտք է առատօրէն նպաստէ Կիլիկիոյ ինքնապաշտպանութեան: Թերթեր հրատարակութիւններ ըրին այդ նպատակով, եւ մասնաւոր դրամահաւաք յանձնաժողովով մը կրցան գոյացնել 60000 ոսկի գումար մը: Ապահովութիւն տուած էին մեզի, թէ պիտի կրնան զէնք ղրկել Կիլիկիա, բայց յայտնի չէ, թէ ի՞նչ եղաւ: Ժողովուրդը զինելու մտածումը գէշ չէ. դրամ հաւաքենք ատոր համար. բայց նախ պէտք է ապահով ըլլանք, թէ ժողովուրդը պիտի կրնա՞յ ստանալ այդ զէնքերը:

Տիար Գ. Ֆնտգլեան. Այնպէս կը կարծեմ, որ հակառակ բոլոր անցեալ հիասթափութեանց, իրաւունք չունինք թերահաւատ ըլլալու Անգլիոյ կատարուելիք դիմումի մը մասին: Կրնայ ըլլալ, որ դարձեալ յուսախաբ ըլլանք, բայց այդ հաւանականութիւնը պէտք չէ պատճառ դառնայ, որ նորէն չփորձենք: Երբ վերջին

անգամ Անգլիոյ մէջ հաղորդուեցաւ Կիլիկիոյ պաշտպանութեան հարցը, Լորդ Քըրզոն յայտարարեց Լորդերու Ժողովին մէջ, թէ իր կառ.ավարութիւնը ամեն ջանք թափելու վրայ է, որ Ֆրանսա չհեռանայ Կիլիկիայէն եւ հոն գտնուող քրիստոնեաները պաշտպանելու ծանր պաշտօնը ստանձնէ: Ասիկա կ'ենթադրէ, թէ խորհրդակցութիւն մը տեղի կ'ունենար Անգլիոյ եւ Ֆրանսիոյ միջեւ այդ մասին, եւ թէ սկզբունքը ընդունուած էր: Անգլիա չի' կրնար հանդուրժել, որ աշխարհի, մանաւանդ Ամերիկայի հանրային կարծիքին առջեւ պատասխանատու մնայ, թէ ֆրանսացւոց մեկնելէն ետքը հայ ժողովուրդը բոլորովին անպաշտպան ձգած է թուրքերուն ձեռքը: Միւս կողմէ՝ ուրիշ կէտ մըն ալ կայ, որ յուսատու կը դառնայ այս պարագային: Դաշնակիցները որոշեցին թուրքերը պահել Պոլսոյ մէջ, այն մտածմամբ, թէ Պոլսէն աւելի հեշտ կրնան ճնշում բանեցնել թուրքերուն վրայ, մինչդեռ եթէ Անատոլու գտնուէին, դժուար պիտի ըլլար այդ ճնշումը ընել: Յայտնեցին նաեւ, որ եթէ Թուրքիա չգործադրէ դաշնագրին պայմանները, պիտի խստացնեն զանոնք, եւ այդ խստութիւններէն առաջինը պիտի ըլլայ թուրքերը վերջնականապէս Պոլսէն վտարելը: Քանի որ թուրքերուն վրայ ճնշում բանեցնելու միջոցներ չեն պակսիր, չեմ կարծեր, թէ երբ Կիլիկիոյ ժողովուրդին պաշտպանութեան համար դիմում ընենք Անգլիոյ, ըսէ թէ կարելիութիւն չկայ: Կը կրկնեմ, որ պէտք չէ յոյսերնիս կտրենք Անգլիայէն:

Տիար Տիրան Տէօվլէթեան. Ինքզինքնիս չխաբենք: Մարաշի դէպքերէն ետքն ալ դիմումներ ըրինք Անգլիոյ: Պատասխանեցին, թէ Ֆրանսայի գացէ'ք: Չեմ յուսար, որ դրական բան մը ընեն հիմա: Ինչ որ պէտք է ընել՝ ատիկա մեր ընելիքն է: Պէտք է որոշենք, թէ ի՞նչ կրնանք ընել: Կ'առաջարկեմ, որ Պատուիրակութիւնը կարեւոր մէկը ղրկէ Կիլիկիա, որպէսզի երթայ անձամբ տեսնէ, քննէ եւ հաղորդէ իրեն բուն կացութիւնը:

Տիար Չօպանեան. Մարդ ղրկելու մասին Պատուիրակութիւնը երբեք չէ թերացած: Դեռ վերջերս՝ շատ լուրջ, շատ արժանի անձ մը ղրկել որոշած էինք՝ Տոքթ. Արթինեանը, բայց դժբախտաբար, անձնական հարկեցուցիչ պատճառներ զինքը արգիլեցին: Անկէ ի վեր՝ ուրիշ մը կը փնտռենք: Քանի որ Կիլիկիոյ ինքնապաշտպանութեան մասին ակնարկութիւններ եղան, ըսեմ որ Պատուիրակութիւնը այդ մասին ալ չթերացաւ: Երբ Լոնտոն էինք, երկու Պատուիրակութեանց Նախագահները եւ Զաւէն Պատրիարք համախումբ հեռագրեցին Ամերիկա, որ Կիլիկիային կարեւոր գումար մը ղրկեն բացարձակապէս ինքնապաշտպանութեան նպատակին համար: Գիտենք, որ շատ մեծ գումարներ ղրկուեցան, եւ պէտք է հասած ըլլան Կիլիկիա, որովհետեւ վերջերս Պ. Տամատեան մեզի ծանուցած էր, թէ դրամական անձկութեան մը միջոցին ստիպուեր էին ինքնապաշտպանութեան դրամէն փոխառութիւն մը ընել հիւանդանոցին համար:

Ամեն. Դուրեան Արքեպ. Հիւանդանոցը կ'ուտէ արդէն մեր կեանքը:

Տիար Տէր-Ստեփանեան. Ինծի կը թուի, թէ ո՛չ այսօրուան քաղաքական դրութեան կատարելապէս տեղեակ ենք, հետեւաբար՝ ո՛չ ալ ապագայ հաւանականութիւններուն: Դաշնագիր մը կայ, որ դեռ չէ ստորագրուած եւ որուն բախտը ի՞նչ պիտի ըլլայ՝ չենք գիտեր: Դրութիւնը կրնայ հիմնապէս փոխուիլ եւ կրնան ստեղծուիլ նոր վտանգներ, եւ կամ նպաստաւոր կարելիութիւններ: Տրուած ըլլալով ասիկա, մենք պէտք է հրաժարինք մեր աղաւնիի քաղաքականութենէն: Պէտք է չվարանինք զանազան ուղղութեանց միտող ձեռնարկներ միանգամայն ընելէ, պատրաստ ըլլալու համար ամեն տեսակ պատահականութեանց: Քաղաքականութիւնը էապէս անպարկեշտութիւն է եւ մենք չէ, որ պիտի կրնայինք անոր օրէնքներէն խուսափիլ: Հետեւաբար՝ կը կարծեմ, որ պէտք է առաջարկուած երեք ուղղութեամբ ալ գործենք միեւնոյն ատեն, տուեալ վայրկեանին ելից հնար մը ունենալու համար: Քեմալիստներու հետ պէտք է բոլորովին անպաշտօն կերպով բանակցութեան մտնենք: Այդ բանակցութեանց թերեւս յարմարագոյն կեդրոնը կրնայ ըլլալ Պոլիս, որուն հետ, ինչպէս եւ Կիլիկիոյ հետ, սուրհանդակներու միջոցաւ պէտք է

հաղորդակցութիւն հաստատել: Այս բանակցութիւնները կատարուելու են այն տեսակ եղանակով մը, որ յառաջիկային՝ եթէ քաղաքական դրութիւնը նպաստաւոր դառնայ, մեզի վնասակար չըլլան: Այս տեսակ քաղաքականութենէ մը խրտչելու չենք, քանի որ ամեն տերութիւն նոյն ճամբով կը գործէ: Պէտք է միեւնոյն ատեն գաղտնի կերպով զօրացնենք Կիլիկիոյ հայութիւնը, ինքնապաշտպանութեան կարելիութիւնը ընծայելով անոր: Իսկ այստեղ եւ Լոնտոն շարունակել մեր սովորական դիմումի քաղաքականութիւնը: Այս ամբողջ ձեռնարկներուն մանրամասնութիւնները եւ գործադրութեան եղանակները պէտք չէ, որ Համագումարը որոշէ, այլ՝ գործադիր պատասխանատու մարմինը: Իմ կարծիքս է, որ Արեւելքի բարդ քաղաքականութիւնը նոյնպէս բարդ քաղաքականութիւն մը կը պարտադրէ մեզի, եւ թէ այդ է միակ ելքի միջոցը:

Տիար Ա. Թէրզիպաշեան. Դրութիւնը մեզի համար պարզ է, Դաշնագիրը Կիլիկիան տուեր է թուրքերուն: Կը կարծեմ, որ պէտք է այժմէն հաշտուինք այս իրականութեան հետ: Անգլիա, ինչպէս նաեւ Դաշնակիցները, փոքրամասնութեանց պաշտպանութիւնը ստանձնած են արդէն: Կը հետեւի, ուրեմն, որ անոնց պաշտպանութեան կրնանք դիմել, ինչպէս նաեւ ինքնապաշտպանութեան բնական միջոցին: Իսկ մեր քաղաքականութեան առանցքն ըլլալու է դաշնագրին հիմնական վճիռը, որ արդէն տրուեր է՝ Կիլիկիան թուրքերուն թողլով: Մեզի երկու ճամբայ կը մնայ ուրեմն. կա'մ հաշտուիլ այս իրականութեան հետ՝ եթէ երբեք մեր վերջին յոյսերը անէանան եւ կա'մ թէ հեռանալ Կիլիկիայէն:

Ամեն. Դուրեան Արքեպիս. Ի՞նչ իրաւունքով կրնանք ստիպել ժողովուրդը, որ ելլէ իր հայրենիքէն: Թող իրենք modus vivendi մը գտնեն թուրքերուն հետ մնալու համար:

Տիար Թէրզիպաշեան. Ես չեմ ըսեր, թէ որոշենք որ ժողովուրդը ելլէ, այլ՝ մեզի ներկայացուած հարցին երկու երեւոյթներն են, որ կը պարզեմ: Ես կը կարծեմ, որ այսօրուընէ պէտք է Պատուիրակութիւնը սկսի նախապատրաստական աշխատանքը, անակնկալի չգալու համար, ըստ որուն՝ դաշնագրին ստորագրութիւնը շաբաթներու հարց է, մինչդեռ մենք Կիլիկիա մարդ ղրկելու համար շատ անգամ ամիսներ սպասելու կը հարկադրուինք:

Տիար Զ. Պզտիկեան. Կիլիկիոյ ժողովուրդին ելլելը կամ չելլելը աւելի ապագայի հարց է: Կիլիկիոյ ժողովուրդը չէ ընդունած դաշնագիրը, միշտ բողոքող պիտի մնայ անոր դէմ: Հիմա անմիջականը սա է, որ ժողովուրդը վտանգի տակ է: Պէտք է խորհիլ, թէ ինչ միջոցներ ձեռք առնելու է, որ երբ ֆրանսացիք քաշուին, ջարդեր տեղի չունենան: Տէրութեանց պիտի դիմենք ասոր համար եւ թէ՝ Մուսթաֆա Քեմալի հետ պիտի բանակցինք: Կարծեմ, թէ երկուքն ալ կրնանք ընել: Եթէ ժողովդ համամիտ գտնուի, կրնանք փորձել Տիար Ֆնտգլեանի առաջարկած միջոցը: Միւս կողմէ, կրնանք նաեւ սկսիլ թուրքերուն հետ բանակցելու: Կան թուրքեր, որոնք լաւ դեր մը խաղցան տարագրութեան ընթացքին, ինչպէս Պեքի Համիտ, Ալի Հայտար Պէյ, ու նաեւ Ատանայի արդի վալի ճելալ Պէյը: Ասոնք սերտ յարաբերութեան մէջ են Մուսթաֆա Քեմալի հետ: Խնդիր է, թէ ինչպէ՞ս բանակցութեան պիտի մտնուի անոնց հետ: Բայց անգամ մը, որ սկզբունքը ընդունուի, անշուշտ միջոց մը կը գտնուի, եւ պէտք է գտնուի՝ նկատի առնելով վերահաս վտանգը, որ կը սպառնայ Կիլիկիոյ ժողովուրդին:

Տիար Տոքթ. Բարսեղեան. Կասկած չկայ, որ առաջարկուած երեք միջոցներու ուղղութեամբ ալ պէտք է աշխատիլ: Սակայն, պէտք է նկատի առնել կարգ մը պարագաներ:

Առաջին: Միլլիճիներու հետ բանակցութեանց միջոցին պէտք է նկատի ունենանք, որ մենք երբ բան մը կը պահանջենք, անոնք ալ փոխադարձաբար մեզմէ բան մը կը սպասեն: Անոնց գլխաւոր ուղղութիւնը այն է, որ Կիլիկիոյ, ինչպէս միւս թրքական նահանգներուն մէջ հայերը՝ ներկայիս եւ մօտիկ ապագային՝ իրենց վտանգ սպառնացող մեծամասնութիւն մը չունենան: Եւ եթէ մենք նոյնիսկ յաջողինք այժմ

համաձայնութեան մը գալ անոնց հետ, ֆրանսացւոց մեկնելէն ետքը ամեն մէկ առիթին պիտի օգտուին այդ մեծամասնութիւնը յանձառացնելու զանազան պատրուակներով: Համաձայն եմ Համագումարի Նախագահին, որ զանգուածային գաղթ մը կրնայ աղիտաբեր ըլլալ: Բայց արդեօք կարելի չէ՞ թելադրել, որ միջոց ունեցողները, որոնց գաղթը կրնայ տեղի ունենալ սովորական ճամբորդութեան մը պայմաններով, առանց իրենց թիւը նուազեցնելու, առ այժմ մեկնին Կիլիկիայէն եւ, այս կերպով, միլլիճիները վտանգաւոր նկատուող մեծամասնութիւն մը չտեսնեն: Այս պարագային, թէ՝ բանակցութիւնները կը դիւրանան եւ թէ՝ գործադրութիւնը կ'ապահովուի: Պայման կը նկատեմ միայն, որ այս բանակցութիւնը վարողներն ըլլան տեղական ժողովուրդի ներկայացուցիչները:

Երկրորդ միջոցը՝ ինքնապաշտպանութիւնը՝ պէտք է շատ զգուշաւոր ըլլայ, եւ Կիլիկիա մնալիք փոքրամասնութիւնը բաղդադաբար ապահովելու նպատակին ծառայէ: Այս ալ պիտի ըլլայ միմիայն տեղական ոյժերու միջոցով: Հասկնալի է հարկաւ, որ դուրսէն այդ նպատակով անհրաժեշտ նիւթական միջոցները պէտք է հայթայթուին:

Այս երկու խնդիրներուն համար, որոնց գործադրութիւնը այնտեղի ոյժերուն կը մնայ, նոր մարդ մը ղրկելու ալ պէտք չկայ, քանի որ Վեհ. Կաթողիկոսը առաջին առթիւ պիտի մեկնի, եւ այս բոլոր տեսակէտները, ինչպէս քիչ մը աւելի խոհեմութեամբ վարուելու անհրաժեշտութիւնը լաւագոյն կերպով մը կրնայ բացատրել:

Գալով երրորդ տեսակէտին, ի հարկէ պէտք է ամեն հնարաւոր դիմումներն ընել Դաշնակից պետութեանց մօտ եւ ատ ալ կ'ընեն անշուշտ այստեղի պաշտօնական մարմինները:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Պիտի խնդրեմ, որ Պատուիրակութիւնն իր յառաջիկայ նիստին մէջ նկատողութեան առնելով խնդրոյն բազմակողմանի հանգամանքները, որոշ առաջարկութիւն մը բերէ Համագումարիս:

Տիար Ա. Չօպանեան. Պատուիրակութիւնը պիտի ընէ պէտք եղածը: Բոլոր անհրաժեշտ դիմումները պիտի կատարուին պետութեանց մօտ, հարկ եղած ամբողջ կորովով ու աչալրջութեամբ: Միւս կողմէ՝ կը մտածենք դարձեալ մեծ միթինկ մը սարքել ո'չ թէ մենք անձամբ, այլ՝ ֆրանսական քաղաքական խմբակցութեան մը կողմէ, ինչպէս անցեալներս ըրինք՝ Մարդկային Դաշնակցութեան միջոցով, եւ այս շատ մեծ յաջողութիւն մը գտաւ:

Տիար Վ. Թէքէեան. Պէտք է Անգլիոյ մէջ սարքել տալ այդ տեսակ միթինկ մը, քանի որ տեսանք արդէն, թէ Ֆրանսայի մէջ եղածները մեծ արդիւնք մը չեն տար:

Տիար Ա. Չօպանեան. Միւս կողմէ՝ ինչպէս անցեալ նիստին ալ ըսի, արդեօք լաւ չըլլա՞ր, որ Համագումարը ինք ալ հանդիսաւոր բողոքագրով մը արտայայտուի Կիլիկիոյ մասին՝ տէրութեանց մօտ:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Երբ այդ տեղեկութիւնները բերէք, Համագումարս նկատողութեան կ'առնու կարեւորն:

Նիստը փակուեցաւ ժամը 7-ին:

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 63, թթ. 23-49: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ ԺԶ

14 Յունիս 1920, ժամը 5-ին,
նախագահութեամբ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեանի:

Ներկայ էին 16 պատգամաւոր՝

Ամեն. Դուրեան Արքեպ., Տոքթ. Բարսեղեան, Դաւիթ-Բէկ, Թէրզիպաշեան, Թէքէեան, Հանըմեան, Մսըրլը, Տոքթ. Նեւրուզ, Վսեմ. Գ. Նորատունկեան, Չօպանեան, Պզտիկեան, Սինապեան, Տէրպէտէրեան, Տէր-Ստեփանեան, Տէօվլէթեան, Ֆնտգլեան:

Օրակարգ

1. Շարունակութիւն վիճաբանութեան Ազգ. Պատ. համարատուութեան
2. Տեղեկագիր Ազգ. Պատ. Կազմական Կանոնագրի Յանձնաժողովին
3. Վերակազմութիւն Ազգ. Պատուիրակութեան

Օրակարգ

1. Շարունակութիւն վիճաբանութեան Ազգ. Պատ. Համարատուութեան.

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Ժողովին բացումէն քանի մը վայրկեան առաջ ստացայ Ազգ. Պատուիրակութեան Վսեմ. Նախագահին եւ Պատուիրակութեան անդամներուն կողմէ ուղղուած նամակներ, որոնք պիտի կարդացուին:

Կարդացուեցան Պատուիրակութեան Նախագահ Վսեմ. Պօղոս Փաշա Նուպարի եւ Պատուիրակութեան անդամ Տիարք Արշակ Չօպանեանի եւ Վահան Թէքէեանի հետեւեալ նամակները.

Ա. Նամակ Վսեմ. Պօղոս Փաշա Նուպարի

Փարիզ, 12 Յունիս 1920.

Տիար Նախագահ
Հայկական Ազգ. Համագումարին,
Փարիզ.

Տիար Նախագահ,

Այն եօթ տարիները, որոնց հինգը պատերազմին սկզբնաւորութենէն ասդին, զորս նուիրեցի մեր ազգային դատին պաշտպանութեան, այն աստիճան յոգնութիւն պատճառած են ինծի եւ այնքան ուժեղ կերպով խախտած են առողջութիւնս, որ կը հարկադրուիմ հրաժարիլ Ազգ. Պատուիրակութեան Նախագահի պաշտօնէն, զոր ինծի վստահելու շատ մեծ պատիւը ըրած էին նախ՝ Ն. Ս. Օծութիւն Կաթողիկոսը եւ յետոյ՝ մեր Ազգ. Համագումարը:

Քանի ատենէ ի վեր արդէն որոշած էի հրաժարիլ եւ յետաձգած էի այն յոյսով, թէ ոյժերս պիտի ներեն դիմանալ մինչեւ Թրքական Խնդրին լուծումը: Այս մասին տեղեկութիւն տուած էր մեր Ամեն. Ձաւէն Պատրիարքին, Փարիզէն մեկնելէն առաջ, տեղեկութիւն տուած էի նաեւ Ձեզի, մեր վերջին տեսակցութիւններէն մէկուն ընթացքին: Բայց երկու պատճառներ զիս կը հարկադրէին հրաժարիլ անմիջապէս:

Նախ՝ որ այսօր այլեւս տարակոյս չկայ, թէ թուրքերը չպիտի ընդունին դաշնագիրը, եւ Հայկական Խնդիրը տակաւին ժամանակ մը անլոյծ պիտի մնայ: Չպիտի կրնամ մինչեւ այն ատեն յարատեւել այն յոգնած վիճակին մէջ ուր կը գտնուիմ, եւ որ այս մեծ տարիքիս մէջ զիս անկարող կը դարձնէ տալու ամբողջ աշխատութիւնը, զոր մեր ազգը իրաւունք ունի ինձմէ սպասելու, ինչպէս սպասած է անցեալին մէջ:

Միւս կողմէ՝ իմ պաշտօնս ստացած ըլլալով Ազգ. Համագումարէն, որ քիչ օրէն պիտի աւարտուի, եւ իմ յաջորդը ընտրելու ձեռնհասութիւնն ալ Համագումարին միայն պաքթանելուն, անհրաժեշտ է, որ հրաժարիմ իր աւարտուելէն առաջ, որպէսզի կարելիութիւն ունենայ, տակաւին իր աշխատութիւնները չլրացուցած, նոր նախագահ մը ընտրելու եւ նոր տիրէքթիւներ տալու անոր:

Պատիւն ունիմ, ուրեմն, նոր Ազգ. Համագումարին ներկայացնելու իմ հրաժարականս՝ Ազգ. Պատուիրակութեան նախագահութեան պաշտօնէն եւ իրեն յայտնելու այն ցաւը, զոր կը զգամ իրմէ բաժնուելով:

Կ'ուզեմ աւելցնել, թէ խոր յուզումով մը կը թողում այս պաշտօնը, որուն նուիրուած էի ամբողջ էութեամբս. որովհետեւ՝ բնաւ չպիտի մոռնամ այն բազմաթիւ քաջալերութիւնները եւ վեհանձն զգացումները, որոնց այնքան սրտայոյզ ու հայրենասիրական ապացոյցները տուին ինծի բոլոր երկրներուն մէջ գտնուող հայրենակիցներս, այս տկար ու ցաւագին տարիներուն ընթացքին, եւ ամեն առթիւ: Մինչեւ իմ վերջին շունչս՝ խանդաղատալից երախտագիտութիւն մը պիտի պահեմ այն վստահութեան համար, զոր դրին իմ վրաս, եւ որ, ամէնէն մթին օրերուն մէջ, մինակը ինծի զօրավիգ եղաւ եւ զիս սրտապնդեց:

Բայց, որքան ալ տակաւին անձկութեան պահեր ունենանք անցընելիք, կը մնտենայ այն ժամը, որ մեր արի ազգը, որուն տառապանքները այս պատերազմին ընթացքին իրենց սոսկումով գերազանցեցին ինչ որ պատմութիւնը արձանագրած էր մինչեւ այդ ատեն, պիտի ողջունէ իր վերածնութեան արշալոյսը. այս յոյսն է, որ կը մխիթարէ զիս՝ տակաւին ատեն մըն ալ Հայաստանի համար աշխատելու այս անկարողութեան մէջ:

Հաճեցէ՛ք ընդունիլ, Տիար Նախագահ, իմ շատ բարձր մեծարանացս հաւաստիքը:

/ստորագրուած/ Պօղոս Նուպար

Հ. Գ. ինչպէս իմ պարտականութիւնս է, այս նամակը, ձեզի ղրկելէ առաջ, հաղորդեցի Ազգ. Պատուիրակութեան իմ պաշտօնակիցներուն, որոնք, համերաշխութեան ոգիով մը, ինծի պաշտօն կը յանձնեն յայտնելու, թէ իրենք ալ կը հրաժարին, որպէսզի Համագումարը կարենայ նոր Ազգ. Պատուիրակութիւն մը ընտրել:

Պ. Ն.

Բ. Նամակ Տիար Ա. Չօպանեանի

Փարիզ, 14 Յունիս 1920.

Վսեմ. Պ. Գաբրիէլ Նորատունկեան,
Նախագահ Հայ Ազգ. Համագումարի,

Պարոն Նախագահ,

Ազգային Պատուիրակութեան Նախագահը որոշած ըլլալով տալ իր հրաժարականը, պատիւ ունիմ յայտնել Ձեզ, որ կը միացնեմ իմ հրաժարականս իրենին:

Ընդունեցէ՛ք, Պարոն Նախագահ, մեծարանացս հաւաստիքը:

Ա. Չօպանեան

Գ. Նամակ Տիար Վ. Թէքէեանի

Փարիզ, 14 Յունիս 1920.

Վսեմաշուք Տիար Գ. Նորատունկեան, Նախագահ Ազգ. Համագումարի,

Տէր Նախագահ,

Ազգ. Պատուիրակութեան մեծանուն Նախագահին կողմէ պաքթառելի Ժողովիդ մատուցուած անձնական հրաժարագրին յարակից՝ պատիւ ունիմ Ձեզ ներկայացնելու նոյն Պատուիրակութեան անդամակցութենէ հրաժարականս:

Երբ տասնեւչորս ամիս առաջ Պատուիրակութիւնը ընտրուեցաւ Համագումարէն, ո՛չ ընտրեալները եւ ո՛չ ալ ընտրողները կը խորհէին, թէ անոր պաշտօնավարութիւնը այսքան երկարատեւ պիտի ըլլայ: Հայկական Խնդիրը դեռ այսօր իր վերջնական լուծումին յանգած չէ, բայց Համագումարին երկրորդ

նստաշրջանին ներկայիս հաւաքումը՝ իմ մասիս հնարաւոր եւ հարկ կ'ընծայէր վերադարձնել անոր ինծի վստահած պաշտօնը՝ մեր պաշտօնավարութեան վերաբերմամբ իր դատաստանը լսելէ անմիջապէս ետք: Պատուիրակութեան Նախագահին հրաժարականը թեւ զիս կը ստիպէ մի քանի օրով կանխել այդ որոշումս, բայց աւելորդ չեմ համարեր յայտնել, թէ կը նկատեմ ինքզինքս միշտ ենթակայ այդ դատաստանին, ըստ որում՝ կ'ընդունիմ լիակատար պատասխանատուութիւնը Ազգ. Պատուիրակութեան բովանդակ գործունէութեան:

Մնամ ամենախորին յարգանօք

Անդամ Հայ Ազգ. Պատուիրակութեան

Վահան Թէքէեան

Տիար Տոքթ. Նեւրուզ. Ես առանձին նամակով իմ հրաժարականս չէի ծանուցած, նկատելով, որ Պատուիրակութեան Նախագահը Պատուիրակութեան անդամներուն ալ հրաժարած ըլլալը ծանուցած է իր նամակին մէջ, բայց քանի որ միւս ընկերներս պէտք տեսեր են առանձին նամակ գրելու, կը ձայնակցիմ Տիար Վահան Թէքէեանի նկատումներուն, եւ կը խնդրեմ Համագումարին, որ իմ կողմէ ալ ստորագրուած նկատէ իր նամակը:

Տիար Արշակ Չօպանեան. Ես ալ կը ձայնակցիմ այդ նկատումներուն:

Վսեմ Տիար Գ. Նորատունկեան. Տարակոյս չկայ, որ Համագումարը համամիտ պիտի գտնուի ինծի, թէ պէտք է մերժուին այս հրաժարականները: Այսպիսի ճգնաժամային ատենուան մը մէջ պէտք չէ, որ հրաժարականի խնդիր գոյութիւն ունենայ մեր օրակարգին վրայ: Որքան ալ յարգելի ըլլան Պատուիրակութեան Վսեմ. Նախագահին մէջ բերած պատճառները, կը յուսամ որ կոչում ընելով թէ' իր եւ թէ' Պատուիրակութեան յարգելի անդամներուն հայրենասիրութեան, պիտի յաջողինք զիրենք ետ կեցընել այս մտադրութենէն:

Տիար Տէրպետէրեան. Կ'առաջարկեմ, որ Համագումարս, սակայն, մասնաւոր պատգամաւորութիւն մը ղրկէ Ն. Վսեմութեան մօտ, խնդրելով որ ետ առնէ իր հրաժարականը:

Տիար Վահան Թէքէեան. Այս առաջարկութեան առթիւ ինծի պարտք կը նկատեմ յայտնել, թէ Պատուիրակութեան Նախագահը երբ իր որոշումը ծանոյց մեզի, ըսաւ թէ անդառնալի է. այս կերպ կրկնեց ու շեշտեց, աւելցնելով, որ իրեն համար այլեւս բացարձակապէս անկարելի է շարունակել իր աշխատութիւնը եւ թէ իր հրաժարականը ձեւականութիւն մը չէ: Գալով մեր հրաժարականներուն, այսօրուան համար անոնք կը բղխին այդ հրաժարականէն: Վաղուան համար ալ վերջնական է գոնէ իմս, քանի որ միայն իմ անունովս կրնամ խօսիլ:

Տիար Չօպանեան. Երբ Փաշան հրաժարելու որոշումը յայտնեց, բնականաբար խնդրեցինք, պնդեցինք գոնէ տակաւին ատեն մը, գոնէ մինչեւ դաշնագրին ստորագրութիւնը շարունակէ իր աշխատութիւնը: Մերժեց, առարկելով, թէ իր առողջական վիճակը չի ներեր, յիշեցուցինք իրեն թէ շատ անգամներ զինքը տկար տեսած էինք արդէն եւ թէ հակառակ ատոր, միշտ աշխատած էր իր սովորական աւիւնով եւ կորովով: Յիշեցուցինք նաեւ, թէ ինք տրամադրութիւն յայտնած էր Համագումարին մէջ՝ մինչեւ դաշնագրին ստորագրութիւնը մնալու իր պաշտօնին գլուխը, եւ նոյնիսկ այստեղ առաջարկ բերաւ, առաջարկ, որուն Պատուիրակութեան բոլոր անդամներս ալ համաձայն էինք, որ Համագումարի Նախագահն ալ այսուհետեւ անդամակցի Պատուիրակութեան: Այս ամենը ըսինք, կրկնեցինք, աւելցնելով, որ ինք դրօշ մը, անուն մըն է մեր դատին հետապնդութեան համար եւ թէ իր մեկնումը մեծ ցաւ պիտի պատճառէ ընդհանուր հայութեան: Բայց օգուտ չըրաւ: Պէտք է աւելցնեմ, որ ես ինքս ալ, բացի Նախագահին հրաժարման միանալու որոշումէս, արդէն իսկ չափազանց յոգնած եւ ուժասպառ կը գտնեմ զիս: Իմ հեռացումս արդէն մեծ նշանակութիւն մը չունի: Լաւագոյն կը նկատեմ, որ աւելի թարմ ոյժեր գան լծուին այս ծանր գործին:

Տիար Տէր-Ստեփանեան. Պիտի խնդրէի Պատուիրակութեան անդամներէն, որ անկեղծօրէն ըսէին, թէ արդեօք նախորդ նիստին մէջ ներկայացուած բանաձեւերը ոեւէ ազդեցութիւն ունեցա՞ն այս որոշման վրայ:

Տիար Տէրպետէրեան. Այդպէս բան չէ յիշատակուած հրաժարականներուն մէջ:

Տիար Տէր-Ստեփանեան. Ճիշդ է, պաշտօնապէս չէ յիշուած, բայց այդ չէ իմ հասկնալ ուզածս:

Տիար Տոքթ. Նեւրուզ. Պատուիրակութեան Նախագահին նամակէն իսկ կը հասկցուի, թէ շատ աւելի առաջ որոշած էր հրաժարիլ: Այս որոշումը իր մօտ անխախտ էր, բայց չէր յայտնած, այն յոյսով, թէ մօտ է Հայկական Հարցին լուծումը, եւ պիտի կրնայ իր աշխատութիւնը շարունակել տակաւին ատեն մը: Նոյնիսկ այս մտադրութիւնը Ս. Պատրիարքին յայտնեց ճիշդ այն օրը միայն, որ Ն. Ամենապատուութիւնը Փարիզէն կը մեկնէր, որպէսզի լուրը չտարածուի: Այդ օրը ըսաւ նաեւ Ն. Ամէնապատուութեան, որ եթէ Պոլիս իմանան, թէ հրաժարած է իր պաշտօնէն, ուրիշ պատճառի չվերագրեն եւ աւելորդ վրդովում չունենան: Մենք ալ կը հրաժարինք՝ խոհարհելով Ն. Վսեմութեան նկատումներուն առջեւ եւ իրեն հետ Պատուիրակութեան գործունէութեան մասին ամեն պատասխանատուութիւն կը ստանձնենք Համագումարին հանդէպ:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Վսեմ. Փաշային նամակին մէջ իմ անունս ալ յիշուած ըլլալուն, ու միւս կողմէ՝ տրուած տեղեկութիւններն ամբողջացնելու համար պէտք կը տեսնեմ ըսելու, թէ, արդարեւ, ասկէ քանի մը օր առաջ Վսեմ. Փաշան ինծի յայտնեց իր հրաժարելու մտադրութիւնը, առարկելով, որ յոգնած է: Այդ առթիւ աւելորդ է նաեւ այս՝ թէ երբ Համագումարին անցեալ նիստերէն մէկուն մէջ պնդեց, որ անմիջապէս, առանց ապագայ տիրէքթիւներու հարցին անցած ըլլալու, զիս ալ իրեն աշխատակից ունենայ, պատճառը սա էր, որ կը փափաքէր յաջորդութիւն մը պատրաստել, որպէսզի իր հրաժարման միջոցին Պատուիրակութիւնը միշտ ամբողջ մնայ: Պատասխանեցի շատ որոշ կերպով եւ շատ ալ անկեղծութեամբ, թէ ինծի համար բացարձակապէս անկարելի է Պատուիրակութեան մէջ պաշտօն ստանձնել. եւ թէ նոյնիսկ հրաժարելու պարագային, պէտք է ընտրուի այն տեսակ անձ մը, որ կարենայ շարունակաբար մնալ Պատուիրակութեան հետ: Ինչպէս Տիար Տոքթ. Նեւրուզ ըսաւ, Ն. Վսեմութեան հրաժարելու մտադրութիւնը այսօրուան խնդիր չէ. այս խնդիրը երեւան գալէն շատ առաջ արդէն յայտնած էր այդ մտադրութիւնը:

Տիար Տիրան Տէվլէթեան. Ինչ որ ալ ըլլան շարժառիթները, այս միջոցիս բացարձակապէս սխալ է Պատուիրակութեան հրաժարումը, որ պարզապէս մեր թշնամիները պիտի ուրախացնէ: Համարատուութեան միջոցին քննադատութիւններ եղան, նոյնիսկ շատ կծու քննադատութիւններ, բայց չեմ կարծեր, որ անոնք ուղղուած ըլլային Պատուիրակութեան դէմ: Եղած քննադատութիւնները՝ Պատուիրակութեան գործունէութեան մեթոտին դէմ էին միայն, եւ ատոնք ալ եղան որպէսզի գործուած սխալները չկրկնուին: Յայտնի կ'երեւայ, թէ Վսեմ. Փաշան ազդուած է այդ քննադատութիւններէն: Որովհետեւ՝ նստաշրջանին սկիզբը չունէր այս տեսակ մտադրութիւն մը. նոյնիսկ ատոր բոլորովին հակառակ տրամադրութիւն մը ցոյց տուաւ՝ ակնարկելով Պատուիրակութեան ապագայ գործունէութեան եւ փափաքելով, որ Համագումարին Վսեմ. Նախագահն ալ գործակցի իրեն: Կը ձայնակցիմ, ուրեմն Տիար Տէրպետէրեանի, եւ ես ալ կ'առաջարկեմ, որ մասնաւոր պատգամաւորութիւն մը, եթէ ժողովը փափաքի՝ Դիւանը երթայ Ն. Վսեմութեան մօտ եւ ժողովիս անունով խնդրէ ետ առնել իր հրաժարականը: Ողբալի պիտի ըլլար ասանկ ատեն մը հրաժարած տեսնել Ազգին ղեկը ձեռքերնին ունեցող մարդիկը:

Ամեն. Դուրեան Արքեպիսկոպոս. Այս հրաժարականներուն շարժառիթը, որքան ալ ծածկել ուզեն, շատ որոշ կ'երեւայ: Վսեմ. Փաշան դեռ քանի մը օր առաջ՝ հին տիրէքթիւներու մասին խօսելու առթիւ, խօսք ըրաւ ապագայ տիրէքթիւներու, ինչ որ կ'ենթադրէ, թէ մտադիր էր իր աշխատութիւնը շարունակելու: Տարակոյս չկայ, որ եղած

քննադատութիւնները ազդեցին թէ՛ Փաշային եւ թէ՛ իր պատուական ընկերներուն վրայ: Յայտնի է, սակայն, թէ աշխատանքին մէջ չէ որ բան մը պակսած է, այլ այն տեսակ պատճառներ, որոնք դիւանագիտական էին ու անպատմելի, թոյլ չեն տուած, որ այդ աշխատանքը պսակուի: Մենք, սակայն, այդ պատճառները իրած ըրինք բերինք Պատ.-թեան վիզը պլլեցինք: Անյաջողութեան պարագային սովորութիւն ունինք արդէն միշտ յանցաւոր մը փնտրելու: Հիներուն մէջ, երբ քրմապետը եզը մորթէր, դատաստան կ'ըլլար, թէ ո՞վ մորթեց եզը, եւ քրմապետը յանցաւոր հանել ուզելով հանդերձ, վերջապէս դանակը յանցաւոր կը գտնէին: Հիներուն մօտ արարողութիւն մըն էր ասիկա. իսկ մեր մէջ՝ սովորութիւն դարձած է: Պէտք էինք մտածել, որ մեր գլխաւոր կարեւոր ոյժերը ասոնք էին, բայց չկրցան դիմադրել այն բոլոր արգելքներուն, որոնց գիտենք, թէ պիտի բաղխէին: Գիտէինք նաեւ, որ ամբողջական այն մեծ Հայաստանին նկատմամբ մեր սնուցած երազները կրնային ձախողիլ: Խելքի դէմ է ատոր համար պատասխանատու նկատել Պատ.-ը: Ամէնքս ալ պէտք է փութանք դարմանել եղածը, խմբուելով միակ բանաձեւի մը շուրջը, եւ շնորհակալութիւն յայտնելով տարուած աշխատութեան համար, ընդունելով, որ իրենք բոլոր կարելին ըրած են, բայց բաղխած են մեծ դժուարութեանց: Պէտք չէ, որ Պատ.-ը դնենք այն տեսակ վիճակի մը մէջ, որ շիկնած, շառագնած ելլէ այս գործին մէջեն:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Երկու առաջարկ կայ ուրեմն: Առաջին՝ մասնաւոր պատգամաւորութիւն մը երթայ Վսեմ. Փաշային եւ յանուն Համագումարին խնդրէ, որ ետ առնէ իր հրաժարականը: Երկրորդ՝ բարեփոխուին տրուած բանաձեւերը եւ խմբագրուի նոր բանաձեւ մը, որուն շուրջ խմբուի ամբողջ Համագումարը ու Վսեմ. Փաշային երթալիք պատգամաւորութիւնը այդ բանաձեւն ալ տանի միասին: Խօսք ուզող կա՞յ այս առաջարկներու մասին:

Տիար Ա. Հանըմեան. Որքան որ ալ ըսուեցաւ, թէ եղած քննադատութիւնները բաժին չունեցան Պատուիրակութեան հրաժարականին մէջ, կրնանք վստահ ըլլալ, որ հրաժարականներուն բուն պատճառը անոնք են: Չեմ կարծեր, որ քննադատները այս արդիւնքը գոյացնելու համար ըրին իրենց քննադատութիւնները: Այս պատճառաւ, կը յուսամ, որ անոնցմէ մէկը կամ միւսը սիրով պիտի ուզեն ընկերանալ այն պատգամաւորութեան, որ պիտի երթայ Փաշային մօտ:

Տիար Ա. Թէրզիպաշեան. Ես, որ քննադատողներէն մէկը եղած եմ, կը կարծեմ, որ քննադատութիւնը չի կրնար պատճառ դառնալ այս տեսակ վարմունքի մը: Մենք անպատճառ եղած գործերը հաստատելու համար չէր, որ հրաւիրուեցանք այստեղ: Ամեն ոք պարտաւոր էր իր խօսքին ու մտքին թելադրութեանց համաձայն արտայայտել: Ես կը կարծեմ, որ իմ պատգամաւորի պարտքս կատարած եմ եւ չեմ սպասեր, որ իմ ազատ արտայայտութիւնս ոեւէ մեկու մը վիրաւորանք համարուի. մանաւանդ, որ ես իմ վերլուծմանս մէջ գլխաւոր պատասխանատուութիւնը կը վերագրէի ուրիշ գործօններու: Կը կարծեմ, որ քննադատութիւններէ աւելի բանաձեւերը կրնան դեր խաղցած ըլլալ այս խնդիրներուն մէջ, վասնզի քննադատողները փոքրամասնութիւն էին: Իսկ բանաձեւը, եթէ անբաւական համարուած է, պատճառը սա է անշուշտ, որ նկատուած է իբր մեծամասնութեան արտայայտութիւն. այնպէս որ, կարծեմ թէ բանաձեւը ստորագրողներուն երթալը աւելի նպատակայարմար է:

Տիար Գ. Ֆնտգլեան. Բանաձեւերուն ակնարկութիւն եղաւ: Ես ալ բանաձեւ մը ներկայացուցած եմ եւ պարտք կը զգամ քանի մը բացատրութիւններ տալու: Բանաձեւերը կազմելու առթիւ ստիպուած էինք նկատի առնել երկու բան. նախ՝ ձեռք բերուած արդիւնքը, եւ յետոյ՝ գործողներուն աշխատանքը: Շատ կարելի էր չգովել արդիւնքը, եւ սակայն, չդատապարտել նաեւ գործողները, որովհետեւ իրենք առանձին չեն եղած կացութեան հանդէպ. իրենցմէ շատ աւելի ուժեղ ազդակներ եղած են որոնք, ըստ կամս շրջած են պայմանները: Այս վարանման առջեւ էր, որ դժուարութիւն

ունեցայ որոշ բանաձեւ մը տալու եւ վերջ ի վերջոյ, ստիպուեցայ երկու կէտերն ալ նկատի առնելով խմբագրել իմ բանաձեւս:

Նախագահի՝ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեանի առաջարկութեան վրայ, Համագումարը որոշեց պահ մը դադար տալ նիստին՝ Ամեն. Դուրեան Արքեպիսկոպոսի առաջարկած ձեւով բանաձեւ մը մասին խորհրդակցելու համար:

Նիստը վերսկսելուն, Դիւանին յանձնուած էր Տիարք Գառնիկ Ֆնտգլեանի եւ Տիրան Տէօվլէթեանի կողմէ ստորագրուած հետեւեալ բանաձեւը.

Համագումարս, մեծ ցաւով լսելով Պատուիրակութեան Վսեմ. Նախագահին հրաժարականը, պարտք կը համարի բացարձակապէս անընդունելի նկատել զայն, ներկայ բախտորոշ, ճգնաժամային րոպէին, ուր իր հեռացումը մեծ հարուած մը պիտի ըլլայ մեր դատին եւ ազգին պիտի պատճառէ դառն յուսալքում: Համագումարս, միաձայն յայտնելով խորին շնորհակալութիւն եւ գնահատում անցելոց մէջ ազգին մատուցած անգին ծառայութեանց համար, կը խնդրէ եւ վստահ է, որ Ն. Վսեմութիւնը պիտի հաճի, հակառակ իր առողջական վիճակին, այս գերագոյն զոհողութիւնն ալ յանձն առնել ի սէր ազգին, ետ առնելով իր հրաժարականը:

Գառնիկ Ֆնտգլեան
Տիրան Տէօվլէթեան

Տիար Ն. Տէր-Ստեփանեան. Կը կարծեմ, որ պէտք չէ քաղաքական բանաձեւի խնդիրը միացնել Պատուիրակութեան Նախագահին յարուցած հրաժարականի հարցին հետ, քանի որ հրաժարականը տարամերժօրէն առողջական նկատումներով պատճառաբանուած է: Քննադատողները, որոնցմէ մէկն ալ ես եղայ, բնաւ նպատակ չունէին Պատուիրակութեան Նախագահին հրաժարականը յառաջ բերել: Այն բանաձեւը, զոր ես ներկայացուցած էի, իմ մտքիս մէջ վստահութեան քուէ մըն էր, թէեւ ոչ մեծ վստահութեան: Այնքան ճիշդ է այս, որ նիստէն առաջ, երբ բացարձակապէս անտեղեակ էի Նախագահին հրաժարականէն, խմբագրած էի բանաձեւ մը, զոր ստորագրեց նաեւ Տիար Թէրզիպաշեան, որով Համագումարին կ'առաջարկուէր հայութեան կողմէ իր գնահատումը արտայայտել Պատուիրակութեան Նախագահին, անոր եօթ տարուան անձնուէր գործունէութեան համար: Ես կ'առաջարկեմ, որ մեր այս բանաձեւը կարդացուի, քուէարկուի միաձայնութեամբ, եւ պատգամաւորութիւն մը զայն տանելով Նախագահին, խնդրէ որ ետ առնէ իր հրաժարականը: Տիար Զաքարիա Պզտիկեան նոյնպէս առաջարկեց, որ հրաժարականի խնդիրը չկապուի բանաձեւերուն, քանի որ անոնց ակնարկութիւն չէ եղած հրաժարականներուն մէջ եւ առաջարկեց, որ Համագումարը, առանց նոր բանաձեւ մը կազմելու, պատգամաւորութիւն մը ղրկելով խնդրէ Փաշային, որ իր հրաժարականը ետ առնէ:

Համագումարը որոշեց միաձայնութեամբ խմբուիլ Տիարք Ֆնտգլեանի եւ Տէօվլէթեանի բանաձեւին շուրջը: Տիար Տոքթ. Բարսեղեան առաջարկեց, որ անոր վերջի նախադասութեան աւելցուի «եւ շարունակէ իր գործունէութիւնը մինչեւ Թուրքիոյ հետ դաշնագրին կնքումը» պարբերութիւնը: Ժողովին մերժման վրայ՝ Տիար Բարսեղեան չբողոքեց միաձայնութեան բառին դէմ եւ պայման դնելով, որ իր առաջարկութիւնը չարձանագրուի ատենագրութեան մէջ, համամտութիւն յայտնեց Համագումարի միւս անդամներուն՝ միանալու Տիարք Ֆնտգլեանի եւ Տէօվլէթեանի բանաձեւին շուրջ:

Տիարք Ֆնտգլեանի եւ Տէօվլէթեանի բանաձեւը քուէի դրուելով, ընդունուեցաւ միաձայնութեամբ:

Համագումարը պաշտօն յանձնեց Դիւանին, որ Ամեն. Դուրեան Արքեպիսկոպոսի ընկերակցութեամբ Պատ.-թեան Նախագահին ներկայացնեն այդ բանաձեւը եւ խնդրեն, որ ետ առնէ իր հրաժարականը:

Նիստը փակուեցաւ ժամը 7 1/2-ին:

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 63, թթ. 50-63: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ Ժէ

15 Յունիս 1920, ժամը 5-ին,

նախագահութեամբ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեանի:

Ներկայ էին 15 պատգամաւոր՝

Ամեն. Դուրեան Արքեպիսկոպոս, Տոքթ. Բարսեղեան, Դաւիթ-Բէկ, Թէրզիպաշեան, Թէքէեան, Մսըրլը Պէյ, Ներսէսեան Խան, Վսեմ. Գ. Նորատունկեան, Չօպանեան, Պզտիկեան, Սինապեան, Տէրպէտէրեան, Տէր-Ստեփանեան, Տէօվլէթեան, Ֆնտգլեան:

ՕՐԱԿԱՐԳ

1. Շարունակութիւն վիճաբանութեան Ազգ. Պատ. համարատուութեան
2. Տեղեկագիր Ազգ. Պատուիրակութեան Կազմական Կանոնագրի Յանձնաժողովին
3. Վերակազմութիւն Ազգ. Պատուիրակութեան

1. Շարունակութիւն վիճաբանութեան Ազգ. Պատ. համարատուութեան

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Մեր օրակարգին առաջին խնդիրն էր Պատ. Վսեմ. Նախագահին հրաժարականի հարցը: Երէկուան նիստին մէջ՝ միաձայնութեամբ բանաձեւ մը քուէարկեցինք եւ յանձնեցինք Դիւանին, որ Ամեն. Դուրեան Արքեպիսկոպոսի հետ տանի Պատուիրակութեան Նախագահին ներկայացնէ, որպէսզի ետ առնէ իր հրաժարականը եւ մեր վարչական գործերը իրենց բնական ընթացքին մէջ մտնեն: Պատգամաւորութիւնը գնաց եւ ներկայացուց այդ բանաձեւը: Ն. Վսեմութիւնը, գոհունակութիւն յայտնելով հանդերձ տրուած բանաձեւին համար, կարգ մը բացատրութիւններ տուաւ իր հրաժարականին նկատմամբ: Կը խնդրեմ Դուրեան Սրբազանէն ժողովիդ հաղորդէ, թէ ինչպէ՞ս եղաւ մեր տեսակցութիւնը:

Ամեն. Դուրեան Արքեպիսկոպոս. Գրեթէ մեկուկէս ժամուան տեսակցութիւն մը ունեցանք Վսեմ. Փաշային հետ: Չեմ կարծեր, որ տեսակցութեան առարկայ դարձած ամեն բան մանրամասնութեամբ պատմել պէտք ըլլայ: Պիտի յայտնեմ միայն ինչ որ էական է: Ն. Վսեմութիւնը ցաւ յայտնեց այն չորս բանաձեւերուն համար, որոնք ներկայացուած էին իր պատասխանէն ետք. չորսն ալ՝ իր, եւ առհասարակ, Պատ.-թեան գործունէութեան ու ձեռք բերած արդիւնքին համապատասխան ոգուով բանաձեւեր չէին, իր իսկ բառով՝ «նախատինք կը պարունակէին» կամ «պարսաւանքի բանաձեւեր էին»: Ն. Վսեմութիւնը յիշեց թէ' Տիար Թէրզիպաշեանի եւ թէ' ուրիշներու կողմէ եղած քննադատութիւնները, յիշեց նաեւ իր տուած պատասխանը, աւելցնելով, որ կը կարծէր, թէ իր պատասխանին մէջ ցոյց տրուած պատճառները չափազանց զօրաւոր պէտք էին ըլլալ ժողովը համոզելու համար: Եւ սակայն, յարեց, Համագումարի անդամներէն մէկը միայն շնորհակալութիւն յայտնեց մեր գործունէութեան մասին. ուրիշ մը ներկրորդեց այդ շնորհակալութիւնը: Այս պարագաները քիչ մը ցաւ իրեն. կրնար իր իրաւունքին մէջ ըլլալ: Պատասխանելով Ն. Վսեմութեան, ըսինք, թէ այդ բանաձեւերէն ո'չ մէկը քուէարկուած էր, թէ իր անձին նկատմամբ ո'չ նախատինք, պարսաւանք ոեւէ պատգամաւորի մտքէն իսկ անցած չէր: Աւելի համոզիչ դառնալու համար յիշատակեցինք նաեւ սա պարագան, թէ իրեն ներկայացուած նոր բանաձեւը ընդունուած էր տասնչորս ներկաներու միաձայնութեամբ, եւ խնդրեցինք իրմէ, որ ուրիշ ամեն նկատում մէկ կողմ թողլով՝ բարեհաճի ետ առնել իր հրաժարականը եւ վերստանձնել իր պաշտօնը այս փափուկ վայրկեանին: Փաշան, սակայն, բոլորովին գոհ չմնաց այդ բանաձեւէն. իր կարծիքով՝ ասիկա միջոց մըն էր, զոր ստիպուեցանք ընել իր հրաժարականին վրայ միայն, զայն

ետ առնել տալու համար: Բնականաբար՝ ժխտեցինք ասիկա: Այս մասին տարակարծիք ըլլալով մեզի հետ, Ն. Վսեմութիւնը պայման դրաւ, որ ժողովը, նոյնիսկ այն պարագային, ուր մեծամասնութիւն չպիտի ունենայ, վստահութեան քուէով մը որոշապէս արտայայտուի իր եւ Պատուիրակութեան գործունէութեան նկատմամբ: Եթէ այս վստահութեան քուէն տրուի նոյնիսկ պարզ մեծամասնութենէն, ինքզինքը գոհացած պիտի նկատէ, պայմանաւ, որ այլեւս փակուի համարատուութեան հարցը: Այս պահանջը ընելուն պատճառը սա էր, որ միայն մէկ ժողովական շնորհակալութիւն յայտնած ըլլալով Պատուիրակութեան գործունէութեան մասին, իրաւունք ունենալ կը կարծէր ենթադրելու, թէ միւսները բոլորն ալ դժգոհ էին: Ոեւէ մեծամասնութեամբ դրուած վստահութեան քուէ մը պիտի փարատէր անշուշտ այս տարակոյսը: Միւս կողմէ, Փաշան, իր ընկերներուն նկատմամբ փափկանկատութեան զգացումով մը չուզեց լքել զանոնք, եւ համերաշխութեան ոգուով մը պահանջեց, որ այդ վստահութեան արտայայտութիւնն ըլլայ ո'չ միայն իր, այլ՝ ամբողջ Պատուիրակութեան գործունէութեան մասին:

Տիար Գ. Ֆնտգլեան. Փաշան գանգատեցաւ նաեւ, որ ժողովը կարծիք չյայտնեց հաշիւներու մասին:

Ձայներ. Անոնք կապ ունէին ընդհ. համարատուութեան հետ:

Տիար Տէր-Ստեփանեան. Փաշան պէտք չէր, որ ժողովին բուն տրամադրութեան պաքթերը նկատէր այդ բանաձեւերը, քանի որ անոնցմէ ո'չ մէկը քուէարկուած է:

Տիար Գ. Ֆնտգլեան. Բացատրեցի այդ պարագան, յիշեցի նաեւ իմ ներկայացուցած բանաձեւս, աւելցնելով, որ ես ինքս յաջորդ օրը պէտք տեսայ զայն փոխելու: Բայց Ն. Վսեմութիւնը այնպէս կը նկատէ, թէ ներկայացուած չորս բանաձեւերուն մէջ տիրող ոգին իրական ցոլացումն է ժողովին բուն տրամադրութեան:

Ամեն. Դուրեան Արքեպիսկոպոս. Յայտնեցինք նաեւ, թէ իր հրաժարականին տեղեկանալէ առաջ իսկ իր ընդհանուր գործունէութեան մասին գոհունակութիւն յայտնելու պէտք տեսնուած եւ բանաձեւ մըն ալ խմբագրուած էր:

Տիար Դաւիթ-Բէկ. Տեսակցութեան ես ալ ներկայ էի, եւ կրնամ ըսել, որ Փաշան՝ երկու կէտի վրայ ծանրացաւ: Առաջին՝ կ'ուզէ, որ շնորհակալութեան կամ վստահութեան քուէ մը տրուի Պատուիրակութեան: Երկրորդ՝ կ'ուզէ, որ անցեալը բոլորովին փակուի եւ այլեւս նոր գործունէութեան պայմաններով զբաղի Համագումարը:

Տիար Տոքթ. Բարսեղեան. Ի՞նչ կը նշանակէ «անցեալը բոլորովին փակուի» խօսքը:

Ամեն. Դուրեան Արքեպիսկոպոս. Այսինքն թէ Համագումարը եկաւ, տեսաւ Պատուիրակութեան գործունէութիւնը, պատճառ մը չունեցաւ անկէ դժգոհ մնալու, քանի որ գիտենք, թէ արդիւնքը որքան ալ անբաւական ըլլայ՝ պատճառը Պատուիրակութիւնը չէ, եւ այլեւս խնդիրը վերջացած նկատուի, անդրադարձումներ չըլլան անոր մասին:

Տիար Տոքթ. Բարսեղեան. Օրինակի համար՝ միացման խնդրի մասին չխօսեցանք համարատուութեան վիճաբանութեան ընթացքին. վերջի վերապահուեցաւ այդ հարցը. ուրեմն այլեւս չպիտի՞ վերադառնանք անոր:

Տիար Չօպանեան. Այդ խնդիրը օրակարգին վրայ է եւ պիտի քննուի նոր տիրէքթիւներու հարցին հետ: Պատուիրակութիւնը ո'չ թէ չուզէր, այլ, ընդհակառակը, ինք կը փափաքի, որ Ժողովդ զբաղի անով: Գալով համարատուութեան միւս կէտերուն, որքան ալ վիճաբանութիւնը փակուած ըլլայ, տարակոյս չկայ, որ միշտ ազատ ենք եւ պիտի ստիպուինք արդէն անոնց ակնարկելու, քանի որ պիտի որոշենք, թէ վաղուան համար ի՞նչ կրնանք ընել այդ հարցերուն մասին:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Արդեօք կարելի չէ՞, որ Պատուիրակութեան ներկայ եղող անդամները խորհրդակցին իրենց միջեւ եւ ձեւ մը որոշեն ըլլալիք նոր կարգադրութեան համար:

Ամեն. Դուրեան Արքեպիսկոպոս. Արդար ըլլալու համար՝ պէտք է, որ անոնց հրաժարականներն ալ մերժենք:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Կարծեմ լաւ կ'ըլլայ, որ իրենք յայտնեն, թէ ի՞նչ ձեւով ըլլալու է մեր եզրակացութիւնը, որպէսզի կարելի դառնայ երկու կողմէ թիւրիմացութիւնները բառնալ եւ այս խնդրին վերջ տալ ու շարունակել ընդհատուած գործունէութիւնը: Անոր համար լաւ չէ՞, որ խորհրդակցին իրենց միջեւ:

Տիար Ա. Չօպանեան. Մենք չենք կրնայ հիմա կարծիք մը յայտնել. ատոր համար՝ անհրաժեշտ է, որ խորհրդակցինք Պատուիրակութեան Նախագահին հետ: Բնական է՝ ամեն ազատութիւն ունիք ուզածնուդ պէս խմբագրելու բանաձեւը. անկէ պիտի երեւայ, թէ կրնա՞նք մնալ: Պէտք է որոշապէս ըսել մեզի՝ կա՛մ գացէ՛ք, կա՛մ մնացէ՛ք: Ո՛չ Փաշան, ո՛չ ալ մենք գովեստ կը սպասենք. բայց որպէսզի մնանք, պէտք է այն տեսակ բանաձեւ մը, որ կարենանք արժանապատուութեամբ շարունակել մեր պաշտօնավարութիւնը:

Տիար Տէր-Ստեփանեան. Պատուիրակութեան Նախագահը ուզած էր Ժողովին իւրաքանչիւր անդամին անհատական կարծիքը ունենալ: Լաւ չէ՞, որ ամեն անդամ իր իսկ բանաձեւը յայտնէ, որպէսզի կարելի ըլլայ գնահատել Ժողովին ընդհանուր տրամադրութիւնը:

Տիար Վահան Թէքէեան. Քանի որ խնդիրը կեդրոնացաւ ամբողջ Պատ.-թեան հրաժարականին շուրջ, կը յիշեցնեմ իմ հրաժարագրիս խօսքերը: Ձեր ընելիք կարգադրութիւնը ինծի չի վերաբերիր: Մէջտեղը գործունէութիւն մը կայ, որուն համարատուութիւնը եղաւ, որու մասին քննադատութիւններ եղան եւ պատասխաններ տրուեցան: Իբր համագումարի անդամ, կ'ըսեմ, որ պէտք է Ժողովը այսօր իր վճիռը արտասանէ այդ գործունէութեան մասին: Վերջը Պատ.-թիւնը պիտի շարունակէ՞, թէ՞ ոչ՝ ուրիշ խնդիր է. արդէն օրակարգի վրայ է այդ խնդիրը: Որովհետեւ կարելի չէ վստահաբար ըսել, թէ Պատ.-ը անպատճառ պիտի շարունակէ պաշտօնավարել: Կրնայ ըլլալ որ տրուելիք նոր տիրէքթիւներուն մէջ գտնուի անանկ բան մը, զոր չընդունի եւ հրաժարի: Պատ.-ը այսօր կը սպասէ միայն Ժողովիդ արտայայտութեան, որպէսզի ընելիքը գիտնայ: Իմ մասին, ընելիքս պարզած եմ արդէն հրաժարագրիս մէջ:

Տիար Տ. Տէօվլէթեան. Յայտնի կ'ըլլայ, թէ Պատ.-թեան Վսեմ. Նախագահը պարզ վստահութեան քուէ կ'ուզէ մեզմէ, հետեւաբար նաեւ՝ գնահատում իր գործունէութեան: Մեր ընելիքը, ուրեմն, պէտք է որոշ ըլլայ. կա՛մ գնահատում, կա՛մ անվստահութիւն: Կարծեմ դժգոհ չենք թէ՛ Պատուիրակութեան Նախագահէն եւ թէ՛ Պատուիրակութենէն: Անշուշտ եղան քննադատութիւններ, եւ ես ալ քննադատողներուն մէջ էի, բայց արդար քննադատութիւններ էին կարգ մը սխալներու մասին, որոնք Պատուիրակութեան հիմնական գործունէութեան չէին պաքքաներ, եւ երբեք պարսաւանք չէին նշանակեր: Երէկ այն որոշման յանգեցանք, որ այս վճռական օրերուն, երբ այնքան կենսական խնդիրներ կան մէջտեղ, երբ կը խորհուի երկու Պատուիրակութիւնները միացնել, ո՛չ իսկ պէտք է խորհինք հրաժարականի մասին: Պէտք չէ խաղանք բառերուն վրայ, ու քանի որ մեր նախկին բանաձեւերը գոհացուցիչ չգտնուեցան, կ'առաջարկեմ, որ նոր բանաձեւի մը շուրջ միանանք իսկոյն եւ վերջացնենք այս խնդիրը:

Տիար Տոքթ. Բարսեղեան. Այսօրուան տեսակցութեան մասին եղած յայտնութիւնները կը պարզեն, թէ Փաշան իր հրաժարականը գրեր է անցեալ օրուան բանաձեւերուն տպաւորութեան տակ եւ թէ հիւանդութեան առարկութիւնը զոր ըրած էր իր հրաժարագրին մէջ, բուն պատճառը չէ:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Ն. Վսեմութեան հիւանդութեան տեսակէտը միշտ կայ. մեր տեսակցութեան միջոցին ատոր խօսքն ալ եղաւ եւ նոյնիսկ Վիշի երթալու մտադրութիւն յայտնեց:

Ամեն. Դուրեան Արքեպիսկոպոս. Բայց եւ աւելցուց, որ իր ոյժերը պիտի կրնան դիմանալ տակաւին քանի մը ամիս շարունակելու:

Տիար Բարսեղեան. Տրուած բացատրութիւններէն կ'երեւայ, թէ Փաշան կը փափաքի, որ հրաժարագիրն ետ առնելու համար Համագումարը պէտք է ո՛չ միայն իր, այլ ամբողջ Պատուիրակութեան մասին գոհանակութիւն յայտնէ: Ընդունելէ առաջ այդ պահանջումը, պէտք է քննենք, թէ որքա՞ն իրաւացի է: Եթէ խնդիրը իր անձին շուրջ միայն մնացած ըլար, մեր երէկուան բանաձեւը պէտք է գոհացներ զինքը: Ես ալ ձայնակցեցայ այդ բանաձեւին, բայց ձայնակցեցայ այն մտածումով, որ անոր առարկան լոկ իր անձն էր: Մինչդեռ, ձեռքս խղճիս վրայ, չպիտի կրնայի եւ չպիտի կրնամ նոյն ձեւով արտայայտութիւն մը ընել ամբողջ Պատուիրակութեան համար: Բացատրեմ թէ ինչո՞ւ: Ես այն համոզումն ունիմ, որ Պատուիրակութիւնը, այս մէկ տարուան ընթացքին, իր ներքին քաղաքականութիւնը վարած է շատ ձախաւեր, շատ անյաջող կերպով մը: Արտաքին քաղաքականութեան մասին համոզուած եմ, որ Ազգ. Պատ.-ը ըրած է այն, ինչ որ կրնար ընել: Գիտեմ, որ աւելին ընել կարելի չէր եւ թէ ձախողութիւնը վերագրելի է աւելի արտաքին ազդակներու, քան իրեն: Միակ վերապահութիւն մը ունիմ այս տեսակէտով, եւ այդ ալ հայ-քրտական բանակցութեան հարցն է: Բայց այս մէկ հատիկ վերապահումը ինծի իրաւունք չի տար անոր արտաքին քաղաքականութիւնը դատապարտելու: Իրեն տեղ ով որ ալ ըլլար, ուրիշ արդիւնք մը չպիտի առաջ գար: Գալով ներքին քաղաքականութեան, ամէնքս ալ գիտենք, որ Փաշան հայկական իրականութեան ծանօթ մը չէ եղած եւ, դժբախտաբար, չէ ալ մինչեւ այսօր: Ըսի թէ Պատուիրակութիւնը այս տեսակէտով շատ ձախաւեր, շատ անյաջող քաղաքականութիւն մը ունեցած է: Ես ասիկա կը վերագրեմ լոկ Փաշային ընկերներուն, որոնք շատ աւելի լաւ տեղեակ էին ազգ. պայմաններուն, որով՝ այդ քաղաքականութեան ձախողութեան ամբողջ պատասխանատուութիւնը կ'իյնայ իրենց վրայ:

Տիար Ա. Թէրզիպաշեան. Անձնական պատասխանատուութեան խնդիր կը հանէք, բայց սխալ է: Մէջտեղը համերաշխ Պատուիրակութիւն մը կայ, համերաշխ ծրագրով մը: Մեր աչքին՝ Փաշան նոյնն է, ինչ որ են իր միւս ընկերները:

Տիար Տոքթ. Բարսեղեան. Քննելով Պատ.-թեան ներքին քաղաքականութիւնը, մենք կը տեսնենք մասնաւորաբար կարգ մը խնդիրներ, որոնք շատ գէշ արդիւնք մը տուած են եւ որոնց պատճառաւ առաջ եկած է շատ ալ անբաղձալի դրութիւն մը: Այսպէս, օրինակի համար, արեւմտահայոց՝ Հայաստանի խորհրդարանին մասնակցութիւնը արգիլելու ձգտող հեռագիրը, Մայիս 28-ի աքթին դէմ եղած բողոքը, եւ Ամերիկա զոյգ առաքելութիւն ղրկելու ձեռնարկը: Այս երեք խնդիրներն ալ, ինչպէս յայտնի է, տեղի տուին ծանր վէճերու, որոնք կը տեւեն տակաւին մինչեւ այսօր, եւ որոնց վնասներուն նկատմամբ կարծեմ հարկ չկայ խօսիլ: Եւ իմ համոզումս է, որ այդ երեք խնդիրներուն մէջ ալ պատասխանատուն Փաշան չէ, այլ՝ իր ընկերներն են, որոնք շատ աւելի ծանօթ էին մեր ներքին պայմաններուն եւ մեր հասարակական ոյժերու փոխ-յարաբերութեանց եւ որուն հետեւանքով, այս խնդիրներուն նկատմամբ տոն տուողը, բնականաբար իրենք պիտի ըլլան: Այս տեսակէտով, ներքին քաղաքականութեան մէջ ալ այնքան չեմ մեղադրեր Փաշան, որով կրնամ իր մասին եղած գոհունակութեան արտայայութեան մը մասնակցիլ: Բայց ինչ որ կրնամ ընել իրեն համար, իմ խիղճս երբեք չպիտի թոյլատրեր, որ ընեմ նաեւ Պատուիրակութեան միւս անդամներուն համար. եւ բացատրեցի թէ ինչո՞ւ: Նոյնիսկ այս տեսակէտով բացառութիւն չեմ նկատեր Պատ.-թեան անդամներէն Տիար Տոքթ. Նեւրուզը, որքան ալ վստահ ըլլամ, թէ այդ խնդիրներուն մէջ աշխատած է իր ընկերներէն տարբեր ուղղութեամբ:

Տիար Տէօվլէթեան. Պէտք չէ միշտ քննադատենք, պէտք չէ միշտ մեղադրենք: Յետոյ այլեւս այս խնդիրները յուզելու պէտք չունինք այսօր, քանի որ որոշապէս ըսուեցաւ, թէ Պատ.-թեան գործունէութիւնը չէր այս օրուան արդիւնքին պատճառը:

Տիար Բարսեղեան. Իմ խօսքս ներքին քաղաքականութեան համար էր:

Տիար Տէօվլէթեան. Ազգ. Պատուիրակութիւնը շատ անգամ սխալ ճամբու մէջ գացած է՝ պարզապէս միւս Պատուիրակութեան համաձայն մնալ ուզելուն համար: Այս մասին երկուքն ալ հաւասարապէս մեղադրելի են: Ինչո՞ւ կը մոռնաք միւս Պատուիրակութեան ունեցած դերը:

Տիար Բարսեղեան. Անոնց հաշիւը ուրիշ տեղ պիտի տեսնուի:

Տիար Տէր-Ստեփանեան. Եթէ տեսնուի:

Տիար Ա. Չօպանեան. Տիար Բարսեղեանի դիտել պիտի տամ, որ Ազգ. Պատուիրակութիւնը ներքին գործունէութեան մասին ալ համերաշխ եղած է այնքան, որքան արտաքին գործունէութեան մէջ: Եթէ այսօր Պատուիրակութեան Նախագահը հոս ըլլար, ամենէն առաջ ինք պիտի փութար ասիկա հաստատելու: Մայիս 28-ի աքթին առթիւ եղած բողոքը դրդուած էր մեծ վտանգի մը՝ ռուսական վտանգին հաւանականութեան գիտակցութենէն. եւ այս գիտակցութիւնը Փաշան ինք ունեցաւ ամէնէն առաջ, այնքան, որ երբ անոր ակնարկութիւն կ'ըլլար, կը յիշեցնէր, որ ինք տեսաւ նախ այդ վտանգը. եւ անկեղծօրէն համոզուած էր, ինչպէս համոզուած էինք մենք ալ, որ եթէ Պատուիրակութիւնը այդ ուղղութիւնը չբռնէր, հետեւանքը վնասակար պիտի ըլլար ազգին: Ամեն պարագայի մէջ, մտածումը նախ իրն էր, եւ ինքն իսկ կ'ըսէր անոր ակնարկելով, ամեն անգամ որ առիթը ծագեր՝ «C'est ma thèse!»

Տիար Տէրպէտէրեան. «Թէզ» մը, որ «ֆայիթթ» ըրաւ:

Տիար Գ. Ֆնտգլեան. Կը ցաւիմ, որ Տիար Բարսեղեան ներքին քաղաքականութեան խնդիր յարոյց, որով արտաքին քաղաքականութեան համար ստեղծուած կացութիւնը, զոր պարզելու միջոց մը կը խորհինք հեռու նիստէ ի վեր, բոլորովին կնճռոտեցաւ: Փաշան ներքին քաղաքականութեան մէջ ալ ինքզինքը չանջատէր իր պաշտօնակիցներէն: Քանի որ գոհունակութիւն պիտի յայտնենք իր մասին, չենք կրնար իր պաշտօնակիցները անջատել:

Տիար Վահան Թէքէեան. Եթէ Տոքթ. Բարսեղեանի խօսքերը Պատուիրակութեան ներքին քաղաքականութեան վերաբերեալ պատասխանատուութեան մասին՝ վիրաւորիչ չըլլային Փաշային համար զայն ցոյց տալու իբր մեզի պարզ հետեւորդ՝ ես իմ հաշուիս պիտի ուզէի սիրով համամիտ ըլլալ իրեն եւ ստանձնել այդ քաղաքականութեան առաջնակարգ պատասխանատուութիւնը, որովհետեւ չեմ կարծեր, որ սխալ գործեցինք այդ ուղղութիւնը բռնելով:

Տիար Տոքթ. Բարսեղեան. Իմ ըսածներս վիրաւորիչ չեն Փաշային համար: Ես պարզապէս բացատրեցի, թէ ինչո՞ւ չեմ կրնար Պատուիրակութեան անդամներուն համար ալ ընդունիլ այս բանաձեւը, որ երէկ առաջարկուեցաւ Փաշային համար:

Տիար Տէր-Ստեփանեան. Տիար Բարսեղեան կարծիք մը շիներ է առանց գիտնալու, թէ ի՞նչ անցած-դարձած է Պատուիրակութեան մէջ: Միակ օրինակ մը շատ բան կրնայ յայտնել այս մասին: Արեւմտահայոց՝ Հայաստանի խորհրդարանին մասնակցութեան վերաբերող այն հեռագրին նկատմամբ, որուն ակնարկեց, լուր տարածուեցաւ իրեն համախոհներու կողմէ, որ Փաշան հեռագիրը ղրկեր էր լոկ իր նախաձեռնութեամբ, եւ թէ Պատուիրակութեան միւս անդամները խնդիրը իմացած են հեռագրին ղրկուելէն ետք միայն:

Նախագահ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեանի առաջարկութեան վրայ, ժողովը որոշեց պահ մը դադրեցնել նիստը եւ խորհրդակցիլ նոր բանաձեւի մը մասին:

Նիստը վերսկսելուն՝ Ամեն. Դուրեան Արքեպիսկոպոս եւ Տիարք Ֆնտգլեան ու Տէօվլէթեան ներկայացուցին նոր բանաձեւ մը: Միւս կողմէ՝ Տիար Տէր-Ստեփանեան յայտարարեց, թէ ինչպէս քանի մը անգամներ ըսած է արդէն, նախորդ օրը շատ աճապարանքով ներկայացուեցան բանաձեւերը, եւ բաւարար ատեն չունեցան անոր համար, մինչդեռ պէտք էր գոնէ օր մը ժամանակ տալու, այլապէս թերեւս կարելի ըլլար փոխել զանոնք, եւ այս անպատեհութիւններէն խուսափիլ: Տիար Տէր-Ստեփանեան յարեց, թէ իր բանաձեւն ալ այդ պայմաններուն մէջ դրուած ըլլալով, ետ կ'առնէ զայն եւ անոր տեղ կը ներկայացնէ նոր բանաձեւ մը:

Տիար Տոքթ. Բարսեղեան ալ յայտարարեց, թէ քանի որ երէկուան բանաձեւէն տարբեր նոր բանաձեւեր կը ներկայացուին, ինք կը պնդէ իր առաջին բանաձեւին վրայ:

Որով՝ Դիւանին յանձնուեցան հետեւեալ երեք բանաձեւերը, եւ որոշուեցաւ կարդալ զանոնք կարգաւ, ու կարգաւ ալ քուէարկել՝ ժամ առաջ խնդիրը փակելու եւ օրակարգի միւս հարցերուն անցնելու համար:

Ա. բանաձեւ.

Համագումարս, լսելով Ազգ. Պատուիրակութեան անցեալ պաշտօնավարութեան համարատուութիւնը, անոր նկատմամբ եղած քննադատութիւնները, Պատուիրակութեան Նախագահին տուած բացատրութիւնները, գնահատելով Ն. Վսեմութեան եւ իր պաշտօնակիցներուն անխոնջ ջանքերն ու գործունէութիւնը եւ յայտնելով իր վստահութիւնը, կ'անցնի օրակարգին:

Եղիշէ Արքեպիսկոպոս Դուրեան
Գառնիկ Ֆնտգլեան
Ա. Տէօվլէթեան

Բ. բանաձեւ.

Համագումարը, լսելով Ազգ. Պատուիրակութեան համարատուութիւնը, անոր շուրջ փոխանակուած քննադատութիւններն ու պատասխանները, եւ նկատելով, որ Ազգ. Պատուիրակութիւնը ներքին ու մանաւանդ արտաքին շատ դժուար կացութեան մը առջեւ գտնուած է իր գործունէութեան ընթացքին, կը գնահատէ ընդհանրապէս անոր աշխատանքն ու ջանքերը, ու կ'անցնի օրակարգին:

Ն. Տէր-Ստեփանեան

Գ. բանաձեւ.

Ազգ. Համագումարը, լսելով Ազգ. Պատուիրակութեան համարատուութիւնը մէկ տարուան իր գործունէութեան մասին, ինչպէս նաեւ անոր թեր ու դէմ քննադատութիւններն ու գնահատումները, լսելով նաեւ Ազգ. Պատուիրակութեան Նախագահին եւ անդամներուն պատասխան-բացատրութիւնները, վերջացած կը յայտարարէ այս հարցը եւ կ'անցնի օրակարգի յաջորդ խնդրին:

Տոքթ. Տ. Բարսեղեան
Զ. Պզտիկեան
Ա. Հանըմեան

Այս վերջին բանաձեւը նախապէս ստորագրած էին նաեւ Տիարք Դաւիթ-Բէկ եւ Տէրպէտէրեան: Տիար Դաւիթ-Պէկ յայտարարեց, թէ կը վերապահէ իր որոշումը, իսկ Տիար Տէրպէտէրեան նախապէս հարցուց, թէ Տիար Տէր-Ստեփանեան ի՞նչ կը հասկնայ իր բանաձեւին մէջ գործածուած «կը գնահատէ ընդհանրապէս» խօսքէն: Տիար Տէր-Ստեփանեանի բացատրութեան վրայ, թէ կը նշանակէ «գնահատել ընդհանուր առումով», Տիար Տէրպէտէրեան յայտարարեց, թէ ինք ալ այլեւս պէտք չի տեսներ Տիար Բարսեղեանի բանաձեւին միանալու, նախապատիւ նկատելով Տիար Տէր-Ստեփանեանի բանաձեւը:

Տիարք Զաքարիա Պզտիկեան եւ Դաւիթ-Բէկ առաջարկեցին, որ այս բանաձեւերուն քուէարկութիւնը յետաձգուի յաջորդ նիստին, որպէսզի հապճեպ գործողութիւն մը չըլլայ:

Այս առաջարկը քուէարկութեան դրուելով, Համագումարը որոշեց յետաձգել բանաձեւին քուէարկութիւնը: Քուէարկութեան տեղ, սակայն, Տիար Տէր-Ստեփանեան ուզեց գիտնալ, թէ ի՞նչ է Պատ.-թեան մտածումը:

Տիար Արշակ Չօպանեան յայտարարեց, որ եթէ բանաձեւը քուէարկուի ալ՝ Պատուիրակութեան ներկայ եղող անդամները չպիտի կրնան, առանց Նախագահին հետ խորհրդակցելու, ընդունիլ կամ մերժել քուէարկուած բանաձեւը, եւ առաջարկեց,

որ նոր կայացուած բանաձեւերը նախապէս հաղորդուին Պատուիրակութեան Նախագահին:

Համագումարը համամիտ գտնուեցաւ այս առաջարկին, չեղեալ նկատեց բանաձեւն անմիջապէս քուէի դնելու մասին տրուած որոշումը, եւ յաջորդ նիստին թողուց բանաձեւերու քուէարկութիւնը, որոշելով որ անոնք նախապէս ներկայացուին Պատուիրակութեան Նախագահ Վսեմ. Պողոս Փաշա Նուպարի:

Նիստը փակուեցաւ ժամը 7 1/2-ին:

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 64, թթ. 1-13: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ ԺԸ

16 Յունիս 1920 ժամը 5-ին,

նախագահութեամբ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեանի:

Ներկայ էին 15 պատգամաւոր՝

Ամեն. Դուրեան Արքեպիսկ., Տոքթ. Բարսեղեան, Դաւիթ-Բէկ, Թէրզիպաշեան, Թէքէեան, Համբմեան, Մսըրլը Պէյ, Վսեմ. Գ. Նորատունկեան, Չօպանեան, Պզտիկեան, Սինապեան, Տէրպէտէրեան, Տէր-Ստեփանեան, Տէօվլէթեան, Ֆնտգլեան:

Օրակարգ

1. Շարունակութիւն վիճաբանութեան Ազգ. Պատ. համարատուութեան
2. Տեղեկագիր Ազգ. Պատուիրակութեան Կազմական Կանոնագրի Յանձնաժողովին
3. Վերակազմութիւն Ազգ. Պատուիրակութեան

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Ատենագրութիւն

Կարդացուեցան եւ վաւերացուեցան Յունիս 11-ի, 12-ի, 14-ի եւ 15-ի նիստերուն ատենագրութիւնները.

Օրակարգ

1. Շարունակութիւն վիճաբանութեան Ազգ. Պատ. համարատուութեան

Նախագահ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան հարցուց Պատուիրակութեան ներկայ անդամներուն, թէ արդեօք ներկայացուած բանաձեւերուն նկատմամբ խորհրդակցեցա՞ն Պատուիրակութեան Նախագահին հետ, եւ խնդրեց, որ յայտնեն, թէ այդ բանաձեւերէն ո՞րը ընդունելի է իրենց, որպէսզի անմիջապէս քուէարկութեան ձեռնարկուի եւ փակուի այս խնդիրը:

Տիար Արշակ Չօպանեան, յանուն Պատուիրակութեան, պատասխանեց, թէ Պատուիրակութիւնը ազատ կը թողու Համագումարը, բանաձեւերուն քուէարկութեան մասին:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Արդեօք Պատուիրակութիւնը բոլոր բանաձեւերն ալ հաւասա՞ր կը նկատէ:

Տիար Չօպանեան. Անշուշտ Պատուիրակութիւնն ունի իր նախասիրութիւնը, բայց միաձայնութեամբ որոշեց չյայտնել, որպէսզի Ժողովը իր ազատ կամքով քուէարկէ իրեն յարմարագոյն թուած բանաձեւը: Քուէարկուելիք բանաձեւէն կախուած է Պատուիրակութեան մնալը կամ չմնալը:

Տիար Տէր-Ստեփանեան. Դիտել կուտամ, թէ Պատուիրակութեան անունով եղած այս յայտարարութիւնը լուծում մը չէ, ընդհակառակը՝ Համագումարը կը մատնէ այն անորոշութիւնը, որուն մէջ կը գտնուէր նախորդ նիստին:

Տիար Տոքթ. Բարսեղեան. Յայտնի է, կ'երեւայ, որ Պատ.-ը այսօր ժողով ունեցեր եւ որոշեր է, թէ բանաձեւերէն ո՞րը կը նախընտրէ. բայց չեն ուզեր ըսել որպէսզի չկարծուի, թէ ճնշում կը բանեցնեն Ժողովին վրայ: Բայց այս ճնշումը երէկուընէ եղած է արդէն:

Տիար Հանըմեան. Քանի որ Պատուիրակութիւնը կը փափաքի վստահութեան արտայայտութիւն մը ունենալ, պէտք էր, որ ինք ըսեր, թէ ներկայացուած բանաձեւերէն ո՞րը կը նախընտրէ՝ նկատելով զայն իբր վստահութեան արտայայտութիւն, ինչպէս կ'ըլլայ բոլոր խորհրդարաններու մէջ:

Վիճաբանութիւնը շարունակուեցաւ այս կէտին շուրջ, եւ Պատուիրակութեան անդամները հաստատ մնացին իրենց պահանջման վրայ: Ի վերջոյ, Տիար Տէօվլէթեան ըսաւ, թէ նոյն առտուն իսկ տեսնուած էր Վսեմ. Փաշային հետ, եւ Փաշան չէր ծածկած իրմէ, թէ Պատուիրակութիւնը պիտի գոհանայ՝ եթէ երբեք Համագումարը քուէարկէ այն բանաձեւը, որ ստորագրուած էր Ամեն. Դուրեան Արքեպիսկոպոսի, Տիար Գառնիկ Ֆնտգլեանի եւ իր կողմէ:

Տիար Վահան Թէքէեան. Եթէ չեմ կրնար լիակատար կերպով մը, գոնէ կրնամ չափով մը լուսաբանել Ժողովը: Ձեր բանաձեւերը կրկնակ նշանակութիւն ունին, մէկը Պատուիրակութեան անցեալ գործունէութեան կը վերաբերի, միւսը՝ անոր յառաջիկայ պաշտօնավարութեան: Ինծի համար ապագայի խնդիր չկայ, որովհետեւ ըսած եմ արդէն, թէ հրաժարականս վերջնական պիտի ըլլայ, երբ Համագումարը արտասանէ անցեալի գործունէութեան մասին իր վճիռը, ինչ ալ ըլլայ անիկա: Պատ.-թիւնը ընտրուած է մինչեւ Համագումարի նոր նստաշրջանը գործելու եւ իր համարատուութիւնը ներկայացնելու համար: Այդ է որ կատարեցինք, եւ Համագումարին կը մնայ այժմ յառաջիկային համար նոր ուղեգիծ տալով՝ ընտրել նաեւ նոր Պատուիրակութիւն մը, որուն մէջ նախորդ անդամներն ալ կրնան մտնել՝ անոնք, որոնց մասնակցութիւնը կը փափաքէի եւ որոնք կը յօժարին: Իսկ թէ ներկայացուած բանաձեւերէն ո՞րը կրնայ Պատ.-թեան անդամներուն թոյլ տալ նոր Պատ.-թեան մէջ կրկին մտնելու, անշուշտ այն բանաձեւն է, որ Պատ.-թեան գործունէութեան հաւանութիւն կը յայտնէր: Պէտք չէ ասկէ հետեւցնել, սակայն, թէ այդ հաւանութիւնը ամբողջ Պատ.-թեան համար իր պաշտօնը շարունակելու պարտադրութիւն մը կ'ենթադրէ:

Համագումարը որոշեց յաջորդաբար անուանական քուէարկութեան ենթարկել ներկայացուած երեք բանաձեւերն ալ, սկսելով այն բանաձեւէն, զոր ստորագրած էին Տիարք Տոքթ. Բարսեղեան, Պզտիկեան եւ Հանըմեան: Խնդիր եղաւ, թէ Պատուիրակութեան անդամները կրնա՞ն մասնակցիլ քուէարկութեան: Որքան ալ ըսուեցաւ, թէ խորհրդարանական օրէնքներու հիման վրայ՝ Պատուիրակութեան անդամները կրնան քուէ տալ, թէ՛ Տիար Արշակ Չօպանեան եւ թէ՛ Տիար Վահան Թէքէեան յայտարարեցին, որ չպիտի մասնակցին քուէարկութեան: Միւս կողմէ, եղած հարցումներու վրայ, ըսին, թէ Պատուիրակութեան փափաքն է, որ քուէարկութեան հիմ բռնուի ո՛չ թէ քուէներու առաւելագոյն թիւը, այլ՝ ներկայ եղող պատգամաւորներու մեծամասնութիւնը: Եւ այդ հիմամբ 13 պատգամաւորներու մասնակցութեամբ քուէի դրուեցաւ Տիարք Տոքթ. Բարսեղեանի, Պզտիկեանի եւ Հանըմեանի բանաձեւը.

«Ազգ. Համագումարը, լսելով Ազգ. Պատուիրակութեան համարատուութիւնը մէկ տարուան իր գործունէութեան մասին, ինչպէս նաեւ անոր թեր ու դէմ քննադատութիւններն ու գնահատումները, լսելով նաեւ Ազգ. Պատուիրակութեան Նախագահին եւ անդամներուն պատասխան-բացատրութիւնները, վերջացած կը նկատէ այս հարցը եւ կ'անցնի օրակարգի յաջորդ խնդրին»:

Այս բանաձեւը քուէարկութեան դրուելով՝ ստացաւ միայն երեք քուէ /Տիարք Բարսեղեան, Հանըմեան, Պզտիկեան/:

Յետոյ քուէի դրուեցաւ Տիար Տէր-Ստեփանեանի բանաձեւը.

«Համագումարը, լսելով Ազգ. Պատուիրակութեան համարատուութիւնը, անոր շուրջ փոխանակուած քննադատութիւններն ու պատասխանները, եւ նկատելով, որ Ազգ. Պատուիրակութիւնը ներքին ու մանաւանդ արտաքին շատ դժուար կացութեան մը առջեւ գտնուած է իր գործունէութեան ընթացքին, կը գնահատէ ընդհանրապէս անոր աշխատանքն ու ջանքերը եւ կ'անցնի օրակարգին»:

Այս բանաձեւն ալ ստացաւ միայն երկու քուէ /Տէրպէտէրեան եւ Տիար Տէր-Ստեփանեան/:

Ի վերջոյ քուէի դրուեցաւ փոփոխում տրուելով Ամեն. Դուրեան Արքեպ.ի եւ Տիարք Ֆնտգլեանի եւ Տէօվլէթեանի բանաձեւը.

«Համագումարը՝ լսելով Ազգ. Պատուիրակութեան անցեալ պաշտօնավարութեան համարատուութիւնը, անոր նկատմամբ եղած քննադատութիւնները եւ Պատուիրակութեան Նախագահին տուած բացատրութիւնները, գնահատելով Ն. Վսեմութեան եւ իր պաշտօնակիցներուն անխոնջ ջանքերը ու գործունէութիւնը եւ յայտնելով իր վստահութիւնը՝ կ'անցնի օրակարգին»:

Այս բանաձեւը ստացաւ եօթ քուէ, /Ամեն. Դուրեան Արքեպ., Տիարք Թէրզիպաշեան, Մսըրլը Պօղոս Պէյ, Վսեմ. Գ. Նորատունկեան, Սինապեան, Տէօվլէթեան, Ֆնտգլեան՝ մեծամասնութիւնը ներկայ տասներեք պատգամաւորներուն:

Տիար Դաւիթ-Բէկ ձեռնպահ մնաց երեք քուէարկութեանց ալ ընթացքին: Նախ. Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան յոյս յայտնեց, որ այս քուէարկութեամբ այլեւս կը փակուի Պատուիրակութեան հրաժարականի խնդիրը, եւ հակիրճ ամփոփումը ըրաւ այն աշխատութեանց, որոնք կը մնան Համագումարին:

Ատոնց մէջ առաջինն է թրքական դաշնագրին քննութիւնը, որ առաջ կը տարուի թէ՛ Ազգ. Պատուիրակութեան եւ թէ՛ Համագումարին կողմէ նշանակուած յանձնաժողովներուն միջոցաւ:

Երկրորդ խնդիր մը՝ Ազգ. Պատուիրակութեան վերակազմութեան կամ անոր տրուելիք նոր տիրէքթիւներու հարցն է: Վսեմ. Նախագահը Ժողովին յանձնարարեց, որ մասնաւոր յանձնաժողով մը գումարուի այդ տիրէքթիւները ուսումնասիրելու համար:

Երրորդ խնդիր մը՝ Կիլիկիոյ կացութեան հարցն է, որու մասին Վսեմ. Նախագահը յոյս յայտնեց, որ Պատուիրակութիւնը շուտով կը ներկայացնէ իր առաջարկները Համագումարին:

Ուրիշ գլխաւոր խնդիր մը՝ մանտայի հարցն է, որուն նկատմամբ, Համագումարի նախորդ նստաշրջանին որոշման համաձայն, պատրաստուած էին կարգ մը օրինագիծեր, որոնց այլեւս պէտք չէ մնացած, քանի որ պայմանները փոխուած են անկէ ի վեր եւ Հայաստան մանտաթէր չպիտի ունենայ այն ձեւով, ինչպէս որ կ'ենթադրուէր անցեալ տարի Ազգերու Ընկերակցութեան Դաշնակցութեան 22-րդ յօդուածին հիման վրայ: Բայց եւ այնպէս, ըսաւ Ն. Վսեմութիւնը, կրնանք այդ օրինագիծերը իբր նախագիծ ներկայացնել հայկական կառավարութեան նկատառման: Իսկ մանտայի հարցին նկատմամբ վերջնական որոշման մը յանգելու համար, Ն. Վսեմութիւնը այն յայտնեց, որ Պատուիրակութեան առաջարկին պէտք է սպասել: Ն. Վսեմութիւն Ժողովը հաւանութիւն յայտնեց այս առաջարկին, որով կազմական կանոնագրեր տեղեկագրին խնդիրը վերցաւ օրակարգէն:

Տիար Տէր-Ստեփանեանի առաջարկին վրայ, որոշուեցաւ Պատուիրակութեան ապագայ տիրէքթիւներու մասին նախ ընդհանուր խորհրդակցութիւն մը կատարել եւ վերջէն կազմել անոնց ուսումնասիրութեան համար յանձնաժողով մը, որպէսզի այս վերջինը Համագումարին տրամադրութեանց տեղեկանայ եւ որոշ ուղղութիւն մը ունենայ իր աշխատութեան նկատմամբ:

Նախագահ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան ի վերջոյ շեշտեց այս բոլոր աշխատութիւնները կարելի եղածին չափ շուտով լրացնելու անհրաժեշտութիւնը, նկատելով, որ պատգամաւորներէն շատերը եկած են հեռաւոր տեղերէ, եւ անհամբեր են վայրկեան մը առաջ իրենց գործին գլուխը դառնալու:

Տիար Տիրան Տէօվլէթեան. Վսեմ, Նախագահին ակնարկած պատգամաւորներէն մէկն ալ ես եմ: Կը ցաւիմ, որ ստիպուած եմ վաղն իսկ մեկնիլ Անգլիա, որով այլեւս չպիտի կրնամ մասնակցիլ Համագումարիդ աշխատութեանց: Շատոնց պիտի մեկնէի արդէն, բռնադատուած հարկեցուցիչ պատճառներէ, բայց եղած պնդումներու վրայ՝ մնացի, ինչ որ սակայն դժբախտաբար, այլեւս անկարելի է այսօր: Չեմ կարծեր, որ իմ մեկնիլս զգալի դառնայ Ժողովիդ, որովհետեւ կը յուսամ, որ իմ թանկագին ընկերս՝ Տիար Գառնիկ Ֆնտգլեան, սիրով պիտի փոխանորդէ ինծի, ամեն անգամ, որ Անգլիոյ հայոց անունով յայտարարութիւն մը ընելու պէտք ծագի:

Չբաժնուած՝ կ'ուզեմ քանի մը խօսք ընել պաքթ. Ժողովիդ, այն յոյսով, որ ձեր ամէնուդ զգացմանց թարգմանը եղած պիտի ըլլամ:

Մենք հաւատացած ենք ու կը հաւատանք մէկ եւ անբաժանելի Հայաստանի մը .., անկաշկանդ ու անկախ, եւ եթէ կարելի ըլլայ՝ բացարձակ տէր իր իրաւանց: Մենք կը հաւատանք ունենալ այնքան իրաւունք Երեւանի Հանրապետութեան ստեղծման եւ պահպանման գործին մէջ, որքան իր այսօրուան ներկայացուցիչները: Առանց ամբողջական հայութեան ջանքերուն ու օգնութեան, առանց մանաւանդ համերաշխ գործակցութեան, կարելի չէ, որ մեր ճակատագրին տէր դառնանք: Ասոնք կ'ըսեմ ամէնախոր համոզումով, մտաբերելով ազգիս զարգացման ու բարգաւաճման պատմութիւնը, որ է՛ն առաջ այս ճշմարտութիւնը կը սորվեցնէ մեզի: Երկու Պատուիրակութիւնները պէտք է միանգամ ընդ միշտ հասկնան, որ եթէ եղբայրական սէր, ներող ոգի, փոխադարձ զիջողութիւն չըլլայ, բացարձակապէս անկարելի կը դառնայ համերաշխ գործակցութիւնը, եւ մեր ազգին արդար դատը, որուն յաջողութեան ակնդէտ կը սպասէ ամբողջ հայութիւնը, որ ցրուած է աշխարհի բոլոր մասերուն մէջ, վերջնականապէս կորստեան կը մատնուի: Արդէն իսկ շատ բան տուժեցինք անհամերաշխութեան, անմիաբանութեան ձեռէն, ինչպէս մեր նախնիքը տուժած են անցեալի մէջ: Մեր ձախողութիւններէն շատերուն բուն պատճառը ատ է: Ի զուր այդ ձախողութեանց պատասխանատուներ կը փնտռենք: Յանցանքը գլխաւորաբար մեր անմիաբանութեան վերագրելի է: Յանուն Անգլիոյ հայ գաղութին, որու ներկայացուցիչներէն մէկն ըլլալու պատիւն ունիմ Համագումարիս մէջ խոնարհաբար ու թախանձանօք կոչ կ'ընեմ Պատուիրակութեանց իւրաքանչիւր անդամին հայրենասիրական զգացմանց, որպէսզի մոռնալով անցեալը, սուրբ գործին փարին նոր ոգուով ու ջերմեռանդութեամբ, յիշելով անմահ Պէշիկթաշլեանի՝ մեզի կտակած խօսքերը.

«Տո՛ւր ինձ քո ձեռքը, եղբայր ենք մենք,
Որ մըրրկաւ էինք զատուած,
Բախտին ամեն ոխ չարանենգ
Ի մի համբոյր դրուին ի բաց:
Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն
Քան զանձկալի եղբայր անուն»:

Համագումարը հաւանութեան ձայներով իր համամտութիւնը յայտնեց Տիար Տէօվլէթեանի:

Նախագահ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան արտասուաթոր ձայնակցեցաւ Տիար Տիրան Տէօվլէթեանի, մաղթելով, որ բանաստեղծին ըղձանքը իրականանայ ազգին մէջ այս դժուարին ոստէին, երբ այնքան անհրաժեշտ է ընդհանուրին համագործակցութիւնը ընդհանուր ազգին դատին փրկութեան համար:

Նիստը փակուեցաւ ժամը 6 1/2-ին:

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 64, թթ. 14-23: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ ԺԹ

18 Յունիս 1920, ժամը 4-ին,
նախագահութեամբ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեանի:

Ներկայ էին 16 պատգամաւոր՝
Ամեն. Դուրեան Արքեպիսկ., Տոքթ. Բարսեղեան, Դաւիթ-Բէկ, Թէրզիպաշեան, Թէքէեան, Տամատեան, Հանըմեան, Մսըրլը Պէյ, Տոքթ. Նեւրուզ, Վսեմ. Գ. Նորատունկեան, Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար, Չօպանեան, Սինապեան, Տէրպէտէրեան, Տէր-Ստեփանեան, Ֆնտգլեան:

ՕՐԱԿԱՐԳ

1. Վերակազմութիւն Ազգ. Պատուիրակութեան
2. Տեղեկագիր Դաշնագրի Քննութեան Յանձնաժողովին

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Ատենագրութիւն

Կարդացուեցաւ Յունիս 16-ի նիստին ատենագրութիւնը եւ վաւերացուեցաւ:

1. Ձեկուցում Ազգ. Պատուիրակութեան Նախագահ Վսեմ. Պօղոս Փաշան Նուպարի, հատուցման խնդրին նկատմամբ:

Ազգ. Պատուիրակութեան Նախագահ Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար յիշեցուց ժողովին Տիար Թէրզիպաշեանի այն քննադատութիւնը, թէ հայերը կրնային հատուցում ստանալ Գերմանիայէն, բայց Պատուիրակութեան անփութութեամբ չէ ստացուեր. յիշեցուց նաեւ իր խոստումը, թէ այս խնդիրը, որուն նկատմամբ ինք անձնապէս բոլորովին հակառակ կարծիք մը ունէր, պիտի ենթարկէր յայտնի իրաւագէտի մը խորհրդակցութեան: Ն. Վսեմութիւնը ըսաւ, թէ երկու յայտնի հրաւէրներ՝ Բրօֆ. Պարթէլէմի եւ Պ. Մանտէլշթամ, որոնց խորհրդակցութեան դիմուեցաւ այդ մասին, Տիար Թէրզիպաշեանի թէզին հակառակ կարծիք յայտնած էին արդէն, եւ թէ այս անգամ ալ՝ դիմած էր երրորդ իրաւագէտի մը՝ Պ. տը լա Բրատէլի, անոր ուշադրութեան ներկայացնելով նաեւ նոյն ինքն Տիար Թէրզիպաշեանի կողմէ այս խնդրին նկատմամբ եղած առարկութիւնները պարունակող հետեւեալ հարցարանը.

Հարցարան Տիար Ա. Թէրզիպաշեանի՝ Գերմանիայէն
տուգանք ստացուելու խնդրին նկատմամբ

Հայկական Հանրապետութիւնն ու Թուրքիոյ հայերը իրաւունք ունի՞ն հատուցում պահանջելու Թուրքիայէն ու Գերմանիայէն:

Հայկական Հանրապետութիւնը իրաւունք ունի՞ մաս մը պահանջելու այն հատուցումէն, զոր Գերմանիա, Վերսայլի Դաշնագրին տրամադրութեան համաձայն, պիտի ընէ Դաշնակից պետութեանց:

Տիար Թէրզիպաշեան հետեւեալ առարկութեանց վրայ կը հիմնուի՝ հաստատական պատասխան տալու համար այս երկու հարցումներուն.

Առաջին հարցման մասին.

1. Թուրքիոյ հայերը, 1914-ին, Դաշնակից պետութիւններէն մէկուն գրաւոր յանձնառութեանց հետեւանքով՝ հայ պետերու հրամանին տակ գտնուող վաշտեր կազմած են ռուսական հողին վրայ եւ կռուած են թուրքերուն դէմ:
2. Պ. Բիշոնի՝ այն ատեն արտաքին գործոց նախարար՝ մէկ շիֆրէ հեռագրին վրայ՝ Թուրքիոյ հայերը Թուրքիոյ մէջ կազմած են զինեալ ոյժեր, որոնք Դաշնակիցներու ելեւմտական ու զինուորական աջակցութեան շնորհիւ, կռուած են թուրքերու դէմ:
3. Թուրքիոյ հայերը, հակառակ թուրքերու կողմէ եղած շլացուցիչ խոստումներու, մերժած են անոնց հետ ձեռք-ձեռքի տալ, եւ ինչպէս ըսուեցաւ, արդէն զինուորական օգնութիւն ընծայած են Դաշնակիցներուն:
4. Թուրքիոյ հայերը, հենց այս ընթացքին պատճառաւ, ենթարկուած են խմբական կոտորածներու, տեղահանութեանց եւ ամէնէն զարհուրելի վայրագութեանց, զորս պատմութիւնը արձանագրած ըլլայ երբեք:

Երկրորդ հարցման մասին

1. Ռուսական Կայսրութիւնը մաս կը կազմէր Համաձայնական Դաշնակից պետութեանց, եւ այդպէս ալ մնաց մինչեւ Լենինի Յեղափոխութիւնը: Առանց այս յեղափոխութեան, Ռուսիա ալ պիտի մասնակցէր հաշտութեան դաշնագրին եւ իր բաժինը պիտի ստանար գերմանական հատուցումէն: Հայաստան չհետեւեցաւ պոլշեւիկ շարժման, այլ՝ շարունակեց կռուիլ Համաձայնութեան կողքին. այս վերջինին կողմէ զէնքով եւ ռազմամթերքով օժանդակութիւն եղաւ իրեն: Հայաստան պահած է ուրեմն իր պատերազմիկ դաշնակցի հանգամանքը. Հայաստան 20000 հոգի կորսնցուց, առանց հաշուելու վիրաւորները եւ հաշմուածները: Այս իրողութիւնները ինքնին կը հաստատեն, թէ Հայաստան իրաւունք ունի արդար հատուցում մը ստանալու:

2. 2. Պէտք է մտաբերել, որ Գերմանիոյ հետ զինադադար կնքուելէն առաջ իսկ Հայաստան ինքզինքը անկախ հռչակած էր 1918 Մայիս 28-ին, եւ այս անկախութիւնը ճանչցուած է Թուրքիոյ կողմէ՝ այս վերջինին եւ Հայաստանի միջեւ կնքուած դաշնագրով:

3. Դաշնակիցներու եւ Թուրքիոյ միջեւ կնքուելիք դաշնագրին ծրագիրը կը հաստատէ այն սկզբունքը, թէ Դաշնակից պետութիւնները իրաւունք ունին Թուրքիայէն փոխարինութիւններ պահանջելու, այդ ծրագիրը նոյն ատեն կը հռչակէ Հայկական Հանրապետութեան՝ Դաշնակից պետութեան հանգամանքը: Փոխարինութեան սկզբունքը հիմնուած է այն իրողութեան վրայ, թէ Թուրքիա՝ Գերմանիոյ եւ Աւստրիա-Հունգարիոյ հետ ընկերակցած է այս պետութեանց կողմէ յայտարարուած պատերազմին մէջ. այս երեք պետութիւնները համերաշխաբար պատասխանատու նկատուած են:

Արդ, այն միեւնոյն սկզբունքը, որ կը հռչակէ Հայկական Հանրապետութեան իրաւունքը Թուրքիայէն փոխարինութիւններ պահանջելու, պէտք է ընդունի նաեւ Հանրապետութեան իրաւունքը՝ Գերմանիայէն փոխարինութիւն պահանջելու եւ իր բաժինը ստանալու այն հաւաքական հատուցումէն, զոր այս վերջին պետութիւնը պիտի վճարէ:

4. Հայկական Հանրապետութիւնը միջոց մը հաշտութեան կնքեց Թուրքիոյ հետ, բայց ամեն մարդ գիտէ, թէ բռնադատուած եւ ստիպուած էր այդպէս ընելու: Ինչպէս Ռումանիոյ հարկադրուած հաշտութիւնը արգելք մը չեղաւ, որ այս պետութիւնը Դաշնակից չհռչակուի եւ չմասնակցի Խաղաղութեան Դաշնագրին, այնպէս ալ այն հաշտութիւնը, զոր Հայկական Հանրապետութիւնը ստիպուած էր կնքելու, պէտք չէ որ փաստ դառնայ իրեն դէմ:

Այս բոլոր պատճառներով՝ Տիար Թէրզիպաշեան կը կարծէ, թէ Թուրքիոյ հայերն ու հայկական պետութիւնը, իրաւունքի եւ արդարութեան տեսակէտով, կրնան պահանջել եւ ստանալ պատերազմական հատուցում մը, ինչպէս Վերսայլի Դաշնագրին մասնակցած պետութիւնները, ինչպէս արդէն՝ Համաձայնութեան պետական մարմինները հռչակած են բազմիցս իրենց յայտարարութիւններով:

Այս հարցարանին ընդունումէն ետք, Ազգ. Պատուիրակութեան Նախագահ Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար ժողովին հաղորդեց հարցարանին նկատմամբ Պ. տը լա Բրատէլի հետ փոխանակուած նամակները, որոնք կարդացուեցան:

Ա. Նամակ Վսեմ. Պօղոս Փաշա Նուպարի՝ առ Պ. տը լա Բրատէլ.

Փարիզ, 12 Յունիս 1920

Պ. տը Լա Բրատէլ,
2, Rue Lacourbe, 2
Paris.

Սիրելի Պ. տը լա Բրատէլ,

Ձեզի կը ղրկեմ ստորեւ նշանակուած գիրերը, որոնց մասին խօսած էինք մեր երէկուան տեսակցութեան ընթացքին.

1. Պատճէն այն նամակին, որով Դաշնակից կառավարութեանց ծանուցին Հայաստանի անկախութիւնը.
2. Պատճէն բրիտանական կառավարութեան պատասխանին: Միւս կառավարութիւնները չեն պատասխանած:
3. Պատճէն Խաղաղութեան Վեհաժողովի այն նամակին, որ կը վերաբերի Հայկական Հանրապետութեան ճանաչման:
4. Պատճէն Ֆօրէյն Օֆիսի մեկ նամակին, որ կը պաքքանի այդ միեւնոյն ճանաչման:

Անոնց կը կցեմ պզտիկ ծանօթագիր մը՝ պատրաստուած մեր Համագումարին անդամներէն մէկուն կողմէ, որ այն կարծիքն ունի, թէ իրաւունք ունէինք բաժին մը ստանալու գերմանական հատուցումէն եւ որ խնդրեց ձեզի ներկայացնել այն առարկութիւնները, որոնք պարզուած են այդ ծանօթագրին մէջ:

Ընդունեցէ՛ք, սիրելի՛ Պ. տը լա Բրատէլ, իմ ամէնէն անձնուէր զգացմանցս ու մեծարանացս հաւաստիքը:

Պօղոս Նուպար

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Պ. տը լա Բրատէլի պատասխանին մէջ, զոր ստացայ, բնաւ ակնարկութիւն չէր եղած Տիար Թէրզիպաշեանի հարցումին նկատմամբ: Կարծելով, որ մոռցած է զայն նկատողութեան առնելու, իրեն գրած երկրորդ նամակիս մէջ անգամ մըն ալ իր ուշադրութեան ներկայացուցի Տիար Թէրզիպաշեանի հարցարանը, ինչպէս արդէն պիտի տեսնուի նամակիս ընթերցումէն:

Բ. Նամակ Վսեմ. Պօղոս Փաշա Նուպարի՝ առ Պ. տը լա Բրատէլ.

Փարիզ, 15 Յունիս, 1920

Պ. տը լա Բրատէլ,
2, Rue Lacourbe, 2
Paris.

Սիրելի՛ վարպետ,

Կը փութամ ձեզի ղրկելու երկու մատնագրուած օրինակները ձեր նոյնքան նշանաւոր խորհրդակցութեան գրին, որուն համար կը խնդրեմ, որ ընդունէք իմ ամէնաբուռն շնորհակալութիւններս:

Կը վախնամ, որ սխալներ սպրդած ըլլան մատնագրութեան մէջ. այս պատճառաւ՝ երկու օրինակ կը ղրկեմ ձեզի, եւ կը խնդրեմ, որ անոնցմէ մէկը՝ եթէ պէտք կայ՝ արտագրելէ վերջ ստորագրէք եւ ինձի դարձնէք ու միւսն ալ պահէք ձեր մօտ:

Շնորհապարտ պիտի մնամ ձեզի, եթէ նոյն ատեն յայտնէք, թէ արդեօք ձեր խորհրդատուութեան գիրը խմբագրած ատեննիդ նկատողութեան առի՞ք այն հարցարանը, զոր ձեզի ղրկեցի Շաբաթ օր, եւ որուն մէջ, ինչպէս ըսած էր Ազգ. Համագումարի մեր պաշտօնակիցներէն մէկը՝ Տիար Թէրզիպաշեան, Հայաստանի իրաւունք կու տար բաժին մը ստանալու գերմանական հատուցումէն:

Որովհետեւ այդ հարցարանը չէ յիշատակուած Ձեր խորհրդատուութեան մէջ, պիտի ուզէի ամեն կասկած բառնալ այդ մասին. հետեւաբար՝ շատ շնորհապարտ պիտի մնամ Ձեզի, եթէ զայն յիշատակէք կա՛մ ձեր խորհրդատուութեան գրին մէջ եւ կա՛մ այն գրաւոր պատասխանին մէջ, զոր պիտի Դուք ինձի տաք նամակով, որպէսզի կարենամ անոր նկատմամբ տեղեկութիւն տալ Համագումարին:

Ընդունեցէ՛ք, սիրելի՛ վարպետ, իմ ամէնաանձնուէր զգացմանցս հաւաստիքը:

Պօղոս Նուպար

Վսեմ Պօղոս Փաշա Նուպար. Պ. տը լա Բրատէլ, ստիպուած ըլլալով նոյն իրիկունն իսկ մեկնիլ, հետեւեալ նամակը ղրկեց ինձի, նամակ, որուն մէջ, ինչպէս փափաք յայտնած էի, բացորոշ կերպով ըսած է, թէ ինչո՞ւ իր խորհրդատուութեան մէջ չէ յիշատակած Տիար Թէրզիպաշեանի հարցարանը:

Գ. Նամակ Պ. տը լա Բրատէլի առ Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար.

Փարիզ, 15 Յունիս 1920.

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար,
Նախագահ Հայ Ազգ. Պատուիրակութեան
12 Avenue de Président Wilson,
Paris.

Վսեմափայլ Տիար,

Այն միջոցին, ուր կը խմբագրէի խորհրդատուութեան գիրը, որ ձեր մօտն է եւ որուն սրբագրուած ու ստորագրուած մէկ օրինակը շուտով պիտի ղրկեմ Ձեզի, աչքի առջեւ ունէի Տիար Թէրզիպաշեանի պատճառաբանութիւնը. ո՛չ ոք պիտի տարակուսի այս մասին, կարդալով խորհրդատուութեան գիրը: Ամէնամեծ խնամքով քննեցի իր կողմէ ներկայացուած պատճառները եւ անոնցմէ ո՛չ մէկը համոզեց զիս:

Հաճեցէ՛ք ընդունիլ, Վսեմ. Տիար, իմ ամէնաանձնուէր զգացմանցս հաւաստիքը:

տը լա Բրատէլ

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Այսպէս ուրեմն՝ երեք նշանաւոր իրաւագէտներ՝ նախ Պ. Պարթէլէմի, յետոյ Պ. Մանտելշթամ եւ ի վերջոյ Պ. տը լա Բրատէլ, որոնց խորհրդակցութեան դիմեցինք, կը հերքեն Տիար Թէրզիպաշեանի թեզը, թե կրնայինք հատուցում ստանալ Գերմանիայէն եւ փոյթ չենք ըրած ստանալու:

Այս է այն խնդիրներէն մէկը, որուն համար անձնապէս յարձակմանց նշաւակ եղայ:

Տիար Ա. Թէրզիպաշեան. Ես նախ պէտք է յայտնեմ, որ անձի հետ գործ չեմ ունեցած. ես քննադատած եմ Պատուիրակութիւնը, առանց անձի խօսք ընելու. չեմ փափաքիր, որ իմ ընթացքս սխալ մեկնուի: Յետոյ, որպէսզի Պ. Նախագահին խօսքերը առանց պատասխանի մնալով որոշ տպաւորութիւն չթողուն, հակառակ որ այդ հարցը օրակարգի վրայ չէ, կ'ըսեմ, որ ես սկիզբին Գերմանական տուգանքին բաժին պահանջելու թեզը դրած եմ ո՛չ թէ օրէնքի ձեւականութեան վրայ, այլ՝ օրենքի ոգիին, բարոյականին վրայ: Մեր մէջ կարծեմ չկայ մէկը, որ ստանայ մեր բարոյական իրաւունքը. չկայ մէկը, որ մոռցած ըլլայ, թէ Դաշնակիցները պաշտօնապէս եւ տասնեակ անգամներ ի լուր աշխարհի հռչակած են, թէ Պելճիքայի, Սերպիոյ եւ

Հայաստանի վերականգնումը իրենց յաղթանակին նպատակներէն մէկն է: Անոնք չդադրեցան Գերմանիան վարկաբեկելէ հայկական ջարդերուն համար: Այսօր՝ երբ Հայաստան աւերակներու կոյտ մը դարձած է, Դաշնակիցները կը ստանան 100 միլիառ, Պելճիքայի բաժին կու տան, Սերպիոյ բաժին կու տան, իսկ Հայաստանին՝ ոչ: Ո՛չ, որովհետեւ չե՛նք ուզեր ստանալ: Դաշնակիցները մեր վիճակը գիտեն, մեզմէ պիւտճէ ուզած են մեզի օգնելու համար: Մենք՝ օգնութեան անունով կ՚ուզենք, բայց իրաւունքով՝ ոչ: Խորհրդատուութիւն կատարող իրաւագէտներէն Պ. Պարթէլէմի իսկ հաստատած է մեր բնական իրաւունքը: Քանի որ Գերմանիա՝ Վերսայլի Դաշնագրին 231-րդ յօդուածով խոստովանած է, թէ ինք է պատճառը պատերազմին աղէտներուն զորս, յանձն կ՚առնէ դարմանել. ես դարձեալ կը պնդեմ, որ մենք պէտք է պահանջենք մեր հատուցման բաժինը, մեր իրաւունքին ամբողջ բարոյական ոյժովը:

3. Խնդիր Մեծամասնութեան Ազգ. Համագումարի

Տիար Տոքթ. Ա. Բարսեղեան. Պատգամաւորներու ներկայութեան տոմարին մէջ անդամներու թիւը իջած է 26-ի, մինչդեռ Համագումարին կողմէ տրուած որոշումներով հրաժարած նկատուողները 12-ի չհասան, որպէսզի լրանայ անցեալ տարուան 38 թիւը: Պատահմամբ աչքիս զարկաւ, որ Համագումարի հրաւէրը անպատասխան ձգողներէն մէկ քանին հանուած են այդ ցանկէն, մինչդեռ ուրիշներ կը մնան: Այս իրողութեան հետեւանքով ալ մեծամասնութեան խնդիրը անորոշ ձեւ մը առած է: Առաջին անգամ՝ հրաժարականները նկատի առնուելէ ետքը, 17-ը ընդունուեցաւ իբր մեծամասնութեան թիւ. յետոյ՝ թէեւ նոր հրաժարողներ եղան, բայց նոր ընտրութիւններն ալ վաւերացուեցան եւ նոր ճշդում մը չեղած՝ վերջին օրերս մենք սկսանք մեծամասնութիւն փնտռել ցանկին մէջ նշանակուած 26 անուններուն վրայ: Ասիկա, իմ կարծիքովս անկանոնութիւն մըն է, որու մասին ուշադրութիւնը կը հրաւիրեմ թէ՛ Դիւանին եւ թէ՛ Ժողովին:

Տիար Տէր-Ստեփանեան. Կ՚առաջարկեմ Համագումարի հրաւէրը անպատասխանի թողողները պահել ցանկին մէջ, բայց քուէարկութեանց ընթացքին նկատի չառնել զանոնք, ինչպէս նկատի չենք առներ հրաժարեալները: Իսկ անոնք, որ այս Համագումարին կամքէն անկախ բղխող պատճառով մը բացակայ են, բնական է՝ կը մնան անդամ:

Տիար Վահան Թէքէեան. Կան կարգ մը անդամներ, որոնք իրենց կամքովը չեն մասնակցած Համագումարին. իրենք միակ դատաւորը եղած են իրենց բացակայութեան: Եթէ անոնց թիւը կէսէն աւելի ըլլար, Համագումարը պիտի դատապարտուէր անշարժութեան: Նոյնիսկ չպիտի կրնար գումարուիլ: Բոլորովին տարբեր է, օրինակի համար, Պուլկարիոյ եւ Ամերիկայի պատգամաւորներու պարագան. անոնք կա՛մ հրաժարած են որոշ պատճառաբանութիւններով եւ կա՛մ հրաժարեցուած են զիրենք ընտրող մարմիններու կողմէ: Բայց միւսները բնաւ բան մը չեն ըսած իրենց բացակայութեան մասին: Բարեբախտաբար՝ ասոնց թիւը կէսէն աւելի չէ: Ասոնք երբեք իրաւունք չունէին առանց լուր տալու, առանց պատճառաբանելու բացակայիլ, քանի որ անցեալ տարի՝ իրենց հաւանութեամբ տրուեցաւ Համագումարի երկրորդ նստաշրջանը գումարելու որոշումը: Իրենց կողմէ սխալ մը, յանցանք մըն է ասիկա: Ուրիշ պատգամաւորներ եկեր են ու կը մասնակցին այս Համաժողովին. պէ՞տք է, որ իրենց գործունէութիւնը խափանուի մնացեալներուն յանցանքին պատճառաւ: Ոչ անշուշտ: Ուրեմն, պէտք է, որ նկատի չառնենք առանց պատասխան տալու բացակայ եղողները եւ մեր գործը շարունակենք: Մանաւանդ որ ընդհանուր պատգամաւորներու կէսին մէկ աւելին ներկայ է: Եթէ զանոնք հաշուի առնէինք եւ մեր մեծամասնութիւնը ըստ այնմ որոշէինք, պարզապէս անկարգութեան պարգեւ մը տուած պիտի ըլլայինք:

Տիար Ա. Հանըմեան. Չենք անդրադառնար սակայն, որ հետզհետէ կը նուազեցնէինք մեծամասնութեան թիւը: Պէտք է վերջնականապէս որոշենք, թէ մինչեւ ո՞ւր կրնանք առաջ տանիլ այդ նուազեցումը: Եթէ օր մը այստեղ միայն չորս հոգի մնան, քանի որ շարունակ մեկնողներ կ՚ըլլան, պիտի կրնանք այդ չորս հոգիով որոշում տալ:

Տիար Վահան Թէքէեան. Բնականաբար, ամեն անոնք, որոնք անգամ մը ներկայ գտնուած են, կը հաշուէին մեծամասնութեան որոշման առթիւ:

Տիար Ա. Բարսեղեան. Համագումարին իրական թիւը 38 էր, ուրեմն՝ մեծամասնութիւնը պէտք է ըլլայ 20 թիւը: Անկէ պակասով եղած ամեն գործողութիւն, ըստ իս, կամայականութիւն է:

Հաշուուեցաւ, թէ Համագումարին այս նստաշրջանին մասնակցած են նախորդ անդամներէն 19 հոգի՝

1. Ամեն. Դուրեան Արքեպիսկոպոս

Տիարք՝

2. Աղաթօն Պէյ
3. Տոքթ. Բարսեղեան
4. Դաւիթ-Բէկ
5. Թէրզիպաշեան
6. Թէքէեան
7. Թումայեան
8. Հանըմեան
9. Մսըրլը Պէյ
10. Տոքթ. Նեւրուզ
11. Ներսիսեան Խան
12. Վսեմ. Գ. Նորատունկեան
13. Վսեմ. Նուպար Պօղոս Փաշա
14. Չօպանեան
15. Սինապեան
16. Տէրպէտէրեան
17. Տէր-Ստեփանեան
18. Քէլէկեան Խան
19. Ֆնտգլեան

Հրաժարուած են 9 պատգամաւոր՝

1. Հ. Յովհ. Վ. Թորոսեան

Տիարք՝

2. Համբարձումեան
3. Հինդլեան
4. Մաթիկեան
5. Յակոբեան
6. Տոքթ. Սայեան
7. Վարանդեան
8. Տէրվիշեան
9. Փաստրմաճեան

Վախճանած է մէկ պատգամաւոր

1. Տիար Յ. Մոստիչեան

Համագումարի հրաւէրը անպատասխանի թողած են 9 պատգամաւոր՝

Տեարք՝ 1. Տոքթ. Ալթունեան
2. Խաչատուրեան Բրօֆ.
3. Մալքոլմ
4. Մասեհեան Խան

5. Միքայէլեան
6. Շանթ
7. Տամատեան
8. Տէր-Յակոբեան Բրոֆ.
9. Փափազեան

որոնցմէ երեքը՝ Տիարք Մալքոլմ, Տամատեան եւ Բրոֆ. Տէր-Յակոբեան՝ մասնաւոր պաշտօնով կը գտնուին այլ եւ այլ տեղեր, իսկ նոր ընտրուած են 5 պատգամաւոր՝

1. Գեր. Մուշեղ Արքեպիսկոպոս

Տիարք՝

2. Լեւոնեան Բրոֆ.
3. Պապաջանեան
4. Պզտիկեան
5. Տէօվլէթեան

Առաջարկուեցաւ քուէարկութեանց պահուն հրաժարեալներուն հետ բոլորովին մէկ կողմ թողուլ 9 պատգամաւորները, որոնք անպատասխանի թողած են Համագումարի հրաւէրը, ինչպէս նաեւ նոր ընտրուողներէն երկուքը՝ Գեր. Մուշեղ Արքեպիսկ. եւ Բրոֆ. Լեւոնեան, որոնք բնաւ չեն ներկայացած, եւ որոնց գալուն յոյս ալ չկայ այլեւս, եւ նկատի առնել, քուէարկութեանց պահ, նախորդ պատգամաւորներէն լոկ 19 ներկաներն ու նոր ընտրուող պատգամաւորներէն մնացեալ երեքը. Այս առաջարկութեան համեմատ՝ Համագումարի երկրորդ նստաշրջանին անդամներու ընդհանուր թիւը կը հասնէր 22-ի եւ մեծամասնութեան թիւն ալ կ'ըլլար 12-ը: Կարճատեւ վիճաբանութենէ մը ետք, 16 պատգամաւորներու ներկայութեան, ընդունուեցաւ 12 ձայնի մեծամասնութեամբ:

ՕՐԱԿԱՐԳ

1. Վերակազմութիւն Ազգ. Պատուիրակութեան

Համագումարը անցաւ Ազգ. Պատուիրակության վերակազմումի խնդրին եւ կարդացուեցաւ Պատուիրակության Նախագահ Վսեմ. Պօղոս Փաշա Նուպարի կողմէ Դիւանին ուղղուած հետեւեալ նամակը.

Փարիզ, 17 Յունիս 1920.

Տիար Նախագահ

Հայ Ազգ. Համագումարին,

Տիար Նախագահ,

Ինծի հաղորդուեցաւ այն վստահութեան բանաձեւը, զոր Համագումարը քուէարկած էր երէկ:

Իմ եւ ինծի պէս հրաժարած իմ պաշտօնակիցներուս անունով պատիւ ունիմ Համագումարին ներկայացնելու մեր ամէնախոր շնորհակալութիւնները՝ Պատուիրակութեան գործունէութեան մասին յայտնուած այս հաւանութեան արտայայտութեան համար:

Ամեն բանէ աւելի կ'ուզեմ իմ ամէնաբուռն երախտագիտութիւնս յայտնել անձնապէս ինծի համար միաձայնութեամբ քուէարկուած այն բանաձեւին համար զոր Ամեն. Դուրեան մերժեց, եւ Համագումարի Դիւանը հաճեցաւ ինծի յանձնել եւ որուն մէջ իմ ծառայութեանցս մասին եղած գնահատութիւնը, որ այնքան բարձր է բաղդատմամբ իմ տկար արժանիքիս, խորապէս յուզեց զիս:

Համագումարին կը մնայ հիմա նոր Ազգ. Պատուիրակութիւն մը անուանել եւ անոր տիրէքթիւներ տալ: Ասիկա պէտք է ընել կացութիւնն ու Թուրքիոյ տրուած Խաղաղութեան Դաշնագիրը խորապէս քննելէ վերջ միայն, քննութիւն՝ որուն մասնակցիլը՝ իբր անդամ Համագումարի, ինծի պարտականութիւն մը պիտի նկատեմ,

նոյնիսկ առաջին նիստէն, որ անոր պիտի նուիրուի, եւ որ կարծեմ պիտի գումարուի վաղը՝ Ուրբաթ:

Բայց անհրաժեշտ կը նկատեմ նախապէս տեսակցութիւն մը ունենալ Ձեզի եւ այն միւս անդամներուն հետ, որոնց ընկերակցութեամբ երեքշաբթի ինծի այցելելու պատիւը ըրիք: Շնորհապարտ պիտի մնամ, ուրեմն, Ձեզի եթէ հաճիք իմացնել, թէ ո՞ր ժամուն, կարելիութեան պարագային՝ այսօր եւ կամ վաղը առտուն, պիտի կրնամ պատիւը ունենալ Ձեզ գտնելու մեր պաշտօնատեղին՝ Պօքատոր փողոց:

Ընդունեցէ՛ք, Տիար Նախագահ, իմ անձնուէր զգացմանցս հաւաստիքը:

Պօղոս Նուպար

Նախ. Վսեմ. Գ. Նորատունկեան յայտնեց, թէ այս նամակը ստացած էր երէկ, բայց անկարելի ըլլալով անոր մէջ յիշուած անդամներուն լուր տալ նոյն օրն իսկ, տեսակցութիւնը տեղի ունեցած էր այս առտու: Ն. Վսեմութիւնը հրաւիրեց Պատուիրակութեան Վսեմ. Նախագահը, որ հաճի անձամբ բացատրել այդ տեսակցութեան շարժառիթը:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Ինչպէս պատիւ ունեցայ յայտնելու այս առտուան մեր տեսակցութեան միջոցին, կը կրկնեմ նաեւ այստեղ, թէ իմ հրաժարականիս ամէնէն էական պատճառը անձնական առողջական վիճակս էր: Այն դժուարին գործը, որ իմ վրաս կը ծանրանար տարիներէ ի վեր, կը պահանջէր տաժանագին աշխատութիւն մը, զոր սիրով տարի, որքան ատեն որ ոյժերս ներեցին: Բայց կը վստահեցնեմ ձեզ, եւ բացարձակապէս յոգնած կը զգամ ինքզինքս, եւ թէ բացարձակապէս անկարելի է, որ ասկէ ետքը կարենամ աշխատիլ այն կորովով ու աւիւնով որով կ'աշխատէի եօթ տարիէ ի վեր: Կը վստահեցնեմ ձեզ նոյնպէս, թէ շատոնց մտադիր էի հրաժարիլ այդ միեւնոյն պատճառաւ, եւ արդէն իսկ հրաժարած կ'ըլլայի մինչեւ այսօր, եթէ այն յոյսը, թէ մեր հետապնդած դատը իր լուծման կը յանգի շուտով, ինծի գրգիռ մը չըլլար, տակաւին ատեն մըն ալ տոկալու: Գիտէք արդէն, թէ բախտ չունեցանք այդ յոյսն իրականացած տեսնելու: Նպատակը, որուն կը ձգտինք, շարունակ խուսափեցաւ քանի եռանդով կ'աշխատէինք անոր հասնելու: Մինչդեռ կը կարծէինք, թէ երկու-երեք ամսուան խնդիր մըն է, ահա տարի ու կէս անցաւ եւ չհասաւ իր լուծման: Դժբախտաբար, նոյնիսկ այսօր հաւանականութիւն չկայ, թէ մօտաւոր լուծում մը կը գտնէ թրքական հարցը որուն կապուած է մեր դատը: Այդ լուծումը օրերու խնդիր մը չէ, այլ՝ ամիսներու: Եւ ես չեմ կրնար տոկալ այլեւս. ոյժերս չեն ներեր, բացարձակապէս յոգնած եմ ու հիւանդ, հետեւաբար՝ ինքզինքս անկարող կը զգամ տակաւին երկար միջոց մըն ալ տանելու այն սպառիչ աշխատութիւնը, որուն լծուած էի տարիներէ ի վեր: Թերեւս կարենամ նոր ճիգ մը ընել, եւ տակաւին ատեն մըն ալ մնալ պատնէշին վրայ, բայց վստահ եմ, որ այդ ճիգը բաւարար չպիտի ըլլայ եւ չպիտի կրնամ խղճի հանդարտութեամբ ըսել, թէ աշխատեցայ այնպէս, ինչպէս պարտաւոր էի, ինչպէս աշխատած էի մինչեւ այսօր: Պիտի խնդրեմ ձեզմէ, որ անձնական տեսակէտները մէկ կողմ թողուք, նկատի առնէք լոկ մեր դատը եւ անոր փրկութեան մեծ պարտականութիւնը: Եւ այդ պարտականութեան հատուցման համար անհրաժեշտ է, որ այս դժուարին գործը ստանձնէ այն տեսակ անձնաւորութիւն մը, որ ո՛չ միայն կարող ըլլայ, այլ մանաւանդ՝ ի վիճակի ըլլայ իր բովանդակ էութեամբ անոր նուիրուելու: Կը կրկնեմ դարձեալ, թէ իմ առողջական վիճակս չի ներեր ինծի այդ բանը ընելու: Կրնաք վստահ ըլլալ, որ ձեւի համար չեմ ըսեր ասիկա. ինչ աշխատութիւն, որ երբեմն մէկ ժամուան մէջ կ'ընէի, հիմա հազիւ կրնամ գլուխ հանել երկու, երբեմն նոյնիսկ երեք ժամուան մէջ: Եւ մեր դատը այսօր մատնուած է այն տեսակ դրութեան մը, որ ուրիշ ատենէ աւելի եռանդ, ուրիշ ամէն ատենէ աւելի աշխատութիւն ու կորով կը պահանջէ: Ասիկա ըսելէ վերջ՝ իմ ամենախոր երախտագիտութիւնս կը յայտնեմ այն վստահութեան արտայայտութեան համար, զոր միաձայնութեամբ քուէարկեր էիք իմ եօթ տարուան գործունէութեան մասին, ինչպէս նաեւ այն պատուին համար, որուն

առարկայ դարձուցիք զիս՝ Ամեն. Դուրեան Արքեպիսկոպոսէ եւ Դիւանէն կազմուած մասնաւոր պատգամաւորութեամբ մը այդ բանաձեւը ինծի ղրկելով: Կրնաք վստահ ըլլալ, որ գնահատութեան այս արտայայտութիւնները խորապէս յուզած են զիս: Անգամ մըն ալ շնորհակալութիւն կը յայտնեմ այդ մասին եւ կը խնդրեմ, որ Համագումարը նկատի առնելով իմ առողջական վիճակս, նկատի առնելով մանաւանդ պարագաներուն բազմապահանջ դրութիւնը, փութայ իսկոյն իմ տեղս ընտրելու ուրիշ անձնաւորութիւն մը, նորանոր դժուարութիւններով եւ աւելի ծանրացած այս աշխատութիւնը տանելու համար: Համագումարը այս գործը պէտք է լրացնէ ցրուելէ առաջ, պէտք է ընտրէ նոր Պատուիրակութիւն մը եւ նոր տիրէքթիւներ տայ անոր: Որովհետեւ նոր կացութեան մը դէմն ենք, պէտք է նոր ծրագիր եւ նոր գործունէութիւն, պէտք են նաեւ նոր դիմումներ, եւ անոնց ամէնուն համար պէտք են նոր մարդիկ, որոնք յոգնած չըլլան ու կարենան եռանդով փարիլ պահանջուած դժուարին աշխատութեան:

Տիար Վ. Թէքէեան. Պզտիկ ճշդում մը պիտի ընեմ Պատուիրակութեան Նախագահին խօսքերէն ետք: Ոչ թէ պէտք է նախ Պատուիրակութիւնը ընտրել եւ յետոյ տիրէքթիւները կազմել, այլ՝ նախ տիրէքթիւները սահմանել եւ յետոյ Պատուիրակութիւնը ընտրել:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Ես ալ այդ կարծիքին էի նախապէս, եւ, ըստ իս՝ տրամաբանական ալ կը թուէր ատիկա, որովհետեւ տիրէքթիւները պէտք է ուսումնասիրել անձնական նկատումներէ անկախաբար: Բայց այս առտուն մեր տեսակցութեան ընթացքին Համագումարին Վսեմ. Նախագահը հակառակ տեսակէտը պաշտպանեց եւ իր մէջ բերած նկատումները համոզիչ երեւցան ինծի:

Տիար Ա. Թէրզիպաշեան. Մեզի համար արդէն Պատուիրակութեան ընտրութեան հարց չկայ, այլ՝ տիրէքթիւի հարց: Պատուիրակութեան հարցը վճռուած է, քանի որ վստահութեան քուէ տուինք իր մասին: Այդ վստահութիւնը լոկ անցեալին համար չէր, այլ՝ նաեւ ապագայի համար:

Տիար Ա. Չօպանեան. Ճիշդ է, որ այդ վստահութիւնը կրնայ նկատուիլ նաեւ ապագայի համար տրուած, բայց ինչպէս Վսեմ. Նախագահը, ես ալ յոգնած եմ շատ, անհնար է, որ կարենամ անցեալին պէս աշխատիլ: Համամիտ եմ Պատուիրակութեան Նախագահին, որ այս ահաւոր րոպէին, որ այնքան մեծ ճիգեր եւ որքան անդուլ ու սպառիչ աշխատութիւն մը պէտք է մեր դատին համար, անհրաժեշտ է, որ ուժեղ տարրերով Պատուիրակութիւն մը կազմուի. Պատուիրակութիւն՝ որուն անշուշտ նախագահ կը մնայ դարձեալ Փաշան:

Տիար Ա. Թէրզիպաշեան. Պատուիրակութեան լրացմա՛ն հարց կրնայ ըլլալ, բայց ոչ ընտրութեան: Կարծեմ Համագումարը կրնայ իր կողմէ խնդրել Վսեմ. Տիար Նորատունկեանի, որ իբր Համագումարի Նախագահ՝ գործակցի Փաշային, որովհետեւ հասած ենք անանկ րոպէի մը ուր ամէնքս ալ, ոեւէ նկատում մէկ կողմ թողելով, պէտք է կատարենք գերագոյն հայրենասիրական պարտք մը:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Բայց Համագումարը, այս որոշումը տալէն քիչ ետքը պիտի բաժնուի: Այն ատեն ի՞նչ պիտի ըլլայ իր նախագահին դիրքը: Անշուշտ չի կրնար պահել գոյութիւն չունեցող Համագումարի մը նախագահութիւնը: Ես շնորհակալ պիտի ըլլամ, եթէ Վսեմ. Նորատունկեան էֆենտի, ինչպէս արդէն այստեղ ըսի, ինչպէս իրեն ալ ըսած եմ անձնապէս փոխանակ իբր Համագումարի Նախագահ մասնակցելու Պատուիրակութեան, ուղղակի իբր անդամ մտնէ անոր մէջ: Եթէ պէտք ըլլայ, որ անպատճառ մնամ Պատուիրակութեան մէջ, կը մնամ, բայց ըսի արդէն, թէ մնալով հանդերձ, չպիտի կրնամ տալ անհրաժեշտ աշխատութիւնը, որն այլեւս անհնար է ինծի՝ առողջական վիճակիս բերումով: Որպէսզի կարենամ մնալ, աշխատակից մը պէտք է ինծի, աշխատակից մը որ, ստանձնէ գործնական նախագահութիւնը, մինչդեռ ես անուանապէս կը պահեմ նախագահի տիտղոսը: Անանկ որ՝ եթէ յանկարծ ոյժերս չներեն եւ ստիպուիմ հրաժարիլ, յաջորդս պատրաստ կ'ըլլայ եւ պէտք չի մնար նոր համագումար հրաւիրելու: Այս մտածմամբ միայն

փափաքեցայ, որ Ն. Վսեմութիւնը Պատուիրակութեան մէջ մտնէ, առանց նոյնիսկ Պատուիրակութեան վերակազմութեան այս խնդրին քննութեան սպասելու:

Տիար Մսըրլը Պէյ. Եթէ Նորատունկեան էֆ. հաւանի Պատուիրակութեան մէջ մտնել, պիտի ուզէի՞ք պահել Պատուիրակութեան նախագահութիւնը:

Վսեմ. Պօղոս Փաշա. Կը պահեմ, քանի որ այդ է ամէնուս փափաքը, կը պահեմ եւ ոչ թէ սոսկ etiquette-ի համար: Կ'աշխատիմ՝ որքան ատեն որ ներեն ոյժերս, այն մտքի հանդարտութեամբ, որ եթէ յանկարծ չկարենամ այլեւս տոկալ, յաջորդս պատրաստ է եւ, իմ քաշուելով, Պատուիրակութիւնը չի քայքայուիր:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Քանի որ խնդիրը իմ անձիս շուրջ կը դառնայ, պէտք է այս մասին լուսաբանեմ Համագումարդ:

Խորապէս ազդուած եմ այն պատուաբեր առաջարկէն, զոր թէ՛ Ն. Վսեմութիւնը եւ թէ՛ Համագումարը ըրիք զանազան առիթներով: Բայց քանի-քանի անգամ որոշապէս ըսի, թէ՛ այստեղ եւ թէ՛ մասնաւոր տեսակցութեանց մէջ, Ն. Վսեմութեան ալ կրկնեցի մեր տեսակցութեանց ընթացքին, որ ինծի համար բացարձակապէս անկարելի է մասնակցիլ Պատուիրակութեան ու գործուն դեր ստանձնել: Ասիկա իմ կողմէս Պատուիրակութեան տրուելիք ոեւէ օժանդակութեան մերժում մը չէ: Գիտէք, թէ ինչ-ինչ առիթներու մէջ երբ կոչում եղաւ ինծի, կրցածս ըրի նոյն իսկ Լոզանէն գալով Փարիզ եւ Սան Ռեմօ: Բայց այդ Պատուիրակութեան մէջ մտնելու այս առաջարկը չեմ կրնար ընդունիլ, որովհետեւ քիչ օրէն պիտի ստիպուիմ բացակայիլ Փարիզէն: Կը խնդրեմ, հետեւաբար, որ այդ մասին յոյս չդնէք իմ վրաս: Աշխատինք ուրիշ լուծում մը գտնելու: Կրնանք այդ աշխատակցութիւնը խնդրել Համագումարիդ մէկ ուրիշ անդամէն:

Տիար Տոքթ. Բարսեղեան. Անցեալ տարի՝ Համագումարին փափաքն էր կարելի եղածին չափ շուտ վերջ տալ այն երկուութեան, որ գոյութիւն առեր էր ազգային դատին հետապնդման գործին մէջ. նոյնիսկ տիրէքթիւներ տրուեցան այս մասին: Ցաւալի է սակայն, որ երկուութիւնը մնաց: Չեմ մտներ պատճառներուն մէջ, բայց յայտնի է, թէ ինչո՞ւ չիրականացաւ Համագումարին այդ փափաքը: Մէջտեղը հիմա՝ Փաշային հրաժարականի հարցը կայ եւ անով պիտի զբաղիմ: Հարցը պարզ է ինծի համար: Եօթ-ութ տարիէ ի վեր Ազգ. Պատուիրակութիւնը վարող անձը, որ տակաւին մինչեւ տարիուկէս առաջ գրեթէ մինակը կը կատարէր այդ գործը եւ որուն անունը անբաժանելի կերպով կապուած է Ազգ. Պատուիրակութեան հետ, անձնական տկարութեան պատճառաւ կը հրաժարի եւ կը պնդէ իր հրաժարականին վրայ: Խնդիր է, թէ Փաշային հրաժարելէն վերջ, ի՞նչ պիտի ըլլայ Պատուիրակութիւնը: Պատգամաւորներէ ոմանք պէտք տեսան նախ Պատուիրակութիւն մը կազմելու եւ յետոյ նոր տիրէքթիւներ սահմանելու: Ես կը կարծեմ, թէ սխալ է ասիկա: Մենք նախապէս պէտք է խորհինք տիրէքթիւներուն վրայ, որովհետեւ սահմանուելիք տիրէքթիւներէն յայտնի պիտի ըլլայ Պատուիրակութեան դիրքը եւ անհրաժեշտութիւնը: Պիտի առաջարկեմ հետեւաբար, որ նախ խորհրդակցինք, թէ այն միջոցին երբ կը հրաժարի Փաշան, պէտք կա՞յ իրապէս՝ նոր ընտրութեան: Ամէնքս ալ գիտենք, որ Փաշային անունը շաղախուած է Ազգ. Պատուիրակութեան հետ, այնքան որ Ազգ. Պատուիրակութիւնը իր նախագահով մեծ ծանօթ է աշխարհի: Եթէ նախագահ մը ընտրենք անոր տեղ, պիտի ստիպուինք ծանօթացնելու եւրոպական դիւանագիտութեան, որը մինչեւ այսօր Փաշան միայն ճանչցած է այդ հանգամանքով: Ասոր համար երկար-բարակ աշխատութիւն պէտք պիտի ըլլայ: Քննենք նաեւ, թէ իրապէս անհրաժե՞շտ է այդ աշխատութիւնը: Ուրիշ կերպ ըսելով՝ արդեօք Ազգ. Պատուիրակութեան մը համար պէտք եղած հողը կա՞յ, որպէսզի այսպէս նոր ընտրութեան եւ ընտրուելիք անձին ծանօթացման համար անհրաժեշտ աշխատութեանց ձեռնարկենք: Ինծի այնպէս կը թուի, թէ Հանրապետութեան ճանչցուելէն ի վեր, Ազգ. Պատուիրակութեան շարունակութիւնը տեսակ մը արդիւնք է:

Հանրապետութեան ճանաչումէն ետք, այս կամ այն ձեւով, երկու Պատուիրակութիւն պէտք չէ մնար, այլ պէտք էր ծուլել զանոնք:

Տիար Տէր-Ստեփանեան. Առաջարկեցին ատիկա, ընդունուեցաւ, բայց ետ առին իրենց խօսքը:

Տոքթ. Ա. Բարսեղեան. Գիտեմ, որ ջանքեր թափուեր են, բայց վերջնական արդիւնք մը չէ գոյացեր: Այդ մասին երկու կողմն ալ ունեցած են իրենց աւելի կամ նուազ դերը եւ պատասխանատուութեան պզտիկ բաժինն ալ: Ամեն պարագայի մէջ՝ այն կողմինը չէ, որ Համագումարը կը ներկայացնէ: Եթէ չյաջողեցաւ այդ մտածումը, պատճառը նախ սա էր, որ տարիներէ ի վեր ազգ. դատը հետապնդող անձին գործունէութեան եւ préstige-ին համապատասխան դիրք մը ապահովելու մտածումը դիտեց բանակցութեան մէջ: Միւս կողմէ՝ այս կամ այն կուսակցութեան՝ կառավարութեան ու Պատուիրակության մէջ մտնելու փութկոտութիւնն ալ պատճառ մը աւելի եղաւ այդ բանակցութեանց անյաջողութեան: Կը վերադառնամ բուն խնդրին: Այսպէս թէ այնպէս՝ այն անձը, որ Ազգ. Պատուիրակութիւնը կը մարմնացնէր, կ'ուզէ քաշուիլ, եւ կ'ըսէ, թէ անդառնալի է իր հրաժարականը: Համակարծիք չեմ, որ նոր Պատուիրակութիւն մը ընտրուի:

/բողոքի ձայներ/

Տիար Ա. Թէրզիպաշեան. Դուք այնպէս կը խօսիք, թէ Պատուիրակութեան Նախագահը հրաժարեր է, բայց օրակարգի վրայ ատանկ հարց չկայ:

Տոքթ. Ա. Բարսեղեան. Իմ հասկցածս սա է, որ Փաշան կ'ըսէ, թէ ինք այլեւս չի կրնար գործօն մասնակցութիւն մը ունենալ Ազգ. Պատուիրակութեան մէջ:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Ճիշդ է:

Տոքթ. Ա. Բարսեղեան. Բայց ինք պատրաստ է իր անունը տալու Պատուիրակութեան, եթէ նոր ոյժեր աւելցուին:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Խնդրեմ կէտ մը կայ, որ պէտք է ճշդուի: Ես՝ պատրաստ եմ, ըսի, որովհետեւ խնդրեցին: Երբ ինծի յայտնեցին, որ իմ քաշուիլս շատ գէշ տպաւորութիւն պիտի ընէ, վիատութեան պիտի մատնէ ազգը, եւ նոյնիսկ հեռաւոր վայրերու մէջ տեղի պիտի տայ այն տեսակ մեկնութեանց, որոնք կրնան վնասել մեր դատին, այս բոլոր անպատեհութիւններէն խուսափելու համար հաւանեցայ պահել անուանական նախագահութիւնը, պայմանաւ որ գոյութիւն ունենայ գործօն նախագահութիւն մը:

Տիար Տէր-Ստեփանեան. Անշուշտ որոշ չափով պիտի գործենք:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Բնականաբար. եւ արդէն պահ մը առաջ ըսի, թէ ինծի համար etiquette-ի խնդիր մը չպիտի ըլլայ ասիկա. միշտ պիտի աշխատիմ, բայց պէտք `է ապահով ըլլայ, որ այն պարագային, երբ ոյժերս չներեն եւ ստիպուիմ քաշուիլ, ինչ որ կրնայ պատահիլ, Պատուիրակութեան գործը մէջտեղը չմնայ:

Տիար Տէր-Ստեփանեան. Ուրեմն, անուանական մասնակցութիւն մը չէ, ոչ ալ՝ հրաժարական մը:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Այսինքն՝ Վսեմ. Փաշան կը մնայ նախագահ եւ այս խնդիրը կը փակուի՝ եթէ կարելի ըլլայ ընտրել դեր-նախագահ մը, որ տանի գործին գլխաւոր ծանրութիւնը:

Տոքթ. Ա. Բարսեղեան. Ուրեմն՝ խնդիրը կը փոխուի:

Տիար Գ. Սինապեան. Բայց անձի խնդիր մը կայ, զոր կը մոռնաք: Փաշան պայման դրաւ, որ մեր Նախագահը պէտք է ըլլայ իր աջակիցը, մինչդեռ մեր Նախագահը կը մերժէ:

Ձայներ. Ո՛չ անպատճառ:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Եթէ նոյնիսկ Ն. Վսեմութիւնը չըլլայ, թէեւ լաւագոյն է, որ ինքը ըլլայ, պէտք է վերջապէս նոր արիւն ներարկուի Պատուիրակութեան: Կը կրկնեմ նորէն, որ ձեւի համար չեմ ըներ այս պահանջումը: Միշտ նկատի պէտք է ունենաք այն յոգնութիւնը, որուն ենթարկուած ենք: Քիչ մը առաջ

կ'ըսէի, թէ պատնէշին վրա էինք, բայց իսկապէս՝ խրամներու մէջ էինք ամբողջ տարիուկէս:

Տիար Տէր-Ստեփանեան. Տիար Բարսեղեանի խօսքերուն մէջ հիմնական վիրաւորանք մը եւ արհամարհանք մը կը տեսնեմ Համագումարին հանդէպ, եւ ասոր համար կը բողոքեմ ոյժովս: Տիար Բարսեղեանի խօսքերուն համաձայն՝ անցեալ տարի Համագումարը գոյութիւն առեր է, Պատուիրակութիւն ընտրեր է, յետոյ այս տարի նորէն գումարուեր է ո՛չ թէ անոր համար, որ տաճկահայ դատ մը կայ, այլ՝ Պօղոս Փաշա մը կայ, որուն պէտք էր դիրք մը տալ: Քիչ մը առաջ, երբ կը կարծէր, թէ Փաշան կը հրաժարիր, Պատուիրակութեան պէտք չէր տեսներ, մինչդեռ երբ յայտնուեցաւ, որ Փաշան չի հրաժարի, կ'ըսէ, թէ խնդիրը կը փոխուի:

Տիար Արշակ Չօպանեան. Կը ձայնակցիմ: Քանի որ դեռ թրքահայ դատ մը կայ՝ պէտք է մնայ թրքահայ Պատուիրակութիւն մը եւ ասիկա՝ անկախաբար անձերու խնդրէն:

Ամեն. Դուրեան Արքեպիսկ. Կարծեմ, թէ Տիար Բարսեղեանի տեսակէտը չբացատրուեցաւ պէտք եղածին պէս: Այն պատգամաւորները, որոնք զանազան կողմերէ եկան Պատուիրակութեան շուրջը խմբուեցան, եկան մանաւանդ Փաշային անձին համար: Եթէ իրեն մեզ սովորական մահկանացու մը այդ մասին հրաւէր ուղղած ըլլար, անշուշտ ո՛չ ոք տեղէն պիտի շարժէր: Փաշան ծանօթ էր իր անձով ու գործունէութեամբ: Գիտէինք, որ նախապէս Կաթողիկոսին կողմէ կոչուած էր բարենորոգմանց գործին համար, եւ թէ նոր պայմաններու բերումով՝ կ'աշխատէր աւելի լայն ծրագրով մը, ազգին ընդհանրութեան դատին համար: Մենք եկանք ո՛չ թէ նոր բան մը ստեղծելու, այլ՝ արդէն իսկ եղածը զօրացնելու մտածմամբ:

Տիար Վ. Թէքէեան. Տաճկահայ դատը պաշտպանելու համար չպիտի՞ գայիք:

Ամեն. Դուրեան Արքեպիսկոպոս. Անշուշտ պիտի գայինք, բայց ատիկա կախուած էր հրաւէրը ընողէն: Այդ հրաւէրը պէտք էր բղխեր մեծ հեղինակութենէ մը: Եկանք՝ որովհետեւ Փաշային 5-6 տարուան գործունէութիւնը, անձնական հեղինակութիւնը, Կաթողիկոսէն ստացած պաշտօնը մեզի ծանօթ էին՝ երբ մեզ հրաւիրեց: Բայց կը կրկնեմ, որ մենք եկանք զինքը զօրացնելու համար, այդ մասին թելադրութիւններ բերինք միասին: Ուրախ ենք, որ աշխատուեցաւ, եւ արդիւնքն ալ, գոնէ ինչ որ կարելի էր ձեռք բերել, ստացանք: Իմ մասիս, ձեռքս խղճիս վրայ կը յայտարարեմ, թէ այսօր՝ ոեւէ Պատուիրակութիւն, որուն գլուխը Փաշան չէ, ոչ եւս է Պատուիրակութիւն:

Տիար Թէրզիպաշեան. Ատիկա ձեր անձնական կարծիքն է: Դատ մը կայ մէջտեղը, որ Փաշայինը չէ լոկ. ընդհակառակը՝ Փաշային պաշտօնն է, որ այդ դատէն կը բղխի:

Ամեն. Դուրեան Արքեպիսկոպոս. Տաճկահայ դատին, ըստ ինծի, գոյութեան հերքում մը չէր ըսածս:

Տիար Գ. Ֆնտգլեան. Տիար Տոքթ. Բարսեղեանի հետ համաձայն եմ մինչեւ կէտ մը: Թէ առանց Փաշային՝ Պատուիրակութիւն մը անհասկնալի է՝ ասիկա կ'ընդունիմ. եւ այս է նաեւ համոզումը Անգլիոյ հայոց, զորս ներկայացնելու պատիւն ունիմ: Բայց համաձայն չեմ Տիար Բարսեղեանի, երբ աճապարանք մը ցոյց կու տայ Փաշային հրաժարականը ընդունելու, մէկ անգամով վերջ տալու համար Պատուիրակութեան գոյութեան: Ասիկա սխալ է: Պետք չէ աճապարենք. ընդհակառակը, պէտք է միջոց մը գտնենք, որպէսզի Փաշան ետ առնէ իր հրաժարականը եւ տակաւին քանի մը ամիս շարունակէ իր պաշտօնը:

Տոքթ. Ա. Բարսեղեան. Աճապարենք չըսի:

Տիար Գ. Ֆնտգլեան. Կը կրկնեմ, որ անհասկանալի է Պատուիրակութեան գոյութիւնը առանց Փաշային:

Տիար Վահան Թէքէեան. Համաձայն եմ, որ առանց Փաշային՝ Պատուիրակութիւն մը անհասկնալի պիտի մնայ, որովհետեւ Փաշան մեր մէջն է եւ

կրնայ Պատուիրակութեան գլուխը գտնուիլ միշտ: Բայց եթէ Փաշան ուեւէ անձնական նկատումով հեռանայ, օրինակի համար՝ հարկեցուցիչ պատճառի մը բերումով ստիպուի եգիպտոս մեկնիլ, Պատուիրակութիւնը պէտք չէ՞ գոյութիւն ունենայ: Ասիկա կը հարցնեմ անշուշտ իբր Համագումարի անդամ: Փաշան դուրս ձգելով Պատուիրակութիւն ընտրելը թէ՛ մեր դատին պիտի վնասէր եւ թէ՛ կազմուած Պատուիրակութեան հեղինակութիւնը պիտի նուազեցնէր: Բայց այս տեսակ հաւանականութիւն մը չկայ մէջտեղը: Փաշան կը պատասխանէ, որ տակաւին աշխատելու տրամադիր է, պայմանաւ, որ օգնական մը տրուի իրեն: Համագումարիս Նախագահը, զոր Փաշան ուզեց իրեն օգնական ունենալ՝ մերժեց: Խնդիր է, թէ Համագումարը պիտի ընդունի՞ այս մերժումը եւ կամ նոյնիսկ Նախագահը՝ երբ ամեն կողմէ կոչում ըլլայ իր հայրենասիրութեան, չպիտի՞ փոխէ իր որոշումը: Միւս կողմէ՝ Փաշան բացարձակապէս չըսաւ, թէ քանի որ Համագումարին Նախագահը չընդունիր, կը հրաժարի: Անկախաբար այս տեսակէտները՝ պէտք է նախ որոշել, թէ Պատուիրակութեան պէտք կա՞յ: Այն ատեն է, որ Փաշան պիտի պահենք. պէտք ըլլալուն համար է, որ կը խորհինք կոր զինքը համոզել, որ ամիս մը, երկու ամիս, մինչեւ կէտ մը շարունակէ տակաւին: Եթէ պէտք չկայ, թողէինք խեղճ մարդը որ ելլէ երթայ, քանի որ բացորոշապէս ըսաւ, թէ հիւանդ է, չի կրնար: Այդ պէտքը սակայն կայ: Հանրապետութեան ճանաչումով ամեն ինչ իր վերջնական լուծումին չյանգեցաւ: Դեռ չէ եկած այն վայրկեանը, որ կարելի է թրքահայ դատին բախտը միացնել ռուսահայ դատին: Մանաւանդ, որ ծանր կնճռոտութիւններ ծագած են Կովկասի մէջ, եւ չենք գիտեր, թէ ո՞ւր կրնան յանգիլ: Երեք ամիս առաջ կարելի էր ըսել, թէեւ ես միշտ հակառակ կարծիքին եղած եմ, թէ հոգ չէ, եթէ Պատուիրակութիւն չըլլայ, գործերը կրնանք Հանրապետութեան կառավարութեան թողուլ: Բայց նոր կնճռոտութեանց վրայ որոնք ծագեցան, այլեւս չենք կրնար այսպէս խորհիլ: Եթէ թրքահայ դատին համար Պատուիրակութիւն մը գոյութիւն ունեցած ալ չըլլար, այսօր թերեւս պէտք էր ստեղծել: Պատուիրակութեան անհրաժեշտութեան խնդիրը զատ է, անձի խնդիրը՝ զատ: Անշուշտ, պէտք է հեղինակաւոր անձ մը Պատուիրակության գլուխը, եւ բարեբախտ ենք, որ կայ անձ մը, անձ մը, որ եօթ տարիէ ի վեր կ'աշխատի թրքահայ դատին անունով եւ որ յօժար է տակաւին այսօր ալ գործել: Պէտք է օգտուիլ իր այս տրամադրութենէն: Ասկէ զատ ալ, պէտք է վերակազմել Պատուիրակութիւնը՝ Նախագահին իբր օժանդակ տալով աշխատելու ընդունակ կարող ոյժեր, որպէսզի տակաւին երկու-երեք ամիս շարունակէ գործը: Իմ մասիս, գրաւոր ալ ըսի, բերանացի ալ ըսի, որ այլեւս չեմ մասնակցիր Պատուիրակութեան: Ասիկա կը կրկնեմ դարձեալ, որպէսզի Համագումարը ազատօրէն կարենայ կազմել նոր Պատուիրակութիւնը, ընտրելով այն ուժեղ մարդիկը, որոնց պէտք պիտի տեսնէ՝ այս կարեւոր գործը այսպիսի վճռական ու փափուկ ժամանակի մը մէջ շարունակելու համար:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Յայտնի եղաւ կարծեմ, թէ Փաշան բացարձակապէս չէ հրաժարած, այլ՝ իրաց ծանր վիճակին տեղեակ ըլլալով, յօժարութիւն ունի շարունակելու: Միայն թէ կը փափաքի զորավիգ մը ունենալ, եւ ճիշդ ատոր վրայ է, որ պէտք է խորհինք: Երկու միջոց կայ մեր առջեւ: Կա՛մ նախորդ Պատուիրակութիւնը ամբողջութեամբ կը վերահաստատուի եւ Համագումարս կը խնդրէ, որ, ինչպէս մէկուկէս տարիէ ի վեր կ'ընէին, նորէն շարունակեն իրենց վստահուած գործը, եւ կա՛մ ընտրուի նոր Պատուիրակութիւն մը: Պէտք է որոշենք, ուրեմն, թէ այս երկու միջոցներէն ո՞րը պիտի ընտրենք, որպէսզի փակուի այս խնդիրը: Նոր Պատուիրակութիւն մը կազմել ուզողները կը կարծեն, թէ ասկէ վերջ՝ կատարուելիք շատ կարեւոր, շատ ընդարձակ աշխատութիւններ կան. բայց եթէ պահ մը մտածելու ըլլանք, պիտի տեսնենք, որ մնացած աշխատութիւնը պիտի բռնադատուի սահմանափակուած մնալու գլխաւորաբար մէկ քանի կէտերու շուրջ: Որովհետեւ դաշնագիրը, զոր Գերագոյն Խորհուրդը պատրաստեց, ընդհանուր պահանջմանց maximum-ը կը պարունակէ եւ, դժբախտաբար, այլեւս անհնար է այդ

լուծուած հարցերը վերստին սեղանի վրայ դնել տալ: Այս մասին՝ պէտք չէ յոյս դնել թուրքերու պահանջմամբ դաշնագրին ենթարկուելիք փոփոխութեանց վրայ, որոնք աւելի անոնց գոհացումը տալու բնոյթ պիտի ունենան, հաշտութեան կնքումը դիւրացնելու համար, ըստ նախընթաց օրինակներու:

Տիար Վ. Թէքէեան. Ուրեմն ինչո՞ւ երկու յանձնաժողովներ կ'աշխատին, ինչո՞ւ ձեռնարկներ կ'ըլլան դաշնագրին մեզի աննպաստ մասերուն փոփոխութեան համար:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Բայց անշուշտ պիտի ըլլան, որքան ալ անյուսալի երեւայ արդիւնքը: Պարտականութիւն մըն է ատիկա, որուն մէջ չենք կրնար թերանալ՝ եթէ կ'ուզենք որ խիղճերնիս մեզ չմեղադրէ: Եւ յետոյ, ինչպէս ըսի, քանի մը կէտեր կան որոնց մասին կարելի է յոյս ունենալ նոր առաւելութիւններ ձեռք բերելու, ինչպէս հանր. պարտուց եւ հատուցման խնդիրները, ինչպէս նաեւ Կիլիկիոյ մէջ մեր ժողովուրդին համար նպաստաւոր դրութեան մը ստեղծումը, եւ այլն: Բաներ ալ կան, զորս տէրութիւնները, թուրքերէն անկախաբար, ուղղակի կրնան տալ մեզի, եւ զորս պիտի աշխատուի ստանալու: Այս մասին Վսեմ. Փաշային եւ իր ընկերներուն ընելիք աշխատութիւնը իր կշիռը ունի, եւ կը կարծեմ, թէ Հանրապետութեան կառավարութիւնը եւ իր այստեղի ներկայացուցիչը իրենք իսկ պիտի փափաքին, որ այդ կէտերուն հետապնդման համար ոյժ մը աւելի գոյութիւն ունենայ: Ազգ. Պատուիրակութիւնը ծնունդ առաւ Թրքահայաստանի դատին հետապնդութեան համար: Իր գոյութեան աղբիւրը այդ է եւ պէտք է մնայ մինչեւ որ այդ դատը յանգի իր վախճանին: Կայ նաեւ ուրիշ տեսակէտ մը, որ իր մնալը անհրաժեշտ կը դարձնէ: Ազգը մեծ յոյսեր դրած էր Պատուիրակութեան վրայ: Ի՞նչ պիտի մտածեն, եթէ յանկարծ իմացուի որ Պատուիրակութիւնը վերցաւ, Համագումարը ցրուեցաւ: Անշուշտ ծանր հետեւանքներ կրնայ ունենալ ասիկա: Բայց թէ տակաւին մինչեւ ե՞րբ պէտք է մնայ Պատուիրակութիւնը՝ ատիկա խնդիր մըն է, զոր պիտի քննէ Համագումարը՝ նոր տիրէքթիւներու խնդիրը ձեռք առած միջոցին: Ուրեմն՝ մեր ընելիքը պէտք է ըլլայ պահել արդի Պատուիրակութիւնը, լրացնելով զայն, հրաժարեալ Տիար Փաստրմաճեանի տեղ նոր ոյժի մը յաւելմամբ:

Տիար Վ. Թէքէեան. Հարցը պէտք չէ այդպէս դնել. Փաշան կը մնայ, կրնայ մնալ. իսկ ես արդէն ըսի ու կրկնեցի, թէ չեմ մնար:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Պէտք է դուք ալ նոր զոհողութիւն մը ընէք:

Տիար Վ. Թէքէեան. Փաշային էական պէտքը կայ, բայց ոչ մեր. հետեւաբար՝ զոհողութիւն մը չպիտի ըլլայ մեր քաշուիլը: Կը խնդրեմ, որ չկրկնէք այդ առաջարկը:

Ամեն. Դուրեան Արքեպիսկ. Պատուիրակութեան անդամներուն նկատմամբ անձնապէս ուեւէ կասկած չունինք եւ Փաշային ինչ որ ըսինք՝ ձեզի ալ ըսած կ'ըլլանք:

Տիար Թէրզիպաշեան. Արդէն հակասութիւն ալ կ'ըլլայ, քանի որ վստահութեան քուէ տուեր ենք:

Տոքթ. Ա. Բարսեղեան. Անգամ մըն ալ կը շեշտեմ, որ նախ պէտք է որոշենք, թէ ի՞նչ ունի դեռ ընելիք Պատուիրակութիւնը, որպէսզի անոր համեմատ խորհինք մեր ընելիքը: Թերեւս ասկէ վերջ ըլլալիք գործերը այնքան բազմապահանջ չեն եւ քիչ մարդ պէտք է անոնց համար: Նախ պէտք է գիտնանք, թէ ի՞նչ կրնայ ընել Պատուիրակութիւնը, ի՞նչ կրնանք պահանջել իրմէ: Ազգ. Պատուիրակութիւնը մինչեւ հիմա նկատուեր է արեւմտահայոց ներկայացուցիչ: Բայց ամենուս ալ ծանօթ է, որ ոչ մեծ Կովկասի, այլ նոյնիսկ Եգիպտոսի, Պուլկարիոյ, Ամերիկայի նման հեռաւոր գաղութներու մէջ արեւմտահայերու կողմէ եղան այն տեսակ արտայայտութիւններ դէպի Հանրապետութեան կառավարութիւնը, որ կը տկարացնեն Ազգ. Պատուիրակութեան բացարձակ դիրքը իբր արեւմտահայերը ներկայացնող մարմին:

Տիար Տէր-Ստեփանեան. Այո, արտայայտութիւններ եղան հաւատարմութիւն եւ հպատակութիւն յայտնելով, իբր թէ քիւրտ աշիրէթներ ըլլային եւ ոչ թէ հայ քաղաքացիներ:

Տիար Ա. Բարսեղեան. Հպատակութիւն ըսելով անոնք քաղաքացիութիւն կ'ըմբռնեն:

Տիար Տէր-Ստեփանեան. Ֆորմիւլները գրողները գիտեն ըսածնին:

Տոքթ. Ա. Բարսեղեան. Անցեալ տարի, հաւանական նկատուող անպատեհութիւններէ խուսափելու համար, որոշեցինք Միացեալ Պատուիրակութիւն մը կազմել: Ես ասոր ալ պէտք չեմ տեսներ հիմա, որովհետեւ այնպէս կը կարծեմ, թէ արեւմտահայոց կողմէ եղած արտայայտութիւնները դէպի Հանր. կառավարութիւնը, բաւական են, որով երկու զատ Պատուիրակութեան պէտք չի մնար այլեւս: Մինակ Պոլիսը չէր արտայայտուած, բայց մեր մեկնած միջոցին՝ ազգային պաշտօնական շրջանակներն ալ այդ իմաստով արտայայտուեցան:

Տիար Տէր-Ստեփանեան. Շատ զարմանալի է:

Տոքթ. Ա. Բարսեղեան. Ապացուցանելու համար ասիկա, կը կարդամ հետեւեալ որոշումը, որ ցոյց կու տայ Պոլսոյ պաշտօնական մարմիններու տրամադրութիւնը այդ մասին:

«Փարիզի Ազգ. Պատուիրակութեան եւ Հայկ. Հանրապետութեան իրարու հանդէպ ունենալիք դիրքը եւ փոխ-յարաբերութիւնները ճշդելու ժամանակը եկած հասած է այլեւս: Կարգ մը խնդիրներ ատկէ կախում պիտի ունենան: Վաղը ներգաղթի հարցը կրնայ ներկայանալ. ո՞վ պիտի վարէ այդ գործը: Պիւտճէի գործը ինչպէ՞ս պէտք է կարգադրուի: Պոլսոյ ժողովուրդը չի կրնար երկար ատեն ամսական 60000 ոսկիի ծախք մը ընել: Հայրենիքի տուրքը առ այժմ ամսական 20000 ոսկի արդիւնք կու տայ, բայց կասկածելի է, որ այսպէս շարունակուի: Հետեւաբար՝ որբերու եւ տարագրեալներու պատսպարման հարցը պէտք է տարբեր կերպով լուծուի, հայ պետական պիւտճէի մասը կազմէ մօտաւոր ապագայի մէջ, երբ պետութիւնն ալ իր կազմակերպութեան համար տարբեր աղբիւրներէ փոխառութիւն մը պիտի ստանայ, ինչ որ շատ հաւանական է: Պոլիս պիտի ընէ ինչ որ կրնայ. բայց երբեք չի կրնար պետական պիւտճէ կազմել. հավաքուածը տուրք մը չէ, այլ՝ նուէր, որ կրնայ դադրիլ եւ նուազիլ: Պետութեան եւ Պատուիրակութեան փոխ-յարաբերութեանց բարւոքումը օգտակար պիտի ըլլայ նաեւ Պոլսոյ գործերուն. Հանրապետութեան ներկայացուցիչը աւելի գործօն դեր մը կը ստանձնէ խնամատարական եւ այլ գործերու մէջ»:

Տիար Վ. Թեքէեան. Ո՞ր մարմինէն բղխած է այդ թշուառութիւնը:

Տոքթ. Ա. Բարսեղեան. Քաղաքական ժողովէն:

Տիար Վ. Թեքէեան. Ի՞նչ կը հետեւցնէք ատկէ:

Տոքթ. Ա. Բարսեղեան. Սկսէ կը հետեւցնեմ, որ նոյնիսկ Պոլսոյ մէջ՝ որուն Ազգ. Ժողովին փոխանցել կը մտածէին երբեմն Պատուիրակութեան համարատուութիւնը, թրքահայ դատին եւ ռուսահայ դատին ըմբռնումը նոյնացած է: Ասիկա եղեր է մանաւանդ Հանրապետութեան ճանաչումէն ետք: Այսօր ամեն տեղ, հայութեան փափաքն է, որ երկուութիւնը վերնայ ազգին մէջէն. եւ ասոր համար՝ անհրաժեշտ է, որ ինչպէս է երկրին մէջ, այնպէս ալ արտասահմանի մէջ միակ մարմին մը գոյութիւն ունենայ: Հասկնալի է, որ մինչեւ դաշնագրին ստորագրութիւնը կրնայ տեւել Ազգ. Պատուիրակութիւնը, այն պայմանաւ, որ Փաշան մնայ անոր գլուխը: Բայց եթէ պիտի հրաժարի քանի որ կ'ըսէ թէ հիւանդ է, այլեւս Պատուիրակութեան պէտք չկայ, որովհետեւ՝ ասկէ ետք՝ կարելի չէ արեւմտահայոց անունով դիմում ընել ուրիշ տեղ: Այս տեսակ դիմում մը կրնայ Հանրապետութեան Պատուիրակութիւնն ալ ընել եւ կ'ընդունուի: Փոքրամասնութեանց խնդրին համար ըլլայ, Կիլիկիոյ դրութեան համար ըլլայ՝ Ազգ. Պատուիրակութիւնը ի՞նչ կրնայ ընել, զոր չկարենայ ընել Հանրապետութեան Պատուիրակութիւնը:

Տիար Գ. Ֆնտգլեան. Հապա հատուցման խնդի՞րը:

Տոքթ. Բարսեղեան. Հատուցման խնդրին համար նոյն ինքն Տիար Թէրզիպաշեան ըսաւ, որ աւելի ռուսահայոց անունով պէտք է հետապնդել:

Տիար Տէր-Ստեփանեան. Մէկ մասը միայն:

Տոքթ. Բարսեղեան. Ինչ որ ալ ըլլայ, այլեւս պէտք է վերջ տալ այս երկուութեան: Կը կրկնեմ դարձեալ, որ եթէ Փաշան պիտի ուզէ մնալ՝ Պատուիրակութիւնը կը մնայ մինչեւ դաշնագրին ստորագրութիւնը, պայմանաւ, որ ո՛չ մէկ առանձին ձեռնարկ կամ դիմում ընէ, այլ միշտ գործէ Հանր. Պատուիրակութեան հետ: Փաշային անձին նկատմամբ յարգանք մը ունեցողները կը հասկնան անշուշտ, որ պէտք է այդ բաւարարութիւնը տալ իրեն: Եթէ պիտի ուզէ մնալ՝ կը խորհինք, թէ մինչեւ դաշնագրին ստորագրութիւնը ի՞նչ պայմաններով պիտի պահենք Պատուիրակութիւնը: Ասոր համար՝ նախ պէտք է տիրէքթիւներու հարցը քննենք, գիտնանք, թէ իրապէս ի՞նչ կայ ընելիք:

Տիար Ա. Թէրզիպաշեան. Այնտեղ ուր դաշնագիրը կը պոռայ, անհատական ենթադրութիւններ արժեք չունին: Դաշնագիրը կ'ըսէ, թէ Թուրքիա կը ճանչնայ Հայաստանը այնպէս ինչպէս ճանչցած են զայն Դաշնակիցները, ճիշդ բառովը՝ Ռուսահայաստանը: Թրքահայաստանի հարցը դրուած է հոն սահմանագծումի մը, ձեւով, եւ այնպիսի եղանակով մը որ կրնայ շերտ մը հող անգամ չմիանալ Ռուսահայաստանի: Արդ, մինչեւ իրաւարարութիւնը, մինչեւ հաշտութեան ստորագրութիւնը՝ այդ կցուելիք հողերու բնակչութիւնն է, որ պիտի արտայայտուի ու հետապնդէ իր ցանկութիւնը, եւ ոչ թէ Ռուսահայաստանի կառավարութիւնը, որուն պիտի կցուի: Իմ կարծիքովս՝ դեռ շատ բան կայ ընելիք այս տեսակէտով:

Տիար Տէրպէտէրեան. Հանրապետութեան Պատուիրակութիւնը չի՞ կրնար այդ բաները ընել:

Տիար Թէրզիպաշեան. Չի կրնար, որովհետեւ մենք մեր Թուրքիոյ հպատակի հանգամանքը չենք կրնար թօթափել մինչեւ այն օրը, որ հայկական հպատակ դառնանք: Եւ յետոյ, այս Համագումարը միայն վանեցիներու, էրզրումցիներու, պիթլիսցիներու համագումար չէ, այլ՝ ամբողջ թրքահայութեան ներկայացուցչական օրկանն է, որուն մէջ գտնուող կիլիկեցին, խարբերդցին դեռ յոյսեր ունին, յոյսերէն վերջ՝ շահեր ունին, réparation-ի, indemnité-ի եւ փոքրամասնութեանց իրաւունքներու պաշտպանութեան գործերը ունին զայս: Ինչպէս ըսի, Հանրապետութեան կառավարութիւնը չի կրնար ստանձնել ինքը, ժողովուրդը, իր ներկայացուցիչներուն ժողովով պիտի պաշտպանէ իր շահերը: Անոնք, որ դաշնագրին ստորագրութենէն ետք պիտի ընդունին Հայ Հանրապետութեան հպատակութիւնը, իրենց շահերու պաշտպանութեան հոգն ալ պիտի փոխանցեն Հանրապետութեան. բայց դեռ ատոր ալ ժամանակ պէտք է. կարելի չէ ամեն բան մէկանց իրար խառնել, իրաւական դիրքերը իրարու հետ շփոթել, մանաւանդ, որ դաշնագրին մէջ ուրէ actif քայլ առնուած չէ թրքահայկական հարցի մասին: Դաշնագրին ստորագրուելէն վերջն ալ, Հայ կառավարութիւն մը ունինք ըսելով չենք կրնար թրքահայոց բոլոր գործերը անոր յանձնել: Թրքահայերու մէկ մասը, բնականաբար, կը մնայ թրքահպատակ. այս մասը՝ ինք իր ձեռքով պիտի հետապնդէ իր շահերը:

Ամեն. Դուրեան Արքեպիսկ. Մեր հիմակուան ընելիքը՝ Թրքահայաստանի Հանրապետութեան տեղի մասերուն, անոնց սահմաններուն որոշման կը վերաբերի: Եւ այդ կցելի մասերուն ժողովուրդը արդէն իսկ Կովկաս է: Անդին Թուրքիա մնալիք ժողովուրդը կայ, որ անշուշտ վաղը միւս օր իր գլխուն ճարը պիտի նայի՝ իր շահերուն փրկութեան համար միջոցներ խորհելով: Մենք ալ մեր կողմէ այդ նպատակով կրնանք ուղեգիծներ տալ անոր: Սա պահուն՝ կա՞յ այն տեսակ թրքահայ հարց մը, որ նոր Պատուիրակութեան մը կազմութիւնը անհրաժեշտութիւն դարձնէ:

Տիար Տէրպէտէրեան. Եւ ամսական ալ 18-20.000 ֆրանք ծախքերու դուռ բանայ:

Տիար Թէրզիպաշեան. Չենք կրնար ըսել, թէ տաճկահայ դատը փակուած է, որովհետեւ տաճկահայ հարցը լոկ այն կցելի նահանգներուն կապուած չէ: Indemnité-

ի, réparation-ի, փոքրամասնութեանց իրաւունքներու հարցերը միայն Վանայ, Պիթլիսի, Էրզրումի նահանգներու հայերը չեն հետաքրքրեր, կը հետաքրքրեն նաեւ Թուրքիոյ բոլոր մասերուն եւ Կիլիկիոյ մէջ ալ գտնուող հայ ժողովուրդը: Ի՞նչ պատճառ կայ, որ այդ ամենը չկատարուած՝ աճապարենք վերջ տալ այն մարմնին, որ անոնց հետապնդման սահմանուած է: Ես կ'եզրակացնեմ: Այս յուսահատ անորոշութեան մեջ չփորձենք փայլուն ֆրազներով շփոթել դրութիւնը: Պատուիրակութեան գործունէութեան առաջին հանգրուանը դաշնագրին ստորագրութիւնն է. անկէ վերջ՝ տիրէքթիւներու պատրաստութեան ընթացքին է, որ պիտի որոշենք, թէ ի՞նչ հաւանականութիւններ պիտի ունենանք աչքի առջեւ, եթէ երբեք միութեան գործը գլուխ չելլէ:

Տիար Ա. Չօպանեան. Իբր նախկին Պատուիրակութեան հրաժարեալ անդամ՝ Համագումարի ուշադրութիւնը կը հրաւիրեմ շատ կարեւոր եւ շատ ծանրակշիռ կէտի մը վրայ: Հրատապ գործունէութեան օրեր են. շատ ծանր, շատ բազմապահանջ գործեր, դիմումներ կան ընելիք, ասոնք պէտք են կատարուիլ, եւ շուտով. բայց մենք ահա նստեր ժամանակ կ'անցընենք այս վիճաբանութիւններով: Համամիտ չեմ անոնց, որոնք կ'ըսեն թէ պէտք չկայ Ազգ. Պատուիրակութեան մը: Հիմա, այս վճռական օրերուն, աւելի քան երբեք պէտք է Ազգ. Պատուիրակութիւն մը: Անհրաժեշտ է, ուրեմն, որ ձեւ մը գտնէ Համագումարը եւ լուծէ այս խնդիրը, բայց շուտով, որովհետեւ ամէնաթանկագին ժամանակ մըն է, որ կ'անցնի, երբ մենք այսպէս կը վիճինք եւ ասիկա ծանր պատասխանատուութիւն մըն է Համագումարին համար: Այսօրուան պահանջները այնքան մեծ են եւ այնքան դժուարին, որ եթէ նոյնիսկ այս վիճաբանութիւնները եղած չըլլային ու Պատուիրակութիւնը մնացած ըլլար, ինք պիտի ըսէր ձեզի, որ աջակիցներ տայիք իրեն: Այն սպառիչ աշխատութիւնը, զոր կը տանինք, տարիուկէսէ ի վեր, յոգնեցուցած է մեզ: Աչքի առջեւ բերէք անգամ մը օտար Պատուիրակութիւնները: Անոնցմէ իւրաքանչիւրը օժտուած է օժանդակ յանձնաժողովներով, մասնագէտներով, խորհրդականներով. բոլորն ալ բազմաթիւ գործակիցներ ունին. իսկ դուք՝ երեւակայուելիք ամէնէն ահաւոր խնդիրը բերեր տուեր էք չորս հոգիի ուսերուն վրայ: Պէտք է անպատճառ գործնական լուծում մը գտնել, որովհետեւ այս գործը այլեւս չի քալեր այսպէս: Ես եւ Տիար Թեքէեան վերջնականապէս հրաժարած ենք: Պէտք է նոր Պատուիրակութիւն մը, որուն գլուխը միշտ Փաշան մնայ եւ որ սկսուած գործը պիտի տանի մինչեւ իր բնական լրումը; Դաշնագրին ստորագրութեան օրը Պատուիրակութիւն մը պէտք է մնայ եւ Փաշան պէտք է ստորագրէ դաշնագիրը թրքահայոց անունով, որպէսզի թրքահայերը այդ կերպով հռչակած ըլլան, թէ իրենք կը միանան իրենց ռուսահայ եղբայրներուն եւ ոչ թէ ռուսահայերն են, որ զիրենք իրենց կը միացնեն:

Ներեցէ՛ք, որ այս առթիւ ցաւս յայտնեմ ուրիշ տեսակէտի մը մասին, որուն դէմ բողոքելու իրաւունքը չեմ կարծեր, որ զլացուի ինծի: Խորապէս կը յարգեմ Փաշան, բայց անձնուիրութեան մարմնացում եղող այդ մարդուն համար ունեցած յարգանքիս հակառակ, չեմ կրնար ընդունիլ, որ ըսուի թէ առանց Փաշայի Պատուիրակութիւն չկայ: Կը ցաւիմ անոր համար, որ մտաւորականներու կողմէ մանաւանդ յայտնուեցաւ այս տեսակ մը արհամարհանքը Պատուիրակութեան անդամներուն համար, որոնք մտաւորականներ են իրենց պէս, իբր թէ կարօտուած աշխատութեան մէջ բան մը ըրած չըլլային անոնք: Արդեո՞ք մեր ռուսահայ եղբայրներն մեզմէ նուազ խելացի են, որ գրագէտի մը յանձնած են Հանրապետութեան Պատուիրակութեան նախագահութիւնը: Կը կրկնեմ, որ պիտի շուտով գործնական լուծում մը գտնենք այս խնդրին համար, եւ չեմ կարծեր, որ դժուար ըլլայ ասիկա: Ն. Վսեմութիւնը ըսաւ, որ եթէ Պ. Նորատունկեանը իրեն գործակից տրուի՝ կը մնայ, եւ գիտենք որ եթէ մնաց, չի կրնար անտարբեր կենալ, ինք ալ պիտի աշխատի նորէն: Տիար Նորատունկեան չընդունիր. պէտք է ուրեմն ուրիշ անձ մը: Խնդիրը այդ անձը գտնելուն վրայ է. գտէ՛ք այդ երկուքին

շուրջը ուրիշներն ալ, ազգային կեանքին ծանօթ, աշխատելու ընդունակ հայրենասէր անձեր, եւ ամեն բան կը կարգադրուի: Պատուիրակութիւնը պէտք չէ մեռնի այսպէս. պէտք է պատուով քաշուի այս գործէն, եւ թրքահայութիւնը պատուաւորապէս ներկայացուի ազգերու դատին ամբողջական լուծման առթիւ:

Տիար Գ. Ֆնտգլեան. Ելեր խնդիր կ'ընենք, որ Պատուիրակութեան պէտք կա՞յ, թէ ոչ, մինչդեռ օրերով գումարուեցանք դաշնագիրը սրբագրել տալու համար ձեռք առնուելիք միջնորդագիր գրելու համար: Եթէ Պատուիրակութեան պէտք չկար, ուրեմն ինչո՞ւ ըրինք այդ աշխատութիւնը: Թշնամին եկեր է մեր դուռը եւ մենք տակաւին այդ բաներուն վրայ կը խորհինք:

Տիար Ա. Հանըմեան. Որովհետեւ երկու Պատուիրակութեանց ցաւը կայ:

Տիար Գ. Ֆնտգլեան. Այդ դատը կը վերնայ երբ դաշնագիրը ստորագրուի, ոչ անկէ առաջ:

Տիար Տէր-Ստեփանեան. Գացէ՛ք այդ ցաւը ուրիշ տեղ յայտնեցէ՛ք. մենք չենք պատասխանատուն՝ եթէ այսօր տակաւին երկու Պատուիրակութիւն գոյութիւն ունին:

Տիար Ա. Չօպանեան. Մինակ մեր ազգը չէ, որ Խաղաղութեան Վեհաժողովին մօտ երկու Պատուիրակութիւն ունի: Պեսարապիան Ռումանիոյ կը մնայ դաշնագրին համեմատ: Բայց մինչեւ վերջը ռումանականէն անկախ առանձին պատուիրակութիւն մը ունեցաւ. եւ նոյն ինքն ռումանական կառավարութիւնը փափաքեցաւ ասոր, համոզուած ըլլալով, թէ Պեսարապիոյ համար անջատ պատուիրակութիւն մը մեծ վնաս մը չէ ռումանական պահանջմանց համար, այլ ընդհակառակը՝ զօրավիգ մը աւելի:

Տիար Ա. Հանըմեան. Կ'ըսուի, թէ քանի որ թրքահայ դատ մը կայ, այս դատը պէտք է հետապնդէ թրքահայ պատուիրակութիւն մը: Ես ձեզի Թրակիոյ եւ Իզմիրի օրինակը տամ: Անոնց դատը կապուած էր Թուրքիոյ յոյներուն, բայց Թուրքիոյ յոյները առանձին պատուիրակութիւն ունեցա՞ն Վեհաժողովին մոտ:

Տիար Գ. Ֆնտգլեան. Հապա Պոնտո՞սը, որ մասնաւոր Պատուիրակութիւն մը ունի:

Տիար Տէր-Ստեփանեան. Թրքահայոց դատը Թրակիոյ յոյներուն դատի՞ն կը նմանցնէք:

Տիար Գ. Ֆնտգլեան. Մեր դատը յիսուն տարուան քաղաքական գոյութիւն ունեցող դատ մըն է: Արդեո՞ք թրակիացիք մեզի պէս մէկ միլիոնէ աւելի զոհ տուին:

Վսեմ Տիար Գ. Նորատունկեան. Կարծեմ, թէ բաւական լուսաբանուեցաւ այս խնդիրը: Պէտք է այլեւս միանանք մէկ կէտի մը վրայ եւ վերջ տանք այս կնճռոտութեան: Այս կէտը, ըստ իս, սա է: Թէեւ Տիարք Չօպանեան եւ Թեքէեան կը պնդեն, թէ իրենք հաստատ կը մնան իրենց հրաժարականին վրայ, բայց լաւագոյն է, որ վերստանձնեն իրենց գործը, զոր սկսեր ու շարունակեր են մէկուկէս տարի եւ որ տակաւին քանի մը ամիս պէտք է շարունակուի: Անշուշտ իրենք ալ կ'ընդունին, որ Պատուիրակութեան գործը տակաւին քանի մը ամիս ալ շարունակելու պէտք կայ:

Տիար Վահան Թեքէեան. Ոչ այն հասկացողութեամբ, թէ մէջտեղը դաշնագիր մը կայ, զոր կարելի չէ փոփոխութեան ենթարկել, ինչպէս ըսիք պահ մը առաջ: Որովհետեւ՝ եթէ այդպէս ըլլայ, իրօք, այլեւս ի՞նչ պէտք կը մնայ Պատուիրակութեան:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Բայց շատ սխալ հասկցեր էք իմ խօսքերս: Ես ըսել չուզեցի, որ ասկէ վերջ ըլլալիք ոչինչ կայ, ըսել չուզեցի, որ ասկէ վերջ ըլլալիք գործողութիւնները կարեւորութիւն չունին: Ընդհակառակը, թուեցի այն խնդիրները, որոնք տակաւին կարօտ են աշխատութեան: Իմ հասկցնել ուզածը սա էր, որ պէտք չէ մեծ յոյսեր դնենք դաշնագրին փոփոխութեան առթիւ մեր ձեռք բերելիք առաւելութեանց վրայ, որպէսզի վերջէն յուսախաբ չըլլանք: Կատարուելիք գործողութիւնները, որքան ալ կարեւոր, պիտի ըլլան չափաւոր սահմանի մը մէջ, եւ վաղը եթէ ամէնազօրաւոր Պատուիրակութիւն մըն ալ բերէք, ան ալ ստիպուած պիտի մնայ այս անձուկ սահմանին մէջ գործելու: Համագումարը՝ Պատուիրակութեան

համար վստահութեան քուէով մը արտայայտուեցաւ: Որքան ալ Վսեմ. Փաշան նորէն իր հիւանդութեան առարկութիւնը դրաւ մէջտեղ, կը կարծեմ, որ պէտք է հաստատենք մեր նախորդ որոշումը, նոր անդամ մը ընտրելով նախապէս հրաժարած անդամին տեղ, որպէսզի Պատուիրակութիւնն իր գործը շարունակէ մինչեւ դաշնագրին ստորագրութիւնը:

Տիար Ա. Չօպանեան. Ատիկա լուծում մը չէ: Փաշան ալ, Պատուիրակութեան անդամներն ալ յոգնած էին տարիուկէսուան չարաչար աշխատութենէն: Ասկէ անկախաբար՝ եղած քննադատութիւնները այն աստիճան վիատութեան մատնեցին մասնաւորաբար Փաշան, որ հիմա ինք ալ կը հաւատայ, թէ չպիտի կրնայ այլեւս շարունակել այս գործը մինակը: Մի՛ կարծէք, որ Պատուիրակութեան անդամներուն մնալովը՝ Փաշան ալ կրնայ մնալ: Ինք կարող դեր-նախագահ մը ունենալ ուզեց իրեն աջակից եւ անունն ալ տուաւ: Մինչեւ որ ասիկա չըլլայ՝ չպիտի ուզէ Պատուիրակութեան մէջ մնալ:

Տիար Ֆնտգլեան. Բայց Փաշային անձի եւ կամ կարողութեան մասին ոչինչ ըսուեցաւ որպէսզի այդ վիատութիւնն արդարանար: Եղած քննադատութեանց արժէքը յայտնի եղաւ տրուած բանաձեւերէն: Կարծեմ Փաշան ստացաւ ամեն գոհացում, եւ պէտք չէ պատճառ մը ունենայ վիատելու: Ինծի այնպէս կը թուի, թէ Վսեմ. Նախագահին առաջարկած լուծումը լաւագոյն բանն է, որ կրնանք ընել այս դժբախտ խնդիրը պատուաւորապէս փակելու եւ ընդհատուած աշխատութեանց ընթացք տալու համար: Ատենը թանկագին է ինչպէս երբեք չէ եղած. աշխատինք ժամ առաջ հարթելու այս կնճռոտութիւնները:

Տիար Տէր-Ստեփանեան. Մենք խնդիրները շփոթելու վրայ ենք, որով վիճաբանութիւնը անօգուտ կը դառնայ եւ իրար չենք հասկնար: Փաշան ինծի հարց դրաւ, թէ երկու գործ կայ ընելիք: Մէյ մը՝ տիրէքթիւները գծել, մէյ մըն ալ՝ Պատուիրակութիւն մը ընտրել, եւ ինք ալ ըսաւ, որ տրամաբանական է նախ տիրէքթիւները գծել եւ յետոյ Պատուիրակութեան կազմութեան վրայ խորհիլ՝ հետապնդուելիք գործերու կարեւորութեան համեմատ: Հետեւաբար, կ'առաջարկեմ, որ անձերու հարցը մէկ կողմ թողունք եւ զբաղինք տիրէքթիւներով: Ասիկա նոյն ատեն մեզի միջոց կ'ընծայէ առանձին տեսակցութիւններով խորհրդակցելու եւ Պատուիրակութեան կազմութեան մասին գոյութիւն ունեցող դժուարութիւնները դիւրութեամբ հարթելու:

Ամեն. Դուրեան Արքեպիսկ. Մինչեւ տիրէքթիւներու պատրաստութիւնը՝ Պատուիրակութիւն չպիտի՞ ըլլայ:

Տիար Տէր-Ստեփանեան. Պատուիրակութիւնը, բնականաբար, կը մնայ եւ իր աշխատութիւնը կը շարունակէ:

Ամեն. Դուրեան Արքեպիսկ. Այն ատեն կրնայ երկու ամիս տեւել այս խնդիրը:

Տիար Ֆնտգլեան. Եթէ ոչ աւելի:

Տիար Տէր-Ստեփանեան. Չեմ կարծեր, որ այդքան երկար տեւէ եւ չեմ կարծեր, որ աւելի չըսեմ գործնական՝ գոնէ տրամաբանական միջոց մը գտնել կարելի ըլլայ:

Տիար Ա. Չօպանեան. Քանի մը խօսք ալ պիտի ըսեմ տիրէքթիւներու մասին: Առաջին խնդիր մը սա է, թէ Պատուիրակութիւն մը պիտի մնա՞յ, թէ՞ ոչ: Երկրորդ՝ մինչեւ ե՞րբ պիտի մնայ: Երրորդ՝ ի՞նչ ունի ընելիք այդ տեւողութեան միջոցին: Չորրորդ՝ ի՞նչ ջանք տակաւին կայ ընելիք՝ միւս Պատուիրակութեան հետ միացումը իրականացնելու համար: Հինգերորդ՝ Ազգ. Պատուիրակութեան ջնջուելէն ետք՝ Հայաստանի չկցուած հայկական հողամասերու խնդրով ո՞վ պիտի զբաղի Վեհաժողովին առջեւ: Վեցերորդ՝ Ազգ. Պատուիրակութեան կողմէ պիտի ստորագրուի՞ դաշնագիրը: Կան տակաւին հատուցման խնդիրը եւ մանտայի խնդիրը, որ կարեւորներէն մէկն է անտարակոյս:

Տիար Գ. Ֆնտգլեան. Ես կ'առաջարկեմ այսօր իսկ, անմիջապէս քուէի դնենք Պատուիրակութեան մնալու կամ չմնալու խնդիրը:

Տիար Ֆնտգլեանի այս առաջարկութեան մասին թեր ու դէմ խօսեցան մէկ քանի պատգամաւորներ:

Ի վերջոյ, Համագումարը պէտք տեսաւ յաջորդ նիստին յետաձգելու այդ առաջարկութեան քուէարկութիւնը:

Նիստը փակուեցաւ ժամը 7-ին:

ՀԱԱ, ֆ. - 430, ց. 1, գ. 65, թթ. 1-39: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ Ի

19 Յունիս, 1920, ժամը 4 1/2 –ին,
նախագահութեամբ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեանի.

Ներկայ էին 13 պատգամաւոր՝

Ամեն. Դուրեան Արքեպիսկ., Տոքթ. Բարսեղեան, Դաւիթ-Բէկ, Թէրզիպաշեան, Թեքէեան, Թումայեան, Մսըրլը Պէյ, Վսեմ. Գ. Նորատունկեան, Չօպանեան, Սինապեան, Տէրպէտէրեան, Տէր-Ստեփանեան, Ֆնտգլեան:

Օրակարգ

1. Վերկազմութիւն Ազգ. Պատուիրակութեան
2. Տեղեկագիր Դաշնագրի Քննութեան Յանձնաժողովին

Օրակարգ

1. Վերակազմութիւն Ազգ. Պատուիրակութեան

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Երկու խնդիր ունինք, որոնց մասին պիտի խօսինք այսօր: Առաջին՝ Դաշնագրին Քննութեան Յանձնաժողովին եզրակացութիւնները, եւ երկրորդ՝ այն խնդիրը, որով երէկ զբաղեցանք, այսինքն՝ Պատուիրակութեան ամբողջացման խնդիրը: Դաշնագրին Քննութեան Յանձնաժողովին տեղեկաբեր Տիար Չօպանեան խնդրեց, որ նախապատուութիւնը տրուի երկրորդ խնդրին, որովհետեւ յիշատակագրի նախագիծը տակաւին օրինակուելու վրայ է: Ուրեմն, կը շարունակենք զբաղիլ երկրորդ հարցով:

Տիար Գ. Սինապեան. Խորհրդակցութեան չսկսած՝ յայտարարութիւն մը պիտի ընեմ: Այս առտու տեսնուեցայ Փաշային հետ. ինք դարձեալ կը պնդէ, որ եթէ Նորատունկեան էֆենտի չհաւանի Պատուիրակութեան մէջ մտնել՝ պիտի հրաժարի: Փաշան խնդրեց, որ այս պարագան ժողովիդ հաղորդեմ. արդէն ինք ալ պիտի գայ եւ անշուշտ նոյնը պիտի կրկնէ:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Բայց ատիկա անել մըն է եւ ոչ մէկ բանի կրնանք յանգիլ՝ եթէ այդ անել ճամբուն մէջ մնանք: Անգամ մըն ալ կը խնդրեմ, որ այլեւս իմ անձին շուրջը խնդիր չըլլայ այս առթիւ:

Տիար Արշակ Չօպանեան. Բայց այս խնդիրներէն առաջ՝ երբ Փաշան առաջին անգամ այս ժողովին մէջ բաղձանք յայտնեց, որ մասնակցիք Պատուիրակութեան, այսքան վճռական կերպով մը չմերժեցիք, ինչ որ յուսադրեց Փաշան ալ, մեզ ալ:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Միշտ վճռական էի: Ես մեղմ կերպով մը ըսի, որովհետեւ խառնուածքով ալ մեղմ եմ արդէն, բայց չհասկցուեցաւ, որով՝ կրկնուելով կրկնուելով՝ հետզհետէ խստացաւ իմ մերժման ձեւը: Եւ արդէն այն համոզումն ունիմ, որ Պատուիրակութենէն դուրս մնալով՝ ի պահանջել հարկին ծառայութիւն մը կրնամ մատուցանել: Իմ չէզոք դիրքս՝ օրինակի համար՝ ինծի կը թոյլատրէ, որ երբ պէտք

ծագի, միացման գիծ մը դառնամ երկու Պատուիրակութեանց միջեւ, երբ իրենց տեսակէտները համաձայն չըլլան իրարու հետ: Յետոյ կան խնդիրներ, որոնց Պատուիրակութիւնը չուզէր անձամբ միջամտել, եւ որոնց համար անհրաժեշտ է կէս մը չէզոք անձի մը միջամտութիւնը: Այդ պարագաներուն մէջ ալ իմ դերս օգտակար կրնայ դառնալ: Պատուիրակութիւնը, երբ որ ուզէ, միշտ պատրաստ եմ ամբողջ օժանդակութիւնս բերել իրեն, ինչպէս ըրած եմ արդէն անցեալին մէջ անպաշտօն կերպով:

Տիար Գ. Սինապեան. Բայց խնդիրը պէտք է լուծել:

Տիար Ա. Թէրզիպաշեան. Փաշան երեկ չպահանջեց, որ անպատճառ Նորատունկեան էֆենտին ըլլայ իրեն տրուելիք զորավիգը:

Տիար Գ. Սինապեան. Այո, բայց այսօր այդ պայմանը դրաւ:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Մենք այն հաւատքն ունինք, թէ Համագումարին տուած վստահութեան քուէով այս հրաժարականի խնդիրը վերջապէս փակուած է այլեւս:

Տիար Արշակ Չօպանեան. Կ'առաջարկեմ, որ Ժողովը նախ իր որոշումը տայ այն հարցին նկատմամբ, որ մէջտեղ դրուեցաւ երէկ. թրքահայ Պատուիրակութիւն մը պէ՞տք է մնայ, թէ՞ ոչ: Նախ պէտք է լուծել այս հարցը: Ատկէ ետքը կը մնայ գտնել ուրիշ յարմար անձ մը իբր փոխ-նախագահ, որպէսզի թրքահայ Պատուիրակութիւն մը միշտ իրեն նախագահ ունենալով Փաշան, թրքահայոց դատը շարունակէ հետապնդել գոնէ մինչեւ դաշնագրին ստորագրութիւնը:

Տիար Ա. Թէրզիպաշեան. Կ'առաջարկեմ, որ անմիջապէս քուէի դնենք այս հարցը, որովհետեւ կասկած չկայ, որ դաշնագրին եզական հանգամանքին բերումով՝ թրքահայոց խնդիրը բաց եւ անլոյծ կը մնայ, ինչ որ անհրաժեշտ կը դարձնէ այդ խնդրին անունով առանձին Պատուիրակութեան մը գոյութիւնը:

Տիար Ա. Չօպանեան. Երէկ ըսուեցաւ, թէ այլեւս անյարմար է, որ երկու Պատուիրակութեանց կողմէ ըլլան նոր դիմումները. ըսուեցաւ նաեւ, որ նոր Պատուիրակութիւնը ի՞նչ ունի այսուհետեւ ընելիք: Որպէսզի Ազգ. Պատուիրակութեան մը գոյութեան ամէնէն անհաշտ հակառակորդներն իսկ համոզուին՝ պիտի ըսեմ: Երկու Պատուիրակութիւնները դաշնակից պետութեանց մօտ կողք-կողքի գործեցին սկիզբէն ի վեր, եւ մատուցուած պաշտօնագրերը կրեցին երկու Պատուիրակութեանց ալ նախագահներուն ստորագրութիւնը: Եւ պետութիւնները երբեք առարկութիւն չըրին ասոր դէմ: Մինչեւ Սան Ռեմօ այսպէս եղաւ, եւ Սան Ռեմոյի մէջ ալ մեր պահանջումները ներկայացուցեցան թէ՛ Պ. Ահարոնեանի եւ թէ՛ Փաշային ստորագրութեամբ, մէկը իբր Հանրապետական կառավարութեան եւ միւսն ալ իբր irredimè Հայոց ներկայացուցիչ: Ինչո՞ւ յանկարծ փոխուի այս դրութիւնը, որ նուիրագործուած է այլեւս պետութեանց մօտ, քանի որ Պատուիրակութեանց ձուլումը կարելի չեղաւ: Մինչեւ դաշնագրին ստորագրութիւնը՝ պէտք է գործերը վարուին այդ կերպով, եւ Փաշան ալ պէտք է ստորագրէ դաշնագիրը՝ հռչակելու համար թրքահայոց միացումը Հանրապետութեան: Անկէ ետքը, ի հարկէ, այն հայերը, որոնք Հանրապետութենէն դուրս պիտի մնան, պէտք պիտի ունենան իրենց ճակատագրով զբաղող մարմնի մը: Ո՞վ պիտի ըլլայ այս մարմինը, ո՞վ պիտի ընտրէ զայն, նոր համագումա՞ր պիտի հրաւիրուի ատոր համար: Ասոնք վերջի խնդիրներ են: Հիմա անհրաժեշտը սա է, որ Պատուիրակութիւնը պէտք է մնայ գոնէ մինչեւ դաշնագրին ստորագրութիւնը: Շատ խնդիրներ կան, որոնք իրեն կապուած էին. կը յիշեմ մեր մանտայի ամէնակարեւոր հարցը: Այս խնդիրները պէտք է իրմով լուծում գտնեն:

Տիար Տոքթ. Բարսեղեան. Տիար Չօպանեանի ըսած փաստերը, որոնք իբր թէ պիտի համոզէին նոյնիսկ անհաւատները, որոնցմէ մէկն ալ ես եմ, կ'երեւայ՝ իր աչքին, ո՛չ միայն համոզիչ չեն, այլ՝ հակառակը կ'ապացուցանեն: Համագումարը անցեալ տարի Պատուիրակութեան կազմութիւնը ո՛չ թէ անհրաժեշտ նկատեց, այլ՝ համակերպեցաւ եղած դրութեան: Բայց այն պայմանները, որոնք կային անցեալ

տարի, գոյութիւն չունին այսօր: Անցեալ տարի երեք գլխաւոր առարկութիւններ կ'ընէին զուտ Ազգային Պատուիրակութեան մը գոյութիւնը հիմնաւորելու համար: Առաջին՝ Հանրապետութեան ճանչցուած չըլլալը: Երկրորդ՝ ռուսական վտանգը: Երրորդ՝ կը շեշտուէր, որ Հայկական Խնդրին ծանրութեան կեդրոնը թրքահայկական դատը կը կազմէ: Ասոնցմէ ո՛չ մէկն այլեւս գոյութիւն ունի: Հիմա, ըսել, թէ թրքահայ դատը պաշտպանելուն համար յատուկ Պատուիրակութիւն մը պէտք կայ՝ սխալ է: Կ'ըսուի, թէ մանտայի հարցին մէջ Ազգ. Պատուիրակութիւնը մեծ դեր ունի կատարելիք: Բայց այս ալ անընդունելի է, որովհետեւ այս ուղղութեամբ ամեն գործ կ'իյնայ Հանր. կառավարութեան: Ասկէ զատ կայ նաեւ այն պարագան, որ Ազգ. Պատուիրակութիւնը ինքզինքը կը նկատէ ամբողջ արեւմտահայութեան ներկայացուցչութիւն, հետեւաբար՝ ո՛չ միայն Հայաստանի կցուելիք հողամասերէն դուրս մնացած հայկական նահանգներուն եւ Կիլիկիոյ, այլեւ եւրոպական մյուս գաղութներուն: Արդ, ինչպէ՞ս կ'ըլլայ, որ այսպիսի մարմին մը իրեն մեծ դեր վերագրէ մանտայի խնդրին նկատմամբ, որ կը վերաբերի կցուելիք հողամասերուն, որոնք ո՛չ մէկ պարագայի տակ երկու տարիէ ի վեր գոյութիւն ունեցող հողամասերէն աւելի ընդարձակ ըլլալ չեն ենթադրուիր: Այս տեսակ յաւակնութիւն մը իրական եւ իրաւական ո՛չ մէկ հիմ ունի: Հետեւաբար, պէտք չեմ տեսներ թրքահայ դատին համար առանձին Պատուիրակութեան մը անհրաժեշտութեան: Մինչեւ դաշնագրին ստորագրութիւնը անոր գոյութեան հետ կրնամ հաշտուիլ: Բայց այն պայմաններուն տակ միայն, որոնց մասին քանի անգամ առիթ ունեցայ արդէն խօսելու:

Կը խնդրեմ, որ Ազգ. Պատուիրակութիւնը անհրաժեշտ նկատողներ տան հետեւեալ հարցումին պատասխանը: Եթէ միացման մասին Երեւանի բանակցութիւնները յաջող ելքի մը յանգած ըլլային, ամիսներ առաջ արդէն այլեւս չէինք ունենար Ազգ. Պատուիրակութիւնը մը: Հետաքրքրական է գիտնալ, թէ այժմ նորէն Ազգ. Պատուիրակութիւն մը ստեղծելու մասին պիտի խորհէի՞ն, եւ ինչո՞ւ: Եւ եթէ այդ միացմամբ Ազգ. Պատուիրակութեան մը նորէն կեանք չտայինք, թրքահայ դատը ստացա՞ծ պիտի ըլլայինք: Ընդունինք ուրեմն, որ Ազգ. Պատուիրակութեան մը գոյութիւնը անհրաժեշտութիւն մը չէ: Երբ յաճախ ակնարկուած դժուարութիւնը այժմ ինքնին կը վերնայ, մեզի կը մնայ միայն խորհիլ այն միջոցներուն մասին, որոնք հնարաւոր կը դարձնեն կառավարութեան միջոցով Հանր/ապետութեան/ Պատ/ուիրակութեան/ մէջ մտցնել երկու կամ երեք արեւմտահայեր, որոնք թրքահայոց պայմաններուն աւելի ծանօթ կրնան ըլլալ: Մեծ պետութիւններն ալ այս երկուութեան համակերպած են ինչպէս մենք, եւ ո՛չ թէ անհրաժեշտ նկատած են զայն, եւ յաճախ ալ զգացուցած են այս դրութեան վնասակարութիւնը մեր դատին համար: Այնպէս չէ՞, Տիար Չօպանեան:

Տիար Չօպանեան. Այո՛, որովհետեւ երկուքին միջեւ վէճեր առաջ եկած են:

Տոքթ. Բարսեղեան. Ճիշդ ասոր համար ալ պէտք է ժամ առաջ վերջ տալ այդ երկուութեան: Պէտք է նկատի ունենալ նաեւ, որ եթէ այս տեսակ պատասխանատու որոշում մը տան եւ նոր Պատ/ուիրակութիւն/ մը ընտրենք, անիկա պիտի ունենա՞յ պէտք եղած հեղինակութիւնը իր ետին, երբ այսպէս նուազած Համագումարի մը քանի մը քուէներով ընտրուի:

Տիար Ա. Թէրզիպաշեան. Հարցը դրուած է այն ձեւով, որ Պատուիրակութիւնը պէ՞տք է մնայ, թէ՞ ոչ: Ես կը կարծեմ, որ Պատուիրակութեան գոյութիւնը մինչեւ դաշնագրին ստորագրութիւնը պահելու առաջարկը այն դրական իմաստով է, որ դաշնագիրը կը ստորագրէ մեր յոյսերու minimum պսակումով: Հակառակ պարագային՝ կարելի չէ ըսել, որ Պատուիրակութեան դերը կը լրանայ. ան իր դերը եւ իր համարատուութիւնը ունի յանձնելիք կա՛մ նոր համագումարի մը, որու մասին պէտք է խօսինք, կա՛մ Պոլսոյ Ազգ. Երեսփ. Ժողովին եւ կամ՝ համաձայնութիւն գոյացած պարագային՝ Հայաստանի խորհրդարանին:

Վիճաբանութիւնը վերջ գտած ըլլալով, Վսեմ. Նախագահը քուէի դրաւ նախ Պատուիրակութեան Նախագահ Վսեմ. Պօղոս Փաշայի հրաժարականին մերժումը:

14 ներկաներու 13-ին քուէով՝ մերժուեցաւ Պատուիրակութեան Նախագահին հրաժարականը:

Միայն Տիար Տոթք. Բարսեղեան հակառակ քուէ տուաւ, պատճառաբանելով, թէ քանի որ Փաշան կը պնդէր իր հրաժարականին վրայ, ինք պէտք չի տեսներ, որ Համագումարը պատրաստ է անկարելիին:

Յետոյ քուէի դրուեցաւ Պատուիրակութեան միւս անդամներուն հրաժարականին մերժումը:

Տիար Տէրպէտէրեան. Պատուիրակութեան միւս անդամներուն ալ հրաժարականին մերժման ես ալ համամիտ եմ, պայմանաւ, որ որոշ ըլլայ, թէ առանց Ն. Վսեմութիւն Փաշային՝ Ազգ. Պատուիրակութիւն չի կրնար գոյութիւն ունենալ. միայն Փաշային համար է, որ կը համակերպիմ մինչեւ դաշնագրի ստորագրութիւնը Ազգ. անջատ Պատուիրակութեան մը գոյութեան:

14 ներկաներու 13-ին քուէով՝ մերժուեցաւ Պատուիրակութեան միւս անդամներուն հրաժարականը:

Տիար Տոթք. Բարսեղեան դարձեալ հակառակ քուէ տուաւ:

Տիար Տէր-Ստեփանեան. Մենք կը մերժենք իրենց հրաժարականը, բայց ասիկա չի բառնար Պատուիրակութեան վերակազմութեան խնդիրը, որ կայ մեր օրակարգին վրայ:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Եթէ ժողովդ փափաքի՝ կրնայ որոշել նաեւ, թէ Պատուիրակութիւնը մինչեւ ե՞րբ պիտի շարունակէ իր պաշտօնը:

Տիար Տէր-Ստեփանեան. Ինծի կը թուի, թէ այդ հարցը չենք կրնար որոշել մինչեւ որ տիրէքթիւները չսահմանենք: Ընդհակառակը՝ պէտք է քուէարկենք, թէ Պատուիրակութիւն մը պէ՞տք է մնայ կամ ոչ, առանց որոշելու թէ մինչեւ ե՞րբ պիտի շարունակէ իր պաշտօնը, որուն տեւողութեան սահմանումը տիրէքթիւներէն պիտի բղխի:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Բայց արդէն մեր քուէարկութեան նպատակը ատ էր:

Ամեն. Դուրեան Արքեպիսկ. Արդէն իրենց հրաժարականը մերժելուս նպատակն էր, որ մնան ու շարունակեն իրենց պաշտօնը:

Տիար Ա. Թէրզիպաշեան. Կարծեմ սա ձեւով բանաձեւ մը կրնանք անցընել, թէ Պատուիրակութիւնը պէտք է շարունակէ իր գործունէութիւնը մինչեւ դաշնագրին նպաստաւոր կերպով ստորագրութիւնը:

Տիար Դաւիթ-Բէկ. Ո՛չ միայն պէտք է սպասենք մինչեւ դաշնագրին ստորագրութիւնը, այլ նաեւ մինչեւ անոր վաւերացումն ու գործադրութիւնը: Ըստ իս՝ մեր Պատուիրակութիւնը պէտք է գոյութիւն ունենայ մինչեւ դաշնագրին գործադրութիւնը, որպէսզի երբ Թրքահայաստանէն մասեր կցուին Հանրապետութեան, կարենայ հռչակել թրքահայոց միացումը իրենց ռուսահայ եղբայրներուն:

Տիար Տէր-Ստեփանեան. Կ'առաջարկեմ, որ այժմ սկսինք տիրէքթիւներու մասին խորհրդակցութեան:

Համագումարն անցաւ տիրէքթիւներու հարցին քննութեան:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Պատուիրակութեան վիճարկած գործերուն մէջ կայ նախ դաշնագրին սրբագրութեան համար կատարուելիք ձեռնարկը: Ամէնքս ալ կարծեմ համամիտ ենք այդ մասին: Եւ արդէն՝ քիչ մը վերջ պիտի կարդացուի այն յիշատակագիրը, որ այդ նպատակով պիտի մատուցուի Գերագոյն Խորհուրդին: Երկրորդ՝ Պատուիրակութիւնը պիտի խորհի, թէ ի՞նչ պայմաններու մէջ եւ ինչպէ՞ս կարելի պիտի ըլլայ Թրքահայաստանի մէկ մասին կցումը Հայկական Պետութեան: Կրնայ ըլլալ, որ դաշնագրին ստորագրութենէն առաջ ալ հնարաւոր դառնայ այդ հողամասերուն Հայաստանի կցումը, օրինակի համար՝ ենթադրենք՝ թուրքերուն հետ

գոյացած ուղղակի համաձայնութեամբ մը, եթէ կարելի ըլլայ: Երրորդ՝ տակաւին ատեն մը պիտի մնանք այն տեսակ դրութեան մը մէջ, որ եթէ երկու Հայաստանները միանան, պէտք պիտի ըլլայ կիրարկել ռուսական օրէնքները՝ Ռուսահայաստանի եւ թրքական օրէնքները՝ Թրքահայաստանէն կցուած մասերուն մէջ: Այս վիճակը պիտի տեւէ՝ մինչեւ որ նոր օրինագիրք մը ունենայ Հայկական Պետութիւնը: Պատուիրակութիւնը կրնայ օրէնսգէտ անձերու աջակցութեամբ, հիմակուընէ աշխատիլ այդ նպատակով: Չորրորդ՝ կան տէրութեանց մօտ Եւրոպայի մէջ ըլլալիք դիմումները: Բնական է՝ անհրաժեշտ է, որ այդ դիմումները կատարուին մեր Հանրապետութեան ներկայացուցչին հետ համախորհուրդ, սերտ գործակցութեամբ մը, որ դժբախտաբար, կարելի չեղաւ մինչեւ այսօր: Անցեալ տարի թէեւ Ամբողջական Հայաստանի Պատուիրակութիւն ըսինք, բայց ամեն կէտերու մէջ կարելի չեղաւ համերաշխ ու էապէս միացեալ գործունէութիւն մը: Անշուշտ այլեւս ատենն է, որ հակամարտութիւնները վերնան եւ աշխատութիւնները կատարուին ձեռք-ձեռքի: Հինգերորդ՝ կայ մանտայի հարցը: Եւ տակաւին անոր նման ուրիշ շատ խնդիրներ կը գտնուին Պատուիրակութեան օրակարգին վրայ: Այս բոլորը, զորս կը յիշատակեմ անցողակի կերպով մը, կրնան նկատողութեան առնուիլ տիրէքթիւներու պատրաստութեան միջոցին:

Տիար Ա. Չօպանեան. Մանտայի խնդիրը մանաւանդ Ազգ. Պատուիրակութեան վերաբերող ամէնէն հրատապ հարցերէն մէկն է: Եւ արդէն՝ թրքահայերը մասնաւորապէս շահագրգռող խնդիր մըն է, քանի որ հիմնուած է Ազգերու Ընկերակցութեան դաշնագրութեան 22-րդ յօդուածին վրայ, որ սոսկ թրքահայոց կը վերաբերի: Ես պիտի փափաքէի, որ այսօր իսկ Համագումարը զբաղեր այդ խնդրով:

Տիար Ա. Թէրզիպաշեան. Ես կը կարծեմ, որ Պատուիրակութեան պարտականութիւններէն ամէնէն կարեւորը մոռցանք: Պատուիրակութեան պարտքն է նաեւ ուշադիր հետեւիլ քաղաքական իրադարձութիւններուն, որոնք այսօր առաւել քան երբեք սպառնալից են հայ ժողովուրդին ֆիզիքական գոյութեան: Կայ պոլշեւիկութեան ստեղծած դրութեան վտանգը, կայ թուրք միլլիներու վտանգը, կայ տակաւին Կիլիկիոյ օրհասական վիճակը: Ասոնց ամենը՝ հայ ժողովուրդին աչքերը կը դարձնեն դեպի Ազգ. Պատուիրակութիւնը, եւ Պատուիրակութիւնը չի կրնար իր գործունէութիւնը սահմանափակել միայն քանի մը շրջաններու Ռուսահայաստանի կցման աշխատանքին մէջ: Այդ շրջաններէն դուրս կը մնան ուրիշ շատ մը հայ շրջանակներ, որոնց ֆիզիքական գոյութեան, ինչպէս նաեւ քաղաքական իրաւանց պաշտպանութեան, նոյնպէս նաեւ Կիլիկիոյ նման կարգ մը շրջանակներու մասնաւոր առանձնաշնորհեալ ռեժիմ մը ապահովելու հոգերը Ազգ. Պատուիրակութեան կը պատկանին: Պատուիրակութիւնը պէտք է անդուլ խորհի, թէ ի՞նչ կրնանք փրկել, թէ այն մեր այն խեղճ ազգակիցները, որոնք պիտի մնան Հայաստանի սահմաններէն դուրս, ի՞նչ կերպով կրնանք փրկել:

Տիար Ա. Բարսեղեան. Այդ գործով ո՛չ Համագումարը, ո՛չ ալ տիրէքթիւներու պատրաստութեան համար կազմուելիք յանձնաժողովը կրնան զբաղիլ: Այս առաջարկը կ'ուզէ շեշտել Եւրոպայի մէջ տեւականապէս գոյութիւն ունենալիք մարմնի մը կամ Պատուիրակութեան անհրաժեշտութիւնը: Կ'ընդունիմ, որ չկցուած հայկական հողամասերու մէջ գտնուող հայերը իրենց շահերուն պաշտպանութեան նուիրուած մարմին մը ունենան: Բայց ատիկա ո՛չ այս Պատուիրակութիւնը, ո՛չ ալ Համագումարը կրնան որոշել: Ատիկա Եւրոպայի ղրկուելիք հրահանգներով չըլլար, այլ՝ տեղին ժողովուրդը եւ պայմանները պիտի ընեն: Մենք հիմա չենք կրնար ատով զբաղիլ: Եւ յետոյ, դաշնագիրի ստորագրութենէն եւ գործադրուելէն ետք պէտք է սպասել ժամանակ մը, որպէսզի տեսնենք, թէ ի՞նչ տեսակ պայմաններ կը ստեղծուին:

Տիար Թէրզիպաշեան. Պիտի լրացնեմ առաջարկութիւնս, ըսելով որ Հանրապետութեան կառավարութիւնը, դաշնագրին ստորագրութենէն վերջ, իրական տեսակէտով չի՛ կրնար Հայաստանի սահմաններէն դուրս մնացած

մասերու ժողովուրդներուն, օրինակ՝ կիլիկեցիի մը կամ խարբերդցիի մը ձգտումներուն արտայայտիչը ըլլալ: Ատիկա այդ ժողովուրդներուն իրաւունքն է, որ ներկայացուցիչներու միջոցաւ՝ առանձին օրկանով մը պէտք է արտայայտէ իր ձգտումները: Եւ այդ ներկայացուցիչները խտացած են այս Հանգանումարին մէջ եւ ունին իրենց գործադիր, օրկանը որ Ազգ. Պատուիրակութիւնն է:

Տիար Տէր-Ստեփանեան. Տիրէքթիւներու մասին խօսուած ատեն մենք պէտք է նկատի ունենանք, մեր արտաքին քաղաքականութենէն վերջ, ներքին քաղաքականութիւնը, քանի որ այս վերջին տեսակէտով ալ Պատուիրակությունը որոշ դեր կատարեր է անցեալին մէջ, եւ հետեւաբար՝ ապագային նկատմամբ ալ ունի որոշ դեր, պարտականութիւն ու պատասխանատուութիւն: Պատուիրակութեան տեւողութեան մասին, ըստ իս, պէտք է նկատի ունենալ զանազան պատահականութիւններ: Չի բաւեր ըսել, որ Պատուիրակութիւնը պէտք է գոյութիւն ունենայ մինչեւ դաշնագրին ստորագրութիւնը, եւ յետոյ լուծուի. որովհետեւ՝ մինչեւ այդ՝ դրութիւնը կրնայ բոլորովին փոխուած ըլլալ եւ նոր գործեր թելադրել: Պէտք է նախատեսենք երկու գլխաւոր կարելիութիւն: Առաջին՝ կը ստորագրուի դաշնագիր մը, որուն մէջ Տաճկահայաստանի իրաւունքները գէթ նուազագոյն չափով մը յարգուած են: Երկրորդ՝ կը ստորագրուի դաշնագիր մը, որուն մէջ բոլորովին ոտնակոխ եղած է Տաճկահայաստանը եւ անկէ ո՛չ մէկ հողամաս կամ փոքր հողամաս մը կը միացուի Հանրապետութեան: Առաջին պարագային՝ Պատուիրակութեան արտաքին գործը վերջացած պէտք է համարել, երբ Տաճկահայաստանի ազատագրեալ մասը գրաւուի ու միացուած ըլլայ Հանրապետութեան: Երկրորդ պարագային՝ Պատուիրակութեան գործը վերջացած չէ, եւ ըստ իս, պէտք է որ, համաձայն Պոլսոյ Ազգ. Երեսփ. Ժողովին հետ, հրաւիրէ նոր Արեւմտահայ Համագումար մը, որ որոշում տայ ապագայի մասին: Իմ համեստ կարծիքովս, այս երկրորդ պարագային, որ կը համապատասխանէ տաճկահայ դատին ամբողջական կամ գրեթէ ամբողջական վիժման, Ազգ. Պատուիրակութիւնը պէտք է փոխադրուի Ամերիկա եւ հոն ու անկէ շարունակէ պայքարիլ նոր թափով, հայութեան ոտնակոխ եղած իրաւունքներուն համար, մասնաւորապէս կոչ ընելով Ամերիկայի, որ վերջին տարուան ընթացքին մեծագոյն պատասխանատուութիւնը ստանձնեց մեզի հանդէպ: Առաջին՝ այսինքն մեր նուազագոյն գոհացում ստանալու պարագային, Ազգ. Պատուիրակութիւնը, որ մինչեւ դաշնագրին ստորագրութիւնը պիտի շարունակէ պաշտպանել ամբողջ Հայաստանի եւ արեւմտահայութեան շահերը, պէտք է վերջ գտնէ եւ պէտք չէ, որ զբաղի ոչ-փրկեալ Հայաստանով ու հայութեամբ: Հայութեան այդ մասին պէտք է թողուլ որոշել իր դիրքը, համակերպիլ կամ ոչ: Պատուիրակութիւնը շատ-շատ կրնայ գաղտնի թելադրութիւններ ընել ոչ-փրկեալ հայութեան, Պոլսոյ Ազգ. ժողովին միջոցով: Գալով ներքին քաղաքականութեան եւ մասնաւորապէս միացման հարցին, որ չլուծուեցաւ ցարդ, ամեն ոք գիտէ, թէ որո՛ւ յանցանքով:

Ես կ'առաջարկեմ հետեւիլ սա ծրագրին: 1. Պատուիրակութիւնը կ'առաջարկէ Երեւանի կառավարութեան՝ միացումը կատարել նուազագոյն ծրագրի մը հիման վրայ, որ կը կազմէ կառավարութեան առաջարկներն իսկ, պատշաճեցուած ներկայ դրութեան: Ընելով այս առաջարկը, Պատուիրակութիւնը կը յայտարարէ, որ անոր մերժման պարագային՝ ստիպուած պիտի ըլլայ խնդիրը ենթարկելու նոր Արեւմտահայ Համագումարի մը: 2. Մերժումի պարագային՝ Պատուիրակութիւնը պէտք է ձեռնարկէ նոր Արեւմտահայ Համագումարի մը ընտրութեան: Ընտրութիւնը կը կատարուի ընդհանուր ժողովրդական քուէարկութեամբ: Համագումարը բաղկացած պէտք է ըլլայ շուրջ 50 անդամէ, ամբողջովին ընտրուած տաճկահպատակ արեւմտահայութենէն: Ընտրելու ակտը պիտի նկատուի՝ ամեն ընտրողի համար՝ համազօր հայկական քաղաքացիութեան խնդրանքի: Համագումարը կը հաւաքուի Երեւան, կը քննէ Ազգ. Պատուիրակութեան համարատուութիւնը, ու յետոյ, ինք ըլլալով արեւմտահայութեան գերագոյն ներկայացուցչութիւնը, կը բանակցի ուղղակի Երեւանի խորհրդարանին

հետ, միացման հարցին շուրջ: Համագումարին իշխանութիւնը բացարձակ է, ան, համաձայնութեան պարագային, կրնայ ինքզինքը նկատել միացեալ խորհրդարանի արեւմտահայ կէսը, եւ իբր այդ մտնել Երեւանի խորհրդարանին մէջ, այդպէսով առաջ բերելով հայութեան երկու հատուածներուն վերջնական ձուլումը:

Տիար Գ. Ֆնտգլեան. Կ'ուզէի որոշապէս գիտնալ, թէ Ազգ. Պատուիրակութիւնը իրեն պարտք պիտի նկատէ՞ դիւանագիտական դիմումներ ընել եւ աշխատիլ, որ Հայաստանէն դուրս մնալիք հայոց համար՝ դաշնագրին փոքրամասնութեանց պաշտպանութեան տրամադրութիւններուն վտիտ արդիւնքէն աւելի բան մը ձեռք բերուի:

Տիար Չօպանեան. Բայց անշուշտ. իր ամէնէն էական պարտականութիւններէն մին է այդ բանը:

Համագումարը տակաւին պահ մըն ալ շարունակեց վիճաբանութիւնը այն հարցին շուրջ, թէ Պատուիրակութիւնը մինչեւ ե՞րբ պէտք է մնայ:

Նախագահ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան դիտել տուաւ, թէ օրինական տեսակէտով՝ դաշնագրին ստորագրութենէն վերջ Ազգ. Պատուիրակութիւնը չի՛ կրնար մնալ, ինչպէս չի՛ կրնար մնալ նաեւ Հանր. Պատուիրակութիւնը, որուն մէջ՝ Հանր/ապետութեան/ կառավարութիւնը կրնայ դիւանագիտական ներկայացուցիչ մը դրկել: Գալով Թուրքիոյ մեջ մնալիք հայ ժողովուրդին, Ն. Վսեմութիւնը ըսաւ, թէ անոնք արդէն իրենց պաշտօնական ներկայացուցիչներն ունին Ազգ. Երեսփ. ժողովին մէջ. եւ դաշնագրին մէջ կայ յօդուած մը, որ կապահովէ Սահմանադրութեան, հետեւաբար նաեւ Ազգ. ժողովին տեւականութիւնը: Եթէ ժողովուրդը պէտք տեսնէ նոր մարդ կամ նոր մարմին մը դրկելու Եւրոպա, ինք իր պաշտօնական օրկաններով կորոշէ ատիկա, ինչպէս ըրեր է արդէն անցեալին մէջ: Կարելի է, որ նորէն Վսեմ. Պօղոս Փաշային կը յանձնէ այդ գործը: Ն. Վսեմությունը եզրակացուց, թէ Պատուիրակութիւնը պէտք է մնայ մինչեւ դաշնագրին ստորագրութիւնը:

Պատուիրակութեան անդամ Տիար Արշակ Չօպանեան յայտարարեց, թէ այդ ամենուն համաձայն է, ինչպէս արդէն յայտնած ալ է:

Պատուիրակութեան տեւողութեան խնդիրը քուէարկութեան տրուելով, Համագումարը մեծամասնութեամբ որոշեց, որ Պատուիրակութիւնը իր պաշտօնը շարունակէ մինչեւ դաշնագրին ստորագրութիւնը:

Տիար Տէր-Ստեփանեանը հակառակ արտայայտուեցաւ այս որոշման եւ ուզեց, որ ատենագրուի: Յետոյ կազմուեցաւ հինգ անդամէ բաղկացեալ յանձնաժողով մը, նոր տիրէքթիւներու մասին ծրագիր մը պատրաստելու համար: Յանձնաժողովին անդամ նշանակուեցան՝

Տիարք՝
Բարսեղեան
Թէրզիպաշեան
Չօպանեան
Սինապեան
Տէր-Ստեփանեան

Համագումարը թելադրեց Յանձնաժողովին, որ կարելի եղածին չափ շուտով բերէ իր եզրակացութիւնները:

2. Տեղեկագիր Դաշնագրին Քննութեան Յանձնաժողովին

Համագումարը անցնելով Դաշնագրի Յանձնաժողովի տեղեկագրին քննութեան, խօսք առաւ տեղեկաբեր Տիար Արշակ Չօպանեան.

Ինչպէս գիտէք՝ թրքական դաշնագրի՝ հայոց վերաբերող յօդուածներու մասին Հայկական Պատուիրակութեան դիտողութիւնները Գերագոյն Խորհուրդին ներկայացնող յիշատակագիր մը խմբագրելու համար, Ազգ. Պատուիրակութիւնն իր կողմէ՝ Պ. Պ. Աճէմեանի եւ Չայեանի աջակցությամբ, եւ Համագումարի՝ այդ նպատակաւ կազմած յանձնախումբը, քանի մը խառն նիստերէ յետոյ, օգտուելով նաեւ Պ. Պ. Պարթըլէմիի, տը լա Բրատէլի եւ Մանտէլշթամի յայտնած կարծիքներէն, երկուստէք եղած աշխատութիւնները միացնելով յօրինեց յիշատակագրի նախագիծը, զոր պիտի կարդամ ձեզի հիմա: Անոր մասին ձեր հաւանութիւնը ստանալէ յետոյ, պիտի ներկայացնենք զայն Պօղոս Փաշայի եւ Պ. Ահարոնեանի, եւ յետոյ պիտի յանձնենք Պ. Մանտէլշթամի, որ հաճի խմբագրութեան վերջնական ձեւը տալ անոր:

Տիար Արշակ Չօպանեան կարդաց յիշատակագրին նախագիծը:

Ընթերցումէն վերջ, Դաշնագրի Քննութեան Յանձնաժողովին անդամներէն Տիար Տէր-Ստեփանեան Համագումարին ներկայացուց հետեւեալ երկու առաջարկները, զորս ըրած էր Յանձնաժողովին մէջ, առանց մեծամասնութիւն գտնելու եւ պահանջ դրաւ, որ Համագումարը արտայայտուի անոնց մասին:

Ա. պահանջել, որ իրաւարարութեան ենթարկուած չորս վիլայէթներու առնուազն կէսը, դաշնագրին ստորագրութենէն վերջ, մինչեւ որ իրաւարարութիւնը յայտնուի, թուրքերու կողմէ պարպուի եւ յանձնուի Հայ Հանրապետութեան կառավարութեան:

Բ. պահանջել, որ իրաւարարութեան ենթակայ չորս վիլայէթները, դաշնագրին ստորագրութենէն անմիջապէս վերջ, պարպուին թուրք զօրքերէն եւ իշխանութենէն եւ յանձնուին միջդաշնակցային յանձնաժողովի մը վարչութեան, մինչեւ իրաւարարութեան վախճանը:

Ն. Տէր-Ստեփանեան

Քուէի տրուեցաւ այս առաջարկները յիշատակագրին կցելու հարցը, զոր յարոյց Տիար Տէր-Ստեփանեան: Երկու առաջարկներն ալ մերժուեցան առանձին քուէարկութեամբ: Առաջին առաջարկն ստացաւ մէկ եւ երկրորդը՝ հինգ քուէ: Համագումարը, սակայն, միաձայնութեամբ որոշեց Պատուիրակութեան հրահանգ տալ, որ երկրորդ առաջարկին իմաստով գրաւոր կամ բերանացի դիմում ընէ պետութեանց:

Յետոյ քուէի տրուեցաւ յիշատակագրի նախագիծը եւ ընդունուեցաւ տասնչորս ներկաներու 13-ին քուէով:

Ձեռնպահ մնաց Տիար Տէր-Ստեփանեան, պատճառաբանելով, թէ յիշատակագրի նախագիծը դաշնագրին 89-րդ եւ 90-րդ յօդուածներուն մէջ Տաճկահայաստանի հարցը լուծուած չըլլալուն նկատմամբ պէտք եղած բողոքը եւ անկից հետեւող պահանջներ չի պարունակեր:

Նիստը փակուեցաւ ժամը 6-ին:

ՀԱԱ, ֆ. -430, ց. 1, գ. 65, թթ. 40-55: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ ԻԱ

22 Յունիս 1920, ժամը 4-ին,
նախագահութեամբ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեանի.

Ներկայ էին 16 պատգամաւոր՝

Ամեն. Դուրեան Արքեպիսկոպոս, Տոքթ. Բարսեղեան, Դաւիթ-Բէկ, Թէրզիպաշեան, Թէքէեան, Թումայեան, Մսըրլը Պէյ, Վսեմ. Գ. Նորատունկեան, Չօպանեան, Պզտիկեան, Սինապեան, Տէրպէտէրեան, Տէր-Ստեփանեան:

Օրակարգ

1. Վերակազմութիւն Ազգ. Պատուիրակութեան

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Ատենագրութիւն

Կարդացուեցաւ եւ վաւերացուեցաւ Յունիս 18-ի եւ 19-ի նիստերու ատենագրութիւնը:

2. Մեկնում Անգլիոյ հայ գաղութի պատգամաւոր Տիար Գառնիկ Ֆնտգլեանի:

Նախագահ Վսեմ. Տիար Գաբրիէլ Նորատունկեան ժողովին ծանոյց, թէ Անգլիոյ հայ գաղութի պատգամաւոր եւ Համագումարի Ա. ատենադպիր Տիար Գառնիկ Ֆնտգլեան, անձնական հարկեցուցիչ պատճառով մը ստիպուած էր մեկնիլ Անգլիա:

3. Նամակ Վսեմ. Պօղոս Փաշա Նուպարի, իւր հրաժարականի խնդրին նկատմամբ:

Նախագահ Վսեմ. Տիար Գաբրիէլ Նորատունկեան ժողովին հաղորդեց Ազգ. Պատուիրակութեան Նախագահ Վսեմ. Պօղոս Փաշա Նուպարի հետեւեալ նամակը, զոր ստացած էր նիստին բացման պահուն իսկ.

Ճարիզ,20 Յունիս 1920
Վսեմափայլ
Գաբրիէլ Նորատունկեանին
Նախագահ Ազգ. Համագումարին.

Տիար Նախագահ,

Երախտապարտ պիտի մնամ Ձեզի, եթէ բարեհաճիք այս նամակը հաղորդել Համագումարին, իւր վաղուան նիստին սկսած միջոցին, որովհետեւ կ'իմանամ, թէ մերժած ըլլալով ընդունիլ հրաժարականս, մտադիր է ցրուիլ առանց ինձի յաջորդ մը ծանուցանելու, մինչդեռ ես, կատարեալ անկեղծութեամբ եւ խոնարհութեամբ՝ Ուրբաթի նիստին մէջ յայտարարած էի, թէ ֆիզիկապէս ի վիճակի չեմ այլեւս այսքան ծանր բեռ մը տանելու: Մնալով՝ պարտականութեանս հակառակ վարուած պիտի ըլլամ, եւ չպիտի կրնամ մեր ազգային դատին ի սպաս դնել այն ամբողջ գործունէութիւնն ու կորովը, որոնք անհրաժեշտ են իրեն: Ասիկա էր, որ պատիւը ունեցայ բացատրելու Համագումարին, երբ վստահութեան զգացմամբ մը, որու մասին իմ շնորհակալութիւնս յայտնեցի սրտանց, որ ինձմէ խնդրեց, որ ետ առնեմ հրաժարականս: Ինչպէս ըսած եմ արդէն, ո՛չ մէկ քուէ, որքան ալ բարեացական ըլլայ, չպիտի կրնայ վերահաստատել առողջութիւնս եւ ինծի վերադարձնել իմ ոյժերս:

Իր պնդումներուն վրայ, որոնց պատճառ ցոյց կու տար Պատուիրակութեան գլուխը իմ անունս պահելու անհրաժեշտութիւնը, հաւանեցայ ատոր, լաւ մը ապացուցանելու համար իմ բարիկամեցողութիւնս եւ իմ անձնուիրութիւնս, ու միւս կողմէ՝ որպէսզի իմ քաշուելուս նկատմամբ ցոյց չտան այն տեսակ պատճառներ, որոնց չպիտի ուզէի, որ վերագրեն, բայց ատոր հաւանեցայ այն պայմանաւ, որ բոլորովին պատուակալ պիտի ըլլար իմ մասնակցութիւնս եւ թէ Պատուիրակութեան գործօն նախագահութիւնը պիտի ստանձնէիք Դուք, որ ազգին մէջ ունեցած Ձեր դիրքով եւ ձեր քաղաքական ասպարէզով բոլորովին յարմար անձն էք այդ տեսակ պաշտօնի մը համար:

Խորապէս կը ցաւիմ, որ ընդունելու պատրաստ չզգացիք ինքզինքնիդ, եւ այսօր կ'իմանամ, որ Համագումարը կը կարծէ, թէ հրաժարականս ընդունելու իւր մերժումը պէտք է բաւէ իրերը իրենց արդի կացութեան մէջ ձգելու համար, եւ թէ մօտ օրէն պիտի ցրուի՝ պարզապէս նախկին Պատուիրակութեան մէկ կամ երկու անդամ աւելցնելէ ետք:

Կը պաղատիմ Համագումարին, որ չյանգի այս լուծման, որ լուծում մը չէ ինքնին, եւ որ ինծի պիտի թողու ամբողջ պատասխանատուութիւնը աշխատութեան մը, զոր ոյժերս, կը կրկնեմ վերջին անգամ ըլլալով, չեն թոյլատրեր կատարել:

Ինչպէս բացարձակ կերպով յայտնեցի նիստի պահուն իսկ, մէկդի թողլով անձի ամեն նկատում, միակ ելք մը միայն կը տեսնեմ. այսինքն թէ՝ Դուք ստանձնէք նախագահութիւնը նոր Պատուիրակութեան մը, զոր Համագումարը, տարակոյս չունիմ, թէ պիտի կարենայ ընտրել, իմ կողմէս ես ալ տրամադիր ըլլալով իմ անունս տալու պատուակալ կերպով, եթէ երբեք, ինչպէս բարեացակամութիւնը ունեցաք յայտարարելու, օգտակար դատէք ատիկա:

Կը յուսամ, ուրեմն, որ Համագումարը ցրուելէ առաջ պիտի բարեհաճի ընդունիլ առաջարկութիւնս եւ անուանել նոր Պատուիրակութիւն մը: Թող ներուի ինծի աւելցնել, թէ Համագումարը, լոկ ինք ունենալով այս տեսակ որոշում մը տալու իրաւունքը, ծանր պատասխանատուութիւն մը պիտի ստանձնէ եթէ չտայ այդ որոշումը:

Կոչում կ'ընեմ իւր հայրենասիրութեան, եւ անգամ մըն ալ իրեն յայտնելով իմ ամբողջ երախտագիտութիւնս այն վստահութեան համար, զոր այնքան սրտագորով կերպով մը քանիցս կը յայտնէ իմ մասին, կը խնդրեմ, որ ընդունիք, Տիար Նախագահ, իմ ամէնաանձնուէր զգացմանքս նոր հաւաստիքը:

Պօղոս Նուպար

Նամակին ընթերցումէն վերջ Տիար Գ. Սինապեան յայտնեց, թէ Փաշան նոյն առտուն իրեն տեղեկութիւն տուած էր այդ նամակին նկատմամբ եւ խնդրած էր, որ Համագումարը այսօր իսկ լուծէ այս հարցը: Տիար Սինապեան յարեց, որ եթէ նոյնիսկ Համագումարը Պատուիրակութեան աւելցնել ուզէր անոր գործունէութիւնը քննադատողներէն մէկն ալ, Փաշան պիտի ընդունէր, պայմանաւ, որ Նորատունկեան էֆենտի հաւանէր անդամակցիլ Պատուիրակութեան:

Վսեմ. Տիար Գաբրիէլ Նորատունկեան կրկնեց այն պատճառները, զորս քանիցս յայտնած էր արդէն, եւ որոնք անհնար կը դարձնէին իր պաշտօնապէս մասնակցութիւնը Պատուիրակութեան: Ն. Վսեմութիւնը այս անգամ աւելի խոր մտաւ այդ պատճառներուն, բացատրեց թէ ինչո՞ւ Պատուիրակութենէն դուրս մնալով պիտի կրնայ աւելի դրական, հետեւաբար նաեւ՝ աւելի օգտակար աջակցութիւն մը բերել Պատուիրակութեան եւ ազգային դատին: Բացի այդ նկատումներէն, Ն. Վսեմութիւնը դարձեալ ըսաւ, թէ պիտի ստիպուի բացակայիլ մօտ ատենէն, բայց Եւրոպայի մէջ ըլլալով, ամեն անգամ, որ Պատուիրակութիւնը պէտք տեսնէ իւր աշխատակցութեան, պիտի կրնայ գալ, ինչպէս արդէն ըրած է անցեալին մէջ: «Իմ մերժումս, յարեց Ն. Վսեմութիւնը,-աջակցութեան, օժանդակութեան մերժում մը չէ: Այստեղ գտնուիմ, թէ այլուր, միշտ պարտաւոր եմ ստանձնելու ամեն աշխատութիւն, որ կը ձգտի մեր դատին փրկութեան»:

Ամեն. Դուրեան Արքեպիսկոպոս, յանուն ամբողջ Համագումարին, անգամ մըն ալ կոչում ըրաւ Ն. Վսեմութեան, որպէսզի ի բաց թողու իւր հաւանութեան արգելք դարձող նկատումներն, որքան ալ յարգելի ըլլան անոնք, եւ յիշեցուց այս առթիւ, թէ Վսեմ. Նորատունկեան էֆենտի իր ամբողջ կեանքին ընթացքին գործած է միշտ անձնական պատասխանատուութեամբ, թէ՛ ազգ. հարցերու մէջ եւ թէ՛ այն պետական բարձր պաշտօններուն մէջ, որոնք վստահուած են իր մեծ ձեռնհասութեան եւ հմտութեան: Եթէ այս խնդիրը չլուծուի, յարեց Ն. Ամենապատուութիւնը,

Պատուիրակութիւնը պիտի քայքայուի, եւ ասիկա շատ գէշ տպաւորութիւն մը առաջ պիտի բերէ ամբողջ ազգին մէջ եւ շատ ալ ծանրակշիռ հետեւանքներ պիտի ունենայ: Ազգը մեծ յոյսեր դրած էր Պատուիրակութեան վրայ: Պատուիրակութեան քայքայումը այս պայմաններուն մէջ՝ տեսակ մը անպատիւ վերջաւորութիւն է, եւ նոյնքան անպատիւ կերպով մը քանդումը՝ ազգին սնուցած յոյսերուն: Այլեւս հայրենասիրութեան խնդիր չէ ասիկա, այլ՝ պատուոյ խնդիր: Այսօր՝ ազգին պատիւը փրկելու պիտի աշխատինք եւ ասիկա կարծեմ մեծագոյն հայրենասիրութիւնն է: Ով որ կրնայ իր աշխատութեան բաժինը բերել այս փրկութեան գործին, պէտք է ի բաց թողու ուրիշ ամեն նկատում, որքան ալ հարկեցուցիչ ըլլան: Ն. Ամենապատուութիւնը յոյս յայտնեց, թէ այս տեսակէտը ինքնին պիտի բաւէ համոզելու Վսեմ. Նորատունկեան էֆենտին, որուն անդամակցութիւնը ո՛չ միայն շատ կենսական ու անհրաժեշտ ոյժ մը պիտի աւելցնէ Պատուիրակութեան, այլ նաեւ պիտի կազդուրէ Փաշան՝ որպէսզի նոր կորովով մը փարի իր գործին:

Տիար Բրօֆ. Թումայեան համիմաստ բաղձանք մը յայտնեց, աւելցնելով, թէ Համագումարի նախագահութիւնը աւելի անձնական պատասխանատուութիւն կ'ենթադրէ, քան Պատուիրակութեան անդամակցութիւնը, քանի որ Պատուիրակութիւնը բղխած է Համագումարէն:

Տիար Տէր-Ստեփանեան. Մեր Նախագահին տուած բացատրութիւնները իւր մերժման մասին՝ շատ յարգելի էին եւ կրնան Ժողովին վրայ տպաւորութիւն գործել: Կը հաւատամ, որ Պատուիրակութենէն դուրս մնալով՝ որոշ խնդրի մը մէջ կարենայ աւելի օգտակարապէս աշխատակցիլ: Սակայն, Պատուիրակութիւնը ուրիշ կարեւոր գործեր ունի կատարելիք, որոնց համար իր ուղղակի մասնակցութիւնը աւելի օգտակար կրնայ դառնալ անշուշտ: Միւս կողմէ, այսօր այն տեսակ կացութեան մը դէմ կը գտնուինք, որ ստիպուած ենք ընդունիլ նուազագոյն վնաս բերող կարգադրութիւնը: Նորատունկեան էֆէնտիի՝ Պատուիրակութեան մէջ մտնելը ո՛չ միայն ինքիրմով մեծ կարեւորութիւն ունի, այլ՝ եթէ այդ պաշտօնը չընդունի, Պատուիրակութիւնը կրնայ քանդուիլ եւ ասիկա մեծագոյն վնաս մը պիտի պատճառէ: Կը յուսամ, հետեւաբար, որ Ն. Վսեմութիւնը տեղի պէտք է տայ Համագումարի միահամուռ բաղձանքին առջեւ, որ անշուշտ ազգին ալ միահամուռ բաղձանքն է:

Տիար Թէրզիպաշեան. Անցեալ օր Տիար Տէօվլէթեանի ոտանաւորէն փղձկող իր սիրտը կը յուսանք, որ այս գերագոյն որպէին ալ պիտի բաբախէ հայրենիքին համար:

Վսեմ. Տիար Գաբրիէլ Նորատունկեան շնորհակալութիւն յայտնելով իր մասին եղած գնահատութեանց նկատմամբ, աւելցուց, թէ իւր որոշումը բացարձակ համոզման մը արդիւնքն է:

Համագումարը վերստին պնդեց իր տեսակէտին վրայ: Ն. Վսեմութիւնը ի վերջոյ միջոց խնդրեց խորհելու եւ առաջարկեց օրակարգի անցնիլ:

Ամեն. Դուրեան Արքեպիսկոպոս. Ձեր ամբողջ կեանքը աչքի առջեւ բերէք եւ պատասխանը անկէ կ'առնէք:

Տիար Թէրզիպաշեան. Որովհետեւ մանաւանդ դժուար պիտի ըլլայ ուրիշ ոեւէ ձեւով լուծում մը տալ այս խնդրին, որ այսքան ճգնաժամային որպէի մը՝ կը կաշկանդէ ազգային ճակատագրով զբաղելու կոչուած անձնաւորութիւնները, կը յուսամ ես ալ, որ յաջորդ նիստին նպաստաւոր պատասխան մը ստանալու բախտաւորութեան կ'արժանացնէք մեզ:

Ամեն. Դուրեան Արքեպիսկոպոս. Եւ մենք ամէնքս կը բաժնենք այդ յոյսը:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Ներեցէ՛ք, որ դիտել տամ, թէ կարծիքի հիմնական տարբերութիւններ կան Ձեր եւ իմ միջեւ այս մասին:

Օրակարգ

1. Վերակազմութիւն Ազգ. Պատուիրակութեան

Համագումարը նոր Տիրէքթիւներու խնդրին անցնելով, այդ մասին կազմուած մասնաւոր յանձնաժողովին տեղեկաբեր Տիար Տէր-Ստեփանեան կարդաց Յանձնաժողովին եզրակացութիւնները պարունակող հետեւեալ տեղեկագիրը.

Տեղեկագիր նոր Տիրէքթիւներու Սահմանման Յանձնաժողովին.

Արտաքին քաղաքականութիւն

1. Տեւողութիւն. Ազգ. Պատուիրակութեան տեւողութեան մասին Յանձնաժողովին մէջ յայտնուեցան հետեւեալ կարծիքները.

Տիարք Թէրզիպաշեան եւ Տէր-Ստեփանեան կը կարծեն, որ Պատուիրակութեան տեւողութեան խնդիրը որոշելու ատեն պէտք է նկատի ունենալ երկու գլխաւոր կարելիութիւն. 1. Դաշնագիրը նուազագոյն գոհացում կու տայ արեւմտահայերուն՝ Տաճկահայաստանի կարեւոր մէկ մասին միացումով Հանրապետութեան, 2. Դաշնագիրը ոտնակոխ կ'ընէ տաճկահայ դատը, Տաճկահայաստանէն ոչինչ կամ անկարեւոր մաս մը միայն միացնելով Հանրապետութեան: Առաջին պարագային, Պատուիրակութիւնը վերջ կը գտնէ, այսուհետ գործունէութեան համար, դաշնագրին ստորագրութեամբ: Երկրորդ պարագային, Պատուիրակութիւնը կը շարունակէ իր գործը եւ, միեւնոյն ատեն, կը հրաւիրէ նոր Արեւմտահայ Համագումար մը, որուն միայն կը մնայ որոշումներ առնել ապագայի մասին:

Բ. Տիար Չօպանեան կը կարծէ, որ Ազգ. Պատուիրակութիւնը վերջ պէտք է գտնէ դաշնագրին ստորագրութեամբ: Համագումարը իր այս որոշումը կը հաղորդէ Ազգ. ժողովին՝ անոր թողլով ուեւէ որոշում ապագայի մասին:

Գ. Տիար Սինապեան կը կարծէ, որ Ազգ. Պատուիրակութիւնը վերջ պէտք է գտնէ դաշնագրին ստորագրութեամբ: Համագումարը իր այս որոշումը կը հաղորդէ իր մէջ ներկայացուցիչ ունեցող մարմիններուն, անոնց թողլով ուեւէ որոշում ապագայի մասին:

Դ. Տիար Բարսեղեան կը կարծէ, որ Ազգ. Պատուիրակութիւնը պարզապէս վերջ պէտք է գտնէ դաշնագրի ստորագրութեամբ, առանց ուեւէ նախաձեռնութիւն առնելու ապագային համար:

2. Դաշնագրի ստորագրութիւն. Յանձնաժողովը կը կարծէ, որ Ազգ. Պատուիրակութեան համար ստորագրութեան հարց չկայ եւ չի կրնար ծագիլ: Պ. Տէր-Ստեփանեան չի բաժնէր այս կարծիքը եւ կ'առաջարկէ, որ նախատեսուին զանազան կարելիութեան եւ ըստ այնմ ստորագրելու կամ չստորագրելու հրահանգ տրուի: Գալով Ազգ. Պատուիրակութեան Նախագահին՝ Հանրապետութեան կառավարութեան կողմէ ստորագրելու խնդրին, Յանձնաժողովը կը կարծէ, որ այդ Պօղոս Նուպար Փաշայի գործն է: Պ. Թէրզիպաշեան կը կարծէ, որ ստորագրութեան հարց պէտք չէ ըլլայ ուղեգծին մէջ:

3. Դաշնագիր. Յանձնաժողովը կը կարծէ, որ դաշնագրի սրբագրութեան համար կազմուած յանձնաժողովին կողմէ Համագումարին բերուած եւ անկէ վաւերացուած յիշատակագրին տրամադրութիւնները պէտք է նկատուին ուղեգրի մաս:

4. Կիլիկիա. Յանձնաժողովը կը կարծէ, որ Պատուիրակութիւնը պէտք է հետապնդէ, օգտագործելով ամեն միջոց եւ ամեն նոր կարելիութիւն, ինքնավար ռեժիմ մը Կիլիկիոյ եւ Խարբերդի հայկական շրջաններուն համար:

5. Վնասուց հատուցում. Յանձնաժողովը կը կարծէ, որ Պատուիրակութիւնը պէտք է հետապնդէ ամեն միջոցով, մասնաւորապէս զօրաւոր բրոբականտ մղելով, վնասուց հատուցման գործը, հիմնուելով մեր բարոյական իրաւունքին վրայ հանդէպ Թուրքիոյ, Գերմանիոյ եւ Դաշնակիցներուն:

6. Mandat.- Յ.-ը կը կարծէ, որ Պատուիրակութիւնը պէտք է շարունակէ, mandataire պետութիւն մը գտնելու իր ցայդ ըրած քաղաքականութիւնը, ջանալով որ mandat -ն Հայաստանի անկախութեանը վտանգելու բնոյթ չունենայ:

7. Թուրքերու հետ համաձայնութեան հարց. Յանձնաժողովը կը կարծէ, որ Պատուիրակութիւնը իրաւասութիւն պէտք է ունենայ ի հարկին, եւ եթէ կարելի ըլլայ, թուրքերու հետ համաձայնութեամբ ապահովել Տաճկահայաստանին գէթ մէկ մասին ազատագրումը:

8. Propagande.- Յանձնաժողովը կը կարծէ, որ Ազգ. Պատուիրակութիւնը պէտք է շարունակէ propagande-ի գործը նախապատուութիւն տալով հետեւեալ երկու միջոցներուն եւ ապա գործելով անոնցմէ առնուազն մէկը. 1. հրատարակել մեծ tirage-ով թերթ մը, շաբաթաթերթ կամ առ առաւելն կեսամսեայ, ուր ուժգին կերպով պաշտպանուին հայութեան շահերը եւ մասնաւորապէս անոր անկախութեան ու վնասուց հատուցման իրաւունքները: 2. Նոյն նպատակով յօդուածներ հրատարակել տալ անգլերէն եւ ֆրանսերէն առնուազն մէկ մէկ թերթերու մէջ՝ դրամական օժանդակութեան փոխարեն:

Ներքին քաղաքականութիւն

9. Միացեալ կառավարութիւն. Այս հարցի մասին Յանձնաժողովի մէջ յայտնուեցան հետեւեալ կարծիքները.

Ա. Պ. Պ. Թէրզիպաշեան եւ Տէր-Ստեփանեան կը կարծեն, որ Պատուիրակութիւնը պէտք է դիմէ Երեւանի կառավարութեան, առաջարկելով անոր միացումը կատարել դաշնագրին ստորագրութենէն անմիջապէս վերջ, եւ եթէ դաշնագիրը նուազագոյն գոհացում մը տայ արեւմտահայերուն, Պ. Խատիսեանի առաջարկներու հիման վրայ: Մերժումի պարագային Պատուիրակութիւնը պէտք է շուրջ 50 անդամէ բաղկացած Արեւմտահայ Համագումարի մը ընտրութիւն ձեռնարկէ, զայն գումարելով Երեւան եւ անոր յանձնելով միացման եւ ուրիշ արեւմտահայ հարցերը: Այդ Համագումարը կրնայ, համաձայնութեան պարագային, ինքզինք արեւմտահայ խորհրդարան նկատել եւ ձուլուելով Երեւանի խորհրդարանին հետ՝ կազմել Միացեալ խորհրդարան:

Բ. Պ. Սինապեան կը կարծէ, որ այս մասին Համագումարը ուեւէ որոշում չառնելով պէտք է միայն հաղորդէ դրութիւնը իւր մէն ներկայացուցիչ ունեցող ամեն մարմիններուն՝ անոնց թողելով ուեւէ որոշում:

Գ. Պ. Բարսեղեան կը կարծէ, որ Պատուիրակութիւնը պէտք է անմիջապէս առաջարկէ Երեւանի կառավարութեան միացումը գոյացնել Պ. Խատիսեանի նամակին՝ խորհրդարանի ու կառավարութեան վերաբերող մասերու հիման վրայ: Գալով Պատուիրակութիւններու հարցին, կը կարծէ, որ Համագումարը պէտք է ընտրէ չորս անձնաւորութիւնները, որոնցմէ երկուքը Երեւանի կառավարութեան կողմէ հանրապետութեան Պատուիրակութեան անդամ նշանակուին, ու այդպէսով կազմուի միացեալ Պատուիրակութիւնը:

Կամաւորական բանակ. Յանձնաժողովը կը կարծէ, որ Պատուիրակութիւնը պէտք է դիմէ Դաշնակից կառավարութիւններուն կամ անոնցմէ միայն խնդրելով, որ իրեն օժանդակեն արեւմտահայ կամաւորական բանակ մը կազմելու՝ Տաճկահայաստանի գրաւման գործունէութեան համար: Բանակը կը հաւաքուի եւ կը մարզուի ուեւէ baze-ի մը մէջ, ու երբ պատրաստ ըլլայ՝ կը գործածուի ըստ հանրապետութեան գրաւման բանակի սպայակոյտի հրահանգներուն: Այս առաջարկին ամբողջութեամբ համաձայն չէ գտնուած Պ. Բարսեղեան:

Ամերիկահայ գաղութ. Պատուիրակութիւնը, կարելիօրէն Հանրապետութեան Պատուիրակութեան գործակցութեամբ, պէտք է ջանայ վերջ մը տալու Ամերիկայի հայ գաղութին եւ հոն ուղարկուած առաքելութիւններու միջեւ պառակտման,

վերականգնելով ամերիկահայ ազգային միութիւնը: Ներկայ առաջարկին այս ձեւով գրուելուն համաձայն չէ Պ. Բարսեղեան:

Տեղեկաբեր Ն. Տէր-Ստեփանեան

Տեղեկագրին ընթերցումին վերջ, Տիար Տէր-Ստեփանեան, յայտնելէ ետք, թէ Յանձնաժողովը բաւարար ժամանակ չունեցաւ ամեն խնդրով զբաղելու, իր անունով առաջարկ դրաւ նաեւ, որ Կիլիկիոյ Բժշկական Առաքելութեան գործէն ձեռնթափ ըլլայ Ազգ. Պատուիրակութիւնը, այդ գործը յանձնելով Պոլսոյ Պատրիարքարանին: Տիար Տէր-Ստեփանեան պահանջեց, որ Համագումարը արտայայտուի նաեւ այս մասին՝ տիրէքթիւներու քննութեան ընթացքին:

Տիար Ա.Չօպանեան. Արդէն Պատուիրակութիւնը որոշած էր այդպէս ընել:

Տիար Վահան Թէքէեան. Պահ մը առաջ Դուրեան Սրբազան ըսաւ, թէ Պատուիրակութեան՝ այս միջոցին քայքայումը անպատիւ բան մը պիտի ըլլայ: Ես պիտի ըսեմ, որ նոյնքան անպատիւ բան մը պիտի ըլլայ, եթէ Պատուիրակութիւնը դաշնագրին ստորագրութեան յաջորդ օրը, առանց ոեւ՛է կանխատեսութեան վերջ տայ իր գործունէութեան, ինչպէս այդպէս կ'առաջարկուի: Այստեղ նախատեսուեցաւ երկու պարագայ, մէկը այն՝ որ դաշնագիրը գոհացում կու տայ մեր պահանջներուն, եւ միւսը այն՝ որ դաշնագիրը բնաւ գոհացում չտար: Երկու պարագային ալ՝ Պատուիրակութեան համար տակաւին գործ կայ կատարելիք, եթէ կ'ուզենք, որ իրեն վստահուած շահերը չվտանգուին: Եթէ դաշնագրով նուազագոյն գոհացում մը գտան մեր պահանջները, եւ այդ նուազագոյն չափն ալ կարելի է այժմէն ճշդել Համագումարին մէջ, պէտք է ձեռնարկուի Երեւանի հետ: Ո՞վ պիտի կատարէ այդ միացումը: Բնականաբար՝ այն մարմինը, որ մինչեւ հիմա տաճկահայոց անունով գործած է: Եւ այդ բանը չի կրնար անշուշտ մէկ օրուան մէջ իրականացնել որպէսզի դաշնագրին ստորագրութեան օրն իսկ յանկարծ վերջ տար իր գործունէութեան: Իսկ այն պարագային, որ դաշնագիրը կրնար գոհացում չտայ մեզի, Պատուիրակութիւնը դարձեալ բան մը ունի ընելիք, այն է՝ գումարել տաճկահայերու ներկայացուցչական ժողով մը եւ առիթ տալ անոր, որպէսզի անկէ վերջ ազգին հետեւելիք ուղղութիւնը գծէ:

Քանի որ Համագումարը նոր տիրէքթիւներ կու տայ նոր Պատուիրակութեան, ասիկա ինքնին կը նշանակէ, թէ Պատուիրակութեան համար գործունէութեան որոշ ժամանակ մը կը նախատեսէ, որ չի վերջանար դաշնագրին ստորագրութեան հետ: Այդ օրը՝ որոնք ալ որ ըլլան Պատուիրակութեան անդամները, եթէ ամենադոյզն հայրենասիրութիւն մը ունենան, պէտք չէ, որ մէկ վայրկեանէն միւսը յանկարծ լքեն իրենց գործը: Եթէ ասոր հակառակողները չեն ուզեր, որ այդ անխուսափելի գործունէութեան շրջանին Ազգ. Պատուիրակութիւնը իրենց ուզածէն աւելի բան մը չընէ, թող իրենք փութան որոշ կերպով սահմանելու թէ ի՛նչ պէտք է ընէ: Որովհետեւ գործունէութեան այդ շրջանը անհրաժեշտ է: Օրինակի համար՝ մանդաթէրի խնդիր մը կայ, որուն կապուած է մեր դատն այսօր: Թրքահայերը՝ որոնք այսքան տարի կը տառապին, կը չարչարուին, որոնք այնքան ահաւոր զոհողութեանց ենթարկուեցան, պէտք է, որ իրենց ձայնը ունենան այդ խնդրին մէջ: Ես, իբր թրքահայ, համամիտ եւչեմ անոնց, որոնք կ'ըսեն թէ Հանր. կառավարութիւնը միայն իրաւունք ունի այս խնդրով զբաղելու: Ինչպէ՞ս կրնաք այդ խնդիրը վստահիլ մարդու մը կամ մարդերու, որոնք մեզի չափ ծանօթ չեն մեր վիճակին, եւ որոնք պատասխանատուութիւն մը ունին մեր այսօրուան դրութեան մէջ, պատասխանատուութիւն մը, որ անպատճառ պիտի փնտրուի ապագային:

Տիար Ա. Բարսեղեան. Յանձնաժողովին երկու անդամները որոնք կը փափաքին Ազգ. Պատուիրակութեան գոյութիւնը մշտնջենաւորելու եւ նոր Համագումար մը ընտրելու իրաւասութիւն տալ անոր, կը նախատեսեն երկու պարագայ, որոնց վրայ կը հիմնեն իրենց պատճառաբանութիւնները: Առաջին՝ երբ դաշնագիրը բաւարար չափով գոհացում չտայ մեզի, երկրորդ՝ երբ բնաւ գոհացում

չտայ: Իմ կարծիքովս՝ ո՛չ Յանձնաժողովը, ո՛չ ալ այս ժողովը իրաւասութիւն ունին այդ տեսակ հաւանականութիւններէ մը ետքը ազգին բռնելիք ուղղութեան մասին որոշում տալու: Նոյն իրաւասութիւնը չունի նաեւ Ազգ. Պատուիրակութիւնը, քանի որ անիկա կազմուած է արտաքին յարաբերութեանց համար, որոնք ամբողջովին վերջ կը գտնեն դաշնագրին ստորագրութեամբ: Թրքահայաստանի ոեւէ հողամաս Հանրապետութեանը չկցելու պարագային նոր Համագումար մը ընտրելու իրաւունքը կը պատկանի թրքահայ ժողովուրդին: Եւ մինչեւ որ կեանքը ցոյց չտայ, թէ նոր պայմանները ի՞նչ են, թրքահայ ժողովուրդը չի կրնար այդ տեսակ որոշում մը տալ: Պէտք է ենթադրել առնուազն տարի մը պէտք պիտի ըլլայ մինչեւ այդ նոր պայմաններուն յայտնութիւնը: Ուրեմն, մինչեւ այդ ատե՞ն պիտի տեւէր Պատուիրակութիւնը: Հետեւաբար, համամիտ չեմ այս առաջարկին: Եւ արդէն՝ եթէ այդ առաջարկը ընդունուի, նոր ներքին վէճերու դուռն պիտի բացուի ազգին մէջ:

Տիար Ա. Չօպանեան. Իմ տեսակէտս այս մասին՝ քանիցս յայտնեցի եւ չեմ փոխած: Պատուիրակութիւնը կրնայ, իրաւունք ունի, եւ պէտք է մնայ մինչեւ դաշնագրին ստորագրութիւնը: Անշուշտ ասիկա չի նշանակեր, թէ ստորագրութեան օրն իսկ պիտի քաշուի: Սկսուած խնդիրներ կրնան ըլլալ, զորս պէտք է վերջացնել, եւ ինք միայն կրնայ ընել ատիկա: Պատուիրակութիւնը ստեղծուած է վեհաժողովի մը մօտ աշխատելու համար, ինչպէս ժամանակին Պատուիրակութիւն մը աշխատեցաւ Բեռլինի Վեհաժողովին մօտ, ինչպէս ուրիշ Պատուիրակութիւն մը աշխատեցաւ Պալքանեան պատերազմէն ետք: Այդ վեհաժողովին լրանալով՝ կը լրանայ նաեւ Պատուիրակութեան գործը, բայց Պատուիրակութիւնը չի կրնար ի հարկէ մէկ վայրկեանէն միւսը անհետանալ, առանց որ իր գործը չվերադարձնէ եւ իր հաշուետուութիւնը ընէ [հանդէպ] գերագոյն ներկայացուցչութեան, այսինքն՝ ներկայ պարագային՝ Պոլսոյ Պատրիարքարանին եւ անոր աջակից Համազգային Խորհուրդին: Այս գերագոյն ներկայացուցչութիւնը անկէ վերջ կը խորհի, թէ ի՞նչ պէտք է ընել, պէ՞տք է նոր Համագումար հրաւիրել եւ թէ ոչ՝ պիտի ստանձնէ՞ այդ Համագումարին կազմութեան նախաձեռնութիւնը, նո՞ր պատուիրակութիւն մը, թէ այն Պատուիրակութիւնը, որ իր գործը լրացուց:

Դիտողութիւն պիտի ընեմ նաեւ ուրիշ կէտի մը մասին: Կ'ըսեն թէ բնաւ արդիւնք մը չունեցանք, թէ Դաշնագրին մէջ ոչինչ կայ մեզ գոհացնող: Ասիկա սխալ է:

Տիար Տէր-Ստեփանեան. Տաճկահայաստան չունեցանք:

Տիար Չօպանեան. Ինչպէ՞ս կրնանք ըսել, որ բնաւ արդիւնք չունեցանք: Արդեօք հայկական անկախ պետութեան մը կազմութիւնը արժէք չունի՞ ինքնին: Ընդհակառակը, ես կը կարծեմ, որ նոյնիսկ այն դժբախտ պարագային, որ անկարելի ըլլայ թիզ մը հող անգամ միացնել Հանրապետութեան, մենք իրաւունք չունինք ըսելու, թէ բան մըն ալ ձեռք չբերուեցաւ, քանի որ հայկական անկախ պետութիւն մը հիմնուեցաւ:

Տիար Զ. Պզտիկեան. Կ'ուզէի գիտնալ, թէ արդեօք Պատուիրակութիւնը ե՞րբ բաւարար պիտի նկատէ մեզի տրուած գոհացումները, որպէսզի կարենայ ստորագրել դաշնագիրը: Միւս կողմէ՝ քանի որ Կիլիկիան դուրս կը մնայ Հայաստանէն, պիտի կրնա՞նք ինքզինքնիս գոհացած նկատել որպէսզի Պատուիրակութիւնները կարենան ստորագրել դաշնագիրը: Եւ եթէ Պատուիրակութիւնները ստորագրեն՝ Կիլիկիոյ ժողովուրդը պիտի ընդունի՞ ատիկա:

Ամեն. Դուրեան Արքեպիսկոպոս. Կիլիկիոյ հարցը վճռած է արդէն դաշնագիրը, քանի որ իրաւարարութեան ենթարկուած հողամասերուն մէջ Կիլիկիոյ խօսքը չկայ:

Տիար Զ. Պզտիկեան. Պատուիրակութիւնը պէտք է անանկ ձեւ մը գտնէ, որ Կիլիկիոյ խնդիրը ուրացած չըլլայ: Եթէ դաշնագիրը ընդունինք՝ ընդունած պիտի ըլլանք նաեւ Կիլիկիոյ բաժանումը ինչպէս նաեւ Կիլիկիոյ մեծագոյն մասին թուրք տիրապետութեան վերադարձուիլը: Ասիկա շատ ծանր պատասխանատուութիւն մըն է,

եւ կը կարծեմ, թէ Ազգ. Պատուիրակութիւնը չի կրնար այս պայմաններուն մէջ ստորագրել դաշնագիրը:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Ազգ. Պատուիրակութիւնը չէ որ պիտի ստորագրէ դաշնագիրը, այլ՝ Հանրապետութեան ներկայացուցիչը: Եթէ նոյնիսկ մեր Պատուիրակութեան մէկ անդամն ալ մասնակցի ստորագրութեան, պիտի կարենայ ստորագրել հանրապետութեան կառավարութեան լիազօրութեան թուղթով եւ անունով եւ ո՛չ թէ իբր ներկայացուցիչ Թուրքիոյ հայոց, որոնք լիազօրութեան թուղթ չեն կրնար տալ, այդ տեսակ իրաւունք մը լոկ պետութիւններու պատկանելուն:

Տիար Զ. Պզտիկեան. Երբ որ Հանրապետութեան ներկայացուցիչը դաշնագիրն ստորագրէ, ատիկա պիտի նշանակէ, թէ վիհը կը դադրի հայոց եւ թուրքերու միջեւ, մինչդեռ իրականին մէջ՝ վէճը դադրած պիտի ըլլայ միմիայն Հայկ. Հանրապետութեան եւ թուրքերու միջեւ, իսկ Հանրապետութենէն դուրս մնացող հայերուն եւ թուրքերուն մէջ՝ վէճը միշտ պիտի մնայ: Պէտք է հիմակուընէ ճշդենք, թէ ի՞նչ հանգամանքներու մէջ Հանրապետութեան ներկայացուցիչը պէտք է ստորագրէ եւ ի՞նչ հանգամանքներու մէջ պէտք չէ ստորագրէ: Որովհետեւ կրնան գոյութիւն ունենալ այն տեսակ հանգամանքներ, որոնց մէջ դաշնագրին ստորագրութիւնը մեզի համար աւելի վնասակար կ'ըլլայ, քան օգտակար: Կը խնդրեմ, որ նկատի առնուի այս պարագան:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Որքան ալ փափաքելի ըլլայ, որ Հանրապետութեան ներկայացուցիչը այս կամ այն պայմանով միայն ստորագրէ դաշնագիրը, պէտք է խորհինք, որ այդ մասին բոլորովին հիմնական անկարելիութիւն մը կայ: Հայկական պետութիւնը առաջին անգամն է, որ կը ճանչցուի: Նախապէս գոյութիւն ունեցող պետութիւն մը չէր, որ իր պահանջմանց գոհացում չտրուած պարագային կարենար մերժել դաշնագրին ստորագրութիւնը, ինչպէս ըրաւ Ռումանիա, առանց ատոր համար իր անկախ պետութեան հանգամանքէն զրկուելու: Մենք չենք կրնար ըսել Հանրապետութեան, որ դաշնագիրը չստորագրէ, որովհետեւ այդ ստորագրութիւնը պիտի ըլլայ՝ իր անկախ պետութեան հանգամանքին անդրանիկ հաստատութիւնը: Մեր ուզածն է, որ տղայ մը ծնի, եւ պէտք է աշխատինք այդ տղան լաւ մեծցնելու, բարգաւաճ վիճակի մը հասցնելու: Առաջին օրէն չենք կրնար ըսել, որ տղան վտիտ է եւ զայն Մովսէսի պէս ջուրը ձգել: Հետեւաբար՝ դաշնագրին ո՛եւէ ձեւով ստորագրութիւնը անհրաժեշտ է:

Տիար Տէր-Ստեփանեան. Պէտք կը զգամ բացատրելու, թէ ինչո՞ւ դաշնագիրն մեզի նուազագոյն գոհացում մը չտալու պարագային՝ անոր հետեւող նոր գործունէութիւն մը նախատեսած ենք: Անոնք, որ կը կարծեն, թէ դաշնագրի ստորագրութենէն վերջ, նոյնիսկ եթէ անոր մէջ բոլորովին անտեսուած ըլլայ, տաճկահայ դատը, Ազգ. Պատուիրակութիւնը ո՛չ միայն պէտք է դադրի, այլ եւ ոեւէ նախաձեռնութիւն ալ պէտք չէ առնէ, կը մոռնան, որ տաճկական դաշնագիրն ալ, ինչպէս իւր նախորդները, ուրիշ ոչինչ պիտի ըլլայ, եթէ ոչ թուղթի կտոր մը, որ այն չափով միայն իրական արժէք պիտի ունենայ, որչափով որ գործադրուի: Մնաց որ այս տեսակէտը պիտի հենց աչքի առջեւ ունենալ նոյն իսկ այն պարագային, երբ դաշնագիրը մեզի գոհացում տուած ըլլար: Անոնք կը մոռնան աւելի կարեւոր բան մը. մեր հարցին նկատմամբ ամէնէն աւելի հետաքրքրութիւն ցոյց տուող եւ անոր այսօրուան դրութեան մէջ մեծագոյն պատասխանատուութիւն ունեցող պետութիւնը Ամերիկան, ոեւէ կերպով գործակցած չպիտի ըլլայ, տաճկահայ դատի վիժման պարագային, այդ դաշնագրին կազմութեան: Հետեւաբար, իր խօսքը պիտի ունենայ ըսելիք՝ ապագային: Եւ այդ խօսքը՝ անիկա պիտի կարենայ ըսել միայն նախագահական ընտրութիւններէն վերջը, որով պիտի յայտնուի ամերիկեան ժողովուրդին կամքը: Պարզ է, ուրեմն, որ այն շրջանին, երբ մեծագոյն Դաշնակից պետութիւնը իւր դիրքը պիտի որոշէ, եթէ տաճկահայ դատը վիժած ըլլայ դաշնագրին մէջ, տաճկահայոց ներկայացուցչութիւնը ո՛չ միայն պէտք չէ լուծուի, այլ՝ իմ

կարծիքովս, պէտք է փոխադրուի Ամերիկա եւ հոն հաւաքէ նոր Արեւմտահայ Համագումարը:

Տիար Թէրզիպաշեան ալ շեշտեց հաշտութեան ստորագրութենէն վերջ Պատուիրակութեան տակաւին իր գործը շարունակելու անհրաժեշտութիւնը, ըսելով որ Ազգ. Պատուիրակութիւնը մեր դատին հետապնդութեան համար կազմուած մարմին մը չէ, այլ, տրուած ըլլալով, որ Հայկական Հարցը հետապնդելու առթիւ ամբողջ հայ ժողովրդի ներկայացուցչական հանգամանքը ունի միայն Համագումարը, այս վերջինին կը պատկանի այդ հետապնդութեան գործը, որով՝ անոր մասին ոեւէ նախաձեռնութիւն պէտք է բղխի այն գործադիր մարմնէն, զոր Համագումարը ընտրած է, այսինքն՝ Ազգ. Պատուիրակութիւնը: Վիճաբանութեան գործնական արդիւնքն փութացնելու համար, Նախագահ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան առաջարկեց, որ Դիւանը բանաձեւ մը բերէ այս խնդրին նկատմամբ, երկու կողմին ալ առարկութիւնները նկատի առնելով: Համագումարը ընտրեց այս առաջարկը:

Նիստը փակուեցաւ ժամը 6-ին:

ՀԱԱ, ֆ. -430, ց. 1, գ. 66, թթ. 1-21: Բնագիր: Ձեռագիր:

Նիստ ԻԲ

24 Յունիս 1920, ժամը 4-ին,
նախագահութեամբ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեանի.

Ներկայ էին 15 պատգամաւոր՝
Ամեն. Եղիշէ Արքեպիսկոպոս Դուրեան, Տոքթ. Բարսեղեան, Դաւիթ-Բէկ, Թէրզիպաշեան, Թէքէեան, Թումայեան, Հանըմեան, Մսըրլը Պէյ, Վսեմ. Գ. Նորատունկեան, Չօպանեան, Պապաջանեան, Պզտիկեան, Սինապեան, Տէրպէտէրեան, Տէր-Ստեփանեան:

Օրակարգ

1. Վերակազմութիւն Ազգ. Պատուիրակութեան

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Ատենագրութիւն

Կարդացուեցաւ եւ վաւերացուեցաւ Յունիս 22-ի նիստին ատենագրութիւնը:

2. Ներկայութիւն Տիար Մ. Պապաջանեանի

Նիստին բացման պահուն Նախագահ Վսեմ. Տիար Գաբրիէլ Նորատունկեան շնորհակալութեամբ հաստատեց ներկայութիւնը Տիար Մ. Պապաջանեանի: «Շատ ուրախ եմ որ,-ըսաւ,-Տիար Պապաջանեանի պէս ազգին պարծանք բերող անձնաւորութիւն մը եւ մեր կարողագոյն ու արժանաւոր անդամներէն մէկը, Լոնտոնի մէջ ունեցած զբաղումները լքելով եկաւ մասնակցելու մեր աշխատութեանց, որոնց անշուշտ պիտի բերէ իւր իմաստուն խորհուրդներուն աջակցութիւնը»:

3. Նամակ Հապէշիսթանի հայ գաղութին պատգամաւոր Տիար Ռուբէն Որբերեանի

Կարդացուեցաւ Հապէշիսթանի հայ գաղութէն նախորդ տարի պատգամաւոր ընտրուած Տիար Ռուբէն Որբերեանի կողմէ Դիւանին ուղղուած հետեւեալ նամակը.

Փարիզ, 24 Յունիս 1920.

Վսեմաշուք Տիար Գաբրիէլ Նորատունկեան՝ Նախագահ Փարիզի երկրորդ Համագումարին

Ի. Ք.

Սիրելի Տէր,

Եթովպիոյ փոքրիկ, այլ շատ մը ուրիշներէ աւելի հայրենասէր ու մանաւանդ ազգասիրութիւնը ապացուցած գաղութին պատգամաւոր՝ թէ՛ հեռագրով եւ թէ՛ նամակով պատրաստակամութիւն յայտնած էի գալ մասնակցիլ առաջին Համագումարին, եւ սակայն, մեզի անծանօթ պատճառներով պատասխան չտրուեցաւ:

Ներկայիս կու գամ ո՛չ թէ վերստին արծարծել ընտրութեան մը կամ ընտրութեանց խնդիրներ, այլ պարզապէս խնդրել Ձեր Վսեմութիւնէն, որ բարեհաճիք հաղորդել Համագումարի պատ. անդամներուն, Եթովպիոյ հայ գաղութին հետեւեալ տեսութիւններն ու բաղձանքները:

Գաղութս խորապէս կը գնահատէ Ազգ. Պատուիրակութեան մեծանուն Նախագահ Պօղոս Նուպար Փաշայի գործունէութիւնը Հայ Դատին ի նպաստ, եւ իր հիացումը կը յայտնէ, խնդրելով միեւնոյն ատեն, որ ընդհանուր գծերով՝ Պատուիրակութեան կատարած գործերուն տեղեակ պահուին մերինին պէս հեռաւոր գաղութները:

Եթովպահայ գաղութը Հայաստանի Հանրապետութեան ճանաչումէն եւ վաւերացումէն վերջ՝ իր անվերապահ բաղձանքը կը ներկայացնէ, որ վերջ մը տրուի հայ Պատուիրակութիւններու երկուութեան, եւ ատկէ ծնունդ առած անհասկացողութիւններու ու մանաւանդ լրագրական պայքարներու, որ արձագանգ գտնելով մինչեւ հեռաւոր երկիրներ, հայութիւնը չորս հատուածներու կը բաժնեն, ժողովուրդը կը պառակտեն, ու կը վնասեն մեր նուիրական Դատին: Ներքին միութիւն եւ արտաքին թշնամիին դէմ մէկ ճակատ:

Մնամ ամէնախորին յարգանօք՝

Պատգամաւոր Եթովպիոյ հայոց

Ռ. Որբերեան

Նախագահ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան ըսաւ, որ թէեւ Տիար Որբերեան խնդիր չընէր իր ընտրութեան վաւերացման համար, որ տեղի չունեցաւ նախորդ տարի, բայց եթէ Համագումարը պիտի տեսնէ, կարելի է զինքը հրաւիրել յառաջիկայ նիստին՝ իբր պատգամաւոր Եթովպիոյ հայ գաղութին:

Տիար Վ. Թէքէեան. Անշուշտ թերութիւն մըն է՝ եթէ չէ պատասխանուեր նախորդ տարի: Բայց կարծեմ բուն պատճառը սա է, որ Հապէշիսթանի հայոց հրաւէր չէր ուղղուած Համագումարի համար, ու միւս կողմէ ալ Տիար Որբերեան ներկայ չէր Փարիզ, հեռուէն կատարած էր իւր դիմումը: Եթէ ներկայացած ըլլար, շատ հաւանաբար պիտի ընդունուէր, ինչպէս ընդունուեցան նոյն պայմաններուն մէջ գտնուող ուրիշ պատգամաւորներ: Հիմա որ Փարիզ է եւ կը յիշեցնէ մեզի իւր ընտրութիւնը, Համագումարը չի կրնար անշուշտ անտարբեր մնալ: Կ'առաջարկեմ, որ իբր յարգանքի արտայայտութիւն մը իր ներկայացուցած գաղութին նկատմամբ, Տիար Որբերեան հրաւիրուի Դիւանին կողմէ, մասնակցելու Համագումարի աշխատութեանց:

Համագումարը միաձայնութեամբ ընդունեց այս առաջարկը:

4. Նամակ Նախագահ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեանի առ Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար, Պատուիրակութեան հրաժարականի խնդրին նկատմամբ.

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Օրակարգին անցնելէ առաջ, քանի մը բառով տեղեկութիւն կու տամ այն թղթակցութեան մասին, որ փոխանակուեցաւ Պատուիրակութեան Վսեմ. Նախագահին եւ նուաստիս միջեւ, հրաժարականի ծանօթ խնդրին նկատմամբ: Ինչպէս յայտնի է Ժողովիդ, Ն. Վսեմութիւնը իր վերջին նամակով, որ կարդացուեցաւ այստեղ, կը ծանօթացնէր, թէ Պատուիրակութեան գործնական նախագահութիւնը կը թողու եւ դարձեալ պայման կը դնէր, որ ես ստանձնեմ այդ

գործը: Համագումարդ ալ վերստին համանման փափաք մը յայտնեց նախորդ նստին: Արդէն բազմիցս պարզած եմ այն պատճառները, որոնք կը ստիպէին զիս մերժել այս պատուաբեր առաջարկը: Նախորդ նիստին՝ աւելի խորը մտայ այդ պատճառներուն եւ Ժողովիդ պնդման վրայ խնդրեցի, որ միջոց տաք խորհելու: Իմ մերժումս բացարձակ համոզման մը արդիւնքն ըլլալով, կ'ուզէի միայն վերջին փորձ մը ընել Ն. Վսեմութեան մօտ, եւ այդ մտքով՝ Ժողովին փակումէն վերջ խնդրեցի մեր յարգելի անդամակից Տիար Սինապեանէ, որ անգամ մըն ալ տեսնէ Վսեմ. Փաշան եւ յայտնելով շնորհակալութիւններս իմ մասիս ունեցած համարման մասին, պարզէ այն պատճառներն, որոնք ինծի անկարելի կը դարձնեն Պատուիրակութեան ի պաշտօնէ մասնակցութիւնը: Խնդրեցի նաեւ Տիար Սինապեանէ, որ այդ առթիւ, յանուն Ժողովին, վերստին կոչում ընէ Ն. Վսեմութեան հայրենասիրութեան՝ որպէսզի այս վճռական րոպէին չլքէ այն ամէնակարեւոր եւ ամէնափափուկ գործը, զոր կը վարէր այսքան տարիէ ի վեր: Տիար Սինապեան երէկ յայտնեց ինծի, թէ Վսեմ. Փաշան նորէն պնդեց իր պահանջման վրայ, առարկելով որ մեր Դատին յաջողութեան համար աւելի օգտակար կը նկատէ իմ անդամակցութիւնս Պատուիրակութեան: Կը փափաքէի անձամբ տեսնել Ն. Վսեմութիւնը, բայց, դժբախտաբար կարելի չեղաւ, եւ այս առտու իրեն գրեցի հետեւեալ նամակը զոր Համագումարիդ հաղորդելն ինծի պարտք մը կը նկատեմ.

Փարիզ, 24 Յունիս 1920.

Վսեմափայլ Պօղոս Փաշա Նուպար, Նախագահ Ազգ. Պատուիրակութեան,

Ձերդ Նախագահ, Համագումարին նիստին հաղորդեցի Ձերդ Վսեմութեան ընթացիկ 20 թուակիր նամակս:

Կը փութամ ամեն բանէ առաջ շնորհակալութիւնս յայտնել Ձերդ Վսեմութեան, ինչպէս մեր բոլոր պաշտօնակիցներուն, իմ մասիս ցոյց տուած համարման հաւաստիքին համար, հաւաստիք, որ անհունապէս կը յուզէ զիս: Բայց ինչպէս յայտնի է Ձեզի, Տիար Նախագահ, խաղաղութեանց բանակցութեանց սկզբնաւորութեան ատենին իսկ որոշած էի մաս չկազմել Պատուիրակութեան, եւ արդի պարագաներուն մէջ չէ որ, մանաւանդ այս վայրկեանին, ուր Թուրքիոյ հետ խաղաղութեան դաշնագիրը կնքուելու վրայ է, եւ ուր համոզուած եմ, թէ իմ անպաշտօն աջակցութիւնս աւելի դրական կերպով օգտակար պիտի ըլլայ ձեզի, պիտի փոխէի որոշումս:

Մեր պաշտօնակիցը, Տիար Սինապեան, որմէ խնդրած էի այս մասին խօսիլ Ձեր Վսեմութեան հետ, երէկ յայտնեց ինծի, թէ կը պնդէք ձեր տեսակէտին վրայ՝ Պատուիրակութեան նախագահութեան խնդրին նկատմամբ: Ներեցէք ինծի ձեզի ըսել, թէ ըստ իս՝ Ազգ. Պատուիրակութիւնը գոյութեան իրաւունք չունի եւ չի՛ կրնար մնալ առանց ձեր գործնական նախագահութեան: Կ'աւելցնեմ, որ չեմ գիտեր, թէ ի՞նչ բան Ձեզ մղեց մտածելու, թէ Ձեր պատուակալ մասնակցութիւնը բաւական կը նկատեմ, ինչպէս կը յայտարարէք Ձեր վերոբերեալ նամակին մէջ: Երբեք այս իմաստով չեմ արտայայտուած, ինչպէս կրնան վկայել Համագումարի բոլոր անդամներն ալ:

Այս պարագաներուն մէջ՝ Ձեր Վսեմութեան կը մնայ մեզի տեղեկացնել, որ կ'ուզէ՞ տանիլ իր արդի աշխատութիւնները, թէ՞ կը փափաքի որ նոր ընտրութեան մը ձեռնարկուի:

Համագումարը այսօր կէսօրէ վերջ ժամը 4-ին նիստ պիտի գումարէ, եւ երջանիկ պիտի ըլլամ, եթէ անձամբ գալով, փափաքուած լուծումը տաք այսօր իսկ, որովհետեւ պատգամաւորները հետզհետէ կը մեկնին եւ մեր վերջին նիստին հազիւ կարելի եղաւ գոյացնել համեմատական մեծամասնութիւն մը:

Հաճեցէ՛ք ընդունիլ, Տիար Նախագահ, իմ ամէնաանձնուէր զգացմանս հաւաստիքը:

Գաբրիէլ Նորատունկեան:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Կը յուսամ, որ այս նամակին վրայ Ն. Վսեմութիւնը կը բարեհաճի անձամբ գալ այս նիստին, եւ իր ներկայութեան կը

մտածենք, թէ ի՞նչ ձեւով կրնանք ելլել այս կացութենէն: Ինք պէտք է խորհուրդ տայ մեզի եւ մեզ առաջնորդէ, վասնզի ազգին վստահութեան առարկայ դարձած անձնաւորութիւնը ինքն է: Միայն թէ, Ժողովէդ դարձեալ կը թախանձեմ, որ այդ առթիւ իմ անձիս շուրջ խնդիր չբլլայ:

Օրակարգ

1. Վերակազմութիւն Ազգ. Պատուիրակութեան

Համագումարին նախորդ նիստին որոշման համաձայն, Դիւանը բանաձեւ մը բերած էր՝ հաշտեցնելու համար այն տարակարծութիւնները, որոնք գոյութիւն առած էին՝ Տիրէքթիւներու Սահմանման Յանձնաժողովին բերած առաջարկութեանց առաջինին նկատմամբ, որ կը պատկանէր Պատուիրակութեան տեւողութեան խնդրին, եւ որու մասին Յանձնաժողովին կողմէ ալ չորս տարբեր կարծիքներ յայտնուած էին:

Դիւանի բանաձեւին ընթերցումէն առաջ խօսք առաւ

Տիար Վահան Թէքէեան. Այն վայրկեանին, երբ չէինք գիտեր, թէ ի՞նչ պիտի ըլլայ Պատուիրակութիւնը, քանի որ այդ մասին ամեն բան Փաշային կամքէն կախում ունի, ի՞նչ պէտք կայ տիրէքթիւներով զբաղելու:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Ժողովը արդէն որոշած էր, որ նախ տիրէքթիւները սահմանէ եւ յետոյ զբաղի Պատուիրակութեան վերակազմութեան խնդրով: Այդ խնդիրը նախորդ նիստին ալ կար, բայց անկէ առաջ՝ Ժողովը տիրէքթիւներու քննութեան ձեռնարկեց:

Դիւանի բանաձեւին ընթերցումէն վերջ՝ Տիրէքթիւներու Յանձնաժողովի անդամներէն Տիարք Թէրզիպաշեան եւ Տէր-Ստեփանեան պատճառաբանեցին իրենց տեսակէտը՝ պահանջելով, որ տիրէքթիւներուն մէջ Պատուիրակութեան իրաւասութիւն տրուի նաեւ նոր Համագումար հրաւիրելու, երբ տաճկահայ դատին համար անհրաժեշտ ըլլայ ատիկա:

Դարձեալ Տիրէքթիւներու Յանձնաժողովին անդամներէն Տիար Բարսեղեան յայտարարեց, թէ ինք սկզբունքով կը հակառակի ատոր, որովհետեւ Ազգ. Պատուիրակութեան դերը կը լրանայ դաշնագրին ստորագրութենէն ետք, եւ անկէ անդին տեղի ունենալիք գործերը այլեւս իր իրաւասութենէն դուրս են, կը պատկանին ժողովուրդին: Տիար Բարսեղեան աւելցուց, որ ինք դաշնագրին ստորագրութենէն վերջ Ազգ. Պատուիրակութեան գոյութեան բնաւ պէտք չի տեսներ:

Նախագահ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան դիտել տուաւ թէ դաշնագրին ստորագրութենէն վերջ կրնան ծագիլ այն տեսակ պատահականութիւններ, որոնց հանդէպ նոյնիսկ Հանրապետութեան կառավարութիւնը թերեւս փափաքի առանձին Պատուիրակութեան մը գոյութիւնը: Հետեւաբար, յարեց Ն. Վսեմութիւնը, պէտք է այդ պատահականութիւնները նախատեսուին տիրէքթիւներու խմբագրութեան միջոցին:

Տիար Արտաւազդ Հանըմեան. Ի՞նչ պէտք ունինք տիրէքթիւներուն մէջ անպատճառ գրելու, որ Պատուիրակութիւնը նոր Համագումար հրաւիրելու իրաւասութիւն ունի: Պատուիրակութիւնը եթէ պէտք տեսնէ, թո՛ղ յառաջիկային հրաւէր ուղղէ ինք իր նախաձեռնութեամբ, ինչպէս արդէն անգամ մը ըրաւ:

Տիար Վահան Թէքէեան. Ես հակառակ եմ Տիարք Բարսեղեանի եւ Հանըմեանի խօսքերուն մեզ դիտող այն ոգիին, որով չեն ուզեր Պատուիրակութեան ոեւէ իրաւունք ճանչնալ դաշնագրին ստորագրութենէն ետք ծագելիք հաւանականութեանց մասին:

Ամեն. Դուրեան Արքեպիկոպոս. Նոր Համագումար մը ընտրելու համար նախ մենք պէտք է ինքզինքնիս լուծենք: Բայց այդ բանը ընելու իրաւունքը տրուած չէ մեզի: Մենք չենք կրնար այս Համագումարին գոյութեան վերջ տալ, մինչեւ որ մեր կատարած պաշտօնին մասին կարեւոր տեղեկատուութիւնը չընենք անոնց, որոնք մեզ ընտրեցին: Ուրեմն, իրաւական տեսակէտով՝ մենք չենք կրնար մեզ լուծել: Պատուիրակութիւնը կը

մնայ յառաջիկային համար նոր Համագումար մը կազմելու պէտքին առջեւ՝ դիմում ընել կեդրոններուն եւ գաղութներուն:

Տիար Թէրզիպաշեան. Մենք որոշ յանձնառութեամբ եկած էինք, բայց մեր ընկերներէն ոմանք չեկան եւ այս Ժողովը տկարացաւ այնքան, որ այսօր դժուարութիւն կը քաշենք որոշում մը տալու համար: Մենք փոխանակ մեզ լուծելու, կ՚ըսենք մեզ ընտրող ազգին, որ մենք կը քաշուինք, կը ցրուինք, բայց մեր գործը չլրացած՝ ընտրէ՛ ուրիշ մարմին մը, աւելի զօրեղ: Ահա թէ ինչո՞ւ կը պահանջենք նոր Համագումարի մը կազմութիւնը: Մեր դիրքը կարելի է նմանցնել խորհրդարաններու. երբ խորհրդարան. մը դադրի՝ ինքզինքը չի լուծեր, այլ գործադիր մարմնին հրահանգ կու տայ ուրիշ մը ընտրելու:

Դիւանը առաջարկեց քուէի դնել տիրէքթիւներու մէջ նոր Համագումար մը հրաւիրելու մասին Պատուիրակութեան իրաւասութիւն տալու սկզբունքը: Ժողովին հաւանութեան վրայ՝ քուէարկութիւն կատարուեցաւ ներկայ 14 պատգամաւորներու մասնակցութեամբ, եւ այդ սկզբունքը ընդունուեցաւ 3-ի դէմ 8 ձայնի մեծամասնութեամբ:

Տիար Հանըմեան, որ հակառակ քուէ տուած էր, յայտարարեց, թէ իւր քուէն չի նշանակեր, որ Համագումարի մը հրաւիրման կը հակառակի, միայն թէ, յարեց, չուզէր, որ այդ մասին որոշ իրաւասութիւն դրուի տիրէքթիւներու մէջ:

Այս քուէարկութեան վրայ՝ Տիար Բարսեղեան դիտել տուաւ, որ Ներքին Կանոնագրին համաձայն, կենսական խնդրի մը քուէարկութեան համար անհրաժեշտ է բացարձակ մեծամասնութիւն, ընդհանուր անդամներու ամբողջական թուին կէսէն մէկ աւելիով: Հետեւաբար, պահանջեց, որ այս քուէարկութիւնը օրինական չնկատուի:

Տիար Տէր-Ստեփանեան. Այս տեսակ պահանջ մը դնել՝ կը նշանակէ Համագումարը բոլորովին անգործութեան դատապարտել, եւ արդէն այս է Տիար Բարսեղեանի ու իր համախոհներուն նպատակը: Եթէ բացարձակ մեծամասնութիւն փնտռենք, չպիտի կրնանք ո՛չ մէկ խնդիր վճռել՝ նկատի ունենալով Համագումարին անդամներուն արդի թիւը: Այդ պարագային մեզի կը մնայ գլխարկներս դնել եւ Համագումարը լուծուած հռչակելով ելլել երթալ առանց ոեւէ գործ տեսնելու: Ես կ՚առաջարկեմ, որ ջնջենք Ներքին Կանոնագրին 19-րդ, 20-րդ եւ 23-րդ յօդուածները: Ասիկա կրնանք ընել նոյնիսկ մեր այսօրուան յարաբերական մեծամասնութեամբ, քանի որ Ներքին Կանոնագիրն ալ նախորդ տարի քուէարկուեցաւ յարաբերական մեծամասնութեամբ:

Տիար Բարսեղեան. Ես կը հակառակիմ այս առաջարկութեան: Ներքին Կանոնագիրը նախորդ տարի կրնայ անցած ըլլալ պարզ մեծամասնութեամբ, բայց չենք կրնար պարզ մեծամասնութեամբ փոխել զայն: Եւ յետոյ՝ տեսնուած չէ, որ նստաշրջանի մը վերջը՝ Ներքին Կանոնագիր փոխուի: Եթէ այդ փոփոխութիւնը պէտք էր, պարտաւոր էինք զայն ընել նստաշրջանին սկիզբը: Այս Համագումարը նախորդին շարունակութիւնն է: Առջի տարի մեր թիւը 38 էր, եւ մեծամասնութիւնը կը կազմէր 20 թիւը: Եթէ 20-է աւելի անդամ չունենայինք, այս անգամ չպիտի կրնայինք գումարուիլ: Նախորդ նիստի մը մէջ խնդիր ըրի մեր մեծամասնութեան հարցը եւ Ժողովը որոշեց Համագումարի հրաւէրը անպատասխանի թողող պատգամաւորները մեծամասնութեան համար նկատի չառնելով՝ պատգամաւորներու ընդհանուր թիւ ընդունիլ 22-ը: Հիմա՝ այդ կարգադրութեան համեմատ մեծամասնութիւն համարուող 12 թիւն ալ չենք փնտռեր եւ կը գոհանանք պարզ մեծամասնութեամբ: Կը հարցնեմ, թէ այս պայմաններուն մէջ ի՞նչ արժէք պիտի ունենան մեր տուած տիրէքթիւները:

Տիար Տէր-Ստեփանեան պնդեց իր տեսակէտին վրայ եւ Դիւանին ներկայացուց հետեւեալ առաջարկութիւնը.

«Համագումարը կը ջնջէ իր Ներքին Կանոնագրին 19, 20 եւ 23-րդ յօդուածները:

Ն. Տէր-Ստեփանեան»:

Համագումարը պէտք տեսաւ նախ որ կարդացուին այդ յօդուածները:

«Յօդուած 19.- Կենսական կարեւորութիւն ունեցող հարցերու առթիւ տրուելիք որոշումները ոյժ ունին միայն այն ատեն, երբ քուէարկուած կ'ընլլան անդամներու ամբողջական թիւին կէսէն աւելի ձայներով, բացարձակ մեծամասնութեամբ:

Յօդուած 20.- Կենսական կը նկատուին այն հարցերը, որոնք իբր այդ կը նկատուին առնուազն եօթ անդամներու կողմէ, այս մասին իրենց նկատումը բերելով ժողովին, քուէարկութեան ձեռնարկելէ առաջ:

Յօդուած 23.- Պատուիրակութեան իւրաքանչիւր գործ ժողովին կողմէ քննելու պարագային, քուէարկութեան համար կը պահանջուի բացարձակ մեծամասնութիւն (յօդ. 19)»:

Քուէարկութեան դրուեցաւ Տիար Տէր-Ստեփանեանի առաջարկութիւնը, 14 պատգամաւորներու ներկայութեան եւ մերժուեցաւ՝ միայն 4 քուէ ստանալով:

Տիար Տոքթ. Բարսեղեան առաջարկեց, որ տիրէքթիւներու սահմանումը «կենսական խնդիր» նկատուի 19-րդ յօդուածին համաձայն, որով անհրաժեշտ պիտի ըլլար, որ անոնք անցնէին բացարձակ մեծամասնութեամբ:

Համագումարը չընդունեց այս տեսակէտը, այն առարկութեամբ, թէ խնդիր մը «կենսական» հռչակելու համար, 20-րդ յօդուածին համաձայն, անհրաժեշտ է, որ առնուազն եօթ անդամներ քուէարկութենէն անմիջապէս առաջ առաջարկ բերեն այդ մասին, ինչ որ չէ եղած: Հետեւաբար՝ Համագումարը որոշեց գոհանալ պարզ մեծամասնութեամբ:

Քուէարկութեան դրուեցաւ Պատուիրակութեան տեւողութեան մասին՝ Դիւանին կողմէ ներկայացուած եւ վիճաբանութեան ընթացքին բարեփոխուած բանաձեւին առաջին հատուածը.

«Ազգ. Համագումարը, որոշելով հանդերձ որ Ազգ. Պատուիրակութիւնը պէտք է վերջ գտնէ Թուրքիոյ հետ խաղաղութեան դաշնագրին ստորագրութեամբ, ի յուշ կ'ածէ սակայն, որ կրնան պատահիլ բացառիկ պարագաներ, որոնք անհրաժեշտ կը դարձնեն անոր տակաւին ժամանակ մը եւս պաշտօնավարութիւնը, այդ պարագային՝ Պատուիրակութիւնը կը բանաձեւէ Պոլսոյ եւ գլխաւոր գաղութներու ազգ. կեդրոնական մարմիններուն, ինչպէս նաեւ Հայ Հանրապետութեան կառավարութեան հետ եւ ստանալիք յանձնարարութեանց վրայ կը տնօրինէ կարեւորը»:

14 պատգամաւորներու ներկայութեան՝ այս հատուածը ընդունուեցաւ 2-ի դէմ 11 քուէով:

Քուէարկութեան դրուեցաւ նաեւ նոյն բանաձեւին երկրորդ հատուածը.

«Միեւնոյն պարագաներու մէջ՝ Պատուիրակութիւնը կրնայ նոյնիսկ թրքահպատակ հայոց Համագումարի մը հրաւիրման նախաձեռնութիւնը առնել, վերոյիշեալ մարմիններուն հետ խորհրդակցելէ ետք»:

Այս հատուածն ալ 14 քուէարկուներու ներկայութեան, ընդունուեցաւ 2-ի դէմ 8 քուէով:

Կարդացուեցաւ Յանձնաժողովին բերած երկրորդ առաջարկութիւնը, որ կը պատկանէր դաշնագրին ստորագրութեան խնդրին.

«Դաշնագրի ստորագրութիւն. Յանձնաժողովը կը կարծէ, որ Ազգ. Պատուիրակութեան համար ստորագրութեան հարց չկայ եւ չի կրնար ծագիլ:

Պ. Տէր-Ստեփանեան չի բաժներ այս կարծիքը եւ կ'առաջարկէ, որ նախատեսուին զանազան կարելիութիւններ եւ ըստ այնմ ստորագրելու կամ չստորագրելու հրահանգ տրուի:

Գալով Հանրապետութեան կառավարութեան կողմէ ստորագրելու խնդրին, Յանձնաժողովը կը կարծէ, որ ատիկա Պօղոս Նուպար Փաշայի անձնական գործն է:

Պ. Թէրզիպաշեան կը կարծէ, որ ստորագրութեան հարց պէտք չէ ըլլայ ուղեգիծին մէջ»:

Տիար Բրօֆ. Թումայեան պաշտպանեց այն տեսակէտը, թէ Ազգ. Պատուիրակութեան Նախագահը պէտք է անպատճառ ստորագրէ դաշնագիրը,

թրքահայոց անունով, որպէսզի այդ կերպով հռչակուած ըլլայ, թէ հայերը իրաւունք մը կը ստանան թուրքերուն վրայ իբր հաւասար հաւասարի դաշինք կնքելու անոր հետ: Տիար Թումայեան առաջարկեց, որ եթէ նոյնիսկ կարելի չըլլայ ուղղակի թրքահայոց կողմէ դաշնագիրը ստորագրելու իրաւունքը ապահովել Պատուիրակութեան Նախագահին, աշխատուի որ գոնէ Հանր. կառավարութիւնը արտօնէ զայն, որ իր անունով, բայց իբր թրքահայոց ներկայացուցիչ ստորագրէ դաշնագիրը:

«Ստորագրութիւնը, յարեց Տիար Թումայեան, անպատճառ չի նշանակեր համակերպիլ Թրքահայաստանի մասին եղած կարգադրութեանց: Մենք այսօր ունինք կացութիւնը այն մարդուն, որուն ամբողջ նկանակ մը խոստացուած է եւ որուն սակայն կէս նկանակ միայն կու տան: Ամբողջը ստացած չըլլալուն համար պէ՞տք է, որ նետէ իրեն տրուած այդ կէսը ալ. ընդհակառակը, պէտք է պահէ այդ կէսն եւ աշխատի միւս կէսն ալ ստանալու»:

Յանձնաժողովին անդամներէն Տիար Արշակ Չօպանեան՝ դաշնագրին թրքահայոց կողմէ ստորագրուելուն կարեւորութիւնը շեշտելով, հետեւեալ երկու առաջարկութիւնները ներկայացուց.

Ա.- Կ'առաջարկեմ Համագումարին կողմէ մանտա տալ Պատուիրակութեան՝ որպէսզի թրքահայոց կողմէ ստորագրէ դաշնագիրը:

Բ.- Կ'առաջարկեմ Տիար Սիարոնեանէն խնդրել, որ միջնորդէ Հանր. կառավարութեան մօտ, որպէսզի Փաշան ալ ստորագրէ դաշնագիրը, Հանր. կառավարութեան անունով, իբր թրքահայոց ներկայացուցիչ:

/ստ./ Ա. Չօպանեան

Առաջին առաջարկութեան մասին Նախագահ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան ըսաւ, թէ օրինական ոեւէ հիմ չունի, ո՛չ ալ կրնայ դրական հետեւանք մը ունենալ, քանի որ դաշնագիրը ստորագրելու իրաւունքը տրուած է լոկ Հայկ. Հանրապետութեան լիազօրին:

Տիար Չօպանեանի առաջին առաջարկութիւնը քուէի դրուեցաւ 14 պատգամաւորներու ներկայութեան եւ մերժուեցաւ՝ միայն 2 քուէ ստանալով:

Երկրորդ առաջարկութեան քննութեան առթիւ Տիար Չօպանեան յայտարարեց, որ չի կրնար երեւակայել, թէ Հանրապետութեան կողմէ կրնայ մերժուիլ, քանի որ Հանրապետութեան պաշտօնական կառավարութիւնը տակաւին քիչ ժամանակ առաջ կ'առաջարկէր, որ Փաշան ընդունի Միացեալ Պատուիրակութեան նախագահութիւնը:

Քուէարկութեան դրուեցաւ Տիար Չօպանեանի նաեւ երկրորդ առաջարկութիւնը, 14 պատգամաւորներու ներկայութեան եւ մերժուեցաւ միայն 5 քուէ ստանալով:

Յետոյ քուէարկութեան դրուեցաւ Յանձնաժողովին առաջարկութիւնը, թէ տիրէքթիւներուն մէջ պէտք է յիշատակուի, որ Հանրապետութեան կառավարութեան կողմէ դաշնագիրը ստորագրելու խնդիրը Վսեմ. Պօղոս Փաշայի անձնական գործն է: Այս առաջարկութիւնն ալ, 14 պատգամաւորներու ներկայութեան՝ մերժուեցաւ միայն 6 քուէ ստանալով:

Յանձնաժողովի անդամներէն Տիար Թէրզիպաշեան ալ պահանջեց, որ նոյնպէս քուէարկութեան դրուի իր առաջարկը, թէ տիրէքթիւներու մէջ պէտք չէ դաշնագրին ստորագրութեան հարց ըլլայ:

Տիար Պապաջանեան, որուն կարծիքը ուզուեցաւ, յայտնեց թէ սկիզբէն հետեւած չըլլալով խնդրին՝ իրեն համար դժուար է կարծիք յայտնել: Ամեն պարագայի մէջ, աւելցուց, Համագումարը պէտք չէ իր ներկայացուցիչին ձեռքերը կապէ այդ մասին որոշում տալով, պէտք է թողու, որ Միացեալ Պատուիրակութիւնները, ինչպէս անցեալին մէջ ըրեր են, այդ խնդրին համար ալ ընեն ինչ որ յարմար կը դատեն:

Տիար Թէրզիպաշեանի առաջարկութիւնն ալ քուէի դրուեցաւ 14 պատգամաւորներու ներկայութեան եւ մերժուեցաւ միայն 2 քուէ ստանալով: Եւ սակայն՝ թէ՛ Յանձնաժողովին եւ թէ՛ պատգամաւորներուն կողմէ եղած ոեւէ

առաջարկութիւն մեծամասնութիւն գտած չըլլալով, դաշնագրի ստորագրութեան այս հարցը դուրս մնաց տիրէքթիւներէն:

Կարդացուեցաւ Յանձնաժողովին բերած երկրորդ առաջարկութիւնը՝ Դաշնագրին Քննութեան Յանձնաժողովին կողմէ պատրաստուած Յիշատակագրին նկատմամբ.

«Դաշնագիր. Դաշնագրին սրբագրութեան համար կազմուած Յանձնաժողովին կողմէ Համագումարին բերուած եւ անկէ վաւերացուած Յիշատակագրին տրամադրութիւնները պէտք է նկատուին դաշինքի մաս»:

Այս առաջարկութիւնը քուէի դրուելով, միաձայնութեամբ ընդունուեցաւ ներկայ 12 պատգամաւորներուն կողմէ:

Կարդացուեցաւ Յանձնաժողովին բերած չորրորդ առաջարկութիւնը.

«Կիլիկիա. Պատուիրակութիւնը պէտք է հետապնդէ, օգտագործելով ամեն միջոց եւ ամեն նոր կարելիութիւն, ինքնավար ռեժիմ մը Կիլիկիոյ եւ Խարբերդի հայկական շրջաններուն համար»:

Տիար Տէրպէտէրեան առաջարկեց, որ «Խարբերդ» անունի տեղ աւելի ընդարձակ տարածութեան մը ակնարկուի, եւ Յանձնաժողովին առաջարկութիւնը բարեփոխուեցաւ հետեւեալ ձեւով.

«Կիլիկիա. Պատուիրակութիւնը պէտք է հետապնդէ, օգտագործելով ամեն միջոց եւ ամեն նոր կարելիութիւն, ինքնավար ռեժիմ մը Կիլիկիոյ եւ այլ հայկական շրջաններու համար»:

Այս ձեւով՝ 11 պատգամաւորներու ներկայութեան, ընդունուեցաւ միաձայնութեամբ:

Կարդացուեցաւ Յանձնաժողովին բերած 5-րդ առաջարկութիւնը.

«Վնասուց հատուցում. Պատուիրակութիւնը պէտք է հետապնդէ ամեն միջոցով, մասնաւորապէս զօրաւոր բրոբականտ մղելով, վնասուց հատուցման գործը, հիմնուելով մեր բարոյական իրաւունքին վրայ՝ հանդէպ Թուրքիոյ, Գերմանիոյ եւ Դաշնակիցներուն»:

Տիար Պապաջանեան յայտնեց, թէ «բարոյական իրաւունք» ասութիւնը, որ գործածուած է այս առաջարկութեան մէջ, անբաւական է. աւելցուց նաեւ, թէ Պ. Մանտէլշթամ ալ, որուն հետ տեսնուած է այս մասին եւ որուն համակարծիք է անձնապէս, հաստատելով հանդերձ, որ միջազգային իրաւունք չունինք հատուցման համար, կ՚ընդունի, թէ ունինք քաղաքացիական անվիճելի իրաւունք, որ կրնայ հիմ դառնալ մեր պահանջմանց: Տիար Պապաջանեանի այս դիտողութեան վրայ՝ առաջարկութիւնը բարեփոխուեցաւ հետեւեալ ձեւով.

«Վնասուց հատուցում. Պատուիրակութիւնը պէտք է հետապնդէ ամեն միջոցով, մասնաւորապէս զօրաւոր բրոբականտ մղելով, վնասուց հատուցման գործը, հիմնուելով մեր իրաւունքին վրայ՝ հանդէպ Թուրքիոյ, Գերմանիոյ եւ Դաշնակիցներուն»:

Այս ձեւով՝ 11 պատգամաւորներու ներկայութեան, ընդունուեցաւ միաձայնութեամբ:

Կարդացուեցաւ Յանձնաժողովին բերած վեցերորդ առաջարկութիւնը.

«Մանտա. Պատուիրակութիւնը պէտք է շարունակէ «մանդաթէր» պետութիւն մը գտնելու իր ցարդ ըրած քաղաքականութիւնը, ջանալով, որ «մանտա»ն Հայաստանի անկախութիւնը վտանգելու խնդիր չունենայ»:

Այս առաջարկութիւնը քուէի դրուելով, 11 պատգամաւորներու ներկայութեան ընդունուեցաւ 7 քուէի մեծամասնութեամբ:

Նիստը փակուեցաւ ժամը 7-ին:

ՀԱԱ, ֆ. -430, g. 1, գ. 66, թթ. 22-37: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ ԻԳ

26 Յունիս 1920, ժամը 2 ½ -ին,
նախագահութեամբ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեանի.

Ներկայ էին 15 պատգամաւոր՝

Ամեն. Եղիշէ Արքեպիսկոպոս Դուրեան, Բարսեղեան, Դաւիթ-Բէկ, Թէրզիպաշեան, Թէքէեան, Թումայեան, Մսըրլը Պէյ, Վսեմ. Գ. Նորատունկեան, Չօպանեան, Պզտիկեան, Սինապեան, Տէրպէտէրեան, Տէր-Ստեփանեան, Որբերեան, Մալքոլմ:

Օրակարգ

1. Վերակազմութիւն Ազգ. Պատուիրակութեան

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Ընթերցում ատենագրութեան

Կարդացուեցաւ եւ վաւերացուեցաւ Յունիս 24-ի նիստին ատենագրութիւնը:

2. Ներկայութիւն Հապէշիսթանի հայ գաղութին պատգամաւոր Տիար Ռուբէն Որբերեանի

Նախագահ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան ուրախութիւն յայտնեց, որ Եթովպիոյ հայ գաղութին պատգամաւոր Տիար Ռուբէն Որբերեան ներկայ է այսօրուան նիստին: Ն. Վսեմութիւնն այդ առթիւ յիշատակեց այն խանդավառ աջակցութիւնը, զոր Տիար Որբերեան հեռուէն նուիրած է միշտ թէ՚ ազգ. դատին եւ թէ՚ Ազգ. Պատուիրակութեան:

3. Ներկայութիւն Տիար Ճ. Մալքոլմի

Նախագահ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան ուրախութիւն յայտնեց նաեւ Տիար Ճ. Մալքոլմի ներկայութեան համար: Ն. Վսեմութիւնը յիշեցուց ժողովին, որ Տիար Մալքոլմ պաշտօնական գործերուն բերմունքով ստիպուած էր բացակայիլ, եւ յոյս յայտնեց, որ մինչեւ նստաշրջանին վախճանը կը մասնակցի Համագումարին աշխատութեանց:

4. Նամակ Ազգ. Պատուիրակութեան Նախագահ Վսեմ. Պօղոս Փաշա Նուպարի, իր հրաժարականի խնդրին նկատմամբ

Կարդացուեցաւ Ազգ. Պատուիրակութեան Նախագահ Վսեմ. Պօղոս Փաշա Նուպարի կողմէ Համագումարի Վսեմ. Նախագահին ուղղուած եւ նիստին բացման պահուն Դիւանին յանձնուած հետեւեալ նամակը իր հրաժարականի խնդրին նկատմամբ.

Փարիզ, 24 Յունիս 1920.

Վսեմ. Գաբրիէլ Էֆենտի Նորատունկեան,
Նախագահ Ազգ. Պատուիրակութեան.

Տիար Նախագահ,

Ստացայ այն նամակը, որով Ձեր Վսեմութիւնը կը յայտարարէ, թէ չի հաւանիր անդամակցիլ նոր Պատուիրակութեան, զոր Համագումարը պիտի ընտրէ նախորդ հրաժարեալ Պատուիրակութեան տեղ: Ձեր նամակը կարդացուած ըլլալով Համագումարին մէջ՝ շնորհապարտ պիտի մնամ Ձեզի, եթէ նոյնպէս քարտուղարին միջոցով կարդալ տաք նաեւ այս պատասխանը:

Խոր զարմացմամբ մը կը տեսնեմ, որ Ձերդ Վսեմութիւնը անգիտանալ կը թուի այն պատճառները, որոնք զիս հարկադրեցին քաշուելու: Նամակին մէջ՝ ո՛չ իսկ ակնարկութիւն կայ այդ մասին: Եւ սակայն՝ այն նամակով, զոր պատիւը ունեցայ

Համագումարին անունով Ձեզի ղրկելու, որոշապէս յայտարարած եմ, թէ առողջական վիճակս ինծի անհնար կը դարձնէր գործուն դեր մը ունենալ, եւ ինծի կը պարտադրէր բացարձակ հանգիստ մը, աշխատութեան այն եօթ տարիներէն վերջ, որոնք այնքան ծանր փորձի մը ենթարկեցին իմ ոյժերս: Այս մասին՝ Համագումարին եւ Ձեր Վսեմութեան մտքին մէջ ծագում առնելիք ամեն կասկած փարատելու համար, ինքզինքս քննել տուի իմ բժիշկիս՝ Տոքթ. Հիւտէլոյին, որ բացարձակ կերպով հաստատեց եւ ինծի տուաւ յայտարարութիւն մը, զոր ներեցէ՛ք, որ Ձեզի ղրկեմ, Համագումարին հաղորդելու համար: Պիտի տեսնէք այնտեղ, թէ Տոքթորը ո՛չ միայն երկարատեւ հանգիստ մը անհրաժեշտ կը նկատէ ինծի համար, այլ, նոյնիսկ,- եւ ինծի համար շատ տժգանելի է ատիկա հաստատելը. կը յայտարարէ, թէ լուրջ եւ թերեւս ծանր պատահականութեանց սպառնալիքին ենթակայ եմ:

Կը յուսամ, որ Տոքթ. Հիւտէլոյի քիչ մը բուռն անկեղծութիւնը պիտի համոզէ Ձերդ Վսեմութիւնը, որ, այդ պարագայուն մէջ, նոյնիսկ հաւանելով ինծի մնացած ոյժերուն համեմատական աշխատութիւն պահանջող չափով մը միայն նոր Պատուիրակութեան մասնակցիլ, բացարձակապէս նկատի չեմ առներ իմ անձիս օգուտը եւ ասիկա համատեղելու համար Համագումարին կողմէ յայտնուած այն կարծիքին, թէ իմ անունս անհրաժեշտ էր Պատուիրակութեան մէջ:

Կը մերժէք մտնել նոր Պատուիրակութեան մէջ, այն պատճառով՝ ինչպէս կ՚ըսեք՝ թէ Ձեր կէս պաշտօնական աջակցութիւնը աւելի օգտակար պիտի ըլլայ: Այս մասին բնաւ համամիտ չեմ, մինչդեռ ո՛չ ոք պիտի կրնայ ժխտել այն պատճառները, զորս մէջ բերի, եւ կարծել թէ քաշուելով՝ կ՚ուզեմ խուսափիլ պատասխանատուութիւններէ, զորս չվստահեցուց ստանձնել աւելի քան հինգ տարիէ ի վեր:

Ձեր Վսեմութիւնը կը յայտարարէ, թէ առանց ինծի՝ Պատուիրակութիւնը գոյութեան իրաւունք չունի: Այս դատաստանը, իմ կարծիքովս, անարդար է հանդէպ Համագումարի մեր պաշտօնակիցներուն եւ հանդէպ Ձեզի, եւ ես անոր մէջ ուրիշ բան չեմ տեսներ՝ այլ միայն փաստ մը աւելի՝ Ձեզ համոզելու համար, որ ընդունիք նոր Պատուիրակութեան նախագահութիւնը: Ձեր հաւաստումը, թէ առանց իմ գործուն նախագահութեանս՝ Պատուիրակութիւն մը բացարձակապէս գոյութեան իրաւունք չպիտի ունենար՝ եւ չի կրնար մնալ, առ այժմ շատ արմատական չի թուիր ինծի, եւ չեմ գիտեր, թէ մեր հայրենակիցները ի՞նչ պիտի մտածեն այդ մասին: Ամեն պարագայի մէջ ո՛չ ոք պիտի կրնայ զիս պատասխանատու նկատել այն շփոթութեան մասին, որուն կ՚ենթարկէ մեզ Ձեր Վսեմութեան ընդդիմութիւնը իր պաշտօնական աջակցութիւնը ընծայելու մասին, եւ այս կերպով անհնար դարձնելով այն լուծումները, զորս, համաձայնութեան ոգուով մը, առաջարկած էի, Թուրքիոյ մեր հայրենակիցներու շահերուն փրկութեան համար:

Գալով ինծի, չկրնալով անտարբեր մնալ մեր ազգային դատին նկատմամբ, որ իր ամէնէն վճռական պահը անցընելու վրայ է, եւ նկատի առնելով վստահութեան բանաձեւը, զոր Համագումարը բարեհաճած է ուղղել ինծի, ինչպէս նաեւ Պոլսէն ստացած հեռագիրներս, որոնց մէջ Ամեն. Ս. Պատրիարքը՝ Քաղաքական ու Խառն Ժողովներուն հետ՝ կոչում կ՚ընեն իմ զոհողութեան ոգիիս, ինծի ուրիշ բան չի մնար ընել, այլ միայն արձանագրել Ձեր մերժումը եւ Համագումարի իմ բարեկամներուն հետ, փորձ մը ընել գտնելու կարգադրութիւն մը, որ ինծի թոյլատրէ, իմ միջոցներուս ներած չափով, աշխատակցիլ ապագայ Ազգ. Պատուիրակութեան:

Անգամ մըն ալ իմ ցաւս յայտնելով, կը խնդրեմ, որ ընդունիք, Տիար Նախագահ, իմ անձնուէր զգացումներուս նոր հաւաստիքը:

Պօղոս Նուպար

Հ. Գ.- Յարակից՝ պատճէնները Ամեն. Ս. Պատրիարքին, Խառն ու Քաղաքական Ժողովներու հեռագիրներուն, ինչպէս նաեւ Տոքթ. Հիւտէլոյի վկայագիրը:

Պ. Ն.

Նամակ Վսեմ. Պօղոս Փաշային

Ն. Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար այս նամակին յարակից Դիւանին ղրկած էր նաեւ Փարիզի հիւանդանոցներու սպասարկութեան պետ Տոքթ. Հիւտէլոյի ստորագրութիւնը կրող բժշկական նկարագրի մը բնագիրը եւ Պոլսէն իր հասցէին ուղղուած երկու հեռագիրներ, որոնք նոյնպէս կարդացուեցան:

Ա. վկայագիր Տոքթ. Հիւտէլոյի

Paris, 24 Jule 1920.

Je soussigné, médecin chéf de service des Hopitaux de Paris; certifie que S. E. Nubar présente un état marqué d'hypertenion artérielle qui nécessite un répos physique et moral immédiat, et une cure prolongée hydro-minérale à Evian; cet état, resultat d'une période prolongée de sormenage, met le malade en raison particuliérement de son âge, dans l'imminence d'accidents cérébraux gui pourraient être sérieux, peut-être graves.

Hudelo.

Բ. Հեռագիր Ամեն. Ձաւէն Պատրիարքի

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար, Փարիզ.

Կ. Պոլիս, 18 Յունիս (ստացուած 20 Յունիսին).- Քաղաքական Ժողովը, բուռն կերպով տպաւորուած ձեր հրաժարած ըլլալու լուրէն, կը փութայ՝ յանուն ազգին գերագոյն շահուն՝ կոչում ընել Ձեր զոհողութեան ոգիին եւ թախանձագին կը խնդրէ, որ շարունակէք այնքան անձնուրութեամբ դէպի լաւը տարուած Ձեր գործը:

Ձաւէն Պատրիարք

Գ. Հեռագիր Պոլսոյ Համազգային Ժողովին.

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար, Փարիզ.

Կ. Պոլիս, 19 Յունիս (ստացուած 21 Յունիսին).- Երեք հայ յարանուանութեանց Համազգային Խորհուրդն սրտաբեկ ձեր հրաժարականին եւ մեծապէս գնահատելով այն հայրենասիրական անձնուիրութիւնը, որով եօթ տարիէ ի վեր հազուագիւտ արժանաւորութեամբ եւ անխոնջ կերպով կը հետապնդէիք ազգային դատը, կոչում կ՚ընէ ձեր ազնիւ զգացումներուն, որպէսզի ներկայ վճռական վայրկեաններուն միշտ նոյն կամքով շարունակէք ազգին գերագոյն շահերուն պաշտպանութիւնը՝ ապահով ըլլալով ազգին միահամուռ երախտագիտութեան մասին:

Ձաւէն (Պատրիարք Հայոց)
Սայիլեան (Պատր. Կաթողիկէ Հայոց)
Պէզճեան (Ազգապետ Բողոքականաց)

Նախ. Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան գոհունակութիւն յայտնեց, որ Ն. Վսեմութիւն Փաշային այս նամակով վերջ կը գտնէ հրաժարականի խնդիրը, որ այնքան ծանր մտահոգութեան մը մատնած էր Համագումարը:

Տիար Արշակ Չօպանեան. Կ՚առաջարկեմ, որ Համագումարը պատուիրակութիւն մը կազմելով ղրկէ Փաշային մօտ, թէ՛ Ժողովին ուրախութիւնն ու շնորհակալութիւնը յայտնելու եւ թէ՛ Պատուիրակութեան վերակազմութեան մասին Ն. Վսեմութեան հետ խորհրդակցելու համար, ըստ իր նամակին:

Տիար Թումայեան. Արդեօք կարելի չէ՞ միջոց մը գտնել, որպէսզի Վսեմ. Փաշան ալ ստորագրէ դաշնագիրը, ինչ որ քաջալերութիւն մը պիտի ըլլայ իրեն եւ նոյն ատեն՝ պսակումը այն անձնուէր աշխատութեան, զոր կը կատարէ այսքան տարիէ ի վեր:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Այդ մասին վերստին կը խօսինք Տիար Ահարոնեանի: Գալով Վսեմ. Փաշային մօտ մասնաւոր պատգամաւորութիւն մը ղրկելու խնդրին, թէեւ Ն. Վսեմութեան նամակը ատոր հարկ չի թողուր, բայց եթէ Համագումարը փափաքի՝ կրնանք ղրկել:

Տիար Վ. Թէքէեան. Համագումարի անդամներուն ուշադրութեան կը ներկայացնեմ սա պարագան, թէ երբ այսքան կարեւոր խնդրի մը մէջ, գլուխնիս այնքան քարերու զարնելէ ետք վերջապէս լուծման ճամբայ մը գտանք, երբ Փաշան՝ հակառակ այն բժշկական վկայագրին, որ կարդացուեցաւ, կ'ըսէ, թէ պատրաստ է նոր զոհողութիւն մըն ալ ընելու, չենք կրնար անտարբեր մնալ եւ սպասել, որ ինք միայնակ կարգադրութիւն մը ընէ, անտարբեր մնալով՝ ո՛չ յարգանքի զգացում մը յայտնած, ո՛չ ալ մեր պաշտօնին գիտակցութեան ապացոյց մը տուած կ'ըլլանք: Պէտք է որ կա՛մ՝ ինչպէս առաջարկուեցաւ, պատգամաւորութիւն մը կազմելով եւ կա՛մ նամակով Համագումարը յայտնէ իր խնդակցութիւնը, ինչպէս նաեւ իր պատրաստակամութիւնը՝ Պատուիրակութեան վերակազմութեան համար իրեն հետ խորհրդակցելու եւ պէտք եղած լուծումը ձեռք բերելու մտքով:

Տիար Բարսեղեան. Ինծի այնպէս կը թուի, թէ Փաշան չուզէր Ժողովին մէջ պաշտօնապէս զբաղիլ այս խնդրով, այլ՝ Ժողովէն դուրս, մասնաւոր բանակցութեամբ: Այս պատճառաւ, կը կարծեմ, որ աւելորդ է մասնաւոր պատգամաւորութիւն մը ղրկել: Կրնանք մասնաւոր նամակով մը շնորհակալութիւն յայտնել Փաշային, եւ այդ ալ Դիւանը կրնայ ընել Համագումարին անունով:

Տիար Չօպանեան. Կը կրկնեմ իմ առաջարկը, թէ պէտք է մասնաւոր պատգամաւորութիւն մը ղրկել Վսեմ. Փաշային մօտ: Ասիկա ո՛չ միայն յարգանքի նշան մը պիտի ըլլայ Ժողովին կողմէ, այլ նաեւ շատ կանոնաւոր եւ շատ սահմանադրական ընթացք մը: Փաշային ցոյց տուած անձնուիրութիւնը պէտք է ըմբռնենք ու գնահատենք, եւ այս գնահատութիւնը տարբեր կերպով մը չենք կրնար արտայայտել: Եթէ Փաշան պէտք տեսնէ, ուրիշ անձեր ալ կ'երթան Պատուիրակութեան խնդրին նկատմամբ խորհրդակցելու:

Ի վերջոյ, Համագումարը որոշեց մասնաւոր պատգամաւորութիւն մը ղրկել, եւ յանձնարարեց Դիւանին, որ նամակով մը Պատուիրակութեան Նախագահին յայտնէ Ժողովին ուրախութիւնն ու շնորհակալութիւնը՝ Ն. Վսեմութեան ցոյց տուած զոհողութեան եւ հայրենասիրութեան այս նոր ապացոյցին համար:

Օրակարգ

Վերակազմութիւն Ազգ. Պատուիրակութեան

Տիրէքթիւներու Յանձնաժողովին առաջարկութեանց քննութեան անցնելէ առաջ, Դիւանին յանձնուեցաւ հետեւեալ առաջարկութիւնը, զոր ստորագրած էին եօթ պատգամաւորներ.

Ստորագրեալներս, իբր տիրէքթիւ կ'ընդունինք Թուրքիոյ տրուած դաշնագրին առթիւ պատրաստուած նոր Յիշատակագրին մէջ նկատի առնուած կէտերը միայն, քանի որ Ազգ. Պատուիրակութեան պաշտօնավարութեան շրջանը կ'աւարտուի Դաշնագրին ստորագրութեամբ:

Համագումարը իւր երկրորդ նստաշրջանի մասին ընդհանուր տեղեկատուութիւն մը կը պատրաստէ եւ անմիջապէս կը ղրկէ պատգամաւոր ունեցող կեդրոններուն, որմէ ետքը վերջիններուն կ'իյնայ որոշել իրենց ընելիքը:

26 Յունիս 1920.

Եղիշէ Արքեպ. Դուրեան

Մ. Ս. Դաւիթ-Բէկ
Ա. Հանըմեան
Գ. Սինապեան
Մ. Տէրպէտէրեան
Զ. Պզտիկեան
Տոքթ. Բարսեղեան

Տիար Ճ. Մալքոլմ. Հայաստան այս տեսակ բաներով չի փրկուիր: Ինչո՞ւ կը զբաղիք այս բաներով, ի՞նչ է ասոնց օգուտը:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Կարծեմ բացատրութեան կարօտ է այս առաջարկութիւնը:

Տիար Ա. Չօպանեան. Արդէն կը հակասէ նախորդ նիստին մէջ տրուած որոշման:

Ամեն Դուրեան Արքեպիսկ. Մեր առաջարկը չի հակասեր նախորդ նիստին մէջ տրուած որոշման: Նախ՝ անոր առաջին մասը արդէն իսկ քուէարկուած է Համագումարին, այսինքն՝ թէ Պատուիրակութիւնը մինչեւ դաշնագրին ստորագրութիւնը իր գործը կ'աւարտէ: Եւ որովհետեւ նախատեսուած կէտեր կային, որոնց համեմատ Պատուիրակութիւնը պիտի կրնար տակաւին ժամանակ մը եւս մնալ, այդ կէտը անհրաժեշտ չնկատեցինք շօշափել, վերջնականապէս որոշուած համարելով: Գալով երկրորդ մասին, մենք այս շրջանին եկանք իբր համարառու մարմին, աղէկ կամ գէշ արդիւնք մը տեսանք: Մեզի կը մնայ դառնալ մեր ընտրողներուն ըսել, թէ մեր գործը աւարտած է եւ թէ Պատուիրակութիւնը կը մնայ մինչեւ դաշնագրին ստորագրութիւնը: Եթէ անոնք ուզեն ներքին յարաբերութիւն մը պահել Պատուիրակութեան հետ, թող ուղղակի բանակցին անոր հետ:

Տիար Ճ. Մալքոլմ. Շա՛տ սխալ, շա՛տ սխալ:

Տիար Ա. Չօպանեան. Այս առաջարկութեամբ՝ Պատուիրակութեան գործունէութիւնը սահմանափակ կրնայ ըլլալ: Պատուիրակութիւնը եթէ պիտի մնայ, պէտք է, որ անիկա ընէ ամեն ինչ որ անհրաժեշտ է եւ կամ պէտք է բնաւ գոյութիւն չունենայ: Օրինակի համար՝ դաշնագրին առթիւ տրուած Յիշատակագրին մէջ՝ մանտայի խնդիրը չէ յիշուած, մինչդեռ՝ Ազգ. Պատուիրակութեան համար անհրաժեշտ պարտք կայ, բնականաբար՝ Հանր. Պատուիրակութեան հետ համախոհաբար, ինչպէս ամեն բանի մէջ, այդ էական խնդրով զբաղիլ: Պատուիրակութիւնը պէտք է այսպէս լայն եւ լիակատար գործունէութիւն ունենայ, մինչեւ այն ժամանակը, որ որոշուած է: Անկից յետոյ, Պոլսոյ Պատրիարքին եւ Համազգային Ժողովին, ինչպէս եւ ուրիշ պաշտօնական մարմիններու հետ խորհրդակցելէ ետքն է որ կ'որոշուի, թէ պէ՞տք է մնայ Պատուիրակութիւնը, կամ պէ՞տք է հրաւիրուի երկրորդ համագումար մը, թէ՞ ոչ, փրկուող հայոց գործերը վարելու համար նո՞ր Պատուիրակութիւն մը պէտք է ընտրել կամ այդ գործը պէտք է թողուլ ուղղակի Պատրիարքարանին:

Ամեն. Դուրեան Արքեպ. Մեր բերած առաջարկութեամբ՝ Պատուիրակութեան գործունէութիւնը ո՛չ կը խափանուի, ո՛չ ալ կը սահմանափակուի: Մենք մեզ ընտրողներուն պիտի ըսենք. Պատուիրակութիւնը գործի վրայ է, խորհեցէ՛ք լաւ մը, թէ ի՞նչ կապեր կ'ուզէք պահել անոր հետ, եւ ըստ այնմ ըրէք պէտք եղածը: Այս իմաստով տեղեկագիր մը պիտի տրուի բոլոր պատգամաւոր ունեցող կեդրոններուն կամ գաղութներուն, իրենց պատգամաւորները ներկայ եղած ըլլան կամ ոչ:

Տիար Ա. Չօպանեան. Համագումարը այդպիսով ինք իր հեղինակութիւնը կը ջնջէ, որովհետեւ ի՞նչ կը մնայ իր արժէքէն, երբ իր գործը չլրացուցած՝ իր ընտրողներուն կարծիքը հարցնէ:

Ամեն. Դուրեան Արքեպ. Բայց Համագումարին անդամները չեն գիտեր, թէ իրենց ընտրողները ի՞նչ կը խորհին այսօր:

Տիար Տէր-Ստեփանեան. Եթէ կ'ուզէիք ատիկա գիտնալ, թող մանտա ընէիք միասին:

Ամեն. Դուրեան Արքեպ. Մանտա ուզեցինք, բայց կարեւորութիւն չտուիք: Ինչ որ Տիար Բարսեղեան կարդաց անցեալ նիստի մը մէջ՝ իբր Պոլսոյ պաշտօնական մարմիններուն կողմէ եղած արտայայտութիւն, մանտա մըն էր:

Տիար Գ. Սինապեան. Ժողովին ուշադրութիւնը կ'ուզեմ հրաւիրել մեր բերած առաջարկին երկրորդ մասին վրայ: Անոր մէջ ցոյց տրուած է տեղեկագիր մը ղրկել ընտրողներուն: Տեղեկագրին ձեւը Համագումարին կամքէն կախուած է. կա՛մ ամբողջ ատենագրութեանց մէկ օրինակը կը ղրկուի, եւ կա՛մ ամփոփում մը, որուն մէջ պէտք է ըսել, թէ մեր որոշմամբ, Պատուիրակութիւնը կը դադրի դաշնագրին ստորագրութենէն վերջ եւ իրենց կը մնայ մինչեւ այն ատեն որոշիլ, թէ ի՞նչ դիրք պիտի բռնեն անոր հանդէպ, կամ ի՞նչ տեսակ յարաբերութիւններ պիտի հաստատեն անոր հետ:

Ձայներ. Նախորդ նիստին որոշեցինք, որ Պատուիրակութիւնը դաշնագրին ստորագրութենէն ետք տակաւին ատին մը պիտի շարունակէ իր պաշտօնավարութիւնը:

Տիար Գ. Սինապեան. Այդ կէտը խնդրի առարկայ չէ: Կը կարծեմ, որ դաշնագրին ստորագրութեան համար առնուազն երկու ամիս պէտք պիտի ըլլայ, մինչդեռ մէկ ամիսը կը բաւէ որպէսզի ամեն ընտրող ստանայ մեր տալիք տեղեկութիւնը եւ իր ընելիքը որոշէ: Ընտրողները թերեւս կը պահեն Պատուիրակութիւնը, թերեւս նոր մը ընտրելու պէտք կը տեսնեն, կամ նոյնիսկ ուղղակի տիրէքթիւներ կու տան, որոնք անշուշտ աւելի զօրաւոր պիտի ըլլան, քան այստեղ 6-7 քուէով սահմանուած տիրէքթիւները: Իմ կարծիքովս՝ նոր տիրէքթիւ կազմելու կամ նոր Համագումարի հրաւիրման որոշում տալու իրաւունք չունինք մեր այսօրուան թուով: Լաւագոյն է, որ այս խնդիրներուն մասին խօսքը թողունք ընտրողներուն, համառօտ տեղեկագրով մը անմիջապէս անոնց ծանուցանելով կացութիւնը:

Տիար Ա. Թէրզիպաշեան. Ես, ընդհակառակը, ատոր մէջ որոշ ջանք մը կը տեսնեմ ամեն բան կազմալուծելու: Որովհետեւ եթէ ընդունինք այդ առաջարկութիւնը, պարզապէս հիմակուընէ խաղալիք դարձուցած պիտի ըլլանք Պատուիրակութիւնը: Կը զարմանամ, որ Տիար Սինապեանի պէս անձ մը, որ հմուտ է խորհրդարանական կանոններու, ստորագրեր է այդ առաջարկութիւնը: Խորհրդարան մը գործադիր իշխանութեան մը գործունէութիւնը կը սահմանաւորէ կա՛մ իր, կա՛մ նոր ընտրուելիք խորհրդարանի մը միջոցաւ: Լսուած բան չէ, որ խորհրդարան մը լուծուելէ վերջ՝ նոր օրինատէր իշխանութիւնը թողու զանազան շրջաններու կամայականութեան: Ասիկա իշխանութեան կազմալուծում մը կը նշանակէ:

Ամեն. Դուրեան Արքեպ. Մենք այդպէս չմտածեցինք, երբ դուք խօսեցաք Պատուիրակութեան մասին:

Տիար Ա. Թէրզիպաշեան. Ես պարզապէս կատարեցի քննադատութեան իմ պարտականութիւնս, եւ պատրաստ եմ կրկնելու ինչ որ ըսի: Ինչո՞ւ, ուրեմն, եկած պիտի ըլլայի՝ եթէ այդ քննադատութեան պարտականութիւնը պիտի անտեսուի:

Տիար Սինապեան. Բայց սխալ է ինչ որ կ'ենթադրէք մեր առաջարկութեան մասին:

Տիար Տէր-Ստեփանեան. Այս առաջարկն անընդունելի է շատ մը տեսակէտներով: Իր իմաստը, ինչպէս իր ձեւը, որոշ ձգտում մը ունին, եւ պէտք չկայ յայտնելու, թէ ի՛նչ է այդ ձգտումը: Համագումարը որոշեց նախապէս, որ Պատուիրակութիւնը մնայ մինչեւ դաշնագրին ստորագրութիւնը՝ եթէ դաշնագրով գոհացուցիչ արդիւնք մը ձեռք բերուի: Հակառակ պարագային համար ալ Համագումարը որոշեց, որ Պատուիրակութիւնը մնայ տակաւին ժամանակ մըն ալ, թրքահայութեան ճակատագրին նկատմամբ անհրաժեշտ եղող ձեռնարկներուն կատարման համար: Տիրէքթիւները, որոնք պիտի տրուին՝ այդ նպատակին կը ձգտին: Հիմա այս առաջարկը ընողները, հակառակ տրուած որոշման, Պատուիրակութեան գոյութեան անպատճառ վերջ տալ կ'ուզեն, առանց իսկ սպասելու դաշնագրին արդիւնքին: Յետոյ, անհասկնալի է իբր տիրէքթիւ նկատել միայն դաշնագրին

սրբագրութեան համար պատրաստուած Յիշատակագրին տրամադրութիւնները: Այս ալ անշուշտ նոյն որոշ ձգտումին մէկ արտայայտութիւնն է:

Երկրորդ հարց մը: Այս առաջարկը ստորագրողները ապացոյց կու տան, որ եկած են առանց մանտայի, եւ այդ իսկ պատճառով, չուզելով ոեւէ պատասխանատուութիւն առնել ապագային մասին, կ'ուզեն զիրենք ընտրողներուն ձգել ոեւէ որոշում ապագայի նկատմամբ: Անոնք չեն զգար, թէ այդպէսով անիշխանութիւն առաջ կու գայ, տաճկահայ դատը կրնայ մնալ առանց պաշտպանի, որով կանխաւ արհամարհուած կ'ըլլան այն բազմաթիւ նպաստաւոր կարելիութիւնները, որոնք կրնան ծնունդ առնել քաղաքական դրութեան փոփոխմամբ, փոփոխում, որ հաւանական ալ է, տրուած ըլլալով, թէ տաճկական այս դաշնագիրը, որուն սրբագրութեան կ'ուզուի կապել Պատուիրակութեան ամբողջ գործը, կրնայ չեղեալ նկատուիլ՝ թուրքերու ընդդիմութեան եւ մէջ առնուած որոշումներուն հետեւանքով:

Ամեն. Դուրեան Արքեպ. Կը կրկնեմ, որ մանտա ունինք:

Տիար Տէր-Ստեփանեան. Ուրեմն, այդ մանտան ձեզի իրաւունք կու տայ, որ Պատուիրակութեան եւ Համագումարին վե՞րջ տանք՝ նոյնիսկ եթէ ոչ մէկ գոհացում գտած ըլլան թրքահայերը:

Տիար Ճ. Մալքոլմ. Ես այն գիտեմ, որ մեր անգլիացի բարեկամները պիտի հակառակին այս տեսակ բանի մը: Անոնք կը փափաքին, որ այս Պատուիրակութիւնը մնայ մէկ-երկու տարի:

Տիար Տէր-Ստեփանեան. Բերուած առաջարկին անկեղծ չըլլալուն ամէնէն մեծ ապացոյցը սա է, որ անոր մէջ տիրէքթիւի համարժէք կը նկատուին այն կէտերը միայն, որոնք դաշնագրին սրբագրութեան կը վերաբերին եւ որոնք կը գտնուին Յիշատակագրին մէջ: Բայց ո՞վ որոշեց այդ կէտերը: Չէ՞ որ անոնք ալ այս Համագումարին կողմէ սահմանուեցան: Ուրեմն, ինչպէ՞ս կ'ըլլայ, որ Համագումարին որոշումներէն մաս մը արժէք կ'ունենայ եւ ուրիշ մաս մը՝ ոչ: Եթէ իր տուած տիրէքթիւները արժէք չունին, ուրեմն արժէք չունի նաեւ Յիշատակագիրը: Ո՛չ մէկ ներկայացուցչական մարմին կրնայ ըսել, որ ինք գոյութիւն չունի այլեւս, առանց ապագային մասին ոեւէ տնօրինութիւն ընելու: Ընտրողներուն ձգող ապագան՝ անիշխանութիւն ստեղծելն է, քանի որ ընտրողը իւր կամքը արտայայտելու ո՛չ մէկ օրինաւոր միջոց ունի, բացի նոր ներկայացուցչութիւն մը ընտրելէ: Եւ մենք ալ տարբեր բան չենք պահանջեր, նկատի առնելով նոր Համագումարի մը կարելիութիւնը: Եւ յետոյ, գաղութներու կամ կեդրոններու առաջարկներն ո՞վ պիտի կեդրոնացնէ եւ զանոնք գնահատելով որոշում մը պիտի առնէ՝ եթէ Պատուիրակութիւնը գոյութիւն չունենայ:

Տիար Թէրզիպաշեան. Գործադիր մարմինն իր ոյժը կը ստանայ այն օրէնսդիր մարմնէն, որմէ բղխած է: Արդ, Համագումարը, գործունէութեան որոշ իրաւասութիւն տալով Պատուիրակութեան՝ մինչեւ նոր Համագումարի հրաւիրումը, Պատուիրակութիւնը գիտէ թէ ի՞նչ է իր գործունէութեան շրջանը եւ նպատակը: Իսկ այսօր, եթէ գաղութներուն գրենք եւ անոնց կարծիքին ենթարկենք Պատուիրակութեան ոյժը, ես չեմ գիտեր, թէ Պատուիրակութիւնը ի՞նչ հեղինակութիւն պիտի կրնայ պահել: Ենթադրենք, թէ գաղութներէն մաս մը թեր եւ ուրիշ մաս մը դէմ կարծիք յայտնէ: Պատուիրակութիւնը որո՞ւն հպատակելու պարտաւոր պիտի զգայ ինքզինքը: Արդիւնքը ուրիշ բան չպիտի ըլլայ՝ եթէ ոչ անիշխանութիւն:

Տիար Ա. Բարսեղեան. Մեր առաջարկութիւնը բնաւ հակառակ չէ անցեալ նիստին մէջ քուէարկուած որոշումներուն: Համագումարը յանձնաժողով մը ընտրեց, որպէսզի համաձայնութիւն գոյանայ տիրէքթիւներու մասին: Այդ համաձայնութիւնը չգոյացաւ: Յանձնաժողովին անդամները համակարծիք գտնուեցան միայն այն կէտերու մասին, որոնք կը գտնուին Յիշատակագրին մէջ: Եւ արդէն Յանձնաժողովը կազմուեցաւ Յիշատակագրին կարդացուելէն առաջ, եւ տիրէքթիւներու համար

նկատառուած խորհրդակցութիւններն ալ ատկէ առաջ տեղի ունեցած են: Այն խնդիրները, որոնք տիրէքթիւներուն մէջ միաձայնութեամբ անցած են՝ կան արդէն Յիշատակագրին մէջ: Հետեւաբար, աւելորդ է զանոնք նորէն, իբր առանձին տիրէքթիւ, Պատուիրակութեան պարտադրել: Միւս կողմէ՝ փորձ մը կայ այստեղ՝ անհամաձայնութեան առարկայ դարձած կէտերը անցընելու անպատճառ յարաբերական մեծամասնութեամբ մը, մինչդեռ անցեալ տարի՝ տիրէքթիւներու պատկանող ամեն հարցի համար փնտռուեցաւ բացարձակ մեծամասնութիւնը: Արդեօ՞ք այս Համագումարը կրնայ աւելի յաւակնութիւններ ունենալ քան նախորդը, որ նոյնիսկ կարեւոր հարցերու մէջ այսպէս 6-7 քուէն բաւական կը նկատէ որոշում տալու համար: Մեր ուզածն է այս տեսակ մը ապօրինութեան վերջ տալ:

Նախագահ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան դիտել տուաւ, որ Ժողովն արդէն անգամ մը սկսած էր Տիրէքթիւներու Սահմանման Յանձնաժողովին բերած առաջարկութիւններով զբաղիլ, եւ պատրաստ էր լրացնել անոնց քննութիւնը:

Միւս կողմէ, Ն. Վսեմութիւնը խոստացաւ, որ անմիջապէս երբ այդ քննութիւնը աւարտի, Դիւանը Ժողովին պիտի բերէ Համագումարի այս Բ. նստաշրջանին գործունէութիւնը պատկերացնող համառօտ տեղեկագիր մը, որպէսզի վաւերացուելով տպուի եւ, ինչպէս անցեալ տարի եղաւ, ղրկուի բոլոր պատգամաւոր ունեցող կեդրոններու կամ գաղութներու:

Դիւանին առաջարկութեան վրայ, Համագումարը որոշեց նախապէս շարունակել Տիրէքթիւներու Սահմանման Յանձնաժողովին տեղեկագրին քննութիւնը եւ յետոյ նկատի առնել ներկայացուած առաջարկը:

Կարդացուեցաւ Յանձնաժողովին բերած եօթներորդ առաջարկութիւնը.

«7. Թուրքերու հետ համաձայնութեան հարց. Պատուիրակութիւնն իրաւասութիւն ունի ի հարկին, եւ եթէ կարելի ըլլայ, թուրքերու հետ համաձայնութեամբ, ապահովել Տաճկահայաստանի գէթ մէկ մասին ազատագրումը»:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Ժողովն անշուշտ ազատ է ընդունելու կամ մերժելու այս առաջարկութիւնը: Բայց եթէ պիտի ընդունի, պէտք է ըսել անոր մէջ, որ թուրքերու հետ բանակցութիւնները պիտի կատարուին Դաշնակից պետութեանց հետ համաձայնութեամբ:

Տիար Ա. Չօպանեան. Կը կարծեմ, թէ շատ փափուկ հարց մըն է ասիկա, եւ անոր մասին գրաւոր տիրէքթիւ տալը խոհեմութիւն չէ: Պատուիրակութիւնը կա՛մ պէտք չէ գոյութիւն ունենայ եւ կա՛մ եթէ գոյութիւն պիտի ունենայ, պէտք է որ լայն իրաւասութիւն տրուի իրեն: Որովհետեւ ո՛չ մէկ կառավարութիւն չի կրնար գործի գլուխ անցնիլ, եթէ առաջուց բացարձակապէս կաշկանդեն իւր ձեռքերը: Կարծեմ, թէ պէտք է բաւականանանք ատենագրութեանց մէջ ատենագրելով այդ բաղձանքը, թեւ ես իմ մասիս մեծ յոյս մը չունիմ, որ թուրքերու հետ համաձայնութեամբ կարելի է ոեւէ արդիւնք ձեռք բերել, եթէ Դաշնակիցներու կողմէ ճնշում մը չըլլայ:

Տիար Ա. Բարսեղեան. Ես եւս այս կէտին ալ համամիտ գտնուած էի Յանձնաժողովին մէջ, բայց, ինչպէս ըսի արդէն, այդ միջոցին տակաւին ծանօթացած չէինք Յիշատակագրին, որուն տեղեկանալէ վերջ այլեւս աւելորդ կը նկատեմ այս առաջարկութիւնը:

Տիար Ա. Չօպանեան. Օրինակ մը տամ այս մասին: Անցեալ տարի՝ տիրէքթիւներուն մէջ տրուած չէր հայ-քրտական համաձայնութեան մասին ոեւէ յանձնարարութիւն, եւ Ժողովին մէջ ալ կարծիք յայտնուած էր, որ պէտք չէ քաջալերել անկախ Քիւրտիստանի մը կազմութիւնը: Բայց Պատուիրակութիւնը արտաքոյ կարգի պարագաներու առջեւ գտնուեցաւ եւ անհրաժեշտ նկատեց այդպիսի կարգադրութիւն մը ընել ո՛չ միայն Դաշնակից պետութեանց, այլ նաեւ շատ մը հայ կարեւոր անձնաւորութեանց խորհուրդով: Այս տարի ալ կրնան պատահիլ արտասովոր պարագաներ եւ Պատուիրակութիւնը ստիպուի որոշ չափով անդին անցնիլ իրեն

տրուած տիրէքթիւներէն: Էականը սա է, որ Պատուիրակութեան վրայ վստահութիւն ըլլայ:

Քուէարկութիւն կատարուելով, 14 պատգամաւորներու ներկայութեան 2-ի դէմ 12 քուէով որոշուեցաւ տիրէքթիւներուն մէջ չդնել այդ կէտը, այլ միայն, Տիար Չօպանեանի առաջարկին համաձայն, ատենագրութեանց մէջ ատենագրել, թէ Պատուիրակութիւնը իրաւասութիւն ունի այդ մասին յարմար դատածը ընելու, Դաշնակից պետութեանց հետ համաձայնութեամբ:

Տիար Վահան Թէքէեան. Կը զարմանամ, թէ անոնք իսկ, որոնք ստորագրած էին պահ մը առաջ կարդացուած այն բանաձեւը, որով չէին ուզեր ոեւէ իրաւասութիւն տալ Պատուիրակութեան, հիմա կը քուէարկեն այն տեսակ որոշում մը, որ լայն ու պատասխանատու գործունէութեան իրաւասութիւն մը կու տայ Պատուիրակութեան: Պարզապէս կը հաստատեմ այն հակասութիւնը, որուն մէջ կ'իյնան եւ զոր կրնանք նշան մը նկատել իրենց անկեղծութեան:

Կարդացուեցաւ Տիրէքթիւներու Սահմանման Յանձնաժողովին բերած 8-րդ առաջարկութիւնը.

«8. Բրոբականտ. Ազգ. Պատուիրակութիւնը պէտք է շարունակէ բրոբականտի գործը, նախապատուութիւն տալով հետեւեալ երկու միջոցներուն, եւ իրագործելով անոնցմէ առնուազն մէկը: 1. Հրատարակել մեծ tirage-ով թերթ մը, շաբաթաթերթ կամ առ առաւելն կիսամսեայ, ուր ուժգին կերպով պաշտպանուին հայութեան շահերը եւ, մասնաւորապէս, անոր անկախութեան ու վնասուց հատուցման իրաւունքները: 2. Նոյն նպատակով յօդուածներ հրատարակել տալ անգլերէն եւ ֆրանսերէն առնուազն մէկ մէկ թերթերու մէջ, դրամական օժանդակութեան փոխարէն»:

Տիար Ա. Չօպանեան. Որպէսզի այս տիրէքթիւը նշանակութիւն մը ունենայ, պէտք է նաեւ, որ Համագումարը կարգադրութիւն մը ընէ նիւթական միջոցներ ապահովելու համար:

Տիար Զ. Պզտիկեան. Մինչեւ հիմա եղած հրատարակութիւններէն ի՞նչ խէր տեսանք, որ ասկէ վերջն ալ շարունակենք: Օրուան լուրերը եւրոպական թերթերէն 15-20 օր վերջ տալու համար հրատարակուելիք թերթ մը չեմ կարծեր, որ ոեւէ օգուտ ունենայ մեր դատին: Ըստ իս՝ այս տեսակ ձեռնարկ մը աւելորդ է եւ ի զուր անոր համար պիտի ծախսուի դրամ մը, որ կրնար այլապէս օգտակար ըլլալ: Բայց համաձայն եմ, որ եւրոպական թերթերու միջոցով բրոբականտը շարունակուի:

Տիար Ա. Չօպանեան. Մեր հայրենակիցներէն ոմանք բրոբականտը անօգուտ կը նկատեն: Սխալ է ասիկա: Օրինակը տաճիկներէն առնենք: Անոնք այս միջոցին ահագին ծախք կ'ընեն եւ ամեն ճիգ կը թափեն բրոբականտ ընելու համար ճիշդ այն ձեւով, որով մենք ըրինք, այսինքն՝ միթինկներ եւ քոնֆերանսներ սարքել, պրոշիւր կամ թերթ հրատարակել: Մենք անշուշտ չունինք անոնց ունեցած միջոցները՝ շատ աւելի տարածուն եւ ազդու դարձնելու համար մեր բրոբականտը: Բայց մտածել, թէ ինչ որ ըրինք անօգուտ էր՝ ճիշդ չէ: Տաճիկներուն ըրած բրոբականտը պատասխան մըն էր հայկական բրոբականտի դէմ: Եթէ առիթ ունենաք տեսնելու Echo de l'Islam թերթը, պիտի տեսնէք, թէ բոլոր յօդուածներն ալ մեր կողմէ եղած հրատարակութիւններու դէմ գրուած են: Մեր բրոբականտը պէտք է շարունակուի, բայց դրամ պէտք է, որպէսզի աւելի ազդեցիկ ըլլայ:

Տիար Տէր-Ստեփանեան. Յանձնաժողովին առաջարկած թերթը Bulletin-ը կամ անոր նման հրատարակութիւն մը չէ: Bulletin-ը, տրուած ըլլալով իւր կազմութիւնը, չի կրնար կատարել այն դերը, զոր մենք կ'ակնկալենք մեր առաջարկած թերթին հրատարակութենէն: Մենք կը փափաքինք, որ այդ հրատարակութիւնը արտաքին աշխարհին առջեւ պարզէ մեր դատը, մեր պահանջները, կորովով, լուրջ ու խորունկ ուսումնասիրութիւններով: Ապացուցանելու համար, թէ այս տեսակ հրատարակութիւն մը այնքան օգտակար կրնայ ըլլայ, յիշեմ միայն իտալացի նախորդ նախարար Պ. Մէտայի այն խօսքը, զոր ինծի ըրաւ օր մը, ըսելով, թէ այլեւս չի կրնար յօդուած գրել

Հայկական Խնդրին վրայ, որովհետեւ Armenia չի հրատարակուիր: Պ. Մէտա՝ այդ թերթէն կ'առնէր իր նիւթերը՝ Հայկական Դատին պաշտպանութեան համար: Թուրքերուն հրատարակած Echo de l'Islamը այդ ուղղութեամբ խմբագրուած թերթ մըն է, եւ կը հաւատամ, որ շատ ազդեցութիւն կը գործէ: Մենք պէտք չէ անտարբեր մնանք: Այդ թերթը պէտք է հիմնուի եւ կրնայ մնալ նոյնիսկ Պատուիրակութեան պաշտօնին լրանալէն ետքն ալ, իբր աշխարհի հանրային կարծիքին առջեւ ընդհանուր հայութեան իրաւանց պաշտպանութեան նուիրուած օրկան մը: Չեխօ-սլովաքները եւ ուրիշ ազգեր, որոնք այլեւս գործ չունին Վեհաժողովին հետ, քանի որ իրենց բախտը վճռուած է, միշտ կը շարունակեն այստեղ՝ Փարիզի մէջ, հրատարակել իրենց դատին պաշտպանութեան նուիրուած օրկաններ:

Յանձնաժողովին առաջարկութիւնը քուէարկութեան դրուելով՝ 14 պատգամաւորներու ներկայութեան ընդունուեցաւ 13 քուէով: Ձեռնպահ մնաց Տիար Զաքարիա Պզտիկեան, առաջարկութեան առաջին մասին համաձայն չըլլալով:

Համագումարը յառաջիկայ նիստին յետաձգեց Տիրէքթիւներու Սահմանման Յանձնաժողովին 9-րդ առաջարկութեան քննութիւնը եւ յաջորդ առաջարկութեանց անցաւ:

Կարդացուեցաւ Յանձնաժողովին 10-րդ առաջարկութիւնը.-

«10. Կամաւորական բանակ. Պատուիրակութիւնը պէտք է դիմէ Դաշնակից կառավարութիւններուն կամ անոնցմէ մէկուն, խնդրելով, որ իրեն օժանդակեն արեւմտահայ կամաւորական բանակ մը կազմելու՝ Տաճկահայաստանի գրաւման գործածուելու համար: Բանակը կը հաւաքուի եւ կը մարզուի ռեւէ base-ի մը մէջ, ու երբ պատրաստ ըլլայ, կը գործածուի՝ ըստ Հանրապետութեան գրաւման բանակի սպայակոյտի հրահանգներուն»:

Յանձնաժողովի անդամներէն Տիար Տոքթ. Ա. Բարսեղեան յայտարարեց, թէ ինք համաձայն չէ այս առաջարկութեան ամբողջութեան:

Տիար Զ. Պզտիկեան. Ես հակառակ եմ, որ Կիլիկիոյ մէջ ըլլալիք կամաւորական կազմակերպութիւնը Հանր. կառավարութեան հրամանին ենթարկուի, քանի որ Կիլիկիա ֆրանսական ազդեցութեան շրջանակին մէջ է եւ այնտեղ ըլլալիք կարգադրութիւնները պէտք է ենթակայ մնան ֆրանսական իշխանութեանց հաւանութեան: Եթէ պարագաները նպաստաւոր ըլլան, որ ֆրանսացիք հաւանին կամաւորական կազմակերպութիւն մը, այդ պարագային պէտք է հրամանատարութիւնը իրենց մնայ:

Առաջարկութիւնը քուէարկութեան դրուեցաւ 14 պատգամաւորներու ներկայութեան եւ ընդունուեցաւ 9 ձայնի մեծամասնութեամբ:

Կարդացուեցաւ Տիրէքթիւներու Սահմանման Յանձնաժողովին 11-րդ եւ վերջին առաջարկութիւնը.

«11. Ամերիկահայ գաղութ. Պատուիրակութիւնը, կարելիօրէն Հանրապետութեան Պատուիրակութեան գործակցութեամբ, պէտք է ջանայ վերջ մը տալու Ամերիկայի հայ գաղութին եւ հոն ուղարկուած առաքելութեան պառակտման, վերականգնելով Ամերիկահայ Ազգային Միութիւնը»:

Յանձնաժողովին անդամներէն Տիար Տոքթ. Բարսեղեան յայտարարեց, թէ ինք համաձայն չէ առաջարկութեան այս ձեւով խմբագրութեան:

Տիար Զաքարիա Պզտիկեանի առաջարկութեան վրայ, որոշուեցաւ ուրիշ գաղութներու մասին ալ նոյն յանձնարարութիւնը ընել, որով՝ առաջարկութիւնը բարեփոխուեցաւ հետեւեալ ձեւով.

«11. Ամերիկայի եւ ուրիշ վայրերու հայ գաղութները. Պատուիրակութիւնը, կարելիօրէն Հանրապետութեան Պատուիրակութեան գործակցութեամբ, պէտք է ջանայ վերջ մը տալու Ամերիկայի եւ ուրիշ վայրերու հայ գաղութներուն, ինչպէս նաեւ Ամերիկա ուղարկուած առաքելութեանց պառակտման, վերականգնելով Ամերիկահայ Ազգային Միութիւնը»:

Այս ձեւով քուէարկութեան դնելով, առաջարկութիւնը՝ 14 պատգամաւորներու ներկայութեան՝ ընդունուեցաւ 11 քուէով: Տիար Բարսեղեան ձեռնպահ մնաց:

Տիար Արշակ Չօպանեան առաջարկեց, որ Համագումարը պիտի ճէի յանձնաժողով մը կազմէ, եւ այդ առթիւ յայտարարեց, թէ Պատուիրակութեան ձեռքը դրամական միջոցներ չկան՝ գործերու հետապնդութեան համար:

Տիար Ճ. Մալքոլմ. Անցեալ տարի ըսի, որ խոշոր հատուցում չպահանջէք, մտիկ չըրիք, միլիառներ պահանջեցիք: Եթէ համեստ պահանջում մը ըրած ըլլայիք, հաւանական է, որ այսօր տրուած ըլլար:

Տիար Ռուբէն Որբերեան. Նախ իմ խորին շնորհակալութիւններս կը յայտնեմ, որ ի յարգանս Եթովպիոյ հայ գաղութին՝ ընդունեցիք զիս իբր իրենց պատգամաւոր: Եթովպիոյ հայերը, որքան ալ անջատուած եւ հեռու կ'ապրին, միշտ ամէնաբուռն կերպով հետաքրքրուած են ազգային դատով: Առաջին առթիւ իրենց պիտի ներկայացնեմ Ազգ. Պատուիրակութեան երկու տարուան գործունէութիւնը: Շնորհակալ պիտի ըլլամ Դիւանին, եթէ այդ մասին տեղեկութիւններ տայ ինծի: Քիչ մը առաջ դրամի խօսք եղաւ, ըսուեցաւ, թէ Պատուիրակութիւնը նիւթական շատ անձուկ դրութեան մը մէջ կը գտնուի: Կրնաք վստահ ըլլալ, որ եթէ երբեք Եթովպիոյ հայերն համոզուին, թէ Պատուիրակութիւնը իսկապէս արդիւնք մը կու տայ, սիրով պիտի ընծայեն նիւթական շատ մեծ աջակցութիւն մը, ինչպէս ըսին ինծի՝ մեկնած միջոցիս: Բայց ասոր համար՝ անհրաժեշտ է, որ գիտնան, թէ ի՞նչ կ'ընէ Պատուիրակութիւնը: Քննադատութեան համար չէ, որ կ'ուզեն գիտնալ, այլ՝ պարզապէս, տեղեկութիւն ունենալու համար: Անոնք կը խնդրեն, որ զիրենք ազգին անհարազատ զաւակները չնկատէք: Անոնք հաւասարապէս հայ են որքան ամեն տեղ ցրուած հայերը, եւ կը փափաքին չմոռցուիլ: Նիւթական աջակցութեան մասին իրենց պատրաստակամութիւնը անոնք յայտնած են երկու տարի առաջ, եւ նոյնիսկ գրած ալ են Պատուիրակութեան, բայց իրենց խօսք մը ըսող չէ եղած: Անկէ ի վեր՝ ազգային պէտքերու համար տասնեակ հազարաւոր լիրաներ տուին եւ միշտ պատրաստ են տալու, եթէ աւելի սերտ եւ աւելի տաք յարաբերութիւն մը պահուի իրենց հետ: Դարձեալ իրենց փափաքն է, որ ամեն բան չզլացուի ազգ. համերաշխութիւն մը ստեղծելու համար: Խնդրեցին ինծմէ, որ այս մասին թախանձագին կոչում ընեմ ամէնուր: Կը հաւատամ, որ դրամը ջիղն է մեր դատին, եւ անգամ մըն ալ կը կրկնեմ, որ մեր գաղութը սիրով պիտի տայ պէտք եղածը: Բայց եթէ միութիւն չըլլայ, այս բոլորը զուր կը ծրագրէք, թուղթի վրայ պիտի մնան, որովհետեւ չեմ կարծեր, որ ռեւէ մէկը դրամ տայ այս պայմաններուն մէջ: Քանի որ դրօշակ մը ունինք այսօր եւ այս դրօշակը բարձրացեր է Արարատի վրայ, խմբուինք անոր շուրջը եւ աշխատինք զօրացնելու այն պետութիւնը, որ կազմուեցաւ: Ան ալ մէկն է այն տիրական բաղձանքներէն, որոնցմով տոգորուած է Եթովպիոյ հայ գաղութը:

(Ծափահարութիւններ)

Տիար Արշակ Չօպանեան. Ազգ. Պատուիրակութիւնը արդէն երբեք իր գործունէութիւնը չէ սահմանափակած լոկ թրքահայ խնդիրներու մէջ, անիկա միշտ ձեռք-ձեռքի եւ նոյնքան կորովով դիմումներ ըրած է, Հանր. Պատուիրակութեան հետ, այնքան Ղարաբաղի, որքան նաեւ Կիլիկիայի համար: Հանրապետութեան տրուած ամերիկեան ալիւրի գործին մէջ ալ գլխաւոր դերն Ազգ. Պատուիրակութիւնը կատարեց: Տարակոյս չկայ, որ այս ոգին պիտի տիրապետէ նաեւ իր յառաջիկայ գործունէութեան մէջ:

Նիստը փակուեցաւ ժամը 5 ½ -ին:

ՀԱԱ, ֆ. -430, ց. 1, գ. 66, թթ. 38-60: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ ԻԴ

28 Յունիս 1920, ժամը 4 ½-ին
Նախագահութեամբ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեանի.

Ներկայ էին 17 պատգամաւոր՝
Ամեն. Եղիշէ Արքեպիսկոպոս Դուրեան, Բարսեղեան, Դաւիթ-Բէկ, Թէրզիպաշեան, Թէքէեան, Թումայեան, Մալքոլմ, Մսըրլը Պէյ, Տոքթ. Նեւրուզ, Վսեմ. Գ. Նորատունկեան, Որբերեան, Չօպանեան, Պապաջանեան, Պզտիկեան, Սինապեան, Տէրպէտէրեան, Տէր-Ստեփանեան:

Օրակարգ

1. Վերակազմութիւն Ազգ. Պատուիրակութեան

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Ընթերցում ատենագրութեան
Կարդացուեցաւ եւ վաւերացուեցաւ Յունիս 26-ի նիստին ատենագրութիւնը:
2. Նամակ Նախագահ Վսեմ. Տիար Գ. Նորատունեանի առ Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար
Կարդացուեցաւ հետեւեալ նամակը, զոր Նախագահ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան, Համագումարի նախորդ նիստին որոշման համաձայն, յանուն Ժողովին ուղղած էր Ազգ. Պատուիրակութեան Վսեմ. Նախագահին՝ գոհունակութիւն ու շնորհակալութիւն յայտնելու համար իր պաշտօնը շարունակելու մասին ցոյց տուած պատրաստակամութեան նկատմամբ:

Փարիզ, 27 Յունիս, 1920.

Վսեմաշուք Պօղոս Փաշա Նուպար,

Տիար Նախագահ,
Ինչպէս արդէն առիթ ունեցայ Ձեր Վսեմութեան հաղորդելու, Համագումարը՝ որուն կարդացի Ձեր վերջին նամակը եւ անոր կցուած գիրերը, ինծի յանձնարարեց Ձեզի յայտնել իւր գոհունակութիւնն ու շնորհակալութիւններն այն խոստումին նկատմամբ, զոր Ձեր Վսեմութիւնը կ'ընէ, գտնելու համար այն տեսակ կարգադրութիւն մը, որ իրեն թոյլ տայ, իր միջոցներուն ներած չափով, գործակցիլ ապագայ Ազգ. Պատուիրակութեան:
Կը ձայնակցիմ մեր ընկերակիցներուն, խնդրելու համար Ձերդ Վսեմութենէն, որ հակառակ մեզի այնքան թանկագին եղող իր առողջական վիճակին, կարելին ընէ, որպէսզի այս խնդիրը, որչափ հնարաւոր ըլլայ, շուտով իւր պատշաճ լուծումը ստանայ յօգուտ ազգային շահուց, եւ Համագումարն ալ, մեր ամէնուս բաղձանքին համեմատ, կարենայ փակել իր նստաշրջանը:
Հաճեցէ՛ք ընդունիլ, Տիար Նախագահ, մեր լաւագոյն զգացմանց հաւաստիքը:
Գաբրիէլ Նորատունկեան
Նախագահ
Ազգ. Համագումարի

Վսեմ. Տիար Գ. Նորատունեան. Վսեմ. Փաշան պիտի գայ քիչ մը վերջը, եւ իւր ներկայութեան կը խորհրդակցինք այս խնդրին վերջնական կարգադրութեան մասին: Ն. Վսեմութիւնը անշուշտ իր առաջարկը պիտի բերէ:
3. Հեռագիր Պոլսոյ Համազգային Խորհուրդին:
Կարդացուեցաւ Պոլսոյ Համազգային Խորհուրդին կողմէ Պատուիրակութեան Վսեմ. Նախագահին հրաժարականին առթիւ Դիւանին ուղղուած հետեւեալ հեռագիրը.

Վսեմ. Գաբրիէլ էֆենտի Նորատունկեան
12, Avenue de Prەsident Wilson
Paris

Կ. Պոլիս, 24 Յունիս 1920, via Malta.
Երեք հայ յարանուանութեանց ընդհանուր ժողովը, ամբողջական նստի մը մէջ, մեծապէս գնահատելով Պօղոս Փաշայի մատուցած թանկագին ծառայութիւնները, իր խոր ցաւը կը յայտնէ անոր հրաժարականի նկատմամբ, եւ թախանձագին կը խնդրէ Ձեզմէ կարելին ընել՝ Ն. Վսեմութիւնը համոզելու համար, որ շարունակէ իր բարձր պաշտօնը: Անձկութեամբ կը սպասենք պատասխանի:

Զաւէն (Պատրիարք Կ. Պոլսոյ)
Սայիլեան (Պատրիարք Կաթողիկէ Հայոց)
Պէզճեան (Ազգապետ Բողոքական Հայոց)

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Նիստէն վերջ կը հեռագրենք, թէ հրաժարականի խնդիրը կարգադրուած է:

Յայտարարութիւն Տիար Գ. Սինապեանի:

Տիար Գ. Սինապեան, որ Պատուիրակութեան Վսեմ Նախագահին հետ տեսնուած էր, յայտարարեց, թէ Ն. Վսեմութիւնը պաշտօն յանձնեց իրեն՝ իր շնորհակալութիւնները յայտնելու Համագումարի Դիւանին կողմէ անցեալ օր ղրկուած նամակին համար: Ն. Վսեմութիւնը, յայտնեց Գ. Սինապեան, կը փափաքէր անձամբ գալ այսօրուան նիստին, խորհրդակցելու համար Պատուիրակութեան կազմութեան մասին, բայց, իր իսկ բառերով, «Տիար Ահարոնեանի հետ ունեցած բանակցութիւններս տակաւին ելքի մը յանգած չըլլալով», վաղը միայն պիտի կրնայ գալ:

Օրակարգ

1. Վերակազմութիւն Ազգ. Պատուիրակութեան

Կարդացուեցաւ Տիրէքթիւներու Սահմանման Յանձնաժողովին 9-րդ առաջարկութիւնը, որուն նկատառումը յետաձգուած էր նախորդ նիստին մէջ, եւ որ Յանձնաժողովին տեղեկագրին մէջ ներկայացուած էր հետեւեալ ձեւով.
«9. Այս հարցի մասին՝ Յանձնաժողովին մէջ յայտնուեցան հետեւեալ կարծիքները.
Ա. Պ. Պ. Թէրզիպաշեան եւ Տէր-Ստեփանեան կը կարծեն, որ Պատուիրակութիւնը պէտք է դիմէ Երեւանի կառավարութեան, առաջարկելով անոր՝ միացումը կատարել դաշնագրին ստորագրութենէն անմիջապէս վերջ, եւ եթէ դաշնագիրը նուազագոյն գոհացում մը տայ արեւմտահայերուն, այդ միացումը ըլլայ Պ. Խատիսեանի առաջարկութեան հիման վրայ: Մերժումի պարագային,

Պատուիրակութիւնը պէտք է շուրջ 50 անդամէ բաղկացած արեւմտահայ Համագումարի մը ընտրութեան ձեռնարկէ, զայն գումարելով Երեւան եւ անոր յանձնելով միացման եւ ուրիշ արեւմտահայ հարցերը: Այդ Համագումարը կրնայ, համաձայնութեան պարագային, ինքզինքը արեւմտահայ խորհրդարան նկատել եւ ձուլուելով Երեւանի խորհրդարանին հետ՝ կազմել Միացեալ խորհրդարան:

Բ. Պ. Սինապեան կը կարծէ, որ այս մասին ալ Համագումարը ոեւէ որոշում չառնելով, պէտք է միայն հաղորդէ դրութիւնը իւր մէջ ներկայացուցիչ ունեցող ամեն մարմիններուն, անոնց թողլով ոեւէ որոշում:

Գ. Պ. Բարսեղեան կը կարծէ, որ Պատուիրակութիւնը պէտք է անմիջապէս առաջարկէ Երեւանի կառավարութեան միացում մը գոյացնել Պ. Խատիսեանի նամակին՝ խորհրդարանի ու կառավարութեան վերաբերող մասերու հիման վրայ: Գալով Պատուիրակութիւններու հարցին, կը կարծէ, որ Համագումարը պէտք է ընտրէ չորս անձնաւորութիւններ, որոնցմէ երկուքը Երեւանի կառավարութեան կողմէ Հանրապետութեան Պատուիրակութեան անդամ նշանակուին, ու այդպիսով կազմուի Միացեալ Պատուիրակութիւնը»:

Տիար Վահան Թէքէեան յայտնեց, թէ Յանձնաժողովին այս առաջարկութիւնը կը շօշափէ միացման համար եղած վերջին ձեռնարկը եւ այն առաքելութիւնը, որ այդ առթիւ ղրկուեցաւ Կովկաս: Հետեւաբար, իբր անդամ նոյն առաքելութեան, պատրաստակամութիւն ցոյց տուաւ լիակատար ծանօթութիւն տալու բանակցութեանց մասին, նկատելով, որ այդ խնդրին նկատմամբ արդէն անգամ մը խօսուեցաւ Պատուիրակութեան համարատուութեան ընթացքին եւ նկատառումը վերապահուեցաւ: Տիար Թէքէեան աւելցուց, թէ այդ տեղեկատուութիւնը անհրաժեշտաբար պէտք է հիմնուի տօքիմաններու վրայ, որոնցմէ մաս մը Պատուիրակութեան մօտն են, եւ առաջարկեց, որ եթէ ժողովը փափաքի, յաջորդ նիստին բերուին, կարդացուին եւ իր տալիք տեղեկութեանց հետ անցնին ատենագրութեանց մէջ:

Նոյնպէս Կովկաս ղրկուած առաքելութեանց անդամ Տիար Տէր-Ստեփանեան պաշտպանեց այս տեսակէտը, իւր կարգին պահանջելով, որ բոլոր տօքիմանները ատենագրուին ատենագրութեանց մէջ:

Տիար Արշակ Չօպանեան ալ համամտութիւն յայտնեց այդ մասին, եւ պէտք ցոյց տուաւ, որ Համագումարը տեղեկանայ այդ խնդրին բոլոր մանրամասնութիւններուն, քանի որ խնդիրը՝ ինքնին՝ ազգ. ժամանակակից պատմութեան կարեւոր էջերէն մէկը կը կազմէ: «Ես կը կարծեմ, թէ,-յարեց,-այս իրիկուն աճապարանքով լուծելիք հարց մը չէ ասիկա: Պ. Խատիսեան քանի մը օրէն Փարիզ կու գայ եւ անշուշտ իւր խորհուրդներն ալ այս մասին կրնան օգտակար դառնալ, քանի որ համաձայնութեան հիմ ցոյց կը տրուին իւր կողմէ եղած վերջին առաջարկները: Պատուիրակութեան կազմութեան միջոցին Համագումարը պէտք է նկատի առնէ, թէ ինչ պիտի ըլլան իւր յարաբերութիւնները միւս Պատուիրակութեան հետ: Բայց միացման խնդիրը պէտք չէ թողուի դաշնագրի ստորագրութենէն ետքը: Տաճկահայաստանէն նոյնիսկ եթէ երկու թիզ հող միացուի Հանրապետութեան, ամէնքն ալ՝ թրքահայ, ռուսահայ, պարսկահայ, պէտք է ներկայացուցիչ ունենան հայ տէրութեան կառավարութեան մէջ:

15 պատգամաւորներու ներկայութեան քուէարկութիւն կատարելով, 8 ձայնի մեծամասնութեամբ որոշուեցաւ յաջորդ նիստին լսել Տիար Թէքէեանի տալիք բացատրութիւնները:

Տիար Բարսեղեանի մէկ հարցման վրայ Տիար Թէքէեան յայտնեց, թէ առաքելութեան նկատմամբ գրաւոր զեկուցում չէ եղած Պատուիրակութեան, եւ այդ մասին հետեւեալ բացատրութիւնը տուաւ.

Տիար Վահան Թէքէեան. Մեզի պաշտօն մը յանձնուեցաւ, ստանձնեցինք ու ելանք գացինք: Պաշտօնը դիւրին չէր, բայց ըրինք՝ ինչ որ կարելի էր: Թերեւս մեզի

տրուած իրաւասութիւններէն աւելի զիջումներ ալ ըրինք՝ անպատճառ յաջողցնելու համար մեր պաշտօնը: Բայց նորէն օգուտ չըրաւ եւ ստիպուեցանք ընդհատել բանակցութիւնները ու մեկնիլ: Վերադարձիս՝ ամիս մը Պոլիս մնացի: Այդ միջոցին լսեցի, թէ Փաշան հեռագրով յայտնած է, թէ կ'ընդունի այն պայմանները, զորս Տիար Խատիսեան ներկայացուցած էր իբր հակառաջարկներ: Մտածեցի, թէ պատգամաւորներու ստիպման տակ այնպէս վարուեր է, եւ այլեւս գրաւոր տեղեկատուութիւն մը չպատրաստեցի: Երբ Փարիզ դարձայ, Փաշան ալ ատանկ բան մը չուզեց, բայց Պատուիրակութիւնը անտեղեակ չմնաց, որովհետեւ ընկերս՝ Տիար Տէր-Ստեփանեան, իսկոյն Փարիզ անցած եւ բերանացի տեղեկութիւն տուած էր իրեն:

Տիար Բարսեղեան պահանջեց, որ գրաւոր ըլլայ Տիար Թէքէեանի տեղեկատուութիւնը, բայց ժողովը ոեւէ պայման չորոշեց այդ մասին:

Նիստը փակուեցաւ ժամը 5 ½ -ին:

ՀԱԱ, ֆ. -430, g. 1, գ. 66, թթ. 61-68: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ ԻԵ

29 Յունիս 1920, ժամը 4-ին,
նախագահութեամբ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեանի.

Ներկայ էին 15 պատգամաւոր՝

Ամեն. Դուրեան Արքեպիսկ., Բարսեղեան, Դաւիթ-Բէկ, Թէրզիպաշեան, Թէքէեան, Թումայեան, Մսըրլը Պէյ, Վսեմ. Գ. Նորատունկեան, Որբերեան, Չօպանեան, Պապաջանեան, Պզտիկեան, Սինապեան, Տէրպէտէրեան, Տէր-Ստեփանեան:

Օրակարգ

1. Վերակազմութիւն Ազգ. Պատուիրակութեան

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Ընթերցում ատենագրութեան

Կարդացուեցաւ եւ վաւերացուեցաւ Յունիս 28-ի նիստին ատենագրութիւնը:

Օրակարգ
1. Վերակազմութիւն Ազգ. Պատուիրակութեան

Համագումարի նախորդ նիստի որոշման համաձայն, Կովկասի առաքելութեան անդամ Տիար Վահան Թէքէեան պարզեց միացման խնդրին համար Երեւանի մէջ Հանրապետութեան ներկայացուցիչներուն հետ կատարուած բանակցութիւնները եւ անոնց խռովութեան պատճառները:

Տիար Վ. Թէքէեանի խօսք առնելէն առաջ, Տիար Թէրզիպաշեան առաջարկեց, որ վիճաբանութիւն չմնայ այն խնդրին նկատմամբ, այլ Ժողովը լսէ տրուած տեղեկութիւնները իբր յետահայաց ակնարկ մը միացման խնդրին նկատմամբ:

Տիար Չօպանեան կրկնեց այս առաջարկութիւնը, աւելցնելով, որ «ինչ որ է այլեւս պատմութեան կը վերաբերի: Անոնց անդրադառնալը ժամանակի կորուստ պիտի ըլլայ. ընդհակառակը, պէտք է օգտուինք անոնցմէ՝ ասկէ ետք ըլլալիքներուն համար»:

Տիար Վ. Թէքէեան. Անցեալ տարի Համագումարը բազմաթիւ նիստերու մէջ եւ մասնաւոր յանձնաժողովի մը միջոցաւ քննեց Երեւանի Հանրապետութեան եւ թրքահայոց ներկայացուցիչ Ազգ. Պատուիրակութեան միջեւ հասկացողութիւն մը առաջ բերելու եւ միացեալ կառավարութիւն, խորհրդարան ու Պատուիրակութիւն կազմելու հարցը: Համագումարը չկրցաւ վերջնական որոշման մը յանգիլ, եւ տիրէքթիւներուն մէջ յանձնարարեց Պատուիրակութեան, որ ինք ջանայ իրականացնել այդ նպատակը: Թէ ի՞նչ էր Համագումարին մեծամասնութեան տեսակէտը այս խնդրին նկատմամբ՝ ծանօթ է անշուշտ ձեզի: Մէկ կողմէ կար գոյութիւն առած, բայց տակաւին անհաւասար եւ քաղաքականապէս չճանչցուած պետութեան մը դատը, եւ միւս կողմէ՝ տակաւին գոյութիւն չառած, բայց քաղաքականապէս աւելի հաստատ ու ծանօթ տաճկահայ դատ մը: Համագումարը նկատի առնելով կարգ մը վտանգներ, որոնք գոյութիւն ունէին, անպատեհ նկատեց երկու դատերը անմիջապէս իրարու խառնել եւ յանձնարարեց Պատուիրակութեան, որ յարմար ժամանակին եւ յարմար միջոցներով աշխատի այդ միութիւնը ձեռք բերելու: Անտարակոյս, ո՛չ ոք հակառակ էր այս միացման, ո՛չ ոք մտքէն կ'անցընէր, որ երկու առանձին Հայաստաններ պէտք է գոյութիւն առնեն:

Պատուիրակութիւնն իր պաշտօնը սկսաւ 1919 Ապրիլի սկիզբները եւ մինչեւ Մայիսի վերջերը տակաւին ձեռնարկ մը չէր ըրած այդ մասին, սա պատճառաւ, որ Համագումարին մէջ յայտնուած մտահոգութիւնները գոյութիւն ունէին միշտ, եւ չէր կրցած միջոց մը գտնել: Բայց Պատուիրակութեան անդամներէն մէկը, Տիար Փաստրմաճեան Մայիս 20-ի նիստին մէջ մէջտեղ դրաւ միացման խնդիրը, պահանջելով, որ Պատ.-թիւնն իսկոյն անոր իրականացման ձեռնարկէ: Պատուիրակութեան միւս անդամները համամտութիւն յայտնեցին այդ մասին. բայց առարկեցին, թէ ի՞նչ նոր ձեւով մը պէտք էր կատարել այդ ձեռնարկը, առանց շեղուելու Համագումարին մէջ յայտնուած մեծամասնութեան կարծիքին ոգիէն: Տիար Փաստրմաճեան, ինչպէս արդէն ըրած էին Համագումարին մէջ ինք եւ իր համախոհները, առաջարկեց Երեւանի կառավարութիւնն ընդունիլ իբր ընդհանուր հայ կառավարութիւն: Պատ.-թիւնն իր մէջէն յանձնախումբ մը ընտրեց՝ երկու կողմին մտահոգութիւնները նկատի առնելով յարմար լուծում մը գտնելու համար: Այդ յանձնախումբն ամբողջ շաբաթներ նիստեր գումարեց, եւ չէր կրցած տակաւին վերջնական որոշման մը յանգիլ, երբ յանկարծ Մայիս 28-ին, Հանրապետութեան հաստատութեան տարեդարձի օրը Երեւանի մէջ կատարուած ակտին լուրը առնուեցաւ: Այդ օրը, Երեւանի կառավարութիւնը ո՛չ միայն հռչակեր էր երկու Հայաստաններու միացումը, բան մը, որուն նախաքայլն առած էր արդէն Ազգ. Պատուիրակութիւնը նախորդ տարուան Նոյեմբեր 30-ին ըրած Անկախութեան յայտարարութեան առթիւ, այլ՝ ինքզինքն հռչակած էր իբր Միացեալ Հայաստանի կառավարութիւն, առանց այդ մասին թրքահայ ժողովուրդին ներկայացուցիչը եղող Համագումարին ընտրուած Ազգ. Պատուիրակութեան կարծիքը կանխաւ հարցնելու եւ ստանալու: Այսպիսով, Պատ.-թիւնը կատարուած իրողութեան մը առջեւ կը գտնուէր: Անիկա, առաջին վայրկեանին իսկ մտածեց բողոքել, որովհետեւ այդ ակտը ոտնակոխ կ'ընէր թէ՛ քաղաքական այն լուրջ նկատումները, որոնք յայտնուած էին Համագումարին մէջ եւ թէ՛ այն իրաւասութիւնը, զոր Համագումարը տուած էր Պատուիրակութեան: Այդ բողոքը, սակայն, անմիջապէս տեղի չունեցաւ, եւ վերջէն ալ չկատարուեցաւ այն ձեւով, որով կը մտածուէր ընել: Պատուիրակութեան անդամներէն Տիար Տոքթ. Նեւրուզ երկիւղ յայտնեց, թէ այդ կարգի բողոք մը խոշոր պառակտումներ առաջ բերէ, եւ պէտքը շեշտեց Հանրապետութեան Պատուիրակութեան հետ հասկացողութեան մը գալու: Այս մտքով բանակցութիւններ սկսան Հանր. Պատուիրակութեան հետ, բայց այդ բանակցութիւնները արդիւնքի մը չյանգեցան, եւ անհամաձայնութիւնը կը տեւէր, երբ Փարիզ ժամանեց Համագումարի Վսեմ. Նախագահը՝ Տիար Նորատունկեան, որուն միջամտութեամբ որոշուեցաւ Երեւանի

կառավարութեան ուղղել բողոքի հեռագիր մը Մայիս 28-ի ակտին դէմ, ստորագրուած երկու Պատուիրակութեանց նախագահներէն: Այդ հեռագրով, Տիար Ահարոնեան կը յայտնէր, թէ Ազգ. Պատ.-թիւնը ընտրուած բոլոր թրքահայերու ներկայացուցիչ Ազգ. Համագումարէն, անընդունելի գտած էր այն պայմանները, որոնց մէջ հրատարակուած էր Մայիս 28-ի յայտարարութիւնը, աւելցնելով, թէ զայն դարմանելու համար Ազգ. Պատ.-թիւնը առաջարկներ ներկայացուցած է եւ թէ առաքելութիւն մը պիտի ղրկուի Երեւան: Մինչեւ սոյն ատեն՝ կը խնդրէր յետաձգել խորհրդարանին կողմէ այդ յայտարարութեան վաւերացումը: Իսկ Ազգ. Պատուիրակութեան Նախագահ Նուպար Փաշա այդ հեռագրին ներքեւ յայտնած էր, թէ Ազգ. Պատ.-թիւնը կը հաստատէ հեռագրին պարունակութիւնը:

Տիար Չօպանեան. Այդ հեռագրով Տիար Ահարոնեան կը հաստատէր Ազգ. Պատ. թեան՝ թրքահայոց ներկայացուցիչ մարմինն եղած ըլլալը:

Տիար Թէքէեան. Ատկէ առաջ արդէն Պատուիրակութիւնը տեղեկացած էր, թէ Երեւանի կառավարութիւնը խորհրդարանի նոր ընտրութեանց մասնակցելու համար հրաւէր ուղղած է թրքահայոց, մասնաւորապէս Պոլիս՝ Պատրիարքարանի շրջանակներուն, որուն վրայ, Պատուիրակութեան Նախագահը հեռագրով յանձնարարած էր, թէ՛ Պոլիս՝ Պատրիարքարանին եւ թէ՛ Էջմիածին՝ Վեհ. Կաթողիկոսին միջոցով, որ թրքահայերը, մինչեւ քաղաքական կացութեան պարզուիլը, ձեռնպահ մնան:

Մայիս 28-ի ակտին դէմ բողոքող վերոյիշեալ հեռագրին առաքումէն վերջ, երկու Պատուիրակութիւնները այստեղ փորձեցին համաձայնութեան մը գալ այն միջոցներուն նկատմամբ, որոնցմով կարելի պիտի ըլլար դարմանել այդ ակտը: Բանակցութիւնները տեւեցին շաբաթներ, բայց, դժբախտաբար, լիակատար արդիւնք մը չունեցան: Չորս խնդիր կար մէջտեղը, 1. Միացեալ կառավարութեան խնդիր, 2. Միացեալ խորհրդարանի խնդիր, 3. Միացեալ Պատուիրակութեան խնդիր, եւ 4. Միացման ակտի հռչակման խնդիր: Ասոնցմէ միմիայն Միացեալ Պատուիրակութեան կազմութեան մասին համամտութիւն երեւան եկաւ բանակցութեանց ընթացքին: Քանի որ կարելի չէր միւս կէտերու մասին հասկացողութեան մը գալ, որոշուեցաւ Երեւան ղրկել այն առաքելութիւնը, որ արդէն ծանուցուած էր հեռագրաւ, Երեւանի մէջ իսկ այդ համաձայնութիւնը առաջ բերելու համար, նկատի առնելով նաեւ սա պարագան, թէ Տիար Ահարոնեան այդ խնդիրներուն նկատմամբ վերջնական բան մը ըսելու մասին իրաւասութիւնը չունենալը կը յայտնէր եւ կ'աւելցնէր, թէ Երեւանի կառավարութիւնը շատ աւելի դիւրութեամբ կրնայ վերջնական համաձայնութիւն մը գոյացնել: Առաքելութեան մեկնումէն առաջ, այստեղ երկու Պատուիրակութեանց միջեւ անհամաձայնութեան գլխաւոր կէտն էր Միացեալ առժամեայ կառ.-թեան կազմութեան հարցը: Ազգ. Պատ.-թիւնը կը նկատէր, թէ՝ միացման պարագային պէտք է զօրաւորապէս շեշտուած ըլլայ կառավարութեան մէջ թրքահայ դատին գերակշռութիւնը, որուն համար, ըստ իրեն, անհրաժեշտ էր, որ կառ.-թեան գլուխը գտնուի թրքահայ մը, եւ այդ թրքահայն ալ ըլլայ տարիներէ ի վեր արդէն թրքահայոց դատը հետապնդող անձը, այսինքն՝ Ազգ. Պատուիրակութեան Նախագահ Պօղոս Նուպար Փաշան: Ազգ. Պատուիրակութեան Նախագահն, անշուշտ անոր համար, որ իր անձը խնդրոյ առարկայ էր, ընդունելով հանդերձ, որ Երեւանի կառ.-թեան գլուխը պէտք է թրքահայ մը գտնուի, չէր պնդեր իրեն տրուած նախընտրութեան վրայ: Բայց Ազգ. Պատուիրակութեան միւս անդամները, բացի Տիար Տոքթ. Նեւրուզէն, համաձայն էին, որ անպատճառ պէտք է պնդել այդ տեսակէտին վրայ՝ քաղաքական նկատումներով:

Տիար Չօպանեան. Տիար Նեւրուզի կարծիքը nuance-ով մը կը տարբերէր Պատուիրակութեան միւս անդամներուն կարծիքէն: Այսինքն, կը փափաքէր, որ Փաշան ըլլայ ո՛չ թէ կառավարութեան պետ, այլէ արտաքին գործոց նախարար: Այս կարծիքը ինծի առաջին անգամ յայտնած է Պատուիրակութեան մէջ:

Տիար Վահան Թէքէեան. Բացի կառավարութեան պետի տեսակէտէն, Ազգ. Պատուիրակութիւնը նկատի առաւ նաեւ կառավարութեան կազմութեան խնդիրը: Ազգ. Պատուիրակութիւնը կ'ուզէր, որ կառավարութիւնը կէս առ կէս տաճկահայ եւ ռուսահայ տարրերէ կազմուած ըլլայ, այսինքն՝ 4 թրքահայ նախարար եւ չորս ռուսահայ նախարար, որոնցմէ զատ պատերազմական նախարար պիտի անուանուէր ռուսահայ բարձրաստիճան սպայ մը: Ազգ. Պատուիրակութիւնը, բացի կառավարութեան այս հատուածական կազմութեան տեսակէտէն, նկատի առաւ նաեւ կառավարութեան կուսակցական կազմութեան տեսակէտը: Մայիս 28-ի ակտին հրատարակութենէն անմիջապէս վերջ Երեւանի կառավարութիւնը, որ նախապէս խառն կառավարութիւն մըն էր, այդ ակտին դէմ իբր բողոք, Ժողովրդական Կուսակցութեան անդամ նախարարներուն հրաժարելովը վերածուած էր ամբողջովին միատարր Դաշնակցական կառավարութեան մը: Ազգ. Պատուիրակութիւնը, միացման մասին մտածած պահուն՝ պարտաւոր էր նկատի առնել նաեւ կազմուելիք կառավարութեան մասնակցութիւնը ոչ-Դաշնակցական կուսակցութեանց, մասնաւորապէս Կովկասի Ժողովրդական Կուսակցութեան, որ նախորդ խառն դահլիճին մէջ կէս առ կէս համեմատութեամբ մասնակցութիւն ունէր եւ քաշուած էր ճիշդ արեւմտահայոց իրաւունքներուն Մայիս 28-ի ակտով ոտնակոխ ըլլալուն պատճառաւ: Ազգ. Պատ.-թիւնը Հանր. Պատուիրակութեան հետ իր բանակցութեանց միջոցին արդէն յայտնած եւ, ըստ Տոքթ. Նեւրուզի վկայութեան, Պ. Ահարոնեան եւս ընդունած էր, որ կազմուելիք 9 անդամով դահլիճին 2 ռուսահայ եւ թրքահայ անդամները ըլլան Դաշնակցական, մնացեալ հինգ անդամներէն 2-ը ըլլան ռուսահայ Ժողովրդական, 2-ը թրքահայ եւ ոչ-Դաշնակցական, իսկ պատերազմական նախարարը, երկու կողմերու հաւանութեամբ նշանակուելիք՝ անկուսակցական զօրավար մը: Այս վերջին կարգադրութիւնը պիտի ըլլար այն մտածմամբ, որ ազգը տակաւին ամբողջութեամբ իր կամքը յայտնած չէր, թէ անպատճառ կը նախընտրէ սա կամ նա կուսակցութիւնը: Իսկ պատերազմական նախարարին անկուսակցական ըլլալու պայմանն ալ դրուեցաւ այն կանխատեսութեամբ, որ Հայաստանի բանակը կուսակցական վէճերու թատր չդառնայ եւ նուիրուի զուտ Հայրենիքի պաշտպանութեան: Արդէն պատերազմական նախարարը, նախորդ խառն դահլիճին մէջ ալ նոյն նկատումով անկուսակցական զինուորական մըն էր: Վերջին պահուն, մեր մեկնելէն առաջ, Ազգ. Պատուիրակութեան մէջ մտածուեցաւ, թէ քանի որ դահլիճին անդամներուն բոլոր մնացեալ մասը կուսակցականներէ պիտի բաղկանայ, թրքահայ ոչ-Դաշնակցական երկու նախարարներն ալ, որ լաւագոյն է որ ըլլան Ժողովրդական Կուսակցութեան անդամ նախարարներու նման, նոյն հոսանքին մօտ, այսինքն ոչ-ընկերվարական եւ ազգայնական ուղղութեամբ կուսակցականներ: Այս ուղղութեամբ գործող թրքահայ երկու կուսակցութիւններ գոյութիւն ունէին, մէկը՝ Վերակազմեալ Հնչակեանները եւ միւսը Ռամկավարները:

Նկատելով, որ Վեր. Հնչակեանները յայտնի ոյժեր չունէին ո՛չ այստեղ եւ ո՛չ ալ Կովկաս, որոշուեցաւ վերոյիշեալ առժամեայ խառն դահլիճին թրքահայ ոչ-Դաշնակցական անդամները առաջարկել Ռամկավար Կուսակցութենէն:

Տիար Թէրզիպաշեան. Ես կը կարծեմ, որ Տիար Թէքէեան փոքրիկ շեղում մը կ'ընէ: Ռամկավարներու անունով չէր կրնար կտրուկ պայման մը եղած ըլլալ, քանի որ վերջէն իմացանք, թէ նախարարական պաշտօնի համար առաջարկ եղած է Տիար Նորատունկեանի եւ Տիար Ոսկան Մարտիկեանի նման անձնաւորութեանց, որոնք չեն պատկանիր Ռամկավար Կուսակցութեան:

Տիար Վահան Թէքէեան. Ասիկա հարկադրիչ պայման մը չէր: Նկատելով, որ նախարարներուն մնացեալ կէսը կուսակցական տիսիբլինի տակ գտնուող անձերէ պիտի բաղկանար, մեր մեկնելէն առաջ Պ. Պապաջանեանի ներկայութեան գումարուած Պատուիրակութեան վերջին նիստին մէջ յարմար նկատուեցաւ, որ մեր ներկայացնելի նախնական պայմաններուն մէջ ոչ-Դաշնակցական տաճկահայ

անդամները նոյնպէս կուսակցական տիսիբլինի ենթակայ եղող Ռամկավարներ ըլլային: Մանաւանդ թէ խառն դահլիճին նպատակներէն մէկն ալ կուսակցական համերաշխութիւն եւ գործակցութիւն ստեղծելն էր: Արդէն, ինչպէս պիտի տեսնուի մեր գրաւոր առաջարկներուն ընթերցումէն, միայն մեկ անգամ գործածուած է «Ռամկավար» անունը տաճկահայ ոչ-Դաշնակցական նախարարներու համար, եւ անկէ վերջ յիշուած է «թրքահայ ոչ-Դաշնակցական» բացատրութիւնը: Այս կէտը վերջէն շեշտուած է նաեւ բանակցութեանց արդէն պատրաստուած ատենագրութիւններու մէջ, ի պատասխան Դաշնակցական բանակցողներու այն առարկութեան, թէ մեր բանակցութիւնները կ'ուզէինք կուսակցական հողի վրայ կատարել:

Տիար Տէր-Ստեփանեան. Այս մասին Երեւանի մէջ ալ Պ. Թէքէեանի անհամաձայն էի եւ կ'ուզեմ պարզել թէ ինչո՞ւ: Պատուիրակութեան որոշումը՝ միացեալ կառավարութեան տաճկահայ անդամներու մասին, այսինքն 2 Դաշնակցական եւ 2 ոչ-Դաշնակցական ըլլալն այնքան ճիշդ է, որ մեր հրահանգներուն մէջ ալ ատիկա որոշապէս գրուած էր: Իրաւ է, որ մեր Երեւան մեկնելէն մէկ-երկու օր առաջ, նիստի մը մէջ, որուն ես ալ ներկայ էի, մէկ հոգիի կողմէ կարծիք յայտնուեցաւ, որ ոչ-Դաշնակցականները պէտք էր նմանապէս կուսակցական տիսիբլինի ենթակայ անձեր ըլլային, բայց ոեւէ որոշում չառնուեցաւ: Ուրիշ ապացոյց մըն ալ այն հանգամանքն է, որ երբ Պատ.-թիւնը ստացած է Երեւանի մեր ուղղած հեռագիրը՝ կառավարութեան ոչ-Դաշնակցական անդամներուն նշանակումը փութացնելու մասին, դիմած է Պատրիարքարան, որպէսզի Պոլսէն երկու ձեռնհաս անձերու դիմում ըլլայ այդ նպատակով:

Տիար Ա. Չօպանեան. Ես ներկայ չեմ գտնուած Ազգ. Պատուիրակութեան այն նիստին, որուն մէջ որոշուեր է «ոչ-Դաշնակցականի» տեղ «Ռամկավար» բառը դնել: Եթէ ներկայ եղած ըլլայի՝ ատոր համաձայն չպիտի ըլլայի:

Տիար Վ. Թէքէեան. Երեւան հասնելով՝ ներկայացանք, ինչպէս մեր պաշտօնն էր, նախարարապետ Պ. Խատիսեանին, որ ըսաւ, թէ ինք ձեռքէ եկածը պիտի ընէ անպատճառ համաձայնութեան մը գալու համար, եւ թէ չի կարծեր, որ էական տարբերութիւններ գոյութիւն ունենան մեր եւ իրենց տեսակէտներուն միջեւ: Այդ առաջին տեսակցութեան մէջ բերանացի եւ համառօտ կերպով յայտնեցինք մեր պահանջներուն գլխաւոր գիծերը: Պ. Խատիսեան առարկութիւն ըրաւ միայն կառավարութեան գլուխը Ազգ. Պատուիրակութեան Նախագահը դնելու առաջարկին դէմ, յայտնելով, որ ատիկա անկարելի պիտի ըլլայ ընդունիլ տալ: Ասիկա գիտցանք առաջին վայրկեանին: Պ. Խատիսեան նոյն ատեն կարծիք յայտնեց, թէ փոխանակ վարչապետի տիտղոսին, կարելի էր Պօղոս Փաշա Նուպարը Հանրապետութեան նախագահ կամ Հանր. գերագոյն ներկայացուցիչ անուանել, ինչպէս Պ. Ժորդանիա՝ «Վրաստանի Հանրապետութեան գերագոյն ներկայացուցիչ» տիտղոսը կը կրէր: Պ. Խատիսեան յայտնեց նոյնպէս, թէ մեզի հետ բանակցելու համար Դաշնակցութեան նոյն միջոցին գումարուած Ընդհանուր Պատգմ. Ժողովը պիտի նշանակէր իր ներկայացուցիչները: Պատասխանեցինք, որ մենք եկած ենք կառավարութեան հրաւէրին եւ նոյն ինքն Պ. Խատիսեանի հեռագրին համաձայն՝ կառավարութեան հետ բանակցելու, որով եթէ կուսակցութիւնն ան ընտրեր բանագնացները, զանոնք պիտի նկատէինք ներկայացուցիչները կառավարութեան, որ անշուշտ ուղղակի իր անդամներէն ալ բանագնացներ պիտի կարգէր: Այս կէտը նոյն պահուն առկախ մնաց: Յետոյ դահլիճը ամբողջական նիստ մը գումարեց, որուն առջեւ հրաւիրուեցանք պարզելու Ազգ. Պատուիրակութեան պայմանները: Այդտեղ միայն լուսաբանութիւններ խնդրուեցան մեզմէ, զոր տուինք առանց էութեան մասին վիճաբանութեան մտնելու: Մինչեւ բանագնացներուն նշանակումը՝ երկու շաբաթ ժամանակ անցաւ, եւ մենք երկիցս բերանացի ու գրաւոր խնդրեցինք Պ. Խատիսեանէ, որ փութայ մեզ յարաբերութեան դնել իրենց բանագնացներուն հետ: Վերջէն հասկցանք, թէ ի՞նչ էր այս յապաղման պատճառը: Փարիզէն մեկնելնէս շաբաթ մը վերջ՝ Պ. Ահարոնեան Երեւան

ղրկած էր Պ. Բրօֆ. Խաչատրեանը, անդամ Ազգ. Համագումարի: Բրօֆեսորին հանդիպեցանք Պոլիս, մեր մեկնած օրը, եւ միասին ճանապարհեցինք մինեւ Թիֆլիս: Ինք, ընտանեկան պատճառներով մնաց այնտեղ 10-12 օր: Պ. Ահարոնեանի կողմէ իրեն տրուած նամակ մը հասցուցած էր Երեւան, մեր ժամանումէն քիչ վերջ, բայց կը սպասէին նաեւ իր Երեւան ժամանման, լսելու համար իր բերանացի տալիք հրահանգները եւս: Այս էր պատճառը, որ բանակցութեանց բացումը ուշացաւ: Ի վերջոյ՝ Պ. Խատիսեան մեզ հրաւիրեց եւ ծանոյց, թէ Դաշնակցութեան Ընդհ. Պատգմ. Ժողովը ընտրած է երեք բանագնացներ՝ Պ. Պ. Սիմոն Վրացեան, Մարտիրոս Յարութիւնեան եւ Պոլսոյ «Ճակատամարտ» թերթի խմբագիր Շաւարշ Միսաքեան: Պ. Խատիսեան խնդրեց մեզմէ, որ չպնդենք բանագնացներուն ուղղակի կառավարութեան ներկայացուցիչ համարուելու հանգամանքին վրայ, աւետելով, թէ ինք պիտի նախագահէ առաջին նիստին եւ պիտի յայտնէ, որ մեր կնքելիք համաձայնութիւնը կառավարութիւնը իրեն համար պարտադրիչ կը նկատէ եւ կը վստահեցնէ, թէ խորհրդարանն ալ պիտի վաւերացնէ զայն: Միւս կողմէ, այդ բանագնացներն ալ, Պ. Խատիսեանի տուած հաւաստիքին համաձայն, երբեք խնդրոյ առարկայ չպիտի ընէին Ազգ. Պատուիրակութեան՝ թրքահայոց ներկայացուցիչ ըլլալու հանգամանքը, ինչպէս նաեւ մեր՝ Ազգ. Պատուիրակութեան հարազատ ներկայացուցիչը եւ բանագնացները ըլլալու հանգամանքը: Այստեղ պէտք է յայտնեմ, թէ Ազգ. Պատ.-թիւնը երբ Պ. Տէր-Ստեփանեանը եւ զիս Պատուիրակ նշանակեց, խորհեցաւ իբրեւ երրորդ անդամ Կովկասի մէջ առաքելութեան աւելցնել Պ. Սամսոն Յարութիւնեանը: Այս որոշման տեղի տուող նկատումը սա էր, որ Պ. Սամսոն Յարութիւնեան ո՛չ միայն ծանօթ էր տեղական պայմաններուն, այլ եւ վարիչներէն մէկն էր Ժողովրդական Կուսակցութեան որ կատարուելիք բանակցութեանց հետեւանքով անդամներ պիտի տար կազմուելիք խառն դահլիճին, ինչպէս արդէն Մայիս 28-էն առաջ կէս առ կէս համեմատութեամբ կը մասնակցէր դահլիճին եւ Պ. Սամսոն Յարութիւնեան եւս նախարարական պաշտօն մը ունէր նոյն դահլիճին մէջ: Պ. Սամսոն Յարութիւնեանի հաւանութիւնը ստանալէ վերջ, յայտնեցինք մեր առաքելութեան իր անդամակցութիւնը Պ. Խատիսեանի, որ ոեւէ առարկութիւն չըրաւ: Ասոնք կ'ըսեմ, որովհետեւ մամուլին մէջ՝ խորհրդարանի անդամ թրքահայ Դաշնակցականի մը կողմէ խիստ դիտողութիւններ հրատարակուեցան թէ՛ Ազգ. Պատուիրակութեան՝ ամբողջ թրքահայոց ներկայացուցիչը ըլլալու եւ թէ՛ մեր երեք հոգիէ բաղկացած առաքելութեան՝ Ազգ. Պատուիրակութեան հարազատ ներկայացուցիչը ըլլալու հանգամանքին դէմ: Պ. Խատիսեանի տուած հաւաստիքը, թէ Դաշնակցական բանագնացները բանակցութեանց ընթացքին պիտի չանդրադառնան այս կէտերու մասին, մեզի տրուած երաշխաւորութիւն մըն էր ընդդէմ վերոյիշեալ առարկութիւններուն: Բայց, քիչ մը վերջ՝ ընելիք ընթերցումներնէս պիտի տեսնուի, որ տրուած այս պայմանը չյարգուեցաւ նոյն ինքն բանագնացներուն կողմէ, երբ բանակցութիւնները յանգեցան այնպիսի կէտի մը, ուրկէ անդին նոր զիջումներով հասկացողութեան մը գալ անկարելի կ'երեւար: Ինչպէս կ'երեւայ երկու կողմի բանագնացներու կազմութենէն, մեր առաքելութեան երեք անդամներէն մէկը ռուսահայ մըն էր եւ միւս կողմի երեք բանագնացներէն մէկն ալ՝ թրքահայ մը:

Ահաւասիկ հիմա այն նախնական առաջարկներուն ծրագիրը, զոր դահլիճին փափաքին համաձայն, մեր առաջին տեսակցութիւններէն վերջ՝ գրաւոր ղրկեցինք, եւ զոր դահլիճն ալ յանձնած էր նախ Դաշնակցութեան Ընդհ. Պատգամաւորական Ժողովին, որ, իր կարգին, յանձներ էր զայն իր նշանակած բանագնացներուն: Մեր բանակցութիւնները սկսան կատարուիլ այս նախնական պայմաններու ծրագրին վրայ:

Ծրագիր N 1

Տիար Վ. Թէքէեան. Մեր առաջին նիստին մէջ, ըստ Պ. Խատիսեանի նախապէս տուած խոստման, ինքը՝ Պ. Խատիսեան, իբրեւ նախագահ ըրաւ հետեւեալ

յայտարարութիւնը, զոր նոյնութեամբ կը կարդամ այդ առաջին նիստի ատենագրութենէն:

Ատենագրութիւն N 2
«Վարչապետը նիստը բացեց»

Տիար Վ. Թէքէեան. Ասիկա մինակ առաջին նիստին ատենագրութիւնն է: Եթէ ժողովը փափաքի՝ կարդամ նաեւ միւս ութ նիստերուն մասին ալ կազմուած ատենագրութիւնները:

Ձայներ. Հարկ չկայ. միայն պատմեցէ՛ք իրողութիւնները:

Տիար Վ. Թէքէեան. Մեր առաջարկներուն բոլոր կէտերուն վրայ երկար վիճաբանութիւններէ եւ մեր կողմէ եղած կարեւոր զիջումներէ վերջ, հասանք այնպիսի կացութեան մը, ուրկէ անդին այլեւս բանակցութիւնները կարելի չէր առաջ մղել: Այդ նիստին մէջ, որ կացութիւնը այս կէտին հասաւ՝ կը բացակայէր Պ. Վրացեան: Երկրորդ բանագնաց Պ. Մարտիրոս Յարութիւնեան խօսք առաւ եւ ըրաւ այնպիսի յայտարարութիւններ, որոնք ո՛չ միայն իրենց վերջնական պայմանները կը ներկայացնեն, այլեւ անոնց ընդունելութիւնը մեզի հարկադրելու դիտումով խնդրոյ առարկայ կը դարձնէին Ազգ. Պատուիրակութեան եւ մեր առաքելութեան իրաւասութիւնները, հակառակ Պ. Խատիսեանի կանխաւ այդ մասին մեզի տուած բացարձակ հաւաստիքին: Պահանջեցինք, որ այդ առաջարկները եւ դիտողութիւնները գրաւոր յանձնուին մեզի, որպէսզի կարենայինք բանակցութիւնները շարունակել: Ահաւասիկ այդ գիրը՝ ստորագրուած երեք բանագնացներուն կողմէ.

N 3
Վրացեան-Յարութիւնեան-Միսաքեան

Տիար Վ. Թէքէեան. Թէ՛ այս նիստին գումարուած միջոցին, եւ թէ՛ վերոյիշեալ գրութեան մեզի յանձնուած օրը վարչապետ Պ. Խատիսեան բացակայ էր Երեւանէն՝ իր պաշտօնին բերումով: Երբ վերոյիշեալ գրութիւնը ստացանք՝ իսկոյն պատրաստեցինք մեր պատասխանը, զոր նոյնպէս ղրկեցինք գրաւոր Պ. Խատիսեանի, անմիջապէս երբ Երեւան դարձաւ, իրեն ուղղուած նամակով մը որուն մէջ կը յայտնէինք մեր զարմանքը՝ յարուցուած միջադէպին մասին, եւ այն անել դրութիւնը, որուն մատնուած էին բանակցութիւնները՝ այդ միջադէպին պատճառաւ: Ահաւասիկ Տիար Խատիսեանի ղրկուած մեր պատասխանագիրը.

N 4
Թեքէեան-Յարութիւնեան-Տէր-Ստեփանեան

Տիար Վ. Թէքէեան. Այս նամակին իբր առաջին արդիւնք՝ Պ. Խատիսեան Երեւան դառնալուն պէս հրաւիրեց մեզ իր մօտ եւ յայտնեց, թէ շատ չնչին տարբերութիւն մը միայն պատճառ եղած է մեր բանակցութեանց ընդհատման եւ թէ ինք կը յուսայ, որ փոխադարձ զիջողութեամբ կարելի պիտի ըլլայ հարթել այդ անհամաձայնութիւնը, ինչպէս որ նոյն մտքով արդէն խօսած է Պ. Վրացեանի: Գալով յարուցուած իրաւասութեան վէճին, ցաւ յայտնեց, որ հակառակ իր բացարձակ յայտարարութեան ու խոստումին, այդ կարգի միջադէպ մը ստեղծուած էր, եւ նոյնպէս ծանոյց, թէ այդ մասին եւս ինք պէտք եղածը կարգադրելու ? է: Պ. Խատիսեան աւելցուց, թէ մէկ-երկու օրէն իր նախագահութեամբ նիստին պիտի հրաւիրէ երկու կողմերը: Մինչ այդ՝ ստացանք Պ. Վրացեանի հետեւեալ պատասխանագիրը մեր ուղղած նամակին, զոր Տիար Խատիսեան իրենց հաղորդած էր.

N 5
Վրացեանի նամակը

Տիար Վ. Թէքէեան. Երբ Պ. Խատիսեանի խոստման համաձայն՝ իրեն հետ մեր տեսակցութենէն յաջորդ օրն իսկ գումարուեցանք, դժբախտաբար Պ. Խատիսեան միայն մենէ պահանջեց զիջողութիւն, հակառակ որ մինչեւ այն ատեն արդէն բոլոր զիջողութիւնները մեր կողմէ միայն կատարուած էին: Կը պահանջէին մասնաւորաբար, որ կառավարութիւնը կազմուի 9 կամ 11 անդամի վրայ, 5 կամ 6 Դաշնակցական նախարարներով: Պորտֆելներու մասին կը պահանջէին, բացի նախարարապետէն, ներքին գործոց, աշխատանքի ու երկրագործութեան նախարարները, որ պատերազմական նախարարն ալ իրենց կողմէ ներկայացուի եւ ըլլայ ի հարկին նոյնիսկ ոչ-զինուորական մը: Գալով արտաքին գործոց նախարարին, թեեւ ընդունած էին, որ Պօղոս Փաշան՝ իբր Պատ.-եան Նախագահ ունենայ նաեւ արտաքին գործոց նախարարի հանգամանքը: Բայց երբ հարցուցինք, թէ Երեւանի դահլիճին մէջ աթոռ ունենալիք իր փոխանորդը կ'ընդունի՞ն որ ոչ-Դաշնակցական մը ըլլայ, միակ պատասխանը որ ստացանք՝ Պ. Մարտիրոս Յարութիւնեանի պատասխանն էր. «Ո՛չ, արտաքին գործոց նախարարի փոխանորդն ալ կ'ուզենք, որ մեր կողմէ ներկայացուի»: Իրաւ է, թէ յաջորդ եւ վերջին նիստին՝ այդ նիստին ատենագրութեան ընթերցման պահուն Պ. Վրացեան ըսաւ, թէ ատիկա Պ. Մարտիրոս Յարութիւնեանի անձնական կարծիքն է եւ թէ կրնայ մտածուիլ այդ մասին, բայց այդ վերջին պահուն իսկ, հակառակ մեր պնդումին, չյայտարարեցին, թէ կ'ընդունին արտաքին գործոց նախարարի իրական պաշտօնը վարելու կոչուած, Երեւան մնացող փոխանորդին ոչ-Դաշնակցական մը ըլլալը: Պատուիրակութեան կազմին նկատմամբ անհամաձայնութիւն չկար, քանի որ կ'ընդունէին Պօղոս Փաշա Նուպարի նախագահութիւնը եւ անդամներու հատուածական ու կուսակցական համեմատութեան վերաբերող մեր պայմանները: Բայց, այս համամտութիւնը ոեւէ լուրջ երաշխիք մը չէր ներշնչեր, քանի որ իրենց պահանջմամբ Պատ.-թիւնը ամեն կերպով ենթակայ կը մնար կառավարութեան եւ խորհրդարանին որոշմանց, որոնք կրնային առ նուազն այնպիսի հրահանգներ տալ, զորս կարելի չըլլալով գործադրել, Պատ.-թիւնը պիտի ստիպուէր հրաժարիլ: Մեր սկզբնական պահանջն էր Պատուիրակութեան ապահովել գործունէութեան որոշ անկախութիւն մը, իբրեւ աւելի մօտէն տեղեակ Խաղաղութեան Համաժողովին աշխատութենց եւ քաղաքական կացութեան: Բայց այդ պայմանը երբեք կարելի չեղաւ ընդունիլ տալ: Գալով խորհրդարանին, մինչեւ անոր ամբողջացումը դադար տալու առաջարկը, զոր ըրած էինք՝ չընդունուեցաւ անոնց կողմէ, կարգ մը առարկութիւններով, որոնց պատասխանները մեր վերջնական պայմանները պարունակող գրութեան մէջ քիչ վերջը պիտի տեսնէք:

Միացման յայտարարութեան մասին եւս կատարեալ համաձայնութիւն չգոյացաւ, ըստ որում՝ Փարիզէն մեզի տրուած վճռական հրահանգին համաձայն, պայման կը դնէինք, որ թրքական Հայաստանը իր անկախութիւնը հռչակած եւ իր կառավարութիւնը կազմած նկատուելէն վերջ, ռուսական Հայաստանը իր կառավարութեամբ միացած հռչակուի անոր: Այդ նիստին պահանջեցին մենէ, որ Պ. Պ. Վրացեանի, Մար. Յարութիւնեանի եւ Միսաքեանի ստորագրութեամբ նախապէս մեզի ուղղուած Նոյեմբեր 4 թուակիր նամակին պայմաններուն նկատմամբ մեր վերջնական պատասխանը գրաւոր հաղորդենք: Այդպէս ալ ըրինք եւ իրենց ուղղեցինք հետեւեալ նամակը, որ կը պարունակէր մեր վերջնական պայմանները, եւ, ինչպէս պիտի տեսնուի, շատ մեծ զիջողութիւններ կ'ընէր մեր ներկայայուցած սկզբնական առաջարկներուն վրայ:

N 6
Թէքէեան-Ստեփանեան-Յարութիւնեան

Տիար Վ. Թէքէեան. Այս նամակը ղրկելէ ետք, գումարուեցաւ վերջին նիստը, որուն մէջ յայտարարեցինք, թէ կը ցաւինք, որ հակառակ մեր բովանդակ բարեկամեցողութեան եւ զիջումներուն, անկարելի եղաւ համաձայնութեան մը գալ եւ թէ մեր պաշտօնը լրացած նկատելով՝ կը վերադառնանք Փարիզ՝ համար տալու Ազգ. Պատուիրակութեան, որուն կը մնայ վերջին խօսքը ըսել: Այդ նիստին մէջ որոշուեցաւ, որ բանակցութիւնները վերջնականապէս խզուած չնկատելով, այդ մասին լրագրական թեր եւ դէմ հրատարակութիւններ չընել: Այդ պայմանը դժբախտաբար չյարգեցին ո՛չ Թիֆլիսի մէջ եւ ո՛չ ալ Պոլիս, ինչ որ ստիպեց մեզ ալ, հրապարակաւ կարգ մը ճշդումներ ընելու:

Տիար Բրօֆ. Թումայեան. Քիչ առաջ կարդացուած ձեր վերջնական պայմաններուն մէջ ըսուած է, թէ ընկերային բարենորոգումներու վերաբերող որոշումները 2/3-ի մեծամասնութեամբ պէտք է կայացուին: Արդեօք Տիար Թէքէեան կրնա՞յ ըսել, թէ ի՞նչ ընկերային բարենորոգումներ կատարուած են արդէն կամ կատարելու դիտում ունի կառավարութիւնը:

Տիար Թէքէեան. Օրինակի համար՝ կառավարութիւնը խորհրդարանին քուէարկել տուած է եղեր արդէն հողային գրաւմանց վերաբերող օրենք մը: Մեր այնտեղ գտնուած միջոցին օր մը՝ Դաշնակցական երեսփոխան մը հարցապնդում ըրաւ կառավարութեան, թէ ինչո՞ւ այդ օրէնքը գործադրութեան չէ դրուած էջմիածնի հողերուն համար: Նախարարը ի պատասխան կարդաց ցուցակ մը 30-է աւելի հողի գրաւմանց, որոնց մէջ մէկ կտոր ալ էջմիածնայ հողերէն: Բայց հարցապնդող երեսփոխանը, յայտնելով, թէ էջմիածնի սեփական ուրիշ բազմաթիւ հողեր գրաւուած չեն տակաւին, պահանջեց, որ անոնք ալ գրաւուին: Նախարարը ըսաւ, թէ գյուղացիները իրենց սեփականութիւնը եղող հողերն իսկ չեն կրցած մշակել՝ սերմնացու չունին աշնան համար, ինչ որ ինծի թոյլ կու տայ հետեւցնելու, թէ կառավարութեան քով պատրաստակամութիւնը չպիտի պակսի այդ օրէնքը գործադրելու:

Տիար Թումայեան. Անշուշտ էջմիածնայ սեփական հողերն ալ այդ օրէնքին ենթակայ են միւսներուն պէս:

Տիար Թէքէեան. Անշուշտ:

Տիար Թումայեան. Էջմիածին ի՞նչ կը խորհի այդ մասին:

Տիար Թէքէեան. Որչափ որ գիտեմ՝ էջմիածնայ մէջ դժգոհ են այդ մասին: Ահա այս կարգի երեւոյթներու առջեւ է, որ ընկերային բարենորոգմանց մասին տրուելիք որոշումները ուզեցինք, որ կառավարութիւնը իր Դաշնակցական մեծամասնութեամբ միայն չկարողանայ ի գլուխ հանել եւ պայման դրինք 2/3-ի մեծամասնութեան անհրաժեշտութիւնը այդպիսի պարագաներու համար:

Մեր մեկնելեն վերջն է որ Պ. Խատիսեան Ազգ. Պատուիրակութեան Նախագահին ուղղած նամակով յայտնած է կառավարութեան վերջնական պայմանները, որոնք նոյնն են ինչ որ մեր բանակցութեանց վերջանալուն մեզի ծանօթ էին. Ահաւասիկ այդ նամակը.

N 7
Խատիսեանի նամակը

Տիար Վ. Թէքէեան. Ազգ. Պատ.-թիւնը այս նամակը ստացած էր իմ Փարիզ հասնելէն առաջ, եւ ինչպէս անցեալներս առիթ ունենայ ըսել, որ Խաղաղութեան Համաժողովին կողմէ Թուրքիոյ դաշնագրին մօտալուտ յանձնումին պահուն միակ Պատուիրակութեան մը գոյութեան անհրաժեշտութիւնը նկատի ունենալով, ու միւս կողմէ՝ անգլիական պատուիրակութեան ծանօթ մէկ անդամին կողմէ այդ նպատակով

եղած կոչին առջեւ, որոշած է ընդունիլ Տիար Խատիսեանի նամակով առաջարկուած պայմանները, եւ ըստ այնմ՝ Պատուիրակութեան Նախագահ Պօղոս Փաշա Նուպար հետեւեալ հեռագիրը ղրկած է Տիար Խատիսեանի.

N 8
Հեռագիր Պօղոս Փաշայի

Տիար Վ. Թէքէեան. Նոյնիմաստ հեռագիր մըն ալ Ազգ. Պատ.-թիւնը ղրկած է Պ. Սամսոն Յարութիւնեանի, զինքը եւ Պ. Արշալոյս Մխիթարեանը իր կողմէ ներկայացուցիչ կարգելով միացման գործին համար: Պ. Խատիսեանի տրուած հեռագրին պատասխան ստացուած չէ մինչեւ այսօր: Այս մասին կ'արժէ բացատրութիւն մը տալ: Ասկէ առաջ ըսի արդէն, թէ մեր Երեւան մեկնելէն շաբաթ մը վերջ Հանր. Պատ.-թիւնը հարկ համարած էր դէպի Երեւան ճամբայ հանել նաեւ Բրօֆ. Խաչատուրեանը, որոշ հրահանգներով: Բայց Բրօֆ. Խաչատուրեանէ զատ Փարիզէն Երեւան եկաւ նաեւ, երբ մենք այնտեղ էինք տակաւին, Տոքթ. Մանդինեան, որ զեկոյցներ տուած էր, ինչպէս լսեցինք, կառավարութեան, Դաշնակցական Ընդհ. Պատգմ. Ժողովին եւ էջմիածնի Միաբանութեան: Այս զեկոյցները մեր բանակցութեանց ընթացքին վրայ աննպաստ ազդեցութիւն մը գործեցին: Այս մասին աւելի ստոյգ տեղեկութիւն մը ստացանք մեր մեկնումէն օր մը առաջ, Երեւանի Առաջնորդ Խորէն Եպիսկոպոսի՝ մեզի ի պատիւ տուած հացկերոյթի մը միջոցին, որուն ներկայ էր նաեւ Տոքթ. Մանդինեան: Խորէն Եպիսկոպոս սեղանին վրայ, ակնարկելով մեր առաքելութեան ձախողանքին, խօսքն ուղղեց Տոքթ. Մանդինեանի եւ ըսաւ. «Բժի՛շկ, դո՛ւն պատճառ եղած ես այս բանակցութեանց ձախողանքին»: Բժիշկը պատասխանեց. «Լո՞ւրջ կ'ըսէք կոր»: -«Այո՛, յարեց եպիսկոպոսը,- քու հաղորդած զեկոյցներու զուր պատճառաւ»: Ատոր վրայ՝ Տոքթ. Մանդինեան ըսաւ, թէ ինք անձնապէս իր խօսքերովը չէր կրնար այդպիսի արդիւնք մը առաջ բերած ըլլալ, բայց հաւանական է, որ Պ. Ահարոնեանի կողմէ իրեն տրուած եւ իր Երեւան բերած թղթածրարը որոշ դեր մը խաղցած ըլլայ այդ ուղղութեամբ, որովհետեւ, աւելցուց, «իմ մեկնած օրերուս՝ միացման խնդրի մասին տրամադրութիւնները փոխուած էին Հանր. Պատուիրակութեան մէջ»:

Ինչպէս կը տեսնուի՝ Երեւանի մէջ մեր ունեցած բանակցութեանց ելքին անյաջողութեան պատճառը պէտք է փնտռել այստեղ: Նոյնպէս՝ եթէ Պ. Խատիսեան կամ Հանր.-թեան կառ.-թիւնը անպատասխանի թողուցին իրենց իսկ ներկայացուցած առաջարկներուն հիման վրայ Ազգ. Պատուիրակութեան հետ միութեան կնքումը, պատճառը հետեւեալն է: Պ. Ահարոնեան երբ տեղեկութիւն ունեցած է Ազգ. Պատ.-փեան հեռագրէն, իսկոյն հեռագրած է Երեւան, թէ Պ. Օհանջանեան ճամբայ կ'ելլէ Փարիզէն եւ յանձնարարած է, որ մինչեւ անոր Երեւան հասնիլը ոեւէ ձեռնարկ չընեն: Ասիկա ցոյց կու տայ, որ ինչպէս մեր կատարած բանակցութիւններուն ընթացքին, նոյնպէս այստեղէն ղրկուած վերջին հաւանութեան հեռագրին ընդունելութեան առթիւ, դժուարութիւնը յարուցուած է Փարիզէն: Համագումարը պէտք է գիտնար, թէ ինչո՞ւ եւ ինչպէ՞ս մինչեւ այսօր կը շարունակեն երկու անջատ Պատ.-թիւններ գոյութիւն ունենալ:

Տիար Տէր-Ստեփանեան. Քանի որ Պ. Օհանջանեանի մեկնման նպատակին մասին խօսք եղաւ, օգտակար կը նկատեմ յայտնել, թէ ի՛նչ անցաւ Միացեալ Պատուիրակութեան այն նիստին մէջ, որ Ազգ. Պատ.-թիւնը հաղորդեց Հանր. Պատուիրակութեան՝ Պ. Խատիսեանի առաջարկները ընդունած ըլլալը: Պ. Ահարոնեան, որ տարի է մը ի վեր միացման առաքեալ եղած էր այստեղ, կը սպասէինք, որ ուրախանայ, բայց պաղ ու շփոթ պատասխան մը տուաւ եւ, ի միջի այլոց, ըսաւ, որ անշուշտ դուք զանազան ժողովներ ըրած էք այսպիսի որոշում մը տալու համար, հետեւաբար, պէտք է որ ես ալ մեր պատգամաւորները հաւաքեմ, որպէսզի որոշենք

մեր տեսակէտը: Ինչ որ ցոյց կու տայ թէ Պ. Ահարոնեան ինքզինքը առնուազն կառ.-թեան համազօր մարմինի մը գլուխ կը կարծէր: Ժողովին վերջն ալ երբ ոտքի ելէր էինք, ըսաւ, որ Երեւանի մէջ միայն կառավարութեան կազմութեան տեսակէտը նկատի առնուեր է, եւ Պատուիրակութեան մասին հոգ չէ տարուեր: Ասով ըսել կ'ուզէր, թէ Դաշնակցական մեծամասնութիւնը կառ.-թեան մէջ ապահովուած էր, մինչդեռ Պատուիրակութեան մէջ ոչ:

Տիար Տոքթ. Բարսեղեան. Ես սկիզբէն ներկայ չէի, բայց գալէս ի վեր քանի մը նօթեր առի եւ կ'ուզեմ մէկ-երկու դիտողութիւն ընել: Մէկը փաստացի բան մըն էր, կ'ուզէի որ ճշդուէր: Պ. Տէր-Ստեփանեան յայտարարեր է Երեւանի բանակցութեանց ընթացքին, թէ Համագումարը, միաձայնութեամբ Պատուիրակութեան նախագահ ընտրած է Փաշան: Մինչդեռ Համագումարը Փաշան ընտրած էր Պատուիրակութեան անդամ, եւ ոչ նախագահ: Ապահովաբար՝ այդ կերպ յայտարարուեր է հոն՝ որոշ ազդեցութիւն գործելու համար:

Տիար Տէր-Ստեփանեան. Նախ՝ Երեւանի մեր բանակցութեանց ատենագրութիւնները թերի են. եւ յետոյ՝ իմ ըսածիս մէջ հիմնական սխալ մը չկայ, որովհետեւ՝ Պատուիրակութեան ընտրութեան միջոցին ամեն մարդ գիտէր Համագումարին մէջ՝ Փաշան պիտի ըլլայ նախագահը:

Տիար Տոքթ. Բարսեղեան. Ուրի՛շ դիտողութիւն մը: Այստեղէն գացող առաքելութեան անդամները բանակցութեանց ընթացքին շատ աւելի խիստ ոգի ցոյց տուած են, քան այնտեղինները: Եւ յետոյ՝ գերագոյն ներկայացուցչութեան հանգամանքը յատկապէս Փաշային անձին վրայ կեդրոնացնելու մտայնութիւնը չի պատշաճիր բնաւ այն ոգիին, որ պէտք է տիրեր բանակցութեանց մէջ: Միւս կողմէ՝ վստահութեան պակասը Տիար Թէքէեանի ենթադրածին չափ փոխադարձ չէ եղած: Հասկնալի է, թէ Պ. Խատիսեան լոկ քաղաքավարութեան համար գործածած է «փոխադարձ» բառը. մինչդեռ ամեն բան ցոյց կու տայ, թէ գացողներն են, որ վստահութեան պակաս ունեցած են: Այստեղ՝ առաքելութեան անդամներուն, մասնաւորաբար Պ. Թէքէեանի կողմէ եղած լրագրական հրատարակութիւնները պատճառ եղան, որ պատասխան չտրուի: Որովհետեւ Պ. Թէքէեան ինքզինքին ներած էր գրելու Պոլսոյ մէջ, Երեւանէ վերադարձին, թէ «ինքզինքին հանդէպ յարգանք ունեցող կառ.-թիւն մը ինքը պէտք է բանակցեր եւ ոչ թէ ցոյց տար կուսակցութեան մը դուռը»:

Տիար Թէքէեան. Իմ այդ յօդուածս գրուած է Պ. Շաւարշ Միսաքեանի՝ «Ճակատամարտ»-ի մէջ ըրած այն յայտարարութենէն ետք, թէ «տհաս եւ յաւակնոտ առաջարկներով անկարելի դարձուցած ենք միութեան յաջողութիւնը»:

Կարդացուեցաւ Տիրէքթիւներու Սահմանման Յանձնաժողովին 9-րդ առաջարկութիւնը՝ միացեալ կառավարութեան խնդրի մասին, որու նկատմամբ Յանձնաժողովին կողմէ չորս տարբեր կարծիքներ բերուած էին:

Տիար Արշակ Չօպանեան. Փաշան եւ Պ. Ահարոնեան այս միջոցիս խօսակցութեան մը մէջ են. տարակոյս չկայ, որ այս խօսակցութիւնը կը դառնայ երկու Պատուիրակութեանց յարաբերութեանց շուրջ: Այնպէս կը կարծեմ, թէ բանաւոր է, որ իրենք ալ տեղեկութիւն ունենան, թէ այս տեսակ առաջարկութիւններ եղած են Համագումարին կողմէ, եւ այս տեղեկութիւնը պէտք է Փաշային տալ քուէարկելէ առաջ, որպէսզի գիտնայ, թէ ի՞նչ կը խորհի Համագումարը եւ ըստ այնմ իր կարծիքը յայտնէ: Միւս կողմէ՝ Համագումարն ալ պէտք է գիտնայ, թէ ի՞նչ կ'ընեն այդ բանակցութեանց մէջ: Կայ նաեւ սա պարագան: Պ. Խատիսեան Փարիզ գալու վրայ է. հետեւաբար՝ պէտք չունինք աճապարելու, եթէ կարելի ըլլար՝ լաւագոյն էր անոր ժամանման սպասել:

Տիար Հանրմեան. Դեռ Պոլիս անգամ հասած չէ:

Տիար Վ. Թէքէեան. Եւ իբր վարչապետ ալ չի գար կոր: Լաւագոյն է քուէարկել այս առաջարկութիւնները: Տիար Բարսեղեանի եւ միւս կողմէ՝ Տիարք Թէրզիպաշեանի

ու Տէր-Ստեփանեանի առաջարկութիւնները միայն Պատուիրակութեան մասին իրարմէ կը հեռանան, մինչդեռ կառավարութեան մասին համաձայն են իրարու: Ուրեմն, քուէարկութեան հիմ մը կայ:

Տիար Բարսեղեան. Ես իմ առաջարկս իբր ամբողջութիւն մը կը նկատեմ. եթէ մէկ մասը չընդունուի՝ համամիտ չեմ, որ միւս մասը քուէի դրուի:

Տիար Տէր-Ստեփանեան. Մենք ալ այդպէս:

Տիար Բարսեղեան. Միւս կողմէ՝ պէտք չեմ տեսներ նախապէս Փաշային հաւանութեան ընթերցելու այս առաջարկութիւնը: Կա՛մ պէտք է քուէարկել, եւ կամ՝ եթէ Փաշային պիտի ղրկուի, պէտք է ղրկել նաեւ Յանձնաժողովին միւս առաջարկութիւնները, որոնք քուէարկուեցան, բնականաբար՝ չեղեալ նկատելով քուէարկութիւնները:

Տիար Վ. Թէքէեան. Համագումարը միաձայնութեամբ Փաշան ազատ թողած է, որ Պատ.-թիւնը կազմէ. հիմա ինչպէ՞ս կրնանք այդ ազատութիւնը ետ առնել՝ պարտադիր առաջարկութիւն մը ներկայացնելով:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Եթէ Ժողովը ուզէ, թերեւս կարելի ըլլայ միաձայնութեամբ Պատուիրակութեան իրաւասութիւն տալ այս մասին, եւ խնդիրը կը փակուի:

Տիար Վ. Թէքէեան. Կարծեմ ատով Համագումարը նուազեցուցած կ'ըլլայ իր հեղինակութիւնը:

Համագումարը ի վերջոյ որոշեց Փաշային ներկայութեան շարունակել Տիրէքթիւներու Յանձնաժողովին այս 9-րդ առաջարկութեան նկատառումը:

Տիար Արշակ Չօպանեան՝ հիմնուելով Վսեմ. Պօղոս Փաշա Նուպարի վերջին նամակին այն պարբերութեան վրայ, որով կը յայտնէր, թէ Պատուիրակութեան կազմութեան մասին կարգադրութիւն մը ընելու համար պիտի խորհրդակցի Համագումարի իր բարեկամներուն հետ, կրկնեց նախապէս ըրած առաջարկը, թէ Համագումարը, այդ նամակով յայտնուած փափաքին համեմատ, իր մէջէն պէտք է պատգամաւորութիւն մը կազմէ՝ Փաշային հետ բանակցելու համար: Համագումարը անհետեւանք թողուց այս առաջարկը:

Նիստը փակուցաւ ժամը 7-ին:

ՀԱԱ, ֆ. -430, ց. 1, գ. 67, թթ. 1-24: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ ԻԶ

30 Յունիս 1920, ժամը 4-ին,
նախագահութեամբ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեանի
եւ Տիար Գ. Սինապեանի.

Ներկայ էին 18 պատգամաւոր՝

Ամեն. Դուրեան Արքեպիսկ., Բարսեղեան, Դաւիթ-Բէկ, Թէրզիպաշեան, Թէքէեան, Բրոֆ. Թումայեան, Հանըմեան, Մալքոլմ, Մսըրլը Պէյ, Տոքթ. Նեւրուզ, Վսեմ. Գ. Նորատունկեան, Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար, Ռ. Որբերեան, Չօպանեան, Պզտիկեան, Սինապեան, Տէրպէտէրեան, Տէր-Ստեփանեան:

Նիստին ներկայ էր նաեւ Կիլիկիոյ Վեհ. Տ. Սահակ Կաթողիկոսը:

Օրակարգ

1. Վերակազմութիւն Ազգ. Պատուիրակութեան

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Կիլիկիոյ կացութիւնը

Կարդացուեցան Որբախնամ Ընկերութեան Աղեքսանդրիոյ հատուածին Մայիս 12 եւ 14 թուակիր երկու նամակները ուղղուած Ազգ. Պատուիրակութեան Վսեմ. Նախագահին եւ անոնց յարակից՝ Տիկին Զապէլ Եսայեանի կողմէ, Ապրիլ 24-ին ու 25-ին Որբախնամ Ընկերութեան նոյն հատուածին ղրկուած երկու տեղեկագրերու պատճէններ, որոնցմով տեղեկութիւններ կու տար Կիլիկիոյ որբերու թիւին, դրութեան, փոխադրութեան եւ վտանգի որպէին Կիլիկիա մնացող որբերու պաշտպանութեան համար ձեռք առնուած միջոցներուն նկատմամբ: Կարդացուեցաւ նաեւ Տիկին Զապէլ Եսայեանի կողմէ Մերսինէն Յունիս 1 թուականով Ազգ. Պատուիրակութեան Վսեմ. Նախագահին ուղղուած նամակ մը, որուն մէջ մասնաւորաբար ծանուցանելով, որ եթէ դաշնագրին հիման վրայ Կիլիկիա Թուրքիոյ թողուի եւ թուրք վարչութիւնը վերահաստատուի, իրեն համար այլեւս անկարելի պիտի ըլլայ իր պաշտօնին շարունակութիւնը, կը խնդրէ Ազգ. Պատ.-թենէն, որ այն պարագային՝ իրեն տեղ՝ թուրք պաշտօնատարներու հետ յարաբերութեան մէջ մնալու կարող անձ մը նշանակէ:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար Ժողովին հաղորդեց հետեւեալ հեռագիրը, զոր առտուն ստացած էր Փարիզի հելլէն դեսպանատան միջոցաւ: Հեռագիրը Պատուիրակութեան ուղղուած էր Հանրապետութեան Պոլսոյ դիւանագիտական ներկայացուցիչ Տիար Թահիրճեանի կողմէ, եւ խմբագրուած էր Տիկին Զապէլ Եսայեանի տուած տեղեկութեանց վրայ.

Կ. Պոլիս, 14/27 Յունիս 1920.

Կ'ուղղենք հետեւեալ հեռագիրը /խնդրելով որ/ Հելլէն դեսպանատուն, Փարիզ Ձեզի հետ Պատուիրակութեան /հաղորդէք/:

Տիկին Եսայեանի խնդրանքով կը հաղորդեմ հետեւեալը: Կը հաստատեմ նամակները եւ հեռագիրները: Տամատեան ղրկեց տեղեկագիրները եւ վաւերաթուղթեր: Կացութիւնը հրատապ: Կիլիկիա գրաւուած քեմալիստներու կողմէ: Բոլոր դիրքերը առնուած կամ պարպուած են: Քրիստոնեայ ժողովուրդները եւ ֆրանսական ոյժերը կեդրոնացած են դաշտի երեք քաղաքներու մէջ*: Մերսին յարձակման ենթարկուեցաւ, թշնամին ետ մղուեցաւ զրահաւորներու կրակով: Թարսուսի Ամերիկեան Միսիոնին պետը առեւանգուեցաւ իր կնոջ հետ: Կատարեալ համաձայնութիւն ֆրանսացւոց եւ հայոց միջեւ Ամանոսի շրջանակին մէջ, որ միշտ պաշտպանողականի վրայ է: Հայկական ոյժերը յաջողութեամբ կը դիմագրաւեն կացութեան: Ատանայի մօտերը կռիւ տեղի կ'ունենայ: Քրիստոնեաները վրդովուած են Գերագոյն Խորհուրդին կողմէ պարպելու մասին տրուած որոշումէն: Անկարելի է համաձայնութեան գետին մը գտնել հայոց եւ թուրքերուն միջեւ: Փարիզէն լուր եւ հրահանգ չունենալով՝ դէպքերը յանկարծակիի բերին մեզ:

Հայ ժողովուրդին տրամադրութիւնները կռուելու կողմն են, բնաւ երբէ՛ք համաձայնութեան գալու կողմը: Նախորդ ծանր դէպքերու հետեւանքով ո՛չ մէկ յոյս, ո՛չ մէկ վստահութիւն կայ քեմալիստներու մասին: Անել կացութիւն եթէ զինուորական օգնութեան չապահովուի: Անկարելի է ուրիշ միջոցով երաշխաւորել ապահովութիւնը: Դաշնագրին գործադրութիւնը անհնար է՝ առանց երրորդ տարրին՝ հայոց հետ համաձայնութեան: Կացութեան տէր չենք: Հայերը պատրաստ են յուսահատական որոշման մը դիմելու, եթէ անմիջական միջամտութիւն չըլլայ: Թահիրճեան հեռագրած էր արդէն Լառնաքայի օգնութեան կոչը: Յանկարծակիի եկած եմ եւ ընկճուած տիրէքթիւներէ ու հրահանգներէ զուրկ ըլլալուս: Շատ մեծ պատասխանատուութիւն մը կը ծանրանայ ամէնուս ալ վրայ: Խնդրած էի Տամատեանէն, որ մեզի տեղեկացնէ

* Մերսին, Թարսուս, Ատանա /վերջին առնուած տեղեկութեանց համեմատ/: Ծան. ընդօրինակողի:

անցուդարձը: Անհամբերութեամբ ձեր հեռագիրներուն կը սպասէր Կիլիկիա հաղորդելու համար: Կիլիկիոյ մասնաւոր Պատուիրակութիւնը կը ներկայացնէ նաեւ յոյն հասարակութիւնը: Շատ օգտակար պիտի ըլլար, եթէ դիմէինք նաեւ Պ. Վէնիզելոսի: Թահթաճեան»:

Տիար Զ. Պզտիկեան. Երէկ տեսակցութիւն մը ունեցանք գնդապետ Նորմանի հետ որ, ինչպէս ծանօթ է ձեզի, Կիլիկիայէն կու գայ եւ մօտէն տեղեակ է այնտեղի անցուդարձերուն: Մեր տեսակցութեան ընթացքին յայտնի եղաւ, թէ Արտաքին Գործոց Նախարարութեան մէջ այս միջոցիս տիրապետող կարծիքը սա է, որ պիտի ստիպուին պարպել Ատանան: Ֆրանս. կառավարութիւնը ոյժերու կեդրոնացում մը անհրաժեշտ կը դատէ, եւ այդ կեդրոնացումը պիտի ըլլայ Սուրիոյ մէջ: Ըսի իրեն, թէ ֆրանսական իշխանութիւնները ինչպէ՞ս կրնան քաշուիլ, երբ գիտեն, թէ այդ պատճառաւ հայ ժողովուրդը պիտի մնայ թուրքերուն ձեռքը, ինչ որ կրնայ շատ ծանր ու աղիտալի հետեւանքներ ունենալ: Գնդապետը պատասխանեց, թէ վերջը դարձեալ պիտի գան: Բայց մինչեւ ձեր վերադարձը հայ մնացած կ'ըլլա՞յ, հարցուցի: Ատոր վրայ՝ Գնդապետ Նորման յայտնեց, թէ ֆրանսական ոյժերը պիտի քաշուին՝ թուքերուն լաւ դաս մը տալէ վերջ միայն: Կ'ուզենք, ըսաւ, նախ մեծ յաղթանակ մը տանիլ իրենց վրայ՝ մեր բարոյական ազդեցութիւնը հաստատելու համար Սիսին մէջ, որպէսզի թուրք տարրը այլեւս չփորձէ դիմադրել, երբ վերադառնանք Կիլիկիա: Գնդապետը յայտնեց նաեւ, թէ վերջին խօսքը Զօրավար Կուրոյի թողուած է եւ թէ Զօրավարը պիտի որոշէ Կիլիկիան պարպելու կամ չպարպելու հարցը: Ամեն պարագայի մէջ՝ Գնդապետը կրկնեց, որ եթէ պարպելու պէտք ըլլայ, ֆրանսական դրօշին պատիւը բարձր պահելու համար, փայլուն յաղթանակէ մը ետք միայն տեղի պիտի ունենայ պարպումը: Մեր տեսակցութեան միջոցին խօսք դարձաւ նաեւ Պատերազմական Նախարարութեան այն լայն զեկոյցին վրայ, որով ծանուցուած էր, թէ Ուրֆայի պարպումին ժամանակ տեղւոյն հայերը թուրքերուն միացեր են եւ թէ կտրեր են ֆրանսական բանակին տրուած պարէնը: Գնդապետ Նորման ըսաւ, թէ բացարձակապէս սխալ է այս լուրը, եւ ցաւ յայտնեց այդ իմաստով եղած հրատարակութեանց մասին: Ես միայն, ըսաւ, կրնայի գիտնալ, թէ ինչ անցած-դարձած է իրօք, որովհետեւ գործողութիւնները ես վարեցի: Հայերը ո՛չ միայն թուրքերուն չմիացան, այլ ընդհակառակը՝ շատ թանկագին աջակցութիւն մը ընծայեցին մեզի: Նոյնիսկ Հարիւրապետ Օժէ խորհուրդ տուաւ անոնց, որ ի զուր ինքզինքնին չվտանգեն, եւ չըլլայ որ այդ պատճառաւ, իրենց քաշուելէն ետք, թուրքերը վրիժառութեան համար կոտորած մը սարքեն: Բայց նորէն հայերը մտիկ չըրին: Իրենց ընթացքը Ուրֆայի մէջ ալ՝ շատ սիրալիր եղաւ մեր մասին, ու կը զարմանամ, թէ ինչպէ՞ս Պատերազմական Նախարարութիւնը, առանց խնդիրը աղբիւրէն ստուգելու, այդ իմաստով զեկոյց մը հրատարակութեան տուեր է:

Տիար Ա. Չօպանեան. Չեմ կարծեր, որ քիչ մը առաջ կարդացուած հեռագրին մէջ ամեն բան Տիկին Եսայեանի կողմէ գրուած ըլլայ, որովհետեւ ինք չէր կրնար ըսել թէ ո՛չ հրահանգ, ո՛չ ալ տեղեկութիւն ստացած է: Պատուիրակութիւնը օրը օրին տեղեկութիւն տուած է թէ՛ Պ. Տամատեանի եւ թէ՛ Տիկին Եսայեանի, նախատեսելով նաեւ դաշնագրին տրամադրութեանց համաձայն՝ Կիլիկիոյ՝ թուրքերուն թողուիլը: Որոշ հրահանգ տրուած է իրենց, թէ ֆրանսացւոց մեկնած միջոցին ի՞նչ պէտք է ընել եւ մնացած ատենին՝ ի՞նչ: Որբերու տեղափոխութեան մասին ալ պէտք եղածը հեռագրուած է իրենց եւ մեր միջեւ որոշուած կարգախօսով. այդ հեռագիրը ընդունած են եւ ընդունած ըլլալնին ալ իմացուցած: Իրենց գրած ենք նաեւ, թէ նոյնիսկ նախատեսած ենք ամենայոռեգոյն կացութիւնը եւ անգլ. կառավարութեան մօտ դիմումներ ըրած ենք, որ այդ պարագային աջակցութիւն ընծայէ՝ ի հարկին Կիլիկիոյ ամբողջ ժողովուրդին տեղափոխութիւնը ապահովելու համար:

Տիար Ռ. Որբերեան. Կ'ուզէի գիտնալ, թէ ի՞նչ դիմումներ եղած են մինչեւ այսօր Կիլիկիոյ մասին, եւ թէ դիմում ընելու տեղ մնացա՞ծ է:

Տիար Ա. Չօպանեան. Մինակ մենք չէ, Վեհ. Կաթողիկոսն ալ դուռ չմնաց, որ չզարնէ:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Բոլոր դիմումները որոնք կարելի էին՝ եղած են: Ամեն անգամ, որ գէշ լուր մը հասնէր Կիլիկիայէն, իսկոյն կը հաղորդէինք անգլիական եւ ֆրանսական կառավարութեանց, միշտ պահանջելով, որ ժողովուրդին օգնութեան հասնին: Նոյնիսկ խնդրեցինք իրենցմէ, որ եթէ իրօք պիտի պարպեն Կիլիկիան, պարպեն նաեւ հայ ժողովուրդը, քանի որ բացայայտ է, թէ այս տեսակ պարագայի մը մէջ ի՞նչ կացութեան կը մատնուէր հայ ժողովուրդը եթէ նորէն թուրքերուն հետ գլուխ գլխի մնար: Տարակոյս չկայ, որ թեւերնիս ծալլած չենք մնար: Այս հեռագիրն ալ պիտի հաղորդենք եւ պիտի կրկնենք ինչ որ կարելի է ըսել, պիտի պահանջենք ինչ որ կրնանք պահանջել: Բայց կրնա՞նք ըսել իրենց, որ չպարպեն Կիլիկիան: Դեռ քանի մը օր առաջ Պ. Միլլրան Երեսփոխ. ժողովին մէջ յայտարարեց բացէ ի բաց, թէ չպիտի մնան, որոշած են մեկնիլ: Յայտնի է, թէ որոշ քաղաքականութիւն մը ունին այդ մասին: Նոյնիսկ մեր բարեկամները, ինչպէս օրինակի համար Պ. Վիքթոր Պեռար՝ համամիտ չեն, որ մնան: Բայց մէջտեղը քրիստոնեայ բնակչութիւնը պաշտպանելու անհրաժեշտութիւն մը կայ, զոր ո՛չ ոք կ'ուրանայ: Այդ հիման վրայ է, որ դիմում կրնանք ընել:

Տիար Թումայեան. Վեհ. Կաթողիկոսը արդեօք կը հաճի՞ յայտնել, թէ ի՞նչ պատասխան կու տային իր դիմումներուն:

Տիար Տ. Սահակ Կաթողիկոս. Եթէ իրենց պատասխաններուն նայինք՝ բոլորովին շփոթութեան մէջ կը մնանք: Որովհետեւ որոշ բան չեն ըսեր: 4-5 օր առաջ Պ. Քամէրէրի մօտն էի, ըսաւ որ առ այժմ չպիտի պարպեն Ատանան, քաղաքական պատճառներով: Հարցուցի, թէ այդ պատճառները միշտ գոյութիւն պիտի ունենա՞ն: Պատասխանեց, որ ինք ալ բան չգիտեր: Երէկ՝ ինչպէս Տիար Պզտիկեան պատմեց, Գնդապետ Նորման յայտնեց, թէ Ատանան պարպելու որոշում տրուած է: Սովորաբար՝ այսպէս հակասական բաներ են մեզի տրուած պատասխանները:

Վսեմ. Տիար Գաբրիէլ Նորատունկեան. Դեռ մօտերս Կիլիկիան պարպելու մտածում չունէին: Վերջին անգամ երբ Պ. Պեռարի գացինք Պ. Պ. Ահարոնեանի, Ֆնտգլեանի եւ Սինապեանի հետ,- Փաշան անհանգիստ էր այդ օրը,- Պ. Պեռար ըսաւ մեզի, թէ իր հարցման վրայ Պ. Միլլրան բացարձակ պատասխան տուած էր, որ չպիտի ելլեն Կիլիկիայէն:

Տիար Ռ. Որբերեան. Յայտնի եղաւ, որ ֆրանսական կառավարութեան մօտ դիմումներ եղեր են թէ՛ Պատուիրակութեան եւ թե՛ Վեհ. Կաթողիկոսին կողմէ: Նոյն դիմումները եղեր են նաեւ անգլիական կառավարութեան մօտ: Արդիւնքը մէջտեղն է, ինչ որ կ'ենթադրէ, թէ Դաշնակիցներէն խէր չկայ: Բայց այդեօք Եւրոպայի երկնքին տակ չկա՞յ ուրիշ պետութիւն մը, որուն կարելի ըլլայ դիմել: Իբր օրինակ կը յիշեմ Սպանիան: Գիտէք անշուշտ, որ պատերազմի միջոցին՝ գերիներու մասին այնքան կոչեր եւ դիմումներ եղան Սպանիոյ թագաւորին: Ն. Վեհափառութիւնը միշտ միջոցը գտաւ զանոնք պաշտպանելու: Կարելի չէ՞, որ Կիլիկիոյ մասին ալ դիմում ընենք Սպանիոյ թագաւորին:

Տիար Ա. Չօպանեան. Համաձայն եմ այս առաջարկին. ո՛չ միայն Սպանիոյ, այլ բոլոր չէզոք պետութեանց մօտ դիմումներ պէտք է ընել. նաեւ Ս. Պապին ալ, որքան ալ անյոյս ըլլանք այս մասին: Որովհետեւ, դժբախտաբար, չենք կրնար խոշոր ակնկալութիւններ դնել այդ դիմումներուն վրայ: Օրինակ մը յիշեմ: Պատերազմին սկիզբը՝ երբ լուր առնուեցաւ, թէ թուրք կառավարութիւնը աքսորեր է հայ մտաւորականները, Պօղոս Փաշան իսկոյն դիմեց Սպանիոյ թագաւորին, որպէսզի միջամտէ անոնց Պոլիս վերադառնալուն համար: Ն. Վեհափառութիւնը ապահովիչ պատասխան մը տուաւ, բայց արդիւնքը յայտնի է: Բացի մէկ քանիէն, բոլոր աքսորուած մտաւորականները սպանուեցան զարհուրելի պայմաններու մէջ:

Տիար Ռ. Որբերեան. Ուրեմն, մեզի կը մնայ ազգովին անարշիսք ըլլալ:

Տիար Տէր-Ստեփանեան. Պատուիրակութեան թողունք, որ իւր սովորական դիմումները ընէ: Բայց, միւս կողմէ, պէտք է խնդրենք Վեհ. Կաթողիկոսէն, որ հանդիսաւոր կոչ մը ուղղէ ֆրանսական ժողովուրդին, եւ Պատուիրակութիւնն ալ պէտք է իր միջոցները դնէ Ն. վեհափառութեան տրամադրութեան տակ որպէսզի այդ կոչը կարելի մեծագոյն տարածումը ունենայ թէ՛ կառավարութեան, թէ՛ մամուլին եւ թէ՛ ժողովուրդին մէջ: Միւս կողմէ, ինծի կը թուի, որ կատարուելիք օգտակար գործ կայ այս միջոցիս Հռոմ: Ամենուս ծանօթ են իտալական կառավարութեան յարաբերութիւնները քեմալիսթներու հետ. գիտենք, որ անոնց վրայ մեծ ազդեցութիւն ունի, եւ ասիկա ապահովաբար պիտի շարունակուի՝ քանի խաղաղութիւնը չէ կնքուած: Արդ, կրնանք՝ օգտուելով Պ. Վարանդեանի Հռոմ ներկայութենէն, դիմել իտալական կառավարութեան եւ խնդրել, որ իր ազդեցութիւնը կենթարկէ հայերու ֆիզիկական գոյութիւնը պահպանելու համար: Այս դիմումը միեւնոյն ատեն կրնար ըլլալ նաեւ Վատիկեանի մօտ, որ կառավարութեան յենակէտներէն մէկը եղող ժողովրդական Կուսակցութեան հետ ունեցած սերտ յարաբերութեանց շնորհիւ կրնայ օժանդակել այս գործին, բացի իր կատարելիք ուղղակի միջամտութենէն:

Տիար Որբերեան. Վեհ. Կաթողիկոսն ալ արդեօք չի՞ կրնար Հռոմէն անցնելով դիմել Ս. Պապին:

Վեհ. Տ. Սահակ Կաթողիկոս. Դժուարութիւններ կան ճամբաս փոխելու համար: Արդէն Թէրզեան Կաթողիկոս եւ Նազլեան Գերապայծառ Հռոմ են եւ աւելի օգտակարապէս կ'աշխատին հոն: Ես, ընդհակառակը, կ'աճապարեմ Զօրավար Կուրոյի մօտ երթալու, որովհետեւ խնդրին բանալին, ինչպէս Գնդապետ Նորման յայտնեց, անոր մօտն է: Եգիպտոսէն անցած միջոցիս ալ պիտի տեսնեմ Մարաջախտ Ալէնպիի, եւ կը յուսամ, որ բոլորովին ապարդիւն չի մնար անոր մօտ կատարելիք դիմումս, քանի որ ծանօթ են իւր բարեացակամ տրամադրութիւնները հայ ազգին նկատմամբ:

Տիար Վահան Թէքէեան առաջարկեց, որ ինչպէս Սուլթան Համիտի օրով՝ քաղաքական տեսակէտներէ անկախ դիմումներ կ'ըլլային Եւրոպայի հանրային կարծիքին, եւրոպական խորհրդարաններու անդամներուն, հայ ժողովուրդին պաշտպանութեան համար, նոյնիմաստ դիմումներ ըլլան նաեւ, ի հարկին լոկ Վեհ. Կաթողիկոսին կողմէ, Ծերակոյտի եւ Երեսփ. ժողովի անդամներուն մօտ, հիմնուելով այն սպառնալիքներուն վրայ, զորս Գերագոյն Խորհուրդը ըրած էր Թուրքիոյ՝ նոր անկարգութիւններ ծագելու պարագային դաշնագրին տրամադրութիւնները պիտի խորացուին ըսելով:

Տիար Տէրպէտէրեան. Ինչո՞ւ լոկ խորհրդարանի անդամներուն դիմում ըլլայ եւ ոչ խորհրդարաններուն:

Տիար Թէքէեան. Որովհետեւ ֆրանսացիներուն իրաւունքն է միայն դիմում ընել խորհրդարանին:

Տիար Տէր-Ստեփանեան ցաւ յայտնեց, որ մինչեւ այսօր, թէ՛ ծերակուտականներու եւ թէ՛ Երեսփ. ժողովի անդամներուն մօտ պէտք եղածին պէս տարածուն կերպով մը դիմումներ չեն եղած:

Առաջարկուեցաւ մասնաւոր յանձնաժողով մը կազմել Կիլիկիոյ հարցերով զբաղելու համար:

Տիար Թէրզիպաշեան պաշտպանեց այս առաջարկը, ըսելով, որ պէտք էր Համագումարը իւր մէջէն երեք անդամներ ընտրելով կազմէ այդ յանձնաժողովը, որ Պատուիրակութեան պիտի աշխատակցի խորհրդակցական հանգամանքով: Այդ առթիւ յիշատակեց Ամանոսի հայ հանրապետութեան հաստատութեան մասին տարածուած զրոյցը եւ ըսաւ, որ եթէ այս լուրը ստուգուի, կարելի է դիմել ֆրանս. կառավարութեան, եւ անոր առաջարկին ամեն գործակցութիւն Կիլիկիոյ մէջ հետապնդած իր տնտեսական նպատակներուն յաջողութեան համար, պայմանաւ, որ Կիլիկիոյ մէջ նախապատուութիւն տայ հայ տարրին:

Տիար Վահան Թէքէեան. Ամանոսի հանրապետութեան մասին Տիար Զօպանեան դիմում ըրաւ Արտաքին Գործոց Նախարարութեան մօտ, պատասխանեցին թէ լուր չունին: Եթէ այնտեղ հայերուն եւ ֆրանսացւոց միջեւ հասկացողութիւն մը գոյացած ըլլար, ֆրանսացիք իրենք պիտի փութային հայոց հետ համաձայնութեան մը գալ:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Եթէ Համագումարը տեւէր՝ բնականաբար յանձնաժողով մը կ'ընտրէր այս խնդրով զբաղելու համար: Բայց Համագումարը հազիւ 1-2 նիստ ալ գումարելէ ետք՝ պիտի ցրուի եւ բոլոր առկախ գործերը պիտի անցնին Պատուիրակութեան: Մենք խորհող մարմինն ենք. գործադիր մարմնէն կ'ելնայ մեր որոշումները գործադրել: Վիճաբանութեան ընթացքին պէտք տեսնուեցան նոր դիմումներու՝ ո՛չ միայն ֆրանսական, այլ նաեւ ուրիշ Դաշնակից եւ չեզոք պետութեանց մօտ: Պէտք տեսնուեցաւ նաեւ խորհրդարանի անդամներու մօտ ալ դիմումներ կատարելու: Թէ՛ այս դիմումներուն եւ թէ՛ մասնաւոր յանձնաժողովի մը կազմութեան մասին յանձնարարութիւն կ'ընենք Պատուիրակութեան:

Տիար Վ. Թէքէեան. Համագումարը եթէ պիտի ցրուի, կրնայ գոնէ ընտրել իր անդամներէն երեք հոգի, որոնք Փարիզ պիտի մնան: Այս երեք հոգին կը կազմեն Կիլիկիոյ յանձնաժողովը՝ եւ անոնց պաշտօնավարութեան տեւողութիւնն ալ չորոշուիր առաջուց: Պատուիրակութիւնը կ'իւրացնէ այդ յանձնաժողովը, որ խորհրդակցական աշխատութեամբ մը կը կապուի իրեն:

Համագումարը անհետեւանք թողուց Կիլիկիոյ համար մասնաւոր յանձնաժողով մը ստեղծելու առաջարկութիւնը:

Օրակարգ
1. Վերակազմութիւն Ազգ. Պատուիրակութեան

Նախագահ Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան քիչ մը անհանգիստ զգալով ինքզինքը, նախագահութիւնը վարեց դեր-նախագահ Տիար Գ. Սինապեան:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Ինծի առաջին պարտականութիւն կը նկատեմ շնորհակալութիւն յայտնել Համագումարի Դիւանին կողմէ ամէնուն անունով գրուած Յունիս 27 թուակիր նամակին համար: Խորապէս զգացուած եմ համակիր գնահատութեան այս նոր ցոյցին եւ երախտապարտ եմ ձեզի, որ ուզեցիք նկատի առնել իմ առողջական վիճակս: Համագումարիդ պնդումներուն վրայ, խոստացած էի ոյժերուս ներած չափով տակաւին ժամանակ մըն ալ աշխատիլ, եթէ երբեք կարելի ըլլար կարգադրութիւն մը գտնել Պատուիրակութեան զօրացման համար, քանի որ, ինչպէս արդէն յայտնի է ժողովիդ, առողջական վիճակս չի թոյլատրեր ինծի այլեւս տալ ամբողջ կարելին, որ անհրաժեշտ է մեր դատին հետապնդութեան: Այս մասին որոշում մը տալէ առաջ՝ ուզեցի գիտնալ, թէ ի՞նչ պիտի ըլլան մեր յարաբերութիւնները Հանրապետութան Պատուիրակութեան հետ եւ թէ ի՞նչ պայմաններու մէջ պիտի կրնանք շարունակել մեր համերաշխ գործակցութիւնը, ինչպէս կ'ըլլար անցեալին մէջ: Այս նպատակով՝ բազմաթիւ տեսակցութիւններ ունեցայ թէ՛ Տիար Ահարոնեանի եւ թէ՛ բարեկամներու հետ, եւ միասին խորհրդակցեցանք այն միջոցներուն վրայ, որոնցմով կարելի պիտի ըլլար դրական եւ կատարեալ աշխատակցութիւն մը հաստատել: Ի վերջոյ համաձայնութեան հիմ մը գտանք եւ այդ համաձայնութեան պայմանները պարզուած են այն գիրին մէջ, որ պիտի կարդացուի հիմա Դիւանին կողմէ:

Կարդացուեցաւ Վսեմ. Պօղոս Փաշա Նուպարի կողմէ Դիւանին յանձնուած հետեւեալ գրութիւնը.

«1. Երկու Պատուիրակութիւնները միասին պիտի քննեն ամեն խնդիր, եւ բոլոր խնդիրները պիտի ենթարկուին երկու միացեալ Պատուիրակութեանց. երկու Պատուիրակութիւններէն ո՛չ մէկը չպիտի կրնայ առանձին որոշում մը տալ:

Երկու Միացեալ Պատուիրակութեանց պիտի նախագահէ Ն. Վսեմութիւն Պօղոս Նուպար Փաշա եւ, իր բացակայութեան, Տիար Ահարոնեան:

«2. Ազգ. Պատուիրակութիւնը պիտի ունենայ չորս անդամ, երեքը՝ ոչ-Դաշնակցական եւ մէկը Դաշնակցական:

«3. Ամեն ծանուցագիր եւ ամեն պաշտօնագիր, որոնք երկու կողմերուն յատուկ են ու կը հետաքրքրեն Միացեալ Հայաստանը, եւ որոնք պիտի ուղղուին պետութեանց ու Խաղաղութեան Վեհաժողովին, պիտի ստորագրուին՝ ինչպէս անցեալին մէջ՝ երկու Նախագահներուն կողմէ: Սակայն՝ Պ. Ահարոնեան մինակը պիտի ստորագրէ այն նամակները եւ պաշտօնագրերը, որոնք լոկ Հանրապետութեան կառավարութիւնը կը հետաքրքրեն, եւ Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար նոյնպէս մինակը պիտի ստորագրէ այն նամակները, որոնք պիտի ուղղուին Թուրքիոյ բոլոր հայերուն պատրիարքական իշխանութեանց»:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Ինչպէս կը տեսնէք, ասիկա հիմ մըն է, որ աւելի սերտ աշխատակցութիւն մը կ'ապահովէ, քան անցեալին մէջ եղածը, եւ մեծ յոյս ունիմ, որ այլեւս կը դադրին այն տարակարծութիւնները, որոնց, դժբախտաբար, բոլորովին կարելի չեղաւ առաջքը առնել եւ որոնք պէտք է վերջ գտնեն այլեւս: Իմ կարծիքովս՝ այս համաձայնութիւնը շատ մեծ յաջողութիւն մըն է այդ տեսակէտով եւ երկու Պատուիրակութեանց փոխադարձ յարաբերութեանց բարւոքման գրաւական մը, որմէ զուրկ էինք անցեալին մէջ: Կայ կէտ մը, որ ինծի համար մեծ կարեւորութիւն ունէր, այսինքն՝ Պատուիրակութեան անդամներու թիւին խնդիրը: Նկատի առնելով կատարուելիք գործերուն բազմապահանջութիւնը, իմ փափաքս էր՝ եթէ ոչ աւելցնել՝ գոնէ անփոփոխ պահել Պատուիրակութեան անդամներուն թիւը: Այս մասին շատ պնդեցի, բայց, դժբախտաբար, կարելի չեղաւ: Տեղի տուի մանաւանդ այն առարկութեան առջեւ, թէ Հանր.-թեան Պատուիրակութիւնը միայն երկու անդամ պիտի ունենար՝ Տիարք Ահարոնեանը եւ Խատիսեանը, որ Փարիզ գալու վրայ է այս միջոցիս: Նկատողութեան արժանի ուրիշ կէտ մը՝ պաշտօնագիրներու ստորագրութեան հարցն էր: Իմ փափաքս էր, որ բոլոր պաշտօնագրերը, ըստ առաջնոյն, կրեն երկու Նախագահներուն ստորագրութիւնը: Տիար Ահարոնեան դիտել տուաւ, թէ Հանր. կառավարութեան պատկանող եւ ուղղակի զայն շահագրգռող պաշտօնագիրներ կային՝ զորս պէտք էր որ ինք մինակը ստորագրէր իբր ներկայացուցիչ Հանրապետութեան: Անարդար պիտի ըլլար սակայն, որ ինք իրաւունք ունենար մինակը ստորագրելու թուղթեր, որոնք կը վերաբերէին իր ներկայացուցչական իրաւասութեան, եւ ես չունենայի նոյն իրաւունքը այն տեսակ թուղթերու մասին, որոնք կը վերաբերէին իմ ներկայացուցչական իրաւասութեանս, քանի որ նոյնքան ակներեւ էր, որ ես ալ ներկայացուցիչն էի թրքահայ ժողովուրդին: Այսպէս՝ այն իրաւունքը, զոր ինք կը պահանջէր Հանրապետութեան կառավարութեան պատկանող գիրերու ստորագրութեան մասին, ես ալ պահանջեցի թրքահայ ժողովուրդին հեղինակաւոր հաստատութեանց՝ օրինակի համար՝ Պատրիարքարանին պատկանող գիրերու ստորագրութեան մասին: Պ. Ահարոնեան ընդունեց եւ, այս կերպով, իրաւանց հաւասարակշռութիւն մը հաստատուեցաւ երկու Պատուիրակութեանց միջեւ:

Տիար Տէր-Ստեփանեան. Անշուշտ մինակ ստորագրուելիք թուղթերը կը պատկանին ներքին խնդիրներու: Իսկ արտաքին դիմումներու համար՝ դարձեալ երկու Նախագահները միասին պիտի ստորագրեն:

Տիար Գ. Սինապեան. Տարակոյս չկայ, որ այս տեսակ ֆորմիւլի մը մէջ կարելի չէ ամեն բան մանրամասնել առաջուց: Վերջին երկու կողմերը իրենք իրենց միջեւ կ'որոշեն այդ մանրամասնութիւնները:

Տիար Տոքթ. Նեւրուզ. Պէտք է ճշդել այս կէտը եւ ատիկա պիտի ընեմ մէկ-երկու բառով, քանի որ ես ալ մասնակցեցայ բանակցութեանց: Այն գիրերը, զորս Տիար Ահարոնեան մինակը պիտի ստորագրէ՝ միայն անոնք չեն, որոնք ուղղուած պիտի ըլլան իր կառավարութեան, այլ նաեւ՝ Խաղաղութեան Վեհաժողովին եւ պետութեանց

ուղղուած այն տեսակ գիրեր, որոնց մէջ յուզուած խնդրին համար ինք միայն իրաւասու է դիմում ընելու իբր հայկական պետութեան ներկայացուցիչ:

Տիար Վ. Թէքէեան. Բայց այս խնդիրներուն պատկանող խորհրդակցութեանց պիտի մասնակցին երկու Նախագահներն ալ:

Տիարք Սինապեան եւ Նեւրուզ. Անշուշտ, բայց ամեն մէկը պիտի ստորագրէ:

Տիար Տէր-Ստեփանեան. Եթէ սակայն Հանր. կառավարութիւնը ուզէ կարեւոր հրահանգ մը տայ, զոր օրինակ՝ ըսէ, թէ իրենք մանտա չեն ուզեր, այս պարագային՝ Ազգ. Պատուիրակութիւնը ձայն պիտի ունենա՞յ, որովհետեւ մանտայի խնդիրը այն տեսակ խնդիր մըն է, որ թրքահայերն ալ, հետեւաբար՝ Ազգ. Պատուիրակութիւնն ալ կը հետաքրքրէ:

Տիար Տոքթ. Նեւրուզ. Այդ պարագային՝ Միացեալ Պատուիրակութիւնը պիտի խորհրդակցի, եւ եթէ համաձայնութեան չգայ՝ խնդիրը պիտի տեղեկագրէ կառավարութեան:

Տիար Գ. Սինապեան. Այսինքն կ'ուզուի նախատեսել սա պարագան՝ թէ կառավարութիւնը կրնայ վճռական հրահանգ մը տալ Տիար Ահարոնեանի եւ Միացեալ Պատուիրակութիւնը համաձայն չըլլար այդ հրահանգին նկատմամբ: Անշուշտ կրնան ծագիլ այս եւ ասոր նման անհամաձայնութիւններ, բայց կարելի չէ առաջուց լուծում մը գտնել անոնց մասին: Երկու կողմերու իմաստութեան պէտք է թողուլ այդ անհամաձայնութեանց լուծումը:

Վսեմ. Պօղոս Նուպար. Կառավարութիւն մը կայ՝ որուն գոյութիւնը չենք կրնար անտեսել. նոյնիսկ երջանիկ ենք որ գոյութիւն ունի: Այդ կառավարութեան իրաւունքն է անշուշտ դիմումներ ընել, ինչպէս ըրած է անցեալին մէջ: Կրնայ պատահիլ, որ բոլորովին համաձայն չըլլանք իր ամեն դիմումներուն, բայց չենք կրնար արգիլել զինքը: Էականը սա է, որ մեր համամտութենէն դուրս կատարուած դիմումներուն պատասխանատուութիւնը ինք ստանձնէ:

Վսեմ. Տիար Գաբրիէլ Նորատունկեան. Կ'առաջարկեմ, որ այլեւս չվիճաբանիք այս խնդրին նկատմամբ, եւ անմիջապէս քուէարկենք ներկայացուած գիրը: Տարակոյս չկայ, թէ ամէնքս ալ ուրախ ենք, որ ելքի մը յանգեցաւ վերջապէս այս խնդիրը:

Տիար Վ. Թէքէեան. Այստեղ կը նախատեսուի կոր պարագայ մը, որ Հանր. Պատուիրակութիւնը պիտի կրնայ առանձինն ստորագրել, կամ դիմում ընել, անշուշտ՝ Միացեալ Պատուիրակութեան խորհրդակցութեամբ, նոյնիսկ այն առիթներուն մէջ, ուր Ազգ. Պատուիրակութիւնը համամիտ չըլլայ իրեն: Կ'ուզէի գիտնալ, թէ արդեօք Ազգ. Պատ.-թիւնն ալ, Պատրիարքարանին հետ իր ունենալիք յարաբերութենէն անկախաբար, պիտի կրնա՞յ առանձին դիմում ընել թրքահայոց անունով. եւ եթէ միւս Պատ.-թիւնը համաձայն չըլլայ այդ դիմումին՝ Ազգ. Պատուիրակութիւնը իրաւունք պիտի ունենա՞յ միշտ ընելու իր հարկ դատած դիմումը, միւս Պատուիրակութիւնը անհամաձայն ըլլալը միայն արձանագրելով, ինչպէս Հանր. Պատուիրակութիւնը իրաւունք ունի:

Տիար Տէր-Ստեփանեան. Ձեւը խնդիր չէ ինծի համար. մէկը կը ստորագրէ, միւսը կը ստորագրէ, կարեւորութիւն չունի, այլ՝ էութիւնը: Արտաքին հարցերու մասին՝ Հանր. Պատուիրակութեան գործը կարելի է երկուքի բաժնել, մէկ մը դեսպանական գործը, մէկ մըն ալ Խաղաղութեան Վեհաժողովին մօտ կատարուելիք գործը: Դեսպանական գործերը կրնայ ընել մինակը: Ո՛չ ոք տարակարծիք է այս մասին: Ինչ որ զիս կը հետաքրքրէ՝ Խաղաղութեան Վեհաժողովին մօտ ընելիք դիմումներն են: Եթէ այդ մասին Երեւանի կառավարութիւնը որոշում մը տայ եւ Ազգ. Պատ.-թիւնը համաձայն չըլլայ, ի՞նչ պիտի ընէ Հանր. Պատ.-թիւնը: Երկու լուծում կայ այս մասին. կա՛մ Հանր. Պատուիրակութիւնը առանց Ազգ. Պատուիրակութեան հետ համաձայնելու ուզէ քայլ չառնէր, եւ կա՛մ ընթացք կու տայ իր ստացած հրահանգին, նոյնիսկ առանց համաձայնութեան: Առաջին պարագային՝ խնդիր չի մնար: Իսկ երկրորդ պարագային՝ ես կը կարծեմ, որ Ազգ. Պատ.-թիւնը ճիշդ նոյնքան մասնաւոր իրաւունքներ պէտք է

ունենայ՝ իբր տաճկահայոց ներկայացուցիչ, որքան Հանր. Պատ.-թիւնը պիտի ունենայ իբր հայկական կառավարութեան ներկայացուցիչ:

Տիար Տոքթ. Նեւրուզ. Պէտք չէ ներքին հարցերը շփոթել արտաքին հարցերուն հետ: Ներքին հարցերու մէջ՝ Ազգ. Պատուիրակութեան համար կրնայ պէտք ծագիլ առանձինն ստորագրելու: Բայց արտաքին հարցերու մէջ՝ չեմ կարծեր, որ այդ պէտքը ծագի: Ինչ որ Ամբողջական Հայաստանի, հետեւաբար նաեւ թրքահայոց կը պատկանի, խորհրդակցութեան առարկայ պիտի դառնայ Միացեալ Պատուիրակութեան մէջ, ու պիտի ստորագրուի երկու Նախագահներուն կողմէ: Ուրեմն, մինակ դիմում ընելու պէտք չի մնար Ազգ. Պատուիրակութեան: Իրաւունքը հաւասարակշռութիւնը երկու Պատուիրակութեանց միջեւ՝ փնտռել պէտք է լոկ ներքին հարցերու համար. արտաքին հարցերու համար պէտք չկայ: Խնդիրներ կան, որոնք կը հետաքրքրեն լոկ Հայկ. պետութեանը, եւ որոնց մասին կատարուելիք դիմումները պէտք է ընէ մի՛միայն պետութեան ներկայացուցիչը. նոյնիսկ Ազգ. Պատ.-թիւնը պիտի փափաքէր, որ այդ կարգի խնդիրները լոկ Հանր. Պատուիրակութեան պատկանին: Գալով այն անհամաձայնութեանց, որոնք կրնան ծագիլ, պիտի աշխատուի անշուշտ որ բնաւ չծագին, եւ եթէ երբեք ծագին ու կարելի չըլլայ զանոնք բառնալ այստեղ, Պատուիրակութեանց կը մնայ դիմել հայկական կառավարութեան եւ անոր ներկայացնել իրողութիւնը:

Տիար Վ. Թէքէեան. Այդ պարագային՝ պէտք է, որ Պատրիարքարանին ալ ներկայացուի իրողութիւնը՝ Ազգ. Պատուիրակութեան միջոցաւ:

Ամեն. Դուրեան Արքեպիսկոպոս. Կարծեմ, թէ այդ կերպով աւելի դժուար կը դառնայ լուծումը:

Տիար Ա. Չօպանեան. Պատուիրակութեանց անհամաձայնութեանց մասին խօսուեցաւ, քանի մը բառ ալ ես պիտի ըսեմ այդ մասին: Վերջին տարուան ընթացքին երկու Պատուիրակութիւնները անշուշտ համաձայն չգտնուեցան ամեն տեսակէտով՝ ներքին եւ արտաքին խնդիրներու մէջ, բայց Խաղաղութեան Վեհաժողովին մօտ ըլլալիք դիմումներու մասին անոնք միշտ համերաշխ մնացին: Կրնամ վստահեցնել ժողովիդ, թէ եղան նոյնիսկ պարագաներ, որոնց ընթացքին Հանր. Պատ.-թիւնը փոխեց իր կառավարութենէն ստացած հրահանգները, ինչ որ կ'ենթադրէ, թէ կառավարութիւնը լայն իրաւասութիւններ տուած էր իրեն: Կը հաւատամ, որ ասկէ վերջն ալ տարբեր չըլլար: Հետեւաբար, լաւագոյն է, որ վերջ տանք այս վիճաբանութեան:

Տիար Ռ. Որբերեան. Ներկայ կացութիւնը կը պահանջէ, որ թշնամիին դէմ մէկ ճակատ կազմենք եւ ձեռք-ձեռքի աշխատինք: Այս մասին՝ ամէնէն անհրաժեշտ քայլն է, որ առնուեր է: Գալիք գործողութեանց համերաշխութեան խնդիրը երկու Նախագահներուն իմաստութեան թողունք եւ, ինչպէս Տիար Չօպանեան ըսաւ, վիճաբանութեան վերջ տալով՝ անցնինք քուէարկութեան:

Տոքթ. Բարսեղեան. Այս թուղթը կա՛մ պէտք չէր գար Ժողովին եւ կա՛մ գալէ վերջ, պէտք է անանկ ձեւ մը առնէ, որ անպատեհութեանց ծնունդ չտայ: Որովհետեւ անոր բովանդակութիւնը պարզ չէ, եւ կը վախնամ, որ վաղուընէ սկսեալ անպատեհութիւններ ծագին: Պարզ չէ՝ որովհետեւ Խաղաղութեան Վեհաժողովը իր պաշտօնագիրները կ'ուղղէ միայն Հանր, Պատուիրակութեան. չեմ հասկնար թէ Հանր. Պատ.-թիւնը ինչպէ՞ս կրնայ թոյլատրել, որ ուրիշ Պատուիրակութեան մըն ալ պետը՝ որ կառավարութեան մը ներկայացուցիչը չէ, իրեն հետ ստորագրէ Խաղաղութեան Վեհաժողովին ուղղուելիք պաշտօնագրեր: Ասիկա անհիմաստ է, որովհետեւ չկայ ուրիշ օրինակ մը. Խաղաղութեան Վեհաժողովին մօտ կա՞յ ժողովուրդ մըն ալ, որուն անունով երկու անձ խօսին:

Տիար Չօպանեան. Մինչեւ հիմա այսպէս եղած է:

Տոքթ. Բարսեղեան. Մինչեւ հիմա պարագաները տարբեր էին. իսկ այժմ, Թուրքիոյ դաշնագիրը ներկայացուելէն ի վեր՝ ինչ որ Հայկ. պետութեան իրաւական ճանաչումը կը հռչակէ, բանակցութիւնները պէտք է ըլլան պետական հողի վրայ, եւ

այդ դրութիւնը, զոր կ'ուզուի նուիրագործել, պետութիւն ըմբռնումն իսկ կը քանդէ: Կը կրկնեմ, որ անիմաստ են այդ թուղթերը, եւ կ'առաջարկեմ, որ այն բոլոր դիմումները, որոնք պիտի կատարուին յանուն Հայաստանի Հանրապետութեան, պէտք է ստորագրուին միմիայն Հանր. Պատուիրակութեան Նախագահին կողմէ:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Չեմ հասկնար, թէ ինչո՞ւ կը վիճաբանիք այս խնդրին վրայ, երբ Տիար Ահարոնեան ու ես համաձայն ենք անոր մասին, ինչպէս կը վկայէ բերուած ու կարդացուած թուղթը:

Տոքթ. Բարսեղեան. Ատիկա համաձայնութիւն մը չէ. ստորագրուած ալ չէ:

Տիար Տոքթ. Նեւրուզ. Եթէ համաձայնութիւն մը չըլլար՝ չէինք բերեր այս Ժողովին:

Տիար Սինապեանն ալ, որ Տիար Տոքթ. Նեւրուզի հետ մասնակցած էր բանակցութեանց, նոյնը հաստատեց:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Քանի որ Տիար Ահարոնեան խնդիր չընէր, կ'ընդունի եւ ես ալ կ'ընդունիմ, այլեւս ի՞նչ տեղի կը մնայ վիճաբանութեան: Ես այս գործը ա՛յս պայմաններով միայն կրնամ շարունակել. ազատ էի մերժելու այդ պայմանները, բայց պէտք է, որ զիս ալ ազատ թողուի:

Տիար Տէր-Ստեփանեան. Պատուիրակութեան վերակազմութեան խնդրին մէջ Տիար Ահարոնեան միջամտեր է Համագումարի գործին, սահմանելով Պատուիրակութեան անդամներուն թիւը եւ անոնց կուսակցական հանգամանքը: Այս ոտնձգութիւնը անընդունելի է: Հետեւաբար՝ պէտք է երկու մասի բաժնել այս համաձայնութեան գիրը եւ ըստ այնմ քուէարկել:

Տիար Տոքթ. Նեւրուզ. Տիար Ահարոնեան երբեք միջամտած չէ Համագումարի գործերուն. մտքէն անգամ չէ անցած այս տեսակ բան մը, եւ եթէ ուզէ՝ այսօր ինքզինքը բոլորովին ազատ կը զգայ նոյնիսկ այս համաձայնութիւնը չեղեալ նկատելու:

Տիար Տէր-Ստեփանեան. Պատուիրակութեան անդամներուն թիւը եւ անոնց կուսակցական հանգամանքը պէտք էր դուրս մնային այս խնդրէն, քանի որ Համագումարին կը պատկանի անոնց մասին որոշում մը տալու իրաւունքը:

Տիար Տոքթ. Նեւրուզ. Եղածը համաձայնութեան մը արդիւնքն է, եւ Տիար Ահարոնեանը չէր, որ այդ համաձայնութիւնը փնտռեց, ոչ ալ ինք պատրաստեց զայն:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Կը պահանջեմ, որ կա՛մ ամբողջութեամբ քուէարկուի եւ ընդունուի այդ համաձայնութիւնը եւ կա՛մ բնաւ չընդունուի: Ըսի արդէն, թէ Պատուիրակութեան անդամներու թիւին 4-ի վերածումը իմ մտածումս չէր. ընդհակառակը՝ անբնական եւ անյարմար կը նկատեմ զայն, նկատի առնելով կատարուելիք գործերու ծանրութիւնը: Բայց վերջապէս ստիպուեցայ համակերպիլ: Եւ իմ կողմէս եղած այս զոհողութիւնը ինքնին ցոյց կու տայ, թէ որքան կը փափաքէի այս համաձայնութեան գոյանալուն:

Տիար Տէրպէտէրեան. Տիար Ահարոնեան ինք չմիջամտե՞ց այս մասին:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Չեմ ծածկեր, որ ես դիմեցի իրեն: Ես իրեն գացի եւ ամենայն անկեղծութեամբ ըսի, որ չպիտի կրնամ Ազգ. Պատուիրակութեան նախագահութիւնը ստանձնել՝ եթէ ապահով չըլլամ, որ միասին պիտի քալենք: Հարցուցի իրեն, թէ կարելի պիտի ըլլա՞ր, որ անցեալ տարուընէ աւելի սերտ կերպով մը գործակցինք: Տիար Ահարոնեան նոյնպէս համամիտ էր այս համագործակցութեան տեսակէտին: Խօսեցանք, եւ վերջապէս յանգեցանք համաձայնութեան մը: Այդ համաձայնութիւնը կարդացուեցաւ: Կա՛մ կ'ընդունիք անոր ամբողջութիւնը եւ կա՛մ կը մերժէք: Կը կրկնեմ, որ ուրիշ ոեւէ կարգադրութեան առջեւ պիտի ստիպուիմ քաշուիլ վերջնականապէս: Այնքան խարխափումներէ ետք, երբ վերջապէս համաձայնութեան գետին մը գտանք, չեմ հասկնար, թէ ինչո՞ւ կը փորձէք զայն քանդել, դուք որ ամէնէն աւելի պէտք է բաղձաք այդ տեսակ համաձայնութեան մը գոյացումը: Եւ արդէն այս չէ՞ նաեւ ընդհանուր ազգին բաղձանքը:

Տոքթ. Բարսեղեան. Այս համաձայնութիւնը եղեր է երկու Պատուիրակութեանց Նախագահներուն միջեւ, մինչդեռ անցեալ օր այստեղ կարդացուեցաւ Փաշային մէկ նամակը, որուն մէջ կ'ըսէր, թէ Պատուիրակութեան վերակազմութեան մասին անհրաժեշտ կարգադրութիւնները պիտի ընէ Համագումարի իր բարեկամներուն հետ խորհրդակցելով: Մենք այնպէս կարծեցինք, թէ այդ կերպով կ'ակնարկէ ամբողջ Համագումարին, մինչդեռ կը տեսնուի, որ Համագումարը անտեղեակ մնացած է կատարուած բանակցութիւններէն: Կարծեմ այս է իրականութիւնը, ինչ որ սակայն այնքան անհամապատասխան է մեր հասկացողութեան:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Նամակիս իմաստը սխալ մեկնուեր է: Չէի կրնար ենթադրել, որ ամբողջ Համագումարը ինծի համամիտ է եւ կրնայ ըլլալ: Իմ նամակիս մէջ ես կ'ակնարկէի Համագումարի այն անդամներուն միայն, որոնք բարեացակամ էին իմ մասիս եւ զօրավիգ եղան ինծի:

Առաջարկուեցաւ վերջ տալ վիճաբանութեան եւ քուէարկել համաձայնութեան գիրը իր ամբողջութեամբ, ինչպէս պահանջած էր Պատուիրակութեան Վսեմ. Նախագահը:

Տոքթ. Բարսեղեան. Ես կը հակառակիմ այս գիրն ամբողջութեամբ քուէարկելուն, որովհետեւ տակաւին ընելիքներ ունիմ անոր երկրորդ մասին նկատմամբ:

Ձայներ. Ըսէ՛ք, ըսէ՛ք ու վերջանայ:

Տոքթ. Բարսեղեան. Այն չորս թիւը, որ որոշուեր է Պատուիրակութեան անդամներուն համար՝ պարզապէս կամայականութիւն մըն է: Պատուիրակութիւնը անցեալ տարի վեց անդամ ունէր. այս տարի շատ աւելի նուազ գործեր կան ընելիք, եւ բնական կը գտնեմ, որ Պատուիրակութեան անդամներուն թիւն ալ նուազ ըլլայ: Բայց աւելի բանաւոր պիտի ըլլար, որ փոխանակ 4-ի, 3-ի վերածուեր այդ թիւը: Հանր.-թեան Պատ.-թիւնը երբեք երկու հոգիէ աւելի չէ եղած. արդեօ՞ք իր գործերը նուազ ծանր են, քան Ազգ. Պատուիրակութեան գործերը: Նախորդ տարի, հակառակ անոր որ, աւելի բազմապահանջ աշխատութիւն մը անհրաժեշտ էր, Պատ.-թիւնը կրցաւ իր անդամներէն երկուքը Ամերիկա ղրկել. վերջէն ալ ուրիշ անդամ մը Կովկաս գնաց, եւ Պատուիրակութիւնը կրցաւ շարունակել իր գործը երեք անդամով: Այս տարի, երբ աշխատութիւնները նոյնքան բազմապահանջ չեն, կրնայ նոյնպէս երեք անդամով բաւականանալ:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Ես հիւանդ եմ, զիս մի հաշուէք:

15 պատգամաւորներու ներկայութեան քուէի դրուեցաւ Համաձայնագիրը եւ ընդունուեցաւ 12 ձայնի մեծամասնութեամբ:

Տիար Տէրպէտէրեան. Կ'առաջարկեմ, որ Փաշան ինք անուանէ Պատուիրակութեան անդամները եւ այլեւս այս խնդիրը փակուի:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Կը խնդրեմ, որ չպնդէք այդ մասին: Շատ-շատ՝ կրնամ անձեր առաջարկել, ինչպէս պիտի առաջարկեմ Տիար Լեւոն Մկրտչեանը, որ կարող, գործունեայ, բազմակողմանի հմտութեան տէր անձնաւորութիւն մըն է եւ որուն համար վստահ եմ, թէ պիտի կրնայ իմ վրաս ծանրացող գործին մէկ մասը ստանձնել: Իրեն հեռագրեցի այս մասին եւ տակաւին չեմ գիտեր, թէ պիտի ընդունի՞: Ամեն պարագայի մէջ՝ իմ կողմէ ներկայացուելիք անձերուն նկատմամբ վերջին խօսքը Ժողովիդ կը պատկանի:

Նիստը փակուեցաւ ժամը 7 1/2-ին:

ՀԱԱ, ֆ. -430, ց. 1, գ. 67, թթ. 25-45: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ Իէ

3 Յուլիս, 1920, ժամը 4 1/2-ին,

Նախագահութեամբ
Վսեմ. Տիար Գ. Նորատունկեանի

Ներկայ էին 17 պատգամաւոր՝

Ամեն. Դուրեան Արքեպիսկոպոս, Բարսեղեան, Թէրզիպաշեան, Թումայեան, Թէքէեան, Հանըմեան, Մալքոլմ, Տոքթ. Նեւրուզ, Վսեմ. Գ. Նորատունկեան, Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար, Որբերեան, Չօպանեան, Պզտիկեան, Սինապեան, Տէրպէտէրեան, Տէր-Ստեփանեան, Քէլէկեան Խան:

Օրակարգ

1. Վերակազմութիւն Ազգ. Պատուիրակութեան

Համագումարը ձեռնարկեց Ազգ. Պատուիրակութեան ընտրութեան:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար կրկնեց նախորդ՝ Յունիս 30-ի նիստին մէջ ըրած յայտարարութիւնը» թէ որքան ալ ինք փափաքած էր պահել Պատուիրակութեան անդամներուն նախորդ թիւը, բայց ատիկա անկարելի եղած էր: Ն. Վսեմութիւնը յայտնեց, թէ Հանր. Պատուիրակութեան հետ իր ունեցած բանակցութեանց ընթացքին թէեւ այդ թիւը չպարտադրուեցաւ իրեն, բայց վերջապէս անհրաժեշտութիւն մը դարձաւ բանակցութեանց յաջողութեանց եւ երկու Պատուիրակութեանց ապագայ սերտ համագործակցութեան համար, ինչ որ զինքը ստիպեց համակերպիլ: Ն. Վսեմութիւնը Պատուիրակութեան կազմութեան գործը Ժողովին թողլով հանդերձ, յայտնեց, թէ ինք ինչ կը խորհի այդ մասին:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Նախորդ նիստին ըսի արդէն, թէ ինծի համար փափաքելի պիտի ըլլար աշխատակից ունենալ Տիար Լեւոն Մկրտչեանը: Մեծ յատկութեանց տէր, ողջամիտ անձնաւորութիւն մըն է, խորապէս ծանօթ երեք լեզուներու, եւ կը հաւատամ, որ շատ օգտակար պիտի դառնայ Պատուիրակութեան մէջ մտնելով: Ինչպէս ծանուցի արդէն, հեռագրով հարցուցած էի իրեն, որ, ընտրութեան պարագային, պիտի կրնա՞յ Փարիզ գալ: Պատասխան ստացայ, որ կու գայ՝ պայմանաւ, որ Պատուիրակութեան նախագահութեան պաշտօնը շարունակեմ պահել: Միւս կողմէ՝ քանի ատեն է արդէն Համագումարն ալ կը լսէ, որ խօսք կը դառնայ Տիար Սինապեանի մասին, եւ ես կը հաւատամ նոյնպէս, որ Պատուիրակութեան մէջ մտնելով՝ Տիար Սինապեան մեծ օգտակարութիւն պիտի ունենայ եւ թանկագին օժանդակ մը պիտի ըլլայ ինծի: Գալով չորրորդ անդամին, որ մեր համաձայնութեան համեմատ՝ պէտք է Դաշնակցական մը ըլլայ, արդէն իսկ նշանակուած կրնանք նկատել Տիար Տոքթ. Նեւրուզը, որուն հետ կ'աշխատինք նախորդ տարուընէ ի վեր: Տարակոյս չկայ, որ Պատուիրակութիւնը պիտի ունենայ նաեւ կարգ մը խորհրդականներ, որոնցմէ ոմանք գործօն աշխատակցութիւն մը պիտի նուիրեն, մասնակցելու համար այն աշխատութեանց, որոնք կը ծանրանան մեր վրայ:

Քուէարկութեան անցնելէ առաջ՝ Տիար Տոքթ. Բարսեղեան առաջարկեց ատենագրութեանց մէջ չանցընել նախորդ նիստին այն մասը, որ կը վերաբերէր երկու Պատուիրակութեանց Նախագահներուն միջեւ գոյացած եւ Համագումարին կողմէ քուէարկուած համաձայնութեան, նկատելով, որ այդ խնդիրը թիւրիմացութեամբ մը բերուած է Ժողովին:

Տիար Տէր-Ստեփանեան՝ յիշեցնելէ ետք, թէ նախորդ նիստին ինք չքուէարկեց այդ համաձայնագիրը, ըսաւ, թէ քանի որ չեղեալ պիտի նկատուի, ինչպէ՞ս կարելի է Պատուիրակութեան անդամներուն համար առաջարկուած չորս թիւն ընդունիլ: Տիար Տէր-Ստեփանեան աւելցուց, թէ Ժողովը այդ քուէարկութիւնն ըրաւ անոր համար, որ կը կարծէր, թէ Փաշային եւ Տիար Ահարոնեանի միջեւ համաձայնութիւն մը կար: Եթէ այդ

տեսակ համաձայնութիւն մը չկայ՝ ուրեմն Ժողովը ինք պէտք է որոշէ, թէ ի՞նչ թիւ պիտի ունենայ Պատուիրակութիւնը, չո՞րս թէ վեց:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Ես առարկութիւն մը չունիմ Տիար Բարսեղեանի առաջարկութեան դէմ: Ժողովը եթէ ուզէ՝ կրնայ ջնջել ատենագրութեանց այդ մասը: Արդէն այդ խնդիրը առնչութիւն չունէր Համագումարին հետ, եւ ես զայն հաղորդեցի իբր բարի լուր մը, որ մեծ յոյս կը ներշնչէր երկու Պատուիրակութեանց համագործակցութեան մասին:

Տիարք Թէրզիպաշեան, Թէքէեան եւ Չօպանեան պահանջեցին, որ ատենագրութիւնը մնայ նոյնութեամբ:

Ի վերջոյ քուէի տրուեցաւ Տիար Բարսեղեանի առաջարկութիւնը եւ ստացաւ եօթ քուէ:

Քուէի դրուեցաւ նաեւ նախորդ նիստին ատենագրութիւնը անեղծ պահելու առաջարկութիւնը եւ ստացաւ 5 քուէ:

Քուէարկութեանց միջոցին ներկայ եղող պատգամաւորներու թիւը 16 ըլլալով, երկու առաջարկութիւններն ալ մեծամասնութիւն չստացան եւ խնդիրը մնաց այնպէս, ինչպէս որ էր:

Տիար Արտաւազդ Հանըմեան. Պատուիրակութեանց անդամներուն քուէարկութեան սկսելէ առաջ՝ Ժողովիդ ուշադրութիւնը կը հրաւիրեմ հետեւեալ երեք կէտերուն վրայ: Նախ՝ Համագումարին արժանապատուութիւնը որոշ չափով պահելու համար՝ Պատուիրակութեան անդամները ընտրելէ առաջ պէտք է քուէի ենթարկենք սա կէտը, թէ կ'ընդունի՞նք, որ Պատուիրակութիւնը վեցի տեղ չորս անդամ պիտի ունենայ: Երկրորդ՝ ատենագրութեանց մէջ արձանագրուած է, որ երկու անգամ այս Համագումարը մերժեց Պատուիրակութեան հրաժարականը: Պէտք է ընդունինք, ուրեմն, նախորդ Պատուիրակութեան հաւաքական հրաժարականը եւ վերջը ձեռնարկենք նոր Պատուիրակութիւն ընտրելու:

Տիար Տէրպէտէրեան. Հապա Բրօֆ. Տէր-Յակոբեա՞նը:

Տիար Հանըմեան. Ան բնաւ տեղեկութիւն չունի եղածէն:

Վսեմ. Տիար Գ. Նորատունկեան. Բայց Պատուիրակութեան հրաժարականին մերժումէն վերջ նոր իրողութիւն մը տեղի ունեցաւ: Վսեմ. Փաշան, իր վերջին նամակին մէջ ըսած է, թէ Ժողովիդ պնդումներուն վրայ ետ կ'առնէ իր հրաժարականը եւ թէ նոր Պատուիրակութեան կազմութեան պիտի աշխատի: Այս նամակը կարդացուեցաւ այստեղ եւ Ժողովն ալ պաշտօն յանձնեց Դիւանին, որ այդ մասին գոհունակութեան ու շնորհակալութեան գիր մը ուղղէ Ն. Վսեմութեան, ինչ որ եղաւ: Ուրեմն, այդ կերպով, Համագումարն իրաւունք տուաւ Փաշային՝ նոր Պատուիրակութիւն մը նշանակելու:

Տիար Ա. Հանըմեան. Երրորդ կէտը՝ որուն վրայ Ժողովիդ ուշադրութիւնը պիտի հրաւիրեմ՝ սա է: Այս գործին մէջէն աւելի արժանի կերպով մը ելլելու համար՝ լաւագոյն պիտի ըլլար, որ Համագումարը միայն մէկ անձ ընտրէր իբր Պատուիրակութեան նախագահ եւ անոր թողուր Պատուիրակութեան միւս անդամներուն ընտրութիւնը:

Համագումարը որոշեց Տիար Հանըմեանի առաջարկութիւններէն քուէի ենթարկել միայն առաջինը, որ կը վերաբերէր Պատուիրակութեան անդամներուն թիւին վեցէն չորսի վերածուելուն:

Տիար Տէր-Ստեփանեան յայտարարեց, թէ բացարձակապէս կը հակառակի այս որոշման, առարկելով, որ Պատուիրակութեան առջեւ ահագին գործ կայ ընելիք եւ թէ չորս անդամներ անբաւական են այդ մեծ աշխատութիւնը տանելու: Տիար Տէր-Ստեփանեան աւելցուց, թէ կը բողոքէ ու չի մասնակցիր քուէարկութեան եւ առաջարկեց նոյն ատեն, որ նախորդ Պատուիրակութիւնը վերընտրուի՝ անոր աւելցնելով Տիար Լեւոն Մկրտչեանը:

Տիար Տոքթ. Բարսեղեան ալ առաջարկեց, որ Պատուիրակութեան անդամներուն թիւը 4-էն 3-ի իջեցուի:

Տիար Հանըմեանի առաջին առաջարկութիւնը թէ՝

«Համագումարը համամիտ է, որ Ազգ. Պատուիրակութեան անդամներուն թիւը 6-էն 4-ի վերածուի»,

16 պատգամաւորներու ներկայութեան քուէի դրուելով՝ ընդունուեցաւ 14 քուէով:

Յետոյ Համագումարը ձեռնարկեց Պատուիրակութեան ընտրութեան, ի ներկայութեան 17 պատգամաւորներու, որոնցմէ Տիար Չօպանեան յայտարարեց, թէ ձեռնպահ կը մնայ:

Առաջին քուէարկութեան արդիւնքը եղաւ հետեւեալը.

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար	12 քուէ
Տիար Լեւոն Մկրտչեան	9
Տիար Տոքթ. Նեւրուզ	8
Տիար Սինապեան	8
Տիար Չօպանեան	6
Վսեմ. Նորատունկեան	1
Տիար Թէրզիպաշեան	1
Տիար Թէքէեան	1
Սպիտակ	3

Մեծամասնութեամբ ընտրուած հռչակուեցան՝ Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար, Տիար Լեւոն Մկրտչեան: Համեմատականի մնացին Տիարք Նեւրուզ եւ Սինապեան:

Համեմատական քուէարկութենէն առաջ՝ Դիւանին ներկայացուեցաւ հետեւեալ առաջարկութիւնը.

«Կ'առաջարկենք Պատուիրակութեան ընտրութիւնը նկատել կենսական հարց:

Տոքթ. Ա. Բարսեղեան
Ա. Հանըմեան
Տոքթ. Նեւրուզ
Մ. Տէրպէտէրեան

Նկատի առնելով, որ ըստ Ներքին Կանոնագրին 19-րդ յօդուածին, այս տեսակ առաջարկութիւն մը պէտք է եօթ պատգամաւորներու ստորագրութիւնը կրէ, անհետեւանք թողուեցաւ այս առաջարկութիւնը:

Համեմատականի քուէարկութիւն կատարուելով, Տիարք Նեւրուզ եւ Սինապեան ընտրուեցան 10-ական քուէ ստանալով, որով Ազգ. Պատուիրակութիւնը կազմուեցաւ հետեւեալ կերպով.

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար
Տիար Լեւոն Մկրտչեան
Տոքթ. Նեւրուզ
Տիար Գ. Սինապեան

Պատգամաւորները շնորհաւորեցին նորընտիր Պատուիրակութեան այն անդամները, որոնք ներկայ էին Ժողովին:

Նորընտիր Պատուիրակութեան անդամ Տիար Գ. Սինապեան շնորհակալութիւն յայտնեց Ժողովին կողմէ իր մասին եղած գնահատութեան ցոյցին համար եւ ըսաւ, թէ որքան ատեն, որ Փարիզ գտնուի, սիրով ու անձնուիրութեամբ պիտի մասնակցի Պատուիրակութեան աշխատութեանց. միայն թէ ինք Փարիզ չի բնակիր, կրնայ ըլլալ, որ ստիպուի մեկնիլ ժամանակ մը վերջ՝ Պատուիրակուեան գործը չլրացած: Հետեւաբար, առաջարկեց, որ Համագումարը, իր նիստերը դադրեցնելէ առաջ, նախատեսէ այս պարագան եւ հիմակուց որոշում մը խորհի ու քուէարկէ, որպէսզի յառաջիկային՝ բացակայութեան մը կամ հրաժարման մը պարագային Պատուիրակութիւնն իրաւասութիւն ունենայ պակսածին տեղ նոր անդամ մը ընտրելու:

Տիար Բրօֆ. Թումայեան. Ես ալ համամիտ եմ այս առաջարկին:

Տիար Տէր-Ստեփանեան. Համամիտ եմ նոյնպէս, սա պայմանաւ, որ պակսած անդամներու տեղ նորերու ընտրութեան իրաւասութիւնը թողունք Փաշային, քանի որ արդէն ամբողջ այս խնդրին մէջ մեր կամքն ու իրաւասութիւնները ենթարկեցինք անոր:

Տիար Պզտիկեան. Կը ձայնակցիմ:

Տիար Նեւրուզ. Չէ՞ք մտածեր, թէ ատանկ պարագայի մը՝ Պատուիրակութեան միւս անդամները պիտի ուզե՞ն, որ Փաշան մինակը կատարէ ընտրութիւնը: Տրամաբանական պիտի ըլլար այս տեսակ որոշում մը՝ եթէ երբեք Համագումարը ընդունած ըլլար Տիար Հանըմեանի այն առաջարկութիւնը, որով պահ մը առաջ կը յանձնարարէր միայն նախագահ մը ընտրել եւ անոր թողուլ ամբողջ Պատուիրակութիւնը ընտրելու գործը: Քանի որ այս առաջարկութիւնը մերժուեցաւ եւ ընտրութիւն կատարուեցաւ, պէտք է, որ յառաջիկային պակսած անդամի մը ընտրութեան իրաւասութիւնն ալ չթողուի լոկ Փաշային, եւ ընտրութիւնը կատարուի ամբողջ Պատուիրակութեան կողմէ:

Տոքթ. Բարսեղեան. Այստեղ Փաշային առաջարկուեցաւ, որ ինք կատարէ Պատուիրակութեան անդամներուն ընտրութիւնը, բայց մերժեց, լաւագոյն սեպեց, որ քուէարկութեամբ կատարուի: Հետեւաբար՝ պէտք է ամբողջ Պատուիրակութեան թողուլ պակսած անդամի մը տեղ նորի մը ընտրութեան իրաւասութիւնը եւ ո՛չ թէ միայն իրեն, ինչ որ իր բաղձանքին ալ համաձայն պիտի ըլլար:

Տիար Սինապեան. Կրնայ ըլլալ, որ նոյն ինքն Փաշան, նկատի առնելով իր առողջական վիճակը, ստիպուի քաշուիլ: Պէտք է հիմակուց որոշուի, թէ ի՞նչ պէտք է ընել այդ պարագային:

Տիար Հանըմեան. Պատուիրակութիւնը եթէ ինքզինքը պիտի կրնայ լրացնել, պէտք չէ, որ այդ իրաւունքը միայն մէկ անդամի տրուի, այլ՝ ամբողջ Պատուիրակութեան տրուելու է: Քիչ մը առաջ առաջարկեցի, որ Փաշան նախագահ ընտրենք եւ անոր թողունք ամբողջ Պատ.-թիւնը ընտրելու հոգը. Ժողովը մերժեց: Հիմա ինչպէ՞ս մինակ Փաշային կրնայ թողուլ պակսած անդամ մը ընտրելու իրաւասութիւնը: Ես կ'առաջարկեմ, որ Համագումարը, առ ի նախատեսութիւն, ընտրէ մէկ քանի փոխ-անդամներ, որոնք՝ երբ Պատուիրակութեանը անդամներ պակսին, առաւելագոյն քուէի կարգով կու գան պակսածներուն տեղը բռնելու:

Տիար Թէրզիպաշեան. Եթէ Պատուիրակութեան կազմութեան գործը Փաշային չթողուցինք, պատճառը սա էր, որ մերժեց: Ուեւէ մարմին իրաւունք ունի միշտ իր պակսած անդամներուն տեղ նորեր նշանակելու: Քանի որ ամէնքս ալ վստահութիւն ունինք Փաշային վրայ, եւ եթէ ինք արգելք չըլլար՝ առանց առարկութեան իրեն պիտի թողէինք Պատուիրակութեան կազմութիւնը, ուրեմն՝ կրնանք նոյն վստահութեամբ իրեն թողուլ նաեւ պակսած անդամի մը յաջորդին ընտրութիւնը:

Տիար Վահան Թէքէեան. Ես ալ կ'առաջարկեմ, որ եթէ անդամ մը պակսի, Պատուիրակութեան միւս անդամները իրենց գործը շարունակեն առանց նոր մը ընտրելու:

Համագումարը որոշեց քուէի ենթարկել այս խնդրին նկատմամբ եղած հետեւեալ չորս առաջարկութիւնները.

Ա. Առաջարկ Տիար Տէր-Ստեփանեանի.

«Եթէ յառաջիկային Պատուիրակութեան մէկ անդամը պակսի, Նախագահ Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար յարմար անձ մը կ'ընտրէ անոր տեղը»:

Բ. Առաջարկ Տիար Տոքթ. Նեւրուզի.

«Եթէ յառաջիկային Պատուիրակութեան մէկ անդամը պակսի, միւս անդամները յարմար անձ մը կ'ընտրեն անոր տեղը»:

Գ. Առաջարկ Տիար Ա. Հանըմեանի.

«Համագումարը հիմակուց փոխ-անդամներ պէտք է ընտրէ, որոնք՝ առաւելագոյն քուէի կարգով պէտք է կոչուին Պատուիրակութեան պակսած մէկ անդամին յաջորդելու»:

Դ. Առաջարկ Տիար Վ. Թէքէեանի.

«Եթէ յառաջիկային Պատուիրակութեան մէկ անդամը պակսի, միւս անդամներն իրենց գործը կը շարունակեն՝ առանց պակսածին տեղ նոր անդամ մը ընտրելու»:

Քուէարկութեան ընթացքին Տիար Տոքթ. Նեւրուզ ետ առաւ իր առաջարկութիւնը: Նոյնպէս Տիար Հանըմեան ալ ետ առաւ իր առաջարկութիւնը, յայտնելով, թէ կը միանայ Տիար Վ. Թէքէեանի առաջարկութեան:

Քուէի դրուեցան Տիար Տէր-Ստեփանեանի եւ Տիար Թէքէեանի առաջարկութիւնները:

Տիար Տէր Ստեփանեանի առաջարկութիւնը ստացաւ ութ քուէ:

Տիար Վահան Թէքէեանի առաջարկութիւնը ստացաւ եօթ քուէ:

Քուէարկուներու թիւը 15 ըլլալով, Տիար Տէր-Ստեփանեանի առաջարկութիւնը, որ մեծամասնութիւն ստացած էր, ընդունուեցաւ:

Հարցում եղաւ այս առթիւ, թէ Պատուիրակութեան պակսած անդամին տեղ ընտրուելիք անձնաւորութիւնը պէ՞տք է, որ անպատճառ Համագումարի անդամ ըլլայ:

Տիար Թումայեան. Ես կը կարծեմ, որ այս մասին անպատճառ պարտադիր պայման դնելու պէտք չկայ: Փաշան կ'ընտրէ իրեն յարմար դատած արժանաւորագոյն անձը:

Ամեն. Դուրեան. Մանաւանդ, որ Համագումարին դերն ալ կը լրանայ արդէն, որով Համագումարի անդամ ալ չի մնար:

Տիար Որբերեան. Դիրքը, հանգամանքը, աւելի արժանաւորութիւնն է, որ պէտք է փնտռուին: Վսեմ. Փաշան ազատ թողելու է, որպէսզի պէտք եղած պահուն կարենայ յարմարագոյն անձը կոչել գործի գլուխ: Յաւակնութիւն մը պիտի ըլլայ մեր կողմէ խորհիլ, որ այս Համագումարէն դուրս արժանաւոր անձ չկայ:

Տիար Թէրզիպաշեան. Այդ չէր առաջարկութեան բուն իմաստը: Մեկնութիւնը սխալ է:

Տիար Որբերեան. Ամեն պարագայի մէջ՝ լաւագոյնը Փաշան ազատ թողելու է կարծեմ: Հետեւաբար՝ այդ իմաստով բարեփոխման մը պէտք է ենթարկել Տիար Տէր-Ստեփանեանի առաջարկութիւնը, զոր հիմա քուէարկեցինք:

Բրօֆ. Թումայեան. Համամիտ եմ: Եւ արդէն ամէնէն գործնական եղանակն է ասիկա:

Ժողովը որոշեց, որ Փաշան եթէ ուզէ՝ կրնայ Համագումարի անդամ չեղող անձնաւորութիւն մը ալ ընտրել: Այս որոշման վրայ՝ Տիար Տէր-Ստեփանեանի առաջարկութիւնը, բարեփոխուելով, ստացաւ հետեւեալ ձեւը.

«Եթէ յառաջիկային Պատուիրակութեան մէկ անդամը պակսի, Նախագահ Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար յարմար անձ մը կ'ընտրէ անոր տեղը, կա՛մ Համագումարի անդամներէն եւ կամ դուրսէն»:

Այս ձեւով քուէի դրուելով, առաջարկութիւնը ընդունուեցաւ 14-ի վրայ 9 ձայնի մեծամասնութեամբ:

Նիստը փակուեցաւ ժամը 6-ին:

ՀԱԱ, ֆ. -430, ց. 1, գ. 67, թթ. 46-55: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ ԻԸ

5 Յուլիս, 1920, ժամը 4 1/2-ին,
նախագահութեամբ
Վսեմ. Տիար Գ. Նորատունկեանի.

Ներկայ էին 13 պատգամաւոր՝

Բարսեղեան, Դաւիթ-Բէկ, Թէրզիպաշեան, Թէքէեան, Թումայեան, Վսեմ. Գ. Նորատունկեան, Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար, Որբերեան, Չօպանեան, Պզտիկեան, Սինապեան, Տէրպէտէրեան, Տէր-Ստեփանեան:

Օրակարգ

1. Վերակազմութիւն Ազգ. Պատուիրակութեան

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Ընթերցում ատենագրութեան

Կարդացուեցան եւ վաւերացուեցան Յունիս 30-ի եւ Յուլիս 3-ի նիստերուն ատենագրութիւնները:

Հարցում Տիար Վահան Թէքէեանի /տես վերջը/՝ «մանտա»յի խնդրին նկատմամբ Ամերիկայի մէջ եղած յայտարարութեան մասին: Որոշուեցաւ այս խնդիրը օրակարգ անցընել եւ առանց վիճաբանութեան լսել ու արձանագրել Պատուիրակութեան բացատրութիւնները:

Օրակարգ

1. Վերակազմութիւն Ազգ. Պատուիրակութեան

Կարդացուեցաւ Տիրէքթիւներու Սահմանման Յանձնաժողովին 9-րդ առաջարկութիւնը, որ կը վերաբերէր Միացեալ կառավարութեան խնդրին, առաջարկութիւն՝ որու մասին երեք տարբեր կարծիք յայտնուած էր Յանձնաժողովի անդամներուն կողմէ եւ որուն նկատառումը թողուած էր վերջին:

Յանձնաժողովի անդամներէն Տիարք Թէրզիպաշեան եւ Տէր-Ստեփանեան կարծիք յայտնած էին, թէ Պատուիրակութիւնը պէտք է դիմէ Երեւանի կառավարութեան, առաջարկելով անոր՝ միացումը կատարել դաշնագրին ստորագրութենէն անմիջապէս վերջ, եւ եթէ դաշնագիրը նուազագոյն գոհացում մը տայ արեւմտահայոց, միացման համար հիմ ընդունիլ Պ. Խատիսեանի կողմէ եղած առաջարկութիւնները: Մերժումի պարագային՝ Տիարք Թէրզիպաշեան եւ Տէր-Ստեփանեան կարծիք յայտնած էին, որ Ազգ. Պատուիրակութիւնը պէտք է շուրջ 50 անդամէ բաղկացած արեւմտահայ համագումարի մը ընտրութեան ձեռնարկէ, զայն գումարելով Երեւան եւ անոր յանձնելով միացման եւ ուրիշ արեւմտահայ հարցերը: Այս համագումարը համաձայնութեան պարագային պիտի կրնար ինքզինքը արեւմտահայ խորհրդարան նկատել, եւ ձուլուելով Երեւանի խորհրդարանին հետ՝ կազմել Միացեալ խորհրդարան:

Յանձնաժողովի անդամներէն Տիար Գ. Սինապեան կարծիք յայտնած էր, որ Համագումարը այս մասին ալ ոեւէ որոշում չառնելով՝ պէտք է միայն դրութիւնը հաղորդէ իր մէջ ներկայացուցիչ ունեցող ամեն մարմիններուն, անոնց թողլով ոեւէ որոշում:

Դարձեալ Յանձնաժողովի անդամներէն Տիար Բարսեղեան կարծիք յայտնած էր, որ Ազգ. Պատուիրակութիւնը պէտք է անմիջապէս առաջարկէ Երեւանի կառավարութեան՝ միացումը գոյացնել Պ. Խատիսեանի նամակին խորհրդարանի ու կառավարութեան վերաբերող մասերու հիման վրայ: Գալով Պատուիրակութեանց հարցին, Տիար Բարսեղեան կարծիք յայտնած էր, որ Համագումարը պէտք է ընտրէ չորս անձնաւորութիւններ, որոնցմէ երկուքը՝ Երեւանի կառավարութեան կողմէ պիտի

նշանակուին Պատուիրակութեան անդամ, եւ այսպիսով պիտի կազմուի Միացեալ Պատուիրակութիւնը:

Վիճաբանութիւն ձեռնարկելով՝ խօսք առաւ

Տիար Բարսեղեան. Կը կարծեմ, թէ պէտք է իմ ամբողջ առաջարկութիւնս վերցնել այլեւս: Ինչպէս արդէն ըսի քանիցս, անոր ամբողջութիւնը միայն կարեւորութիւն ունի: Եթէ իբր ամբողջութիւն ընդունուի՝ կը հաւանիմ, որ քուէի դրուի: Մասնակի քուէարկուելու կը հակառակիմ: Ես անմիջապէս միացման միջոց մը ցոյց տուած էի երկու Պատուիրակութեանց համար: Քանի որ ատիկա եղաւ, կարծեմ, թէ այլեւս պէտք չի մնար այս առաջարկութեան:

Տիար Թէրզիպաշեան. Այս դիտողութիւնը կարելի է ընել առաջարկութեան երկրորդ կէտին՝ Պատուիրակութեանց միացման մասին, բայց առաջին կէտը՝ Միացեալ կառավարութեան հարցը կը մնայ:

Տոքթ. Բարսեղեան. Կը կրկնեմ, որ իմ առաջարկութեանս ամբողջութիւնը միայն կարեւորութիւն ունէր իմ աչքիս:

Տիար Թէքէեան. Ուրեմն, ինչպէ՞ս պէտք է լուծուին Միացեալ կառավարութեան ու խորհրդարանի հարցերը:

Տոքթ. Բարսեղեան. Միացման մասին կարծիք չունիմ: Կեանքը կ'որոշէ ինչ որ պէտք է ըլլայ այդ ուղղութեամբ:

Տիար Տէր-Ստեփանեան. Մեզի համար լաւագոյն է անշուշտ, որ Տիար Բարսեղեան ետ առնէ իր առաջարկութիւնը, բայց չեմ հասկնար, թէ ի՞նչ պէտք կայ ատոր, քանի որ իր ուզածին պէս ալ եղաւ: Ինք առաջարկած էր, որ չորս անձեր նշանակուին եւ Երեւանի կառավարութիւնը անոնցմէ երկուքը անդամ անուանէ Միացեալ Պատուիրակութեան: Այդպէս ալ՝ չորս անձեր նշանակուեցան: Թող Երեւանի կառավարութիւնը երկու հոգի ընտրէ ատոնցմէ եւ խնդիրը կը վերջանայ:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Քանի մը դիտողութիւններ պիտի ընեմ Տիարք Թէրզիպաշեանի եւ Տէր-Ստեփանեանի առաջարկութեան մասին: Նախ՝ չափազանց խնդրական բան մըն է հայկական պահանջներու «նուազագոյն» չափով մը գոհացում գտնելու նախատեսութիւնը, որ եղած է այդ առաջարկութեան մէջ, քանի որ կարելի չէ դրապէս ըսել, թէ ուր կը սկսի այդ «նուազագոյն գոհացում»ը եւ ուր կը վերջանայ: Միացման խնդրին համար ալ դիտել կու տայ, որ Ազգ. Պատուիրակութեան կողմէ ոեւէ նոր փորձ կատարելու հնարաւորութիւն չկայ, քանի որ յայտնի է, թէ այդ մասին ի՞նչ ընթացք ցոյց տրուեցաւ Հանր. կառավարութեան կողմէ: Կառավարութիւնը ո՛չ իսկ պատասխանեց մեր այն հեռագրին, որով կը յայտնէինք, թէ կ'ընունինք Տիար Խատիսեանի կողմէ յանուն կառավարութեան եղած փոխ-առաջարկները: Հիմա ի՞նչ ըսելով նորէն դիմում պիտի ընենք: Անշուշտ նախաձեռնութիւնը պէտք է ուղղակի կառավարութենէն գայ, որպէսզի կարելի ըլլայ վերստին բանակցութեան մտնել: Հաւանական է, որ Տիար Խատիսեան քիչ ատենէ Փարիզ հասնի եւ ուղղակի խօսինք իրեն հետ այս խնդրին նկատմամբ:

Բրօֆ. Թումայեան. Չէ՞ք կարծեր, որ Տիար Խատիսեանի ժամանումը առնչութիւն ունենայ այս խնդրին հետ:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Ապահով չեմ, գոնէ բան մը չէ ըսուած մեզի այդ տեսակ ապահովութիւն մը ներշնչող:

Տիար Տէրպէտէրեան. Անշուշտ այս մասին ալ հրահանգ պէտք է ունենայ, քանի որ ինք էր խնդրին ձեռնարկողը:

Վսեմ. Պօղոս Փաշա Նուպար. Ամեն պարագային մէջ, երբ Փարիզ հասնի, կը խորհրդակցինք իրեն հետ, տեսնելու համար, թէ բան մը կա՞յ ընելիք դիտողութիւն մը նաեւ առաջարկութեան մէջ գործածուած «դաշնագրին ստորագրութենէն ետք» բացատրութեան մասին: Այդ բացատրութիւնը չի համապատասխաներ այսօրուան կացութեան, նկատելով, որ դաշնագրին ստորագրութեամբ յայտնի չպիտի ըլլայ հայկական պահանջներու ինչ չափով գոհացում գտած ըլլալը: Որովհետեւ, թէեւ

դաշնագիրը այն տպաւորութիւնը կը թողուր, թէ նախագահ Ուիլսոնի իրաւարարութիւնը տեղի պիտի ունենայ ստորագրութենէն առաջ, բայց այսօր այլեւս տարակոյս չկայ, թէ այդ իրաւարարութիւնը պիտի կատարուի ստորագրութենէն վերջ միայն. հետեւաբար՝ լաւագոյն պիտի ըլլար նախատեսուած կարգադրութիւնները թողուլ իրաւարարութեան կատարումէն ետք, երբ այլեւս պիտի յայտնուի, թէ ի՞նչ համեմատութեամբ գոհացում գտած են մեր պահանջները Ամբողջական, Միացեալ Հայաստանի մասին: Կարծեմ՝ նկատի առնելով այսօրուան դրութիւնը՝ տրամաբանականն ալ աս է այդ խնդրին նկատմամբ եղած բոլոր առաջարկութեանց մէջ:

Տիար Տէր-Ստեփանեան. Մեր առաջարկութիւնը հիմ մըն է, կը բաւէ որ սկզբունքը ընդունուի եւ հիմը դրուի՝ անկէ անդին՝ Պատուիրակութեան կը մնայ յարմարագոյն ատենին եւ յարմարագոյն եղանակով զինքը կառուցանել այդ հիման վրայ: Կը զարմանամ, որ Տիար Բարսեղեան այսօր կ'ուզէ այս խնդիրը քանդել:

Տոքթ. Բարսեղեան. Չըսի, թէ քանդել կ'ուզեմ: Եթէ իմ առաջարկութիւնս ընդունուի իր ամբողջութեան մէջ, կը մասնակցիմ ես ալ:

Տիար Թէքէեան. Բայց կ'ըսէիք, թէ կարծիք չունէիք միացման մասին, ինչ որ ժխտում մըն էր միացման խնդրին անհրաժեշտութեան:

Տոքթ. Բարսեղեան. Աւելցուցիք նաեւ, թէ կեանքը կ'որոշէ այդ ուղղութեամբ ըլլալիքը:

Տիար Տէր-Ստեփանեան. Կեանքը տակաւին շատ բան պիտի որոշէ, եթէ մինչեւ այսօր որոշածները չեն բաւեր: Չերը պարզապէս քանդման գործ մըն է եւ ոչ ուրիշ բան: Մենք տակաւին կը պնդենք մեր առաջարկութեան վրայ: Կարելի չէ նախատեսել Պատուիրակութեան համար ապագայ ոեւէ գործունէութիւն առանց այս հիման:

Տիար Թէրզիպաշեան. Եթէ դաշնագիրը գոհացում տայ հայկական պահանջներուն եւ Թրքահայաստանէն մաս մը միանայ Հանրապետութեան, այդ պարագային աւելի դրական կը դառնայ թրքահայոց իրաւունքը՝ հայկական կառավարութեան ու խորհրդարանին մասնակցելու: Բայց եթէ կառավարութիւնը մերժէ, այդ պարագային՝ Պատուիրակութիւնը, որ թրքահայ ժողովուրդը ներկայացնող Համագումարէն բղխած մարմին մըն է, պարտաւոր է խնդիրը ենթարկել նոյն ինքն թրքահայ ժողովուրդին, հրաւիրելով նոր համագումար մը, որուն կը մնայ որոշել, թէ ի՞նչ ընթացք պէտք է բռնել թրքահայոց իրաւանց պաշտպանութեան համար: Այդ համագումարին է, որ կը մնայ վերջին խօսքը: Այս անբնական պայմաններուն մէջ, երբ թրքահայութիւնը ցրուած վիճակ մը ունի. հարկաւոր է, որ ոեւէ մարմին նախաձեռնութիւնը ստանձնէ թրքահայութեան ցրուած կամքերը իրար բերելու եւ Թրքահայաստանի վերաշինութեան ու թրքահայերու ներգաղթին առթիւ անոնց շահերը պաշտպանելու եւ առհասարակ կառավարութեան մօտ զիրենք ներկայացնելու գործին մէջ: Արդ, ո՛չ մեկ մարմնին կը պատշաճի այս նախաձեռնութիւնը, եթէ ոչ Հայկական Հարցի առիթով ընտրուած Համագումարէն բղխող Պատուիրակութեան:

Վսեմ. Պօղոս Նուպար Փաշա համամտութիւն յայտնեց առաջարկութեան այս կերպ մեկնութեան:

Տիար Տոքթ. Բարսեղեան. Այս առաջարկը պարզելու համար՝ պէտք է հասկնալ, թէ նախատեսուած համագումարին պիտի մասնակցին միայն ա՞յն արեւմտահայերը, որոնք կը գտնուին Հայաստանի սահմաններուն մէջ եւ կամ բնիկներն են կցուած նահանգներուն, թէ՞ պիտի մասնակցին գաղութներու հայերն ալ: Առաջին պարագային՝ նախաձեռնութիւնը չի՛ կրնար պատկանիլ Ազգ. Պատուիրակութեան, քանի որ տարիներէ ի վեր Հայաստան ապաստանած արեւմտահայութիւնը իր ներկայացուցիչներն ունի, թուով 13, խորհրդարանին մէջ: Երկրորդ պարագային՝ այս առաջարկին գործադրութիւնը շատ աւելի կը դժուարանայ, որովհետեւ աշխարհի չորս կողմը ցրուած հայութիւնը անկարելի է խմբել Ազգ. Պատուիրակութենէն բղխող

հրաւէրի մը շուրջը: Հետեւաբար՝ Ազգ. Պատ.-թիւնը չի՛ կրնար այս տեսակ ձեռնարկի մը գլուխ կենալ: Ուրիշ բան է՝ եթէ զանազան կեդրոններէ դիմումներ ըլլան Հայաստանի կառավարութեան, որ ապահովաբար ընթացք կու տայ քաղաքացիութեան փափաքներուն:

Տիար Թէրզիպաշեան. Որ Մայիս 28-ին պետական հարուածի հետեւանքով քանի մը արեւմտահայերու՝ բարլամենտին մասնակցութիւնը Կովկասի փախստականութեան դիրքը չէ փոխած՝ յայտնի է այն հանգամանքէն, որ թրքահայերու համագումար մը այսօր գոյութիւն ունի եւ կը գործէ այստեղ:

Ի վերջոյ, որոշուեցաւ Տիրէքթիւներու Սահմանման Յանձնաժողովին բոլոր առաջարկութիւնները, որոնք քուէարկուած էին Պատուիրակութեան հրաժարած միջոցին, եւ այս 9-րդ առաջարկութիւնն ալ յանձնել նորընտիր Պատուիրակութեան, որպէսզի Ժողովին բերէ իր կարծիքը անոնց մասին:

Տիար Բարսեղեան պահանջ դրաւ դարձեալ, որ Տիրէքթիւներու Յանձնաժողովին առաջարկութիւնները, որոնք ընդհանուր պատգամաւորներու թիւին կէսէն մէկ աւելի բացարձակ մեծամասնութեամբ չեն անցած, տիրէքթիւ չնկատուին, այլ՝ պարզ թելադրութիւն:

Ժողովն անհետեւանք թողուց այս պահանջումը:

Հարցում Տիար Վահան Թէքէեանի

Տիար Վահան Թէքէեան. Ասկէ առաջ Ժողովին մէջ խնդիր եղաւ, թէ Խորէն Եպիսկոպոս եւ Տիարք Փաստրմաճեան ու Գարտաշեան Ուաշինկթոն՝ Ծերակոյտի Արտաքին Գործոց Յանձնաժողովին յայտարարած էին, որ հայերը մանտա չեն ուզեր: Ինչպէս կը յիշուի, Փաշան այս մասին հեռագիր մը ուղղեց Տիար Սվազլըի, որմէ ստացուած պատասխանը նոյնպէս կարդացուեցաւ այս Ժողովին մէջ: Այդ թղթակցութիւնները այն տպաւորութիւնը թողուցին, թէ խնդիրը սխալ ներկայացուած էր, եւ Ժողովը դժգոհութիւն յայտնեց, որ Տիար Սվազլը սխալ տեղեկութիւն մը հաղորդեր է՝ առանց լրջօրէն խնդիրը քննելու: Կը լսենք, թէ անկէ ի վեր Պատուիրակութեանը նոր տեղեկութիւններ հասած են այս խնդրին նկատմամբ: Հետեւաբար, կը խնդրեմ Պատուիրակութեանէն, որ Համագումարի յառաջիկայ նիստին բերէ այդ տեղեկութիւնները, որպէսզի խնդիրը պարզուի վերջնականապէս:

Տիար Թէրզիպաշեան. Արդէն առաջին օրէն, երբ այս խնդիրը Ժողովին եկաւ, ըսի, թէ Տիար Ավազլըի տուած տեղեկութիւնը չի՛ կրնար սխալ ըլլալ, քանի որ ծանօթ են Հանր. կառավարութիւնը ձեռք առած մարդոց տրամադրութիւնները «մանտա»յի խնդրին նկատմամբ: Որչափ որ իմացանք՝ Պատուիրակութեանը հասած լիակատար տեղեկութիւնները, որոնց ճշդութիւնը կարելի չէ բնաւ տարակոյսի ենթարկել, հիմնովին կը հաստատեն ասիկա: Ժողովին համար խղճի պարտք է ուղղել այս մասին իր նախապէս ըրած յայտարարութիւնը, որ համաձայն չէր իրականութեան:

Նիստը փակուեցաւ ժամը 6-ին:

ՀԱԱ, ֆ. -430, ց. 1, գ. 67, թթ. 56-63: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ ԻԹ

9 Յուլիս 1920, ժամը 4-ին,

Նախագահութեամբ Գաբրիէլ էֆ. Նորատունկեանի

Ներկայ էին 12 պատգամաւորներ՝

Եղիշ՝ Արքեպ. Դուրեան, Պ. Պ. Դավիթ-Բէկ, Ա. Թէրզիպաշեան, Վ. Թէքէեան, Գ. Նորատունկեան, Ռ. Որբերեան, Ա. Չօպանեան, Մ. Պապաջանեան, Զ. Պզտիկեան, Գ. Սինապեան, Մ. Տէրպէտէրեան, Ն. Տէր-Ստեփանեան:

ՕՐԱԿԱՐԳ

1. Վերակազմութիւն Ազգ. Պատուիրակութեան

Նորատունկեան էֆենտիի յայտարարութիւնները ֆրանսական հոգատարութեան խնդրին նկատմամբ:

ՕՐԱԿԱՐԳ

1. Վերակազմութիւն Ազգ. Պատուիրակութեան

Նորատունկեան /Գ. էֆ./. Քանի օր է չկրցանք գումարուիլ երկու պատճառներով: Նախ՝ դաշնագրին սրբագրութեան եւ պարզելու կարօտ կէտերուն նկատմամբ Գերագոյն Խորհուրդին մատուցուելիք Յիշատակագրին խնդիրը կար, որ բաւական լուրջ զբաղում մը եղաւ մեզի, եւ երկրորդ՝ Հայաստանեաց Միջազգային Համաժողովին գումարումը: Այս Համաժողովին աշխատութեանց վերաբերող պարագայ մը կայ, զոր պարտք կը զգամ հաղորդել Ժողովիդ: Համաժողովը Գերագոյն Խորհուրդին ուղերձ մը պիտի տար՝ գլխաւորաբար հայոց համար օգնութիւն հայցելով: Խնդրեցի իրենցմէ, որ հայոց համար եղած խնդրանքներուն աւելցուի նաեւ Գերմանիոյ կողմէ ըլլալիք ընդհանուր հատուցումէն պզտիկ բաժին մըն ալ, ամբողջական գումարին վրայ գոնէ 1/2 % համեմատութեամբ մաս մը մեզի տրուելու առաջարկութիւնը: Բնական է՝ այս խնդիրքը ըրած ատենս ապահով չէի կրնար ըլլալ, որ Դաշնակիցները անպատճառ պիտի ընդունին զայն, բայց ասիկա պարտականութիւն համարեցի ընել: Պէտք էինք մեր ձեռքէն եկած ամեն բան փորձել այս մասին, նոյնիսկ եթէ թերահաւատ ըլլայինք արդիւնքին նկատմամբ: Մնաց որ՝ բոլորովին անյուսալի ալ չէր, ինչպէս յայտնեցի Պ. Վիքթոր Պեռարի, որ ղեկավարեց Համաժողովին աշխատութիւնները: Պ. Պեռար նախապէս համամիտ գտնուեցաւ ինծի եւ խոստացաւ ուղերձին մէջ աւելցնել այս կէտը: Հետեւեալ առաւօտեան՝ դաշնագրի սրբագրութեան Յիշատակագրին խմբագրութեամբ զբաղած ըլլալով՝ ուշ միայն գացի Համաժողովին: Փափաքեցայ տեսնել պատրաստուած ուղերձը, գիտնալու համար, թէ ի՞նչ ձեւով ըրած էին խնդրանքը: Զարմացմամբ տեսայ, որ բոլորովին մոռցուած էր այդ մասին յիշատակութիւն ընել: Խնդրեցի թէ՛ Պ. Պեռարէն եւ թէ՛ Համաժողովին գլխաւոր անդամներէն, որ այդ կէտը աւելցուի ուղերձին, մեր պահանջումը 1/2 % ցոյց տրուելով, որպէսզի այս համեստ պահանջումը, որ 4-500 միլիոն ֆրանքի շուրջ կը դառնայ, չմերժուի:* Պ. Պեռար խնդրեց, որ չպնդեմ, ըսաւ թէ արդի պարագաներուն մէջ այդ տեսակ պահանջում մը գէշ տպաւորութիւն պիտի ընէ տէրութեանց վրայ, որոնք արդէն իրենց որոշումները տուած են: Հասկցայ, որ նախորդ օրուան իր տրամադրութիւնը փոխուեր էր: Անշուշտ, կարելի չէր Համաժողովին մէջ վիճաբանիլ: Ձայն չհանեցի, բայց քիչ մը վերջը, երբ Պ. Պեռարի հետ մինակ էինք, վերստին արծարծեցի խնդիրը եւ կրկնեցի պահանջումս: Պ. Պեռար, ըսաւ թէ չի կարծեր, որ կարելի ըլլայ այդ մասին բան մը ընել, որովհետեւ առտուն Ծերակոյտին մէջ իմացած էր, թէ ութ օրէ ի վեր ամեն բան որոշուած էր հատուցման բաժիններուն նկատմամբ, թէ յետին սանթիմը

* Նորատունկեան էֆ. ըսաւ նաեւ.«...Յայտնեցի իրենց, թէ նախապէս 20 միլիոն ֆր.-ի պահանջ մը ըրած էինք և նկատողութեան չէին առած»: Նորատունկեան էֆ. ջնջեց այս տողերը:

տէրութեանց մէջ արդէն բաժնուած ըլլալով, հնարաւորութիւն չկար հայոց ալ բաժին մը ապահովելու: Պատասխանեցի, թէ մեր պահանջածը centimes additionales է, զորս, ի հարկին, տէրութիւնները կրնան տալ իրենց ինկած բաժնէն: Պ. Պեռար տեղի տուաւ, միասին վերադարձանք Համաժողովին զուիցերիացի անդամներուն մօտ, եւ այդ կէտը աւելցնել տուի ուղերձին: Փափաքելի է անշուշտ, որ Պատուիրակութեանց այժմ Սբա գտնուող անդամները անձամբ ալ դիմում ընեն այս մասին՝ երբ Գերմանիայէն ստացուելիք հատուցման խնդիրը պիտի քննուի: Որովհետեւ՝ ընդհանուր հատուցմանց մեջ, զորս Դաշնակիցները կը պահանջեն, ամէնէն առաջ գերմանականն է, որ ստացուելու յոյս կը ներշնչէ: Թուրքիոյ տալիք հատուցումէն պահանջելը նշանակութիւն չպիտի ունենար, քանի որ իրականութեան մէջ մեծ բան մը չարժէր թրքական հատուցումը. բայց գերմանականէն յոյս կար: 1/2% բաժինը, զոր կը պահանջենք, կարծեմ՝ ինչպէս ըսի՝ վեր ի վերոյ հաշուով մը 500.000.000 ֆրանք կ'ընէ. ենթադրելով, որ ատկէ պակաս ալ տան, մեծ բան է մեզի համար, որովհետեւ տարակոյս չկայ, թէ մեր պետութիւնը այդքան գումար մը ուրիշ միջոցներով շատ դժուարութեամբ պիտի կրնայ գտնել, գոնէ առաջին տարիներու ընթացքին: Քանի որ դեռ չունինք հոգատար պետութիւն մը, որուն միջոցներէն օգտուինք, եթէ աս ալ չըլլայ, չպիտի կրնանք ոՐչ մեր հարիւր հազարաւոր գաղթականները տեղաւորել, ոՐչ ալ մեր պետութեան ելեւմուտքն հաւասարակշռել: Կարծեմ գէշ չըլլար, եթէ այս մասին յանձնարարութիւն մը ընենք Պատուիրակութեան Սբա գտնուող անդամներուն:

Պ. Ռ. Որբերեան. Պատուիրակութիւնը իր բոլոր խորհրդականներով Սբա գացեր է, կ'ըսեն, ինչպէս գացեր են նաեւ Հանրապետութեան Պատուիրակութիւնը եւ իր խորհրդականները: Բայց կը ցաւիմ հաստատելու, թէ այդ բազմութեան մէջ մէկ հատիկ դիւանագէտ մը չկայ: Միակ դիւանագէտը, որ ունինք՝ մեր Նախագահն է. Գացողները՝ ամենը մէկ՝ չեն կրնար անոր գործը կատարել: Կարծեմ ամբողջ Ժողովին թարգմանը եղած պիտի ըլլամ, փափաք յայտնելով որ Նորատունկեան էֆենտին ալ Սբա երթայ այս վճռական օրերուն:

Պ. Ա. Չօպանեան. Գերագոյն ձեռնարկն է, որ այս պահուս Սբայի մեջ տեղի պիտի ունենայ Հայկական Հարցին համար: ՈՐչ միայն Նորատունկեան էֆենտի, այլ նաեւ Պ. Սինապեան եւ միւս բոլոր խորհրդականները պէտք է Սբա գտնուէին հիմա: Հանրապետութեան Պատուիրակութիւնը 8-10 խորհրդականներ ունի. անոնք ալ պէտք էր հոն գտնուէին: Ինչպէս կ'իմանանք՝ բոլոր ազգերը մեծ թուով պատուիրակութիւններ դրկեր են Սբա: Պէտք է, որ մենք ալ այդպէս ընենք, որովհետեւ, ինչպէս ըսի, Սբայի մեջ վերջնական գերագոյն կարգադրութիւնները պիտի ըլլան Արեւելեան Խնդրին նկատմամբ:

Նորատունկեան էֆենտի. Մեր Պատուիրակութիւնները քիչ մը ուշ արթնցան այս խնդրին մէջ: Չէին գիտեր, թէ Սբայի մէջ թրքական հարցն ալ պիտի քննուի: Վերջէն, յանկարծակի իմացեր են, եւ կը վախնամ, որ դաշնագրին սրբագրելի կէտերուն նկատմամբ պատրաստուած Յիշատակագիրը չհասնի յարմար ատենին: Այդ Յիշատակագրին պատրաստութիւնը անցաւ կարգ մը գործողութիւններէ, որոնց ծանօթացումը Ժողովիդ՝ թերեւս աւելորդ չըլլայ: Ինչպէս յայտնի է, յանձնաժողովի մը մէջ պատրաստեցինք այդ Յիշատակագրին նախնական օրինակը, որ կարդացուեցաւ այստեղ: Այդ օրինակին մէջ մեր կողմէ շնորհակալութիւն յայտնուած էր պետութեանց, որ նկատի առած են մեր իրաւունքները եւ հայկական պետութիւն մը կազմած, ու միւս կողմէ ալ պետութեանց ուշադրութեան ներկայացուած էին կարգ մը կէտեր, որոնք կարօտ էին սրբագրութեան կամ լրացման: Այսպէս՝ վնասուց հատուցման, Թուրքիոյ հանրային պարտուց մեր պետութեան իյնալիք բաժնին, հողային պահանջմանց, մասնաւորներու ըլլալիք փոխարինութեանց, Քիւրտիստանի եւ կարգ մը ուրիշ խնդիրներու վերաբերող կէտերը, որոնք յայտնի են արդէն Ժողովիդ: Այս ձեւով՝ Յիշատակագիրը պատրաստ էր եւ պիտի ներկայացուէր Գերագոյն Խորհուրդին, երբ թուրքերը դաշնագրին նկատմամբ իրենց պատասխանը տուին: Ատոր վրայ օգտակար

դատուեցաւ վերահասու ըլլալ անոր պարունակութեանը եւ որոշուեցաւ ըստ այդմ մեր Յիշատակագիրը բարեփոխել խորհրդակցութեամբ Պ. Մանտէլշթամի, որ թէԲ կարող օրէնսգետ մըն է եւ թէԲ մեր ազգին նկատմամբ բարեացակամ անձնաւորութիւն մը: Թուրքերու տուած պատասխանէն միայն մէկ օրինակ տրամադրուած էր եւ այդ մէկ օրինակն ալ կը գտնուէր Պ. Մանտէլշթամի մօտ: Հետեւաբար՝ ոԲչ Պ. Սինապեան, ոԲչ ալ ես չկրցանք ատենին աչքի առջեւ ունենալ զայն: Իրաւաբանները սովորութիւն մը ունին՝ մինչեւ texte մը աչքի առջեւ չունենան՝ անոր մասին վերջնական կարծիք չեն յայտներ: Եւ ասիկա անհրաժեշտ է, որպէսզի ոչինչ վրիպի ուշադրութենէ: Ստիպուեցանք սպասել: Երբ Պ. Մանտելշթամ իր աշխատութիւնը աւարտեց, այն ատեն միայն տեսանք, որ թուրքերու պատասխանէն նկատի առած էր միմիայն հատուցման խնդիրը. իսկ մեր հողային պահանջմանց մասին թուրքերու կողմէ եղած առարկութեանց բնաւ չէր ակնարկած: Եւ որովհետեւ կարելի չէր Յիշատակագիրը ներկայացնել առանց այդ կարեւոր կէտին նկատմամբ մեր տեսութիւնը պարզելու, փութացինք իսկոյն պատասխանագրին պատրաստութեան:

Պ. Գ. Սինապեան. Մեր Պատուիրակութեանց նախագահները չէին գիտեր անգամ, որ Սբայի մէջ այս խնդրով պիտի զբաղին, երբ այդ մասին լուր առնուեցաւ եւ հարկ եղաւ, որ Սբա մեկնին փութով: Յիատակագիրը որուն կարգ մը կէտերը անկատար էին, առին միասին տարին: Ատոր վրայ՝ մենք ջանացինք ամբողջացնել այստեղ եւ ետեւնուն հասցնել:

Նորատունկեան էֆենտի. Եւ ատոր համար ստիպուեցանք գիշերը ցերեկին, ցերեկը գիշերին խառնել, ամբողջը աչքէ անցուցինք եւ յաւելուածներով, որոնք անհրաժեշտ էին, ղրկեցինք փոսթով: Յիշատակագիրը կը պարունակէ երեք մասեր, որոնք իրար կը լրացնեն, ինչպէս պիտի տեսնուի ընթերցումէն:

Կարդացուեցաւ Յիշատակագիրը իր յարակից մասերով, որոնց կցուած էր նաեւ Միացեալ Պատուիրակութեան կողմէ անցեալ տարի պետութեանց ներկայացուած այն տետրակը, որուն մէջ, մերձաւոր հաշուով, ցոյց տրուած են պատերազմին, տեղահանութեանց ու ջարդերուն հետեւանքով հայ ժողովուրդին կրած վնասները:

Նորատունկեան էֆենտի. Ինչպէս ըսի արդէն, հողային պահանջմանց վերաբերող վերջին յարակից գլուխը Պատուիրակութեան անդամներուն մեկնելէն ետք պատրաստուեցաւ այստեղ: Եւ որպէսզի անդին՝ Սբայի մէջ՝ հապճեպով պակասաւոր բան մը չներկայացուի Գերագոյն Խորհուրդին, իսկոյն իրենց ղրկեցինք հետեւեալ հեռագիրը.

«Հայկական Պատուիրակութիւն

Սբա /Պելճիքա/».

«Ամբողջական Հայաստանի մասին՝ Ազգ. Համագումարը կը խնդրէ, որ պնդէք դաշնագրին 89-րդ յօդուածին մէջ մտցնելու «եւ Խարբերդի սահմանակից շրջանակները» պարբերութիւնը: Այսօր յանձնարարեալ ծրարով Ձեզի կը ղրկենք Յիշատակագիրը իր վերջնական ձեւին մէջ, յարակից յաւելուածներով, Վեհաժողովին մատուցելու համար:

Նորատունկեան.

Փարիզ, 8 Յուլիս 1920»:

Պ. Ա. Չօպանեան. Կը կրկնեմ, որ պէտք չէ Պատուիրակութեան անդամները մինակ թողնել Սբայի մէջ: Լոնտոնի Վեհաժողովին համար ալ ըսին նախապէս, թէ ութ օր միայն պիտի տեւէ, բայց երկու ամիս տեւեց: Եթէ Պ. Որբերեան առաջարկած չըլլար Նորատունկեան էֆենտիի համար, ես ինքս պիտի առաջարկէի: Ո՛չ միայն Նորատունկեան էֆենտի, այլ նաեւ Ազգ. Պատուիրակութեան բոլոր խորհրդականները, մանաւանդ Պատուիրակութեան նորընտիր անդամ Պ. Սինապեան այնտեղ պէտք է գտնուին այս վճռական օրերուն: Նաեւ՝ Հանրապետութեան Պատուիրակութեան խորհրդականները՝ Պ.Պ.Ասատուրեան, Պէրպէրեան, էնֆիաճեան:

Նորատունկեան էֆենտի. Ըստ երեւոյթին՝ աւելի հաւանական է, որ շուտով աւարտի Գերագոյն Խորհուրդին գործը Սբայի մէջ: Ինչ որ կ'ընենք՝ աւելի մեր պարտականութիւնը լիովին կատարած ըլլալու եւ խղճով հանգիստ մնալու համար է: Պատուիրակութիւնը ուշ մնացած է այժմ: Եթէ հայ ազգը, տարբեր քաղաքականութեամբ, զինադադարէն անմիջապէս յետոյ տէր եղած ըլլար իր երկրին, գաղթականներն ու փախստականները տեղաւորած կ'ըլլայինք ցարդ եւ հայկական պետութիւնը շատ աւելի կանուխ ճանչցուած դիրք կ'ունենար իրաւապէս: Ասոր մէջ ամբողջ յանցանքը մերիններունը չէ. եւրոպական տերութիւններն ալ իրենց յանցանքի բաժինն ունին, եւ Ամերիկան ալ: Ձեմ ըսեր, թէ չարամտութեամբ ըրին, բայց, վերջապէս, շատ պարտքեր ունէին մեր ազգին հանդէպ, եւ պարագաներու դժբախտ բերումով կարելի չեղաւ, որ այդ պարտքերուն գոնէ ամէնէն կենսականներուն հատուցումը գտնէինք իրենցմէ: Ահա՛ այս պայմաններուն մէջ յապաղեցաւ Հայկական Խնդրին լուծումը, եւ այս յապաղումը միլիոններ արժեց ազգին: Եթէ յիշենք նաեւ զինադադարէն վերջ մեր ունեցած մարդկային կորուստները, որոնք 200.000-ը կ'անցնին, մեր վնասները կը հասնին ահաւոր համեմատութեան մը: Եթէ այս յապաղումը չըլլար, Կիլիկիոյ կորուստներն ալ չպիտի ունենայինք հաւանաբար, եւ մեր ժողովուրդը ազատած պիտի ըլլար այն թշուառութենէն ու համաճարակներէն, որոնց մէջ կը տուայտի այսօր: Կամ գոնէ՝ եթէ հոգատար պետութիւն մը ունեցած ըլլայինք, երբ տակաւին Վերսայլի Դաշնագրին 22-րդ յօդուածը գոյութիւն չունէր: Բայց զգուշանանք դատաստան մը ընելէ. ո՛չ ոք մեղադրենք: Թերեւս բախտին մէկ բերմունքն է այս ամենը:

Պ. Ա. Չօպանեան. Պ. Ն. Տէր-Ստեփանեան, ես ֆաթալիսթ չեմ. անցեալին մեջ ահագին սխալներ ըրինք, հիմա ալ կը շարունակենք ընել: Այս ժողովը նոր-նոր ինքզինքը սպաննեց, իր հեղինակութիւնը ոտքի տակ առաւ եւ իբր թէ ընտրեց Պատուիրակութիւն մը, որ նոյնպէս հեղինակութիւն չունի: Եւ այս ամենն ըրաւ պարզապէս, որովհետեւ իր անդամներուն մեծամասնութիւնը, ամենուն հետ բարեկամ մնալու գերագոյն մտահոգութեամբ, չունեցաւ ոեւէ կարծիք եւ չստանձնեց ոեւէ պատասխանատուութիւն: Պատասխանատուութենէ վախնալու հայկական չքնաղ ձեւն է այս, այսինքն՝ չառնել ոեւէ նախաձեռնութիւն եւ չկատարել ոեւէ որոշ գործ յանուն պատասխանատուութեան զգացումին:

Տէրութեանց եւ մանաւանդ Ամերիկայի համար՝ յանցանք բառը գործածել սխալ է - եթէ յանցանք կայ՝ մերն է: Այն ատենին, որուն ակնարկեց Պ. Նախագահը, մեզի համար կարելի էր գտնել հոգատար պետութիւն մը, եւ Դաշնակիցներուն մէջ կային պետութիւններ, որ կ'ուզէին Հայաստանի հոգատարութիւնն ստանձնել. բայց մենք ենք, որ անոնց կռնակ դարձուցինք: Ամերիկեան հոգատարութեան մեր երազն է, որ իրապէս եւ անմիջականապէս հնարաւոր լուծումները վիժեցուց եւ մէկ ու կէս տարիէ ի վեր մեր ունեցած այնքան կորուստներուն եւ մանաւանդ Թրքական Հայաստանի մինչեւ հիմա գրաւուած չըլլալուն գլխաւոր պատճառն եղաւ: Ասիկա կ'ըսեմ, որովհետեւ տակաւին մինչեւ այսօր ամերիկեան հոգատարութեան հաւատացողներ կան: Անցեալ տարի՝ Համագումարէն առաջ, քանի մը հոգի միայն՝ Նորատունկեան էֆենտի, Պ. Պ. Մալքոլմ, Մոստիչեան, զգացած են հոգատարութեան համար Ֆրանսայի դիմելու պէտքը: Ես ալ իրենց պէս մտածած եմ: Դժբախտաբար՝ անոնց ձայնը չլսուեցաւ:

Նորատունկեան էֆենտի. Անկէ ի վեր քանի եղան առիթներ, զորս փախուցինք:

Պ. Ա. Չօպանեան. Ֆրանսայի հետ մենք արդէն գործ մը սկսած էինք Հայկական Լեգէոնի կազմութեամբ եւ Կիլիկիոյ ու շրջակայ նահանգներու մասին եղած համաձայնութեամբ: Այդ ճամբուն մէջ կարելի էր շարունակել: Իսկ Պ. Մալքոլմ, որ Անգլիայէն կու գար եւ անգլիական կառավարութեան տրամադրութիւնները մօտէն գիտէր, կը հաւաստէր, թէ անգլիական կառավարութիւնը չպիտի հակառակի Ամբողջական Հայաստանի հոգատարութեան Ֆրանսայի տրուելուն, որոշ

պայմաններով անշուշտ: Սակայն, մեր մեջ ընդհանուր հոսանք մը ստեղծուած էր, ամերիկեան զօրութեանէն շլացած եւ Ֆրանսայի հանդէպ արհամարհոտ: Ամեն տեղ բացէ ի բաց կ'ըսէին, թէ Ֆրանսա այլասերած է, մեզի անկախութիւն չի տար, Հայաստանը գաղթավայր պիտի դարձնէ, եւ այլն: Պէտք էր այն միջոցին ըմբռնել, թէ Ամերիկա, ոեւէ վերջնական պատասխան տալու համար, ստիպուած էր հարցը Քոնկրէսին դնել, ինչ որ երկար ամիսներու կարօտ էր. այդ միջոցին՝ ամենաթանկագին ժամանակ մըն է, որ կը կորսուէր, կացութիւնը եւ տրամադրութիւնները կը փոխուէին ամեն տեղ, եւ ոչինչ կ'ապահովէր, թէ այդքան սպասումէ վերջ Ամերիկայի պատասխանը պիտի ըլլար հաստատական: Ընդհակառակը, Ամերիկան մօտէն ճանչցողներ որոշապէս կը յայտարարէին, թէ ամերիկեան ժողովուրդը, իր ստուար մեծամասնութեամբ. Հայոց դատին համակրութիւն ունենալով հանդերձ, ոեւէ հոգատարութիւն ընդունելու, արեւելեան թնճուկին մէջ խառնուելու բնաւ տրամադրութիւն չունէր: Պատուիրակութեան մէջ մտնելէս յետոյ առիթ ունեցայ մէկ քանի անգամ տեսնել համբաւաւոր հայասէր հրապարակագիր Տելլօնը, որ նոր կու գար Ամերիկայէն, ինչպէս նաեւ ամերիկացի ծանօթ անձնաւորութիւն մը՝ Բրոֆէսէօր Պոլտոիէնը, որոնք ուժգնապէս հաստատեցին, թէ հայկական հոգատարութեան Ամերիկայի կողմէ ստանձնուիլը բոլորովին անհնար բան մը կը նկատեն: Սակայն, այսպիսի կարծիքներու կարեւորութիւն տուող չկար: Այսօր կացութիւնը բոլորովին փոխուած է, եւ անանկ ատեն մը, ուր պօլշեւիկ վտանգը մօտեցած է Հայաստանի, ո՛չ Ֆրանսա, ո՛չ ալ ուրիշ ոեւէ եւրոպական մեծ տէրութիւն մը կ'ուզէ ընդունիլ Հայաստանի հոգատարութիւնը: Աս ըսել չէ, ի հարկէ, որ պէտք է յուսահատինք եւ իր բախտին թողունք մեր Հանրապետութիւնը: Եթէ այլեւս յուսալի չէ, որ մեծ ազգերէն մէկը ընդունի Հայաստանի հոգատարութիւնը, պէտք է ամեն կերպով ջանանք փոյթեռանդ ճիգերով, որ փոքր չէզոք ազգ մը կամ ազգերու խումբ մը գտնենք, որոնք կատարեն այդ օգնականի դերը: Հայասէրներու վերջին համաժողովին մեջ՝ Տանը մարքացի Հայասէրներու Քոմիթէին նախագահ Պ. Պէնէտիքթսէն, որ քանի մը անգամ Հայաստան ճամբորդած է, յայտարարեց, թէ սքանտինաւեան երկիրներուն եւ մանաւանդ իր երկրին մէջ մեծ համակրութիւն կայ Հայաստանի համար, եւ անյուսալի չէ, որ եթէ Ազգերու Ընկերութիւնը առաջարկէ Տանը մարքայի կամ ուրիշ սքանտինաւեան երկիրներու, այս վերջինները ընդունին Հայաստանի օգնականութիւնը: Միւս կողմէ՝ անդին՝ Միջերկրականի եզերքը, Ամանոսի շրջանին մէջ նոր յոյս մը կը ծագի, եւ մեզի հասած լուրերուն համեմատ, հոն հայկական շրջանակ մը ստեղծուած է ֆրանսական հովանաւորութեան տակ: Պէտք է ջանանք ատիկա զօրացնել եւ ընդարձակել: Ամէնքս ալ գիտենք, որ Կիլիկիոյ մէջ ամէնատխուր դեպքեր պատահեցան, ուր ֆրանսացիք ալ, մենք ալ սխալներ գործեցինք. պէտք է սակայն երբեք չմոռնալ, որ Ֆրանսա Կիլիկիա մտած ատենը համակիր էր մեզի եւ զայն հայ երկիր կը նկատէր: Նոյնիսկ Պ. Ժորժ Բիքօ այնտեղ կ'երթար «Սուրիոյ եւ Հայաստանի Բարձր Քոմիսէր» տիտղոսով. մեր սխալ ընթացքով՝ Ֆրանսան մեզի դէմ դարձուցինք եւ մղեցինք զայն թուրքերուն կռթելու: Բացէ ի բաց, ամեն տեղ, Համագումարին մէջ, գաղութներուն մէջ, Կիլիկիոյ մէջ, լրագիրներու մէջ՝ «Ֆրանսան չե՛նք ուզեր, Ամերիկա՛ն կ'ուզենք» կը պոռայինք: Պէտք է այս սխալը դարմանենք, եւ սկսած ենք արդէն դարմանել. Պատուիրակութիւնը աւելի քան վեց ամիսէ ի վեր Ֆրանսայի պաշտպանութիւնը կ'ուզէ Կիլիկիոյ եւ շրջակայ հողամասերու համար: Վերջերս, Կիլիկիոյ քրիստոնեայ ազգաբնակութեանց կողմէ Դաշնակիցներուն ուղղուած եւ Ֆրանսայի հովանաւորութիւնը պահանջող հեռագիրը կարդացուեցաւ այստեղ. եւ անկէ վերջն է որ, եւ հաւանօրէն անոր ազդեցութեան տակ, Ֆրանսացիք թոյլ տուած են, որ Ամանոսի մէջ հայկական շրջանակ մը կազմուի: Պէտք է ջանանք, որ ատիկա զօրանայ ու տարածուի: Պէտք է ամեն կերպ օգնութիւն հասցնել անոնց, դրամ, կամաւոր, զէնք, եւ այլն: Բայց պայմանաւ, որ միշտ Ֆրանսայի հաւանութեամբ եւ աջակցութեամբ գործենք: Եթէ նորէն փոփոխական եւ հակասական

քաղաքականութեան մը հետեւինք, նորէն ամեն բան կը կորսնցնենք: Միտքէս չեմ անցըներ երբեք, թէ Ամերիկայէն ոչինչ յուսալու չենք. անկից կրնանք ստանալ, մեր անկախ Հանրապետութեան համար նիւթական եւ բարոյական մեծ աջակցութիւններ, եւ ասիկա ստանալու համար պէտք է միշտ աշխատինք: Բայց կը շեշտեմ, որ Փոքր Հայքի եւ Կիլիկիոյ համար Ֆրանսայի հետ միայն գործ ունենալու ենք:

Պ. Վ. Թեքէեան. Կիլիկիոյ մասին մինչեւ այսօր յուսատու ի՞նչ ըրինք: Կարծեմ Համագումարի անդամները համաձայն են ինծի, թէ բան մըն ալ չըրինք: Հիմա որ Ամանոսի Հանրապետութեան փոքր ճառագայթը ծագած է, ատիկա պարտք կը դնէ Համագումարին վրայ, որ գոնէ այդ մասին իրեն ինկած պարտականութիւնները լիովին կատարէ: Կիլիկիոյ կացութիւնը այսօր այն աստիճան կը հետաքրքրէ մեր ազգը, որ այս Համագումարէն դուրս, եւ Պատուիրակութենէն ալ դուրս, որոշ շրջանակ մը անով կը զբաղի եւ կը մտածէ մնայուն մարմին մը ընտրել յատկապէս Կիլիկիոյ ճակատագրին նուիրուած ձեռնարկներու գլուխ կանգնելու համար: Գիտենք, որ Պատուիրակութիւնը անբաւական է այս տեսակ գործով մը զբաղելու: Հետեւաբար, Համագումարը պէտք է արտայայտուի այդ տեսակ ձեռնարկի մը ի նպաստ: Այս անջատ մարմինը Պատուիրակութեան դէմ խափանարար ընթացք մը չպիտի ունենայ անշուշտ: Ընդհակառակը, Պատուիրակութեան պիտի գործակցի խորհրդակցաբար: Բայց եթէ պատահի, որ Պատուիրակութիւնը թերանայ Կիլիկիոյ մասին իր ունեցած պարտականութեան մէջ, այդ պարագային նոյնիսկ պիտի գործէ Պատուիրակութեան հակառակ:

Պ.Ն.Տէր-Ստեփանեան. Պ.Զօպանեան խօսքը ըրաւ Զօրացեալ Պատուիրակութեան մը. բայց Զօրացիալ Պատուիրակութիւնը որուն ակնարկեց, մնայուն կազմ բնաւ չէ ունեցած, այլ՝ Պատուիրակութիւնն է այն շրջանին, որ կ'երթայ հին Պատուիրակութենէն մինչեւ Համագումարի հաւաքումը, երբ հետզհետէ պատգամաւորներ կը հասնէին: Այդ Զօրացեալ անուանուած Պատուիրակութիւնը Ֆրանսայի հանդէպ նկարագրուած քաղաքականութիւնը ընդգրկելու որոշումը տուած է, երբ կազմուած էր հետեւեալ անձերէն՝ Նուպար Փաշա, Նորատունկեան էֆենտի, Պ. Պ. Մասեհեան Խան, Վարանդեան, Շանթ, Տոքթ. Նեւրուզ, Գ. Յակոբեան եւ Ճէյմս Մալքոլմ: Կիլիկիոյ մէջ ֆրանսայի հովանաւորութեամբ անկախ պետութիւն մը ունենալու քաղաքականութիւնը ես կը կարծեմ, որ պէտք է ընենք համարձակօրէն, առանց մտահոգուելու ամերիկեան հոգատարութեան հարցով, քանի որ այդ հոգատարութիւնը պիտի վերաբերի այն Հայաստանին, որ պիտի բխէր նախագահ Ուիլսոնի իրաւարարութենէն, եւ որ ո՛չ միայն Կիլիկիան չի պարունակէր, այլ անոր սահմանակից ալ չէ: Սքանտինաւեան հոգատարութիւնն ալ ամերիկեանին պէս բան մը կրնայ դառնալ՝ եթէ մենք ծայրայեղ զգուշութեամբ չվարուինք: Պ. Պէնէտիքթսէն շատ բարի եւ ազնիւ մարդ մըն է, բայց ոչինչ կը ներկայացնէ, եւ ինքն իսկ այնքան ալ դիւրին բան մը չի նկատէր այդ հոգատարութիւնը: Բան մը, սակայն, որ օգտակար է եւ զոր պէտք է ընել՝ այն նախապատրաստական աշխատութիւնն է, զոր պէտք է կատարել սքանտինաւեան երկիրներու մէջ, ընդհանուր բրոբականտի ձեւով, առանց ոչինչ կանխորոշելու: Իսկ թէ որչա՞փ կարելի է Կիլիկեան անկախութիւն մը ֆրանսական հովանաւորութեան տակ՝ ես ալ այդ մասին լաւատես եմ հետեւեալ պատճառով: Ֆրանսա ունեցաւ իր որոշ քաղաքականութիւնը Թուրքիոյ հանդէպ, քաղաքականութիւն, որ կը միտէր պահպանել զօրաւոր Թուրքիա մը, ընդդէմ անգլիական քաղաքականութեան, որ հակառակ ձգտումը ունէր եւ որ ձեւական յաջողութիւն մը ստացած էր ցարդ դաշնագրին մէջ: Բայց այս ձեւական յաջողութիւնը իրականի վերածուելու մեծ հաւանականութիւն ունի, մանաւանդ յունական միջամտութենէն վերջ, եւ եթէ այսպէս ըլլայ, Ֆրանսա իր թրքասիրական քաղաքականութեան վիժման առջեւ պիտի ուզէ ձեւ մը գտնել ետ առնելու համար ինչ որ յանուն այդ քաղաքականութեան ինքնաբերաբար զոհած էր, այսինքն՝ Կիլիկիոյ այն կարեւորագոյն մասը, որ դաշնագրով Թուրքիոյ ձգուած է: Այս բանը ընելու համար

Ֆրանսա մէկ միջոց ունի, եւ այդ միջոցն է յենուլ հայ ժողովուրդին պահանջներուն վրայ, պահանջներ, որոնք զգացողական եւ պատմական չեն միայն, քանի որ մենք Կիլիկիոյ մեջ ունինք մեծ թուով հայութիւն եւ մօտ ատենէն կրնանք հոն գոյացնել հայկական բացարձակ մեծամասնութիւն: Ասկէ զատ, ես կը կարծեմ, որ Կիլիկիոյ այն մասին մէջ ալ, որ Ֆրանսայի թողուած է եւ որուն մէջ հիմնուած է հայկական Ամանոսի Հանրապետութիւնը, Ֆրանսա շահ ունի հայասէր քաղաքականութիւն մը ընելու, տրուած ըլլալով, որ սուրիացիները զորս անցեալ տարի անիկա կը նկատէր հայոցմէ շատ աւելի վստահելի տարր մը, եւ այդ պատճառով կերպով մը Կիլիկիոյ կարեւորագոյն մասը Սուրիոյ մաս կը հռչակէ, այսօր կը խուսափին իր ձեռքէն:

Վերջացուցի. բայց կ'ուզեմ հարցում մը ընել միջադէպի մը մասին, որ իբր կը հաւաստուի, թէ տեղի ունեցած է Հայասէրներու Համաժողովին մէջ: Երբ Պ. Պեռար առաջարկեր է ուղերձ մը ուղղել ֆրանսական կառավարութեան՝ շնորհաւորելով զայն Ամանոսի Հանրապետութեան կազմութեան առթիւ եւ այդ մասին յանձնարարութիւններ ընելու համար, Պ. Ահարոնեան պէտք զգացեր է ըսելու, թէ այդպիսի Հանրապետութեան մը գոյութեան մասին ոչ մէկ հաստատ լուր իբր թէ չըլլալով, պէտք չէ ռեւէ յիշատակութիւն ընել: Ատոր վրայ՝ Պ. Պեռար ըսեր է, թէ ատիկա իրողութիւն մըն է: Պ. Ահարոնեան պնդեր է, թէ հաստատ բան մը չկայ եւ թէ ճանչցուած չէ այդ Հանրապետութիւնը, ինչպէս ճանչցուած է Երեւանի Հանրապետութիւնը: Վիճաբանութիւնը շարունակուեր է հետեւեալ կերպով. «Ես Ձեզի կ'ըսեմ, որ իրողութիւն մըն է,- կրկներ է անգամ մըն ալ Պ. Պեռար,- քանի որ այդ մասին հարցում եղաւ Ծերակոյտին մէջ եւ կառավարութիւնը չհերքեց»: Իսկ երբ Պ. Ահարոնեան յամառեր է նորէն պնդել, այն ատեն Պ. Պեռար ըսեր է. «Երբ ես Ձեզի կ'ըսեմ, որ ատիկա իրականութիւն է, մի՛ ստիպէք զիս ըսելու նաեւ, որ Ծերակոյտին Արտաքին Գործոց Յանձնաժողովին մէջ այդ մասին խնդիր եղած է արդէն»:

Պ. Մ. Տէրպէտէրեան. Նոյնիսկ եթէ Պ. Ահարոնեան տարակոյս ալ յայտնած ըլլայ, ինչո՞ւ գէշ կը մեկնէք:

Պ. Ն. Տէր-Ստեփանեան. Ես գէշ չեմ մեկներ. միայն դիտել կու տամ, որ այսպիսի տարակոյսներ ունենալը մեր մէկ որոշ հոսանքին լեզուով որուն գլուխներէն մէկն է Պ. Ահարոնեան, «դաւաճանութիւն» կը կոչուի: Միջադէպը՝ ինչպէս որ ինծի հաղորդուեցաւ, պատմեցի նոյնութեամբ: Կը հարցնեմ հիմա Պ. Սինապեանի, թէ ճի՞շդ է այս պատմութիւնը:

Պ. Գ. Սինապեան. Չեմ կրնար պատասխան տալ, որովհետեւ ներկայ չէի:

Պ. Ա. Չօպանեան. Համաժողովին առաջին օրն էր, որ տեղի ունեցաւ այդ միջադէպը, զոր նոյնութեամբ՝ ինչպէս պատմուեցաւ՝ կը հաստատեմ:

Նորատունկեան էֆենտի. Ես չլսեցի: Կիլիկիոյ այն մասերը, որոնք դաշնագրին ընկերացող քարտէսին մէջ ցոյց տրուած են իբր Սուրիոյ մաս, օրինակի համար՝ Հասան Պէյլի, Տէօրթ Եօլ եւ այլն, բնական կերպով անջատուած են արդէն: Հասկնալի է, թէ ֆրանսական կառավարութիւնը, ինչպէս Լիբանանի համար, այնպէս ալ Կիլիկիոյ այդ մասին համար կրնայ չուզել, որ ուղղակի Սուրիական Պետութեան տակ իյնան: Ֆրանսա կը փափաքի թերեւս, որ դաշնակցական կազմ մը ունենայ Սուրիոյ Պետութիւնը, որպէսզի կարելի ըլլայ Սուրիոյ զանազան մասերը զերծ պահել էմիր Ֆայսալի ոտնձգութիւններէն: Այդ նպատակաւ՝ Ֆրանսայի գործին պիտի յարմարի, որ Ամանոսի այդ շրջանակին հայերը մասնաւոր կազմակերպութիւն մը ունենան: Ֆրանսա նախապէս կը յուսար, որ էմիր Ֆայսալ պիտի ենթարկուի իր թեւարկութեան, եւ Սուրիա՝ Թունուզի կամ Մարոքի պէս ձեւ մը պիտի ստանայ: Բայց ինչպէս յայտնի է, էմիր Ֆայսալ անկախութեան դրօշ պարզեց նոյն ինքն Ֆրանսայի դէմ, եւ այսօր յայտնի եղաւ, թէ Ֆայսալ չուզէր Ֆրանսան ընդունիլ իբր հոգատար, այլ՝ իբր պարզ օգնական պետութիւն: Այս կացութեան հանդէպ ֆրանսացիք կը խորհին անշուշտ, թէ ինչո՞ւ Կիլիկիոյ այդ անջատեաւ մասը թողուն Սուրիոյ: Այդ մասին մէջ կարելի է ընդգրկել նաեւ Իսկենտէրունը. եւ ֆրանսացիք կը տեսնեն բնականաբար, որ եթէ

նոյնիսկ Սուրիական Պետութիւնը խուսափի իրենցմէ, գոնէ այդ նաւահանգիստը իրենց կապուելու է, քանի որ Սուրիոյ ամբողջ առեւտուրը գլխաւորաբար Իսկենտէրունի ճամբով պիտի կատարուի: Ահա՛ թէ ինչու ֆրանսացիք շահ ունին փափաքելու, որ Կիլիկիոյ այդ մասին մէջ իրենց հովանաւորութեան ու վարչութեան ենթակայ մասնաւոր կազմակերպութիւն մը գոյանայ, մանաւանդ եթէ մենք գիտնանք օգտուիլ ասկէ, խոհեմ ու պատշաճ վարմունք մը ունենալով իրենց հետ: Դուրսէն Յանձնաժողովի մը կազմութեան մասին խօսք եղաւ. բայց Պատուիրակութիւնն ալ պէտք է մշտապէս շփման մէջ մնայ Քէ տ'Օրսէի հետ եւ աշխատի, որ ֆրանսական աջակցութիւնը նոյն շրջանակի հայ ժողովուրդին՝ հետզհետէ աւելի դրական եւ աւելի հիմնաւոր դառնայ:

Պ. Վ. Թէքէեան. Թերեւս մտածուի, որ եթէ Պ. Ահարոնեան գիտնար այդ ամենը, ծանօթ միջադէպը տեղի չէր ունենար. բայց եթէ նոյնիսկ գիտնար՝ չեմ կարծեր, որ տարբեր վարուեր, որովհետեւ փափաքը կը պակսի իր մօտ:

Պ. Զ. Պզտիկեան. Կարծեմ լաւագոյն բանը, որ կրնանք ընել Կիլիկիոյ համար, այնտեղ սկսած կամաւորական շարժման ոյժ տալն է: Կիլիկեցւոց քաղաքական ճակատագրին նկատմամբ վճռական քայլեր առնելու իրաւունքը ամէնէն առաջ իրենց կը պատկանի: Ասով չեմ ուզեր ուրանալ ո՛չ Պատուիրակութեան կատարելիք դերը, ո՛չ ալ Պատուիրակութեան իբր օժանդակ գործելու առաջադրութեամբ կազմուելիք յանձնաժողովի մը կարեւորութիւնը: Բայց այս վերջինը եւ Պատուիրակութիւնը Կիլիկիոյ ժողովուրդին հետ մշտապէս շփման մէջ մնալու են, որպէսզի այնտեղ եւ այստեղ եղած ջանքերը ներդաշնակ մնան, իրար չխաչաձեւեն: Դժբախտաբար, Քէ տ'Օրսէի մեջ տեսակ մը կողմնակալ հակառակութիւն գոյութիւն առած է կիլիկեցւոց նկատմամբ: Ասիկա տեսանք միշտ ամեն անգամ, որ Կիլիկիոյ համար դիմում ըրինք: Պատճառը պարզ է անշուշտ: Քէ տ'Օրսէի մէջ Կիլիկիոյ նկատմամբ լիակատար տեղեկութիւններ չունին, այլ կ'առաջնորդուին այնտեղէն եկող տեղեկագիրներէ, որոնք ընդհանուր կերպով աննպաստ են մերիններուն: Այս սխալ հասկացողութիւնը պէտք է դարմանել. եւ յետոյ՝ միշտ ամէնէն կարեւորը, պէտք է զօրացնել տեղոյն մէջ առաջ եկած կամաւորական շարժումը, անոր ընծայելով թէ՛ նիւթական ոյժ եւ թէ՛ բարոյական, եթէ կ'ուզէք՝ դիւանագիտական ոյժ:

Պ. Դաւիթ-Բէկ. Համաձայն եմ Պ. Թէքէեանի ըսածին:

Պ. Ա. Չօպանեան. Ես անգամ մըն ալ կը վերադառնամ առաջարկութեան մը, զոր ըրած եմ ասկէ առաջ: Պէտք է, որ այս Համագումարը նշանակալից կերպով մը արտայայտուի մասնաւորաբար Ամանոսի մէջ գոյութիւն առած Հանրապետութեան նկատմամբ: Մենք տեսանք, որ Հայասէրներու Համաժողովին մաս կազմող օտարներ որոնք Փարիզ հաւաքուած էին, այդ մասին ուղերձ մը ուղղեցին պետութեանց: Երբ օտարները այս տեսակ արտայայտութեան մը օգտակարութիւնը կը զգան, զարմանալի չէ,՞ որ Պատուիրակութիւն եւ Համագումար անտարբեր մնան: Կ'առաջարկեմ, որ Համագումարն իր կարգին ուղերձ մը ղրկէ պետութեանց, Ամանոսի նորակազմ Հանրապետութեան եւ առհասարակ Կիլիկիոյ ամբողջութեան համար պահանջելով ինքնավար ռեժիմ մը՝ Ֆրանսայի հովանաւորութեան տակ: Համագումարը պէտք է քաջալերէ նաեւ Ամերիկայի մէջ եղած ձեռնարկները Կիլիկիոյ կամաւորական շարժման զօրացման մասին: Երբ ինքնապաշտպանութեան գործին համար Պատուիրակութիւնը եւ Ս. Պատրիարքը Լոնտոնէն հեռագիր ուղղեցին Ամերիկա, մեծ խանդավառութիւն առաջ եկաւ եւ հարիւր հազարներով տոլար ղրկուեցաւ:

Պ. Ա. Թէրզիպաշեան. Յայտնի կ'ըլլայ, որ Ֆրանսա զինուորական գործողութեան մը պիտի ձեռնարկէ Սուրիոյ մէջ, եւ իր ալ փափաքն է հիմա, որ Կիլիկիոյ որոշ մէկ շրջանակին նկատմամբ ապահով ըլլայ: Այդ շրջանակը Ամանոսն է. կրնանք ասկէ օգտուիլ:

Պ. Մ. Տէրպէտէրեան. Ես պիտի խնդրէի մեր Նախագահէն, որ մանրամասն կերպով պատմէր այստեղ, թէ Զօրացեալ Պատուիրակութեան օրով՝ երբ ինքը այնքան հեռատես ու ողջամիտ կարծիք մը յայտնած էր Հայկական Խնդրին մասին, ի՞նչ հիման վրայ իրեն դէմ արտայայտուեցան: Ընդհանուր կարծիքն այն է, որ մենք այդ միջոցին մեր բերնին ոսկորը ձգելով շուքին ետեւէն վազեցինք եւ մեր բերնին ոսկորն ալ վրայ տուինք: Պատմութեան համար գոնէ պէտք է արձանագրուին այս խնդրին մանրամասնութիւնները:

Համագումարին ներկայ անդամները ամբողջովին համամիտ գտնուեցան Պ. Տէրպէտէրեանի, եւ կրկնեցին անոր ըրած առաջարկութիւնը :

Նորատունկեան էֆենտի. Թէեւ ժամանակը չէ այս խնդրով զբաղուելու, բայց ժողովիդ գոհացում տալու համար համառօտ ըսեմ, թէ ազգին քաղաքականութիւնը ծագում առաւ հետեւեալ պարագաներուն մէջ: Երբ 1918 Հոկտեմբերին զինադադար կնքուեցաւ եւ սկսան Փարիզ ժամանել զանազան պետութեանց եւ ազգերու Պատուիրակութիւններ, պէտք կար, որ Հայկական Պատուիրակութիւնն ալ ուժովնար: Ինչպէս կը յիշէք արդէն՝ Պատուիրակութեան Շրջաբերականն ալ Համագումարի հրաւիրման մասին, կ'ըսէր թէ Համագումարը սահմանուած է Ազգ. Պատուիրակութիւնը զօրացնելու: Երբ Զուեցերիայէն իբր պատգամաւոր Փարիզ եկայ, Փաշային հետ կը գործէին միայն Տիարք Մասեհեան Խան, Վարանդեան եւ Շանթ. քանի մը օր յետոյ եկան նաեւ Տիարք Տոքթ. Նեւրուզ՝ Եգիպտոսէն, Գ. Յակոբեան՝ Մանչեսթրէն, Ճէյմս Մալքոլմ՝ Լոնտոնէն եւ որիշներ հետզհետէ: Իսկ Տիար Արտաւազդ Հանըմեան եղաւ ընդհանուր քարտուղար Պատուիրակութեան: Ես այն ատեն ըսի, որ էն առաջ պէտք է ծրագիր մը հաստատուի, թէ ի՞նչ կերպով առաջ պէտք է տարուի մեր ազգին դատը, եւ թէ ո՞ր պետութեան պիտի ապաւինինք մեր դատը յաջողցնելու համար: Որովհետեւ քիչ ետքը պիտի գումարուէր Խաղաղութեան Վեհաժողովը, պէտք էր որ ամուր դիրք մը ստեղծէինք մեզի համար, որպէսզի կարենայինք մենք ալ աթոռ մը գրաւել Վեհաժողովին մէջ ու մեր պահանջումները ընդունիլ տալ պետութեանց: Եւ ասիկա անհնար պիտի դառնար մեզի՝ եթէ երբեք պաշտպան պետութիւն մը չունենայինք: Իմ գալէս առաջ՝ Պատուիրակութիւնը յիշատակագիր մը տուած էր արդէն պետութեանց, որուն մէջ ցոյց տրուած էին նաեւ այն սահմանները, զորս պէտք է ունենար Հայկական Պետութիւնը: Այդ սահմանները կը տարածուէին Սեւ Ծովէն մինչեւ Միջերկրական եւ կը պարունակէին այն երկրամասերը, որոնք վերջէն ստացան «Ամբողջական Հայաստան» ընդհանուր անունը: Ըսի թէ քանի որ այսքան ընդարձակ երկիր մը կը պահանջենք, անհրաժեշտ է, որ մեզի սրտակից օգնական պետութիւն մը ունենանք, եւ պէտք է հիմակուց խորհինք, թէ ո՞ր պետութիւնը կրնայ յարմարիլ մեզի: Ես խորհուրդ տուի, որ այս մասին ուշադրութեան առնենք նախ եւ առաջ Անգլիոյ, Ֆրանսայի եւ Ռուսիոյ միջեւ 1916-ին կնքուած համաձայնութիւնը, որուն վերջէն համակերպած էր նաեւ Իտալիա, քանի որ այս համաձայնութիւնը այդ տէրութեանց՝ Թուրքիոյ մեջ ունեցած բաժինները ճշդած էր եւ կրնար ուղղակի կերպով հետաքրքրել մեզ՝ մեր ցանկութեանց իրականացման տեսակէտով: Այդ համաձայնութեան համեմատ, այն Ամբողջական Հայաստանը, զոր կը պահանջէինք, բաժնուած էր երկու մասի. Կիլիկիա եւ յարակից քանի մը նահանգներ՝ ինչպէս Սեբաստիա, Խարբերդ, Տիարպէքիր, կը մնային Ֆրանսայի ազդեցութեան շրջանակին մէջ, իսկ Վերին Հայաստանը, այն է՝ Էրզրում, Վան, Պիթլիս կ'ենթարկուէր Ռուսիոյ ազդեցութեան շրջանակին: Արդ, Ռուսիա վերջէն իր ստացած քաղաքական դիրքին բերումով այլեւս դեր չունէր խաղաղութեան դաշնագրին կազմութեան մէջ, որով՝ Վերին Հայաստանի համար ամեն տեսակ կարգադրութիւն կարելի դարձած էր: Եւ որովհետեւ այսպիսով Կիլիկիա եւ միւս յարակից նահանգները կը մնային Ֆրանսայի ձեռքը, որ կարգ մը խոստումներ ըրած էր Պատուիրակութեան, ուրեմն, անոր հետ համաձայնելու առաջարկ ըրի Ամբողջական Հայաստանի կազմութեան համար: Մեր այս խորհրդակցութեան ընթացքին ըսողներ եղան, թէ Վերին Հայաստանի ամբողջ շրջանակին մէջ Անգլիա պիտի խաղայ մեծագոյն

դերը եւ թէ անոր հետ ալ պէտք է համաձայնիլ: Առարկեցի, որ եթէ, երկու Հայաստան կ'ուզենք՝ ի դէպ է անոր հետ բանակցիլ. բայց եթէ միակ Հայաստան մըն է մեր ուզածը, անհրաժեշտ պէտք է, որ բացարձակապէս եւ նախապէս համաձայնինք Ֆրանսայի հետ՝ խնդրին էական կէտերուն մասին: Առաջարկեցի նաեւ օրինակ առնել այն ազգերը, որոնք մեզի հետ նոյն կացութեան մէջ կը գտնուէին: Չեխօ-սլովաքներու պարագան գրեթէ նոյնն էր մերինին հետ, եւ անոնք ճանչցուած էին իբր պետութիւն: Նոյնիսկ օտար հողի վրայ, Փարիզի մէջ կազմուած էր չեխօ-սլովաք դահլիճ մը, որ երկիր երթալու համար կը սպասէր պետութեան ազատագրութեան: Նոյնը կարելի էր ըսել Բոլոնիոյ համար ալ: Այս օրինակներուն վրայ յենուելով, ֆրանսացի մէկ քանի քաղաքական անձնաւորութիւններ ալ խորհուրդ կու տային մեզի, որ մենք ալ չեխօ-սլովաքներուն պէս Հայաստանի կառավարութիւն մը կազմենք այստեղ: Խորհուեցաւ թէ արդեօք կարելի չէ՞ր այդ մտածումը իրականութեան դնել: Արդէն 1918 Նոյեմբեր 18-ին Ֆրանս-Արմենի Ընկերակցութեան նախագահ Պ. Կեռնիէի միջոցով ունկնդրութիւն մը ունեցած էինք արտաքին գործոց պաշտօնատան մէջ՝ նախարար Պ. Բիշոնէն, զոր շահեկան է վերյուշել: Այդ ունկնդրութեան ներկայ գտնուեցան տասնչորս անձեր, ընդ որս՝ Պ. Կեռնիէ, Պ. Կու, Պ. Ֆրանքլին-Պոյյեոն, Ֆրանս-Արմենի Ընկերակցութեան կարեւոր անդամներէն մեկ քանին, ինչպէս Զօրավար Պայեյու, Պ. Պ. Օնօրա, Ֆերտինանտ Հերոլտ, Հանրի Քուլոն, Էսքոֆիէ, Պեռլ, Մաքլէր եւ այլն, Պօղոս Փաշան, Յովհաննէս Խան Մասեհեան, Պ. Վարանդեան եւ ես: Պ. Կեռնիէ, թուելով հայոց կողմէ պատերազմին ընթացքին Կովկասի, Պաղեստինի եւ ուրիշ ճակատներու վրայ Դաշնակիցներուն ընծայուած զինուորական աջակցութիւնը, ինչպէս նաեւ Օտար Լեգէոնի հայ կամաւորներուն գործունէութիւնը, յանուն Ֆրանս-Արմենի Ընկերակցութեան խնդրեց նախարարէն, որպէսզի հայ ժողովուրդը, որ իր այդ աջակցութեամբ արդէն գոյապէս /de facto/ պատերազմիկ ժողովուրդ դարձած էր, իրաւապէս /de juris/ նաեւ պատերազմիկ ճանչցուի, որպէսզի կարենայ Խաղաղութեան Վեհաժողովին մէջ աթոռ ունենալ եւ պաշտպանել իր իրաւունքները: Պ. Բիշոն պատասխանեց, թէ Ֆրանսայի համակրութիւնը ամբողջովին հայոց կողմն է եւ ինք անձնապէս կատարեալ պատերազմիկ ժողովուրդ կը նկատէ հայերը: Աւելցուց, որ Վերսայլի վերջին Միջդաշնակցային Խորհրդաժողովին մէջ ինք պաշտպանեց հայերը պատերազմիկ ճանչնալու տեսակէտը, բայց Դաշնակից պատուիրակները, նկատելով որ զինադադարը կնքուած է, յարմար դատեցին ընթացք չտալ խնդրին: Պ. Բիշոն վստահեցուց նոյն ատեն, թէ Ֆրանսա պիտի պնդէ, որ հայերը աթոռ ունենան Խաղաղութեան Վեհաժողովին մէջ, եւ խնդրեց, որ Ազգ. Պատուիրակութիւնը առ այդ հայոց իրաւունքները հաստատող ծանօթագիր մը ներկայացնէ իրեն*: Այս

* Նորատունկեան էֆենտի ջնջեց հետեւեալ տողերը, զորս արտասանած էր այս խօսքերէն ետք. «... Փաշան այդ առթիւ յիշեցուց այն պայմանները, որոնց մէջ կազմուած էին հայ կամաւոր խումբերը, որոնք ֆրանսացւոց հետ կողք-կողքի կռուեցան Պաղեստինի ճակատին վրայ. յիշեցուց նաև այն ատեն եղած խոստումը, թէ լայն ինքնավարութիւն մը պիտի տրուէր հայոց՝ Կիլիկիոյ և սահմանակից նահանգներուն մէջ, ու զարմանք յայտնեց, թէ հիմա ինչպէ՞ս կը ժխտուի հայոց պատերազմիկ ժողովուրդի հանգամանքը: Պ. Բիշոն անգամ մըն ալ կրկնեց, որ եթէ հայերը պատերազմիկ ժողովուրդ չեն հռչակուած և այդ մասին Ազգ. Պատուիրակութեան կողմէ Վերսայլի Միջդաշնակցային Խորհուրդին յղած խնդրանքը չէ ընդունուած, ատոր մէջ Ֆրանսա դեր չունի, և թէ ինք աշխատած է ու պիտի աշխատի դարձեալ, որ այդ արդարութեան հատուցումն ըլլայ հայոց: Ունկնդրութեան ընթացքին խօսք դարձաւ նաեւ Կովկասի մէջ տեղի ունեցած վերջին ջարդերու մասին, որոնց համար Փաշան ըսաւ, թէ թուրքերու դրդումով եղած են: Պ. Բիշոն, որ նոյնպէս այդ կարծիքն ունէր, հաստատեց, թէ դժբախտաբար ջարդերը աւելի մեծ ծաւալ ունեցած են, քան ինչ որ ծանուցած էին թերթերը, եւ աւելցուց, որ Ֆրանսա, անգլիական կառավարութեան հետ համախորհուրդ, որոշած է խիստ միջոցներ ձեռք առնել թուրքերուն

ունկնդրութենէն ետք, թէ՛ չեխօ-սլովաքներու նման կառավարութիւն կազմելու եւ թէ՛ յարակից խնդիրներու համար պէտք տեսանք իրաւագիտական խորհրդակցութիւն մը ունենալ, եւ Փաշան այդ նպատակով հրաւիրեց պելճիքացի ծանօթ իրաւագէտ Պ. Օթլէթը, որ զանազան տեսակէտներ պարզեց մեր մտահոգութեանց առարկայ եղող օրինական հարցերու մասին, ու գրաւոր ալ յանձնեց իր խորհրդատուութիւնը:

Պ. Մ. Տէրպէտէրեան. Հայաստանի Հանրապետութիւնը գոյութիւն ունէ՞ր այդ միջոցին:

Նորատունկեան էֆենտի. Տեղեկութիւն չունէինք. ոեւէ յարաբերութիւն եւ թղթակցութիւն չկար Կովկասի հետ:

Պ. Վ. Թէքէեան. Քէրէնսքիի ի պատիւ Լոնտոն տրուած ճաշկերոյթին մէջ նոյնիսկ Պ. Վարանդեան բաղձանք յայտնած էր, որ Կովկասեան Հայաստանը ռուսական դաշնակցային պետութեան մաս կազմէ:

Նորատունկեան էֆենտի. Պ. Օթլէթի խորհրդատուութեան հետ զուգընթացաբար, յարմար դատեցինք նաեւ տեսակցութիւն մը ունենալ չէխօ-սլովաքներու Փարիզ կազմած դահլիճին մէջ արտաքին գործոց վարիչ Պ. Պէնէշի հետ: Այս տեսակցութիւնը, որքան որ կը յիշեմ, տեղի ունեցաւ Նոյեմբեր 28-ին, եւ ներկայ էին Պօղոս Փաշա, Մասեհեան Խան, Պ. Վարանդեան եւ ես: Պ. Պէնէշ յայտնեց, որ եթէ իրենք յաջողեցան պատերազմիկ ճանչցուիլ եւ աթոռի իրաւունք ստանալ յառաջիկային գումարուելիք Վեհաժողովին մէջ, ատիկա կը պարտին լոկ Ֆրանսայի ազդու պաշտպանութեան: Պ. Պէնէշ մեզի նկարագրեց իրենց գործունէութիւնը, պարզեց պետութեանց հետ իրենց ունեցած յարաբերութեանց եղանակները եւ աւելցուց, որ եթէ մենք ալ Ֆրանսայի ապաւինինք՝ մեր բաղձանքները դիւրութամբ կրնան պսակուիլ: Իսկ առժամեայ կառավարութիւն կազմելու խորհուրդը չտուաւ, ըսելով, որ ատիկա կրնար օրինական առարկութեանց տեղի տալ, քանի որ պատերազմական վիճակը այլեւս վերջ գտած էր, քանի որ մանաւանդ մենք պիտի ստիպուէինք այդ պարագային Ռուսական Հայաստանն ալ հաշուի առնել, մինչդեռ Դաշնակիցները որոշած էին անեղծ պահել Ռուսիոյ ամբողջութիւնը:

Այդ օրերը տեսակցութիւն մը ունեցանք նաեւ Արտաքին Գործոց Նախարարութեան Արեւելեան Բաժնի տնօրէն Պ. Կուի հետ, հասկնալու համար, թէ ի՞նչ կրնար ըլլալ ֆրանսական տեսակէտը՝ Ֆրանսայի հոգատարութեամբ Ամբողջական Հայաստանի մը կազմութեան մասին: Տեսակցութեան ներկայ էին Փաշան, Յովհաննէս Խան Մասեհեան, Պ. Շանթ եւ ես: Պ. Կու այդ հարցին նկատմամբ ըսաւ, թէ ոեւէ հրահանգ չունի իր նախարարութենէն, բայց իր անձնական մտածումը սա է, թէ կարելի եղածին չափ ընդարձակ Հայաստան մը պէտք է պահանջենք, այսինքն՝ Կիլիկիան ամբողջ, Մարաշի Սանճագն ու Սվազի, Խարբերդի, Տիարպէքիրի վիլայէթներուն

դէմ, վերջ տալու համար կոտորածներուն : Իր խօսքերէն՝ առաջին անգամ այդ օրը յայտնի եղաւ, որ ֆրանսական և անգլիական կառավարութիւնները, թուրքերուն վրայ ճնշում բանեցնելու եւ զանոնք զգաստութեան բերելու համար, որոշած են Կ. Պոլիսը գրաւել: Փաշային կողմէ եղած պահանջման մը վրայ, որուն համաձայն գտնուեցան թէ՛ Պ. Բիշոն եւ թէ՛ Պ. Կու, նախարարը խոստացաւ «Հայկական Լեգէոն» անունը տալ ֆրանսական դրօշի տակ ծառայող հայ կամաւորներուն, որոնք կը գործէին «Արևելեան Լեգէոն» անունին տակ, ինչպէս Փաշան ինքն իսկ պահանջած էր անոնց կազմութեան միջոցին, զգուշութեան համար, որպէսզի թուրք վարիչները բոլորովին չգրգռուին հայոց դէմ : Պ. Բիշոն խոստացաւ նաեւ, որ այդ Լեգէոնը ի հարկին պիտի արտօնուի Հայաստան երթալու, հայրենի հողին պաշտպանութեան համար: Ունկնդրութեան միջոցին խօսք դարձաւ նաեւ յարակից ուրիշ հարցերու մասին: Մասնաւորաբար Պ. Կու փափաքեցաւ վիճակագրական տեղեկութիւններ ունենալ Թուրքիոյ ընդհանուր բնակչութեան մասին: Յայտնեցի այս գործին դժուարութիւնը, այդ առթիւ երկար բացատրութիւններ տալով այն եղանակին նկատմամբ, որով վիճակագրութիւնները կը պատրաստուին Թուրքիոյ մէջ» :

մեծագոյն մասերը, Արղընիի հանքերն ալ մէջը ըլլալով: Բայց այսպէսով կազմուելիք Հայաստանին համար խորհուրդ տուաւ, որ ընդունինք Զուիցերիոյ նման դաշնակցային կազմութեան մը ձեւը, աշխատելով, որ դաշնակցային կեդրոնական խորհուրդին մէջ հայերը կազմեն մեծամասնութիւնը: Երկրին զանազան մասերուն մէջ, տեղ-տեղ, մեծամասնութիւնը կրնայ մնալ միւս տարրերուն, օրինակ՝ քիւրտերուն, ըսաւ, կը բաւէ որ կեդրոնական խորհուրդին մեծամասնութիւնը ձեր ձեռքը ըլլայ. 40-50 տարիէն քիւրտերը եւ այլ տարրերը կը տկարանան՝ իբր յետամնաց ժողովուրդ, կը կորսնցնեն իրենց ոյժը, եւ դուք կը մնաք երկրին տէրը. ձեր մշակոյթը, ձեր յատկութիւնները երաշխիք են այս մասին: Գալով Ֆրանսայի աջակցութեան մանրամասնութեանց, Պ. Կու ըսաւ, թէ ֆրանսական կառավարութիւնը Հայաստան կրնայ ղրկել բարձր-քոմիսէր մը, ժանտարմերիի պետ մը եւ սպաներ, հանրային կրթութեան, ելեւմտից եւ այլ ճիւղերու պէտք եղած քննիչներ ու մարզիչներ: Ըստ Պ. Կուի, այս դրութիւնը պէտք է տեւէր մինչեւ այն ատեն, ուր Հայաստան ի վիճակի ըլլար մինակը կառավարելու ինքզինքը: Հայաստանի կառավարութեան ձեւը ազգը պիտի որոշէր եւ հայկական կառավարութիւնը օրէնսդրական իրաւունք պիտի ունենար լիովին: Պ. Կու ըսաւ նաեւ, թէ նոյնիսկ Ռուսական Հայաստանը կրնար մաս կազմել անոր, բայց աւելցուց, որ ասիկա լոկ իր անձնական կարծիքն է:

Այն պետական կազմակերպութիւնը, զոր Պ. Կու կ'առաջարկէր մեզ, ներշնչուած էր հաւանաբար Սուրիոյ նկատմամբ պատրաստուած օրինագծէ մը, զոր ի ձեռին ունեցանք եւ որ Ֆրանսայի հաւանութեան ենթարկուած էր Սուրիական Կեդրոնական Քոմիթէին կողմէ: Բայց դաշնակցային դրութիւնը մեզի յարմար չերեւաց եւ ինչ-ինչ խորհրդածութիւններ ըրինք: Պ, Կու դիտել տուաւ, թէ հայ ժողովուրդին թիւը շատ ստուար չէ բաղդատմամբ Հայաստանի մեծ տարածութեան եւ միւս տարրերու թիւին: Մասեհեան Խան ըսաւ, թէ մենք Հայաստան գոյացնել կ'ուզենք եւ ոչ թէ խառն երկիր մը: Ատոր վրայ՝ խօսքը դարձաւ պզտիկ Հայաստանի մը կազմութեան մասին, եւ խօսակցութիւնը ստացաւ ոչ տաք համգամանք մը: Մասեհեան Խան հարցուց, որ եթէ Ֆրանսա ստանձնէ հոգատարութիւնը, ի՞նչ ընթացք պիտի բռնէ Հայաստանի մէջ, ի՞նչ կերպով պիտի կառավարէ զայն:

- Ոչ իշխան մը կրնանք տալ, ոչ ալ թագաւոր մը,- ըսաւ Պ. Կու, այլ լոկ ընդհանուր քոմիսէր մը:

Մասեհեան Խան պատասխանեց.

- Այո՛, ինչպէս Թունուզի տուած էք. ուրեմն գաղութի՞ պիտի վերածէք Հայաստանը:

Շատ հաճելի կերպով մը չբաժնուեցանք այդ օրը:

Նոյն իրիկունը Փաշային տունն էինք, նորէն կը կրկնէին, թէ Պ. Կուի ծրագիրը պարզապէս Հայաստանը կլլելու կը միտի: Մասեհեան Խան փափաքեցաւ վերստին լսել իմ կարծիքս որոշապէս: Ըսի, որ առանց Կիլիկիոյ եւ Խարբերդի նահանգին՝ էապէս հայկական պետութիւնը կատարեալ չպիտի ըլլար, եւ իրաց վիճակը կը պահանջէ Ֆրանսայի հետ բանակցիլ եւ ընդունիլ տալ Հայաստանի պաշտպանութիւնը, որոշ պայմաններով: Աւելցուցի նաեւ, թէ ասիկա ուսումնասիրութեան կարօտ հարց մըն է, ի հարկէ պէտք է աշխատինք, որ Եգիպտոսի պէս բան մը չըլլայ Հայաստան, բայց վերջապէս կարելի է յաջողիլ յարատեւ ջանքերով, կը բաւէ որ սկզբունքն ընդունինք անգամ մը եւ աշխատինք պատշաճագոյն ձեւը գտնելու: Պ. Կուի կարծիքը վերջնական չի կրնար ըլլալ, յարեցի, անկէ բարձր պաշտօնատարներ կան, որոնք համակիր ալ են մեր ազգին, կրնանք բանակցութեան մտնել անոնց հետ. այսպէս՝ օրինակի համար Պ. Բիշոնը, Պ. Քամպոնը, նոյնիսկ Պ. Քլէմանսօն, որ հայոց բարեացակամ է եւ որ սերտ յարաբերութիւն կը թուի ունենալ Պօղոս Փաշայի հետ: Եւ որովհետեւ Պ. Քլէմանսօ ամէնազօրեղ դիրք մը ունէր, անձնապէս յոյս յայտնեցի, որ կարելի էր մեր բանակցութեանց մէջ յաջողիլ, ի հարկին օգտուելով նաեւ Քէ տ'Օրսէի մէջ մեր ունեցած

բարեկամներուն աջակցութենէն*: Պատուիրակութեան անդամները կը կարծէին, թէ կարելի պիտի ըլլայ Կիլիկիան ունենալ առանց Ֆրանսայի, եւ նոյնիսկ՝ հակառակ Ֆրանսայի, ուրիշ պետութեան մը, զոր օրինակ՝ Ամերիկայի միջոցաւ, ինչպէս կը յուսային: Իմ կարծիքս տարբեր էր, մանաւանդ սա տեսակէտով, որ Վեհաժողովին մէջ աթոռ մը չունենալով, միջոց չպիտի գտնէինք մեր իրաւունքները պաշտպանելու: Վերջապէս՝ համաձայնութիւն չգոյացաւ մեր միջեւ, եւ միայն որոշուեցաւ կատարել Հայաստանի անկախութեան յայտարարութիւնը, որուն նկատմամբ հարկ դատեցինք հասկնալ, թէ Պ. Քլէմանսոյի տրամադրութիւնները ի՞նչ պիտի ըլլան: Քիչ ետքը Փաշան հաղորդեց, թէ անձի մը միջոցաւ, որուն անունը չի կրնար տալ, ստացած է Պ. Քլէմանսոյի պատասխանը սապէս թէ՝ ինծի անձնապէս խորհուրդ չի տար, որ հայերը անկախութիւն յայտարարեն, բայց եթէ ընելու ըլլան՝ չպիտի հակառակի: Այս պատասխանին մէջ հակառակելու տրամադրութիւն չըլլալուն, Նոյեմբեր 30-ին Հայաստանի անկախութեան հռչակման ծանօթ գիրը ղրկուեցաւ պետութեանց: Իսկ առժամեայ դահլիճ կազմելու գաղափարը, տրուած հանգամանքներուն մէջ, բոլորովին մէկդի թողուեցաւ:

Պ. Ն. Տէր-Ստեփանեան. Երանի թէ կազմած ըլլայիք:

Նորատունկեան էֆենտի. Անկախութեան յայտարարութիւնը յատուկ անձի մը միջոցաւ ղրկուեցաւ Լոնտոն: Անգլիական կառավարութիւնը գրաւորապէս պատասխանեց, թէ «ստացանք ու կ'արձանագրենք» /Nous en prenons note/, ինչ որ չհակառակելու նշան է, բայց ոչ բացարձակ հաւանութեան, որովհետեւ այս վերջին պարագային պէտք էր ըսուած ըլլար՝ «նկատողութեան կ'առնենք» /Nous en prenons acte/: Իսկ Ֆրանսա եւ Իտալիա պատասխան չտուին: Միայն՝ իտալական խորհրդարանին մէջ Հայաստանի իրաւունքները հռչակուեցան ծափահարութիւններով:

Պ. Վ. Թէքէեան. Այդ միջոցին Պ. Տամատեան Իտալիա կը գտնուէր, բայց իրեն լուր տրուած չէր, թէ այդ տեսակ գիր մը ուղղուած է իտալական կառավարութեան: Շատ նեղացած էր ասոր համար, ու վերջէն ըսաւ, որ եթէ տեղեկութիւն ունեցած ըլլար, տեղին վրայ կ'աշխատէր պատասխան մը ստանալու եւ կը յաջողէր ալ: Չեմ գիտեր, թէ Փաշան ի՞նչ դիմում ըրաւ այստեղ անձնապէս:

Նորատունկեան էֆենտի. Այդ միջոցին բոլոր տեսակցութիւնները Փաշային կողմէ կ'ըլլային՝ իբր Պատուիրակութեան Նախագահ. երբեմն Մասեհեան Խան միասին կ'երթար: Դեկտեմբեր 10-ին Ազգ. Պատուիրակութիւնը նիստ մը ունեցաւ, որուն ներկայ էինք՝ Փաշան, Յովհաննէս Խան Մասեհեան, Տոքթ. Նեւրուզ, Պ. Շանթ, Պ. Վարանդեան եւ ես: Փաշան, որ կը նախագահէր, կարդաց Պ. Սվազլըի կողմէ իրեն հասած նամակ մը, որմէ կը հասկցուէր թէ Տոքթ. Պարթընի դիմումին վրայ՝ արտաքին գործոց նախարար Պ. Լանսինկ բացորոշապէս յայտարարած է, թէ ամերիկեան կառավարութիւնը երբեք չի կրնար ընդունիլ Հայաստանի հոգատարութիւնը: Փաշան՝ աւելցնելով, թէ Պ. Քլէմանսօ ալ զգացուցած էր ատիկա իրեն, յիշեցուց, թէ նախագահ Ուիլսոն երեք օրէն Փարիզ կը ժամանէ եւ թէ անհրաժեշտ է, որ կարելի եղածին չափ շուտով որոշում մը տրուի այս հոգատարութեան խնդրին նկատմամբ: Նկատի առնելով Պ. Լանսինկի մերժումը, Փաշան այն գաղափարը յայտնեց, թէ Կիլիկիոյ եւ սահմանակից վիլայէթներու մասին պէտք է վերադառնալ 1916-ին Ֆրանսայի ստանձնած յանձնառութեան եւ անոնց համար խնդրել Ֆրանսայի հոգատարութիւնը, բայց ո՛չ թէ Պ. Կուի կողմէ արտայայտուած գիծերով, որոնց գործադրութիւնը կցման համարժէք կը նկատէր: Պօղոս Փաշա կ'առաջարկէր նամակով մը մերժել այդ ծրագիրը եւ յանձնառութիւն յայտնել ընդունելու աջակցութեան շատ թեթեւ ձեւ մը, որուն մեծ

* Նորատունկեան էֆ. ըսաւ նաև. «Մերժեցին իմ կարծիքս, եւ նորէն «կլլել» բայը խոնարհուեցաւ թէ՛ Փաշային, թէ՛ Պ. Շանթի եւ թէ՛ Մասեհեան Խանի կողմէ»: Վերջէն վերցուց այս պարբերութիւնը, իր յայտնութիւնները թեթեւցնելու համար:

գիծերը կրնայինք սահմանել՝ եթէ երբեք ֆրանսական կառավարութիւնը սկզբունքով ընդունէր այդ ձեւը*: Իսկ Վերին եւ Կովկասեան Հայաստանի համար՝ Փաշան առաջարկեց Անգլիոյ աջակցութիւնը փնտռել: Իր ծրագրին համեմատ՝ Ամբողջական Հայաստանի հոգատարութիւնը պիտի կատարուէր՝ արեւմտեան մասին համար Անգլիոյ կողմէ անջատաբար: Փաշային ծրագիրը երկու անջատ Հայաստաններու մասին՝ զիս չէր խանդավառեր. բայց համամիտ էի ազգին դիրքը ճշդելու եւ ժամ առաջ ծրագիր մը ընտրելու մեր ունենալիք քաղաքականութեան մասին: Երբ իմ կարծիքս ուզուեցաւ, չծածկեցի, թէ Ֆրանսան կը նախընտրեմ իբր աջակից պետութիւն Ամբողջական Հայաստանի, եւ բացատրելով իմ նախընտրութեանս պատճառները, տրամադրութիւն յայտնեցի առ այդ ծրագիր մը բերել՝ եթէ Պատուիրակութեան անդամները սկզբունքով համամիտ ըլլային: Այս առաջարկութիւնս ընդունուեցաւ, եւ յաջորդ նիստին բերի ծրագրի նախագիծ մը, որուն մէջ պայմաններ ցոյց տուած էի աջակից պետութեան կողմէ՝ որ Ֆրանսան պիտի ըլլար՝ Հայաստանի տրուելիք աջակցութեան: Իմ ծրագրիս համեմատ՝ Ամբողջական Հայաստանը /Թուրքիոյ հայկական նահանգները, Ռուսական Հայաստանը, Կիլիկիան, եւայլն/ պիտի ճանչցուէր ազատ ու անկախ պետութիւն, Ազգերու Ընկերութեան երաշխաւորութեամբ, եւ Ընկերութեան մասնաւոր «մանտա»յով՝ Ֆրանսա պիտի ստանձնէր ժամանակաւոր աջակցութիւն մը, որուն տեւողութիւնը պիտի որոշէր Խաղաղութեան Վեհաժողովը: Չեմ մտներ մանրամասնութեանց մէջ. բայց քանի մը բառով ըսեմ, որ իմ մտածումս եղած էր թէ՛ Ամբողջական Հայաստանի պետութեան հաստատութիւնն ու ճանաչումը եւ թէ՛ Ֆրանսայի բարոյական ու նիւթական օգնութիւնը ապահովել: Ես կ'ուզէի, որ ժամանակի մը համար, զոր օրինակ՝ հինգ կամ տասը տարի, ֆրանսացի մը կառավարէ մեր երկիրը, եւ այդ ֆրանսացին մենք ընտրենք եռանուն ցանկի մը վրայէն, որ մեզի տրուի ֆրանսական կառավարութեան կողմէ, իբր նախագահ, բարձր-քոմիսէր, կամ ուրիշ ռեւէ անունով մը:

Պ. Վ. Թէքէեան. Կը յիշեմ, որ ձեր մտածումն էր առաջարկել Պ. Ժօնառը՝ Ալճերիոյ նախորդ ընդհանուր կուսակալը, որ այնքան մեծ անուն մը թողուց:

Նորատունկեան էֆենտի. Ամեն պարագայի մէջ՝ ընտրութիւնը մենք պիտի ընէինք: Ես կը խորհէի, թէ ֆրանսական ազգը, նկատի առնելով իր ասպետական տրամադրութիւնները, ամենայն սիրով պիտի աջակցէր մեր պետութեան բարգաւաճման ու զօրացման, եթէ երբեք ֆրանսացի մը ըլլար Հայաստանի գլուխը: Իմ ծրագրիս համաձայն՝ երկրին պետական լեզուն եւ դրօշը, ինչպէս նաեւ դրամները հայկական պիտի ըլլային, Դաշնակից պետութիւնները իսկոյն գրաւման պիտի ենթարկէին հայկական հողերը, անոնցմէ հեռացնելով ո՛չ միայն թուրք զօրքերը, այլ նաեւ՝ անդորրութիւնը վրդովող տարրերը: Ֆրանսա դրամ փոխ պիտի տար երկրին մէջ տիրող թշուառութիւնը բառնալու համար, երկրին վերականգնութեան պիտի

* Իրականութեան մէջ՝ Փաշան այդ նամակը գրած էր արդէն Նոյեմբեր 30-ին, Պ. Կուի հետ Քէ տ'Օրսէի մէջ տեղի ունեցած տեսակցութենէն երկու օր վերջ, բնական է՝ Յովհաննէս Խան Մասեհեանի եւ Պ. Լևոն Շանթի ազդեցութեան տակ, եւ այն տեսակ կտրուկ ձևով մը, որ նոր բանակցութեանց պէտքին ակնարկելով հանդերձ՝ յետագայ բանակցութեանց դռները կը գոցէր: Դեկտեմբեր 10-ին, այսինքն՝ նամակին ղրկելէն 10 օր վերջ երբ ժողովին մէջ այս կարգի նամակ մը ղրկելու անհրաժեշտութիւնը կը զգացնէր Նորատունկեան էֆենտիի եւ միւս ժողովականներուն, որոնք տեղեկութիւն չունէին նամակին ղրկուած ըլլալէն, Փաշան պարզապէս կատարուած իրողութիւն մը վաւերացնել տալու, ինքնագլուխ՝ կամ մէկ-երկու ժողովականներու միայն գիտակցութեամբ և քիչ մը չափազանց հապճեպով տեղի ունեցած շատ ծանրակշիռ արարքի մը պատասխանատուութիւնը միանգամայն բոլոր ժողովականներուն բաժնել տալու փորձ մըն էր որ կ'ընէր, այս մասին լռեկ համամտութիւնը ունենալով Մասեհեան Խանի եւ Պ. Շանթի, որոնք գիտէին նամակին ղրկուած ըլլալը: Ա. Ա.

ձեռնարկէր՝ հայթայթելով ո՛չ միայն անհրաժեշտ գումարները, այլ նաեւ՝ պաշտօնեաներն ու մասնագէտները, պիտի կազմէր ու մարզէր բանակը, Հայաստանի բնական հարստութիւնները պիտի օգտագործէր ի նպաստ պետութեան ու ժողովուրդին, պետութեան անհրաժեշտ փոխառութիւնները պիտի երաշխաւորէր, եւ խաղաղութեան Վեհաժողովին մէջ ոյժ պիտի տար մեր հատուցման իրաւունքին, ինչպէս նաեւ հայկական ջարդերու եւ տեղահանութեանց հեղինակները պատժելու պահանջման: Երբ այս ծրագիրս կարդացուեցաւ, Փաշան ըսաւ, որ «Բնաւ չեմ հաւանիր այս տեսակ ծրագրի մը. կատարելապէս միակողմանի /unilatéral/ է, եւ Ֆրանսա երբեք չպիտի ընդունի զայն»: Այսինքն՝ ըսել ուզեց, որ իմ ծրագիրս մեզի համար շատ նպաստաւոր էր, բայց Ֆրանսա չէր կարող ընդունիլ զայն: Պատուիրակութեան անդամներէն մէկը ըսաւ, թէ ինչպէ՞ս օտար մը կրնանք դնել Հայաստանի գլուխը: Պատասխանեցի, թէ ատիկա առժամանակեայ բան մըն է, թէ մենք մեր ուզածը ընտրելու ազատ պիտի ըլլանք, ու նոյն ատեն յիշեցուցի օրինակը շատ մը երկիրներու որոնք իրենց գլուխը օտարներ ունենալով սկսան, եւ որոնք անկախ ու զօրեղ պետութիւններ դարձան, ինչպէս Յունաստան, Պուլկարիա, եւ այլն: Անկեղծօրէն ըսելով, նոյն օրը ծրագիրս խորապէս չքննուեցաւ*: Եւ որովհետեւ Փաշան համակարծիք չէր ինծի, առաջարկեցի իրեն, որ ինք ալ ծրագիր մը բերէ ու ենթարկէ խորհրդակցութեան: Յետագայ նիստերուն մէջ Փաշան ծրագիր մը բերաւ, որ նոյնպէս հաւանութիւն չգտաւ**: Պատուիրակութեան անդամներէն ոմանք, ընդ որս Պ. Շանթ, արտայայտուեցան տարբեր ուղղութեամբ, այսինքն՝ գոհանալ Ամբողջական Հայաստանի անկախութեան յայտարարութեամբ որ եղած էր Նոյեմբեր 30-ին, այդ Յայտարարութեան իրականացման գործն ու կազմուելիք հայկական պետութիւնը ենթարկելով ընդհանուր Դաշնակիցներու պաշտպանութեան:

Այս տարակարծութիւնները տեւեցին տակաւին քանի մը նիստ, ու կարելի չեղաւ վերջնական որոշման գալ, որով խնդիրը այդպէս անլոյծ մնաց, հակառակ իմ պնդումներուս, թէ ժամանակը անգին է եւ գործը՝ ստիպողական: Գիտէք անշուշտ, թէ ի՞նչ հետեւանք ունեցան այս առաջարկներս, քանի որ իրողութիւնը արձագանգ գտաւ մինչեւ Համագումարին մէջ***:

Պ. Ն. Տէր-Ստեփանեան. Այո՛, ո՛չ միայն հակառակեցան ձեզի, ըսին թէ ֆրանսամոլ էք, այլ նաեւ ձեզ նախատելու, զրպարտելու չափ առաջ գացին: Կը յիշեմ մասնաւորաբար միջադէպ մը, որ տեղի ունեցաւ Ճիշդ Փարիզ հասած օրս, այսինքն՝ 1918 Դեկտեմբեր 30-ին, միջադէպ, որ ցոյց կու տայ, թէ ի՞նչ մտայնութիւն կը տիրէր այն ատենուան Պատուիրակութեան մէջ: Ասիկա առաջին տպաւորութիւնն է, զոր կրեցի Փարիզի մէջ մեր ներկայացուցիչներէն, եւ որուն որչափ շինիչ ըլլալը ձեզի կը թողում դատել: Յանկարծ Պ. Վարանդեան ամբաստանող ձայնով մը եւ կիրքով յայտարարեց, որ Պատուիրակութեան մէջ ամեն խօսուած Քէ տ'Օրսէէն կը գիտցուի, եւ հետեւաբար, Պատուիրակութեան մէջ գտնուող անձերու միջոցաւ է, որ կ'ըլլայ այս

* Ճիշդ ու ճիշդ ըսաւ. «Անկեղծօրէն ըսելով՝ վշտացայ, որ առանց ծրագիրս խորապէս քննելու, այդքան փութկոտ կարծիք մը յայտնուեցաւ Փաշային կողմէ»: Վերջէն թեթևցուց այս պարբերութիւնը՝ վերի ձևով:

** Նորատունկեան էֆ. ըսաւ նաեւ. «Փաշային ծրագիրը հիմնուած էր երկու տարբեր հոգատարութեամբ երկու անջատ Հայաստաններու կազմութեան վրայ»: Վերջէն ջնջեց այս տողերը:

*** Նորատունկեան էֆ. բառ առ բառ հետևելն ըսաւ այս մասին. «Հասկցուցի իրենց, թէ շատ սխալ կը մտածեն, որուն վրայ՝ բոլորովին սրեցաւ իրենց հակառակութիւնը ինծի դէմ, ըսին թէ ֆրանսամոլ եմ, և այսքանով ալ չբաւականացան, մինչև իսկ զիս նախատելու չափ առաջ գացին, զրպարտեցին ալ, վերջապէս ծանօթ է ձեզի մնացածը, որ իր արձագանգը ունեցաւ նաև Համագումարին մէջ»: Վերջէն թեթևցուց այս պարբերութիւնը՝ վերը արձանագրուած կերպով:

բանը: Ես անմիջապէս հասկցայ, որ ամբաստանութիւնը ուղղուած էր Պ.Նորատունկեանի եւ Պ. Մալքոլմի, որոնք լաւագոյն նկատեցին լռել: Քիչ ետքը սակայն՝ Պօղոս Փաշա, խօսքն ուղղելով Պ. Նորատունկեանի, ըսաւ. «Excellence! եթէ կ'ուզէք Պատուիրակութեան նախագահութիւնը ստանձնել, ահաւասիկ իմ աթոռս. գրաւեցէ՛ք զայն»: Պ. Նորատունկեան մէկ խօսք միայն ըրաւ, որ հետեւեալն էր. «Excellence! Ի զուր մի՛ բարկանաք, Ձեր առողջութիւնը չափազանց թանկագին է ազգին համար»: Նուպար Փաշայի այդ խօսքերը կ'ապացուցեն, թէ իր մէջ գոյացուցեր էին այն համոզումը,- աւելորդ է ըսել որո՞նք,- որ իբր թէ Պ. Նորատունկեան կ'ուզէր Քէ տ'Օրսէի միջոցաւ զինքը տապալել եւ իր տեղը գրաւել: Իսկ Պ. Վարանդեանի ամբաստանութեանց լրջութիւնը կարելի է դատել այն միւս միջադէպէն, որ երկու ամիս վերջ պատահեցաւ Համագումարին մէջ եւ զոր կը յիշէք անշուշտ: Օր մը Պ. Վարանդեան ձեռքը բռնած «Լա Ֆրանս էքսթրիէօր» լրագրին մէկ թիւը, եւ ակնյայտնի կերպով ակնարկելով Համագումարի Նախագահ Պ. Նորատունկեանի, կ'ուզէր հաստատել, թէ այդ թերթին մէջ հրատարակուած յօդուածի մը ներշնչումը բղխած է Համագումարի մէկ անդամէն: Ինչպէս կը յիշէք, այդ միջադէպին յաջորդ օրն իսկ նոյն թերթին մէջ հրատարակուած յօդուած մը, որ «Les Hommes de Plâtre» /Գաճէ Մարդիկը/ վերնագիրը կը կրէր, այդ յորջորջման տակ կը նոյնացնէր Պօղոս Փաշան եւ Պ.Նորատունկեանը, երկուքն ալ ամբաստանելով իբր հեղինակ հայոց հակաֆրանսական քաղաքականութեան:

Նորատունկեան էֆենտի. ամերիկեան հոգատարութեան խնդիրը այս անցուդարձերէն ետքն է, որ ծագում առաւ:

Պ. Գ. Սինապեան. Անկէ վերջ դարձեալ տեսակցութիւն ունեցա՞ք նախարարներու կամ ուրիշ պաշտօնական անձնաւորութեանց հետ:

Նորատունկեան էֆենտի. Ոչ. բնաւ մէկուն չգացի:

Պ. Ա. Թէրզիպաշեան. Իսկ ամերիկեան հոգատարութեան մասին ի՞նչ կը խորհէիք:

Նորատունկեան էֆենտի. Ըսի, թէ տար Աստուած, որ չխաբուէինք: Մէկ կողմէ՝ ինձի դժուար կը թուէր, որ Ֆրանսա համակերպի Ամերիկայի թողուլ Կիլիկիան, միւս կողմէ՝ կը յիշէի, որ Ամերիկա Մոնրոյի վարդապետութիւնն ունի, ամերիկացիք կրթուած են այդ վարդապետութեան ոգւով, եւ անհաւանական էր, որ յօժարութիւն ունենան Ամերիկայի սահմաններէն դուրս գտնուող կնճռոտութեանց խառնուելու եւ հոգատարութիւն ընդունելու: Իմ անխախտ համոզումս էր ասիկա: Բայց եթէ այս համոզմանս անունով պայքարէի, աշխատէի, մեր մէջ առաջ պիտի գար շատ վնասակար պառակտում մը, անանկ ատեն մը, երբ մեր ազգին համար միութիւնը առաջին անհրաժեշտ բանն էր: Այս ազգային գերագոյն շահուն սիրոյն նախընտրեցի լռել, եւ բոլորովին քաշուեցայ:

Պ. Դաւիթ-Բէկ. Այնքան որ ատիկա նոյնիսկ օտարներուն աչքին զարկաւ: Փաշան օր մը ինծի ըսաւ, թէ Պ. Կու հարցուցած էր, որ ինչո՞ւ այլեւս առիթ չունենար Պ. Նորատունկեանը տեսնելու:

Նորատունկեան էֆենտի. Ամերիկեան հոգատարութեան մասին կարելի էր խորհիլ զինադադարէն առաջ, պայմանաւ, որ հնարաւոր ըլլար Ամերիկայի պարտադրել այդ տեսակ յանձնառութիւն մը: Այս մասին պարագայ մը կայ, զոր առիթ է յայտնելու Ժողովիդ: Զինադադարէն 5-6 ամիս առաջ Զուեցերիա եկան ֆրանսական եւ անգլիական առաքելութիւններ: Ինծի ալ այցելեցին, հարցուցին, թէ ի՞նչ կը մտածէի Թուրքիոյ հետ հաշտութեան մը եւ ընդհանուր առմամբ՝ Հայաստանի ապագային նկատմամբ: Թուրքերու նկատմամբ մտածածս ըսելէ յետոյ, իրենց խնդրանքին վրայ՝ գրաւոր՝ թէեւ առանց ստորագրութեան, տուի իմ խորհուրդս, թէ ցանկալի էր, որ Ֆրանսա եւ Անգլիա համաձայնին Ամերիկայի առաջակին եւ ընդունիլ տան Հայաստանի հոգատարութիւնը: Այդ գրութեան մէջ պատճառաբանած էի, թէ ինչո՞ւ

Ֆրանսա եւ Անգլիա պէտք էր նոյնիսկ պատերազմի միջոցին ընդունիլ տային Ամերիկայի՝ Հայաստանի հոգատարութիւնը: Ըսել կ'ուզեմ, որ անհատապէս ամերիկեան հոգատարութեան դէմ չէի, եթէ կանխաւ, առաջին օրէն, ընդունած ըլլար, եւ պարտադրիչ եղանակով մը: Ժամանակ ետքը՝ երբ Փարիզ եկանք, Պ. Փաստրմաճեան նոր դարձած էր Ամերիկայէն եւ, ինչպէս անկէ ալ գրած էր նախապէս, միշտ այն համոզումն ունէր, թէ Ամերիկա չպիտի ընդունի Հայաստանի հոգատարութիւնը: Ուրիշ անձնաւորութիւններ ալ, թէ՛ եւրոպացի եւ թէ՛ ամերիկացի, այդ համոզումը ունէին: Տոքթ. Պարթըն եւ Մր. Մորկընթաու կը պաշտպանէին ուրիշ կարգադրութիւն մը, որուն համաձայն՝ Ամերիկա պէտք էր ստանձնէր ո՛չ թէ լոկ Հայաստանի, այլ՝ ընդհանուր Թուրքիոյ հոգատարութիւնը: Ո՛չ մէկը կ'ապահովցնէր, թէ Ամերիկա պիտի կրնայ ընդունիլ առանձին Հայաստանի հոգատարութիւնը: Անգլիայէն ալ այդ միջոցին Փարիզ հասած էր «Թայմզ»-ի խմբագիր Մր. Սթէտ, որուն հետ տեսնուեցանք: Ան ալ թերահաւատ էր այդ մասին, ինչպէս մեր լաւագոյն անգլիացի բարեկամը՝ Լորտ Պրայս: Երկուքն ալ խորհուրդ կու տային, որ Ֆրանսայի մօտենանք: Տակաւին ուրիշ շատեր ալ կային: Երբ մենք, Զօրացեալ Պատուիրակութեան մէջ, այս խնդիրն սկսանք քննել, այս բոլորը սեղանի վրայ էին: Ըսի, որ ես ալ կը նախընտրէի Ամերիկան, ինչպէս էն առաջ խորհած էի անոր մասին, բայց այլեւս շատ տարակուսելի էր, թէ կ'ընդունի: Մանաւանդ, որ Ամերիկայի ընդունիլը շատ երկար ամիսներու կարօտ էր, մինչդեռ Հայաստանի պէտք էր ամենաանմիջական օժանդակութիւն: Յետոյ կար 1916-ի Համաձայնութիւնը, որ ի սկզբանէ ինծի անյայտ էր, եւ որ Ֆրանսայի վճռական դեր մը կու տար Կիլիկիոյ եւ շրջակայ հողամասերուն մէջ: Եւ Լորտ Պրայս՝ աւելի այդ նկատումով մեզի խորհուրդ կու տար, որ անգլիական հոգատարութեան վրայ չխորհինք ու Ֆրանսան նախընտրենք:

Պ. Ռ. Որբերեան. Հապէշիսթանի եւ Ճիպութիի հայ գաղութն ալ զինադադարէն ետք գիր մը ուղղեց թէ՛ նախագահ Ուիլսոնի, թէ՛ Պ. Պ. Քլէմանսոյի, Լլոյտ Ճորճի, Օրլանտոյի, եւ Պապին ալ, խնդրելով, որ Ամբողջական Հայաստանը կազմուի իր պատմական սահմաններուն մէջ: Իտալական կառավարութեան պատասխանը շատ լաւ էր եւ կը խոստանար բոլոր կարելին ընել այդ նպատակով: Ֆրանսա իր պատասխանին մէջ կ'ըսէր, թէ վերջ պիտի տան հայոց դէմ կիրարկուած հարստահարութեան դրութեան, բայց անկախութեան խօսք չէր ըներ բնաւ: Պատասխան տուաւ նաեւ Անգլիան:

Նորատունկեան էֆենտի. Ի՞նչ ձեւով պատասխանեց անգլիական կառավարութիւնը:

Պ. Ռ. Որբերեան. Ընդունած ըլլալը ծանուցած էր, աւելցնելով, թէ «Բովանդակութիւնը արձանագրուած է» /Le contenu est noté/:

Պ. Ա. Չօպանեան. Նախկին Զօրացեալ Պատուիրակութեան այդ համբաւաւոր նիստին, ուր Պօղոս Փաշայի, Նորատունկեան էֆենտիի եւ Դաշնակցականներու ծրագիրները ներկայացուեցան, ես ներկայ չէի, որովհետեւ այդ միջոցին Պատուիրակութեան անդամ չէի: Ինծի պատմող ալ չէր եղած անկէ ի վեր: Բայց մեր Պատուիրակութեան նիստերէն մէկուն մէջ, ասկէ 5-6 ամիս առաջ, օր մը, Փաշան բերաւ եւ կարդաց այդ երեք գրութիւնները: Նորատունկեան էֆենտիի առաջարկութեան մասին կ'երեւայ, թէ այդ նիստին մէջ հեգնողներ եղեր են, թէ ֆրանսացիներէ աւելի ֆրանսացի կ'ըլլայ, քանի որ Ամբողջական Հայաստանի Հանրապետութեան համար ֆրանսացի նախագահ կ'ուզէ: Նորատունկեան էֆենտիի ծրագիրը սակայն՝ ֆրանսական հոգատարութեամբ Ամբողջական Հայաստան մը կազմելու մասին, շատ կարելի բան մըն էր քանի որ, ըստ Պ. Մալքոլմի, անգլիացիք ալ չպիտի հակառակէին ատոր՝ որոշ պայմաններով: Միւս կողմէ, բարձր-քոմիսէրին ֆրանսացի մը ըլլալը առաջին շրջանին համար անպատեհութիւն մն չէր ներկայացներ, քանի որ այդ անձնաւորութիւնը, ըստ Նորատունկեան էֆենտիի ծրագրին, հայոցմէ պիտի ընտրուէր:

Եւ արդէն, եթէ Ամերիկա ընդունէր Հայաստանի հոգատարութիւնը, միթէ՞ չպիտի՞ նշանակէր բարձր-քոմիսէր մը, որ ապահովապէս պիտի ըլլար ամերիկացի մը:

Նորատունկեան էֆենտի. Չմոռնամ ըսելու, որ այդ ծրագիրը պատրաստելէ առաջ, անձնապէս առիթ ունեցած էի իմանալու կարգ մը ֆրանսացի եւ ականաւոր անձերու կարծիքը: Ոմանք վաղուց ծանօթներս էին, ինչպէս Երեսփոխանական Ժողովոյ նախագահ Պ. Տէշանէլ, նախկին նախարարապետ Պ. Վիվիանի, նախկին նախարար Պ. Բէնլըվէ, եւայլն: Տեսած ֆրանսացիներէս ո՛չ մէկը հակառակած էր այդ գաղափարին: Պատուիրակութեան ծանօթ գումարումէն վերջն ալ, որուն ընթացքին այդ ծրագիրը բերած էի, գացի Պ. Վիքթոր Պեռարի եւ ծրագիրը ներկայացնելով հարցուցի, թէ ի՞նչ էր իր կարծիքը այդ մասին: Ըսաւ, թէ ատիկա պատուական կամուրջ մըն է, որուն վրայէն Ֆրանսա հայոց եւ հայերը Ֆրանսայի կրնան ձեռք տալ, իրարու մեծապէս մերձենալով: Չմոռնանք, որ Պ. Պեռար սկզբունքով հակառակ էր ֆրանսական միջամտութեան Արեւելքի մէջ ծաւալման. բայց նորէն ծրագիրը անգործնական չգտաւ, մանաւանդ երբ իրեն հասկցուցի, թէ մենք դժուար թէ կարենանք մեր անկախութիւնը իրականացնել առանց օգնական պետութեան մը, եւ թէ այդ օգնական պետութիւնը կրնայ ըլլալ Ֆրանսա, որուն մշակոյթը այնքան ընտանի է մեզի, զոր վարժուած ենք սիրելու, եւ որ արդէն մեզի հանդէպ յանձնառութիւն մը ստանձնած էր 1916-ի Համաձայնութեան կնքման առթիւ:

Պ. Ա. Չօպանեան. Պօղոս Փաշայի ծրագիրն ալ գործնական էր, ու նոյնիսկ աւելի գործնական էր թերեւս, թէպէտ Ամբողջական Հայաստանը երկու մասի բաժնուած կ'ըլլար ատով: Խնդիր է արդէն, թէ օր մը պատմութիւնը չպիտի՞ մեղադրէ մեզ այս Ամբողջական Հայաստանի չափազանց գեղեցիկ գաղափարին համար, որուն երեսէն հայ ժողովուրդը այնքան մեծ կորուստ մը ունեցաւ: Պօղոս Փաշան համամիտ էր անոնց, որոնք կ'ուզէին օգտուիլ բնավայրին այս կամ այն մասերուն մէջ արդէն իսկ գոյութիւն ունեցող եւ անմիջական շահ ունեցող տէրութիւններէն, ձգտելով ստանալ Անգլիոյ հոգատարութիւնը Մեծ Հայաստանի համար եւ Ֆրանսայինը՝ Փոքր Հայաստանի համար: Իսկ Դաշնակցականները կ'ըսէին, թէ ֆրանսա տկարացած ազգ մըն է, միւսիւլմանական ուղղութեան կը հետեւի, էմբէրիալիսթ է, թէ իրական անկախութիւն չպիտի տայ, այլ՝ Հայաստանը պիտի վերածէ Թունուզի պէս գաղութի մը, եւ խորհուրդ կու տային չաճապարել Ֆրանսայի հետ կապուելու, եւ Ամբողջական Հայաստանի հոգատարութիւնը տալ կա՛մ Ամերիկայի եւ կա՛մ Անգլիոյ: Վերջնական որոշում մը տալէ առաջ կը յանձնարարէին սպասել բոլոր Դաշնակից Պատուիրակութեանց Փարիզ հասնելուն, մասնաւորապէս ամերիկեանին եւ անգլիականին, որպէսզի անոնց հետ խորհրդակցելէ ետքը տրուէր այդ որոշումը: Արդ, ինչպէս յայտնի է, անոնց ալ հասնելէն ետքը, որոշումը որ տրուեցաւ Դաշնակցականներուն եւ, պէտք է խոստովանիլ, ազգին ալ մեծամասնութեան նախասիրութեանց ճնշման տակ, ամերիկեան հոգատարութիւնն ուզելը եղաւ Ամբողջական Հայաստանի համար: Արդ, թէ՛ Դաշնակցականները եւ թէ՛ ազգին ստուար զանգուածը կը մոռնային, թէ Կովկասի մէջ Մեծ Հայաստանի վրայ վճռական դեր կատարելու կարող անգլիական զօրութիւնը կար, եւ Փոքր Հայաստանի ու մանաւանդ Կիլիկիոյ մէջ 1916-ի Համաձայնութեան հետեւանքով Ֆրանսան կար, եւ անոր հետ մեր Ազգ. Պատուիրակութեան ունեցած բանակցութիւնները կային: Կային տակաւին մեր հազարաւոր կամաւորները ֆրանսական դրօշի տակ, կար Կիլիկիոյ ինքնավարութիւն մը տալու խոստումը ֆրանսական կառավարութեան կողմէ, եւ այս բոլորը շօշափելի իրողութիւններ էին, զորս պէտք էր հաշուի առնել: Կ'ընդունիմ, թէ Պ. Կու, որ խօսելու չոր եւ քիչ սրտապնդիչ եղանակ մը ունի սովորաբար, կրնայ այնպէս մը արտայայտուած ըլլալ, որ վարանման մղած ըլլայ մեր ներկայացուցիչներէն ոմանք: Բայց Պ. Կուի, ինչպէս եւ Պ. Բիշոնի հետ միակ տեսակցութիւն մը բաւական չէր անշուշտ այդպիսի ծանր հարցի մը մասին վերջնական որոշում մը տալու համար: Պ. Կու եւ նոյն ինքն Պ. Բիշոն ամբողջ Ֆրանսան չէին. անոնցմէ դուրս կային բազմաթիւ

ականաւոր ազդեցիկ անձնաւորութիւններ, հայոց բարեկամ, կար Ֆրանսայի Հանրապետութեան զօրեղ նախագահը՝ Պ. Բուանքարէն, որուն հետ պէտք էր խօսիլ, կար մանաւանդ ամէնէն վեր՝ մեծազօր Քլեմանսօն, Հայկական Դատին հին բարեկամը, Նուպարենց տան վաղեմի մտերիմը, որ յաղթանակը վաստակող մեծ ֆրանսացին ըլլալէ զատ, Խաղաղութեան Վեհաժողովին նախագահն էր, եւ որ յաղթանակէն քիչ առաջ ըսած էր Պօղոս Փաշային. «Արեւը, լուսինը եւ աստղե՞րը կ'ուզէք Հայաստանի համար՝ պիտի ունենաք»: Ասիկա կատակ մըն էր անշուշտ, բայց դէպի հայերը շատ լաւ տրամադրութիւն մը ցոյց կու տար: Այդ օրերուն, կը յիշեմ, որ քանի մը անգամ «Բլաժա» պանդոկին մէջ Նորատունկեան էֆենտիի եւ Պ. Մալքոլմի հետ այս խնդրին նկատմամբ երկար խօսակցութիւններ ունեցած եմ եւ յայտնած եմ, որ լիովին համաձայն եմ իրենց հետ, թէ լաւագոյն լուծումն էր Անգլիոյ համաձայնութեամբ Ֆրանսայի հոգատարութիւնը ստանալ՝ եթէ կարելի է՝ Ամբողջական Հայաստանի համար, իսկ եթէ կարելի չէր՝ Մեծ Հայաստանի համար անգլիական հոգատարութիւն մը, եւ Փոքր Հայքի ու Կիլիկիոյ համար՝ ֆրանսական պաշտպանութեամբ ինքնավարութիւն մը, այս վերջինն ըլլալով այդ միջոցին ամէնէն անմիջական կերպով ապահովը եւ իրագործելին, եթէ մենք ուզէինք: Կը յիշեմ, որ նոյն օրերուն ընդարձակ վիճաբանութիւն մըն ալ ունեցած եմ Պ. Վարանդեանի եւ Պ. Շանթի հետ, որոնք ամերիկեան հոգատարութեան գաղափարին յարած էին: Ամերիկեան հոգատարութիւնը ինծի անորոշ ու հեռաւոր՝ թէպէտ եւ հրապուրիչ, բայց անստոյգ խոշոր երազ մը կը թուէր, մինչդեռ անգլօ-ֆրանսական կարգադրութեամբ մը կրնայինք մեր հարցը անմիջապէս լուծել դրական կերպով մը: Ատկից զատ, դիտել կու տայի նաեւ, որ Ամերիկայի ետեւէն վազելով, առանց վստահ ըլլալու անոր հոգատարութիւնը ստանալու, ապահովապէս Ֆրանսան պիտի նեղացնէինք եւ մեզի թշնամի դարձնէինք, ինչպէս ալ եղաւ: Որովհետեւ նոյնիսկ ամերիկեան հոգատարութիւնը հետապնդելու ատենին եւ ո՛չ իսկ ամենադոյզն նրբավարութիւն ցոյց տուինք, գոնէ Ֆրանսայի դիւրազգացութիւնները յարգած ըլլալու համար: Յանկարծակի, հայերը կռնակ դարձուցին Ֆրանսայի: Ամեն տեղ բացէ ի բաց անոր հակառակ կ'արտայայտուէին: Օր մը, բարեկամ ընտանիքի մը մէջ Պ. Մասեհեան հետեւեալն ըսաւ նոյնիսկ 15 հոգիի ներկայութեան. «Այս ֆրանսացիք կ'ուզեն կոր մեր երկիրը գաղութ մը դարձնել: Ես Պ. Կուի ըսի. «Մենք մինչեւ հիմա կը պաշտէինք Ֆրանսան, բայց եթէ շարունակէ այսպէս տիրամոլական ձգտումներ ցոյց տալ, պիտի ստիպուինք ատել Ֆրանսան»: Քիչ օր յետոյ, «Բլաժա» պանդոկին առջեւ հանդիպեցայ Պ. Մասեհեանի եւ յայտնեցի իրեն, թէ ինչքան վտանգաւոր կը գտնէի Ֆրանսայի հետ սկսուած որոշ գործ մը այսպէս յանկարծ լքելով ամերիկեան հոգատարութեան երազին յանձնուիլը: Պ. Մասեհեան ինծի պատասխանեց. «Ես վստահ եմ, որ Ամերիկա պիտի ընդունի հոգատարութիւնը եւ կարելի բան չէ կապուած մնալ Ֆրանսայի՝ երբ այդպիսի հզօր աջակցութեամբ մը Ամբողջական Հայաստան մը կազմելու հնարաւորութիւն կայ. պատմութեան առջեւ ես կը ստանձնեմ ասոր պատասխանատուութիւնը»: Ոմանք ալ կը կարծեն, որ արդէն Ֆրանսա չպիտի ընդունէր, եթէ նոյնիսկ մենք պնդած ըլլայինք Ամբողջական Հայաստանի հոգատարութիւնը: Արդ, ես առիթ ունեցայ ասկից 6-7 ամիս առաջ տեսակցութիւն մը ունենալու Պ. Կէռնիէի հետ, որ իբր Ֆրանս-Արմէնի Ընկերակցութեան նախագահ՝ 1917-18 շրջանին սերտ յարաբերութիւններ ունէր Ազգ. Պատուիրակութեան հետ եւ գլխաւոր միջնորդներէն մէկն էր այս վերջինին եւ Քէ տ'Օրսէի միջեւ: Պ. Կեռնիէ մեծ դառնութեամբ խօսեցաւ, յիշելով այդ օրերուն անցած դարձածը, եւ ըսաւ. «Այդ միջոցին դուք մեծ առիթ մը փախցուցիք. ես գիտեմ, որ ֆրանսական կառավարութիւնը տրամադիր էր ընդունելու Ամբողջական Հայաստանի հոգատարութիւնը, եթէ հայերը որոշապէս խնդրէին զայն Վեհաժողովին բացուելէն առաջ: Քէ տ'Օրսէի պաշտօնատարները կրնան աւելի կամ նուազ վերապահ լեզու մը բանեցնել, պէտք չէր անոնցմէ խրտչիլ, ես գիտէի մեր կառավարութեան բուն տրամադրութիւնները եւ ատոր

համար խնդրեցի, որ Ազգ. Պատուիրակութիւնը այդ խնդրանքը ընէ. բայց հայերը, ատեն մը ինծի հետ գործակցելէ յետոյ, յանկարծ զիս մէջտեղ ձգեցին»: Իսկ Պ. Մալքոլմ նոյնպէս ինծի պատմած էր հետեւեալը. անցեալ տարի, մեր Համագումարին բացումէն քիչ առաջ, տեսակցութիւն մը ունեցեր է Ֆրանսայի երեսփոխանական ժողովին Արտաքին Գործոց Յանձնաժողովին Նախագահ Պ. Ֆրանքլին-Պույեռնի հետ եւ խնդրեր է անկից հարցնել Յանձնաժողովին, թէ համաձա՞յն են, որ Ֆրանսա ստանձնէ Ամբողջական Հայաստանի հոգատարութիւնը: Քանի մը օր յետոյ Պ. Ֆրանքլին-Պույեռն յայտներ է Պ. Մալքոլմի, թէ այդ հարցը դրեր է Յանձնաժողովին առջեւ եւ թէ Յանձնաժողովը գրեթէ ամբողջութեամբ իր համամտութիւնը յայտներ է:

Պ. Ն. Տէր-Ստեփանեան. Ճի՞շդ է ասիկա, Պ. Նախագահ:

Նորատունկեան էֆենտի. Այո՛: Նոյնիսկ Պ. Մալքոլմին ալ ըսի, որ ես Պատուիրակութեան հետ յարաբերութեան մէջ չեմ, գացէ՛ք եւ այդ լուրը հաղորդեցէ՛ք Փաշային:

Պ. Ա. Չօպանեան. Պէտք էր, որ թէ՛ Նորատունկեան էֆենտի եւ թէ՛ Պ. Մալքոլմ Համագումարի առաջին նստաշրջանին այս հարցն իր ամբողջ լայնութեամբ դնէին Համագումարին առջեւ: Ճիշդ է, որ մինչեւ այն ատեն՝ ո՛չ միայն Պատուիրակութիւնը, այլ՝ ազգն ամբողջ դէք բռնած էին Ամերիկայի հոգատարութեան նկատմամբ եւ քիչ հաւանականութիւն կար, որ կարելի ըլլար այդ հոսանքին դէմ երթալ. բայց պէտք էր այդ փորձը ընել գոնէ պատմութեան համար:

Պ. Մ. Պապաջանեան. Իբր ռուսահայ՝ դժբախտաբար շատ քիչ ծանօթ եմ արեւմտահայոց վերաբերող հարցերու. միւս կողմէ, բացակայելու ստիպուած ըլլալով, չկրցայ սկիզբէն հետեւիլ վիճաբանութեան ենթարկուած խնդիրներուն, որով դժուար է ինծի կարծիք յայտնել անոնց մասին: Բայց չեմ կրնար ժողովիդ չյիշեցնել, թէ Հայաստան եւ երեք վիլայէթները որոնք անոր պիտի կցուին, մեծ վտանգի ենթակայ են: Այս վտանգը կու գայ մէկ կողմէ պլշեւիկերէն ու միւս կողմէ՝ Մուսթաֆա Քէմալէն: Մէկն ու միւսը հաւասարապէս սպառնալից են այս միջոցիս: Ծանօթ են Մուսթաֆա Քէմալի հետապնդած նպատակները: Անիկա չուզեր, որ նոյնիսկ թիզ մը հող տրուի Հայաստանի՝ հարեւան Թուրքիայէն: Իսկ պոլշեւիկերը մեծ իմպէրիալիսթներ են, կը ցանկան տարածուիլ ո՛չ միայն դէպի Անատոլու, այլ մինչեւ Պոլիս, ու միւս կողմէ ալ՝ մինչեւ Իսկեստէրուն: Այս պայմանները աչքի առջեւ ունենալուս համար մանաւանդ՝ ամբողջ սրտովս կը բաղձամ, որ հայերը ազատութեան ու անկախութեան տիրանան Կիլիկիոյ մէջ: Անկախ Կիլիկիա մը նոյնիսկ Երեւանի ազատութեան աղբիւր կրնայ դառնալ օր մը, եթէ երբեք պարագաները ջնջեն այսօրուան Հանրապետութիւնը: 1918 Նոյեմբերին՝ երբ անդին Հանրապետութիւնը կար, այսօրուան պէս մտահոգ էինք անոր տեւականութեան նկատմամբ: Այդ մտահոգութեան մէջ երբ լսեցինք, թէ այստեղ, Փարիզի մէջ, Ազգ. Պատուիրակութիւնը յայտարարեր է Հայաստանի անկախութիւնը, չափազանց ուրախացանք, եւ Դաշնակցականները մեզի հետ ու մեզի չափ ուրախացան, մտածելով, որ եթէ դուք այդ յայտարարութիւնը կ'ընէք, ձեզի համամիտ ունիք Անգլիան ու Ֆրանսան: Արեւելեան հայերս սովորաբար շատ տեղեակ չենք եւրոպական իրերուն, հետեւաբար պէտք չէ մեզ մեղադրել այս մտածման համար: Այսօր, ինչպէս այն ատեն, վտանգը նոյնն է Հանրապետութեան համար. հետեւաբար, ցանկալի պիտի ըլլար Կիլիկիոյ մէջ անկախ հայութեան մը գոյութիւնը, որպէսզի եթէ այս կողմի անկախութիւնը վրայ տայինք, Կիլիկիոյ կորիզին շնորհիւ օր մը կարենայինք վերստին ձեռք անցընել մեր կորսնցուցածը:

Պ. Պապաջանեան այս առթիւ ներկայացուց հետեւեալ առաջարկութիւնը.

«Նկատելով Կիլիկիոյ քաղաքական նոր պայմանները, Համագումարը անհրաժեշտ կը գտնէ հետապնդել Կիլիկիոյ մէջ ինքնավար, եւ եթէ կարելի է՝ անկախ Հայաստան ստեղծելու քաղաքականութիւնը՝ Ֆրանսայի հովանաւորութեան տակ»:

Մ. Պապաջանեան

Այս առաջարկութեան միացան նաեւ Պ. Պ. Ա. Չօպանեան եւ Ա. Թէրզիպաշեան:

Ի վերջոյ, կարգ մը բարեփոխութեանց ենթարկուելով, այս առաջարկութիւնը ստացաւ հետեւեալ վերջնական ձեւը.

«Նկատելով Կիլիկիոյ քաղաքական նոր պայմանները, Համագումարը անհրաժեշտ կը գտնէ հետապնդել Կիլիկիոյ եւ, հնարաւորութեան պարագային՝ շրջակայ հայ հողամասերու մէջ ինքնավար, եւ եթէ կարելի է՝ անկախ իշխանութիւն հաստատելու քաղաքականութիւնը՝ Ֆրասայի հովանաւորութեան տակ»:

Այս ձեւով քուէարկութեան դրուելով, առաջարկութիւնը, 12 պատգամաւորներու ներկայութեան, ընդունուեցաւ միաձայնութեամբ:

Պ. Պապաջանեան, նկատի առնելով, որ օրուան քաղաքական պահանջներուն բաղդատմամբ Պատուիրակութեան անդամներուն թիւը անբաւական է, առաջարկեց իրաւունք տալ Պատուիրակութեան Նախագահին, որ պէտք տեսած ատենը cooptation-ի դրութեամբ աւելցնէ Պատուիրակութեան անդամներուն թիւը:

Համագումարը որոշեց այս խնդիրը նկատողութեան առնել Պատուիրակութեան Նախագահ Պօղոս Նուպար Փաշայի ներկայութեան:

Կարդացուեցաւ Տիրէքթիւներու Սահմանման Յանձնաժողովին 9-րդ առաջարկութիւնը, որու մասին երեք կարծիք բերուած էին Յանձնաժողովին կողմէ: Նախորդ նիստին՝ Պ. Բարսեղեան ետ առած էր իր առաջարկութիւնը: Այս անգամ ալ Պ. Սինապեան, նկատելով, որ Պատուիրակութեան անդամ ընտրուած է, ետ առաւ իր առաջարկութիւնը, որով մնաց միայն Թէրզիպաշեան-Տէր-Ստեփանեան առաջարկութիւնը:

Համագումարը որոշեց անմիջապէս քուէի ենթարկել այս առաջարկութիւնը:

Պ. Մ. Տէրպէտէրեան. Ես հակառակ եմ այդ բանաձեւին ամբողջութեան, որովհետեւ այնտեղ կը շօշափուին երկու հարցեր: Առաջին՝ Հայաստաններու միութեան ակտ, եւ երկրորդ՝ Միացեալ նախարարութեան կազմութիւն, թրքահայերէ եւ ռուսահայերէ բաղկացած: Արդ, եթէ երկու Հայաստաններու միացման համար դիւանագիտական ակտ մը անհրաժեշտ է, ունինք երեք որոշ յայտարարութիւններ. առաջին՝ Նուպար Փաշայի 1918 Նոյեմբերի Յայտարարութիւնը. երկրորդ՝ Հայկական Պետութեան 1919 Մայիսի ակտը, եւ երրորդ՝ Թուրքիոյ ներկայացուած դաշնագրով Մեծ Տէրութեանց նուիրագործած ակտը, որով Հայկական Պետութեան սահմանները կ'ընդարձակուին Վանայ, Պիթլիսի, Կարնոյ եւ Տրապիզոնի նահանգներուն ամբողջութեամբ կամ մասերով: Իբր դիւանագիտական ակտեր՝ ասոնք բաւական են, թէեւ չեմ գիտեր, որ եթէ երբեւիցէ կազմակերպուած Ռուսաստան մը, ըլլայ պոլշեւիկ, ցարական կամ սահմանադրական, ուզէ գրաւել Հայաստանն ու Միջերկրական հասնիլ, որչա՞փ պիտի ազդուի այդ ակտերէն, եւ թէ անոնք որչա՞փ պիտի զօրեն կասեցնելու արշաւող քազաքներու յառաջացումը: Ներքնապէս՝ ես երբեք պէտք չեմ տեսներ միացման ոեւէ ակտի: Հայերու հատուածական բաժանումները բռնադատուած են իրենց կամքին հակառակ եւ անկախ պատճառներով: Հայութիւնը միշտ պահած է իր բարոյական միութիւնը: Երբեք հայութիւնը յայտարարած չէ, թէ կը բաժնուի իր այսինչ հատուածէն, որպէսզի այսօր ալ ստիպուի յայտարարել, թէ վերստին կը միանայ անոր: Գալով նախարարական կազմին մէջ տարբեր հատուածներու ներկայութեան, այդպիսի պահանջ մը թերեւս կարենար պաշտպաններ ունենալ, եթէ միութիւնը իրականանար դաշնագրին ստորագրութիւնէն առաջ: Բայց այսուհետեւ այլեւս արտառոց կը գտնեմ այդպիսի պահանջ մը: Իմ միակ պահանջս այն է, որ հայկական նախարարութիւնը կազմուի իրենց պաշտօնին բարձրութեան վրայ գտնուող հայ քաղաքացիներէ, ըլլան անոնք թրքահայ թէ հնդկահայ, պարսկահայ թէ ռումանահայ: Եթէ պատահի, որ Աւստրօ-հունգարական նախկին կայսրութեան նախարարապետ հայազգի Լուգաշը երկիր վերադառնայ եւ ուզէ նախարարութեան մէջ մտնել, միթէ՞ պիտի մերժենք, որովհետեւ Իգդիր, էրզրում կամ Երեւան չէ ծնած: Թերեւս յառաջիկայի եէզտի, թաթար կամ քիւրտ նախարարներ ալ պիտի ունենանք՝ ժամանակին պահանջմանց համաձայն: Ինչպէ՞ս կարելի է

պահանջել, որ անպատճառ նախարարներէն այսչափը թրքահայ ըլլան եւ այսչափ ռուսահայ:

12 պատգամաւորներու ներկայութեան քուէի դրուեցաւ Պ. Պ. Թէրզիպաշեանի եւ Տէր-Ստեփանեանի առաջարկութիւնը, բայց միայն 5 քուէ ստացած ըլլալուն, որոշուեցաւ այդ առաջարկութիւնը նոյնութեամբ, բայց ոչ իբր որոշում հաղորդել Պատուիրակութեան:

Կարդացուեցաւ Յունիս 26-ի նիստին մէջ Դուրեան Արքեպիսկոպոսի եւ Պ. Պ. Սինապեանի, Հանըմեանի, Բարսեղեանի, Դաւիթ-Բէկի, Պզտիկեանի ու Տէրպէտէրեանի ստորագրութեամբ ներկայացուած բանաձեւը:

Համագումարը որոշեց քուէի ենթարկել զայն:

12 պատգամաւորներու ներկայութեան քուէի դրուելով, բանաձեւը 9-ի դէմ 3 քուէ ստանալով՝ մերժուեցաւ:

Նիստը փակուեցաւ ժամը 6 1/2-ին:

ՀԱԱ, ֆ. -430, ց. 1, գ. 67, թթ. 64-81: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ Լ

9 Յուլիս 1920, ժամը 4-ին
նախագահութեամբ Գաբրիէլ էֆ. Նորատունկեանի:

Ներկայ էին 10 պատգամաւոր՝

Եղիշէ Արքեպ. Դուրեան, Պ. Պ. Դաւիթ-Բէկ, Ա. Թէրզիպաշեան, Վ. Թէքէեան, Գ.Նորատունկեան, Ռ. Որբերեան, Ա. Չօպանեան, Գ. Սինապեան, Մ. Տէրպէտերեան, Ն.Տէր-Ստեփանեան:

Օրակարգ

1. Վերակազմութիւն Ազգ. Պատուիրակութեան:
2. Հարցում Պ. Վահան Թէքէեանի՝ Ամերիկայի մէջ հոգատարութեան խնդրին նկատմամբ եղած յայտարարութեան մասին

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Ընթերցում ատենագրութեան

Կարդացուեցաւ եւ վաւերացուեցաւ Յուլիս 5-ի նիստին ատենագրութիւնը:

Օրակարգ

1. Վերակազմութիւն Ազգ. Պատուիրակութեան

Կարդացուեցաւ Պ. Ն. Տէր-Ստեփանեանի հետեւեալ առաջարկութիւնը Կիլիկիոյ Բժշկական Առաքելութեան մասին.

«Համագումարը, նկատելով որ Կիլիկիոյ Բժշկական Առաքելութիւնը կազմելու եւ վարելու համար Ազգ. Պատուիրակութեան կողմէ նշանակուած յանձնախումբը անկարող եղած է գործը դնելու կանոնաւոր հիման վրայ, կ'որոշէ, որ այդ Առաքելութեան ղեկավարութիւնն ու վարչութիւնը ամբողջովին եւ անմիջապէս յանձնուին Պատրիարքարանին:

Ն. Տէր-Ստեփանեան

ախումբի տեղեկագրին ընթերցման միջոցին հարցում ըրի, թէ Կիլիկիոյ Բժշկական Առաքելութեան անդամները կը շարունակե՞ն իրենց պաշտօնը:

Պատասխանուեցաւ, թէ կը շարունակեն: Բայց անկէ ի վեր նոր տեղեկութիւններ հասան, եւ այսօր զարմացմամբ կը լսենք, որ անոնք մեծ մասամբ մեկներ են Կիլիկիայէն: Տոքթ. Տամլամանեան, որ Առաքելութեան կարողագոյն անդամը կը նկատուէր, հոն չէ. ուրիշներ Եւրոպա դարձած են: Ղրկուած հիւանդապահուհիներու կարողագոյններն ալ մեկներ են նոյնպէս:

Նորատունկեան էֆենտի. Ես ալ տեսայ անոնցմէ երկուքը, որոնք կարծեմ Սիլեան ընտանիքին կը պատկանին, երկուքն ալ շատ լաւ բաներ չըսին Առաքելութեան արդի վիճակին մասին:

Պ. Վ. Թէքէեան. Եւ Տոքթ. Ղազարոսեանի վկայութեան համաձայն, այդ երկուքը լաւագոյններն էին: Յետոյ Տիկին Հանըմեանն ալ, որ իբր հիւանդապահուհի գացած էր, մեկներ է եւ Իզմիր կը գտնուի այսօր:

Պ. Ա. Չօպանեան. Պատուիրակութիւնն ընդհանրապէս անտեղեակ մնաց Կիլիկիոյ Բժշկական Առաքելութեան գործունէութենէն, որովհետեւ ո՛չ միայն Առաքելութիւնը, այլ նաեւ Պ. Տամատեան ալ բան մը չէին գրեր, հակառակ անոր, որ շարունակ տեղեկութիւն կը խնդրուէր իրենցմէ: Իսկ այստեղ՝ Բժշկական Յանձնախումբը միշտ լաւ վկայութիւն կու տար Առաքելութեան անդամներու մասին, եւ տեղեկութիւն չհասնիլը կը բացատրէր՝ ըսելով, որ ղրկուած նամակները կրնան կորսուած ըլլալ: Ես եթէ պահանջեցի, որ Բժշկական Առաքելութեան գործը փոխանցուի Պոլսոյ Պատրիարքարանին, երկու պատճառ ունէի: Նախ սա՝ թէ Պատրիարքարանը Կիլիկիոյ հետ աւելի մերձաւոր ու շարունակական յարաբերութիւններ ունէր, հետեւաբար կրնար լաւագոյն կերպով մը հաղորդակցութեան մէջ մնալ Առաքելութեան հետ, քան մենք այստեղէն: Երկրորդ պատճառն էր Ազգ. Պատուիրակութեան դրամական կացութիւնը: Պատուիրակութիւնը՝ քանի մը ամիս առաջ նոյնիսկ այս շէնքը պիտի գոցէր, այնքան անձուկ էր պիւտճէն: Կիլիկիա մարդ ղրկելու պէտք տեսնուեցաւ. Պ. Գուրգէն Թահմազեանը համոզեցինք, պատճառ եղանք, որ պաշտօնը թողու, բայց ճիշդ այն պահուն, որ պիտի մեկնէր՝ չկրցանք քանի մը հազար ֆրանք գտնել զինքը ղրկելու համար:

Նորատունկեան էֆենտի. Ինչ որ անգամ մըն ալ կ'ապացուցէ, թէ մեթոտը պակսեր է:

Պ. Ա. Չօպանեան. Կը մաղթեմ, որ այս Համագումարէն բղխած նոր Պատուիրակութիւնը աւելի մեթոտ ունենար:

Նորատունկեան էֆենտի. Ես անձի ակնարկութիւն չըրի, այլ հաստատեցի իրողութիւն մը, որուն առաջին ապացոյցը ձեր խօսքերն էին:

Ամեն. Դուրեան Արքեպ. Կիլիկիոյ Բժշկական Առաքելութեան համար անհրաժեշտ ամսականը՝ 25-30 հազար ֆրանք, պատրաստ գումարէ՞ մը կը տրուէր:

Պ. Ա. Չօպանեան. Ո'չ, պատրաստ դրամ չկար այդ նպատակով, հանգանակութիւններէ գոյացած դրամէն կը տրուէր: Այդ հանգանակութիւնները ժամանակէ ի վեր դադրած են գրեթէ, եւ ասոր մեծագոյն պատճառն եղաւ Զօրավար Անդրանիկ, որ Ամերիկա գնաց, բայց ըրած հանգանակութիւնը ինքն իր գլխուն տնտեսելու կը յամառի, առանց Պատուիրակութեան բան մը իմացնելու: Մանչեսթր եւ ուրիշ գաղութներ ալ զատ-զատ նպատակներու յատկացուցին իրենց նուէրները, որով Պատուիրակութեան աղբիւրները գոցուեցան: Բժշկական Առաքելութեան ծախքերը մասամբ առնուած են պատրաստ գումարներէ, մաս մըն ալ Պատուիրակութեան Նախագահը եւ իր քոյրը, ինչպէս նաեւ տիկին Էգնայեան նուիրեցին: Իսկ վերջին ատենները՝ երբ անձկութիւնը մեծ էր, գրեցինք Անդրանիկի, որ մաս մը դրամ Կիլիկիա ղրկէ Ատանայի հիւանդանոցին համար, ու որչափ որ գիտեմ, պզտիկ գումար մը ղրկեց:

Ամեն. Դուրեան Արքեպ. Կարծեմ շատ յարմար չէ այս գործը Պատրիարքարանին յանձնելը: Պատրիարքարանը չի կրնար որբերուն դրամ հասցնել: Ինչ որ կը հանգանակուի այդ անունով՝ անբաւական է ընդհանուր պէտքը հոգալու, մէկ

մըն ալ Ատանայի հիւանդանոցի հոգը բեռցնել իր վրայ՝ չեմ գիտէր, թէ որքան խելացութիւն կրնայ ըլլալ:[1]

Պ. Ա. Չօպանեան. Պատրիարքարանը կրնայ Զօրավար Անդրանիկի դիմել եւ պահանջել, որ իր կատարած հանգանակութենէն մաս մը տայ Ատանայի հիւանդանոցին համար:

Ամեն. Դուրեան Արքեպ. Այդ տեսակ յարաբերութիւններ դժուար է ընել:

Պ. Ն. Տէր-Ստեփանեան. Եթէ Պատուիրակութիւնը միլիոններ ալ ունենար իր տրամադրութեան տակ, ես դարձեալ պիտի պահանջէի, որ այս գործը առնուեր իրմէ եւ տրուեր ուրիշ մարմնի մը: Մինչեւ այսօր կատարեալ անիշխանութիւն մը տիրեր է թէ' այստեղ՝ Բժշկական Յանձնախումբին, եւ թէ՛ Կիլիկիա՝ Առաքելութեան մէջ: Եթէ մէկուն ու միւսին գործունէութիւնը աչքի առջեւ բերենք, պիտի տեսնենք, որ եղածը կատարեալ խայտառակութիւն մըն է:

Պ. Վ. Թէքէեան. Եւ արդէն՝ Կիլիկիոյ մէջ Առաքելութեան անդամները իրարու գլուխ պատռեր են եւ տեղի տուեր են այն տեսակ ամօթալի դէպքերու, զորս դժուար է պատմել:

Պ. Ն. Տէր-Ստեփանեան. Իսկ այստեղ՝ Տոքթ. Նեւրուզ մինակը վարեր է Յանձնախումբը, բռներ առանց վկայականի մարդիկ ղրկեր է հոն, ինչպէս կ'ըսուի, կարգադրութիւններ ըներ է միշտ մինակը, եւ Պատուիրակութեան ըսեր է, թէ Յանձնախումբը որոշեց, Յանձնախումբը ղրկեց: Այս անիշխանութեան պէտք է վերջ տալ, որովհետեւ այլեւս ամօթ մըն է անոր շարունակուիլը: Մանաւանդ, որ Տոքթ. Նեւրուզը դուք հլուօրէն, առանց համոզումի, Պատուիրակութեան անդամ ընտրեցիք, երբ Պ. Չօպանեանի եւ Պ. Թէքէեանի պէս անձնաւորութիւններ դուրս կը ձգէիք, հպատակելով Պ. Ահարոնեանի ճնշումին: Պատրիարքարանը իր դրամէն չպիտի հոգայ Առաքելութիւնը, Ամերիկայի հանգանակութիւններէն կարելի է հայթայթել անհրաժեշտ գումարը: Ամեն պարագայի մէջ՝ լաւագոյն է, որ Պատրիարքարանը ստանձնէ այդ գործին քոնքրոլը:

Պ. Ռ. Որբերեան. Բայց ատիկա մէկ փոսէն հանել եւ միւս փոսը ձգել պիտի նշանակէ, որովհետեւ Պատրիարքարանն ալ տիպար հաստատութիւն մը չէ այդ տեսակէտով: Դեռ անցեալներս Իզմիրէն 2000 ոսկի ղրկուած էր Պատրիարքարան որպէսզի Խարբերդ հասցնեն, բայց դրամը չհասաւ. ո՛չ միայն չհասաւ, այլ նոյնիսկ հետքն ալ չգտնուեցաւ Պատրիարքարանին մէջ:

Պ. Ա. Չօպանեան. Հոս ալ դրամ չկայ, շատ հաւանական է, որ մինչեւ ամիս մը Պատուիրակութիւնը նոյնպէս չկարենայ վճարել Առաքելութեան ծախքերը:

Պ. Վ. Թէքէեան. Եթէ Ամերիկա կատարուած հանգանակութենէն Կիլիկիոյ հիւանդանոցին համար մաս մը ղրկուի, ամերիկացիք իրենց կողմէ պիտի կրկնապատկեն ղրկուած գումարը, ինչպէս կ'ըսեն արդէն, որով ծախքը իրենք վճարած պիտի ըլլան:

Պ. Գ. Սինապեան. Բայց եթէ Պատուիրակութիւնը չընդունի՝ ի՞նչ պիտի ընէք:

Պ. Ն. Տէր-Ստեփանեան. Այդ պարագային կա՛մ Պատուիրակութիւնը «լիքիտէ» կ'ընէ գործը եւ կա՛մ զայն կը յանձնէ Կիլիկիոյ տեղական մարմիններուն:

Պ. Մ. Տէրպէտէրեան. Ես համամիտ չեմ Պ. Տէր-Ստեփանեանի առաջարկութեան առաջին մասին: Եթէ այդ մասը փոխուի, սիրով կը քուէարկեմ: Որովհետեւ այստեղ Բժշկական Յանձնախումբին նկատմամբ այնքան ծանր ամբաստանութիւններ չեն եղած, որպէսզի կարելի ըլլայ արդարացնել այդ տեսակ բանաձեւ մը: Մնաց որ, Տոքթ. Նեւրուզ ալ այստեղ չէ, որպէսզի կարենար ինքզինքը արդարացնել:

[1] Ճիշդ և ճիշդ ըսաւ. «Երբ Պատուիրակութիւնը չի կրնար՝ Պատրիարքարանը ինչպէ՞ս պիտի կրնայ խօսք հասկցնել Զօրավարին»: Վերջէն սրբագրեց՝ վերի ձևով:

Պ. Ն. Տէր-Ստեփանեան. Տոքթ. Նեւրուզ երբեք չուզեց, որ ճշմարտութիւնը յայտնուի այս խնդրին նկատմամբ: Ինք ամեն ճիգ թափեց, որ Տոքթ. Ղազարոսեան չգայ անձամբ բացատրութիւն տալու Համագումարին առջեւ: Գալով իր բացակայութեան, Տոքթ. Նեւրուզ, Պատուիրակութեան անդամ ըլլալով հանդերձ, միշտ արհամարհեց այս Համագումարը, դուրսն ալ յայտարարելով, որ իր արժանապատուութիւնը չի ներեր իրեն՝ անոր մասնակցիլ: Եւ արդէն, ինչպէս գիտէք, իր ներկայութեան խօսելու պատիւը չէինք կրնար ունենալ, քանի որ կանոնաւոր կերպով միշտ բացակայած է Համագումարէն, այն օրէն երբ Բժշկական Յանձնախումբին գործին նկատմամբ Համագումարը բարենիշներ տալու բոլորովին հակառակ տրամադրութիւն մը ցոյց տուաւ:

Պ. Ն. Տէր-Ստեփանեանի առաջարկութիւնը, կարգ մը բարեփոխութեանց ենթարկուելով, ստացաւ հետեւեալ վերջնական ձեւը.

«Համագումարը Կիլիկիոյ Բժշկական Առաքելութեան մասին կ'որոշէ, որ այդ Առաքելութեան ղեկավարութիւնն ու վարչութիւնը ամբողջովին եւ անմիջապէս յանձնուին Պատրիարքարանին, որպէսզի կա՛մ ինք ղեկավարէ եւ կա՛մ իր հսկողութեամբ յանձնէ Կիլիկիոյ ազգ. պատասխանատու մարմիններուն»:

Այս ձեւով՝ առաջարկութիւնը քուէի դրուեցաւ 10 պատգամաւորներու ներկայութեան եւ ընդունուեցաւ միաձայնութեամբ:

Կարդացուեցաւ Պ. Աւետիս Թէրզիպաշեանի հետեւեալ առաջարկութիւնը.

«Հայ Ազգային Համագումարին.

Տիար Նախագահ,

Որպէս ներկայացուցիչ Կովկասի մէջ ապաստանած թրքահայութեան, ես ինծի պարտք կը համարեմ Արեւմտահայ Համագումարին ներկայացնելու իմ ներկայացուցած ժողովուրդիս օրհասական վիճակը:

Թրքահայ փախստականութիւնը 1914 եւ 1915-ի նահանջներէն վերջ, իր սեփական տնտեսութենէն զրկուելէն յետոյ, 1916 թուականին անոր երկրագործ մասը՝ թուով 120 000, չորս բարեգործական հաստատութեանց, այսինքն Հայաստանի Վերաշինութեան Յանձնաժողովի, Կովկասի Հայ Բարեգործական Ընկերութեան, Համառուսական Քաղաքներու Միութեան եւ Հայ Գիւղատնտեսական Ընկերութեան նախաձեռնութեանց շնորհիւ, ռուս կառավարութեան յատկացուցած վարկերով, հնարաւորութիւն գտած էր ունենալ իր սեփական լծկանը, երկրագործական գործիքը եւ սերմնցուն: 1917 թուականին փախստականներու այդ մասը ո՛չ միայն իր սեփական աշխատութեամբ ապրուստը ապահոված էր, այլ նաեւ պարենաւորման գործին մեծ ծառայութիւն մը կը մատուցանէր, իր սպասելիքէն աւելին արտադրելով: 1918-ի գարնան նահանջը անգամ մը եւս խլեց փախստականութեան ձեռքէն իր տնտեսութեան սեփական միջոցները, եւ անկէ վերջ այլեւս փորձ չեղաւ փախստականներու տնտեսութիւնը միեւնոյն եղանակաւ ապահովելու: Եղած օգնութիւնները կատարուեցան ողորմութեան ձեւով եւ խիստ անբաւական քանակութեամբ, որով արդէն հալումաշ եղած փախստականութիւնը, իր ենթարկուած հոգեկան թշուառութեան եւ ֆիզիկական զրկանքներուն չկրնալով դիմանալ, այս վերջին երեսուն ամիսներուն ընթացքին կորսնցուց, առանց չափազանցութեան, իր թիւին գրեթէ 100-ին 40-ը: Ու եթէ արագ դարման մը չտրուի, թրքահայ փախստականութիւնը՝ այն անհամեմատ տուրքով, զոր կը վճարէ ամեն տարի մահացութեան, դատապարտուած է բնաջնջուելու: Երկու-երեք տարի ալ, եւ ահա ոչ եւս է թրքահայ գիւղացիութիւնը:

Ես կը կարծեմ, որ թրքահայ դատը, այս րոպէին, բնաջնջուելու վտանգի առջեւ գտնուած հայ գիւղացիութեան փրկութիւնն է, եւ այդ փրկութիւնը՝ անոր իր սեփական աշխատութեամբ ապրուստը հայթայթելու հնարաւորութիւն տալուն մէջ կը կայանայ: Եթէ ռուս կառավարութեան օգնութեամբ 1916-ին հնար եղաւ այդ դժբախտ

ժողովուրդին տնտեսութեան միջոցները հայթայթել, Ամերիկա, Անգլիա, Ֆրանսա չպիտի մերժեն անշուշտ նմանօրինակ օգնութիւն մը, որ մէկ երկու միլիոն անգլիական ոսկիի մէջ կը կայանայ: Նախաձեռնութիւնն է, որ կը պակսի: Այս օգնութիւնը վաղուան վերաշինութեան առթիւ արդէն պիտի ըլլայ, բայց վաղը որ բաւական անստոյգ է, ուշ է:

Այս համառօտ տեղեկութեամբ պատկերացնելով թրքահայ գիւղացիութեան դրութիւնը, ես կ'առաջարկեմ քննութեան ենթարկել այս հարցը, ինչպէս նաեւ այն մտքերը, զորս ես համառօտակի պարզեցի, եւ որոնց մէջ ցոյց տրուած գումարը հիմնուած է մասնաւոր նախահաշուի մը վրայ: Անհրաժեշտ է արագ դարման մը խորհիլ կորսուելու դատապարտուած թրքահայ գիւղացիութեան մասին, որուն գոյութիւնը, ինչպէս ըսի ու կը կրկնեմ, այս րոպէին թրքահայ դատն իսկ է»:

Անդամ Համագումարի
Ա. Թէրզիպաշեան
1920, Յունիս 20.

Պ. Ա. Թէրզիպաշեան. Կ'ուզեմ քանի մը խօսք աւելցնել այս գրաւոր յայտարարութեան: Մեր մէջ չկայ մէկը, որ տարակարծիք ըլլայ, թէ Թրքահայաստանի հարցին վերջնական կարգադրութիւնը կապուած կը մնայ Ամերիկայի նախագահական ընտրութեան հետ, իսկ գործադրութիւնը առաւել քան երբեք անորոշ է, տրուած ըլլալով, որ հոգատար պետութիւն մը ունենալու հաւանականութիւնը օր ըստ օրէ կը նուազի եւ պոլշեւիզմի խուժումը դէպի Հայաստանի սահմանները, քառասային վիճակ մը ստեղծած է Կովկասի մէջ: Այդ իսկ պատճառներով, մենք պէտք է աչքի առաջ ունենանք, որ թրքահայ փախստականները նուազագոյն հաշուով երկու տարիէն առաջ չեն կրնար մտնել Թրքահայաստան: Այս պայմաններուն մէջ՝ հարկ է այժմէն խորհիլ այդ փախստականներու գիւղացի դասակարգը հանրակացարանի վիճակէն հանելու միջոցներուն վրայ: Պէտք է վարելահող, երկրագործութեան անհրաժեշտ լծկան ու գործիք, ինչպէս նաեւ սերմնացու հայթայթել անոնց որպէսզի իրենց սեփական տնտեսութեամբ ապրելու հնարաւորութիւն ունենան: Մենք հետզհետէ պիտի իմանանք, թէ ինչքան կարիք ունինք դրամի եւ թէ ինչքան սխալած ենք կարծելով, որ առանց մեր հատուցման իրաւունքը ստանալու՝ կրնանք Հայաստանը վերականգնել: Ես չեմ ուզեր կրկնել այս մասին ըրած նախկին նկատողութիւններս: Ես կը կրկնեմ միայն, որ Կովկասի փախստականները չեն կրնար ապրիլ իրենց ներկայ մուրացկանի վիճակով, այս դրութիւնը թէ՛ ֆիզիկապէս եւ թէ՛ հոգեպէս կը մաշեցնէ զիրենք: Պէտք է վերականգնել գիւղացիին սեփական տնտեսութիւնը, այդ մէկ հատիկ միջոցով է, որ կարելի պիտի ըլլայ դարմանել մէկ կողմէն պարենաւորման ճգնաժամը եւ միւս կողմէ՝ թրքահայ գիւղացիութեան օրհասական վիճակը: Մէկ միլիոն անգլիական ոսկիի կը կարօտի այս գործը, եւ ասիկա ձեռք չբերուելիք գումար մը չէ: Լոնտոնի մէջ 10 միլիոնի փոխատուութեան խօսքեր եղած են: Տրամադրութիւնը չէ, որ կը պակսի: Պէտք է նախաձեռնութիւնը վերցնել եւ արագ կերպով օգնութեան հասնիլ, եթէ կ'ուզենք, որ ներգաղթի օրը Հայաստան տանելիք թրքահայ ժողովուրդ ունենանք: Որպէսզի Համագումարին յայտնի ըլլայ, թէ Հայ Հանրապետութեան կառավարութիւնը որ մինչեւ օրս կը մերժէ «քոալիսիոն» կառավարութիւն կազմելու առաջարկները, ի՞նչ տնտեսական քաղաքականութեամբ է, որ կը վարէ երկիրը, մէջ կը բերեմ օրինակ մը: Երկու տարի առաջ՝ կառավարութիւնը՝ կարծելով, թէ բամպակի մթերքը առեւտրական դասակարգին ձեռքը կը գտնուի, այդ դասակարգին ստացուածքով պետութեան եկամուտ մը ապահովելու համար բամպակի պետական մենաշնորհի օրէնք մը հրատարակեց եւ իւրաքանչիւր փուտին /=16 քիլօ/ 49½ ռուպլի գին նշանակելով՝ բամպակի մթերքը «ռէքիզիսիոն»-ի ենթարկեց. բանէն դուրս եկաւ, որ բամպակի մթերքին 10%-ը միայն առեւտրականներու ձեռքն էր, իսկ մնացեալ 90-ը՝ արդիւնաբերող գիւղացի դասակարգին ձեռքը կը գտնուէր: Արդ, օրէնքին հրատարակութենէն ետք՝ ռուպլիին գինը հետզհետէ անկում կրելով այն աստիճանին

հասաւ, որ 49½ ռուպլին գրեթէ հաւասար էր մէկ փուտ բամպակ փոխադրելու եւ կառավարութեան յանձնելու ծախքերուն. նաեւ՝ աւելի աժան, քան կենդանիներու կերը, քան նոյնիսկ վառելիքը. այնպէս որ՝ գիւղացիք նախընտրեցին կենդանիներու կերցնել կամ վառել, քան տանիլ ծախել առանց փոխարինութեան. այդպիսով, գոնէ յոգնութիւնը կը խնայէին: Ահա այսպէս՝ կառավարութիւնը շատ քիչ քանակութիւն մը միայն կրցաւ ձեռք անցընել այդ թանկագին ապրանքէն, որուն փուտը Պաթումի մէջ կ'արժէր 5000 ռուպլի: Բայց դեռ ամբողջ վնասը այս չէ: Գիւղացին, տեսնելով այդ ամենը, այլեւս չցանեց յաջորդ տարին, այնպէս որ՝ 600 000 փուտ բամպակ արտադրող Արարատեան դաշտը 1919-ին 600 փուտ բամպակ միայն արտադրեց: Այս տխուր համեմատութեան թիւերը քաղած եմ նոյն ինքն կառավարութեան օրկանը եղող «Յառաջ» թերթի մէկ խմբագրականէն: Չեմ գիտեր, թէ որքան ժամանակ պէտք է գիւղացիին վստահութիւն ներշնչելու համար, որ իր արդար վաստակը այդքան անարդար օրէնքի մը քմահաճոյքին չպիտի ենթարկուի այլեւս: Ահա թէ ի՞նչ արժեց Հայ Հանրապետութեան կառավարութեան այս ընկերային-տնտեսական փորձարկութիւնը միանգամայն թէ՛ ժողովուրդին եւ թէ՛ կառավարութեան: Նոյնքան վնասակար բան մը եղաւ հողային հարցին նկատմամբ բռնուած ուղղութիւնը: Ներկայ պայմաններուն մէջ՝ հայ Պետութեան միակ հարստութիւնը Թրքահայաստանի այն ընդարձակ հողերն են, որոնք, դժբախտաբար, մնացած են առանց հերկողի: Աւելորդ է ըսել, թէ սեփականատիրութեան տենչով մինչեւ հեռաւոր Քալիֆորնիա գացող հայը Հայաստան կու գայ նորէն սեփականատէր ըլլալու, իրեն յատուկ հողն ու ագարակը ունենալու տենչով: Այդ տենչանքը մէկ կողմէն առիթ կրնայ դառնալ, որ հայութիւնը Հայաստանի մէջ համախմբուի, եւ միւս կողմէն ալ պետութեան կրնայ ապահովել հասոյթի եւ հարստութեան աղբիւր մը: Դժբախտաբար, ներկայ կառավարութիւնը, առաջնորդուած կուսակցական շահերէ, հողերու համայնացման սկզբունքը նուիրագործած է, եւ այդպէսով պետութիւնը զրկուած է այդ ընդարձակ հողերու հարստութիւնը շահագործելու պատեհութենէն, միւս կողմէ՝ այդ դրութիւնը մտքի շփոթութիւն ու վարանում պատճառած է անոնց, որոնք Հայաստան մտնելու, հողատէր դառնալու, աշխատելու եւ արդիւնաբերելու մտադրութիւն ունէին:

Նորատունկեան էֆենտի. Հայկական պետութեան արդի դժուարութեանց մէջ մեծագոյններէն մէկն ալ ելեւմտական անձկութիւնն է: Հանրապետութիւնը այսօր տարեկան մէկ միլիոն անգլիական ոսկիի ծախք մը ունի. ասոր փոխարէն՝ հասոյթները շատ աննշան են, կ'ենթադրեմ, թէ հազիւ տարին 100 000 ոսկիի կը հասնին: Կառավարութիւնը, այս խոշոր բացը գոցելու համար, թղթադրամ շրջաբերութեան հանելէ զատ ուրիշ միջոց չէ ունեցած մինչեւ այսօր. եւ թղթադրամն ալ դժբախտաբար շատ ինկած է արժէքով:

Պ. Մ. Տէրպէտերեան. 50 ռուպլիանոց թուղթ մը 25 սանթիմ կ'արժէ, այսինքն՝ աւելի քիչ, քան թուղթին տպագրական ծախքը:

Նորատունկեան էֆենտի. Միւս կողմէ՝ պետութիւնը մեծ ծախքեր ունի, որոնց մէջ գլխաւոր տեղը կը բռնեն բանակին համար ըլլալիքները: Գրաւեալ եւ գրաւուելիք հողամասերու մէջ վնասակար տարրեր կան, որոնք զբաղմունք պիտի պատճառեն եւ դժուարութիւններ պիտի յարուցանեն խաղաղութեան եւ ապահովութեան հաստատման համար: Սահմանները նոյնպէս պահպանուելու պէտք ունին, որովհետեւ երկիրը շրջապատուած է թշնամի տարրերով: Անշուշտ ներքին ապահովութեան համար ալ ոյժ պէտք է: Անհրաժեշտ պէտք կայ, ուրեմն, քիչ-շատ զօրեղ բանակի մը, որ տակաւին գոյութիւն չունի: Հանրապետութեան բանակը այսօր մօտաւորապէս 15-20 000 զօրք ունի: Ասիկա անբաւական է: Տէրութեանց կողմէ խոստում եղած է ռազմամթերք եւայլն տալու, որպէսզի հայկական պետութիւնը կարենայ 30 կամ 40 հազար հոգիանոց կատարեալ բանակ մը կազմել: Բայց ասիկա, առանց նիւթական միջոցներու, անկարելի է: Եւ պետութեան արդի ելեւմտական վիճակը կարելի չի դարձներ այդ տեսակ զինուորական ոյժի մը գոյացումը: Այսպէս ուրեմն՝ դրամական

մեծ վիհ մը կայ, որ սակայն կրնայ լեցուիլ, եթէ ազգը ամբողջ ձեռք-ձեռքի տայ եւ նոյն անձնուիրութեամբ ու գուրգուրանքով բոլորուի մեր նորակազմ պետութեան շուրջը: Այս տեսակէտով հաւասարապէս պարտք կը ծանրանայ թէ՛ պետութեան եւ թէ՛ ժողովուրդին վրայ: Ժողովուրդը կրնայ բարձր բռնել տալ պետութեան հանած թղթադրամը, բայց ասոր համար պէտք է վստահ ըլլայ, թէ ազգին բարգաւաճման արգելք եղող օրէնքներ չպիտի հրատարակուին, ինչպէս, օրինակի համար, եղեր է բամպակի վաճառման համար: Յետոյ, կառավարութեան ընծայելիք մեծագոյն երաշխաւորութիւնը երկրին հողային հարստութիւնն է: Այդ տեսակէտով ա՛լ աւելի ապահովութիւն ներշնչող, հողերու արդիւնաբերութիւնը չարգիլող, ընդհակառակը՝ անոնց շահագործումը դիւրացնող օրէնքներ պէտք են: Ազգը քանի՛ հարուստ ըլլայ, այնքան կը դիւրանայ նաեւ պետութեան ելեւմուտքին հաւասարակշռութիւնը: Հետեւաբար, պետութեան առաջին պարտականութիւնը պէտք է ըլլայ ազգին հարստացումը դիւրացնող օրէնքներու հաստատումը: Բնականաբար, այս ամէնէն վեր է միաբանութեան, համերաշխութեան եւ գործունեայ աշխատութեան պահանջը: Ասիկա չեղաւ մինչեւ այսօր, եւ եթէ իրերու խորը փնտռենք, մեր ձախորդութեանց մեծագոյն պատճառը աս է: Պէտք է դարման գտնել ասոր, եւ այս դարմանը՝ ըստ իս՝ ամէնէն աւելի պիտի կրնայ գալ օժանդակ պետութեան մը սահմանումէն: Մենք մեզի մնալով՝ չպիտի կրնանք մեծ ու որոշ բան մը ընել այդ տեսակէտով, կամ չպիտի կրնանք ընել այնքա՛ն, որքան պիտի կրնար օժանդակ պետութիւնը իրականացնել իր երկար փորձառութեամբ, էն առաջ իր դրամական վարկովը մեզի օգնելով եւ մասնագէտներու միջոցաւ դիւրացնելով պետութեան արագ եւ կատարելագոյն ձեւով վերակազմութիւնը: Յետոյ անիկա տեսակ մը առանցք պիտի ըլլար, որ իր շուրջը պիտի համախմբէր ազգին զանազան ոյժերը, կարծիքները, հատուածները, եւ բոլորը մէկ պիտի կրնար գործածել նոյն միակ նպատակին համար, այսինքն՝ պետութեան բարգաւաճման ու զօրացման համար: Բախտաւոր պիտի ըլլանք իրապէս, եթէ կարենանք այս տեսակ օժանդակ պետութիւն մը գտնել: Մենք մեր գլխուն մնալով, ինչպէս ըսի, երկար ժամանակի պէտք պիտի ունենանք իտէալ վիճակ մը ապահովելու համար մեր պետութեան:

Պատգամաւորներէ ոմանք առաջարկեցին Դիւանին՝ Համագումարի յառաջիկայ նիստին հրաւիրել Հայաստանի նախկին վարչապետ Պ. Խատիսեանը, որ օր մը ետք Փարիզ պիտի հասնէր, եւ որ պիտի կրնար տեղեկութիւններ տալ Հանրապետութեան իրական կացութեան նկատմամբ:

Նախագահ Նորատունկեան էֆենտի խոստացաւ այս մասին պէտք եղածը ընել անձամբ:

Կարդացուեցաւ հետեւեալ բանաձեւը, զոր Պ. Արշակ Չօպանեան խմբագրած էր Պ. Թէրզիպաշեանի առաջարկութեան մասին.

«Նկատի ունենալով Հայ Հանրապետութեան մէջ տիրող տնտեսական ահաւոր տագնապը, որուն հետեւանքով մասնաւորաբար արեւմտահայ փախստականութիւնը բնաջինջ ըլլալու վտանգին մէջ է, Համագումարը պարտք կը դնէ Պատուիրակութեան վրայ, իսկոյն ամէնակորովի դիմում մը ընել ամերիկեան կառավարութեան եւ ժողովուրդին, խնդրելով նիւթական շուտափոյթ եւ կարեւոր նպաստ, կամ այս նպատակով ազգային հանգանակութիւն բանալով, որպէսզի, սպասելով որ ծննդավայր վերադարձի որպէն հասնի, արեւմտահայ գիւղացիութեան եւ փախստականութեան համար սեփական տնտեսութիւն ապահովուի: Նոյն ատեն, Համագումարը կը յանձնարարէ Պատուիրակութեան՝ ամեն ջանք ընել նպաստելու համար Հանրապետութեան մէջ արեւելահայ բոլոր կուսակցութիւններէն ներկայացուցիչ ունենայ նաեւ արեւմտահայ փախստականութիւնը»:

Ա. Չօպանեան

Պ. Թէրզիպաշեան համամիտ չգտնուեցաւ Պ. Չօպանեանի երկու առաջարկութեանց միացման. ըսաւ որ պէտք է սեփական տնտեսութեան միջոց ընծայել արեւմտահայ գիւղացիութեան եւ փախստականներուն, եւ ո՛չ թէ նպաստ, որպէսզի միանգամընդմիշտ ապահովուի անոնց գոյութիւնը, եւ առաջարկեց որ Համագումարը mandat imperatif տայ Ազգ. Պատուիրակութեան՝ այդ մասին անհրաժեշտ մէկ միլիոն անգլիական ոսկին ճարելու համար:

Ի վերջոյ՝ Պ. Չօպանեանի առաջարկութեանց առաջին մասը, կարգ մը բարեփոխութեանց ենթարկուելով, ստացաւ հետեւեալ վերջնական ձեւը.

«Նկատի ունենալով Հայ Հանրապետութեան մէջ տիրող տնտեսական ահաւոր տագնապը, որուն հետեւանքով մասնաւորապէս արեւմտահայ փախստականութիւնը բնաջինջ ըլլալու վտանգին մէջ է, Համագումարը պարտք կը դնէ Պատուիրակութեան վրայ, որ աջակցութեամբ Հանրապետութեան Պատուիրակութեան՝ իսկոյն ամենակորովի դիմում ընէ Դաշնակից եւ մասնաւորաբար ամերիկեան կառավարութեանց ու ժողովուրդին մօտ, խնդրելով նիւթական շուտափոյթ եւ կարեւոր նպաստ, կամ այս նպատակով ազգային հանգանակութիւն բանալ, որպէսզի, սպասելով որ ծննդավայր վերադարձի որոպէն հասնի, արեւմտահայ գիւղացի փախստականներու համար սեփական տնտեսութիւն ապահովուի, անոնց տրուելով վարելահող, լծկան անասուններ եւ սերմնացու»:

Այս ձեւով առաջարկութիւնը քուէի դրուեցաւ 10 պատգամաւորներու ներկայութեան եւ ընդունուեցաւ միաձայնութեամբ:

Իսկ Պ. Չօպանեանի առաջարկութեանց երկրորդ մասը, որ Հայաստանի կառավարութեան կազմութեան կ՚ակնարկէր, անհետեւանք թողուեցաւ:

Պ. Ա. Չօպանեան. Համագումարի Նախագահը հոգատարութեան հարցին ակնարկեց պահ մը առաջ: Ինչպէս յայտնի է, այս մասին խնդիր մը ծագեցաւ Ամերիկայի մէջ, զոր պէտք է լուսաբանել: Պօղոս Փաշա այստեղ կարդաց Պ. Սվազլըի մէկ հեռագիրը, որուն համեմատ՝ Պ. Փաստրմաճեան իրեն ըսած էր, թէ հոգատարութեան հակառակ ոեւէ յայտարարութիւն չէ ըրած: Համագումարը այս միայն գիտէ: Բայց անկից ի վեր Պ. Սվազլը ընդարձակ հեռագիր մը ղրկած է Պօղոս Փաշային, որով իր նախկին ըսածը կը հաստատէ՝ ծանօթ ծերակուտականներու վկայութեան յենելով: Միեւնոյն բանը կը հաստատէ Բրօֆ. Տէր-Յակոբեան՝ Փաշային ուղղուած երկու ընդարձակ նամակներով: Խորէն Եպիսկոպոս անշուշտ պատասխանատու չէ եղածին: Ինք անգլերէն չի գիտեր: Կ՚ըսուի, թէ Պ. Գարտաշեան, որ արդէն հոգատարութեան հակառակ եղած է, իր ուզած կերպով պէտք է թարգմանած ըլլայ անոր խօսքերը: Միւս կողմէ՝ կայ ուրիշ կարեւոր հարց մը, որուն վրայ կ՚ուզեմ ձեր ուշադրութիւնը հրաւիրել: Ամերիկայի «Պահակ» թերթը, որ Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութեան օրկանն է, հրատարակած է Պ. Վէնիզէլոսի՝ ամերիկեան թերթի մը թղթակցին հետ ունեցած տեսակցութիւնը, որուն մէջ յոյն մեծանուն պետական մարդը կ՚ըսէ, թէ քեմալիսթներու զօրութիւնը կարծուածէն շատ նուազ լուրջ բան մըն է եւ թէ Հայաստանի հոգատարութիւնը իրագործելու համար պէտք չկայ մեծ ոյժերու, բաւական է 20 000 զօրք: Ասիկա յիշելէ ետք, «Պահակ» խմբագրական մը նուիրած է հոգատարութեան հարցին, առաջարկելով, որ հայերը խնդրեն Պ. Վէնիզէլոսէն, որ Դաշնակիցներուն այս պահուս իրեն յանձնած գործը լրացնելէն յետոյ՝ Յունաստան ստանձնէ Հայաստանի հոգատարութիւնը եւ մաս մը յունական զօրքեր Տրապիզոնէն յառաջանան դեպի Էրզրում, ձեռք տալու համար հակառակ ուղղութեամբ նոյնպէս դեպի Էրզրում յառաջանալիք Երեւանեան բանակին, միւս կողմէ, ուրիշ խումբ մը յոյն զօրքեր երթան օգնել մեր Կիլիկեան քաջերուն: Այս գաղափարը, զոր «Պահակ» մեջտեղ կը դնէ, արժանի է լուրջ նկատառութեան: Մենք կրնանք այս առթիւ, Պոնտոսի յունաց ծրագրին ալ իրականացման կարելիութիւնը ցոյց տալով եւ ատոր մեր բարոյական ամեն կերպ աջակցութիւնը խոստանալով, հրաւիրել յոյն կառավարութիւնը, որ Թրքահայաստանի գրաւման ու Կիլիկիոյ ազատագրման

անմիջականօրէն անհրաժեշտ գործին մէջ օգնէ մեզի: Ես կ՚առաջարկեմ Նորատունկեան էֆենտիի, որ, իբր նախագահ Համագումարի, այս հարցը դնէ նորընտիր Ազգ. Պատուիրակութեան առջեւ, եւ Ազգ. Պատուիրակութեան Նախագահը, Հանրապետութեան Պատուիրակութեան Նախագահ Պ. Ահարոնեանի եւ Նորատունկեան էֆենտիի հետ միասին, Պ. Վէնիզէլոսի դառնալէն անմիջապէս յետոյ երթան այս առաջարկը բացորոշ կերպով անոր ներկայացնեն: Կը խնդրեմ Համագումարէն ալ, որ այս մասին արտայայտուի որոշ կերպով:

Թեր ու դէմ կարճատեւ կարծիքներու փոխանակութենէ մը վերջ, Համագումարը համամիտ չգտնուեցաւ Պ. Չօպանեանի այս առաջարկութեան, եւ անհետեւանք թողուց զայն:

Կարդացուեցաւ Պ. Ա. Թէրզիպաշեանի հետեւեալ բանաձեւը, զոր կ՚առաջարկէր քուէի ենթարկել Տիրէքթիւներու Սահմանման Յանձնաժողովին 9-րդ առաջարկութեան տեղ, որ նախորդ նիստին 5 քուէ միայն ստացած ըլլալով, իբր «յանձնարարութիւն» պիտի մատուցուէր Ազգ. Պատուիրակութեան.

«Պատուիրակութիւնը պէտք է իր առաջին գործերէն մէկը ընէ դիմել Հայաստանի կառավարութեան, առաջարկելով անոր անմիջապէս ստեղծել միացեալ բազմատարր կառավարութիւն՝ Պ. Խատիսեանի վերջին առաջարկին համաձայն: Այս դիմումին մերժման պարագային, եթէ ստորագրուելիք դաշնագիրը նուազագոյն գոհացում տայ արեւմտահայերուն, Պատուիրակութիւնը պարտաւոր է նոր Համագումարի մը ընտրութեան նախաձեռնութիւնը առնել եւ անոր որոշման ենթարկել արեւմտահայերու մասնաւոր իրաւանց պաշտպանութեան գործը»:

Ա. Թէրզիպաշեան

Տասը պատգամաւորներու ներկայութեան քուէի դրուելով, այս առաջարկութիւնը ընդունուեցաւ միաձայնութեամբ:

Պ. Տէրպէտէրեան յայտարարեց, թէ կը քուէարկէ առաջարկութիւնը, բայց կը փափաքի, որ արձանագրուի, թէ համաձայն չէ անոր երկրորդ մասին:

Համագումարը որոշեց նաեւ, որ իր թէ՛ նախորդ եւ թէ՛ այս երկրորդ նստաշրջանին ատենագրութիւնները պէտք է պատրաստուին երկուքական օրինակ մէկ օրինակը՝ Հայկական կառավարութեան եւ միւս օրինակն ալ Պոլսոյ Ազգ. Պատրիարքարանին տրուելու համար:

Նախագահ Գաբրիէլ էֆենտի Նորատունկեան դիտել տուաւ, թէ նախորդ նստաշրջանի ատենագրութիւնները պէտք ունին կարգ մը լեզուական եւ ձեւական սրբագրութեանց, եւ յայտնեց, որ Դիւանը յօժար է կատարելու այդ սրբագրութիւնները:

Համագումարը համամիտ գտնուեցաւ:

Պ. Չօպանեան առաջարկեց, որ ներկայ նստաշրջանին ատենագրութիւնները, որոնք խղճամիտ հարազատութեամբ մը պատրաստուեցան Պ. Արամ Անտոնեանի կողմէ, անփոփոխ մնան այնպէս՝ ինչպէս կարդացուեցան եւ վաւերացուեցան:

Համագումարը համամիտ գտնուեցաւ նաեւ այս առաջարկութեան:

Նիստը փակուեցաւ ժամը 7-ին:

ՀԱԱ, ֆ. -430, ց. 1, գ. 68, թթ. 1-8: Ձեռագիր: Բնագիր:

Նիստ ԼԱ

/փակման նիստ/

13 Յուլիս 1920, ժամը 4-ին

նախագահութեամբ Գաբրիէլ էֆ.Նորատունկեանի:

Ներկայ էին 13 պատգամաւորներ՝

Եղիշէ Արքեպ. Դուրեան, Պ. Պ. Դաւիթ-Բէկ, Ա. Թէրզիպաշեան, Վ. Թէքէեան, Ա. Հանըմեան, Տոքթ. Նեւրուզ, Գ. Նորատունկեան, Պօղոս Փաշա Նուպար, Ռ. Որբերեան, Ա. Չօպանեան, Գ. Սինապեան, Մ. Տէրպէտէրեան, Ն. Տէր-Ստեփանեան:

Օրակարգ

1. Վերակազմութիւն Ազգ. Պատուիրակութեան
2. Հարցում Պ. Վահան Թէքէեանի՝ Ամերիկայի մէջ հոգատարութեան խնդրին նկատմամբ եղած յայտարարութեան մասին
3. Փակում Ազգ. Համագումարի երկրորդ նստաշրջանին

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Ընթերցում ատենագրութեան

Կարդացուեցաւ եւ վաւերացուեցաւ Յուլիս 9-ի նիստին ատենագրութիւնը:

2. Անձնական բացատրութիւն Տոքթ. Նեւրուզի՝
Բժշկական Յանձնաժողովի խնդրին նկատմամբ

Ատենագրութեան ընթերցումէն ետք՝ խօսք ուզեց Տոքթ. Նեւրուզ՝ Բժշկական Յանձնաժողովի խնդրին նկատմամբ անձնական բացատրութեան մը համար:

Տոքթ. Նեւրուզ. Համագումարի նախորդ նիստին մէջ, որուն ներկայ չէի Սբա մեկնած ըլլալուս պատճառաւ, վերստին արծարծուեր է Բժշկական Առաքելութեան խնդիրը, եւ այդ առթիւ մեր անդամակիցներէն Պ. Պ. Թէքէեան եւ Տէր-Ստեփանեան իմ անձիս նկատմամբ ըրեր են կարգ մը ամբաստանութիւններ, որոնք զուտ զրպարտութիւններ են եւ որոնց պիտի պատասխանեմ քանի մը խօսքով:

Բժշկական Առաքելութեան այդ խնդիրը ժողովին կողմէ քննութեան առարկայ դարձաւ, երբ տակաւին Համագումարի անդամներուն մեծ մասը ներկայ էր: Այն ատեն, ինչպէս կը յիշէք, բոլոր բացատրութիւնները որ ուզուեցան՝ տուի այստեղ: Ժողովէն դուրս ալ, ամեն անգամ, որ Համագումարի անդամներէն մէկուն կողմէ մանրամասնութիւն մը ուզուեցաւ, սիրով պատասխանեցի: Կը յիշեմ մասնաւորաբար Պ. Տէօվլէթեանը, որ անձամբ եկաւ գտաւ զիս եւ ուզեց ունենալ թէ՛ Կիլիկիոյ Բժշկական Առաքելութեան եւ թէ՛ Բժշկական Յանձնաժողովին գործունէութեան պատկանող ամեն տեսակ տեղեկութիւններ եւ «տօքիւմաններ»: Այդ քննութենէն ետք՝ Պ. Տէօվլէթեան համոզուեցաւ, թէ Բժշկական Յանձնաժողովը բոլոր կարելին ըրեր է Առաքելութեան արդիւնաւորութեան համար. համոզուեցաւ մասնաւորաբար, թէ ես բնաւ ինքնագլուխ չեմ գործած, ինչպէս ըսեր էին իրեն, այլ՝ Յանձնաժողովին որոշումները տրուած էին բոլոր անդամներու խորհրդակցութեամբ: Բժշկական Յանձնաժողովը կը բաղկանար Պ. Պ. Տոքթ. Օհանջանեանէ, Լաքրուայէ, Հանըմեանէ, Տիկին Տոքթ. Ռօպէրէ եւ ինծմէ: Պաշտօնական ատենագրութիւնները կան, որոնք կ'ապացուցեն, թէ բոլորն ալ մասնակցած են խորհրդակցութեանց, եւ որոշումները առնուած են ամէնուն ալ գիտութեամբ: Կը զարմանամ, որ Պ. Տէր-Ստեփանեան, միայն «կ'ըսուի»-ներու վրայ յենելով՝ զիս կը դատապարտէ: Ան նոյնիսկ առաջ կ'երթայ ըսելու, որ եթէ Պատուիրակութիւնը միլիոններ ալ ունենար իր տրամադրութեան տակ, պէտք էր Բժշկական Առաքելութեան գործը առնել իրմէ եւ յանձնել Պատրիարքարանին, քանի որ թէ՛ այդ գործը եւ թէ՛ Բժշկական Յանձնաժողովը կը գտնուին եղեր այն տեսակ պայմաններու մէջ, որ դարձեր են, իր բառերով, «կատարեալ խայտառակութիւն»: Կը զարմանամ, որ Պ. Տէր-Ստեփանեանի պէս զարգացեալ երիտասարդ մը, որ երկար ատեն Եւրոպա ապրած է, այդքան ծանր բառ մը կը գործածէ, շեղելով նոյնիսկ ամենատարրական քաղաքավարութեան

կանոններէն: Ո՛չ խայտառակութիւն կայ մէջտեղը, ո՛չ նոյնիսկ անիշխանութիւն: Ասկէ առաջ՝ համոզիչ փաստեր տուի արդէն այդ մասին. եթէ ատոնք անբաւական նկատուին, Համագումարիդ տրամադրութեան տակ եմ. պատրաստ եմ ամեն տեղեկութիւն տալու: Եւ արդէն՝ Պատուիրակութեան Նախագահը, որ ներկայ է այստեղ, ի հարկին կրնայ վկայել, թէ ամեն բան եղած է Յանձնաժողովին եւ իր հաւանութեամբ:

Գալով Պ. Թէքէեանի այն դիտողութեան, թէ ամօթալի դէպքեր տեղի ունեցեր են Կիլիկիոյ մէջ, չեմ հասկնար, թէ ատիկա ինչպէ՞ս առիթ մը կրնայ դառնալ Բժշկական Յանձնաժողովը դատապարտելու: Երկու հիւանդապահուհի իրարու գլուխ պատռեր են. ասոր մէջ Յանձնաժողովը ի՞նչ յանցանք ունի: Ամեն գործի մէջ կրնան պատահիլ այս տեսակ դէպքեր: Յանձնաժողովը նոյնքան ցաւեցաւ այդ մասին որքան ուրիշ ամեն մարդ, եւ նոյնիսկ գրեցինք Պ. Տամատեանի, որ քննութիւն կատարէ եւ պատժէ այդ գայթակղութեան հեղինակները. նամակները կեցած են:

Իսկ այն ակնարկութեան, թէ Համագումարը զիս Պատուիրակութեան անդամ ընտրեր է Պ. Ահարոնեանի ճնշումին վրայ, կը ցաւիմ, որ Համագումարի անդամները ինչպէ՞ս չեն բողոքեր ատոր դէմ: Ինչպէս ըսի անգամ մը, ինչպէս այստեղ ամեն ոք գիտէ, Պ. Ահարոնեան կապ չունի Պատուիրակութեան ընտրութեան խնդրին հետ՝ ա՛յն կերպով ինչպէս ցոյց կու տայ Պ. Տէր-Ստեփանեան: Պ. Ահարոնեան երբեք անձի խնդիր չէ յուզած, «սա առէք, միւսը թողուցէք» չէ ըսած: Ինք պահանջած է միայն, որ Պատուիրակութիւնը երեք անդամ ունենայ, որպէսզի կարելի ըլլայ ձեռք-ձեռքի աշխատիլ հաւասար ոյժերով: Եղածը այս է միայն, ու լաւագոյն է, որ այլեւս բնաւ չյուզենք այս խնդիրը: Դարձեալ Պ. Տէր-Ստեփանեան ըսեր է, թէ ես արգելք եղայ ճշմարտութեան յայտնուելուն: Այս ամբաստանութիւնը նոյնքան անհիմն է՝ որքան էին միւս ըսուածները: Պ. Տէօվլէթեան ալ այդ մտածումն ունէր, բայց երբ եկաւ եւ անձամբ տեղեկութիւն ուզեց, հեշտիւ կրցայ զինքը համոզել, թէ սխալած է: Եւ արդէն Յանձնաժողովին ատենագրութիւնները մէջտեղն են. ուզողը կրնայ կարդալ: Եթէ տեղեկութիւն չենք կրցած տալ, պատճառը սա է որ, ինչպէս արդէն բազմիցս ըսուեցաւ, ղրկուած տեղեկագիրը կորսուեր էր: Անշուշտ մեղադրելի են, որ ուրիշ մը չեն ղրկած: Մեղադրելի է նաեւ Պ. Տամատեան: Բայց վերջապէս պէտք է նկատի առնել նաեւ այն պայմանները, որոնց մէջ կը գտնուին այսօր: Անոնց տեղը եղէք անգամ մը: Ով գիտէ ի՞նչ դրութեան մէջ կը գտնուին: Ինծի դէմ մեղադրանք մը դարձուցեր են նաեւ Տոքթ. Տամլամանեանի եւ ուրիշներու մեկնումը: Բայց ասոնք նոր պատահած իրողութիւններ են, որոնց մասին տեղեկութիւն անգամ չենք ստացած:

Քանի մը խօսք ալ քուէարկուած առաջարկութեան մասին պիտի ընեմ: Երբ տակաւին Տոքթ. Օհանջանեան այստեղ էր, Բժշկական Յանձնաժողովը այն մտածումն ունէր, թէ այդ գործը պէտք է տակաւ առ տակաւ վերածել անանկ կացութեան մը, որ տեղական մարմինները իւրացնեն զայն: Այս մտքով արդէն Յանձնաժողովը գրած էր Պ. Տամատեանի, որ հիւանդանոցի հոգաբարձութիւն մը կազմէ եւ տեսուչ ընտրէ բժիշկ չեղող անձնաւորութիւն մը, որպէսզի ներքին մրցակցութեան եւ նախանձի դէպքեր չծագին: Իսկ Պատրիարքարանի յանձնուելուն նոյնպէս համամիտ եմ, ինչպէս կրնայ վկայել Պ. Չօպանեան:

Ահա՛ եղած քննադատութիւնները եւ անոնց արժէքը: Բայց իրապէս քննադատութեան համար չեն եղած այս խօսքերը, անոնց մէջ աւելի թոյն կայ, քան քննադատութեան ոգի: Այդ թոյնը նոյնութեամբ իրենց կը վերադարձնեմ:

Պ. Տէր-Ստեփանեան. Խօսք կ'ուզեմ:

Նորատունկեան Էֆենտի. Վիճաբանութեան պէտք չկայ այլեւս այս խնդրին նկատմամբ:

Պ. Տէր-Ստեփանեան. Քանի մը խօսք միայն պիտի ընեմ ապացուցանելու համար, որ մեր քննադատութիւնները անտեղի փաստերու վրայ չէին հիմնուած, այլ նոյնիսկ այստեղ տեղի ունեցած դէպքերու վրայ: Կը խնդրեմ, որ խօսք տաք, քանի որ իրեն խօսք տուիք:

Նորատունկեան էֆենտի. Տոքթորը անձնական բացատրութիւն մը տալու իրաւունք ունէր:

Պ. Տէր-Ստեփանեան. Ես փաստեր պիտի տայի, որոնք կ'ապացուցեն ըսածներս եւ զորս կարելի էր վայրկեանին ճշդել: Կը բողոքեմ այս անիրաւութեան դէմ:

Պօղոս Նուպար Փաշա. Լաւ չհասկցայ Տոքթ. Նեւրուզի խօսքերուն այն մասը, որ կը վերաբերի Պատուիրակութեան վերակազմութեան: Ամեն պարագայի մէջ՝ կը կրկնեմ այն յայտարարութիւնը, որ նախապէս ըրի արդէն: Մեր համաձայնութեան առթիւ՝ Պ. Ահարոնեանի պահանջումը երեք հոգիի համար էր, բայց եթէ այդպէս մնար եւ չորսը չընդունուէր, չպիտի համաձայնէի: Յայտնեցի արդէն, թէ այս աստիճան փափուկ ատեն մը չորսի զիջում ընելս մեծ զոհողութիւն մըն էր ինծի համար: Մնաց որ այսօր մեծապէս կը ցաւիմ, որ վեց չենք Պատուիրակութեան մէջ:

Նորատունկեան էֆենտի. Նախորդ նիստին մէջ Պ. Պապաջանեան առաջարկեց, որ Համագումարը ձեզի իրաւունք տայ, որ եթէ պէտք տեսնէք՝ cooptation-ի դրութեամբ աւելցնէք Պատուիրակութեան անդամներուն թիւը:

Պօղոս Նուպար Փաշա. Եւ Համագումարը մերժե՞ց:

Պ. Ա. Թէրզիպաշեան. Ո'չ, պիտի վերադառնանք այդ խնդրին:

Պօղոս Նուպար Փաշա. Լա'ւ:

3. Խնդիր ներկայութեան Պ. Ա. Խատիսեանի

Նորատունկեան էֆենտի. Համագումարին նախորդ նիստին մէջ յայտնուած բաղձանքին համաձայն՝ տեսնուեցայ Պ. Ալ. Խատիսեանի հետ: Պ. Խատիսեան խոստացաւ ներկայ գտնուիլ մեր այսօրուան նիստին եւ զեկոյց մը ընել: Միջանկեալ յայտնեմ, թէ Պ. Խատիսեան անձնապէս կողմնակից է միշտ միացման խնդրին եւ ատոր օրինաւոր կերպով գործադրութիւնը կարելի կը նկատէ, ինչպէս ինքն իսկ պիտի յայտարարէ այստեղ: Ինք լոկ փոխառութեան խնդրին համար եկած է Երեւանէն, նոյնիսկ Փարիզ գալու մտադիր ալ չէ եղեր, այլ պիտի երթայ եղեր Եգիպտոս, բայց Պ. Ահարոնեանէ հրաւէր ստացած ըլլալովը Փարիզ գալու եւ մօտէն տեղեկանալու քաղաքական անցուդարձերուն, ճամբան փոխեր է ժամանակի մը համար:

Պ. Ա. Չօպանեան. Մինակ փոխառութեան խնդրին համար չէ եկած, այլ՝ հաւանօրէն միացման խնդրին համար ալ բան մը պիտի ընէ, քանի որ կայարանը իրեն ընդառաջ գացողներուն երկու խօսք ըսելով՝ միութեան պէտքը շեշտեց: Վերջէն սակայն, իրեն տուած այցելութեանս միջոցին ինծի այնպէս ըսաւ, որ միացեալ կառավարութեան եւ միացման խնդիրները կրնան կարգադրուիլ դաշնագրին ստորագրութենէն անմիջապէս ետք:

Նիստը վերջանալուն մօտ ստացուեցաւ Պ. Ալ. Խատիսեանի հետեւեալ նամակը, որ կարդացուեցաւ.

«Ն. Վսեմութիւն Տիար Նորատունկեան,

Մեծապատիւ պարոն,

Ես արդէն պատրաստւում էի գնալ Ձեզ մօտ զեկուցում տալու համար, երբ ինձ հրաւիրեցին մի շատ կարեւոր եւ անյետաձգելի պաշտօնական դիւանագիտական տեսակցութեան համար: Ես ստիպուած եմ գնալ այնտեղ, ուստի ներողութիւն եմ խնդրում Ձեզանից, որ այսօրուայ զեկուցումը չպիտի կարողանամ անել, եւ այն ինչ որ պէտք է ասէի՝ ես կ'աշխատեմ այս շաբաթուայ ընթացքում մի առանձին զեկուցումով անել: Նորից խնդրում եմ ներողութիւն յարգելի պարոններից, որոնց հետ ես էլ կ'ուզենայի տեսնուել:

Ձեզ յարգող

Ալ. Խատիսեան»

4. Զեկուցում Ազգ. Պատուիրակութեան Նախագահ Պօղոս Նուպար Փաշայի՝ Սբայի մէջ ունեցած գործունէութեան մասին

Նախագահ Նորատունկեան էֆենտի խնդրեց Ազգ. Պատուիրակութեան Նախագահէն, որ տեղեկութիւն տայ Ժողովին՝ Պատուիրակութեան անդամներուն Սբայի մէջ ունեցած գործունէութեան մասին:

Պօղոս Նուպար Փաշա. Ինչպէս ծանօթ է, Սբա մեկնելու որոշումը տուինք եւ անմիջապէս մեկնեցանք, երբ յայտնի եղաւ, թէ Գերագոյն Խորհուրդը այնտեղ պիտի քննէ նաեւ թուրքերուն կողմէ ներկայացուած հակառաջարկները: Երբ Սբա հասանք, իմ առաջին հոգս եղաւ տեսնել Պ. Վէնիզէլոսը, որ անշուշտ կրնար լաւագոյն տեղեկութիւններ տալ, քանի որ յայտնի է, թէ այդ բանակցութեանց մեծագոյն դերակատարներէն մէկը պիտի ըլլար՝ Յունաստանի կողմէ վերջերս Թուրքիոյ մէջ ստանձնուած գործօն դերին բերումով: Պ. Ահարոնեան ալ ինծի համակարծիք եղաւ եւ միասին գացինք Պ. Վէնիզէլոսի մօտ: Պ. Վէնիզելոս յայտնեց, թէ Գերագոյն Խորհուրդը նախորդ օրուան նիստին մէջ որոշած էր իր տալիք պատասխանը թուրքերուն, եւ թէ այդ պատասխանը պարզապէս կը մերժէր թուրքերու կողմէ առաջարկուած բոլոր փոփոխութիւնները, բացի քանի մը աննշան կէտերէ, որոնք չէին շրջեր դաշնագրին ոգին, ինչպէս, օրինակի համար, նեղուցներուն հսկողութեան Միջդաշնակցային Յանձնաժողովին մէջ թուրք ներկայացուցչի մը գոյութիւնը, եւայլն: Մասնաւորաբար Հայաստանի վերաբերող մասին համար Պ. Վէնիզէլոս ըսաւ, թէ Գերագոյն Խորհուրդը նոյնութեամբ անփոփոխ պահած է զայն: Մեր տեսակցութիւնը տեղի ունեցաւ Հինգշաբթի օր: Իսկ Գերագոյն Խորհուրդը իր պատասխանը պարունակող ծանուցագիրը թուրքերուն պիտի յանձնէր Շաբաթ օր: Ուրեմն, երկու օր ունէինք, եւ այդ միջոցին կրնայինք յանձնել մեր Յիշատակագիրը: Պ. Ահարոնեան եւ ես գացինք Պ. Պէրթլոյի եւ մեզի համար բախտ մը եղաւ, որ այս այցելութիւնը ըրած ատեննիս՝ Դաշնակից տէրութեանց կողմէ թուրքերուն տրուելիք ծանուցագիրը պատրաստ էր: Պ. Պէրթլօ ո'չ միայն սիրալիր եւ յուսադրիչ ընդունելութիւն մը ըրաւ մեզի, այլ նոյնիսկ բարեացակամութիւնը ունեցաւ կարդալու ծանուցագրին այն կէտերը, որոնք մեզի կը պատկանին: Շատ կորովով գրուած էր եւ տեղ-տեղ հիմնուած էր այն համբաւաւոր նամակին վրայ, զոր Պ. Քլէմանսօ երբեմն ուղղած էր թուրք առաջին պատուիրակութեան: Ծանուցագիրը մասնաւորաբար կը ժխտէր թուրքերուն կողմէ եղած այն առարկութիւնը, թէ հայերը պետութեան դէմ ապստամբած ըլլալնուն համար ենթարկուած էին ծանօթ խստութեանց, եւ կը յիշեցնէր թուրքերուն, թէ ջարդերը, Թուրքիոյ մէջ, լոկ այս պատերազմին տարիներուն յատուկ բաներ չէին, թէ անկէ առաջ ալ տեղի ունեցած էին բոլոր հպատակ ազգութեանց դէմ, շատ հեռաւոր ժամանակներէ սկսեալ: Ծանուցագիրը կը յայտնէր նոյն ատեն, թէ Գերագոյն Խորհուրդը չի հաւանիր ո՛չ մէկ էական մաս փոխել դաշնագրէն, եւ թէ թուրքերուն 10 օր պայմանաժամ կու տայ իրենց հաւանութիւնը յայտնելու:

Պ. Վէնիզէլոսի հետ մեր տեսակցութեան միջոցին այն տպաւորութիւնը կրած էինք, թէ 10 օրուան այդ պայմանաժամը պիտի տրուի ստորագրելու համար, բայց երբ Պ. Պէրթլօն տեսանք, հասկցանք, թէ լոկ իրենց հաւանութիւնը յայտնելու համար էր այդ պայմանաժամը: Թուրքերը ծանուցագիրը ստանալէն ետք, 10 օր միջոց ունէին այո կամ ոչ ըսելու համար: Իսկ ստորագրութիւնը, որ անշուշտ խել մը ձեւակերպութեանց կարօտ է, կը մնար աւելի ետքի: Պ. Ահարոնեանի հետ տեսնուեցանք Դաշնակից երկիրներու կարգ մը պատուիրակներուն հետ: Այս բոլոր տեսակցութեանց ընթացքին մեր առաջին հոգը եղաւ հասկնալ, թէ պատրաստուած Յիշատակագիրը կարելի՞ էր Գերագոյն Խորհուրդին տալ՝ արդիւնաւոր ելքի մը ապահովութեամբ: Պարզեցինք իրենց, թէ դաշնագիրը շատ կէտերու մէջ չէր գոհացներ մեզ, թէ պէտք կար անհրաժեշտ սրբագրութիւններու, քանի որ նախապէս ո՛չ մէկ մասնակցութիւն ունեցած էինք անոր խմբագրութեան: Բոլորն ալ ըսին, թէ անկարելի է

բան մը փոխել տալ, եւ նոյնիսկ խորհուրդ տուին, որ Յիշատակագիրը չներկայացնենք Գերագոյն Խորհուրդին: Աւելցուցին նաեւ, որ ատիկա վատ տպաւորութիւն պիտի ընէ: Այդ միջոցին ստացանք Նորատունկեան էֆենտիի հեռագիրը, որ հողային պահանջմանց մասին սրբագրութիւն մը ընել կը յանձնարարէր՝ «Խարբերդի սահմանակից հողամասերու» պարբերութեան յաւելմամբ, ծանուցանելով նոյն ատեն, թէ Յիշատակագրին մէկ լրացեալ օրինակը յանձնուած է փոսթին: Եղած փոփոխութիւնները եւ յաւելումները շատ լաւ էին. խնդիրը ներկայացուած էր աւելի ամբողջական կերպով մը: Բայց, ինչպէս ըսի, վարանումի մէջ էինք այնտեղ. պէ՞տք էր տալ Յիշատակագիրը, թէ՞ ոչ: Ի վերջոյ, Պ. Ահարոնեան, Տոքթ. Նեւրուզ, Զօրավար Կորկանօֆ եւ ես պզտիկ խորհուրդ մը ըրինք, որուն ներկայ գտնուեցաւ նաեւ Պ. Հանըմեան, եւ որոշեցինք չտալ, քանի որ մեր տեսած բոլոր անձնաւորութիւններն ալ այն կարծիքը յայտնած էին, թէ ատիկա յոռի տպաւորութիւն մը պիտի գործէ Դաշնակիցներուն վրայ:

Շաբաթ օրը ես մեկնեցայ, եւ Փարիզ դարձիս իմացայ, որ թուրքերը նոր ծանուցագիր մը տուեր են. թերթերն ալ հրատարակեցին, թէ դաշնագիրը պիտի ենթարկուի կարգ մը փոփոխութեանց: Անձնապէս չեմ կարծեր, որ այդ փոփոխութիւնները հիմնական բաներ ըլլան, անշուշտ անոնք են, որոնց մասին Պ. Վէնիզելոս խօսած էր մեզի եւ որոնք չեն հետաքրքրեր մեզ:

Ահա այս կացութեան մէջն ենք այսօր: Թուրքերը 10 օր պիտի ունենան պատասխանելու՝ երբ ծանուցագիրը ստանան: Եթէ ընդունին՝ բան մը չենք կրնար ընել եւ կամ միակ դուռ մը միայն բաց կը մնայ այլեւս մեր առջեւ, այն է՝ դաշնագրին տրամադրութեանց մեկնութեան ապաւինիլ, խնդրելով որ այս կամ այն տրամադրութիւնը մեզի ի նպաստ մեկնուի: Այդ պարագային՝ տարակոյս չկայ, որ պատրաստուած Յիշատակագիրը կրնայ իր օգուտն ունենալ: Իսկ եթէ թուրքերը մերժեն, այն ատեն Արեւելքի հարցը նոյնութեամբ սեղանի վրայ կը դրուի, եւ կրնանք ամեն յոյս ունենալ, թէ մենք ալ կը յաջողինք ի նպաստ մեզի փոփոխութիւններ մտցնել դաշնագրին մէջ: Այնպէս կը թուի, թէ թուրքերը պիտի մերժեն ստորագրել:

Փարիզ վերադարձիս իմացայ, որ բացակայութեանս միջոցին Պ. Ռոպէր տը Քէ թէլէֆօն ըրեր եւ ուզեր է զիս տեսնել, յանձնարարելով, որ դարձիս անպատճառ լուր տան ինծի: Անցեալ ձմեռուընէ ի վեր չէի տեսած զինքը: Երկար տեսակցութիւն մը ունեցայ իրեն հետ, եւ այդ տեսակցութեան միջոցին Պ. Ռոպէր տը Քէ յայտնեց, թէ ինք համոզուած է, որ թուրքերը չպիտի ստորագրեն դաշնագիրը: Գիտէք, որ անձամբ տեսնուած ըլլալով Մուսթաֆա Քէմալի հետ, Պ. տը Քէ կրնար շատ լաւատեղեակ ըլլալ այս մասին: Մեր տեսակցութեան միջոցին Պ. տը Քէ յայտնեց նաեւ, թէ ֆրանսացիք ոեւէ գաղտնի դաշնագիր կամ համաձայնութիւն չեն կնքած թուրքերուն հետ, թէ ամբողջ եղածը այն զինադադարի պայմանագրութիւնն է, որ ծանուցուեցաւ եւ որ արդէն ամեն ոյժ կորսնցուցած է այսօր: Իսկ Կիլիկիան պարպելու հարցին նկատմամբ ըսաւ, թէ առ այժմ Ֆրանսա միտում չունի լքելու այն կէտերը, որոնց մէջ համախմբած է իր ոյժերը:

Նորատունկեան էֆենտի. Ամանոսի խնդրին վրայ ալ խօսեցա՞ք:

Պօղոս Նուպար Փաշա. Այո՛, բայց Պ. տը Քէ, որ երկար ատենէ ի վեր մեկնած է, շատ ստոյգ տեղեկութիւններ չունէր: Չի կարծեր, որ մեծ բան մը ըլլայ. ըսաւ թէ թերեւս մաս մը հայեր այդտեղ իրենք իրենց գլխուն անկախութիւն յայտարարած ըլլան: Հարցուցի, թէ Ֆրանսա չի՞ հովանաւորեր այդ շարժումը, քանի որ վերջերս մտադիր էր սուրիական դաշնակցային վարչութիւն մը հաստատել, վարչութիւն՝ որուն մէջ ինչպէս արաբ, այնպէս ալ հայ շրջանակ մը կրնայ գոյութիւն առնել: Պ. տը Քէ սկեպտիկ է. մանաւանդ որ կը կարծէ, թէ այդ շարժումը սկսած է Իսկենտէրունի հարաւային կողմը՝ ճեպէլ Մուսայի մէջ, որ դժուար թէ հայկական շրջանակ մը դառնայ:

Ձայներ. Սխալ է:

Պօղոս Նուպար Փաշա. Ամեն պարագայի մէջ՝ Պ. տը Քէ տեղեկութիւն չունէր եւ չի կարծեր, որ ֆրանսական հովանաւորութեամբ սկսուած շարժում մը ըլլայ եղածը:

Պ. Ա. Չօպանեան. Թէրզեան Կաթողիկոսի դիմումը զոր թերթերը ծանուցեր էին, ի՞նչ պայմաններու մէջ եղաւ:

Պօղոս Նուպար Փաշա. Տարօրինակ եւ անակնկալ բան մըն էր որ եղաւ: Նոյնիսկ լուր ելաւ, թէ միասին դիմում ըրեր ենք, բայց մենք տեղեկութիւն անգամ չունէինք: Սբա գտնուած ամբողջ ատեննիս զինքը բնաւ չտեսանք: Վերջին օրը՝ ցերեկուան մօտ՝ երբ Գերագոյն Խորհուրդը գումարուելու վրայ էր, ընդհանուր քարտուղար Պ. Ռոմէնժաքմէնի քովն էի, երբ յանկարծ կարմիր տարազով եկեղեցական մը ներս մտաւ: Տեսայ, որ Թէրզեան Կաթողիկոսն է: Իսկոյն իմ մօտս եկաւ, ըսաւ, թէ քանի օր է Սբա կը գտնուէր, բայց հասցէս չգիտնալուն չէր կրցած ինծի լուր տալ: Մինչդեռ ամէնէն դիւրին բանն էր մեր հասցէն գտնելը: Կաթողիկոսն աւելցուց, թէ եկած է կարգ մը անձնաւորութիւններ տեսնելու եւ Կիլիկիոյ խնդիրը հետապնդելու: Չմոռնամ ըսելու, որ ինքզինքը կը ներկայացնէր իբր Կիլիկիոյ հայոց կաթողիկոս: Պզտիկ ծանուցագիր մըն ալ պատրաստած էր Գերագոյն Խորհուրդին տրուելու համար. մէկ օրինակն ալ ինծի յանձնեց: Ատոր մէջ պարզապէս կը խնդրէ, որ Կիլիկիոյ ժողովուրդին գոյութիւնը ապահովուի Ֆրանսայի պաշտպանութեամբ:

Նորատունկեան էֆենտի. Պատրաստուած Յիշատակագիրը կրնայ իր օգտակարութիւնը ունենալ յառաջիկային, որովհետեւ կան երեք պարագաներ, որոնցմէ կրնանք յուսալ մեզի նպաստաւոր փոփոխութիւններ դաշնագրին տրամադրութեանց նկատմամբ: Առաջինը՝ դաշնագրին գործադրութեան դրուելու բրոթոքոլին պատրաստութեան միջոցին: Եթէ նոյնիսկ թուրքերը հաւանին ստորագրելու, բնականաբար գործադրութեան եղանակ մը պիտի որոշուի, եւ այդ առթիւ կրնայ ստորագրել protocole d'execution մը, որ առիթ կու տայ մեր այս կարգի պահանջմանց նկատառման: Երկրորդ առիթն է, ըստ այս դաշնագրութեան մէկ յօդուածին, յաւելուածական դաշնագրութիւններ կազմելու իրաւունքը: Իսկ երրորդ առիթ մը՝ Դաշնագրին ինչ-ինչ տրամադրութեանց մասին Գերագոյն Խորհուրդին կողմէ տրուելիք մեկնութիւնն է, որմէ կարելի է օգտուիլ, եւ եթէ Գերագոյն Խորհուրդը ուզէ, կրնայ, առանց նոյնիսկ թուրքերուն բան մը հարցնելու, մեր պահանջմանց նպաստաւոր մեկնութիւն մը տալ այդ տրամադրութեանց: Ասոնցմէ դուրս չորրորդ հաւանականութիւն մըն ալ կը ներկայանայ մտքիս: Գտնելու եղանակ մը, որ փութացնէ նախագահ Ուիլսոնի իրաւարարութեան վճիռը, նկատի առնելով, որ ձմեռը վրայ պիտի գայ, եւ եթէ իրաւարարութիւնը շուտով չըլլայ, երկար ամիսներու կորուստը շատ սուղի պիտի նստի մեր ժողովուրդին, որ արդէն իսկ ծանրագոյն թշուառութեան մը մատնուած է: [Արդեօք կարելի չէ՞ միջոց մը խորհիլ, որ շուտ կատարուի իրաւարարութիւնը: Դաշնագրին 89-րդ յօդուածը կ'ըսէ, թէ Թուրքիա եւ Հայաստան նախագահ Ուիլսոնի իրաւարարութեան կ'ենթարկեն ծանօթ չորս նահանգներուն մէջ Հայաստանի եւ Թուրքիոյ սահմաններուն որոշումը, ինչ որ կ'ենթադրէ թէ որքա՛ն հայոց, այնքան նաեւ թուրքերուն հաւանութիւնը անհրաժեշտ է որպէսզի նախագահ Ուիլսոն տայ իր վճիռը: Արդ, եթէ կարելի ըլլայ դաշնագրին այդ յօդուածէն Թուրքիոյ անունը հանել, այն ատեն այլեւս թուրքերու հաւանութեան խնդիր չի մնար եւ նախագահ Ուիլսոն կրնայ առանց աւելի երկարածգելու յայտնել իր վճիռը: Չեմ ըսեր, թէ ասիկա դիւրին բան մըն է, որովհետեւ տարակոյս չկայ, որ այս տեսակ փոփոխութիւն մը կատարել տալու համար անհրաժեշտ է ունենալ բոլոր Դաշնակից պետութեանց հաւանութիւնը: Բայց կը խորհիմ, թէ արդեօք կարելի չէ՞ գոնէ փորձ մը ընել այս ուղղութեամբ]:[1]

[1] Քառակուսի չակերտներու մէջ առնուած հատուածները, այս և յետագայ էջերուն մէջ, վերջէն ջնջեց Նորատունկեան էֆենտի:

Պօղոս Նուպար Փաշա. Որոշ կ'երեւայ այսօր, թէ Դաշնակիցները համաձայն են կէտի մը մասին. այսինքն թէ՝ նախագահ Ուիլսոնի իրաւարարութիւնը պէտք է տեղի ունենայ դաշնագրին ստորագրութենէն ետք: Հետեւաբար, հարկ պիտի ըլլայ սպասել մինչեւ ստորագրութիւնը, որով ոչինչ կարելի է ընել Ձեր առաջարկած ուղղութեամբ: Բայց եթէ թուրքերը մերժեն դաշնագիրը ստորագրել, անշուշտ այդ պարագային կարելի է աշխատիլ այդ փոփոխութիւնը ընելու համար:

Նորատունկեան էֆենտի. Քիչ մը առաջ, սակայն ըսիք թէ Գերագոյն Խորհուրդը կարգ մը փոփոխութեանց պիտի ենթարկէ դաշնագիրը:

Պօղոս Նուպար Փաշա. Այո՛, բայց այդ փոփոխութիւնները պիտի ըլլան թուրքերու կողմէ եղած առաջարկութեանց հետեւանքով: Գալով մեզի, ինչպէս Սբայի մէջ մեր տեսած բոլոր անձնաւորութիւններն ըսին, չենք կրնար փոփոխութեան առաջարկ ընել հիմա, քանի որ դաշնագիրը թուրքերուն պարտադրող կողմերէն մէկն ենք: Ուրիշ կէտ մը կայ նկատառութեան արժանի: Դաշնակիցները Սան Ռէմոյի մէջ որոշեցին նախագահ Ուիլսոնի իրաւարարութեան յանձնել ծանօթ նահանգներուն մէջ սահմաններու որոշումը: Անշուշտ այդ միջոցին թուրքերուն հաւանութեան պէտք չտեսան: Հիմա ալ կարելի ըլլայ թերեւս իրաւարարութիւնը ընել եւ թուրքերուն ըսել, որ եղաւ:

Նորատունկեան էֆենտի. Դժբախտաբար, Դաշնակիցները համամիտ չեն այդ մասին:

Պօղոս Նուպար Փաշա. Այո՛, իրաւունք ունիք:

Նորատունկեան էֆենտի. [Այս օրուան կացութիւնը սա է, որ թուրքերը կը մերժեն սկզբունքով իրաւարարութիւնը, քանի որ Ռուսական Հայաստանէն դուրս Հայաստան ճանչնալ չեն ուզեր: Եթէ կարելի ըլլայ 89-րդ յօդուածին մէջէն ջնջել Թուրքիոյ անունը, այն ատեն կարելի է իրաւարարութիւնը ընել տալ: Այս տեսակ լուծում մը անհրաժեշտ է, որպէսզի ժամ առաջ կատարուի իրաւարարութիւնը: Յետաձգում մը աղէտ մըն է մեր ժողովուրդին համար. պէտք է որ ժողովուրդը օր առաջ իր հողին վրայ ըլլայ, գաղթականները ազատին թափառական կենցաղէն, կարենան հաստատուիլ, ի վիճակի ըլլան աշխատելու, արդիւնաբերելու]:

Պօղոս Նուպար Փաշա. Եթէ թուրքերը մերժեն ստորագրել, ինչպէս Պ. տը Քէ կը կարծէ, թէ պիտի մերժեն, այն ատեն կարելի է ատոր վրայ խորհիլ:

Նորատունկեան էֆենտի. Դժբախտաբար՝ ժամանակը կ'անցնի:

Պօղոս Նուպար Փաշա. Ի՞նչ կրնանք ընել:

Պ. Ա. Չօպանեան. Նախորդ նիստին, «Պահակ»-ի մէկ յօդուածին առթիւ առաջարկ մը ըրի, որ դիմում ըլլայ Պ. Վէնիզէլոսի՝ Թրքահայաստանի գրաւման համար: Այսօր ատենագրութեան ընթերցումէն հասկցայ, որ ժողովը մերժեր է այս առաջարկը, Մինչդեռ այդ տպաւորութիւնը չէի ունեցած նախորդ նիստին: Ամեն պարագայի մէջ, կը կրկնեմ այդ առաջարկութիւնս: Հետաքրքրական պիտի ըլլար անշուշտ գիտնալ, թէ Պատուիրակութեան Նախագահը ի՞նչ կը խորհի այդ մասին:

Պօղոս Նուպար Փաշա. Սբայի մէջ Պ. Վէնիզէլոսի հետ շատ աւելի երկար խօսեցանք այն բոլոր հաւանականութեանց մասին, որոնք կրնային ծագիլ: Յունական բանակներու յաջողութիւնը շնորհաւորելով, մաղթեցի, որ շուտով տարածուին մինչեւ էնկիւրի: Պ. Վէնիզէլոս ըսաւ, թէ այդքան հեռու չպիտի երթան, որովհետեւ բաւարար ոյժ չունին: Թերեւս մինչեւ Պրուսա յառաջանանք, ըսաւ, եւ անկէ ի վեր իմացանք, որ մտեր են արդէն Պրուսա: Պ. Վէնիզէլոս յիշեցուց, թէ Թրակիոյ մէջ ալ գործ ունին, եւ թէ քանի որ Գերագոյն Խորհուրդը 10 օրուան պայմանաժամ տուած է թուրքերուն, այդ 10 օրերէն պիտի օգտուին յոյները՝ Թրակիոյ մէջ ալ իրենց գործը լրացնելու համար: Հարցուցի, թէ ի՞նչ պիտի ընեն, եթէ թուրքերը մերժեն ստորագրել: Այն ատեն, ըսաւ, թերեւս պէտք ըլլայ որ յառաջանանք, եւ ատոր համար անհրաժեշտութիւն պիտի ծագի նոր ոյժեր ղրկելու, թերեւս 3-4 զօրաբաժին, այսինքն՝ մօտաւորապէս 60 000 զօրք: Հարցուցի նաեւ, թէ Կիլիկիա ալ պիտի երթա՞ն: Ո՛չ, պատասխանեց, բայց թերեւս

յառաջանանք մինչեւ էնկիւրի: Հարցուցի նաեւ, թէ մտադի՞ր են գոնէ Տրապիզոնէն զինուոր ցամաք հանել, եթէ դէպքերը անհրաժեշտ դարձնեն այդ կողմէն կատարուելիք գործողութիւն մը: Այս մասին հաստատական պատասխան տուաւ, յարելով, թէ ինք բնաւ յաւակնութիւն չունի Տրապիզոնի մասին, զոր երբեմն սիրով Հայաստանի թողուց, վստահ ըլլալով, թէ հայերը պիտի գիտնան գնահատել այս զոհողութիւնը: Ապահովցուցի զինքը, թէ մենք բնաւ ցանկութիւն չենք յայտնած Տրապիզոնը անպատճառ ունենալու, եւ թէ Ռիզէն ու Աթենէն կը բաւեն մեզի՝ Սեւ Ծովուն վրայ:

Տոքթ. Նեւրուզ. Պ. Վէնիզէլոս Պ. Սհարոնեանի ըսաւ, որ եթէ Տրապիզոն զինուոր հանելու պէտք ծագի, ինք մինակը չի կրնար այդ արշաւանքին ձեռնարկել, եթէ հայկական բանակն ալ չշարժի դէպի էրզրում, եւ հարցուց, թէ հայերը գոնէ մէկ զօրաբաժին կրնա՞ն տրամադրել: Պ. Սհարոնեան պատասխանեց, թէ հայկական պետութիւնը կրնայ աւելին ալ տրամադրել: Զօրավար Կորկանօֆ աւելցուց, թէ Հայաստան կրնայ ի հարկին 40-50 000 զինուոր տալ:

Նորատունկեան էֆենտի. Անգլիոյ կողմէն ղրկուելիք ռազմանիւթն ու զէնքերը գացի՞ն:

Տոքթ. Նեւրուզ. Պ. Սհարոնեան հարցուց նաեւ, թէ կարելի չէ՞, որ Յունաստանի կառավարութիւնն ալ մաս մը ռազմանիւթ եւ զէնք տայ հայոց: Պ. Վէնիզէլոս պատասխանեց, թէ ատիկա չի կրնար, որովհետեւ իրենք ալ պէտք ունին: Աւելցուց նաեւ, թէ Դաշնակիցները յիմարութիւն կ'ընեն ոչնչացնելով Գերմանիոյ զէնքերն ու ռազմանիւթերը, մինչդեռ կրնային առնել եւ պէտք ունեցող Դաշնակից փոքր պետութեանց տալ:

ՕՐԱԿԱՐԳ

1. Հարցում Պ. Վ. Թէքէեանի՝ Ամերիկայի մէջ հոգատարութեան խնդրին նկատմամբ եղած յայտարարութեան մասին

Ազգ. Պատուիրակութեան Նախագահ Պօղոս Նուպար Փաշա հակիրճ կերպով մը պատասխանեց այն հարցման, զոր Պ. Վ. Թէքէեան Պատուիրակութեան ուղղած էր Համագումարի Յուլիս 5-ի նիստին մէջ՝ հոգատարութեան հարցին նկատմամբ Հանրապետութեան Ամերիկայի ներկայացուցչին կողմէ եղած յայտարարութեան մասին:

Պօղոս Նուպար Փաշա. Ժողովիդ յայտնած էի արդէն, թէ երբ Պ. Սվազլըի մէկ հեռագրէն իմացանք, որ Խորէն Եպիսկոպոս եւ Պ. Փաստրմաճեան, Պ. Գարտաշեանի հետ ծանօթ յայտարարութիւնը ըրած են Ամերիկայի ծերակուտականներու, իսկոյն Միացեալ Պատուիրակութեանց մէկ նիստին մէջ որոշեցինք հերքել եղած յայտարարութիւնը: Նոյն ատեն՝ Ազգ. Պատուիրակութեան Ամերիկայի ներկայացուցիչէն հեռագրով խնդրեցի մանրամասնութիւններ, եւ Պ. Սվազլը ի պատասխան ղրկեց հեռագիր մը, որ կարդացուեցաւ այստեղ: Այդ հեռագրին մէջ՝ Պ. Սվազլը կը հաղորդէր, թէ Պ. Փաստրմաճեան կը հերքէ ըսուածը: Ատոր վրայ հեռագրեցի Պ. Սվազլըի, թէ ինչպէ՞ս առանց խնդիրը խորապէս քննելու, այս աստիճան ծանրակշիռ լուր մը հաղորդած է: Ատոր վրայ Պ. Սվազլը պատասխանեց, թէ ինք թեթեւօրէն չէ հեռագրած, այլ հեռագիրը գրած է այն ատեն միայն, երբ ամերիկացի ծերակուտականներ, մասնաւորաբար Պ. Սմիթ, հաւաստած են իրեն, թէ Պ. Փաստրմաճեան իրապէս յայտարարած է, որ հայերը ամերիկեան հոգատարութիւնը չեն ուզեր, որուն վրայ իրենք ալ, Ծերակոյտին մէջ, նոյնը կրկնած են: Իրողութիւնը այս է: Պ. Փաստրմաճեան հիմա կը պնդէ, թէ ճիշդ չէ ծերակուտականներուն ըսածը, թէ ինք՝ նկատելով որ Հայաստանի հոգատարութիւնը չպիտի ընդունուի, Ամերիկայի օգնութիւնը ուզած էր հայկական պետութեան համար:

2. Վերակազմութիւն Ազգ. Պատուիրակութեան

Ազգ. Պատուիրակութեան Նախագահ Պօղոս Նուպար Փաշա պարզեց Պատուիրակութեան տեսակէտները Տիրէքթիւներու Յանձնաժողովին այն առաջարկութեանց մասին, զորս Ժողովը քուէարկած էր, ինչպէս նաեւ այն միւս առաջարկութեանց նկատմամբ, զորս Ժողովն ընդունած էր նախորդ նիստերու ընթացքին:

Պօղոս Փաշա Տիրէքթիւներու Յանձնաժողովին 9-րդ առաջարկութեան մասին անգամ մըն ալ կրկնեց, թէ Պատուիրակութեան համար անկարելի է ուղղակի բանակցութիւն կատարել Երեւանի կառավարութեան հետ, քանի որ կառավարութիւնը չէր իսկ պատասխանած Պատուիրակութեան՝ երբ այս վերջինը ծանուցած էր, թէ կ'ընդունի իր առաջարկութիւնները:

Ժողովը որոշեց այս մասին ազատ թողուլ Պատուիրակութիւնը, որ յարմար առիթ մը ներկայացած միջոցին, կամ ըստ իրեն պատշաճ նկատուող ուեւէ միջոցով աշխատի դարձեալ այդ միութիւնը գոյացնելու: Այս մտածմամբ՝ կարգ մը բարեփոխութեանց ենթարկուեցաւ Տիրէքթիւներու Յանձնաժողովին 9-րդ առաջարկութիւնը եւ ստացաւ հետեւեալ վերջնական ձեւը.

«7-րդ. Միացեալ կառավարութիւն. Այն պարագային, որ Հայկական կառավարութիւնը, մինչեւ դաշնագրին ստորագրութիւնը ետ չառնէ իր մերժումը՝ Պ. Խատիսեանի Յունուար 25-ին ստացուած նամակին առաջարկութեանց հիման վրայ Միացեալ կառավարութիւն կազմելու մասին, Ազգային Պատուիրակութիւնը պիտի կրնայ ձեռնարկել Արեւմտահայ նոր Համագումարի մը ընտրութեան, որ ձեռք պիտի առնէ անհրաժեշտ միջոցները՝ արեւմտեան հայոց շահերուն պաշտպանութեան համար»:

Այս ձեւով քուէարկութեան դրուելով, 13 պատգամաւորներու ներկայութեան, առաջարկութիւնը ընդունուեցաւ միաձայնութեամբ:

Պօղոս Նուպար Փաշայի առաջարկութեան վրայ, բարեփոխութեան ենթարկուեցաւ նաեւ Տիրէքթիւներու Յանձնաժողովին 8-րդ առաջարկութիւնը եւ ստացաւ հետեւեալ վերջնական ձեւը.

«8-րդ. Կամաւորական բանակ. Պատուիրակութիւնը պէտք է դիմէ Դաշնակից կառավարութիւններուն կամ անոնցմէ մէկուն, խնդրելով, որ իրեն օժանդակեն արեւմտահայ կամաւորական զօրամասեր կազմելու, Տաճկահայաստանի գրաւման գործածուելու համար: Այս զօրամասերը կը հաւաքուին ու կը մարզուին ուեւէ base-ի մը մէջ, ու երբ պատրաստ ըլլան, կը գործածուին՝ ըստ Հանրապետութեան բանակին Սպայակոյտի հրահանգներուն»:

Այս ձեւով քուէարկութեան դրուելով, 13 պատգամաւորներու ներկայութեան, առաջարկութիւնը ընդունուեցաւ միաձայնութեամբ:

Թէ' Տիրէքթիւներու Յանձնաժողովին մնացեալ առաջարկութեանց եւ թէ' Համագումարին կողմէ քուէարկուած միւս առաջարկութեանց մասին՝ Պօղոս Նուպար Փաշա յայտնեց, թէ կը յարմարին Պատուիրակութեան տեսակէտներուն:

Կովկաս գտնուող արեւմտահայ փախստականներու համար կատարուելիք փոխառութեան հարցն ալ, որու մասին Համագումարն իր Յուլիս 9-ի նիստին մէջ քուէարկած էր Պ. Չօպանեանի մէկ առաջարկութիւնը, քննուեցաւ նոյն կերպով, եւ Պատուիրակութեան Նախագահ Պօղոս Նուպար Փաշա խոստացաւ գործադրել զայն, երբ նպաստաւոր առիթ մը ծագէր: Այդ առթիւ, Պօղոս Փաշա յայտնեց, թէ քանի մը օր առաջ այցելութիւն ընդունեց Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյց Յանձնախումբին ընդհանուր քարտուղար Մր. Վեքրէի: Մր. Վեքրէ, որ աջ բազուկն է նոյն Յանձնախումբի նախագահ Տոքթ. Պարթընի, Երեւան երթալու համար անմիջապէս մեկնելու ստիպուած, խնդրեր է իրմէ, որ մինչեւ կայարան իրեն ընկերանայ: Ճամբան, յարեց Պօղոս Փաշա, Մր. Վեքրէ յայտնեց, թէ Մերձաւոր Արեւելքի անունով հաւաքուած

նպաստի գումարը հասած է 50 միլիոն տոլարի, որուն կարեւորագոյն մասը պիտի յատկացուի հայ ժողովուրդին պէտքերուն, եւ թէ ինք Երեւան կը մեկնի այդ գումարին գործածութեան պայմանները ուսումնասիրելու համար: Մր. Վեքրէ շատ համակրութեամբ խօսէր է հայոց մասին, սրտապնդելով Պօղոս Փաշան, եւ յայտնելով, թէ մինչեւ Սեպտեմբեր պիտի վերադառնայ, գործնական ճամբու մը մէջ դնելու համար ամերիկեան նպաստի գործը:

Ներկայ պատգամաւորները միաձայնութեամբ պաշտօն յանձնեցին Դիւանին, որ յանուն Համագումարին, մասնաւոր հեռագրով մը երախտագիտութիւն յայտնէ Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյց Յանձնախումբի Նախագահ Տոքթ. Պարթընի եւ, անոր միջոցաւ, բովանդակ ամերիկեան ժողովուրդին:

Համագումարը կարծիքներու փոխանակութիւն մը ունեցաւ Ազգ. Պատուիրակութեան յառաջիկայ գործունէութեան համարատուութեան մասին, եւ ի վերջոյ, միաձայնութեամբ ընդունեց հետեւեալ որոշումը.

«Համարատուութիւն.- Ազգ. Պատուիրակութիւնն իր համարատուութիւնը պիտի ընէ Հայաստանի Միացեալ կառավարութեան, եթէ կազմուած ըլլայ. իսկ եթէ կազմուած չըլլայ եւ պէտք ծագի նոր Համագումար հրաւիրելու, համարատուութիւնը պիտի ընէ այդ նոր Համագումարին»:

Դուրեան Արքեպիսկոպոս այս առթիւ փափաք յայտնեց, որ Պատուիրակութիւնը ասկէ ետք քիչ մը աւելի տեղեակ պահէ հեռաւոր վայրեր գտնուող հայերը, ինչպէս, օրինակի համար, Պոլսոյ հայութիւնը, օրուան քաղաքական անցուդարձերուն, որոնց մասին ամեն հայ միշտ անձկութեամբ կը սպասէ մանրամասնութեանց:

Պօղոս Նուպար Փաշա խոստացաւ գոհացում տալ այս բաղձանքին. եւ արդէն, ըսաւ, Ս. Պատրիարքին մեկնելէն վերջ շաբաթը անգամ մը կանոնաւոր կերպով տեղեկութիւն կու տամ իրեն:

Համագումարը, 12 պատգամաւորներու ներկայութեան, միաձայնութեամբ հետեւեալ որոշումը անցուց այս առաջարկութեան մասին.

«Յարաբերութիւն ժողովուրդին հետ.- Ազգ. Պատուիրակութիւնը, կարելիութեան սահմանին մէջ, կանոնաւոր կերպով տեղեկութիւն կու տայ քաղաքական անցուդարձերու մասին, հայ գաղութներու կեդրոնական պատասխանատու մարմիններուն»:

Պ. Ա. Թէրզիպաշեան. Բաժնուելէ առաջ՝ պիտի առաջարկէի, որ Համագումարը, ընդհանուր արեւմտահայոց ներկայացուցիչը եղող Ազգ. Պատուիրակութեան Նախագահին իրաւունք տար յանուն Թուրքիոյ հայոց ստորագրելու դաշնագիրը:

Պ. Ա .Չօպանեան. Ուրախ եմ, որ Պ. Թէրզիպաշեան կը վերադառնայ այս հարցին, զոր ես ինքս դրի Համագումարին առջեւ եւ զոր շեշտեցի մէկ քանի անգամ: Անհրաժեշտ է արդարեւ, որ ինչքան ալ ըլլայ Թրքահայաստանէն հայ պետութեան կցուելիք մասը, թրքահայութեան ներկայացուցիչը ստորագրէ դաշնագիրը, որպէսզի որոշ ըլլայ, թէ Թրքահայաստանի մէկ մասին Ռուսահայաստանի կցումը չէ, որ տեղի կ'ունենայ, այլ՝ Դաշնակիցներու կողմէն անկախութիւն կը տրուի ուղղակի Տաճկահայաստանին, թէպէտ մասամբ, ինչպէս Ռուսահայաստանին, եւ թէ Միացեալ Հայաստանի մը այդ կերպով կազմուելուն թրքահայութիւնն ու ռուսահայութիւնը իրենց ներկայացուցիչներով անգամ մը եւս այդ միացման համար իրենց կամքը յայտնած են:

Նորատունկեան էֆենտի. Այս խնդիրը արդէն անգամ մը եկաւ Ժողովին: Ըսի, որ Համագումարին կողմէ Պատուիրակութեան թուղթ տրուելով խնդիրը չի լմննար, որովհետեւ, օրինական տեսակէտով, պետութիւնները չեն կրնար ընդունիլ: Դաշնագրի ստորագրութիւնը կ'ըլլայ պետութեան մը անունով եւ պետութեան մը կողմէ տրուած իրաւասութեան գրով: Ո՛չ Համագումարը, ո՛չ ալ Պոլսոյ Համազգային Ժողովը

պետութիւններ չեն, որոնց տալիք իրաւասութեան գիրը օրինապէս ընդունուեր: Արդէն դաշնագիրն ալ շատ որոշ է այս մասին: Սկիզբը դրուած է ստորագրող կողմերու անունը: Հայոց համար՝ այդ իրաւունքը տրուած է Հայկական Հանրապետութեան, որուն կողմէ իրաւասութեան գիր պիտի ունենան այն անձերը, որոնք պիտի ստորագրեն դաշնագիրը:

Պօղոս Նուպար Փաշա. Ասոր մէջ անձի խնդիրը պէտք է ի բաց թողուլ եւ նկատի առնել լոկ սկզբունքի տեսակէտը: Եթէ Համագումարը հոգ չընէր, որ թրքահայերուն ալ անունով ստորագրուի դաշնագիրը, լա՛ւ: Բայց կը կարծեմ, թէ թրքահայերուն ալ անունով ստորագրուիլը անհրաժեշտութիւն մըն է, որուն համար ամեն բան պէտք է փորձել: Մեր խնդիրը շատ անբնական, բոլորովին բացառիկ պայմաններու մէջ հետապնդուեցաւ: Մինչեւ այսօր ունեցանք երկու ներկայացուցչութիւն, մէկը՝ Թուրքիոյ հայոց, միւսն ալ՝ Հանրապետութեան անունով: Այս բացառիկ դրութիւնը ընդունեցին պետութիւնները, անանկ որ կարելի եղաւ դիմումներ ընել, գիրեր գրել, խօսակցութիւններ ունենալ այդ երկուութեամբ: Թրքահայոց շահը կը պահանջէ, որ այս զանազանութիւնը երեւայ եւ նուիրագործուի նաեւ դաշնագրին մէջ, ստորագրութեան առթիւ: Ասիկա նախազգուշական միջոց մըն է թրքահայերուն համար: Եթէ հիմակուց իրենց դատին առանձնայատկութիւնը հռչակուի, վաղը միւս օր, երբ պարագաները այնպէս բերեն, որ վերստին աշխատելու պէտք ծագի իրենց փրկութեան համար, իրենց ներկայացուցիչները իրաւունքի հիմ մը ունենան: Կը կրկնեմ, որ պարզ զգուշական միջոց մըն է ասիկա, չենք գիտեր, թէ պիտի ընդունուի՞ արդեօք տերութեանց կողմէ. բայց վերջապէս կրնանք փորձել:

Պ. Ա. Չօպանեան. Եթէ ասիկա չընենք, Պ. Ահարոնեան պիտի ստորագրէ մինակը, ինչ որ պիտի նշանակէր, թէ Ռուսիոյ հայերը իրենց կը միացնեն Թուրքիոյ հայերը, մինչդեռ, ընդհակառակը, այս վերջիններն են, որ կը միանան Հանրապետութեան:

Նորատունկեան էֆենտի. Մինչեւ այսօր գոյութիւն ունեցող անբնական ու բացառիկ դրութիւնը կը դադրի գոյութիւն ունենալէ Դաշնագրին ստորագրութեան օրը: Կը զարմանամ, որ ստորագրութեան այս խնդիրը կը շփոթուի Հայկական Դատին հետապնդութեան խնդրին հետ: Երկուքը իրարմէ բոլորովին տարբեր բաներ են: Մինչեւ ստորագրութիւնը կարելի է նոյնիսկ ամէնէն անբնական եղանակներով հետապնդել մեր Դատը, բայց դաշնագրի ստորագրութիւնը տեղի կ'ունենայ որոշ բրոթոքոլի մը համաձայն, որ իր անխախտ կանոններն ունի եւ որոնք պէտք է տառապէս յարգուին ստորագրութեան միջոցին: Եթէ դաշնագիրը ստորագրելու համար իրաւասութեան գիր մը տանք Համագումարին կողմէ՝, կրնայ հարցուիլ, թէ Համագումարը ինք ի՞նչ իրաւասութիւններ ունի առ այդ, քանի որ պետութիւն մը չէ եւ իր կազմութիւնը թերի է: Գիտնալով, թէ ըստ միջազգային օրէնքներու, ի՛նչ են «բրոթոքոլէս» կանոնները եւ թէ տարեգրութեանց մէջ չկայ նախընթաց օրինակը, ես չեմ կրնար այս տեսակ թուղթ մը ստորագրելու հաւանիլ: Եթէ անպատճառ կը փափաքիք, որ այդ թուղթը տրուի Պատուիրակութեան, ուրիշ մը ստորագրելու է զայն, որովհետեւ չեմ ուզեր, որ ըսեն, թէ ինչպէ՞ս Նորատունկեան ալ, որ գիտէր այս մասին գոյութիւն ունեցող բոլոր իրաւական կանոնները, ինքզինքին ներեր է այդ թուղթը ստորագրելու: Այս տեսակ իրաւունք մը Փաշային կրնայ տալ լոկ Հայկական կառավարութիւնը:

Պօղոս Նուպար Փաշա. Դաշնագրին յանձնման արարողութեան հրաւէրին առթիւ սակայն կարելի եղաւ արժեցնել թրքահայոց անունով առանձին ներկայացուցչութիւն մը: Արդէն անգամ մը այս Ժողովին մէջ պատմած եմ, թէ ինչպէ՞ս եղաւ այդ հրաւէրը: Արտաքին Գործոց Նախարարութենէն թէլէֆօն եղած էր ինծի, թէ

* Այստեղ ըսաւ նաև. «... պարզապէս ծիծաղելի կը դառնանք»: Վերջէն ջնջել տուաւ այս բառերը:

հրաւէրը ստացա՞ք: Չէի գիտէր խնդիրը, ելայ գացի Քէ տ'Օրսէ: Այնտեղ յայտնուեցաւ, թէ հրաւէր մը ղրկուած է դաշնագրին յանձնման ներկայ գտնուելու համար, բայց այդ հրաւէրը գացեր է լոկ Պ. Ահարոնեանի: Ատոր վրայ՝ իրենց բացատրեցի, թէ Հանրապետութեան դատէն անկախաբար գոյութիւն ունի թրքահայ դատ մը, թէ ես այդ դատը կը հետապնդեմ եօթ տարիէ ի վեր, պետութեանց հաւանութեամբ, եւ առ այդ իրաւասութեան գիրեր ալ ունիմ, որոնք նոյնպէս ծանօթ են պետութեանց եւ ընդունուած են անոնց կողմէ: Այդ գիրերուն ներկայացումն իսկ բաւեց, որ իսկոյն հրաւէր մըն ալ ինծի ուղղեն:

Պ. Ա. Թէրզիպաշեան. Պէտք է վերջապէս պատմական ակտ մը ունենանք ձեռքերնիս, որպէսզի կարենանք ըսել, թէ բան մը ըրինք թրքահայոց համար: Եւ այդ ակտը ուրիշ բան չի կրնար ըլլալ, եթէ ոչ դաշնագրին ստորագրութիւնը թրքահայոց անունով:

Նորատունկեան էֆենտի. Դաշնագրին յանձնման արարողութեան հրաւէրը եւ դաշնագրին ստորագրութիւնը տարբեր բաներ են եւ տարբեր կանոններու ենթակայ: Կը կրկնեմ, որ ստորագրութեան միջոցին անհրաժեշտ է Հանրապետութեան կառավարութենէն իրաւասութեան գիր մը ունենալ, քանի որ անոր անունով է միայն, որ պիտի ստորագրուի: Միացեալ Պատուիրակութեան մէկ նիստին մէջ, որուն ներկայ էր նաեւ Պ. Աճէմօֆ, Պ. Ահարոնեան տրամադրութիւն յայտնեց, նոյնիսկ ինքնաբերաբար, գրելու այդ մասին Հանրապետութեան կառավարութեան, եւ ես ալ շնորհաւորեցի զինքը. Փաշան ալ համակերպեցաւ այդ օրը: Դարձեալ այս ճամբով պէտք է գիր մը բերել տանք Փաշային համար, որպէսզի իրապէս կարենայ ստորագրել դաշնագիրը:

Պօղոս Նուպար Փաշա. Պէտք չկայ կարծեմ ըսելու, թէ ի՞նչ պիտի ըլլայ արդիւնքը: Այո՛ պիտի ըսեն եւ բան մըն ալ չպիտի ընեն: Փորձով գիտենք ասիկա: Մնաց որ՝ եթէ Միացեալ կառավարութիւնը կազմուած չըլլայ, չեմ ուզեր դաշնագիրը ստորագրել Հանրապետութեան անունով: Ես կը ներկայացնեմ թրքահայերը, եւ մինչեւ որ Միացեալ կառավարութիւնը չկազմուի, չեմ կրնար թրքահայոց դատը կապել Հանրապետութեան:

Նորատունկեան էֆենտի. Մեր մեկնակէտը այս խնդրին մէջ՝ պարզ է: Ամէնքս ալ կը փափաքինք, որ Փաշան ստորագրէ դաշնագիրը յանուն թրքահայոց: Բայց պէտք չէ մոռնանք, որ այսօր չենք գտնուիր այն դիրքին մէջ, ուր կը գտնուէինք դեռ քիչ առաջ: Այսօր Հայկական Պետութիւն մը կայ, իրաւապէս ճանչցուած, պետութիւն մը, որ պաշտօնապէս պիտի հրաւիրուի դաշնագիրը ստորագրելու: Ինչպէ՞ս կրնանք այդ պետութեան պաշտօնական ներկայացուցչին քով դնել ուրիշ ներկայացուցիչ մը՝ իբրեւ երկրորդ Հայկական Պետութիւն*: Երեք հաւանականութիւններ կան, որոնք կրնան ծագիլ այս պայմաններուն մէջ, եւ զորս պէտք է նկատի առնենք որոշում մը տալէ առաջ: Նախ՝ թուրքերը կրնան մերժել: Երկրորդ՝ նոյն ինքն Հանրապետութեան կառավարութիւնը կրնայ առարկութիւն ընել: Եւ երրորդ՝ Տէրութիւնները կրնան խնդիր հանել, թէ թրքահայոց անունով կազմուած պետութիւն մը չկայ, որպէսզի անոնց ներկայացուցիչը իրաւունք ունենայ դաշնագիրը ստորագրելու: Այս երեք հաւանականութեանց առջեւ ալ հաւասարապէս անզօր ենք**: Կարծեմ աւելի խոհականութեամբ վարուած կ'ըլլանք Փաշային յանձնարարելով, որ այս մասին իրաւաբաններու կարծիքին դիմէ եւ անոնց թելադրութեանց համեմատ շարժի: Իմ

* Այստեղ աւելցուց նաեւ. «...մենք որ չունինք այն պաշտօնական հանգամանքը, զոր ունի Հայկական Պետութիւնը, և որ բացարձակապէս անհրաժեշտ է որպէսզի մեր ներկայացուցիչն իրաւունք ունենայ դաշնագիրը ստորագրելու»: Վերջէն ջնջեց:

** Այստեղ ըսաւ նաեւ հետեւեալը. «...ըսի արդէն, որ եթէ ուզէք՝ կ'ընէք, բայց ես չեմ ստորագրեր, մինչեւ որ Հանրապետութեան կառավարութիւնը չհաւանի»: Վերջէն ջնջեց այս մասը:

մասիս, վստահ եմ, թէ բոլորն ալ պիտի ըսեն, որ անկարելի է: Բայց վերջապէս փորձ մըն է, թող ըլլայ: Գալով ստորագրութեան համար Փաշային պաշտօն տալու խնդրին, ըսի արդէն, թէ Հայ Հանրապետութեան գործակցութիւնն անհրաժեշտ է:

Պօղոս Նուպար Փաշա. Այդ պայմանով չեմ ստորագրեր, եւ պարզեցի արդէն պատճառը: Թող պատասխանատուութիւնը առնեն անոնք, որ կը հակառակին[***]:

Պ. Ա. Չօպանեան. Այս Համագումարը մշտապէս Պ. Ահարոնեանի սարսափին տա՞կ պիտի մնայ:

Տոքթ. Նեւրուզ. Քանի որ Պ. Ահարոնեանի անունը մէջտեղ դրուեցաւ, ըսեմ թէ ինչ կը մտածէ ինք անձնապէս: Պ. Ահարոնեան, իր խոստումին համաձայն, կառավարութեան պիտի հեռագրէր, որ Պօղոս Փաշան արտօնեն դաշնագիրը ստորագրելու, բայց այդ օրերուն պոլշեւիզմի վտանգը շատ մեծ էր, լուր չկար Կովկասէն, յայտնի չէր, թէ դէպքերը ի՞նչ ընթացք պիտի առնէին, եւ ետ կեցաւ: Նոյնիսկ Պ. Աճէմօֆ եւ ուրիշ անձնաւորութիւններ խորհուրդ տուին, որ այդ անորոշ կացութեան մէջ ետ կենայ ոեւէ ձեռնարկ ընելէ: Բայց անձնապէս Պ. Ահարոնեան այն կարծիքը յայտնեց, թէ Կաթողիկոսին եւ Կ. Պոլսոյ Համազգային Խորհուրդին կողմէ Փաշային տրուած իրաւասութեան գիրերը այնքան վաւերական չեն, որքան պիտի կրնար ըլլալ Համագումարին կողմէ տրուելիք իրաւասութեան գիր մը: Պատճառ մը չկայ, ուրեմն, որ այդ տեսակ գիր մը չտանք Փաշային:

Նորատունկեան էֆենտի. Կը հաւանիմ մէկ պայմանով: Գիրը պատրաստ կ'ըլլայ, Փաշան դիմում կ'ընէ Գերագոյն Խորհուրդին մօտ, եւ երբ ապահովութիւն ստանայ, թէ Համագումարին իրաւասութեան գրով իրեն իրաւունք պիտի տան դաշնագիրը ստորագրելու թրքահայոց անունով, այդ պարագային կը ստորագրեմ:

Թէ՛ Ազգ. Պատուիրակութեան Նախագահը եւ թէ՛ Համագումարը համամիտ գտնուեցան Նորատունկեան էֆենտիի:

Պ. Տէր-Ստեփանեան այդ մասին կարդաց հետեւեալ առաջարկութիւնը. «Ազգ. Համագումարը «մանտա» կու տայ Ազգ. Պատուիրակութեան Նախագահին՝ որպէսզի այն պարագային, երբ դաշնագիրը նուազագոյն չափով գոհացում տայ արեւմտահայոց պահանջներուն, անհրաժեշտ դիմումներն ընէ իրաւունք ստանալու համար դաշնագիրը ստորագրելու յանուն Թուրքիոյ հայոց ներկայացուցիչ Համագումարին:

Միւս կողմէ՝ Համագումարը «մանտա» կու տայ իր Նախագահին, որ այդ նպատակով իրաւասութեան գիր մը յանձնէ, երբ Պատուիրակութեան Նախագահը յաջողի Դաշնագիրը ստորագրելու իրաւունքը ստանալ:

Ն. Տէր-Ստեփանեան»:

Այս առաջարկութիւնը քուէի դրուեցաւ 11 պատգամաւորներու ներկայութեան եւ ընդունուեցաւ միաձայնութեամբ:

Համագումարը կարծիքներու փոխանակութիւն մը ունեցաւ Պ. Մ. Պապաջանեանի կողմէ Յուլիս 9-ի նիստին մէջ բերանացի եղած այն առաջարկութեան մասին, որով անբաւական կը նկատէր Ազգ. Պատուիրակութեան անդամներուն թիւը եւ կը յանձնարարէր իրաւասութիւն տալ Պօղոս Նուպար Փաշայի՝ որպէսզի երբ պարագաները անհրաժեշտ դարձնեն, cooptation-ի դրութեամբ նոր անդամներ աւելցնէ Պատուիրակութեան:

Պօղոս Նուպար Փաշա. Կը հաւանիմ այս յանձնարարութիւնը՝ եթէ առանց պայմանի տրուի: Ըսի արդէն, թէ մեծ զոհողութիւն մը ըրի՝ հաւանելով, որ Պատուիրակութեան անդամներուն թիւը 4-ի իջնէ: Չէի կրնար ուրիշ կերպ ընել, որովհետեւ այլապէս անհնար պիտի դառնար ոեւէ համաձայնութիւն

[***] Փաշան աւելցուց նաեւ՝ ակնարկելով Նորատունկեան էֆենտիի. «Ինք չուզէր, որ ես ստորագրեմ»: Նորատունկեան էֆենտի պատասխան չտուաւ և չուզեց, որ այդ խօսքն արձանագրուի:

Հանրապետութեան Պատուիրակութեան հետ: Համագումարիդ յանձնարարութիւնը կը գործադրենք երբ պէտք ծագի, երբ մանաւանդ նոր անպատեհութիւններ չյայտնուին այդ պատճառաւ:

Պ. Մ. Տէրպէտէրեան. Պատուիրակութեան անդամներուն թիւը չորս ըլլալը բնական կը գտնեմ: Կ'առաջարկեմ, որ այդ թիւն անփոփոխ մնայ: Պատուիրակութիւնը կրնայ ուզածին չափ մարդ աւելցնել իրեն, պայմանաւ որ խորհրդականի հանգամանք միայն ունենան:

Պ. Ռ. Որբերեան. Ես այդ կարծիքին չեմ. որչափ անդամ կ'ուզեն թող աւելցնեն՝ եթէ պիտճէն կը ներէ:

Պօղոս Նուպար Փաշա. Կը խնդրեմ, որ այդ մանրամասնութիւնները Պատուիրակութեան թողուք: Կը բաւէ, որ Պատուիրակութեան իրաւունք ճանչցուի նոր անդամներ առնելու, եւ Պատուիրակութիւնը պարագաներուն ներած չափով կը գործադրէ այդ իրաւունքը:

Դուրեան Արքեպ. Անշուշտ երկու անդամէ աւելի չառնելու պայմանաւ:

Պօղոս Նուպար Փաշա. Անշուշտ:

Դուրեան Արքեպ. Եւ կարծեմ արդարութիւն եղած կ'ըլլայ՝ եթէ այդ երկու անդամները ըլլան անոնք, որոնք նախապէս Պատուիրակութեան կ'անդամակցէին եւ այս նոր կարգադրութեան հետեւանքով դուրսը մնացին:

Տոքթ. Նեւրուզ. Չեմ հասկնար, թէ երբ Հանրապետութեան Պատուիրակութիւնը լոկ խորհրդականներով կ'աշխատի, ինչո՞ւ մեր Պատուիրակութիւնը չորսէն աւելի անդամ ունենայ: Խորհրդական՝ կը հասկնամ. ուզուածին չափ կարելի է աւելցնել. բայց նոր անդամ աւելցնելով՝ դարձեալ խնդիր պիտի ծագի երկու Պատուիրակութեանց միջեւ: Մանաւանդ որ որոշուած էր նոյնիսկ խորհրդականներն ընտրել երկու կողմերու համաձայնութեամբ:

Պօղոս Նուպար Փաշա. Ամենեւի՛ն, ամենեւի՛ն, բնա՛ւ այդ տեսակ բանի մը չեմ հաւանած: Ինչպէս որ իրենք իրենց խորհրդականները կ'ընտրեն առանց մեզի բան մը հարցնելու, այնպէս ալ մենք իրաւունք ունինք մեր խորհրդականները ընտրելու առանց իրենց հարցնելու: Ես արդէն մեծ զոհողութիւն մը ըրի միայն երեք աշխատակից ունենալու հաւանելով. բայց խորհրդականներու ընտրութիւնն ալ անոնց հաւանութեան ենթարկել, օ՛հ, ո՛չ:

Պ. Ն. Տէր-Ստեփանեան. Դիտել կու տամ, որ Տոքթ. Նեւրուզ մինչդեռ իմ քննադատութիւններուս պատասխանած ատենը ըսաւ, թէ Պ. Ահարոնեան ոեւէ դեր չէ կատարած մեր Պատուիրակութեան անդամներուն եւ անոնց թիւին սահմանման մէջ, հիմա կ'ըսէ, թէ cooptation-ով Պատուիրակութեան անդամներուն յաւելումը նոր դժուարութիւններ առաջ պիտի բերէ Հանրապետութեան Պատուիրակութեան հետ:

Պ. Ա. Չօպանեան. Նոր Պատուիրակութեան կազմութենէն անմիջապէս յետոյ առիթ ունեցայ տեսնելու Պ. Ահարոնեանը: Պատուիրակութեան մէջ չըլլալուս համար խնդալով կատակ մը ըրաւ: Ես ալ իրեն ըսի, որ կ'երեւայ թէ Հանրապետութեան ապահովութեան համար ատիկա անհրաժեշտ է եղեր: Ասոր վրայ Պ. Ահարոնեան խնդալէ դադրեցաւ եւ հաւաստեց, թէ ինք ո՛չ անձի եւ ո՛չ թիւի մասին պահանջ չէ դրած. ինչպէս անցեալ տարի, այնպէս ալ այս տարի կարծիք մը միայն յայտնած է, թէ Ազգ. Պատուիրակութիւնը երեք անդամ պէտք է ունենայ: Պ. Ահարոնեան աւելցուց, որ ինչպէս անցեալ տարի, Համագումարը չընդունեց իր տեսակէտը եւ երեքի տեղ վեց անդամով Պատուիրակութիւն մը ընտրեց, ու ինք ալ շարունակեց անոր գործակցիլ, Համագումարը այս տարի ալ կրնար ուզածին չափ անդամով ընտրել Պատուիրակութիւնը. ինք իրաւունք չունէր ճնշում մը ընելու: Ասիկա կը պատմեմ՝ պարզապէս ըսելու համար, թէ ամբողջ այս պատմութիւնը ինծի անհասկնալի կը թուի կոր: Ի՞նչ տեսակ համաձայնութիւն է աս, որու մասին ամեն մարդ մէկ մէկ պատմութիւն ունի:

Պօղոս Նուպար Փաշա. Լուծում մը միայն կայ ձեզի համար, սիրելի Պ. Չօպանեան. Դաշնակցական եղէք, եւ ամեն բան կը կարգադրուի:

Ի վերջոյ ներկայացուեցաւ հետեւեալ առաջարկութիւնը.

«Պատուիրակութեան թիւը.- Համագումարը իրաւունք կու տայ Պատուիրակութեան Նախագահին՝ cooptation-ի դրութեամբ երկու նոր անդամներ աւելցնել Պատուիրակութեան, երբ պարագաները անհրաժեշտ դարձնեն այդ յաւելումը»:

Այս առաջարկութիւնը քուէի դրուեցաւ 12 պատգամաւորներու ներկայութեան, եւ ընդունուեցաւ 5-ի դէմ 7 ձայնով:

3. Փակում Ազգ. Համագումարի

Կարդացուեցաւ Պ. Ռուբէն Որբերեանի հետեւեալ առաջարկութիւնը.

«Համագումարի վերջին ժողովին, թոյլ տուէք որ առաջարկ բերեմ, իբր ցոյց յարգանքի, որոշել մի օր, երբ Փարիզի պանդուխտ հայեր, գնացին ուխտի այն մեծաւոր ու գրեթէ մոռցուած գերեզմանին, ուր կը հանգչի աքսորական մեծ հայրենասէրը Գրիգոր Օտեան: Բէռ Լաշեզի այդ շիրմին շուրջ հաւաքուելով, պիտի յիշուին միասնաբար, բոլոր այն միտքի հսկաներն ու քնարի վարպետները, Զօհրապէն մինչեւ Սիամանթօ, Զարդարեանէն մինչեւ Վարուժան, որ ինկան պարտականութեան փշալից ճամբուն վրայ, աչքերնին կիսաբաց, կարօտովն հայրենի ազատութեանց: Ու Համագումարի կողմէն պսակ մը, եթէ կը զգան հոգիներ, ինչպէս կը հաւատար Օտեան, գերագոյն հրճուանքը պիտի առթէր իր անմխիթար ստուերին, բերելով հաւաստիքը, թէ վերածնած հայրենիքը պիտի չմոռնայ երբեք իր մեծ զաւակները, որ կեանքերնին զոհեցին ազատութեան բագինին վրան:

Ռ. Որբերեան»:

Նախագահ Գաբրիէլ Էֆենտի Նորատունկեան յուզումով ոգեկոչեց այս առթիւ մեծանուն ազգային գործիչին, ինչպէս նաեւ անոր ժամանակակից ու գործակից ազգային մեծ դէմքերուն յիշատակը: Այս պատեհութեամբ յիշեց, թէ ասկէ առաջ երկու անգամ այցելած էր Օտեանի շիրմին: Առաջին անգամուն շատ անխնամ գտած էր զայն. երկրորդ անգամուն միայն տեսած էր որ քիչ մը խնամք տարուած է:

Պ. Չօպանեան յայտնեց, թէ Օտեանի շիրիմը խնամուած էր Պ. Մինաս Չերազի շնորհիւ:

Նախագահ Գաբրիէլ Էֆ. Նորատունկեան առաջարկեց, որ Փարիզի հայ գաղութին ալ հրաւէր ուղղուի այս յարգանքի ուխտագնացութեան համար:

Համագումարին ներկայ անդամները միաձայնութեամբ համամիտ գտնուեցան թէ՛ Պ. Որբերեանի եւ թէ՛ Նորատունկեան էֆենտիի առաջարկութեանց, եւ որոշեցին մերձաւոր օր մը խմբովին Բէռ Լաշէզի գերեզմանատունը՝ Գրիգոր Օտեանի շիրմին շուրջ գտնուիլ:

Կարդացուեցաւ Պ. Դաւիթ-Բէկի հետեւեալ առաջարկութիւնը.

«Համագումարը, իր նիստերը փակելէ առաջ պարտք կը համարէ յայտնել իր խորին շնորհակալութիւններն ու երախտագիտութիւնը Անկախ Հայ Պետութեան նեցուկ Հայկական Բանակին սպաներուն եւ զինուորներուն եւ իր հիացումի զգացումները Արեւմտեան Հայաստանի /Կիլիկիոյ/ պանծալի ռազմիկներուն:

Մ. Ս. Դաւիթ-Բէկ»:

Ներկայ 11 պատգամաւորները ծափահարութիւններով համամտութիւն յայտնեցին այս առաջարկութեան:

Համագումարը որոշեց, որ նոյն առթիւ համակրութիւն յայտնուի նաեւ Հանրապետութեան կառավարութեան, եւ այդ մասին ուղերձի մը խմբագրութիւնն ու առաքումը յանձնարարեց Դիւանին:

Դարձեալ Համագումարը պաշտօն յանձնեց Դիւանին՝ համակրութեան ուղերձ մը ղրկել Կիլիկիոյ հայ ժողովուրդին:

Ի վերջոյ՝ նախագահ Գաբրիէլ Էֆենտի Նորատունկեան ծանոյց, թէ ներկայ նիստով կը փակուի Համագումարին երկրորդ նստաշրջանը, եւ ըսաւ.

Նորատունկեան էֆենտի. Համագումարի այս երկրորդ նստաշրջանին աշխատութիւնները պատկերացնող ամփոփումը, որուն գլխաւոր մասերը կարդացուեցան այստեղ եւ վաւերացուեցան, լրացուելով պիտի հրատարակուի եւ պիտի տրուի ամենուդ, հաղորդելու համար ձեզ ընտրող մարմիններուն կամ շրջանակներուն: Համագումարն իր առաջին նստաշրջանին ըրաւ ինչ որ կրնար: Իր աշխատութեանց մէկ մասը կը պատկանէր անմիջական կարգադրութեան կարօտ խնդիրներու. մաս մըն ալ ապագայ կարգադրութեանց պէտք ունեցող խնդիրներու: Այս երկրորդ նստաշրջանին՝ Համագումարը տեսաւ, թէ ի՛նչ ձեւով աշխատուեր է այդ վերջին խնդիրներուն հետապնդութեան եւ ի՛նչ արդիւնք գոյացեր է: Այդ մասին՝ Համագումարը կարծիքի փոխանակութիւններ ունեցաւ եւ տուաւ այն բոլոր որոշումները, որոնք կը պատշաճէին անոնցմէ իւրաքանչիւրին: Աշխատութեան շատ մեծ հարկ մը կը ծանրանար այս երկրորդ նստաշրջանին՝ Համագումարին վրայ, այն է՝ ազգային համերաշխութեան հարկը: Պէտք էր ներքին համերաշխութիւն՝ ժողովին անդամներուն միջեւ, ինչպէս պէտք էր նաեւ համերաշխութիւն ընդհանուր ժողովուրդին զանազան հատուածներուն միջեւ: Համագումարը չէր կրնար առ այդ ոեւէ կոչում ընել ժողովուրդին եթէ ինք իր մէջ համերաշխ չըլլար: Ուրախ եմ հաստատելու, թէ ներքին անհամաձայնութիւնները որոնք գոյութիւն ունէին, կրցաւ հարթել փոխադարձ զիջողութեամբ, եւ վերջ ի վերջոյ յանգեցաւ միաբանութեան մը, որ անշուշտ արժանի է ամեն շնորհաւորութեան ու խնդակցութեան: Ազգին ներկայ դրութեան մէջ շատ վնասակար բան մը պիտի ըլլար՝ եթէ երբեք այս ժողովը ցրուէր անհամերաշխութեան մէջ: Որովհետեւ, իր օրինակին վրայ, ժողովուրդը աւելի պիտի պառակտէր, մինչդեռ այսօր՝ իր մէջ տիրող միաբանութիւնը թերեւս գրգիռ մը դառնայ,- եւ սրտանց կը մաղթենք ասիկա,- որ ժողովուրդն ալ համերաշխութեան նոյն ոգուով հարթէ իր մէջ գոյութիւն ունեցող անհամաձայնութիւնները եւ միաբան ու միակամ բոլորուի մեր մանուկ պետութեան շուրջ: Առանց մեր ամենուս գործակցութեան եւ ձեռք-ձեռքի աշխատութեան՝ դժուար թէ կարենանք կենսունակ ու զօրաւոր վիճակ մը ապահովել այդ պետութեան: Չեմ ըսեր, որ համերաշխութիւնը ամեն խնդրի մասին դիւրին է, բայց ինչպէս որ այս ժողովին մէջ նոյնիսկ շատ խոր անհամաձայնութիւններ կարելի եղաւ հարթել՝ ազգին գերագոյն շահերուն համար փոխադարձաբար եղած զիջողութիւններով, պէտք է որ Համագումարի իւրաքանչիւր անդամ իր շրջանակին մէջ աշխատի նոյն ոգին ներշնչելու ժողովուրդին. այդ պարագային՝ ինչ որ անկարելի կը թուէր, դիւրաւ կը հարթուի, ինչպէս արդէն փորձով տեսանք այստեղ: Համագումարն այլեւս ուրիշ դեր չունի: Բաժնուելէ առաջ՝ կրնանք ակնարկ մը նետել այն խնդիրներուն վրայ, որոնց լուծման կը սպասէ հայութիւնը:

- Նախ՝ ազգին նիւթական բարւոքման հարցը կայ: Պէտք է ամեն ջանք ընել, որ զանազան անկիւններ ցրուած եւ ընդհանրապէս նիւթական ու բարոյական շատ աննպաստ կացութեան մը մատնուած տարագիրները փութով վերադառնան հայրենիք, տեղաւորուին, հաստատուին, ունենան իրենց շէները եւ օժտուին ապրուստի անհրաժեշտ միջոցներով: Դժուար խնդիր: Բայց դարձեալ ազգին ընդհանուր ձեռնտուութիւնը եւ միաբան գործակցութիւնը պիտի կրնան իրականացնել զայն: Ասիկա խնդիր մըն է, որուն վրայ պէտք է խորհինք ամէնէն աւելի, որովհետեւ առանց ժողովուրդին արդի տխուր վիճակին բարւոքման՝ կարելի չէ, որ բարւոքի մեր պետութեան վիճակը:
- Երկրորդ խնդիր մը օժանդակ պետութիւն մը գտնելու անհրաժեշտութիւնն է: Մենք հաւատք ունինք, թէ Պատուիրակութիւնն այս հարցը յարմարագոյն կերպով մը լուծելու համար բոլոր կարելին պիտի ընէ: Օժանդակ պետութեան մեծ կամ

փոքր ըլլալուն նայելու չէ. կը բաւէ որ անկեղծ համակրութիւն մը ունենայ մեր ժողովուրդին նկատմամբ եւ մեր պետութեան օժանդակ դառնայ ո՛չ թէ իր սեփական շահուն համար, այլ առաւելապէս մարդասիրական, կարելի է ըսել՝ հայասիրական զգացումներէ թելադրուելով:

- Ուրիշ կարեւոր խնդիր մը միացման հարցն է: Պէտք է, որ վերջ գտնէ արեւելեան եւ արեւմտեան հայոց միջեւ գոյութիւն առած երկուութիւնը, որ այնքան աղիտաբեր եղաւ մեր ազգին, անցեալին մէջ, եւ որ ա՛լ աւելի աղիտաբեր կրնայ դառնալ նաեւ յառաջիկային: Չմոռնանք, որ մեր պետութեան բարգաւաճման ու զօրացման մեծագոյն միջոցներէն մէկն ալ այդ միութիւնն է: Երբ այս տեսակէտով խորհինք միութեան խնդրին վրայ, իսկոյն պիտի հասկնանք մեծութիւնն ու նուիրականութիւնը այն պարտականութեան, որ մեզմէ իւրաքանչիւրին վրայ կը ծանրանայ այդ խնդիրը անպատճառ բարեյաջող լուծման մը հասցնելու համար: Կը կարծեմ, որ եթէ ամեն մէկ պատգամաւոր իր շրջանակին մէջ աշխատի ազդելու հանրային կարծիքին ու մամուլին վրայ, այս գործն ալ կ՚իրականանայ:
- Հայաստանի վերջնական կազմութեան համար պիտի սպասենք նախագահ Ուիլսընի իրաւարարութեան: Այս գործը պիտի կատարուի մեզմէ անկախաբար եւ պիտի ստիպուինք սպասել արդիւնքին: Բայց ատոր սպասելով մէկտեղ, պէտք է մենք ալ մեր ձեռքէն եկած ամեն բան ընենք որպէսզի Միացեալ Հայաստանը վերջնականապէս կազմուած օրը կարենանք զայն օժտել միացեալ ժողովուրդով մը, ինչ որ գլխաւոր հիմն է իր մեծութեան: Պէտք է այս կերպով պատրաստենք ժողովուրդը այդ մեծ օրուան, զոր ամբողջ հայութիւնը պէտք է ողջունէ միատարր ու միաբան: Ազգն ամբողջ կարենալու է ըսել այդ օրը, թէ իր հոգին, զգացումները, մտածումները մէկ են եւ կը ձգտին միակ նպատակի մը, պետութեան ու ժողովուրդին մեծութեան:
- Այդ յոյսով կը վերջացնեմ այս մէկ քանի խօսքերը եւ կը յուսամ Ձեր ամենուդ զգացմանց թարգմանը ըլլալ՝ գոչելով. կեցցէ՛ Հայաստան, կեցցէ՛ մեր ամենուս Հայրենիքը:

Բոլոր պատգամաւորները երկարատեւ ծափահարութիւններով ձայնակցեցան Գաբրիէլ էֆենտի Նորատունկեանի:

Պօղոս Նուպար Փաշա. Բաժնուելէ առաջ անգամ մը ալ Համագումարիդ կը յայտնեմ իմ երախտագիտութիւնս՝ վստահութեան եւ համակրութեան այն ցոյցին համար, որուն արժանի նկատեցիք զիս:

Ժողովիդ ծանօթ են այն պատճառները, որոնք զիս հարկադրեցին քաշուիլ: Հանգիստի պէտքը տիրական էր ինծի համար. չէի կրնար այլեւս աշխատիլ այնպէս, ինչպէս աշխատեր էի անցեալին մէջ: Բայց հակառակ ասոր, ստիպուեցայ զիջիլ եւ վերստանձնել այս ծանր գործը, որովհետեւ տեսայ, թէ ուրիշ միջոց չկար եւ թէ չէի կրնար խուսափիլ այս հայրենասիրական պարտականութենէն: Կը յուսամ, որ պիտի կրնամ այդ պարտականութեան բարձրութեան վրայ մնալ մինչեւ դաշնագրին ստորագրութիւնը: Դեռ երէկ, այդ ստորագրութիւնը մօտալուտ կը թուէր. բայց այսօր ամեն բան ցոյց կու տայ, որ շուտով տեղի չպիտի ունենայ, պիտի երկարածգուի, ինչպէս երկարածգուեցան ուրիշ շատ մը հարցեր, որոնց լուծումը երբեմն օրերու խնդիր մը կը նկատէինք եւ որոնցմէ ոմանք անլոյծ կը մնան տակաւին մինչեւ այսօր: Գործը որ յանձնեցիք մեզի, չափազանց ծանր է ու դժուար: Յոյս ունիմ, որ զիս չէք մեղադրեր՝ եթէ հիմակուց զգացնեմ, թէ կրնան պատահիլ վայրկեաններ, որոնց ընթացքին թերեւս ինծի դժուար ըլլայ պէտք եղած կորովով մնալ պատնէշին վրայ, նկատի առնելով առողջական վիճակս եւ այն արտակարգ յոգնութիւնը, որուն ենթարկուած էի մինչեւ այսօր:

Նորատունկեան էֆենտի. Թոյլ տուէք, որ անգամ մը ալ Ձեզ սրտապնդեմ: Ես այն խոր հաւատքն ունիմ, թէ միանակ չէք մնար Ձեր դժուարին աշխատութեան մէջ եւ բոլոր անոնք, որոնք կրնան ոեւէ կերպով օժանդակել այդ մասին, սիրով կը

բոլորուեն Ձեր շուրջը: Իմ մասիս, ինչպէս անցեալին մէջ երբեք չեմ մերժած, միշտ պատրաստ պիտի ըլլամ առաջին կոչին Ձեր մօտ փութալու, եթէ երբեք ատիկա անհրաժեշտ դատէք, եւ աշխատելու այնպէս, ինչպէս աշխատեցայ մինչեւ այսօր, ամեն անգամ որ պէտք տեսնուեցաւ: Կը հասկնամ գործին բովանդակ դժուարութիւնը. գիտեմ, եւ փորձով տեսայ, թէ կարգ մը պահերու մէջ չափազանց ծանր է Պատուիրակութեան Նախագահի պաշտօնը: Սակայն, կը յուսամ, թէ այս անգամ այլեւս մօտն ենք ելքին: Եթէ թուրքերը ստորագրեն մինչեւ քանի մը օր, այն ատեն մեծ աշխատութեան հարկ չի մնար: Բայց եթէ, հակառակ ամեն ակնկալութեան, թուրքերը մերժեն ստորագրել, այն ատեն կը հասկնամ, որ ամեն բան կնճռոտի: Ո՛վ գիտէ, թերեւս այդ պարագային Թուրքիոյ բաժանման հարց ծագի եւ մեր դատին հետապնդութեան, ինչպէս նաեւ Կիլիկիոյ ապագային սահմանման համար անհրաժեշտ դառնայ շատ դժուարին աշխատութիւն մը, եւ հարկ ըլլայ նոր Համագումար մը հրաւիրել: Կովկաս ալ շատ վտանգի ենթակայ է այս միջոցին: Մեր պետութիւնը յաջողեցաւ պոլշեւիկ շարժումի մը առաջքը առնել այս անգամ. չենք կրնար որոշապէս ըսել, թէ կրկնութեան պարագային պիտի կրնա՞յ նոյն յաջողութիւնը ունենալ, եթէ Մոսկուայի ազդեցութիւնն ու զօրութիւնը հետզհետէ աւելի ծաւալին Կովկասի մէջ: Ատրպատական, որ բոլորովին պոլշեւիկ դարձաւ, յուսադրիչ օրինակ մը չէ այս տեսակէտով:

Պօղոս Նուպար Փաշա. Այս ամենը ցոյց կու տան, թէ որքան ծանր գործ կայ ընելիք: Այս առտու՝ Արտաքին Գործոց Նախարարութեան պաշտօնատունն էի. ընդհանրապէս այն կարծիքին են, թէ թուրքերը չպիտի ստորագրեն: Ամեն բան տակն ու վրայ պիտի ըլլայ այդ պարագային: Եթէ նոյնիսկ ստորագրեն՝ դարձեալ ոչինչ լմնցած պիտի ըլլայ, որովհետեւ կայ գործադրութեան խնդիրը, որ տարակոյս չկայ, թէ մեծ մտահոգութեանց դուռ պիտի բանայ: Ծայրաստիճան խառնակ դրութեան մը հանդէպ կը գտնուինք: Ամեն պարագայի մէջ՝ բոլոր կարելին պիտի ընենք այս ծանր պարտականութիւնը մինչեւ վերջը տանելու համար: Դժբախտաբար, կացութեան լուծումը մեր ձեռքը չէ եւ ամեն բան մեր աշխատութենէն կախուած չէ, քանի որ դէպքերուն ենթակայ ենք եւ այդպէս ալ պիտի մնանք: Բայց կը բաւէ, որ մեր խիղճը հանդարտ մնայ եւ կարենանք ըսել, թէ ըրինք ինչ որ կրնայինք ընել: Այդ պիտի ըլլայ մեր տքնութեանց եւ աշխատութեան պսակումը եւ մեր ամբողջ վարձատրութիւնը:

Նորատունկեան էֆենտի. Եւ անշուշտ Ամենապատիւ Դուրեան Արքեպիսկոպոս, ինչպէս բոլոր պատուարժան պատգամաւորները, իրենց պարտականութիւն պիտի նկատեն արձագանգ ըլլալ Համագումարիս բաղձանքներուն եւ իղձերուն, իրենց շրջանակներու ժողովուրդին մօտ:

Պ. Աւետիս Թէրզիպաշեանի առաջարկութեան վրայ, ներկայ բոլոր պատգամաւորները ծափահարութիւններով շնորհակալութիւն յայտնեցին Գաբրիէլ էֆենտի Նորատունկեանին, թէ՛ Համագումարին նախագահութեան պաշտօնը այնքան արժանեօք ու անկողմնակալութեամբ վարած ըլլալուն եւ թէ՛ Ազգ.Պատուիրակութեան յառաջիկայ աշխատութեանց ալ գործակցելու մասին տուած խոստումին համար:

Համագումարի երկրորդ նստաշրջանին այս փակման նիստը լրացաւ ժամը 7-ին:

ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 68, թթ. 9-23: Ձեռագիր: Բնագիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայոց ազգային բյուրո 9

Հայկական համագումար Պետրոգրադում 119

Ազգային համախորհրդակցություն 160

Արևմտահայերի համագումարներ 291

Արտակարգ խորհրդակցություն 313

Հայ ազգային համագումարներ 339

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(1912-1920թթ.)

Փաստաթղթերի և նյութերի ժողովածու

ВСЕАРМЯНСКИЕ СОВЕЩАНИЯ

(1912-1920.)

Сборник документов и материалов

Ստորագրված է տպագրության 2004թ. հուլիսի 15-ին:
Չափսը 60x84 $^{1}/_{16}$: Ծավալը 49,5 մամուլ:
Թուղթը՝ օֆսեթ: Տպաքանակը 350:

«Լուսաս» ՍՊԸ տպարան: Երևան, Վ.Վաղարշյան 12ա: